20 գողցաւ։ Եւ Յակոբ Լաւրէն †Լաբանին գաղտուկ փախաւ՝ քանզի իր փախչիլը չգիտցուց անոր։ Այսպէս անիկա իր բոլոր ունեցածովը փախաւ, ու եղաւ և Գետէն անցաւ, ու իր երեսը գէպ ի Գաղաադ լեռը չիտկեց։
22 Եւ երրորդ օրը Յակոբի փախչիլը
23 Լաբանի պատմեցաւ։ Եւ անիկա իր եղբայրները հետը առնելով, անոր եաևէն եօթը օրուան ճամբայ գնաց, ու անոր հասաւ Գաղաադ լեռը։ Եւ
24 Աստուած գիշերուան երազի մէջ Լաբանի Լաւրէն եկաւ ու բսաւ անոր, Զգոյշ կեցիր որ Յակոբի ազէկ կամ
25 գէշ չդրուցեաս։ Ուստի Լաբան հասաւ Յակոբի։ և Յակոբ իր վրանը լեռը կանգներ էր. ու Լաբան իր եղբայրներուն հետ Գաղաադ լեռը իջաւ։
26 Եւ Լաբան բսաւ Յակոբի, Ի՞նչ է այս քու բրածդ որ բնծի գաղտուկ փախար, և իմ աղջիկներս պատ առ-
27 նուած սրով տարի՞ր։ Ինչո՞ւ փախչիդ գաղտուկ պահեցիր և ինծի չիմացուցիր, որ ես քեզ ուրախութեամբ և երգերով, թմբուկներով ու փառներով
28 խրկէի։ Եւ չթողուցիր զիս որ իմ որդիներս ու ազիկներս համբուրէի. հիմա այս բանը անմտութեամբ բրեր։

*Եբր. թերափիմները
†Եբր. Լաբանին սիրտը գողցաւ։

29 Ձեզի չարիք ընելու զօրութիւն ունիմ
ձեռքս մէջը, բայց ձեր Հօրը Աստուա-
ծը երեկ գիշեր ինծի խօսեցաւ՝ ըսե-
լով, Զգոյշ կեցիր որ Յակոբին ոտկի
30 կամ գէշ չդրուցես։ Եւ հիմա՝ թէ-
պետև քու հօրդ տանը չատ փափա-
քելուդ համար գացիր։ Բայց ինչո՞
31 իմ աստուածներս գողցար։ Եւ Յակոբ
պատասխան տուաւ ու ըսաւ Լաբա-
նին, Վասնզի երկնչեցայ ըսի՝ զի
գուցէ դուն ալ քու աղջիկներուդ
32 առնես։ Բայց քու աստուածներդ
որուն քովը որ գտնես, թող անոնք
չապրի։ Մեր եղբայրներուն առջեւ քնն-
նէ՝ ինչ, թէ որ իմ քովս քու ինչ
բանդ ունիս՝ առ։ Քանզի Յակոբ չէր
գիտեր որ Ռաքէլ զողցեր էր զանոնք։
33 Եւ Լաբան Յակոբի վրանը ու Լիայի
վրանը և երկու աղախիններուն վրա-
նը մտաւ, բայց չգտաւ։ Եւ դուրս Լիայի
վրանէն ելաւ, ու Ռաքելի վրանը
34 մտաւ։ Եւ Ռաքէլ առաւ կռապերը,
ու զանոնք ուղտի պատասին մէջը դը-
րաւ, ու վրան նստաւ։ Եւ Լաբան բո-
35 լոր վրանը փնտռեց, բայց չգտաւ։ Եւ
անոնք իր Հօրը ըսաւ, Իմ տիրոջս աչ-
քերուն ծանր չերեւնայ, որ քու առ-
ջեւդ չեմ կրնար ոտք կենալ։ քանզի
կանանց սովորութիւնը մէջն եմ։ Այս-
պէս փնտռեց, բայց կռապերը չգտաւ։
36 Եւ Յակոբ բարկացաւ ու Լաբանի
հետ կռիւ եղաւ։ Եւ Յակոբ պատասխան
տուաւ ու ըսաւ Լաբանին, Ինչ է իմ
յանցանքս, ինչ է իմ մեղքս, որ ան-
37 քու թիւռալ եռանէս ինկար։ Որովհետև
իմ բոլոր կարասիքս խառնեցիր, քու
տանդ ամէն կարասիքէն ինչ որ գտար,
հոս իմ եղբայրներուս և քու եղբայր-
ներուդ առջեւը դիր, որ երկուքնուս
38 մէջտեղը դատաստան կռնեն։ Լիսան
քսան տարի է որ քեզի հետ եմ։ ոչ-
խարներդ ու այծերդ ձագ չձգեցին.
39 և քու հօտիդ խոյերը չկերայ։ Գոչընչ-
նչէն գիշատածը չբերի քեզի, վնա-
սածը ես կը քաշէի. ցորեկը գողցուած
ը ու գիշերը գողցուածը իմ ձեռքս

40 կը պահանջէիր։ Այսպէս ես. ցորեկը
տաքը և գիշերը ցուրտը կը մնչէր
գիս, և աչքերս քունս կը փախչէր։
41 Այսպէս եղայ քսան տարի քու տանդ
մէջ. քու երկու աղջիկներուդ համար
տասնուչորս տարի ծառայեցի քեզի,
և հօտերուդ համար վեց տարի ծա-
ռայեցի, և իմ վարձքս տասը անգամ փո-
խեցիր։ Թէ որ իմ Հօրս Աստուածը,
42 Աբրահամի Աստուածը և Իսահակի
Երկիւղը ինծի հետ չըլլար, իրաւցնէ
դիս հիմա դատարկ կը խրկէիր։ Աս-
տուած իմ տառապանքս ու իմ ձեռ-
քս աշխատութիւնը տեսաւ, և երեկ
գիշեր տէդ յանդիմանեց։
43 Եւ Լաբան պատասխան տուաւ ու
ըսաւ Յակոբի, Այս աղջիկները իմ ա-
ղջիկներս են, և այս որդիները իմ որ-
դիներս են, և այս հօտերը իմ հօտերս
են, և ամէնը որ կը տեսնես, իմս են.
և ինչ ընեմ այսօր այս իմ աղջիկնե-
րուս կամ իրենց ծնած զաւակներուն։
44 Ուստի հիմա եկուր, ես և դուն ուխտ
ընենք, որ իմ ու քու միջտեղ վկայու-
45 թեան համար ըլլայ։ Եւ Յակոբ քար մը
առաւ ու արձան կանգնեց զանիկա։
46 Եւ Յակոբ իր եղբայրներուն ըսաւ,
Քարեր ժողվեցէք։ և անոնք քարեր
առին ու դէզ մը ըրին, և հոն դէղին
47 վրայ հաց կերան։ Ու Լաբան անոր ա-
նունը *Եղկար-սահատութա դրաւ,
բայց Յակոբ անոր անունը †Գաղատ
48 դրաւ։ Եւ Լաբան ըսաւ, Այս դէղը իմ
ու քու միջտեղ վկայ մրն է այսօր։
անոր համար անոր անունը Գաղատ
49 ըսուեցաւ. Եւ ‡Մատփա ալ ըսուեցաւ.
քանզի ըսաւ, Մինչ իրարմէ զատուած
50 ատեննիս, իմ ու քու միջտեղ Տէրը դի-
տէ։ Թէ որ իմ աղջիկներս վշտացընես,
և կամ թէ որ իմ աղջիկներուս վրայ
ուրիշ կիներ առնես, հետերնիս մէկը
չկայ. տես իմ ու քու միջտեղ վկայ Ա-

*Այսինքն՝ վկայութեան դէզ (Գալէդ-
ըէն)։
†Այսինքն՝ վկայութեան դէզ (Նէբսա-
յէրէն)։ ‡Ս. Լինամց՝ դ Լսանամց,



51 աստուած է։ Եւ Լաբան ըսաւ Յակոբին,
Ահա այս դէզը, և ահա իմ ու քու
52 միջտեղ իմ կանգնած արձանս. Այս
դէղը վկայ՝ ու այս արձանը վկայ է, որ
այս դէղէն չանցնիմ քեզի դէպ՝ ինչ, և
դուն այս դէղէն ու այս արձանէն չանց-
նես ինծի դէպ՝ ինչ, չարիք ընելու համար։
53 Աբրահամի Աստուածը և Նաքովրի
աստուածը, անոնց հայրերուն աստուա-
ծը մեր միջը դատաւոր ըլլան։ Եւ Յա-
կոբ իր Հօրը Իսահակի Երկիւղովը երդ-
54 նում ըրաւ։
Եւ Յակոբ զոհեր մատուց լեռանը
վրայ, և իր եղբայրները հաց ուտե-
ցուց։ Հաց կերան, և գի-
55 շերը լեռը մնացին։ Եւ Լաբան առա-
ւաւտանց կանուխ ելաւ, և իր որդի-
ները ու իր աղջիկները համբուրեց և
օրհնեց գանոնք. և Լաբան դնաց ու իր
տեղը դարձաւ։

## Գլ. ԼՐ

1 Եւ Յակոբ իր ճամբան գնաց, ու Աս-
տուծոյ հրեշտակները անոր պատահե-
2 ցան։ Եւ Յակոբ երբոր անոնք գտնելը,
ըսաւ, Ա՛յս Աստուծոյ բանակն է. և այն
տեղին անունը †Մանայիմ դրաւ։
3 Եւ Յակոբ իր առջեւէն պատգամաւոր-
ներ խրկեց իր եղբօրը Եսաւ դէպ ի
4 Սէիր երկիրը՝ Եդոմի գաւառը։ Եւ պա-
տուիրեց անոնց՝ ըսելով, Իմ տիրոջս Ե-
սաւ այսպէս ըսէք, Քու ծառադ Յակոբ
սաղմ կ'ըսէ, Լաբանի քովը պանդխ-
տութիւն բրի, ու մինչև հիմա ուշացայ։
5 Եւ ունիմ արջառներ ու էշեր, հօտեր
ու ծառաներ և աղախիններ. և խրր-
կեցի իմ տիրոջս խնդրելու, որ քու
6 առջեւդ շնորհք գտնեմ։ Եւ պատգա-
մաւորները դարձան Յակոբի և ըսին,
Քու եղբօրդ Եսաւ դացինք, ու ա-
նկից ալ չորս հարիւր մարդով քեզ
դիմաւորելու կու գայ։
7 Եւ Յակոբ խիստ վախցաւ ու խռովե-
ցաւ։ և իր հետը եղած ժողովուրդը ու

*Այսինքն՝ երկու բանակներ։

հօտերը և արջառները և ուղտերը եր-
8 կու խումբի բաժնեց, Եւ ըսաւ, Թէ որ
Եսաւ մէկ խումբին հասնի, և այն զար-
նելու ըլլայ, միւս խումբը կ'ազատի։
9 Եւ Յակոբ ըսաւ, Ով իմ Հօրս Աբրա-
համի Աստուածը, ու իմ Հօրս Իսա-
հակի Աստուածը, ով Տէր՝ որ ըսիր
ինծի, Քու երկիրդ և քու հայրենիդդ
10 դարձիր, ու քեզի բարիք ընեմ. Ա-
ժանչ չեմ այն ամէն ողորմութիւննե-
րուն և ամէն հաւատարմութեանը, զոր
դուն քու ծառայիդ ցուցուցիր. քանզի
իմ գաւազանովս անցայ այս Յոր-
դանանէն, և հիմա երկու խումբի եր-
11 եցայ։ Կ'ազատիս քեզի, ազատէ զիս իմ
եղբօրս Եսաւի ձեռքէն. զի վախնամ
եսաւ կը վախնամ, որ չըլլայ թէ գայ
ու զարնէ զիս, ու մայրը զաւակներու-
12 վը։ Եւ դուն ըսիր թէ Անշուշտ քեզի
բարիք պիտի ընեմ, ու քու սերունդդ
ծովի աւազին չափ պիտի ընեմ, որ չա-
փուելուն չհամրուի իր։
13 Եւ այն գիշերը հոն կեցաւ. ու իր
ձեռքը գտնուածէն իր եղբօրը Եսաւի
14 համար ընծաներ պատրաստեց, Երկու
հարիւր այծ և քսան նոխազ, երկու
15 հարիւր էգ ոչխար և քսան խոյ, Երե-
սուն ծիծ տուող ուղտ իրենց ձագե-
րովը, քառասուն կով ու տասը ցուլ,
16 քսան էգ էշ և տասը ալանակ։ Եւ
մէն մի հօտը զատ զատ իր ծառանե-
րուն ձեռքը յանձնեց, և ըսաւ իր
ծառաներուն, Առջեւս անցէք, ու հօ-
տերը իրարմէ փէշ մը հեռու թողու-
17 ցէք։ Եւ առջեւէն գացողին պատուի-
րեց ըսելով, Երբոր իմ եղբայրս Եսաւ
քեզի պատահի և քեզի հարցնէ, ըսե-
լով Թէ Դուն որմե՞ն ես և ո՞ւր կ'եր-
թաս, և այս առջեւդ հօտերը որո՞ն
18 են. Անատնիդ ըսէ որ Քու ծառայիդ
Յակոբին է. իմ տիրոջս Եսաւի իրր-
կած բնծան է. և ահա ինքն ալ հետ-
19 նիս է։ Եւ այսպէս երկրորդին ու եր-
րորդին և հետերուն եղածին բոլոր գա-
ցողներուն պատուիրեց ըսելով, Ա՛յս
խօսքին պէս զրուցեցէք Եսաւի եր-
20 րոր գիմեր գտնէք. Եւ ահա քու ծա-

ուած Յակոբ ալ եւ նէ՝ բակը. քանզի բաւ, Աւգէէս զացող ընծաներով անոր երեսը կը հաշտեցնէ, և անկէ ետքը անոր երեսը կը տեսնէ. գու-
21 ցէ դիս ընդունի. Այսպէս ընծաները առաջ կ՚անցնէին, և ինքը այն գիշեր-
22 ը հոն մնաց բանակին մէջ։ Եւ այն գիշերը եղաւ, որ իր երկու կիներն եւ իր երկու աղախինները ու իր տասնմէկ որդիները առաւ, և Յաբոկի անցքին
23 անցաւ։ Եւ առաւ զանոնք ու վտակին անցուց, և իր ե-ը ունեցածը անցուց։
24 Եւ Յակոբ մնաց մնաց, ու մարդ մը կռւ գօտեմարտեր անոր հետ մինչև ար-
25 շալոյս։ Եւ երբ տեսաւ որ իր ոյժը անոր չհասաւ, անոր զտին ամրաչիլին դպաւ, և անոր հետ գօտեմարտած առնէր Յակոբին զտին ամրաչիլը ՚խախ-
26 տեցաւ։ Եւ անիկա ըսաւ, Թող տուր զիս, քանզի արշալոյսը †երեցաւ. և Յա-է-ը ըսաւ, Չեմ թողուր քեզ մինչև որ
27 դիս չօրհնես։ Եւ անիկա ըսաւ անոր, Ի՞նչ է անունդ. նա ալ ըսաւ, Յակոբ
28 է։ Եւ անիկա ըսաւ, Ալ մէ յիշեն ալ քու անունդ Յակոբ չըսուի, այլ ‡Իսրայէլ. քանզի Աստուծոյ հետ ու մարդոց հետ մարտնչեցար, և յաղթեցիր։
29 Եւ Յակոբ հարցուց ու ըսաւ, Շնորհք ըրէ՝ անունդ ըսէ՛ ինձի։ Եւ անիկա ըսաւ, Ինչո՞ւ իմ անունս կը հարցընես. և հան
30 օրհնեց զանիկա։ Եւ Յակոբ այն տեղին անունը ‖փանուէլ դրաւ. քանզի ըսաւ, Դէմ առ դէմ տեսայ զԱստուած, ու իմ անձս ողջ մնաց։
31 Եւ փանուէլէն անցածին պէս արեւը անոր վրայ ծագեցաւ. ու իր զտին
32 վրայ կը կաղար։ Անոր համար Իսրայէլի որդիքը զտին վրայի **թմշած չիքը՛ չեն ուտեր մինչև այսօր. որովհետև Յակոբին զտին ††թմշած չիքին դպաւ։

*Կամ թմրեցաւ։ †ՆԷՔ. երեւաւ։
‡Աքվ-ին-ն՝ Աստուծոյ հետ մարտնչող։
‖Աքվ-ին-ն՝ Աստուծոյ երեսը։
**Կամ ամրաչիլը ††Կամ ամրաչիլին

ԳԼ. ԼԲ

1 Եւ Յակոբ իր աչքերը վեր վերցուց ու նայեցաւ, և ահա Եսաւ կու գար ու անոր հետ չորս հարիւր մարդ. և էր զաւակները Լիայի ու Բաքելի ու եր-
2 կու աղախիններուն բաժնեց։ Եւ աղախինները իրենց զաւակներովը առջեւը դրաւ, և Լիան իր զաւակներովը ետեւը, և Ռաքելը ու Յովսէփը ամենէն ետեւը։
3 Եւ ինքը անոնց առջեւը անցաւ, ու մինչև իր եղբօրը մօտենալուն՝ գետնին հասաւսար եօթը անգամ խոնարհուե-
4 ցաւ։ Եւ Եսաւ զանիկա դիմաւորելու վազեց ու գրկեց զանիկա, և անոր պարանոցին վրայ ինկաւ ու համ-
5 բուրեց զանիկա. և լացին։ Ու Եսաւ իր աչքերը վեր վերցուց և տեսաւ կիներն ու զաւակները, և ըսաւ, Այոնք քուկին ի՞նչդ են. և անիկա ըսաւ, Աստուածոյ քու ծառային պարգեւած զա-
6 ւակներն են։ Անոնցմէն աղախիններուն և անոնց զաւակները մօտեցան ու խո-
7 նարհութիւն ըրին։ Եւ Լիան ալ ու իր զաւակները մօտեցան ու խոնարհութիւն ըրին. և ետքը Յովսէփ ու Ռաքէլ մօտեցան ու խոնարհութիւն ըրին։
8 Ու Եսաւ ըսաւ, Այս քու բոլոր խումբերդ ի՞նչ պիտի ըլլայ, որուն ես պատահեցայ, և Յա-է-ը ըսաւ, իմ տիրոջս առջեւը շնորհք գտնելու համար է։
9 Ու Եսաւ ըսաւ, Ես շատ ունիմ, եղ-
10 բայր իմ, քուկինդ քեզի ըլլայ։ Եւ Յակոբ ըսաւ, Չէ, կ՚աղաչեմ քեզի, թէ որ հիմա քու առջեւդ շնորհք գտայ իմ ձեռքէս ընծաս ընդունէ. քանզի քու երեսդ Աստուծոյ երեսը տեսնելու
11 պէս տեսայ, և ինծի հաճեցար։ Շնորհք ըրէ, քեզի բերուած *ընծաս առ. քանզի Աստուած ողորմեցաւ ինծի, և քանզի ես ամէն բան ունիմ. և տարեցաւ
12 անոր, ու նա ալ ընդունեց։ Եւ անիկա ըսաւ, Ելլենք երթանք. և ես քու
13 առջեւդ կ՚երթամ։ Եւ Յա-է-ը ըսաւ անոր, իմ տէրս գիտէ որ զաւակները

*ՆԷՔ. օրհնութիւնս.



մանուկ են, ու հետս եղած հօտերը ու արջառները ձաղերով են. և թէ որ մէկ օր մը քանութեամբ վարին զանանք,
14 բոլոր հօտերը պիտի մեռնին։ Ուրեմն թող իմ տէրս իր ծառային առջեւը անցնի. ու ես կամաց կամաց առջեւս եղած անասուններուն ոտքովը և որդանիներուն ոտքովը կ՚երթամ, մինչև
15 որ իմ տիրոջս Սէիր հասնիմ։ Եւ Եսաւ ըսաւ, Արդ իմ հետս եղող ժողովուրդէն քու քովդ ձգեմ. և անիկա ըսաւ, Ի՞նչ պէտք է. թող իմ տիրոջս առ-
16 ջեւը շնորհք գտնեմ։ Այսպէս Եսաւ այն օրը իր ճանապարհ դարձաւ դէպ ի Սէիր։
17 Եւ Յակոբ Սոկքովթ չեկաւ, ու իրեն տուն մը շինեց և իր հօտերուն վրանները շինեց. անոր համար այն տեղին անունը ՚Սոկքովթ դրաւեցաւ։
18 Եւ Յակոբ Միջագետքէն գարձած ատենը՝ Սիքեմացւոց Սաղէմ քաղաքը եկաւ, որ Քանանու երկրին մէջն է, և
19 քաղաքին առջեւն բնակեցաւ։ Եւ իր վրանը կանգնած տրտին կալուածքը Սիքեմի հօրը Եմմորի որդիներէն
20 հարիւր կտոր ասեղնի՝ ‡Էլէլօհէ-Իսրայէլ դրաւ։

ԳԼ. ԼԳ

1 Եւ Լիայի Յակոբի ծնած աղջիկը Դինա այն երկրին աղջիկները տեսնելու և
2 լսելու եկաւ։ Եւ այն երկրին իշխանը Խեւացի Եմմորի որդին Սիքեմ տեսաւ զանիկա, և առաւ ու պառկեցաւ անոր հետ ու
3 պղծեց զանիկա։ Եւ անոր հոգին Յակոբի Դինա աղջիկը յարեցաւ. ու սիրեց աղջիկը, և աղջկան ‖քաղցրութեամբ խօսեցաւ։ Եւ Սիքեմ իր հօրը Եմմորի զրուցեց ըսելով, Այս ա-
5 ղջիկը ինծի կնիկ առ։ Եւ Յակոբ լսեց որ անիկա իր Դինա աղջիկը պղծեց.

*Աքվ-ին-ն՝ փարախներ։
†Կամ հարիւր գառնուկներ։
‡Աքվ-ին-ն՝ Աստուած Իսրայէլի Աստուածը։ ‖ՆԷՔ. սրտին



բայց իր որդիները իր հօտերուն հետ գաշտն էին, ու մինչև անոնց գալը Յակոբ լուռ կեցաւ։
6 Եւ Սիքեմի հայրը Եմմոր գնաց Յա-
7 կոբի, որ անոր հետ խօսի. Եւ Յակոբի որդիքը լսածնուն պէս գալուն եկան. և մարդիկը դժուարեցան և խիստ բարկացան. քանզի Յակոբի աղջկանը հետ պառկելով՝ Իսրայէլի մէջ անզգամութիւն ըրած, որ առանկ բաներ չեն. Ու Եմմոր խօսեցաւ անոնց հետ ըսելով, Իմ Սիքեմ որդուս հոգին ձեր աղջկանը հետ սիրահարեցաւ. կ՚աղաչեմ ձեզի, զանիկա անոր
9 կնութեան տուէք, Եւ ձեզի հետ խնամութիւն ըրէք. ձեր աղջիկները մեզի տուէք և մեր աղջիկները ձեզի առէք.
10 Եւ մեզի հետ բնակեցէք և այս երկիրը ձեր առջեւը պիտի ըլլայ. անոր մէջ բնակեցէք ու առուտուր ըրէք, և ա-
11 նոր մէջ կալուածքներ առացէք. Եւ Սիքեմ ըսաւ աղջկան հօրը ու անոր եղբայրներուն, Թող ձեր առջեւը շնորհք գտնեմ, և ինչ որ ինծի ըսէք, կու-
12 տամ, Խնդրեցէք ինծմէ խիստ շատ օժիտ ու ընծայ, և ինծի բաներնուդ պէս պիտի տամ. միայն թէ աղջիկը
13 ինծի տուէք՝ կնիկ ըլլալու համար։ Եւ Յակոբի որդիքը խաբեութեամբ պատասխան տուին Սիքեմի ու անոր հօրը Եմմորի, և ըսին, (քանզի անկից
14 իրենց Դինա քոյրը պղծեց,) Եւ ըսին անոնց, Մենք այս բանը չենք կրնար ընել, որ մեր քոյրը անթլփատ մարդու մը տանք. վասն զի այդ մեզի ա-
15 մօթ բան մի է. Բայց միայն սասլ կը համձնէք ձեզի, թէ որ ձեզմէ ամէն արուն թլփատուելով՝ մեզի պէս ըլ-
16 լաք, Անասունը մեր աղջիկները ձեզի կու տանք, և ձեր աղջիկները մեզի կ՚առնենք, և ձեզի հետ կը բնակինք, ու չէ՛ք հեռ մէկ ժողովուրդ կ՚ըլլանք.
17 Բայց թէ որ մեզի մտիկ չընելով՝ չթլփատուիք, անասունը մենք մեր ա-
18 ղիկը կ՚առնենք ու կ՚երթանք։ Եւ անոնց խօսքը հաճելի եղաւ Եմմորի ու
19 Եմմորի որդի՝ Սիքեմի։ Եւ այն պա-

մանկին այս բանը ընելու չուշացաւ, քանզի Յակոբի աղջկանը դմբոցած էր. և իր հօրը տանը մէջ եղողներուն ամենէն պատուականն էր անկից։
20 Ու Եմմովր և անոր որդին Սիւքեմ իրենց քաղաքին դուռը եկան, և իրենց քաղաքին մարդոցը հետ խօսեցան՝ ըսելով, Այս մարդիկը խաղաղասէր կը վարուին մեզի հետ. ուստի թող՝ երկրին մէջ բնակին, ու անոր մէջ առուտուր ընեն. քանզի ահա երկիրը ընդարձակ է անոնց առկից. Էնէ՝ անոնց աղջիկները մեզի կնիկներ առնենք և մեր աղջիկները անոնց տանք։
22 Բայց այն մարդիկը մեզի հետ բնակելու, մէկ ժողովուրդ ըլլալու համար միայն այս բանով կը հաճին մեզի, որ անոնց թլփատուելուն պէս՝ մեր ամէն արուն
23 թլփատուի։ Անոնց հօտերը ու անոնց ստացուածքը և ամէն անասունները մերը չէ՞ն ըլլար. միայն թէ մենք անոնց հաճենք, որ մեզի հետ բնակին։
24 Ու Եմմովր և անոր որդւոյն Սիւքեմի մտիկ ըրին այն ամէնոր որ անոր քաղաքին դռնէն դուրս կ՚ելլէին. և ամէն արու որ անոր քաղաքին դռնէն դուրս կ՚ելլէր, թլփատուեցաւ։
25 Ու եղաւ որ երրորդ օրը երբոր անոնք ցաւին մէջն էին, Յակոբի երկու որդիքը Շմաւոն ու Ղեւի՝ Դինայի եղբայրները՝ իւրաքանչիւրն իր սուրը առաւ, և համարձակ քաղաքը մտան ու սպանեցին
26 Եմմովրը և անոր որդին Սիւքեմը սուրի բերնէ անցուցին. և Սիւքեմի տունէն ալ
27 Դինան ու դուրս եկան։ Եւ Յակոբի որդիքը սպանուածներուն վրայ եկան, ու քաղաքը կողոպտեցին իրենց քոյրը
28 պղծելնուն համար։ Անոնց հօտերը և անոնց արջառները ու էշերը և քաղաքին մէջ եղածը ու դաշտին մէջ եղածը առին. և անոնց բոլոր ստացուածքը և անոնց բոլոր տղաքներն ու կիներնին գերի առին, և տուներուն մէջ բոլոր գանուածը կողոպտեցին։
30 Եւ Յակոբ ըսաւ Շմաւոնի ու Ղեւիի, Չէք այս երկրին բնակացը՝ քանանացւոց ու փերեզացւոց մէջը՝ տասի ընելով՝ զիս փորձանքի մէջ ձգեցիք. և ինծի հետ քիչ մարդիկ ըլլալով՝ անոնք իմ վրաս պիտի հաւաքուին ու զիս պիտի զարնեն, և ես ու իմ տունս պիտի կորսուինք։ Եւ անոնք ըսին, Հապա մեր քոյրը բոզի պէս գործածել պէ՞տք էր անոր։

## ԳԼՒ ԼՆ

1 Եւ Աստուած ըսաւ Յակոբի,Ելիր՝ վեր դէպ ի Բեթէլ գնա և հոն բնակէ, և հոն սեղան մը չինէ Աստուծոյ՝ որ քեզի երեցաւ, քու եղբօրդ Եսաւի երեսէն փախած ատենդ։ Եւ Յակոբ իր ընտանեացը ու բոլոր իրեն հետ եղողներուն ըսաւ, Ձեր մէջը եղող օտար աստուածները վերցուցէք, ու մաքրուեցէք և հանդերձները փոխեցէք։ Եւ կելլենք դէպ ի Բեթէլ վեր երթանք. ու հոն սեղան մը չինեմ Աստուծոյ, որ իմ նեղութեանս օրը ինծի լսեց, ու իմ գացած ճամբուս մէջ ինծի հետ եղաւ։ Եւ իրենց ձեռքը եղած բոլոր օտար աստուածները ու իրենցականջները եղած օղերը Յակոբի տուին. և Յակոբ թաղեց զանոնք Սիւքեմի մօտ եղած բլակներուն տակը։ Եւ ճամբայ ելան. և իրենց բոլորտիքը եղած քաղաքներուն վրայ Աստուծոյ վախը ինկաւ, ու Յակոբի որդւոցը հետևից չինկան։ Եւ Յակոբ գնաւ Լուզ՝ որ հիմա Բեթէլ կ՚ըսուի, Քանանայ երկրին մէջ եղող Լուզ՝ որ ինքն ու իր հետը եղող բոլոր ժողովուրդը։ Եւ հոն սեղան մը չինեց, ու այն տեղին անունը Էլ–Բեթէլ դրաւ. քանզի իր եղբօրը երեսին վախած ատենը Աստուած հոն իրեն երեցեր էր։
8 Եւ Ռեբեկային դայեակը Դեբովրա մեռաւ, ու Բեթէլի վերի կողմը կաղնիին տակը թաղուեցաւ. ու անոր անունը ‡Ալօնպախութ դրուեցաւ։

*ԵԲԸ. գարշահոտ
†Ա֊ԼՒՆԱՆ՝ Բեթէլին Աստուածը։
‡Ա֊ԼՒՆԱՆ՝ կաղնի սգոյ։



9 Եւ Աստուած նորէն երևցաւ Յակոբի երբոր անկից Մեսոպոտամէն դարձաւ
10 ձեր էր, ու օրհնեց զանկիկ։ Եւ Աստուած ըսաւ անոր, Քու անունդ Յակոբ է. այլ ետքը քու անունդ Յակոբ չըսուիր, այլ Իսրայէլ ըլլայ քու անունդ. ու անոր անունը Իսրայէլ
11 դրաւ։ Եւ Աստուած ըսաւ անոր, Ես Ամենակարող Աստուած եմ. աճիր և շատացիր, քեզմէ ազգ ու ազգերու բազմութիւն ըլլայ, և քու ետևանքէդ
12 թագաւորներ ելլեն։ Եւ այն երկիրը որ Աբրահամի և Իսահակի տուի, քեզի պիտի տամ. ու քեզմէ ետքը քու սերունդիդ պիտի տամ այն երկիրը։ Եւ
13 Աստուած այն տեղը որ անոր հետ խօսեցաւ, անոր քովէն վեր երթաւ։ Ու Յակոբ քարէ սրճան մը կանգնեց այն տեղը՝ ուր որ Աստուած իր հետը խօսեցաւ, և անոր վրան թափելու նուէր մատուց և անոր վրան իւղ թափեց։
15 Եւ Յակոբ այն տեղին անունը որ որ Աստուած իր հետը խօսեցաւ, Բեթէլ դրաւ։
16 Ու Բեթէլէն ճամբայ ելան. և դեռ Եփրաթա չհասած փիչ մը ճամբայ մնացած՝ Ռաքէլ ծնաւ, և ծնած ատենը
17 չատ դժուարութիւն քաշեց։ Եւ եղաւ որ երբ իր ծնանելուն չատ դժուարութիւն կը քաշէր, ծնունդին բսաւ անոր, Մի վախնար, քանզի այս ալ քեզի որդի է։ Եւ եղաւ որ երբ անոր հոգին կ՚ելլէր, (քանզի մեռաւ,) անոր անուն Բենոնի դրաւ, բայց անոր հայրը
19 Բենիամին կանչեց անկիկա։ Եւ Ռաքէլ մեռաւ, ու թաղուեցաւ Եփրաթայի ճամբան՝ որ Բեթլեհէմ է։ Եւ Յակոբ անոր դէրեզմանին վրայ արձան մը կանգնեց, որ մինչև այսօր Ռաքէլի դէրեզմանին արձանն է։
21 Ու Իսրայէլ ճամբայ ելաւ, և իր վրանը ‡Միհեապ Հզերի անդին կողմը
22 կանգնեց։ Եւ եղաւ որ երբոր Իսրայէլ այն երկիրը կը բնակէր, Ռուբէն գնաց և իր հօրը Բաղդա հարճին հետ պառկեցաւ. և Իսրայէլ լսեց ըլլաս։

Արդ Յակոբի որդիքը տասներկու էին,
23 Լիայի որդիքը՝ Յակոբի անդրանիկը Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա,
24 Իսաքար ու Զաբուղոն։ Ռաքելի որդիքը՝ Յովսէփ ու Բենիամին։ Եւ Ռաքելի Բաղդա ազախինին որդիքը՝ Դան
26 ու Նեփթաղիմ։ Եւ Լիայի Զելփա ազախինին որդիքը՝ Գադ ու Ասեր. Ասոնք են Յակոբի որդիքը՝ որոնք Մեսոպոտամիա ծնան անոր։
27 Եւ Յակոբ եկաւ իր հօրը Իսահակի գէպ ի Մամբրէ՝ Արբայի քաղաքը՝ այսինքն Քեբրոն, ուր որ Աբրահամ ու Իսահակ պանդխտութեամբ բնակեցան։
28 Եւ Իսահակի օրերը հարիւր ութսուն
29 տարի եղան։ Եւ Իսահակ ծերացած ու օրերը լիացած՝ ասանդից հոգին և մեռաւ, և իր ժողովուրդին խառնուեցաւ. ու անոր որդիքը Եսաւ և Յակոբ թաղեցին զանիկա։

## ԳԼՒ ԼԶ

1 Եւ ասոնք են Եսաւի ծնունդները՝ որ
2 է եղոմ։ Եսաւ իրեն կնիկներ առաւ Քանանացի աղջիկներէն, Բնատացի Լլօնի աղջիկը Ադդան, ու Խևատացի Սիբեգովնի աղջիկը Ոհոլի աղջիկը Ոհոլիբամա,
3 Եւ Իսմայէլի աղջիկը՝ Նաբեթի քոյրը Բասեմաթը։ Եւ Ադդա ծնաւ Եսաւի Եղիփազը, ու Բասեմաթ
5 ծնաւ Ռագուէլը։ Եւ Ոհիբամա ծնաւ Յեուսը ու Յեղղոմը և Կորխը. ասոնք են Եսաւի որդիքը որ ծնան իրեն Քանանու երկրին մէջ։
6 Ու Եսաւ առաւ իր կնիկները ու արուները և աղջիկները ու իր տան բոլոր մարդիկը՝ և իր հօտերը ու իր բոլոր անասունները՝ և իր բոլոր ստացուածքը որ Քանանու երկրին մէջ ստացեր էր, և իր եղբօրը Յակոբի երեսէն գնաց։
7 Վասն զի երկիրը մը դնաց. Քանզի իրենց ստացուածքը չատ ըլլալուն համար չէին կրնար միասին բնակիլ. և

*Ա֊ԼՒՆԱՆ՝ նեղութեան օրդին։
†Ա֊ԼՒՆԱՆ՝ ալ ձեռքին օրդին։
‡Ա֊ԼՒՆԱՆ՝ հօտի աշտարակ։

իրենց հօաերուն պատճառովը իրենց
պանդխտութեամբ բնակած երկիրը բա-
8 ւական չէր իրենց։ Ու նաեւ Սէիր լեռը
բնակեցաւ։ Եսաւ եղովմին է։
9 Ու Սէիր լեռը եղող եղովմացւոց
հօրը Եսաւի Ծնունդներըը ասոնք են։
10 Եսաւի որդւոցը անուններըը ասոնք են։
Եսաւի կնկանը Ադդայի որդին Եղի-
փազ, — Եսաւի կնկանը Բասեմաթի
11 որդին Ռագուէլ։ Ու Եղիփազի որդի-
քը Թեման, Օմար, Սեփով և Գոթամ
12 ու կենեզ էին։ Ու Թամնա Եսաւի որ-
դւոյն Եղիփազի հարճն էր, որ Եղի-
փազի Ամմաղեկը ծնաւ։ Եսաւի կնի-
կանը Ադդայի որդիքը ասոնք էին։
13 Ու Ռագուէլի որդիքը ասոնք են. Նա-
հաթ, Զարա, Սամմա ու Մէզա. ասոնք
էին Եսաւի կնկանը Բասեմաթի որ-
14 դիքը։ Ու Եսաւի կնկանը Սեբեգոնի
աղջկանը Անայի աղջիկները Ողիբամայի
որդիքը ասոնք են։ Ու ծնաւ Եսաւի՝
Յեհուսը ու Յեղդոմը և Կորխը։
15 Եսաւի որդւոցմէ եղող իշխաններըը
ասոնք են։ Եսաւի անդրանկանը Եղի-
փազի որդիքը՝ Թեման իշխան, Օմար
իշխան, Սեփով իշխան, կենեզ իշխան,
16 Կորխ իշխան, Գոթամ իշխան, Ամմաղէկ
իշխան։ Եդովմի երկրին մէջ Եղիփազին
եղող իշխաններըը ասոնք են։ Ասոնք
17 Ադդայի որդիքն էին։ Ու Եսաւի որ-
դւոյն Ռագուէլի որդիքը ասոնք են.
Նահաթ իշխան, Զարա իշխան, Սամմա
իշխան, Մէզա իշխան։ Եդովմի երկրին
մէջ Ռագուէլին եղող իշխաններըը ա-
սոնք են։ Եսաւի կնկանը Բասեմաթի
18 որդիքը ասոնք էին։ Ու Եսաւի կընի-
կանը Ողիբամայի որդիքը ասոնք են։
Յեհուս իշխան, Յեղդոմ իշխան, Կորխ
իշխան։ Եսաւի կնոջմէն Անայի աղջի-
կը եղող Ողիբամայէն ծնած իշխանն-
19 րը ասոնք էին, Ասոնք են Եսաւի՝
այսինքն Եդովմի որդիներըը, և ասոնք
են անոնց իշխաններըը։
20 Ու այն երկրին մէջ բնակող Քոռեցի
Սէիրի որդիքը ասոնք են. Ղոտան և
21 Սոբադ ու Սեբեգոն և Անա Ու Դիսոն
ու Եսեր և Դիսան. ասոնք էին Քոռեց-
22 ոց իշխաններըը Սէիրի որդիքը եղովմի
երկրին մէջ։ Ու Ղոտանի որդիքը Հո-
մամ էին, ու Ղոտանի քոյ-
23 րը Թամնա։ Ու Սոբադի որդիքը ա-
սոնք են. Գաղուան ու Մանահաթ և
24 Դիբաղ, Սեփով ու Օնամ։ Ու Սեբե-
գոնի որդիքը ասոնք են. Այժա ու Ա-
նա. այս այն Անան է, որ իր հօրը Սե-
բեգոնի էշերը արածած ատենը անա-
25 պատին մէջ ջերմուկները գտաւ։ Ու
Անայի որդիքը ասոնք են. Դիսան, ու
26 Անայի աղջիկը Ողիբամա։ Ու Դիսոնի
որդիքը ասոնք են. Ամմադան ու Ես-
27 բան և Յեթրան ու Քառան։ Եսերի
որդիքը ասոնք են. Բաղդան ու Զաա-
28 ւան և Ական։ Դիսանի որդիքը ասոնք
29 են. Հուս ու Առան։ Քառեցւոց իշխան-
ներըը ասոնք են. Ղոտան իշխան, Սո-
բադ իշխան, Սեբեգոն իշխան, Անա իշ-
30 խան, Դիսոն իշխան, Եսեր իշխան, Դի-
սան իշխան. ասոնք են Քառեցւոց իշ-
խաններըը Սէիրի երկրին մէջ իրենց
իշխանութեանը [illegible] համե-
մատ։
31 Ու ասոնք են այն թագաւորներըը՝ որ
Եդովմի երկրին մէջ թագաւորեցին,
Իսրայէլի որդւոցը վրայ թագաւոր մը
32 թագաւորելէն առաջ։ Ու Բեովրի որ-
դին Բալա թագաւորեց Եդովմի մէջ։
ու անոր քաղաքին անունը Դինհաբա
33 էր։ Ու Բալա մեռաւ, ու անոր տեղը
Բոսրացի Զարայի որդին Յոբաբ թա-
34 գաւորեց։ Ու Յոբաբ մեռաւ, ու անոր
տեղը Թեմանացւոց երկրէն Հուսամ
35 թագաւորեց։ Ու Հուսամ մեռաւ, ու
անոր տեղը Բադադի որդին Ադադ թա-
գաւորեց, որ Մովաբի դաշտին մէջ
Մադիանացիներըը կոտորեց։ Ու անոր
36 քաղաքին անունը Աւիթ էր։ Ու Ադադ
մեռաւ, ու անոր տեղը Մասրեկացի
37 Սամղան թագաւորեց։ Ու Սամղան
մեռաւ, ու անոր տեղը Գետին քովը
Ռոհոբոթէն եղող Սաւուղը թագաւորեց։
38 Ու Սաւուղ մեռաւ, ու անոր տեղը Աք-
բորի որդին Բաղաղանան թագաւո-
39 րեց։ Ու Աքբորի որդին Բաղաղանան
մեռաւ, ու անոր տեղը Ադադ թագա-



որեց. և անոր քաղաքին անունը Փա-
գով էր. ու անոր կնկանը անունը Մե-
ետաբէել էր, որ Մեզահաբին աղջկանը
Մատրեթին աղջիկն էր։
10 Ու իրենց տոհմերուն ու իրենց տե-
ղերուն համեմատ իրենց անուններովը՝
Եսաւէն եղած իշխաններուն անուննե-
րըը ասոնք են. Թամնա իշխան, Գաղուա
11 իշխան, Յեթաթ իշխան, Ողիբամա իշ-
12 խան, Իլա իշխան, Փինոն իշխան, կե-
նեզ իշխան, Թեման իշխան, Մաբդար
իշխան, Մագդիել իշխան, Իրամ իշ-
13 խան։ Ասոնք են եղովմի իշխաններըը
իրենց բնակութեանը համեմատ՝ իրենց
ատաղձած տեղը երկրին մէջ։ այս է Եսաւ
Եղովմացւոց հայրը։

## Գլ. Լէ

1 Ու Յակոբ իր հօրը պանդխտացած երկ-
րին՝ Քանանու երկրին մէջ բնակեցաւ։
2 Ասոնք են Յակոբի ծնունդները. Յով-
սեփ տասնեւօթը տարեկան էր, երբոր
իր եղբայրներուն հետ հօտերը կ'արած-
էր, և պատանի բլալով՝ իր հօրը կը-
նիկներուն Բաղդայի որդիներուն հետ
ու Զելբայի որդիներուն հետ էր. և
Յովսեփ անոնց չար լուրը անոնց հօրը
3 կը բերէր։ Ու Իսրայէլ իր բոլոր որդի-
ներէն աւելի կը սիրէր Յովսեփը, քան-
զի իր ծերութեանը որդին էր անկից.
և բազմագոյն պատմուճան մը շինեց
4 անոր։ Ու անոր եղբայրները տեսնելով
որ իրենց հայրը կը սիրէ զանկից
բոլոր եղբայրներէն աւելի, ատեցին զա-
նկից ու խաղաղութեամբ չէին կրնար
5 խօսիլ անոր հետ։
Ու Յովսեփ երազ մը տեսաւ, ու իր
եղբայրներուն պատմեց. և անոնք ա-
6 ւելի ատեցին զանկից։ Ու ըսաւ ա-
նոնց, Կ'ազաչեմ ձեզի, մտիկ ըրէք այս
7 իմ տեսած երազս. Ահա մենք գաւազան
մէջ որաններ կը կապէինք, և ահա իմ
գաւազանս ուղիղ կանգնեցաւ. և
ահա ձեր գաւազանները անոր բոլորտիքը
կայնեցան, ու իմ գաւազանիս երկրպագու-
8 թիւն ըրին։ Ու անոր եղբայրները ըսին
անոր, Իրաւցընէ մեր վրայ պիտի թա-
գաւորես, կամ իրաւցընէ մեր վրայ
պիտի տիրես։ և անոր երազներուն ու
խօսքերուն համար աւելի ատեցին զա-
9 նկից։ Ու ուրիշ երազ մի ալ տեսաւ,
և զանկից իր եղբայրներուն պատմեց,
ու ըսաւ, Ահա երազ մի ալ տեսայ,
և ահա արեւը և լուսինը ու տասնու-
մէկ աստղեր ինծի երկրպագութիւն ը-
10 րին։ Ու իր հօրը ու իր եղբայրներուն
պատմեց. և իր հայրը յանդիմանեց
զանկից, և ըսաւ անոր, Ի՞նչ է այս
քու տեսած երազդ. միթէ ես ու քու
մայրդ և քու եղբայրներդ իրաւցընէ
պիտի գանք՝ ինչպէս գետինը քեզի խո-
11 նարհութիւն ընենք։ Ու եղբայրներըը
նախանձեցան անոր, բայց հայրը էջ դո-
րեց պահեց այս խօսքը։
12 Ու անոր եղբայրներըը գացին որ իրենց
հօրը հօտերը Սիւքեմի մէջ արածեն։
13 Ու Իսրայէլ ըսաւ Յովսեփի, Քու եղ-
բայրներդ Սիւքեմի մէջ չէ՞ն արածեր
[illegible]։ եկուր ես քեզ անոնց խրկե-
մ. ու անկից ըսաւ, Ահա ես հո-
14 նէ։ Ու ըսաւ անոր, Գնա՛ նայէ թէ
քու եղբայրներդ ողջ առո՛ղջ են, և
հօտերը ո՛ղջ են, ու ինծի լուր մը բեր։
այսպէս խրկեց զանկից Քեբրոնի հովի-
15 տէն։ ԵՒ նա ալ Սիւքեմ եկաւ։ Ու մարդ
մը գտաւ զանկից, որ դաշտին մէջը
ապրին անդին կը պտըտէր. և այն մար-
դը հարցուց անոր ըսելով, Ի՞նչ կը
16 փնտռես։ Ու անկից ըսաւ, Իմ եղ-
բայրներս կը փնտռեմ. կ'ազաչեմ ըսէ
17 ինծի, անոնք ո՞ր կ'արածեն։ Ու այն
մարդը ըսաւ, Ասկէ հեռացան. քանզի ըսե-
ցի որ Դոթայիմ երթանք։ կ'ըսեին։ Ու
Յովսեփ իր եղբայրներուն հետէն գը-
նաց, ու զանոնք Դոթայիմի մէջ գտաւ։
18 Ու իրը զանկից հեռուէն տեսան, դեռ
ինքը անոնց չմօտեցած, զանկից մեռ-
19 ցընելու դաւաճանութիւն ըրին։ Ու ի-
րարու ըսին, Ահա այն *երազ տեսնո-
20 ղը կու գայ։ Ուստի հիմա եկէք մեռ-
ցընենք զանկից, ու գուբի մը մէջ նե-

*ԵՔԸ. երազներու տէրը

ոնեք, ու ըսէք Թէ Զար գապան մը կերթա զանիկա. և սեռնէք Թէ անոր
31 Եղայնները ինչ պիտի ըլլան։ Եւ Ռուբէն լսածին պէս՝ անոնց ձեռքէն ազատեց
զանիկա, ըսելով, Զմեռցընենք զանի-
32 կա։ Եւ Ռուբէն ըսաւ անոնց, Արիւն մի Թափէք, Բ֊ց զանիկա այս գուբը
նետեցէք՝ որ անապատին մէջն է, և անոր ձեռք մի զարնէք։ այս Կ՚ըսէր՝ որ
կարենայ ազատել զանիկա անոնց ձեռքէն՝ իր հօրը դարձընելու համար։
23 Ու եղաւ որ Յովսէփ իր եղբայրնե-
րուն քովը եկածին պէս՝ մերկացուցին Յովսէփը իր պատմուճանէն, պատինչ
իր վրայէն բաժնեզգեստ պատմուճանին։
24 Եւ առին զանիկա ու գուբը նետեցին.
և գուբը դատարկ էր, ջուր չկար։
25 Ու նստան հաց ուտելու. ու իրենց աչ-
քերը վերցուցին և տեսան, և ահա Իսմայէլացւոց մէկ կարաւանը կու գար
Գաղաադէն, որ իրենց ուղտերը հա-
մեմներով և բալասանով և գմռռամով
բեռնաւորած՝ Եգիպտոս տանելու կ՚եր-
26 Թային։ Եւ Յուդա ըսաւ իր եղբայրնե-
րուն, Ի՞նչ օգուտ կ՚ըլլայ Թէ որ մեր
27 եղբայրը սպաննցընենք, ու անոր արիւնը
ծածկենք։ Նիկը Իսմայէլացիներուն
ծախենք զանիկա, և մեր ձեռքը անոր
չդպչի. քանզի անիկա մեր եղբայրը ե֊
մեր մարմինն է։ և անոր եղբայրները
28 համձնցան։ Եւ երբոր Մադիանացի վա-
ճառականներ կ՚անցնէին, Յովսէփը գու-
բէն քաշեցին և գուբս հանեցին էր
Իսմայէլացիներուն, և Իսմայէլացիներուն ծա-
խեցին Յովսէփը քսան կտոր արծաթի.
անոնք ալ Յովսէփը Եգիպտոս տարին։
29 Եւ Ռուբէն դեռ ի գուբը դարձաւ, և
ահա Յովսէփ գուբին մէջը չէր. ու իր
30 հանդերձները պատռեց։ Եւ դարձաւ
իր եղբայրներուն ու ըսաւ, Տղան չկայ.
և ես ո՛ր երթամ։
31 Եւ առին Յովսէփի պատմուճանը, ու
այծերէն նոխազ մը մորթեցին և պատ-
32 մուճանը արիւնը Թաթխեցին։ Եւ խրր-
կեցին բաժնեզգեստ պատմուճանը, ու ի-
րենց հօրը տարին, ու ըսին, Այս գտանք
մենք. գիտցիր հիմա Թէ այս քու որ-

33 դւոյդ պատմուճանն է՛ Թէ ոչ։ Եւ ա-
նիկա ճանչցաւ զայն, և ըսաւ, Իմ որ-
դւոյս պատմուճանն է, չար գազան մը
կերած է զանիկա. Յոսէփ անշուշտ
34 պիտաւոր եղաւ։ Եւ Յակոբ պատռեց իր
հանդերձները, և փութք հագաւ իր
մէջքին վրայ. և իր որդւոյն համար շատ
35 օրեր սուգ բռնաւ։ Ու իր բոլոր որդի-
ները ու իր բոլոր աղջիկները գինքը
մխիթարելու եկան. բայց ինքը մխի-
Թարուիլ չէր ուզեր. և ըսաւ, Ես սու-
գով պիտի իջնեմ գերեզմանը՝ իմ որ-
դւոյս քովը։ Այսպէս անոր հայրը լա-
36 ցաւ անոր համար։ Եւ Մադիանացիները
ծախեցին զանիկա Եգիպտոսի մէջ
Փարաւոնի *նեբգիներին պետին
դահճապետին։

## Գլ. Լը

1 Եւ եղաւ որ անտառները Յուդա իր եղ-
բայրներուն քովէն էյաւ ու Ոդոդամցի մէկու մը քով գնաց, որուն անու-
2 նը Իրաս էր։ Եւ Յուդա Շուա անու-
նով Քանանացիի մը աղջիկը տեսաւ,
3 և առաւ զանիկա և մտաւ անոր։ Եւ
անիկա յղացաւ ու որդի մը ծնաւ. և
4 անոր անունը Էր դրաւ։ Եւ նորէն յղա-
ցաւ ու որդի մը ծնաւ, և անոր անու-
5 նը Օնան դրաւ։ Եւ դարձեալ որդի մի
ալ ծնաւ, և անոր անունը Սելօմ դը-
բաւ. և երբոր զանիկա ծնաւ՝ Յու֊
Բիզիբի մէջ էր։
6 Եւ Յուդա իր առջինեկ տղուն Էրին
կնիկ մը առաւ, որուն անունն էր Թա-
7 մար։ Եւ Յուդայի առջինեկը Էր չար
էր Տէրոջը առջեւը. ու Տէրը մեռցուց
8 զանիկա։ Եւ Յուդա բսաւ Օնանի,
Մտիր քու եղբօրդ կնկանը, ու ապգ-
րութեան կատարած եղիր անոր,
9 և քու եղբօրդ սերունդ հանէ։ Եւ Օ-
նան գիտցաւ որ սերունդը իրենը պի-
տի չըլլար. անոր համար երբոր իր եղ-
բօրը կնկանը կը մտնէր, սերմը գետինը

*Աչքէն՝ պալատականին, չամ սենեկա-պետին։



կը Թափէր որ իր եղբօրը սերունդ չտայ։
10 Եւ այս ըրած բանը Տէրոջը առջեւն գէշ
11 երեցաւ, ու զանիկա ալ մեռցուց։ Եւ
Յուդա իր Թամար հարսին ըսաւ, Որ-
բևայրի նստէ քու հօրդ տունը՝ մինչև
որ իմ Սելօմ որդիս մեծնայ. քանզի
ըսաւ, Զըլլայ որ այս ալ իր եղբայրնե-
րուն պէս մեռնի. և Թամար գնաց ու
12 իր հօրը տունը նստաւ։
Եւ շատ օրերէն ետքը մեռաւ Շուա-
յի աղջիկը՝ Յուդայի կնիկը. և Յու-
դա մխիթարուեցաւ, և Թամնա գնաց
իր հօտերը ասպակտուր բնողներուն
ինքն ու իր բարեկամը Ոդոդամցի Ի-
13 րաս։ Եւ զուցուեցաւ Թամարի՝ ըսե-
լով, Ահա քու սկեսրայրդ դէպ ի Թամ-
նա կ՚երթայ՝ իր ոչխարները ասպակտուր
14 բնելու։ Նա ալ իր արբևարութեան
հանդերձները հանեց իր վրայէն, և քօ-
ղով մը ծածկուեցաւ ու փաթթուե-
ցաւ, և Թամնայի ճամրուն մէջ եղող
Ենայիմի մուտքը նստաւ. քանզի տե-
սաւ որ Սելօմ մեծցաւ, և ինքը անոր
15 կնկի չըլլալու չարութեան տեսաւ։
Երբոր Յու-
դա տեսաւ զանիկա, կարծեց,
16 քանզի իր երեսը ծածկեր էր։ Եւ ճամ-
բան անոր դարձաւ ու ըսաւ, Շնորհք
ըրէ, քեզի մտնեմ. քանզի չէր գիտեր
Թէ անիկա իր հարսն է։ Եւ անիկա ը-
սաւ, Ինծի մտնելու համար ի՞նչ կու
17 տաս ինծի։ Նա ալ ըսաւ, Ես ուղղ ա-
ծի ուլ մը կը խրկեմ հօտէրնէն. և ա-
նիկա ըսաւ, Գրաւ մը կու տաս մինչև
18 խրկելդ։ Եւ Յու֊ ըսաւ, Ի՞նչ գրաւ
պիտի տամ քեզի. և անիկա ըսաւ, Քու կըր-
նիքդ ու ժապաւէնդ և ձեռքիդ գա-
ւազանը։ Ես ալ տուի անոր ու
մտաւ անոր, և Թամնէ անկէ յղի մնաց։
19 Եւ երբ ու գնաց, և իր վրայէն քօ-
ղը հանեց ու իր արբևարութեան հան-
20 դերձները հագաւ։ Եւ Յուդա իր Ոդո-
դամցի բարեկամին ձեռքով ուլին
ուղարկեց, որ կնկանը ձեռքէն գրաւը
21 առնէ. բայց չգտաւ զանիկա։ Եւ այն
տեղի մարդոցը հարցուց՝ ըսելով, Ջամ-
բուն վրայ Ենայիմի մէջ եղած բազէ որ
22 է. և անոնք ըսին, Հոս բազ չկայ։ Եւ

դարձաւ Յուդայի և ըսաւ, Չգտայ
զանիկա, և այն տեղի մարդիկն ալ ըսին
23 Թէ Հոս բազ չկայ։ Եւ Յուդա ըսաւ,
Իրեն Թող ըլլայ, որ խայտառակ չըլ-
լանք. ահա ես այս ուլը խրկեցի, ու
24 դուն չգտար զանիկա։ Եւ եղաւ որ երեք
ամսէ չափ ետքը Յուդայի պատմուե-
ցաւ՝ ըսելով, Քու հարսդ Թամար պոռ-
նկեցաւ, նաև ահա պոռնկութենէն
յղի մնաց. և Յուդա ըսաւ, Հանեցէք
25 զանիկա, և պրծուի։ Երբոր զանիկա
դուրս կը հանէին, Է֊ՒԸ իր սկես-
րայրին խրկեց՝ ըսելով, Ես այս բան-
ուն տիրոջմէն յղի եմ. նաև ըսաւ,
Շնորհք ըրէ՝ գիտցիր Թէ այս կնիքն ու
Փայտուէնը և գտազարը որուն են,
26 Եւ Յուդա ճանչցաւ և ըսաւ, Անիկա
ինծմէ արդար է. քանզի զանիկա իմ
որդւոյս Սելօմին չտուի։ Ու մէյնէն
նորէն չդիպաւ զանիկա։
27 Ու եղաւ որ ծնած ատենը՝ ահա
անոր արգանդին մէջ երկու որթակ էին։
28 Եւ եղաւ որ երբ կը ծնանէր, Ձեռք
երկնցուց. և մանկաբարձը առաւ
և անոր ձեռքին վրայ կարմիր գերձան կապեց՝ ըսելով, Ասիկա այս եկաւ
29 Եւ անիկա իր ձեռքը նետեց պատմուճանը՝ ահա անոր եղբայրը եկաւ. և Հռէ֊
Բ֊ՅԸ ըսաւ, Ինչո՞ ցանկը պատռե-
ցիր. այս պատռուտքը քու վրադ ըլ-
լայ. անոր համար անոնց անունը Փա-
30 րէս գրուեցաւ։ Եւ ետքը ձեռքին վր-
րայ կարմիր գերձան ունեցող եղբայրը
եկաւ, և անոր անունը Զարա գրուե-
ցաւ։

## Գլ. Լթ

1 Ու Յովսէփը եգիպտոս իջեցուցին. և
Փարաւոնի *նեբգիներն՝ Եգիպտացի Պե-
տուփրէս *դահճապետը Իսմայէ-
զանիկա լացնիներուն ձեռքէն,
2 որոնք զանիկա հոն իջեցուցին։ Եւ Տէ-
րը Յովսէփի հետ էր, և անիկա յա-

*Աչքէն՝ պատուոյ։ †Ուր էր դիվանապահպետ

ջողակ մարդ մին էր. ու իր եդիպտա-
3 ցի ախրոջը առնին էր անվկաս. եւ անոր
տէրը տեսաւ որ Տէրը անոր հետն է.
և Թէ ինչ որ ընէր, Տէրը կը յաջողէր
4 անոր ձեռքովը. եւ Յովսէփ շնորհք
գտաւ անոր առջեւը ու ծառայէր ա-
նոր, որ իր տանը վրայ վերակացու
բրաւ զանիկա, և իր բոլոր ունեցածը
5 անոր ձեռքը յանձնեց։ Եւ եղաւ որ
զանիկա իր տանը ու իր բոլոր ունե-
ցածին վրայ վերակացու բրած ժամա-
նակին՝ Տէրը եգիպտացիին տունը օրհ-
նեց Յովսէփի համար. և Թէ տանը
մէջ և Թէ դաշտին մէջ անոր բոլոր ու-
նեցածին վրայ Տէրոջը օրհնութիւնը
6 եղաւ։ Եւ իր բոլոր ունեցածը Յովսէ-
փի ձեռքը Թողուց. ու ինչ որ կար
անոր քովը չէր գիտեր, իր կերած հա-
ցէն զատ։ Եւ Յովսէփ գեղեցիկ էր դէմ-
քով ու գեղեցիկ տեսքով։
7 Եւ եղաւ որ այս բաներէն ետքը՝ ա-
նոր տիրոջը կնիկը աչք անկաց Յովսէ-
փին վրայ, ու բաւ, Պառկի՛ր ինծի հետ։
8 Բայց անիկա չհաճեցաւ, և իր տիրոջը
կնիկոր բաւ, Ահա իմ տէրս տանը
մէջ իմ քովս ինչ որ կայ՝ չգիտեր. և
իր բոլոր ունեցածը իմ ձեռքս յանձ-
9 նեց. Այս տանը մէջ ինծմէ մեծը չկայ.
ու բան մը ինծմէ չպահեց՝ քեզմէ՛ զատ,
քանզի դուն անոր կնկին ես.
ուրեմն ես ինչպէս այս մեծ չարութիւ-
նը ընեմ, ու Աստուծոյ դէմ մեղան-
10 չեմ։ Եւ քանի որ անիկա օրէ օր Յովսէ-
փի կը զրուցէր, անիկա մտիկ չէր
ըներ անոր՝ որ հետը պառկի՝ համ հե-
11 տը ըլլայ։ Եւ եղաւ որ օր մը իր գոր-
ծին համար տունն եկաւ. և հոն տանը
12 մէջ տանը մարդոցմէն մէկը չկար։ Եւ
ինքը զրնեց անոր հանդերձէն՝ բռնե-
լով, Պառկի՛ր ինծի հետ. և անիկա իր
հանդերձը անոր ձեռքը Թողուց, ու
13 փախաւ դուրս եկաւ։ Եւ երբոր տեսաւ
որ անիկա իր հանդերձը անոր ձեռքը
14 Թողուց ու դուրս փախաւ, իր տանը
մարդիկը կանչեց, և զրուցեց անոնց՝
բսելով, Նայեցէ՛ք, մեզի Եբրայեցի մը
բերաւ՝ մեզ խայտառակ ընելու հա-
մար. անիկա ինծի եկաւ՝ ինծի հետ
պառկելու համար, և ես բարձր ձայ-
15 նով պոռացի։ Եւ երբոր լսեց իմ բարձր
ձայնով պոռալս, իր հանդերձը քովս
16 Թողուց, և փախաւ դուրս եկաւ։ Եւ
մինչև որ անոր տէրը տունն եկաւ, ա-
17 նոր հանդերձը իր քովը պահեց։ Եւ
խօսեցաւ անոր այս խօսքերուն պէս՝
բսելով, Ան եբրայեցի ծառան՝ որ դուն
մեզի բերիր, ինծ խայտառակ ընելու հա-
18 մար եկաւ ինծի։ Եւ երբոր իմ ձայնս
վերցուցի ու պոռացի, իր հանդերձը
քովս Թողուց և դուրս փախաւ։
19 Եւ եղաւ որ երբ անոր տէրը լսեց իր
կնկանը խօսքերը՝ որ զրուցեց իրեն՝
բսելով, Քու ծառադ ինծի այսպէս
ըրաւ, իր բարկութիւնը բորբոքեցաւ։
20 Եւ Յովսէփին տէրը առաւ զանիկա ու
բանտը դրաւ, այն տեղը՝ ուր որ Թա-
գաւորին բանտարկեալները կապուած
21 էին. և հոն բանտին մէջ մնաց։ Բայց
Տէրը Յովսէփին հետն էր, և ողորմու-
Թիւն ցուցուց անոր. և բանտապետին
առջեւը շնորհք գտնել տուաւ անոր,
22 Ու բանտապետը Յովսէփի ձեռքը
յանձնեց բանտին մէջ եղած բոլոր բան-
տարկեալները. և հոն ամէն գործը տես-
23 նողը անիկա էր։ Բանտապետը անոր
ձեռքը եղած մէկ բանին չէր նայեր.
քանզի Տէրը անոր հետն էր, և ա-
նոր ամէն ըրածները Տէրը կը յաջողէր։

## Գլ. Խ

1 Ու եղաւ որ այս բաներէն ետքը՝ ե-
գիպտոսի Թագաւորին մատուռակը ու
հացագործը իրենց տիրոջը եգիպտոսի
Թագաւորին դէմ յանցանք գործեցին։
2 Եւ Փարաւոն բարկացաւ իր երկու ներ-
քինիներուն՝ այսինքն մատուռակապե-
3 տին և հացագործապետին։ Եւ զանոնք
դահձապետին տանը բանտին մէջ բան-
տարկեց՝ ուր որ Յովսէփ բանտարկուած
4 էր։ Եւ դահձապետը Յովսէփի ապրու-
ցրեց անոնց համար, ու անիկա կը ծա-
ռայէր անոնց. և անոնք տասն մը բան-
որ մնացին։



5 Եւ եգիպտոսի Թագաւորին մատու-
ռակը ու հացագործը՝ որոնք բանտին մէջ կապուած էին, երկուքն ալ
մէկ գիշեր մէ յմէկ երազ տեսան, ամէն
մէկուն երազին նշանակութեանը պէս։
6 Եւ Յովսէփ առտուընդ անոնց եկաւ,
ու տեսաւ զանոնք որ խռոված էին։
7 Եւ իր տիրոջը տունը իր հետ բան-
տարկուած Փարաւոնի ներքինիներուն
հարցուց՝ բսելով, Ինչո՞ւ համար ձեր ե-
8 րեսները այսօր տխուր են այսպէս։
բսին անոր, Երազ տեսանք, ու զանիկա
մեկնող չկայ. և Յովսէփ բսաւ անոնց,
Չէ՞ որ Աստուծոյ կը վերաբերին մեկ-
նութիւնները։ ազէ պատմեցէ՛ք ինծի։
9 Եւ մատուռակապետը իր երազը պատ-
մեց Յովսէփի, և բսաւ անոր, Երա-
զիս մէջ *անասս որ՝ առջեւս որթի մը
10 կար. Եւ որթին վրայ երեք ուռ կային.
և նա բողբոջելուն պէս ծաղիկ բացաւ,
և անոր ողկոյզները խաղող հասցու-
11 ցին. Ու Փարաւոնի գաւաթը ձեռքս
էր, ու խաղողները առի և Փարաւոնի
գաւաթին մէջ Տմլեցի, ու գաւաթը
12 Փարաւոնի ձեռքը տուի։ Եւ Յովսէփ
անոր բսաւ, Պարա մեկնութիւնը այս է.
13 երեք ուռը երեք օր է. Երեք օրէն
ետքը Փարաւոն գլուխդ պիտի վերցը-
նէ, և քեզ նորէն քու պաշտօնիդ
պիտի դարձնէ. և Փարաւոնի գա-
ւաթը անոր ձեռքը պիտի տաս՝ ա-
նոր մատուռակը եղած ատենդ տուած
14 ըսութիւնը պէս։ Բայց քեզի բարիք ե-
ղած ատենդ զիս մտիդ բեր, և կա-
զաչեմ քեզ՝ ինծի բարերարութիւն ըրէ,
և զիս Փարաւոնի առջեւը յիշեցո՛ զիս
15 այս տունէն դուրս հանե։ Քանզի ինաւ-
ցուեցայ Եբրայեցւոց երկրէն.
և հոս ալ բան մը չըրի որ զիս այս գու-
բը նետեն։
16 Երբոր հացագործապետը տեսաւ որ
ազէկ մեկնութիւն տուաւ, բսաւ Յովսէ-
փի, Ես ալ երազիս մէջ տեսայ՝ որ
գլխուս վրայ երեք †ճերմակ սափոր

17 ունէի. Եւ ամենուն վրայի սափորին
մէջ հացագործի չինած Փարաւոնի ա-
մէն կերակուրներէն կար. ու թռչուն-
ները կուտէին զանոնք գլխուս վրայի
18 սափորէն։ Եւ Յովսէփ պատասխան
տուաւ ու բսաւ, Պարա մեկնութիւնը
19 այս է. Երեք սափորը երեք օր է. Ե-
րեք օրէն ետքը Փարաւոն վրայէդ պի-
տի վերցնէ քու գլուխդ, ու քեզ ծա-
ռէ մը պիտի կախէ. և թռչուններըվրայէդ քու մարմինդ պիտի ուտեն։
20 Եւ եղաւ որ երրորդ օրը Փարաւոնի
ծննդեանը օրն էր, և իր բոլոր ծառա-
յներուն խնջոյք բրաւ. և իր ծառանե-
րուն մէջը մատուռակապետին և հա-
ցագործապետին գլուխները վերցուց։
21 Եւ դարձուց մատուռակապետը իր
պաշտօնին, և անիկա գաւաթը Փարա-
22 ոնի ձեռքը տուաւ. Բայց հացագոր-
ծապետը կախել տուաւ, ինչպէս որ
23 Յովսէփ մեկներ էր անոնց։ Եւ մատու-
ռակապետը մեռաբը չյիշեաւ Յովսէ-
փը, այլ մոռցաւ զանիկա։

## Գլ. ԽԱ

1 Եւ եղաւ որ լման երկու տարիէն ետ-
քը՝ Փարաւոն երազին մէջ տեսաւ որ
2 գետին եզերքը կայներ էր։ Եւ ահա
գետէն գեղեցիկ տեսքով և պարարա
մարմնով եօթը երինջներ ելան, ու
†մարգագետնին վրայ՝ կուտուծուէին։
3 Եւ ահա անոնց ետևէն՝ գետէն ուրիշ
եօթը երինջներ ելան զգալի տեսքով
ու նիհար մարմնով, ու գ-ե երինջ-
ներուն քովը գետին եզերքը կայնեցան.
4 Եւ զգալի տեսքով ու նիհար մարմնով
երինջները կերան եօթը գեղեցիկ տես-
քով ու պարարտ երինջները։ Եւթէ
5 Փարաւոն արթնցաւ։ Եւ քնացաւ, ու
երկրորդ անգամ երազին մէջը տեսաւ
որ մէկ ծղօտի վրայ եօթը պարարտ ու
6 ազէկ հասկեր կ'ելլէին։ Եւ ահա անոնց
ետևէն եօթը նիհար ու խորշակահար
7 հասկեր կը բուսանէին. Եւ այն նիհար

*ԵԲԲ. և ահա
†կամ վանդակագործ, և յետ նաչիին

†կամ պղտտներուն մէջը

հաակերը կլլեցին հօթը պարարտ ու լեցուն հասկերը։ Եւ Փարաւոն արթնացաւ 8 ցաւ, և ահա երազ էր։ Եւ եղաւ որ առաւուանց անոր հոգին նեղացաւ, ու կանչել տուաւ Եգիպտոսի բոլոր մոգերը և այն տեղի բոլոր իմաստունները. ու Փարաւոն պատմեց անոնց իր երազները, բայց մէկը չկար որ զանոնք Փարաւոնին մեկնէ։

9 Անտառներ մատուռակապետը զրուցեց Փարաւոնի՝ ըսելով, Այսօր ես իմ յանցանքներս կը յիշեմ։ Փարաւոն բարկացաւ իր ծառաներուն, ու զիս դահճապետին տուներ բանտը դրաւ, զիս ու հացագործապետը։ Եւ ես ու անիկա մէկ գիշեր երազ տեսանք, ամէն մէկիրենէս իր երազին նշանակութեանը 12 պէս երազ տեսանք։ Եւ հոն մեզի հետ դահճապետին ծառան Եբրայեցի պատանի մը կար, և անոր պատմեցինք, և անիկա մեկնեց մեզի մեր երազները, ամէն մէկիրենուն իր երազին պէս մեկնեց։ 13 Նեց։ Ու ինչպէս որ անիկա մեզի մեկնեց, անանկ եղաւ. զիս իմ պաշտօնիս դարձուց, ու զանիկա կախեց։

14 Անտառներ Փարաւոն Յոսէփ խրկեց ու կանչեց Յովսէփը, և շուտով բանտէն հանեցին զանիկա. և մազերը եցուց ու իր հանդերձները փոխեց և Փարաւոնի 15 եկաւ։ Եւ Փարաւոն բսաւ Յովսէփին, Երազ տեսայ, ու զանիկա մեկնող մը չկայ։ և քեզի համար լսեցի որ կ'ըսեն, 16 Թէ լսած երազդ կը մեկնես։ Եւ Յովսէփ պատասխան տուաւ Փարաւոնի ու բսաւ, Չէ Թէ ես. Աստուած պիտի տայ խաղաղութեան պատասխան Փարաւոնի։

17 Եւ Փարաւոն բսաւ Յովսէփին, Երազս մէջ տեսայ որ գետին եղերքը կայի 18 ներ էի։ Եւ ահա գետէն հօթը երինջներ ելան պարարտ մսալիով ու գեղեցիկ տեսքով, և մարգագետնին վրայ 19 կ'արածէին։ Եւ ահա անոնց ետեւէն ուրիշ հօթը երինջներ ելան՝ նիհար ու խիստ զազիր տեսքով և վատ մսալիով, որ անանց պէս զազիր բնաւ չը տեսայ Եգիպտացի բոլոր երկրին մէջ, 20 Եւ նիհար ու զազիր երինջները կերան այն առջի հօթը պարարտ երինջները. 21 Եւ անոնց փորը մտնելէն հետը չէր գիտցուներ Թէ անոնք անոնց փորը մտան. այլ անոնց տեսքը առջինին 22 պէս զազիր էր։ Եւ ես արթնցայ։ Եւ ես—չ—ես երազիս մէջ տեսայ որ ահա մէկ ծղօտի վրայ հօթը լեցուն ու ազնիւ 23 հասկեր կ'ելլէին. Եւ ահա անոնց ետեւէն հօթը չոր, նիհար — խորշակահար հասկեր կը բուսանէին։ Եւ նիհար հասկերը 24 կլլեցին այն հօթը ազնիւ հասկերը։ Ու պատմեցի մոգերուն, բայց մէկը չկայ որ ինծի մեկնէ։

25 Եւ Յովսէփ բսաւ Փարաւոնի, Մէկ է Փարաւոնի երազը. Աստուած իր 26 ընելիքը յայտնեց Փարաւոնի։ Հօթը ազնիւ երինջները հօթը տարի են, և հօթը ազնիւ հասկերը հօթը տարի են. է 27 րազը մէկ է։ Եւ անոնց ետեւէն եկած հօթը նիհար ու զազիր երինջները հօթը տարի են, և հօթը պարապ — խորշակահար հասկերը հօթը տարուան 28 սով կ'ըլլան։ Փարաւոնի զրուցած խօսքս այս է. Աստուած իր ընելիքը Փարաւոնին 29 նի ցուցուեր է։ Ահա բոլոր Եգիպտոսի երկրին մէջ հօթը տարի մեծ ա- 30 ռատութիւն պիտի գայ։ Եւ անոնց ետեւէն հօթը տարի սով պիտի գայ, և Եգիպտոսի երկրին մէջ բոլոր առատութիւնը պիտի մոռցուի։ և սովը պիտի ապահէ երկիրը։ Եւ երկրին մէջ ա- 31 ռատութիւնը պիտի չգիտցուի՝ անկէ հետը գալու սովին պատճառաւը. վասն զի խիստ սաստկի պիտի ըլլայ։ Եւ 32 երազը երկու անգամ Փարաւոնի կրկնեցաւ ետեւնուն պատճառը այս է որ այս բանը Աստուծմէ հաստատուեցաւ, և Աս- 33 տուած չատ սկիտ պիտի ընէ զայն։ Ուստի հիմա թող Փարաւոն հանճարեղ ու իմաստուն մարդ մը գտնէ, ու զանիկա 34 Եգիպտոսի երկրին վրայ կեցընէ։ Թող Փարաւոն այսպէս ընէ, և երկրին վրայ գործակալներ դնէ, ու Եգիպտոսի երկրին արմտիքներուն առատութեան հօթը տարիներուն մէջ հինգէն մէկը առ- 35 նէ։ Եւ այն գալու սկիտ տարինե-



րուան բոլոր պաշարը ժողվեն, ու Փարաւոնի ձեռքին տակը ցորեն դիզեն, և քաղաքներուն մէջ պաշար պահեն։ 36 Եւ Եգիպտոսի երկրին մէջ ըլլալու հօթը տարուան սովին դէմ այս պաշարը երկրին համար պահուի, որ երկիրը սովին չկորսուի։

37 Եւ այս բանը Փարաւոնի աչքին ու անոր բոլոր ծառաներուն աչքին ազնիւ 38 երեւցաւ։ Եւ Փարաւոն բսաւ իր ծառաներուն, Կրնա՞նք գտնել մարդ մը մէկ՝ որ իր ներքին Աստուծոյ Հոգին ունի, Եւ Փարաւոն բսաւ Յովսէփին, Որովհետեւ Աստուած այս ամէնը քեզի գիտցուց, քեզի պէս հանճարեղ 40 և իմաստուն չկայ։ Դուն իմ տանս վրայ կեցիր, և իմ բոլոր ժողովուրդս քու բերանդ նային. Ես միայն աթո- 41 ռով քեզմէ մեծ ըլլամ։ Եւ Փարաւոն բսաւ Յովսէփին, Ահա քեզ Եգիպտոսի 42 բոլոր երկրին վրայ կեցուցի։ Եւ Փարաւոն իր ձեռքէն մատանին հանեց, ու Յովսէփի ձեռքը դրաւ, և անոր բեհեզէ հանդերձներ հագցուց, և անոր պարանոցը ոսկի մանեակ անցուց։ 43 Եւ զանիկա իր երկրորդ կառքը հեծցուց. և կր պոռային անոր առջեւէն, Մնաստդրուեթեան երկիր։ և Եգիպտոսի բոլոր 44 երկրին վրայ կեցուց զանիկա։ Եւ Փարաւոն բսաւ Յովսէփի, Ես Փարաւոն եմ, և առանց քեզի բնաւ մէկը իր ձեռքը կամ իր ոտքը չվերցնէ Եգիպ- 45 տոսի բոլոր երկրին մէջ։ Եւ Փարաւոն Յովսէփի անունը *Փառնիքոմոփանէք դրաւ, և †Ասենէթ փղոսքին Պետափրէայ քուրմին աղջիկը Ասանէթին անոր կնոկ ըլլալու տուաւ։ ու Յովսէփ Եգիպտոսի երկիրը պարեւրէս եկաւ։

46 Եւ Յովսէփ Եգիպտոսի Փարաւոն թագաւորին առջեւը եւտն տասներկուսն տարեկան էր։ Եւ Յովսէփ Փարաւոնի աջքէն ելաւ, ու Եգիպտոսի բոլոր երկիրը պտրտեցաւ։ 47 Եւ երբ Յակոբ իմացաւ Եգիպտոսի մէջ պաշար ըլլալը, Յակոբ բսաւ իր որդիներուն, Ինչո՞ւ երեսնուս կը նայիք։ Ես

48 չատ արթիւնք առուս։ Եւ Եգիպտոսի երկրին մէջ եղած հօթը տարիներուն բոլոր պաշարը ժողվեց, և քաղաքներուն մէջ պաշար պահեց. տակն քաղաքին բոլորտիքը եղած արտերուն պաշարը նոյն քաղաքին մէջ դրաւ։ 49 չարը նոյն †ագռաչին մէջ դրաւ։ Եւ Յովսէփ ծովու աւազին չափ խիստ չատ ցորեն դիզեց. այնպէս որ հաշիւ չգտաւ նոյն համար չափելը դադրեց։

50 Եւ սովին տարիները գալէն առաջ՝ Յովսէփի երկու որդի ծնաւ, որ Ասենէթ քաղաքին Պետափրէայ քուրմին աղջիկը 51 Ասանէթ ծնաւ անոր։ Եւ Յովսէփ առջինին անունը *Մանասէ դրաւ. քանզի ըսաւ, Աստուած ինծի մոռցուցիր իմ բոլոր վիշտերս, և իմ հօրս բոլոր տուն։ 52 Նոյ։ Եւ երկրորդին անունը †Եփրեմ դրաւ. քանզի ըսաւ, Աստուած իմ տառապանացս երկրին մէջ ինծի պտուղ տուներ։

53 Եւ Եգիպտոսի երկրին մէջ եղած ա- 54 ռատութեան հօթը տարին անցաւ։ Եւ Յովսէփի բսածին պէս սովին հօթը տարին գալ սկսաւ։ և բոլոր երկիրներուն մէջ սով եղաւ, բայց Եգիպտոսի 55 բոլոր երկրին մէջ հաց կար։ Եւ երբոր Եգիպտոսի բոլոր երկիրը սովի եցաւ, ժողովուրդը հացի համար Փարաւոնի աղաչակեց. և Փարաւոն բսաւ բոլոր Եգիպտացիներուն, Յովսէփի գացէք. 56 ինչ որ ձեզի բսէ, անոր բրէք։ Եւ երկրին բոլոր երեսին վրայ սով եղաւ. և Յովսէփ բացաւ բոլոր չտեսնուածները, և Եգիպտացիներուն պաշար ծախեց. և սովը աստակացաւ Եգիպ- 57 տոսի երկրին մէջ։ Եւ բոլոր աշխարհն Եգիպտոս հաւ գնային Յովսէփին պաշար ծախու առնելու. քանզի սովն երկրի մէջ սաստկացաւ։

## Գլ. ԽԲ

1 Եւ երբ Յակոբ լսնացաւ Եգիպտոսի մէջ պաշար ըլլալը, Յակոբ բսաւ իր որդիներուն, Ինչո՞ւ իրարու կը նայիք։ Ես

*Ասենէթ՝ Երկրին փղկիկը։
†ԵՔԲ։ Օն ⁺ագռաչին։

*Ասենէթ՝ մոռցնող։
†Ասենէթ՝ պտղաբեր։

բաւ, Ահա լսեցի որ Եգիպտոսի մէջ պաշար կայ, հոն իջէք՝ ու անկէ մեզի համար ծախուս առէք, որ ողջ մնանք
3 և չմեռնինք։ Ու Յովսեփի տասը եղբայրները իջան՝ Եգիպտոսէն ցորեն ծախու առնելու։ Բայց Յակոբ Յովսեփի եղբայրը Բենիամինը անոր եղբայրները հետ չղրկեց. քանի որ ըսաւ,
5 Զըլայ որ փորձանք մը պատահի անոր։ Ու Իսրայէլի որդիները հոն գացողներուն հետ պաշար ծախու առնելու եկան. քանի որ Քանանու երկրին մէջ
6 սով կար։ Ու Յովսեփ այն երկրին իշխանն էր. Ե՛ն ինքը երկրին բոլոր ժողովուրդին պաշար կը ծախէր։ Ու Յովսեփի եղբայրները եկան, ու իրենց երեսները մինչև գետինը խոնարհեցուցին
7 երկրին անոր։ Ու Յովսէփ իր եղբայրները տեսածին պէս ճանչցաւ անոնք, բայց ինքզինքը անոնց չճանչցուց, ու անոնց հետ խստութեամբ խօսեցաւ, և անոնց ըսաւ, Ուսկից եկաք. և անոնք ըսին, Քանանու երկրէն կեցարան ծախու առնելու եկանք։
8 Ու Յովսէփ իր եղբայրները ճանչցաւ, բայց անոնք զինքը չճանչցան։
9 Ու Յովսէփ անոնց վրայով իր տեսած երազները միտքը բերաւ, և ըսաւ անոնց, Դուք լրտեսներ էք. երկրին *ապաւութիւնը տեսնելու
10 եկած էք։ Ու ըսին անոր, Չէ, տէր իմ, այլ քու ծառաներդ կերակուր ծա-
11 խու առնելու եկանք։ Մենք ամենքս մէկ մարդու մը որդիները ենք, մենք չեստակ խոստովան ենք. ծառաներդ լրտեսներ չեն։ Ու անոնք ըսին անոնց,
12 Չէ, այլ երկրին ապաւութիւնը տեսնելու եկած էք։ Ու անոնք ըսին, Մենք
13 տասներկու եղբայրներ ենք. և ահա ամենէն պզտիկը այսօր մեր հօրը քովն է, և միւսը չկայ։ Ու Յովսէփ ըսաւ անոնց, Այս է որ ձեզի պրպտցնել ըսի,
15 ըսի, Թէ դուք լրտեսներ էք։ Այսով պիտի փորձուիք. Փարաւոնի կենացը
16 Հասնի՝ դուք տակէ պիտի չելլէք, թէ որ ձեր պզտիկ եղբայրը հոս չգայ։ Ձեզմէ մէկը ձեր եղբայրը բերելու խրկեցէք, և դուք բանտը դրուիք, որ ձեր խօսքերը փորձուին, թէ արդեօք ձեր մէջը ճշմարտութիւն կայ. և թէ չէ, փարաւոնի կենացը հասնի՝ դուք
17 լրտեսներ էք։ Ու երեք օր բանտը դրաւ զանոնք։
18 Ու երրորդ օրը Յովսէփ ըսաւ անոնց, Այսպէս ըրէք որ ողջ մնաք. Աստուծմէ կը վախնամ, թէ
19 ես։ Եթէ ճշմարիտ էք, ձեր եղբայրներէն մէկը ձեր բանտարկուած տանը մէջ արդիլուի. և դուք գացէք, ձեր տները անօթութեան համար պարապ տա-
20 րէք։ Ու ձեր պզտիկ եղբայրը ինծի բերէք, որ ձեր խօսքերը ճշմարիտ ելլեն,
21 ու չմեռնիք։ Ու այնպէս ըրին։ Ու իրարու ըսին, Իրաւցնէ մեր եղբօրը վրայով յանցաւոր ենք. վասն զի մենք տեսանք անոր հոգիին նեղութիւնը՝ երբոր մեզի աղաչեց, ու մտիկ չըրինք. վասն որով այս նեղութիւնը
22 վրանիս եկաւ։ Ու Ռուբէն պատասխան տուաւ անոնց՝ ըսելով, Ես ձեզի չըսի՞ ըսելով Թէ Տղուն դէմ մեղք մի գործէք. ու դուք մտիկ չըրիք. և ահա հիմա անոր արիւնը դարձ կը պահան-
23 ջուի։ Ու անոնք չէին գիտեր որ Յովսէփ կը հասկնար, քանզի թարգմանով
24 հետ կը խօսէր իրենց հետ։ Ու անոնցմէ դարձաւ ու լացաւ. և նորէն անոնց գարձաւ, և խօսեցաւ անոնց հետ. և անոնցմէ Շմաւոնը առաւ, և անոնց աչքին առջեւ կապեց զանիկա։
25 Ապա Յովսէփ հրամայեց որ անոնց անօթները ցորենով լեցնեն, ու ամէն մէկուն տակը իր փուքսին մէջը դնեն, և անոնց ճամբուն պաշար տան։
26 Ու այսպէս ըրաւ անոնց։ Ու անոնք իրենց էշերուն վրայ բեռցուցին ցորենը,
27 գնին, ու անկէ գացին։ Ու անոնցմէ մէկը իջևանին մէջ իր էշուն կեր տալու համար իր փուքսը բացած պէտ՝ իր տակը տեսաւ, որ ահա իր փուքսին
28 բերանն էր։ Ու իր եղբայրներուն ըսաւ,

*Եբր. մերկութիւնը



իմ տասը հոս տրուեցաւ, և ահա հոս իմ փուքսիս մէջն է. ու անոնց սիրտը խառնվեցաւ, և վախնալով իրարու բսին, Ի՞նչ է սա որ Աստուած մեզի բրաւ։
29 Ու եկան Քանանու երկիրը իրենց հօրը Յակոբի, և բոլոր իրենց գլխուն եկածները պատմեցին անոր՝ ըսելով,
30 Այն երկրին տէրն եղող մարդը մեզի խոտութեամբ խօսեցաւ, և մեզ երկրը լրտեսներու տեղ դրաւ։ Ու ըսինք անոր, Մենք չհամակ հաւտիկ ենք,
31 լրտեսներ չենք. Մենք մեր հօրը որդիքը՝ տասներկու եղբայրներ ենք. մէկը չկայ, և ահեղն պզտիկը Քանանու երկրին մէջ մեր հօրը քովն է այսօր։
32 Ու այն երկրին տէրն եղող մարդը ըսաւ մեզի, Ձեր շիտակ հաւտիկ ըլլալը տակէ գիտամ. ձեր եղբայրներուն մէկը իմ քովս ձգեցէք, և ձեր ընտանեացը սովուն համար տարէք և գացէք։
33 Ու ձեր պզտիկ եղբայրը ինծի բերէք, որ ձեր խօսքերը շիտակ ելլեն, ու չմեռնիք։ Ու ես ալ ձեր եղբայրը ձեզի կը տամ, և ձեր երկրին մէջ առուտուր կրնայ ընել։
34 Ու ձեր պզտիկ եղբայրը ինծի բերէք, որ գիտամ Թէ դուք լրտեսներ չէք, այլ շիտակ հաւտիկ էք. այնպես ձեր եղբայրը ձեզի կատամ, և ձեր երկրին մէջ առուտուր կրնաք։
35 Ու եղաւ որ իրենց փուքսերը պարպած ատեննին, ահա ամէն մէկուն տոպրակին ծրարը իր փուքսին մէջն էր. և իրենք ու իրենց հայրն ալ տասկին ծրարները տեսածնուն պէս՝ վախցան։ Ու անոնց հայրը Յակոբ ըսաւ անոնց, Զիս անդրդիմ կ՚ընէք. Յովսէփը չկայ, Շմաւոնը չկայ, Բենիամինն ալ պիտի առնէք. ամենքն ալ ինծի դէմ եկան։
37 Ռուբէն խօսեցաւ իր հօրը ու ըսաւ, Թէ որ ես զանիկա քեզի չբերեմ, իմ երկու որդիներս մեռցուր. զանիկա իմ ձեռքս յանձնէ, և ես քեզի նոր կը բերեմ զանիկա։
38 Բայց Յակոբ ըսաւ, Իմ որդիս ձեզի հետ չիջնէ. քանզի անոր եղբայրը մեռած է, ու անիկա մինակ մնաց. և Թէ որ ձեր երթալու ճամբան մէջ անոր փորձանք մը պատահելու ըլլայ, իմ ձերմակ մազերս սրտմտութեանով գերեզմանը պիտի իջեցնէք։

Գլ. ԽԳ.

1 Ու սովը ատակացաւ երկրին մէջ։ (2)Ու եղաւ որ երբ Եգիպտոսէն բերած պաշարնին կերան հատցուցին, հայրերնին բսաւ անոնց, Դարձ ըրէ՛ք նորէն՝ մեզի փչ
3 մը ուտելիք ծախու առէք։ Ու Յուդա պատասխանց անոր՝ ըսելով, Այն մարդը մեզի հաստատ վկայութեամբ խօսելով բսաւ, Թէ որ ձեր եղբայրը հետերնիդ չըլլայ, իմ երեսս պիտի չտեսնէք։ Թէ
4 որ մեր եղբայրը մեզի հետ խրկես, կ՚իջնենք և քեզի ուտելիք ծախու կառնենք։ Բայց Թէ որ չխրկես, չենք իջներ. քանզի այն մարդը բսաւ մեզի, Թէ որ ձեր եղբայրը հետերնիդ չըլլայ,
6 իմ երեսս պիտի չտեսնէք։ Ու Իսրայէլ բսաւ, Ինչո՞ւ համար չարութիւն բրիւ ինծի՝ այն մարդուն խնայընելով Թէ ու-
7 րիշ եղբայր ունիք։ Ու անոնք ըսին, Այն մարդը մեզի համար ու մեր ազգականներուն համար ճշդիւ հարցուց՝ բսելով, Ձեր հայրը տակաւին ո՞ղջ է, ուրիշ եղբայր ունի՞ք։ և մենք այս խօսքերուն համեմատ պատասխան տուինք անոր. արդեօք մենք կրնայի՞նք գիտնալ որ անիկա պիտի բսէ Թէ Ձեր եղ-
8 բայրը իջեցուցէք։ Ու Յուդա իր հօր Իսրայէլի բսաւ, Տղան ինծի հետ խրրկէ, և ելլենք երթանք, որ ողջ մնանք ու չմեռնինք, Թէ մենք՝ Թէ դուն
9 Թէ մեր ընտանիքներնիս։ Ես երաշխաւոր կ՚ըլլամ անոր համար. զանիկա իմ ձեռքս պահանջէ. Թէ որ զանիկա քեզի չբերեմ, և քու առջեւդ չկայնեցնեմ, յաւիտեան քեզի յանցաւոր ըլ-
10 լամ։ Քանզի եթէ չյապաղեինք, մինչև հիմա երկրորդ անգամ դարձած կ՚ըլ-
11 լայինք։ Ու անոնց հայրը Իսրայէլ բսաւ անոնց, Եթէ այդպէս է, հիմա այս ըրէք. Ձեր աման ներուն մէջը երկրին ամենէն ազնիւ պատուհներէն առէք, և մարդուն բնծայ տարէք, փիչ մը բալասան և փիչ մը մեղր, համեմներ ու դմուռս, փըս-
12 տուկ ու նուշ. Ու ձեռքերնիդ կրկնապատիկ սասկ առէք, և ձեր փուքսերուն բերանը եղած սասկը՝ որ ես

բերուեցաւ, Ձեռքերնիդ ——— նա
մարէկ. գուցէ սխալմունք եղած էր.
13 Եղբայրնիդ ալ առէք, և երկեք նորէն
14 այն մարդուն գացէք. Եւ Ամենակարող
Աստուած ձեզի չնորհք գտնել տայ ան
մարդուն առջեւը, որ ձեր մէւս եղ-
բայրը ու Բենիամինը Թող տայ ձեզի.
և ես ալ որ անզաւակ մնալու եմ, Թող
անզաւակ մնամ.
15 Եւ մարդիկը առին այս ընծաները,
և ձեռքերնին կրկնապատիկ առակ ա-
ւաին՝ նաև Բենիամինը, և երթ եղիպ-
տոս իջան, և Յովսեփի առջեւը կայնե-
16 ցան։ Եւ երբ Յովսէփ Բենիամինը անոնց
հետ տեսաւ, իր տանը վերակացուին
ըսաւ, Տուն տար այս մարդիկը, և *պա-
րարտ կենդանիներ՝ մորթէ, և պատ-
րաստէ. քանզի այս մարդիկը կէսօ-
17 րին ինծի հետ պիտի ճաշեն։ Եւ այն մար-
դը Յովսեփի ըսածին պէս ըրաւ. և
այն մարդը Յովսեփի տունը տարաւ
18 մարդիկը։ Եւ մարդիկը վախցան Յով-
սեփի տունը տարուելնուն համար, և
ըսին, Առջի անգամին մեր քսակներուն
մէջը դարձած առակին համար կը տա-
րուինք, որ վրանիս յարձակի, և մեր
վրայ իյնայ, մեզ ծառաներ առնէ՝ ու
19 մեր էշերը։ Եւ Յովսեփի տանը վերա-
կացուն եղող մարդուն մտեցան, և
20 անոր դրանը մէջ խօսեցան անոր, և
ըսին, Ո՜հ, աչեր, ասկէ առաջ կերթայ-ը
21 ծախու առնելու իջանք։ Եւ եղաւ որ
երբ իջևանը եկանք, և մեր քսակները
բացինք, ահա ամէն մէկիկնուս առակը
իր քսակին բերանն էր, մեր առակը
լման կշիռքովը. և զանիկա մեր ձեռ-
22 քովը նա բերինք։ Եւ ձեռքերնուս մէջ
ուրիշ առակ բերինք՝ կերթայ-ը ծախու
առնելու համար. չենք գիտեր Թէ ով
դրաւ մեր առակը մեր քսակներուն մէջ։
23 Եւ անիկա ըսաւ, Խաղաղութիւն ձեզի,
մի վախնաք. ձեր Աստուածը և ձեր
հօրը Աստուածը ձեզի գանձ տուաւ ձեր
քսակներուն մէջ. ես առի ձեր առա-

*ԵԲԸ. մարթելիք
†ԵԲԸ. ձեր առակը ինծի եկաւ։

կրը։ Եւ Շմաւոնը դուրս հանեց անոնց։
24 Եւ այն մարդը Յովսեփի տունը տա-
րաւ մարդիկը, և չոր տուաւ անոնց,
և իրենց ոտքերը լուացին, և անոնց
էշերուն կեր տուաւ։ Եւ անոնք ընծա-
ները պատրաստեցին՝ մինչև Յովսեփի
կէսօրան գալը. քանզի խմացան որ
իրենք հոն հաց պիտի ուտեն։ Եւ երբ
Յովսէփ տուն եկաւ, իրենց ձեռքը
եղած ընծաները անոր մատուցին տա-
նը մէջ, և մինչև գետինը չոքեցան անոր
27 խոնարհութիւն ըրին։ Եւ անոնց ողջ-
յութիւնը հարցուց՝ ըսելով, Ա՞ր ձեր
ծեր հայրը՝ որուն վրայով խօսեցաք
28 Էնէ, ապրի է. ողջ է։ Եւ ըսին, Քու ծառայ մեր հայրը ապրի է,
տակաւին ողջ է։ և ծռեցան ու խո-
29 նարհութիւն ըրին։ Եւ իր աչքերը վերց-
ուց, և իր մօրը որդին՝ իր եղբայրը
Բենիամինը տեսաւ, և ըսաւ, Այդ է
ձեր պզտիկ եղբայրը, որուն վրայով
խօսեցաք ինծի։ և ըսաւ Բենիամինի,
Աստուած ողորմի քեզի, որդեակ իմ։
30 Եւ Յովսէփ չդադրեցաւ երկար. քանզի իր
ողիքը գալարեցան իր եղբօրը վրայ, և
լալու փէշ կը փնտռէր. և ներքին սեն-
31 եակը մտաւ ու հոն լացաւ։ Եւ լուաց
իր երեսը ու դուրս ելաւ. և զսպեց ինք-
32 զինքը ու ըսաւ, Հաց բերէք։ Եւ իրեն
զատ, ու անոնց զատ, և իրեն հետ ու-
տող Եգիպտացիներուն զատ դրին.
քանզի Եգիպտացիները երբայեցւոց հետ
հաց չեն կրնար ուտել, քանզի ն-
33 գիպտացիներուն զզուելի էր։ Եւ նրա-
տուն անոր առջեւը, ընդրանիքը իր ան-
դրանիկութեանը պէս, և պզտիկը իր
պզտիկութեանը պէս. և մարդիկը ի-
34 րարու նայելով կը զարմանային։ Եւ ա-
նիկա իր առջեւէն բաժիններ խրկից ա-
նոնց. բայց Բենիամինի բաժինը միւս-
ներուն բաժինէն հինգ անգամ աւե-
լի էր. և խմկին ու անոր հետ մկի-
տանը զուարթացան։

## ԳԼ. ԽԴ

1 Եւ իր տանը վերակացուին հրաման



ըրաւ, ըսելով, Այս մարդոցը քսակները
ամանով կրցածնուն չափ ուտելիք լե-
ցուր, և ամէն մէկուն ասակը իր քսակ-
2 ին բերանը դիր։ Եւ —ինէն պզտիկին
քսակին բերանը իմ գաւաթս՝ արծաթ
գաւաթը ու իր պաշարին ասակը դիր։
Եւ անիկա Յովսեփի ըսած խօսքին պէս
ըրաւ։
3 Եւ առաւօտուն լուսցածին պէս մարդ-
իկը խրկուեցան, իրենք ու իրենց էշե-
4 րը։ Անոնք քաղաքէն ելլելով դեռ չը
հեռացած, Յովսէփ իր տանը վերակա-
ցուին ըսաւ, Ելիր՝ այն մարդոցը հասիր
տպագ, և անոնց հասնիս ու ըսէ անոնց,
Ինչո՞ւ բարիին փոխարէն չար հատու-
5 ցիք. Այս այն չէ՞ որուն ինչէն իմ տէրս
կը խմի, և անով կը հմայէ. այսպէս ը-
6 նելով՝ գէշութիւն ըրիք։ Եւ անիկա հա-
սաւ անոնց, և ըսաւ անոնց այս նոյն
7 խօսքերը։ Եւ ըսին անոր, Ինչո՞ւ իմ
տէրս այսպիսի խօսքեր կը զրուցէ. քան
լիցի որ քու ծառաներդ այսպէս բան
8 մը ընեն։ Ահա մեր քսակներուն բերա-
նը գտած ասակինս գանանոտ երկրէն
քեզի հետ բերինք. ուրեմն ինչպէս
քու տիրոջդ տունէն արծաթ կամ ոս-
9 կի պիտի գողնանք. Քու ծառաներուդ
որուն քովը որ գտնուի, Թող անիկա
մեռնի, և մենք ալ իմ տիրոջս ծա-
10 ռաներ ըլլանք։ Եւ անիկա ըսաւ, Հի-
մա ճիշդ ձեր ըսածին պէս Թող ըլլայ.
որուն քովը որ գտնուի, նա ինծի ծա-
ռայ ըլլայ, և դուք անպարտ ըլլաք։
11 Ուստի իւրաքանչիւրն արագընդ իր
քսակը գետինը իջեցուց, և իւրաքան-
12 չիւրն իր քսակը բացաւ։ Եւ անիկա
մեծէն սկսեց փնտռել, և մինչև պզտիկ
նայեցաւ. և գաւաթը Բենիամինի
քսակին մէջ գտնուեցաւ։
13 Անոնք իրենց հանդերձները պատռեցին. և իւրաքանչիւրն իր էշը բեռ-
14 ցուց ու քաղաքը դարձան։ Եւ Յուդա
ու անոր եղբայրները Յովսեփի տունը
եկան, և անիկա տակաւին հոն էր, և
15 անոր առջեւը գետինը ինկան։ Եւ Յով-
սեփ ըսաւ անոնց, Այս ի՞նչ բան է որ
ըրիք. չէ՞ք գիտեր որ ինծի պէս մարդ

16 մը անպատճառ կը հմայէ։ Եւ Յուդա ըսաւ,
Իմ տիրոջս ի՞նչ բանը, ի՞նչ խօսինք,
կամ ի՞նչպէս արդարացնինք ինք-
զինքնիս. Աստուած քու ծառաներուդ
յանցանքը բռնեց. ահա մենք մեր տի-
րոջը ծառաներ ենք, Թէ մենք Թէ ա-
նիկա՝ որուն քովը գաւաթը գտնուե-
17 ցաւ։ Եւ անիկա ըսաւ, Քան լիցի որ ես
այդպէս ընեմ. այլ այն մարդը՝ որուն
քովը գաւաթը գտնուեցաւ, անիկա ին-
ծի ծառայ ըլլայ, և դուք խաղաղու-
թեամբ ձեր հօրը երթաք։
18 Անառնեը Յուդա մտեցաւ անոր ու
ըսաւ, Ո՜հ, աչեր իմ, չնորհք ըրէ՝ Թող
քու ծառադ խօսք մը խօսի իմ տիրո-
ջս ականջներուն, և ծառայիդ վրայ
քու բարկութիւնդ չբորբոքի. քանզի
19 դուն փարաւոնի պէս ես։ Իմ տէրս
իր ծառաներուն հարցուց՝ ըսելով,
20 Հայր կամ եղբայր ունիք։ Եւ մենք ը-
սինք մեր տիրոջը, Թէ ծեր հայր մը
ունինք, և Թէ —ինէ՝ էր ծերութեան
—ինէ՝ պզտիկ որդի մը ——ն, ու
անոր եղբայրը մեռած է, և միայն ա-
նիկա իր մօրմէն մնաց, և անոր հայրը
21 կը սիրէ զանիկա։ Եւ դուն ծառաներուդ
ըսիր, Ինծի իջեցուցէք զանիկա, որ
22 *տեսնեմ։ Եւ իմ տիրոջս ըսինք, Տղան
իր հայրը չկրնար ձգել. քանզի Թէ որ
իր հայրը ձգելու ըլլայ, անիկա պիտի
23 մեռնի։ Եւ դուն ծառաներուդ ըսիր,
Թէ որ ձեր պզտիկ եղբայրը ձեզի հետ
չիջնէ, իմ երեսս այլ ևս պիտի չտես-
24 նէք։ Եւ երբոր քու ծառայիդ իմ հօրս
եկանք, իմ տիրոջս խօսքերը պատմե-
25 ցինք անոր։ Եւ մեր հայրը ըսաւ, Գա-
ցէք նորէն, և մեզի քիչ մը կերակուր
26 ծախու առէք։ Եւ մենք ըսինք, Չենք
կրնար իջնել. Թէ որ մեր պզտիկ եղ-
բայրը մեր հետը ըլլայ, անառնեը կ'իջ-
նենք. քանզի պիտի չկրնանք տես-
նել այն մարդուն երեսը, Թէ որ մեր
27 պզտիկ եղբայրը մեր հետը չըլլայ։ Եւ
քու ծառադ իմ հայրս ըսաւ մեզի, Դուք
գիտէք որ իմ կինիկս երկու *որդի ծը-

*ԵԲԸ. աչքս անոր վրայ դնեմ։

28 նաև ինձի. Եւ մեկը փոխէս ելաւ, ու
ես ըսի, Անշուշտ ջարդած ես զիս։
29 է, և մինչև հիմա դինքը չտեսայ։ Եւ
Քէ որ տասիկա ալ փոխէս առնէիք, և
անոր փորձանք մը պատահէ, իմ ձեր-
մակ մազերս արտմուքիւնով գերեզ-
30 մանը պիտի իջեցնէիք։ Ուստի հիմա՝
երբոր քու ծառայիդ իմ հօրս երկիրը
գայ, ոտան մեր հետը չըլլայ, անոր հո-
գին տղուն հոգւոյն հետ կապուած ըլ-
31 լալով, երբոր տեսնի Քէ տղան չէ հա-
սած, պիտի մեռնի. և ծառանդիդ քու
ծառայիդ մեր հօրը մեզրմակ մազերը
արտմուքիւնով գերեզմանը պիտի ի-
32 ջեցնենք։ Վասն զի ծառադ տղուն
համար իմ հօրս երաշխաւոր եղայ ըս-
ելով, Քէ որ ես զանիկա քեզի չբե-
րեմ, իմ հօրս յանիտեան յանցաւոր
33 ըլլամ։ Ուստի հիմա կ՚ապաշեմ քեզի,
տղուն տեղը ծառադ իմ ախոյեան ծա-
ռայ մնայ, և տղան իր եղբայրներուն
34 հետ երթէ. Քանզի Քէ որ տղան իմ հե-
ռացս չըլլայ, ի՞նչպէս երթէմ իմ հօրս.
չըլլայ որ իմ հօրս գալու փորձանքը
տեսնեմ։

## Գլ. Խե

1 Եւ Յովսէփ չկրցաւ զսկիզ ընդդիմեալ
բոլոր իր քովը կացողներուն առջևը,
և պոռաց, Քովէս գուրս հանեցէք բո-
լոր մարդիկը. և երբ Յովսէփ ինքզինք-
ը իր եղբայրներուն ճանչցուց, քովը
2 մարդ մը չկեցաւ։ Եւ ձայնը վերցնե-
լով լացաւ. և Եգիպտացիք լսեցին, և
3 Փարաւոնի տունն ալ լսեց։ Եւ Յով-
սէփ ըսաւ իր եղբայրներուն, Ես Յով-
սէփն եմ. իմ հայրս տակաւին ողջ է.
ու եղբայրները չկրնար պատաս-
խանատու անոր, ինչու որ անոր առջև-
4 ը ապշած մնացին։ Եւ Յովսէփ ըսաւ
իր եղբայրներուն, Ինձի մօտ եկէք. ա-
նոնք ալ մօտ եկան. և ըսաւ, Ես ձեր
եղբայրը Յովսէփն եմ, որ Եգիպտոս
5 թողուցիք ծախելնիդ։ Ուստի հիմայ
զիս հոս ծախելնուդ համար մի վշաս-
նաք, և ձեզի ծանր չերևնայ. վասն
զի Աստուած իրկեց զիս ձեր առջևէն
6 կեանք պահելու համար։ Քանզի երկ-
րիս վրայ սովին երկրորդ տարին է այս.
և տակաւին հինգ տարի կայ որ ոչ վա-
7 ռելացան, ոչ ալ հունձք պիտի ըլլայ։
Եւ Աստուած զիս ձեր առջևէն իրկեց՝
որ երկրի վրայ ձեզի սերունդ պահէ,
և մեծ ազատութիւնով ձեզ ապրեցը-
8 նէ։ Եւ հիմա զիս հոս իրկողը դուք
չէք, այլ Աստուած է. և զիս փա-
րաւոնի հայր՝ և իր բոլոր տանը տէր՝
ու եգիպտոսի բոլոր երկրին իշխան դր-
9 եալ։ Շուտով իմ հօրս երթէք, և ըսէք
անոր, Այսպէս կ՚ըսէ քու Յովսէփ որ-
գիդ, Աստուած բոլոր եգիպտոսի տէր
10 ըրաւ զիս. չուշանաս՝ ինծի իջնես. Եւ
Գեսեմի երկրին մէջ պիտի բնակիս, որ
ինծի մօտ ըլլաս, դուն ու քու որդիդ՝
և քու որդւոցդ որդիքդ և ոչխարդ
ու արջառներդ և քու բոլոր ունե-
11 ցածդ. Եւ հոն քեզ պիտի սնուցանեմ.
քանզի տակաւին հինգ տարի սով
կայ. չըլլայ որ դուն ու քու տունդ և
քու բոլոր ունեցածդ չբաւարարիս ին-
12 քզիդ. Եւ ահա ձեր աչքերը ու իմ
եղբօրս բնիամինի աչքերը կը տես-
նեն՝ որ ձեզի խօսողը իմ բերանս է։
13 Եւ եգիպտոսի մէջ իմ ունեցած բոլոր
փառքս, և ձեր բոլոր տեսածը պատ-
մեցէք իմ հօրս. և շուտով իմ հայրս
14 հոս իջեցուցէք։ Եւ իր եղբօրը բնիամ-
ինի պարանոցին վրայ ինկաւ ու լաց-
ար. բնիամինն ալ անոր պարանո-
15 ցին վրայ լացաւ։ Եւ իր բոլոր եղբայր-
ները համբուրեց, և անոնց վրայ լա-
ցաւ. և այնուհետև իր եղբայրները խ-
16 րին խօսեցան։
Եւ այս լուրը փարաւոնի տանը մէջ
լսուեցաւ Քէ Յովսէփի եղբայրները ե-
կեր են. և փարաւոնի ու անոր ծա-
17 ռաներուն հաճելի եղաւ։ Եւ փարաւոն
րսաւ Յովսէփի, Քու եղբայրներուդ ը-
սէ, Այս ըրէք. ձեր անասուններդ բեռ-
ցուցէք, և Քանաանու երկիրը դացէք.
18 Եւ ձեր հայրը ու ձեր ընտանիքներդ
առէք, ու ինծի եկէք. և Եգիպտոսի
երկրին ոսկի ջէնջը ձեզի տամ, և եր-



19 կրին պարարտութիւնն ուտէք։ Եւ քե-
զի հրաման եղաւ. այս ըրէք. Ձեր որ-
դւոցներուն համար ու ձեր կիներուն
համար եգիպտոսի երկրէն կառքեր ա-
ռէք ձեզի, և ձեր հայրը բերէք ու ե-
20 կէք։ Եւ ձեր կարասիքին մի նայիք.
քանզի բոլոր եգիպտոսի երկրին բա-
րիքը ձերն է։
21 Եւ իսրայէլի որդիները այնպէս ը-
րին. և Յովսէփ անոնց կառքեր ատաւ
փարաւոնի խօսքին պէս, և ճամբու
22 համար պարար առաւ անոնց։ Անոնց
ամէն մէկուն զատ զատ փոխելու հան-
դերձներ տուաւ, բայց Բնիամինի ե-
րեք հարիւր կտոր արծաթ ու հինգ ձեռք
23 փոխելու հանդերձ տուաւ։ Եւ իր հօ-
րը ասոր պէս բաներ իրկեց. տասը էշ
եգիպտոսի բարիքներով բեռնած՝ և
տասը էգ էշ ցորենով ու հացով և ա-
ռաքելիքներով բեռնած՝ իր հօրը ճամ-
24 բորդութեանը համար։ Այսպէս իր եղ-
բայրները իրկեց, և գացին. և ըսաւ
անոնց, Ճամբուն մէջ չխռովիք։
25 Եւ անոնք եգիպտոսէն ելան, և գէպ
ի Քանաան երկիրը իրենց հօրը Յա-
26 կոբի գացին. Եւ անոր պատմեցին ը-
սելով, Յովսէփ տակաւին ողջ է, և
եգիպտոսի բոլոր երկրին իշխանը անի-
կա է։ Եւ Յակոբէ սիրտը մտրեցաւ,
27 քանզի անոնց չհաւատաց։ Եւ անոր
պատմեցին Յովսէփի բոլոր խօսքերը
որ իրենց ըսեր էր, և երբոր տեսաւ
Յովսէփի իրկած կառքերը զինքը տա-
նելու համար, անոնց հօրը Յակոբի հո-
28 գին ոգևրնցաւ։ Եւ Իսրայէլ ըսաւ, Բա-
ւական է. իմ որդիս Յովսէփ տակա-
ւին ողջ է. երթամ ու տեսնեմէն ա-
ռաջ անոնք զանիկա։

## Գլ. Խզ

1 Եւ Իսրայէլ իր բոլոր ունեցածովը ճամ-
բայ ելաւ, և Բերսաբէէ եկաւ. և իր
հօրը Իսահակի Աստուածային զոհերը մա-
2 ատուց։ Եւ Աստուած գիշերուան ա-

*Եբր. ձեր աչքը չխնայէ։

†Կամ Յաստուբ

նի, և Նաբաթ, Լբէլ, ու Աբօդէլ և Աբելի։
17 Եւ Աւթերի որդիքը՝ Յեմնա, ու Յեսուա, և Յեսուբ, ու Բարիա, և անոնց քոյրը Սարա. և Բարիայէ որդիքը՝ Փաթեր
18 ըեր ու Մէդիբէլ։ Աւանք են Զելպայի որդիքը՝ զոր Լաբան իր Լիա աղջկանը տուաւ. և անոնք Ծնաւ առանք
19 Յակոբի՝ տասնուվեց հոգի։ Յակոբի կնկանը Ռաքելի որդիքը՝ Յովսէփ ու
20. Բենիամին։ Եւ Յովսէփի՝ Եգիպտոսի երկրին մէջ Մանասէ ու Եփրեմ Ծնան, որոնք Աբեզ քահանային աղջկը Ասանէթ Ծնաւ
21 անոր։ Եւ Բենիամինի որդիքը՝ Բաղա ու Բաքար, և Աշբէլ, Գերա, ու Նէհման, Իջի, ու Ռոշ, Մուպիմ, և Ուփիմ ու Արդ։ Աւանք են Ռաքելի որդիքը՝ որոնք Ծնան Յակոբի, ամէնը
23 տասնևչորս հոգի։ Եւ Դանի որդիքը՝ Յուսիէլ։ Եւ Նեփթալիմի որդիքը՝ Յասիէլ, ու Գունի, և Յասեր ու Սիլլեմ
25 Աւանք են Բաղդայի որդիքը զոր Լաբան իր Ռաքէլ աղջկանը տուաւ. ու անոնք Յակոբի ասանք Ծնան, ըր ա-
26 մէնը հոգի էին։ Յակոբի հետ Եգիպտոս եկող բոլոր հոգիները, որ անոր երանքին ելած էին, Յակոբի որդւոցը կնիկներէն զատ՝ ամէնը վթա-
27 սունևմէկ հոգի էին։ Եւ Յովսէփի որդիքը՝ որ Եգիպտոսի մէջ անոր Ծնան, երկու հոգի էին. Եգիպտոս գացող Յակոբի տանը՝ բոլոր հոգիները եօթանասուն էին։
28 Եւ անիկա Յուդան իր առջևէն իջեցնել Յովսէփի, որ Գեսեմի ցուցնի իրեն. և անոնք Գեսեմի երկիրը եկան։
29 Եւ Յովսէփ իր կառքը պատրաստեց, և իր հայրը Իսրայէլը դիմաւորելու համար Գեսեմ երթաւ. և երբ անոր դէմը երթաւ, անոր պարանոցին վրայ ինկաւ, և շատ մը ատեն անոր պարանոցին վր-
30 րայ լացաւ։ Եւ Իսրայէլ բաւ Յովսէփ, Հիմա քու երեսդ տեսնելս ետքը թող մեռնիմ, քանզի ապրեալ
31 ողջ ես։ Եւ Յովսէփ իր եղբայրներուն ու իր հօրը տան բաւ, Երթամ և փաթառնի պատմեմ, և բսեմ անոր, Իմ
32 եղբայրներս ու իմ հօրս բնտանիքը՝ որ Քանանու երկրին մէջն էին, ինծի եկան։ Եւ այն մարդիկը հովիւներ են, քանզի խաշնդ ութ են, և իրենց հօտերը ու իրենց արջառները և իրենց
33 բոլոր ունեցածը բերին։ Եւ ըլլայ որ երբ փարաւոն ձեզ կանչէ, և բսէ Ի՞նչ
34 է արհեստդ, Բսէ, Քու ծառաներդ մեր մանկութենէն մինչև հիմա՝ թէ մենք, թէ մեր հայրերն, խաշնդ ութ ենք. որ Գեսեմի երկրին մէջ բնակիք, քանզի ամէն հովիւ Եգիպտացւոց առ-
ջևը գարշելի է։

## ԳԼ. Խ

1 Եւ Յովսէփ եկաւ ու պատմեց փարաւոնի ու բսաւ, իմ հայրս ու եղբայրներս, և անոնց հօտերն ու արջառները, և անոնց բոլոր ունեցածը՝ եկան Քանանու երկրէն, և ահա Գեսեմի եր-
2 կիրն են։ Եւ իր եղբայրներուն մէջէն հինգ մարդ առաւ, և զանոնք փարաո-
3 նի առջևը ներկայացուց։ Եւ փարաւոն բսաւ անոր եղբայրներուն, Ինչ է ձեր արհեստը. և անոնք փարաոնի բսին, Քու ծառաներդ հովիւներ ենք, թէ մենք թէ մեր հայրերն։ Եւ
4 ևս, թէ մենք թէ մեր հայրերն։ Եկած բսին փարաւոնի, Այս երկրին մէջ պանդխտանալու եկանք. վասն զի Քանանու երկրին մէջ սոսկալի սաստկանալն
համար, քու ծառաներդ հօտերուն արածելիք չկայ. ուստի հիմա չնորհք բրէ՝ ծառաներդ Գեսեմի երկրին մէջ բր-
5 նակենք։ Եւ փարաւոն խօսեցաւ Յովսէփի՝ բսելով, Քու հայրդ ու եղբայր-
6 ներդ քեզի եկան. Եգիպտոսի երկիրը առջևդ է. քու հայրդ ու եղբայրներդ երկրին ամենէն ազնիկ տեղը բնակեցուր. Գեսեմի երկրին մէջ թող բնակին. և թէ որ անոնց մէջը ճարպիկ մարդիկ բլլայ գիտես, զանոնք իմ հօտերուն վրայ վերակացու բրէ։
7 Եւ Յովսէփ իր հայրը Յակոբը բերաւ, ու փարաւոնի առջևը Հանեց. և Յա-
8 կոբ օրհնեց փարաւոնը։ Եւ փարաւոն բսաւ Յակոբի, Քանի կեանքդ տարիներ-



9 բուն օրերը ո՞րչափ են։ Եւ Յակոբ բսաւ փարաւոնի, Իմ պանդխտութեանս տարիներուն օրերը հարիւր երեսուն տարի են, իմ կենացս տարիներուն օրերը փչ ու ցաւով եղան, և իմ հայրերուս պանդխտութեան օրերուն մէջ հասած իրենց կենացը տարիներուն օ-
10 րերուն չհասան։ Եւ Յակոբ օրհնեց փարաւոնը, և դուրս եկաւ փարաւոնի առջևէն։
11 Եւ Յովսէփ Եգիպտոսի երկրին տեղ-
նէն ադէկ կողմը՝ Ռամսեսի երկրին մէջ բնակեցուց իր հայրն ու եղբայրները, և անոնց կալուածք տուաւ, ինչպես որ
12 փարաւոն հրամայեր էր։ Եւ Յովսէփ իր հայրն ու եղբայրները և իր հօրը բոլոր տունը՝ հոգոց բնտանիքներուն համեմատ հացով կը սնուցանէր։
13 Եւ բոլոր երկրին մէջ հաց չկար, քանզի սոսկալի խոտան սաստկացաւ, և Եգիպտոսի երկիրը և Քանանու երկիրը
14 սովին պատճառով նուաղեցան։ Եւ Յովսէփ պաշար Ծախու առնողներէն՝ Եգիպտոսի երկրին մէջ ու Քանանու երկրին մէջ գտնուած բոլոր տակր ժողվեց. և Յովսէփ փարաոնի տունը
15 տարաւ։ Եւ երբոր Եգիպտոսի երկրին ու Քանանու երկրին մէջ տա-
կը հատաւ, բոլոր Եգիպտացիները եկան Յովսէփի ու բսին, Մեզի հաց տուր. քանզի տակ չըլլալուն համար
16 ինչո՞ւ մեռնինք քու առջևդ։ Եւ Յովսէփ բսաւ, Ձեր անասունները բերէք, և թէ որ տակ չկայ, ձեր անասուններուն
17 բուն փոխարէն տամ ձեզի։ Եւ անոնք իրենց անասունները Յովսէփի բերին, և Յովսէփ հաց տուաւ անոնց՝ ձիերուն փոխարէն, և ոչխարներուն փոխարէն, և արջառներուն փոխարէն, և էշերուն փոխարէն. և այն տարին զանոնք հացով կերակրեց՝ իրենց բոլոր անասուններուն փոխարէն։
18 Եւ երբոր լմնցաւ այն տարին, հետևեալ տարին եկան անոր ու բսին, Մեր տիրոջմէն չենք պահեր որ տակը հատաւ, և Ֆէ անասուններն ալ մեր տիրոջն եղան. ալ բան մը չմնաց մեր
19 երկիրը՝ բայց մեր անձերը ու երկիրը. ինչո՞ւ համար քու աչքիդ առջև մեռնինք մենք ու մեր երկիրը. մեզ ու մեր երկիրը հացով ծախու առ, և մենք մեր երկիրով փարաոնի ծառաներ բլլանք. և սերմ տուր Ֆէ որ ապրինք ու չմեռնինք, և երկիրը ա-
20 մայի չըլլայ։ Եւ Յովսէփ բոլոր Եգիպտոսի երկիրը փարաոնի համար ծախու առաւ. քանզի Եգիպտացւոց վրայ ոտի ոտաւիկ բլալուն համար՝ անոնց իւրաքանչիւրն իր արտը ծախեց, և եր-
21 կիրը փարաոնի եղաւ։ Եւ Եգիպտոսի սահմանին մէկ ծայրէն մինչև միւս ծայրը՝ ժողովուրդը *քաղաքի քաղաք
22 փոխադրեց։ Միայն քուրմերուն երկիրը ծախու չառաւ, քանզի քուրմերը փարաոնէն [illegible] բաժին ունէին, և կ'ուտէին իրենց բաժինը, որ փարաոն կու տար անոնց. անոր հա-
23 մար իրենց երկիրը չծախեցին։ Եւ Յովսէփ բսաւ ժողովուրդին, Ահա այսօր ծախու առի ձեզ ու ձեր երկիրը փարաոնի համար. արդ ձեզի սերմ [illegible],
24 ու սերմանեցէք երկիրը. Եւ Էլլէ արդիւնքին հինգէն մէկը փարաոնին տուէք տաք, և չորս մասը ձերը պիտի բլլայ, որ արտին սերմ ու ձեզի և ձեր տաքը մէջ եղողներուն ու ձեր ապա-
25 նեներուն ուտելիք բլլայ։ Եւ բսին, Մեզ ապրեցուցիր. թող մեր տիրոջը առջևը շնորհք գտնենք, և փարաոնի ծա-
26 ռաներ բլլանք։ Եւ Յովսէփ այս օրէնքը հաստատեց Եգիպտոսի երկրին մէջ մինչև այսօր՝ որ հինգէն մէկը փարաոնի բլլայ. բաց ի քուրմերուն երկրէն, որ փարաոնի չեզաւ։
27 Եւ Իսրայէլ կը բնակէր Եգիպտոսի երկրին մէջ՝ Գեսեմի երկիրը. և հոն կալուածք առացան, և աճեցան ու խիստ շատացան։
28 Եւ Յակոբ Եգիպտոսի երկրին մէջ տասնևեօթը տարի ապրեցաւ. և Յակոբի կենացը տարիներուն օրերը հարիւր քառասունևեօթը տարի եղան։

*ԵԲՐ. քաղաքներուս

29 Եւ երբոր Իսրայէլի մեռնելու օրերը մատեցան, կանչեց իր Յովսէփ որդին, եւ ըսաւ անոր, Թէ որ հիմա քու առջեւդ շնորհք գտայ, կ՚ազաչեմ քեզի՝ ձեռքդ իմ երանգիս ներքեւը դիր, եւ ինծի մարդասիրութիւն ու ճշմարտութիւն ըրէ. կ՚ազաչեմ քեզի՝ զիս Եգիպտոսի մէջ մի թաղեր։ 30 Այլ իմ հայրերուս հետ ննջեմ, ու զիս Եգիպտոսէն հանես, եւ իմ անոնց գերեզմանը թաղես։ Եւ անիկայ ըսաւ, Ես քու բանիդ պէս պիտի ընեմ։ 31 Եւ ինքը ըսաւ, Ինծի երդում ըրէ։ Եւ անիկա երդում ըրաւ անոր։ Եւ Իսրայէլ գանկողինին գլուխն վրայ երկրպագութիւն ըրաւ։

## Գլ. ԽԸ

1 Ու եղաւ որ այս բաներէն ետքը Յովսէփի բսաւնցաւ, Ահա քու հայրդ հիւանդ է. եւ անիկա իր երկու որդիքը Մանասէն ու Եփրեմը իր հետ առաւ։ 2 Եւ Յակոբի պատմուեցաւ ու բսաւնցաւ, Ահա քու որդիդ Յովսէփ քեզի կու գայ. եւ Իսրայէլ ուժգնացաւ ու անկողինին վրայ նստաւ։ 3 Եւ Յակոբ ըսաւ Յովսէփի, Ամենակարող Աստուած Քանաան երկիրը Լուզի մէջ երեւցաւ ինծի, եւ օրհնեց զիս։ 4 Եւ ըսաւ ինծի, Ահա քեզ պիտի աճեցնեմ ու շատցնեմ, եւ քեզ շատ ժողովուրդներու հաւաք պիտի ընեմ. եւ այս երկիրը քեզմէ ետքը քու սերունդիդ յաւիտենական կալուածք պիտի տամ։ Եւ հիմա քու երկու որդիքդ՝ որ ծնան քեզի Եգիպտոսի երկրին մէջ՝ քեզի Եգիպտոս գալէս առաջ, իմն են. Եփրեմը ու Մանասէն Ռուբենի ու Շմաւոնի պէս իմն 6 պիտի ըլլան։ Եւ անոնցմէ ետքը քու ծնած որդիդ քու կողդ ըլլան, ու իրենց ժառանգութեանը մէջ իրենց եղբայրներուն անուններովը կանչուին։ 7 Եւ ես երբոր Միջագետքէն կու գայի, Քանաան երկրին մէջ այն ճամբուն վրայ՝ որ տակաւին Եփրաթա երթալու քիչ մը տեղ կայ, Ռաքել մեռաւ իմ քովս. և գանիկա հոն Եփրաթայի՝ այսինքն Բեթլեհեմի ճամբուն մէջ թաղեցի։

8 Եւ Իսրայէլ տեսաւ Յովսէփի որդիները, և ըսաւ, Ո՞վ ենասոնք։ 9 Յովսէփ ըսաւ իր հօրը, Իմ որդիներս են՝ որ Աստուած հոս ինծի տուաւ. և անիկա ըսաւ, Շնորհք ըրէ՝ ինծի բեր զանոնք, որ օրհնեմ։ Եւ Իսրայէլի աչքերը ծերութենէն ծանրացած էին, ու նայել չէր կրնար։ Եւ զանոնք մօտեցուց անոր, և անիկա համբուրեց զանոնք և գրկեց։ 11 Եւ Իսրայէլ ըսաւ Յովսէփի, Ես չէի յուսար որ քու երեսդ տեսնեմ, և ահա Աստուած ինծի քու սերունդդ ալ ցուցուց։ 12 Յովսէփ հանեց զանոնք անոր ծունկերէն, և իր երեսը մինչեւ գետինը խոնարհութիւն ըրաւ։ 13 Եւ Յովսէփ առաւ անոնց երկուքն ալ՝ Եփրեմը իր աջ ձեռքովը Իսրայէլի ձախ կողմը՝ և Մանասէն իր ձախ ձեռքովը Իսրայէլի աջ կողմը, և մօտեցուց անոր։ 14 Եւ Իսրայէլ իր աջ ձեռքը երկնցուց, և Եփրեմի գլուխն վրայ դրաւ, որ պզտիկն էր, և իր ձախ ձեռքը Մանասէի գլխուն վրայ. անիկա խորհրդով իր ձեռքերը փոխեց. քանզի Մանասէն անդրանիկն էր։ 15 Եւ օրհնեց Յովսէփ ու ըսաւ, Այն Աստուածը՝ որուն առջեւը իմ հայրերս Աբրահամ ու Իսահակ քալեցին, այն Աստուածը՝ որ ծնած ատենէս 16 հետ մինչեւ այսօր զիս կերակրեց, Այն Հրեշտակը՝ որ զիս ամէն չարիքներէն ազատեց, օրհնէ այս տղաքները, և իմ անունս՝ ու իմ հայրերուս Աբրահամի և Իսահակի անունըասոնց վրայ կանչուի, և երկրին մէջ առատ չատ։ 17 Եւ Յովսէփ տեսաւ որ հայրը իր աջ ձեռքը Եփրեմի գլուխն վրայ դրաւ, իրեն հաճելի չեղաւ. և իր հօրը ձեռքը բռնեց՝ որ զանիկա Եփրեմի գլխուն վրայէն Մանասէի գլուխն վրայ փոխադրէ։ 18 Եւ Յովսէփ իր հօրը, Ոչ այդպէս, հայր իմ, քանզի անդրանիկը այս է. քու աջ

†Կամ գաւազանին



19 ձեռքդ անոր գլխուն վրայ դիր։ Եւ իր հայրը չուզեց՝ ու ըսաւ, Գիտեմ, որդեակ իմ, գիտեմ. ասիկա ալ ժողովուրդ պիտի ըլլայ, և ասիկա ալ մեծ պիտի ըլլայ. բայց անոր պզտիկ եղբայրը անկէ աւելի մեծ պիտի ըլլայ, և անոր սերունդը խիստ մեծ ազգ պիտի 20 ըլլայ։ Եւ այն օրը օրհնեց զանոնք ու ըսաւ, Իսրայէլ քեզմով պիտի օրհնէ, Աստուած քեզ Եփրեմի պէս և Մանասէի պէս ընէ. ըսելով՝ ու Եփրեմը Մանասէէն առաջ դրաւ։

21 Եւ Իսրայէլ ըսաւ Յովսէփի, Ահա ես կը մեռնիմ. և Աստուած ձեզի հետ պիտի ըլլայ, և ձեզ ձեր հայրերուն երկիրը պիտի դարձընէ։ 22 Եւ ես քու եղբայրներէդ մէկ բաժին աւելի տուի քեզի, զոր Ամորհացիներուն ձեռքէն իմ սրովս ու աղեղովս առի։

## Գլ. ԽԹ

1 Եւ Յակոբ կանչեց իր որդիները ու ըսաւ, Ժողովուեցէք, որ վերջին օրերը ձեր գլուխն գալիքը պատմեմ ձեզի։ 2 Ժողովուեցէք ու լսեցէք, ով Յակոբին որդիները, Եւ ձեր հօրը Իսրայէլի մտիկ ըրէք։ 3 Ով Ռուբէն, իմ անդրանիկս, Իմ ոյժս ու իմ զօրութեանս սկիզբը, Պարգեւութեան կատարելութիւնը ու զօրութեան կատարելութիւնը դուն ես։ 4 Ջուրի պէս եռացիր, առաջին պիտի չըլլաս. Վասն զի քու հօրդ անկողինը ելար. Անառանը պղծեցիր՝ վրանիս։ (Իմ անկողինս ելաւ։) 5 Շմաւոն ու Ղեւի եղբայրներ են. Սուրերնին անբարութեան զօրծիքներ են։ 6 Իմ հոգիս անոնց խորհուրդներուն չը մանէ, Իմ պատիւս անոնց ժողովքին հետ չը միանայ. Քանզի իրենց բարկութեամբը մարդ սպաննեցին, և իրեն կամապաշտութեամբը ցուլ չիղ կտրեցին։ 7 Անիծեալ ըլլայ անոնց բարկութիւնը, քանզի խիստ էր, Եւ անոնց սրամտութիւնը, քանզի սաստիկ էր. Զանոնք Յակոբի մէջ պիտի բաժնեմ, Եւ զանոնք Իսրայէլի մէջ պիտի ցրեմ։ 8 Ով Յուդա, քու եղբայրներդ քեզ պիտի գովեն. Քու ձեռքդ քու թշնամիներուդ պարանոցին վրայ ըլլայ. Քու հօրդ որդիքը քեզի երկրպագութիւն ընեն։ 9 Յուդան առիւծի ձագ է. Որդեակ իմ, կողոպուտէն ելար. Առիւծի պէս ծունկ կրճնեց, մեռաւակ առիւծի պէս պառկեցաւ. Զանիկա ո՞վ պիտի արթընցնէ։ 10 Իշխողութիւնը Յուդայէն պիտի չպակսի, Ոչ ալ անոր ոտքերուն միջէն օրէնսդիրը, Մինչեւ որ *Սիլովը գայ. Եւ ժողովուրդները անոր պիտի հնազանդին։ 11 Իր յաւանակը որթին պիտի կապէ, Եւ իր էգ իշուն ձագը ամենէն ազնիւ որթին. Իր պատմուճանը գինիով պիտի լուայ, Եւ իր հանդերձը խաղողի արիւնով։ 12 Իր աչքերը գինիէն կարմիր՝ Եւ իր ակռաները կաթէն ճերմակ պիտի ըլլան։ 13 Զաբուղոն ծովուն եզերքը պիտի քնակի, Եւ անիկա նաւերուն հանգիստը պիտի ըլլայ, Եւ անոր սահմանը մինչեւ Սիդոն պիտի հասնի։ 14 Իսաքար ուժեղ էշ մըն է, Որ գոմերուն միջտեղը կը պառկի. 15 Եւ տեսնելով որ հանգստութիւնը աղեկ է,

*Այսինքն՝ խաղաղը, կամ օրուան կը վայլէ.

Եւ երկիրը՝ որ գեղեցիկ էր,
իր ուսը բեռցընելու խանարհեցուց,
Եւ հարկատու ծառայ եղաւ։
16 Դան իր ժողովրդը պիտի դատէ,
իսրայէլի ցեղերէն մէկուն պէս։
17 Դան ճամբու վրայ օձ մը պիտի ըլլայ,
Եւ ճամբու վրայ իժ մը,
Որ ձիուն գոլորշապարը կը խածնէ,
Այնպէս զի հեծեալը եռանը կ'ինկնայ։
18 Ով Տէր, քու փրկութեանդ սպասեցի։
19 Գադ վրան գունդ մը պիտի յարձակի։
Բայց վերջապէս ինքը պիտի յարձակի։
20 Ասերի հացը պարարտ պիտի ըլլայ.
Եւ ինքը թագաւորի հաճոյամբ կերակուրներ պիտի տայ։
21 Նեփթաղիմ գեղեցիկ խօսքեր առած
Ագաա թագաւած եղջերու մի է։
22 Յովսէփ պտղաստաւ ռատ մի է,
Աղբիւրի քով պտղաբեր ռատ մը,
Որուն բողբոջները պատի վրայ կ'ելլեն։
23 Աղեղնաւորները վշտացուցին զանիկա,
Եւ նետահէպ եղան անոր, և ատելին զանիկա։
24 Բայց անոր ուժգոր զօրաւոր մնաց,
Եւ իր ձեռացը բազուկները ուժգոյացան,
Յակոբին հզօր Աբիրոնէն ձեռքերովը։
Իսրայէլին վէմը եղող հովիւը անկէ է։
25 Աստուած քու հօրդ Աստուծմէն է՝ որ քեզի պիտի օգնէ,
Եւ Ամենակարողն՝ որ քեզ պիտի օրհնէ,
Վերէն երկնից օրհնութիւններովը,
Եւ վարը պառկող խորութեան օրհնութիւններովը,
Մէծերուն ու արգանդին օրհնութիւններովը։
26 Քու հօրդ օրհնութիւնները *իմ նախնեացս օրհնութիւններէն
Մինչև յաւիտենական բլուրներուն գագաթը զօրացան։

Յովսէփի գլուխն վրայ պիտի ըլլան,
Եւ անոր գագաթին վրայ՝ որ իր եղբայրներէն գերազանց է։
27 Բենիամին պատառոտ գայլ պիտի ըլլայ։
Առաւոտանց որսը պիտի ուտէ,
Եւ գիշերը կողոպուտը պիտի բաժնէ։
28 Ամէն ասոնք Իսրայէլի տասներկու ցեղերն են. և այս է՝ որ անոնց հայրը խօսեցաւ անոնց, և օրհնեց զանոնք. ամէն մէկուն օրհնութիւնը պէս պէս օրհնեց զանոնք։ 29 Նոյն ատենը պատուիրեց անոնց ու ըսաւ, Ես իմ ժողովրդիս պիտի խառնուիմ. իմ հայրերուս հետ այն սպրին մէջ թաղեցէք զիս, որ Քետացի Եփրոնի արտին մէջն է. 30 բանի որ արտին մէջն է. Այն սպրին մէջ՝ որ Քանանու երկիրը Մամբրէի դիմացը եղող Մաքփելայի արտին մէջն է, զոր Աբրահամ արտին հետ մէկտեղ գերեզմանի կալուածքի համար՝ Քետացի Եփրոնէն գնեց իր տիրանալի տեղի համար։ 31 Հոն թաղեցին Աբրահամը ու անոր կնիկը Սարրան հոն թաղեցին. Իսահակը ու անոր կնիկը Ռեբեկան հոն թաղեցին. Ես ալ Լիան հոն թաղեցի։ 32 Այն արտը ու հոն եղած սպրը Քետի որդիներէն ծախու առնուեցան։ 33 Յակոբ երբ լմնցուց իր որդւոցը պատուէրը տալը, իր ոտքերը անկողնին մէջ ժողվեց, և հոգին տ ա ն ե ց, և իր ժողովրդին խառնուեցաւ։

## Գլ. Ծ

1 Եւ Յովսէփ իր հօրը երեսին վրայ ինկաւ, և լացաւ անոր վրայ, և համբուրեց զանիկա։ 2 Եւ Յովսէփ իր բժիշկ ծառաներուն հրամայեց որ իր հայրը զմռնան. և բժիշկները զմռնեցին Իսրայէլը։ 3 Քսանչորս օրը լրնցաւ. վասն զի զմռնուածներուն օրերը այսպէս կը լրնցնուին. և Եգիպտացիք անոր համար եօթանասուն օր սուգ բռնեցին։ 4 Եւ երբ անոր սուգին օրերը անցան, Յովսէփ զրուցեց Փարաւոնի ազնիւները՝ ըսելով, Թէ որ հիմա ձեր առջեւը շնորհք գտայ, կ'աղաչեմ ձեզի՝ Փարաւոնի ականջին զրուցեցէք ու ըսէք, 5 Իմ հայրս ինձի երդուցմամբ ընդ տուաւ՝ ըսելով, Ահա ես կը մեռնիմ. իմ գերեզմանիս մէջը՝ որ ես ինձի համար քանդեցի երկրին մէջ փորեցի, դիս հոն թաղես. և հիմա շնորհք բրէ՝ իմ հայրս թաղելու երթամ, ու նորէն գամ։ Եւ Փարաւոն ըսաւ, Երթ ու թաղէ քու հայրդ՝ ինչպէս որ անիկա քեզի երդումով ընդ տուաւ։

7 Եւ Յովսէփ իր հայրը թաղելու երթաւ. և Փարաւոնի բոլոր ծառաները, անոր տանը ծերերը ու Եգիպտոսի երկրին բոլոր ծերերը անոր հետ երթան. Նաև Յովսէփի բոլոր տունը ու անոր եղբայրները և անոր հօրը տունը. միայն իրենց բնաւնիքները ու իրենց հօտերը և իրենց արջառները Գեսեմի երկրին մէջ թողուցին։ 9 Եւ անոր հետ կառքեր ու ձիաւորներ երթան, և չատ մեծ բանակ մը եղաւ։ Եւ եկան Աւատդի կալը՝ որ Յորդանանու անդիի կողմն է. հոն մեծ ու խիստ սասափել լացով մը ողբացին, և իր հօրը համար եօթը օր սուգ բռնաւ։ Եւ այն երկրին մէջ բնակող Քանանացիները երբոր տեսան Աւատդի կալին մէջ սուգին հանդիսը, ըսին, Այս մեծ սուգ մը ըլլալու է Եգիպտացիներուն։ անոր համար անոր անունը Աբէլմիսրաիմ դրին, որ 12 Յորդանանու անդիի կողմն է։ Եւ անոր որդիները իրեն պէս ինչպէս որ պատուիրեր էր։ 13 Եւ անոր որդիները Քանանու երկիրը տարին զանիկա, և Քաղկեդոնի արտին սպրին մէջը, զոր Աբրահամ գերեզմանի կալուածքի համար Ծախու առաւ արտին հետ Մեհատի Եփրոնէն։ 14 Եւ Յովսէփ իր հայրը թաղելէն եաև՝ Եգիպտոս դարձաւ, ինքն և իր եղբայրները և ան ամէնը որ իրեն հետ իր հայրը թաղելու երթան։

15 Եւ Յովսէփի եղբայրները տեսնելով որ իրենց հայրը մեռաւ, ըսին Գէրձին,

*Կամ հանգիստներ լեռներուն օրհնութիւնին, և յաւիտենական բլուրներուն վայելութենէն



Գուցէ Յովսէփ ոխ պահելով՝ պիտի հատուցանէ մեզի այն ամէն չարիքը որ 16 որ ըրինք իրեն։ Եւ Յովսէփի պատգամաւորը իրկեցին՝ ըսելով, Քու հայրդ մեռնելէն առաջ պատուիրեց հետ 17 ու ըսաւ, Յովսէփի այսպէս ըսէք. Հիմա շնորհք բրէ՝ քու եղբայրներուդ յանցանքը ու անոնց մեղքը նեղք, քանզի քեզի չարութիւն ըրին. և հիմա կ'աղաչենք քեզի՝ քու հօրդ Աստուծոյն ծառաներուն յանցանքը նեղ։ Եւ Յովսէփ լացաւ՝ երբոր անոնք 18 խօսեցան իրեն։ Եւ անոր եղբայրներն ալ գացին, և անոր առջեւը ինկան, և ըսին, Ահա մենք քու ծառաներդ ենք։ 19 Եւ Յովսէփ բաւ անոնց, Մի վախնաք. 20 միթէ ես Աստուծոյ տեղն եմ։ Եւ քիչ պատ դուք խնդի դէմ չարութիւն խորհեցաք, բայց Աստուած այն ատենի դարձեալ բարութիւնի պատճառ ընելով՝ այնպէս ինչպէս որ այս օրուան եղած է՝ շատ ժողովրդ ապրեցնէ։ 21 Եւ հիմա մի վախնաք. ես ձեզ ու ձեր բնաւնիքները պիտի կերակրեմ։ Այսպէս մխիթարեց զանոնք՝ փաղցրութեամբ խօսելով։

22 Եւ Յովսէփ Եգիպտոս բնակեցաւ, ինքը և իր հօրը տունը։ և Յովսէփ հարիւր տասը տարի ապրեցաւ։ 23 Եւ Յովսէփ Եփրեմի որդիները մինչև երրորդ սերունդը տեսաւ, և Մանասէի որդւոյն Մաքիրի որդիները ալ Յովսէփի ծնկներուն վրայ ծնան։

24 Եւ Յովսէփ իր եղբայրներուն բաւ, Ահա ես կը մեռնիմ, և Աստուած անշուշտ ձեզի այցելութիւն պիտի բնէ, ու ձեզ այս երկրէն պիտի հանէ դէպ ի այն երկիրը՝ որուն համար ինքը երդումով բրաւ Աբրահամի, Իսահակի ու Յակոբի։ 25 Եւ Յովսէփ Իսրայէլի որդւոցը երդումով ընդ տուաւ՝ ըսելով, Աստուած անշուշտ ձեզի այցելութիւն պիտի բնէ, և իմ ոսկորներս ասկից հանեցէք հոն։ 26 Նէ։ Եւ Յովսէփ հարիւր տասը տարեկան ըլլալով մեռաւ. ու զմռնեցին զանիկա, և տապանի մէջ դրին Եգիպտոսի մէջ։

*Աչխէնազ՝ սուգ Եգիպտացւոց։

*Եբր. անոնց սրտին

# ԳԻՐՔ ԵԼԻՑ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ եգիպտոս գացող Իսրայէլի որդւոցը
անունները սոսկալ են. իւրաքանչիւրն
2 իր տունովը Յակոբի հետ գնաց. Ռու-
3 բէն, Շմաւոն, Ղեւի ու Յուդա, Իսա-
4 քար, Զաբուղոն և Բենիամին, Դան ու
5 Նեփթաղիմ, Գադ ու Ասեր։ Եւ Յակո-
բի երանքին ելած բոլոր հոգիները եօ-
թանասուն հոգի էին. Յովսէփ ալ Ե-
6 գիպտոս էր։ Եւ Յովսէփ ու անոր բո-
լոր եղբայրները և բոլոր այն ազգը մե-
7 ռան։ Եւ Իսրայէլի որդիքը աճեցան ու
բազմացան և շատացան ու խիստ զօրա-
ցան. և այն երկիրը անոնցմով լեցուե-
ցաւ։

8 Արդ եգիպտոսի վրայ մէկ նոր թա-
գաւոր մը եղաւ, որ Յովսէփը չէր ճանչ-
9 նար։ Եւ նա ըսաւ իր ժողովուր-
դին, Ահա Իսրայէլի որդւոցը ժողովուր-
10 դը մեզմէ շատ ու զօրաւոր են. եկէք
խնամտութիւն բանեցնենք անոնց դէմ,
որ չըլլայ թէ շատանան, և երբոր պա-
տերազմ պատահելու ըլլայ, անոնք ալ
մեր թշնամիներուն հետ միանան, և
մեզի դէմ պատերազմին, և այս երկ-
11 րէս ելլեն։ Անոր համար գործակալներ
դրին անոնց վրայ, որ չարչարեն զա-
նոնք իրենց ծանր գործերովը. և փա-
րաւոնի շտեմարանի քաղաքներ՝ Փի-
12 թոմ ու Ռամսէսը շինեցին։ Եւ որչափ
կը չարչարէին զանոնք, այնչափ ալ ա-
ւելի կը շատանային ու կ'աճէին. և ա-
նոնք Իսրայէլի որդւոցմէն ձանձրացան։
13 Եւ եգիպտացիք բռնութեամբ կը ծա-
14 ռայեցնէին Իսրայէլի որդիները։ Եւ ա-
նոնց կեանքը ծանր գործով՝ կաւով
ու աղիւսներով և դաշտին ամէն գոր-
ծովը կը գառնացընէին. ինչ ծառա-
յութիւն որ անոնց ընել տային՝ բռա-
նութեամբ էր։

15 Եւ եգիպտոսի թագաւորը խօսեցաւ
Եբրայեցւոց մանկաբարձներուն, որոնց
մէկուն անունը Սեփրա՝ և միւսին ա-
16 նունը Փուա էր, ու ըսաւ, Եբրայեցի
կիներուն ծառայը առած աւոններիդ՝
նստարաններուն վրայ նայիք, թէ որ
տղայ է մեռցընէք զանիկա, և թէ որ
17 աղիկ է՝ թող ապրի։ Բայց մանկա-
բարձները Աստուծմէ վախցան, և Ե-
գիպտոսի թագաւորին իրենց ըսածին
պէս չըրին. այլ արուները ողջ կը
18 թողուին։ Եւ եգիպտոսի թագաւորը
կանչեց մանկաբարձները, և ըսաւ ա-
նոնց, Ինչո՞ւ այս բանը ըրիք, և արու-
19 ները ողջ թողուցիք։ Եւ մանկաբարձ-
ները բոլն փարաւոնի, Քանզի Եբրա-
յեցի կիները եգիպտացի կիներուն
պէս չեն. քանզի առոյգ են. մանկա-
20 բարձը անոնց չգացած՝ կը ծնանին Անոր
համար Աստուած մանկաբարձներուն
բարիք ըրաւ. և ժողովուրդը շատցաւ
21 ու խիստ զօրացաւ։ Եւ եղաւ որ մանկա-
բարձները Աստուծմէ վախնալնուն
22 համար, անոնց տուներ շինեց։ Եւ փա-
րաւոն իր բոլոր ժողովուրդին հրամայեց՝
ըսելով, Ամէն ծնած տղան գետը նե-
ւեցէք, և ամէն աղիկը ողջ թողուցէք։

## ԳԼ. Բ

1 Եւ Ղեւիի տունէն մէկը գնաց, և Ղե-



2 ւիի դէմ աղիկը յղի առաւ և կնիկը
յղացաւ, և որդի մը ծնաւ. և անոր
գեղեցիկ բլլալը տեսնելով՝ երեք ամիս
3 պահեց զանիկա։ Եւ երբ ալ չէր կրնար
պահել զանիկա, պատուհէնէն տապանակ
մը առաւ անոր համար, և կռկռով ու
ձիւթով ծեփեց, և տղան մէջը դրաւ,
և գետին եզերքը եղած շաղիին մէջ
4 ձգեց։ Եւ անոր քոյրը հեռու կայնե-
ցաւ, որ տեսնի թէ ինչ պիտի պատա-
5 հի անոր։ Եւ փարաւոնի աղիկը գե-
տը իջնալու եկաւ, և անոր ազա-
խիւնները գետին եզերքը կը զբօսնէին.
և երբ անիկա շաղիին մէջեղը տապա-
նակը տեսաւ, իր ազախինը խրկեց, որ
6 բերան զանիկա։ Եւ երբոր բացաւ, տը-
ղան տեսաւ, և ահա տղան կուլար. և
խղճաց անոր վրայ, և ըսաւ, Ասիկա
7 Եբրայեցւոց ազախիններէն է։ Եւ քոյր ա-
նոր տղոյն ըսաւ փարաւոնի աղիկոջը,
Երթամ ու քեզի Եբրայեցիներէն ծիծ
տուող կնիկ մը կանչեմ, որ տղան սը-
8 նուցանէ քեզի համար։ Եւ փարաւոնի
աղիկը ըսաւ անոր, Գնա. և աղիկը
գնաց, և տղան մայրը կանչեց։ Ե-
9 փարաւոնի աղիկը ըսաւ անոր, Ա-
սիկա տղան՝ որ անուցանես ինծի համար,
և ես քեզ վարձքդ կու տամ. և կնիկը
10 առաւ տղան ու անուց զանիկա։ Երբ-
որ տղան մեծցաւ, փարաւոնի աղիկա-
նը բերաւ զանիկա, և անոր որդին ե-
ղաւ. և անոր անունը Մովսէս դրաւ,
ու ըսաւ, Քանզի ջրէն հանեցի զա-
նիկա։

11 Եւ այն օրերը երբոր Մովսէս մեծցաւ,
իր եղբայրներուն ելաւ, և անոնց ծանր
գործքերուն նայեցաւ. և տեսաւ Ե-
գիպտացի մը՝ որ իր Եբրայեցի եղբայր-
12 ներէն մէկը կը ծեծէր։ Եւ երբ անդին
ադին նայելով տեսաւ որ մէկը չկայ,
մեռցուց Եգիպտացին, և աւազին մէ-
13 ջը թաղեց զանիկա։ Եւ հետևեալ օրը
ելաւ, և ահա երկու Եբրայեցի մար-
դիկ կը կռուէին իրարու հետ. և ըսաւ
անոր որ իրաւունք չունէր, Ինչո՞ւ ծե-
14 ծընէ ընկերիդ կը զարնես։ Եւ անիկա ըսաւ,
Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դատա-
ւոր դրաւ. դիտո՞ւ մեռցընելու միտք
ունիս, ինչպէս որ Եգիպտացին մեռ-
ցուցիր։ Եւ Մովսէս վախցաւ ու ըսաւ,
Անշուշտ այս բանը խնամուած է։
15 Եւ երբ Փարաւոն լսեց այս բանը, Մով-
սէսը մեռցընել կ'ուզէր. բայց Մովսէս
փարաւոնի երեսէն փախաւ, և Մա-
դիամի երկիրը բնակեցաւ. և հօրի մը
16 քով նստաւ։ Եւ Մադիամի քուրմին
եօթը աղիկ ունէր. և անոնք եկան
և ջուր քաշեցին, և իրենց հօրը հօտը
17 խմցնելու համար տապանները լեցու-
ցին։ Եւ հովիւները եկան ու վռնտե-
ցին զանոնք. և Մովսէս երես ու օգ-
նեց անոնց, և անոնց հօտին ջուր խմե-
18 ցուց։ Եւ երբ անոնք իրենց հօրը Ռա-
գուէլին եկան, անիկա ըսաւ, Այսօր
19 ինչ պատճառով շուտ եկաք։ Եւ ը-
սին, Մեկ եգիպտացի մը մեզ հովիւնե-
րուն ձեռքէն ազատեց, և մեզի ալ
շատ ջուր քաշեց, և հօտին խմցուց։
20 Ան ալ ըսաւ իր աղիկներուն, Ուրո՞ր
է անիկա. ինչո՞ւ այն մարդը այդպէս
թող տուիք. կանչեցէք զանիկա՝ որ հաց
21 ուտէ։ Եւ Մովսէս համեցաւ այն մար-
դուն հետ բնակիլ, և անիկա իր Սեպ-
22 փորա աղիկը Մովսէսի տուաւ։ Եւ
ինքը որդի մը ծնաւ, և անիկա անոր
անունը Գերսամ դրաւ. քանզի ըսաւ,
Պանդուխտ եղայ օտար երկրի մէջ։
23 Եւ եղաւ որ շատ օրերէն յետոյ Եգ-
իպտոսի թագաւորը մեռաւ, և Իսրա-
յէլի որդիքը ծառայութեան պատ-
ճառաւ հառաչեցին ու աղաղակեցին,
և ծառայութեան համար անոնց աղա-
24 ղակը Աստուծոյ հասաւ։ Եւ Աստուած
անոնց հեծութիւնը լսեց. ու Աստուած
յիշեց իր ուխտը՝ որ Աբրահամի, Իսա-
25 հակի ու Յակոբի հետ դրեր էր։ Եւ
Աստուած նայեցաւ Իսրայէլի որդւոցը
վրայ, և Աստուած գիտցաւ։

---

Աւելցուած՝ հոն պանդխտացած։

ԳԼ. Գ

1 Եւ Մովսէս Մադիամու քուրմին իր
Ցոիթրոր աներոջը հօտը կ'արածէր. և
հօտը անապատին եամն քշեցուց՝ Ա-
2 ստուծոյ լեռը Քորեբ եկաւ։ Եւ Տէրոջը
հրեշտակը կրակի բոցով մորենիին միջէն
երեւցաւ անոր. և անիկա տեսաւ որ մո-
հա մորենին կրակով կը վառէր, բայց
3 մորենին չէր ապառեր։ Եւ Մովսէս ը-
սաւ, Հիմա դառնամ ու այս մեծ տե-
սարանը տեսնեմ՝ թէ ինչուն համար
4 մորենին չայրիր։ Եւ երբ Տէրը տեսաւ
որ անիկա տեսնելու դարձաւ, Ա-
ստուած մորենիին միջէն կանչեց անոր
ու ըսաւ, Մովսէս Մովսէս. և անիկա
5 ըսաւ, Ահա հոս եմ։ Եւ Աստուած ը-
սաւ, Հոս մի մօտենար. կօշիկներդ հա-
նէ քու ոտքերէդ, քանզի այն տեղը՝
որուն վրայ կայնած ես, սուրբ երկիր
6 է։ Նաև ըսաւ անոր, Ես եմ քու հօրդ
Աստուածը՝ Աբրահամի Աստուածը՝ Ի-
սահակի Աստուածը ու Ցակոբի Աս-
տուածը. և Մովսէս իր երեսը պահեց,
քանզի Աստուծոյ նայելու վախցաւ։
7 Եւ Տէրը ըսաւ, Եգիպտոսի միջ եղող
ժողովուրդիս չարչարանքը յիրաւի տե-
սայ, և գործակալներուն պատճառա-
ւը անոնց կըցաւ՝ ազգակիր լսեցի.
քանզի անոնց նեղութիւնները գի-
8 տեմ. Եւ զանոնք Եգիպտացւոց ձեռ-
քէն ազատելու, և զանոնք այն երկրէն
ել ու բարի ու լայնածաւալ երկիր մը՝
կաթ ու մեղր բղխող երկիր մը՝ Քանա-
նացւոց ու Քետացւոց ու Ամօրհացւոց
ու Փերեզացւոց և Եւացւոց ու Յեբու-
9 սացւոց տեղը հանելու իջայ։ Եւ ահա
հիմա Իսրայէլի որդւոցը աղաղակը ին-
ծի հասած է. և Եգիպտացիներուն ա-
նոնց բռած հարստահարութիւնն ալ
10 տեսայ։ Ուստի եկուր հիմա՝ քեզ փա-
րաւոնի կրկեմ, և իմ ժողովրդս
Իսրայէլի որդիքը Եգիպտոսէն հանես։
11 Եւ Մովսէս ըսաւ Աստուծոյ, Ես ո՞վ
եմ՝ որ փարաւոնի երթամ, և Իս-
րայէլի որդիքը Եգիպտոսէն հանեմ։
12 Եւ ըսաւ, Անշուշտ ես քեզի հետ ալ-



21 պիտի Քորեբ որ երթաք։ Եւ այս ժո-
ղովուրդին շնորհք պիտի տամ Եգիպ-
տացւոց առջեւը. և երբոր երթ-ք, դա-
22 տարկ պիտի չերթ-ք։ Այլ ամէն կնիկ
իր գրացկին ու իր տաճը մէջ բնակող
կնիկին ադծաթեղէն զարդեր ու ոսկի-
էն զարդեր ու հանդերձներ պիտի
խնդրէ, և ածէք ձեր որդիներուն ու
աղջիկներուն վրայ պիտի դնէք. և Ե-
գիպտոսը պիտի կողոպտէք։

ԳԼ. Դ

1 Եւ Մովսէս պատասխան տուաւ ու ը-
սաւ, Բայց ահա անոնք ինծի պիտի չը
հաւատան, ոչ ալ իմ ձայնիս մտիկ պի-
տի բնեն, քանզի պիտի ըսեն Թէ Տէրը
2 քեզի չերեւցաւ։ Եւ Տէրը ըսաւ անոր,
Այդ քու ձեռքիդ ինչ է. և անիկա
3 ըսաւ, Գաւազան։ Եւ ըսաւ անոր, Գե-
տինը ձգէ գոյն. և զանիկա գետինը ձգ-
եց, և օձ եղաւ. և Մովսէս անոր առ-
4 ջեւէն փախաւ։ Եւ Տէրը ըսաւ Մովսէսի,
Ձեռքդ երկրնցուր ու պոչէն բռնէ. և
անիկա իր ձեռքը երկրնցուց ու զանի-
կա բռնեց, և գաւազան եղաւ իր ձեռ-
5 քին մէջ. Որ հաւատան՝ Թէ իրենց հայ-
րերուն Տէր Աստուածը, Աբրահամի
Աստուածը՝ Իսահակի Աստուածը ու
Ցակոբի Աստուածը երեւցաւ քեզի։
6 Եւ Տէրը գարձեալ ըսաւ անոր, Հի-
մա քու ձեռքդ ծոցդ դիր. և անիկա
իր ձեռքը ծոցը դրաւ. և երբոր դուրս
հանեց, ահա իր ձեռքը ձիւնի պէս ծե-
7 ղ-ղ բորառ եղաւ։ Եւ Տէրը ըսաւ, Ձեռ-
քդ նորէն ծոցդ դիր. և անիկա նո-
րէն իր ձեռքը ծոցը դրաւ, և երբոր
ծոցէն հանեց, ահա նորէն իր բնա-
8 մարմինին պէս եղաւ։ Եւ ըսաւ՝ որ երբ
քեզի չհաւատան, և առջի նշանին ձայ-
նին մտիկ չընեն, հարկ նշանին ձայնին
9 պիտի հաւատան։ Իսկ Թէ որ այս երկու
նշաններուն ալ չհաւատան, և քու
ձայնիդ ալ մտիկ չընեն, գետին կու տաս
առ, և ցամաք կ'եղծնը Թափէ. և ան
կ'ըլլայ՝ որ գետնէն առիր, ցամաքին վրայ
արիւն պիտի ըլլայ։

10 Եւ Մովսէս ըսաւ Տէրոջը, Ոհ, Տէր
իմ, ես ճարտարախօս չեմ, ոչ երէկ-
ւընէ ու միւնայ օրէնքն, ոչ ալ ծա-
ռայիդ հետ խօսելէդ ետոյ. այլ ես
11 ծանրախօս ու ծանրալեզու եմ։ Եւ Տէ-
րը ըսաւ անոր, Ո՞վ տուաւ բերանն
կամ ո՞վ լրաս համրը կամ
խուլը՝ կամ աչք ունեցողը կամ կուրը։
12 չէ՞ որ ես Տէրս։ Ուստի գնա հիմա, ու
ես քու բերնիդ հետ պիտի ըլլամ, և
քեզի պիտի ուսուցանեմ ինչ որ պիտի
13 խօսիս։ Եւ անիկա ըսաւ, Ոհ, Տէր իմ,
կ'աղաչեմ՝ ես զոր պիտի որ ձեռքով
14 խրկել կ'ուզես խրկե։ Եւ Տէրոջը բար-
կութիւնը բորբոքեցաւ Մովսէսի դէմ,
և ըսաւ, Ղեւտացի Ահարոնը քու եղ-
բայրդ չէ՞. ես գիտեմ որ անիկա ճար-
տարախօս է. նաև ահա անիկա քեզ
դիմաւորելու պիտի ելլէ, և քեզ տես-
նած ատեն իր սրտին մէջ պիտի ուրա-
15 խանայ։ Եւ դուն խօսէ անոր, և անոր
բերանը խօսքեր դիր. և ես քու բերա-
նիդ ու անոր բերանին հետ պիտի ըլ-
ըմամ, և ձեզի պիտի ուսուցանեմ ինչ
16 որ պիտի ընէք։ Եւ քու տեղդ անիկա
ժողովուրդին. և անիկա քեզի բերնի տեղ ըլլայ, և դուն անոր
17 Աստուծոյ տեղ ըլլաս։ Եւ այս գաւա-
զանը ձեռքդ առ, որ անով նշանները
ընես։
18 Եւ Մովսէս գնաց, և իր Ցոիթրոր ա-
ներոջը դարձաւ, և ըսաւ անոր, Ձի-
մա երթամ, և եգիպտոսի մէջ եղող
եղբայրներուս դառնամ, և նայիմ Թէ
ասկա ին դեռ են անոնք. և Ցոիթրոր
ըսաւ Մովսէսի, Գնա խաղաղութեամբ,
19 Եւ Տէրը Մադիամի մէջ ըսաւ Մովսե-
սի, Գնա՝ եգիպտոս դարձիր. քանզի
քու կեանքդ փնտռող բոլոր մարդիկը
20 մեռան։ Եւ Մովսէս իր կինը ու իր
որդիները առաւ, և իշուն վրայ հեծ-
ցուց զանոնք, և եգիպտոսի երկիրը
դարձաւ. և Մովսէս Աստուծոյ գաւա-
զանը իր ձեռքը առաւ։ Եւ Տէրը ըսաւ
21 Մովսէսի, Երբոր գառնաս՝ եգիպտոս
երթաս, նայէ որ փարաւոնի առջեւը
բոլոր հրաշքները ընես, որոնք քու

ձեռքդ դրի. և ես անոր սիրտը պնդեցուցի, որ ետևէս գայ, և ժողովուրդը պահ չմնայ։ Ու ըսես Փարաւոնին, Տէրը այսպես կ՚ըսէ, Իսրայէլը իմ որդիս՝ իմ անդրանիկս է։ Ես քեզի կ՚ըսեմ, իմ որդիս թող տուր՝ որ ինծի պաշտէ. բայց դուն թէ որ անկից թող տալ չուզես, ահա ես քու որդիդ՝ քու անդրանիկդ կը սպաննեմ։

24 Եւ եղաւ որ ճամբան լճակ տեղը Տէրը անոր պատահեցաւ, և ուզեց սպանել զանիկա։ Ուստի Սեպփորա սուր քար մը առաւ, և իր որդւոյն անթլփատութիւնը թլփատեց, և անոր ոտքերուն դպցուց, և ըսաւ, Իրաւցնի դուն ինծի արիւնոտ երիկ մի ես։ Ա յսպես Տէրը թող տուաւ զանիկա. անոր համար թլփատութեանը համար ան ը ս ը ր ը ս ա ւ, Արիւնոտ երիկ մի ես։

27 Եւ Տէրը ըսաւ Ահարոնի, Գնա անապատը Մովսէսը դիմաւորելու. և անիկա գնաց, ու Աստուծոյ լեռանը վրայ պատահեցաւ անոր, և համբուրեց զանիկա։ 28 Եւ Մովսէս պատմեց Ահարոնի Տէրոջը բոլոր խօսքերը որ խրկեց զինքը, և բոլոր նշանները որ իրեն պատուիրեց։

29 Ես Մովսէս ու Ահարոն գացին, և Իսրայէլի որդւոցը բոլոր ծերերը ժողվեցին։ 30 Ահարոն Տէրոջը Մովսէսի ըսած բոլոր խօսքերը պատմեց անոնց, ու ժողովուրդին աչքերը նշաններն ըրաւ։ 31 Ես ժողովուրդը հաւատաց. և երբոր լսեցին թէ Տէրը այցելութիւն ըրած է Իսրայէլի որդւոցը, և թէ անոնց տառապութիւնները նայած է, խոնարհեցան ու երկրպագութիւն ըրին։

## Գլ. Ե

1 Ես ետքը Մովսէս ու Ահարոն փարաւոնի մտան ու ըսին, Իսրայէլի Եհովայ Աստուածը այսպես կ՚ըսէ, Իմ ժողովուրդս թող տուր որ անապատին մէջ ինծի տօնախմբութիւն ընեն։ 2 Փարաւոն ըսաւ, Եհովան ո՞վ է, որ անոր խօսքը մտիկ ընելով՝ Իսրայէլը թող տամ. Եհովան չեմ ճանչնար, և Իսրայէլն ալ չեմ թողուր։ 3 Ես անոնք ըսին, Երբոյնեցւոց Աստուածը մեզի հանդիպեցաւ. հրաման տուր որ երեք օրուան ճամբայ անապատը երթանք, և մեր Եհովայ Աստուծոյն զոհ մատուցանենք, որ չըլլայ թէ ժանտախտով կամ սրով մեզի դէմ ելլէ։ 4 Ես Եգիպտոսի թագաւորն ըսաւ անոնց, Ով Մովսէս ու Ահարոն, ինչո՞ւ ժողովուրդը իրենց գործերէն կա կը Թողուք։ 5 գացէք աշխատեցէք։ Ես Փարաւոն ըսաւ, Ահա հիմա երկրին ժողովուրդը շատ է, և դուք կը հանգստացընէք զանոնք իրենց գործերուն։

6 Ես Փարաւոն այն օրը ժողովուրդին գործավարներուն ու անոնց վերակացուներուն հրամայեց՝ ըսելով, 7 Ասկէ ետև ուրիշ օրուան պէս այլև ժողովուրդին չորդ մի տաք աղիւս չտնեցնէ համար։ Թող իրենք երթան ու իրենց չորդ ժողվեն։ 8 Բայց աղիւսներուն թիւէն որ առաջ կը շինեին, անոնց վրայ դրէք, անկէ մի պակսեցընէք. քանի ծոյլ են, անոր համար կը պոռան ըսելով, Երթանք մեր Աստուծոյն զոհ մատուցանենք։ 9 Նենգ, Թող գործը այս մարդոցը վրայ ծանրանայ, որ անով աշխատին, և փուճ խօսքերու մտիկ չընեն։ 10 Ես ժողովուրդին գործավարներն ու վերակացուները ելան, և ժողովուրդին խօսեցան՝ ըսելով, Փարաւոն այսպես կ՚ըսէ, Ես ձեզի չորդ չեմ տար։ Գնա՛ք գացէք ձեզի չորդ առէք՝ ուր տեղ որ կրնաք գտնել. բայց ձեր գործէն 12 բան մը պիտի չպակսի։ Այսպէս ժողովուրդը եգիպտոսի բոլոր երկրին մէջ ցրուեցան՝ չորդի տեղ խոզան ժողվելու համար։ 13 Ես գործավարները կը ստիպէին՝ ըսելով, Ձեր ամէն օրուան գործը լմընցուցէք, ինչպէս 14 երբոր չորդ կունէիք։ Ես Փարաւոնի գործավարները Իսրայէլի որդւոցը վրայ իրենց դրած վերակացուները ծեծելին ու ըսին, Ձեր չորց դրուած աղիւսներուն ամէն երէկ ու այսօր լմընցուցէք առաջինին պէս։ 15 Ես Իսրայէլի որդւոցը վերակացուները եկան ու Փարաւոնի բողոքելին՝ ըսելով, Ինչո՞ւ քու ծառաներուդ այսպէս կ՚ընես։ 16 Քու ծառաներուդ չորդ չեն տար, և մեզի կ՚ըսեն թէ Աղիւս ներ չընեցէք. և ահա քու ծառաներդ ծեծ կերան, և յանցանքը քու ժողովուրդիդն է։ 17 Եես անիկա ըսաւ, Ծոյլ էք դուք, ծոյլ. անոր համար կ՚ըսէք թէ երթանք՝ Տէրոջը զոհ մատուցանենք։ 18 Նենգ։ Ուստի գացէք հիմա բանեցէք, ու ձեզի չորդ պիտի չտրուի, բայց աղիւսներուն թիւէն պիտի տաք։ 19 Իսրայէլի որդւոցը վերակացուները ինքզինքնին փորձանքի մէջ տեսան, երբոր ըսուեցաւ թէ Աղիւն օրուան ձեր վրայ դրուած աղիւսներուն թիւէն չպակսեցընէք։ 20 Եես փարաւոնէն դուրս ելած ատենին՝ հանդիպեցան Մովսէսի ու Ահարոնի, որ դիմաւորելու կը սպասէին։ 21 Ու ըսին անոնց, Տէրը ձեզի նայի ու դատէ, ինչու որ գարշելի ըրիք մեր հոտը փարաւոնի աչքին, ու անոր ծառաներուն աչքը, մեզ սպանելու համար անոնց ձեռքը տուր տալով։

22 Ես Մովսէս Տէրոջը դարձաւ ու ըսաւ, Ով Տէր, ինչո՞ւ այս ժողովուրդը փորձանքի մէջ ձգեցիր, և դուն ինչո՞ւ խրկեցիր։ 23 Վասն զի ջամի որ քու անունովդ փարաւոնի դրացելու եկոր եմ, անկէ ասա ժողովուրդը փորձանքի մէջ ձգեց, ու դուն բնաւ չիրկեցիր քու ժողովուրդդ։

## Գլ. Զ

1 Ես Տէրը ըսաւ Մովսէսի, Փարաւոնի ինչ ընելիքս հիմա պիտի տեսնես. որ հզօր ձեռքով պիտի թողու զանոնք, ու հզօր ձեռքով պիտի վռնտէ զանոնք իր երկրէն։ 2 Նենգ իր երկրին։ Ես Աստուած խօսեցաւ Մովսէսի ու ըսաւ անոր, Ես եմ Եհովան։ 3 Ես Աբրահամի, Իսահակի ու Յակոբի Ա յ ն ե մ ի կ ո ր ով Աստուած երևցայ. բայց իմ Եհովայ անունովս չյայտնուեցայ։ 4 Ես նաև անոնց հետ իմ ուխտս հաստատեցի, որ անոնց տամ Քանանու երկիրը, անոնց օտարութեան երկիրը՝ ուր որ պտնդ խառնացան։ Ես լսեցի ալ Իսրայէլի որդւոցը հառաչանքը, որ եգիպտացիները ծառայեցուցին. և իմ ուխտս յիշեցի։ 6 Անոր համար Իսրայէլի որդւոցը ըսէ, Ես եմ Եհովան. և ես ձեզ եգիպտացւոց ծանր գործքերուն ներքևէն պահ հանեմ, և ձեզ անոնց ծառայութենէն պիտի ազատեմ, և ձեզ երկնցած բազուկով ու մեծ դատաստաններով պիտի փրկեմ։ 7 Ես ձեզ ինծի ժողովուրդ պիտի առնեմ, և ձեզի Աստուած պիտի ըլլամ. և պիտի գիտնաք որ ես Եհովան եմ ձեր Աստուածը որ ձեզ եգիպտացւոց ծանր գործքերուն ներքևէն հանող Տէրը՝ ձեր Աստուածը ես եմ։ Ես ձեզ ան երկիրը պիտի տանիմ, զոր Աբրահամի, Իսահակի ու Յակոբի տալու համար երդուայ ըրի, և զայն ձեզի ժառանգութիւն ըրի։ 9 Ես Մովսէս Իսրայէլի որդւոցը այսպես դրուցեց. բայց անոնք հոգիի նեղութենէն ու գործին ծանրութենէն մտիկ չըրին Մովսէսին։

10 Ես Տէրը խօսեցաւ Մովսէսի ըսելով, 11 Մտիր խօսէ եգիպտոսի փարաւոն թագաւորին՝ որ Իսրայէլի որդիքը իր երկրէն արձակէ։ 12 Ես Մովսէս խօսեցաւ Տէրոջը առջևը ըսելով, Ահա Իսրայէլի որդիքը ինծի մտիկ չըրին, այլ փարաւոն ինծի ի՞նչպես մտիկ պիտի ընէ. որ ես †ծանրաբերուռ եմ։ Ես Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի, ու հրամայեց անոնց՝ որ Իսրայէլի որդւոցը ու եգիպտոսի փարաւոն թագաւորին էրթան, Իսրայէլի որդիքը եգիպտոսի երկրէն հանելու համար։

13 Անոնց հայրերուն տուներուն գլխաւորները ասոնք են։ Իսրայէլի անդրանիկը Ռուբինի որդիքը՝ Ենոքն, Փաղուս, Եսրոն և Քարմի. ասոնք են

*Նբ. ձեռքս վրը վերցուցի։
†Նբ. անբ լեզուս չբմունդներով

15 Թուրենի ոռնիները, եւ շմռնուն որդիքը՝ Յամնուել, Յամին, Ոհադ, Յաքին, Սահաս, եւ Քանանացի կնոջը որդին Սաուղ։ սոքա են շմռնուն
16 ոռնիները։ եւ Ղևիի որդւոցը անուններ իրենց ծնունդներուն համեմատ սոքա են։ Գերսոն, կոհաթ և Մերար։ եւ Ղևիի կենացը տարիները հա-
17 րիւր երեսունեւութը տարի եղան։ Գերսոնի որդիքը իրենց ոռնիներուն հա-
18 մեմատ Դոբենի ու Սեմէի էին։ եւ կահաթի որդիքը՝ Ամրամ, Խառհառ, Քերբոն ու Ողիել։ եւ կահաթի կենացը տարիները հարիւր երեսուներկու
19 տարի եղան։ եւ Մերարիի որդիքը՝ Մաոլի ու Մուսի։ Ղևիի ոռնիները իրենց ծնունդներուն համեմատ սոքա
20 են։ եւ Ամրամ իր հօրաքրոջը Յոքաբեդը իրեն կին առաւ, որ Ծնող իրեն Ահարոնը ու Մովսէսը։ եւ Ամրամի կենացը տարիները հարիւր երեսունեւ-
21 եօթը տարի եղան։ եւ Խառհառի որդիք՝ Կորհ, Նաբեդ և Զիքրի։ եւ
22 Ոզիելի որդիքը՝ Միսայէլ, Եղիսափան և Սիթրի։ եւ Ահարոնի իրեն կին առաւ Ամինադաբի աղջիկը՝ Նահասոնի քոյրը Եղիսաբեթը, և Ծնող իրեն Նադաբը ու Աբիուդը, Եղիազարը ու Ի-
24 թամարը։ եւ Կորհի որդիքը՝ Ասիր, Եղկանա և Աբիասափ։ սոքա են Կորհեցւոց տոհմերուն գլուխները իրենց տոհմերուն համեմատ։
25 Ահարոնի որդի Եղիազար առաւ իրեն կին Փութիելի աղջիկներէն իրեն կին առաւ։ և Ծնող իրեն Փենէհէսը։ սոքա են Ղևտացւոց հայրերուն գլուխները իրենց տոհմերուն համեմատ։
26 Ասոնք են այն Ահարոնը ու Մովսէսը՝ որոնց բսաւ Տէրը, Իսրայէլի որդիքը իրենց զօրքերովը Եգիպտոսի երկրէն
27 հանեցէք։ Իսրայէլի որդիքը Եգիպտոսէն հանելու համար՝ Եգիպտոսի Փարաւոն թագաւորին խօսացողները սոսնք են։ սա Մովսէսը ու Ահարոնը։
28 Եւ այն օրը որ Տէրը խօսեցաւ Մովսիսի՝ Եգիպտոսի երկրին մէջ, Ասանոնք Տէրը Մովսիսի դուցեց բսելով, Ես եմ Տէրոջմէ. ամէն ինչ որ քեզի կ'ըսեմ, Եգիպտոսի Փարաւոն թա-
30 գաւորին խօսէ։ Եւ Մովսէս Տէրոջը առջեւը բսաւ, Ահա ես *Ծանրալեզու եմ, և Փարաւոն ինչպէս մտիկ պիտի բնէ ինծի։

## Գլ. Կ

1 Եւ Տէրը բսաւ Մովսիսի, Նայէ՛ քեզ Փարաւոնի տաւած բրէ, և քու եղբայրը Ահարոն քու մարգարէդ բլայ։
2 Դուն խօսիս այն ամէնը որ քեզի կը հրամայեմ, և քու եղբայրը Ահարոն Փարաւոնի խօսացնէ որ Իսրայէլի որդիքը իր երկրէն արձակէ։ եւ ես Փարաւոնի սիրտը պիտի խստացընեմ, և իմ նշաններս և հրաշքներս եգիպտոսի երկրին մէջ պիտի շատցնեմ։ եւ Փարաւոն ձեզի մտիկ պիտի չընէ։ և ես իմ ձեռքս եգիպտոսի վրայ պիտի ձգեմ, և իմ զօրքերս՝ իմ ժողովրդիս Իսրայէլի որդիքը մեծ դատաստաններով
5 պիտի հանեմ։ եգիպտոսի երկրին։ եւ երբոր իմ ձեռքս եգիպտոսի վրայ երկնցընեմ՝ ու Իսրայէլի որդիքը անոնց մէջէն հանեմ, պիտի գիտնան եգիպտացիք թէ ես եմ Տէրը։ եւ Մովսէս ու Ահարոն Տէրոջը իրենց պատուիրածին
7 ձին պէս բրին, այնպէս բրին։ եւ Մովսէս ութսուն տարեկան էր, և Ահարոն ութսունեւերկու տարեկան էր, երբոր Փարաւոնի հետ խօսեցան։
8 Եւ Տէրը խօսեցաւ Մովսիսի ու Ահարոնի՝ բսելով,
9 Երբոր Փարաւոն ձեզի խօսի ու բսի, Ձեզի համար հրաշք ցուցուցէք։ անոնտեր Ահարոնի բսես թէ գաւազանդ առ, և Փարաւոնի առջեւը նետէ։ և անիկա վիշապ պիտի
10 բլայ։ Եւ Մովսէս ու Ահարոն մտան Փարաւոնի՝ ու Տէրոջը պատուիրածին պէս բրին։ և Ահարոն իր գաւազանը նետեց Փարաւոնի առջեւը և անոր ծառաներուն առջեւը, և վիշապ եղաւ։
11 Եւ Փարաւոն ալ իմաստասիրները ու կախարդները կանչեց։ և եգիպտոսի մոգերը՝ անոնք ալ իրենց կախարդու-

*ԵԲՐ. անթի լեզուաց չրիծանքներով



12 թիւններովը այնպէս բրին։ եւ իւրաքանչիւրն իր գաւազանը նետեց, և անոնք վիշապներ եղան։ բայց Ահարոնի գաւազանը անոնց գաւազաններըը կլլեց։
13 Եւ Փարաւոնի սիրտը կարծրացաւ, ու անոնց մտիկ չբրաւ, ինչպէս որ Տէրը զրուցեր էր։
14 Եւ Տէրը բսաւ Մովսիսի, Փարաւոնի սիրտը խստացաւ, ժողովուրդը արձակել չուզեր։ Առաւօտուն Փարաւոնի դնաս։ ահա անիկա գետ կ'իջնէ։ և դուն գետին եզերքը անոր դիմացը կայնէ, և այն օձ դարձած գաւազանը
16 ձեռքդ առ, եւ բսէ անոր, Երբայեցւոց Աստուածը զիս քեզի իրրև կեց՝ բսելով, Արձակէ իմ ժողովուրդս՝ որ զիս պաշտեն անապատին մէջ։ և ահա դուն մինչեւ հիմա մտիկ չբրեր։
17 Այսպէս կ'ըսէ Տէրը, Այսով գիտնաս թէ ես եմ Տէրը։ Ահա ես իմ ձեռքս եղած գաւազանով գետին մէջի ջուրերուն պիտի զարնեմ, և անոնք պիտի դառնան։
18 Եւ գետին մէջ եղած ձուկերը պիտի մեռնին, և գետը պիտի հոտի։ և եգիպտացիք պիտի զրուին գետէն ջուր խմելու։
19 Եւ Տէրը բսաւ Մովսիսի, Ըսէ Ահարոնի, Գաւազանդ առ, ու ձեռքդ երկնցուր Եգիպտացւոց ջուրերուն վրայ, անոնց առուներուն վրայ, անոնց գետերուն վրայ, և անոնց լիճերուն վրայ, և անոնց բոլոր ջրակուտակներուն վրայ՝ որ արիւն բլլան։ և եգիպտոսի բոլոր երկրին մէջ՝ փայտի ու քարի ամաններուն մէջին ջ-ԲԵՐԸ արիւն բլլան։
20 Եւ Մովսէս ու Ահարոն Տէրոջը պատուիրածին պէս բրին։ և գաւազանը վերցուց, և Փարաւոնի առջեւը և անոր ծառաներուն առջեւը գետին մէջի ջուրերուն զարկաւ, և գետին մէջի բոլոր ջուրերը արիւն դարձան։ եւ գետին մէջ եղած ձուկերը մեռան, և գետը հոտեցաւ, և եգիպտացիք չկրնար գետէն ջուր խմել։ և եգիպտոսի բոլոր երկրին մէջ արիւն կար։ եւ եգիպտոսի մոգերն ալ իրենց կախարդութիւններովը այնպէս բրին։ և Փարաւոնի սիրտը կարծրացաւ, և Տէրոջը բսածին պէս՝ անոնց մտիկ չբրաւ։
23 Եւ Փարաւոն դարձաւ ու իր տունը եկաւ, և *այս ևս անոր սրտին չդպաւ։
24 Եւ բոլոր եգիպտացիք գետին բոլորտիքը փորեցին խմելու ջուրի համար։ քանզի գետին ջուրն չէին կրնար
25 խմել։ եւ Տէրը գետը զարնելէն հաքը՝ հօթը օրը լրցաւ։

## Գլ. Կ

1 Եւ Տէրը բսաւ Մովսիսի, Փարաւոնի մտիր, և բսէ անոր, Տէրը այսպէս կ'ըսէ։ Արձակէ իմ ժողովուրդս որ պաշտեն զիս։ Եւ թէ որ չ-ՆՈՒՑ արձակել չուզես, ահա ես քու բոլոր սահմանդ
3 ներդ գորտերով պիտի զարնեմ։ Եւ գետը շատ գորտեր պիտի հանէ, և անոնք պիտի ելլեն, և քու տանդ և անկողնիդ տներուդ և քու ծառաներուդ տուներուն և քու ժողովրդիդ՝ և քու թոնիրներուդ և խմորի տաշտերուդ մէջ պիտի մտնեն։
4 Եւ գորտերը քու վրադ և ժողովրդիդ վրայ ու բոլոր ծառաներուդ վրայ պիտի ելլեն։
5 Եւ Տէրը բսաւ Մովսիսի, Ահարոնի ՝-ՈՒՐ բսէ։ Առուներուն վրայ, գետերուն վրայ ու լիճերուն վրայ ձեռքդ երկնցուր քու գաւազանովդ, ու եգիպտոսի երկրին վրայ գորտեր հանէ,
6 Եւ Ահարոն երկնցուց իր ձեռքը եգիպտոսի ջուրերուն վրայ։ և գորտեր եկան ու եգիպտոսի երկիրը ծածկեցին։
7 Եւ մոգերն ալ իրենց կախարդութիւններովը այնպէս բրին, ու եգիպտոսի երկրին վրայ գորտեր հանեցին։
8 Եւ Փարաւոն կանչեց Մովսէսը ու Ահարոնը և բսաւ, Աղաչեցէք Տէրոջը՝ որ հնձմէ ու իմ ժողովրդէս վերցնէ գորտերը, և ժողովուրդը պիտի արձակեմ որ Տէրոջը զոհ մատուցանեն։
9 Եւ Մովսէս բսաւ Փարաւոնի, Ժ-ՈՒ-

*ԵԲՐ. իր սիրտը սա բանիս վրայ չդրաւ։

Ն֊ի մը որոշէ ինծի, թէ ո՛րը քեզի համար ու ծառաներուդ համար և ժողովուրդիդ համար ազատիմ, որ քեզմէ և քու առներիդ զորաւորը կորսուի, և միայն գետին մէջը մնայ։ Ու անիկա բսաւ, Վազը։ Ու ինքը բսաւ, Քու խօսքիդ պէս ըլլայ, որ գիտնաս թէ մեր Եհովայ Աստուծոյն պէս չկայ։ Ու քեզմէ ու քու առներէդ՝ և քու ծառաներիդ ու քու ժողովուրդիդ զորաւորը պիտի վերնան. միայն գետին մէջը պիտի մնան։ Ու Մովսէս ու Ահարան Փարաւոնի քովէն ելան. և Մովսէս Տէրոջը աղաղակեց այն զորաւորուն համար՝ որ Փարաւոնի վրայ բերեր էր։ Ու Տէրը Մովսէսի բսածին պէս ըրաւ։ և առներէն, բակերէն և արտերէն զորաւորը մեռան։ Ու դէդ դէդ ժողվեցին զանոնք, և երկիրը հանեցաւ։ Բայց երբոր Փարաւոն հանգստութիւն ըլլալը տեսաւ, իր սիրտը խրաւցուց ու անոնց մտիկ չըրաւ՝ Տէրոջը բսածին պէս։

Ու Տէրը բսաւ Մովսէսի, Ըսէ Ահարոնի, Քու գաւազանդ երկընցուր, ու երկրի հողին զարկ, որ Եգիպտոսի բոլոր երկրին վրայ ՚մուն ըլլայ։ Ու այնպէս ըրին. քանզի Ահարոն իր գաւազանովը իր ձեռքը երկնցուց ու երկրի հողին զարկաւ, և մարդոց վրայ ու անասուններուն վրայ մուն եղաւ. Եգիպտոսի բոլոր երկրին վրայ երկրին բոլոր հողը մուն եղաւ։ Ու մոգերն ալ իրենց կախարդութիւններովը այնպէս ըրին՝ որ մուներ հանեն, բայց չկրցան. այսպէս մարդոց ու անասուններուն վրայ մուն եղաւ։ Ու մոգերը բսին փարաւոնի, Ա՛յս՝ Աստուծոյ մատն է. բայց Փարաւոնի սիրտը կարծրացաւ ու անոնց մտիկ չըրաւ՝ Տէրոջը բսածին պէս։

Ու Տէրը բսաւ Մովսէսի, Առաւսուն կանուխ կելլիր, և Փարաւոնի առջևը կայնէ. (ահա անիկա դեպ՚ի ջուրը կ՚ելլէ.) և բսի անոր, Տէրը այսպէս կ՚ըսէ. Արձակէ իմ ժողովուրդս որ պիտ պաշտեն. իսկ թէ որ իմ ժողովուրդս չարձակես, ահա ես քու վրադ՝ և քու ծառաներուդ վրայ՝ և քու ժողովուրդիդ վրայ ու քու առներուդ վրայ շատ ճանճեր պիտի խրկեմ, և եգիպտացւոց առները ճանճերով պիտի լեցուն, նաև այն գետինը որուն վրայ անոնք են։ Բայց այն օրը իմ ժողովուրդիս բընակած Գեսեմի երկիրը պիտի որոշեմ, և հոն ճանճեր պիտի չըլլայ. որ գիտնաս թէ երկրին մէջտեղը ես եմ Տէրը։ Ու իմ ժողովուրդիս ու քու ժողովուրդիդ մէջ խարտեաշ պիտի դնեմ. վաղը այս նշանը պիտի ըլլայ։ Ու Տէրը այնպէս ըրաւ. և փարաւոնի տանը՝ և անոր ծառաներուն տուներուն՝ և ամբողջ եգիպտոսի բոլոր երկրին վրայ շատ ճանճեր եկան. և ճանճերէն պատճառով երկիրը ապականեցաւ։

Ու Փարաւոն կանչեց Մովսէսը ու Ահարոնը՝ և բսաւ, Գացէք ձեր Աստուծոյն զոհ մատուցէք՝ ու հոս երկրին մէջ։ Ու Մովսէս բսաւ, Արժան չէ այսպէս ընել. քանզի եգիպտացւոց գարշելի ոչխարները Տէրոջը մեր Աստուծոյն զոհ պիտի մատուցանենք. թէ որ եգիպտացւոց գարշելի ոչխարները իրենց աչքին առջևը զոհ մատուցանեսլու ըլլանք, պիտի չքարկածեն մեզ։ Մենք երեք օրուան ճամբայ պիտի երթանք անապատին մէջ, և զոհ պիտի մատուցանենք մեր Տէր Աստուծոյն, ինչպես որ ինքը մեզի պատուիրէ։ Ու Փարաւոն բսաւ, Ես ձեզ թող կու տամ որ երթաք անապատին մէջ ձեր Եհովայ Աստուծոյն զոհ մատուցանէք, միայն թէ չատ հեռու չերթաք. ինծի համար աղաչեցէք։ Ու Մովսէս բսաւ, Ահա ես քու քովէդ կ՚ելլեմ ու Տէրոջը կ՚աղաչեմ որ վաղը Փարաւոնէն, անոր ծառաներէն ու անոր ժողովուրդէն չանճաճները երթայ. բայց Փարաւոն այլ ևս չխաբէ՝ ժողովուրդը թող չարձակելով Տէրոջը զոհ մատուցանելու։ Ու Մովսէս Փարաւոնի քովէն ելաւ, և Տէրոջը աղաչեց։ Ու Տէրը Մովսէսի

*Ա֊ՆԻ ՕՐԻՆ



պէս խօսքին պէս ըրաւ, և քանաւնէն, անոր ծառաներէն և անոր ժողովուրդէն չանճաճները վերցուց. մէկ հատ անգամ չմնաց։ Ու Փարաւոն այն անգամն ալ իր սիրտը խաւացուց ու ժողովուրդը չարձակեց։

## Գլ. Ը

Ու Տէրը բսաւ Մովսէսի, Փարաւոնի մօրը, և իսկ անոր, Երբոպէս ոյ Տէր Աստուածը այսպէս կ՚ըսէ. Արձակէ իմ ժողովուրդս՝ որ զիս պաշտեն. Քանզի այս անգամ իմ բոլոր հարուածներս պիտի խրկեմ քու՚վրադ՝ և քու ծառաներուդ ու քու ժողովուրդիդ վրայ. որ գիտնաս թէ բոլոր երկրի մէջ ինծի պէս չկայ։ Արդարև հիմա իմ ձեռքս պիտի երկնցընեմ՚ որ քեզ ու քու ժողովուրդդ ժանտախտով զարնեմ, և երկրէն պիտի կորսուիս։ Ու սոսկ հասնելու համար քեզ վերցուցի՝ որ իմ զօրութիւնս քեզմով ցուցնեմ, և բոլոր երկրի մէջ իմ անունս պատմուի։ Դուն տակաւին իմ ժողովուրդիս դէմ կենալով՝ պիտի չարձակես զանոնք։ Ահա ես վաղը այս առին խիստ աստիճ կարկուտ պիտի տեղացնեմ, որ անոր պէս եգիպտոսի մէջ եղած չէ՝ անոր հաստատած օրէն մինչև հիմա։ Ու հիմա ղրկ խրկի, և ժողվէ քու հօտերդ՝ ու ինչ որ ունիս գաշտին մէջ. քանզի մարդ ու անասուն որ գաշտին մէջ գտնուի՝ ու առներուդ ժողվուած չըլլայ, անոնց վրայ կարկուտ պիտի իջնայ, և պիտի մեռնին։ Փարաւոնի ծառաներէն ով որ Տէրոջը խօսքէն կը վախնար՝ իր ծառաները ու հօտերը առներու մէջ ժողվեց։ Ու ով որ Տէրոջը խօսքին ուշադրութիւն չըրաւ, իր ծառաները ու իր հօտերը գաշտին մէջ թողուց։

Ու Տէրը բսաւ Մովսէսի, Քու ձեռքդ դէպ՚ի երկինքը երկընցուր, և եգիպտոսի բոլոր երկրին մէջ մարդոց ու անասուններուն վրայ խաղատարներ հանդ ուռեցքներ երկրին մէջ մնան։ Մովսէս դէպ՚ի երկինքը ցանկը գարնիկա, և մարդոց և անասուններուն վրայ խաղատարներ հանդ ուռեցքներ եղան։ Ու մոգերը ուռեցքներուն պատճառովը չկրցան կանգնիլ Մովսէսի առջևը. քանզի ուռեցքները թէ մոգերուն վրայ և թէ բոլոր եգիպտացւոց վրայ եղան։ Ու Տէրը կարծրացուց Փարաւոնի սիրտը. և անոնց մտիկ չըրաւ, ինչպես որ Տէրը Մովսէսի բսեր էր։

Ու Տէրը բսաւ Մովսէսի, Առաւսուն կանուխ ելլիր, և Փարաւոնի առջևը կայնէ, և անոր բսի, Երբոպէս ոյ Տէր Աստուածը այսպէս կ՚ըսէ. Արձակէ իմ ժողովուրդս՝ որ զիս պաշտեն. Քանզի այս անգամ իմ բոլոր հարուածներս պիտի խրկեմ քու՚վրադ՝ և քու ծառաներուդ ու քու ժողովուրդիդ վրայ. որ գիտնաս թէ բոլոր երկրի մէջ ինծի պէս չկայ։ Արդարև հիմա իմ ձեռքս պիտի երկնցընեմ՚ որ քեզ ու քու ժողովուրդդ ժանտախտով զարնեմ, և երկրէն պիտի կորսուիս։ Ու սոսկ հասնելու համար քեզ վերցուցի՝ որ իմ զօրութիւնս քեզմով ցուցնեմ, և բոլոր երկրի մէջ իմ անունս պատմուի։ Դուն տակաւին իմ ժողովուրդիս դէմ կենալով՝ պիտի չարձակես զանոնք։ Ահա ես վաղը այս առին խիստ աստիճ կարկուտ պիտի տեղացնեմ, որ անոր պէս եգիպտոսի մէջ եղած չէ՝ անոր հաստատած օրէն մինչև հիմա։ Ու հիմա ղրկ խրկի, և ժողվէ քու հօտերդ՝ ու ինչ որ ունիս գաշտին մէջ. քանզի մարդ ու անասուն որ գաշտին մէջ գտնուի՝ ու առներուդ ժողվուած չըլլայ, անոնց վրայ կարկուտ պիտի իջնայ, և պիտի մեռնին։ Փարաւոնի ծառաներէն ով որ Տէրոջը խօսքէն կը վախնար՝ իր ծառաները ու հօտերը առներու մէջ ժողվեց։ Ու ով որ Տէրոջը խօսքին ուշադրութիւն չըրաւ, իր ծառաները ու իր հօտերը գաշտին մէջ թողուց։

Ու Տէրը բսաւ Մովսէսի, Քու ձեռքդ դէպ՚ի երկինքը երկընցուր, և եգիպտոսի բոլոր երկրին մէջ մարդոց ու անասուններուն վրայ եղած պտուղներ բոլոր խո-

*ԵՔԸ. պտիպ վրայ՝

23 ան վրայ կարկուտ պիտի գայ։ Եւ Մովսէս իր գաւազանը դէպ ի երկինքը երկընցուց. և Տէրը որոտաց և կարկուտ խրկեց, և երկրին վրայ կրակ կը վազէր. և Տէրը Եգիպտոսի երկրին
24 վրայ կարկուտ տեղացոյց։ Եւ կարկուտ՝ ու կարկտանին միջտեղը խառնուած կրակ եկաւ. այնպէս սաստիկ էր որ Եգիպտոսի բոլոր երկրին մէջ՝ ազգ ըս-
25 խրին հետէ անոր պէս եղած չէր։ Եւ կարկուտը Եգիպտոսի բոլոր երկրին մէջ՝ դաշտը եղածին ամէնը մարդէն մինչև անասուն զարկաւ. և կարկուտը զաշտին բոլոր խոտը զարկաւ, և զա-
26 ղին բոլոր ծառերը կոտրեց։ Միայն Գեսեմի երկրին մէջ՝ ուր որ Իսրայէլի որդիքը էին՝ [ב֣נֵי־יִשְׂרָאֵל], կարկուտ չեղաւ։
27 Եւ Փարաւոն Մովսէսը և Ահարոնը կանչեց և ըսաւ անոնց, Այս անգամ մեղանչեցի. Տէրոջ արդար է, և ես ու իմ ժողովուրդս
28 չանգստուր ենք։ Աղաչեցէք Տէրոջը՝ որ Աստուծոյ *որոտումները ու կարկուտը դադարտին. և ձեզ պիտի արձակեմ,
29 և ալ պիտի չկենաք։ Եւ Մովսէս ըսաւ անոր, Քաղաքէն դուրս հազիս պէս՝ իմ ձեռքերս Տէրոջը պիտի երկընցնեմ, -- որոտումները պիտի դադարին, և ալ կարկուտ պիտի չըլլայ. որ գիտնաս
30 թէ երկիրը Տէրոջն է։ Բայց ես և գիտեմ որ դուն ու քու ծառաներդ տակաւին Տէր Աստուծմէն չէք վախնար։
31 Եւ քթանը ու գարին զարնուեցան. քանզի գարին հասած էր, և քթա-
32 ղը ծերմի գացած։ Բայց ցորենը ու հնձադը չզարնուեցան, քանզի ուշ կը բուսանին։
33 Եւ Մովսէս Փարաւոնի քովին քաղաքէն դուրս եկաւ, և իր ձեռքերը Տէրոջը երկնցուց. և որոտումները կարկուտը դադարեցան, և երկրին
34 վրայ անձրեւ չկաթեցաւ։ Եւ Փարաւոն երբոր անձրեւին ու կարկտանին և որոտումին դադարելը տեսաւ, նորէն մեղանչեց, և սիրտը խստացուց ինքն

35 ու իր ծառաներուն։ Այսպէս Փարաւոնի սիրտը կարծրացաւ. և Իսրայէլի որդիքը չարձակեց, ինչպէս որ Տէրը Մովսէսի ձեռքովը ըսեր էր։

## Գլ. Ժ

1 Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Մտիր Փարաւոնի. վասն զի ես անոր սիրտը ու անոր ծառաներուն սիրտը խստացուցի, որ այս իմ նշաններս ցուցընեմ ա-
2 նոնց մէջը։ Եւ որ պատմես քու որդիիդ ու քու որդւոյդ որդիին ականջներուն՝ ին որ երի եգիպտացւոց մէջ, և իմ նշաններս որ անոնց մէջ ցուցուցի, որ գիտնաք թէ ես եմ Տէրը։
3 Եւ Մովսէս ու Ահարոն մտան Փարաւոնի, և ըսին անոր, Երբայեցւոց Եհովայ Աստուածը այսպէս կ'ըսէ. Մինչև ե՞րբ պիտի չկամիս խոնարհիլ իմ առջեւս. արձակէ իմ ժողովուրդս որ
4 պաշտանին։ Վասն զի թէ որ իմ ժողովուրդս արձակել չուզես, ահա վաղը քու սահմաններուդ վրայ մարախներ
5 պիտի խրկեմ։ Եւ երկրին երեսը պիտի ծածկեն, և հիւ պիտի չկրնայ տեսնել երկիրը. և կարկտանէն ապաւինած ձեզի մնացածը պիտի ուտեն, և արտին մէջ բուսած ձեր բոլոր ծառերը պիտի
6 ուտեն։ Եւ քու տուներդ ու քու բոլոր ծառաներուդ տուները և ամէն եգիպտացւոց տուները պիտի լեցուին, որ ոչ քու հայրերդ՝ ոչ ալ քու հայրերուդ հայրերը տեսած են իրենց երկրի վրայ եղած օրէն մինչև այսօր։ Եւ գարձաւ ու Փարաւոնի քովէն դուրս եկաւ։
7 Եւ Փարաւոնի ծառաները ըսին անոր, Մինչև ե՞րբ այս *հիւրը մեզի որոգայթ պիտի ըլլայ. արձակէ մարդիկը որ իրենց Եհովայ Աստուածը պաշտանին. տակաւին չէ՞ս գիտեր որ Եգիպտոս աւերակ եղաւ։
8 Եւ Մովսէսը ու Ահարոնը Փարաւոնի դարձուցին. և անիկա ըսաւ անոնց, Գացէք պաշտեցէք ձեր Եհովայ Աստուածը. †այդ *որո՞նք են

*Եբր. ձայները †Եբր. հերիք է.

*Եբր. ո՞վ և ո՞վ



9 գացողները։ Եւ Մովսէս ըսաւ, Մեր մանուկներովը ու մեր ծերերովը պիտի երթանք, մեր տղաքներովը ու մեր աղջիկներովը, մեր հօտերովը ու մեր արջառներովը պիտի երթանք. քանզի
10 ասն պիտի պահենք Տէրոջը։ Եւ ըսաւ անոնց, Տէրը այնպէս ձեր հետը ըլլայ, ինչպէս որ ես ձեզ ու ձեր տղաքները կ'արձակեմ. զգուշացէք, քանզի չա-
11 րիք կան ձեր առջեւը։ Ոչ այդպէս. հիմա գուք երկի մարդիկները գացէք ու Տէրը պաշտեցէք. քանզի դուք զայդ կ'ուզէիք։ Եւ Փարաւոնի առջեւէն վռնդուեցան։
12 Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Երկընցուր քու ձեռքդ եգիպտոսի երկրին վրայ մարախներուն համար, որ եգիպտոսի երկրին վրայ գան, և երկրին բոլոր խոտը կարկտանէն բոլոր մնացածը
13 ուտեն։ Եւ Մովսէս երկընցուց իր գաւազանը եգիպտոսի երկրին վրայ. և Տէրը բոլոր այն օրը ու բոլոր գիշերը երկրին վրայ արեւելեան հով վրեց առաւ. և երբ առաւոտ եղաւ՝ արեւելեան հովը մարախները բերաւ։ Եւ մարախները եգիպտոսի բոլոր երկրին վրայ գան, և եգիպտոսի բոլոր առմանեանց վրայ իջան. խիստ սաստիկ էին. անոնցմէ առաջ այնպէս մարախ չեղաւ, անոնցմէ ետքն ալ այնպէս պի-
15 տի չըլլայ։ Եւ բոլոր երկրին երեսը ծածկեցին, և երկիրը մթընցաւ, և երկրին բոլոր խոտը և կարկտանէն մնացած ծառերուն ամէն պտուղները կերան. և եգիպտոսի բոլոր երկրին մէջ եղած ծառերուն վրայ և արտին խոտերուն վրայ բնաւ կանաչեղէն չ'մնաց։
16 Ուստի Փարաւոն չուտով կանչեց Մովսէսը ու Ահարոնը, և ըսաւ, Ձեր Տէր Աստուծոյն ու ձեզի դէմ մեղանչեցի. և հիմա շնորհք ըրէք՝ միայն այս անգամ նեղութիւնը իմ չանցնգնա, ու ձեր Տէր Աստուծոյն աղաչեցէք՝ որ իմ վրայէս միայն այս մահը վերցնէ։
18 Եւ անիկա Փարաւոնի քովէն դուրս
19 եկաւ, ու Տէրոջը աղաչեց։ Եւ Տէրը

խիստ սաստիկ արեւմտեան հով մը երբեկեց, որ մարախները վերցուց ու կարմիր ծովը գցեց գանոնք. եգիպտոսի բոլոր սահմաններուն մէջ մէկ մարախ
20 մը չմնաց։ Բայց Տէրը կարծրացուց Փարաւոնի սիրտը, ու անիկա Իսրայէլի որդիները չարձակեց։
21 Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ձեռքդ դէպ ի երկինքը երկընցուր, որ եգիպտոսի երկրին վրայ խաւար ըլլայ, չո-
22 շափելի խաւար մը ըլլայ։ Եւ Մովսէս իր ձեռքը դէպ ի երկինքը երկընցուց, ու եգիպտոսի բոլոր երկրին մէջ երեք օր
23 խաւար եղաւ երեք օր. մէկզմէկ չէին տեսներ, և երեք օր մէկը իր տեղէն չկրնար. բայց Իսրայէլի բոլոր որդիքը իրենց բնակութեանցը մէջ լոյս ունէին։
24 Եւ Փարաւոն կանչեց Մովսէսը ու ըսաւ, Գացէք պաշտեցէք Տէրոջման. միայն ձեր հօտերը ու արջառները մնանան. ձեր ընտանեկներն ալ ձեզի հետ
25 երթան։ Եւ Մովսէս ըսաւ, Պիտի երթանք. և մեր ձեռքը զոհեր ու ողջակիզներ ալ տանք, որ մեր Տէր Աս-
26 տուծոյն մատուցանենք. և մեր հօտերն ալ մեր հետը պիտի երթան՝ անոնցմէ մէկ կճղակ մը չմնալով. քանզի մեր Տէր Աստուածը պաշտելու համար անոնցմէ պարտինք առնել, ու մինչ մինչև որ հոն երթանք, չենք գիտեր թէ ինչո՞վ պիտի պաշտենք Տէրը։ Եւ Տէրը կարծրացուց Փարաւոնի
28 սիրտը, որ չուզեց արձակել զանոնք։ Եւ Փարաւոն ըսաւ անոր, Քովէս գնա. զգուշացիր երբ որ անձիդ, մէկ երեսս ալ իմ երեսս չտեսնես. քանզի այն օրը որ իմ երեսս տեսնես, պիտի մեռ-
29 նիս։ Եւ Մովսէս ըսաւ, Ճիշդ ըսիր. մէկ երեսդ պիտի չտեսնեմ։

## Գլ. ԺԱ

1 Եւ Տէրը ըսաւ Մովսէսի. Փարաւոնի վրայ ու եգիպտոսի վրայ մի հարուած ալ պիտի բերեմ, այնուհետև ձեզ տակ պիտի արձակէ. և երբոր չե՞ն ար-

2 ասի ընէ, Հինա խօսէ Ժողովուրդին ա-
կանջներաւն, ու ամէն մարդ իր զրա-
յիչէն և ամէն կնիկ իր զրացիկէն ար-
ծաթեղէն զարդեր ու ոսկեղէն զարդեր
3 խնդրեն։ Եւ Տէրը շնորհք տուաւ Ժո-
ղովուրդին եգիպտացւոց առջեը։ Մով-
սէս ալ եգիպտոսի երկրին մէջ փարա-
ւոնի ծառաներուն առջեը ու Ժողո-
վուրդին առջեը խիստ մեծ մարդ մըն
էր։
4 Եւ Մովսէս ըսաւ, Տէրը այսպէս կ'ը-
սէ. Ես կէս գիշերին եգիպտոսի մէջտե-
5 ղը պիտի ելնեմ։ Ու եգիպտոսի երկրին
մէջ ամէն առջինեկը պիտի մեռնի, իր
աթոռին վրայ նստող փարաւոնի ա-
ռջինեկէն մինչև ազագրին հաւը եղող
ազախնին առջինեկը՝ և բոլոր ա-
6 նասուններուն առջինեկը։ Ու եգիպ-
տոսի բոլոր երկրին մէջ մեծ ազազակ
պիտի ըլլայ, անանկ որ անոր պես ոչ
7 եղած է, ոչ ալ նորէն պիտի ըլլայ։ Եւ
Իսրայէլի որդւոցը մէկուն դէմ մա-
զն մինչև անասուն չուն մին ալ պի-
տի չշարժէ իր լեզուն. որ գիտնաք Թէ
Տէրը եգիպտացւոց ու Իսրայէլի մէջ-
8 տեղը տարբերութիւն կ'ընէ։ Եւ այս
բոլոր քու ծառաներդ ինծի պիտի իջ-
նեն, ու ինծի խոնարհութիւն ընեն ը-
սելով, Դուն ու բոլոր քեզի հետևող
ժողովուրդըելէք։ ու անկէ ետքը պի-
տի ելլեմ։ Եւ Մովսէս սաստիկ բար-
կութեամբ փարաւոնի դիմէն դուրս
եկաւ։
9 Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Փարաւոն
ձեզի մարկի պիտի չընէ, որ իմ հրաշք-
ներս շատցընեմ եգիպտոսի երկրին մէջ։
10 Եւ Մովսէս ու Ահարոն այս ամէն հր-
բաշքները փարաւոնի առջեը ըրին. և
Տէրը կարծացուց փարաւոնի սիրտը,
ու Իսրայէլի որդիքը իր երկրէն չար-
ձակեց։

## ԳԼ. ԺԲ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահա-
րոնի եգիպտոսի երկրին մէջ ըսելով,
2 Ա.յս ամիսը ձեզի ամիսներուն սկիզբն
ըլլայ. ձեզի տարւոյն ամիսներուն ա-
3 ռաջինն ըլլայ, Իսրայէլի բոլոր ժողով-
քին զրուցեցէք ըսելով, Այս ամսուն
տասնին իւրաքանչիւրն իրեն գառնուկ
մը առնէ՝ հայրերուն տաներ հա-
մեմատ, այսինքն տան գլուխ մէյմէկ
4 գառնուկ։ Եւ Թէ որ մէկ տուները մէկ
գառնուկին քիչ կու գայ, այն դրացին
իր տանը քովը եղած դրացիին հետ
հոգիներուն համրանքին համեմատ առ-
նէ. գառնուկին վրայով ամէն մէկուն
5 իր կերածին չափ հաշիւ ընէք։ Ձեր
գառնուկը անարատ, արու, մէկ տա-
րեկան ըլլայ. ոչխարներէն կամ այծե-
6 րէն առնէք զայն։ Եւ մինչև աս ամ-
սուն չորեքտասաներորդ օրը պահէք
զայն. ու իսրայէլի ժողովրդին բոլոր
բազմութիւնը մրթին զանիկա *իրի-
7 կուան գէմ։ Եւ արիւնէն առնեն ու
տուներուն երկու կողմի դրանդեացը
ու վերի սեմին վրայ քսեն, ուր որ զա-
8 նիկա պիտի ուտեն։ Եւ միսը այն գի-
շերը ուտեն. զանիկա կրակի վրայ խո-
րոված բաղարջով ու լեղի խոտերով
9 պիտի ուտեն։ Անկէ հում կամ չուրի
մէջ եփած չուտէք, բայց կրակի վրայ
խորոված, անոր գլուխը ոտքերովը ու
10 փորոտիքովը մէկտեղ։ Եւ անկէ բան մը չի պահէք մինչև առաւօտ, ու
անկէ մնչ որ առաւօտան կը մնայ՝ կա-
11 մով այրէք։ Եւ այսպես պիտի ուտէք
զայն. ձեր գօտիները մէջքերնիդ՝ ու
ձեր կօշիկները ոտքերնիդ՝ և ձեր ձո-
պերը ձեռքերնիդ բռնելով. զանիկա
արագութեամբ ուտէք։ Տէրոջը †զատիկն
12 է նայ։ Եւ այն գիշերը եգիպտոսի երկ-
րէն պիտի անցնիմ, ու եգիպտոսի երկ-
րին մէջ ամէն առջինեկը՝ մարդէն մին-
չև անասուն պիտի զարնեմ. և եգիպ-
տոսի բոլոր ‡աստուածներուն վրայ
դատաստան պիտի կատարեմ. ես Եր
13 Տէրը։ Եւ արիւնը ձեր եղած տուներ-
ուն վրայ նշանի համար ըլլայ, ու ես
ըլլայ. ձեզի տարւոյն ամիսներուն ա-

*ՆԵՐ. երկու իրիկուններուն մէջտեղը։
†ՆԵՐ. ՓՍՍԱՒ, այսինքն՝ անցնել.
‡Կամ իշխաններուն։



բար արիւնը տեսնեմ՝ ձեր վրայէն պի-
տի անցնեմ. և հարուածը ձեր վրայ
պիտի չգայ չեղ կորսընցնելու, երբոր
14 եգիպտոսի երկիրը զարնեմ։ Եւ այն
օրը ձեզի յիշատակի համար ըլլայ և զա-
նիկա Տէրոջը տօն պահէք. ձեր *սե-
րունդին մէջ յաւիտենական կանոնով
15 մը տօն պահէք զայն, նօթը օր բա-
զարջ ուտէք. նոյն իսկ առաջին օրը
ձեր տուներէն դուրս ձգէք խմորը.
քանզի առջի օրէն մինչև եօթներորդ
օրը ով որ խմորեալ հաց ուտի, այն
16 անձը իսրայէլին պիտի կորսուի։ Եւ
առաջին օրը սուրբ ժողով մը ըլլայ,
եօթներորդ օրն ալ ձեզի սուրբ ժողով
մը ըլլայ. այն օրերը գործ մը չը
գործուի, բայց ամէն մէկուն ուտելի-
քը, զայն միայն պատրաստէք։ Եւ բա-
զարջներուն տօնը պահէք. քանզի այն
նոյն օրուան մէջ ձեր զօրքերը եգիպ-
տոսի երկրէն հանեցի. ուստի ձեր սե-
րունդին մէջ յաւիտենական կանոնով
18 մը այն օրը պահեցէք Առաջինն ամսուն
չորեքտասաներորդ օրուան իրիկունէն
մինչև ամսուն քսանա մէկերորդ օրուան
19 իրիկունը բաղարջ պիտի ուտէք։ Եօթը
օր տուներնիդ խմոր չգտնուի. քանզի
ով որ խմորեալ հաց ուտէ, այն անձը
Իսրայէլի ժողովրդէն պիտի կորսուի, Թէ
օտարական ըլլայ և Թէ երկրին բնակիչ.
20 Խմորեալ բան մը պիտի չուտէք. ձեր
բոլոր բնակութեանցը մէջ բազարջ ու-
տէք։
21 Եւ Մովսէս կանչեց Իսրայէլի բոլոր
ծերերը, ու բսաւ անոնց, Ձեր ընտան-
եացը համեմատ ընարեցէք, ու առէք
ձեզի ‡ոչխարներ, ու զատկին համար
22 մորթեցէք։ Եւ զոտյի փունջ մը ա-
ռէք, ու կանդրին մէջ եղած արիւնին
թաթխեցէք, և դրանը վրայի սեմին
ու երկու կողմի դրանդեացը վրայ՝ կան-
դրին մէջ եղած արիւնէն քսեցէք, և
մինչև առաւօտ ձեզմէ մէկը իր տանը
23 դռնէն դուրս չելլէ։ Քանզի Տէրը ե-
գիպտացիները զարնելու պիտի անցնի,
և երբ դրանը վրայի սեմին ու երկու
կողմի դրանդեացը վրայ արիւնը տես-
նէ, Տէրը այն դրանը վրայէն պիտի
անցնի, և պիտի չթողու սատակիչը՝ որ
ձեր տուները մտնէ չեղ զարնելու հա-
24 մար։ Եւ այս բանը քեզի ու քու որ-
դւոցդ կանան ըլլալու համար պահէք
25 յաւիտեան։ Եւ ըլլայ Թէ երբոր այն եր-
կիրը գաք՝ զոր Տէրը ձեզի պիտի տայ
իր ըսածին պէս, այս պաշտօնը պա-
26 հէք։ Եւ ըլլայ Թէ երբոր ձեր որդիքը
ձեզի ըսեն Թէ Ա.յս պաշտօնով ի՞նչ ը-
27 սել կու զէք, Ըսէք որ Սիկիա Տէրոջը
զատկին զոհն է, որ անիկա եգիպտոսի
մէջ Իսրայէլի որդւոցը տուներուն վը-
րայէն անցաւ երբոր եգիպտացիները
զարկաւ, ու մեր տուները ազատեց։
Եւ ժողովուրդը խոնարհեցաւ ու եր-
28 կրպագութիւն ըրաւ։ Եւ Իսրայէլի
որդիքը գացին, ու Տէրոջը Մովսէսի և
Ահարոնի պատուիրածին պէս ըրին,
անանկ ըրին։
29 Եւ եղաւ որ կէս գիշերին Տէրը ե-
գիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը
զարկաւ, իր աթոռը նստող փարաւո-
նի առջինեկէն մինչև բանտի մէջ եղած
գերիին առջինեկը՝ և ամէն անասու-
30 նին առջինեկը։ Եւ ‡ինկերը եղաւ
Փարաւոն ու անոր բոլոր ծառաները
և բոլոր եգիպտացիք, ու եգիպտոսի
մէջ մեծ ազազակ մը եղաւ. քանզի
տուն մը չկար որ անոր մէջ մեռեալ
չըլլար։
31 Եւ գիշերով կանչեց Մովսէսն ու Ա-
հարոնը և բսաւ, Արէք, ու ելէք իմ
ժողովուրդիս մէջէն Թէ դուք և Թէ
Իսրայէլի որդիքն, ու գացէք պաշտե-
32 ցէք Եհովան ինչպես որ ըսիք. նաև
ձեր հօտերը ու ձեր արջառները առէք՝
ինչպես որ ըսիք, ու գացէք. և գիս
33 ալ օրհնեցէք։ Եւ եգիպտացիք բռնա-
գաւեցին ժողովուրդը՝ որ չուտով այն
երկրէն դուրս խրկեն զանոնք. քանզի
34 ըսին, Ամենքս ալ կը մեռնինք։ Եւ ժո-
ղովուրդը իրենց զանգուածը գեռ չը
խմորած՝ իրենց խմորի տաշտերը իրենց
լաթ երովը փաթթած ուսերնուն վրայ

*ՆԵՐ. ազգերուն

35 վերցուցին եւ խրայէլի որդիքը Մովսիսէ խօսքին պէս ըրին, ու եգիպտացիներէն արծաթեղէն զարդեր և ոսկեղէն զարդեր ու հանդերձներ խընդրեցին։ 36 Տէրը Ժողովուրդին շնորհք տուաւ եգիպտացւոց առջեւը, անանկ որ ընդառաջ անոնց ինդրածը տուին. ու անոնք կողոպտեցին զիպտացիները։

37 Եւ խրայէլի որդիքը Ռամսեսէն դէպի Սոկքովթ չուեցին. ընտանիքներէն զատ վեց հարիւր հազարի չափ հեռանակ էրիկ մարդիկ էին, եւ անոնց հետ խառն բազմութիւն ալ հաւ. և ոչխարները ու արջառները խիստ մեծ հօտ էին։ 39 Եւ եգիպտոսէն իրենց հանած գանգուածէն անխմոր չոփեր եփեցին, վասն զի խմորեալ չէր. քանզի Եգիպտոսէն վռնտուեցան, ու չէին կրնար ուշանալ. ու իրենց պաշար ալ չէին պատրաստեր։

40 Ու եգիպտոսի մէջ խրայէլի որդւոցը բնակած ժամանակը չորս հարիւր 41 երեսուն տարի էր։ Ու եղաւ որ չորս հարիւր երեսուն տարիներուն վերջը՝ այն նոյն օրը Տէրոջը բոլոր զօրքերը 42 եգիպտոսի երկրէն ելան։ Այսկա Տէրոջը համար պահելու գիշեր մըն է, քանզի զանոնք եգիպտոսի երկրէն հանեց. այս այն գիշերն է Տէրոջը համար խրայէլի բոլոր որդիներէն իրենց ազգերուն մէջ պահելու։

43 Եւ Տէրը ըսաւ Մովսիսի ու Ահարոնի, Այս է զատկին կանոնը. բնաւ մէկ օտարական մը անկէ պիտի չուտէ։ 44 Բայց ամէն մարդուն ստակով ծախու առած ծառան երբոր զանիկա թլփատես, ան առնոր թող ուտէ անկէ։ 45 Օտարականն ու վարձկանը անկէ պիտի չուտէ։ 46 Մէկ տան մէջ պիտի ուտուի ան. տանէն դուրս չհանես այն միսէն, ու անոր մէկ ոսկրը պիտի չկոտրէք։ 47 Իսրայէլի բոլոր ժողովքը ընէ զայն։ 48 Եւ երբ օտարական մը քու քովդ պանդխտանալու ըլլայ, ու Տէրոջը զատկի ընելու ըլլայ, անոր ամէն արուն թող թլփատուի, և անոնէն զայն ընելու մօտենայ, ու ինքը երկրին բնակուին պէս ըլլայ. քանզի անթլփատ մէկը բնաւ անկէ պիտի չուտէ։ 49 Երկրացիին ու ձեր մէջը բնակող օտարականին մէկ օրէնք ըլլայ։ 50 Եւ իսրայէլի բոլոր որդիքը Մովսիսի ու Ահարոնի պատուիրածին պէս ըրին. անանկ ըրին։ 51 Եւ եղաւ որ այն նոյն օրը Տէրը եգիպտոսի երկրէն հանեց իսրայէլի որդիքը իրենց զօրքերովը։

## Գլ. ԺԳ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսիսի ընդդէմ, 2 Սրբէ ինծի ամէն անդրանիկը՝ իսրայէլի որդւոցը մէջ ամէն արգանդ բացողը, թէ մարդուն թէ անասունին. ան իմս է։ 3 Եւ Մովսէս բաւ Ժողովրդին, Յիշեցէք այս օրը որ եգիպտոսէն՝ ծառայութեան տունէն ելաք, վասն զի Տէրը ձեզ ամէկց զօրաւոր ձեռքով հանեց. և խմորեալ հաց պիտի չուտուի։ 4 Ուր Դուք այսօր ելաք, Աւիվ ամսուն մէջ։ 5 Եւ ըլլայ որ Տէրը զանիկա բերէ քեզ Քանանացւոց ու Փերեզացւոց և Ամորհացւոց ու Խեւացւոց և Յեբուսացւոց երկիրը՝ զոր քեզի տալու համար քու հայրերուդ երդուաւ բաւ, այն երկիրը որ կաթ ու մեղր կը բղխէ, այս ամսուն մէջ պիտի կատարես այս պաշտօնը։ 6 Եօթը օր բաղարջ պիտի ուտես, և եօթներորդ օրը տօն է Տէրոջը։ 7 Եօթը օրերուն մէջ բաղարջ պիտի ուտուի. ու քովդ խմոր պիտի չտեսնուի. ոչ ալ քու քովդ խմոր պիտի տեսնուի քու բոլոր սահմաններուդ մէջ։ 8 Եւ ան օրը քու որդւոյդ պիտի պատմես ըսելով, Այս անոր համար է որ Տէրը ինծի բրաւ երբ Եգիպտոսէն ելայ։ 9 Ան, երբոր ես Եգիպտոսէն ելայ, նշան պիտի ըլլայ ձեռքիդ վրայ, ու քու աչքերուդ միջտեղը յիշատակի համար, որ Տէրոջը օրէնքը քու բերնիդ մէջ ըլլայ. վասն զի Տէրը քեզ զօրաւոր ձեռքով հանեց Եգիպտոսէն։ 10 Ուստի դուն այս կանոնը տարուէ տարի իր տաւնին պիտի պահես։ 11 Եւ ըլլայ որ երբ Տէրը քեզ քանանացւոց երկիրը տանի, ինչպէս որ քեզի ու քու հայրերուդ երդուաւ 12 բրաւ, ու զանիկա քեզի տայ, Ան ամէնը որ արգանդ կը բանայ, Տէրոջը համար պիտի զատես. և քու ունեցած անասունիդ ամէն առջինեկ արուները Տէրոջը պիտի ըլլայ։ Ու իշուն ամէն առջինեկը ոչխարով մը փրկես, և թէ որ չփրկես, անոր վիզը կտրես ու քու որդւոցդ մէջ մարդոց ամէն անդրանիկը փրկես։ 14 Ետքը պիտի ըլլայ, ու երբ որ քու որդիդ *ըսի մը քեզի հարցընէ ըսելով, Ինչ է սա, անոր պիտի ըսես Թէ Տէրը մեզ Եգիպտոսէն ծառայութեան տունէն զօրաւոր ձեռքով հանեց։ 15 Նեց։ Ու Փարաւոն երբ խրտուցաւ ու մեզ արձակել չուզեց, Տէրը եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը՝ մարդուս առջինեկին մինչև անասունի առջինեկը մեռցուց. անոր համար ես ամէն արգանդ բացող արուն Տէրոջը զոհ կ'ընծայեմ, ու իմ որդւոցս ամէն առջինեկը կ'ազատեմ։ 16 Ուստի ան նշանը ձեռքիդ վրայ և ճակտիդ վրայ նշանի համար՝ որ մեզ զօրաւոր ձեռքով Տէրը Եգիպտոսէն հանեց։

17 Եւ եղաւ որ երբ Փարաւոն Ժողովրդը արձակեց, Աստուած զանոնք Փղշտացւոց երկրին ճամբայէն չտարաւ, թէև այն ճամբան մօտ էր. քանզի Աստուած ըսաւ, Գուցէ որ ժողովուրդը զղջայ երբոր պատերազմ տեսնեն, ու 18 եգիպտոս դառնայ։ Այլ Աստուած ժողովուրդը կարմիր ծովու անապատին ճամբային պարզուցաւ։ Ու իսրայէլի որդիքը դէնքով դէնքով եգիպտոսի երկրէն ելան։ 19 Եւ Մովսէս Յովսեփի ոսկորները իր հետը առաւ. քանզի անիկա իսրայէլի որդւոցը հաստատ երդուեցաւ բնկ տուաւ բսելով, Անշուշտ Աստուած ձեզի այցելութիւն պիտի բնէ, ու իմ ոսկորներս ասկից հետերնիդ հանեցէք։

20 Եւ Սոկքովթէն չուեցին, ու Եթամի անապատին ծայրը իջևան ըրին։ 21 Եւ Տէրը անոնց առջեւէն կ'երթար ցորկը ամպի սիւնով՝ անոնց ճամբայ ցուցնելու համար, ու գիշերը կրակի սիւնով՝ անոնց լոյս տալու համար, որ ցորկն ու գիշերը երթան։ 22 Ցորկը ամպի սիւնը ու գիշերը կրակի սիւնը ժողովուրդին առջեւէն չպակասցաւ։

## Գլ. ԺԴ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսիսի ըսելով, 2 Խօսէ իսրայէլի որդւոցը՝ որ դառնան ու փիախերթին առջեւը՝ Մագդոլին ու ծովուն միջեւցը բանակ դնեն. Բէելսեփոնին առջեւն՝ անոր դիմացը ծովուն քովը բանակ դրէք։ 3 Եւ Փարաւոն իսրայէլի որդւոցը համար պիտի ըսէ Թէ երկրին մէջ ամէն առջինեկը՝ մարդուս առջինեկը մեռցուց։ անոր համար ես ամէն արգանդ բացող արուն Տէրոջը զոհ կ'ընծայեմ, ու իմ որդւոցս ամէն առջինեկը կ'ազատեմ։ 4 Ուստի Դուք այսօր ելաք, Աւիվ ամսուն մէջ։ 5 Եւ ըսաւ Տէրոջը Եգիպտոսի թագաւորին Թէ ժողովուրդը փախաւ, և Փարաւոնի ու անոր ծառայներուն սիրտը ժողովուրդին դէմ դարձաւ։ ու ըսին, Մենք ինչո՞ւ ըրինք սա բանը՝ որ իսրայէլը մեզի ծառայութիւն ընելէն Թող տուինք։ 6 Ուստի Ետ իր կառքը պատրաստեց, ու իր ժողովուրդը իր հետը առաւ։ Ու 7 մի հարիւր ընտիր կառքեր ու Եգիպտոսի բոլոր կառքերը՝ և անոնց ամէն մէկուն վրայ սպասիրաններ առաւ։ Ու Տէրը Եգիպտացի Փարաւոնի թագաւորին սիրտը կարծրացուց, ու անիկա իսրայէլի որդւոցը հետևեցաւ։ և իսրայէլի որդիքը բարձր ձեռքով ելան։ 9 Բայց Եգիպտացիք անոնց հետևեցան իրենք, Փարաւոնի ամէն ձիերը՝ կառքերը՝ և անոր հեծեալները ու զօրքերը, և հասան անոնց՝ որ բանակած էին

*Եբր. վազը

*Կամ չփոխ ուած

Ծովուն մեռ Փխիրօթի քովը՝ Բեհզաեփհի առջեւ։
10 Եւ երբ Փարաւոն մօտեցաւ, Իսրայէլի որդիքը իրենց աչքերը վերցուցին, և ահա Եգիպտացիք իրենց ետեւէն կու գային, ու խիստ վախցան. և Իսրայէլի որդիքը Տէրոջը աղաղակեցին Տէրոջը։
11 Ըսին Մովսէսի, Եգիպտոսի մէջ գերեզմաններ չկայնուն համար մեզ առաւ մեռնելու բերիր. ինչ է այս մեզի ըրածդ որ մեզ Եգիպտոսէն հանեցիր։ Ա՛յս չէր այն խօսքը որ քեզի զրուցեցինք Եգիպտոսի մէջ՝ ըսելով, Թող առ մեզ՝ որ Եգիպտացւոց ծառայութիւն ընենք. քանզի աւելի աղէկ է մեզի Եգիպտացւոց ծառայութիւն ընել, քան թէ անապատին մէջ մեռնիլ։ Եւ Մովսէս ըսաւ Ժողովրդին, Մի վախնաք, կայնեցէք, ու տեսէք Տէրոջը փրկութիւնը՝ որ այսօր պիտի ընէ ձեզի. վասն զի այսօրուան ձեր տեսած Եգիպտացիները միշտին ալ
14 պիտի չտեսանէք յաւիտեան։ Տէրը ձեզի համար պիտի պատերազմի, ու դուք լուռ կենաք։
15 Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ինչո՞ւ ինծի կ՚աղաղակես. ըսէ Իսրայէլի որդւոցը
16 որ չուեն։ Եւ դուն գաւազանդ վերցուր, ու ձեռքդ ծովուն վրայ երկնցուր, ու ճեղքէ զայն. և Իսրայէլի որդիքը ծովուն մէջէն ցամաքով երթան։
17 Եւ ես ահա Եգիպտացւոց սիրտը պիտի կարծրացնեմ, ու անոնց ետեւէն պիտի երթան. և ես փառաւորեմ ու. նոր բոլոր զօրքերուն վրայ՝ անոր կառքերուն ու անոր ձիաւորներուն վրայ
18 պիտի փառաւորուիմ։ Եւ երբոր ես փառաւորեմ ու անոր կառքերուն և անոր ձիաւորներուն վրայ փառաւորուիմ, Եգիպտացիք պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։
19 Եւ Աստուծոյ հրեշտակը՝ որ Իսրայէլի բանակին առջեւէն կ՚երթար, երաւ ու անոնց ետեւը գնաց. և ամպի սիւնը երաւ անոնց առջեւէն ու անոնց ետեւն
20 կայնեցաւ. Եւ Եգիպտացւոց բանակին ու Իսրայէլի բանակին մէջտեղը եկաւ ու ամպը խաւար եղաւ, բայց գիշերը լոյս կու տար. և բոլոր գիշերը իրարու չմօտեցան։
21 Եւ Մովսէս իր ձեռքը ծովուն վրայ երկնցուց, ու Տէրը ապտիկ արեւելեան հովով գարձուց ծովը բոլոր գիշերը, և ծովը ցամաք ըրաւ, ու ջուրը բերը ձեղքուեցաւ։
22 Եւ Իսրայէլի որդիքը ծովուն մէջէն ցամաքով գացին. ու ջուրերը անոնց աջ կողմէն ու ձախ կողմէն պարիսպ եղան։
23 Եւ Եգիպտացիք հետեւ եկան, ու փարաւոնի բոլոր ձիերը՝ կառքերը ու ձիաւորները անոնց ետեւէն
24 ծովուն մէջտեղը գացին։ Եւ եղաւ որ առաւօտեան պահուն Տէրը Եգիպտացւոց բանակին նայեցաւ կրակի ու ամպի սիւնէն, ու Եգիպտացւոց բանակը խառնիմանեցուց մէջ ձգեց։
25 Եւ անոնց կառքերուն անիւները հանեց, որ դժուարութեամբ առաջ կ՚երթային. անոնք ու Եգիպտացիք ըսին, Փախչինք Իսրայէլի երեսէն, վասն զի մեր Տէրն անոնց համար Եգիպտացւոց հետ կը պատերազմի։
26 Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ձեռքդ ծովուն վրայ երկնցուր, որ ջուրերը Եգիպտացւոց վրայ՝ անոնց կառքերուն ու անոնց ձիաւորներուն վրայ դառնան։
27 Նայ. Եւ Մովսէս իր ձեռքը ծովուն վրայ երկնցուց, և առաւուան դէմ ծովը իր տեղը դարձաւ, ու Եգիպտացիք անոր դիմացն փախան. և Տէրը Եգիպտիս Եգիպտացիները ծովուն մէջ
28 թօթափեց։ Եւ ջուրերը գարձան ու ծածկեցին փարաւոնի կառքերը ու ձիաւորները և բոլոր զօրքերը՝ որոնք անոնց ետեւէն ծովուն մէջ մտան. ու անոնցմէ մէկն ալ չմնաց։ Բայց Իսրայէլի որդիքը ծովուն մէջէն ցամաքով կ՚երթային, և ջուրերը անոնց աջ կողմէն ու ձախ
30 կողմէն անոնց պարիսպ կ՚ելնէ։ Եւ Տէրը այն օրը Եգիպտացւոց ձեռքէն ազատեց Իսրայէլը. ու Իսրայէլ մեռած տեսաւ Եգիպտացիները ծովուն եղերքը։
31 Եւ Իսրայէլ տեսաւ այն մեծ *գործը՝

*Նբ. ձեռքը՝



զոր Տէրը բրաւ Եգիպտացւոց վրայ. ու ժողովուրդը վախցաւ Տէրոջմէն, ու հաւատացին Տէրոջը և անոր ծառային՝ Մովսէսի։

## ԳԼ. ԺԵ

1 Այնտեղ Մովսէս ու Իսրայէլի որդիքը սա երգը երգեցին Տէրոջը, և խօսեցան ըսելով,
Պիտի երգեմ Տէրոջը, քանզի փառքով փառաւորեալ է.
Ձին ու անոր հեծեալը ծովը նետեց։
2 Տէրն է իմ զօրութիւնս ու իմ գովութիւնս,
Եւ իմ փրկութիւնս եղաւ.
Ա՛նիկա է իմ Աստուածս, ու պիտի փառաւորեմ զանիկա.
Իմ Հօրս Աստուածն է, ու պիտի բարձրացընեմ զանիկա։
3 Տէրը հզօր պատերազմող է.
Անոր անունը ԵՀՈՎԱՅ է։
4 Փարաւոնին կառքերը ու անոր զօրքերը ծովը նետեց.
Եւ անոր ընտիր սպարիկապետները կարմիր ծովուն մէջ ընկղմեցան։
5 Անդունդները ծածկեցին զանոնք.
Քարի պէս խորունկը իջան։
6 Քու աջ ձեռքդ, ով Տէր, փառաւորեալ է զօրութեամբ.
Քու աջ ձեռքդ, ով Տէր, խորտակեց թշնամին։
7 Եւ քու փառազդ մեծութեամբդ քեզի դէմ կ՚ելլողները կործանեցիր.
Քու բարկութիւնդ խրկեցիր, որ զանոնք յարդի պէս կ՚ելլա։
8 Եւ քու շունչիդ վրնջելով ջուրերը ժողվուեցան.
Հեղեղները դէզի պէս կայնեցան.
Ծովուն մէջտեղը անդունդները պաղեցան։
9 Թշնամին ըսաւ, Պիտի հալածեմ, պիտի հասնիմ,
Աւարը պիտի բաժնեմ.
Իմ անձս անոնցմէ պիտի կշտանայ.
Իմ սուրս պիտի քաշեմ,
Իմ ձեռքս զանոնք պիտի սրէ։
10 Քու հովդ փչեցիր, ծովը զանոնք ծածկեց.
Ջրասէր ջուրերուն մէջ կապարի պէս ընկղմեցան։
11 Ով Տէր, աստուածներուն մէջ քեզի պէս ով կայ.
Սրբութեան մէջ փառաւորեալ, օրհնութեան մէջ սքանչելի,
Հրաշքներ ընող՝ ով կայ քեզի նման։
12 Քու աջ ձեռքդ երկնցուցիր,
Երկիրը զանոնք կլլեց։
13 Քու ողորմութեամբդ առաջնորդեցիր այս ժողովուրդին՝ որ դուն փրկեցիր.
Քու զօրութեամբդ տարիր զանոնք քու սուրբ բնակութիւնդ։
14 Ժողովուրդները պիտի լսեն ու սարսափին.
Փղշտացւոց երկրին բնակիչները ցաւ պիտի բռնէ։
15 Աստուածոյ իշխաններուն պիտի սոսկալին.
Մովաբի զօրաւորները պիտի դողան.
Քանաանու բոլոր բնակիչները պիտի հալին։
16 Անոնց վրայ վախ ու դող պիտի իյնայ.
Քու բազկիդ մեծութենէն քար պիտի կարին,
Մինչև որ անցնի քու ժողովուրդդ, ով Տէր,
Մինչև որ անցնի այս ժողովուրդը՝ որ դուն առաջուր։
17 Պիտի բերես զանոնք, ու քու ժառանգութեանդ լեռը պիտի տնկես զանոնք,
Ով Տէր, այն տեղը՝ որ քու բնակութեանդ համար շինեցիր։
Ով Տէր, այն սրբարանին մէջ՝ որ քու ձեռքերդ շինեցին։
18 Տէրը պիտի թագաւորէ յաւիտեան յաւիտենից։
19 Քանզի Փարաւոնի ձիերը իր կառքերովը ու ձիաւորներովը ծովը մտան,
ԵՒ Տէրը ծովուն ջուրերը անոնց վրայ դարձուց. բայց Իսրայէլի որդիքը ծովուն մէջէն ցամաքով գացին։
20 Եւ Ահարոնի քոյրը Մարիամ մար-

գաթուհին թմբուկը իր ձեռքը առաւ, ու բոլոր կիներըը թմբուկներով ու
21 պարերով անոր հետևէն եկան։ Ու Մարիամ պատասխան տուաւ անոնց,
երգեցէք Տէրոջը, քանզի փառքով փառաւորուած է.
Ձին ու անոր հեծեալը ծովը նետեց։
22 Ու Մովսէս Կարմիր ծովէն հանեց Իսրայէլը, ու Սուրի անապատը
եկան. և երեք օրուան ճամբայ գացին
23 անապատին մէջ, ու ջուր չգտան։ Ու երբոր Մարայ հասան, չկրցան խըմել Մարայի ջուրերէն, վասն զի գառն էին. անոր համար անոր անունը *Մա-
24 րայ կոչուեցաւ։ Ու ժողովուրդը տրտնջեցին Մովսէսի դէմ՝ ըսելով, Ի՞նչ
25 խմենք։ Ու անիկա Տէրոջը աղաղակեց, ու Տէրը անոր փայտ մը ցուցուց, զանիկա ջուրերուն մէջ գցածին պէս՝ ջուրերը անուշցան։ Հոն անոնց կանոն ու դատաստան դրաւ, և հոն փորձեց
26 զանոնք, ու ըսաւ, Թէ որ Տէրոջը քու Աստուծոյդ ձայնին ուշադրութիւնդ մսիկ ընես, ու ինչ որ անոր աչքին հաճակ է՝ ընես. և անոր պատուիրանքներուն ականջ դնես, ու անոր բոլոր կանոնները պահես, այն ախտերուն մէկը քու վրադ պիտի չբերեմ, զորս բերի Եգիպտացւոց վրայ. քանզի ես եմ Տէրը՝ որ քեզ կը բժշկեմ։
27 Ու հոնկան եղիմ, ու հոն տասներկու ջուրի աղբիւրներ ու եօթանասուն արմաւենիներ կային. և հոն ջուրերուն քովը բանակ դրին։

## Գլ. ԺԶ

1 Ու հանեցին Եղիմէն, ու Իսրայէլի որդւոց բոլոր ժողովքը հասան Սին անապատը՝ որ Եղիմի ու Սինայի մէջտեղն է, անոնց Եգիպտոսէ երկրէն ելլելուն երկրորդ ամսուն տասնհինգերորդ
2 օրը։ Ու Իսրայէլի որդւոց բոլոր ժողովքը անապատին մէջ Մովսէսի ու Ա-
3 հարոնի դէմ տրտնջեց ըսին. Ու Իսրայէլի որդիքը ըսին անոնց, Երանի Քէ Տէրոջը ձեռքովը մեռած ըլլայինք Եգիպտոսի երկրին մէջ, երբոր մսի կաթսաներուն քովը նստած էինք, ու կուշտ հաց կուտէինք. քանզի մեզ այս անապատը հանեցիք որ բոլոր այս ժողովքը անօթութենէն մեռցնէք։
4 Ու Տէրը ըսաւ Մովսէսի, Ահա ես ձեզի երկինքէն հաց պիտի տեղամ, և ժողովուրդը պիտի ելլէ ու օրէ օր ժողվէ անոր մէկ աւուրը պէտք եղածը, որ փորձեմ զանոնք՝ Թէ իմ օրէնքիս հա-
5 մեմատ պիտի գտնեն Քէ ոչ։ Ու ըլլայ որ վեցերորդ օրը բերածնին պատրաստեն, և անիկա ամէն օրուան ժողվածներուն կրկինը ըլլայ։
6 Ու Մովսէս ու Ահարոն ըսին Իսրայէլի բոլոր որդւոցը, Այս իրիկուն պիտի գիտնաք որ ձեզ եգիպտոսէ երկրին հանողը Եհովան է։ Ու առաւօտուն պիտի տեսնէք Տէրոջը փառքը,
7 վասն զի Տէրոջը դէմ ձեր ըրած արբուտնջիը ինք լսեց. և մենք ո՞վ ենք, որ մեզի դէմ կը տրտնջիք։ Ու Մովսէս ըսաւ, Երբոր Տէրը ձեզի իրիկուն միս տալու, ու առաւօտուն կըշտանալու չափ հաց տայ, որովհետև Տէրը լսած է իրեն դէմ ըրած արբուտնջիները որ դուք կ՚ընէք. ձեր արբուտնջիը մեզի դէմ չէ, հապա Տէրոջը
9 դէմ։ Ու Մովսէս ըսաւ Ահարոնի, Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովքին ըսէ, Տէրոջը առջևը մտցէք. վասն զի ձեր արտունջը լսեց։
10 Ու եղաւ որ երբ Ահարոն Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովքին կը խօսէր, անոնք դէպ՚ի անապատը նայեցան, և ահա Տէրոջը փառքը ամպին մէջ երևաւ։
11 Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի ը-
12 սելով, Իսրայէլի որդւոցը արբուտնջիը լսեցի. խօսք անոնց ըսելով, Իրիկուան դէմ միս պիտի ուտէք, ու առաւօտուն հացով պիտի կշտանաք. և պիտի գիտնաք Քէ ես եմ Տէրը Աստուածը։
13 Ու եղաւ որ իրիկուանը լորամարգիներ եկան ու բանակը ծածկեցին. և





առաւօտուն բանակին բոլորտիքը ցօղ
14 իջաւ։ Ու երբոր իջած ցօղը վերցաւ, ահա անապատին երեսին վրայ մանր թեփաձև բան մը կար՝ եղեամի պէս
15 մանր՝ գետնին վրայ։ Ու երբոր իսրայէլի որդիքը տեսան, իրարու ըսին, Ի՞նչ է սա՝. քանզի ինչ ըլլալը չէին գիտեր. ու Մովսէս ըսաւ անոնց, Այս է այն հացը՝ որ Տէրը ձեզի ուտելու
16 տուաւ։ Տէրոջը պատուիրած բանը այս է. Ժողվեցէք անկէ ամէն մէկիկնիդ իր կերածին չափ. ամէն մէկիկնիդ իր վրանին մէջ եղողներուն համար՝ ձեր հոգիներուն համրանքին նայելով՝ մարդ
17 գլուխ մէյմէկ օմէր առնէք։ Ու իսրայէլի որդիքը այնպէս ըրին. և որը շատ
18 ու որը քիչ ժողվեց, Ու երբ օմէրով կը չափէին, շատ ունեցողինը չաւելցաւ, ու քիչ ունեցողինը չպակսեցաւ. իրաքանչիւրն իր կերածին չափ ժողվեց։
19 Ու Մովսէս ըսաւ անոնց, Մէկը անկէ
20 մինչև առաւօտ չպահէ։ Բայց մարդիկ չըրին Մովսէսի, այլ ոմանք թողուցին անկէ մինչև առաւօտ, և որդնոտեցաւ ու հոտեցաւ. և Մովսէս բարկացաւ ա-
21 նոնց։ Ու ամէն առաւօտ կը ժողվէին անկէ իւրաքանչիւրն իր կերածին չափ. ու արևը տաքցածին պէս կը հալէր։
22 Ու եղաւ որ վեցերորդ օրը կրկնապատիկ ուտելիք այսինքն մէն մի անձի համար երկու օմէր ժողվեցին. և ժողովքին բոլոր իշխանները եկան ու
23 պատմեցին Մովսէսի։ Ու անիկա ըսաւ անոնց, Այս է Տէրոջը ըսածը. Վաղը հանգստութեան սուրբ շաբաթն է Տէրոջը. ինչ որ պիտի եփէք՝ եփեցէք, և ինչ որ պիտի եռացնէք՝ եռացուցէք, ու ինչ որ կ՚աւելնայ՝ ձեզի համար առ-
24 տուան պահուելու թողուցէք։ Ու անոնիկա առտուան թողուցին՝ Մովսէսի հրամայածին պէս. և ոչ հոտեցաւ,
25 ոչ ալ անոր մէջը որդ եղաւ։ Ու Մովսէս ըսաւ, Այսօր կերէք զայն, քանզի այսօր շաբաթ է Տէրոջը. այսօր գտնուիր մէջ անկէ պիտի չգտնէք։
26 Վեց օր պիտի ժողվէք զանիկա. բայց եօթներորդ օրը՝ որ շաբաթ է, պիտի
27 չգտնուի։ Ու եղաւ որ եօթներորդ օրը ժողովուրդէն ոմանք ժողվելու ե-
28 լան, ու չգտան։ Ու Տէրը ըսաւ Մովսէսի, Մինչև ե՞րբ չէք ուզեր պահել իմ պատուիրանքներս ու օրէնքները։
29 Նայեցէք որ Տէրը տուաւ ձեզի շաբաթը, անոր համար վեցերորդ օրը ինքը ձեզի երկու օրուան հաց կու տայ. ամէն մէկիկնիդ իր տեղը թող նստի. մէկը իր տեղէն չելլէ եօթներորդ օրը։
30 Ու ժողովուրդը հանգստացաւ եօթներ-
31 րորդ օրը։ Ու իսրայէլի *որդիքը անոր անունը Ման դրին. ու ան գինձի սերմի պէս ճերմակ՝ ու անոր համը մեղրով չիաւած գաթայի պէս էր։
32 Ու Մովսէս ըսաւ, Տէրոջը հրամայածը այս է. Անկէ օմէր մը լեցուցէք՝ որ ձեր ազգերուն մէջ պահուի. որ ա-
33 նոնք տեսնեն այն հացը՝ զոր ձեզի կերցուցի անապատին մէջ՝ երբոր ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցին։ Ու Մովսէս ըսաւ Ահարոնի, Սափոր մը առ, ու անոր մէջը օմէր մը լեցուն մանանայ դիր. և զանիկա ձեր ազգերուն մէջ
34 պահուելու համար Տէրոջը առջևը դիր։ Ինչպես որ Տէրը Մովսէսի պատուիրեց, անանկ ալ Ահարոն վկայութեան առ-
35 ջևը դրաւ զանիկա՝ որ պահուի։ Ու իսրայէլի որդիքը քառասուն տարի կերան մանանան, մինչև որ չէն երկիր եկան. մանանան կերան՝ մինչև որ Քանանի երկրին սահմանը եկան։ Ու օմէրը արդուին տասներորդ մասն է։

## Գլ. ԺԷ

1 Ու Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովքը Տէրոջը խօսքին պէս իրենց գնացքին համեմատ Սին անապատէն չուեցին, և Ռափիդիմի մէջ բանակ դրին. ու ժողովուրդին համար խմելու ջուր չկար։
2 Ու ժողովուրդը Մովսէսի հետ վիճե-

ցան ու բաս, Մեզի չար տուր, որ
խաւնիք. և Մովսէս բաս անոնց, ինչո՞
ինծի հետ կը վիճիք. ինչո՞ Տէրը կը
3 փորձէ։ Եւ Ժողովուրդը հոն չուբի
համար ծարաւեցաւ. ու Ժողովուրդը
Մովսէսի դէմ տրտունջ բաս ու բաս,
ինչո՞ համար մեզ Եգիպտոսէն հանե-
ցիր, որ մեզ ու մեր որդիները և մեր
հօտերը ծարաւութեամբ մեռցընես։
4 Եւ Մովսէս Տէրոջը աղաղակեց՝ բաս-
լով, Ի՞նչ ընեմ այս Ժողովուրդին.
դրեթէ պատրաստ են զիս քարկոծե-
5 լու։ Եւ Տէրը բաս Մովսէսի, Ժողո-
վուրդին առջեր անցիր, ու Իսրայէլի
ծերերէն քու հետդ առ, և քու գա-
ւազանդ՝ որով գետը զարկիր, ձեռդդ
6 առ ու գնա։ Ահա Քորէբի մէջ Ժայռին
վրայ՝ հոն քեզ առջեւ կը կայնիմ, և
Ժայռին զարկ, ու անկէ ջուր պիտի ել-
լէ, և Ժողովուրդը պիտի խմէ։ Եւ Մով-
սէս անանկ բաս Իսրայէլի ծերերուն
7 առջեւը։ Եւ այն տեղին անունը *Փոր-
ձութիւն և Մերիբայի դրաւ, քանզի Իսրա-
յէլի որդիքը հոն վիճեցան, և Տէրը
փորձեցին բսելով, Արդեօք Տէրը մեր
միջին է թէ ոչ։
8 Անատեղը Ամաղեկ եկաւ, ու Ռափի-
դիմի մէջ Իսրայէլի հետ պատերազմե-
9 ցաւ։ Եւ Մովսէս բաս Յեսուի, Մեզի
մարդիկ ընտրէ, ու Ամաղեկի հետ
պատերազմելու ելլիր. վաղը ես բուս-
րին գլուխը պիտի կայնիմ՝ Աստուծոյ
10 գաւազանը ձեռքս առնելով։ Եւ Յե-
սուէ Մովսէսի բանին պէս բաս, ու
Ամաղեկի հետ պատերազմեցաւ. և Մով-
սէս, Ահարոն ու Ովր բուսրին գլուխը
11 ելան։ Եւ կ'ըլլար որ երբոր Մովսէս իր
ձեռքերը վեր կը վերցընէր, Իսրայէլ
կը յաղթէր, ու երբոր իր ձեռքերը
վար կ'իջեցընէր, Ամաղեկ կը յաղթէր։
12 Եւ Մովսէսի ձեռքերը ծանրանալուն՝
քար մը առին ու անոր տակը դրին,
և ինքը անոր վրան նստաւ. ու Ահա-
րան և Ովր՝ միկը միկ կողմէն ու մի-

սը միւս կողմէն՝ անոր ձեռքերը վեր
բռնեցին, ու մինչև արեգակին մտը
մնացին անոր ձեռքերը հաստատուն
13 մնացին։ Եւ Յեսու սուրի բերնով ան-
ցուց Ամաղեկը ու անոր ժողովուրդը։
14 Եւ Տէրը բաս Մովսէսի, Աւետիս յիշա-
տակի համար գիրքի մէջ գրէ, ու Յե-
սուի †ականջը՝ որ Ամաղեկի յիշատա-
կը երկինքէ ամէն բոլորովին պիտի ջնջ-
15 չեմ։ Եւ Մովսէս սեղան մը չինեց, ու
16 անոր անունը ‡Եհովահովսի գրաւ, ու
բաս, ‖Քանզի Տէրը երդում բրաւ ը-
ռնելով՝ Տէրը ազգէ ազգ պիտի պա-
տերազմի Ամաղեկի դէմ։

## Գլ. ԺԸ

1 Եւ Մովսէսի աները՝ Մադիամու քա-
հանային Յեթրոյ լսեց այն ամէնը որ Աս-
տուած բրաւ Մովսէսի ու իր ժողովուրդին, Ե՛թէ Տէրը Եգիպտոսէն հա-
2 նեց Իսրայէլը։ Եւ Մովսէսի աները Յե-
թրո առաւ Մովսէսի կինը Սեպփորան,
3 անոր առաջուընէ դարձուցած, Եւ անոր
երկու որդիները՝ որոնց մէկուն անունը
Գերսամ էր. քանզի ինքը բսեր էր, Օ-
4 տար երկրի մէջ պանդուխտ եմ. Եւ
միւսին անունը ‖Եղիեզեր էր, քանզի
բսեր էր, Իմ հօրս Աստուածը իմ օգ-
նականս էր, ու զիս փրկեց սուրէն
5 փարաւոնի։ Եւ Մովսէսի աները Յե-
թրո անոր որդիներովը ու անոր կնկովը
եկաւ Մովսէսի դէմ՝ ի անապատ՝ ուր
որ անկիս բանակ գրեր էր Աստուծոյ
6 լեռանը քով. Եւ իմացուց Մովսէսի
ըսելով Ես քու աներդ Յեթրո քեզի
կու գամ, նաև քու կինդ իր երկու
7 որդիքը իր հետը առնելով։ Եւ Մով-
սէս իր աները դիմաւորելու ելաւ, և

*Եբր. փորձութիւն ու վիճաբանութիւն,

†Այլ՝ Տէրը իմ դրօշակս է,
‡Եբր. Քանզի Տէրը էր աթոռին վրայ
ձեռք վերցնելով էրթաւ ըսաւ, Իմ
Որովհետև ձեռք վերցաւ Տէրոջը ա-
թոռին դէմ,
‖Այլ՝ Իմ Աստուածս օգնական,



ոնոր խոնարհութիւն բրաւ, ու համ-
բուրեց զանիկա. և իրարու ողջոյն իւ-
8 նդրացին ու վրանը մտան։ Եւ
Մովսէս իր աներոջը պատմեց այն ա-
մէնը՝ որ Տէրը բրաւ փարաւոնի ու Ե-
գիպտացւոց՝ Իսրայէլի համար, և ճամ-
բուն մէջ բոլոր իրենց փորձած ուխտ-
աւորութիւնը, ու Տէրոջը զանոնք ազա-
9 տելը։ Եւ Յեթրո ուրախացաւ բոլոր
բարութիւններուն համար՝ զոր Տէրը
բրաւ Իսրայէլի, փրկելով զանոնք Ե-
10 գիպտացւոց ձեռքէն։ Եւ Յեթրո բա-
ւաւ, Օրհնեալ ըլլայ Տէրը՝ որ ազատեց
ձեզ Եգիպտացւոց ձեռքէն ու փարա-
ւոնի ձեռքէն. ազատեց ժո-
ղովուրդը Եգիպտացւոց ձեռքին տա-
11 կէն։ Հիմա գիտեմ որ Եհովան բոլոր
աստուածներէն մեծ է. քանզի ինչ
բանի մէջ որ կը հպարտանային, անոնց-
12 մէ վեր էր։ Եւ Մովսէսի աները
Յեթրո ողջակէզ ու զոհեր բերաւ Ա-
ստուծոյ. և Ահարոն ու Իսրայէլի բոլոր
ծերերը Մովսէսի աներոջը հետ Աստու-
ծոյ առջեւը հաց ուտելու եկան։
13 Եւ եղաւ որ հետեւեալ օրը Մովսէս
ժողովուրդը դատելու նստաւ, ու ժո-
ղովուրդը առաւօտեան մինչև իրիկուն
14 Մովսէսի քովը կայնեցաւ։ Եւ Մովսէ-
սի աները երբոր տեսաւ ինչ որ կ'ը-
ներ Մովսէս ժողովուրդին, բսաւ, Ինչ
է այս բանը՝ որ դուն կ'ընես ժողո-
վուրդին. ինչո՞ դուն մինակ կը նստիս,
ու բոլոր ժողովուրդը առաւօտեան մին-
15 չև իրիկուն քու քովդ կը կայնի։ Եւ
Մովսէս բաս իր աներոջը, Քանզի ժո-
ղովուրդը կու գայ ինծի՝ Աստուծմէ
16 դատաստան կ'ընելու։ Երբոր անոնք
բան մը ունենան՝ ինծի կու գան, և ես
*անոնց միջտեղը դատաստան կ'ընեմ,
ու Աստուծոյ կանոնները և օրէնքնե-
17 րը անոնց կը գիտցընեմ։ Եւ Մովսէսի
աները բսաւ անոր, Չես բարւոք ապրիր
18 բան չէ։ Իրաւ ցրնդի դուն պիտի մաշիս,
դուն ալ ու քու հետդ եղած այս ժողո-
վուրդն ալ. քանզի այս բանը քեզի շատ

*Եբր. մարդուն ու իր ընկերին

19 մեծ է. դուն մինակ չես կրնար ընել
այս։ Հիմա մտիկ ըրէ իմ խօսքս. ես
քեզի խրատ տամ, ու Աստուած քե-
զի հետ պիտի ըլլայ. ժողովուրդին հա-
մար Աստուծոյ առջեւը դուն գնա, որ
դատերը դուն ներկայացընես Աստու-
20 ծոյ. Եւ անոնց սորվեցուր կանոնները
ու օրէնքները, և գիտցուր անոնց ի-
րենց քալելու ճամբան ու իրենց ընե-
21 լու գործը։ Ուստի դուն բոլոր ժողո-
վուրդին կարող մարդիկ՝ Աստուծմէ
վախցող, ճշմարտասէր ու ագահու-
թիւնը ատող մարդիկ ընտրէ, և զանոնք
հազարապետներ, հարիւրապետներ,
յիսնապետներ ու տասնապետներ դիր
22 անոնց վրայ։ Ու ամէն աստէն Թող ա-
նանք դատեն ժողովուրդը. և ամէն
մեծ բանը քեզի ներկայացընեն, ու ա-
մէն պզտիկ բանը անոնք դատեն. այս-
պէս քեզի *օգնելով՝ քու վրայէդ բեռը
23 կը թեթեւցընեն։ Թէ որ այս բանը ը-
նես, ու Աստուած ալ քեզի պատ-
ուիրէ, անատնեը կարող կ'ըլլաս դի-
մանալու, և բոլոր այս ժողովուրդն ալ
խաղաղութեամբ իրենց տեղը կ'երթան։
24 Եւ Մովսէս իր աներոջը խօսքը մտիկ
25 բրաւ, ու անոր ամէն բսածը բրաւ։ Եւ
Մովսէս բոլոր Իսրայէլին կարող մարդ-
իկ ընտրեց, ու զանոնք ժողովուրդին
վրայ գլուխներ այսինքն հազարապետ-
ներ, հարիւրապետներ, յիսնապետներ
26 ու տասնապետներ կարգեց։ Եւ ամէն
աստէն անոնք կը դատէին ժողովուրդը.
դժուարին բանը Մովսէսի կը ներկա-
յացընէին, ու ամէն պզտիկ բանը իրենք
27 կը դատէին։ Եւ Մովսէս իր աները ճամ-
բայ հանեց, ու անիկա իր երկիրը գնաց։

## Գլ. ԺԹ.

1 Երրորդ ամսուն մէջ Իսրայէլի որդի-
ները Եգիպտոսի երկրէն ելլելէն ետքը,
նոյն օրը Սինայի անապատը եկան։
2 Քանզի Ռափիդիմէն չուեցին, ու Սի-
նայի անապատը եկան, ու անապատին

*Եբր. հետ տանելով

մէջ բանակ դրին. և Իսրայէլ հոն լե-
3 ռանը դիմացը բանակ դրաւ։ Եւ Մովսէս Աստուծոյ եկաւ. ու Տէրը լեռնէն կանչեց զանիկա ըսելով, Ցակոբի տանը ասանկ բանս, և Իսրայէլի որդւոց իմացընես. Դուք տեսաք ինչ
4 որ ըրի Եգիպտացւոց, և խլեցի ձեզ արծիւի թեւերուն վրայ վերցուցի ու
5 քովս բերի։ Եւ հիմա թէ որ իրաւցնէ իմ ձայնիս հնազանդիք ու իմ ուխտս պահէք, դուք ինծի սեպհական ժողովրդէ աւելի ըլլաք ամէն ազգերէն.
6 վասն զի բոլոր երկիրը իմս է։ Եւ դուք ինծի քահանաներու թագաւորութիւն ու սուրբ ազգ մը պիտի ըլլաք։ Իսրայէլի որդւոցը զրուցելու խօսքերդ ասոնք են։
7 Եւ Մովսէս եկաւ ու ժողովրդին ծերերը կանչեց, և Տէրոջը իրեն պատուիրած այս բոլոր խօսքերը անոնց առ-
8 ջեւը դրաւ։ Եւ բոլոր ժողովուրդը միաբերան պատասխանեցին ու ըսին, Տէրոջը բոլոր բաներն որ խօսեցաւ՝ պիտի ընենք։ Ու Մովսէս ժողովուրդին խօսքերը Տէրոջը դարձուց։
9 Եւ Տէրը ըսաւ Մովսէսի. Ահա ես քեզի կու գամ թանձր ամպի մէջ, որ ժողովուրդը լսէ՝ երբոր ես քեզի հետ խօսիմ, ու նաև յաւիտեան քեզի հաւատայ։ Եւ Մովսէս ժողովուրդին խօսքերը Տէրոջը պատմեց։
10 Եւ Տէրը Մովսէսի ըսաւ, Գնա ժողովուրդին, և զանոնք սրբէ այսօր ու վաղը, և
11 թող իրենց լաթերը լուան, Ու երրորդ օրուան համար պատրաստ ըլլան. քանզի երրորդ օրը Տէրը բոլոր ժողովուրդին աչքին առջեւը Սինա լեռանը վրայ
12 պիտի իջնէ։ Եւ դուն ժողովուրդին բոլորտիքը սահման դնես՝ ըսելով, Ինքզինքնիդ լեռը չելլէք կամ անոր ծայրին դպչիլն զգուշացած ըլլաք. ով որ լեռանը դպչի, անշուշտ պիտի մեռցուի։
13 Անոր ձեռք չզպչի. քանզի գլխովը անպատճառ պիտի քարկոծուի կամ նետով զարնուի. թէ անասուն ըլլայ և թէ մարդ՝ պիտի չապրի. երբոր փողին ձայնը երկար հնչուի, անոնք լեռը պիտի ելլեն։
14 Եւ Մովսէս լեռնէն դէպ ի ժողովուրդը իջաւ, ու սրբեց ժողովուրդը. և
15 անոնք իրենց լաթերը լուացին։ Եւ անոնք ըսաւ, Երեք օրուան համար պատրաստ եղէք. չերթաք կիներուն մի մերձենաք։
16 Եւ եղաւ որ երրորդ օրը առաւուընց որոտումներ ու կայծակներ կ'ըլլային, և թանձր ամպ մը կար լեռանը վրայ, ու խիստ սաստիկ փողի ձայն մը, և բանակին մէջ եղած բոլոր ժողովուրդը դող զարհուրեցաւ։ Եւ Մովսէս բանակէն Աստուծոյ առջեւը հանեց ժողովուրդը, ու անոնք լեռանը ստակը կայ-
18 նեցան։ Եւ Սինա լեռը բոլորովին կը մխար, վասն զի Տէրը անոր վրայ կրակով իջաւ, ու անոր մուխը հնոցի մուխի պէս կ'ելլէր, և բոլոր լեռը սաստիկ կը դողար։ Եւ քանի որ փողին ձայնը շատ կը սաստկանար, Մովսէս խօսեցաւ, ու Աստուած ձայնով մը ա-
20 նոր պատասխան տուաւ։ Եւ Տէրը Սինայ լեռանը վրայ՝ լեռանը գլուխը իջաւ։ ու Տէրը կանչեց Մովսէսը լեռան
21 նը գլուխը, և Մովսէս եկաւ։ Եւ Տէրը ըսաւ Մովսէսի. Իջիր՝ ժողովուրդին պատուիրէ, որ չըլլայ թէ Տէրը տեսնելու համար սահմանէն անցնին, ու
22 անոնցմէ շատերը կորսուին։ Եւ Տէրոջը մօտեցող քահանաներն ալ սրբուին, որ չըլլայ թէ Տէրը անոնց վրայ յար-
23 ձակի։ Եւ Մովսէս ըսաւ Տէրոջը, Ժողովուրդը չկրնար ելլել Սինա լեռը. վասն զի դուն մեզի պատուիրեցիր՝ ըսելով, Սահման դիր լեռանը, ու անի-
24 կա սրբէ։ Եւ Տէրը ըսաւ անոր, Գնա՝ վար իջիր, ու Ահարոնի հետ մէկտեղ ելլիր. բայց քահանաները ու ժողովուրդը Տէրոջը ելլելու համար սահմանին չանցնեն, որ չըլլայ թէ անոնց վրայ
25 յարձակիւ։ Ու Մովսէս ժողովուրդին իջաւ, և անոնց խօսեցաւ անոնց։

## Գլ. Ի

1 Եւ Աստուած այս բոլոր խօսքերը ըսաւ ցեղը՝ ըսելով,
2 Ես եմ Եհովա քու Աստուածդ՝ որ



քիզ եգիպտացւոց երկրէն՝ ծառայութեան տունէն հանեցի։
3 Ինծմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս։
4 Դուն քեզի կուռք չկերտես, ոչ ալ վերը երկինքի մէջ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ ե-
5 ղած բաներուն մէկ նմանութիւնը. Անոնց երկրպագութիւն չընես ու զանոնք չպաշտես. քանզի ես քու Տէր Աստուածդ նախանձոտ Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ ինծի-
6 զիս. Եւ կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն։
7 Տէրոջը քու Աստուածդ անունը պարապ տեղը բերան չառնես. քանզի Տէրը իր անունը պարապ տեղը բերան առնողը անմեղ պիտի չսեպէ։
8 Հանգստութեան օրը միտդ բեր՝
9 զանիկա սուրբ պահելու համար։ Վեց օր պիտի աշխատես, ու բոլոր գործդ
10 ընես. Բայց եօթներորդ օրը Տէրոջը քու Աստուածդ հանգստութեան օրն է. ոչ մէկ գործ մը չգործես, ոչ դուն՝ ոչ քու որդիդ՝ ոչ քու աղջիկդ՝ ոչ քու ծառադ ու ազախինդ՝ ոչ քու անասունդ՝ ոչ ալ *ատեդ մէջ եղած օտա-
11 րականդ. Քանզի Տէրը վեց օրուան մէջ երկինքը ու երկիրը, ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը ու սրբեց զանիկա։
12 Պատուէ քու հայրդ ու մայրդ, որ քու օրերդ երկար ըլլան այն երկրին վրայ՝ զոր քու Տէր Աստուածդ կու տայ քեզի։
13 Սպանութիւն մի ըներ։
14 Շնութիւն մի ըներ։
15 Գողութիւն մի ըներ։
16 Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի ըներ։
17 Քու դրացիիդ տանը մի ցանկար. քու

*ԵԲՐ. դռներուդ

դրացիիդ կնոջը՝ կամ անոր ծառայ-
ին՝ կամ անոր ազախինին՝ կամ անոր
եզին՝ կամ անոր էշուն՝ և քու դրացի-
իդ ամենեն մէկ բանին մի ցանկար։
18 Եւ բոլոր ժողովուրդը կը տեսնէին որոտումները ու կայծակները և փողին ձայնը ու լեռանը մխալը։ Եւ երբ ժողովուրդը տեսաւ, հեռ քաշուեցաւ ու
19 հեռու կայնեցաւ. Եւ բուն Մովսէսի. Դուն խօսէ մեզի հետ, ու մենք կ'լսենք. բայց Աստուած թող չխօսի մեզի հետ՝
20 որ չմեռնինք։ Եւ Մովսէս ըսաւ ժողովուրդին, Մի վախնաք. վասն զի Աստուած ձեզ փորձելու եկաւ, այնպէս զի անոր վախը ձեր առջեւը ըլլայ, որ
21 չմեղանչէք։ Եւ ժողովուրդը հեռու կայնեցաւ. ու Մովսէս մօտեցաւ այն թանձրը խաւարին ուր որ Աստուած էր։
22 Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ասանկ պիտի ըսես Իսրայէլի որդւոցը, Դուք տեսաք որ ձեզի հետ երկինքէն խօսեցայ.
23 ինծի հետ արծաթէ աստուածներ չընենք, ոչ ալ ոսկի աստուածներ չընէք
24 ձեզի։ Ինծի հետ սեպան մը չընես, ու անոր վրայ քու ոչխարներդ ու խաղաղութեան զոհերդ, քու ոչխարներդ ու արջառներդ մատուցանես. Ես ամէն տեղ՝ ուր որ իմ անունս յիշել կու տամ, քեզի պիտի գամ, ու քեզ պիտի
25 օրհնեմ։ Եւ թէ որ ինծի քարէ սեպան չընելու ըլլաս, ուշած քարէ չընես. քանզի թէ որ անոր վրայ երկաթ գործ
26 ածէք վերցնես, կը պղծես զանիկա։ Եւ աստիճաններով չելլես իմ սեղանս, որ քու մերկութիւնդ չերեւնայ անոր վրայ։

## Գլ. ԻԱ

1 Եւ անոնց առջեւը դնելու դատաստան-
2 ներդ ասոնք են. Թէ որ Եբրայեցի ծառայ մը ծառու առնելու ըլլաս, անիկա վեց տարի պիտի ծառայէ, և եօթներորդ տարին ձրի ազատ պիտի ելլէ։
3 Թէ որ մինակ մտաւ, մինակ պիտի ելլէ. Թէ որ կին ունէր, կինն ալ իր
4 հետը պիտի ելլէ։ Թէ որ իր տէրը իրեն կին առաւ, ու անիկա իրեն որ-

գիներ կամ աղխինները ծնած է, կինը ու անոր ազգքը սիրոջը պիտի բլլան,
5 ու ինքը մինակ պիտի ելլէ, իսկ Թէ որ ծառան յայտնի բսկլու բլլայ Թէ ես կը սիրեմ իմ տէրս, իմ կինս ու իմ զաւակներս, չեմ ուզեր որ ելլեմ ազատ
6 ըլլալ, Անոնոնոր տէրը դատաւորներուն պիտի տանի զանիկա, և դրբանը կամ դրանդեացը մօտեցընէ. ու անոր տէրը անոր ականջը հերիւնով պիտի ծակէ, և անիկա յաւիտեան ծառայ պիտի բլլայ անոր։
7 Ու Թէ որ մէկը իր աղխիկը ազախնի բլլալու համար ծախէ, անիկա ծառաներուն պէս պիտի չելլէ։
8 Եթէ որ անիկա հաճելի չերեւնայ իր տիրոջը որ զանիկա իրեն նշաներ էր, Թող վրիկէ ասոր ազգ ծախելու կարող չըլլայ, վասն որ զանիկա՝ Բ-յց զանիկա օտար ազգի ծախելու կարող չըլլայ, վասն
9 որն զի խաբեր Թիւն ըրաւ անոր։ Ու Թէ որ զանիկա իր որդւոյն նշանած է, աղխինոց օրէնքին համեմատ պիտի բնակ
10 անոր։ Թէ որ իրեն ուրիշ կին առնէ, անոր ուտելիքը, հանդերձը ու մերձաւորութիւնը պիտի չպակսի։ Ու Թէ որ անոր այս երեք բանը չընէ, անասունը անիկա առանց սակի ձրի պիտի երթայ։
12 Մարդ զարնող մեռցընողը անչուշտ
13 պիտի մեռցուի։ Իսկ Թէ որ դարանամուտ չեղաւ, այլ ՚Ա-ստուած մատնեց անոր ձեռքը, քեզի տեղ մը պիտի սահմանեմ, որ անիկա հոն փախչի։
14 Բայց Թէ որ մեկը իր դրացիին ոխ ունենայ, և զանիկա նենգութեամբ մեռցընէ, իմ սեղանէս ալ պիտի առնես զանիկա՝ որ մեռնի։ Ու իր հօրը կամ մօրը զարնողը անչուշտ պիտի մեռցուի։
16 Ու մարդ գողցողը, Թէ՛ զանիկա ծախած բլլայ, և Թէ՛ իր ձեռքը գտնուի, անչուշտ պիտի մեռցուի։
17 Ու իր հայրը կամ մայրը անիծողը անչուշտ պիտի մեռցուի։
18 Ու Թէ որ մարդիկ կռուռւ հետ վէճ բնեն, ու մէկը միւսին քարով կամ բռնցքի զարնէ, ու անիկա չմեռնի,
19 այլ անկողինը պառկի, Թէ որ նորէն ելլէ ու ցուտով պորտի, զարնողը անպարտ բլլայ, միայն անոր ՚կորնցուցած ժամանակին ՚Բ-ժիչ՚ը հատուցանէ, ու բոլորովին առողջացնէ ՚ընդ՚։
20 Ու Թէ որ մեկը գաւազանով իր ծառան կամ իր ազախինը զարնէ, ու անիկա իր ձեռքին տակը մեռնի, անչուշտ անկէ վրէժ պիտի առնուի։ Բայց Թէ որ օր մը կամ երկու օր ապրի, անկէ վրէժ չառնուի։ վասն զի անիկա իր ստակն է։
22 Ու Թէ որ մարդիկ կռուին, ու յղի կնկան մը զարնելով՝ անոր ազան անցընել տան, և ՚Բ-ժիչ մեռնայ մը չըլլայ, անիկա անչուշտ ան կնոջ երկանը իր վրայ դրած ապժը պիտի փառէ, դատաւորներուն ՚Բ-ՐԲ-ՈՐՆԷՆ պէս հատուցանելով։ Բայց Թէ որ մեռնայ մը ըլլայ, անեծ փոխարէն անեծ պիտի տուայ,
24 Աչքի փոխարէն աչք, ակռայի փոխարէն ակռայ, ձեռքի փոխարէն ձեռք,
25 ոտքի փոխարէն ոտք, խարանի փոխարէն խարան, վէրքի փոխարէն վէրք, հարուածի փոխարէն հարուած։
26 Ու Թէ որ մէկը իր ծառային աչքը կամ իր ազախնին աչքը զարնէ ու կուրցընէ, զանիկա իր աչքին փոխարէն ազատ պիտի արձակէ։
27 Ու Թէ որ իր ծառային ակռան կամ իր ազախնին ակռան թափէ, զանիկա իր ակռային փոխարէն ազատ պիտի արձակէ։
28 Ու Թէ որ եզ մը իր եզին բնեղովը մարդ մը կամ կին մը զարնէ մեռցընէ, եզը անչուշտ պիտի քարկոծուի, ու անոր միսը պիտի չուտուի։ բայց եզին տէրը անպարտ բլլայ։ Իսկ Թէ որ եզը երեկուընէ ՚ի վեր օրնէ զարնող է, և անոր տէրն ալ զրուցուած է, ու զանիկա պահած չէ, Թէ որ մարդ մը կամ կին մը մեռցընէ բլլայ, եզը պիտի քարկոծուի, ու անոր տէրն
30 ալ պիտի մեռցուի։ Թէ որ փրկանք մը ձգուի անոր վրայ, անիկա իր անձին ազատութեանը համար՝ ինչ որ իր վրան ձգուի պիտի վճարէ։ Թէ ազայ մը

*ՆԲՔ. Նաիւը



և Թէ աղխիկ մը զարնելու բլլայ Ն-ղ,
32 այս դատաստանին պէս բլլայ անոր։ Թէ որ եզը ծառայ մը կամ ազախին մը զարնէ, անոնց տիրոջը երեսուն սիկղ արծաթ պիտի տայ, ու եզը պիտի քարկոծուի։
33 Ու Թէ որ մեկը փոս մը բանայ, կամ մեկը փոս մը փորէ ու չծածկէ, և հոն
34 եզ մը կամ էշ մը ինկնելու բլլայ, վնասը փոսին տէրը պիտի քաշէ, ու անոնց տիրոջը սակ պիտի տայ, և մեռածը իրը պիտի բլլայ։
35 Ու Թէ որ մեկուն եզը իր դրացիին եզը դարնէ մեռցընէ, աղէ եզը պիտի ծախեն, ու անոր սակը բաժնեն, և
36 մեռածն ալ բաժնեն, Իսկ Թէ որ եզին երկկոտընէ ՚ի միս օրնէ զարնող բլլալը դիացուած բլլալով, անոր տէրը զանիկա պահած չէ, անչուշտ եզին տեղը եզ պիտի հատուցանէ, ու մեռածը իրը պիտի բլլայ։

## ԳԼ. ԻՐ

1 Թէ որ մեկը արջառ մը կամ ոչխար մը գողցայ՝ ու մորթէ կամ ծախէ զանիկա, մեկ արջառին տեղը հինգ արջառ՝ ու մեկ ոչխարին տեղը չորս ոչ-
2 խար պիտի հատուցանէ. Թէ որ գող մը գտնի ծակելու վրայ գտնուի, ու զարնուի մեռնի, անոր համար արիւն պիտի Թափուի. անիկա լման կրնար հատուցանել. Թէ որ բան մրն ալ չունենար, անասունը իր գողցած բանին համար
4 կրնար ծախուի. Թէ որ գողցածը իր ձեռքը ողջ գտնուի, Թէ եզ բլլայ՝ Թէ էշ և Թէ ոչխար, կրկինը պիտի հատուցանէ։
5 Թէ որ մեկը արտ մը կամ այգի մը ՚վնաս ասյ՝, Թող տայով իր անասունը ուրիշի մը արտին մէջ արածելու, իր արտին ամենէն ազնիւ ՚ըրդ՚-ՆԵՒՆ՝ ու իր այգիին ամենէն ազնիւ ԲՐԴ-ՆԵՒՆ պի-

*ՆԲՔ. մէջ արածել տայ,

6 տի հատուցանէ, Թէ որ կրակ ցաթկէ ու ցանկի փուշերուն փակչի, և դիզուած արաներ կամ չհնձուած ցորեն կամ արտը այրէ, կրակը վառողը այրածին ՚Բ-ՀԻՉ՚ը լման պիտի հատուցանէ։
7 Թէ որ մեկը իր դրացին տակ կամ անասներ սյ պահելու համար, և այն մարդուն առնէն գողցուի, Թէ որ գողը գտնուի, անիկա կրկինը պիտի հատուցանէ. Թէ որ գողը չգտնուի, տանուտէրը դատաւորներուն պիտի տարուի, իր ձեռքը իր դրացիին տուացուածքին չդպցընելը ՚Բ-ՀԻՉ՚ը հաստատելու համար։ Ամեն կերպ անիրաւութեան համար, Թէ եզի՝ Թէ էշու՝ Թէ ոչխարի և Թէ հանդերձի համար, ՚ի՛ ամէն կերպ կորուսած բանի համար՝ որն որ ՚ի՛նը կը հատատաէ Թէ իրն է, երկու կողմին գատաստանները առէնին տարուի, ՚ի՛ գատաստանները որու վրայ վճռելու բլլան, անիկա իր դրացիին կրկինը պիտի հատուցանէ։
10 Թէ որ մեկը իր դրացիին էշ մը կամ եզ մը կամ ոչխար մը կամ ինչ և իցէ անասուն մը պահելու համար տայ, ու անիկա մեռնի կամ վնասի կամ ՚Բ ըշնամին առնի տանի՝ ու տեսնող չըլլայ,
11 Ա-ՏՈՒԱԾ երկու քին մէջտեղը Տէրոջը երդում ըլլայ՝ իր դրացիին տուացուածքին ձեռք չդպցընելուն համար։ ու անոր տէրը պիտի ընդունի երդումը, և
12 ինքը պիտի չհատուցանէ։ Ու Թէ որ իրաւ գրնի իր քովէն գողցուեր է, ինքը անոր տիրոջը պիտի հատուցանէ։ Թէ
13 անոր տիրոջը պիտի հատուցանէ։ Թէ որ ՚Ե-ՉՆ պատառուած է, Թող բերէ զանիկա՝ վկայ Թիւն ընելու համար։ ու պատառուածին չէ՛նը պիտի չհատուցանէ։
14 Ու Թէ որ մեկը իր դրացէն ՚Ա-ՏՈՒԱ փոխ առնէ, ու անիկա վնասուելու կամ մեռնելու բլլայ՝ անոր տէրը հետը չբլլալով, ինքը անչուշտ պիտի հատուցանէ։ Բայց Թէ որ անոր տէրը հետն էր, պիտի չհատուցանէ. Թէ որ վարձ-

*ՆԲՔ. գերու Թիւն ըլլալ՝

փով առնուած էր, վաթսփեն փոխարէն սեպուի։
16 Եւ Թէ որ մէկը չնչանուած աղջիկ մը խաբէ, ու անոր հետ պառկի, անշուշտ անոր օժիտը ինքը տալով՝ զանիկա իրեն կին պիտի ընէ։ 17 Թէ որ անոր հայրը ամենեին չուզէ անոր տալ, անիկա կոյսերուն օժիտին չափ տակի պիտի *տայ։
18 Կախարդ կինը չպահեցնես։
19 Ով որ անասունի հետ պառկի, անշուշտ պիտի մեռցուի։
20 Միայն Տէրոջմէն ի զատ՝ ---էլ աստուածներու զոհ ընողը բոլորովին պիտի կորսուի։
21 Եւ օտարականը մի չարչարեր, ու զանիկա մի նեղեր, վասն զի դուք ---ը եգիպտոսի երկրին մէջ օտարական էիք։
22 Ոևէ այրին ու որբը բնաւ մի չարչարէք։
23 Թէ որ զանոնք չարչարէք ինչ և իցէ կերպով, ու անոնք ինծի բղաւքելու բլլան, անշուշտ պիտի լսեմ անոնց աղաղակը։ 24 Եւ իմ բարկութիւնս պիտի բորբոքի, ու ձեզ սրով պիտի մեռցնեմ. և ձեր կիները որբևարի ու ձեր ազաքը որբ պիտի բլլան։
25 Թէ որ իմ ժողովրդիս քու քովդ եղած ազքատ մէկուն փոխ տակի տաս, վաշխ առնողի մը պէս մի բլլար անոր, 26 ու անոր վրան վաշխ մի դներ։ Թէ որ քու դրացիդ հանդերձը գրաւ առնես, արևը մտնը չմտած՝ իրեն նա դարձնես։ 27 Վասն զի ան է միայն անոր ծածկոցը, իր մարմնին հանդերձն է ան. ինչով պիտի պառկի։ և պիտի բլլայ որ երբոր ինծի աղաղակէ, պիտի լսեմ, քանզի ես ողորմած եմ։
28 Դատաւորները մի հայհոյեր, և քու ժողովուրդիդ իշխանը մի անիծեր։
29 Քու արմաֆիներուդ ու հեղուկներուդ երախայրիները մի ուշացներ. քու որդւոցդ անդրանիկները ինծի պիտի տաս։ 30 Քու եզդ -- ոչխարիդ ալ ասանկ պիտի ընես. եօթը օր մոր հետ պիտի բլլայ, ութերորդ օրը զանիկա ինծի պիտի տաս։

*Եբր. կշռէ։

31 Եւ դուք ինծի սուրբ մարդիկ պիտի բլլաք. և գազանին մէջ չ-ղ-ննէրէն պատառուածին միսը պիտի չուտէք. շուներուն պիտի նետէք զայն։

## Գլ. ԻԳ

1 Սուտ լուր չսանկես. անօրէնի հետ ձեռ-
2 քըդ չդնես անիրաւ վկայ բլլալով։ Զանրութիւն ընելու համար բազմութեան չհետեւիս. ու դատաստանի մէջ էք---ը ծռելու համար չառերուն կողմը խոնարհելով՝ խօսք չխօսես։ 3 Եւ աղքատին ալ առանձնութիւն չընես իր դատին մէջ։
14 տաբծիւը, Եւ ցիները, ու անգղը իր ա-
15 տակին պէս, Ե– ամէն ագռաւը իր ա-
16 տակին պէս, Եւ ջայլամը, ու բուն, և կկուն, ու բազէն իր տեսակին պէս,
17 Եւ հատապտիրը, ու հոդամոգը, և քա-
18 ջահաբը, Ու կաթապը, և հատապտ,
19 ու սև անգղը, Եւ արագիլը, ԵԵ քաջաղը իր տեսակին պէս, և յապոպը, ու չղջիկը։

20 Ամէն չորս ոտքի վրայ քալող թռչուն
21 պիտի ըլլայ. Սակայն ասոնք պիտի ուտէք. բոլոր չորս ոտքի վրայ քալող թռչուններէն երկրի վրայ ցաթկելու համար ոտքերու-
22 նուն վրայ ազդր ունեցողները. Անոնցմէ ասոնք պիտի ուտէք. մորեխը իր տեսակին պէս, ու գրասխը իր տեսակին պէս, և խոյտագուլը իր տեսակին պէս, ու ցօղտակը իր տեսակին պէս։
23 Բայց ձեզի բոլոր չորս ոտքով թռչ-
24 չող սեռերը ձեզի պիղծ ըլլայ. Ե– ասոնցմով զուր անմաքուր պիտի ըլ-
25 լաք. ամէն անոնց դիեղմէն դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ,
25 Եւ ամէն անոնց դիեղը վերցնողը իր հանդերձները պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ։
26 Իրիկուն անմաքուր պիտի ըլլայ. Բոլոր անասուններուն որոնք կձղակաբաշխ են, բայց կձղակնին ձեղքուած չէ, և չեն որոճար, անմաքուր են ձեզի. ով որ անոնց դիեղմէն դպչի՝ անմաքուր պիտի ըլլայ։
27 Եւ բոլոր չորս ոտքի վրայ քալող անասուններէն՝ թաթերնուն վրայ քալողներուն ամէնը անմաքուր ըլլայ ձեզի. ամէն անոնց դիեղմէն դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ։
28 Եւ անոնց դիեղը վերցնողը իր լուանքը պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ. անոնք անմաքուր են ձեզի։
29 Եւ երկրի վրայ սողացող սողուններուն մէջ ասոնք անմաքուր ըլլան ձեզի. աքիսը ու մուկը և *սխտեակը իր
30 տեսակին պէս, Եւ կոճպհան ու մողեսը և քարաթռչը ու խամէլեօնը և գե-
31 ռնաբծիւը։ Բոլոր սողացողներուն մէջ ձեզի անմաքուր եղածներն ասոնք են. ամէն անոնց մեռածին դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ։
32 Եւ անոնց մէկ մեռածը ինչ բանի վրայ որ իյնայ, թէ փայտէ առնուն ըլլայ՝ կամ հանդերձ՝ կամ մորթ՝ կամ գուրձ, ինչ տեսակ գործածական առնուն որ ըլլայ՝ անմաքուր պիտի ըլլայ. Ջուրը պիտի ձգուի այն, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ, և ետքը մաքուր պիտի
33 ըլլայ։ Եւ անոնց մէկը որ հողի առնուին մէջ իյնայտ ըլլայ, ամէն անոր մէջ եղածն անմաքուր պիտի ըլլայ, ու այն
34 տունը պիտի կործեք։ Ամէն ուտելու կերակուրը՝ որուն վրայ †ջուր կայ, ԵԵ սառնց ինչ ինչ էնայ՝ անմաքուր պիտի ըլլայ. Նոյնպէս ամէն առնուի մէջ եղած բոլոր խմելու խմելիք անմա-
35 քուր պիտի ըլլայ։ Եւ ամէն բան՝ որուն

*Կամ կրնան
†Կամ սառնչ ջուր գայ,



վրայ անոնց դին կ'իյնայ, անմաքուր պիտի ըլլայ. ԲՆ Թոնիր ըլլայ և Թէ վառարան՝ պիտի աւերուի. անոնք անմաքուր են ու անմաքուր պիտի սեպուին
36 ձեզի։ Բայց աղբիւրը կամ հաւր *ուր ժողուած ջուր կայ՝, մաքուր պիտի ըլլայ. սակայն անոնց դիեղմէն դպչո-
37 ղը անմաքուր ըլլայ։ Եւ Թէ որ անոնց դին ցանուելու սերմի մը վրայ
38 իյնայ, մաքուր պիտի ըլլայ այն։ Բայց Թէ որ սերմին վրայ ջուր դրուած ըլլայ՝ ու անոր վրան անոնց դին իյնայ, այն ձեզի անմաքուր պիտի ըլլայ։
39 Եւ Թէ որ ձեր ուտելու կենդանիներէն մէկը մեռնի, անոր դիեղ դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ։
40 Եւ անոր դիեղմէն ուտողը իր հանդերձները պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ. և անոր դիեղ վերցնողը իր հանդերձները պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։
41 Եւ երկրի վրայ սողացող ամէն սողուն պիղծ է. պիտի չուտուի այն,
42 Երկրի վրայ բոլոր սողացող սողուններէն ամէն իր փորին վրայ քալողը՝ կամ ամէն չորս ոտքի վրայ պտըտողը՝ և կամ ամէն բազմոտանի եղածները պիտի չու-
43 տէք, քանզի պիղծ են։ Ընտ սողացող սողունով մի անձերնիդ մի պղծէք. ոչ ալ անոնցմով պղծուելով ան-
44 մաքուր եղէք. Վասն զի ես եմ Տէր Ձեր Աստուածը. ուստի սրբեցէք անձերնիդ ու սուրբ եղէք, քանզի ես սուրբ եմ. ու բնաւ երկրի վրայ մէկ սողացող սողունով մը անձերնիդ
45 մի պղծէք։ Վասն զի ես եմ Տէրն՝ որ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի որ ձեզի Աստուած ըլլամ. ուստի սուրբ եղէք, քանզի ես սուրբ եմ։
46 Ջորքառաներուն և թռչուններուն ու ջուրերուն մէջ չարժող բոլոր շնչաւոր կենդանիներուն և երկրի վրայ սողացող ամէն կենդանիներուն օրէնքն
47 այս է. Որ անմաքուրին ու մաքուրին միջոցով՝ և ուտուելու անասունին ու

*Կամ ՝ամ ջրահաւտակը՝

չուտուելու անասունին միջոցով տարբերութիւն ընէք։

## ԳԼ. ԺԲ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ բսելով,
2 Խօսէ Իսրայէլի որդւոց ու բսէ, Թէ որ կին մը սերմ առնէ ու արու զաւակ ծնանելու ըլլայ, եօթը օր անմաքուր պիտի ըլլայ. իր ցաւոտնին հասմար զաւակելու օրերուն հասինսան ան-
3 մաքուր պիտի ըլլայ։ Եւ ութերորդ օրը թլփատութեան մնրմինը պիտի թլփատուի։ Եւ անիկա իր մաքրելուն արիւնովը երեսուն երեք օր պիտի նստի. ու մինչև իր մաքրելու օրերուն բլինեալը՝ բնաւ սուրբ բանի մը պիտի չդպչի, ոչ ալ սրբարանը պիտի
5 մտնէ։ Բայց Թէ որ անիկա աղջիկ ծնանելու ըլլայ, երկու շաբաթ անմաքուր պիտի ըլլայ իր դաշտանի ֆամպալին պէս, և վաթսունվեց օր իր մաքրուելուն արիւնով պիտի նստի։
6 Եւ երբ ազգ կամ աղջիկ զաւկի հասմար իր մաքրուելու օրերը բլինեալ, ժողովքի խորանին դուռը ոչխարվի հասմար մէկ տարեկան գառն ու մեղքի պատարագի հասմար ագռաւների ձագ մը կամ տատրակ մը պիտի բերէ քահա-
7 նային, Որ պիտի մատուցանէ զանիկա Տէրոջը առջև՝ ու քաւութիւն ընէ անոր հասմար, և անիկա իր արիւնի աղբիւրէն պիտի մաքրուի։ Ասիկա կամ էգ
8 զաւակ ծնանողին օրէնքն այս է։ Եւ Թէ որ գառն բերելու կարող չէ, երկու ատտատկի կամ աղուներէն երկու ձագ առնէ, մէկը ողջակիզի և մէսը մեղքի պատարագի հասմար, և քահանան քաւութիւն ընէ անոր հասմար, ու անիկա մաքրուի։

## ԳԼ. ԺԳ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահա-
2 րոնի՝ բսելով, Մարդու մը մարմինին մորթին մէջ ուռեցք կամ քոս կամ պռպռաջ բլլալով՝ անոր մարմինին մոր-

քին մէջ բորոտութեան պատճառ չը երևնալու լիցի, անասնոյն առնիկ Ահարոն քահանային կամ անոր որդւոցը քահանայութեան մէկուն պիտի
3 բերուի։ Եւ քահանան պիտի նայի մարմինին մարքին մէջ եղած պատճառն նշանագրուած։ ու թէ որ պատճառն մէջի մազերը դարձած լինին սպիտակ, ու պատճառը մարքին խորութենկ երևնայ, բորոտութեան պատճառ է այն. և քահանան պիտի նայի անոր՝ ու *պիտի ծանուցանի
4 նէ անոր անմաքուր լիցի։ Իսկ թէ որ անոր մարմինին մարքին մէջ պատկառը սերմանկ է ու մարքէն խորութենկ չերևնար, և մազն ալ սերմանկի գարձած չէ, անասուն քահանան եօթն օր գոցուած պիտի պահէ պատահիկը։
5 Եւ քահանան եօթներորդ օրը պիտի նայի անոր. ու թէ որ պատը դեռ կը կենայ, ու մարքին մէջ տարածուած չէ, անասուն քահանան եօթն օր ալ գոցուած
6 պիտի պահէ զանիկա։ Եւ քահանան եօթներորդ օրը նորէն պիտի նայի անոր, ու թէ որ պատը չլացած լիցի, ու մարքին մէջ տարածուած չլիցի, քահանան †պիտի ծանուցանէ անոր մաքուր լիցիը. ատիկա դէղ մին է. և անիկա իր լաթերը պիտի լուայ,
7 ու մաքուր լիցի։ Բայց թէ որ իր մաքրուելուն համար քահանային նայուելէն հետը գալը քոսը մարքին մէջ տարածուի, քահանան նորէն պիտի նայի ա-
8 նոր։ Եւ քահանային նայած ատենը թէ որ քոսը մարքին մէջ տարածուած է, անասնոյն անոր անմաքուր լիցիը պիտի ծանուցանէ. բորոտութիւն է։
9 Երբոր մարդու մը վրայ բորոտութեան պատճառ լիցի, անիկայ քահանային պիտի տարուի։
10 Եւ քահանան պիտի նայի. և թէ որ մարքին մէջ սերմանկի ուռկեց կայ ու սերմանկի գարձեր է մազը՝ և ուռկեցին մէջ ողջ միսի նըշան կայ,
11 Ասիկա անոր մարմինին մարքին մէջ հինցած բորոտութիւն է. և քահանան անոր անմաքուր լիցիը պիտի ծանուցանէ, գոցուած չպահէ քանիկա, քանզի անմաքուր է։
12 Եւ թէ որ բորոտութիւնը մարքին մէջ տարածուած է, ու ախտակիրն բոլոր մարքը գլխէն մինչև ոտքը, այսինքն քահանային աչքերուն բոլոր տեսած
13 տեղը բորոտութիւնը պատեր է։ Եւ քահանան տեսնէ որ բորոտութիւնը անոր բոլոր մարմինը պատած է, անասնոյն ախտակիրն մաքուր լիցիը ծանուցանէ. †նէնգ բոլորովին սերմանկի գարձած է, անիկա մաքուր է։ Բայց երբոր անոր վրայ ողջ միս տեսնուի,
14 նիկա անմաքուր պիտի լիցի։ Եւ քահանան պիտի տեսնէ ողջ միսը, և անոր անմաքուր լիցիը ծանուցանէ. ողջ միսը անմաքուր է. բորոտութիւն է։
15 Իսկ թէ որ ողջ միսը փոխուի նորէն ու սերմանկի գառնալու լիցի, անասնոյն քահանային պիտի գայ. Եւ քահանան պիտի տեսնէ զանիկա.
16 ու թէ որ ողջ միսը փոխուի նորէն սերմանկի գառնալու լիցի, անասնոյն քահանային պիտի գայ. Եւ քահանան պիտի տեսնէ զանիկա. ու թէ որ
17 պատը սերմանկի գարձեր է, անասնոյն քահանան պիտի քահանայ. ու թէ որ պատը սերմանկի գարձեր է, անասնոյն քահանան պիտի քահանայ. անիկա մաքուր է։
18 Եւ թէ որ մարմինին մարքին մէջ
19 պատառ լիցի ու առողջանայ, Եւ պատառին տեղը սերմանկ ուռկեց կամ քիչ մը կարմրագած սերմանկ պատառ լիցի, քահանային պիտի ցուցուի այն,
20 Եւ երբ քահանան տեսնէ որ մարքէն գոգացած կ'երևնայ, և մազը սերմանկի գարձած է, քահանան անոր անմաքուր լիցիը պիտի ծանուցանէ. անիկա պատառի բորոտութիւն է։
21 Եւ թէ որ քահանան տեսնէ որ սերմանկ մազ չկայ անոր մէջ, ու մարքէն ցած չէ՝ բայց լացած է, անասնոյն քահանան եօթն օր գոցուած պիտի պահէ զանիկա։
22 Եւ թէ որ մարքին մէջ տարածուած է, անասնոյն քահանան անոր անմաքուր
23 լիցիը ծանուցանէ. պատ է այն. Բայց թէ որ պատկառը իր տեղը կը կենայ ա-չէ տարածուեր, պատարին սպին է. և քահանան անոր մաքուր լիցիը պիտի ծանուցանէ։

*ՆԵՔ. զանիկա անմաքուր պիտի բնէ։
†ՆԵՔ. զանիկա մաքուր պիտի բնէ։



24 Իսկ թէ որ մարմինին մարքին մէջ կրակի այրած լիցիը, ու ‡այրածէն նըշանը քիչ մը կարմրագած սերմանկ կամ
25 բոլորովին սերմանկ պատպազ լիցիը, քահանան անոր նայած ատենը՝ թէ որ պատպազին մէջ մազը սերմանկի գարձած է, ու մարքէն խորութենկ կ'երևնայ, անիկա այրածէն առաջ եկած բորոտութիւն է. և քահանան անոր անմաքուր լիցիը պիտի ծանուցանէ. անիկա
26 բորոտութեան պատ է։ Բայց թէ որ քահանային նայած ատենը պատպազին մէջ մազը սերմանկ չէ, ու մարքէն խորութենկ չէ, այլ շլացած է, անասնոյն քահանան եօթն օր գոցուած պիտի պահէ
27 զանիկա։ Եւ եօթներորդ օրը քահանան պիտի նայի անոր. թէ որ մարքին մէջ տարածուած է, քահանան անոր անմաքուր լիցիը ծանուցանէ. անիկա բորոտութեան պատ է։ Եւ թէ որ
28 պատպազը իր տեղը կը կենայ ու մարքին մէջ տարածուած չէ, հապա շլացած է, անիկա այրածէն ուռկեցքն է. և քահանան անոր մաքուր լիցիը ծանուցանէ. վասն զի այրածէն սպին է։
29 Եւ թէ որ մարդու մը կամ կնիկան մը գլուխը կամ կզակը պատ մը լիցի,
30 քահանան պիտի տեսնէ պատը. և թէ որ մարքէն խորութենկ երևնայ, ու անոր մէջ բարակ դեղին մազ լիցի, անասնոյն քահանան անոր անմաքուր լիցիը պիտի ծանուցանէ. անիկա գանգուխ է, գլխոյ կամ կզակի բորոտութիւն է։
31 Եւ Եւ թէ որ քահանան գանգուխ տեսնէ պատը տեսնէ որ մարքէն խորութենկ չերևնար, ու անոր մէջ սև մազ չկայ, անասնոյն քահանան գանգուխ պատացած եօթն օր գոցուած պիտի պահէ
32 զանիկա։ Եւ եօթներորդ օրը քահանան պատը պիտի նայի, ու թէ որ գանգուխը տարածուած չէ, և անոր մէջ դեղին մազ չկայ, ու գանգուխը մարքէն խորութենկ չերևնար, Անիկա պիտի ածխուի, բայց գանգուխը պիտի չածխի. և քահանան եօթն օր ալ գոցուած պիտի պահէ գանգուխ ունեցածը։
34 Ու։ Եօթներորդ օրը քահանան գանգուխը եօթն ունեցողին պիտի նայի. և թէ որ գանգուխը մարքին մէջ տարածուած չէ, ու մարքէն խորութենկ չերևնար, անասնոյն քահանան անոր մաքուր լիցիը ծանուցանէ. և անիկա իր լաթերը պիտի լուայ, ու մաքուր լիցի։
35 Բայց թէ որ իր մաքրուելէն ետքը գանգուխը մարքին մէջ տարածուի,
36 Անասնոյն քահանան պիտի նայի անոր. և թէ որ գանգուխը մարքին մէջ տարածուած է, անասնոյն քահանան՝ ոչ դեղին մազ պիտի չփընտռէ. անիկա անմաքուր է։
37 Բայց թէ որ գանգուխը եղածին պես կը կենայ, և անոր մէջ սև մազ բուսեր է, գանգուխը բժշկուած է. անիկա մաքուր է, ու քահանան անոր մաքուր լիցիը ծանուցանէ։
38 Եւ թէ որ մարդ մը կամ կին մը իր մարմինին մարքին մէջ պատպազներ՝ սպիտակ ձերմանկ պատպազներ ունենայ,
39 Անասնոյն քահանան պիտի նայի, և թէ որ անոնց մարմինները մարքին մէջ պատպազները չլացած ձերմանկ լիցին, անիկա մարքին մէջ գոցուած պուսակ է. անիկա մաքուր է։
40 Եւ թէ որ մարդու մը գլուխն մազը թափկոտ լիցի, անիկա կնատակ է՝ բայց
41 մաքուր է։ Եւ թէ որ անոր երեսին կողմէն գլուխն մազերն ինկած լիցին,
42 անիկա ճեղ է՝ բայց մաքուր է։ Իսկ թէ որ կնատութեան կամ ճեղատութեան մէջ քիչ մը կարմրագած ձերմանկ վէրք մը լիցի, այն՝ անոր կնատութեանը կամ ճեղատեան մէջ գոցուած բորոտութիւն է, Անասնոյն քահանան պիտի նայի անոր. և թէ որ անոր կնատութեանը կամ ճեղատութեան մէջ՝ վէրքին ուռկեցքը քիչ մը կարմրագած ձերմանկ լիցի՝ մարմինին մարքին մէջ եղած բո-
44 րոտութեան ուռկեցքին պես, Անի մարդը բորոտ է, անմաքուր է. քահանան անպատճառ անոր անմաքուր լիցիը պիտի ծանուցանէ. անոր գլխուն է։

‡Կամ այրածը առողջանալով

45 Եւ սիրտ ունեցող բորոտին հանդերձք պատառած պիտի ըլլայ, և անոր գլուխը մերկ, ու անոր *շրմունքները ծածկուած պիտի ըլլան, և ձայն պիտի ապ թէ Անմաքուր եմ՝ անմաքուր։
46 Ամեն իր վրայ եղած բոլոր օրերը անմաքուր պիտի ըլլայ. անիկա անմաքուր է, մենակ պիտի նստի. անոր բնակութիւնը բանակէն դուրս պիտի ըլլայ։
47 Եւ այն հանդերձը՝ որուն մէջ բորոտութիւն մտած կայ, թէ բուրդէ հանդերձ ըլլայ և թէ քիմանէ հանդերձ,
48 քիմանեղէնի կամ ըրդիղէնի առէջի կամ թէզանի մէջ՝ կամ մորթի մէջ և կամ մորթէ շինուած ամէն բանի մէջ,
49 Ա յսինքն՝ թէ որ հանդերձի կամ մորթի մէջ՝ կամ առէջի կամ թէզանի մէջ՝ կամ մորթէ չինուած ամէն կերպ բանի մէջ բիչ մը կանաչ կամ կարմրագոյն ախտ նշան ըլլայ, բորոտութեան ախտ է, ու քահանային պիտի ցուցնուի։
50 Եւ քահանան պիտի նայի ախտին ու եօթը օր գոցուած պիտի պահէ ախտացեալ բանը։
51 Եւ եօթներորդ օրը ախտացեալ բանին պիտի նայի. թէ որ ախտին նշանը տարածուած է հանդերձի մը մէջ, կամ առէջի կամ թէզանի մէջ, կամ մորթի մէջ, և կամ գործածուելու համար մորթէ շինուած ամէն բանի մէջ, այս ախտը բորոտագին բորոտութիւն է. անմաքուր է։
52 Ուստի պիտի այրէ հանդերձին կամ քիմանեղէն հանդերձը՝ կամ առէջը կամ թէզանը, կամ ամէն կերպ մորթէ շինուած բանը որուն մէջ այն ախտը կայ. վասն զի բորոտագին բորոտութիւն է այն, կրակի մէջ պիտի այրուի։
53 Եւ քահանան պիտի նայի. ու թէ որ քահանան տեսնէ որ ախտին նշանը հանդերձին մէջ, կամ առէջին կամ թէզանին մէջ, կամ ամէն կերպ մորթէ շինուած բանին մէջ տարածուած չէ,
54 Ա յնտեղ քահանան պիտի հրամայէ որ այն ախտացեալ բանը լուանան. ու նորէն եօթն օր գոցուած պիտի պահէ զայն։
55 Ու ախտացեալ բանը լուացուելէն ետքը թէ որ քահանան տեսնէ որ ախտը չէ փոխեր, ու ախտը տարածուած ալ չէ, անիկա անմաքուր է. կրակի մէջ պիտի այրես զայն. անոր ակը կամ վրան փուտթիւն կայ։
56 Ու թէ որ քահանան տեսնէ որ անոր լուացուելէն ետքը ախտին նշանը չէ ցած է, անոնցմէ այն խոցոտիլ ըսածը հանդերձէն կամ մորթէն կամ առէջին կամ թէզանին կամ մորթէն կամ առէջին
57 և կամ թէզանին պիտի պատառէ։ Ու թէ որ այն հանդերձին մէջ, կամ առէջին կամ թէզանին մէջ, կամ ամէն կերպ մորթէ շինուած բանին մէջ նորէն երեւնայ ըլլայ, անիկա տարածուած բծոտութիւն է. վրան ախտ ունեցող բանը կրակի մէջ պիտի այրես։
58 Եւ այն հանդերձը, կամ առէջը կամ թէզանը, կամ ամէն կերպ մորթէ շինուած բանը, որ լուացուելէն ետքը ախտը անկէ զացած է, նորէն պիտի լուացուի ու մաքուր ըլլայ։
59 Բուրդէ կամ քիմանէ հանդերձի մէջ, կամ առէջի կամ թէզանի մէջ, կամ մորթէ շինուած ամէն կերպ բանի մէջ եղած բորոտութեան ախտին օրէնքն այս է, անոր մաքուր կամ անմաքուր ըլլալը ծանուցանելու համար։

## Գլ. ԺԴ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ըսելով,
2 Բորոտին օրէնքն այս է իր մաքրուելու օրը. Անիկա քահանային պիտի տարուի։
3 Ու քահանան դուրս պիտի ելլէ, ու քահանան պիտի նայի. ու թէ որ բորոտին բորոտութեան ախտը բժշկուած է, Աշտանին քահանան պիտի հրամայէ որ մաքրուելու համար երկու աղէ և մաքուր թռչուն ու եղևնատայա ու կրկնակի կարմիր և զոպայ առնուն։ Ու քահանան պիտի հրամայէ որ թռչունին մէկը հողէ ամանի մը մէջ *կենդանի ջուրի վրայ մորթուի։

* Ա յսինքն՝ ակի



վայոր և կրկնակի կարմիրը ու զոպան պիտի առնէ, և սաոնք ողջ թռչունին հետ կենդանի ջուրին վրայ մորթած թռչունին արեանը մէջ պիտի թաթխէ։
7 Ու բորոտութենէն մաքրուելու մարդուն վրայ եօթը անգամ սրսկի ու մաքրէ զանիկա. և ողջ թռչունը դէպ ի գաշտը արձակէ։
8 Ու մաքրուելու մարդը իր հանդերձները պիտի լուայ, ու իր բոլոր մազերը ածիլէ, և ջրով պիտի լուացուի ու մաքրուի. և անկէ ետև բանակը պիտի մտնէ, ու եօթը օր իր վրանին դուրսը դէն պիտի կենայ։
9 Ու եօթներորդ օրը իր բոլոր մազերը ածիլէ, իր գլուխը ու մօրուքը և յօնքերը՝ այսինքն իր բոլոր մազերը ածիլէ. և իր հագերը պիտի լուայ, ու իր մարմինը ջրով լուայ ու մաքուր ըլլայ։
10 Ու ութերորդ օրը երկու անարատ արու գառն, ու մէկ տարեկան մի անարատ էգ գառն, և հարկ ընծայի համար եղով շաղուած երեք տասանորդ բարակ ալիւր, ու մէկ ճաշակ եղ պիտի առնէ։ Ու մաքրող քահանան մաքրուելու մարդը՝ ասոնցմով Տէրոջը առջև ժողովքի խորանին դուռը կացնէ։
12 Ներկայէ։ Ու քահանան արու գառնին մէկը պիտի առնէ ու մեղքի պատարագին հետ մատուցանէ յանցանքի պատարագի համար, ու եղին ճաշակը վեր ուռէ, և զանոնք Տէրոջը առջև երեսպաշտելու ընծայ պիտի բերէ։
13 Ներ։ Ու գառը պիտի մորթէ մեղքի պատարագին ու ողջակիզին մորթուած տեղը, սուրբ տեղը՝ վերի մասին. քանի որ եղին պատարագը մեղքի պատարագին պէս քահանային է. սուրբ սահմանուած է։ Ու քահանան յանցանքի պատարագին արիւնէն պիտի առնէ, ու քահանան մաքրուելու մարդուն աջ ականջին բլիթին վրայ՝ և անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ՝ ու անոր աջ ոտքին մեծ մատին վրայ։
15 պիտի դնէ։ Ու քահանան եղին ճաշակէն մէկ հատ առնէ, պիտի
16 ու իր ձախ ձեռքին մէջ թափէ։ Ու քահանան աջ մատը իր ձախ ձեռքին մէջ եղած եղին պիտի թաթխէ, ու իր մատովը Տէրոջը առջև եօթն անգամ
17 որսկ այն եղէն ու քահանան իր ձեռքին մէջ մնացած եղէն մաքրուելու մարդուն աջ ականջին բլիթին վրայ՝ ու անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ՝ և անոր աջ ոտքին մեծ մատին վրայ՝ յանցանքի պատարագի արիւնին վրան
18 պիտի դնէ։ Ու քահանան իր ձեռքին մէջ մնացած եղը մաքրուելու մարդուն գլխուն վրայ պիտի դնէ, ու անոր համար քաւութիւն պիտի ընէ Տէրոջը
19 առջև։ Ետքը քահանան մեղքի պատարագը պիտի մատուցանէ, և իր անմաքրութենէն մաքրուելու մարդուն համար քաւութիւն ընէ, ու անկէ ետև ողջակիզը մորթէ։ Ու քահանան ողջակիզը ու հացի ընծան սեղանին վրայ պիտի մատուցանէ, ու անոր համար քաւութիւն ընէ, և անիկա պիտի մաքրուի։
21 Ե թէ որ անիկա աղքատ ըլլայ ու այնչափին իր կարողութիւնը չհասնի, անասնի անոր քաւութիւն ընելու համար երկրպագնելու յանցանքի պատարագի գառնուկ մը, և հացի ընծայի համար եղով շաղուած տասանորդ մը բարակ ալիւր ու ճաշակ մը եղ պիտի
22 առնէ։ Ու երկու տատրակ կամ աղաւնիի երկու ձագ, որը որ գտնէ, և մէկը մեղքի պատարագ ու միսը ողջակէզ ըլլայ։ Ու ութերորդ օրը իր մաքրուելուն համար զանոնք քահանային պիտի բերէ ժողովքի խորանին դուռը
24 Տէրոջը առջև։ Ու քահանան պիտի առնէ յանցանքի պատարագին գառնուկը ու եղին ճաշակը, և զանոնք Տէրոջը առջև երեսպաշտելու ընծայ մատուցանէ։ Ու յանցանքի պատարագին գառնուկը պիտի մորթէ, ու քահանան յանցանքի պատարագին արիւնէն պիտի առնէ, ու մաքրուելու մարդուն աջ ականջին բլիթին վրայ՝ և անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ՝ ու անոր աջ ոտքին մեծ մատին վրայ դնէ
26 պիտի։ Ու քահանան եղէն իր ձախ
27 ձեռքին մէջ պիտի թափէ։ Ու քահանան իր աջ մատովը իր ձախ ձեռքին

մէկ եղած եղէն Տէրոջը առնէ եօթն
28 անգամ պիտի ովսիկ, եւ քահանան
իր ձեռքին մէջ եղած եղէնը մատրաւ-
լու մարդուն ալ ականջին լրիմակին վր-
բոյ՝ ու անոր ալ ձեռքին մեծ մատին
վրայ՝ և անոր ալ ոտքին մեծ մատին
վրայ՝ յանցանքի պատարագին արիւնը
29 եղած տեղին վրայ պիտի դնէ, եւ քա-
հանան իր ձեռքին մէկ մնացած եղը
մատրաւելու մարդուն գլխուն վրայ պի-
տի դնէ՝ Տէրոջը առջեւ անոր համար
30 քաւութիւն ընելով։ Եւ ատաղասնե-
րէն կամ ագաւնիի ձագերէն մէկը,
31 որ որ գանէ, Այսպէսը պատրաս-
տի համար և միւսը պղպեղի համար՝
հասյն ընծայեն հետ մէկտեղ պիտի մա-
տուցանէ. և քահանան մատրաւելու
մարդուն համար քաւութիւն ընէ Տէ-
32 րոջը առջեւ։ Բորոտութեան ախտ ու-
նեցողին ու իր մատրաւելուն համար կա-
րողութիւն չունեցողին օրէնքն այս է։
33 Եւ Տէրը խօսեցաւ Մովսիսի ու Ահա-
34 րոնի՝ ըսելով, Երբոր մտնէք Քանաան
երկիրը՝ որ ձեզի առաջնատէք բլլալու
պիտի տամ, և ձեր ատացնատէքը ե-
35 ղած երկրին մէկ տանը մէջ բորոտու-
թեան հարուածը տալու բլլամ, Այն
տանը տէրը պիտի գայ, ու քահանայ
քահանային ըսելով, Ինծի կ'երեւնայ
36 որ տանս մէջ ախտ կայ։ Եւ քահանան
պիտի հրամայէ որ տանը պարապին, դեռ
ինքը տեսնելու ներս չմտած, որպէս-
զի տանը մէջ եղած բաներէն մէկը ան-
մաքուր չըլլայ։ ու անկէ ետև քահա-
37 նան տանը տեսնելու պիտի մտնէ։ Եւ
ախտին նշանները պիտի նայէ, ու թէ
որ ախտը տանը պատերուն վրայ փիչ
մը կանաչած կամ կարմրցած փոս ա-
38 ղուտներ երեւ է, ու անոնք պատին ե-
բեւէն խորունկ կ'երեւնան, Այնտանը
քահանան տանէն պիտի ելլէ տանը
դուռը, և եօթն օր տանը պիտի գո-
39 ցէ։ Ու եօթներորդ օրը քահանան նո-
րէն պիտի գայ ու նայի. և թէ որ ախ-
տը տանը պատերուն վրայ տարածուած
40 է, Այնտանն քահանան պիտի հրամա-

յէ որ ախտացեալ քարերը հանեն, և
քարտըէն դուրս անմաքուր տեղ մը
41 նետեն զանոնք։ Եւ տանը ներսէն
չուրջանակին քերել պիտի տայ, ու ա-
նոնց քերած հողը քաղաքին դուրսի
դին անմաքուր տեղ մը պիտի թափին,
42 Եւ ուրիշ քարեր պիտի առնեն ու այն
քարերուն տեղը դնեն, և ուրիշ հող
43 պիտի առնեն ու տանը ծեփեն։ Եւ թէ
որ քարերը հանելին ետքը ու տանը
քերելէն և ծեփելին ետքը՝ ախտը նո-
րէն գայ ու տանը մէջ երեւան ելլէ,
44 Անատեն քահանան պիտի գայ ու նա-
յի. և թէ որ ախտը տանը մէջ տարա-
ծուած է, տանը մէջ բորբոքած բորո-
45 տութիւն կայ. անմաքուր է այն։ Եւ
տունը, այսինքն անոր քարերը ու փայ-
տերը ու տանը բոլոր ծեփերը՝ հողը
փլցընել, և քաղաքին դուրսի դին ան-
46 մաքուր տեղ մը հանել։ Եւ ով որ այն
տունը մտնէ անոր բոլոր գոցուած օ-
րերը, մինչև իրիկուն անմաքուր պիտի
47 բլլայ։ Եւ այն տունը պառկողն ալ իր հան-
դերձները պիտի լուայ, ու այն տանը
մէջ հաց ուտողն իր հանդերձները պի-
48 տի լուայ։ Եւ թէ որ քահանան գայ
ու նայի որ տանը ծեփուելէն ետքը
ախտը տանը մէջ տարածուած չէ, ան-
ատեն քահանան այն տանը մաքուր
բլլալը ծանուցանէ, քանզի ախտը բը-
49 ժշկուած է։ Եւ տանը մաքրութեանը
համար երկու թռչուն ու եղևնափայտ
և կրկնակի կարմիր ու զոպայ պիտի
50 առնէ։ Ու պիտի մորթէ թռչունին մէ-
կը հողէ ամանի մը մէջ կենդանի ջու-
51 րի վրայ։ Եւ եղևնափայտը ու զոպան
և կրկնակի կարմիրը ու ողջ թռչունը
պիտի առնէ, ու զանոնք մորթուած
թռչունին արիւնը և ողջ կենդանի
ջուրին մէջ պիտի թաթխէ, ու եօթն
52 անգամ տանը վրայ սրսկէ։ Եւ թռչու-
նին արիւնովը ու ողջ կենդանի ջրով
և ողջ թռչունով ու եղևնափայտով և զոպայով ու կրկնակի կարմի-
53 րով պիտի մաքրէ տանը։ Եւ ողջ թռչու-
նը քաղաքին դուրսի դին դէպ ի
դաշտը պիտի արձակէ, ու տանը հա-



մար քաւութիւն ընէ, և պիտի մաքրուի այն։
54 Բոլոր բորոտութեան ախտին ու գոն-
55 յութեան, Եւ հանդերձի կամ տան մը
56 բորոտութեան, Եւ ուռեցքի ու գոյն
57 և պարզաբան օրէնքն այս է. Որ-
պէսզի անմաքուր բլլալը ու որ տանն անոր մաքրութիւնը՝ օրինակցնելու համար՝ բորոտութեան օրէնքն այս է։

## ԳԼ. ԺԵ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսիսի ու Ահա-
2 րոնի՝ ըսելով, Խօսեցէք Իսրայէլի որ-
դւոց ու ըսէք անոնց, Երբոր մարդու
մը մարմնին ծորում բլլայ, անոր ծո-
3 րումը անմաքուր է։ Եւ իր ծորումին
ժամանակը իր անմաքրութիւնը այս
պիտի բլլայ. Թէ որ իր մարմինն իր ծո-
րումը վազէ, կամ իր մարմինը իր ծոր-
մանէն զոցուի, այս է իր անմաքրու-
4 թիւնը։ Ամէն անկողին որուն վրայ ծո-
րում ունեցողը կը պառկի, անմաքուր
է. և ամէն բան որուն վրայ անիկա
5 նստի, անմաքուր պիտի բլլայ։ Եւ ա-
նոր անկողինն դպչող մարդը իր հան-
դերձները պիտի լուայ, ու ինքը ջրով
լուացուի, ու մինչև իրիկուն անմա-
6 քուր բլլայ։ Եւ ծորում ունեցողին նըս-
տած բանին վրայ նստողը իր հանդերձ-
ները պիտի լուայ, ու ինքը ջրով լուա-
ցուի, և մինչև իրիկուն անմաքուր բլ-
7 լայ։ Եւ ծորում ունեցողին մարմինին
դպչողը իր հանդերձները պիտի լուայ,
ու ինքը ջրով լուացուի, և մինչև ի-
8 րիկուն անմաքուր բլլայ։ Եւ ծորում
ունեցողը մաքուր մարդու մը վրայ
թքելու բլլայ, անկից իր հանդերձնե-
րը պիտի լուայ, ու ինքը ջրով լուացու-
ի, և մինչև իրիկուն անմաքուր բլ-
9 լայ։ Եւ ամէն թամբ որուն վրայ ծո-
րում ունեցողը կը հեծնէ, անմաքուր
10 պիտի բլլայ։ Եւ ամէն անոր տակը ե-
ղած բանին դպչողը մինչև իրիկուն ա-
11 մաքուր պիտի բլլայ։ ու զանոնք վեր-
ցընողը իր հանդերձները պիտի լուայ,
և ինքը ջրով լուացուի, ու մինչև իրի-
կուն անմաքուր բլլայ։ Եւ ծորում ու-
նեցողը իր ձեռքը ջուրը չխթած ո-
12 րու որ դպչելու բլլայ, անկից իր հան-
դերձները պիտի լուայ, ու ինքը ջրով
լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր
բլլայ։ Եւ ծորում ունեցողին դպած
հողէ ամանը պիտի կոտրուի, ու ամէն
փայտէ աման ջրով պիտի խթուի։
13 Եւ երբ ծորում ունեցողը իր ծորում-
ին մաքրուի, իր մաքրուելուն համար
եօթն օր պիտի համրի իրեն, և իր հան-
դերձները լուայ, ու իր մարմինը կեն-
դանի ջրի մէջ լուայ, և մաքուր պի-
14 տի բլլայ։ Եւ ութերորդ օրը երկու
աստրակ կամ ագաւնիի երկու ձագ
պիտի առնէ իրեն, ու Տէրոջը առջեւ
ժողովքի խորանին դուռը գայ, և զա-
15 նոնք քահանային տայ։ Եւ քահանան
անոնց մէկը մեղքի պատարագ ու մի-
սը ողջակէզ պիտի ընէ, և քահանան
Տէրոջը առջեւ քաւութիւն ընէ անոր
իր ծորումին համար։
16 Եւ թէ որ մարդու մը զուգաւորու-
թեան սերմը իրմէն ելլելու բլլայ, իր
բոլոր մարմինը ջրով պիտի լուայ, ու
17 մինչև իրիկուն անմաքուր բլլայ։ Եւ
ամէն հանդերձ ու ամէն մորթ՝ որուն
վրայ զուգաւորութեան սերմ կայ, ջը-
րով պիտի լուացուի, ու մինչև իրի-
18 կուն անմաքուր բլլայ։ Եւ երբոր մարդ
մը կնկանը հետ զուգաւորելու համար
պառկի, անոնք երկուքն ալ ջրով պի-
տի լուացուին, ու մինչև իրիկուն ան-
մաքուր բլլան։
19 Եւ թէ որ կին մը ծորում ունենայ,
— անոր մարմնոյն ծորումը արիւն է,
եօթն օր պառաւած պիտի կենայ. և
ամէն անոր դպչողը մինչև իրիկուն ան-
20 մաքուր բլլայ։ Եւ անոր պառաւած ա-
նոնը ինչ բանի վրայ որ պառկի, այն
բանը անմաքուր պիտի բլլայ, և ինչ
բանի վրայ որ նստի, այն բանը անմա-
21 քուր պիտի բլլայ։ Եւ ամէն անոր ան-
կողնին դպչողը իր հանդերձները պի-

Կամ Մէկ բան մը երբոր անմաքուր է ու երբոր մաքուր է՝ ինչ ընելէ

մի լուայ, ու ինքը ջրով լուացուի, և
22 մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ Եւ
ով որ գայլի բանի մը դպչի որ ան-
նիկա նաւատ, իր հանդերձները պիտի
լուայ, ու ինքը ջրով լուացուի, և մին-
23 չև իրիկուն անմաքուր ըլլայ։ Եւ ⸗որ
անիկայնին դպչողը՝ կամ մէկ բանի մը
որուն վրայ անիկա կը նստի, մինչև ի-
24 րիկուն անմաքուր պիտի ըլլայ։ Եւ թէ
որ մարդ մը անոր հետ պառկի, անանկ
որ անոր պղծութիւնը իրեն դպչի, այն
ՏԷՐՈՋ եօթն օր անմաքուր պիտի ըլ-
լայ, և ամէն անկողին որուն վրայ ա-
նիկա պառկի՝ անմաքուր ըլլայ։
25 Եւ կին մը՝ թէ որ դաշտանին առե-
նը չհիւծ, իր արեանը ժողովուը չաս
օրեր վազէ, կամ իր դաշտանին աւե-
լի վազելու ըլլայ, իր անմաքրութեանը
ժողովին բոլոր օրերը իր դաշտանին
օրերուն պէս պիտի ըլլայ· անիկա ան-
26 մաքուր է։ Անոր ժողովին բոլոր օրե-
րը ամէն անկողին որուն վրայ անիկա
կը պառկի, իր դաշտանին անկողնին
պէս պիտի ըլլայ իրեն, և ինչ բանի վր-
րայ որ կը նստի, իր դաշտանին ան-
մաքրութեանը պէս անմաքուր պիտի
27 ըլլայ։ Եւ ամէն անոնց դպչողը անմա-
քուր պիտի ըլլայ, ու իր հանդերձնե-
րը պիտի լուայ, և ինքը ջրով լուացու-
ի, ու մինչև իրիկուն անմաքուր ը-
28 լայ։ Ու թէ որ իր ժողովին մաքրուի,
անսահման եօթն օր պիտի համրի իրեն,
29 ու անկէ ետև մաքուր ըլլայ։ Եւ ու-
թերորդ օրը երկու տատրակ կամ ա-
պառնիի երկու ձագ պիտի առնի իրեն,
ու ժողովքի խորանին դուռը քահա-
30 նային պիտի բերի զանոնք։ Ու քահա-
նան մէկը մեղքի պատարագ և միսը
ողջակէզ պիտի ընէ։ և քահանան Տէ-
րոջը առջև քաւութիւն պիտի ընէ
անոր իր անմաքրութեանը ժողովին
համար։
31 Այսպէս Իսրայէլի որդիքը իրենց ան-
մաքրութենէն պիտի *զգուշացընէք,
որ իրենց մէջ եղած իմ խորանս պղծ-
ելով՝ իրենց անմաքրութեանը պատ-
32 ճառով չմեռնին։ Ասիկա ունեցողին
և իրմէ զուգաւորութեան ելլելո-
33 ղով անմաքուր եղողին, ու իր դաշ-
տանովը հիւանդ եղող կնկանը՝ ու
անմաքուր կնկան հետ պառկող
մարդուն օրէնքն այս է։

## ԳԼ. ԺԶ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի, Ահարո-
նի երկու որդւոցը մեռնելնէն ետքը, ա-
րանք Տէրոջը առջև մատնցան ու մե-
2 ռան։ Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Խօսէ
քու եղբօրդ Ահարոնի որ ամէն ատեն
սուրբ սեղը վարագուրին ներսի գին
տապանակին վրայ եղած քաւութեան
առջև չմտնէ, որ չմեռնի. վասն զի քա-
ւութեան վրայ ամպի մէջ պիտի երե-
3 նամ։ Ահարոն այս *ձևերով պիտի մըտ-
նէ սրբարանը. մեղքի պատարագի հա-
մար զուարակով մը, և ողջակիզի հա-
4 մար խոյով մը։ Կտաւէ սուրբ չալուկ
պիտի հագնի, և իր մարմնոյն վրայէն
կտաւէ վարտիք ունենայ, ու իր մէջ-
քը կտաւէ գօտի կապէ, և իր գլուխը
կտաւէ խոյր դնէ. սոոնք սուրբ զգե-
ստներ են. ուստի իր մարմինը ջր-
րով պիտի լուայ, ու զանոնք հագնի։
5 Եւ Իսրայէլի որդւոցը ժողովքէն մեղ-
քի պատարագի համար այծերէն երկու
նոխազ, ու ողջակիզի համար մէկ խոյ
6 պիտի առնէ։ Եւ Ահարոն իր մեղ-
քի պատարագին զուարակը պիտի մա-
տուցանէ, և իրեն համար ու իր տա-
7 նը համար քաւութիւն պիտի ընէ։ Եւ
երկու նոխազը պիտի առնէ, ու Տէր-
ոջը առջև ժողովքի խորանին դուռը
8 կեցընէ։ Եւ Ահարոն այն երկու նոխազ-
ներուն վրայ վիճակներ պիտի ձգէ. մէկ
վիճակը Տէրոջը համար՝ և միւս վիճա-
կը ազատ արձակուելու նոխազին հա-
9 մար։ Եւ Ահարոն պիտի մատուցնէ այն
նոխազը որուն վրայ Տէրոջը վիճակը ե-
լաւ, ու մեղքի պատարագ ընէ զանի-
10 կա։ Եւ այն նոխազը որուն վրայ ա-

*Նէբ. զգուշ.



զատ արձակուելու վիճակը ելաւ, Տէ-
րոջը առջև ողջ պիտի կայնեցընէ՝ որ
անով քաւութիւն ընէ, և ազատ ար-
ձակելու համար զայն անապատ խրր-
կէ։
11 Եւ Ահարոն իր մեղքի պատարագին
զուարակը պիտի մատուցանէ, և իրեն
համար ու իր տանը համար քաւութիւն
պիտի ընէ, և իր մեղքի պատարագին
12 զուարակը մորթէ։ Եւ Տէրոջը առջև
եղած սեղանին վրայէն բուրվառը լե-
ցուն կրակով պիտի առնէ, ու բուրակ ծեծուած անուշահոտ խունկին
իր ձեռքերը լեցնէ, ու վարագուրին
13 ներսի գին բերէ։ Եւ խունկը կրակին
վրայ պիտի դնէ Տէրոջը առջև, ու
խունկին *մխրճութեան վրայի քա-
ւութիւնը պիտի ծածկէ, որ չմեռ-
14 նի։ Եւ զուարակին արիւնէն պիտի առ-
նէ, ու իր մատովը քաւութեան վրայ
արևելեան կողմը սրսկէ, և իր մատո-
վը քաւութեան առջև եօթն անգամ սրսկէ։
15 Եւ ժողովրդին համար մեղքի պա-
տարագ բրլրու նոխազը պիտի մորթէ,
ու անոր արիւնը վարագուրին ներսի
գին պիտի բերէ և զուարակին արիւ-
նով րրածին պէս անոր արիւնով, այսինքն քաւութեան վրայ ու քա-
16 ւութեան առջև սրսկէ դայն։ Եւ սրբ-
բարանին համար քաւութիւն պիտի ը-
նէ՝ Իսրայէլի որդւոցը անմաքրութեանց
պատճառաւ և անոնց բոլոր մեղքերուն
համար։ Ու ժողովքին որ անոնց մէջ
կը բնակի անոնց անմաքրութեանց մէջ-
տեղ՝ նոյնպէս պիտի ընէ։
17 Ոեւէ մարդ ժողովքին մէջ կը կենայ՝ երբ
որ սրբարանը քաւութիւն ընելու մտած ա-
նանը, մինչև որ իրեն համար ու իր
տանը համար և Իսրայէլի բոլոր ժո-
ղովքին համար քաւութիւն ընէ ու
դուրս ելլէ, ժողովքի խորանին մէջ
18 մարդ մը պիտի չըլլայ։ Եւթը Տէրոջը
առջև եղած սեղանը պիտի ելլէ, ու
անոր համար քաւութիւն ընէ. և զուա-
րակին արիւնէն ու նոխազին արիւնէն
առնէ, և սեղանին եղջիւրներուն վրայ
19 չորս անգամ դնէ։ Եւ արիւնէն իր մա-
տովը եօթն անգամ անոր վրայ պիտի
սրսկէ. ու Իսրայէլի որդւոց անմաք-
րութիւններէն մաքրէ, ու սուրբ ընէ
զանիկա։
20 Եւ սրբարանին ու ժողովքի խոր-
անին և սեղանին համար քաւութիւն ը-
նելը լմնցընելէն ետքը, ողջ նոխազը
21 պիտի մտեցընէ։ Եւ Ահարոն իր երկու
ձեռքերը ողջ նոխազին գլխուն վրայ
պիտի դնէ, ու Իսրայէլի որդւոց բո-
լոր անօրէնութիւններն և անոնց բո-
լոր յանցանքները և բոլոր մեղքերը
պիտի խոստովանի անոր վրայ, և զա-
նանք նոխազին գլխուն վրայ դնելով՝
յօրմար մարդու մը ձեռքով անապա-
22 տ տի խրկէ։ Եւ նոխազը անոնց բոլոր ա-
նօրէնութիւնները իր վրան ⸗ոյ անբ-
նակ երկիր մը պիտի տանի. և ՏԷՐՈՋ
անապատին մէջ թող տայ նոխազը։
23 Եւ Ահարոն ժողովքի խորանը պիտի
մտնէ, ու սրբարանը մտնելու ժամա-
նակին հագած կտաւէ հանդերձները
24 հանէ, և զանոնք հոն դնէ։ Եւ սուրբ
տեղը իր մարմինը ջրով պիտի լուայ,
ու իր հանդերձները հագնի. և ելլէ իր
ողջակիզը ու ժողովրդին ողջակիզը
մատուցանէ, ու իրեն համար և ժողո-
25 վրդին համար քաւութիւն ընէ։ Եւ
մեղքի պատարագին ճարպը անզանին
վրայ պիտի ծխէ։
26 Եւ նոխազը ազատ արձակելու տա-
նողն իր հանդերձները պիտի լուայ, ու
իր մարմինը ջրով լուայ, և ետքը բա-
նակը մտնէ։
27 Եւ այն մեղքի պատարագին զուա-
րակը ու մեղքի պատարագին նոխազը՝
որոնց արիւնը քաւութիւն ընելու
համար սուրբ տեղը բերուեցաւ, բա-
նակէն դուրս պիտի հանեն, և անոնց
մորթերը ու անոնց միսերը և անոնց
28 աղբը կրակով պիտի այրեն։ Եւ զանոնք այրողը
իր հանդերձները պիտի լուայ, ու մար-
մինը ջրով լուայ, ետև բանակը
մտնէ։

*Նէբ. ամպը

29 Եւ այս ձեզի յատկանական կանոն
ըլլայ, որ ձեր ցեղերուդ ամուսն մէջ՝ ամ-
սուն ամսնեքսրդ օրը ձեր անձերը պի-
տի խոնարհեցնէք, ու բնաւ գործ մը
չգործէք, թէ երկրացին և թէ ձեր մէջ
30 գտնուող օտարականը. Քանզի այն
օրը ձեզ քաւութիւն պիտի
ընէ ձեզ մաքրելու համար, որ ձեր բո-
լոր մեղքերէն մաքրուիք Տէրոջը առջև։
31 Ա՛յն ձեզի հանգստութեան շաբաթ պի-
տի ըլլայ, և յատկանական կանոնով
մը պիտի խոնարհեցնէք ձեր անձերը։
32 Եւ իր Տօրը տեղ գտնելու քահանայութիւնը ը-
նելու համար օծուած ու օրհնուած
քահանան քաւութիւնը պիտի ընէ, և
հագնի կտաւէ հանդերձները՝ այսինքն
33 սուրբ հանդերձները. Եւ սուրբ
տեղին համար քաւութիւն պիտի ընէ,
և ժողովքի խորանին համար ու սեղա-
նին համար քաւութիւն ընէ, և քա-
հանաներուն ու ժողովքին բոլոր ժողո-
վուրդին համար քաւութիւն ընէ։ Եւ
34 ասիկա ձեզի յատկանական կանոն ըլ-
լայ Իսրայէլի որդւոց համար իրենց
բոլոր մեղքերուն քաւութիւն ընելու
տարին անգամ մը։ Եւ անոնք Տէրոջը
Մովսէսի պատուիրածին պէս ըրաւ։

## Գլ. ԺԶ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով,
2 Խօսէ Ահարոնի ու անոր որդւոց և
Իսրայէլի բոլոր որդւոց, ու բսէ ա-
նոնց, Ա՛յս է որ Տէրը պատուիրեց՝ ը-
3 սելով, Իսրայէլի տունէն ով որ արջառ
մը կամ ոչխար մը և կամ այծ մը բա-
նակին մէջ մորթէ, կամ բանակէն դուրս
4 մորթէ, Եւ Տէրոջը խորանին առջև
Տէրոջը զոհ մատուցանելու համար ժո-
ղովքի խորանին դուռը չբերէ, արիւն
պիտի սեպուի այն մարդուն. անիկա ա-
րիւն թափած է, ու այն մարդը իր
ժողովուրդին մէջէն պիտի կորսուի։
5 Որպէս զի Իսրայէլի որդիքը այն զոհ-
րը որ հիմա դաշտի մէջ կը մորթեն, Տէ-
րոջը բերեն, այսինքն ժողովքի խորա-
նին դուռը քահանային բերեն, և խա-
դաղութեան զոհերուն համար զանոնք
6 Տէրոջը զոհեն։ Եւ քահանան պիտի
սրսկէ արիւնը ժողովքի խորանին դու-
ռը Տէրոջը սեղանին վրայ, ու ծարպը
անոյշ հոտի համար այրէ Տէրոջը մա-
7 ղաւորի համար։ Եւ իրենց զոհերը՝ ալ չզոհեն դե-
ւերուն, որոնց հետևէն էրէմուվ պոռն-
կութիւն ըրին. ասիկա անոնց յաւիտե-
նական կանոն պիտի ըլլայ իրենց ազգե-
8 րուն մէջ։ Եւ պիտի բսես անոնց, Ի-
րայէլի տունէն կամ ձեր մէջ պան-
դխացած օտարականներէն մեր
մէ ողակեզ կամ զոհ մատուցանելու
9 ըլլայ, Եւ զանիկա Տէրոջը մատուցա-
նելու համար ժողովքի խորանին դու-
ռը չբերէ, այն մարդը իր ժողովուր-
դին մէջէն պիտի կորսուի։
10 Եւ Իսրայէլի տունէն կամ ձեր մէջ
պանդխացած օտարականներէն մարդ
մը ինչ և իցէ արիւն ուտելու ըլլայ,
իմ երեսս այն արիւն ուտող ան-
ձին վրայ պիտի անկեմ, ու զանիկա իր
ժողովուրդին մէջէն կորսնցնեմ։
11 Քանզի մարմնին կենդանութիւնը ա-
րիւնին մէջն է։ և ես ձեզի տուի զա-
նիկա, որ սեղանին վրայ ձեր հոգինե-
րուն համար քաւութիւն ընէք. քան-
զի հոգիին համար քաւութիւն կընդ
12 արիւնն է։ Անոր համար Իսրայէլի որդ-
ւոց ըսի, Ձեզմէ մէկը արիւն չուտէ,
ձեր մէջ պանդխացած օտարականն
13 ալ արիւն չուտէ։ Եւ Իսրայէլի որդւոց-
մէ կամ ձեր մէջ պանդխացած օ-
տարականէն մէկը ուտուելու անասու-
նի կամ թռչունի որս որսալու ըլլայ,
անոր արիւնը պիտի թափէ, ու հողով
14 ծածկէ զայն։ Քանի որ ամէն մարմնո-
նին կենդանութիւնը իր արիւնն է. ա-
նիկա է բուն կենդանութիւնը. ուստի
Իսրայէլի որդւոց ըսի, Բնաւ մարմնի
մը արիւնը պիտի չուտէք, քանզի ա-
մէն մարմնին կենդանութիւնը իր ա-
րիւնն է. ով որ ուտէ զայն՝ պիտի կոր-
15 սուի։ Եւ երկրացիներէն կամ օտարա-
կաններէն՝ ով կամ գիշատուած ուտող
ամէն մարդ իր լաթերը պիտի լուայ, ու
ինքը ջրով լուացուի, և մինչև իրի-



կուն անմաքուր ըլլայ, ու երեկոյ մա-
16 քուր ըլլայ. Բայց թէ որ չլուայ չհանդէ,
և իր մեղքին չկրնայ, անաւանն իր ա-
նօրէնութիւնը պիտի կրէ։

## Գլ. ԺԸ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով,
2 Խօսէ Իսրայէլի որդւոց ու բսէ անոնց,
3 Ես եմ Եհովայ ձեր Աստուածը։ Ա՛յն
ձեր բնակած Եգիպտոսի երկրին ըրած-
ծին պէս պիտի չընէք. և գնացած
երկրին ըրածին պէս ալ ո՛ր ձեզ պի-
տի տանիմ, պիտի չընէք, ու անոնց
կանոններուն համեմատ պիտի չքալէք։
4 Իմ դատաստաններս պիտի ընէք, և
իմ կանոններս պահէք, որ անոնցմով
քալէք. Ես եմ Տէրը ձեր Աստուածը։
5 Ուստի իմ կանոններս ու իմ դատաս-
տաններս պիտի պահէք, որ զանոնք
կատարող մարդը անոնցմով պիտի ապ-
րի. Ես եմ Տէրը։
6 Բնաւ ձեզմէ իր մօտ ազգականին չմո-
տենայ՝ անոր ծածկը բանալու
համար. Ես եմ Տէրը։ Քու հօրդ ծածկը
կամ քու մօրդ ծածկը չբանանաս. անիկա քու մայրդ է, ա-
8 նոր ծածկը չբանանաս. Քու հօրդ
կնկանը ծածկը չբանանաս. այն
9 քու հօրդ ծածկութիւնն է։ Քու հօրդ
աղջկանը կամ քու մօրդ աղջկանը քու
քրոջդ ծածկը չբանանաս, թէ տանը մէջ
ծնած ըլլայ թէ դուրսը ծնած, անոնց
10 ծածկութիւնը չբանանաս. Քու որդւոդ
աղջկանը կամ քու աղջկանդ աղջկանը
ծածկը չբանանաս, քանզի անոնց ծածկութիւնը չը
բանաս, քանզի անոնց ծածկութիւնը
11 քուկդ է։ Քու հօրդ կնոջը աղջկան
ծածկութիւնը, քու հօրմէդ ծնած քու
քրոջդ ըլլալուվը՝ անոր ծածկութիւնը չը-
12 բանաս. Քու հօրդ քրոջը ծածկութիւնը
չբանանաս. անիկա քու հօրդ ազգականն
13 է։ Քու մօրդ քրոջը ծածկութիւնը չը-
բանաս, քանզի անիկա քու մօրդ ազ-
14 գականն է։ Քու հօրդ եղբօրը ծածկու-
թիւնը չբանանաս, անոր կնկանը չմօտե-
նաս. անիկա քու հօրաքրոջդ է հո՛ր-
15 րէ։ Քու հարսիդ ծածկութիւնը չբա-
նանաս. անիկա քու որդւոդ կինն է,
16 անոր ծածկութիւնը չբանանաս. Քու եղ-
բօրդ կնոջը ծածկութիւնը չբանանաս.
17 ան քու եղբօրդ ծածկութիւնն է։ Կընդ-
կան մը ու անոր աղջկանը ծածկութիւ-
նը չբանանաս. և անոր որդւոյն աղջիկը
կամ անոր աղջկան աղջիկը չառնես՝
անոնց ծածկութիւնը բանալու համար,
անոնք անոր ազգականներն են. անօ-
18 րէնութիւն է այն։ Եւ կին մը իր քրո-
ջոջը հետ չառնես ջնջելի՛ իր կենդա-
նութեան ատեանը վշտացնելու համար՝
մերկացնելու ծածկութիւնը բանալով։
19 Եւ իր անմաքրութեան ատենը զատ-
ուած կնոջ մը չմօտենաս՝ անոր մեր-
20 կութիւնը բանալու։ Եւ դուդ ընտե-
ղութեան համար քու դրացիիդ կնոջը
հետ չպառկիս, անոր հետ պղծուելով։
21 Քու սերունդիդ Մողովքի համար ի՛ր-
կի անցընելու չիդուս, և քու Աստու-
ծոյդ անունը չպղծես. Ես եմ Տէրը։
22 Եւ արուի հետ կինոյ հետ պառկելու
23 պէս չպառկիս. պղծութիւն է այն։ Եւ
բնաւ անասունի մը հետ չդուդ ընտե-
ղութեան համար, անոր հետ պղծուելով. ու բնաւ կին
մը անասունի մը առջև չկայնի՝ անոր
հետ զուդ ընտելու. գարշութիւն է այն։
24 Անոնց մէկովն ալ բնաւ չպղծուիք,
վասն զի բոլոր ասոնցմով պղծուեցան
այն ազգերը՝ որ ձեր առջևէն պիտի
25 վռընամ։ Եւ այն երկիրը պղծուելով՝
անոր անօրէնութիւնը անոր վրայ
պիտի հասցնեմ, ու այն երկիրը իր
26 բնակիչները պիտի փսխէ։ Ուստի դուք
իմ կանոններս ու դատաստաններս
պահէք, ու այս պղծութիւններէն մէ-
կովն ալ չընէք, ոչ ալ ձեր
27 մէջ պանդխացող օտարականը. Քանզի
ձեզմէ առաջ եղած այն երկրին մարդի-
կը այս բոլոր պղծութիւններն ըրին,
28 ու այն երկիրը պղծուեցաւ։ Որ՛պէս զը-
նո՛ղ ըլլալով՝ որ չըլլայ թէ այն երկիրը
ձեզ ալ զուրս փսխէ՝ զոն պղծած ա-
զգերնիդ, ինչպէս որ ձեզմէ առաջ ե-
29 ղած ազգերը փսխեց։ Քանզի ով որ
այս ամէն պղծութիւններէն մէկը ընե-

լու ըլլայ, այն բնաղ անձինքն իրենց
Ժողովուրդին ալիչէն պիտի կորսուին։
30 Ուստի իմ հրամաններս պահէք, որ
ձեզմէ առաջ գործուած պիղծ սոխա-
կութիւններուն ձեր չընէք, ու անոնց-
մով չպղծուիք. ես եմ Տէրը ձեր Աստ-
ուածը։

ԳԼ. ԻԹ

1 Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի ընելով,
2 Խօսէ Իսրայէլի որդւոց բոլոր Ժողով-
քին ու ըսէ անոնց, Դուք սուրբ եղէք,
քանզի ես ձեր Աստուած Տէրս սուրբ եմ։
3 Ձեր իւրաքանչիւրն իր մօրմէն ու իր
հօրմէն պիտի վախնայ, և իմ շաբաթ-
ներս պիտի պահէք. ես եմ Տէրը ձեր
Աստուածը։
4 Կռոտքերուն մի դառնաք, և ձեզի
ձուլածոյ աստուածներ մի շինէք. ես
եմ Տէրը ձեր Աստուածը։
5 Ու թէ որ խաղաղութեան զոհ մատու-
ցանէք Տէրոջը, ընտիր մատուցէք որ ըն-
դունելի ըլլայ ձեզի համար։
6 Ան երրորդ օրուան միացածէր կրակով
պիտի այրուին։ Ու թէ որ անկէ երրորդ
օրը ուտուելու ըլլայ, այն պիղծ է, պի-
տի չընդունուին։ Ու զանիկա ուտողը իր
անօրէնութիւնը պիտի կրէ, վասն զի
Տէրոջը սուրբ բանը պղծեց, ու այն
անձը իր Ժողովուրդէն պիտի կորսուի։
9 Ու ձեր երկրին հունձքը հնձելու ա-
տենիդ՝ դուռ արտիդ եզերքը լման չը
հնձես, ու դուռ հունձքիդ ինկած հաս-
կերը չժողովես։ Ու դուռ այգիդ ճառագայ
չընես, այնպէս այգիդ մէջ միացած
ողկոյզները չքաղես. զանոնք աղքա-
տին և օտարականին համար թողուս։
Ես եմ Տէրը ձեր Աստուածը։
11 Գողնալ մի ընէք։ սուտ մի զուա-
ցէք, և մէկզմէկ մի խաբէք։ Ու իմ
անունովս սուտ անունով երդում մի ը-
նէք, ու ձեր Աստուծոյն անունը մի
պղծէք։ Ես եմ Տէրը։ Դուռ դրացիդ
զրկանք մի ընէր, և յափշտակութիւն
մի ընէր։ փոգի վարձքով բանողին ե-
րեկուան վարձքը մինչև առաւօտ դուռ քովդ չմնայ։
14 Խուլին մի հայհոյեր, ու կոյրին առ-
ջև գայթակղութիւն մի դներ, հապա
դուռ Աստուծմէդ վախնար. ես եմ Տէրը։
15 Դատաստանի մէջ անիրաւութիւն մի
ընէք. ազգասէր աչառութիւն մի ը-
ներ, և մեծը մի շոյեր. դուռ դրացիդ արդարութիւնով դատէ։
16 Դուռ ժողովրդիդ մէջ չաբանաւա-
կութիւն ընելու չպատրաս. դուռ ընկերիդ
արիւնը չհանեսս. ես եմ Տէրը։ Նզովո-
րուդ դուռ սրտիդ մէջ չատիս. դուռ դր-
դահոչիդ անպատճառ յանդիմանես, որ
18 անոր համար մեղք չկրնաս վրէդ չառ-
նես, և դուռ Ժողովուրդիդ որդւոցը
սիրտ չպահես, այլ դուռ ընկերդ քու անձիդ պէս սիրես. ես եմ Տէրը։
19 Իմ կանոններս պահէք. դուռ անա-
սունիդ մէկ տեսակը ուրիշ տեսակին
հետ զուգաւորել չտաս. դուռ արտիդ
մէջ զանազան սերմ չցանես. և երկու
տեսակ գործուած այլափառուն հան-
դերձ չհագնիս։
20 Ու թէ որ մէկը կնոջ մը հետ պառ-
կելով զուգաւորութիւն ընէ, ու անիկա մէկուս մը նշանուած ապախիկն է
ու փրկուած չէ, ոչ ալ անոր ազատութիւն արուած, անոնք պիտի պատ-
ժուին. անոնք պիտի չմեռնուին, քանզի
կինը ազատ չէր։ Ու մարդը իր չանգան-
քին պատարագը Տէրոջը պիտի բերէ
ժողովրդիս խորանին դուռը, խոյ մը չան-
22 գանքի պատարագի համար։ Ու քահա-
նան չանգանքի պատարագին խոյովը
Տէրոջը առջև քառութիւն պիտի ընէ ա-
նոր իր ըրած մեղքին համար. և անոր
ըրած մեղքը պիտի ներուի իրեն։
23 Ու երբոր այն երկիրը մտնէք, ու ա-
մէն տեսակ ծառեր անկէ պտուղ ու-
տելու համար, անասնին պէս պտու-
ղը չկրնաս ուտել պէս անսպասելով պիտի
24 չուտուի։ Ու չորրորդ տարին անոր բո-
լոր պտուղը Տէրը փառաւորելու համար



25 սուրբ պիտի ըլլայ։ Ու հինգերորդ տա-
րին անոր պտուղը պիտի ուտէք, որ իր
արդիւնքը ձեզի համար ուելցընէ. ես
26 եմ Տէրը ձեր Աստուածը։ Մէջը արիւ-
նովը չուտէք. չհմայէք և գուշակու-
27 թիւն չընէք։ Ձեր գլուխները եզերք-
քի մազերը չկրծէք, ու դուռ մօրուքիդ
28 եզերքը չաւրեսս։ Ու մէկու մը ոգւոյն
համար ձեր մարմնին վրայ կտրածներ
չընէք, ու ձեր վրան դրոշմ չընէք.
ես եմ Տէրը։
29 Աղջիկդ պոռնիկ ընելով մի պղծեր,
որ երկիրը պոռնկութեան մէջ չիյնայ,
ու երկիրը չարութիւնով չլեցուի։
30 Իմ շաբաթներս պահէք, ու իմ սրբ-
31 ութիւնէրուն յարգեցէք. ես եմ Տէրը։ Վր-
հուկներուն մի նայիք, և հմայողներուն
քով մի հարցընէք, որ անոնցմով չը
պղծուիք. ես եմ Տէրը ձեր Աստուածը։
32 Մազի ճերմակածին առջև ոտք ելլէր,
և ծերը պատուէ, ու դուռ Աստուածմէդ
վախցիր. ես եմ Տէրը։
33 Ու թէ որ օտարական մը ձեր երկրին
մէջ ձեր քով պանդխտանալու ըլլայ,
34 չնեղէք զանիկա։ Ձեր քով պանդրիս-
ացող օտարականը ձեր երկրին բնա-
կին պէս ըլլայ ձեզի, և դուռ անձիդ
պէս սիրես զանիկա, վասն զի դուք ալ
եգիպտացւոց երկրին մէջ օտարական եք։
ես եմ Տէրը ձեր Աստուածը։
35 Դատաստանի մէջ անիրաւութիւն չը-
նէք, կանգառնի մէջ՝ կշիռքի մէջ ու
36 չափի մէջ ալ։ Ձեր կշիռքները լման,
ձեր կշռաքարերը լման, ձեր արգասն
լման ու հիմնը լման պիտի ըլլայ։ Ձեզ
Եգիպտոսի երկրէն հանող Տէրը ձեր
37 Աստուածը ես եմ։ Ուստի իմ բոլոր կա-
նոններս ու իմ բոլոր դատաստաններս
պահէք, և ընէք զանոնք։ ես եմ Տէրը։

ԳԼ. Ի

1 Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի ընելով,
2 Նաև Իսրայէլի որդւոց ըսէս, Իսրա-
էլի որդւոցմէ և Իսրայէլի մէջ պան-
դխտացող օտարականներէն ով որ իր
սերունդէն Մողովքի տայ, անշուշտ պի-

*ՆԵԲ. պոռնկութ.

մեռցուին, անոնց արիւնը իրենց վրայ
14 ըլլայ։ Եւ Թէ որ մարդ մը՝ կին մը ու
անոր մայրը առնէ, անօրէնութիւն է.
Թէ այն Թէ անոնք կրակով պիտի այ-
րուին, որ ձեր մէջ անօրէնութիւն չըլ-
15 լայ։ Եւ Թէ որ մարդ մը անասունի
հետ պառկի, անշուշտ պիտի մեռցուի,
16 ու անասունը պիտի սպանէք։ Եւ Թէ
որ կին մը որ և իցէ անասունի հետ
զուգաւորելու համար անոր մօտենայ,
Թէ կինը Թէ անասունը պիտի սպան-
նես. անոնք անշուշտ պիտի մեռցուին.
17 անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ։ Եւ
Թէ որ մարդ մը իր քոյրը առնէ՝ իր
հօրը աղջիկը կամ իր մօրը աղջիկը, ու
անոր մերկութիւնը տեսնէ, ու աղջիկն
ալ անոր մերկութիւնը տեսնէ, չարա-
Թիւն է. անոնք իրենց ժողովուրդին
աչքին առջեւ պիտի կորսուին. անիկա
իր քրոջը մերկութիւնը բացաւ. իր ա-
18 նօրէնութիւնը պիտի կրէ։ Եւ Թէ որ
մարդ մը իր դաշտանին մէջ եղող կը-
նոջ մը հետ պառկի ու անոր մերկու-
Թիւնը բանայ, ինք անոր աղբիւրը
բացաւ, կինն ալ իր արեան աղբիւրը
բացաւ. երկուքն ալ իրենց ժողովուր-
19 դին մէջէն պիտի կորսուին։ Եւ քու
մօրդ քրոջը կամ քու հօրդ քրոջը մեր-
կութիւնը չբանաս. վասն զի նթէ մէկը
իր ազգականին մերկութիւնը բանալու
ըլլայ, երկուքնալ իրենց անօրէնութիւ-
20 նը պիտի կրեն։ Եւ Թէ որ մարդ մը
իր հօրեղբօրը կնոջ հետ պառկի, իր
հօրեղբօրը մերկութիւնը բացաւ. ան-
զաւակ պիտի մեռնին։ Եւ Թէ որ մարդ
21 մը իր եղբօրը կինն առնէ, պղծութիւն
է այն. անկիա իր եղբօրը մերկութիւ-
նը կը բանայ. անզաւակ պիտի ըլլան։
22 Ուստի իմ բոլոր կանոններս և իմ
բոլոր դատաստաններս պահէք, ու ը-
նէք զանոնք, որ այն երկիրը ուր որ
ձեզ պիտի տանիմ հոն բնակիլ, զուր
23 չիսլճ ձեզ։ Եւ պիտի չգնաք այն ազ-
գերուն սովորութիւններովը, որոնք
ձեր առջեւէն պիտի վռնտեմ. քանզի
այս ամէն բաները ըրին անոնք, ու ես
24 զզուեցայ անոնցմէ։ Եւ ըսի ձեզի, Ա-
նոնց երկիրը դուք պիտի ժառանգէք,
ու ես զանիկա ձեզի պիտի տամ սեպ-
ուհաճ եղող երկիր մը որ կաթ ու
մեղր կը բղխէ. ես եմ Տէրը ձեր Ա-
ստուածը որ ձեզ ազգերէն զատեցի
25 ձեզի։ Ուստի սահման ու անսահման
անասուններուն միջեւէն՝ և անսահման
ու սահման թռչուններուն միջեւէն
տարբերութիւն պիտի ընէք. և ձեր
անձերը չպղծէք անասուններով կամ
թռչուններով կամ գետնի վրայի բո-
լոր սողուններով՝ որոնք ես զատեցի
26 ձեզի իբրև անսահման ու դուք սուրբ
պիտի ըլլաք ինծի. քանզի ես Տէրս
սուրբ եմ, ու ձեզ ազգերէն զա-
տեցի որ իմ ըլլաք։
27 Կին կամ հմայող եղողը՝ Թէ էրիկ
մարդ ըլլայ և Թէ կնիկ՝ անշուշտ պի-
տի մեռցուին. քարերով քարկոծեն զա-
նոնք. անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ։

## ԳԼ. ԻԱ

1 Եւ Տէրը բաւ Մովսիսի, խօսէ Ա-
հարոնի որդւոց՝ քահանաներուն ու ը-
սէ անոնց, Քահանայ մը մեկուն հա-
մար անսահման չըլլայ իր ժողո-
2 վուրդին մէջ. բայց մօտիկ իր մօտ ազ-
գականին համար, այսինքն իր մօրը ու
իր հօրը և իր որդւոյն ու իր աղջկանը
3 և իր եղբօրը համար, Եւ իր կոյս քո-
յրոջը համար որ մօտ է իրեն ու էրկան
տրուած չէ, կրնայ անսահման ըլլալ։
4 Անիկա իր ժողովուրդին մէջ գլխաւոր
մարդ ըլլալով, անսահման պիտի չըլ-
5 լայ՝ ինքզինքը պղծելով։ Անոնք գլ-
լուխնին փեսալով կնասի պիտի չընին,
և իրենց մօրուքին եզերքը չտաշլին,
և իրենց մարմնոյն վրայ կտրածներ
6 չընին. Սուրբ պիտի ըլլան իրենց Ա-
ստուածոյն. և իրենց Աստուածոյն անուն
չպղծեն, վասն զի Տէրոջը պատարագ-
ները՝ իրենց Աստուածոյն հացը ա-
նոնք կը մատուցանեն. ուստի սուրբ
7 պիտի ըլլան։ Պոռնիկ կամ պղծուած
կին չառնեն, և իր էրկէն արձակ-



ուած կին մը չառնեն. քանզի Հոգի
8 Նո նուիրեալ իր Աստուծոյն. Ուստի
պիտի սրբեն զանիկա, վասն զի ես Ա-
ստուծոյդ հացը անիկա կը մատուցանեմ.
անիկա սուրբ պիտի ըլլայ քեզի, քան-
զի ես Տէրս որ ձեզ կը սրբեմ, սուրբ
9 եմ։ Եւ Թէ որ քահանայի մը աղջիկը
պոռնկութիւն ընելով պղծուելու ըլ-
լայ, իր հայրը կը պղծէ. անիկա կրա-
կով պիտի այրուի։
10 Եւ իր եղբայրներէն մեծ եղող քա-
հանան՝ որուն գլխուն վրայ օծման ե-
ղը թափուած է, ու զգեստները հագ-
նելու օրհնուած, իր գլուխը պիտի չը
11 բանայ, և իր լաթերը չպատառէ, Եւ մե-
ռած մարդու մը քով չերթայ, ոչ ալ
իր հօրը կամ իր մօրը համար անսա-
12 փուր ըլլայ. Եւ սրբարանէն դուրս չել-
լէ, ու իր Աստուծոյն սրբարանը չպղծէ.
վասն զի իր Աստուծոյն օծման ե-
ղեւն պսակը իր վրան է. ես եմ Տէրը։
13 Եւ անիկա կոյս մը իրեն կին պիտի
14 առնէ. Որբևարի կամ արձակուած կամ
պղծուած կամ բազ չառնէ. հապա կին
ըլլալու համար իր ժողովուրդին կոյս
15 մը առնէ, Որ իր սերմը չպղծէ իր ժո-
ղովուրդին մէջ, վասն զի ես եմ Տէրը՝
որ կը սրբեմ զանիկա։
16 Եւ Տէրը խօսեցաւ Մովսիսի՝ ըսելով,
17 Խօսէ Ահարոնի ու ըսէ, Քու սերունդ-
դիդ իրենց ազգերուն մէջ ալ որ իր
վրան արատ մը ունի, Թող չմօտենայ
իր Աստուծոյն հացը մատուցանելու.
18 վասն զի ինաս արատ ունեցող մարդ
մը պիտի չմօտենայ. կոյր մարդը կա-
ղը՝ կամ կարճունչը՝ կամ չէր ծռտա-
19 ղերուն վրայ ատելոյդ բան մը ունեցողը՝
կամ ոտքը կոտրած՝ կամ ձեռքը կոտ-
20 րած մարդը, կամ ասպատոյր կամ
Թզուկը՝ կամ իր աչքին մէջ բիծ ու-
նեցողը՝ կամ քոսոտը՝ կամ արբիւնա-
ւոր կամ †փչացանկը. Ահարան քահա-
նային սերունդէն արատ մը ունեցող
մարդը Տէրոջը պատարագները մատու-

*Կամ ականջաւոր.
†Կամ ամորձիքը ճմռւած, կամ միորձին.

ցանելու պիտի չմօտենայ, Հոգի արա-
տաւոր ըլլալով՝ իր Աստուծոյն հացը
22 մատուցանելու պիտի չմօտենայ։ Անիկա
իր Աստուծոյն հացը պիտի ուտէ, Թէ
ամենասուրբ բաներէն և Թէ սուրբ
23 բաներէն. Միայն վարագուրին քով
պիտի չմտնէ, և սեղանին չմօտենայ,
քանզի արատ ունի, ու իմ սուրբ բա-
ներս չպղծէ, քանզի անոնք սրբող Տէ-
24 րը ես եմ։ Եւ Մովսէս խօսեցաւ Ա-
հարոնին ու անոր որդւոց և
Իսրայէլի բոլոր որդիներուն։

## ԳԼ. ԻԲ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսիսի՝ ըսելով,
2 Խօսէ Ահարոնի ու անոր որդւոյ՝ որ
Իսրայէլի որդւոց մօտենան սուրբ
բաներէն՝ զորոնց կենան, և իմ սուրբ
անունս չպղծեն այն բաներուն որ ինծի
3 կը սրբեն, ես եմ Տէրը։ Ըսէ անոնց,
Ձեր բոլոր սերունդէն ձեր ազգե-
րուն մէջ՝ ով որ իր անսահմանու-
թիւնը իր վրան ունենալով մօտենայ այն
սուրբ բաներուն որ Իսրայէլի որդիքը
կը սրբեն Տէրոջը, այն անձը իմ ա-
4 ջեւէս պիտի կորսուի. ես եմ Տէրը։ Ով
որ Ահարոնի ցեղէն բորոտ ըլլայ, կամ
ծորաբեմ ունենայ, սուրբ բաներէն պի-
տի չուտէ մինչեւ որ մաքրուի։ ԵՒ ով
որ մեռելէ պղծուած բանի մը դպչի,
կամ մարդ մը որուն զուգաւորութեան
5 աերմը իրմէն ելած է, կամ ով որ դիպ-
չի որ և իցէ սողունի մը որով կրնայ
անսահմանուիլ ըլլալ, կամ մարդու մը որ-
մէն կրնայ անսահմանուիլ ըլլալ, որ և իցէ
6 անսահմանութիւն որ անկիա ունենայ,
Անոնց դպչող մարդը մինչեւ իրիկուն ան-
սահման պիտի ըլլայ, և սուրբ բանե-
րէն չուտէ, այլ իր մարմինը ջրով լուայ.
7 Եւ երբ արեգակը մարը մտնէ, մաքուր
պիտի ըլլայ, ու ետքը սուրբ բաներէն
8 ուտէ, քանզի անի իր հացն է. Անկիա
մեռած կամ գազանաբեկ պիտի չուտէ,
9 որ անով չպղծուի. ես եմ Տէրը։ Ու

*Նբր. պատ

իմ կարգադրութիւնս պիտի պահեն, որ անոր համար մեղք չբերեն, ու զայն պղծելուն համար չմեռնին. ես եմ Տէրը որ զանոնք կը սրբեմ։
10 Բնաւ օտարական մը ասոր քահանայ պիտի չուտէ. քահանային հիւրը կամ վարձկանը սուրբ բան պիտի չուտէ։
11 Բայց քահանային իր առակոյին ծախու առած անձը ու իր տունը ծնածը անկէ պիտի ուտէ. անոնք անոր կերակուրէն պիտի ուտեն։ Թէ որ քահանային աղջիկը օտարականի մը հետ ամուսնանայ, անիկա նուիրուած սուրբ բաներէն պիտի չուտէ։ Բայց թէ որ քահանային աղջիկը այրեւարի կամ արձակուած ըլլայ ու զաւակ չունենայ, և իր հօրը տունը դառնայ՝ առաջուն իր աղջկութեան ժամանակին պէս իր հօրը հացէն պիտի ուտէ. սակայն բնաւ օտարական մը անկէ չուտէ։
14 Եւ թէ որ մարդ մը անգիտութեամբ սուրբ բան մը ուտէ՝ անոր վրայ հինգերորդ մաս մը պիտի աւելցնէ, ու սուրբ բանով մեղքեցող քահանային տայ։
15 Եւ իսրայէլի որդւոց Տէրոջը մատուցած սուրբ բաները չպղծեն. 16 Երբոր անոնք սուրբ բաները ուտելով՝ յանցանոց անօրէնութիւնը իրենց վրայ չբերեն, վասն զի ես եմ Տէրը որ զանոնք կը սրբեմ։
17 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ըսելով, 18 Խօսէ Ահարոնի ու անոր որդւոց և իսրայէլի բոլոր որդւոց, և ըսէ անոնց, Իսրայէլի առանէն կամ Իսրայէլի մէջ բնակող օտարականներէն անոնց ողջակիզի համար Տէրոջը մատուցածը իրենց բոլոր ուխտերուն և բոլոր կամաւոր ընծաներուն համար, իր դէմ մատուցանող ամէն մարդը, Աբրահամներէն, ոչխարներէն կամ այծերէն անարատ արու պիտի մատուցանէ, որ ձեզի համար ընդունելի ըլլայ։ 20 Ամէն ինչ որ թերութիւն ունեցողը պիտի չմատուցանէք, վասն զի ձեզի համար ընդունելի պիտի չըլլայ։
21 Եւ երբոր մարդ մը ուխտ կամ կամաւոր ընծայ համար կամ կամաւոր ընծայ համար՝ ոչ թէ արջառներէն կամ ոչխարներէն Տէրոջը խաղաղութեան զոհ մատուցանելու ըլլայ, անարատ պիտի ըլլայ՝ ան որ ընդունուի. բնաւ ատոնց պիտի չըլլայ անոր վրայ։
22 Կոյր՝ կամ ջղէ կոխուած կամ կիրտրտած կամ խազաւարտունեցող՝ կամ քոսոտ կամ որբենոտ եղածներէն Տէրոջը պիտի չմատուցանէք, ոչ ալ աոնցմէ Տէրոջը պատարագի համար ան-
23 դանին վրայ պիտի դնէք։ Եզից կամ գառնէ երան ձկ աւելորդութիւն կամ պակասութիւն ունեցող զուարակը կամ ոչխարը կամաւոր ընծայի համար մատուցանես. սակայն ուխտի համար պիտի չգոհուի։
24 Ան չընդունիք այնու Աստուծոյ ճմլուածի կամ ճզմուածը կամ փրցուածը կամ կարուածը չմատուցանէք Տէրոջը, և ձեր երկրին մէջ չընէք։ 25 Եւ օտարականի մը ձեռքէն ալ՝ ամէն այնոցմէ ձեր Աստուծոյն † պատարագ չը մատուցանէք, վասն զի անոնց մէջ խեղութիւն ու ապուռ կայ. անոնք ձեզի համար ընդունելի պիտի չըլլան։
26 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ըսելով, 27 Երբոր զուարակ կամ ոչխար կամ այծ ծնանի, եօթը օր իր մօրը քով պիտի մնայ. և ութերորդ օրը և անկէ ետքը Տէրոջը ընդունելի պիտի ըլլայ պատարագ իր համար։ 28 Եւ կովը կամ ոչխարը իր ձագովը մէկ կովց մէկ օրուան մէջ չմորթէք։
29 Եւ երբոր գոհութեան զոհ մատուցանէք Տէրոջը, այնպէս պիտի մատուցանէք որ ձեզի համար ընդունելի ըլ-
30 լայ։ Նոյն օրը պիտի ուտուի անիկա, անկէ մինչև առաւօտ չձգէք։ Ես եմ Տէրը։
31 Ուստի իմ պատուիրանները պահէք, և ընէք զանոնք։ Ես եմ Տէրը։ 32 Եւ իմ սուրբ անունս չպղծէք, որ ես սրբուիմ Իսրայէլի որդւոց մէջ։ Ես եմ Տէրը
33 որ ձեզ կը սրբեմ, Որ ձեզի Աստուած

---

*Կամ՝ Ո՛չ մէկ ուրիշը անոնց վրայ չանցանայ անօրէնութիւնը իրենց երբոր անոնք իրենց սուրբ բաները ուտեն,

† Եբր. հաց



բլլալու համար՝ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի։ Ես եմ Տէրը։

## ԳԼ. ԻԹ

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ըսելով,
2 Խօսէ Իսրայէլի որդւոց ու ըսէ անոնց, Տէրոջը սուրբը որ դուք ժողով պիտի կոչէք, իմ սուրբ ժողովս պիտի կոչէք, անոնք իմ սուրբ հաներս են։
3 Վեց օր գործ գործուի, բայց եօթներորդ օրը հանգստութեան շաբաթը բլլալով սուրբ ժողով է. բնաւ գործ պիտի չգործէք. Տէրոջը շաբաթ պիտի բլլայ ձեր բոլոր բնակութեանց մէջ։
4 Տէրոջը սուրբները, որ իրենց ատենին հաստատուած սուրբ ժողովներ պիտի քարոզէք, սոնք իմ հաներս են։
5 Առաջին ամսուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ Տէրոջը զատիկն է։ Եւ նոյն ամսուն հնգետասաներորդ օրը բազարջակեաց նանն է Տէրոջը. եօթն օր բազարջ պիտի ուտէք։ 7 Առաջին օրը սուրբ ժողով պիտի ունենաք. բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք։ 8 Եւ եօթն օր պատարագ պիտի մատուցանէք Տէրոջը. եօթներորդ օրը սուրբ ժողով պիտի բլլայ. բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք։
9 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ըսելով,
10 Խօսէ Իսրայէլի որդւոց ու ըսէ անոնց, Երբ որ մտնէք այն երկիրը որ ձեզի կուտամ, ու անոր հունձքը հնձէք, ձեր հունձքին երախայրի որայ մը քահանային
11 նային բերէք։ Նա ալ Տէրոջը առջև երերցնելով՝ պիտի մատուցանէ զայն, որ ձեզի համար ընդունելի բլլայ. քահանան շաբաթին հետևեալ օրը պիտի
12 մատուցանէ զանիկա։ Եւ զայն մատուցած օրերնիդ՝ ողջակիզի համար մէկ տարեկան անարատ գառ մը մատուցանէք Տէրոջը. Եւ անոր թափելու նուէրը հինգին չորրորդ մասը գինի պիտի բլլայ. Եւ մինչև այն օրը՝ որ ձեր Աստուծոյն ընծան կը մատուցանէք, հաց կամ բոհրած ցորեն կամ թարմ հասկեր չուտէք. ձեր ազգերուն մէջ ձեր բոլոր բնակութիւններուն մէջ այս յաւիտենական կանոն պիտի բլլայ։
15 Եւ շաբաթին հետևեալ օրէն՝ որ դուք նուիրական զատիկ բերած օրէն սկսեալ եօթը
16 լիք շաբաթ պիտի համրէք ձեզի. Մինչև եօթներորդ շաբաթին հետևեալ օրը յիսուն օր պիտի համրէք, և նոր
17 հացի ընծայ մատուցանէք Տէրոջը. Ձեր բնակարաններէն երեքցնելու ընծայի համար երկու հաց պիտի բերէք, որ ա-
18 նոնք երկու տասնորդով թարակ ալիւրէ բլլալով՝ խմորեալ եփած պիտի բլլան. այս երախայրի է Տէրոջը։ Եւ հացին հետ՝ մէկ տարեկան եօթը հաս անարատ գառնիկ, և արջառներէն մէկ դուարակ մը, ու երկու խոյ պիտի մատուցանէք Տէրոջը, որոնք հացի ընծաներուն ու թափելու նուէրներուն հետ ողջակէզ՝ անուշահոտ պատա-
ընես, առանց ուշացընելու կատարես.
քանզի քու Տէր Աստուածդ անպատ-
ճառ զանիկա քեզմէ պիտի պահանջէ,
22 և մեղք մէջդ պիտի ըլլաս. Բայց թէ
որ ուխտ ընել չուզես, անիկա քեզի
23 մեղք չըլլար։ Ինչ որ բերանդդ կը խոս-
տանաս և քու կամքդդ քու Տէր Աս-
տուածդդ կ'ուխտես, քու չբռունքդդ
հատը զգուշանաս քու համար։
24 Երբ քու դրացւոյդ այգին կը մտնես,
ուզածդդ չափ խաղող ուտես և կշտա-
25 նաս, բայց ամանդդ մէջ չդնես։ Երբոր
քու դրացւոյդ հունձքին մէջ կը մտնես,
ձեռքովդ հասկերը փրցընես, բայց
դրացւոյդ հունձքին մանգաղ չգարնես։

## Գլ. ԻԴ

1 Թէ որ մէկը կին մը առնէ ու անոր է-
րկի բլլայ, և անոր վրայ անպզուա-
թեան բան մը գտնելուն համար անի-
կա իր աչքին հաճոյ չըլլայ, անասուն
անոր արձակման թուղթ մը գրէ և ա-
նոր ձեռքը տայ, և իր տունէն ճամբէ,
2 Եւ երբ անիկա անոր տունէն ելլե-
լով՝ երթայ ուրիշ երկան մը կին բլլայ,
3 Թէ որ ետքի երկին ալ զանիկա ատե-
լով արձակման թուղթ մը գրէ, և ա-
նոր ձեռքը տայ, իր տունէն ճամբէ,
կամ թէ որ անոր հետ կարգուած ետ-
4 քի երկիր մեռնի, Առջի երկիր որ զա-
նիկա ճամբեր էր, կարող չըլլայ զանի-
կա դարձեալ իրեն կին առնել, անոր
պղծուելէն ետքը. քանզի Տէրոջը առ-
ջև պղծութիւն է այս բանը. և այս-
պէս գետն մեղքով չկեցընես այն եր-
կիրը՝ զոր քու Տէր Աստուածդ քեզի
ժառանգութիւն կու տայ։
5 Նոր ամուսնացած մարդը պատե-
րազմի չերթայ, և անոր բնաւ պարտա-
կ մը չտրուի. ապրի մը իր տան մէջ ա-
զատ թող նստի, և իր տունը կինը ուրախացընէ։

6 Զրկաց որ Հ֊ԵՏ Հ֊ը ապօրինքը կամ ա-
նոր վերի քարը գրաւ առնէ. քանզի
էր ընդերձ կեանքը գրաւ առած կ'ըլլայ։
7 Թէ որ մարդ մը գտնուի, որ իր եղ-
բայրներուն՝ այսինքն Իսրայէլի որդւոց
մէկը գաղնապով՝ զանիկա ծառայե-
ցուցեր է կամ ծախեր է, այն գողը
թող մեռնի. և ձեր մէջէն չարութիւ-
նը վերցնես։
8 Բորոտութեան ախտին համար դգու-
շութիւն բռնէք, Ղեւտացի քահանանե-
րուն բոլոր ձեզի ասրվեցուցած բանե-
րը ձշդիւ պահելու և ընելու. ինչ որ
անոնց պատուիրեր եմ՝ զգուշութեամբ
9 կ'գործ գնէք։ Միտք դիր ինչ որ
քու Տէր Աստուածդ Մարիամին բրած
ճամբուն մէջ՝ եգիպտոսէն ելած ատեն-
նիդ։
10 Երբ քու գործդդ բան մը փոխ
առս, գրաւն առնելու համար անոր
11 տունը չմտնես. Դուրսը կայնես և փոխ
առնող մարդը գրաւը քեզի դուրս բե-
12 րէ։ Եւ թէ որ այն մարդն աղքատ է,
13 անոր գրաւովը չպառկիս. Արեւը մաս-
ծին պէս անպատճառ անոր գրաւը ետ
տաս, որ անիկա իր հանդերձովը պառ-
կի ու քեզ օրհնէ. և քու Տէր Աստու-
ծոյդ առջեւ այ Բարութիւն մեզգա-
րես։
14 Աղքատ ու կարօտ վարձկանին զըր-
կանք չընես, ԷՒ քու եղբայրներէդ և
թէ քու երկրիդ մէջ քու փողոցներդ
15 գտնուող օտարականներէն ըլլայ. Նոյն
օրը արեգը չմտած անոր վարձքը հա-
տուցանես, քանզի անիկա ագքատ է,
և անոր խելքը միաբը անոր վրայ է.
չըլլայ որ քեզի համար Տէրոջը բողոքի,
և մեղքի սէր ըլլաս։
16 Տղոց յանցանքէն համար հայրերը չը
սպանուին, և հայրերուն յանցանքէն հա-
մար ալոյք չսպանուին. ամէն մարդ
իր յանցանքին համար պիտի սպանուի։
17 Օտարականին և որբին իրաւունքը չը
ծռես, և որբահարսին հանգիստը գրաւ
18 չառնես. Ես միտք բեր որ դուն Ե-
գիպտոսի մէջ ծառայ էիր, և քու Տէր
Աստուածդ քեզ անկէ ազատեց. անոր
համար ես քեզի կը պատուիրեմ որ այս
բանն ընես։
19 Երբ քու արտիդ մէջ հունձդ հըն-
ձես, և արտին մէջ որայ մը մոռ-
ցած ըլլաս, զանիկա առնելու համար
ետ չդառնաս. անիկա օտարականին,
որբին և այրեաւրին թող ըլլայ. որպես
զի քու Տէր Աստուածդ քու ձեռքե-
րուդ ամէն գործքին մէջ քեզ օրհնէ,
20 Զիթենիդ թօթուելիդ ետքը վրան ճա-
ղ֊ՇՆԵԼԸ ասոկ ասո չդիմառնաս. անիկա
օտարականին, որբին և այրեաւրին թող
21 ըլլայ. Ե֊ այգեդդ խաղողները ժողվե-
լիդ ետքը ձագագայ չընես. անիկա օ-
տարականին, որբին ու այրեաւրին թող
22 ըլլայ. Եւ միտք բեր որ եգիպտոսի
երկրին մէջ ծառայ էիր. անոր համար
ես քեզի կը պատուիրեմ որ այս բանն
ընես։

## Գլ. ԻԵ

1 Երբ մարդոց մէջ վէճ մը ըլլայ և գա-
տաստանի երթան, դատաՒՒՇԻՐԸ ա-
նոնց գատը մտիկ ընելով՝ իրաւունք
ունցողն արդարացընեն, և յանցա-
2 ւորը դատապարտեն. Եւ յանցաւոր ե-
ղողը թէ որ ծեծի արժանի է, դատա-
ւորը զանիկա պառկեցընէ, և անոր
յանցանքին համեմատ իր առջեւ ծե-
3 ծել տայ զանիկա քառասուն՝ Քառասու-
նէն աւելի զարնել չտայ. չըլլայ որ աս-
կէ աւելի զարնելով՝ եղբայրդ քու աչ-
քերդ առջեւ անարգուի։
4 Կաղի մէջ աշխատող եղին դունչը չը-
կապես։
5 Երբ եղբարք մէկտեղ բնակին, և
անոնց մէն առանց զաւկի մեռնի, մեռ-
նողին կինը դուրսը օտար մարդու հետ
չկարգուի. տագդը անոր մտնէնայ և
զանիկա իրեն կին առնէ, և տագդու-
թեան պարտականութիւնն անոր հա-
6 մայնէ. Եւ անոր ծնած առջի-
նեկ տղան մեռնող եղբօրը անունով
կոչուի, որ չըլլայ թէ անոր անունը իս-

ՆԵՂ. կենայ։



7 րայէլէն չնջուի։ Եւ թէ որ այն մարդը իր
հարսն առնել չուզէ, անառնն հարսը
դուռը ելլէ ծերերուն և ըսէ, Իմ տագ-
րս Իսրայէլի մէջ իր եղբօր անունը
հաստատելէն կը հրաժարի. տագդու-
թեան պարտականութիւնն ինծի հա-
8 մայնել չուզեր։ Անառնն անոր քա-
ղաքին ծերերը զանիկա պիտի կանչեն,
և անոր խօսքեր ալ ընէ, և թէ որ անիկա
համառ կենալով ըսէ Ես իրեն հա-
9 մայնել չուզեմ։ Անառնն անոր քա-
ղաքին ծերերը զանիկա պիտի առնեն,
գոտ քու Տէր Աստուածդ քեզի տուած
երկրէն ժողվեր ես, և կողովի մը մէջ
դնելով երթան այն տեղը՝ գոր քու
Տէր Աստուածդ պիտի ընտրէ իր անու-
նը հոն դնելու համար. Եւ այն օրերը
եղող քահանային երթան ըսես, Ես այս
օր քու Տէր Աստուածդ ՚֊ԷՒ կը խոս-
տանամ որ ես մտայ այն երկիրը, ո-
րուն համար Տէրը մեր հայրերուն եր-
4 դում ըներ էր մեզի տալու. Ցեղոյ
քահանան կողովը քու ձեռքէդ ա-
ռնելով՝ զանիկա քու Տէր Աստուածդ
5 սեղանին առջեւ պիտի դնէ. Եւ դուն
պատասխան ուղով՝ քու Տէր Աստու-
ծոդ առջեւ ըսես, Իմ հայրս Թափա-
ռական Ասորի մը ըլլալով, Եգիպտոս
իջաւ, և հոն փիր հոգիներով պան-
դխտութիւնը ընելով՝ մեծ, զօրա-
6 ւոր ու շատաւոր ազգ մը եղաւ. Եւ Ե-
գիպտացիք մեզ չարչարեցին, մեզ նե-
ղեցին և մեր վրայ ծանր ծառայու-
7 թիւններ դրին. Եւ մենք մեր հայրե-
րուն Տէր Աստուածին աղաղակեցինք.
և Տէրը մեր ձայնը լսելով՝ մեր նեղու-
թիւնը, աշխատութիւնը և մեզի եղած
8 դրկանքը տեսաւ. Եւ Տէրը զօրաւոր
ձեռքով ու բարձր բազուկով, մեծ ա-
հարկու թիւններով, նշաններով ու հր-
9 նշներով մեզ Եգիպտոսէն հանեց. Եւ
մեզ այս տեղը բերաւ, և մեզի այս եր-
կիրը՝ կաթ ու մեղր բղխող երկիրը
10 տուաւ։ Եւ արդ, ով Տէր, ինծի տուած
երկրիդ պտուղներուն երթայրներէդ
բերիս Եւ անոնք քու Տէր Աս-
տուածդդ առջեւ դնելով՝ Տէր Աստու-
ծոդ առջեւ երկրպագութիւն ընես.

11 Եւ քու Տէր Աստուծոյդ փեզի և քու
տանդ աուած բոլոր բարիքներով ու-
րախութիւն ընես, իկ դուն իկ Ղե-
ւացին՝ և իկ ձեր միջ եղող օտարա-
կանը։
12 Երբորդ տարին տասանորդի տարի
ըլլալով, երբ դուն քու արդիւնքե-
ներուդ բոլոր տասանորդները պատա-
րեմնցընես, և զանոնք Ղեւացիին, օ-
տարականին, որբին ու որբևարիին
տաս, որ ուռնե՛ ալ քու քաղաքներուդ
13 միջ ուտեն կշտանան, Անտանն քու
Տէր Աստուծոյդ առջև ըսես, Սուրբ
եղած բանը բոլորովին տունէս հանե-
ցի, և քու բոլոր հրամայած պատու-
իրաններուդ համեմատ զանիկա Ղե-
ւացիին, օտարականին, որբին ու որ-
բևարիին տուի. քու պատուիրանե-
րըդ զանց չըրի, և ջնջած չեմ ատոց։
14 Սուգիս ութերորդ միջ անկէ չխլեցայ, և
անմաքուր բանիս մը չդպածացեցի, և
անկէ մեռելի համար չտուի. իմ Տէր
Աստուծոյս խօսքը մտիկ ըրի. ինծի
ինչ որ պատուիրեցիր, անոր համեմատ
15 ըրի։ Նայէ երկինքէն քու սուրբ բնա-
կարանէդ, և օրհնէ քու Իսրայէլ ժո-
ղովուրդդ, և այն երկիրը որ տուիր
մեզի, ինչպէս որ մեր հայրերուն երդ-
ում ըրած էիր դուք, երկիր մը որ
կաթ և մեղր կը բղխէ։
16 Այսօր քու Տէր Աստուածդ քեզի կը
պատուիրէ որ այս կանոններուն ու դա-
տաստաններուն՝ կատարէ զանոնք
բոլոր սրտովդ և բոլոր հոգւովդ պա-
17 հես ու կատարես զանոնք։ Դուն այսօր
Տէրոջմէ խօսք կուտաս, որ անիկա քե-
զի Աստուած ըլլայ, և դուն անոր ճամ-
բաներուն մէջ քալես, և անոր կանոն-
ները, պատուիրանները ու դատաս-
տանները պահես, և խօսքը մտիկ ընես.
18 Տէրն ալ այսօր քեզի խօսք կուտայ,
որ դուն իրեն սեպհական ժողովուրդ
ըլլաս, ինչպէս որ քեզի բսաւ, որ ա-
նոր բոլոր պատուիրանները պահես.
19 Ու բոլոր իր ստեղծած ազգերէն գե-
րազանց բնէ քեզ գովքի համար, համ-
բաւի ու փառքի, որ սուրբ ժողո-

վուրդ մը ըլլաս քու Տէր Աստուածոյդ՝
իր ըսածին պէս։

## Գլ. Իկ

1 Եւ Մովսէս Իսրայէլի ծերերուն հետ
ժողովուրդին պատուիրելով բսաւ, Պա-
հեցէք այն բոլոր պատուիրանները
2 զոր ես այսօր ձեզի կը պատուիրեմ։ Ու
Յորդանանէն քու Տէր Աստուածդ քե-
զի տուած երկիրը անցած օրդ՝ քեզի
մեծ քարեր կանգնես, և զանոնք կի-
3 րով ծեփես։ Ու այս օրէնքիս բոլոր
խօսքերն անոնց վրայ գրես, երբ
անցնես ու մտնես այն երկիրը՝ զոր
քու Տէր Աստուածդ քեզի կուտայ,
երկիր մը որ կաթ ու մեղր կը բղխէ,
ինչպէս որ քու հայրերուդ Տէր Ա-
4 ստուածը քեզի բսաւ։ Եղիր երբ
Յորդանանէն անցնես, այս օրէնքի քե-
զի պատուիրածիս պէս այս քարերը
Գեբաղ լեռան վրայ կանգնես, և ա-
5 նոնք կիրով ծեփես։ Ու հոն քու Տէր
Աստուածդ սեղան մը շինես, քա-
րերէ չբ———ե սեղան մը. անոնց վրայ
6 երկաթ չդպցընես։ Ս—ի՛ քու Տէր
Աստուածդոյդ սեղանն ամբողջ քարերէ
շինես, և անոր վրայ քու Տէր Աստու-
7 ծոյդ ողջակէզներ մատուցանես։ Ու
խաղաղութեան զոհեր մատուցանելով՝
հոն ուտես, և քու Տէր Աստուածդոյդ
8 առջև ուրախանաս։ Ու այս օրէնքիս
բոլոր խօսքերը քարերուն վրայ շատ
պարզ կերտով մը գրես։
9 Ու Մովսէս Ղեւացի քահանաներուն
հետ բոլոր Իսրայէլի խօսելով բսաւ,
Ով Իսրայէլ, լուռ կեցիր ու մտիկ ը-
րէ։ Դուն այսօր քու Տէր Աստուածոյդ
10 ժողովուրդը եղար։ Ուստի քու Տէր
Աստուածոյդ խօսքը մտիկ ընելով՝ ի
գործ դնես անոր պատուիրանները և
կանոնները, զորս ես այսօր քեզի կը
պատուիրեմ։
11 Ու նոյն օրը Մովսէս ժողովուրդին
12 պատուիրելով բսաւ, Երբ Յորդանա-
նէն անցնիք, ժողովուրդը օրհնելու
համար Գարիզիմ լեռան վրայ առանձ-



Թող կայնին. Շմաւոն, Ղեւի, Յուդա,
13 Իսաքար, Յովսէփ ու Բենիամին. Ու
անէծքի համար Գերազի լեռան վրայ
առնեք Թող կայնին. Ռուբէն, Գադ,
Ասեր, Զաբուղոն, Դան ու Նեփթաղիմ։
14 Ու Ղեւացիք Իսրայէլի բոլոր մարդ-
կոց հետ խօսելով՝ բարձր ձայնով
15 պիտի բսեն, Անիծեալ ըլլայ այն մար-
դը՝ որ արուեստաւորի ձեռագործ և
Տէրոջը առջև պիղծ նիւթոյ փորուած
կամ ձուլածոյ կուռք կը շինէ, և գաղ-
տուկ մեղ մը կը դնէ։ Եւ բոլոր ժողո-
վուրդը պատասխան տալով՝ Ամէն պի-
16 տի բսէ։ Անիծեալ ըլլայ նա՝ որ իր
հօրը կամ մօրը դէմ հայհոյութիւն
կ'ընէ։ Եւ բոլոր ժողովուրդն Ամէն պի-
17 տի բսէ։ Անիծեալ ըլլայ նա՝ որ իր դր-
բացւոյն սահմանը կը փոխէ։ Եւ բոլոր
18 ժողովուրդն Ամէն պիտի բսէ։ Անիծեալ
ըլլայ նա՝ որ կոյր էշ ճամբայէն կը խա-
փանչցնէ։ Եւ բոլոր ժողովուրդն Ամէն
19 պիտի բսէ։ Անիծեալ ըլլայ նա՝ որ
պանդուխտին, որբին ու որբևարիին
իրաւունքը կը ծռէ։ Եւ բոլոր ժողովուր-
20 դը Ամէն պիտի բսէ։ Անիծեալ ըլլայ
նա՝ որ իր հօրը կնոջ հետ կը պառկի.
քանզի իր հօրը քողանցքը կը բանայ։ Եւ
բոլոր ժողովուրդն Ամէն պիտի բսէ։
21 Անիծեալ ըլլայ նա՝ որ որ և իցէ անա-
սունի հետ կը պառկի։ Եւ բոլոր ժողո-
22 վուրդն Ամէն պիտի բսէ։ Անիծեալ ը-
լլայ նա՝ որ իր հօր աղջիկը կամ իր
մօր աղջիկը եղող իր քոյրը հետ կը
պառկի։ Եւ բոլոր ժողովուրդն Ամէն
23 պիտի բսէ։ Անիծեալ ըլլայ նա՝ որ իր
զոքանչին հետ կը պառկի։ Եւ բոլոր ժո-
24 ղովուրդն Ամէն պիտի բսէ։ Անիծեալ
ըլլայ նա՝ որ իր դրացին գաղտուկ կը
մեռցընէ։ Եւ բոլոր ժողովուրդն Ամէն
25 պիտի բսէ։ Անիծեալ ըլլայ նա՝ որ ան-
մեղ մարդը մեռցընելու համար կա-
շառք կ'առնէ։ Եւ բոլոր ժողովուրդն
26 Ամէն պիտի բսէ։ Անիծեալ ըլլայ նա՝
որ այս օրէնքիս ամէն խօսքերուն մէ-
ջը չկենայ՝ որ զանոնք կատարէ։ Եւ բո-
լոր ժողովուրդն Ամէն պիտի բսէ։

## Գլ. ԻԸ

1 Եւ թէ որ դու Տէր Աստուածոյդ խօս-
քը ուշադրութեամբ մտիկ ընելով՝ ըն-
դունելութեամբ ի գործ դնես անոր բո-
լոր պատուիրանները՝ զոր ես այսօր
քեզի կը պատուիրեմ, քու Տէր Ա-
ստուածդ երկրիս բոլոր ազգերէն գե-
2 րադանց պիտի ընէ քեզ։ Ու թէ որ
դու Տէր Աստուածոյդ խօսքին հնազան-
դիս, այս բոլոր օրհնութիւնները քու
3 վրադ գալով քեզի պիտի հասնին, Քա-
ղաքի մէջ օրհնեալ, և դաշտի մէջ
4 օրհնեալ պիտի ըլլաս. Քու որովայնիդ
պտուղը, քու երկրիդ պտուղը, քու
անասուններուդ պտուղը, կովերուդ
ծնունդը և ոչխարներուդ հօտերը օրհ-
5 նեալ պիտի ըլլան. Քու կողովդ ու աջ-
6 ւրդ օրհնեալ պիտի ըլլան. Մտած ա-
մենդ օրհնեալ, և ելած ամենդ օրհ-
7 նեալ պիտի ըլլաս. Տէրը քու առջևէդ
յարձակել պիտի տայ քու վրադ եկող
թշնամիներդ. անոնք քեզի դէմ մէկ
ճամբով պիտի գան, և քու առջևէդ
8 եօթը ճամբով պիտի փախչին. Տէրը
քու շտեմարաններուդ և ամեն ձեռք
զարնելու բաներուդ մէջ օրհնութիւն
պիտի բերէ քեզի, և քու Տէր Աստու-
ծոյդ քեզի տուած երկրին մէջ քեզ
9 պիտի օրհնէ, թէ որ քու Տէր Աստու-
ծոյդ հրամաններուը պահելով՝ անոր
ճամբաներուն մէջ քալես, Տէրը քեզի
երդում ըրածին պէս՝ քեզ իրեն սուրբ
10 ժողովուրդ պիտի հաստատէ. Եւ երկ-
րիս ամէն ժողովուրդները պիտի տես-
նեն որ Տէրոջը անունը քու վրադ կը
11 կոչուի, և քեզմէ պիտի վախնան։ Եւ
Տէրը բարիքներով քեզ պիտի լեցնէ,
քու որովայնիդ պտուղը, քու անա-
սուններուդ պտուղը ու քու եր-
կրիդ պտուղը չ—ջնելով՝ այն երկրին
վրայ, զոր Տէրը քու հայրերուդ եր-
12 դում բրաւ քեզի տալու։ Տէրը իր
բարութեան գանձը՝ այսինքն երկինքը
քեզի պիտի բանայ, որ քու երկրիդ
անձրևն ատնովը ասյ, և քու ձեռ-
քիդ ամէն գործը օրհնէ. և դուն շատ

ապրեալքս փոխ պիտի առաս, բայց դուն
13 փոխ պիտի չառնես։ Տէրը Ծոր-Վերջ-
Դէրս գլուխ պիտի ընէ քեզ, և չի թէ
պոչ. դուն միշտ վրայ պիտի ելլես, և
քնաս վար պիտի չիյնաս, թէ որ քու
Տէր Աստուծոյդ պատուիրանները մտիկ
ընելով պահես ու կատարես, զորս ես
14 այսօր քեզի կը պատուիրեմ, Ու օտար
աստուածներուն ետևէն երթալու հա-
մար, ո՛ւ անոնց ծառայութիւն ընելու
համար, ալ կռմէն կամ ձուխ կողմն
չխռտորիս այն բոլոր խօսքերէն, զորս
ես այսօր քեզի կը պատուիրեմ,
15 Բայց թէ որ քու Տէր Աստուծոյդ
խօսքին չհնազանդիս, և չպահես ու
չընես անոր բոլոր պատուիրանները և
կանոնները՝ զորս ես այսօր քեզի կը
պատուիրեմ, անաւանդ այս ամէն ա-
նէծքները քու վրադ գալով քեզի պի-
16 տի հասնին և քեզ բռնեն. Քաղաքի մէջ անիծեալ,
և գաւառի մէջ անիծեալ պիտի ըլլաս.
17 Քու կողովդ և ուռկադ անիծեալ պիտի
18 ըլլայ. Քու որովայնիդ պտուղը, երկրիդ պտուղը, կովերուդ ծնունդը և
ոչխարներուդ հօտերը անիծեալ պիտի
19 ըլլան. Քու մտած ատենդ անիծեալ՝
և քու ելած ատենդ անիծեալ պիտի
20 ըլլաս։ Ու՝ Տէրը քու ամէն ձեռք զար-
կած գործիդ մէջ անէծք, տագա-
պանք ու յանդիմանութիւն պիտի խրրէ
քեզի՝ քու չար գործերուդ ու
պիտ ձգելուդ համար, մինչև որ շու-
21 տով բնաջինջ ըլլաս և կորսուիս Տէրը
քեզի ժանտախտը պիտի փակցնէ, մին-
չև որ քեզ հասցնէ այն երկրին վրա-
յէն, ուր որ դուն կը մտնես զանիկա
22 ժառանգելու։ Ու՝ Տէրը քեզ պիտի
զարնէ ծխ բաքան ախտով, հրատա-
նաց տենդով, կիզմամբ ու արեւոտ
տաքութիւնով, Նեռաշունչութեամբ, խոր-
շակահարութեամբ և ոսկեծէց դալու-
կով. և ատոնք պիտի հալածեն քեզ
23 մինչև որ կորսուիս Ու դիմուդ վրայի
երկինքը պղնձէ, և ներքեւդ եղած եր-
24 կիրը երկաթէ պիտի ըլլայ։ Տէրը անձ-

---

1 Կամ արտ,

եւթ անգ հազ և փոշի պիտի տայ քու
երկրիդ. ու երկինքէն քու վրադ պիտի
իջնէն մինչև դուն բնաջինջ ըլ-
25 լաս։ Տէրը քու թշնամիներուդ առջև
քեզ չարտիլ պիտի տայ, անոնց դէմ
մէկ ճամբով պիտի ելլես, և անոնց
առջևէն եօթը ճամբով պիտի փախչիս.
և երկրիս բոլոր թագաւորութեանց մէջ
26 թափառական պիտի ըլլաս։ Ու քու
մարմնիդ երկնից բոլոր թռչուններուն
և երկրիս գազաններուն կերակուր պի-
տի ըլլայ. և ընդոստ վռնտող մը պի-
27 տի չըլլայ։ Տէրը Եգիպտոսի պարսներով, Քաղցով, քոսոտութեամբ և հա-
զով պիտի զարնէ քեզ, որ անոնցմէ
28 չկարենաս բժշկուիլ։ Տէրը սպրդու-
թեամբ, կուրութեամբ և պատաղոտով
29 պիտի զարնէ քեզ։ Ու ինչպէս որ կոյ-
րը խաւարի մէջ ձեռքով կը խարխա-
փէ, դուն ալ կիս օրուան ատեն այն-
պէս պիտի խարխափես, և գործե-
րուդ մէջ բարեբաղդութիւն պիտի չու-
նենաս. և միշտ զրկանք և յափշտակու-
թիւն պիտի կրես, և ձեռքդ ազատող պի-
30 տի չըլլայ։ Դուն կնոջ մը պիտի նը-
շանուիս, և անոր հետ ուրիշը պիտի
պառկի. տուն պիտի չինես, և անոր
մէջ դուն պիտի չբնակիս. այգի պիտի
անկնես, և անոր խաղողը պիտի չճաշա-
31 կես։ Քու եզդ քու աչքիդ առջև պի-
տի մորթուի, բայց դուն անկէ պիտի
չուտես. քու էշդ քու առջևէդ պիտի
յափշտակուի, և քեզի նա պիտի չվերա-
նայ. Հօտերդ քու թշնամիներուդ պի-
տի տաւնուին, և ազատող քեզի պա-
32 տգ պիտի չըլլայ։ Քու տղաքդ և
աղջիկներդ ուրիշ ժողովրդի մը
պիտի տրուին, և աչքերդ պիտի սեւ-
նին, և բոլոր օրը անոնց համար ձե-
ղոյ կորուստով պիտի նուաղին.
33 և ձեռքդ պիտի չհասնի ջհենդ։ Քու
երկրիդ արդիւնքը և քու բոլոր աշ-
խատութիւնդ քեզի անծանօթ ղեղճ
ժողովուրդ մը պիտի ուտէ. և դուն
ամէն օր միայն զրկանք ու ճնշում պի-
34 տի կրես. Ու աչքերուդ տեսած բա-
35 ներէն պիտի խենդնաս։ Տէրը քու

---

2 Նբր. դաւաչ.



ծունկերդ և սրունքդ՝ ս ասքիդ
Թաթէն մինչև գլխուդ գազանքը դէշ
պատարներով պիտի զարնէ, և պիտի
36 չկրնաս բժշկուիլ դանել։ Տէրը պի-
տի տանի քեզ և քու վրադ դրած թա-
գաւորդ այնպիսի ազգի մը՝ որ ոչ դուն
ճանչցած ես, ոչ ալ քու հայրերդ. և
հոն օտար աստուածներու՝ փայտի ու
37 քարի ծառայութիւն պիտի ընես։ Ու
դուն զարմանաց և առակի և կատակի
ենթակայ պիտի ըլլաս այն բոլոր ժողո-
վուրդներուն մէջ, ուր որ Տէրը քեզ
38 պիտի տանի։ Սերմիդ մէջ շատ սերմ
պիտի հանես, և քիչ ժողովես պիտի
ժողվես. զանգի մորեխները պիտի ու-
39 տեն զանիկա։ Այգիներ պիտի անկնես
ու դարմանես, բայց գինին պիտի չխը-
մես, և խաղող պիտի չժողվես. զանգի
40 անիկա որդերը պիտի ուտեն։ Քու ա-
մէն սահմաններուդ մէջ ձիթենիներ
պիտի ունենաս, բայց եղով պիտի չծե-
ուռնաս. զանգի քու ձիթենիդը չէշերը
41 պիտի թափեն։ Տղայ և աղջիկներ պիտի ծնանիս, բայց քեզի
պիտի չըլլան. զանգի անոնք գերու-
42 թեան պիտի երթան։ Բոլոր ծառերդ
և երկրիդ պտուղները խառնիճաղ պիտի
43 ուտէ։ Քեզ մէջ եղող օտարականը
քեզմէ գերազանց պիտի ըլլայ, և շատ
պիտի բարձրանայ, և դուն շատ վար
44 պիտի իջնես։ Անիկա քեզի փոխ պիտի
տայ, բայց դուն անոր փոխ պիտի չը
տաս. անիկա գլուխ պիտի ըլլայ, բայց
45 դուն պոչ պիտի ըլլաս։ Ու այս բոլոր
անէծքները քու վրադ պիտի գան, քեզ
պիտի հալածեն և քեզի պիտի հասնին,
մինչև որ դուն բնաջինջ ըլլաս. որով-
հետև քու Տէր Աստուծոյդ խօսքին
հնազանդութիւն չըրիր, և քեզի հրա-
մայած պատուիրաններն ու կանոննե-
46 րը չպահեցիր։ Ու անոնք քու վրադ
և քու սերունդիդ վրայ նշան ու հր-
47 թաշք պիտի ըլլան յաւիտեան։ Որով-
հետև դուն ամէն բանի առատու-
թեանը համար՝ ուրախութեամբ և յօ-

---

1 Նբր. դաւաչ.

ժարտությամբ քու Տէր Աստուծոյդ ծա-
48 ռայութիւն չըրիր, Անոր համար դուն
անօթութեամբ, ծարաւով, մերկու-
թեամբ ու ամէն բանի կարօտութեամբ
ծառայութիւն պիտի ընես քու թշ-
նամիներուդ, զորս Տէրը քու վրադ
պիտի խրկէ. և քու պարանոցիդ վրայ
երկաթէ լուծ պիտի դնէ, մինչև որ
49 բնաջինջ ընէ քեզ։ Տէրը քու վրադ հե-
ռուէն՝ երկրիս ծայրէն արծուոյ
թռչելուն պէս ազգ մը պիտի բերէ,
այնպիսի ազգ մը որուն լեզուն դուն
50 չես հասկնար, Գիմահարս ազգ մը, որ
ծերոց պատիւ պիտի չընէ, և ազատոց
51 վրայ գութ պիտի չունենայ։ Ու անի-
կա քու անասուններուդ պտուղը և
երկրիդ պտուղը պիտի ուտէ, մինչև որ
դուն բնաջինջ ըլլաս. որովհետև քեզի
ցորեն, գինի, եղ, կովերուդ ծնունդ-
ները և ոչխարներուդ հօտերը պիտի
չթողու, մինչև որ քեզ բնաջինջ ընէ.
52 Ու անիկա քու բոլոր քաղաքներուդ
մէջ քեզ պիտի պաշարէ, մինչև որ կոր-
ծանին քու բարձր ու ամուր պարիսպ-
ները, որոնց դուն ապաւիներ ես, քու
բոլոր երկրիդ մէջ. և քեզ պիտի պա-
շարէ քու ամէն քաղաքներուդ մէջ ա-
քու բոլոր երկրիդ մէջ, զոր քու Տէր
53 Աստուածդ քեզի կու տայ։ Ու պա-
շարման ատեն և քու թշնամիդ քեզ
նեղը ձգած ատեն՝ քու որովայնիդ
պտուղը՝ քու Տէր Աստուածդ քեզի
տուած քու ազատներուդ և աղջիկնե-
54 րուդ միսը պիտի ուտես։ Քեզ մէջ
քնքոյշ ու շատ փափուկ մարդն իր
եղբօրը և իր ծոցէն կնոջ և իր ազ
Թողուցած որդւոց ծուռ աչքով պի-
55 տի նայի, Որպէս զի իր ուտելու որդւո-
ցը միսէն անոնց մէկուն չտայ. զանգի
պաշարման ատեն՝ և քու թշնամիդ
ամէն քաղաքներուդ մէջ քեզ նեղը ձը-
գած ատեն՝ ուրիշ բան մը պիտի չմը-
56 նայ անոր։ Քեզ մէջ շատ քնքոյշ ու
փափուկ կինը, որ իր փափկութե-
նէն ու քնքոյշ ըլլալէն ոտքը գետ-
նի վրայ կռնելու սորված չէը, իր ծո-
57 ցի երկան, իր ազուն, իր ազջկան, Ու

իր ոտքերուն մէջ անգղին կլոր ոտը բնի-
կերին, և իր ծնած զաւակներուն ծառա-
յութիւն պիտի ընայ. քանզի պատրաստ ան-
ձն՝ և քու ինձմէդ քու քաղաք-
ներուդ մէջ քեզ նեղը ձգած ատեն՝
ամէն բանի պահպանուն համար զանոնք
ծածկուած պիտի ուտէ։
58 Թէ որ դուն այս գրքին մէջ գրուած
այս օրէնքիս ամէն խօսքերը զգուշա-
նիս համար չկատարես, և այս՝ ՓԱՌ ԵՒ Ո-
ՂԱՑ ԱՍՏՈՒԱԾՈՅ պատուական և ահա-
59 ելը անունէն չվախնաս, Տէրն ալ ան-
ոտքը հարուածներով, մեծ ու երկա-
րաև հարուածներով, գէշ ու երկայն
հիւանդութիւններով պիտի դարնէ քեզ
60 և քու սերունդդ։ Եւ եգիպտոսի բո-
լոր հիւանդութիւնները՝ որոնցմէ դուն
կը վախնաս, քու վրադ պիտի դարձը-
նէ. և անոնք քեզի պիտի փակչին։
61 Նաև այս օրինաց գրքին մէջ չգրուած
ամէն հիւանդութիւն և ահա-
ուած Տէրը քու վրադ պիտի բերէ,
62 մինչև որ դուն բնաջինջ ըլլաս։ Եւ քու
Տէր Աստուածդ խօսքին հնազանդու-
թիւն չընելուդ համար, դուք որ շա-
աւութեան կոդմանէ երկինքը ստեղերուն
պէս էիք, յոյժ սակաւաթիւ պիտի
63 մնաք։ Ու ինչպես որ Տէրը ձեզի ապէ-
կութիւն ընելով և ձեզ յաւագրնելով
ձեր վրայ ուրախացաւ, այնպես ալ ձեզ
կորսընդնելով ու բնաջինջ ընելով ձեր
վրայ պիտի ուրախանայ, և պիտի չընդ-
ջիք այն երկրին վրայէն, ուր հի-
մա կ՚երթաք զանիկա ժառանգելու։
64 Եւ Տէրը երկրիս մէկ ծայրէն մինչև միւս
ծայրը բոլոր ժողովուրդներուն մէջ պի-
տի ցրուէ քեզ, և հոն ծառայութիւն
պիտի ընես օտար աստուածներու՝ փայ-
տի և քարի, զորոնք ոչ դուն ճանչ-
65 ցեր էիր՝ ոչ ալ քու հայրերդ։ Եւ
այն ազգերուն մէջ հանգիստ պիտի չը
գտնես, և ոտքիդ թաթին հանգչելու
տեղ պիտի չըլլայ։ Եւ հոն Տէրը քեզի
դողդոջուն սիրտ, աչքի նուաղում և
66 հոգւոյ տրտմութիւն պիտի տայ։ Եւ քու
կեանքդ քու առջևդ կախման մէջ պի-
տի ըլլայ, և դիշեր ցորեկ պիտի վախ-
նաս, և քու կենացդ վրայ ապահով
67 պիտի չըլլաս։ Ու սրտիդ ահուդողին և
աչքերուդ տեսած բաներուն, առաւօ-
տուն պիտի ըսես, Երանի թէ երեկոյ
ըլլար, և երեկոյին ալ պիտի ըսես, Ե-
68 րանի թէ առաւօտ ըլլար։ Եւ Տէրը նա-
ւերով Եգիպտոս պիտի դարձնէ քեզ
այն ճամբայով, որուն համար քեզի ը-
սի թէ դանիկա ալ ևս պիտի չտես-
նես։ ԵՒ հոն ծառաներ և աղախիններ
ըլլալու պիտի ծախուիք ձեր թշնա-
միներուն, և ծախող առնող պիտի
չըլլայ։

## Գլ. ԻԹ

1 Ասոնք են այն ուխտին խօսքերը, որ
Տէրը Մովսէսի հրամայեց խրայէլի որ-
դւոց հետ ընել Մովաբի երկրին մէջ,
անոնց հետ Որեբէի վրայ ըրած ուխ-
տէն զատ։
2 Ուստի Մովսէս բոլոր խրայէլը կանչելով՝ անոնց ըսաւ, Դուք տեսաք այն
ամէնը՝ որ Տէրը ձեր աչքերուն առջև
Եգիպտոսի երկրին մէջ ըրաւ Փարաւո-
նին, և անոր բոլոր ծառաներուն, և ա-
3 նոր բոլոր երկրին։ Այն մեծ
փորձութիւնները, նշանները և մեծ
հրաշները, զորոնք դուն քու աչքե-
4 րովդ տեսար։ Ու Տէրը մինչև այսօր
չտուաւ ձեզի սիրտ մը որ իմանաք,
և ոչ աչքեր որ տեսնէք, ոչ
5 ալ ականջներ որ լսէք։ Ու ես քառա-
սուն տարի անապատին մէջ ձեզ պըտ-
րտցուցի. ձեր վրայէն չհինցան,
և տարբերազ կօշիկները չմաշե-
6 ցան. հաց չկերաք և գինի կամ օղի
չխմեցիք, որ գիտնաք թէ ես ձեր Տէր
7 Աստուածն եմ։ Ու երբ այս տեղ ե-
կաք, Եսեբոնի Սեհոն թագաւորը և
Բասանի Ովգ թագաւորը մեր առջև
եկան մեզի հետ պատերազմելու, և
8 մենք զարհինք զանոնք։ Ու անոնց
երկիրն առինք, և զանիկա Ռուբենեա-
նաց, Գադեանց և Մանասէի կէս ցե-
9 ղին ժառանգութիւն տուինք։ Ուստի
այս ուխտին խօսքերը պահէք և կա-



տարէք, որ ձեր ամէն գործերին մէջ
յաջողութիւն դանէք։
10 Այսօր դուք ամէնդդ ձեր Տէր Աս-
տուածոյն առջև կը կայնիք. ձեր *ցեղե-
րուն իշխանները, ձեր ծերերը, ձեր ոս-
տիկանները և բոլոր խրայէլի մարդի-
11 կը, Ձեր տղաքը, ձեր կիները, և քու
բանակիդ մէջ եղող օտարականդ, քու
փայտ կարդդ մինչև քու ջրկիրդ։ Որ
քու Տէր Աստուածդդ ուխտին և անոր
երդման մէջ մտնես, զոր այսօր քու Տէր
13 Աստուածդ քեզի հետ կ՚ընէ, Որպէս զի
քեզ այսօր իրեն ժողովրդ հաստատէ,
և ինք քեզի Աստուած ըլլայ, ինչպէս
որ քեզի բսաւ, և ինչպէս որ քու հայ-
րերուդ՝ Աբրահամի, Իսահակի ու Յա-
կոբի երդուաւ իրաւ։ Ու ես այս ուխ-
տը և այս երդումը միայն ձեզի հետ
15 չեմ ըներ. Այլ այսօր մեզի հետ մեր
Տէր Աստուածոյն առջև հոս կայնողնե-
րուն հետ, և այսօր մեզի հետ հոս չե-
16 զողներուն հետ ալ. Քանզի գուք գի-
տէք թէ ինչպես բնակեցանք Եգիպտա-
ցի երկրին մէջ, և ինչպես անցանք այն
17 ազգերուն մէջէն որ գուք անցաք. Ու
անոնց քով եղած անոնց պղծելի բա-
ները, և անոնց փայտէ, քարէ, ար-
ծաթէ և ոսկիէ կուռքերը տեսաք։
18 Զըլլայ որ ձեր մէջ երիվ մարդ կամ կիսվ
մարդ կամ ազգատոհմ կամ ցեղ մը գըտ-
նուի, որ իր սիրտը այսօր մեր Տէր Աս-
տուածմէն խոտորեցընելով, երթայ այն
ազգաց աստուածներուն ծառայու-
թիւն ընէ. չըլլայ որ ձեր մէջ թոյն և
դառնութիւն բերող արմատ մը գըտ-
19 նուի. Ու երբ որ ԽԷը այս անէծքին
խօսքերը լսելով՝ սրտին մէջ իրեն օրհ-
նութիւն տարով ըսէ, Թէև ես իմ սրտիս
յամառութեան մէջ գալեմ, ինծի
հաղագս թիւն կ՚ըլլայ, և այսպէս ա-
նիկա իր ծարաւութեան վրայ դինո-
20 վթիւն աւելցնէ. Տէրը պիտի չկամի
անոր ներողութիւնը տալու, այլ անատին Տէրոջը
բարկութիւնը և նախանձը այն մար-
դուն վրայ պիտի բորբոքի, և այս
գրքին մէջ գրուած ամէն անէծքը ա-
նոր վրայ պիտի իջնէ, և Տէրը անոր
անունը երկինքի ներքևէն բնաջինջ պի-
21 տի ընէ. Ու Տէրը այս օրինաց գրքին
մէջ գրուած ուխտին ամէն անէծքնե-
րուն համեմատ անոր վրայ չարիք հա-
ներելու համար՝ զանիկա իսրայէլի բո-
22 լոր ցեղերէն պիտի զատէ, Ու պիտի ը-
սէ յետագայ սերդը՝ այսինքն ձեզմէ
ետքը կոլոր ձեր զաւակները, և հեռու
երկրէ եկող օտարականը, երբ տես-
նեն այն երկրին հարուածները և անոր
հիւանդութիւնները, որոնցմով Տէրը
23 զանիկա պիտի նեղէ. Ս- ԷՐ Ս-ԽՈՆ-
ՐԻ այն բոլոր երկիրը ծծումբ, աղ ու
սպրած ըլլալով, հոն բան չցանուիր,
և պտուղ չբերեր, և խոտ չբուս-
նիր՝ Սդոմի, Գոմորի, Ադմայի և Սե-
բոյիմի աւերման պէս, որոնք Տէրը իր
բարկութեամբը և սրտմտութեամբը
24 բնաջինջ ըրաւ։ Նաև ամէն ազգերը
պիտի բսեն, Ինչո՞ւ համար Տէրը այս
երկրին այսպէս ըրաւ. այս մեծ սրբտ-
մտութեան և բարկութեան պատճառ
25 ի՞նչ է։ Ու անոնց պիտի բսեն, Որով-
հետև այս էր անոնք մերժեցին իր
բնիկ Տէր Աստուածոյն ուխտը,
զոր անոնց հետ բրեր էր՝ զանոնք ե-
26 գիպտոսի երկրէն հանած ատեն, Ու
զացին ուրիշ աստուածներու ծառա-
յեցին, և անոնց երկրպագութիւն ը-
րին, այնպիսի աստուածներու՝ որ ի-
րենք բնաւ չէին ճանչցած, և որ Տէրը
27 որոշած չէր անոնց։ Ուստի Տէրոջը
բարկութիւնը այն երկրին դէմ բոր-
բոքեցաւ, որ այս գրքին մէջ գրուած
ամէն անէծքերն անոր վրայ բերէ.
28 Ու Տէրը բարկութեամբ, սրտմուա-
թեամբ և մեծ զայրացմամբ զանոնք
իրենց երկրէն արմատախիլ ըրելով՝
ուրիշ երկիր մը նետեց, ինչպես որ
այսօր կ՚երեւի։ Գաղտուկ բաները մեր
Տէր Աստուածոյն կը պատկանին, բայց
յայտնուած բաները մեզի և մեր որ-
դւոց պատկանին, որ այս
օրինքիս ամէն խօսքերը կատարենք։

* ՆԷը. ձեր իշխանները, ձեր ցեղերը,

## Գլ. Լ.

1 Եւ երբ այս բեզի ցուցուցած բաները՝ թէ անէծքը և թէ օրհնութիւնը
գու վրադ գան, և գուն ընծեռ գու
սրտիդ մէջ նորէն յիշես այն բոլոր
ազգերուն մէջ, ուր որ գու Տէր Ա-
2 ստուածդ քեզ պիտի վանեայ, եւ գուն
գու Տէր Աստուծդ դառնաս, և բո-
լոր սրտովդ ու բոլոր հոգւովդ անոր
խօսքին հնազանդիս՝ թէ գուն և թէ
գու որդիդդ, ինչպես որ ես այսօր քե-
3 զի պատուիրեցի, գու Տէր Աստուածդ
ալ քեզ գերութենէն դարձընելով
պիտի ողորմի քեզի, և նորէն պիտի
ժողվէ քեզ այն ամէն ազգերէն, որոնց
մէջ գու Տէր Աստուածդ քեզ ցրուեր
4 էր՝ թէ որ մինչև երկնից ծայրը ալ քեզ
աստուած ալ ըլլաս, գու Տէր Աստուա-
ծդ քեզ անկէ պիտի ժողվէ, ու անկէ
5 պիտի առնէ քեզ։ Եւ գու Տէր Աս-
տուածդ գու հայրերուդ ժառանգած
երկիրը պիտի դարձընէ քեզ, և գուն
կրնայ պիտի ժառանգես, և քեզի ան-
կութիւն ընելով գու հայրերդ աւելի
6 պիտի շատցնէ քեզ։ Եւ գու Տէր Աս-
տուածդ գու սիրտդ և գու որդւոյդ
սիրտը պիտի թլփատէ, որպէս զի գու
Տէր Աստուածդ բոլոր սրտովդ և
7 բոլոր հոգւովդ սիրես որ ապրիս։ Եւ
գու Տէր Աստուածդ այս բոլոր ա-
նէծքները գու թշնամիներուդ վրայ՝
քեզ ատողներուն և հալածողնե-
8 րուն վրայ պիտի դարձընէ։ Եւ գուն
պիտի դառնաս, ու Տէրոջը խօսքին հը-
նազանդիս, և կատարես անոր բոլոր
պատուիրանները՝ զորոնք ես այսօր
9 քեզի կը պատուիրեմ։ Եւ գու Տէր
Աստուածդ գու ձեռացդ բոլոր գործ-
քերը, որովայնիդ պտուղը, անասուն-
ներուդ պտուղը և երկրիդ պտուղը
չատցընելով քեզի յաջողութիւն պիտի
տայ. գումեղ Տէրը ազէկութիւն ընե-
լով նորէն պիտի ուրախանայ գու վրա-
յիդ, ինչպես որ գու հայրերուդ վրայ
10 ուրախացաւ, երբ գուն գու Տէր
Աստուածդ խօսքին հնազանդիս, և
այս օրէնսդրութեան մէջ գրուած անոր
պատուիրանները և կանոնները պա-
հես, և բոլոր սրտովդ և բոլոր հոգւո-
վրդ գու Տէր Աստուածդ դառնաս։
11 Հանդէպ այս պատուիրանը որ ես
այսօր քեզի կը պատուիրեմ՝ քեզի ա-
նիմանալի չէ, և քեզմէ հեռու ալ չէ։
12 Անիկա երկինքը չէ, որ ըսես թէ Մեզի
համար ո՞վ պիտի երթայ երկինք, և զա-
նիկա մեզի պիտի բերէ որ լսենք ու բո-
13 նենք։ Եւ անիկա ծովուն անդիի կողմն
ալ չէ, որ ըսես թէ Մեզի համար ծո-
վուն անդիի կողմը ո՞վ պիտի անցնի,
և զանիկա մեզի պիտի բերէ որ լսենք
14 ու բնենք։ Հանդէպ այս խօսքը քեզի
շատ մօտ է, գու բերնիդ ու սրտիդ մէջն է, որ գուն զանիկա կատա-
րես։
15 Նայէ, ես այսօր կեանքը և բարին,
16 մահը և չարը գու առջեդ դրի։ Որով-
հետև ես այսօր քեզի կը պատուիրեմ
որ գու Տէր Աստուածդ սիրես, անոր
ճամբաներուն մէջ քալես, և անոր
պատուիրանները, կանոնները և դա-
տաստաններըը պահես, որ ապրիս ու
շատնաս, և գու Տէր Աստուածդ քեզ
օրհնէ այն երկրին մէջ, ուր որ կ'եր-
17 թաս ժառանգելու համար։ Բայց թէ
որ գու սիրտդ դառնայ, և հնազան-
դութիւն չընես, այլ մոլորելով ուրիշ
աստուածներու երկրպագութիւն ընես
18 և զանոնք պաշտես, Քեզի այսօր կը
ծանուցանեմ որ անշուշտ պիտի կոր-
ուստիք, ու երկար կեանք պիտի չունե-
նաք այն երկրին վրայ, ուր մանե-
նելու և անիկա ժառանգելու համար
19 Յորդանանէն կ'անցնիք։ Այսօր եր-
կինք և երկիր վկայ կը բռնեմ ձեզի,
որ կեանքը ու մահը, օրհնութիւնը և
անէծքը ձեր առջև դրի։ ուրեմն
կեանքը ընտրէ որ ապրիս դուն և գու
20 սերունդդ։ Գու Տէր Աստուածդ սիրե-
լով՝ անոր խօսքին հնազանդութիւն
ընես, և անոր յարես, (Որովհետև քե-զի կեանքդ և օրերուդ երկարութիւնն
այս է,) որ դուն բնակիս այն երկրին
վրայ, զոր Տէրը գու հայրերուդ Աբ-



րահամի, Իսահակի ու Յակոբի երդում
բրաւ անոնց տալու։

## Գլ. ԼԱ.

1 Եւ Մովսէս գնաց բոլոր Իսրայէլին ը-
2 րաց ըսաւ այս խօսքերը, Ես անունդ բաւ,
ես այսօր հարիւր քսան տարեկան եմ.
ալ ելլելու ու մանելու կարողութիւն
չունիմ. և Տէրը ինծի բաւ, Դուն այս
3 Յորդանանէն պիտի չանցնիս։ Գու Տէր
Աստուածդ ինք գու առջեդ պիտի
անցնի, և այս ազգերը գու առջեդ
ինք պիտի կործանցնէ, և գուն անոնց
ժառանգութեան պիտի տիրես. ա-
Տէրոջը բաածին պէս Յեսու պիտի անց-
4 նի գու առջեդ։ Եւ Տէրը անոնց այն-
պէս պիտի բնէ, ինչպէս որ Ամորհա-
ցւոց Սիհոն և Ովգ թագաւորներուն
և անոնց երկրին բրաւ, զանոնք բնաջինջ
5 ընելով։ Եւ Տէրը զանոնք ձեր ձեռքը
պիտի տայ, ու իմ ձեզի բոլոր պատու-
6 բածիս պէս պիտի բնէք անոնց։ Ուժով-
ցէք և քաջ եղէք, մի վախնաք և անոնց
երեսէն մի գարհուրիք. քանզի գու Տէր
Աստուածդ ինք գու հետդ կ'երթայ. ա-
նիկա քեզ չի ձգեր ու քեզ երեսէ չգներ։
7 Եւ Մովսէս Յեսուն կանչեց, ու բո-
լոր Իսրայէլի առջև անոր բաւ, Ու-
ժովկիր ու քաջ եղիր, քանզի այս ժո-
ղովուրդը դուն պիտի մտնես այն եր-
կիրը, գոր Տէրը անոնց հայրերուն եր-
դում բրաւ անոնց տալու. և զանիկա
8 դուն պիտի ժառանգ եցընես անոնց։ Եւ
գու առջեդ գացողն ինքն Տէրն է,
անիկա գու հետդ պիտի ըլլայ, անիկա
քեզ պիտի չի ձգեր և քեզ երեսէ պիտի
չգներ, մի վախնար և մի դարհուրիր։
9 Եւ Մովսէս այս օրէնքը գրեց, և
զանիկա Տէրոջը տապանակը
վերցնող Ղեւտացի քահանաներուն, և
10 Իսրայէլի բոլոր ծերերուն տուաւ. Եւ
Մովսէս անոնց պատուիրելով բաւ,
Ամէն եօթներորդ տարին թողութեան
տարւոյն առնն տաղաւարատօնի
11 տանին, երբ բոլոր Իսրայէլ կու գայ
գու Տէր Աստուածդ առջև երևնալու

*Եբր. կարգաս, †Եբր. ժողվի

20 հասնիք բլլայ։ Քանզի զանոնք պիտի սա-
նեմ այն կաթ և մեղր բղխող երկիրը,
որուն համար ես անունց հայրերուն եր-
դում բրի. և անոնք պիտի ուտեն և
կշտանան և դիրնան. և էթէը ուրիշ
աստուածներու դառնալով և անոնց
ծառայութիւն ընելով՝ զիս պիտի սը-
տհամարհեն, և իմ ուխտս պիտի խա-
21 փանեն, իսկ երբ անոնք չատ չար-
եաց և նեղութիւններու հանդիպին,
այս երգը անոնց առջև վկայութիւն
պիտի ասյ. որովհետև անոնց զաւակ-
ներուն բերնէն պիտի չմոռցուի. վասն
զի գիտեմ անոնց խորհուրդը՝ որ այս
օր կ'ընեն, քանի որ գնա իմ երդու-
մունս խոստացած երկիրս տարած չեմ
22 դանոնք։ Ուստի Մովսէս նոյն օրը այս
երգը գրեց, և իսրայէլի որդւոց սոր-
վեցուց զանիկա։
23 Եւ Տէրը Նաւէի որդւոյն Յեսուէ պատ-
ուիրելով բսաւ, Զօրացիր և քաջ լե-
ղիր. քանզի իսրայէլի որդիքը դուն
պիտի տանիս այն երկիրը, որուն հա-
մար անոնց երդում բրի. և ես քու
հետդ պիտի բլլամ։
24 Եւ երբ Մովսէս այս օրէնքիս բո-
լոր խօսքերը գրքի մը մէջ գրեց
25 մինչեւց, Տէրոջը ուխտին տապանակը
վերցնող Ղեւտացիներուն պատուիրեց
26 Մովսէս և բսաւ, Այս օրէնքիս գիրքը
առէք, և զանիկա ձեր Տէր Աստուծոյն
ուխտի տապանակին քով դրէք, որ
հոն քեզի դէմ վկայութեան համար
27 բլլայ. Քանզի ես քու ապստամբութիւնդ
ու քու պարանոցդ խստութիւնը գի-
տեմ. ահա այսօր որ ասկաւին ես ձե-
զի հետ ողջ եմ՝ դուք Տէրոջը դէմ
ապստամբութիւն կ'ընէք, ուրեմն ես
28 աւելի իմ մեռնելէս ետքը, Ձեր ցեղե-
րուն բոլոր ծերերը և ձեր ոստիկան-
ները իմ առջև ժողվեցէք, որ անոնց
այս խօսքերը զրուցեմ, որ լսեն և եր-
կինք ու երկիր վկայ բռնեմ անոնց.
29 Քանզի գիտեմ որ իմ մեռնելէս ետքը
դուք անշուշտ *անօրէնութիւն պիտի

*Նբ. պիտի ապականիք,

ընէք, և իմ ձեզի պատուիրած ճամ-
բայէս պիտի խոտորիք. և վերջի օրե-
րը չարեաց պիտի հանդիպիք. որով-
հետև Տէրոջը առջև չարութիւն պի-
տի ընէք, և ձեր ձեռքերուն գործ-
քերովը զանիկա պիտի սրդոցընէք։
30 Ուստի Մովսէս այս երգին խօսքերը
իսրայէլի բոլոր ժողովքին ականջնե-
րուն ամրողջ զրուցեց։

## Գլ. ԼՔ

1 Ով երկինք, ականջ դրէք որ խօսիմ.
Եւ երկիրը իմ բերնիս խօսքերը թող
մտիկ ընէ։
2 Իմ խրատս անձրեւի պէս պիտի կաթի.
Իմ խօսքս ցօղի պէս պիտի իջնէ.
Անձրեւի պէս կանաչեղէնի վրայ,
Եւ առատ անձրեւներու պէս խոտի
վրայ։
3 Քանզի Տէրոջը անունը պիտի կանչեմ.
Մեր Աստուածոյն պատիւ տուէք։
4 †Աստուծոյ գործը կատարեալ է.
Քանզի անոր ամէն ճամբաներն իրա-
ւունք են.
Աստուած հաւատարիմ է, և անիրա-
ւութիւն չունի.
Անիկա արդար և ուղիղ է։
5 Ատանք ապականեցան, իրենց արատն
անոր որդւոցը չէ.
Ամբիծ խոտորած և ծռած ազգ մի
է։
6 Տէրոջը երած հատուցումնիդ տակիա՞ է,
Ով յիմար և անմիտ ժողովուրդ.
Անիկա քու Հայրդ չէ՞, որ քեզ առացաւ,
Քեզ առեղծեց և քեզ հաստատեց։
7 Հին օրերը մխտդ բեր,
Անցած զարերուն տարիները մտա-
ծէ.
Քու հօրդ հարցուր, և քեզ պատմէ.
Քու ծերերուդ հարցո՛ր, և քեզ բա-
նէն բսան.
8 Երբ Բարձրեալն ազգերուն ժառան-
գութիւն բաժնեց,

†Նբ. ոչխին



Եւ Ադամի որդիքը առանձնց,
Ազգերուն սահմանները
Իսրայէլի որդւոց թուոյ դրաւ։
9 Քանզի Տէրոջը բաժինը իր ժողովուր-
դն է,
Եւ իր ժառանգութեան վիճակը Յա-
կոբն է։
10 Զանիկա անապի երկրի մէջ,
Անկոխ և ահագին անապատի մէջ
գտաւ.
Զանիկա †պաշտպանեց, խրատեց,
Եւ իր աչքին բիբին պէս պահեց։
11 Ինչպէս որ արծիւն իր բոյնը կը գըր-
գռէ,
Կը շարժի իր ձագերուն վրայ,
Իր թեւերը կը տարածէ, զանոնք վրան
կ'առնէ
Եւ թեւերովը կը վերցնէ,
12 Նոյնպէս Տէրը միայն զանիկա պարացուց,
Եւ անոր հետ օտար աստուած չկար։
13 Զանիկա երկրիս բարձր տեղերուն վրայ
‡հանեց,
Որ արտերուն պտուղն ուտէ.
Եւ անոր վիմէն մեղր,
Եւ ապառաժ վիմէն եղ ծծել տուաւ.
14 Ա՛ռջ կովերու իւղ և ոչխարներու կաթ
[երջո՛ջ],
Գառներու և Բասանի խոյերու և
նոխազներու ճարպով,
Եւ ցորենի ‖բնաւոր ալիւրով.՝
Եւ խաղողին արիւնը՝ գինի խմեցիր։
15 Եւ :Իսրայէլ գիրնալով աքացից.
(Գիրցար, հաստցար, եղ կապեցիր.)
Եւ իր Արարիչ Աստուածը թողուց,
Եւ իր փրկութեան վէմը արհամար-
հեց։
16 Օտար *աստո՛ւածներով անոր նախանձը
գրգռեցին,
Եւ գարշելի բաներով զանիկա սրը-
դոցուցին։
17 Դեւերուն զոհ մատուցին, Ե՛ոչ Աս-
տուծոյ,

*Կ՚ոմ հոգւոց. †Կ՚ոմ պարացուց,
‡ Նբ. հնծցուց,
‖ Նբ. երկնականը ճարպով.
:Նբ. Յեսուրուն

Իրենց չգիտցած աստուածներուն,
Նոր — մօտերս եղողներուն,
Որ ձեր հայրերն անոնցմէ չվախցան։
18 Դուն քեզ ծնանող վէմը մոռցար,
Եւ քեզ առեղծող Աստուածը մոռցիդ
հանեցիր։
19 Եւ Տէրը տեսնելով զրուեցաւ,
Որովհետև իր տղաքը և աղջիկները
զ՚ինք սրդոցուցին։
20 Եւ բսաւ, Անոնցմէ երեսս ծածկեմ,
Եւ տեսնեմ թէ անոնց վերջն ինչ պի-
տի բլլայ.
Վասն զի անոնք ծուռ ազգ են,
Անհաւատարիմ որդիներ են։
21 Անոնք չաստուածներով իմ նախանձս
գրգռեցին,
Եւ իրենց անուռ բաներով զիս սրբ-
գոցուցին.
Ես ալ անպիտան ժողովրդով մը ա-
նոնց նախանձը պիտի գրգռեմ,
Եւ անմիտ ազգով մը զանոնք պիտի
սրդոցընեմ։
22 Քանզի իմ բարկութենէս կրակ վառե-
ցաւ,
Եւ դժոխքին մինչև ներքին տեղ-
ւոյնքը պիտի այրէ.
Երկիրը և անոր արմտիքը պիտի ուտէ,
Եւ լեռներուն հիմերը պիտի բռնկ-
ցընէ։
23 Անոնց վրայ չարիքներ պիտի դիզեմ,
Իմ նետերս անոնց վրայ *Ս՚պառ պի-
տի հատցընեմ։
24 Անօթութեամբ պիտի մաշին,
Եւ †հրատապնապ տենդով՝ և դառն
ժանտախտով պիտի հատնին,
Եւ անոնց վրայ գազաններուն ակռաները
Եւ գետնի վրայ սողացողներուն թա-
նը պիտի խրկեմ։
25 Դուրսէն սուրը և †ներսէն վախ՝
Երիտասարդները ու կոյս ազիկները,
Կաթնկիր ազաքը
Եւ ալեւոր մարդերը պիտի չարչին։
26 Ըսի որ զանոնք Էրէ՛ս ամէն կողմը ցըր-
ուեմ,

*Կ՚ոմ կայծակով
†Նբ. անհաւատներէն

Անոնց յիշատակը մարդոց մէջէն վերջացնեմ,
27 Միայն Թէ Թշնամի՛ն բարկութենէն վախցայ.
Զրկուայ որ անոնց հակառակորդներն ուրանան.
Զրկուայ որ բոլոր Թէ Այս բոլոր բանն ըներ
Մենք բարձր ձեռքն է, և ոչ Թէ Տէրը։
28 Քանզի անոնք խորհրդակորոյս ազգ են,
Եւ անոնց մէջ խնամաւոր Թիւն չկայ։
29 Երանի Թէ խնամաւոր բլլային, — այս բանը հասկնային,
Ե՛ր իրենց վախճանը մտածէին։
30 Մէկ մարդ հազարը ի՞նչպէս կը հալածէր,
Եւ երկու մարդ տասը հազարն ի՞նչպէս կրնար փախցընել,
Թէ որ անոնց վէմը զանոնք չծախեր,
Եւ Տէրը զանոնք չմատնէր։
31 Քանզի անոնց վէմը մեր վէմին պէս չէ,
Եւ մեր Թշնամիներն — բո՛ղ դատաւոր բլլան։
32 Վասն զի անոնց որթը Սոդոմի որթէն է,
Եւ Գոմորի արտէն է.
Անոնց խաղողները թո՛ւնաւոր խաղողներ են,
Ե՛ր անոնց ողկոյզները դառն են,
33 Անոնց գինին վիշապներուն *ժանտութիւնը
Եւ իժերուն մահաբեր թո՛ւնն է։
34 Աչխա՛ր իմ քովս պահուած,
Ե՛ր իմ չանմաններուս մէջ կնքուած չէ՞ արդեօք։
35 Իմ է վրէժխնդրութիւնը և հատուցումը։
Անոնց ոտքը առ՛նելո՛ւն ժամանակն պիտի գայ։
Վասն զի անոնց կործանման օրը մօտ է,
Եւ անոնց գլխուն գալիքները կ՚արագանան։
36 Քանզի Տէրը իր ժողովուրդը պիտի դատէ,
Եւ իր ծառաներուն վրայ պիտի զբաղայ,
Որովհետև պիտի տեսնէ անոնց ուժաթափ ըլլալնին,
Երբ գոյութիւն և ձգտած չկայ։
37 Եւ պիտի ըսէ, Ո՞ր են անոնց աստուածները,
Այն վէմը՝ որուն վրայ իրենց յոյսը դրեր էին,
38 Անոնց զոհերուն ճարպը ուտողները,
Եւ թափելու նուէրներուն գինին խըմողները.
Թող կելլեն և ձեզի օգնեն,
Եւ ձեզի պատսպան բլլան։
39 Հիմա նայեցէ՛ք, որ *ինձի՛ն ԻՍ ԵՄ՚,
Եւ ինծի՛ւ ուրիշ Աստուած չկայ։
Ես կը մեռցընեմ և ես կը բժշկեմ,
Ես կը զարնեմ և ես կը բժշկեմ,
Եւ իմ ձեռքէս ազատող չկայ։
40 Քանզի ձեռքս երկինքը վերցընելով կ՚ըսեմ,
Ես յաւիտեան կենդանի եմ.
41 Թէ որ փայլակի պէս սուրս սրեմ,
Եւ ձեռքս դատաստանի երկրագործեմ,
Իմ Թշնամիներուս վրէժխնդրութիւն պիտի ընեմ,
Եւ զիս ատողներուն հատուցում ընեմ։
42 Սպաննուածներուն և գերիներուն արիւնէն,
Թշնամիաց խլռաններուն գլուխէն
Իմ նետերս արիւնով պիտի արբեցընեմ,
Եւ իմ սուրս միս պիտի ուտէ։
43 Ով ազգեր, անոր ժողովուրդին ուրախակից եղէ՛ք,
Քանզի իր ծառաներուն արիւնն վրէժ պիտի խնդրէ.
Իր Թշնամիներէն վրէժ պիտի առնէ,
Եւ իր երկրին — ժողովուրդին քաւութիւն պիտի բնէ։
44 Ուստի Մովսէս Նաւեանն Յեսուի հետ եկաւ, և այս երգին բոլոր խօսքերը ժողովուրդին ականջներուն դուրս
45 ցնց։ Եւ երբ Մովսէս այս ամէն խօս-

*Եբր. Ես՝ Ես եմ,



քերը բոլոր Իսրայէլի զուարճ ըրին-
46 ցուց, Անոնց ըսաւ, Ձեր սրտին մէջ դրէ՛ք այն ամէն խօսքերը՝ զորոնք այս օր ձեզի վկայութիւն բերի, որ զանոնք ձեր ազգայ պատուիրէք, որ այս օրէնքիս ամէն խօսքերը պահեն և կատարեն,
47 Քանզի ասիկա ձեզի պարապ բան մը չէ, որովհետև ձեր կեանքն է. և այս բանով երկայնակեաց պիտի ըլլաք այն երկրին վրայ, զոր Յորդանանէն կ՚անցնիք զանիկա ժառանգելու։
48 Եւ Տէրը նոյն օրը խօսեցաւ Մովսէսի
49 սը՛ ըսելով, Այդ Աբարիմ լեռը երթ՛ Մովսէսի երկրին մէջ եղող Երիքովի դիմացի Նաբաւ լեռը, և տես Քանանու երկիրը, զոր Իսրայէլի որդւոց
50 կալուածք պիտի տամ. Եւ դուն այն քու եղած լեռանդ վրայ մեռնիս, և քու ժողովուրդիդ քաղնուիս, ինչպէս որ քու եղբայրդ Ահարոն Հոր լեռանը վրայ մեռաւ, ու իր ժողովուրդին
51 քաղնուեցաւ. Որովհետև Իսրայէլի որդւոց մէջ՝ Սին ջուրերուն՝ Կադէսի հակառակութեան չափերուն վրայ ինծի անհաւատութեամբ չըրիք զիս Իսրայէլի որդւոց մէջ պիտ՚ չխնայես տեսնելու
52 ցի՛ր։ Ուստի այն երկիրը դէհ՚ուէն պիտի տեսնես, բայց դուն հոն պիտի չմտնես, այն երկիրը զոր ես Իսրայէլի որդւոց կու տամ։

## ԳԼ. ԼԳ

1 Եւ այս է այն օրհնութիւնը՝ որով Աստուծոյ մարդը Մովսէս իր մեռնելէն
2 առաջ Իսրայէլի որդիներն օրհնեց։ Եւ ըսաւ,
Տէրը Սինայէն եկաւ,
Եւ Սէիրէն անոնց երեցաւ,
Ե՛ր Փառան լեռնէն փայլեցաւ,
Եւ բիւրաւոր սուրբերով եկաւ։
Անոր աջ ձեռքին օրինաց կրակը էր՝ անոնց։
3 Այո, անիկա ժողովուրդները կը սիրէ.

*Եբր. Տարբեցիք, †Եբր. դիմացէն

Բոլոր սուրբերը քու ձեռքդ են.
Եւ անոնք քու խօսքերդ ընդունելու համար
Քու ոտքերուդ քով կը նստին։
4 Մովսէս մեզի տուաւ օրէնքը,
Յակոբի ժողովրդին ժառանգութիւնը։
5 Եւ երբ ժողովուրդին գլխաւորները
Իսրայէլի ցեղերուն հետ միկտեղ ժողովուեցան,
Ինչ՚Իսրայէլի մէջ իշխան եղաւ։
6 Թո՛ւրէն Թող ապրի և չմեռնի,
Եւ անոր ժողովուրդը չատո՛ւր բլլան։
7 Եւ Յուդայի համար այս բանն ըսաւ,
Ով Տէր, Յուդայի ձայնը լսէ,
Եւ զանիկա իր ժողովուրդին տար.
Անոր ձեռքերն իրեն բաւական բլլան,
Եւ անոր Թշնամւոյը զէմ օգնական եղիր։
8 Ու Ղևիի համար ըսաւ,
Քու Թումմիմդ և Ուրիմդ քու սուրբ մարդուդ բլլայ,
Որ զանիկա Մասային մէջ փորձեցիր,
Ե՛ր Մերիբայի ջուրին վրայ անոր հետ վիճեցար։
9 Նա որ իր Հօրը և Մօրը համար
Չանիկա չտեսաւ՝ ըսաւ,
Եւ իր եղբայրները չճանչցաւ,
Եւ իր որդիները չդիտցաւ.
Քանզի անոնք քու խօսքիդ զգուշացած էին ըրին,
Եւ քու ուխտդ պահեցին։
10 Քու դատաստաններդ Յակոբի՛
Ու քու օրէնքդ Իսրայէլի անոնք պիտի սորվեցընեն.
Քու առջևդ խունկ պիտի մատուցանեն,
Ու քու սեղանիդ վրայ ողջակէզ։
11 Ով Տէր, անոր զօրութիւնն օրհնէ,
Ու անոր ձեռքին գործն ընդունէ.
Անոր վրայ ելլողներուն և անոր թշնամիներուն մէջքը կոտրէ,
Որ ալ ևս չկրնան։
12 Բենիամինի համար ըսաւ,
Տէրոջը սիրելին անոր քով ապահովութեամբ բնակի.
Ամբո՛ղջ վրա զանիկա պաշտպանէ,

*Եբր. Յետ բանիկ մէջ թագաւոր

Եւ անոր *ուսերուն մէջ բնակի։
13 Եւ Յովսեփի համար բաւ,
Անոր երկիրը Տէրոջմէն օրհնեալ ըլլայ
Երկինքէ ընծաը պարգեւներով, ցօղով,
Եւ վարը պառկող անդունդներով,
14 Եւ արեգակէն յառաջ եկած ընտիր բերքերով,
Եւ †ամիսներուն ընտիր արդիւնքներով,
15 Եւ հին լեռներուն ‡ընտիր պտուղներով,
Եւ հնձնելուար բլուրներուն ընտիր պարգեւներով,
16 Եւ երկրին և անոր առատութեան ընտիր պարգեւներով,
Եւ մարենդն մէջ բնակողին բարեհաճութեամբ.
Ասոնք Յովսեփի գլխուն վրայ,
Իր եղբարց մէջ նուիրեալ եղողին գագաթին վրայ թող գան։
17 Անոր իր ցուլին առջեւնկին պէս գեղեցկութիւն ունի,
Եւ իր եղջիւրները միեղջերուի եղջիւրներու պէս են։
Անոնցմով պիտի զարնէ ժողովուրդները
Մինչեւ երկրին ծայրերը.
Ասոնք են Եփրեմի բիւրաւորները
Ու Մանասէի հազարաւորները։
18 Եւ Զաբուղոնի համար բաւ,
Ուրախացիր, ով Զաբուղոն, քու ելած առներդ,
Եւ դուն, ով Իսաքար, քու վրաններուդ մէջ,
19 Ժողովուրդները լեռը հրաւիրելով՝
Հոն արդարութեան զոհեր պիտի մատուցանեն.
Քանզի անոնք ծովերուն առատութիւնը
Եւ աւազին ծածուկ գանձերը պիտի ծծեն։
20 Եւ Գադի համար բաւ,
Գադը ընդարձակողն օրհնեալ ըլլայ.
Առտուկ առիւծի պէս կը նստի,
Եւ թեւեր և գլուխներ կը գիշատէ.
21 Եւ անիկա էրէքն առաջին մասն իրեն
Յարմար տեսաւ.
Քանզի հոն օրէնսդրին բաժինն
Մէջ պահուեցաւ,
Եւ ժողովուրդին գլխաւորներով դալով՝
Տէրոջը արդարութիւնը և անոր դատաստանները
Իսրայէլի հետ ի գործ դրաւ։
22 Եւ Դանի համար բաւ,
Դան առիւծի ձագ է.
Անիկա Բասանէն պիտի ցատկէ։
23 Եւ Նեփթալիմի համար բաւ,
Նեփթալիմ Աստուծոյ չնորհքով կըշտացած,
Եւ Տէրոջը օրհնութիւնով լցուած,
Արեւմուտք և հարաւ պիտի ժառանգէ։
24 Եւ Ասերի համար բաւ,
Ասեր որդւոցմէ օրհնուի.
Իր եղբայրներուն հաճոյ ըլլայ,
Եւ ոտքը եղի մէջ թաթխէ։
25 Քու *կօշիկներդ երկաթ և պղնձէ ըլլան,
Եւ քու †ոյժդ քու օրերուդ չափ ըլլայ։
26 ‡Իսրայէլի Աստուծոյն պէս չկայ.
Անիկա քեզի օգնութիւն ընելու համար՝
Իր վեհվեհութեամբ երկինքներու
Եւ ամպերու վրայ կը նստի։
27 Յաւիտենական Աստուածը †եղէ ապաւէն է,
Ու անոր յաւիտենական բազուկները ||եղէ պաշտպան են.
Քանզի թշնամիները քու առջեւդ պիտի վռնտէ,
Եւ Ջնջէ՛ կտրէ՛ պիտի ըսէ։
28 Եւ Իսրայէլ ապահովութեամբ առանձին պիտի բնակի.
Յակոբի աղբիւրը ցորենի և գինւոյ երկրին մէջ պիտի ըլլայ,
Եւ անոր երկինքին ցօղ պիտի կաթի։

*Կամ առիւծներուն
†Եբր. լուսիններուն
‡Եբր. գլխովը,

*Կամ կղպակներդ  †Կամ հանգիստդ
‡Եբր. Յեսուրունի  ||Եբր. տակն են.



29 Երանի քեզ, ով Իսրայէլ. ո՞ր ժողովուրդը քեզի պէս
Տէրոջմէ ձեռքով փրկուած է.
Ո՛ւր է քու օգնութեան ապարը
Եւ յաղթութեան սուրը անիկա է.
Քու թշնամիներդ քեզի պիտի *խոնարհին,
Եւ անոնց բարձր տեղուանքը պիտի կոխես։

ԳԼ. ԼԴ

1 Եւ Մովսէս Մովաբի դաշտերէն Նաբաւ լեռան վրայ Երիքովի դիմացի Փասգայի գագաթը ելաւ. և Տէրը անոր ցուցուց բոլոր Գաղաադտէ երկիրը
2 մինչեւ Դան, Նաև բոլոր Նեփթալիմի, և Եփրեմի և Մանասէի երկիրը, և Յուդայի բոլոր երկիրը մինչեւ արեւմտեան
3 ծովը, Նե հարաւային կողմը ու Երիքովի հովտին դաշտը, ո՛ր Արմաւենեաց քաղաքը մինչեւ Սեգովր։ Եւ Տէրը անոր բաւ, Այս է այն երկիրը՝ որուն համար Աբրահամի, Իսահակի ու Յակոբի երդում րրի բանալով, Քու սերունդիդ պիտի տամ զանիկա. Հա՛ քու աչքերուդ ցուցուցի, բայց դուն հոն պիտի չանցնիս։

# ԳԻՐՔ ՅԵՍՈՒԱՅ

## ԳԼՈՒԽ Ա

1 Տէրոջը ծառային Մովսեսի մեռնելէն ետքը՝ Տէրը Մովսեսի սպասաւորին Նաւէի որդւոյն Յեսուի հետ խօսեցաւ ըսելով, Իմ ծառաս Մովսէս մեռաւ. հիմա ել՝ անցիր այդ Յորդանանէն
2 դուն և այս բոլոր ժողովուրդը՝ այն երկիրը, զոր ես Իսրայէլի որդւոց կու
3 տամ։ Ձեր ոտքին բոլոր կոխած տեղերը ձեզի պիտի տամ, ինչպէս որ Մովսէսի րսի. Անապատէն և այս Լիբանանէն մինչեւ մեծ գետը՝ այսինքն Եփրատ գետը, Քեթացւոց բոլոր երկիրը մինչեւ
5 Մեծ Ծովը՝ դէպի Արեւմուտք՝ ձեր սահմանը պիտի ըլլայ։ Ոչ ոք քու առջեւդ չի կրնար կենալ քու կեանքիդ բոլոր օրերը. ինչպէս որ Մովսէսի հետ էի, նոյնպէս քեզի հետ պիտի ըլլամ, քեզ չթողում և չլքեմ։
6 Զօրացի՛ր և քաջալերուէ՛, որովհետև դուն պիտի տիրանաս այս ժողովուրդին՝ անոնց երկրին մասին որ երդում րրի անոնց հարցուց որ պիտի տամ անոնց։
7 Միայն զօրացի՛ր և շատ քաջալերուէ՛, որ պահես ու գործադրես այն բոլոր օրէնքը՝ զոր իմ ծառաս Մովսէս քեզի պատուիրեր է. աջ կամ ձախ չդառնաս, որ յաջողակ ըլլաս ամեն տեղ որ երթաս։
8 Այս Օրէնքի գիրքը բերնէդ չպակսի, հապա անոր մէջ գիշեր ցերեկ խորհրդածէ՛, որ պահես ու գործադրես անոր մէջ գրուածին համեմատ. որովհետև այն ատեն քու ճամբադ պիտի յաջողցնես, և յաջողակ պիտի ըլլաս։
9 Ես քեզի պատուիրեցի՝ զօրացի՛ր և քաջալերուէ՛. մի՛ վախնար և մի՛ զարհուրիր, որովհետև ո՛ւր որ երթաս քու Տէր Աստուածդ քեզի հետ է։
10 Յեսու ժողովուրդին պետերուն պատուիրեց ըսելով,
11 Ամբողջ ճամբարին մէջ անցէ՛ք և ժողովուրդին պատուիրեցէ՛ք ըսելով, Պատրաստեցէ՛ք ձեզի համար ճամբու ուտելիք, որովհետև երեք օրէն պիտի անցնիք այս Յորդանանէն՝ որ մտնէք և տիրանաք այն երկրին՝ զոր ձեր Տէր Աստուածը ձեզի կու տայ որ տիրանաք։
12 Ռուբինեանց և Գադացւոց և Մանասէի կիսոյ ցեղին ալ Յեսու ըսաւ ըսելով,
13 Յիշեցէ՛ք այն խօսքը՝ զոր Մովսէս Տէրոջ ծառան ձեզի պատուիրեց ըսելով, Ձեր Տէր Աստուածը ձեզի հանգստութիւն պիտի տայ և այս երկիրը ձեզի պիտի տայ։
14 Ձեր կիները, մանուկները և անասունները պիտի մնան այն երկրին մէջ՝ զոր Մովսէս ձեզի տուաւ Յորդանանէն այս կողմը. բայց դուք զինուած պիտի անցնիք ձեր եղբայրներուն առջեւէն, ամէն զօրաւոր մարդիկ, և անոնց պիտի օգնէք
15 մինչեւ որ Տէրը ձեր եղբայրներուն հանգստութիւն տայ ինչպէս ձեզի տուաւ, և անոնք ալ տիրանան այն երկրին՝ զոր ձեր Տէր Աստուածը անոնց կու տայ. ապա դարձէ՛ք ձեր տիրացած երկրին և տիրացէ՛ք անոր՝ զոր Տէրոջ ծառան Մովսէս ձեզի տուաւ Յորդանանէն այս կողմը՝ դէպի արեւելք։
16 Անոնք Յեսուի պատասխանեցին ըսելով, Ինչ որ մեզի պատուիրեցիր՝ պիտի ընենք, և ուր որ մեզ ղրկես՝ պիտի երթանք։
17 Ինչպէս որ Մովսէսի ամեն բանին մէջ հնազանդեցանք, նոյնպէս քեզի ալ պիտի հնազանդինք. միայն թող Տէր Աստուածդ քեզի հետ ըլլայ ինչպէս որ Մովսէսի հետ էր։
18 Ով որ քու հրամանիդ հակառակի և քու խօսքերուդ չհնազանդի՝ որ քեզի պատուիրես, պիտի մեռցուի. միայն զօրացի՛ր և քաջալերուէ՛։

մեծ Ծովը արեւմտեան կողմը ձեր սահ-
5 մանն լինայ. Բուռ հինացիք բոլոր օրէ-
րաձն մէջ մարդ մը չկարենայ քեզի դէմ
դնել. ինչպէս որ Մովսէսի հետ էի,
նոյնպէս քեզի հետ պիտի ըլլամ. քեզ
պիտի չթողում ու քեզ անտես պիտի
6 չընեմ։ Զօրացիր և քաջալերուի հզիր.
քանզի այս ժողովուրդին դուն պիտի
ժառանգեցնես այն երկիրը, որուն
համար ատենց հայրերուն երդում ըրի
7 տուեց տալու։ Միայն թէ զօրացիր և
շատ քաջ հզիր, որ իմ Ծառայիս Մով-
սէսի բոլոր քեզի պատուիրած օրէնքը
պահես ու բնես. անկէ ալ կամ ձախ
կողմը չխոտորիս, որ քու ամէն երթա-
8 լու տեղդ յաջողութիւն դանես։ Այս
օրինաց գիրքը քու բերանէդ չպատուի,
հապա գիշեր ցորիկ անոր վրայ մտա-
ծես, որ բոլոր անոր մէջի գրուածնե-
րը պահես ու կատարես. քանզի անա-
նէն քու դործերդ յաջող կը տաս-
նես, և անոնէն յաջողութիւն կը գըտ-
9 նես։ Ահա քեզի կը պատուիրեմ, զօ-
րացիր և քաջալերուի հզիր, մի վախնար
ու մի զարհուրիր. քանզի քու ամէն
երթալու տեղերդ քու Տէր Աստուածդ
քու հետդ է։
10 Ա յնու հետեւ Յեսու ժողովուրդին ա-
11 րիկապետներուն պատուիրեալով բսաւ, Բա-
նակին մէջէն անցէք, ու ժողովուրդին
ապապրելով բսէք, Ձեզի պաշար պատ-
րաստեցէք. քանզի երեք օրէն հոն
դուք այս Յորդանանէն պիտի անցնիք,
որ երթաք ժառանգէք այն երկիրը,
զոր ձեր Տէր Աստուածը ձեզի ժառան-
գութիւն կու տայ։
12 Ու Ռուբինանց ու Գադ հոնց և Մա-
նասէի կէս ցեղին Յեսու խոսեցաւ ու
13 բսաւ, Մտաբերնիդ բերէք այն խոսքը,
որ Տէրոջը Ծառան Մովսէս ձեզի պատ-
ուիրեց բսելով, Ձեր Տէր Աստուածը
ձեզ հանդստացուց, ու այս երկիրը ձե-
14 զի տուաւ, Ձեր կիներդ, ձեր ապա-
քը և ձեր անասուները Յոզ բնա-

*Կամ խնդացաւ թէեամի վարպետ
†Եբր. չէ՞ որ

կին այն երկրին մէջ, որ Մովսէս ձե-
զի տուաւ Յորդանանա տադիի կողմը.
բայց դուք ամէնդ որ ուժով կռիւ-
ներ եք՝ զապաձպինեալ ձեր եղբայր-
ներուն առջեւ անցնելով՝ անոնց օգ-
15 նութիւն ընէք, Մինչեւ որ Տէրը ձեր
եղբայրներն ալ ձեզի պէս հանգստա-
ցընէ, և անոնք ալ ժառանգեն այն
երկիրը, զոր ձեր Տէր Աստուածն ա-
նոնց կու տայ. և Խոշը ձեր ժառան-
գութեան երկիրը դառնաք, և ժառան-
գէք զանիկա, զոր Տէրոջը Ծառան Մով-
սէս ձեզի տուաւ, Յորդանանա առջի
կողմը դէպ արեւելք։
16 Ու անոնք Յեսուի պատասխան տը-
ւին ու բսին, Բուռ ամէն պատուիրած-
ներդ պիտի ընենք, և ուր որ մեզ դրը-
17 կես պիտի երթանք. ինչպէս որ Մով-
սէսի հետ անդամ էինք, նոյնպէս և քեզի հետ անդամ կ՚ընենք, նոյն-
պէս և քեզի հնազանդութիւն պիտի
ընենք. միայն թէ քու Տէր Աստուածդ
քու հետդ բլլայ, ինչպէս որ Մովսէսի
հետ էր։ Ամէն մարդ որ քու հրամա-
նիդ դէմ դնէ, և ամէն ինչ որ անոր
պատուիրես՝ քու խօսքերդ մտիկ չընէ,
պիտի մեռցուի. միայն թէ զօրացիր և
քաջալերուի եղիր։

## Գլ. Բ

1 Ու Նաւէի որդին Յեսու Սատիմէն երե-
կու մարդ խրկից՝ ծածկաբար երկիրը
լրտեսելու համար, ու անոնց բսաւ, Գնա-
ցէք՝ այն երկիրը ու Երիքով տեսէք։
և անոնք գացին ու Բահաբ անունով
պոռնիկ կնկան մը տունը մտան, և հոն
2 †Քնացին։ Անտեն Երիքովի Թագա-
ւորին լուր տրուեցաւ՝ ըսելով, Ահա
այս գիշեր երկիրը լրտեսելու համար
Իսրայէլի որդւոցմէ մարդիկ եկեր են
3 հոս։ Ու Երիքովի Թագաւորը Բահաբ-
ին խրկեց ըսելով, Քեզի եկող
և տունդ մտնող մարդիկը դուրս հա-
նէ. քանզի անոնք այս բոլոր երկիրը

*Կամ գունդ գունդ
†Եբր. պառկեցան։

4 լրտեսելու եկեր են։ Եւ կինն այն երկու
մարդն առաւ պահեց, ու բսաւ, Իրաւ
այն մարդիկն ինծի եկան, բայց ուստի
5 ըլլալնին չգիտցայ. Ու դռնէնուն գոց-
ուելու ատեն՝ մութն այն մարդի-
կը դուրս ելան. և այն մարդոց ուր
երթալը չեմ գիտեր. շուտով անոնց
6 ետեւէն ինկէք, որ անոնց հասնիք. Իսկ
ինք տանիքը հանելով զանոնք պա-
հեր էր վիթանի եղէգներուն մէջ՝ որ
7 տանիքին վրայ դիզուած էին։ Ու-
ստի մարդիկը Յորդանանա ետեւէն մին-
չեւ անցքերն անոնց ետեւէն ինկան, և
անոնց ետեւէն ինկողները դուրս ելլե-
լուն համար դռները գոցեցին։
8 Ու երբ անոնք դեռ չինն քնացած,
կինը տանիքին վրայ անոնց գալ ե-
9 լաւ, Ու մարդոցը բսաւ, Ես գիտեմ
որ Տէրը այս երկիրը ձեզի տուաւ, և
ձեր վախը մեր վրայ ինկաւ, և ձեր
պատճառաւ այս երկրին բոլոր բնա-
10 կիչները հալեցան. Քանզի մենք լսեցինք
թէ ինչպէս Տէրը ձեր Կարմիր ծո-
ված տանն կարմիր ծովուն ջուրերը
ձեր առջեւէն ցամքեցուց. նաև ինչ որ
դուք երկու Ամորհացւոց երկու Թագա-
ւորներուն Սիհոնի ու Ովգի՝ որոնք
11 Յորդանանէ այն կողմը էին՝ ըրիք. Ուստի այս լսածնուս պէս սրտերնիս հալեցաւ, և
ձեր երեսէն վախնալուն համար մէկու-
մը վրայ հոգմութիւն չմնաց. Քանզի Տէր Աստուածդ վերը
երկինքի մէջ և վարը երկրի վրայ Աս-
12 տուած անիկա է։ Արդ կ՚ազաչեմ, Տէ-
րոջմով երդում ըրէք ինծի, որ ես ձե-
զի ողորմութիւն ընելուս համար, դուք
ալ իմ հօրս տանը ողորմութիւն ընէք.
13 և ինծի †ճշմարիտ նշան մը տուէք, Որ
իմ հայրս, մայրս, եղբայրներս, քոյ-
րերս ու բոլոր անոնց վերաբերեալները
ողջ պիտի թողուք, և մեր անձերը մահ-
14 ուանէ պիտի ազատէք։ Եւ այն մար-

*Եբր. հոգի
†Այսինքն՝ ապահովութեան, կամ հաւա-
տարմութեան



դիկն անոր բսին, Թէ որ այս մեր բա-
նը չյայտնէք, ձեր տեղը մեր անձինքը
մեռնինն. ու երբ Տէրը այս երկիրը
մեզի տայ, քեզի ողորմութիւն ու հա-
15 ւատարմութիւն պիտի ընենք։ Այս
գանոնք չուանով մը պատուհանէն
վար իջնցուց. (քանզի իր տունը բեր-
դին պարսպին վրայ էր, և ինք պա-
16 րսպին վրայ կը բնակէր.) Եւ անոնց
բսաւ, Լեռը գացէք, չըլլայ որ հալա-
ծողները ձեզի հանդիպին, և հոն երեք
օր պահուեցէք, մինչեւ որ հալածողնե-
րը կոս դառնան, այնուհետեւ ձեր ճամ-
17 բան գացէք։ Եւ այն մարդիկն անոր
բսին, Ա՜ֆ մենք այդ մեզի բնել տուած
երդումէդ ա՛յս կերպով անպատրա կըլ-
18 լանք. երբ մենք այս երկիրը մտնե-
ննք, այս կարմիր դերձանէ չուանն
այն պատուհանին վրայ կապես, ուս-
տի որ մեզ իջնցուցիր և քու հայրդ,
մայրդ, եղբայրներդ ու քու հօրդ բո-
լոր տունդ քու բովդ այս տան մէջ
19 ժողվես. Ու ՝ուրեմն ով որ քու տանդ
դուռնէն դուրս ելլէ, անոր արիւնն իր
գլխուն վրայ բլլայ. մենք անպատրա ենք.
բայց քու բովդ այս տան մէջ բոլոր
եղողներուն թէ որ ձեռք մը դպչի,
անոնց արիւնը մեր գլխուն վրայ
20 ըլլայ. Ու թէ որ այս մեր բանը ջնջա՜ մը
յայտնես, անատեն քու մեզի բնել
ուած երդումէդ անպարտ կ՚ըլլանք։
21 Ու կինն բսաւ, Ձեր խոսքերուն
պէս՝ այնպէս թող բլլայ. և Թոզուց
զանոնք, և անոնք գացին. և այն
կարմիր չուանը պատուհանին վրայ կա-
պեց։
22 Ու անոնք անկէ լեռնակոփը գացին,
ու հոն երեք օր նստան, մինչեւ որ հա-
լածողները կոս դարձան. ու հալածող-
ները գանոնք ամէն ճամբու մէջ փնր-
23 տուին, բայց չգտան։ Անտեն այն
երկու մարդիկ կոս գառնալով վեր-
նէն վար իջան, և անցնելով՝ նաւէի
որդւոյն Յեսուի գացին, ու իրենց
պատահած բոլոր բաներն անոր պատ-
24 մեցին. Ու Յեսուի բսին, Իրաւցնէ
Տէրը այն բոլոր երկիրը մեր ձեռ-քը

տաւաւ, ու այն երկրին բոլոր բնակիչները մեր երեսէն հալեցան։

## Գլ. Գ

1 Եւ Յեսու առաւոտնց կանուխ եկաւ. և ինք ու բոլոր Իսրայէլի որդիքը Սատիմէն չուեցին, և մինչև Յորդանան եկան. և անցնելէն առաջ հոն իջևան երեքին։
2 Ու եղաւ երեք օրէն հետը ոստիկանները բանակին մէջէն անցան. և ժողովուրդին պատուիրելով բսին, երբոր ձեր Տէր Աստուծոյն ուխտին տապանակը տեսնէք, ու Ղեւտացի քահանաները՝ որ զանիկա կը տանին, դուք ալ ձեր տեղերէն երթաք, ու անոր հետևէն գացէք։
4 Բայց ձեր ու անոր մէջտեղ երկու հազար կանգնոց չափ միջոց պիտի ըլլայ. անոր չմօտենաք, որ երթալու ճամբանիդ գիտնաք. քանզի առաջ այս ճամբայէն անցած չէք. եւ Յեսու ժողովուրդին բսաւ, Սրբեցէք ձեր անձերը. քանզի Տէրը վաղը ձեր մէջ հրաշներ պիտի ընէ։
6 Ա՛յնուհետև Յեսու քահանաներուն խօսեցաւ բսելով, Ուխտին տապանակը վերցուցէք, և ժողովուրդին առջև անցէք։ Ուստի անոնք ուխտին տապանակը վերցուցին, ու ժողովուրդին առջևէն գացին։
7 Եւ Տէրը բսաւ Յեսուի, Այսօր պիտի սկսիմ բոլոր Իսրայէլի աչքին առջև քեզ մեծցնելու, որ գիտնան թէ ինչպես որ Մովսէսի հետ էի, քեզի հետ
8 ալ այնպես պիտի ըլլամ։ Հիմա դուն ուխտին տապանակը վերցնող քահանաներուն պատուիրելով բսէս, Երբ Յորդանանու ջուրին եզերքը հասնիք, Յորդանանու մէջ կանգնեցէք։
9 Եւ Յեսու Իսրայէլի որդւոց բսաւ, Հոս մտածեցէք, և ձեր Տէր Աստուծոյն
10 խօսքը մտիկ ըրէք։ Եւ Յեսու բսաւ, Ասով պիտի գիտնաք, որ կենդանի Աստուածը ձեր մէջն է, ու ձեր առջևէն Քանանացիները, Փերեսացիները, Եւեսացիները, Փերեզացիները, Գերգեսացիները, Ամորհացիները ու Յեբուսացիները
11 բոլոքամին պիտի մըքնեմ։ Ահա բոլոր երկրիս Տէրոջը ուխտին տապանակը ձեր առջև պիտի անցնի Յորդանանու
12 մէջ։ Եւ հիմա դուք Իսրայէլի ցեղերէն տասնևերկու մարդ առէք՝ իւրաքանչիւր ցեղէ մէկական մարդ։ Եւ երբ բոլոր երկրիս Եհովայ Տէրոջը տապանակը վերցընող քահանաներուն ոտքերը Յորդանանու ջուրին մէջ մտնեն, Յորդանանու ջուրը պիտի կտրի, և վերէն իջնող ջուրը պիտի կայնի իրեւ կարկառակոյտ մը։
14 Եւ երբ ժողովուրդը Յորդանանէն անցնելու համար իրենց վրանները չուեցին, ուխտին տապանակը վերցընող քահանաները ժողովուրդին առ-
15 ջևէն կ՚երթային։ Եւ տապանակը վերցընողները մինչև Յորդանան հասնելով՝ տապանակը վերցընող քահանաներուն ոտքերը ջուրին եզերքը մտաւ (քանզի հունձքի բոլոր ժամանակը Յորդանանու ե՛ր առ ատնալով իր բոլոր եզերքները կը կոխէ։)
16 Անոնուն վերէն իջնող ջուրը կայնեցաւ, ու Սարթանին քով եղող Ադամ քաղաքին շատ հեռուս կարկառակոյտ մը պես բարձրացաւ, ու դաշտի ծովը՝ պարզին Ազի ծով իջնողը լմընցաւ կարեցաւ։ ԵՒ ժողովուրդը երիքովին
17 դիմաց անցաւ։ Եւ Տէրոջը ուխտին տապանակը վերցընող քահանաները Յորդանանու մէջ ցամաքի վրայ հաստատ կայնեցան. ու բոլոր Իսրայէլ ցամաքավ անցաւ, մինչև որ բոլոր ժողովուրդին Յորդանանէն անցնիլը լմընցաւ։

## Գլ. Դ

1 Եւ երբ բոլոր ժողովուրդին Յորդանանէն անցնիլը լմընցաւ, Տէրը խօսեցաւ Յեսուի ու բսաւ,
2 Ժողովուրդէն տասնևերկու մարդ առէք, իւրաքանչիւր
3 ցեղէ մէկական մարդ, ու անոնց պատուիրելով բսէք, Ասկէ Յորդանանու մէջէն՝ քահանայից ոտքերուն ամուր կեցած տեղէն՝ ձեզի տասնևերկու



քար վերցուցէք, և գանոնք ձեր հետը տարէք, ու գրէք այն տեղը՝ ուր
4 որ այս գիշեր իջևան պիտի ընէք։ Եւ Յեսու Իսրայէլի որդւոցմէ իր որոշած տասնևերկու մարդիկը կանչեց, իւրաքանչիւր ցեղէ մէկական մարդ։ Եւ Յեսու անոնց բսաւ, Յորդանանու մէջ
5 ձեր Տէր Աստուծոյն տապանակին առջև անցէք, ու Իսրայէլի որդւոց ցեղերուն թուովՙ ամէն մէկիկնիդ ձեր ուսերուն վրայ մէկական քար վերցուցէք
6 —Ա՛խ։ Որ ասիկա ձեր մէջ նշան ըլլայ. — երբ վաղը ձեր որդիքը չէի հարցընելու ըլլան ու բսեն թէ Ա՛յս քարերուն ի՞նչ պիտի ըլլան ձեզի։ Անոնց բսէք, Քանզի Տէրոջը ուխտ տապանակին առջևէն Յորդանանու չուբերը կտրուեցան, երբ անիկա Յորդանանէն կ՚անցնէր Յորդանանու չուբը կտրուեցաւ. և այս քարերն Իսրայէլի որդւոց մէջ յիշատակի համար պիտի ըլլան յաւիտեան։ Եւ Իսրայէլի որդիքը
8 Յեսուի պատուիրածին պէս ըրին. ու Յորդանանու մէջէն ութսունևերկու քար առին՝ Իսրայէլի որդւոց ցեղերուն թուով, ինչպէս որ Տէրը Յեսուի հրամայեր էր, և զանոնք իրենց հետ իջևանի տեղը տարին, ու հոն գրին։
9 Եւ Յեսու ութսունևերկու քարեր ալ կանգնեց Յորդանանու մէջ, ուխտին տապանակը վերցընող քահանայից ոտքերուն կեցած տեղը, ու մինչև այս
10 օրս հոն են։ Եւ տապանակը վերցընող քահանաները Յորդանանու մէջ կայնեցան, մինչև որ լմընցաւ այն բոլոր խօսքը, զոր Տէրը Յեսուի պատուիրեց ժողովուրդին ըսելու, ինչպէս որ Մովսէս Յեսուի պատուիրեր էր. և ժողովուրդը արագացավ անցաւ։ Ու երբ
11 բոլոր ժողովուրդին անցնիլը լմընցաւ, անատեն Տէրոջը տապանակը ու քահանաները ժողովուրդին առջև անցան,
12 Եւ Ռուբենի որդիքը ու Գադի որդիքը և Մանասէի կէս ցեղը սպառազինեալ՝ Իսրայէլի որդւոց առջև անցան, ինչպէս որ Մովսէս անոնց ըսեր
13 էր. Քառասուն հազարի չափ պատրաստած զօրք Տէրոջը առջև՝ պատերազմի համար Երիքովի դաշտը անցան։
14 Նոյն օրը Տէրը բոլոր Իսրայէլի աչքերուն առջև Յեսուն մեծցուց, ու անոր կենացը բոլոր օրերուն մէջ՝ Մովսէսին վախցածնուն պէս անկէ կը վախ-
15 նային։ Եւ Տէրը խօսեցաւ Յեսուի ըսելով, Վկայութեան տապանակը վերցընող քահանաներուն հրամայէ որ
17 որ Յորդանանէն ելլեն։ Ուստի Յեսու քահանաներուն հրամայեց ու բսաւ,
18 Յորդանանէն ելէք։ Ու երբ Տէրոջը ուխտին տապանակը վերցընող քահանաները Յորդանանու մէջէն ելան, և քահանայից ոտքերուն թաթերը ցամաքի վրայ կոխեցին, Յորդանանու չուբն իր տեղը դարձաւ, ու առջիններուն պէս իր բոլոր եզերքներուն վրայ քալեց։
19 Եւ առաջին ամսուն տասներորդ օրը ժողովուրդը Յորդանանէն դուրս ելլելով, Գաղգաղայի մէջ երիքովի արեւելեան կողմն իջևան ըրին։ Եւ այն տասնևերկու քարը՝ որ Յորդանանէն առեր էին, Յեսու Գաղգաղայի մէջ կանգնեց։
21 Եւ Իսրայէլի որդւոց խօսեցաւ ըսելով, Վաղը թէ որ ձեր որդիքն իրենց հայրերուն հարցընելու ըլլան ու բսեն
22 թէ Ա՛յս քարերն ի՞նչ են. Ձեր աղոցը իմացընէք ըսելով, Իսրայէլ այս Յոր-
23 դանանէն ցամաքավ անցաւ. Որովհետև ձեր Տէր Աստուածը ձեր առջևէն Յորդանանու չուբերը ցամքեցուց մինչև որ դուք անցաք, ինչպէս որ ձեր Տէր Աստուածը Կարմիր ծովուն ալ ըրաւ, զոր ցամքեցուց մեր առջևէն
24 մինչև որ մենք անցանք. Որպէս զի երկրիս ամէն ազգերը գիտնան որ Տէրոջը ձեռքը զօրաւոր է, և դուք ձեր Տէր Աստուածէն միշտ վախնաք։

## Գլ. Ե

1 Եւ երբ լսեցին Ամորհացւոց բոլոր թագաւորները, որոնք Յորդանանու ափին արեւմտեան կողմն էին Բ—ին, ու Քանանացւոց բոլոր թագաւորները,

օրանք ծալվզերքին քով ի քով իրենց, թէ Տէրը Իսրայէլի օրհաց մէջ մինչև անոնց անցնիլը Յորդանան ջուրերը ցամքեցուցեր է, անոնց սիրտը հալեցաւ, և Իսրայէլի որդւոց երեսէն անոնց վախ համարձակութիւն չմնաց։

2 Անառն Տէրը Յեսուի ըսաւ, Քեզի *գայլամագ դանակներ շինէ, և գաղթիր Իսրայէլի որդիքը նորէն թլփատել։

3 Ու Յեսու իրեն գայլամագ դանակներ շինեց, և Գիբէաթ անթլփատութեանց ըսուած տեղը Իսրայէլի որդիքը թլփատեց։

4 Եւ այս է պատճառը, որուն համար Յեսու զանոնք թլփատեց. Եգիպտոսէն ելած բոլոր ժողովրդին արբանեակները՝ անոնք որ եգիպտացի էին, անապատին մէջ ճամբան մեռան։ Ու բոլոր ելած ժողովրդը թլփատուած էր, բայց Եգիպտոսէն ելլելնին ետքը անապատին մէջ ճամբան ծնած բոլոր ժողովրդը չէին թլփատեցներ։ Քանզի Իսրայէլի որդիքը քառասուն տարի անապատին մէջ պարեցան, մինչև որ Տէրոջը խօսքին հնազանդութիւն չընող բոլոր ազգը՝ որոնցմէ Եգիպտոսէն ելլող պատերազմական մարդիկը ապականացան. որովհետև Տէրը անոնց կըզգամ ըրաւ որ բնաւ անոնց չյանգչիլ այն երկիրը՝ որ կաթ և մեղր բղխող երկիրը, որ Տէրը անոնց հայրերուն երդում ըրեր էր մեզի տալու։ Անոնց տեղ անոնց զաւակները հանեց, ու զանոնք թլփատեց Յեսու. քանզի անթլփատ էին, որովհետև ճամբան մէջ թլփատած չէին զանոնք։ Ու երբ բոլոր ժողովրդին թլփատելը վերջացաւ, բանակին մէջ իրենց տեղը նստան մինչև որ առողջացան։ Անառն Տէրը Յեսուի ըսաւ, Այսօր ես եգիպտոսի նախատինքը ձեր վրայէն †վերցուցի. ուստի այն տեղին անունը մինչև այս օր ‡Գաղգաղա ըսուեցաւ։

10 Ու Իսրայէլի որդիքը Գաղգաղայի մէջ բանակեցան. ու ամսուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ՝ Երիքովի
11 դաշտերուն մէջ զատիկը բրին։ Ու զատկին հետևեալ օրը այն երկրին պտուղէն բազարջ կերան, ու նոյն օրը բոհրած ցորեն ալ՝ խմոր։
12 Ու հետևեալ օրը երբ այն երկրին պտղէն կերան, մանանան դադրեցաւ. ու այնուհետև Իսրայէլի որդւոց համար՝ ալ մանանայ չէր գտնուեր. և այն տարին Քանանու երկրին պտղէն կերան։

13 Ու երբ Յեսու Երիքովի մօտ էր, աչքերը վերցնելով տեսաւ, որ ահա իր դիմացը մարդ մը կայներ էր, և անոր ձեռքը մերկ սուր մը կար. ու Յեսու անոր մտնելով՝ անոր ըսաւ, Մե՞նք ես թէ մեր թշնամիներէն ես։
14 Ու անիկա ըսաւ, Ոչ, այլ ես Տէրոջը զօրավարն եմ՝ հիմա եկայ։ Ու Յեսու երեսի վրայ գետին ինկաւ, ու երկրպագութիւն ըրաւ, և անոր ըսաւ, Իմ ա՛ռ իր ծառային ի՞նչ կը հրամայէ Տէրը քու տիրոջդ։
15 Ու Տէրոջը զօրավարը Յեսուի ըսաւ, Քաղքէդ կօշիկներդ հանէ, զանգի տեղը որ կայնած ես՝ սուրբ է։ Ու Յեսու այնպէս ըրաւ։

## Գլ. Զ

1 Ու Երիքով իսրայէլի որդւոց *պատճառաւ ամուր կերպով մը փակուած էր. ելլող ու մտնող չկար։ Ու Տէրը Յեսուի ըսաւ, Նայ՝ Երիքով ու անոր թագաւորը՝ զօրաւոր կտրիճները քու ձեռքդ տուի։ Ուստի ամէն պատերազմական մարդիկը քաղաքին բոլորտիքը դառնալով՝ մէկ անգամ քաղաքին բոլորտիքը պարեցէք։ Վեց օր
4 տանի բնես։ Ու տապանակին առջև եօթը քահանայ եօթը †Յոբելեան փող մեներ։ Ու եօթներորդ օրը քաղաքին բոլորտիքը եօթն անգամ պարեցէք, և քահանաները փողերը հնչե-

*Կամ սաթ †Եբր. գլորցուցի։
‡Այսինքն՝ գլորում

*Եբր. երեսէն †Կամ խոյի եղջիւրէ



5 ցնեն։ Ու երբ Յոբելեան եղջիւրը երկար հնչեցնեն, և դուք փողերուն ձայնը լսէք, բոլոր ժողովրդը մեծ ուրախակ մը հանէ. և քաղաքին պարիսպները վար սիրտ կ'ինան, ու ժողովուրդին ամէն մէկը չիտակ յառաջ երթալով՝ անոր մտնէ։
6 Ու Նաւէի որդի Յեսու քահանաները կանչեց ու անոնց ըսաւ, Ուխտին տապանակը վերցուցէք, և Տէրոջը տապանակին առջևէն եօթը քահանայ եօթը Յոբելեան փող առնեն ու Տէրոջը տապանակին առջևէն անցնեն։
7 Եր Յեսուի ժողովրդին ըսաւ, Ելէք ժողովուրդին ըսա, Անցէք ու քաղաքին բոլորտիքը պարեցէք, և զինուորները Տէրոջը տապանակին առջև անցնեն։
8 Եւ Յեսու ժողովրդին խօսքը որ ըսաւ, եօթը Յոբելեան փողերն առնելով Տէրոջը առջև անցնելով փողերը հնչեցուցին, ու Տէրոջը ուխտին տապանակն անոնց ետևէն կ'երթար։
9 Ու զինուորները փողերը հնչեցնող քահանաներուն առջևէն կ'երթային, բայց վերջապահները՝ տապանակին ետևէն. ու փողերը հնչեցուցին։
10 Յեսու ժողովրդին պատուիրեցեալ ըսաւ, Չըլլաք ազազակ մը հանէք, և ձայներնիդ չլսուի, ու ձեր բերնէն խօսք մը չելլէ, մինչև այն օրը որ ես ձեզի ըսեմ՝ Թէ Ազազակ հանեցէք. անոնք ազազակ
11 կ'ընեն։ Ուստի Տէրոջը տապանակը քաղաքին բոլորտիքը մէկ անգամ պարեցուցին. ետքը բանակը դարձան, ու գիշերը բանակին մէջ մնացին։
12 Ու Յեսու առաւօտուն կանուխ կեցաւ, և քահանաները Տէրոջը տապանակը
13 վերցուցին։ Ու եօթը Յոբելեան փողերը կրող եօթը քահանաները Տէրոջը տապանակին առջևէն կ'երթային՝ փողերը հնչեցնելով, ու զինուորները անոնց առջևէն կ'երթային, ու վերջապահները՝ Տէրոջը տապանակին ետևէն. և փողերը հնչեցնելով
14 կ'երթային։ Երկրորդ օրն ալ քաղաքին բոլորտիքը մէկ անգամ պարեցուցին՝ բանակը դարձան. վեց օր այսպէս
15 ըրին։ Ու եօթներորդ օրը կանուխ լուսն արշալուսին ծագած ատենը, և քաղաքին բոլորտիքը եօթն անգամ պարեցան նոյն կերպով. միայն թէ այն օրը քաղաքին բոլորտիքը եօթն
16 անգամ պարեցան։ Ու եօթներորդ անգամին երբ քահանաները փողերը հնչեցուցին, Յեսու ժողովրդին ըսաւ, Աղազակեցէք, քանզի Տէրը ձեր քաղաքը տուաւ։
17 Ու քաղաքը ձեր ձեռքը տուաւ։ Ու քաղաքը ու բոլոր անոր մէջ եղածը Տէրոջմէ նզովածն ըլլան, միայն Ռահաբ պոռնիկը մեր զրկած լրտեսները պահելուն համար ողջ մնայ, թէ ինք և թէ իրեն հետ տանը մէջ բոլոր եղողները։
18 Բայց դուք ամէն կերպով զգուշանաք նզովածէն. չըլլայ որ նզովածէն առնելով դուք՝ Իսրայէլի բանակը նզովքի մէջ ձգելով՝ զանոնք դիպցնէք։
19 Նիւթ նզովութեան հանդիպացընէք։ Ու բոլոր արծաթն ու ոսկին և պղինձ ու երկաթէ առաջները Տէրոջը համար սուրբ ըլլան. Տէրոջը գանձը մտնեն։
20 Ուստի ժողովուրդը ազազակեց, ու փողերը հնչեցուցին. և երբ ժողովուրդը փողերուն ձայնը լսեց, ու ժողովուրդը բարձրաձայն ազազակեց, պարիսպները վար ինկան. և ժողովուրդին ամէն մէկը չիտակ յառաջ քաղաքը մտաւ, ու առին զանիկա։
21 Ու մանաւանդ քաղաքին մէջ եղողը՝ այր և կին, երիտասարդ և ծեր, արջառ, ոչխար ու էշ սուրի բերնէ անցընելով կտրեցին։
22 Ու Յեսու այն երկիրը լրտեսող երկու մարդոց ըսաւ, Այն պոռնիկ կնոջ տունը գացէք, և հնչակով որ անոր երդում բրիք, կինն ու անոր ամէն ունեցածն անկէ դուրս հանեցէք։
23 Նեցէք։ Ուստի այն լրտես երիտասարդները գացին, ու Ռահաբը և անոր հայրը ու մայրը ու եղբայրները և անոր ամէն ունեցածը դուրս հանեցին, ու անոր բոլոր ազգատոհմն ալ դուրս հանեցին, և զանոնք Իսրայէլի բանակին
24 դուրսը կեցուցին։ Ու քաղաքը և բոլոր անոր մէջ եղածը հրակով տոչորեցին, միայն արծաթն ու ոսկին և պղին-

ձէ ու երկաթէ ամանները Տէրոջը տա-
25 նը գանձին մէջ դրին։ Ա՛յսպէս Յեսու
ղէ պահեց Ռահաբ պառնկին ու անոր
հօրը տունը և անոր ամէն ունեցածը,
ու անիկա Իսրայէլի մէջ բնակեցաւ մին-
չև այսօր. քանզի անիկա պահեց այն
լրտեսները՝ զոր Յեսու ղրկեր էր Ե-
րիքովայ լրտեսելու համար։
26 Ու անատեն Յեսու երդումով ըսաւ,
Տէրոջը առջև անիծեալ ըլլայ
այն մարդը՝ որ կելլէ ու այս Երիքով
քաղաքը շինէ. իր անդրանկով անոր
հիմերը դնէ, ու անոր դռներն ալ իր
պզտիկ տղով կանգնէ։
27 Ու Տէրը Յեսուի հետ էր, ու անոր
համբաւը բոլոր երկրին մէջ տարած-
ուեցաւ։

## ԳԼ. Է

1 Բայց Իսրայէլի որդիքը նզովքի վրա-
յով յանցանք գործեցին. քանզի Յու-
դայի ցեղէն Զարայի որդւոյն †Զաբդիի
որդւոյն Քարմիի որդին Ա՛քար նզովա-
ծէն առաւ, ու Տէրոջը բարկութիւնը
Իսրայէլի որդւոց վրայ բորբոքեցաւ։
2 Ու Յեսու Երիքովէն մարդիկ ղրկեց
դէպ՚ի Գայի, որ Բեթաւանի մօտ է՝
Բեթէլի արեւելեան կողմը, և խօսեցաւ
անոնց բսելով, Նէ՛ք և այն երկիրը լրտ-
եսեցէ՛ք. և այն մարդիկը եկան ու
3 Գային լրտեսեցին։ Ու Յեսուի դար-
ձան ու անոր բսին, Բոլոր ժողովուրդը
չելլէ, հո՛ն երկու կամ երեք հա-
զար մարդ ուղարկեն ու Գային զար-
նեն. բոլոր ժողովուրդը հո՛ն մանելով
մի յոգնեցնէ՛ր. քանզի անոնք փչուր
4 են։ Ուստի ժողովուրդէն երեք հազա-
րի չափ մարդ հո՛ն երթան, բայց Գայիի
5 մարդոց առջևէն փախան։ Ու Գայիի
մարդիկն անոնցմէ երեսունու չափ մար-
դու զարկին, քանզի զանոնք դր-
բան առջևէն մինչև Սեբարիմ հալա-
ծեցին, և զա՛ի վայրէն վրայ զանոնք

զարկին. ուստի ժողովուրդին սիրտը
հալեցաւ ու չորսի պէս եղաւ։
6 Ու Յեսու իր հանդերձները պառա-
կով Տէրոջը տապանակին առջև երե-
սին վրայ գեռն իրնկաւ մինչև իրի-
կուն, թէ ինք և թէ Իսրայէլի ծերե-
րը, և իրենց գլուխն վրայ հող ցանե-
7 ցին։ Ու Յեսու բսաւ, Ո՛հ, Տէր Նո՛ովոյ,
ինչո՞ւ համար այս ժողովուրդը Յոր-
դանանու տագին կողմը անցուցիր, որ
մեզ Ամորհացւոց ձեռքը մատնես, ու
մեզ կորնչցնես. երանի թէ Յորդա-
նանու անդին կողմը գոհ ըլլալով մնա-
8 յինք։ Ո՛հ, Տէր, Իսրայէլ իր թշնամի-
ներուն առջև կռնակ դարձնելէն ետ-
9 քը՝ ալ ես ի՞նչ բսեմ. Որովհետև Քա-
նանացիները ու երկրին բոլոր բնակիչ-
ները լսելով՝ մեզ պիտի պաշարեն, ու
մեր անունը երկրիս վրայէն բոլորովին
պիտի վերցընեն. անատեն քու մեծ
անունդ ի՞նչ պիտի ընես։
10 Ու Տէրը Յեսուի բսաւ, Ոտքի վրայ
ելիր. ինչո՞ւ համար այսպէս երեսիդ
11 վրայ ինկեր ես. Իսրայէլ մեղք գործեց,
և իմ անոնց հրամայած ուխտս զանց
ըրին. քանզի նզովածէն առին, ու գո-
ղութիւն ըրին և սուտ զրուցեցին, և
նաև իրենց կարասիներուն մէջ դը-
12 րին. Ուստի Իսրայէլի որդիքը պիտի չը
կրնան իրենց թշնամիներուն առջև
կենալ. իրենց թշնամիներուն առջև
կռնակ պիտի դարձընեն, քանզի նզո-
ված եղան. և ալ ձեր հետը պիտի չըլ-
լամ, թէ որ դուք նզովածը ձեր մէջէն
13 բնաջինջ չընէ՛ք. ելիր ժողովուրդը սրբե-
ցէ՛ք, և ըսէ, Վաղուան համար սրբուե-
ցէ՛ք. քանզի Իսրայէլի Տէր Աստուա-
ծը այսպէս կ՚ըսէ, Ով Իսրայէլ, ձեր
մէջ նզոված կայ. մինչև որ նզովածը
ձեր մէջէն չվերցընէ՛ք, քու թշնամին-
ներուդ առջև պիտի չկրնաս կենալ,
14 Ուստի առաւոտանց ձեր ցեղերով մտ-
եցնա՛ք, ու Տէրը ո՛ր ցեղը վի՜ճակ բըռ-
նելու ըլլայ, անիկա իր ազգատոհմե-
րով մտեցնայ. և Տէրը ո՛ր ազգատոհ-
մը բռնելու ըլլայ, անիկա իր տուներ-
ով մտեցնայ. և Տէրը ո՛ր տունը բռ-

*ՆԲԳ. պառագամաւորները
†Կամ Զամբրիի



նելու ըլլայ, անիկա իր մարդոցմով
15 մտեցնայ. Ու ով որ նզովածով բռնուի,
կրակով պիտի այրուի, թէ ինք և թէ
իր ամէն ունեցածը. քանզի Տէրոջը ու-
խտը զանց ըրաւ, և Իսրայէլի մէջ
անպատմելի բան ըրաւ։
16 Ուստի Յեսու առաւոտանց կանուխ ե-
լաւ, ու Իսրայէլ իր ցեղերով մտեց-
ուց, և Յուդայի ցեղը բռնուեցաւ.
17 Ու Յուդայի ազգատոհմները մտեցը-
նելուն, Զարայեանց ազգատոհմը բռնա-
նուեցաւ. և Զարայեանց տունը իր
մարդոցմով մտեցընելուն, Զաբդին
18 բռնուեցաւ. Նաև անոր տունը իր
մարդոցմով մտեցընելուն, Յուդայի
ցեղէն Զարայի որդւոյն Զաբդիի որդւոյն
19 Քարմիի որդին Ա՛քար բռնուեցաւ. Ա՛ն-
ատեն Յեսու Ա՛քարին բսաւ, Որդեակ,
հիմա Իսրայէլի Տէր Աստուծոյն փառք
տուր, և ո՛ւ դէպ անոր խոստովանէ,
և քու ըրածդ հիմա ինծի յայտնէ,
20 ինծմէ մի պահեր։ Ու Ա՛քար պատաս-
խան տուաւ Յեսուի և բսաւ, Իսրաէլ-
նէ՛ս Իսրայէլի Տէր Աստուծոյն դէմ
մեղք գործեցի, ու ատանկ ատանկ բան
21 ըրի. Այսինքն աւարին մէջ ա-
դուռը Բաբելոնի վերթիւռ
մը, ու երկու հարիւր սիկղ արծաթ,
և յիսուն սիկղի ծանրութեամբ ոս-
կի լեզու մը տեսայ, ու անոնց ցան-
կալով առի. և ահա անոնք իմ վրա-
նիս մէջ հողին տակ պահուած են, ու
22 արծաթն անոր ներքեւն է։ Ուստի Յե-
սու լրտեսներ ղրկեց, և անոնք վրա-
նը վազեցին. և ահա վրանին մէջ պա-
հուած էր այն, ու արծաթը անոր ներքեւն
23 էր. Ու զանոնք վրանին մէջէն առնելով
Յեսուի ու բոլոր Իսրայէլի որդւոց բե-
րին, և զանոնք Տէրոջը առջև դրին։
24 Անատեն Յեսու և բոլոր հետ բոլոր
Իսրայէլ՝ Զարայեան Ա՛քարը և այն ար-
ծաթը և վերթիւռն ու ոսկի լեզուն և
անոր տղաքը, աղջիկները, ար[ջ]ամները,
հշերը, ոչխարները, վրանը ու անոր ա-
մէն բանը առին, և զանոնք Ա՛քորի
25 ձորը հանեցին։ Ու Յեսու բսաւ, Ինչո՞ւ
համար դուն մեզ նեղեցիր. Տէրը այսօր
փչով պիտի նեղէ. ուստի բոլոր Իսրա-
էէլ զանիկա քարերով քարկոծեցին,
ու զանոնք քարերով քարկոծեցին ետ-
26 քը կրակով այրեցին, Ետքը անոր վրայ
մեծ քարակոյտ մը դիզեցին, որ [մ]ինչև
մինչև այս օրս։ Ու Տէրը իր
սաստիկ բարկութենէն դադրեցաւ.
այս պատճառաւ այն տեղին անունը
*Ա՛քորի ձոր ըսուեցաւ մինչև այս օրս։

## ԳԼ. Ը

1 Եւ Տէրը Յեսուէ ըսաւ, Մի՛ վախնար
ու մի զարհուիր. բոլոր պատերազմող
մարդիկը հետդ առ, ու ելիր դէպ՚ի
Գայի գնա՛. ահա Գայիի թագաւորն ու
անոր ժողովուրդը և անոր քաղաքը
ու անոր երկիրը քու ձեռքդ տուի.
2 Ու Երիքովի և անոր թագաւորին ը-
րածիդ պէս՝ Գայիի ու անոր թագա-
ւորին ալ ընես, միայն թէ անոր աւա-
րը ու անասուններուն ձեզի առնէ՛ք. Ք[ա]-
զքին հետևի կողմին գաղանները պատ-
3 րաստեա՛ Ուստի Յեսու ու բոլոր պա-
տերազմող մարդիկը ոտք ելան, որ
Գայիի վրայ երթան. և Յեսու երեսուն
հազար զօրաւոր մարդ ընտրեց, ու զա-
4 նոնք գիշերով ղրկեց. Ու անոնց պատ-
ուիրելով բսաւ, Նայեցէ՛ք, դուք քա-
զքին հետևէն այն քաղաքին համար
դարանի մէջ պիտի նստի՛ք. քաղաքէն
չատ մի հեռանա՛ք, և ամէնքդիդ ալ
5 պատրաստ ըլլա՛ք. Ու ես իմ հետս ե-
ղող բոլոր ժողովուրդով քաղաքին պի-
տի մօտենա՛մ. ու երբ անոնք առջի
անգամին պէս մեզի դէմ ելլեն, անոնց
6 առջևէն պիտի փախչի՛նք. Ու անոնք
մեր հետևէն պիտի ելլեն, մինչև որ զա-
նոնք քաղաքէն զատնե՛նք. որովհետև
անոնք պիտի ըսեն թէ Մեր առջևէն
փախան առջի անգամին պէս. ու մենք
7 անոնց առջևէն պիտի փախչի՛նք. Ա՛յն-
ատեն դուք դարանէն ելլի՛ք ու քա-
զքը առնէ՛ք, քանզի ձեր Տէր Աստ-
ուածը զանիկա ձեր ձեռքը պիտի տայ։

*Ա՛յ-ինչ-ն՝ նեղու թ[եան], [մ]ահ[ացու]թեան

8 Եւ երբ քաղաքը առնէք, քաղաքը
կրակով այրեցէք. Տէրոջը բանին պէս
9 ընէք. ահա ձեզի պատուիրեցի։ Եւ Յե-
սու զանոնք զրկեց, ու անոնք գացին
գաղտնի նայան Բեթէլի ու Գայիի մէջ-
տեղ, Գայիի արեւմտեան կողմին. և
Յեսու այն գիշերը ժողովուրդին մէջ
մնաց։
10 Եւ Յեսու առաւօտուն կանուխ եղաւ
ու ժողովուրդը աչքէ անցուց, և ին-
քը իսրայէլի ծերերուն հետ ժողովուր-
11 դին առջեւէն դէպ ի Գայի գնաց. Եւ
իր հետ եղող բոլոր պատերազմական
մարդիկն ալ ելան, և մօտենալով քա-
ղաքին առջեւ գացին, և Գայիի հիւ-
սիսային կողմը բանակեցան. և անոնց
12 ու Գայիի միջտեղ ձոր մը կար։ Եւ
հինգ հազարի չափ մարդ առաւ, ու
դնոնք դարանի մէջ նստեցուց Բեթէ-
լի ու Գայիի միջտեղ՝ քաղաքին արեւ-
13 մեան կողմը։ Ու ժողովուրդը քաղա-
քին հիւսիսային կողմը զրին բոլոր բա-
նակը, և քաղաքին արեւմտեան կողմը
դարանը։ և Յեսու այն գիշերը ձորին
մէջ գնաց։
14 Եւ երբ Գայիի թագաւորը զանիս-
տնաց, քաղաքին մարդոցմով շու-
տով ու կանուխ դուրս եկաւ, որ ինք
ու իր բոլոր ժողովուրդը որոշ ժամա-
նակով մը դաշտի վրայ իսրայէլի դէմ
պատերազմին, և չէր գիտեր որ քա-
ղաքին հետ իրեն համար դարան
15 պատրաստած է։ Եւ Յեսու ու բոլոր
իսրայէլ անոնց առջեւ զիրենք զարնուա-
ծի պէս ցուցնելով՝ անապատին ճամ-
16 բան փախան։ Եւ քաղաքին մէջ եղող
բոլոր ժողովուրդը ճամբացաւ որ դա-
նոնք հալածեն, և Յեսուի հետևէն կը-
17 նալով քաղաքէն զատուեցան։ Եւ Գա-
յիի ու Բեթէլի մէջ մարդ չմնաց՝ որ
իսրայէլի հետևէն չելլէ. ուստի քաղա-
քը բաց թողուցին, և իսրայէլի հետ-
ևէն գնացին։
18 Եւ Տէրը Յեսուի բսաւ, Ձեռքդ ե-
զած նիզակը դէպ ի Գայի երկրացուր,

քանզի զանիկա քու ձեռքդ պիտի տամ.
և Յեսու ձեռքը եզած նիզակը դէպ ի
19 քաղաքը երկրացուց. Եւ դարանակալ-
ները շուտով իրենց տեղէն ելան, և
անիկա իր ձեռքը երկրացուցածին պէս,
վազելնին քաղաքը մտան ու առին ա-
նիկա, և շուտով մը քաղաքը կրակով
20 բռնկեցուցին։ Եւ Գայիի բնակիչները
հետևնին դարձան տեսան որ ահա քա-
ղաքին ծուխը մինչև երկինք կ՚ելլէր.
և անոնք հոս կամ հոն փախչելու կա-
րողութիւն չունէին. և անապատը փախ-
չող ժողովուրդն ալ իր հետևէն դիմող-
21 ներուն վրայ դարձաւ։ Եւ Յեսու ու
բոլոր իսրայէլ երբ տեսան որ դա-
րանակալները քաղաքն առին, ու քա-
ղաքին ծուխը վեր կ՚ելլէր, իրենք ալ
22 նոր դարձան ու Գայիի մարդիկը զար-
կին։ Միւսներն ալ քաղաքէն անոնց
դէմ եկան. ուստի մէկ կողմանէ ասոնք՝
ու միւս կողմանէ ալ անոնք բլլալով,
Գայէն հաքնելը իսրայէլացոց մէջտեղ
մնացին. և զանոնք զարկին մինչև որ
անոնցմէ մարդ մը ողջ չմնաց ու չա-
23 զաուեցաւ։ Եւ Գայիի թագաւորը ողջ
բռնեցին, և դանիկա Յեսուի բերին։
24 Եւ երբ Իսրայէլացիք Գայիի բոլոր
բնակիչները՝ զիրենք հալածողները դաշ-
տին ու անապատին մէջ կարգեցին, և
անոնց ամէնքն ալ սուրի բերնով կոտո-
րուելով հասան, բոլոր Իսրայէլացիք Գայի
դարձան, և զանիկա սուրի բերնով ան-
25 ցուցին։ Եւ այն օրը ինկածներուն ա-
մէնը, թէ երիկ մարդ և թէ կնիկ մարդ,
տասներկու հազար էր, այսինքն Գա-
26 յիի բոլոր մարդիկը։ Եւ Յեսու նիզա-
կով երկրացուցած ձեռքը չդարձուց
մինչև որ Գայիի բոլոր բնակիչները բը-
27 նաջնջէ բրաւ։ Բայց իսրայէլացիք ա-
նասունները ու քաղաքին աւարն իրե-
նց առին, Տէրոջը Յեսուի հրամա-
28 յած խօսքին համեմատ։ Եւ Յեսու Գա-
յին այրեց, ու զանիկա հանդիսական
աւերակներու դէզ բրաւ մինչև այսօր։
29 Եւ Գայիի թագաւորը ծառի մը կախեց
մինչև իրիկուն. ու արեւը մանելուն
Յեսու հրամայեց որ անոր մեռած մար-



մինը ծառէն վար իջեցընեն, և զանի-
կա քաղաքին դրան առջև նետեցին,
ու անոր վրայ մեծ քարակոյտ մը
դիզեցին, որ է՝ ի՛նչ մինչև այսօր։
30 Այնատեն Յեսու Իսրայէլի Տէր Ա-
ստուծոյն սեղան մը շինեց Գերազ լե-
31 ռան վրայ, ինչպէս որ Տէրոջը ծառան
Մովսէս Իսրայէլի որդւոց պատուիրեր
էր. ո՛ր Մովսէսի օրինաց գրքին մէջի
գրուածին պէս՝ Ճշո՛ւտ այս սեղանը ամ
բողջ քարերէ չէ՛ղած, որուն վրայ եր-
կաթի չէր դպած. և անոր վրայ Տէրո-
ջը ողջակէզներ ու խաղաղութեան զո-
32 հեր մատուցին։ Եւ հոն այն քարերուն
վրայ գրեց Մովսէսի օրինաց Էջէն օ-
րինակը, զոր Իսրայէլի որդւոց առջև
33 գրեց։ Ու բոլոր Իսրայէլ և անոնց
ծերերն ու սատարիանները և դատաւոր-
ները տապանակին մէկ կողմէն ու միւս
կողմէն՝ Տէրոջը ուխտին տապանակը
վերցընող Ղեւտացի քահանաներուն հա-
յելէն կ՚երթային, թէ օտարականները
և թէ բնակիները. անոնց կէսը Գարիզի
լեռանը կողմը՝ ու կէսն ալ Գերազ լե-
ռանը կողմը կայնեցան, ինչպէս որ Տէ-
րոջը ծառան Մովսէս առաջ որ օրհնէր
էր Իսրայէլի ժողովուրդը սկզբնա-
34 պէս։ Եւ այնտեղ հետև օրէնքին բոլոր
խօսքերը կարդաց, թէ օրհնութիւն-
ները և թէ անէծքները, ինչ որ գրուա-
35 ծած էր օրինաց գրքին մէջ։ Մովսէ-
սի բոլոր պատուիրածներէն բնաւ խօսք
մը չմնաց, որ զանիկա Յեսու Իսրայէլի
բոլոր ժողովին և կիներուն ու
ապագայ և անոնց մէջ պտրատղ ծա-
ռայականին առջև չկարդայ։

ԳԼ. Թ

1 Եւ երբ Յորդանանու սապի կողմը
եղող բոլոր թագաւորները՝ որոնք լե-
ռան վրայ, դաշտի վրայ ու մեծ ծո-
վեզր բոլոր եղերքը մինչև Լիբանանու
դիմացը կը բնակէին, այսինքն Քետա-
ցիք, Ամորհացիք, Քանանացիք, Փե-
րեզացիք, Խեւացիք ու Յեբուսացիք
2 այս բաները լսեցին, Միաբանութեամբ

ցինք, բայց ահա պատած են. և այս մեր հանդերձներըը և կօշիկներըը ծամբուն խիստ երկայնութեանը համար
14 հինցան. Եւ Իսրայէլի այրերն նայեցան՝ այն մարդկին ընդունելին՝, և Տէրը չհարցուցին. Եւ Յեսու անոնց հետ խաղաղութիւն ըրաւ, և անոնց ուխտ որ զանոնք ապրեցընէ. և ժողովրդին իշխաններն ալ անոնց երդում ըրին.
16 Եւ անոնց հետ դաշնակցութիւն ընելէն երեք օր ետքը լսեցին՝ որ անոնք իրենց դրացիներն են, և իրենց մէջ
17 կը բնակին. Եւ Իսրայէլի որդիքը չուեցին՝ երրորդ օրը անոնց քաղաքները մտան. և անոնց քաղաքները Գաբաւոն, Կեփիրա, Բեերովթ և Կարիաթարիմ էին. Եւ Իսրայէլի որդիքը զանոնք չկոտորեցին, քանզի ժողովքին իշխանները Իսրայէլի Տէր Աստուծոյն անուամբ անոնց երդում էին. բայց բոլոր ժողովքը իշխաններուն դէմ տրանջեցին.
19 Եւ ամէն իշխանները բոլոր ժողովքին ըսին, Մենք Իսրայէլի Տէր Աստուծոյն անուամբ անոնց երդում ըրինք, և
20 հիմա չենք կրնար անոնց դպչիլ. Անոնց այսպէս ընենք. զանոնք ողջ թողունք, որ մեր վրայ բարկութիւն չգայ անոնց
21 երդումնիս ընդհանուր համար. Ուստի իշխանները անոնց ըսին, Թող ողջ մնան, բայց բոլոր ժողովքին փայտահատողներ ու ջրկիրներ ըլլան. Եւ ինչպէս իշխանները անոնց ըսին.
22 Այսպէս զանոնք կանչեց, և անոնց խօսեցաւ ըսելով, Ինչո՞ւ համար մեզ խաբեցիք ու ըսիք թէ Քանզի չատ հեռու ենք, և դուք մեր մէջ կը
23 բնակիք. Ուրեմն դուք հիմա անիծեալ էք, և ի՛մ Աստուծոյս տանը համար ձեզմէ ծառայ, փայտահատ ու ջրկիր
24 չպակսիր. Եւ անոնք Յեսուի պատասխան տուին ու ըսին, Քանզի քու ծառաներդստուգիւն իմացան, որ քու Եհովայ Աստուածդ իր ծառային Մովսէսի հրամայեր է այս բոլոր երկիրը ձեզի տալու, և այս երկրիս բոլոր բնակիչները ձեր առջևէն բնաջինջ ընելու. ուստի մենք ձեր պատճառաւ մեր անձերուն համար չատ վախցանք,
25 և այս բանն ըրինք. Եւ ահա հիմա քու ձեռքդ ենք. քեզի ինչ որ հաճոյ ու արդար կ'երևնայ, զայն ըրէ մեզի.
26 Ուստի անոնց այնպէս ըրաւ, և զանոնք իսրայէլի որդւոց ձեռքէն ազատեց,
27 և զանոնք չմեռցուցին. Եւ Յեսու նոյն օրը փայտահատող ու ջրկիր ըրաւ զանոնք ժողովքին ու Տէրոջը սեղանին համար, որ Տէրոջը ընտրելու տեղը ծառայէ մինչև այս օրս։

## Գլ. Ժ

1 Եւ երբ Երուսաղեմի Ադոնիսեդեկ թագաւորը լսեց թէ Յեսու գայթն առաւ ու զանիկա բոլորովին կործանեց, և Երիքովի ու անոր թագաւորին ըրաւ, Գայիի ու անոր թագաւորին ալ այնպէս ըրաւ, և թէ Գաբաւոնի բնակիչներն Իսրայէլացւոց հետ հաշտութիւն ըրին, և անոնց մէջ մնացին,
2 նացին, շատ վախցան Կռե՛ն Է իր ժողովուրդը. քանզի Գաբաւոն թագաւորական քաղաքի մը պէս մեծ քաղաք էր, և անիկա Գայիէն մեծ էր, և անոր բոլոր մարդիկը զօրաւոր էին.
3 Ասոր համար Երուսաղեմի Ադոնիսեդեկ թագաւորը Հեբրոնի Հոհամ թագաւորին, Յերիմոթի Փիրամ թագաւորին, և Լաքիսի Յափիէ թագաւորին, և Էգղոնի Դաբիր թագաւորին հրդ
4 րկից, ըսելով, Ինծի եկէք ու ինծի օգնութիւն ըրէք որ Գաբաւոն զարնենք. քանզի Յեսուի հետ ու Իսրայէլի որդւոց հետ հաշտութիւն ըրաւ։
5 Ուստի Ամորհացւոց հինգ թագաւորները՝ Երուսաղեմի թագաւորը, Հեբրոնի թագաւորը, Յերիմոթի թագաւորը, Լաքիսի թագաւորը ու Էգղոնի թագաւորը ժողովուեցան, և իրենք ու իրենց բոլոր բանակները ելան, և Գաբաւոնի դէմ բանակ դրին, և անոր դէմ պատերազմ բրին։
6 Եւ Գաբաւոնի բնակիչները Գողգոթայի մէջ բանակը Յեսուի հրեշտ ղրկին, ըսելով, Ձեռ ծառաներէդ ձեռքը մի քաշեր, շուտով մեզի եկ, մեզ ազատէ ու մեզի օգնութիւն ըրէ. քանզի լեռնաբնակ Ամորհացւոց բոլոր թագաւորները մեր վրայ ժողովեցան։
7 Եւ Յեսու՝ ինք ու իրեն հետ բոլոր պատերազմական մարդիկ և զօրքին բոլոր զօրաւորները Գողգոթայէն ելան։ Եւ Տէրը Յեսուի ըսաւ, Անոնցմէ մի վախնար, քանզի զանոնք քու ձեռքդ տուի. քեզի անոնցմէ մէկը պիտի չկարենայ քու առջևդ կայնիլ։ Եւ Յեսու Գողգոթայէն բոլոր գիշերը *քալելով՝ յանկարծակի անոնց վրայ հասաւ։
10 Ու Տէրը խռովեցուց զանոնք Իսրայէլի առջև, և զանոնք Գաբաւոնի մեծ կոտորածով կոտրեց, ու զանոնք Բեթհորոն ելլելու ճամբուն վրայ հալածեց, և զանոնք մինչև Ազեկա ու Մակեդա զարկաւ։ Եւ երբ անոնք Իսրայէլի առջևէն կը փախչեին, ու Բեթհորոնէն վար կ'իջնէին, Տէրը անոնց վրայ երկինքէն կարկտաքար մեծ քարեր նետեց մինչև Ազեկա, և մեռան. կարկտանի քարերէն մեռնողները Իսրայէլի որդւոց սրով մեռցուցածներէն շատ էին։
12 Այնաուն Յեսու Տէրոջը հետ խօսեցաւ, այն օրը որ Տէրը Ամորհացիները Իսրայէլի որդւոց ձեռքը մատաւ, և Իսրայէլի առջև ըսաւ, Արեգ, դուն Գաբաւոնի դիմաց կայնէ. Լուսին, դուն ալ Այիղոնի ձորին դիմաց։
13 Եւ՝ Եւ արեգը կայնեցաւ, և լուսին իր տեղը մնաց, մինչև որ ժողովուրդը իր թշնամիներէն վրէժ առաւ։ Միթէ այսիկ Ուղիղին գրքին մէջ գրուած չէ՞. ուստի արեգը երկինքէ մէջտեղ կայնեցաւ, և լման մէկ օրի մը չափ մնաց։
14 Ու չարաչարաց Անոր պէս օր մը չեղաւ, ոչ առաջ ու ոչ ետքը, որ Տէրը մարդու ձայնը լսեց. քանզի Տէրը Իսրայէլի համար պատերազմեցաւ։
15 Ապա Յեսու և անոր հետ բոլոր Իսրայէլ Գողգոթայ բանակը դարձան։
16 Եւ հինգ թագաւորները փախան, և
17 Մակեդա այրին մէջ պահուեցան։ Եւ Յեսուի պատմեցաւ, ըսելով, Այն հինգ թագաւորները Մակեդա այրին
18 մէջ պահուած գտնուեցան. Եւ Յեսու ըսաւ, Այրին բերանը մեծ քարեր գլորեցէք, և անոր վրայ մարդիկ դրէ
19 ըէք որ պահպանութիւն բնեն. Բայց դուք մի կայնիք, ձեր թշնամիները հալածեցէք, և անոնց հեռիններըը զարկէք, և անոնց Թող մի տաք որ իրենց քաղաքները մտնեն. քանզի ձեր Տէր Աստուածը զանոնք ձեր ձեռքը
20 մատնեց։ Եւ երբ Յեսու Իսրայէլի որդւոց հետ զանոնք խիստ մեծ կոտորածով կոտրեց, և զանոնք հետացուց լմնցուց, և անոնց փախստականները պարսպապատ քաղաքներու մէջ
21 մտան, Բոլոր ժողովուրդը խաղաղութեամբ Մակեդա բանակը Յեսուի դարձաւ. — Իսրայէլի որդւոց դէմ բնաւ մէկը իր լեզուն չշարժեց։
22 Այնաուն Յեսու ըսաւ, Այրին բերանը բացէք, և այրէն այն հինգ թագաւորները հանեցէք ինծի բէրէ։
23 Ու այնպէս ըրին, և այրէն այն հինգ թագաւորները՝ այսինքն Երուսաղեմի թագաւորը, Հեբրոնի թագաւորը, Յերիմոթի թագաւորը, Լաքիսի թագաւորը — Էգղոնի թագաւորը հանեցին ա
24 նոր դ — Էգղոնի Եւ երբ այս թագաւորները Յեսուի — Ը հանեցին, Յեսու Իսրայէլի բոլոր մարդիկը կանչեց, և իրեն հետ գացող պատերազմողաց գլխաւորներուն ըսաւ, Մօտեցէք ու ձեր ոտքերն այս թագաւորներուն պարանոյներուն վրայ դրէք. և անոնք մօտեցան ու իրենց ոտքերն անոնց պա
25 րանոցներուն վրայ դրին. Եւ Յեսու ա նոնց ըսաւ, Մի վախնաք ու մի զարհուրիք, ուժովցէք և քաջասիրտ եղէք. քանզի Տէրը այսպէս պիտի բնէ

---

†կամ՝ Իսրայէլ մարդիկը անոնց պաշարին առին,

*Նբ. Ելլելով՝

ձեր ամէն Թշնամիներուն, որոնց հետ
26 որ դուք պիտի պատերազմիք։ Եւ այ-
նուհետեւ Յեսու զանոնք զարկաւ մեռ-
ցուց, և զանոնք հինգ ծառի կախեց,
և ծառերուն վրայ մինչև իրիկուն կա-
27 խած մնացին։ Եւ արեւը մտնելուն
Յեսու հրամայեց, և զանոնք ծառերուն
վրայէն իջեցուցին, և իրենց պահուած
այրին մէջ նետեցին զանոնք, և այ-
րին բերանը մեծ քարեր դրին, որ ևս
մինչև այսօր։
28 Եւ Յեսու նոյն օրը Մակեդան ալ ա-
ռաւ. և զանիկա սուրի բերնէ անցուց,
և անոր Թագաւորն ու անոր մէջ գըտ-
նուած բոլոր հոգիները կոտրնցուց, և
մէկը ողջ չձգուց. ու Մակեդայի Թա-
գաւորին ալ այնպէս ըրաւ, ինչպէս որ
Երիքովի Թագաւորին ըրած էր։
29 Ապա Յեսու և իրեն հետ բոլոր Իս-
րայէլ Մակեդայէն Լիբնա անցան, և
30 Լիբնայի դէմ պատերազմեցան. Եւ
Տէրը զանիկա ալ անոր Թագաւորին
Իսրայէլի ձեռքը մատնեց, և զանիկա
ու անոր մէջ գտնուած բոլոր հոգինե-
րը սուրի բերնէ անցուցին, ևս մէկը
ողջ չձգուցին. և անոր Թագաւորին
նոյնպէս ըրին, ինչպէս որ Երիքովի
Թագաւորին ըրած էին։
31 Ապա Յեսու ու իրեն հետ բոլոր Իս-
րայէլ Լիբնայէն Լաքիս անցան, և ա
նոր դէմ բանակելով անոր դէմ պա-
32 տերազմեցան. Եւ Տէրը Լաքիսը Իսրա-
յէլի ձեռքը մատնեց, և զանիկա եր-
կրորդ օրը առնելով, զանիկա ու ա-
նոր մէջ գտնուած բոլոր հոգիները սու-
րի բերնէ անցուցին, ինչպէս որ Լիբ-
նային ըրած էին։
33 Անոնէն Գազերի Հօրամ Թագաւո-
րը Լաքիսը օգնութիւն բնելու եկաւ.
և Յեսու զանիկա ու անոր ժողովուր-
դը կոտրնց, անոնկ որ անոնցմէ մէկը
ողջ չմնաց։
34 Ապա Յեսու և իրեն հետ բոլոր Իս-
րայէլ Լաքիսէն Եգղոն անցան, և ա-
նոր դէմ բանակելով, անոր դէմ պա-
35 տերազմ բրին. Եւ զանիկա նոյն օրը
առնելով սուրի բերնէ անցուցին. ու
Յեսու նոյն օրը անոր մէջ գտնուած
բոլոր հոգիները կոտրնցուց, ինչպէս
որ Լաքիսի բրած էր։
36 Ապա Յեսու ու իրեն հետ բոլոր Իս-
րայէլ Եգդոնէն Բերբոն եկան, ու անոր
37 դէմ պատերազմ բրին. Եւ զանիկա
առնելին եաբ՝ սուրի բերնէ անցուցին
զանիկա ու անոր Թագաւորը, և անոր
բոլոր քաղաքներն ու անոր մէջ գըտ-
նուած բոլոր հոգիները, և մէկը ողջ
չձգուցին, ինչպէս որ Եգդոնի բրին.
այսպէս զանիկա ու անոր մէջ գտնուած
բոլոր հոգիները կոտրնցուց։
38 Ապա Յեսու և իրեն հետ բոլոր Իս-
րայէլ Դաբիր դարձաւ, և անոր հետ
39 պատերազմեցաւ. Եւ զանիկա ու անոր
Թագաւորը և անոր բոլոր քաղաքներն
առին, և զանոնք սուրի բերնէ անցու-
ցին. և անոր մէջ գտնուած բոլոր հո-
գիները կոտրնցուցին, ևս մէկը ողջ չը
Թողուցին. ինչպէս որ Բերբոնի բրաւ,
և ինչպէս որ Լիբնայի ու անոր Թա-
գաւորին բրաւ, նոյնպէս և Դաբիրի
ու անոր Թագաւորին բրաւ։
40 Եւ Յեսու բոլոր լեռնային, հարաւա-
յին, դաշտային ու լեռներուն տարած
եղած երկիրները և անոնց բոլոր
Թագաւորները զարկաւ, ևս մէկը ողջ
չձգուց, այլ ամէն շնչաւոր մեռցուց,
ինչպէս որ Իսրայէլի Տէր Աստուածը
41 պատուիրեր էր։ Եւ Յեսու Կադէս-
բառնեայէն մինչև Գազա՝ ու բոլոր Գո-
սեմի երկիրը մինչև Գաբաւոն զանոնք
42 զարկաւ։ Եւ այս բոլոր Թագաւորներն
ու անոնց երկիրը Յեսու մէկէն առաւ.
քանզի Իսրայէլի Տէրը Իսրայէլի Տէր
43 Աստուածը պատերազմ կ'ընէր։ Եւ Յե-
սու ու իրեն հետ բոլոր Իսրայէլ Գաղ-
գաղա բանակը դարձան։

## Գլ. ԺԱ

1 Եւ Հասորի Յաբին Թագաւորը երբ
այս բաները լսեց, Մադոնի Յոբաբ Թա-
գաւորին և Սամրոնի Թագաւորին ու
2 Աքսաֆի Թագաւորին, Եւ հիւսիսային
լեռներու ու Քինեռեթի հարաւային դաշ-



տը ու հովիտը և արեւմտեան կողմ՝
Դովրի դաշտաներուն մէջ եղող Թա-
3 գաւորներուն, Արեւելեան ու արեւմ-
տեան կողմ եղող Քանանացիներուն,
Ամորհացիներուն, Բեւազացիներուն, Փե-
րեզացիներուն ու լեռնային Յերու-
սաղէմացիներուն, և Հերմոնի ներքև Մա-
ւպայի երկիրը եղող Խևացիներուն հաղ-
4 րիկը, Ուստի անոնք իրենց բոլոր բա-
նակներով ևս շատ ժողովուրդով ե-
լան, որ ծովուն եզերքն եղող աւազին
չափ բազմաթիւ էին, և հեծեծներ խիստ
5 շատ ձիեր ու կառքեր ունէին։ Եւ այս
բոլոր Թագաւորները միաբանելով մէկ-
տեղ գացին՝ Մառաւնի Ջուրին քով բա-
նակեցան, որ Իսրայէլի հետ պատեր-
բազմին։
6 Եւ Տէրը Յեսուի բսաւ, Անոնց երե-
սէն մի վախնար, քանզի վաղն այս ա-
մենուն եա անոնց ամէնը Իսրայէլի առ-
ջև կոտրուելու պիտի մատնեմ. անոնց
ձիերուն ջիղերը պիտի կտրես, ու ա-
7 նոնց կառքերն ալ կրակով պիտիս Ետ-
ու Յեսու և իրեն հետ բոլոր պատեր-
բազմական ժողովուրդը յանկարծակի
Մառաւնի Ջուրին քով անոնց դէմ կը-
8 Թալով վրանին յարձակեցան. Եւ Տէրը
զանոնք Իսրայէլի ձեռքը մատ, և
զանոնք զարկին, և մինչև մեծ Սիդոն
ու Մառեփօթ–մայիմ, և մինչև Մաս-
պայի հովիտը դէպ ի արեւելք Հաշած-
ցին, ու զանոնք զարկին՝ մինչև որ ա-
9 նոնցմէ մէկը չազատեցաւ։ Եւ Յեսու ա-
նոնց այնպէս ըրաւ, ինչպէս որ Տէրն անոր
բսեր էր. անոնց ձիերուն ջիղերը կըտ-
րեց, և անոնց կառքերը կրակով այրեց։
10 Եւ նոյն առեն Յեսու դարձաւ՝ Հա-
սորը առաւ, և անոր Թագաւորը սր-
բով մեռցուց. քանզի Հասոր առաջ-
նոյց այս բոլոր Թագաւորութիւններ-
11 բուն գլուխն էր։ Եւ անոր մէջ գըտ-
նուած բոլոր հոգիները սուրի բերնէ
անցուցին, և բնաջինջ ըրին. բնաւ մէկ
շնչաւոր մը չմնաց. և Հասորը կրակով
12 այրեց։ Ուստի Յեսու այս Թագաւոր-
ներուն բոլոր քաղաքներն ու անոնց
բոլոր Թագաւորներն առաւ, և զանոնք
սուրի բերնէ անցնելով բնաջինջ բրաւ,
ինչպէս որ Տէրոջը ծառան Մովսէս
13 պատուիրեր էր։ Բայց Իսրայէլ չայրեց
այն քաղաքները՝ որոնք իրենց հոյա-
կըտութեամբ կը կենային, բացի միայն
14 Հասորէ՝ զոր Յեսու այրեց։ Եւ այս ա-
ղտաքներուն բոլոր աւարն ու անասուն-
ները Իսրայէլի որդիքն իրենց առին,
բայց բոլոր մարդիկը սուրի բերնէ ան-
ցուցին, մինչև որ զանոնք բնաջինջ ը-
րին, ևս բնաւ շնչաւոր մը չմնաց։
15 Ինչպէս որ Տէրը իր Մովսէս ծա-
ռային պատուիրեր էր, նոյնպէս Մով-
սէս Յեսուի պատուիրեց, և Յեսու
ալ այնպէս ըրաւ. Ե ինչ որ Տէրը Մով-
սէսի պատուիրեր էր, բնաւ անոնց մէ-
կը զանց չըրաւ։
16 Ուստի Յեսու այն բոլոր երկիրն ա-
ռաւ, լեռնականին ու բոլոր հարաւա-
յին կողմը և բոլոր Գեսեմի երկիրը,
հովիտն ու դաշտը, և Իսրայէլի լեռն
17 ու անոր հովիտը, Սէիր ելլող Քալակ
լեռնէն մինչև Հերմոն լեռան տարած
Լիբանանու հովիտին մէջ եղող
Բաղդատ, և անոնց բոլոր Թագաւոր-
ները բռնեց, ու զանոնք զարկաւ մեռ-
18 ցուց. Յեսու այս բոլոր Թագաւորնե-
րուն հետ չատ օրեր պատերազմ բրաւ,
19 Գաբաւոնի մէջ բնակող Խևացիներէն ի
զատ Իսրայէլի որդւոց հետ հաշտու-
թիւն բնող քաղաք մը չկար. ամէնն
20 ալ պատերազմով առին. Քանզի անոնց
սրտին կարծրանալն ու պատերազմով
Իսրայէլի դէմ դնելը Տէրոջմէն եղաւ,
որ անոնց սրտմտութիւն չընլալով զա-
նոնք կոտրնցրնէ ու բնաջինջ ընէ, ինչ-
պէս որ Տէրը Մովսէսի պատուիրեր էր։
21 Եւ անասուն Յեսու գնաց, ու լեռ-
նէրէն՝ Քեբրոնէն, Դաբիրէն, Անաբէն
ու Յուդայի բոլոր լեռներէն, և Իսրա-
յէլի բոլոր լեռներէն ենաքիմներն կոտ-
րեց. Յեսու զանոնք իրենց քաղաքնե-
22 րով մեկտեղ կոտրնցուց։ Եւ Իսրայէ-
լի որդւոց երկրին մէջ ենաքիմներէն
Գէզ չմնաց, բայց միայն Գազայի, Գե-
թի ու Ազոդոսի մէջ մնացին։
23 Եւ Յեսու բոլոր երկրին առաւ, ինչ-

պէս օր Տէրը Մովսէսի պատուիրեր էր, և Յեսու զանիկա Իսրայէլի ժառանգութեան տուաւ, անոնց ցեղերուն բաժիններուն համեմատ. ու երկիրը պատերազմէն հանգստացաւ։

## Գլ. ԺԲ

1 Ասոնք են այն երկիրին թագաւորները՝ զորոնք Իսրայէլի որդիքը զարկին, և անոնց երկիրներուն տարին, Յորդանանու անդիի կողմը դէպ արեւելք, Առնոն ձորէն մինչև Հերմոն լեռը՝ արեւելեան
2 կողմին բոլոր դաշտովը, Եսեբոնի մէջ բնակող Ամորհացւոց Սիհոն թագաւորը, որ անիկա՝ Առնոն ձորին եզերքը եղող Արոերէն, և ձորին մէջտեղէն, և Գաղաադու կէսէն մինչև Ամմոնի որդւոց սահմանը եղած Յաբոկ ձորը,
3 Նաև դաշտին, արեւելեան կողմին մինչև Քիններեթի ծովը, և արեւելեան կողմէն Բեթեհսիմթի ճամբան, և հարաւային կողմէն Աշեդոթ-փիսգայի ներքև՝ մինչև դաշտի ծովը՝ այսինքն
4 մինչև Աղի ծովը կը տիրէր։ Եւ հակառակ Մովսէս Տէրոջ ծառային և Իսրայէլի որդւոց զարկին։ Եւ Մովսէս Տէրոջ ծառան Ռուբինեանց,
Գադեանց ու Մանասէի կէս ցեղին ժառանգութիւն տուաւ։
7 Եւ ասոնք են երկրին թագաւորները, որ Յեսու ու Իսրայէլի որդիքը զարկին Յորդանանու ափի կողմը դէպ արեւմուտք, Լիբանանու հովտին մէջ եղող Բաալգադէն մինչև Քալակ լեռը, որ Սեիր կ՚ելլէ. և Յեսու անոնց Իսրայէլի ցեղերուն ժառանգութիւն տուաւ իրենց վիճակներուն և դաշտերուն մէջ ու լեռներուն ատորաններն և անապատն ու հարաւային կողմը Քետացիներուն, Ամորհացիները, Քանանացիները, Փերեզացիները, Խեւացիներն ու Յեբուսացիները. Երիքովի թագաւորը մէկ,
9 Բեթելի քով եղող Գայի թագաւորը
10 մէկ, Երուսաղէմի թագաւորը մէկ,
11 Քեբրոնի թագաւորը մէկ, Յերմութի թագաւորը մէկ, Լաքիսի թագաւորը
12 մէկ, Էգղոնի թագաւորը մէկ, Գազերի թագաւորը մէկ,
13 Դաբիրի թագաւորը մէկ, Գեդերի թագաւորը մէկ, Քեդերի թագաւորը մէկ, Հորմայի թագաւորը մէկ, Արադի թագաւորը մէկ, Լիբնայի թագաւորը մէկ,
16 Ադոդոմի թագաւորը մէկ, Մակեդայի թագաւորը մէկ, Բեթելի թագաւորը
17 մէկ, Թափուայի թագաւորը մէկ, Ափերի թագաւորը մէկ, Աֆեկի թագաւորը մէկ, Լասարոնի թագաւորը
19 մէկ, Մադոնի թագաւորը մէկ, Հասորի թագաւորը մէկ, Սամրոն-մէռոնի թագաւորը մէկ, Աքսափի թագաւորը
21 մէկ, Թանաքի թագաւորը մէկ, Մագեդովի թագաւորը մէկ, Կադեսի թագաւորը մէկ, Կարմելոս եղած Յոկնեամի թագաւորը մէկ, Դովրի գաւառին մէկ Դովրի թագաւորը մէկ, Գազզայի Գոյիմի թագաւորը մէկ, Թերսայի թագաւորը մէկ. այս թագաւորներուն ամէնը երեսունմէկ էին։

## Գլ. ԺԳ

1 Ու երբ Յեսու ծերացաւ ու առաջքը առաւ, Տէրը անոր ըսաւ, Դուն ծերացար ու առաջդ առիր. և դեռ խիստ շատ երկիր մնաց ժառանգելու։
2 Մնացած երկիրն ասիկա է. Փղշտացւոց ամէն սահմանները, ու բոլոր Գեսուրը, Եգիպտոսի դիմաց եղող Սիովրէն մինչև Բանեացւոց սեպուհած Ակկարոնի սահմանին հիւսիսային կողմը, Փղշտացւոց հինգ նախաբարութիւնները, այսինքն Գազացւոց, Աշդոդացւոց, Աշկաղոնացւոց, Գեթացւոց ու Ակկարոնացւոց, նաև Աւացւոց
4 ցեղը Երէիրը. Հարաւային կողմէն՝ Քանանացւոց բոլոր երկիրն ու Սիդոնացւոց Մէարան, մինչև Ափէկ ու մինչև Ամորհացւոց սահմանը. Եւ Գեբալացւոց
5 երկիրը՝ և արեւելեան կողմէն բոլոր Լիբանան, Հերմոն լեռան տակը եղող Բաալգադէն մինչև Եմաթի մտնելը,
6 Բոլոր լեռնաբնակները՝ Լիբանանէն մինչև Մասրեփոթ-մայիմ, բոլոր Սիդոնացիները. զանոնք Իսրայէլի որդւոց առջևէն ես պիտի վռնտեմ. միայն թէ դուն Իսրայէլի ժառանգութիւն բաժնէ այն Երէիրը, ինչպէս որ քեզի պատուիրեցի։
7 Ու հիմա այս երկիրը ժառանգութիւն բաժնէ ինը ցեղին, և Մանասէի
8 կէս ցեղին. Ռուբինեանք ու Գադեանք անոր հետ առին իրենց ժառանգութիւնը, զոր Մովսէս Յորդանանու անդիի կողմը դէպ արեւելք անոնց տուաւ, Տէրոջը ծառային Մովսէսի պէս. Առնոն ձորէն եղերքին վրայ եղող Արոերէն, ու ձորին մէջ եղող քաղաքէն՝ Մեդաբայի բոլոր դաշտով՝ մինչև Դեբոն.
10 Ու Եսեբոնի մէջ թագաւորող՝ Ամորհացւոց Սիհոն թագաւորին բոլոր քաղաքները՝ մինչև Ամմոնի որդւոց սահմանը. Գաղաադ՝ ու Գեսուրացւոց ու Մաքաթացւոց սահմանը՝ և բոլոր Հերմոն լեռն՝ ու բոլոր Բասանը մինչև
12 Սալքա. Բասանի մէջ ՈՎգին բոլոր թագաւորութիւնը՝ որ Աստարովթ ու Եդրէյիի մէջ կը թագաւորէր. Ե հրեականներուն մնացորդէն անիկա մնացեր էր. բայց Մովսէս զանոնք զարկաւ ու
13 վռնտեց։ Եւ Իսրայէլի որդիքը Գեսուրացիներն ու Մաքաթացիները չվռնտեցին. և Գեսուրացիներն ու Մաքաթացիները մինչև այսօր Իսրայէլի մէջ
14 բնակեցան։ Միայն Ղեւիի ցեղին ժառանգութիւն չտուաւ. անոր ժառանգութիւնը Իսրայէլի Տէր Աստուծոյ հրեշտակներն են, ինչպէս որ անոր ըսեր էր։
15 Ու Մովսէս Ռուբինի որդւոց ցեղին՝ անոնց ազգաւոհմիներուն համեմատ



16 ժառանգութիւն տուաւ։ Եւ անոնց սահմանն եղաւ. Առնոն ձորին ու ձորին վրայ եղող Արոերէն ու ձորին մէջ եղող քաղաքէն, Մեդաբայի քով
17 եղած բոլոր դաշտը, Եսբոն ու անոր բոլոր դաշտային քաղաքները, Դիբոն, Բամոթ-բաղ ու Բեթբեղէղմոն,
18 Ու Յասսա, ու Կադեմոթ, և Մեփաաթ,
19 յաթ, Ու Կարիաթեմ, և Սեբամա, և
20 Սարեթ-սահառ Ծմակ լեռան վրայ, Ու Բեթ-փեգովր, և Աշեդովթ-փսգա, և
21 Բեթեհսիմթ, Ու դաշտին ամէն քաղաքները, և Եսբոնի մէջ թագաւորող Ամորհացւոց Սիհոն թագաւորին բոլոր թագաւորութիւնը, որ զանիկա ու Մադիամու իշխանները՝ Եվին, Րեկոմը, Սուրը, Ուրը ու Ռեբեն, այն երկրին մէջ բնակող Սիհոնին նախարարները զարկաւ։ Ու Իսրայէլի որդիքը Բեհղեան Բաղաամ հարցուկն ալ սրով մեռցուցին Ե՛ւ բաղաքացիներուն հետ։ Ռուբինի որդւոց սահմանը Յորդանան և՛ եղաւ սահմանն եղաւ։ Ռուբինի որդւոց ըստ ազգաւոհմիներուն ժառանգութիւն ասիկա է, այս քաղաքներն ու անոնց գիւղերը։
24 Ու Մովսէս Գադի ցեղին՝ Գադի որդւոց իրենց ազգաւոհմիներուն համեմատ ժառանգութիւն տուաւ։ Եւ անոնց սահմանն ասիկա եղաւ. Յազեր ու բոլոր Գաղաադու քաղաքները, և Ամմոնի որդւոց երկրին կէսը՝ մինչև Արոեր, որ Ռաբբայի դիմացն է։ Ու Եսբոնէն մինչև Ռամոթ-Մասպեհ ու Բետոնիմ, և Մանայիմէն մինչև Դաբիր։ Ու Հովմի մէջ՝ Բեթ-արամ ու Բեթնամրա, Սոկքովթ ու Սափոն՝ Եսբոնի Սիհոն թագաւորին թագաւորութեան մնացորդը, Յորդանան ու անոր սահմանը, մինչև Քինեռեթի ծովուն ծերքը՝ Յորդանանու անդիի կողմը դէպ արեւելք։ Գադի որդւոց ժառանգութիւնն իրենց ազգաւոհմիներուն համեմատ ասիկա է, այս

*Կամ հովիտի

քաղաքներն ու առնոց գեղերը։
29 Եւ Մովսէս Մանասէի կէս ցեղին [illegible]
[illegible] որ Մանասէի
որդւոց կէս ցեղին եղաւ իրենց ազ-
30 գատոհմիներուն համեմատ։ Ու անոնց
սահմանն ասկից եղաւ. Մանայիմէն
Բասանի Ովգ թագաւորին բոլոր Բա-
գաւորութիւնը՝ բոլոր Բասան, և Բա-
սանի մէջ եղող Յայիրի բոլոր գիւղա-
31 քաղաքները՝ վաթսուն քաղաք. Եւ
Գաղաադ ու կէսը՝ և Աստարովթ ու
Եդրայի՝ Բասանի մէջ Ովգի Թագա-
ւորութեան քաղաքները Մանասեան
Մաքիրի որդւոց եղաւ, այսինքն Մա-
քիրի որդւոց կէսին՝ իրենց ազգա-
տոհմիներուն համեմատ։
32 Ասոնք են [illegible] որ Մով-
սէս Մովաբի դաշտերուն մէջ՝ Երիքով-
վի դէմ՝ Յորդանանու անդիի կողմը
դէպ արեւելք ժառանգութիւն բա-
33 ժանեց։ Բայց ՄովսէսՂեւիի ցեղին ժա-
ռանգութիւն չտուաւ. անոնց ժառան-
գութիւնն Իսրայէլի Տէր Աստուածն
է, ինչպէս որ անոնց ըսաւ։

## Գլ. ԻԴ

1 Եւ Քանանու երկրին մէջ Իսրայէլի որ-
դւոց ժառանգած [illegible] որ եղեալար քահանան և Նաւեան Յե-
սուէ ու Իսրայէլի որդւոց ցեղերուն
նահապետութեան իշխանները ժառան-
2 գեցուցին անոնց, ինն ու կէս ցեղերուն
վիճակով [illegible] անոնց ժառան-
գութիւնը, ինչպէս որ Տէրը Մովսէսի
3 ձեռքով հրամայեր էր։ Քանզի Մով-
սէս երկու ու կէս ցեղերուն Յորդա-
նանու անդիի կողմը ժառանգութիւն
տուեր էր. բայց անոնց մէջ՝ Ղեւտա-
րիներուն ժառանգութիւն տուած չէր։
4 Որովհետև Յովսէփի որդիքը երկու
ցեղ էին, Մանասէ ու Եփրեմ. ու եր-
կրին մէջ Ղեւտացւոց բաժին չտուին,
բայց միայն քաղաքներ՝ բնակելու հա-
մար, ու արուարձաններն ալ՝ անոնց
խաշանց և սեպհականութեան համար։
5 Ինչպէս որ Տէրը Մովսէսի պատուիրեր
էր, իսրայէլի որդիքն այնպէս ըրին,
ու երկիրը բաժնեցին։
6 Եւ Յուդայի որդիքը Գաղգաղայի մէջ
Յեսուէ մօտեցան, և Կենեզեան Յեփո-
ննէի որդին Քաղէբ անոր ըսաւ, Դուն
գիտես այն խօսքը՝ զոր Տէրը Կադէս-
բառնեայի մէջ Աստուծոյ մարդուն
Մովսէսի հետ խօսեցաւ ինծի ու քեզի
7 համար։ Երբ Տէրոջը ծառան Մովսէս
զիս Կադէս-բառնեայէն իրկեց երկիրը
լրտեսելու համար, ես քառասուն տա-
րեկան էի. և սրտիս մէջ եղածին պէս
8 անոր լուր բերի. Սակայն իմ հետս ելլող
եղբայրներս ժողովուրդին սիրտը
թուլցուցին, բայց ես՝ իմ բոլոր սրտո-
տութս իմ Տէր Աստուծոյս հետազօտ-
9 ցայ։ Եւ Նոյն օրը Մովսէս երդում ըս-
րաւ՝ ըսելով, Անշուշտ քու ոտքիդ կոխած
երկիրն անպատճառ քեզի ու քու որ-
դւոցդ յաւիտեան ժառանգութիւնն
պիտի ըլլայ. որովհետև իմ Տէր Աս-
տուծոյս քու բոլոր սրտովդ հետազո-
10 տութիւն ըրիր։ Արդ ահա Տէրն իր ը-
սածին պէս այս քառասուն տարին
իմ կեանքս պահեց, այն ժամա-
նակէն ի վեր՝ որ Տէրը այս խօսքը
Մովսէսի ըսաւ, քանի որ Իսրայէլ ա-
նապատին մէջ կը պտրտէր. և ահա ես
այսօր ութսուն տարեկան եմ.
11 Եւ այսօր տակաւին ուժով եմ, ինչ-
պէս որ էի Մովսէսի զիս իրկած օրը.
այն ատենի զօրութիւնս ինչպէս էր, հի-
մակուան զօրութիւնս ալ այնպէս է՝
պատերազմելու, և ելլելու ու մտնելու
12 կռմանէ։ Ուստի հիմա ինծի տուր այն
լեռը, որուն համար Տէրը այն օրը խօս-
եցաւ. քանզի դուն այն օրը լսեցիր
որ ենակիմներուն հոն [illegible] և մեծ
պարսպապատ քաղաքներ [illegible] թերևս
Տէրն իմ հետս ըլլայ, և ես զանոնք
13 վռնտեմ, ինչպէս որ Տէրը ըսաւ։ Եւ
Յեսուէ զանոնք օրհնեց, ու Յեփոննէի
Քաղէբին՝ Քերրոնը ժառանգութիւն
14 տուաւ։ Ասոր համար Քերրոն Կենեզ-

* Եբր. իմ Տէր Աստուծոյս հետևէն լե-
ցուցի։



եան Յեփոննէի որդւոյն Քաղէբի ժա-
ռանգութիւն եղաւ մինչև այսօր,
քանզի Իսրայէլի Տէր Աստուծոյն բո-
15 լոր սրտով հետազօտութիւն ըրաւ։ Ու
Քերրոնի անունն առաջուց Կարաթ-
արբա էր. — այն Աբբա [illegible] նակի մեծ
[illegible] մարդ էր։
Եւ երկիրը պատերազմէն հանգստա-
ցաւ։

## Գլ. ԺԵ

1 Եւ Յուդայի որդւոց ցեղին վիճակն
իրենց տոհմերուն համեմատ մինչև Ե-
դոմայեցւոց սահմանը կը հասնէր. հա-
րաւային կողմն Սին անապատն [illegible]
հարաւային ծայրն էր։
2 Եւ անոնց հարաւային սահմանն այս
եղաւ, Ագի ծովուն ծայրէն՝ այսինքն
3 հարաւակողմը նայող ծոցէն [illegible] Եւ
հարաւային կողմն Ակրաբիմի զառ՝ի
վերը ելլելով՝ Սին կ՚անցնի, ու հարա-
ւային կողմէն Կադէս-բառնեայ ելլե-
լով՝ Եսրան կ՚անցնի. հետը դէպ Ադ-
դար ելլելով՝ Կարկային կողմը կը պըտ-
4 պտի. Եւ հետը Ասեմոնէն անցնելով՝ Ե-
գիպտոսի հեղեղատը կ՚ելլէ, ու այս
սահմանը ծովուն մէջ կը վերջանայ. Ձեր
հարաւային սահմանն այս է։
5 Եւ արեւելեան սահմանն Ագի ծովը կ
մինչև Յորդանանու ծայրը։
Եւ հիւսիսային կողմի սահմանը Յոր-
դանանու ծայրն եղող ծոցէն [illegible]
6 Եւ այս սահմանը մինչև Բեթագղա կ՚ելլէ,
ու Բեթարաբայի հիւսիսային կող-
մէն կը պտրտի. և այս սահմանը մին-
չև Ռուբենեան Բահանին վէմը կ՚ելլէ.
7 Նաեւ այս սահմանն Աքորի ձորէն
Դաբիր կ՚ելլէ, և հիւսիսային կողմէն
Գաղգաղա կը դառնայ, որ այն ձորին
հարաւակողմը եղող Էդոմիմի զառ՝ի
վերին դիմացն է. և այս սահմանը կեն-
սամիսի ջուրէն կ՚անցնի, և Ռոգելի
8 աղբիւրը կը վերջանայ. Եւ այս սահմա-
նը Ենոմի որդւոյն ձորը՝ հարաւային
կողմէն Յերուսաղէմ այսինքն Երուսաղէ-
մի քով կ՚ելլէ. հետը այս սահմանը
մինչև այն լեռան գլուխը կ՚ելլէ, որ
արեւմտեան կողմէն Ենոմի ձորին դի-
մացն է, ու հիւսիսային կողմէն Ռա-
9 փայնոց ձորին ծայրն է. Եւ այս սահ-
մանը լեռան գլխէն մինչև Նեփթո-
ւայի ջուրին աղբիւրը կը հասնի, ու
Եփրոն լեռան քաղաքները կ՚ելլէ. հե-
տը այս սահմանը մինչև Բաալա՝ այ-
10 սինքն Կարիաթարիմ կը հասնի. Եւ այս
սահմանը Բաալայէն դէպ արեւմուտք
Սէիր լեռը կը պտրտի, ու հիւսիսային
կողմէն Յարիմ լեռան քովէն կ՚անց-
նէ, որ անկիւնի բնութեան է. անկէ ի՛ջ-
սամիս կ՚իջնէ, ու Թամնա կ՚անցնի
11 Եւ այս սահմանն Ակկարոնի քով կ՚ել-
լէ դէպ ի հիւսիս, ու այս սահմանը
Սաքարօն հասնելով՝ Բաալա լեռնէն
կ՚անցնի, ու Յաբնէլ կ՚ելլէ. և այս սահ-
մանը ծովուն մէջ կը վերջանայ։
12 Եւ արեւմտեան սահմանը մեծ ծովուն
եզերքն է. Յուդայի որդւոց սահման-
նը չորս կողմանի իրենց տոհմերուն հա-
մեմատ ասիկա է։
13 Եւ Յեփոննեան Քաղէբի Յուդայի որ-
դւոց մէջ Ենակի հօր Արբայի քաղա-
քը՝ այսինքն Քերրոն բաժին տուաւ,
ինչպէս որ Տէրը Յեսուէի հրամայեր էր։
14 Եւ Քաղէբ անկէ Ենակի երեք որդի-
ները՝ Սէսան ու Աքիմանը և Թոլմին
15 Ենակի որդիքը վռնտեց. Եւ անկէ
Դաբիրի բնակչաց վրայ գնաց. (ու Դա-
բիրի անունն առաջուց Կարիաթ-սե-
16 փեր էր.) Եւ Քաղէբ ըսաւ, Ով որ Կա-
րիաթ-սեփերը զարնէ ու առնէ, իմ
Աքսա աղջիկս անոր կնութեան պիտի
17 տամ։ Եւ Քաղէբի եղբօր Կենեզի որ-
դին Գոթնիէլ առաւ զանիկա. ու Քա-
ղէբ իր Աքսա աղջիկն անոր կնութեան
18 տուաւ։ Եւ երբ [illegible] գնաց, զա-
նիկա յորդորեց որ իր հօրմէն ա-
գարակ մը ուզէ. և իջուն վրայէն վայ
իջաւ. ու Քաղէբ անոր ըսաւ, Ինչ կ՚ու-
19 զաս քեզի. Եւ աղջիկն ըսաւ, Ինծի
օրհնութիւն տուր. որովհետև ինծի հա-
րաւային երկիր մը տուիր, ինծի

* Աբբա՝ Աբրայի քաղաքը։

*ջուրի ազբիւրները՝ ալ առաւ. ուստի անոր՝ վերի ազբիւրներն ու վարի ազբիւրները առաւ.
20 Յեղոպայի որդւոց ցեղին ժառանգութիւնն իրենց առ՚ի ըերդաւն համեմատ ա-
21 սիկա է։ Ու Եղովմի առ՚ի նդին քով հարաւային կողմը Յեղոպայի որդւոց ցեղին վերջին քաղաքներն ասոնք են. Կաբ-
22 սէել, Եդեր, Յագուր, Կինա, Դիմոնա,
23 Ադադա, Կադէս, Հասոր, Յիթնան,
24 Զիփ, Տելէմ, Բեաղոթ, Հասոր-ադադա-
25 թա, †Կարիւոթ, Եսրոն՝ որ է Հասոր,
26 Ամամ, Սամա, Մօլադա, (27) Ասըր-
28 գադգա, Եսէմոն, Բեթ-փաղէթ, Ա-
29 սըր-աուազ, Բերսաբէէ, Բաղիօթիա,
30 Բաազա, Իլէմ, Ասէմ, Էլթոլադ, Փէ-
31 թել, Հորմա, Սիկեղակ, Մադմաննա,
32 Սանսաննա, Լաբաովթ, Սէլէմ, Ային
ու Ռեմոն. ամէնը քսանեւինը քաղաք
է, և անոնց գեղերը։
33 Դաշտավայրի մէջ՝ Եսթաուղ, Սո-
34 րաա, Աշնա, Զանոավ, Ենգաննիմ, Թա-
35 փուա, Ենայիմ, Յերմութ, Ոդոդամ, Սո-
36 քով, Ազեկա, Սագարիմ, Ադիթայիմ
և Գադերա (ու Գադերոթայիմ.) տասնեւչորս քաղաք ու անոնց գեղերը։
37 Սէննան, Ադաաս, Մադդադգադ,
38 Դաղաան, Մասփա, Յեկթէէլ, (39) Լա-
40 քես, Բազկաթ, Լէդդոն, Գաբբոն, Լա-
41 մաա, Բիթթիս, Գադերօթ, Բեթ-գադոն,
Նաամա ու Մակեդա. տասնեւվեց քա-
42 ղաք և անոնց գեղերը։ Լիբնա, Եթէր,
43 Աշան, Յեփթա, Աշնա, Նեսիբ, (44) Կէ-
իլա, Աքեզիբ և Մարեսա. ինը քաղաք
45 ու անոնց գեղերը։ Եկրոնն իր գիւ-
46 ղաքաղաքներով ու գեղերով։ Եկ-
կարոնէն մինչև Ծովը, Աշդոդին քով
մօտ բոլոր †տերիներն իրենց գեղերով։
47 Աշդոդի իր գիւղաքաղաքներով ու
գեղերով. Գազա իր գիւղաքաղաքներով ու գեղերով մինչև Եգիպտոսի
հեղուկտն ու մինչև մեծ Ծովը իր սահմաններով։

48 Ու լեռնադաշտի վրայ՝ Սամիր, Յաթիր,
49 Սոքով, Դաննա, Կարիաթ-սաննա՝ այ-
50 սինքն Դաբիր, Անաբ, Եսթեմով, Անիմ,
51 Գոսեմ, Քօղոն ու Գեղոն. տասնեւմէկ
52 քաղաք ու անոնց գեղերը։ Եբեր, Դու-
53 մա, Եսան, Յանում, Բեթ-թափուա, Ա-
54 փեկա, Քամփասիա, Կարիաթ-արբա՝ այ-
սինքն Բերբրոն, ու Սիովր. ինը քաղաք
55 և անոնց գեղերը։ Մաոն, Կարմելոս,
56 Զիփ, Յեսուա, Յեզրեէլ, Յեկդեամ,
57 Զանոավ, Կային, Գաբաա ու Թամնա.
տասը քաղաք ու անոնց գեղերը։ Ա-
58 զուզ, Բեթ-աուր, Գեդովր, Մաարաթ,
Բեթ-անովթ ու Եէլթեկան. վեց քաղաք
60 ու անոնց գեղերը։ Կարիաթ-բաալ՝ այ-
սինքն Կարիաթ-արիմ ու Հաբբաա. երկու քաղաք ու անոնց գեղերը։
61 Անապատին մէջ՝ Բեթ-արաբա, Մադ-
62 դին, Սեքաքա, Նիբսան, Աղի քաղաքը ու Ենգադդի. վեց քաղաք ու անոնց գեղերը։
63 Բայց Յեբուսացին որ կը բնակէր Երուսաղէմի մէջ՝ Յուդայի որդւոց հետ Երուսաղէմի մէջ կը բնակին մինչև այսօր։

## ԳԼ. ԺԶ

1 Ու Յովսեփի որդւոց վիճակն Երի-
քովայ մօտ՝ Յորդանանէն Երիքովի դէմ՝ Յորդանանէն Երիքովի կողմէն անապատը կ՚երթայ, որ Երիքովէն լեռնակողմը Բեթէլ կ՚ելլէ,
2 մինչև Բեթէլէն Լուզ կ՚ելլէ, և Արքի-
3 սացիներուն սահմանէն կ՚անցնի, Եւ աբդեմական կողմէն Յեփլեթի սահմանը կ՚իջնէ, մինչև վարի Բեթ-որոնի սահմանն ու մինչև Գազեր, և Ծովուն մէջ
4 կը վերջանայ։ Ու Յովսեփի որդիքը՝ Մանասէ ու Եփրեմ ժառանգութիւն առին։
5 Ու Եփրեմի որդւոց սահմանն իրենց ազգերուն համեմատ այս եղաւ. այսինքն անոնց ժառանգութեան սահմանն արեւելեան կողմէն Ատարոթ-ադդարէն մինչև վերի Բեթ-որոնը։ Ու
6 դարձ եղաւ մինչև Ծովը։ Ու Միքմեթաթ՝ Ծովը կ՚ելլէ, և այս սահմանն արեւելեան կողմէն մինչև Թաանաթ-սելով կը պտտի, և հոկը արեւելեան
7 կողմէն Յանովհ կը մտնէ, ու Յանովհէն Ատարովթ ու Նաարա կ՚իջնէ, և Երիքովի քովէն անցնելով Յորդանան
8 կ՚ելլէ։ Ե՚ այս սահմանը Թափուայէն կանաս հեղեղատը կ՚երթայ արեւմտեան կողմէն, և Ծովուն մէջ կը վերջանայ։ Եփրեմի որդւոց ցեղին ժառանգութիւնն իրենց առ՚ի ըերդաւն համեմատ ա-
9 սիկա է։ Նաև Եփրեմի որդւոց համար զատուած քաղաքները Մանասէի որդւոց ժառանգութեան մէջ էին, բոլոր քաղաքներն իրենց գեղերով։
10 Ու անոնք Գազերի մէջ բնակող Քանանացիները չէ՚ բնաւնկեցին. և Քանանացիները մինչև այսօր Եփրեմի մէջ բնակելով՝ հարկատու ծառաներ եղան։

## ԳԼ. ԺԷ

1 Ե՚ ասիկա եղաւ Մանասէի ցեղին վիճակը, քանզի անիկա Յովսեփի անդրանիկն էր. Մանասէի անդրանիկը Մաքիր՝ Գաղաադի հայրը պատերազմող մարդ՝ էր ըլլալուն համար, Գաղաադ ու
2 Բաասան անոր եղաւ։ Ե՚ Մանասէի միւս որդիքն ալ՝ Աբիեզերի որդիքը, Քեղէքի որդիքը, Ասրիէլի որդիքը, Սիքեմի որդիքը, Եփերի որդիքը, ու Սեմիդայի որդիքը իրենց առ՚ի ըերդաւն համեմատ արուներն ասոնք են։
3 Յովսեփեան Մանասէի սրտ զատուներէն իրենց առ՚ի ըերդաւն համեմատ ասոնք են. Ե՚ Մանասէի որդւոյն Մաքիրի որդւոյն Գաղաադի որդւոյն Ոփերի որդին Սալպաադ որդի չունէր, բայց միայն աղջիկներ, ու անոր աղջիկներուն անուններն ասոնք են. Մաա-
4 լա, Նոա, Եգլա, Միլքա ու Թերսա։ Ասոնք Եղիազար քահանային առջև, Նաւեան Յեսուի առջև ու իշխաններուն առջև՝ Տէրոջը հրամայեց որ մեր եղբարց մէջ մեզի ժառանգութիւն տայ։ Ու Յեհո-
5 վան հրամանա անոնց Հօրեղբարց մէջ
6 անոնց ժառանգութիւն տուաւ։ Ե՚ Մանասէի Յորդանանու անդի կողմը եղող Գաղաադ ու Բասանի երկիրն ի զատ
7 տասը բաժին ինկաւ. Քանզի Մանասէի աղջիկներն անոր տղոց մէջ ժառանգութիւն առին, ու Գաղաադ ու երկիրը Մանասէի միւս որդւոցն եղաւ։
8 Ե՚ Մանասէի սահմանն Տափուայէն կողմն էր. Եփրեմի որդւոց համար զատուած քաղաքներուն կը հասնի Տափուայ երկիրը Մանասէի եզեր, և Մանասէի սահմանն ալ՝ Եփրեմի որդւոց ժառանգութեան մէջ էր։
9 Նաև Եփրեմի որդւոց համար զատուած քաղաքները Մանասէի որդւոց ժառանգութեան մէջ էին, բոլոր քաղաքներն իրենց գեղերով։
10 Ե՚ անոնք Գազերի մէջ բնակող Քանանացիները չէ՚ բնաւնկեցին. և Քանանացիները մինչև այսօր Եփրեմի մէջ կը կենան, և Ծովուն մէջ կը
11 վերջանայ։ Հարաւային կողմը Եփրեմի, և հիւսիսային կողմը Մանասէի ըլլալով, անոնց սահմանն Ծովը եղաւ. և հիւսիսային կողմէն Ասերի, և արեւելեան կողմէն Իսաքարի հետ կը միանան։
12 Ե՚ Իսաքարի ու Ասերի Բեթ-սանի ու անոր գիւղաքաղաքները, և Յիբղաամ ու անոր գիւղաքաղաքները, և Դորի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները, և Ենդովրի բնակիչներն ու անոր գիւղաքաղաքները, և Թաանաքի բնակիչներն ու անոր գիւղաքաղաքները, Մակեդովի բնակիչներն ու անոր գիւղաքաղաքները, այս երեք գաւառը Մանասէի եզեր։ Ե՚ Մանասէի որդիքը չկրցան այս քաղաքներուն բնակիչները զուրս վռնտել, և Քանանացիները կամակորութեամբ այն երկրին մէջ բնակեցան։
13 Ե՚ Իսրայէլի որդիքը երբ ուժովցան՝ հարկատու ըրին Քանանացիները, բայց զանոնք չվռնտեցին խաթաւ։
14 Ե՚ Յովսեփի որդիքը Յեհոսի հետ

*Կամ Ասեր-մաքմեթաթէն։

խօսեցան ու ըսին, ինչո՞ւ համար ինծի դէմ մէկ վիճակ ու մէկ բաժին ժառանգութիւն տուիր, և ես բազմաթիւ ժողովուրդ եմ. քանզի Աստուած մինչև հիմա զիս օրհնեց։ 15 Եւ Յեսու անոնց բսաւ, Թէ որ դուն բազմաթիւ ժողովուրդ ես, անտառը ելլը ու Ռափայնոց երկրին մէջ քեզի տեղ շինէ, որովհետև Եփրեմի լեռը քեզի նեղ կու 16 գայ։ Եւ Յովսեփի որդիքն բսին, Լեռը մեզի հասար չէ. և հովտի երկրին մէջ՝ Բեթսանի մէջ ու անոր գիւղաքաղաքներուն մէջ, և Յեզրայելի հովտին մէջ բնակող բոլոր քանանացիները 17 երկաթէ կառքեր ունին։ Եւ Յեսու Յովսեփի ան՝ այսինքն Եփրեմի ու Մանասէի հետ խօսելով բսաւ, Դուն բազմաթիւ ժողովուրդ ես, և շատ զօրութիւն քեզի դէմ մէկ վիճակ չըլլայ։ Լեռը քովիդ ըլլայ. և որովհետև անիկա անտառ է, զանիկա կարէ, և մինչև ծայրը քովիդ ըլլայ. քանզի դուն Քանանացիներն անկէ պիտի վռնտես, թէև անոնք երկաթէ կառքեր ունենան ու զօրաւոր ըլլան։

## Գլ. ԻԸ

1 Եւ իսրայէլի որդւոց բոլոր ժողովքը Սելովի մէջ ժողովեցան, և հոն ժողովքի խորանը կանգնեցին, և երկիրը անոնց առջև նուաճեցաւ։

2 Եւ իսրայէլի որդւոց մէջ եօթը ցեղ մնացեր էր, որոնք իրենց ժառանգութիւնն առած չէին։ 3 Եւ Յեսու իսրայէլի որդւոց բսաւ, Մինչև ե՞րբ անհոգութիւն պիտի ընէք, ու պիտի չերթաք ժառանգել այն երկիրը, զոր ձեր հայրերուն Տէր Աստուածը ձեզի տուաւ։ 4 Ձեր ի ցեղէ երեք մարդ *ընտրեցէք, ու զանոնք զրկեմ, որ երթան այն երկրին մէջ պտրտին, և զանիկա իրենց ժառանգութեան համեմատ գրեն, և եկէք ինծի զառնան։ 5 Զա-

* Եբր. տուէք։

նիկա եօթը մասերու բաժնեն. Յուդա իր սահմանին մէջ հարաւային կողմը կենայ, և Յովսեփի տունն իրենց սահմաններուն մէջ հիւսիսային կողմը կենան։ 6 Նաեւ դուք երկիրը եօթը բաժին գրեցէք, ու հոս ինծի բերէք, և մեր Տէր Աստուծոյն առջև հոս ձեզի համար վիճակ ձգեմ. Քանզի Ղեւտացիները ձեր մէջ բաժին չունին, որովհետև անոնց ժառանգութիւնը Տէրոջը քահանայութիւնն է. և Գադ ու Ռուբեն և Մանասէի կէս ցեղը Յորդանանս անդին կողմը զեպ արեւելք իրենց ժառանգութիւնն առին, որոնք Տէրոջը ծառան Մովսէս անոնց տուաւ։

8 Եւ այն մարդիկը ելան գացին. և Յեսու այն երկիրը գրելու գացողներուն պատուիրեց ըսելով, Գացէք և այն երկրին մէջ պտրտելով զանիկա գրեցէք. եւ ետքը ինծի դարձէք, որ հոս Սելովի մէջ Տէրոջը առջև ձեզի համար վիճակ ձգեմ։ Եւ այն մարդիկը գացին, և այն երկրին մէջ պտրտեցան, և զանիկա իր քաղաքներով եօթը բաժին ընելով՝ գրքի մը վրայ գրեցին, 10 և Սելովի՝ բանակը եկան Յեսուի։ Եւ Յեսու Սելովի մէջ Տէրոջը առջև անոնց համար վիճակ ձգեց. և Յեսու հոն երկիրը բաժնեց իսրայէլի որդւոց՝ իրենց բաժիններուն համեմատ։

11 Եւ Դաւ Բենիամինի որդւոց ցեղին վիճակը ելաւ իրենց տուներուն համեմատ. և իրենց վիճակին սահմանը Յուդայի որդւոց ու Յովսեփի որդւոց 12 մէջտեղ ելաւ։ Եւ անոնց հիւսիսային կողմի սահմանը Յորդանանէն եղաւ. և այս սահմանը հիւսիսային կողմին երիքովի քով կ՚ելլէ, և դէպ արեւմուտք լեռը վեր կ՚ելլէ, և Բեթաւանի անապատովը կ՚ելլէ։ Եւ սահմանն անկէ Լուզէն կ՚անցնի, Լուզի՝ այսինքն Բեթէլի հարաւային կողմէն. եւ այս սահմանն Աստարովթ-ադար կ՚իջնէ, որ վարի Բեթորոնի հարաւային կողմը կեղոր լեռան քովն է։ Եւ այս սահմանն արեւմուտեան ծայրը հասնելով՝ դէպ ի հարաւ կը գառնայ հա-



րաւային կողմէն Բեթորոնի դիմացի լեռնէն, և կը վերջանայ Կարիաթ-բաալի մէջ՝ որ է Կարիաթարիմ, Յուդայի որդւոց քաղաքը։ Արեւմտեան ծայրն 15 ալ կէ։ Եւ հարաւային կողմը Կարիաթարիմի ծայրէն վերէն՝ սահմանը դէպ արեւմուտք կ՚երթայ, և Նեփթոյի ջուրերն աղբիւրը կ՚ելլէ։ Եւ այս 16 սահմանը Ռափայնոց հովիտն մէջ՝ հիւսիսային կողմը հզոր Ենոմի որդւոց ձորն դիմացի լեռան հզօրը կ՚իջնէ, և Յեբուսի քովէն դէպ ի հարաւ Ենոմի Դազրելովի կ՚ելլէ, և Ռուբենեան 17 աղբիւրը կ՚իջնէ։ Եւ հիւսիսային կողմէն նշան կտրելով Ենսամիս կ՚ելլէ, և ՀադՀդումինի դառնալիքին դիմացը ելլէ Գազելովի կ՚ելլէ, և Ռուբենեան 18 Բոհանի վէմը կ՚իջնէ։ Եւ ետքը Աբարայի դիմացի կողմէն դէպ ի հիւսիս անցնելով Աբարա կ՚իջնէ։ Եւ ետքը այս սահմանը դէպ ի հիւսիս Բեթ-ոգլայի քովէն կ՚անցնի, ու այս սահմանն Ալի ծովուն հիւսիսային ծոցը՝ Յորդանանու հարաւային ծայրը կը վերջանայ։ Հարաւային սահմանն ասիկա է։ Եւ արեւելեան կողմի սահմանը Յորդանան է։ Բենիամինի որդւոց ժառանգութիւնը չորս կողմանի իր սահմաններով անոնց տուներուն համեմատ ասիկա է։

21 Եւ ասոնք են Բենիամինի որդւոց ցեղին քաղաքներն իրենց տուներուն 22 համեմատ. Երիքով, Բեթ-ագլա, Եմէկ-կասիս, Բեթարաբա, Սեմարիմ, Բեթ-24 Թէլ, Աւիմ, Փարա, Եփրա, Բեթ-փարամմոնա, Համոնի ու Գաբաա. տասներկու 25 քաղաք և անոնց գիւղերը։ Գաբաան, Ռամա, Բերոթի, Մասիա, Կեփիրա, 27 Մոսա, Ռեկեմ, Յեբրեայէլ, Թարգաս, 28 Սելա, Էլէփ, Յեբուս՝ այսինքն Երուսաղէմ, Գաբաաթ ու Կարիաթ. տասներկու քաղաք և անոնց գիւղերը։ Բենիամինի որդւոց ժառանգութիւնն իրենց տուներուն համեմատ ասիկա է։

## Գլ. ԻԹ

1 Եւ երկրորդ վիճակը Շմաւոնի ելաւ, Շմաւոնի որդւոց ցեղին իրենց տուներուն համեմատ և անոնց ժառանգութիւնը Յուդայի որդւոց ժառանգութեան մէջ եղաւ։ 2 Եւ անոնց ժառանգութեան մէջ ալ Բերսաբէէ, (Սաբէէ,) Մողադա, 3 Ասար-սուսաղ, Բարա, Ասեմ, 4 Էլթուղադ, Բեթուէլ, Հորմա, (5) Սիկեղակ, Բեթ-մարքաբովթ, Ասար-սուսա, 6 Բեթ-լաբաովթ և Սարուհէն. տասներեք քաղաք և անոնց գիւղերը։ Ային, Ռեմոն, Եթեր և Ասան. չորս քաղաք 8 ու անոնց գիւղերը։ Եւ այս քաղաքներուն բոլորտիքը եղած բոլոր գիւղերը՝ մինչև *Բաղաղեթ-բէկեր ու Հարաւային Ռամաթ։ Շմաւոնի որդւոց ցեղին ժառանգութիւնն իրենց տուներուն համեմատ 9 ասիկա է։ Շմաւոնի որդւոց ժառանգութիւնը Յուդայի որդւոց բաժնէն եղաւ, քանզի Յուդայի որդւոց բաժինը չատ էր իրենց. անոր համար Շմաւոնի որդիքն անոնց ժառանգութեան մէջ ժառանգութիւն առին։

10 Եւ երրորդ վիճակը Զաբուղոնի որդւոց ելաւ իրենց տուներուն համեմատ. և անոնց ժառանգութեան սահմանը մինչև Սարիդ եղաւ։ Եւ անոնց 11 սահմանը դէպ ի ծովը ու Մարիդայի կ՚ելլէ, և Դաբասեթի կը հասնի, ու Եկնաամի դիմացը եղող ձորը կը հասնի, 12 Եւ Սարիդեան դէպ արեւելեան կողմը՝ Քասղոթթաբորի սահմանը կը դառնայ, և Դաբերաթեան ելլելով՝ վեր Յափիա կ՚ելլէ, 13 Եւ անկէ դէպ արեւելք անցնելով՝ Գեթ-փոփեր և Իթ-ազասին կ՚անցնի, և Ռեմոն-մեթոար և Նուա կ՚ելլէ։ Եւ ետքը այս սահմանը հիւսիսային կողմէն Եննաթոն կը պտրտի, և Եփթայելի ձորին մէջ կը վերջանայ. 15 Եւ Կաատաթ, և Նաղոլ, և Սեմրոն ու Եադեղա, և Բեթլեհեմ. տասներկու 16 քաղաք և անոնց գիւղերը։ Զաբուղոնի որդւոց ժառանգութիւնն իրենց

* Կամ Բաղաղեթ-բէկեր-ռամաի հարաւային կողմին։

տաճիներուն համեմատ ասիկա է, այս քաղաքներն ու անոնց գեղերը։
17 Չորրորդ վիճակին իսաքարին եղաւ, իսաքարի որդւոց իրենց տոհմերուն
18 համեմատ։ Եւ անոնց սահմանն ասիկա եղաւ։ Յեզրայէլ, ու Քասղովիթ, և
19 Սունեմ, Եւ Ափերիմ, և Սիհոն, և Ա-
20 նարէթ, Եւ Ռաբբիթ, և կեսիօն, և
21 Աբէս, Եւ Ռեմեթ, և Ինգանիմ և Ե-
22 զրադ, և Բեթփասես։ Եւ այս սահմանը հասաւ Թաբոր, Սահսիմա ու Բեթսամիս
23 կը հասնի, և անոնց սահմանը Յորդանանու մէջ կը վերջանայ։ տասնեւվեց
24 քաղաք ու անոնց գեղերը։ իսաքարի որդւոց ցեղին ժառանգութիւնն իրենց տոհմերուն համեմատ ասիկա է,
25 այս քաղաքներն ու անոնց գեղերը։ Եւ հինգերորդ վիճակն Ասերի որդւոց
26 ցեղին եղաւ իրենց տոհմերուն հա-
27 մեմատ։ Եւ անոնց սահմանն ասիկա եղաւ։ Փեղղեթ, և Ազէ, և Բետէն, և
28 Ափսէթ, Եւ Հելքաթ, ու Հալի, և Բետէն, և Մաասէ, և արեւմտեան կողմէն մինչև Սիւր-լեւնաթ կը հասնի,
29 Եւ արեւելեան կողմէն դէպ ի Բեթդագոն կը դառնայ, և հիւսիսային կողմէն Զաբուղոն, Յեփթայէլի ձորը, Բեթ-
30 մէկ ու Նէիէլ կը հասնի, և ձախ կողմէն Քաբուղ կ'ելլէ, Եւ Եբրոն, և Բոռ,
31 ու Համմոն, և Կանա, մինչև մեծ Սիդոն։ Նաբը այս սահմանը դառնայ մինչև Տիբռա ամուր քաղաքը, և այս սահմանն Ուսա դառնալով Ծովսան մէջ՝ Աբեզրէի վիճակին մէջ կը
32 վերջանայ։ Եւ Ամմա, և Ափէկ, և Բոռքսանեւերկու քաղաքներ ու անոնց գե-
33 ղերը։ Աների որդւոց ցեղին ժառանգութիւնն իրենց տոհմերուն համեմատ ասիկա է, այս քաղաքներն ու անոնց գեղերը։
34 Վեցերորդ վիճակը Նեփթաղիմի որդւոց եղաւ, այսինքն Նեփթաղիմի որդւոց իրենց տոհմերուն համեմատ։ Եւ անոնց սահմանն ասիկա եղաւ։ Հելեփէն ու Ալոնէն մինչև Սաանանիմ, ու Ադամի Նագեբ, և Յաբնէլ մինչև Լակում, և
35 ելքերը Յորդանանու մէջ կը վերջա-
36 նայ։ Եւ այս սահմանն արեւմուտքն կողմէն Ազանոթ-Թաբոր կը դառնայ, և անկէ Հուկոկ կ'ելլէ, և հարաւային կող-
37 մէն մինչև Զաբուղոն կը հասնի, և արեւմտեան կողմէն մինչև Ասեր, և արեւելեան կողմէն մինչև Յուդա ու Յոր-
38 դանան կը հասնի։ Եւ պարսպապատ քաղաքներն Ասեդիմ, Սէր, Ամաթ, Ռեկ-
39 կաթ, Քենեռեթ, Ադամա, Ռաման, Հասոր, Կադէս, Եդրայի, Ենհասոր,
40 Իրմենեռոն, Միկդալէլ, Հարեմ, Բեթանաթ ու Բեթսամիս։ տասնեւիններ քաղաք և անոնց գեղերն էին։ Նեփթաղիմի որդւոց ցեղին ժառանգութիւնն իրենց տոհմերուն համեմատ ասիկա է, այս քաղաքներն ու անոնց գեղերը։
41 Եօթներորդ վիճակը Դանի որդւոց
42 եղաւ իրենց տոհմերուն համեմատ։ Եւ անոնց ժառանգութեան սահմանն
43 ասիկա եղաւ։ Սաբաա, ու Եսթաուղ,
44 և Իրսամէս, Եւ Սաղաբին, և Այեղոն,
45 ու Բեթէլ, Եւ Ելոն, ու Թամնաթա,
46 և Ակիկարոն, Ու Ելթեկէ, և Գաբաթոն,
47 ու Բաալաթ, Եւ Յուդ, և Բանէ-բարակ, ու Գեթրիմոն, Եւ Մէարկոն, ու Ռաքկոն, Յոպպէին դիմացը եղած սահմանով։ Եւ Դանի որդւոց սահմանն իրենց դըժուէ եղաւ։ ուստի Դանի որդիքը ելան, ու Լէսեմի հետ պատերազմեցան, և զանիկա առնելէն ետքը սուրի բերնէ անցուցին, ու անիկա ժառանգելով անոր մէջ բնակեցան, և Լէսեմ իրենց հօրը Դանին անունով Դան կոչեցին։ Դանի որդւոց ցեղին ժառանգութիւնն իրենց տոհմերուն համեմատ ասիկա է, այս քաղաքներն ու անոնց գեղերը։
49 Եւ երկիրն իր սահմաններով բաժնելը լմնցուցին։ Իսրայէլի որդիքը Դաւեան Յեսուի իրենց մէջ ժառան-
50 գութիւն տուին։ Տէրոջը հրամանով անոր ուզած քաղաքը Թամնաթ-սարան իրեն տուին։ Եփրեմի լեռան վրայ։ ու անիկա քաղաքը շինեց, և անոր մէջ բնակեցաւ։
51 Ասոնք են այն ժառանգութիւնները՝ որ Եղիազար քահանան և Դաւեան Յե-



սու ու Իսրայէլի որդւոց ցեղերուն նահապետները Սելովի մէջ Տէրոջը առջև՝ ժողովքի խորանին դրան քով վիճակով բաժնեցին։ և երկիրը բաժնելը լմնցուցին։

## Գլ. Ի

1 Եւ Տէրը խօսեցաւ Յեսուի րսելով,
2 Իսկ Իսրայէլի որդւոց ու րսկ, Մովսէսի ձեռքով՝ այն իմ ձեզի րսած ապաստանի քաղաքներս ձեզի համար ո-
3 րոշեցէք։ Որպէս զի սխալմամբ — անդիտութեամբ մարդ զարնող սպանողը հոն փախչի։ և անոնք ձեզի ապաստանարան ըլլան արեան վրէժխնդիրը ե-
4 ղողէն։ Եւ երբ անոնք քաղաքներէն միոյն մէջ փախչի, և քաղաքին դուռը հասնի, և այն քաղաքին ծերերուն իր իրաւունքը խօսի, որ ըսեն։ և անոնք զանիկա քաղաքին մէջ իրենց քով առնելով՝ անոր տեղ մը տան, որ իրենց հետ բնակի։
5 Եւ երբ արեան վրէժխնդիրն անոր հետևէն հնչայ, սպանողն անոր ձեռքը չտան, քանզի անիկա իր դրացին անդիտութեամբ մեռցուցեր է, և առաջուց անոր դէմ թշնամութիւն չու-
6 ներ։ Եւ անիկա այն քաղաքին մէջ պիտի բնակի, մինչև որ դատաստանի համար ժողովքին առջև կանչի, — մինչև որ այն օրերը եղող քահանայապետը մեռնի։ Յետոյ սպանողը թող դառնայ, իր քաղաքն ու իր տունը երթայ, այսինքն այն քաղաքն ուսկից փախեր էր։
7 Ուստի Գալիլեայի մէջ Կադէսը *զանոյին Նեփթաղիմի լեռնակողմի, Սիւքեմն Եփրեմի լեռնակողմի, և Կարիաթարբան՝ այսինքն Քեբերոնը Յուդայի լեռ-
8 նակողմն։ Եւ Երիքովի դէմ՝ Յորդանանու անդիի կողմը դէպ արեւելք՝ Ռուբենի ցեղէն անապատի գաւառին մէջ Բասորը, և Գադի ցեղէն Գաղաադ մէջ Ռամոթը, ու Մանասէի ցե-

*Եբր. արբեցին՝

9 ղէն՝ Բասանի մէջ Գովղանը տուին։ Բոլոր Իսրայէլի որդւոց համար՝ ու անոնց մէջ բնակող օտարականին համար որոշած քաղաքներն սուրը եղ։ որպէս զի ամէն ով որ սխալմամբ մարդ սպանէ՝ հոն փախչի, և արեան վրէժխնդրին ձեռքով չմեռնի, մինչև որ դատաստանի համար ժողովքին առջև չկայնի։

## Գլ. ԻԱ

1 Եւ Ղեւտացւոց նահապետները եղիազար քահանային, Նաւեան Յեսուի և Իսրայէլի որդւոց ցեղերուն նահապետ-
2 ներուն մտեցան, Եւ Քանանու երկիրը Սելովի մէջ խօսեցան անոնց՝ ըսելով, Տէրը Մովսէսի ձեռքով հրամայեց որ մեզի բնակելու համար քաղաքներ, ու մեր անասուններուն համար
3 անոնց արուարձանները տուրէն։ Եւ Իսրայէլի որդիքը Տէրոջը հրամանով իրենց ժառանգութիւններէն այս քաղաքներն ու անոնց արուարձանները Ղեւտացւոց տուին։
4 Եւ ահաւոր վիճակը Կահաթեանց ազգատոհմներուն եղաւ։ ու Ղեւտացիներէն Ահարոն քահանային որդւոց՝ վիճակով տասներեք քաղաք ելաւ, Յուդայի ցեղէն, Շմաւոնի ցեղէն ու Բենիամինի ցեղէն։ Եւ Կահաթի միւս որդւոց՝ Եփրեմի ցեղին ազգատոհմներէն և Դանի ցեղէն և Մանասէի կէս ցեղէն
6 վիճակով տասը քաղաք ելաւ։ Եւ Գերսոնի որդւոց՝ Իսաքարի ցեղին ազգատոհմներէն և Ասերի ցեղէն ու Նեփթաղիմի ցեղէն և Բասանի մէջ եղող Մանասէի կէս ցեղէն վիճակով տասներեք
7 քաղաք ելաւ։ Մերարիի որդւոց իրենց տոհմերուն համեմատ՝ Ռուբենի ցեղէն, Գադի ցեղէն ու Զաբուղոնի ցեղէն տասներկու քաղաք
8 ելաւ։ Եւ Իսրայէլի որդիքն այս քաղաքներն ու անոնց արուարձանները վիճակով Ղեւտացւոց տուին, ինչպէս որ Տէրը պատուիրեր էր Մովսէսի ձեռքով։

9 Եւ Յուդայի որդւոց ցեղէն և Շմաւոնի որդւոց ցեղէն այս իրենց անուն-
10 նով յիշուած քաղաքները տուին, Եւ Ահարոնի որդւոց կողմն, որոնք Դևիի որդւոցմէ եղող Կահաթեանց ազգատոհմիներէն էին. քանզի ինձաքին վի-
11 ճակն անոնցն էր։ Եւ անոնց՝ Յուդայի լեռան վրայ Եհոակի հօրը Արբայի քաղաքը տուին բերդովն ու անոր
12 շրջակայ արուարձաններով. Եւ քաղաքին ագարակներն ու գիւղերը Յեփոնեան Քաղեբին կալուածք տուին։
13 Ուստի Ահարոն քահանային որդւոց՝ ընդունդի համար ապաստանի քաղաք ըլլալու որոշուած Հեբրոնը տուին իր արու-
14 արձաններով, նաև Լիբնան իր արուարձաններով, Եւ Յաթիրն իր արուարձաններով, ու Եսթեմոան իր արու-
15 արձաններով, Եւ Քաբզէնն իր արուարձաններով, ու Դաբիրն իր արու-
16 արձաններով, Եւ Այինն իր արուարձաններով, ու Յեւտանն իր արուարձաններով, և Բեթ Սամիսն իր արուարձաններով. այս երկու ցեղէն ինը
17 քաղաք տուին։ Եւ Բենիամինի ցեղէն՝ Գաբաոնն իր արուարձաններով, Գա-
18 բան իր արուարձաններով, Անաթոթը իր արուարձաններով, ու Գաղմոնը իր արուարձաններով, չորս քաղաք
19 տուին։ Ահարոնի որդւոց քահանաներուն բոլոր քաղաքները արուարձաններով քաղաք էին՝ ու անոնց արուարձան-
նները։
20 Եւ Կահաթի որդւոցմէ մնացած Ղևացոց Կահաթեանց ազգատոհմիներն ալ Եփրեմի ցեղէն վիճակով քաղաքներ
21 առին։ Եւ անոնց՝ Եփրեմի լեռնակողմն ապաստանի համար ապաստանի քաղաք ըլլալու որոշուած Սիւքեմը ուստի
22 իր արուարձաններով, նաև Գազերն իր արուարձաններով, Եւ Կիբսայիմ իր արուարձաններով, և Բեթ Հորոնն իր
23 արուարձաններով, չորս քաղաք տուին։ Եւ Դանի ցեղէն՝ Ելթեկէն իր արուարձաններով, Գաբաթոնն իր արուար-
24 ձաններով, Այյղոնն իր արուարձաններով, ու Գեթ Բեմոնն իր արուարձաններով, չորս քաղաք տուին։
25 Ձանիներով, չորս քաղաք տուին։ Եւ Մանասէի կէս ցեղէն՝ Թանաքն իր արուարձաններով, և Գեթ Բեմոնն իր
26 արուարձաններով, երկու քաղաք ընդունդի համար ապաստանի քաղաք ըլլալու որոշուած Կահաթի որդւոց մնացած ազգատոհմիներուն բոլոր քաղաքները տասն
էին՝ և անոնց արուարձանները։
27 Եւ Ղևացոց ազգատոհմիներէն Գեր-սոնի որդւոց՝ Մանասէի կէս ցեղէն ապահովի համար ապաստանի քաղաք ըլլալու որոշուած Բասանի մէջ Գովղանն իր արուարձաններով, նաև Բեհեսթարան իր արուարձաններով, եր-
28 կու քաղաք տուին։ Եւ Իսաքարի ցեղէն՝ Կեհրոնն իր արուարձաններով,
29 Դաբարաթին իր արուարձաններով, Յերմութին իր արուարձաններով, Ենգանիմին իր արուարձաններով, չորս քա-
30 ղաք տուին։ Եւ Ասերի ցեղէն՝ Մաասաղն իր արուարձաններով, Աբդոնն
31 իր արուարձաններով, Հելգաթին իր արուարձաններով, և Բոռոն իր արուարձաններով, չորս քաղաք տուին։
32 Եւ Նեփթաղիմի ցեղէն՝ ապահովի համար ապաստանի քաղաք ըլլալու որոշուած Գալիլեացի մէջ Կադեսն իր արուարձաններով, նաև Եմմոթ-դորն իր արուարձաններով, և Կարթանն իր արուարձաններով, երեք քաղաք տուին։
33 Գերսոնեանց բոլոր քաղաքները անոնց ազգատոհմիներուն համեմատ տասներեք քաղաք էին՝ և անոնց արուարձանները։
34 Եւ Մեռարի Ղևացիներուն՝ այսինքն Մերարիի որդւոց ազգատոհմիներուն՝ Զաբուղոնի ցեղէն Յեկնեամն իր արուարձաններով, Կարթան իր արուարձաններով,
35 Դիմնան իր արուարձաններով, Նահալոլն իր արուարձաններով՝ չորս
36 ձաններով, չորս քաղաք տուին։ Եւ Ռուբինի ցեղէն՝ Բոսորն իր արուարձաններով, ու Յասան իր արուար-
37 ձաններով, Կադեմոթն իր արուարձաններով, և Մեփաաթին իր արուարձաններով, չորս քաղաք տուին։ Եւ Գադի ցեղէն ապահովի համար ապաստանի քաղաք ըլլալու որոշուած Գաղաադ ու



Մահանէմն իր արուարձաններով,
39 Եսեբոնն իր արուարձաններով, — Յազերն իր արուարձաններով, ամ-
40 ենը չորս քաղաք տուին։ Դևատացոց ազգատոհմիներէն մնացած Մերարիի որդւոց բոլոր քաղաքներն իրենց ազ-
ատոհմիներուն համեմատ իրենց վիճակով տասներկու քաղաք եղաւ։
41 Իսրայէլի որդւոց կալուածներուն մէջ Դևացոց բոլոր քաղաքները քա-
ռասնուերկու քաղաք էին՝ ու անոնց
42 արուարձանները։ Այս քաղաքներուն ամէն մէկին իր բոլորտիքը արուարձան-
ներ ունէր. այս քաղաքներուն ամէնն ալ այնպէս էր։
43 Եւ Տէրը Իսրայէլի տուաւ այն բոլոր երկիրը, զոր անոնց հայրերուն տալու երդում ըրեր էր. և զանիկա ժառան-
44 գեցին ու անոր մէջ բնակեցան։ Եւ Տէրը զանոնք ամէն կողմէն հանգստացուց, ինչպես որ անոնց հայրերուն երդում ըրեր էր. ու անոնց բոլոր թշնամիներէն բնաւ մէկը չիդրցաւ անոնց դէմ դնել. Տէրը անոնց ամէն
45 թշնամիները անոնց ձեռքը տուաւ։ Եւ Տէրը Իսրայէլի տան համար որչափ բարի խօսք որ ըրեր էր, անհնգամ եղած մը չկատարուեցաւ. ամէնն ալ կատարուեցաւ։

## Գլ. ԻԲ

1 Այնուհետև Յեսու Ղևացիները, Գադեանները ու Մանասէի
2 կէս ցեղը, Եւ անոնց ըսաւ, Տէրոջը ծառան Մովսէս ինչ որ ձեզի հրամայեր էր, դուք անոնց ամէնն ալ պահեցիք. ու իմ խօսքս ձեզի բերած ամէն բանը
3 մէջ որ ձեզի պատուիրեցի։ Այսչափ շատ օրեր մինչև այս օրս ձեր եղբայրները չթողուցիք, և ձեր Տէր Աստուծոյն պատուիրանն ամրողջ* պահեցիք։
4 Եւ հիմա ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրները հանգստացուց, ինչպես որ

* ՆԲՔ. պատուիրանին պահպանութիւնը

անոնց բսաւ. ուստի հիմա դարձէք, ձեր վրաններն — ձեր կալուածոց երկիրը դացէք, զոր Տէրոջը ծառան Մովսէս Յորդանանու անդին ձեզի
5 տուաւ։ Միայն թէ ուշիկ զգուշանաք ընէք ի գործ դնելու այն պատուիրանն ու օրէնքը, զոր Տէրոջը ծառան Մովսէս ձեզի պատուիրեց, որ ձեր Տէր Աստուածը սիրէք, և անոր ամէն ճամբաներուն մէջ քալէք, և անոր պատուիրանները պահէք, և անոր յարիք, և ձեր բոլոր սրտով և բոլոր հոգւով
6 դործէք պաշտէք։ Եւ Յեսու օրհնեց զանոնք և արձակեց. և անոնք իրենց
7 վրաններն դացին։ (Եւ Մանասէի կէս ցեղին Մովսէս կալուածք տուեր էր Բասանի մէջ, և կէսն ալ Յեսու անոնց եղբայրներուն հետ Յորդանանու արեւմտեան կողմը տուաւ դէպ արեւմտեան)։ Եւ երբ Յեսու զանոնք իրենց վրան-
8 ները դրկեց, զանոնք օրհնեց. Եւ անոնց խօսելով, Շատ հարստութիւնով ու խիստ շատ անասուններով, արծաթով, ու ոսկով, պղնձով, երկաթով ու խիստ շատ հանդերձներով ձեր վրաններէն դարձէք, — ձեր թշնամւոց աւարը ձեր եղբայրներուն հետ բաժնեցէք։
9 Ուստի Ռուբինի որդիքը, Գադի որդիքն ու Մանասէի կէս ցեղը Քանահնու երկիրը Սիլովի մէջ Իսրայէլի որդւոցմէ պատուեցան գացին, որ իրենց ժառանգութիւնն երկիրը՝ այսինքն Գաղաադ-
10 ու երկիրը երթան, զոր Մովսէսի ձեռքով տրուած Տէրոջը հրամանով առեր էին։ Եւ երբ Յորդանանու մօտ ուղ-
ուանքը եկան, այն կողմը որ Քանահնու երկրին մէջն է, Ռուբինի որդիքը, Գադի որդիքն ու Մանասէի կէս ցեղը հոն Յորդանանու մօտ սեղան մը շի-
11 նեցին, երեւութով մեծ սեղան մը։ Եւ Իսրայէլի որդիքը լսեցին «ար ահա Ռուբինի որդիքը, Գադի որդիքը և Մանասէի կէս ցեղը Քանահնու երկրին կողմը Յորդանանու մօտ՝ ուր որ Իսրայէլ-

* ՆԲՔ. քանզի

լի որդիքն անցեր էին, սերան մը չի-
12 ներ են. Եւ երբ Իսրայէլի որդիքը
լսեցին, Իսրայէլի որդւոց բոլոր ժո-
ղովքը Սելովի մէջ ժողովուեցան, որ
անոնց վրայ երթան պատերազմելու
13 համար։ Եւ Իսրայէլի որդիքը Ռուբէն-
եանց, Գադեանց ու Մանասէի կէս ցե-
ղին՝ Գաղաադու երկիրը զրկեցին
Եղիազարէ որդին Փենէհէս քահա-
14 նան, Եւ անոր հետ տասը իշխան,
այսինքն Իսրայէլի ամէն ցեղերուն նա-
հապետութիւններէն մէկմէկ իշխան, ո-
րոնց իւրաքանչիւրն Իսրայէլի հազա-
րաւորներուն նահապետութեանց իշ-
15 խաններ էին. Եւ անոնք Գաղաադու
երկիրը գացին Ռուբէնի որդւոց, Գա-
դի որդւոց ու Մանասէի կէս ցեղին,
16 և անոնց հետ խօսեցան՝ ըսելով, Տէ-
րոջը բոլոր ժողովքն այսպէս կ'ըսէ.
Այդ ի՞նչ մեղք է, որ դուք Իսրայէլի
Աստուծոյն դէմ գործեցիք՝ այսօր
Տէրոջմէ խոտորելով, և այսօր Տէ-
րոջը դէմ ապստամբութիւն բնելու
17 համար ձեզի սեռան չինեցիք. Մինչ
Փոգովրի անօրէնութիւնը պզտիկ բան
մի է մեզի, որ անկէ՝ մինչև այս օրս
չմաքրուեցանք, և Տէրոջը ժողովքին
18 վրայ այն հարուածը եկաւ. Եւ դուք
այսօր Տէրոջմէ խոտորեցաք. ուստի
թէ որ դուք այսօր Տէրոջմէ ապստամ-
բիք, նա ալ վաղը Իսրայէլի բոլոր ժո-
19 ղովքին վրայ պիտի բարկանայ։ Սակայն
թէ որ ձեր կալուածոց երկիրն անմա-
քուր կը համարէք, Տէրոջը կալուածոց
երկիրն անցէք, ուր որ Տէրոջը խորանը
կանգնած է, և մեր մէջ ժառանգու-
թիւն առէք. և մեր Տէր Աստուծոյն սե-
ռանէն ի զատ ձեզի սեռան չինելով Տէ-
րոջը ապստամբ մի ըլլաք, և մեզմէ ալ
20 մի ապստամբիք՝ Սրբոյր Զարայեան Ա-
քան նզովածէն ասէլով մեզ գործեց,
միթէ Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի բո-
լոր ժողովքին վրայ չեկաւ, և այն մարդն
իր անօրէնութեան մէջ միակ չմեռաւ։
21 Եւ Ռուբէնի որդիքը, Գադի որդիքն
ու Մանասէի կէս ցեղը պատասխան
առին, և Իսրայէլի հազարապետներուն
22 ըսին, *Աստուածներուն Եհովայ Աս-
տուածը, աստուածներուն Եհովայ
Աստուածը՝ ինքը գիտէ. և Իսրայէլն
ալ թող գիտնայ, թէ որ եթէ ան-
պատշաճութեան համար՝ կամ Տէրո-
ջը դէմ յանցանք գործելու համար ը-
23 ընէ, մեզ այսօր էլապրեցնէ. Թէ որ
մեզի սեռան չինեցինք Տէրոջմէ ե-
տադառնալու համար, կամ անոր վրայ
ողջակէզ ու հացի բնծայ մատուցանե-
լու համար, և կամ անոր վրայ խաղա-
ղութեան զոհեր բնելու համար, Տէրը
24 ինք փնտռէ՛ նէ ընէ. Այլ մենք ա-
սկէսմ մեր վախուն չինեցինք, մտա-
ծելով որ գուցէ վաղը ձեր որդիքը
մեր որդւոց խօսին՝ և ըսեն թէ Դուք
Իսրայէլի Տէր Աստուծոյն հետ ի՞նչ ու-
25 նիք. Ո՛վ Ռուբէնեան ու Գադեանք,
Տէրը մեր ու ձեր մէջ Յորդանանը
սահման դրաւ, դուք Տէրոջմէ բնա-
բաժին չունիք. և այս կ'ըլլայ ձեր որ-
դիքը մեր որդւոցմէ Տէրոջը երկիրզը
26 վերցընեն. Այս պատճառաւ ըսինք,
Հիմա մեզի սեռան մը չինենք, Բայց
չէ թէ ողջակիզի համար, ոչ ալ զոհի
27 համար, Այլ որպէս զի անիկա մեր ու
ձեր մէջ, և մեզմէ ետքը մեր սե-
րունդներուն մէջ վկայութիւն ըլլայ,
որ մեր ողջակէզներով, մեր պատա-
րագներով ու մեր խաղաղութեան զո-
հերով Տէրոջը ծառայութիւնն Անոր
առջև ընենք, ու մարդ ձեր որդիք
մեր որդւոց չըսեն թէ Դուք Տէրոջմէ
28 բաժին չունիք. Եւ ըսինք, թէ որ մե-
զի կամ մեր սերունդին մարդ այս բա-
նը ըսելու ըլլայ, պիտի բանք թէ Ձե-
ռակերտ Տէրոջը սեռանին օրինակը՝ զոր
մեր հայրերը չնեցին, ոչ թէ ողջակիզի
համար կամ զոհի համար, այլ մեր ու
ձեր մէջ վկայութիւն ըլլալու համար։
29 Հաւ լիցի որ մենք Տէրոջմէ ապստամ-
բենք, ու այսօր Տէրոջմէ հետ դառնա-

* Կամ Աստուածներուն Աստուածը Եհովան է, աստուածներուն Աստուածը Եհովան է.



լով, խորանին առջև եղող մեր Տէր
Աստուծոյն սեռանէն ի զատ՝ ողջակիզի
համար, հացի ընծայի համար և զոհի
համար սեռան չինենք։
30 Եւ երբ Փենէհէս քահանան և ա-
նոր հետ եղող ժողովքին իշխանները,
ու Իսրայէլի հազարապետները Ռու-
բէնի որդւոց, Գադի որդւոց ու Մա-
նասէի որդւոց բան խօսելը լսե-
31 ցին, իրենց հաճոյ երեցաւ. Եւ Եղիա-
զարի որդին Փենէհէս քահանան Ռու-
բէնի որդւոց, Գադի որդւոց ու Մա-
նասէի որդւոց բան, Այսօր գիտցանք
որ Տէրը մեր մէջ է, քանզի դուք
Տէրոջը դէմ այս յանցանքը չգործե-
ցիք, և Իսրայէլի որդիքը Տէրոջը ձեռ-
քէն ազատեցիք։
32 Այսպէս Եղիազարի որդին Փենէհէս
քահանան և իշխանները Ռուբէնի որ-
դւոց ու Գադի որդւոց քովէն՝ Գա-
ղաադու երկրէն Քանանու երկիրն Իս-
րայէլի որդւոց դարձան, և անոնց
33 լուր բերին։ Եւ այս բանն Իսրայէլի որ-
դւոց հաճոյ երեցաւ, և Իսրայէլի որ-
դիքը զԱստուած օրհնեցին, և Ռուբէն
երկիրը կործանելու համար անոնց դէ-
րայ երթանք պատերազմինք՝ չխօսե-
34 ցան։ Եւ Ռուբէնի որդիքն ու Գադի որդիքն
այն սեռանին անունը Վկայութիւն դր-
բին, քանզի ըսին, Անիկա մեր մէջ վկ-
կայ է, որ Եհ Աստուածը Եհովան է։

## Գլ. ԻԳ

1 Եւ շատ օրերէ ետքը՝ որ Տէրը հան-
գստացուցեր էր Իսրայէլ անոր բոլոր-
թիւրը եղած ամէն թշնամիներէն, Ես-
ու ծերացած ու առաջին էր։
2 Եւ Յեսու կանչեց բոլոր Իսրայէլ՝ ա-
նոր ծերերը, իշխանները, դատաւոր-
ները ու ոստիկանները, և անոնց բաւ,
3 Ես ծերացայ ու առաջին եմ։ Եւ դուք
տեսաք այն ամէնը, որ ձեր Տէր Աստ-
ուածը ձեր առջև բրաւ այս բոլոր ազ-
գերուն, քանզի ձեր Տէր Աստուածն
ինք ձեզի համար պատերազմ բրաւ։
4 Նայեցէք, Ես ձեզի այս մնացած ազգե-
րը վիճակով ժառանգութիւն բաժնե-
ցի ձեր ցեղերուն համեմատ, Յորդա-
նանէն իմ կտրած բոլոր ազգերովս
մինչև Մեծ ծովը դէպ արև-
5 մուտք։ Եւ ձեր Տէր Աստուածն ինք
ձեր առջևէն պիտի հալածէ զանոնք ու
պիտի վռնտէ, և անոնց երկիրը դուք
պիտի ժառանգէք, ինչպես որ ձեր Տէր
6 Աստուածը ձեզի բաւ։ Ուստի շատ
ժրաջան եղէք, որ Մովսէսի օրինաց գրքին
մէջ գրուած բոլոր բաներն զգուշա-
նալով կատարէք, և անոնց եր-
7 կուդիմ կամ ձախ կողմը չխոտորիք. Որ-
պէս զի ձեր մէջ մնացած այս ազգե-
րուն հետ չխառնուիք, և անոնց աս-
տուածներուն անուններուն չյիշէք, և
անոնցով երդում չընէք, և անոնց եր-
8 կրպագութիւն չընէք. Այլ ձեր Տէր
Աստուածոյն յարիք, ինչպես որ մինչև
9 այս օրս բրիք։ Եւ Տէրը ձեր առջևէն
մեծ ու զօրաւոր ազգեր վռնտեց, և
մինչև այս օրս ընաւ մէկը չկրցաւ ձե-
10 զի դէմ դնել։ Ձեզմէ մէկն հազար հա-
զարը պիտի հալածէ, քանզի ձեր Տէր
Աստուածն ինք ձեզի համար կը պա-
տերազմի, ինչպես որ ձեզի ըսաւ։
11 Ուստի ձեր անձերուն ազէկ զգու-
շութիւն ընէք, որ ձեր Տէր Աստուածը
12 սիրէք։ Բայց թէ որ անկէ դառնալու
բլլաք, և ձեր քովի մնացած այս ազ-
գերուն միացորդին յարիք, և անոնց
հետ խառնուիք, և անոնք ալ
13 ձեզի հետ, Սորտ գիտցէք որ ձեր Տէր
Աստուածն այլ ևս այս ազգերը ձեր
առջևէն պիտի չվռնտէ. այլ անոնք
ձեզի որոգայթ ու գայթակղութիւն
պիտի բլլան, և ձեր կողերուն խթան-
ներ, և ձեր աչքերուն փուշեր, մինչև
որ բնաջինջ բլլաք այս բարի երկրին
վրայէն, զոր ձեր Տէր Աստուածը ձեզի
14 տուաւ։ Եւ ահա ես այսօր ամէն երկ-
րին ճամբան կ'երթամ, և դուք ձեր
բոլոր սրտով ու բոլոր հոգւով գիտէք

* Նէբ. մէջ չմնանք,

որ ձեր Տէր Աստուածը ձեզի համար որչափ բարի խօսքեր որ ըսաւ, անոնցմէ բան մը չպակսեցաւ։ Ընդդէմ ամէնն ալ ձեր վրայ կատարուեցաւ, անոնցմէ
15 բնաւ խօսք մը գետինը չինկաւ։ Եւ ինչպէս որ ձեր Տէր Աստուածն ձեզի համար ըրած ամէն բարի խօսքերը ձեր վրայ կատարեցան, նոյնպէս ալ Տէրը ամէն չար խօսքերը ձեր վրայ պիտի բերէ, մինչև որ բնաջինջ ընէ ձեզ այս բարի երկրին վրայէն, զոր ձեր Տէր
16 Աստուածը ձեզի տուաւ։ Թէ որ ձեր Տէր Աստուածին ձեզի պատուիրած ուխտը զանց ընէք, և երթաք օտար աստուածներ պաշտէք, և անոնց երկրպագութիւն ընէք, Տէրոջը բարկութիւնը ձեր վրայ պիտի բորբոքի, և այն ձեզի տուած բարի երկրին վրայէն շուտով պիտի կորսուիք։

## ԳԼ. ԻԴ

1 Եւ Յեսու Իսրայէլի ամէն ցեղերը Սիքեմի մէջ ժողվեց, ու Իսրայէլի Ծերերը, Իշխանները, դատաւորները և օրէնսդիրները կանչեց. և անոնք Աստուծոյ
2 Ծոյ առջև կայնեցան։ Եւ Յեսու բոլոր ժողովուրդին ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս կ՚ըսէ. Առաջ ձեր հայրերը՝ Արրահամի հայրն ու Նաքորի հայրը Թարա՝ Գետին անդիի կողմը բնակեցան, և օտար աստուածներ պաշ-
3 տեցին։ Եւ ես ձեր հայրն Աբրահամ Գետին անդիի կողմէն առի, ու զանիկա Քանանու բոլոր երկրին մէջ պրտտցուցի, և անոր սերունդը շատցուցի, և Իսահակ անոր տուի։ Եւ Իսահակին Յակորը և Եսաւը տուի ու Եսաւի Սէիր լեռը ժառանգութիւն տուի. և Յակոբ և անոր որդիքը Եգիպտոս իջան։ Եւ Մովսէսն ու Ահարոնը զրկելով Եգիպտոսը գարկի, (ինչպէս որ անոր մէջ բրի,) հարբ ձեզ
6 հանեցին։ Ու ասի ես ձեր հայրերը Եգիպտոսէն հանեցի, և դուք ծովը եկաք։ Եգիպտացիները կառքերով և ձիաւորներով մինչև Կարմիր ծովը ձեր հայ-
7 րերուն եւեւէն ինկան։ Անոնք աղաղակեցին, և անիկա ձեր և Եգիպտացոց մէջտեղ խաւար դրաւ, ու ծովը անոնց վրայ բերելով զանոնք ծածկեց. և ձեր աչքերը Եգիպտոսի մէջ բրած բաներս տեսան. և շատ ժամանակ անապատին մէջ բր-
8 նակեցաք։ Ապա ձեզ բերի Յորդանանու անդիի կողմը բնակող Ամորհացոց երկիրը, և ձեզի հետ պատերազմ բրին. և զանոնք ձեր ձեռքը տուի, և անոնց երկիրը պաղեստինն ընէք, Տէրոջը բարկութիւնը ձեր վրայ պիտի բորբոքի, և այն ձեզի տուած բարի երկրին վրայէն շուտով պիտի կորսուիք։

## ԳԼ. ԻԴ

1 Եւ Յեսու Իսրայէլի ամէն ցեղերը Սիքեմի մէջ ժողվեց, ու Իսրայէլի Ծերերը, Իշխանները, դատաւորները և օրէնսդիրները կանչեց. և անոնք Աստուծոյ
2 Ծոյ առջև կայնեցան։ Եւ Յեսու բոլոր ժողովուրդին ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս կ՚ըսէ. Առաջ ձեր հայրերը՝ Արրահամի հայրն ու Նաքորի հայրը Թարա՝ Գետին անդիի կողմը բնակեցան, և օտար աստուածներ պաշ-
3 տեցին։ Եւ ես ձեր հայրն Աբրահամ Գետին անդիի կողմէն առի, ու զանիկա Քանանու բոլոր երկրին մէջ պրտտցուցի, և անոր սերունդը շատցուցի, և Իսահակ անոր տուի։ Եւ Իսահակին Յակորը և Եսաւը տուի ու Եսաւի Սէիր լեռը ժառանգութիւն տուի. և Յակոբ և անոր որդիքը Եգիպտոս իջան։ Եւ Մովսէսն ու Ահարոնը զրկելով Եգիպտոսը գարկի, (ինչպէս որ անոր մէջ բրի,) հարբ ձեզ
6 հանեցի։ Ու ասի ես ձեր հայրերը Եգիպտոսէն հանեցի, և դուք ծովը եկաք։ Եգիպտացիները կառքերով և ձիաւորներով մինչև Կարմիր ծովը ձեր հայ-
7 րերուն եւեւէն ինկան։ Անոնք աղաղակեցին, և անիկա ձեր և Եգիպտացոց մէջտեղ խաւար դրաւ, ու զանիկա Քանանու բոլոր երկրին մէջ պրտտցուցի, և անոր սերունդը շատցուցի, և Իսահակ անոր տուի։ Եւ Իսահակին Յակորը և Եսաւը տուի ու Եսաւի Սէիր լեռը ժառանգութիւն տուի. և Յակոբ և անոր որդիքը Եգիպտոս իջան։ Եւ Մովսէսն ու Ահարոնը զրկելով Եգիպտոսը գարկի, (ինչպէս որ անոր մէջ բրի,) հարբ ձեզ
6 հանեցի։ Ու ասի ես ձեր հայրերը Եգիպտոսէն հանեցի, և դուք ծովը եկաք։ Եգիպտացիները կառքերով և ձիաւորներով մինչև Կարմիր ծովը ձեր հայ-
7 րերուն եւեւէն հանեցի

# ԳԻՐՔ ԴԱՏԱՒՈՐԱՑ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ Յեսուի մեռնելէն ետքը Իսրայէլի որդիքը Տէրոջը հարցուցին ու ըսին, Մեզի համար Քանանացւոց վրայ առաջ ով կելլէ անոնց հետ պատերազմելու։
2 Եւ Տէրը բաւ, Յուդա թող կելլէ. ահա երկիրն անոր ձեռքը տուի։
3 Եւ Յուդա իր եղբօրը Շմաւոնի բաւ, Ինծի հետ իմ վիճակիս երկիր, և Քանանացւոց հետ պատերազմինք, և ես ալ քեզի հետ քու վիճակիդ երթամ։ Եւ Շմաւոն անոր հետ գնաց։
4 Եւ Յուդա ելաւ, և Տէրը Քանանացիներն ու Փերեզացիները անոնց ձեռքը տուաւ. և անոնցմէ Բեզեկի մէջ տասը հազար մարդ կոտորեցին։
5 Եւ Բեզեկի մէջ Ադոնիբեզեկի գրանելով՝ անոր հետ պատերազմեցան, ու Քանանացիները և Փերեզացիները զարկին ու Ադոնիբեզեկ փախաւ. բայց անոնք անոր ետևէն կրնալով զանիկա բռնեցին, և անոր ձեռքերուն ու ոտքերուն մեծ մատները կտրած եօթանասուն թագաւորներ իր սեղանին ներքև էին՝ իրենց ճաշերնէրը կը ժողվելին. ես ինչպէս որ ըրի, Աստուած ալ ինծի այնպէս հատուցում բաւ։ Եւ զանիկա Բոնաւոյմ տարին, և հոն մեռաւ։
8 Եւ Յուդայի որդիքը Երուսաղէմի հետ պատերազմ բնելով զանիկա առին, ու սուրի բերնէն անցընելով քաղաքը կրակով այրեցին։
9 Ա֊յնուհետև Յուդայի որդիքը վար իջան, որ լեռնակողմն ու հարաւային կողմն ու դաշտի մէջ բնակող Քանանացւոց դէմ պատերազմին։ Եւ Յուդա Բերբոնի մէջ բնակող Քանանացիներուն վրայ գնաց. (ու Բերբոնի անունն առաջուց Կարիաթ֊արբա էր.) և անոնք Սեսքան, Աքիմանն ու Թոլմին զարկին։
11 Եւ անկէ Դաբիրի բնակչաց վրայ գնաց. (ու Դաբիրի անունն առաջուց Կարիաթ֊սեփէր էր.)
12 Եւ Քաղէբ բաւ, Ով որ Կարիաթ֊սեփերը զարնէ ու առնէ, իմ աղջիկս Աքսան անոր կնութեան պիտի տամ։
13 Եւ Քենազի Յոսի Քաղէբի պզտիկ եղբօրը կենդի որդին Գոթնիէլ զարաւ առաւ զանիկա. և Քաղէբ իր աղջիկն Աքսան անոր կնութեան տուաւ։
14 Եւ երբ աղջիկն անոր կերթար, զանիկա յորդորեց որ իր հօրմէն ագարակ մը ուզէ, և էշէն վար իջաւ։ ու Քաղէբ բաւ անոր, Քեզի ի՞նչ եղաւ։
15 Եւ աղջիկն անոր բաւ, Ինծի օրհնութիւն տուր. որովհետև ինծի Հարաւային երկիր մը տուիր, ինծի ջուրի աղբիւրներ ալ տուր։ Ուստի Քաղէբ վերի աղբիւրներն ու վարի աղբիւրները տուաւ անոր։
16 Եւ Մովսէսի անեղբօրը կինեցիի որդիքը Ցուդայի որդւոց հետ Արմաղեդոնաց քաղաքէն՝ Արադի հարաւային կողմը եղող Ցուդայի անապատն եկան, ու գացին Ժողովուրդին հետ բնակեցան։
17 Եւ Ցուդա իր եղբօրը Շմաւոնի հետ գնաց. ու Սեփաթի մէջ բնակող Քանանացիները զարկին, և զանիկա նզովեցին, և այն քաղաքին անունը *Հորմա կոչեցին։
18 Նաեւ Ցուդայեանք Գազան ու անոր սահմանը, և Ասկաղոն ու անոր սահմանը, և Ակկարոն ու անոր սահմանն առին։ Եւ Տէրը Ցուդայի հետ էր, և անիկա լեռնանը տիրեց, բայց հովիտներուն բնակիչները չկրցաւ վռնտել, քանզի անոնք երկաթէ կառքեր ունէին։
19 Նոր Քեբրոնը Քաղէբի տուին, ինչպէս որ Մովսէս բսեր էր. և անկէ Ենաքի երեք որդիները վռնտեց։
20 Եւ Բենիամինի որդիքը Երուսաղէմի մէջ բնակող Յեբուսացիները չվռնտեցին. ու Յեբուսացիք Բենիամինի որդւոց հետ Երուսաղէմի մէջ բնակեցան մինչև այս օրս։
21 Եւ Յովսեփեան տունն ալ Բեթէլի վրայ գնաց, և Տէրը անոնց հետ էր։ Եւ Յովսեփի տունը Բեթէլը լրտեսեցին. (ու այն քաղաքին անունն առաջուց Լուզ էր.)
22 Եւ պահապանները մարդ մը տեսան որ այն քաղաքէն կելլէր, և անոր բսին, Շնորհք բրէ, քաղաքը մեզի ցուցուր, և քեզի ողորմութիւն կրնանք։ Եւ անկէ քաղաքը մանելու կողմը ցուցուց անոնց։ Եւ քաղաքը սուրի բերնէն անցուցին, բայց այն մարդը և անոր բոլոր ազգատոհմը թող տուին։
26 Եւ այն մարդը Քետացւոց երկիրը գնաց, և հոն մէկ քաղաք մը չինեց, և անոր անունը Լուզ կոչեց, Ե մինչև այս օրս անոր անունն այս է։
27 Եւ Մանասէ Բեթսանը և անոր գիւղաքաղաքները, Թանաքն ու անոր գիւղաքաղաքները, Դովրի բնակիչները և անոր գիւղաքաղաքները, Յեբղաամի բնակիչներն ու անոր գիւղաքաղաքները, Մաֆեդովի բնակիչներն ու անոր գիւղաքաղաքները չվռնտեցին. և Քանանացիք կամակորութեամբ այս երկրին մէջ բնակեցան։
28 Եւ երբ Իսրայէլ ուժովցաւ՝ Քանանացիները հարկատու ըրաւ, բայց զանոնք բոլորովին չվռնտեց։
29 Եփրեմ ալ Գազերի մէջ բնակող Քանանացիները չվռնտեց. և Քանանացիք անոր հետ Գազերի մէջ բնակեցան։
30 Զաբուղոն Կեթրոնի բնակիչները և Նահաղոլի բնակիչները չվռնտեց. և Քանանացիք անոնց մէջ բնակելով հարկատու եղան։
31 Ասեր Ակքովի բնակիչներն, ու Սիդոնի, Աքղաբի, Աքզիբի, Հելբայի, Աֆեկի ու Բոոբի բնակիչները չվռնտեց.
32 Այլ Ասերեանք այն երկիրը բնակող Քանանացւոց մէջ բնակեցան, քանզի զանոնք չվռնտեցին։
33 Նեփթաղիմ Բեթսամիսի բնակիչներն ու Բեթանաթի բնակիչները չվռնտեց, այլ այն երկիրը բնակող Քանանացւոց մէջ բնակեցաւ. և Բեթսամիսի ու Բեթանաթի բնակիչներն անոր հարկատու եղան։
34 Եւ Ամորհացիք Դանի որդիները լեռնան վրայ նեղը ձգեցին, քանզի անոնց հովիտներուն իջնել չտուին։
35 Թող չտուին որ Հարմիսեռն իջնեն։ Եւ Ամորհացիք կամակորութեամբ Հարեսլեռը, Այիղոնի ու Սաղարբինի մէջ բնակեցան. բայց երբ Յովսեփի տունը ձեռքն ուժովցաւ, անոնք հարկատու եղան։
36 Ամորհացւոց սահմանն Ակրաբիմի զառիվերէն՝ Ի վերէն վէմէն վեր էր։

## ԳԼ. Բ

1 Եւ Տէրոջը հրեշտակը Գաղգաղայէն Բոքիմ ելաւ ու բաւ, Ձեզ Եգիպտոսէն հանեցի, և ձեզ այն երկիրը բերի, զոր ձեր հայրերուն երդում բրեր էի. ու բսի որ Ձեզի հետ բրած ուխտս յաւիտեան պիտի չխզեմ։
2 Եւ այս երկրին բնակչաց հետ դաշնակցութիւն մի ընէք, անոնց սեղանները փլցուցէք. բայց դուք իմ խօսքիս հնազանդութիւն չբրիք. ինչո՞ւ համար
3 համար այս բանն բրիք։ Ես ալ բսի, Զանոնք ձեր առջևէն պիտի չվռնտեմ, այլ անոնք ձեզի թշնամի, ու անոնց աստուածներն ալ ձեզի որոգայթ պիտի ըլլան։
4 Եւ երբ Տէրոջը հրեշտակը բոլոր Իսրայէլի որդւոց այս խօսքերն բսաւ, ժողովուրդը ձայնը վերցուցին լալով
5 յաղաւ։ Եւ այն տեղին անունը *Բոքիմ կոչեցին. ու հոն Տէրոջը զոհ մատուցին։
6 Եւ երբ Յեսու ժողովուրդն արձակեց, Իսրայէլի որդիքն իւրաքանչիւրը իր կալուածքը գնաց՝ երկիրը

* Ա֊յլ֊ե֊ն՝ նզովք։

* Ա֊յլ֊ե֊ն՝ լացողներ։

7 ժառանգելու համար, Եւ ժողովուրդը՝ Յեսուի բոլոր օրերուն մէջ, ու
Յեսուէն հաքը ողջ մնացող՝ և իսրայէլի համար Տէրոջն ըրած ամէն մեծ
գործ գիրերը տեսնող ծերերուն բոլոր օ-
8 րերուն մէջ՝ Տէրոջը ծառայութիւն ը-
րին։ Եւ Տէրոջը ծառան Յեսուն Նաւեան հարիւր տասը տարեկան մեռաւ։
9 Եւ զանիկա իր ժառանգութեան սահմանին մէջ Թամա լեռան հիւսիսային կողմը՝ Եփրեմի լեռը *Թամնաթ–Սարեհ
10 սէ մէջ թաղեցին։ Եւ այն գարուն բոլոր մարդիկն իրենց հայրերուն խառնուեցան. ու անոնցմէ հաքը ուրիշ ազգ մը եկաւ, որ Տէրը ու իսրայէլի համար անոր ըրած գործերը չճանչցան։
11 Եւ իսրայէլի որդիքը Տէրոջ առջև չարութիւն ըրին ու Բահաղիմը պաշ-
12 տեցին։ Եւ թողուցին իրենց հայրերուն Տէր Աստուածը, որ զիրենք եգիպտոսի երկրէն հաներ էր, ու օտար աստուածներու հաւէ գացին, այսինքն իրենց բոլորտիքը եղող ազգաց †–ուէ՛ք աստուածներուն, և անոնց երկրպագութիւն ըրին, և Տէրը զրգռեցին։
13 Ու‌ստի Տէրը թողուցին և Բահաղն ու
14 Աստարովթը պաշտեցին։ Եւ Տէրոջը բարկութիւնն իսրայէլի վրայ բորբոքեցաւ, ու զանոնք կողոպտիչներու ձեռքը մատնեց, ու զանոնք կողոպտեցին. և զանոնք չրջակայ թշնամիներուն ծախեց, և ալ չկրնան կենալ իրենց թշնա-
15 նիներուն առջև կռիւով։ Ուր որ երթային՝ Տէրոջը ձեռքն անոնց վրայ էր չարիք ընելու համար, ինչպես որ Տէրը ըսեր էր, և ինչպես որ անոնց երդուար բրեր էր. և խիստ մեծ նեղութեան մէջ էին։
16 Եւ Տէրը դատաւորներ հանեց, որոնք կողոպտիչներուն ձեռքէն ազա-
17 տեցին զանոնք։ Սակայն իրենց դատաւորներուն ալ մտիկ չրրին, և օտար աստուածներու հաւէ էրթալով պոռնկութիւն ըրին, և անոնց երկրպագու-

* Ուր Յես.ԺԴ. 50 և իգ. 30 կ՚ըսուի Թամնաթ–սարա։

թիւն ըրին. չուտով խոտորեցան այն ճամբայէն՝ որուն մէջ իրենց հայրերը կը քալէին Տէրոջը հրամաններուն հնազանդելով, Բայց ասոնք այնպես չըրին։ Եւ երբ Տէրը անոնց դատաւորներ կը հանէր, Տէրը դատաւորին հետ ըլլալով՝ դատաւորին բոլոր օրերը զանոնք իրենց թշնամիներուն ձեռքէն կ՚ազատէր. քանզի անոնց նեղութիւն առաջնորդներուն ու չարչարողներուն երեսէն անոնց հեծութիւններուն համար Տէրը կը զղջար։ Եւ երբ այն դատաւորը մեռնէր, կը դառնային նորէն օտար աստուածներու հաւէ կ՚երթային, զանոնք կը պաշտէին և անոնց երկրպագութիւն կ՚ընէին, ու իրենց հայրերէն աւելի անօրէնութիւն կ՚ընէին. իրենց ըղ գործերէն ու իրենց
20 †ծուռ ճամբայէն չէին դառնար։ Ուստի Տէրոջը բարկութիւնն իսրայէլի վրայ բորբոքելով՝ ըսաւ, Որովհետև այս ազգը իրենց հայրերուն պատուիրած ուխտս զանց ընելով՝ իմ ձայնիս հնազանդութիւն չըրին, ես ալ այսուհետև անոնց առջևէն բնաւ մէկը ելի-
22 սի չվռնտեմ այն ազգերէն, որոնք Յեսու իր մեռած ատեն թողուց, Որպէս զի անոնցմով իսրայէլը փորձեմ, թէ արդեօք իրենց հայրերուն պէս պիտի չտնտիպեն պիտի ընեն Տէրոջը ճամ-
23 բան քալելու, թէ ոչ։ Ուստի Տէրը այս ազգերը թող տուաւ, և չարաւ չվռնտեց, ու զանոնք Յեսուի ձեռքը չմատնեց։

## Գլ. Գ

1 Եւ ասոնք են այն ազգերն որոնք Տէրը թող տուաւ, որ անոնցմով իսրայէլը՝ այսինքն Քանանացւոց բոլոր պատերազմները ամէն չգիացողները փոր-
2 ձէ. (Միայն ասոր համար՝ որ իսրայէլի որդւոց սերունդը՝ մանաւանդ առաջուց չգիացողները պատերազմ սորվին ու
3 գիտնան.) Փղշտացւոց հինգ նախաթա-

*Եբր. կարծր



րութիւնները, և բոլոր Քանանացիները և Սիդոնացիները, Լիբանան լեռը բնակող Խևացիները՝ Բաալ-Հերմոն լեռնէն մինչև Եմաթի մուտքը։ Աստնցմով պիտի փորձէր իսրայէլը որ գիտնար թէ արդեօք պիտի հնազանդէին Տէրոջը պատուիրանները, որոնք Մովսէսի ձեռքով անոնց հայրերուն հրամայեր էր։
5 Եւ իսրայէլի որդիքը Քանանացւոց, Քետացւոց, Ամորհացւոց, Փերեզացւոց, Խևացւոց ու Յեբուսացւոց մէջ բնակեցան. Եւ անոնց աղջիկներն իրենց կին առին, և իրենց աղջիկներն ալ անոնց տղոցը տուին, և անոնց աստուածները
7 ները պաշտեցին։ Եւ իսրայէլի որդիքը Տէրոջը առջև չարութիւն ըրին, և իրենց Տէր Աստուածը մոռնալով՝ Բահաղիմը և Աստարովթը պաշտեցին։ Եւ
8 Տէրոջը բարկութիւնն իսրայէլի վրայ բորբոքեցաւ, և զանոնք Միջագետք Քուշան–Րսաթայիմի թագաւորին ձեռքը մատնեց. և իսրայէլի որդիքն ութ տարի ծառայութիւն ըրին Քուշան–
9 Րսաթայիմի։
Ապա իսրայէլի որդիքը Տէրոջը աղաղակեցին. և Տէրը իսրայէլի որդւոց փրկիչ մը հանեց, Քաղերի պզտիկ եղբօրը կենեզի որդին Գոթոնիէլը, որ
10 զանոնք ազատեց։ Եւ Տէրոջը Հոգին անոր վրայ բլլալով՝ իսրայէլի մէջ դատաւորութիւն կ՚ընէր. և երբ պատերազմի ելաւ, Տէրը Միջագետք Քուշան–Րսաթայիմ թագաւորն անոր ձեռքը տուաւ, և անոր ձեռքը Քուշան-
11 Րսաթայիմի դէմ զօրացաւ։ Եւ երկիրը քառասուն տարի հանգստացաւ. և Կենեզեան Գոթոնիէլ մեռաւ։
12 Եւ իսրայէլի որդիքը նորէն Տէրոջը առջև չարութիւն ըրին. և Տէրոջը առջև չարութիւն ընելնուն համար Տէրը Մովաբի Եգղոն թագաւորն իս-
13 րայէլի դէմ զօրացուց. Եւ անիկա Ամմոնի և Ամաղեկի որդիքն իր քովը ժողվեց, և գնաց իսրայէլը զարկաւ և
14 Արմաւենեաց քաղաքին տիրեց։ Եւ իսրայէլի որդիքը Մովաբի Եգղոն թագաւորին ծառայեցին տասն և ութ տարի։
15 Եւ իսրայէլի որդիքը Տէրոջը աղաղակեցին, և Տէրը անոնց փրկիչ մը հանեց, Բենիամինեան Գերայի որդին Եհուդը որ *աճեկագործ էր. և իսրայէլի որդիքն անոր ձեռքով Մովաբ Եգղոն թագաւորին ընծայ խրրե-
16 կեցին։ Եւ Եհուդ մէկ †կանգնալափ երկայնութեամբ երկայրի սուր շինեց իրեն, և զանիկա իր հագուստներուն տակ իր աջ ազդրին վրայ կապեց։ Եւ
17 կէն իր աջ ազդրին վրայ կապեց։ Եւ ընծան Մովաբի Եգղոն թագաւորին տարաւ. (ու Եգղոն չատ գէր մարդ
18 մըն էր.) Եւ երբ ընծան տուաւ լըմընցուց, ընծան կրող մարդիկը հա-
19 րկեց. Եւ ինք Գաղգաղայի մօտ եղած ‡քարահանդերէն հա դարձաւ և բաւ, Ով թագաւոր, քեզի ծածուկ խօսք մը ունիմ. և անիկա ըսաւ, Լուռ ||կեցիր. և բոլոր անոր քով ե-
20 ղողները դուրս ելան։ Եւ Եհուդ անոր քով մտաւ, և անիկա նստեր էր իրեն յատկացեալ աւազանային վերնատան մէջ. և Եհուդ անոր ըսաւ, Քեզի Աստուծոյ կողմանէ խօսք մը ունիմ. և անիկա աթոռէն վրայէն ե-
21 լաւ։ Եւ Եհուդ իր ձախ ձեռքը երկրընդնելով առաւ իր աջ ազդրին վրայէն
22 քաշեց և անոր փորը խոթեց, Այնպես որ երկաթին հետէն կոթն ալ ներս մտաւ. և գիրուցը երկաթը բռնեց, այնպես որ աւուրն անոր փորէն չկրցաւ
23 հանել, և աղբը դուրս եկաւ։ Եւ Եհուդ սրահն ելաւ և վերնատան դռները անոր վրայէն գոցեց և կղպեց.
24 Եւ ինք ելաւ ‡ետց։ Եւ անոր ծառաները գացին նայեցան որ ահա վերնատան դռները կղպուած էին. և ըսին, Անիկա անաւարակոյս իր ամառնային սենեակին մէջ։ :Գարկաւորութեան

* Եբր. աչ ձեռքը գոցուած մարդ
† Կամ թզուկ
‡ Կամ փորուած ժայռերէն
|| Կամ կեցիր.
:Եբր. առքերը ծածկած է։

25 գայած է՞ Եւ անունք ապաւեցին մինչև որ ամչցան, բայց ահա վիճակահան դանձերը չէր բանար. և բանալին առին բացին, և ահա իրենց աչքը գետնի
26 վրայ ինկած մեռած էր։ Եւ գանէ որ անունք կը անարգային։ Աւազդ փախաւ, և քարահանքին անցնելով ոչ ապաղէ Սէլայ հասաւ։
27 Եւ Երբ հասաւ՝ նիփթալմի լճակն վրայ փող հնչեցուց, և Իսրայէլի որդիքն անոր հետ այն լճակին վար իջան, և ինքն անոնց առջևէն Երթեր։
28 Եւ անոնց բսաւ, Իմ հետևէս եկէք, քանզի Տէրը ձեր թշնամիները՝ Մովաբացիք ձեր ձեռքը տուաւ։ Ուստի անոր հետևէն իջան, և Մովաբի ԱՂՆԷՆ Յորդանանու անցքերը բռնեցին, և
29 Քոչ չտուին որ մարդ մը անցնի։ Եւ այն ժամանակ Մովաբին տասը հազարի չափ մարդ կտրեցին, ամէնն ալ յաղթ Թանգամ և զօրաւոր մարդիկ էին։ և
30 մէկը չկրցաւ փախչիլ։ Եւ այն օրը Մովաբ Իսրայէլի ձեռքին ներքև նուաճեցաւ։ և երկիրն ութսուն տարի հանգրուացաւ։
31 Եւ ոտնահետև Անաթի որդին Սամեգար եղաւ, և եղներու խթանով մը Փղշտացիներէն վեց հարիւր մարդ կոտրեց։ և ասիկա ալ Իսրայէլն ազատեց։

## ԳԼ. Դ

1 Եւ Աւազդի մեռնելէն ետքը Իսրայէլի որդիքը Տէրոջը առջև նորէն չարութիւն ըրին։ Եւ Տէրը մատնեց զանոնք Քանանացոց Յաբին թագաւորին ձեռքը, որ Հասորի մէջ կը թագաւորէր։ և անոր զօրապետին անունը Սիսարա էր, և
3 ազգաց Աիրոաթին մէջ կը բնակէր։ Եւ Իսրայէլի որդիքը Տէրոջը աղաղակեցին. քանզի անիկա հինգ հարիւր երկաթէ կառք ունէր, և անիկա քսան տարի Իսրայէլի որդիքը ահագին նեղեց։
4 Եւ անառաւն Դեբորա մարգարէուհին՝ Ղապիդովթի կինը Իսրայէլի մէջ
5 դատաւորութիւն կընէր։ Եւ անիկա Եփրեմի լեռան վրայ՝ Ռամայի ու Բեթէլի միջտեղ Դեբորայի արմաւենւոյն ներքև կը բնակէր, և Իսրայէլի որդիքը դատաստանի համար անոր կիյնային։
6 լիներ։ Ու Դեբորա Հրով դրկեց, և Նեփթաղիմի Կադեսէն Աբինոամի որդին Բարակ կանչեց, և անոր բսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը Հով չհրամայե՞ց ըսելով Գնա՛ Թաբոր լեռը երթր, և Նեփթաղիմի որդւոցմէ և Զաբուղոնի որդւոցմէ քու հետդ տասը հազար մարդ
7 առ։ Եւ ես Յաբինի զօրագլուխը Սիսարան, և անոր կառքերն ու ջրաշթաղմութիւնը քու դէմդ պիտի հանեմ Կիսոն հեղեղատին քով, և զանիկա ես ձեռքդ պիտի մատնեմ։ Եւ
8 Նիկա քու ձեռքդ պիտի մատնեմ։ Եւ Բարակ անոր բսաւ, Թէ որ դուն ինծի հետս երթաս, կերթամ. բայց Թէ
9 որ իմ հետս չերթաս, չեմ երթար։ Եւ անիկա բսաւ, Անշուշտ ես քու հետդ պիտի երթամ, բայց դու երթալուս ճամբուդ մէջ դուն փառք մը չես առներ, քանզի Տէրը Սիսարան կնոջ մը ձեռքը պիտի մատնէ։ Եւ Դեբորա ելաւ
10 Բարակի հետ Կադէս գնաց։ Եւ Բարակ Զաբուլոն ու Նեփթաղիմը Կադեսի մէջ ժողվեց, և տասը հազար մարդով ելաւ։ Դեբորա ալ անոր հետ ելաւ։
11 (Եւ Մովսէսի սկեսրոջը Յոթորի որդիներէն կինեցիներէն զատուեր էր, և իր վրանը Կադեսի մօտ Սաանանիմի կաղնիին քով կանգներ էր։)
12 Անառաւն Սիսարայի լսնացուցին որ Աբինոամի որդին Բարակ Թաբոր լեռը
13 ելեր է։ Եւ Սիսարա իր բոլոր կառքերը՝ ինն հարիւր երկաթէ կառքերը, և իր հետ եղող բոլոր զօրքն ազգաց Աբրոաթին կիսոն հեղեղատը ժողվեց։
14 Եւ Դեբորա բսաւ Բարակի, Ոտք ելիր, քանզի Տէրը այսօր Սիսարան քու ձեռքդ մատնեց. միթէ Տէրը քու առջևդ չելա՞ւ։ Եւ Բարակ Թաբոր լեռնէն իջաւ, և իր հետ տասը հազար մարդ
15 կար։ Եւ Տէրը Սիսարան և բոլոր կառքերն ու բոլոր բանակը Բարակի առջև տուրի բերնով խորտակեց. և Սիսարա կառքէն վար իջաւ և ոտքով
16 փախաւ։ Եւ Բարակ կառքերը և բանակր մինչև ազգաց Աիրոաթ հալածեց, և Սիսարայի բոլոր բանակը սուրի բերնով ինկաւ, և մարդ մր չմնաց։
17 Եւ Սիսարա ոտքով կենեցի Բաբերի կնոջը Յայելի վրանը փախաւ. քանզի Հասորի Յաբին թագաւորին ու կենեցի Բաբերի տան միջտեղ խաղաղութիւն
18 կար։ Ուստի Յայել Սիսարան դիմաւորելու ելաւ և անոր բսաւ, Տէր իմ, դարձիր, ինծի դարձիր, մի վախնար։ Ուստի անիկա դէպ ի վրանն անոր դարձաւ, և կինը զանիկա վերմակով
19 մր ծածկեց։ Եւ անիկա կնոջը բսաւ, Շնորհք բրէ՝ ինծի փիչ մը ջուր տուր որ խմեմ, քանզի ծարաւած եմ։ Նա ալ կաթին ափիը բացաւ, և անոր խմցուց։
20 Եւ բսաւ զանիկա ծածկեց։ Եւ անիկա կընոջը բսաւ, Վրանին դուռը կեցիր, և թէ որ մարդ մը գայ, թէզի հարցընէ և բսէ թէ Այս տեղ մարդ կա՞յ, Ձկա՝ բսես։
21 Եւ Բաբերի կինը Յայել վրանին մէկ ցիցը առաւ, և ուռն ալ ձեռքը բռնելով կամացուկ մր անոր քով գնաց, և ցիցն անոր ծամլիքը մխելով մինչև գետինը զաւկաց, և անիկա յոգնած քնացեալն հանգիստ խորանին մէջ էր։ այսպէս
22 մեռաւ։ Եւ ահա Բարակ Սիսարայի հետևէն կը վազէր, և Յայել զանիկա դիմաւորելու ելաւ և անոր բսաւ, Եկուր, քու փնտռած մարդդ քեզի ցուցընեմ։ և անիկա կնոջը հետ ներս մտաւ, և ահա Սիսարա մեռած պառկեր էր, և ցիցն անոր ծամլիքին մէջն էր։
23 Եւ Աստուած այն օրը Քանանացոց Յաբին Թագաւորն Իսրայէլի որդւոց
24 առջև կոտրտելու բրաւ։ Եւ Քանանացոց Յաբին Թագաւորին դէմ Իսրայէլի որդւոց ձեռքն օրէ օր կը զօրանար, մինչև որ Քանանացոց Յաբին Թագաւորը բնաջինջ բրին։

## ԳԼ. Ե

1 Եւ այն օրը Դեբորա և Աբինոամի որդին Բարակ երգեցին և ըսին,
2 Իսրայէլի զօրաւորաց առաջնորդելուն Եւ ժողովուրդին յօժարակամ անձնանուէր ըլլալուն համար՝
Տէրը օրհնեցէք։
3 Ով Թագաւորներ, մտիկ ըրէք,
Ով նախարարներ, ականջ դրէք.
Ես Տէրոջը պիտի երգեմ,
Իսրայէլի Տէր Աստուծոյն առջևը պիտի բսեմ։
4 Ով Տէր, երբ գուն Սէիրէն ելար,
Եւ Եդոմի դաշտեն չուեցիր,
Երկիրը շարժեցաւ, երկինք ալ կաթեցուցին,
Ամպերն ալ ջուր կաթեցուցին։
5 Տէրոջը երեսին լեռները հալեցան,
Իսրայէլի Տէր Աստուծոյն երեսին Սինայ ալ հալեցաւ։
6 Անաթի որդւոյն Սամեգարի օրերը՝
Յայելի օրերը
Մեծ ճամբաներն անկոխ էին,
Եւ ճանապարհորդները խոտորնակ ճամբաներէ կ'երթային։
7 Իսրայէլի մէջ զօրավարներ չմնացին,
Չմնացին, մինչև որ ես Դեբորա ելայ,
Մինչև որ ելայ Իսրայէլի մէջ մայր ըլլալու։
8 Նոր աստուածներ ընտրեցին.
Անոնուն էրեսը գռներուն մէջ պատերազմ եղաւ։
Արդեօք Իսրայէլի քառասուն հազար զրէրն մէջ
Վահան կամ նիզակ երևցաւ։
9 Իմ սիրտս Իսրայէլի իշխաններուն վրայ է.
Ով ժողովուրդին անձնանուէր եղողները,
Տէրն օրհնեցէք։
10 Ձերմակ էշերու վրայ հեծնողներ,
Դատաստանի աեղանը նստողներ,
Եւ ճամբու վրայ պտըտողներ, զրուցեցէք։
11 †Ախդիռաւորներուն ձայնին պատասխանի՝
Ջուր հանելու տեղերուն մէջ,

*Կամ Մովսիի էրիւերը էրեցաւ

*Բնբ. կանչեց



*Բնբ. պակսեցան,
†Կամ՝ ——ը բաժնողներուն, և կամ ժողովուրդներուն

Հան Տէրոջը արդարութիւնները,
եւ իսրայէլի մէջ անոր զօրաւորաց արդարութիւնները պատմեն.
Ազատեն Տէրոջը ժողովուրդը դռնեըը իջան,
12 Արթնցիր, արթնցիր, ով Դեբովա,
Արթնցիր, արթնցիր ու երգ ըսէ.
Ով Բարակ, ելիր.
Ով Աբինոամի որդի, քու գերութիւնդ գերի ըրէ.
13 Ազատեն վախատականները
Ժողովուրդին զօրաւորներուն վրայ յաջակէցան.
Տէրը ինծի հետ
Զօրաւորներուն դէմ իջաւ.
14 Եփրեմի արմատէն եղողներն Ամաղեկի վրայ ելան.
Բենիամին քու եռևէդ քու ժողովուրդիդ մէջ էր.
Մաքիրէն իշխաններ՝
Եւ Զաբուղոնէն գրչի գրիչ բռնողներ իջան.
15 Եւ Իսաքարի զօրավարները Դեբովայի հետ,
Եւ Իսաքարն ալ Բարակի պէս
Անոր եռևէն հովիտը դրկուեցաւ.
Ռուբինի *ճոհմերուն մէջ
Մեծ յաղմուկներ կար.
16 Ինչո՞ւ համար փարախներուն մէջ նըստար,
Որ †հօտերուն մռնգիը լսես
Ռուբինի ճոհմերուն մէջ
Մեծ ստրակութիւններ կար.
17 Գաղաադ Յորդանանու անդիի կողմը կը բնակէր,
Ու Դան ինչո՞ւ համար նաւերու մէջ պանդուխտ մնաց,
Ասեր ծովուն եղերքը կը նստէր,
Եւ իր նաւահանգիստներուն քով կը բնակէր.
18 Զաբուղոն և Նեփթաղիմ մեռնելու ժողովուրդ մի է,
Որ դաշտին բարձր տեղութիւնքը զինք մահուան վտանգի մէջ կը դնէ.
19 Թագաւորները եկան, պատերազմ բռնեցին.
Անառեն Քանանացւոց թագաւորները
Մահեդդովի չուրին քով Թանաքի մէջ պատերազմ բռնին.
Սակայ չշահեցան,
20 Երկինքէն պատերազմ բռնուեցաւ.
Աստղերն իրենց շրջաններէն՝
Սիսարայի դէմ պատերազմ բռնին.
21 Կիսոն հեղեղատն՝ այն հին հեղեղատը՝
Կիսոն հեղեղատը զանոնք քշեց տարաւ.
Ով իմ անձս, առաջ զօրութիւնը կոխեցիր.
22 Անառեն ձիերուն սմբակները
Սաստիկ վազելուն համար կատր կատր եղան,
Զօրաւորներուն վազցնելովը.
23 Տէրոջը հրեշտակն ըսաւ, Մարովզը նզովեցէք,
Անոր բնակիչները սաստիկ նզովեցէք,
Քանզի Տէրոջը օգնութեան՝
Զօրաւոր խնամիներուն դէմ Տէրոջը օգնութեան չեկան.
24 Կինեցի Քաբերի կինը Յայել
Կանանց մէջ օրհնեալ ըլլայ.
Վրաններու մէջ բնակող կիներէն
Աւելի օրհնեալ ըլլայ.
25 Սիսերա ջուր ուզեց. կաթ տուաւ,
Իշխանաց անոթով կոգի մատուց.
26 Ձեռքը իր ձեռքը ցիլոին՝
Եւ իր աջ ձեռքը հիւսան ուռին երկընցուց,
Սիսերայի զարնելով գլուխը ճեղքեց.
Եւ ջիղը անոր ծամելիքը միջովը խոցեց.
27 Անիկա ծռեցաւ, ծռելէ առաջուան մէջ ինկաւ փռուեցաւ,
Առաջուան մէջ ծռեցաւ ինկաւ.
Ուր որ ծռեցաւ, հոն մեռած ինկաւ.
28 Սիսերայի մայրը պատուհանէն նայեցաւ,
Եւ վանդակին եռևէն ազատակեց.
Ինչո՞ւ համար անոր կառքը կ'ուշանայ գալու,
Ինչո՞ւ անոր կառքերուն քայլերը կամ կը մնան.

*Կամ հեղեղատներուն
†Կամ հօտերուն մէջ սրինգի ձայնը



29 Անոր իմաստուն տիկիններն անոր պատասխան տուին,
Ինքն ալ իր խօսքերուն պատասխանն իրեն կու տար,
30 Անշուշտ անոնք աւար գտան,
Ձոնդիլ բաժնելու վրայ են.
Ամէն կարմիր համար մէկ կամ երկու ազիկ,
Իւ Սիսարայի համար գոյնզգոյն աւար մը,
Գոյնզգոյն նկարագործ աւար մը,
Երկու կողմը բանուած և գոյնզգոյն վիշապներ աւար——Ձ՚ենէ ըլլան.
31 Ով Տէր, քու բոլոր թշնամիներդ
Այսպէս կորսուին.
Իսկ զինեկիա սիրողներն
Իր զօրութեամբ ելլող արեւուն պէս ըլլան.
Եւ երկիրը քառասուն տարի հանգչեցաւ.

## Գլ. Զ

1 Ե՛ւ իսրայէլի որդիքը Տէրոջը առջեւ չարութիւն ըրին, և Տէրը զանոնք եօթը տարի Մադիանացւոց ձեռքն մատնեց.
2 Նոյն ու Մադիանացւոց ձեռքն իսրայէլի վրայ ուժգնացաւ. — իսրայէլի որդիքը Մադիանացւոց պատճառաւ իրենց համար լեռներու մէջ խոռոչներ,
3 քարայրներ և պատնէշներ շինեցին ու երբ իսրայէլացիք սերմ կը ցանէին, Մադիանացիք անոնց վրայ կ'ելլէին. և Ամաղեկացիք և արեւելքի բնակիչներն ալ կ'ելլէին. ու անոնց դէմ բանակ կազմելով գետինն բերքը կ'ապրեին մինչեւ Գազա, ու իսրայէլի ապրուստ մը չէին թողուր, ոչ ոչխար, ոչ արջառ և
5 ոչ էշ. քանզի անոնք իրենց հօտերով և վրաններով կ'ելլէին, և մորթի պէս բազմութեամբ կու գային. թէ անոնք և թէ անոնց ուղտերը չէին հաշուեր. ու իսրայէլ երկիրը կու գային
6 զանիկա աւերելու համար. ու իսրայէլ Մադիանացւոց պատճառաւ շատ աղքատացաւ. և իսրայէլի որդիքը Տէրոջը ազազակեցին.
7 Ե՛ւ երբ իսրայէլի որդիքը Տէրոջը ազազակեցին Մադիանացւոց պատճառ
8 ով, Տէրը իսրայէլի որդւոց մարգարէ մը դրկեց. և անիկա բսաւ անոնց, Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս կ'ըսէ. Ես ձեզ Եգիպտացին հանեցի, և ձեզ
9 Ծառայութեան տունէն զերծ ըրի, և ձեզ Եգիպտացւոց ձեռքէն, և բոլոր ձեզի նեղութիւն տուողներուն ձեռքէն ազատեցի, և զանոնք ձեր առջեւէն վռնտեցի, և անոնց երկիրը ձեզի տուի.
10 Ու ձեզի բսի, Ես եմ ձեր Եհովայ Աստուածը. մի վախնաք Ամորհացւոց աստուածներէն, որոնց երկրին մէջ կը բնակիք. բայց դուք իմ խօսքս մտիկ չըրիք.
11 Ե՛ւ Տէրոջը հրեշտակը եկաւ, և Ոբիեզերեան Յոաշի բլուկնուկն ներքև նստաւ, որ Եփրայի մէջ էր. և անոր որդին Գեդէօն հնձանին մէջ ցորեն կը ծեծէր՝ Մադիանացւոց երեսէն փախցընելու համար։ Եւ Տէրոջը հրեշտակն անոր երեւցաւ, և բսաւ, Ով զօրաւոր
13 կարիճ, Տէրը քու հետդ է։ Եւ Գեդէօն անոր բսաւ, Ո՛հ, Տէր իմ, թէ որ Տէրը մեր հետն է, ինչո՞ւ համար այս բոլոր բաները մեր գլուխը եկաւ. և ո՛ւր են անոր ամէն հրաշքները, որոնք մեր հայրերը մեզի կը պատմին՝ ըսելով թէ Տէրը մեզ Եգիպտացին հանեց. բայց հիմա Տէրը մեզ երեսէ ձգեց, և մեզ Մադիանացւոց ձեռքը մատնեց։ Եւ
14 Տէրը անոր նայեցաւ և բսաւ, Այդ քու զօրութիւնովդ գնա, որ Իսրայէլը Մադիանացւոց ձեռքէն ազատես. ո՞չ ա-
15 պա՛ք են քեզ դրկեցի։ Եւ անիկա անոր բսաւ, Ո՛հ, Տէր իմ, Իսրայէլն ինչո՞վ ազատեմ. ահա իմ *ազգատոհմս Մանասէի ցեղին ազգատոհմն է, և ես իմ հօրս տան կրտսերագոյնն եմ.
16 Եւ Տէրը անոր բսաւ, Ես անշուշտ քու հետդ պիտի ըլլամ, և Մադիանը մէկ
17 մարդու պէս պիտի զարնես։ Եւ ան-նիկա անոր բսաւ, Կ'ազաչեմ, թէ որ ես քու աչքիդ առջեւ շնորհք գտայ,

*Բեր. հազարաւորս

ինձի նշան մը ցուցուր, որ ՙէ՛ք՚ ըն
18 ինձի հետ խօսողը դուն ես։ Կ՚աղաչեմ
որ ասկէ չերթաս, մինչև որ ես քեզի
գամ, իմ ընծաս բերեմ և քու առ-
ջեդ դնեմ։ Ան ալ ըսաւ, Ես կը
19 սպասեմ մինչև որ դուն դառնաս։ Եւ
Գեդէօն ներս մտաւ, այծերէն ուլ մը
և մէկ արդու ալիւրէ բաղարջ չօթեր
պատրաստեց. մսոր ափաւոր մը մէջ
դրաւ, և արգանակն ալ պատկի մը
մէջ դրաւ, և անոր առջև հանեց բե-
20 րեվրդն ներքև և ՙոռը մատուց։ Եւ
Աստուծոյ հրեշտակին անոր ըսաւ, Մի-
սը և բաղարջ չօթերն առ, այս վէմին
վրայ դիր, և արգանակը թափէ։ Եւ
21 անկէ այնպես ըրաւ։ Եւ Տէրոջը
հրեշտակին իր ձեռքի գաւազանին ծայ-
րը երկնցուց, և մսին և բաղարջ չօ-
թերուն դպաւ. և վէմէն կրակ ելլե-
լով մսոր և բաղարջ չօթերն այրեց։ Եւ
Տէրոջը հրեշտակն անոր աչքերուն ա-
22 չեն դնաց։ Եւ Գեդէօն տեսաւ որ ա-
նկէակ Տէրոջը հրեշտակն է. և Գեդէօն
ըսաւ, Ո՜հ, Տէր Եհովայ, որ Տէրոջը հր-
23 եշտակը երես առ երես տեսայ։ Բայց
Տէրը անոր ըսաւ, Խաղաղութիւն ըլլայ
քեզի, մի վախնար. պիտի չմեռնես։
24 Եւ Գեդէօն հոն Տէրոջը սեղան մը շի-
նեց, և անոր անունը ՙԵհովայ-շալոմ՚
կոչեց, որ մինչև այս օրս Աբիհզերեանց
Եփրայի մէջ կեցած է։
25 Եւ այն գիշերը Տէրը անոր ըսաւ, Քու
հօրդ զուարակը, եօթը տարեկան երկ-
րորդ զուարակն առ, և քու հօրդ ու-
նեցած Բահաղի սեղանը փլցուր, և քա-
26 ժի Աստարովթը կարէ։ Եւ †ա ապա-
ռաժ քարին գլուխն օրինաւոր կեր-
պով՝ քու Տէր Աստուծոյդ սեղան մը
շինէ, և երկրորդ զուարակն առ, և
քու կարած Աստարովթիդ փայտերու-
27 ը ողջակէզ ըրէ։ Եւ Գեդէօն իր ծա-
առներէն տասը մարդ առաւ, և Տէ-
րոջը ինչն ըսածին պէս ըրաւ, և իր
հօրը առունէն, և քաղաքին մարդոցմէն
վախնալով՝ այս բանը ցորեկն ընելու՝
գիշերն ըրաւ։
28 Եւ երբ քաղաքին մարդիկն առա-
ւօտուն կանուխ եղան, տեսան որ Բա-
հաղին սեղանը փլած, և անոր քովի
Աստարովթը կարած, և երկրորդ զուա-
րակը շինուած սեղանին վրայ ողջակէզ
29 եղած էր։ Ուստի իրարու ըսին, Այս
բանն ո՞վ ըրաւ. և փնտռելէն և քըն-
նելէն. և ըսուեցաւ Թէ Այս բանը
30 Յովասի որդին Գեդէօն ըրաւ։ Եւ քա-
ղաքին մարդիկը Յովասի ըսին, Որդիդ
դուրս հանէ որ մեռնի, քանզի Բահա-
ղի սեղանը փլցուցեր ու անոր քովի
31 Աստարովթը կարեր է։ Եւ Յովաս իր
վրան եկող բոլոր մարդոցն ըսաւ, Մի-
թէ Բահաղի իրաւունքը դո՞ւք պիտի
պաշտպանէք, կամ թէ զանիկա դո՞ւք
պիտի ազատէք. ով որ անոր իրաւուն-
քը պաշտպանէ՝ մեռցուի մինչև
առաւօտ։ Թէ որ անիկա աստուած է՝
թող ինքն իր իրաւունքը պաշտպանէ
անոր դէմ, իր սեղանը փլցնելուն հա-
32 մար։ Եւ նոյն օրը զանիկա ՙՅերոբաաղ
անուանեց, քանզի ըսաւ, Թող Բահաղ
իր իրաւունքը պաշտպանէ անոր դէմ,
իր սեղանը փլցնելուն համար։
33 Եւ բոլոր Մադիանացիները, Ամաղե-
կացիները և արեւելքի բնակիչները ժո-
ղովեցան, և Յորդանանէն անցնելով՝ Յզրէլացւոյ հովտին մէջ բանա-
34 կեցան։ Եւ Տէրոջը Հոգին Գեդէօնի
վրայ հանգչեցաւ, և անիկա փող հըն-
չեցուց, և Աբիհզերեանք անոր հետէն
35 ժողովեցան։ Եւ բոլոր Մանասէի պատ-
գամաւորները զրկեց, նա ալ անոր ե-
տեւէն ժողովեցաւ. և Ասերի, Զորու-
ղոնի և Նեփթաղիմի ալ պատգամա-
ւորներ զրկեց, և անոնք գացին դա-
նոնք դիմաւորելու։
36 Եւ Գեդէօն Աստուծոյ ըսաւ, Թէ որ
ըսածիդ պէս Իսրայէլն իմ ձեռքովս
37 ազատելու ես, Ահա ես կալին մէջ

*Աչխէճ՚ Տէր խաղաղութեան, Եհովա-
զաղութիւն Տեառն։
†Կամ ապառաժոյս գլխուն բայց անզը

հօրդ առունէն, և քաղաքին մարդոցմէն վախնալով՝ այս բանը ցորեկն ընելու՝ գիշերն ըրաւ։
28 Եւ երբ քաղաքին մարդիկն առաւօտուն կանուխ եղան, տեսան որ Բահաղին սեղանը փլած, և անոր քովի Աստարովթը կարած, և երկրորդ զուարակը շինուած սեղանին վրայ ողջակէզ
29 եղած էր։ Ուստի իրարու ըսին, Այս բանն ո՞վ ըրաւ. և փնտռելէն և քննելէն. և ըսուեցաւ Թէ Այս բանը
30 Յովասի որդին Գեդէօն ըրաւ։ Եւ քաղաքին մարդիկը Յովասի ըսին, Որդիդ դուրս հանէ որ մեռնի, քանզի Բահաղի սեղանը փլցուցեր ու անոր քովի
31 Աստարովթը կարեր է։ Եւ Յովաս իր վրան եկող բոլոր մարդոցն ըսաւ, Միթէ Բահաղի իրաւունքը դո՞ւք պիտի պաշտպանէք, կամ թէ զանիկա դո՞ւք պիտի ազատէք. ով որ անոր իրաւունքը պաշտպանէ՝ թող մեռցուի մինչև առաւօտ։ Թէ որ անիկա աստուած է՝ թող ինքն իր իրաւունքը պաշտպանէ անոր դէմ, իր սեղանը փլցնելուն համար։
ճամբորդ մարդը քաղքին հրապարակին
մէջ տեսաւ՝ Ծեր մարդն բսաւ, Ո՞ր
18 կ՚երթաս, և ուսան՞ կու գաս։ Եւ ա-
նիկա բսաւ, Մենք Յուդայի Բեթլեհե-
մէն մինչև Եփրեմի լեռան կողմերը
կ՚անցնինք. ես այն տեղացի եմ, և
մինչև Յուդայի Բեթլեհեմը գացի, և
հիմա Տէրոջը տունը կ՚երթամ. և ոնա
իւր տունն ընդունող մարդ մը չկայ։
19 Բայց մեր էշերուան համար յարդ և Ճա-
րակ կայ. և ինծի համար, քոյ ազա-
խնդ համար և քոյ Ծառայիդդ հետ
եղող մանչուն համար հաց և գինի ո-
20 նիմ. բնաւ բան մը պակաս չէ։ Եւ
այն Ծեր մարդն բսաւ, Խաղաղութիւն
քեզի. քոյ ամէն պակասութիւնդ հոգը
իմ վրաս ըլայ. բայց գիշերը հրապա-
21 րակին մէջ մի մնար։ Եւ զանիկա իւր
տունը տարաւ, և էշերուն կերը տուաւ.
և անոնք ոտքերնին լուալէն ետքը կե-
րան և խմեցին։
22 Եւ երբ անոնց սիրտ կը զուարճա-
նար, ահա քաղաքին բնակիչներէն
չար մարդիկ մանր չորս կողմը պատ-
ընցին, և դուռը Ծերուք պատա-
նեցին, և Ծերուք տէրը՝ այն Ծեր մարդուան հետ խօ-



սեցան և բսին, Տուղ հիգ մարդը
23 հանէ, որ զանիկա գիտնանք։ Եւ այն
տունուտէր մարդն անոնց ելաւ, և ա-
նոնց բսաւ, Ոչ, եղբայրներս։ Կ՚ազա-
չեմ՝ գործ մի ընէք. այս մարդն
իմ տունս մանելէն ետքը այս անզդա-
24 մութիւնը մի ընէք։ Ահա իմ կոյս ադ-
ջիկս, և այն մարդուն հարճը հիմա ձե-
զի հանեմ, և զանոնք կնկեցէք, և ձեր
ուզածն րնէք անոնց, և այս մարդուն
այս անզդամութիւնը գործը այս մի ընէք։
25 Բայց այն մարդիկը չուզեցին անոր խօս-
քը մտիկ ընել. և այն մարդն իւր հար-
ճը բռնելով դուրս հանեց անոնց. և ա-
նոնք զանիկա դիմացան, և բոլոր գի-
շերը զանիկա կնկեցին մինչև առաւօ-
ւան. և երբ արշալոյսը ծագեցաւ, զանիկա
26 թող տուին որ երթայ։ Եւ այն կինը
առաւուան դէմ գնաց, և ինկաւ այն
մարդուն տանը դրան առջև, ուր որ
իւր տէրը կը կենար՝ մինչև որ լուսա-
27 ցաւ։ Հան ծաղ։ Եւ անոր տէրն առա-
ւաւտուն ելաւ, տան դռնները բացաւ,
որ գնայ իւր ճամբան երթայ։ և ահա կի-
նը՝ իւր հարճը տանը դրան առջին
ինկած էր, և ձեռքերը սեմին վրայ էր։
28 Եւ անոր բսաւ, Ելիր երթանք։ բայց
պատասխան տուողչկար։ Առնաւն
զանիկա իւր էշուն վրայ դրաւ, և մար-
29 դը ելաւ իւր տեղը գնաց։ Եւ երբ իւր
տունը հասաւ՝ դանակ մը առաւ, և իւր
հարճը բռնեց և զանիկա ոսկորներով
տասներկու կտորի բաժնեց, և Իսրա-
30 յէլի ամէն սահմաններուն զրկեց։ Եւ ա-
մէն տեսնողները կ՚րսէին թէ Իսրայէլի
որդւոց Եգիպտոսի երկրէն հան օրէն
մինչև այս օր՝ այսպէս բան մը ոչ եղած
է, ոչ ալ տեսնուած է. տուր վրայ մը-
ածեցէք, խորհուրդ ըրէք և խօսե-
ցէք։

## Գլ. Ի

1 Առնաւն բոլոր Իսրայէլի որդիքը ե-
լան, և ժողովը մարդու մի պէս Դա-
նէն մինչև Բեերսաբէէ և Գաղաադու
երկիրը՝ Մատիայի մէջ Տէրոջը առջև
2 ժողովեցան։ Եւ բոլոր ժողովրդին՝

Իսրայէլի բոլոր ցեղերուն գլխաւորը մար-
դիկը չորս հարիւր հազար սուր քաշող
հետեւակ զօրք ըլլալով՝ Աստուծոյ ժո-
ղովրդին ժողովքին մէջ ներկայացան։
3 Եւ Բենիամինի որդիքը լսեցին որ Իս-
րայէլի որդիքը Մատիա ելած են։ Եւ
Իսրայէլի որդիքն ըսին, Մեզի պատ-
մեցէք թէ այս չարութիւնն ի՞նչպես
4 եղաւ։ Եւ այն Գաւատի մարդը՝
մեռցուած կնոջ էրիկը պատասխան
տուաւ և բսաւ, Ես և իմ հարճս Բե-
նիամինի Գաբաան եկանք, որ գիշերը
5 հոն մնանք։ Եւ Գաբաայի բնակիչներն
ինծի դէմ ոտք եղան, և գիշերով իմ
եզած տունս պաշարեցին, և ինս մեռ-
ցընել կ՚ուզէին, և իմ հարճս կնկեցին
6 և մեռաւ։ Ես ալ իմ հարճս առի և
զանիկա կտոր կտոր րրի, և Իսրայէլի
ժառանգութեան բոլոր երկիրը զրկե-
կեցի. քանզի անօնք Իսրայէլի մէջ մեծ
7 յանդգնութիւն րնդունեցին։ Ա-
հա դուք ամէնդդ ալ Իսրայէլի որդիք
էք, հոս ձեր մէջ խօսեցէք և խոր-
8 հուրդ րրէք։ Եւ բոլոր ժողովրդը
մէկ մարդու պէս ոտք եղաւ, և ը-
սաւ, Մեզմէ բնաւ մէկն իւր վրանը պի-
տի չերթայ, և բնաւ մէկն իւր տունը
9 չդառնայ։ Եւ հիմա Գաբաայի րնելու
բանէրնիս ասիկա է. Անոր վրայ վիճա-
10 կով կ՚քաշենք։ Եւ Իսրայէլի ամէն ցեղե-
րէն հարիւրին տասը, և հազարէն հա-
րիւր, և տասը հազարէն հազար մարդ
առնենք, որ ժողովուրդին պաշար տա-
նին. անոնք ալ Բենիամինի Գաբաան
մտնելով, անոր Բենիամինի մէջ
բրած բոլոր անզդամութիւնը փոխա-
11 րէն գային պատերազմելու համար շա-
բաւեցան նոյն ատեղը, ուր որ տա-
23 ղի օրը չարաչար էին։ (Եւ Իսրայէլի որ-
դիքը եկան, և Տէրոջը առջև մինչև
իրիկուն լացին, և Տէրոջը հարցընելով
ըսին, Մեր եղբօրը Բենիամինին հետ
պատերազմելու համար նորէն եկե՞նք
24 Եւ Տէրը բսաւ, Անոր դէմ եկէք։) Եւ
երկրորդ օրը Իսրայէլի որդիքը Բենիա-
25 մինի որդւոց մօտեցան, Եւ երկրորդ

*Կամ Աստուծոյ տունը

օրը Բնիամինեանք Գաբաայէն անոնց դէմ ելան պատերազմելու համար. և Իսրայէլի որդւոցմէ նորէն ասանկաւ հազար մարդ զեռին փռեցին. ասոնց ամէնն ալ սուր քաշող մարդիկ էին։
26 Անոնք ալ բոլոր Իսրայէլի որդիքը՝ այսինքն բոլոր ժողովուրդը ելան *Բեթէլ գացին, և հոն Տէրոջը առջև նըստան լացին, և այն օրը մինչև իրիկուն ծոմ պահեցին, և Տէրոջը առջև ողջակէզներ և խաղաղութեան զոհեր մատուցին.
27 Եւ Իսրայէլի որդիքը Տէրոջմէ հարցուցին. (և այն օրերը Աստուծոյ ուխտին տապանակն հոն էր.
28 և Եղիազարայ Ահարոնեան Եղիազարի որդին փինեհէս կը կայներ.) և ըսին, Մենք եղբօրը Բնիամինի որդւոց հետ պատերազմելու համար մի անգամ ևս ելլե՞նք, թէ ետ քաշուինք։ Եւ Տէրը ըսաւ, Ելէք, քանզի վաղը զանոնք ձեր ձեռքը պիտի մատնեմ։
29 Եւ Իսրայէլցիք Գաբաայի բոլորտիքը դարանակալներ դրին։ Եւ Իսրայէլի որդիքը երրորդ օրը Բնիամինի որդւոց վրայ գացին, և մէկ անգամներուն պէս Գաբաայի դիմացը շարուեցան։
31 Անոնք Բնիամինի որդիքը ժողովուրդին դէմ ելան, և քաշուեցան, և առջի անգամներուն պէս սկսան ժողովուրդը զարնել, և երեսնի չափ Իսրայէլացի մեռցուցին այն ճամբաներուն մէջ՝ որոնց մէկը Բեթէլ կ՚երթար և մէկը Գաբաան։ Եւ Բնիամինի որդիքն ըսին,
32 Անոնք մեր առջև առջի անգամներուն պէս կը կատրուին։ Եւ Իսրայէլի որդիքն ըսին, Փախչինք և զանոնք քաշքշեցնենք մինչև ճամբաները հասցնեն։
33 Ուստի բոլոր Իսրայէլի մարդիկն իրենց տեղէն ելան, և Բաալթամարի մէջ պատերազմելու պատրաստուեցան։ Եւ Իսրայէլի դարանակալներն ալ իրենց տեղէն՝ Գաբաայի դաշտին դուրս ելան։
34 Եւ Գաբաայի առջև բոլոր Իսրայէլէն ընտրուած հազար մարդ եկան, և պատերազմը սաստկացաւ. և անոնք չէին գիտեր որ իրենց վրայ չարիք հասած է։
35 Եւ Տէրը Իսրայէլի առջև Բնիամինը զարկաւ. և այն օրը Իսրայէլի որդիքը Բնիամինէն քսանուհինգ հազար հարիւր մարդ կոտրեցին. անոնց ամէնն ալ սուր քաշող էին։
36 Եւ Բնիամինի որդիքն իրենց յաղթուիլը տեսան. քանզի Իսրայէլցիք Գաբաայի բոլորտիքը դրած դարանակալներուն տպաւ ընելով՝ Բնիամինի մօտենալէն զգուշացուցած էին։
37 Եւ դարանակալները շուտով Գաբաայի վրայ յարձակեցան, և դարանակալները ընդհանուր տարածուեցան, և բոլոր քաղաքը սուրի բերնէ անցուցին։
38 Եւ Իսրայէլացիք դարանակալներուն հետ *ժամանակ մը որոշած էին, որ քաղաքէն մեծ կրակով ծուխ հանեն։ Անոնք Իսրայէլի մարդիկը պատերազմին մէջ փախուստ տալ տուին. և Բնիամինեանք սկսան Իսրայէլացիները զարնել, և երեսուն մարդու չափ մեռցուցին. քանզի ըսին Թէ Անոնք պարզապէս անոնք մեր առջև առջի պատերազմին պէս կը կոտրեն։
40 Բայց երբ քաղաքէն կրակին ծուխը սիւնի պէս բարձրանալ սկսաւ, Բնիամինեանք ետևնին դառնալով՝ նայեցան որ քաղաքին հրդեհը երկինք կ՚ելլէր։
41 Եւ երբ Իսրայէլացիները նորէն հոն դարձան, Բնիամինեանք ապշեցան մնացին, քանզի անոնց չարիքն իրենց վրայ հասած էր։
42 Ուստի անոնք Իսրայէլացւոց առջևէն դէպ անապատին ճամբան դարձան. բայց պատերազմին անոնց հասաւ, և քաղաքներէն ելլողները զանոնք իրենց մէջ մեռցուցին. Այսպէս Բնիամինեանները պաշարեցին, զանոնք հալածեցին, և զանոնք դիւրաթեամբ մինչև Գաբաայի դիմաց արևելեան կողմէն գտին։
44 Եւ Բնիամինէն տասնուերկու հազար մարդ իյնաւ. անոնց ամէնն ալ զօրաւոր էր։
45 Եւ մարդիկ կէին և Ռեմոնի ժայռը դարձան դէպ անապատը. Ռեմոնի վրայ

*Կամ Աստուծոյ տունը

*Կամ Նչան



փախան. անոնցմէ ճամբաներուն մէջ հինգ հազար մարդ ճանապարհին վրայ զանոնք մինչև Գեդոմ հալածելով՝ անոնցմէ երկու հազար մարդ զարկին։
46 Եւ Բնիամինէ այն օր բոլոր իյնածները քսանուհինգ հազար սուր քաշող մարդ էր. անոնց ամէնն ալ զօրաւոր մարդիկ էին։
47 Եւ վեց հարիւր մարդ դարձան և անապատը Ռեմոնի վրայ փախան, և Ռեմոնի վրայ չորս ամիս կեցան։
48 Եւ Իսրայէլացիք Բնիամինի որդւոց դառնալով՝ զանոնք սուրի բերնէ անցուցին, քաղաքներուն մէչ մարդէ մինչև անասուն, և ինչ որ գտնուեցաւ. և բոլոր գտնուած քաղաքներն ալ կրակով այրեցին։

## Գլ. ԻԱ

1 Եւ Իսրայէլի մարդիկը Մասփայի մէջ երդում դրած էին, և ըսած էին Թէ Մէկուն ձեզմէ մարդ մը իր աղջիկը Բնիամինի կին չըլլայ։
2 Եւ ժողովուրդը *Բեթէլ երթալով՝ հոն Աստուծոյ առջև մինչև իրիկուն նստան, և ձայներնին վերցնելով՝ մեծ լացով
3 ըսին, Ով Իսրայէլի Տէր Աստուածը, ինչո՞ւ համար այս բանը Իսրայէլի մէջ պատահեցաւ, որ այսօր Իսրայէլէ ցեղ մը պակսի։
4 Եւ հետևեալ օրը ժողովուրդը կանուխ ելաւ, և հոն սեղան մը շինեցին, և ողջակէզներ և խաղաղութեան զոհեր մատուցին։
5 Եւ Իսրայէլի որդիքն ըսին, Իսրայէլի ամէն ցեղերէն ժողովին հետ Տէրոջը առջև չելլողն ո՞վ է. քանզի Տէրոջը առջև Մասփա չելլող մարդուն համար մեծ երդում դրած էին, ըսելով Թէ
6 Անկիկա անպատճառ պիտի մեռնի։ Անասանի Իսրայէլի որդիքն իրենց եղբօրը Բնիամինի համար ցաւելով ըսին, Այսօր Իսրայէլէ ցեղ մը կնջուեցաւ։
7 Ա՛յս ինչացածնիդուն ինչ ընենք, որ անոնց կիներ տանինք. քանզի մենք Տէրոջը անուամբ երդում ըրինք որ

*Կամ Աստուծոյ տունը

8 Եւ ըսին, Իսրայէլի ցեղերէն ո՞վ է որ Տէրոջը առջև Մասփա չելաւ. և ահա Գաղաադայ Յաբեսէն բնաւ մարդ մը եկած չէր բանակը և ժողովը։
9 Եւ ժողովուրդն աչքէ անցուցին. և ահա անոնց մէջ Գաղաադայ Յաբեսի բնակիչներէն մարդ մը չգտնուեցաւ։
10 Ուստի մարդ մը չգտնուեցաւ։ Անասանն ժողովը խթան զօրաւորներէն հոն ուղարկեց հազար մարդ զրկելով, և անոնց պատուիրելով ըսին, Գացէ՛ք, և Գաղաադայ Յաբեսի բնակիչները սուրի բերնէ անցուցէ՛ք, կիներն
11 ըրն ալ և ապրան ալ։ Եւ ձեր ընելու բանն այս է. Ամէն էրիկ մարդ և էրիկ մարդու անկողին գիտցող ամէն
12 կին կոտրանցուցէ՛ք։ Եւ Գաղաադայ Յաբեսի բնակիչներուն մէջ չորս հարիւր կոյս աղջիկներ գտան, որ անոնք արու հետ պառկած չէին, և էրիկ մարդ չէին գիտեր, և զանոնք Քանանեայ երկրին մէջ Սիլովի բանակը բերին։
13 Եւ բոլոր ժողովը խօսք զրկելով, Ռեմոնի վրայ եղող Բնիամինի որդւոց խօսեցան, և զանոնք խաղաղութեան կանչեցին։
14 Դարձեալ Եւ անասան Բնիամինացիք դարձան. և անոնց այն կիները տուին, որ Գաղաադայ Յաբեսի կիներէն ողջ թողացած էին. բայց անոնց բաւական չեղաւ։
15 Եւ ժողովուրդը Բնիամինի համար ցաւեցաւ. քանզի Տէրը Իսրայէլի ցեղերուն մէջ խռովութիւն բրաւ։
16 Եւ ժողովրդին ծերերն ըսին, Մնացածներուն ի՞նչ ընենք կիներ գտնելու համար. վասն զի Բնիամինի ցեղն ոչնչացաւ։
17 Կիները կորուեցան։ Եւ ըսին, Ողջ մնացող Բնիամինեանց ժառանգութիւն Եղ պիտի ըլլայ, որ Իսրայէլէ ցեղ մը չջնջուի։
18 Բայց մենք անոնց մեր աղջիկներէն կին չենք կրնար տալ, քանզի Իսրայէլի որդիքը երդում ընելով ըսին Թէ Բնիամինի կին տուողն անիծեալ ըլլայ։ Եւ ըսին, Ահա տարի տարի Տէրոջը տօնախմբութիւն կ՚ըլլայ Սիլովի մէջ, որ Բեթէլէ հիւսիսային կողմը, և Բեթէլէ Սիքեմ

լալոյ Նաոմեան աբեւելեան կողմը, և Ղեբռնացին հարաւային կողմը կ'իյնայ։
20 Եւ Բեննամինի որդւոց պատառիկով՝ բսան, Գացէք, այգիները մէջ պահ-
21 ուեցէք։ Եւ երբ տեսանէք որ Սկզբի աղիկները պար բռնելով խաղալու եկած են, անոնն ալ այգիներէն ելէք, և իւրաքանչիւր անձ Սկզբի աղիկներէն ձեզի մէկմէկ կին յափշտակեցէք, և
22 Բեննամինի երկիրը գացէք։ Եւ եթէ անոնց հայրերը կամ եղբայրները մեզի գալով՝ դանգատ բնեն, անոնց կ'ըսենք թէ Մեր սիրոյն համար շնորհք ըրէք անոնց. քանզի մենք պատերազմին մէջ

անոնց ամէնուն մէկմէկ կին չպահեցինք. և հիմա դուք չտուիք անոնց որ
23 յանցաւոր ըլլար։ Եւ Բեննամինի որդիքն այնպէս ըրին, և իրենց թուոյն չափ պար բռնողներէն կիներ յափշտակելով՝ առին և գացին իրենց ժառանգութիւնը դարձան, և քաղաքները շինեցին և անոնց մէջ բնակեցան։
24 Եւ անառեն Իսրայէլի որդիքն՝ անկէ ամէն մարդ իւր ցեղին և իւր ազգատոհմին գնաց, և ամէն մարդ անկէ իւր ժա-
25 ռանգութիւնը ելաւ։ Ա՛ն օրերը Իսրայէլի մէջ թագաւոր չկար. ամէն մարդ իւր աչքին հաճելի եղածը կ'ընէր։

# ԳԻՐՔ ՀՌՈՒԹԱՑ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Դատաւորաց կառավարութեան օրերը երկրին վրայ սով եղաւ. և Բեզղայի Բեթլեհեմի մարդ մը իւր կինով և երկու որդիներով Մոաբի երկիրը
2 պոռղհամանալու գնաց։ Եւ այն մարդուն անունը Ելիմելէք, և կնոջն անունը Նաոմի, և երկու որդւոց անունները Մահլոն և Քեղյոն էին. ա-
3 նոնք Եփրաթացի էին Բեզղայի Բեթլեհեմէն։ և Մոաբի երկիրը գացին և հոն բնակեցան։ Եւ Նաոմիի էրիկը Ելիմելէք մեռաւ. և անկէ իւր երկու որ-
4 դիներով մնաց, որոնք իրենց Մոաբացի կիներ առին. անոնց անունը Որպա, և մէսյն անունը Հռութ էր. և անոնք հոն իրենց տասը տարի նստան։
5 Եւ Մահլոն և Քեղյոն երկուքն ալ մեռան, և կինը իւր երկու որդւոցմէն և էրկնէն զուրկ մնաց։
6 Եւ անկիա իւր երկու հարսերով ելաւ, որ Մոաբի երկրին գառնայ. քանզի Մոաբի երկրին մէջ լսած էր որ Տէրը իւր ժողովուրդին այցելութիւն բրած է
7 անոնց հաց տալով։ Եւ անկիա իւր երկու հարսերուն հետ ելաւ, և Բեզղայի երկիրը գառնալու համար ճամրայէն դուրս գացին։
8 Եւ Նաոմի իւր երկու հարսերուն բսաւ, Գացէք, և ամէն մէկերնիդ իւր մօրը տունը գառնայ. Տէրը ձեզի ողորմութիւն ընէ, ինչպէս որ դուք մեռածներուն և ինծի բրիք։ Տէրը ձեզի տայ որ ամէն մէկերնիդ իւր երկրանը տունը հանգիստ գտնէ. և գառնանք համբուրեց, և անոնք ձայներնին վերցնելով լացին։ Եւ անոր բսին, Մենք անպատճառ քու հետդ քու ժողովուրդիդ կու գանանք։ Բայց Նաոմի բսաւ,
11 Դիր կու գառնանաք իմ աղիկներս, ետ գարձէք. ինչո՞ համար իմ հետս պիտի երթաք. միթէ իմ արգանդիս մէջ ուրիշ որդիներ կան որ ձեզի էրիկներ լինին։
12 Դիր կու գառնաք իմ աղիկներս, և գացէք. քանզի ես պառաւած եմ, և նորէն պիտի չկարգամ. եթէ ըսես ունիմ ըսպով՝ այս գիշեր կորգուհլու ըլլայի,
13 և որդիք ալ ծնանէի, Մուք մինչև անոնց մեծնալը պիտի սպասէիք, և զուք ասոր համար պիտի չկարգանայիք և այանց պիտի ձեցիք. չէ աղջիկներս, քանզի Ձեզի համար շատ կը ցաւիմ. քանզի Տէրոջը ձեռքը իմ վրաս դիմացաւ։ Եւ անոնք նորէն ձայներնին վերցնելով լացին։ Եւ Որպա իւր կեռուրը համբուրեց, բայց Հռութ անկէ չզատուեցաւ։ Սակայն Նաոմի բսաւ, Ահա քոյրդ ներդ իւր ժողովուրդին և իւր աստուածներուն դարձաւ. գուն ալ ներսդ եւուէն եա գարձիր։
16 Եւ Հռութ բսաւ, Իմ վրաս մի խնդար որ քեզ թողամ, և քեզմէ գառնամ. քանզի ուր որ երթաս հոն պիտի երթամ, և ուր որ մնաս հոն պիտի մնամ. քու ժողովուրդդ իմ ժողովուրդս ըլլայ, և քու աստուածդ իմ աստուածս
17 ըլլայ. ուր որ մեռնիս՝ ես ալ հոն պիտի մեռնիմ և հոն թաղուիմ. Տէրը ինծի այնպէս և աւելի ընէ, եթէ մահ քեզմէ մեռնանք։ Երբ Նաոմի անոնց որ անկիա միտքը դրած էր անոր հետը գալ, ալ չբսաւցաւ անոր։
19 Եւ երկուքը Բեթլեհեմ գացին, մինչև որ Բեթլեհեմ հասան. և երբ Բեթլեհեմ մտան, ամբոխ պատճառով բոլոր քաղաքը չարժեցաւ, և կ'ըսէին, Արդեօք Նաոմի՞ է։ Եւ անկիա անոնց բսաւ, Ձիս Ֆ Նաոմի մի կանչէք, զիս ||Մարա կանչեցէք. քանզի Ամենակա-
21 ղութ մեծ դառնութեամբ լեցուց զիս։ Ես լեցուն գացի, և Տէրը զիս պարապ դարձուց. ինչո՞ զիս Նաոմի կը կանչէք. քանզի Տէրը :ինծի դէմ վկայութիւն տուաւ, և Ամենակարող զիս
22 վշտացուց։ Այսպէս Նաոմի իւր հարսին Մոաբացի Հռութի հետ Մոաբի երկրէն եա դարձաւ. և գարնան հնձոց սկսած ատեն եկան Բեթլեհեմ հասան։

## ԳԼ. Բ

1 Եւ Նաոմի իւր էրկանը կողմանէ ազգական մը ունէր՝ անիկա Ելիմելէքի ազգատոհմէն էր, և շատ հարուստ մարդ
2 էր, և անոր անունը Բոոս էր։ Եւ Մոաբացի Հռութ Նաոմիին բսաւ, Արտերը երթամ, և որուն աչքին ողորմութիւն գտնելու ըլլամ, անոր ետեւէն եբսմ։ Եւ Նաոմի անկիա բսաւ, Գնա աղջիկս։ Եւ անկիա գնաց, և արտ մը մտնելով հնձողներուն ետեւէն հաւաք կը ժողվէր. և այնպես պատահեցաւ որ անիկա Ելիմելէքի ազգատոհմին եղող Բոոսի արտին մէջ գառնեցաւ։
4 Եւ ահա Բոոս Բեթլեհեմէն եկաւ, և հնձողներուն բսաւ, Տէրը ձեր հետ ըլլայ։ Եւ անոնք բսին, Տէրը քեզ օրհ-
5 նէ։ Եւ Բոոս հնձողներուն վրայ կեցող իւր մանչուն բսաւ, Այս աղջիկը որո՞ւնն
6 է։ Եւ հնձողներուն վերակացուն մանչը պատասխան տուաւ և բսաւ, Նաոմիի հետ Մոաբի երկրէն դարձող Մոաբացի աղջիկն է. Եւ ինծի բսաւ, Խնդրեմ, պառներուն մէջ հնձողներուն ետեւէն հաւաք քաղեմ և ժողվեմ. և ա-
7 նկից առաւոտուն կանուխ եկաւ, և մինչև հիմա կեցաւ, գէշ ըն հիմա փչ մը տունը նստաւ։
8 Եւ Բոոս բսաւ Հռութի, Մաղի իւր, աղջիկս. հաւաք ժողվելու համար ուրիշ արտ չերթաս, այլ հոս իմ աղջիկներուս
9 քով կենաս. Քու աչքերդ անոնց հընձած արտին վրայ բլլան, և անոնց ետեւէն գնաս. ահա մանչերուն ապսպրած եմ որ քեզի չդպչին. և երբ ծար-
10 խան անանկերուն քով գնաս, և մանչերուն քաշած ջուրէն խմես։ Եւ աղջիկը երեսի վրայ ինկաւ, և գետնէն երկրպագութիւն ընելով անոր բսաւ, Ինչո՞ւ է որ ես քու աչքերուդ առջև շնորհք կը գտնեմ, և զիս ինծի հետ ծանօթութիւն կ'ընես. քանզի ես
11 օտար կին մի եմ։ Եւ Բոոս պատասխան տուաւ և անոր բսաւ, Քու

:Կամ ձեզմէ աւելի †Եբր. Նաոմ։
‡Այլ՝ Ինձմէ հաճելի։ ||Այլ՝ Ինձմէ դառնութեամբ։
:Կամ զիս խոնարհեցուց,

երկանդ մեռանելէն եառքը դուն քու կնաւորիդ ինչ որ երթիր՝ բոլորն ալ պատմեցին ինծի, և քեզ ընդունած քու հայրդ և մայրդ և ծնած երկիրդ թողուցիր, և եկար այն ժողովուրդին զոր առաջուց չէիր ճանչնար։ 12 Քու գործիդ փոխարէն Տէրը հատուցած ընէ, և քու վարձդ իսրայէլի Տէր Աստուծոյն կոչուելուդ առաջուըն պարզի, քանզի դուն եկար որ անոր թեւերուն ներքև ապաստանարան մը գտնես։ Եւ անոնք քսան 13 պատառանարան մը գտնեն։ Եւ անոնք քսան, ով ալ որ իմ քու աչքերուդ առջև շնորհք գտնեմ. քանզի դուն զիս մխիթարեցիր, և քու աղախնոյդ թագուրթեամբ խօսեցար, թէպէտ և ես քու աղախիններուդ մէկուն պէս ալ չեմ։ 14 Եւ Բոոս կերակուրի ատեն անոր ըսաւ, Հոս եկուր, և հացէն կեր և պատառդ քացախին մէջ թաթխէ։ Ուստի անկնա հնձողներուն քով նստաւ, և անոր բոհրած ցորեն առաւ, անոյ կերաւ և ուելցածը պահեց։ 15 Եւ երբ հասկ ժողովելու կոչաւ, Բոոս իր մանչերուն պատուիրելով ըսաւ, Թող որ անոնք հնձողներուն մէջէն ալ ժողվէ, և զանիկա մի ամչցընէք. 16 Եւ խուրձերէն ալ անոր համար գէտինը ձգեցէք, և թող առէք որ ժողվէ, և զանիկա մի յանդիմանէք։ 17 Եւ անոնք մինչև իրիկուն այն արտին մէջ հաւաքեց ժողվեց. և երբ ժողմածը ծեծեց, մէկ արտուի չափ գարի եղաւ։ Եւ զանիկա առաւ և քաղաքը մտաւ, և կեռւերն անոր ժողմածը տեսաւ. և Հ֊ՈՒ֊Ն հանեց այն իր կշտացածէն ուելցածն անոր տուաւ։ 19 Եւ կեռւերն անոր ըսաւ, Այսօր ուրա՞ք հաւ ժողվեցիր, և ո՞ր բանեցար. քեզի ճանչնալութիւն ընողն օրհնեալ ըլլայ։ Անաոնն անիկա իր կեռւերն իմացուց թէ որու քով բանած էր, և ըսաւ, Այն մարդը՝ որուն քով ես այսօր բանեցայ, Բոոս կը կոչուի։ 20 Եւ Նոեմի իր հարսին ըսաւ, Անիկա Տէրոջմէ օրհնեալ ըլլայ, որ կենդանիներէն և մեռածներէն իր ողորմութիւնը չկրաւրեց. և Նոեմի անոր ըսաւ, Այն մարդը մեր ազգատոհմէն է, անիկա մեռ 21 ազգական է մեզի։ Եւ Մոաբացի Հրուաթ ըսաւ, Անիկա նաև ինծի ըսաւ Թէ իմ մանչերուս քովէն չպատուխս, մինչև որ անոնք իմ բոլոր հունձքս 22 լրընցընեն։ Եւ Նոեմի իր հարսին Հրուաթի ըսաւ, Աղէկ է, աղջիկս, որ դուն անոր աղջիկներուն հետ ելլես, և քեզ ուրիշ արտ մը մէջ *չտեսնեն։ 23 Եւ անիկա Բոոսի աղջիկներէն չպատուեցաւ. և մինչև գարուն հնձոց և ցորենին հնձոց լրընծալը հաւ ժողվեց, և իր կեռւերուն քով կը բնակէր։

## Գլ. Գ

1 Եւ անոր կեռւերը Նոեմի անոր ըսաւ, Աղջիկս, քեզի հանդիստ չմնար՞մ, որ քեզի աղէկ ըլլայ։ Հիմա Բոոս մեր ազգականը չէ՞, որ դուն անոր աղջիկներուն քով կեցար. ահա անիկա այս գիշեր կալին մէջ գարին կը հաւի։ 3 Եւ դուն լուացուէ և եղով օծուէ, և լաթերդ հագիր և կալը իջիր. և մինչև որ ուտել և խմելը չլրնցընէ, այն մարդուն մի յայտնուիր։ Եւ երբ քնանայ՝ անոր պառկած տեղն իմացիր, և գնա անոր ոտքերուն կողմէն ծածկոցը բաց և պառկէ, և անիկա քեզի պիտի իմացընէ թէ ինչ ընելու ես։ Եւ Հ֊ՈՒ֊Ն անոր բսաւ, Ամէն ինծի ազատցածներդ պիտի ընեմ։

6 Եւ կալն իջաւ, և կեռւերուն ամէն ապրատածին պէս բրաւ։ Եւ Բոոս ուտելէն խմելէն և սիրտը զուարճանալէն ետքը՝ գիզուած էրոյտ եղերքը պառկելու գնաց. և Հ֊ՈՒ֊Ն ալ կամացուկ մը գնաց, և անոր ոտքերուն կողմէն ծածկոցը բացաւ և պառկեցաւ։ 8 Եւ կէս գիշերուն մարդը վախցաւ, և ծռելով տեսաւ՝ որ անա իր ոտքերուն 9 քով կին մը պառկած էր։ Եւ բսաւ, Դուն ո՞վ ես։ Եւ անիկա բսաւ, Ես քու ազախնդ Հրուաթ եմ. և քու քղանցդդ քու ազախնդդ վրայ տարածէ, քանզի դուն մեռ ազգական ես։ Ան ալ բ

*ՆԲԳ. չհանգչիլն։



սաւ, Դուն Տէրոջմէ օրհնեալ ըլլաս, աղջիկս. քու եարքի ազէկութիւնդ առջինին մեծ է, քանզի ազքատ կամ հարուստ երիտասարդներուն եաւկն 11 չդացիր։ Եւ հիմա, ով աղջիկս, մի վախնար, դուն ինծի ինչ որ ըսես՝ քեզի պիտի ընեմ. քանզի իմ *քաղաքիս բոլոր ժողովուրդը դիտէ որ դուն առաքլի 12 նի կին ես։ Եւ հիմա իրաւցընէ ես ազգականդ եմ, բայց ինէ մտա 13 երէն ազգական ալ կայ։ Այս գիշեր հոս կեցիր, և եթէ անիկա առաւօտան իր ազգականութեան պարտականութիւնը քեզ հատուցանել ուզէ, ապէկ, թող հատուցանէ. բայց եթէ անիկա ազգականութեան պարտականութիւնը քեզ հատուցանել չուզէ, անատն ես կը հատուցանեմ, կենդանի Տէրը. մինչև առաւօտ հոս պառկէ։

14 Ուստի մինչև առաւօտ անոր ոտքերուն քով պառկեցաւ. և հրեցաւ, երբ մարդիկ դեռ չկրնար միմիկնիկ ճանչնալ, ևսաւ. և Բոոս բսաւ, Մարդ չգիտնայ որ կալին մէջ կին մտած եր։ 15 Նաև բսաւ, վրայի ծածկոցդ բեր, և զանիկա բռնէ։ Եւ Հ֊ՈՒ֊Ն զանիկա բրաւնեց. և անոր վից չ֊ի գարի չափեց, և անոր վրայ բեռնաւորեց. և անիկա 16 քաղաք գնաց։ Եւ Հ֊ՈՒ֊Ն իր կեռւերուն դարձաւ, որ անոր բսաւ, Ով աղջիկս †ի՞նչպէս եաւ. և անիկա անոր պատմեց 17 ինչ որ այն մարդն բրաւ անոր։ Եւ բսաւ, Ինծի այս վից չ֊ի գարին տուաւ, բանզի, Բաւ կեռւերդ պարապ չերթաս 18 Թաւ։ Եւ Նոեմի բսաւ, Աղջիկս, նստէ, մինչև որ դիտանաս Թէ այս գործն ինչպէս պիտի բլընցայ. քանզի այն մարդ մինչև որ այս գործն այսօր չլընցընէ՝ չհանգստանար։

## Գլ. Դ

1 Եւ Բոոս դուռը ելաւ և հոն նստաւ. և ահա այն Բոոսի բսած ազգականը

*ՆԲԳ. ժողովուրդիս բոլոր դուռը †կամ ո՞վ

2 անիկա դարձաւ և նստաւ։ Անատն անիկա քաղաքին ծերերէն տասը մարդ առաւ, և Ը֊ԴՆ բսաւ, Այս տեղ նստաք։ 3 անոնք նստան։ Եւ անիկա ազգականին բսաւ, Մոաբի երկրէն դարձող Նոեմի մեր եղբօրը կիմելեքի արտին բաժինը ծախելու վրայ է։ Եւ ես մտածեցի որ քեզ իմացընեմ և բսեմ, Զանիկա այս նստողներուն առջև և իմ ժողովրդիս ծերերուն առջև ծախա առ։ եթէ ազգականութեան իրաւունքով զանիկա ծախա առնել կ'ուզես, ծախա առ. բայց եթէ ծախա առնել չես ուզեր, ինծի իմացուր որ գիտնամ. քանզի քենէ զատ ազգականութեան իրաւունքը կատարելու մէկը չկայ, և քենէ ետքը ես եմ։ Եւ անիկա բսաւ, Ես ազգականութեան իրաւունքը կը կատարեմ։ 5 Եւ Բոոս բսաւ, Դուն Նոեմիի ձեռքէն արտը ծախա առած օրդ՝ մեռնողին կնոջմէն՝ Մոաբացի Հրութէն ալ ծախա առնելու ես, որ մեռնողին անուն պահես իր ժառանգութեան մէջ։ 6 Եւ ազգականն բսաւ, Ես իմ ազգականութեան իրաւունքը չեմ կրնար կատարել, չըլլայ որ իմ ժառանգութիւնս աւեմ. իմ ունեցած ազգականութեանս իրաւունքը դուն կատարէ, քանզի ես չեմ կրնար կատարել։ Եւ իսրայէլի մէջ առաջուց այս ա֊վրո֊ինէ֊նը կար փրկելու և ծախա առնելու գործերուն մէջ՝ ամէն բան հաստատելու համար, մարդն իր կօշիկը կը հանէր և իր ընկերին կու տար. և ասիկա իսրայէլի մէջ վկայութիւն կ'ըլլար։ 8 Ուստի ազգականը Բոոսի բսաւ, Դուն ծախա առ. և իր կօշիկը հանեց։

9 Եւ Բոոս ծերերուն և բոլոր ժողովրդեան բսաւ, Դուք այսօր վկայ էք, որ ես Նելիմելէքի բոլոր առացուածքը, և Քլիոնի և Մաալոնի բոլոր առացուածքը Նոեմիի ձեռքէն ծախա առի։ 10 Եւ Մաալոնի կինը՝ Մոաբացի Հրութն ալ ինծի կին առի, որ մեռնողին անուն

նը պահեմ իւր ժառանգութեան մէջ, և միաձեռնին անուն իւր եղբայրնեւրէն և իւր բնակարանին դադնէն չվերնայ. գալ ըստ Բանէր Տեառն այսօր վկայ էք, 11 Աննաեան գուռ ալ եղոյ բոլոր ժողովուրդն ա. Ժերեքն բանն, վկայ ենք. Տերը քա տուեաղ մեռնայ կինը Ռաքիւլ և Լեայի պէս ընէ, որ անոնց երկուքը խորայէլի տունը շինեցին. և դուն Եփրաթայի մէջ ուժովցիր, և Բեթղեհեմի մէջ անուն վաստակէ. 12 և քու տունդ Փարեսի տան պէս ըլայ, զոր Թամար Ծնաւ Յուդային, այն սերմունդով՝ որ Տէրը պիտի տայ քեզի այս նորահասակ կնոջմէն. 13 Եւ Բոոս զՀռութ առաւ, որ իրեն կին եղաւ, և անոր մտաւ. և Տէրոջը ողորմութիւնը յղացաւ և որդի մը ծնաւ. 14 Նաւ. Եւ կանայք Նեոմիի ըսին, Օրհնեալ ըլայ Տէրը, որ այսօր քեզ առանց մտա ազգականի չթողուց, որ անոր անունը Իսրայէլի մէջ յիշուի. 15 Նաեւն Իսրայէլի մէջ յիշուի. Եւ ասիկա քու հոգւոյդ միխիթարութիւն և ծերութեանդ պահապան ըլայ. քանզի զանիկա քեզ սիրող հարսդ ծնաւ, որ քեզի եօթը որդիէ աղեկ է. 16 Եւ Նեոմի առաւ իւր գիրկը դրաւ, և անոր դայեակ եղաւ. 17 Եւ դրացի կանայք անոր անուն դրին, ըսելով, Նաեոմիի որդի մը ծնաւ, և անոր անունը Ովբէդ կոչեցին. ասիկա Դաւիթի հօրը Յեսսէի հայրն էր. 18 Եւ Փարեսի ծնունդներն ասոնք են. 19 Փարես ծնաւ Եսրոն, 20 Եսրոն ծնաւ †Արամ և Արամ՝ ծնաւ Ամմինադաբ, 20 Եւ Ամմինադաբ ծնաւ Նաասոն, և Նաասոն ծնաւ Սալմոն, 21 Եւ Սալմոն ծնաւ Բոոս, և Բոոս ծնաւ Ովբէդ, 22 Եւ Ովբէդ ծնաւ Յեսսէ, և Յեսսէ ծնաւ Դաւիթ։

# ‡ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Յ. Եվրեմի լեռնէն ‖Աբիմաի եմաօվիմ Ագիանա անուամբ Եվրեթացի մարդ մը կար, որ Սուֆիի որդւոյն Թովղայի որդւոյն Եղիսաի որդւոյն Յերաամի որդին էր։ Եւ անիկա երկու կին ունէր. մէկուն անունն Աննա, և միւսին անունը Փեննանա էր. և Փեննանա զաւակներ ունէր, բայց Աննա զաւակ չունէր։ Եւ այն մարդը տարուէ տարի իւր քաղաքէն կ'ելլէր, որ Սեղովի մէջ զօրութեանց Տէրոջը երկրպագութիւն և զոհ մատուցանէ. և հոն Հեղիի երկու որդիքը՝ Ովիսի և Փեհեհէս Տէրոջը քահանայութեան էին։ 4 Եւ Եղկանան իր զոհ մատուցած օրը իւր կնոջը Փեննանայի և ամէն որդւոցը և աղջիկներուն մէկ մասունք տուաւ. 5 մէկ բաժին տուաւ. իսկ Աննային՝ որ կը սիրէր. քանզի անիկա զԱննա կը սիրէր. բայց Տէրը անոր արգանդը գոցած էր։ 6 Եւ անոր նեղացնողը փնթռնա զանիկա կսկծցընելու համար շատ վշտացուց. քանզի Տէրը 7 անոր արգանդը գոցած էր։ Եւ Ամէն տարուէ տարի Տէրոջը տունը երթալուն՝ նոյնպէս կ'ընէր. Փեննա ալ նոյնպէս զԱննա կը վշտացընէր, 8 և անիկա կու լար և չէր ուտեր։ Եւ Եղկանան անոր ըսաւ, Աննա, ինչո՞ւ կու լաս և ինչո՞ւ չես ուտեր, և ինչո՞ւ քու սիրտդ վատ է. չէ՞ որ ես քեզի համար տասը որդիէ լաւ չե՞մ։

‡Կամ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ՍԱՄՈՒԵԼԻ
‖Որ է Յեսսեան

*Նբգ. խնամոցդ թևերը
†Կամ Բամբ և Բամ
:Կամ Հրեվեի



չես. Համար սրտագ ուրախ ըսպասում է. 9 Եւ Աննա յարեաւ Սիլովի մէջ ուտելէն և խըմելէն ետքը. (և Հեղի քահանան Տէրոջը տաճարին սեմնց քով նստած էր.) 10 Եւ արտասուելով հոգւով Տէրոջը աղջե աղօթք ըրաւ։ 11 և խոստում ալ ըրաւ. Եւ ասիկա ըսաւ, Ով Տէր զօրութեանց, եթէ քու աղախնոյդ նեղութեանը նայիս և զիս յիշես, և քու աղախինդ չմոռնալով՝ քու աղախնոյդ արու զաւակ մը տաս, զանիկա Տէրոջը պիտի նուիրեմ իւր կենաց բոլոր օրերուն մէջ, և անոր գլուխն վրայ ածելի պիտի չելլէ։ 12 Եւ երբ անիկա Տէրոջը աղջե իւր աղօթքը շատցուց, Հեղի անոր բերանն կը նայէր։ 13 Եւ Աննա իր սրտին մէջէն կը խօսէր. միայն անոր շրթունքները կը շարժէին, բայց ձայներ չէր լսուեր. անոր համար 14 Հեղի զանիկա գինով կարծեց։ Եւ Հեղի անոր ըսաւ, Մինչև ե՞րբ գինովութիւն պիտի ընես. քու գինիդ հրաժարէ։ 15 Ժարէ։ Եւ Աննա պատասխան տուաւ և ըսաւ, Ով տէր իմ, ոչպէս չէ, ես վշտացած սրտով կին մի եմ, և գինի կամ օղի չեմ խմած. ոսկոյն Տէրոջը առջև իմ սիրտս բացի քու առջեւդ խոնդ մի կարծեր, քանզի իմ վշտացս և նեղութեանս չափս Եւ Աննա համար մինչև հիմա խօսեցայ։ 17 Անսաեան Հեղի պատասխան տուաւ և ըսաւ, Գնա խաղաղութեամբ, և Իսրայէլի Աստուածը քու խնդրուածդ քեզ տայ։ 18 Եւ ասոր ինչ որ անկէ խնդրեցիր։ Եւ անիկա ըսաւ, Քու ողորմութիւն քու գտա առջեւդ գնորհք գանէ. և կինը իւր ճամբան գնաց, և կերաւ, և երեսն այլ ևս չտրտմեցաւ։

19 Եւ անոնք առաւօտուն կանուխ եղան, և Տէրոջը առջև երկրպագութիւն ըրին, և Ռամա գարձան և իրենց տունը գացին։ Եւ Եղկանա իր Աննա կնոջ մտաւ. և Տէրը զանիկա յիշեց։ 20 Եւ Աննա յղացաւ, և ժամանակը հասնելուն ոգոյ մը ծնաւ, և անոր անունը *Սամուէլ կոչեց՝ ըսելով, Քանզի զանիկա Տէրոջմէ խնդրեցի։ 21 Նիկա Տէրոջմէ խնդրեցիր։ Եւ անոր երթիկը Եղկանա իւր բոլոր ընտանիքով Սելովեղաւ որ Տէրոջը առջև տարեկան զոհը մատուցանէ, և իւր ուխտը կատարէ։ 22 Բայց Աննա չգնաց, քանզի իւր երիկոնը ըսաւ, Մինչև տղուն կաթէ կտրուիլը կը տանիմ, որ Տէրոջը առջև երթայ, և միշտ հոն կենայ։ 23 Նայ։ Եւ երիկը Եղկանան անոր ըսաւ, Ա՛ջերդուդ հաճելի եղածն ըրէ. միայն որ զանիկա կաթէն կտրես նայէ. միայն թէ Տէրը իւր խօսքը հաստատէ. ուստի կինը նստաւ, և մինչև իւր տղան կաթէն կտրեցը զանիկա կը մեծցնէր։

24 Եւ զանիկա կաթէն կտրածին պէս իրեն հետ առաւ, և երէք զուարակով, մէկ արգաւ ալիւրով և մէկ ափի գինով զանիկա Տէրոջը տաճար տարաւ, որ Սեղովի մէջ էր. և տղան փոքրիկ էր։ 25 Եւ զուարակը մորթեցին, և տղան Հեղիի 26 դիմ տարին։ Եւ Աննա ըսաւ, Ո՛վ, տէր իմ, քու անձդ կենդանի է. ես այն կինն եմ, որ հոս քու քովդ կայնեցայ 27 Տէրոջը աղօթք ընելու համար։ Ես այս տղուն համար աղօթք ըրի, և Տէրը իմ խնդրուածքս բնծի տուաւ՝ ինչ որ անկէ խնդրեցի։ 28 Եւ ես ալ զանիկա Տէրոջը փոխ կու տամ. անիկա իւր բոլոր կենաց մէջ Տէրոջը փոխ տրուած ըլայ. և անիկա հոն Տէրոջը երկրպագութիւն ըրաւ։

## ԳԼ. Բ

1 Յ. Աննա աղօթք ըրաւ և ըսաւ,
Իմ սիրտս Տէրոջմով ուրախացաւ.
Իմ եղջիւրս Տէրոջմով բարձրացաւ.
Բերանս իմ թշնամիներուս վրայ բացուեցաւ,
Քանզի քու փրկութիւնովդ ուրախացայ։

*Աչխ՝ Աստուծոյ լսածը, կամ Աստուծոյ անունը։

2 Տէրոջը պէս սուրբ չկայ, քանզի քեզմէ
բացի չկայ,
Ու մեր Աստուծոյն պէս մէկ չկայ։
3 Մի՛ պարծենաք,
Եւ ձեր բերնէն ամբարտաւանութիւն
չելլէ,
Քանզի Տէրը գիտութեանց Աստուածն
է,
Եւ անկից գործքը կը կշռէ։
4 Զօրաւորներուն աղեղները կոտրեցան,
Եւ ակարները զի՛ հագան։
5 Կուշտ եղողները հացի համար վարձ-
կան եղան,
Եւ անօթի եղողները կըշտացան։ Ի մ ո-
զուցին.
Մինչեւ որ ամուլը եօթը զաւակ ծնաւ,
Եւ շատ զաւակ ունեցողը ակաթցաւ։
6 Մեռցնողը և ողջացնողը,
Գերեզման իջեցնողը և վեր հանո-
ղը Տէրն է։
7 Աղքատացնողն ու հարստացնողը,
Ցածցնողն ու բարձրացնողը Տէրն է։
8 Անկիս ազբատը փոշիէն կը վերցնէ,
Եւ կարօտն ապրուստէն կը հանէ,
Որ իշխաններուն հետ նստեցնէ,
Եւ փառաց աթոռն անոնց ժառան-
գեցնէ.
Քանզի երկրիս հիմերը Տէրոջն են,
Եւ աշխարհս անոնց վրայ հաստատեց։
9 Անկիս իր սուրբերուն ոտքերը կը պահէ,
Եւ չարագործները մութին մէջ պի-
տի *կորսուին.
Քանզի մարդ էոյ ոյժովը յաղթող չըլ-
լար։
10 Տէրոջը դէմ հակառակորդները պիտի
կոտրուին,
Երկինքէն անոնց վրայ պիտի օրսայ.
Տէրը երկրիս ծայրերը պիտի գատէ,
Եւ իր թագաւորին ոյժ պիտի տայ,
Եւ իր օծեալին եղջիւրը պիտի բարձ-
րացնէ։
11 Եւ Եղկանա Ռամա իր տունը գնաց.
և Սա՛մուէլ մնացուկը Հեղի քահանային
առջև Տէրոջը ծառայութիւն կ'ընէր։
12 Եւ Հեղիի որդիքը չար մարդիկ ըլլալով՝
13 Տէրը չէին ճանչնար։ Եւ քահանային սո-
վորութիւնն այս էր, որ երբ ժողովուր-
դէն մէկը զոհ մատուցանէր, մինչեւ ե-
փած առնէր՝ քահանային սպասաւորը
ձեռքը երեք փուանի մսհան մը առած
14 կու գար։ Եւ պանիկա կամ կաթսային կամ
կամ նետարանին կամ պատիկին
մէջ կը խոթէր, և մսհանին ինչ որ հա-
նելու ըլլար, քահանան զանիկա իրէն
կ'առնէր։ Անոնք Սիլովի մէջ բոլոր հան
եկող Իսրայէլացիներուն այսպէս կ'ը-
15 նէին։ Նախ ճարպն այրելէն առաջ՝ քա-
հանային սպասաւորը կու գար, և զոհ
բնող մարդուն կ'ըսէր, քահանային հա-
մար խորովելու միս տուր, քանզի ա-
նեփակ բերմէ եփած միս չառնէր, այլ
16 հում։ Թէ ի՛սկ եւ ըսէր մարդը երբ բո-
սեր թէ Թող հիմա ճարպն այրեն, և
ապա սրտիդ ուզածին չափ առ։ անա-
ւանն կ'ըսէր, Ոչ, հիմա տուր. եթէ ոչ՝
17 բռնի կ'առնեմ։ Այսպէս այն երիտա-
սարդներուն մեղքը Տէրոջը առջև շատ
մեծ էր, քանզի մարդիկ Տէրոջը զոհը
կ'արհամարհէին։
18 Եւ Սամուէլ մանուկը քթանէ եփուած
հագած Տէրոջը առջև ծառայութիւն
19 կ'ընէր։ Եւ անոր մայրը Հեղիի փոքրիկ
պատմուճան կը շինէր անոր, և տար-
ուն տարի երբ իր երկանը հետ տա-
րեկան զոհը ընելու կ'ելլէր, անոր կը
20 տանէր։ Եւ Հեղի Եղկանան և անոր կնո-
ջը օրհնելով ըսաւ, Տէրը քեզի այս կը-
նոջէն զաւակներ տայ, Տէրոջը տրուած
փոխին տեղ։ և անոնք իրենց տեղը
21 գացին։ Եւ Տէրը այցելութիւն ըրաւ
Անոյին, որ յղացաւ, և երեք որդի
և երկու աղջիկ ծնաւ։ Սամուէլ մա-
նուկին ալ Տէրոջը առջև մեծցաւ։
22 Եւ Հեղի չատ ծերացած էր. և ա-
նոր որդիքն ինչ որ կ'ընէին բոլոր Իս-
րայէլի, և ինչպէս անոնք ժողովքի խո-
րանին առջև խոնարհով ժողվուած
կիներուն հետ կը պառկէին, ամէնն ալ
23 կը լսէր։ Եւ անոնց ըսաւ, Ինչո՞ւ հա-
մար այսպիսի բաներ կ'ընէք. քանզի
ես այս բոլոր ժողովուրդին բերնէն ձե-

*Նէբր. լուռ կենան



24 զի՛ համար գէշ խօսքեր կը լսեմ. Մի՛
ըներ, տղաքս, քանզի ապրկ չէն այն
լուրերը որ ես կը լսեմ. գուք Տէրոջը
25 ժողովուրդը կը մոլորցնէք. եթէ մարդ
մը մարդու դէմ մեղք գործէ, *անոր
դատաստանն Աստուած կը կարէ." բայց
եթէ մարդ մը Տէրոջը դէմ մեղք գոր-
ծէ, անոր համար ո՞վ աղաչանք պիտի
ընէ։ Սակայն անոնք իրենց հօր խօս-
քը մտիկ չէին ըներ, քանզի Տէրը զա-
26 նոնք մեռցընել կ'ուզէր։ Եւ Սամուէլ
մանուկն օրէ օր կը մեծնար, և Տէրոջը և մարդոց հաճոյ էր։
27 Եւ Աստուծոյ մէկ մարդը Հեղիի
եկաւ, և անոր ըսաւ, Տէրը այսպէս
կ'ըսէ. Քու հօրդ տան յայտնապէս ե-
րեւցայ, երբ անոնք Եգիպտոսի մէջ փա-
28 րաւոնի տան ծառայ էին. Եւ Իսրայէլի
բոլոր ցեղերէն զանիկա ինծի քահա-
նայ ընտրեցի, որ իմ սեղանիս վրայ
զոհ մատուցանէ, խունկ ծխէ, և իմ
առջևս եփուած հագնի. և Իսրայէլի որ-
դւոց բոլոր պատարագները քու հօրդ
29 տանը տուի. Ե՞ւ իմ տանս հետ պատ-
ուիրած զոհերս և ընծաներս ինչո՞ւ
կ'անարգէք, և քու որդիներդ ինծմէ
աւելի կը փառաւորես, որ իմ ժողո-
վուրդիս Իսրայէլին բոլոր զոհերով ձեզ
30 գիրցնէք։ Ասոր համար Իսրայէլի Տէր
Աստուածն այսպէս կ'ըսէ. Իրաւցընէ
ըսած էի որ քու տունդ և քու հօրդ
տունը յաւիտեան իմ առջևս պտրաձին.
բայց հիմա Տէրը կ'ըսէ, Բաւ լիցի. քան-
զի ես զիս փառաւորողները պիտի փա-
ռաւորեմ, և զիս արհամարհողները պի-
31 տի անարգուին։ Ահա օրերը պիտի գան,
որ քու թեւդ և քու հօրդ տան թեւը
պիտի կտրեմ, որ քու տանդ մէջ ծեր
32 չգտնուի։ Եւ Իսրայէլ ամէն անուակ
բարութիւն վազեցած տեսնես, դուն իմ
տանս մէջ դժբախտութիւն պիտի տես-
նես, և քու տանդ մէջ բնաւ ծեր պի-
33 տի չգտնուի։ Եւ քու սերունդէդ ճա-
շէն մարդը ոչ իմ սեղանիս չեմ կըտ-

*Կամ անոր համար քաւութիւն կ'ըլլայ Աստուծոյ առջևը.

ըած, քու աչքերդ նուազցընելու և
քու սիրտդ վշտացընելու համար պէտք
ճայ. և քու տանդ բոլոր զաւակները
*երիտասարդութեան մէջ" պիտի մեռ-
34 նին։ Եւ քու երկու որդւոդդ Ովնիի
և Փենհեսի գլուխը գալիքը քեզի նըշ-
ան ըլլայ, այսինքն երկուքին ալ մէկ
35 օրուան մէջ մեռնիլը։ Եւ ինծի հաւա-
տարիմ քահանայ մը պիտի հանեմ, որ
բոլոր իմ սրտիս և հոգւոյս մէջ եղա-
ծը կատարէ. և անոր հաւատարիմ
տուն մը պիտի շինեմ. և միշտ իմ օ-
36 ծեալս առջև պիտի պտրաձի։ Եւ քու
տունէդ ով որ մնայ, կուգ մը արծա-
թի համար և նկանակ մը հացի համար
պիտի գայ անոր երկրպագութիւն բնէ,
և ըսէ, Կ'աղաչեմ, զիս քահանայական
պաշտօնի մը վրայ դիր, որ պատառ մը
հաց ուտեմ։

## Գլ. Գ

1 Եւ Սամուէլ մանուկն Հեղիի առջև Տէ-
րոջը ծառայութիւն կընէր. և այն օ-
րերը Տէրոջը խօսքը հազուագիւտ էր
2 և յայտնի տեսիլք չկար։ Եւ ժօր մը՝
Հեղի իր տեղը պառկած էր. (և անոր
աչքերը սկսած էին ծանրանալ, և չէր
3 կրնար տեսնել.) Եւ Աստուծոյ կանթե-
ղը տակաւին մարած չէր, և Սամուէլ
Տէրոջը տաճարին մէջ կը քնանար, ուր
4 Աստուծոյ տապանակը կար։ Եւ Տէրը
կանչեց զՍամուէլ. և անիկա Հոս եմ՝
5 ըսաւ։ Եւ Հեղիի վազելով՝ ըսաւ, Ահա
հոս եմ. քանզի զիս կանչեցիր։ Եւ ա-
նիկա ըսաւ, Ես չկանչեցի. դարձիր
պառկէ։ Ան ալ դարձաւ պառկեցաւ։
6 Եւ Տէրը դարձեալ, Ովի՛ Սամուէլ, կան-
չեց. և Սամուէլ երթալ Հեղիի գնաց և
ըսաւ, Ահա հոս եմ. քանզի զիս կան-
չեցիր։ Եւ անիկա ըսաւ, Որդեակ իմ,
7 ես չկանչեցի. դարձիր պառկէ։ Եւ Սա-
մուէլ տակաւին Տէրոջը չէր ճանչ-
նար, և Տէրոջը խօսքը դեռ անոր յայտ-

*Նէբր. մարդ ըլլալուն պէս՝
†Նէբր. ան օրը

8 նաւած չէր, և նորին երրորդ անգամ Տէրը կանչեց, Ով Սամուէլ. և Սամուէլ եաւ Հեղիի դնաց, և ըսաւ, Ահա հաւ եմ. քանզի գիս կանչեցիր։ Եւ Հեղի իմացաւ որ Տէրն կանչողը Տէրն էր։
9 Եւ Հեղի Սամուէլի ըսաւ, Գնա պառկէ, և եթէ զքեզ կանչէ, ըսեա, Ով Տէր, խօսէ, քանզի քու ծառադ մտիկ կ'ընէ։ Եւ Սամուէլ գնաց իր տեղը պառկեցաւ։ Եւ Տէրը եկաւ կայնեցաւ, և առջի անգամներուն պէս, Սամուէլ, Սամուէլ, կանչեց։ և Սամուէլ ըսաւ, Խօսէ, Տէր, քանզի քու
11 ծառադ մտիկ կ'ընէ։ Անոնէն Տէրը Սամուէլի ըսաւ, Ահա ես իսրայէլի մէջ գործելիք բան մը պիտի ընեմ, որ զանիկա ամէն լսողին երկու ականջները
12 պիտի խօսնին։ Այն օրը Հեղիի վրայ պիտի կատարեմ ամէն ինչ որ անոր տան վրայ խօսած եմ. պիտի սկսիմ և պիտի վերջացնեմ։ Եւ անոր իմացուցած եմ որ անոր տունը պիտի գտնեմ մինչև յաւիտեան, անոր գիտցած անօրէնութեան համար. քանզի անոր որդիքն իրենց վրայ անէծք կը բերեն, և անիկա
14 կա չյանդիմանեց զանոնք։ Այս պատճառաւ Հեղիի տան համար երդուայ ըրի, որ Հեղիի տան անօրէնութեան՝ զոհերով և ընծաներով յաւիտեան քաւութիւն չըլլայ։
15 Եւ Սամուէլ մինչև առաւօտ պառկեցաւ, և յետոյ Տէրոջը տան դուռները բացաւ. և Սամուէլ վախցաւ այն տեսիլքը Հեղիի պատմելու։ Բայց Հեղի զՍամուէլ կանչեց և ըսաւ, Որդեակ իմ Սամուէլ. և անիկա ըսաւ, Ահա հաւ
17 եմ։ Եւ անիկա ըսաւ, Քեզի բաած խօսքը ի՞նչ է. ինծմէ մի պահեր։ Աստուած քեզի ոչօպէս և ասիկ աւելի ընէ, եթէ քեզի պատած բոլոր խօսքերէն
18 խօսք մը ինէ պահես։ Եւ Սամուէլ բոլոր խօսքերն անոր պատմեց, անիկ չպահեց։ Եւ Հեղի ըսաւ, Անիկա Տէրն է. իւր աչքերուն հաճոյ երեւցածը թող ընէ։
19 Եւ Սամուէլ մեծցաւ, և Տէրը անոր հետ էր, և անոր ըսած խօսքերէն մէ-
20 կը գետին չձգեց։ Եւ Դանէն մինչև Բերսաբէէ բոլոր Իսրայէլ իմացաւ, որ Սամուէլ *հաստատուած է Տէրոջը մարգարէ ըլլալու։ Եւ Տէրը Սիլովի մէջ նո-
21 րէն երեւցաւ. քանզի Տէրը Սիլովի մէջ Սամուէլի կը յայտնուէր Տէրոջը խօսքով։ Եւ բոլոր Իսրայէլի մէջ Սամուէլի խօսքը կը տարածուէր։

## Գլ. Գ

1 Եւ Իսրայէլ պատերազմով փղշտացիները դիմաց ելլելու ելաւ, և Աբենեզերի մէջ բանակեցաւ. և փղշտացիք Ափեկի
2 մէջ բանակեցան։ Եւ փղշտացիք Իսրայէլի դիմացը շարուեցան. և պատերազմը տարածուեցաւ, և Իսրայէլ յաղթուեցաւ փղշտացւոց առջև, որ պատերազմի տղայքներին մէջ իրը չորս հա-
3 զար մարդ կոտորեցին։ Եւ ժողովուրդը բանակը դարձաւ. և Իսրայէլի ծերերն ըսին, Ինչո՞ւ համար Տէրը փղշտացւոց առջև կաոեց զմեզ այսօր. Տէրոջը ուխտին տապանակը Սիլովէ մեր մէջ գանենք, և մեզի գայ մեր թշնամիներուն ձեռքին
4 ու զանի մեզ ազատէ։ Ուստի ժողովուրդը խրկեց զրկեց դէպի Սիլով, և զերովբէներուն վրայ նստող զօրութեանց Տէրոջը ուխտին տապանակը անկէ վերցուցին. և Հեղիի երկու որդիքը Ոփնի և Փենհէհս հոն Աստուծոյ ուխտին տապանակին հետ էին։
5 Եւ երբ Տէրոջը ուխտին տապանակը բանակին մէջ մտաւ, բոլոր Իսրայէլ մեծ ձայնով մը ազաղակեց, և գետինը ձայն
6 տուաւ։ Եւ փղշտացիք այն ազաղակին ձայնը լսելով՝ ըսին, Սրբայնցեալ բանակին մէջ այս բարձրաձայն ազաղակն ի՞նչ պիտի ըլլայ. և իմացան որ Տէրո-
7 ջը տապանակը բանակ եկած էր։ Ու Փղշտացիք վախցան, քանզի ըսին, Աստուած բանակին մէջ եկաւ. Նաև ըսին, Վա՜յ մեզ, քանզի մինչև հիմա
8 այսպիսի բան եղած չէր. Վա՜յ մեզ, այս զօրաւոր Աստուածներուն ձեռքէն ո՞վ

*Կամ հաստատեալ



մեզ պիտի ազատէ. սոքա՛ն այն Աստուածներն են, որ Եգիպտոս զամէն հարուածներով գարիին անապատի մէջ։
9 Ուժովցիք և քաջ եղէք, ով փղշտացիք, գուցէ ծրրայնցւոց ծառայ ըլլաք, ինչպէս որ անոնք ձեզի ծառայ եղան. ուստի քաջ եղէք և մարդ էք տա-
10 ղերգիցէք։ Եւ երբ փղշտացիք պատերազմեցան, Իսրայէլ յաղթուեցաւ և ամէն մարդ իւր վրանը փախաւ, և չատ մեծ կոտորած եղաւ, և Իսրայէլէ երեսուն հազար հետեւակ զօրք ինկաւ։
11 Նաև Աստուծոյ տապանակին առնուեցաւ. և Հեղիի երկու որդիքը Ոփնի և Փենհէհս մեռան։
12 Եւ բիւրեմիանեան մարդ մը բանակին վազելով՝ նոյն օրը Սիլով հասաւ, և իւր լաթերը պատռած էր, և իւր գլխուն վրայ հող դրած եր։ Եւ երբ հոն
13 հասաւ, ահա Հեղի ճամբուն վրայ նստած՝ կը սպասէր, քանզի Աստուծոյ տապանակին համար սիրտը կը դողար։ Եւ երբ այն մարդը քաղաք մտնելով՝ այս բանը պատմեց, բոլոր
14 քաղաքն ողաղակեց։ Եւ Հեղի այն ողաղակին ձայնը լսելով՝ ըսաւ, Այս ողմանկին ձայնը ի՞նչ պիտի ըլլայ։ Եւ այն մարդը շուտով վազեց եկաւ, և Եղի
15 բանէրը Հեղիի պատմեց։ Եւ Հեղի իննսունեւմէկ տարեկան էր, և աչքերնէն տկարացած էին, որ չկրնար տեսնել։
16 Եւ այն մարդը Հեղիի ըսաւ, Ջօրքին մէջէն եկած եմ, և պատերազմէն այսօր փախայ. և անիկա
17 ըսաւ, Որդեակ, ի՞նչ եղաւ։ Եւ լուր բերողը պատասխան տուաւ և ըսաւ, Իսրայէլ փղշտացւոց առջեւէն փախաւ, և ժողովուրդին մէջ մեծ կոտորած եղաւ, և քու երկու որդիքդ Ոփնի և
18 Փենհէհս մեռան, և Աստուծոյ տապանակը գերեվարեցաւ։ Եւ երբ անիկա Աստուծոյ տապանակը յիշեց, Հեղի աթոռէն կռնակի վրայ ինկաւ դրան քով, և վիզին ոսկրը կոտրեցաւ և մեռաւ,

*Եբր. կեցած
†Կամ կռնակին



քանզի ծեր և ծանրացած մարդ էր. և անիկա Իսրայէլի մէջ քառասուն տարի դատաւորութիւն րրած էր։
19 Եւ անոր հարսը՝ Փենհէհսի կինը յղի և ծնանելու մօտ ըլլալով, երբ Աստուծոյ տապանակին առնուելուն և իւր կեսրայրին և էրկանը մեռնելուն լուրը լսեց, ծունկ ծնելով ծնաւ, քանի
20 զի ցաւերն անոր վրայ կոխեցին։ Եւ երբ կը մեռնէր, քովը կայնող կանայք անոր ըսին, Մի վախնար, քանզի որդի ծնած ես. բայց անիկա պատասխան չտուաւ և ուշադրութիւն չրրաւ։
21 Եւ ազգն անունը *Իքաբօդ կոչեց, ըսելով, Իսրայէլէ փառքը վերցաւ. (քանզի Աստուծոյ տապանակին առնուեցաւ, և անոր կեսրայրը և այրը
22 դ–ռ–ե) Անոր համար ըսաւ, Աստուծոյ տապանակին առնուելուն համար Իսրայէլէ փառքը վերցաւ։

## Գլ. Ե

1 Եւ Փղշտացիք Աստուծոյ տապանակն առին, և զանիկա Աբենեզերէ †Ազովտ
2 տուս տարին։ Եւ Փղշտացիք Աստուծոյ տապանակն առին, և զանիկա Դագոնի տաճարը տարին, և Դագոնի քով դրին։
3 Եւ հետեւեալ օրը Ազովտացիք առաւօտուն կանուխ կելլելով, տեսան որ Դագոն Տէրոջը տապանակին առջև երեսի վրայ գետնին ինկած էր. և անոնք դիագոն վերցուին իւր տեղը դրին։ Եւ
4 հետեւեալ օրը դարձեալ առաւօտուն կանուխ եղան, և տեսան որ Դագոն Տէրոջը տապանակին առջև երեսի վրայ գետնին ինկած էր, և Դագոնի գլուխն ու երկու թաթերը կտրած՝ ‡սեմին վրայ խուճ եղեր, և միայն Դա-
5 գոնի մարմինը մնացած էր։ (Այս պատճառաւ Դագոնի քուրմերն ու Դագոնի տաճար բոլոր մտնողները մինչև այս օրս Ազովտու եղող Դագոնի սեմին վրայ չեն

*Այսինքն՝ անպատիւ։
†Ամբ. Ե՛ Ասեզովմի
‡Կամ ձուկը. Եբր. Դագոնը

6 կոխեր։) Ա՛յնուհետեւ Տէրոջը ձեռքն
Ագովասացուց վրայ Ծանրացաւ, և զա-
նոնք կոտրընդուց, և զանոնք Ագով-
ասոի և անոր սահմաններուն մէջ Թան-
չի ուռուցիկ զարկաւ։
7 Եւ Ագովասոի բնակիչներն այսպէս ըս-
լալը տեսնելով՝ ըսին, Իսրայէլ Աստու-
ծոյն տապանակը մեր քով չկենայ. քան-
զի անոր ձեռքը մեր վրայ և մեր աս-
տուծոյն Դագոնի վրայ Ծանրացաւ։ Եւ
8 հրեշտակ ղրկեցին, և Փղշտացոց բոլոր
նախապետներն իրենց քով ժողվեցին,
և ըսին, Իսրայէլի Աստուծոյ տապա-
նակին ի՞նչ ընենք. և ըսին, Իսրայէլի
Աստուծոյ տապանակը Գէթի փոխադ-
րուի։ Եւ Իսրայէլի Աստուծոյ տապա-
9 նակը Գէթի փոխադրելին ետքը, Տէրոջը ձեռքն
այն քաղաքին վրայ ըլլալով՝ մեծ իր-
ուռվայ թիւն եղաւ. և քաղաքին մար-
դիկը փոքրէն մինչեւ մեծը զարկաւ. և
անոնց վրայ թաղիչի ուռուցիկներ երեւցան։
10 Եւ Աստուծոյ տապանակին Ակկարոն
ղրկեցին. և երբ Աստուծոյ տապանակն
Ակկարոն մտաւ, Ակկարոնացիք կանչ-
ուրտւելով ըսին, Իսրայէլի Աստուծոյ
տապանակը մեզի բերին՝ որ մեզ և մեր
11 ժողովուրդը մեռցընեն։ Եւ Հրով ղրր-
կելով՝ Փղշտացոց բոլոր նախապետնե-
րը ժողվեցին, և ըսին, Իսրայէլի Աս-
տուծոյն տապանակը թող տուէք երթայ
և իր տեղը դառնայ, որ մեզ և
մեր ժողովուրդը չմեռցընէ. քանզի բո-
լոր քաղաքին մէջ մահաբեր ահակուռ
մը կար, և հոն Աստուծոյ ձեռքը շատ
12 ծանրացած էր։ Եւ չմեռած մարդիկ
թաղիչի ուռուցիկներով զարնուեցան, և
քաղաքին աղաղակը երկինք հասաւ։

## Գլ. Զ

1 Եւ Տէրոջը տապանակը Փղշտացոց եր-
2 կրին մէջ եօթն ամիս մնաց։ Եւ Փղշ-
տացիք էբէց փուլիները և բախտ նա-
յողները կանչեցին և ըսին, Տհասոյի
տապանակին ի՞նչ ընենք. խնդացնէք
մեզ թէ զանիկա ինչո՞վ իր տեղը դրր-
3 կուի կոխենաք երթնչ տանի, և զանոնք
ապրին լծեցին, և անոնց ձագերը ան
11 մէջ գոցեցին։ Եւ Տէրոջը տապանակը,
և ոսկի մուկերուն և իրենց թանչի
ուռուցիկներուն պատկերներուն փոքրիկ
12 արկղը տպրին վրայ դրին։ Եւ երկինքը
րը շիտակ ԲԷթ Տհասոյ Ճամբան բռնե-
ցին, և մեծ Ճամբէն քառատելով կ՚եր-
թային, և ա՛յ կամ ձախ կողմը չխոտո-
րեցան. և Փղշտացոց նախապետները
մինչեւ ԲԷթ Տհասոյ սահմանն անոնց ե-
13 տևէն գացին։ Եւ ԲԷթ Տհասիացիք հով-
ատն մէջ ցորեան հունձք կը հնձէին,
և իրենց աչքերը վերցընելով տապա-
նակը տեսան, և ուրախացան որ տես-
14 ան։ Եւ տպրը ԲԷթ Տհասիացի Յեհոսի
պատը մտաւ և հոն կայնեցաւ, ուր մեծ
քար մը կար. և տպրին փայտերը ձեղ-
քեցին, և այն կովերը Տէրոջը ող-
15 ջակէզ մատուցին։ Եւ Ղեւտացիք Տէրո-
ջը տապանակն և անոր հետ եղող ոս-
կի պատկերներուն փոքրիկ արկղը
վար իջեցուցին, և այն մեծ քարին
վրայ դրին. և այն օրը ԲԷթ Տհասիա-
16 ցիներն Տէրոջը ողջակէզներ և զոհեր
մատուցին։ Եւ Փղշտացոց հինգ նա-
խապետներն այս բաները տեսնելէն ետ-
17 ը՝ նոյն օրն Ակկարոն դարձան։ Եւ այն
ոսկեզին թանչի ուռուցիկները՝ որ Փղշտա-
ցիք յանցանքի համար Տէրոջը ընծայ
առին, առանձ՚ին. Մի՛ Ազովասոի հա-
մար, մի՛ Գազայի համար, մի՛ Ասկաղոնի
համար, մի՛ Գէթի համար և մի՛ ևս
18 Ակկարոնի համար։ Եւ ոսկի մուկերը
Փղշտացոց հինգ նախապատրաստ թիւններ-
ուն բոլոր քաղաքներուն թէ ամուր էին,
պարսպատոր գաղաքէն մինչև անպատ-
րաստ գեղը, և մինչև այն մեծ քարը՝
որուն վրայ Տէրոջը տապանակը դրաւ
եցաւ։ Եւ մինչև այս օր այն դաշտը ԲԷթ-
19 Տհասիացի Յեհոսի պատին մէջ է։ Եւ
Տէրը ԲԷթ Տհասիացի մարդիկը զար-
կաւ, քանզի անոնք Տէրոջը տապանա-
կին մէջ նայեցան. և ժողովուրդէն յի-
սուն հազար հոգի անասունի մարդ զար-
կաւ. և Տէրը ժողովուրդին մէջ կոտո-
րած ընելուն համար ժողովուրդը սուգ
20 բանեց։ Եւ ԲԷթ Տհասիացի մարդիկն ը-
սին, Ա՛վ սուրբ Տէր Աստուծոյն առջե-
ւ՝ ո՞վ կրնայ կայնիլ. և մեր քովէն որո՞
21 ղրկեցի Եւ Կարիաթ Տհասիմի բնակիչներուն
պատգամաւորներ ղրկեցին՝ ըսելով,
Փղշտացիք Տէրոջը տապանակը հետ բե-
րին. իջէք և զանիկա ձեր քով հանե-
ցէք։

## Գլ. Է

1 Եւ Կարիաթ Տհասիմի մարդիկ գացին, և
Տէրոջը տապանակն ՚ի՛նչ հանեցին, և
զանիկա տարին Աբինադաբի տունը որ
բլրոյն վրայ էր. և անոր օրզին զեղաց-
զար *օրշեցին որ Տէրոջը տապանակին
2 պահպանութիւն ընէ։ Եւ տապանակը
Կարիաթ Տհասիմի մէջ դրուած օրէն հետը
շատ օրեր անցան, և քսան տարի եղ-
աւ, և Իսրայէլի բոլոր տունը Տէրոջը
հառաչեցին։
3 Անատն Սամուէլ Իսրայէլի բոլոր
տան խօսեցաւ՝ ըսելով, Եթէ դուք
ձեր բոլոր սրտով Տէրոջը դարձած էք,
ձեր մէջէն օտար աստուածները և Աս-
տարովթը վերցուցէք, և ձեր սիրտերը
Տէրոջը պատրաստեցէք, և միայն զա-
նիկա պաշտեցէք. և անիկա փրկաս-
4 ցուց ձեզ պղտի ազատէ։ Եւ
Իսրայէլի որդիքը Բահաղիմը և Աստա-
րովթը վերցուցին, և միայն Տէրոջը
5 ծառայութիւն ըրին։ Եւ Սամուէլ ըսաւ,
Բոլոր Իսրայէլ Մասփայի մէջ ժողվե-
ցէք, և ձեզի համար Տէրոջը աղօթք
6 ընեմ։ Եւ Մասփայի մէջ ժողվուեցան,
և ջուր քաշեցին և Տէրոջը առջև թա-
փեցին. և այն օր ծոմ բռնեցին, և
հոն ըսին, Տէրոջը դէմ մեզք գործե-
ցինք։ Եւ Սամուէլ Մասփայի մէջ Իսրա-
յէլի որդւոց դատաւորութիւն ըրաւ։
7 Եւ երբ Փղշտացիք լսեցին որ Իսրա-
յէլի որդիքը Մասփայի մէջ ժողված
են, Փղշտացոց նախապետներն Իսրա-
յէլի դէմ եկան. և Իսրայէլի որդիքն
այս լսելով Փղշտացոց երեսէն վախ-

*ԵԲԲ. օրբեցին



†ԵԲԲ. Թէթ Ազգին
†ԵԲԲ. անօթները

8 ցան՝ եւ Իսբայէլի որդիքը Սամուէլի
ըսին, Անդադար մեր Տէր Աստուծոյն
աղաղակէ մեզի համար, որ մեզ փրկէ
9 ազգաց ձեռքէն պատուէ։ Եւ Սամուէլ
կաթնակեր գառնուկ մը առաւ, և զա-
նիկա բոլորովին ողջակէզ ըրաւ Տէրո-
ջը. և Սամուէլ Իսբայէլի համար Տէրո-
ջը աղաղակելով —ԱՂԵՒ ԸՐ—. և Տէրը
անոր պատասխան տուաւ։
10 Եւ երբ Սամուէլ ողջակէզը կը մա-
ուցանէր, Փղշտացիք մօտեցան որ Իս-
բայէլի դէմ պատերազմ ընեն. և Տէրը
նայն օրը Փղշտացւոց վրայ մեծ ձայնով
պոռաց, և զանոնք խռովեցուց. և
11 Իսբայէլի առջև զարնուեցան։ Եւ Իս-
բայէլի մարդիկը Մասփայէն ելլելով
Փղշտացիները հալածեցին, և մինչև
Բեթքարի ներքև զանոնք կոտրեցին։
12 Անառանն Սամուէլ քար մը առաւ, և
Մասփայի և Սենի միջեռղ կանգնեց,
և անոր անունն *Աբենեզեր կոչեց, ը-
սելով, Տէրը մինչև այս տեղս մեզի
օգնեց։ Եւ Փղշտացիք կորագտնեց ե-
ղան, և այլ եւս Իսբայէլի սահմանին
մէջ չմտան. և Սամուէլի բոլոր օրերը
14 Տէրոջը ձեռքը Փղշտացւոց վրայ էր։ Եւ
Փղշտացիք Իսբայէլէ որչափ քաղաքներ
որ առած էին, Ակկարոնէ մինչև Գէթ,
Բալըշ ալ Իսբայէլի եւս ազատեցան. և
Իսբայէլ անոնց սահմաններէն Փղշտա-
ցւոց ձեռքէն ազատեց. և Իսբայէլի
և Ամորհացւոց միջեռղ խաղաղութիւն
կար։
15 Եւ Սամուէլ իր կենաց բոլոր օրերուն
16 մէջ դիսբայէլ դատեց։ Եւ տարէ տա-
րի Բեթէլ, Գաղգաղա և Մասփա կ'եր-
քար կը պտրեէր, և բոլոր այն տեղ-
17 ուանքը դիսբայէլ կը դատէր։ Եւ դար-
ձեալ Հռամա կը դառնար, քանզի իր տունը
հոն էր. և հոն կը դատէր զիսբայէլ,
և հոն Տէրոջը սեղան շինեց։

## Գլ. Ը

1 Եւ երբ Սամուէլ ծերացաւ՝ իր որդի-

*Ասիկա՝ օգնութեան քար։

2 ներն Իսբայէլի վրայ դատաւոր դրաւ։
2 Եւ անոր անդրանիկ որդւոյն անունը
Յովէլ, և երկրորդին անունն Աբիա էր,
և Բերսաբէէի մէջ դատաւորութիւն
3 կ'ընէին։ Եւ անոր որդիքն անոր ճամ-
բաներուն մէջ չգացին, այլ ագահու-
թեան ետեւէ կ'ընթանալ կ'ուզէին. և կա-
ռնեին, և իրաւունքը կը ծռէին։
4 Եւ Իսբայէլի բոլոր ծերերը ժողվուե-
5 ցան, և Ռամա Սամուէլի գացին, Եւ
անոր ըսին, Ահա դուն ծերացած ես,
և քու որդիքդ քու ճամբաներուդ
մէջ չեն գար. հիմա մեր վրայ
թագաւոր մը դիր, որ ամէն ազգերու
6 պէս դիզ *կառավարէ։ Եւ այս բանը
Սամուէլի աչքէն գէշ երեցաւ, որ ըսին
Թէ Մեզի թագաւոր մը տուր, որ մեզ
կառավարէ. և Սամուէլ Տէրոջը աղօթք
7 ըրաւ։ Եւ Տէրը Սամուէլի ըսաւ, Ժո-
ղովուրդին ըսածքր եւ անոնց ձեզի ա-
մէն բանէն մեծ մեղք ըրէ. քանզի անոնք
քեզ չեն մերժեր, այլ ես կը մերժեմ,
8 որ անոնց վրայ չթագաւորեմ։ Ըրածնէն
կղիպատակ հանած օրէս մինչև այս
օր ինչ որ ըրին՝ ես ինծի ատով և ու-
րիշ աստուածներու ծառայութիւն ը-
9 նելով, նոյնը քեզի ալ կ'ընեն։ Եւ հիմա
դուն անոնց խօսքը մեղմ ըրէ. բայց
անոնց յայտնի վկայութիւն ընես, և
անոնց վրայ իշխելու թագաւորին վար-
մունքն անոնց իմացընես։
10 Եւ Սամուէլ Տէրոջը բոլոր խօսքերն
իրմէ թագաւոր ուզող ժողովուրդին
11 զրուցեց։ Եւ ըսաւ, Ձեր վրայ իշխելու
թագաւորին վարմունքն այս պիտի ըլ-
լայ. ձեր տղաքը պիտի առնէ, և զա-
նոնք իրեն համար իր կառաց և ձիե-
րուն վրայ պիտի դնէ. և անոր կառաց
12 առջևէն պիտի վազեն։ Եւ իրեն հազա-
րապետներ և յիսնապետներ պիտի ը-
նէ, և անոր արտերը պիտի հերկեն, և
հունձերը հնձեն, և անոր պատե-
րազմական զէնք և կառաց գործի-
13 ներ շինեն։ Եւ ձեր աղջիկները պիտի
առնէ, որ իւղագործ, խոհարար և

*Եբր. դատէ։



14 հացկերոց ըլլան։ Եւ ձեր լաւագոյն արտերը, այգիներն ու ձիթենիներն առնելով իր ծառաներուն պիտի տայ։
15 Եւ ձեր հունտերուն և ձեր այգիներուն տասանորդը պիտի առնէ, և զանոնք իր ներքինիներուն և ծառաներուն
16 ըսն պիտի տայ։ Եւ ձեր ծառաներն և աղախիններդ, և ձեր ամենագոյն երիտասարդները, և ձեր էշերը պիտի առնէ և իր ծառայութեան գործածէ։
17 Ձեր հօտերուն տասանորդը պիտի առնէ, և դուք անոր ծառաները պիտի ըլ-
18 լաք։ Այն օրը դուք ձեր ընտրած թագաւորին պատճառաւ պիտի աղաղակէք, բայց Տէրը այն օրը ձեզի պատասխան պիտի չտայ։
19 Սակայն ժողովուրդը Սամուէլի խօսքը մերկ ընել չուզեցաւ ըսելով, Ոչ, այլ պատճառ մեր վրայ թագաւոր մը լի-
20 լայ։ Եւ մենք ևս բոլոր ազգերուն պէս ըլլանք, և մեր թագաւորը մեզ կառավարէ. անիկա մեր առջևէն ելլէ, և մեր պատերազմներուն մէջ առաջնորդութիւն ընէ։ Եւ Սամուէլ ժողովուրդին բոլոր խօսքերը լսեց, և զանոնք
22 Տէրոջը ականջներուն զրուցեց։ Եւ Տէրը Սամուէլի ըսաւ, Անոնց խօսքը մի-
ակի ըրէ, և անոնց վրայ թագաւոր մը դիր։ Աստուած Սամուէլ Իսբայէլի մարդոց ըսաւ, Թող ամէն մարդ իր քաղաքը երթայ։

## Գլ. Թ

1 Եւ Բենիամինի տոհմէն Կիս անուն զօրաւոր մարդ մը կար. և անիկա Բենիամինեան Աֆիայի որդւոյն Բեքորաթի որդւոյն Սերորի որդւոյն Աբիելի
2 որդին էր։ Եւ անիկա որդի մը ունէր, որուն անունը Սաուղ էր. անիկա փոյթ և գեղեցիկ էր, և Իսրայէլի որդւոց մէջ քան զնա գեղեցիկ մարդ չկար. բոլոր ժողովուրդին ուսէն վեր երկայն էր։
3 Եւ Սաուղի հօրը Կիսի էշերը կորսուեցան. և Կիս իր որդւոյն Սաուղի

*Եբր. պատերազմները պատերազմիմ։

*Կամ Աօթիմի։

տեղը հետ չէ կերակուր ուտելու համար. քանզի մինչև անոր գալը ժողովուրդը կերակուր չուտեր, քանզի անիկա կ'օրհնէ զոհը, և ապա հրաւիրեալք կ'ուտեն, հիմա երթ, քանզի հիմ կը գտնէք զանիկա։ Եւ անոնք քաղաքը կու մտնէին, ահա Սամուէլ բարձր տեղը երթալով՝ անոնց դիմաց ելաւ։

15 Եւ Սաուղի գալէն օր մը առաջ Տէրը Սամուէլի յայտնած էր, և բաած էր
16 թէ վաղը այս ատեն Բենիամինի երկրէն քեզի մարդ մը պիտի դրկեմ, և զանիկա իմ Ժողովուրդիս Իսրայէլի վրայ իշխան օծիս, որ անիկա իմ ժողովուրդս Փղշտացւոց ձեռքէն ազատէ. քանզի Ժողովուրդիս Ղէղեհէնը նայեցայ, վասն զի անոր ազաղակն հնաչեցաւ, Սամուէլ զԱսաուղ տեսաւ, Տէրը անոր բսաւ, Ահա այս է մարդը որուն համար քեզի բսի. սիկա իմ ժողովուրդիս վրայ պիտի իշխէ։ Եւ Սաուղ դրան մէջտեղ Սամուէլի մօտեցաւ, և բսաւ, Տեսանողին տունն ո՞ր է, կ'ազաչեմ՝ ինծի ցուցուր։ Եւ Սամուէլ պատասխան տուաւ Սաուղի և բսաւ Տեսանողը ես եմ. իմ առջևէս բարձր տեղը երթիր, քանզի այսօր ինծի հետ կերակուր պիտի ուտէք. և վաղը քեզ կը դրկեմ, և բոլոր սրտով մէջ
20 եղածը քեզի կը պատմեմ։ Եւ քու երէկ կորսուած էշերուդ համար մի հոգար, քանզի անոնք գտնուած են. և Իսրայէլի բոլոր *փափաքը որո՞ է. ո՛չ ազաքին քեզ և
21 քու հօրդ բոլոր տանը։ Եւ Սաուղ պատասխան տուաւ և բսաւ, ես Իսրայէլի ցեղերուն փոքրագոյնէն Բենիամինեան չեմ, և իմ ազգատոհմս Բենիամինի ցեղին բոլոր ազգատոհմիներուն կրտսերը չէ՞. ուստի ինչու՞ համար ինծի
22 ձի այդ պիսի խօսք զրուցեցիր։ Եւ Սամուէլ Սաուղ և անոր մանչը, և զանոնք ներս բերաւ սրահը տարաւ, և նստեցուց զանոնք կոչնականներուն

գլուխը, որ իրեւ երեսուն մարդ էին։
23 Եւ Սամուէլ խոհարարին բսաւ, Բեր այն բաժինը, զոր քեզի տուի, և քեզի պահուխրեցի որ քովդ պահես ըսի։
24 Եւ խոհարարն ազդրը վրայի հաւ վերցնելով, զանիկա Սաուղի առջև դրաւ։ Եւ Սամուէլ բսաւ, Ահաւասիկ մնացածը, զանիկա առջիդ դիր և կեր. քանզի ևրը ըսի թէ ժողովուրդը *հրաւիրած եմ," այն վայրկեանին հետ անոնիկա քեզի համար պահուած է. և այն օրը Սաուղ Սամուէլի հետ կերաւ։
25 Եւ բարձր տեղէն քաղաքը իջան, և Սամուէլ Սաուղի տանիքին վրայ Սա-
26 ուղի հետ խօսեցաւ։ Եւ առաւօտուն կանուխ եղան, և լուսածէն պէս Սամուէլ զԱսաուղ տանիքը կանչեց և բսաւ, Ելիր և քեզ պիտի դրկեմ։ Եւ Սաուղ ելաւ, և ինքը և Սամուէլ միկ-
27 տեղ դուրս եղան։ Երբ անոնք քաղաքին ծայրը կ'իջնէին, Սամուէլ բսաւ Սաուղի, Մանչուն բսէ որ մեր առջև անցնի։ (և անիկա անցաւ։) և հիմա դուն հաւ կեցիր, որ Աստուծոյ պատգամը քեզի իմացընեմ։

## Գլ. Ժ

1 Եւ Սամուէլ եղկին շիշն առաւ, և անոր գլուխն վրայ թափեց, և զանիկա համբուրեց, և բսաւ, Ո՞չ ազաքին Տէրը քեզ իր ժառանգութեան վրայ իշխան
2 օծեց։ Այսօր ինծի գացած առենդ Բենիամինի սահմանը Սելսահի մէջ՝ Ռաքելի գերեզմանին քով երկու մարդ գտնես, և քեզի պիտի բսեն, Գտնուեցան էշերը զորս փնտռելու գացած էիր. և ահա հայրդ էշերուն հոգը թողուց, և ձեզի համար կը հոգայ, և կ'ըսէ, Տղուս համար ի՞նչ ը-
3 նեմ։ Եւ երբ անկէ անդին երթաս և Թաբօրի կաղնին հասնիս, հոն երեք մարդ քեզ պիտի հանդիպին, որոնց մին երեք ուլ, մին երեք նկանակ հաց և մին ևս ոսկի մը գինի տանելով՝ Աս-

*Կամ վայելչութիւնը

*Կամ հրաւիրեմ,



4 տուծոյ կ'երթան դէպ ի Բեթէլ։ Եւ քու ոդջութիւնդ հարցընելով՝ քեզի երկու հաց պիտի տան, և դուն անոնց ձեռքէն պահես առնես։ Ա֊յնու հետև Աստուծոյ բլուրը պիտի երթաս, ուր Փղշտացւոց բերդապահ զօրքը կ'ըլլայ. և երբ հոն քաղաքը մտնես, բարձր տեղէն իջնող գունդ մը մարգարէից պիտի հանդիպես, որ հրնոց առջևէն տաւիղ, թմբուկ, սրինգ և գինի ունենալով մարգարէութիւն պիտի բնեն.
6 Եւ քու վրադ Տէրոջը Հոգին պիտի գայ, և անոնց հետ մարգարէութիւն պիտի բնես. և դուն պիտի փոխուիս, ուրիշ
7 մարդ պիտի ըլլաս։ Եւ երբ այս նշանները քու վրադ գան՝ ձեռքդ եղիր որ կ'ուզես բնես, քանզի Աստուած քու հետդ
8 է։ Եւ ինծի առաջ Գալգաղա իջնես. և ահա ես քեզի պիտի իջնեմ ողջակէզներ և խաղաղութեան զոհեր մատուցանելու։ Եօթն օր սպասես մինչև որ ես քեզի գամ, և քու ընելու գործդ քեզի իմացընեմ։

9 Եւ երբ անիկա իր կռնակը գարձուց՝ Սամուէլի քովէն երթալու համար, Աստուած անոր ուրիշ սիրտ մը տուաւ. և նոյն օրն այս բոլոր նշանները
10 իր կատարուեցան։ Եւ երբ հոն բլուրը եկան, ահա մարգարէից գունդ մը անոր առջև ելաւ. և անոր վրայ Աստուծոյ Հոգին եկաւ, և անոնց մէջ մար-
11 գարէութիւն բրաւ։ Եւ ամէն անոնք որ զանիկա առաջուց կը ճանչնային, երբ տեսան որ անիկա մարգարէներուն հետ մարգարէութիւն կ'ընէր, ժողովուրդն իրարու բսին, Այս ի՞նչ բան է որ Կիսի որդւոյն հանդիպած է. մի֊թէ Սաուղն ալ մարգարէներուն մէջն է։
12 Եւ այն տեղի մարդոցմէ մէկը պատասխան տուաւ և բսաւ, իսկ անոնց հայրն ո՞վ է։ Անոր համար ասիկա առակ եղաւ, Մի֊թէ Սաուղն ալ մարգարէներուն մէջն է։ Եւ երբ մարգարէութիւն բնելը լմընցուց՝ բարձր տեղը եկաւ։
14 Եւ Սաուղի հօրեղբայրն անոր և անոր մանչուն բսաւ, Ո՞ւր գացիք։ Եւ

անիկա բսաւ, Էշերը փնտռելու. բայց երբ տեսանք որ չկան, Սամուէլի գացինք։
15 Եւ Սաուղի հօրեղբայրն բսաւ, Սամուէլ ձեզի ի՞նչ գրուցեց, պատմէ
րտէ, բայց դուն իմ քովս ապահով
կաս։

## Գլ. ԻԳ

1 Եւ Դաւիթ խնացուցին բսնալով, Ահա
Փղշտացիք կռիւ կ'ընեն հասիլայի կ'ը-
2 նեն, և կալերը կը կողոպտեն։ Եւ Դա-
ւիթ Տէրոջը հարցուց և ըսաւ, Երթամ
այս Փղշտացիները պարնե՞մ։ Եւ Տէրը
Դաւիթի ըսաւ, Գնա Փղշտացիները զարկ
3 և հասիլան ազատէ։ Եւ Դաւիթի մարդիկն
անոր ըսին, Ահա մենք հոս Յուդայի
մէջ կը վախնանք. ալ ո՞րչափ աւելի
երթ կռիւ երթանք Փղշտացւոց գունդ-
4 երուն դէմ։ Եւ Դաւիթ նորէն Տէրոջը
հարցուց. և Տէրը անոր պատասխան
տուաւ և ըսաւ, Նիւթ՝ կռիւ իջիր,
քանզի Հն Փղշտացիները քու ձեռքդ
5 կու տամ։ Եւ Դաւիթ իւր մարդկանով
կռիւ գնաց, և Փղշտացւոց հետ պա-
տերազմ բրաւ և անոնց անասուններն
առաւ, և զանոնք մեծ հարուածով
զարկաւ և Դաւիթ կռիւերն բնակիչ-
6 ներն ազատեց։ Եւ Աքիմելեքի որդին
Աբիաթար Դաւիթի քով կռիւ փախած
ատեներ եփուդը ձեռքը բռնած իջաւ։

*Կամ՝ առնելոյդ մանուկ, և †Կամ՝ հրամանատարդ գացող,

7 Եւ երբ Սաուղի իմացուցին, թէ Դաւիթ Կէիլա մտած է, Սաուղ բաւ, Աստուած իմ ձեռքս մատնած է զանիկա, քանզի զուռներ և նիգեր ունեցող քաղաքի մը մէջ մտած գտնուած է։ 8 Եւ Սաուղ բոլոր ժողովուրդը պատերազմի կանչից, որ Կէիլա իջնէ, և Դաւիթ և անոր մարդիկը պաշարեն։ 9 Դաւիթ և անոր մարդիկը գաղտնի իմացան որ Սաուղ իրեն համար գաղտնակ չարաթիւն կը հնարէր, և Աբիաթար քահանային բաւ, Եփաո 10 ար մօտեցուր։ Եւ Դաւիթ ըսաւ, Ով Տէր Աստուած Իսրայէլի, քու ծառադ առդ լսեց որ Սաուղ կ'ելլայ վրայ գալ և կ'ուզէ, որ քաղաքն իմ պատճառ 11 ուստի ազբ։ Արդեօք կ'ելլայի բնակիչները զիս անոր ձեռքը պիտի մատնեն։ Ծառայիդ լսածին պէս՝ Սաուղ հաս պիտի իջնէ։ ով Տէր Աստուած Իսրայէլի, կ'ուսուցնէ՛ ծառայիդ յայտնէ։ Եւ 12 Տէրը բաւ, Պիտի իջնէ։ Եւ Դաւիթ բաւ, Կէիլայի բնակիչները զիս և իմ մարդիկս Սաուղի ձեռքը պիտի մատնեն։ Եւ Տէրը բաւ, Պիտի մատնեն։ 13 Ուստի Դաւիթ և անոր մարդիկը վեց հարիւր մարդու չափ եղան՝ ելլելով գացին, և ուր որ կրնային երթալ՝ կ'երթային։ Եւ երբ Դաւիթի Կէիլայէ ելլելը Սաուղի իմացուցին, հոն երթալէն ետ կեցաւ։

14 Եւ Դաւիթ անապատին մէջ ամուր տեղեր կը նստէր։ Եւ Զիփի անապատին մէջ լեռան մը վրայ նստաւ։ Եւ Սաուղ ամէն օր զանիկա կը փրնտռէր, բայց Աստուած անոր ձեռքը չմատնեց զանիկա։ 15 Եւ Դաւիթ տեսաւ որ Սաուղ անոր անձը փնտռելու ելած էր։ և Դաւիթ Զիփի անապատն անտառին մէջ էր։

16 Եւ Սաուղի որդին Յովնաթան ելաւ՝ անտառը գնաց Դաւիթի, և անոր 17 ձեռքը Աստուծով զօրացուց։ Եւ ան նոր բաւ, Մի վախնար, քանզի իմ հօրս Սաուղի ձեռքը քեզ պիտի չգտնէ, և դուն իսրայէլի վրայ թագաւոր պիտի ըլլաս, և ես քու երկրորդդ պիտի ըլլամ։ և այս բանն իմ հայրս

18 Սաուղ ալ գիտէ։ Եւ երկուքը Տէրոջը առջև ուխտ ըրին։ և Դաւիթ անտառին մէջ մնաց, բայց Յովնաթան իր տունը դարձաւ։

19 Եւ Զիփեացիք Գաբաա եկան Սաուղի, և ըսին, Ահա Դաւիթ մեր քով ամուր տեղեր անտառին մէջ՝ Հաքիղա բլրոյն վրայ՝ Եսիմոնի հարաւային կողմը պահուած է։ Հիմա, ով թագաւոր, ինչպէս որ քու անձդ իջնելու կը փափաքի իջիր, և զանիկա թագաւորին ձեռքը մատնել մեզի մը 21 նայ։ Եւ Սաուղ բաւ, Դուք Տէրոջմէն օրհնեալ ըլլաք, որ ինծի ցաւա 22 կից եղաք։ Երթեալ պատրաստեցէք և ան լի ապէկ դիտեցէք, և անոր տարին կռահած տեղը դիտեցէք և տեսէք, Ե՞ր ով զանիկա հոն տեսած է, քանզի ինծի ըսած են թէ անիկա չատ 23 խորամանկ է։ Ուստի նայեցէք և ան նոր բոլոր պահուելու տեղտանքն իմացէք, և ուղիղ տեսութեամբ ինծի դարձէք, և ձեզի հետ երթամ։ և եթէ անիկա այն երկրին մէջն է, զանիկա Յուդայի բոլոր հազարաւորներուն 24 մէջ ապէկ մը պիտի փնտռեմ։ Եւ ան նոքա եկան և Սաուղի առջևէն Զիփ գացին։ և Դաւիթ իր մարդերով Մաոնի անապատը գտնուեցաւ՝ Եսիմոնի 25 հարաւային կողմը Նափէ եր։ Եւ Սաուղ իր մարդերով ըսածին փնտռելու գնաց։ և երբ Դաւիթի իմացուցին՝ ինքն իջաւ և Մաոնի անապատին մէջ նստաւ։ և Սաուղ լսեց, և Դաւիթի 26 հետևէն Մաոնի անապատը վազեց։ Եւ Սաուղ լեռան այս կողմէն կ'երթար, և Դաւիթ իր մարդերով լեռան անդի կողմէն կ'երթար։ և Դաւիթ կը փութար Սաուղի երեսէն փախչել, բայց Սաուղ և անոր մարդիկը Դաւիթի և անոր մարդոց չորս կողմը պա 27 տեցին, որ զանոնք բռնեն։ Եւ լուրեր մը եկաւ Սաուղի և բաւ, Շուտով եկիր, քանզի Փղշտացիք երկիրը կո 28 խեցին։ Ուստի Սաուղ Դաւիթի հա լածելէն դարձաւ գնաց, որ Փղշտացւոց դէմ գնէ. անոր համար այն ան



դին անունը *Սէլա-Հաշլէգոթ ըսուեցաւ։

## Գլ. ԻԴ.

1 Եւ Դաւիթ անկից ելաւ և Ենգադիի 2 ամուր տեղատեղը նստաւ։ Եւ երբ Սաուղ Փղշտացիներէն ետ դարձաւ՝ անոր իմացուցին և ըսին, Ահա Դաւիթ 3 Ենգադիի անապատին մէջն է։ Եւ Սաուղ բոլոր Իսրայէլէ երեք հազար ընտրուած մարդիկ առաւ, և գնաց որ գիտնայ Դաւիթ և անոր մարդիկը փնտռել այծեհանց ժայռերուն վրայ։ Եւ ճամբուն վրայ հոգի ոչխարներուն փարախները եկաւ, և հոն քարայր մը կար։ և Սաուղ †ծարկուտրելու համար ներս մտաւ։ և Դաւիթ իր մարդերով 5 քարայրին ներսի դին նստած էր։ Եւ Դաւիթի մարդիկը անոր ըսին, Ահա Տէրոջմէ քեզի ըսած օրն այս է, թէ Քեզ թշնամիդ քու ձեռքդ պիտի մատնեմ, և քու ուզածդ հաճոյ երեսցածն ըրէ անոր։ Եւ Դաւիթ ելաւ և Սաուղի վերարկուին ծայրը գաղտնի կտրեց։ 6 Բայց յետոյ Դաւիթի սիրտը խղճաց, Սաուղի վերարկուին ծայրը կտրելուն 7 վրայ։ Եւ իր մարդոց ըսաւ, Աստուած չընէ որ Տէրոջը օծեալին՝ իմ տիրոջս այս բանն ընեմ, ձեռք անոր վրայ երկնցնելով, քանզի անիկա Տէրոջը 8 օծեալն է։ Եւ Դաւիթ այս խօսքերով իր մարդիկը զսպեց, և անոնց չհաղորդեց Սաուղի վրայ յարձակիլ։ Եւ Սաուղ քարայրէն դուրս ելաւ և իր ճամբան գնաց։

9 Ապա Դաւիթ ալ քարայրէն դուրս ելաւ, և Սաուղի հետևէն կանչելով բաւ, Ով տէր իմ թագաւոր։ Եւ երբ Սաուղ հետն նայեցաւ, Դաւիթ երեսովը գետինը ծռելով երկրպագութիւն 10 բաւ։ Եւ Դաւիթ ըսաւ Սաուղի, Ինչո՞ համար մարդոց խօսքը մտիկ կ'ընես, որ †Ելլէ կ'ըսեն թէ Ահա Դաւիթ

11 քեզի չարութիւն ընելու կը չափայ։ Ահա այսօր քու աչքերդ կը տեսնեն, որ Տէրը այսօր քարայրին մէջ քեզ իմ ձեռքս մատնեց։ և բսին որ քեզ սպանեմ, բայց ես քեզի խնայեցի, և ըսի, Ես իմ ձեռքս իմ տիրոջս չեմ երկնցներ, քանզի անիկա Տէրոջը օ 12 ծեալն է։ Եւ տես, Հայր իմ, տես քու վերարկուիդ ծայրն իմ ձեռքս մէջն է։ և ես քու վերարկուիդ ծայրը կտրելով՝ քեզ չսպանեցի։ Գի՛ր հասկցիր և տես, որ իմ ձեռքս մէջ չարութիւն և անօրէնութիւն չկայ, և քեզի չմեղանչեցի մը չեմ ըրած, բայց դուն *զիս 13 սպանցնելու կ'որսաս։ Տէրը դատաւոր բնէ իմ և քու մէջ, և Տէրը իմ վրէժս քենէ առնէ։ բայց իմ ձեռքս քու վրադ չելլայ։ ինչպէս որ հին առածը կ'ըսէ, Անօրէններէն անօրէնութիւն կ'ելլէ, բայց իմ ձեռքս քու վրադ չելլայ։ 15 յետ Ետպիսի թագաւորը որո՞ հետևէն եկած է, և դուն որո՞ հետևէն կ'երթ կը հալածես։ մեռած շան մը հետևէ։ 16 ը, լուծ մը հետևէ ելլես։ Ուստի Տէրը դատաւոր ըլլայ, և իմ ու քու մէջ դատաստան բնէ, և տեսնէ և պատպանէ զիս, և քու ձեռքէդ ազատէ։

17 Եւ երբ Դաւիթ այս խօսքերը Սաուղի խօսիլը լմնցուց, Սաուղ բաւ, Ըղձակ իմ Դաւիթ, այդ քու ձայնդ է։ և Սաուղ իր ձայնը վերցուց և լա 18 ցաւ։ Եւ Դաւիթի ըսաւ, Դուն ինծի արդար ես, քանզի դուն ինծի բարիք հատուցիր, բայց ես քեզի չարիք հա 19 տուցի։ Եւ դուն այսօր քու ինծի բ լուած ազէկութիւնդ յայտնեցիր, քանզի Տէրը զիս քու ձեռքդ մատնեց, և 20 դուն զիս չսպանեցիր։ Վասն զի մարդ մը իր թշնամին գտնելու ըլլայ՝ զանիկա բարի ճամբայ, որ խաղաղութեամբ երթայ։ ուստի այսօր քու ինծի ըրած չարիքդ փոխարէն Տէրը քեզի բարիք հա 21 տուցանէ։ Եւ հիմա ահա գիտեմ որ դուն անշուշտ թագաւոր պիտի ըլլաս,

*Ա. Թագ. ԻԳ. 28։

†Եբր. սաքերը ծածկելու։

*Եբր. իմ անձս կ'որսաս զանիկա առնելու։

և Իսրայէլի թագաւորութիւնը փու-
22 ձեալ մէջ պիտի հաստատուի ես
հիմա Տէրոջմով ինծի երդում ըրէ թէ
ինծի նայիր իմ սերունդս պիտի չվե-
ցրնես, և իմ հօրս տունէն իմ անունս
23 բնաջինջ պիտի չընես։ Դաւիթ Սա-
ուղի երդում ըրաւ։ Ապա Յաւուղ
իր տունը գնաց, և Դաւիթ իր մար-
դերով ամուր տեղը եկաւ։

## Գլ. Իե

1 Ես Սամուէլ մեռաւ, և բոլոր Իսրայէլ
ժողովուրդն ու անոր համար սուգ ը-
րին, և զանիկա Ռամայի մէջ իր տու-
նը թաղեցին։ Եւ Դաւիթ եղաւ փառանի
անապատն իջաւ։
2 Եւ Մաոնի մէջ մարդ մը կար, և ա-
նոր *գործը Կարմէղոսի մէջ էր։ և ա-
նիկա շատ մեծ մարդ էր, և երեք հա-
զար ոչխար և հազար այծ ունէր։ և
իր ոչխարներն ասրակասուր ընելու
3 համար Կարմէղոսի մէջ կը գտնուէր։ Եւ
ան մարդուն անունը Նաբաղ էր, և ա-
նոր կնոջ անունն Աբիգեա։ և կինը խո-
հեմամիտ և գեղեցկադէմ էր, բայց այ-
րը խաստաբարոյ և չարագործ էր, և
անիկա †Քաղէբեան էր։
4 Եւ Դաւիթ անապատին մէջ լսեց որ
Նաբաղ իր ոչխարներն ասրակասուր
5 կ'ընէ։ Եւ Դաւիթ տասը մանչ զրկեց,
և Դաւիթ մանչերուն բսաւ, Կարմէղոս
ելէք և Նաբաղի գացէք, և իմ ա-
նունովս անոր ողջոյնիս հարցուցէք։
6 Եւ ա՛նոր այսպէս ըսէք, Ողջ կեցիր,
քեզի և քու տանդ խաղաղութիւն բլլայ, Եւ
7 ասացածդդ խաղաղութիւն բլլայ, Եւ
հիմա լսեցի որ ոչխարներդ ասրակասուր
կ'ընես։ քու հովիւներդ մեր հետ էին,
անոնց վնաս մը չտուինք, և անոնք
Կարմէղոսի մէջ որչափ ատեն որ կե-
ցան, անոնց մեկ բանը չկորսուեցաւ։
8 Քու մանչերուդ հարցուր, և քեզի թող
բսեն. ուստի այս մանչերը քու աչքե-

*Կամ տասդասած քը
†Կամ չնաբարոյ

րուդ առջև շնորհք թող գտնեն, քան-
զի բարի օր եկանք. շնորհք բրէ՛ քու
ծառաներուդ և քու որդւոյդ Դաւիթ
9 ձեռքդ եկածը տուր։ Դաւիթ մանչե-
րը գացին, և այս բոլոր խօսքերուն
համեմատ Դաւիթ անունէն Նաբաղի
10 զրուցեցին և կանգնեցան։ Եւ Նաբաղ
Դաւիթ ծառաներուն պատասխան ը-
ուաւ և բսաւ։ Դաւիթ ով է, և Յեսսէի
որդին ով է։ այս օրերս իրենց տէրե-
րուն երեսէն փախչող ծառաներ շատ
11 ցած են։ Ես իմ հացս, ջուրս և ա-
րբակաուր ընդունելուս համար մորթած
անասուններս առնեմ՝ և ո՞չխէրի մարդ-
ոց տամ, որոց ուսած բլլալը չեմ գի-
12 տեր։ Եւ Դաւիթ մանչերն իրենց ճամ-
բան դարձան, և գացին այս բոլոր խօս-
13 քերն անոր պատմեցին։ Եւ Դաւիթ իւր
մարդոց բսաւ, Ամէն մարդ իւր սուրը
մէջքը կապէ։ և ամէն մարդ իւր սուրը
մէջքը կապեց, և Դաւիթ ալ իւր սուրը
մէջքը կապեց։ և Դաւիթ հետևէն իրր
չորս հարիւր մարդ եղաւ, և երկու հա-
րիւր մարդ հոն կարասներուն քով
մնացին։
14 Եւ ծառաներուն մէկը Նաբաղի կնոջ
Աբիգեայի խնացուց և բսաւ, Ահա
Դաւիթ անապատէն մարդիկ զրկեց
մեր տէրն օրհնելու. իսկ անիկա *խրս-
15 ոփ. խօսեցաւ անոնց հետ՝ բայց այն
մարդիկը մեզի հետ շատ ազնիկ եղան,
և մեզի վնաս մը չտուին։ և դաշտի
մէջ որչափ ատեն որ անոնց հետ պար-
տեցանք, մենք բան մը չկորսուեցաւ։
16 Անոնք մեզի պարիսպ էին՝ թէ գիշերը
և թէ ցորեկը՝ որչափ ատեն որ անոնց
17 քով ոչխարները կ'արածէինք։ Եւ հիմա
գիտցիր և տես՝ թէ ինչ պիտի ընես,
քանզի մեր տէրոջը վրայ և անոր բոլոր
տան վրայ չարիք հասած է. քանզի ա-
նիկա այնպէս չար մարդ է, որ անոր
հետ մարդ չկրնար խօսիլ։
18 Եւ Աբիգեա շուտով երկու հարիւր
հաց, և երկու սրիկ գինի, և հինգ †ե-

*Նբէր. անոնց վրայ յարձակեցաւ։
†Նբէր. եզած



ված ոչխար, և հինգ գրիւ բտերած
ցորեն, հարիւր ողկոյզ չամիչ, և երկու
հարիւր շարոց թուզ առաւ և դանոնք
19 էշերու վրայ դրաւ։ Եւ իր ծառաներն
ըսաւ, Առջև անցէք, ահա ես
ձեր ետևէն կու գամ. բայց իր երկա-
20 նը Նաբաղի չիմացուց։ Եւ երբ կինր
իշու վրայ հեծած՝ լեռան գոգ ուղղն
կ'իջնէր, ահա Դաւիթ և անոր մարդ-
կին անոր առջևը կ'իջնէին. և անիկա
21 անոնց հանդիպեցաւ։ Եւ Դաւիթ բսած
էր, Ուրեմն անապատին մէջ այս մար-
դուն բոլոր ունեցած բաներէն պատրաստ
տեղ պահած եմ, և անոր բոլոր ու-
նեցածէն բան մը չկորաւ եղաւ. և ա-
նիկա ինծի տեղի թեան վարձքն կը-
22 տեսնէ՝ ըրածին պէս ուրիշներն ալ
չընեմ՝ եթէ մինչև վաղ առաւոտ անոր մար-
դերէն *երկրի մարդ* մը ողջ թողում։
23 Եւ Աբիգեա Դաւիթ տեսածին պէս
շուտով իշուն վրայէն իջաւ, և Դաւիթ
առջև երեսի վրայ երկնցաւ՝ մինչև դէ-
24 պին երկրպագութիւն ըրաւ։ Եւ անոր
ոտքերնին և բսաւ, Ով տէր իմ, յան-
ցանքն իմ վրաս բլլայ. բայց հրաման
տուր՝ որ քու ապահինդ քու առջևդ
խօսի, և քու ապահոդդ խօսքերը մը-
25 տիկ ըրէ։ Կ'ապաչեմ՝ որ իմ տէրս այս
չար մարդուն Նաբաղի համար իր սրբ-
ութեան մէջ ըշտ չդնէ. քանզի իր ա-
նուն պէս ինքն ալ պիտակ է. անոր
անունը †Նաբաղ է, և անզգամութիւնն
անոր հետն է. բայց ես քու ապահոդդ
26 իմ տիրոջս զրկած մանչերը չտեսայ։ Եւ
հիմա, ով տէր իմ, Տէրը կենդանի է
և քու հոգիդ ալ կենդանի է, որ Տէրը
քեզ չթողուց որ արիւն մտնես, և քու
վրէժդ քու ձեռքովդ առնես. և հիմա
քու թշնամիներդ և իմ տիրոջս գէ-
շութիւն ուզողները Նաբաղի պէս բլ-
27 լան։ Եւ հիմա այս բնծան որ քու ա-
պահոդդ իմ տիրոջս բերաւ, թող իմ
տիրոջս հետևէն եկող մանչերուն տր-

*Նբէր. պատի վրայ միզող
†Այլ՝ անզգամ։

28 ուի։ Կ'ապաչեմ՝ քու ապահոդդ յան-
ցանքը ներէ. քանզի Տէրը իմ տիրոջս
անպատճառ հաստատ տուն պիտի շի-
նէ, քանզի իմ տէրս Տէրոջը պատե-
րազմները պատերազմեցաւ, և քու ա-
րերուդ մէջ քու վրադ չարութիւն մը
29 չգտնուեցաւ։ Բայց թէ և քեզ հալածե-
լու՝ և քու հոգիդ փնտռելու համար
մարդ մը ոտք եղած է, իմ տիրոջս հոգին
քու Տէր Աստուծոդ առջև՝ կենաց ծրա-
րին մէջ ծրարած պիտի բլլայ. բայց Ա-
նիկա քու թշնամիներուդ հոգիները պար-
սատակի մէջէն էշէ-ի-ի պիտի նետէ։
30 Եւ երբ Տէրը բոլոր քեզի համար բսած
ազիկութիւններն իմ տիրոջս բնէ, և քեզ
31 Իսրայէլի վրայ թագաւոր դնէ, Ասիկա
քեզի գայթակղութիւն մը և իմ տի-
րոջս սրտին խիղճ մը չբլլայ, թէ առանց
պատճառի արիւն թափեցիր, կամ թէ
իմ տէրս իր վրէժն ինք առաւ. և երբ
Տէրը իմ տիրոջս բարութիւն ընէ, քու
ապահինդ մտքդ բերէ։
32 Եւ Դաւիթ բսաւ Աբիգեայի, Օրհնեալ
բլլայ Իսրայէլի Տէր Աստուածը, որ այս
33 օր քեզ զրկեց զիս դիմաւորելու. Եւ
քու խոհեմութիւնդ օրհնեալ բլլայ, և
դուն ալ օրհնեալ բլլաս, որ այսօր զիս
արգելեցիր որ արիւն չմտնեմ, և իմ
34 վրէժս ձեռքովս չառնեմ. Բայց Իսրա-
յէլի Տէր Աստուածը՝ որ զիս արգելեց
քեզի չարութիւն ընելէ, կենդանի է,
եթէ դուն չուտով չգայիր և առջևս
չելլէիր, մինչև վաղ առաւոտ Նաբաղի
35 մէկ երկի մարդը չէր մնար։ Եւ Դաւիթ
անոր բերած ընծաներէն ձեռքէն առաւ,
և անոր բսաւ, Խաղաղութեամբ տու-
նդ գնա. ահա խօսքդ մտիկ ըրի և
քու *խնդիրդ ընդունեցի։
36 Եւ Աբիգեա Նաբաղի գնաց, և ահա
անիկա իր տան մէջ թագաւորական
կոչունքի պես կոչունք կ'ընէր. և Նա-
բաղի սիրտը զուարթացած էր, և ա-
նիկա շատ գինովցած էր. ուստի կինը
մինչև առաւօտեան լոյսը փոքր կամ
37 մեծ բան մը չպատմեց անոր։ Եւ ա-

*Նբէր. երեսդ։

առաւտուն երբ նայեցաւ գինիին գթասացաւ, անոր ինչ որ կիներն այս բանէրն անոր պատահեց. և անոր սիրտը իր ներսի գին մեռաւ, և քարի պէս
38 եղաւ։ Եւ իրք տասն օր անցնելէն Նաբալ Տէրը զարկաւ զինքը, որ մեռաւ։
39 Եւ Դաւիթ Նաբալի մեռնիլը լսելով՝ ըսաւ, Օրհնեալ է Տէրը, որ Նաբալի ձեռքին նախատանացս դատաստանն ինձ դատեց, և իւր ծառան չխնայեցնել ետ պահեց. և Տէրը Նաբալի չարութիւնն անոր գլխովը դարձուց։ Եւ Դաւիթ հասը զրկեց՝ և Աբիգեայի խօսեցաւ, որ զանիկա իրեն կին առնէ։
40 Եւ Դաւիթ ծառաները Կարմէլացի գացին Աբիգեայի, և անոր հետ խօսեցան և ըսին, Դաւիթ մեզ զքեզ զրկեց, որ
41 քեզ իրեն կին առնէ։ Եւ անիկա երես և երեսի վրայ մինչև գետին երկրպագութիւն բրաւ, և ըսաւ, Ահա քու աղախինդ իմ ոտքերս ծառաներուն ոտքերը լուանալու համար սպասուհութիւն ընդ
42 ինդ եղիր։ Եւ Աբիգեա չուտով ոտք եղաւ, և իրեն սպասաւորուհութիւն ընդ հինգ աղջկանց հետ էշը հեծաւ, և Դաւիթի պատգամաւորներուն հետևեցաւ գնաց, և անոր կին եղաւ։
43 Եւ Դաւիթ Յեզրաելէլ ալ Աբինոամ առաւ, և ասոնց երկուքն ալ անոր
44 կիներ եղան։ Բայց Սաուղ իր Մեղբազ աղջիկը՝ որ Դաւիթի կինն էր՝ Գաղղիմացի Լայիսի որդւոյն Փալտիէլի տուաւ։

## Գլ. ԻԶ

1 Եւ Զիփացիք Գաբաա գացին Սաուղի, և ըսին, Ահա Դաւիթ Եսիմոնէ դիմաց
2 Նգիելայի բլուրն վրայ պահուած է։ Եւ Սաուղ երաւ. Զիփի անապատն իջաւ Իսրայէլի երիք հազար ընտրուած մարդերով, որ Զիփի անապատին մէջ զԴաւիթ փնտռէ։ Եւ Սաուղ Եսիմոնի դիմաց Նգիելայի բլուրի մօտերը բանակեցաւ։ Դաւիթ ալ անապատին
3 մէջ նստած էր. և երբ տեսաւ որ Սաուղ անոր ետևէն անապատը կու գար,
4 Դաւիթ լրտեսներ զրկեց, և Սաուղի ասդին գալն իմացաւ։
5 Եւ Դաւիթ ելաւ և Սաուղի բանակ գնաց տեղը տեսաւ. և Դաւիթ Սաուղ և անոր զօրավարին Ներներան Աբեններուն պառկած տեղը տեսաւ։ բայց Սաուղ կառքերուն մէջտեղ պառկած էր, և ժողովուրդն
6 անոր բոլորտիքը բանակած էին։ Եւ Դաւիթ պատասխան տուաւ և Քեռասդի Աբիսեփէի և Յովաբի եղբօր Շերուհան Աբեսային բսաւ, Ո՞վ ինձի հետ Սաուղի քով բանակը կիջնէ։ Եւ Աբեսա բսաւ, Ես քեզի հետ կիջնեմ։
7 Եւ Դաւիթ Աբեսայի հետ գիշերով ժողովուրդին մէջ մտաւ. և ահա Սաուղ կառքերուն մէջտեղ պառկած կր
8 քնանար. անոր նիզակը գլխուն քով գետնին ցցուած էր, և Աբեններ և ժողովուրդն անոր բոլորտիքը պառկեր էին։ Եւ Աբեսա Դաւիթի բսաւ, Այսօր քու ձեռքդ մատնեց. և հիմա թող տար որ նիզակով մէկ անգամն գետին *ցցեմ զանիկա, և չկրկնեմ հարուածը։
9 Բայց Դաւիթ Աբեսայի բսաւ, Զանիկա մի սպաններ. քանի՞ Տէրոջը օծեալն ձի կընայ ձեռք երկնցընել և
10 անմեղ ըլլալ։ Եւ Դաւիթ բսաւ, Տէրը կենդանի է որ զանիկա Տէրը պիտի զարնէ, կամ անոր աւուրը պիտի գայ և մեռնի, կամ թէ պատերազմի մէջ
11 պիտի մտնէ և մեռնի։ Սաուղ չընէ որ Տէրոջը օծեալն դէմ ձեռք երկնցընեմ. միայն թէ հիմա անոր գլխուն քովի նիզակը և ջուրի կուժն առ. և
12 երթանք։ Եւ Դաւիթ Սաուղի գլխուն քովէն նիզակը և ջուրի կուժն առաւ և գացին. և աեսնող չկար, խնդացող չկար և արթնցող չկար. քանզի ամէնքը կր քնանային, քանզի Տէրոջը կողմանէ անոնց վրայ խորունկ քուն բնկած էր։
13 Եւ Դաւիթ անդին կողմն անցաւ, և լեռան գլուխն վրայ հեռուանց կայնեցաւ, և անոց մէջ մեծ միջոց կար։

*Եբր. զարնեմ



14 Եւ Դաւիթ ժողովուրդին և Ներներան Աբեններուն կանչելով բսաւ, Ով Աբենները, պատասխան չե՞ս տար. և Աբենները պատասխան տուաւ և բսաւ,
15 Դուն ո՞վ ես որ Թագաւորին կը կանչես։ Եւ Դաւիթ Աբենները բսաւ, Դուն այր չե՞ս, և Իսրայէլի մէջ քեզի պէս ո՞վ կայ. և ինչո՞ւ համար քու տիրոջդ Թագաւորին պահապանութիւն չըրիր. քանզի ժողովուրդէն մէկը քու տիրդ Թագաւորին պահապանութիւն չըրիր։
16 Թագաւորը մեռցընելու եկաւ. և այդ քու բրած բանդ ապէկ չէ. կենդանի է Տէրը՝ որ դուք մեռնելու արժանի եք, քանզի Տէրոջը օծեալն ձեր տիրոջը պահպանութիւն չըրիք. և հիմա նայէ, Թագաւորին նիզակը և անոր գլխուն
17 քով ջուրի կուժին ուր են։ Անտանի Սաուղ Դաւիթի ձայնը ճանչցաւ և բսաւ, Որդեակ իմ Դաւիթ, այդ քու ձայնդ է. և Դաւիթ բսաւ, Ով Տէրս իմ
18 Թագաւոր, իմ ձայնս է. Եւ բսաւ, իմ տիրս ինչո՞ւ համար այդպէս իր ծառային հետևէն ինկած է. քանզի ի՞նչ բրի, և ձեռքս մէջ ի՞նչ չարութիւն
19 կայ։ Եւ հիմա իմ տիրս Թագաւորն իր ծառային խօսքը Թող մտիկ բնէ. եթէ Տէրը քեզ իմ վրաս ոտք հանեց, Թող պոհ մը *ընծան. բայց եթէ մարդոց որդիք ատ հանդիցէ, անոնք Տէրոջը առջև անիծեալ ըլլան, քանզի զիս այսօր վըռնտեցին որ Տէրոջը ժառանգութեան հետ չմիանամ, և ՚ըսէ
20 բսին, Գնա օտար աստուածներու ծառայութիւն բրէ։ Եւ հիմա Տէրոջը առջև իմ արիւնս գետին չիյնայ. քանզի Իսրայէլի Թագաւորը լու մը վիճաւելու եկաւ, ինչպէս որ մարդ մը լեռներու
21 վրայ կաքաւ մը հետևէ կ'իյնայ։ Եւ Սաուղ բսաւ, Մեղք գործեցի. դարձիր, որդեակ իմ Դաւիթ. իմ հոգիս այսօր քու աչքերուդ պատուական եղեւնաւուն համար՝ փեղի այլ ևս չարութիւն պիտի չընեմ. ահա յիմարութիւն բրի և մեծապէս սխալեցայ։
22 Եւ Դաւիթ պատասխան տուաւ և բսաւ, Ահա Թագաւորին նիզակը. մանչերուն մէկը Թող գայ և զանիկա առ-
23 նէ։ Եւ Տէրը ամէն մարդու անոր արդարութեան և հաւատարմութեան փոխարէնն հատուցանէ. քանզի Տէրը քեզ այսօր իմ ձեռքս տուաւ, բայց ես Տէրոջը օծեալն ձեռք երկընցընել չու-
24 զեցայ։ Եւ ահա ինչպէս որ քու հոգիդ այսօր իմ աչքերուս պատուական եղաւ, իմ հոգիս ալ Տէրոջը առջև այնպէս պատուական երևնայ, և զիս
25 ամէն նեղութենէ ազատէ։ Եւ Սաուղ Դաւիթի բսաւ, Օրհնեալ իմ Դաւիթ, օրհնեալ բլլաս. *քու գործերուդ մէջ յաղթող թիւն պիտի գտնես, ՚ոտն յաղթող պիտի բլլաս։ Եւ Դաւիթ իր ճամբան գնաց, և Սաուղ իր տեղը դարձաւ։

## Գլ. ԻԷ

1 Եւ Դաւիթ իր սրտին մէջ բսաւ, Վերջապէս օր մը Սաուղի ձեռքով պիտի կորսուիմ. ինծի փոյթ ալ երկիրը փախչելն ալ ինծի չկայ, որ Սաուղ ինծի յուսը կտրէ, և զիս այլ ևս Իսրայէլի բոլոր սահմաններուն մէջ չզննուէ. այսպէս անոր ձեռքէն կ'ա-
2 զատիմ։ Եւ Դաւիթ իր հետ եղող վեց հարիւր մարդով, և Գեթի Թագաւորին Մաոքի որդւոյն Անքուսի քով գնաց։
3 Եւ Դաւիթ ինք և անոր մարդիկը, իւրաքանչիւր մարդ իր տնով, Դաւիթ ալ իր երկու կանանց՝ Յեզրաելացի Աքինոամի և Կարմէլացի Նաբալի կնոջ Աբիգեայի հետ Անքուսի քով Գեթի
4 մէջ բնակեցան։ Եւ երբ Սաուղի խնդացուցին թէ Դաւիթ Գեթ փախած է, այլ ևս զանիկա չփնտռեց։
5 Եւ Դաւիթ Անքուսի բսաւ, Կ'ազաչեմ, եթէ քու առջևդ շնորհք գտայ, գիւղախրճիթներէն մէկուն մէջ ինծի տեղ տուէք որ հոն նստիմ. քանզի քու ծառայդ ինչո՞ւ համար քեզի հետ Թագաւորանիստ քաղաքին մէջ նստի։

*Եբր. հատու բսայ.

*Եբր. բնելով պիտի բնես,

6 Եւ այն օրը Անքուս Սիկիլակը առաւ
անոր. այս պատճառով Սիկիլակ մինչև
այս օրս Յուդայի Թագաւորներուն Ե-
7 դեա՛ Եւ Փղշտացւոց երկրին մէջ Դաւ-
թի նասած օրերուն Թիւը մէկ տարի
և չորս ամիս եղաւ։
8 Եւ Դաւիթ և անոր մարդիկը եկան,
և Գեսատացւոց վրայ յարձակեցան. քան-
դի անոնք չառնոյն *ի վեր այն երկրին
մէջ կը բնակէին, Սուրէ մինչև Եգիպ-
9 տոսի երկիրը։ Եւ Դաւիթ այն երկիրը
զարկաւ, և ամենևին երկի մարդ կամ
ինկի մարդ ողջ չթողուց. և ոչխարներն
և արջառները և էշերը և ուղտերը և
հանդերձներն առաւ, և գարձաւ Ան-
10 քուսի եկաւ։ Եւ Անքուս բսաւ, Այսօր
ո՞ր կողմը յարձակեցաք. և Դաւիթ ը-
սաւ, Յուդայի հարաւային կողմը, Յե-
րահմեացւոց հարաւային կողմը, և Կե-
11 նեցւոց հարաւային կողմը։ Եւ Դաւիթ
երկի կամ ինկի մարդ մը ողջ չթողուց,
որ Գէթ ը՛ր բերէ. քանզի ըսաւ, Գուցէ մեզի համար պատմեն և բանն
Թէ Դաւիթ *այսպէս ըրաւ։ Եւ անոր
սովորութիւնն այսպէս էր, քանի որ
12 Փղշտացւոց երկրին մէջ կը նստէր։ Եւ
Անքուս Դաւիթի հաւատալով՝ ըսաւ,
Այս հարը՛ իր ժողովուրդն իսրայէ-
լի քով ինքզինք չատ ֆառելի ընելուն
համար, ինձի յաւիտեան ծառայ պիտի
ըլայ։

## Գլ. ԻՀ

1 Եւ այն օրերը Փղշտացիք իրենց զօր
քը ժողվեցին, որ կռիւն Իսրայէլի հետ
պատերազմին. և Անքուս Դաւիթի ը-
սաւ, Գիտցած ըլլաս որ դուն քու մար-
դերովդ իմ հետս բանակը պիտի ելլաս։
2 Եւ Դաւիթ Անքուսի բսաւ, Ուրիմն ծա-
ռայիդ ընելու գործը պիտի տեսնես.
և Անքուս Դաւիթի բսաւ, Անոր համար
քեզ միշտ ինծի անձնապահ պիտի ընեմ։
3 Իսկ Սամուէլ մեռած էր. և բոլոր
Իսրայէլ անոր համար սուգ բրած էին,
և զանիկա իր քաղաքը՝ Ռամային մէջ
թաղած էին. Սաուղ ալ վհուկները
և նշանագիտանները երկրէն վերցուցած
4 էր։ Եւ Փղշտացիք ժողվուեցան և ե-
կան Սունամի մէջ բանակեցան. Սաուղ
ալ բոլոր Իսրայէլը ժողվեց, և Գել-
5 բուէի մէջ բանակեցան։ Եւ Սաուղ Փը-
ղշտացւոց բանակը տեսնելով՝ վախ-
ցաւ, և սիրտը չատ դողաց։ Եւ Սա-
ուղ Տէրոջը հարցուց, բայց Տէրը Թէ
երազներով՝ Թէ Ուրիմով և Թէ մար-
գարէներով անոր պատասխան չտուաւ։
7 Անտեն Սաուղ իր ծառաներուն ը-
սաւ, Ինծի վհուկ կին մը փնտռեցէ՛ք
որ երթամ անոր հարցնեմ։ Եւ ծա-
ռաներն անոր ըսին, Ահա Ենգաղլի մէջ
վհուկ կին մը կայ։
8 Եւ Սաուղ իր հանդերձները փոխե-
լով՝ ուրիշ հանդերձներ հագաւ, և ի-
րեն հետ եղող երկու մարդով գնաց,
և գիշերով այն կնոջ քով հասան։ Եւ
Սաուղ ըսաւ, Շնորհք ըրի, ինծի վհկի
ոգւով գիտութիւնն ըրի, և քեզի ը-
9 սելու *պէս ինծի վիր հանէ։ Եւ կինն
անոր բսաւ, Ահա դուն Սաուղի ըրած
բանը գիտես, Թէ ինչպես անիկա վը-
հուկները և նշանագիտանները երկրէն
բնաջինջ ըրաւ. ուրեմն ինչո՞ զիս ուռ-
ցընելու համար իմ անձիս որոգայթ կը
10 պատրաստես։ Եւ Սաուղ Տէրոջմով
երդում ըրաւ անոր և բսաւ, Տէրը կեն-
դանի է որ այս բանին քեզի վնաս մը
11 պիտի չպատահի։ Անտեն կինն բսաւ,
Քեզի ո՞վ վիր հանեմ. և անիկա բսաւ,
Սամուէլ հանի ինծի։
12 Եւ կինը զՍամուէլ տեսնելով՝ մեծ
ձայնով պոռաց. և կինը Սաուղի խօ-
սեցաւ և բսաւ, ինչո՞ւ զիս խաբեցիր.
13 քանզի դուն Սաուղն ես։ Եւ թագա-
ւորն անոր բսաւ, Մի վախնար. բայց
ի՞նչ տեսար։ Եւ կինը Սաուղի բսաւ,
Գետնէն ելլող աստուածներ տեսայ։
14 Եւ Սաուղ անոր բսաւ, Անոր կերպա-

*Կամ Գաբեզացւոց ‡Եբր. գարշահոտ
†Կամ այսպէս բրաւ, ան անոր սովորու-
թիւնը սասնկ պիտի ըլայ՝ քանի որ
Փղշտացւոց երկրին մէջ կը նստի։



րանքն ի՞նչպէս է։ Եւ կինն բսաւ, Ա-
ստուած մը կ'ելլէ, և մերկապատ
մը հագած է։ Եւ Սաուղ հասկըցաւ
որ անիկա Սամուէլն էր. և երեսը գե-
տին ծռեցուց՝ ուզ երկրպագու Թիւն ը-
15 բաւ։ Եւ Սամուէլ բսաւ Սաուղի, Ին-
չո՞ւ համար ինծի նեղութիւն տուիր և
զիս վեր հանեցիր։ Եւ Սաուղ բսաւ,
Ես մեծ նեղութեան մէջ եմ, քանզի
Փղշտացիք ինծի հետ պատերազմ կ'ը-
նեն, և Աստուած ինձ հեռացաւ, և
ինծի Թէ մարգարէներու միջոցով և Թէ
երազներով պատասխան չտուաւ. անոր
համար քեզ կանչեցի, որ ինծի իմացը-
16 նես թէ ինչ ընեմ։ Եւ Սամուէլ բսաւ,
Ինչո՞ւ համար ինծի կը հարցընես, հի-
մա որ Տէրը քենէ հեռացաւ և քեզի
17 թշնամի եղաւ։ Եւ Տէրը իմ *ըրնծա-
պատգամածին պէս ընբսաւ, և Տէրը քու
ձեռքէդ Թագաւորութիւնը պատառեց,
և քաղիա քու ընկերիդ Դաւիթ տը-
18 ուաւ։ Քանզի դուն Տէրոջը խօսքը մըտ-
իկ չըրիր, և Ամաղկի վրայ անոր
սաստիկ բարկութիւնն *ի գործ չդրիր,
անոր համար այսօր Տէրը քեզի այս
19 բանը բրաւ։ Եւ Տէրը քեզի հետ Իս-
րայէլն ալ Փղշտացւոց ձեռքը պիտի
մատնէ և վաղը դուն և քու որդիքդ
իմ քովս պիտի ըլլաք. և Տէրը Իսրա-
յէլի բանակն ալ Փղշտացւոց ձեռքը
պիտի մատնէ։
20 Անտեն Սաուղ չտաւել ինկաւ և
գետնի վրայ փռուեցաւ, և Սամուէլի
խօսքէն չատ վախցաւ, և ոՀԵՒ վը-
բան այժ չկար, քանզի բոլոր օրը և
21 բոլոր գիշերը հաց կերած չէր։ Եւ կինը
Սաուղի քով գնաց, և անոր չա-
փազանց տագնապը տեսնելով անոր ը-
սաւ, Ահա քու ապախնդ քու խօս-
քերդ մտիկ բրաւ. և իմ հոգիս ձեռ-
քիս մէջ դնելով՝ ինծի ըսած խօսքե-
22 րուդ հնազանդութիւն ըրի։ Եւ հիմա
Ի՝ադաչիմ՝ դուն ալ քու ապախնդդ
խօսքը մտիկ ըրէ, և քու առջևդ պա-

*Եբր. ձեռքովս
†Եբր. իրեն համար բրաւ,

տառ մը հաց դնեմ, և կեր որ այժ
առնես, քանզի ճամբայ պիտի երթաս։
23 Հայց անիկա չուզեց, և Զեմ ուտեր՝
ըսաւ. սակայն երբ անոր ծառաները և
կինն ալ զանիկա բանագտացուցին, ա-
նոնց խօսքը մտիկ ըրաւ. և գետնէն
24 ելլելով անկողնին վրայ նստաւ։ Եւ կի-
նը տանը մէջ անասած որթ մը
ունէր. չտաւել զանիկա մորթեց, և
ալիւր առաւ շաղեց, և անով բաղարջ
25 հացեր եփեց։ Եւ Սաուղի առջև և ա-
նոր ծառաներուն առջև դրաւ, և կե-
բան, և երան նոյն գիշերը գացին։

## Գլ. ԻԹ

1 Եւ Փղշտացիք իրենց բոլոր բանակներն
Աֆիկի մէջ ժողվեցին. և Իսրայէլացիք
Յեզրաելի մէջ եղող ադբիւրին քով բա-
2 նակեցան։ Եւ Փղշտացւոց նախարար-
ներն էրէրց հարիւրավորներով և հա-
զարավորներով կ'անցնէին. և Դաւիթ
և անոր մարդիկն անոնց հետևէն Ան-
3 քուսի հետ կ'անցնէին։ Եւ Փղշտացւոց
իշխաններն ըսին, Այս Եբրայեցիներն
ի՞նչ պիտի ըլլան։ Եւ Անքուս Փղշտա-
ցւոց իշխաններուն ըսաւ, Աչիա Իս-
րայէլի Թագաւորին Սաուղի ծառան
Դաւիթ չէ՞, որ այսչափ օրերէ կամ
մանաւանդ այսչափ տարիներէ *ի վեր
իմ քովս է. և ինձի ինկած օրէն մինչև
այս օրս անոր վրայ ամենևին չգտայ
4 մը չգտայ։ Եւ Փղշտացւոց իշխաններն
անոր սրդռոցան, և Փղշտացւոց իշ-
խաններն անոր ըսին, Այդ մարդը նա
դրկէ, և երթայ իր տեղը, ուր որ զա-
նիկա դրիր. և մեր հետ պատերազմի
մէջ չիջնայ, չըլլայ որ պատերազմին մէջ
մեզի թշնամի Թիւն ընէ. քանզի անի-
կա ինչո՞վ պիտի հաշտուի իր տիրոջը
հետ, մե՞ր ապագլէն այս մարդոց գլուխ-
5 ներով։ Աչիա այն Դաւիթը չէ՞, որու
համար կանայք պար բռնելով և պա-
տասխան տալով կ'ըսէին,

Սաուղ իր հազարաւորները զարկաւ,
Եւ Դաւիթ իր բիւրաւորները։

6 Եւ Անքուս կանչեց զԴաւիթ, և անոր

բաւ, Տէրը կենդանի է որ դուն ուրիշ մարդ ես, և իմ հետս բանակին մէջ մնալով և երկրի իմ ամբիս ապիկ կ'երեւնայ. քանզի ինձի եկած օրէդ մինչև այս օրս քու վրադ չարութիւն մը չգտայ. բայց դուն նախաբարեւութեան
7 այքին ապիկ չես երեւնար. Ուստի հիմա գնա, և խաղաղութեամբ գնա, և Փղշտացւոց նախաբարեւութեան այքին
8 գէշ երեւցածը մի ըներ։ Եւ Դաւիթ Անգամաի բաւ, Բայց ես ի՞նչ գրի, և քու առջեւդ կացնած օրէս մինչև այս օրս ծառայիդ վրայ ի՞նչ գտար, որ ես չերթամ և իմ Տիրոջս թագաւորին թշնամիներուն հետ պատերազմ չընեմ։
9 Եւ Անքուս պատասխան առաւ և բաւ Դաւիթի, Գիտեմ որ դուն իմ աչքերուս Աստուծոյ հրեշտակին պէս ապիկ կ'երեւնաս. բայց Փղշտացւոց իշխաններն բսին ինձ՝ Անիկա մեր հետ պա-
10 տերազմի չելլէ։ Ուստի առաւօտուն կանուխ երթը դուն և քու տիրոջդ ծառաները որ քու հետդ եկան, առաւօտուն կանուխ երթ և լուսցածին պէս
11 գացէք։ Եւ Դաւիթ ինք և անոր մարդիկն առաւօտուն կանուխ եղան որ երթան, և Փղշտացւոց երկիրը գացին. իսկ Փղշտացիք Ցեզրաէել եկան։

## Գլ. Լ.

1 Ուր երբ Դաւիթ և անոր մարդիկը երրորդ օրը Սիկլակ հասան, Ամաղեկացիք հարաւային երկրին և Սիկլակի վրայ յարձակած էին. և Սիկլակը զարնելով զանիկա կրակով այրած
2 էին. Եւ հոն եղած կանայք գերի առած էին. փոքրէն մինչև մեծը մարդ մը չէին մեռցուցած, այլ գերեվարելով հետ տանելով՝ իրենց ճամբան գացած
3 էին։ Եւ երբ Դաւիթ և անոր մարդիկը քաղաքը հասան, ահա անիկա կրակով այրուած էր. և անոնց կանայք, ազգք և աղջիկներ գերի առնուած
4 էին։ Ուստի Դաւիթ և անոր հետ եղող ժողովուրդն իրենց ձայնը վերցուցին և լացին, մինչև որ անոնց վրայ այ չմնաց լալու։ Եւ Դաւիթի երկու կնադ՝ Ցեզրաելացի Աքինոամ և Կարմելացի Նաբալի կինն Աբիգեա ևս գերի առնուած էին։ Եւ Դաւիթ մեծ ծանգ-
5 նադի մէջ էր, քանզի ժողովուրդը զանիկա քարկոծել կ'ուզէր. վասն որ բոլոր ժողովուրդին ամէն մարդու սիրտը կը կսկծար իր որդւոց և աղջկանց համար. բայց Դաւիթ իր Տէր Աստուծով
7 զօրացաւ։ Եւ Դաւիթ Աբիմելէքի որդւոյն Աբիաթար քահանային բաւ, Եփուդը մօտեցար ինծի. և Աբիաթար
8 եփուդը մօտեցուց։ Եւ Դաւիթ Տէրոջը հարցուց և բաւ, Այս գունդին հետևելէն կրնա՞մ. անոնց կը հասնի՞մ. և Տէրը բաւ անոր, Հետևէն ընկիր, քանզի անշուշտ պիտի հասնիս և ամէն
9 բան պիտի ազատես։ Եւ Դաւիթ ինք և անոր հետ եղող վեց հարիւր մարդիկ գացին, և մինչև Բսոր հեղեղատը եկան. և հոս մնա-
10 ցողներն հոն կեցնելացան։ Եւ Դաւիթ չորս հարիւր մարդով ընթացաւ հալածեց. (ասկոյն երկու հարիւր մարդիկ չսա յոգնած լլլալով Բսոր հեղեղատին ա-
11 դիւ կոզմը մնացին, և չկրցան անցնիլ.) և գաշտին մէջ եգիպտացի մարդ մը գտան, և զանիկա Դաւիթի բերին. և անոր հաց սաւին, և կերաւ, և անոր
12 չուր խմցուցին. Եւ անոր քէկ մը չոր թուզ և երկու ողկոյզ չամիչ սաւին, որ կերաւ և ոգին վրան եկաւ. քանզի երեք օր և երեք գիշեր հաց չէր կերած
13 և չուր չէր խմած։ Եւ Դաւիթ անոր բաւ, Դուն որո՞ւ մարդն ես, և ուսո՞ւմ ես։ Եւ անիկա բաւ, Ես եգիպտացի պատանի եմ՝ Ամաղեկացի մարդու մը ծառայ. և հիմա երեք օր է որ Տէրս զիս հոս թողուց քանզի հի-
14 ւանդ եմ։ Մենք Քերեթի հարաւային կողմը՝ Յուդայի կողմերը և Քաղեբի հարաւային կողմերն յարձակեցանք, և Սիկլակը կրակով այրեցինք։
15 Եւ Աբիմելէք կրակով այրեցինք։ Եւ Դաւիթ անոր բաւ, Զիս այն գունդին կրնա՞ս իջեցընել։ Եւ անիկա բաւ, Դուն

*Եբր. և



ինծի Աստուծով երդում ըրէ որ զիս պիտի չմեռցընես, և զիս իմ տիրոջս ձեռքը պիտի չտաս, Ես ալ քեզ այն գունդին կ'իջեցընեմ։
16 Եւ զանիկա հոն իջեցուց, և ահա անոնք բոլոր գետնին երեսին վրայ ցրուած էին, կ'ուտէին և կը խմէին, և փղշտացւոց երկրէն և Յուդայի երկրէն առած այն բոլոր մեծ աւարին համար
17 ուրախութիւն կ'ընէին։ Եւ Դաւիթ զարշտուկն մինչև հետևեալ օրուան իրիկունը զանոնք զարկաւ, և անոնցմէ մարդ չազատեցաւ, բայց միայն չորս հարիւր երիտասարդ որ ուղտերու վր-
18 բայ հեծած և փախան։ Եւ Դաւիթ Ամաղեկացոց առած բոլոր բաներն ազատեց. և Դաւիթ իր երկու կնադ-
19 ալ ազատեց։ Եւ իրենց մէկ բանը պակաս չէր փոքրէն մինչև մեծը, թէ աղջիկ, և թէ աւար՝ ինչ որ անոնք առած տարած էին. Դաւիթ ա-
20 մէնն ալ հետ բերաւ։ Եւ Դաւիթ բոլոր ոչխարները և արջառները առաւ, և զանոնք էրէնց հօտերուն առջևէն կը տանէին, և կ'ըսէին, Դաւիթի աւարն այս է։
21 Եւ Դաւիթ այն երկու հարիւր մարդոց եկաւ, որ չատ յոգնած լլլալով չէին կրցած Դաւիթի հետևէն երթալ. և զանոնք Բսոր հեղեղատը նստեցուցած էր. և անոնք ելան դիմաւորելու. և Դաւիթի երբ ժողովրդին մօտեցաւ, հետ եղող ժողովրդին ալ հարցուցին.
22 անոնց ողջութիւնը հարցուց։ Եւ Դաւիթի հետ գացող մարդկերէն բոլոր չար և անպիտան մարդիկ պատասխան տուին և բսին, Որովհետև ասոնք մեզ հետ չելան, մենք ալ անոնց մեր ապառած աւարէն չենք տար. ամէն մարդ միայն իր կինը և զաւակն առնէ և երթայ։
23 Բայց Դաւիթ ըսաւ, Ա՛յդպէս մի ընէք, եղբայրներս, քանզի Տէրը մեզի տուաւ ասիկա, և ինք մեզ պահեց և մեր վրայ եկող գունդը մեր ձեռքը
24 մատնեց։ Եւ այս բանիս մէջ ո՞վ ձեզի մեկ կ'ընէ. քանզի կռուողներուն բաժինը պատերազմի գացողներուն բաժինին հետ հաւասար պիտի բլլայ. հաւասարապես պիտի բաժ-
25 նեն։ Եւ այն օրէն ի վեր տակաւին իսրայէլի մէջ կանոն և օրէնք դրաւ, մ-
չը մինչև այս օրս։
26 Եւ Դաւիթ Սիկլակ եկաւ, և այն աւարէն Յուդայի ծերոց՝ իր բարեկամներուն դրկեց՝ ըսելով, Ահա ձեզի Տէրոջը թշնամիներուն աւարէն *ընծայ
27 մը գ[illegible]. Ա.յսինքն՝ Բեթէլի մէջ եղողներուն, Հարաւային Ռամոթի մէջ և-
28 ղողներուն, Յաթիրի մէջ եղողներուն, Արոերի մէջ եղողներուն, Սեփամոթի մէջ եղողներուն, Եթթեմոայի մէջ եղող-
29 ներուն, Բաթալի մէջ եղողներուն, Երամեելացւոց քաղաքներուն մէջ եղողներուն, Կենացւոց քաղաքներուն մէջ
30 եղողներուն, Հորմայի մէջ եղողներուն,
31 Քորաասանի մէջ եղողներուն, Աթաքի մէջ եղողներուն, Քերրոնի մէջ եղողներուն, և այն ամէն տեղեր ուր Դաւիթ իր մարդերով պտրաստ էր։

## Գլ. ԼԱ.

1 Եւ Փղշտացիք իսրայէլի հետ պատերազմ կ'ընէին. և իսրայէլի մարդիկը Փղշտացւոց առջևէն փախան, և Գիլբուէ լեռան վրայ սպաննուած ինկան.
2 Եւ Փղշտացիք Սաւուղի և անոր որդւոց հետևէն հասան, և Փղշտացիք Սաւուղի որդիքը՝ Յովնաթան, Աբինադաբ և Մելքիսուէ զարկին։ Եւ պա-
3 տերազմը Սաւուղի վրայ սաստկացաւ, և ազեղնաւորներն զանիկա գտան. և ազեղնաւորներէն †ստակի վիրաւորուեցաւ։ Եւ Սաւուղ իր կապարձակրէն ըսաւ, Սուրդ քաշէ և անով զիս խոցէ. գուցէ այս անթլփատներն գան և զիս խոցեն, և զիս ծաղր ընեն. բայց կապարձակիրը չուզեց, քանզի

*Եբր. օրհնութիւն
†Կամ թիւա վախցաւ.

չատ վախցաւ, եւ Սաուղ ասաւ ա-
5 ռաւ և անոր վրայ բնակաւ։ Եւ անոր
կապարճակիրը Սաուղի մեռնիլը տես-
նելով՝ ան ալ իր սուրին վրայ բնկաւ
6 և անոր հետ մեռաւ։ Եւ Սաուղ և
անոր երեք որդիքը, և կապարճակիրը
և անոր բոլոր մարդիկը նոյն օրը մեկ-
տեղ մեռան։
7 Եւ հովիտին անդիի կողմը և Յոր-
դանանէ անդիի կողմը եղող Իսրայէլի
մարդիկն Իսրայէլացւոց փախչիլը և Սա-
ուղի և անոր որդւոց մեռնիլը տես-
նելով՝ քաղաքները թողուցին և փա-
խան. և Փղշտացիք եկան և անոնց մէջ
բնակեցան։
8 Եւ հետեւեալ օրը Փղշտացիք եկան
որ մեռելները մերկացընեն. և Սաուղ
և անոր երեք որդիները Գելբուէ լե-
9 ռան վրայ ինկած գտան։ Անոնէն ա-
նոր գլուխը կտրեցին, և անոր վրէն
զէնքերն հանեցին. և Փղշտացւոց երկ-
րին չորս կողմը իրենց կռտաուններուն
և ժողովրդին մէջ բառնեռուն ուղ-
10 ղեալ համար մեռելոց տունը զրե-
ցին, և անոր մարմինը Բեթսանի պա-
րսպին կախեցին։
11 Եւ Գաղաադայ Յաբեսի բնակիչները
երբ լսեցին ինչ որ Փղշտացիք Սաու-
12 ղի բրած էին, Բոլոր ուժի մէջ մար-
դիկ ոտք եղան, և բոլոր գիշերը գա-
ցին, և Բեթսանի պարսպէն Սաուղի
մարմինը և անոր որդւոց մարմիններն
առին, և Յաբես եկան և հոն զանոնք
13 այրեցին։ Եւ անոնց ոսկրները առին,
և Յաբեսի մէջ *Թամարին տակ թաղե-
ցին, և եօթն օր ծոմ պահեցին։

# *ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ

## ԳԼՈՒԽ Ա

1 Եւ Սաուղի մեռնելէն հետքը՝ երբ Դա-
ւիթ Ամաղեկացիները զարնելէն դար-
ձած էր, և երկու օր Սիկղակի մէջ
2 նստած էր, երրորդ օրն ահա բանակէն
Սաուղի քովէն մէկը եկաւ, որուն հա-
գուստները պատառած էին և գլուխն վր-
րայ հող կար. և անիկա Դաւիթի քով
գալով՝ գետին ինկաւ և երկրպագաւ։
3 Դաւիթ ըսաւ։ Եւ Դաւիթ ըսաւ անոր,
Ուրտե՞ կու գաս։ Եւ անիկա ըսաւ ա-
նոր, Ես Իսրայէլի բանակէն փախայ։
4 Եւ Դաւիթ ըսաւ անոր, Բանն ի՞նչպէս
եղաւ, պատմէ ինծի։ Եւ անիկա ըսաւ,
Ժողովուրդը պատերազմէն փախաւ, և
ժողովուրդէն շատ հոգիներ ինկան մե-
ռան. նաև Սաուղ և անոր որդին Յով-
5 նաթան մեռան։ Եւ Դաւիթ իրեն ըսր
բերող պատանւոյն ըսաւ, Սաուղի և
անոր որդւոյն Յովնաթանի մեռնիլն
6 ուտա՞ գիտես։ Եւ անոր ըսր բերող
պատանին ըսաւ, Պատահածով Գելբուէ
լեռան վրայ գտնուեցայ, և ահա Սա-
ուղ իւր նիզակին վրայ կռթնած էր,
և կառքերը և ձիաւորներն անոր վրայ
7 կը հասնէին։ Անոնէն նայեր գտնուե-
լով ինծ տեսաւ, և ինծ կանչեց. Ես ալ
8 ըսի, Ահա հոս եմ։ Եւ անիկա ինծի ը-
սաւ, Դուն ո՞վ ես։ Ես ալ անոր ըսի
9 թէ Ամաղեկացի եմ։ Եւ անիկա ինծի
ըսաւ, Կ՚ազաչեմ՝ իմ վրաս եկիր և զիս
մեռցուր. քանզի վրաս թմրութիւն մը
եկաւ, բայց տակաւին հոգիս վրաս է։

*Կամ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ՍԱՄՈՒԵԼԻ

*Կամ մեռցնէին



10 Անոնէն անոր վրայ եկայ և զանիկա
մեռցուցի. քանզի ես հասկըցայ որ ա-
նիկա իյնալէն ետքը պիտի չապրէր. և
անոր գլուխն վրայի թագը և անոր
թեւին վրայ եղած *պատրանդանն առի,
11 և զանոնք հոս իմ տիրոջս բերի։ Անո-
նէն Դաւիթ իր հագուստները բռնեց
պատռեց, նոյնպես ալ անոր հետ ե-
12 ղող բոլոր մարդիկ։ Եւ անոնք Սաու-
ղի համար, և անոր որդւոյն Յովնա-
թանի համար, և Տէրոջը ժողովուրդին
համար, և Իսրայէլի տան համար սուգ
բռնեցին և լացին, և մինչև իրիկուն
ծոմ բռնեցին անոնց սրով իյնալուն
համար։
13 Եւ Դաւիթ իրեն լուր բերող պա-
տանւոյն ըսաւ, Դուն ո՞ր տեղացի ես։
Եւ անիկա ըսաւ, Ես պանդուխտ Ա-
14 մաղեկացւոյ որդի եմ։ Եւ Դաւիթ ա-
նոր ըսաւ, Ի՞նչպէս չվախցար ձեռք
երկնցընելու և Տէրոջը օծեալը մեռ-
15 ցնելու։ Եւ Դաւիթ մանչերուն մէկը
կանչեց և ըսաւ, Մօտեցիր՝ ասիկա
մեռցուր։ և զանիկա զարկաւ, որ մե-
16 ռաւ։ Եւ Դաւիթ անոր ըսաւ, Քու
արիւնդ քու գլխիդ ըլլայ, քանզի
քու բերանդ քեզի համար վկայութիւն
տուաւ՝ ըսելով, Տէրոջը օծեալը ես
մեռցուցի։
17 Եւ Դաւիթ Սաուղի վրայ և անոր
որդւոյն Յովնաթանի վրայ այս ոգբը ը-
18 սաւ։ Եւ պատուիրեց որ †Ազեղը Յու-
դայի որդւոց սորվեցընեն. ահա անի-
կա Ուղիղի դրքին մէջ գրուած է։
19 Ով Իսրայէլի փառքը,
Քու բարձր տեղերուդ վրայ վիրաւո-
րուած է՛լաւ։
Զօրաւորներն ի՞նչպէս ինկան,
20 Գէթի մէջ մի պատմէք,
Ասկաղոնի ճամբաներուն մէջ աւետիս
մի տաք,
Գուցէ Փղշտացւոց աղջիկներն ուրա-
խանան,
Գուցէ անթլփատներուն աղջիկները
ցնծութիւն ընեն։

*Կամ շղթան †Երբեմն անունն է։

21 Ով Գելբուէի լեռներ,
Ձեր վրայ ոչ ցօղ ձայ և ոչ անձրեւ,
Եւ էրթեսբէի ընծանոթութեան անդաստան-
ներ չբեռնուին.
Քանզի զօրաւորներուն վահանը հոն
ձգուեցաւ.
Սաուղի վահանը էրթեսբէ իբ եղով չէր
օծուած։
22 Վիրաւորուածներուն արիւնէն և զո-
րաւորներուն ճարպերէն
Յովնաթանի ետեղը կամ չդարձաւ,
Եւ Սաուղի աւերը պարապ չդարձաւ։
23 Սաուղ և Յովնաթան
Իրենց կենդանութեան ատեն շատ սի-
րելի և հաճելի էղան,
Իրենց մահուան ժամանակն ալ իրար-
մէ չդատուեցան.
Արծիւներէն աւելի թեթեւ էին,
Եւ առիւծներէն աւելի զօրաւոր էին։
24 Ով Իսրայէլի աղջիկներ, լացէք Սաու-
ղի համար,
Որ ձեզի վարդեւոյ կարմիրներ կը հագ-
ցընէր,
Եւ ձեր հանդերձներուն վրայ ոսկիէ
զարդեր կը դնէր։
25 Պատերազմին մէջ զօրաւորներն ինչ-
պէս ինկան,
Ով Յովնաթան, քու բարձր տեղերուդ
վրայ սպանուեցար։
26 Քեզի համար շատ կը ցաւիմ,
Ով եղբայր իմ Յովնաթան.
Դուն ինծի շատ սիրելի էիր.
Քու սէրդ ինծի զարմանալի էր,
Կանանց սիրէն աւելի էր։
27 Զօրաւորներն ինչպէս ինկան,
Եւ պատերազմի զէնքերը կորսուեցան։

## ԳԼ. Բ

1 Եւ ասկէ ետքը Դաւիթ Տէրոջը հար-
ցուց և ըսաւ, Յուդայի քաղաքներուն
մէկը ելլե՞մ։ Եւ Տէրը անոր ըսաւ, Ե-
լիր։ Եւ Դաւիթ ըսաւ, Որո՞ւր ելլեմ։ Եւ
2 Տէրը ըսաւ, Քեբրոնո։ Եւ Դաւիթ իր
երկու կանայքը, այսինքն Յեզրաելացի
Աքինոամը և Կարմելացի Նաբալի կի-
նը Աբիգեան իրեն հետ առնելով՝ հոն

3 Եւ ասէ Դաւիթ իւր հնազ մարդկին ալ՝ թէ բաւական իւր ընտանեօք տարաւ և ինքզինքն փախչելու
4 բան մի՛ բնակեցան Եւ Յուդայի մարդիկը եկան, և հոն դիմաւին Յուդայի տան վրայ թագաւոր օծելնիս Եւ Դաւիթ պատմեցին և բան թէ Քաղաքացիք Յաբիսի բնակիչներն զՍաւուղ թագեցին Եւ Դաւիթ Քաղաքացիք պատգամաւորներ դրկեց, և անոնց բաւ, Դուք Տէրոջմէն օրհնեալ ըլլաք, որ ձեր տիրոջը Սաւուղի այս ազգութիւնն ըրիք, և
6 զանիկա թաղեցիք Եւ հիմա Տէրը ձեզի ազգութիւն և ճշմարտութիւն բե՛ք. և որովհետև դուք այս բանն ըրիք, ես ալ ձեզի այս ազնիւութեան
7 խրատը՝ պիտի հատուցանեմ Եւ հիմա ձեր ձեռքն ուժովնայ, և զօրաւոր քաջեր եղէք. քանզի ձեր տէրը Սաւուղ մեռաւ, և Յուդայի տունը զիս իրեն վրայ թագաւոր օծեց։
8 Իսկ Սաւուղի զօրավարը Աբներներ Սաւուղի որդին Յեբուսթէն առաւ, և զանիկա Մանայիմ անցուց,
9 Եւ զանիկա Գաղաադացւոց վրայ, Աշուրիի վրայ, Յեզրայելի վրայ, Եփրեմի վրայ, Բենիամինի վրայ, և բոլոր Իսրայելի
10 վրայ թագաւոր բրաւ։ Երբ Սաւուղի որդին Յեբուսթէ Իսրայելի վրայ թագաւորեցաւ, քառասուն տարեկան էր, և երկու տարի թագաւորութիւն բրաւ։ Միայն Յուդայի տունը Դաւիթի
11 հետևակ եղաւ։ Եւ Յուդայի տան վրայ Քեբրոնի մէջ Դաւիթի թագաւորութիւն բրած ժամանակը եօթը տարի և վեց ամիս էր։
12 Եւ Ներներ Աբներներ և Սաւուղի որդւոյն Յեբուսթէի ծառաները Մանայիմէ Գաբաւոն եկան։ Եւ Շարուհեայի որդին Յոաբ և Դաւիթի ծառաները ելան, և Գաբաւոնի աւազանին քով անոնց հանդիպեցան. և մեկ աւազանին մէկ կողմը և մեկ աւազանին միւս կողմը նստան։

*Ներ. Եւս էն

14 Եւ Աբներներ Յոաբի բաւ, Թող քաջերը ելլեն և մեր առջև խաղան։ Եւ
15 Յոաբ բաւ, Թող ելլեն։ Ուստի անոնք թուով ելան, և Բենիամինէ և Սաւուղի որդւոյն Յեբուսթէի կողմէն տասներկու մարդ, և Դաւիթի ծառայոցմէն
16 տասներկու մարդ անցան։ Եւ իւրաքանչիւրը իւր բնկերին գլուխն բռնեց, և իւր սուրն բնկերին կողը խրեց, և միասին ինկան։ և այն տեղին անունը *Հելգաթ-ասուրիմ բաւեցաւ, որ Գաբաւոնի մէջ է։
17 Եւ այն օրը չատ սաստիկ պատերազմ եղաւ։ և Աբներներ Իսրայէլի մարդոց հետ Դաւիթի ծառաներուն առջև յաղթուեցաւ։ Եւ Շարուհեայի երեք որդիքը Յոաբ, Աբեսա և Ասայէլ հոն էին։ և Ասայէլ զաւակ այծեմման պէս
19 ոտքով թեթև էր։ Եւ Ասայէլ Աբներներ հետևեցաւ ինկաւ, և Աբներներ հետևէն ալ կամ ձախ կողմ չխոտորեցաւ
20 ցաւ։ Եւ Աբներներ հետևը դարձաւ և բաւ, Ասայէլ, դուն հա՞ Եւ անիկա բաւ, Ես եմ։ Եւ Աբներներ անոր բաւ,
21 Դու ալ կամ ձախ կողմդ խոտորէ, և փութալ միւս բանէ, և անոր զինքը քեզի առ. բայց Ասայէլ անոր հետևէն
22 դառնալ չուզեց։ Եւ Աբներներ դարձեալ Ասայէլի բաւ, Նո՛ւաստ դարձիր. քեզ ինչո՞ համար գետնի գարնեմ. անառանն ինդպէս երեսս վերցնեմ քու
23 եղբօրդ Յոաբի դէմ։ Բայց անիկա առոր խրնեն դառնալ չուզեց։ Եւ Աբներներ նեզակին հետևի ծայրով փոռակուշին զարկաւ զանիկա, և նիզակն անոր կռնակէն ելաւ։ և հոն ինկաւ և նոյն տեղ մեռաւ։ և ով որ Ասայէլի ինկած և մեռած տեղը կու գար՝ կանգ
24 կ՚առնէր։ Եւ Յոաբ և Աբեսա Աբներներ հետևէն ինկած կը հալածէին արևմ. և երբ անոնք Գիայի դիմաց՝ Գաբաւոնի անապատին Ամման հզոց Ամմայի բլուրը եկան, արեւ մտաւ։
25 Եւ Բենիամինի որդիքն Աբն հետևէ

*Այսինքն՝ սուրերուն արար, իմա՛ փորձն



ուեցին Յոդվուհացան, դունդ մը եղան, և
26 բլրոյ մը գլուխը կայնեցան։ Եւ Աբներներ Յոաբի պատուիրեց բաւ, Մինչև աւերն անգադա՞ պիտի ուտէ. չե՞ գիտեր որ սասր վերջը դառն կ՚ըլլայ. մինչև ե՞րբ ժողովուրդին պիտի չհրամայես որ իրենց եղբայրները հալածելէ
27 ետ դառնան։ Եւ Յոաբ բաւ, Կեն դանի է Աստուած, եթէ դուն զրուցած չըլլայիր, ժողովուրդին առնուն ալ առաւօտ՝ ի վեր իւր եղբայրներն հալածելէն ետ պիտի դառնար։
28 Անառանն Յոաբ փող հնչեցուց. և բոլոր ժողովուրդը կանգ առաւ, և ալ Իսրայէլի հետևէն չկռնան, և այլ ևս
29 պատերազմ չըրին։ Եւ Աբներներ և անոր մարդիկն այն բոլոր գիշերը գաշտին միջնէն երթալով՝ Յորդանանէ անցան, և բոլոր Բիթրոն փալե ալ՝ Մա-
30 նայիմ եկան։ Եւ Յոաբ Աբներներէ դարձաւ, և բոլոր ժողովուրդը ժողովեց. և Դաւիթի ծառաներէն ասանկներ մնացին
31 որ մարդ և Ասայէլ կը պակսէին. Բայց Դաւիթի ծառաները Բենիամինէ և Աբներներ մարդ երեքհարիւր փաթ-
32 առն մարդ զարկին, որ մեռան։ Եւ Ասայէլ վերուցին, և զանիկա Բեթլեհեմի մէջ իւր հօրը գերեզմանը թաղեցին։ Եւ Յոաբ և անոր մարդիկը բոլոր գիշերը քալեցին, և արշաւսան Քեբրոն հասան։

## Գլ. Գ

1 Եւ Սաւուղի տան և Դաւիթի տան մէջ երկար պատերազմ եղաւ. և Դաւիթի երթալով կը զօրանար, բայց Սաւուղի տունը երթալով կը տկարանար։
2 Եւ Քեբրոնի մէջ Դաւիթի որդիներ ծնան. և անոր անդրանիկը Յեզրայէլացի Աքինոամէն Յեզրէ Ամնան էր, Եւ անոր երկրորդը Կարմէլացի Նաբալի կնոջէն Աբիգեայէ Յեզրէ Քիլաբ էր, և երրորդը Գեսուրի Թագաւորին Թոլմիի աղջկան Մաաքայի որդին Աբիսաղոմ էր,
4 Եւ չորրորդն Ագգիթի որդին Ադոնիա էր, և հինգերորդն Աբիտալի որդին
5 Սափատիա էր, Եւ վեցերորդը Դաւիթի կնոջէն Եգդայէ Յեթրամ էր։ Քեբրոնի մէջ Դաւիթի ատեն ծնան։
6 Եւ Սաւուղի տան և Դաւիթի տան մէջ քանի որ պատերազմ կար, Աբներ
7 Սաւուղի տան Բիկուզին էր։ Եւ Սաւուղ հարճ մը ունէր՝ որուն անունը Ռեսփա էր, և Այեայի աղջիկն էր։ Եւ Յեբոսթէ Աբներներ բաւ, Իմ հօրս
8 հարճին ինչո՞ մտաք։ Եւ Աբներներ Յեբոսթէի խօսքին համար շատ բարկացաւ, և բաւ, Մինչև հիմա չեմ գլո՞խ եմ որ Յուդայի դէմ՝ քու հօրդ Սաւուղի տան, անոր եղբայրներուն և բարեկամներուն այսօր ազգութիւն ըրի, և քեզ Դաւիթի ձեռքը չմատնեցի, և դուն այսօր այս կնոջ համար զիս
9 կը մեղադրես։ Աստուած Աբներներու այսպէս և աւելի քան զայս ընէ, եթէ Դաւիթի չընեմ ինչ որ Տէրը անոր երդում ըրաւ։ Այսինքն թագաւորութիւնը Սաւուղի տունէն վերցնելով և
11 Դաւիթի աթոռն Իսրայէլի վրայ և Յուդայի վրայ հաստատելով Դանէ մինչև Բեերսաբէ։ Եւ Յեբոսթէ այլ ևս չկըրցաւ Աբներներին պատասխան տալ՝ անկէ վախնալուն համար։
12 Եւ Աբներներ իւր կռմանէ Դաւիթի պատգամաւորներ զրկեց բսելով, Այս երկիրն որո՞ է. և բաւ, Ինձի հետ դաշնակցութիւն ըրէ, և ահա իմ ձեռքս քեզի հետ պիտի ըլլայ՝ բոլոր Իս-
13 րայէլ քեզի դարձնելու։ Եւ անիկա բաւ, Աղեկ, ես քեզի հետ դաշնակցութիւն կ՚ընեմ. բայց քենի բան մը կը պահանջեմ, որ իմ երեսս տեսնելու եկած ատենդ՝ նախ Սաւուղի ազջիկը Միզբայ ինծի չբերես, իմ երեսս
14 չտեսնես։ Եւ Դաւիթ Սաւուղի որդւոյն Յեբոսթէի գեսպաններ զրկեց՝ բսելով, Իմ կինս Միզբայ ինծի տուր, զոր փաստացս հարիւր անգլիսաւորութիւն
15 նկատմամբ առի։ Եւ Յեբոսթէ մարդ զրկեց, և զանիկա անոր երկրէն վերցուցին
16 յիսան փաղանգի առաջ։ Եւ անոր երկիրը լալով մինչև Բաուրիմ անոր հետևէն գնաց։ Եւ Աբներներ անոր ը-

սաւ, գնա գարձիր. և անիկա գարձաւ։
17 Եւ Աբեններ խրատեցի ծերերուն հետ խօսեցաւ և ըսաւ, Երէկ և միւս օր կ՚ուզէիք որ Դաւիթ ձեր վրայ թագաւո-
18 ւոր ըլլար. ուրեմն հիմա ըրէք. քանզի Տէրը Դաւիթի համար խօսեցաւ ըսելով, Իմ ժողովուրդս զիսրայէլ Փղշտացւոց ձեռքէն և անոր բոլոր թշնամիներուն
19 ձեռքէն՝ իմ ծառային Դաւիթի ձեռօք պիտի ազատեմ։ Եւ Աբեններ նայ Խոսբ
Բենիամինի ալ զրուցից. այնուհետև Աբեններ Բերրսի գնաց, որ խրատելի
և Բենիամինի բոլոր տան հետ Հեբրոն
20 ցածը Դաւիթի պատմէ։ Եւ Աբեններ Բերրսի եկաւ Դաւիթի, իւր հետ քսան մարդ առնելով։ Եւ Դաւիթ Աբեններին և անոր հետ եղող մարդոց
21 խնճոյք ըրաւ։ Եւ Աբեններ Դաւիթի ըսաւ, Պիտի երթամ, և բոլոր իսրայէլ իմ տիրոջս թագաւորին քով ժողվեմ, որ քեզի հետ դաշնակցութիւն ընեն.
և դուն սրտիդ ամէն ուզածին պես
22 թագաւորութիւն ընես։ Եւ Դաւիթի Աբեններին զրկից, որ խաղաղութեամբ գնաց։
22 Եւ ահա Դաւիթի ծառաներէն և Յովաբ *ասպատակութենէ հետ գարձան, և իրենց հետ շատ աւար բերին. իսկ Աբեններ Դաւիթի քով Բերրսի մէջ չէր. քանի Դաւիթ զանիկա զրկած էր,
և անիկա խաղաղութեամբ գացած էր։
23 Եւ երբ Յովաբ և անոր հետ եղող բոլոր զօրքը եկան, Յովաբի պատմեցին և ըսին, Ներնան Աբեններ թագաւորին եկաւ. ան ալ զանիկա զրկից, և
24 խաղաղութեամբ գնաց։ Անոնից Յովաբ թագաւորին գնաց և ըսաւ, Ինչ ըրիր. ահա Աբեններ քեզի եկած է. ինչո՞ համար զանիկա թոզ տուիր, և
25 գնաց. †Զի՞ գիտէր՝ որ Ներնան Աբեններ քեզ խաբելու, քու ելլուդ և մտնելդ գիտնալու, և քու ամէն գործդ իմանալու համար եկաւ։ Եւ
26 գործդ իմանալու համար եկաւ։ Եւ Յովաբ Դաւիթի քովէն ելաւ, և Աբեններ Հեբրսնէն պատգամաւորներ զրկից, և զանիկա Սիրայի Ջիոնէն կռ գարձուցին. բայց Դաւիթ չգիտէր։
27 Եւ Աբեններ Բերրսն գարձաւ, Յովաբ զանիկա գրան ներսի գին քաշից՝ անոր հետ ծածուկ խօսակցութիւն ընելու համար, և զանիկա հոն՝ իր ղերբօր Ասայէլի սրտան համար անակռայէն
զարկաւ, և անիկա մեռաւ։
28 Եւ այնուհետև Դաւիթ լսից, և ըսաւ, Ես և իմ թագաւորութիւնս Ներնան Աբեններէն յաւիտեան անպարտ
29 ենք Տէրոջմբ առջև. Յովաբի գլխուն վրայ, և անոր հօրը բոլոր տան վրայ հասնի. և Յովաբի տունէն աղբիւրակաթ, բորոտ, ցուպի կռթընոց, սրով կռնող
30 և հացի կարօտ պակաս չըլլայ։ Այսպէս Յովաբ և անոր եղբայրն Աբեսսա զԱբեններ մեռցուցին, քանզի անիկա անոնց եղբայրն Ասայէլ պատերազմի ժամանակ Գաբաւոնի մէջ մեռցուցած
էր։
31 Եւ Դաւիթ Յովաբի և անոր հետ եղող բոլոր ժողովուրդին ըսաւ, Հանդերձներդ պատռեցէք և քուրձեր հագէք, և Աբեններէն առջևէն լացէք։ Եւ
32 Դաւիթ թագաւորը դագաղին հետևէն գնաց։ Եւ զԱբեններ Բերրսի մէջ թաղեցին. և թագաւորը ձայնը վերցուց և Աբեններէն գերեզմանին վրայ լացաւ. բոլոր ժողովուրդն ալ լացաւ։
33 Եւ թագաւորն Աբեններէն համար ոգբաց և ըսաւ,
Մի՞թէ Աբեններ այնպէս մեռաւ,
ինչպէս որ անզգամ մարդ մը կը մեռնի։
34 Քու ձեռքերդ կապուած չէին,
Եւ ոտքերդ կապանքի մէջ դրուած չէին.
Անօրէններուն առջև կ՚ինգռի մը պէս
ինկար։
Եւ բոլոր ժողովուրդը նորէն անոր վրայ լացաւ։ Եւ գիտի որ ցորեկ էր՝ բոլոր ժողովուրդը եկաւ որ Դաւիթի հաց
35 կերցուանեն. բայց Դաւիթ երդում ըրաւ և ըսաւ, Աստուած ինծի այսպէս և աւելի գան զայս ընէ, երէկ արևը մըտնելէն առաջ հաց կամ ուրիշ բան մը
36 ճաշակեմ։ Եւ բոլոր ժողովուրդն ուշադրեցին, և ամէն բան որ թագաւորը ընելով էր, հաճոյ եղաւ անոնց աչքին։
37 Այսպէս այն օրը բոլոր ժողովուրդը և բոլոր Իսրայէլ հասկըցաւ, որ Ներնան Աբեններէն
38 ազանաիլը թագաւորէն չէր։ Եւ թագաւորը իր ծառաներուն ըսաւ, Չէ՞ք գիտեր որ այսօր Իսրայէլի մէջ մեծ զո-
39 րաւոր մը ինկաւ։ Եւ ես այսօր ախոռեմ, թէպէտ և թագաւոր օծուածոյ, և այս մարդիկը, Շարուհայի որդիք, ինծի համար խիտ են. Տէրը հատուցանէ չարութիւն ընողին՝ անոր չարութեան համեմատ։

## Գլ. Դ

1 Եւ Սաուղի որդին Յիբոսթէ երբ Աբեններէն Բերրսի մէջ մեռնիլը լսից, ձեռքերը թուլցան, և բոլոր Իսրայէլ
2 ացդնոպեցաւ։ Եւ Սաուղի որդին երկու գնդապետ ունէր, մէկուն անունը Բաանա՝ և միւսին անունը Ռեքաբ էր. սոսնձ Բենիամինի ցեղէն Բերովթացի Ռեմմոնի որդիքն էին. (Քանզի Բերովթ ալ Բենիամինացոց
3 կ՚համարուի։ Եւ Բերովթացիները Գեթթայիմ փախան, և հոն մինչև այս օրս պանդխտի պէս բնակեցան։) Եւ Սաուղի որդին Յովնաթանի ոտքերը կաղ տղայ մը
4 ունէր. երբ Սաուղի և Յովնաթանի համբաւը լսրը Յեզրեելէն եկաւ, անիկա հինգ տարեկան էր. և անոր դայեակը զանիկա առաւ և փախաւ. և երբ փախչելու կը փութար, ղեղ ինկաւ՝ կաղ եղաւ. և անոր անունը
5 Մեմփիբոսթէ էր։ Եւ Բերովթացի Ռեմմոնի որդիքը Ռեքաբ և Բաանա գացին, և ցորեկուան տաք առնը Յեբոսթէի տունը հասան, և անիկա կէս
6 օրուան տաքին պառկած կը քնանար. Եւ անոնք մինչև տան միջտեղը հասան, իբր թե ցորեն պիտի առնեին. և զանիկա անակռայ հարին, և Ռեքաբ և անոր եղբայրը Բաանա անդէ փախան։
7 Այս կերպով տունը հասան և երբ անիկա ննջարանին մէջ իր անկողնին մէջ կը քնանար, զանիկա զրկին մեռցուցին, և անոր գլուխը կտրեցին, և գլուխն առնելով՝ բոլոր գիշերը գաշտին
8 ճամբով գացին. Եւ Յեբոսթէի գլուխը Քերրսն տարին Դաւիթի, և Թագաւորին ըսին, Ահա քու թշնամիդ՝ քու կեանքդ փնտռող Սաուղի որդւոյն Յեբոսթէի գլուխը. և Տէրը Սաուղ և անոր սերունդէն այսօր վրէժխնդրութիւն առաւ մեր Թագաւոր սերրս
9 Ըլլ։ Եւ Դաւիթ Բերովթացի Ռեմմոնի որդւոյ Ռեքաբի և անոր եղբօր Բաանայի պատասխան առաւ. և անոնց ըսաւ, Իմ հոգիս ամէն նեղութենէ ա-
10 զատող Տէրը կենդանի է, Զի նա որ ինծի պատմեց և ըսաւ Թէ Սաուղ մեռաւ, կարծելով Թէ աւետիս առողջ մը պիտի երևնար իւրմէ, զանիկա բռնեցի և Սիկղակի մէջ մեռցուցի, և
11 անոր առած աւետիսին վարձքն այս եղաւ. Ո՛րչափ աւելի ես՝ վատ մարդիկ նը վասլ այն չար մարդոց, որ արդար մարդ մը իր տան մէջ՝ իր անկողնին վրայ մեռցուցին. և հիմա անոր արիւնն անպուճառ ձեր ձեռքէն պիտի պահանջեմ, և ձեզ երկրէս վրայէն պիտի վեր-
12 ցնեմ։ Այնուհետև Դաւիթ իր մանկտւն հրամայեց, և զանոնք մեռցուցին. և անոնց ձեռքերն և ոտքերը կտրեցին, և Բերրսնի ատամնին վրայ կախեցին, իսկ Յեբոսթէի գլուխն առին, և Բերրսնի մէջ Աբեններէի գերեզմանը թաղեցին։

## Գլ. Ե

1 Եւ Իսրայէլի բոլոր ցեղերը Քերրսն եկան Դաւիթի, և ըսին, Ահա մենք
2 քու ոսկրդ և քու մարմինդ ենք։ Եւ *ասկէ առաջ՝ ալ երբ Սաուղ մեր վրայ թագաւոր էր, գուն Իսրայէլ դուրս հանող և ներս բերողը դուն կիր։ Եւ Տէրը քեզի ըսաւ, Իմ ժողովուրդս զԻսրայէլ դուն հովուես, և Իսրայէլի

*Եբր. Երէկ ու միւս օր



*Կամ ասպատակներու վրայ յարձակելէն †Եբր. գիտես

3 վասն իշխան բլլար։ Եւ Իսրայէլի բոլոր
ծերերը գիրքն եկան Թագաւորին. և
Դաւիթ Թագաւորը գիրքն մէջ Տէ-
րոջը առջև անոնց հետ դաշնակցու-
թիւն բրաւ. և անոնք զԴաւիթ Իսրա-
յէլի վրայ Թագաւոր օծեցին։
4 Ե՝ Դաւիթ երեսուն տարեկան էր՝
երբ Թագաւոր եղաւ, և քառասուն
5 տարի Թագաւորութիւն բրաւ։ Գիրո-
նի մէջ Յուդայի վրայ եօթը տարի և
վեց ամիս Թագաւորութիւն բրաւ, և
Երուսաղէմի մէջ բոլոր Իսրայէլի և
Յուդայի վրայ երեսունևերկուք տարի
Թագաւորութիւն բրաւ։
6 Եւ Թագաւորն իւր մարդերով Երու-
սաղէմ գնաց՝ այն երկիրը բնակող Յե-
բուսացիներուն վրայ. և Դաւիթ խօ-
սեցան ըսելով, Եթէ կոյրերը և կաղե-
րը չվերցընես, հոս պիտի չմտնես. կար-
ծելով թէ Դաւիթ չկրնար հոն մտնել։
7 Բայց Դաւիթ առաւ Սիոնի բերդը, (որ
8 Դաւիթի քաղաքը կ՚ըսուի) Եւ Դա-
ւիթ այն օր բաւս, Ով որ Յեբուսացի-
ները զարնէ, և ջրանցքը հասնելով
Դաւիթի ատելի հոգի կաղերը և կոյրե-
րը վիրաւորէ, ոտքս ընդհատ ոտքէ ըս-
ըսյ. անոր համար կ՚ըսեն, Կոյրը և
9 կաղը առուն չմտնեն։ Եւ Դաւիթ այն
բերդին մէջ նստաւ, և զանիկա Դաւի-
թի քաղաք անուանեց. և Դաւիթ ա-
նոր չորս կողմը Մելոնեն դէպ ի ներս
10 վերջը չվնեց։ Եւ Դաւիթ երթալով կը
մեծնար, և զօրաց Տէր Աստուածն ա-
նոր հետ էր։
11 Եւ Տիւրոսի Թագաւորը Փիրամ
Դաւիթի դեսպանները զրկից, նաև եղե-
նամայաներ և հիւսներ և որմնադիրներ՝
12 որ Դաւիթի տուն չինեցին։ Անոնք
Դաւիթ ճանցաւ որ Տէրը զանիկա Իս-
րայէլի վրայ Թագաւոր հաստատեց, և
իւր Ժողովուրդին Իսրայէլի համար ա-
նոր Թագաւորութիւնը բարձրացուց։
13 Եւ Դաւիթ Գիրոնէ գալէն ետքը ե-
րուսաղէմէ ուրիշ հարճեր և կիներ ա-
ռաւ. և Դաւիթի ուրիշ որդիներ և
14 աղիներ ալ ծնան։ Եւ Երուսաղէմի
մէջ անոր ծնած որդոց անուններն ա-
նանք են. Սամաա, Սովբաբ, Նաթան,
15 Սողոմոն, Յիբհաար, Եղիսուա, Նափեկ,
16 Յաֆիէ, Եղիսամա, Եղիադա և Եղի-
փաղէտ։
17 Եւ Փղշտացիք Դաւիթի Իսրայէլի վրայ
Թագաւոր օծուիլը լսելով, բոլոր Փը-
ղշտացիք ոտք կելան որ զԴաւիթ փնտ-
րտեն. երբ Դաւիթ այս բանը լսեց,
18 բերդն իջաւ։ Եւ Փղշտացիք եկան և
Ռափայիմ հովտին մէջ տարածուեցան։
19 Եւ Դաւիթ Տէրոջը հարցուց և ըսաւ,
Փղշտացւոց դէմ երթա՞մ, զանոնք իմ
ձեռքս պիտի մատնե՞ս։ Եւ Տէրը Դաւի-
թի ըսաւ, Երթը, զանոնք Փղշտացիները
անշուշտ քու ձեռքդ պիտի մատնեմ։
20 Անոնք Դաւիթ Բաալփարասիմ գնաց.
և Դաւիթ զանոնք հոն զարկաւ, և ը-
սաւ, Տէրը իմ թշնամիներս իմ ձեռ-
քովս պատռեց, ինչպէս որ ջուրերը
կ՚ըսէ։ Ասոր համար
անունը Բաալփարասիմ
21 բռնեցան։ Եւ Փղշտացիք հոն թագու-
ցին իրենց կուռքերը, և Դաւիթ և ա-
նոր մարդիկը զանոնք առին։
22 Եւ Փղշտացիք նորէն եկան, և Ռա-
23 փայիմ հովտին մէջ տարածուեցան։ Եւ
երբ Դաւիթ Տէրոջը հարցուց, Ո՞որ ը-
սաւ, Չելլես. այլ դէպ անոնց հետևի
կողմը դառնալով՝ Թթենիներուն կող-
24 մէն անոնց վրայ երթաս։ Եւ երբ Թ-
թենիներուն գլուխը քալուածքի մը
ձայն լսես, անատեն չարժիս. քանզի
անատեն Տէրը քու առջևէդ պիտի ել-
լի Փղշտացւոց բանակը զարնելու։ Եւ
Դաւիթ այնպէս բրաւ, ինչպէս որ Տէ-
րը անոր հրամայեց. և Գաբաոն մինչև
Գազեր Փղշտացիները զարնաւ։

## Գլ. 6

1 Ետ Դաւիթ նորէն Իսրայէլի բոլոր ընտ-
րուած մարդիկը ժողվից, որ եղեսան
2 հազար հոգի էին։ Եւ Դաւիթ իր հետ
եղող բոլոր ժողովրդով եկաւ՝ և Յու-

*Աչխեդ՝ տէր կամ տեղ խրամատիկ։
†Եբբ. պէ-փեսանեքսեան



դայի Բաալէ գնաց, որ անկէ Աստու-
ծոյ տապանակը վեր հանէ, որ անոր
վրայ քերովբէից վրայ նստող Զօրու-
3 թեանց Տէրոջը անունը կոչուած է։ Եւ
Աստուծոյ տապանակը նոր սայլի մը վը-
րայ դրին, և զանիկա բլլուայի Աբինա-
դաբի տունէն վերուցին. և Աբինադա-
բի օրդիքը՝ Ոզա և Ախիով՝ այն նոր
4 սայլը կը վարէին։ Եւ զանիկա Աստու-
ծոյ տապանակին հետ բլլուայի Աբինա-
դաբի տունէն հանեցին. և Ախիով
5 տապանակին առջևէն կ՚երթար։ Եւ
Դաւիթ և Իսրայէլի բոլոր տունը՝ մոլ
փայտէ չխուճ ամէն տեսակ նուագ-
ներով, քնարներով, տավիղներով,
թմբուկներով, դափերով և ծնծղա-
ներով Տէրոջը առջև կը խաղային։
6 Եւ երբ Նաքոնի կալը եկան, Ոզա
Ե՛Ը Աստուծոյ տապանակին եր-
կարացուց, և զանիկա բռնեց, քանզի
7 եզները զարնէ ծռած էին։ Եւ Տէրոջը
բարկութիւնը բորբոքեցաւ Ոզայի դէմ,
և Աստուած զանիկա հոն այս յան-
ցանքին համար զարկաւ. և հոն Աս-
8 տուծոյ տապանակին քով մեռաւ։ Եւ
Դաւիթ տրտմեցաւ, քանզի Տէրը հա-
րուածով Ոզա զարկաւ. և այն տեղ-
ւոյն անունը մինչև այս օր Փարեզ-Ո-
զա բառնացաւ։ Եւ Դաւիթ այն օրը Տէ-
9 րոջմէն վախցաւ, և բսաւ, Տէրոջը տա-
պանակն ի՞նչպէս իմ քովս մտնէ։ Եւ
10 Դաւիթ Տէրոջը տապանակն իրեն քով՝
Դաւիթի քաղաքը չուզեց տանել. և
Դաւիթ զանիկա Գեթացի Աբդեդոմի
11 տունը խոտորցուց։ Եւ Տէրոջը տապա-
նակը Գեթացի Աբդեդոմի տունը ե-
րեք ամիս մնաց. և Տէրը զԱբդեդոմ
և անոր բոլոր տունն օրհնեց։
12 Եւ Դաւիթ Թագաւորին պատմեցին
և բսին, Աստուծոյ տապանակին հա-
մար Տէրը Աբդեդոմի տունը և անոր
ամէն ունեցածն օրհնեց։ Եւ Դաւիթ
գնաց, և Աստուծոյ տապանակն Աբդե-
դոմի տունէն ուրախութեամբ Դաւիթի
13 քաղաքը հանեց։ Եւ երբ Տէրոջը տա-
պանակը վերցնողները վեց քայլ ա-
ռաջ գացին, արջառներ և պարարտ
14 ըսբ-ինէ զոհեց։ Եւ Դաւիթ Տէրոջը
առջև բոլոր ուժովը կը խաղար, և Դա-
15 ւիթ քթանէ եփուած հագած էր։ Եւ
Դաւիթ և Իսրայէլի բոլոր տունը Տէ-
րոջը տապանակն ուրախութեամբ և
16 փողերու ձայներով կը տանէին։ Եւ երբ
9 Ու Իսրայէլի ամէն ցեղերուն մէջ բո-

*ՆԲԸ. սրանին



լոր ժողովուրդը կը վիճէին և կ՚ըսէին,
Մեր թշնամիներուն ձեռքին ազատ
կողը Թագաւորն է, և փղշտացւոց ձեռքին մեզ ազատողը նա է։ և հիմա Աբիսողոմի պատճառաւ այս երկրէն փա-
10 խաւ։ Ու Աբիսողոմ որ մեր վրայ թագաւոր օծեցինք, պատերազմի մէջ մեռաւ։ և հիմա դուք Թագաւորը նա
գարձնելու վրայ ինչո՞ւ բան մը չէք խօսիր։
11 Ու Դաւիթ Թագաւորը Սադովկ և Աբիաթար քահանաներուն հրով ղրկեց՝ ըսելով, Ցուդայի ծերերուն հետ խօսեցէք և ըսէք, Թագաւորն իր տունը դարձնելու ինչո՞ւ հետ կը մնաք, քանզի բոլոր Իսրայէլի խօսքը Թագաւորին
12 հասաւ մինչեւ անոր տունը։ Դուք իմ եղբայրներս, ոսկր և մարմինս էք։ և Թագաւորն ետ դառնալու ինչո՞ւ
13 համար կը մնաք։ Ու Ամասայիի ըսէք, Դուն իմ ոսկրս և մարմինս չե՞ս։ Աստուած ինծի այսպես և աւելի քան զայն ընէ, եթէ Յովաբի տեղ միշտ իմ առ-
14 ջեւս զօրագլուխ չըլլաս։ Ու Ցուդայի բոլոր մարդոց սիրտը մէկ մարդու սրտի պէս էրեն գարձուց։ և Թագաւորին դարձէք դուք և ձեր ծառաները։ Ասոնք ալ մինչեւ Գաղգաղա եկան, որ Թագաւորը դիմաւորել և Թագաւորը Յորդանանէ անցուցնել։
15 Անոնուն Թագաւորը դարձաւ և մինչեւ Յորդանան եկաւ։ Ցուդա ալ մինչեւ Գաղգաղա եկաւ, որ Թագաւորը դիմաւորել և Թագաւորը Յորդանանէ անցուցնէ։
16 Ու Գերայի որդին Բաւուրիմացի Բենիամինեան Սեմէի արագարշալ՝ Ցուդայի մարդոց հետ Դաւիթ Թագաւորը
17 դիմաւորելու իջաւ, և անոր հետ Բենիամինէ հարիւր մարդ կար։ և Սաւուղի տան ծառան Սիբա իր տասնեհինգ որդիներով և քսան ծառաներով էլա՜ւ, և Թագաւորին առջեւ †Յորդա-
18 նան հատան։ Ու Թագաւորին տունն անցուցնելու համար՝ և անոր այբին հաճոյ երևցածն ընելու համար նաւակ մը

անցաւ։ և երբ Թագաւորը Յորդանանէ անցաւ, Գերային որդին Սեմէի՝ Թա-
19 գաւորին առջեւ ինկաւ, և Թագաւորին ըսաւ, Իմ տիրոջս իմ չհամարիր, և իմ Թագաւոր տիրոջս չյիշատակես, և իմ Թագաւոր տիրոջս երուսաղէմէ ելած օրը Ծառայիդ բրած անօրէնութիւնը չդնէ, և Թագաւորը
20 զայն իր սրտին մէջ չդնէ։ Քանզի քու ծառադ գիտցայ որ մեղք գործեցի. և ահա այսօր Յովսեփայ բոլոր տունէն առաջ ես եկայ, որ իմ Թագաւոր տէրս
21 դիմաւորելու իջնեմ։ Ու Շարուհեայի որդին Աբիսա պատասխան տուաւ և ըսաւ, Մի՞թէ Սեմէի սատր համար պիտի չմեռնի, որ Տէրոջը օծեալն անի-
22 ծեց։ Բայց Դաւիթ ըսաւ, Դուք ինծի հետ ի՞նչ բան ունիք, ով Շարուհեայի որդիք, որ այսօր ինծի Թշնամի Թե՞ն կ՚ընէք։ միթէ այսօր Իսրայէլէ մարդ պիտի մեռնի՞. քանզի գիտեմ որ ես
23 այսօր Իսրայէլի վրայ Թագաւոր եմ։ Ու Թագաւորը Սեմէիի ըսաւ, Պիտի չմեռնիս։ և Թագաւորն անոր երդում ըրաւ։
24 Ու Սաւուղի որդին Մեմփիբոսթէ Թագաւորը դիմաւորելու իջաւ։ և ան-
նիկա Թագաւորին գացած օրին մինչեւ անոր խաղաղութեամբ եկած օրը՝ ոտքերը չէր դարմանած, և մօրուքը չէր
25 չտկած, և լաթերը չէր լուացած։ Ու երբ Թագաւորը դիմաւորելու հանար Երուսաղէմ եկաւ, Թագաւորն անոր ըսաւ, Ով Մեմփիբոսթէ, ինչո՞ւ ինծի
26 հետ չգացիր։ Ու անիկա ըսաւ, Ով Տէր իմ Թագաւոր, իմ ծառայս զիս խաբեց. քանզի քու ծառադ ըսաւ, Էշը պատրաստեմ, որ վրան հեծնեմ և Թագաւորին հետ երթամ. վասն զի
27 ծառադ կաղ է։ Ու անիկա քու ծառադ իմ Թագաւոր տիրոջս առջեւ բամբասեց. բայց իմ Թագաւոր տէրս Աստուծոյ հրեշտակի մը պէս է. ուստի քու աչքիդ հաճոյ երևցածն ըրէ։
28 Քանզի հիպէտ և իմ հօրս բոլոր տունը իմ Թագաւոր տիրոջս առջեւ միայն մեռնելու մարդիկ էին, բայց դուն քու ծառադ քու սեղանդ կերակուրը ու-

†Կամ Յորդանանէ անցան։

*ՆԲԸ. վերջինները կ՚ըլլաք։

առնելուն կարգը դրիր. ուստի այսուհետեւ ինչ իրաւունք ունիմ Թագաւորին դարձեալ աղաչել վասն հասարակ բանից։
29 Գաւորին բողոքելու։ Եւ Թագաւորն անոր բսաւ, Ալ ինչո՞ւ քու բաներուդ վրայ կը խօսիս. Ես քեզ ըսի որ դուն և Սիբա տարերդ մէկտեղ բաժնեցէք։ Եւ
30 Մեհիբեթայէ ըսաւ Թագաւորին, Թող անկիա ամէնն ալ առնէ, վասն զի իմ Թագաւոր տէրս խաղաղութեամբ իր տունը եկաւ։
31 Եւ Գաղաադացի Բերզելի Ռոգելիմէ իջաւ, և Թագաւորին հետ Յորդանանէն անցաւ, որ զանկիա Յորդանանէն անցուց, որ զանկիա շատ ծեր էր՝ ութսուն տարեկան մարդ էր եղեր. և որչափ ժամանակ որ Թագաւորը Մահայիմի մէջ կեցաւ, զանկիա ինչ կերակրեց, քանզի շատ մեծ մարդ էր։
33 Եւ Թագաւորը Բերզելիի ըսաւ, Ինծի հետ անցիր, և քեզ իմ քովս Երուսաղեմի մէջ կերակրեմ։ Եւ Բերզելի Թագաւորին ըսաւ, Իմ կենացս տարիները որչա՞փ են որ Թագաւորին հետ Երուսաղեմ ելլեմ.
35 ես այսօր ութսուն տարեկան եմ. միթէ ազէկն և գէշը կրնա՞մ որոշել. միթէ ծառադ իր կերածին և խմածին համը կրնա՞մ առնել. և այսուհետեւ խաղ կանչող տարանց կամ կանանց ձայներ կրնա՞մ լսել. և քու ծառադ իմ Թագաւոր տէրոջս՝ ալ ինչո՞ւ համար
36 բեռ ըլլայ։ Քու ծառադ Թագաւորին հետ քիչ մը Յորդանանէ տիրան անցնի. և Թագաւորն ինչո՞ւ ինծի այսպէս վարձքն մը հատուցանէ։ Թող ծառադ դառնամ, և իմ քաղաքիս մէջ իմ հօրս և մօրս գերեզմանին քով մեռնիմ. ահա քու ծառադ Քաամամ իմ տէրոջս Թագաւորին հետ անցնի. և քու աչքիդ հաճոյ երեւցածն ըրէ ա-
38 նոր։ Եւ Թագաւորն ըսաւ, Թող Քաամամ ինծի հետ անցնի, և ես քու աչքիդ հաճոյ երեւցածը պիտի ընեմ անոր. և ինէ ինչ որ ինծմէն քեզի պիտի ընեմ, եւ բոլոր ժողովուրդը Յորդանանէ անցաւ. և Թագաւորն զԲերզելի համբուրեց և զանկիա օրհնեց. և նա իր տե-
40 ղը գնաց. և Թագաւորը Գաղգաղա անցաւ, և Քաամամ անոր հետ անցաւ. այսպէս Յուդայի բոլոր ժողովուրդը և Իսրայէլի ալ կէս ժողովուրդը Թագաւորն անցուցին։
41 Եւ ահա բոլոր Իսրայէլի մարդիկը Թագաւորին եկան՝ և Թագաւորին ըսին, Ինչո՞ւ համար մեր եղբայրներնիդ՝ Յուդայի մարդիկը քեզ գողցան, և Թագաւորը և անոր տունը և անոր հետ Դաւթի բոլոր մարդիկը Յորդանանէն անցուցին։
42 Նոնիկ անցուցին։ Եւ Յուդայի բոլոր մարդիկն Իսրայէլի մարդոց պատասխան առին և ըսին, Թագաւորը մեզի մօտ ազգական է, և այս բանիս համար ինչո՞ւ այսպէս կը նեղանաք. միթէ Թագաւորէն բան մը կերա՞նք, կամ թէ անկիա մեզի պարգև մը տա՞ւ։
43 Եւ Իսրայէլի մարդիկը Յուդայի մարդոց պատասխան առին և ըսին, Մենք Թագաւորին քով տասը բաժին ունինք, և նաև Դաւթի վրայ ձեզմէ աւելի իրաւունք ունինք. և ինչո՞ւ համար մեզ անարգեցիք, և մեր Թագաւորը նա՛ գտնելուն համար առաջ մեզի խորհուրդ չհարցուցիք։ Բայց Յուդայի մարդոց խօսքը Իսրայէլի մարդոց խօսքէն աւելի խիստ էր։

## Գլ. Ի

1 Եւ հոն Բենիամինի ցեղէն Բոքրեան Սարէէ անուամբ անօրէն մարդ մը գտնուեցաւ. և անիկա փող հնչեցուց և ըսաւ, Մենք Դաւթի քով բաժին չունինք. ով Իսրայէլ, ամէն մարդ իր
2 վրաններ գնա՛։ Ուստի Իսրայէլի բոլոր մարդիկը Դաւթէ պատուկան, և Բոքորեան Սարէէի հետևէն գացին. բայց Յուդայի մարդիկը Յորդանանէ մինչև Երուսաղէմ իրենց Թագաւորին յարձրացան։
3 Եւ Դաւիթ Երուսաղէմ իր տունը

*ՆԷԲ. մեր խօսքը չեղաւ։



եկաւ. և Թագաւորը իր տասը պահպանութեան համար Յուդացած տասը հարճերն առաւ, և զանոնք տան մը մէջ պահել տուաւ և զանոնք կը կերակրէր, բայց անոնց չմտաւեցաւ. և անոնք մինչև իրենց մեռնելու օրը պահուած մնացին, և իրրև այրի ապրեցան։
4 Եւ Թագաւորն Ամեսայիի ըսաւ, Մինչև երեք օր Յուդայի մարդիկը ինծի կանչէ, և դուն ալ հոս ներկայ եղիր։
5 Ուստի Ամեսայի Յուդան կանչելու գընաց, և Դաւթի դրած ատենէն աւելի
6 ուշացաւ։ Այնուհետև Դաւիթ Աբեսսայի ըսաւ, Հիմա Բոքորեան Սարէ Աբիսողմէն աւելի չարութիւն պիտի ընէ մեզի. ոչխէն զան քու տիրոջդ ծառաները և հետ առ և անոր եռաւէն ինկիր, գուցէ իրեն պարսպատոր քաղաքներ գտնէ և մեր աչքին անցայտ
7 ըլլայ։ Այսպէս Յոաբի մարդիկը և Քերեթիներն և Փելեթիները և բոլոր զօրաւորները անոր եռաւէն եղան, և Բոքորեան Սարէէ հալածելու համար Երուսաղէմէ ելան։
8 Երբ անոնք Գաբաւոնի մէջ հղող մեծ քարին քովն էին, Ամեսայի անոնց դիմացը եկաւ. և Յոաբ իր հագած հանդերձէն գօտեւորած էր, և անոր վրայն սրէչ գօտով՝ մէջքը սուր կապած էր պատեհանով մէկտեղ. և երբ անիկա կ'երթար՝ սուրը թափեցաւ ին-
9 կաւ։ Եւ Յոաբ Ամեսայիի ըսաւ, Եղբայրս, ողջ ա՞ռողջ ես. և Յոաբ Ամեսային հարուածելու համար ազ ձեռքով անոր մօրուքէն բռնեց։
10 Եւ Ամեսայի Յոաբի ձեռքը եղած սուրէն չդուշացաւ. և անով Յոաբ անոր շաթէն զարկաւ զանկիա և անոր աղիքը գետին թափեց, և անոր երկրորդ անգամ չզարկաւ. և անիկա մեռաւ։ Եւ Յոաբ և անոր եղբայրն Աբեսսա Բո-
11 քորեան Սարէէի հետևէն ինկան։ Անոնցմէն Յոաբի պատանիներուն մէկն անոր քով կայնեցաւ և ըսաւ, Ով որ Յոաբը կը սիրէ՝ և ով որ Դաւթի
12 կողմն է՝ Յոաբի հետևէն երթա՛։ Եւ Ամեսայի ճամբուն վրայ էր արեան մէջ կը թաւալէր։ Եւ այն մարդը երբ տեսաւ որ բոլոր զօրքը կայնեցան մէնաց, զԱմեսայի ճամբուն վրայէն վերցուց՝ արաթ մը մէջ չէ՞ր, և անոր վրայ լաթ մը ծածկեց. քանզի տեսաւ որ ամէն անոր քով եկողը կանչ կ'առ-
13 նէր։ Եւ զանկիա ճամբուն վրայէն վերցուցածին պէս՝ ամէն մարդ Յոաբի հետևէն գնաց՝ Բոքորեան Սարէէ հալածելու համար։ (Բայց անիկա Իսրայէլի բոլոր ցեղերէն մինչև Աբէլ և Բեթմաաքա անցած էր բոլոր Բերացիներուն հետ, որ անոր քով ժողովուե-
15 լով՝ անոր հետևէն գացած էին.) Եւ անոնք եկան, և Բեթմաաքայի Աբելի մէջ զանիկա պաշարեցին. և քաղաքին առջև հողաթումբ չինեցին, որ պարսպին մօտ կանգնուեցաւ. և Յոաբի հետ եղող բոլոր զօրքը պարիսպը փըլցուցնելու *ի՛նչտաուէին։
16 Եւ խնամուն կին մը քաղաքէն կանչել, լսեցէք, լսեցէք. ընսէք ըրէք՛ Յոաբի ըսէք, Հոս մօտեկիր որ քեզի
17 հետ խօսի՛։ Ու Յոաբ անոր մօտեցաւ. և կինը բսաւ, Յոաբ դո՞ւն ես։ Ու անիկա բսաւ, Ես եմ։ Ու կինը անոր ըսաւ, Քու ապրանդայ խօսքը մտիկ ըրէ. և անիկա բսաւ, Ա՛ն մտիկ կ'ը-
18 նեմ։ Ու կինը խօսեցաւ և բսաւ, Հին առածք սովոր էին բսել, Թող Աբելի †երթան հարցուենն,՝ և այնպէս լմընցուցնէին։ Ես իսրայէլի մէջ խաղաղասէր
19 և հաւատարիմ ‡ըլլա՛ եմ. և դուն կը ջանաս սրել ‡ըլլո՛ք քաղաք մը՝ որ իսրայէլի մէջ մայրաքաղաք է՛։ Տէրոջը ժառանգութիւնն ինչո՞ւ ընկլլիլ
20 կ'ընես։ Յոաբ պատասխան առաւ և բսաւ, Քաւ լիցի, քաւ լիցի, որ ես
21 ընկլլիլ ընեմ կամ աւերեմ. Այդպէս չէ. այլ Եփրեմի լեռնէն Բոքորեան Սարէէ անունով մարդ մը իւր ձեռքը Դաւթի Թագաւորին դէմ վեր-

*ՆԷԲ. Կ'աւրէինք։
†ՆԷԲ. Հարցուենլով հարցուենն,
‡ՆԷԲ. քաղաք և մայր իսրայէլի մէջ.

ցուց· մինակ անիկա տուէք, և այս քաղաքէս երթամ։ Եւ կինը Յովսէփ բսաւ, Ահա անոր գլուխը պարապին
22 վրայէն քեզի պիտի նեռուէ։ Եւ կինը բոլոր ժողովուրդին գնաց՝ իր խնամութեամբը Եւսեբիոս։ և Բօբրիան Աբէլէի գլուխը կոպեցին և Յովսէփ նեռուցին։ Անուանն անիկա վազ հընչեցուց, և ամէն մարդ այն քաղաքին իր վրանը քաշուեցաւ։ Յովսէփ ալ Եբուսացւոյ Թագաւորին դարձաւ։
23 Եւ Յովսէփ իսրայէլի բոլոր զօրքին վրայ էր։ և Յովհաղայի որդին Բանայա Քերեթհացւոցն և Փելեթհացւոցն վրայ
24 էր։ Եւ Ագաբամ Տարկերացւոյ։ և Ադբեղդայի որդին Յովսաբատ յիշասա-
25 կաց գործը էր։ Եւ Սուսա առենագրողը էր։ և Սադովկ և Աբիաթար քա-
26 հանաներ էին։ Եւ Յայրացի Իրաս ալ Դաւթի նախարարն էր։

## Գլ· ԻԱ

1 Եւ Դաւթի օրերն իրարու հետէ երեք տարի սով եղաւ։ և Դաւիթ Տէրոջը *հարցուց։ Եւ Տէրը բսաւ, Սաւուղի և անոր արիւնահեղ տան համար է, քանզի անիկա Գաբաւնացիները
2 մեռուցեր։ Եւ թագաւորը Գաբաւնացիները կանչեց և անոնց խօսեցաւ։ (և Գաբաւնացիք իսրայէլի որդիներէն չէին, այլ Ամորհացւոց մնացորդէն էին։ և իսրայէլի որդիքն անոնց երդում բրած էին։ բայց Սաւուղ իսրայէլի և Յուդայի որդւոց համար նախանձաւորութիւն ընելով՝ զանոնք զորնէ ու-
3 զած էր։) Եւ Դաւիթ Գաբաւնացիներուն բսաւ, Ձեզի ի՞նչ ընեմ, և ինչո՞վ քաւութիւն ընեմ, որ Տէրոջը ժառանգութիւնն օրհնէք։
4 Եւ Գաբաւնացիք անոր բսին, Սաւուղէ և անոր տունէն արծաթ կամ ոսկի չենք ուզեր, և իսրայէլէ մարդ մեռցնել չենք ուզեր։ Եւ անիկա բսաւ, Դուք ինչ որ
5 բսիք՝ ձեզի պիտի ընեմ։ Եւ անոնք Թագաւորին բսին, Այն մարդը որ մեզ չարչռեց, և մեզ այնպէս կարծրացուցեր ուզեց, որ ամենևին իսրայէլի սահմանն
6 ներսն մէջ չգտնուինք, Անոր որդիներէն մեզի եօթը մարդ արուի, և զանոնք Տէրոջը ընծայած Սաւուղի Գաբաայի մէջ Տէրոջը համար կախենք։ Եւ Թագաւորը՝ կոչ տաւ բսաւ։
7 Բայց Թագաւորը Սաւուղեան Յովնաթանի որդւոյն Մեմիբբոսթէի խնայեց, Սաւուղի որդւոյն Յովնաթանի և Դաւթի մէջտեղ եղած Տէրոջը երդման համար։ Բայց Թագաւորն Այիայի աղջկան Ռեսփայի երկու որդիները, զորս Սաւուղի ծնած էր, այսինքն Արմանի և Մեմիբբոսթէ, և Սաւուղի տղիկան *Միհադդայի հինգ որդիները՝ զորս Մաուղայի Բերզելիի որդւոյն Եդրիելի ծնած
9 էր, առաւ, Եւ զանոնք Գաբաւնացւոց ձեռքը տուաւ։ և զանոնք Տէրոջը առջև լեռան վրայ կախեցին, և եօթն ալ միկտեղ մեռան։ և անոնք հնձոց առջի օրերը՝ գարւոյ հնձոց սկիզբը մեռուցեցան։
10 Եւ Այիայի աղջիկը Ռեսփա փոքրմը առաւ, և զանիկա իրեն համար ապառաժի մը վրայ փռեց, հնձոց սկիզբէն մինչև անոնց վրայ երկինքէն անձրև գալը։ և ցորկիք երկնից թռչուններըն՝ և գիշերը անասդաձի գազաններըն չէր
11 թողուր որ անոնց դպչէնին։ Եւ Սաւուղի հարճին Այիայի աղջկան Ռեսփայի
12 ըրածը Դաւթի պատմեցին։ Եւ Դաւիթ գնաց, և Սաւուղի և անոր որդւոյն Յովնաթանի ոսկրները առաւ Գաղաադացի Յաբեսի բնակիչներէն, որ Բեթսանի հրապարակէն գանոնք գողցած էին, ուր Փղշտացիք գանոնք հան կախած էին այն օրը՝ որ Փղշտացիք Գիղբոայի
13 վրայ Սաւուղը մեռուցած էին։ Եւ Սաւուղի ոսկրները և անոր որդւոյն Յովնաթանի ոսկրները անկից վերցուց։ և կախաւածներուն ոսկրներն ալ ժողովեցին։
14 Եւ թաղեցին։ Եւ Սաւուղի և անոր որդւոյն Յովնաթանի ոսկրները Բենիամինի Եր-

*Եբր· երեսը վնասուց։

*Միհրովրին



կիրը՝ Սէլայի մէջ անոր հօրը Կիսի գերեզմանը Թաղեցին, և Թագաւորին բոլոր պատուիրածն ըրին։ և այնուհետև Աստուած երկրին համար եղած ազօթքին ընդունեց։
15 Եւ Փղշտացիք նորէն իսրայէլի հետ պատերազմ ըրին։ և Դաւիթ և անոր ծառաներն անոր հետ իջան և Փղշտացւոց հետ պատերազմ ըրին։ և Դաւիթ ուժ կարնցաւ։
16 Եւ Յեսբիբենոբ՝ որ Ռափայի որդիներէն էր, և երկաթ հարիւր սնդեղ ծանրութեամբ պղնձէ նիզակ ունէր, և մէջքը նոր ---ը կապած էր, ուզեց որ զԴաւիթ զարնէ։
17 Բայց Շարահեայի որդին Աբիսա անոր օգնութեան հասաւ, և Փղշտացին զարկաւ և զանիկա մեռուցաւ։ Անուանն Դաւթի մարդիկն անոր երդում ըրին և ըսին, Այլեւս հետևակ դուն մեզի հետ պատերազմի չելլես, որ իսրայէլի ճրագը չմարես։
18 Եւ այնու հետև նորէն Փղշտացւոց հետ պատերազմ եղաւ Գովբի մէջ։ անատանն Ովսացի Սոփերաք Թոփային որդւոցմէ եղող Սեփեան մեռուցաւ։
19 Եւ նորէն Փղշտացւոց հետ պատերազմ եղաւ Գովբի մէջ։ և Բեթլհեմցի Արիայիրգիմին որդին Ելհանան Գեթացի Գողիաթի եղբայրը զարկաւ, որոյ նիզակին բունը ոստայնանկաց գլանին պէս էր։
20 Եւ նորէն Գեթի մէջ պատերազմ եղաւ։ և երկայնահասակ մարդ մի կար, որոյ ձեռաց մատներն և ոտից մատերը վեց վեց եղեալ՝ քսանեչորս հատ ունէր։ անիկա ալ Ռափայի որդիներէն
21 էր։ Եւ անիկա դիսպրոչել նախատեց։ բայց Դաւթի եղբօրը Սամայայի որդին
22 Յովնաթան զանիկա զարկաւ։ Այս չորսը Գեթի մէջ Ռափայէ ծնած էին, և Դաւթի ձեռքով և անոր ծառաներուն ձեռքով ինկան։

## Գլ· ԻԲ

1 Եւ Դաւիթ՝ այն օրը որ Տէրը զանիկա իր բոլոր թշնամիներուն ձեռքէն և Սաւուղի ձեռքէն ազատեց, այս երգին
2 խօսքերը Տէրոջը խօսեցաւ, Ես բսաւ. Տէրը իմ վէմս, ամրութիւնս և փրկիչս է։
3 Իմ Աստուածս իմ *պարիսպս է, Եւ անոր կը յուսամ.
Անիկա իմ վահանս և իմ փրկութեանս եղջիւրը,
Իմ աշտարակս, իմ ապաստանս և ազատիչս է,
Ձիս անիրաւութենէ զիս կ'ազատեաս։
4 Օրհնեալ Տէրը կը կանչեմ,
Եւ իմ թշնամիներէս կ'ազատիմ։
5 Քանզի մահուան ալիքներն իմ բոլորտիքս աուին,
Եւ անօրէնութեան հեղեղները զիս վախցուցին.
6 Գերեզմանին լարերը զիս պատրեցին,
Եւ մահուան որոգայթներն իմ առջևս առին։
7 Իմ նեղութեանս մէջ Տէրոջը կանչեցի,
Եւ իմ Աստուծոյս ազաղակեցի.
Որ իր տաճարէն իմ ձայնս լսեց,
Եւ իմ ազաղակս անոր ականջներուն հասաւ։
8 Անուանն երկիրը սասանեցաւ և դողաց.
Երկնից հիմերը չարժեցան և սասանեցան,
Քանզի անիկա բարկացաւ։
9 Անոր քիթէն ծուխ ելաւ,
Եւ բերանէն մաղող կրակ.
Անկէ կայծակներ բռնկեցան։
10 Եւ անիկա երկինքը խոնարհեցուց և իջաւ,
Եւ անոր ոտքերուն տակ մառախուղ կար։
11 Եւ քերովբէի վրայ եկաւ և թռաւ.
Եւ հովին թևերուն վրայ երևցաւ։
12 Եւ խաւարը և թանձր ջուրերը
Եւ երկնից ամպերն իր բոլորտիքը վրաքողքը քաշեց։
13 Անոր առջև եղող ծառագայթէն
Կրակի կայծակներ բռնկեցան։
14 Տէրը երկինքէն որոտաց,
Եւ Բարձրեալն իր ձայնը լսել տուաւ։

*Եբր· ժայռս

15 Եւ նեռնը զրկից և զանձք ցրուից,
կայծակինը ղրկէ՞ և զանձք խռովից։
16 Եւ Տէրոջը յանդիմանութեամբ
Ե՛ անոր բարկութեան հովին փչելով՝
Ծովուն յատակները երեցան,
Ե՛ աշխարհս հիմերը յայտնուեցան։
17 Բարձրէն զրկեց Ե՛ զիս բռնեց,
Ե՛ շատ ջուրերէն զիս հանեց։
18 Իմ զօրեղ թշնամիէս Ե՛ զիս ատողներէն ազատից զիս,
վասն զի ինձ զօրաւոր էին։
19 Իմ նեղութեանս օրը իմ առջեւս առին,
Բայց Տէրը ինծի հո՛գ տա՛ր էր։
20 Եւ զիս լայնարձակ տեղ մը հանեց,
Ե՛ զիս ազատեց, քանզի ինծի հաճեցաւ։
21 Տէրը իմ արդարութեանս պէս ինծի վարձատրեց կո՛ ասց.
Իմ ձեռացս մաքրութեան համեմատ հատուցում կ՚ընէ ինծի։
22 Վասն զի Տէրոջը ճամբաները պահեցի,
Ես իմ Աստուծոյս դէմ ամբարշտութեան չըրի,
23 Քանզի անոր օրէնքներէն չհեռացայ,
Ու անոր արձանքներէն չհեռացայ,
24 Եւ անոր առջեւ կատարեալ եղայ,
Ու իմ անօրէնութենէս զգուշացայ։
25 Ու Տէրը ինծի հատուցում ըրաւ իմ արդարութեանս համեմատ,
Իմ չո՛ւացս մաքրութեանը համեմատ,
որ անոր աչքերուն առջեւն է։
26 Ողորմածին հետ ողորմած կ՚ըլլաս,
կատարեալ մարդուն հետ կատարեալ կ՚ըլլաս։
27 Մաքրին հետ մաքուր կ՚ըլլաս,
Ու ծուռին հետ կը ծռիս։
28 Ու վշտացած ժողովուրդը դուն կ՚ազատես։
Ու քու աչքերդ ամբարտաւաններուն վրայ են ու զանո՛ւծ ցածցնես։
29 Քանզի իմ ճրագս դուն ես, ով Տէր,
Ու իմ խաւարս Տէրը կը լուսաւորէ։
30 Վասն զի քեզմով դունդի մը վրայ կը վազեմ,
Ե՛ իմ Աստուծովս պարսպի կ՚անցնեմ։
31 Աստուծոյ ճամբան կատարեալ է։
Տէրոջը խօսքերը փորձուած են։
Անիկա ամէն իրեն յուսացողներուն ասպար է։
32 Քանզի Տէրոջմէն զատ ո՞վ է Աստուած,
Կամ մեր Աստուծմէն զատ ո՞վ է վէմ։
33 Իմ զօրաւոր բերդս Աստուած է,
Ու իմ ճամբաս կատարեալ կ՚ընէ,
34 Իմ ոտքերս եղջերուի *ոտքերո՛ւն պէս կ՚ընէ,
Ու իմ բարձր տեղերուս վրայ զիս կը կայնեցունէ։
35 Ձեռքերս պատերազմի կը վարժէ,
Ու իմ †բազուկներս պղնձէ աղեղ կը լարեն։"
36 Ինծի նաև քու փրկութեանդ ասպարը տուիր,
Ու քու քաղցրութեանդ զիս մեծցուցիր,
37 Իմ քայլերս ճամբաս ներքեւս լայնցուցիր,
Ու իմ ոտքիս յօդուածները չտոչորեցան,
38 Իմ թշնամիներս հալածելով և զանոնք կորզեցի,
Ու հո՛ս չդարձայ մինչև որ զանոնք հատցուցի,
39 Ու զանոնք հատցուցի, գետին զարկի՛ որ չկանգնին.
Անոնք իմ ոտքերուս տակ ինկան,
40 Ու պատերազմի համար ինծի զօրութեան գոգցուցիր.
Ու իմ վրաս եղողները ներքեւս ձգեցիր։
41 Ու իմ թշնամիներուս ‡կռնակն ինծի դո՛ւշ-նէ՛ տուիր,"
Որ զիս ատողները չկրցի՛ր,
42 ‡Աղաղակեցին, բայց ազատող չկար։
Տէրոջը՝ ո՛չ-նէ՛ւ-ին, բայց անոնց պատասխան չտուաւ։
43 Անոնք զանոնք երկրի փոշւոյն պէս մանրեցի։
Ե՛ իմ Աստուծովս պարսպի կ՚անցնեմ
31 Աստուծոյ ճամբան կատարեալ է։
Տէրոջը խօսքերը փորձուած են։
Անիկա ամէն իրեն յուսացողներուն ասպար է։
32 Քանզի Տէրոջմէն զատ ո՞վ է Աստուած,
Կամ մեր Աստուծմէն զատ ո՞վ է վէմ։
33 Իմ զօրաւոր բերդս Աստուած է,
Ու իմ ճամբաս կատարեալ կ՚ընէ,
34 Իմ ոտքերս եղջերուի *ոտքերո՛ւն պէս կ՚ընէ,
Ու իմ բարձր տեղերուս վրայ զիս կը կայնեցունէ։
35 Ձեռքերս պատերազմի կը վարժէ,
Ու իմ †բազուկներս պղնձէ աղեղ կը լարեն։"
36 Ինծի նաև քու փրկութեանդ ասպարը տուիր,
Ու քու քաղցրութեանդ զիս մեծցուցիր,
37 Իմ քայլերս ճամբաս ներքեւս լայնցուցիր,
Ու իմ ոտքիս յօդուածները չտոչորեցան,
38 Իմ թշնամիներս հալածելով և զանոնք կորզեցի,
Ու հո՛ս չդարձայ մինչև որ զանոնք հատցուցի,
39 Ու զանոնք հատցուցի, գետին զարկի՛ որ չկանգնին.
Անոնք իմ ոտքերուս տակ ինկան,
40 Ու պատերազմի համար ինծի զօրութեան գոգցուցիր.
Ու իմ վրաս եղողները ներքեւս ձգեցիր։
41 Ու իմ թշնամիներուս ‡կռնակն ինծի դո՛ւշ-նէ՛ տուիր,"
Որ զիս ատողները չկրցի՛ր,
42 ‡Աղաղակեցին, բայց ազատող չկար։
Տէրոջը՝ ո՛չ-նէ՛ւ-ին, բայց անոնց պատասխան չտուաւ։
43 Անոնք զանոնք երկրի փոշւոյն պէս մանրեցի։

*Կամ բազուկներովս պղնձէ աղեղ մը կը կոտրուի։
†Կամ վիզը ինծի տուիր,
‡Կամ Նայեցան։



Զանոնք փոզոցներու ցեխին պէս կոխեցի և ճմլեցի։
44 Եւ իմ ժողովուրդիս կռիւներէն զիս ազատեցիր,
Ե՛ զիս պահեցիր՝ որ ազգերու գլուխ ըլլամ.
Ե՛ իմ չգիտցած ժողովուրդս ինծի ծառայեց,
45 Օտարներն ինծի *խոնարհութիւն ըրին.
Իրենց ականջներով լսածնուն պէս՝ ինծի հնազանդեցան,
46 Օտարները ափաթացան,
Ու իրենց պահուըտած տեղերէն դողացին։
47 Տէրը կենդանի է, և իմ վէմս օրհնեալ ըլլայ.
Ու իմ փրկութեանս վէմն Աստուած բարձր ըլլայ,
48 Աստուած է որ իմ վրէժս կը լնդրէ,
Ու ժողովուրդներն ինծի կը հնազանդեցունէ,
49 Իմ թշնամիներէս զիս հանելով՝
Զիս իմ վրաս եղողներէն աւելի բարձրացուցիր,
Ե՛ բռնաւոր մարդէն ազատեցիր։
50 Ասոր համար, ով Տէր, ազգերուն մէջ քեզ պիտի գովեմ,
Ու քու անուանդ սաղմոս պիտի երգեմ։
51 Իր թագաւորին փրկութիւնները մեծցնողը՝
Ու իւր օծեալին՝ Դաւիթ և անոր սերունդին
Յաւիտեան ողորմութիւն ընողը Ե՛ է։

## Գլ. ԻԳ

1 Ես Դաւիթ վերջին խօսքերն ասողն են,
Յեսսէի որդին Դաւիթ կ՚ըսէ,
Այն մարդը որ բարձրացաւ,
Յակոբայ Աստուծոյն օծեալը,
Ու Իսրայէլի վայելուչ երգիչը չարաչարողը կ՚ըսէ,
2 Տէրոջը Հոգին ինծմով խօսեցաւ,
3 Իսրայէլի Աստուածն բաւ,
Ե՛ Իսրայէլի վէմն ինծի խօսեցաւ,
Ը՛ներէ՛, Մարդոց վրայ իշխողն արդար ըլլայ,
Ու Աստուծոյ վախովն իշխէ,
4 Անաման անիկա առաւօտեան լուսոյն կը նմանի,
Որ արեւուն ծագած առենը ի՛րենէ՛ս,
Անթափանց առաւօտ մը որ առանց ամպի է,
Ու –բո՛ւ– ճառագայթին,
Որ անձրեւէն երկրը գեհենէն կանանչ խոտը կը բո՛ւսցնէ։
5 Թէ և իմ տունս Աստուծոյ քով այսպէս չէ,
Սակայն ինծի հետ յաւիտենական ուխտ մը բա՛ս,
Որ ամէն բանի մէջ պատրաստ և հաստատ է.
Քանզի իմ բոլոր փրկութիւնս և իմ բոլոր բաղձանքս –ս՛ է.
*Ու պիտի չծաղկեցնէ՞" ըսէ,
6 Բայց բոլոր անօրէնները՝
Դուրս նետուած փուշերու պէս պիտի ըլլան.
Քանզի անոնք ձեռքով չեն բռնուիր,
7 Ու անոնց դպչելու մարդը
Երկաթը և նիզակին բունը †իրեն զէնք պիտի ընէ։"
Ու իրենց եղած տեղը՝
Բոլորովին կրակի մէջ պիտի այրին,
8 Դաւիթի զօրաւոր մարդոց անուններն ասոնք են. ‡Յօսէբ-բաշեբէթ Թահքեմոնացին, որ զօրավարներուն գլխաւորն էր. անիկա է ||Ասոնացի Ադինօն, որ ո՛ն-ըմ-հ՛ը ութ հարիւր մարդ մէկէն մեռցուց։"
9 Ու անկէ ետքը Ագոհացի Դոդիպայի որդին Եղիազար որ Դաւիթի հետ եղող երեք զօրաւորաց մէն էր, երբ անոնք

*Կամ Թէ և չծաղկեցնէ
†Ընդ. լեցուն. ‡Կամ աթոռը նստող
||Կամ իր նիզակը վերցուց ութ հարիւր մարդոց վրայ, և զանոնք մէկէն մեռցուց։

*Ընդ. սուեցին.

պատերազմելու համար հան ժողովուած
փղշտացիները նախատեցին, և խարսխելի
10 մարդիկը փախան. Աւսիկա եղաւ և փղ-
շտացիները զարկան, մինչև որ ձեռ-
քը յոգնեցաւ, և ձեռքը իր սուրին
վրայ փակաւ, և Տէրը այն օրը մեծ
փրկութիւն բրաւ. և ժողովուրդն ա-
նոր եաեւէն գարձաւ՝ միայն կողոպուտ-
ն առնելու համար։
11 Եւ անկէ ետքը Արատացի Ագէի որ-
դին Սամմա էր. և փղշտացիք *զունդ
մը կազմեցին.* և հոն ոսոլով լեցուն
ագարակ մը կար. և ժողովուրդը փը-
12 ղշտացւոց առջեւէն փախաւ. Բայց ա-
նոնք ագարակին մէջտեղ կայնեցան,
զանոնք պաշտպանեց և փղշտացիները
զարկաւ. և Տէրը մեծ փրկութիւն ը-
րաւ։
13 Եւ երեսուն †զօրավարներուն երեքն
իջան, և հնձոց ժամանակ Ոդոդամի
քարայրը՝ Դաւթի եկան. և փղշտա-
ցւոց մէկ գունդը Հափայնց հովիտն
14 մէջ բանակած էր։ Եւ անոնք Դա-
ւիթի բերդին մէջն էր. և անոնք փը-
ղշտացիք Բեթլեհեմի մէջ բերդապահ
15 զօրք ունէին։ Եւ Դաւիթ փափաքե-
լով բաւ, բեթլեհեմի գուռը եղող
16 ջրհորէն ով ինծի ջուր կը խմցնէ։ Ան-
ոնք այս երեք զօրաւորները փղշտա-
ցւոց բանակը ձեղքելով անցան, և
բեթլեհեմի գուռը եղող ջրհորէն ջուր
քաշեցին, և առին Դաւթի տարին.
բայց անկից չուզեց անկ խմել, այլ
դինիկա Քաւելով՝ Տէրոջը հեղուց։
17 Եւ բաւ, Ով Տէր, քու լեցի որ ես
այս բանն ընեմ. իրենց կեանքը վտան-
գի մէջ դնելով գացող մարդոց արիւ-
նը խմե՞. և անկէ խմել չուզեր։ Այսոր
են այն երեք զօրաւոր մարդոց ըրածը-
18 նները։
Եւ Շարուհեան Յոաբի եղբայրը Ա-
բեսսա այն երեք մարդոց գլխաւորն
էր. և անիկա իր նիզակը երեք հա-
րիւր մարդոց վրայ վերցուռնելով՝ ը-

պաններց ջնջեց. և անիկա երեքին
19 մէջ անուանի էր։ Եւ անիկա երեքէն
աւելի համարատ ունենալուն համար,
անոնց գլուխ եղաւ. բայց *–ի երե-
քին առաջինները չհասաւ։
20 Եւ մեծ գործեր գործող Կաբսեէլա-
ցի զօրաւոր մարդու մը որդւոյն Յո-
ւիադայ որդին Բանեա Մոաբի երկու
զօրաւոր մարդիկը մեռցուց։ Նաև ձիւ-
նի ժամանակ իջաւ և գուբին մէջ ա-
21 ռիւծը մեռցուց։ Աւսիկա սեպհով և-
րեայի նիզակացի մարդ մի ալ մեռ-
ցուց. և նիզակացւոյն ձեռքը նիզակ
մը կար, բայց Բանեա ցուպով մը ա-
նոր վրայ իջաւ, և նիզակացւոյն ձեռ-
քէն նիզակը յափշտակեց, և զանիկա
22 անոր նիզակով մեռցուց։ Յոյիադայ
որդին Բանեա այս բաներն բրաւ, և
երեք զօրաւորներուն մէջ անուանի ե-
23 ղաւ. երեսունէն աւելի պատիւ ունէր,
բայց *–ի երեքին առաջինները չհասաւ։
և Դաւիթ զանիկա իր աւետարանին վե-
րակացու դրաւ։
24 Յոաբի եղբայրն Ասայէլ երեսունէն
էր. Նո՛ բեթլեհեմացի Դոդոյի որ-
25 դին Եղիհանան, Հարոդացի Սամմա, Հա-
26 րոդացի Եղիկա, †Փելլտացի Բեղդէս,
27 Թեկուացի Եկկեսի որդին Իրաս, Անա-
թոթացի Աբիեզեր, Ովսացի Մեբուն-
28 նայ, Ախոհացի Սելմոն, Նետոփաթա-
29 ցի Մահարայ, Նետոփաթացի Բաանայի
որդին Հէլեբ, Բենիամինի որդւոց Գա-
30 բաայէն Ռիթայի որդին Իթթէ, Փա-
րաթոնացի Բանեա, Գահաս Հորերէն
31 Ագդայի, Արաբաթացի Աբիէլբոն, Բա-
32 բահացի Ազմաւէթ, Սաղարիմացի Եղի-
ահբա Յաշէնի որդիներէն՝ Յովնաթան,
33 Հարարացի Սամմա, Հարարացի Սարարի
34 որդին Հափեար, Մաքաթիի որդւոյն
Հահասբայի որդին Եղիփաղէտ, Գեղո-
35 նացի Հասբէ, Հարրացի Փաաղայ,
36 Ուրբայի Հեսմոնի որդին Իգալ, Դա-
37 գայի Բանի, Ամմոնացի Սելեկ, Շա-
բահեան Յոաբի զինակիրը Բե-

*Կամ Քեթայացի մէջ ժողովեցան.
†Կամ Գիլոնացի

*Կամ Փելոնացի



38 բսիմ ացի Նահարա, Յեթրեացի Իրաս,
39 Յեթրեացի Գարեբ, Քեաացի Ուրիա.
ամէնը երեսունեւեօթն էին։

ԳԼ. ԻԴ

1 Եւ Տէրոջը բարկութիւնը նորէն Իսրա-
յելի վրայ բորբոքեցաւ, և Դաւիթ ա-
նոնց դէմ գրգռեց, ըսելով, Գնա Իս-
2 րայէլ և Յուդա համրէ։ Եւ թագաւո-
րը իր քով եղող Յովաբ զօրապետին
բսաւ, Իսրայէլի բոլոր ցեղերուն մէջ՝
Դանէ մինչև Բերսաբէէ պարտ, և ժո-
ղովուրդը համրեցէք, որ ժողովուրդին
3 թիւը գիտնամ։ Եւ Յովաբ բսաւ թա-
գաւորին, Թող Տէր Աստուածդ՝ ժողո-
վուրդը այսպէս որ է՝ հարիւր բազմապիկ
աւելցնէ, և իմ թագաւոր սիրոյս աչ-
քերը տեսնեն. բայց իմ թագաւոր ասոր
ինչո՞ համար այս բանիս կը ցանկայ։
4 Եւ երբ թագաւորին խօսքը Յովաբի և
զօրավարներուն վրայ տասակացաւ, Յո-
վաբ զօրավարներուն հետ թագաւորին
առջեւէն ելաւ, որ Իսրայէլի ժողովուր-
5 դը համրէ։ Եւ Յորդանանէ անցան,
և Դադի ձորին մէջ եղող քաղաքին
աջ կողմը Արոէր բանակեցան. յետոյ
6 Յազեր, Եւ Գաղաադ և Թահթիմհոդա-
սի երկիրը եկան. անկէ *Դանեսան, և
7 Սիդոնի չրջականերն եկան։ Եւ *–ի
Տիրոսի ամրոցը և Խեւացւոց և Քա-
նանացւոց բոլոր քաղաքները գացին.
և Յուդայի հարաւային կողմը բերսա-
8 բէէ ելան։ Եւ բոլոր երկիրը պտտե-
ցան. և ինն ամսէ և քսան օրէ ետքը
9 Երուսաղէմ գտձան։ Եւ Յովաբ ժո-
ղովուրդին թուոյն ցուցակը թագաւո-
րին տուաւ. Եւ Իսրայէլի մէջ ութ հա-
րիւր հազար աւազ քաշող պատերազ-
մական մարդ կար. և Յուդայեանք հինգ
հարիւր հազար մարդ էին։
10 Եւ Դաւիթ ժողովուրդը համրելէն
ետքը՝ իսղոնը գրգռեց զինք. և Դաւիթ
Տէրոջը բսաւ, Այս բնելով մեծ մեղք
գործեցի. ով Տէր, հիմա քու ծառայիդ
11 այս մեղքը ներէ. քանզի մեծ յիմա-
ցաւ բսիւն ըրի։ Եւ երբ Դաւիթ առաւօ-
տան եղաւ, Տէրոջը խօսքը Դաւիթ մար-
գարէին՝ Գադ մարգարէին եղաւ, ը-
12 սելով, Գնա և Դաւիթի բսէ, Տէրը այս-
պէս կ'ըսէ. Ես քեզի երեք բան կը-
առաջարկեմ. անոնց մին ընտրէ որ քե-
13 զի ընեմ։ Եւ Գադ Դաւիթի գալով՝ ա-
նոր պատմեց, և անոր բսաւ, Եօթը
տարի քու երկրիդ վրայ սով ըլայ,
կամ երեք ամիս քու թշնամիներուդ
երեսէն փախչիս, և անոնք քեզ հա-
լածեն, կամ թէ երեք օր քու երկրիդ
վրայ ժանտախտ ըլայ. արդ խորհէ և
տես թէ ինչ պատասխան տանիմ դին
14 զրկողին։ Եւ Դաւիթ Գադի բսաւ, Շատ
մեծ նեղութեան մէջ եմ. հիմա Տէրո-
ջը ձեռքն իյնանք, քանզի անոր գո-
թութիւնը շատ է, և մարդու ձեռքը
չիյնամ։
15 Եւ Տէրը այն առաւօտեան մինչև որոշ-
ուած ժամանակը Իսրայէլի վրայ ժան-
տախտ զրկեց. և Դանէ մինչև Բերսա-
բէէ ժողովուրդէն եօթանասուն հազար
16 մարդ մեռաւ։ Եւ Աստուծոյ հրեշտակը
ձեռքը երուսաղէմի վրայ երկարեցուց
որ զանիկա ջնջէ. և այս չարեաց վրայ
Տէրոջը սիրտը իյնաւ, և ժողովուրդը
ջնջող հրեշտակին բսաւ, Հերիք է, ալ
ձեռքդ քաշէ. և Տէրոջը հրեշտակը Յե-
17 բուսացի Ոռնայի կալին քովը էր։ Եւ
Դաւիթ ժողովուրդը զարնող հրեշտա-
կը տեսնելով՝ Տէրոջը բսաւ, Ահա ես
մեղանչեցի և ես անօրէնութիւն ըրի,
բայց այս ոչխարներն ի՞նչ ըրին. կ'ա-
ղաչեմ՝ քու ձեռքդ իմ վրաս և իմ
հօրս տան վրայ ըլայ։
18 Եւ նոյն օրը Գադ Դաւիթի եկաւ, և
անոր բսաւ, Ելիր, Յեբուսացի Ոռնայի
19 կալին մէջ Տէրոջը սեգան կանգնէ։ Եւ
Դաւիթ Գադի բսածին համեմատ վեր
ելաւ, ինչպէս որ Տէրը պատուիրած էր։
20 Եւ Ոռնա նայեցաւ, և երբ տեսաւ որ
թագաւորը և անոր ծառաները գէպ
իրեն կու գային, Ոռնա ելաւ և երեսը
մինչև գետին խոնարհեցուց իրեն բսաւ թա-
21 գաւորին, Եւ Ոռնա բսաւ, Աղբեզ

*Կամ Դանի անտառը

ի՞նչ պատճառաւ իմ Թագաւոր տէրս իւր ծառային եկաւ։ Եւ Դաւիթ ըսաւ, Այ՛ կալը քենէ գնելու և Տէրոջը սեղան մը շինելու համար, որ ժողովրդին վրայէն հարուածը վերնայ։ Եւ Ոռնա ըսաւ Դաւիթի, Իմ Թագաւորը տէրս ընդունի առնէ, և իր աչքին հաճոյ երևցածին պէս զոհ բնէ. ահա եզերն ողջակիզի համար, կառնասայլերը և եզերուն գործիները փայտի համար լըման Ոռնայ ամէնը *Ոռնա Թագաւորի մը պէս Թագաւորին տուաւ. և Ոռնա Թագաւորին ըսաւ, Տա՛ Տէր Աստուած քեզ ընդունի, բայց Թագաւորը Ոռնայի ըսաւ, Ոչ. այլ ես ընդհա՛ւ քենէ անչուշտ առակով պիտի գնեմ, և Տէր Աստուծոյս ողջակէզ պիտի չմատուցանեմ։ Եւ Դաւիթ կալը և եզերն յիսուն արծաթով գնեց։ Եւ Դաւիթ հոն Տէրոջը սեղան շինեց, և ողջակէզներ և խաղաղութեան զոհեր մատուցց. և Տէրը լսեց ետ ազօթքը երկրին համար, և Իսրայէլի վրայէն հարուածը վերցաւ։

# †ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱՒԻՈՐԱՑ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Եւ Դաւիթ Թագաւորը ծերացած և առաջին առած էր, և զանիկա հանդերձներով կը ծածկէին, բայց չէր
2 տաքնար։ Եւ ծառաներն անոր ըսին, Մեր Թագաւոր տէրոջը համար կոյս աղջիկ մը փնտռենք՝ որ Թագաւորին առջև կայնի, զանիկա գարմանէ և անոր ծոցը պառկի, որ մեր Թագաւոր տէրը
3 տաքնայ։ Եւ Իսրայէլի բոլոր սահմաններուն մէջ գեղեցիկ աղջիկ մը փնտռեցին. և Սունամացի Աբիսագը գտան,
4 և զանիկա Թագաւորին բերին։ Եւ այն աղջիկը շատ գեղեցիկ էր. և անիկա Թագաւորը կը գարմանէր և անոր ըսպասաւորութիւն կ'ընէր. բայց Թագաւորը զանիկա չգիտցաւ։
5 Ադոնիան Ագգիթի որդին Ադոնիա հըպարտացաւ և ըսաւ, Ես Թագաւոր ըլլամ. և իրեն համար կառքեր և ձիաւորներ պատրաստեց, և հիսուն մարդ՝
6 որ իր առջևէն վազեն։ Եւ անոր հայրը անոր կենացը մէջ ամենևին յանդիմանած չէր ընա, ըսելով Թէ ինչո՞ւ այդպէս ըրիր։ և անիկա սեւագոյն շատ գեղեցիկ էր, և ծնոր Աբիսագը զանիկա Ա-
7 բիաթարին հետ էր, և անոնք խօսքը ժէկ ըրաւ. Յովաբին հետ և Աբիաթար քահանային հետ, որ Ադոնիայի հետևելով՝ անոր
8 օգնութիւն կ'ընէին։ Բայց Սադոկ քահանան և Յովիադայի որդին Բանիա և Նաթան մարգարէ և Սեմէի և Ռէի և Դաւիթի զօրաւոր մարդիկն Ադոնիայի
9 հետ չէին։ Եւ Ադոնիա Ռոգելի ազբիւրին մօտ եզող Զոհելեթի քարին քով՝ ոչխարներ, արջառներ և գեր անասուններ մորթեց. և իր ամէն եղբայրները՝ Թագաւորին որդիքը, և Յուդայի բոլոր մարդիկը՝ Թագաւորին ծառաները հրաւիրեց։ Բայց Նաթան մարգարէն և Բանիա և զօրաւորները և իր Սողոմոն եղբայրը չհրաւիրեց։
11 Եւ Նաթան Սողոմոնի մօր Բերսաբէի հետ խօսեցաւ և ըսաւ, Զլսեցի՞ր որ Ադդիթի որդին Ադոնիա Թագաւոր եղաւ, և մեր տէրը Դաւիթ չիմացաւ։
12 Ուրեմն հիմա եկուր քեզի խրատ մը

*ՆԲՔ. Ոռնա Թագաւորը
†Կամ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ԹԱԳԱՒԻՈՐԱՑ



տամ, որ քու կեանքդ և քու որդւոյդ Սողոմոնի կեանքն ազատես։
13 Որովհետև գնա՛ Դաւիթ Թագաւորին քով, և անոր ըսէ, Ով տէր իմ Թագաւոր, դուն քու աղախնոջդ երդում չըրի՞ր և չըսի՞ր որ Ինէ՛ն քու որդիդ Սողոմոն Թագաւոր պիտի ըլլայ, և իմ աթոռս նա՛ անիկա պիտի նստի. և ինչո՞ւ համար Ադոնիա Թագաւոր եղաւ։ Ահա դուն այն ատեն Թագաւորին հետ խօսած ատենդ՝ ես ալ եմ՛եդ կու գամ, և քու խօսքերդ կը լրացնեմ։
15 Եւ Բերսաբէ ներքին սենեակը մտաւ Թագաւորին քով. և Թագաւորը շատ ծերացած էր, և Սունամացի Աբիսագ Թագաւորին ծառայութիւն կ'ընէր։
16 Եւ Բերսաբէ գլուխը ծռեց և Թագաւորին խոնարհութիւն ըրաւ։ Եւ Թագաւորը ըսաւ, Ի՞նչ կ'ուզես։ Եւ անիկա ըսաւ անոր, Ով տէր իմ, դուն քու ադախնոջդ քու Տէր Աստուծդ անուամբ երդում ըրիր, ըսելով, Ինէ՛ն քու որդիդ Սողոմոն Թագաւոր պիտի ըլլայ, և իմ աթոռս նա պիտի նստի։ Եւ ահա հիմա Ադոնիա Թագաւոր եղած է, և դուն չիմացար, ով տէր իմ Թագաւոր։ Եւ անիկա շատ արջառներ և գեր անասուններ և ոչխարներ մորթեց, և Թագաւորին բոլոր որդիքը և Աբիաթար քահանան և Յովաբ զօրավարը հրաւիրեց, բայց քու ծառադ Սողոմոն չհրաւիրեց։ Հիմա, ով տէր իմ Թագաւոր, բոլոր Իսրայէլի աչքը քու վրադ է, որ անոնց յայտնուես Թէ իմ Թագաւոր տիրոջս աթոռոն իմմէ ետքը ո՛վ պիտի նստի։ Եթէ ոչ՝ երբ իմ Թագաւոր տէրս իր հայրերուն հետ քնանայ, ես և իմ որդիս Սողոմոն յանցաւոր պիտի համարուինք։
22 Եւ երբ անիկա Թագաւորին հետ կը
23 խօսէր, Նաթան մարգարէ եկաւ։ Եւ Թագաւորին յայտնեցին և ըսին Թէ Ահա Նաթան մարգարէ է՛։ և անիկա ներս Թագաւորին առջև, և երեսը մինչև գետին ծռելով Թագաւորին խոնարհութիւն ըրաւ։ Եւ Նաթան ըսաւ, Ով տէր իմ Թագաւոր, դո՞ն ըսիր որ Ինէ՛ն եղբայրդ Ադոնիա Թագաւոր պիտի ըլլայ, և իմ աթոռս անիկա պիտի նստի։
25 Որովհետև անիկա այսօր իջաւ, և շատ արջառներ և գեր անասուններ և ոչխարներ մորթեց. և Թագաւորին բոլոր որդիքը, զօրավարները և Աբիաթար քահանան հրաւիրեց. և ահա անոնք անոր առջև կ'ուտեն կ'ըմպեն, կը խնդան
26 և կ'ըսեն, Կեցցէ՛ արքայ Ադոնիա։ Բայց զիս քու ծառադ և Սադոկ քահանան և Յովիադայի որդին Բանիան և քու
27 ծառադ Սողոմոն չկանչեց։ Այս բանն արդեօք իմ Թագաւոր տիրոջս ձեռքովն եղաւ, և քու ծառայիդ չգիտցուցիր Թէ քենէ ետքը իմ Թագաւոր տիրոջս աթոռոն ո՛վ պիտի նստի։
28 Եւ Դաւիթ Թագաւորը պատասխան առաւ և ըսաւ, Բերսաբէն ինծի կանչեցէ՛ք։ Եւ անիկա Թագաւորին առջև եկաւ և Թագաւորին առջև կայնեցաւ։
29 Եւ Թագաւորը երդում ըրաւ և ըսաւ, իմ անձս ամէն նեղութենէ ազատող
30 Տէրը կենդանի է՛ որ, ինչպէս քեզի խրատեցի Տէր Աստուծով երդում ըրի, և ըսի Թէ ինէ՛ն քու որդիդ Սողոմոն Թագաւոր պիտի ըլլայ, և իմ աթոռս նա պիտի նստի. և իմ տեղս իմ աթոռս վրայ անիկա պիտի նստի, ահա այսօր այնպէս պիտի ընեմ։
31 Աբիսագն Բերսաբէ երեսը մինչև գետին ծռելով՝ Թագաւորին խոնարհութիւն ըրաւ և ըսաւ, իմ տէրս Դաւիթ Թագաւոր յաւիտեան ապրի կենայ։
32 Եւ Դաւիթ Թագաւորն ըսաւ, Սադոկ քահանան և Նաթան մարգարէն և Յովիադայի որդին Բանիան հիմի կանչեցէ՛ք։ Եւ անոնք Թագաւորին առջև
33 չև եկան։ Եւ Թագաւորն անոնց ըսաւ, Ձեր տիրոջը ծառաները ձեր հետ առէ՛ք, և իմ որդիս Սողոմոնն իմ ջորուս վրայ հեծցուցէ՛ք, և զանիկա Գիհոն ի-
34 ջեցուցէ՛ք։ Եւ Սադոկ քահանան և Նաթան մարգարէ հոն զանիկա իսրայէլի վրայ Թագաւոր օծեն. և փող հնչեցուցէ՛ք և ըսէ՛ք, Կեցցէ արքայ Սողոմոն։ Եւ անոր հետևէն ելէ՛ք, և անիկա Թագ գայ և իմ աթոռս նստի, և իմ տեղս անիկա Թագաւոր ըլլայ. զանի-

զի ես հրաման տուի որ անիկա խոտա-
յելի վրայ և Յուդայի վրայ իշխան լի-
36 նայ։ Անասնոյ Յովիաթայի որդին Բան-
ես թագաւորին պատասխան առաւ և
բսաւ, Ահեղ. իմ թագաւոր տիրոջս
37 Տէր Աստուածն ալ այդպես ըսէ, ինչ-
պէս որ Տէրը իմ թագաւոր տիրոջս
հետ էր, Սողոմոնի հետ ալ այնպէս լի-
նայ, և անոր աթոռն իմ տիրոջս Դա-
ւիթ թագաւորին աթոռէն մեծ բնէ,
38 Անասոն Սադոկ քահանան, Նաթան
մարգարէ և Յովիաթայի որդին Բան-
ես, և Փելեթիները և Փելեթիները ի-
ջան, և զՍողոմոն Դաւիթ թագաւորին
ջորւոյն վրայ հեծուցին, և զանիկա
39 Գիհոն տարին. Եւ Սադոկ քահանան
խոտանէն եղին եղջիւրն առաւ և զՍո-
ղոմոն օծեց. և փողը հնչեցուցին, և
բոլոր ժողովուրդը ի՛նսէր, կեցցէ ար-
քայ Սողոմոն. Եւ բոլոր ժողովուրդն
40 անոր ետևէն կ՚ելլէին. և ժողովուրդը
սրինգներ հնչեցնելով մեծ ուրախու-
թեամբ կ՚ուրախանային, այնպէս որ
անոնց ձայնէն գետինը *կը դղրդէր։
41 Եւ Ադոնիա և անոր բոլոր բաղմա-
կանները լսեցին. և ուռնկը կերակու-
րէն հրած էին. և Յովաբ փողին ձայնը
լսելով՝ ըսաւ, Ի՞նչ պիտի ըլլայ այս
դղրդման ձայնը որ քաղաքին կ՚ելլէ,
42 երբ անիկա տակաւին կը խօսէր, ահա
Աբիաթար քահանային որդին Յովնա-
թան եկաւ. և Ադոնիա ըսաւ, Եկուր,
քանզի դուն քաջ մարդ ես, և բարի
43 աւետիս պիտի բերես. Յովնաթան
պատասխան առաւ և ըսաւ Ադոնիա-
յի, Շեղաւկն այո է որ մեր աէրը Դա-
ւիթ թագաւորը զՍողոմոն թագաւոր
44 ըրաւ. Եւ թագաւորը Սադոկ քահա-
նան և Նաթան մարգարէն և Յովիա-
թայի որդին Բանեան, և Փելեթիները
և Փելեթիները անոր հետ դրկեց. և
զանիկա թագաւորին ջորւոյն վրայ հեծ-
45 ուցին. Եւ Սադոկ քահանան և Նա-
թան մարգարէն զանիկա Գիհոնի մէջ
թագաւոր օծեցին, և անկէ ուրախա-
թեամբ եկան, և քաղաքը դղրդեցաւ.
46 Ե ձայնը զոր կը լսէք այն է, նաև Սո-
ղոմոն թագաւորութեան աթոռին վր-
47 րայ նստաւ. Եւ թագաւորին ծառա-
ներն ալ մեր աէրը Դաւիթ թագաւորն
օրհնելու եկան, և ըսին, Քու Աստ-
ուածդ Սողոմոնի անունը քու անուն-
նէդ աւելի մեծցուցէ, և անոր աթոռը
քու աթոռէդ աւելի բարձրացուցէ. Եւ
թագաւորը իր անկողնին վրայ երկրը-
48 պագութիւն ըրաւ։ Նաև թագաւորն
այսպէս ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածն
օրհնեալ ըլլայ, որ այսօր իմ աթոռիս
վրայ նստող մը առաւ, և իմ աչքերս
49 անոնն. Եւ Ադոնիայի բոլոր կոչնական-
ները զարհուրեցան, և երան և ելա-
քանչիր իր ճամբան գնաց։
50 Եւ Ադոնիա Սողոմոնի երեսէն վախ-
ցաւ, և եղաւ գնաց և սեղանին եղջիւր-
51 ները բռնեց. Եւ Սողոմոնի պատմեցին
և ըսին, Ահա Ադոնիա Սողոմոն թա-
գաւորէն վախցաւ, և ահա անիկա սե-
ղանին եղջիւրները բռնեց, և ըսաւ,
Սողոմոն թագաւորն այսօր ինձի եր-
դում ընէ որ իր ծառան սրով պիտի
52 չմեռցնէ. Եւ Սողոմոն ըսաւ, Եթէ ա-
նիկա առաքինի ըլլայ, անոր մկ մա-
զը գետին պիտի չիյնայ. բայց եթէ ա-
նոր վրայ չարութիւն գտնուի, անա-
53 նուն պիտի մեռնի։ Եւ Սողոմոն թա-
գաւորը դրկեց, և զանիկա սե-
ղանէն վար իջեցուցին. Եւ անիկա ե-
կաւ և Սողոմոն Թագաւորին խոնար-
հութիւն բրաւ. և Սողոմոն անոր ը-
սաւ, Տունդ գնա։

## Գլ. Բ

1 Եւ երբ Դաւիթ մեռնելու օրերը մո-
տեցան, իր որդւոյն Սողոմոնի պատ-
2 ուէր առաւ, ըսելով, Ահա ես ամէն
երկրին ճամբան կ՚երթամ, իսկ դուն
3 զօրացիր և *քաջասիրտ եղիր. Եւ քու
Տէր Աստուծոյդ պահպանութիւնը պա-
հէ, որ անոր ճամբաներուն մէջ քա-

*Եբր. կը ճեղքուէր։

*Եբր. այր



լես, և անոր կանոնները, պատուի-
րանները, դատաստանները և վկա-
յութիւնները պահես, ինչպէս որ Մով-
սիսի օրէնքին մէջ գրուած է. որ-
պէսզի ինչ որ ընես և ուր որ երեսդ
4 դարձնես յաջողութիւն գտնես. Որ-
պէս զի Տէրը իր խօսքը հաստատէ,
զոր ինծի համար խօսեցաւ՝ ըսելով,
Եթէ քու որդիքդ իրենց ճամբաներուն
զգուշութիւն բնեն, և իմ առջեւս յու-
սով սրտով, բոլոր հոգւով և ճշմար-
տութեամբ քալեն, Իսրայէլի աթոռին
վրայէն քեզի մարդ պակաս պիտի չըլ-
5 լայ։ Եւ դուն գիտես ինչ որ Յովաբ
Նեթանեայի որդին Յովաբ ինծի բրաւ, և ինչ
որ Իսրայէլի երկու զօրավարներուն՝
Ներեան Աբենեղի և Յեթերեան Ամա-
սայեի բրաւ. քանզի զանոնք մեռցուց,
և խաղաղութեան ատեն պատերազմի
արիւն թափեց, և իր մէջքի գօտւոյն
և ոտքի կօշիկներուն վրայ պատերազ-
6 մի արիւն արկաց։ Ուրեմն դուն քու
իմաստութիւնդ ի գործ դնես, և ա-
նոր ճերմակ մազերը խաղաղութեամբ
7 գերեզման չիջեցնես։ Բայց Գաղաա-
դացի Բերզելիի որդւոց ողորմութիւն
ընես, և քու սեղանիդ ուտողներուն
հետ ըլլան. քանզի երբ քու եղբօրդ
Աբեսողոմի երեսէն փախայ, ինծի այն-
8 պես մօտեցան։ Եւ ահա քեզի հետ Բա-
հուրիմեան Գերայի որդին Սեմէի քու
փովդ է. և անիկա Մահայիմ գացած
օրը ինծի անէծք աուաւ։ բայց
երբ անիկա զիս դիմաւորելու հասաւ
Յորդանան իջաւ, Տէրոջմով երդում ը-
րի անոր և ըսի, Քեզ սրով չեմ մեռ-
9 ցներ։ Եւ հիմա զանիկա անմեղ չհա-
մարիս, քանզի դուն խելացի մարդ ես
և գիտես ինչ պիտի ընես անոր. և ա-
նոր ճերմակ մազերն արիւնով գերեզ-
ման իջեցնես։
10 Եւ Դաւիթ իր հայրերուն հետ քնաց-
աւ, և Դաւիթ քաղաքին մէջ թաղ-
11 ուեցաւ։ Եւ Դաւիթ Իսրայէլի վրայ թա-
գաւորութեան օրերը քառասուն տա-
րի էին. Հեբրոն տասը տարի մէջ թա-
գաւորութիւն բրաւ, և Երուսաղէմի մէջ թագաւորութիւն բրաւ։
12 Եւ Սողոմոն իր հօրը Դաւիթի աթո-
ռը նստաւ, և անոր թագաւորութիւ-
նը չատ հաստատ եղաւ։
13 Եւ Ագիթի որդին Ադոնիա Սողոմո-
նի մօրը Բերսաբեի գնաց. և Բերսաբէ
անոր բսաւ, Միթէ խաղաղութեամբ
եկար. և անիկա բսաւ, Խաղաղու-
14 թեամբ։ Եւ բսաւ, Քեզի խօսք մը ու-
15 նիմ. և անիկա բսաւ, Խօսէ. Եւ անի-
կա բսաւ, Դուն ազիկ գիտես որ թա-
գաւորութիւնն իմ էր, և բոլոր Իս-
րայէլ երեսն իմ վրաս էր որ թագա-
ւոր ըլլամ. բայց թագաւորութիւնը
դարձաւ և իմ եղբօրս եղաւ, քանզի
16 անոր Տէրոջմէ եղաւ։ Եւ հիմա ես քե-
զի խնդիրք մը կը խնդրեմ. *ինծի չչ
յրուիս։ Եւ Բերսաբէ անոր բսաւ, Խօ-
17 սէ։ Եւ անիկա բսաւ, Կ՚աղաչեմ Սո-
ղոմոն թագաւորին բսէ, (քանզի անի-
կա քեզի չչ յրուիր,) որ Սունամացի Ա-
18 բիսագն ինծի կնութեան տայ։ Եւ Բեր-
սաբէ բսաւ, Աղէկ, ես քեզի համար
թագաւորին կը խօսիմ։
19 Եւ Բերսաբէ Սողոմոն թագաւորին
գնաց, որ Ադոնիայի համար անոր հետ
խօսի. և թագաւորը զանիկա դիմաւո-
րելու համար ոտք ելաւ և անոր խոնար-
հութիւն բրաւ. և երբ իր աթոռը
նստաւ, թագաւորին մօրը համար ալ
աթոռ դնել տուաւ, և անիկա անոր
20 աջ կողմը նստաւ. Եւ բսաւ, Ես քեզ-
մէ փոքր խնդիրք մը կը խնդրեմ, չի-
ծի ոչ չրսես։ Եւ թագաւորն անոր ը-
սաւ, Խնդրէ, մայր իմ, քանզի քեզի
21 ոչ պիտի չրսեմ։ Եւ անիկա բսաւ, Սու-
նամացի Աբիսագն եղբօրդ Ադոնիայի
22 կին տուրէ։ Եւ Սողոմոն թագաւորը
պատասխան տուաւ և բսաւ իր մօրը,
Դուն ինչո՞ Ադոնիայի համար Սունա-
մացի Աբիսագ կը խնդրես. անոր հա-
մար թագաւորութիւնն ալ խնդրէ,
(քանզի անիկա իմ մեծ եղբայրս է,)
անոր և Աբիաթար քահանային և Շա-

*Եբր. իմ երեսս մի դարձներ։

23 բուհեան Յովաբի համար։ Եւ Սողոմոն
Թագաւորը Տէրոջմով երդուեցաւ ըսաւ,
և ըսաւ, Աստուած ինծի այսպէս և աւելի քան զայս ընէ, որ Ադոնիա այդ
24 խօսքը իւր կենաց դէմ խօսած է. Եւ
հիմա վա՛հ հաստատողը, և վա՛հ իմ հօրը Դաւիթի աթոռը նստեցնողը, և
իւր խոստմունը պէս ինծի տուն չինող Տէրը կենդանի է որ Ադոնիա այսօր սպի-
25 տի մեռցնէ։ Եւ Սողոմոն Թագաւորը
Յովհադայի որդին Բանեա ղրկեց. և
զարկաւ զանիկա, որ մեռաւ։
26 Եւ Թագաւորն Աբիաթար քահանային ըսաւ, Անաթովթ՝ քու ագարակդ
գնա, քանզի դուն մեռնելու արժանի
ես, բայց այսօր քեզ չեմ մեռցներ.
քանզի հօրս Դաւիթի առջև Տէր Եհովային տապանակը վերցուցիր. և իմ
հօրս ամէն կրած նեղութիւններուն
27 մասնակից եղար։ Եւ Սողոմոն վռնիաթար Տէրոջը քահանայութենէն հանեց,
որ Սիլովի մէջ Հեղիի տան համար Տէրոջը ըսած խօսքը կատարէ։
28 Եւ այս լուրը մինչև Յովաբի հասաւ.
(քանզի Յովաբ Աբեսողոմի հետևող չէր, բայց Ադոնիայի հետևող
եղաւ։) և անասուն Յովաբ Տէրոջը խոնարը փախաւ, և սեղանին եղջիւրները
29 բռնեց։ Եւ Սողոմոն Թագաւորին իմացուցին թէ Յովաբ Տէրոջը խոնարը
փախաւ, և ահա անիկա սեղանին քովն է։ և Սողոմոն Յովհադայի որդին Բանեա ղրկեց և ըսաւ, Գնա անիկա զարկ։
30 Եւ Բանեա Տէրոջը խոնարը Յովաբէն գրնաց, և անոր ըսաւ, Թագաւորն այսպէս կ'ըսէ, Դուրս եկիր։ և անիկա ըսաւ, Ոչ, հա հոս պիտի մեռնիմ։ և
Բանեա Թագաւորին պատմեց և ըսաւ,
Յովաբ այսպէս ըսաւ, և ինծի այսպէս
31 պատասխան տուաւ։ Եւ Թագաւորն ըսաւ անոր, Անոր ըսածին պէս ըրէ, և
զանիկա մեռցուր և զանիկա թաղէ,
որ իմ վրայէս և իմ հօրս տան վրայէն
Յովաբի Թափած անմեղ արիւնը վեր-
32 ցնիս։ Եւ Տէրը անոր գլխուն արիւնն անոր գլխուն դարձունէ. քանզի անիկա առանց իմ հօրս Դաւիթի գիտու-

Թեան երկու լաւ արդար և ազնիկ մարդոց, Խաթանէլի զաբաթացիին Նէրեան Աբենեղրի, և Յուդայի զաբաթացին՝ Յեթերեան Ամեսայիի վրայ յարձակեցաւ, և զանոնք սրով մեռ-
33 ցուց. Ուստի անոնց արիւնը Յովաբի գլուխը և անոր սերունդին գլուխը դառնայ յաւիտեան. բայց Դաւիթի և անոր սերունդին և անոր տան և անոր աթոռին Տէրոջը կողմանէ յա-
34 ւիտեան խաղաղութիւն ըլլայ։ Եւ Յովհադայի որդին Բանեա ելաւ և անոր վրայ յարձակեցաւ, և զանիկա մեռցուց. և անիկա անապատին մէջ իր
35 տունը թաղուեցաւ։ Եւ Թագաւորն անոր տեղ զօրքին վրայ Յովհադայի որդին Բանեա դրաւ. և Թագաւորը Սադոկի քահանան Աբեաթարի տեղ դրաւ։
36 Եւ Թագաւորը հրէշ ղրկեց, Սեմէի կանչեց և անոր ըսաւ, Քեզի Երուսաղեմի մէջ տուն մը չինէ և հոն նստէ,
և անկէ տղին կամ անդին չելլես.
37 Քանզի տղէկ գիտնաս որ եթէ ելլես և կեդրոն հեղեղատն անցնես, նոյն օրն անպատճառ պիտի մեռնիս։ Ե՛ր ա-
38 րիւնդ քու գլուխդ պիտի ըլլայ։ Եւ Սեմէի Թագաւորին ըսաւ, Այս խօսքդ բարի է. իմ Թագաւոր տէրս ինչպէս որ ըսաւ՝ քու ծառադ այնպէս պիտի ընէ։ Ուստի Սեմէի շատ օրեր Երուսաղեմի մէջ նստաւ։
39 Եւ երեք տարի հետքը Սեմէիի երկու ծառաներէն Գէթի Թագաւորին Մաաքայի որդւոյն Անքուսի քով փախան. և Սեմէիի իմացուցին՝ ըսելով, Ահա
40 քու ծառաներդ Գէթի մէջ են։ Եւ Սեմէի հոս և իր էշուն հասմար ղրաւ, և իր ծառաները փնտրելու համար Գէթ գնաց Անքուսի քով. և Սեմէի
41 գնաց և իր ծառաները Գէթէն բերաւ։ Եւ երբ Սեմէիի Երուսաղեմէ Գէթ երթալը և դառնալը Սողոմոնի
42 պատմեցին, Անասուն Թագաւորը հրէշ ղրկեց, և Սեմէի կանչեց և անոր ըսաւ, Ո՞չ ապաքէն քեզի Տէրոջմով երդում ընել տուի. և քեզի վկայութիւն



ըրի և ըսի թէ Ագէկ գիտնաս որ երթալդ եղած և տեղին կամ անդին գացած օրդ անպատճառ պիտի մեռնիս. և դուն ինծի նայ՝ խօսքս բարի
43 կ'ըսես։ Ուրեմն ինչո՞ւ համար Տէրոջը երդումն և քեզի պատուիրելիս
44 հնազանդութիւն չըրիր։ Եւ Թագաւորը Սեմէիի ըսաւ, Դուն իմ հօրս Դաւիթի դէմ քու բոլոր չարութիւնդ գիտես, *որուն քու սիրտդ կը վա-
45 յէ։ ուստի Տէրը քու չարութիւնդ իրեն դարձուցանէ։ Բայց Սողոմոն Թագաւորն օրհնեալ, և Դաւիթի աթոռը Տէրոջը առջև յաւիտեան հաս-
46 տատի պիտի ըլլայ։ Եւ Թագաւորը Յովհադայի որդւոյն Բանեայի հրաման տուաւ, և անիկա ելաւ և զարկաւ զանիկա, որ մեռաւ։ Եւ Թագաւորութիւնը Սողոմոնի ձեռքին մէջ հաստատուեցաւ։

## Գլ. Գ

1 Եւ Սողոմոն Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին հետ խնամութիւն ըրաւ,
և Փարաւոնի աղջիկն առաւ և զանիկա Դաւիթի քաղաքը բերաւ, մինչև որ իր տունը և Տէրոջը տունը և Երուսաղեմի շրջակայ պարիսպը չշինեց
2 լրիւնցուց։ Սակայն ժողովուրդը զոհեր մատուցանէր վասն զի մինչև այն օրերը Տէրոջը անունը տակաւին չէին
3 շինուած էր։ Եւ Սողոմոն Տէրը կը սիրէր, և իր հօրը Դաւիթի կանոններով կը քալէր. միայն թէ բարձր տեղերը վասն զոհ կը մատուցանէր և խունկ կը ծխէր։
4 Եւ Թագաւորը Գաբաոն գնաց, որ հոն զոհ մատուցանէ, քանզի մեծ բարձր տեղն այն էր. Սողոմոն այն սեղանին
5 վրայ հազար ողակեզ զոհեց։ Եւ Գաբաոնի մէջ Տէրը Սողոմոնի երազի գիշերուան երեւցաւ. և Աստուած ըսաւ, Ըն՝ ինչ խնդրել որ քեզի տամ։
6 Եւ Սողոմոն ըսաւ, Դուն քու ծառա-

*ԵԶՐ. որուն որ քու սիրտդ գիտէ։

ԵԶՐ. լսող ԵԶՐ. լսելու

և իբր բոլոր ծառաներուն կոչունք ըլլաս։
16 Անաանն երիս ոտնկի կանգնեցաւ Թագաւորին եկան, և անոր առջև
17 կայնեցան։ Եւ կանանց մին ըսաւ, Ով տէր իմ, դուրմէ ինծի. ես և այս կինը մէկ տան մէջ կը բնակինք, և ես տան
18 մէջ սաոր քով ծնայ։ Ու իմ ծնանելուս երրորդ օրը այս կինն ալ ծնաւ։ և մենք մէկտեղ էինք. տան մէջ մէր հետ օտար մարդ չկար, այլ տան մէջ մենք երկուքս էինք։
19 Ինք ու այս կնոջ տղան գիշերով մեռաւ, քանզի անկէ անոր վրայ պառկեցաւ։
20 կեցաւ։ Ու կէս գիշերուն կաւ, և իմ աղախնոյդ քնացած ատենը իմ տղաս քովէս առաւ և զանիկա իւր ծոցը պառկեցուց, և իւր մեռած տղան իմ
21 ծոցս պառկեցուց։ Ու երբ առաւօտուն ելայ որ տղաս ծիծ աստ, ահա անիկա մեռած էր։ և առաւօտուն մտադրութեամբ անոր նայեցայ, և ահա անիկա իմ ծնած տղաս չէր։ իսկ մին ալ կինն
22 բսաւ, Ոչ, այլ ողջ եղողը իմ տղաս է, և մեռածը քու տղադ է։ Ու ասիկա բսաւ, Ոչ, այլ մեռածը քու տղադ է, և ողջ եղողը իմ տղաս է. և
23 Թագաւորին առջև այսպէս կը խօսէին։ Անաանն Թագաւորն բսաւ, Ասիկա կ'ըսէ, իմ տղաս այս ողջ եղողն է, և մեռածը քու տղադ է. և անիկա կ'ըսէ, Ոչ, այլ մեռածը քու տղադ է, և
24 ողջ եղողն իմ տղաս է։ Ու Թագաւորն բսաւ, Ինծի սուր մը բերէք. և Թա-
25 գաւորին առջև սուր մը բերին։ Ու Թագաւորն բսաւ, Ողջ տղան կարեցէք, երկուս կաոր ըրէք, և կէսը մէկուն
26 և կէսն ալ միւսին տուէք։ Անաանն ողջ տղուն մայրը եղող կինը Թագաւորին պատասխան առաւ, և իւր սրտին վրայ ագիքը գալարելուն համար՝ այսպէս բսաւ, Ով տէր իմ, ողջէն ինծի ողջ տղան անոր տուէք, և զանիկա մի մեռցնէք։ Բայց միւսն բսաւ, Ոչ ինծի ըլայ, ոչ քեզի. ղեխէ՛ ձեզ-
27 բեցէք։ Ու Թագաւորը պատասխան առաւ և բսաւ, Ողջ տղան այս կինոջ տուէք, և չըլայ որ զանիկա մեռցնէք։
28 Հրէից անոր մասին ասիկա է։ Ու բոլոր Իսրայէլ Թագաւորին կատած գատաստանը լսելով՝ Թագաւորէն վախցան. քանզի տեսան որ անոր վրայ Աստուծոյ իմաստութիւնը կար դատաստան ընելու համար։

## Գլ. Դ

1 Եւ Սողոմոն Թագաւորը բոլոր Իսրայէլի վրայ Թագաւոր էր։ Ու անոր իշխանները սասնք էին։ Ազարիայի որդին Ա-
3 զարիա քահանայ էր։ Սիսայի որդիքը Եղիքորեփ և Աքիա տառնագիր էին, և Աբիղուդի որդին Յովսափատ յիշատակագիր էր։ Ու Յովիադայի որդին Նանիա զօրքին վրայ էր։ և Սադոկի և Աբիաթար քահանաները էին։
5 Ու Նաթանի որդին Ազարիա գործակալներուն վրայ էր։ և Նաթանի որդի Զաբուդ նախարար և Թա-
6 գաւորին բարեկամն էր։ Ու Աքիաոր տանը հրամանատարն էր։ և Աբդայի որդին Ադոնիրամ հարկերուն վրայ էր։
7 Ու Սողոմոն բոլոր Իսրայէլի վրայ տասներկու գործակալ ունէր, և անոնք Թագաւորը և անոր տունը կը կերակրեին. և կերակրելը իւրաքանչիւրին տարին մէկ ամիս կ'ընկնար։ Ու անոնց անուններն ասոնք են. Ետրեմի լեռան
9 մէջ՝ †Բենհուր. Մաքասի, Սաղաբինի բեթսամիսի և Ելոն-բեթհանանի մէջ՝
10 ‡Բենդեկեր. Արաբոթի մէջ՝ ||Բենհեսեդ, որուն էր Սոքովն և բոլոր Ոփերի երկիրը. Բոլոր Դովրի գաւառին մէջ՝ :Բենաբինադաբ. Սողոմոնի աղջիկը Տափաթ ասոր կինն էր. Թա-
12 նաքի և Մակեդովի մէջ, և Բեթսանէլի Նեռքև՝ Սարթանի քով եղող բոլոր Բեթսանի մէջ, և Բեթսանէլն մինչև Աբելմասղա, և մինչև Յեկմաղի անդին

*Ա՞ւ Սուսայի †Աչինադաբ՝ Ովրի որդին։
‡Աչինադաբ՝ Դաղարի որդին։
||Աչինադաբ՝ Հեսեդի որդին։
:Աչինադաբ՝ Աբինադաբի որդին։



13 կողմն՝ Աբիղուդի որդին Բանահու. Թամաղի–գաղաադի մէջ՝ Բենգաբեր. Գաղաադի մէջ եղող Մանասեան Յայիրի գիւղաքաղաքները, և Բասանի մէջ եղող Արգոբի նահանգը՝ վաթսուն մեծ պարսպատոյտ և պղնձեղէն փականքներ
14 անոր։ Իղ Վրեբէբէն՝ Մանայիմի մէջ՝
15 Ափղովի որդին Աբինադաբ. Նեփթաղիմի մէջ՝ Աբիմասս. ասիկա ալ Սողոմոնի աղջիկը Բասեմաթ կին առաւ։
16 Աւսերի և Բաալոթի մէջ՝ Փուսեի որդին
17 Բասնա. Իսաքարի մէջ՝ Փարուախի որ-
18 դին Յովսափատ. Բենիամինի մէջ՝ Ի-
19 լայի որդին Սեմէի. Գաղաադի երկիրը և Ամորհացւոց Սեհոն Թագաւորին և Բասանի Ովգ Թագաւորին երկիրը՝ Ուրիի որդին Գաբեր. և այն երկրին մէջ
20 Ցուդա և Իսրայէլ շատ էին՝ ծովուն եղերքը եղող աւազին չափ շատ էին. կ'ուտէին, կը խմէին և ուրախութեան կ'ընէին։ Ու Սողոմոն
21 Եփրատ գետէն մինչև Փղշտացւոց երկիրը և մինչև Եգիպտոսի սահմանը՝ բոլոր Թագաւորութիւններուն վրայ կ'իշխէր. և անոր ընծաներ կը բերէին, և Սողոմոնի ծառայութիւն կ'ընէին՝ անոր կենաց բոլոր օրերուն մէջ։
22 Ու Սողոմոնի մէկ օրուան ռաճիկն այս էր. երեսուն քոռ նաշխ, և վաթսուն
23 քոռ ալիւր, Տասը գեր արջառ, և քսան արօտական արջառ, և հարիւր ոչխար, բաց եղջերուներէն, այծեամներէն, դիվիքերէն և գիրացած թռչուններէն։ Քանզի անիկա Գետի բոլոր տոգի կողմին՝ Թափսախ մինչև Գազա՝ Գետին տոգի կողմը եղող բոլոր Թագաւորներուն վրայ կ'իշխէր. և իբր բոլորտիքը եղողներուն հետ խաղաղու-
25 թիւն ունէր։ Ու Սողոմոնի բոլոր օրերուն մէջ Ցուդա և Իսրայէլ՝ Դանի մինչև Բերսաբէէ՝ իւրաքանչիւր մարդ իւր որթին տակ և իւր թզենւոյն տակ ապահովութեամբ կը նստէր։

†Աչինադաբ՝ Գաբերի որդին։
†Ա՞ւ գամէշներէն։

26 Ու Սողոմոն իւր կառքի ձիերուն համար քառասուն հազար ախոռ ունէր,
27 և տասներկու հազար ձիաւոր։ Ու այն գործակալները իւրաքանչիւր իւր ամսուն մէջ Սողոմոն Թագաւորը և Սողոմոնի Թագաւորին սեղանը բոլոր մատեցողներուն կը կերակրէին՝ բան մը պա-
28 կաս չընելով. Նաև ձիերուն և երիվարներուն համար՝ անոնց եղած տեղը իւրաքանչիւրը իւր վրայ դրուած հարկին չափով գարի և յարդ կը բերէին։
29 Ու Աստուած Սողոմոնի իմաստութիւն և շատ մեծ հանճար և սրտի լայնութիւն տուաւ՝ ծովուն եղերքը եղող ա-
30 ւազին չափ։ Ու Սողոմոնի իմաստութիւնը բոլոր արեւելցիներուն իմաստութենէն և Եգիպտացւոց բոլոր իմաս-
31 տութենէն աւելի էր։ Ու անիկա ամէն մարդէ իմաստուն էր. Եզրահացի Եթանէ, և Մաուղի որդւոցմէ՝ Եմանէ, Քաղբոլ և Դարդայէ Խոսթոսէ էր, և բոլոր շրջակայ ազգերուն մէջ անուն-
32 նի եղաւ։ Ու անիկա երեք հազար առակ խօսեցաւ, և անոր երգերը հազար և հինգ էին։ Ու անիկա ծառերուն վրայ խօսեցաւ, Լիբանանի եղեւինէն մինչև պատի վրայ բուսնող զոսան. և նաև անասունի վրայ, թռչուններու վրայ, սողուններու վրայ և
34 ձուկերու վրայ խօսեցաւ։ Ու ամէն ժողովուրդներէն, և անոր իմաստութեան համբաւը լսող երկրին բոլոր Թագաւորներէն՝ Սողոմոնի իմաստութիւնը մտիկ ընելու կու գային։

## Գլ. Ե

1 Եւ Տիւրոսի Քիրամ Թագաւորն իւր ծառաները Սողոմոնի ղրկեց, քանզի լսած էր որ անոր տեղը օծած են. վասն զի Քիրամ
2 միշտ զԴաւիթ կը սիրէր։ Սողոմոն ալ
3 Քիրամի դրկեց և ըսաւ, Դուն գիտես որ իմ հայրս Դաւիթ չկրցաւ իւր Տէր Աստուծոյն անուան տուն շինել, այն պատերազմներուն պատճառաւ՝ որ անոր բոլորտիքը պատած էին, մինչև

որ Տէրը զանոնք անոր առից Թաթե-
4 րուն ներքև դրաւ։ Բայց հիմա իմ Տէր
Աստուածս ամէն կողմանէ ինծի հան-
գիստ տուաւ. Թշնամի չկայ, և ձախորդ
5 պատահար չկայ։ Եւ ահա ես ի՛րաւունք ու-
իմ Տէր Աստուծոյս անուան մէջ
չինեմ, ինչպէս որ Տէրը իմ հօրս Դաւի-
թի հետ խօսեցաւ՝ ըսելով, Քու սերդիդ՝
զոր քու ետեղդ քու ախոռիդ վրայ պի-
տի հաստատեմ, անկից իմ անուանս
6 աուն պիտի չինէ։ Եւ հիմա հրամայե՛ր ըլ-
լէ որ ինծի համար Լիբանանէ եղևին-
ներ կարեն. և իմ ծառաներս քու ծա-
ռաներուդ հետ ըլլան. և քու ծառա-
ներուդ վարձքը քու ամէն բաժնիդ պէս
քեզի կու տամ. քանզի դուն դիտես
որ մեր մէջ Սիդոնացւոց պէս վարպետ
կարող վարպետ մարդ չկայ։
7 Եւ երբ Բիրամ Սողոմոնի խօսքը լը-
սեց՝ շատ ուրախացաւ, և ըսաւ, Այս
մեծ ժողովուրդին վրայ Դաւիթի իմաս-
տուն որդի տուող Տէրն այսօր օրհնեալ
8 ըլլայ։ Եւ Բիրամ Սողոմոնի հետը ղրր-
կեց՝ ըսելով, Ինծի ղրկած խոսքդ լսե-
ցի. ես եղևնափայտի և մայր փայտի
համար քու ամէն կամքդ պիտի կա-
9 տարեմ։ Իմ ծառաներս Լիբանանէ
ծովը իջնցուցնեն. և ես զանոնք լաստեր
կ՚ընեմ՝ մինչև ինծի ցուցուած տեղը
ծովէն տանիմ, և հոն զանոնք քակեմ,
և դուն վերցուցնես. դուն ալ իմ տանս
պաշար տալով՝ իմ կամքս կատարես։
10 Եւ Բիրամ Սողոմոնի ուղածին չափ ե-
ղևնափայտ և մայր փայտ կու տար։
11 Եւ Սողոմոն Բիրամի տան համար քա-
ռասն հազար քոռ ցորեն, և *երկու հա-
րիւր մար մաքուր եղ՝ պաշար կու
տար։ Սողոմոն Բիրամի տարուէ տա-
12 րի այսպէս կու տար։ Եւ Տէրը Սո-
ղոմոնի խոստացած խօսքին պէս
որ անոր խոստացած էր. և Բիրամի
և Սողոմոնի մէջտեղ խաղաղութիւն
կար, և երկուքը դաշնակցութիւն ը-
րին։
13 Եւ Սողոմոն Թագաւորը բոլոր Իսրա-
յէլէ՝ մարդ ժողվեց, և ժողվածը երե-
14 սուն հազար մարդ եղաւ։ Եւ զանոնք
յաջորդաբար ամիսը տասնհազար հա-
զար հոգի Լիբանան կը ղրկէր, որ մէկ
ամիս Լիբանան կը կենային, և երկու
ամիս իրենց տուները։ Եւ Ադոնիրամ այս
15 մարդահարկին վրայ էր։ Եւ Սողոմոն
եօթանասուն հազար բեռնակիր, և ին-
ը տասնհազար հազար փայտ կտրող ու-
16 նէր, Թագ Սողոմոնի երկրէ հազար ե-
րեսուհարիւր գլխաւորը գործակատարները՝
որ գործը բանող ժողովուրդին վրայ
17 կ՚ընչխէին։ Եւ Թագաւորը հրամայեց որ
մեծ և պատուական քարեր կտրեն, որ
տան հիմը տասնաւած քարերով դնեն.
18 Եւ Սողոմոնի վարպետներն և Գիբլեայի
վարպետները եւ Գերազոյնէք փայտերը
և քարերը տաշեցին և պատրաստեցին՝
տանը շինութեան համար։

## Գլ. Զ

1 Եւ Իսրայէլի օրդւոց եգիպտացւոց եր-
կրէն ելլելուն չորս հարիւր ութսուն-
երրորդ տարին, Ե Սողոմոնի Իսրայէլի
վրայ թագաւորելուն չորրորդ տարին,
Զիւս ամսուն՝ այսինքն երկրորդ ամ-
սուն Տէրոջը տունը դիլնել սկսաւ։
2 Եւ Սողոմոն Թագաւորին Տէրոջը
համար շինած տան երկայնութիւնը
վաթսուն կանգուն, լայնութիւնը քը-
սան և բարձրութիւնը երեսուն կան-
3 գուն էր։ Եւ տանը առջևի սրահը քսան կանգուն երկայնութիւն
ունէր, որ տանը լայնութեան չափ էր,
և անոր լայնութիւնը տասն կանգուն
4 տասը վրանէն էր։ Եւ տանը †վան-
5 դակապատ պատուհաններ շինեց։ Եւ
տանը պատին բոլորտիքը տանը պատին
կցուած դահլիճներ շինեց, թէ տա-
ճարին և թէ դարիբին բոլորտիքը, և
այսպէս շուրջանակի սենեակներ շինեց։
6 Վարի կարգին լայնութիւնը հինգ կան-
գուն՝ և միջին կարգինը լայնութիւնը վեց

*Կամ մարդահարկ †Եբր. կը շինէր։
‡Կամ ներսէն լայն գուբսին նեղ



կանգուն՝ և երրորդին լայնութիւնը ը-
թը կանգուն էր. քանզի դարսնին տա-
նէն բոլորտիքը միջոցներ ձգեց ‡էբեռնե-
րը հեծցնելու համար, որ տանը պա-
7 տին մէջ չմտնեն։ Եւ երբ տունը կը
շինուէր՝ քարահանքին մէջ պատրաս-
տուած քարերով կը շինուէր, այնպէս
որ անոր շինուած ատեն մուրճի մամ
ատուրի և †ուրիշ երկաթէ գործ-
8 ոց չլսուեցաւ տանը մէջ, Միջին
կարգին դուռը տան ձախ կողմն էր, և
ղմնտանդարձ պտուտակներով՝ միջին
կարգը, և միջին կարգէն երրորդ կար-
9 գը կ՚ելլէին։ Եւ տունը շինեց և վանի-
կրմնցուց, և տան ձեղունը եղևնա-
փայտ տախտակներով դրուագազարդ
10 շինեց։ Եւ բոլոր տան վրայ †էնհնխէ-
բանէ կարգը՝ հինգ կանգուն բարձրու-
թեամբ շինեց, և եղևնափայտերով
տանը կցուած էր։
11 Եւ Տէրոջը խօսքը Սողոմոնի եղաւ՝
12 ըսելով, Հիմա որ դուն այս տաճարը կը
շինես, եթէ իմ կանոններովս գործես, և
իմ դատաստաններս ի գործ դնես, և
իմ բոլոր պատուիրանքներս պահես ա-
նոնց մէջ գալով՝ անոնցմով քու մէջ
13 քայլ պիտի հաստատեմ այն խօսքը զոր
2 Եւ Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, բայց ոչ իրմէ առաջ եղող Իսրայէլի թագաւորներուն պէս։ Անոր դէմ եկաւ Ասորեստանի Սաղմանասար թագաւորը, և Ովսէէ անոր ծառայ եղաւ և անոր հարկ կուտար։ Եւ Ասորեստանի թագաւորն Ովսէէի վրայ նենգութիւն գտաւ, քանզի անկիա Եգիպտոսի Սուա թագաւորին դեսպաններ ղրկած էր, և Ասորեստանի թագաւորին տարին հարկ վճարած չէր. անոր համար Ասորեստանի թագաւորը զանիկա բանտ և բանակի մէջ կապեց։ Եւ Ասորեստանի թագաւորը բոլոր երկրին վրայ եկաւ։ Սամարիայի վրայ ալ եկաւ, և զանիկա երեք տարի պաշարեց։
6 Ովսէէի իններորդ տարին Ասորեստանի թագաւորը Սամարիա առաւ, և զԻսրայէլ Ասորեստան փոխադրեց, և զանոնք Գովզան գետին քով Բաղայի և Բաւորի մէջ և Մարաց քաղաքներուն մէջ բնակեցուց։ Քանզի Իսրայէլի որդիքը զԵհովա իրենց Եգիպտոսի երկիրէն և Եգիպտոսի փարաւոն թագաւորին ձեռքին տակէն հանող իրենց Տէր Աստուծոյն դէմ մեղք գործեցին, և ուրիշ աստուածներէ վախցան։ Եւ Տէրոջը Իսրայէլի որդւոց առջևէն վռնտած ազգերուն կանոններուն համեմատ՝ և Իսրայէլի թագաւորներուն բրած կանոններուն համեմատ գործեցին։ Եւ Իսրայէլի որդիքն իրենց Տէր Աստուծոյն առջև ուղիղ չեղած բաները գաղտուկ կ՚ընէին, և իրենց բոլոր քաղաքներուն մէջ պահապանաց աշտարակէն մինչև պարսպաւոր քաղաքն իրենց բարձր
10 տեղեր չինեցին, Եւ անոնք ամէն բարձր բլուրներու վրայ՝ և ամէն կանաչ ծառերու տակ իրենց արձաններ և Աստարովթի կուռքեր* կանգնեցին։ Եւ հոն ամէն բարձր տեղերու վրայ խունկ ծխեցին՝ Տէրոջը անոնց առջևէն վռնտած ազգերուն պէս, և չար գործեր
12 ըրին և Տէրը բարկացուցին։ Եւ կռապաշտութիւն ըրին, որոնց համար Տէրը անոնց ըսած էր թէ Այդ բանը մի ընէք։
13 Եւ Տէրը բոլոր մարգարէներուն և բոլոր տեսանողներուն ձեռքով Իսրայէլի և Յուդայի վկայութիւն ընելով՝ ըսած էր, Ձեր չար ճամբաներէն դարձէք, և իմ պատուիրաններս և կանոններս պահեցէք, այն ամէն օրինաց համեմատ՝ զոր ձեր հայրերուն պատուիրեցի, և իմ ծառաներուս՝ մարգարէներուն ղրկած էր։
14 Բայց անոնք մտիկ չըրին, այլ իրենց պարանոցն իրենց Տէր Աստուծոյն չհաւատացող իրենց հայրերուն պարանոցին պէս
15 խստացուցին։ Եւ անոր կանոնները և իրենց հայրերուն հետ անոր ըրած ուխտը՝ և անոր ատած վկայութիւնները մէկդի ձգեցին, և անպատշաճութեան ետևէ գացին և անպատշաճ եղան, և իրենց չորս կողմը գտնուած ազգերուն հետևեզ եղան, որոնց համար Տէրը անոնց պատուիրած էր որ անոնց պէս
16 չընեն։ Բայց իրենց Տէր Աստուծոյն բոլոր պատուիրանները թողուցին, և իրենց երկու ձուլածոյ օրթ չինեցին, և Աստարովթի կուռք չինեցին, և Երկնից բոլոր զօրութիւններուն երկրպագութիւն ըրին, և Բահալի ծառայեցին։
17 Եւ իրենց որդիքը և աղջիկները կրակի անցուցին, և կախարդութիւն և հմայութիւն ըրին, և վիրնք ծախելնին Տէրոջը առջև չարութիւն ընելու և զանիկա բարկացնելու։ Ու սաստիկ Տէրը Իսրայէլի չատ բարկացաւ, և զանոնք իր երեսէն ձգեց։ Այնպես որ ոչ-
18 րէ՛ը չմնաց, բայց միայն Յուդայի ցեղը։

*Կամ անտառները

19 Յուդա ալ իր Տէր Աստուծոյն պատուիրանները չպահեց, այլ Իսրայէլի
20 կանոններով քալեց։ Եւ Տէրը Իսրայէլի բոլոր սերունդը մերժեց, և զանոնք չարչարեց, և զանոնք յափշտակողներուն ձեռքը մատնեց, մինչև որ զանոնք իրենց երեսէն ձգեց։ Քանզի Իսրայէլ Դաւթի տունէն պատառեցաւ, անոնք ալ Նաբատեան Երոբոամը թագաւոր դրին, և Երոբոամ զԻսրայէլ Տէրոջը հետևելէ արգիլեց, և
22 անոնց մեծ մեղք գործել տուաւ։ Եւ Իսրայէլի որդիքը Երոբոամի բոլոր մեղաց մէջ քալեցին, անոնցմէ հեռ չկեցան, Մինչև որ Տէրը զԻսրայէլ իր առջևէն վերցուց, ինչպէս որ իր բոլոր ծառաներուն՝ մարգարէներուն բերնով խօսած էր։ Այսպէս Իսրայէլ իր երկրէն Ասորեստան փոխադրեւցաւ մինչև այս օր։
24 Եւ Ասորեստանի թագաւորը Բաբելոնէ, Փարթայէ, Աւայէ, Եմաթէ և Սեփարուիմէ մարդիկ բերաւ, և Սամարիայի քաղաքներուն մէջ Իսրայէլի որդւոց տեղ բնակեցուց։ ԵՒ անոնք Սամարիա ժառանգեցին, և անոր քաղաքներուն մէջ բնակեցան։ Եւ երբ անոնք սկսան հոն բնակիլ, Տէրոջմէ չէին վախնար։ ԵՒ Տէրը անոնց մէջ առիւծներ ղրկեց,
26 որ զանոնք կը մեռցնէին։ Եւ Ասորեստանի թագաւորին խօսեցան և ըսին, Ան ազգերը որ գուն փոխադրեցիր և Սամարիայի քաղաքներուն մէջ բնակեցուցիր, այն երկրին Աստուծոյն Կրօնքը չեն գիտեր։ և անիկա անոնց մէջ առիւծներ ղրկած է, և ահա զանոնք կը մեռցնեն, վասն զի անոնք այն երկրին Աստուծոյն կրօնքը չեն գիտեր։
27 Անտուն Ասորեստանի թագաւորն հրաման ըրաւ՝ ըսելով, Ձեր անկից գերի առած քահանաներուն մէկը հոն տարէք, և երթան հոն բնակին, և անոնց սորվեցնեն զերկրին Աստուծոյն կրօնքը։
28 Թող անոնց սորվեցնեն։ Եւ Սամարիայէ գերի առնուած քահանաներուն մէկը գնաց Բեթէլ բնակեցաւ, և անոնց սորվեցուցին թէ ինչպէս Տէրոջմէ վախնալու էին։ Եւ իւրաքանչիւր ազգ իր աստուածները կը շինէր, և Սամարացւոց շինած բարձր տեղերուն տուները կը դնէր իւրաքանչիւր ազգ իր բնակած գաղաքին մէջ։ Եւ բաբելացիք շինեցին զԱպոքովիթ-բանամբի, և Քութացիք՝ զներգադ չինեցին, և
31 Եմաթացիք զԱսիմաթ շինեցին, Եւ Աւացիք զնիբհաս և զԹարթակ շինեցին, և Սեփարուիմացիք իրենց տղաքը Սեփարուիմացւոց աստուածներուն՝ Ադրամելեքի և Անամելեքի համար կը կրակով կ՚այրէին։ Ու սակ Տէրոջմէ կը վախնային, և իրենց՝ տարբեր ազգերէն մարդերէ բարձր տեղերուն քուրմեր կ՚ընէին, որ անոնց համար բարձր տեղերուն տուները կը կրակով կ՚այրէին։ Անոնք Տէրոջմէ կը վախնային, և Դաւ իրենց աստուածներուն ծառայութիւն կ՚ընէին այն ազգերուն սրբազոյն թիւններով՝ որոց մէջէն փոխադրած էին։
34 Անոնք մինչև այս օր առջի սովորութիւններուն պէս կ՚ընեն։ ոչ Տէրոջմէ կը վախնան, և ոչ իրենց կանոններէն և սահմաններէն կը կատարեն, և ոչ այն օրէնքէն և պատուիրանքէն, զոր Տէրը Յակոբայ որդւոց տուաւ, որոյ անունը
35 Իսրայէլ դրած էր։ Եւ Տէրը անոնց հետ ուխտ բրած էր, և անոնց պատուիրած էր՝ ըսելով, Ուրիշ աստուածներէ չը վախնաք, և անոնց երկրպագութիւն չընէք, և անոնց ծառայութիւն չընէք,
36 և անոնց զոհ չմատուցանէք։ Այլ ձեզ եգիպտացի երկրէն մեծ զօրութեամբ և բարձր բազկաւ հանող Տէրոջմէն վախնաք, և անոր երկրպագութիւն ընէք,
37 և անոր զոհ մատուցանէք։ Եւ ձեզի համար գրած կանոնները, գատաստաններէն, օրէնքէն և պատուիրանքէ միշտ զգուշութեամբ՝ ի գործ դնէք, և ուրիշ աստուածներէ չվախնաք։ Եւ ձեզ հետ բրած ուխտս մի՛ նաև չմոռնաք, և ուրիշ աստուածներէ չվախնաք։ Այլ ձեր Տէր Աստուծմէն վախնաք, և անիկա ձեր ամէն թշնամիներուն ձեռքէն ձեզ պի-

*Նէբ. գաղտաստանը

10 ամ ապատե, բայց անոնք հետզհետէ
թիւն չբերին, այլ իրենց առջեւ ամօթ
11 թիւններուն պէս կ'ընէին։ Այս ազգերն
ալ Էհեովա Տէրոջմէ կը վախնային, բայց
իրենց կառավարուն ալ ծառայութիւն
կ'ընէին. նաեւ անոնց որդիքը եւ անոնց
որդւոց որդիքը մինչեւ այս օր իրենց
հարերուն ըրածին պէս կ'ընեն։

## ԳԼ. ԺՐ

1 Եւ Իսրայէլի Թագաւորին Էլոյի որ-
դւոյն Ովսէէի երրորդ տարին Յուդայի Ա-
քազ Թագաւորին որդին Եզեկիա
2 Թագաւոր եղաւ։ Քսանհինգ տարե-
կան էր երբ Թագաւոր եղաւ, և Երու-
սաղէմի մէջ քսանեւինը տարի Թագա-
ւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունն
Աբիա էր, և Զաքարիայի աղջիկն էր։
3 Եւ իր հօրը Դաւիթ բոլոր ըրածին պէս
4 Տէրոջը առջեւ ուղիութիւն ըրաւ։ Ա-
սիկա բարձր տեղերուն վրայէն, և
արձաններըը կտրտեց, և Աստարթիի
կուռքերը կարեց, և Մովսէսի չնուած
պղնձէ ձիր կտոր կտոր ըրաւ, (քանդի
մինչեւ այն օրերը Իսրայէլի որդիքն ա-
նոր ծխելին կը ծխէին), և զանիկա *Նէ-
5 հեթան կոչեց։ Անիկա Իսրայէլի Տէր
Աստուծոյն ապաւինեցաւ. և անկէ ետ-
քը Յուդայի բոլոր Թագաւորներուն
մէջ անոր նմանը չեղաւ, ոչ ալ անկէ
6 առաջ եղողներուն մէջ։ Եւ Տէրոջը յա-
ջողեցաւ անոր հետեւին չհետադարձաւ,
և Տէրոջը Մովսէսի պատուիրած պա-
7 տուիրանները պահեց։ Եւ Տէրը անոր
հետ էր, և ուր որ կ'երթար յաջողու-
թիւն կը գտնէր։ Եւ Ասորեստանի Թա-
գաւորէն ապստամբեցաւ և անոր ծա-
8 ռայութիւն չբերաւ։ Անիկա Փղշտացի-
ները զարկաւ մինչեւ Գազա և անոր
սահմանները՝ պահապանաց աշտարակէն
մինչեւ պարսպաւոր քաղաքը։
9 Եւ եղաւ որ Եզեկիա Թագաւորին
չորրորդ տարին, որ Իսրայէլի Թագա-
ւորին Էլոյի որդւոյն Ովսէէի եօթնե-

*Ախէհ՝ պղնձի կտոր։

րորդ տարին էր, Ասորեստանի Սար-
մանասար Թագաւորը Սամարիայի վրայ
10 եկաւ, և զանիկա պաշարեց։ Եւ երեք
տարի ետքը զանիկա առաւ. Սամա-
րիա Եզեկիայի վեցերորդ տարին՝ (այս-
ինքն Իսրայէլի Թագաւորին Ովսէէի
11 իններորդ տարին) առնուեցաւ։ Եւ Ա-
սորեստանի Թագաւորն Իսրայէլ Ասո-
րեստան փոխադրեց, և զանոնք Գով-
զան գետին քով՝ Քաղայի և Բաբովրի
մէջ, և Մարաց քաղաքներուն մէջ դը-
12 րաւ։ Վասն զի անոնք իրենց Տէր Ա-
ստուծոյն ձայնին ականջ չդրին, և ա-
նոր ուխտը չյանցնեցին, և Տէրոջը ծա-
ռայն Մովսէսի ամէն պատուիրածները
մի՛ կ չլսեցին և ի գործ չդրին։
13 Եւ Եզեկիա Թագաւորին չորեքտաս-
ներորդ տարին Ասորեստանի Սենե-
քերիմ Թագաւորը Յուդայի բոլոր պա-
րսպաւոր քաղաքներուն վրայ եկաւ,
14 և զանոնք առաւ։ Եւ Յուդայի Եզեկիա
Թագաւորը Լաքիս †ղրկեց Ասո-
րեստանի Թագաւորին՝ ըսելով, Մե-
ղայ, վրայէս կա դարձիր. ինչ որ իմ
վրաս դնես՝ կը հատուցանեմ։ Եւ Ա-
սորեստանի Թագաւորը Յուդայի Եզե-
կիա Թագաւորին վրայ երեք հարիւր
տաղանդ արծաթ և երեսուն տաղանդ
15 ոսկի հաշիւ դրաւ։ Եւ Եզեկիա Տէրոջը
տան մէջ և Թագաւորին տան գանձ-
րուն մէջ գտնուած բոլոր արծաթը ար-
16 աւ։ Այնտեղ Եզեկիա Տէրոջը տաճա-
րին դռներուն և զրանիներուն վրէն
ոսկի քակեց, որ Եհէզ Յուդայի Եզեկիա
Թագաւորը զանոնք պատած էր, և Ա-
սորեստանի Թագաւորին տուաւ։
17 Եւ Ասորեստանի Թագաւորը Տարա-
թան, Ռաբսարիս և Ռաբսակէ չատ զօր-
քով Լաքիսէն Երուսաղէմ դրկեց Ե-
զեկիա Թագաւորին. անոնք ալ եկան
Երուսաղէմ եկան, և հոն հասնելով՝
Թափչի ագարակին ճամբան եղող վերի
18 ջրհորին ջրմուղին մօտ կայնեցան. Եւ
Թագաւոր կանչեցին. և Քեղկիայի որ-
դին Եղիակիմ՝ պալատին հոգաբարձուը՝
և Սեբնա տաճնադպիր և յիշատակաց
դպիր Ասափի որդին Յովաք անոնց եկան,

†Կամ պատանդ տուր,
†Կամ Բաղդէտացին



19 Եւ Ռաբսակէ անոնց ըսաւ, եղեկիայի
ըսէք, Մեծ Թագաւորն, Ասորեստանի
Թագաւորն այսպէս կ'ըսէ. Ինչ է այդ
20 յոյսը՝ որուն դուն կ'ապաւինիս. Դուն
ըսիր, Պատերազմի համար խորհուրդ
և զօրութիւն կայ. բայց չիմացիր
խօսքեր են. հիմա որո՞ւ ապաւինելով
21 ինծի ապստամբեցար. Ահա դուն այն
ջեղեքած եղեգի ցուպին, Եգիպտոսի
ապաւինեցար, որուն եթէ մարդ կռթնի,
անոր ձեռքը պիտի մտնէ և զանիկա պիտի ծակէ. Եգիպտոսի Փարաւոն
Թագաւորը բոլոր իրեն ապաւինողնե-
22 րուն այնպէս է։ Բայց եթէ ինծի ըսէք
Թէ Մենք մեր Եհովայ Աստուծոյն կ'ա-
պաւինինք, որմէ որ չէ՞ որ բար-
ձրը ակղերը և սեղաններն եղեկիա վեր-
ցուց, և Յուդայի և Երուսաղէմի բաւ,
Թէ՞ այս սեղանիս առջեւ երուսաղէ-
23 մի մէջ երկրպագութիւն ըրէք։ Եւ հի-
մա իմ տիրոջս Ասորեստանի Թագաւո-
րին *հետ հաշուուէ՛ և քեզի երկու
հազար ձի տամ, եթէ դուն քու կող-
մանէդ անոնց վրայ հեծնողներ դնելու
24 կարող եաս։ Եւ իմ տիրոջս կրտսեր զա-
դին ծառաներէն մէկ կապակին ինչ-
պէս կրնաս դէմ դնել, որ դուն կա-
փերու և ձիերու համար Եգիպտոսի կ'ա-
25 պաւինիս։ Հիմա այս երկրին վրայ ար-
դեօք առանց Եհովայի հրամանի եկած
եմ՝ զանիկա աւերելու. ինծի Եհովան ը-
սաւ, Այն երկրին վրայ երթ և զանիկա
աւերէ։
26 Եւ Քեզկիայի որդին Եղիակիմ և Սեբ-
նա և Յովաք Ռաբսակայ ըսին, Շնորհք
ըրէ՛ քու ծառաներուդ հետ †Ասորե-
րէն խօսէ, քանզի մենք կը հասկնանք,
և մեզի հետ Երբայեցերէն մի խօսիր
որ պարսպին վրայ եղող ժողովուրդը
27 լսէ։ Բայց Ռաբսակէ անոնց ըսաւ. Մի-
թէ այս խօսքերը խօսելու համար իմ
տէրս քիս քու տիրոջդ ու քեզի չէ՞
ղրկեց. ոչ՝ պարսպին այս մարդոց ալ՝
որ պարապին վրայ կը նստին, ձեզի հետ



իրենց ազբն ուտելու և իրենց մեզը խը-
մելու։
28 Եւ Ռաբսակ ոտք եղաւ, և մեծ ձայ
նով Երբայեցերէն ազդարկեց, և խօ-
սեցաւ ըսելով, Մեծ Թագաւորին Ա-
սորեստանի Թագաւորին խօսքը մտիկ
29 րուէք։ Թագաւորն այսպէս կ'ըսէ. Ե-
զեկիա ձեզ չխաբէ, քանզի անիկա չի
կրնար ձեզ հանել ձեռքէս ազատել.
30 Եւ Եզեկիա ձեզ Եհովայի չյուսացընէ՝
ըսելով, Եհովա մեզ անշուշտ պիտի ա-
զատէ, և այս քաղաքն Ասորեստանի
31 Թագաւորին ձեռքը պիտի չմատնուի։
Եզեկիայի մտիկ մի ընէք, քանզի Ասո-
րեստանի Թագաւորն այսպէս կ'ըսէ.
Ինծի հետ հաշտութիւն ըրէք, և ինծի
ելէք. և ամէն մարդ իւր որթին՝ և ա-
մէն մարդ իւր թզենիին ուտէ, և ա-
մէն մարդ իւր ջրհորին ջուրն խմէ,
32 Մինչեւ որ ես գամ, և ձեզ ձեր երկ
րին պէս երկիր մը, ցորենի և գինւոյ
երկիր մը, հացի և այգիներու երկիր
մը, իւղ ուտող ձիթենիներու և մեղրի
երկիր մը տանիմ, որ ապրիք և չմե-
նիք. և Եզեկիայի մտիկ մի ընէք, քան-
զի ձեզ գլխէ կը հանէ՝ ըսելով, Եհովա
33 մեզ պիտի ազատէ։ Միթէ ազգաց աս-
տուածներէն Ասորեստանի Թագաւորին
ձեռքէն իւրաքանչիւր իւր երկիրը կըր-
34 ցա՞ ազատէ։ Եմաթի և Արփադի աս-
տուածներն ո՞ւր են. Սեփարաւիմի, Ա-
նայի և Աւայի աստուածներն ո՞ւր են.
միթէ անոնք Սամարիա իմ ձեռքս
35 ազատեցի՞ն։ Երկիրներուն ամէն աս-
տուածներէն ո՞րն իւր երկիրը իմ ձեռ-
քս ազատեց, որ Եհովան Երուսաղէմ
իմ ձեռքս ազատի։
36 Բայց ժողովուրդը լուռ եկեցաւ և ա-
նոր պատասխան չտուաւ, քանզի Թա-
գաւորն հրաման ըրած էր ըսելով, Ա-
նոր պատասխան մի տաք։
37 Եւ Քեզկիայի որդին Եղիակիմ՝ պա-
լատին հոգաբարձուը և Սեբնա տաճ-
նադպիր և յիշատակաց դպիր Ասափի
որդին Յովաք իրենց հանգերձները

*Կամ իմ ձեռքս

պատուած՝ Եզեկիային գային, և Ռաբ-
շակայ խօսքն անոր պատմեցին։

ԳԼ. Ի-Թ.

1 Եւ երբ Եզեկիա Թագաւորը լսեց՝ իր
հանդերձները պատռեց և քուրձ հա-
2 գաւ, և Տէրոջ տունը մտաւ։ Եւ Ե-
լեակիմ՝ պատարին հազարապետը և
Սերնա տաճարագիրը և քահանանե-
րուն ծերերը քուրձեր հագած՝ Ամոս-
ի որդւոյն Եսայի մարգարէին ղրկեց։
3 Եւ անոր ըսին, Եզեկիա այսպես կ՚ըսէ.
Այս օր նեղութեան, կշտամբանաց և
նախատանաց օր է. քանզի ծոցերը
մինչև ծննդելու վայրկեան հասան,
4 բայց ծննդելու զօր չկայ։ Թերևս քու
Տէր Աստուածդ Ռաբշակայ բոլոր խօս-
քերը լսէ, զոր իր տէրը Ասորեստանի
Թագաւորը դրկեց՝ կենդանի Աստուածը
նախատելու համար, և քու Տէր Ա-
ստուածդ այն իր լսած խօսքերուն
համար յանդիմանութիւն տայ. ուրե-
մըն դուն գոնատ մնացորդին համար
5 աղօթք բրէ։ Եւ Եզեկիա Թագաւորին
6 ծառաները Եսայիի գային։ Եւ Եսայի
անոնց ըսաւ, Ձեր տիրոջն այսպէս ը-
սէք, Տէրը այսպէս կ՚ըսէ. Մի վախնար
այն խօսքերէն զոր լսեցիր և որով
Ասորեստանի Թագաւորին ծառաները
7 զիս հայհոյեցին։ Ահա ես անոր վրայ
ոգի մը կը դրկեմ, և լուր մը լսելով՝
իր երկիրը պիտի դառնայ. և զանիկա
իր երկրին մէջ սրով պիտի կործանեմ։
8 Եւ Ռաբշակ դարձաւ, և Ասորես-
տանի Թագաւորը գտաւ՝ որ Լիբնայի
հետ կը պատերազմէր, վասն զի
9 լսած էր որ Լաքիսէ չուած էր։ Եւ
Սենեքերիմ Եթովպացոց Թագաւոր Թա-
գաւորին համար լսեց, որ կ՚ըսէին, Ա-
հա անիկա քեզի հետ պատերազմելու
եկած է. և նորէն Եզեկիայի դեսպան-
10 ներ դրկեց՝ ըսելով, Ցուդայի Եզեկիա
Թագաւորին այսպէս խօսք և ըսէք.
Ա՛ն քու Աստուածդ՝ որ որուն ա-
պաւինած ես, Թող քեզ չխաբէ՝ ըսե-
լով, Երուսաղէմ Ասորեստանի Թագա-
11 ւորին ձեռքը պիտի չտրուի։ Ահա դուն
լսեցիր ինչ որ Ասորեստանի Թագա-
ւորները բոլոր երկիրներուն ըրին,
և ինչպէս զանոնք բոլորովին կործանե-
12 ցին, և հիմա դուն պիտի ազատիս։ Մի-
թէ իմ հայրերուս կործնատ ազգե-
րուն՝ գոսանցի Թովհանի, Խառանի,
Ռեսեփի և Թեղասարի մէջ եղող Եդեմի
որդւոց աստուածները զանոնք ազա-
13 տեցին։ Ո՞ր է Եմաթի Թագաւորը և
Արփադի Թագաւորը, և Սեփարուա-
քաղաքին Անայի և Աւայի Թագաւորը։
14 Եւ Եզեկիա նամակը դեսպաններուն
ձեռքէն առաւ և զանիկա կարդաց, և
Տէրոջ տունը եկաւ. և Եզեկիա Տէրո-
15 ջը առջև աղօթք բրաւ և ըսաւ,
16 Ով Տէր Աստուած Իսրայէլի որ քե-
րովբէներուն վրայ կը նստիս, երկիրս
ամէն Թագաւորութիւններուն վրայ
Աստուած միայն դուն ես. երկինք և
երկիր դուն ստեղծեցիր։ Ով Տէր, ա-
կանջդ խոնարհեցուր և լսէ. ով Տէր,
աչքերդ բաց և նայէ, և լսէ Սենեքե-
րիմի խօսքերը, որ դրկեց կենդանի
17 Աստուածը նախատելու։ Ով Տէր, ար-
դարև Ասորեստանի Թագաւորներն
18 ազգերը և անոնց երկիրն աւերեցին, Եւ
անոնց աստուածները կրակի տուին,
վասն զի անոնք Աստուած չէին, այլ
մարդու ձեռագործ՝ փայտ և քար է-
ին. անոր համար զանոնք կորսնցու-
19 ցին։ Եւ հիմա դուն, ով Տէր Աստուած
մեր, ազատէ մեզ անոր ձեռքէն, որ-
պէս զի երկրիս բոլոր Թագաւորու-
թիւնները գիտնան, որ Տէր Աստուած
միայն դուն ես։
20 Եւ Ամմոսի որդին Եսայի Եզեկիայի
հետ դրկեց՝ ըսելով, Իսրայէլի Տէր
Աստուածն այսպէս կ՚ըսէ. Ասորեստա-
նի Սենեքերիմ Թագաւորին համար
21 ինձի լրած աղօթքդ լսեցի։ Անոր վր-
րայ Տէրոջ խօսքն այս է.

Սիանի կոյս աղջիկը քեզ անարգեց,
քեզ ծաղր բրաւ.

*Կամ ասպածէց



Երուսաղէմի ազջիկը քու հետևդ գը-
լուխ շարժեց։
22 Դուն ո՞վ նախատեցիր և հայհոյե-
ցիր,
Եւ որու՞ վրայ ձայնդ վերցուցիր.
Եւ աչքերդ Իսրայէլի Սուրբին դէմ վեր
վերցուցիր։
23 Քու դեսպաններուդ ձեռքով Տէրը
նախատեցիր՝ ըսիր,
Իմ կառքերուս բազմութեամբ լեռ-
ներուն բարձրութիւնը՝
Լիբանանու քովերը եկայ,
Եւ անոր բարձր եղևիններըը
Ու ընտիր մայրիները՝ պիտի կարեմ.՝
Եւ անոր վերջին բնակութիւնը
Անոր Կարմելոսի անտառը հպիտի
մնանեմ.՝
24 Ես փորեցի և օտար ջրեր խմեցի,
Ու ոտաց ներով ցամքեցուցի
Ոտքերուս թաթերով ցամքեցու-
ցի։
25 Մի՞թէ լսած չե՞ս որ ասիկա շատոնցմէ
Ես կազմեցի,
Եւ առջի օրերն ի վեր ձեւակերպեցի.
Հիմա հասուցի,
Որ դուն պարսպաւոր քաղաքներն ա-
ւերակի հոգակոյտներու դար-
ձնելու։
26 Ուստի անոնց բնակիչներուն ձեռքը
վար ըլլալուն համար
Զարհուրեցան և ամչցան.
Անոնք էին դաշտի խոտ
Եւ էրեւ կանանչ բանջար,
Տանիքի խոտի դէմ
Եւ գէտ չհասած և խորշակէն զար-
նուած հունձքի դէմ եղան։
27 Բայց ես քու բնակութիւնդ, ելլելդ և
մանելդ,
Եւ ինձի ունեցած սրամտութիւնդ գի-
տեմ։
28 Որովհետև ինձի ունեցած սրամտու-
թիւնդ

*Կամ կարելի.
†Կամ պտղաբեր ագարակին
‡Կամ մասն։ ||Կամ եզիպտոսի

եւ քու ամբարտաւանութիւնդ իմ ա-
կանջներուս եկաւ,
Ես ալ իմ կարթս քու բիրիդ՝
Եւ իմ սանձս քու բերանդ պիտի դը-
նեմ,
Եւ քու եկած ճամբադ քեզ նա պիտի
դարձնեմ։
29 Եւ ասիկա քեզի նշան ըլլայ,
Այս տարի ինքնին բուսածը,
Եւ երկրորդ տարին ինկած հատիկէն
բուսածը պիտի ուտէք.
Եւ երրորդ տարին ցանեցէք և հնձե-
ցէք,
Եւ այգիներ անկեցէք և անոնց պը-
տուղը կերէք։
30 Եւ Յուդայի տան ազատուած մնացորդը
վարին արմատ պիտի արձակէ,
Եւ վերէն պտուղ պիտի տայ։
31 Քանզի Երուսաղէմէ մնացորդ՝
Եւ Սիօն լեռնէն ազատուած պիտի ելլէ.
Այսիկ զօրաց Տէրոջ նախանձը պիտի
ընէ։
32 Ասոր համար Ասորեստանի Թագա-
ւորին վրայ Տէրը այսպէս կ՚ըսէ.
Անիկա այս քաղաքը պիտի չմտնէ,
Եւ անոր նետ պիտի չձգէ,
Եւ անոր առջև վահանով պիտի չգայ,
Եւ անոր դէմ պատնէշ պիտի չշանգնէ.
33 Իր եկած ճամբէն նա պիտի դառնայ,
Եւ այս քաղաքը պիտի չմտնէ՝ կ՚ըսէ
Տէրը։
34 Եւ այս քաղաքը պիտի պաշտպանեմ,
Եւ զանիկա ազատեմ ինձի համար
Եւ իմ ծառայիս Դաւթի համար։
35 Եւ եղաւ որ այն գիշերը Տէրոջը հր-
եշտակը ելաւ, և Ասորեստանի բա-
նակին մէջ հարիւր ութսունեհինգ
հազար մարդ զարկաւ. և երբ առաւ-
ուան կանուխ ելան, ահա անոնց ա-
36 մէնքը մեռած մարմիններ էին։ Եւ Ա-
սորեստանի Սենեքերիմ Թագաւորը
չուեց գնաց, և դարձաւ Նինուէի մէջ
37 նստաւ։ Եւ երբ անիկա իր աստու-
ծոյն Նեսրոքայ տան մէջ երկրպագու-
թիւն կ՚ընէր, անոր որդիքն Ադրամե-
լէք և Սարասար զանիկա սրով զար-
կին, և Արարատի երկիրը փախան. և

անոր տեղ անոր որդին Աստրդան թագաւոր եղաւ։

## Գլ. Ի

1 Ա՚յն օրերը նեղկիա մահուան ատեն հիւանդացաւ։ Եւ Ամոսի որդին Եսայի մարգարէ անոր եկաւ, և անոր ըսաւ, Տէրը այսպէս կ՚ըսէ. Տնող համար պատուէր տուր, քանզի դուն
2 մեռնելու ես և պիտի չապրիս։ Եւ նեղկիա իր երեսը պատին դարձուց, և
3 Տէրոջը աղօթք ըլաւ՝ ըսելով, Ով Տէր, կ՚աղաչեմ, քու առջեւդ շնորհաւոր եղած և կատարեալ սրտով քալելը՝ և քու աչքիդ առջեւ բարի եղածն ընելը յիշէ. և նեղկիա մեծ լացով լացաւ։
4 Եւ Եսայի տակաւին մէկին գաւթէն չելած՝ Տէրոջը խօսքն անոր եղաւ ըսելով,
5 Դարձիր, և իմ ժողովրդիս իշխանին նեղկիայի ըսէ, Քու հօրդ Դաւթի Տէր Աստուածն այսպէս կ՚ըսէ. Քու աղօթքդ լսեցի, քու արտասուքդ տեսայ. ահա քեզ պիտի բժշկեմ, և երրորդ օրը Տէրոջը տունը պիտի կ՚ելլես. Եւ քու օրերուդ վրայ տասնեհինգ տարի պիտի աւելցընեմ, և քեզ և այս քաղաքն Ասորեստանի թագաւորին ձեռքէն պիտի ազատեմ, և այս
7 քաղաքին պաշտպանութիւն պիտի ընեմ ինծի համար և իմ ծառային Դաւթի համար։ Եւ Եսայի ըսաւ, Քանի մը չոր թուզ առէք. և առին և վէրքին վրայ դրին, և ողջացաւ։
8 Եւ նեղկիա Եսայիի ըսաւ, Տէրոջը պիս բժշկելուն և երրորդ օրը Տէրոջը տունը
9 ը՝ելլելուս նշան ի՞նչ ըլլայ։ Եւ Եսայի ըսաւ, Սիպիա քեզի Տէրոջմէ նշան ըլլայ՝ թէ Տէրը իր ըսած խօսքը պիտի կատարէ. Սաւերը կամ ատան ստիճան առաջ երթայ, կամ ատան ստի-
10 ճան ետ դառնայ։ Եւ նեղկիա ըսաւ, Սաւերին ատան ստիճան առաջ երթալը դիւրին է. այլ, այլ սաւերը ատ-
11 ը՝ստիճան ետ դառնայ։ Եւ Եսայի մարգարէն Տէրոջը աղաչեց. և ատան աստիճան ետ դարձուց սաւերն այն աստիճաններէն որ Աքազի արեւու ժամացոյցին վրայ իջած էր։
12 Անատեն Բաղեդանի թագաւորը՝ Բաղադանի որդին *Մարովդաք-բազադան նամակներ և ընծաներղրկեց եզեկիայի, քանզի լսած էր թէ եզեկիա հի-
13 ւանդ էր։ Եւ եզեկիա †անոնց մտիկ ըրաւ, և ամբարին բոլոր տունը՝ արծաթը և ոսկին և խունկերը և պատուական իւղը, և իր զինքերուն բոլոր տունը և իր գանձերուն մէջ բոլոր գտնուածը ցուցուց. իր տան մէջ և իր բոլոր տէրութեան մէջ
14 բան չմնաց, որ եզեկիա անոնց չցուցուցած։ Եւ Եսայի մարգարէն եզեկիա թագաւորին եկաւ, և անոր ըսաւ, Այս մարդիկն ի՞նչ ըսին, և ուստե՞ւ եկան
15 քեզի. և եզեկիա ըսաւ, Հեռու տեղէ՝ Բաբելոնէ եկան։ Եւ անիկա ըսաւ, Քու տանդ մէջ ի՞նչ տեսան և եզեկիա ըսաւ, Տանս մէջ ինչ որ կայ՝ տեսան, և գանձերուս մէջ չմնաց բան՝ որ ա-
16 նոնց չցուցուցի։ Անատեն Եսայի եզեկիայի ըսաւ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէ.
17 Ահա օրեր կու գան, որ քու տանդ մէջ ինչ որ կայ՝ և քու հայրերդ մինչև այս օր ինչ որ ժողվեցին՝ Բաբելոն պիտի տարուի. բան մը պիտի չմնայ՝ կ՚ըսէ
18 Տէրը։ Եւ քենէ եղելոյս՝ քու ծնանելու որդիներէդ պիտի առնեն, և անոնք Բաբելոնի թագաւորին պալատին մէջ
19 ներքինի պիտի ըլլան։ Եւ եզեկիա Եսայիի ըսաւ, Տէրոջը խօսքը՝ որ դուն ըսիր, բարի է. նաև ըսաւ, Բա՞ղէ չէ՞, որ իմ օրերուս մէջ խաղաղութիւն և ապահովութիւն պիտի ըլլայ։
20 Եւ եզեկիայի միւսոյրդ պատմութիւնը, և անոր բոլոր զօրութիւնը, և շինած աւազանը և ջրմուղը, և քաղաքը բերած ջուրը՝ ահա Ցուդայի թագաւորներուն յիշատակաց գրքին մէջ
21 գրուած են։ Եւ եզեկիա իր հայրերուն

*ՆԵՂ. Բարովդաք բաղադան
†Կամ անոնց վրայ ուրախացաւ,



հետ քնացաւ, և անոր տեղ անոր որդին Մանասէ թագաւոր եղաւ։

## Գլ. ԻԱ

1 Մանասէ տասներկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ, և Երուսաղէմի մէջ յիսունհինգ տարի թագաւորութիւն ըրաւ, և անոր մօրը անունն Լփսիբայ էր։ Եւ անիկա Տէրոջը իսրայէլի
2 որդւոց առջեւէն վռնտած ազգերուն գարշելի գործերուն պէս՝ Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ։ Եւ անիկա իր
3 հօրը եզեկիայի կործանած բարձր տեղատեղերն շինեց, և Բահաղի սեղաններ կանգնեց, և Աստարովթի կուռք մը շինեց իսրայէլի Աքաաբ թագաւորին ըրածին պէս, և երկնից բոլոր զօրութիւններուն երկրպագութիւն ըրաւ և անոնց ծառայութիւն ըրաւ։
4 Եւ սեղաններ շինեց Տէրոջը տան մէջ, որուն համար Տէրը ըսած էր Թէ իմ անունս Երուսաղէմի մէջ պիտի դնեմ.
5 Եւ Տէրոջը տան երկու գաւիթներուն մէջ երկնից բոլոր զօրութիւններուն սեղաններ շինեց։ Եւ իր որդին կրակի անցուց, և գուշակութիւն և հմայութիւն կ՚ընէր, և մոգեականներ և նշանագէտներ *ունէր. և Տէրոջը առջեւ չատ չարութիւն ըրաւ և զանիկա բար-
7 կացուց։ Եւ իր շինած Աստարովթի կուռքն այն տան մէջ դրաւ, որուն համար Տէրը Դաւթի և անոր որդւոյն Սողոմոնի ըսած էր, իմ անունս այս տան մէջ և Իսրայէլի բոլոր ցեղերէն իմ ընտրած Երուսաղէմիս մէջ պիտի
8 դնեմ յաւիտեան. և Իսրայէլի ոտքն այլեւս պիտի չտարժեմ այդ երկրէն, զոր անուանց հայրերուն տուի. միայն թէ անոնք իմ ամէն պատուիրաններուն և իմ Մովսէս ծառային անոնց պատուիրած բոլոր օրինքն զգուշութեամբ կ՚
9 գործ դնեն։ Բայց անոնք մտիկ չըրին, և Մանասէ անոնց մոլորցուց զանոնք, որ Տէրոջը իսրայէլի որդւոց առջեւէն կորսնցուցած ազգերուն աւելի չարութիւն ըրին։
10 Եւ Տէրը իր ծառաներուն՝ մարգարէներուն ձեռքով խօսեցաւ՝ ըսելով,
11 Որովհետեւ Ցուդայի Մանասէ թագաւորն այս գարշութիւններն ընծայով ըրաւ աւելի եղող Ամորհացւոց բոլոր ըրածներէն աւելի չարաբարոյ ըրաւ, և իր կուռքերով Ցուդայի ալ մեղք գոր-
12 ծել տուաւ, Անոր համար Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս կ՚ըսէ. Ահա եւ բերուսաղէմի վրայ և Ցուդայի վրայ այնպէ՛ս չարիք մը պիտի գրկեմ, որ ամէն
13 լսողին երկու ականջը պիտի խօսի. Եւ Երուսաղէմի վրայ Սամարիայի լարը և Աքաաբի տան գնահատը պիտի երկընցընեմ, և Երուսաղէմ պիտի սրբեմ՝ ինչպէս որ մարդ անօթ մը կը սրբէ, և սրբելէն ետքը երեսն ի վար կը դար-
14 ձնէ։ Եւ իմ ժառանգութեանս մնացորդը պիտի մերժեմ, և զանոնք թշնամիներուն ձեռքը պիտի տամ, և անոնք իրենց բոլոր թշնամիներուն աւար և յափշտակութիւն պիտի ըլլան.
15 Քանզի իմ առջեւս չարութիւն ըրին, և իրենց հայրերուն եգիպտոսէ ելած օրէն մինչև այսօր պես բարկացուցին։
16 Նաև Մանասէ շատ անմեղ արիւն թափեց, այնպէս որ Երուսաղէմ ծայրէ ի ծայր լեցուց. թող իւր այն մեղքը՝ որով Տէրոջը առջեւ չարութիւն ընելուն պատճառ եղաւ։
17 Եւ Մանասէի միւսոյրդ պատմութիւնը և ամէն ըրածը և անոր գործած մեղքը՝ ահա Ցուդայի թագաւորներուն յիշատակաց գրքին մէջ գրուած է.
18 Եւ Մանասէ իր հայրերուն հետ քնացաւ, և իր տան պարտիզին մէջ՝ Ոզայէ պարտիզին մէջ թաղուեցաւ. և անոր տեղ անոր որդին Ամոն թագաւոր եղաւ։
19 Ամոն քսան և երկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ, և Երուսաղէմի մէջ երկու տարի թագաւորութիւն ըրաւ, և անոր մօրը անունը Մեսոզամիթ էր,
20 և Եսերացի Արուսի աղջիկն էր։ Եւ ա-

*ՆԵՂ. կ՚ընէր.

նիկա իւր հօրը Մաւանայէլ, բրածէն պէս
21 Տէրոջը առջև չարտ Թիւն ըրաւ։ Եւ իւր հօրը քարած բոլոր ճամբուն մէջ քա-
լեց, և իւր հօրը պաշտած կուռքերը պղտկեց և անոնց երկրպագութիւնը ը-
22 րաւ։ Ու իւր հայրերուն Տէր Աստուածը Թագաւոր Տէրոջը ճամբուն մէջ չը-
քալեց։
23 Ու Ամնէի ծառաներն անոր դէմ դա-
ւաճանութիւն ըրին, և Թագաւորն իւր
24 տան մէջ մեռցուցին։ Ու երկրին ժո-
ղովուրդն Ամնի Թագաւորին դէմ դա-
ւաճանութիւն ընողներուն ամէնքն ալ
սպաննեցին։ Ու երկրին ժողովուրդն անոր ո-
դին Յաւխա անոր տեղ Թագաւոր ը-
րաւ։
25 Ու Ամնէի գործերուն մնացորդ պատ-
մութիւնն ահա Ցուդայի Թագաւորնե-
րուն յիշատակաց գրքին մէջ գրուած
26 է։ Ու ան դանկիա Ողոյի պարտէզը իւր
գերեզմանին մէջ Թագեցին և անոր
տեղ անոր որդին Յաւխա Թագաւոր
եղաւ։

Գլ. ԻԸ

1 Յաւխա ութ տարեկան էր երբ Թա-
գաւոր եղաւ, և Երուսաղէմի մէջ ե-
րեսունեմեկ տարի Թագաւորութիւն ը-
րաւ, և անոր մօրը անունը Յեդիդա
էր, և Բաղկաթացի Ադայիայի աղջիկն
2 էր։ Ու ան անիկա Տէրոջը առջև ուղղու-
թիւն ըրաւ, և իւր հօրը Դաւիթի բոլոր
ճամբուն մէջ գնաց, և աջ կամ ձախ
կողմը չխոտորեցաւ։
3 Ու Յաւխա Թագաւորին ատենները
ներթարգ տարին Թագաւորը Մեսոզա-
մէ որդւոյն Եակէիայի որդին Սաման
գիւղը Տէրոջը առանը զրկեց ըսելով,
4 Բեղկիա քահանայապետին գնա, և ա-
նիկա Տէրոջը առանը բերուած ասոկը
Թող համրէ, զոր դրան պահապանն-
ը ժողովուրդէն ժողվեցին, ու ան-
կա Տէրոջը տան էրձէն վրայ գրուած
բանուորներուն տան, և անոր վրած
տեղուանքը չվնասելու համար Տէրոջը տան
մէջ գործը բանուորներուն տան ձայն,
6 Հիւսներուն, շինողներուն և որմնադր-
ներուն։ Նաև փայտ և տաշուած քա-
րեր ծախու առնելն առանը նորոգելու
7 համար։ Բայց անոնց ձեռքը արուած
առակին հաշիւը չէին հարցներ, փան-
դի անոնք հաւատարմութեամբ կը գոր-
8 ծէին։ Եւ Բեղկիա քահանայապետ Սա-
փան գրագիրն ըսաւ, Տէրոջը տան մէջ օ-
րինաց գիրք մը գտայ։ Եւ Բեղկիա այն
գիրքը Սափանի տուաւ, և կարդաց
9 զայն։ Եւ Սափան գրագիրը Թագաւորին
եկաւ, և Թագաւորին պատասխան ե-
րաւ, և ըսաւ, Քու ծառաներդ ան
մէջ գտնուած ասուկը հանեցին, և Տ-
րոջը տան էրձէն վրայ դրուած բա-
10 նուորներուն ձեռքը տուին։ Ու Սա-
փան գրագիրը Թագաւորին պատմեց և
ըսաւ, Բեղկիա քահանան ինծի գիրք
մը տուաւ։ և Սափան Թագաւորին ա-
11 ն կարդաց զայն։ Ու Թագաւորն օրի-
նաց գրքին խօսքերը լսածին պէս իր
12 հանդերձները պատառեց։ Ու Թագաւո-
րը Բեղկիա քահանային և Սափանի
որդւոյն Աքիկամի և Միքիայի որդւոյն
Աքբորի և Սափան գրագիրն և Թա-
գաւորի ծառային Ասայիայի պատուի-
13 րեց և ըսաւ, Գացէք ինծի համար և
ժողովուրդին համար և բոլոր Ցուդայի
համար այն գտնուած գրքին խօսքե-
րուն վրայ Տէրոջը հարցուցէք։ քանզի
մեր վրայ Տէրոջը մեծ բարկութիւնը
բորբոքած է, քանզի մեր հայրերն այս
գրքին խօսքերուն հնազանդութիւն չը-
րին, և մեզի համար ամէն գրուած բա-
14 ներն ի գործ չդրին։
Ու Բեղկիա քահանայ և Աքիկամ և
Աքբոր և Սափան և Ասայիա Աբասի
որդւոյն Թեկուայի որդւոյն Սեղղում
հանդերձապահին կնոջ Ողդա մարգա-
րէին գացին, և անիկա Երուսաղէմ՝
*Մասենայի մէջ կը բնակէր, և անոր
15 հետ խօսեցան։ Ու անիկա ըսաւ անոնց,
Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս
կ՚ըսէ։ Ձեզ ինծի դրկող մարդուն այսպէս
16 ըսէք, Տէրը այսպէս կ՚ըսէ։ Ահա ես

*Այլն՝ երկրորդ մասին



այս տեղուն և անոր բնակիչներուն
վրայ չարիք պիտի բերեմ, այսինքն
Ցուդայի Թագաւորին կարդացած գըր-
17 քին ամէն խօսքերը։ Վասն զի զիս
Թողուցին և ուրիշ աստուածներու
խունկ ծխեցին, որ իրենց ձեռացը բո-
լոր գործերով զիս բարկացնեն,
ուստի այս տեղուն վրայ իմ բարկու-
Թիւնս պիտի բորբոքի և պիտի չմարի։
18 Բայց Տէրոջը հարցնելու համար ձեզ
զրկող Ցուդայի Թագաւորին այսպէս
ըսէք, Իսրայէլի Տէր Աստուածն այս-
պէս կ՚ըսէ։ Ասած խօսքերուդ համար,
19 Որովհետև քու սիրտդ կակղցաւ, և
Տէրոջը առջև խոնարհեցար երբ լսեցիր
իմ խօսքս, Թէ այս տեղուն վրայ և
անոր բնակիչներուն վրայ ասիրեմ և
անէծք պիտի ըլլան, և քու հանդերձ-
ներդ պատռեցիր և իմ առջևս լացիր,
20 և ես լսեցի կ՚ըսէ Տէրը։ Անոր համար
ահա ես քեզ քու հայրերուդ պիտի
խաղեցնեմ, և խաղաղութեամբ քու գե-
րեզմանդ պիտի ամրոխուիս։ և
բոլոր չարիքը զոր այս տեղուն վը-
րայ պիտի բերեմ քու աչքերդ պիտի
չտեսնեն։ Ու անոնք Թագաւորին պա-
տասխան բերին։

Գլ. ԻԹ

1 Եւ Թագաւորը դրկեց և Ցուդայի
և Երուսաղէմի բոլոր ծերերն անոր քով
2 ժողվուեցան։ Եւ Թագաւորը և անոր
հետ Ցուդայի բոլոր մարդիկը և Երու-
սաղէմի բոլոր բնակիչները, և քահա-
նաները և մարգարէները, և փոքրէն
մինչև մեծը բոլոր ժողովուրդը Տէրոջը
տանը ելան, և Տէրոջը տան մէջ գըտ-
նուած դպրեվանքի գիրքը բոլոր անոնց
3 ականջը կարդաց։ Եւ Թագաւորը սեան քով կայնեցաւ և Տէրոջը առջև
ուխտ ըրաւ, որ այն գրքին մէջ գը-
րուած ուխտին խօսքերը հաստատելու
համար Տէրոջը ետևէն երթալ, և անոնց
պատուիրանները և վկայութիւնները և

*Եբր. ափանջնակուն

*Եբր. տուներ

կանոնները բոլոր սրտով և բոլոր հո-
գւով պահել և բոլոր ժողովուրդն ուխ-
տին հաստատութեան տուաւ։ Եւ Թագա-
ւորը Բեղկիա քահանայապետին և եր-
կրորդ աստիճանի քահանաներուն և
դրան պահապաններուն հրամայեց, որ
Բահղի համար և Աստարովթի համար
և երկինքի բոլոր զօրութիւններուն հա-
մար չինուած գործիքներուն ամէնը Տ-
րոջը տաճարէն դուրս հանեն, և զա-
նոնք Երուսաղէմէ դուրս կեդրոնի
դաշտավայրերը մէջ այրեց, և անոնց
5 մոխիրը Բեթէլ տարաւ։ Եւ Ցուդայի
Թագաւորներուն Ցուդայի քաղաքնե-
րուն մէջ և Երուսաղէմի բոլորտիքը
բարձր տեղերու վրայ դրած խունկ ծը-
խող քուրմերը, և Բահղի և արե-
գական և լուսնի և [illegible] հնե-
գոյական համակերպներուն և երկինքի բոլոր զո-
րութիւններուն խունկ ծխողները վեր-
6 ացուց։ Ու Աստարովթի կուռքը Տէրոջը
տունէն Երուսաղէմէ դուրս կեդրոն
հեղեղատն հանեց, և զանիկա կեդրոն
հեղեղատին մէջ այրեց, և ծեծեց փո-
շի ըրաւ, և փոշին ժողովուրդին որ-
դւոց գերեզմաններուն վրայ ցանեց։
7 Ու Տէրոջը տան մէջ գտնուող Սոդո-
մական մեղք գործողներուն առները
փլցուց, որ որ կանայք Աստարովթի
8 վրայ գործեցին։ Ու ան քահանաները կը գործէին, Ու Ցու-
դայի քաղաքներէն բոլոր քահանանե-
րը եբեռացուցին բերաւ, և Գաբայէն մին-
չև Բերսաբէէ պղծեց այն բարձր տե-
ղերուն, ուր քահանաները խունկ կը
ծխէին։ և քաղաքի իշխանին Գեհոսի
դրան բերանը քաղաքին դրան ձախ
կողմը եղող դռներուն բարձր տեղուան-
9 քը քանդեց։ Բայց բարձր տեղերուն
քահանաները Երուսաղէմ եղող Տէրո-
ջը սեղանը չէին երթար, այլ իրենց եղ-
10 բայրներուն մէջ բազարջ կ՚ուտէին։ Ու
ենովմի որդւոյն ձորին մէջ եղող Տո-
փեթ պղծեց, որ մարդ իւր որդին կամ
աղջիկը Մողոքի համար կրակի չանցը-
11 ներ։ Ու նաև ձիերուց Տէրոջը տան դը-

բան առնլէին Հիերը, զորս Յուդայի Թագաւորներն արեգական նուիրած էին, և անոնք փարատիլ եղող Նաթանաէլէ ի ներքինեացն սենեկին քովն էին. և արեգական կառքերը կրակով
12 այրեց։ Եւ Աբգալի վերնատան առնեաց վրայ Յուդայի Թագաւորներուն շինած սեղանները, և Տէրոջը տան երկու գաւիթներուն մէջ Մանասէի շինած սեղանները Թագաւորը փլուցոյ, և անկէ բռնկինլ ըրաւ, և անոնց հողը կեդրոնի
13 հեղեղատը Նեռնեց։ Եւ Երուսաղէմի դիմացը Ապականութեան լեռան աջ կողմը՝ որ Իսրայէլի Սաղմոն Թագաւորին Սիդոնացւոց դարձեալ ան Աստարովթի համար, և Մոաբացւոց գարշելին Քամոսի համար և Ամմոնի որդւոց գարշելին Մելքոմի համար և Ամմոնի որդւոց շինուած բարձր տեղերը՝ Թագաւորը պղծեց։ Եւ
14 արձանները խորտակեց և Աստարովթի կուռքերը կտրատեց, և անոնց տեղ մարդոց ոսկերներով լեցուց։
15 Եւ Բեթէլի սեղանն ալ, և Իսրայէլի մեղանչել առնող Նաբատեան Երոբոամի շինած բարձր տեղը՝ (այն սեղանը և բարձր տեղն ալ) փլուցոյ, և բարձր տեղն այրեց և փոշի դարձուց, և Աս-
16 տարովթի կուռքն այրեց։ Եւ Յովսիա դարձաւ և հոն լեռան վրայի գերեզմանները տեսաւ, և խրկե՛ր զրկեց՝ գերեզմաններուն մէջէն ոսկերներն առաւ, և անոնցմէն վրայ այրելով պղծեց զսյն՝ Տէրոջը խօսքին հետևելու, զոր այս բաները խօսող Աստուծոյ մարդը բար-
17 զբր ձայնով խօսած էր։ Եւ ըսաւ՝ զոր բանը կը տեսնեմ՝ Ի՞նչ պիտի ըլլայ այս կոթողը զոր ես կը տեսնեմ։ և քաղաքին մարդիկն անոր ըսին, Անիկա Աստուծոյ մարդուն գերեզմանն է, որ Յուդայէ եկաւ, և Բեթէլի սեղանին վրայ այս
18 բաները որ ըրած *խօսեցաւ, նէ ըսաւ՝ Զանիկա թողուցէք, ոտնը ոսկորները մարդ տեղէն չշարժէ. ուստի անոր ոսկորները Սամարիայէ եկող մարդարէին ոսկրներուն հետ թող
19 տուին։ Եւ Բեթէլա Սամարիայի քաղաքներուն մէջ բոլոր բարձր տեղերուն տաճարներն ալ վերցուց, զորս Իսրայէլի Թագաւորները շինելով Տէրը բարկացուցած էին։ և Բեթէլի մէջ բո-
20 լոր բրած նկո անոնց ալ ըրաւ։ Եւ հոն գտնուած բարձր տեղերուն բոլոր քուրմերը սեղաններուն վրայ մորթեց, և անոնց վրայ մարդու ոսկրներ այրեց։ ապա Երուսաղէմ դարձաւ։
21 Եւ Թագաւորը բոլոր ժողովրդին պատուիրեց ըսելով, Զեր Տէր Աստուծոյն զատիկ ըրէք, ինչպէս որ այս ուխտի գրքին մէջ գրուած է։ Քանզի գիւրացել զատող զատաւորներուն օրերէն ի վեր՝ և Իսրայէլի Թագաւորներուն և Յուդայի Թագաւորներուն բոլոր օրերն ալ այս զատիկին պէս եղած
23 չէր։ Բայց Յոսիա Թագաւորին ութ-ևտասներորդ տարին այս զատիկը Տէրոջը եղաւ Երուսաղէմի մէջ։
24 Եւ նաև Յովսիա փնտռեցին, նշանագէտները և Թերափիմները և կուռքերը, և Յուդայի երկրին մէջ և Երուսաղէմի մէջ երեւցած բոլոր գարշութիւնները վերցուց, որ Բէզկիա քահանային՝ Տէրոջը տունը գտած գրքին մէջ գրուած օրէնքին խօսքերն հաստատէ։ Եւ անկէ առաջ անոր նման
25 մտաբեր։ Եւ անկէ առաջ անոր նման Թագաւոր չեղաւ, որ իր բոլոր սրտովն և բոլոր հոգւով և բոլոր զօրութեամբ Տէրոջը դարձաւ՝ Մովսէսի բոլոր օրինաց համեմատ. ոչ ալ անկէ
26 հաբ անոր նմանը եղաւ։ Բայց Տէրը Յուդայի վրայ բորբոքած իր մեծ և սաստիկ բարկութիւնէն ետ չդարձաւ՝ այն բոլոր *չար գործերուն համար, որովհետև Մանասէ զանիկա բարկացուցած
27 էր։ Եւ Տէրը ըսաւ, Յուդա ալ իմ երեսէս պիտի ձգեմ, ինչպէս որ զիսարկել ձգեցի. և պիտի մերժեմ այս քաղաքը՝ իմ ընտրած Երուսաղէմն, և այս տունը՝ որուն համար ըսի Թէ իմ անունս հոն ըլլայ։
28 Եւ Յովսիայի մնացորդ պատմութիւն-

*ԵԲԲ. կանչեց։

*ԵԲԲ. գայրացուցած էին զանոնք։



նը և անոր բոլոր բրածն ահա Յուդայի Թագաւորներուն յիշատակաց գրքին մէջ գրուած է։ Անոր օրերը Ե-
29 գիպտոսի Թագաւորը Փարաւոն Նեքաւով Ասորեստանի Թագաւորին վրայ Եփրատ գետը եկաւ։ և Յովսիա Թագաւորն անոր դէմ ելլելու գնաց, և անիկա Մեգիդոյ տեսնած պահ զանիկա
30 մեռցուց։ Մահկերդովի մէջ և անոր ծառաները անոր մարմինը Մահկերդովի կառքով Երուսաղէմ բերին, և զանիկա իր դերեզմանին մէջ Թաղեցին։ և երկրին ժողովուրդը Յովսիայի որդին Յովահազ առին և օծեցին, և զանիկա իր հօրը տեղ Թագաւոր դրին։
31 Յովահազ քսանեւերկու տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, և Երուսաղէմի մէջ երեք ամիս Թագաւորութիւն ըրաւ։ և անոր մօրը անունն Ամիտաղէր, և Լիբնացի Երեմիայի աղջիկն էր։
32 Եւ անիկա իր հայրերուն բոլոր բրածին պէս Տէրոջը առջև չարութիւն ըրաւ։ Եւ Փարաւոն Նեքաւով զանիկա Նեմթի երկիրը՝ Ռեբղայի մէջ բանտարկեց, որ Երուսաղէմի մէջ Թագաւորութիւն չընէր։ և երկրին վրայ հարիւր
33 տաղանդ արծաթ և տաղանդ մը ոսկի հարկ դրաւ։ Եւ Փարաւոն Նեքաւով Յովսիայի որդին Եղիակիմ անոր հօրը Յովսիայի տեղ Թագաւոր դրաւ, և անոր անունը փոխեց Յովակիմ ։ Բայց զՅովահազ առաւ Եգիպտոս տա-
34 րաւ։ և անիկա հոն մեռաւ։ Եւ Յովակիմ այն արծաթը և ոսկին Փարաւոնի տուաւ, բայց երկրին վրայ հարկ դրաւ՝ այն արծաթը Փարաւոնի պատուիրածին պէս տալու համար։ և երկրին ժողովուրդէն ամէն մարդու վրայ դրբաւած հարկին համեմատ արծաթը և ոսկին առաւ, որ Փարաւոն Նեքաւովի տայ։
36 Երբ Յովակիմ Թագաւոր եղաւ՝ քսանհինգ տարեկան էր, և Երուսաղէմի մէջ տասնմէկ տարի Թագաւորութիւն ըրաւ։ և անոր մօրը անունը Զաբիդա էր, և Ռումայի Փազայելայի աղջիկն էր։ Եւ անիկա իր Տէրոջը բոլոր
37 բրածին պէս՝ Տէրոջը առջև չարութիւն ըրաւ։

*ՀԱ Մն. գ. 16 Ի՛շտեղ Յեքոնիա։

զը քաղաքին վրայ եկաւ, երբ անոր
12 ծառաները պաշարած էին զայն։ Եւ
Յուդայի Թագաւորը Յովաքին իր մօ-
րը և ծառաներուն և իշխաններուն և
ներքինիներուն հետ Բաբելոնի Թագա-
ւորին ելաւ։ Եւ Բաբելոնի Թագաւորն
իր Թագաւորութեան ութերորդ տա-
13 րին զանիկա բռնեց։ Եւ անկէ Տէրոջը
տան բոլոր գանձերը և Թագաւորին
տան գանձերը տանեց, և կտրատեց այն
ամէն ոսկեղէն անօթները, զոր Իսրա-
յէլի Սողոմոն Թագաւորը Տէրոջը
տաճարին համար չինած էր Տէրոջը բ-
14 ածին համեմատ։ Եւ բոլոր Երուսա-
ղէմ, և ամէն իշխանները և ամէն զո-
րաւոր մարդիկ՝ տասը հազար գերի,
և ամէն հիւս և դարբին չքեց տա-
րաւ։ Երկրին ժողովրդոց ազքատներէն
15 զատ մնաց չմնաց։ Եւ զՅովաքին Բա-
բելոն փոխադրեց, և Թագաւորին մայ-
րը և Թագաւորին կիները և անոր ներ-
քինիները և երկրին զօրաւորները ե-
16 րուսաղէմէ Բաբելոն գերի առաւ։ Եւ
բոլոր զօրաւոր մարդիկ եօթը հազար
մարդ, և հաւտը հիւս և դարբին, ա-
րանց ամէնն ալ զօրաւորութիւն է-
ին, Բաբելոնի Թագաւորը զանոնք Բա-
17 բելոն գերի առաւ։ Եւ Բաբելոնի Թա-
գաւորն անոր տեղ անոր Հօրեղբօրը
Մաթանիան Թագաւոր դրաւ, և անոր
անունը Սեդեկիայի փոխեց։
18 Սեդեկիա քսանմէկ տարեկան էր
երբ Թագաւորեզաւ, և Երուսաղէմի
մէջ տասնմէկ տարի Թագաւորեց։
Եւ անոր մօր անունն Ա-
միտաղ էր, և Լիբնայէ Երեմիայի աղ-
19 ջիկն էր։ Եւ անիկա Յովակիմի բոլոր
գործերուն պէս Տէրոջը աչքին չարութիւն
20 գործեց։ Քանզի Տէրոջը բարկութիւնը Ե-
րուսաղէմի և Յուդայի վրայ էր, մինչև
որ զանոնք իր երեսէն ձգեր։ Անոր
համար Սեդեկիա Բաբելոնի Թագաւո-
րին ապստամբեցաւ։

## ԳԼՈՒԽ

1 Եւ եղաւ որ անոր Թագաւորութեան



13 Եւ Քաղդէացիք Տէրոջը տան մէջ ե-
ղող պղնձէ սիւները և մեքենովիները
և Տէրոջը տան մէջ եղող պղնձէ ծովը
կոտր կոտր ըրին, և անոնց պղինձը
14 Բաբելոն տարին։ Եւ Թագաւորները և
թիակները և բազմակալները և խնկա-
մաններն և պաշտօնի համար գործա-
ծառած բոլոր պղնձէ անօթներն առին,
15 Եւ գոհատեղը՝ անկէ և արծաթէ
բաւրվառները և կանթեղն առաւ։ Նե-
Սողոմոնի Տէրոջը տան համար չինած
երկու սիւները, մէկ ծովը և մեքե-
նովիները. բոլոր այս գործիներուն
17 պղինձը կշռոյ չէր գար։ Մէկ սեան
բարձրութիւնը ութ ասան կանգուն
էր, և անոր վրայ պղնձէ խոյակ կար,
և խոյակին բարձրութիւնը երեք կան-
գուն էր. և խոյակին վրայ շուրջանա-
կի ցանցակերպ գործ և նռնաձեր կային,
ամէնքն ալ պղնձէ էին։ Եւ միւս սիւնն
ալ ցանցակերպ գործով այնպէս էր։
18 Եւ գոհատեղին առաջին քահանան
Սարայիա՝ և երկրորդ քահանան Սո-
փոնիա՝ և երեք դռնապաններն առաւ։
19 Եւ քաղաքին ներքինի մը առաւ, որ
պատերազմող մարդոց զօրագլուխն էր։
և Թագաւորին դէմքը կացողներէն՝
քաղաքին մէջ գտնուած հինգ մարդ,
և երկրին ժողովրդը զինուորութեան
գրող զօրքին մեծ գրագիրը, և քա-
ղաքին մէջ գտնուած երկրին ժողո-
20 վուրդէն վաթսուն մարդ առաւ։ Եւ
Նաբատ զարդանի գահճապետ գտնոնք ա-
րաւ, և Բաբելոնի Թագաւորին Լիբ-
21 նա տարաւ։ Եւ Բաբելոնի Թագաւորը
զանոնք զարկաւ, և Եմաթի երկրին
Ռիբղայի մէջ զանոնք մեռցուց։ Այս-
պէս Յուդա իր երկրին գերի տարուե-
22 ցաւ։ Բայց Յուդայի երկրին մէջ մնա-
ցած ժողովրդեան վրայ զոր Բաբելոնի
Նաբատ զարդանան Թագաւորն հոն Թո-
ղուցած էր՝ Սափանեան Աքիկամի որ-

Գոհատեղին՝ բաւրվառները և կանթեղը առաւ, ինչ որ ոսկիէ էր՝ ԷԲՐ ոսկի, և ինչ որ արծաթէ էր՝ ԷԲՐ արծաթ, †ԼԷԲ. երեսը տեսնողներէն

23 դին Գոդոդիա կուսակալ դրաւ։
Եւ զօրաց բոլոր իշխանները իրենց
մարդերովը երբ լսեցին որ Բաբելոնի
Թագաւորը Գոդոդիա կուսակալ ըրած
էր, Գոդոդիայի Մասիա եկան, այս-
ինքն Նաթանեայի որդին Իսմայէլ, կա-
րէհի որդին Յոհանան, և Թանհումեթի
որդին Նետոփաթացի Սարայա, և Մա-
քաթիի որդին Յեզոնիա, Թէ իրենք և
24 Թէ իրենց մարդիկը։ Եւ Գոդոդիա ա-
նոնց և անոնց մարդոց երդում ըրաւ,
և անոնց բսաւ, Քաղդէացիներուն *ծա-
ռայ Թիւն ընդունիլ մի վախնաք. այս
երկրին մէջ բնակեցէք, և Բաբելոնի
Թագաւորին ծառայեցէք, և ձեզի աղէկ պիտի լլայ։
25 Եւ եղաւ որ եօթներորդ ամիսը Թա-
գաւորյոց սերունդէն եղող Եղիսամա-
յի որդւոյն Նաթանեայի որդին Իսմա-
յէլ տասը մարդով եկաւ, և Գոդոդ-
դիա զարկին, և մեռաւ, նոյնպէս անոր
հետ Մասիա եղող Հրեաները և Քաղ-
26 դէացիները։ Եւ բոլոր ժողովուրդը
փոքրէն մինչև մեծը՝ և զօրաց իշխան-
ները եկան Եգիպտոս գացին, քանզի
Քաղդէացիներէն վախցան։
27 Եւ եղաւ որ Յուդայի Յովաքին Թա-
գաւորին գերութեան երեսունեւեօթ-
ներորդ տարին երկոտասաներորդ ա-
միսը ամսուն քսանեւօթներորդ օրը,
Բաբելոնի Եւմարովդաք Թագաւորն
իր Թագաւորեղած տարին, Յուդայի
Յովաքին Թագաւորին գլուխը բարձ-
28 րացուց և ընձեռնէ բանտէն հանից. Եւ
անոր հետ քաղցրութեամբ խօսեցաւ,
և անոր աթոռը Բաբելոնի մէջ իրեն
հետ եղող Թագաւորներուն աթոռէն
30 վեր դրաւ։ Եւ անոր բանտի չաթիները
փոխեց, և անիկա իր կենաց բոլոր օ-
րերուն մէջ միշտ անոր սեղանէն հաց կ'ու-
30 ձէր։ Եւ անոր ռոճիկը մշտական ռոճիկ
ըլլալով, անոր կենաց բոլոր օրերուն
մէջ Թագաւորին կողմէն օրէ օր անոր
կը տրուէր։

*Կամ ծառաներէն

# ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

## ԳԼՈՒԽ Ա

1 Ադամ, Սէթ, Ենովս, (2)Կայնան, Մա-
3 դաղէէլ, Յարէդ, Ենովք, Մաթուսաղա,
4 Ղամէք, Նոյ· Սէմ, Քամ և Յաբեթ·
5 Յաբեթի որդիքը Գոմէր, Մագոգ,
6 Մադայ, Յաւան, Թուբէլ, Մոսոք և
Թիրաս էին· եւ Գոմէրի որդիքն Ա-
7 շքանաս, Ռիփաթ և Թոգրամա էին·
եւ Յաւանի որդիքը Եղիսա, Թարսիս,
Կիտացիք և †Դոդանիք էին·
8 Քամի որդիքը Քուշ, Մեսրայիմ, Փու-
9 և Քանան էին· եւ Քուշի որդիքը Սա-
բա, Եւիլա, Սաբթա, Ռեգմա և Սաբ-
թեքացա էին· եւ Ռեգմայի որդիքը
10 Սաբա և Դեդան էին· եւ Քուշ Նեմ-
րովդի ասիկա սկսաւ հզօրանալ
11 գետնի վրայ· նա Մեսրայիմ Ենաո-
ղացիները, Անամացիները, Լաբա-
12 ցիները, Նեֆթացիները, Պաթրո-
սացիները և Քասղացիները (ո՛ւռա-
ւի Փղշտացիք եկան,) և Քասլոքացի-
13 ներն ալ· եւ Քուշէ Ենաո իր անդ-
14 րանիկը Սիդոն, նաև Քեթը, Յեբուսա-
15 ցին, Ամորհացին, Գերգեսացին, Եւա-
16 ցին, Արքակեցին, Ասենացին, Արուա-
դացին, Սամարացին և Ամաթացին·
17 Ենովի որդիքը Եղոմ, Ասուր, Ար-
փաքսադ, Ղուդ, Աբամ, Հուս, Հուլ,
18 Գաթեր և Մոսոք էին· եւ Արփաքսադ
Ենաո Սաղայ, և Սաղայ Ենաո Ղնբեր·
19 եւ Ղնբերի երկու որդի Ենաո
անունը ‡Փադղէկ էր, քանզի երկիրն ա-
նոր օրերը բաժնուեցաւ· և անոր եղ-
20 բօր անունը Յեկտան էր· եւ Յեկտան
Ենաո Ղեզմովդաց, Սալեփ, Հասարմաթ,
21 Յարաք, Ուզալ, Դիկղայ,
22 Գեբաղ, Աբիմայէլ, Սաբայ, (23) Ոփիր,

*Կամ Դիփաթ †Կամ Ռոգացիք·
‡Այլուստ՝ բաժանուաց

Եւիլայ և Յոբաբ· ասոնց ամէնքը Յեկ-
տանի որդիքն էին·
24 Սէմ, Արփաքսադ, Սաղայ, (25) Ե-
26 բեր, Փադղէկ, Ռեալա, Սերուգ, Նա-
27 քոր, Թարայ, Աբրամ այսինքն Ա-
բրահամ·
28 Աբրահամի որդիքն Իսահակ և Իսմա-
29 էէլ էին· Անոնց Ենաղներն ասոնք
են· Իսմայէլի անդրանիկը՝ Նաբէթ,
ետքը Կեդար, Ադբէէլ, Մաբսամ,
30 Մասմա, Դումա, Մասայ, Հադադ, Թե-
31 մա, Յետուր, Նաֆիս և Կեդմա· Իս-
մայէլի որդիքն ասոնք էին·
32 Եւ Աբրահամի հարճին Քեթուրայի որ-
դիքը· անիկա Ենաո Զեմրան, Յեկսան,
Մադան, Մադիան, Յեսբոկ և Սովէ·
եւ Յեկսանի որդիքը Սաբա և Դեդան
33 էին· եւ Մադիանի որդիքը Գեփա, Ա-
փէր, Ենովք և Եբիդա և Եղիսա·
ասոնց ամէնքը Քեթուրայի որդիքն էին·
34 Եւ Աբրահամ Ենաո զԻսահակ, Իսա-
հակայ որդիքը Եսաւ և Իսրայէլ էին·
35 Եսաւի որդիքը՝ Եղիփազ, Ռագաուէլ,
36 Յեուս, Յեղդոմ և Կորհ էին· Եղիփա-
զի որդիքը Թեման, Օմար, Սեփոյ, Գո-
թոմ, Կենազ, Թամնա և Ամաղէկ էին·
37 Ռագաուէլի որդիքը Նահաթ, Զարա,
38 Սամմա և Մզա էին· եւ Սէիրի որդի-
քը Ղոտան, Սոբաղ, Սեբէգոն, Ենան,
39 Դիսան, Եսեր և Դիսան էին· եւ Ղո-
տանի որդիքը Քոռի և Հեմամ էին· և
40 Թամնա Ղոտանի քոյրն էր· Սոբալի որ-
դիքը Գոտաս, Մանահաթ, Գեբոդ,
Սեփոյ և Ովնամ էին· եւ Սեբէգոնի որ-
41 դիքն Այիա և Ենա էին· Ենայի որդին
Դիսոն էր· և Դիսոնի որդիքն Ամրան, Ես-
42 բան, Յեփրան և Քառան էին· Եսէրի
որդիքը Բաղդան, Զաւան և Յական
էին· Դիսանի որդիքը Հուս և Ենան էին·
43 Եւ ասոնք են այն թագաւորները որ
Եդոմի երկրին մէջ թագաւորեցին՝ Իս-
րայէլի որդուց վրայ թագաւոր թա-
գաւորելէն առաջ· Բեղովի որդին Բա-
44 ղա և անոր քաղաքին անունը Դինհա-
բա էր· Եւ Բաղա մեռաւ, և անոր տեղ
Յոբոդայի Զարգայի որդին Յոբաբ թա-
45 գաւորեց· Եւ Յոբաբ մեռաւ, և անոր
տեղ Թեմանացւոց երկրին Հուսամ
46 թագաւորեց· Եւ Հուսամ մեռաւ, և
անոր տեղ Բադադի որդին Ենադդ թա-
գաւորեց, որ Մովաբի դաշտին մէջ Մա-
դիանացիները կռտորեց· և անոր քա-
47 ղաքին անունն Աւիթ էր· Եւ Ենադդ
մեռաւ, և անոր տեղ Մասրեկացի Սա-
48 մղա թագաւորեց· Եւ Սամղա մեռաւ,
և անոր տեղ Գետնի գոմ Թողբովիէն եղող Սաուղ թագաւորեց·
49 Եւ Սաուղ մեռաւ, և անոր տեղ Ա-
քոբորի որդին Բաղդանան թագաւո-
50 րեց· Եւ Բաղդանան մեռաւ, և անոր
տեղ Ենադդ թագաւորեց· և անոր քա-
ղաքին անունը Փաքոյ էր, և անոր կա-
նոչ անունը Մեհեթաբէլ էր, որ Մէ-
զահաբի ազգին Մատրեդի ազգին
էր·
51 Եւ Ենադդ մեռնելէն ետքը Եդոմի
իշխանները եղան, Թամնա իշխան, Գա-
52 լեա իշխան, Յեթեթ իշխան, Ողիբա-
53 մա իշխան, Իլա իշխան, Փինոն իշխան,
54 Կենազ իշխան, Թեման իշխան, Մաբ-
զար իշխան, Մագդիէլ իշխան, Իրամ
իշխան· Եդոմի իշխանները ասոնք
էին·

## Գլ· Բ

1 Իսրայէլի որդիքն ասոնք են· Ռուբէն,
Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար, Զա-
2 բուղոն, Դան, Յոսէփ, Բենիամին,
Նեփթալիմ, Գադ և Ասեր·
3 Յուդայի որդիքն էր, Օնան և Սելօմ
էին· այս երեքը Քանանացի Շուայի
աղջկանէն Ենան անոր· և Յուդայի
անդրանիկին էր Տէրը տեսնելով թո-
լորտն Համար՝ Տէրը զանիկա մեռցուց·
4 Եւ անոր հարսը Թամար փարեւս Զա-

*Կամ Դարդաս †Նշբ· Բամ
‡Կամ Քադէք
‖Կամ Գետաբացւոց ու Աստրոց Երկրին



բդոյ Ենաո անոր· Յուդայի բոլոր որ-
դիքն հինգ էին·
5 Փարեսի որդիքը Նոմսն և Համուլ
6 էին· Եւ Զարայի որդիքը՝ Զամբրի, Ե-
թան, Եման, Քալքոլ և Դարա· ամէնը
7 հինգ էին· Եւ Քարմիի որդին Աքար էր,
որ Նզովածով մեզ գործեց, և Իսրա-
8 յէլ նեղութեան մէջ ձգեց· Եւ Եթա-
9 նի որդին Ազարիա էր· Եւ Նսոմնի որ-
դիքը որ անոր Ենան, Յերահմէլ, †Ա-
րամ և ‡Քելուբայ էին·
10 Եւ Արամ Ենաո զԱմմինադաբ, և Ա-
մմինադաբ Ենաո Նահասոն, իշ-
խանը Նահասոնի·
11 Եւ Նահասոն Ենաո զՍաղմոն, Սաղմոն
12 Ենաո զԲոոս, Բոոս Ենաո զՈբէդ, Ո-
բէդ Ենաո զՅեսսէ,
13 Յեսսէ Ենաո իր անդրանիկը Եղիաբ,
երկրորդը՝ Աբինադաբ
14 և երրորդը՝ Սամմա, Չորրորդը՝ Նա-
15 թանայէլ, հինգերորդը՝ Հառադայի, Վե-
ցերորդը՝ Աւսամ և եօթներորդը՝ Դա-
16 վիթ· Եւ անոնց քոյրերը Շարուհեան և
Աբիգեան էին· Եւ Շարուհեայի որդիքը
երեք էին· Աբեսսա, Յովաբ և Ասա-
17 յէլ· Եւ Աբիգեա Ենաո զԱմասայի, և
Ամասայի հայրն Իսմայէլացի Յեթեր էր·
18 Եւ Նոսոնի որդին Քաղէբ Կնոյմէն Ա-
զուբայէ և Յերիովթ· որդիները ասոնք
են· Յասեր,
19 Սովաբ և Արդօն· Եւ երբ Ազուբա մե-
ռաւ, Քաղէբ իրեն Կիր առաւ Եփրաթ,
20 որ անոր Ենաո զՈվր· Եւ Ովր Ենաո
Ուրի, և Ուրի Ենաո Բեսաղէէլ·
21 Եւ ապա Եսրոն Գաղաադայ հօրը Մա-
քիրէ աղջկան մոտ և զանիկա առաւ,
և ինք վաթսուն տարեկան էր· և ա-
22 նիկա Ենաո անոր զՍեգուբ· Եւ Սեգուբ
Ենաո զՅայիր· և տասկա Գաղաադայ
երկրին մէջ քսանեւերկու քաղաք ու-
23 նէր· Եւ ‖Գեսուր և Արամ, Յայիրի
գեղդքաղաքները, կռնաքն և անոր
գեղերը՝ վաթսուն քաղաք առաւ ա-
նոնցմէ· ասոնց ամէնը Գաղաադայ հօ-

24 րը Մաքիրն որդւոյն էր։ Եւ Եթրոն
Քաղէբ–Եփրաթայի մէջ մեռնելէն ետք,
Եսրոնի կինն Աբիա՝ անոր ծնաւ
Թեկոէէի հայրն Ասքուր։
25 Եւ Եսրոնի անդրանիկ Ցերամէլի որ-
դիքն սոնոք էին։ անդրանիկին Հառամ,
26 Բաւնա, Օրէն, Ասամ և Աբիա։ Եւ Ցե-
րամէլ ուրիշ կին մը ունէր, և անոր
անունն Ատարա էր։ անիկա Օնամի մայ-
27 րը եղաւ։ Եւ Ցերամէլի անդրանիկ
Հառամի որդիքն սոնոք էին։ Մոաս,
28 Յամին և Ակեր։ Եւ Օնամի որդիքը Սա-
մմայի և Յադայ էին։ Եւ Սամմայիի որ-
29 դիքը Նադաբ և Աբիսուր էին։ Եւ Ա-
բիսուրի կնոջ անունն Աբիհայիլ էր, որ
30 անոր Ծնաւ Աքբան և Մոլոիդ։ Եւ Նա-
դաբի որդիքը Սապադ և Ափփելմ էին։
31 և Սապադ անորդի մեռաւ։ Եւ Ափփել-
մի որդին՝ Ցեսան, և Ցեսանի որդին՝
Սեսան, և Սեսանի որդին Ազդայ էր։
32 Եւ Սամմայիի եղբօր՝ Յադայի որդիքը
Ցեթեր և Ցոնաթան էին։ և Ցեթեր
33 անորդի մեռաւ։ Եւ Յոնաթանի որ-
դիքը Փաղէթ և Զազա էին։ Ցերամէ-
լի որդիքն սոնոք էին։
34 Եւ Սեսան որդի չունէցաւ, բայց մի-
այն աղջիկներ։ Եւ Սեսան Յարքա ա-
նուն Եգիպտացի ծառայ մը ունէր։
35 Եւ Սեսան իր աղջիկն իր Յարքա ծա-
ռային կին առուաւ։ որ անոր Ծնաւ
36 զԱթթի։ Եւ Նթթի Ծնաւ զՆաթան, և
37 Նաթան Ծնաւ Զաբադ, Եւ Զաբադ Ծը-
նաւ զՓղդոն, և Ովղդոն Ծնաւ զՈվ-
38 բէդ, Եւ Ովբէդ Ծնաւ զՅեհու, և Յեհու
39 Ծնաւ զԱզարիա, Եւ Ազարիա Ծնաւ բդ-
ռեցողես, և Բեղղես Ծնաւ զԵղիեասա,
40 Եւ Եղիասա Ծնաւ զՍաոմի, և Սաոմի
41 Ծնաւ զՍեզղում, Եւ Սեզղում Ծնաւ
զՅեկամիա, և Յեկամիա Ծնաւ զԵղի-
42 սամա։
Եւ Ցերամէլի եղբօր Քաղէբի որդի-
քը՝ անոր անդրանիկը Մեսա՝ Զիփի
հայրն էր, և Քեբրոնի հայրը Մարեսա-

43 յի որդին էր։ Եւ Քեբրոնի որդիքը Կորհ
և Թաֆուա և Ռեկոմ և Սեմա էին։
44 Եւ Սեմա Ծնաւ զՀառամի Յորկաամի
45 հայրը, և Բոկոմ Ծնաւ զՍամմայի։ Եւ Յա-
մմայիի որդին Մաոն էր։ և Մաոն Բեթ-
46 սուրի հայրն էր։ Եւ Քաղէբի հարճը
Գեփա Ծնաւ զՀառան, զՄոսա և զԳա-
47 զէզ։ և Ադան Ծնաւ զԳազէզ։ Եւ Յա-
դայիի որդիքը Հառագեմ, Յովղթամ,
Գեսան, Փաղէտ, Գեփա և Սագաֆ էին։
48 Եւ Քաղէբի հարճը Մաաքա Ծնաւ զՍե-
բեր և զԹհանան։ Նաև Ծնաւ Մադ-
մաննայի հայրը Սագար, և Մաքբեն-
նայի հայրը և Գաբաայի հայրը Շեուա։
և Քաղէբի աղջիկն Աքսա էր։
49 Եփրաթէէ անդրանիկն Բմրի որդւոյն
Քաղէբի որդիքն սոնոք էին։ Կաբիա-
50 թաբէմի հայրը Սոբաղ, Բեթլեհեմի հայ-
րը Սաղման, Բեթգաղէթի հայրը Հարեփ։
51 Եւ Կաբիաթաբէմի հոր Սոբաղի որդի-
քը Հայօք՝ և Մանահաթացւոց կէսն
52 էին։ Եւ Կաբիաթարիմի առնիներէն Ցե-
թերայիք, Փարթացիք, Սամմաթացիք
և Մաստացիք էին։ Սորաթացիք և Ես-
53 թաւոզացիք սոնոցմէ էրան։ Սոպտա-
նի որդիքը Բեթլեհեմ, Նետոփաթա-
ցիք, Ատրոթ Բեթ Յովաբի տունը և Մա-
նահաթացւոց կէսը՝ Սարացիք էին։
55 Եւ Գաբեսի մէջ բնակող գրիչներուն
առնիներն Թարգաթացիք, Սամմաթա-
ցիք, Սուկաթացիք։ սոնոք Ռեքաբի
առն հօրմէն Եմաթէէ եկող կինեցիք
էին։

## Գլ. Գ

1 Եւ Դաւթի Բեերոնի մէջ ծնած որդիքն
սոնոք էին։ անդրանիկին Ամնոն՝ Ցէ-
զրեելուհի Աբիհնաոմէ, երկրորդը Դա-
2 նիէլ՝ Կարմելացի Աբիգայէլ, երրորդն
Աբիսողոմ՝ Գեսուրի թագաւորին Թոլ-
միի աղջկան Մաաքայի որդին,
3 չորրորդն Ադոնիա՝ Ագգիթի որդին,
Հինգերորդը Սափատիա՝ Աբիտալէ, վեցերորդը
4 Յեթրեամ՝ իր կնոջմէն Եգդայէ։ Այս
վեցն անոր Ծնան Քեբրոնի մէջ։ և հոն
եօթը տարի և վեց ամիս թագաւորա-

*Կամ Եղիսաա

†Կամ անոր որդին Հառափայիա, անոր
որդին Ռոնա, անոր որդին Աբդիա, ա-
նոր որդին Սեբեհնիա։



Թեցին բրաս, և Երուսաղեմի մէջ երե-
ուհետևնէրնէք տարի թագաւորեցին բ-
րան։
5 Եւ Երուսաղեմի մէջ սոնոք Ծնան ա-
նոր։ Սամաա, Սովբաբ, Նաթան և Սո-
զոման. այս չորսը Ամիէլի աղջկանէն՝
6 Բեերսաբէէ Շուայ էին։ Եւ Ցերսաբ, և
7 Նղհասան, և Եղիփաղետ, Եւ Նոգա,
8 և Նեփեկ, և Յաֆիէ, Եւ Եղիսամա,
և Եղիսաղա և Եղիփաղետ. սոնոք իննն
9 էին։ Ամենն ալ Դաւթի որդիներն էին,
հարճերուն որդիներէն և անոնց քրո-
քոջմէն՝ Թամարէ գառ։
10 Եւ Սողոմոնի որդին Ռոբովամ էր։ ա-
նոր որդին Աբիա, անոր որդին Ասա,
11 անոր որդին Յոսափատ, Անոր որդին
Յովրամ, անոր որդին Ոքոզիա, անոր
12 որդին Յովաս, Անոր որդին Ամասիա,
անոր որդին Ազարիա, անոր որդին
13 Յոսփթամ, Անոր որդին Ահազ, անոր
որդին Եզեկիա, անոր որդին Մանասէ,
14 Անոր որդին Ամոն, անոր որդին Յոսիա։
15 Եւ Յովսիայի որդիքն անդրանիկը Յո-
հանան, երկրորդը Յովակիմ, երրորդը
16 Սեդեկիա, չորրորդը Սեդրեմ էր։ Եւ
Յովակիմի որդիքն՝ անոր որդին Ցեքո-
17 նիա, անոր որդին Սեդեկիա էր։ Եւ Ցե-
քոնիայի որդիքն՝ Ասիր, անոր որդին
18 Սաղաթիէլ. Նաև Մելքիրամ, Փադա-
յիա, Սանէասար, Ցեկամիա, Ոսամա և
19 Նադաբիա էին։ Եւ Փադայիայի որդիքը
Զորաբաբել և Սեմէի էին։ և Զորաբաբե-
լի որդիքը՝ Մեսուզամ և Անանիա, և
20 անոնց քոյրը Սաղոմիթ էր։ Նաև Ասու-
բա և Ոհել և Բարեքիա և Ասադիա և
21 Յովսաբեսէդ՝ հինգ էին։ Եւ Անանիայի
որդիքը Փաղաթիա և Եսայի էին։ †Հաս-
վեպիայի որդիքը, Ռոնայի որդիքը, Աբ-
դիայի որդիքը, Սեքենիայի որդիքը։*
22 Եւ Սեքենիայի որդին Սեմայիա էր։ և
Սեմայիայի որդիքը Ցեսաուս, և Ի-
գաղ, և Բեբիա, և Նաաբիա և Սա-

23 փատ՝ վեց էին։ Եւ Նաաբիայի որդիքը
Եղիոէնայի և Եզեկիա և Եզրիկամ՝ ե-
24 րեք էին։ Եւ Եղիոէնայի որդիքը Ով-
զատա, և Եղիասիբ, և Փադայիա, և
և Ակկուբ և Յոհանան և Դաղայիա և
Անանի՝ եօթն էին։

## Գլ. Դ

1 Յուդայի որդիքը Փարէս, Եսրոն և
2 Քարմի և Ուր և Սոբաղ էին։ Եւ Սո-
բաղի որդին Ռէոյիա Ծնաւ զՅահ։ և
Յահ Ծնաւ Աքթայի և Ղազա։ Սորա-
3 այս տոհմերն սոնոք էին։ Եւ Հառամի
՝հօրմէն սոնոք եղան։ Յեզրայէլ և
Յեսմա և Յեդբաս։ և անոնց քրոջը ա-
4 նունն էր Եսելեղպոնի։ Եւ Գեդովրի հայ-
րը Փանուէլ, և Ովսայի հայրը Եզեր էր.
սոնոք Բեթլեհեմի հօր՝ Եփրաթի անդ-
րանիկն Ովրի որդիքն էին։
5 Եւ Թեկոէէի հայրը Ասքուր երկու
6 կին ունէր, Եղուա և Նաարա։ Եւ Նաա-
րա անոր Ծնաւ զԱքզոզամ, զՀեփեր,
զԹեմնի և զԱհաստարի։ Նաարայի որ-
7 դիքն սոնոք էին։ Եւ Եղուայի որդիքը
8 Սարեթ, Սահառ, և Եթնան էին։ Եւ
Կոզ Ծնաւ զԱնոբ, զՍովբեբա, և Հա-
րում որդւոյն Ահարհէլի տոհմերը։
9 Եւ Գաբես իր եղբայրներէն փառա-
ւոր էր, և անոր մայրն անոր անունը
†Գաբես գրաւ, ըսելով, Զանիկա որբա-
10 մոէմամբ Ծնայ։ Եւ Գաբես Իսրայէլի
Աստուծոյն ադաղակեց և ըսաւ, Եթե
դուն թէ անշուշտ կզգմանես զիս օրհնես և
իմ սահմանս մեծցուներս, և քու ձեռ-
քդ ինծի հետ ըլլայ, և զիս չարէն ա-
զատես որ ինծի ապտութիւն չըլլայ։
Եւ Աստուած անոր խնդիրքը կատա-
րեց։
11 Եւ Սուհայի եղբայրը Քեղոռ Ծնաւ
12 զՄաքիր, որ Եսթոնի հայրն էր։ Եւ Ես-
թոն Ծնաւ զԲեթռափան և Փասէն և
Իրնահաս հայրը Թհանան. սոնոք Հաս-
13 քայի մարդիկն էին։ Եւ կենիզի որդի-

*Կամ որդիքը
†Այսինքն՝ ապտութիւն։

քը Գոթոնիէլ և Սարայիա էին, և Գա-
14 թանիէլի որդին Աթաթ էր։ Եւ Մա-
նահաթացի Ծնաա զիմիրա. և Սարայիա Ծը-
նաա զՅեհիլաթ՝ *Գեղթարաթիմի հայրը.
(գեղի անունը արհեստաւորներ էին.)
15 Եւ Յեփնեան հարիւրի որդիքն էին,
էլա և Նաամ էին. և էլասի որդի Ես-
16 նէզ էր։ Եւ Յայիզելի որդիքը՝ Զիփ,
17 Զիփա, Թիրիա և Ասարէլ. Եւ եղբօրի
որդիքը Յեհէրի, Մօրադ, Ափէր և Յա-
զօն էին. և Ասէ կինը Ծնաա զՄարիամ
և Սամայի և Եսթեմովի հայրը Յեսբան.
18 Եւ անոր կինը Յուդիա Գեդովրի
հայրը Յարեդ, Սոքովի հայրը Քաբեր
և Զանովի հայրը Յեկթիէլ. և Մօթա-
դի առած Փարաւոնի աղջիկան՝ Բեթ Թա-
19 լի որդիքն ասոնք էին։ Եւ Ասէ կնոջ
Նայեմի քրոջը՝ Ովդիայի որդիքը Կեի-
լային հայրը Գարմի, և Մաաթիացի Եսա-
20 թեմով էր։ Եւ Սիմոնի որդիքն Ամնոն,
Հանան, Բենհանան և Թիղոն էին. և Յեսո-
սի որդիքը Զոհէթ և Բենզոհէթ էին։
21 Եւ Շուդայի որդւոյն Սելոմի որդի-
քը՝ Ղեքային հայրը էր, և Մարեսայի
հայրը Ղասդա, և Աբէթայի տան բե-
հեզագործներուն տան տոհմերն էին.
22 Նաև Յոսկիմի և Քոզեբային մարդիկը
և Յոաշ և Սարափ որ Մոաբի մէջ բա-
նաւորած էին և Եղեմուղէլի և Գաղեթայի
մէջ կը բնակէին. Թագաւորին գով ա-
նոր գործին համար հոն կը բնակէին։
24 Շմաւոնի որդիքը՝ Նամուէլ, Յամին,
25 Յարիբ, Զարա և Սաուղ. Անոր որդին
Սեդրատ, անոր որդին Մարաամ, անոր
26 որդին Մաասա։ Եւ Մաասայի որդիքը,
անոր որդին Ամնէլ, անոր որդին Զա-
27 քուր, անոր որդին Սեմէին։ Եւ Սեմէի
տասնվեց որդի և վեց աղջիկ ունէր,
բայց անոր եղբայրները չատ ազատ չու-
նէին. և անոնց բոլոր տոհմերը Յու-
28 դայի որդւոց չափ չշատցան։ Եւ անոնք
Բերսաբեէի, և Մօղադայի, և Ասեր-

29 սուաղի, Եւ Բազայի, և Ասեմի, և
30 Թուղադի, Եւ Բաթուէլի, և Հորմայի, և
31 Սիկեղակի, Եւ Բեթմարքաբովթի, և
Սասեր-սուսիմի, և Բեթբարեի և Սա-
գարիմի մէջ բնակեցան. մինչև Դաւիթ
թագաւոր եղած ատեր անոնք էին ա-
32 նոնց քաղաքները, Եւ անոնց գիւղերը՝
Ետամ, Ային, Ռեմոն, Թոքան և
33 Ասան, հինգ քաղաք։ Եւ այս քաղաք-
ներուն բոլորային բոլոր գիւղերը մին-
չև Բահաղ, անոնց բնակութիւնները և
34 *վիճակներն ասոնք էին։ Եւ Մոսոբաբ,
և Յամլեք, և Ամասիայի որդին Ոսա,
35 Եւ Յովէլ և Ափիէլի որդւոյն Սարաիա-
յի որդւոյն Յոսարիայի որդին Ցեւ,
36 Եւ Եղիովէնայի, և Ցեկիտայ, և Յա-
սուհա, և Ասայիա, և Ադիէլ, և Ցե-
37 սիմիէլ, և Բանեա, Եւ Սեմայիայի որ-
դւոյն Սամարիի որդւոյն Ցեդոյիայի
որդւոյն Ազանի որդւոյն Սեփեթի որ-
38 դին Զիզան։ Այս անուններով յիշատա-
կներն իրենց տոհմերուն մէջ իշխաններ
էին, և անոնց աղջատոհմիները խիստ
39 չատացան։ Եւ իրենց անասուններուն
համար արօտ փնտռելով՝ Գեդովրի
մուտքը գային մինչև Ձորին արեւե-
40 լեան կողմը։ Եւ տեսան և ագէկ ա-
րօտ գտան. և այն երկիրն բնդարձակ
էր, և խաղաղութեան և հանգստու-
41 թեան մէջ էր. քանզի առաջ Քամի ե-
ղողները հոն կը բնակէին։ Եւ այս ա-
նուններով գրուածներն Եզեքիա թա-
գաւորին օրերը գային, և անոնց վրաններն և հոն գտնուած բո-
նակարանները զարկին, և զանոնք բո-
նովին իրենց մինչև այսօր, և անոնց
տեղ բնակեցան. վասն զի հոն իրենց
42 Հօտերուն համար արօտ կար։ Եւ ա-
նոնցմէ՝ այսինքն Շմաւոնի որդիներէն
հինգ հարիւր մարդ Սեիր լեռը գացին,
իրենց վրայ Եղեսաբի որդիքը Փալատիա,
Նեարիա, Հռափայիա և Ոզիէլ իշխան
43 եղեալ։ Եւ Ամաղեկի փախուստան
ձեռադրուները գտին, և մինչև այս
օր հոն բնակեցան։

*Ա-ինէզեր՝ արհեստաւորաց ձորին
†Կամ ու Ադդէբարիմ աթթիկիմ.

*Կամ Ազգաբանութիւնները



ԳԼ. Ե

1 Եւ Իսրայէլի անդրանկան Ռուբէնի
որդիքը. (քանզի անդրանկին անիկա
էր. բայց իբր հօրը անկողինը պղծե-
լուն համար՝ իր անդրանկութեան ի-
րաւունքն Իսրայէլի որդւոյն Յովսէփի
որդւոց արուեցաւ. և ազգաբանութիւն
2 մէջ անդրանկի պէս չգրուեցաւ. Իսկ
Յուդա իր եղբայրներէն զօրաւոր ե-
ղաւ, և անկէ իշխանները ելան, թայց
անդրանկութեան իրաւունքն Յովսէ-
3 փայ էր։) Իսրայէլի անդրանկան Ռու-
բէնի որդիքը Ենովք, Փաղղոս, Եսրոն
4 և Քարմի էին։ Յոէլի որդիքն՝ անոր
որդին Սեմայիա, անոր որդին Գոգ, ա-
5 նոր որդին Սեմէի, Անոր որդին Միքա,
անոր որդին Ռէայիա, անոր որդին
6 Բաաղ, Անոր որդին Բէէրա, զոր Ա-
ռորեացւոյն Թագդաթ-փաղնասր Թա-
գաւորը գերի տարաւ. անիկա Ռու-
7 բենացոց իշխան էր։ Եւ անոր եղբայր-
ներէն իրենց տոհմերով իրենց ազգաշա-
րերին մէջ գրուեցան, Ծագդոյի գլխաւոր
8 Յեհիէլ էր, յետոյ Զաքարիա, Եւ Յո-
էլի որդւոյն Սեմայի որդւոյն Ագազի
որդին Բաղա. տարեկ Աղոերի մէջ, և
Նեբոյ մինչև Նաբաս և Բէէլբոն բնակե-
9 ցաւ։ Եւ արեւելեան կողմը՝ Եփրատ գե-
տէն մինչև անապատը բնակեցաւ, քան-
զի անոնց անասունները Գաղաադա-
10 երկրին մէջ չատացած էին։ Եւ Սաուղի
օրերն անոնք պատերազմ ըրին Հագա-
բացւոց հետ, որ անոնց ձեռքն ինկան.
և Գաղաադա բոլոր արեւելեան կող-
մերն անոնց վրաններուն մէջ բնակե-
ցան։
11 Եւ Գադի որդիքն անոնց դիմաց Բա-
սանա երկրին մէջ բնակեցան մինչև
12 Սելքա. Գլխաւորը՝ Յոէլ, և երկրորդը՝
Սափամ, յետոյ Յանայ, և Սափատ՝
13 Բասանի մէջ։ Եւ անոնց եղբայրներէն ի-
րենց ազգատոհմիներուն համեմատ՝ Մի-
քայէլ, Մեսուղամ, Սաբէէ, Յովէլ,
14 Յագան, Չիա և Եբեր՝ եօթն էին. Ա-
նոնք Բուզի որդւոյն Յագդովի որդւոյն
Յեհոսայի որդւոյն Միքայէլի որդւոյն
Գաղաագի որդւոյն Յասրայի որդւոյն
Հուրիի որդւոյն Աբիխէլի որդիք էին.
13 Անոնց ազգատոհմիներուն իշխանը Գու-
նիի որդւոյն Աբդիէլի որդին Աքի էր։
16 Եւ անոնք Գաղաադա մէջ, Բասանի
և անոր գիւղաքաղաքներուն մէջ, և
Սարոնի բոլոր արուարձաններուն մէջ՝
մինչև անոնց սահմանները բնակեցան.
17 Ամենը ազգատոհմերով թա-
գաւորին օրերը, և Իսրայէլի Յերոբո-
ամ թագաւորին օրերը գրուեցան ազ-
գաբանութիւն մէջ։
18 Ռուբէնի որդիքը և Գադացին և
Մանասէի կէս ցեղը՝ քաջասիրտ եղող
հազար հարիւր վաթսուն զօրա-
ւոր, վահան և սուր կրող, և աղեղ
քաշող, պատերազմ սորված, և պա-
տերազմի ելլող մարդիկ էին։ Եւ անոնք
Հագարացւոց, Յետուրացւոց, Նաբդե-
ացւոց և Նոդաբացւոց հետ պատեր-
20 բազմ ըրին, Եւ անոնց յաղթեցին. և
Հագարացիք և բոլոր անոնց հետ ե-
ղողներն անոնց ձեռքը մրուեցան. քան-
զի անոնք պատերազմի մէջ Աստուծոյ
ապաւինեցան, և անոնց լսեց, վասն զի
21 անոր ապաւինեցան։ Եւ անոնց անաս-
ունները՝ իրենց հազար ուղտ, և եր-
կու հարիւր յիսուն հազար ոչխար, և
երկու հարիւր էշ, և հարիւր հազար
22 մարդ գերի ըրին. (Քանզի շատերը մեռ-
ած ինկան. վասն զի այս պատերազմն
Աստուծմէ էր.) և մինչև գերութիւնն
անոնց տեղ բնակեցան։
23 Եւ Մանասէի որդւոց կէս ցեղն այն
երկրին մէջ բնակեցան, Բասանէ մինչև
Բաալհերմոն, Սանիր և Հերմոն լեռը,
24 *Եփ բազմութիւն էին, Եւ անոնց ազ-
գատոհմիներուն իշխաններն սասնք էին.
Ափէր, Եսեայ, Եզրիէլ, Երեմիա, Ովդաբա և Յագդիէլ, որ զօրա-
ւոր, քաջ և անուանի մարդիկ էին,
և իրենց ազգատոհմիներուն իշխաններն
էին։
25 Եւ իրենց Հայրերուն Աստուծոյ դէմ
ապստամբեցան, և այն երկրին ազգաց
աստուածներուն եաեէն էբեաւել պոռ-
նկեցան, զոր Աստուած անոնց առջեւէն

26 բնաբինչ ըրած էր։ Եւ Իսրայէլի Ա-
ստուածն Ասորեստանի Փուղ թագաւո-
րին հոգին՝ եւ Ասորեստանի Թագաթ-
փաղասար թագաւորին հոգին գիմբ-
ռեց, և Յու բենեանները, Գադեանն-
բր և Մանասէի կէս ցեղը գերի բրաւ,
և զանոնք Քաղա և Խաբոր և Հաբա
և Գոզքան գետը տարաւ մինչև այս օր։

ԳԼ. Զ

1 Ղևիի որդիքը Գերսոն, Կահաթ և Մե-
2 բարի էին։ Եւ Կահաթի որդիքն Ամ-
բրամ, Յասհար, Քեբրոն և Ոզիէլ էին։
3 Եւ Ամբրամի որդիքն Ահարոն, Մովսէս
և Մարիամ էին։ Եւ Ահարոնի որդիքը՝
Նադաբ, Աբիհու, Եղիազար և Իթա-
4 մար էին։ Եղիազար Փնհես ցվինեցաւ,
5 և Փինհես Յեսու ցԱբիսուա, Եւ Աբի-
սուա Յեսու ցԲոկկի, և Բոկկի Յեսու
6 զԻզի, Եւ Իզի Յեսու զԶարհա, և Զա-
րիա Յեսու զՄարիովթ, Եւ Մարիովթ Ջե-
նեաւ զԱմարիա, և Ամարիա Յեսու զԱ-
7 հիտուբ, Եւ Ահիտուբ Յեսու զՍադովկ,
8 և Սադովկ Յեսու զԱքիմաաս, Եւ Ակի-
մաաս Յեսու զԱզարիա, Եւ Ազարիա Յե-
9 սու զՅովհանան, Եւ Յովհանան Յեսու զԱ-
10 զարիա. (Ասիկա էր որ Սողոմոնի Ե-
րուսաղէմ շինած *տաճարին մէջ քա-
11 հանայապետին բրաւ.) Եւ Ազարիա Յե-
սու զԱմարիա, և Ամարիա Յեսու զԱ-
12 հիտուբ, Եւ Ահիտուբ Յեսու զՍադովկ,
13 և Սադովկ Յեսու զՍեղդում, Եւ Սեղ-
դում Յեսու զԲեզկիա, և Բեզկիա Յե-
14 սու զԱզարիա, Եւ Ազարիա Յեսու զԱ-
րայիա, և Սարայիա Յեսու զՅովսեդեկ,
15 Եւ Յովսեդեկ երթալ գնաց, երբ Տէրը
Բուդա և Երուսաղէմ Նաբուգոդոնո-
սորի ձեռքով փոխադրեց։

16 Ղևիի որդիքը Գերսոն, Կահաթ և
17 Մերարի էին։ Եւ Գերսոնի որդոց ա-
նուններն ասոնք էին. Ղաբնի և Սե-
18 մէի։ Եւ Կահաթի որդիքն Ամրամ, Ի-
19 սհառ, Քեբրոն և Ոզիէլ էին։ Մե-
րարիի որդիքը Մողղի և Մուսի էին։

*Եբր. տաճարը

և ասոնք են Ղևտացւոց ազգերն ի-
րենց հայրերուն համեմատ։

20 Գերսոնի որդին՝ անոր որդին Ղաբ-
նի, անոր որդին Զեմէ, անոր որդին
21 Զոմմա, Անոր որդին Յովաբ, անոր
որդին Ադդով, անոր որդին Զարա,
անոր որդին Յեաթրի էր։

22 Կահաթի որդիքը՝ անոր որդին Ամի-
նադաբ, անոր որդին Կորհ, անոր որ-
23 դին Ասիր, Անոր որդին Եղկանա, ա-
նոր որդին Աբիասափ, անոր որդին Ա-
24 սիր, Անոր որդին Թահաթ, անոր որ-
դին Ուրիէլ, անոր որդին Ոզիա և ա-
25 նոր որդին Սաուղ էր։ Եւ Եղկանայի
26 որդիքն Ամասայի, Ախիմոթ և Եղկա-
նա էին։ Եղկանայի որդիքը՝ անոր որ-
դին Սոփի, և անոր որդին Նահաթ,
27 Անոր որդին Եղիաբ, անոր որդին Ջե-
28 րոհամ, անոր որդին Եղկանա էր։ Ե-
Սա Հուելի որդիքը՝ անոր անդրանիկին
Յովէլ և երկրորդին Աբիա էր։

29 Մերարիի որդիքը՝ Մողղի անոր որ-
դին Ղաբնի, անոր որդին Սեմէի, անոր
30 որդին Ոզա, Անոր որդին Սամաա, անոր
որդին Անգիա, անոր որդին Ասայիա էր։

31 Եւ ասոնք են որ Դաւիթ երգեցո-
ղութեան պաշտօնէին վրայ դրաւ Տէրո-
ջը սան մէջ տապանակին հանդչելէն
32 ետքը։ Եւ անոնց պաշտօնը ժողովրդի
խորանին առջև օրհներգութիւն երգել էր,
մինչև որ Սողոմոն Երուսաղեմի մէջ
Տէրոջը տունը չինեց։ և իրենց կարգին
33 հաճեմատ իրենց պաշտօնին վրայ կը
կենային։ Եւ իրենց որդիներով կեցող-
ներն ասոնք են։ Կահաթեանց որդի-
ներէն երգեցող Եման՝ Յովէլի որդին,
34 որ Սամուելի որդին, Որ Եղկանայի որ-
դին, որ Երոհամի որդին, որ Եղիէլի
35 որդին, որ Թովղայի որդին, Որ Սուփի
որդին, որ Եղկանայի որդին, որ Մա-
36 ահի որդին, որ Ամասայիի որդին, Որ
Եղկանայի որդին, որ Յովէլի որդին, որ
Ազարիայի որդին, որ Սոփոնիայի որ-
37 դին, Որ Թահաթի որդին, որ Ասիրի
որդին, որ Աբիասափի որդին, որ Կոր-
38 հայ որդին, Որ Իսհառի որդին, որ
Կահաթ ու որդին, որ Ղևիի որդին, որ



39 Իսրայէլի որդին էր։ Եւ անոր աջ կող-
մը կայնողն անոր եղբայրն Ասափ էր,
Ա Ասափ՝ Բարաքիայի որդին, որ Սա-
40 մայի որդին, Որ Միքայէլի որդին, որ
Բասեհայի որդին, որ Մելգիայի որ-
41 դին, Որ Ադնիի որդին, որ Զարայի
42 որդին, որ Ադայիայի որդին, Որ Եթա-
նի որդին, որ Զամմայի որդին, որ Սե-
43 մէիի որդին, Որ Ցեթի որդին, որ Գեր-
44 սոնի որդին, որ Ղևիի որդին էր։ Եւ
անոնց եղբայրները՝ Մերարիի որդիքը
ձախ կողմը կը կայնէին՝ Եթան՝ Կիսեայի
որդին, որ Աբդիի որդին, որ Մալուքի
45 որդին, Որ Ասաբիայի որդին, որ Ամա-
46 սիայի որդին, որ Քեղկիայի որդին, Որ
Ամասիի որդին, որ Բանիի որդին, որ
47 Սամերի որդին, Որ Մողղիի որդին, որ
Մուսիի որդին, որ Մերարիի որդին,
48 որ Ղևիի որդին էր։ Եւ անոնց եղբայր-
ները՝ Ղևտացիք Աստուծոյ տան խո-
րանին համար ծառայութեան նշանակած
էին։

49 Բայց Ահարոն և անոր որդիքը ողջա-
կիզի սեղանին վրայ ողջակէզ և խունկի
սեղանին վրայ խունկ կը մատուցանէ-
ին, սրբութեանց սրբութեան համ-
ձեռքը կատարելով, և Իսրայէլի հա-
մար քաւութիւն ընելով, այն ամենուն
համեմատ որ Աստուծոյ ծառան Մով-
50 սէս պատուիրած էր։ Եւ Ահարոնի որ-
դիքն ասոնք էին. Անոր որդին Եղիա-
զար, անոր որդին Փինհէս, անոր որ-
51 դին Աբիսուա, Անոր որդին Բոկկի, ա-
նոր որդին Ոզի, անոր որդին Զարհա,
52 Անոր որդին Մարիովթ, անոր որդին Ա-
53 մարիա, անոր որդին Ահիտուբ, Անոր
որդին Սադովկ, անոր որդին Ահիմա-
աս։

54 Եւ Կահաթի ասոնին Ահարոնի որ-
դւոց բնակութիւններն ասոնք էին՝ ի-
րենց գեղերով և իրենց սահմաններով,
55 թանզի այն վիճակին անոնց եղաւ։ Եւ
Յուդայի երկրին մէջ Քեբրոն և անոր
շրջակայ արուարձանները անոնց տուին։
56 Բայց այն քաղաքին արտերը և անոր
57 գեղերը Յեփոնեան Քաղեբի տուին։ Եւ
Յուդայի քաղաքներէն Ահարոնի որ-

*Եբր. տանին

71 Գերաման որդւոց՝ Մանասէի կէս ցե-
ղին ասմնին Բաասի մէջ Գողան իւր
արուարձաններով, և Աստարովթ իւր
72 արուարձաններով, և Իաքաբի ցե-
ղին կադես իւր արուարձաններով,
73 Դաբարաթ իւր արուարձաններով, և
Ռամովթ իւր արուարձաններով, և Ա-
74 նամ իւր արուարձաններով. և Աների
ցեղին Մասազ իւր արուարձաններով,
75 և Աքրօն իւր արուարձաններով, և
Հուկոկ իւր արուարձաններով, և Բսոր
76 իւր արուարձաններով. և Նեփթազե-
մի ցեղին Գալիլեայի մէջ Կադես իւր
արուարձաններով, և Համմոն իւր ա-
րուարձաններով, և Կարթաթիմ իւր
արուարձաններով եօթն։

77 Եւ մնացեալներուն որմէն Մերա-
րիի որդւոց՝ Զաբուլոնի ցեղէն Ռիմոն
իւր արուարձաններով, Թաբօր իւր
78 արուարձաններով. և Երիքովի Յոր-
դանանէ մնացի կողմն՝ Յորդանանու
արեւելեան կողմն՝ Ռուբենի ցեղէն Ա-
նապատի մէջ Բսոր իւր արուարձան-
ներով, և Յասա իւր արուարձանն-
երով, և Կեդեմովթ իւր արուարձան-
79 ներով, և Մեփաաթ իւր արուարձան-
ներով, և Գադայ ցեղէն Գաղաադի
80 մէջ Ռամովթ իւր արուարձաններով,
և Մանայիմ իւր արուարձաններով,
81 և Եսեբոն իւր արուարձաններով, և
Յազեր իւր արուարձաններով եօթն։

## ԳԼ. Լ

1 Եւ Իսաքարի որդւոց՝ Թովղա և Փուա
2 և Յասուբ և Սամրօն՝ չորս էին։ Եւ
Թովղայի որդիքը՝ Ոզի և Հափայիա
և Յերէել և Յեմայի և Յեբսամ և Սա-
մուէլ՝ իրենց հօրը Թովղայի տան իշ-
խաններն՝ և իրենց ազգին մէջ զօրա-
ւոր երիւռատարպներ էին. Գաթիէ օ-
րերին անոնց թիւը քսանեւերկու հա-
3 զար վեց հարիւր էր։ Եւ Ոզիի որդիքը՝
Յեզերիա և Յեզերիայի որդիքը Միքա-
էէլ և Աբդիա և Յոէլ և Յեսիա՝ հինգ
4 էին, և ամէնն ալ իշխաններ էին։ Եւ
անոնց հետ անոնց ցեղին և ազգատոհ-
մին մէջ պատերազմի չորս հազար զօր-
ական զինուոր կար. քանզի անոնց կանայք և որդիքը շատ ար-
5 էին։ Եւ անոնց եղբայրներն Իսաքարի
բոլոր տոհմերուն մէջ զօրաւոր երի-
ւռատարպներ էին՝ իրենց ազգատոհ-
մերին համեմատ ամէնը ութսունևե-
օթն հազար էին։

6 Բենիամինի որդիք՝ Բաղա, Բաքր և
7 Յեդիէլ՝ երեք էին։ Եւ Բաղայի որդի-
քը՝ Եսբան, Ոզի, Ոզիէլ, Յերիմովթ և
Իրի՝ իրենց ազգատոհմին իշխաններն
և զօրաւոր երիւռատարպներ՝ հինգ է-
ին. և անոնց ազգատոհմին մէջ գրե-
ուածները քսանևերկու հազար երե-
8 սունևչորս հոգի էին։ Եւ Բաքրի որ-
դիքը Զամիրա, Յովաս, Ղղիազար, Ե-
ղիովէնայի, Ամրի, Յերիմովթ, Աբիա,
Անաթովթ և Գադեմէթ էին. ասոնց
9 ամէնը Բաքրի որդիքն էին։ Եւ անոնց
ազգատոհմերին մէջ իրենց ազգատոհմ-
ներուն իշխանները՝ զօրաւոր երիւռա-
տարպներ՝ քսան հազար երկու
10 հարիւր հոգի կար։ Եւ Յեդիէլի որդին
Բաղդան, և Բաղդանի որդիքը՝ Յեուս,
Բենիամին, Ահոդ, Քանանա, Զեթան,
11 Թարսիս և Աբիսհամ էին։ Ասոնց ա-
մէնը Յեդիէլի որդիքն էին՝ ասոնց տան
իշխանները և զօրաւոր երիւռա-
տարպներ էին. և տասնևեօթն հազար
երկու հարիւր պատերազմի կրող մար-
12 դիկ էին։ Եւ Սուփիմ և Ոփիմ՝ Իրիի
որդիքն էին, և Հուսիմ Աքերի որդին
էր։

13 Նեփթազիմի որդիքը՝ Յասիէլ, Գու-
նի, Յասեր և Սեղղում՝ Բաղդայի որ-
դիքն էին։

14 Մանասէի որդիքն՝ Ասրիէլ, զոր ա-
նոր Կին Ձնաւ. և անոր Ասորի հարճը
15 Գաղաադա հայրը զՄաքիր Ծնաւ։ Եւ
Մաքիր իրեն կին առաւ Ափիմի և Սու-
փիմի քոյրը՝ որուն անունը Մաաքա էր,
և երկրորդին անունը Սալպաադ էր. և
16 Սալպաադի աղջիկներ Ծնան։ Եւ Մա-
քիրի կինը Մաաքա որդի մը Ծնաւ, և
անոր անունը Փարես կոչեց. և անոր
եղբօր անունը Սարէս էր, և անոր որ-



17 դիները Ուղամ և Բակամ էին։ Եւ Ու-
ղամի որդին Բեդան էր. Մանասէի որ-
դւոցմէ Մաքիրի որդւոցմէ Գաղաադ որ-
18 դին ասոնք էին։ Եւ անոր քոյրը Մա-
ղեքիթ Ծնաւ զԻշհոդ, զԱբիեզեր և
19 զՄահղա։ Եւ Սեմիդայի որդիքն Ա-
խման, Սիւքեմ, Ղաղէլ և Անիամ էին։
20 Եւ Եփրեմի որդիքը՝ Սուտաղա, (և
անոր որդին Բարադ, և անոր որդին
Թահաթ, և անոր որդին Եղիադա, և
21 անոր որդին Թահաթ, Եւ անոր որդին
Զաբադ, և անոր որդին Սուտղայ)
նաև Եզեր և Եղիադ էին. և զանոնք
այն երկրին մէջ ծնած Գեթացիք մեռ-
ցուցին, քանզի անոնց անասուններն
22 առնելու իջան։ Եւ անոնց հայրը Եփ-
րեմ շատ օրեր սուգ բռնեց, և անոր
եղբայրները գանիկա մխիթարելու գա-
23 ցին։ Եւ անիկա իր կնոջ մտաւ, և
անիկա յղանալով որդի մը ծնաւ. և
անոր անունը Բարիա կոչեց, վասն զի
24 իր տան մէջ չարիք եկած էր։ Եւ ա-
նոր աղիկը Սեերա էր. ասիկա վարի
և վերի Բեթհորան և Ոզանսեէրա շի-
25 նեց։ Եւ անոր որդին Հափէթ և Հը-
ւաեէթ, և անոր որդին Թոփէ, և ա-
26 նոր որդին Թաան, Անոր որդին Ղաա-
դան, անոր որդին Ամիուդ, անոր որ-
27 դին Եղիսամա, Անոր որդին Նաւէ Ե-
28 անոր որդին Ցեսու էր։ Եւ անոնց կա-
լուածներուն և բնակութիւններն ասոնք
էին, Բեթէլ և անոր գեղերը, և ա-
րեւելեան կողմն Նոարան, և արև-
մտեան կողմն Գազեր և անոր գեղե-
րը, և Սիւքեմ և անոր գեղերը, մին-
29 չև Գազա և անոր գեղերը. Եւ Մանա-
սէի որդւոց սահմաններուն քով Բեթ-
սան և անոր գեղերը, Թաանաք և ա-
նոր գեղերը, Մակիդդով և անոր գե-
ղերը, Դովր և անոր գեղերը. Իսրայէ-
լի որդւոցն Յազեվեայ որդիքն ասոնց
30 մէջ կը բնակէին։
Ասերի որդիքը Յեմնա, Յեսուա, Յե-
սուի և Բարիա, և անոնց քոյրը Սարա
31 էր։ Եւ Բարիայի որդիքը Բաբեր և

*Այսինքն՝ չարիքի մէջ

1 Եւ Բենիամին Ծնաւ իր անդրանիկը
Բաղա, երկրորդն Ասբէլ, երրորդն՝
2 Աքրա, Չորրորդը Նովա, և հինգե-
3 րորդը՝ Իափա։ Եւ Բաղայի որդիքն
4 Ադար, Գեբռա, Աբիհուդ, Աբիսուա, Նե-
5 ուման, Ափռը, Գեբռա, Սուփան և Փի-
6 րամ էին։ Եւ Ադուդի որդիքն ասոնք
էին, Նաթայի բնակչաց իշխաններն
ասոնք էին, և զանոնք Մահանաթ
7 փախատրեցին։ Եւ Նեէման և Աքիա և
Գանանք փախադրողը Գեբռա ածին
8 Ծնաւ զԱզա և զԱքիհուդ։ Եւ Սահարիմ
գանանք գրկելէն ետքը Մոաբի երկրին
մէջ ղաբաղնէք Ծնաւ։ Եւ անոր կանայք
9 Հուսիմ և Բաառա էին։ Եւ իր կնոջ-
մէն Գազեմէ Ծնաւ զՅովաբ, զԱբիա,
10 զՄեսա, զՄեղդամ, Զեբեօս, զԱնքան
և զՄարմա, ասոնք անոր որդիքը Ե
11 ռասներուն իշխաններ էին։ Եւ Հուսիմէ
12 Ծնաւ Աբիտովբ և Եղբաադ։ Եւ Եղբաա-

*Կամ Աբեդ

դի որդիքը՝ Երեք, Միսաամ և Մաամը,
(տաիկա Ալիսով), Դոմդ և անոր գեղեր-
13 քը շինեց,) եւ Բարիա և Սեմա էին.
ասոնք Այեղոն բնակող առնիներուն իշ-
խանները էին, և ասոնք վռնտեցին
14 Գեթի բնակիչները. եւ Ահիսով, Սոմ-
15 ակ, Ցերիմոթ, Զաբադիա, Արադ, Ե-
16 դեր, Միքայէլ, Յեսիա և Յովքա եւ
17 բոլոր որդիքն էին. եւ Զաքաղա, Մե-
18 սուզամ, Ազակի, Ջաբեր, Ցեսամմերի,
Ցեզղրա, և Յոբաբ եղիսազդ որդիքն
19 էին. եւ Յակիմ, Զեքրի, Զաբդի,
20 Եղիենայի, Սաղթի, Եղիել, (21) Ա-
դայիա, Բաթեա և Սամաթաթ Սեմիթի
22 որդիքն էին. եւ Յեսփան, Երեր, Եղի-
23 էլ, Աբդոն, Զեքրի, Անան, (24) Անա-
25 նիա, Եղամ, Անաթոթիա, Ցեփեդիա
26 և Փանուէլ Սափսակի որդիքն էին. եւ
27 Սամսարի, Սեմսքիա, Գոթողիա, Յո-
րեսիա, Եղիա և Զեքրի Ցերոսմի որ-
28 դիքն էին. Ասոնք իրենց առնիներուն
համեմատ նահապետներ և իշխաններ
էին, և Երուսաղեմ մէջ կը բնակէին.
29 Եւ Գաբաւոնի հայրը
կը բնակէր. և անոր կնոջ անունը Մա-
30 աքա էր. եւ անոր անդրանիկ որդին
Աբդոն էր, հաջը Սաբ, Կիս, Բաալ,
31 Նադաբ, Գեդոր, Աքիով և Զաքար
32 էին. եւ Մակղոթ Շնաա գլխաւոր. և
ասոնք իրենց եղբայրներուն դիմացը
Երուսաղեմի մէջ իրենց եղբայրներուն
հետ բնակեցան.
33 Եւ Ներ Շնաա գլխաւ, և Կիս Շնաա
գլխաւոր, և Սաուղ Շնաա Յոնաթա-
նէլ, գլխեզրնաէ, գլխերնադար և
34 գնաբաադ. Եւ Յոնաթանի որդին Մե-
րիբաալ էր. և Մերիբաալ Միքա-
35 քա. Եւ Միքայի որդիքը Փիթոն, Մե-
36 լէք, Թաբէա և Աքազ էին. Եւ Աքազ
Շնաա գլխաւոր, և Յոհադա Շնաա
գլխաւորէ, գլխաւոր և Զամրիա. և
37 Զամրիի Շնաա գլխաւոր, Եւ Մոսա Շնաա
գլխաւոր. անոր որդին Բաքա, անոր
որդին Եղիասա և անոր որդին Եսել էր։
38 Եւ Եսել գլխ որդի ունէր, և անոնց
անուններն ասոնք են՝ Եզրիկամ, Բո-
քերու, Իսմայէլ, Սաարիա, Աբդիա և
Անան. ասոնց ամէնը Եսելի որդիքն
39 էին. Եւ անոր եղբօր Եսելի որդիքն՝
անդրանիկը Ուդամ, Երիսրդը՝ Ցեուս,
40 Երրորդը՝ Եղիփաղետ էր. Եւ Ուդամի
որդիքը զօրաւոր երիտասարդներ և ա-
զեղնաւներ էին, և անոնք շատ որ-
դիներ և թոռներ ունէին՝ երեք հարիւր
հիսուն. ասոնց ամէնը Բենիամինի որ-
դիներէն էին։

## Գլուխ Թ

1 Ս.յսպէս բոլոր Իսրայէլացիք ազգանա-
գրուած էին, և ահա Իսրայէլի և Յու-
դայի թագաւորաց գիրքին մէջ գրուած
էին. և իրենց անօրէնութեան համար
Բաբելոն գերի տարուեցան,
2 Եւ անոնց կալուածներուն մէջ անոնց
քաղաքներուն մէջ առաջ բնակողները՝
Իսրայէլացիներէն, քահանաներէն, Ղե-
ւացիներէն և Նաթանայիմներէն սահ-
3 Երն։ Եւ Երուսաղեմի մէջ Յուդայի որ-
դիներէն, Բենիամինի որդիներէն, Եփ-
րեմի և Մանասէի որդիներէն բնակե-
4 ցան. Յուդայի որդւոյն Փարեսի որդի-
ներէն՝ Բանիի որդւոյն Իմրիի որդւոյն
Ամրիի որդւոյն Ամիհուդի որդւոյն Ոմ-
5 րիի. Եւ Սիլհանացիներէն՝ անոր անդրա-
6 նիկը Նէիլ և անոր եղբայրները՝ Ե-
Զարացի որդիներէն Ցեվել և անոնց
եղբայրները՝ վեց հարիւր ինսունհինգ մարդ։
7 Եւ Բենիամինի որդիներէն՝ Սաանուայի
որդւոյն Ովդաւիայի որդւոյն Մեսու-
8 զամի որդին Սաղու. և Ցերոսմի որ-
դին Ցեբնիա, և Մարքիի որդւոյն Ո-
զիի որդին Էլա, և Ցեբնեայի որդւոյն
Ռագուելի որդւոյն Սափատիայի որդին
9 Մեսուզամ, Եւ անոնց եղբայրներն ի-
րենց ցեղերուն համեմատ՝ հինգ հարիւր
վեց հարիւր հիսունհինգ մարդ. բոլոր այս մարդիկ
կին իրենց տուներուն նահապետներն
էին։

*Կամ Սաուղ,
†Կամ անոր եղբայրները,



10 Եւ քահանաներէն՝ Յեդայիա, Յոհա-
11 րիբ և Յաքին, Եւ Ասոս Յոդ տան պե-
տակաց՝ Ահիտուբի որդւոյն Մարիո-
թի որդւոյն Սադոկի որդւոյն Մեսու-
դամի որդւոյն Բեղկիայի որդին Ազա-
12 րիա, Եւ Մեղբեայի որդւոյն Փաշուրի
որդւոյն Ցեբրամի որդին Ադայիա, և
Եռմերի որդւոյն Մեսեզաբէլի որդւոյն
Մեսուզամի որդւոյն Եղիբայի որդւոյն
13 Ադզեի որդին Մաասէ։ Եւ անոնց եղ-
բայրներուն իրենց տունհերուն իշխաննե-
րէն՝ հազար եօթն հարիւր վաթսուն
զօրաւոր երիտասարդներ Աստուծոյ
տան գործին ծառայութեան մէջ էին։
14 Եւ Ղեւտացիներէն՝ Սեմայիի որդւոյն
Ասարիայի որդւոյն Եղբիկամի
15 որդւոյն Ասուբի որդին Սեմայիա, Եւ
Բակբակար և Արիս և Գալալ և Ա-
սաֆի որդւոյն Զեքրիի որդւոյն Միքա-
16 յի որդին Մաթանիա, Եւ Եդիթունի
որդին Գաղալ և Ասուբի որդւոյն Եղ-
կանայի որդին Բերեքիա, որ նեստրա-
17 ցիներէն էր։ Եւ դռնապաններն՝ Սեղդում, Ակքոբ,
Տելմոն և Ահիման և անոնց եղբայր-
ներն. Սեղդում գլխաւորն էր։
18 Որ մինչև հոս թագաւորի դռան մօտ կը դի-
տէր Ղեւի որդւոց բանակներուն դռնա-
19 պաններն էին. և Կորեի որդւոյն Ա-
բիասափի որդւոյն Կորէի որդին Սեղ-
դում, և անոր եղբայրներն անոր հօ-
րանդէն Կորհացիներէն՝ Ցեսի-
յի վրայ հսկողութեան ծառա-
յութեան գործին վրայ էին, և խոտո-
նին մեծերուն պահապանութեան կ՚ընէին.
20 և անոնց հայրերը Տէրոջ բանակին մէջ
դրան պահապանութեան կ՚ընէին. Եւ ի-
րենցմէ Փենոհէս առաջ անոնց
վրայ իշխան էր, և Տէրը անոր հետ էր։
21 Մատեզամիայի որդին Զաքարիա ժողով-
քի խորանին դրան պահապանն էր։
22 Դռներուն մէջ ընտրեալ քիչ ընթա-
հատար բոլոր դռնապան բնաւոր ազնիւներն
երիսուհարիւր տասներկու հոգի էին։

*Կամ Հիսա

36 Նը Մաաքա էր. եւ անոր անդրանիկ որդին Ափգան էր. Եոքը Սաբ, Ակս,
37 Բաապ, Ներ, Նադաբ, Գեդոր, Ափխոյ,
38 Զաքարիա եւ Մակելոթ էին. եւ Մաքելոթ ծնաւ Սամսամ. եւ ասոնք ալ իրենց եղբայրներուն դիմացը՝ Բրուսաղեմի մէջ իրենց եղբայրներուն հետ բնակեցան։
39 Եւ Ներ ծնաւ զԿիս, և Կիս ծնաւ զՍաւուղ, և Սաւուղ ծնաւ զՅոնաթան, զՄելքիսուա, զԱբինադաբ և
40 զԵսբաաղ։ Եւ Յոնաթանի որդին Մերիբբաալ էր. և Մերիբբաալ ծնաւ զՄիքա։
41 Եւ որ Միքայէլի որդիքը փիլման, Մելէք, Թաբէ և Ախազ էին։ Եւ Ախազ ծընաւ զՅոադդա, և Յոադդա ծնաւ զԱղամաթ և զԱզմաթ և Զամբրի. և Զամբրի ծնաւ զՄոսա. Եւ Մոսա ծնաւ
42 զԲանասա, անոր որդին Ռափայա, անոր որդին Եղասա, Ա անոր որդին
43 Նախ էր։ Եւ Նախ վեց որդի ունէր, և անոնց անուններն ասանք են. Եզրիկամ, Բոքերու, Իսմայէլ, Սաարիա, Ափդիա և Անան. Եսկի որդիքն ասանք էին։

## Գլ. Ժ

1 Եւ Փղշտացիք Իսրայէլի հետ պատերազմ ըրին, և Իսրայէլի մարդիկը Փղշտացւոց առջեւէն փախան, և Գիղբոաի լեռան վրայ ապտնուած իյնկան։
2 Եւ Փղշտացիք Սաւուղի և անոր որդւոց հետեւեցան հասան. և Փղշտացիք Սաւուղի որդիքը՝ Յոնաթանն, Աբինադաբ և
3 Մելքիսուա, զարկին. Եւ պատերազմը Սաւուղի վրայ սաստկացաւ. և ախոյեանները զանիկա գտան, և ախոյեան
4 նաներնին վիրաւորեցուցին։ Եւ Սաւուղ իւր կապարձակիրին ըսաւ, Սաբդ քաշէ և անով զիս խոցէ, գուցէ այս անթլփատները գան և զիս ծաղր ընեն. բայց կապարձակիրը չուզեց, քանզի շատ վախցաւ։ Եւ Սաւուղ սուրը առաւ և
5 անոր վրայ իյնաւ։ Եւ անոր կապարձակիրը Սաւուղի մեռնելը տեսնելով՝ ինք ալ իւր սուրին վրայ իյնաւ և մեռաւ։
6 Ա այսպէս մեռաւ Սաւուղ և անոր երեք որդիքը. անոր բոլոր աունը ալ մեկտեղ մեռաւ։
7 Եւ հովիտին մէջ եղող բոլոր Իսրայէլ մարդիկը՝ անոնց փախչելը, և Սաւուղի և անոր որդւոց մեռնելը տեսնելով՝ իրենց քաղաքները թողուցին փախան։ և Փղշտացիք եկան և անոնց մէջ բնակեցան։
8 Եւ հետեւեալ օրը Փղշտացիք եկան որ մեռելները մերկացունեն, և զԱաւուղ և անոր որդիները Գելբոաէ լեռան վրայ իյնկած գտան. Եւ զանիկա մերկացուցին, և անոր գլուխը և զէնքն առին. և Փղշտացւոց երկրին չորս կողմը՝ իրենց կուռքերուն և ժողովրդին՝ յո բաներուն աւետիս ղրկեցին։
10 Եւ Համար դրէին. Եւ անոր զէնքն իրենց աստուծոյն տունը դրին, և անոր գլուխը Դագոնի տան մէջ գամեցին։
11 Եւ Գաղաադ. Յաբեսի բոլոր բնակիչները լսեցին այն ամէնը զոր Փղշտացիք Սաւուղի ըրած էին, Բոլոր զօրաւոր մարդիկ ոտք եղան, և Սաւուղի մարմինը և անոր որդւոց մարմինները վերցուցին, և զանոնք Յաբիս բերին. և անոնց ոսկորները Յաբիսի մէջ բևեկնեայն տակ թաղեցին, և եօթն օր ծոմ պահեցին։
13 Ա այսպէս մեռաւ Սաւուղ Տէրոջը դէմ ըրած ապստամբութեան մեղայ համար. քանզի Տէրոջը խօսքը չպահեց, և նաև հմուկ փնտռելոց բան հարցնելու հետ
14 մաը, Եւ Տէրոջը չհարցուց. ուստի Տէրը զանիկա մեռցուց, և թագաւորութիւնը Յեսսէի որդւոյն Դաւիթի դարձուց։

## Գլ. ԺԱ

1 Եւ բոլոր Իսրայէլ Դաւիթի քով Քեբրոնի մէջ ժողվուեցան, և ըսին, Ահա մենք քու ազգիդ և քու մարմինդ ենք։
2 Եւ ասկէ առաջ ալ երբ Սաւուղ թագաւոր էր, Իսրայէլ դուրս հանող և ներս բերդող դուն էիր. և քու Տէր Աստուածդ քեզի ըսաւ, Իմ ժողովրդիս Իսրայէլի հովուեցիր, և իմ ժողովրդիս Իսրայէլի վրայ դուն իշխան պիտի ըլլաս։ Եւ Իսրայէլի բոլոր ծերերը Քեբրոն եկան Թագաւորին, և Դաւիթ Քեբրոնի մէջ Տէրոջը առջեւ անոնց հետ դաշնակցութիւն բրաւ. և անոնք Դաւիթի Իսրայէլի վրայ թագաւոր օծեցին, ինչպէս որ Տէրը Սամուէլի բերնով խոսած էր։
4 Եւ Դաւիթ բոլոր Իսրայէլի հետ Երուսաղէմ՝ այսինքն Յեբուս գնաց. և հոն այն երկրին բնակիչները՝ Յեբուսացիները հոն էին։
5 Եւ Յեբուսի բնակիչները Դաւիթի ըսին, Չես սիրեր չմտնես. բայց Դաւիթ առաւ Սիոնի բերդը, (որ
6 Դաւիթի քաղաքը կ՚ըսուի) Եւ Դաւիթ ըսաւ, Ով որ Յեբուսացիներն առաջ զարնէ, անիկա իշխան և զօրավար պիտի ըլլայ. և առաջ Շարուհեայի որդին Յոաբ երթալ, և անիկա զօրավար եղաւ։ Եւ Դաւիթ այն բերդին մէջ բնակեցաւ. անոր համար անիկա Դաւիթի քաղաքը կոչեցին։ Եւ Դաւիթ քաղաքը չինեց չորս կողմանէն՝ սկսելով Մելօն և անոր շրջակայ տեղատեղը. և Յոաբ քաղաքին մնացորդը նորոգեց։ Եւ Դաւիթ երթալով կը մեծնար, և զօրաց Տէրն անոր հետ էր։
10 Եւ ասոնք են Դաւիթի զիւաւոր զօրաւորները, որ անոր թագաւորութեան համար անոր օգնեցին ըրին բոլոր Իսրայէլի հետ, որ զանիկա թագաւոր հաստատեն՝ Տէրոջը Իսրայէլի վրայ ըսած
11 խօսքին համեմատ։ Եւ Դաւիթի զօրաւոր մարդոց թիւն այս է. Հաքմոնիի որդին Յեսբաամ՝ զօրավարներուն գլուխը, որ իւր նիզակը երեք հարիւր մարդոց վրայ վերցուց, և մէկէն զանոնք մեռցուց։
12 Եւ անկէ ետքը Աքոսքային Դոդոյի որդին Եղիազար՝ որ երեք զօրաւորներէն էր։ Անիկա երբ Ափեսդոմինի մէջ Դաւիթի հետ էր, փղշտացիք հոն Ժողովեցան պատերազմելու համար, և արաբ մը մէկ մասը գաւազանի էր. և Ժողովուրդը փղշտացւոց երեսէն փախաւ։ Իսկ ասոնք արմէն

վերջը զիրարդել գալն պիտի հովուեցիր, և իմ ժողովրդիս Իսրայէլի վրայ
3 դուն իշխան պիտի ըլլաս։ Եւ Իսրայէլի բոլոր ծերերը Քեբրոն եկան Թագաւորին, և Դաւիթ Քեբրոնի մէջ Տէրոջը առջեւ անոնց հետ դաշնակցութիւն բրաւ. և անոնք Դաւիթի Իսրայէլի վրայ Թագաւոր օծեցին, ինչպէս որ Տէրը Սամուէլի բերնով խոսած էր։
4 Եւ Դաւիթ բոլոր Իսրայէլի հետ Երուսաղէմ՝ այսինքն Յեբուս գնաց. և հոն այն երկրին բնակիչները՝ Յեբուսացիները
5 ասոնք կը Բնակէին։ Եւ Յեբուսի բնակիչները Դաւիթի ըսին, Չես սիրեր չմտնես. բայց Դաւիթ առաւ Սիոնի բերդը, (որ
6 Դաւիթի քաղաքը կ՚ըսուի) Եւ Դաւիթ ըսաւ, Ով որ Յեբուսացիներն առաջ զարնէ, անիկա իշխան և զօրավար պիտի ըլլայ. և առաջ Շարուհեայի որդին Յոաբ երթալ, և անիկա զօրավար եղաւ։ Եւ Դաւիթ այն բերդին մէջ բնակեցաւ. անոր համար անիկա Դաւիթի քաղաքը կոչեցին։ Եւ Դաւիթ քաղաքը չինեց չորս կողմանէն՝ սկսելով Մելօն և անոր շրջակայ տեղատեղը. և Յոաբ քաղաքին մնացորդը նորոգեց։ Եւ Դաւիթ երթալով կը մեծնար, և զօրաց Տէրն անոր հետ էր։
10 Եւ ասոնք են Դաւիթի զիւաւոր զօրաւորները, որ անոր թագաւորութեան համար անոր օգնեցին ըրին բոլոր Իսրայէլի հետ, որ զանիկա թագաւոր հաստատեն՝ Տէրոջը Իսրայէլի վրայ ըսած
11 խօսքին համեմատ։ Եւ Դաւիթի զօրաւոր մարդոց թիւն այս է. Հաքմոնիի որդին Յեսբաամ՝ զօրավարներուն գլուխը, որ իւր նիզակը երեք հարիւր մարդոց վրայ վերցուց, և մէկէն զանոնք մեռցուց։
12 Եւ անկէ ետքը Աքոսքային Դոդոյի որդին Եղիազար՝ որ երեք զօրաւորներէն էր։ Անիկա երբ Ափեսդոմինի մէջ Դաւիթի հետ էր, փղշտացիք հոն Ժողովեցան պատերազմելու համար, և արաբ մը մէկ մասը գաւազանի էր. և Ժողովուրդը փղշտացւոց երեսէն փախաւ։ Իսկ ասոնք արմէն
մէկտեղ կանգնեցան, և զանիկա ազատեցին և Փղշտացիները զարկին. և Տէրը մեծ փրկութիւն ըրաւ։
15 Եւ երեսուն զօրավարներուն երեքը Ողոդամի քարայրը՝ Դաւիթի քով վար իջան. և Փղշտացւոց բանակը Ռափայիմ հոգ հովիտին մէջ բանակած էր։ Եւ անատն Դաւիթ բերդին մէջ էր. և անատն Փղշտացիք Բեթլեհեմի մէջ բերդ
17 զօրավար ունէին։ Եւ Դաւիթ փափաքելով բսաւ, Բեթլեհեմի դուռը եղող ջրհորէն ով ինծի ջուր կը խմցնէ։
18 ցուներ։ Անատն այս երեք մարդիկը Փղշտացւոց բանակը ձեղքելին անցան, և Բեթլեհեմի դուռը եղող ջրհորէն ջուր քաշեցին և առին Դաւիթի տարին. բայց Դաւիթ զանիկա խմել չուզեց, այլ զանիկա Թափելով Տէրոջն ընծայեց,
19 Եւ ըսաւ, Իմ Աստուածս չյանցանեմ ինծի որ ես այս բանն ընեմ. միթէ ես այն մարդոց արիւնն իրենց կեանքովը պիտի խմեմ. վասն զի իրենց կենաց վտանգով այս ջուրը բերին. և անկէ խմել չուզեց։ Ասոնք են այն երեք զօրաւոր մարդոց բրածները։
20 Եւ Յոաբին եղբայրն Աբեսա այն երեք մարդոց գլխաւորն էր. և անիկա իւր նիզակը երեք հարիւր մարդոց վրայ վերցուցնելով՝ ասոնցմէ չքնաղ, և
21 անիկա երեքին մէջ անուանի էր. Եւ երեքին երկուքէն առել համբաւ ունենալուն համար անոնց գլուխ եղաւ, բայց առջի երեքին սակայնները չհասաւ։
22 Եւ մեծ գործեր գործող Կաբեսեելացի զօրաւոր մարդու մը որդւոյն Յոյիադայի որդին Բանեա Մոաբի երկու զօրաւոր մարդիկը մեռցուց. Նաև ձիան ժամանակ իջաւ և գուբին մէջ
23 առիծը մեռցուց։ Ասիկա Եգիպտացի մարդն՝ այն հինգ կանգուն բարձր մարդը մեռցուց. և Եգիպտացւոյն ձեռքը նիզակը յափշտակեց, և զանիկա անոր նիզակով մեռցուց։ Յոյիադայի որդին բանեա այս բաներն բրաւ, և երեք

25 զօրաւորներուն մէջ անուանի եղաւ, Ա-
նիկիա ասա երեսունն ու երկուքէն աւելի պատիւ ու-
նէր, բայց ոտքի երեքին առաջինէն չը
հասաւ. և Դաւիթ զանիկա իւր առա-
ջնորդին վերակացու դրաւ։
26 Եւ զօրքերուն զօրաւորներն սոսկ
էին. Յովաբի եղբայրն Ասայել, Բեթլե-
27 հեմացի Դոդովայի որդին Եղհանան, Ա-
րոդացի Սամմաթ, Փելոնացի Քեղղես,
28 Թեկուացի Իկկեսի որդին Իրաս, Անա-
29 թովթացի Աբիեզեր, Ողսացի Սիբքայ,
30 Ափրատացի Եղի, Նետոփաթացի Մահ-
րայ, Նետոփաթացի Բաանայի որդին
31 Ագագ, Բենիամինի որդւոց Գաբաայէն
Ռիբայի որդին Իթթէ, Փարաթոնացի
32 Բանեա, Դաագաշ ձորերէն Հուրայ, Ա-
33 րաբաթացի Աբիէլ, Բարհումացի Ազ-
34 մաթ, Սաղաբինացի Եղիահբա, Գեզոնա-
ցի Հաասէմ որդիներէն՝ Ադաբացի Սա-
35 գէի որդին Յոնաթան, Ագարացի Սա-
քարի որդին Ահիամ, Ուրի որդին Ե-
36 ղիփաղ, Մեկերաթացի Ոփերը, Փելո-
37 նացի Ահիա, Կարմէլացի Եսարէ, Ազ-
38 բիայի որդին Նաադայ, Նաթանի եղ-
բայրը Յոէլ, Ագարացի որդին Մարաբ,
39 Ամմոնացի Սելեկ, Շարաւհան Յոփարի
կապարճակիրը, Բերոթացի Նաարա-
40 յ, Յեթերացի Իրաս, Յեթերացի Գարեբ,
41 Քետացի Ուրիա, Ագդայի որդին Զաբադ,
42 Ռուբենեանց գլուխը՝ Ռուբենեան Սի-
զայի որդին Ադինա, և անոր հետ ե-
43 րեսուն մարդ կար։ Մաագայի որդին
44 Անան, Մաթթանայի Յովսափատ, Աս-
տարաթացի Ոզիա, Արոերացի Հով-
45 թամի որդիքը՝ Սամա և Յեհիէլ, Սա-
մոքրիի որդին Յեդիէլ և անոր եղբայրը
46 Թիսացի Յովա, Մահաւացի Եղիէլ,
Եղնաամի որդիքը՝ Յաբիբայի և Յեսա-
47 էլա, Մովաբացի Եղիթեմա, Եղիէլ, Ովբէդ և Մեսոբացի Յահիէլ։

## ԳԼ. ԺԲ

1 Ու ասոնք են որ Սիկլակ եկան Դաւ-
թի քով՝ երբ անիկա դեռ Կիսեան Սաւուղի երեսէն պահուած էր, և ա-
նոնք զօրաւորներէն էին՝ պատե-
2 րազմի մէջ օգնութիւն կ՚ընէին, Բոն-
ւոր աղեղնաւոր էին, և պարուով քարերը և աղեղով նետերը նետելո՝ իրենց թէ՛
աջ և թէ՛ ձախ ձեռքը կը գործածէին.
անոնք Սաւուղի եղբայրներէն Բենիա-
3 մինեան էին։ Անոնց գլուխն Ա-
փիեզեր էր, եւթը Յոաս՝ Գաբաացի Սամաայի որդիքը, և Յեզիէլ և Փա-
զէա՝ Ազմաթի որդիքը, և Բաքաքա
4 և Անաթովթացի Յեհու, Եւ երեսնին
մէջ զօրաւոր և երեսնին վերակացուն Գաբաւնացի Իսմայիա, և Երեմիա և
Յազիէլ և Յոհանան և Դադերացի
5 Յովսաբադ, Եղիոզայ և Յերեմոթ և
Բաալիա և Սամարիա և Յարուփացի
6 Սափատիա, Եղկանա, Յեսիա, Ազա-
րեէլ, Յովեզեր և Յեսբաամ՝ կոբեա-
7 յիք։ Եւ Գեդովացի Յերոամի որդի-
քը՝ Յովելա և Զաբադիա։
8 Եւ Գադեաններէն ալ Դաւթի քով՝
անապատին մէջ բերդը քաշուեցան զօ-
րաւորը, քաջ, պատերազմական, վա-
հան և նիզակ գործածող մարդիկ. ա-
նոնց դէմքն առիւծի դէմքի նմանէր,
և լեռներու վրայի այծեամներուն պէս
9 թեթեւաոտք էին։ Առաջինը Եզեր,
երկրորդը Աբդիա, երրորդը Եղիաբ,
10 Հորրորդը Մաամանա, հինգերորդը Ն-
11 երեմիա, վեցերորդը Եթթի, եօթնե-
12 րորդը Եղիէլ, Ոմիերորդը Յոհանան,
13 իններորդը Եղզերա, Տասներորդը
Երեմիա, մեսասաներորդը Մաքբան-
14 նայ էր։ Ասոնք Գադի զաւակներէն զօ-
րաց իշխաններն էին. փոքրերուն մէ-
կը՝ հարիւրի վրայ, և մեծերուն մեկը
15 հազարի վրայ էր։ Ասոնք են որ ա-
ջին ամսուն մէջ Յորդանանէ անցան՝
երբ Հեղբը լիր բոլոր եզերքը կմախ-
էր, և գետ ալեկոծ և ալեմոլոր բո-
լորը հովտի բնակիչները փախցուցին։
16 Եւ երբոր Դաւթի քով Բենիամինի
17 և Յուդայի որդիներէն ալ եկան, Ս-
Դաւիթ անոնց առջեւ ելաւ և պատաս-
խան առաւ՝ անոնց ըսելով, եթէ խա-
դագութեամբ ինծի օգնութեան ընելու
եկած էք, իմ սիրտս ձեզի հետ պիտի
լայ. բայց եթէ խաբէութեամբ զիս



իմ թշնամիացս ձեռքը մատնելու հա-
մար ելած էք, (որ իմ ձեռացս մէջ ա
նօրէնութիւն մը չկայ,) մեր հայրերուն
18 Աստուածը անոնք կ՚տեսնէ և յանդիմանէ. Եւ
իշխաններուն գլուխն Ամասայի Հոգի վրայ
լեցաւ եղաւ, և ըսաւ.

Մենք քու կողմդ ենք, ով Դաւիթ,
Եւ քեզի հետ պիտի բլլանք, ով Յեսսէի որդի.
Խաղաղութիւն, խաղաղութիւն քեզի,
Եւ քու օգնականներուդ խաղաղութիւն բլլայ.
Քանզի քու Աստուածդ քեզի օգնական է։

Անոնք Դաւիթ զանոնք ընդունեց, և
դնոնք էր գունդին իշխաններուն
մէջ դրաւ։
19 Մանասէի մէ Դաւթի անցան, երբ
անիկա Փղշտացւոց հետ Սաւուղի վրայ
պատերազմելու գնաց, բայց անոնց
օգնեց թէ չըրին. քանզի Փղշտացւոց
նախարարները խորհրդով զանիկա ե-
րեսկեցին ըսելով, Այսիկա մեր գլուխ-
ներուն ետեւով իր տէրջը Սաւուղ
20 պիտի անցնի երբ անիկա Սիկլակ կ՚երթար՝ Մանասէի Մանասէի հազարապետները՝ Եդնա, Յովզաբադ, Եհիէլ, Միքայէլ, Յովզաբադ, Եղիհու և
21 Սաղթի անոր անցան. Եւ ասոնք Գաւ-
թի օգնեցին զրոյ չ՚ըլլալէն զանոնք ա-
ւազակ վրայ չ՚երթալէն. զանոնք ա-
մէնքն ալ զօրաւոր երիտասարդներ
22 էին, և զօրաց իշխաններ եղան. Քանզի
անոնք օրէ օր Դաւթի կու գային՝
անոր օգնելու Աստուածոյ բանակին պէս մեծ
բանակ մը եղաւ։
23 Եւ ասոնք են այն սպառազինեալ
զօրաց թիւերը՝ որ Քեբրան եկան Դաւ-
թի, որ Տէրոջը խօսքին համեմատ ա-
նոր պարձանքն Սաւուղի թագաւո-
24 րութիւնը. Յուդայի որդիներէն վա-

---

ՀԱՅ ՀԸՐԱՏ։
†Հայ անոր գունդին վրայ պրոՒԼՒԼ։
‡Հայ զօրաց իշխաններուն. ԵԲԲ. զօրաց գլուխներուն

---

հան և նիզակի կրող վեց հազար ա-
25 զօրաւոր պատերազմելու զօրք. Շմաա-
յի որդիներեն եօթն հազար հարիւր
պատերազմական զօրաւորներ. երեսու-
26 արդներ. Ղևիի որդիներեն չորս հա-
27 զար վեց հարիւր. Եւ Ահարոնեանն-
երուն առաջնորդը Յոյադա, և անոր
հետ երեք հազար եօթն հարիւր մար-
28 դիկ. Եւ զօրաւոր ախոյեան Սադովկ
երիտասարդը, և անոր հօրը տունէն
29 քսանեւերկու իշխան. Եւ Սաւուղի եզ-
բայրներուն Բենիամինի որդիներէն և-
րեք հազար մարդիկ. քանզի մինչև ա-
ռաւօտն անոնց չատը Սաւուղի տան
30 պահապանութիւնը կ՚ընէին. Եւ երիս-
մի որդիներէն անոնց ազգատոհմին-
երուն անուանի մարդիկը քսան հազար
ութ հարիւր զօրաւոր երիտասարդներ.
31 Եւ Մանասէի կէս ցեղէն ութ հազար
հազար մարդիկ, որ իրենց անուններով
որոշուեցան երթալ՝ և զԴաւիթ թա-
32 գաւորեցնեն. Եւ Իսաքարի որդիներէն
երկու հարիւր իշխաններ, որ ժամանակներուն հասկնալով գիտէին
թէ Իսրայէլ ինչ ընելու է. և անոնց
բոլոր եղբայրներն անոնց բերանը կը
33 նայէին. Զաբուղոնէն պատերազմի ել-
լող և տաճկի տեսակ պատերազմական
զօրեղներով պատերազմող յիսուն հա-
զար մարդիկ, որ մէկ սրտով կարգա-
34 կը չպահէին. Եւ Նեփթաղիմէ հազար
իշխան, և անոնց հետ երեսունեւեօթն
հազար վահանաւոր և նիզակաւոր մար-
35 դիկ. Եւ Դանեաններէն քառասուն հազար վեց հարիւր պատերազմական
36 մարդիկ. Եւ Աշերէ զօրաւորն հազար
37 պատերազմի գացող զօրք. Եւ Յորդանանէ անդին կողմէն՝ Ռուբենեաններէն և Գադեաններէն և Մանասէի կէս
ցեղէն տասն տեսակ պատերազմական
38 զօրեղներով պատերազմող հարիւր քսան հազար մարդիկ. Բոլոր այն զինուոր շարուց պատերազմական մարդիկ անկեղծ սրտով Քեբրան եկան՝
զԴաւիթ բոլոր Իսրայէլի վրայ թագա-

---

*ԵԲԲ. ոչ սրտով ու սրտով

ւոր գնելու։ և Իսրայէլ բոլոր մեա-
ցորդն ալ մէկ սրտով էր՝ զԴաւիթ
39 թագաւոր ընելու։ եւ հոն Դաւիթ հետ
ուտելով և խմելով երեք օր կեցան.
քանզի անոնց եղբայրներն անոնց հա-
մար պատրաստութիւն տեսած էին։
40 Եւ անոնց մօտ եղողներն ալ՝ մինչև
անգամ Իսաքար, Զաբուղոն և Նեփ-
թաղիմ՝ էշերով, ուղտերով, ջորինե-
րով և եզերով հաց բերին. հոն ուտելու
համար շատ ալիւր, չոր թուզ, չամիչ,
գինի, իւղ, արջառ և ոչխար, քանզի
Իսրայէլի մէջ ուրախութիւն կար։

## ԳԼ. ԺԳ

1 Եւ Դաւիթ հազարապետներուն և հա-
րիւրապետներուն և բոլոր իշխաննե-
2 րուն հետ խորհուրդ ըրաւ։ Եւ Դաւիթ
բոլոր Իսրայէլի ժողովքին բսաւ, Եթէ
ձեզի հաճոյ կ'երեւայ, և այս բանը մեր
Տէր Աստուծմէն է, Իսրայէլի բոլոր ներ-
կիներուն մէջ մնացած մեր եղբայր-
ներուն, և անոնց հետ քահանաներուն
և Ղեւտացիներուն՝ իրենց քաղաքները
և արուարձաններուն *մըդ ղրկենք,
3 որ մեր քովը ժողովուին։ Եւ մեր Աս-
տուծոյն տապանակը մեր քովը փո-
խադրենք. քանզի Սաուղի օրերը
4 դանիկա չխնդրեցինք։ Եւ բոլոր ժո-
ղովքն այսպէս ընելու հաճութիւն տե-
սաւ. քանզի այս խօսքը բոլոր ժող-
5 ովրդին աչքին ուղիղ երեւցաւ։ Եւ
Դաւիթ Եգիպտոսի Սիհորէն մինչև Ե-
մաթի մտաքը բոլոր Իսրայէլ ժողվեց,
Աստուծոյ տապանակը Կարիաթարիմէ
6 բերելու։ Եւ Դաւիթ բոլոր Իսրայէլի
հետ՝ Բաալ այսինքն Յուդայի Կարիա-
թարիմէ երթալ, որ անկէ՝ բերովբէից
վրայ նստող երկոյից կոչուած Աստու-
7 ծոյն տապանակը վեր հանէ, Եւ Աս-
տուծոյ տապանակն Աբինադաբի տու-
նէն փոցշէներով նոր սայլի մը վրայ դը-
րին. և Ոզա և Ախիով այն սայլը կը վա-
8 րէին, Եւ Դաւիթ և բոլոր Իսրայէլ բո-

*Եբր. տարածէնք՝ ղրկենք,

լոր ուժով Աստուծոյ առջև կը խաղա-
յին օրհնութիւններով, քնարներով,
տաւիղներով, թմբուկներով, ծնծղա-
ներով և փողերով։
9 Եւ մինչև Քիդոնի կալը եկան. և Ո-
զա իր ձեռքը երկնցուց որ տապա-
նակը բռնէ. քանզի եզերը զանիկա ծը-
10 ռած էին։ Եւ Տէրոջը բարկութիւնը
Ոզայի դէմ բորբքեցաւ, և ձեռքը
տապանակին երկնցնելուն համար
զանիկա զարկաւ. և անիկա հոն Աս-
11 տուծոյ առջև մեռաւ։ Եւ Դաւիթ
տրտմեցաւ, քանզի Տէրը հարուածով
զարկած Ոզա. և այն տեղըն անուա-
նեց մինչև այս օր *Փարէս-Ոզա բսուե-
12 ցաւ։ Եւ Դաւիթ այն օր Աստուծմէ
վախցաւ, և բսաւ, Աստուծոյ տապա-
13 նակն ի՞նչպէս քովս բերեմ։ Եւ Դա-
ւիթ տապանակն իր քով՝ Դաւիթի
քաղաքը չբերաւ. այլ զանիկա Գեթա-
14 ցի Աբդեդոմի տունը խոտորցուց։ Եւ
ցի Աբդեդոմի տանը Ախիեդոմի քով
անոր տան մէջ երեք ամիս մնաց. և
Տէրը Աբդեդոմի տունը և անոր բոլոր
տառցուածքն օրհնեց։

## ԳԼ. ԺԴ

1 Եւ Տիւրոսի Քիրամ թագաւորը Դաւ-
իթի դեսպաններ ղրկեց, և եղևնափայ-
տեր, արձեստագործներ և հիւսներ, որ ա-
2 տաղ շինեն, Անոնք Դաւիթի ի-
մացաւ որ Տէրը զանիկա իսրայէլի վրայ
թագաւոր հաստատեց, վասն զի իր
ժողովուրդին Իսրայէլի համար անոր
թագաւորութիւնը բարձրացաւ։
3 Եւ Դաւիթ Երուսաղէմի մէջ ուրիշ
կիներ առաւ, և Դաւիթ ուրիշ որ-
4 դիներ և աղջիկներ ծնաւ։ Եւ Երու-
սաղէմի մէջ անոր ծնած որդւոց ա-
նուններն սոսկա են. Սամաա, Սոբ-
5 բաբ, Նաթան, Սողոմոն, Յեբհաար, Ե-
6 ղիսուա, Նեփեդիա, Ղոգա, Ղաբեկ,
7 Յաֆիէ, Եղիսամա, Բաղեադա և Եղի
փաղէտ։

*Այսինքն՝ Ոզայի խրամատութիւնը։



8 Եւ փղշտացիք երբ լսեցին Դաւիթի
բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր ծեռե-
լը, բոլոր փղշտացիք ամբ եկան որ
զԴաւիթ փնտռեն. երբ Դաւիթ այ-
9 ն բանը լսեց՝ անոնց դիմացը ելաւ, Եւ
փղշտացիք եկան և Բռեփայնդ հովտին
10 մէջ տարածուեցան։ Եւ Դաւիթ Աս-
տուծոյ հարցուց և բսաւ, Փղշտացւոց
դէմ ելլե՞մ, և զանոնք իմ ձեռքս
պիտի մատնե՞ս։ Եւ Տէրը անոր բսաւ,
Ելիր, և զանոնք քու ձեռքդ պիտի
11 մատնեմ։ Եւ անոնք Բաղդիթարանին
եկան, և Դաւիթ զանոնք հոն զարկաւ.
և Դաւիթ բսաւ, Աստուած իմ Թշնա-
միներս իմ ձեռքովս պատառեց, ինչ-
պէս որ ջուրերը կ'ոտնաթաթը կը պատռ-
ուին. անոր համար այն տեղըն անուա-
12 նը Բաղդիթարանին կոչեցին։ Եւ փղշտ-
ացիք հոն իրենց աստուածները
թողուցին հրով այրեցին։
13 Եւ փղշտացիք նորէն անդամ մ'ալ
14 հովտին մէջ տարածուեցան։ Եւ Դա-
ւիթ նորէն Աստուծոյ հարցուց. և Ա-
ստուած անոր բսաւ, Անոնց ետեւէն չելլես,
այլ անոնց դէմերնէն պտրաելով՝
Թթենիներուն կողմէն անոնց վրայ կր-
15 թաս։ Եւ երբ Թթենիներուն գլուխը
անձայնութիւն անուանեն պատերազ-
մելու ելլես, յետոյ Աստուած քու ա-
ջեւդ պիտի ելլէ փղշտացւոց բանակը
16 զարնելու։ Եւ Դաւիթ այնպէս բրաւ՝
ինչպէս որ Աստուած անոր հրամայեց,
և Գաբաւոնէ մինչև Գեզերը փղշտացւոց
17 բանակը զարկին։ Եւ Դաւիթ անունն
ամէն երկիրը տարածուեցաւ, և Տէրը
ամէն ազգերու վրայ անոր ահը ձգեց։

## ԳԼ. ԺԵ

1 Եւ անիկա իրեն համար Դաւիթ քա-
ղաքին մէջ տուներ շինեց, և Աստու-
ծոյ տապանակին համար ուղ պատ-
րաստեց, և անոր համար վրան կանգ-
2 նեց։ Այնատեն Դաւիթ բսաւ, Աստու-
ծոյ տապանակը վերցնել ուրիշ մէկ-
մը երեսուր չէ, բայց միայն Ղեւտացի-
8 և Փղշտացիք երբ լսեցին Դաւիթի
բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր ծեռե-
լը, բոլոր փղշտացիք ամբ եկան որ
զԴաւիթ փնտռեն. երբ Դաւիթ այ-
9 ն բանը լսեց՝ անոնց դիմացը ելաւ, Եւ
փղշտացիք եկան և Բռեփայնդ հովտին
10 մէջ տարածուեցան։ Եւ Դաւիթ Աս-
տուծոյ հարցուց և բսաւ, Փղշտացւոց
դէմ ելլե՞մ, և զանոնք իմ ձեռքս
պիտի մատնե՞ս։ Եւ Տէրը անոր բսաւ,
Ելիր, և զանոնք քու ձեռքդ պիտի
11 մատնեմ։ Եւ անոնք Բաղդիթարանին
եկան, և Դաւիթ զանոնք հոն զարկաւ.
և Դաւիթ բսաւ, Աստուած իմ Թշնա-
միներս իմ ձեռքովս պատառեց, ինչ-
պէս որ ջուրերը կ'ոտնաթաթը կը պատռ-
ուին. անոր համար այն տեղըն անուա-
12 նը Բաղդիթարանին կոչեցին։ Եւ փղշտ-
ացիք հոն իրենց աստուածները
թողուցին հրով այրեցին։
13 Եւ փղշտացիք նորէն անդամ մ'ալ
14 հովտին մէջ տարածուեցան։ Եւ Դա-
ւիթ նորէն Աստուծոյ հարցուց. և Ա-
ստուած անոր բսաւ, Անոնց ետեւէն չելլես,
այլ անոնց դիմերնէն պտրաելով՝
Թթենիներուն կողմէն անոնց վրայ կր-
15 թաս։ Եւ երբ Թթենիներուն գլուխը
անձայնութիւն անուանեն պատերազ-
մելու ելլես, յետոյ Աստուած քու ա-
ջեւդ պիտի ելլէ փղշտացւոց բանակը
16 զարնելու։ Եւ Դաւիթ այնպէս բրաւ՝
ինչպէս որ Աստուած անոր հրամայեց,
և Գաբաւոնէ մինչև Գեզերը փղշտացւոց
17 բանակը զարկին։ Եւ Դաւիթ անունն
ամէն երկիրը տարածուեցաւ, և Տէրը
ամէն ազգերու վրայ անոր ահը ձգեց։

## ԳԼ. ԺԵ

1 Եւ անիկա իրեն համար Դաւիթ քա-
ղաքին մէջ տուներ շինեց, և Աստու-
ծոյ տապանակին համար ուղ պատ-
րաստեց, և անոր համար վրան կանգ-
2 նեց։ Այնատեն Դաւիթ բսաւ, Աստու-
ծոյ տապանակը վերցնել ուրիշ մէկ-
մը երեսուր չէ, բայց միայն Ղեւտացի-
ներ. քանզի Տէրը զանոնք ընտրեց
որ Աստուծոյ տապանակը վերցնեն, և
յաւիտեան անոր ծառայութիւն բնեն։
3 Եւ Դաւիթ բոլոր Իսրայէլ Երուսա-
ղէմի մէջ ժողվեց, որ Տէրոջը տապա-
նակն անոր համար պատրաստած
տեղն հանէ։ Եւ Դաւիթ Ահարոնի որ-
5 դիները և Ղեւտացիները ժողվեց. Դա-
հաթի որդիներէն Ուրիէլ իշխանը և
անոր եղբայրները հարիւր քսան հոգի.
6 Մերարիի որդիներէն Ասայիա իշխան և
անոր եղբայրները երկու հարիւր քսան
7 հոգի. Գեռսոնի որդիներէն Յոէլ իշ-
խան և անոր եղբայրները հարիւր և-
8 ւսուն հոգի. Եղիսափանի որդիներէն
Սեմայիա իշխան և անոր եղբայրները
9 երկու հարիւր հոգի. Քեբրոնի որդի-
ներէն Եղիէլ իշխան և անոր եղբայր-
10 ները ութսուն հոգի. Ոզիէլի որդիներ-
ուն Ամինադաբ իշխան և անոր եղբայր-
ները հարիւր տասներկու հոգի։
11 Եւ Դաւիթ Սադոկ և Աբիաթար քա-
հանաները, և Ղեւտացիներէն Ու-
րիէլ, Ասայիա, Յոէլ, Սեմայիա, Ե-
12 ղիէլ և Ամինադաբ կանչեց, Եւ անոնց
ըսաւ, Դուք Ղեւտացւոց տուներուն
իշխաններն էք. ասուի դուք և ձեր
եղբայրները սրբուեցէք, որ Իսրայէլի
Տէր Աստուծոյն տապանակն հանէք մի-
ջոցը՝ զոր ես անոր համար պատրաս-
13 տած եմ. վասն զի որովհետև դուք
առաջին անգամն հոն չհանուեցաք,
մեր Տէր Աստուածը մեր մէջ հարուած
բրաւ, քանզի զանիկա կանոնաւոր կեր-
14 պով չխնդրեցինք։ Եւ Իսրայէլի Տէր
Աստուծոյն տապանակն հանելու համար
քահանաները և Ղեւտացիները սրբուե-
15 ցան։ Եւ Ղեւտացւոց որդիքն Աստու-
ծոյ տապանակը ձողերով իրենց ուս-
քերնին վրայ վերցուցին, ինչպէս որ Մով-
սէս Տէրոջը խօսքով պատուիրած էր։
16 Եւ Դաւիթ Ղեւտացւոց իշխաններուն
պատուիրեց որ իրենց եղբայրներէն
նուագարաններով, տաւիղներով, քր-
նարներով և ծնծղաներով երգեցողներ
կանգնեցնեն, որ ուրախութեան ձայ-
17 ներ վերցնելով հնչեցնեն։ Ուստի

Ղևտացիները՝ Ցոլիկի որդին Եման, և
անոր եղբայրներին Բարաքիայի որդին
Ասափ, և անոնց եղբայրներեն Մերա-
րիի որդիներեն կիսեայի որդին Եթան
18 կայնեցացին. Եւ անոնց հետ երկրորդ
դասին՝ անոնց եղբայրները զանազան-
նելով՝ Զաքարիա, Բենո, Յազիել, Սե-
միրամովիթ, Յեհիել, Ունոի, Եղկանա,
Բանեա, Մաասիա, Մատաթիա, Նղի-
վոդէ, Մաքենիա, Աբդեդոմ և Յեհիել՝
19 Աբդ. Եման, Ասափ և Եթան երգեցողը-
ները պղնձէ ծնծղաներ կը զարնէին.
20 Եւ Զաքարիա, Ազիել, Սեմիրամովիթ,
Յեհիել, Ունոի, Եղկանա, Մաասիա և
Բանեա առի իշներով Ալամոթի էշնա-
21 կի վրայ էին. Եւ Մատաթիա, Նղի-
վոդէ, Մաքենիա, Աբդեդոմ, Յեհիել
և Ազազիա քնարներով Շեմինիթի ե-
22 ղանակով կ՚առաջնորդէին. Եւ Քանանիա
Ղևտացիներուն երգեցողութեան ա-
ռաջնորդ ըլլալով՝ ղեկավար երգեցիկ էր
23 երաժշտի. քանզի հմնաոր էր. Եւ
Բարաքիա և Եղկանա տապանակին
24 դռնապաններն էին. Եւ Սեբանիա և
Յոսափատ և Նաթանայէլ և Ամասայի
և Զաքարիա և Բանեա և Եղիազար՝
քահանաներն Աստուծոյ տապանակին
առջև փող կը հնչեցնէին. և Աբ-
դեդոմ և Յեհիա տապանակին դռնա-
պաններն էին.
25 Այսպէս Դաւիթ և Իսրայէլի ծերերը
և հազարապետները Տէրոջը տեսին
տապանակն Աբդեդոմի տունէն ուրա-
26 խութեամբ հանելու գացին. Եւ երբ
Աստուած Տէրոջը ոտիսին տապանակը
վերցուռնող Ղևտացիներուն օգնեցաւ
բրաս, եօթը զուարակ և եօթը խոյ
27 զոհ բրին. Եւ Դաւիթ բեհեզի պատ-
մուճան հագած էր. նոյնպէս տապա-
նակը վերցուռնող բոլոր Ղևտացիները
և երգեցողները և երգեցողներուն ղե-
կավար Քանանիա և Դաւիթի վրայ
28 քիմանէ եփուած կար. Եւ բոլոր Իսրա-
յէլ Տէրոջը ոտիսին տապանակն ու-
րախութեան ազաղակով, շեփորի ձայ-
նով, փողերով և ծնծղաներով, առ-
իներ և քնարներ զարնելով վեր կը

29 հանէին. Եւ երբ Տէրոջը ուխտին տա-
պանակը մինչև Դաւիթ քաղաքը եկաւ,
Սաուղի աղջիկը Միքդող պատուհա-
նէն նայեցաւ, և Դաւիթ թագաւորին
կաքաւելը և խաղալը տեսնելով՝ զա-
նիկա իւր սրտին մէջ անարգեց։

## Գլ. ԺԶ

1 Եւ Աստուծոյ տապանակը տարին, և
զանիկա այն վրանին մէջ դրին,
զոր Դաւիթ անոր համար կանգնած էր. և
Աստուծոյ առջև ողջակէզներ և խա-
2 ղաղութեան զոհեր մատուցին. Եւ Դա-
ւիթ երբ ողջակէզները և խաղաղու-
թեան զոհերը մատուցանելը լմնցուց,
Տէրոջը անուամբ ժողովուրդն օրհնեց.
3 Եւ Իսրայէլի բոլոր մարդոց՝ երկի մար-
դէ մինչև կին մարդ՝ իւրաքանչիւրին
մէկ նկանակ հաց, կտոր մը միս և կա-
կանդակ մը բաշխեց։
4 Ս Տէրոջը տապանակին առջև Ղև-
տացիներուն պաշտօնեաներ դրաւ՝ Իս-
րայէլի Տէր Աստուածն յիշելու, օրհ-
5 նելու և փառաւորելու. Գլխաւորն
Ասաֆ էր, և անոր երկրորդը Զա-
քարիա, Նէ- Յեհիել, Սեմիրամովիթ, Յե-
հիել, Մատաթիա, Եղիաբ, Բանեա,
Աբդեդոմ և Յեհիել տաւիղներու և քր-
նարներու նուագարաններ կը ջրբեխէին.
6 բայց Ասաֆ ծնծղաներ կը զարնէր. Եւ
Բանեա և Յազիել քահանաներն Աս-
տուածոյ ուխտի տապանակին առջև միշտ
փողեր կը հնչեցնէին։
7 Ս Եւ նոյն օրը Դաւիթ առաջին անգամ
յանձնեց առքսը տուաւ Ասաֆի և ա-
նոր եղբայրներուն ձեռքը՝ Տէրոջը գո-
հութեան տալու.
8 Գոհացէք Տէրոջմէ, անոր անունը
կանչեցէք,
Անոր գործերը ժողովրդոց մէջ պատ-
մեցէք։
9 Երգեցէք անոր, սաղմոս ըսէք անոր,
Պատմեցէք անոր բոլոր հրաշներուն։
10 Անոր սուրբ անունովը պարծեցէք.
Տէրոջ խնդրողներուն սիրտը թող ու-
րախ ըլլայ։



11 Տէրոջ և անոր զօրութիւնը խնդրեցէք,
Միշտ ժամանակ անոր երեսը փնտռե-
ցէք։
12 Յիշեցէք անոր հրաշները,
Անոր նշանները և բերնին դատաստան-
ները.
13 Ով անոր ծառային Իսրայէլի սերունդը,
Ով Յակոբայ որդիք՝ անոր ընտրեալ-
ները։
14 Նովաան ինքն է Տէր Աստուածը,
Անոր դատաստանները բոլոր երկրին
մէջ են։
15 Անոր ուխտը յաւիտեան յիշեցէք,
Անոր պատուիրած խօսքը մինչև հա-
զար ազգ.
16 Այն ուխտը զոր Աբրահամու հետ բրաւ,
Եւ իւր երդումը Ղևտի համար.
17 Յակոբայ ալ հաստատեց զայն՝ օրէնք
ըլլալու,
Եւ Իսրայէլի՝ յաւիտենական ուխտ,
18 Ըսելով, Քեզի պիտի տամ Քանանու
երկիրը՝
Ձեր ժառանգութեան վիճակը։
19 Երբ դուք սակաւաւոր էիք,
Եւ նուազ և պանդուխտ անոր մէջ։
20 Եւ անոնք մէկ ազգէ ուրիշ ազգի գացին,
Եւ մէկ թագաւորութենէ ուրիշ ժո-
ղովրդեան.
21 Անիկա մարդու մը չտուաւ զանոնք
նեղել,
Եւ թագաւորներ յանդիմանեց անոնց
համար,
22 Ըսելով՝ Մի՛ ձեռնամուխ եղէք իմ օծեալներուս,
Եւ իմ մարգարէներուս չարութիւն մի՛
ընէք։
23 Երգեցէք Տէրոջը, ով բոլոր երկիր,
Օր ըստ օրէ անոր փրկութիւնը փառա-
ւորեցէք։
24 Անոր փառքն ազգերուն մէջ պատմեցէք,
Եւ անոր հրաշները բոլոր ժողովրդոց
մէջ։
25 Քանզի Տէրը մեծ է և գովելի յոյժ.
Ամէն աստուածներուն վրայ սքանչելի է,
26 Վասն զի ազգերու բոլոր աստուածները
կուռքեր են,

*Կամ ունայնութիւններ

Բայց Եհովան երկինքը ստեղծեց։
27 Փառք և վեհապանծութիւն կայ անոր առ-
ջևին,
Զօրութիւն և ուրախութիւն անոր բը-
նակութեան մէջ։
28 Տէրոջը տուէք, ով ժողովրդոց ազ-
միկ,
Տէրոջը տուէք փառք և զօրութիւն։
29 Տէրոջը տուէք իւր անուան փառքը.
Ընծայ տուէք և անոր առջև եկէք.
Սուրբ հանդերձով Տէրոջը երկրպագու-
թիւն բրէք։
30 Ով բոլոր երկիր, անոր երեսէն վախ-
ցէք.
Աշխարհն ալ պիտի հաստատուի
Եւ պիտի չսասանի։
31 Երկինք թող ուրախանայ, և երկիր
ցնծայ,
Եւ ազգերուն մէջ բսեն թէ Տէրը կը
թագաւորէ։
32 Ծով իւր լիութենէն թող գոռայ,
Դաշտը և բոլոր անոր մէջ եղողները թող
ուրախանան։
33 Այնատեն անտառին ծառերը Տէրոջը
առջև ցնծան,
Քանզի երկրին դատաստան ընելու կու
գայ։
34 Գոհացէք Տէրոջմէն, քանզի բարի է,
Քանզի անոր ողորմութիւնն յաւի-
տեան է։
35 Նաև բսէք, Ով մեր փրկութեան Աս-
տուած, փրկէ զմեզ,
Եւ ժողովէ զմեզ և ազատէրն ազատէ
զմեզ,
Մը գոհ ըլլալ անուանդ գոհութիւն
մատուցանենք,
Եւ քու օրհնութեանդ պարծենանք։
36 Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը
յաւիտենից յաւիտեանից,
Եւ բոլոր ժողովուրդն Ամէն բսելով՝
Տէրը օրհնեցին։
37 Եւ հոն Տէրոջը ուխտի տապանակին
առջև Ասաֆ և անոր եղբայրները թո-
ղուց, որ շարունակ ամէն օրուան պաշ-
տօնը կատարեն տապանակին առջև։
38 Եւ Աբդեդոմ և անոր վեց տասնեւութ
եղբայրները. և Իդիթունի որդին Աբ-

դեզօամ և Ռուա դահնապանները էբօ-
39 Եւ Սադովկ քահանան և անոր քահա-
նայ եղբայրները Դաւաւոնի բարձր ու-
ղտին վրայ Տէրոջը խորանին առջև Խո-
40 ղոց, Որ միշտ առաւօտ և երեկոյ ող-
ջակիզի սեղանին վրայ Տէրոջը ողջա-
կէզներ մատուցանեն, և Տէրոջը խա-
դայէլի պատուիրած օրինաց բոլոր գր-
41 րատածն ի գործ դնեն։ Եւ անոնց հետ
էբօ- Եհման և Եդիթուն և ուրիշ ընտ-
րուածները՝ որ յանուանէ յիշուեցան,
որպէս զի Տէրոջը գոհութիւնն մատու-
ցանեն, քանզի անոր ողորմութիւնն
42 յաւիտեան է։ Եւ անոնց՝ այսինքն Ե-
մանի և Եդիթունի հետ եղող նուա-
գածուներուն փողեր և ծնդուներ էբ-
ՀԱ-, նաև Աստուծոյ երգեցողն նուա-
գարանները։ և Եդիթունի որդիքը դր-
43 ռան պահապանութեան կացուցին։ Եւ բոլոր
ժողովուրդը գնայ՝ իւրաքանչիւր իւր
տունը։ Դաւիթ ալ իր տունն օրհնե-
լու դարձաւ։

## ԳԼ. ԺԵ

1 Եւ երբ Դաւիթ իր տան մէջ բնակե-
ցաւ, Դաւիթ Նաթան մարգարէին ը-
սաւ, Ահա ես եղևնափայտէ չէՀՀ-
ան մէջ կը բնակիմ, բայց Տէրոջը ու-
2 մէն տապանակը վրանի տակ է։ Եւ
Նաթան Դաւիթի բսաւ, Բոլոր սրտիդ
մէջ եղածն ըրէ, քանզի Աստուած քու-
3 հետդ է։ Եւ այն գիշեր Աստուծոյ խօս-
4 քը Նաթանի եղաւ՝ ըսելով, Գնա, իմ
ծառայիս Դաւիթի ըսէ, Տէրը այսպէս
կ'ըսէ. իմ բնակելու տունս դուն պի-
5 մի չշինես. Քանզի զիտցէք ես Իսրա-
հանած օրէս մինչև այս օրս տան մէջ
չբնակեցայ, այլ վրանէ վրան և խորա-
6 նէ խորան պատեցայ։ Բոլոր Իսրայէլի
հետ որչափ տեղ որ պատեցայ, միթէ
բան մը խօսեցայ Իսրայէլի դատաւոր-
ներէն մէկուն հետ՝ որուն իմ ժողո-
վուրդս հովուելու հրաման տուած էի,
և ըսի թէ Ինչու համար ինծի եղևնա-
7 փայտէ տուն չշինեցիք։ Եւ հիմա իմ
ծառայիս Դաւիթի այսպէս ըսես, Զո-
բաղ Տէրն այսպէս կ'ըսէ. Ես քեզ փա-
րախէ՝ ոչխարներուն ետևէն առի, որ
իմ Իսրայէլ ժողովուրդիս առաջնորդ
8 ըլլաս։ Եւ ուր որ կ'երթայիր՝ քու հետդ
էի, և քու առջևէդ բոլոր թշնամիներդ
կտրեցի։ և քու անունդ երկրիս վը-
րայ եղող մեծերուն անուանը պէս ը-
9 րի։ Եւ իմ ժողովուրդիս Իսրայէլի ու-
տեղ մը պիտի որոշեմ, և զանիկա պի-
տի անկնեմ։ և իւր տեղը պիտի բնակի,
ալ պիտի չշարժի։ և անիրաւութեան
որդիք այլ ևս պիտի չնեղչեն զնա ինչ-
10 պէս առաջ, ինչպէս որ իմ ժողո-
վուրդիս Իսրայէլի վրայ դատաւորներ
դրած օրէս ի վեր եղաւ։ և քու ամէն
թշնամիներդ պիտի նուաճեմ. և քե-
զի կ'ինցուցանեմ որ Տէրը քեզի տուն
11 պիտի շինէ։ Եւ երբ քու օրերդ լը-
ցուին՝ և քու հայրերուդ քովն երթա-
ս, քենէ ետքը քու սերունդդ՝ քու որ-
դիներէդ մին պիտի թագաւորացնեմ,
և անոր թագաւորութիւնը պիտի հաս-
12 տատեմ։ Անիկա ինծի տուն պիտի շի-
նէ. և անոր աթոռն յաւիտեան պիտի
13 կանգնեմ. Ես անոր հայր պիտի ըլլամ,
և անիկա ինծի որդի պիտի ըլլայ, և
իմ ողորմութիւնս անկէ պիտի չվիր-
ցուներմ, ինչպէս որ քենէ առաջ եղո-
14 ղէն վերցուցի։ Եւ զանիկա յաւիտեան
իմ տանս մէջ և իմ թագաւորութեանս
մէջ պիտի հաստատեմ, և անոր ա-
թոռն յաւիտեան հաստատ պիտի ըլ-
15 լայ։ Եւ Նաթան այս բոլոր խօսքերը
և այս բոլոր տեսիլքը մը ըսաւ Դաւիթի։
16 Եւ Դաւիթ թագաւորը գնաց՝ Տէրո-
ջը առջև նստաւ, և ըսաւ, Ով Տէր Աս-
տուած, ես ո՞վ եմ, և իմ տունս ի՞նչ
17 է, որ դուն զիս մինչև հոս բերիր։ Սակայն
սիկա քու աչքերուդ փոքր երևցաւ,
ով Աստուած, և քու ծառայիդ տան
վրայ հեռաւոր ժամանակի համար խո-
սեցար, և ինծի, ով Տէր Աստուած,
բարձր աստիճանի մարդու պէս նայե-
18 ցար։ Եւ քու ծառայիդ վրառաց հա-
մար Դաւիթ ալ աւելի ի՞նչ խօսի. դուն
19 քու ծառադ կը ճանչնաս։ Ով Տէր, քու



ծառայիդ սիրոյն համա՛ր և քու սրտիդ
ուզածին պէս այս բոլոր մեծ բաներն
րրիր, որ այս բոլոր մեծ բաները գոռ-
20 ցընես։ Ով Տէր, քեզի պէս ուրիշ մե-
կը չկայ, և քենէ զատ Աստուած չկայ՝
մեր ականջներով բոլոր լսածներուս
21 համեմատ։ Եւ երկրիս վրայ ո՛ր ազգը
քու ժողովուրդիդ Իսրայէլի պէս է, ո-
րուն համար Նո՛ր Ի՛նչ Աստուած եկաւ
ընկնիլ փրկելու, իրեն ժողովուրդ ը-
նելու։ որ նեխոտած ազատած ժողո-
վուրդիդ առջևէն ազգեր վռընաելով՝
քեզի մեծ և երևելի անուն առացար,
22 Եւ քու ժողովուրդդ զիսրայէլ յաւ-
տեան քեզի ժողովուրդ ըրիր, և դուն,
23 ով Տէր, անոնց Աստուած եղար։ Եւ
հիմա, ով Տէր, քու ծառայիդ և անոր
տան համար բան խօսքդ Թող յաւ-
տեան հաստատուի, և քանզիդ պէս ը-
24 րէ. Թող հաստատուի, և քու անունդ
յաւտեան մեծ ճանչցուի, և ըսուի թէ
Զօրութեանց Տէրը Իսրայէլի Աստուածն
է, Աստուած Իսրայէլի. և քու ծառա-
յիդ Դաւիթի տունը քու առջևդ հաս-
25 տատ ըլլայ։ Քանզի դուն, ով Աստուած
իմ, քու ծառայիդ յայտնեցիր, որ ա-
նոր տուն պիտի շինես. անոր համար
քու ծառադ էր սրտին մէջ հոգաբաղ-
ձութիւն գտաւ քու առջևդ այս աղօթքն
26 ընելու։ Եւ հիմա, ով Տէր, այն Աս-
տուածը դուն ես, և քու ծառայիդ այս
27 բարութիւնը խոստացար։ Եւ հիմա
*կամք ըրէ՝ քու ծառայիդ տունն օրհ-
նելու, որ յաւիտեան քու առջևդ ըլ-
լայ. քանզի դուն օրհնեցիր, ով Տէր,
և յաւիտեան օրհնեալ է։

## ԳԼ. ԺԶ

1 Ա՛յնուհետև Դաւիթ փղշտացիները զար-
կաւ և զանոնք նուաճեց, և Գէթ և
անոր գեղերը փղշտացոց ձեռքէն ա-
2 ռաւ։ Այս Մոաբը զարկաւ, և Մո-
վաբացիք Դաւիթի հարկատու ծառա-
3 ներ եղան։ Եւ Դաւիթ Սուբայի Ադրա-

*Կամ սկսար

զար թագաւորը Եմաթի կողմերը զար-
կաւ, երբ Եփրատ գետին վրայ իւր *իշ-
խանութիւնը հաստատելու կ'երթար։
4 Եւ Դաւիթ անկէ հազար կառք և եօթն
հազար ձիաւոր և քսան հազար հետե-
ւակ զօրք բռնեց. և Դաւիթ բոլոր
†կառքի ձիերուն Հզիլը կարեց, և ա-
նոնցմէ միայն հարիւր ձի էրէն հա-
5 պահեց։" Եւ Դամասկոսի Ասորիները
Սուբայի թագաւորին Ադրազարի օգ-
նութեան ընելու եկան. և Դաւիթ Ա-
սորիներէն քսանևերկու հազար մարդ
6 զարկաւ։ Եւ Դաւիթ Դամասկոսի Ա-
սորւոց մէջ ընդդատարան զօրք դրաւ, և Ա-
սորիները Դաւիթի հարկատու ծառա-
յ եղան. և Դաւիթ ուր որ կ'երթար՝ Տէ-
7 րը անոր յաջողութիւն կու տար։ Եւ
Դաւիթ՝ Ադրազարի ծառաներուն վր-
րայ եղող ոսկի վահաններն առաւ, և
8 զանոնք Երուսաղէմ բերաւ։ Եւ Ադ-
րազարի քաղաքներէն Տեղազէ և Քա-
ղէն Դաւիթ խիստ շատ պղինձ առաւ.
անկէ շինեց Սողոմոն պղնձէ ծովը և
սիւներն և պղնձէ գործիները։
9 Եւ Եմաթի թագաւորը Թովու երբ
լսեց որ Դաւիթ Սուբայի Ադրազար
թագաւորին բոլոր զօրքը ջարդած է,
10 իւր որդին Ադորամ Դաւիթի թագա-
ւորին ղրկեց, որ անոր բարև ընէ և
‡զանիկա օրհնէ," Ադրազարի դէմ պա-
տերազմ ընելուն և զանիկա պարտե-
լուն համար։ (քանզի Ադրազար Թո-
վուի հետ պատերազմ կ'ընէր.) և ա-
նոր ամէն տեսակ ոսկիէ, արծաթէ և
11 պղնձէ անօթներ ղրկեց։ Դաւիթ թա-
գաւորը զանոնք ալ Տէրոջը նուիրեց՝
այն արծաթով և ոսկւով մկիտեց, որ
ամէն ազգերէ՝ Եդոմէ, Մոաբէ, Ա-մ-
մանի որդիներէն, Փղշտացիներէն և
12 Ամաղկէ առած էր։ Եւ Շարուհեայի
որդին Աբեսսա Աղի ձորին մէջ տասնև-
աթ հազար Եդոմացի զարկաւ։

*Նէբր. ձեռքը
†Կամ կառքերը քակեց, և անոնցմէ
միայն հարիւր կառք պահեց։
‡Կամ շնորհաւորութիւն ընէ անոր,

13 Եւ Եգոմի մէջ բերդապահ զօրք դրբաւ, և բոլոր Եգոմացիք Դաւթի ծառայ եղան. և Դաւիթ ուր որ կ'երթար՝ Տէրը անոր յաջողութիւն կուտար։

14 Եւ Դաւիթ բոլոր Իսրայէլի վրայ թագաւորութիւնը ըրաւ, և իւր բոլոր ժողովուրդին հրաման ունէր և արդարութիւնը կ'ընէր։ Եւ Շարուհեայի որդին Յովաբ զօրաց վրայ էր. և Աբիզոր որդին Յովսափատայ յիշատակագիր էր. Եւ Աբիմաղէք որդին Սադովկ և Աբիմաղէքի որդին Սարայիա քահանայ էին. և Սուսա ատենադպիր էր. Եւ Յովիադայի որդին Բանեա Քերեթացիներուն և Փելեթացիներուն վրայ էր. և Դաւիթի որդիքը թագաւորին քով նախարարներ էին։

## Գլ. ԻԹ.

1 Եւ այնուհետև Աստուծոյ Թագաւորը Նաասի մեռաւ, և անոր տեղ անոր որդին թագաւոր եղաւ։ Եւ Դաւիթ ըսաւ, Ողորմութիւն պիտի ընեմ Անոնի Նաասի որդւոյն հետ, քանզի անոր հայրն ինձի մեծ ողորմութիւն ըրաւ։ Եւ Դաւիթ դեսպաններ դրկեց, որ զանիկա իւր հօրը վրայ մխիթարեն. և Դաւիթի ծառաներն Աստուծոյ երկիրը Անոնի գացին՝ զանիկա մխիթարելու։ Եւ Աստուծոյ որդւոյ իշխանները Անոնի ըսին, Միթէ Դաւիթ քու հայրդ քու առջիդ պատուէրներ հաստատ ընդի մխիթարիչներ դրկեց. միթէ անոր ծառաներն այս երկիրը քննելու, ամրնուելու ընելու և լրտեսելու համար չէ՞ր դրկեր Անոնի Դաւիթի ծառաները։ Եւ զանոնք ածիլեց, և անոնց հանդերձներուն ալ կէսը մինչև նստոյ տեղը կտրել տուաւ, և զանոնք դրկեց զանոնք։ Եւ պատմեցին այն մարդոյն Դաւթի պատմեցին. ան ալ զանոնք դիմաւորելու համար դրկեց, քանզի այն մարդիկը շատ անարգուած էին. և Թագաւորն ըսաւ, Երիքով նստեցէք մինչև որ մօրուքնիդ աճի, և ապա դարձեցէք։

33 Ձորին հողի կոշտերն անոր անոյշ պի-
տի գան,
եւ ամէն մարդ անոր ետեւէն պիտի
երթայ.
Իսկ անոր առջեւէն չտրտընջերուն հայիւրը
չկայ։
34 Ուրեմն ինչպէ՞ս ունայն միտքերնիդ ինձ
մխիթարութիւններ կու տաք ինծի.
Քանզի ձեր պատասխաններուն մէջ սը-
տութիւն կայ։

Գլ. ԻԲ

1 Ետսաեփն Նգիփազ Թեմանացի պատաս-
խան տալով ըսաւ,
2 Մի՛թէ մարդ կրնայ Աստուծոյ օգտա-
կար ըլլալ։
Խելացի մարդը միայն իրեն օգուտ կ'ըլ-
նէ։
3 Ամենակարողին հաճութիւն մը կ'ըլլա՞յ
եթէ արդար ըլլաս,
կամ շա՞հ մը՝ եթէ քու ճամբաներդ
ուղղես։
4 Մի՛թէ քենէ վախնալով քեզի հետ վի-
ճաբանութիւն կ'ընէ՞.
Քեզի հետ դատաստանի կը մտնէ՞։
5 Ո՞չ ապաքէն քու անզգամութիւնդ
մեծ է,
եւ անօրէնութիւններդ անհամար են։
6 Քանզի եղբայրներէդ առանց պատճա-
ռի գրաս առիր,
եւ մերկերուն հանդերձներն յափըշ-
տակեցիր։
7 Ծարաւածին ջուր չխմցուցիր,
եւ հացն անօթիէն խնայեցիր։
8 Բայց երկիրը զօրաւորինն էր,
եւ անոր մէջ պատուաւորը կը բնակէր։
9 Այրի կանայք դատարկ զրկեցիր,
եւ որբերուն թեւերը կոտրեցան։
10 Վասն որոյ բոլորտիքդ որոգայթներ
ւրուած են,



եւ յանկարծահաս վախը քեզ կը զար-
հուրեցնէ։
11 կամ խաւարը մը եւ ջուրերուն ծո-
ւարը չես կրնար տեսնել։
եւ ջուրերուն բազմութիւնը քեզ կը
ծածկէ։
12 Աստուած երկնից բարձր տեղը
չէ՞.
Հեռու տեսողութեան *բարձրութիւնը նա-
յէ, որչափ բարձր են։
13 Եւ դուն ըսիր,
Ինչ գիտէ Աստուած.
Մառախուղին միջէն դատաստանի
պիտի ընէ։
14 Ամպերն անոր առջեւ ծածկոյթ են, և
չտեսներ.
եւ անիկա երկնից կամարին վրայ կը
պտըտի։
15 †Ուշադրութիւն բրի՞ր այն ‡հին ճամ-
բուն,
Որ անօրէնն մարդկ պտրտեցան.
16 Որ յանկարծակի յափշտակուեցան,
Որոց հիմերը հեղեղն ընկղմեց,
17 Անոնք որ կ'ըսէին Աստուծոյ, Հեռացիր
մեզմէ։
եւ Ամենակարողը ||մեզի ինչ պիտի ը-
նէ։
18 Թէ և անոնց տուներ բարութեամբ լե-
ցուցած էր։
Անզգամներուն խորհուրդն ինձ հեռու
ըլլայ։
19 Արդարները պիտի տեսնեն և ուրախ
ըլլան,
եւ անմեղները զանոնք ծաղր պիտի ը-
նեն, ըսելով,
20 Մեր թշնամիները կորստած չէ՞ն,
Եւ անոնց մնացորդը կրակը չկերաւ։
21 Ագէ՛ Անոյ հետ բարեկամ եղիր, և
խաղաղութիւն ունեցիր։
եւ ասկէ քեզի օգուտ կ'ըլլայ։
22 Անոր բերնէն օրէնք ընդունէ,
եւ անոր խօսքերը սիրտդ դիր։

*Եբր. գլուխն
†Կամ Պիտի հետեւի՞ս
‡Կամ հին աշխարհին ճամբուն,
||Եբր. անոնց

23 Եթէ Ամենակարողին դառնաս, գուն
պիտի *հաստատուիս.
Անօրէնութիւնը քու վրաններէդ հե-
ռացուր։
24 Եւ ոսկին հողին †վրայ պիտի դնես,
Եւ Օփիրի ոսկին հեղեղատներու քա-
րերուն †վրայ։
25 Իւ Ամենակարողը քու ոսկիդ ըլլալով
Քու զօրութեանդ արծաթը պիտի ըլ-
լայ,
26 Քանզի անառեն Ամենակարողին ու քա-
խութիւն պիտի ունենաս,
Եւ երեսդ դէպ Աստուած պիտի վերը-
ցնես.
27 Անոր պիտի ազաչես, և քեզի պիտի լսէ.
Եւ քու ուխտերդ պիտի կատարես։
28 Եթէ դիտաւորութիւն մը ունենաս քե-
զի պիտի յաջողի,
Եւ ճամբաներուդ վրայ լոյս պիտի ճա-
ւագայթէ։
29 Երբ ձեղ ցածնայ, և դուն ըսես, ‡Ցոյց
բարձրանայ,
Անառեն պիտի ազատէ զանիկա՝ որ աչ-
քերով խոնարհած էր։
30 Անմեղ չեղողն ազա՛տ պիտի ազատէ,
Եւ քու ձեռքերուդ մաքրութեամբ
պիտի ազատուի։

Գլ. ԻԳ

1 Եւ Յոբ պատասխան առաւ և ըսաւ,
2 Այսօր ալ իմ գանգատս դառն է,
||Հարուածս հառաչքս ծանր է։
3 Երանի թէ կարող ըլլայի գտնել զԱնի-
կա,
Մինչեւ անոր աթոռը կ'երթայի.
4 Իմ դատս անոր առջեւ կը տարածէի,
եւ բերանս փաստերով կը լեցնէի։
5 Կը գիտնայի թէ ինծի ինչ պատասխան
կու տար,
Եւ կը լսէի ինչ որ ինծի կ'ըսէր։
6 Մի՞թէ ուժով սատակութեամբ ինծի հետ
պիտի վիճէր. ոչ.

*Եբր. չինուխ. †Կամ պէս
‡Եբր. Բարձրութիւն,
||Եբր. Զեռքս

Այլ ինք զիս պիտի զօրացուցանէր։
7 Ուզեց մարդը հոն կրնայ փիճաբանիլ անոր հետ։
Եւ ես չյաւերեան իմ Փառաւորիս կ'ազատուիմ։
8 Բայց ահա գէպ արևելք կ'երթամ, և անիկա չերևնար,
Եւ գէպ արևմուտք, և զանիկա չեմ նշմարեր։
9 Գէպ ի հիւսիս կ'երթամ, ուր ինք կը գործէ,
Բայց զանիկա չեմ կրնար դիտել։
Հարաւային կողմը կը պահտի, Եւ չեմ կրնար տեսնել զանիկա։
10 Իսկ անիկա գիտէ իմ Ճամբաս։
Երբ զիս փորձէ, ոսկւոյ պէս պիտի ելլեմ։
11 Ոտքս անոր քայլերուն վրայ հաստատուեցաւ,
Անոր Ճամբան պահեցի՝ չխոտորեցայ։
12 Անոր շրթանց պատուիրանքէն չդադարեցայ։
Անոր բերնին խօսքերն իմ պահոյքէս աւելի պահեցի։
13 Բայց նա մէկ հոգի վրայ է,
Եւ ո՞վ կրնայ զանիկա դարձուցանել։
Եւ ոգին ուզածը կ'ընէ։
14 Ուրնին ինծի համար ստեղծած պիտի կատարէ։
Եւ ասոր պէս շատ բաներ կան անոր քով։
15 Անոր համար անոր ներկայութենէն կը շփոթիմ,
Ե՛րբ կը մտածեմ՝ անկէ կը վախնամ։
16 Քանզի Աստուած սիրտս կը կակուղցուցանէ,
Եւ Ամենակարողը զիս կը շփոթէ։
17 Քանզի ես չեմ խ-ր-ր-ր-ւծ խաւարէն առաջ չեմ ուզեր,
Եւ մութն առջևէս չծածկեց։

## Գլ. ԻԴ

1 Որովհետև Ամենակարողէն պահուած չեն ժամանակները,
Ի՞նչպէս զանիկա ճանչցողներն անոր օրերը չեն տեսներ։
2 Չ–ր–ի–ը սահմանները կը փոխեն,
Հօտեր կը յափշտակեն և հանեն կ'արածեն։
3 Որբերուն էշերը կ'առնեն կը տանին,
Այրիին եզը գրաւ կ'առնեն։
4 Աղքատները Ճամբէն կը մղորդունեն,
Եւ երկրին անապահովները միասին կը պահտեն։
5 Ահա անոնք անապատի վայրենի էշերուն պէս երթեկ գործին կ'ելլեն,
Կանուխ որս փնտռելու կ'երթան։
Անապատն անոնց արտադր հաց է։
6 Արտը որ իրենց չէ կը հնձեն,
Եւ անիրաւութեամբ այգի կ'ատրեն։
7 Բիչերն առանց հանդերձի կը գիշերանցունեն մերկ,
Եւ ցուրտ ժամանակին առանց ծածկոցի կը քնանան։
8 Անձնք լեռներուն տարափէ անձրևներէն կը թրջուին,
Եւ ապաստանարան չունենալուն համար ժայռերը կը գրկեն։
9 Որբը ծիծէն կը խլեցնեն,
Եւ աղքատէն գրաւ կ'առնեն։
10 Մերկերն առանց հանդերձի կը պտրտցանեն,
Եւ անօթիներէն հնձած ցորենը կը կրեն։
11 Իրենց պատերուն մէջ իւղ հանողները
Եւ հնձաններուն մէջ ջինջ կոխողները ծարաւ կը մնան։
12 Քաղաքին մէջէն մարդիկ կը հեծեծեն,
Եւ վիրաւորածներուն հոգին կ'ապաւակէ,
Բայց Աստուած պոռոց ըրածն անպատասխանի չհամարիր։
13 Անոնք լուսոյ դէմ կեցողներէն են,
Անոր Ճամբաները չեն գիտեր,
Եւ անոր շաւիղներուն մէջ չեն կենար։
14 Մարդասպանը լուսանալուն պէս կ'ելլէ,
Աղքատը և անապկը կը սպաննէ,
Եւ գիշերը գողի պէս կ'ըլլայ։
15 Շնացողին աչքն ալ իրիկուան խ–ր–ի–ն կը սպասէ՝ ըսելով,
Ոչ ոք զիս կտեսնէ. և երեսին ծածկոց կը դնէ։
16 Մութ տան կը ծակին այն տուներէ՝



Որոց վասն ցորեկուընէ նշան դրած են.
Անոնք լոյսը չեն ճանչնար։
17 Վասն զի առաւուան ստուերը մահուան չափ պէս է անոնց,
Քանզի մահուան չափին երկիւղներուն ծանօթ են։
18 Անիկա չարին երեսին վրայ թեթև է.
Անոնց բաժինը երկրի վրայ անիծեալ է,
Եւ այգիներուն ճամբան չդառնար։
19 Երաշտութիւնը և ջերմութիւնը ձեան ջուրը կը ապահեն,
Եւ գերեզմանը մեղք գործողներ։
20 Որովայնը պիտի մոռնայ զնա,
Որդը պիտի ուտէ զնա անոյշ բանի պէս.
Եւ այլ եւս պիտի չյիշուի։
Անիրաւութիւնը ծառի պէս պիտի կտրուի։
21 Անիկա զաւակ չծնանող ամուլը կը չարչարէ,
Եւ այրեցին բարիք չընէր։
22 Անիկա իր ուժովը զօրաւորներն անգամ վեր կը քաշէ.
Թէ երբ ելլէ, մէկուն կեանքին պատուով չէ։
23 Ապահով անոր ապահովութիւն կուտայ, որ անոր վստահի,
Բայց անոր աչքերն անոնց Ճամբաներուն վրայ են։
24 Քիչ մը բարձրացան և ոչինչ եղան,
Ամէնուն պէս կոթաւելով ընկղմեցան,
Եւ հասկի գլխու պէս կտրուեցան։
25 Եթէ այսպէս չէ՝ ո՞վ զիս սուտ կը հանէ,
Եւ իմ խօսքս ոչինչ ըլլալ կը ցուցնէ։

## Գլ. ԻԵ

1 Եւ Բաղդատ Սօփարին պատասխան տուաւ և ըսաւ,
2 Իշխանութիւնը և վախն Անոր քովն են,
Իր բարձր տեղերուն մէջ խաղաղութիւն կընէ։
3 Անոր գունդերուն համրանքը հայ արդեօք,
Եւ անոր լոյսը որուն վրայ չծագիր։
4 Ուրեմն մարդ ինչպէս պիտի արդարանայ Աստուծոյ առջև,
Եւ կնոջէ ծնածն ինչպէս կրնայ մեղքէ բլլալ։
5 Ահա լուսինն խակ լոյս չտար,
Եւ Անոր աչքերուն առջին աստղերն անգամ մաքուր չեն։
6 Ո՛ր կը մնայ ուրեմն մարդը՝ որ որդ է,
Եւ մարդու որդին՝ որ ՏՀի է։

## Գլ. ԻԶ

1 Անասնն ձայ պատասխան տուաւ և ըսաւ,
2 Տկարին ինչ չես օգնութիւն ըրեր,
Եւ այժ չունեցող բազուկն ինչպես զօրացուցեր,
3 Անխելքին ինչ խրատ տուեր,
Եւ ինչ շատ իմաստութիւն ցուցուցեր,
4 Զոնն որո՞ր ըսեր չես խօսքերը,
Եւ որո՞ր շունչը եկաւ քեզնէ,
5 Ոգիները վարին կը գոգան,
Նո՛ւ էակները և անոնց բնակիչները,
6 Դժոխքը բաց է Անոր առջին,
Եւ կորուստն անծածկելի է։
7 Անիկա հիւսիսը պարապ տեղն վրայ կը տարածէ,
Եւ գերկիրը ոչնչի վրայ կը կախէ։
8 Ջուրերը իր մութ ամպերուն մէջ կը ծարսէ,
Եւ անոնց տակէն ամպը չպատռիր։
9 Իր աթոռին երեսը կը պահէ,
Անոր վրայ իր ամպը կը տարածէ։
10 Ջուրերուն երեսին վրայ սահման կոչմանէ մինչև լուսոյ և խաւարի ծայրը։
11 Երկնից սիւները կը սարսին,
Եւ անոր յանդիմանութենէն կ'ապշին։
12 Իր զօրութեամբ ծովը *կը խաղցնէ,
Եւ իր գիտութեամբ Նաւարատութիւնը կը զարնէ։
13 Իր Հոգւով երկինքը զարդարեց,
Անոր ձեռքը փախչող Վիշապն ատեղծեց։

*Կամ կը յանդիմանէ

14 Ահա ասանք են անոր ճամբաներուն
ծայրերը,
Բայց անոր վրայ մեր լսածը մրմունջ
կիչ է.
Եւ ո՞վ կրնայ իմանալ անոր զօրու-
թեան որոտումը։

ԳԼ. ԻԱ

1 Եւ Յոբ դարձեալ իր առակն սկսե-
լով՝ ըսաւ,
2 Իմ իրաւունքս մէկդի դնող Աստուած՝
Եւ հոգիս դառնութեամբ լեցուցող Ա-
մենակարողը կենդանի է.
3 Մինչդեռ շունչս վրաս է,
Եւ ձնգացս մէջ Աստուծոյ հոգին կայ,
4 Շրթունքս անիրաւ բան պիտի չզրու-
ցեն,
Ու լեզուս նենգութիւն պիտի չմտօծի։
5 Քաւ լիցի ինձ՝ որ ձեզ արդարացունեմ.
Մինչև մեռնիմ իմ ուղղութիւնս ձեռ-
քէ պիտի չձգեմ։
6 Իմ արդարութիւնս հաստատ բռնած
եմ, և պիտի չթողում զայն,
Ս– կենացս *մէջ սիրտս բնաւ պիտի չըլ-
յանդխմանէ զիս։
7 Թշնամիս ամբարշտի պէս ըլլայ,
Ու ինծի դէմ եղողն անզգամի պէս։
8 Քանզի կեղծաւորին յոյսն ի՞նչ է, (†Թէ
և հարստութիւն դիզած ըլլայ,՞)
Երբ Աստուած անոր հոգին առնէ.
9 Մինթէ Աստուած անոր ազաղակը պիտի
լսէ՞,
Երբ անոր վրայ փորձանք գայ։
10 Անկիա Ամենակարողին վրայ պիտի ու-
րախանայ՞.
Անկն ժամանակ Աստուծոյ պիտի ազա-
ղակէ՞։
11 Աստուծոյ ձեռաց մէջ եղածը ձեզի
պիտի սորվեցունեմ.
Ամենակարողին քով եղածը պիտի չըծ-
ածկեմ,
12 Ահա դուք ամէնքդ տեսաք,
Ու ինչո՞ւ այդպէս բոլորովին ունայնա-
ցած կ’ըլ։

13 Ա՛յս է ամբարիշտ մարդուն բաժինն
Աստուծոյ առջև,
Ու բռնաւորներուն Ամենակարողէն
առնելու ժառանգութիւնը.
14 Եթէ անոր տղաքը չատնան, սուրի հա-
մար է.
Եւ անոր սերունդն հացով պիտի չկըշ-
տանայ։
15 Անոր մնացորդները մահուամբ պիտի
թաղուին,
Բայց անոր այրիները պիտի չլան։
16 Թէ և հողի պէս արծաթ դիզէ,
Ու տղմի պէս հանդերձներ պատրաստէ,
17 Անիկա պիտի պատրաստէ, բայց ար-
դարը պիտի հագնի,
Ու անմեղն արծաթը պիտի բաժնէ։
18 Իրեն տուն կը շինէ ցեցի պէս,
Ու այծեամ պահապանին շինած խրճիթին
պէս։
19 Հարուստը կը պառկի և չամփոփուիր,
*Աչքը կը բանայ և՝ ոչինչ կ’ըլլայ։
20 Աբեհալիքները չուրերու պէս անոր պիտի
հասնին.
Գիշերով փոթորիկը պիտի յափշտակէ
զնա։
21 Արևելեան հովը պիտի քշէ զնա, և ան
պիտի երթայ.
Եւ փոթորկի պէս իր տեղէն պիտի
վերցունէ զնա։
22 Ա՛ստ–ւ–ծ–ոյ–ն է–ր ն–ե–տ–ե–ր անոր դէմ
պիտի նետէ, և պիտի չխնայէ.
Ան՝ ձ անոր ձեռքէն փախչելու պիտի
ջանայ։
23 Անոր համար ծափ պիտի զարնեն,
Եւ անոր եղած տեղէն անոր դէմ պի-
տի սուլեն։

ԳԼ. ԻԲ

1 Արդարև արծաթը է՛ր երակն ունի,
Եւ ոսկին է՛ր զտուելու տեղը։
2 Երկաթը հողէն կ’առնուի,
Հանքը կը հալի և պղինձ կ’ելլէ։
3 Մ–ա–ր–դ–ը խա–ւար–ին վախճան կը դնէ,
Եւ ամէն բան կատարելապէս կը քննէ,

*Կամ Ակնթարթի մէջ

*Կամ հանար †Կամ երբ մեռնի,



Շատ ծածուկ պահուած քարերը՝ որ
մահուան տուներին մէջ են։
4 Ի՛ր բնակած տեղին փովէն փոս կը
բանայ.
Ոտք չկոխած կը կախուին,
Ե– մարդոցմէ հե–ռա– կ’երերան։
5 Երկրէն հաց կ’ելլէ,
Եւ անոր տակը կրակի նման բռնէք կը
գոնուի։
6 Անոր քարերը շափիւզաներու տեղ են,
Եւ հոն ոսկեզ աւազ կայ։
7 Յափշտակող թռչունն ո՛չոր չափիզը չը-
ճանչցաւ,
Եւ անգղին աչքը զանիկա չտեսաւ։
8 *Վայրենի գազաններն՝ հոն ոտք կո-
խած չեն.
Առիւծն անկէ անցած չէ։
9 Մ–ա՛ր–դ ի՛ր ձեռքը կ’երկընցունէ ապա-
ւաժներուն,
Եւ լեռները հիմէն կը տապալէ։
10 Ապաւաժները ձեղքելով՝ ո՛չոր ներքն
վտակները կ’անցունէ.
Եւ ամէն մեծագին բաներն անոր աչ-
քը կը տեսնէ։
11 Գետերը վազելէն կ’արգիլէ,
Եւ գաղտուկ եղածը երևան կը հա-
նէ։
12 Բայց իմաստութիւնն ո՛ւր կը գտնուի,
Եւ հանճարին տեղն ո՛ւր է։
13 Մարդ անոր յարգը չգիտեր.
Եւ կենդանեաց երկրին մէջ չգտնուիր։
14 Անդունդը կ’ըսէ, Անիկա իմ մէջս չէ.
Եւ ծովը կ’ըսէ, Իմ քովս չէ։
15 Ոսկւոյ սակաւով չգնուիր,
Եւ անոր արժէքին համար արծաթ չը-
կշռուիր։
16 Ո՛ղ Ոֆիրի սակաւով կը փոխուի,
Ե– ո՛ր պատուական եղնգնաքարով և
շափիւզայով։
17 Ոսկին և ակնեմանին չեն կրնար անոր
հատուցուիլ.
Եւ զուտ ոսկիէ սամաններն անոր փո-
խանակ չեն ըլլար։
18 Բուսաոը և բիւրեղն ո՛չոր տով չեն մի-
չտիր,

*Եբր. Հպարտութեան որդիքն

Ու խնամութեան գինը *յակինթնե-
րու քէնէն աւելի բարձր է։
19 Եթովպիայի տպազիոնին գինն անոր
հաւասար չգար,
Եւ զուտ ոսկւով չփոխուիր։
20 Ուրեմն իմաստութիւնն ուստի՞ կու
գայ,
Եւ հանճարին տեղն ո՞ւր է.
21 Քանզի բոլոր ապրողներուն աչքերէն
ծածկուած՝
Ու երկինքի թռչուններէն պահուած է։
22 Կորուստը և մահը կ’ըսեն,
Մենք անոր համբաւը մեր ականջներով
լսած ենք։
23 Անոր ճամբան Աստուած կը հասկընայ,
Եւ անոր տեղն ինք գիտէ։
24 Քանզի մինչև երկրին ծայրերը կը նայի,
Ե– բոլոր երկինքի տակ եղածը կը տես-
նէ։
25 Երբ հովին կշիռ կը դնէր
Եւ ջուրերը չափով կը չափէր,
26 Երբ անձրևին օրէնք՝
Եւ որոտումներուն փայլակին ճամբայ
կ’որոշէր,
27 Անոնց տեսաւ զնա և յայտնեց,
Պատրաստեց զնա և նաև քննեց։
28 Եւ մարդուն ըսաւ, Ահա Տէրոջը վախն
է իմաստութիւն,
Ու չարութենէ հեռանալուն հանճարն է։

ԳԼ. ԻԹ

1 Եւ Յոբ նորէն իր առակն սկսելով
ըսաւ,
2 Երանի թէ առաջին ամիսներուն պէս՝
Աստուծոյ զիս պահած օրերուն պէս
ըլլայի։
3 Երբ անոր ճրագն իմ գլխուս վրայ լոյս
կու տար,
Ե– ես խաւարի մէջ անոր լուսով կը
քալէի։
4 Երիտասարդութեանս օրերը եղածիս
պէս՝
Երբ Աստուծոյ մտերմութիւնն իմ վը-
րանիս մէջ էր։

*Կամ բուստերուս

5 Երբ Աստուածակարգը տակաւին ինծի հետ էր,
Ես՝ ոտքս իմ բոլորտիքս էի՛ն,
6 երբ ճամբաներս կոգովով կը թրջէի.
Եւ ապառաժէն ինծի համար ձէթի հեղեղներ կը վազէին.
7 երբ դռնէն քաղաքը կ'ելլէի,
Ես՝ աթոռս հրապարակին մէջ կը դնէի,
8 երիտասարդները զիս տեսնելով կը պահուէին,
Եւ ծերերը ոտք կ'ելլէին կը կայնէին.
9 իշխանները խօսելէն կը դադրէին,
Եւ երկնց ձեռքերն երկնց բերնին վրայ կը դնէին.
10 Ազնուականներն իրենց ձայները կը կտրէին,
Անոնց լեզուն իրենց քիմքը կը փակէր։
11 Լսէն մարի ընդ ականջը Երանի կ'ըսէր ինծի,
Եւ զիս տեսնող աչքը վկայութիւն կուտար ինծի.
12 վասն զի ես ազատակոչ աղքատը
Եւ որբը և օգնութիւն չունեցողը կ'ազատէի.
13 կորուստը վրայ եղողին օրհնութիւնը վրաս կու գար,
Եւ այրւոյն սիրտը կ'ուրախացնէի.
14 Արդարութիւն կը հագնէի, այն էր իմ հանդերձս.
Ես՝ պատատանն ինծի պատմուճանի և խոյրի պէս էր։
15 Կոյրին աչք էի
Եւ կաղին ոտք.
16 Աղքատին հայր էի,
Եւ չքնոցած պատահանս կը քննէի։
17 Անիրաւին ժանիքը կը կոտրէի,
Եւ անոր ակռաներէն որսը կը ձգէի.
18 Եւ կ'ըսէի, Բոյնիս մէջ պիտի մեռնիմ,
Եւ օրերս աւազի պէս պիտի չատցուցնեմ։
19 Արմատս դէպ ի ջուրերը կը տարածուէր,
Եւ ցօղը բոլոր գիշեր ոստերուս վրայ էր։
20 Փառքս իմ վրաս կը նորոգուէր,
Եւ աղեղս ձեռքիս մէջ կը զօրանար։
21 Մարդիկ ինծի ունկի կ'ընէին և կը սպասէին,
Եւ երբ իմ խորհուրդս կ'ըսէի լուռ կը կենային։
22 Իմ զրուցելէս ետքը անոնք չէին կրկնեներ,
Եւ իմ խօսքս անոնց վրայ կը կաթէր։
23 Անձրեւի սպասելու պէս ինծի կը սպասէին,
Եւ եարքի անձրեւին ետեւէն ուշ-ուշ պէս իրենց բերանը կը բանային։
24 Եթէ անոնց վրայ խնդայի չէին հաւատար,
Եւ երեսս լոյսը չէին կրնար սրտնաթողել։
25 Անոնց ճամբաներն ընտրելով՝ իշխան կը նստէի,
Եւ՝ թագաւորի պէս՝
Եւ զօրագունդերուն մէջ եղող թագաւորի պէս կը բնակէի։

## Գլ. Լ.

1 Բայց հիմա ասոնք որ ինձմէ կրտսեր եղողներդ ինծի ծաղր կ'ընեն,
Որոց հայրերը հօտերուս շուներուն հետ պահելու չէի հաճեր.
2 նաև անոնց ձեռքերուն ոյժն ինծի բ՞նչ օգուտ ունէր.
Անոնց առուտուրքիները կորսուած էր.
3 Զքաղութիւնէ և անօթութենէ նիհարցած էին,
Եւ անապատ՝ ամիս, աւերակ և վայրի անդերը կը փախչէին.
4 Իրենց կերակրոյն համար ծացառներուն փուի *մոլոխները կը քաղէին,
Եւ գիհուոյ արմատ իբ՞ ուտելիք։
5 Մարդոց մէջէն կը վռնտուէին.
Եւ անոնց ետեւէն գողի նման պոռային
պէս կը պոռային։
6 Սոսկալի ձորերու մէջ կը բնակէին,
Հողի և ապառաժներու ծակերուն մէջ։
7 Մացառներուն մէջ կը կանչուըռտէին,

*Կամ վրիժրեմները

22 Զիս վերցուցիր հովին վրայ կը հեծցուցիր,
Եւ զիս բոլորովին կը հալեցուցիր։
23 Աստուած գիտեմ որ զիս մահուան պիտի տանիս,
Եւ ամէն ապրողներուն համար ասիմանուած տունը.
24 *Բայց Անիկա աւերածին վրայ ձեռք պիտի չերկընցնէ,
Եթէ կորստեան ատեն անոնք ապաչեն։
25 Դժբաղտութեան մէջ եղողին համար չէ՞ լար.
Աղքատին համար հոգիս չէ՞ր նեղնար։
26 Բայց երբ ես բարիք կը յուսայի՝ չարիք հասաւ.
Եւ երբ լուսոյ կը սպասէի՝ խաւար եկաւ։
27 Փորոտիքս եռաց և չդադրեցաւ.
Թշուառութեան օրեր ինծի հասան։
28 Անցած պտրաեցայ, բայց ոչ արեւէն.
Ելայ ՝ ժողովքին մէջ աղաղակեցի.
29 Շնագայլերու եղբայր՝
Եւ ջայլամներու ընկեր եղայ։
30 Մորթս վառ սեւցաւ,
Եւ ոսկորներս ջերմութենէ սպրնցան։
31 Վասն որոյ քնաբս սգոյի փոխուեցաւ,
Եւ արմնգ՝ լալկաններու ձայնի։

## Գլ. ԼԱ.

1 Աչքերուս հետ ուխտ բրի.
Ուրեմն ի՞նչպէս կոյսի վրայ մտածէի։
2 Բանզի վերէն Աստուծմէ ի՞նչ բաժին կ'ելլայ էր,
Եւ բարձր տեղերէ՝ Ամենակարողն ի՞նչ ժառանգութիւն։
3 Կորուստն ամբարշտին համար ահմահաւասիկ չէ՞,
Եւ սոսկալի դատաստան անօրէնութիւն գործողներուն համար։
4 Միթէ Անիկա իմ ճամբաներս չէ՞ տեսներ,

*Կամ Արդարև ազատականը ոչինչ կ'ուզէ, Երբոր Աստիւ ձեռքը երկնցուցած, ոչ ալ անոնց ազատակը՝ երբ Անիկա կորսընցուցած։



Եղէներուն տակ կը ժողվուէին։
8 Ցիմար և անունսն չորոց զաւակներ
Ըսուելով՝
Երկրէն կը վռնտուէին.
9 Եւ հիմա ես անոնց խօսք՝
Նաև անոնց առակը եղած եմ.
10 Ինէ գարշելով կը հեռանան ինէ,
Եւ երեսիս թքելքը չեն խնայեր։
11 Որովհետև իմ կապս թուլցնելով՝ զիս նեղեց,
Անոնք իմ առջեւս երասանակը թող տրին,
12 Աջ կողմէս ըակռանները կ'ելլեն,
Անոնք ոտքերս կը տրեն,
Եւ ինծի դէմ իրենց կորստեան ճամբաները կը պատրաստեն։
13 Անոնք չեւ իրենց կ'ուտրեն, վշտաց կ'աւելցնեն.
*Ես անոնց դէմ էնձի օգնութիւն բնող չկայ։
14 Լայն խրամատէ մը չորս պէս կը յարձակին,
Աւերակներուն տակէն չորս կը գլորին։
15 Արհաւիրք իմ վրաս դարձան,
Եւ հովի պէս պատիւս կը հալածեն.
Եւ ազատութիւնս ամպի պէս անցաւ։
16 Եւ հիմա հոգիս ներսի՛ս կը հալի.
Տրտմութեան օրերը զիս պաշարեցին։
17 Իմ ցաւս գիշերանց ոսկորներս ծակեց,
Եւ չկրկնս հանգիստ չունեցան։
18 Իր մեծ զօրութեամբ հանդերձիս փոխեց,
Եւ պատմուճանիս օձիքին պէս պատեց զիս։
19 Զիս ցեխին մէջ նետեց,
Ես հո հողի և մոխրոյ նմանեցայ։
20 Քեզ գոչեմ կ'ազազակեմ, և ինծի պատասխան չես տար.
Կը կայնիմ, և դուն ինծի ուշադրութիւն չես բներ։
21 Դուն ինծի անգութ ըեղար,
Զօրագիր զօրութեամբ քեզ հանդուգն պէս կը վարուիս ինծի հետ։

*Կամ Աստուծ մեկու մը անունց օգնելուն։
†Կամ կ'երթամ։
‡Եբր. փոխուեցաւ։

22 Զիս վերցուցիր հովին վրայ կը հեծցուցիր,
Եւ զիս բոլորովին կը հալեցուցիր։
23 Աստուած գիտեմ որ զիս մահուան պիտի տանիս,
Եւ ամէն ապրողներուն համար ասիմանուած տունը.
24 *Բայց Անիկա աւերածին վրայ ձեռք պիտի չերկընցնէ,
Եթէ կորստեան ատեն անոնք ապաչեն։
25 Դժբաղտութեան մէջ եղողին համար չէ՞ լար.
Աղքատին համար հոգիս չէ՞ր նեղնար։
26 Բայց երբ ես բարիք կը յուսայի՝ չարիք հասաւ.
Եւ երբ լուսոյ կը սպասէի՝ խաւար եկաւ։
27 Փորոտիքս եռաց և չդադրեցաւ.
Թշուառութեան օրեր ինծի հասան։
28 Անցած պտրաեցայ, բայց ոչ արեւէն.
Ելայ ՝ ժողովքին մէջ աղաղակեցի.
29 Շնագայլերու եղբայր՝
Եւ ջայլամներու ընկեր եղայ։
30 Մորթս վառ սեւցաւ,
Եւ ոսկորներս ջերմութենէ սպրնցան։
31 Վասն որոյ քնաբս սգոյի փոխուեցաւ,
Եւ արմնգ՝ լալկաններու ձայնի։

## Գլ. Լ.Ա.

1 Աչքերուս հետ ուխտ բրի.
Ուրեմն ի՞նչպէս կոյսի վրայ մտածէի։
2 Բանզի վերէն Աստուծմէ ի՞նչ բաժին կ'ելլայ էր,
Եւ բարձր տեղերէ՝ Ամենակարողն ի՞նչ ժառանգութիւն։
3 Կորուստն ամբարշտին համար ահմահաւասիկ չէ՞,
Եւ սոսկալի դատաստան անօրէնութիւն գործողներուն համար։
4 Միթէ Անիկա իմ ճամբաներս չէ՞ տեսներ,

*Կամ Արդարև ազատականը ոչինչ կ'ուզէ, Երբոր Աստիւ ձեռքը երկնցուցած, ոչ ալ անոնց ազատակը՝ երբ Անիկա կորսընցուցած։

Եւ ամէն քայլերս չը՛ համրեր։
5 Եթէ սատիճան մէջ քալեցի,
կամ ոտքս նենգութեան արագապայ,
6 Թող կշռէ զիս արդարութեան կշռով,
Եւ Աստուած անմեղութիւնս գիտնայ։
7 Եթէ ոտքս ճամբէն խոտորեցաւ,
Եւ սիրտս աչքերուս ետեւէն գնաց,
Եւ ձեռքերուս սպաս մը փակաւ,
8 Թող ես սերմանեմ, և ուրիշն ուտէ.
Եւ բուսցուցածս արմատէն վերցուի։
9 Եթէ սիրտս կնոջ ետեւէ մոլորեցաւ,
կամ թէ դացուոյս դուռը դարանամուտ եղայ,
10 կինս ուրիշի մը համար ալօրիքի քար դարձուն է,
Եւ ուրիշներն անոր վրայ ծռին։
11 Քանզի սա պղծագործութիւն է,
Եւ դատաւորներէն փոփոխելու անօրինութիւն.
12 Քանզի մինչև Ջհ կորստեան նետը լափող կրակ է,
Եւ բոլոր արդիւնքս արմատէն կը խլէ։
13 Եթէ ծառայիս կամ աղախնոյս իրաւունք ընել չուզեցի,
Երբ ինծի հետ վէճ ունեցան.
14 Ես ի՛նչ պիտի ընեմ, երբ Աստուած ելլէ.
Եւ երբ քննէ, ի՛նչ պատասխան պիտի տամ անոր։
15 Ո՞չ ապաքէն զիս որովայնի մէջ ստեղծողը դանոնք ալ ստեղծեց.
Եւ մեզ —Էհ՛ս— արգանդի մէջ ձեւակերպողը մէկ չէ՞։
16 Եթէ աղքատին ցանկացածը չտուի,
Եւ սպրսպն աչքերը մարեցուցի.
17 Եթէ պատառս մինակ կերայ,
Եւ անկէ որբն ալ չկերաւ.
18 (Քանզի երիտասարդութենէս ի վեր հօր պէս մեծցուցի *զնա,
Եւ մօրս արգանդէն †անոր խնամք տարի.)
19 Եթէ հանդերձ չտեսնեցող մը կորսուելու վրայ,
կամ ծածկոց չունեցող չքաւոր մը տեսայ,

20 Ե՞ւ իրմէ անոր երիկամունքը չօրհնեցին զիս,
Եւ ոչխարներուս բուրդէն չտաքցաւ.
21 Եթէ ձեռքս որբին դէմ վերցուցի,
Երբ տեսայ որ դրան մէջ ինծի օգնականներ կային.
22 Թող իմ թեւս ուսէն կիյնայ,
Եւ բազուկս արմուկէն կոտրուի,
23 Վասն զի Աստուծոյ *դատաստանէն կը վախնայի,
Եւ անոր մեծափառութեան առջեւ չէի կրնար կենալ։
24 Եթէ յոյսս ոսկւոյ վրայ դնելով,
Ձուտ ոսկւոյն ըսի թէ իմ վստահութիւնս դո՛ւն ես։
25 Եթէ ստացուածքս չատ ըլլալէն
Եւ ձեռքս շատ գտնելէն ուրախացայ.
26 Եթէ արեւին նայեցայ՝ անոր չտա փայլուն առնը,
Կամ պայծառութեամբ քալող լուսնին,
27 Եւ սիրտս գաղտնի խաբուելով՝
Բնբանս ձեռքս պագաւ,
28 (Ես այս ալ դատուելու անօրէնութիւն է,
Քանզի վերը բնակող Աստուած ուրացած կ'ըլլայի։)
29 Եթէ զիս ատողին թշնամութեան վրայ ուրախացայ,
Կամ անոր փորձանաց հանդիպելուն համար խնդացի։
30 (†Լեզուիս ալ մեղք գործելու թող չըտուի,
Անէծքով անոր մեռնելն ուզելով։)
31 Եթէ վրանիս մարդիկը չըսին,
‡Ե՞րբ անոր մկսէն չէինք կշտանար։
32 (Հեր երբեք գիշերը դուրս չէր մնար,
Հանապարհորդին դուռս կը բանայի։)
33 Եթէ յանցանքս ||Ադամի պէս ծածկեցի,
Եւ անօրէնութիւնս ծոցիս մէջ պահեցի,
34 Շատ բազմութենէն վախնալով,
Եւ ազգերուն անարգութիւնը զիս վախցնելով,
Այլ ես չխօսիմ և դուռնէն չելլեմ։
35 Երանի թէ ինծի ականջ դնող ըլլար,

*Եբր. կորուստչն
‡Եբր. Երանի թէ
†Եբր. Քմացս
||Կամ Մարդու

(Ահա այս է փափաքս՝ որ Ամենակալը ինծի պատասխան ապ.)
Եւ իմ դատաստանս գրուած մը գրէր։
36 Անշուշտ զանիկա իմ ուսիս վրայ պիտի կրէի,
Եւ պսակի պէս ինծի պիտի կապէի։
37 Քայլերուս թիւն անոր պիտի պատմէի,
Իշխանի պէս պիտի մօտենայի անոր։
38 Եթէ իմ երկիրս ինծի դէմ կը բողոքէ,
Եւ անոր ակօսները կու լան,
39 Եթէ անոր արդիւնքն առանց ռոճկի կերայ,
Կամ անոր տէրերուն հոգին հանեցի,
40 Ցորենի տեղ փուշ՝
Եւ գարւոյ տեղ որոմ բուսցուն։
Յոբայ խօսքերը լմնցան։

## Գլ. ԼՒ

1 Ա՛նտաեն այս երեք մարդիկ Յոբայ պատասխան տալէն դադրեցան, քանզի անիկա իր աչքերուն առջեւ արդար
2 Ի՛եհ՛ուհ՛ը։ Եւ *Աբրամի ազգատոհմէն Բուզացի Բարաքիէլի որդւոյն Եղիուի բարկութիւնը բորբոքեցաւ. անոր բարկութիւնը Յոբայ դէմ բորբոքեցաւ, քանզի Աստուծմէ աւելի զինք կ'արդարացուներ։ Նաև անոր բարկութիւնը բորբոքեցաւ Յոբայ երեք բարեկամներուն դէմ, քանզի պատասխան չգտան, և քանի որ Յոբ յանցաւոր համարեցին։ Եւ Եղիուս Յոբայ խօսքերուն ընդհատ սպասած էր, քանզի անոնք
5 քան զինք ծեր էին։ Բայց երբ Եղիուս տեսաւ որ այն երեք մարդոց բերանն՝ այլ ևս պատասխան չմնաց, անոր բար-
6 կութիւնը բորբոքեցաւ։ Անատեն Բուզացի Բարաքիէլի որդին Եղիուս պատասխան տալով բաւ.
Ես տարիքով փոքր եմ, և դուք չատ ծեր էք,
Ուստի եռա կեցայ, և գիտցածս ձեզի յայտնելու վախցայ.
7 Ըսի թէ †երկար կեանքը՝ թող խօսի,

*Եբր. Իամի
†Եբր. Օրերը

Եւ տարիներուն չատութիւնը թող իմաստութիւնը գիտցունէ.
8 Բայց մարդուն ներսի ոգին հոգի կայ,
Եւ Ամենակարողին շունչն անոնց հանճար կու տայ։
9 Նշբէ՛ն մեծերն իմաստուն չեն,
Եւ ծերերը դատաստան չեն հասկըննար։
10 Անոր համար ըսի, Ինծի մտիկ ըրէ,
Որ ես ալ իմ գիտցածս զրուցեմ։
11 Ա՛հա ես ձեր խօսքերուն սպասեցի,
Ձեր փաստերուն ականջ դրի,
Մինչև որ դուք խօսքերը քննեցիք։
12 Ես ձեզի ալէկ ուշադրութիւն ըրի,
Եւ ահա ձեզմէ մէկը չկայ, որ Ցոբ յանդիմանէ,
Եւ անոր խօսքերուն պատասխան տայ.
13 Զըլլայ որ ըսէք թէ՝ իմաստութիւն գըտանք։
Աստուած է որ զանիկա կը յաղթէ, և ոչ թէ մարդ։
14 Անիկա իր խօսքերն ինծի դէմ չըպատրաստեց,
Եւ ես ձեր խօսքերուն համեմատ անոր պատասխան պիտի չտամ։
15 Անոնք ապշեցան, այլ ևս պատասխան չտուին,
Անոնց խօսքերը հատան։
16 Եւ ես սպասեցի, մինչև որ այլ ևս բան մը չըսին,
Լո՛ւ կեցան, և այլ ևս չկրկնեցին։
17 Եւ ես իմ կողմս պատասխան տամ,
Ես ալ իմ գիտցածս զրուցեմ.
18 Քանզի խօսքերով լեցուն եմ,
Իմ ներսի ոգիս զիս կ'ըստիպէ։
19 Ա՛հա որովայնս չբացուած գինւոյ պէս է.
Նոր սրիկերու պէս պատռելու վրայ է։
20 Զրուցեմ որ չունչ առնեմ,
Շրթունքս բանամ և պատասխան տամ։
21 Ա՛նչ մկկու մը աչառութիւն չընեմ,
Եւ մարդու չողոքորթութիւն չընեմ.
22 Քանզի չեմ գիտեր չողոքորթութիւն ընել.
Զիս Ստեղծողը չուտով զիս պիտի վերցունէր։

ԳԼ. ԼԹ

1 Բայց ապէ, ով Յոբ, իմ խօսքս մտիկ ըրէ,
Եւ ամէն բառերուս ականջ դիր։
2 Ահա հիմա բերանս կը բանամ,
Եւ լեզուս քովս հնա կը խօսի։
3 Խօսքերս արթուն ուղղութեամբը պիտի ըլլան,
Եւ չքմտնքս գուտ խոսուածքներն պիտի խօսին։
4 Զիս Աստուծոյ Հոգին ստեղծեց,
Եւ Ամենակարողին հոգին ինծի կեանք տուաւ։
5 Եթէ կրնաս՝ պատասխան տուր ինծի,
Պատրաստուէլով՝ դիմացս կայնէ։
6 Ահա ես քու բանիդ համեմատ Աստուծոյ համար իբ նայեր։
Ես ալ հողէ ստեղծուեցայ։
7 Ահա երկիւղս զրկէ պիտի չցաւիտրեցնէ,
Եւ *ձեռքս վրադ պիտի չծանրանայ։
8 Արդարև ականջիս բսիր,
Եւ խօսքերուդ ձայնը լսեցի, որ ըսիր,
9 Ես մաքուր եմ՝ առանց յանցանաց.
Ես անարատ եմ, եւ վրաս անօրէնութիւն չկայ։
10 Ահա Անիկա վրաս պատճառներ կը գտնէ,
Զիս իրեն թշնամի կը համարի։
11 Ոտքերս կոճղներու մէջ կը դնէ,
Բոլոր շաւիղներս կը դիտէ։
12 Ահա քեզի պատասխան կուտամ որ այս բանիս մէջ իրաւունք չունիս,
Քանզի Աստուած մեծ է քան զմարդ։
13 Անոր հետ ինչո՞ւ կը վիճիս։
Քանզի անիկա բնաւ իւր բոլոր ծրագիրներուն համար պատասխան չտայ։
14 Արդարև Աստուած մէկ անգամ կամ երկու անգամ կը խօսի,
(Թէև հարց ուշադրութիւն չդներ,)
15 Երազի մէջ՝ գիշերուան տեսլեան մէջ՝ երբ խոր քուն կ'ինայ մարդոց վրայ,
Եւ անոնք էրէոց անկողիններուն մէջ կը քնանան,
16 Աստուած մարդոց ականջները կը բանայ,
Եւ անոնց խրատալ կը կնքէ,
17 Որ մարդը դիտ գործէն դարձնել,
Եւ մարդէն հպարտութիւնն *արգիլել,
18 Անոր հոգին գերեզմանէն կը զսպէ,
Եւ կեանքը սր սրամ չանցնի։
19 Նաև հարց իւր անկողնին մէջ ցաւով կը պատժուի,
Եւ անոր բոլոր ոսկրները սաստիկ շոշաւի,
20 Աստուած անոր անձը հացէն կը զզուի,
Եւ անոր հոգին փասիական կերակրէ,
21 Անոր մարմինն այնպէս կը հալի որ ալ չերեւնայ,
Եւ անոր չերեւցած ոսկրները դուրս կ'ելլեն։
22 Անոր անձը գերեզմանին կը մօտենայ,
Եւ անոր կեանքը՝ կործանման։
23 Եթէ անոր քով Թարգման պատգամաւոր մը ըլլայ,
Հազարէն մէկը,
Որ անոր ուղութիւնը մարդուն իմացնել,
24 Աստուած անոր ողորմելով պիտի ըսէ,
Ազատէ զանիկա որ գերեզման չիյնայ.
Ես քաւութիւն մը գտայ։
25 Անոր մարմինը աւելի փափուկ պիտի ըլլայ,
Եւ անիկա իւր մանկութեան օրերուն պիտի դառնայ։
26 Աստուծոյ պիտի ազաչէ, և Աստուած զանիկա պիտի ընդունի,
Եւ անոր երեսն ուրախութեամբ պիտի տեսնէ.
Քանզի Անիկա պիտի հատուցանէ մարդուն՝ անոր արդարութեան համեմատ։
27 Անիկա մարդոց վրայ կը նայի.
Եւ ԻՐԻ հիւր ըսէ, Մեղք գործեցի և ի բաւ ուղիղը ետ ընկայ,
Եւ ասկից ինծի օգտակար չեղաւ,
28 Անոնք անոր հոգին կ'ազատէ, որ գերեզման չիյնէ.
Եւ անոր կեանքը լոյս կը տեսնէ։
29 Ահա Աստուած այս ամէն բաները

*Կամ բերաս

*Եբր. ծածկէ։



երկու երեք անգամ մարդուն կ'ընէ,
30 Որ անոր հոգին գերեզմանէն դարձնէ,
Որ ապրողներուն լուսով լուսաւորուի։
31 Ականջ դիր, ով Յոբ, ինծի մտիկ ըրէ,
Լուռ կեցիր որ ես խօսիմ։
32 Եթէ բանիւք ունիս ինծի պատասխան տուր.
Զրուցէ, վասն զի կ'ուզեմ այդ պարագաներու կը փափագիմ։
33 Եթէ ոչ՝ ինծի մտիկ ըրէ,
Լուռ կեցիր, որ քեզի խոսմաւթիւն սորվեցնեմ։

ԳԼ. ԼԴ

1 Ելիհու նեղուած իւր խօսքը շարունակելով ըսաւ,
2 Ով իմաստուններ, իմ խօսքս մտիկ ըրէք,
Ու գուք, ով գիտուններ, ինծի ականջ դրէք։
3 Քանզի ականջը խօսքը կ'որոշէ,
Ինչպէս որ փիմքը կերակրոյ համը կ'ուտէ։
4 Իրաւունքը մեզի ընտրենք,
Մեր մէջ գիտնանք թէ որ բանն ազնիւ է։
5 Քանզի Յոբ ըսաւ,
Ես արդար եմ,
Բայց Աստուած իրաւունքս մէկդի ձգեց։
6 Մինչ է իրաւունքս պիտի սուտ եմ.
*Վէրքս մահացու է, թէ և յանցանք չունիմ։
7 Յոբայ պէս մարդ ով կայ,
Որ հայհոյութիւնը ջուրի պէս կը խմէ.
8 Որ անօրէնութիւն գործողներուն հետ ընկերութեամբ կը պտտի,
Եւ անբարիչտ մարդոց հետ կը քալէ.
9 Վասն զի բսաւ,
Աստուծոյ համար րլլալն մարդուս օգուտ չկայ։
10 Վասն այդ ինծի մտիկ ըրէք, ով խոհականներ,

*Եբր. Նեռս

Բնաւ վեղի որ Աստուծոյ գործ չգործէ,
Եւ Ամենակարողին գործ անօրէնութիւն ըլլայ։
11 Քանզի Անիկա մարդուն ըստ գործին հատուցանէ,
Եւ ամէն մարդու իւր ճամբուն համեմատ գտնել կուտայ։
12 Արդարև Աստուած անօրէնութիւն չընէր,
Եւ Ամենակարողը դատաստան չդուներ։
13 Երկիրը ով յանձնեց անոր,
Եւ բոլոր աշխարհը ով կարգի դրաւ։
14 Եթէ իւր սիրտն †ուզէր ան զկեանս ընդ իւր,
Միբոլոր հոգին և չունչն իրեն կը ժողվէր։
15 Անոր ամէն մարմին միկէն կը մեռնի,
Եւ մարդը հող կը դառնայ։
16 Հիմա եթէ բնութիւնն առնես մտիկ ըրէ.
Խօսքերուս ձայնին ականջ դիր։
17 Մինչ արդարութիւնն ատողը կրնայ իշխել,
Կամ արդար Հզօրը յանցաւոր կրնաս հանել,
18 †Այն որ թագաւորին կ'ըսէ թէ Եղեռնագործ ես,
Եւ աղնուականներուն թէ Զար հրէից ես։
19 Այն որ իշխաններուն աչառութիւն չընէր,
Եւ հարուստն աղքատէն աւելի չխնայեր,
Քանզի անոնք ամէնն ալ անոր ձեռաց գործն են,
20 Մէկ վայրկեանի մէջ պիտի մեռնին,
Եւ կէս գիշերուան ատեն ժողովուրդը խռովութեան մէջ կ'ինայ՝ պիտի անցնին.
Եւ զօրեղները պիտի վերցուին առանց ձեռքս ձեռքն անոնց չդպչելու.
21 Քանզի Անոր աչքերը մարդուն ճամբաներուն վրայ են,

*Եբր. անոր վրայ գնէ,
†Կամ կրնայ մէկը թագաւորին ըսել

Եւ անոր ամէն քայլերը կը տեսնեմ։
22 Ոչ խաւար կայ և ոչ մահուան շուք՝
Որ անօրէնութիւն գործողներն հոն պահուին։
23 Վասն զի մարդուս վրայ *երկար քննութիւն չըներ,
Երբ անիկա Աստուծոյ առջև դատաստանի կ'երթայ։
24 †Անխնայելի կերպով զօրաւորները կը կտրէ,
Եւ անոնց տեղ ուրիշներ կը հաստատէ։
25 Գիտէ անոնց գործերը,
Եւ գիշերով տակնուվրայ կ'ընէ, և կը խորտակուին։
26 Անոնց ամբարիշտ ըլլալուն համար՝
‡Ամէնուն առջև՝ զանոնք կը զարնէ,
27 Քանզի անոր հետևելէն ձեռք քաշեցան,
Եւ անոր ճամբաները բնաւ չհանդգնան.
28 Աչքերա՛ս որ աղքատին ազաղակն անոր հասցուցին,
Ու անիկա զրկեալներուն ազաղակը լսեց։
29 Եթէ անիկա հանգիստ տայ,
Ո՞վ կրնայ նեղութիւն տալ.
Եւ եթէ անիկա երեսը պահէ,
Ո՞վ կրնայ զանիկա տեսնել.
Ե՛ւ ազգի և մարդու.
30 Որպէս զի կեղծաւոր մարդը չիշխագաւորէ,
Ու ժողովուրդին որոգայթ չըլլայ։
31 Արդարև պէտք է Աստուծոյ ըսել,
Պատիժ կրեցի, այլ ևս չարութիւն չեմ ըներ.
32 Զանազանս դուն ինծի սորվեցուր,
Եթէ ամբարշտութիւն գործեցի՝ այլ ևս չեմ գործեր։
33 Արդեօք ||քու ուզածիդ պէս՝ պիտի հատուցանէ՝ որ հակառակ կը կենաս.
Քանզի դուն ընտրելու ես՝ և ոչ թէ ես.
Ուրեմն ինչ որ գիտես՝ խօսէ։
34 Իմաստուններըս պիտի բսեն ինծի հետս,
(Ու գիտուն մարդը որ ինծի մտիկ կ'ընէ,)
35 Յոբ խմաստութեամբ չգրուցեց,
Եւ անոր խօսքերն իմաստութեամբ չեն։
36 Իմ փափաքս այս է, որ Յոբ մինչև վերջը փորձուի.
Վասն զի ամբարիշտ մարդոց *պէս պատասխաններ տուաւ։
37 Քանզի իր մեղաց վրայ ապստամբութիւն կ'աւելցունէ.
Մեր մէջ ծափ կը զարնէ,
Եւ Աստուծոյ դէմ իր խօսքերը կը շատցունէ։

## Գլ. Լև

1 Դարձեալ Եղիուս իր խօսքը շարունակելով ըսաւ,
2 Մի՞թէ կը կարծես թէ իրաւացի է այս,
Որ ըսիր թէ ես Աստուծմէ աւելի արդար եմ,
3 Քանզի դուն ըսիր, Քեզի ի՞նչ օգուտ կ'ըլլայ.
Մեղքէս աւելի ի՞նչ կը վաստըկիմ.
4 Ահա ես քեզի պատասխան կու տամ,
Նաև քեզի հետ քու բարեկամներուդ։
5 Երկինքը նայէ և տես.
Ամպերը դիտէ, որ քան զքեզ աւելի բարձր են։
6 Եթէ դուն մեղք գործես, Անոր դէմ ի՞նչ ըրած կ'ըլլաս,
Ու երբ անօրէնութիւններդ չատնան, Անոր ի՞նչ կ'ընես։
7 Եթէ արդար ես, Անոր ի՞նչ կու տաս,
Կամ անիկա քու ձեռքէդ ի՞նչ կ'առնէ։
8 Ամբարշտութիւնդ քեզի պէս մարդուն՝
Ու արդարութիւնդ մարդու որդւոյն կը ըլլէ։
9 Անիրաւութեան բազմութենէն կը բողոքեն,
Բռնաւորներուն բազկին համար կ'աղաղակեն։
10 Բայց չեն ըսեր Թէ Ձիս ստեղծող Աստուածն ո՞ւր է,

*Կամ կողմէն

*Եբր. ալ չդներ, †Կամ Անթիւ
‡Եբր. Տեսնողներուն տեղը
||Եբր. քու քովդ



Որ գիշերուան մէջ երգեր կու տայ,
11 Որ մեզ երկրի անասուններէն աւելի կսովրեցնէ,
Եւ երկնից թռչուններէն աւելի խմաստուն կ'ընէ։
12 *Հոն չարերուն հպարտութեան համար կ'աղաղակեն,
Բայց Աստուած պատասխան չտայ։
13 Արդարև Աստուած ունայնութիւն մտիկ չըներ,
Եւ Ամենակարողն անոր չնայիր։
14 Եւ թէև կ'ըսես Թէ Զանիկա չես տեսներ,
Բայց դատաստան կայ անոր առջև, և անոր յուսա։
15 Եւ հիմա անոր բարկութեան ըրածը բան մը չէ,
Եւ անօրէնութիւնը ամենևին չգիտեր.
16 Ուստի Յոբ իր բերանը զուր տեղը բանայով՝
Անգիտութեամբ խօսքերը կը չատցունէ։

## Գլ. Լգ

1 Եւ Եղիուս շարունակելով ըսաւ,
2 Թիչ մը համբերէ՛ ինծի, և ես քեզի յայտնեմ,
Որ Աստուծոյ համար տակաւին ուրիշ խօսելիք ունիմ։
3 Գիտութիւնս հեռուէն պիտի առնեմ,
Եւ արդարութիւնը Ստեղծողիս ընծայեմ։
4 Իրաւցնէ իմ խօսքերս սուտ չեն։
Դիտութեամբ կատարեալ մէկ մը քու քովդ է։
5 Ահա Աստուած հզօր է, բայց ձեռք չարհամարհեր,
Անիկա հզօր է իր սրտին զօրութեամբ։
6 Անիկա ամբարիշտը չապրեցուներ,
Եւ նեղեալներուն իրաւունք կ'րնէ.
7 Արդարներուն վրայէն աչքը չվերցուներ,
Եւ զանոնք թագաւորներուն հետ աթոռին վրայ կը դնէ։

*Կամ Հոն կ'աղաղակեն, բայց Աստուած պատասխան չտայ՝ չարերուն հպարտութեանը համար։

Զանոնք չարիութեան կը նանեցնէ, և կը բարձրանան։
8 Ու անոնք եթէ չղթաներով կապուած՝
Թշուառութեան կապերուն մէջ բռնուին,
9 Անասնին անոնց կը յայտնէ իրենց գործերը,
Եւ անոնց յանցանաց բազմութիւնը։
10 Նաև անոնց ականջը կը բանայ, որ խրատ ընդունին,
Եւ անոնց կը պատուիրէ որ անօրէնութենէ դառնան։
11 Եթէ անոնք հնազանդելով՝ անոր ծառայութիւն ընեն,
Իրենց օրերը բարութեամբ, և իրենց տարիներն ուրախութեամբ կ'անցունեն,
12 Բայց եթէ անոնք հնազանդութիւն չընեն, սուրէ պիտի անցնին,
Եւ առանց գիտութեան պիտի մեռնին։
13 Եւ անոնք որ սրտով կեղծաւոր են, բարկութիւն կը դիզեն.
Երբ դանոնք կապէ, անոր չեն աղաղակեր։
14 Անոնց անձը երիտասարդութեան մէջ պիտի մեռնի,
Եւ անոնց կեանքը պիղծերուն մէջ վախճանի։
15 Աղքատը կ'ազատէ անոր թշուառութենէն տանի,
Ու նեղութեան մէջ անոր ականջ կը բանայ։
16 Քեզ ալ նեղութենէ պիտի ազատէր,
Եւ ապահով ընդարձակութեան բերէր, ուր նեղութիւն չիայ։
Եւ քու սեղանդ գրասածը պարարտութեամբ լեցուն պիտի ըլլար։
17 Բայց եղիր դուն չարին գատաստանը *պահպանեցիր,
Իրաւունք և դատաստան պիտի բռնեն։
18 Քանզի բարկութիւն կայ, չըլլայ որ հարուածով մը վերցունէ զքեզ,
Անատնն մեծ փրկանքն զքեզ չկրնար ազատել։

*Եբր. կատարեցիր,

19 Մի՛թէ անիկա քու հոգւոյտ թիւնդ բանի մտիդ կը դնէ՞.
Ոչ ոսկին և ոչ մեծ գանձերը քեզ չեն հմայեր։
20 Մի փափաքիր այն գիշերին
Որուն մէջ ժողովուրդները իրենց տեղն "անդունդի կ'ըլլան"։
21 Զգուշացիր անօրէնութեան գառնալէն.
Քանզի դուն ասկից թշուառութենէ աւելի ընտրեցիր։
22 Ահա Աստուած իր զօրութեամբ դասատուացեալ է.
Ով կրնայ անոր պէս օրէնսդիր ըլլալ։
23 Անոր ճամբան ո՞վ որոշեց անոր,
Եւ ո՞վ ըսաւ անոր թէ Դուն անիրաւութիւն գործեցիր։
24 Մի՛ գովեր զանիկա որ մեծագործ անոր գործքերը՝
Զոր մարդիկ կ'երգեն ականջներուն։
25 Ամէն մարդ կը տեսնէ զանոնք,
Հեռուէն կը դիտէ։
26 Ահա Աստուած մեծ է, և մենք չենք գիտեր.
Եւ անոր տարիներուն համրանքն անքննելի է։
27 Քանզի չոր կերպուն կաթիլները կը քաշէ.
Անոնք իր գոլորշիէն անձրեւ կը թափեն,
28 Զոր ամպերը վազցունելով՝
Մարդոց վրայ առատօրէն կը կաթեցնեն։
29 Բայց ընաւ ո՞վ կը տեսներուն տարածումը՝
Եւ անոր վրանին գոռգոռմը կրնայ հասկընալ։
30 Ահա անոր վրայ իր լոյսը կը տարածէ,
Եւ ծովուն խորութիւնը կը ծածկէ։
31 Ժողովուրդներն այս բաներով ‖կը դատէ,
Եւ առատօրէն կերակուր կու տայ։
32 Ափով †կայծակը կը ծածկէ,
Եւ անոր հրամանն կու տայ, թէ ո՛ր պիտի զարնէ։

*ԵԲՐ. կը վերնան։
†Կամ կը բարձրացունէ. ‡Կամ կ'երգեն։
‖Կամ կը խնամէ, §ԵԲՐ. լոյսը

33 *Անոր կը ցրցունէ իր բարեկամը.
Անօրէնութեան դէմ բարկութիւն կը դիզուի։"

ԳԼ. ԼԷ

1 Ասոր համար նաև սիրտս կը դողայ,
Եւ իր տեղէն կ'ելլէ բերան։
2 Անոր ձայնին որոտումը
Եւ անոր բերնէն ելած շառաչիւնը մըտիկ ըրէք։
3 Բոլոր երկնից տակ կը զրկէ զանիկա,
Եւ անոր լոյսը† մինչև երկրին ծայրերը։
4 Անոր յետեւէն մեծ ձայն մը կ'ելլէ,
Իր վեհափառութեան ձայնով կ'որոտայ,
Եւ իր ձայնը լսուելէն ետքը չուշացուներ զանոնք։
5 Աստուած իր ձայնով սքանչելի կերպով կ'որոտայ,
Ան այնպիսի մեծ բաներ կ'ընէ՝ որ մենք չենք կրնար հասկնալ։
6 Քանզի անիկա կ'ըսէ ձեան, Երկրի վրայ եղիր,
Նաև սաստիկ անձրեւին և իր զօրութեան սաստիկ անձրեւներուն։
7 Անիկա ամէն մարդուն ձեռքը կը կնքէ,
Որ իր ստեղծած բոլոր մարդիկը հասկընան։
8 Գազաններն իրենց որջերը կը մտնեն,
Եւ իրենց այրերուն մէջ կը բնակին։
9 Հարաւէն փոթորիկ կու գայ,
Եւ հիւսիսէն ցուրտ։
10 Աստուծոյ շունչէն սառնամանիք կը տրուի,
Եւ ջուրերուն լայնութիւնը կը նեղնայ։
11 Նաև պարզութիւնը կը փարատի մեգը.
Անոր լոյսն ամպը կը ցրուէ։
12 Անոր խորհրդով անիկ տեղ կը փոխադրուին,
Որ աշխարհի երեսը երկրի վրայ անոր բոլոր հրամանը կատարեն։
13 Ցանկնք կը բերէ՝ թէ խրատի համար,

*Կամ Անոր շառաչիւնը անոր համար լուր կու տայ, խաշինքն ալ՝ կելոզ ամպին համար։



Թէ իր երկրին համար և թէ հնարհքի համար։
14 Ով Ցոբ, այս ըսածդ մտիկ ըրէ.
Կայնէ և Աստուծոյ սքանչելեաց վրայ մտածէ։
15 Գիտե՞ս թէ Աստուած ինչպէս կը կարգադրէ զանոնք,
Եւ իր ամպին լոյս կը փայլեցունէ։
16 Գիտե՞ս ամպերուն հաւասարակշռութիւնը,
Եւ խմաստութեամբ կատարեալ եղողին սքանչելիքը։
17 Երկիրը հարաւային հովէն հանգստացուցած ժամանակը,
Պիտի՞ թէ ինչու համար քու հանդերձներդ կը տաքնան։
18 Անոր հետ ամպերուն տարածելուն երկինքը,
Որ ամուր է թափած հայելոյ պէս։
19 Սորվեցուր մեզի թէ ինչ պիտի ըսենք անոր.
Մեզ անդէպ մթութեան պատճառաւ չենք կրնար դէր խօսք կարգադրել։
20 Եթէ ես խօսելու ըլլամ, պիտի պատմուի՞ Անոր,
Եթէ մեկը զրուցի, անդուռն պիտի կլլուի։
21 Եւ հիմա ոչ չեն կրնար նայիլ, երբ երկինքը կը փայլատակի,
Բայց հովը կ'անցնի, և զանիկա կը սրբէ։
22 Ահա հիւսիսէն ոսկեայ պէս լոյս կու գայ.
Աստուծոյ քով սոսկալի փառաւորութիւն կայ։
23 Անիկա Ամենակարող է, չենք կրնար հասկնալ զանիկա.
Մեծ է զօրութեամբ, գառնատառանով և շատ արդարութեամբ,
Եւ չի նեղուիր զրկանք չրնելու։
24 Անոր համար մարդիկ կը վախնան անկէ.
Սրտով խմաստուններուն չի նայիր։"

*Կամ պատառտման չատ։
†Կամ մեկը բնաւ չկրնար տեսնել ընդհանրին։

ԳԼ. ԼԸ

1 Անաւասն Եհովան փոթորկէն մեկնեալ ատամեան ատլով Ցոբայ՝ բսաւ,
2 Ով է դա՝ որ անխմաստ խօսքերով
Խորհուրդը կը նսեմացունէ։
3 Չիմն քաջ մարդու պէս մէջդ պնդէ.
Բեզի հարցունեմ, և դուցաղդ ինձի իմացունես։
4 Ո՞ւր էիր դուն՝ երբ ես երկրին հիմերը կը դնէի։
Ըսէ ինձի՝ եթէ խմաստութեան տեղեկութիւն ունիս։
5 Մեթ գիտես՝ ըսէ, ով գոյ տանոր չափերը,
Կամ թէ անոր վրայ լար ո՞վ քաշեց։
6 Անոր հիմերն ինչի՞ վրայ հաստատուած են,
Կամ թէ անոր անկեան քարն ո՞վ դրաւ,
7 Երբ առաւօտեան աստղերը միկտղ փառաբանութիւն կ'ընէին,
Եւ երբ Աստուծոյ բոլոր որդիքը ցնծութեամբ կ'աղաղակէին։
8 Նաև ծով որովայնէն յարձակելով ելած ժամանակ՝
Ո՞վ զոցեց զանիկա դուռներով,
9 Երբ ամպն անոր հանդերձ դրի,
Եւ մէգը խանձարուր,
10 Եւ անոր վրայ հրամանս հաստատելով՝
Անոր փականք և դուռներ դրի,
11 Եւ ըսի անոր, Մինչև հոս գաս և անդին չանցնես,
Եւ քու ալեացդ հպարտութիւնն հոս դադարի։
12 կենացդ մէջ երբէք առաւօտուն հրաման ըրի՞ր,
Արշալոյսդ ցուցուցի՞ր անոր ծագելու տեղը,
13 Որ երկրին ծայրերը բռնէ,
Եւ չարագործներն անկէ թօթափին։
14 Երկիր նոր ձև կ'առնէ կնքուած կաւի պէս,
Եւ անոնք բոլ *հանդերձով գործուածքի պէս կ'երևնայ։

*ԵԲՐ. հագուստի

15 Սակայն մանրաբիւրանեկրէն կարդելուի
անոնց լոյսը,
Ու բարձր բազուկը կը խորտակի։
16 Չոզուն պղերնները մնացած են,
Ու անպուղին ծածուկ տեղուանքը
պարապած եղաւ։
17 Մահուան գուռները յայտնուեցան
քեզի,
Ու մահուան շուքին դուռները տեսար։
18 Երկրին լայնութեան խելքդ հասաւ.
Եթէ ամէնը գիտես՝ զրուցէ։
19 Լուսոյ *բնակարանն ո՞ր է,
Ու խաւարին տեղն ո՞ւր է,
20 Որ զանոնք առնես իրենց սահմանը դնէս,
Ու անոր տան ճամբաներն իմանաս։
21 Գուն անառանն ծնած ըլլալու համար,
Ու քու օրերուդ թիւը չատ ըլլալուն
համար գիտես։
22 Ձիան չափարանները մտած ես,
Ու կարկտոյ գանձերը տեսած ես,
23 Որ ես կը պահեմ նեղութեան ժամանակին,
Ու կռուոյ և պատերազմի օրուան համար։
24 Ի՞նչ ճամբով լոյսը կը բաժնուի,
Ու *Է՞նդէտ արևելեան հովը երկրի վրայ
կը տարածուի։
25 Հեղեղներուն համար անցք
Ու որոտմանց փայլակին համար ճամբայ ո՞վ բացաւ,
26 Որ անձրև տայ այն երկրին վրայ՝ ուր
մարդ չկայ,
Անապատին վրայ՝ ուր ոչ ոք կը բնակի,
27 Որ անապատները և անչէն տեղերը
յագեցնէ,
Ու հանոյ խոտին ընձիւղը բուսցնէ։
28 Անձրեւն հայր ունի՞,
Կամ ցօղոյ կաթիլներն ո՞վ ծնաւ։
29 Սառը որո՞ւ արգանդէն կ'ելլէ,
Ու երկնից եղեամն ո՞վ ծնաւ։
30 Ջուրերը քարի պէս կ'ըլլան կը պահուին,
Ու անդունդին երեսը †կը սառի։

31 Բազմաստեղին *կապերը կրնա՞ս կապել,
Կամ Քէտ Հայկին կապերը կրնա՞ս քակել։
32 †Մազարոթը ժամանակին կրնա՞ս հանել,
Ու Արջին և անոր զաւակաց առաջնորդել։
33 Երկնից կանոնները գիտե՞ս,
Անոր իշխանութիւնը երկրի վրայ կըրնա՞ս դնել։
34 Ձայնդ ամպերուն կրնա՞ս վերցնել,
Որ ջրերուն բազմութիւնը քեզ ծածկէ։
35 Կայծակները կրնա՞ս ղրկել որ երթան,
Ու քեզի Ահա պատրաստ ենք՝ բանեն։
36 Երիկամանց մէջ ո՞վ իմաստութիւն դրաւ,
Կամ սրտին ո՞վ հանճար տուաւ։
37 Ո՞վ կրնայ իմաստութեամբ ամպերը համրել,
Ու երկնից սափորը ‡պառկեցուցնել,
38 Երբ փոշին էրէ–երով զանգուած կըլլայ,
Ու հողոյ կոշտերն իրարու կը փակչին։
39 Առիւծին համար որս կրնա՞ս որսալ,
Ու կորիւններուն ախորժակը կրնա՞ս յագեցնել,
40 Երբ անոնք էրէնց այրերուն մէջ կը կըծկըմին,
Ու դարանի համար իրենց օրջերուն մէջ կը կենան։
41 Ո՞վ կը պատրաստէ ագռաւին իւր որսը,
Երբ անոր ձագերն Աստուծոյ կ'ազաղակեն,
Ու ուտելիք չունենալուն համար կը թափառին։

Գլ. Լ.

1 Ժայռի այծեամներուն ծնանելու ժամանակը գիտե՞ս.

*Կամ զուարճութիւնները
†Կամ Տասը–երիս– կենդանակերպները
‡Կամ թափել տալ։



Եղնիկներուն ծնանելը դիտեցի՞ր,
2 Անոնց հղացած ամիսները կրնա՞ս համրել,
Ու անոնց ծնանելու ժամանակը գիտե՞ս,
3 Անոնք ծռելով իրենց ձագերը կը ծըննանին,
Ու իրենց ցաւերը կ'անցուընեն։
4 Անոնց ձագերը կը զօրանան, դաշտի մէջ կը մեծնան.
Կ'երթան և ետիրն անոնց չեն դառնար։
5 Ո՞վ համարձակ թող տուաւ ոյնը,
Ու վայրենի իշուն կապերն ո՞վ քակեց,
6 Որուն տուի դաշտը տան համար,
Ու անապատն՝ անոր բնակութեան համար։
7 Անիկա քաղաքին ազդազոյն ծաղր կ'ընէ,
Ու բանեցուցողին պոռալը չլսեր.
8 Պարտած լեռներն անոր արօտն են,
Ու ամէն թեաւոյ խոտ կը փնտռէ։
9 Միեղջիւրուն քեզի ծառայելու կը հաճի՞,
Կամ քու մսրդդ գոմ գիշերը կը մնա՞յ։
10 *Արտ վարելու համար միեղջիւրուն կրնա՞ս չուանով կապել,
Կամ թէ քու եաւիդ հովիտները կը տափանէ՞։
11 Անոր ոյժը չատ ըլլալուն համար անոր կը վստահի՞ս,
Ու գործդ անոր կը յանձնե՞ս։
12 Կը հաւատա՞ս անոր թէ քու արմտիդդ պիտի բերէ,
Ու քու կալդ ժողվէ։
13 Ջայլամին թևը ցնծութեամբ կը շարժի.
Արդեօք արագիլ թևերուն և փետուրներուն կը նմանի՞։
14 Անիկա իւր ձուերը գետին կը ձգէ,
Ու զանոնք հողին վրայ կը տաքցունէ,
15 Ու մոռքը չգար որ ջիւռ մը ոտքը կը կոտրէ զանոնք,
Կամ գաշտի գազանները ոտնակոխ կ'ընենն։
16 Անիկա անգութ է իւր ձագերուն՝ իբրեւ չեղածներու պէս.

*Եբր. Ակօսին մէջ

Իւր աշխատութիւնը զատարկ եղելուն վախ չունի։
17 Քանզի Աստուած իմաստութենէ զրկեց զայն,
Ու հանճարէն անոր բաժին չտուաւ։
18 Անիկա բարձրը երած ժամանակը՝
Ձին և անոր վրայ հեծնողը ծաղր կ'ընէ։
19 Ձիուն գո՞ւն այժ տուիր,
Անոր պարանոցին *բաշը գո՞ւն հագցուցիր։
20 Զանիկա մարախի պէս կրնա՞ս ցաթկցունել.
Անոր վեհնչելուն †փսաւուր ձայնն՝ ահաւոր է։
21 Հովտի մէջ գետինը կը փորէ, և իւր զօրութեամբ կը զուարճանայ.
Սպառազինը դիմաւորելու կ'ելլէ։
22 Երկիւղը ծաղր կ'ընէ, բնաւ մը չվախնար,
Ու սուրին երեսէն ետ չդառնար։
23 ‡Նետերն անոր վրայ կը սուլեն,
Նաև փայլուն նիզակը և գեղարդը։
24 Կատաղութեամբ և բարկութեամբ գետինը կը կլլէ,
Ու փողին ձայնը ընդունի՝ ||չկրնար զինք զսպել։
25 Քանի որ փողը կը հնչուի, Ա՛հ, կ'ըսէ.
Հեռուէն կ'առնէ պատերազմին հոտը,
Զօրագլուխներուն որոտումը և աղաղակները կը լսէ։
26 Բազէն քո՞ւ խնամութեամբդ կը թռչի,
Ու թևերը դէպ ի հարաւ կը բանայ։
27 Արծիւը քո՞ւ հրամանովդ կը բարձրանայ,
Ու բոյնը բարձրը կը հաստատէ։
28 Անիկա ժայռի վրայ՝ ժայռի գագաթներու վրայ՝
Ու ապահովներու մէջ բնակելով կը կենայ.
29 Կերակուրն անկէ կը փնտռէ.
Անոր աչքերը հեռուէն կը տեսնեն։

*Կամ որոտումը †Եբր. փառքը
‡Եբր. Կապարը անոր վրայ կը սուլէ,
||Կամ չհաւատար։

30 Անոր ձագերն ալ արիւն կը ծծեն,
Ու ուր որ դիակ ըլլայ, անկից հոն է։

ԳԼ. Խ

1 Ու Տէրը Յոբայ խօսելով բաւ,
2 Արդ, Ամենակարողին հետ վիճաղը բան
մը պիտի սորվեցնե՞ւ.
Աստուծոյ հետ վիճաբանողը թող պա-
տասխան տայ։
3 Անատեն Յոբ Տէրոջը պատասխան
տալով ըսաւ,
4 Ահա ես նուաստ եմ. քեզի ի՞նչ պա-
տասխան տամ.
Ձեռքս բերանիս վրայ կը դնեմ։
5 Մէկ անգամ խօսեցայ, այլ ես պա-
տասխան պիտի չտամ.
Երկու անգամ ալ, բայց պիտի չկրկ-
նեմ։
6 Անատեն Տէրը մրրկէն Յոբայ պա-
տասխան տալով բաւ,
7 Հիմա քաջ մարդու պէս մէջքդ պինդ է,
Քեզի հարցնեմ, և դուն ինծի ծանուցիր
ինծի խնդիրը։
8 Իմ դատաստանս պիտի խափանե՞ս,
Քեզ արդարացնելու համար ինծի յան-
ցաւո՞ր պիտի հանես։
9 Աստուծոյ պէս բազուկ ունի՞ս,
Ու ձայնով կրնա՞ս անոր պէս որոտալ։
10 Հիմա վառաւորութեամբ և մեծու-
թեամբ զարդարուէ,
Ու պատուով և փառաւք հագուէ,
11 Բարկութեանդ հեղանդը տարածէ,
Ու ամէն հպարտին նայէ և զանիկա խո-
նարհեցուր։
12 Ամէն հպարտին նայէ և զանիկա նուա-
ճէ,
Ու անօրէններն իրենց տեղը կոխկռտէ։
13 Անոնց ամէնն ալ հողին մէջ աներեւոյթ
ըրէ,
Անոնց երեսը գաղտուկ տեղ պահէ։
14 Անատեն ես ալ քեզի կը խոստովանիմ,
Որ աջ ձեռքդ քեզ կրնայ ազատել։
15 Ահա *բեհեմոթին որ քեզի հետ ըս-
տեղծեցի,
Անիկա արջառի պէս խոտ կ'ուտէ։
16 Ահա հիմն անոր զօրութիւնն անոր մէջ-
քին է,
Ու ոյժը փորին †ականներուն մէջ։
17 Պոչը կ'երերցունէ եղէնոյ պէս.
Ազդրերուն ջիղերը հիւսուած են,
18 Անոր ոսկորները դպղնձէ խողովակներ՝
են,
Անոր ոսկրները երիվարի նիզակներու պէս
են։
19 Աստուծոյ ճարտար գործն անիկա է.
Ջանիկա առեղծողն ‡իւր սուրը կրնայ
անոր մօտեցնել։
20 Արդարև անոր պաշար կը բերուն լեռ-
ները,
Ուր որ գաշտի բոլոր գազաններն կը
խաղան։
21 Անիկա հովանաւոր ծառերուն տակ,
Եղէգներուն շուքը և ճահիճներուն մէջ
կը պառկի։
22 Հովանաւոր ծառերն իրենց շուքով կը
ծածկեն զնա,
Հեղեղատներուն ուռիներն անոր բո-
լորտիքն են։
23 Եթէ գետն աւազանայ, անիկա չվախ-
նար։
Թէև Յորդանան անոր բերանին վրայ դի-
մելու ըլլայ, հանգարտ կը կենայ։
24 Մէյմի անիկա չյայտնի կը բռնուի՝
||որոգայթի մէջ անոր քիթին ո՞վ կրնայ
ծակել։

ԳԼ. ԽԱ

1 :Լևիաթանը կարթով կրնա՞ս վերցու-
նել,
Ու անոր լեզուէն լարով կրնա՞ս քաշել։
2 Անոր քթին չուան անցուցեր՝ով,
Ծնօտը կրնա՞ս փուշով ծակել։
3 Մէյմի անիկա քեզի շատ ազաչանք կ'ը-
նէ՞,

*Կամ պոռթին
†Կամ պղնձէ ամուր կաորաւանք
‡Կամ անոր սուրը էբէն կուտայ։
||Կամ Քիթովը որոգայթները կը ծակէ։
:Կամ կոկորդիլոսը



Քեզի մեղմ խօսքեր կ'ըսէ՞։
4 Անիկա քեզի հետ ուխտ կ'ընէ՞,
Զանիկա մշտնջենաւոր ծառայ պէս
կրնա՞ս առնել։
5 Թռչնոյ հետ խաղալու պէս անոր հետ
կրնա՞ս խաղալ,
Կամ թէ ազախիններուդ համար զա-
նիկա կրնա՞ս կապել։
6 Ընկերներուն անոր հաւէտ հացկերոյթ կըր-
նա՞ն ընել,
Անիկա վաճառականներուն մէջ կը
բաժնուի՞։
7 Անոր մորթը ալգիներով
Ու անոր գլուխը ձկնորսի սեգերով
կրնա՞ս լեցուն՝ել։
8 Ձեռքդ անոր վրայ դիր, պատերազմը
յիշէ.
Ե՞ւ նորէն պիտի չընես ըսածիդ։
9 Ահա անոր իւսոլելուն յոյսը պարապ է.
Զանիկա տեսնելով՝ս դուն չէ՞ զարհուր-
բիր։
10 Չկայ քաջասիրտ մարդ որ զանիկա
արթընցնէ.
Իսկ ի՞մ առջեւս ո՞վ կրնայ կայնիլ։
11 Ո՞վ ինձի առաջուց տուաւ, որ հատ-
ուցանեմ.
Բոլոր երկինքց տակ եղածն իմն է։
12 Անոր անդամներուն և զօրութեան,
Նաև գեղեցիկ կարգաւորութեան վը-
րայ խօսելու պիտի չլռեմ։
13 Անոր հանդերձին երեսն ո՞վ կրնայ բա-
նալ.
Անոր երկու կզակներուն մէջ ո՞վ կըր-
նայ մտնել։
14 Անոր երեսին դուռներն ո՞վ կրնայ
բանալ.
Ահն անոր ակռաներուն բոլորտիքն է։
15 Անոր ամուր վահաններն անոր հպար-
տութիւնն են,
Պինդ կնքուածի պէս զոց են.
16 Այնպէս քովէ քով շարուած են,
Որ անունց մէջ քամի չկրնար մտնել.
17 Իրարու կցուած են,
Իրար կը բռնեն և բնաւ չեն զատուիր։
18 Անոր փռնգոտալէն լոյս կը փայլի,
Ու աչքերն արշալուսոյ արեւանման
կը նմանին։
19 Անոր բերնէն վառած ջահեր կ'ելլեն,
Ե՞ւ կրակի կայծեր կը ցայտեն։
20 Քիթն ծխերէն շոգի կ'ելլէ՝
Եռացող ամանի կամ կաթսայի պէս։
21 Անոր շունչն կրակի կայծեր կը բոր-
բոքին,
Ու բերնէն բոց կ'ելլէ։
22 Անոր պարանոցին վրայ ոյժ կը բնակի.
Ու երկիւղն անոր առջեւն կը խաղայ։
23 Անոր մսին ծալուածները փակած են,
Անոր վրայ հաստատուելով չեն երերար։
24 Անոր սիրտը քարի պէս պինդ է,
Ու աղօրայն վարի քարին պէս ամուր է։
25 Անոր հզած ժամանակը զօրաւորները
կը վախնան,
Ե՞ւ երկիւղին կը չխոթին։
26 Անոր վրայ յարձակողին սուրը չդիմա-
նար,
Ո՛չ նիզակը, գեղարդը և վրանը։
27 Երկաթը յարդի պէս է անոր առջեւ,
Ե՞ւ պղինձը փտած փայտի պէս։
28 Աղեղին նետը զանիկա չփախցուներ,
Պարապքարերը անոր դէմ մղեղի կը
դառնան,
29 Մահակները չուզերուս տեղ կը համարի,
Ցեղին ճօճալը ծաղր կ'ընէ։
30 Անոր տակը սրածայր խեցեղէ կտոր-
ներուն կան,
Ցեխին վրայ սուր բաներ կը տարածէ։
31 Անդունդը ասիր մը պէս կ'եռացընէ,
Ե՞ւ ծովը ապերանոյ կաթսային նման
կ'ընէ։
32 Իւր ետեւէն ճամբան պայծառ կ'երե-
ցունէ,
Անդունդը ճերմակած մազերու կը նմանի։
33 Երկրի վրայ անոր նմանը չկայ,
Որ այնպէս աներկիւղ ստեղծուած ըլլայ։
34 Ամէն բարձր բաներու վրայ կը նայի,
Բոլոր *հպարտութեան որդւոց թա-
գաւորն է։

ԳԼ. ԽԲ

1 Անատեն Յոբ Տէրոջը պատասխան տա-
լով բաւ,

*Կամ վայրենի գազաններուն

2 Գիտեմ որ ամէն բանի կարող ես,
Եւ քու դիտաւորութիւնդ բնաւ չյաղ-
ղիր։
3 Ո՞վ է սա որ տգիտութեամբ խորհուր-
դը կը նսեմացնէ.
Արդարև կը զրուցեի, բայց չէի հաս-
կընար.
*Ինծի սքանչելի բաներ ըլլալով՝ չէի ի-
մանար։
4 Կ'աղաչեմ մտիկ ըրէ որ ես զրուցեմ,
Քեզի հարցնեմ և ինծի սորվեցուր։
5 Ես քու վրադ ականջի լուով լսած
էի,
Բայց հիմա աչքս կը տեսնի զքեզ։
6 Անոր համար իմ ա՛ւէս կ'արհամարհեմ,
Հողի և մոխրոյ վրայ կը զղջամ։
7 Արդ Տէրը այս խօսքերն Յորայ զը-
րուցելէն ետքը՝ Տէրը նեղիտաղ Թեւ-
մանացւոյն ըսաւ, Քու վրադ և երկու
ընկերներուդ վրայ իմ բարկութիւնս
բորբոքեցաւ, քանզի ինծի համար իմ
Յոբ ծառայիս պէս ուղիղ չխօսեցաք։
8 Ուստի հիմա ձեզի եօթը զուարակ և
եօթը խոյ առէք, և Յոբ ծառայիս եր-
թալով՝ ձեզի համար ողջակէզ մատու-
ցեք, և իմ Յոբ ծառայս ձեզի համար
աղօթք ընէ, որ ես ալ անոր †աղօթքն
ընդունելով՝ չէր անմխիթարեան վե-
չընեմ ձեզի, քանզի իմ առջևս Յոբ
ծառայիս պէս ուղիղ չխօսեցաք։
9 Անոնք նեղիտաղ Թեւմանացի և
Բաղդատ Սօքեցի և Սոփար Նեեմացի
երթալով՝ Տէրոջը իրենց ըսածին պէս
ըրին. և Տէրը Յորայ *աղօթքն ընդու-
նեց։
10 Ու Տէրը գերութենէ ազատեց Յոբ՝
իր բարեկամներուն համար աղօթք
ըրած ատենը. նաև Տէրը Յորայ ըոլոր
առացուածոց կրկնապատիկը տուաւ։
11 Եւ անոր բոլոր եղբայրները և բոլոր
քոյրերը և զանկիա առաջուց ճանչ-
ցողներուն բոլորն ալ անոր գալով՝ ա-
նոր տան մէջ հաց կերան անոր հետ, և
անոր համար ցաւերով՝ Տէրոջը անոր
դրկած բոլոր փորձանաց համար անոր
մխիթարութիւն տուին. և իւրաքան-
չիւր մէկիկ կտոր ասեղ և մէկիկ ոսկի
12 օղ տուին անոր։ Եւ Տէրը Յորայ վերջին
առաջինէն աւելի օրհնեց. այնպէս որ
տասնեչորս հազար ոչխար, և վեց հա-
զար ուղտ, և հազար զոյգ եզ և հա-
զար մատակ էշ ունեցաւ։ Եւ անոր
13 տասը տղայ էշ ունեցաւ։ Եւ անոր
14 եօթը որդի և երեք աղջիկ եղաւ։ Եւ
մէկ աղջկան անունը †Եմիմա՝ և երկ-
րորդին անունը Կասիա՝ և երրորդին ա-
15 նունը ‡Կերեն-Հապուք դրաւ։ Եւ բո-
լոր երկրին վրայ Յորայ աղջիկներուն
պէս գեղեցիկ կիներ չէր գտնուեր. և
անոնց հայրն անոնց ժառանգութիւն
տուաւ իրենց եղբայրներուն մէջ։
16 Ու յետ այսորիկ Յոբ հարիւր քառա-
սուն տարի ապրելով՝ տեսաւ իր որ-
դիները և իր որդւոց որդիները հինգ
17 չորրորդ ազգ։ Եւ Յոբ ծերացած և օ-
րերը լեցուած մեռաւ։

*Եբր. Ինէ

†Եբր. Կերեսը

*Եբր. Կերեսը †Այսինքն՝ Ութ-
‡Այսինքն՝ Եղջիւր ծաղկոյ։

# *ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՑ

## ՍԱՂՄՈՍ Ա.

1 Երանելի է այն մարդը՝
Որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ
չգայթէ,
Եւ մեղաւորներուն ճամբուն մէջ չկե-
նար,
Եւ ծաղր ընողներուն նստած տեղը չը-
նստիր.
2 Այլ անոր հաճութիւնն Աստուծոյ օ-
րէնքին մէջ է,
Եւ ցորեկ և գիշեր անոր օրէնքին վր-
րայ կը մտածէ։
3 Եւ անիկա ջուրի ճամբաները տնկուած
ծառի պէս պիտի ըլլայ,
Որ ժամանակին իր պտուղը կու տայ.
Եւ անոր տերեւը պիտի չթափի,
Եւ ինչ բան որ ընէ՝ պիտի յաջողի։
4 Այսպէս չեն ամբարիշտները,
Այլ մղեղի պէս՝ զոր հովը կը ցրուէ։
5 Ասոր համար ամբարիշտները դատաս-
տանի մէջ պիտի չկրնան կենալ,
Ոչ ալ մեղաւորներն արդարոց ժողով-
քին մէջ։
6 Վասն զի Տէրը կը ճանչնայ արդարնե-
րուն ճամբան.
Բայց ամբարիշտներուն ճամբան պիտի
կորսուի։

## ՍԱՂՄ. Բ

1 Ինչո՞ւ հեթանոսները խռովութիւն կ'ը-
նեն,
Եւ ժողովուրդները պարապ բան կը
մտածեն։
2 Երկրի թագաւորները պիրկնք կը հաս-
տատուին,
Եւ իշխանները միկտեղ խորհուրդ կ'ը-
նեն
Տէրոջը դէմ և անոր Օծեալին դէմ,
3 Ըսելով, Կտրենք անոնց կապերը,
Եւ մենք նետենք անոնց *լուծը։
4 Երկինք բնակող ծիծաղ պիտի
Տիրադալ,
Տէրը ծաղր պիտի ընէ զանոնք։
5 Անատեն իր բարկութեամբ պիտի խօ-
սի անոնց,
Եւ իր սրամտութեամբ պիտի խռովե-
ցունէ զանոնք, ըսելով,
6 Ես օծեցի իմ թագաւորս
Իմ սուրբ լեռանս՝ Սիոնի վրայ։
7 Հրամանը պիտի պատմեմ.
Տէրը ինծի ըսաւ,
Դուն իմ Որդիս ես,
Ես այսօր ծնայ զքեզ։
8 Խնդրէ ինէ, և հեթանոսները քեզի
ժառանգութիւն պիտի տամ,
Եւ երկրին ծայրերը՝ քեզի սեպհական։
9 Զանոնք երկաթէ գաւազանով պիտի
†կոտրես.
Բրտի ամանի պէս պիտի փշրես զա-
նոնք։
10 Ուստի հիմա, ով թագաւորներ, խե-
լամտեցէք,
Երկրի դատաւորներ, խրատուեցէք։
11 Երկիւղով Տէրոջը ծառայեցէք,
Եւ դողալով ‡ուրախ եղէք։"
12 Որդին համբուրեցէք՝ որ չբարկանայ,
Եւ ճամբուն մէջ չկորսուիք,
Երբ անոր բարկութիւնը քիչ մը բոր-
բոքի։
Երանի այն ամենուն որ անոր կը յու-
սան։

*Ղուկ. Ի. 42, Գոր. Ա. 20.

*Եբր. լուծանները։
†Կամ հովուես.
‡Կամ ցնծացէք։

## ՍԱՂՄ. Գ

*Սաղմոս Դաւթի, երբ որդւոյն Աբիսողոմի երեսէն փախած ժամանակը։*

1 Ով Տէր, իմ թշնամիներս ո՞րքան շատացան.
իմ վրաս եղողները շատացոր են։
2 Շատերը իմ անձիս համար կ՚ըսեն թէ
Աստը փրկութիւն չկայ Աստուածմէ։ (*Սէլայ։)
3 Բայց, ով Տէր, դուն ես իմ ասպարս,
իմ փառքս և իմ գլուխս բարձրացուցողը։
4 Իմ ձայնովս Տէրոջը կանչեցի,
Եւ իր սուրբ լեռնէն ինծի պատասխանեց։ (Սէլայ։)
5 Ես պառկեցայ և քնացայ.
Արթնցայ, վասնզի Տէրը զիս պահպանեց։
6 Ես պիտի չվախնամ բիւրաւոր ժողովուրդներէ
Որ չորս կողմս պատեցին։
7 Ելիր, ով Տէր, զիս փրկէ, ով իմ Աստուածս,
Վասն զի դուն զարկիր իմ բոլոր թշնամիներուս ծնօտը։
Ամբարիշտներուն ակռաները փշրեցիր։
8 Փրկութիւնը Տէրոջն է.
Քու օրհնութիւնդ քու ժողովուրդիդ վրայ է։ (Սէլայ։)

## ՍԱՂՄ. Դ

*Գլխաւոր երաժշտին, Նկինոթի վրայ։ Սաղմոս Դաւթի։*

1 Կանչելուս առնիս ինծի պատասխան արդ, ով իմ արդարութեանս Աստուածը։
Նեղութեան մէջ զիս ընդարձակեցիր։
Ողորմէ ինծի և լսէ իմ աղօթքս։
2 Մարդոց որդիներ, մինչև ե՞րբ իմ փառքս անարգի պիտի դարձնէք,
Ե՞րբ պիտի սիրէք ունայնութիւն և սուտութիւն փնտռէք։ (Սէլայ։)
3 Բայց գիտցէք որ Տէրը իրեն նուիրուած հպարտը *պարշտց.
Տէրը պիտի լսէ իրեն կանչելուս առնիս։
4 Դողացէք և մեղք մի գործեք.
Խօսեցէք ձեր սրտին տեղ ձեր անկողիններուն վրայ և լռեցէք։ (Սէլայ։)
5 Արդարութեան զոհեր մատուցէք,
Եւ Տէրոջը յուսացէք։
6 Շատեր կ՚ըսեն թէ Ո՞վ մեզի բարութիւն պիտի ցուցնէ.
Ով Տէր, քու երեսիդ լոյսը մեր վրայ ծագէ։
7 Իմ սրտիս ուրախութիւն տուիր
Անոնց ցորենով և գինւոյ առատութեան ժամանակին աւելի։
8 Խաղաղութեամբ պիտի պառկիմ և քնանամ,
Վասն զի դուն միայն, ով Տէր, զիս ապահովութեամբ կը բնակեցնես։

## ՍԱՂՄ. Ե

*Գլխաւոր երաժշտին, †Նէհիլոթի վրայ։ Սաղմոս Դաւթի։*

1 Ով Տէր, ականջ դիր իմ խօսքերուս,
Մխածէ առ իմ աղաղակս։
2 Իմ կանչելուս ձայնը մտիկ ըրէ, ով իմ Թագաւորս և Աստուածս,
Վասն զի ես քեզի կ՚աղաչեմ։

*Կամ երեւելի ըրաւ։
†Այլիւ հառաչօք խրթնիւ փչիւս նըւագարաններուն տակաւն է։



3 Ով Տէր, առաւօտուն պիտի լսես իմ ձայնս.
Առաւօտուն *պատրաստ պիտի կրկամ քեզի և սպասեմ։
4 Վասն զի դուն անօրէնութիւն ուզող Աստուած չես.
Չարը քու քովդ պիտի չհիւրանայ։
5 Հպարտները քու աչքերուդ առջեւն պիտի չկենան.
Բոլոր անօրէնութիւն գործողները կ՚ատես.
6 Սուտ խօսողները կը կորսընցնես.
Տէրը արիւնահեղ և նենգաւոր մարդ կն կը զզուի։
7 Բայց ես քու ողորմութեանդ բազմութեամբ քու տունդ պիտի մտնեմ,
Քու վախովդ երկրպագութիւն պիտի բնեմ քու սուրբ տաճարիդ մէջ։
8 Ով Տէր, քու արդարութեամբդ զիս թշնամիներուս համար.
Քու ճամբադ շակէ իմ առջեւս։
9 Վասն զի անոնց բերնին մէջ շմարտութիւն չկայ,
Անոնց ներսիդին չարութիւն է.
Անոնց կոկորդը բաց դերեզման է.
Իրենց լեզուով նենգաւոր եղան։
10 Ով Աստուած, յանցաւոր հանէ զանոնք.
Իրենց խորհուրդներով թող կքնան։
Անոնց չար ամբարշտութիւններուն համար հալածէ զանոնք.
Վասն զի քեզի դէմ ապստամբեցան։
11 Բայց ամէն քեզի յուսացողները թող ուրախ ըլլան.
Յաւիտեան թող ցնծան, քանզի դուն զանոնք կը պատսպարես.
Եւ քու անունդ սիրողները թող քեզմով զուարճանան։
12 Վասն զի դուն պիտի օրհնես արդարը, ով Տէր,
Բարի կամեցողութեամբ անոր չորս կողմը պիտի պատես՝ որպէս թէ վահանով։

*Կամ ապշէս պիտի ներկայացունեմ

## ՍԱՂՄ. Զ

*Գլխաւոր երաժշտին, Նկինոթի վրայ, *Շեմինիթի վրայ։ Սաղմոս Դաւթի։*

1 Ով Տէր, քու սրամտութեամբդ զիս մի յանդիմաներ,
Եւ քու բարկութեամբդ զիս մի խրատեր։
2 Ով Տէր, ողորմէ ինծի, վասն զի տկար եմ.
Զիս բժշկէ, ով Տէր, վասն զի ոսկորներս կը սարսափին։
3 Իմ անձս ալ շատ սարսափեցաւ.
Եւ դուն, ով Տէր, մինչև ե՞րբ։
4 Դարձիր, ով Տէր, փրկէ իմ անձս,
Քու ողորմութեանդ համար զիս ազատէ։
5 Վասն զի մահուան մէջ քեզ յիշատակել չկայ.
Գերեզմանին մէջ ո՞վ քեզի գնորհակալութիւն պիտի ընէ։
6 Հառաչանք ընելէն յոգնեցայ.
Ամէն գիշեր առատութեամբ կը լուամ իմ անկողինս,
Արտասուօք կը թրջեմ իմ մահճաս։
7 Իմ աչքս մռայեաւ սրտմտութենէ,
Իմ ամէն թշնամիներուս համար հինցաւ։
8 Ինձմէ հեռացէք ամէնքդ որ անօրէնութիւն կը գործէք.
Վասն զի Տէրը իմ լացս ձայնը լսեց։
9 Տէրը իմ աղօթքս լսեց.
Տէրը իմ խնդրուածս պիտի ընդունի։
10 Թող ամչնան և շատ զարհուրին իմ անձն թշնամիներս,
Նա պառնան և յանկարծ թող ամչնան։

## ՍԱՂՄ. Է

†Շիկկայոն Դաւթի, որ երգեց Տէրոջը Բենիամինեան Քուշին խօսքերուն համար։

*Այսինքն՝ ուխտերորդի,
†Կամ Մեղեդի

1 Ով իմ Տէր Աստուածս, քեզի կը յու-
սամ,
Փրկէ զիս իմ ամէն հալածիչներէս և
ազատէ զիս։
2 Զրլլայ որ առիւծի պէս իմ անձս դի-
շատէ,
Եւ պատառէ և ազատող չըլլայ։
3 Ով իմ Տէր Աստուածս, եթէ այս բանն
ըրի,
Կամ թէ իմ ձեռքերուս մէջ անօրէ-
նութիւն կայ,
4 Եթէ բարեկամիս չարութիւն ըրի,
Եւ յափշտակեցի ջնջիկ՝ որ առանց
պատճառի իմ թշնամիս էր,
5 Թող թշնամին հալածէ իմ անձս և
հասնի անոր,
Եւ երկրի վրայ կոխկրտէ իմ կեանքս,
Եւ իմ փառքս հողի վրայ բնակեցնէ։
(Սէլա։)
6 Ելիր, ով Տէր, քու բարկութեամբդ,
Իմ թշնամեացս կատաղութիւններուն
դէմ բարձր եղիր,
Եւ քու հրամայած դատաստանիդ ին-
ձի համար արթնցիր։
7 Եւ ժողովուրդներուն ժողովը քու չորս
կողմիդ պիտի պահեն.
Անոնց վրայ դէպ ի բարձրը դարձիր։
8 Տէրը պիտի դատէ ժողովուրդները.
Ով Տէր, իմ դատաստանս տես՝
Իմ ունեցած արդարութեանս և ան-
մեղութեանս նայելով։
9 Ամբարիշտներուն չարութիւնը թող
հասնի,
Բայց դուն արդարը հաստատէ.
Դուն զի դուն, ով արդար Աստուած,
Կը քննես սիրտերը և երիկամունքը։
10 Իմ պաշտպանութիւնս Աստուծմէ է,
Ան որ կ'ապրեցնէ սրտով ուղիղնե-
րը։
11 Աստուած արդար դատաւոր է,
Եւ Աստուած ինքնօրէն ամէն օր բար-
կացած է.
12 Եթէ անիկա չդառնայ, իւր սուրը պի-
տի սրէ.
Աղեղը լարած և պատրաստած է,
13 Եւ մահու գործիներն անոր համար
պատրաստած է,
Իւր նետերն *հալածիչներուն համար՝
չինած է։
14 Ահա անօրէնը թէեան երկունքը բըռ-
նեց զինս.
Յղացաւ և տառապ ինն ծնաւ։
15 Հոր փորեց և խորտնկցոց,
Բայց իւր չինած փոսին մէջ ինք պիտի
իյնայ։
16 Անոր չարութիւնն անոր գլխուն պիտի
գառնայ,
Եւ անոր բռնութիւնն անոր գագաթին
վրայ պիտի իջնէ։
17 Գոհութիւն պիտի մատուցանեմ Տէրո-
ջը անոր արդարութեան համար,
Եւ սաղմոս պիտի երգեմ Բարձրեալ
Տէրոջը անուան։

ՍԱՂՄ. Ը

Գլխաւոր երաժշտին, †Կիթթիթի վրայ.
Սաղմոս Դաւթի։

1 Ով Տէր՝ մեր Տէրը,
Ո՜րչափ փառաւոր է քու անունդ բոլոր
երկրի վրայ,
Որ քու վառքդ երկինքներէն վեր դը-
րիր։
2 Մանկանց և կաթնկեր ազայոց բերնէն
‡Ոյժութիւն կատարեցիր՝ քու թշնա-
միներուդ համար,
Որ թշնամին և վրէժխնդիրը լռեցնես։
3 Երբ նայիմ երկինքդ՝ քու մատի-
րուդ գործը,
Լուսինը և աստղերը՝ զորս դուն հաս-
տատեցիր,
4 Մարդն ի՞նչ է որ զանիկա կը յիշես,
Կամ մարդու որդին, որ անոր այցե-
լութիւն կ'ընես։
5 Քիչ մը վար բերիր զնա հրեշտակներէն,

*Կամ կրակոտ
†Կը նշանակուի թէ գործիք մը նուագարանի անուն է։
‡Կամ Զօրութիւն



Փառաւոր և պատուով պսակեցիր զնա.
6 Քու ձեռացդ գործերուն վրայ իշխան
դրիր զնա.
Ամէն բան անոր ոտքին տակ դրիր.
7 Բոլոր ոչխարները և արջառները,
Դաշտ վայրենի անասունները,
8 Երկինքց թռչունները և ծովուն ձուկերը
Ը՛նչ որ ծովու ճամբաներուն մէջ կը
պտրտի։
9 Ով Տէր՝ մեր Տէրը,
Ո՜րչափ փառաւոր է քու անունդ բոլոր
երկրի վրայ։

ՍԱՂՄ. Թ

Գլխաւոր երաժշտին ; Մութ-լաբպէնի
վրայ. Սաղմոս Դաւթի։

1 Գոհութիւն պիտի մատուցանեմ Տէրո-
ջը բոլոր սրտովս.
Քու ամէն սքանչելիքդ պիտի պատմեմ։
2 Բերկրիմ ու ցնծամ պիտի քեզմով.
Քու անունդ սաղմոս պիտի երգեմ,
ով Բարձրեալ։
3 Թշնամիներս նո՛ր դառնային առեն
Քու երեսդ պիտի իյնան և կորսուին.
4 Վասն զի դատաստանս և իրաւունքս
դուն տեսար.
Աթոռին վրայ նստար Է՛ք- արդարու-
թեան դատաւոր։
5 Հեթանոսները յանդիմանեցիր,
Ամբարիշտը կորսընդուցիր,
Անոնց անունները ընդհանրապէս յա-
ւիտեան յաւիտենից։
6 Թշնամւոյն աւերումները բոլորովին
վերջացան.
Քաղաքներն աւերեցիր.
Անոնց յիշատակն անոնց հետ կորաւե-
ցաւ։
7 Բայց Տէրը յաւիտեան կը մնայ.
Անիկա իւր աթոռը պատրաստեց դա-
տաստանի համար։
8 Ինք պիտի դատէ աշխարհս արդարու-
թեամբ,
Ժողովուրդներուն դատաստան պիտի
ընէ ուղղութեամբ։
9 Տնանկին ալ ապաւէն պիտի ըլլայ Տէրը,
Ապաւէն նեղութեան ժամանակներու։
10 Եւ անոնք որ քու անունդ գիտեն՝ քե-
զի պիտի յուսան.
Վասն զի քեզ փնտռողները, ով Տէր,
երբեք չես գցեր։
11 Սաղմոս երգեցէ՛ք Տէրոջը որ Սիոն կը
բնակի,
Ժողովուրդց մէջ պատմեցէ՛ք անոր բ-
րածները։
12 Վասն զի արեան վրէժխնդիրն յիշեց
զանոնք,
Չմոռցաւ նեղեալներուն ազգակը։
13 Ով Տէր, ողորմէ ինծի,
Տես իմ թշնամիներէս կրածէ նեղու-
թիւնս,
Դուն որ զիս մահուան դարպասներէն կը
վերցուներս.
14 Որպէս զի քու ամէն գովութիւններդ
պատմեմ
Սիոնի աղջիկան դարպասներուն մէջ.
Պիտի ցնծամ քու փրկութեամբդ։
15 Հեթանոսներն իրենց չինած փոսին
մէջ ընկղմեցան,
Իրենց գաղտուկ լարած որոգայթին մէջ
անոնց ոտքը բռնուեցաւ։
16 Տէրը ճանչցուած է, Հատ մ դատաստան
բրաւ.
Ամբարիշտը իւր ձեռաց գործքերով ո-
րոգայթը կ'ինայ. (*Հիկկայոն.
Սէլայ։)
17 Ամբարիշտները դժոխքը պիտի դառ-
նան,
Եւ ամէն ազգ որ կ'մոռնայ զԱստուած կը մոռ-
նայ։
18 Թանգի աղքատը պիտի չմոռցուի մին-
չև վերջը։
Տնանկներուն յոյսը յաւիտեան պիտի
չկորսուի։
19 Ելիր, ով Տէր, մարդը չզօրանայ.
Թող հեթանոսները դատուին քու առ-
ջիդ։
20 Ով Տէր, †դանոնք վախցուր.
Թող հեթանոսները ճանչնան թէ իրենք
մարդ են։ (Սէլայ։)

*Ա՛նգիտ՝ մոռցաւ Թէեան։
†Կամ անոնց վրայ օրէնդիր դիր։

ՍԱՂՄՈՍ Ժ

1 Ով Տէր, ինչո՞ւ հեռու կը կենաս.
Նեղու ժամանակներ անուշ կ'ըլլա՞ս։
2 Հպարտութեան ամբարտաւանութեան պատճառով աղքատը կը տանջուի.
Իրենց խորհած հնարքներուն մէջ թող բռնուին։
3 Վասն զի ամբարիշտը իր անձին ցանկութեամբ կը պարծենայ,
Եւ ագահը իջը՝ անէնի երանի կու տայ, Տէրը կ'անարգէ։
4 Ամբարիշտը իր երեսին մէջ հպարտութեան համար չի փնտռեր.
Բոլորովին անոր մտքին մէջ Աստուած չկայ։
5 Անկէ ժամանակի անոր ճամբաները պինդ են,
Քու դատաստաններդ անոր առջեւէն բարձր են.
Անիկա իր բոլոր թշնամիներուն վրայ կը փչէ։
6 Իր սրտին մէջ ըսաւ Թէ Պիտի չսասանիմ.
Վասն զի ազգէ մինչեւ ազգ նեղութեան մէջ պիտի չըլլամ։
7 Անոր բերանն անիծքէ և նենգութեամբ և հարստահարութեամբ լի է.
Անիրաւութիւնը և անօրէնութիւնն անոր լեզուին տակ են։
8 Գեղերուն դարանի տեղը անոր կը նստի,

Գաղտուկ տեղերու մէջ անմեղը կ'սպաննէ.
Անոր աչքերը ծածկաբար անանկին կը նային։
9 Գաղտուկ տեղը դարանամուտ կ'ըլլայ, ինչպէս որ առիւծն իր որջին մէջ.
Դարանակալ կը նստի՝ ազքատը յափշտակելու.
Ազքատը կը յափշտակէ՝ իր որոգայթը ձգելով ղնա.
10 Եւ կծկուած կը պառկի,
Եւ անանկներն անոր ճանկերուն տակ կ'իյնան։
11 Իր սրտին մէջ ըսաւ Թէ Աստուած մոռցած է,
Եւ իր երեսը ծածկած է ար բնաւ չտեսանէ։
12 Ելիր, ով Տէր, ով Աստուած; ձեռքդ վեր վերցուր.
Մի մոռնար նեզուկները։
13 Ինչո՞ւ համար ամբարիշտը կ'անարգէ զԱստուած.
Իր սրտին մէջ ըսաւ Թէ Պիտի չքննես։
14 Դուն տեսար, վասն զի դիտեն և նեղութեամբը կը նայիս՝
Որ ձեռքդ փոխարէն հատուցանելու համար։
Քու ձեռքդ փոխարէն հատուցանելու համար։
Ազքատը զինք քեզի կը յանձնէ.
Որբին օգնականը դուն ես։
15 Ամբարիշտին բազուկը կոտրէ,
Եւ չարին անօրէնութիւնը փնտռէ՝ գտնէ՛ր որ՝ չգտնես։
16 Տէրը յաւիտեան յաւիտենից թագաւոր է.
Հեթանոսները կորսուած են անոր երկրէն։
17 Տնազնկերտուն ցանկութիւնը լսեցիր, ով Տէր.
Անոնց սիրտերը պիտի հաստատես, և քու ականջդ պիտի ասա
18 Որբին և անանկին դատաստանը տեսնելու,
Որ երկրին մարդն այլ եւս ղողոջ չըվախցնէ։

*Ա. թագաւորէդ Սաղմոսը ևւ Հայոց ձեռքով իրաքի՛նուներէն ի Հայոց ձեռքով իրաքի՛նուներէն ձեզ ինչ ներբողին հետ միացուցած է, որով սխալմունքներուն մէջ փոխադրուած է, և ոչ ոքեւ կը ընդունելու ձեզ հարկաւ փոխադրուած, Տէր տեղ տեղ ձեռնարկելու։

†Կամ Ամբարիշտը իր ամբարտաւանութեամբը սասկիկ կը հալածէ ազքատը.



ՍԱՂՄՈՍ ԺԱ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի։

1 Տէրոջը ապաւինեցայ,
Ինչպէ՞ս իմ անձիս կ'ըսէք Թէ
Թռչնոց պէս դէպ ի ձեր լեռը թռչէ.
2 Վասն զի ահա մեղաւորներն աղեղ լարեցին,
Իրենց նետերը լարին վրայ պատրաստեցին,
Որ մութ տեղէն սրտով չիտակ եղողները նետեն։
3 Եթէ հիմերը կործանին,
Արդարն ի՞նչ պիտի ընէ։
4 Տէրը իր սուրբ տաճարին մէջ է.
Տէրոջը աթոռը երկինքն է.
Անոր աչքերը կը տեսնեն,
Անոր թարթիչները կը քննեն մարդոց որդիները։
5 Տէրը կը քննէ արդարը.
Բայց անոր անձը կ'ատէ ամբարիշտը և բռնութիւն սիրողը։
6 Ամբարիշտներուն վրայ պիտի տեղայ *որոգայթներ,
Հուր և ծծումբ և խորշակ.
Այս ալեաց բաժակին բաժինը։
7 Քանզի արդար Տէրը արդարութիւն կը սիրէ,
Անոր երեսն ուղղին կը նայի։

ՍԱՂՄՈՍ ԺԲ

Գլխաւոր երաժշտին, Շէմինիթի վրայ. Սաղմոս Դաւթի։

1 Ով Տէր, փրկէ, վասն զի սուրբը չմնաց.
Վասն զի հաւատարիմները մարդոց որդիներուն մէջէն պակսեցան։
2 Ամէն մարդ սուտ կը խօսի իր ընկերին հետ.
Շողոքորթող շրթունքով և կրկին սրտով կը խօսին։

*Կամ փայլակներ,

3 Տէրը պիտի կտրէ ամէն շողոքորթող շրթունք
Եւ մեծախօս լեզու,
4 Որ ըսին Թէ Մեր լեզուաւ պիտի յաղթենք,
Մեր շրթունքը մեզի է, մեր վրայ տիրող ո՞վ պիտի ըլլայ։
5 Աղքատներուն զրկանաց և անմխիթարներուն հեծութեան համար
Հիմա պիտի ելլեմ՝ կ'ըսէ Տէրը,
Ապահութեան մէջ պիտի դնեմ զանիկա որ կը փչէ իրեն։
6 Տէրոջը խօսքերը մաքուր խօսքեր են.
Հողեղ բովի մէջ զտուած՝
Եւ եօթն անգամ մաքրուած արծաթի պէս են։
7 Ով Տէր, դուն պիտի պահես զանոնք,
Եւ պիտի պահպանես այս ազգէն միշտ յաւիտեան։
8 Ամբարիշտներն ամէն կողմ կը պտըտին,
Երբ մարդոց որդիներուն մէջ անարգները բարձրանան։

ՍԱՂՄՈՍ ԺԳ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի։

1 Ով Տէր, մինչեւ ե՞րբ բոլորովին զիս պիտի մոռնաս,
Մինչեւ ե՞րբ քու երեսդ ինէ պիտի ծածկես։
2 Մինչեւ ե՞րբ մտքիս մէջ հոգեր պիտի դնեմ,
Ամէն օր սրտիս մէջ տրտմութիւն ունենալով.
Մինչեւ ե՞րբ թշնամիս իմ վրաս պիտի բարձրանայ։
3 Նայէ, ով իմ Տէր Աստուածս, և պատասխան տուր ինծի.
Լուսաւորէ աչքերս,
Որ մահուան քունը չքնանամ,
4 Զըլլայ որ թշնամիս ըսէ Թէ Յաղթեցի անոր.
Կամ ինծի պիտի կ'իյնան իմ սասանելու ատենս։
5 Իս քու ողորմութեանդ յուսացայ,

Իմ սիրտս քոյ փրկութեամբդ պիտի ցնծայ։
6 Պիտի երգեմ Տէրոջը,
Քանզի ինծի բարերարութիւն ըրաւ։

ՍԱՂՄ. ԺԳ

Գլխաւորը երաժշտին։ Սաղմոս Դաւթի

1 Անզգամն իւր սրտին մէջ ըսաւ թէ
Աստուած չկայ։
Ապականեցան և պիղծ գործերը ըրին.
Չկայ ոք որ բարութիւն ընէ։
2 Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն վրայ,
Որ տեսնէ թէ կա՞յ արդեօք խոհական ոք
Որ Աստուած փնտռէ։
3 Ամէնքը խոտորեցան, իրարմէն անպիտան եղան.
Բարութիւն ընող չկայ, մէկ մըն ալ չկայ։
4 Մի՞թէ չե՞ն ճանչնար ամէն անօրէնութիւն ընողները,
Որ հաց ուտելու պէս իմ ժողովուրդս կ'ուտեն,
Եւ Տէրոջը չեն կանչեր։
5 Անտեղն շատ վախցան.
Քանզի Աստուած արդարներուն ազգին մէջն է։
6 Աղքատին խորհուրդն ամօթով ըրիք,
Սակայն անոր յոյսը Տէրն է։
7 Երանի թէ Սիոնէ գար Իսրայէլի փրկութիւնը.
Տէրը իւր ժողովուրդը գերութենէն դարձուցած ատենը՝
Յակոբ պիտի ցնծայ, Իսրայէլ ուրախ պիտի ըլլայ։

ՍԱՂՄ. ԺԴ

Սաղմոս Դաւթի։

1 Տէր, ո՞վ պիտի կենայ քոյ վրանիդ մէջ,
Ո՞վ պիտի բնակի քոյ սուրբ լեռանդ վրայ։
2 Նա որ անմեղութեամբ կը քալէ, և արդարութիւն կը գործէ,
Եւ ճշմարտութիւն կը խօսի իւր սրտին մէջ։
3 Նա որ լեզուա՛ չզրպարտեր,
Ընկերին չարութիւն չընէր,
Եւ իւր դրացւոյն վրայ նախատինք չբերաներ։
4 Որուն առջին անարգուած է չարագործը,
Բայց երկիւղածները կը պատուէ.
Երդում կ'ընէ ի՛նչ ի՛նչ ըլլալն՝ և չդառնար։
5 Իւր արծաթը վաշխքով չտար,
Եւ անմեղին դէմ կաշառք չառնէր.
Ով որ ասոնք կընէ՝ յաւիտեան պիտի չսասանի։

ՍԱՂՄ. ԺԵ

Երգ Դաւթի։

1 Ող Աստուած, զիս պահէ,
Քանզի քեզ յուսացայ։
2 Տէրոջը ըսի, իմ Տէրս դուն ես,
Առանց քեզ բարիք չունիմ։
3 Երկրիս մէջ եղող սուրբերուն և պատուականներուն՝
Անոնց վրայ է բոլոր հաճութիւնս։
4 Անոնց ցաւերը պիտի չաճանան, որ ուրիշի մը կ'արտարան.
Անոնց արեան նուէրներն պիտի չնուիրեմ,
Եւ անոնց անուններըը չբերանս վրայ պիտի չառնեմ։
5 Տէրն է ժառանգութիւնս և բաժակիս բաժինը.
Իմ վիճակս դուն պիտի պահես։
6 Վիճակներ նշան ինծի գեղեցիկ եղած.
Այրեւս ժառանգութիւնս ինծի գեղեցիկ եղաւ։
7 Պիտի օրհնեմ Տէրը որ զիս խրատեց.

*Կամ Քանզի

*Կամ գրացոյն՝



Նաև երիկամունքս գիշերուան մէջ ինծի կը սորվեցունեն։
8 Ամէն առեն Տէրը իմ առջեւս դրի.
Քանզի իմ աջ կողմս է, պիտի չսասանիմ։
9 Ուսաւ սիրտս ուրախ եղաւ և *փառքս բերկրեցաւ,
Եւ մարմինս ալ յուսով պիտի հանգստանայ։
10 Վասն զի իմ անձս դժոխքի մէջ պիտի չթողուս,
Եւ քոյ սուրբիդ ալ ապականութիւն տեսնել պիտի չտաս։
11 Կեանց ճամբան ինծի պիտի ցուցունես.
Երեսիդ առջին լեցուն ուրախութիւն կայ,
Քու աջ կողմդ միշտ հաճութիւններ կան։

ՍԱՂՄ. ԺԶ

Ագռաթ Դաւթի։

1 Ով Տէր, լսէ արդարութիւնը,
Մտիկ ըրէ ազաղակս,
Ականջ դիր ազօթքիս,
Որ խաբեբայ շրթամբք չէ։
2 Իմ դատաստանս քոյ երեսիդ թող ելլէ.
Քու աչքերդ ուղղութիւնը թող տեսնեն։
3 Իմ սիրտս փորձեցիր, գիշեր տուն քննեցիր,
Զիս լրուեր փորձեցիր և բան մը չգտար.
‡Միտքս դրի որ բերանս պատուիրածդնէ չյանցայ։
4 Մարդոց գործերուն նայելով՝
Քու շրթանցդ խօսքերով ես բռնաւորին ճամբաներէն զգուշացայ։
5 Իմ քայլերս քու ճամբաներուդ մէջ պահէ,
Որ գնացքս չսասանին։

6 Ես քեզի կանչեցի, վասն զի ինծի պատասխան պիտի տաս, ով Աստուած.
Խոնարհեցուր ինծի քու ականջդ, լսէ իմ խօսքս։
7 Աքանչելի կերպով քու ողորմութիւնդ ներդո՛ւ ցուցեր,
Դուն որ փէշ յուսացողներն ալ ձեռքովդ կ'ազատես
Հակառակ կեցողներէն։
8 Աչքի բբի պէս զիս պահէ,
Թեւերուդ հովանաւորութեան տակ զիս ծածկէ
9 Ինծի տառապանք տուող ամբարիշտներուն երեսէն,
Իմ անձիս թշնամիները զիս պաշարեցին։
10 Իրենց պարարտութեամբ ծածկուեցան,
Իրենց բերնով ամբարտաւանութեամբ խօսեցան։
11 Հիմա մեր քայլերուն չորս կողմը պաշարելով՝
Իրենց աչքը դէր ձգեց անկեցին գետնի զարնելու,
12 Առիւծի պէս որ կը փափաքի գիշատել,
Առիւծի կոթեան պէս որ դարանակալ կ'ըլլայ։
13 Ելիր, ով Տէր, անոր առջեւ իյնալ տուր՝
Ետ դարձիր,
Զանիկա գետինը զարկ։
Քու սրովդ փրկէ իմ անձս ամբարիշտներէն,
14 Քու ձեռքովդ մարդոցմէ, ով Տէր,
Աշխարհի մարդոցմէ՝ որոնց բաժինն այս կեանց մէջ է,
Եւ անոնց փորերը շռեմարաններովդ կը լեցուներս.
Անոնց որդիքն ալ կը կշտանան,
Եւ իրենցմէ աւելցածն իրենց ողջոյը կը թողուն։
15 Իսկ ես արդարութեամբ պիտի տեսնեմ քու երեսդ.
Երբ արթննամ քու դէմքիդ պիտի կշտանամ։

*Կամ Անոնք օրդիներով

*Աբեղեդ՝ անձս, կամ լեզուս
†Կամ գժոխքին
‡Կամ Ձերպանս իմ խորհուրդներս պիտի չբռնանայ։

ՍԱՂՄՈՍ ԺԵ

Գլխաւոր երաժշտին. Տէրոջը ծառային Դաւթի Սաղմոս, որ ըսաւ Տէրոջը առ երգին խօսքերը ան օրը որ Տէրը ազատեց զանիկա իւր ամէն թշնամիներուն ձեռքէն, և Սաւուղի ձեռքէն. և ըսաւ,

1 Ող Տէր՝ իմ զօրութիւնս, քեզ պիտի սիրեմ՝

2 Տէրը վէմս, ամրութիւնս և փրկիչս է, իմ Աստուածս իմ պաշտպան է, ես ա-նոր կը յուսամ՝
Անիկա իմ վահանս և իմ փրկութեանս եղջիւրը
և՝ իմ բարձր աշտարակս է։
3 Օրհնեալ Տէրը կը կանչեմ՝
Եւ իմ թշնամիներէս կ'ազատիմ։
4 Մահուան լարերն իմ բոլորտիքս առին,
Եւ անօրէնութեան հեղեղները զիս վախցուցին,
5 Գերեզմանին լարերը զիս պաշարեցին,
և՝ մահուան որոգայթներն իմ առջեւս առին։
6 Իմ նեղութեանս մէջ Տէրոջը կանչեցի,
Եւ իմ Աստուծոյս աղաղակեցի,
Անիկա իւր տաճարէն իմ ձայնս լսեց,
Եւ իմ աղաչս անոր առջեւ՝ անոր ականջը հասաւ։
7 Անաստն երկիր սասանեցաւ և դողաց,
Եւ լեռներուն հիմերը չարժեցան և սասանեցան,
Քանզի Անիկա բարկացաւ։
8 Անոր քթէն ծուխ ելաւ,
Եւ բերնէն լափող կրակ.
Անկէ կայծակներ բռնկեցան։
9 Եւ անիկա երկինքը խոնարհեցուց և իջաւ,
Եւ անոր ոտքերուն տակ մառախուղ կար։
10 Եւ քերովբէի մը վրայ ելաւ և թռաւ,
Եւ հովին թեւերուն վրայ սլացաւ։
11 Խաւարն իրեն ծածկոյթ դրաւ,
և՝ իւր բոլորտիքը իրեն բնակարան
Թանձր ջուրերը և երկինքէ ամպերն ը-նտրեց։
12 Անոր առջեւ եղող պայծառութենէն անոր ամպերն անցան
Կարկտով և կրակի կայծակներով։
13 Եւ Տէրը երկինքի մէջ որոտաց,
Եւ Բարձրեալն իւր ձայնը լսել տուաւ
Կարկտով և կրակի կայծակներով։
14 Եւ իւր նետերը զրկեց և զանոնք ցրտեց,
Նաև կայծակները զրկեց և զանոնք խռովեցուց։
15 Եւ քու յանդիմանութեամբդ, ով Տէր,
Քու բարկութեանդ հովին փչելով
Ջուրերուն յատակները երեւցան,
Եւ աշխարհիս հիմերն յայտնուեցան։
16 Բարձրէն զրկեց և զիս բռնեց,
Ու՝ ջուր յուրերէն զիս հանեց,
17 Իմ զօրեղ թշնամիէս և զիս ատողներէն ազատեց զիս.
Վասն զի ինէ զօրաւոր էին։
18 Իմ նեղութեանս օրն իմ առջեւս ա՛ն,
Բայց Տէրը ինձի հոպպոյթ եղաւ։
19 Եւ զիս լայնարձակ տեղ մը հանեց,
և՝ զիս ազատեց, քանզի ինձի հաւնեցաւ։
20 Տէրը իմ արդարութեանս պէս ինձի փոխարէն կու տայ,
Իմ ձեռացս մաքրութեան համեմատ հատուցում կ'րնէ ինձի.
21 Վասն զի Տէրոջը ճամբաները պահեցի,
Եւ իմ Աստուծոյս դէմ ամբարշտութիւն չըրի,
22 Քանզի անոր ամէն դատաստաններն իմ առջեւս էին,
Ու՝ անոր օրէնքն ինէ չհեռացուցի։
23 Նաև անոր առջեւ կատարեալ եղայ,
Եւ իմ անօրէնութենէս ղգուշացայ։
24 Եւ Տէրը ինձի հատուցում տուաւ իմ արդարութեանս համեմատ,
Իմ ձեռացս մաքրութեան համեմատ՝ որ անոր աչքին առջեւն է։
25 Ողորմածին հետ ողորմած կ'ըլլաս,
Կատարեալ մարդուն հետ կատարեալ կ'ըլլաս.
26 Մաքուրին հետ մաքուր կ'ըլլաս,
Ու՝ ծուռին հետ կը ծռիս։
27 Վասն զի դուն վշտացած ժողովուրդը կ'ազատես,
Ու՝ ամբարտաւան աչքերը կը ցածցուցնես։



28 Քանզի դուն իմ ճրագս կը վառես.
Իմ Տէր Աստուածս իմ խաւարս կը լուսաւորէ։
29 Վասն զի քեզմով գունդի մը վրայ կը վազեմ,
Եւ իմ Աստուածովս պարսպի կ'անցնիմ։
30 Աստուծոյ ճամբան կատարեալ է.
Տէրոջը խօսքերը փորձուած են.
Անիկա ամէն յուսացողներուն ապար է։
31 Քանզի Տէրոջմէն զատ ո՞վ է Աստուած,
Կամ մեր Աստուծմէն զատ ո՞վ է մեծ.
32 Աստուած է որ ինձի զօրութիւն կը հագցնէ,
Եւ իմ ճամբաս կատարեալ կ'րնէ։
33 Իմ ոտքերս եղջերուի ոտքերուն պէս կ'րնէ,
Եւ իմ բարձր տեղերուս վրայ զիս կը կայնեցունէ։
34 Ձեռքերս պատերազմի կը վարժէ,
Եւ իմ *բազուկներս պղնձէ աղեղ կը քարշեն։"
35 Ինձի նաև քու փրկութեանդ ասպարը տուիր.
Եւ քու աջ ձեռքդ զիս զօրացուց,
Եւ քու քաղցրութիւնդ զիս մեծցուց։
36 Իմ քայլերս ճամբան նեղութիւն չեցնցուցին,
Եւ իմ սրունքներս չսասանեցան։
37 Թշնամիներս հալածեցի և անոնց հասայ,
Եւ նո չդարձայ մինչև որ զանոնք հատցուցի։
38 Զանոնք գետինը զարկի, և կանգնելու կարող չեղան.
Անոնք իմ ոտքերուս տակ ինկան։
39 Եւ պատերազմի համար ինձի զօրութիւն հագցուցիր,
Իմ վրաս ելլողները տակս ձգեցիր։
40 Եւ թշնամիներուս վիզնին ինձի դարձուցիր, որ ես զիս ատողները ջարդեմ։
41 Աղաղակեցին, բայց ազատող չկար,
Տէրոջը ըսկսան՝ բայց անոնց պատասխան չտուաւ։
42 Եւ զանոնք հովի առջեւին փոշւոյ պէս մանրեցի,
Եւ փողոցներուն ցեխին պէս մկկի ձգեցի զանոնք։
43 Ժողովուրդին կռիւներէն զիս ազատեցիր,
Եւ՝ զիս ազգերու գլուխ դրիր.
Իմ չգիտցած ժողովուրդ ինձի ծառայեց,
44 Իրենց ականջներով լսածին պէս՝ ինձի հնազանդեցան։
Օտարներն ինձի *խոնարհութիւն ըրին"
45 Օտարները ակռայացան,
Եւ իրենց պահպանած տեղերէն դողացին։
46 Տէրը կենդանի է, և իմ վէմս օրհնեալ ըլլայ,
Եւ իմ փրկութեանս Աստուածը բարձր ըլլայ։
47 Աստուած է որ իմ վրէժս կը խնդրէ,
Եւ ժողովուրդներն ինձի կը հնազանդեցնէ։
48 Իմ թշնամիներէս զիս կը փրկէ.
Նաև զիս իմ վրաս ելլողներէն բարձրացուցիր,
Եւ բռնաւոր մարդէն զիս ազատեցիր։
49 Ասոր համար, ով Տէր, ազգերուն մէջ քեզ պիտի գովեմ՝
Եւ քու անուանդ ոտանս պիտի երգեմ։
50 Իւր թագաւորին փրկութիւններ մեծցուցնողը,
Եւ իւր օծեալին՝ Դաւթի և անոր սերունդին
Յաւիտեան ողորմութիւն ընողն Ան է։

ՍԱՂՄՈՍ ԺԹ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի.

1 Երկինք Աստուծոյ փառքը կը պատմէ,
Եւ երկինք հաստատութիւնն անոր ձեռացց գործքերը կը ցուցընէ։
2 Օր աւուր կը յայտնէ խօսքը,

*Կամ բազուկներուս պղնձէ աղեղ մը կը կարգուի։
†Կամ պարանոցը ինձի տուիր,

*Եբր. առեցին։

եւ գիշեր գիշերի կը ցուցընէ գիտու-
թիւնը։
3 Չկայ զրոյց և չկան խօսքեր.
Անոնց ձայնը չլսուիր։
4 Բայց ամէն երկիր կուգ անոնց հնչիւնը,
եւ մինչև աշխարհի ծայրն՝ անոնց խօս-
քը։
Անոնց մէջ արևին համար վրան մը
կանգնեց.
5 եւ *անիկա իբր առագաստէն ելած
փեսայի պէս է,
Հզօր մարդու պէս ինք ճամբան վազե-
լով կ'ուրախանայ։
6 Անոր ելքը երկնից ծայրէն է,
Եւ անոր շրջանը մինչև անոնց ծայրերը,
եւ անոր ջերմութենէն բան չծած-
կուիր։
7 Տէրոջը օրէնքը կատարեալ է, հո-
գին կը նորոգէ.
Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է, որ-
գէն իմաստուն կ'ընէ։
8 Տէրոջը կանոնները շիտակ են, սիրտը
կ'ուրախացուն են.
Տէրոջը պատուիրանները պայծառ են,
աչքերու լոյս կուտան։
9 Տէրոջը վախը սուրբ է, յաւիտեան
կը մնայ.
Տէրոջը դատաստանները ճշմարիտ և
բոլորովին արդար են։
10 Ցանկալի են անոնք ոսկիէ և շատ փոր-
ձուած ոսկիէ.
Մեղրէ անոյշ են, և խորխէ կաթած
մեղրէ։
11 Նաև քու ծառադ անոնցմով կը խրա-
տուի,
Եւ զանոնք պահելուն վարձքը շատ է։
12 Ո՞վ կրնայ միտք առնել իր յան-
ցանքը,
Ծածուկ հղիներէն զիս մաքրէ.
13 Ամբարտաւան հղիներէն ալ պահէ քու
ծառադ.
Թող անոնք չիմնեն իմ վրաս,
Անատեն անմեղ կ'ըլլամ,
Եւ կը մաքրուիմ մեծ անօրէնութենէ։
14 Բերնիս խօսքերը և սրտիս խորհուրդը

*Ա. յունարէն՝ արևը

քու առջիդ ընդունելի ըլլան,
Ով Տէր՝ իմ վէմս և փրկիչս։

ՍԱՂՄ. Ի.

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի.

1 Ընդունելեան օրը Տէրը պատասխանէ
քեզի,
Յակոբայ Աստուծոյն անունն զքեզ
պաշտպանէ.
2 Օգնութիւն ղրկէ քեզ սուրբ տեղէն,
Եւ Սիոնէ զօրացունէ զքեզ.
3 Քու ամէն ընծաներդ յիշէ,
Եւ քու ողջակէզներդ ընդունի. (Սե-
լայ.)
4 Քու սրտիդ համեմատ քեզի տայ,
Եւ քու ամէն խորհուրդներդ կատարէ։
5 Քու փրկութեանդիդ պիտի ուրախա-
նանք,
Եւ մեր Աստուծոյն անունովն դրօշ
վերցուննենք.
Տէրը կատարէ քու ամէն խնդրուած-
ներդ։
6 Հիմա գիտցայ որ Տէրը կը պահէ իր
օծեալը.
Անոր պատասխան կուտայ իր սուրբ
երկինքէն՝
Իր աջ ձեռքին փրկութեան ուժով։
7 Ոմանք կառքերու, և ոմանք ալ ձիե-
րու կ'ապաւինին,
Բայց մենք մեր Տէր Աստուծոյն անու-
նը պիտի յիշենք։
8 Անոնք կորացան և ինկան,
Բայց մենք ելանք և շիտակ կայնե-
ցանք։
9 *Ով Տէր, փրկէ թագաւորը.
Պատասխան տուր մեզի մեր կանչելու
օրը։"

ՍԱՂՄ. ԻԱ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի.

1 Ով Տէր, քու զօրութեանդիդ թագաւո-
րըն ուրախ պիտի ըլայ,

*Կամ Ով Տէր, փրկէ. Թագաւորը մեզի պատասխան տայ մեր կանչելու օրը։

եւ քու փրկութեամբդ որչափ շատ
պիտի ցնծայ։
2 Անոր սրտին փափաքն անոր տուիր.
Եւ անոր շրթանց խնդրիրքն ՝ներ չար-
գելեցիր։ (Սելայ)
3 Վասն զի բարութեան օրհնութեամբ
անոր հասար.
Անոր գլխուն մաքուր ոսկիէ պսակ դրիր։
4 Քեզմէ կեանք խնդրեց,
Եւ անոր երկայն օրեր տուիր յաւի-
տեանս յաւիտենից։
5 Անոր փառքը մեծ է քու փրկու-
թեամբդ.
Փառք և վայելչութիւն դրիր անոր
վրայ։
6 Վասն զի օրհնութիւններն անոր վրայ
հաստատեցիր յաւիտեան.
Ուրախութեամբ ուրախ ըրիր զանիկա
քու երեսիդ առջեւն։
7 Քանզի թագաւորը Տէրոջը կը յուսայ,
Եւ Բարձրելոյն ողորմութեամբ պիտի
չսասանի։
8 Քու ձեռքդ պիտի գտնէ քու ամէն
թշնամիներդ.
Քու աջ ձեռքդ պիտի գտնէ զքեզ ա-
տողները։
9 Զանոնք կրակի հնոցի պէս պիտի ընես
քու բարկութեանդդ ժամանակ.
Տէրը իր բարկութեամբ *բոլորովին
պիտի կորսընցունէ" զանոնք,
Եւ կրակը պիտի ուտէ զանոնք։
10 Անոնց պտուղը երկրէն պիտի կորսըն-
ցուներես,
Եւ անոնց սերունդը մարդոց որդիներէն։
11 Քանզի քեզի դէմ չարութիւն պատ-
րաստեցին.
Նենգութեան խորհուրդ ըրին, բայց
կարող չեղան կատարել։
12 Վասն զի դուն անոնց կռնակը կու պի-
տի դարձնես.
Քու նետերդ անոնց երեսին դէմ՝ լարե-
րուդ վրայ պիտի պատրաստես։
13 Ով Տէր, քու ուժովդ բարձր եղիր.
Պիտի երգենք և ազնուս ըսենք քու
զօրութեանդդ։

*Եբր. պիտի կայէ



ՍԱՂՄ. ԻԲ.

Գլխաւոր երաժշտին, Այէլէզ Շահարի
վրայ. Սաղմոս Դաւթի.

1 Աստուած իմ՝ Աստուած իմ, զիս լսե-
չէր Թողուցիր.
Զիս փրկելէն և պզտալուս խօսքերէն
հեռու եղար։
2 Ով իմ Աստուածս, ցորեկը կանչեմ, և
կանչեմ, և չես պատասխաներ.
Եւ գիշերը կը խռովի և չեմ դադարիր։
3 Բայց դուն սուրբ ես,
Ով Իսրայէլի գովաբանութեանց մէջ
բնակող։
4 Մեր հայրերը քեզի յուսացան.
Յուսացան, և փրկեցիր զանոնք։
5 Քեզի աղաղակեցին և ազատեցան.
Քեզի յուսացան և չամչցան։
6 Բայց ես որդ եմ և մարդ չեմ.
Մարդոց մէջ քամահուած, և ժողո-
վրդոց մէջ անարգուած։
7 Ամէն զիս տեսնողները զիս ծաղր կ'ը-
ներեն.
Շրթունք կը բանան, գլուխ կը շար-
ժեն,
8 Ըսելով, Տէրոջը յուսացաւ, Թող փրկէ
զանիկա.
Թող ազատէ զանիկա, քանզի անոր
հաճեցաւ։
9 Բայց զիս մօրս արգանդէն հանողը դուն
ես.
Մօրս ծիծը եղած առենս դուն ինծի
յոյս տուիր։
10 Ակռանդէն ես քեզի յանձնուեցայ.
Իմ մօրս որովայնէն դուն ես իմ Աս-
տուածս։
11 Մի հեռանար ինէ, վասն զի նեղու-
թիւնը մօտ է,
Վասն զի օգնող մը չկայ։
12 Շատ զուարակներ չորս կողմս առին,
Բասանի ցուլերը զիս պաշարեցին։
13 Իրենց բերանն իմ վրաս բացին՝
Յափշտակող և մռնչող առիւծի պէս։
14 Ջուրի պէս թափուեցայ,
Եւ ամէն ոսկերներս քակուեցան.
Սիրտս մոմի պէս եղաւ,

Հալեցաւ վարիս մէջ։
15 Զարացաւ իմ ոյժս հողէ ամանի մը պէս,
Եւ լեզուս քունցս փակաւ։
Եւ զիս մահուան հողոյ դրիր։
16 Վասն զի շուները չորս կողմս առին,
Չարքերան ժողովքը զիս պատեցին,
Ձեռքերս և ոտքերս ծակեցին։
17 Իմ ամէն ոսկորներս կրնամ հաշուել.
Անոնք կը նային, կը տեսնեն զիս,
18 Իմ հանդերձներս իրենց մէջը կը բաժնեն,
Ու պատմուճանիս վրայ վիճակ կը ձգեն։
19 Բայց դուն, ով Տէր, մի հեռանար ինէ.
Ով իմ զօրութիւնս, շուտով ինծի օգնութեան հասիր։
20 Իմ անձս սուրէն ազատակ,
Եւ *կեանքս շանը ձեռքէն։
21 Փրկէ զիս առիւծին բերնէն,
Ու ինծի պատասխան տուր †եղջիւրաւոր էակներուն խղճութենէն։
22 Քու անունդ եղբայրներուս պիտի պատմեմ,
Ժողովքին մէջ քեզ պիտի գովեմ։
23 Ով Տէրոջմէ վախցողներ, գովեցէք զանիկա։
Ով Յակոբայ բոլոր զաւակները, փառաւորեցէք զանիկա,
Ու վախցէք անկէ, Իսրայէլի բոլոր զաւակները։
24 Վասն զի չանարգեց և չդժանեցաւ աղաւորեալին ‡պատուական բանը,
Ու երեսն անկէ չդարձուց։
Այլ երբ կանչած աեներ լսեց։
25 Քեզմով պիտի բլլայ իմ գովեստիս մեծ ժողովքին մէջ.
Իմ ուխտերս անկէ վախցողներուն առջեւն պիտի կատարեմ։
26 Տնանկները պիտի ուտեն և կշտանան.
Տէրը պիտի գովեն զանիկա փնտռողները.
Ձեր սիրտը յաւիտեան պիտի ապրի։
27 Պիտի յիշեն և Տէրոջը դառնան երկրի ամէն ծայրերը,
Ու քու առջեւդ երկրպագութիւն պիտի բնեն ազգերուն ամէն ազնիւները։
28 Վասն զի թագաւորութիւնը Տէրոջն է,
Ու նա կը տիրէ ազգերուն վրայ։
29 Երկրի ամէն պարարտները պիտի ուտեն և երկրպագութիւն պիտի բնեն.
Ամէն հողը իջնողները ծունկ պիտի կրկնեն անոր առջեւն,
Ու նա՝ որ իր անձը չապրեցուներ,
30 Զաւակը պիտի ծառայէ անոր.
Ու՝ Տէրոջը վրայ պիտի պատմուի գալոց սերունդի մէջ։
31 Պիտի գան և անոր արդարութիւնը պիտի պատմեն
Ազգ մը ծնողներուն, որ պիտի ծնանի.
Վասն զի այս բանը նա կատարեց։

## ՍԱՂՄ. ԻԹ

Սաղմոս Դաւթի։

1 Տէրը իմ հովիւս է.
Ես չեմ մը կարօտութիւն պիտի չունենամ։
2 Զիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ.
Հանդարտ ջուրերուն քով կ'ինծի կ'առաջնորդէ։
3 Հոգիս կը նորոգէ.
Իր անուանը համար արդարութեան ճամբաներուն մէջ կ'առաջնորդէ ինծի։
4 Թէ և մահուան շուքի ձորին մէջ անգամ գայիմ,
Չարէն պիտի չվախնամ.
Վասն զի դուն իմ հետս ես,
Քու ցուպդ և գաւազանդ անոնք զիս պիտի մխիթարեն։
5 Սեղան կը պատրաստես իմ առջեւս իմ թշնամիներուս դիմացը.
Իմ գլուխս իւղով կ'օծես,
Իմ բաժակս խիստ լեցուն է։
6 Բիրսի բարերարութիւնը և ողորմութիւնը իմ հետս պիտի գան



Կենացս բոլոր օրերուն մէջ,
Եւ շատ օրեր Տէրոջը տունը պիտի բնակիմ։

## ՍԱՂՄ. ԻԹ

Սաղմոս Դաւթի։

1 Ով Տէր, իմ անձս քեզի վերցուցի։
2 Ով իմ Աստուածս, քեզի յուսացայ.
Թող ամչնամ,
Եւ թշնամիներս իմ վրաս չցնծան։
3 Նաև ամէն քեզի սպասողները թող չամչնան.
Ունայնութեամբ անօրէնութիւն ընողները թող ամչնան։
4 Ով Տէր, քու ճամբաներդ ցուցուր ինծի,
Քու շաւիղներդ սորվեցուր ինծի։
5 Քու ճշմարտութեանդ մէջ ինծի առաջնորդէ և սորվեցուր ինծի,
Քանզի դուն ես իմ փրկութեանս Աստուածը.
Ես քեզի կը սպասեմ ամէն օր։
6 Ով Տէր, քու գթութիւններդ և ողորմութիւններդ յիշէ,
Քանզի յաւիտենական են։
7 Մանկութեան մեղքերս և յանցանքներս մի յիշեր,
Այլ քու ողորմութեամբդ զիս յիշէ
Քու բարութեանդ համար, ով Տէր։
8 Տէրը բարի և ուղիղ է.
Անոր համար մեղաւորներուն կը սորվեցնէ ճամբան։
9 Դատաստանի մէջ պիտի առաջնորդէ հեզերուն,
Եւ իր ճամբան հեզերուն պիտի սորվեցունէ։
10 Տէրոջը բոլոր ճամբաները ողորմութիւն և ճշմարտութիւն են
Իր ուխտը և վկայութիւնները պահողներուն։
11 Ով Տէր, քու անուանդ համար
Ներէ իմ անօրէնութիւնս, *վասն զի մեծ է։
12 Ո՞վ է այն մարդը որ Տէրոջմէն կը վախնայ.
Անոր ընտրած ճամբան պիտի սորվեցունէ։

*Կամ թէև.

*Եբր. միամօրս
†Կամ վայրի ցուլերուն
‡Կամ ազազակը։

*Կամ ով Յակոբ։

13 Անոր անձը բարութեան մէջ պիտի բնակի,
Եւ անոր սերունդը երկիրը պիտի ժառանգէ.
14 Տէրոջը ընտանութիւնն իրեն վախցողներուն հետ է,
Եւ իր ուխտն անոնց կը տեսցնէ.
15 Իմ աչքերս միշտ Տէրոջը [ն են,
վասն զի իմ ոտքերս որոգայթէն նա պիտի հանէ.
16 Ինծի դարձիր և ողորմէ ինծի,
վասն զի մինակ և վշտացած եմ.
17 Սրտիս նեղութիւնները չատցան.
Իմ վիշտերէս զիս հանէ.
18 Իմ նեղութեանս և տառապանքիս նայէ,
Եւ բոլոր մեղքերս ներէ.
19 Տես իմ թշնամիներս, վասն զի չատցան,
Եւ անիրաւ ատելութեամբ զիս ատեցին.
20 Պահէ իմ անձս և փրկէ զիս.
Թող չամչնամ, վասն զի քեզի յուսացայ.
21 Կատարելութիւնը և ուղղութիւնը զիս թող պահեն,
վասն զի քեզի սպասեցի.
22 Ով Աստուած, փրկէ զԻսրայէլ
Իր ամէն նեղութիւններէն։

## ՍԱՂՄ. ԻԶ

Սաղմոս Դաւթի.

1 Ով Տէր, զիս դատէ,
վասն զի իմ անարատութեամբս քալեցի.
Տէրոջը յուսացայ, պիտի չսասանիմ.
2 Ով Տէր, զիս փորձէ և քննէ,
փորձէ իմ երկիամտութիւնս և սիրտս.
3 վասն զի քու ողորմութիւնդ իմ աչքերուս առջեւն է,
Եւ քու ճշմարտութեանդ մէջ քալեցի.
4 Ունայն մարդոց հետը չնստայ,
Եւ կեղծաւորներուն հետը պիտի չխառնուիմ.
5 Չարերուն ժողովքն ատեցի,
Եւ ամբարիշտներուն հետ պիտի չնըստիմ.
6 Անմեղութեամբ ձեռքերս պիտի լուամ,
Եւ քու սեղանիդ չորս կողմը պիտի պտտիմ, ով Տէր,
7 Որ շնորհակալութեան ձայնը լսել տամ,
Եւ քու ամէն սքանչելիքդ պատմեմ.
8 Ով Տէր, սիրեցի քու տանդ բնակութիւնը,
Եւ քու փառքիդ կեցած տեղը.
9 Մի կորսնցներ իմ անձս մեղաւորներուն հետ,
Եւ իմ կեանքս՝ արիւնահեղ մարդոց հետ,
10 Որ անոնց ձեռքերուն մէջ անօրէնութիւն կայ,
Եւ անոնց աջ ձեռքը կաշառքով լեցուն է.
11 Բայց ես իմ անարատութեամբս պիտի քալեմ.
Զիս փրկէ և ինծի ողորմէ.
12 Իմ ոտքս ուղղութեան մէջ կը կենայ.
Ժողովքներուն մէջ Տէրը պիտի օրհնեմ։

## ՍԱՂՄ. ԻԸ

Սաղմոս Դաւթի.

1 Տէրը իմ լոյս և իմ փրկութիւնս է,
Ես ուստե՞ պիտի վախնամ.
Տէրը իմ կեանքիս ապաւէնն է,
Ես ուստե՞ պիտի դողամ.
2 Չարերը իմ մարմինս ուտելու համար
ինծի մօտեցած ատեն՝
իմ նեղիչներս և թշնամիներս ոտհեցան և ինկան.
3 Եթէ վրաս զօրքի բանակ հլլէ,
Սիրտս պիտի չվախնայ.
Եթէ վրաս պատերազմի պատրաստութիւն ըլլայ,
Անով ես ես վստահ պիտի ըլլամ.
4 Բան մը կը խնդրեմ Տէրոջմէն,
Ես զայս կ'ապաշխեմ,
Որ կեանքիս բոլոր օրերը
Տէրոջը տան մէջ բնակիմ՝
Տէրոջը վայելչութիւնը տեսնելու,



Եւ անոր սրահին մէջ վերջը խնդրելու համար։
5 Վասն զի չար օրուան մէջ՝
Իւր բնակարանին մէջ զիս պիտի պահէ,
Իւր վրանին ծածկութով զիս պիտի ծածկէ.
Վէմի վրայ պիտի վերցնէ զիս։
6 Եւ հիմա իմ գլուխս պիտի բարձրանայ
Իմ բոլորտիքս եղող թշնամիներուս վրայ.
Եւ անոր վրանին մէջ ուրախութեան ձայնով զոհեր պիտի մատուցանեմ.
Պիտի երգեմ և սաղմոս պիտի ըսեմ Տէրոջը։
7 Ով Տէր, ձայնս լսէ կանչելու ատենս,
Եւ ողորմէ և պատասխան տուր ինծի։
8 Իմ երեսս փնտռեցէ՛ք ըսիր ինծի,
Իմ սիրտս քեզի ըսաւ, Քու երեսդ պիտի փնտռեմ, ով Տէր։
9 Քու երեսդ ինէ մի ծածկեր,
Բարկութեամբ ծառադ մէկդի մի ձգեր.
Ինծի օգնական եղար, զիս մի մերժեր,
Եւ զիս մի թողուր, ով իմ փրկութեանս Աստուածը։
10 Թէև հայրս և մայրս զիս թողուն,
Բայց Տէրը զիս պիտի ընդունի։
11 Ով Տէր, քու ճամբադ ինծի սորվեցուր,
Եւ ուղիղ ճամբուն մէջ ինծի առաջնորդէ թշնամիներուս համար։
12 Զիս իմ թշնամիներուս կամացը մի մատներ,
Քանզի իմ վրաս սուտ վկաներ
Եւ անիրաւութիւն փչողներ եղան։
13 Հաւատացի Տէրոջը բարութիւնը տեսնելու.
կենդանիներուն երկրին մէջ։
14 Տէրոջը սպասէ.
Զօրացիր և սիրտդ թող զօրանայ.
Ես Տէրոջը սպասէ։

## ՍԱՂՄ. ԻՐ

Սաղմոս Դաւթի.

1 Ով Տէր, քեզի կը կանչեմ.
Ով իմ վէմս, մի լռեր ինծի.
Զրկայ որ ինծի լռելով
*Գերեզմանը իջնողներուն նմանիմ։
2 Լսէ իմ ինդրուածքիս ձայնը՝
Երբ քեզի կ'աղաչեմ,
Երբ իմ ձեռքերս կը վերցնեմ
Դէպ ի քու սուրբ դաւիթդ։
3 Զիս մի †կորսընցներ ամբարիշտներուն հետ,
Եւ անօրէնութիւն գործողներուն հետ,
Որ իրենց ընկերներուն հետ խաղաղութիւն կը խօսին,
Բայց սրտերնուն մէջը չարութիւն կայ։
4 Տուր անոնց իրենց գործերուն պէս,
Եւ իրենց ըրածներուն չարութեանը պէս.
Իրենց ձեռացը գործերուն պէս տուր անոնց,
Հատուցում ըրէ անոնց։
5 Որովհետև անոնք Տէրոջը ըրածներուն
Եւ անոր ձեռացը գործերուն մտադրութիւն չեն ըներ,
Պիտի կործանէ զանոնք, և ալ չի‡ պիտի չշինէ։
6 Օրհնեալ ըլլայ Տէրը,
Որ լսեց իմ աղօթքիս ձայնը։
7 Տէրը իմ զօրութիւնս և իմ ասպարս է.
Իմ սիրտս անոր յուսացաւ, և ես օգնութիւն գտայ.
Ուստի սիրտս ուրախացաւ,
Եւ ես իմ երգովս զանկից պիտի գովեմ։
8 Տէրը անոնց ոյժն է,
Եւ իւր օծեալին փրկութեանը պարիսպն է,
9 Փրկէ քու ժողովուրդդ,
Եւ օրհնէ քու ժառանգութիւնդ.
Նաև հովուէ զանոնք և յաւիտեան բարձրացուր։

## ՍԱՂՄ. ԻԹ

Սաղմոս Դաւթի,

Տէրոջը տուէք, ով ‡հզօրաց որդիք,

*Եբր. Գուբը †Եբր. քաչեր
‡Կամ Աստուծոյ

Տէրոջը տուէք փառք և զօրութիւն։
2 Տէրոջը տուէք իւր անուան փառքը,
Տէրոջը երկրպագութիւն բերէք սրբութեան զարդարանքով։
3 Տէրոջը ձայնը յորձերուն վրայ է.
փառաց Աստուածը կ'որոտայ.
Տէրը շատ յորձերուն վրայ է։
4 Տէրոջը ձայնը ուժով է,
Տէրոջը ձայնը վեհախառնութեամբ է։
5 Տէրոջը ձայնը եղևինները կը կտրէ,
Եւ Տէրը կը կոտրատէ Լիբանանի եղևիններըը.
6 Զանոնք կը ցնծեցուցանէ որթատու պէս,
Լիբանանը և Սիրիոնը վիւղջերուներուն ձագին պէս։
7 Տէրոջը ձայնը կրակին բոցերը կը ճեղքէ։
8 Տէրոջը ձայնը կը դողացուցանէ անապատը,
Տէրը կադեսի անապատը կը դողացուցանէ։
9 Տէրոջը ձայնը եղջիւրները կը ծնուցանէ,
Եւ անտառները կը մերկացուցանէ.
Անոր տաճարին մէջ ամէնքն ալ կը խօսին անոր փառքը։
10 Տէրը յորհեղեղին վրայ կը նստի.
Տէրը յաւիտեան թագաւոր կը նստի։
11 Տէրը իւր ժողովուրդին զօրութիւն պիտի տայ,
Տէրը իւր ժողովուրդը խաղաղութեամբ պիտի օրհնէ։

## ՍԱՂՄ. Լ.

*Սաղմոս Դաւթի. տանը նաւակատեաց երգը։*

1 Ով Տէր, կը բարձրացուցիր քեզ, վասն զի զիս ազատեցիր,
Եւ թշնամիներս իմ վրաս չուրախացուցիր։
2 Ով իմ Տէր Աստուածս, քեզի կանչեցի,
Եւ զիս բժշկեցիր։
3 Ով Տէր, իմ անձս գերեզմանէն *հանեցիր,
Գուրը ինձմէ ներս մտնողներուն մէջէն զիս ապրեցուցիր։
4 Սաղմոս երգեցէք Տէրոջը, ով անոր սուրբերը,
Եւ անոր սրբութիւնը յիշելով շնորհակալ եղէք։
5 Վասն զի բոպէ մը իւր բարկութեան մէջ է,
Բայց իւր հաճութեան մէջ է ամբողջ կենաց ատենը.
Իրիկունը լաց կայ,
Բայց առաւօտուն ուրախութիւն։
6 Ես իմ յաջողութեանս մէջ ըսի թէ
Յաւիտեան պիտի չսասանիմ։
7 Ով Տէր, քու հաճութեամդ իմ լեռս հաստատուն ըրիր.
Երեսդ ծածկեցիր, և ես խռովեցայ։
8 Ով Տէր, քեզի կը կանչեմ,
Եւ Տէրոջը աղաչանք կ'ընեմ։
9 Իմ արիւնէս ինչ օգուտ կ'ըլլայ,
Եթէ ես գուրը իջնեմ.
Մի թէ հողը քեզ պիտի գովէ,
Կամ անիկա պիտի պատմէ քու ճշմարտութիւնդ։
10 Լսէ, ով Տէր, և ողորմէ ինծի.
Ով Տէր, ինծի օգնական եղիր։
11 Իմ սուգս պարի փոխեցիր,
Քուրձս ինձմէ հանեցիր,
Եւ ինծի ուրախութիւն հագուցիր։
12 Որպէս զի իմ փառքս սպմոս երգէ քեզի և այլ ևս չլռէ.
Ով իմ Տէր Աստուածս, յաւիտեան քեզ պիտի գովեմ։

## ՍԱՂՄ. ԼԱ.

*Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի։*

1 Ով Տէր, քեզի յուսացայ,
Յաւիտեան չամչնամ.
Քու արդարութեամդ զիս ազատեւ։
2 Քու ականջդ ինծի խոնարհեցուր,
Շուտով զիս ազատէ.
Ինծի ամրութեան վէմ մը եղիր,
Եւ զիս ապրեցնելու համար ապառաժի տուն մը։
3 Վասն զի իմ վէմս և բերդս դուն ես.
Եւ քու անուանդ համար ինծի առաջնորդէ և զիս կառավարէ։
4 Որոգայթէն զիս հանէ, որ ինծի համար գաղտուկ լարած են,
Վասն զի իմ զօրութիւնս դուն ես։
5 Իմ հոգիս քու ձեռքդ կը յանձնեմ.
Ով ճշմարիտ Աստուած ճշմարտութեան,
դուն զիս փրկեցիր։
6 Ունայնութիւններ պահողներէն ատեցի.
Բայց ես Տէրոջը յուսացայ։
7 Քու ողորմութեամդ պիտի ցնծամ և ուրախ ըլլամ.
Գանգի իմ թշուառութիւնս տեսար,
Եւ իմ անձս առնապանդաց մէջ գիտցար։
8 Եւ զիս թշնամւոյն ձեռքը չմատնեցիր,
Այլ իմ ոտքերս լայնարձակ տեղ մը կանգնեցուցիր։
9 Ով Տէր, ողորմէ ինծի, վասն զի նեղութեան մէջ եմ.
Սրտանգութենէն մաշեցաւ իմ աչքս,
իմ անձս և իմ փորս։
10 Վասն զի իմ կեանքս տրտմութենէն
Եւ տարիներս հառաչանք ընելէն ըսպառեցան.
Իմ այժ թշուառութենէս ակարացաւ,
Ոսկորներս խիստ մաշեցան։
11 Իմ բոլոր թշնամիներուս՝ մանաւանդ դրացիներուս առջեւ նախատինք եղայ,
Եւ իմ ծանօթներուս երկիւղ եղայ.
Զիս դուրսը տեսնողներն ինձմէ կը փախչէին։
12 Մեռածի պէս սրտէ մոռցուած եղայ,
Կորսուած ամանի նմանեցայ։
13 Վասն զի շատերուն բամբասանքը լսեցի.
Զորս կողմս վախ կար.
Երբ անոնք ինծի համար միկտեղ ժողովուեցան,
Խորհուրդ կ'ընէին որ հոգիս առնեն։
14 Բայց ես քեզի յուսացայ, ով Տէր.
Ըսի թէ Դուն ես իմ Աստուածս։
15 Իմ ժամանակներս քու ձեռքդ են.
Փրկէ զիս թշնամիներուս և հալածողներէն։
16 Քու դէմքդ վրայ երեսդ փայլեցուր,
Քու ողորմութեամդ զիս փրկէ։
17 Ով Տէր, չամչնամ,
Վասն զի քեզի կանչեցի.
Ամբարիշտները թող ամչնան,
Եւ գերեզմանին մէջ թող լուռ կենան,
18 Թող պատանձին սուտախօս շրթունքները,
Որ հպարտութեամբ և նախատանօք
Արդարամտութիւն կը խօսին արդարին դէմ։
19 Մրչափ մեծ է քու բարութիւնդ՝
Որ քեզմէ վախցողներուն համար պահեցիր,
Եւ քեզի յուսացողներուն համար երեսիդ մարդոց որդիներուն առջեւ։
20 Զանոնք քու երեսիդ ծածկութիւնովդ պահեցիր մարդոց դաւաճանութիւններէն.
Խորանի մէջ պիտի ծածկես զանոնք լեզուներուն հակառակութիւնէն։
21 Օրհնեալ ըլլայ Տէրը,
Վասն զի ինձ սքանչելութիւնը գործեցիր ըրաւ ինծի
Պարսպաւոր քաղաքի մէջ։
22 Իմ շփոթութեանս մէջ ըսի թէ
Կտրուեցայ ես քու աչքերուդ առջեւէն.
Սակայն դուն իմ ազօթքս ձայնը լսեցիր՝
Երբ քեզի աղաղակեցի։
23 Տէրը սիրեցէք, ով անոր բոլոր սուրբերը,
Վասն զի Տէրը հաւատացեալները կը պահէ,
Եւ սքանչանալիօրէն ընդհանրութեան առաւօրէն հատուցում կ'ընէ։
24 Քաջ եղէք և ձեր սիրտը թող զօրանայ,
Դուք ամէնքդ որ Տէրոջը կը յուսաք։

## ՍԱՂՄ. ԼԲ.

*Դաւթի *ներբեր։*

1 Երանի անոր՝ որուն յանցանքը թողութիւն եղաւ,

*Պահ խնամութեան սաղմոս։



որուն մեղքը ծածկուեցաւ։
2 Երանի անոր՝ որուն Տէրը անօրէնութիւն չհամարեցաւ,
Եւ որուն հոգիին մէջ նենգութիւն չկայ։
3 Երբ լռեցի, ոսկորներս ինձ մաշեցուցին
Իմ հեծեծանքովս ամբողջ օրը։
4 Վասն զի գիշեր ցորեկ ձեռքդ ինծի վրայ ծանրացաւ,
Իմ հիւթս ամառնային երաշտի պէս չորցաւ։ Սելա։
5 Քեզի իմ մեղքս ծանուցի,
Եւ անօրէնութիւնս չծածկեցի.
Ըսի թէ Տէրոջը իմ յանցանքներս պիտի խոստովանիմ,
Եւ դուն իմ մեղքիս անօրէնութիւնը ներեցիր։ Սելա։
6 Ասոր համար ամէն սուրբ քեզի աղօթք պիտի ընէ
Ատենին մէջ որ կրնաս գտնուիլ.
Անշուշտ ջուրերուն մեծ ջրհեղեղը անոր չի հասնիր։
7 Դուն ինծի պատսպարան ես,
Դուն զիս նեղութենէ պիտի պահես,
Ազատութեան երգերով պիտի պատես զիս։ Սելա։
8 Ես քեզ պիտի հանդարտեցնեմ և ուսուցանեմ
Զոր ճամբան որ պիտի երթաս.
Քեզի խորհուրդ պիտի տամ՝ աչքս քեզի վրայ դնելով։
9 Ձի կամ ջորի պէս մի՛ ըլլաք որ չեն հասկնար,
Որոնց բերանը սանձով և սանկով պիտի սանձես,
Որպէս զի քեզի չմօտենան։
10 Չարագործին շատ ցաւեր կ'ըլլան,
Բայց Տէրոջը վրայ յուսացողը ողորմութիւնով պիտի պատուի։
11 Արդարներ, Տէրոջմով ուրախացէք և ցնծացէք,
Եւ ուղղասիրտներ, բոլորդ ալ գոչեցէք։

## ՍԱՂՄ. ԼԳ.

1 Արդարներ, Տէրոջմով ցնծացէք,
Ուղղամիտներուն գեղեցիկ է գովասանութիւնը։
2 Տէրոջը գուսանութեամբ փառաբանեցէք,
Տասնեակ լարով նուագարանով երգեցէք անոր։
3 Նոր երգ մը երգեցէք անոր,
Ճարտարութեամբ նուագեցէք ուրախալի ձայնով։
4 Վասն զի Տէրոջը խօսքը ուղիղ է,
Եւ անոր բոլոր գործերը հաւատարմութեամբ են։
5 Ան արդարութիւն և իրաւունք կը սիրէ,
Տէրոջը ողորմութենէն երկիրը լեցուն է։
6 Տէրոջը խօսքովը երկինքները ստեղծուեցան,
Եւ անոնց բոլոր զօրութիւնը անոր բերանին հոգիովը։
7 Ան ծովուն ջուրերը կոյտի պէս կը հաւաքէ,
Անդունդները շտեմարանի մէջ կը դնէ։
8 Տէրոջմէն բոլոր երկրի վրայ ապրողները թող վախնան,
Անոր առջեւ աշխարհի բոլոր բնակիչները թող դողան։
9 Վասն զի ան խօսեցաւ և եղաւ,
Ան պատուիրեց և հաստատուեցաւ։
10 Տէրը հեթանոսներուն խորհուրդը կ'ապարդիւնացնէ,
Ժողովուրդներուն խորհուրդները կ'անպտղացնէ։
11 Տէրոջը խորհուրդը յաւիտեան կը հաստատուի,
Անոր սրտին խորհուրդները ազգէ ազգ կը տեւեն։
12 Երանի անոր ազգին՝ որուն Աստուածը Տէրն է,
Ժողովուրդին՝ որ ինք ընտրեց իրեն ժառանգութիւն։
13 Տէրը երկինքէն նայեցաւ,
Ամբողջ մարդկային ցեղը տեսաւ։
14 Իր բնակած տեղէն երկրի բոլոր բնակիչները դիտեց,
15 Ան որ միասին կազմեց անոնց սիրտերը,
Որ անոնց բոլոր գործերուն ուշադրութիւն կ'ընէ։
16 Թագաւորը զօրաւոր զօրքով չի փրկուիր,
Հսկայ զօրութիւնով զինուորը չի ազատուիր։
17 Ձի՝ պատերազմի համար ապարդիւն է,
Եւ իր մեծ զօրութեամբ չի կրնար ազատել։
18 Ահա Տէրոջը աչքը անոնց վրայ է որ իրմէ կը վախնան,
Անոնց վրայ որ անոր ողորմութեան կը յուսան,
19 Որպէս զի անոնց հոգին մահէն ազատէ,
Եւ սովու ատենը կենդանի պահէ։
20 Մեր հոգին Տէրոջը կը սպասէ,
Ան մեր օգնականն ու վահանն է։
21 Անոր համար մեր սիրտը անով կ'ուրախանայ,
Վասն զի մենք անոր սուրբ անունին վստահեցանք։
22 Տէր, քու ողորմութիւնդ մեր վրայ թող ըլլայ,
Որպէս զի քեզի յուսացինք։

Ե՞ անոր մեղքերը ծածկուեցան։
2 Երանի այն մարդուն՝ որ Տէրը անօրէնութիւն չհամարիր անոր,
Եւ անար հոգւոյն մէջ նենգութիւն չկայ։
3 Երբ լուռ կեցայ՝ ոսկրներս մաշեցան
Իմ ամէն օր աղաղակելովս։
4 Վասն զի ցորեկ ու գիշեր քու ձեռքդ
Իմ վրաս ծանրացաւ։
Իմ թացութիւնս ամառուան չորութեան դարձաւ։ (Սէլա։)
5 Իմ մեղքս քեզի յայտնեցի,
Եւ իմ անօրէնութիւնս չծածկեցի։
Ըսի Թէ Տէրոջը պիտի խոստովանիմ յանցանքներս.
Եւ դուն թողուցիր իմ մեղքիս անօրէնութիւնը։ (Սէլա։)
6 Ասոր համար ամէն սուրբ ժամանակ աղօթք պիտի ընէ քեզի
Հու գտնուելու ժամանակդ.
Ցրուած ջուրերուն հեղեղներուն առջեւը
Անոր պիտի չմօտենան։
7 Դուն ես իմ ապաստանարանս.
Նեղութենէն զիս պիտի պահես.
Դուն զիս պիտի պատես ազատութեան երգերով։ (Սէլա։)
8 Քեզի պիտի սորվեցնեմ, և երթալու ճամբադ պիտի ցուցնեմ քեզի.
†Քեզ պիտի խրատեմ,՝ իմ աչքս քու վրադ պիտի ըլլայ։
9 Ձիու պէս և չորոյ պէս մի ըլլաք, որ միտք չունին,
Որ իրենց սանձին և սանձարջին զարդովը կապելու է, որ քեզի չմօտենան։
10 Ամբարշտին անձկանքները շատ պիտի ըլլան,
Սակայն Տէրոջը յուսացողին չորս կողմը ողորմութիւնը պիտի պատէ։
11 Ով արդարներ, Տէրոջմով ուրախ եղէք ու ցնծացէք,
Ցնծութեամբ երգեցէք դուք ամէնքդ՝ որ սրտով ուղիղ եք։

ՍԱՂՄ. ԼԴ

1 Ով արդարներ, Տէրոջմով ցնծայէք.
Ուղիղներուն կը վայլէ օրհնութիւնը։
2 Գովեցէք Տէրը քնարով,
Տասը լար ունեցող սազով սաղմոս երգեցէք անոր։
3 Նոր երգ մը երգեցէք անոր,
Ճարտարութեամբ նուագեցէք զարկէք ցնծութեան ձայնով։
4 Վասն զի Տէրոջը խօսքն ուղիղ է,
Եւ անոր բոլոր գործքերը ճշմարտութեամբ են։
5 Անիկա արդարութիւն և իրաւունք կը սիրէ.
Տէրոջը ողորմութեամբ երկիրը լեցուն է։
6 Տէրոջը խօսքով երկինք ստեղծուեցաւ,
Եւ իւր բերնին հոգւով անոր բոլոր զօրքը։
7 Ծովուն ջուրերը *դեզի մը պէս կը ժողվէ,
Անդունդները շտեմարաններուն մէջ կը դնէ։
8 Բոլոր երկիրը թող Տէրոջմէն վախնայ,
Եւ անկէ դուրս աշխարհի բոլոր բնակիչները։
9 Վասն զի անիկա ըսաւ, և եղաւ.
Ինք հրամայեց, և հաստատուեցաւ։
10 Տէրը կը ցրուէ հեթանոսաց խորհուրդները,
Ի դերև կը հանէ ժողովուրդոց դիտաւորութիւնները։
11 Տէրոջը խորհուրդը յաւիտեան կը մնայ,
Եւ անոր սրտին դիտաւորութիւնները՝ ազգէ մինչև ազգ։
12 Երանի այն ազգին՝ որոյ Աստուածը Տէրն է,
Եւ այն ժողովուրդին՝ զոր իրեն ժառանգութեան համար ընտրեց։

†Կամ խորհուրդ պիտի ընեմ ինձի համար,

*Կամ օրպէս թէ ակի մը մէջ



13 Տէրը երկինքէն կը նայի,
Բոլոր մարդոց որդիները կը տեսնէ։
14 Իւր բնակութենեան տեղէն
Աշխարհի բոլոր բնակիչները կը դիտէ։
15 Անոնց սիրտերը հաւասարապէս ինք ստեղծեց,
Անոնց բոլոր ըրածները կ'իմանայ։
16 Թագաւոր մը զօրքի բազմութեամբ չազատիր.
Ոչ հսկ զօրաւոր մարդ մը ուժի չափութեամբ կը փրկուի։
17 Ձին ազատութեան համար պարապ բան է,
Եւ իւր ուժին առատութեամբ չկրնար ազատիլ։
18 Ահա Տէրոջը աչքը իրմէ վախցողներուն
Եւ իւր ողորմութեանը յուսացողներուն վրայ է,
19 Անոնց անձը մահուանէ փրկելու,
Եւ սովի ժամանակ զանոնք ապրեցնելու համար։
20 Մեր անձը Տէրոջմէ կը սպասէ.
Մեր օգնութիւնը և վեր վահանը անիկա է։
21 Վասն զի մեր սիրտերն անով կ'ուրախանան.
Վասն զի անոր սուրբ անունը յուսացանք։
22 Ով Տէր, քու ողորմութիւնդ մեր վրայ ըլլայ,
Ինչպէս որ քեզի կը յուսանք։

ՍԱՂՄ. ԼԶ

Սաւղա Դաւիթ՝ անատեն որ *Աբիմելեքի առջեւն յիմար ձեւացաւ, ան ալ դուրս ըրաւ զանիկա որ գնաց։

1 Ամէն ժամանակ Տէրը պիտի գովեմ.
Անոր գովութիւնը միշտ իմ բերանս պիտի ըլլայ։
2 Իմ անձս Տէրոջմով պիտի պարծի.
Խոնարհները պիտի լսեն և ուրախ ըլլան։
3 Ինծի հետ Տէրը մեծցուցէք,

*Այլեւս՝ Աքքուսի

Եւ իմիասին բարձրացունենք անոր անունը։
4 Տէրը խնդրեցի, և ինծի պատասխան տուաւ,
Եւ իմ ամէն երկիւղներէս զիս փրկեց։
5 Անոր նայեցան և լոյս առին,
Եւ անոնց երեսները չամչցան։
6 Այս աղքատ աղաղակեց, և Տէրը լսեց
Եւ զանիկա իւր բոլոր նեղութիւններէն փրկեց։
7 Տէրոջը հրեշտակը իւր բանակին անկիւնները չորս կողմը կը դնէ,
Եւ զանոնք կ'ազատէ։
8 Ճաշակեցէք և տեսէք որ Տէրը բարի է.
Երանի այն մարդուն որ անոր կը յուսայ։
9 Տէրոջմէ վախցէք, ով անոր սուրբերը,
Վասն զի անկէ վախցողներուն բան մը պակաս չըլլար։
10 Առիւծի կորիւնները չքաւորութիւն և անօթութիւն կը կրեն.
Սակայն Տէրը փնտռողներուն բարութիւն մը պակաս պիտի չըլլայ։
11 Եկէք, որդիք, մեկ ըսէք ինծի,
Տէրոջը վախը ձեզի սորվեցնեմ։
12 Ո՞վ է այն մարդը որ սիրել կ'ուզէ,
Ե՞ր օրեր կը սիրէ՝ բարութիւն տեսնելու համար։
13 Քու լեզուդ չարութենէ պահէ,
Եւ շրթունքդ նենգութիւն խօսելէ։
14 Չարութենէ հեռացիր և բարութիւն ըրէ,
Խաղաղութիւն փնտռէ և անոր հետևէն գնա։
15 Տէրոջը աչքերն արդարներուն վրայ են,
Եւ անոր ականջներն անոնց աղաղակին։
16 Տէրոջը երեսը չարագործներուն դէմ է՝
Անոնց յիշատակը երկրէն բնաջինջ ընելու համար։
17 Արդարները կ'աղաղակեն, և Տէրը կը լսէ,
Եւ իրենց բոլոր նեղութիւններէն կը փրկէ զանոնք։

18 Տէրը մեռե՛ լ անոնց որոնց սիրտը կոտրած է,
եւ հոգեվ խնայարհածներըզ կ՚ապրեցուցանէ.
19 Արդարին նեղութիւնները շատ են,
բայց Տէրը ամէնէն կը փրկէ զանոնկա.
20 Անոր բոլոր ոսկրները կը պահէ,
Անոնցմէ մէկը չի՛ փորուիր.
21 Չարութիւնն ամբարիշտը պիտի սպաննէ,
եւ արդարն առողները պիտի գատապարտուին.
22 Տէրը իւր ծառաներուն անձը կը փրկէ,
Եւ իրեն յուսացողներէն ոեւէ մէկը պիտի չդատապարտուի.

## ՍԱՂՄ. ԼՆ

Սաղմոս Դաւթի.

1 Ով Տէր, ինծի հետ հակառակորդներուս հետ հակառակէ.
ինծի հետ պատերազմողներուն հետ պատերազմէ։
2 Վահան և վահան առ,
Ու հոգիի ինծի օգնութիւն բերելու.
3 Նաեւ նիզակը քաշէ, և ճամբաս գոցէ
դէմ հալածողներուս դէմ.
Ըսէ անձիս թէ Ես փրկութիւնդ եմ.
4 Իմ անձս փնտռողներն ամչնան և խայտառակ ըլլան.
Ետ դառնան և ամչնան
Անոնք որ ինծի համար չարութիւն կը խորհին։
5 Հովին առջեւ եղած մէղեղի պես ըլլան անոնք,
Ու Տէրոջը հրեշտակը վանեսնէ զանոնք։
6 Անոնց ճամբան խաւար և սկզբնեցընող ըլլայ,
Ու Տէրոջը հրեշտակը հալածէ զանոնք։
7 Վասն զի ի դուր իրենց որոգայթը փոսի մէջ ինծի համար ծածկեցին,
Ես ի դուր փոսը փորեցին անձիս համար։
8 Թող անոր վրայ յանկարծ աւերում գայ,
Ու իւր ծածկած որոգայթը զինք բռնէ.
Նոյն աւերման մէջ իյնայ։
9 Սակայն իմ անձս Տէրոջմով պիտի ցընծայ,
Անոր փրկութեամբ ուրախ պիտի ըլլայ։
10 Իմ բոլոր ոսկրներս պիտի բսեն,
Տէր, ով քեզի նման է,
Որ աղքատը կ՚ազատես անկէ որ կը զօրանայ անոր վրայ,
Եւ աղքատը և անձանկը իւր յափշտակողին։
11 Սուտ վկաներ կանգնեցան,
Զոր հարցածներս կը հարցնէին ինծի։
12 Բարութեան փոխարէն ինծի չարութիւն ըրին
Ծոզոպատելով իմ անձս։
13 Բայց ես անոնց հիւանդութեան ատենները քուրձ կը հագնէի,
Իմ անձս ծոմով կը չարչարէի,
Ու իմ աղօթքս իմ ծոցս պիտի դառնայր։
14 Ինչպէս իմ բնկերիս կամ եղբօրս հետ՝ այնպէս նաեւ անոնց հետ կը վարուէի,
Իբր մորը համար սուգ ունեցողի մը պէս տրտմութեամբ կը ցածնայի։
15 Բայց անոնք իմ կաղութեանս ատեն ինծի ծաղրի ու ժողովեցան.
Չարնողներն իմ վրաս ժողվուեցան, և ես բան մը չէի գիտեր.
Կը ձեղքէին զիս ու չէին դադարեր.
16 Խնճոյքի կերպ ծաղր խնդկատականներուն հետ
Ակռաներնին իմ վրաս կը կրճտեէին։
17 Ով Տէր, մինչեւ ե՞րբ պիտի նայիս.
Ազատէ իմ անձս անոնց աւերումներէն,
Իմ †կեանքս առիւծի կորիւններէն։
18 Մեծ ժողովի մէջ քեզ պիտի գովեմ,
Շատ ժողովուրդի մէջ քեզ պիտի օրհնեմ։
19 Ոյնք որ սուտ ինծի թշնամի եղողները թող իմ վրաս չխնդան,

*կամ կը դառնան։
†Եբր. միամօրս



Եւ անօրէնաբար գանակոցողս աչքով նշան չընան։
20 Քանզի խաղաղութիւն չեն խօսիր,
Այլ երկրի մէջ հանդարտներուն դէմ նենգութիւն կը խորհին,
21 Եւ իրենց բերանն ինծի դէմ կը լայնցուցին ըսելով,
Վաշ վաշ, մեր աչքերը տեսան։
22 Ով Տէր, դուն տեսար, լուռ մի կենար.
Ով Տէր, հեռու մի՛ կենար։
23 Արթնցիր, ով իմ Աստուածս և Տէրս,
Եւ իմ դատաստանիս և գործիս երթիր։
24 Քու արդարութեանդ համեմատ իրաւունք բերի՛ ինծի, ով իմ Տէր Աստուածս,
Եւ իմ վրաս թող չուռնան։
25 Իրենց սրտին մէջ թող չըսեն թէ Ահա մեր կամքը եղաւ,
Ե՛ թող չըսեն թէ կլլեցինք անիկա։
26 Թող ամչնան և միկտեղ խայտառակ ըլլան
Անոնք որ իմ չարիացս վրայ կը խընդան.
Իմ վրաս հպարտացողներն
Ամօթ և խայտառակութիւն հագնին։
27 Թող ցնծան և ուրախանան
Անոնք որ իմ արդարութիւնս կ՚ուզեն,
Եւ միշտ թող ըսեն թէ Աստուած մեծցուի,
Որ իւր ծառային խաղաղութիւնը կ՚ուզէ։
28 Եւ իմ լեզուս քու արդարութիւնդ պիտի խօսի,
Ե՛ ամէն օր քու գովեստիդ։

## ՍԱՂՄ. ԼԶ

Դպրապետ երաժշտին. Աստուածապաշտ Դաւթի Տէրոջը ծառային։

1 Ամբարիշտին չարութեան վրայ սրտիս մէջէն խօսքը ասե՛ ։
Աստուածոյ վախը չկայ անոր աչաց առջեւ։
2 Քանզի ինքզինք կը չղճացընէ իւր աչաց առջեւ՝
Իւր անօրէնութեան գանուելուն և ատելի ըլլալուն վրայ։
3 Անոր բերնին խօսքերն անօրէնութիւն և նենգութիւն են,
Բարին ընելու համար խելամտութիւնը մէկդի ձգեց։
4 Իւր անկողնին մէջ անօրէնութիւն կը մտածէ,
Ե՛ կը կենայ այնպիսի ճամբու մէջ որ աղէկ չէ,
Ե՛ չարէն չզզիր։
5 Ով Տէր, քու ողորմութիւնդ մինչեւ երկինքը հ՚ հասնի,
Ե՛ քու ճշմարտութիւնդ մինչեւ ամպերը։
6 Քու արդարութիւնդ հզօր լեռներու պես է,
Քու իրաւունքդ մեծ անդունդ է.
Մարդիկ և անասուները դուն կ՚ապրեցնես, ով Տէր։
7 Ով Աստուած, քու ողորմութիւնդ որքա՜ն թանկագին է,
Որ մարդոց որդիքը քու թեւերուդ հովանաւորութեան կ՚ապաւինին։
8 Անոնք քու տանդ պարարտութենէն պիտի կշտանան,
Եւ քու հաճութիւններուդ գետէն պիտի խմցնես անոնց։
9 Քանզի կենաց աղբիւրը քու քովդ է.
Քու լուսովդ լոյս պիտի տեսնենք։
10 Քու գիտութիւնդ քեզ ճանչցողներուն շարունակէ,
Եւ քու արդարութիւնդ սրտով ուղիղներուն։
11 Ամբարտաւանութեան ոտքը թող իմ վրաս չգայ,
Եւ չարերուն ձեռքը զիս չշարժէ։
12 Հոն ինկան անօրէնութիւն գործողները.
Գետնքը զարնուեցան և չկրցան վեր կենալ։

## ՍԱՂՄ. ԼԷ

Սաղմոս Դաւթի.

1 Չարերուն համար մի նեղանար,

Անօրէնութիւն գործողներուն մի նախանձիր.
2 վասն զի անոնք խոտի պէս շուտով պիտի կտրուին,
Եւ կանանչ խոտի պէս պիտի չորնան։
3 Տէրոջը յուսա և բարութիւն ըրէ,
Երկրին վրայ բնակէ և ճշմարտութեան մէջ արածուէ.
4 Եւ Տէրոջմով ուրախացիր.
Եւ անիկա կու տայ քեզ քու սրտիդ խնդրուածները։
5 Տէրոջը յանձնէ քու ճամբագ,
Եւ անոր յուսա, և անիկա պիտի կատարէ.
6 Եւ դուրս պիտի հանէ քու արդարութիւնդ լուսոյ պէս,
Եւ քու իրաւունքդ կէս օրուան պէս։
7 Տէրոջը համբերէ և անոր սպասէ,
Ե՛ մի նեղանար իր ճամբան յաջողութիւնէն գացողին համար,
Ե՛ խարէութիւն ընող մարդուն համար։
8 Դադարէ բարկութենէն, և զրդռդիլը վերջացուր։
Մի նեղանար, որ չարութիւն ընես.
9 վասն զի չարագործները պիտի կորսուին,
Սակայն Տէրոջը համբերողները երկիրը պիտի ժառանգեն։
10 վասն զի քիչ ժամանակ ետքը ամբարիշտը պիտի չըլլայ,
Եւ անոր տեղը պիտի փնտռես, և ինք պիտի չգտնուի։
11 Սակայն հեզերը պիտի ժառանգեն երկիրը,
Եւ խաղաղութեան առատութեամբ ուրախ պիտի ըլլան։
12 Մեղաւորն արդարին դէմ չար կը խորհի,
Եւ անոր վրայ ակռաները կը կրճտէ։
13 Տէրը ծաղր պիտի ընէ զանիկա,
վասն զի անոր օրը հասնելու վրայ կը տեսնէ.
14 Մեղաւորները թուր քաշեցին,
Ե՛ իրենց աղեղները լարեցին՝
Աղքատը և անանկը վար ձգելու համար,
*Ուղիղ ճամբու մէջ քալողները* սպանելու համար։
15 Անոնց թուրն իրենց սիրտը պիտի մտնէ,
Եւ անոնց աղեղները պիտի կոտրտին։
16 Արդարին քիչ բանը
Շատ ամբարիշտներու առատ մասնաժողովքին աղէկ է։
17 Քանզի ամբարիշտներուն բազուկները պիտի կոտրուին,
Բայց արդարներուն †ապաւէնը Տէրն է։
18 Արդարներուն օրերը գիտէ Տէրը,
Եւ անոնց ժառանգութիւնը յաւիտենական պիտի ըլլայ։
19 Փորձանքի ժամանակ պիտի չամչնան,
Եւ սովի օրերը պիտի կշտանան։
20 Բայց ամբարիշտները պիտի կորսուին,
Եւ Տէրոջը թշնամիները ‡գառնուկներու ճարպին՝ պէս պիտի ապառնին,
Մուխի պէս պիտի ապառնին։
21 Ամբարիշտը փոխ կ'առնէ և չվճարեր,
Սակայն արդարը կ'ողորմի և կու տայ։
22 Վասն զի անոր օրհնածները պիտի ժառանգեն զերկիր,
Բայց անկէ անիծուածները պիտի կորսուին։
23 Բարի մարդուն քայլերը Տէրոջմէ կը հաստատուին,
Եւ Անիկա անոր ճամբուն կը հաճի։
24 Թէև իյնայ, պիտի չկործանի.
Վասն զի Տէրը անոր ձեռքը կը բռնէ։
25 Տղայ եղ և ծերացայ,
Բայց արդարն անտես եղած չտեսայ,
Կամ անոր զաւակը հաց մուրացող։
26 Անիկա օր կ'ողորմի և փոխ կու տայ.
Եւ անոր սերունդն օրհնուած է։
27 Չարութենէ եա կեցիր և բարութիւն ըրէ,
Եւ յաւիտեան պիտի ճոխանաս։
28 Քանզի Տէրը կը սիրէ իրաւունքը,
Եւ իր սուրբերը երեսէ չձգեր.
Յաւիտեան կը պահուին անոնք.

*Եբր. ձամբով չհատակ եղողները
†Եբր. նեցուկը
‡Կամ պարարտ ոչխարի



Բայց ամբարիշտներուն սերունդը պիտի կորսուի։
29 Արդարները պիտի ժառանգեն զերկիրը,
Եւ յաւիտեան անոր վրայ պիտի բնակին։
30 Արդարին բերանն իմաստութիւն կը խօսի,
Եւ անոր լեզուն իրաւունք կը զրուցէ։
31 Իր Աստուծոյն օրէնքն անոր սրտին մէջ է.
Ե՛ անոր քայլերը պիտի չսահին։
32 Մեղաւորն արդարը կը դիտէ,
Եւ զանիկա մեռցնելու եռանդ կ'իյնայ։
33 Տէրը անոր ձեռքը պիտի չձգէ զանիկա,
Եւ անոր դատաստանը անանցած ատենը պիտի չդատապարտէ զանիկա։
34 Տէրոջը հասկերէ և անոր ճամբան պահէ,
Եւ անիկա քեզ կը բարձրացունէ որ ժառանգես զերկիրը.
Ամբարիշտներուն ատեն մը պիտի տեսնես։
35 Ամբարիշտը զօրացած տեսայ,
Եւ իր տեղը կեցող կանանչ ծառի մը պէս տարածուած.
36 Բայց նա անցաւ, և ահա չկար.
Եւ զանիկա փնտռեցի, բայց չգտնուեցաւ։
37 Ակրատը նկատէ և ուղղին նայէ.
Վասն զի խաղաղարար մարդը բ–ը վախճան պիտի ունենայ։
38 Իսկ անօրէնները միասին պիտի կորսուին.
Ամբարիշտներուն վախճանը կորսուած պիտի ըլլայ։
39 Բայց արդարներուն փրկութիւնը Տէրոջմէն է,
Նեղութեան ժամանակ ինք անոնց ապաւէնն է։
40 Եւ Տէրը պիտի օգնէ անոնց և պիտի ազատէ զանոնք.
Ամբարիշտներէն պիտի ազատէ,
Եւ պիտի փրկէ զանոնք, վասն զի անոր կը յուսան։

## ՍԱՂՄՈՍ ԼԷ

Սաղմոս Դաւթի, յիշատակի համար։
1 Ով Տէր, քու սրամտութեամդ դիս մի յանդիմաներ,
Եւ բարկութեամդ դիս մի խրատեր։
2 Վասն զի քու նետերդ իմ վրաս դիս մխուեցան,
Եւ քու ձեռքդ իմ վրաս կիջնէ։
3 Իմ մարմնոյս մէջ առողջութիւն չկայ քու բարկութեանդ համար,
Ե՛ ոսկրներուս մէջ հանգիստ չկայ իմ մեղացս համար։
4 Վասն զի անօրէնութիւններս գլխուս վրէ բարձրացան.
Ծանր բեռի պէս *իմ վրաս ծանրացած են։
5 Վէրքերս հոտեցան և փտեցան
Իմ յիմարութեանս պատճառով։
6 Դուժացայ և շատ ցածցայ.
Ամէն օր սգաւոր կը պտրտիմ.
7 Վասն զի աղիքս չերմութեամբ լեցուեցաւ,
Եւ մարմնոյս մէջ առողջութիւն չկայ։
8 Տկարացայ և շատ ճնշուեցայ.
Սրտիս հեծութենէն մռնչեցի։
9 Ով Տէր, իմ ամէն բաղձանքս քու առջեւդ է,
Եւ իմ հեծութիւնս քեզմէ չծածկուեցաւ։
10 Սիրտս կը բաբախէ, ոյժս զիս թողու տուաւ,
Եւ իմ աչքերուս լոյսը՝ ան ալ իմ հետս չէ։
11 Սիրականներս և ընկերներս իմ չարչարանքս հետու կը կենան,
Ազգականներս ալ հետու կը կենան.
12 Եւ անձս փնտռողներն իրէն որոգայթ կը լարեն,
Եւ ինծի չարիք ուզողներն անօրէնութիւն կը խօսին,
Եւամէն օր նենգութիւն կը մտածեն։
13 Սակայն ես խուլի պէս չեմ լսեր,
Եւ բերանը չբացող համրի պէս եմ։

*Եբր. ինէ

14 Եւ ես պահէի մարդս պէս եմ որ
չլսեր,
Եւ հակառակ իւսաք չկայ անոր բերանը։
15 Վասն զի, ով Տէր, ես քեզի կը յու-
սամ,
Դուն պիտի պատասխանես, ով իմ
Տէր Աստուածս։
16 Թանզի ըսի, Թող չխնդան իմ վրաս.
Ոտքս սահած ժամանակն ինձի դէմ
պէրէներ կը մեծցնէին։
17 Վասն զի ես կաց բլլալու պատրաստ
եմ,
Եւ իմ ցաւս առիւն առջիս է։
18 Թանզի անօրէնութիւնս պիտի պատ-
միմ,
Եւ մեղացս համար հոգ պիտի ընեմ։
19 Բայց թշնամիներս ողջ են, զօրացան.
Զիս ի զուր առողներդ չատացան.
20 Եւ բարութեան փոխարէն չարութիւն
ընդդիմերն
Ինձի դէմ կը կենան, վասն զի ես բա-
րութեան ետեւէ կ'երթամ։
21 Զիս մի թողուր, ով Տէր,
Ով իմ Աստուածս, մի հեռանար։
22 Ինձի օգնութիւն ընելու արագերցէր,
Ով Տէր իմ փրկութիւնս։

ՍԱՂՄ. ԼԹ

Դպետար երաժշտին՝ Իդիթունի.
Սաղմոս Դաւթի։

1 Ըսի թէ Ճամբաներուս զգուշութիւն
ընեմ,
Որ լեզուավ մեղք չգործեմ.
Բերանս սանձով պահեմ
Անիրաւին իմ առջիս եղած աւենը։
2 Մունջ եղայ լռութեամբ,
Բարութեան վրայ ալ լռեցի,
Եւ ցաւս չարժեցաւ։
3 Սիրտս բորբոքեցաւ ներսի դիս,
*Իմրմնութեանս մէջ կրակ վառեցաւ.
Ահաւորէն լեզուավ խօսեցայ։
4 Ցուցուր ինձի, ով Տէր, իմ վերջս,
Եւ օրերուս չափը ո՛րչափ է,
Որ գիտնամ թէ ինչպէս անցաւոր եմ։

5 Ահա իմ օրերս թիկերու լուծ դրիր,
Եւ իմ կեանքս ոչնչի պէս է քու առջիդ.
Իրաւ ամէն մարդ ինչ հաստատուած
ըլլար,
Բոյց բոլորովին ունայնութիւն է, (Ակ-
լայ)
6 Արդարև մարդ աստուերի պէս կը պար-
ծի.
Արդարև զուր տեղ անհանգիստ կ'ըլ-
լայ.
Կը դիզէ, բայց չգիտեր թէ ով պիտի
առնէ զանոնք։
7 Եւ հիմա ի՞նչ բանի սպասեմ, ով Տէր.
Իմ յոյս քեզի է.
8 Փրկէ զիս իմ բոլոր յանցանքներէս,
Չես յիմարներուն նախատինք ընլլու-
մի դներ։
9 Մունջ եղայ և բերանս չբացի,
Վասն զի դուն ըրիր։
10 Քու հարուածդ հեռացուր ինէ.
Ձեռքիդ պատճառովը ես կորսուեցայ։
11 Անօրէնութեան համար յանդիմանու-
թիւններով կը խրատես մարդը,
Ցեցի պէս կը հալեցնես անոր ցան-
կալի բաներըը.
Արդարև ամէն մարդ ունայնութիւն
է. (Ակլայ)
12 Ով Տէր, լսէ աղօթքս, և ականջ դիր
աղաղակիս.
Արտասուացս մի լռեր.
Թանզի քու առջիդ պանդուխտ եմ ես,
Հիւր իմ բոլոր նախնիներուս պէս։
13 Թոյլատուութիւն ըրէ ինձի որ զուար-
թանամ,
Քանի որ չեմ գացած այն տեղէն՝ որ այլ
ես պիտի չգտնուիմ

ՍԱՂՄ. Խ

Դպետար երաժշտին. Սաղմոս Դաւթի.

1 Սպասելով սպասեցի Տէրոջը,
Եւ ծռեցաւ ինձի և լսեց իմ ազա-
ղակս.
2 Եւ զիս կորստեան փոսէն, ազմկից
կաւէն հանեց,
Եւ ոտքերս վէմի վրայ ամրացուց և
քայլափոխս հաստատեց.



3 Եւ բերանս դրաւ նոր երգ մի՝
Մեր Աստուծոյն գովութիւնը։
Շատերը պիտի տեսնեն և պիտի վախ-
նան,
Եւ Տէրոջը պիտի յուսան։
4 Երանի այն մարդուն որ իւր յոյսը Տէ-
րոջը վրայ կը դնէ,
Եւ չնայիր հպարտներուն և դաւթեան
դարձողներուն։
5 Շատ են սքանչելիքդ, որ դուն ըրած
ես,
Ով իմ Տէր Աստուածս,
Եւ մեր վրայ ունեցած խորհուրդներդ
Մէկիդ չկրնար կարգադ պատմել քու
առջիդ.
Պիտի պատմէի և խօսէի,
Բայց հաշիւնդի աւելի շատ են։
6 Զոհի և ընծայի չհաճեցար,
Աչքերս ականջներս բացիր.
Ողջակէզ և մեղքի պատճառով չպա-
հանջեցիր։
7 Անոնց ըսի թէ՝ Ահա կու գամ ես.
Իրքեւ տոմար մէջ ինձի համար գրուած է,
8 Ով իմ Աստուածս, քու կամքդ կա-
տարել փափաքեցայ,
Եւ քու օրէնքդ իմ ներսի դիս է։
9 Արդարութիւն քարոզեցի մեծ
ժողովի մէջ.
Ահա շրթունքս չարգելեցի.
Ով Տէր, դուն գիտես։
10 Սրտիս մէջ գաղտուկ չպահեցի քու
արդարութիւնդ.
Հաւատարմութիւնդ և փրկութիւնդ
պատմեցի.
Քու ողորմութիւնդ և ճշմարտութիւ-
նդը մեծ ժողովքին չծածկեցի։
11 Դուն, ով Տէր, քու գթութիւնդ ետ
մի պահեր ինէ.
Քու ողորմութիւնդ և ճշմարտութիւ-
նդը ամէն ժամանակ պահպան-
նեն զիս։
12 Վասն զի անթիւ չարիք զիս պատեցին.
Անօրէնութիւններս ինձի հասան, և ես
չեմ կրնար տեսնել.
Գլխուս մազերն չատ են, և սիրտս զիս
թողուց։

13 Ով Տէր, զիս փրկելու կամք ըրէ.
Ով Տէր, ինձի օգնելու արագերցէր։
14 Թող ամչնան և իւ միասին խայտառակ
ըլլան
Իմ անձս փնտռողներդ կորսնցնելու
համար զայն.
Նա դառնան և ամօթով ըլլան
Ինձի չարութիւն ուզողները։
15 Թող *ամչնալով կործանին
Անոնք որ ինձի վայ վայ կ'բսեն։
16 Ամէն քեզ փնտռողները
Ցնծալով թող ցնծան և ուրախանան.
Քու փրկութիւնդ սիրողները
Ամէն ժամանակ թող բսեն, Տէրը մե-
ծնայ։
17 Բայց ես ազքատ և անտնկ եմ,
Սէրտը Տէրը հոգ կը տանի ինձի.
Իմ օգնականս և փրկիչս դուն ես,
Ով իմ Աստուածս, մի ուշանար։

ՍԱՂՄ. ԽԱ

Դպետար երաժշտին. Սաղմոս Դաւթի։

1 Երանի անոր որ ազքատին հոգ կը տա-
նի.
Նեղութեան օրը Տէրը պիտի փրկէ ըզ-
նա։
2 Տէրը պիտի պահէ և ապրեցնէ զնա,
Երանելի պիտի բլլայ երկրի վրայ։
Եւ թշնամիներուն կամքը պիտի չը
մատնես զնա։
3 Տէրը անոր ոյժ պիտի տայ տկարու-
թեան անկողնին մէջ.
Անոր ամէն անկողինը պիտի գոցես-
նես անոր հիւանդութեան ատե-
նը։
4 Ես բսի, Ով Տէր, ողորմի ինձի,
Բժչկի իմ անձս, զի ես քեզի դէմ մե-
ղանչեցի։
5 Թշնամիներս զէշ կը խօսին իմ վրաս,
Բսելով Երբ պիտի մեռնի և անուն
կորսուի։
6 Եթէ հէնէ դուրս բլլայ տեսնելու
համար, ունայնութիւն կը խօսի.

*Կամ Մահմետականները

Անոր սիրան անօրինութիւն կը ժողվէ
իրեն համար,
Որ դուրս կելլէով զրուցէ։
7 Ինծի դէմ մեկնող կը փախան ամէն
մէս առաղնները,
Իմ վրաս չարութիւն կը խորհին.
8 Ո՛ըն ըլ Զարմութեան բան մը անոր
վրայ թափեցաւ.
Եւ հիմա որ պառկած է, այլ ևս պիտի
չկրկէ։
9 Մինչև անգամ իմ բարեկամն՝ որուն
ապաւինած էի,
Իմ հացս ուտողն ինծի դէմ կրունկ
վերցուց։
10 Սակայն, ով Տէր, դուն ողորմի՛ ինծի և կանգնեցուր զիս,
Եւ ես փոխարինը տամ անոնց։
11 Ասկէ գիտեմ որ ինծի կը հաճիս,
Որ Թշնամիս իմ վրաս չպարծենայ։
12 Եւ զիս իմ անմեղութեանս մէջ կը պահես,
Եւ յաւիտեան զիս քու առջեդ կը կայնեցնես։
13 Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէրը Աստուածը
Յաւիտենից յաւիտենից, Ամէն և ամէն։

ՍԱՂՄ. ԽԲ

Գլխաւոր երաժշտին. Կորխի որդւոց
երգը։

1 Ինչպէս որ եղջերուն կարօտ վտակներուն կը փափաքի,
Այնպէս իմ անձս քեզի կը փափաքի,
ով Աստուած,
2 Հոգիս ծարաւի է Աստուծոյ կենդանի
Աստուծոյն.
Երբ պիտի գամ և երեսս Աստուծոյ առջեւն,
3 Ցորեկ և գիշեր արտասուքս ինծի հաց
եղան.
Քանզի ամէն օր ինծի կ'ըսեն թէ Ո՞ւր
է քու Աստուածդ։
4 Այս բաները միտքս կը բերեմ,
Եւ հոգիս կը թափեմ իմ ներսէս դիս,
Փութութեամբ որ բազմութեան հետ երթայի,
Անոնց հետ հանդէսով Աստուծոյ տունը մտնեի
Ուրախութեան և օրհնութեան ձայնով,
Տօնախմբող բազմութեան հետ։
5 Ինչո՞ւ կը ցածնաս, ով իմ հոգիս,
Եւ ինչո՞ւ իմ ներսէս դիս անհանգիստ ես.
Աստուծոյ յուսա. քանզի մի անգամ
ևս պիտի գովիմ զանիկա
Իր երեսին փրկութիւնը համար։
6 Ով իմ Աստուածս, հոգիս իմ ներսէս դիս կը ցածնայ.
Անոր համար քեզ կը յիշեմ Յորդանանու երկրէն
Եւ Հերմոնիներէ՝ * փոքր լեռնէն։
7 Անդունդն անդունդին կը կանչէ քու յորձանացդ ձայնով.
Քու ամէն հոհակներդ և ալիքդ իմ վրայէս անցան։
8 Ցորեկը Տէրը պիտի պատուիրէ իւր ողորմութիւնն,
Եւ գիշերն անոր երգը ինծի հետ պիտի ըլլայ,
Ե՝ աղօթք իմ կենացս Աստուծոյն
ըլլայ։
9 Պիտի ըսեմ Աստուծոյ՝ իմ վէմիս,
Ինչո՞ւ զիս մոռցած ես,
Ինչո՞ւ սրտաւմ պարթեւի
Թշնամւոյն հարստահարութենէն։
10 Ոսկրներս կոտրելու չափ թշնամիներս
զիս կը նախատեն՝
Ամէն օր ինծի ըսելով թէ Ո՞ր է քու
Աստուածդ։
11 Ինչո՞ւ կը ցածնաս, ով իմ հոգիս,
Եւ ինչո՞ւ իմ ներսէս դիս անհանգիստ
ես.
Աստուծոյ յուսա. քանզի մի անգամ
ևս պիտի գովիմ զանիկա,
Նա է իմ երեսիս փրկութիւնը և իմ
Աստուածս։

ՍԱՂՄ. ԽԳ

1 Ինծի դատաստան ըրէ, ով Աստուած,

*ԵԲՐ. Միսար

Եւ իրաւունքս պաշտպանէ
Սուրբ ժողովուրդին դէմ,
Նենգաւոր և անօրէն մարդէն դիս ազատէ։
2 Քանզի դուն ես իմ ամրութեանս Աստուածը.
Ինչո՞ւ ինծի կը մերժես,
Ինչո՞ւ սրտաւմ պարթեւի
Թշնամւոյն հարստահարութենէն։
3 Քու լոյսդ և ճշմարտութիւնդ զրկի.
Անոնք առաջնորդեն ինծի, և զիս հանեն
Քու սուրբ լեռդ և քու բնակարաններդ։
4 Եւ Աստուծոյ սեղանին քովէ պիտի երթամ,
Իմ ուրախութեանս և ցնծութեանս
Աստուծոյն առջեւն.
Եւ քեզ քնարով պիտի գովեմ,
Ով Աստուած՝ իմ Աստուածս։
5 Ինչո՞ւ կը ցածնաս, ով իմ հոգիս,
Եւ ինչո՞ւ իմ ներսէս դիս անհանգիստ
ես.
Աստուծոյ յուսա. ինչու որ անգամ
մ'ալ զանիկա պիտի գովեմ,
Ան է իմ երեսիս փրկութիւնը և իմ
Աստուածս։

ՍԱՂՄ. ԽԴ

Գլխաւոր երաժշտին. Կորխի որդւոց
երգը։

1 Ով Աստուած, մեր ականջներով լսեցինք,
Մեր հայրերը մեզի պատմեցին
Այն գործը զոր անոնց օրերը գործեցիր
Առջի ժամանակը։
2 Դուն քու ձեռքովդ հեթանոսները քշեցիր,
Եւ *զանոնք անկեցիր.
Ջարչարեցիր ժողովուրդները,
Եւ տարածեցիր զանոնք։
3 Քանզի ոչ թէ իրենց սրով ժառանգեցին երկիրը,

*Այսինքն՝ մեր հայրերը

Եւ ոչ թէ իրենց բազուկը զանոնք փրկեց,
Այլ քու աջ ձեռքդ և քու բազուկդ
և քու երեսիդ լոյսը.
Վասն զի անոնց հաճեցար։
4 Դուն ինքդ ես իմ Թագաւորս, ով Աստուած.
Հրամայեա տալ Յակոբայ փրկութիւնները համար։
5 Քեզմով մեր թշնամիները գետին պիտի զարնենք.
Մեր վրայ կելլողները քու անուանդ
ոտքի տակ պիտի առնենք։
6 Վասն զի աղեղիս չեմ յուսար,
Եւ թուր զիս չիրնար ազատել.
7 Այլ դուն մեզ կը փրկես մեր թշնամիներէն,
Եւ մեզ ատողները ամօթով կ'ընես։
8 Այնէն օր Աստուածով կը պարծենանք,
Եւ յաւիտեան քու անունդ պիտի գովենք։ (Սէլա)
9 Սակայն մեզ մերժեցիր և խայտառակ ըրիր,
Եւ մեր զօրաց հետ չելար։
10 Թշնամիէն մեզ ետ դարձուցիր,
Եւ մեզ ատողները հաւկզոպաեցին իրենց համար։
11 Մեզ ոչխարի պէս ուտելու տուիր,
Եւ հեթանոսներուն մէջ զմեզ ցրուեցիր։
12 Քու ժողովուրդդ ոչինչ գնով ծախեցիր,
Եւ չաւելցուցիր քու հարստութենէդ անոնց գիներովը։
13 Մեր դրացիներուն առջեւ մեզ խայտառակ ըրիր,
Մեր բոլորտիքը եղողներուն ծաղր և կատակ։
14 Մեզ հեթանոսներուն մէջ առակ ըրիր,
Ե՝ ժողովուրդց մէջ իրենց գլուխը ընդրցուելու պատճառ։
15 Ամէն օր իմ նախատինքս առջեւս է,
Եւ երեսիս ամօթը զիս կը ծածկէ՝
16 Նախատողին և հայհոյողին ձայնէն,
Թշնամւոյն և վրէժխնդրին երեսէն։
17 Այս ամէնը մեր վրայ եկաւ,
Սակայն մենք քեզ չմոռցանք և քու ուխտիդ սուտ չեղանք։

18 Մեր աթոռը եա չդարձան,
Եւ մեր քաղաքը քու ծամբէդ դուրս չկաւ.
19 Թէպէտ շնագայլերու եղած տեղն զմեզ ցրտեցիր,
Եւ մահուան սուերով զմեզ ծածկեցիր.
20 Եթէ մեր Աստուծոյն անունը մոռցած ենք,
Կամ օտար աստուծոյ մեր ձեռքը երկնցուցած ենք,
21 Միթէ Աստուած այս բանը պիտի չիրնառո՞ւ,
Քանզի ինք սրտին գաղտնիքը գիտէ։
22 Բայց ամէն օր քեզի համար կը սպանուինք,
Մորթուելու ոչխարի պէս կը համբուինք։
23 Արթնցիր, ով Տէր, ինչո՞ւ կը քնանաս.
Ելիր, մի մերժեր Դուն յաւիտեան։
24 Ինչո՞ւ երեսդ կը ծածկես,
Մեր աղտութիւնը և տառապանքը կը մոռնաս։
25 Քանզի մեր անձը մինչև հողը ծռեցաւ,
Մեր փորը գետին փակաւ։
26 Ելիր մեր օգնութեանը,
Եւ ազատէ զմեզ քու ողորմութեանդ համար։

## ՍԱՂՄ. ԽԵ

Գլխաւոր երաժշտին, Շօշանիմի վրայ.
Կորխի որդւոց քերթուածը. երգ սիրոյ։

1 Իմ սրտիս բարի խօսք կը բղխի.
Շարադրածս թագաւորին համար կը խօսիմ.
Լեզուս արագագիր գրչի պէս է։
2 Դուն մարդոց որդիներէն աւելի գեղեցիկ ես.
Քու շրթանցդ վրայ շնորհք թափուած է.
Անոր համար Աստուած քեզ օրհնեց յաւիտեան։
3 Ով հզօր, թուրդ մէջքդ կապէ
Քու փառքովդ և վայելչութեամբդ։
4 Եւ քու վայելչութեամբդ յաջողուէ.
Հաստատութեան և հեզութեան և արդարութեան համար հնծիր.
Եւ քու աջ ձեռքդ քեզի սքանչելի բաներ պիտի սորվեցնէ։
5 Քու նետերդ սրուած են,
Ե՛ թագաւորին թշնամիներուն սրտին մէջ ցաւո՛ւ կ՚ըլլան.
Ժողովուրդները քու ներքեւդ պիտի իյնան։
6 Ո՛վ Աստուած, քու աթոռդ յաւիտեանս յաւիտենից է.
Քու թագաւորութեանդ գաւազանն ուղղութեան գաւազան է.
7 Արդարութիւն կը սիրես և անօրէնութիւնը կ՚ատես.
Անոր համար, ով Աստուած, քու Աստուածդ
Ուրախութեան իւղով զքեզ օծեց քու ընկերներէդ աւելի։
8 Քու բոլոր հանդերձներդ զմուռա և հալուճ և կասիա կը հոտին.
Փղոսկրէ պալատներէն տաղերը քեզ ուրախացուցին,
9 Թագաւորներուն աղջիկները քու պատուականներուդ մէջ են.
Թագուհին քու աջ կողմդ կը կանգնի
Ոսկիով ասիով շքեղապէս։
10 Ով աղջիկ, լսէ և տես, և քու ականջդ ծռէ.
Մոռցիր քու ժողովուրդդ և քու հօրդ տունը,
11 Անտես թագաւորը պիտի ցանկայ քու գեղեցկութեանդ,
Վասն զի նա է քու տէրդ, և անոր երկրպագութիւն բրէ։
12 Եւ Տիւրոսի աղջիկը՝ ժողովուրդին հարուստները
Ընծայով պիտի խնդրեն քու երեսդ։
13 Թագաւորին աղջիկը բոլորովին փառաւոր է ներսը,
Ոսկի թելով հիւսուած է անոր հանդերձը։
14 Նկարահերիսած հանդերձով պիտի բերուի թագաւորին։

---

*Կամ ուսի



Անոր եղեւնի եկող աղջիկ ընկերները քեզի պիտի բերուին։
15 Ցնծութեամբ և ուրախութեամբ պիտի բերուին,
Թագաւորին պալատը պիտի մտնեն։
16 Քու հայրերուդ տեղը որդիդ պիտի ըլլան.
Բոլոր երկրին մէջ իշխաններ պիտի ընես զանոնք։
17 Քու անունդ հաշակել պիտի տամ ազգ մ՚ազգ մինչև ազգ.
Անոր համար ժողովուրդներն զքեզ պիտի գովեն յաւիտենից յաւիտենից։

## ՍԱՂՄ. ԽԶ

Գլխաւոր երաժշտին. Կորխի որդւոց երգը Ալամոթի վրայ։

1 Աստուած մեր ապաւէնը և զօրութիւնն է.
Նեղութիւններուն մէջ խիստ օգնական կը գտնուի։
2 Անոր համար պիտի չվախնանք, թէև երկիրը փոխուի,
Եւ լեռները ծովուն սիրտը ձգուին։
3 Թէև անոր ջուրերը գոռան և պղտորին,
Լեռները դողան անոր ուռնալով, (Սէլա)
4 Գետի վտակները պիտի ուրախացունեն Աստուծոյ քաղաքը՝
Բարձրելոյն սուրբ բնակարանները։
5 Աստուած անոր մէջ է, անկիւ պիտի չսասանի.
Աստուած անոր պիտի օգնէ առտուանց կանուխ։
6 Հեթանոսները կը խռովին, թագաւորութիւնները կը շարժին.
Բարձրեցաւ իր ձայնը կաւապայ, երկիրը կը հալի։
7 Զօրաց Տէրը մեզի հետ է.
Յակոբայ Աստուածը մեզի ապաւէն է, (Սէլա)
8 Եկէք և տեսէք Տէրոջը գործերը,
Որ աւերումներ բրաւ երկրի մէջ։
9 Պատերազմները կը դադրեցունէ մինչև ի երկրի ծայրը.
Աղեղը կը կոտրուի և նիզակը կը ջարդէ, կառքերը կրակով կ՚այրէ։
10 Հանդարտ կեցէք և ճանչցէք որ ես եմ Աստուած.
Հեթանոսներուն մէջ պիտի բարձրանամ, երկրի վրայ պիտի բարձրանամ։
11 Զօրաց Տէրը մեզի հետ է,
Յակոբայ Աստուածը մեզի ապաւէն է. (Սէլա)

## ՍԱՂՄ. ԽԷ

Գլխաւոր երաժշտին. Կորխի որդւոց Սաղմոս։

1 Ծափ զարկէք, բոլոր ժողովուրդներ,
Ցնծութեան ձայնով Աստուծոյ ազաղակեցէք։
2 վասն զի Տէրը բարձեալ է ահարկու է.
Բոլոր երկրի վրայ մեծ թագաւոր է։
3 Ժողովուրդները մեզի կը հնազանդեցուցանէ,
Եւ ազգերը մեր ոտքերուն տակ։
4 Ընտրեց մեզի մեր ժառանգութիւնը,
Յակոբայ վսեմութիւնը՝ զոր սիրեց։ (Սէլա)
5 Աստուած ցնծութեամբ վեր կաւ,
Տէրը փողի ձայնով։
6 Սաղմոս երգեցէք Աստուծոյ, սաղմոս երգեցէք.
Սաղմոս երգեցէք մեր թագաւորին, սաղմոս երգեցէք։
7 Վասն զի բոլոր երկրի վրայ թագաւոր Աստուած է.
Երգ երգեցէք ուժով։
8 Աստուած ազգերուն վրայ կը թագաւորէ,
Աստուած կը նստի իր սուրբ աթոռին վրայ։
9 Ժողովրդոց իշխանները ժողովուեցան Աբրահամի Աստուծոյն ժողովրդեան հետ.
Վասն զի երկրի ապարանքներն Աստուծոյ են.
Ինք չատ բարձրացած է։

## ՍԱՂՄ. ԽԸ

Կարճել որդւոց երգը Սաղմոսաց։

1 Տէրը մեծ է և օրհնեալ է յոյժ
Մեր Աստուծոյն քաղաքին մէջ՝
Իւր սուրբ լեռան վրայ։
2 Գեղեցիկ բարձրութեամբ,
Բոլոր երկրի ուրախութիւնը՝
Հիւսիսային կողմերը Սիոն լեռն է,
Մեծ թագաւորին քաղաքը։
3 Աստուած անոր պալատներուն մէջ
Ապաւէն ճանցուած է։
4 Վասն զի ահա թագաւորները ժողովուեցան,
Ե՛ւ միասին անցան։
5 Անոնք տեսածնուն պէս զարմացան.
Զարհուրեցան՝ շուտով փախան։
6 Հոն դողութիւնը բռնեց զանոնք,
Ե՛ւ ցաւը՝ ծնանողի ցաւէ պէս։
7 Արեւելեան հովով
Թարսիսի նաւերը կը խորտակես։
8 Ինչպէս որ լսեցինք, նոյնպէս և տեսանք
Զօրութեանց Տէրոջը քաղաքին մէջ,
Մեր Աստուծոյն քաղաքին մէջ.
Աստուած անիկա պիտի հաստատէ յաւիտեան։ (Սէլայ։)
9 Ով Աստուած, քու ողորմութեանդ
վրայ կը մտածենք
Քու տաճարիդ մէջ։
10 Քու գովութիւնդ, ով Աստուած,
Քու անուանդ պէս մինչև երկրին ծայրերն է.
Արդարութեամբ լեցուն է քու աջ ձեռքդ։
11 Սիօն լեռը թող ուրախանայ,
Ե՛ւ Յուդայի աղջիկները թող ցնծան
Քու դատաստաններուդ համար։
12 Սիոնին չորս կողմը պտտեցէք,
Եւ անոր բոլորտիքը շրջուեցէք
Ե՛ւ աշտարակները համրեցէք։
13 Ուշադրութեամբ դիտեցէք անոր պարիսպները.
Անոր պալատները դիտեցէք,
Որ գալու ազգին պատմէք։
14 Վասն զի այս Աստուածը մեր Աստուածն է յաւիտեան յաւիտենից.
Անիկա պիտի առաջնորդէ մեզ մինչև ի մահ։

## ՍԱՂՄ. ԽԹ

Գլխաւոր երաժշտին. Կարճել որդւոց Սաղմոսաց։

1 Լսեցէք զայս, ով բոլոր ազգեր,
Ականջ դրէք, աշխարհի բոլոր բնակիչներ,
2 Թամիկներ և ազնուականներ,
Հարուստներ և աղքատներ ի միասին։
3 Բերանս խնամութիւն պիտի խօսի,
Եւ սրտիս խորհուրդները՝ հանճար։
4 Իմ ականջս առակի պիտի ծռեմ,
Խրթնաբանութիւնս քնարով պիտի բանամ։
5 Ինչո՞ւ վախնամ չար օրերուն մէջ,
Երբ դաւադիրներուն անօրէնութիւնը չորս կողմս կը պատէ։
6 Իրենց զօրութեան յուսացողներուն
Ե՛ւ իրենց հարստութեան բազմութեամբ պարծողներուն
7 Մեկը բնաւ չկրնար փրկել իր եղբայրը,
Ոչ ալ անոր վրկանքն Աստուծոյ հասուցանել.
8 (Քանզի սուղ է անոնց անձին փրկութեան գինը,
Ե՛ւ յաւիտեան պիտի դադրի.)
9 Որ ալ ապրի յաւիտեան,
Ե՛ւ տրտիանալու չտեսնէ,
10 Վասն զի կը տեսնէ թէ իմաստունները կը մեռնին,
Յիմարը և անխելքն ի միասին կը կորսուին,
Եւ իրենց ստացուածները ուրիշներուն կը թողուն։
11 Անոնց խորհուրդն այն է թէ իրենց տուները յաւիտեան պիտի տեւեն,
Ե՛ւ իրենց բնակարաններն ազգէ մինչև ազգ.
Երկիրներն իրենց անուններով կը կոչեն։

*Կամ իմ գաբրէտպարներուս



12 Բայց մարդը պատուոյ մէջ չմնաց,
Անասուններուն նման է՝ կը կորսուի։
13 Անոնց այս ճամբան իրենց յիմարութիւն է,
Սակայն անոնց ետեւէն եկողներն անոնց խօսքին հաճութիւն պիտի տան։ (Սէլայ։)
14 Անոնք ոչխարներու պէս գերեզման կը դրուին.
Մահը պիտի հովուէ զանոնք.
Եւ ուղիներն անոնց վրայ պիտի տիրեն առտուընջ.
Եւ անոնց գեմքը գերեզմանը պիտի մաշեցնէ իրենց բնակարանէն։
15 Սակայն Աստուած գերեզմանին ձեռքէն պիտի փրկէ իմ անձս,
Վասն զի զիս պիտի ընդունի։ (Սէլայ։)
16 Մի վախնար երբ մարդ մը հարստանայ,
Եւ անոր տան փառքը չաճի։
17 Վասն զի մեռնելու ատեն ամենևին բան մը իր հետ պիտի չառնէ,
Ե՛ւ անոր փառքն անոր հետեւէն պիտի չիջնէ։
18 Թէպետև իր անձն օրհնեց իր կենդանութեան ատեն,
(Եւ քեզ կը գովեն երբ դուն քու անձիդ բարութիւն կ'ընես։)
19 Ա՛խ իր նախնիներուն ազգին պիտի երթայ.
Մինչև յաւիտեան լոյս պիտի չտեսնեն։
20 Մարդը որ պատուոյ մէջ է և խոհեմութիւն չունի,
Անասուններուն կը նմանի որ կը կորսուի։

## ՍԱՂՄ. Ն

Սափոնս Ասափայ։

1 Աստուածներուն Աստուածը՝ Տէրը խօսեցաւ,
Եւ երկիրը կանչեց արեւելքէն մինչև արեւմուտք։
2 Սիոնէն՝ գեղեցկութեան կատարեալ թենէն
Աստուած փայլեցաւ։
3 Մեր Աստուածը պիտի գայ և պիտի չլռէ.
Անոր առջեւն ճարակ կրակ,
Եւ բոլորտիքը սաստիկ փոթորիկ պիտի ըլլայ։
4 Երկինքը պիտի կանչէ վերէն,
Եւ երկիրը՝ իր ժողովուրդը դատելու համար։
5 Ինծի ժողվեցէք իմ սուրբերս,
Ե՛ւ ինծի հետ զոհով ուխտ ընողները։
6 Եւ երկինք անոր արդարութիւնը պիտի պատմեն,
Վասն զի Աստուած ինք դատաւոր է։ (Սէլայ։)
7 Լսէ, ով իմ ժողովուրդս, և խօսիմ.
Ով Իսրայէլ, և քեզի վկայութիւն ընեմ,
Որ ես եմ Աստուած՝ քու Աստուածդ։
8 Ոչ թէ քու զոհերուդ համար քեզ կը յանդիմանեմ,
Եւ քու ողջակէզներուդ համար՝ որ միշտ իմ առջեւս են։
9 Քու տանէդ զուարակ չեմ առներ,
Ոչ ալ քու գոմերէդ նոխազներ։
10 Վասն զի իմ են անտառին բոլոր գազանները,
Հազարաւոր լեռներուն անասունները։
11 Ես գիտեմ լեռներուն բոլոր թռչուները,
Եւ դաշտի գազանները իմ քովս են։
12 Եթէ անօթենամ քեզի պիտի չըսեմ.
Վասն զի աշխարհն և անոր լիութիւնն իմս են։
13 Միթէ ես ցուլերու միս կ'ուտեմ,
Կամ նոխազներու արիւն կը խմե՞մ։
14 Շնորհակալութիւնն զոհէ Աստուծոյ,
Եւ քու ուխտերդ կատարէ Բարձրեալին։
15 Եւ նեղութեան օրն ինծի կանչէ.
Ես քեզ պիտի ազատեմ, և դուն զիս պիտի փառաւորես։
16 Սակայն Աստուած ամբարիշտին կ'ըսէ,
Քեզի ի՞նչ՝ որ դուն իմ օրէնքս կը պատմես,
Եւ իմ ուխտս բերանդ կ'առնես։
17 Վասն զի դուն խրատն ատեցիր,
Եւ իմ խօսքս ետիդ ձգեցիր։

*Կամ առաքութիւնը իմ քովս է։

18 Գողը առանելով՝ անոր հետ մեռանիք-
ցար,
Եւ շնացողներուն հետ բաժին ունեցար.
19 Քու բերանդ չարութեան առիթը,
Եւ քու լեզուդ նենգութիւն կը հնարէ.
20 Կը նստես եղբօրդ դէմ կը խօսիս,
Մօրդ որդւոյն դէմ չարախօսութիւն
կ'ընես.
21 Ա՛ս բաներէն ըրիր և ես լռեցի.
Կարծեցիր թէ ես բոլորովին քեզի կը
նմանիմ.
Բա՛յց քեզ պիտի յանդիմանեմ,
Եւ աչքերուդ առջեւ պիտի չարեմ [1]—
ընդէ՛ր.
22 Ա՛րդ իմացէ՛ք զա՛յս, ով դուք Աստուած
մոռցողնե՛ր,
Զըլլայ որ չե՛ղ պատառեմ, և ազատող
ալ չգտնուի.
23 Շնորհակալութիւն մատուցանողը զիս
կը փառաւորէ.
Եւ ե՛ղ ճամբան զգուշացողին
Պիտի ցուցնեմ Աստուծոյ փրկու-
թիւնը։

ՍԱՂՄ. ՅԱ

Գլխաւոր երաժշտին. Սպրմոն Դաւթի,
անոր Բերսարկի քով մանելէն ետ-
քը, Նաթան մարգարէին անոր ե-
կած ժամանակը։

1 Ողորմի՛ ինծի, ով Աստուած, քու ո-
ղորմութեանդ համեմատ,
Քու առատ գթութեանդ համեմատ
ջնջէ՛ իմ յանցանքներս։
2 Իմ անօրէնութենէս բոլորովին զիս
լուա,
Եւ իմ մեղքէս զիս սրբէ։
3 Վասն զի ես կը ճանչնամ իմ յանցանք-
ներս,
Եւ իմ մեղքս միշտ իմ առջեւս է։
4 Քեզի՛ միայն քեզի դէմ մեղանչեցի,
Եւ քու աչքերուդ առջեւ չարութիւն
ըրի.
Որ արդար ըլլաս խօսքերուդ մէջ,
Եւ անարատ ըլլաս դատաստանիդ մէջ։
5 Ահա ես անօրէնութեամբ ծնայ,
Եւ իմ մայրս մեղքով յղացաւ զիս։
6 Ահա դուն ճշմարտութիւն կ'ուզես
երիկամանդ մէջ.
Եւ ծածուկ տեղը իմաստութիւն պիտի
դիտցուներս ինծի։
7 Զոպային մշակաւ մաքրէ զիս, և մա-
քուր ըլլամ.
Զիս լուա, և ձիւնէն աւելի սերմանիկ
ըլլամ։
8 Ցնծութիւն և ուրախութիւն լսել տուր
ինծի,
Թող ցնծան այն ոսկորները որ կտրեցիր։
9 Իմ մեղքերս երեսդ ծածկէ,
Եւ բոլոր անօրէնութիւններս ջնջէ։
10 Ով Աստուած, իմ մէջս մաքուր սիրտ
ստեղծէ,
Եւ իմ ներսի դիս ուղիղ հոգի նորոգէ։
11 Զիս երեսէդ մի ձգեր,
Եւ քու Սուրբ Հոգիդ ինձմէ մի հաներ։
12 Քու փրկութեանդ ցնծութիւնն ինծի
նա դարձուր,
Եւ կամաւոր հոգի մը թող հաստատէ
զիս։
13 Ամբարիշտներուն պիտի սորվեցու-
նեմ քու ճամբաներդ,
Եւ մեղաւորները քեզի պիտի դառնան։
14 Ով Աստուա՛ծ իմ փրկութեանս Աս-
տուածը,
Փրկէ զիս արիւններէ՛ն։
Լեզուս ցնծութեամբ պիտի խօսի քու
արդարութեանդ վրայ։
15 Ով Տէր, իմ շրթունքս բաց,
Եւ բերանս պիտի պատմէ քու գովե-
լութիւնդ։
16 Վասն զի զոհի չես հաճիր որ ընծի-
ա՛տուցանեմ.
Դուն ողջակէզի ալ չես հաւնիր։
17 Աստուծոյ զոհը կատած հոգին է.
Կոտրած և խոնարհ սիրտը, ով Աս-
տուա՛ծ, դուն չես անարգեր։
18 Քու բարեհաճութեամբդ Սիոնի բա-
րիք ըրէ՛,
Երուսաղէմի պարիսպները չինէ։
19 Անատնի պիտի հաւնիս արդարութեան
զոհերուն՝

[1] Կամ ապին։



Ողջակէզներուն և բոլորովին ա՛ղբատած
զոհերուն.
Անատնին քու սեղանիդ վրայ զա՛ռակ-
ներ պիտի մատուցանեն։

ՍԱՂՄ. ՆԲ

Գլխաւոր երաժշտին. Դաւթի երգը,
երբ Դոեկ Եդովմացին եկաւ և
պատմեց Սաուղին, և անոր բաւ Թէ
Դաւիթ Աբիմելէքի տունը մտած է։

1 Ինչո՞ւ անօրէնութեամբ կը պարծիս,
ով բռնաւո՛ր.
Աստուծոյ գթութիւնն ամէն օր կայ։
2 Լեզուդ չարութիւններ կը հնարէ,
Սուր մկրատ պէս նենգութիւն կը
գործէ.
3 Չարութիւնը բարութենէն աւելի կը
սիրես,
Ե՛ւ սուտին արդարութիւնը խօսե-
լէն աւելի։ (Սէլա)
4 Ամէն կործանման խօսքերը
Ե՛ւ նենգաւոր լեզուն կը սիրես։
5 Աստուած ալ յաւիտեան քեզ պիտի
կործանէ,
Քեզ պիտի բռնէ և քեզ հանէ ի՛ր բը-
նակարանէդ,
Եւ քեզ արմատէդ պիտի խլէ կենդա-
նեաց երկրին։ (Սէլա)
6 Արդարները պիտի տեսնեն և վախ-
նան,
Եւ անոր վրայ պիտի ծիծաղին՝ ըսելո՛վ
7 Ահա այն մարդը որ զԱստուած իրեն
ամրութիւն չըրաւ,
Այլ իր չատ հարստութեան վստահե-
ցա՛ւ,
Ե՛ւ իր անօրէնութեամբ զօրացա՛։
8 Սակայն ես Աստուծոյ տան մէջ կա-
նանչ ձիթենւոյ պէս եմ.
Աստուծոյ ողորմութեան կը յուսամ
յաւիտեան յաւիտենից։
9 Քեզ պիտի գոհանամ յաւիտեան,
Որ ա՛յս ընեցիր կատարեցիր.
Եւ քու անունդ պիտի յուսամ,
Վասն զի բարի է սուրբերուդ առջեւ։

ՍԱՂՄ. ՆԳ

Գլխաւոր երաժշտին, Մահալաթի
վրայ. Դաւթի երգը։

1 Անզգամն իր սրտին մէջ բաւ Թէ
Աստուած չկայ.
Ապականեցան և պիղծ անօրէնութիւն
ըրին.
Մէկը չկայ որ ապրկութիւն ընէ։
2 Աստուած երկինքէն նայեցաւ մարդոց
որդիներուն վրայ,
Որ տեսնէ թէ կայ արդեօք խոհեմ ո՛ն
մէկը
Որ զԱստուած փնտռէ։
3 Ամէնքը խոտորեցան, ի միասին անպի-
տան եղան.
Պզկութիւն ընող մը չկայ, մէկ մըն ալ
չկայ։
4 Մի՞թէ չե՛ն ճանչնար անօրէնութիւն ը-
նողները,
Որ հաց ուտելու պէս իմ ժողովուրդս
կ'ուտեն,
Ե՛ւ Աստուծոյ չեն կանչեր։
5 Անոնք այն տեղը շատ վախցան՝ ո՛ր
վախ չկար.
Քանզի քեզ պաշարողներուն ոսկորները
ցրուեց Աստուած.
Ամչցուցիր զանո՛նք, վասն զի Աստուած
անարգեց զանոնք։
6 Երանի՛ Թէ Սիոնէ գար Իսրայէլի փըր-
կութիւնը.
Աստուած իր ժողովուրդը գերութե-
նէ դարձուցած ատենը՝
Յակոբ պիտի ցնծայ և Իսրայէլ ուրախ
պիտի ըլլայ։

ՍԱՂՄ. ՆԴ

Գլխաւոր երաժշտին, Նկիլնօթի վրայ.
Դաւթի երգը, անատնին որ Զիփա-
ցիք եկան և բան Սաուղի, Ահա
Դաւիթ մեր քով պահուած է։

1 Ո՛վ Աստուա՛ծ, քու անուանդ զիս ա-
զատե՛,
Եւ քու զօրութեամբդ իրաւունք ըրէ՛
ինծի։

2 Ով Աստուած, լսէ իմ աղօթքս,
Ընդունիս խօսքերուն ականջ դիր։
3 Վասն զի օտարներն իմ վրաս եղան,
Եւ բռնաւորները կը փնտռեն իմ անձս,
Ե՛ւ զԱստուած իրենց առջեւ չդրին։
(Սէլայ։)
4 Ահա Աստուած ինծի օգնական է.
Տէրը իմ հոգւոյս պաշտպաններուն
հետ է։
5 Զարմանքինը թշնամիներուս վրայ պիտի դարձնէ։
Ի՛ւր ճշմարտութեամբդ կորնչցուս զանոնք։
6 Ես իմ կամքովս քեզի զոհ պիտի մատուցանեմ։
Ով Տէր, քու անունդ պիտի գովեմ,
վասն զի բարի է,
7 վասն զի ամէն նեղութենէ զիս փրկեց,
Եւ իմ աչքս թշնամիներուս ետ-ոտքը
տեսաւ։

## ՍԱՂՄ. ԾԴ

Գլխաւոր երաժշտին, Նկինօթի վրայ. Դաւիթի երգը։

1 Ով Աստուած, ականջ դիր աղօթքիս,
Եւ խնդրուածքէս քու էբէոպ մի ծածկեր։
2 Մարիկ ըրէ և պատասխանէ ինծի.
Իմ դանդաղումս *կը մոլորիմ և կը խռովիմ,
3 Թշնամւոյն ձայնէն և ամբարշտին նեղութենէն ահէն.
Վասն զի իմ վրաս անիրաւութիւն կը բերեն,
Եւ բարկութեամբ զիս կը հալածեն։
4 Սիրտս դողայ ներսիս դիս,
Եւ մահուան արհաւիրք բնկան վրաս։
5 Վախ և դող եկաւ իմ վրաս,
Եւ սոսկումը զիս ծածկեց։
6 Եւ ըսի, Երանի թէ աղաւնւոյ պէս թեւեր ունենայի,
Որ թռչէի և հանգչէի։
7 Ահա հեռուն կը փախչէի,
Անապատին մէջ կը բնակէի։ (Սէլայ։)
8 Սաստիկ հովէն և փոթորկէն
Իմ փախչելս կ'արագրցունէի։
9 Ով Տէր, կորսնցուր, անոնց լեզուները բաժնէ,
Վասն զի քաղաքին մէջ բռնութիւն և կռիւ տեսայ։
10 Շուրէկ և գիշեր անոր չորս կողմն՝ անոր պարիսպներուն վրայ կը պտըտցնեն։
Անօրէնութիւն և չարիք կայ անոր մէջ,
11 Անոր մէջ եղեռնագործութիւն կայ.
Եւ բռնութիւն և նենգութիւն անոր հրապարակներէն չեն զատուիր։
12 Քանզի թշնամին չէր զիս նախատողը,
որ համբերէի.
Կամ ատողը չէր իմ վրաս հպարտացողը, որ անկէ պահուէի։
13 Այլ դուն, ով մարդ, իմ հաւասարս,
Իմ ընկերս և ծանօթս,
14 Որ երթոյս հետ անոյշ խօսակցութիւն կ'ընէիր,
Ե՛ւ բազմութեան հետ Աստուծոյ տունը կ'երթայինք։
15 Մահ յանկարծ անոնց վրայ պիտի հասնի,
Ե՛ւ ողջ ողջ դերեզման պիտի իջնեն,
Վասն զի իրենց բնակարաններուն և իրենց մէջ չարութիւն կայ։
16 Իսկ ես Աստուծոյ պիտի կանչեմ,
Եւ Տէրը զիս պիտի փրկէ։
17 Իրիկուն, առաւօտ և կէս օրը պիտի բողոքիմ և հառաչեմ,
Եւ անկաս պիտի լսէ իմ ձայնս։
18 Խաղաղութեամբ կը փրկէ իմ անձս ինծի դէմ եղած պատերազմէն,
Վասն զի շատեր կան իմ դէմս։
19 Աստուած պիտի լսէ,
Եւ յաւիտենականութեան մէջ բնակողը պիտի ցածցունէ զանոնք։ (Սէլայ։)
Քանզի չեն փոխուիր անոնք,
Եւ Աստուծմէ չեն վախնար։
20 Ձեռքն իրեն հետ հաշտութիւններուն վրայ երկընցուց,
Իր ուխտն աւրեց,



21 Անոր բերնին նորութիւնը կակուղ էն քան զկոգի,
Բայց անոր սրտին մէջ պատերազմ կայ.
Անոր խօսքերը կակուղ էն քան զձէթ,
Բայց մերկ սուրեր էն։
22 Քու հոգդ Տէրոջը վրայ ձգէ,
Եւ անիկա քեզ պիտի խնամէ.
Անիկա յաւիտեան սասանութիւն չտար արդարին։
23 Բայց դուն, ով Աստուած, զանոնք ապականութեան գուբին մէջ պիտի իջեցունես.
Արիւնահեղ և նենգաւոր մարդիկ իրենց օրերուն կէսին պիտի չհասնին,
Սակայն ես քեզի պիտի յուսամ։

## ՍԱՂՄ. ԾԶ

Գլխաւոր երաժշտին, Յեդութէթ-Երէմելիքին վրայ. Դաւիթի երգը, երբ Փղշտացիք Գեթի մէջ բռնեցին զանիկա։

1 Ով Աստուած, ողորմէ ինծի, վասն զի մարդը կ'ուզէ զիս կլլել.
Այժմն օր պատերազմ ընելով զիս կը նեղէ,
2 Թշնամիներս ամէն օր կ'ուզեն զիս կլլել,
Վասն զի շատ մարդիկ *ամբարտաւանութեամբ ինծի դէմ կը մարտնչին։
3 Վախցած օրս քեզի պիտի յուսամ,
4 Աստուծով պիտի գովեմ իւր խօսքը.
Աստուծոյ կը յուսամ, պիտի չվախնամ.
Մարմինն ինծի ի՞նչ կրնայ ընել։
5 Այժմն օր իմ †գաղափարս վնաս կուտան.
Իմ վրաս անոնց բոլոր խորհուրդները չարի համար են։
6 Կը ժողովուին և կը պահուտին,
Իմ շաւիղներս կը դիտեն,
Վասն զի իմ անձիս կը սպասեն։
7 Մեղք անօրէնութեամբ անոնց փրկութիւն կ'ըլլայ։
Բարկութեամբ ժողովուրդները վար ձգէ, ով Աստուած։

*Կամ բարձրէն, և կամ ով Բարձրեալ,
†Կամ խօսքերս կը ծռեն.

8 Իմ թափառական պարտիզս համրեցիր.
Արտասուքս քու պնակդ մէջ դիր։
Մի՞թէ անոնք քու գրքիդ մէջ չե՞ն։
9 Թէդէ կանչած օրս հա պիտի դառնան իմ թշնամիներս.
Զայս գիտեմ, վասն զի Աստուած ինծի հետ է։
10 Աստուծով պիտի գովեմ է՛ր խօսքը,
Տէրոջմով պիտի գովեմ է՛ր խօսքը,
11 Աստուծոյ կը յուսամ, պիտի չվախնամ.
Մարդ ինծի ի՞նչ կրնայ ընել։
12 Ով Աստուած, քու ուխտերդ իմ վրաս են.
Գէզի շնորհակալութիւններ պիտի հատուցանեմ,
13 վասն զի իմ անձս մահուանէ ազատեցիր,
Եւ ոտքերս գայթակղել չե՞ս ըլլար,
Որ Աստուծոյ առջեւ քալեմ կենդանիներուն լուսոյն մէջ։

## ՍԱՂՄ. ՃԱ

Գլխաւոր երաժշտին. *Ալ-թաշհէթ,
Դաւիթի երգը, Սաւուղ ղրկեաւ զեպ
ի քարայրը փախած աւուրը։

1 Ողորմէ ինծի, ով Աստուած, ողորմէ ինծի,
վասն զի իմ անձս քեզի կը յուսայ.
Եւ քու թեւերուդ հովանաւորութեան պիտի ապաւինիմ,
Մինչեւ որ թշուառութիւններն անցնին,
2 Բարձեալ Աստուծոյն պիտի ապաւինիմ,
Ինծի համար գործող Աստուծոյն,
3 Երկինքէն պիտի ղրկէ և փրկէ զիս,
Թէև զիս կլլել ուզողը ջնջ նախատէ. (Սէլայ։)
Աստուած պիտի ղրկէ իւր ողորմութիւնը և ճշմարտութիւնը.
4 Իմ անձս առիւծներու մէջ է.
Բոց փչող մարդոց որկրներուն մէջ կը պառկիմ,

*Այլեւս՝ մի կորսնցուներ։

Որոնց ակռաները նիզակներ և նետեր են,
եւ անոնց լեզուները սրած թուրեր են,
3 Ով Աստուած, երկինէ վրայ բարձրացիր։
Քու փառքդ բոլոր երկրի վրայ ըլլայ,
6 իմ քաջերուս սրտացի պատրաստեցին,
Անձամ վար ծռեցաւ.
փոս փորեցին առջեւս,
Ե՞ր երենք ինկան անոր մէջ։ (Սէլայ)
7 Սիրտս պատրաստ է, ով Աստուած,
սիրտս պատրաստ է.
Պիտի երգեմ և սաղմոս պիտի ըսեմ.
8 Արթնցիր, ով իմ փառքս.
Արթնցիր, ով սազով և քնար.
Ես կանուխ պիտի արթննամ։
9 Ով Տէր, ժողովուրդոց մէջ քեզ պիտի գովեմ.
Սաղմոս պիտի երգեմ քեզի ազգերու մէջ։
10 Վասն զի մեծ է քու ողորմութիւնդ մինչեւ երկինք,
Եւ քու ճշմարտութիւնդ մինչեւ ամպերը։
11 Երկինէ վրայ բարձրացիր, ով Աստուած,
Քու փառքդ բոլոր երկրի վրայ ըլլայ։

ՍԱՂՄՈՍ ՆԷ

Դպիրաց երաժշտին. Ալ-թաշհէթ,
Դաւիթ երգը,

1 Արդարեւ *անթաքրաւտ արդարութիւն
կը խօսիք,
Ու ղղութեամբ դատաստան կը տեսնէք, ով մարդոց որդիներ։
2 Արդարեւ սրտով անօրէնութիւններ կը գործէք.
Երկրի վրայ ձեր ձեռաց բռնութիւնը կը կշռէք։
3 Ամբարիշտներն էջերէն հէր արգանդէն խոտորեցան.
Որովայնէ կը մոլորին սուտ խօսելով։
4 Անոնց թոյնը օձի թունոյ պէս է,
խուլ խիի պէս՝ որ կը գոցէ իւր ականջները,
5 Որ չլսէ թովիչներու ձայնը,
թէկուզ հմտապատրաստեալ թովիչ կ'ըլլան։
6 Ով Աստուած, անոնց ակռաները իրենց բերաններուն մէջ փշրէ.
Ով Տէր, առիւծի կորիւններուն ծնօտները կտրատէ։
7 Թող անոնք հալին չորերու պէս ու կը վազեն.
Եղէ երենց ազեղները կը լարեն, թող կտորտին։
8 Խղուելի պէս՝ ու քալած ատենը կը հալի,
Ինկան մը վիժած պատկին պէս արեւը չտեսնեն։
9 Ձեր կաթսաները փուշերուն չը՛ն ըզգալուն առաջ,
Թէ թարմ և թէ այրուող չո՛ւերը փոթորկով պիտի ցրուէ։
10 Արդ արդ պիտի ուրախանայ, երբ վրէժխնդրութիւն տեսնէ.
Իւր ոտքերն ամբարշտին արեան մէջ պիտի լուայ։
11 Եւ մարդը պիտի րսէ Թէ Արդարեւ արդարին համար վարձք կայ.
Արդարեւ Աստուած կայ, որ երկրի վրայ դատաստան է։

ՍԱՂՄՈՍ ՆԹ

Կվասաւոր երաժշտին. Ալ-թաշհէթ,
Դաւիթ երգը, անատեն որ Սաուղ հղկեց, և տունը պահապանեցին որ մեռցնեն զանիկա։

1 Թշնամիներէս զիս փրկէ, ով իմ Աստուածս.
Իմ վրաս եղողներէն զիս վեր վերցուր։
2 Անօրէնութիւն գործողներէն զիս ազատէ,
Եւ արիւնահեղ մարդկանէ զիս փրկէ։
3 Վասն զի ահա իմ անձիս համար դարան մտան.
Զօրաւոր մարդիկ իմ վրաս ժողվուեցան,
Ոչ թէ ինձմէ և յանցանացս համար, ով Տէր.
4 Մեղք չունենալս առնելս վազելուն և պատրաստուելուն.
Արթնցիր զիս դիմաւորելու և նայէ։
5 Ով Տէր Աստուած զօրութեանց՝ Աստուած Իսրայէլի,
Արթնցիր բոլոր հեթանոսները քընդնելու.
Չար անօրէններուն բնաւ մի ողորմիր, (Սէլայ)
6 Անոնք իրիկուան ետ կը դառնան,
Շան պէս կ'ոռնան,
Եւ քաղաքին չորս կողմը կը պտրտին։
7 Ահա իրենց բերանէն չո՛ւ-չո՛ւ դուրս կը թափեն.
Անոնց շրթանց վրայ սուր կան.
Զանգի կ'ըսեն ըն ով պիտի լսէ։
8 Բայց դուն, ով Տէր, անոնց վրայ պիտի ծիծաղիս,
Բոլոր հեթանոսները ծաղր պիտի ընես։
9 Ով *իմ զօրութիւնս, քեզի պիտի սպասեմ,
Վասն զի Աստուած է իմ ապաւէնս։
10 Ողորմութեանս Աստուածն ինձի պիտի հանդիպի.
Աստուած պիտի ցոյց տայ ինծի թշնամիներուս չո՛ւքս։
11 Մի սպաններ զանոնք, որ ժողովուրդս չմոռնայ.
Զանոնք ցրուացուր բրէ քու զօրութեամբդ,
Եւ վար ձգէ զանոնք, ով Տէր՝ մեր վահանդ։
12 Անոնք իրենց բերաններուն մեղաց և շրթանց խօսքին համաձ՝
Իրենց սիրաթակաւանութեան մէջ թող բռնուին,
Նաև անիծից և սուտ խեան համար ըզձ կը խօսին։
13 Կատաղութեամբ, կատաղութեամբ՝ որ ոչնչանան,
Եւ գիտնան թէ Աստուած կը տիրէ Յակոբայ
Մինչեւ երկրի ծայրերը։ (Սէլայ)
14 Անոնք իրիկուան ետ պիտի դառնան,
Շան պէս պիտի ոռնան,

*Կամ անոր զօրութիւնը,



Եւ քաղաքին չորս կողմը պտրտին.
15 Ուտելիքի համար պիտի թափառին,
Եթէ յագենան՝ դիշերն ալ հոն անցնեն։
16 Բայց ես քու զօրութիւնդ պիտի երգեմ,
Եւ առաւօտուն քու ողորմութեամդ պիտի ցնծամ.
Վասն զի դուն ինծի պատսպարան եղար,
Եւ ապաւէն իմ նեղութեանս օրը։
17 Ով իմ զօրութիւնս, քեզի սաղմոս պիտի երգեմ,
Վասն զի իմ պատսպարանս Աստուած է՝
Իմ ողորմութեանս Աստուածը։

ՍԱՂՄՈՍ Կ

Դպիրաց երաժշտին, Շուսան-Եդութ վրայ· Դաւիթ երգը՝ ուսուցանելու համար, անատեն որ պատերազմեցաւ Միջագետաց Ասորւոց և Սուբայի Ասբուոց հետ, և Յովաբ ետ դառնալով՝ Եդոմեացիները տասներկու հազար հոգի զարկաւ Աղի ձորին մէջ։

1 Ով Աստուած, մեզ երեսկ թողուցիր,
Ցրուեցիր զմեզ՝ բարկացար. մեզի դարձիր։
2 Երկիրը դողացուցիր, անիկա պատռեցիր.
Անոր վնասուածքը նորոգէ, վասն զի կ'երերայ։
3 Քու ժողովրդեանդ խստութիւն ցուցուցիր,
Մեզի թմրութեան գինի խմցուցիր։
4 Բենչ վախցողներուդ դրօշ տուիր,
*Ճշմարտութեան համար վերցուանելու.” (Սէլայ.)
5 Որ քու սիրելիներդ փրկուին՝
Քու ձեռքովդ ապրեցուր և պատասխան տուր ինծի։
6 Աստուած †իւր սրբութեամբ՝ խօսեցաւ,
Ես պիտի ցնծամ, Սիւքէմ պիտի բաժնեմ,

*Կամ Որ փախչին աղեղին երեսէն.
†Կամ իւր սրբարանին մէջ

եւ Սոկքովմի հովիւը պիտի չափեմ։
7 Իմն է Գաղաադ եւ իմն է Մանասէ,
Եփրեմ գլուխս զօրութիւնն է.
Յուդա իմ օրէնսդիրս է.
8 Մովաբ իմ լուացուելու տանիս է.
Եդովմի վրայ պիտի ձգեմ իմ մուճակս.
Ով Փղշտացիք, ինծի համար ձայնով
ցնծացէք։
9 Ո՞վ պիտի տանի զիս պարսպաւոր քաղաքը.
Ո՞վ պիտի առաջնորդէ ինծի մինչեւ Եդոմ,
10 Ո՞չ ապաքէն դուն, ով Աստուած, որ մերկեսիդ ձգեցիր մեզ,
Եւ մեր զօրաց հետ չելար, ով Աստուած։
11 Նեղութեան միջէն մեզի օգնութիւն տուր,
Վասն զի բնաւ նայն է մարդուն փրկութիւնը։
12 Աստուծով քաջութիւն պիտի ընենք.
Եւ նա պիտի կոխէ մեր թշնամիները։

## ՍԱՂՄ. ԿԱ

Գլխաւոր երաժշտին, Հակինաթի վրայ. Սաղմոս Դաւթի։

1 Ով Աստուած, լսէ աղաղակս,
Ե՛ մտիկ ըրէ աղօթքս։
2 Երկրի ծայրէն քեզի պիտի կանչեմ սրտիս մաքլուելու առնիւ.
Զիս ձգիր բարձր վէմին առաջնորդէ ինծի։
3 Վասն զի դուն ինծի ապաւէն եղար,
Ամուր աշտարակ թշնամւոյն երեսին։
4 Քու խորանիդ մէջ պիտի բնակիմ եւ յուսամ։
Քու թեւերուդ հովանաւորութեանն ներքեւ պիտի ապաւինիմ։ (Սէլա)
5 Վասն զի դուն, ով Աստուած, լսեցիր իմ ուխտերս.
Քու անունէդ վախցողներուն ժառանգութիւնն էիր տուր։
6 Թագաւորին օրերուն վրայ օրեր պիտի աւելցնես.
Անոր տարիները իրարու ազգ ի մինչեւ ազգ պիտի ըլլան։
7 Անիկա յաւիտեան Աստուծոյ առջին պիտի նստի.
Ողորմութիւնն ու ճշմարտութիւնն պատրաստէ որ զանիկա պահպանեն։
8 Այսպէս սաղմոս պիտի երգեմ քու անուանդ յաւիտեան,
Որ ամէն օր ուխտերս կատարեմ։

## ՍԱՂՄ. ԿԲ

Գլխաւոր երաժշտին, Իդիթունի վրայ. Սաղմոս Դաւթի։

1 Աստուած իմ, անձս լուիր կը սպասէ Աստուծոյ.
Անկէ է իմ փրկութիւնս։
2 Արդարեւ նա է իմ վէմս եւ փրկութիւնս.
Իմ ապաւէնս է, չատ պիտի չսասանիմ։
3 Մինչեւ ի՞րդի մարդու վրայ կը յարձակիք.
Դուք ամէնդդ պիտի կաքաւիք ջախջախուած պատի նման կամ խախտած ցանկի պէս։
4 Արդարեւ իրենց պատուէն ձգելու խորհուրդ կ'ընեն.
Սուտին կը սիրեն.
Իրենց բերնով կ'օրհնեն,
Բայց իրենց սրտով կ'անիծեն։ (Սէլա)
5 Ով իմ անձս, միայն Աստուծոյ սպասէ,
Վասն զի անկէ է իմ յոյսս։
6 Արդարեւ նա է իմ վէմս եւ փրկութիւնս.
Իմ ապաւէնս է, պիտի չսասանիմ։
7 Աստուծմէ է իմ փրկութիւնս եւ փառքս.
Զօրութեանս վէմը՝ ապաւէնս Աստուած է։
8 Ամէն ժամանակ անոր յուսացէք, ով ժողովուրդ.
Անոր առջեւն ձեր սիրտերը թափեցէք.
Աստուած ապաւէն է մեզի։ (Սէլա)
9 Արդարեւ ռամիկ մարդիկ ընդունայն են,
Ազնուական մարդիկ սուտ են.
Եթէ կշռայ մէջ դրուելու ըլլան,
Ամէնքն ալ ունայնութենէ ընդհանրեն են։
10 Հարստահարութեան մի յուսաք,
Եւ յափշտակութեան վրայ ունայն յոյս մի դնէք.



Հարստութիւնը եթէ յառնայ,
Սիրտ վրայ սրա մի դնէք։
11 Մէկ անգամ խօսեցաւ Աստուած.
Երկու անգամ լսեցի զայս,
Թէ զօրութիւնն Աստուծոյ է։
12 Ողորմութիւնն ալ քու կդ է, ով Տէր,
Քանզի իւրաքանչիւր իւր գործոց համեմատ հատուցում կ'ընես։

## ՍԱՂՄ. ԿԳ

Սաղմոս Դաւթի, երբ Յուդայի անապատին մէջ էր։

1 Ով Աստուած, դուն ես իմ Աստուածս,
Ես առաւօտուց քեզ կը փնտռեմ։
Հոգիս կը ծարաւի քեզի, և մարմինս քեզի կը փափաքի
Զօր և ծարաւ տեղը, ուր չկայ ջուր,
2 Քու զօրութիւնդ և փառքդ տեսնելու համար,
Ինչպէս որ զքեզ տեսած եմ սրբարանին մէջ։
3 Վասն զի քու ողորմութիւնդ կեանքէն աղէկ է,
Իմ շրթունքս քեզ պիտի գովեն։
4 Այսպէս պիտի օրհնեմ զքեզ իմ կեանցս մէջ.
Քու անուանդ ձեռքերս վեր պիտի վերցնեմ։
5 Իբր թէ ճարպով և պարարտութեամբ պիտի յագի իմ անձս,
Եւ ցնծութեան շրթունքով պիտի գովէ զքեզ իմ բերանս,
6 Երբ անկողնիս վրայ քեզ կը յիշեմ,
Գիշերապահներուն մէջ քու վրադ կը մտածեմ.
7 Վասն զի ինծի օգնական եղար.
Եւ քու թեւերուդ հովանաւորութեան ներքեւ պիտի ցնծամ։
8 Իմ անձս քեզի հետեւելով կը յարի.
Քու աջ ձեռքդ զիս կը պահէ։
9 Բայց անոնք որ իմ անձս կը փնտռտեն զայն կորսընցնելու համար,
Գետնին խորունկ տեղերը պիտի մտանեն.
10 Սրոյ պիտի մատնուին,
*Աղուէսներու բաժին պիտի ըլլան։
11 Բայց թագաւորն Աստուծով պիտի ուրախանայ,
Անոր երդումով ընդունելութիւն պիտի գտնեն.
Իսկ սատիսականերուն բերանը պիտի պատնձի։

## ՍԱՂՄ. ԿԴ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի։

1 Ով Աստուած, լսէ իմ ձայնս իմ դառնաւելու առնիս.
Թշնամւոյն վախէն իմ կեանքս պահպանէ։
2 Ծածկէ զիս չարերուն ժողովքէն,
Անօրէնութիւն գործողներուն բազմութենէն,
3 Որ իրենց լեզուները թուրի պէս կը սրեն,
Իրենց նետերը կը քաշեն, որ լեղի խօսքեր են,
4 Գաղտուկ տեղէն անմեղին նետելու համար.
Յանկարծակի անոր կը նետեն և չեն վախնար։
5 Իրենց մէջ չար խօսքեր կը հաստատեն.
Գաղտնի որոգայթներ դնելու համար կը խօսին,
Կ'ըսեն թէ Չանոնք ո՞վ պիտի տեսնէ,
6 Անօրէնութիւն կը փնտռեն,
†Կ'ըսեն Ըէ կատարեցինք խորհուրդը զոր կը խորհինք.
Մարդուն նեղսիրտ և սիրտը խոր են։
7 Բայց Աստուած զանոնք պիտի զարնէ նետով,
Անոնք յանկարծ պիտի վիրաւորին,
8 Եւ իրենց լեզուն իրենց վրայ պիտի հանդիպեցնեն.
Բոլոր զանոնք տեսնողները պիտի փախչին։

*Կամ Շնագայլներու.
†Կամ Իրենց խորհած խորհուրդը կը ծածկեն.

9 Եւ բոլոր մարդիկ պիտի վախնան,
Եւ Աստուծոյ գործը պատմեն,
Եւ անոր ըրածին ուշադրութեամբ պիտի նային։
10 Արդարը Տէրոջմով պիտի ուրախանայ,
Ե՛ անոր պիտի յուսայ.
Եւ ամէն ուղիղ սրտով եղողները պիտի պարծին։

## ՍԱՂՄ. ԿԵ

Վկայուց երաժշտին. Դաւթի Սաղմոս Ը երգ։

1 Քեզի *կը սպասէ օրհնութիւնը, ով Աստուած, Սիօնի մէջ,
Եւ քեզի ուխտը պիտի կատարուի,
2 Ով աղօթք լսող,
Քեզի պիտի գայ ամէն մարմին,
3 †Անօրէնութիւնք իմ վրաս զօրացան.
Մեր մեղքերը դուն պիտի քաւես։
4 Երանի անոր որ ի՛նտրես և †ինձ կը մտեցնես,
Որ բնակի քու սրահներուդ մէջ.
Պիտի լցուինք քու տանդ՝
Քու սուրբ տաճարիդ բարութեամբ։
5 Ակնյայտ բաներով արդարութեամբ պիտի պատասխանես մեզի,
Ով մեր փրկութեան Աստուածը,
Որ երկրի ամէն ծայրերուն և ծովուն մէջ հեռուն եղողներուն յոյսն ես։
6 Որ քու զօրութեամբդ լերանները հաստատեցիր,
Կարող թեամբդ գօտի կռպտեցար.
7 Որ կը ցածցնես ծովուն ձայնը՝
Անոր ալիքներուն ձայնը,
Ու ազգերուն խռովութիւնը։
8 Ու երկրի ծայրերը բնակողները պիտի վախնան քու նշաններէդ.
Առաւօտուն և երեկոյին կ'ուրախացնես։
9 Երկիրն այցելութիւն կ'ընես և կը ջրես զայն.
Շատ կը հարստացնես զայն.

Աստուծոյ գետը ջրով լեցուն է.
Անոնց ցորեն կը պատրաստես,
Վասն զի այսպէս պատրաստեցիր զայն։
10 Անոր ակօսները կը խմցունես;
Ու անոր փոսերը կը հարթես.
Անձրեւներով կը կակղցնես զայն,
Ու օրհնես անոր բոյսը։
11 Կը պսակես տարին քու բարութեամբդ,
Ու քու ջնջիկներդ պարարութիւն կը կաթեցնեն,
12 Անապատի արօտներուն ջրոյ կը կաթեցնեն.
Ու բլուրներն ուրախութեամբ պատած են։
13 Արօտներն հօտերով հագուած են,
Ու հովիտները ցորենով ծածկուած են.
Ցնծութեամբ կ'աղաղակեն և կ'երգեն։

## ՍԱՂՄ. ԿԶ

Վկայուց երաժշտին. Սպիտակ Ը երգ։

1 Ով բոլոր երկիր, ցնծութեամբ Աստուծոյ աղաղակեցէ՛ք.
2 Սաղմոս երգեցէ՛ք անոր անուան փառաւոր,
Փառաւոր ըրէ՛ք անոր օրհնութիւնը։
3 Աստուծոյ ըսէ՛ք Ե՛ն Ի՛նչպէս ահաւոր են քու գործերդ.
Քու մեծ զօրութենդ համար
Թշնամիներդ քեզի †հանարհոյ թիւն պիտի բնեն։
4 Բոլոր երկիրը երկրպագութիւն պիտի ընէ քեզ.
Սաղմոս պիտի երգէ քեզ,
Սաղմոս պիտի երգէ քու անուանդ։ (Սէլայ)
5 Եկէ՛ք և տեսէ՛ք Աստուծոյ ըրածները.
Անիկա էր գործերով մարդոց Էջ վրայ ահաւոր է։
6 Ծովը ցամաքի դարձուց,
Գետին ոտքով անցան.
Ա՛յն տեղ անով ուրախացանք։
7 Իր ուժովը յաւիտեան կը տիրէ,

*Եբր. Երիկամունքներուն
†Եբր. քաջերացաւ.



Անոր աչքերն ազգերը կը դիտեն.
Ապստամբները թող չբարձրանան։ (Սէլայ)
8 Ով ժողովուրդներ, օրհնեցէ՛ք մեր Աստուածը,
Եւ լսել տուէ՛ք անոր գովութեան ձայնը։
9 Անիկա մեր հոգին կենդանի կը պահէ,
Եւ մեր ոտից սասանել չտար։
10 Վասն զի դուն քննեցիր զմեզ, ով Աստուած.
Փորձեցիր զմեզ, ինչպէս կը փորձուի արծաթ։
11 Որոգայթի մէջ մտցուցիր զմեզ,
Ծանր բեռ դրիր մեր †կռնակը վրայ.
12 Մեր գլուխներուն վրայ մարդիկ հեծցուցիր.
Կրակի և ջուրը մտանք,
Սակայն մեզ առատութեան դէպը հանեցիր։
13 Ողջակէզներով պիտի մտնեմ քու տունդ,
Քեզի պիտի հատուցանեմ ուխտերս,
14 Որ շրթունքս խոստացան,
Ու բերանս մէջ բերաւ խօսեցաւ։
15 Պարարտ ողջակէզներ պիտի մատուցանեմ քեզ խոյերու խնկով.
Ջուարակներ պիտի պատրաստեմ նախապատրաս հետ։ (Սէլայ)
16 Եկէ՛ք լսեցէ՛ք դուք ամէնդ որ Աստուծմէ կը վախնաք,
Ու պատմեմ ինչ որ բրաւ իմ անձիս։
17 Բերանս անոր աղաղակեցի,
Եւ լեզուս եղաւ †բարձրացուցի զնա։
18 Եթէ սրտիս մէջ անօրէնութիւն տեսնէի,
Տէրը պիտի չլսէր։
19 Սակայն Աստուած լսեց,
Իմ աղօթքիս ձայնը մտիկ բրաւ։
20 Օրհնեալըլայ Աստուած, որ իմ աղօթքս չդարձուց,
Ու իր ողորմութիւնն ինձմէ չտարձուց։

## ՍԱՂՄ. ԿԷ

Գլխաւոր երաժշտին, Նկինոթի վրայ. Սաղմոս Ե երգ։

1 Աստուած ողորմի մեզ և օրհնէ զմեզ,
Երեսը փայլեցնէ մեր վրայ, (Սէլայ)
2 Որ երկրի վրայ քու ճամբադ ծանուցուի,
Ե՛ ամէն ազգաց մէջ քու փրկութիւնդ։
3 Թող ժողովուրդներն գոհ գովեն, ով Աստուած,
Բոլոր ժողովուրդներն գոհ գովեն։
4 Ազգերը թող ուրախանան և ցնծան,
Վասն զի ժողովուրդներն ուղղութեամբ պիտի դատես,
Ու երկրի ազգերուն դուն պիտի առաջնորդես։ (Սէլայ)
5 Թող ժողովուրդներն գոհ գովեն, ով Աստուած,
Բոլոր ժողովուրդներն գոհ գովեն։
6 Երկիր իր պտուղը պիտի տայ.
Ե՛ Աստուած մեր Աստուածն զմեզ պիտի օրհնէ։
7 Աստուած զմեզ պիտի օրհնէ,
Ու երկրի ամէն ծայրերն անկէ պիտի վախնան։

## ՍԱՂՄ. ԿԸ

Գլխաւոր երաժշտին. Դաւթի Սպիտակ Ե երգը։

1 Թող կրկ Աստուած, անոր թշնամիները թող ցրուին,
Ու ատելիները թող փախչին։
2 Մուխին պէս ցրուելուն պէս ցրուէ՛ զանո՛ւ.
Ինչպէս որ մոմը կրակի առջև կը հալի,
Այսպէ՛ս թող կորսուին ամբարիշտը Աստուծոյ երեսին։
3 Բայց արդարները թող ուրախանան,
Աստուծոյ առջև թող ցնծան,
Ու ուրախութեամբ զուարճանան։
4 Երգեցէ՛ք Աստուծոյ, սաղմոս երգեցէ՛ք անոր անուան.
Ճամբայ պատրաստեցէ՛ք անապատներուն մէջինն հեծնողին,

Որուն անունը *Եահ է,
Եւ ցնծացէք անոր առջեւ։
5 Որբերուն Հայրը եւ որբևայրներուն դատաւորն
Աստուած իւր սուրբ բնակարանին մէջ։
6 Աստուած մինակ եղողները տան մէջ
կը բնակեցունէ,
Կապուածները յայտնութեան կը հանէ.
Բայց ապստամբները չոր տեղ կը բնակին,
7 Ով Աստուած, քու ժողովուրդիդ
առջեւէն գացած ատենդ,
Անապատէն անցած ատենդ, (Սելայ,)
8 Երկիր չարժեցաւ, երկինք ալ ջուր կաթեցուց Աստուծոյ երեսէն.
Սինայ նա չարժեցաւ Աստուծոյ՝ Իսրայէլի Աստուծոյն առջեւէն։
9 Ով Աստուած, քու ժառանգութեանդ առատօրէն անձրեւ տալով,
երբ յոգնած էր՝ դուն հաստատեցիր զնա։
10 Քու ժողովուրդդ անոր մէջ բնակեցաւ.
Քու քաղցրութեամբդ աղքատին համար պատրաստեցիր, ով Աստուած։
11 Տէրը պատգամ տուաւ.
Աւետաբեր տուողները մեծ բազմութիւն են։
12 Զօրքերուն թագաւորները կը փախչին.
կը փախչին, և տան մէջ բնակող կինը աւարը կը բաժնէ։
13 Թէեւ գամերուն մէջտեղ պառկած էք,
Աղաւնոյ թեւերուն պէս պիտի ըլլաք ար ծաթով պատած,
Եւ անոր փետուրները դեղին ոսկով։
14 Այնժամ երբ այն Երկրին վրայ թագաւորները ցրուած տեղը՝
Երկիրը Սեղմոնի մէջ ձեան պէս ճերմկցաւ։
15 Աստուծոյ լեռը Բասան լեռն է,
Բազմագագաթ լեռը Բասան լեռն է։
16 Ով բազմագագաթ լեռներ, ինչո՞ւ նայիք նախանձով կը նայիք

*Կամ Եհովայ, այսինքն՝ Որ Է՝ն։

Այս՝ այն լեռն է՝ որոյ մէջ Աստուած հաճեցաւ բնակիլ.
Այդ տեղ Տէրը հար պիտի բնակի յաւիտեան։
17 Աստուծոյ կառքերն երկու անգամ տասը հազար են, *հազար հազարաց.
Տէրն անոնց մէջ է, Ե՛ր սուրբ տեղն է Սինա՛յ մէջ։
18 Բարձր տեղը ելար, գերութիւնը գերի վրիր,
Պարգեւներ առիր մարդոց համար,
Եւ ապստամբներուն համար եւս,
Որ Տէր Աստուած անոնց մէջ բնակի։
19 Տէրը օրհնեալ ըլայ †օր օր.
Մեզ հոգը բեռ մը դնէ մեր վրայ,
Աստուած է մեր փրկիչը, (Սելայ։)
20 Աստուած մեզ փրկութեան Աստուած է,
Եւ մահուան ազատութիւը Տէր Եհովային է,
21 Սակայն Աստուած պիտի փշրէ իր թշնամիներուն գլուխը,
Նաեւ իր անօրէնութիւններուն մէջ պատրոգին գիսաւոր գագաթը։
22 Տէրը ըսաւ, Զ՚Բաշանէն եմ դարձնելիք.
Ծովուն անդունդներէն եմ դարձնելիք.
23 Որպէս զի ոտքդ արեան մէջ թաթխուի,
Շուներուդ լեզուն թշնամիներէն իր բաժինն առնէ։
24 Քու քալուածներդ տեսան, ով Աստուած,
Իմ Աստուծոյս՝ իմ Թագաւորիս քալուածները սուրբ տեղին մէջ։
25 Առջեւն երգիչները գացին,
Եաւէն նուագածուները՝
Թմբուկ զարնող կոյսերուն մէջտեղ։
26 Ժողովրդներուն մէջ օրհնեցէք զԱստուած,
Տէրը, ով Իսրայէլի աղբիւրէն եղողներ։
27 Այն տեղն է փոքր Բենիամին անոնց տիրապետողը,

*Կամ հազարաւոր հրեշտակներ.
†Կամ՝ որ օրէ օր մեր վրայ Բեռ բերող Աստուած է։



Ձուդալի իշխաններն իրենց բազմութեամբ,
Զաբուղոնի իշխանները՝ Նեփթաղիմի իշխանները։
28 Քու Աստուածդ քու զօրութիւնդ հաստատեց.
Զօրացուր, ով Աստուած, այն բանը որ մեզի համար ըրիր։
29 Երուսաղէմ եղող տաճարիդ համար
Թագաւորները ընծաներ պիտի բերեն քեզի։
30 Եղէգնեղէն մէջ գտնող գազանները, և ցուլերուն ժողովը
Ժողովրդոց զուարակներուն հետ տասուկ,
Որ խառնարին՝ ար ծաթի կտորնանք բերելով.
Պատերազմ սիրող ժողովուրդները ցրուէ.
31 Եգիպտոսէ ազնուականներ պիտի գան.
Եթովպիա իւր ձեռքը շուտով Աստուծոյ պիտի երկնցնէ։
32 Ով երկրի թագաւորութիւններ, երգեցէք Աստուծոյ,
Սաղմոս ըսէք Տէրոջը, (Սելայ,)
33 Անոր՝ որ կ՚յարձակի երկինց երկինի վրայ *կը նստի.
Ահա անկից իւր ձայնով զօրաւոր ձայն կու տայ.
34 Զօրութիւն տուէք Աստուծոյ.
Անոր մեծ վայելչութիւնն Իսրայէլի վրայ է,
Եւ անոր զօրութիւնն ամպերուն մէջ է,
35 Սքանչելի ես, ով Աստուած, քու սուրբ տեղերուդ մէջ.
Իսրայէլի Աստուածն
Ինք կու տայ ե՛ր ժողովրդեան զօր և կարողութիւն.
Աստուած օրհնեալ ըլայ։

ՍԱՂՄ. ԿԹ.

Գլխաւոր երաժշտին, Շօշանիմի վրայ. Սաղմոս Դաւթի։

1 Ապրեցուր զիս, ով Աստուած,

*Եբր. կը հեծնէ.

2 Խորունկ ցեխի մէջ կ՚ընկղմիմ,
Ուր կայնելու տեղ չկայ.
Ջուրերուն խորունկ տեղերը մտայ,
Եւ յորձանք զիս ընկղմեցնէ։
3 Ձգնեցայ ես կանչելէս, կոկորդս ցամքեցաւ,
Աչքերս նուազեցան իմ Աստուծոյս ըսպասելէն։
4 Առանց պատճառի զիս ատողները գլխուս մազերէն շատ են.
Զիս ի զուր կորսընցնող թշնամիներս զօրացան.
Այն բանը՝ որ չէի յափշտակած, անսանեն վճարեցի։
5 Ով Աստուած, իմ յիմարութիւնս գուն գիտես,
Եւ յանցանքներս քեզմէ ծածկուած չեն,
6 Քեզի հաւատարմներն իմ պատճառաւս չամչնան,
Ով Տէր՝ զօրոց Տէրը.
Քեզ փնտռողներն իմ պատճառաւս ամօթով չըլլան,
Ով Իսրայէլի Աստուածը։
7 Վասն զի քեզի համար նախատանաց համբերեցի,
Ամօթը ծածկեց իմ երեսս.
8 Նզովրներուս օտար
Եւ մօրս որդւոց անծանօթ եղայ։
9 Վասն զի քու տանդ նախանձը զիս կերաւ,
Եւ զքեզ նախատողներուն նախատինքը իմ վրաս իյնաց։
10 Իմ անձիս ծոմ պահելով լացի,
Եւ այս ինծի նախատինք հանդիսացաւ։
11 Եւ իմ հանդերձս քուրձ ըրի,
Եւ անոնց առակ եղայ։
12 Դուռը նստողներն իմ վրաս կը խօսին,
Եւ արբեցողներուն խաղը եղայ։
13 Բայց ես իմ աղօթքս կ՚ընեմ քեզի,
Ով Տէր, ընդունելի ժամանակին.
Ով Աստուած, քու մեծ ողորմութեամբդ,
Քու փրկութեանդ ճշմարտութեամբ լնծի պատասխան տուր։
14 Հանէ զիս ցեխէն, և չընկղմիմ.

Զիս առագներէն և խոր չուրերէն ա-
զատեմ։
15 Ջուրերուն յորձանքը ինձ զիս չընկղմէ,
Եւ անդունդը զիս չկլլէ,
Եւ *չհրապն իւր բերանը վրաս չդոցէ։
16 Պատասխան տուր ինձ, ով Տէր,
Վասն զի քու ողորմութիւնդ քաղցր է.
Քու առատ գթութեանդ համեմատ
Նայէ ինձ։
17 Եւ երեսդ մի ծածկեր քու ծառայէդ,
Վասն զի նեղութեան մէջ եմ.
Շուտով պատասխան տուր ինձ։
18 Իմ անձիս մօտեցիր և զանիկա փրկէ.
Իմ թշնամիներուս համար զիս ազատէ։
19 Դուն գիտես իմ նախատինքս
Եւ իմ ամօթս և խայտառակութիւնս.
Քու առջեւդ են բոլոր զիս նեղողները։
20 Նախատինքը սիրտս կատրեց և հիւանդ
եղայ.
Կսպասէի եղողի մը նայելոյ, բայց չկար,
Եւ մխիթարութիւն տուողներուն՝ բայց
չգտայ։
21 Անգ կերակրոյ տեղ թոյն տուին ինձ,
Եւ ծարաւած առնիս քացախ խմցու-
ցին ինծ։
22 Անոնց սեղանն իրենց առջեւ որոգայթ,
Եւ յաղագութեան տեղ վտանգ լլայ։
23 Անոնց աչքերը մթանան որ չտեսնեն.
Եւ անոնց մէջքերը միշտ դողացուր։
24 Քու սրամտութիւնդ անոնց վրայ թա-
փէ,
Եւ սաստիկ բարկութիւնդ անոնց վրայ
հասնի։
25 Անոնց բնակարանն աւերակ լլայ,
Եւ անոնց վրաններուն մէջ բնակող չլ-
ինի։
26 Վասն զի նա զոր դուն զարկիր, անոնք
կը հալածեն,
Եւ քու վիրաւորածդ ցաւն վրայ կը
խօսին։
27 Անոնց անօրէնութեան վրայ անօրէնու-
թիւն դիր,
Եւ քու արդարութեանդ չհասնին։
28 Կենաց գրքէն թող ջնջուին,
Եւ արդարներուն հետ չգրուին։
29 Բայց ես աղքատ և վշտացած եմ.
Ով Աստուած, քու փրկութիւնդ թող
զիս պաշտպանէ։
30 Աստուծոյ անունը պիտի գովեմ երգով,
Եւ պիտի բարձրացնեմ զնա գոհա-
բանութեամբ։
31 Եւ սիրտս եղջերուոյ և կճղակաւոր
եղէնէ աւելի ընդունելի պիտի լլայ Տէրոջը։
32 Հեզերը պիտի տեսնեն և ուրախանան.
Ով Աստուած փնտռողներ, ձեր սիրտ
ալ պիտի ապրի։
33 Վասն զի Տէրը անապատներուն կը լսէ,
Եւ իր կապուածները չանարգեր։
34 Թող գովեն զնա երկինք և երկիր,
Ծով և բոլոր անոր մէջ շարժողները։
35 Վասն զի Աստուած Սիովն պիտի փրր-
կէ,
Եւ Յուդայի քաղաքները պիտի շինէ.
Եւ հոն պիտի բնակին և ժառանգեն
զնա։
36 Եւ անոր ծառաներուն սերունդը պի-
տի ժառանգէ զնա,
Եւ անոր անունը սիրողներն անոր մէջ
պիտի բնակին։

ՍԱՂՄ. Ն

Գլխաւոր երաժշտին. Աստուա Դաւթի
յիշատակի համար։

1 Ով Աստուած, զիս փրկելու ի՛ր ըրէ,
Ով Տէր, ինծի օգնելու արագութիւն։
2 Թող ամչնան և խայտառակ լլան
Իմ անձս փնտռողները.
Նա դառնան և ամօթով լլան
Ինծի չարիք ուզողները։
3 Թող *ամչնալով նա դառնան
Անոնք որ ՚ի՛ հա՛ վա՛ կ՚ըսեն։
4 Ամէն քեզ փնտռողները
Բերկրով թող ցնծան և ուրախանան.
Եւ քու փրկութիւնդ սիրողները
Ամէն ժամանակ թող ըսեն, Աստուած
մեծանայ։

*Կամ գալը

*Կամ իրենց ամօթին պատճառաւ



5 Բայց ես աղքատ և անանկ եմ,
Ով Աստուած, չուտով հասիր ինծի.
Իմ օգնականս և փրկիչս դուն ես,
Ով Տէր, մի ուշանար։

ՍԱՂՄ. ՀԱ

1 Ով Տէր, քեզի յուսացայ,
Ջամչնամ յաւիտեան։
2 Քու արդարութեամդ զիս ազատես և
ազատէ զիս.
Ականջդ ծռէ ինծի և փրկէ զիս։
3 Ինծի ապաստանութեան վէմ եղիր,
Որ միշտ հոն երթամ.
Դուն հրամայեր տուիր զիս փրկելու,
Քանզի իմ վէմս և բերդս դուն ես։
4 Ով իմ Աստուածս, ազատութիւն ձեռ-
քէն,
Անօրինէն և բռնաւորին ձեռքէն զիս
փրկէ.
5 Վասն զի իմ ակնկալութիւնս դուն ես,
ով Տէր Եհովայ.
Մանկութենէս ի վեր իմ յոյս դուն
ես։
6 Ես քեզի հաստատուեցայ արդանդէ,
Մօրս որովայնէն իմ պաշտպանս դուն
ես.
Իմ գովութիւնս միշտ քու վրադ է։
7 Զարմանալի բանի մը պէս եղայ շա-
տերուն,
Բայց իմ զօրաւոր ապաւէնս դուն ես։
8 Բերանս քու գովաբանութեամդ լցուի,
Ամէն օր քու փառաբանութեամդ։
9 Ծերութեան առենս զիս մի ձգեր.
Ոյժս պակսած առենը զիս մի թողուր։
10 Վասն զի թշնամիներս ինծի համար կը
խօսին,
Եւ իմ անձս պաշարողները միասին
խորհուրդ կ՚ընեն,
11 Ըսելով, Աստուած թողուց զնա.
Հալածեցէք և բռնեցէք զնա,
Վասն զի ազատող չկայ։
12 Ով Աստուած, ինէ մի հեռանար.
Ով իմ Աստուածս, ինծի օգնելու ար-
ագորդիր։
13 Թող ամչնան և կորսուին իմ անձիս
հակառակորդները.
Նախատանօք և ամօթով թող ծած-
կուին ինծի չարութիւն ուզողները։
14 Բայց ես ամէն առեն պիտի յուսամ,
Եւ քու ամէն գովաբանութեանդ վր-
բայ պիտի աւելցնեմ։
15 Բերանս պիտի պատմէ քու արդարու-
թիւնդ,
Ամէն օր քու փրկութիւնդ.
Քանզի ես անոնց թիւը չեմ գիտեր։
16 Պիտի քալեմ Տէր Եհովային զօրու-
թեամբ.
Քու արդարութիւնդ՝ միայն քուկդ
պիտի յիշեմ։
17 Ով Աստուած, մանկութենէս ի վեր
սորվեցուցիր ինծի.
Եւ մինչև հիմա քու հրաշալի գործերդ
պատմեցի։
18 Եւ հիմա մինչև ծերութեան և ալեւո-
րութեան առենս
Զիս մի ձգեր, ով Աստուած,
Մինչև որ պատմեմ քու *կարողութիւ-
նդ հետագային,
Ե՛ քու զօրութիւնդ այն ամենուն որ
պիտի գան։
19 Քու արդարութիւնդ ալ չատ բարձր է,
ով Աստուած,
Որ դուն մեծամեծ բաներ ըրիր.
Քեզի պէս ո՞վ կայ, ով Աստուած։
20 Դուն որ չատ և ծանր նեղութիւններ
ցուցուցիր ինծի,
Նորէն զիս պիտի կենդանացունես,
Եւ երկրին անդունդներէն նորէն զիս
պիտի հանես։
21 Իմ մեծութիւնս պիտի չատցնես,
Եւ դառնալով զիս պիտի մխիթարես։
22 Աւետ ես ալ պիտի գովեմ գքեզ սաւ-
ղով
Քու ճշմարտութեանդ համար, ով իմ
Աստուածս.
Սաղմոս պիտի երգեմ քեզ քնարով,
Ով Իսրայէլի Սուրբը։
23 Քեզի սաղմոս երգած առենս իմ շըր-
թունքս պիտի ցնծան,
Եւ իմ հոգիս զոր դուն փրկեցիր։

*Եբր. բազուկդ

24 Իմ լեզուս եւս ամէն օր քու արդարութիւնդ պիտի խօսի,
Քանզի ինծի չարիք ուզողներն ամչցան
եւ խայտառակ եղան։

## ՍԱՂՄ. ՀԸ

*Սողոմոնի համար։*

1 Ով Աստուած, քու դատաստաններդ
Թագաւորին տուր,
Եւ արդարութիւնդ՝ թագաւորին որդւոյն,
2 Անիկա արդարութեամբ պիտի դատէ
քու ժողովուրդդ,
Եւ աղքատներդ իրաւամբ։
3 Լեռները խաղաղութիւն պիտի բուսցունեն ժողովրդեան,
Եւ բլուրներն ալ՝ արդարութեամբ։
4 Ժողովրդեան աղքատներուն իրաւունք պիտի ընէ,
Տնանկին զաւակները պիտի ազատէ,
Եւ բռնաւորը պիտի ջարդէ։
5 Քանի պիտի վախնան քեզի որ արեգակը եւ լուսինն կը մնան՝
Ազգէ մինչեւ ազգ։
6 Հնձուած խոտի վրայ էջեր անձրեւի պէս պիտի իջնէ,
Տարափներու պէս որ երկիրը կը թրջեն։
7 Անոր օրերուն մէջ արդարը պիտի ծաղկի.
Եւ չատ խաղաղութիւն պիտի ըլլայ,
Մինչեւ որ այլ եւս լուսին չըլլայ։
8 Եւ ծովէն մինչեւ ծովը պիտի տիրէ անիկա,
Եւ գետէն մինչեւ երկրի ծայրերը։
9 Անոր առջեւն անապատին բնակիչները ծունկ պիտի կրկնեն,
Եւ անոր թշնամիները փոշի պիտի լզեն։
10 Թարսի եւ կղզիներուն թագաւորներն բնծայ պիտի մատուցանեն.
Շաբայի եւ Սափայի թագաւորները պարգեւ պիտի բերեն։
11 Եւ բոլոր թագաւորներն անոր երկրպագութիւն պիտի ընեն.
Բոլոր ազգերն անոր պիտի ծառայեն։
12 Վասն զի աղքատը պիտի փրկէ աղաղակելու առեներ,
Թէ թշուառը եւ թէ զանիկա որ օգնութիւն չունի։
13 Պիտի խղճայ աղքատին եւ անանկին,
Եւ անանկներուն անձերը պիտի ազատէ։
14 Հարստահարութենէ եւ բռնութենէ պիտի փրկէ անոնց անձը,
Եւ անոնց արիւնը պատուական պիտի ըլլայ անոր առջեւ։
15 Եւ պիտի ապրի, և Շաբայի ոսկիէն անոր պիտի տրուի.
Եւ ամէն ատեն աղօթք պիտի մատուցուի անոր համար։
Ամէն օր պիտի օրհնեն զնա։
16 Ցորենի առատութիւն պիտի ըլլայ երկրին մէջ՝
Լեռներուն գլուխը.
Անոր պտուղը Լիբանանի պէս պիտի շարժի։
Եւ գետնի խոտին պէս պիտի ծաղկին *քաղաքացիները։
17 Անոր անունը յաւիտեան պիտի մնայ.
Քանի որ արեգակը կը հաս, անոր անունն եւս պիտի մնայ։
Եւ հաբէն անով պիտի օրհնուին.
Ամէն ազգերը երանութիւն պիտի տան անոր։
18 Օրհնեալ ըլլայ Տէր Աստուած՝ Իսրայէլի Աստուածը.
Միայն ինքն է հրաշքները ընողը։
19 Եւ օրհնեալ ըլլայ յաւիտեան անոր փառաւոր անունը,
Եւ բոլոր երկիրը թող լցուի անոր փառքով։ Ամէն և ամէն։
20 Յեսսեի որդւոյն Դաւիթի աղօթքները կ'ընդացան։

## ՍԱՂՄ. ՀԹ

*Սաղմոս Աստիպայ։*

1 Արդարև Աստուած բարի է Իսրայէլի,

*Եբր. քաղաքին։



Այսինքն սրտով մաքուր եղողներուն։
2 Բայց քիչ մնաց որ իմ ոտքերս պիտի ծռէին,
Ես մազ մնաց որ իմ քայլերս գայթակղէին։
3 Վասն զի նախանձեցայ հպարտներուն,
Երբ ամբարիշտներուն յաջողութիւնը տեսայ։
4 Վասն զի իրենց մահուան ժամանակին համար ցաւեր չունին.
Առնոց մարմինն ալ պարարտ է։
5 Անոնք մարդոց նեղութեան մէջ չեն,
Եւ ուրիշ մարդոց հետ չեն տանջուիր։
6 Անոր համար վիզնոցի պէս ամբարտաւանութիւնը զանոնք կը շրջապատէ.
Բռնութիւնը հանդերձի պէս զանոնք կը ծածկէ։
7 Անոնց աչքերը պարարտութենէ դուրս կ'ելլեն։
Անոնք սրտի խորհուրդներէն անդին կ'անցնին։
8 Չարը կ'ընեն և չարութեամբ կը խօսին բռնութեան համար,
Հպարտութեամբ կը խօսին։
9 Իրենց բերանը երկինք դէմ կը դնեն,
Եւ իրենց լեզուն երկրին մէջ կը պտըտի։
10 (Անոր համար անոր ժողովուրդը հոս պիտի դառնայ,
Եւ առատութեամբ ջուր պիտի քամուի անոնց։)
11 Եւ կ'ըսեն, Աստուած ի՞նչպէս գիտէ.
Եւ Բարձրելոյն գով գիտութիւն կայ։
12 Ահա սոսկ են ամբարիշտները
Որ միշտ յաջողութիւն ունին, և հարստութիւն կ'աւելցունեն։
13 Արդարև ի զուր իմ սրտս մաքրեցի,
Եւ իմ ձեռքերս անմեղութեամբ լուացի.
14 Քանզի ամէն օր կը տանջուիմ,
Եւ ամէն առաւօտ կը խրատուիմ։
15 Եթէ ըսէի թէ ես այսպէս խօսիմ,
Ահա քու սրդոյդ ազգին նենգութիւն բրած պիտի ըլլայի։
16 Երբ խորհեցայ իմանալու զայս,
Դժուար եկաւ իմ աչքերուս.
17 Մինչեւ որ Աստուծոյ սրբարանը մտայ,
Եւ անոնց վերջն իմացայ։
18 Արդարև դուն զանոնք սահելու տեղերը դրած ես.
Կործանման մէջ իջեցուցիր զանոնք։
19 Ո՜նպէս յանկարծակի աւերմանց մէջ կ'իյնան.
Հատան և վախերով կորսուեցան։
20 Ինչպէս երազ մը հրդեհած արթննալէն ետքը,
Ով Տէր, *քաղաքին մէջ անոնց պատկերն այնպէս պիտի անարգես։
21 Բայց իմ սիրտս ցաւեցաւ,
Եւ իմ երիկամունքս խոցուեցան։
22 Եւ ես յիմար էի և չէի իմանար,
Քու առջիդ անասուններու պէս էի։
23 Սակայն ես միշտ քեզի հետ եմ.
Դուն իմ աջ ձեռքս կը բռնես։
24 Դուն պիտի առաջնորդես ինծի քու խորհրդովդ,
Եւ վերջը փառքով պիտի ընդունես։
25 Ով ունիմ ես երկինց մէջ.
Երկրի վրայ ես քեզի ուրիշը չեմ ուզեր։
26 Իմ մարմինս և սիրտս կը մաշին,
Բայց Աստուած իմ սրտին զօրութիւնը և իմ բաժինս է յաւիտեան։
27 Վասն զի ահա անոնք որ քեզմէ կը հեռանան կը կորսուին.
Դուն կը սատկեցունես ամէնը՝ որ շնութիւն կ'ընեն՝ քեզմէ դուրս ելլելով։
28 Բայց Աստուծոյ մօտենալը բարի է ինծի.
Յոյս դրած եմ Տէր Եհովայի վրայ,
Որ քու բոլոր գործերդ պատմեմ։

## ՍԱՂՄ. ՀՉ

*Երգ Ասափայ։*

1 Ով Աստուած, ինչո՞ւ մեզ բոլորովին մերժեցիր,
Ես բարկութիւնդ կը մխայ քու արօտիդ ոչխարներուն վրայ։
2 Յիշէ քու ժողովուրդդ որ սկիզբէն բստացած ես,

*Կամ արթննալով

քու ժառանգութեանդ վիճակը ՟ր փրկած ես,
եւ այս Սիօն լեռն ուր բնակած ես։
3 Բարձրացուր քու քայլերդ դէպ ի բոլորովին աւերածներուն,
ո՛ւր ամբարտաւանութիւն,
4 քու թշնամիներդ կը պոռան քու ժողովքիդ մէջ։
Իրենց նշանները նշանի դէզ կը դնեն,
5 Անկուա անտառի ծառերուն վրայ
կացիններով վերցուռնդի մը պէս գիտցուեցան։
6 Եւ հիմա անոր քանդակագործ գարգերը
Ամէնը միասին կացիններով եւ մուրճերով կը կոտրատեն։
7 Կրակով այրեցին քու սրբարանդ,
Մինչեւ գետին կերծանեցին քու անուանդ բնակարանը։
8 Իրենց սրտերուն մէջ ըսին թէ կորզնցունենք ամոնց ամէնքն ի միասին։
Երկրին մէջ Աստուծոյ բոլոր ժողովարաններն այրեցին։
9 Մեզ նշանները չենք տեսներ
Այլեւս մարգարէ չկայ։
Ու մեր մէջ մինչ ալ չկայ,
Որ գիտնայ թէ մինչեւ ե՛րբ պէտք է տեւէ։
10 Ով Աստուած, մինչեւ ե՛րբ նախատինք պիտի ընէ հակառակորդը։
Թշնամին մինչեւ յաւիտեան քու անունդ պիտի անարգէ՞։
11 ինչո՞ւ կտ կը քաշես քու ձեռքդ՝ եւ աջ ձեռքդ։
Զո՛ւկ ծոցէդ հանէ՛ եւ կորզնցուր զո՛նէ։
12 Բայց սկիզբէն իմ թագաւորս Աստուած է,
Որ փրկութիւններ կ՚ընէ երկրին մէջ։
13 Դուն քու զօրութեամբդ ծովը պատռեցիր,
վիշապներուն գլուխները ջուրերուն մէջ փշրեցիր։
14 Դուն Լեւիաթանին գլուխները
Ջանիկա կերակուր բլլալու տուիր անապատին մէջի ժողովրդեան։
15 Դուն ճեղքեցիր ազբիւրը եւ վտակը,
Դուն յորդացիր հնչնինաար գետերը։
16 Քուկդ է ցօրեկը, եւ քուկդ է գիշերը։
Լոյսը եւ արեգ դուն պատրաստեցիր։
17 Դուն հաստատեցիր երկրին ամէն սահմանները։
Ամառը եւ ձմեռը դուն ստեղծեցիր։
18 Յիշէ ասիկա՝ որ թշնամին նախատինք տուաւ Տէրոջը,
Եւ յիմար ժողովուրդը քու անունդ անարգեց։
19 Մի մատներ գազանին քու տատրակիդ անձը։
Մի մոռնար յաւիտեան քու ազքատներուդ *կեանքը։
20 Նայէ՛ ուխտիդ, վասն զի երկրին խաւարին տեղւոյն մէջ
Բռնութեան բնակարաններով լցուած են։
21 Թող թշուառը ետ չդառնայ ամօթով։
Թող աղքատը եւ անանկին օրհնեն քու անունդ։
22 Ելիր, ով Աստուած, քու դատդ պաշտպանէ։
Յիշէ այն նախատինքը՝ որ անզգամն ամէն օր քեզի կ՚ընէ,
23 Մի մոռնար քու թշնամիներուդ ձայնը,
Քեզի դէմ ոտք հանողներուն խռովութիւնն ամէն ժամանակ կը բարձրանայ։

## ՍԱՂՄ. ՀՆ

Գլխաւոր երաժշտին, Ալ-թաշխէթ, Ասաֆի Սաղմոսը Եւ երգը։

1 Կը գովենք զքեզ, ով Աստուած,
կը գովենք, եւ քու անունդ մօտ է.
Քու հրաշքներդ կը պատմեն։
2 Երբ որոշեալ ժամանակ ունենամ՝
Ուղիղ դատաստան պիտի տեսնեմ։
3 Երկիր և անոր բոլոր բնակիչները մնչեցան։

*Կամ ժողովը։



Անոր սիւները ես կը հաստատեմ։ (Սէլա)
4 Ըսի հպարտներուն թէ հպարտացէք
Եւ ամբարիշտներուն թէ եղջիւր մի վերցուներ։
5 Ձեր եղջիւրները վեր մի վերցուներ։
Ամբարտաւան պարանոցով մի խօսիք։
6 Վասն զի բարձրանալը ո՛չ արեւելքէն է
Եւ ո՛չ արեւմուտքէն ո՛չ ալ անապատէն,
7 Այլ դատաւորն Աստուած է,
Մին կը ցածցունէ, եւ միւսը կը բարձրացունէ։
8 Բանվի Տէրոջը ձեռքը բաժակ կայ, եւ գինին կարմիր է.
Անիկա խառնուածով լեցուն է, եւ անկէ կը թափէ.
Եւ իրաւ երկրին բոլոր ամբարիշտները
Անոր մրուրները քամելով պիտի խմեն։
9 Բայց ես յաւիտեան պիտի պատմեմ.
Յակոբայ Աստուծոյն սաղմոս պիտի երգեմ.
10 Եւ ամբարիշտներուն բոլոր եղջիւրները պիտի փշրեմ,
Արդարին եղջիւրները պիտի բարձրանան։

## ՍԱՂՄ. ՀՕ

Գլխաւոր երաժշտին, Նհինոթի վրայ. Ասաֆի Սաղմոսը Եւ երգը։

1 Աստուած Յուդայի մէջ ծանօթացած է.
Անոր անունն Իսրայէլի մէջ մեծ է։
2 Եւ անոր խորանը Սաղեմի մէջ է,
Եւ անոր բնակարանը Սիօնի մէջ է։
3 Հոն ջարդեց պիղծին նետերը,
Վահանը, սուրը և պատերազմը։ (Սէլա)
4 Դուն լուսաւոր ես,
Յափշտակութեան լեռներէն աւելի զեղօրհնեալ ես։
5 Սրտով զօրաւորներն յափշտակուեցան,
Իրենց քունը քնացան.
Եւ բոլոր զօրեղ մարդիկ իրենց ձեռքը չգտան։
6 Ով Յակոբայ Աստուածը, քու յանդիմանութենդ
Կառքը և ձին անզգայ պառկեցան։
7 Դուն, ով Տէր, դուն ահաւոր ես,
Եւ ո՞վ կրնայ կայնիլ քու առջեւդ՝ քու բարկութեանդ ատեն։
8 Դուն երկինքէն լսել տուիր դատաստանը.
Երկիր վախցաւ և լռեց,
9 Երբ Աստուած դատաստան բնելու եղաւ,
Որ երկրին բոլոր *հեզերը փրկէ։ (Սէլա)
10 Ադդարեւ մարդուն բարկութիւնը քեզ պիտի գովէ.
Եւ մնացած բարկութիւնը դուն պիտի զսպես։
11 Ուխտ բրէք և կատարեցէք Ձեր Տէր Աստուածդն.
Անոր բոլորքդը եղոդներուն ամէնը
Թող ընծաներ բերեն Ահաւորին։
12 Ինք իշխաններուն հոգին պիտի կտրէ.
Ահաւոր է երկրի թագաւորներուն։

## ՍԱՂՄ. ՀԶ

Գլխաւոր երաժշտին, Իդիթունի վրայ. Ասաֆի Սաղմոսը։

1 Իմ ձայնս Աստուծոյ է, և ես կ՚ազաղակեմ.
Իմ ձայնս Աստուծոյ է, և ան ինծի պիտի լսէ։
2 Իմ նեղութեանս օրը Տէրը փնտռեցի.
Գիշերը առաջացած էր իմ ձեռքս և չէր թուլնար.
Իմ անձս մխիթարուիլ չէր ուզեր։
3 Աստուած յիշեցի և անհանգիստ եղայ.
Խորհեցայ և հոգիս մաշեցաւ։ (Սէլա)
4 Աչքերս արթուն պահեցիր.
Խռովեցայ և չկրցայ խօսիլ։
5 Միտքս բերի առջի օրերը,
Հին ժամանակներուն տարիները։
6 Գիշերուան մէջ կը յիշեմ իմ երգս.
Իմ սրտիս հետ կը խօսիմ,

*Կամ խեզիները

Եւ իմ հոգիս ալ քննութիւն կ'ընէ։
7 Աբդեօք Տէրը յաւիտեան պիտի մերժէ՞,
եւ այլ եւս բնաւ պիտի չհաճի՞։
8 Մինչեւ անոր ողորմութիւնը բոլորովին պակսեցա՞,
ե՞ւ խոստումը վերջացա՞ ազգէ մինչեւ ազգ։
9 Մինչեւ Աստուած գթութիւն ընելը մոռցա՞,
Մինչեւ բարկութեամբ արգելի՞ց իւր ողորմութիւնը։ (Սելա)
10 Ուստի ըսի, Այս է իմ տկարութիւնս,
•Բարձրելոյն աջ ձեռքին փոփոխութիւնը։"
11 Տէրոջը գործերը պիտի յիշեմ.
Արդարեւ քու առջի հրաշքներդ պիտի յիշեմ,
12 Բոլոր գործերուդ վրայ պիտի խորհիմ,
Եւ քու բրածներուդ վրայ պիտի մտածեմ։
13 Ով Աստուած, քու ճամբադ սրբութեան մէջ է.
Աստուծոյ պէս մեծ Աստուած ո՞վ կայ,
14 Հրաշներ ընող Աստուածը դուն ես.
Քու զօրութիւնդ ժողովրդոց մէջ ցուցուցիր։
15 Քո՛ բազկովդ փրկեցիր քու ժողովուրդդ,
Յակոբայ և Յովսեփայ որդիները։ (Սելա)
16 Ջուրերը քեզ տեսան, ով Աստուած,
Ջուրերը քեզ տեսան՝ դողացին.
Անդունդներն ալ սոսկացան։
17 Ամպերը լուր թափեցին.
Երկինք ձայն հանեցին.
Նետերդ ալ գացին։
18 Քու որոտանդ ձայնը դիերկինքն էր.
Փայլակները լոյս տուին աշխարհի.
Երկիրը սասանեցաւ և դողաց։
19 Քու ճանապարհդ ծովուն մէջ է,
Եւ քու ճամբադ մեծ ջուրերուն մէջ է.

•Կամ Սալոյն Բարձրելոյն աջ ձեռքին տարիները պիտի յիշեմ.

Եւ քու չափերդ չեն դիտցուիր։
20 Հօտի պէս քու ժողովուրդիդ առաջնորդեցիր՝
Մովսէսի և Ահարոնի ձեռքով։

## ՍԱՂՄ. ՀԷ.

Երգ. Ասափայ։

1 Ով իմ ժողովուրդս, մտիկ ըրէք իմ •օրէնքս,
Խոնարհեցուցէք ձեր ականջն իմ բերնիս խօսքերուն։
2 Առակով պիտի բանամ իմ բերանս,
Ե՞ւ հին ժամանակի խրթնաբանութիւնները պիտի խօսիմ,
3 Զոր լսեցինք և գիացանք,
Եւ մեր հայրերը մեզի պատմեցին։
4 Մինչ պիտի չծածկենք անոնց որդիներուն.
Նոքի ևկող ազգին պիտի պատմենք
Տէրոջը գովութիւնները և անոր զօրութիւնը
Եւ անոր բրած հրաշները։
5 Վասն զի վկայութիւն հաստատեց Յակոբայ մէջ,
Եւ օրէնք դրաւ Իսրայէլի մէջ,
Որ պատուիրեց մեր հայրերուն,
Որ ծանուցանեն իրենց որդւոց։
6 Որպէս զի գալու ազգը՝ ծնելու ազգաց առնէ իմանան,
Ե՞ւ երկեն իրենց որդւոց պատմեն.
7 Անոնք ալ իրենց յոյսն Աստուծոյ վրայ դնելով՝
Զմոռնան Աստուծոյ գործերը,
Այլ անոր պատուիրանները պահեն.
8 Ե՞ւ իրենց հայրերուն պէս
Կամակոր և ապստամբ ազգ չըլլան,
Այն ազգ մը՝ որ իրենց սիրտը չհին ուղղած,
Եւ իրենց հոգին հաւատարիմ չէ Աստուծոյ։
9 Եփրեմի որդիքը զէ սպառազինեալ աղեղնաւորներ էին,
Պատերազմին օրը կռ դարձան։

•Կամ վարժութիւնս,



10 Աստուծոյ ուխտը չպահեցին,
Եւ անոր օրէնքին համեմատ չուզեցին քալել.
11 Եւ մոռցան անոր գործերը,
Եւ անոր հրաշները որ անոնց ցուցուցած էր։
12 Անոնց հայրերուն առջին հրաշներ ըրաւ,
Եգիպտոսի երկրին՝ Տոյանիսի դաշտին մէջ,
13 Ծովը պատռեց և զանոնք անցուց,
Եւ ջուրերը դէպի պէս կանգնեցուց։
14 Եւ ցորեկն ամպով առաջնորդեց անոնց,
Եւ բոլոր գիշերը կրակի լուսով։
15 Վէմերը պատռեց անապատին մէջ,
Եւ խմցուց անոնց իբր թէ մեծ անդունդէ։
16 Եւ առուներ հանեց վէմէն,
Եւ ջուրերը գետերու պէս բղխեցուց։
17 Բայց անոնք նորէն իրենց մեղքն աւելցուցին անոր դէմ,
Ե՞ւ բարկացուցին Բարձրեալն անապատին մէջ։
18 Եւ իրենց սրտերուն մէջ դԱստուած փորձեցին,
Կերակուր ուզելով իրենց անձերուն համար։
19 Եւ Աստուծոյ դէմ խօսեցան՝ ըսին,
Մինչեւ կարո՞ղ է Աստուած
Անապատին մէջ սեղան պատրաստել։
20 Ահա վէմին զարկաւ, և ջուրերը դուրս բղխեցին,
Եւ առուները վազեցին.
Արդեօք հաց ալ կրնա՞յ տալ.
Արդեօք մի՞ւս կը պատրաստէ՞ իւր ժողովրդեան։
21 Ուստի Տէրը լսեց և բարկացաւ.
Եւ կրակ բորբոքեցաւ Յակոբայ մէջ,
Եւ նաև բարկութիւն ելաւ Իսրայէլի վրայ։
22 Վասն զի Աստուծոյ չհաւատացին,
Եւ իրենց յոյսն անոր փրկութեան վրայ չդրին։
23 Թէպէտ ինք վերեն հրամայեց ըրած էր ամպերուն,
Եւ երկինց դռները բացած էր,
24 Եւ կերակուր համար անոնց վրայ մանանայ տեղացած էր,
Եւ երկինց ցորեն տուած էր անոնց,
25 •Մարդիկ հրեշտակներու հացը կերան."
Յագեցնելու չափ պարարտ ղրկեց անոնց։
26 Երկինց մէջ արեւելեան հովը հանեց,
Եւ իւր զօրութեամբ հարաւային հովը բերաւ։
27 Եւ անոնց վրայ փոշւոյ պէս միս տեղաց,
Եւ ծովու աւազին չափ թեւաւոր թռչուններ,
28 Եւ անոնց բանակին մէջ՝
Անոնց վրաններուն չորս կողմն իջեցուց։
29 Եւ կերան և յագեցան յոյժ.
Եւ անոնց ցանկութիւնն առաւ անոնց.
30 Իրենց ցանկութենէն զուրկ չմնացին.
Ե՞ւ մինչ անոնց կերակուրն անոնց բերանն էր,
31 Աստուծոյ բարկութիւնն անոնց վրայ բորբոքեցաւ,
Եւ սպաննեց անոնց պարարտներէն,
Եւ գեհոին ջարկաւ Իսրայէլի ընտիրները։
32 Այս բոլոր բաներուն վրայ նորէն մեղանչեցին,
Եւ չհաւատացին անոր հրաշներուն։
33 Եւ ունայնութեան մէջ սպառեց անոնց օրերը,
Եւ տի մէջ՝ անոնց տարիները։
34 Երբ կը սպաններ զանոնք, կը խնդրէին զինք.
Եւ նո կը դառնային, և դԱստուած կանուխ կը փնտռէին,
35 Եւ կը յիշէին որ Աստուած իրենց վէմն էր,
Եւ Բարձրեալ Աստուածն իրենց փրկիչն էր։
36 Սակայն իրենց բերնով կեղծաւորութիւն կ'ընէին անոր,
Եւ իրենց լեզուով սուտ կը խօսէին անոր։
37 Եւ անոնց սիրտն ուղիղ չէր անոր առջեւ,
Եւ հաւատարիմ չէին անոր ուխտին մէջ։

•Կամ Աբեղաց ամէն մէկը ապրուստանոց հացը կերան։

38 Բայց ինք զզբաժած ըլլալով՝ անոնց
անօրէնութիւնը կը քաւէր,
Եւ չէր կորսընցուներ զանոնք.
Եւ շատ անգամ կը զարձուներ իւր
բարկութիւնը,
Եւ չէր բորբոքեցուներ իւր բոլոր սրբա-
մտութիւնը։
39 Քանզի կը յիշէր թէ անոնք մարմին են,
Հովի շունչ՝ որ կ'երթայ և ետ չդառ-
նար։
40 Քանի անգամ բարկացուցին զնա ա-
նապատին մէջ,
Եւ զայրացուցին զնա անջուր տեղը։
41 Եւ դարձան փորձեցին զԱստուած,
Եւ Իսրայէլի Սուրբը նեղացուցին։
42 Չյիշեցին անոր ձեռքը,
Եւ այն օրը՝ որ զանոնք թշնամիին
վրկեց։
43 Եւ թէ ինչպէս իւր նշաններն ըրաւ Ե-
գիպտոսի մէջ,
Եւ իւր հրաշները Տոյանիսի դաշտին
մէջ։
44 Եւ արիւն դարձուց անոնց գետերը,
Եւ անոնց առուները, որ չիրցան խմել։
45 Շանճանճաններ զրկեց անոնց վրայ, որ
կերան զանոնք,
Եւ գորտեր՝ որ ապականեցին զանոնք։
46 Եւ անոնց բերքը գրուխէլ առաւ,
Եւ անոնց վաստակը մարախով։
47 Անոնց որթերը կնկեց կարկտով,
Եւ անոնց ժանտաթիներները խոշոր
կարկտով։
48 Եւ անոնց անասուններըը կարկտով մատ-
նեց,
Եւ անոնց հօտերը կայծակի։
49 Իւր սաստիկ բարկութիւնը զրկեց ա-
նոնց վրայ,
Սրտմտութիւն և բարկութիւն և նե-
ղութիւն,
*Չար հրեշտակներ զրկելով։
50 Իւր բարկութեան ճամբայ բացաւ.
Անոնց անձը մահուանէ չխնայեց,
Այլ անոնց †կեանքը ժանտախտի մատ-
նեց։

51 Եւ ամէն անգրանիկ ապանանց Եգիպ-
տոսի մէջ,
Ե՛ *առջինները իրենց վրանները
մէջ։
52 Եւ իւր ժողովուրդը ոչխարներու պէս
հանեց,
Եւ զանոնք հօտի պէս վարեց անապա-
տին մէջ։
53 Եւ անոնց ապահովութեամբ առաջնոր-
դեց, և չվախցան.
Իսկ անոնց թշնամիները ծովը ծածկեց։
54 Եւ զանոնք տարաւ իւր սրբութեան
սահմանը,
Այն լեռը զոր անոր աջ ձեռքն ապա-
հած էր։
55 Եւ անոնց առջևէն ազգեր վռնտեց,
Եւ չափով ժառանգութիւն բաժնեց
անոնց,
Եւ Իսրայէլի ցեղերն անոնց վրանները-
րուն մէջ բնակեցուց։
56 Բայց անոնք փորձեցին և բարկացու-
ցին Բարձրեալ Աստուածը,
Եւ չպահեցին անոր վկայութիւննե-
րը։
57 Ե՛ իրենց հայրերուն պէս նա զարձան
և նենգութիւն ըրին.
Խարեպայ աղեղան պէս խոտորեցան։
58 վ՚ասն զի բարկացուցին զնա իրենց բար-
ձրը սեղերով,
Եւ նախանձի չարժեցին զնա իրենց
կուռքերով։
59 Աստուած լսեց և բարկացաւ,
Եւ շատ անարգեց զԻսրայէլ։
60 Ե՛ Սիլովի խորանը մերժեց,
Այն վրանը զոր մարդոց մէջ կանգնած
էր։
61 Եւ †իւր զօրութիւնը գերութեան մատ-
նեց,
Եւ իւր փառքը թշնամիներուն ձեռ-
քը։
62 Եւ իւր ժողովուրդը սուրի մատնեց,
Եւ իւր ժառանգութեան վրայ բարկա-
ցաւ։
63 Անոր երիտասարդները կրակ կերաւ.

*Կամ Չարիքները.
†Կամ անասունները

*Եբր. զօրութեան սիկղը.
†Կամ անոր



Եւ անոր *աղջիկները սուգ չըրին։
64 Անոր քահանաները սրով ինկան,
Եւ անոր այրիները լացին։
65 Բայց Տէրը արթընցաւ որպէս թէ քու-
նէ
Գինիէ ամրափած զօրաւոր մարդու պէս,
66 Եւ իւր թշնամիները անոնց հետևէն
զարկաւ.
Յաւիտենական նախատինք առաւ ա-
նոնց։
67 Եւ Յովսեփայ վրանը մերժեց,
Եւ Եփրեմի ցեղը չընտրեց.
68 Այլ Յուդայի ցեղն ընտրեց,
Ե՛ Սիօն լեռը զոր սիրեց։
69 Եւ իւր սրբարանը չինեց բարձր Բե-
հեր պէս,
Երկրի պէս զոր յաւիտեան հաստատեց։
70 Եւ իւր Դաւիթ ծառան ընտրեց,
Եւ ոչխարի փարախներէն առաւ զնա.
71 Յետ առուց ոչխարներուն հետևէն բե-
րաւ զնա.
Որ իւր Յակոբ ժողովուրդը
Եւ իւր իսրայէլ ժառանգութիւնն հով-
ուէ։
72 Եւ նա հովուեց զանոնք իւր սրտին ան-
մեղութեամբ,
Եւ իւր ձեռաց յաջողակութեամբ ա-
ռաջնորդեց անոնց։

## ՍԱՂՄ. ՀԹ

Սաղմոս Ասափայ։

1 Ով Աստուած, հեթանոսները քու ժա-
ռանգութեանդ մէջ մտան,
Քու սուրբ տաճարդ պղծեցին,
Չերուսաղէմ աւերակներու դարձու-
ցին։
2 Քու ծառաներուդ դիները
Երկնից թռչուններուն կերակուր տը-
ւին,
Քու սուրբներուդ մարմինը՝ երկրի գա-
զաններուն։
3 Անոնց արիւնը ջուրի պէս թափեցին
Երուսաղէմի բոլորտիքը,

*Կամ աղջիկներուն համար սուգ բնող
չկար։

Եւ անոր *աղջիկները սուգ չըրին։
64 Անոր քահանաները սրով ինկան,
Եւ անոր այրիները լացին։
65 Բայց Տէրը արթընցաւ որպէս թէ քու-
նէ
Գինիէ ամրափած զօրաւոր մարդու պէս,
66 Եւ իւր թշնամիները անոնց հետևէն
զարկաւ.
Յաւիտենական նախատինք առաւ ա-
նոնց։
67 Եւ Յովսեփայ վրանը մերժեց,
Եւ Եփրեմի ցեղը չընտրեց.
68 Այլ Յուդայի ցեղն ընտրեց,
Ե՛ Սիօն լեռը զոր սիրեց։
69 Եւ իւր սրբարանը չինեց բարձր Բե-
հեր պէս,
Երկրի պէս զոր յաւիտեան հաստատեց։
70 Եւ իւր Դաւիթ ծառան ընտրեց,
Եւ ոչխարի փարախներէն առաւ զնա.
71 Յետ առուց ոչխարներուն հետևէն բե-
րաւ զնա.
Որ իւր Յակոբ ժողովուրդը
Եւ իւր ժառանգութեան հովուէ։
72 Եւ նա հովուեց զանոնք իւր սրտին ան-
մեղութեամբ,
Եւ իւր ձեռաց յաջողակութեամբ ա-
ռաջնորդեց անոնց։

## ՍԱՂՄ. ՀԹ

Սաղմոս Ասափայ։

1 Ով Աստուած, հեթանոսները քու ժա-
ռանգութեանդ մէջ մտան,
Քու սուրբ տաճարդ պղծեցին,
Չերուսաղէմ աւերակներու դարձու-
ցին։
2 Քու ծառաներուդ դիները
Երկնից թռչուններուն կերակուր տը-
ւին,
Քու սուրբներուդ մարմինը՝ երկրի գա-
զաններուն։
3 Անոնց արիւնը ջուրի պէս թափեցին
Երուսաղէմի բոլորտիքը,
4 Մեր դրացիներուն նախատինք եղանք,
Ծաղր և կատակ՝ մեր բոլորտիքը եղո-
ղներուն։
5 Մինչև ե՞րբ, ով Տէր, միշտ պիտի
բարկանա՞ս.
Քու նախանձդ կրակի պէս պիտի բոր-
բոքի՞։
6 Թափէ քու բարկութիւնդ այն ազգե-
րուն վրայ
Որ զքեզ չեն ճանչնար,
Եւ այն թագաւորութեանց վրայ՝
Որ քու անունդ չեն կանչեր։
7 Քանզի գիսակը կերան,
Եւ անոր բնակութիւնն աւերակ գար-
ձուցին։
8 Մի յիշեր մեզի զհինգ առաջին անօ-
րէնութիւնները.
Թող չուտով հասնին մեզ քու ողոր-
միութիւնները,
Քանզի թշուառացանք չափ։
9 Քու անուանդ փառաց համար
Օգնէ մեզ, ով մեր փրկութեան Ա-
ստուածը.
Եւ քու անուանդ համար փրկէ զմեզ,
Եւ մեր մեղքերը քաւէ։
10 Ինչո՞ւ ըսեն հեթանոսք թէ Ո՞ր է ա-
նոնց Աստուածը։
Թող յայտնուի հեթանոսաց մէջ մեր
աչքերուն առջև
Քու ծառաներուդ թափուած արեան
վրէժը։
11 Կապուածին հառաչանքը քու առ-
ջեդ թող հգնէ.
Քու զօրութեանդ միծութեամբ
Ի մահ մատնուածները ազատեցուր։
12 Եւ եօթնապատիկ հատուցուր քրեւ մեր
դրացիներուն իրենց ծոցին մէջ
Այն լուրնց նախատանաց զոր-ըն-
որով զքեզ անարգեցին, ով Տէր։
13 Բայց մենք քու ժողովուրդդ և քու
արօտիդ ոչխարները
Յաւիտեան զքեզ պիտի գովինք,
Եւ քու փառքդ պիտի պատմենք ազ-
գէ մինչև ազգ։

## ՍԱՂՄ. 2

Գլխաւոր երաժշտին, Շօշանիմ-Եդու-
թի վրայ. Ասաբի Սաղմոսը,

1 Ականջ դիր, ով Իսրայէլի Հովիւը,
Որ Յովսեփայ հօտի պէս կ'առաջնոր-
դես.
Դուն որ քերովբէից վրայ կը նստիս՝
պայծառացիր։
2 Եփրեմայ և Բենիամինի և Մանասէի
առջեւ
Արթընցուր քու զօրութիւնդ,
Եւ եկուր զմեզ փրկելու։
3 Ով Աստուած, մեզ դարձուր,
Եւ քու երեսդ փայլեցուր, և պիտի
փրկուինք։
4 Ով Տէր՝ զօրաց Աստուած,
Մինչեւ ե՞րբ կը բարկանաս քու ժողո-
վուրդիդ աղօթքին դէմ,
5 Արտասուաց հաց կը կերցուներես ա-
նոնց,
Եւ մեծ չափով արտասուք կը խմցու-
ներես անոնց։
6 Մեզ կռուոյ պատճառ կ'ընես մեր դր-
բացիներուն,
Եւ մեր թշնամիները ինչ ծաղր կ'ընեն
իրենց մէջ։
7 Ով զօրաց Աստուած, մեզ դարձուր,
Եւ քու երեսդ փայլեցուր, և պիտի
փրկուինք։
8 Եգիպտոսէ որթ մը փոխադրեցիր,
Հեթանոսները վռնտեցիր և զայն տնկե-
ցիր։
9 Անոր առջեւէն փէշ պատրաստեցիր,
Եւ անոր արմատներն հաստատեցիր.
Եւ անիկա երկիրը լեցուց։
10 Լեռները ծածկուեցան անոր հովան-
ւով,
Եւ անոր ճիւղերն Աստուծոյ եղևիննե-
րուն պէս եղան։
11 Անոր ճիւղերը երկնցուց մինչեւ ծովը,
Եւ անոր բողբոջները մինչեւ Գետը։
12 Ինչո՞ւ փլուցիր անոր ցանկերը,
Որ ճամբէն բոլոր անցնողները փրցու-
նեն զայն։
13 Անտառին խոզը ապականց զայն,
Եւ դաշտի գազանները կերան զայն։
14 Ով զօրաց Աստուած, կ'աղաչեմ
դարձիր.
Նայէ երկինքէն և տես,
Եւ այցելու եղիր այս որթին,
15 Եւ այս առնկին՝ որ քու աջ ձեռքդ մղ
անկեցիր,
Եւ որդւոյն՝ որ քեզի համար հաստա-
ցուցիր։
16 Կրակով այրուած է կտրուած է.
Քու երեսդ սպառած կ'ըլլայ քու մէջդ։
17 Թող քու ձեռքդ քու աջ ձեռքիդ
մարդուն վրայ ըլլայ,
Ե՛ մարդու որդւոյն վրայ՝ զոր քեզի
համար հաստատեցիր։
18 Մենք այլ ևս ետ պիտի չդառնանք քե-
զի.
Կենդանացուր զմեզ, և քու անունդ
պիտի կանչենք։
19 Ով Տէր՝ զօրաց Աստուած, զմեզ դար-
ձուր,
Ե՛ քու երեսդ փայլեցուր, և պիտի
փրկուինք։

## ՍԱՂՄ. 80

Գլխաւոր երաժշտին, կիթթէթի վրայ.
Ասաբի Սաղմոսը։

1 Ցնծացէք Աստուծոյ առջեւն, որ մեր
զօրութիւնն է,
Ուրախութեամբ աղաղակեցէք Յակո-
բայ Աստուծոյն,
2 Սաղմոս առէք և թմբուկը բերէք,
Նաեւ անոյշ քնարը տաւղին հետ։
3 Փող հնչեցուցէք ամսու գլխուն,
*Նաեւ լուսնի լման առնն՝ մեր տօնին
օրը։
4 Վասն զի սահման կանոն է Իսրայէլի,
Յակոբայ Աստուծոյն հրամանն է։
5 Ինք վկայութիւն դրաւ զայն Յովսե-
փայ մէջ,
Եգիպտոսի երկրին վրայ ելած ատեն.
Ուր լեզու մը լսեցի որ չէի գիտեր։
6 Անոր թիկունքը հեռացուցի բեռէն.
Անոր ձեռքերն հանդիստեցան կողովէն։
7 Նեղութեան մէջ կանչեցիր, և փրկեցի
զքեզ.
Պատասխան տուի քեզ որոտման ծած-
կոցին միջէն.
Փորձեցի զքեզ Մերիպայի ջրոյն քով։
(Սելայ.)
8 Լսէ, ով իմ ժողովուրդս, և վկայեմ
քեզ.
Ով Իսրայէլ, եթէ ինծի մտիկ ընես,
9 Օտար աստուած չըլլայ քու մէջդ,
Եւ օտար աստուծոյ երկրպագու թիւն
չընես.
10 Ես եմ քու Տէր Աստուածդ,
Որ հանեցի զքեզ Եգիպտոսի երկրէն.
Լայն բաց քու բերանդ,
Եւ զանիկա ես պիտի լեցունեմ։
11 Բայց իմ ժողովուրդս մտիկ չըրաւ իմ
ձայնս,
Եւ Իսրայէլ ինծի չհնազանդեցաւ։
12 Ուստի զանոնք իրենց սրտին կամա-
կորութեան թողուցի,
Որ իրենց խորհուրդներուն համեմատ
գնային.
13 Երանի թէ իմ ժողովուրդս ինծի մտիկ
ընէր,
Եւ Իսրայէլ իմ ճամբաներուս մէջ քալէր.
14 Շուտով պիտի խոնարհեցնէի անոնց
թշնամիները,
Եւ ձեռքս պիտի դարձնէի անոնց նե-
ղիչներուն վրայ։
15 Տէրը ատոնները՝ խոնարհութիւն պի-
տի բնէին՝ անոր,
Եւ անոնց ժամանակը յաւիտեան պի-
տի ըլլար։
16 Անիկա պիտի կերակրէր զանոնք պա-
րբերթ ցորենով.
Եւ վկայն վեղարէ մեղրով զքեզ պիտի
յագեցնէի։

## ՍԱՂՄ. 81

Ասաբի Աստիայ.

1 Աստուած կայնած է Աստուծոյ ժո-
ղովքին մէջ,

*Եբր. պիտի սատկին



*Աստուածներուն մէջ դատաստան կը
տեսնէ։
2 Մինչեւ ե՞րբ անիրաւութեամբ դիտի
դատիք,
Եւ ամբարիշտներուն երեսը դիտի
ընէք։ (Սելայ.)
3 Դատաստան ըրէք աղքատին և որբին.
Թշուառին և չքաւորին իրաւունք ը-
րէք։
4 Փրկեցէք ազքատը և անանկը,
Ամբարիշտներուն ձեռքէն ազատեցէք
զանոնք։
5 Չգի՛ն իմանար և միաք չունին առներ,
Խաւարի մէջ կը պտըտին.
Երկրին բոլոր սիւները շարժեցան։
6 Ես ըսի թէ Դուք աստուածներ եք,
Ու դուք ամէնքդ Բարձրեալին որդի-
ներն էք։
7 Բայց մարդոց պէս պիտի մեռնիք,
Եւ իշխաններէն միայն պէս պիտի կը-
նաք։
8 Ելիր, ով Աստուած, դատէ երկիրը,
Քանզի բոլոր ազգերը դուն պիտի ժա-
ռանգես։

## ՍԱՂՄ. 83

Ասաբի Երգը՝ Սաղմոսը։

1 Ով Աստուած, լուռ մի կենար.
Անձայն մի ըլլար, և հանդարտ մի կե-
նար, ով Աստուած։
2 Քանզի ահա քու թշնամիներդ կը գո-
ռան,
Եւ քեզ ատողները գլուխ կը վերցունեն.
3 Խորամանկութեան հնարք կը գտնեն
քու ժողովուրդիդ դէմ,
Եւ խորհուրդ կ'ընեն քու պահպանած-
ներուդ դէմ.
4 Կ'ըսեն թէ եկէք, կտրեցնենք զա-
նոնք որ ազգ չըլլան,
Եւ այլ ևս չյիշուի Իսրայէլի անունը։
5 Քանզի միասին սրտով խորհուրդ ըրին,
Եւ քեզի դէմ դաշնակցութիւն ըրին
6 Եդովմի վրաններն և Իսմայէլացիք,

*Կամ Պահատուրներուն

Մոլար և Հազարացիք,
7 Գեբաղ և Ամմոն և Ամաղկ,
Փղշտացիք Տիւրոսի բնակչաց հետ.
8 Նաև Ասուր անոնց հետ միաբանեցաւ.
Ղովթի որդւոց ձեռնտու եղան· (Սէլա)
9 Ըրէ անոնց ինչպէս Մադիամի,
Ինչպէս Սիսարայի և Յաբինի գետէ հիմն հեղեղատին քով.
10 Անոնք կիզուելով մէկ ապառկեցան,
Աղբի դէս եղան երկրի վրայ.
11 Անոնց իշխաններն Օրեբի և Զեբի պէս,
Եւ անոնց բոլոր երեւելիները Զեբեէի և Սալմանային պէս ըրէ.
12 Որ ըսին թէ Աստուծոյ բնակարանները Մենք ժառանգենք մեզի համար.
13 Ով իմ Աստուածս, զանոնք *մրկողի պէս,
Հովի առջեւ եղող շիւղի պէս ըրէ.
14 Ինչպէս որ կրակն անտառը կ'այրէ,
Եւ բոցը լեռները կը բռնկցունէ,
15 Անդամս հալածէ զանոնք քու մրրկովդ,
Եւ խռովութեան մէջ ձգէ զանոնք քու փոթորկովդ.
16 Լեցուր անոնց երեսները անարգանօք,
Որ քու անունդ խնդրեն, ով Տէր.
17 Թող ամչնան և խռովին յաւիտեան,
Եւ ամօթովկոր ըլլան և կորսուին.
18 Որ գիտնան թէ միայն դուն՝ որ քու անունդ Եհովայ է,
Բարձրեալ ես բոլոր երկրի վրայ.

## ՍԱՂՄ· ՁԴ

Գլխաւոր երաժշտին, Կիթթիթի վրայ. Կորխի որդւոց Սաղմոս.

1 Ի՜նչպէս սիրելի են քու բնակարանները,
Ով զօրաց Տէր.
2 Իմ անձս կը փափաքի և նաև կը մաշի Տէրոջը սրահներուն համար.
Իմ սիրտս և մարմինս ցնծութեամբ կ'աղաղակեն
Կենդանի Աստուծոյն.
3 Ճնճղուկն իսկ տուն գտաւ,
Եւ ծիծեռնիկն իրեն բոյն՝ ձագերը դնելու համար,
Քու սեղաններուդ քով, ով զօրաց Տէր,
Իմ Թագաւորս և Աստուածս.
4 Երանի անոնց որ քու տանդ մէջ կը բնակին.
Անոնք անդադար գովեզ պիտի օրհնեն· (Սէլա)
5 Երանի այն մարդոյ որուն զօրութիւնը քեզի է,
Եւ անոնց սրտին մէջ ուխտ ճամբաները կան.
6 Աւազաւազ հովիտէն անցնելով աղբիւրի մը կ'ընեն զանիկա.
Առաջին անձրեւն *օրհնութեամբ պիտի ծածկէ զայն·
7 Անոնք զօրութենէ զօրութիւն կ'երթան,
Մինչ՝ որ Սիոնի մէջ Աստուծոյ առջեւ երեւնան.
8 Ով Տէր՝ զօրաց Աստուած, լսէ իմ աղօթքս.
Ականջ դիր, ով Յակոբայ Աստուածը· (Սէլա)
9 Ով մեր վահանն Աստուած, տես,
Եւ քու օծեալդ երեսը նայէ.
10 Քանզի քու սրահներուդ մէջ
Մէկ օրը հազարէն ազէկ է.
Աւելի բնաբերեցի իմ Աստուծոյս տան չեմին վրայ կենալ,
Քան թէ ամբարշտոյց վրաններուն մէջ բնակիլ.
11 Քանզի Տէր Աստուած արեւ և վահան է.
Տէրը շնորհք և փառք պիտի տայ.
Բարութիւն մը պիտի չպակսեցունէ
Ուղղութեամբ քալողներուն·
12 Ով զօրաց Տէր,
Երանելի է քեզի յուսացող մարդը.

## ՍԱՂՄ· ՁԵ

Գլխաւոր երաժշտին. Կորխի որդւոց Սաղմոս.

1 Ով Տէր, դուն հաճեցար քու երկիրդ,

*Կամ աւազանները կը լեցուին.



Ցակոբայ գերութիւնը դարձուցիր·
2 Քու ժողովրդիդ անօրէնութիւնը նեղեցիր,
Անոնց բոլոր մեղքերը ծածկեցիր· (Սէլա)
3 Հեռացուցիր քու բոլոր սրամտութիւնդ,
Եւ դարձար քու առտիկ բարկութենէդ.
4 *Մեզ դարձուր,՝ ով մեր փրկութեան Աստուածը,
Եւ քու բարկութիւնդ որ մեր վրայ է դադրեցուր.
5 Մինչ՝ յաւիտեան պիտի բարկանա՞ս մեզ.
Քու բարկութիւնդ ազգէ մինչեւ ազգ պիտի երկրնցնե՞ս.
6 Մինչ՝ նա պիտի չդառնա՞ս և մեզ կեանքանացնե՞ս,
Որ քու ժողովուրդդ քեզմով ուրախ ըլլայ.
7 Ցուցուր մեզի, ով Տէր, քու ողորմութիւնդ,
Եւ քու փրկութիւնդ մեզի տուր.
8 Պիտի լսեմ ինչ որ կը խօսի Տէր Աստուած.
Քանզի խաղաղութիւն պիտի խօսի իր ժողովրդեան և իր սուրբերուն.
Եւ յիմարութեան չդառնան անոնք.
9 Անշուշտ անոր փրկութիւնը մօտ է երկմտ վախցողներուն,
Որ մեր երկրին մէջ փառք բնակի.
10 Ողորմութիւն և ճշմարտութիւն իրար պատահեցան,
Արդարութիւն և խաղաղութիւն դէմ դիմաց համբուրեցին.
11 Ճշմարտութիւնը երկրէն պիտի բուսնի,
Եւ արդարութիւնը յերկնից վար պիտի նայի.
12 Նաև Տէրը բարութիւն պիտի տայ,
Եւ մեր երկիրն իր պտուղը պիտի տայ.
13 Արդարութիւնն անոր առջեւէն պիտի երթայ,
Եւ ճամբան գնացքը ճամբան՝ պիտի դնէ.

*Կամ Մեզի դարձիր
†Կամ՝ Դէպ իր քայլերուն ճամբուն մէջ

## ՍԱՂՄ· ՁԶ

Ադօթք Դաւթի.

1 Ով Տէր, խոնարհեցուր քու ականջդ.
Պատասխան տուր ինծի, վասն զի աղքատ և անանկ եմ.
2 Պահէ իմ անձս, վասն զի եւս սուրբ եմ.
Ով իմ Աստուածս, քեզ յուսացող ծառադ դուն փրկէ.
3 Ողորմի ինծ, ով Տէր,
Վասն զի քեզ կը կանչեմ ամէն օր.
4 Ուրախացուր քու ծառայիդ անձը,
Քանզի դէպ ի՛ քեզ կը վերցունեմ իմ անձս, ով Տէր.
5 Վասն զի դուն, ով Տէր, բարի և ներողաց ես.
Եւ չատ ողորմած այն ամէնուն որ քեզի կը կանչեն.
6 Ականջ դիր իմ ազօթքս, ով Տէր,
Եւ մանկ ըրէ աղաչանացս ձայնը.
7 Նեղութեանս օրը քեզի կ'աղաղակեմ,
Վասն զի դուն ինծի կը պատասխանես.
8 Աստուածներուն մէջ քեզ նմանը չկայ, ով Տէր,
Եւ քու գործերուդ պէս չկայ.
9 Բոլոր ազգերը զոր դուն առեղծեցիր՝ պիտի գան
Եւ երկրպագութիւն բնեն քու առջեւդ, ով Տէր,
Եւ քու անուանդ փառք պիտի տան.
10 Վասն զի դուն մեծ և հրաշներ գործող ես,
Աստուած միայն դուն ես.
11 Ով Տէր, սորվեցուր ինծ քու ճամբադ,
Որ քու ճշմարտութեանդ մէջ քալեմ.
*Միացուր իմ սիրտս՝ որ քու անունդ վախնայ.
12 Իմ բոլոր սրտովս գովեզ պիտի քեզի, ով Տէր՝ իմ Աստուածս,
Եւ յաւիտեան պիտի փառաւորեմ քու անունդ.
13 Վասն զի քու ողորմութիւնդ մեծ է զիս իմ վրաս.

*Կամ իմ սիրտս պիտի ուրախանայ,

Եւ զոն փրկեցիր իմ անձս զԺոխոց խորհն։
14 Ով Աստուած, ամխթաւանեսցեն ինձի զիմ նեղս,
Եւ յանդգնութիւնքն ժողովին իմ ամբաստանեսցին,
Եւ քեզ լիցին առիթ չդրին։
15 Բայց զոն, ով Տէր, զթած եւ ողորմած Աստուած ես,
Երկայնամիտ եւ ողորմութեամբ եւ ճշմարտութեամբ առատ ես։
16 Դարձ ինձ եւ ողորմի ինձ,
Տուր զօրութիւնդ առաջ քու ծառայիդ,
Եւ քու ազախնոյդ որդին փրկիկ։
17 Բարութիւն նշան ինձ արի ինձի,
Որ զիս ատողները տեսանեն եւ ամչնան.
Վասն զի զոն, ով Տէր, ինձի օգնեցիր եւ զիս մխիթարեցիր։

ՍԱԼՄՈՍ· 21։

Կարխի արդասի Սաղմոսի՝ երգոյ։

1 Աստոր հիմերը սուրբ լեռներուն վրայ են։
2 Տէրը սիրեցի դուռները
Յակոբայ բոլոր բնակարաններէն աւելի կը սիրէ։
3 Փառաւոր բաներ կը պատմին քեզի քաղաքիդ համար,
Ով Աստուծոյ քաղաքը։ (Սէլա)
4 Բաղանը եւ Բաբելոն պիտի յիշեմ †ծանօթներուս մէջ.
Ահա Փղշտացւոց երկիրը եւ Տիւրոս Քուշի հետ.
Ասոնք ալ հոն ծնան։
5 Եւ Սիոնի համար պիտի բուռ բուռ կ՚ըսուի թէ
Այս մարդը եւ այն մարդն հոն ծնան.
Եւ Բարձրեալն ինք պիտի հաստատէ զնա։
6 Տէրը ազգերը գրած ժամանակը պիտի բանայ՝
Թէ սոսկա հոն ծնաւ։ (Սէլա)
7 Եւ երգեցողները, նոյնպէս ե՛ւ պարզատեղները,
Բոլորը ակներ ըլլան,
Իմ բոլոր ազբիւրներս քեզի են։

ՍԱԼՄՈՍ· 22։

Կարխի արդասի երգոյ՝ Ազատուսր։
Գալաթեայ Մահաղաթի վրայ։

1 Ով Տէր՝ իմ փրկութեան Աստուածը,
Ցորեկ կ՚ազաղակեմ ե՛ւ գիշերը քու առջեւդ կ՚ելլէ։
2 Իմ ազօթքս քու առջեւդ թող հասնի.
Խոնարհեցուր ականջդ իմ ազաղակիս։
3 Վասն զի իմ անձս չարիքով լեցաւ,
Եւ կեանքս գերեզմանին մօտեցաւ։
4 Փոսը իջնողներուն հետ համարուեցայ,
Ոյժ չունեցող մարդու պէս եղայ,
5 Մեռելներուն մէջ ինկած ես՝
Գերեզմանի մէջ պառկող վիրաւորածներուն պէս,
Զորս այլեւս չես յիշեր,
Եւ քու ձեռքէդ վերմակած են։
6 Զիս վար խորագոյն գրոյ մէջ դրիր՝
Խաւարային անդունդներու մէջ։
7 Քու սրտմտութիւնդ ծանրացաւ իմ վրաս,
Եւ քու բոլոր ալեկոծներովդ զիս չարչարեցիր։ (Սէլա)
8 Իմ ծանօթներս ինձմէ հեռացուցիր,
Զիս գարշելի ըրիր անոնց առջեւ.
Փոցուեցայ եւ դուրս չեմ կրնար ելլել
9 Տառապանքէ աչքերս մռայլեցան.
Ամէն օր քեզի ազաղակեցի, ով Տէր,
Ձեռքերս քեզի երկնցուցի։
10 Մի՞թէ մեռելներուն հրաշք պիտի ընես.
Մի՞թէ մեռածներ պիտի կանգնին եւ քեզ գովեն։ (Սէլա)
11 Մի՞թէ կը պատմի՛ գերեզմանին մէջ,
Եւ ճշմարտութիւնդ կորստեան մէջ,
12 Մի՞թէ կը ճանչցուի՛ն հրաշներդ խաւարին մէջ,

*Ա՛ր. ՚ի՛ն՝ Եգիպտոս։
†Կա՛մ ճանչցողներու պէս։



Եւ արդարութիւնդ՝ մոռացման երկիրին մէջ։
13 Բայց ես, ով Տէր, քեզի ազաղակեցի,
Եւ իմ ազօթքս առաւօտուն քու առջեւդ կ՚ելլէ պիտի։
14 Ով Տէր, ընդէ՞ր իմ անձս կը մերժես,
Եւ քու երեսդ կը ծածկես ինձմէ։
15 Ես թշուառ եմ եւ մահամերձ ի վեր մեռնելու վրայ եմ.
Քու սիրդ քաշեցի՝ խռովեցայ։
16 Սրտմտութիւնդ իմ վրաս կ՚անցաւ,
Եւ զարհուրանքդ զիս կտրատնեցուցին։
17 Ամէն օր ջուրի պէս զիս պատեցին,
Միանգամ չորս կողմն առին։
18 Հեռացուցիր ինձմէ սիրելին եւ բարեկամը,
Ծանօթներս խաւարի մէջ են։

ՍԱԼՄՈՍ· 23։

Նիթան Եզրահացւոյն երգը։

1 Տէրոջը ողորմութիւններն յաւիտան պիտի երգեմ.
Հաւատարմութիւնդ իմ բերնովս ազգ ազգ պիտի պատմեմ։
2 Վասն զի ըսի թէ՝ Ողորմութիւնն յաւիտան պիտի շինուի.
Երկինքը մէջ պիտի հաստատես քու հաւատարմութիւնդ։
3 Ես իմ ընտրեալս հետ ուխտ ըրի,
Դաւիթ ծառայիս երդում ըրի, ըսելով
4 Քու սերունդդ յաւիտան պիտի հաստատեմ,
Եւ ազգ ազգ պիտի շինեմ քու աթոռդ։ (Սէլա)
5 Երկինքը ալ կը փառաւորեն քու հրաշներդ, ով Տէր,
Եւ հաւատարմութիւնդ սուրբերուն ժողովին մէջ։
6 Վասն զի ո՞վ կայ երկինքը մէջ Տէրոջը հաւասար.
Եւ հզօրաց որդիներուն մէջ ո՞վ կը նմանի Տէրոջը։
7 Աստուած շատ պարտուելի է սուրբերուն ժողովին մէջ,

*Կա՛մ աստուածոց

Եւ ահաւոր է ամէն իր բոլորտիքը եղողներուն։
8 Ով Տէր՝ զօրաց Աստուած, ո՞վ է քեզի պէս հզօր Տէր.
Եւ քու հաւատարմութիւնդ քու բոլորտիքդ է։
9 Դուն կը տիրես ծովուն հպարտութեան վրայ.
Երբ անոր ալիքները կը բարձրանան, դուն կը հանդարտեցնես զանոնք։
10 Դուն ճնշեցիր Ռահաբ խոցուածի պէս.
Քու զօրութեամբ ցրուեցիր թշնամիները։
11 Քու է երկինքը եւ քու է երկիրը.
Դուն հիմնեցիր աշխարհը եւ անոր լիութիւնը։
12 Հիւսիս եւ Հարաւ դուն ստեղծեցիր.
Թաբոր եւ Հերմոն քու անունովդ կը ցնծան։
13 Դուն զօրաւոր բազուկ ունիս.
Քու ձեռքդ հզօր է, ով ձեռքդ բարձրացած է։
14 Արդարութիւն եւ իրաւունք քու աթոռիդ հիմն են,
Ողորմութիւն եւ ճշմարտութիւն քու երեսիդ առջեւն կ՚երթան։
15 Երանի՛ այն ժողովուրդին որ գիտէ †ազդարարութիւնդ։
Ո՛վ Տէր, անոնք քու երեսիդ լուսով պիտի քալեն։
16 Քու անունովդ ամէն օր պիտի ցնծան,
Եւ քու արդարութիւնովդ պիտի բարձրանան։
17 Վասն զի զուն ես անոնց զօրութեան փառքը,
Եւ քու հաճութիւնովդ պիտի բարձրանայ մեր եղջիւրը։
18 Վասն զի մեր վահանը Տէրոջն է,
Եւ մեր թագաւորն Իսրայէլի Սրբինն է։
19 Այն ժամանակ տեսիլներով խօսեցար քու սուրբիդ հետ,
Եւ ըսիր, Օգնութիւն դրի պատերազմին վրայ,

*Կա՛մ ցնծութիւնդ

ժողովուրդն ընտրեաւձը բարձրացուցեալ։
20 իմ Ծառաս Դաւիթ գտայ,
իմ սուրբ եղեալս օծեցի զնա։
21 Որոյ հետ իմ ձեռքս պիտի հաստատուի,
եւ բազուկս պիտի զօրացունէ զնա։
22 Թշնամին պիտի չհարստահարէ զնա,
եւ անօրէնութեան որդին պիտի չտկարչարէ զնա։
23 Եւ անոր թշնամիներն անոր առջևէն պիտի կոտրեմ,
ու զանոնք ատողները պիտի զարնեմ։
24 Եւ իմ հաւատարմութիւնս եւ ողորմութիւնս անոր հետ պիտի ըլլայ։
Եւ անոր եղջիւրն իմ անունովս պիտի բարձրանայ։
25 Անոր ձեռքը ծովուն մէջ պիտի դնեմ,
Եւ անոր աջ ձեռքը գետերուն մէջ։
26 Անիկա ինծի պիտի կանչէ Թէ Դուն ես իմ Հայրս,
իմ Աստուածս եւ իմ փրկութեանս վէմը։
27 Եւ ես զանիկա անդրանիկի պիտի ընեմ
Երկրի թագաւորներէն աւելի բարձր։
28 Իմ ողորմութիւնս յաւիտեան պիտի պահեմ անոր համար,
Եւ իմ ուխտս անոր հետ հաւատարիմ պիտի ըլլայ։
29 Եւ անոր սերունդը յաւիտեան,
Եւ անոր աթոռը երկինքի օրերուն չափ պիտի ընեմ։
30 Եթէ անոր որդիքն իմ օրէնքս թողուն,
Եւ իմ իրաւունքներովս չքալեն,
31 Եթէ իմ կանոններս անարգեն,
Եւ իմ պատուիրանները չպահեն,
32 Ես ալ գաւազանով պիտի պատժեմ անոնց յանցանքը,
Եւ հարուածներով՝ անոնց անօրէնութիւնը։
33 Բայց իմ ողորմութիւնս պիտի չխլտրեմ անկէ,
Եւ իմ հաւատարմութիւնս սուտ պիտի չհանեմ։
34 Իմ ուխտս պիտի չանարգեմ,
Եւ շրթունքներէս ելածը պիտի չփոխեմ։
35 Անգամ մը երդուայ իրի իմ սրբութեամբս,
Որ սուտ պիտի չըսեմ Դաւիթի։
36 Անոր սերունդը յաւիտեան պիտի մնայ,
Եւ անոր աթոռն իմ առջեւս արեգական չափ։
37 Լուսնի պէս յաւիտեան պիտի հաստատուի,
Եւ երկինքի մէջ հաւատարիմ վկայի պէս։ (Սէլա)
38 Բայց դուն երեսիդ ձգեցիր եւ անարգեցիր,
Բուռ օծեալդ բարկացար,
39 Բուռ Ծառայիդ ուխտը մերժեցիր,
Անոր թագը գետնին հաւասար պղծեցիր։
40 Անոր բոլոր պարիսպները փըցուցիր,
Անոր բերդերն աւերակ ըրիր։
41 Ճամբէն բոլոր անցնողները կողոպտեցին զնա։
Դարասիներուն եղաւ իր դրացիներուն։
42 Անոր նեղիչներուն աջ ձեռքը բարձրացուցիր,
Անոր բոլոր թշնամիները ուրախացուցիր։
43 Անոր սուրին բերանն ալ դարձուցիր,
Եւ զինքը պատերազմին մէջ չկեցնեցուցիր։
44 Անոր փառքը դադրեցուցիր,
Եւ անոր աթոռը գետին զարկիր։
45 Անոր երիտասարդութեան օրերը կարճեցուցիր,
Ամօթով ծածկեցիր։ (Սէլա)
46 Մինչև ե՞րբ, ով Տէր, բուռ անդադ միշտ պիտի պահես.
Բուռ սրամտութիւնդ կրակի պէս պիտի բորբոքի՞։
47 Յիշէ Թէ ինչ է կեանքս.
Ինչ ունայնութեան համար առիր ես զբոլոր մարդոց բոլոր որդիները։
48 Ո՞վ է այն մարդը որ պիտի եւ մահ չը տեսնէ,
Եւ իւր անձը գերեզմանի ձեռքէն պիտի ազատէ։ (Սէլա)
49 Ով Տէր, ո՞ր են քու առջի ողորմութիւններդ,
Որ երդուար բրիր Դաւիթի քու հաւատարմութեամբդ։



50 Ով Տէր, յիշէ քու ծառաներուդ նախատինքը,
Որ իմ ծոցիս մէջ կը կրեմ բոլոր մեծ ազգերին,
51 Որ անով քու թշնամիներդ անարգեցին, ով Տէր,
Որ անով քու օծեալդ քայլերն անարգեցին։
52 Օրհնեալ ըլլայ Տէրը յաւիտեան,
Ամէն և ամէն։

## ՍԱՂՄ. Գ.

Աստուծոյ Մարդուն Մովսիսի աղօթքը։

1 Ով Տէր, դուն մեզի ապաւէն եղար
ազգ մինչև ազգ։
2 Լեռներուն ծնանելէն առաջ,
Եւ երկրի և աշխարհի առեղծուելէն առաջ,
Յաւիտենից մինչև յաւիտեանս դուն ես Աստուած։
3 Դուն մարդը փոշի կը դարձուներ,
Եւ կ'ըսես, Եղ դարձէք, մարդոց որդիներ։
4 Վասն զի հազար տարին քու առջիդ երեկուան պէսը պիտի որ անցաւ,
Կամ գիշերուան պահու մը պէս։
5 Կ'ընկղմես զանոնք, երազի պէս կ'ըլլան.
Առտուան կանանչացած խոտի պէս կ'ըլլան։
6 Առտուան կը ծագին և կը կանանչանայ,
Երեկոյին կը կարուի և կը չորնայ։
7 Վասն զի քու բարկութենէդ կը մաշինք,
Եւ քու սրամտութենէդ կը խռովինք։
8 Մեր անօրէնութիւնները քու առջիդ,
Եւ մեր ծածուկ յանցանքը քու երեսիդ լուսոյն մէջ դրիր։
9 Բանզի մեր բոլոր օրերը քու բարկութեամդ կ'անցնին,
Մեր տարիները իբրև ցնորք կ'անցընենք։
10 Մեր տարիներուն օրերը հօթանասուն տարի կ'են.
Եւ եթէ զօրութեամբ ութսուն տարի ըլլան,
Տակաւին անոնց փառքն աշխատանք և ցաւ է.
Վասն զի անանք չատուով կ'անցնինին, և մենք կը թռչինք։
11 Ո՞վ գիտէ քու բարկութեանդ զօրութիւնը,
Եւ քու սրամտութիւնդ քու վախիդ համեմատ։
12 Այնպէս տրվիցուր մեզի մեր օրերը հաշուել,
Որ սրտի խոհեմութիւն ստանանք։
13 Դարձիր, ով Տէր, մինչև ե՞րբ.
Եւ զթութիւն ըրէ քու ծառաներուդ։
14 Կշտացուր մեզ կանուխ քու ողորմութեամբդ,
Որ ցնծանք և ուրախ ըլլանք մեր բոլոր օրերուն մէջ։
15 Ուրախացուր մեզ այն օրերուն չափով որ տրտմեցուցիր.
Այն տարիներուն չարիք տեսանք։
16 Թող երևնայ քու գործդ քու ծառաներուդ,
Եւ քու փառքդ անոնց որդիներուն։
17 Եւ մեր Տէր Աստուծոյն վայելութիւնը մեր վրայ ըլլայ.
Եւ մեր ձեռաց գործը հաստատէ մեր վրայ.
Մեր ձեռաց գործը հաստատէ։

## ՍԱՂՄ. Ղ.Ա.

1 Բարձրելոյն ծածկոցին ներքև բնակողն
Ամենակարողին հովանաւորութեան ներքև պիտի հանգչի։
2 Տէրոջը համար պիտի ըսեմ Թէ իմ ապաւէնս և իմ ամրոցս է.
Իմ Աստուածս որուն կը յուսամ։
3 Արդարև նա պիտի փրկե քեզ որսորդին որոգայթէն,
Ապականիչ ժանտահարէն։
4 Քեզ իւր փետուրներով պիտի ծածկէ,
Եւ իւր թևերուն ներքև պիտի ապաստանիս.
Անոր ճշմարտութիւնը վահան և ապար պիտի ըլլայ։

5 Պիտի չվախնաս գիշերուան զարհուրանքէն,
նետէն որ ցերեկը կ՚ուղղուի,
6 ոչ ալ խոխ մեռիկ որ խաւարի մէջ կը սողոսկի,
ոչ կործանումէն որ կէսօրին կը պատահի։
7 Հազար հոգի քու ձախդ,
եւ տասը հազար քու աջ կողմիդ պիտի իյնան,
բայց քեզի հասնելու չեն պիտի կարենար։
8 Միայն քու աչքերդ պիտի նային,
եւ ամբարիշտներուն հատուցումը պիտի տեսնես։
9 Որովհետեւ դուն Տէրը իմ Ապաւէնս ես,
բարձրեալը քեզի ապաստանարան ըրիր,
10 քեզի չարիք պիտի չհասնի,
եւ քու բնակարանիդ հարուած պիտի չմօտենայ։
11 Վասն զի իւր հրեշտակներուն պիտի տպարգէ քեզի համար,
որ քու բոլոր ճամբաներուդ մէջ քեզ պահեն։
12 Անոնք ձեռաց վրայ պիտի վերցնեն քեզ,
որ չքլլայ թէ առջի քարի զարնես։
13 Առիւծի եւ իժի վրայ պիտի քալես.
Առիւծի կորիւնը եւ վիշապը պիտի կոխկրտես։
14 Որովհետեւ ինծի կը ցանկայ, Անոր համար ես պիտի փրկեմ զնա.
Անոր ամբոխութիւն պիտի ըլլամ,
Քանզի անիկա իմ անունս գիտցաւ։
15 Ինծի պիտի կանչէ, եւ ես անոր պատասխան պիտի տամ.
Նեղութեան մէջ անոր հետ պիտի ըլլամ.
Պիտի ազատեցնեմ եւ փառաւորեմ զնա։
16 Երկայն օրերով պիտի կշտացնեմ զնա,
եւ իմ փրկութիւնս անոր պիտի ցուցնեմ։

ՍԱՂՄՈՍ Ղ.Ի

Շաբաթ օրուան Համար Սաղմոս
Ե երգ։

1 Բարի է գոհանալ Տէրոջմէն,
եւ սաղմոս բանել քու անունդդ, ով Բարձրեալ,
2 Աւետաւորել քու ողորմութիւնդ,
եւ զիշերները քու հաւատարմութիւնդ պատմել,
3 Տասը լար ունեցող նուագարանով եւ ապզովով,
եւ քնարի ձայնով։
4 Վասն զի գուն, ով Տէր, քու գործովդ զիս ուրախացուցիր.
քու ձեռացդ գործերով պիտի ցնծամ։
5 Ով Տէր, ի՜նչ մեծ են քու գործերդ.
շատ խոր են քու խորհուրդներդ։
6 Անմիտ մարդը չիմանար զայս,
եւ յիմարը չհասկնար.
7 Ամբարիշտներուն խոտի պէս բուսնիլը՝
եւ բոլոր անօրէնութիւն գործողներուն ծաղկիլը
Իրենց յաւիտենական կորստեան կ՚երթան։
8 Բայց գուն, ով Տէր, յաւիտեան բարձրը կաս։
9 Վասն զի ահա քու թշնամիներդ, ով Տէր,
վասն զի ահա քու թշնամիներդ պիտի կորսուին.
Բոլոր անօրէնութիւն գործողները պիտի ցրուին։
10 Բայց իմ եղջիւրս մէկղկերուինին պէս պիտի բարձրացուներ.
Նոր ձէթ իւղով օծուելու։
11 Եւ աչքերս թշնամիներուս կ՚երթան պիտի տեսնեն.
Ականջներս ինծի դէմ եղող չարագործներուն պիտի լսեն։
12 Արդարն արմաւենոյ պէս պիտի ծաղկի,
Լիբանանու եղևնոյն պէս պիտի մեծնայ։
13 Տէրոջը տան մէջ անկուռածները



Մեր Աստուծոյն սրահներուն մէջ պիտի ծաղկին.
14 Ծերութեան առեն ևս պտուղ պիտի տան,
Պարարտ եւ կանաչ պիտի մնան,
15 Որ պատմեն թէ Տէրը ուղիղ է.
Անիկա իմ վէմս է, եւ անիրաւութիւն չկայ անոր մէջ։

ՍԱՂՄՈՍ Ղ.Զ

1 Տէրը կը թագաւորէ, մեծ պատուութիւն հագած է.
Տէրը զօրութիւն հագած է զօրանդած է.
Աշխարհը ալ հաստատուած է որ չսասանի։
2 Քու աթոռդ հին ժամանակէն հաստատուած է,
Ի յաւիտենից ես դուն։
3 Ով Տէր, գետերը բարձրացուցին,
Գետերը կը բարձրացուցեն իրենց ձայները.
Գետերը կը բարձրացնեն իրենց ալիքները։
4 Ջուռ չուրերուն ձայնէն՝ ծովուն զօրաւոր ալիքներէն
Աւելի զօրաւոր է Տէրը բարձրութեան մէջ։
5 Քու վկայութիւններդ շատ հաստատուած են.
Ով Տէր, սրբութիւնը քու տանդ կը վայլէ յաւիտեան։

ՍԱՂՄ. Ղ.Է

1 Ով Տէր, վրէժխնդրութիւնց Աստուած,
Ով վրէժխնդրութեանց Աստուած, յայտնուէ։
2 Վերթ, ով երկրին Դատաւորդ,
Ամբարիշտ անձերուն հատուցում ըրէ։
3 Ով Տէր, մինչև ե՞րբ ամբարիշտները,
Մինչև ե՞րբ ամբարիշտները պարծենան.
4 Գոռոզութեամբ բարբառելով խօսին,
Եւ իրենք անօրէնութիւն գործողները պարծենան։
5 Ով Տէր, անոնք քու ժողովուրդդ կը հարստահարեն,
Եւ քու ժառանգութիւնդ կը չարչարեն.
6 Այրին եւ պանդուխտը կը սպաննեն,
Եւ որբերը կը մեռցնեն.
7 Եւ կ՚ըսեն, Տէրը չտեսնէր,
Եւ Յակոբայ Աստուածը չմնանար։
8 Խելացէք, ով ժողովրդեան անմիտներդ,
Եւ դուք, ով յիմարներ, երբ միտք պիտի առնէք։
9 Մէկ ականջը անկազդ չըլլնէր,
կամ թէ աչքը տեսնդ չըլլնէր,
10 Մէկ ազգերը խրատող չը յանդիմաներ.
Մէկ մարդու գիտութիւն սորվեցնողը չէ՞ որ։
11 Տէրը մարդոց խորհուրդները գիտէ՝
Որ ունայնութիւն են։
12 Երանելի այն մարդուն զոր գուն կը խրատես, ով Տէր,
Եւ քու օրէնքէդ անոր կը սորվեցնես,
13 Որ չարաչար օրերուն մէջ զանիկա հանգչեցնես,
Մինչև որ ամբարիշտին համար հոր փորուի։
14 Վասն զի Տէրը իւր ժողովրդը երեսէ պիտի չձգէ,
Եւ իւր ժառանգութիւնը պիտի չմերժէ.
15 Այլ դատաստանն իրաւունքի պիտի դառնայ,
Եւ ամէն սրտով ուղիղներն անոր կ՚եւեւէն պիտի երթան։
16 Ո՞վ ինծի համար չարերուն դէմ պիտի կելլէ,
Ո՞վ ինծի համար անօրէնութիւն գործողներուն պէմ պիտի կանգնի։
17 Եթէ Տէրը ինծի ոգնական չըլլար,
Փիչ պիտի մնար որ իմ անձս լռութեան տեղը բնակէր։
18 Երբ կ՚ըսէի թէ իմ տոտքս կը սասանի,
Ով Տէր, քու ողորմութիւնդ զիս կը հաստատէր։
19 Իմ ներսի դիս հոգվոյս շատացած ատեանը՝

*Եբր. երկար օրեր։

Քու՝ մխիթարութիւններդ իմ անձս
կ'ուրախացունէին։
20 Մինչ՛ք քեզի հետ հաղորդ ակնյայտութիւն
ունի՝ անօրինութեան աճառը,
Որ՝ օրէնքին դէմ չարիք կը պատրաստէ։
21 Արդարին անձին դէմ կը ժողովուին,
Եւ անմեղ արիւն կը դատապարտեն։
22 Բայց Տէրը իմ ամրութիւնս է,
Եւ իմ Աստուածս՝ իմ ապաւինութեանս
վէմը։
23 Եւ անոնց անօրինութիւնն իրենց վրայ
պիտի գարձնէ,
Եւ զանոնք իրենց չարութեամբ պիտի
կտրէ։
Մեր Տէր Աստուածը պիտի կտրէ զանոնք։

## ՍԱՂՄ· Ղ.Ե

1 Եկէ՛ք ցնծութիւն ընենք Տէրոջը առ-
ջեւ,
Ազաղակենք մեր փրկութեան վէմին։
2 Գոհութեամբ անոր երեսին առջեւ գանք,
Սաղմոսներով ազաղակենք անոր։
3 Քանզի Տէրը մեծ Աստուած է,
Եւ բոլոր աստուածներուն վրայ մեծ
Թագաւոր է։
4 Անոր ձեռքին մէջ են երկրի խորունկ
տեղերը,
Եւ լեռներուն բարձրութիւնները ա-
նոնն են։
5 Անոնն է ծով, և նա չինեց զայն,
Եւ անոր ձեռքերը առեղծեցին ցամա-
քը։
6 Եկէ՛ք երկրպագութիւն ընենք և ծը-
ռնի՛ք,
Դուռը կրնկնի՛ք մեզ սաեղծող Տէրոջը
առջեւ։
7 Վասն զի նա է մեր Աստուածը,
Եւ մենք անոր արօտին ժողովուրդը և
անոր ձեռաց գործարներն ենք։
Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք,
8 Ձեր սրտերը մի խստացնէք ինչպես
Մերիպայի մէջ՝
Անապատին մէջ փորձութեան օրուան
պէս,
9 Ուր ձեր հայրերը զիս փորձեցին,
Քննեցին զիս և իմ գործերս տեսան։
10 Քառասուն տարի զզուեցայ այն ազ-
գէն,
Եւ ըսի, Անոնք սրտով մոլորած ժո-
ղովուրդ են,
Իմ ճամբաներս չճանչցան։
11 Ուստի իմ բարկութեանս մէջ երդում
ըրի,
Թէ անոնք իմ հանգիստս պիտի չմտա-
նեն։

## ՍԱՂՄ· Ղ.Զ

1 Նո՛ր երգ երգեցէ՛ք Տէրոջը։
Ով բոլոր երկիր, երգեցէ՛ք Տէրոջը։
2 Երգեցէ՛ք Տէրոջը, օրհնեցէ՛ք անոր ա-
նունը։
Օրէ օր անոր փրկութիւնը քարոզե-
ցէ՛ք։
3 Անոր փառքն ազգերուն մէջ պատմե-
ցէ՛ք,
Եւ անոր հրաշները բոլոր ժողովուրդ-
ներուն մէջ։
4 Քանզի Տէրը մեծ է և շատ գովելի
Անկից բոլոր աստուածներուն վրայ
սքանչելի է։
5 Քանզի ազգերուն բոլոր աստուածները
կուռքեր են,
Սակայն Եհովան երկինքը սաեղծեց։
6 Փառք և վեհութիւն կայ անոր առ-
ջեւ,
Զօրութիւն և գեղեցկութիւն՝ անոր
սրբարանին մէջ։
7 Տէրոջը տուէ՛ք, ով ժողովրդոց տոհ-
մերը,
Տէրոջը տուէ՛ք փառք և զօրութիւն։
8 Տէրոջը տուէ՛ք անոր անուան փառքը։
Ընծայ տուէ՛ք և անոր սրահներուն մէջ
մտէ՛ք։
9 Գեղեցկութեամբ՝ Տէրոջը երկրպա-
գութիւն ըրէ՛ք։

*Կամ՝ էր առհասարակ օրէնքով
†Կամ՝ զօրութիւնները

Կամ՝ ունայնութիւններ
†Կամ՝ Սրբութեան գարդարանքով



Վախցէ՛ք անոր երեսէն, ով բոլոր եր-
կիր։
10 Հեթանոսներուն մէջ ըսէ՛ք թէ Տէրը
կը թագաւորէ,
Աշխարհն ալ հաստատած է որ չսա-
սանի,
Անիկա ազգերը ժողովուրդներն ա-
ռտղութեամբ
11 Երկինք թող ուրախանայ և երկիր ցըն-
ծայ,
Ծով իր լիութեամբը թող գոռայ,
12 Դաշտը և բոլոր անոր մէջ եղողները
թող ուրախանան.
Անտառն անտառին բոլոր ծառերը թող
ցնծան
13 Տէրոջը առջեւ, քանզի կու գայ,
Քանզի կու գայ երկիրը դատելու.
Պիտի դատէ աշխարհը արդարու-
թեամբ,
Եւ ժողովուրդները իր ճշմարտու-
թեամբ։

## ՍԱՂՄ· Ղ.Ի

1 Տէրը կը թագաւորէ, երկիր թող ցըն-
ծայ,
Շատ կղզիներ թող ուրախանան։
2 Անոր բոլորտիքը ամպ և մառախուղ
կայ,
Արդարութիւն և իրաւունք անոր ա-
թոռին հիմերն են։
3 Անոր առջեւէն կրակ կ'երթայ,
Եւ անոր բոլորտիքը նեղած թշնամինե-
րը կ'այրէ։
4 Անոր փայլակներն աշխարհը կը լու-
սաւորեն.
Երկիր կը տեսնէ և կը դողայ։
5 Լեռները մոմի պէս կը հալին Եհովային
երեսէն,
Բոլոր երկրին Տէրոջը երեսէն։
6 Երկինք կը պատմէ անոր արդարու-
թիւնը,
Եւ բոլոր ժողովուրդները կը տեսնեն
անոր փառքը։
7 Թող ամչնան այն ամէնը որ կուռքե-
րուն կը ծառայեն,
Որ ունայնութեամբ կը պարծենան.

*Կամ՝ յաղթութիւն

6 Փառերով և չխփերիս ձայնով
Ազաղակեցէք Տէր Թագաւորին առջև։
7 Թող գառաց ծով և անոր լիութիւնը,
Աշխարհքն և անոր բնակիչները։
8 Գետերը թող ծափ զարնեն,
Լեռները թող միասին թող ցնծան
9 Տէրոջը առջև, զանոնք կոչ գալ երկիրը դատելու
Անիկա պիտի դատէ աշխարհքը արդարութեամբ,
Եւ ժողովուրդներն ուղղութեամբ։

ՍԱՂՄՈՍ ՂԹ

1 Տէրը կը թագաւորէ, ժողովուրդները թող սարսափին։
Ինք քերովբէից վրայ կը նստի, երկիրը թող շարժի։
2 Տէրը մեծ է Սիոնի մէջ
Եւ բարձրացած է բոլոր ժողովուրդներուն վրայ։
3 Թող գովեն քու մեծ և ահաւոր անունդ.
Անիկա սուրբ է։
4 Եւ *թագաւորին զօրութիւնն իրաւունք կը սիրէ։
Ու դուն հաստատեցիր,
Իրաւունք և արդարութիւն յիրէ ետկորայ մէջ։
5 Բարձրացուցէք Տէրը՝ մեր Աստուածը,
Եւ երկրպագութիւն լրիվ անոր ստից պատուանդանին առջև,
Անիկա սուրբ է։
6 Մովսէս և Ահարոն անոր քահանաներուն մէջ
Եւ Սամուէլ անոր անուանը կանչողներուն մէջ
Տէրոջը ի՛նդրողներն էին,
Ու անիկա պատասխան կու տար անոնց։
7 Ամպի սեան մէջէն կը խօսէր անոնց հետ։
Անոնք կը պահէին անոր վկայութիւնները,
Ու այն հրամանը՝ որ անոնց տուաւ։
8 Ով Տէր՝ մեր Աստուածը, դուն կը լսեիր անոնց.
Դուն անոնց նեղող Աստուած էիր,
Թէեւ վրէժխնդիր եղար անոնց գործերուն։
9 Բարձրացուցէք Տէրը՝ մեր Աստուածը,
Եւ երկրպագութիւն բլրիք անոր սուրբ դիւանի վրայ.
Քանզի Տէրը՝ մեր Աստուածը սուրբ է։

ՍԱՂՄՈՍ Ճ

Փառաբանական Սաղմոս։

1 Ացողակեցէք Տէրոջը, ով բոլոր երկիր,
2 Ուրախացեք Տէրոջը ուրախութեամբ.
Անոր առջևն եկէք ցնծութեամբ։
3 Գիտցէք որ Եհովան է Աստուած.
Անիկա ստեղծեց մեզ, և ոչ թէ մենք.
Մենք անոր ժողովուրդը և անոր արօտին ոչխարներն ենք։
4 Մտէք անոր դուռներէն գոհութեամբ,
Եւ անոր սրահներն՝ օրհնութեամբ
Գոհացեք անկէ և օրհնեցէք անոր անունը։
5 Վասն զի Տէրը բարի է
Անոր ողորմութիւնն յաւիտեան է,
Եւ անոր հաւատարմութիւնն ազգէ ազգ։

ՍԱՂՄՈՍ ՃԱ

Սպիտակ Դաւիթի

1 Ողորմութիւն և իրաւունք պիտի երգեմ.
Ով Տէր, քեզի սաղմոս պիտի բանեմ։
2 Խելամտութեամբ պիտի քալեմ կատարեալ ճանապարհի մէջ.
Երբ ինձի պիտի գաս.
Իմ տան մէջ սրտով կատարեալ ըլլամ
3 Աչքերուս առջև չեմ դներ մեղքի պիտի չդնեմ։

*Կամ դուն, ով իրաւասէր զօրութիւն թագաւոր,



Մոլորածներուն գործը ի՛ւրմէս,
Թող անիկա ինծի չկպչի։
4 Ծուռ սիրտ ինծի թող գաղուէ ինէ.
Չարը պիտի չճանչնամ։
5 Ով որ ծածուկ կը խօսի իր ընկերին դէմ, պիտի չնեղեմ.
Ով որ աչքերով բարձր է և սրտով ամբարտաւան,
Անոր պիտի չհամբերեմ։
6 Իմ աչքերս երկրի հաւատարիմներուն վրայ պիտի դրուն,
Որ ինծի հետ բնակին.
Կատարեալ ճանապարհի մէջ գալորն ինծի ծառայութիւն պիտի բնէ։
7 Նենգաւորը պիտի չբնակի իմ տանս մէջ.
Սուտ խօսողն աչքերս առջևէն պիտի չհաստատուի։
8 Առ ատենն կանեմ իմ պիտի չնեղեմ երկրին բոլոր ամբարիշտները,
Որ Տէրոջը քաղաքէն բոլոր անօրէնները կտրեմ գործողները.

ՍԱՂՄՈՍ ՃԲ

Վշտալի այն ատենը՝ երբ մէբՈԸ կը մարի և իւր գանգատը Տէրոջը առջևն կը թափէ։

1 Ով Տէր, ինչ ազգի քու։
Եւ ատյատկա թող փելի հանար։
2 Քու հրեշտդ ալ ծածկեր ինչ իմ նեղութեանս օրը։
Խոնարհեցուր ինծի քու ականջդ։
Շուտ ասլ պատասխան տուր ինծի այն օրը որ չեպ կանչեմ։
3 Վասն զի իմ օրերս մխի պէս անցան,
Եւ ոսկրներս խոտի պէս այրեցան։
4 Սիրտս գարնանացան և խոտի պէս չորցաւ,
Այնպէս որ հացս ուտելս մոռցայ։
5 Հառաչանքիս ձայնէն
Ոսկրներս մաղիներս փական։
6 Անապատի մէջ հաւալան նմանեցայ,
Աւերակներու բուէն պէս եղայ։
7 Ան քուն մնացի, և նման եղայ
Տանիքայ վրայ մինակ եղող ճնճղիկին։
8 Ամէն օր իմ թշնամիներս զիս կը նախատեն,
Իմ վրաս ատոնիկ բարկացողներն ինծի պէս երդում կ'ընեն։
9 վասն զի մոխրէն հացի պէս կերայ,
Եւ ըմպելիքս արտասուօք խառնեցի
10 Քու բարկութեանդ և սրամտութեանդ համար,
Վասն զի զիս վերցուցիր և նետեցիր։
11 Իմ օրերս երկրի ընացած սուտերի պէս եղան,
Եւ ես խոտի պէս չորցայ։
12 Բայց դուն, ով Տէր, յաւիտեան կը կենաս,
Եւ քու յիշատակդ ազգէ մինչև ազգ։
13 Դուն պիտի ելլես և Սիոնի ողորմիս,
Քանզի ժամանակ է անոր ողորմելու,
Քանզի որոշած ժամանակն հասաւ։
14 վասն զի քու ծառաներդ անոր քարերուն կը հաճին,
Եւ անոր հողին կը գթան։
15 Եւ հեթանոսները պիտի վախնան Տէրոջը անունէն,
Եւ երկրի բոլոր թագաւորները քու փառքդ։
16 վասն զի Տէրը պիտի շինի Սիոնը,
Ու փառօք պիտի երեւնայ։
17 Տնանկներուն ազօթքը մերկ պիտի բնէ,
Եւ անոնց ազօթքը պիտի չանարգէ։
18 Ասիկա պիտի գրուի գալու ազգին համար.
Եւ ստեղծուելու ժողովուրդը Տէրոջը գովեստ պիտի տայ։
19 վասն զի իր սրբութեան բարձրութենէն հայեցաւ.
Տէրը երկինքէն երկրի վրայ նայեցաւ.
20 Որ կապուածին հառաչանքը լսէ,
Եւ մահու որդիներն արձակէ
21 Որ Սիոնի մէջ Տէրոջը անունը պատմեն,
Եւ անոր գովութիւնը Երուսաղէմի մէջ,
22 Երբ ժողովուրդներն և միասին ժողովուին,
Եւ թագաւորութիւններըն Տէրոջը ծառայելու համար։
23 Անիկա զօրութիւնս ուժասպառ ընաւ ճամբուն մէջ,

Ե– իմ օրերս կարճեցաւ։
24 Եւ ասի, Ով իմ Աստուածս,
իմ օրերուս կէսին մէջ զիս մի վերցներ.
քու տարիներդ ազգէ մինչեւ ազգ են։
25 Սկիզբէն երկիրն հիմերը դրիր,
Եւ երկինք քու ձեռացդ գործն է։
26 Անոնք պիտի կորսուին, բայց դուն պիտի կենաս.
Եւ անոնց ամէնը ձորձի պէս պիտի մաշին.
Հանդերձի պէս պիտի փոխես զանոնք,
Եւ պիտի փոխուին։
27 Բայց դուն նոյն ինքն ես,
Եւ քու տարիներդ պիտի չվերջանան։
28 Քու ծառաներուդ որդիքը պիտի բնակին,
Եւ անոնց սերունդը հաստատ պիտի մնայ քու առջեւդ։

ՍԱՂՄ. ՃԲ

Սաղմոս Դաւթի։

1 Ով իմ անձս, օրհնէ Տէրը,
Եւ ամէն ինչ որ իմ ներքին զիս է՝ անոր սուրբ անունը։
2 Ով իմ անձս, օրհնէ Տէրը,
Եւ անոր բոլոր բարերարութիւնները մի մոռնար.
3 Որ կը քաւէ բոլոր անօրէնութիւններդ,
Եւ կը բժշկէ բոլոր հիւանդութիւններդ.
4 Որ կը փրկէ կեանքդ ապականութենէ,
Ե– կը պսակէ գթով ողորմութեամբ եւ գիրութեամբ.
5 Որ կը լեցնէ ծերութիւնդ բարութեամբ,
Ե– մանկութիւնդ արծուոյն պէս կը նորոգուի։
6 Տէրը արդարութիւն եւ իրաւունք կ'ընէ
Բոլոր զրկուածներուն։
7 Անիկա իր ճանիրները Մովսէսի ճանչցուց,
Ե– իր գործերն Իսրայէլի որդւոց։
8 Բարեգութ եւ ողորմած է Տէրը,
Երկայնամիտ եւ առատ ողորմութեամբ։
9 Անիկա միշտ վիրջը չհակառակիր,
Եւ յաւիտեան սէր չպահեր։
10 Անիկա մեր մեղքերուն համեմատ չվրաժեցաւ մեզ,
Եւ մեր անօրէնութիւններուն համեմատ հատուցում չըրաւ մեզ։
11 Այլ որչափ երկինքը երկրէն բարձր է,
Այնչափ անոր ողորմութիւնն անոնց վախցողներուն վրայ զօրաւոր է։
12 Որչափ որ արեւելք արեւմուտքէն հեռու է,
Այնչափ հեռացուց մեզմէ մեր յանցանքները։
13 Ինչպէս որ հայր մը կը գթայ իր որդւոց վրայ,
Այնպէս Տէրը կը գթայ իրեն վախցողներուն վրայ։
14 Վասն զի ան գիտէ մեր կազմուածքը,
Կը յիշէ որ մենք հող ենք։
15 Մարդուն օրերը խոտի պէս են.
Ինչպէս գաշտի ծաղիկը, այնպէս կը ծաղկի։
16 Վասն զի հովը անոր վրայէն կ'անցնի եւ ան կ'ոչնչանայ,
Եւ այլ եւս անոր տեղը չճանչնար զանիկա։
17 Բայց Տէրոջը ողորմութիւնն յաւիտեանէ յաւիտեան անոնց վախցողներուն վրայ է,
Եւ անոր արդարութիւնը որդւոց որդիներուն վրայ.
18 Անոնց՝ որ կը պահեն անոր ուխտը
Եւ կը յիշեն անոր պատուիրանները եւ կը կատարեն։
19 Տէրը իր աթոռը երկինքի մէջ հաստատեց.
Եւ անոր թագաւորութիւնն ամենուն վրայ կը տիրէ։
20 Օրհնեցէք Տէրը, ով անոր հրեշտակներդ, որ ուժով զօրաւոր էք,
Որ անոր խօսքին ձայնը լսելով՝ անոր հրամանը կը կատարէք։
21 Օրհնեցէք Տէրը, ով անոր բոլոր զօրքերդ՝
Անոր կամքը կատարող պաշտօնեաներ։
22 Օրհնեցէք Տէրը, ով անոր բոլոր գործերը,



Անոր տէրութեան ամէն տեղերուն մէջ.
Օրհնէ Տէրը, ով իմ անձս։

ՍԱՂՄ. ՃԳ

1 Օրհնէ Տէրը, ով իմ անձս.
Ով Տէր՝ իմ Աստուածս, դուն շատ մեծ ես.
Փառք եւ վեհութիւն հագած ես։
2 Լոյսը հանդերձի պէս կը հագնիս,
Երկինք վարագուրի պէս կը տարածես։
3 Անիկա իր վերնատուները ջուրերուն վրայ կը շինէ,
Ամպերն իրեն կառք կ'ընէ,
Հովին թեւերուն վրայ կը պտրտի։
4 Իր հրեշտակներն հոգիներ կ'ընէ,
Ե– իր պաշտօնեաները՝ կրակի բոց։
5 Անիկա հաստատեց զերկիր իր հիմերուն վրայ,
Որ յաւիտեանս յաւիտենից չխախտի։
6 Զանիկա անդունդով ծածկեցիր իբրեւ հագուստով.
Ջուրերը լեռներուն վրայ կայնեցան.
7 Քու սպառնալիդ փախան.
Քու որոտանդ ձայնէն արտորալով փախան։
8 Լեռներուն վրայ ելան՝ հովիտներուն մէջ իջան,
Այն տեղը զոր գտան հաստատեցիր անոնց համար։
9 Սահման դրիր որ չանցնին,
Եւ նորեն երկիրը չծածկեն։
10 Ջրերուն մէջ աղբիւրներ կը ղրկէ.
Ջուրերը լեռներուն մէջէն կ'երթան։
11 Անոնք բոլոր գազան գազաններուն կը խմցնեն.
Ե– վայրի էշերն իրենց ծարաւը կ'անցցնեն։
12 Անոնց քով երկնից թռչունները կը բնակին,
Ոստերուն մէջէն ձայն կու տան։
13 Անիկա իր վերնատուներէն լեռները կը ջրէ.
Քու գործերուդ պտուղն երկիրը կը հագցնայ։
14 Անիկա անագուններուն համար խոտ կը բուսցնէ,

*ԵԲԲ. իշէն, [-ի իշէն ա-ն]
†Կամ սատանաներուդ։

Եւ մարդուն ծառայութեան համար բոյս,
Որ կերակուր հանէ երկրէն,
15 Եւ գինի՝ որ կ'ուրախացնէ մարդու սիրտը,
Ե– ձէթ՝ որ անոր երեսը կը փայլեցնէ,
Եւ հաց՝ որ կը հաստատէ մարդու սիրտը։
16 Տէրոջը ծառերը կուշտ են,
Լիբանանի կեդրոնները՝ որ ինք անիկա,
17 Հոն թռչունները բունը կը շինեն,
Ե– սրագին բնակարանը մայրերուն վրայ է։
18 Բարձր լեռներն այծեամներուս ապաւէն են,
Ե– վէմերը՝ ծագարներուս։
19 Ժամանակներու համար լուսինն ըստ ակզբնաց.
Արեգակն իր մտքը մտնելը կը ճանչնայ։
20 Խաւարը կը դնես և գիշեր կ'ըլլայ,
Որուն մէջ անտառին բոլոր գազանները կը պտրտին։
21 Առիւծներուն կորնիւնները կը մռնչին յափշտակութեան համար,
Ե– Աստուծմէ իրենց կերակուրը կը խնդրեն.
22 Արեգակը ծագելուն պէս կը ժողովուին,
Եւ իրենց որջերուն մէջ կը պառկին։
23 Մարդ մինչեւ իրիկուն իր գործին
Եւ իր ծառայութեան կ'երթայ։
24 Ով Տէր, ո՜րչափ շատ են քու գործերդ.
Անոնց բոլորն իմաստութեամբ ըրիր.
Երկիրը լցուած է քու ստեղծածներովդ։
25 Այս ծով մեծ և լայն է,
Հոն անթիւ սողուններ՝ փոքր և մեծ անասուններ կան։
26 Հոն նաւերը կը գային,
Ե– Լեւիաթան զոր անոր մէջ խաղալու համար առեղծեցիր։

27 Աստուց ամէնը քեզի կը ապահեն,
Որ անոնց կերակուրը ժամանակին տաս։
28 Զուն անոնց կու տաս՝ անոնք կը ժողվեն.
Ձեռքդ կը բանաս՝ բոլորն ալ կը կշտանան։
29 Երբ քու երեսդ կը ծածկես՝ կը խռովին.
Երբ անոնց հոգին կ'առնես՝ կը մեռնին
Ու իրենց հողը կը դառնան։
30 Հոգիդ կը դրկես՝ անոնք կը ստեղծուին.
Ու երկրին երեսը կը նորոգես։
31 Տէրոջը փառքն յաւիտեան ըլլայ.
Տէրը իր գործերուն վրայ ուրախանայ։
32 Երկրին վրայ կը նայի և ան կը դողայ.
Լեռներուն կը դպչի և անոնք կ'ծխան։
33 Տէրոջը պիտի երգեմ իմ կենացս մէջ.
Սաղմոս պիտի բամ իմ Աստուծոյս՝ քանի որ ոյժ եմ։
34 Անոր վրայ իմ մտածութիւնս քաղցր պիտի ըլլայ.
Ես Տէրոջմով պիտի ուրախանամ։
35 Մեղաւորները աշխարհէ թող պակսին,
Ու ամբարիշտ ալ ուզանան։
Օրհնէ Տէրը, ով իմ անձս։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԵ

1 Գոհացէք Տէրոջմէն, անոր անունը կանչեցէք,
Անոր գործերը ժողովրդներուն մէջ պատմեցէք։
2 Երգեցէք անոր, սաղմոս բամ անոր,
Պատմեցէք անոր բոլոր հրաշներուն։
3 Անոր սուրբ անունովը պարծեցէք.
Տէրը խնդրողներուն սրտով թող ուրախ ըլլայ։
4 Տէրը և անոր զօրութիւնը խնդրեցէք,
Անկէ ժամանակ անոր երեսը փնտռեցէք։
5 Յիշեցէք անոր հրաշները,
Անոր նշաններն և բերնին դատաստանները,
6 Ով անոր ծառային Աբրահամու սերունդը,
Ով Յակոբայ որդիք՝ անոր ընտրեալները։
7 Եհովան ինքն է մեր Աստուածը.
Անոր դատաստաններն բոլոր երկրին մէջ են։
8 Անկիա իր ուխտն յաւիտեան կը յիշէ,
Ու իր պատուիրած խօսքը մինչև հազար ազգ։
9 Այն ուխտը որ Աբրահամու հետ բրաւ,
Ու իր երդումն ալ Իսահակայ։
10 Յակոբայ ալ հաստատեց զայն՝ օրէնք մը ըլլալու,
Ու Իսրայէլի՝ յաւիտենական ուխտ,
11 Ըսելով՝ Քեզի պիտի տամ Քանանու երկիրը՝
Ձեր ժառանգութեան պիճակը։
12 Երբ անոնք սակաւաթիւ էին,
Քիչ ատեն և պանդուխտ անոր մէջ,
13 Ու մէկ ազգէ ուրիշ ազգի գացին,
Մէկ թագաւորութենէ ուրիշ ժողովրդի ատեն։
14 Անկիա մէկու թող չտար զանոնք նեղէ.
Թագաւորներ իսկ յանդիմանեց անոնց համար,
15 Ըսելով՝ Իմ օծեալներուս մի դպչիք,
Ու իմ մարգարէներուս չարութիւն մի ընէք։
16 Ու սով կանչեց երկրին վրայ.
Հացին բոլոր ցօղութիւնը կոտրեց։
17 Անոնց առջևէն մարդ դրկեց,
Յովսեփ՝ որ ծառայութեան ծախուեցաւ։
18 Անոր ոտքերը կապանքը նեղեցին.
Անոր անձը երկաթի մէջ դրուեցաւ
19 Մինչև այն ժամանակ որ անոր խօսքը եկաւ,
Տէրոջը խօսքը փորձեց զինաւ։
20 Թագաւորը դրկեց և արձակեց զնաւ,
Ժողովրդներուն իշխանն ազատեց զնաւ։
21 Իր տան վրայ տէր կեցուց զինաւ,
Ու իր բոլոր ունեցածին վրայ իշխան։
22 Որ անոր իշխաններն իրեն ուզածին պէս կապէ,

*Այլն՝ Տէրը օրհնեցէք։



Ու անոր ծերերն իմաստուն բրէ։
23 Ու Իսրայէլ եգիպտոս եկաւ,
Ու Յակոբ պանդուխտ եղաւ Քամի երկրին մէջ։
24 Ու Տէրը իր ժողովուրդը բազմացուց յոյժ,
Ու զանոնք իրենց թշնամիներէն աւելի զօրաւոր բրաւ։
25 Անոնց սիրտը դարձուց որ անոր ժողովուրդն ատեն,
Ու անոր ծառաներուն նենգութիւն բրնեն։
26 Իր ծառան Մովսէս դրկեց,
Ու իր ընտրածն Ահարոն,
27 Որ անոնց մէջ անոր նշաններն բրեն,
Ու հրաշներ Քամի երկրին մէջ։
28 Խաւար դրկեց և խաւարեցուց.
Ու անոր խօսքին դէմ չկեցան։
29 Անոնց ջուրերն արիւն դարձուց,
Ու անոնց ձուկերն սպաննեց։
30 Անոնց երկիրը առատօրէն գորտեր գտաւ բերաւ,
Մինչև անոնց թագաւորներուն ննջարանները։
31 Ըսաւ, և չանճառներ՝ մուներ
Անոնց բոլոր սահմաններուն մէջ եկան։
32 Անձրեւի տեղ կարկուտ տուաւ անոնց,
Ու հրաւիր բոցեր անոնց երկրին մէջ։
33 Անոնց որձերը և թզենիները զարկաւ,
Ու անոնց սահմաններուն ծառերը կոտրեց։
34 Ըսաւ, և եկաւ մարախ,
Ու չթուելու առատ թիւով։
35 Ու անոնց երկրին մէջ բոլոր խոտը կերաւ,
Ու անոնց արտերուն պտուղը կերաւ։
36 Անոնց երկրին մէջ բոլոր անդրանիկները,
Ու անոնց բոլոր զօրութեան սկիզբը զարկաւ։
37 Ու զանոնք արծաթով և ոսկով հանեց.
Ու անոնց ցեղերուն մէջ ոտքի մարդ չկար։
38 Եգիպտոս ուրախացաւ անոնց դուրս երթալուն,
Քանզի անոնց ահն անոնց վրայ իյնած էր։
39 Ցօղով հովանի ըլլալու համար ամպը,
Ու գիշեր լոյս ատելու համար կրակը տարածեց։
40 Խնդրեցին, և լորամարգիներ բերաւ,
Ու երկնից հացով կշտացուց զանոնք։
41 Վէմը պատռեց, և ջուրերը վազեցին.
Գետի պէս քալեցին յոր տեղերուն մէջ։
42 Քանզի իր սուրբ խօսքը յիշեց,
Ջոր իր Աբրահամ ծառային հետ էր։
43 Ու իր ժողովուրդը ցնծութեամբ հանեց,
Ու իր ընտրածներն ուրախութեամբ։
44 Ու հեթանոսաց երկիրներն անոնց տուաւ.
Ու ժողովրդոց վաստակները ժառանգեցին անոնք։
45 Որպէս զի անոր պատուիրանները պահեն,
Ու անոր օրէնքները կատարեն. Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃՁ.

1 Ալէլուիա։ Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է,
Վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է։
2 Ո՞վ պիտի պատմէ Տէրոջմէն զօրութիւնը.
Ո՞վ պիտի իմացնէ անոր ամէն գովութիւնը։
3 Երանի անոնց որ իրաւունքը կը պահեն,
Ու ամէն ժամանակ արդարութիւն կ'ընեն։
4 Յիշէ զիս, ով Տէր, քու ժողովուրդդ վրայ ունեցած հաճութեանդ համեմատ,
Ինծի այցելութիւն բրէ քու փրկութեամբդ։
5 Որ քու բնաբեաններուդ բարութիւնը տեսնեմ,
Քու ազգիդ ուրախութեանդ ուրախանամ,
Քու ժառանգութեամբդ պարծենամ։

6 Մինչ մեր հայրերուն հետ մեզանէ-
ցինք.
Անօրէնութիւն ըրինք, ամբարշտա-
թիւն գործեցինք։
7 Մեր հայրերը Եգիպտոսի մէջ չմտացան
զու՛ն հրաշներդ,
Չյիշեցին զու՛ն ողորմութիւնդ, առա-
ւոտութիւնը։
Հապա ապստամբեցան ծովուն քով՝
Կարմիր ծովուն քով։
8 Բայց զանոնք իբր անուան համար փրկե-
ց,
Որ իւր մեծ զօրութիւնը ճանչցնէ։
9 Եւ կարմիր ծովուն սաստեց, և ցամ-
քեցաւ.
Եւ անդունդներուն միջէն քալել տուա-
նոնց իբր թէ անապատի միջէն,
10 Եւ զանոնք փրկեց պատին ձեռքէն,
Եւ ազատեց զանոնք թշնամիին ձեռ-
քէն։
11 Եւ ջուրերն անոնց թշնամիները ծած-
կեցին.
Անոնցմէ մէկը չմնաց։
12 Անոնք հաւատացին անոր խօսքին,
Եւ անոր օրհնութիւնը երգեցին։
13 Շուտով մոռցան անոր գործերը,
Եւ անոր խրատուն չսպասեցին,
14 Եւ անապատին մէջ ցանկացան յոյժ,
Եւ ալաւուած փորձեցին անջուր տե-
ղին մէջ,
15 Եւ անոնց ուզածը տուաւ իրենց ագահը,
Թէ սակայն վատուժութիւնն ղրկեց անոնց
անձերուն վրայ։
16 Եւ Մովսէսի նախանձեցան բանակին
մէջ,
Եւ Տէրոջը սրբոյն Ահարոնի։
17 Երկիրը բացուեցաւ և կլլեց Դաթան
Եւ Աբիրոնի ժողովը ծածկեց։
18 Եւ հրակ բորբոքեցաւ անոնց ժողով-
քին մէջ,
Բոցն այրեց ամբարիշտները։
19 Որթ շինեցին Քորէբի մէջ,
Եւ երկրպագութիւն ըրին ձուլածոյ
պատկերին,
20 Եւ իրենց փառքը
Խոտակեր արջառի նմանութեան վու-
խցուցին։
21 Մոռցան իրենց փրկիչ Աստուածը՝
Որ մեծամեծ գործերը ըրաւ Եգիպտո-
սի մէջ,
22 Եւ հրաշներ՝ Քամի երկրին մէջ,
Եւ ահաւոր բաներ՝ Կարմիր ծովուն
մէջ։
23 Եւսաի բաւ ար զանոնք կորնչցուներ,
Եթէ անոր ընտրեալը Մովսէս
*Մէջտեղը անոր ապականի չդրաւեր,
Անոր բարկութիւնը եւ դարձուներ
համար՝ որ չսպաոակէ,
24 Նաև՝ ան ցանկալի երկիրն անարգեցին,
Եւ անոր խօսքին չհաւատացին,
25 Եւ իրենց վրաններուն մէջ արտնջացին,
Տէրոջը ձայնը չլսեցին։
26 Եւսաի անոնց համար †երդուաւ իրաւ
Որ զանոնք անապատին մէջ ձգէ,
27 Եւ անոնց սերունդն ազգերու մէջ ձգէ,
Եւ զանոնք երկիրներու մէջ ցրուէ։
28 Եւ անոնք Բէելփեղովրի յարեցան,
Եւ մեռածներուն զոհերը կերան։
29 Եւ իրենց գործերով Տէրը բարկացու-
ցին.
Եւ անոնց վրայ ժանտամահ հասաւ։
30 Եւ քահանայ կեցաւ և զատաստան ը-
րաւ,
Եւ ժանտամահը զադրեցաւ։
31 Եւ այս բանն անոր արդարութիւն հա-
մարուեցաւ
Ազգ ի վիտից ազգ յաւիտեան։
32 Նաև բարկացուցին զնա՝ Մերիպայի
ջուրերուն վրայ,
Եւ անոնց համար Մովսէսի գէշ եղաւ։
33 Քանի դառնացուցին անոր հոգին,
Եւ նա անխորհրդաբար խօսեցաւ իր
շրթունքով։
34 Չկորընչցուցին այն ազգերը
Որ Տէրը բաւ էր անոնց,
35 Հապա հեթանոսներուն հետ խառնուե-
ցան,
Եւ անոնց գործերը սորվեցան։
36 Եւ անոնց կուռքերուն ծառայեցին,
Եւ անոնք իրենց որոգայթ եղան։
37 Եւ իրենց որդիքը և աղջիկները

*ՆԷՔ. Խրամատին մէջը
†ՆԷՔ. ձեռքը վերցուց



Դեւերուն զոհեցին,
38 Եւ անմեղ արիւն թափեցին,
Իրենց որդւոց և աղջիկներուն արիւնը,
Զորս զոհեցին Քանանու կռաց
Եւ երկիրը պղծուեցաւ արեամբ։
39 Եւ իրենց գործերով պղծուեցան,
Եւ իրենց ըրածներով պոռնկութիւն
ըրին։
40 Եւսաի Տէրոջը բարկութիւնը բորբո-
քեցաւ իւր ժողովրդեան վրայ,
Եւ զզուեցաւ իւր ժառանգութենէն.
41 Եւ զանոնք հեթանոսներուն ձեռքը
մատնեց,
Եւ զանոնք որոնք ատեցին անոնց
վրայ տիրեցին։
42 Եւ անոնց թշնամիները նեղեցին զա-
նոնք.
Եւ անոնց ձեռքէն տակն խոնարհեցան։
43 Շատ անգամ փրկեց զանոնք,
Բայց անոնք իրենց խորհուրդներով
դառնացուցին զնա։
Եւ նուազացան իրենց անօրէնութեան
համար։
44 Սակայն անոնց նայեցաւ անոնց նե-
ղութեան,
Երբ անոնց աղաղակը լսեց։
45 Եւ անոնց համար իւր ուխտը յիշեց,
Եւ իր մեծ ողորմութեան համեմատ
զղջացաւ,
46 Եւ անոնց բոլոր գերեվարողներուն առջև
Թափութիւն գտնել տուաւ անոնց։
47 Փրկէ մեզ, ով Տէր՝ մեր Աստուածը,
Եւ ժողվէ մեզ հեթանոսներուն միջէն,
Որ գոհանանք անուն սրբոյդ,
Եւ քու օրհնութեամբդ պարծենանք։
48 Օրհնեալ իսրայէլ Տէրը՝ յաւիտեան
ի յաւիտեան։
Ժողովուրդը ըսի՝ թող ըսէ Ամէն,
Եւ բոլոր ժողովուրդը թող ըսէ, Ամէն,
Ալէլուիա։

ԱՍԱՂ. ԺԷ

1 Խոստովանեցէք Տէրոջմէն, զի բարի է,
Զի անոր ողորմութիւնն յաւիտեան է,

2 Թող ասացէ՛ն այն Տէրոջը փրկածները,
Զորս փրկեց թշնամիին ձեռքէն,
3 Եւ ժողվեց զանոնք երկիրներէն,
Արեւելքէն և արեւմուտքէն,
Հիւսիսէն և ծովէն։
4 Անապատ մոլորեցան անապատին մէջ՝
Անջուր ճամբու մէջ,
Բնակիլու քաղաք չգտան։
5 Անօթի և ծարաւ ըլլալով՝
Անոնց հոգին անոնց նեղութիւն կը մա-
րէր։
6 Եւ Տէրոջը աղաղակեցին իրենց նեղու-
թեան մէջ,
Եւ՝ նա փրկեց զանոնք իրենց տառա-
պանքէն։
7 Եւ անոնց ուղիղ ճամբու մէջ առաջ-
նորդեց,
Որ բնակիլու քաղաք երթան։
8 Թող գոհանան Տէրոջմէն անոր ողոր-
մութեան համար,
Եւ մարդոց որդիներուն անոր բրած
հրաշներուն համար։
9 Վասն զի անկիրթ ծարաւած հոգին կը
յագեցնէ,
Եւ անօթեցածը բարութեամբ կը լե-
ցունէ։
10 Անոնք խաւարի և մահուան շուքի
մէջ կը նստէին,
Տառապանքով և երկաթով գոպուած
էին.
11 Քանզի Աստուծոյ խօսքերուն հակա-
ռակ կեցան,
Եւ Բարձրելոյն խորհուրդին արհա-
մարհեցին։
12 Եւսաի՝ նա նեղութեամբ խոնարհե-
ցուց անոնց սիրտը։
Ինկան և օգնական չկար։
13 Եւ Տէրոջը աղաղակեցին իրենց նեղու-
թեան մէջ,
Եւ՝ զանոնք փրկեց իրենց տառապան-
քէն։
14 Զանոնք խաւարէն և մահուան շուքէն
հանեցաւ
Եւ անոնց կապանքը կտրատեց։
15 Թող գոհանան Տէրոջմէն անոր ողոր-
մութեան համար,

*Կամ հարաւէն։

եւ մարդոց որդիներուն իւր բրած հրաշալեքներն համար։
16 Քանզի պղնձէ դռնակները փշրեց,
եւ երկաթէ նիգերը կտրեց։
17 Յիմարներն իրենց չար ճամբուն համար
եւ իրենց անօրէնութիւններուն համար նեղութիւն կը կրեն։
18 Անոնց անձն ամէն կերակուր կը ցզուի,
եւ մինչեւ մահուան դուռները կը մօտենան։
19 Եւ Տէրոջը կ՚ազաղակեն իրենց նեղութեան մէջ,
եւ կը փրկէ զանոնք իրենց տառապանքէն։
20 Իւր խօսքը կը ղրկէ եւ կը բժշկէ զանոնք,
եւ կ՚ազատէ զանոնք իրենց կործանումներէն։
21 Թող գոհանան Տէրոջմէն անոր ողորմութիւնն համար,
եւ մարդոց որդիներուն անոր բրած հրաշալեքներն համար։
22 Եւ գոհութեան պատարագներ մատուցանեն,
եւ անոր գործերը ցնծութեամբ պատմեն։
23 Նաւերով ծով իջնողները
եւ մեծ յորձրձի մէջ գործ ղործողները,
24 Անոնք Տէրոջը գործերը
եւ անոր հրաշալիքը կը տեսնեն անդունդին մէջ։
25 Վասն զի ան կ՚ըսէ եւ մրրիկը հովը կը հանէ,
Որ անոր ալիքը կը բարձրացնէ,
26 Երկինք կ՚ելլեն, անդունդը կ՚իջնեն.
Անոնց անձերը նեղութենէ կը հալին։
27 Գինով մարդու պէս կը դողդոջեն եւ կ՚երերան,
եւ անոնց բոլոր խելամտութիւնը կը հատնի։
28 Անտառն Տէրոջը կ՚ազաղակեն իրենց նեղութեան մէջ,
եւ կը փրկէ զանոնք իրենց տառապանքէն։
29 Մրրիկը հանդարտութեան կը դարձնէ,
եւ ալիքը կը դադրին։
30 Իրենք ալ կ՚ուրախանան որ դադարեցան։
եւ կ՚առաջնորդէ անոնց իրենց ուզած նաւահանգիստը։
31 Թող գոհանան Տէրոջմէն անոր ողորմութեան համար,
եւ մարդոց որդիներուն անոր բրած հրաշալեքներուն համար։
32 Եւ թող բարձրացնեն զինք ժողովրդեան ժողովին մէջ,
եւ գերոց աւագներուն մէջ գովեն զինք։
33 Գետերն անապատ կը դարձնէ,
եւ չոր երկիրը՝ ջուրերու գանգրը չոր երկիրը,
34 Ու պտղաբեր երկիրն աղի երկիրը՝
Անոնք բնակիչներուն չարութեան համար։
35 Անապատը ջուրերու լճի կը փոխէ,
եւ չոր երկիրը՝ ջուրերու գանգրի։
36 Եւ անօթիները հոն կը բնակեցնէ,
Որ բնակելու քաղաք հաստատեն,
37 Եւ արտեր ցանեն եւ այգիներ տնկեն,
Որ արմտաց պտուղ բերեն։
38 Ջանոնք կ՚օրհնէ, և անոնք կը բազմանան չատ,
եւ անոնց անասուններէն չպակսեցուներ։
39 Նորէն կը պակսին և կը գածնան
Բռնութենէ, նեղութենէ և տրտմութենէ,
40 Անարգանք կը թափի իշխաններուն վրայ,
եւ զանոնք ճամբայ չգտնեցող անապատի մէջ կը մոլորցնէ։
41 Բայց աղքատը բարձրացնէ կը բարձրացնէ,
եւ անոր առհասները ոչխարներու հօտի պէս կընէ։
42 Ուղիղները պիտի տեսնեն եւ ուրախանան։
եւ ամէն անօրէնութիւն իւր բերանը պիտի գոցէ։
43 Ով է խելամուտ՝ որ այս բաներէն պահէ։
Անկիա Տէրոջը ողորմութիւնները պիտի հասկընայ։

## ՍԱՂՄՈՍ ԺԷ

Դաւթի երգը։ Սաղմոս։

1 Իմ սիրտս պատրաստ է, ով Աստուած.
Պիտի երգեմ եւ ազնիւ պիտի բանամ իմ փառքովս ալ։
2 Արթնցիր, ով տաւիղ եւ քնար.
Ես կանուխ պիտի արթննամ։
3 Ով Տէր, ժողովրդոց մէջ քեզ պիտի գովեմ,
եւ ազգաց պիտի երգեմ զքեզ ազգերուց մէջ։
4 Վասն զի քու ողորմութիւնդ մեծ է երկինքէն վեր,
եւ քու ճշմարտութիւնդ մինչեւ ամպերը։
5 Երկնից վրայ բարձրացիր, ով Աստուած,
եւ քու փառքդ բոլոր երկրի վրայ բարձրացի։
6 Որ քու սիրելիներդ փրկուին
Աջ ձեռքովդ ապրեցուր և պատասխան ատր ինծի։
7 Աստուած խօսեր է իր սրբութեամբ խոստացաւ,
Ես պիտի ցնծամ, Սիւքեմ պիտի բաժնեմ,
Եւ Սոկքովթի հովիտը պիտի չափեմ։
8 Իմն է Գաղաադ և իմն է Մանասէ.
Եւ Եփրեմ գլուխն զօրութիւնն է.
Յուդա իմ օրէնսդիրս է։
9 Մովաբ իմ լուացարանս տանիս է.
Եդովմի վրայ պիտի ձգեմ մէնակս.
Փղշտացիներուն վրայ ձայնով պիտի ցնծամ։
10 Ո՞վ պիտի տանի զիս պարսպաւոր քաղաքը.
Ո՞վ պիտի առաջնորդէ զինձ մինչեւ Եդոմ։
11 Ո՞չ աստուածն դուն, ով Աստուած, որ երեսդ ձգեցիր զմեզ,
Եւ մեր զօրաց հետ չելար, ով Աստուած։
12 Նեղութենէն մեզ օգնութիւն տուր,
Վասն զի ընդունայն է մարդուն փրկութիւնը։
13 Աստուծով քաջութիւն պիտի բռնենք
եւ նա պիտի կոխէ մեր թշնամիները։

## ՍԱՂՄՈՍ ԺԸ

Գլխաւոր երաժշտին։ Սաղմոս Դաւթի։

1 Ով իմ օգնութեանս Աստուածը, լուսաւորի կենաց։
2 Վասն զի ամբարտին բերանը
եւ նենգաւորին բերանը բացուեցաւ իմ վրաս.
Խօսեր եմ դէմ առ դէմ ինծի խօսեցան։
3 Աստուածութեան խօսքերով զիս պատեցին,
եւ ինծի հետ անիրաւ պերճ կռուեցան։
4 Իմ սիրոյս փոխարէն հակառակ թիւն ըրին ինծի,
Բայց ես ապօթք կ՚ընեմ։
5 Նախ բարւոյն տեղ չար հատուցին,
եւ իմ սիրոյս տեղ՝ ատելութիւն։
6 Անոր վրայ ամբարիշտ մը կարգեցուր
եւ Սատանան թող կայնի անոր աջ կողմը։
7 Երբ դատուի՝ յանցաւոր ելլէ,
եւ անոր ապօթքը մեղք բլլայ։
8 Անոր օրերը պակսին,
Եւ անոր պաշտօնն ուրիշն առնէ.
9 Անոր որդիները որբ բլլան,
եւ անոր կինն այրի։
10 Եւ անոր որդիները թափառական բլլան եւ մուրան,
եւ իրենց աւերակներէն հեռու հնտռնուեն։
11 Փոխ առնողն առնէ անոր բոլոր ունեցածը,
եւ օտարներ յափշտակեն անոր վաստակածը։
12 Բնաւ մէկը գթութիւն չընէ անոր,
Եւ մէկը չողորմի անոր որբերուն։
13 Անոր գահակալները կորստեան մատնուին,
Անոնց անունը գալու ազգին մէջ ջնջուի։

*Կամ իւր սրբարանին մէջ

*Կամ հակառակորդը

14 Անոր հայրերուն անօրէնութիւնը Տէրոջմէ աչքէ չի ջնար,
Եւ անոր մօրը մեղքը չ'ներուիր։
15 Անոնք միշտ Տէրոջ առջեւ ըլլան,
Որ անոնց յիշատակը երկրէն վերցնէ,
16 վասն զի անիկա ողորմութիւն չընկալաւ,
Հապա հալածեց աղքատն ու խեղճը,
Որ սիրտը կոտրածն ալ սպաննէ,
17 Նա անէծքը սիրեց, և թող անոր վրայ գայ,
Ան օրհնութիւնը չուզեց, և թող անկէ հեռու ըլլայ։
18 Անէծքը իր հանդերձին պէս հագաւ,
Ան անիկա յօրի պէս անոր փորին մէջ մտնէ,
Ու ձիթի պէս՝ անոր ոսկորներուն մէջ։
19 Հագնելու հանդերձի պէս
Ու միշտ մէջքը կապելու գօտիի պէս ըլլայ անոր։
20 Ասիկա հակառակ կ'ելլայ պարագներուն
Ու իմ անձիս համար չար խօսողներուն
Վարձքն այն ըլլայ Տէրոջմէն։
21 Բայց դուն, ով Տէր Եհովայ, *օգնէ ինծի՛ քու անուանդ համար։
Փրկէ զիս քու ողորմութիւնդ բարի ըլլալուն համար։
22 Ինչո՞ւ որ ես թշուառ և աղքատ եմ,
Ու իմ սիրտս ներքի դին խոցուած է։
23 Ես կ'երկնցող ստուերի պէս անցայ,
Մարախի պէս թօթուեցայ։
24 Ծունկերս ծոմապահութենէ տկարացան,
Ու մարմինս է՛լ պարարութենէն մեռաւ։
25 Ու ես անոնց նախատինք եղայ.
Երբ զիս կը տեսնէին՝ իրենց գլուխը կը շարժէին։
26 Օգնէ ինծի, ով Տէր իմ Աստուածս։
Փրկէ զիս քու ողորմութենդ համեմատ։
27 Ու գիտցան թէ քու ձեռքդ այս է,
Ու՝ դուն ըրիր զայն, ով Տէր։
28 Թող անոնք անիծեն, բայց դուն օրհնէ.

*Եբր. ինծի հետ գործէ

Երբ էջերէ փե՛մ կելլեն՝ թող ամչնան,
Բայց քու ծառադ թող ուրախ ըլլայ։
29 Իմ թշնամիներս թող նախատինք հագնին,
Ու իրենց ամօթը պատմուճանի պէս իրենց վրայ ծածկեն։
30 Շատ պիտի գոհանամ Տէրոջմէն իմ բերնովս,
Ու շատերուն մէջ պիտի օրհնեմ զինք։
31 Վասն զի ինք ազքատին աջ կողմը կը կայնի,
Որ անոր անձը դատապարտողներէն փրկէ։

ՍԱՂՄՈՍ ՃԺ.

Ազգաս Դաւթի։

1 Տէրը իմ Տէրոջս բսաւ, Նստէ իմ աջ կողմս,
Մինչեւ որ քու թշնամիներդ քու ոտքերուդ պատառանդան ընեմ։
2 Տէրը քու զօրաւոր գաւազանը Սիոնէ պիտի դրկէ.
Թշնամիներուդ մէջտեղ դուն տիրէ։
3 Ժողովուրդդ քու զօրաւոր օրը
Ցծծաբաւակամ պիտի ըլլայ սրբազան գեղեցկութեամբ.
Քու ծննդեան պարգեւդ արշալոյսի ցօղն է։
4 Տէրը երդում բրաւ և պիտի չզղջայ,
Դուն յաւիտեան Մելքիսեդեկի կարգին պէս քահանայ եղար։
5 Տէրը քու աջ կողմդ է,
Անիկա իւր բարկութեան օրը թագաւորներ պիտի ջարդէ։
6 Անիկա հեթանոսներուն մէջ դատաստան պիտի ընէ,
Մեռելներով պիտի լեցնէ,
Շատ երկիրներու վրայ գլուխ ը՛նդերէ պիտի ջարդէ։
7 Ճամբուն մէջ պիտի խմէ.
Ան համար գլուխը պիտի վերցնէ։

*Եբր. երիտասարդութեանդ ցօղը՝ արշալոյսի արգանդէն



ՍԱՂՄՈՍ ՃԺԱ.

1 Ալէլուիա։ Բերանս պիտի գովեմ Տէրը պիտի գովեմ
Ուղիղներու ժողովին և ժողովրդեան մէջ։
2 Տէրոջը գործերը մեծ են,
Անոնք սիրողներուն բոլորին կը փընտռուին։
3 Անոր գործը փառաւոր և ճոխ է,
Ու անոր արդարութիւնն յաւիտեան կը մնայ։
4 Յիշել տուաւ իւր հրաշներուն.
Տէրը ողորմած և գթած է։
5 Կերակուր տուաւ իրեն վախցողներուն.
Իւր ուխտը յաւիտեան կը յիշէ։
6 Իւր գործերուն զօրութիւնը ցուցուց իւր ժողովրդեան,
Անոնց տալով ազգերուն ժառանգութիւնը։
7 Անոր ձեռքին գործերը ճշմարտութիւն են և իրաւունք ալ.
Անոր բոլոր պատուիրանները հաստատուած են,
8 Յաւիտեան յաւիտենից հաստատուած են,
ճշմարտութեամբ և ուղղութեամբ եղած են։
9 Փրկութիւն ղրկեց իւր ժողովրդեան,
Իւր ուխտը յաւիտեան պատուիրեց.
Սուրբ և ահաւոր է անոր անունը։
10 Իմաստութեան սկիզբը Տէրոջմէ վախն է.
Բարի խոհեմութիւն ունին այն մարդիկը որ անոնք կ'ընեն.
Անոր օրհնութիւնն յաւիտեան կը մնայ։

ՍԱՂՄՈՍ ՃԺԲ.

1 Ալէլուիա, Երանի այն մարդուն որ Տէրոջմէն կը վախնայ,
Ան՝ անոր պատուիրանները շատ կը հաճնի։
2 Անոր սերունդը զօրաւոր պիտի ըլլայ երկրի վրայ.
Ուղիղներուն ցեղը պիտի օրհնուի։
3 Առատութիւն և հարստութիւն պիտի ըլլայ անոր տան մէջ,
Ու անոր արդարութիւնն յաւիտեան պիտի մնայ։
4 Խաւարի մէջ լոյս կը ծագի ուղիղներուն.
Ողորմած և գթած և արդար է։
5 Բարի մարդը կ'ողորմի ու փոխ կու տայ.
Իւր բաներն իրաւամբ կը կառավարէ։
6 Արդարն անիկա յաւիտեան պիտի չսասանի.
Արդարոյ յիշատակն յաւիտեան պիտի մնայ։
7 Անիկա գէշ լուրէն չվախնար.
Անոր սիրտն հաստատ է, ՚ի Տէրոջմէ կը յուսայ։
8 Անոր սիրտն հաստատուած է, չվախնար,
Մինչեւ իւր թշնամիներուն վրայ տեսնէ։
9 Ցանած եղ, աղքատներուն տուաւ.
Անոր արդարութիւնն յաւիտեան կը մնայ.
Անոր եղջիւրը փառօք պիտի բարձրանայ։
10 Ամբարիշտը պիտի տեսնէ և բարկանայ,
Ակռաները պիտի կրճտէ և պիտի հալի.
Ամբարիշտներուն ցանկութիւնը պիտի կորսուի։

ՍԱՂՄՈՍ ՃԺԳ.

1 Ալէլուիա, Օրհնեցէ՛ք, ով Տէրոջը ծառաներդ,
Օրհնեցէ՛ք Տէրոջը անունը։
2 Օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը
Յայսմհետ մինչեւ յաւիտեան։
3 Յարիւղիչ մինչեւ արեւմուտք
Օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը։
4 Տէրը բարձր է բոլոր ազգերուն վրայ.
Անոր փառքն երկինքէն վեր է։
5 Մեր Տէր Աստուծոյն պէս ո՞վ կայ,
Որ բարձրութեան մէջ կը բնակի.
6 Որ երկինց և երկրի մէջ եղած բաները
Տեսնելու համար կը խոնարհի։
7 Որ ազքատը փոշիէն վեր կը վերցնէ,
Ու՝ անանկին աղբանոցէն կը բարձրացնէ,

8 Որ ըղձայոյս նաեւ ցունէ իշխաններու հետ՝
իւր ժողովրդեան իշխաններուն հետ.
9 Որ ամուլ կինը տուներ կը բնակեցնէ,
եւ որդիներու ուրախ մայր կ՚ընէ։ Ալէլուիա։

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ

1 Երբ Իսրայէլ Եգիպտոսէն դուրս ելաւ,
եւ Յակոբայ տունն՝ օտարազգի ժողովրդեան միջէն,
2 Յուդա անոր սրբարանը՝
եւ Իսրայէլ անոր իշխանութիւնը եղաւ։
3 Ովո՛վ տեսաւ և փախաւ.
Յորդանան կա դարձաւ։
4 Լերինք խոյերու պէս խայտացին,
եւ բլուրք գառնուհիներու պէս։
5 Ինչ եղաւ քեզ, ով ծով, որ փախար,
եւ դուն, Յորդանան, որ կա դարձար։
6 Ովո՛ լեռներ, Ինչո՞ խոյերու պէս խայտացիք,
եւ դուք, բլուրներ, գառնուհիներու պէս։
7 Սարսափէ, ով երկիր, Տէրոջը երեսէն՝
Յակոբայ Աստուծոյն երեսէն,
8 Ան որ վէմը լուր բերու լճի դարձուց,
եւ ապառաժը՝ լուր բերու աղբեր։

ՍԱՂՄՈՍ ՃԻԹ

1 Ոչ թէ մեզ, ով Տէր, ոչ թէ մեզ,
Այլ քու անուանդ փառք տուր՝
Քու ողորմութեանդ և ճշմարտութեանդ
Նըպ հասար։
2 Ինչո՞ համար հեթանոսք ըսեն թէ
Ո՞ւր է հիմա անոնց Աստուածը։
3 Բայց մեր Աստուածը երկինքն է,
Անոնք ինչ որ կամեցաւ բրաւ։
4 Անոնց կուռքերն արծաթ և ոսկի
են,
Մարդու ձեռագործ են։
5 Բերան ունին՝ բայց չեն խօսիր.
Աչք ունին՝ բայց չեն տեսներ։
6 Ականջ ունին՝ բայց չեն լսեր.
Քիթ ունին՝ բայց հոտ չեն առներ։
7 Ձեռք ունին՝ բայց չեն շօշափեր.
Ոտք ունին՝ բայց չեն քալեր,
եւ իրենց կոկորդով ձայն չեն հաներ։
8 Անոնց նման կ՚ըլլան զանոնք շինողները
եւ բոլոր անոնց յուսացողները։
9 Ովո՛ Իսրայէլ, Տէրոջը յուսա՛.
Նա է անոնց օգնութիւնը և ապարը։
10 Ովո՛ Ահարոնի տուն, Տէրոջը յուսացէք.
Նա է անոնց օգնութիւնը և ապարը։
11 Ովո՛ Տէրոջմէ վախցողներ, Տէրոջը յուսացէք.
Նա է անոնց օգնութիւնը և ապարը։
12 Տէրը կը յիշէ զմեզ՝ և պիտի օրհնէ,
Իսրայէլի տունը պիտի օրհնէ,
Ահարոնի տունը պիտի օրհնէ։
13 Տէրոջմէ վախցողները պիտի օրհնէ՝
Փոքրերը մեծերուն հետ։
14 Տէրը ձեզ յաւելցնէ ձեզ,
Ձեզ և ձեր որդիներուն։
15 Օրհնեալ եք դուք Տէրոջմէն,
Ան որ երկինքը և երկիրը ստեղծեց։
16 Երկինքը երկինք է Տէրոջմէն,
Բայց զերկիրը մարդոց որդիներուն
տուաւ։
17 Մեռեալք Տէրը չեն օրհներ,
եւ ոչ այն ամէնը որ լռելեայն կ՚իջնեն։
18 Բայց մենք Տէրը պիտի օրհնենք
Յայսմհետէ մինչև յաւիտեան։ Ալէլուիա։

ՍԱՂՄՈՍ ՃԻՁ

1 Ես Տիրոջմէ եմ սիրած, զի՞նչ Տէրը
Իմ ձայնս և ազաչանքս լսեց։
2 Քանզի անկից իւր ականջն ինծի խոնարհեցուց,

---

† Կամ Իսրայէլ Տէրոջը կը յուսայ։
† Կամ Ահարոնի տունը Տէրոջը կը յուսան։
‡ Կամ Տէրոջմէ վախցողները Տէրոջը կը յուսան։
‖ Եբր. լուծիները
§ Կամ Տէրը կը սիրեմ,



եւ իմ օրերուս մէջ ալ պիտի կանչեմ։
3 Մահուան լարերը զիս պատեցին,
եւ գերեզմանին վիշտերը զիս գտան.
Նեղութիւն և արտասուք գտայ։
4 Բայց ես Տէրոջը անունը կանչեցի,
Կ՚ազաչեմ, ով Տէր, փրկէ իմ անձս։
5 Ողորմած և արդար է Տէր,
եւ մեր Աստուածը գթած է։
6 Տէրը պահպանողը կը պահէ.
Ես թշուառացայ, և նա զիս ապահովեց։
7 Ովո՛ իմ անձս, դարձիր քու հանգիստդ,
Քանզի Տէրը բարիք ըրաւ քեզ։
8 Վասն զի դուն իմ անձս մահուանէ փրկեցիր,
Աչքերս արտասուելէ, և ոտքերս գայթակղելէ։
9 Տէրոջը առջև պիտի քալեմ
Կենդանիներուն երկրին մէջ։
10 Հաւատացի անոր համար խօսեցայ.
Թշուառացայ յոյժ։
11 Շտապութեանս մէջ ըսի թէ
Այմէն մարդ սուտ է։
12 Ինչ հատուցանեմ Տէրոջը
Անոր բոլոր ինծի ընծի փոխարէն։
13 Փրկութեան բաժակը պիտի առնեմ,
եւ Տէրոջը անունը պիտի կանչեմ։
14 Ուխտերս Տէրոջը պիտի հատուցանեմ
Անոր բոլոր ժողովրդեան առջև,
15 Պատուական է Տէրոջը առջև
Անոր սուրբերուն մահը։
16 Կ՚ազաչեմ, ով Տէր, քանզի ես քու
Գառաղ եմ,
Ես քու ծառազ եմ և քու ազախնոյդ որդին։
Դուն իմ կապերս արձակեցիր։
17 Գոհութեան պատարագ պիտի մատուցանեմ քեզ,
եւ Տէրոջը անունը պիտի կանչեմ։
18 Ուխտերս Տէրոջը պիտի հատուցանեմ
Անոր բոլոր ժողովրդեան առջև,
19 Տէրոջը տանը սրահներուն մէջ,
Քու մէջդ, ով Երուսաղէմ։ Ալէլուիա։

ՍԱՂՄՈՍ ՃԻԶ

1 Օրհնեցէք զՏէր, ով բոլոր ազգեր,
Գովեցէք զինա, ով բոլոր ժողովուրդներ։
2 Վասն զի անոր ողորմութիւնը մեր վրայ մեծ է,
եւ Տէրոջը ճշմարտութիւնն յաւիտեան է։ Ալէլուիա։

ՍԱՂՄՈՍ ՃԻՐ

1 Գոհացեք Տէրոջմէն, վասն զի բարի է.
Վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է։
2 Իսրայէլ թող ըսէ թէ
Անոր ողորմութիւնն յաւիտեան է.
3 Ահարոնի տունը թող ըսէ թէ
Անոր ողորմութիւնն յաւիտեան է.
4 Տէրոջմէ վախցողները թող ըսեն թէ
Անոր ողորմութիւնն յաւիտեան է։
5 Նեղութեան մէջ Տէրոջը կանչեցի,
եւ Տէրը պատասխան տուաւ ինծ, լայնարձակ տեղ մը հանելով։
6 Տէրը իմ հետս է, չեմ վախնար.
Մարդ ինծի ինչ կրնայ ընել։
7 Տէրը իմ օգնականներուս հետ ինծի հետ է,
եւ ես թշնամիներուս կորսուիլը պիտի տեսնեմ։
8 Լաւ է Տէրոջը յուսալ,
Քան թէ մարդոց ապաւինիլ։
9 Լաւ է Տէրոջը յուսալ,
Քան թէ իշխաններու ապաւինիլ։
10 Բոլոր ազգերը զիս պաշարեցին.
Բայց Տէրոջը անուանը պիտի ջարդեմ զանոնք։
11 Իմ բոլորտիքս առին, և զիս պաշարեցին.
Բայց Տէրոջը անուանը պիտի ջարդեմ զանոնք։
12 Մեղուներու պէս իմ բոլորտիքս առին,
Փուչերու կրակի պէս մարեցան.
Քանզի Տէրոջը անուանը պիտի ջարդեմ զանոնք։
13 Սաստիկ հրելով զիս, որ վար կիյնամ.
Բայց Տէրը օգնեց ինծ։
14 Տէրը իմ զօրութիւնս և սաղմոս է,

եւ իմ փրկութիւնս եղաւ։
15 Աբդարոց բնակարաններուն մէջ ցընծութիւն եւ փրկութիւն ձայն կայ.
Տէրոջը աջ ձեռքը զօրութիւն կը գործէ.
16 Տէրոջը աջ ձեռքը բարձր է.
Տէրոջը աջ ձեռքը զօրութիւն կը գործէ։
17 Պիտի չմեռնիմ, այլ պիտի ապրիմ,
եւ Տէրոջը գործերը պատմեմ։
18 Տէրը զիս չատ խրատեց,
բայց մահու ետեւ չմատնեց զիս։
19 Բացէք ինձ արդարութեան դռները.
Անոնց մէջ պիտի մտնեմ, ու Տէրոջը գոհութիւնս մատուցանեմ։
20 Ա՛յս դուռը Տէրոջն է,
Արդարները անկէ պիտի մտնեն։
21 Կը գոհանամ քեզմէ որ պատասխան տուիր ինձ,
եւ փրկութիւն եղար ինձ։
22 Այն քարը զոր շինողք անարգեցին,
Անկիւնի գլուխ եղաւ։
23 Տէրոջմէն եղաւ այս.
Զարմանալի է այս մեր աչքերուն։
24 Ա՛յս այն օրն է զոր Տէրը ստեղծեց.
Ցնծանք եւ ուրախ ըլլանք անոր մէջ։
25 Հիմա կ՚ապաւէնի, ով Տէր, փրկէ,
Հիմա կ՚ապաւէնի, ով Տէր, յաջողէ։
26 Օրհնեալ ըլլայ այն որ Տէրոջը անունովը կու գայ։
Օրհնեցինք քեզի Տէրոջը տունէն,
27 Տէրը Աստուած է, եւ լոյս կը ցուցընէ մեզ.
Զոհի ածուածները շուանները կապեցէք,
ու սեղանին եղջիւրները ծածկեցուցէք։
28 Դուն ես իմ Աստուածս, և գոհութիւն պիտի մատուցանեմ քեզի.
Ով իմ Աստուածս, գովեմ պիտի բարձրացնեմ։
29 Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է.
վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է։

ԱՂԱՂԱՐԴ ՃԺԹ

ԱԼԻՖ

1 Երանի ճամբով ամբիծներուն՝
Որ Տէրոջը օրինաց մէջ կը քալեն։
2 Երանի անոնց՝ որ անոր վկայութիւնները կը պահեն,
ու բոլոր սրտով կը խնդրեն զնա,
3 եւ անօրէնութիւն չեն ըներ,
Այլ անոր ճամբաներուն մէջ կը քալեն։
4 Դուն պատուիրեցիր որ շատ զգուշանանք։
5 Երանի թէ ճամբաներս յաջողին,
Որ քու կանոններդ պահեմ։
6 Այնաուհետեւ պիտի չամչեմ,
երբ քու բոլոր պատուիրանքդ զգուշանամ։
7 Պիտի գովեմ զքեզ ուղիղ սրտով,
երբ քու արդար դատաստաններդ սորվիմ,
8 Քու կանոններդ պիտի պահեմ.
Զիս բոլորովին մի թողուր։

ԲԵԹ

9 Երիտասարդն ինչո՞վ մնքրէ իւր ճամբան.
Քու խօսքիդ համեմատ անոր զգուշանալով։
10 Բոլոր սրտովս խնդրեցի զքեզ,
Մի թողուր զիս որ պատուիրանքներէդ մոլորիմ։
11 Սրտիս մէջ պահեցի քու խօսքերդ,
Որ չմեղանչեմ քեզի դէմ։
12 Օրհնեալ ես դուն, ով Տէր.
Սորվեցուր ինձ քու կանոններդ։
13 Շրթամբք պատմեցի
Քու բերնիդ բոլոր դատաստանները։
14 Քու վկայութիւններուդ ճամբով ուրախացայ,
Որպէս թէ ամէն կերպ հարստութեամբ։
15 Քու հրամաններուդ վրայ պիտի մտածեմ,
եւ քու ճամբաներդ պիտի դիտեմ։
16 Քու կանոններովդ պիտի ուրախանամ,



Ես քու խօսքդ պիտի չմոռնամ։

ԳԻՄԵԼ

17 Բարութիւն ըրէ քու ծառայիդ՝
Որ ապրիմ և քու խօսքդ պահեմ։
18 Բաց իմ աչքերս,
Որ քու օրէնքիդ հրաշները տեսնեմ։
19 Պանդուխտ եմ ես երկրի վրայ.
Մի ծածկեր ինձ քու պատուիրանքդ։
20 Իմ անձս կը նեղուի
Ամէն ժամանակ քու գատաստաններուդ կարօտ ըլլալնուն։
21 Դուն սաստկերը անիծեցիր ամբարտաւանները,
Որ պատուիրանքներէդ մոլորողները։
22 Նախատինք և անարգանք վերցուր ինձմէ,
Վասն զի քու վկայութիւններդ պահեցի։
23 Իշխաններ ալ կը նստին և ինծի դէմ կը խօսին,
Բայց քու ծառադ քու կանոններուդ վրայ կը մտածէ։
24 Քու վկայութիւններդ ալ իմ ուրախութիւնս են
Ես՝ իմ խորհրդականներս եղան։

ԴԱԼԵԹ

25 Իմ անձս հողին կը փակչի.
Կենդանացուր զիս քու խօսքիդ համեմատ։
26 Իմ ճամբաներս պատմեցի, և դուն ինծի պատասխան տուիր.
Սորվեցուր ինձ քու կանոններդ։
27 Քու հրամաններուդ ճամբան խնացուր ինձ,
Ես քու սքանչելութեանդ վրայ պիտի մտածեմ։
28 Իմ անձս արտասուքներէ կը հալի.
Հաստատէ զիս քու խօսքիդ համեմատ։
29 Սուտ ճամբան հեռացուր ինէ,
Ես քու օրէնքդ շնորհէ ինձ։
30 Ճշմարտութեան ճամբան ընտրեցի,

*Կամ խօսքեր։

Ես քու դատաստաններդ կը սիրեմ։
31 Քու վկայութիւններուդ յարեցայ,
Ով Տէր, զիս մի ամչցուներ։
32 Քու պատուիրանքներուդ ճամբան մէջ պիտի վազեմ,
Հանդիպանքս իմ սրտիս պիտի լայնցնես։

ՀԵ

33 Ով Տէր, սորվեցուր ինձ քու կանոններուդ ճամբան,
Ես մինչև վերջը պիտի պահեմ զայն։
34 Իմաստուն ըրէ զիս, որ քու օրէնքդ պահեմ,
Ես բոլոր սրտով ի գործ դնեմ զայն։
35 Առաջնորդէ ինձ քու պատուիրաններուդ շաւղին մէջ,
Քանզի անոր հաւնեցայ։
36 Իմ սիրտս քու վկայութիւններուդ յօժարեցուր,
Ես ոչ թէ ագահութեան։
37 Աչքերս դարձուր իմ աչքերս, որ ունայն բան չտեսնեն,
Ես զիս քու ճամբուդ մէջ կենդանացուր։
38 Հաստատէ քու խօսքդ
Ինէ վախցող ծառայիդ վրայ։
39 Նախատինքս զոր կը վախնամ, անկ կը վախնամ,
Քանզի քու դատաստանները բարի են։
40 Ահա ցանկացայ հրամաններուդ.
Արդարութեանդ մէջ կենդանացուր զիս։

ՎԱՒ

41 Ով Տէր, թող իմ վրաս գայ ողորմութիւնդ,
Ես փրկութիւնդ քու խօսքիդ համեմատ։
42 Ես կը խօսքով պատասխան պիտի տամ զիս նախատողին,
Վասն զի քու խօսքիդ յուսացած եմ։
43 Ես ճշմարտութեան խօսքը բնաւ մի հեռացուներ բերնէս,
Քանզի քու դատաստաններուդ յուսացած եմ։

44 Եւ քու օրինքդ միշտ պահեմ
Յաւիտեանս յաւիտենից.
45 Եւ ընդարձակ դէպ ի լի պահ գալիմ,
Քանզի քու հրամանները խնդրեցի.
46 Եւ քու վկայութիւնները խօսեա ա-
նեղուն առջեւ պիտի խօսիմ,
Եւ պիտի չամչնամ.
47 Եւ պիտի ուրախանամ քու պատու-
իրանները վրայ՝
Զորս սիրեցի.
48 Եւ ձեռս քու դէպ ի պատուիրանները
պիտի վերցնեմ՝ զոր սիրեցի,
Եւ քու կանոններու վրայ պիտի մըտածեմ.

ԶԱՅԻՆ

49 Յիշէ քու ծառային խօսքը,
Որուն վրայ յուսալ տուիր ինձ.
50 Իմ նեղութեանս մէջ մխիթարութիւնս
այս է,
Քանզի քու խօսքդ զիս կենդանացուց.
51 Ամբարտաւանները խիստ շատ ծաղր ը-
րին զիս,
Բայց ես քու օրինքէդ չխոտորեցայ.
52 Ով Տէր, քու առջի դատաստաններդ
յիշեցի,
Եւ մխիթարուեցայ.
53 Սոսկումը զիս բռնեց այն ամբարիշտ-
ներուն համար՝
Որ քու օրինքդ կը թողուն.
54 Քու կանոններդ ինծի երգեր եղան
Իմ պանդխտութեանս տան մէջ.
55 Ով Տէր, գիշերը քու անունդ յիշեցի,
Եւ քու օրինքդ պահեցի.
56 Այս եղաւ ինծի,
Քանզի քու հրամաններդ կը պահեմ.

ԽԷԹ

57 Դուն իմ բաժինս ես, ով Տէր.
Ըսի որ քու խօսքերդ պահեմ.
58 Բոլոր սրտով քու երեսդ խնդրեցի.
Ողորմի ինձ քու խօսքիդ համեմատ.
59 Հաշիւներուս վրայ մտածեցի,
Եւ դարձուցի զոտքերս քու վկայութիւններուդ
դարձուցի.
60 Պատրաստեցի եւ չուշացայ
Պահելու քու պատուիրանները.
61 Ամբարիշտներուն խմբերը զիս պա-
տեցին,
Բայց ես քու օրէնքդ չմոռցայ.
62 Կէս գիշերին կելլեմ քեզի գոհութիւն
մատուցանելու
Քու արդար դատաստաններուդ համար.
63 Ես ընկեր եղայ այն ամենուն որ քեզի
կը վախնան,
Եւ քու հրամաններդ կը պահեն.
64 Ով Տէր, երկիրը լեցուն է քու ողոր-
մութիւնովդ.
Սորվեցուր ինձ քու կանոններդ.

ԴԱԼԹ

65 Բարութիւն ըրիր քու ծառայիդ, ով
Տէր,
Քու խօսքիդ համեմատ.
66 Բարի խմաստութիւն և գիտութիւն
սորվեցուր ինձ,
Քանզի քու պատուիրաններուդ հա-
ւատացի.
67 Քանի որ վշտացած չէի կը սխալէի,
Բայց հիմա քու խօսքդ կը պահեմ.
68 Բարի ես դուն և բարերար.
Սորվեցուր ինձ քու կանոններդ.
69 Ամբարտաւանները սուտ թիւն հնարե-
ցին ինծի դէմ,
Բայց ես բոլոր սրտով քու հրաման-
ներդ պիտի պահեմ.
70 Անոնց սիրտը ճարպի պէս պտրտուա-
ցաւ,
Բայց ես քու օրէնքովդ ուրախացայ.
71 Աղէկ եղաւ ինձ որ վշտացայ,
Որպէս զի քու կանոններդ սորվիմ.
72 Ինծի հազարաւոր ոսկիէ և արծաթէ
Աւելի ազկ է քու բերնիդ օրէնքը.

ՒՕՏ

73 Ձեռս քու ձեռքերդ ըրին և ստեղծե-
ցին.

*Կամ լարերը



Խմաստութիւն ըրէ զիս, որ քու պատու-
իրաններդ սորվիմ.
74 Քեզնէ վախցողները զիս պիտի տեսնեն
և ուրախանան,
Քանզի քու խօսքիդ յուսացայ.
75 Գիտեմ, ով Տէր, որ քու դատաս-
տանները արդարութեամբ են,
Եւ խրատով զիս վշտացուցիր.
76 Հիմա թող քու ողորմութիւնդ ինծի
մխիթարութիւն ըլլայ՝
Քու ծառայիդ տրուած խօսքիդ համե-
մատ.
77 Թող քու գթութիւնները իմ վրաս
գան որ ապրիմ,
Վասն զի քու օրինքդ իմ ուրախա-
թիւնս է.
78 Ամբարտաւանները պիտի ամչնան,
Քանզի առանց պատճառի անիրաւու-
թիւն ըրին ինծի դէմ.
Բայց ես քու հրամաններուդ վրայ պի-
տի մտածեմ.
79 Թող ինծի դառնան քեզի վախցողնե-
րը
Եւ քու վկայութիւններդ ճանչցողները.
80 Թող իմ սիրտս կատարեալ ըլլայ քու
կանոններուդ մէջ,
Որպէս զի չամչնամ.

ԿԱՖ

81 Իմ անձս քու փրկութեանդ *կը կա-
րօտի,
Ես քու խօսքիդ կը յուսամ.
82 Իմ աչքերս քու խօսքիդ համար կը
նուաղին,
Ըսելով Ե՞րբ պիտի մխիթարես զիս.
83 Վասն զի ես ծուխի մէջ դրուած ափի
պէս եղայ,
Բայց քու կանոններդ չմոռցայ.
84 Ո՞րչափ են քու ծառայիդ օրերը.
Ձես հալածողներուն ի՞րը դատաստան
պիտի ընես.
85 Ամբարտաւանները փոսեր փորեցին ին-
ծի համար,
Որ քու օրինքիդ պէս չեն.

*ՆԷՓ· կը մնայ,

86 Քու բոլոր պատուիրանները ճշմարիտ
են.
Ի զուր զիս կը հալածեն, օգնէ ինձ.
87 Քիչ մնաց որ զիս կորսընցուածներէն եր-
կրին մէջ,
Բայց ես քու հրամաններդ չմոռցայ.
88 Քու ողորմութեանդ համեմատ կեն-
դանացուր զիս,
Եւ քու բերնիդ վկայութիւնը պիտի
պահեմ.

ԼԱՄՊԻՏ

89 Ով Տէր, քու խօսքդ
Յաւիտեան հաստատ է երկինք մէջ.
90 Քու հաւատարմութիւնդ ազգ ազգ մինչեւ
ազգ կը մնայ.
Դուն հաստատեցիր երկիր և կը կենայ,
91 Քու հրամաններուդ պէս կը կենան
Դեռ այսօր,
Քանզի բոլորը քու ծառաներդ են.
92 Եթէ քու օրէնքդ իմ ուրախութիւնս
չըլլար,
Անտառն կորսուած պիտի ըլլայի տրտու-
թեանս մէջ.
93 Յաւիտեան պիտի չմոռնամ քու հրա-
մաններդ,
Քանզի անոնցմով կենդանացուցիր զիս.
94 Ես քուկդ եմ, փրկէ զիս.
Քանզի քու հրամաններդ խնդրեցի.
95 Ամբարիշտներն ոգացին ինձ, որ զիս
կորսընցնեն,
Բայց ես քու վկայութիւններդ միտքս
պիտի բերեմ.
96 Ամէն կատարելութեան վերջը տեսայ.
Քու պատուիրանդ շատ ընդարձակ
է.

ՄԻՄ

97 Մ՚ըշտափ կը սիրեմ քու օրինքդ.
Այն է ամէն օր իմ մտածութիւնս.
98 Քու պատուիրաններդ զիս իմ թշնա-
միներէս խմաստուն ըրին,
Քանզի անոնք միշտ իմ քովս են.
99 Իմ բոլոր ուսուցիչներէս աւելի հաս-
կցայ,

Քանզի քու վկայութիւնները իմ մտածութիւնս են։
100 Ծերերէն առելի խելացած եղայ,
Վասն զի քու հրամաններդ պահեցի։
101 Ամէն ոչ չար ճամբէ իմ ոտքերս կոս քաշեցի,
Որ քու խօսքդ պահեմ։
102 Քու դատաստաններէդ չխոտորեցայ,
Քանզի դուն օրէնսդրութիւնը ինծի։
103 Մրսլափ քաղցր է քու խօսքդ իմ բերանս.
Մեղրէն առելի քաղցրացաւ է իմ բերնիս։
104 Քու հրամաններովդ խելացաւն եղայ,
Անոր համար ամէն սխալութեան ճամբան ատեցի։

ՆՈՒՆ

105 Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է,
Եւ իմ շաւիղներուս լոյս։
106 Երդում արի եւ պիտի կատարեմ,
Որ քու արդար դատաստաններդ պահեմ։
107 Շատ նեղացայ.
Ով Տէր, կենդանացուր զիս քու խօսքիդ համեմատ։
108 Հիմա իմ բերնիս կամաւոր գոհերն ընդունիլ, ով Տէր,
Եւ քու դատաստաններդ սորվեցուր ինծի։
109 Իմ հոգիս ամէն ժամանակ ափիս մէջն է,
Բայց քու օրէնքդ չեմ մոռնար։
110 Ամբաւիչներն որոգայթ լարեցին ինծի համար,
Բայց ես քու հրամաններէդ չմոլորեցայ։
111 Քու վկայութիւններդ յաւիտեան ինծի ժառանգութիւն առի,
Քանզի անոնք իմ սրտիս ցնծութիւնն են։
112 Խոնարհեցուցի իմ սիրտս, որ քու կանոններդ կատարեմ
Յաւիտեան մինչև վերջը։

ԱՄԱԼԷԿ

113 Երկմիտ հոգիներ առելի,

Բայց քու օրէնքդ սիրեցի։
114 Իմ ապաւէնս և սարքածս դուն ես.
Քու խօսքիդ յուսացայ։
115 Ես քաշուեցէք ինէ, ով չարագործներ,
Քանզի ես իմ Աստուծոյս պատուիրանները պիտի պահեմ։
116 Պահպանէ զիս քու խօսքիդ համեմատ, որ ապրիմ.
Եւ զիս իմ յոյսէն մի ամչցուներ։
117 Զօրացուր զիս ու ապրիմ,
Եւ միշտ քու կանոններուդ ուշադրութիւն ընեմ։
118 Անարգեցիր այն ամէնը որ քու կանոններդ խոտորեցան,
Քանզի անոնց նենգութիւնը սուտ է։
119 Դուն երեսփոխանները կիղդանդ կը համարիս երկրի բոլոր անօրէնները.
Անոր համար ես քու վկայութիւններդ կը սիրեմ։
120 Իմ մարմինս քու ահէդ դողաց,
Եւ ես քու դատաստաններէդ վախցայ։

ԱՅԻՆ

121 Իրաւունք և արդարութիւն ըրի.
Զիս իմ նեղիչներուս մի մատներ։
122 Քու ծառայիդ բարութեան համար երաշխաւոր եղիր.
Ամբարտաւանները չհարստահարեն զիս։
123 Աչքերս նուաղեցան քու փրկութեանդ համար
Եւ քու արդարութեանդ խօսքին համար։
124 Ըրէ քու ծառայիդ քու ողորմութեամբդ համեմատ,
Եւ քու կանոններդ սորվեցուր ինծի։
125 Ես քու ծառադ եմ, խելաւուն ըրէ զիս,
Որ քու վկայութիւններդ ճանչնամ։
126 Տէրոջը բան ատենն է ժամանակն է.
Քանզի քու օրէնքդ խախտեցին։

*Կամ կղկղանքի պէս մերժեցիր։



127 Անոր համար քու պատուիրանները
Ոսկիէ և աղնիս ոսկիէ աւելի սիրեցի։
128 Ուստի ամէն բանի վրայ պատուէրներդ
ուղիղ համարեմ,
Եւ սուտ ճանապարհ ամէն ճամբայ կատեմ։

Փէ

129 Քու վկայութիւնները զարմանալի են.
Անոր համար իմ անձս զանոնք կը պահէ։
130 Քու խօսքերուդ լոյսը լոյս կու տայ,
Եւ միամիտներն խելացուն կ'ընէ։
131 Բերանս բացի և հեւացի,
Վասն զի քու պատուիրաններուդ ցանկացայ։
132 Ինծի նայէ և ողորմէ ինձ,
Ինչպէս որ սովոր ես ընել քու անուանդ սիրողներուն։
133 Իմ գնացքս հաստատէ քու խօսքիդ մէջ,
Եւ բնաւ անօրէնութիւն չտիրէ ինծի։
134 Փրկէ զիս մարդոց բռնութենէն,
Եւ քու հրամաններդ պիտի պահեմ։
135 Երեսդ փայլեցուր քու ծառայիդ վրայ,
Եւ սորվեցուր ինձ քու կանոններդ։
136 Ջուրերու առուներ կ'իջնեն աչքերէս,
Քանզի հրէիլ քու օրէնքդ չպահեցին։

ՅՕՏ

137 Արդար ես դուն, ով Տէր,
Եւ քու դատաստաններդ ուղիղ են։
138 Քու պատուիրած վկայութիւններդ
Արդար և ճշմարիտ են յոյժ։
139 Իմ նախանձս զիս մաշեց,
Քանզի թշնամիներս քու խօսքերդ մոռցան։
140 Քու խօսքդ շատ մաքուր է,
Անոր համար քու ծառադ կը սիրէ զայն։
141 Ես ցած և անարգուած եմ,
Բայց քու հրամանները չմոռցայ։
142 Քու արդարութիւնդ յաւիտենական արդարութիւն է,
Եւ քու օրէնքդ ճշմարտութիւն է։
143 Նեղութիւն և վիշտ զիս գտան,
Բայց քու պատուիրանները իմ ուրախութիւնս են։
144 Քու վկայութիւններուդ արդարութիւնն յաւիտեան է.
Խելաւուն ըրէ զիս, և պիտի ապրիմ։

ԿՈՖ

145 Բոլոր սրտով աղաղակեցի,
Ով Տէր, պատասխան տուր ինձ,
Քու հանոններդ պիտի պահեմ։
146 Քեզի աղաղակեցի, փրկէ զիս,
Եւ քու վկայութիւններդ պիտի պահեմ։
147 Կանուխ եղայ արշալոյսին և աղաղակեցի.
Քու խօսքիդ յուսացայ։
148 Գիշերապահներն առաջ բացուեցան աչքերս
Քու խօսքերուդ վրայ մտածելու համար։
149 Իմ ձայնս լսէ քու ողորմութեանդ համեմատ, Տէր,
Ով Տէր, քու դատաստաններուդ համեմատ կենդանացուր զիս։
150 Անօրէնութեան հետեւողները մօտեցան,
Անոնք քու օրէնքէդ հեռացան։
151 Ով Տէր, դուն մօտ ես,
Եւ քու բոլոր պատուիրանները ճշմարտութիւն են։
152 Առաջուց իմացած իմ քու վկայութիւններէդ,
Որ զանոնք յաւիտեան հաստատեցիր։

ՐԻՇ

153 Տես իմ թշուառութիւնս և փրկէ զիս,
Քանզի քու օրէնքդ չմոռցայ։
154 Իմ իրաւունքս պաշտպանէ և փրկէ զիս.
Քու խօսքիդ համեմատ կենդանացուր զիս։

155 Փրկութիւնը հեռու է ամբարիշտներէն,
Վասն զի քու կանոններդ չեն դիմեր ըլլալ։
156 Ով Տէր, քու գթութիւններդ շատ են,
Քու դատաստաններուդ համեմատ կենդանացուր զիս։
157 Շատ են հալածիչներս և թշնամիներս,
Բայց ես քու վկայութիւններէդ չխոտորեցայ։
158 Անօրէնները տեսայ և զզուեցայ,
Քանզի անոնք քու խօսքդ չէին պահեր։
159 Նայէ որ քու հրամաններդ կը սիրեմ.
Ով Տէր, քու ողորմութեանդ համեմատ կենդանացուր զիս։
160 Քու խօսքիդ նախիրքը ճշմարտութիւն է,
Ու քու բոլոր արդար դատաստաններդ յաւիտեան են։

ՇԻՆ.

161 Իշխանները զուր տեղը ինծի հալածեցին,
Բայց իմ սիրտս քու խօսքերդմէ վախցաւ։
162 Ես կը ցնծամ քու խօսքերովդ
Շատ ատար գտնողի պէս։
163 Սուտութիւնն ատեցի և անարգեցի,
Բայց քու օրէնքդ սիրեցի։
164 Օրը եօթն անգամ կ'օրհնեմ զքեզ
Քու արդար դատաստաններուդ համար։
165 Քու օրէնքդ սիրողներուն շատ խաղաղութիւն կայ,
Ու անոնց գայթակղութիւն չըլլար։
166 Ով Տէր, քու փրկութեանդ սպասեցի,
Ու քու պատուիրանները կատարեցի։
167 Իմ անձս քու վկայութիւններդ պահեց,
Ու ես զանոնք շատ կը սիրեմ։
168 Քու հրամաններդ և քու վկայութիւններդ պահեցի,
Քանզի իմ բոլոր ճամբաներս քու առջեւդ են։

*Կամ բռնադատութիւնը

ԹԱՒ.

169 Ով Տէր, թող իմ պաղատանքս քու առջեւդ մտնեն։
Քու խօսքիդ համեմատ խելամտութիւն ըրէ զիս։
170 Թող իմ աղաչանքս քու առջեւդ հլլի.
Քու խօսքիդ համեմատ փրկէ զիս։
171 Շրթունքս օրհնութիւն պիտի բղխեն,
Վասն զի քու կանոններդ սորվեցուցիր ինծի։
172 Իմ լեզուս քու խօսքդ պիտի պատմէ,
Քանզի քու բոլոր պատուիրանները արդար են։
173 Թող քու ձեռքդ ինծի օգնական ըլլայ,
Քանզի քու հրամաններդ ընտրեցի։
174 Ով Տէր, քու փրկութեանդ կանկածեալ,
Ու քու օրէնքդ իմ ուրախութիւնս է։
175 Թող իմ անձս ապրի և գքեզ օրհնէ,
Ու քու դատաստաններդ օգնեն ինծի։
176 Կորսուած ոչխարի պէս մոլորեցայ.
Խնդրէ քու ծառադ, քանզի քու պատուիրաններդ չմոռցայ։

ՍԱՂՄ. ՃԻ

Ասմունքներուն երգը։

1 Իմ նեղութեանս մէջ Տէրոջը աղաղակեցի,
Ու անիկա ինծի պատասխան տուաւ։
2 Ով Տէր, փրկէ իմ անձս սուտ շրթունքներէ
Ու նենգաւոր լեզուէ։
3 *Ով նենգաւոր լեզու, քեզի ի՞նչ տամ,
Ու քեզի ի՞նչ աւելցնեմ։
4 Զօրաւոր մարդուն սուր նետերը
Ու գիհեղէնի կայծերը։
5 Վա՜յ ինծ որ Մոսոքի մէջ պանդխտեցայ,
Ու վրանները Կեդարի բնակիչներուն մէջ բնակեցայ։

*Կամ ինչպիսի լեզուն քեզի ի՞նչ կընայ ու քեզի ի՞նչ կ'աւելցնէ։



6 Շատ ժամանակ իմ անձս բնակեցաւ
Թաղադրութիւնն ատողներուն հետ։
7 Ես խաղաղասէր եմ,
Բայց երբ կը խօսիմ, անոնք կռիւ կ'ընեն։

ՍԱՂՄ. ՃԻԱ

Ասմունքներուն երգը։

1 Աչքս դէպ լերանները պիտի վերցնեմ,
Ուռնայ օգնութիւնս պիտի գայ։
2 Իմ օգնութիւնս Տէրոջմէն է,
Ան որ երկինք և երկիր ստեղծեց։
3 Անիկա քու ոտքդ չդողացունէ,
Ու քու պահապանդ չքնանայ։
4 Ահա Իսրայէլի պահապանը
Պիտի չնիրհէ և պիտի չքնանայ։
5 Տէրը քու պահապանդ է.
Տէրը քու աջ ձեռքիդ քով քու հովանիդ է։
6 Ցորեկ արեգակը քեզ պիտի չզարնէ,
Ու ոչ գիշերը՝ լուսինը։
7 Տէրը քեզ ամէն չարէ պիտի պահէ,
Քու անձդ պիտի պահպանէ։
8 Տէրը քու ելլելդ և մտնելդ պիտի պահպանէ
Յայսմհետէ մինչև յաւիտեան։

ՍԱՂՄ. ՃԻԲ

Դաւթի ասմունքներուն երգը։

1 Կ'ուրախանայի երբ կ'ըսէին ինծ,
Տէրոջը տունը երթանք։
2 Մեր սրքերը քու դռնաներուդ մէջ կայնեցան,
Ով Երուսաղէմ։
3 Երուսաղէմ շինուած քաղաքի պէս շինուած է,
Որ ինքնին միաւորուած է։
4 Որ ցեղերը՝ Տէրոջը ցեղերը հոն կ'ելլեն
Իսրայէլի պատուիրութեան պէս,
Տէրոջը անուան գոհութիւն մատուցանելու համար։
5 Քանզի հոն դրուած են դատաստանի աթոռները,
Դաւթի տան աթոռները։
6 Երուսաղէմի խաղաղութիւնը խնդրեցէք.
Թող յաջողութիւն անոնք որ կը սիրեն զքեզ։
7 Խաղաղութիւն թող ըլլայ քու պարիսպներուդ մէջ,
Ու յաջողութիւն քու պալատներուդ մէջ։
8 Իմ եղբայրներուս և ընկերներուս համար
Հիմա պիտի ըսեմ, Խաղաղութիւն ըլլայ քու մէջդ։
9 Մեր Տէր Աստուծոյն տան համար՝
Քեզի բարութիւն պիտի ուզեմ։

ՍԱՂՄ. ՃԻԳ

Ասմունքներուն երգը։

1 Քեզի կը բարձրացունեմ աչքերս,
Ով երկինքի մէջ բնակող։
2 Ահա ինչպէս որ ծառաներուն աչքն իրենց տիրոջը ձեռացը կ'նայի,
Ու ինչպէս որ աղախնոյ աչքն իր տիկնոջը ձեռացը,
Այնպէս մեր աչքերը Տէրոջը մեր Աստուծոյն պիտի նային,
Մինչև որ ողորմի մեզ։
3 Ողորմի մեզ, ով Տէր, ողորմի մեզ,
Վասն զի չատ լեցուեցանք անարգանօք,
4 Շատ լեցուած է մեր անձն հանգիստ վայելողներուն նախատանօք
Ու սպասաստաններուն անարգանօք։

ՍԱՂՄ. ՃԻԴ

Դաւթի ասմունքներուն երգը։

1 Եթէ Տէրը մեր հետը չըլլար,
Հիմա Իսրայէլ թող ըսէ,
2 Եթէ Տէրը մեր հետը չըլլար,
Երբ մարդիկ մեր վրայ ելան,
3 Անտարակոյս ողջ ողջ պիտի կլլէին զմեզ,
Երբ անոնց բարկութիւնը մեր վրայ բորբոքած էր։
4 Անտարակոյս ջուրերն պիտի ընկղմէին,

Հեղեղը մեր անձերուն վրայէն պիտի անցնէր։
5 Անառակն հպարտացած չուրերը
Մեր անձերուն վրայէն պիտի անցնէին։
6 Օրհնեալ ըլլայ Տէրը,
Որ մեզ անոնց ոտնաձերուն որս չընե-
ւար։
7 Մեր անձերը ճնճղկի պէս ազատեցան
Որոգայթէն գայթակղեցուցիչներուն.
Որոգայթը կտրատեցաւ և մենք ազա-
տեցանք։
8 Մեր օգնութիւնը Տէրոջը անունն է,
Ան որ երկինք և երկիր ստեղծեց։

ՍԱՂՄՈՍ ՁԻԵ

Ատենաւորին երգը։

1 Տէրոջը յոյս ընդունողները Սիօն լեռան
պէս են,
Որ չպատանիր, այլ յաւիտեան կը մնայ։
2 Ինչպէս որ Երուսաղէմ լեռներով պա-
տած է,
Այնպէս նաև Տէրը իր ժողովուրդին
չորս կողմն է
Յայսմհետէ մինչև յաւիտեան։
3 Քանզի ամբարշտին գաւազանն արդա-
րներուն վիճակին վրայ պիտի
չմնայ,
Որ արդարներն իրենց ձեռքին անօրէ-
նութեան չերկնցուցանեն։
4 Ով Տէր, բարիք ըրէ բարիներուն
Եւ ուղղասիրտներուն։
5 Մեակայն անոնք որ իրենց ծուռ ճամ-
բաներուն մէջ կը մոլորին,
Տէրը պիտի հալածականէ անօրինու-
թիւն գործողներուն հետ։
Խաղաղութիւն ըլլայ Իսրայէլի վրայ։

ՍԱՂՄՈՍ ՁԻԹ

Ատենաւորին երգը։

1 Երբ Տէրը Սիոնի գերութիւնը դար-
ձուց,

Եղանք ինչպէս երազ տեսնողներ։
2 Այն ժամանակ մեր բերանը խնդու-
թեամբ լեցուեցաւ,
Եւ մեր լեզուն ցնծութեամբ։
Այն ժամանակ հեթանոսաց մէջ ըսին
Տէրը մեանց համար մեծ բաներ ըրաւ։
3 Տէրը մեզի համար մեծ բաներ ըրաւ,
Ե՛ մենք ուրախացանք։
4 Ով Տէր, դարձուր մեր գերութիւնը
Հարաւին առուներուն պէս։
5 Անոնք որ արտասուօք կը ցանեն
Ցնծութեամբ կը հնձեն։
6 Ան որ լալով կ'երթայ՝
Յանկերս սերմն տանելով,
Անշուշտ ցնծութեամբ կու պիտի գայ
Իր snրենի խուրձերը բերելով։

ՍԱՂՄՈՍ ՀԻԷ

Սողոմոնի ատենաւորութեան երգը։

1 Եթէ Տէրը չշինէ տունը,
Զուր տեղը կ'աշխատին անոր շինարա-
րը։
Եթէ Տէրը չպահպանէ քաղաքը,
Զուր տեղը կը հսկեն պահապանները։
2 Պարապ բան է ձեզի համար կանուխ
կանգնիլ Ե՛ուշ հանգչիլ
Եւ՝ ցաւով հաց ուտել.
Արդարև Անիկա իր սիրելիին քուն
կու տայ։
3 Ահա ժառանգութիւն են Տէրոջը ման-
կունքը,
Որովայնին պտուղն ալ վարձք կ'ունի։
4 Ինչպէս են նետերը զօրաւորին ձեռքը
Այնպէս են երիտասարդներուն որդի-
քը։
5 Երանի այն մարդուն՝
Որ իր կապարճն անոնցմով լեցուց.
Երբ գրան մէջ թշնամիով հետ խօսե-
ցած ըլլան
Պիտի չամչնան։

*Պահ Ատենաւորներու երկար վարձքն



ՍԱՂՄՈՍ ՁԻԲ

Ատենաւորներուն երգը։

1 Երանի այն ամենուն որ Տէրոջմէ կը
վախնան,
Ե՛ անոր ճամբաներուն մէջ կը քալեն։
2 Վասն զի դուն ձեռագործ ուշադրու-
թիւնդ պիտի ունենաս։
Երանի ՚ի քեզ, և բարի պիտի ըլլայ
քեզ։
3 Քու կինդ պտղաբեր որթի պէս պիտի
ըլլայ
Քու սեղանդ շրջապատին։
Ե՛ քու որդիքդ ձիթենւոյ տունկերու
պէս
Քու սեղանդ չորս կողմիդ։
4 Ահա Տէրոջմէն վախցող մարդն
Այսպէս պիտի օրհնուի։
5 Տէրը քեզ Սիոնէ օրհնէ,
Եւ երուսաղէմի բարութիւնը տեսնես
Քու կենացդ բոլոր օրերուն մէջ։
6 Եւ քու որդւոցդ որդիները տեսնես,
Խաղաղութիւն ըլլայ Իսրայէլի վրայ։

ՍԱՂՄՈՍ ՁԻԹ

Ատենաւորութեան երգը։

1 Հինա Իսրայէլ թող ըսէ,
Իմ մանկութենէս ի վեր չատ անգամ
զիս նեղեցին.
2 Իմ մանկութենէս ի վեր չատ անգամ
զիս նեղեցին,
Բայց ինծի չյաղթեցին։
3 Հերկողներն իմ կռնակիս վրայ հերկե-
ցին,
Ե՛ իրենց ակօսներն երկնցուցին։
4 Տէրը արդար է.
Անկիա ամբարիշտներուն չուանները
կտրատեց։
5 Ձսիօն ատողներուն ամէնը
Պիտի ամչնան և նահ դառնան։
6 Տանեաց վրայ խոտին պէս պիտի ըլլան,
Որ դեռ չբրցուած կը չորնայ.
7 Որ հնձողը չկրնար անով իր ձեռքը
լեցունել,

Ոչ ալ խուրձ կապողին իր գոգը։
8 Եւ անցնողները չեն ըսեր թէ
Տէրոջը օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ,
Ե՛ ձեզ Տէրոջը անունէ կ'օրհնենք։

ՍԱՂՄՈՍ ՁԼ

Ատենաւորութեան երգը։

1 Ով Տէր, սիրտս չգոռոզացաւ,
Եւ աչքերս չբարձրացան.
Եւ ես մեծամեծ բաներու մէջ չխա-
ղացի,
Ե՛ իմ բարձր բաներու մէջ չքալեցի։
2 Արդարև իմ անձս հանդարտեցուցի և
հանգստացուցի
Իր մօրը կաթին կարատած մանկան
պէս։
Իմ անձս կաթին կարատած մանկան
պէս է։
3 Իսրայէլ թող Տէրոջը յուսայ
Այսուհետև մինչև յաւիտեան։

ՍԱՂՄ. ՃԼԸ

Ասաիճանների երգը։

1 Դաւիթի համար յիշ, ով Տէր,
Անոր բոլոր նեղութիւնը.
2 Նա երդում ըրաւ Տէրոջը,
Ու՝ ուխտ դրաւ Յակոբայ Զօրաւորին,
3 Ըսելով Թէ իմ տանս բնակարանը չմտնեմ,
Եւ իմ մահճակալիս վրայ չպառկիմ,
4 Թէ իմ աչքերուս քունը
Եւ արտեւանունքս նիրհելը չտամ,
5 Մինչեւ որ Տէրոջը համար տեղ մը գտնեմ,
Ու՝ Յակոբայ Զօրաւորին համար բնակարան։
6 Ահա անոր վրայ լսեցինք Եփրաթայի մէջ,
Ու՝ գտանք զնա անտառի դաշտերուն մէջ։
7 Մտնենք անոր բնակարանները,
Ու՝ երկրպագութիւն ընենք անոր պատառանդանին քով։
8 Բու՛ Հանգստանալդ տեղը կերթ, ով Տէր,
Դու և քու զօրութեանդ տապանակը։
9 Քահանաներդ թող արդարութիւն հագնին,
Եւ սուրբերդ ցնծան։
10 Բու՛ Դաւիթի ծառային համար
Աղերսի մի դարձուներ քու օծեալդ երեսը։
11 Տէրը երդում ըրաւ Դաւիթի ճշմարտութեամբ,
Ու՝ ետ չդառնալ անկէ.
Թէ Քու որովայնիդ պտղէն
Քու աթոռիդ վրայ պիտի նստեցնեմ։
12 Եթէ քու որդիներդ պահեն ուխտս և վկայութիւններս
Զոր անոնց պիտի սորվեցնեմ,
Անոնց որդիքն ալ
Քու աթոռիդ վրա պիտի նստին յաւիտեան։
13 Քանզի Տէրը զԱիովն ընտրեց,
Ու՝ զանիկա իրեն բնակութեան համար ուզեց,
14 Ըսելով Ա՛յս է յաւիտեան իմ հանգիստս.
Ասոր մէջ պիտի բնակիմ, քանզի ասոր հաճեցայ։
15 Անոր պաշարն առատապէս պիտի օրհնեմ,
Ու՝ անոր աղքատներն հացով պիտի յագեցունեմ։
16 Եւ անոր քահանաներուն փրկութիւն պիտի հագցնեմ,
Եւ անոր սուրբերն ուրախութեամբ պիտի ցնծան։
17 Ա՛յն տեղը Դաւիթի եղջիւր պիտի բուսցնեմ,
Ու՝ ճրագ պիտի պատրաստեմ իմ օծեալս համար։
18 Անոր թշնամիներուն ամօթ պիտի հագցնեմ,
Բայց անոր վրայ իւր թագը պիտի ծաղկի։

ՍԱՂՄ. ՃԼԹ

Դաւիթի ասաիճանների երգը։

1 Ահա որչափ բարի և որչափ վայելուչ է
Որ եղբայրներ դէպ՛ի միաբանութեամբ բնակին։
2 Այն ալիւր իւղին պէս է,
Որ գլուխն վրայէն մօրուաց վրայ՝
Ահարոնի մօրուաց վրայ վազեց,
Ու՝ մինչև անոր զգեստներուն ծայրն իջաւ։
3 Սիօնի լեռներուն վրայ կիջած
Հերմոնի շաղին պէս է.
Քանզի Տէրը հոն հանապազորդ օրհնութիւն
Ու՝ կեանք մինչև յաւիտեան պատուիրեց։

ՍԱՂՄ. Ճ

Ասաիճանների երգը։

1 Ա՛դ օրհնեցէք Տէրը, ով Տէրոջը բոլոր ծառաներդ,
Որ Տէրոջը տունը կը կենաք գիշերները։
2 Սուրբ տեղը ձեր ձեռքերը վերցուցէք
Ու՝ օրհնեցէք Տէրը։
3 Երկինք և երկիր տանեցող Տէրը
Թող օրհնէ քեզ Սիոնէ։

ՍԱՂՄ. ՃԼ

1 Ա՛լէլուիա։ Օրհնեցէք Տէրոջը անունը,
Օրհնեցէք, ով Տէրոջը ծառաներդ,
2 Որ Տէրոջը տունը կը կենաք,
Մեր Աստուծոյն տան սրահներուն մէջ։
3 Օրհնեցէք Տէրը, քանզի Տէրը բարի է.
Սաղմոս երգեցէք անոր անուան, քանզի քաղցր է։
4 Վասն զի Տէրը իրեն համար ընտրեց զՅակոբը,
Ու՝ գիտցաբար իրեն սեպհական Իսրայէլը։
5 Վասն զի ես գիտցայ, որ նշանաւոր մեծ է,
Եւ մեր Տէրը բոլոր աստուածներէն։
6 Տէրը ամէն ինչ որ կամեցաւ՝ ըրաւ,
Երկինց և երկրի մէջ,
Ծովերուն և բոլոր անդունդներուն մէջ։
7 Երկրի ծայրերէն շոգիները կը հանէ,
Անձրեւի համար փայլակներ կը շինէ,
Ու՝ հով կը հանէ իւր չափարաններէն։
8 Անիկա եգիպտոսի անդրանիկները զարկաւ
Մարդէ մինչև անասուն։
9 Նշաններ և հրաշներ ղրկեց քու մէջդ, ով Եգիպտոս,
Փարաւոնի և անոր բոլոր ծառաներուն վրայ։
10 Շատ ազգեր զարկաւ,
Ու՝ զօրեղ թագաւորներ սպաննեց,
11 Ամորհացւոց Սիհոն թագաւորը,
Բասանի Ովգ թագաւորը,
Ու՝ Քանանու բոլոր թագաւորութիւնները։
12 Ու՝ անոնց երկիրը ժառանգութիւն տուաւ,
Իւր Իսրայէլ ժողովրդեան ժառանգութիւն։
13 Ով Տէր, քու անունդ մինչև յաւիտեան կը տեւայ.
Ով Տէր, քու վերստաիդ ազգէ մինչև ազգ։
14 Քանզի Տէրը իւր ժողովուրդը կը գատէ,
Ու՝ իւր ծառաներուն կ'ողորմի։
15 Հեթանոսաց կուռքերն արծաթ և ոսկի են,
Մարդու ձեռաց գործ են.
16 Բերան ունին, բայց չեն խօսիր.
Աչք ունին, բայց չեն տեսներ.
17 Ականջ ունին, բայց չեն լսեր,
Ու՝ չունի շունչ անոնց բերանին մէջ։
18 Անոնց նման կ'ըլլան զանոնք շինողները
Ու՝ բոլոր անոնց յուսացողները։
19 Ով Իսրայէլի տունը, օրհնեցէք Տէրը.
Ով Ահարոնի տունը, օրհնեցէք Տէրը.
20 Ով Ղեւեայ տունը, օրհնեցէք Տէրը.
Ով Տէրոջմէն վախցողներ, օրհնեցէք Տէրը։
21 Օրհնեալ ըլլայ Տէրը Սիոնէ,
Նա որ Երուսաղէմի մէջ կը բնակի։ Ա՛լէլուիա։

ՍԱՂՄ. ՃԼԶ

1 Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է.
Վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.
2 Գոհացէք աստուածներուն Աստուածմէն,
Վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.
3 Գոհացէք տէրերուն Տէրոջմէն,
Վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.
4 Միակ մեծ հրաշներ ընողին,
Վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.
5 Երկինք իմաստութեամբ ստեղծողին,
Վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.
6 Երկիրը ջուրերուն վրայ տարածողին,
Վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.
7 Մեծ ամպեր լուսատուներ ստեղծողին,
Վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.
8 Արեգակը՝ որ տիրէ ցերեկ,
Վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.
9 Լուսին և աստղերը՝ որ գիշերի իշխեն,

վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

10 *Եգիպտացւոց անդրանիկները" զարնողէն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

11 Եւ զիսրայէլ անոնց միջէն հանողէն,
վասն զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

12 Հզօր ձեռօք և տարածուած բազկով,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

13 Կարմիր ծովը երկու բաժնողէն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

14 Եւ զիսրայէլ անոր միջէն անցուցողէն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

15 Եւ զփարաւոն և անոր զօրքը կարմիր ծովուն միջ թօթափողէն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

16 Իր ժողովուրդն անապատին միջ պարտաւցուցողէն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

17 Մեծ թագաւորներ զարնողէն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

18 Եւ զօրեղ թագաւորներ սպաննողէն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

19 Ամորհացւոց Սեհոն թագաւորը,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

20 Եւ Բասանի Ովգ թագաւորը,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

21 Եւ անոնց երկիրը ժառանգութիւն տուողէն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

22 Իր իսրայէլ ծառային ժառանգութիւն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

23 Մեր խոնարհութեան մէջ զմեզ յիշողէն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

24 Եւ մեր թշնամիներէն զմեզ փրկողէն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

25 Ամէն մարմնոյ հաց տուողին,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է.

26 Գոհացէ՛ք երկնից Աստուծմէն,
վան զի անոր ողորմութիւնն յաւիտեան է։

## ՍԱՂՄ. ՃԼԵ

1 Բաբելոնի գետերուն քով՝ հոն կը նըստէինք,
Եւ զՍիսոն մեր միտքը բերելով կու լայինք.

2 Անոր միջ ուռիներու վրայ
կախեցինք մեր քնարները.

3 Բանզի զմեզ գերի ընդունողները
Հոն մեզի երգ մը խնդրեցին,
Եւ մեր *կողոպտիչներն ուրախութիւն,
Ր-ՒԸՎ, Երգեցէք մեզի Սիոնի երգերէն։

4 Ցերոջը երգն ի՞նչպէս երգենք
Օտար երկրի մէջ.

5 Ով Երուսաղէմ, եթէ զքեզ մոռնամ,
Թող աջ ձեռքս է՛ր գաղտնիը մոռնայ.

6 Թող լեզուս քմացս փակչի,
Եթէ զքեզ չյիշեմ,
Եթէ զերուսաղէմ իմ գլխաւոր ուրախութենէս
Աւելի մեծ չհամարիմ.

7 Յիշէ, ով Տէր, Եդովմի որդիները
Երուսաղէմի օրուան մէջ,
Որ կ'ըսէին, Փլցուցէ՛ք փլցուցէ՛ք
Մինչև անոր հիմը։

8 Ով Բաբելոնի †աւերդոյ աղջիկը,
Երանի անոր՝ որ քեզի կը հատուցանէ

*Եբր. Եգիպտացիներէն իրենց անդրանիկներուն մէջ

*Կամ գերեվարները
†Կամ աւրուելու



Մեզի ըրած գործերուդ փոխարէնը.

9 Երանի անոր՝ որ քու զաւակներդ կը բռնէ
Եւ քարի կը զարնէ։

## ՍԱՂՄ. ՃԼԶ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւիթ։

1 Ով Տէր, զիս քննեցիր և ճանչցար։
2 Դու գիտես նստիլս և ելլելս,
Իմ խորհուրդս հեռուանց կ'իմանաս։
3 Իմ շաւիղս և պառկիլս կը քննես,
Եւ իմ բոլոր ճամբաներս գիտես։
4 Բանզի բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ,
Ահա, ով Տէր, դուն ամէնը գիտես։
5 Իմ ետևէս և առջևէս զիս պաշարեցիր,
Եւ քու ձեռքդ իմ վրաս դրիր։
6 Այս գիտութիւնն ինծի շատ զարմանալի է,
Բարձր է և չեմ կրնար հասկընալ զայն։
7 Ո՞ւր երթամ քու Հոգիէդմէ,
Եւ քու երեսիդ ո՞ւր փախչիմ։
8 Եթէ երկինք ելլեմ, դուն հոն ես.
Եթէ գժոխք անկողինս ընեմ, ահա դուն հոն ես։
9 Եթէ արշալուսոյ թևերուն առնեմ,
Եւ ծովուն վերջին ծայրերը բնակիմ,
10 Հոն եւս քու ձեռքդ ինծի պիտի առաջնորդէ,
Եւ քու աջ ձեռքդ զիս պիտի բռնէ։
11 Եթէ ըսեմ, Արդարև խաւարը զիս պիտի ծածկէ,
Անոփեռ գիշերն եւս լոյս կ'ըլլայ իմ բոլորտիքս։
12 Մութն անգամ քեզի խաւար չէ.
Այլ գիշերը ցերեկուան պէս լուսաւոր կ'ըլլայ։
Խաւարը և լոյսը մի և նոյն բան են քեզի։
13 Բանզի դուն *սանձեցիր երիկամունքս,
Ես մօր որովայնին մէջ դուն զիս ծածկեցիր։
14 Կը գոհանամ քենէ,
Որ սքանչելի կերպով լսանելիացար։

*Կամ սաստար

Քու գործերդ զարմանալի են,
Եւ իմ անձս աղէկ գիտէ։
15 Իմ գոյութիւնս չծածկեցաւ քեզմէ,
Երբ գաղտուկ տեղ շինուեցայ,
Երկրի խորութեանց մէջ *ձարտարութեամբ կազմուեցայ։
16 Քու աչքերդ իմ անկատար կազմուածքս տեսան.
Եւ անդամներս բոլորը քու գրքիդ մէջ գրուած էին,
Որ ժամանակին պիտի կազմուէին,
Երբ դեռ անոնցմէ մէկը չկար։
17 Որչափ պատուական են քեզ քու խորհուրդներդ, ով Աստուած.
Որչափ մեծ է անոնց թիւը։
18 Եթէ համրեմ զանոնք՝ աւազէն շատ են.
Երբ արթննամ՝ դեռ քեզի հետ եմ։
19 Աղտաբուղ ամբարիշտը պիտի սպանանես, ով Աստուած.
Ուրեմն, ով արիւնահեղ մարդիկ, հեռացէք ինձմէ։
20 Անոնք քեզի դէմ նենգութեամբ կը խօսին.
Ե՝ քու †թշնամիներդ տո՛ւր անօրէնք կ'առնեն ընդունայն։
21 Քեզ ատողները չէմ ատեր, ով Տէր,
Եւ քեզի դէմ կելլողներէն չէմ զզուիր։
22 Զանոնք կատարեալ ատելութեամբ կ'ատեմ,
Ե՝ ինծի թշնամի կը համարեմ։
23 Փորձէ զիս, ով Աստուած, և գիտցիր իմ սիրտս.
Զիս քննէ և գիտցիր իմ խորհուրդներս։
24 Եւ նայէ թէ արդեօք չար ճամբու մէջ եմ,
Եւ զիս դէպ ի յաւիտենական ճամբան առաջնորդէ։

ՍԱՂՄ. ՃԼԹ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի.

1 Ով Տէր, չար մարդէն զիս փրկէ,
Ե՝ բռնաւոր մարդէն զիս պահէ,
2 Որ իրենց սրտին մէջ չար բաներ կը մտածեն,
Եւ՝ ամէն օր կռիւներու համար կը ժողովուին։
3 Իրենց լեզուներն օձի պէս սրեցին.
Իժի թոյն կայ անոնց շրթանց ներքեւ։ (Սէլայ։)
4 Ով Տէր, զիս ամբարիշտին ձեռքէն պահէ.
Զիս բռնաւոր մարդէն պահպանէ,
Որ իմ դնացքս խափանելու խորհուրդ ըրին։
5 Ամբարտաւանները ինծի համար գաղանի որոգայթ և լուսաններ լարեցին.
Ուռկան փռեցին իմ ճամբուս վրայ.
Վտարներ դրին ինծի համար։ (Սէլայ։)
6 Ըսի Տէրոջը, Դուն ես իմ Աստուածս.
Ով Տէր, լսէ աղաչանացս ձայնը։
7 Ով Տէր Եհովա, իմ փրկութեանս զօրութիւնը,
Դուն իմ գլխուս հովանի եղար պատերազմին օրը։
8 Ով Տէր, ամբարիշտին ցանկութիւնները մի տար։
Անոր չար խորհուրդը մի յաջողեր,
Որ †ԱՐԵՒ-ԲԼ բարձրանան։ (Սէլայ։)
9 Զիս պաշարողներուն գլուխն
Անոնց շրթանց ամբաստութիւնը պիտի ծածկէ։
10 Վառած ածուխներ պիտի իյնան անոնց վրայ.
Կրակի մէջ պիտի ձգէ զանոնք,
Ե՝ խոր ջուրերու մէջ, որ բնաւ վեր չկրկնեն։
11 Զարհուրանք մարդը երկրի վրայ պիտի չհաստատուի.
Թշուառութիւնը պիտի օրանց բռնաւոր մարդը,
Որ զՆովէ՝ կործանէ։
12 Գիտեմ որ Տէրը զաւառական պիտի քնէ թշուառին,
Ե՝ իրաւունք աղքատներուն։



13 Արդարք յիրաւի պիտի գովեն քու անունդ.
Ուղղամիտները քու առջեւդ պիտի բնակին։

ՍԱՂՄ. ՃԽԱ

Սաղմոս Դաւթի.

1 Ով Տէր, քեզի կը կանչեմ, չուտով հասիր ինծի.
Ականջ դիր ձայնիս երբ քեզի կը կանչեմ։
2 Թող աղօթքս խունկի պէս քեզի շիտակ ելլէ,
Ե՝ իմ ձեռացս վեր վերցուիլն իրիկուան պատարագին պէս։
3 Ով Տէր, պահապան դիր բերնիս,
Ե՝ շրթանցս դուռնը պահպանէ։
4 Սիրտս չար բանի եւեւէ խոտորելու մի թողուր,
Որ անօրէնութեան գործող մարդոց հետ գէշ գործեր չընեմ,
Ե՝ անոնց համագամ կերակուրներէն չուտեմ։
5 Արդարը թող զիս զարնէ, ողորմութիւն է այն.
Եւ զիս յանդիմանէ, գլխուս լաղ է այն.
Իմ գլուխս չմերժէ ըսելս.
Քանզի անոնց նեղութիւններուն մէջ ես պիտի աղօթեմ։
6 Երբ անոնց գաւազիրներն ապառաժներու մէջ ձգուին,
Անոնք պիտի լսեն իմ խօսքերս, քանզի քաղցր են։
7 Ինչպէս որ հերկողը և ձեղքողը երկրի վրայ,
Այնպէս մեր ոսկորները գերեզմանին բերանը ցիրուցան եղան։
8 Սակայն, ով Տէր Եհովա, իմ աչերս դէպ ի քեզ են.
Քեզ յուսացայ, իմ հոգիս մի մերկացուներ։
9 Ինծի համար լարուած որոգայթէն,
Ե՝ անօրէնութեան գործողներուն վարժերէն զիս պահէ։

*Կամ է-ՅՈՒ կարդայ

10 Ամբարիշտներն իրենց ցանցերուն մէջ պիտի իյնան,
Երբ ես բոլորովին անցնիմ։

ՍԱՂՄ. ՃԾԹ

Դաւթի երգը Ը աղօթքի երբ այրին մէջ էր։

1 Իմ ձայնովս Տէրոջը կ'ազաղակեմ.
Իմ ձայնովս Տէրոջը կ'ողթամ։
2 Իմ գանգատս անոր առջեւն կը թափեմ.
Նեղութիւնս անոր առջեւն կը պատմեմ։
3 Երբ հոգիս իմ մէջս կը մաշէր,
Դուն իմ շաւիղս գիտցար.
Իմ քալած ճամբուս մէջ
Ինծի համար գաղտուկ որոգայթ լարեցին։
4 Նայէ աջ կողմս և տես
Որ բնաւ զիս ճանչցող չկայ։
Ապաւէնն ինձ կորսուեցաւ.
Բնաւ մեկը չկայ որ իմ անձիս համար հոգ բնէ։
5 Ով Տէր, քեզի ազաղակեցի,
Ե՝ ըսի, Դուն ես իմ ապաւէնս,
Ե՝ իմ վիճակս կենդանեաց երկրին մէջ։
6 Ականջ դիր ազաղակիս,
Քանզի շատ նուաստացայ.
Ազատէ զիս հալածիչներէս,
Քանզի ինձ զօրաւոր են։
7 Իմ անձս բանտէն հանէ,
Որ քու անունդ գոհութիւն մատուցանեմ։
Արդարները իմ շուրս կողմս պիտի պատեն,
Երբ ինծի բարութիւն ընես։

ՍԱՂՄ. ՃԾԹ

Սաղմոս Դաւթի։

1 Ով Տէր, լսէ իմ աղօթքս,
Ականջ դիր աղաչանքիս.
Պատասխան տուր ինծի քու ճշմարտութեամբդ

Ե- փառ արդարութեամբդ։
2 Եւ քու ծառայիդ հետ դատաստանի
մի մտներ,
Քանզի բնաւ կենդանի մը պիտի չարդարանայ քու առջիդ։
3 Վասն զի թշնամին իմ անձս հալածեց,
Իմ կեանքս գետինը զարկաւ,
Զիս չառաջնորդեց մեռածներուն պէս
Մութը նստեցուց։
4 Եւ հոգիս ներսիդս դիս մաքնցաւ,
Սիրտս ներսիդս դիս խռովեցաւ։
5 Առջի օրերը կը յիշեմ,
Քու բոլոր գործերուդ վրայ կը մտածեմ.
Քու ձեռացդ բոլածներուն վրայ կը խորհիմ։
6 Ձեռքերս դէպ ի քեզ կ'երկնցնեմ.
Իմ անձս չոր երկրի պէս քեզի կը ծարաւի։ (Սէլա)
7 Շուտով պատասխան տուր ինծի, ով Տէր.
Իմ հոգիս մաքնցաւ.
Քու երեսդ ինի մի ծածկեր ինձմէ,
Որ գուբ կիջնողներուն պէս չըլլամ։
8 Առաւօտուն քու ողորմութիւնդ ինծի լսել տուր,
Քանզի քեզի յուսացայ.
Իմ երթալու ճամբան ինծի ցուցուր,
Վասն զի իմ անձս դէպ ի քեզ վերցուցի։
9 Ով Տէր, փրկէ զիս իմ թշնամիներէս,
Քեզի ծածկուեցայ։
10 Սորվեցուր ինծի որ քու կամքդ ընեմ,
Քանզի դուն ես իմ Աստուածս.
Քու բարի Հոգիդ զիս ուղիղ երկիրը առաջնորդէ։
11 Ով Տէր, քու անուանդ համար կենդանացուր զիս.
Քու արդարութեանդ համար իմ անձս նեղութենէ հանէ.
12 Եւ քու ողորմութեամբդ սատակէ թշնամիներս,
Եւ կորսնցուր բոլոր իմ անձս վշտացուցողները,
Քանզի ես քու ծառադ եմ։

ՍԱՂՄ. ՃԽԴ

Ս-ՀԱՆ Դաւթի։

1 Օրհնեալ ըլլայ Տէրը՝ իմ վէմս,
Որ իմ ձեռքս մարտնչելու կը վարժէ,
Ե- իմ մատաղներս՝ պատերազմելու։
2 Նա է իմ ողորմութիւնս և պարիսպս,
Իմ ապաւէնս և իմ փրկիչս,
Իմ վահանս, և ես անոր կը յուսամ,
Որ իմ ժողովուրդս ինծի կը հնազանդեցնէ։
3 Ով Տէր, մարդն ի՞նչ է որ զանիկա կը ճանչնաս,
Ե- մարդու որդին՝ որ զանիկա կը յարգես։
4 Մարդ ունայնութեան պէս է,
Անոր օրերն անցնող չուքի պէս են։
5 Ով Տէր, խոնարհեցուր քու երկինքդ եւ վար իջիր.
Լեռներուն դպչէ և պիտի ծխան։
6 Փայլակը նետէ և ցրուէ զանոնք.
Քու նետերդ զրկէ և զանոնք խռովեցուր։
7 Քու ձեռքդ վերէն զրկէ և ազատէ զիս.
Փրկէ զիս մեծ ջուրերէն Ե օտարներուն ձեռքէն,
8 Որոնց բերանն ունայնութիւն կը խօսի,
Ե անոնց աջ ձեռքը սուտութեան աջ ձեռք է։
9 Ով Աստուած, քեզի նոր երգ պիտի երգեմ,
Տասը լար ունեցող տաւղով պիտի քանմ քեզի։
10 Թագաւորներուն յերկութիւն տուողը,
Ե- իր Դաւիթ ծառան չար սուրէն ազատողը Նա է։
11 Զիս ազատ և օտարներուն ձեռքէն փրկէ,
Որոց բերանն ունայնութիւն կը խօսի,
Եւ անոնց աջ ձեռքը սուտութեան աջ ձեռք է։
12 Որ մեր որդիքն իրենց երիտասարդութեան մէջ տունկերու պէս մեծնան,



Ե- մեր աղջիկները պալատի ձեղքին համար փորագրուած անկիան քարերու պէս ըլլան.
13 Որ մեր ամբարները լեցուին,
Ե- ամէն տեսակ ընչաւէտներէ լրխնեն.
Ե- մեր ոչխարները հազարաւոր Ե բիւրաւոր ծնանին մեր արտերուն մէջ.
14 Որ մեր արջառները *բազմածին ըլլան,
Եւ ամենևին բառնութեամբ մտնել և ելլել չըլլայ,
Եւ ոչ աղաղակ մեր հրապարակներուն մէջ։
15 Երանի այսպիսի վիճակի մէջ եղող ժողովրդեան.
Երանի այն ժողովրդեան որոյ Աստուածը Եհովան է։

ՍԱՂՄ. ՃԽԵ

Օրհնութիւն Դաւթի։

1 Զքեզ պիտի բարձրացունեմ, ով իմ Աստուածս, որ Թագաւոր ես,
Եւ քու անունդ յաւիտեան յաւիտենից պիտի օրհնեմ։
2 Ամէն օր զքեզ պիտի օրհնեմ,
Եւ քու անունդ յաւիտեան յաւիտենից պիտի գովեմ։
3 Մեծ և շատ գովելի է Տէրը,
Եւ անոր մեծութիւնն անքննելի է։
4 Ազգ ազգի պիտի գովէ քու գործերդ,
Եւ քու զօրութիւններդ պիտի պատմէ։
5 Քու փառացդ վեհութեան վայելչութիւնը
Եւ քու հրաշալի գործերդ պիտի զրուցեմ։
6 Եւ քու ահաւոր գործերդ պիտի խօսին,
Եւ ես քու մեծութիւնդ պիտի պատմեմ։
7 Քու մեծ բարերարութեանդ յիշատակը պիտի հրատարակեն,
Եւ քու արդարութեամբդ պիտի ցընծան։

*Կամ պարարտ

8 Ողորմած և գթած է Տէրը,
Երկայնամիտ և բազումողորմ է։
9 Տէրը ամենուն բարի է,
Եւ անոր ողորմութիւնները իւր բոլոր գործերուն վրայ են։
10 Ով Տէր, քու բոլոր գործերդ զքեզ պիտի գովեն,
Ե քու սուրբերդ զքեզ պիտի օրհնեն։
11 Քու թագաւորութեանդ փառքը պիտի խօսին,
Եւ քու զօրութիւնդ պիտի պատմեն.
12 Որ անոր զօրաւոր գործերը և անոր թագաւորութեան փառաւոր մեծութիւնը
Մարդոց որդիներուն գիտցունեն։
13 Քու թագաւորութիւնդ յաւիտենական թագաւորութիւն է,
Եւ տէրութիւնդ ազգէ ազգ։
14 Տէրը կը հաստատէ բոլոր կքնալու վրայ եղողները,
Եւ բոլոր վար ծառայները կը կանգնեցունէ։
15 Ամենուն աչքերը քեզի կը սպասեն,
Եւ ժամանակին անոնց կերակուրը դուն անոնց կու տաս։
16 Ձեռքդ կը բանաս,
Եւ ամէն կենդանւոյ փափաքը կը լցունես։
17 Տէրը արդար է իւր բոլոր ճամբաներուն մէջ,
Եւ ողորմած է իւր բոլոր գործերուն մէջ։
18 Տէրը մատ է այն ամենուն որ կը կանչեն զնա,
Այն ամենուն՝ որ ճշմարտութեամբ կը կանչեն զնա։
19 Անիկա իրմէ վախցողներուն փափաքը կը լեցունէ,
Եւ անոնց աղաղակը կը լսէ և կը փրկէ զանոնք։
20 Տէրը բոլոր զինքը սիրողները կը պահէ,
Սակայն բոլոր ամբարիշտները կը կորսնցունէ։
21 Իմ բերանս Տէրոջը գովութիւնը պիտի խօսի,
Եւ ամէն մարմին անոր սուրբ անունը օրհնէ յաւիտեան յաւիտենից,

ՍԱՂՄ. ՁԼԶ

1 Ալէլուիա. Օրհնէ Տէրը, ով իմ անձս,
2 Տէրը պիտի օրհնեմ իմ կենացս մէջ,
Քանի որ ես կը եմ իմ Աստուծոյս սաղմոս պիտի ըսեմ։
3 Մի յուսաք իշխաններուն,
Մարդու որդւոյն որուն քով փրկութիւն չկայ։
4 Անոր հոգին կ'ելլէ, անիկա իր հողը կը դառնայ։
Նոյն օրը անոր խորհուրդները կը կորսուին։
5 Երանի անոր որոյ օգնականը Յակոբայ Աստուածն է,
Եւ անոր յոյսը իր Տէր Աստուծոյն վրայ է,
6 Այն որ երկինք և երկիր,
Ծովը և բոլոր անոնց մէջ եղածն ըստեղծեց,
Հաւատարմութիւն կը պահէ յաւիտեան,
7 Իրաւունք կ'ընէ զրկուածներուն,
Ու հաց կու տայ անօթիներուն.
Տէրը կ'արձակէ կապուածները։
8 Տէրը կը բանայ կոյրերուն աչքերը.
Տէրը կը կանգնեցնէ վար ծռածները.
Տէրը կը սիրէ արդարները.
9 Տէրը կը պահէ պանդուխտները,
Կը հաստատէ որբը և այրին,
Բայց ամբարիշտներուն ճամբան կը ծռէ։
10 Տէրը պիտի թագաւորէ յաւիտեան,
Քու Աստուածդ, ով Սիօն, ազգ ի ազգ։
Յե՛ս ազգ։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՁԼԷ

1 Գովեցէք Տէրը, վասն զի բարի է մեր Աստուծոյն ազնիւս ընել.
Վասն զի քաղցր և վայելուչ է օրհնութիւնը։
2 Տէրը կը շինէ զԵրուսաղէմ,
Իսրայէլի ցրուածները կը ժողվէ.
3 Սրտով կատրածները կը բժշկէ,
Եւ անոնց խոցերը կը կապէ.
4 Աստղերուն թիւը կը հաշիւ,
Անոնց ամէնն ալ իրենց անուններով կը կանչէ։
5 Մեծ է մեր Տէրը, և անոր զօրութիւնը չատ է.
Անոր խոհեմութիւնն անհուն է։
6 Տէրը կը հաստատէ խոնարհները,
Եւ ամբարիշտները մինչեւ հող կը խոնարհեցնէ։
7 Երգեցէք Տէրոջը գոհութեամբ.
Մեր Աստուծոյն սազմոս ընէք քնարով.
8 Ան է որ երկինքը ամպերով կը ծածկէ,
Անձրեւ կը պատրաստէ երկրին համար,
Խոտ կը բուսցնէ լեռներուն վրայ.
9 Ու անասուններուն կերնոյ կ'երակտրը կու տայ,
Եւ ագռաւի ձագերուն որ կ'ադաղակեն։
10 Անիկա ձիուն զօրութեանը չհաճիր,
Մարդու սրունքներուն չհաներ.
11 Տէրը կը հաճի իրմէ վախցողներուն
Եւ իր ողորմութեանը յուսացողներուն։
12 Ով Երուսաղէմ, գովէ Տէրը.
Օրհնէ քու Աստուածդ, ով Սիօն,
13 Վասն զի անիկա քու դուռներուդ նիգերն ամրացուց,
Եւ քու որդիներդ օրհնեց ի քեզ։
14 Անիկա քու սահմաններուդ խաղաղութիւն կու տայ,
Եւ պարարտ ցորենով քեզ կը յագեցունէ.
15 Անիկա իր խօսքը կը զրկէ երկիր,
Անոր խօսքը չտեւով կը վազէ։
16 Անիկա բուրդի պէս ձիւն կու տայ,
Եւ եղեամը մոխրոյ պէս կը ցանէ։
17 Իր սառը պատառներու պէս կը նետէ.
Անոր ցուրտին դէմ ո՞վ կրնայ կեցնալ։
18 Անիկա իր խօսքը կը զրկէ և կը հալեցնէ զանոնք.

---

Նեղեալ եւ հայոց ի բռնութեանէ խռովեալ եղեալ ես, զի սակս մեղացն մերոց ի ձեռս թշնամեաց մատնեցար։ Տէր Աստուած ի բարերարէն վրայ ձանձրացար։



Իր հովը փչել կու տայ, և յորդերը կը վազեն։
19 Անիկա իր խօսքը կը պատմէ Յակոբայ,
Ե՛ւ իր կանոններն ու դատաստաններն Իսրայէլի։
20 Բնաւ ուրիշ ազգի մը այսպէս չըրաւ.
Եւ անոնք դէպ դատաստանները չեն ճանչցան։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՁԽԵ

1 Ալէլուիա. Օրհնեցէք Տէրը երկինքէն.
Օրհնեցէք զինք բարձր տեղեր։
2 Օրհնեցէք զինք, ով անոր բոլոր հրեշտակները.
Օրհնեցէք զինք, ով անոր բոլոր զօրքը։
3 Օրհնեցէք զինք, ով արեգակն և լուսին.
Օրհնեցէք զինք, ով բոլոր փայլուն աստղեր։
4 Օրհնեցէք զինք, ով երկինից երկինք
Եւ երկինքէն վեր եղող ջուրեր։
5 Թող Տէրոջը անունն օրհնեն.
Վասն զի հրամայեց, և անոնք ստեղծուեցան։
6 Եւ զանոնք յաւիտեան յաւիտենից հաստատեց.
Կանոն դրաւ որ չխախտուի։
7 Օրհնեցէք Տէրը երկրէն,
Ով վիշապներ և բոլոր անդունդներ։
8 Կրակ և կարկուտ, ձիւն և շոգի,
Ե՛ւ անոր խօսքը կատարող մրրկայից հով,
9 Լեռներ և բոլոր բլուրներ,
Պտղաւոր ծառեր և եղեւիններ,
10 Գազաններ և բոլոր անասուններ,
Սողացողներ և թռչուր թռչուններ,
11 Երկրի թագաւորներ և բոլոր ազգեր,
Իշխաններ և երկրի բոլոր դատաւորներ,
12 Երիտասարդներ և կոյս աղջիկներ,
Ծերք և տղայք։
13 Թող Տէրոջը անունն օրհնեն,
Վասն զի անոր անունը միայն բարձր է,
Անոր փառքը երկրէ և երկինքէ վեր է։
14 Անիկա բարձրացուց իր ժողովրդեան եղջիւրը)
Իր բոլոր սուրբերուն,
Իրեն մօտ եղող ժողովրդեան,
Իսրայէլի որդւոց օրհնութիւնը։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՁԽԹ

1 Ալէլուիա. Տէրոջը նոր երգ երգեցէք,
Ե՛ւ անոր օրհնութիւնը սուրբերու ժողովքին մէջ։
2 Իսրայէլ թող ուրախանայ իր Ստեղծողին վրայ.
Սիօնի որդիքը թող ցնծան իրենց Թագաւորին վրայ։
3 Թող անոր անունը պարով օրհնեն,
Թմբկով և քնարով սազմոս թող ըսեն անոր։
4 Վասն զի Տէրը իր ժողովրդեան կը հաճի,
Խոնարհները փրկութեամբ պիտի փառաւորէ։
5 Թող սուրբերն ուրախանան փառաք,
Ե՛ւ իրենց անկողիններուն մէջ ցնծան։
6 Աստուծոյ գովութիւնները անոնց բերնին մէջ թող ըլլան,
Եւ երկու բերնով սուր՝ անոնց ձեռաց մէջ,
7 Որ հեթանոսներէն վրէժ առնեն,
Ե՛ւ ժողովուրդները պատժեն,
8 Որ անոնց թագաւորները շղթաներով կապեն,
Եւ անոնց ազնուականները երկաթի կապանաք,
9 Որ դրուած դատաստանն անոնց վրայ կատարեն.
Այս է անոր բոլոր սուրբերուն փառքը։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. Ճ

1 Ալէլուիա. Օրհնեցէք զԱստուած անոր սրբարանին մէջ.
Օրհնեցէք զինք անոր զօրութեան հաստատութեան մէջ.
2 Օրհնեցէք զինք անոր հզօր գործերուն համար.
Օրհնեցէք զինք անոր մեծափառութեան համեմատ։

3 Օրհնեցէք զնա փոզի, ձայնով·
Օրհնեցէք զնա սաղմոսով և քնարով·
4 Օրհնեցէք զնա թմբկով և պարով·
Օրհնեցէք զնա լար ունեցող նուագարանիներով և ղմղմով·
5 Օրհնեցէք զնա միաձայնեալ ծնծղաներով·
Օրհնեցէք զնա ցնծութեան ծնծղաներով·
6 Ամէն շունչ ունեցող թող Տէրը օրհնէ, Ալէլուիա։

# ԳԻՐՔ ԱՌԱԿԱՅ

## ԳԼՈՒԽ Ա

1 Իսրայէլի թագաւորին Դաւթի որդւոյն Սողոմոնի առակներըն.
2 Իմաստութիւն և խրատ պիտանացու համար,
Հանճարոյ խօսքերն հասկընալու համար,
3 Իմաստութեան կրթութիւնն ընդունելու համար,
Ա՛յնինքն արդարութիւն, դատաստան և ուղղութիւն.
4 Մխիթարութիւն տալու համար
Ե՛ր երիտասարդներուն գիտութիւն և հանճար·
5 Իմաստունը թող լսէ և յոյժ իմաստութիւնն աւելցնէ,
Եւ հանճարեղ մարդը խորհրդութիւն առանայ,
6 Առակ և *նմանութիւն հասկընալու համար,
Ե՛ր իմաստուններուն խօսքերը և անոնց իրթեմաբանութիւններըն.
7 Իմաստութեան սկիզբը Տէրոջը երկիւղն է,
Բայց յիմարներն իմաստութիւն և կրթութիւն կ՚անարգեն.
8 Որդեակ իմ, քու հօրդ խրատը մտիկ րլէ,
Եւ քու մօրդ †օրէնքը մի մոռնար·
9 Քանզի անոնք քու գլուխդ չնորհաց պսակ,
Եւ քու պարանոցդ մանեակներ պիտի րլլան·
10 Որդեակ իմ, եթէ մեզապարներըն գըտնեն հանգիստ ուզեն գալել,
Դուն ՚ի՛նձ համաձայնութիւն մի տար·
11 եթէ ըսեն, Մեզի հետ եկուր,
Արեան համար դաւանամուտ րլլանք,
Անմեղ մարդուն համար առանց պատճառի ծածուկ տեղ սպասենք.
12 Ջանանք գերեզմանի պէս ողջ ողջ՝
Եւ գուբ իջնողներուն պէս ամբողջ կլանենք.
13 Ամէն տեսակ պատուական ստացուած գտնենք,
Եւ մեր տաներն աւարով լեցնենք·
14 Բու վիճակդ մեր մէջ ձգէ,
Ամէնքս մէկ քսակ ունենանք·
15 Որդեակ իմ, անոնց հետ ճամբայ մի կրթար,
Անոնց շաւիղն քու ոտքերդ հետ պահէ.
16 Քանզի անոնց ոտքերը չարութեան կը վազեն,
Եւ արիւն թափելու կ՚արագանան·
17 Ապ արդէ ամէն թռչնոյ աչքերուն առջեւ
Ի զուր վարժուբ կը լարուին·
18 Բայց անոնք իրենց արեան համար դաւան կը դնեն,
Ե՛ւ իրենց կենաց համար ծածուկ տեղ կ՚սպասեն,
19 Ամէն ագահի ճամբաներն այսպէս են.
Ա՛ն†հոգ-ընդ իրեն անձնասուրը կզղզնդերը կը մեռցնեն.
20 Իմաստութիւնը դուրսը բարբառ կ՚ապտակէ,
Ե՛ւ հրապարակներու մէջ իր ձայնը կուտայ·
21 Անիկա բազմութիւն եղած տեղերուն գլուխը
Ե՛ւ դրանց մուտքերուն մէջ կ՚ապազակէ,
Ե՛ւ քաղաքին մէջ իր խօսքերը կը խօսի և ՚ըսէ,
22 Ով անմիտներ, մինչեւ ե՞րբ անմտութիւնը պիտի սիրէք·
Մինչեւ ե՞րբ ծաղր ընողներըն ծաղր ընելով պիտի զուարճանան,
Եւ յիմարները գիտութիւն ատեն·
23 Իմ յանդիմանութեանս դարձէք·
Ահա իմ Հոգիս ձեր վրայ պիտի թափիմ,
Իմ խօսքերս ձեզի պիտի հասկըցնեմ·
24 Որովհետեւ ես կանչեցի, և դուք չմտիկ ըրիք·
Ձեռքս երկարեցուցի, և մարդ չընդունեցաւ·
25 Այլ իմ բոլոր խրատներս մերժեցիք,
Եւ իմ յանդիմանութիւնս չուզեցիք·
26 Ես ալ ձեր թշուառութեան վրայ պիտի ծիծաղիմ,
Եւ ձեր վախը հասնելուն ծաղր պիտի բնեմ·
27 Երբ ձեր վախը հեղեղի պէս հասնի,
Ձեր թշուառութիւնը մրրիկի պէս պատահի,
Ե՛ւ ձեր վրայ նեղութիւն և տառապանք գայ·
28 Անոնք ինծի պիտի աղաղակեն, և պատասխան պիտի չտամ·
Զիս պիտի փնտռեն և պիտի չգտնեն զանիկ·
29 Որովհետեւ գիտութիւնն ատեցին,
Եւ Տէրոջը վախը չընտրեցին,
30 Իմ խրատներս չուզեցին,
Ե՛ւ բոլոր յանդիմանութիւնս անարգեցին.
31 Ուրեմն անոնք իրենց ճամբուն օրպէն պտղատուին,
Եւ իրենց խորհուրդներէն պիտի յագենան·
32 Վասն զի անմիտներուն խոտորիլը զանոնք պիտի մեռցնէ,
Եւ յիմարներուն †անհոգութիւնը զանոնք պիտի կորսուանի,
33 Բայց ինծի մտիկ ընողն ապահովութեամբ պիտի բնակի,
Եւ չարեաց վախէն հանգարտ պիտի ըլլայ·

## ԳԼՈՒԽ Բ

1 Որդեակ իմ, եթէ խօսքերս ընդունիս,
Եւ պատուիրանքս քովդ պահես,
2 Ականջդ որ ակնդէտ իմաստութեան տաս,
Ե՛ւ սիրտդ հանճարոյ բանաս,
3 Եթէ իմաստութիւնը փնտռել կանչես,
Եւ ձայնդ հանճարոյ տպղես,
4 Եթէ դանիկա արծաթի պէս փնտռես,
Եւ ծածուկ գանձերու պէս խնդրես,
5 Անոնուն Տէրոջը վախը պիտի հասկընաս,
Եւ Աստուծոյ գիտութիւնը պիտի գըտնես.
6 Վասն զի Տէրը կու տայ իմաստութիւն.
Գիտութիւնն և հանճարը անոր բերնէն են,
7 Անիկա ուղղութեան համար գիմրկութիւն կը պահէ.
Անիկա ուղղութեամբ քալողներուն վահան է,
8 Որ արդարութեան ճամբաները պահպանէ,
Եւ իր սուրբերուն ճամբան պահէ.
9 Անոնուն արդարութիւն, դատաստան և ուղղութիւն
Ամէն տեսիլ ճամբայ, պիտի հասկընաս,
10 Երբ իմաստութիւնը քու սիրտդ մտնէ,
Եւ գիտութիւնն հոգւոյդ †սորժելի րլլայ,

*Կամ մեկնութիւնը
†Կամ իմաստութիւնը

11 Խոհեմութիւնն դրեալ պիտի պահէ,
Ե՛ հանճարն գրեալ պիտի պաշտպանէ,
12 Որ քեզ չար ճարպուռն ճամբէն,
Նենգաւորիւններ խօսող մարդէն ազա-
տէ.
13 Ահաւադիկ որ ուղիղ ճամբան թողած են,
Որ խաւարին ճամբաներուն մէջ քալեն.
14 Չարութիւն ընելով կ'ուրախանան,
Ե՛ չարին նենգաւորիւններով կը ցըն-
ծան.
15 Որոնց ճամբաները ծուռ են,
Ու անոնց ընթացքը խոտորնակ է.
16 Որ դաձ զքեզ ազատ օտար կնոջէ,
Շողոքորթութիւն խօսող օտար կնոջէ.
17 Այն որ իւր երիտասարդութեան բա-
րեկամը կը թողու,
Եւ իւր Աստուծոյն ուխտը կը մոռնայ.
18 Քանզի անոր տունը մահուան կը տա-
նի,
Եւ անոր շաւիղները ուրուականներու.
19 Անոր գացողները բնաւ չեն դառնար,
Եւ կեանց ճամբաներուն չեն հասներ.
20 Որպէս զի բարի մարդոց ճամբան եր-
թաս,
Եւ արդարներուն շաւիղները պահես.
21 Քանզի ուղիղները երկրի վրայ պիտի
բնակին,
Եւ կատարեալներն անոր մէջ պիտի
մնան.
22 Բայց ամբարիշտները երկրէ պիտի կոր-
սուին,
Եւ անօրէնները անկէ պիտի փրցուին։

ԳԼ. Գ

1 Որդեակ իմ, մի մոռնար իմ օրէնքս,
Այլ քու սիրտդ թող իմ պատուի-
րանները պահէ.
2 Քանզի քեզի երկայն օրեր և կենդա-
նութիւնս տուին
Եւ յաջողութիւն պիտի ածկացնեն։
3 Ողորմութիւն և ճշմարտութիւն զքեզ
չթողուն.
Զանոնք քու պարանոցդ վրայ կապէ,
Քու սրտիդ տախտակին վրայ գրէ զա-
նոնք.
4 Այսպէս Աստուծոյ և մարդոց առջև
Շնորհք և բարի հասկութիւն պիտի գըտ-
նես։
5 Բոլոր սրտովդ Տէրոջը ապաւինէ,
Ե՛ իմաստութեանդ մի վստահիր։
6 Բոլոր ճամբաներուդ մէջ զանիկա ճանչ-
ցիր,
Ե՛ անիկա քու շաւիղներդ պիտի ուղ-
ղէ։
7 Դուն քու աչքիդ առջև իմաստուն մի
ըլլար.
Տէրոջմէ վախցիր և չարութենէ նա
քաշուէ։
8 Այսիկա քու *չիվերուդ առողջութիւն,
Ե՛ քու ոսկրներուդ պատրաստութիւն
կ'ըլլայ։
9 Տէրոջը պատիւ ըրէ քու ստացուածք-
ներդ
Ե՛ քու բոլոր բերքերուդ երիտասարդ-
ներէն։
10 Ու քու չամիչանոցներդ առատու-
թեամբ պիտի լեցուին,
Ե՛ նճանոցներդ նոր գինիով պիտի
թաւիլ։
11 Որդեակ իմ, Տէրոջը խրատը մի ա-
նարգեր,
Ե՛ անոր յանդիմանութենէն մի թուլ-
նար.
12 Վասն զի Տէրը իւր սիրածը կը խրատէ;
Ինչպէս որ հայր մը իւր սիրական զա-
կին կ'ընէ։
13 Երանի այն մարդուն որ իմաստութիւն
կը գտնէ,
Ե՛ այն մարդուն որ հանճար կը ստա-
նայ։
14 Վասն զի անոր շահն արծաթէդ շահէն
աղէկ է,
Ե՛ անոր արդիւնքը մաքուր ոսկիէ։
15 Անիկա †գոհարներէ պատուական է.
Ե՛ քու բոլոր ցանկալի բաներդ չեն
կրնար անոր հետ սահրիլ։
16 Անոր աջ ձեռքին մէջ՝ օրերու երկայ-
նութիւն,
Ե՛ ձախ ձեռքին մէջ հարստութիւն և
փառք կան։

*Կամ պտրտիդ
†Կամ բուստերէն

17 Անոր ճամբաները հաճոյական ճամբա-
ներ են,
Ե՛ անոր բոլոր շաւիղները խաղաղու-
թիւն են։
18 Անիկա իրեն յարդնեղուն կենաց ծառ
է.
Ե՛ զինքը բռնողները երջանիկ կ'ըլլան։
19 Տէրը իմաստութեամբ հիմնեց զերկ-
իր,
Ե՛ հանճարով հաստատեց երկինքը։
20 Անոր գիտութեամբ անդունդները կը
պատռին,
Ե՛ ամպերը ցօղ կը կաթեցունեն։
21 Որդեակ իմ, մտնիք քու աչքերուդ
առջևէն չերթան.
Իմաստութիւնը և խոհեմութիւնը լաւ
պահէ.
22 Ե՛ քու հոգւոյդ կեանք՝
Ե՛ քու պարանոցդ *զարդ ըլլան։
23 Անտառն ճամբագ ապահովութեամբ
պիտի քալես,
Ե՛ ոտքդ պիտի չսայթի։
24 Երբ պառկիս՝ պիտի չվախնաս,
Ե՛ երբ քնանաս՝ քունդ անուշ պիտի
ըլլայ։
25 Պիտի չվախնաս յանկարծական վախէ,
Ոչ ալ ամբարիշտներուն †կորուստէն՝
երբ գայ։
26 Վասն զի յոյսդ Տէրը պիտի ըլլայ,
Ե՛ ոտքդ պիտի պահէ, որ չըլուծուի։
27 Որք ձեռքդ բարութիւն ընել կու
գայ,
‡Կարօտ եղողին մի արգելուր զայն։
28 Դրացւոդ բնաւ մի ըսեր, Դնա և դար-
ձեալ եկուր,
Կամ վաղը կու տամ, երբ փոխ կայ։
29 Դրացւոդդ դէմ հարութիւն մի մտա-
ծեր,
Մինչ անիկա վստահութեամբ քեզի
հետ կը բնակի։
30 Առանց պատճառի մարդու հետ մի վի-
ճիր
Երբ անիկա քեզի չարութիւն չըրած է։

*Եբր. Շնորհք
†Կամ աքլաւանքին
‡Եբր. Անոր ափերուն



31 Բռնաւոր մարդուն մի նախանձիր,
Ե՛ անոր ճամբաներէն բնաւ մի ընտրեր.
32 Վասն զի ծուռ մարդը Տէրոջը տռչև
պիղծ է.
Բայց Տէրոջը ընտանութիւնն արդա-
րոց հետ է։
33 Անէրևյթ մարդուն տան մէջ Տէրոջը
անէծքը կայ.
Բայց արդարներուն բնակարանն Անի-
կա կ'օրհնէ։
34 Արդարև Անիկա ծաղր ընդներները ծաղր
կ'ընէ,
Բայց խոնարհներուն շնորհք կու տայ։
35 Իմաստունները փառք պիտի ժառան-
գեն,
Բայց յիմարներուն բարձրանալն անար-
գանք պիտի ըլլայ։

ԳԼ. Դ

1 Որդեակ, տէր հօրը խրատը լսեցէք,
Ե՛ մտիկ ըրէք որ իմաստութիւնը ճանչ-
նաք։
2 Վասն զի ձեզի ազնիւ կիրթութիւն կու
տամ.
Իմ օրէնքս մի թողուք։
3 Քանզի ես իմ հօրս որդին էի,
Փափուկ և սիրելի իմ մօրս առջև։
4 Անիկա ինծի կը սորվեցնէր և կ'ըսէր,
Քու սիրտդ իմ խօսքերս թող բռնէ.
Իմ պատուիրանները պահէ և ապրէ։
5 Իմաստութիւն գտացիր, խոհեմութիւն
ձեռք բեր.
Մի մոռնար, և իմ բերնիս խօսքերէն
մի խոտորիր։
6 Զանիկա մի թողուր, և անիկա զքեզ
պիտի պահէ.
Զանիկա սիրէ, և անիկա զքեզ պիտի
պահպանէ։
7 Ահա՛ իմաստութիւնն է, իմաստութիւնն
ձեռք բեր
Ե՛ ամէն ստացած բաներուդ հետ խո-
հեմութիւն ձեռք բեր։
8 Զանիկա մեծցուր, և անիկա զքեզ պիտի
բարձրացնէ.
Եթէ զանիկա գրկես՝ զքեզ պիտի պա-
տուէ։

9 Անիկա քու գլխուդ շնորհաց պարդ պիտի տայ.
Քեզի վառաց պսակ պիտի պարգևէ։
10 Մարդիկ ըրէ, որդեակ իմ, և իմ խօսքերս ընդունէ.
Եւ քու կենացդ տարիները պիտի շատնան։
11 Քեզի իմաստութեան ճամբան մէջ ցուցի սորվեցուցի.
Ուղղութեան շաւիղներուն մէջ պարապցուցի զքեզ։
12 Որ քալելու ատենդ տրիդ քայլերը չնեղուին,
Եւ վազելու ատենդ չսայթաքիս։
13 Ամուր բռնէ խրատը՝ բնաւ մի թողուր,
Զանիկա պահէ, վասն զի քու կեանքդ անիկա է։
14 Ամբարիշտներուն ճամբան մի երթար,
Եւ չարերուն ճամբուն մէջ մի քալեր։
15 Անկէ զգուշացիր, անոր քովէն մի անցնիր,
Անկէ խոտորէ և անցիր։
16 Վասն զի անոնք մինչև որ չարութիւն չընեն՝ չեն քնանար.
Եւ եթէ չկործանեն՝ անոնց քունը կը փախչի։
17 Քանզի անոնք ամբարշտութեան հացը կ'ուտեն,
Եւ անիրաւութեան գինին կը խմեն։
18 Բայց արդարներուն ճամբան ծագող լուսոյ պէս է,
Որ երթալով կը լուսաւորի, մինչև որ կատարեալ օր ըլլայ։
19 Ամբարիշտներուն ճամբան խաւարի պէս է,
Եւ չեն գիտեր թէ ինչ բանով իրենց ոտքը պիտի սահի։
20 Որդեակ իմ, մտիկ ըրէ իմ խօսքերս,
Քու ականջներդ իմ խօսքերուս սուր։
21 Անոնք քու աչքերուդ առջևէն չերթան,
Զանոնք քու սրտիդ մէջ պահէ.
22 վասն զի գտնողք գտնողներուն՝ անոնք կեանք են,
Եւ անոնց բոլոր մարմնոյն՝ բժշկութիւն։
23 Ամէն զգուշութեամբ քու սիրտդ պահէ,
Քանզի կենաց *աղբիւրներն անկէ են։
24 Դուռ բերանը քենէ մէկդի ըրէ,
Եւ անիրաւ շրթունք քենէ հեռացուր։
25 Քու աչքերդ ուղիղ նային,
Եւ արտեւանունդդ չիաւակ դէպ առջևդ բլլան։
26 Ոտքերուդ շաւիղներն ուղղէ,
Եւ քու բոլոր ճամբաներդ հաստատուին։
27 Աջ կամ ձախ կողմը մի խոտորիր.
Ոտքդ չարութենէ դարձուր։

## Գլ. Ե

1 Որդեակ իմ, մտիկ ըրէ իմ իմաստութեանս,
Եւ քու ականջդ հանճարիս սուր,
2 Որ խոհեմութիւն պահես,
Եւ շրթունքդ գիտութիւն պահեն։
3 Վասն զի օտար կնոջ շրթունքէն խորխոճ մեղր կը կաթի,
Եւ անոր քիմքը կակուղ է քան զիւղ,
4 Բայց անոր վախճանն օշնդրի պէս դառն
Եւ երկայրի սրոյ պէս սրած է։
5 Անոր ոտքերը մահուան կ'իջնեն,
Եւ անոր քայլերը դժոխքը կը հասնին։
6 Անոր ճամբաները փոփոխական են, և չես կրնար ըսոնք գիտնալ,
Որ չըլլայ թէ կենաց ճամբան մոռնայ։
7 Եւ հիմա, ով որդիք, ինծի մտիկ ըրէք,
Եւ բնաւ մի խօսքերէն մի խոտորիք։
8 Այն կնոջմէն ճամբադ հեռացուր,
Եւ անոր տան դրան մի մտանար.
9 Գուցէ փառքդ ուրիշներուն
Եւ տարիներդ անողորմ մարդուս տան։
10 Գուցէ օտարները քու գօրութիւնէդ յագենան,
Եւ վաստակդ օտարներուն տունը մնայ.
11 Եւ վերջին ատենդ հառաչես,
Երբ մարմինդ և անդամներդ մաշին,
12 Եւ չըսես, Ես ինչպէս խրատն ատեցի,
Եւ սիրտս յանդիմանութիւնն անարգեց.

*ԵՔԷ. եւ քիր



13 Եւ ուսուցիչներուս խօսքը մտիկ չըրի,
ԵՒ ականջս դիս վարժարաններուն չսուր.
14 Ժողովքի և ժողովրդեան մէջ
Գրեթէ ամէն չարութեան հանդիպեցայ։
15 Դուն քու ջրհորէդ ջուր խմէ,
Եւ քու ջրհորիդ մէջ վազող ջուրէն։
16 Քու աղբիւրներդ դուրս տարածուին,
Հրապարակներու մէջ։
17 Անոնք միմակ քու կդ ըլլան,
Եւ ոչ թէ քու կդ և օտարներուն։
18 Քու աղբիւրդ օրհնեալ ըլլայ.
Եւ քու երիտասարդութեանդ կնոջ հետ ուրախ կեցիր։
19 Անկիա սիրելի եղնիկ ու՝
Եւ շնորհալի այծեմեան ու՝ ըլլայ.
Անէն ատեն անոր ծիծերն գոհ զքեզ յագեցնեն,
Եւ միշտ անոր սիրով գմայլիս։
20 Եւ ինչո՞, որդեակ իմ, դուն օտար կնոջ մը հերձ գմայլիս,
Եւ օտար կնոջ ծոցը գրկիս։
21 Վասն զի մարդուն ճամբաները Տէրոջը աչաց առջևն են,
Եւ անոր ամէն քայլերն ալ կը կշռէ։
22 Զարագործը իւր անօրէնութիւններէն պիտի բռնուի.
Եւ անիկա իւր մեղաց չաւանդներով պիտի բռնուի։
23 Անիկա սանձ չունի պիտի մեռնի,
Եւ իւր մեծ յիմարութենէն պիտի մոլորի։

## Գլ. Զ

1 Որդեակ իմ, եթէ բարեկամիդ համար երաշխաւոր եղար,
Կամ օտար մարդու համար ձեռքդ տուիր,
2 Բերնիդ խօսքերով որոգայթի բռնուիր,
Բերնիդ խօսքերով բռնուիր։
3 Որդեակ իմ, այսպէս ըրէ որ ազատուիս.
Որովհետև բարեկամիդ ձեռքը մտար,
Գնա բարեկամիդ խոնարհէ
Եւ զանիկա թախանձէ,
4 Աչքերուդ քուն
Եւ արտեւանունդդ նիրհ մի տար։
5 Ազատէ զքեզ ինչպէս այծեմեան որսորդէն ձեռքեն,
Կամ թռչունը հարսրսին ձեռքեն։
6 Ով ծոյլ, գնա առ մրջիւնն,
Անոր ճամբաները տես և խրատուն եղիր։
7 Վասն զի անիկա ըլլ՝ իշխան,
Ոստիկան կամ տիրոջ չունի,
8 Իւր կերակուրն ամառուընէ կը պատրաստէ,
Իւր ուտելիքը հնձած ատեն կը ժողվէ։
9 Ով ծոյլ, մինչև ե՞րբ կը պառկիս,
Քունէդ ե՞րբ պիտի արթննաս։
10 Քիչ մը քնանաս, քիչ մը նիրհես,
Եւ քիչ մը ձեռք ձեռքի վրայ դնես ննջելու համար։
11 Անառակն աղքատութիւնդ ճամբորդի պէս պիտի գայ,
Եւ կարօտութիւնդ ապառազինեալ մարդու պէս։
12 Անօրէն և չար մարդը
Դուռ բերնով կը շարժի.
13 Անիկա աչօք ակնարկութիւն կ'ընէ,
Ոտքը կը խօսի,
Եւ մատներովը բան կը սորվեցնէ.
14 Անոր սրտին մէջ ծուռութիւն կայ,
Միտա չարութիւն կը հնարէ՝ կռիւներ կը հանէ։
15 Ա՛յս պատճառաւ անոր կորուստն յանկարծ պիտի գայ.
Անկիա յանկարծ պիտի կտորուի, և անոր դարման պիտի չգտնուի։
16 Տէրը սա վեց բանէն կը զզուի,
Եւ անոր հոգւոյն առջև եօթը բան պիղծ է։
17 Ամբարտաւան աչք, ստախօս լեզու
Եւ անմեղ արիւն թափող ձեռք,
18 Չար խորհուրդներ հնարող սիրտ,
Չարութիւն ընելու համար չուտ վազող ոտք,
19 Սուտ խօսող անխրատ վկայ,
Եւ եղբարց մէջ կռիւներ ցանող մարդ։
20 Որդեակ իմ, հօրդ պատուիրանքը պահէ,

Եւ մերդ օրէնքը մի մերժեր։
21 Զանոնք միշտ սրտիդ վրայ կապէ,
Զանոնք պարանոցիդ կախէ։
22 Երբ կը քալես անոնք քեզի առաջնորդեն,
Երբ կը քնանաս զքեզ պահպանեն,
Եւ երբ կ'արթննաս քեզի հետ խօսակցին։
23 Քանի պատուիրանքը՝ ճրագ եւ օրէնքը լոյս է,
Եւ խրատուց յանդիմանութիւններըն կեանքի ճամբայ են.
24 Որ զքեզ զէշ կնոջմէ,
Օտար կնոջ չողոքորթող լեզուէն պահէ։
25 Սրտիդ մէջ անոր գեղեցկութիւնը մի ցանկար.
Եւ երբ արտեւանամբ չքնահ զքեզ։
26 Վասն զի պոռնիկ կնոջ պատճառաւ
Մարդ մինչեւ պատառ մը հացի է՞ջ կ'ըլլայ.
Եւ ընտրող առնականները պատառական հոգի կ'ուտեն։
27 Հնարք է որ մարդ իւր ծոցը կրակ դնէ,
Եւ հանդերձները չայրին։
28 Հնարք է որ մարդ կրակի կայծերու վրայ քալէ,
Եւ անոր ոտքը չայրին։
29 Այսպէս է իւր դրացւոյն կնոջը քով գացողը.
Ով որ անոր դպչի՝ անվեղ չըլլար։
30 Գողը երէկ անօթութեան համար և իւր փորը կրաւցընելու համար գողութիւն ընէ,
Զէն քամահրեր չեն։
31 Սակայն եթէ գտնուի՝ եօթնապատիկ կը հատուցանէ,
Իւր տան բոլոր ինչքը կուտայ։
32 Կնոջ հետ շնութիւն ընողին խելքը պակաս է.
Այս բանն ընողը իւր հոգին կը կորսընցունէ։
33 Վէրք և անարգանք կը գտնէ,
Եւ անոր նախատինքն անջնջելի է։
34 Քանզի նախանձը երկան կատաղութիւնն է,
Եւ անիկա վրէժխնդրութեան օրը չխնայեր։
35 Անիկա բնաւ փրկանքի մը չնայիր,
Կաշառքը ալ չտաղնապներես ընդունիլ։

## Գլուխ Ը

1 Որդեակ իմ, պահէ իմ խօսքերս,
Եւ պատուիրանքս քու քովդ ծածկէ։
2 Իմ պատուիրանքներս պահէ որ ապրիս,
Եւ օրէնքիս քու աչքերուդ բբին պէս նայէ։
3 Զանոնք մատներուդ վրայ կապէ,
Զանոնք սրտիդ տախտակին վրայ գրէ։
4 Իմաստութեան ըսէ, Դուն իմ քոյրս ես.
Եւ խոհեմութեան ծանօթ կանչէ,
5 Որ քեզ օտար կնոջմէ
Շողոքորթութեամբ խօսող օտար կնոջմէ պահեն։
6 Վասն զի ես պատուհանէն
Վանդակիս նայեցայ,
7 Եւ անմիտներուն մէջ տեսայ,
Երիտասարդներուն մէջ պակասամիտ պատանի մը գտայ,
8 Որ փողոցին մէջ այն կնոջ քով անցնելան ճամբէն կ'անցնէր,
Եւ անոր տան ճամբան բռնեց,
9 Երբ իրիկուն եղաւ, օրը մթագնեցաւ
Եւ գիշերուան մութը սկսաւ։
10 Եւ ահա անոր առջեւ կին մը ելաւ,
Անիկա պոռնիկի կերպարանք և նենգ գաղտնի սիրտ ունէր։
11 Անիկա ազազակող և անդդամ էր,
Եւ անոր ոտքերն անոր տան մէջ չէր կենար։
12 Երբեմն դուրսը, երբեմն հրապարակները,
Եւ ամէն անկիւնի քով դարանամուտ կ'ըլլար։
13 Բռնեց համբուրեց զնա,
Եւ լիրբ երեսով ըսաւ անոր,
14 Իմ քովս խաղաղութեան զոհեր կան.
Ես այսօր իմ ուխտերս կատարեցի։
15 Անոր համար ելայ քեզ գիմաւորել,
Քու երեսդ փնտռել, և գտայ զքեզ։
16 Անկողինս ծածկոցներով զարդարած եմ
Եգիպտոսի ծագկանկար բեհեզով.
17 Անկողնոցս մոյր պմուռս,
Հալած և կինամոն կանուխ եմ.
18 Եկուր միտքն առնուինք մինչեւ առտու,
Ճաշակենք իրարով զուարճանանք.
Եւ ցանկութիւններով զբօսնունք.
19 Վասն զի այրս տունը չէ,
Հեռու ճանապարհ գնաց,
20 Սահիկին քսակն իրեն հետ առաւ,
Եւ "լուսնի լրման" օրը տուն պիտի դառնայ։
21 Այսպէս իւր շատախօսութեամբ հրապուրեց զնա,
Եւ իւր շրթանց չողոքորթութեամբ քաշկռտեց զնա։
22 Եւ նա չիտակ կնոջը ետեւէն,
Ապանդանոց գացող ագռնաի պէս,
Պատժուելու ֆաշով կապուած յիմարի պէս, կ'երթայ,
23 Մինչեւ որ նետն անոր լեարդը ծակէ.
Ինչպէս որ թռչուն մը արտորալով գէպ ի ծուզակը կ'երթայ,
Եւ չգիտեր որ անիկա անոր հոգւոյն համար ըսբառաճ է։
24 Եւ հիմա, սէր որդիք, մտիկ ըրէք ինձ,
Եւ բերնիս խօսքերուն ականջ գրէք։
25 Քու սիրտդ անոր ճամբաներուն չխառնուի,
Եւ անոր շաւիղներուն մէջ չմոլորիս։
26 Վասն զի անիկա շատերը խոցոտեց և կործանեց,
Եւ անոր զոհ ապահոված մարդիկը զօրաւոր էին։
27 Անոր տունը գերեզման ճամբան է,
Անոնք մահուան ներսի սենեակները կ'իջնեն։

## Գլուխ Թ

1 Ահա իմաստութիւնը կը կանչէ,
Եւ խոհեմութիւնն իւր ձայնը կու տայ։
2 Անիկա բարձր տեղերու գլուխ, ճամբու վրայ
Եւ շաւիղներու մէջ կը կայնի։
3 Անիկա դուռներուն քով՝ քաղաքներուն բերանը
Եւ գռներուն մուտքը կ'ըսէ ազդարկելով,
4 Ով մարդիկ, ձեզի կը կանչեմ.
Եւ իմ ձայնս մարդոց որդիներուն է։
5 Ով ոչխարներ, խոհեմութիւն ուսումնցէք։
Ով անմիտներ, խելացող սիրտ ուզեցէք։
6 Լսեցէք, վասն զի ազնիւ բաներ պիտի խօսիմ
Եւ իմ շրթունքս պիտի բաներ ուղիղ բաներ խոսեցնեն։
7 Քանզի բերանս ճշմարտութիւն պիտի խօսի,
Բայց շրթունքս ամբարշտութիւնէ կը գզուի։
8 Բնբնիս բոլոր խօսքերն արդարութեամբ են,
Եւ անոնց մէջ խոտորնակ և ծուռ բան չկայ։
9 Անոնք ալ հասկցողին ուղիղ են,
Եւ գիտութիւն գանողներուն շիտակ են։
10 Արծաթս առէք, և ոչ թէ արծաթս,
Եւ ընտիր ոսկւոյ առչի գիտութիւնը աւելի։
11 Վասն զի իմաստութիւնը գոհարներէն պիտի կ'ըլլայ,
Եւ բոլոր ցանկալի բաները չեն կրնար անոր հաւասարիլ։
12 Ես իմաստութիւնս սրամտութեան հետ կը բնակիմ,
Եւ ճարտարութեանց գիտութիւնը կը գանեմ։
13 Տէրոջը վախը չարութիւնն ատելն է.
Ես հպարտութիւնը, ամբարտաւանութիւնը, չար ճամբան
Եւ նենգաւոր բերանը կ'ատեմ։
14 Խորհուրդը և խոհականութիւնն իմն են.
Իմ հանճար, և զօրութիւնն իմն է։
15 Թագաւորք ինծմով կը թագաւորեն,
Եւ նախարարք ինծմով արդարութեան կանոններ կը դնեն,
16 Ինծմով կ'իշխեն իշխանք,





Եւ ազնուականներ, ամէն արդար դատաւորներ։
17 Ես կը սիրեմ զանոնք որ զիս կը սիրեն,
Եւ զիս կանուխ գտնողները կը գտնեն։
18 Հարստութիւն և պատիւ իմ քովս են,
Հաստատ ինչ և արդարութիւն։
19 Իմ պտուղս աւելի քան ոսկի և քան զուարճալի ոսկի է,
Եւ իմ արդիւնքս ընտիր արծաթէ աւելի է։
20 Արդարութեան ճամբան կ'երթամ,
Եւ իրաւունքի շաւիղներուն մէջ,
21 Որ ինծի սիրողներուն ինչ ժառանգեցնեմ,
Եւ անոնց գանձերը լեցնեմ։
22 Տէրը զիս ունեցաւ իւր ճանապարհին սկիզբը,
Իւր գործերէն առաջ, հնուց հնագոյն։
23 Յաւիտենական ատենէ ի վեր օծուեցայ,
Սկիզբէն, երկրի ծագումէն առաջ։
24 Երբ անդունդներ չկային՝ ծնած էի,
Երբ ջուրերով լեցուն աղբիւրներ չկային։
25 Լերանց հաստատուելէն առաջ,
Բլուրներէն առաջ ծնած էի։
26 Երբ երկիրը, դաշտերը և աշխարհիս հողերուն սկիզբը չէր շինած։
27 Երբ երկինքը պատրաստեց՝ անոր հետ էի,
Երբ անդունդին վրայ շրջան քաշեց,
28 Երբ վերի ամպերը հաստատեց,
Երբ անդունդին աղբիւրները զօրացուց,
29 Երբ ծովուն սահմանը դրաւ,
Որ ջուրերը իւր հրամանէն չանցնին,
Երբ երկրի հիմերը դրաւ,
30 Ես անոր քով վարպետ մը էի,
Ես անոր ամէն օր ուրախութիւն էի,
Միշտ անոր առջեւ կը խաղայի,
31 Անոր աշխարհիս երեսին վրայ խաղայի,
Եւ մարդոց որդիներուն հետ ուրախութիւն ունէի։
32 Հիմա, որդեակ իմ, ինծի լսեցէք,
Քանզի երանի անոնց որ իմ ճամբաներս կը պահեն։
33 Խրատուն լսեցէք եւ իմաստուն եղէք,
Եւ զայն մի՛ մերժէք։
34 Երանի անոր որ ինծի լսէ,
Որ ամէն օր իմ դռներուս քով հսկէ,
Իմ դրանս սեմերուն քով սպասէ։
35 Քանզի ով որ զիս գտնէ՝ կեանք կը գտնէ,
Եւ Տէրոջմէ շնորհք կ'առնէ։
36 Բայց ով որ զիս մեղցնէ՝ իր անձին կ'անիրաւէ,
Ինծի ատողները մահը կը սիրեն։

## Գլուխ Թ

1 Իմաստութիւնը իր տունը շինեց,
Եօթը սիւներ քանդեց։
2 Իր անասունները մորթեց, գինին խառնեց,
Եւ իր սեղանն ալ պատրաստեց։
3 Իր աղախինները ղրկեց, կը կանչէ
Քաղաքին բարձր տեղերուն վրայ,
4 Ով որ տգէտ է՝ հոս թող դառնայ։
Եւ խելքի պակասին կ'ըսէ,
5 Եկէք, հացս կերէք
Եւ իմ խառնած գինիէս խմեցէք։
6 Տգիտութիւնը թողուցէք եւ կենաք,
Եւ հանճարի ճամբան ուղղեցէք։
7 Որ հանդիմանէ ծաղրողը՝ անարգանք կը գտնէ,
Եւ որ չարին կը յանդիմանէ՝ իր նախատինքը կ'ըլլայ։
8 Ծաղրողը մի՛ յանդիմաներ, որ չատիր քեզ,
Իմաստունը յանդիմանէ՝ եւ կը սիրէ քեզ։
9 Իմաստունին տուր՝ իմաստունցուի աւելի,
Արդարին սորվեցուր՝ առաջքը աւելի կ'առնէ։
10 Տէրոջ երկիւղը իմաստութեան սկիզբն է,
Եւ սրբոց գիտութիւնը հանճար է։
11 Վասն զի իմաստութիւնը քեզ պիտի բազմացնէ,
Եւ կեանքիդ տարիները պիտի շատցնէ։
12 Եթէ իմաստուն ես՝ քեզի համար իմաստուն ես,
Եւ եթէ ծաղրող ես՝ դուն միայն պիտի կրես։
13 Յիմարութիւնը կնոջ մը պէս աղմկոտ է,
Անմիտ է եւ բան մը չգիտեր։
14 Եւ իր տան դռանը քով,
Քաղաքին բարձր տեղերուն վրայ նստած է,
15 Որ իրենց ճամբան երթալով ուղիղ գացողները կանչէ,
16 Ով որ տգէտ է՝ հոս թող դառնայ։
Եւ խելքի պակասին կ'ըսէ,
17 Գողցած ջուրերը քաղցր են,
Եւ ծածուկ հացը համեղ է։
18 Բայց չգիտեր որ հոն մեռելներ կան,
Եւ անոր հրաւիրածները գերեզմանի խորերուն մէջ են։

## Գլուխ Ժ

1 Սողոմոնի առակները։
Իմաստուն որդի հայրը կ'ուրախցնէ,
Եւ յիմար որդի մօրը տրտունջ է։
2 Անիրաւութեան գանձերը օգուտ չեն բերեր,
Բայց արդարութիւնը մահէն կ'ազատէ։
3 Տէրը արդարին հոգին սովամահ չ'ընէր,
Եւ ամբարիշտներուն ախորժակը կը մերժէ։
4 Ծոյլ ձեռքով աղքատ կ'ըլլայ,
Եւ աշխատասէրին ձեռքը հարստացնէ։
5 Ամառը հաւաքող իմաստուն որդի է,
Հունձքի ատեն քնացող ամօթալի որդի է։
6 Օրհնութիւններ արդարին գլխուն վրայ են,
Եւ ամբարիշտներուն բերանը բռնութիւն կը ծածկէ։
7 Արդարին յիշատակը օրհնութիւն է,
Եւ ամբարիշտներուն անունը կը փտի։
8 Իմաստուն սիրտը պատուիրանները կ'առնէ,
Եւ ամբարտաւան շրթունքը կը կործանի։
9 Ով որ անարատ կ'երթայ՝ ապահով կ'երթայ,
Եւ ով որ իր ճամբաները կը խոտորցնէ՝ պիտի յայտնուի։
10 Ով որ աչքով կ'անիրաւէ՝ ցաւ կը պատճառէ,
Եւ ամբարտաւան շրթունքը կործանի։
11 Արդարին բերանը կեանքի աղբիւր է,
Եւ ամբարիշտներուն բերանը բռնութիւն կը ծածկէ։
12 Ատելութիւնը կռիւներ կը յարուցանէ,
Բայց սէրը բոլոր յանցանքները կը ծածկէ։
13 Խելացի մարդուն շրթունքներուն վրայ իմաստութիւն կը գտնուի,
Եւ անմիտին մէջքին գաւազան է։
14 Իմաստունները գիտութիւն կը պահեն,
Եւ յիմարին բերանը կործանումին մօտ է։
15 Հարուստին հարստութիւնը անոր ամրոցն է,
Աղքատներուն կործանումը անոնց աղքատութիւնն է։
16 Արդարին վաստակը կեանքի համար է,
Ամբարիշտին արդիւնքը մեղքի համար է։
17 Խրատուն պահողը կեանքի ճամբան է,
Բայց յանդիմանութիւնը մերժողը մոլորեցնող է։
18 Ատելութիւնը ծածկող շրթունքներ ստախօսներ են,
Եւ զրպարտութիւն տարածողը յիմար է։
19 Շատ խօսելուն մէջ մեղք չի պակսիր,
Բայց իր շրթունքները զսպողը խելացի է։
20 Արդարին լեզուն ընտիր արծաթ է,
Ամբարիշտներուն սիրտը քիչ արժէք ունի։
21 Արդարին շրթունքները շատերը կը կերակրեն,
Եւ յիմարները խելքի պակասութեան համար կը մեռնին։
22 Տէրոջ օրհնութիւնը կը հարստացնէ,
Եւ անոր հետ տրտունջ չի խառնուիր։
23 Յիմարին համար անառակութիւնը խաղ է,
Եւ իմաստուն մարդուն համար իմաստութիւնը։
24 Ամբարիշտին վախցածը անոր վրայ պիտի գայ,
Եւ արդարներուն ցանկացածը պիտի տրուի։
25 Ինչպէս որ մրրիկը կ'անցնի՝ ամբարիշտը չկայ,
Բայց արդարը յաւիտենական հիմ է։
26 Ինչպէս որ քացախը ատամներուն համար,
Եւ ծուխը աչքերուն համար է,
Նոյնպէս ծոյլը իրեն ղրկողներուն համար է։
27 Տէրոջ երկիւղը երկար կեանք կ'աւելցնէ,
Բայց ամբարիշտներուն տարիները պիտի պակսին։
28 Արդարներուն յոյսը ուրախութիւն է,
Եւ ամբարիշտներուն ակնկալութիւնը պիտի կորսուի։
29 Տէրոջ ճամբան անարատին ամրոց է,
Եւ չարագործներուն կործանում։
30 Արդարը յաւիտեան չի սասանիր,
Բայց ամբարիշտները երկրի վրայ չեն բնակիր։
31 Արդարին բերանը իմաստութիւն կը բղխեցնէ,
Եւ ծուռ լեզուն պիտի կտրուի։
32 Արդարին շրթունքները ընտրելի բան գիտեն,
Եւ ամբարիշտներուն բերանը ծուռ բան։

Աշնուականք և երկրիս բոլոր դատաւորները։
17 Եա կը սիրեմ զիս սիրողները,
և զիս կանուխ փնտռողները զիս կը գտանեն։
18 Իմ փառս հարստութիւն և պատիւ,
Ընծիր առաքինութիւն և արդարութիւն կայ։
19 Իմ պտուղս ոսկիէ և մաքուր ոսկիէ,
և արդիւնքս ընտիր արծաթէ ազնիւ է։
20 Եա արդարութեան ճամբուն մէջ՝
Իրաւանց շաւիղներուն մէջ կը քալեմ,
21 *Որ զիս սիրողներուն ստացուածք ժառանգեցնեմ.
և անոնց գանձերը պիտի լեցնեմ։
22 Տէրը իւր ճամբուն սկիզբն՝
Իւր վաղնիւ գործերէն առաջ զիս բուսացած էր։
23 Եա յաւիտենէ՝
Երկրիս սկիզբէն առաջ †օծուեցայ։
24 Անդունդները չեղած՝
Աւազոտ չափերուն աղբիւրները չեղած ես ծնած էի։
25 Լեռները չանեզաւորուած՝
Բլուրներէն առաջ ես ծնած էի։
26 Տակաւին երկիր և բաց տեղ անք
և աշխարհիս հողերուն ‡առաջինը չսակղծած,
27 Երբ երկինք կը պատրաստէր,
Ես անդնդոց երեսին վրայ կամար կը ձգէր, ես հոն էի։
28 Երբ վերի ամպերը կ'ուժովցուներ,
և անդնդոց աղբիւրները կը հաստատեր,
29 Երբ ծովուն կանոն կը դներ,
Որ ջուրերն իւր հրամանէն դուրս չելլեն,
և երբ երկրիս հիմերը կը ձգէր,
30 Անառնն ես անոր քով ճարտարապետ էի,
և ամէն օր անոր զուարճութիւնն էի,
և միշտ անոր առջեւը կ'ուրախանայի,
31 Ես աշխարհիս մէջ և անոր երկրին վրայ կ'ուրախանայի,
և իմ զուարճութիւնս մարդոց որդիներուն հետ էր։
32 Եւ հիմա, ով որդիք, լսեցէք ինծի բերէք։
Վասն զի իմ ճամբաներս պահողները երջանիկ կ'ըլլան։
33 Խրատ մտիկ ըրէք և խնաւանդ եղէք,
և մի մերժէք զայն։
34 Երանի այն մարդուն՝ որ լսէ ինծի մտիկ կ'ընէ,
Ամէն օր իմ դուռներուս քով կը հսկէ,
Ես իմ դրանդիներս կը դիտէ։
35 Գտնող զիս գտնողը կեանք կը գտնէ,
Եւ Տէրոջմէ շնորհք կը առնայ։
36 Բայց ինծի դէմ մեղանչողն իւր հոգւոյն անիրաւութիւն կ'ընէ.
Բոլոր զիս ատողները մահ կը սիրեն։

## Գլ. Թ.

1 Իմաստութիւնը իւր տունը շինեց,
Ես իւր եօթը սիւնները *կանգնեց։
2 Իւր անասուններըը մորթեց, իւր գինին †խառնեց
Ես իւր սեղանը պատրաստեց։
3 Աղախիններըը ղրկեց,
Ես քաղաքին բարձր տեղերուն վրայ կը կանչէ.
4 Ով որ պարզամիտ է՝ թող հոս գայ։
Ես պակասամիտ եղողին կ'ըսէ,
5 Նկէք իմ հացէս կերէք,
Ես ‡խառնած գինիէս խմեցէք։
6 Յիմարութիւնը թողուցէք՝ որ ապրիք,
Ես խոհեմութեան ճամբուն մէջ քալեցէք։
7 Ծաղր ընողը յանդիմանողն իրեն անարգանք՝
Ես ամբարիշտը խրատողն իրեն արատ կը վաստակի։
8 Ծաղր ընողը մի յանդիմաներ, գուցէ թշնամի ըլլայ քեզի։

*Եբր. տաչեց. †Կամ լեցուց
‡Կամ լեցուցած

*Կամ Զիս սիրողներուն ժառանգութիւն տալու կ'ուզեմ։
†Կամ հաստատուեցայ։
‡Կամ բարձր տեղերը



Իմաստուն յանդիմանէ, և պիտի սիրէ զքեզ։
9 Իմաստնոյն երբեք տուր, և աւելի իմաստուն պիտի ըլլայ։
Արդար մարդուն սորվեցուր, և էջ իմաստութիւնը պիտի աւելցնէ։
10 Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է,
Եւ *Աստուածայրոյն գիտութիւնը հանճար է։
11 Վասն զի քու օրերդ ինծմով պիտի շատնան,
Ես քեզի կեանց տարիներ պիտի աւելնան։
12 Եթէ իմաստուն ես, քեզի իմաստուն ես,
Ես եթէ ծաղր ընող ես, դուռ դոփէքը դուն միայն պիտի կրես։
13 Անզգամ կինն ոտպտակոտ կ'ըլլայ.
Անիկա անմիտ է և բան չգիտեր։
14 Ես քաղաքին բարձր տեղատեղը՝
Իւր տան դուռը աթոռի վրայ կը նըստի,
15 Որ իրենց ճամբան շտկոտ դացող
Անցուդարձները կանչէ,
16 Ով որ պարզամիտ է՝ թող հոս գայ.
Ես պակասամիտ եղողին կ'ըսէ,
17 Գողցուած ջուրերն անուշ են,
Ես գաղտուկ հացն համով կ'ըլլայ։
18 Բայց անիկա չգիտեր որ այն տեղը մեռելներ կան,
Ես անոր հրաւիրած մարդիկը գժոխոց անդունդներուն մէջ են։

## Գլ. Ժ.

### Սողոմոնին առակները։

1 Իմաստուն տղան իւր հայրը կ'ուրախացնէ.
Բայց անմիտ տղան իւր մօրը տրտունջ է։
2 Անօրէնութեան գանձերն օգուտ չեն ըներ.
Բայց արդարութիւնը մահուանէ կ'ազատէ։
3 Տէրը արդարին հոգին անօթի չթողուր,
Բայց ամբարիշտներուն ցանկութիւնը կը խափանէ։
4 Ծոյլ ձեռքով գործողն աղքատ կ'ըլլայ,
Բայց ժիր մարդոց ձեռքը հարստութիւն կը բերէ։
5 Ընտրամատը կը ժողվէ խոհեմ տղայ է.
Հնձոյ ատեն քնացողն ամօթով պատճառ եղող տղայ է։
6 Արդարին գլխուն վրայ օրհնութիւններ կան.
Բայց բռնութիւնն ամբարիշտներուն բերանը կը գոցէ։
7 Արդարոց յիշատակն օրհնեալ կ'ըլլայ.
Բայց ամբարիշտներուն անունը կը փտի։
8 Իմաստուն սիրտ ունեցողը պատուիրանները կը բռնէ.
Բայց յիմար շրթունք ունեցողը կը կործանի։
9 Կատարեալութեամբ քալողն ապահովութեամբ կը քալէ.
Բայց իւր ճամբաները ծռողը պիտի ճանչցուի։
10 Աչքով անարգութիւն բնողը նեղութիւն կու տայ.
Եւ յիմար շրթունք ունեցողը կը կործանի։
11 Արդարին բերանը կենաց աղբիւր է.
Բայց բռնութիւնն ամբարիշտներուն բերանը կը գոցէ։
12 Ատելութիւնը կռիւներ կը հանէ.
Բայց սէրը ամէն յանցանք կը ծածկէ։
13 Իմաստնոյն շրթանց վրայ իմաստութիւն կը գտնուի.
Բայց պակասամիտ եղողին թիկանց համար գաւազան պէտք է։
14 Իմաստուններըը գիտութիւն կը գանձեն,
Բայց յիմարին բերանը կործանման մօտ է։
15 Հարուստին ծոխութիւնն անոր ամուր քաղաքն է.
Բայց անանկներուն աղքատութիւնն անոնց կործանումն է։
16 Արդարին գործը կենաց համար է.
Իսկ ամբարշտին արդիւնքը մեղաց համար է։

17 Խրատ պահողը կենաց ճամբան մէջ է.
Բայց յանդիմանութիւնը մեր֊ժողը կը մոլորի.
18 Աւերութիւնը ծածկողը սատիսս շրթունք ունի,
Եւ բամբասանք հանողն անմիտ է.
19 Շատ խօսքերու մէջ չանցնիր պակաս չէ.
Բայց իր շրթունքը զգուշը խելացի է.
20 Արդարին լեզուն բնաւիր արծաթ է.
Ամբարիշտներուն սիրտը քիչ արժէք ունի.
21 Արդարին շրթունքը շատերուն առաջնորդութիւն կ'ընեն,
Բայց յիմարները խելքի պակասութենէ կը մեռնին.
22 Տէրոջը օրհնութիւնն է որ հարստութիւն կը տայ,
Եւ անոր հետ տրտմութիւն չիտանիր.
23 Զարմութիւն ընելը յիմարին զբաղումն է.
Բայց խոհեմ մարդուն իմաստութիւնը.
24 Չար մարդուն վախցած բանն անոր վրայ կու գայ.
Բայց արդարներուն փափաքը կը լեցցուի.
25 Մրրիկին անցնելուն պէս ամբարիշտը բնաջինջ կ'ըլլայ.
Բայց արդարն յաւիտենական հիմ ունի.
26 Ինչպէս քացախն ատամնոց, և ծուխն աչաց,
Այնպէս զինքը զրկողներուն այնպէս է.
27 Տէրոջը վախն օրեր կ'աւելցնէ.
Բայց ամբարիշտներուն տարիները պիտի կրճատին.
28 Արդարներուն յոյսն ուրախութիւն է.
Բայց ամբարիշտներուն սպասութիւնը պիտի կորսուի.
29 Տէրոջը ճամբան արդարին զօրութիւն է.
Բայց անօրէնութիւն գործողներուն կործանումն է.
30 Արդարը պիտի չսասանի յաւիտեան.
Բայց ամբարիշտը երկրի վրայ պիտի չընակին.
31 Արդարին բերանն իմաստութիւն կը բղխէ.
Բայց նենգաւոր լեզուն պիտի կորսուի.
32 Արդարին շրթունքը հաճոյ բանը գիտէն,
Բայց ամբարիշտներուն բերանը՝ դէպ֊ն նենգութիւն.

## ԳԼ. ԺԱ.

1 Նենգութեան կշռաքը՝ Տէրոջը ատելի պիտի է.
Բայց ուղիղ կշռաքարն անոր հաճոյ է.
2 Երբ հպարտութիւնը գայ, անարգութիւնն ալ կու գայ.
Բայց խոնարհութիւնը խոնարհներուն հետ է.
3 Ուղիղներուն ուղղութիւնն անոնց առաջնորդութիւն կ'ընէ.
Բայց անօրէններուն ծռութիւնը զանոնք բնաջինջ կ'ընէ.
4 Բարկութեան օրը հարստութիւնն օգուտ չընէր.
Բայց արդարութիւնը մահուանէ կ'ազատէ.
5 Կատարեալներուն արդարութիւնն առնոց ճամբան կ'ուղղէ.
Բայց անիրաւը իր անիրաւութեամբ կ'իյնայ.
6 Ուղիներուն արդարութիւնը զանոնք կ'ազատէ.
Բայց անօրէնները իրենց չարութեան մէջ կը բռնուին.
7 Երբ չար մարդը մեռնի, անոր ակնկալութիւնը կը կորսուի.
Եւ անօրէններուն յոյսը կը կորսուի.
8 Արդարը նեղութենէ կ'ազատի,
Եւ անոր տեղ ամբարիշտը կ'երթայ.
9 Կեղծաւորը բերնով իր դրացին կը կորնչացնէ.
Բայց արդարները գիտութեամբ կ'ազատին.
10 Արդարներուն յաջողութեան վրայ քաղաքը կ'ուրախանայ.
Եւ երբ չարերը կորսուին, ցնծութեան ձայն կը լսուի.
11 Ուղիներուն օրհնութեամբ քաղաքը կը բարձրանայ,

*Կամ ցանկութեան



Բայց ամբարիշտներուն բերնով կը կորնչանի.
12 Դրացիին խելք դրացին կ'արհամարհէ.
Բայց խոհեմ մարդը կը լռէ.
13 Բանսարկութեան պտրտողը գաղտնիքը կը յայտնէ.
Բայց հաւատարիմ հոգի ունեցողը բանը կը ծածկէ.
14 Ժողովուրդն առանց խոհականութեան կը կործանի.
Բայց խորհրդականներու բազմութեամբ փրկութիւնն կ'ըլլայ.
15 Օտարականին երաշխաւոր եղողն անշուշտ չարի կը հանդիպի.
Բայց երաշխաւորութիւնն ատողն ապահով է.
16 Շնորհալի կինը պատիւ կը սատնայ.
Եւ եղջեալները մարդիկ հարստութիւնը կը ստանան.
17 Ողորմած մարդն իր անձին բարիք կ'ընէ.
Բայց անողորմ մարդն իր մարմնոյն նեղութիւնն կու տայ.
18 Չար մարդը անսուտ գործ կը գործէ.
Բայց արդարութիւն ցանողն ապահով վարձ կ'ունենայ.
19 Ինչպէս որ արդարութիւնը կենաց կ'երթընթերցէ,
Նոյնպէս չարութեան հետեւողն իր մահուան կ'երթայ.
20 Ծուռ սիրտ ունեցողները Տէրոջը ատելի պիտի են.
Բայց ուղիղ ճամբայ քալողներն անոր հաճոյ են.
21 Անօրէնները †իրենց ձեռք ձեռքի տալով չեն անպատիժ պիտի մնար.
Բայց արդարներուն սերունդը պիտի ազատուի.
22 Գեղեցիկ կինը՝ որ խոհեմութիւն չունի,
Խոզին քիթը ոսկի օղակին կը նմանի.
23 Արդարներուն ցանկութիւնը միայն բարութիւն է.
Բայց անօրէններուն ակնկալութիւնը բարկութիւն պիտի ըլլայ.
24 Մարդ կայ որ իր ապրուստը ցրուելով կ'աւելցնէ,
Եւ մարդ կայ որ չափէ դուրս կը խնայէ, բայց կարօտութեան կը հասնի.
25 Բարերար անձը պիտի գիրնայ.
Եւ ան որ կ'առատէ պիտի առատանայ.
26 Ցորնը պահողին՝ ժողովուրդն անէծք կու տայ.
Բայց ծախողին դլխուն վրայ օրհնութիւն կ'ըլլայ.
27 Բարութեան համար փոյթ ունեցողը շնորհք կը ստանայ.
Բայց ով որ դէշութիւն կը փնտռէ, անիկա իրեն պիտի հանդիպի.
28 Իր հարստութեան վրայ յոյս դնողը պիտի իյնայ.
Բայց արդարները կանանչ տերեւի պէս պիտի ծաղկին.
29 Իր տանը նեղութիւն առաջն հով պիտի ժառանգէ.
Եւ յիմարն խնաստուն սիրտ ունեցողին ծառայ պիտի ըլլայ.
30 Արդարին պտուղը կենաց ծառ է.
Եւ հոգիներ վաստկողն խնաստուն է.
31 Ահա արդարը երկրի վրայ պատիժ կը կրէ.
Ո՛րքան մեռաց ամբարիշտ և մեղաւորը.

## ԳԼ. ԺԲ.

1 Որուն սիրտը դիտութիւնը կը սիրէ,
Եւ յանդիմանութիւն առողն անմիտ է.
2 Բարի մարդը Տէրոջմէ շնորհք կը ստանայ.
Բայց Աստուած նենգաւոր մարդը պիտի դատապարտէ.
3 Մարդ անիրաւութեամբ հաստատուիր չի նեղուիր.
Սակայն արդարներուն արմատը չշարժիր.
4 Անարգինի կինը իր երիտասարդ պսակ է.
Բայց նախատինք բերողն անոր ոսկորներուն մէջի փտութեան պէս է.

5 Արդարներուն մտածութիւնները իրաւունք են.
Բայց ամբարիշտներուն խորհուրդները նենգութիւն են.
6 Ամբարիշտներուն խօսքերն արեան համար դարան են.
Բայց ուղիղներուն բերանը զոնոնք կ'ազատէ.
7 Ամբարիշտները կը կործանին և բնաջինջ կ'ըլլան.
Բայց արդարներուն տունը կը հաստատուի.
8 Մարդ իւր խոհեմութեան չափով կը գովուի.
Բայց ծուռ սիրտ ունեցողը կ'անարգուի.
9 Աննշան մարդը որ ծառայ ունի,
Զինքը մեծցնողէ և հացի կարօտ եղողէն աղէկ է.
10 Արդարն իւր անասուններուն կենացը համար հոգ կը տանի.
Բայց ամբարիշտներուն ողիքն անողորմ են.
11 Իւր երկիրը գործողն հացով կը կշտանայ.
Բայց դատարկ մարդոց հետևողը պակասած է.
12 Ամբարիշտը չարերուն ուսերին կը փափաքի.
Բայց արդարներուն արմատը պտուղ կու տայ.
13 Զարը է՛ր չրթանց յանցանօք որոգայթը կ'ինկնայ.
Բայց արդարը նեղութենէ կ'ելլէ.
14 Մարդ իւր բերնին պտղէն բարեօք կը կշտանայ.
Եւ մարդուն ձեռաց հատուցումն անոր պիտի դառնայ.
15 Ցիմարին ճամբան իւր աչքերուն ուղիղ է.
Բայց խրատ մտիկ ընողն խնամուն է.
16 Ցիմարը նոյն օրը կը յայտնէ իւր բարկութիւնը.
Բայց անարգանքը ծածկողը խելացի է.
17 Ճշմարտութիւն խօսողն արդարութիւն կը յայտնէ.
Իսկ սուտ վկան՝ նենգութիւն.
18 Մարդկան կան որ իրենց չտախօսութեամբը սրոյ պէս կը խոցոտեն.
Բայց իմաստուններուն լեզուն բժշկութիւն է.
19 Ճշմարտախօս շրթունք միշտ հաստատ կը մնայ.
Բայց ստախօս լեզուն վայրկենական է.
20 Չարութիւն մտածողին սրտին մէջ նենգութիւն կ'ըլլայ.
Բայց խաղաղութեան համար խորհուրդ ընողներն ուրախութիւն կ'ունենան.
21 Արդարին բնաւ չարիք չհանդիպիր.
Բայց ամբարիշտները թշուառութեամբ կը լեցուին.
22 Սուտ շրթունքը Տէրոջը զզուելի է.
Բայց հաւատարմութիւն ընողներն անոր հաճոյ են.
23 Խոհեմ մարդը է՛ր գիտցածը կը ծածկէ.
Բայց յիմարներուն սիրտը յիմարութիւն կը հրապարակէ.
24 Ժիր մարդոց ձեռքը կ'իշխէ,
Եւ ծոյլը հարկաւոր կ'ըլլայ.
25 Մարդուն սրտին մէջ եղած վիշտը զանիկա կը ճնշէ.
Բայց աղէկ խօսքը կ'ուրախացուցանէ զանիկա.
26 Արդարը *իւր ընկերին ճամբայ կը ցուցունէ.
Բայց ամբարիշտներուն ճամբան զանոնք կը մոլորեցունէ.
27 Ծոյլը իւր որսը չեփեր.
Բայց ժիր մարդուն ստացուածքը պատուական է.
28 Արդարութեան ճամբուն մէջ կեանք կայ.
†Եւ անոր չուիղներուն ճամբուն մէջ մահ չկայ.

## Գլ. ԺԳ.

1 Իմաստուն որդին իւր հօրը խրատը լսէ՝ Բ՛ԸՆ Բ՛.

*Կամ իւր ընկերին գերազանց է.
†Կամ Բայց ըստ բուռն կախած ճամբան մահուան կը տանէ.



Բայց ծոյլը ընդդիմանութիւնը մտիկ չընէր.
2 Մարդ իւր բերնին պտղէն բարութիւն կ'ուտէ,
Բայց անօրէններուն հոգին բռնութիւն.
3 Իւր բերանը զսպողն իւր անձը կը պահէ.
Բայց շրթունքը լայն բացողը պիտի կորսուի.
4 Ծոյլին հոգին կը ցանկայ և բան չունի.
Բայց ժրաջան մարդոց հոգին կը գրնայ.
5 Սուտ խօսքն արդարին ատելի է.
Բայց ամբարիշտն ամօթալից և խայտառակ վարք ունի.
6 Արդարութիւնը կատարելութեամբ քալողները կը պահպանէ.
Բայց չարութիւնը մեղաւորները կը կործանէ.
7 Կան որ զիրենք հարուստ կը ցուցունեն և բան չունին,
Ե՛ւ կ՛ուրիշ զիրենք աղքատ կը ցուցունեն և չատ հարստութիւն ունին.
8 Մարդուն կենաց փրկանքն անոր հարստութիւնն է.
Բայց աղքատը յանդիմանութիւն չլսեր.
9 Արդարներուն լոյսը զուարթ պիտի լլլայ.
Բայց ամբարիշտներուն ճրագը պիտի մարի.
10 Արդարև հպարտութենէ կռիւ կը ծագի.
Բայց խրատ մտիկ ընողներուն քով իմաստութիւն կայ.
11 *Անիրաւութեամբ ձեռքէ՛ն հարստութիւնը պիտի պակսի.
Բայց է՛ր աշխատութեամբ ժողվողը պիտի չատցունէ.
12 Ուշացած յոյսը սիրտը կը հիւանդացունէ.
Բայց փափագին հանդիպած կենաց ծառ է.
13 Խօսքն արհամարհողը պիտի կորսուի.
Բայց պատուիրանքին վախցողը վարձ պիտի առնէ.
14 Իմաստնոյն օրէնքը կենաց աղբիւր է՝ Մահուան որոգայթներէն ազատ մնալու համար.
15 Բարի խոհեմութիւնը չնորհք կու տայ.
Բայց անօրէններուն ճամբան դժուարին է.
16 Ամէն խելացի իմաստութեամբ կը գործէ.
Բայց անմիտը յիմարութիւն կը տարածէ.
17 Չար պատգամաւորը թշուառութեան մէջ կ'իյնայ.
Բայց հաւատարիմ դեսպանը բժշկութիւն է.
18 Խրատ անարգողն աղքատութիւն և անարգութիւն կը կրէ.
Բայց յանդիմանութիւն մտիկ ընողը պատիւ կը գտնէ.
19 Փափագին կատարուիլը հոգւոյն անուշ է.
Եւ չարագործութենէ հեռ կենալը յիմարներուն զզուելի է.
20 Իմաստուններուն հետ քալողն իմաստուն կ'ըլլայ.
Բայց անմիտներուն հետ ընկերացողը չար կ'ըլլայ.
21 Մեղաւորներուն հետևէն ձախորդութիւն կ'երթայ.
Բայց արդարներուն բարիք կը հատուցուի.
22 Բարի մարդն իւր որդւոց որդիներուն ժառանգութիւն կը թողու.
Բայց մեղաւորին ստացուածքն արդարին համար կը պահուի.
23 Աղքատներուն մշակած երկրին մէջ չատ ուտելիք կայ.
Բայց է՛ր կայ որ անիրաւութենէ կը կորսուի.
24 Գաւազանին խնայողն իւր որդին կ'ատէ.
Բայց զանիկա սիրողը հանուխկէկ կը խրատէ.
25 Արդարը վճռէն իւր անձին կշտանալը կ'ուտէ.

*Կամ չարիքի կը հանդիպի.

*Եբր. Ունայնութենէ

Բայց ամբարիշտներուն փորը կարօտու-
թիւն պիտի քաշէ։

ԳԼ. ԺԲ

1 Ի՛մաստուն կանայք իրենց տունը կը
շինեն.
Բայց յիմար կինը զանիկա իր ձեռ-
քով կը վհցուներ։
2 Իր ուղղութեան մէջ քալողը Տէրոջմէ
կը վախնայ.
Բայց ծուռ ճամբայ ունեցողը զանիկա
կ'անարգէ։
3 Ցիմարին բերանը հպարտութեան գա-
ւազան կայ.
Բայց իմաստուններուն շրթունքը զա-
նոնք կը պահեն։
4 Ուր որ արջառ չկայ, մսուրը մաքուր
կը մնայ.
Իսկ արդեանց առատութիւնը եզին զո-
րութիւննէն առաջ կու գայ։
5 Ճշմարտութեան վկան սուտ չխօսիր.
Բայց անիրաւ վկան սուտութիւններ *կը
թափէ բերանէն։
6 Ծաղր ընողն իմաստութիւն կը փնըռ-
ռէ և †չգտներ.
Բայց իմաստուններուն համար գիտու-
թիւնը դիւրին է։
7 Ցիմար մարդէն հեռացիր,
Երբ կ'իմանաս որ իմաստուն շրթունք
չունի։
8 Խելացի մարդուն իմաստութիւնը իր
ճամբան հասկընալն է.
Բայց յիմարներուն անմտութիւնը նենգ-
ութիւն է։
9 Ցիմարները յանցանքը ծաղր կ'ընեն.
Բայց ուղիներուն մէջ ներողամտու-
թիւն կայ։
10 Մարդոյ սիրտն անոր հոգւոյն ցաւը
կը ճանչնայ.
Եւ անոր ուրախութեան ուրիշը մաս-
նակից չըլլար։
11 Ամբարիշտներուն տունը պիտի կործա-
նի.
Բայց ուղիղներուն վրանը պիտի ծաղկի։
12 Ճամբայ կայ որ մարդուն ուղիղ կ'ե-
րևնայ,
Բայց անոր վախճանը մահուան ճամբա-
ներն է։
13 Ցիծագելու առեն ալ հարբուհու սիրտը
արտութիւն կը զգայ,
Եւ ուրախութեան վախճանը սուգ կըլ-
լայ։
14 Ապականած սիրտը իր ճամբաներէն
Եւ բարի մարդն ինքզինքէն պիտի հշա-
նայ։
15 Միամիտ մարդն ամէն խօսքի կը հա-
ւատայ.
Բայց խելացին իր քայլերը կը քննէ։
16 Իմաստունը կը վախնայ և չարութենէ
կը փախչի։
Բայց անմիտը կը հպարտանայ և յանձ-
նապաստան կ'ըլլայ։
17 Շուտ բարկացողը յիմարութիւն կ'ընէ.
Եւ նենգամիտ մարդն ատելի է։
18 Անխոհեմներն անմտութիւն կը ժա-
ռանգեն.
Բայց խելացիները գիտութեամբ կը
պսակուին։
19 Չարերը բարիներուն առջև կը խոնար-
հին,
Եւ ամբարիշտներն՝ արդարներուն դը-
րան քով։
20 Աղքատը մինչև անգամ իր ընկերին
ատելի է.
Բայց հարուստին բարեկամները շատ
են։
21 Իր ընկերն անարգողը մեղք կը գործէ.
Բայց ազքատին ողորմութիւն ընողը
երանելի կ'ըլլայ։
22 Անշա չարութիւն մտածողները կը մո-
լորին.
Բայց բարութիւն մտածողներուն ողոր-
մութիւն և ճշմարտութիւն կ'ըլ-
լայ։
23 Ամէն աշխատութեան մէջ օգուտ մը կայ.
Բայց *գատարկաբանութիւնը՝ միայն
կարօտութեան կը տանի մարդը։
24 Իմաստուններուն հարստութիւնն ա-
նոնց պսակն է.

*ԵԲԲ. կը վրէ. †ԵԲԲ. չկայ.

*ԵԲԲ. շրթունքներուն խօսքը՝



Բայց անմիտներուն *յարձրութիւնը
յիմարութիւն է։
25 Հաւատարիմ վկան հոգիները կ'ապահո-
վէ.
Բայց խարդախը սուտութիւններ կու
տայ։
26 Տէրոջը երկիւղին մէջ հաստատ վստա-
հութիւն կայ.
Եւ անոր որդիքն ապաւէն պիտի ու-
նենան։
27 Տէրոջը երկիւղը կենաց աղբիւր է՝
Մահուան որոգայթներէն զգուշա ձեա-
լու համար։
28 Ժողովուրդին բազմութիւնը թագաւո-
րին պատիւն է.
Բայց ժողովուրդին նուազութիւնը իշ-
խանին կործանումն է։
29 Երկայնամիտ մարդը շատ խոհեմ է.
Իսկ կարճամիտը շատ յիմարութիւն
կ'ընէ։
30 †Հանգարտ սիրտը մարմնոյն կեանքը է.
Բայց նախանձը ոսկրներուն փտութիւն
է։
31 Աղքատին զրկանք ընողն անոր Սեղե-
ծիչը կ'անարգէ.
Բայց ողորմածին ողորմութիւն ընողը զև-
նիկա կը պատուէ։
32 Ամբարիշտը իր չարութեան համար կը
վռնտուի.
Բայց արդարը իր մահուան առենն
ապաւէն կ'ունենայ։
33 Խելացի մարդուն սրտին մէջ իմաստու-
թիւն կը հանգչի.
Իսկ յիմարներուն ներսը եղածը կը
ճանչցուի։
34 Արդարութիւնն ազգը կը բարձրացնէ.
Բայց մեղքը ժողովուրդներուն անար-
գանք է։
35 Թագաւորի ծառային՝ թագաւորը կը հաճի.
Բայց նախատինքը բերող ծառային կը
բարկանայ։

ԳԼ. ԺԳ

1 Ա՛ղէմ պատահանը սրամտութիւնը
կ'ինչեցունէ.

*Կամ յիմարութիւնը †Կամ Ոգի

Բայց խիստ խօսքը բարկութիւնը կը
գրգռէ։
2 Իմաստուններուն լեզուն գիտութիւնը
հաճոյ կ'ընծայէ.
Բայց անմիտներուն բերանը յիմարու-
թիւն կը բղխէ։
3 Տէրոջը աչքերն ամէն տեղ
Չարերը և բարիները կը դիտեն։
4 *Թաղաղասէր լեզուն կենաց ծառ է.
Բայց խոտորաբեր խօսքը սիրտը կ'ապա-
կէ։
5 Ցիմարը իր հօրը խրատը կ'անարգէ.
Բայց յանդիմանութիւն հնազանդողը
խելացի կ'ըլլայ։
6 Արդարին առանը մեծ գանձ կայ.
Բայց ամբարշտին եկամուտներուն մէջ
խռովութիւն կայ։
7 Իմաստուններուն շրթունքը գիտու-
թիւն կը տարածեն.
Բայց յիմարներուն սիրտն †այնպէս չէ։
8 Ամբարիշտներուն զոհը Տէրոջը ատելի
պիղծ է.
Բայց ուղիղներուն ազօթքն անոր ըն-
դունելի է։
9 Տէրը ամբարշտին ճամբէն կը ղզուի.
Բայց արդարութեան հետևողը կը սիրէ։
10 Ո՛ղիղ ճամբան մերժողին՝ ‡դէշ պատիժ
կ'ըլլայ.
Եւ յանդիմանութիւնն ատողը պիտի
մեռնի։
11 Դժոխքը և կորուստը Տէրոջը առջևն
են.
Որչափ աւելի մարդոց սրտերներուն ձեր-
տերը։
12 Ծաղր ընողը իր յանդիմանիչը չսիրեր,
Եւ իմաստուններուն քով չերթար։
13 Ուրախ սիրտը երեսը կը զուարթացունէ.
Բայց ցաւին տրտմութենէն հոգին կը
ճնշուի։
14 Հանճարեղ սիրտը գիտութիւն կը փընտ-
րտէ.
Բայց անմիտներուն բերանը յիմարու-
թեամբ կը անանի։
15 Վշտալից մարդուն ամէն օրերը գէշ են.

*Կամ Բժշկութիւն առատ
†Կամ հաստատ
‡Կամ խրատը գէշ կը թողու։

Բայց ուրախ սիրտը մշանջենաւոր կոչունքի մէջ է։
16 Աւելի ադեկ է քիչ բան Տէրոջը երկիւղիւ, քան մեծ գանձ խռովութեամբ։
17 Աւելի ադեկ է սէր եղած տեղը խոտեղէն կերակուր, քան գէր զուարակ՝ ատելութեամբ։
18 Բարկասիրտ մարդը վէճ կը հանէ. Բայց երկայնամիտը կռիւը կը դադրեցունէ։
19 Ծոյլին ճամբան փշերէն ցանկի պէս է. Բայց ուղիղներուն ճամբան բանուկ է։
20 Իմաստուն որդին իւր հայրը կ'ուրախացունէ. Բայց անմիտ մարդը իւր մայրը կ'անարգէ։
21 Պակասամիտ մարդուն՝ յիմարութիւնը զբօսանք է. Բայց խմաստուն մարդը կ'ուղէ ԵՒ ընթացքը։
22 Առանց խորհրդոյ՝ դիտաւորութիւնք կը ցրուին. Բայց խորհրդականներուն շատութեամբ կը հաստատուին։
23 Մարդ իւր բերնին պատասխանով կ'ուրախանայ. ԵՒ առիթով բուսած խօսքը որչափ գեղեցիկ է։
24 Կենաց ճամբան խոհեմ մարդը ղէպ՚ի վեր կ՚երթայ, Որ վարի դժոխքէն հեռանայ։
25 Տէրը հպարտներուն տունը կը կործանէ, Բայց այրուոյն սահմանը կը հաստատէ։
26 Չար մարդուն խորհուրդները Տէրոջը աւելի պիղծ են. Բայց պարկեշտներուն խօսքերն հաճելի են։
27 Ագահութեան անձնատուր եղողը իւր տունը խռովութեան մէջ կը ձգէ. Բայց կաշառքէ ղզուողը պիտի ապրի։
28 Արդարին սիրտը ատենը պատասխանը կը մտածէ. Բայց ամբարիշտներուն բերանը չարիք կը բղխէ։
29 Տէրը ամբարիշտներէն հեռու է, Բայց արդարներուն աղօթքը կը լսէ։
30 Աչաց լոյսը սիրտը կ'ուրախացունէ. Բարի լուրը ոսկրները կը գիրցունէ։
31 կենաց յանդիմանութիւնը լսող ականջը իմաստուններուն մէջ կը բնակի։
32 Խրատ մերժողն իւր հոգին կ'անարգէ. Բայց յանդիմանութիւն մտիկ ընողը խելք կը վաստկի։
33 Տէրոջը վախը իմաստութեան խրատն է, Եւ փառաց առջևէն խոնարհութիւնը կ՚երթայ։

Գլ. ԺԶ

1 Սրտին ուղամտութիւնները մարդուն կը ՎերաբերԻ. Բայց լեզուին պատասխանը Տէրոջմէն է։
2 Մարդուն ամէն ճամբաներն իրեն մաքուր կ'երևան. Բայց Տէրը հոգիները կը կշռէ։
3 Քու գործերդ Տէրոջը յանձնէ, Եւ խորհուրդներդ պիտի հաստատուին։
4 Տէրը ամէն բան "իր նպատակին" համար ստեղծեց, Եւ ըմբերշխան ալ՝ ձախորդ օրուան համար։
5 Ամէն սրտով հպարտները Տէրոջը առջև պիղծ են, Ու թէև ձեռք ձեռքի տալով՝ անպատիժ պիտի չմնան։
6 Ողորմութեամբ և ճշմարտութեամբ անօրէնութիւնը կը քաւուի, Ու Տէրոջը երկիւղիւ չարութենէ կը հեռանայ։
7 Երբ Տէրը մարդուն ճամբաներուն կը հաճի, Անոր թշնամիներն անգամ կը հաշտեցունէ անոր հետ։
8 Աղեկ է քիչ բան արդարութեամբ, քան մեծ եկամուտներ՝ անիրաւութեամբ։
9 Մարդուն սիրտը իւր ճամբան կը հնարէ. Բայց անոր քայլերը Տէրը կ'ուղղէ։
10 Թագաւորին շրթանց վրայ աստուածային ազդեցութիւն կայ.

•կամ իրեն †կամ ազգէ ազգ



Անոր բերանը դատաստանի մէջ չսխալիր։
11 Ուղիղ կշռոյթը և կշիռքը Տէրոջն է. Մասագին ամէն կէս քարերն անոր գործն են։
12 Չարագործութիւնը թագաւորներուն զզուելի է. Վասն զի աթոռն արդարութեամբ կը հաստատուի։
13 Արդար շրթունք թագաւորներուն հաճելի են, Եւ ուղիղ խօսողը կը սիրեն։
14 Թագաւորին բարկութիւնը մահաբեր դեսպաններու պէս է. Բայց խմաստուն մարդը զանիկա կ'ինչեցունէ։
15 Թագաւորին երեսին լոյսը կեանք է, Եւ անոր հաճութիւնը վերջին անձրևին ամպին պէս է։
16 Իմաստութիւն առնելը ոսկիէ որչափ ազեկ է, Եւ հանճար վաստկիլն արծաթէ աւելի ընտիր է։
17 Ուղիղներուն մեծ ճամբան չարութենէ հրաժարիլն է. Իւր ճամբան զգուշութիւն ընողը իւր հոգին կը պահէ։
18 Կործանումն առջևէն հպարտութիւն, Ու կործանման առջևէն ամբարտաւանութիւն։
19 Խոնարհներուն հետ խոնարհ ըլլալ Հպարտներուն հետ աւար բաժնելէն ազեկ է։
20 Գործի մէջ խելացութեամբ վարուողը բարիք կը գտնէ. Ու Տէրոջը ապաւինողն երանելի է։
21 Իմաստուն սիրտ ունեցողը խոհեմ կ'րսուի. Ու շրթանց քաղցրութիւնը գիտութիւն կ'աւելցունէ։
22 Խոհեմութիւնը՝ ունեցողին կենաց աղբիւր է. Բայց յիմարներուն խրատն յիմարութիւն է։
23 Իմաստնոյն սիրտն անոր բերնին խմաստութիւն կու տայ, Ու իւր շրթանց գիտութիւն կ'աւելցնէ։
24 Ախորժելուչ խօսքերը մեղրի խորիսխն ալեւ են, Հոգւոյն քաղցր և ոսկրներուն բժշկութիւն են։
25 Ճամբայ կայ որ մարդուն ուղիղ կ'երևայ, Բայց անոր վախճանը մահուան ճամբաներն է։
26 Աշխատաւոր անձն իրեն համար կ'աշխատի. Քանզի անոր բերանը կը պահանջէ անիկա։
27 Անօրէնն մարդը չարութիւն կը փորէ, Եւ անոր շրթանց վրայ իբր թէ այրող կրակ կայ։
28 Ծուռ մարդը կռիւ կը հանէ, Եւ քսուն մտերիմ բարեկամները կը զատէ։
29 Անօրէնն մարդը իւր ընկերը կը խաբէ, Եւ գէշ ճամբաներ կը տանի զնա։
30 Նենգութիւններ մտածելու համար աչքը կը գոցէ, Եւ չրթունքը խածնելով չարութիւնը կը կատարէ։
31 Մազի ասպետութիւնը փառաց պսակ է, Եթէ անիկա արդարութեան ճամբուն մէջ գտնուի։
32 Երկայնամիտ մարդը հզոր մարդէն աղեկ է, Եւ իր ոգին զսպողը՝ քաղաք առնողէն։
33 Վիճակը ծոցը կը ձգուի, Բայց անոր ամէն կարգադրութիւնը Տէրոջմէ է։

Գլ. ԺԷ

1 Աղեկ է պատառ մը չոր հաց խաղաղութեամբ, Քան թէ տուն մը լեցուն զոհեր՝ կռուռուալ։
2 Խոհեմ ծառան նախատինք բերող որդւոյն կ'իշխէ, Եւ եղբարց մէջ ժառանգութեան բաժին կ'առնէ։
3 Արծաթի համար հալոց՝ և ոսկւոյ հալման քուրայ կայ.

Բայց սիրտերը փորձողը Տէրն է։
4 Զար մարդն անիրաւին չրթանցը մտիկ կ'ընէ,
Եւ սուտասօսը լեզուին ա-
կանջ կը դնէ։
5 Աղքատը ծաղր ընողն անոր Յաւիժիչը կ'անարգէ,
Եւ ձախորդութեան վրայ ուրախացողն անպատիժ պիտի չմնայ։
6 Որդւոց որդիները ծերերուն պսակ են,
Եւ որդւոց պարծանքն անոնց հայրերն են։
7 Ընտիր *խօսքն անզգամին չվայլեր։
Որչափ աւելի սուտ խօսք ունէքն՝ ազնուականին։
8 Պարգեւը՝ †գոյծածողին առջեւ պատուական գոհարի պէս է,
Ուր որ դառնայ՝ յաջողութիւն կը գըտնէ։
9 Ծանցանքը ծածկողը բարեկամութիւն կը փրնտռէ.
Բայց գանկիա պատմողը մտերիմ բարեկամները կը զատէ։
10 Խոհեմ մարդուն աւելի կ'ազդէ դէ՛ յանդիմանութիւնը,
Քան թէ հարիւր ղ—ափ հարուած՝ յիմարին։
11 Զար մարդը միշտ ապստամբութիւն կը փնտռէ,
Եւ անոր խիստ պատգամաւոր կը ղըրկուի։
12 Լաւ է ձագերը գողցուած արջուն առնել,
Քան յիմարի մը՝ անոր յիմարութեան առնելն։
13 Ով որ բարեաց փոխարէն չարիք կը հատուցանէ,
Չարիք անոր տունէն պահան պիտի չըլլայ։
14 Կռուոց սկզբնաւորութիւնը ջրոյ արձակման կը նմանի.
Ուրեմն վէճը չրձնկած՝ հոս քաշուէ։
15 Ամբարիշտ արդարացնողը և արդարն ամբարիշտ հանողը՝

*ՆԲԲ. չրթունքն
†Կամ ընդունողին ՆԲԲ. իւր սիրտը

երկուքն ալ Տէրոջը առջեւ պիղծ են։
16 Իմաստութիւնը ծախու առնելու գինն
Հինչ օգուտ ունի յիմարին ձեռքը,
Քանզի *խելք չունի։
17 Բարեկամն ամէն առեն կը սիրէ,
Եւ եղբայրը նեղութեան օրուընի համար ծնած է։
18 Պակասամիտ մարդը ձեռքը կու տայ,
Եւ իր բարեկամին †համար երաշխաւոր կ'ըլլայ։
19 Կռիւ սիրողը յանցանք կը սիրէ.
Իր դուռը բարձրացնողն էր կործանումը կը փնտռէ։
20 Ծուռ սիրտ ունեցողը բարութիւն չըգտներ,
Եւ նենգաւոր լեզուով մարդը չարեաց մէջ կ'իյնայ։
21 Յիմարը ծնանողը տրտմութիւն կը կըրէ,
Եւ անզգամին հայրը չուրախանար։
22 Ուրախ սիրտը դեղի պէս օգտակար է.
Բայց կատած սիրտը ոսկրները կը չորցունէ։
23 Անօրէն մարդն ա—բկէն ծոցէն կաշառք կ'առնէ,
Որ արդարութեան ճամբաները ծռէ։
24 Իմաստութիւնը խոհեմ մարդուն առջեւն է.
Բայց յիմարին աչքը երկիրին ծայրերն են։
25 Յիմար տղան իւր հօրը տրտմութիւն
Եւ զինքը ծնանողին դառնութիւն կ'ըլլայ։
26 Ազէկ չէ արդարէն տուգանք առնել,
‡Ո՛չ ալ իշխանները ծեծել՝ իրաւունք ընդդեմ հանարիս։
27 Իւր խօսքերը զսպողն խնայտառն է,
Եւ երկայնամիտ մարդն հանճարեղ է։
28 Յիմարն անգամ երէ լուռ կենայ, իմաստուն՝
Ե՛ւ իր շրթունքը գոցողը հանճարեղ կը համարուի։

*Կամ փափաք †ՆԲԲ. առջևը
‡Կամ Ո՛չ ալ իշխանները պատիժ դնել ծեծել իրաւունքին աւելի



ԳԼ. ԺԲ.

1 Ինքնահաճոյ մարդը էջ ցանկութիւնը կը փնտռէ
Եւ †ամէն խորհրդոյ դէմ կը կենայ։"
2 Յիմարը խոհեմութենէ չսիրուիր,
Այլ իւր սրտին մէջ եղածը յայտնել կ'ուզէ։
3 Երբ ամբարիշտը գայ, անարգութիւն ալ կու գայ,
Եւ նախատանաց հետ խայտառակութիւն։
4 Մարդուն բերնին խօսքերը խորունկ ջուրեր են.
Իմաստութեան աղբիւրն առատաբուղխ գետ է։
5 Դատաստանի մէջ արդարը աւետ հանելու համար
Ամբարիշտին աչառութիւն ընել ազէկ չէ։
6 Անմիտ մարդուն շրթունքը կռուոյ մէջ կը մտնեն,
Եւ անոր բերանը ծեծեր կը կանչէ։
7 Անմիտ մարդուն բերանն անոր կործանումն է,
Եւ անոր շրթունքն անոր անձին որոգայթ է։
8 Բաս մարդուն խօսքերը քաղցր պատառներու պէս են,
Եւ անոնք մինչև փորին շտեմարաններըը կ'իյնանեն։
9 Ան որ իւր գործին մէջ թոյլ է,
Շռայլ մարդուն եղբայրն է։
10 Տէրոջը անունն ամուր աշտարակ է.
Արդարն անոր կը դիմէ, և ապահով ապաստանարան կ'ունենայ։
11 Հարուստին առագաստը անոր ամուր քաղաքն է,
Եւ անոր երեւակայութեան մէջ բարձր բերդի պէս է։
12 Կատարածէն առաջ մարդուն սիրտը կը հպարտանայ.
Բայց փառաց առջեւն խոնարհութիւն կ'երթայ։
13 Ով որ բան մը չլսած պատասխան կու տայ,
Ծիծաղութիւն և նախատինք է անոր։
14 Մարդուն հոգին իր հիւանդութեանը կը համբերէ.
Բայց վիրաւորուած հոգին ո՞վ կրնայ *մխիթարել։
15 Խոհեմին սիրտը գիտութիւն կը վաստկի.
Եւ իմաստուններուն ականջը գիտութիւն կը փնտռէ։
16 Մարդուն ընծան անոր ձամբայ կը բանայ,
Եւ զանիկա մեծերուն առջեւ կը տանի։
17 Իր գաղն առաջ սկսողը իրաւունք ունեցող կը հաստատէ։
Բայց երբ անոր †ոսոխը գայ՝ զանիկա կը քննէ։
18 Վիճակը վէճերը կը դադրեցունէ,
Եւ զօրաւորներուն մէջտեղ օրոշում կ'ընէ։
19 Վշտացած եղբայր մը ամուր քաղաքէն անառիկ է,
Եւ անոր վէճերը բերդի նիգերուն կը նմանին։
20 Մարդ իր բերնին պտղէն իր փորը կը կշտացունէ,
Եւ իր շրթանց արդիւնքէն կը յագենայ։
21 Մահ և կեանք լեզուին ձեռքն են,
Եւ զանիկա սիրողներն անոր պտուղը կ'ուտեն։
22 Առ—ինէ կին գտնողը բարիք կը գըտնէ,
Եւ Տէրոյմէն շնորհք կը առնայ։
23 Աղքատն ողջոյնով կը խօսի,
Բայց հարուստը խիստ պատասխան կու տայ։
24 Բարեկամներ ունեցող մարդը բարեկամութիւն ընելու է.
Եւ եղբօրմէ աւելի հաստատ բարեկամ կայ։

*Կամ տանիլ. ՆԲԲ. վերցունել։
†ՆԲԲ. ընկերը

*ՆԲԲ. Զատուող
†Կամ ամէն բանի կը խառնուի։

Գլ. ԺԹ.

1 Իւր կառաւարելութեան մէջ քալող ազ-
քասը
Նենգաւոր շրթունք ունեցող յիմարէն
ազնիկ է։
2 Հոգւոյն ագիտութիւնն ազնիկ չէ,
Եւ ոտիւք աճապարողը կը սահի։
3 Մարդուն յիմարութիւնն անոր ճամ-
բան կ'ապրէ,
Եւ անոր սիրտը Տէրոջը դէմ արտաւնջ
կ'ընէ։
4 Հարստութիւնը շատ բարեկամներ կ'ա-
ւելցնէ.
Բայց ազքասը իւր բարեկամէն կը
զատուի։
5 Սուտ վկան անպարտ պիտի չմնայ,
Եւ սուտ խօսողը պիտի չազատի։
6 Շատերն *առատաձեռն մարդուն† հա-
ճութիւնը կը փնտռտեն,
Եւ իւրաքանչիւրը պարգեւատու մարդ-
ուն բարեկամ կ'ըլլայ։
7 Ազքասին բոլոր եղբայրներն անկէ կը
զզուին.
Անոր բարեկամներըն եւս աւելի անկէ
կը հեռանան.
Անոնց ‡ոչինչ խօսքերու հետեւ կ'երթայ։
8 Խելք վաստկողը իւր հոգին կը սիրէ.
Խնամատարութիւն պահողը բարիք պիտի
գտնէ։
9 Սուտ վկան անպարտ պիտի չմնայ,
Եւ սուտ խօսողը պիտի կորսուի։
10 Յիմարին փափկութիւն չվայլէր.
Որչափ աւելի ծառայի մը՝ իշխաններու
վրայ իշխել։
11 Մարդուն խոհեմութիւնն անոր բար-
կութիւնը կը զսպէ,
Եւ յանցանք նկատելն անոր պարծանք է։
12 Թագաւորին բարկութիւնն առիւծ ա-
ռիւծի մռնչելուին կը նմանի,
Իսկ անոր հաճութիւնը խոտի վրայի
ցօղին պէս է։
13 Անմիտ ազանի իւր հօրը թշուառութիւնն է,
Եւ կնոջ կռնչուները յարունակ կաթիլ-
ներու պէս են։
14 Տունը և ստացուածքը հայրերէն ժա-
ռանգ ժառանգութիւն են.
Բայց խոհեմ կինը Տէրոջմէ է։
15 Ծուլութիւնը խորունկ քուն կը բերէ,
Եւ թոյլ մարդն անօթի կը մնայ։
16 Պատուիրանքը պահողը իւր հոգին կը
պահէ.
Իւր ճամբաներն անարգողը պիտի մեռ-
նի։
17 Ազքասին ողորմութիւն ընողը Տէրոջը
փոխ կու տայ,
Եւ Անիկա անոր հատուցումը պիտի ընէ։
18 Մինչդեռ յոյս կայ՝ որդիդ խրատէ,
Եւ *անոր մեղանչելը կամակից մի ըլ-
լար։"
19 Շատ բարկացող մարդը վնաս կը կրէ.
Վասն զի մէկ անգամ ձգտումը՝ նո-
րէն ընելու կու տայ։
20 Խրատ լսէ և կրթութիւն ընդունէ,
Որ ետքը ատենդ խնամատուն ըլլաս։
21 Մարդուն սրտին մէջ շատ դիտաւո-
րութիւններ կան,
Բայց Տէրոջը խորհուրդը հաստատուն
պիտի մնայ։
22 Մարդուն ողորմածութիւնն անոր փառ-
քըն է.
Եւ ազքատը սուտախօսէն ազնիկ է։
23 Տէրոջը երկիւղը կենաց պարգեւ է,
Եւ գոհութեամբ հանգչիլը՝
Ե՛ ձախորդութենէ չհանդիպիլը։
24 Ծոյլը իւր ձեռքը ամանին մէջ կը խո-
թէ,
Ե՛ պանիկա իւր բերանն անգամ չդար-
ձնէր։
25 Ծաղր ընողը ծեծէ, և միամիտը խելա-
գի կ'ըլլայ,
Եւ հեմ խնամատուները յանդիմանեա՝
հանճարը կը հասկընայ։
26 Ի՛ր հայրը կործանողը Ե՛ր մայրը
վռնտողը

*Կամ իշխանին
†Եբր. երեսը
‡Կամ անոնց հետեւէն կ'երթայ խօսքերով,
բայց անոնք չեն ֆոռոտիր։
*Կամ անոր ապազակին ականջ մի դներ։



Ամէն և նախատինք բերող որդի է։
27 Որդեակ իմ, եթէ կեցիր այն խրատը
մոռիկ ընկերէն,
Որ *ի՛ր խնամատարեան խօսքերէն կը
խոտորցնէ։
28 Զոր վկան արդարութիւնը ծաղր կ'ընէ,
Եւ ամբարիշտներուն բերանն անիրա-
ւութիւն կը կլլէ։
29 Ծաղր ընողներուն համար դատաստան-
ներ՝
Եւ անմիտներուն կռնակին համար ծե-
ծեր պատրաստուած են։

Գլ. Ի

1 Գինին ծաղր ընող է, և ցբին կռիւ
հանող,
Եւ ով որ անոնց անձնասուր կ'ըլլայ՝
խնամատուն չըլլար։
2 Թագաւորին սոսկումը առիւծի մռնչու-
նին պէս է,
Եւ զանիկա բարկացնողը իւր անձին
մեղա կ'ընէ։
3 Կռուէն հեռ կենալը մարդուն փառք է.
Բայց ամէն յիմար հակառակը է։
4 Ծոյլը՝ Ձմեռ է ըսելով, ֆերինը չհերկեր.
Ուստի հնձոց ատեն պիտի մուրայ, և
բան մը պիտի չգտնէնայ։
5 Մարդու մը սրտին խորհուրդը խորունկ
ջուր բերու պէս է.
Բայց խելացի մարդը զանիկա կը հանէ։
6 Մարդոցմէ շատերն իրենց բարերարու-
թիւնը կը հրապարակեն.
Բայց հաւատարիմ մարդ մը՝ ով կրնայ
գտնել։
7 Իւր անարատութեան մէջ քալողն ար-
դար է.
Անոր որդիներն անոր հետէն երջանիկ
պիտի ըլլան։
8 Դատաստանի աթոռը նստող թագաւորը
Իւր աչքին ամէն չարիք կը ցրուէ։
9 Ո՛վ կրնայ ըսել՝ Իմ սիրտս սրբեցի,
Մեղքս մաքրուեցայ։
10 Երկու տեսակ կշռոյ քար, երկու տե-
սակ *չափ
Ամէնքն ալ Տէրոջը առջեւ պիղծ են։
11 Տղան մը վարքին մաքրութիւնը և ու-
ղութիւնն անգամ
Անոր գործերէն կը հասկըցուին։
12 Լսող ականջը և տեսնող աչքը՝
Երկուքն ալ Տէրը սաեղծած է։
13 Քունը մի սիրեր գուցէ ազքատա-
նաս.
Աչքդ բաց որ հացով կշտանաս։
14 Ծախու առնողը՝ Չէ՛, չէ՛, կ'ըսէ.
Բայց երբ երթայ՝ անառնի կը պարծե-
նայ։
15 Ոսկի և շատ գոհար կը գտնուին.
Բայց գիտութեան շրթունքը մեծագին
գարդեր են։
16 Օտարականի մը հրաշխատօր հագուին
զգեստն առ,
Եւ օտար կնոջ համար էրաշխատօր ի-
ղուէն գրաւ առ։
17 Սուտ հնար հացը մարդուն մխորժելի է,
Բայց ետքը անոր բերանը խճով պիտի
լեցուի։
18 Դիտաւորութիւնը խորհրդով կը հաս-
տատուի.
Ուստի խոհեմութեամբ պատերազմ
ըրէ։
19 Բանսարկութեան պատգաղը գաղանիք-
ը կը յայտնէ.
Ուրեմն շրթամբք չղոզոզթութիւն ը-
նողին հետ հաղորդակցութիւն
մի ըներ։
20 Ով որ իւր հայրը և մայրը կ'անիծէ,
Անոր ճրագը մութ խաւարի մէջ պիտի
մարի։
21 Կայ ժառանգութիւն՝ որ սկիզբը ամա-
պարանօք կ'առնու,
Բայց անոր վերջը պիտի չօրհնուի։
22 Չարութեան մի՛տիր ետքը՝
Տէրոջը սպասէ, և անիկա պիտի ազա-
տէ զքեզ։
23 Երկու տեսակ կշռոյ քար Տէրոջը առջեւ
պիղծ է,
Եւ նենգաւոր կշիռն ազէկ չէ։
24 Մարդուն քայլերը Տէրոջմէն է.
Ուստի մարդ իւր ճամբան ի՞նչպէս հաս-
կընայ,

*Եբր. արդու

25 *Անխորհրդաբար բան մը նուիրելը," եւ
ուխտ ընելէն ետքը քննութիւն
ընելը
Մարդուն որոգայթ է,
26 Իմաստուն թագաւորն ամբարիշտները
կը ցրուէ,
Եւ անիւն անոնց վրայ կը դարձունէ։
27 Մարդուն հոգին Տէրոջը լոյս է,
Սրտին բոլոր ներքինութիւնները կը քննէ։
28 Ողորմութիւնն եւ ճշմարտութիւն թա-
գաւորը կը պահեն.
Անիկա ալ իր աթոռը ողորմութեամբ
կը հաստատէ։
29 Երիտասարդաց զարդն անոնց ոյժն է,
Եւ ծերոց փառքն ալեւորութիւնն է։
30 Վէրքի նշանները եւ փորի չարութեան-
ները հանող հարուածները
†Զաւր մարդուն մաքրութեան դեղ են։

## Գլ. ԻԱ.

1 Թագաւորին սիրտը Տէրոջը ձեռքը ջու-
րեր է Տէրոջը ձեռքը մէջ,
Զանիկա ո՛ր կողմ ուզէ՝ կը դարձու-
նէ։
2 Մարդուն ամէն ճամբան անոր ուղիղ
կ'երեւայ,
Բայց Տէրը սիրտերը կը կշռէ։
3 Արդարութիւն եւ իրաւունք գործելը
Զոհէ աւելի ընդունելի է Տէրոջը։
4 Աչաց ամբարտաւանութիւնը եւ սրտի
հպարտութիւնը
Ե՛ւ ամբարշտաց ‡լոյսը մեղք են։
5 Աշխատասէր մարդուն խորհուրդները՝
միայն առատութիւն կը բերէն.
Բայց ամէն ամապարտ կարօտութիւն
միայն կը բերէ։
6 Սուտ լեզուով գանձեր վաստկիլը
Մահը փնտռողներուն հալածած ու-
նայնութիւնն է։
7 Ամբարիշտներուն բռնութիւնը զանոնք
պիտի կործանցնէ.
Վասն զի իրաւունք ընել չեն ուզեր։

8 Երէք մարդուն ճամբան ծուռ է, կը
խոտորի.
Բայց մաքուր եղողին գործը ուղիղ
է։
9 Աղէկ է տանիքի մը անկիւնը բնակիլ՝
քան թէ կռուասէր կնոջ հետ *միա-
տան մէջ։
10 Ամբարիշտ մարդուն հոգին չարութեան
կը ցանկայ,
Ե՛ւ անոր բնակիչն անոր աչքին շնորհք
չգտնէր։
11 Երբ ծաղր ընողը տուգանուց հանգիս-
ցի, միամիտն խնամուն կ'իյնայ,
Եւ երբ խնամուն իրաւուն է, գիտու-
թիւն կը ստանայ։
12 Արդարը խոհեմութեամբ ամբարշտին
տունը կը դիտէ,
Երբ ամբարիշտները չարութեան հա-
մար կը կործանին։
13 Ով որ աղքատին ատարկին չլսելու հա-
մար իր ականջը կը գոցէ,
Ինքն ալ պիտի աղաղակէ, և անոր լը-
սող պիտի չըլլայ։
14 Գաղանի պարգեւը բարկութիւնը կ'ինկե-
ցնէ,
Եւ ծոցը դրուած բնծան սաստիկ կա-
տազութիւնը։
15 Իրաւունք ընելն արդարին ուրախու-
թիւն է,
Բայց անկիրաւութիւն ընողներուն ան-
կումն է։
16 Խոհեմութեան ճամբէն մոլորած մար-
դը
Մեռելներուն ժողովին մէջ կ'իջնէ։
17 Ուրախութիւն սիրողը կարօտութեան
մէջ կ'ինկնայ.
Գինին և իւղը սիրողը չհարստանար։
18 Ամբարիշտն արդարին համար,
Եւ անօրէնն ուղիղներուն համար փըր-
կանք կ'ըլլայ։
19 Աղէկ է անապատ տեղ բնակիլ՝
քան թէ կռուասէր և բարկացող կը-
նոջ հետ։
20 Իմաստունին բնակարանին մէջ ցանկալի
գանձ և իւղ կը գտնուին.

*Եբր. ընկերութեան



Բայց անմիտ մարդը *իր ուշեցածը" կը
կուլ։
21 Արդարութեան և ողորմածութեան հե-
տեւողը
Կեանք, արդարութիւն և փառք պի-
տի գտնէ։
22 Իմաստունը զօրաւորներուն քաղաքը
կ'ելլէ,
Եւ անոնց ապաւինած ամրութիւնը կը
փլցնէ։
23 Իր բերանը և լեզուն պահողը
Իր հոգին նեղութիւններէ կը պահէ։
24 Հպարտ եւ ամբարտաւան մարդուն անունը
Դաժան և յանդուգն ծաղրող է հա-
մբաւ։
25 Ծուլին ցանկութիւնը կը մեռցնէ ըզ-
նա,
Վասն զի անոր ձեռքերն աշխատիլ
չեն ուզեր։
26 Անիկա ամէն օր ատամիկ կը ցանկայ.
Իսկ արդարը կու տայ և չխնայեր։
27 Ամբարիշտներուն զոհը պիղծ է,
Մանաւանդ երբ չար դիտաւորութեամբ
կը մատուցանեն զայն։
28 Սուտ վկան պիտի կորսուի.
Բայց լսող մարդը †հաստատութեամբ
պիտի խօսի։
29 Ամբարիշտ մարդը իր երեսը կը պըն-
դացնէ.
Բայց ուղիղը իր ճամբաները կ'ուղղէ։
30 Իմաստութիւն, հանճար կամ խոր-
հուրդ չկայ
Որ Տէրոջը դէմ լինայ։
31 Պատերազմի օրուան համար ձին կը
պատրաստուի,
Բայց փրկութիւնը Տէրոջմէն է։

## Գլ. ԻԲ.

1 Բ–էր անունը շատ հարստութենէ ա-
ւելի ընտիր է.
Եւ շնորհքն արծաթէ և ոսկիէ լաւ է։
2 Հարուստը և աղքատն իրարու կը հան-
դիպին.

*Եբր. զանիկա †կամ յաւիտեան

*կամ իր ճամբուն հանդիման,

16 Իբր ոտքս՝—ծե՛ր չատցուներու համար
ադքատին զրկանք ընդ.
Եւ հարուստին առուղն անդուլ կարօ-
տութեան կը հանեի.
17 Ականջդ ծռէ և խնամասուններուն
խօսքերը մոխկ ըրէ,
Եւ սիրտդ իմ գիտութեանս տուր.
18 վասն զի եթէ զանոնք քու օրոխդ մէջ
պահես, հաճելի բան է.
Անոնք քու շրթանցդ վրայ ալ պիտի
հաստատուին.
19 Ահա քեզի այս բանէրն այսօր խնացուցի,
Որպէս զի ապաւինութիւնդ Տէրոջը վը-
րայ ըլլայ,
20 Մինչեւ ես քեզի *չատ անգամ՝ խրատ-
ներով
Եւ գիտութեամբ չդրեցի՞,
21 Որ քեզի ճշմարիտ խօսքերուն տուռ-
դութիւնը սորվեցուներմ,
Որ քեզի †դարձուցողներուն ճշմարիտ
խօսքերով պատասխան տաս,
22 Ադքատը մի կողոպտեր անոր ադքա-
տութեանը համար,
Եւ անանկը †դատաստանի մէջ մի կո-
խեր.
23 վասն զի Տէրը անոնց իրաւունքը պի-
տի պաշտպանէ,
Եւ զանոնք կողոպտողներուն հոգին
պիտի կողոպտէ.
24 Բարկացող մարդուն հետ ընկերու-
թիւն մի ըներ,
Եւ ցասկոտ մարդուն հետ մի երթար.
25 Գուցէ անոր ճամբանները սորվիս,
Եւ քու հոգւոդդ որոգայթ վաստկիս.
26 Զեռք տուողներէն մի ըլլար,
Ո՛չ պարտքի համար երաշխաւոր ե-
ղողներէն.
27 Եթէ վճարելու կարողութիւն չունիս,
Ինչո՞ւ համար տակիդ անկողինդ տա-
նեն,
28 Գուցէ անգին վերցուներս այն վաղեմի
սահմանին նշանը,
Որ քու հայրերդ դրած են,
29 Իբր գործոց մէջ ժիր մարդ մը կը
տեսնես՞ս,
Անիկա թագաւորներուն առջեւ պիտի
կայնի.
Աննշան մարդոց առջեւ պիտի չկայնի,

## Գլ. ԻԳ

1 Երբ իշխանի հետ սեղան նստիս,
Առջեդ դրուածն ադեկ նայէ.
2 Եւ եթէ ախորժակիդ տէր հոգե ես,
Կոկորդիդ վրայ դանակ դիր,
3 Անոր ազնիւ կերակուրներուն մի ցան-
կար.
Վասն զի անոնք խաբէութեան հաց
են.
4 Հարուստ ըլլալու մի աշխատիր.
Քու *խորհուրդդ եա կեցիր,
5 Աչք պիտի անկե՞ս այն բանին որ ո-
չինչ է.
Անիկա անշուշտ իրեն թեւեր կը շինէ,
Եւ արծուոյ պես օդը կը թռչի.
6 Զար աչք ունեցողին հացը մի ուտեր,
Եւ անոր ազնիւ կերակուրներուն մի
ցանկար.
7 Վասն զի անոնիկ իր սրտին մէջ ինչպէս
որ կը մտածէ, այնպէս է.
Կեր և խմէ, ի՛ըսէ քեզի,
Բայց անոր սիրտը քեզի հետ չէ.
8 Կերած պատառդ պիտի փսխես,
Եւ հաճելի խօսքերդ պիտի կորնցուս-
նես.
9 Յիմարին ականջներուն մի խօսիր,
Քանզի խօսքերուդ խմաստութիւնը
կ'անարգէ.
10 Վաղեմի սահմանին նշանը տեղէն մի
վերցուներ,
Եւ որբերուն արտերը մի մտներ.
11 Քանզի անոնց վրէժխնդիրը զօրաւոր է,
Ե՛ք քեզի դէմ անոնց իրաւունքն ա-
նիկա պիտի պաշտպանէ.
12 Քու սիրտդ խրատի տուր,
Եւ ականջներդ գիտութեան խօսքե-
րուն.
13 Տղային խրատը մի կարծեր,

*Կամ ազնիւ բաներ
†Եբր. զրկողներուն
‡Եբր. զրան

*Կամ խնամասութիւններդ.



Վասն զի եթէ գաւազանով ծեծես զը-
նաս, չմեռնիր.
14 Գուն գաւազանով կը ծեծես զնա,
Բայց անոր հոգին դժոխքէն կազա-
տես.
15 Որդեակ իմ, եթէ սիրտդ խմաստուն
ըլլայ,
Իմ սիրտս ալ պիտի ուրախանայ.
16 Եւ երբ քու շրթունքդ ուղիղ բաներ
խօսին,
Իմ երիկամունքս պիտի ցնծան.
17 Քու սիրտդ մեղաւորներուն չնախան-
ձի,
Այլ ամէն օր Տէրոջը երկիւղին մէջ ե-
ղիր.
18 Վասն զի իրաւ ըլլայ վախճան մը կայ,
Եւ քու յոյսդ պիտի չկտրի.
19 Որդեակ իմ, լո՛ւր և խմաստուն եղիր,
Եւ քու սիրտդ ուղիղ ճամբուն մէջ ուղ-
դէ.
20 Մի ընկերանար գինեմոլներուն հետ,
Եւ *իրենց մսեղիներ մսլողներուն հետ.
21 Վասն զի գինեմոլը և շռայլն աղքատ
կ'ըլլան.
Եւ քունը պատառած հանդերձ-
ներ կը հագցնէ.
22 Հնազանդութիւն ըրէ հօրդ որ քեզ
ծնած է,
Եւ մի անարգեր մօրդ՝ երբ կը պառաւի.
23 Ճշմարտութիւնը ծախու առ և մի ծա-
խեր զնա.
Նմանապէս խմաստութիւնը, խրատը և
հանճարը.
24 Արդարին հայրը չատ պիտի ցնծայ,
Եւ խմաստուն զաւակ ծնանողն անոր
վրայ պիտի ուրախանայ.
25 Թող քու հայրդ և մօրդ ե՛ւ վրադ
ուրախանան,
Եւ քեզ ծնանողը թող ցնծայ.
26 Որդեակ իմ, ինծի տուր սիրտդ,
Եւ աչքերդ թող իմ ճամբաներս դի-
տեն.
27 Վասն զի պոռնիկը խորունկ փոս է,
Եւ օտար կինը նեղ ջրհոր է.
28 Եւ անիկա գողի պես դարանը կը մտնէ,

*Կամ գեղեցկութեամբ միս ուտողներուն

Եւ մարդոց մէջ անհաւատարիմներ կ'ա-
ւելցունէ.
29 Որո՞ւ է վայը. որո՞ւ է ոհը.
Որո՞ւ են կռիւներ. որո՞ւ են տրտունջ-
ներ.
Որո՞ւ են առանց պատճառի վէրք-
Որո՞ւ է աչաց կարմրութիւնը.
30 Գինւոյ քով մնացողներուն,
Խառնած գինին փնտռելու գացողնե-
րուն.
31 Մի նայիր գինւոյն կարմրութեանը,
Գաւաթին մէջ իր գոյնը ցուցնելուն
և շիտակ վազելուն.
32 Անիկա հաքը օձի պես կը խածնէ,
Եւ թարթի պես կը խայթէ.
33 Ձեռքդ աչքերդ օտար կանանց պիտի
նային,
Եւ սիրտդ ծուռ բաներ պիտի խօսի.
34 Եւ ծովուն *մէջ պառկողի պես
Եւ կայմի վրայ պառկողի պես պիտի
ըլլաս.
35 Ե՛ծեծէ ըսես,
Ձես ծեծեցին, և ես ցաւ չզգացի,
Ինծի զարկին, և ես բան չիմացայ.
Ե՛րբ պիտի արթննամ,
Որ նորէն փնտռեմ զայն.

## Գլ. ԻԴ

1 Զար մարդոց մի նախանձիր,
Եւ անոնց հետ կենալու մի ցանկար.
2 Վասն զի անոնց սիրտը բռնութիւն կը
խորհի,
Եւ անոնց շրթունքը վնասներու վրայ
կը խօսին.
3 Խմաստութեամբ կը շինուի տունը,
Եւ հանճարով կը հաստատուի.
4 Եւ չտեսնուածներով գիտութեամբ
Անկն պեսակ պատուական և վայելուչ
գանձերով կը լեցուին.
5 Խմաստուն մարդը զօրաւոր կ'ըլլայ,
Եւ գիտութիւն ունեցողն ոյժը կ'աւել-
ցունէ.
6 Վասն զի պատերազմդ խոհեմութեամբ
կ'ընես.

*Եբր. սիրտը

Եւ *ազատութիւնը խորհրդակիաններու
բազմութեամբ կ'ըլլայ։
7 Իմաստութիւնը յիմարին համար չատ
բարձր է.
Անիկա դրան մէջ իր բերանը չբանար։
8 Ով որ չարութիւն ընել կը մտածէ,
Անիկա նենգամիտ պիտի կոչուի։
9 Յիմարութեան խորհուրդը մեղք է,
Եւ ծաղր ընողը մարդոց գզուելի է։
10 Եթէ նեղութեան օրը քնանաս,
Ոյժդ քիչ է։
11 Սպաոհ զանոնք որ մեռցուելու կը
տարուին,
Եւ սպանուելու վրայ ելոզներուն ապա-
կինէ՞ նա մի կենար։
12 Եթէ ըսես թէ Մենք սակիկ չգիտցանք,
Ահա սիրտերը կշռողն ինք կը հասկը-
նայ.
Եւ հոգիդ պաշտպանողն ինք գիտէ,
Եւ մէկէ մարդու իր գործոցը չափով
պիտի հատուցանէ։
13 Որդեակ իմ, մեղր կեր, որ ագիկ է,
Եւ մեղրախորիսխ կէր, որ քաղցր
քաղցր է։
14 Իմաստութեան ճանչնալն ալ հոգւոյդ
այնպէս ըլլայ։
Եթէ գտնես զայն.
Եւ վախճան մը կայ,
Եւ յոյսդ պիտի չկտրի։
15 Ով չար, արդարին տան դարանամալ
մի ըլլար,
Անոր դիմակարանը մի աւերեր։
16 Վասն զի արդարը թէև եօթն անգամ
կ'իյնայ՝ պիտի կանգնի.
Բայց չարերը ձախորդութեան մէջ պի-
տի կ'իյնան։
17 Երբ թշնամիդ կ'իյնայ՝ մի ուրախանար,
Եւ երբ անոր ոտքը սահի՝ սիրտդ թող
չցնծայ,
18 Զըլլայ որ Տէրը տեսնէ եւ իրեն անհա-
ճոյ երևնայ,
Եւ իր բարկութիւնն անոր վրայէն
դարձունէ։
19 Չարագործներուն համար մի սրտմնար,

*Կամ յաղթութիւնը
†Կամ հանգստեան տեղը

Եւ ամբարիշտներուն մի նախանձիր։
20 Վասն զի չար մարդը ըստ վախճան
չունենար.
Ամբարիշտներուն ճրագը պիտի մարի։
21 Որդեակ իմ, Տէրոջմէ և թագաւորէն
վախցիր,
Եւ *խառնարար մարդոց հետ մի խառ-
նուիր,
22 Քանզի անոնց կործանումն յանկարծ
կ'ըլլայ,
Եւ երկուքին ալ պատուհասն ով գի-
տէ։
23 Սյս բաներն ալ իմաստուններուն
յատկանի է.
Դատաստանի մէջ աչառութիւն բնելն
ազէկ չէ։
24 Ով որ ամբարշտին կ'ըսէ Դուն ար-
դար ես,
Ազգերն անոր անէծք պիտի տան,
Եւ ժողովուրդները պիտի անարգեն
զնա։
25 Բայց յանդիմանութիւն առաղներուն
ընծայք կ'ըլլայ,
Եւ անոնց վրայ բարի օրհնութիւն կու
գայ։
26 Ուղիղ պատասխան տուողը
Շրթունք կը համբուրէ։
27 Դուրսի գործդ կանոնաւորէ,
Եւ գանիկա է՛րտ արտիդ մէջ՝ կարգի
դիր,
Եւ տունդ հետը չինէ։
28 Դրացւոյդ դէմ իզուր վկայութիւն
մի բներ,
Եւ շրթունք մի խաբեր։
29 Մի ըսեր Թէ Անիկա ինծի ինչպէս որ
բրաւ, ես ալ անոր այնպէս պի-
տի ընեմ,
Այն մարդուն իր գործին համեմատ
հատուցում պիտի բնեմ։
30 Ծոյլ մարդուն արտին քովէն
Եւ պակասամիտ մարդուն այգւոյն քո-
վէն անցայ։
31 Եւ ահա ամէնուն մէջ փուշեր բուսած
էին,

*Նբ. փոխոխական
†Նբ. արտին մէջ քեզի համար



Եւ անոնց երեսը եղինջներ ծածկած
էին,
Եւ անոր քարէ պատը փլած էր.
32 Եւ երբ աչեայ ըլլայ՝ մտքիս մէջ պա-
հեցի
Աչք նայեցայ՝ առիւծ խրատ առի։
33 Երէ քիչ մը քնանաս, քիչ մը ներչես,
Եւ քիչ մը ձեռք ձեռքի վրայ դնես
ննջելու համար,
34 Աղքատութիւնդ ճամբորդի պէս պիտի
գայ,
Եւ կարօտութիւնդ՝ զօրաւոր մարդու պէս։

ԳԼ. ԻԵ

1 Ասոնք ալ Սողոմոնի առակներն են,
զորս Յուդայի Եզեկիա թագաւորին
մարդիկն օրինակեցին։
2 Բանը ծածկելն Աստուծոյ փառքն է.
Բայց թագաւորներուն փառքը բանը
ուսկ քննելն է։
3 Երկինքը բարձրութիւնը և երկիրս խո-
րութիւնը
Եւ թագաւորներուն սիրտը չքննուիր։
4 Վերցուր արծաթէն կղկղանքը,
Եւ ակերչին համար հնոցը անոթ կ'ել-
լէ,
5 Վերցուր թագաւորին առջևէն ամբա-
րիշտը,
Եւ անոր աթոռն արդարութեամբ կը
հաստատուի։
6 Թագաւորին առջև մի պարծիր,
Եւ մեծերուն տեղը մի կենար
7 Վասն զի ապէկ է որ քեզի ըսեն Բե-
հոս ելիր,
Քան թէ աչքերուդ անառաջ իշխանին
առջև վար իջեցնեն զքեզ։
8 *Կռուոյ համար չուռաղ դուրս մի ելլեր.
Գուցե երբ բնկերդ քեզ ամչցուցանէ,
Դուն վերջը ինչ ընելիդ չգիտնաս։
9 Ընկերիդ հետ քու դատդ վարէ,
Բայց գաղտնիքը ուրիշին մի յայտներ.
10 Գուցե լսողը քեզ անարգէ,
Եւ զեղ անտեղ անջնջելի մնայ։

*Կամ գետաք

11 Յարմարութեամբ բսուած խոսքը՝
Արծաթի զարդերու մէջ պատուած ոսկիէ
խնձորներու կը նմանի։
12 Իմաստուն յանդիմանութիւնը՝ մտիկ
ընող ականջին
Ոսկիէ օղ և մաքուր ոսկիէ մանեակ է։
13 Հաւատարիմ դեսպանը՝ զինքը զրկող-
ներուն
Հնձոց ժամանակի ձեան զովութեան
պէս է,
Եւ իր տիրոջը հոգին կը զուարճացու-
նէ։
14 Սուտ *առատաձեռնութեան վրայ պար-
ծեցողն
Անձրևէ առիներու և հովի պէս է։
15 Համբերութեամբ իշխանին սիրտը կը
չնորհի,
Եւ անոյշ լեզուն ոսկորներ կը կոտրէ։
16 Եթէ մեղր գտնես՝ քեզի բաւականի և-
զածին չափ կեր,
Գուցէ անով յագենաս և փսխես զայն։
17 Ոտքդ դրացւոյդ տունը յաճախ չդնէ,
Գուցէ քեզի ձանձրանայ և ատէ զքեզ։
18 Իր դրացւոյն համար սուտ վկայու-
թիւն բնողն
Ուռի, սուր և սրած նետի պէս է։
19 Նեղութեան օրն անհատնաստեայ մար-
դու ապաւինիլը
Փչրուող ակռայի և դիւրագլոր ոտքի
պղտոխնէ՞ պէս է։
20 Տրտում մարդուն առջև երգեր եր-
գողը
Ցուրտ օրը հագուստ զգեստը հանողին,
կամ բորակի վրայ քաւախոտ թոցանիլ
կը նմանի։
21 Եթէ թշնամիդ անօթի է, անոր հաց
կերցուր,
Եւ եթէ ծարաւի է, անոր ջուր խըմ-
ցուր։
22 Քանզի այսպէս ընելով անոր գլխուն
վրայ կրակի կոյտեր կը դիզես,
Եւ Տէրը քեզի հատուցում պիտի բնէ։
23 Հիւսիսային հովն անձրևը կ'ելլ ցրուէ,
Եւ խոժոռ դէմքը՝ չարախօս լեզուն։

*Նբ. պարգևի
†Կամ կը յարուցանէ,

24 Ագիկ է առնեաց անկիւնը բնակիլ,
Քան թէ կռուասէր կնոջ հետ մեծ ատեան մէջ։
25 Ինչպէս է պաղ ջուրը ծարաւած մարդուն,
Այնպէս է նաև հեռու երկրէ եղած բարի լուրը։
26 Զար մարդուն ապիկ խնդող արդարը
Պղտորած աղբիւր և աւերուած ական կը նմանի։
27 Շատ մեղր ուտելն ագիկ չէ,
Եւ մարդոց իր փառքը փնտռելը փառք չէ։
28 Իր ոգին չզսպող մարդը
Փլած և անպարիսպ քաղաքի պէս է։

ԳԼ. ԻԶ

1 Ինչպէս որ ամառուան մէջ ձիւն, և հնձոց ժամանակ անձրեւ,
Այնպէս յիմարին պատիւ չվայելէ։
2 Ինչպէս որ ճնճղուկը կը պարսի, և ծիծեռնիկը կը թռչի,
Այնպէս նաև առանց պատճառի անէծք չգայ։
3 Ձիուն՝ խարազան և իշուն՝ սանձ
Եւ յիմարներուն թիկան գաւազան պէտք է։
4 Յիմարին իր յիմարութեան համեմատ պատասխան մի տար,
Գուցէ դուն ալ անոր նման ըլլաս։
5 Յիմարին իր յիմարութեան համեմատ պատասխան տուր,
Գուցէ ինք խմաստուն կարծէ։
6 Յիմարին ձեռքով խօսք ղրկողը
Իր ոտքերը կը կարէ և ինքզինքը կը քաշէ։
7 Խեղճ որ կաղին ոտքերը կ'երերան,
Այնպէս յիմարին բերնին մէջ առակը։
8 Յիմարին պատիւ տուողը
†Քարակոյտի մը մէջ պարսաւելոն քարերու ծրար դնողին՝ կը նմանի։
9 Առակը յիմարին բերնին մէջ՝
Գինովին ձեռքը մտնող փշոյ պէս է։

10 Մեծ է ամէն բան Սահեդողը,
Որ յիմարին վարձք կու տայ, և յանցաւորներուն վարձք կու տայ։
11 Ինչպէս որ շունը իր փսխածին կը դառնայ,
Այնպէս յիմարն իր յիմարութեան կը դառնայ։
12 Զինք խմաստուն կարծող մարդ մը տեսա՞ր.
Աւելի յոյս կայ յիմարին քան թէ անոր կէ։
13 Ծոյլը կ'ըսէ թէ ձամբուն մէջ առիւծ կայ,
Հրապարակներուն մէջ առիւծ
14 Ինչպէս որ դուռը իր ծղնեներուն վրայ կը դառնայ,
Այնպէս ծոյլը իր անկողնին վրայ։
15 Ծոյլը իր ձեռքը ամանին մէջ կը խոթէ,
Եւ բերանն ալ դէմ առնելու դժուարութիւն կը զգայ։
16 Ծոյլը իր աչքերուն՝
Խելացի պատասխան տուող եօթը մարդէ աւելի խմաստուն կ'երեւնայ։
17 Իրենը չեղած դաների համար բարկացող անցաւորը
Շունը ականջներէն բռնողին պէս է։
18 Ինչպէս կատաղած մարդը՝ որ կրակի կայծեր, նետեր և մահ կը ցանէ,
19 Այնպէս է այն մարդը՝ որ իր բարեկամին նենգութիւն կ'ընէ,
Եւ խօսէ կ'ըսէ, Ահա կատակ ըրի։
20 Առանց փայտի կրակը կը մարի,
Եւ երէց քսու չըլլայ, կռիւը կը դադրի։
21 Ինչպէս ածուխը կայծերուն, և փայտը կրակին,
Այնպէս է կռուասէր մարդը վէճ բորբոքելու։
22 Քսու մարդուն խօսքերը քաղցր պատառներու պէս են,
Եւ անոնք միտքի փորին շատմարաններուր կ'իջնեն։
23 Եռանդուն շրթունք և չար սիրտ
Արծաթի կղկղանքով ապակած հողէ ամանի կը նմանին։
24 Առեցողը իր շրթամբքը կը կեղծէ,

*Եբր. կը խմէ։
†Կամ պարսաւիկի մէջ քար կապողին



Եւ սրտին մէջ նենգութիւն կը պահէ։
25 Անոր գեղեցիկ խօսուածքին չհաւատաս.
Վասն զի անոր սրտին մէջ եօթը զզուելի բան կայ։
26 Ատի որ իւր առերեսութիւնը նենգութեամբ կը ծածկէ,
Անոր չարութիւնը ժողովրդի մէջ պիտի յայտնուի։
27 Փոս փորողն ինք մէջը պիտի իյնայ,
Եւ ան որ քար կը գլորէ՝ իրեն պիտի դառնայ։
28 Ստախօս լեզուն *իր ծեծածները՝ կ'ատէ.
Եւ չողոքորթող բերանը կործանում կ'բնէ։

ԳԼ. ԻԹ

1 Վաղուան համար մի պարծիր,
Վասն զի չես գիտեր թէ օրը ինչ պիտի ծնանի։
2 Քեզ ուրիշը գովէ և ոչ թէ քու բերանդ,
Օտարը՝ և ոչ թէ քու շրթունքդ։
3 Քարը ծանրութիւն է և աւազը բեռ.
Բայց յիմարին բարկութիւնը երկուքէն ալ ծանր է։
4 Բարկութիւնն անողորմ է, և սրտմտութիւնը խեթ է.
Բայց նախանձին առջև ո՞վ կրնայ կենալ։
5 Յայտնի յանդիմանութիւնը
Ծածուկ սիրէն աղէկ է։
6 Բարեկամին գործ վէրքերն հաւատարիմ են.
Բայց թշնամւոյն համբոյրներն առատ են։
7 Կուշտ մարդը խորիսխը կ'արհամարհէ.
Բայց անօթի մարդուն ամէն լեղի բան անոյշ կու գայ։
8 Իր տեղէն թափառական եղող մարդը՝
Իր բոյնէն թափառական եղող թռչունոյ պէս է։
9 Իւղը և խունկը սիրտը կը զուարճացունեն.

*Կամ գինքը ծեծողները

Նմանապէս բարեկամին քաղցրութիւնը՝ մտերիմ խորհրդով։
10 Բարեկամդ և հօրդ բարեկամը մի թողուր,
Եւ նեղութեանդ աաեն եղբօրդ տունը մի երթար.
Մօտ դրացին հեռու եղող եղբօրմէ աղէկ է։
11 Որդեակ իմ, խմաստուն եղիր և սիրտս ուրախացուր,
Որ զիս անարգողին պատասխան տամ։
12 Խորագէտը չարիքը կը տեսնէ և կը զգուշանայ.
Բայց միամիտներն առաջ կ'անցնին և վնաս կը կրեն։
13 Օտարականի երաշխաւոր եղողին զգեստն առ,
Եւ օտար կնոջ համար երաշխաւոր եղողէն գրաւ առ։
14 Եթէ մարդ մէ առաւօտուն կանուխ ելլէ, և իր դրացին բարձր ձայնով օրհնէ,
Այս անոր անէծք կը համարուի։
15 Անձրեւոտ օրուան չարունակ կաթիլը
Եւ կռուասէր կինն իրարու կը նմանին.
16 Զանիկա ծածուկ պահողը հովը կը պահէ,
Եւ աջ ձեռքին վրէ պահուածէ իւղը դէմ կը յայտնէ։
17 Երկաթը երկաթով կը սրուի,
Եւ մարդ իւր բարեկամին երեսը կը սրէ։
18 Թզենւոյն հոգ տանողն անոր պտուղը կ'ուտէ,
Եւ իւր տէրը պահպանողը պատիւ կը գտնէ։
19 Ինչպէս ջուրը՝ երեսը երեսին,
Նոյնպէս սիրտը մարդ մարդուն կը ցուցնէ։
20 Դժոխք և կորուստ չեն յագենար.
Մարդուն աչքերն ալ չեն կշտանար։
21 Խեղճ հարցոյն՝ արծաթը և քուրան ոսկին կը փորձէ,
Այնպէս մարդ զինքը գովող բերանը խեղ կ'ընէ։
22 Յիմարը ցորենի հետ անկանի մէջ ասեղնոտուածով ծեծես անգամ,
Անոր յիմարութիւնն անկէ չերթար։

23 Ոչխարներուդ վիճակն ագիտակ գիտցիր,
Ե՛ հօտերուդ ագէկ նայէ.
24 Վասն զի հարստութիւնը միշտ չմնար,
Եւ թագը գարէ՛ի գար չտևէր.
25 Դանդաղը կը բուսնի, խոտը կ՚երևնայ,
Եւ լեռներուն խոտերը կը ժողվին.
26 Գառնուհներդ քու հագուստիդ համար են,
Եւ նոխտաներդ գաշտերուն գինն են.
27 Կերակրդդ համար՝ տանդ կերակրդին համար
Եւ աղախիններուդ սպասուհին համար
Բաւական այծի կաթ պէտք ունիս։

ԳԼ. ԻԷ.

1 Աշխարհին առանց ուրիշի մը հայհոյելուն կը փախչի.
Բայց արդարներն առանց ահի պէս քաջասիրտ կ՚ըլլան.
2 Երկրին յանցանքով անոր իշխանները շատ կ՚ըլլան.
Բայց անոր վիճակին խնամառն՝ Ա՛ստուած մարդուն ձևոքով շատ ատեն կը պինանայ.
3 Աղքատները զրկող չքաւոր մարդը
Հացի կաթսայի պէս ջրով յորդահոս անձրևի պէս է.
4 Օրէնքը մերժողներն ամբարիշտները կը գովեն.
Բայց օրէնքը պահողներն անոնց դէմ կը կիսնան.
5 Չար մարդիկ իրաւունքը չեն հասկընար.
Բայց Տէրը փնտռողներն ամէն բան կը հասկնան.
6 Իր կատարելութեան մէջ քալող աղքատը
Ծուռ ճամբաներու մէջ քալող հարուստ մարդէն աղէկ է.
7 Օրէնքը պահող խնամառն որդի է.
Բայց շռայլներուն բարեկամ եղողը իր հայրը կ՚ամչցնէ.
8 Իր տացուածքը տոկոսով և վաշխով աւելցնողը՝
Աղքատին ողորմութիւն ընդլին համար կը ժողվէ զայն.
9 Ականջը օրէնքը մեկ դնելէն՝ նա կը գարձնէ իր ականջը,
Անոր աղօթքն անգամ պիղծ է.
10 Ուղիղները չար ճամբու մէջ մտցնողը իր փոսին մէջ պիտի կ՚իյնայ.
Սակայն արդարները բարիք պիտի ժառանգեն.
11 Հարուստ մարդը իր աչքերուն խնամառն կ՚երևնայ.
Բայց հանճարեղ աղքատը կը գտնէ զայն.
12 Երբ արդարները ուրախանան, մեծ փառք կ՚ըլլայ.
Բայց երբ ամբարիշտները բարձրանան, մարդ կը փնտռուի.
13 Իր յանցանքը ծածկողն յաջողութիւն չգտնէր,
Բայց ընդունող և մեկզի ձգողն ողորմութիւն կը գտնէ.
14 Միշտ վախցող մարդը երանելի է.
Բայց իր սիրտը խստացնողը չարկաց մէջ պիտի կ՚իյնայ.
15 Աղքատ ժողովրդի վրայ իշխող ամբարիշտը
Մռնչող առիւծի և անյագ արջու կը նմանի.
16 Խոհեմութիւն չունեցող իշխաններ շատ զրկողութիւններ կ՚ընեն.
Բայց ագահութենէ ղեր ատողը երկար կեանքը կ՚ապրելու է.
17 †Արիւնապարտ մարդը մինչև գերեզմանը կը փախչի.
Թող մարդ չպահպանէ զինք.
18 Կատարելութեամբ քալողը փրկութիւն կը գտնէ.
Բայց ծուռ մարդը իր երկու ճամբով կ՚ընկնայ, անոնց մէկուն մէջ կ՚իյնայ.
19 Իր երկիրը գործող հացով պիտի յագնէնայ,
Եւ գատարկ մարդոց հետևողն աղքատութեամբ պիտի լեցուի.
20 Հաւատարիմ մարդը շատ օրհնութիւններ կ՚առնէ.

*Կամ կը պահուրտի.
†Եբր. Անձի մը արիւնովը ձեռնասպ.



Բայց հարստատ ըլլալու ամպարտողը պիտի չարգանայ.
21 Աչառութիւն ընելն աղէկ չէ,
Վասն զի պատառ մը հացի համար մարդ յանցանք կը գործէ.
22 Չար աչք ունեցող մարդն հարստատ ըլլալու կը փութայ,
Եւ չգիտեր որ իր վրայ ազքատութիւն պիտի գայ.
23 Մարդ յանդիմանողը վերջապէս շնորհք կը գտնէ
Լեզուով չղճացողութենէն ընդհէն աւելի.
24 Այն որ իր հայրը կամ իր մայրը կը կողոպտէ, ըսելով Թէ յանցանք չէ,
Անիկա ապականաթաթ մարդու ընկեր է.
25 Հպարտ սիրտ ունեցող մարդը կռիւ կը հանէ.
Բայց Տէրոջը ապաւինողը պիտի գիրնայ.
26 Իր սրտին ապաւինողն անմիտ է.
Բայց իմաստութեամբ քալողը պիտի ազատի.
27 Աղքատին առատը կարօտ չըլլար.
Բայց ՚ի՛նչ երես գարձնողը շատ անէծք կ՚առնէ.
28 Երբ ամբարիշտները բարձրանան, մարդիկ կը պահուրտին.
Բայց երբ անոնք կորսուին, արդարները կը շատնան։

ԳԼ. ԻԹ.

1 *Շատ անգամ յանդիմանուած՝ մարդը որ իր սրտանոցը կը խրատուցանէ,
Յանկարծ պիտի կործանի եւ բժշկութիւն պիտի չգտնէ.
2 Երբ արդարները զօրանան, ժողովուրդը կ՚ուրախանայ,
Բայց երբ ամբարիշտն իշխանութիւն կ՚առնէնայ, ժողովուրդը կը հեծծէ.
3 Իմաստութիւն սիրող մարդը իր հայրը կ՚ուրախացնէ.
Բայց բազերուն ընկերը հաղն ատացուածքը կը ցրուէ.
4 Թագաւորն արդարութեամբ կը հաստատէ երկիրը.
Բայց կաշառք առնողն կը կործանէ զայն.
5 Իր ընկերին շողոքորթութիւն ընող մարդն
Անոր քայլերուն որոգայթ կը լարէ.
6 Չար մարդուն ամբարշտութեան մէջ որոգայթ կայ.
Բայց արդարը ցնծութեան և ուրախութեան մէջ պիտի ըլլայ.
7 Արդարն աղքատներուն գատը գիտէ.
Բայց չար մարդը տեղեակ չըլլար.
8 Ծաղր ընող մարդիկ քաղաքը կը բռնկեցնեն.
Բայց իմաստուններն բարկութիւնը կը դադրեցուցնեն.
9 Իմաստուն մարդը երբ յիմարին հետ վիճաբանութիւն կ՚ընէ,
Թէ սրտզոյն և թէ ծիծաղի՝ հանդարտ չըլլար.
10 Արիւնահեղ մարդիկ արդարը կ՚ատեն.
Բայց ուղիղներն անոր օրհասութիւնը կը հարցունեն.
11 Յիմարը իր միտքը բոլորովին կը յայտնէ.
Բայց իմաստուն ուրիշ ատենի կը պահէ զայն.
12 Ստոյ խօսքերու ականջ դնող իշխանին
Բոլոր ծառաները չար կ՚ըլլան.
13 Աղքատար և բռնաւորն իրարու հանդիպին,
Երկուքին ալ աչքերուն լոյս տուողը Տէրն է.
14 Աղքատները ճշմարտութեամբ գատող թագաւորին աթոռն
Յաւիտեան հաստատ կ՚ըլլայ.
15 Գաւազան և յանդիմանութիւն իմաստութեան կուտան.
Բայց է՛ն խմոջ ձգուած օրիորդն իր մայրը կ՚ամչցնէ.
16 Երբ ամբարիշտները չատնան, յանցանքը կը չատնայ.
Բայց արդարներն անոնց անկումը պիտի տեսնեն.

*Կամ կատաղեր

17 Խրատէ փու որդեդ, որ գթեզ հանգըս-
տացունէ,
Եւ հագիդ զուարճացունէ։
18 Առանց մարգարէութեան ժողովուրդը
կը խառարի,
Բայց օրէնքը պահողն երջանիկ կ'ըլլայ։
19 Հակցող և պատասխան չտուող ծա-
ռան
Խօսքերով չկրթուիր։
20 Իր խօսքերուն մէջ աճապարող մարդ
մը տեսայ.
Անկէ յոյս կայ յիմարին քան թէ ան-
կէ։
21 Եթէ մարդ իր ծառան ազգութենէն
փախուստեամբ կը մեծցունէ,
Վերջապէս անիկա անոր որդին կ'ըլլայ։
22 Բարկասիրտ մարդը կռիւ կը հանէ,
Եւ ցասկոտ մարդը շատ յանցանք կը
ընէ։
23 Մարդուն հպարտութիւնը կը կործա-
նէ զինք.
Բայց հեզահոգի մարդը փառք կը վաս-
տկի։
24 Գողին բնկերը եղողը իր հոգին կ'սատ,
Անիկա երդումը կը լսէ, և ընչ ընդ-
ծիը չէ յայտներ։
25 Մարդու երկիւղն որոգայթի մէջ կը
ձգէ.
Բայց Տէրոջը ապաւինողն ամուր ա-
պաստանարան կ'ունենայ։
26 Շատերն իշխանին երեսը կը փնտռեն.
Բայց մարդուն իրաւունքը Տէրոջմէ է։
27 Անօրէն մարդն արդարներուն զզուե-
լի է,
Եւ ուղղութեամբ քալողն ամբարշտին
զզուելի է։

## Գլ. Լ.

1 Յակէհան Ագուրի խօսքերը՝
Այսինքն պատգամը՝ զոր խօսեցաւ նա
Իթիելի.
Իթիելի և Ուքալի։
2 Այրս արև ես ահէն մարդէ թանձրա-
միտ եմ,
Եւ մարդկային խոհեմութիւն չունիմ.
3 Եւ իմաստութիւն չսորվեցայ,
Եւ *Ամենասրբոյն գիտութիւնը չեմ
գիտեր։
4 Երկինք ո՞վ ելաւ և իջաւ.
Հովը իւր ձեռաց մէջ ո՞վ ժողվեց.
Ջուրերը էրէ հանդերձին մէջ ո՞վ ամ-
փոփեց.
Երկիրս բոլոր ծայրերն ո՞վ հաստատեց.
Անոր անունն ի՞նչ է, և անոր որդւոյն
անունն ինչ է.
Եթէ գիտես՝ ըսէ։
5 Աստուծոյ ամէն խօսքերը մաքուր են.
Անիկա իրեն ապաւինողներուն ասպար
է։
6 Դուն անոր խօսքերուն վրայ բան մի
աւելցներ,
Գուցէ յանդիմանէ զքեզ, և դուն սը-
տախօս երևնաս։
7 Բնէն երկու բան կը խնդրեմ,
Մեռնելէս առաջ զանոնք ինէ մի ար-
գելեր.
8 Ունայնութիւնը և սուտ խօսքն ինէ
հեռացուր։
Ինծի ազգատութիւն կամ հարստու-
թիւն մի տար։
Իմ սովորական հացովս զիս կերակրէ.
9 Գուցէ յագնամ և ուրանամ ըսելու
Եւ. Տէրն ով է ըսեմ.
Եւ գուցէ ազքատանամ և գողութիւն
ընեմ,
Եւ իմ Աստուծոյս անունը պարապ տեղ
բերանս առնեմ։
10 Ծառայի մը հանգէ իր տիրոջը ամ-
բաստանութիւն մի ըներ,
Գուցէ անէծք ասէ քեզ, և յանցաւոր
գտնուիս։
11 Ցեղ կայ որ իր հայրը կ'անիծէ,
Եւ իր մայրը չօրհներ։
12 Ցեղ կայ որ իր աչքին առջև մա-
քուր է,
Սակայն իր ազտեղութենէն լուա-
ցուած չէ։
13 Ցեղ կայ որ անոր աչքերը խիստ ամ-
բարտաւան են,
Եւ անոր արտևանունքը բարձրացած
են։

*Կամ սրբոց



14 Ցեղ կայ որ անոր ակռաները սուր-
բուս պէս են,
Եւ անոր ժանիքը դանակներու պէս
են,
Ագռամանները երկրիս վրայէն
Եւ անանկները մարդոց միջէն ուտե-
լու համար։
15 Տզրուկը երկու աղջիկ ունի.
Տուր, տուր կ'ըսեն։
Այս երեքը չեն յագնեներ,
Ե– չորս բան կայ որ Հերիք է՝ չեն ը-
սեր.
16 Գերեզմանը, ամուլ արգանդը,
Երկիր որ չյագենար
Եւ կրակը որ Հերիք է՝ չըսեր։
17 Այն աչքը որ իր հայրը ծաղր կընէ,
Եւ իր մօրը հնազանդիլը կ'անարգէ,
Զորերուն ագռաւները պիտի փորեն,
Եւ արծիւներուն ձագերը պիտի ու-
տեն զայն։
18 Այս երեք բանն ինծի զարմանալի
կ'երևնայ,
Եւ չորս բան կայ որ չեմ գիտեր։
19 Օդին մէջ արծուոյ ճամբան,
Ապառաժի վրայ օձին ճամբան,
Ծովուն մէջ նաւուն ճամբան
Եւ աղջկան քով երիկ մարդուն ճամ-
բան։
20 Շնացող կնոջ ճամբան ևս այնպէս է.
Կ'ուտէ և բերանը կը սրբէ,
Եւ Ձարութիւն չըրի կըսէ։
21 Երեք բանի համար երկիրը կը դողայ,
Եւ չորս բան կայ, զորս չկրնար տանիլ.
22 Ծառան երբ թագաւորէ,
Յիմարը երբ հացով յագենայ,
23 Ատելի կինը երբ կարգուի
Եւ աղախինը երբ իր սիրնոջը ժառանգ
ըլլայ։
24 Երկրիս վրայ չորս բան կայ որ փոքր
են,
Բայց անոնք շատ խելացի են.
25 Մրջիւնները զօրաւոր ժողովուրդ չեն,
Բայց իրենց կերակուրն ամառուընէ
կը պատրաստեն.
26 Ճագարները ակար ժողովուրդ են,
Բայց իրենց առները վէմերու մէջ կը
շինեն.
27 Մարախները թագաւոր չունին,
Սակայն ամէնքը գունդ գունդ դուրս
կ'ելլեն.
28 *Մողէսը էրէ ձեռօքը ոտքէն կը
փակչի,
Եւ թագաւորաց պալատներուն մէջ կը
գտնուի։
29 Աղեկ քալող երեք բան կայ.
Եւ չորս բան կայ որ գեղեցիկ քալուածք
ունի.
30 Առիւծը՝ որ ամէն անասուններէն զօ-
րաւոր է,
Եւ բնաւ մէկուն երեսէն կառ չդառնար.
31 †Մէջքը կապած տնչ՞ և նոխազը,
Եւ թագաւոր՝ որոյ ժողովուրդն անոր
հետ է։
32 Եթէ բարձրանալով յիմարութիւն
ըրիր,
Կամ չարութիւն մտածելիր,
Ձեռքդ բերանիդ վրայ դիր։
33 Վասն զի եթէ կաթը ծեծես՝ կոպի կ'ել-
լէ,
Եթէ քիթը ծռիս՝ արիւն կ'ելլէ.
Նոյնպէս եթէ բարկութիւնը գրգռես՝
կռիւ կ'ելլէ։

## Գլ. Լ.Ա

1 Լեմուէլ թագաւորին խօսքերը՝
Այսինքն պատգամը՝ զոր անոր մայրն
անոր սորվեցուց։
2 Ի՞նչ ընեմ, ով որդեակ իմ,
Ի՞նչ ընեմ, ով իմ որովայնիս որդին,
Ի՞նչ ընեմ, ով իմ ուխտերուս որդին։
3 Քու զօրութիւնդ կանանց մի տար,
Ոչ ալ քու ճամբաներդ թագաւորները
բնաջինջ ընողներուն։
4 Ով Լեմուէլ, թագաւորներուն չի
վայլեր,
Գինի խմել թագաւորներուն չվայլեր,
Եւ ոչ խմել իշխաններուն չվայլեր։
5 Գուցէ խմեն և օրէնքը մոռնան,

*Կամ Սարդը. ԵԲՐ. ՍԻՄԱՄԻԹ, որուն կ'նմանուի հռչակ ֆուր և սրճասուրճի տե-
սակ մը։
†Կամ Որսական շունը

Եւ առաւաւոտեանէն մինչուն դատաստանը ծանին,
6 Սղին՝ կոչուելու վրայ Եղոգին,
Եւ գինին գառնացողներուն առէք,
7 Որ անոնք խմեն և իրենց ազգաւորութիւնը մոռնան,
Եւ իրենց նեղութիւնն ալ եւս չյիշեն։
8 Բաց քու բերանդ համր մարդուն համար,
Ե՝ բոլոր անխնամ մնացածներուն դատին համար։
9 Բաց քու բերանդ, արդարութեամբ դատէ,
Եւ աղքատին և անանկին դատաստանը ըներ։
10 Առաքինի կին ո՞վ կրնայ գտնել.
Անոր գինը գոհարներէն չատ աւելի է։
11 Անոր էրիկանը սիրան անոր վրայ վստահ է,
Եւ աւարի կարօտ չըլլար։
12 Անիկա իր կենաց բոլոր օրերուն մէջ
Անոր բարիք կը բերէ և ոչ թէ չարիք։
13 Բուրդ և վիթան կը փնտռէ,
Եւ *ուրախ ձեռքով կը գործէ։
14 Անիկա վաճառականի նաւերուն կը նմանի.
Իր հացը հեռու տեղէն կը բերէ։
15 Եւ անկիա դիշերով կ'ելլէ, և տանը *հարցոց կերակուր՝
Եւ իր աղախիններուն բաժին կու տայ։
16 Արտ մը վրայ կը խորհի և զանիկա ծախու կ'առնէ,
Ե՝ իր ձեռագ պտղէն այգի կը տընկէ։
17 Իր մէջքը զօրութեամբ կը պնգէ,
Եւ իր բազուկները կը զօրացունէ։
18 Իր վաստակին ապէկ ըլլալը կը հասկընայ.
Անոր ճրագը գիշերը չմարիր։
19 Իր ձեռքերն իրեն կ'երկընցունէ,
Եւ ափով բոքը կը բռնէ։
20 Ձեռքն աղքատին կը բանայ,
Եւ ձեռքերը կարօտներուն կ'երկընցունէ։
21 Իր տան հարցոց համար ձիւնէն չվախնար.
Քանզի բոլոր ընտանիքը կրկին հանդերձած հագած են։
22 Իրեն ծածկոյներ կը շինէ.
Իր հանդերձը բեհեզ և ծիրանի է։
23 Անոր էրիկը կը ճանչցուի դուռներուն մէջ՝
Երբ երկրին ծերերուն հետ կը նստի։
24 Կտաւ կը գործէ և կը ծախէ,
Եւ վաճառականներուն գօտիներ կու տայ։
25 Զօրութիւն և փառք կը հագնի.
Եւ հոգի օրերը պիտի ուրախանայ։
26 Իր բերանն իմաստութեամբ կը բանայ,
Եւ իր լեզուին վրայ *գթագրութեան օրէնք կայ։
27 Իր տանը ճամբաները կը քննէ,
Եւ ծուլութեան հաց չուտեր։
28 Անոր ազգերը կ'ելլեն և երանելի կ'ասունեն զինք։
Անոր էրիկն ալ կը գովէ զինք, ըսելով,
29 Շատ աղջիկներ առաքինի եղան,
Բայց դուն ամենէն գերազանց եղար։
30 Վայելչութիւնը սուտ է, և գեղեցկութիւնն ունայն է.
Սակայն Տէրոջմէ վախցող կինը պիտի գովուի։
31 Տուէք անոր իր ձեռագ պտղէն.
Եւ անոր գործերը դուռներու մէջ գովեն զինք։

*Կամ յօժարութեամբ

*Կամ ողորմութեան

# ԳԻՐՔ ԺՈՂՈՎՈՂԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Երուսաղէմի մէջ թագաւորող Դաւթի որդւոյն Ժողովողի խօսքերը։
2 Ունայնութիւն ունայնութեանց, ըսաւ Ժողովողն,
Ունայնութիւն ունայնութեանց, ամէն բան ունայնութիւն է։
3 Ինչ օգուտ կ'ունենայ մարդ
Արեւուն տակ չարչարած բոլոր աշխատանքին։
4 Ազգ կ'երթայ և ազգ կու գայ,
Բայց երկիրը միշտ կը կենայ։
5 Նաև արեւը կը ծագի և արեւը կը մտնէ,
Եւ իր ծագած տեղն աճապարելով կը դառնայ։
6 Հովը դեպ ի հարաւ կ'երթայ,
Եւ դէպ ի հիւսիս կը դառնայ.
Ե՝ դիմի այս դին այն դին պտտելով կ'երթայ, իր շրջանները համեմատ կը դառնայ։
7 Ամէն գետ ծովը կ'երթայ,
Բայց ծովը չի լեցուիր.
Անկ տեղ ուր գետերը կ'երթային, հոն կ'երթան։
8 Ամէն *խօսք կը հառաչի.
Մարդս խօսելու կարող չէ.
Աչքը տեսնելով չյագենար,
Եւ ականջը լսելով չի լեցուիր։
9 Ինչ որ եղած է, նոյնը պիտի ըլլայ,
Եւ ինչ որ գործուած է, նոյնը պիտի գործուի.
Եւ արեւուն տակ բնաւ նոր բան չկայ։
10 Կայ ատենօք որմէնք բան մը
Որուն համար կրնանայ ըսուիլ, Ահա այս նոր է.
Ան ալ մեզ առաջ եղած դարերուն մէջ
Անիկա արդէն եղած էր։
11 Առջի բաներուն յիշատակը չկայ,
Եւ ետքը ըլլալու բաներուն ալ՝
Ետքը եկողներուն մէջ յիշատակը պիտի չըլլայ։
12 Ես Ժողովողս Երուսաղէմի մէջ
Իսրայէլի վրայ թագաւոր եղայ,
13 Եւ իմ սրտս երկնից տակ բոլոր գործերուն
Իմաստութեամբ փնտռելու և քննելու տուի.
Աստուած այս չար զբաղմունքը մարդոց որդիներուն տուաւ,
Որ անով զբաղին։
14 Արեւուն տակ բոլոր գործուած գործերը տեսայ,
Եւ ահա ամէնն ալ ունայնութիւն և *հոգւոյ տանջանք է։
15 Այն որ ծուռ է չկրնար շիտակուիլ,
Եւ այն որ պակաս է՝ չկրնար համրուիլ։
16 Ես իմ սրտիս մէջ խօսեցայ և ըսի,
Ահա ես մեծցայ, և իմաստութիւն ըստացայ
Երուսաղէմի մէջ ինձ առաջ եղողներուն ամենէն աւելի.
Եւ իմ սրտս շատ իմաստութիւն և գիտութիւն տեսաւ։
17 Եւ իմ սրտս իմաստութիւնը ճանչնալու,
Եւ խելագարութիւնը և յիմարութիւնը գիտնալու տուի.
Հասկցայ որ այս ալ հոգւոյ տանջանք է,
18 Վասն զի շատ իմաստութեան մէջ շատ տրտմութիւն կայ.
Եւ ով գիտութիւն ունեցուցողը վիշտը կ'աւելցուցնէ։

ԳԼ. Բ

1 Ես իմ սրտիս մէջ ըսի, Եկու հիմա

*Կամ բաներ կը յոգնին.

*Կամ հովի համար աշխատութիւն

ուրախութեան մէջ ձայնով փող փոքձեմ.
Ուստի բարի՛քներ վայելէ.
Եւ ահա այս է՛ ունայնութիւն է,
2 Ուիծաղին համար բան ԹԷ Ցնծար է,
Եւ ուրախութեան համար՝ ԹԷ Ասոր ըրածն ի՞նչ է։
3 Սրտիս մէջ խորհեցայ որ մարմինս գինւով զուարճացուցանեմ,
Եւ խմաստութեան առաջնորդութեամբ անմտութիւնը ձանձնամ,
Որ տեսնեմ ԹԷ ինչ է մարդոց որդիներուն բարին՝
Զոր կրնան ընել երկնից տակ
Իրենց կենաց բոլոր օրերուն մէջ։
4 Մեծ գործեր ըրի.
Ինծի տուներ շինեցի, Ե՛ ինծի այգիներ անկեցի.
5 Ինծի պարտէզներ և դրախտներ շինեցի,
Եւ անոնց մէջ ամէն տեսակ պտուղ բերող ծառեր տնկեցի.
6 Ինծի ջրոյ աւազաններ շինեցի,
Որ անոնցմէ ծառ բուսցնող անտառը ոռոգուի.
7 Ծառաներ և աղախիններ առացայ,
Եւ իմ տանս մէջ ծնած ծառաներ ունեցայ՝
Եւ շատ արջառներ և հօտեր ունեցայ՝
Ինէ առաջ Երուսաղեմի մէջ եղողներուն ամէնէն աւելի։
8 Նաև ինծի արծաթ և ոսկի
Եւ թագաւորներու և գաւառներու գանձեր դիզեցի.
Ինծի այր և կին երգիչներ առացայ,
Եւ մարդոց որդիներուն զուարճութիւնները *՝ ամէն տեսակ շքեղութիւնե՝
9 Եւ ինէ առաջ Երուսաղեմի մէջ եղողներուն
Ամէնէն մեծ եղայ և բարգաւաճեցայ.
Իմաստութիւնս ալ իմ քովս կը կենար,
10 Եւ աչքերուս ամէն ցանկութիւնն ետնոնցմէ չպզտեցի,
Ե՛ սիրտս ամէն գեղակ ուրախութենէ զուրկ չթողուցի.
Այլ սիրտս բոլոր աշխատութիւններէս ուրախացաւ.
Եւ բոլոր աշխատութիւններէս բաժինս այս էր։
11 Եւ ես՝ ձեռքերուս բրած ամէն գործերուն,
Եւ ընելու համար իմ քրտած ամէն աշխատանացս նայեցայ,
Եւ ահա ամէնն ունայնութիւն և հոգւոյ ամնչանք էր,
Եւ արեւուն տակ օգուտ չկար։
12 Եւ ես դարձայ խմաստութիւնը տեսնելու,
Նաև յիմարութիւնը և անմտութիւնը։
Վասն զի թագաւորին ետևէն ևկող մարդն ի՞նչ կրնայ ընել
Ինչ որ արդէն ըրած են։
13 Ուստի տեսայ որ խմաստութիւնն անմտութենէն օգտակար է,
Ինչպէս որ լոյսը խաւարէն օգտակար է։
14 Խմաստնոյն աչքերն անոր գլուխն վրայ են,
Իսկ անմիտը խաւարի մէջ կը քալէ.
Բայց ես հասկցայ որ
Անոնց ամէնուն պատահած դիպուածը մի է։
15 Անսաեն սրտիս մէջ ըսի,
Որովհետև անմտին պատահածն ինծի ալ պիտի պատահի,
Ուրեմն ես ինչո՞ համար աւելի խմաստուն եղայ.
Եւ սրտիս մէջ խօսեցայ որ
Այս ալ ունայնութիւն է։
16 Վասն զի ինչպէս անմտին՝ նմնպէս խմաստնոյն ալ
Յաւիտեան յիշատակը չկայ.
Գալիքան ամէն բաներուն ամէնը
Ոպզպզալ ժամանակին մէջ պիտի մոռացուի.
Եւ խմաստունն ի՞նչպէս կը մեռնի։
Անտնին պէս։
17 Անոր համար այս կեանքէս զզուեցայ,
Վասն զի արեւուն տակ եղած գործերն ինծի գէշ երեցան,
Եւ սրտիս մէջ ամէնը ունայնութիւն և հոգւոյ ամնչանք էր։
18 Եւ ես արեւուն տակ քրտած բոլոր աշխատութիւնս ձգուեցայ,
Զանոնք ինէ ետքը գալու մարդուն պիտի թողում զայն.
19 Եւ ո՞վ գիտէ ԹԷ այն խմաստունն պիտի ըլլայ ԹԷ անմիտ.
Բայց պիտի տիրէ իմ բոլոր աշխատութիւններուս վրայ,
Որ արեւուն տակ աշխատեցայ,
Եւ անոնց մէջ խմաստութիւն ցուցուցի.
Նաև այս ունայնութիւն է։
20 Եւ ես դարձայ, որ արեւուն տակ քրտած բոլոր աշխատանքիս վրայ
Սրտէս յոյս կարէմ.
21 Վասն զի մարդ կայ որոյ աշխատութիւնն խմաստութեամբ, գիտութեամբ և յաջողութեամբ կ'ըլլայ,
Բայց անոր մէջ չաշխատող մարդուն ԷԲԼ բաժին կու տայ.
Այս ես ունայնութիւն և մեծ չարիք է։
22 Վասն զի մարդ արեւուն տակ քրտած բոլոր աշխատանքին
Եւ սրտին տանջանքին ի՞նչ օգուտ կ'ունենայ.
23 Քանզի անոր բոլոր օրերը՝ վիշտերով
Եւ գործքը տրտմութեամբ լեցուն են.
Անոր սիրտը գիշերն անգամ հանգիստ չգտներ.
Այս ես ունայնութիւն է։
24 Մարդս ուտելէ և խմելէ
Եւ իւր աշխատանքով իւր հոգին զուարճացուցնելէն աւելի ազէկութիւն չունի.
Ես այս ես տեսայ որ Աստուծոյ ձեռքով կ'ըլլայ,
25 Վասն զի *բաց ինէ՝ ո՞վ կարող է ուտել,
Եւ ո՞վ կարող է զուարճանալ,
26 Քանզի Աստուած՝ իրեն առջև հաճելի եղող մարդուն
Իմաստութիւն, գիտութիւն և ուրախութիւն կու տայ.
Բայց մեղաւորին զբաղմունք կու տայ,
Որ անկից ոստոստէ ժողվէ և դիզէ,
Որ Աստուծոյ առջև հաճելի եղողին տայ.
Նաև այս ունայնութիւն և հոգւոյ ամնչանք է։

Գլ. Գ

1 Ամէն բանի տեղը կայ,
Եւ երկնից տակ եղող ամէն *գործի ժամանակը.
2 Ծննդելու ժամանակ և մեռնելու ժամանակ,
Տնկելու ժամանակ և անկուածը խլելու ժամանակ,
3 Մեռցնելու ժամանակ և բժշկելու ժամանակ,
Փլցնելու ժամանակ և շինելու ժամանակ,
4 Լալու ժամանակ և ծիծաղելու ժամանակ,
Սուգ ընելու ժամանակ և կատաւելու ժամանակ,
5 Քարեր գետնս նետելու ժամանակ և քարեր ժողվելու ժամանակ,
Գրկելու ժամանակ և գրկելէ հեռանալու ժամանակ,
6 Փնտռելու ժամանակ և կորնցուցնելու ժամանակ,
Պահելու ժամանակ և գետս ձգելու ժամանակ,
7 Պատռելու ժամանակ և կարելու ժամանակ,
Լռելու ժամանակ և խօսելու ժամանակ,
8 Սիրելու ժամանակ և ատելու ժամանակ,
Պատերազմի ժամանակ և խաղաղութեան ժամանակ։
9 Աշխատողին իւր աշխատանքէն
Ի՞նչ օգուտ կ'ըլլայ։
10 Տեսայ այն զբաղմունքը զոր Աստուած մարդոց որդիներուն տուաւ,
Որ անով զբաղին։
11 Նա ամէնայն ինչ իւր ժամանակին վայելչաբար ըրաւ,
Ե՛ աշխարհս ալ անոնց սրտին մէջ դրաւ.

*Կամ մեծ առաւութեամբ։

*Կամ առանց Անոր

*Կամ գիտութենէն

Բայց Աստուծոյ ըրած գործը
Մարդ չկրնար սկիզբէն մինչև վերջը գտնել։
12 Ա՛յո գիտեմ որ ուրախ ըլլալ
Եւ կենդանութեան տեղն բարութիւն ընելէ զատ
Ուրիշ ապրելու բան մը չկայ անոնց մէջ,
13 Եւ նաև ամէն մարդուն ուտելը և խըմելը,
Եւ իւր բոլոր աշխատութենէն բարիք վայելելը
Աստուծոյ պարգևն է։
14 Գիտեմ որ Աստուծոյ ամէն ըրածն յաւիտեան պիտի մնայ։
Անոր վրայ բան ուղղուածնել, կամ անկէ պակսեցուցնել կարելի չէ։
Եւ Աստուած ընէ՛ր ըրաւ, որ անոր երկեղէն երկնչին։
15 Ինչ որ եղած է՝ հիմա ալ կայ։
Եւ ինչ որ պիտի ըլլայ՝ արդէն եղած է։
Եւ Աստուած անցածը կը փնտռէ։
16 Եւ նաև արեգական ներքև՝ տեսայ որ դատաստանի տեղ՝ ամբարշտութիւն,
Եւ արդարութեան տեղ անօրէնութիւն կար։
17 Ես իմ սրտիս մէջ բան ըրի՝ Աստուած պիտի դատէ արդարը և ամբարիշտը։
Վասն զի ամէն դիտաւորութեան և ամէն գործ ժամանակ մը ունի հոն։
18 Ես իմ սրտիս մէջ բան
Մարդոց որդիներուն վիճակին վրայ,
Թէ Աստուած զանոնք պիտի փորձէ։
Եւ պիտի տեսնեն որ իրենք գառնասուններ են,
19 Վասն զի մարդոց որդիներուն պատահածը,
Եւ անասուններուն պատահածը մի է։
Մին ինչպէս կը մեռնի, միւսն ալ այնպէս կը մեռնի։
Եւ ամենուն շունչը մի է։
Եւ մարդը անասունէն աւելի բան մը չունի,
Վասն զի ամէնն ունայնութիւն է։
20 Ամէնը մէկ տեղ կ՚երթայ։
Ամէնը հողէն եղաւ, և ամէնը հող կը դառնայ։
21 Ո՞վ գիտէ թէ մարդոց որդիներուն հոգիները վեր կ՚ելլէն,
Եւ անասնոց հոգիները վար գետինը կ՚իջնեն։
22 Եւ տեսայ որ մարդուս իւր գործերով ուրախ ըլլալէն զատ
Ուրիշ ապրելու բան մը չունի,
Քանզի անոր բաժինն այն է։
Վասն զի ո՞վ պիտի անոր տանի որ տեսնէ
Թէ իրեն հետը ինչ պիտի ըլլայ։

## Գլ. Դ

1 Ես ետ դարձայ և տեսայ
Արևուն տակ եղած բոլոր զրկանքը։
Եւ ահա արիւնածներուն արտասուքը կաթ,
Բայց անոնք մխիթարուիչ չունին։
Եւ անոնց զրկանք ընողներուն ձեռքը այժ կար,
Բայց անոնց մխիթարուիչ չունին։
2 Եւ ես մեռածները արդէն մեռածները
Մինչև հիմա ապրող կենդանիներէն աւելի գովեցի։
3 Բայց այն որ մինչև հիմա եղած չէ՝ երկուքէն ալ աղէկ է,
Վասն զի անիկա արևուն տակ եղած չարութիւնը չտեսաւ։
4 Եւ ես ամէն աշխատութիւն
Եւ ամէն յաջող գործ տեսայ,
Որ անոնց հասնար մարդ իւր ընկերին կը նախանձի։
Ա՛յս ես ունայնութիւն և հոգւոյ ամբոխանք է։
5 Անհոգ իւր ձեռքերը կը ծալէ,
Եւ իւր մէսը կ՚ուտէ։
6 Աւելի աղէկ է մէկ լեցուն ձեռք հանգրստութեամբ,
Քան թէ երկու լեցուն ձեռք՝ որ աշխատանքով և հոգւոյ ամբոխանքով է։
7 Եւ ես դարձայ և արևուն տակ ունայնութիւն տեսայ։
8 Մարդ մը կայ որ երկրորդ չունի,
Ոչ ալ որդի ունի և ոչ եղբայր։
Բայց անոր ամէն աշխատութիւնը վախճան չունի,
Եւ անոր աչքը հարստութեամբ չէն յագենար,
Եւ չըսեր Ես ու՞մ համար կ՚աշխատիմ,
Եւ իմ հոգիս բարիքէ կը զրկեմ.
Ա՛յս ևս ունայնութիւն և չար զրաղմունք է։
9 Երկուքը մէկէն աղէկ է,
Վասն զի անոնց աշխատանքն ունէկ վարձք ունի։
10 Քանզի եթէ իյնան՝ ոեւոր կը վերցունէն.
Բայց վա՜յ մէկուն որ մէկուն
Որ վերցունող երկրորդ մը չունի։
11 Եւ երկու մարդ ձէ՛ռ պառկիլով կը տաքնան։
Բայց մինակն ի՞նչպէս կրնայ տաքնալ։
12 Եւ եթէ մէկն անոնց բանաթիւն ընէ,
Երկուքը կրնան անոր դէմ դնել.
Եւ երեքպատիկ ղերձանը գիւրաւ չ՚կտրուիր։
13 Աղէկ է ապուռ և խնամաւոն պատն,
Քան ծեր և անմիտ թագաւորը՝
Որ ալ չգիտեր խրատուիլ։
14 Քանզի ինքը բանտէն ելլելէ՝ որ թագաւորէ,
Բայց ծնունդ իջէ որ *թագաւոր ծնած է, աղքատ կ՚ըլլայ։
15 Տեսայ արևուն տակ քալող բոլոր կենդանիները,
Ա՛յն պատան հետ որ երկրորդն երկրորդը կը,
16 †Անոնց առջև կեցող բոլոր ժողովուրդն անթիւ էր։
Սակայն հետքը նկողնեցին անկէ որ պիտի չգոհանան։
Ա՛յս ևս ունայնութիւն և հոգւոյ ամբոխանք է։

## Գլ. Ե

1 Երբ Աստուծոյ տունը կ՚երթաս, ոտքդ զգուշութեան ըրէ։

*Կամ իւր թագաւորութեան մէջ
†Կամ Անոնցմէ առաջ եղող



Եւ աւելի մտիկ ընելու մտօքիվ,
Քան թէ անմիտներուն զոհ մատուցանելու։
Վասն զի անոնք չեն գիտեր թէ չարութիւն կ՚ընեն։
2 Բերնովդ մի աճապարիր,
Եւ քու սրտդ Աստուծոյ առջև խօսք հանելու չխուժի։
Քանզի Աստուած երկինքն է, և դուն երկրի վրայ ես,
Անոր համար քու խօսքերդ փիչ ըլլան։
3 Վասն զի երազը շատ զբաղմունքէ յառաջ կու գայ,
Եւ յիմարին ձայնը՝ շատ խօսքերէ։
4 Երբ Աստուծոյ ուխտ կ՚ընես,
Կատարել գայն մի ուշացնէրնը.
Քանզի Աստուած անմիտներուն չհաճիր.
Ըրած ուխտդ կատարէ։
5 Աղէկ է որ ուխտ չընես,
Քան թէ ուխտ ընես և չկատարես։
6 Թող մի տար որ բերանդ մարմնոյդ մեղք գործել տայ,
Եւ հրեշտակին առջև մի ըսեր թէ Սխալանք եղաւ։
Ինչո՞ւ Աստուած քու խօսքիդ համար բարկանայ,
Եւ ձեռքերուդ գործն ապչէ։
7 Վասն զի երազներու շատութեան մէջ
Եւ խօսքերու շատութեան մէջ
Ունայնութիւններ ալ կան։
Բայց դուն Աստուծմէ վախցիր։
8 Եթէ գաւառի մէջ աղքատին եղած զրկանքը
Եւ իրաւանց և արդարութեան ծռութիւնը տեսնես,
Այս բանիս վրայ մի զարմանար։
Վասն զի բարձրերուն վրայ բարձր եղողը կը դիտէ.
Եւ աոաջնումէ Բարձրը կայ։
9 Երկրին ամենուն ալ օգտակար է։
Թագաւորին ծառայ արտէն ծառայութիւն կ՚ըլլայ։
10 Արծաթի սիրողն արծաթէն չյագիր,
Եւ ոչ հարստութիւն սիրողը՝ էրէսէ բերքն.

*Եբր. յաւիտեան իր

Այս ևս ունայնութիւն է,
11 Երբ բարիքը կը շատնայ,
Ուստոնք ալ կը շատնան.
Ուրնմն զայն ունեցողներուն՝
Աչքով տեսնելէն զատ ի՞նչ օգուտ կ'ըլլայ,
12 Քաղցր է աշխատող մարդուն քունը՝
Թէ՛ շատ և թէ՛ քիչ ուտէ.
Բայց հարուստին *կուշտ ըլլալը՝
Զքնդուլը որ անկիս հանդարտ քնանայ,
13 Արեւուն տակ տեսայ որ գէշ ցաւ մը կայ,
Այսինքն այն հարստութիւնը որ իր տիրոջը ձախորդութեան համար պահուած է.
14 Եւ այն հարստութիւնը ձախորդ †պատահարով մը կը կորսուի.
Եւ ինք ոդայ կը ծնանի, և անոր ձեռքը բան մը չկայ.
15 Ինչպէս որ իր մօրը որովայնէն եկաւ, Անդէնս մերկ կը դառնայ.
Ինչպէս որ եկաւ, այնպէս կ'երթայ,
Եւ իր աշխատութենէն բան չառներ որ իրեն հետ առնի,
16 Այս ևս գէշ ցաւ է,
Որ ինչպէս եկաւ, ճիշդ այնպէս կ'երթայ.
Եւ ինչ օգուտ կ'ըլլայ անոր՝
Որ հովի համար կ'աշխատի,
17 Անիկա իր բոլոր օրերը խաւարի մէջ կ'ուտէ
Մեծ արամութեամբ, հիւանդութեամբ և սրտմտութեամբ.
18 Ահա այս ազնութիւնը տեսայ,
Որ վայելուչ է ուտել և խմել,
Եւ Աստուծոյ մէկու մը տուած կենաց բոլոր օրերուն մէջ՝
Արեւուն տակ իր կրած բոլոր աշխատանաց բարիքը վայելել,
Վասն զի անոր բաժինն այս է,
19 Եւ որ մարդուն որ Աստուած հարստութիւն և առաջադրանք կու տայ,
Եւ անկէ ուտելու և բաժինն առնելու,
Եւ իր աշխատանքէն ուրախանալու իշխանութիւն կու տայ,
Անիկա Աստուծոյ պարգեւն է.
20 Քանզի անիկա իր կենաց օրերը շատ չյիշէր.
Վասն զի Աստուած անոր սրտին ուրախութեամբ պատասխան կու տայ,

## Գլ. Ը

1 Արեւուն տակ տեսայ որ չարիք մը կայ,
Եւ անիկա մարդոյ մէջ շատ կը †դնուի,
2 Մարդ մը՝ որուն Աստուած հարստութիւն և ստացուածք և փառք կու տայ,
Այնպէս որ իր հոգւոյն ցանկացած բաներէն պակասութիւն մը չունենար.
Բայց Աստուած անոր իշխանութիւն չտար անկէ ուտելու,
Այլ օտար մարդ կ'ուտէ զայն.
Այս ևս ունայնութիւն և գէշ ցաւ է,
3 Եթէ մարդ հարիւր զաւակ ծնանի,
Եւ շատ տարիներ ապրի,
Եւ անոր տարիներուն օրերը շատ ըլլան,
Եւ անոր հոգին բարութենէն չյագի,
Եւ անիկա թաղում անգամ չունենայ,
Կ'ըսեմ որ վիժածն անկէ աղէկ է.
4 Վասն զի ասիկա ունայնութեամբ կու գայ, և խաւարով կ'երթայ,
Եւ անունը խաւարի մէջ կը ծածկուի.
5 Արեւն ալ չտեսաւ և բան մը չգիտցաւ.
Անիկա միւսէն աւելի հանգիստ է,
6 Իսկ անիկա թէև երկու հազար տարի ապրի,
Եւ բարութիւն չտեսնի,
Մի՞թէ ամէնքը մէկ տեղ չե՞ն երթար,
7 Մարդուն բոլոր աշխատութիւնը իր բերնին համար է,
Սակայն անոր հոգին չյագենար,
8 Քանզի իմաստունն անմիտէն աւելի ի՞նչ բան ունի.
Կենդանիներուն մէջ գալով գիտցող տգիտութն ի՞նչ կ'ուտնենայ,
9 Աչքով տեսնելը հոգւով *փափաքելէն լաւ է.

*Կամ առաւութիւնը †Կամ գործով

*Եբր. քալելէն



Այս ևս ունայնութիւն և հոգւոյ տանջանք է,
10 Ինչ որ եղաւ, արդէն անոր անուն դրուած է,
Եւ յայտնի է թէ մարդն է.
Եւ անիկա իրմէ զօրաւորին հետ վիճելու կարող չէ,
11 Որովհետև ունայնութիւն շատցուցնող շատ բաներ կան,
Մարդուն ի՞նչ կը մնայ,
12 Քանզի ո՞վ գիտէ թէ ո՛ր բանն աղէկ է կենդանի մարդուն՝
Սուտերի պես անցուցած իր ունայն կենաց բոլոր օրերուն մէջ.
Վասն զի մարդուն ո՞վ պիտի յայտնէ,
Թէ երկրի տակը արեւուն տակ ի՞նչ պիտի ըլլայ,

## Գլ. Թ

1 Ի՜ր անուն՝ հոտաւէտ իւղէ,
Եւ մահուան օրը ծննդեան օրէն լաւ է.
2 Սուգի տուն երթալը
Կոչնականի տուն երթալէն լաւ է.
Վասն զի ամէն մարդու վախճանն այն է,
Եւ կենդանի եղողը շո՜ւտ իր սրտին մէջ կը դնէ,
3 *Տրտմութիւնը ծիծաղելէն լաւ է,
Վասն զի երեսին տրտմութեամբ սիրտը †կը զուարճանայ,
4 Իմաստուններուն սիրտը՝ սուգի տունը,
Իսկ յիմարներուն սիրտն ուրախութեան տունը կ'ըլլայ.
5 Իմաստնոյն յանդիմանութիւնը լսել
Յիմարներուն երգը լսելէն լաւ է,
6 Վասն զի ինչպէս է փուշերուն ձայնը կաթսային տակ,
Յիմարներուն ծիծաղն ալ այնպէս է.
Այս ևս ունայնութիւն է,
7 Իրաւ որ բռնութիւնն իմաստունը յիմար կ'ընէ,
Եւ պարգեւը խրտչուռն սիրտը կ'ապականէ,
8 Մէկ բանին վախճանը սկիզբէն լաւ է.

*Կամ Սրտմտութիւնը
†Կամ բարի կ'ըլլայ,

Երկայնամիտ ոգին հպարտ ոգեկէն լաւ է,
9 Մի՛ աճապարիր հոգւովդ բարկանալ,
Քանզի բարկութիւնը յիմարներուն ծոցին մէջ կը հանգչի.
10 Մի՛ ըսեր թէ ինչո՞ համար առաջի օրերն այս օրերէն լաւ էին,
Վասն զի այս բանիս համար ըրած հարցմունքդ իմաստութեամբ չէ.
11 Իմաստութիւնը ժառանգութեան պէս աղէկ է,
Եւ արեւը տեսնողներուն օգտակար է,
12 Վասն զի իմաստութիւնը հովանաւորութիւնն է՝ կ'ընէ,
Եւ արծաթը հովանաւորութիւն է՝ կ'ընէ.
Բայց գիտութեան օգուտն այս է
Որ իմաստութիւնը զինք ստացողները կ'ապրեցնէ.
13 Աստուծոյ գործին նայէ,
Վասն զի անոր ծռածն ո՞վ կրնայ շտկել.
14 Աղէկ օրը աղէկութեամբ անցու՛ր,
Եւ գէշ օրը դժբաղդութեան ըրէ.
Եւ Աստուած իրարու դիմաց դրաւ դանդ,
Որ մարդ իրմէ ետքը բան մը չգտնէ.
15 Իմ ունայնութեան օրերուս մէջ ամէնը տեսայ.
Արդար կայ որ իր արդարութեան մէջ կը կորսուի,
Եւ ամբարիշտ կայ որ իր ամբարշտութեան մէջ երկարօրեայ կ'ըլլայ.
16 Խիստ շատ արդար մի ըլլար,
Եւ ինքզինքդ չափէ դուրս իմաստուն մի՛ կարծեր.
Ինչո՞ւ համար զքեզ կորնչացնես,
17 Շատ ամբարիշտ մի ըլլար և յիմար մի ըլլար.
Ինչո՞ւ համար առանց չեզած մեռնիս,
18 Լաւ է որ մէկը բռնես, և միւսէն ձեռքդ չքաշես.
Վասն զի Աստուծմէ վախցողն ամէնն ալ դուրս կ'ելլէ.
19 Իմաստութիւնն աւելի զօր կու տայ իմաստունին,

քան թէ քաղաքի մէջ եղող ատոր իշխանն՝ այն *տաղտիկն։
20 Աբդաբև երկրի վրայ արդար մարդ չկայ
Որ ապրի՛ւթիւն ընէ, և մեղք չգործէ։
21 Արդ, քու սիրոդ ամէն խօսուածդ խօսքերուն մի ատր,
Որ ծառայիդ քեզի անէծք ատլը չլսես.
22 Վասն զի սիրտդ գիտէ
Որ դուն ալ շատ անգամ ուրիշներուն անէծք տուած ես։
23 Աստոց ամէնքն իմաստութեամբ վորձեցի։
Ըսի թէ ես իմաստուն ըլլամ՝
Բայց անիկա ինէ հեռու էր։
24 Հեռուն ինչ ըլլալը,
Եւ շատ խորունկ եղածն ո՞վ կը գտնէ։
25 Ես իմ սրտովս ստուգեցայ՝ որ դիտնամ և քննեմ
Եւ փնտռեմ իմաստութիւն և հանճար.
Եւ յիմարութեան չարութիւնը
Եւ անմտութիւնը՝ խենդութիւնը գիտնամ։
26 Եւ ես գտի զմահ դառն գտայ այն կինը՝
Որոյ սրտին մէջ ցանցեր և ուռկաններ
Ե՛ձեռքերուն մէջ կապանք կան.
Աստուծոյ առջև հաճելի եղողն անկէ ի՛ազատի,
Բայց մեղաւորն անկէ կը բռնուի։
27 Ահա զայս գտայ, ի՛բակ ժողովողը,
Մի մի հաշիւը գտնելու համար։
28 (Զոր հոգիս ամէնէն կը փնտռէ,
Բայց չեմ կրնար գտնել.)
Այր մարդ՝ հազարէն մէկ գտայ,
Բայց բոլոր ատոց մէջ մէկ կին չգտայ։
29 Ահա միայն սա գտայ
Որ Աստուած մարդն ուղիղ առեղծեց,
Բայց անոնք շատ հնարք փնտռեցին։

## Գլ. Ը

1 Իմաստնոյն պէս ո՞վ կայ.
Եւ խօսքի մեկնութիւնն ո՞վ գիտէ.
Մարդու իմաստութիւնն անոր երեսը
կը փայլեցնէ,
Եւ երեսին պնդութիւնը կը փոխուի։
2 Ես կ'ըսեմ որ թագաւորին հրամանը պահէ.
Մանաւանդ Աստուծոյ երդմնան պատճառաւ։
3 Անոր առջևէն երթալու մի աճապարեր.
Չար գործի մէջ մի կենար,
Վասն զի անիկա ինչ որ ուզէ՝ կ'ընէ։
4 Ուր որ թագաւորին խօսքը կայ, հոն իշխանութիւն կայ,
Եւ ո՞վ կրնայ անոր ըսել թէ ինչ կ'ընես։
5 Պատուիրանքը պահողը չարի չգիտնի՝ պիտի.
Եւ իմաստնոյն սիրտը ժամանակը և յարմարութիւնը կը ճանչնայ։
6 Վասն զի ամէն գիտաւորութիւն ի՛ր ժամանակը և յարմարութիւնն ունի,
Թանզի մարդուն վրայ շատ նեղութիւն կու գայ։
7 Վասն զի անիկա բլլալու բանը չգիտեր.
Եւ ո՞վ պիտի յայտնէ անոր թէ ինչպես պիտի բլլայ։
8 Հոգի՝ այն վրայ իշխող մարդ չկայ, որ հոգին արգիլէ,
Եւ մահուան օրուան վրայ ալրդի չկայ.
Եւ այն պատերազմին մէջ *արձակուրդ չկայ.
Եւ ամբարշտութիւնն իրեն հետևորներըը չազատեր։
9 Ասոնց ամէնը տեսայ,
Եւ արևուն տակ եղող ամէն գործին իմ սիրտս տուի.
Ատեն կայ որ մարդ մը ուրիշ մարդու վրայ կ'իշխէ
Իրեն թշուառութեան համար։
10 Եւ տասր հետ տեսայ ամբարիշտները
Որ թաղուելուն գացին և անոր տեղէն եկան,
Եւ մոռցուելան այն քաղաքին մէջ՝
ուր այնպէս ըրին.
Ասիկա եւս ունայնութիւն է։
11 Որովհետև գէշ գործին վրայ վճիռը չուտով չկատարուիր,
Ասոր պատճառաւ մարդոց որդիներուն սիրտը

*Կամ զինագադարուան



Զարութիւն ընելու ֆութով լեցուած է,
12 Թէ և մեղաւորը հարիւր անգամ չարութիւն ընէ,
Եւ անոր կեանքը երկարնայ,
Սկսայ ամենայնին աստուծ գիտեմ որ բարութիւնը՝
Աստուծմէ վախցողներուն, անոր երեսէն վախցողներուն պիտի ըլլայ,
13 Բայց ամբարշտին բարութիւն պիտի չըլլայ.
Եւ անիկա ինէ օրերը պիտի չերկընցնէ, այլ սաւառնի պէս պիտի ըլլայ.
Վասն զի Աստուծոյ երեսէն չվախնար։
14 Ուրնայնութիւն մը կայ, որ աշխարհիս վրայ կ'ըլլայ.
Այսինքն արդարներ կան, որոց ամբարիշտներուն գործին պէս կը պատահի.
Եւ ամբարիշտներ կան, որոց արդարներուն գործին պէս կը պատահի.
Ըսի որ Սկսա եւս ունայնութիւն է։
15 Եւ ես ուրախութիւնը գովեցի,
Վասն զի մարդ արևուն տակ՝
Ուտելէ, խմելէ և ուրախութիւն ընելէ զատ
Ազեկ բան չունի.
Վասն զի արևուն տակ Աստուծոյ անոր առած կենաց օրերուն մէջ
Իր աշխատանքէն այս կը մնայ անոր։
16 Երբ ես իմ սիրտս տուի խնամութիւնն գիտնալուս,
Եւ երկրի վրայ եղած զբաղմունքը տեսնելուս,
(Վասն զի թէ ցորեկ և թէ գիշեր
Իր աչքը քուն չտեսնող հոգի կայ,)
17 Աստուծոյ բոլոր գործերուն հասկցայ,
Որ մարդ չկրնար գտնել այն գործը՝
որ արևուն տակ կ'ըլլայ։
Վասն զի մարդ կ'աշխատի փնտռել,
բայց չգտնէր,
Եւ թէև իմաստունն ալ գիտնամ ըսէ՝
գտնելու կարող չըլլար։

Գլ. Թ

1 Վասն զի այս ամէնն իմ սրտիս մէջ դրի,
Որ այս ամէնը քննեմ,
Որ արդարները և իմաստուններն և անոնց գործերը
Աստուծոյ ձեռքը մէջ են.
Մարդ չգիտեր թէ սէրը և թէ ատելութիւնը.
Ամէն բան անոնց առջևն է։
2 Ամէն բան ամենուն հաւասարապէս կը պատահի,
Արդարին և ամբարշտին,
Բարի հաւատացեալին, մաքրին և անմաքրին,
Զոհ բնողին և զոհ չբնողին.
Որպոհետ գիպուածը մէկ է.
Ինչպէս է բարի հոգիը, մեղաւորն ալ այնպէս է,
Երդում բնողը երդում ուզողի պէս է։
3 Արեւուն տակ եղած բոլոր գործերուն մէջ գէշ բան այս է,
Որ ամենուն պատահած գիպուածը մէկ է.
Եւ նաև մարդոց որդիներուն սիրտը
Չարութեամբ լեցուած ըլլալով,
Իրենց կենդանութեան առեն իրենց սրտին մէջ խենդութիւն կայ,
Եւ ետքը մեռելներուն կ'երթան։
4 Քանզի բոլոր կենդանիներուն ընկերացած մարդուն յոյս կայ.
Վասն զի ողջ շունը մեռած առիւծէն լաւ է,
5 Քանզի կենդանիները գիտեն որ պիտի մեռնին.
Բայց մեռելները բան մը չեն գիտեր,
Եւ ալ *վարձք մը չեն առներ.
Վասն զի անոնց յիշատակը մոռցուեցաւ.
6 Թէ անոնց սէրը, թէ ատելութիւնը
Եւ թէ նախանձն արդէն կորսուեցան.
Եւ անոնք արևուն տակ եղող բաներուն մէջ
Ալ բաժնի չունին,

*Կամ չան

7 Գնա հացդ ուրախութեամբ կեր,
եւ գինիդ ուրախ սրտով խմէ,
վասն զի արդէն Աստուած քու գործերուդ հաւնեցաւ։
8 Հանգերձներդ ամէն առեն ճերմակ ըլլան,
եւ գլխուդ վրայէն իւղը պակաս չըլլայ։
9 Կնոջ հետ զոր կը սիրես կեանքը վայելէ
քու ունայնութեան կենացդ բոլոր օրերուն մէջ,
Որ Աստուած քեզի տուաւ արեւուն տակ
քու ունայնութեանդ բոլոր օրերուն մէջ.
վասն զի այս կենաց մէջ քու բաժինդ այն է
Արեւուն տակ կրած աշխատանքէդ։
10 Ձեռքդ ինչ որ գտնէ ընելէ,
բոլոր ուժովդ ըրէ.
քանզի գերեզմանին մէջ ուր պիտի երթաս՝
գործ, խորհուրդ, գիտութիւն և իմաստութիւն չկայ։
11 Դարձայ և արեւուն տակ տեսայ,
Որ ճամբան վազողներուն չէ,
եւ պատերազմը զօրաւորներուն չէ.
եւ նաև հացն իմաստուններուն չէ,
եւ հարստութիւնն ալ հանճարեղներուն չէ,
եւ նաև շնորհքը գիտուններուն չէ.
Այլ ժամանակ և դիպուած կը պատահի ամենուն։
12 վասն զի մարդ իր առենն անգամ չը գիտեր.
ինչպէս որ ձուկերը չար ուռկանով կը բռնուին,
եւ թռչունները ծուղակի մէջ կը բռնուին,
նոյնպէս մարդոց որդիներն որոգայթի մէջ կ'իյնան,
երբ չար ժամանակն յանկարծ անոնց վրայ կու գայ։
13 Արեւուն տակ այս իմաստութիւնն ալ տեսայ,
եւ այն մեծ երեւցաւ ինձ.
14 փոքրիկ քաղաք մը՝ և մէջն ալ քիչ մարդ կար,
եւ անոր վրայ մեծ թագաւոր մը եկաւ և զայն պաշարեց,
եւ անոր դէմ մեծ պատնէշներ շինեց.
15 եւ անոր մէջ աղքատ իմաստուն մը գտնուեցաւ,
եւ անիկա իր իմաստութեամբ քաղաքն ազատեց.
Բայց այս աղքատ մարդը ընաւ յիշող չեղաւ։
16 Ասոնէն բան թէ
Իմաստութիւնը լաւ է քան զզօրութիւն,
Թէև աղքատին իմաստութիւնը կ'անարգուին,
եւ անոր խօսքերը մարդ չեն ըներ։
17 Իմաստուններուն մեղմ խօսքերը՝
Յիմարներուն մէջ իշխան եղողին ազատակէն աղէկ կը լսուին։
18 Իմաստութիւնը պատերազմական զէնքերէն լաւ է.
Բայց մէկ մեղաւորը շատ բարութիւններու կորստեան պատճառ կ'ըլլայ։

## Գլ. Ժ

1 Մեռած ճանճերը խզագործին իւղը գարշահոտ կ'ընեն.
փիչ մը անմտութիւնն ալ *իմաստութեամբ և պատուով երեւելի հարստութենէ մարդն ալ։"
2 Իմաստունին սիրտն անոր աջ կողմն է,
եւ անմտին սիրտն անոր ձախ կողմն է։
3 Եւ անմիտ մարդը ճամբան քալելու առենն ալ,
խելքը պակաս ըլլալուն համար, իւր յիմար ըլլալն ամենուն կը յայտնէ։
4 Եթէ իշխանին բարկութիւնը քեզի դէմ ելլէ,
դու տեղդ մի թողուր.
վասն զի քաղցրութիւնը մեծ յանցաւածներ կը դադրեցնէ։
5 Արեւուն տակ չարութիւն մ'ալ տեսայ,

*Կամ իմաստութենէ և պատուէ աւելի երեւան կ'ելլէ։



Որ իշխանին երեսէն ելած անխոհեմութիւն մը ըլլալ կ'երեւնայ։
6 Անմտութիւնը շատ բարձր տեղերու վրայ կը դրուի.
եւ հարուստները ցած տեղ կը նստին։
7 Տեսայ ծառաները՝ ձիերու վրայ հեծած էին,
եւ իշխանները՝ որ երկրի վրայ ծառաներու պէս կը քալէին։
8 Փոս փորողն ինք մէջը կ'իյնայ,
եւ օձ կը խածնէ ցանկ քակողը։
9 Քարեր կոտրողն անոնցմէ կը վիրաւորի,
եւ փայտ ճեղքողն անկէ վտանգի մէջ կ'ըլլայ։
10 Եթէ երկաթը բթացած է, և ոեռը բերանը չսրէ,
Անատեն յոգնած կ'ըլլայ այժը *կրկնապատկելու է.
Բայց իմաստութիւնն յաջողելու օգուտ ունի։
11 Եթէ օձը թօթվելէն առաջ խածնէ,
Անատեն թովչին օգուտ չմնար։"
12 Իմաստնոյն բերնին խօսքերը շնորհք են.
Բայց անմտին շրթունքը կը կլլեն զնա։
13 Անոր բերնին խօսքերուն սկզբնաւորութիւնն անմտութիւն է,
եւ անոր խօսքին վերջը գէշ խենդութիւն է։
14 Եւ յիմարը չոգը խօսքերը կը շատցունէ.
Մարդս ինչ ըլալիքը չգիտեր,
Եւ անոր ա՛վ պիտի յայտնէ
Թէ անկէ ետքը ի՛նչ պիտի ըլլայ։
15 Յիմարներուն աշխատանքը զանոնք կը ձանձրացունէ
Քաղաք երթալ չգիտցողին պէս։
16 Վա՛յ քեզ, երկիր, երբ թագաւորդ մանուկ է,
եւ իշխաններդ առտուանց կ'ուտեն։
17 Երանի քեզ, երկիր, երբ թագաւորդ ազնուազարմ է,
եւ իշխաններդ առեղով կ'ուտեն՝
Ուժոյ համար և ոչ թէ արբենալու համար։
18 Շատ ծուլութեամբ չինքը կը փլչի,
եւ ձեռաց թուլութեամբ տունը կը կաթի։
19 Կոչունքը ծիծաղելու համար կ'ընեն,
եւ գինին կեանքը կ'ուրախացունէ.
Իսկ արծաթին ամէն բաներէ բաւական կ'ըլլայ։
20 Մտքիդ մէջ անգամ թագաւորին անէծք մի տար,
եւ քու պառկելու սենեակներուդ մէջ մեծերուն անէծք մի տար։
վասն զի երկինքի թռչունն այն ձայնը կը տանի,
եւ թեւաւորը խօսքը կը պատմէ։

## Գլ. ԺԱ

1 Քու հացդ յուրերու երեսին վրայ ձգէ,
վասն զի շատ օրեր ետքը պիտի գըտնես զայն։
2 Եօթնին և ութին ալ բաժին տուր,
վասն զի չես գիտեր թէ երկրիս վրայ ինչ պատուհաս պիտի ըլլայ։
3 Եթէ ամպերը լեցուն ըլլան,
երկրիս վրայ անձրեւ կը թափին.
Եւ երբ ծառ մը դէպ ի հարաւ կամ դէպ ի հիւսիս ինյայ,
Այն ծառն ինկած տեղը կը մնայ։
4 Հովը դիտողը չկրնար ցանել,
եւ ամպերուն նայողը չկրնար հնձել։
5 Ինչպէս որ դուն *հովին ճամբան որն ըլլալը,
և յղւոյն որովայնին մէջ ոսկրներուն ինչպէս իմացմունք չես գիտեր,
Այնպէս ամենատեղծ Աստուծոյն գործը չես գիտեր։
6 Առաւօտուն սերմդ ցանէ,
եւ երեկոյին ձեռքդ պառակ մի թողուր.
վասն զի չես գիտեր թէ որն օգտակար պիտի ըլլայ, այս թէ այն,

*Կամ հոգւոյն

Կամ թէ երիտքն հաւանարարեալ ա-
ղջկէ պիտի լլլան,
7 Արգելւ լսոր գաղտը է,
Եւ արև անոնել աչաց ահաւորելի
է.
8 Բայց թէև մարդ չաս ատրէ ապրի,
Եւ անոնց ամենուն մէջ ուրախանայ,
Խնամարի օրերն ալ յիշելու է,
Վասն զի անոնք չաս պիտի լլլան.
Բոլոր գալիքն ունայնութիւն է.
9 Ով երիտասարդ, քու մանկութեանդ
մէջ ուրախ եղիր,
Եւ երիտասարդութեանդ օրերուն մէջ
սիրտդ քու ջեզ զուարճացուներ.
Եւ քու սրտիդ ճամբաներովը
Եւ աչքերուդ նայուածքով գնալ.
Բայց գիտցիր որ ասոնց ամենուն հա-
մար
Աստուած զքեզ դատաստանի պիտի
բերէ.
10 Եւ քու սրտէդ տրտմութիւնը վերցուր,
Եւ մարմնիդ չարութիւնն հեռացուր,
Վասն զի մանկութիւնը և երիտասար-
դութիւնն ունայնութիւն է։

ԳԼ. ԺԲ

1 Եւ քու Ստեղծիչդ երիտասարդու-
թեանդ օրերուն մէջ յիշէ
Գնա՛ մինչ տառապութեան օրերը չհասն,
Եւ այն տարիները չհասած,
Որոց մէջ պիտի ըսես թէ Անոնց չեմ
հաճիր.
2 Արեը, լոյսը, լուսինը և աստղերը չը
խաւարած,
Եւ անձրևին հետէն ամպերը չդար-
ձած.
3 Այն օրը որ տան պահապանները պի-
տի դողան,
Եւ զօրաւոր մարդիկ պիտի ծռին,
Եւ պտտողները քիչ մնալուն համար
պիտի դադարին,
Եւ պատուհաններէն նայողները պիտի
մթննան.
4 Եւ երը ազօրուն ձոյները ակռաննայ,
Փողոցներուն մէջ գուռները պիտի գո-
ցուին.
Եւ թռչնոյ ձայնով պիտի ելլեն,
Եւ բոլոր երգեցող աղջիկները նկուն
պիտի լլլան.
5 Եւ բարձրէն պիտի վախնան,
Եւ ճամբուն մէջ վախկոտ պիտի լլլան.
Եւ նշենին պիտի ծաղկի,
Եւ մարախը ծանրութիւն պիտի հա-
մարուի,
Եւ *ախորժակը պիտի դադրի.
Վասն զի մարդ իր յաւիտենական
տունը կ'երթայ,
Եւ լացողները փողոցներուն մէջ պիտի
չրջին.
6 Գնա՛ արծաթէ թելը չկրծած,
Եւ ոսկիէ բաժակը չկոտրած,
Եւ սափորն աղբիւրին քով չկշռած,
Եւ չրհորին վրայի անիւը չկոտրած.
7 Անատեն հողը երկիր պիտի դառնայ
ինչպէս եղած է.
Եւ հոգին Աստուծոյ պիտի դառնայ
որ զայն առաւ.
8 Ունայնութիւն ունայնութեանց, ը-
սաւ Ժողովողը,
Ամէն բան ունայնութիւն է։
9 Եւ որչափ Ժողովողն իմաստուն էր,
Ա՛ն†ալ Ժողովողեան գիտութիւն սոր-
վեցուց.
Եւ †խորհելով և քննելով
Շատ առակներ չարադրեց։
10 Ժողովողը փնտռեց որ ախորժելի խօս-
քեր գտնէ.
Եւ գրուածն ուղիղ և ճշմարիտ խօս-
քեր են.
11 Իմաստուններուն խօսքերը խթան-
ներու պէս են,
Եւ ժողովներու տէրերէն գամուած
բևեռներու պէս՝ մէկ հովուէ
արուած.
12 Վերջապէս, որդեակ իմ, անոնցմէ ը-
րած առ.
Շատ գիրք չինելը ծայր չունի,
Եւ չատ կարդալը մարմինը կը յոգնե-
ցունէ։
13 Ա՛յս բոլոր խօսքին վախճանը լսենք.

*Կամ կատպարը ‡Ըստ ի-ն †Կամ կշռելով



Աստուծմէ վախցիր և անոր պատուէ-
րանները պահէ,
Վասն զի մարդուս բոլոր պարտաւո-
րութիւնը այս է։
14 Քանզի Աստուած ամէն գործ,
Ամէն ծածուկ բաներու հետ,
Թէ բարին և թէ չարը դատաստանի
պիտի բերէ։

# ԵՐԳ ԵՐԳՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Երգ երգոց Սողոմոնի։
2 Իր բերնին համբոյրներով թող համ-
բուրէ զիս.
Վասն զի քու սէրդ գինիէն քաղ է,
3 Քու իւղերուդ հոտն անարժէքի է,
Քու անունդ թափուած իւղի պէս է,
Անոր համար օրիորդները քեզ կը սի-
րեն,
4 Զիս քաշէ, քու ետեւէդ պիտի վազենք.
Թագաւորն իր ներքին սենեակները
տարաւ զիս.
Բեզ հետ ցնծանք և ուրախանանք,
Քու սէրդ գինիէն աւելի յիշենք.
Բեզ *ուղղութեամբ կը սիրեն։
5 Ով Երուսաղէմի աղջիկներ,
Ես սեւ եմ բայց դեղեցիկ,
Կեդարու վրաններուն պէս,
Սողոմոնի վարագոյրներուն պէս։
6 Իմ սեւցած ըլլալուս մի նայիք,
Վասն զի արեը զիս տեսաւ.
Իմ մօրս որդիքն ինծի բարկացան,
Զիս այգիներու պահապան ըրին.
Բայց իմ այդ‑պէս պահպանութիւնս չըրի,
7 Պատմէ ինծի, ով հոգւոյս սիրածը,
Քու հօտդ ո՞ր կ'արածես.
Կէս օրին ո՞ր կը պառկեցունես.
Քանզի քու ընկերներուդ հօտերուն
քով
Ինչո՞ւ †թափառականի պէս ըլլամ։
8 Եթէ դուն չես գիտեր, ով կանանց
գեղեցիկը,

*Կամ ուղիղները †Կամ նուագածի

Հօտերուն չաւիղներէն գնա,
Եւ հովիներուն վրաններուն քով քու
ուլերդ արածէ,
9 Փարաւոնի կառքերուն ջոջ ձիե-
րուս
Նմանցուցի զքեզ, ով իմ սիրուհիս.
10 Քու այտերդ զարդերով գեղեցիկ է,
Եւ քու պարանոցդ՝ քառամանեակնե-
րով։
11 Բեզի ոսկիէն զարդեր պիտի չինենք
Արծաթէ կնաւածներով։
12 Երբ թագաւորը սեղանն էր,
Իմ նարդոս իւղս հոտը բուրեց։
13 Իմ սիրական ինծի սաւանի ծրարի
պէս է,
Գիշերը իմ տանցաս մէջ պիտի հանգչի.
14 Իմ սիրականս հինայի ողկոյզի պէս է
ինծի
Ենգադիի այգիներուն մէջ։
15 Ահա գեղեցիկ ես, ով իմ սիրուհիս,
Ահա գեղեցիկ ես. քու աչքերդ ագա-
ռնիներու պէս են։
16 Ով իմ սիրականս, ահա գեղեցիկ ես
և վայելուչ.
Եւ մեր անկողինը կանաչ է,
17 Մեր տուներուն գերանները եղևնա-
փայտ են,
Եւ մեր առիքները մայր փայտէ են։

ԳԼ. Բ

1 Ես Սարոնի ծաղիկն եմ,
Եւ հովիտներուն շուշանը։

2 Ինչպէս շուշանը փուշերուն մէջ՝
Այնպէս է իմ սիրուհս աղջկանց մէջ։
3 Ինչպէս խնձորենին անտառի ծառերուն մէջ՝
Այնպէս է իմ սիրականս երիտասարդաց մէջ.
Անոր հովանւոյն տակ ախորժելով նըստայ,
Եւ անոր պտուղն իմ քմային քաղցր է։
4 Զիս *ինձոյքին տունը բերաւ,
Եւ անոր դրօշն իմ վրաս սէր էր։
5 Զիս կարկանդակներով զօրացուցէք,
Զիս խնձորներով ուժովցուցէք,
Վասն զի ես սիրով կը նուաղիմ։
6 Անոր ձախ ձեռքն իմ գլխուս տակ ըլլայ,
Եւ աջ ձեռքը զիս գրկէ։
7 Ով Երուսաղէմի աղջիկունք,
Ձեզ այծեամներով կամ դաշտի եղնիկներով կ'երդմնցունեմ,
Որ սիրուհին չվերցունէք և չարթնցունէք,
Մինչև որ ինք չուզէ։
8 Իմ սիրականս ձայնն է.
Ահա անիկա լեռներուն վրայէն ցատկելով՝
Եւ բլուրներուն վրայէն ցատկըռտելով կու գայ։
9 Իմ սիրականս այծեամի կամ եղնիկ ձագի կը նմանի.
Ահա հիմա մեր պատին հետևւ կայնած է,
Պատուհաններէն կը նայի,
Վանդակներէն կ'երևնայ։
10 Իմ սիրականս պատասխան տալով՝ ինծի ըսաւ,
Ելիր, ով սիրուհիս, ով գեղեցիկս, և եկուր։
11 Քանի ահա ձմեռն անցաւ,
Անձրևները անցան գացին.
12 Գետնի վրայ ծաղիկները կ'երևնան,
Ցօհրելու ժամանակն հասաւ,
Եւ մեր երկրին վրայ տատրակին ձայնը կը լսուի։
13 Ահա թզենին իւր թուզերը կը հասցունէ,
Եւ որթերը ծաղկեցան և իրենց հոտը կու տան.
Ելիր, ով սիրուհիս, ով գեղեցիկս, և եկուր։
14 Ով իմ ագռաւիս, վէմին խոռոչներուն մէջ՝
Ապառաժին հովանւոյն տակ էլլ-ը։
Ինծի երեսդ ցուցուր, ձայնդ ինծի լսել տուր։
Քանզի ձայնդ քաղցր՝ և դէմքդ գեղեցիկ է։
15 Բռնեցէք մեզի աղուէսները,
Այգիները աւրող փոքրիկ աղուէսները։
Վասն զի մեր այգիները ծաղկած են։
16 Իմ սիրականս իմն է, և ես անոր եմ.
Անիկա իւր հօտը շուշաններու մէջ կ'արածէ։
17 Օրուան հովը չվչաց՝ և սաւերները չերևցան՝
Դարձիր, ով իմ սիրականս,
Եւ բեխերի լեռներուն վրայի այծեամի պէս
կամ եղնիկներու ձագին պէս եղիր։

## Գլ. Գ

1 Իմ հոգւոյս սիրածը
Գիշերն անկողնիս մէջ փնտռեցի.
փնտռեցի զնա, բայց չգտայ։
2 Նըմնեմ հիմա պտիտ քաղաքին մէջ,
Փողոցներուն և հրապարակներուն մէջ.
Իմ հոգւոյս սիրածը փնտռեմ.
փնտռեցի զնա, բայց չգտայ։
3 Քաղաքին մէջ պտտող պահապաններըզիս գտան.
Արդեօք իմ հոգւոյս սիրածը տեսա՞ք։
4 Անոնցմէ քիչ մը առաջ անցնելով՝
Իմ հոգւոյս սիրածը գտայ.
Բռնեցի զնա և չթողուցի,
Մինչև որ մօրս տունը՝
Եւ զիս ծնանողին սենեակը տարի։
5 Ով Երուսաղէմի աղջիկներ,
Ձեզ այծեամներով կամ դաշտի եղնիկներով կ'երդմնցունեմ,

*Եբր. զինուոյն



Որ սիրուհին չվերցունէք և չարթնցունէք՝
Մինչև որ ինք չուզէ։
6 Ո՞վ է ասիկա՝ որ զիմասով և հնդրըկով
Ե՞ փերեզակներուն ամէն գեղաւ փոշեւով ելկուամ՝
Անապատէն կ'ելլէ ծխոյ սիւներու պէս,
7 Ահա Սողոմոնի *գահոյքը,
Որոյ բովորտիքն հարսկէի զօրաւորներէն
վաթսուն զօրաւոր կայ.
8 Ամէնքն ալ սուսերաւոր են,
Ե՞ պատերազմի վարժուած են.
Գիշերուան երկիւղին համար՝
Իւրաքանչիւրին սուրն իւր ազդրը վրայ է։
9 Սողոմոն թագաւորը Լիբանանու ծառերէն
Գահաւորակ մը շինեց իրեն համար.
10 Սիւներն արծաթի՝ յենարանները ոսկի՝
Բազմոցը ծիրանիէ շինեց.
Եւ մէջը Երուսաղէմի աղջիկներէն
†Շատ գեղեցիկ՝ նկարագործուած էր։
11 Ով Սիոնի աղջիկունք, ելէք,
Եւ Սողոմոն թագաւորը տեսէք
Այն թագով, որով անոր մայրն անոր փեսայութեան օրը
Եւ սրտին ուրախութեան օրը պսակեց զնա։

## Գլ. Դ

1 Ա՜հա դուն գեղեցիկ ես, ով իմ սիրուհիս,
Ահա դուն գեղեցիկ ես.
Լաչակիդ մէջէն քու աչքերդ աղաւնիներու ա՞լ-ց ‡ը-ն-ման-էն.
Մազերդ Գաղաադ ‡լեռը պառկող՝ այծերու հօտին պէս են։
2 Ակռաներդ լուացարանէ ելլող խուզած հօտի պէս են,
Որոց ամէնքը երկուորեակ կը ծնանին,
Եւ անոնց մէջ ամուլ չկայ։
3 Քու շրթունքդ կարմիր դերձանի պէս են,
Եւ խօսուածքդ գեղեցիկ է.
Աչերդ լաչակիդ մէջէն
Նռան կտորներու կը նմանին.
4 Պարանոցդ՝ զինաբանի համար շինուած
Դաւթի աշտարակին պէս է,
Որ հազար ասպար կախուած են.
Ամէնքն ալ զօրաւորներու վահաններն են,
5 Երկու տաները քու նման են երկու ուլերու՝
Որ այծեման մը երկուորեակ շուշէ էն,
Եւ շուշաններու մէջ կ'արածուին։
6 Օրուան հովը չվչաց՝ և սաւերները չերևցած՝
Ես զմեզով լեռը և կնդրկի բլուրը պիտ երթամ։
7 Բոլորովին գեղեցիկ ես, ով իմ սիրուհիս,
Եւ քու վրադ արատ չկայ։
8 Ով Հարան, ինծի հետ Լիբանանէ ելլուր,
Ինծի հետ Լիբանանէ ելլուր.
Ամանայի գագաթէն՝ Սանիրի և Հերմոնի գագաթէն,
Առիւծներու մորթներէն և ինձերու լեռներէն նայէ։
9 Սիրտս առիր, ով իմ հարս քոյրս,
Սիրտս առիր քու մէկ աչքովդ
Եւ պարանոցիդ մէկ քառամանեակով։
10 Քու սէրդ ի՜նչ գեղեցիկ է, ով հարս քոյրս.
Քու սէրդ գինիէն լաւ է,
Եւ քու խնդրոյդ անուշահոտութիւնը՝
Քան զամենայն խունկ։
11 Շրթունքդ խորսխի մեղր կը կաթէ, ով հարսն,
Լեզուիդ տակ մեղր և կաթ կայ.
Եւ զգեստներուդ անուշահոտութիւնը
Լիբանանու հոտին պէս է։
12 Իմ հարս քոյրս փակեալ պարտէզ է,
Փակեալ աղբիւր և կնքուած աղբիւրակ է։
13 Քու առնկերդ քաղցրահամ պտուղներով,
Հինանելով և նարդոսներով՝ նռնենիներ և նոցա դրախտ է.
14 Նարդոս և քրքում, եղէգն և կինամոն,

*Կամ անկողինը, †Եբր. Սիրով
‡Կամ լեռնէն երևցած

Ամէն հնդրկի ծառով, գմբեթով և հա-
լուեով
Եւ բոլոր գիմաւոր խաղնկերով.
15 Պարտէզներու աղբիւր,
կնդանի ջրոյ գուբ
Եւ Լիբանանի ձաղաձ հեղեղներ.
16 Արեւնգիր, ով հիւսիս. եկուր, ով
հարաւ,
Պարտիզիս մէջ փչէ, որ անոր խաղնկե-
րը բուրին.
Իմ սիրականս թող իր պարտէզը գայ,
Եւ իրեն ախորժելի եղած պտուղներն
ուտէ։

## Գլ. Ե

1 Իմ պարտէզս եկայ, ով հարս քոյր,
իմ գմբեթս խաղնկերուս հետ ժողվե-
ցի,
Խորհրդս մեղրիս հետ կերայ,
Գինիս կաթովս խմեցի.
Կերէք, ով բարեկամներ,
Արբէք և գինովցէք, ով սիրելիներ.
2 Ես կը քնանամ, բայց սիրտս արթ-
նուն է.
Ահա սիրականիս ձայնն է, որ կը
զարնէ և կ'ըսէ,
Ով իմ քոյրս, սիրուհիս,
Աղաւնիս, կատարեալս, բաց ինծի.
Գանգի գլուխս ցօղով լեցուեցաւ,
Եւ վարսերս գիշերուան կաթով։
3 Պատմուճանս հանած եմ,
Ի՞նչպէս հագնիմ զայն։
Ոտքերս լուացած եմ,
Զանոնք ի՞նչպէս ապականեմ։
4 Իմ սիրականս իր ձեռքը ծակէն
երկնցուց,
Եւ անոր համար իմ ապիրս գալարեցաւ։
5 Ես ելայ որ սիրականիս բանամ,
Եւ ձեռքերէս գմբեթս՝ և իմ մատնե-
րէս ընծր գմբեթս կաթեց
Փականակին բռներու ուղին վրայ։
6 Ես իմ սիրականիս բացի,
Բայց իմ սիրականս քաշուած գացած
էր.
Երբ անկից կը խօսէր՝ հոգիս նուազե-
ցաւ.
Փնտռեցի զնա բայց չգտայ.
Կանչեցի զնա, բայց ինծի պատասխան
չտուաւ։
7 Քաղաքին մէջ պտտող պահապաննե-
րը զիս գտան,
Զարկին վիրաւորեցին զիս.
Պարսպին պահապանները քօղս վրայէս
վերցուցին։
8 Ով երուսաղէմի աղիկներ, ձեզ կ'երդ-
մցնեցուներմ,
Եթէ սիրականս գտնէք,
Անոր պատմէք որ ես սիրով կը նուազիմ։
9 Ով կանանց գեղեցիկը,
Քու սիրականդ ո՞րէն սիրականէ ի՞նչ
տարբերութիւն ունի,
Քու սիրականդ ո՞րէն սիրականէ ի՞նչ
տարբերութիւն ունի,
Որ մեզ այդպէս կ'երդմնցուներ։
10 Իմ սիրականս սպիտակ և կարմիր է,
Տասը հազարի մէջ երևելի է։
11 Անոր գլուխը զուտ ոսկի է,
Վարսերը ցրուած՝ և ագռաւի պէս սե-
ւեն.
12 Աչքերը՝ վազող ջուրերու քով
Կաթով լուացուած աղաւնիներու աչք
կը նմանին,
Գամուած գոհարներու պէս են։
13 Անոր այտերը խնկաղից մառնկերու ա-
ծուի
և՝ անուշահոտ ծաղիկներու թագար-
ներու պէս են.
Շրթունքն ընծր գմբեթս կաթող շու-
շաններ են։
14 Ձեռքերը ոսկի մատներներ են՝
Թարսիսի քարերով լեցուած.
Որովայնը բանուած փղոսկր է՝
Շափիւրոնեներով ծածկուած։
15 Սրունքը մարմարիոնէ սիւներ են՝
Ընծիր ոսկի խարիսիններու վրայ հաս-
տատուած.
Կերպարանքը Լիբանանու պէս՝
Եղևիններու պէս ընտիր է։
16 Անոր բերանը քաղցր՝
Եւ ինք բոլորովին ցանկալի է.
Ահա այսպէս է իմ սիրականս, այսպէս
է իմ բարեկամս,
Ով երուսաղէմի աղիկներ։



## Գլ. Զ

1 Քու սիրականդ ո՞ր գնաց,
Ով կանանց գեղեցիկը.
Քու սիրականդ ո՞ր դարձաւ,
Որ քեզի հետ փնտռենք զնա։
2 Սիրականս իր պարտէզը՝
Խնկալից մառնկերուն ածուներն էջաւ,
Որ պարտէզներու մէջ արածէ,
Եւ շուշաններ ժողվէ։
3 Ես սիրականիս եմ,
Եւ սիրականս իս է.
Անկիկս շուշաններու մէջ կ'արածէ։
4 Թերսայի պէս գեղեցիկ ես, ով իմ
սիրուհիս.
Երուսաղէմի պէս հաճելի ես,
Ե՛ դիւրակիր զէրաց պէս ահարկու ես։
5 Աչքերդ ինէ դարձուր,
Վասն զի անոնք ինծի յաղթեցին.
Մազերդ՝ *Գաղաադը պատկող՝ այծե-
րու հօտին պէս են։
6 Ակռաներդ լուացարանէ ելած մանչ-
ներու հօտին կը նմանին,
Որոնց ամէնը երկուորեակ կը ծնանին,
Եւ անոնց մէջ ամուլ չկայ։
7 Այտերդ լաթակիդ մէջէն՝
Նռան կտորներու կը նմանին։
8 Թագուհիները վաթսուն՝ և հարճերն
ութսուն՝
Եւ օրիորդներն անթիւ են։
9 Իմ ազաւնիս՝ իմ կատարեալս մի է,
Իւր մօրը միամօրը,
Ջնա ծնանողին ընտրեալն է.
Աղջիկները տեսան զնա,
Եւ անոր երանի բսին.
Թագուհիները և հարճերն ալ,
Եւ գովեցին զնա։
10 Ով է այս՝ որ արշալոյսի պէս կը նա-
յի,
Որ լուսնի պէս գեղեցիկ, արեւու պէս
մաքուր,
Ե՛ դիւրակիր զէրաց պէս ահարկու է։
11 Ընկոյզներու պարտէզն իջայ,
Որ ձորին †կանաչութիւնը տեսնեմ,

*Կամ Գաղաադէն երևցած
†Կամ պտուղները

Ե՛ նայիմ թէ արդեօք որթը ծլեցաւ,
Եւ նռնենիները ծաղկեցա՞ն։
12 Ես չգիտցայ՝ իմ հոգիս Ամինադաբի
կառաց պէս ըրաւ զիս։
13 Դարձիր, դարձիր, ով Սողոմացի,
Դարձիր, դարձիր, որ գեղով տեսնենք։
Ի՞նչ պիտի տեսնէք Սողոմացւոյն
վրայ,
Իբրև երկու բանակներու դուռդ։

## Գլ. է

1 Ո՜րչափ գեղեցիկ են քայլերդ կօշիկներով,
Ով իշխանի աղջիկ.
Քու բարձերուդ կազմուածքը
Երևելի արուեստաւորի ձեռքով շի-
նուած
Մանեակներու կը նմանի։
2 Պորտդ ըմպելիօք լեցուն բոլորակ թա-
սի կը նմանի.
Փորդ չուշանով պատած ցորենի շեղ-
ջի պէս է.
3 Երկու սրնգդ նման են երկու ուլե-
րու,
Ով այծեմի երկուորեակ ձագ են։
4 Պարանոցդ փղոսկրէ աշտարակի պէս է.
Աչքերդ Եսբոնի՝ Բաթ-բարբիմի դրան
քով եղող աւազաններուն չափ
նմանին.
Ունդդ դէպ ի Դամասկոս նայող Լիբա-
նանու աշտարակին պէս է։
5 Գլուխդ քու վրադ կարմիզոսի պէս,
Եւ գլուխդ հիւսուածը ծիրանւոյ պէս է.
Թագաւորը է՜ս խողոպիներուդ կա-
պուած է։
6 Որչափ գեղեցիկ և ո՜րչափ քաղցր ես,
Իմ փափկալից սիրուհիս։
7 Քու հասակդ արմաւենւոյ՝
Եւ ատինքդ ողկոյզներու կը նմանին։
8 Ըսի, Արմաւենւոյն վրայ կելլեմ,
Անոր ոստերուն փակչիմ.
Եւ քու տանդ՝ խաղողի ողկոյզներու
պէս,
Եւ ռնգացդ հոտը խնձորներու հոտին
պէս ըլլայ։
9 Եւ քու քիմքդ ազնիւ գինւոյ պէս է,
Որ շիտակ կը վազէ իմ սիրականիս,

Եւ քնացողներուն *չբթանքը կը խօսցնայ։"
Ես իմ սիրականիս եմ,
Եւ անոր բաղձանքն ինծի է։
Եկուր, սիրականս, դաշտը ելլենք,
Գիւղերը գիշերը մէջ անցնինք.
Ադամանդն կանուխ այգիներն երթանք,
Եւ տեսնենք թէ որթը ծլած է, ծաղիկը բացուա՞ծ է,
Եւ նռնենիները ծաղկա՞ծ են.
Հոն իմ սէրս քեզի տամ։
Մանրագործներն էջէնց հոտը կուտան.
Եւ մեր դռներուն մէջ՝
Ամէն բնաւոր պտուղներէն, թէ նոր և թէ հին,
Քեզի համար պահած եմ, ով իմ սիրականս։

## Գլ. Ը

Երանի թէ մօրս տանը ծծող եղբօրս պէս ըլլայիր.
Երբ քեզ դուրսը գտնէի պիտի համբուրէի,
Եւ զիս պիտի չանարգէին։
Քեզ առաջնորդելով իմ մօրս տունը կը տանէի,
Որ ինծի խօսվեցուներս.
Քեզի հոտաւէտ գինիէն իմ նռնենուցս օշարակէն կը խմցնէի։
Ձախ ձեռքը գլխուս տակ,
Եւ աջ ձեռքը զիս կը գրկէր։
Ով Երուսաղէմի աղիկանդ, ձեզ կ'ևրդռնցնեմ,
Որ չհ սիրուհիս չարթնցնէք և չվերցնէք,
Մինչև որ ինք չուզէ։
Ո՞վ է սա որ իւր սիրականին կռթընած՝

Անապատէն կ'ելլէ.
Քեզ խնձորենւոյն տակ արթընցուցի.
Քու մայրդ քեզ հոն ծնաւ,
Քու ծնողդ քեզ հոն ծնաւ։
Զիս որպէս վրայ կնքոյ պէս՝
Բազկիդ վրայ կնքոյ պէս դիր.
Վասն զի սէրը մահուան պէս զօրաւոր՝
Ես նախանձը դերեզմանի պէս խիստ է.
Անոր կայծերը սաստիկ բոցավառ կրակի կայծեր են։
Շատ ջուրերը չեն կրնար սէրը մարել,
Եւ գետերը զայն չեն կրնար ընկղմել.
Եթէ մարդ մը սիրոյ փոխարէն իւր տունը բոլոր սեպհականքը տայ,
Զանիկա բոլորովին կ'անարգեն։
Փոքրիկ քոյր մը ունինք,
Եւ անոր տուին չունինք.
Մեր քրոջը ինչ ընենք
Անոր համար խօսուած օրը։
Եթէ անոր պարիսպ է,
Վասն արծաթէ աշտարակ մը չինենք.
Եւ եթէ դուռ է,
Զանիկա եղևնափայտի տախտակներով պատենք։
Ես պարիսպ եմ,
Եւ տիրքս աշտարակներու պէս են.
Այս պատճառով անոր առջև
Խաղաղութիւն գտածի պէս եղայ։
Սողոմոն Բաղամոնի մէջ այգի ունէր,
Անիկա այգին պահապաններու տուաւ,
Իւրաքանչիւրն անոր պտղոյն համար հազար կաղ արծաթ կը բերէր։
Այգիս իմ առջևս է.
Ով Սողոմոն, հազարը քուկդ ըլլայ,
Եւ երկու հարիւրն անոր պտուղը պահապաններուն։
Ով պարտէզներու մէջ նստող,
Ընկերները քու ձայնդ կը լսեն.
Ինծի ալ լսել տուր։
Շուտա՛ եղի՛ր, ով իմ սիրականս,
Եւ իննկարեր լեռներու վրայ
Անդեմանի կամ եղևնիներու ձագի նման եղիր։

*Կամ չբթանց վրայ կը կաթի,
†Կամ սոսվեցուներ.

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ

## ԳԼՈՒԽ Ա.

Ամբաստանութիւն Երուսաղէմի վրայ ուղուած։ Ցուզդայի և Երուսաղէմի վրայ սուրաց՝ Ցուզդայի թագաւորներուն ոգիսոյն, Յովաթամի, Ահազու և Եզեկիայի օրերը։
Լա՛ւ, ով երկինք, և ականջ դիր, ով երկիր,
Վասն զի Տէրը կը խօսի.
Զաւակներ մեծցուցի և բարձրացուցի,
Եւ անոնք ինծի դէմ ապստամբեցան։
Եզը իր տէրը կը ճանչնայ,
Եւ էշը իր տիրոջը մսուրը,
Բա՛յց Իսրայէլ չէ՛ ճանչնար,
Իմ ժողովուրդս չհմանար։
Վայ մեղաւոր ազգին,
Անօրէնութեամբ ծանրացած ժողովուրդ,
Չարագործներու սերունդ, ապականեալ զաւակներ.
Անոնք Տէրը թողացին,
Իսրայէլի Սուրբն անարգեցին
Եւ նա քաշուեցաւ։
Ձեր ո՞ր հարուածով վրայ կրնաք պարնուիլ,
Երբ ալ աւելի ապստամբիք։
Բոլոր գլուխը հիւանդ՝
Եւ բոլոր սիրտը մարած է։
Ոտքէն թագէն մինչև գլուխը
Բնաւ անոր վրայ ողջ տեղ չմնաց.
Հարուածներ, վէրքեր և չարաւուխ խոցեր կան։
Անոնք չգոցուեցան, չկապուեցան
Եւ իւղով ալ չհակղուցան։
Ձեր երկիրն աւերակ դարձած է,
Ես ձեր քաղաքները կրակով այրուած են.
Ձեր արտերը ձեր աչց առջև օտարները կ'ուտեն,
Եւ անոնք օտարներուն ըղձ աւերակներուն պէս խորտակուած են։
Եւ Սիոնի աղջիկն այգւոյ մէջ եղած խրճիթի պէս,
Վարունգի արտի մէջ եղած հիւղի պէս,
Պաշարուած քաղաքի պէս թողուած ձգուած է։
Եթէ զօրաց Տէրը մեզի փիչ մը մնացորդ թողացած չըլլար,
Մենք Սոդոմի պէս պիտի ըլլայինք,
Եւ Գոմորայ պիտի նմանէինք։
Լսեցէք Տէրոջը խօսքը, ով Սոդոմի իշխաններ,
Ականջ դրէք մեր Աստուծոյն օրինաց, ով Գոմորայ ժողովուրդ։
Ինչ պէտք է ինծի ձեր զոհերուն բազմութիւնը, ի՛րսէ Տէրը,
Ձեր խոյերուն ողջակէզներէն
Եւ պարարտ անասուններուն ճարպէն կշտացած եմ,
Եւ զուարակներուն և գառներուն
Եւ նոխազներուն արիւնները չեմ ախորժեր։
Երբ կու գաք իմ առջև երևնալու՝
Ո՞վ պահանջեց ձենէ, որ այսպէս իմ սրահներս կոխէք։
Այլ ևս ընդ ունայն ընծաներ մի բերէք.
Ձեր խունկն ինծի պիղծ է,
Ամսագլուխներու և շաբաթներու
Ես ժողովներու գումարուելուն չեմ կրնար տանիլ,
Ձեր ասնախմբութիւնն անգամ անօրէնութիւն է։
Ձեր ամսագլուխներէն և ասներէն կը զզուի իմ հոգիս.
Անոնք իմ վրաս ծանր բեռ եղան,
վերցնելէ յոգնեցայ։
Ուստի երբ ձեր ձեռքերը կը տարածէք՝
Աչքերս ձենէ պիտի ծածկեմ.
Նաև երբ ձեր ազօթքը կը շատցնէք՝
պիտի չլսեմ.

ֆառնչէ ձեր ձեռքերն արեամբ լեցուն են,
16 Լուացարուեցէք, մաքրուեցէք,
իմ աչքերուս առջեւէն ձեր չար գործերը մեկնի ըրէք,
Զարութիւն գործելէն դադարեցէք.
17 Բարութիւն ընել սորվեցէք,
իրաւունքը փնտռեցէք, զրկուածին ուղղութիւն ըրէք,
Որբին դատաստանը տեսէք և այրուն դատը պաշտպանեցէք։
18 Հիմա եկէք վիճաբանինք, կ'ըսէ Տէրը.
եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիր պէս են՝
Ձեան պէս պիտի ճերմկնան,
ե՞ եթէ որդան կարմիր նման են՝
Ասրի պէս սպիտակ պիտի ըլլան։
19 Եթէ դուք յօժարիք և հնազանդիք՝
Երկրին բարիքը պիտի ուտէք.
20 Բայց եթէ դուք մերժելով ապստամբիք՝
Սուրը պիտի ուտէ ձեզ,
Քանզի Տէրոջը բերանը խօսեցաւ զայն։
21 Ի՜նչպէս պոռնկեցաւ այդ հաւատարիմ քաղաքը.
Անիկա իրաւամբ լեցուն էր,
Եւ անոր մէջ արդարութիւն կը բնակէր.
Բայց հիմա մարդասպաններու բնակարան է։
22 Քու արծաթդ կղկղանք դարձաւ,
Գինւոյդ մէջ ջուր խառնուած է։
23 Իշխաններդ ապստամբ և գողերու ընկեր եղան.
Ամէնքն ալ կաշառք սիրելով՝ պարգեւներ կը փնտռեն.
Անոնք որբին դատաստանը չեն տեսներ,
Եւ այրուն դատն անոնց առջեւ չգար։
24 Անոր համար զօրաց Եհովայ Տէրը՝
Իսրայէլի Հզօրն այսպէս կ'ըսէ.
Աւա՛ղ, իմ հակառակորդներուս համար ցաւցուր պիտի ընեմ,
Եւ թշնամիներէս վրէժ պիտի առնեմ։
25 Եւ ձեռքս քու վրադ պիտի դարձնեմ,
Եւ կղկղանքդ իբր թէ *բոցաթով պիտի մաքրեմ,
Եւ բոլոր անագդ մէկդի պիտի զատեմ։
26 Եւ դատաւորներդ առջիներուն պէս՝
Եւ խորհրդականներդ ակիզբէն եղածին պէս նորէն պիտի հաստատեմ.
Ա՛յնուհետեւ դուն պիտի կոչուիս
Արդարութեան քաղաք՝ հաւատարիմ ուան։
27 Սիօնը դատաստանով պիտի փրկուի,
Եւ հոն դարձողներն՝ արդարութեամբ։
28 Բայց անօրէնները և մեղաւորներն
իրարան պիտի ջարդուին,
Եւ անոնք որ Տէրը կը թողուն՝ բնաջինջ պիտի ըլլան։
29 Քանզի ձեր ցանկացած բևեհնիներէն պիտի ամչնան,
Եւ այն ձեր ընտրած պարտէզներուն համար ամօթով պիտի մնաք։
30 Վասն զի տերեւները թոռմած բևեհնուց պէս՝
Եւ ջուր չունեցող պարտէզի պէս պիտի ըլլաք։
31 Եւ զօրութիւն ունեցողը՝ խծուծի պէս,
Եւ անոր գործը կայծի նման պիտի ըլլայ,
Եւ երկուքն ալ միասին պիտի այրին,
Եւ մարող պիտի չգտնուի։

## Գլ. Բ

1 Ա՛մովսի որդւոյն Եսայեայ՝ Յուդայի և Երուսաղէմի վրայ տեսած տեսլեան խօսքը։
2 Եւթը օրերը պիտի ըլլայ որ Տէրոջը տան լեռը
Լեռներուն գլխուն վրայ պիտի հաստատուի,
Եւ բլուրներէն վեր պիտի բարձրանայ,
Եւ բոլոր հեթանոսներն հեղեղի պէս պիտի դիմեն անոր։
3 Եւ շատ ժողովուրդներ պիտի երթան և ըսեն,
Եկէք, Եհովայի լեռը՝
Յակոբայ Աստուծոյն տունը երթանք,
Որ մեզի իր ճամբաները սորվեցունէ,
Եւ անոր շաւիղներուն մէջ քալենք։
Քանզի օրէնքը Սիօնէ՝
Եւ Տէրոջը խօսքը Երուսաղէմէ պիտի ելլէ։

*Կամ մաքրութեամբ



4 Եւ անիկա հեթանոսներուն մէջ դատաստան պիտի անէ,
Եւ շատ ժողովուրդներ պիտի յանդիմանէ.
Եւ անոնք իրենց սուրերը՝ խոփ,
Եւ իրենց նիզակներն յօտոց պիտի շինեն.
Ազգ ազգի վրայ սուր պիտի չվերցնէ,
Եւ ալ պատերազմ պիտի չսորվին։
5 Ով Յակոբայ տունը,
Եկէք Տէրոջը լուսով քալենք։
6 Քանզի դուն քու ժողովուրդդ Յակոբայ տունը թողուցիր,
Վասն զի արեւելքէ նշխոյրներով լեցուեցան,
Եւ Փղշտացւոց պէս հմայութիւն կ'ընեն,
Եւ օտարներու որդւոց հետ դաշնագիր կնան։
7 Եւ անոնց երկիրն արծաթով և ոսկիով լեցուեցաւ,
Եւ անոնց գանձերն անթիւ եղան.
Անոնց երկիրը ձիերով լեցաւ,
Եւ անոնց կառքերն անթիւ են։
8 Կուռքերով ալ լեցուն է անոնց երկիրը.
իրենց ձեռացց գործերուն երկրպագութիւն կ'ընեն,
Անոնց՝ որ իրենց մատները շինեցին,
9 Եւ ադամի մարդը ծռեցաւ,
Եւ այնուհանդերձ խոնարհեցաւ,
Եւ անոնց պիտի չներես։
10 Տէրոջը երկիւղին երեսէն
Եւ անոր վեհափառութեան մեծութենէն
Վէմին մէջ մտիր, և հողին մէջ պահուիր։
11 Մարդուն ամբարտաւան աչքերը պիտի խոնարհին,
Եւ մարդոց հպարտութիւնը պիտի ցածնայ,
Եւ այն օր Տէրը միայն պիտի բարձրանայ։
12 Քանզի զօրաց Տէրոջը օրը
Բոլոր ամբարտաւաններուն և բարձրամիտներուն վրայ
Եւ բոլոր հպարտացածներուն վրայ պիտի ըլլայ,
Եւ անոնք պիտի խոնարհին։
13 Եւ Լիբանանու բոլոր բարձրացեալ և վերացեալ եղևիններուն վրայ,
Եւ Բասանու բոլոր կաղնիներուն վրայ,
14 Եւ բոլոր բարձր լեռներու վրայ,
Եւ բոլոր բարձրացած բլուրներու վրայ,
15 Եւ բոլոր բարձր աշտարակներու վրայ,
Եւ բոլոր ամուր պարիսպներու վրայ,
16 Եւ Թարսեայ բոլոր նաւերուն վրայ,
Եւ ամէն հաճելի երեւցած բանի վրայ պիտի ըլլայ։
17 Եւ մարդուն ամբարտաւանութիւնը պիտի ցածնայ,
Եւ մարդոց հպարտութիւնը պիտի խոնարհի,
Եւ այն օր Տէրը միայն պիտի բարձրանայ։
18 Եւ կուռքերը բնաջինջ պիտի ըլլան։
19 Եւ քարայրներու մէջ
Եւ երկրին խոռոչները պիտի մտնեն
Տէրոջը երկիւղին երեսէն
Եւ անոր վեհափառութեան մեծութենէն,
Երբ ինք երկիրը սոսկալու ելլէ։
20 Այն օր մարդ իր կուռքերուն և ջղջիկներուն պիտի նետէ
Իր արծաթի եղէն կուռքերը և իր ոսկեղէն կուռքերը,
Զորս իրեն շինած է երկրպագութիւն ընելու համար.
21 Որ Տէրոջը երկիւղին երեսէն
Եւ անոր վեհափառութեան մեծութենէն՝
Ապառաժներուն ծակերը
Եւ վիժերուն ժեռքերը մտնէ,
Երբ Անիկա երկիրը սոսկալու ելլէ։
22 Ան կեցէք մարդէն՝ որուն շունչը իր ռնգռաց մէջն է,
Վասն զի ինչ բանի մէջ հաշուած կը հանգրուանի նա։

## Գլ. Գ

1 Քանզի ահա զօրաց Եհովայ Տէրը
Երուսաղէմէ և Յուդայէ պիտի վերցունէ գաւազանը և ցուպը,
Հացի բոլոր զօրութիւնը և ջրոյ բոլոր զօրութիւնը,

2 Քաջը և պատերազմող մարդը,
Դատաւորը և մարգարէն, գուշակութիւն ընդոր և ծերը,
3 Յիսնապետը և պատուաւոր մարդը,
Խորհրդականը և խնամաւոր Ճարտարագործը և հանճարեղ կախարդը։
4 Եւ անոնց վրայ մանուկներն իշխան պիտի կարգեմ,
Եւ անոնց վրայ տղայք պիտի իշխեն։
5 Եւ ժողովուրդն իրարմէ՝
Եւ ընկերը իւր ընկերին հարստահարութիւն պիտի կրեն.
Մանկունք ծերերուն դառնալու թիւն պիտի ընեն,
Եւ անարգները՝ պատուականներուն։
6 Անատն պիտի բռնէ մարդ իւր հօրը ուսունն եղող իւր եղբայրը, Ե՛ըս,
Դուն հանդերձ ունիս,
Մեր վրայ իշխան եղիր,
Եւ այս աւերակը քու ձեռքիդ տակ ըլլայ,
7 Ա՛յն օր անիկա *պատասխան պիտի տայ՝ և ըսէ,
Ես †առաջնորդ չեմ ըլլար,
Քանզի իմ տանս մէջ ոչ հաց կայ և ոչ հանդերձ.
Զիս ժողովրդեան վրայ իշխան մի կարգէք։
8 Քանզի Երուսաղէմ սասանեցաւ և Յուդա ինկաւ.
Վասն զի անոնց լեզուները և գործերը Տէրոջը դէմ են,
Որ բարկացուցանեն անոր փառաւոր աչքը։
9 Անոնց երեսներուն ւեւքն անոնց դէմ կը վկայէ,
Եւ իրենց մեղքերը Սոդոմի պէս կը յայտնեն, չեն ծածկեր.
Վա՛յ անոնց անձին, քանզի իրենց վրայ չարիք բերին։
10 Արդարին ըսէք որ երջանիկ ըլլայ.

*Կամ երդում պիտի ընէ, ԵԲՐ. պիտի վերցունէ,
†Կամ բժիշկ

Քանզի անոնք իրենց գործերուն պտուղը պիտի ուտեն։
11 Վա՛յ անօրէնին, գէշ պիտի ըլլայ անոր,
Քանզի անոր ձեռաց հատուցումը պիտի տրուի։
12 Բայց իմ ժողովրդեանս վրայ տղայք բռնաւորութիւն կ'ընեն,
Եւ անոր վրայ կանայք կը տիրեն.
Ով իմ ժողովուրդս, քու առաջնորդներդ երէց կ'ելլեն զքեզ կը հանեն,
Եւ քու շաւիղներուդ ճամբան կը խանգարեն։
13 Տէրը դատաստան տեսնելու կեցած է,
Եւ ժողովուրդները դատելու կայնած է։
14 Տէրը ինք դատաստան ընելու պիտի գայ
Իր ժողովրդեան ծերերուն և իշխաններուն հետ.
Քանզի դուք այգին այրեցիք,
Ու՝ ազքատին յափշտակուածը ձեր տունն է։
15 Ձեզի ի՞նչ եղաւ որ իմ ժողովուրդս կը ջրկէք,
Եւ ազքատներուն երեսը կը ճնշէք,
Կ'ըսէ Եհովայ՝ զօրաց Տէրը։
16 Եւ Տէրը ւյտպէս ըսաւ.
Որովհետև Սիօնի աղջիկունք հպարտացան,
Եւ բարձրացպարանոց կը քալեն,
Անհամեստ ակնարկութիւններ կ'ընեն,
Մանրաքայլ կ'երթան
Եւ ոտից շարիւն կը հանեն,
17 Տէրն ալ Սիօնի աղջկանց գագաթը պիսի կեսցացունէ,
Եւ Տէրը անոնց ամօթայքը պիտի մերկացունէ։
18 Եւ այն օր Տէրը պիտի վերցունէ
Ասոնց ոտքի մեհեանգնդակներուն փառքը
Եւ ցանցակերպ ծամակալները և մանհիկները,
19 Գինդերը, ապարանջանները և շղարշաւեղները,
20 Ապարօշները, ոտքի շղթաները և գօտիները,
Անուշահոտ ոգիներուն տուփերը, հմայեակները,
21 Մատանիները և անոնց քիթերուն օղերը,



22 Պատմուճանները, վերարկուները,
Ծածկոցները և քսակները,
23 Հայելիները և բեհեզները,
Խայրերը և քօղերը։
24 Եւ պիտի ըլլայ որ անուշահոտութեան տեղ՝ փտութիւն,
Եւ գօտւոյ տեղ՝ չուան,
Եւ գանգուր մազերու տեղ՝ կնատութիւն,
Եւ լանջապեզ կամաթի տեղ՝ խորգելէն գօտի,
Եւ գեղեցկութեան տեղ խարան պիտի ըլլայ։
25 Քու մարդիկդ սրով պիտի իյնան,
Եւ երիտասարդներդ պատերազմի մէջ։
26 Եւ անոր գուռները պիտի ողբան և սուգ բռնեն,
Եւ անիկա ամայի ըլլալով՝ գետինը պիտի նստի։

## Գլ. Դ

1 Եւ այն օր եօթը կին մէկ էրիկ մարդ պիտի բռնեն և ըսեն,
Մեր հացն ուտենք և մեր հանդերձը հագնինք,
Բայց միայն քու անունդ կոչուի մեր վրայ՝
Մեր նախատինքը վերցունելու համար։
2 Այն օր Տէրոջը շառաւիղը
Փառաւոր և պատուական պիտի ըլլայ,
Եւ Իսրայէլի փրկուածներուն՝
Երկրին պտուղը պարծանաց և պատուոյ համար պիտի ըլլայ։
3 Եւ պիտի ըլլայ որ Սիօնի մէջ մնացածը
Եւ Երուսաղէմի մնացորդը,
Այսինքն Երուսաղէմի մէջ բոլոր ողջ *կեցողները,
Սուրբ պիտի կոչուին,
4 Երբ Տէրը Սիօնի աղջկանց ազտը լուայ,
Եւ դատաստանի հոգւով և այրող հոգւով
Երուսաղէմի արիւնները անոր մէջէն սրբէ։

*ԵԲՐ. գրուածները

5 Եւ Տէրը Սիօն լեռան բոլոր տեղերուն վրայ
Եւ անոր ժողովներուն վրայ՝
Ցերեկ՝ ամպ և մուխ,
Եւ գիշերը փայլուն կրակի բոց պիտի տեղադնէ,
Քանզի բոլոր փառաց վրայ հովանի պիտի ըլլայ,
6 Եւ ցերեկ վրան պիտի ըլլայ,
Տաքութեան համար հովանի,
Եւ մրրիկի և անձրևի համար
Ապաստանարան և ծածկոց ըլլալու։

## Գլ. Ե

1 Եւ սրտ իմ սիրականիս երգը
Իմ սիրելւոյս երգեմ անոր այգւոյն վրայ.
Իմ սիրելիս այգի մը ունէր
Շատ պտղաբեր բլրոյ մը վրայ.
2 Զանիկա ցանկով պատեց, քարերն հանեց մէջէն,
Եւ ընտիր որթեր անկեց,
Եւ անոր մէջտեղ աշտարակ շինեց,
Եւ հոն նաև հնձան մը փորեց.
Եւ կը սպասէր որ խաղող տար,
Բայց անիկա ազռս տուաւ։
3 Ուստի հիմա դուք, ով Երուսաղէմի բնակիչներ և Յուդայի մարդիկ,
Իմ և այգւոյս մէջտեղ դատաստան ըրէք։
4 Իմ այգւոյս ինչ պէտք էր ընել,
Որ ես անոր չըրի.
Ինչո՞ւ համար, երբ ես խաղող տալուն կը սպասէի,
Անիկա ազռս տուաւ։
5 Եւ հիմա ես ձեզի պատմեմ
Թէ ինչ պիտի ընեմ այգւոյս.
Անոր ցանկը պիտի քակեմ, որ անասուն ճարակ ըլլայ,
Անոր պատերը պիտի փլցունեմ, որ ոտնակոխ ըլլայ.
6 Խոպանացած պիտի թողում.
Անիկա պիտի չէթուտի և չրրուի,
Այլ ցախ և փուշ պիտի բուսցունի.
Եւ ամպերուն պիտի պատուիրեմ
Որ անոր վրայ անձրև չտեղան։

7 Քանզի զօրաց Տէրոջը այգին Իսրայէլի
տունն է,
Եւ Յուդայի մարդիկն՝ անոր ախտաժե-
ւի տունկը.
Եւ անիկա իրաւանց կը սպասէր, և ա-
հա արիւնհեղութիւն,
Արդարութեան՝ և ահա ադաղակ։
8 Վա՛յ անոնց՝ որ տուն տան կը յա-
րեն,
Ագարակ ագարակի վրայ կ'աւելցուցանեն,
Մինչև որ տեղ չմնայ,
Եւ դուք միակ բնակիք երկրին մէջ։
9 Զօրաց Տէրն իմ ականջիս խնդրաց՝ ը-
սելով.
Արդարև շատ տուներ աւերակ պիտի
ըլլան,
Մեծ և գեղեցիկ դառնէր, և անոնց մէջ
բնակող պիտի չգտնուի։
10 Վասն զի տասը լծուելիք այգին մէկ մար
պիտի տայ,
Եւ մէկ գոմ սերմը մէկ արդու պիտի
տայ։
11 Վա՛յ անոնց՝ որ առաւօտուն կանուխ
կ'կենան,
Եւ ցբի խնդալ կ'ընկան,
Եւ երեկոյին կ'ուշանան,
Մինչև որ գինին իրենց ջերմեցնէ տաք-
ցունէ։
12 Եւ անոնց խնջոյից մէջ քնար և տա-
ւիղ,
Թմբուկ և սրինգ և գինի կը դանդ-
ւին.
Բայց Տէրոջը ըրածներուն ուշադրու-
թիւն չեն ըներ,
Եւ անոր ձեռաց գործերուն չեն նա-
յիր։
13 Անոր համար իմ ժողովուրդս *Տէրը
չճանչնալով գերի կ'երթայ,
Եւ անոր ազնիւ մարդիկը սով կը
կրեն,
Եւ բազմութիւնը ծարաւէն կը ցամքի։
14 Անոր համար դժոխք գինք կը լայն-
ցունէ,
Եւ բերանը չափէ դուրս կը բանայ.
Եւ անոր պարծանքը և բազմութիւնը
Եւ ազազակը և զուարճութիւնն անոր
մէջ պիտի իջնեն։
15 Եւ ամէնիկ մարդը պիտի խոնարհ,
Եւ ազնուականը պիտի խոնարհի,
Եւ ամբարտաւաններուն աչքերը պի-
տի խոնարհին։
16 Եւ զօրաց Տէրն իրաւամբ պիտի բար-
ձրանայ,
Եւ Սուրբն Աստուած արդարութեամբ
պիտի *վեհանայի։
17 Եւ գառնուկներն իրենց սովորութեան
պէս պիտի արածին,
Եւ օտարներուն պիտի ուտեն հարուստ-
ներուն աւերակները։
18 Վա՛յ անոնց՝ որ անօրէնութիւնն ա-
նպատիւութեան չուանովով կը քա-
շեն,
Եւ մեղքը՝ սայլի փոկովով քաշելու պէս։
19 Որ կ'ըսեն, Թող վուիթայ,
Իր գործը չուտով կատարէ, որ ըն-
դնդինք տեսնենք.
Եւ իսրայէլի Սրբոյն խորհուրդը
Թող մօտենայ՝ գայ, որ գիտնանք զայն։
20 Վա՛յ անոնց՝ որ չարին բարի կ'ըսեն, և
բարուն՝ չար,
Որ խաւարը լուսոյ տեղ, և լոյսը խա-
ւարի տեղ կը դնեն,
Որ դառնը՝ քաղցրի տեղ, և քաղցրը
դառնի տեղ կը դնեն։
21 Վա՛յ անոնց՝ որ իրենց աչքին իմաս-
ուն,
Եւ իրենց առջեւն խոհական են։
22 Վա՛յ անոնց՝ որ գինի խմելու զօրաւոր՝
Եւ ցբի խառնելու քաջ են.
23 Որ կաշառքի համար ամբարիշտը կ'ար-
դարացունեն,
Եւ արդարն իր իրաւունքին կը զըր-
կեն։
24 Անոր համար ինչպէս որ կրակին բո-
ցը չարդը կ'ուտէ,
Եւ չոր խոտը բոցին մէջ կը հատնի,
Անոնց արմատը փտութեան
պէս պիտի ըլլայ,
Եւ անոնց ծաղիկը փոշւոյ պէս վեր պի-
տի ելլէ.

*Եբր. առանց գխաւութեան

Քանզի զօրաց Տէրոջը օրէնքը մերժե-
ցին,
Եւ Իսրայէլի Սրբոյն խօսքն անարգե-
ցին։
25 Անոր համար Տէրոջը բարկութիւնն իր
ժողովրդեան դէմ բորբոքեցաւ,
Եւ անոնց վրայ ձեռքը երկնցուց և
զարկաւ զանոնք,
Այնպէս որ լեռները դողացին,
Եւ անոնց դիերը ճամբաներուն վրայ
ալիքի պէս մնացին.
Այսու ամենայնիւ անոր բարկութիւնը
չդարձաւ,
Այլ անոր ձեռքը տակաւին երկնցած
է։
26 Եւ հեռաւոր ազգաց դրօշակ պիտի
վերցունէ,
Եւ զանոնք երկրիս ծայրէն սուլելով
պիտի կանչէ,
Եւ ահա անոնք աճապարելով արա-
գութեամբ պիտի գան.
27 Անոնց մէջ յոգնած պիտի չըլլայ, և ոչ
ոք պիտի սայթի.
Մարդ պիտի չնիրհի և չքնանայ.
Մարդու մէջքին գօտին պիտի չբա-
կուի,
Ոչ ալ կօշկին կապը պիտի կտրուի։
28 Անոնց նետերը սուր են,
Եւ բոլոր աղեղները լարուած.
Անոնց ձիերուն սմբակները գայլախա-
զի կը նմանին,
Եւ *քարոզ անիւները մրրկի պէս են։
29 Անոնց մռնչիւնն առիւծու պէս է.
Կորիւններուն պէս կը մռնչեն,
Կը գոչեն և կողոպուտը կը յափշտա-
կեն,
Եւ ղանիկ կը փախցունեն, և ապահով
չկայ։
30 Եւ այն օրն անոնց վրայ պիտի գոչեն
ծովուն գոչելուն պէս.
Եւ երբ մարդ երկրին նայի, ահա խա-
ւար և տագնապ պիտի տեսնէ.
Եւ լոյսն անոր *մէկիկութեան մէջ պիտի
խաւարի։

*Կամ երկինքին



Գլ. 2

1 Ոդիա Թագաւորին մեռած տարին Տէ-
րը տեսայ որ բարձր և վերացած ա-
թոռի վրայ նստած էր, և անոր քղ-
2 ղանքը տաճարը կը լեցուներ. Վերի
կողմն սերովբէները կը կայնէին անոր
առջեւ, որոնց իւրաքանչիւրը վեց վեց
թեւ ունէին. երկուքով իրենց երեսը
կը ծածկէին, երկուքով իրենց ոտքե-
րը կը ծածկէին, և երկուքով կը թըռ-
3 չէին։ Եւ միմեանք ի՛ադաղակէին և ի՛ըսէին,
Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ է զօրաց Տէրը,
Բոլոր երկիրն անոր փառաւորը լեցուն է։
4 Եւ ազազակողին ձայնէն սեմերուն հիմ-
երը շարժեցան, և տաճարը ծխով լեց-
ուեցաւ։
5 Եւ ըսի,
Վա՛յ ինծ, ահա կը կտրուիմ.
Վասն զի ես պիղծ շրթունք ունեցող
մարդ եմ,
Եւ պղծաշրթունք ժողովրդեան մէջ կը
բնակիմ,
Եւ աչքերս զօրաց Տէրը՝ Թագաւորը
տեսան։
6 Բայց սերովբէներուն մէն դէղ մը
թռաւ, և ձեռքը կրակի կայծ մը կար՝
7 որ սեղանէն առնելով տաւած էր, Եւ
բերնիս դպցունելով՝ ըսաւ,
Ահա այս քու շրթունդդ դպաւ,
Եւ քու անօրէնութիւնդ վերցաւ,
Եւ մեղքդ քաւութիւն եղաւ։
8 Եւսրբ լսեցի Տէրոջը ձայնը, որ ըսաւ,
Ո՞վ պիտի՛ ղրկեմ, և մեզի համար ո՞վ պիտի
երթայ.
Եւ ես ըսի, Ահաւասիկ ես, զիս ղրկէ։
9 Անսաեան ըսաւ, Գնա, ըսէ այս ժողո-
վուրդին,
Լսելով պիտի լսէք, բայց պիտի չի-
մանաք,
Եւ տեսնելով պիտի տեսնէք, բայց
պիտի չգիտնաք։
10 Այս ժողովրդեան սիրտը թանձրա-
ցուր,
Եւ ականջները ծանրացուր, և անոր
աչքերը գոցէ,

Որ չըլլայ Թէ այօր աւանիկ, և ականջ-
ներով լսէ,
Եւ սրտով խելագայ, և դարձի գայ և
բժշկուի։
11 Եւ ես ըսի, Մինչև ե՞րբ, օվ Տէր իմ, և
ըսաւ,
Մինչև որ քաղաքները բնակիչ չմնա-
նալով՝
Եւ տուները մարդ չգտնուելով անոյշ
ձնան,
Եւ երկիրը բոլորովին աւերակ ըլլայ.
12 Եւ մինչև որ Տէրը հեռացուցանէ մար-
դիկը,
Եւ երկրիս մէջտեղ մեծ անապատութիւն
ըլլայ,
13 Բայց անոր մէջ դեռ տասնեւորդ մնալ
պիտի գտնուի,
Եւ ան ալ դարձեալ պիտի ապաւէ.
Ինչպէս բեւեհինն և կաղնին կարուելով՝ անոնց բունը կը մնայ,
Այնպէս սուրբ սերունդն այն ընդվզողնե-
րուն բունը պիտի ըլլայ։

## Գլ. Ե

1 Եւ եղաւ որ Յուդայի Թագաւորին Ո-
զիայի որդւոյն Յոթամայ որդւոյն Ա-
քազի օրերը՝ Ասորւոց Ռասին Թագա-
ւորը և Իսրայելի Թագաւորը Հոմմե-
լայի որդին Փակէհ Երուսաղէմի վրայ
պատերազմելու եկան, բայց չկրցան ա-
2 նոր հետ պատերազմ ընել։ Ուստի երբ
Դաւիթի տան լուր արուեցաւ՝ Թէ Ա-
սորիք *Եփրեմի հետ միաբանեցան,"
անոր սիրտը և անոր ժողովրդեան սիր-
տը շարժեցաւ, ինչպէս որ անտառին
3 ծառերը հովին կը շարժին։ Բայց Տէրը
Եսայիէ ըսաւ, Ելմա դուն և քու որ-
դիդ †Սէար-յասուբ Թափչի ապտակ-
կին ճամուան վրայ՝ վերի աւազանին
ջրմուխն եղերքը եղիր զինքդ դիմաւո-
4 րելու։ Եւ ըսէ անոր,
Զգոյշ եղիր որ հանգստա ըլլաս,
Մի վախնար և սիրտդ չմարի
Այս ծուխ հանող երկու կիսայրեայ
փայտի ծայրերուն,
Ասորւոյն Ռասինի և Ասորւոց
Եւ Ռոմմելայի որդւոյն սաստիկ բար-
կութենին։
5 Քանզի Ասորիք, Եփրեմ և Ռոմմելայի
որդին
Քու վրադ չար խորհուրդ ըրին և ըսին,
6 Յուդայի վրայ երթանք, և բանա-
գատենք զնա
Եւ մեզի հնազանդեցնենք,
Եւ մեզի հնազանդեցնենք,
Եւ Թաբէէլի որդին Թա-
գաւոր դնենք։
7 Տէրն այսպէս կ'ըսէ.
Այս խորհուրդը պիտի չհաստատուի և
չկատարուի։
8 Վասն զի Ասորւոց Իշխէն գլուխը՝ Դա-
մասկոս,
Եւ Դամասկոսի գլուխը Ռասին է.
Եւ վեց տարուան և հինգ տարուան մէջ Եփ-
րեմ ժողովուրդ ըլլալէն պիտի
ջնջուի։
9 Եւ Եփրեմի գլուխը՝ Սամարիա,
Եւ Սամարիայի գլուխը Ռոմմելայի որ-
դին է.
Եթէ չհաւատաք՝ հաստատուն պիտի
չըլլաք։
10 Դարձեալ Տէրը խօսեցաւ Ահազի և
ըսաւ,
11 Քու Տէր Աստուծմէդ քեզի համար նշան
խնդրէ,
Խորութենան մէջ կամ բարձրութենան
մէջ խնդրէ։
12 Բայց Ահազ ըսաւ, Չեմ խնդրեր և Տէ-
րը չեմ փորձեր։
13 Անասանն անիկա ըսաւ,
Լսեցէք հիմա, օվ Դաւիթի տունը.
Փո՞ր բան կ'ընէնայ ձեզ զմարդիկ աչ-
խատացնել՝
Որ իմ Աստուածս ալ պիտի աչխատա-
ցունէք։
14 Անոր համար Տէրը ինք նշան պիտի տայ
ձեզի.
Ահա կոյսը պիտի յղանայ և որդի պիտի
ծնանի,
Եւ անոր անունն Էմմանուէլ պիտի կոչէ։
15 Անիկա կաղի և մեղր պիտի ուտէ,

*Կամ Եփրեմի Էրէքէն վրայ բանակեցան,
†Այնինչ՝ միացորդը պիտի դառնայ



Մինչև որ գիտնայ չարը մերժել և բարին
ընտրել,
16 Վասն զի տղան չարը մերժել և բարին
ընտրել գիտնալէն առաջ՝
*Պիտի Թողուի այն երկիրը
Որուն երկու Թագաւորներէն դուն կը
վախնաս։"
17 Տէրը քու վրադ, և քու ժողովուրդիդ
վրայ,
Եւ քու հօրդ տան վրայ օրեր պիտի բերէ,
Որ Եփրեմ Յուդայէ զատուած օրէն
ի վեր չեկան,
Այսինքն Ասորեստանի Թագաւորը։
18 Եւ պիտի ըլլայ այն օրը՝ որ Տէրը պիտի
սուլէ
Եգիպտոսի գետերուն ծայրը եղած
Ճանճերուն,
Եւ Ասորեստանի երկրին մէջ եղած մե-
ղուներուն.
19 Եւ ամէնքը պիտի գան և պիտի հանգչին
Ամայի ձորերուն մէջ և վէմերուն խո-
ռոչներուն մէջ,
Եւ ամէն Թուփերուն և ամէն արօտ-
ներուն մէջ։
20 Այն օր Տէրը՝ վարձքով առնուած
մօրեղբայրովդ
Այսինքն Գետին անդին եղող
Ասորեստանի Թագաւորով
Գլուխը և սրտիերուն մազը պիտի մօրթի.
Եւ մորուքն ալ բոլորովին պիտի սափրէ.
21 Եւ պիտի ըլլայ այն օր՝ որ մարդ մը
Մէկ երինջ և երկու ոչխար պահելով,
22 Անոնց տուած կաթին առատութենէն
կագի պիտի ուտէ.
Վասն զի երկրին մէջ բոլոր մնացողները
Կագի և մեղր պիտի ուտեն։
23 Եւ պիտի ըլլայ այն օր՝
Որ ուր հազար որթ գնովուած է հազար
արծաթի արժողութեամբ՝
Ճախարով և փուշերով պիտի լեցուի։
24 Նետերով և աղեղներով հոն պիտի
գան,

*Կամ գետ զգուած երկիրը՝ իր երկու
Թագաւորներէն պիտի Թողուի։

Քանզի բոլոր երկիրը ցախերով և փու-
շերով պիտի լեցուի։
25 Եւ այն ամէն լեռները՝ որ բրլով կը
փորուէին,
Ճախի և փշոյ երկիւղին պատճառաւ
հոն պիտի չերթաք.
Այլ նաւերու արօտ և ոչխարներու կո-
խան պիտի ըլլան։

## Գլ. Ը

1 Եւ Տէրը ինծի ըսաւ, Դուն քեզի մեծ
տախտակ մը առ, և անոր վրայ մարդու
գրչով գրէ Մահէր–շալալ–հաշ–պազին
2 վրայ։ Եւ ինծի հաւատարիմ վկաներ
բռնեցի Ուրիա քահանան և Բարա-
քիայի որդին Զաքարիա։ Եւ մերձեցայ
մարգարէուհուն, և անիկա յղացաւ
և որդի մը ծնաւ։ Եւ Տէրը ինծի ըսաւ,
Անոր անունը *Մահէր–շալալ–հաշ–պազ
4 դիր։ Քանզի դեռ տղան հայրս և մայրս
կանչել չսորված՝ Դամասկոսի հարս-
տութիւնները և Սամարիայի աւարն
Ասորեստանի Թագաւորին առջև պիտի
տարուին։
5 Եւ դարձեալ Տէրը ինծի խօսեցաւ և
ըսաւ,
6 Որովհետև այս ժողովուրդը Սիլոամի
հանդարտ վազող ջուրերը կ'արհամար-
հէ, և Ռասինի և Ռոմմելայի որդւոյն
կը հաճի,
7 Անոր համար ահա Տէրը անոնց վրայ
Գետին զօրաւոր և առատ ջու-
րերը՝
Այսինքն Ասորեստանի Թագաւորը և
անոր բոլոր †զօրութիւնը պիտի
հանէ.
Եւ անիկա իր ամէն յառակներէն վեր
պիտի ելլէ,
Եւ իր բոլոր եղերներուն վրայէն պիտի
գայէ։
8 Եւ Յուդայի մէջ յորդելով՝ պիտի անց-
նի երթայ,

*Այսինքն՝ արագարշաւ ասպատակէ և
չուռաով կողոպտուած ժողովէ։
†Եբր. փառքը

եւ մինչեւ հաբդոյ պատանացը պիտի հասնի,
եւ անոր թեւերուն տարածութիւնը
քու երկրիդ բոլոր թիւնը պիտի լեցնէ, ով Էմմանուէլ։
9 Ով ժողովուրդներ, *պատնեշվից եղէք,* բայց պիտի խորտակուիք.
Ով երկրին հեռաւոր տեղերը, ականջ դրէք.
†Պատրաստուեցէք, բայց պիտի խորտակուիք.
†Պատրաստուեցէք, բայց պիտի խորտակուիք։
10 Խորհուրդ բրէք, բայց պիտի խափանուի.
Խօսք խօսեցէք, բայց պիտի չհաստատուի.
Քանզի Աստուած մեզի հետ է։
11 Քանզի Տէրը հզօր ձեռքով այսպէս խօսեցաւ ինծի,
Եւ խրատեց զիս՝ թէ պէտք չէ այս ժողովրդեան ճամբուն մէջ քալել, ըսելով,
12 Դաշնակցութիւն մի ըսէք,
ինչ բանի որ այս ժողովուրդը դաշնակցութիւն կ'ըսէ.
Եւ անոր երկիւղը մի երկնչիք եւ մի զարհուրիք.
13 Մէ՛ն զօրաց Տէրը *փառաւորեցէք,
Անիկա բոլոր ձեր երկիւղը եւ ձեր զարհուրանքը.
14 Եւ անիկա չէ՛ր որբատան պիտի ըլլայ,
Բայց Իսրայէլի երկու առներուն՝
Գայթակղութեան քար եւ դրդուելու վէմ,
Եւ Երուսաղէմի բնակիչներուն թակարդ եւ որոգայթ պիտի ըլլայ։
15 Եւ անոնցմէ շատերը պիտի գլորին,
Եւ կոտրուին պիտի խորտակուին,
Եւ որոգայթի մէջ կեցուելով պիտի բռնուին։
16 Վկայութիւնը կապէ,
Աշակերտներուս մէջ օրէնքը կնքէ։
17 Ու ես կը պիտի սպասեմ Տէրոջը՝
Որ Յակոբայ առնէն իր երեսը ծածկած է,
Եւ անոր պիտի յուսամ։
18 Ահաւասիկ ես և այն զաւակները զոր Տէրը ինծի տուաւ,
Նշաններ և սքանչելիք ըլլալու Իսրայէլի մէջ՝
Սիոն լեռը բնակող զօրաց Տէրոջը կողմանէ։
19 Եւ երբ ձեզի բանն ըսեն՝
Շշնջող և փրթմնջող վհուկներուն
Եւ նշանագէտներուն հարցուցէք,
Ազգին ըսէ՛ր իր
ժողովուրդը իր Աստուծոյն պիտի չհարցնէ՞,
կենդանիներուն համար մեռածներո՞ւն պիտի հարցնէ։
20 Օրէնքին և վկայութեան խոշ հարցուցէք։
Եթէ այս խօսքին համեմատ չդուրս ցեան,
Անոնք առաւելեալ լոյս չունին։
21 Եւ ծոլովուրդը վիշտ և սով կրելով պիտի անցնի անկէ.
Եւ երբ անօթենայ՝ պիտի բարկանայ,
Եւ իր թագաւորին և իր Աստուծոյն պիտի հայհոյէ, և վեր նայի,
22 Եւ դէպ յերկիր պիտի նայի,
Եւ ահա վիշտ և խաւար, նեղութեան մէջ.
Եւ դէպ ի մառախուղ պիտի քշուին։

Գլ. Թ.

1 Բայց այնպէս խաւար պիտի չըլլայ՝ ինչպէս նեղութեան ժամանակ,
Երբ առաջի առնն անարգեց Զաբուղոնի երկիրը և Նեփթաղիմի երկիրը.
Այլ վերջին առնն պիտի պատուէ ծովուն ճամբան,
Յորդանանու անդիի կողմը՝ Հեթանոսաց Գալիլեան։
2 Խաւարի մէջ պտրտող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ,
Մահուան առուերին երկիրը բնակողներուն լոյս ծագեցաւ։

*Կամ ցնծութիւնն բրէք,
†Նբ. Գօսի կապեցէք,
‡Նբ. սրբեցէք,



3 Ազգը բազմացուցիր, անոր ուրախութիւնը մեծցուցիր.
Անոնք քու առջեւդ կ'ուրախանան՝ հնձոց ատենի ուրախութեան պէս,
Ինչպէս կը ցնծան անոնք որ աւար կը բաժնեն։
4 Քանզի Մադիամու օրուան պէս՝
Անոր ծանր լուծը և կռնակին գաւազանը,
Եւ անոր վրայ բռնութիւն բնողին ցուպը կոտրեցիր։
5 Քանզի շառաչմամբ պատերազմողներուն բոլոր *զինքը
Եւ արիւնաթաթախ հանգերձները
Պիտի այրին և հրոյ ճարակ ըլլան։
6 Վասն զի մեզի մանուկ մը ծնաւ,
Մեզի որդի մը տրուեցաւ,
Եւ իշխանութիւնն անոր ուսին վրայ պիտի ըլլայ,
Եւ անոր անունը պիտի կոչուի
Սքանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած,
Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան։
7 Գաւթի աթոռին վրայ և անոր թագաւորութեան վրայ
Անոր իշխանութեան մեծնալուն և խաղաղութեանը սահման չկայ,
Որ հիմնակուռնակ մինչև յաւիտեան
Իրաւամբ և արդարութեամբ հաստատէ և զօրացունէ զայն։
Զօրաց Տէրոջը նախանձը պիտի ընէ զայս։
8 Տէրը Յակոբայ պատգամ զրկեց,
Եւ անիկա Իսրայէլի վրայ իջաւ։
9 Եւ բոլոր ժողովուրդը պիտի իմանայ,
Այո՛նքն Եփրեմ և Սամարիայի բնակիչները,
Որ ամբարտաւանութեամբ և սրտի հպարտութեամբ կ'ըսեն,
10 Թէ՝ պիտանիներն ինկան,
Բայց մենք տաշուած քարերով պիտի շինենք։
Մորթենիները կտրուեցան,
Բայց մենք անոնց տեղ եղևնափայտեր պիտի դնենք։
11 Սակայն Տէրը անոր վրայ Ռասինի հակառակորդները պիտի յարուցանէ,
Եւ անոր թշնամիները պիտի *գրգռէ։
12 Ասորիք †յարևելից, Փղշտացիք ‡յարևմտից.
Եւ անոնք լեցուն բերանով զԻսրայէլ պիտի ուտեն։
Այսու ամենայնիւ անոր բարկութիւնը չկՀաւ,
Այլ անոր ձեռքը տակաւին երկնցած է։
13 Քանզի ժողովուրդը զինք զարնողին չդարձաւ,
Եւ զօրաց Տէրը չփնտռեր։
14 Եւ Տէրը Իսրայէլէ գլուխը և պոչին,
Արմաւենոյ ճիւղ և կնիւնը
Մէկ օրուան մէջ պիտի կտրէ։
15 (Ծերը և պատուաւոր մարդը գլուխն է.
24 Ու ինձ պիտի ըսէ,
Միայն Տէրոջմով արդարութիւն ու զօրութիւն կայ։
Իրեն գանգատելու անոր պիտի գայ.
Ու բոլոր անոր դէմ բարկացողները պիտի ամչնան,
25 Իսրայէլի բոլոր սերունդը
Տէրոջմով պիտի արդարանայ ու պիտի պարծենայ։

## Գլ. ԽԶ

1 Բէլ խոնարհեցաւ, Նեբոյ ծռեցաւ,
Անոնց կուռքերը կենդանիներու ու անասուններու վրայ էին։
Ձեր բեռցուած բեռները
Յոգնած անասունի ծանրութիւն եղան։
2 Անոնք ծռեցան ու ի միասին խոնարհեցան,
Բեռն ազատելու կարող չեղան,
Ու իրենք ալ գերութեան գացին։
3 Ինձի մտիկ ըրէ՛ք, ով Յակոբայ տունը,
Ու Իսրայէլի տան բոլոր մնացորդը,
Որ ձեզ պրովայնի կը կրեմ ու արգանդէ կը վերցնեմ։
4 Մինչև չէր ծերութիւնն անգամ ես նոյն եմ,
Ու մինչև չէր ալեւորութիւնը ես դնէ պիտի կրեմ.
Ես ստեղծեցի ու ես պիտի վերցնեմ,
Ես պիտի կրեմ ու պիտի ազատեմ։
5 Ձիս որո՞ւ կը նմանցնէ՛ք ու հաւասար կը համարի՛ք.
Ինձի ո՞ւր նմանութիւն կը շինէ՛ք, որ նման ըլլանք։
6 Քսակէն ոսկի կը թափեն ու կշռով արծաթ կը կշռեն,
Վարձքով ոսկերիչ կը բռնեն, որ անով աստուած կը շինէ.
Ձունկ կը պաչեն ու անոր երկրպագութիւն կ'ընեն։
7 Ձանիկա ուսերու վրայ կը վերցուենն կը տանին,
Իւր տեղը կը հաստատեն ու կը կայնի,
Անիկա իւր տեղէն չշարժիր.

Եւ եթէ մարդ անօր ապստամբէ՝ պատասխան չտայ,
Նեղութենէն չազատելը դնա,
8 Ասիկա յիշեցէք և մարդ եղէք,
Ձեր մեղքը բերէք, ով յանցաւորներ,
9 Ի յաւիտենից եղած առէջ բաներն յիշեցէք.
Քանզի ես եմ Աստուած, և ինէ ուրիշը չկայ.
Ես Էմ Աստուած, և ինծի նմանը չկայ,
10 Որ վերջինը սկիզբէն
Եւ դէռ չեղածն առաջուընէ պատմելով.
Եւ կ'ըսեմ թէ իմ խորհուրդս պիտի հաստատուի,
Եւ իմ ամէն կամքս պիտի կատարեմ,
11 Ես Էմ որ արեւելքէն գիշատիչ թռչունը կը կանչեմ,
Ես հեռու երկրէ՝ իմ խորհուրդս ի գործ պիտի դնելու.
Ես խօսեցայ և ես պիտի կատարեմ,
Ես խորհեցայ և ես ի գործ պիտի դնեմ,
12 Ով սրտապնդութենէ հեռացած խստասիրտներդ,
Ինծի մօտիկ ըլլէք.
13 Իմ արդարութիւնս մօտեցուցի,
Անիկա պիտի չհեռանայ,
Ես իմ փրկութիւնս պիտի չուշանայ.
Ես իմ փառքս Իսրայէլի համար
Սիոնի մէջ փրկութիւն պիտի դնեմ,

## Գլ. Խ

1 Ով Բաբելոնի կոյս աղջիկ,
Իջիր և հողի վրայ նստէ.
Ով Քաղդէացւոց աղջիկ,
Գետնի վրայ առանց աթոռի նստէ,
Քանզի այլ ես գիրկ և փափուկ պիտի չկոչուիս։
2 Աղօրիքն քարերն առ, ալիւր ազատէ.
Լաչակդ հանէ, քղանցքդ վերցուր,
Սրունքդ բաց, գետերէն անցիր։
3 Թող քու մերկութիւնդ բացուի
Եւ նախատինքդ ալ երեւնայ.
Վրէժ վերմ պիտի առնեմ,
Եւ մարդու միջնորդութիւնը պիտի չընդունիմ։
4 (Մեր Փրկչին անունը *Եհովայ Սաբաւովթ՝ է.
Անիկա Իսրայէլի Սուրբն է։)
5 Լռէ նստէ, խաւարի մէջ մտիր, ով Քաղդէացւոց աղջիկ,
Քանզի այլ ես Թագաւորութեանց տիկին պիտի չկոչուիս։
6 Ես իմ ժողովուրդիս բարկացայ,
Ես իմ ժառանգութիւնս պղծեցի,
Եւ զանոնք քու ձեռքդ տուի.
Դուն անոնց գթութիւն չցուցուցիր,
Ծերին վրայ քու լուծդ չատ ծանրացուցիր.
7 Եւ ըսիր, Ես յաւիտեան տիկին պիտի ըլամ.
Այնպէս որ ասիկա մտքիդ մէջ չդրիր,
Ասոր վախճանը չյիշեցիր։
8 Եւ հիմա մտիկ ըրէ,
Ով անհոգութեամբ նստող հեշտասէր,
Որ սրտիդ մէջ կ'ըսես,
Ես եմ և ինէ ուրիշը չկայ.
Ես չպիտի չնստիմ,
Եւ անպատկութենն պիտի չգիտնամ։
9 Հիմա ասոնց երկուքն ալ՝
Թէ անպատկութենն և թէ այրութենն
Յանկարծ մէկ օրուան մէջ քու վրադ պիտի գան.
Քու գութենութիւններուդ չատութենան մէջ
Եւ քու անթիւ կախարդութիւններուդ մէջ
Անոնք ամբողջ քու վրադ պիտի գան։
10 Եւ դուն քու չարութեանդ ապաւինեցար,
Եւ ըսիր, Զիս տեսնող չկայ.
Քեզ գիտէ հանդգնը քու խնամութիւնդ կ'ըսէ և գիտութիւնդ է.
Եւ սրտիդ մէջ ըսիր, Ես եմ և ինէ ուրիշը չկայ։
11 Անոր համար քու վրադ ձախորդութիւն մը պիտի գայ,
Որ անոր ուսաւ ծագիլը պիտի չգիտնաս.
Եւ քու վրադ թշուառութիւն պիտի իյնայ,

*Այլ՝ Ես եմ՝ Տէր զօրութեանց



Զոր ես դարձունելու կարող պիտի չըլլաս.
Եւ քու վրադ յանկարծ աւերում մը պիտի գայ,
Զոր դուն պիտի չդիտնաս։
12 Հիմա քու կախարդութիւններուդ և չատ դիւթութիւններուդ մէջ կեցիր,
Որոնք մանկութենէդ ի վեր աշխատած ես,
Թերեւս օգուտ դանելու կարող ըլլաս,
Թերեւս կարենաս յաղթել։
13 Խորհուրդներուդ չատախութենէն ձանձրացար.
Հիմա երկինք դիտողները,
Աստեղաբաշխները,
Նոր ամիսներով գուշակութիւն ընողները թող ելլեն,
Եւ քու վրադ գալու չարչիրէն զբեղ ազատեն։
14 Ահա անոնք մզեղի պէս պիտի ըլլան,
Ու զանոնք կրակը պիտի այրէ.
Իրենց հոգին բոցին զօրութենէն պիտի չկրնան ազատել.
Տաքնալու համար՝ կոյտ մը,
Կամ դիմացը նստելու համար կրակ մը պիտի չլինայ։
15 Այսպէս պիտի ըլլան քեզի անոնք՝ որոնց հետ աշխատեցար,
Եւ մանկութենէդ ի վեր առուտուր ըրիր.
Խաբեանչիր իւր ճամբան երթալով ցրուեցան պիտի ըլլան,
Ու գրեթէ ազատող պիտի չըլլայ։

## Գլ. Խը

1 Լսեցէք զայս, ով Յակոբայ տունը,
Որ Իսրայէլի անուամբ կանչուած եք,
Եւ Յուդայի *ազբիւրէն ելած եք,
Եւ Տէրոջը անուամբ երդնում կ'ընէք,
Եւ Իսրայէլի Աստուածը կը յիշէք,
Բայց ոչ ճշմարտութեամբ, և ոչ արդարութեամբ։
2 (Քանզի անոնք Սուրբ քաղաքին անուամբ կը յիշուին,
Եւ Իսրայէլի Աստուծոյն կը յենուին,
Որոյ անունը Եհովայ Սաբաւովթ է։)
3 Առջի բաներն հին ժամանակէն ի վեր պատմեցի,
Եւ անոնք իմ բերնէս ելան, և զանոնք իմացուցի.
Յանկարծ գործեցի ալ և եղան։
4 Քանզի գիտէի թէ դուն խիստ ես,
Եւ քու պարանոցդ երկաթի ջիղը ունի,
Եւ ալնիդ պղինձ ունիս,
5 Ուստի քեզի հին ժամանակէն ի վեր պատմեցի,
Եւ դեռ չեղած քեզի իմացուցի,
Գուցէ ըսես, Զանոնք իմ արձանս ըրաւ,
Եւ իմ քանդակած և ձուլածոյ կուռքս հրամայեց։
6 Գուն անոնք լսեցիր, նայէ՝ անոնց այն կատարուեցաւ.
Եւ դուք զայն պիտի չհրատարակէք։
Ես քեզ այսուհետև նոր և ծածուկ բաներ պիտի յայտնեմ,
Զորս դուն չգիտցար։
7 Անոնք հիմա ստեղծուեցան և ոչ թէ առաջուց.
Եւ այս օրէս առաջ զանոնք չլսեցիր,
Թերեւս ըսես, Ահա զանոնք գիտցայ,
8 Գուն ոչ լսեցիր, ոչ ալ գիտցար,
Եւ ականջդ չբացուեցաւ.
Վասն զի գիտցայ որ դուն չատ նենգաւոր ես,
Եւ դուն որովայնէ ապստամբ կոչուեցար։
9 Ես իմ անուանս համար բարկութենս պիտի ուշացնեմ,
Եւ իմ փառացս համար համբերող պիտի ըլլամ քեզ,
Որ քեզ չկորսնցնեմ։
10 Ահա գրեցի մաքրելի, բայց ոչ թէ *արծաթի պէս.
Ես գրեցի նեղութեան հալոցին մէջ փորձելով։
11 Այո՛ ինծի համար՝ ինծի համար պիտի գործեմ.

*Եբր. յուդեքէն

*Կամ արծաթով.

Քանզի չէ ածուռնա ինչոյ պղծուի.
Եւ ես իմ փառքս ուրիշին չեմ տար,
12 Ով Յակոբ և Իսրայէլ զոր կոչեցի, ինծի մտիկ ըրէ.
Ես նոյն եմ, առաջինը ես եմ, վերջինն ալ ես եմ,
13 Նաև զերկիրը իմ ձեռքս հիմնեց,
Եւ երկինքը իմ աջ ձեռքս տարածեց.
Երբ ես զանոնք կանչեմ,
Անոնք ի միասին չեմ ուրանար կը կայնին,
14 Ամէնքդ ժողովեցէք և մտիկ ըրէք.
Անոնցմէ ո՞վ պատմեց այս բաները.
Տէրոջը սիրածը Բաբելոնի մէջ անոր կամքն ի գործ պիտի դնէ,
Եւ իր բազուկը Քաղդեացւոց վրայ պիտի իջեցնէ.
15 Ես՝ ես խօսեցայ և կանչեցի զնա,
Բերի զնա և անոր ճամբան յաջող պիտի ըլլայ,
16 Ինծի մօտեցէք, լսեցէք զայս.
Առաջուց ծածուկ չխօսեցայ,
Այս բաները եղած ժամանակէն ի վեր ես հոն եմ.
Եւ հիմա զիս Տէր Եհովան և անոր Հոգին զրկեց.
17 Այսպէս կ'ըսէ Տէրը՝
Քու Փրկիչդ՝ Իսրայէլի Սուրբը.
Ես եմ քու Տէր Աստուածդ,
Որ քեզի օգտակար եղածը կը սորվեցնեմ,
Եւ քալելու ճամբուդ մէջ կ'առաջնորդեմ քեզ,
18 Երանի թէ պատուիրանքս մտիկ ընէիր.
Անտուն խաղաղութիւնդ՝ գետի պէս,
Եւ արդարութիւնդ ծովու ալեաց պէս պիտի ըլլար.
19 Եւ քու սերունդդ՝ աւազի չափ,
Եւ որոմայնիդ ծնունդն անոր *խէրն չափ պիտի ըլլար,
Անոր անունը իմ առջևէս պիտի չկտրուէր և չկորսուէր.
20 Բաբելոնէն ելէք, Քաղդեացիներէն փախէք.
Ասիկա յողոքութեան երգով պատմեցէք ու հրապարակեցէք.

*Կամ որոմայնին ծնունդին

Ասիկա մինչև երկրիս ծայրը տարածեցէք,
Ըսէք՝ Տէրը իր Յակոբ ծառան փրկեց.
21 Եւ երբ զանոնք անապատներու միջ պտըտցուց՝ չծարաւեցան.
Անոնց համար վիմէն ջուր վազցուց,
Վէմը պատռեց և անկէ ջուրեր բղխեցին,
22 Ամբարիշտներուն խաղաղութիւն պիտի չունենան՝ կ'ըսէ Տէրը.

## Կ. Խ

1 Ով կղզիներս, ինծի մտիկ ըրէք,
Եւ, ով ժողովուրդներս, հեռուէն ականջ առէք.
Տէրը զիս արգանդէ կանչեց,
Իմ անունս մօր որովայնէն յիշեց.
2 Եւ իմ բերանս սրած թուրի պէս բրաւ,
Զիս իր ձեռքով հովանոցն ատկ ծածկեց,
Եւ զիս փայլուն նետի պէս բրաւ.
Իր կապարճին մէջ պահեց զիս.
3 Եւ ինծի ըսաւ, Դուն իմ ծառաս ես,
Ով Իսրայէլ, քեզմով պիտի փառաւորուիմ։
4 Եւ ես ըսի, ի զուր աշխատեցայ,
Ու զօրութիւնս ոչինչ և ունայն գործածեցի.
Բայց իրաւունքս Տէրոջը առջևն է,
Եւ գործս Աստուծոյս քովն է։
5 Եւ հիմա այսպէս կ'ըսէ Տէրը՝
Որ զիս որովայնէ իրեն ծառայ ըլլալու համար առեջծեց,
Որ զՅակոբ անոր դարձնելու,
Եւ Իսրայէլ անոր ժողովի,
Որ Տէրոջը առջև փառաւորուիմ,
Եւ իմ Աստուածս ինծի զօրութիւն ըլլայ.
6 Այո՛ն կ'ըսէ. Յակոբայ ցեղերը նորէն հաստատելու համար,
Եւ Իսրայէլի ազատուածները դարձնելու համար,
Իմ ծառա ըլլալդ քեզի քիչ է.
Ահա քեզ ազգերուն լոյս պիտի դնեմ,



Որ մինչև երկրին ծայրը իմ փրկութիւնս ըլլաս։
7 Այսպէս կ'ըսէ Տէրը՝ Իսրայէլի Փրկիչը՝ անոր Սուրբը
Անարգուած անձին՝ ազգայ ատելի եղողին՝ իշխանաց ծառային.
Թագաւորները պիտի տեսնեն և ոտք պիտի կենան.
Իշխաններն ալ երկրպագութեան պիտի բնեն
Տէրոջը համար՝ որ հաւատարիմ է,
Իսրայէլի Սրբոյն համար՝ որ քեզ ընտրած է։
8 Տէրը այսպէս կ'ըսէ.
Ընդունելի ժամանակի մէջ քեզ լսեցի,
Եւ փրկութեան օրը քեզի օգնութիւն բրի,
Եւ քեզ պահեցի և ժողովրդին ուխտ բլլալու տուի,
Որ երկիրը հաստատես,
Եւ ապրուած ժառանգութիւնները ժառանգեցնես.
9 Եւ կապուածներուն բսես, Ելէք,
Ե՛ խաւարի մէջ եղողներուն՝ Յայտնուեցէք.
Ճանապարհներուն վրայ պիտի արածին,
Եւ անոնց արօտն ամէն բլուրներու վրայ պիտի ըլլայ.
10 Անոնք պիտի չանօթենան և չծարաւին,
Եւ զանոնք խոչակը կամ արևը պիտի չզարնէ.
Քանզի անոնց ողորմութիւն ընողը պիտի առաջնորդէ անոնց,
Եւ ջուրի աղբիւրներուն քով պիտի տանի զանոնք.
11 Եւ ամէն լեռներս ճամբաներ պիտի բնեմ,
Եւ պողոտաներս պիտի բարձրանան.
12 Ահա ոմանք հեռուէն,
Եւ ահա ոմանք հիւսիսէն և արեւմտքէն,
Եւ ոմանք Սինեացւոց երկրէն պիտի գան.
13 Ով երկինք, ուրախ եղէք, և ով երկիր, ցնծութիւն բրէ,
Եւ, ով լեռներ, ուրախութեան ձայնով ազազակեցէք.
Քանզի Տէրը իր ժողովրդեան մխիթարութիւն տուաւ,
Եւ իր տառապեալներուն ողորմցաւ։
14 Բայց Սիօն բսաւ, Տէրս զիս թողուց,
Ու Տէրը զիս մոռցաւ։
15 Մի՞թէ կին իր կաթնկերը մոռնալ կրնայ մոռնալ,
Այնպես որ իր որովայնին ծնունդեան վրայ չգթայ.
Թէև անոնք մոռնան,
Բայց ես զքեզ պիտի չմոռնամ։
16 Ահա ես զքեզ իմ ձեռացս մէջ նկարագրեցի,
Պարիսպներդ միշտ իմ առջևս են.
17 Որդիքդ պիտի աճապարեն,
Ե՛ զքեզ վերացնողներդ և աւերողներդ քեզմե պիտի ելլեն։
18 Աչքերդ վերցուր և բոլորտիքդ նայէ.
Ամէնքը կը ժողովին և քեզի կու գան.
Տէրը կ'ըսէ որ Ես կենդանի եմ,
Անշուշտ անոնց ամէնը զարդերու պէս պիտի հագնիս,
Եւ անոնցմով հարսի պէս պիտի զարդարուիս։
19 Քանզի աւերակներդ՝ ամայի տեղուանքդ,
Եւ կործանմանդ երկիրը
Հիմա նեղ բնակիչներուն նեղ պիտի գայ,
Եւ քեզ կլուզողները պիտի հեռանան։
20 Անզաւակութենէդ ետքը ծնանելու որդիքդ
Ականջներուդ պիտի բսեն,
Այս տեղն ինծի նեղ է,
Տեղ տուր ինձ որ բնակիմ։
21 Եւ դուն քու սրտիդ մէջ պիտի բսես,
Ասոնք ինծի ո՞վ ծնաւ.
Ես անզաւակ և ամուլ էի.
Ես գերի և աքսորուած էի,
Ասոնք ո՞վ մեծցուց.
Ահա ես միմակ մնացած էի,
Ասոնք ո՞ւր էին։
22 Այսպէս կ'ըսէ Տէր Եհովա,
Ահա իմ ձեռքս ազգերու վրայ պիտի վերցնեմ,
Եւ զօրաց ժողովուրդներուս մէջ պիտի կանգնեմ.

և անոնք քու ազիւիդդ ըլլծ ծոցին
մէջ պիտի բերեն,
և քու աղջիկներդ՝ անոնց ուսերուն
վրայ պիտի վերցուին։
23 Եւ թագաւորները քու անուցիչներդ
պիտի ըլլան,
և անոնց թագուհիները քու պտկակ-
ներդ.
երեսնց երկրի գետինը ձեռքէդ գետի
երկրպագութիւն պիտի ընեն,
և ոտքերուդ փոշին պիտի լզեն,
և պիտի գիտնաս որ ես եմ Տէրը.
վասն զի ինձմէ ապառնողները պիտի
չամչնան։
24 Մթիւէ հզօրէ առաջը կ'առնուի՞,
կամ *ահաբկու մարդուն գերի առա-
ծը կ'ազատի՞։
25 Բայց Տէրը այսպէս կ'ըսէ.
Հզօրին գերի առածն անգամ պիտի
առնուի,
և բռնաւոր մարդուն առաջը պիտի
ազատուի.
և քեզի հետ վիճողներուն դէմ ես
պիտի վիճիմ,
և քու զաւկիդ ես պիտի ազատեմ։
26 Եւ զքեզ հարստահարողներուն իրենց
մարմինները պիտի կերցունեմ,
և իրենց արիւնը նոր գինւոյ պէս խը-
ղճալ պիտի արբենան.
և ամէն մարմին պիտի գիտնայ
թէ ես եմ Տէրը՝ որ քեզի ազատակ,
և քու փրկիչդ՝ Յակոբայ Հզօրը։

## Գլ. Ն

1 Տէրը այսպէս կ'ըսէ.
Ո՞ր է ձեր մօրը ապահարգման թուղթը,
Որով ես արձակեցի զնա.
կամ ո՞վ է այն պարտատէրը՝
Որուն ես զձեզ վաճառեցի.
Ահա ձեր անօրէնութեանց հա-
մար վաճառուեցաք,
և ձեր մայրը ձեր յանցանաց համար
արձակուեցաւ։
2 Ինչո՞ւ համար երբ ես եկայ, մարդ չկար,
և՝ երբ կանչեցի, պատասխան առնող
չկար.
Միթէ ձեռքս չափազանց՝ որ փրկելու կարող չըլլամ,
կամ թէ ազատելու զօրութիւն չու-
նիմ.
Ահա իմ սառնամանդս ծովը կը ցամքե-
ցունեմ,
գետերն անապատ կը դարձնեմ.
Անոնց ձուկերը ջուր չըլլալուն համար
կը հոտին
և ծարաւէ կը մեռնին։
3 Երկինքը խաւար կը հագցունեմ,
և ծածկոյթ համար անոնց վրայ քուրձ
կը դնեմ։
4 Տէր Եհովան ինծի խնամառուններու
լեզու առաւ,
Որ յոգնածին խօսքով օգնել գիտնամ.
Առիւն առաւ ինչ կ'արթնցունէ,
Անիկա իմ ականջս կ'արթնցունէ,
Որ ուսուկերպներու պէս լսեմ։
5 Տէր Եհովան իմ ականջս բացաւ,
և ես անշնազանդ չեղայ, հետ չդար-
ձայ։
6 իմ կռնակս զարնողներուն,
և մազերս փետողներուն տուի.
երեսս նախատինքէ և թքունէ չծածկեցի։
7 Բայց Տէր Եհովան ինծի կ'օգնէ,
Անոր համար ամօթահարած պիտի չըլ-
լամ.
Անոր համար իմ երեսս գայլամազի
պէս բրի,
և գիտեմ որ պիտի չամչնամ։
8 Զիս արդարացնողը մօտ է.
Ո՞վ ինծի հետ պիտի վիճի. ի միասին
դատաստանի կայնինք.
Իմ դատախազս ո՞վ է. թող ինծի մո-
տենայ։
9 Ահա Տէր Եհովան ինծի պիտի օգնէ.
Ո՞վ է անիկա որ զիս յանցապարտ պիտի
հանէ.
Ահա ամէնքը հանդերձի պէս պիտի մա-
շին,
Ցեղը պիտի ուտէ զանոնք։
10 Ձեր մէջ Տէրոջմէ վախցող,
Անոր ծառային ձայնը մտիկ ընող ո՞վ
կայ,

*Կամ իրաւունք ունեցող



Որ մութի մէջ կը քալէ և լոյս չունի.
Թող անիկա Տէրոջը անուան ապաւինի,
և իր Աստուծոյն յենուի։
11 Ահա դուք ամէնքդ՝ որ կրակ կը վա-
ռէք
և կայծերով կը շրջապատիք,
Ձեր կրակին լսուռ
և ձեր վառած կայծերուն մէջ քալե-
ցէք.
Այս ձեզի իմ ձեռքէս պիտի ըլլայ,
Դուք տրտմութեամբ պիտի պառկիք։

## Գլ. Ն Ա

1 Ով գուք, արդարութեան հետեւողներ
և՝ Տէրը խնդրողներ, ինծի մտիկ ըրէք.
Դուք այն վէմին նայեցէք՝ ուսկի կրա-
ցուեցաք,
և այն գուբին փոսին՝ ուսկի փորուե-
ցաք։
2 Ձեր հօրը Աբրահամու
և ձեզ ծնանող Սարրայի նայեցէք.
Քանզի կանչեցի զնա ոչ մէկ հոգի եր,
և օրհնեցի և բազմացուցի զնա։
3 Վասն զի Տէրը պիտի մխիթարէ,
Անոր բոլոր աւերակները պիտի մխի-
թարէ.
և անոր անապատը Եդեմի պէս,
և անոր տափաստանը Տէրոջը դրախ-
տին պէս պիտի ընէ.
Անոր մէջ ցնծութիւն և ուրախութիւն,
Գոհութիւն և օրհնութեան ձայն պի-
տի գտնուի։
4 Ով իմ ժողովուրդս, ինծի մտիկ ըրէ,
Ով իմ ազգս, ինծի ականջ տուր.
Քանզի ինէ օրէնք պիտի ելլէ,
և իրաւունքս ժողովուրդներուն լոյս
ըլլալու համար պիտի հաստատեմ։
5 Արդարութիւնս մօտ է, փրկութիւնս
եղած է,
և բազուկներս ժողովուրդները պիտի
դատեն.
Կղզիները ինծի պիտի յուսան
և բազկիս պիտի ապաւինին։
6 Ձեր աչքերը վեր վերցուցէք դէպ յեր-
կինքս,
և վար նայեցէք դէպ յերկիր.
Քանզի երկինքը ծխայ պէս պիտի անց-
նին,
և երկիրը հանդերձի պէս պիտի մաշի,
*Նմանապէս անոր բնակիչներն ալ պի-
տի մեռնին.
Բայց իմ փրկութիւնս յաւիտենական
պիտի ըլլայ,
և արդարութիւնս պիտի չտակուի։
7 Ինծի մտիկ ըրէք, ով արդարութիւն
ճանչցողներ,
և իմ օրէնքս ձեր սրտին մէջ պահող
ժողովուրդ.
Մարդոց նախատինքէն մի վախնաք,
և անոնց բամբասանքէն մի զարհու-
րիք։
8 Վասն զի ցեղը պիտի ուտէ զանոնք հա-
նդերձի պէս,
և մկը պիտի ուտէ զանոնք բրդոյ
պէս.
Բայց արդարութիւնս յաւիտեան,
և փրկութիւնս ամէն գարերու մէջ
պիտի ըլլայ։
9 Արթնցիր, արթնցիր, ով Տէրոջը բա-
զուկը, զօրութիւն հագիր.
Արթնցիր առաջին օրերուն պէս՝
Նահապետ անցած գարերու պէս.
Դուն այն չէ՞ս որ զԲահաբ չարդեցիր
և վիշապը վիրաւորեցիր։
10 Դուն այն չէ՞ս որ ծովը՝
Մեծ անդունդին ջուրերը ցամքեցու-
ցիր,
և ծովուն խորտնկի տեղը ճամ-
բայ ըրիր,
Որ փրկուածները անկէ անցնին։
11 Եւ Տէրոջը փրկածները պիտի դառնան,
և երգելով Սիոն պիտի գան,
և անոնց գլխուն վրայ յաւիտենական
ուրախութիւն պիտի ըլլայ.
Անոնք ցնծութիւն և ուրախութիւն
պիտի առնան,
Տրտմութիւն և հեծութիւն ածուխ պի-
տի հեռանան։
12 Ես եմ, ես եմ որ զձեզ կը մխիթա-
րեմ.

*Կամ՝ Մժեղի պէս

Գուն ալ ես, որ մահկանացու մարդկին
Եւ խոտի նմանելու մարդու զաւակին
կը վախնաս.
13 Եւ զքեզ սահզդող, երկինքը տարածող
Եւ երկրին հիմերը դնող Տէրը կը մոռանաս.
Եւ բռնաւորին պատուհասելէն միշտ
ահէն օր կը վախնաս,
Իբր թէ չքեր կորսուանելու պատրաստուած է.
Բայց հիմա ո՞ւր է բռնաւորին պատուհասելիքը.
14 կապուածը շուտով պիտի արձակուի,
Եւ գուբին մէջ պիտի չմեռնի,
Եւ անոր հացը պիտի չպակսի։
15 Քանզի ես Տէր Աստուածդ եմ եմ,
Որ ծովը կը յանդիմանեմ երբ անոր
ալիքը կը գոռան.
Իմ անունս Եհովայ Զաբաւովթ է։
16 Եւ իմ խօսքերս քու բերանդ դրի,
Եւ քեզ ձեռացս հովանոցս ծածկեցի,
Որ երկինքը հաստատեմ և երկրին հիմերը դնեմ,
Եւ Սիօնի ըսեմ, Դուն իմ ժողովրդս ես։
17 Աբթնցիը, արթնցիր և ելիր, ով Երուսաղէմ,
Որ Տէրոջը ձեռքէն անոր բարկութեան
բաժակը խմեցիր.
Թմրութեան բաժակին մրուրը քամելով խմեցիր։
18 Անոր բոլոր ծնած որդիներէն՝ անոր առաջնորդող չկայ,
Եւ բոլոր մեծցուցած որդիներէն՝ բռնէն ձեռնտու չկայ։
19 Այս երկու բաները քեզի պատահեցան,
Ո՞վ քեզի պիտի ցաւի.
կործանում և կոտորած, սով և սուր.
Քեզ ինչո՞վ մխիթարեմ։
20 Քու ազգդ մաշած՝
Ամէն փողոցներու գլխէն կը պառկին
Որոգայթի մէջ բռնուած յանտիի պէս.
Անոնք Տէրոջը բարկութեամբը՝
Քու Աստուածդ յանդիմանութեամբը լեցուած են։
21 Ուրեմն մտիկ բրէ, ով ազգալեզի,
Որ արբած ես, բայց ոչ գինիէ,

22 Այսպէս կ'ըսէ քու Եհովայ Տէրդ,
Եւ քու Աստուածդ՝ որ իր ժողովրդեան դատը կը պաշտպանէ.
Ահա քու ձեռքդէ թմրութեան բաժակը՝
Իմ բարկութեանս բաժակին մրուրն առի.
Ալեն այլ ևս պիտի չխմես.
23 Եւ պիտի դնեմ զայն գլխէդ հարատահարողներուն ձեռքը,
Որ քու անձիդ կ'ըսէին, Ծռէ որ անցնինք.
Եւ դուն կռնակդ՝ անցնողներուն համար
Գետնի պէս և փողոցի պէս դրիր։

## Գլ. ՝ՀԲ

1 Արթնցիր, արթնցիր, քու զօրութիւնդ հագիր, ով Սիօն.
Քու փառաւոր հանդերձներդ հագիր,
ով Երուսաղէմ սուրբ քաղաք.
Քանզի այլ ևս անթլփատ և պիղծ քու մէջդ պիտի չմտնէ։
2 Փոշին քնէ թօթափէ,
Ել նստէ, ով Երուսաղէմ.
Գերանոցիդ կապերը քակէ,
Ով Սիօնի գերի աղջիկ։
3 Զանազ Տէրը այսպէս կ'ըսէ.
Ձրի ծախուեցաք,
Եւ առանց սահկի պիտի փրկուիք։
4 Քանզի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Իմ ժողովուրդս առաջ Եգիպտոս իջաւ.
Հոն պանդխտութիւն քնել.
Եւ Ասորեստանցիք առանց պատճառի անոր բռնութիւն ըրին։
5 Եւ հիմա հոս ի՞նչ ունիմ, կ'ըսէ Տէրը,
Որ իմ ժողովուրդս ի զուր աքսորուեցաւ.
Անոր վրայ իշխողները կը պռոցացնեն զիս, կ'ըսէ Տէրը,
Եւ միշտ ամէն օր իմ անունս կը հայհոյուի։
6 Ուստի ժողովուրդս պիտի գիտնայ իմ անունս.



Ասոր համար այն օրուան մէջ պիտի
գիտնայ,
Թէ ես այն եմ որ կը խօսէի. ահա ես եմ,
7 Լաւ գեղեցիկ են լեռներուն վրայ
անոր առաքեալը՝
Որ աւետիս կը բերէ, խաղաղութիւն
կը քարոզէ,
Բարութեան աւետիս կը բերէ, փրկութիւն կը քարոզէ,
Եւ Սիօնի կ'ըսէ, Աստուածդ կը թագաւորէ,
8 Պահապաններդ ձայն պիտի վերցունեն,
Միաբերան ձայնով միասին պիտի երգեն.
Քանզի երբ Տէրը դիմաց եւ դարձունէ,
Անոնք * յայտնապէս պիտի տեսնեն,
9 Ով Երուսաղէմի աւերակներդ,
Միաբերան ձայնով միասին ազաղակեցէք.
Քանզի Տէրը իր ժողովուրդը մխիթարեց,
Եւ վնռնաւագէմ փրկեց.
10 Տէրը իր սուրբ բազուկը մերկացուց
Բոլոր ազգաց աչքին առջև,
Եւ երկրիս ամէն ծայրերը
Մեր Աստուծոյն փրկութիւնը պիտի տեսնեն։
11 Գաղուեցէք, գաղուեցէք, անկէ ելէք,
Պիղծ բանի մի դպչիք,
Անոր մէջէն ելէք.
Սրբուելու եղէք, ով Տէրոջը սպասները վերցունողներ։
12 Քանզի ոչ թէ աճապարանօք պիտի ելլէք,
Եւ ոչ թէ փախչելով պիտի երթաք.
Այլ Տէրը ձեր առջևէն պիտի երթայ,
Եւ Իսրայէլի Աստուածը թիկնապահ պիտի ըլլայ ձեզ։
13 Ահա իմ ծառաս յաջողութիւն պիտի գտնէ,
Ան պիտի մեծնայ և պիտի բարձրանայ
և պիտի փառաւորի յոյժ։

14 Ինչպէս որ շատեր †անոր վրայ զարմացան,
(Անոր երեսը՝ մարդու երեսէն,
Եւ կերպարանքը մարդու որդիներէն աւելի ապականած ըլլալուն համար,)
15 Այնպէս ան շատ ազգեր պիտի †զարմացնէ,
Թագաւորներն անոր առջև բերանը պիտի գոցեն.
Վասն զի բերնոց չպատմուածը պիտի տեսնեն,
Եւ բերնոց չլսածը պիտի խոհանան։

## Գլ. ՝ՂԴ

1 Ո՞վ հաւատաց մեր պատած լուրն,
Եւ Տէրոջը բազուկն որո՞ց յայտնուեցաւ։
2 Քանզի անոնք առջև մատաղ ծառնկի պէս՝
Եւ ծարաւուտ երկրի խոշոր արմատի պէս բուսան.
Անիկա կերպարանք կամ վայելչութիւն չունէր՝ որ անոր նայինք,
Եւ ոչ այնպիսի երեւոյթ մը՝ որ անկէ սիրտ ինկինք։
3 Անիկա մարդոցմէ անարգուեցաւ և երեսի ձգուեցաւ,
Վշտաց մէջ և ցաւոց տեղեակ եղաւ.
Եւ անկէ երես դարձուներնուս պէս եղաւ,
Անարգուեցաւ և չյարգեցինք զինք։
4 Արդարև անիկա մեր ցաւերը վերցուց,
Եւ մեր վիշտերը իր վրայ առաւ.
Եւ մենք վիրաւորուած, Աստուծմէ զարնուած
Եւ չարչարուց հանդիպած համարեցանք զինք։
5 Բայց անիկա մեր մեղքերուն համար վիրաւորեցաւ,
Եւ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ.
Մեր խաղաղութեան պատիժն անոր վրայ եղաւ,

*Կամ դէմ յանդիման էրաւ. Եբր. աչք աչքի

*Եբր. քու վրադ †Կամ սրսկէ,

Եւ անոր վերբերով մինչ բժշկուեցանք։
6 Ամէն քո ոչխարներու պէս մոլորեցանք.
Մինակ իւրաքանչիւրն իր ճամբուն դարձաք,
Եւ Տէրը մեր ամենուն անօրէնութիւնն անոր վրայ դրաւ։
7 Անիկա անիրաւութիւն կրեց և չարչարուեցաւ
Բայց իր բերանը չբացաւ.
Մորթուելու տարուած ոչխարի պէս,
Եւ իր խուզողներուն առջեւ համր կեցող մաքուր պէս՝
Այնպէս իր բերանը չբացաւ։
8 *Նեղութենէ և դատաստանէ
†Թեմէ վերցաւ.
Եւ անոր ազգաւորին ո՞վ կրնայ պատմել.
Քանզի անիկա կենդանիոց երկրէն կտրուեցաւ,
Ինկիկա իմ ժողովուրդիս յանցանաց համար զարնուեցաւ։
9 Եւ անոր գերեզմանն ամբարիշտներու հետ դրուեցաւ.
Բայց երբ մեռաւ՝ հարստահան հետ եղաւ
†Քանզի անիկա անօրէնութիւն մի չը գործեց
Եւ անոր բերանին մէջ նենգութիւն չը գտնուեցաւ։
10 Բայց Տէրը հաճեցաւ որ զանիկա ծեծելով տառապեցնէ մտանէ.
Անոր անձը մեղաց համար զոհ ‡ընծեղ եղաւ՝
Անիկա սերունդ պիտի տեսնէ, երկար օրերը պիտի երկինցնէ,
Եւ Տէրոջը կամքն անոր ձեռքով պիտի յաջողի։
11 Իր անձին աշխատութեան պտուղը տեսնելով՝ պիտի յագենայ.
Իմ արդար ծառաս իր գիտութեամբ շատերը պիտի արդարացնէ,
Քանզի անոնց անօրէնութիւնները ինք պիտի կրէ։
12 Անոր համար մեծերուն հետ բաժին պիտի տամ անոր,
Եւ հզօրներուն հետ աւարն բաժին պիտի առնէ.
Քանզի իր անձն ի մահ ‖մատնեց,
Եւ յանցաւորներուն հետ համարուեցաւ.
Եւ շատերուն մեղքը վերցուց,
Եւ յանցաւորներուն համար միջնորդութիւն ըրաւ։

## ԳԼ. ԾԴ

1 Ով չծնանող ամուլ, ցնծա.
Ով ծննդական ցաւ չքաշող, ցնծութեամբ գոչէ և ազաղակէ.
Քանզի երեսէ ձգուածին որդիք
Աւրամուծին զրկուներէն շատ պիտի ըլլան՝ կ'ըսէ Տէրը։
2 Վրանիդ տեղը լայնցուր,
Եւ բնակարանիդ վարագոյրները առատաձեւին.
Մի խնայեր, չատնեղիդ երկընցուր և ցիցերդ ամրացուր։
3 Քանզի աջ և ձախ կողմդ պիտի տարածուիս.
Եւ սերունդդ ազգեր պիտի ժառանգէ,
Եւ ամրոցած քաղաքները բնակիչներով պիտի լեցնէ։
4 Մի վախնար, վասն զի պիտի չամչուիս.
Եւ մի պատկառիր, վասն զի պիտի չնախատուիս.
Քանզի մանկութեանդ ամօթը պիտի մոռնաս,
Եւ այլ եւս այրութեանդ նախատինքը պիտի չյիշեսս։
5 Քանզի արդ քու Սաղմոկիդ է,
Անոր անունը Եհովայ Սաբաւովթ է.
Եւ Փրկիդ Իսրայէլի Սուրբն է,
Անիկա բոլոր երկրին Աստուածը պիտի կոչուի։
6 Քանզի Տէրը գթով երեսէ ձգուած և հոգւով վշտացած կնոջ պէս՝
Եւ մերժուած երիտասարդ հարսի պէս կանչեց, կ'ըսէ քու Աստուածդ։
7 Փոքր վայրկեան մը քեզ ձգեցի,

*Կամ Նեղութենէն և դատաստանէ
†Կամ Թէն ‡Կամ ըլլալէն

*Եբր. Թաթեց,



Բայց մեծ ողորմութեամբ զքեզ պիտի ժողվեմ։
8 *Բիշ մը սրտմտութեամբ վայրկեան մը երեսս քեզմէ ծածկեցի,
Բայց յաւիտենական ողորմութեամբ պիտի ողորմիմ քեզի,
Կ'ըսէ Եհովա փրկիչդ։
9 Քանզի սոսկա՛լ ինձի նոյն ջուրերուն պէս է.
Ինչպէս որ երդուայ բրի, թէ Նոյի ջուրերը այլ եւս երկրի վրայ չանցնեն,
Այնպէս երդուայ բրի որ քեզի չբարկանամ և չյանդիմանեմ ըզքեզ։
10 Քանզի լեռները պիտի վերանան,
Եւ բլուրները պիտի սասանին,
Բայց ողորմութիւնս քեզմէ պիտի չվերնայ,
Եւ խաղաղութեան ուխտս պիտի չսասանի,
Կ'ըսէ Տէրը՝ որ քեզի կ'ողորմի։
11 Ով փոթորիկէ պարուսած անմխիթար ազգիկ,
Ահա ես քու քարերդ դիղմզդղդի պիտի դնեմ,
Եւ զքեզ շափիւրաններով պիտի հիմնեմ.
12 Եւ քու մատուռներդ՝ ‡կարմիր յակինթներով,
Եւ դուռներդ՝ կարկինեաններով,
Եւ բոլոր պարիսպներդ սիրուն քարերով պիտի չինեմ։
13 Եւ քու բոլոր որդիդ Տէրոջմէ ուսեալ պիտի ըլլան,
Եւ որդւոցդ խաղաղութիւնը շատ պիտի ըլլայ։
14 Գուն արդարութեամբ պիտի հաստատուիս,
Բռնութենէ հեռու պիտի ըլլաս, որ չվախնաս,
Եւ արհաւիրքն՝ որ քեզի չմօտենայ։

*Կամ Ցանկութիւնէն
†Կամ Ծարաւով
‡Կամ յասպիս քարերով
‖Եբր. ասիմանիներդ

15 Ահա անշուշտ ‖ժողով պիտի ընեն, բայց ոչ ինձմէ.
Ով որ քու վրադ ժողովուի, քու կողմդ պիտի դառնայ։
16 Ահա կռակի մէջ ածուխները փչող՝
Եւ իր գործին համար գործի հանող դարբինը ես ստեղծեցի,
Եւ աւերիչ համար՝ կործանողը ես ստեղծեցի։
17 Քեզի դէմ շինուած գործիքն ամենևին պիտի չյաջողի,
Եւ քու վրադ դատաստանի եղող ամէն լեզու պիտի դատապարտուիս։
Տէրոջը ծառաներուն ժառանգութիւնն այս է,
Եւ անոնց արդարութիւնն ինձմէ է, կ'ըսէ Տէրը։

## ԳԼ. ԾԵ

1 Ով թոյլը ծարաւածներ, իւրաքանչիւրդ եկէք.
Եւ ոտակ չունեցողներ, եկէք, գնեցէք և կերէք.
Եկէք՝ առանց արծաթի և առանց գնոյ գինի և կաթ գնեցէք։
2 Ինչո՞ւ ձեր արծաթը կը վատնէք՝ ոչ թէ հացի համար,
Եւ ձեր վաստակն՝ ոյնպիսի բանի համար որ չի յագեցնէր.
Ինչպէս ինձմէ մտիկ ըրէք, որ բարիք ուտէք,
Եւ ձեր հոգին պարարտութեամբ զուարճանայ։
3 Ձեր ականջը խոնարհեցուցէք և ինձմէ եկէք.
Մտիկ ըրէք, և ձեր հոգին պիտի ապրի.
Եւ ձեզի հետ յաւիտենական ուխտ պիտի դնեմ,
Դաւիթի վճռացեալ ողորմութիւնները յետ դարձնեմ։
4 Ահա զանիկա ժողովուրդներուն վկայ՝

*Կամ ինծմէ չեղող պանդուխտներ պիտի գան, ով որ քու փորդ պանդխտութիւն կ'ընէ,

Ազգերուն առաջնորդ և հրամանատար դրի։
5 Ահա չդիտցած ազգդ պիտի կանչես,
Եւ գրեզ չճանչցող ազգերը վազի պիտի դիմեն
Քու Տէր Աստուծոյդ համար
Եւ Իսրայէլի Սրբոյն համար,
Քանզի անիկա գրեզ փառաւորեց։
6 Տէրը փնտռեցէք՝ մինչդեռ կը գըտնուի.
կանչեցէք զնա՝ մինչդեռ մօտ է։
7 Թող ամբարիշտը իր ճամբէն
Եւ անօրէնն մարդը իր խորհուրդներէն
հրաժարի,
Եւ Տէրոջը դառնայ, և անիկա պիտի ողորմի անոր,
Եւ մեր Աստուծոյն, քանզի անիկա առատապէս կը ներէ։
8 Քանզի իմ խորհուրդներս ձեր խորհուրդները չեն,
Եւ ձեր ճամբաներն իմ ճամբաներս չեն, կ՚ըսէ Տէրը։
9 Այլ որչափ որ երկինք երկրէս բարձր է,
Այնչափ իմ ճամբաներս ձեր ճամբաններէն բարձր են,
Եւ իմ խորհուրդներս ձեր խորհուրդներէն։
10 Վասն զի ինչպէս որ անձրեւ և ձիւն երկինքէն կ՚իջնեն և հոն չեն դառնար,
Այլ երկիրը կ՚ոռոգէ և պտղաբեր և արգասաւոր կ՚ընէ զայն,
Եւ սանողին հունար՝ և ուտողին հաց կու տայ,
11 իմ բերնէս ելած խօսքն ալ այնպէս պիտի ըլլայ,
ինծի պարապ պիտի չդառնայ։
Այլ իմ կամքս պիտի կատարէ,
Եւ յաջողութեամբ վիգործ դնէ այն բանը՝ որոյ համար զրկեցի զայն։
12 Քանզի ուրախութեամբ պիտի ելլէք,
Եւ խաղաղութեամբ պիտի առաջնորդուիք.
Լեռները և բլուրները ձեր առջեւն ցնծութեամբ պիտի ազազակեն,
Եւ դաշտերուն բոլոր ծառերը ծափ պիտի զարնեն։
13 Փոխանակ թիւոյ՝ մայր,
Եւ փոխանակ դժնկի մխանեղ պիտի բուսնի.
Եւ ասիկա Տէրոջը անուան ՚ի——ց համար
Անջինջ և յաւիտենական նշան պիտի ըլլայ։

## Գլ. ԾԶ

1 Տէրը այսպէս կ՚ըսէ.
Իրաւունքը պահեցէք և արդարութիւն ըրէք,
Քանզի փրկութիւնս գալու է
Եւ արդարութիւնս յայտնուելու մօտ է։
2 Երանի այն մարդուն՝ որ ասիկա կ՚ընէ,
Եւ մարդու որդւոյն՝ որ ասիկա ամուր կը բռնէ,
Ամէնքն շաբաթը կը պահէ և չպղծէր զայն,
Եւ ամէն անիրաւութիւն ընելէ իր ձեռքը կը պահէ։
3 Եւ Տէրոջը յարող օտարականի որդին թող չխոսի՝ ըսելով,
Տէրը պիտի իր ժողովրդէն բաղդատելի զատեց.
Եւ ներքինին ալ թող չըսէ,
Ահա ես չոր ծառ եմ։
4 Քանզի Տէրը այսպէս կ՚ըսէ այն ներքինիներուն,
Որ շաբաթներս կը պահեն,
Եւ ինծի հաճոյ եղածը կ՚ընտրեն,
Եւ իմ ուխտս մէջ հաստատ կը կենան.
5 Անոնց՝ իմ տանս մէջ և պարիսպներուս մէջ
Որդիներէ և աղջիկներէ աւելի աղէկ տեղ և անուն պիտի տամ.
Անոնց յաւիտենական անուն պիտի տամ,
Որ պիտի չկտրի։
6 Եւ այն օտարականի որդիք որ Տէրոջը յարած են՝
Անոր ծառայութիւն ընելու,
Տէրոջը անունը սիրելու,
Եւ անոր ծառաներ ըլլալու համար,
Ամէնքն բոլոր անոնք որ շաբաթը կը պահեն և չեն պղծեր,



Եւ ուխտս մէջ հաստատ կը կենան,
7 Զանոնք ալ իմ սուրբ լեռս պիտի բերեմ,
Եւ ազօթքի տանս մէջ զանոնք պիտի ուրախացունեմ.
Անոնց ողջակէզները և զոհերը անգամ նման վայ ընդունելի պիտի ըլլան,
Քանզի տունս բոլոր ազգերուն համար ազօթքի տուն պիտի կոչուի։
8 Այսուհետև կ՚ըսէ Տէր Եհովան,
Որ Իսրայէլի աքսորուածները կը ժողվէ.
Անոր ժողվածներուն վրայ ուրիշներ ալ պիտի ժողվեմ անոր։
9 Ով գազան բոլոր գազաններ,
Ով անտառի բոլոր գազաններ, ուտելու եկէք։
10 Անոր բոլոր պահապաններըը կոյր են,
Բան չը գիտեն,
Ամէնքն ալ համր շուներ են, հաչելու կարող չեն.
Անոնք *կը ցնորին, կը պառկին, քունը կը սիրեն։
11 Այո՛ շատակեր և անյագ շուներ են,
Եւ անոնք խնամողութենէ զուրկ հովիւներ են.
Ամէնքն իրենց ճամբաներուն դարձան,
Իւրաքանչիւր իր կողմէն իր անիրաւ վաստակը փնտռելէն ետ չըմնար։
12 Եկէք, գինի բերեմ,
Եւ գըռով օրհնանք.
Վաղն ալ այս օրուան պէս՝
Ետ ալ աւելի առատ պիտի ըլլայ։

## Գլ. ԾԷ

1 Արդարը կը կորսուի, և ուշադրութիւն ընող մարդ չկայ.
Եւ բարի մարդիկ ալէ՛ւ կը վերցուին,
Առանց մարդու խնամուելն թէ արդարը չարութենէն կը վերցուի,
2 Անիկա խաղաղութեան մէջ կը մտնէ.
Ուղղութեամբ քալողները

*Կամ կը նիրհեն,

Իրենց անկողիններուն վրայ հանգիստ կը գտնեն։
3 Բայց դուք, ով վհկի որդիք,
Շնացողի և պոռնկի սերունդ, հոս մօտեցէք.
4 Դուք ո՞վ ծաղր կ՚ընէք,
Ձեր բերանը որո՞ւ վրայ կը լայնցունէք,
Ե՞ր լեզուներ կ՚երկնցունէք.
Ո՞չ ապստամբ դուք անօրէնութեան զաւակներ և սուտ թեան սերունդ եք,
5 Դուք ամէն կանաչ ծառերու տակ *դիպ՚ի կուռքերը՝ յոռետրիտ կը սպանէք.
Տզոյք ձորերու մէջ՝
վիհերու խառնուածներուն մէջ կը մորթէք.
6 Բաժինդ ձորին տափակ քարերուն մէջն է.
Վիճակդ անոնք են՝ անոնք.
Անոնց անգամ նուէր թափեցիր, ընծայ մատուցիր.
Մի՞թէ ես սոսկայ կրնամ համբերել,
7 Դուն քու անկողինդ բարձր և վերացած լեռան վրայ դրիր.
Հոն ալ զոհ ընելու եղար,
8 Եւ դուռներուն և դրանդիներուն եւս յիշատակդ դրիր.
Քանզի ինծ՚ երեսի քու անձդ մերկացուցիր,
Եւ վեր ելլելով անկողինդ լայնցուցիր.
Եւ անոնց հետ գաշնադրութիւն ըրիր,
Անոնց անկողինը սիրեցիր, և ծոր հաւատ անոր պատառատեցիր։
9 Եւ թագաւորին քով հոդոտեր ելլով գացիր,
Եւ անուշահոտութիւններդ չատցուցիր,
Եւ դեսպաններդ հեռաւոր տեղը դրկեցիր,
Եւ գերեզմնէն գժոխք իջեցուցիր։
10 Ճամբուդ երկայնութենէն յոգնեցար,
Բայց Ձոյս չկայ՝ չըսիր.
Ձեռացդ կեանքը գտար,
Անոր համար չթուլցար։

*Կամ բևեռներուն մէջ

11 Եւ դուն արմի՛ զարհուրելացար և վախ-
ցար, որ առաքաւս եկար,
եւ զիս չյիշեցիր և սիրտդ չդրիր·
Մի՞ ապաքէն իմ չառանցին լուս կե-
նալուս համար է
Որ ինձ չես վախնար։
12 Ես քու արդարութիւնդ և գործերդ
պիտի հրատարակեմ,
Եւ անոնք քեզի օգուտ պիտի չընծայեն։
13 Երբ դուն ազաղակես, թող քու ժո-
ղովածներդ զքեզ փրկեն.
Բայց հովը պիտի տանի ամէնը,
Շունչ մի զոհես պիտի առնի.
Սակայն ինծի յուսացողները զերկիր
իրենց կալուած պիտի տանան,
Եւ սուրբ լեռս պիտի ժառանգեն։
14 Եւ պիտի ըսեն,
Բարձրացուցէք, բարձրացուցէք·
Ճամբայ պատրաստեցէք,
Խոչը իմ ժողովրդիս ճամբէն վեր-
ցուցէք։
15 Քանզի այսպես կ'ըսէ Բարձրը և Բար-
ձրեալը՝
Որ յաւիտենականութեան մէջ կը բը-
նակի և անոր անունը Սուրբ է·
Ես բարձր և սուրբ տեղը կը բնա-
կիմ,
Բայց կտրած և խոնարհ հոգի ունե-
ցողին հետ եմ,
Որ խոնարհներուն հոգին կենդանա-
ցունեմ,
Եւ կտրած սիրտերն ապրեցնեմ։
16 Քանզի յաւիտեան պիտի չվիճիմ,
Եւ միշտ պիտի չբարկանամ·
Վասն զի իմ առջեւս հոգիները պիտի
մաշին.
Եւ այն կենդանիները՝ որ ես ստեղծեցի։
17 Անոր ագահութեան անօրէնութեան
համար բարկացայ
Եւ զանիկա զարկի, էմ Էքես Ծածկե-
ցի և բարկացայ.
Եւ ապստամբն իւր կամաց ճամբուն
հետևեցաւ։
18 Անոր ճամբաները տեսայ, և զանիկա
պիտի բժշկեմ,
Եւ անոր առաջնորդութիւն պիտի ը-
նեմ,
Եւ զանիկա և անոր սգաւորները պի-
տի վերթիւրեմ։
19 Շրթանց պտուղը ես կը ստեղծեմ.
Խաղաղութիւն խաղաղութիւն ըլլայ
հեռուն եղողին
Եւ մօտ եղողին, կ'ըսէ Տէրը,
Եւ ես զանիկա պիտի բժշկեմ։
20 Բայց ամբարիշտներն ալեծուփ ծովու
պես են, որ չկրնար հանդարտիլ,
Եւ որոյ ջուրերը սիրտ և ցեխ դուրս
կը նետեն։
21 Ամբարիշտները խաղաղութիւն պիտի
չունենան՝ կ'ըսէ իմ Աստուածս։

## Գլ. ՎԸ

1 *Բարձրաձայն կանչէ՝ և մի խնայեր,
Ձայնդ փող պես բարձրացուր·
Եւ իմ ժողովրդիս իրենց յանցան-
քը,
Եւ Յակոբայ տան իրենց մեղքերը պատ-
մէ։
2 Բայց անոնք օրէ օր զիս կը փնտռեն.
Եւ իմ ճամբաներս գիտնալու կը փա-
փաքին,
Այնպէսի ազգի մը պէս՝ որ արդարու-
թիւն կ'ընէր,
Եւ իր Աստուծոյն իրաւունքը զանց
չընէր·
Ինծի արդարութեան կանոնները կը
հարցնեն,
Աստուծոյ մօտենալու կը փափաքին.
3 Ե՞ր կ'ըսեն,
Մենք ինչո՞ւ ծոմ պահեցինք, և
դուն չտեսար,
Մեր անձերը չարչարեցինք, և դուն
չգիտցար։
Ահա ձեր ծոմապահութեան օրը ձեր
բաղձանքը կը կատարէք,
Եւ ձեր ամէն †պահանջներն իրա-
ւունքեամբ կը պահանջէք։
4 Ահա կռիւ և վէճի համար
Եւ չարութեան բռնցով զարնելու հա-
մար ծոմ կը պահէք·

*Եբր. Կոկորդով
†Կամ ծառաները կը հարատաջարէք։



Այս օրուան պես ծոմ մի պահէք,
Որ ձեր ձայնը բարձրերը լսել տաք։
5 Իմ ընտրած ծոմապահութիւնդ
Ե՞ս մարդս իր անձը խոնարհեցնելու
օրն այսպէ՞ս կ'ըլլայ·
Իբր գլուխը կնիքի պես ծռելով,
Եւ էրը տ֊ոիը փռելով և մոխիր տա-
ծածելով նստելը։
Այսի՞կ ծոմապահութիւն և Տէրոջը ըն-
դունելի օր պիտի անուանես։
6 Ահա այս է իմ ընտրած ծոմապահու-
թիւնս,
Որ անիրաւութեան կապերը քակես,
Եւ լուծին կապերը թուլցնես,
Եւ հարատահարեալ թէ կրգնելն ազատ
թողուս,
Եւ ամէն լուծ կոտրես,
7 Քու հացդ քաղցելոյն բաժնես,
Եւ թափառական անանկները տանդ
ընդունես,
Երբ մերկ մը տեսնես՝ հագուեցնելու
զնա,
Եւ քու մարմնեղ զքեզ չպահես։
8 Անտառն քու լոյսդ առաւօտ պես
պիտի ծագի,
Եւ բժշկութիւնդ չուտով պիտի *յայ-
նուի,
Եւ արդարութիւնդ առջեւդ պիտի եր-
թայ,
Ե՞ս Տէրոջը փառքը եւեւէդ զքեզ պի-
տի պաշտպանէ։
9 Անտառն պիտի կանչես, և Տէրը պա-
տասխան պիտի տայ.
Պիտի ազաղակես, և անիկա պիտի ը-
սէ, Ահա ես։
Եթէ քու միջիդ լուծը,
Մատով ցուցունելը և չար խօսքերը
վերցունես,
10 Եթէ †անօթին յօժարութեամբ կերակ-
րես,
Եւ կարօտին հոգին յագեցունես,
Անտառն լոյսդ խաւարին միջ պիտի ծագի,
Եւ խաւարդ կէս օրուան պես պիտի
ըլլայ։

*Եբր. բուսանի,
†Եբր. քու հոգիդ անօթին բնծայես,

11 Եւ Տէրը միշտ առաջնորդութիւն պիտի
ընէ քեզ,
Եւ հոգիդ՝ *ներաւութեան տաճն պի-
տի յագեցունէ,
Եւ ոսկրներդ պիտի զօրացունէ.
Եւ դուն ջրարբի պարտէզի պես
Եւ յորը չպակսող ազբերքի պես
պիտի ըլլաս։
12 Եւ քենէ ձե֊ձերբ հին աւերակները
պիտի չվինեն.
Ա֊էն դարերուն հիմերը պիտի կանգ-
նես նորէն,
Եւ դուն փլածները նորոգող
Եւ բնակութեան համար ճամբաներ
շինող պիտի կոչուիս։
13 Եթէ շաբաթը՝ իմ սուրբ օրս
Քու ցանկութիւնդ կատարելէ ազգդ
տրտնջնես,
Եւ շաբաթը †ո֊ զուարճութիւնդ
Եւ Տէրոջը նուիրած տէրս պատուական
անուանես,
Եւ պատուես զայն՝ քու ճամբաներուդ
չհետեւելով,
Քու ցանկութիւնդ չկատարելով և պա-
ղատ խօսք չխօսելով,
14 Անտառն Տէրոջմով պիտի ուրախանաս.
Եւ զքեզ երկրիս բարձր տեղերուն վրայ
պիտի հանեմ,
Եւ քու հօրդ Յակոբայ ժառանգութիւ-
նը զքեզ պիտի կերցունեմ.
Քանզի Տէրոջը բերանը խօսեցաւ։

## Գլ. ՎԹ

1 Ահա Տէրոջը ձեռքը փրկելէն չկարճ-
ցաւ,
Եւ անոր ականջը լսելէն չծանրացաւ։
2 Այլ ձեր և ձեր Աստուծոյն միջտեղ
բաժնուած ձգող
Ձեր անօրէնութիւններն եղան,
Եւ ձեր մեղքերն ծոռը երեսը ձենէ
ծածկեցին, որ չլսէ։
3 Քանզի ձեր ձեռքերն արեամբ
Եւ ձեր մատներն անօրէնութեամբ պղծ-
ուեցան.

*Կամ անմահ տեղերու մէջ

Զկեր չրթունքը սուտ խօսեցան,
Եւ ձեր լեզուներն անիրաւութիւն արտաբերեցին։
4 Ձկայ մարդ որ արդարութեան համար բողոքի,
Եւ չկայ որ ճշմարտութեամբ դատ վարի.
Անոնք ունայնութիւն կը յուսան և անպիտանութիւն կը խօսին.
Թշուառութիւն կը յղանան և անօրէնութիւն կը ծնանին.
5 Բարբի ձուներ կը ածեն,
Եւ սարդի ոստայն կը գործեն.
Անոնց ձուերն ուտողը կը մեռնի,
Եւ բացուածէն իժ կ'ելլէ։
6 Անոնց ոստայններէն հանդերձ չըլլար,
Եւ իրենց գործերովը չեն կրնար ինքզինք ծածկել.
Անոնց գործերն անօրէնութեան գործ են,
Եւ անոնց ձեռաց մէջ բռնութեան գործ կայ։
7 Անոնց ոտքը չարութեան կը վազեն,
Եւ անմեղ արիւն թափելու կը փութան.
Անոնց խորհուրդներն անօրէնութեան խորհուրդներ են,
Անոնց ճամբաներուն մէջ կործանում և հոտած կայ։
8 Խաղաղութեան ճամբան չեն գիտեր,
Եւ անոնց ընթացից մէջ արդարութիւն չկայ.
Իրենց շաւիղները խաթարեցուցին.
Անոնց մէջ քալողներուն ամէնքը խաղաղութիւն չեն գիտեր։
9 Անոր համար իրաւունքը մեզի հեռացաւ,
Եւ արդարութիւնը մեզի չհասնիր.
Լուսոյ կը սպասենք, և ահա խաւար կայ.
Պայծառութեան կը սպասենք, և ահա մռայլութեան մէջ կը չրջինք։
10 Կոյրերու պէս պատերը կը շօշափենք,
Եւ աչք չունեցողներուն պէս կը խարխափենք.
Կէս օրին գիշերուան պէս կը գլորինք,
Գաղարիր ոչխարու մէջ՝ մեռելներու պէս ենք։
11 Ամէնքս արջերու պէս կը մռնչենք,
Եւ աղաւնիներու պէս անդադար կը մնչենք.
Դատաստանի կը սպասենք, բայց չկայ.
Փրկութեան համար կը նայինք, բայց անիկա մեզմէ հեռացած է։
12 Քանզի մեր յանցանքները քու առջեւդ բազմացան,
Եւ մեր մեղքերը մեզի դէմ վկայութիւն կու տան.
Վասն զի մեր յանցանքները մեր քովն են,
Եւ մեր անօրէնութիւնները գիտենք.
13 Յանցանք ըրինք, Տէրը ուրացանք
Եւ մեր Աստուծոյն հետեւիլն խոտորեցուցանք.
Անիրաւութիւն և ապստամբութիւն խօսեցանք,
Մէբ սրտին մէջ առած խօսքերը մտածեցինք և ըսինք։
14 Եւ դատաստանը կը դարձաւ,
Եւ արդարութիւնը հեռուն կայնեցաւ.
Քանզի ճշմարտութիւնը հրապարակին մէջ ինկաւ,
Եւ ուղղութիւնը չկրնար ներս մտնել,
15 Եւ ճշմարտութիւնը կը պակսի,
Եւ չարութենէ զգուշացողը կը կողոպտուի.
Եւ Տէրը տեսաւ, և ասիկա անոր առջեւ գէշ երեցաւ,
Քանզի իրաւունք չկար։
16 Եւ տեսաւ որ մարդ չկար,
Եւ զարմացաւ որ միջնորդ չէր գըտնուեր.
Ուստի անոր բազուկն օգնեց անոր,
Եւ անոր արդարութիւնը ձեռնտու եղաւ անոր։
17 Եւ արդարութիւնը զրահի պէս՝
Եւ փրկութիւնը իւր գլուխը սաղաւարտի պէս հագաւ,
Եւ վրէժխնդրութեան զգեստը պատմուճանի պէս հագաւ,

*Կամ Գաղարաններուն մէջը, և կամ Թանձրը խաւարին մէջ



Եւ նախանձը վերարկուի պէս վրան ածաւ։
18 Ասոնց վարձանց համեմատ հատուցում պիտի ընէ,
Բարկութիւնն իւր հակառակորդներուն,
Հատուցում իւր թշնամիներուն.
*Կղզիներուն հատուցում պիտի ընէ։
19 Եւ արեւմուտք՝ Տէրոջը անունէն,
Եւ արեւելք անոր փառքէն պիտի վախնան.
Երբ թշնամին գետի պէս գայ,
Տէրոջը Հոգին †անոր դէմ դրօշ պիտի կանգնէ։
20 Եւ Փրկիչ պիտի գայ Սիոնի,
Եւ Յակոբայ մէջ չարութենէ դարձողներուն, ի'րեք Տէրը։
21 Եւ անոնց հետ ընելիք ուխտս այս է ի'րեք Տէրը.
Իմ Հոգիս՝ որ քու վրադ է,
Եւ իմ խօսքս՝ որ քու բերանդ դրած եմ,
Քու բերնէդ և քու զաւակներուդ բերնէն
Եւ քու զաւակացդ զաւակներուն բերնէն
Հիմակուընէ մինչեւ յաւիտեան պիտի չպակսին, ի'րեք Տէրը։

## ԳԼ. ԿԱ

1 Ելէք՝ լուսաւորուէ, քանզի լոյսդ եկաւ,
Եւ Տէրոջը փառքը քու վրադ ծագեցաւ։
2 Վասն զի ահա երկիրը խաւար՝
Եւ ազգերը մանրամասն պիտի ծածկէ.
Բայց քու վրադ Տէրը պիտի ծագի,
Եւ անոր փառքը քու վրադ պիտի երեւնայ։
3 Եւ քու լուսոյդ ազգեր պիտի գան,
Եւ քու վրադ ծագած պայծառութեան՝ թագաւորներ։
4 Աչքդ վերցուր և բոլորտիքդ նայէ.
Ամէնքը կը ժողովին՝ քեզի կու գան.
Որդիքդ հեռուէն պիտի գան,
Եւ աղջիկներդ գրկի մէջ պիտի վերցուին։
5 Այնտեղ պիտի տեսնես և ուրախանաս,
Եւ սիրտդ պիտի չարժի և բացուի.
Քանզի ծովուն առատութիւնը քեզի պիտի դառնայ,
Ազգաց հարստութիւնը քեզի պիտի գայ։
6 Բեզ ուղտերուն երամակը՝
Մադիամու և Գեփային տաճիկ ուղտերը պիտի ծածկեն.
Ամէնքը Սաբայէ պիտի գան,
Ոսկի և խնդրուկ պիտի բերեն,
Եւ Տէրոջը գովեստները պիտի աւետանեն։
7 Կեդարու բոլոր հօտերը քու քովդ պիտի ժողովուին,
Եւ Նաբեթայի խոյերը պիտի ծառայեն քեզ.
Անոնք իմ սեզանիս վրայ պիտի ելլեն ընդունելի ընծայ,
Եւ իմ փառաց տունը պիտի փառաւորեմ։
8 Ո՞վ են տանձ՝ որ կը թռչին ամպի պէս,
Եւ դէպ իրենց վանդակը ճնճղուկներու պէս։
9 Քանզի կղզիները և նախ Թարսեսի նաւերը
Ինծի համար պատրաստ պիտի ըլլան,
Որ հեռուէն քու որդիներդ՝
Ե՛ն անոնց հետ անոնց արծաթը և ոսկին բերեն,
Քու Տէր Աստուծոյդ անուան համար՝
Եւ Իսրայէլի Սրբոյն համար, քանզի նեղիտ քեզ կը փառաւորէ։
10 Եւ օտարաց որդիքը քու պարիսպներդ պիտի չինեն,
Եւ անոնց թագաւորները ծառայութիւն պիտի բնեն քեզ.
Քանզի բարկութեամբս զքեզ զարկի,
Բայց հաճութեամբս պիտի ողորմիմ քեզ։
11 Եւ քու դուռներդ միշտ բաց պիտի ըլլան,
Տիւ և գիշեր պիտի չգոցուին,
Որ քեզի ազգերուն ստացուածքը կրնեն,

*Կամ Հեռաւոր երկիրներուն
†Կամ դանիկա պիտի հալածէ։

եւ անոնց թագաւորները *բերաւին։
12 Բանզի քեզի ծառայաթիւն չընող ազգը եւ թագաւորութիւնը պիտի
կորսուի,
եւ ազգերը բոլորովին պիտի կործանին։
13 Լիբանանու փառքը քեզի պիտի գայ,
Մայրը, սօսին եւ սօսախն ի միասին՝
Սրբարանիս տեղը զարդ պիտի հանեմ,
եւ տախտակս տեղը պիտի փառաւորեմ։
14 Եւ քեզի նեղողութիւն տառապելոցն որդիքը
Ծռելով քեզի պիտի գան,
եւ քեզ անարգողներուն ամէնքը
Ոտքդ տախտակներուն երկրպագութիւն պիտի ընեն.
Եւ քեզ Տէրոջը քաղաքը՝
Իսրայէլի Սրբոյն Սիոնը պիտի անուանեն։
15 Զուն որ երեսիդ ձգուած եւ ատելի եղար,
եւ ոչնչ անցնող չեղար,
Քեզ յաւիտենական փառք՝
եւ ազգէ ազգ գոհունութիւն պիտի ըլլայ։
16 Եւ ազգերուն կաթը պիտի ծծես,
Եւ թագաւորներուն ստինքը պիտի ծծես.
եւ պիտի գիտնաս որ ես Տէրս եմ քու Ազատիչդ,
եւ քու Փրկիչդ՝ Յակոբայ Հզօրը։
17 Պղինձի տեղ ոսկի պիտի բերեմ,
Եւ երկաթի տեղ՝ արծաթ,
եւ փայտերու տեղ՝ պղինձ,
եւ քարերու տեղ երկաթ պիտի բերեմ.
Եւ վերակացուներդ խաղաղութիւն պիտի ընեմ,
եւ իշխաններդ արդարութիւն պիտի ընեմ։
18 Այլ եւս քու երկրիդ մէջ բռնութիւն
Եւ քու սահմաններուդ մէջ յափշտակութիւն եւ կոտորած պիտի չըլլայ.
Այլ քու պարիսպներդ փրկութիւն
եւ դուռներդ Գովեստ պիտի անուանես։
19 Այլ եւս ցորեկը քու լոյսդ արեւը պիտի չըլլայ,
Եւ ճկէրը լուսին իր պայծառութեամբ քեզի լոյս պիտի չտայ.
Այլ Եհովան քեզի յաւիտենական լոյս
Եւ քու Աստուածդ քու փառքդ պիտի ըլլայ։
20 Արեգ այլեւս պիտի չմտնէ,
Եւ լուսինդ պիտի չնահանջի.
Այլ Եհովան քեզի յաւիտենական լոյս պիտի ըլլայ,
Եւ սգոյ օրերդ պիտի վերջանան։
21 Եւ քու ժողովուրդդ ամէնքն արդար պիտի ըլլան,
Ու երկիրը յաւիտեան պիտի ժառանգեն.
Իմ անուանս տունկ՝ իմ ձեռացս գործ
Իմ փառացս համար պիտի ըլլայ։
22 Փոքրը հազարաւոր
Եւ սակաւաւորը մեծ ազգ պիտի ըլլայ։
Ես Տէրս շուտով պիտի կատարեմ զայս իր ժամանակին։

## Գլ. ԿԱ

1 Տէրը Եհովայի Հոգին իմ վրաս է.
վասն զի Տէրը զիս օծեց,
Ու զիս զրկեց ազքատներուն աւետիս տալու,
Կոտրած սիրտ ունեցողները բժշկելու,
Գերիներու ազատութիւն
Եւ բանտարկելոց՝ բանտին բացուիլը հրատարակելու։
2 Տէրոջը ընդունելի տարին
Եւ մեր Աստուծոյն վրէժխնդրութեան օրը հրատարակելու,
Ամէն սգաւորները մխիթարելու,
3 Սիոնի սգաւորներուն որոշելու,
Ու անոնց փոխանակ մսխոյի՝ փառք,
Փոխանակ սգոյ՝ ուրախութեան իւղ,
Փոխանակ կոտրած հոգւոյ գովութեան պատմուճան տալու.
Եւ պիտի անուանին զանոնք Արդարութեան բեւեռները,

*Կամ հանգչեալ գան։



Զոր Տէրը անկած է իր փառաց հաստատութ.
4 Եւ հին աւերակներդ պիտի շինեն,
Ու առաջի կարծանուածներդ պիտի կանգնեն;
Եւ ա՛յնտեղ գտգտքներդ
Ու շատ գարերէ ի վեր աւերակ մնացածներդ պիտի նորոգեն։
5 Եւ օտարականները պիտի կենան ու ձեր հօտերը պիտի հսկեն,
Ու օտարաց որդիք ձեր երկրագործներդ և այգեգործներդ պիտի ըլլան,
6 Բայց դուք Տէրոջը քահանաները պիտի կոչուիք,
Մեր Աստուծոյն պաշտօնեաները պիտի քսուիք.
Ազգաց հարստութիւնը պիտի ուտէք,
Եւ անոնց փառքով պիտի փառաւորուիք.
7 Փոխանակ ձեր ամօթոյն կրկին ո՛չ-խո՛-ի՛-ն,
Եւ ֆխ՛ածակ անարգանաց իրենց ժառանգութեան մէջ պիտի ցնծան.
Ուստի իրենց երկրին մէջ կրկին ժառանգութիւն պիտի առնեն.
Անոնք յաւիտենական ուրախութիւն պիտի ունենան։
8 Բանզի ես Տէրս արդարութիւն կը սիրեմ.
Անիրաւութիւն և յափշտակութիւն կ'ատեմ.
Արդարև անոնց գործերուն վարձքը պիտի տամ,
Եւ անոնց հետ յաւիտենական ուխտ պիտի դնեմ։
9 Եւ անոնց սերունդն ազգերուն մէջ՝
Ու անոնց արիւրդ ժողովուրդներուն մէջ պիտի գիտցուին.
Զանոնք տեսնող ամէն մարդիկները պիտի ճանչնան
Թէ անոնք Տէրոջը օրհնած սերունդն են։
10 Ես Տէրոջմով մեծապէս պիտի ցնծամ,
Ու հոգիս Աստուծովս պիտի ուրախանայ.
Բանզի ինծի փրկութեան հանդերձները հագուցուց,
Զիս արդարութեան պատմուճանով ծածկեց,
Փեսայի պէս՝ որ իրեն փառաւոր խոյր կը դնէ,
Եւ հարսի պէս՝ որ իւր զարդերով կը զարդարուի։
11 Բանզի ինչպէս որ երկիրը իւր սունկը կ'առնցուցանէ,
Ու պարտէզն իր մէջ ցանուածները կը բուսցուցանէ,
Այնպէս Տէր Եհովան բոլոր ազգերուն առջեւ
Ազգաբանութիւն և գովութիւն պիտի բուսցուցանէ։

## Գլ. ԿԲ

1 Սիոնի սիրոյն համար պիտի չդադրիմ,
Ու Երուսաղէմի սիրոյն համար պիտի չհանգարտիմ,
Մինչեւ որ անոր արդարութիւնը լուսոյ պէս՝
Ու անոր փրկութիւնը բռնացող ջահի պէս *ծագագայթէ։
2 Եւ ազգերը՝ քու արդարութիւնդ,
Ու բոլոր թագաւորները քու փառքդ պիտի տեսանին.
Ու դուն նոր անուամբ պիտի կոչուիս,
Զոր Տէրոջը բերանը պիտի անուանէ։
3 Եւ Տէրոջը ձեռացդ մէջ պսակ
Ու քու Աստուծոյդ ձեռացդ մէջ արքայական թագ պիտի ըլլաս։
4 Զուն այլեւս թողուած պիտի չկոչուիս,
Ու քու երկիրդ այլեւս Աւերակ պիտի չըսուի.
Այլ դուն †Իմ հաճոյանս,
Ու քու երկիրդ Ամուսնացեալ պիտի բսուի.
Բանզի Տէրը պիտի հաճի քեզ,
Ու քու երկիրդ պիտի ամուսնանայ։

*Եբր. ճրէ։
†Եբր. Եփեսբա, այսինքն՝ իմ հաճոյութիւնս անոր մէջ։

5 Վասն զի ՚ի նեղել՝ ոչ երեսակայիցէ մէ
կատսկ հետ կ՚ամուսնանայ,
Այնպէս քու որդիդ քեզի հետ պիտի
ամուսնանայ.
Եւ ինչպէս ուրախութիւն վրայ կ՚ուրախանայ,
Այնպէս քու Աստուածդ քու վրադ պիտի ուրախանայ։
6 Քու պարիսպներուդ վրայ, օվ Երուսաղէմ, պահապաններ դրի.
Անոնք բոլոր օրը և բոլոր գիշերը բնաւ
պիտի չլռեն.
Դուք, օվ Տէրը յիշողներ, լուռ մի կեցնաք,
7 Եւ անոր հանգիստ մի տաք,
Մինչև որ հաստատէ,
Եւ մինչև որ երկրի վրայ գովաբանէ զանիկա.
8 Տէրը իր աջ ձեռաց վրայ և իր զօրաւոր բազկին վրայ այսպէս երդում բրաւ,
Թէ քու ցորենդ այլ ևս քու թշնամիներուդ կերակուր պիտի չտայ.
Եւ օտարոց որդիքը պիտի չխմեն քու գինիդ,
Որուն համար դուն աշխատեցար.
9 Այլ հնձողները պիտի ուտեն զայն,
Եւ Տէրոջը փառք պիտի տան.
Եւ քաղողները իմ սուրբ սրահներուս մէջ պիտի խմեն զայն։
10 Անցէք, անցէք դուռներէն,
Ժողովրդին ճամբայ պատրաստեցէք.
Շտկեցէք, շտկեցէք շաւիղները,
Քարերն առէք ժողովեցէք.
Ժողովրդներուն դրօշ վերցուցէք.
11 Ահա Տէրը մինչև երկրին ծայրը լսել տուաւ.
Սիոնի աղիկան բսէք,
Ահա քու Փրկիչդ կու գայ.
Ահա անոր վարձքն անոր հետ է,
Եւ գործոց հատուցումն անոր առջևն է։
12 Եւ անոնք Սուրբ ժողովուրդ՝ Տէրոջը փրկածները պիտի բսուին.
Եւ դուն՝ փնտռուած և Ձիթոզած քաղաք պիտի կոչուիս։

Գլ. ԿԳ

1 Ո՞վ է սա որ կու գայ Եդոմէն,
Կարմիրագոյն զգեստով՝ Բոսրայէ,
Որ փառաւոր հանդերձով զարդարուած է,
Եւ իր մեծ զօրութեամբ պանծալով կը քալէ.
Ես եմ, որ արդարութիւն կը խօսիմ,
Ու՝ փրկելու կարողութիւն ունիմ։
2 Ինչո՞ւ համար հանդերձդ կարմիր է,
Եւ զգեստներդ հնձանի մէջ կոխողին պէս է։
3 Հնձանի մէջ միմակ ես կոխեցի,
Եւ ժողովուրդներէն ինծի հետ մարդ չկար.
Եւ զանոնք իմ բարկութեամբս կոխեցի,
Եւ իմ սրանաւթեամբս զանոնք ճմռթեցի.
Եւ անոնց արիւնը զգեստներուս վրայ ցայտեց,
Եւ բոլոր հանդերձներս ներկեցի.
4 Քանզի սրտիս մէջ վրէժխնդրութեան օր կար.
Եւ փրկածներուս տարին հասած էր.
5 Եւ նայեցայ, բայց օգնող չկար,
Եւ զարմացայ որ ձեռնտու եղող չկար.
Ուստի բազուկս ինծի համար փրկութիւն բրաւ,
Եւ բարկութիւնս ինծի ձեռնտու եղաւ։
6 Եւ բարկութեամբս ժողովուրդներ կոխեցի,
Եւ զանոնք իմ սրանաւթեամբս *արբեցուցի,
Եւ անոնց արիւնը գետին իջեցուցի։
7 Տէրոջը ողորմութիւնները, Տէրոջը գովութիւնները պիտի յիշեմ՝
Տէրոջը բոլոր մեզի բրածներուն համեմատ
Եւ այն չատ բարեաց համեմատ,
Որ իր գթութեամբ և առատ ողորմութեամբ
Իսրայէլի տան բրած է,

*Կամ խախխախեցի,



8 Քանզի ըսաւ, սուտ գիւ անոնք իմ ժողովրդս են,
Սուտ չվարուիլու որդիներ են.
Եւ անոնց փրկիչ եղաւ.
9 Անոնց ամէն նեղութիւններուն առանց նեղութիւն կրեց,
Եւ անոր երեսին հրեշտակը զանոնք ազատեց.
Իր սիրով և գթութեամբ զանոնք փրկեց,
Եւ զանոնք վերցուց և հին ժամանակին բոլոր օրերուն մէջ զանոնք կրեց.
10 Բայց անոնք ապստամբեցան և անոր Սուրբ Հոգին բարկացուցին.
Եւ նա դարձաւ անոնց թշնամի եղաւ,
Եւ ինք անոնց հետ պատերազմ բրաւ։
11 Անոնուն առջի օրերը Ն՚ամենէն և անոր ժողովուրդը *յիշեցին.
Ո՞ր է այն՝ որ իր հօտին հովուաւ զանոնք ծովին հանեց.
Ո՞ր է այն՝ որ անոնց մէջ իր Սուրբ Հոգին դրաւ.
12 Իր փառաւոր բազուկը Մովսէսի աջ ձեռքին հետ պատցուց.
Երկին յաւիտենական անուն †վաստակեցու համար՝
Անոնց առջևէն ջուրերը պատռեց.
13 Ե՞ր զանոնք անդունդներէն առանց սահելու անցուց,
Ինչպես որ ձի մը անապատին կ՚անցնէ.
14 Տէրոջը Հոգին հանգստացուց զնա՝
Հովտի մէջ իջնող անասուններու պէս
Դուն քու ժողովրդիդ այնպէս առաջնորդեցիր քու անունդ փառաւորելու համար։
15 Երկինքէն նայէ,
Եւ քու սուրբ և փառաւոր բնակութենդ տես.
Ո՞ր է քու նախանձդ և զօրութիւնդ.
Ողորմութիւններդ և գթութիւններդ ինծի հանդարտեցան։
16 Քանզի մեր Հայրը դուն ես,
Թէ և Աբրահամ մեզ չգիտեր,
Եւ Իսրայէլ մեզ չճանչնար.
Դուն, օվ Տէր, մեր Հայրն ես,
Ե՞ր քու անունդ ՚ի սկզբանէ մեր Փրկիչն է։
17 Ովվ Տէր, ինչո՞ւ համար մեզ քու ճամբաներդէն կը մոլորցնես.
Ինչո՞ւ մեր սիրտը կը խոտորցնես, որ քենէ չվախնանք.
Քու ծառաներուդ համար՝
Քու ժառանգութեանդ ցեղերուն համար դարձիր։
18 Քու սուրբ ժողովուրդդ իրենց ժառանգութիւնը փչ առին վայելեցին.
Մեր թշնամիները քու սրբարանդոտնակոխ ըրին։
19 *Մենք ՚ի սկզբանէ ես՚ի՞նչ ենք.
Դուն անոնց վրայ չիշխեցիր,
Ե՞ր քու անունդ անոնց վրայ չկանչուեցաւ։"

Գլ. ԿԴ

1 Երանի թէ երկինք ձեղքելով վար իջնեիր,
Քու ներկայութենդէ լերինք †հալեին՝
2 Խոխունջը բռնկցնող կրակի պէս,
Ջուրերը եռացնող կրակի պէս,
Որ քու անունդ թշնամիներուդ յայտնեիր,
Ե՞ր ազգերը քու երեսէդ դողային
3 Երբ այն ահաւոր բաներն ըրիր, որոց չէինք յուսար,
Իջար, քու երեսէդ լերինք †հալեցան.
4 Քանզի սկիզբէն ՚ի վեր չլսուեցաւ և ականջ չդրեց,
Եւ աչք չտեսաւ քենէ զատ Աստուած,
Որ իրեն յուսացողներուն այսպէս ընէր ընծ.
5 Ուրախ եղողին և արդարութիւն գործողին
Եւ քու ճամբաներուդ մէջ զքեզ յիշողներուն հանդիպիր.

*Կամ Մենք այնպէս եղանք, որպէս թէ դուն մեր վրայ բնաւ չէիր տիրել, և քու անունդ մեր վրայ չէր կանչուեր։ †Կամ տատնեցան։ ‡Կամ տատնեցան։

Ահա բարկացաւ, ւման զի մեզք գործեցինք.
Անոնց մէջ անդադրեցինք կաց, և պիտի փրկուինք.
6 Բայց ամէնքս պիղծ բանի պէս եղանք,
Եւ մեր բոլոր արդարութիւնները գաշտացի լաթի պէս են.
Եւ ամէնքս տերեւի պէս կը թառամինք,
Եւ մեր անօրէնութիւնները հովի պէս մեզ կը վերցնեն.
7 Եւ քու անունդ կանչող չկայ,
Որ արթնանայ և քեզմով այժ գտնէ.
Քանզի քու երեսդ մեզմէ ծածկեցիր,
Եւ մեր անօրէնութիւններուն պատճառաւ մեզ մաշեցիր.
8 Բայց հիմա, ով Տէր, դուն մեր Հայրն ես.
Մենք կաւ ենք, և դուն մեր Բրուտն ես,
Եւ ամէնքս քու ձեռացդ գործն ենք.
9 Շատ մի բարկանար, ով Տէր,
Եւ հէր անօրէնութիւնն յաւիտան մի յիշեր.
Ահա նայէ, կ'աղաչենք, ամէնքս քու ժողովրդդ ենք.
10 Սուրբ քաղաքներդ անապատ եղան.
Սիոն անապատ եղաւ,
Երուսաղէմ աւերակ եղաւ։
11 Մեր սուրբ և փառաւոր տունը՝
Ուր մեր Հայրերն զքեզ կ'օրհնէին,
Հրոյ ճարակ եղաւ,
Եւ մեր ամէն ցանկալի բերաւոյ տեղս եղաւ.
12 Աստղ վրայ զբեզ պիտի զսպե՞ս, ով Տէր,
Տա՞ս պիտի լռե՞ս և զիեզ չտա պիտի նեղե՞ս։

## Գլ. ԿԵ

1 Զիս չհարցանողներէն փնտռուեցայ,
Զիս չնդրտողներէն գտնուեցայ.
Իմ *անունս չկանչող ազգին
Ահա ես, ահա ես ըսի։

2 Ամէն օր ձեռքս երկնցուցի ապստամբ ժողովրդի մը՝
Որ այնպիսի ճամբու մէջ կը քալէ որ ապրիլ չէ,
Եւ իրենց խորհուրդներուն կը հետեւին.
3 Անդադար ժողովրդի մը՝ որ միշտ երեսս դէմ զիս կը բարկացնեն.
Պարտէզներու մէջ կը զոհեն,
Եւ աղիւներու վրայ խունկ կը ծխեն.
4 Գերեզմաններու մէջ կը նստին,
Եւ գիշերն առանձին տեղ անք կ'անցնեն.
Խոզի միս կ'ուտեն,
Եւ լերնց ամանները իրենց մէջ գարշելի բաներու պզպանակ կայ.
5 Որ կ'ըսեն,
Մեկդի կեցիր, ինծի մի դպչիր,
Քանզի ես քեզի պէս սուրբ եմ։
Ասոնք իմ ռնգոցս մէջ ծուխ են,
Եւ ամէն օր բորբոքած կրակ են։
6 Ահա իմ առջեւս գրուած է.
Պիտի չլռեմ, այլ պիտի հատուցանեմ.
Այո, անոնց ծոցին մէջ պիտի հատուցանեմ
7 Ձեր անօրէնութիւնները՝ ձեր հայրերուն անօրէնութեանց հետ միանգամայն,
Որ լեռներու վրայ խունկ ծխեցին,
Եւ բլուրներու վրայ զիս անարգեցին,
Ա՛րսե՛ Տէրը.
Առաջ անոնց առջի գործերն անոնց ծոցերուն մէջ պիտի լիացնեմ։
8. Տէրը այսպէս կ'ըսե՛.
Ձորը օրինակ երբ ողկոյզի վրայ գտնուի գանոնք կ'ըսեն թէ
Աւրիա մի կորսնցնաք,
Քանզի մասը վրայ օրհնութիւն կայ.
Ես ալ իմ ծառաներուս համար այնպէս պիտի ընեմ,
Որպէս զի ամէնը չկորսնցնեմ։
9 Եւ Յակոբէ սերունդ
Եւ Յուդայէ լեռներուս ժառանգորդ պիտի հանեմ.
Եւ ընտրեալներս այն երկիրը պիտի ժառանգեն,
Եւ ծառաներս հոն պիտի բնակին,

10 Եւ դիս փնտռող ժողովրդեան համար Սարոն հօտերու փարախ,
Եւ Աքորի ձորն արջառներու մակադրուելու պիտի ըլլայ՝
11 Բայց դուք Տէրը թողուցիք
Եւ իմ սուրբ լեռս մոռցաք.
*Գադ խոստին սեղան պատրաստեցիք,
Եւ †Մնեվի ‡թափելու նուէր լեցուցիք.
12 Ես ալ զձեզ սրոյ պիտի ||մատնեմ,
Եւ ամէնքդ պիտի ծռիք մորթուելու համար.
Քանզի կանչեցի և պատասխան չտուիք,
Խօսեցայ և մինչ չլրիք.
Այլ իմ առջեւս չարութիւն լրիք,
Եւ ինծի հաճելի չեզածն ընտրեցիք։
13 Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Ահա իմ ծառաներս պիտի ուտեն,
Բայց դուք անօթի պիտի մնաք.
Ահա իմ ծառաներս պիտի խմեն,
Բայց դուք ծարաւ պիտի մնաք.
Ահա իմ ծառաներս պիտի ուրախանան,
Բայց դուք ամօթով պիտի լռաք.
14 Ահա իմ ծառաներս սրտի ուրախութեամբ պիտի ցնծան,
Բայց դուք սրտի ցաւէ պիտի ազաղակէք,
Եւ հոգւոյ ձիշմանէ պիտի ոռնաք։
15 Եւ ձեր անունն իմ ընտրածներուս անէծքի համար պիտի թողուք.
Եւ Տէր Եհովան զքեզ պիտի մեռցնէ,
Եւ իւր ծառաներն ուրիշ անուամբ պիտի կանչէ.
16 Որ երկրի վրայ օրհնուողը
Ճշմարիտ Աստուծով օրհնուի,
Եւ երկրի վրայ երդնուղ ընդդէմ
Ճշմարիտ Աստուծով երդնում ընէ.
Քանզի առաջի նեղութիւնները մոռցուեցան,
Եւ անոնք իմ աչքերէս ծածկուեցան։

17 Քանզի ահա ես նոր երկինք և նոր երկիր կը ստեղծեմ.
Եւ առաջիններն պիտի չյիշուին, և հոգիս միտքը պիտի չգան։
18 Բայց դուք իմ ստեղծագործութեամբս յաւիտեան յաւիտենից ուրախացէք և ցնծացէք.
Ւման զի ահա ես զԵրուսաղէմ ցնծութեան համար,
Եւ անոր ժողովրդին ուրախութեան համար կը ստեղծեմ։
19 Եւ Երուսաղէմի վրայ պիտի ցնծամ,
Եւ ժողովրդիս վրայ պիտի ուրախանամ.
Եւ հոն այլ ևս լացի ձայն և ազբի ձայն պիտի չլսուի։
20 Հոն այլ ևս քիչ օր տարեկ ոգոյ,
Կամ օրերը չկատարած ծեր պիտի չըլլայ.
Քանզի երիտասարդն հարիւր տարեկան պիտի մեռնի,
Եւ հարիւր տարեկան մեզաւորն անէծքի պիտի հանդիպի։
21 Եւ տուներ պիտի շինեն և պիտի բնակին,
Եւ այգիներ պիտի անկեն և անոնց պտուղը պիտի ուտեն.
22 Ասոնք պիտի չշինեն՝ որ ուրիշները բնակին,
Ասոնք պիտի չտնկեն՝ որ ուրիշներն ուտեն.
Ւման զի իմ ժողովրդիս օրերը ծառի օրերուա չափ պիտի ըլլան,
Եւ իմ ընտրածներս իրենց ձեռաց գործերը պիտի հինցնեն.
23 Ասոնք զարուց ուղ պիտի չաշխատին,
Եւ զժբախտութեան համար տղայ պիտի չծնանին.
Քանզի անոնք Տէրոջը օրհնածներուն սերունդն են,
Եւ անոնց հետ անոնց զաւակներն ալ։
24 Եւ պիտի ըլլայ որ անոնք դեռ չկանչած՝ պատասխան պիտի տամ,
Եւ մինչդեռ կը խօսին՝ պիտի լսեմ։
25 Գայլը և գառն ի միասին պիտի արածին,
Եւ առիւծն արջառոյ պէս յարդ պիտի ուտէ.

*Կամ Բագդին
†Կամ Զակատագրին
‡Եբր. խառնուածք
||Եբր. Ճակատագրեմ,

Եւ օձին կերակուրը հող պիտի ըլլայ.
Անանք իմ բոլոր սուրբ լերանս մէջ
վնաս պիտի չտան
Եւ պիտի չոչնչանան, կ'ըսէ Տէրը։

ԳԼ. ԿԶ

1 Տէրը այսպէս կ'ըսէ.
Երկինք իմ աթոռս է,
Եւ երկիր ոտքս պատուանդանն է.
Ա՛յս ի՞նչ տուն է որ ինծի համար կը շինէք,
Եւ այս ի՞նչ տեղ է իմ հանգստանս համար.
2 Քանզի ասոնց ամէնքն իմ ձեռքս չինեց,
Եւ ասոնց ամէնքը եղան, կ'ըսէ Տէրը.
Բայց ես ասոր պիտի նայիմ,
Այսինքն խոնարհին և կսկիծ հոգի ունեցողին
Եւ իմ խօսքէս դողացողին։
3 Արջառ մորթողը մեռցնողի պէս է,
Գառնուկ զոհողը շուն մորթողի պէս,
Նաեւ մատաղ յանողը խոզի արիւն հաւսուրս-նուէր ընողի պէս.
Ննգրուկ ծխողը կռապաշտի պէս.
Սակայն անոնք իրենց ճամբաներն ընտրեցին,
Եւ անոնց հոգիներն իրենց գարշելիներուն կ'ախորժեն.
4 Ես ես անոնց թշուառութիւնները պիտի ընտրեմ,
Եւ անոնց վախցած բաներն անոնց վրայ պիտի բերեմ.
Վասն զի կանչեցի և պատասխան ոեւէ չեղաւ,
Խօսեցայ և մեկ չըրին.
Այլ իմ աչքիս չարութիւն ըրին,
Եւ իմ չհաճնած բնտրեցին։
5 Տէրոջը խօսքը մեկ ըրէք,
Ով անոր խօսքէն դողացողներ.
Իմ անուանս համար ձեզ ատող,
Եւ ձեզ անարգող ձեր եղբայրներն ըսին,

Թող Տէրը փառաւորուի,
Եւ ձեր ուրախութիւնը տեսնենք.
Բայց անոնք պիտի ամչնան։
6 Քաղաքէն ազդակի ձայն՝ ռամաղէն ձայն մը կու գայ,
Տէրոջը ձայնը՝ որ իւր թշնամիներուն պատիժ կը հատուցանէ։
7 Ձաւ չքաշած ծնաւ,
Ցաւը չհասած արու զաւակ ծնաւ։
8 Ա՛յսպիսի բան մը ո՞վ լսեց, այսպիսի բաներ ո՞վ տեսաւ.
Միթէ երկիր մէկ օրուընդ մէջ կը ծնանի,
կամ ազգ մը վանդականցին ծնաւ.
Քանզի Սիոն դաւ քաշածին պէս իւր որդւոցը ծնաւ։
9 Ես որ ծնանելու վայրկեանը կը բերեմ,
Չծնանիլ պիտի չտամ, կ'ըսէ Տէրը.
Ես որ ծնանել կու տամ,
Արգիլածը պիտի գոցեմ, կ'ըսէ քու Աստուածդ։
10 Երուսաղէմի հետ ուրախացէք և անոր հետ ցնծացէք
Դուք ամէնդ որ կը սիրէք զնա.
Ուրախութեամբ անոր հետ
Դուք ամէնդ որ անոր համար սուգ կը բռնէք.
11 Վասն զի անոր մխիթարութեան տիեզերքէն
Պիտի ծծէք և յագնիք.
Վասն զի դուք պիտի դիէք,
Եւ անոր փառաց առատութեամբ զուարճանաք։
12 Քանզի Տէրն այսպէս կ'ըսէ.
Ահա ես անոր վրայ խաղաղութիւնը* դեռի պէս,
Եւ ազգերուն փառքը յորդահոս հեղեղի պէս պիտի առածեմ.
Եւ պիտի դիէք, գրկի վրայ պիտի վերցուիք,
Եւ ծնկներու վրայ պիտի գգուիք։
13 Ինչպէս մայր մը *իւր* ազան* կը մխիթարէ,
Այնպէս ես դձեզ պիտի մխիթարեմ.

*ՆԵՐ. ուռնուութիւն օրհնողի

*ՆԵՐ. մկկը



Եւ երուսաղէմ մխիթարութիւն պիտի գտնէք։
14 Եւ պիտի տեսնէք և ձեր սիրտերը պիտի ուրախանան,
Եւ ձեր ոսկորները կանանչ խոտի պէս պիտի ծաղկին.
Եւ Տէրոջը ձեռքն անոր ծառաներուն վրայ՝
Եւ անոր բարկութիւնը թշնամիներուն վրայ պիտի յայտնուի։
15 Քանզի ահա Տէրը կրակով կու գայ,
Եւ անոր կառքերը մրրիկի պէս են,
Որ իւր բարկութիւնը՝ սրտմտութեամբ,
Եւ իւր սպառնալիքը կրակի բոցով՝ գործ դնէ։
16 Քանզի Տէրը կրակով և իւր սրովը պիտի դատէ ամէն մարմին.
Եւ Տէրոջմէ սպանուածները շատ պիտի ըլլան։
17 Ջերմնոց սրբոցներէն, և պատուհաններու միջեմեղ իրարմէ եւեւ մնացրուողներէն,
Ե՛ խոզի միս և պիղծ բաներ և մուկ ուտողները
Ի միասին բնաջինջ պիտի ըլլան, կ'ըսէ Տէրը։
18 Բայց ես անոնց գործերը և խորհուրդները գիտեմ.
Ե՛ պիտի ըլլայ որ բոլոր ազգերը և լեզուները պիտի ժողվեմ,
Եւ անոնք պիտի գան և իմ փառքս տեսանեն։
19 Եւ անոնց մէջ նշան պիտի դնեմ,
Եւ անոնցմէ ազատուածներն ազգերուն պիտի ղրկեմ,
Այսինքն դեպ ի Թարսիս, դեպ ի Փուղ և Ղուդ՝ (աղեղնաւորները,)
Դեպ ի Թոբել և Յաւան,
Այն հեռու կղզիները՝ որ իմ համբաւս չլսեցին
Եւ իմ փառքս չտեսան.
Եւ իմ փառքս ազգերուս մէջ պիտի պատմեն։
20 Եւ անոնք՝ ձիերով և կառքերով,
Գոնատարներով, ջորիներով և տաճիկ ուղտերով՝
Ձեր բոլոր եղբայրներն ամէն ազգերէ
Իմ սուրբ լերանս երուսաղէմ
Տէրոջը բնծայ պիտի բերեն, կ'ըսէ Տէրը.
Ինչպէս որ իսրայէլի որդիքը
Մաքուր ամանով Տէրոջը տունն ընծայ կը բերեն։
21 Եւ անոնցմէ ալ պիտի առնեմ՝
Քահանաներ և Ղեւտացիներ ըլլալու համար, կ'ըսէ Տէրը։
22 Քանզի ինչպէս որ նոր երկինքը և նոր երկիրը
Զոր պիտի տեղծեմ առջեւս պիտի կենան, կ'ըսէ Տէրը,
Այնպէս ձեր սերունդը և ձեր անունը պիտի կենայ.
23 Եւ պիտի ըլլայ որ նոր ամսէ նոր ամիս
Եւ շաբաթէ շաբաթ
Այնն մարմին իմ առջեւս երկրպագութիւն ընելու պիտի գայ, կ'ըսէ Տէրը։
24 Եւ անոնք պիտի ելլեն
Եւ ինծի մոտառած եղող մարդոց դիերը պիտի տեսնեն.
Քանզի անոնց որդը պիտի չմեռնի,
Եւ անոնց կրակը պիտի չմարի,
Եւ անոնք ամէն մարմնոյ ղբտանք պիտի ըլլան։

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Բ՚ննդաժխիկ երկիրը՝ Անաթովթի մէջ ե-
զող քահանաներէն Բեզկիայի որդւոյն
2 Երեմիայի խօսքը. որուն Տէրոջը խօս-
քը եղաւ, Յուդայի Թագաւորին Ամո-
նէ որդւոյն Յոսիայի օրերը՝ անոր Թա-
գաւորութեան երեքտասաներորդ տա-
3 րին. Նաեւ Յուդայի Թագաւորին Յոյ-
ակիմ որդւոյն Յոսիայի օրերը՝ մինչև
Յուդայի Թագաւորին Յեքոնիայի որ-
դւոյն Սեդեկիայի վեհատանջութ տա-
րւոյն վերջը՝ մինչև Երուսաղէմի գե-
րութիւնը՝ որ հինգերորդ ամսուն մէջ
եղաւ։
4 Եւ Տէրոջը խօսքն ինծի եղաւ՝ ըսե-
լով,
5 Զքեզ որովայնի մէջ չաւեղծած՝ գիտ-
ցայ զքեզ,
Եւ դուն հոդ արգանդէն չելած՝ զքեզ
սրբեցի։
Զքեզ ազգերուն մարգարէ բրի։
6 Անոնէն ես ըսի,
Ո՜հ, Տէր Եհովայ, ահա ես խօսիլ չեմ
գիտեր,
Վասն զի ես մանուկ եմ։
7 Բայց Տէրը ինծի ըսաւ,
Մի ըսեր թէ ես մանուկ եմ.
Վասն զի ուր որ զքեզ զրկեմ՝ պիտի
երթաս,
Եւ ինչ որ քեզի պատուիրեմ՝ պիտի
խօսիս։
8 Անոնց երեսէն մի վախնար.
Քանզի ես քեզի հետ եմ՝
Քեզ ազատելու համար, կ՚ըսէ Տէրը։
9 Եւ Տէրը իւր ձեռքը երկնցուց և
բերնիս դպաւ.
Եւ Տէրը ինծի ըսաւ,
Ահա իմ խօսքս քու բերանդ դրի։
10 Նայէ՝ ես այսօր զքեզ ազգերու վրայ
Եւ Թագաւորութիւններու վրայ կաց-
նեցուցի,
Որ խլես և փլցնես և կործանուներս
և աւերես,
Նաև չինես և անկնեմ։
11 Եւ Տէրոջը խօսքն ինծի եղաւ՝ ըսե-
լով,
Ով Երեմիա, դուն կը տեսնես։
Եւ ես ըսի, Նշենուց գաւազան կը տես-
նեմ։
12 Անոնոն Տէրը ինծի ըսաւ, Ազեկ տեսար.
Վասն զի ես իմ խօսքիս համար պըն-
կատելու *պիտի փութամ։
13 Եւ երկրորդ անգամ Տէրոջը խօսքն
ինծի եղաւ՝ ըսելով, Ի՞նչ կը տեսնես։
Եւ ես ըսի, Եռացող կաթսայ կը տես-
նեմ
Որուն երեսը դէպ ի հիւսիս է։
14 Եւ Տէրը ինծի ըսաւ,
Չարիքը հիւսիսէն պիտի բորբոքի
Երկրին բոլոր բնակիչներուն վրայ։
15 Քանզի ահա ես հիւսիսի Թագաւորու-
թիւններուն
Բոլոր ազգատոհմիները պիտի կանչեմ,
Կ՚ըսէ Տէրը,
Եւ պիտի գան, և իւրաքանչիւրը իւր
աթոռը
Երուսաղէմի դռներուն առջեւ
Եւ անոր շրջակայ պարիսպներուն վրայ
Եւ Յուդայի բոլոր քաղաքներուն վրայ
պիտի դնեն։
16 Եւ պիտի խօսիմ անոնց իմ դատաս-
տանները,
Անոնց բոլոր չարութիւններուն համար.
Վասն զի անոնք զիս թողուցին,
Եւ ուրիշ աստուածներու խունկ ծխե-
ցին,
Եւ իրենց ձեռաց գործերուն երկրա-
պագութիւն ըրին։

*Եբր. կը հակիմ.



17 Ո՛րձին գօտի քու մէջքդ պնգէ և
կեցիր,
Եւ քեզի բոլոր հրամայածս անոնց ըսէ,
Անոնց երեսէն մի վախնար,
Գուցէ զքեզ անոնց առջեւ ամօթով
ընեմ։
18 Եւ ես այսօր զքեզ բոլոր երկրին
դէմ,
Այրիներէն Յուդայի Թագաւորներուն,
անոր իշխաններուն,
Անոր քահանաներուն և երկրին ժողո-
վրդեան,
Ամուր քաղաքի պէս և երկաթէ սեան
պէս
Եւ պղնձէ պարիսպներու պէս դրի։
19 Եւ անոնք քեզի հետ պիտի պատերազ-
մին,
Բայց պիտի չկրնան քեզի յաղթել,
Վասն զի ես քեզի հետ եմ
Զքեզ ազատելու համար, կ՚ըսէ Տէրը։

ԳԼՈՒԽ Բ

1 Եւ Տէրոջը խօսքն ինծի եղաւ՝ ըսելով,
2 Գնա և Երուսաղէմի ականջներուն կան-
չէ և ըսէ,
Տէրը այսպէս կ՚ըսէ,
Անապատին մէջ այն չգանուած երկիրը
Իմ համբոյր եղած ատենդ՝
Քու մանկութեանդ փեսացութիւնը,
Քու հարսնութեանդ սէրը քեզի հա-
մար յիշեցի։
3 Իսրայէլ Տէրոջը սուրբ էր,
Անոր արմտեաց երախայրին էր.
Բոլոր անոնք որ զանիկա կ՚ուտէին
յանցաւոր կ՚ըլլային.
Անոնց վրայ չարիք կը հասնէր, կ՚ըսէ
Տէրը։
4 Տէրոջը խօսքը մտիկ ըրէք, ով Յակո-
բայ տուներ,
Եւ Իսրայէլի տան բոլոր ազգատոհմիները.
5 Տէրը այսպէս կ՚ըսէ.
Ձեր հայրերն ինչ անիրաւութիւն գը-
տան իմ վրաս,
Որ հեռի հեռացան,
Եւ ունայնութեան ետեւէ երթալով՝
ունայն եղան,
6 Եւ չըսին թէ Ո՞րտե՛ Տէրը՝
Որ զմեզ եգիպտացի երկրէն հա-
նեց.
Որ զմեզ անապատէն պատացուց,
Անապատ եւ փոսերու երկրէն,
Ձորաթեհան և մահուան ստուերի
երկրէն,
Այնպիսի երկրէ մը՝ ուստի մարդ չէր
անցներ,
Ուր հոն մարդ չէր բնակեր։
7 Եւ զձեզ բարիքներ երկիրը քերել,
Որպէսզի պտուղը և բարիքն ուտէք.
Եւ գուք մտաք և իմ երկիրս անմա-
քուր ըրիք,
Եւ ժառանգութիւնս պղծեցիք։
8 Քահանաներն չըսին թէ Տէրը ո՞ւր է,
Եւ օրինաց վարդապետները պիտ չճանչ-
ցան,
Եւ հովիւներն ինծ ապստամբեցան,
Եւ մարգարէները Բահաղով մարգա-
րէութիւն ըրին,
Եւ անօգուտ բաներու հետէ գացին։
9 Ասոր համար ձեզի հետ տակաւին պի-
տի վիճիմ, կ՚ըսէ Տէրը,
Եւ ձեր որդւոց որդիներուն հետ պիտի
վիճիմ։
10 Վասն զի կիտացէք կղզիներն անցէք
և նայեցէք,
Եւ կեդար հարց ղրկեցէք և ազէկ հաս-
կցէք,
Եւ տեսէք թէ այսպիսի բան եղած է.
11 Մի՞թէ ազգ մը իր աստուածները փո-
խեց,
Թէև անոնք Աստուած չեն.
Բայց իմ ժողովուրդս իր փառքը
Անօգուտ բանի հետ փոխեց։
12 Ով երկինք, տար վրայ զարմացիր,
Սոսկացէք և առկայծէք յոյժ, կ՚ըսէ
Տէրը.
13 Վասն զի իմ ժողովուրդս երկու չա-
րութիւն գործեց,
Զիս կենաց ջրոյ աղբիւրը թողու-
ցին,
Եւ իրենց գուբեր փորեցին,
Ճեղքած գուբեր՝ որ չեն կրնար ջուր
պահել։
14 Մի՞թէ Իսրայէլ ծառայ է,

կամ *Ծառայի՛ զաւակ՝ է.
Անիկա ինչո՞ւ համար յափշտակութեան մատնուեցաւ.
15 Անոր վրայ առիւծի կորիւնները գոչեցին
եւ իրենց ձայներն հանեցին,
եւ անոր երկիրն աւերակ ըրին.
Անոր քաղաքներն այրեցան, անբնակ եղան,
16 Մեմփացւոց և Տահպանացւոց որդիքն անգամ
Քու գլխուդ գագաթը կոտրեցին.
17 Ո՞չ ապաքէն դուն քու վրադ բերիր զայս
Քու Տէր Աստուածդ իջուցով,
Երբ անիկա ճամբուն մէջ քեզի առաջնորդութիւն կ'ընէր.
18 Եւ հիմա դուն Եգիպտացւոց ճամբան ինչ բան ունիս,
Որ Սիհորի ջուրը խմելու կ'երթաս.
կամ Ասորեստանի ճամբան ինչ բան ունիս,
Որ Գիհոնի ջուրը խմելու կ'երթաս.
19 Քու չարութիւնդ զքեզ պիտի խրատէ,
եւ անհաւատարմութիւնները զքեզ պիտի յանդիմանեն.
Արդ գիտցիր և տես թէ գէշ և դառն բան է,
Որ քու Տէր Աստուածդ կը թողուս,
Եւ քու վրադ իմ վախս չկայ,
Կ'ըսէ զօրաց Տէրը.
20 Վասն զի քու լուծդ շատոնցմէ †կոտրեցիր,
Քու կապանքդ փըցուցիր,
Եւ դուն ըսիր, Օրինազանց չեմ ըլլար.
Սակայն ամէն բարձր բլրոյ վրայ
Եւ ամէն կանանչ ծառի տակ
Պոռնկացար՝ պոռնկութիւն ըրիր։
21 Եւ ես զքեզ ընտիր որթ
Ե՛ր բոլորովին հարազատ սերմ անմած եի,
Եւ դուն ինչպէ՞ս վայրենի որթոյ անպիտան ճիւղերու պէս եղար ինծի։
22 Եթէ բորակով լուացուիս
Եւ շատ օճառ ալ գործածես,
Անօրէնութիւնդ առջեւս բծի պէս կը մնայ,
Կ'ըսէ Տէր Եհովան։
23 Ի՞նչպէս կրնաս ըսել,
Ես չպղծուեցայ,
Բահաղի հետէն չգացի.
Հովտին մէջ քու ճամբագ նայէ,
Ինչ բրածդ դիտցիր,
Ով խառնարնակ ճամբաներ պտտող ա-
բագնեթացի մաքի ուղտ։
24 Անապատը սովրած վայրենի էշը՝
Որ իւր հոգւոյն յաւիտենական օգը կը ծծէ,
Իւր ցանկութենէն ով կրնայ ետ դարձուցանել.
Զանիկա ամէն փնտռողները չեն յոգներ,
Զանիկա իւր ամսուն մէջ կը գտնեն։
25 Ոտքդ՝ մերկութենէ, և կոկորդդ ծարաւէ ետ պահէ.
Բայց դուն ըսիր, *Անկարելի է, չըլլար.
Վասն զի օտարները սիրած եմ,
Ու անոնց ետեւէն պիտի երթամ։
26 Ինչպէս որ գողը բռնուած ատենը կ'ամչնայ,
Նոյնպէս պիտի ամչնան Իսրայէլի տունը,
Իրենք, իրենց թագաւորները և իշխանները
Եւ քահանաները և մարգարէները.
27 Որ փայտին կ'ըսեն, Դուն իմ հայրս ես,
Եւ քարին՝ Դուն զիս ծնար.
Քանզի ինծի կռնակ դարձուցին և ոչ երես երես.
Բայց իրենց ձախորդութեան ժամանակը կ'ըսեն,
Ելիր և զմեզ ազատէ։
28 Ու՞ր են քու աստուածներդ՝ զորս քեզի շինեցիր.
Եթէ ձախորդութեանդ ժամանակ զքեզ կրնան ազատել, թող ելլեն.

*ՆԵՐ. ընդոծին

†Կամ կոտրեցիր, քու կապերդ փըցուցիր, ու ըսիր, Ծառայութիւն չեմ ըներ. այնպէս որ

*ՆԵՐ. Ցոյս չկայ,



Վասն զի ատատուածներդդ, ով Յուդա,
Քաղաքներուդ թուովն չափ եղան,
29 Ինչո՞ւ համար ինծի հետ կը վիճիս,
Դուք ամէնդդ ինծ ապստամբեցաք,
Կ'ըսէ Տէրը։
30 Պարապ տեղ ձեր որդիքը տեղեցի.
Անոնք խրատ չառին.
Ձեր սուրը ապականարար առիւծի պէս
Ձեր մարգարէները կերաւ։
31 Ով ազգ, Տէրոջը խօսքին նայեցէք.
Միթէ ես անապատ եղայ Իսրայէլի,
կամ մութ երկիրի մը.
Իմ ժողովուրդս ինչո՞ւ կ'ըսէն,
Մենք ինքնագլուխ կը պտռինք,
Այլ ևս քեզի չենք դար։
32 Միթէ կոյսը իւր զարդերը՝
կամ հարսը իւր գօտին կը մոռնայ.
Բայց իմ ժողովուրդս անթիւ օրեր զիս մոռցաւ։
33 Սէր փնտռելու համար՝ ինչո՞ւ քու ճամբագ ազէկ կը յարդարես,
Այնպէս որ քու ճամբաներդդ չար կանանց ալ սորվեցուցիր։
34 Նաեւ քու բզանցներուդ վրայ
Անմեղ տզքատաց հոգիներուն արիւնները գտնուեցան.
Զանոնք դադտուկ տեղւոյ անք չգտայ,
Այլ այս ամէն բաներուն վրայ։
35 Բայց դուն կ'ըսես Թէ Անմեղ ըլլալուս համար՝
Անոր բարկութիւնն անշուշտ ինձմէ պիտի դառնայ։
Ահա ես քեզի հետ դատ պիտի վարեմ՝
Ես ինչո՞ւ չդիտցեցի՝ ըսելուդ համար,
36 Ինչո՞ւ ճամբադ փոխելով այսչափ կը թափառիս։
Դուն Եգիպտոսէ ալ պիտի ամչնաս,
Ինչպէս որ Ասորեստանէ ամչցար։
37 Դուն անկէ ալ պիտի ելլես՝
Ձեռքերդ գլխուդ վրայ դրած.
Քանզի Տէրը քու յոյսերդ մերժեց,
Եւ անոնցմով յաջողութիւն պիտի չունենաս։

Գլ. Գ

1 Կ'ըսեն Թէ Մարդ մը եթէ իւր կինն արձակէ,
Եւ անիկա անոր քովէն երթայ և ուրիշ մարդ առնէ,
Անիկա այլ ևս այն կնոջ կը դառնայ.
Այն երկիրը բոլորովին չ'պղծուիր.
Բայց դուն՝ Ըե՛ շատ համանիներու հետ շնութիւն ըրիր,
Նորէն ինծի դարձիր, կ'ըսէ Տէրը։
2 Այդդ բլուրներուն վերցուր և նայէ,
Ո՞ր պոռնկութիւն չըրիր.
Դուն անոնց համար ճամբաներուն վրայ նստար
Անապատի Արաբացւոյն պէս,
Եւ պոռնկութիւններովդ և չարութեամբդ երկիրը պղծեցիր։
3 Ուստի անձրեւները խափանեցան,
Եւ վերջին անձրեւը չեղաւ.
Սակայն քու ճակտադ պոռնկի ճակտի պէս եղաւ,
Ամօթը միդին չուզեցիր։
4 Միթէ ասկէ ետքը ինծի պիտի չազապակիս՝ ըսելով
Ով Հայր իմ, դուն ես իմ մանկութեանս ատենները դը,
5 Միթէ յաւիտեան պիտի բարկանաս,
կամ է՞ր յաւիտենից միշտ պիտի պահե՞ս.
Ահա դուն այսպէս խօսեցար,
Եւ քու կարողութեանդ չափ չարութիւն գործեցիր։
6 Եւ Յովսիա Թագաւորին օրերը Տէրը ինծի ըսաւ,
Ապստամբ Իսրայէլի բրածը տեսաք.
Անիկա ամէն բարձր լեռան վրայ
Եւ ամէն կանանչ ծառի տակ գնաց,
Եւ հոն շնութիւն բրաւ։
7 Եւ անիկա այս ամէն բաներն ընելէն ետքը՝
Ըսի, ինծի դարձիր, բայց անիկա չդարձաւ.
Եւ անոր ուխտադրուժ քոյրը Յուդա տեսաւ։
8 Եւ երբ ապստամբ Իսրայէլի շնութիւն ընելուն պատճառաւ՝

Չանիկա արձակեցի և արձակման թուղթըն անոր առի,
Տեսայ որ անոր ախտապարտ գոյերը Յուդա չվերացաւ,
Այլ գնաց ինձ ալ չնուիթեան լրտես։
9 Եւ ես ըսի որ անիկա իւր չնուիթեան լրբութեամբը երկիրը պղծեց,
Քանզի քարի և փայտի հետ չնուիթիւն ըրաւ։
10 Այսու ամենայնիւ նաև անոր ուխտապարտ քոյրը Յուդա
Բոլոր սրտով ինծի չդարձաւ,
Այլ սուտութեամբ դարձո՛, կ՚ըսէ Տէրը։
11 Եւ Տէրը ինծի ըսաւ,
Ապստամբ Իսրայէլ ուխտապարտ Յուդայէ աւելի զինք արդարացուց։
12 Գնա այս խօսքերը դէպ՚ի հիւսիս կանչելով ըսէ,
Դարձիր, ով ապստամբ Իսրայէլ, կ՚ըսէ Տէրը,
Եւ քեզի երես չեմ թաներ։
Քանզի ես ողորմած եմ, կ՚ըսէ Տէրը,
Յաւիտեան ոխ չեմ պահեր։
13 Միայն թէ քու անօրէնութիւնդ ճանչցիր,
Որ քու Տէր Աստուծմդէդապստամբեցար,
Եւ անկն կանաչ ծառի տակ
Քու ճամբաներդ օտարներուն տարածեցիր,
Եւ իմ ձայնիս հնազանդութիւն չըրիր,
կ՚ըսէ Տէրը։
14 Դարձէ՛ք, ով ապստամբ որդիք, կ՚ըսէ Տէրը,
Քանզի *ԵՒ՚ ձեզ ամուսնացայ,
Բայց՝ ձեզ պիտի առնեմ՝ մէկ քաղաքի մէկ հոգի,
Եւ մէկ ազգատոհմի երկու հոգի,
Եւ զձեզ Սիոն պիտի բերեմ։
15 Եւ ձեզ իմ սրտիս յարմար հովիւներ պիտի տամ,
Եւ ձեզ գիտութեամբ և հանճարով պիտի հսկեն։
16 Եւ երբ գուք այն օրերը երկրի վրայ շատնաք և ծնիք, կ՚ըսէ Տէրը,

Այլ ևս Տէրոջը ուխտին տապանակը չեն ըսեր։
Եւ անիկա հոգիս ալ պիտի չգայ,
Եւ պիտի չյիշեն զայն,
Եւ անոր այցելութիւն պիտի չընեն։
Եւ այն բաները այլևս պիտի չըլլան։
17 Անոնք կը զրնուադեմ Տէրոջը աթոռը պիտի անուանեն,
Եւ բոլոր ազգերը հոն՝ Տէրոջը անուան համար Երուսաղէմ պիտի ժողովուին,
Եւ այլ ևս իրենց չար սրտին կամեցողութեան ետևէն պիտի չերթան։
18 Այն օրերը Յուդայի տունը
Իսրայէլի տան հետ պիտի երթայ,
Եւ երկուքն ալ միասին հիւսիսի երկրէն
Անոնց հայրերուն ժառանգութիւն տրուած երկիրը պիտի գան։
19 Բայց ես ըսի, Զրկեզ ինչպէս զրկուոց մէջ դնեմ,
Եւ քեզի ՃՇ ցանկալի երկիրը՝
Ազգաց չքնաղ զարդերէն ժառանգութիւնը տամ.
Եւ ըսի, Ինծի Հայր իմ, պիտի ապաշխարես,
Այլ ևս ինծմէ հետևելէն դադար պիտի չտառնաս։
20 Սակայն, ով Իսրայէլի տունը,
Ինչպէս որ կին մը իւր երկրէ անհաւատարիմ կ՚ըլլայ,
Այնպէս գուք ինծի անհաւատարիմ եղաք, կ՚ըսէ Տէրը։
21 Բլուրներուն վրայ ձայն մը լսուեցաւ,
Իսրայէլի որդւոց ապրշանաց և լացի ձայնը։
Վասն զի անոնք իրենց ճամբան խառնեցուցին,
Իրենց Տէր Աստուածը մոռցան։
22 Ով ապստամբ որդիք, դարձէ՛ք,
Ես ձեր ապստամբութիւնները կը բժշկեմ։
Ահա մենք քեզի կու գանք,
Քանզի գուն մեր Տէր Աստուածն ես։
23 Անտարակոյս բլուրներուն
Եւ լեռներուն բազմութեան ցաւալ պարապ բան է.
Այլ Իսրայէլի փրկութիւնը մեր Տէր Աստուծմէն է։



24 Վասն զի մեր մանկութենէն ի վեր
մեր հայրերուն վատնաւկը՝
Անոնց հօտերը և արջառները,
Անոնց որդիքը և աղջիկներն ամօթը կերաւ։
25 Մեր ամօթով կը պառկինք,
Եւ մեր անարգանքն զմեզ կը ծածկէ։
Վասն զի մեր մանկութենէն մինչև այս օր՝
Ես և մեր հայրերը
Մեր Տէր Աստուածմէն զգաստ մնալ գոչեցինք,
Եւ մեր Տէր Աստուածմէն ձայնին հնազանդութիւն չըրինք։

ԳԼ. Գ

1 ԵԹԷ դառնաս, ով Իսրայէլ, կ՚ըսէ Տէրը,
Ինծի պիտի դառնաս։
Եւ կԷ՚ք քու պղծութիւններդ իմ առջևէս վերցնանես,
Այլ ևս թափառական պիտի չըլլաս։
2 Եւ ճշմարտութեամբ, իրաւամբ և արդարութեամբ
Երդուաս պիտի ըսես թէ՝ Տէրը կենդանի է.
Եւ ազգերն անով պիտի օրհնուին,
Եւ անով պիտի պարծին։
3 Վասն զի Տէրը Յուդայի և Երուսաղէմի մարդոց այսպէս կ՚ըսէ.
Ձեզի ակուած երկիրնիդ հերկեցէ՛ք ձեզի,
Եւ փուշերու մէջ մի ցանէ՛ք։
4 Ով Յուդայի մարդիկ և Երուսաղէմի բնակիչներ,
Տէրոջը թլփատուեցէ՛ք,
Եւ ձեր սրտին անթլփատութիւնը վերցուցէ՛ք,
Գուցէ բարկութիւնն ձեր չար գործերուն համար
Կրակի պէս *բորբոքի և այրէ, և մարող չըլլայ։
5 Յուդայի մէջ պատմեցէ՛ք,

Եւ Երուսաղէմի մէջ քարոզեցէ՛ք և ըսէ՛ք,
Երկրի վրայ փող հնչեցուցէ՛ք,
Բարձրաձայն աղաղակեցէ՛ք և ըսէ՛ք,
Ժողովեցէ՛ք և պարսպաւոր քաղաքները մանանք։
6 Դէպ՚ի Սիոն դրօշ վերցուցէ՛ք,
Փախուեցէ՛ք, մի կայնիք։
Վասն զի ես չարիք և մեծ կոտրած պիտի բերեմ հիւսիսէն։
7 Առիւծը իւր *որջէն ելաւ,
Եւ ազգերը չարդուն իւր տեղէն ելաւ՝
Ամբոխ ինքաւ,
Որ քու երկիրդ աւերակ ընէ։
Քաղաքներդ պիտի փլչին,
Եւ ածուց չէ բնակիչ պիտի չգտնուի։
8 Ասոր համար քուրձեր հագէ՛ք
Եւ սուգ ընդոսի պարսպեցէ՛ք,
Վասն զի Տէրոջը սաստիկ բարկութիւնը մեզմէ չդարձաւ։
9 Եւ պիտի ըլլայ այն օրը, կ՚ըսէ Տէրը,
Որ թագաւորին սիրտը և իշխաններուն սիրտը պիտի հատնի։
Եւ քահանաները պիտի ապշին,
Եւ մարգարէները պիտի հիանան։
10 Այն ատենը ըսի,
Աւաղ, ով Տէր Եհովայ,
Արդարև դուն այս ժողովուրդը և Երուսաղէմ խաբեցուցիր՝ ըսելով,
Ձեզի խաղաղութիւն պիտի ըլայ.
Եւ հիմա սուրը մինչև ածոյ հոգին հասաւ։
11 Անատեն այս ժողովուրդին և Երուսաղէմի պիտի ըսուի,
Այրող հով մը անապատին բլուրներէն
Իմ ժողովուրդիս աղջկան ճամբան մէջ՝
Ոչ թէ հառելու համար, ոչ ալ մաքրելու համար,
12 Աւելի սաստիկ հով մը պիտի գայ ինծի.
Հիմա ես ալ անոնց հետ դատաստանները պիտի խօսիմ։
13 Ահա անկիա ամպերու պէս պիտի ելլէ,

*Նբ. ելլէ

*Նբ. մեզաւէն

եւ անոր կառքերը մրրկի պէս.
Անոր ձիերն արծիւներէն սլացկընիթաց են.
վա՜յ մեզի՛ որ կ'աւերուինք։
14 Ով Երուսաղէմ, սիրտդ չարութենէ լուա,
որպէս զի փրկութիւն գտնես.
քու չար խորհուրդներդ մինչեւ ե՞րբ պիտի մնան քու մէջդ։
15 Վասն զի ձայն մը Դանէ լուր կը բերէ,
եւ Եփրեմի լեռնէն թշուառութիւն լսել կու տայ։
16 Ազգերուն յիշեցէ՛ք,
Ահա Երուսաղէմի վրայ պատմեցէ՛ք,
Որ հեռաւոր երկրէ պահապաններ կու գան,
եւ Յուդայի քաղաքներուն վրայ իրենց ձայնը կ'արձակեն։
17 Անոր չորս կողմն ագարակի պահապաններու պէս պիտի պաշարեն,
վասն զի անիկա ինծի ապստամբեցաւ, կ'ըսէ Տէրը։
18 Ա՛յս բաները քու ճամբաներդ եւ գործերդ բերին քու վրադ.
Ասիկա քու չարութիւնդ է, վասն զի դառն է.
վասն զի մինչեւ քու սիրտդ հասաւ։
19 Փո՛րս, փո՛րս, մինչեւ սրտիս *չտախտապաններըդ յա՛ւ կը զգամ.
Սիրտս ներսէն դիս կը խռովի, չեմ կրնար լռել,
Քանզի դուն, ով իմ անձս, փողին ձայնը,
Պատերազմին ազդակը լսեցիր։
20 Կոտորած կոտորածէն վրայ կը կանչուի,
Վասն զի բոլոր երկիրը կործանեցաւ.
Վրաններս՝ յանկարծակի,
Ու խորաններս մէկէն կործանեցան.
21 Մինչեւ ե՞րբ դրօշը պիտի տեսնեմ,
Ու փողին ձայնը պիտի լսեմ,
22 Քանզի իմ ժողովրդս յիմար է, զիս չճանչցան.
Անոնք անմիտ զաւակներ են,
Ու անոնց քով հանճար չկայ.
Անոնք չարութիւն ընելու խմաստուն են,
Բայց բարութիւն ընել չեն գիտեր։
23 Երկրի վրայ նայեցայ, ու ահա անձեւ և պարապ էր.
Երկինք նայեցայ, ու լոյս չունէր։
24 Լեռներուն նայեցայ, ու ահա կը դողային,
Ու ամէն բլուրները կը սարսէին։
25 Նայեցայ, ու ահա մարդ չկար,
Ու երկնից բոլոր թռչուններըը փախած էին։
26 Նայեցայ ու ահա պտղաբեր երկիրն անապատ եղած էր,
Ու բոլոր քաղաքները Տէրոջը երեսէն Անոր սաստիկ բարկութեան երեսէն փճած էին։
27 Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ.
Բոլոր երկիրը պիտի աւերուի,
Բայց բոլորովին ե՛րբեք պիտի չվերնայ։
28 Ասոր վրայ երկիրը սուգ պիտի բռնէ,
Ու վերէն երկինք պիտի խաւարի.
Վասն զի խօսեցայ, որոշեցի,
Ու պիտի չզղջամ և անկէ ետ պիտի չդառնամ։
29 Ձիաւորներուն և աղեղնաւորներուն ձայնէն
Բոլոր քաղաքը պիտի փախչի.
Անոնք թանձրախիտ անտառներու մէջ պիտի մտնեն,
Ու ապառաժներու վրայ պիտի ելլեն.
Բոլոր քաղաքները պիտի թողուին,
Ու անոնց մէջ մարդ պիտի չբնակի։
30 Ու դուն, ով աւերուած, ի՞նչ պիտի ընես.
Թէև կարմիրներ հագնիս,
Ոսկի զարդերով զարդարես,
Ու *աչագդ վրայ չափ ծարայր դնես,՝
Ի զուր կը զարդարուիս.
Համնեցնողդ զքեզ մերժեցին՝ քու հոգիդ կը վնասեն։
31 Քանզի ձայն մը լսեցի ծննդական կնոջ չափ պես.
Ու իբր անդրանիկը ծնանողին երկանց պես.
Սիօնի աղջկան ձայնը՝ որ կը հառաչէ, և ձեռքերը բանալով՝ կ՚ըսէ,

*ԵԲՐ. պատերը

*ԵԲՐ. աչքերդ ծարաւով պատառես,



Վա՜յ ինծի՛ հիմա,
Քանզի սպանողներուն պատճառաւ հոգիս մաքնեցաւ։

## Գլ. Ե

1 Երուսաղէմի փողոցներուն մէջ պտըտեցէ՛ք,
Ու հիմա նայեցէ՛ք և գիտցէ՛ք,
Ու անոր հրապարակներուն մէջ փնտռեցէ՛ք.
Եթէ մարդ մը կրնաք գտնել,
Եթէ իրաւունք ընող, ճշմարտութիւն փնտռող մը կայ,
Ես ան *ների՛ք Թողութիւն ընեմ,
2 Ու թէև, Տէրը կենդանի է, կ'ըսեն,
Բայց սուտ երդումի երդուած կ'ընեն։
3 Ով Տէր, մի՞թէ քու աչքերդ ճշմարտութիւնան չե՞ն նայիր.
Զանոնք ծեծեցիր, բայց ցաւ չզգացին.
Զանոնք հատուցիր, բայց խրատ ընդունել չուզեցին.
Իրենց երեսն ապառաժէն աւելի կարծրացուցին,
Ու դառնալ չուզեցին։
4 Ու ես ըսի, Այրուձիս անոնք ոտքաւոր են,
Անոնք անմիտ են, քանզի Տէրոջը ճամբան՝
Իրենց Աստուծոյն դատաստանը չեն գիտեր։
5 Ես մեծերուն երթամ
Ու անոնց հետ խօսիմ,
Վասն զի անոնք Տէրոջը ճամբան՝
Իրենց Աստուծոյն դատաստանը գիտեն.
Բայց հա՛ անոնք ալ լուծը կոտրեցին,
Կապերը փրցուցին։
6 Անոր համար զանոնք անտառին առիւծը պիտի մեռցնէ,
Զանոնք *անապատներուն գայլը՝ պիտի ասատկէ,
Անոնց քաղաքներուն վրայ մնացը պիտի հսկէ,
Անոնցմէ ամէն դուրս ելլողը պիտի գիսաւուի.

*Պա՛տ Երեմիայեան գայլը

Վասն զի անոնց յանցանքը չատցան,
Ու անոնց ապստամբութիւնները բազմացան։
7 Ա՛յս բանիս համար քեզի ինչպէ՞ս ներեմ.
Քու որդիներդ զիս թողուցին
Ու չաստուածներով երդում ըրին։
Ես երբ զանոնք յագեցուցի անոնք շնութիւն ըրին,
Ու բազմութեամբ բոզանոց գացին։
8 Աստանց դիրցած ձիերու պէս են,
Ամէն մարդ իւր դրացւոյն կնոջը կը վրնջէ։
9 Միթէ այս բաներուն համար այցելութիւն պիտի չընե՞մ, կ'ըսէ Տէրը,
Կամ այսպիսի ազգէ մի հոգիս վրէժ պիտի չառնէ՞։
10 Անոր պարիսպներուն վրայ ելէք և կործանեցէ՛ք,
Բայց ոչ բոլորովին.
Անոր մարակոցները վերցուցէ՛ք,
Վասն զի անոնք Տէրոջը չեն։
11 Քանզի Իսրայէլի տունը և Յուդայի տունը
Ինծի չատ անհաւատարիմ եղան, կ'ըսէ Տէրը։
12 Անոնք Տէրը ուրացան և ըսին, Անիկա չէ,
Ու մեր վրայ չարիք պիտի չգայ,
Ու սուր և սով պիտի չտեսնենք.
13 Ու մարգարէները հովի պէս են,
Ու անոնց բերա՛նը Տէրոջը խօսքը չկայ.
Անոնց այնպէս ըլլայ։
14 Անոր համար զօրաց Տէր Աստուածն այսպէս կ'ըսէ.
Որովհետեւ դուք այս խօսքը խօսեցաք,
Ահա ես իմ խօսքերս քու բերանդիդ մէջ կրակ՝
Ու այս ժողովուրդը փայտ պիտի ընեմ,
Ու զանոնք պիտի ոսկուռէ։
15 Ահա ես ձեր վրայ հեռաւէն ազգ մը կը բերեմ,
Ո՛վ Իսրայէլի տունը, կ'ըսէ Տէրը.
Անիկա զօրաւոր ազգ է,
Անիկա հին ազգ է,

Եւ այնպիսի ազգ է՝ որոյ գուն լեզուն
չես գիտեր
Եւ խօսածը չես հասկնար.
19 Անոնց կապարձներըը բաց գերեզմանի
պէս են.
Ամէնքն ալ զօրաւոր մարդիկ են.
17 Եւ անոնք պիտի ուտեն քու հունձքդ,
Եւ քու որդիներուդ և աղջիկներուդ
ուտելու հացը.
Քու հօտերդ և արջառներդ պիտի ու-
տեն,
Քու պտղիներդ և թզենիներդ պիտի
ուտեն,
Քու ապահոված պարսպատուր քաղաք-
ներդ
Սրով պիտի աւրէ։
18 Բայց այն օրերն ալ, կ'ըսէ Տէրը,
Զեզ պիտի չկատարեմ։
19 Եւ երբ ըսէք,
Ի՞նչ պատճառով մեր Տէր Աստուածը
այս ամէնը մեզի բրաւ,
Դուն անոնց ըսես,
Ինչպէս որ դուք ինծ թողուցիք,
Եւ ձեր երկրին մէջ օտար աստուած-
ներու ծառայութիւն բրիք,
Այնպէս ալ դուք ձերը չեղած երկրին
մէջ
Օտարներու ծառայութիւն պիտի բ-
նէք։
20 Աթիա Յակոբայ տան մէջ պատմե-
ցէք,
Եւ Յուդայի մէջ հրատարակեցէք ըսէք,
21 Հիմա մեղկ ըրէք զայն,
Ով յիմար և անմիտ ժողովուրդ,
Որ աչք ունիք, բայց չէք տեսներ.
Ականջ ունիք, բայց չէք լսեր։
22 Ինծ պիտի չվախնա՞ք կ'ըսէ Տէրը,
Իմ երեսէս պիտի չդողա՞ք,
Որ յաւիտենական հրամանով աւազը
ծովուն սահման դրի,
Եւ անկէ չանցնի։
Թէև անոր ալիքները կը ծփին, բայց
չեն կրնար յաղթել,
Թէև անոնք կը գոչեն, բայց անկէ չեն
կրնար անցնիլ։
23 Սակայն այս ժողովուրդն անհնազանդ
և ապստամբ սիրտ ունի.
Անոնք երթալով իրենց ճամբան ծռե-
ցին,
24 Եւ իրենց սրտին մէջ չըսին,
Մեր Տէր Աստուծմէն վախնանք,
Այն որ անձրևը, առաջին և վերջին
անձրևը, իր ատենին կու տայ,
Ան հնձոց համար արձակած շաբաթ-
ները մեզի կը պահէ։
25 Ձեր անօրէնութիւնները ասոնք հեռա-
ցուցին,
Ձեր մեղքերը բարիքը ձենէ արգելե-
ցին։
26 Վասն զի ժողովուրդս մէջ ամբարիշտ-
ներ գտնուեցան.
Անոնք որսորդներուն կծկաւրան պէս
դարանամուտ կ'ըլլան,
Որոգայթ կը լարեն, մարդիկ կը բռը-
նեն։
27 Ինչպէս որ վանդակը թռչուններով
լեցուն է,
Այնպէս անոնց տուները նենգութեամբ
լեցուն են։
Անոր համար անոնք մեծցան և հարըս-
տացան.
28 Գիրցան, *պարարտացան,
Եւ չարութեան գործերը դիրաղնցեցին.
Անոնք չիտակ դատաստան չեն ըներ,
Որբին իրաւունքը չեն պաշտպաներ,
(Այսու ամենայնիւ յաջողութիւն կը
գտանեն,)
Եւ ազքատին գաւակ չեն անանձը։
29 Մի՞թէ այս բաներուն համար այցելու-
թիւն պիտի չընե՞մ, կ'ըսէ Տէրը,
Կամ այսպիսի ազգէ մի՞ հոգիս վրէժ
պիտի չառնէ։
30 Երկրի վրայ զարմանալի և սոսկալի
գործ կ'ըլլայ.
31 Մարգարէները սուտ կեսմէ մարգա-
րէութիւն կ'ընեն,
Եւ քահանաներն անոնց ձեռքով կ'իշ-
խեն,
Եւ իմ ժողովուրդս այսպէս կ'սիրուիմ։
Բայց ի՞նչ պիտի ընէք, երբ ասոնց վախ-
ճանը հասնի։

*ԵԲՐ. փայլուն եղան։



ԳԼ. Ջ

1 Ով Բենիամինի որդիք, երուսաղէմի
մէջէն քաշուեցեք,
Եւ Թեկոայէի մէջ փող հնչեցուցէք,
Եւ Բեթ-աքարմայի վրայ նշան վերցու-
ցէք.
Վասն զի հիւսիսէն չարիք և մեծ կո-
տորած կ'երևնայ։
2 Սիոնի ազջիկը դեղցիկ և փափուկ կնոջ
նմանցուցի։
3 Հովիւները և անոնց հօտերն անոր պի-
սի երթան,
Անոր գէմ շուրջանակի վրաններ պիտի
կանգնեն,
Իւրաքանչիւրը իւր առմնութեան մէջ պիտի
հովուէ։
4 Անոր վրայ պատերազմի պատրաստե-
ցէք։
Ելէք, և կէս օրին ելլենք.
Վա՜յ մեզի, վասն զի օրը կ'անցնի,
Եւ իրիկուան առուերները կ'երկրնա-
ձին։
5 Ելէք, և գիշերով ելլենք
Եւ անոր *բերդերը կործանենք։
6 Վասն զի զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Ծառեր կարեցէք և երուսաղէմի դէմ
պատնէշ կանգնեցէք.
Անիկա այցելութիւն ընելու քաղաք է,
Բոլորովին հարստահարութեամբ լե-
ցուած է։
7 Ինչպէս որ ջրհորը իւր չարերը կը բղխէ,
Անոնիկա ալ իւր չարութիւնն այնպէս կը
բղխէ։
Անոր մէջ զրկանք և յափշտակութիւն
կը լսուի,
Իմ առջևս միշտ ցաւեր և հարուածներ
կան։
8 Ով երուսաղէմ, խրատուէ,
Գուցէ հոգիս քեզմէ զատուի,
Գուցէ քեզ աւերակ և անբնակ երկիր
դարձնեմ։
9 Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Իսրայէլի մնացորդները այգեզ պէս
Բոլորովին ձեռքդ պիտի քնկն։

*Կամ պարսպաններըը

Դու ձեռքդ կիթոզի պէս կողովներուն
դարձուր։
10 Ո՞րու խօսիմ և վկայութիւն ընեմ
որ լսեն.
Ահա անոնց ականջները անթլփատ է՛ն,
Եւ չեն կրնար մտիկ ընել.
Ահա Տէրոջը խօսքն անոնց առջև ա-
նարգանք եղաւ,
Անկէ չեն ախորժիր։
11 Սակայն ես Տէրոջը բարկութեամբ լե-
ցուած եմ,
Իմ անձս զսպելէն յոգնեցայ.
Զանիկա դուրսը պիտի թափեմ տղոյց
վրայ,
Նոսա երիտասարդաց ժողովին վրայ.
Քանզի այր և կին մարդը,
Ծերը և տարիքն առածը պիտի բռնա-
նան։
12 Եւ անոնց տուներըը, ագարակներըը և
կանայք ի միասին
Օտարաց ձեռքը պիտի անցնին.
Վասն զի երկրին բնակչաց վրայ
Ձեռքս պիտի երկնցնեմ, կ'ըսէ Տէ-
րը։
13 Քանզի անոնց փոքրէն մինչև մեծը
Ամէնքը ագահութեան ետևէ եղան,
Եւ մարգարէն մինչև քահանան
Ամէնքը սուտ կեսմէ կը վարուին,
14 Եւ իմ ժողովրդիս աղջկան վերքը
Տարեմանցի բժշկելով
Խաղաղութիւն, խաղաղութիւն է, կ'ը-
սեն,
Երբ խաղաղութիւն չկայ։
15 Մի՞թէ երբ պղծութիւն կ'ընեն, կ'ամ-
չնա՞ն.
Բնաւ չեն ամչնար,
Եւ պատկառել չեն գիտեր։
Անոր համար կրնայներուն մէջ պիտի
կրնան,
Երբ անոնց այցելութիւն ընեմ, պիտի
գլորին, կ'ըսէ Տէրը։
16 Տէրը այսպէս կ'ըսէ.
Ճամբաներու վրայ կայնեցէք և նայե-
ցէք,
Եւ հին շաւիղներուն համար հարցու-
ցէք,
Թէ ո՛րն է բարի ճամբան,

Եւ անոր մէջ քալեցէք,
Որ ձեր հոգիներուն հանգիստ գտնէք.
Բայց անոնք ըսին, Անոր չենք քալեր։
17 Եւ ձեր վրայ դէմաձեր դրի, ըսելով
Փողին ձայնը մտիկ ըրէք.
Բայց անոնք ըսին, Մտիկ չենք ըներ։
18 Ուրեմն, ով ազգեր, լսեցէք.
Ով ժողովք, անոնց մէջ եղած բանը գիտցէր.
19 Լսէ, ով երկիր,
Ահա ես այս ժողովուրդին վրայ չարիք՝
Անոնց խորհուրդներուն պտուղը պիտի բերեմ.
վասն զի իմ խօսքերս մտիկ չըրին,
Եւ իմ օրէնքս ալ մերժեցին։
20 Ինչո՞ւ ինծի այսպէս Սաբայէ կնդրուկ գայ,
Եւ հեռաւոր երկրէ՝ անուշահոտ խունկ կերկդգն.
Ձեր ողջակէզներն ընդունելի չեն,
Եւ ձեր զոհերն ինծի հաճելի չեն։
21 Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես այս ժողովուրդին առջև խոչընդոտներ կը դնեմ,
Եւ հայրերը որդւոց հետ ի միասին անոնց զարնուելով պիտի ջլտին.
Դրացին և բարեկամը պիտի կորսուին։
22 Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա հիւսիսի երկրէն ժողովուրդ մը կու գայ,
Եւ երկրէս ծայրերէն մեծ ազգ մը կ'ելլէ.
23 Անոնք աղեղ և նիզակ կը կրեն,
Անոնք անգութ և անողորմ են.
Անոնց ձայնը ծովու պէս կը գոռայ,
Եւ անոնք ձիերու վրայ կը հեծծեն,
Եւ պատերազմոյ մարդու պէս
Քեզի դէմ կը շարուին, ով դուստր Սիոնի։
24 Անոր լուրը լսեցինք.
Մեր ձեռքերը թուլցան,
Եւ ցաւերն զմեզ պաշարեցին՝
Ծննդական կնոջ երկանդ պէս։
25 Արտերը մի ելլէք և ճամբաները մի պտտիք.
վասն զի չորս կողմէ թշնամւոյն սուրը և վախ կայ։
26 Ով իմ ժողովուրդիս աղջիկը, քուրձ հագիր
Եւ մոխրոյ մէջ թաւալի,
Եւ շատ գոռաց ողբով լայ,
Ինչպէս որ միամօր որդւոյ վրայ կու լայ.
վասն զի կործանողը յանկարծ մեր վրայ պիտի գայ։
27 Քեզ իմ ժողովրդեանս մէջ փորձիչ բերդ դրի,
Որ անոնց ճամբան գիտնաս և փորձես։
28 Ամէնքը կամակոր ապստամբներ են,
Բանսարկութեան կը պտտին, պղինձ և երկաթ են.
Ամէնքն ապականացած են։
29 Փուքն այրեցաւ,
կապարը կրակէն հատաւ.
Արծաթագործն ի դուր կ'աշխատի,
վասն զի չարերը չորոշուեցան։
30 Անոնց, Անպիտան արծաթ, պիտի կանչեն,
վասն զի Տէրը դանոնք մերժեց։

## ԳԼ. Է

1 Տէրոջը կողմանէ երեմիայի եղած խօսքերն է, որ բսաւ,
2 Տէրոջը տան դուռը կայնէ,
Ու հոն այս խօսքը կանչէ և ըսէ,
Տէրոջը խօսքը մտիկ ըրէք, ով բոլոր Յուդա,
Որ այս դռներէն կը մտնէք՝
Տէրոջը երկրպագութիւն ընելու համար։
3 Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածն այսպէս կ'ըսէ.
Ձեր ճամբաները և գործերն ուղղեցէք,
Եւ ձեզ պիտի թողում որ այս տեղը բնակիք։
4 Դուք մի ապաւինիք սուտ խօսքերուն՝ որ կ'ըսեն,
Տէրոջը տաճարը, Տէրոջը տաճարը,
Տէրոջը տաճարն ատոնք են։
5 Գանզի եթէ ձեր ճամբաները և գործերը բոլորովին ուղղէք,



Եւ եթէ մարդուն և անոր ընկերին մէջ տեղ
Իրաւունքն զգուշութեամբ ի գործ դնէք,
6 Պանդխտին, որբին և այրուն զրկանք չընէք,
Եւ հոս անմեղ արիւն չթափէք,
Եւ օտար աստուածներու հետէ չերթաք,
Որ ձեզի չարեաց պատճառ կ'ըլլայ,
7 Անտահն հոս, այս երկրին մէջ զոր ձեր հայրերուն տուի՝
Պիտի բնակեցնեմ զձեզ յաւիտեանս յաւիտենից.
8 Ահա դուք սուտ խօսքերու կ'ապաւինիք,
Որ չեն կրնար օգուտ ընել.
9 Մի՞թէ գողութիւն, մարգասպանութիւն և շնութիւն ընելով,
Եւ սուտ երդում ընելով, և Բահաղի խունկ ծխելով,
Եւ ձեզ անծանօթ օտար աստուածներու հետէն երթալով՝
10 Կրնա՞ք գալ և իմ առջևս կայնիլ այս տան մէջ՝
Որոյ վրայ իմ անունս կոչուած է,
Եւ ըսել թէ Ազատեցանք որ այս ամէն պղծութիւններն ընենք.
11 Այս տունը՝ որոյ վրայ իմ անունս կոչուած է,
Մի՞թէ ձեր աչաց առջև աւազակներու քարայր եղաւ.
Ահա ես ալ տեսայ, կ'ըսէ Տէրը։
12 Բայց հիմա դուք Սիլովի մէջ իմ տեղս գացէք,
Ուր առաջ իմ անունս հաստատեցի,
Եւ տեսէք ինչ որ անոր ըրած եմ՝
Իմ ժողովուրդիս Իսրայէլի չարութեան համար։
13 Եւ հիմա որովհետև այս բոլոր գործերն ըրիք, կ'ըսէ Տէրը,
Եւ թէպէտ ձեզի խօսեցայ կանուխ հելլելով և խօսելով, բայց դուք պատասխան չտուիք,
Ձեզ կանչեցի, բայց դուք պատասխան չտուիք,
14 Ես ալ այս ձեր ապաւինած տանը՝
Որոյ վրայ իմ անունս կոչուած է,
Եւ այս տեղուս զոր ձեզ և ձեր հայրերուն տուի՝
Սիլովի ըրածիս պէս պիտի ընեմ.
15 Եւ ինչպէս որ ձեր բոլոր եղբայրները, Եփրեմի բոլոր սերունդը, վռնտեցի,
Այդ ձեզ իմ առջևէս պիտի վռնտեմ։
16 Ուստի դուն այս ժողովուրդին համար աղօթք մի ըներ,
Եւ անոնց համար ազաղակ և ազաչանք մի մատուցաներ,
Եւ ինծի բարեխօսութիւն մի ըներ,
Գանզի քեզ մտիկ չեմ ըներ։
17 Դուն չե՞ս տեսներ թէ անոնք ինչ կը գործեն
Յուդայի քաղաքներուն մէջ և Երուսաղէմի փողոցներուն մէջ։
18 Որդիք փայտ կը ժողվեն,
Եւ հայրերը կրակ կը վառեն,
Եւ կանայք խմոր կը շաղեն՝
Երկնից թագուհւոյն բլիթներ չընելու համար,
Եւ օտար աստուածներուն թափելու նուէրներն կը մատուցանեն,
Որ զիս բարկացնեն։
19 Մի՞թէ անոնք զի՞ս կը բարկացնեն, կ'ըսէ Տէրը,
Ո՞չ ապաքէն իրենց անձը իւ ամօթին համար։
20 Անոր համար այսպէս կ'ըսէ Տէր Եհովան.
Ահա իմ բարկութիւնս և սրտմտութիւնս
Այս տեղուս վրայ պիտի թափի,
Մարդուս վրայ և անասնոյ վրայ
Եւ դաշտի ծառերուն վրայ
Եւ երկրի պտուղներուն վրայ,
Եւ պիտի բռնկի և պիտի չմարի։
21 Զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածն այսպէս կ'ըսէ.
Ձեր ողջակէզները ձեր զոհերուն վրայ աւելցուցէք և միս կերէք։
22 Վասն զի ձեր հայրերը եգիպտոսէ երկրէն հանած օրս՝
Անոնց ետ մը չխօսեցայ ողջակիզի և զոհի վրայ,

Ոչ ալ անոնց հրամայեցի.
23 Այլ անոնց այս բանը հրամայեցի եւ ըսի,
Իմ ձայնս մտիկ լրէք,
Եւ ես ձեզի Աստուած պիտի՛,
եւ դուք ինծի ժողովուրդ պիտի՛ ըլլաք.
Եւ ձեզի ամէն հրամայած ճամբանեւ ես ձեզի յաջողի՛ք.
Որ ձեզի բարի ըլլայ.
24 Բայց անոնք մտիկ չըրին եւ իրենց ականջը չծռեցին,
Այլ իրենց չար սրտին կամակորութեամբը
Իրենց խորհուրդներուն հետեւցան,
Եւ ետ գացին եւ ոչ թէ յառաջ.
25 Ձեր հայրերը եղիպտոսի երկրէն եկած օրէն մինչեւ այս օր՝
Իմ բոլոր ծառաներս մարգարէները ձեզի զրկեցի.
Այո՛ն օր կանուխ եղերով կը զրկէի.
26 Եւ ինծի մտիկ չըրին եւ իրենց ականջները չծռեցին,
Այլ իրենց պարանոցը խստացուցին,
Իրենց հայրերէն աւելի չար եղան։
27 Եւ դուն այս բոլոր խօսքերն անոնց պիտի բսես,
Բայց գիրենք մտիկ պիտի չընեն,
Զանոնք պիտի կանչես,
Բայց քեզի պատասխան պիտի չտան։
28 Անոնց անոնց ըսէ՛ն,
Որ Տէր Աստուծոյն ձայնը մտիկ չընեղ
Եւ խրատ չընդունող ազգն այս է՝
Ճշմարտութիւնը կորսուեցաւ եւ անոնց բերնէն կտրեցաւ։
29 Մազերդ կարճ ե՛ւ նետէ՛, ով Երուսաղէմ,
Եւ բլուրներուն վրայ ողբա՛.
Քանզի Տէրը մերժեց ե՛ւ երեսի ձկեց այն սերունդը
Որուց դէմ շատ բարկացած էր։
30 Վասն զի Յուդայի որդիքն իմ առջեւս չարութիւն գործեցին, ի՛րան Տէրը,
Իրենց գարշելի բաներն իմ անուանս կոչուած տան մէջ դրին
Որ զայն պղծեն,
31 Եւ Հինոմի որդւոյն ձորին մէջ եղող Տոփեթի բարձր տեղերը շինեցին
Իրենց որդիքը եւ աղջիկները կրակով այրելու համար.
Որ ես չհրամայեցի եւ մտքէս անցած չէր։
32 Ուստի տէ՛ս օրեր կու գան, ի՛րան Տէրը,
Որ այլ եւս Տոփեթի կամ Հինոմի որդւոյն ձորը պիտի չըսուի,
Այլ Սպանութեան ձոր.
Եւ Տոփեթի մէջ գերեզման պիտի չըլլայ
Մինչեւ որ այլ եւս տեղ չը մնայ։"
33 Եւ այս ժողովուրդին դիերը
Երկնից թռչուններուն եւ երկրի գազաններուն կերակուր պիտի ըլլան,
Եւ վախցնող պիտի չըլլայ։
34 Եւ Յուդայի քաղաքներէն եւ Երուսաղէմի փողոցներէն
Ցնծութեան ձայնը եւ ուրախութեան ձայնը,
փեսային ձայնը եւ հարսին ձայնը պիտի դադրեցնեմ,
Վասն զի երկիրն ամայի պիտի ըլլայ։

ԳԼՈՒԽ Ը.

1 Այն ժամանակ, ի՛րան Տէրը,
Յուդայի թագաւորներուն ոսկրները,
Եւ անոր իշխաններուն ոսկրները,
Եւ քահանաներուն ոսկրները,
Եւ մարգարէներուն ոսկրները,
Եւ Երուսաղէմի բնակչաց ոսկրներն՝
Իրենց գերեզմաններէն պիտի հանեն,
2 Եւ պիտի տարածեն զանոնք արեւուն առջեւ եւ լուսնին առջեւ
Եւ երկնից բոլոր զօրաց առջեւ,
Զորս սիրեցին, եւ անոնց ծառայեցին,
Եւ անոնց ետեւէն գացին
Եւ զանոնք փնտռեցին, եւ անոնց երկրպագութիւն ըրին։
Անոնք պիտի ժողովուին եւ պիտի չըթաղուին,

*Կամ՝ ոտքէն տեղ չըլլալուն համար։



Երկրի երեսին վրայ աղբի պէս պիտի ըլլան։
3 Եւ մահը կեանքէն աւելի ցանկալի պիտի ըլայ
Այս չար ազգին բոլոր մնացորդներուն
Որ մնացած են այն ամէն տեղ,
Ուր զանոնք վռնտած եմ, ի՛րան զօրաց Տէրը։
4 Եւ անոնց ըսէ՛, Տէրը այսպէս կ՚ըսէ.
Մէյմէկ անոնք պիտի կրնան եւ պիտի ելլե՞ն.
Կամ դէմ ե՞ր դառնալէն կը խոտորի եւ հա՛ւ չը դառնար։
5 Ինչո՞ւ այս ետ դարձած ժողովուրդը Երուսաղէմ խոտորմամբ խոտորեցաւ։
Անոնք նենգութեան յամրացան, դառնալ չուզեցին։
6 Ականջ դրի եւ մտիկ ըրի,
Անոնք ուղիղ չեն խօսիր։
Մարդ չկայ որ իւր չարութենէն զղջայ,
Եւ ըսէ թէ՝ Ի՞նչ գործեցի։
Ամէնքն իրենց ընթացքին դարձան՝
Պատերազմի վազող ձիու պէս։
7 Առագին անգամ օդին մէջ իւր որոշ ժամանակը գիտէ,
Եւ սաղարտը եւ կռաւնկը եւ ծիծեռնիկը
Իրենց գալստեան ժամանակը կը դիտեն,
Բայց իմ ժողովուրդս Տէրոջը դատաստանը չգիտեր։
8 Ինչպէս կ՚ըսէք թէ Ամէնք խելառներ ենք,
Եւ Տէրոջը օրէնքը մեր քովն է։
Սուտ գիր ո՞ւմ գրչութիւնը սուտ գրեցին ստախօսները կը գործէ։
9 Իմաստուններն ամչցան,
Անոնք զարհուրեցան եւ բռնուեցան,
Ահա Տէրոջը խօսքն անարգեցին,
Այլ ես անոնց քաղ ի՞նչ իմաստութիւն կը մնայ։
10 Ուստի անոնց կանայք՝ օտարներու,
Անոնց արտերնին անոնց տէրտերներուն պիտի տամ,
Քանզի վերջէն մինչեւ մեծ՝ ամէնքն ագահութեան կաւել եղան.
Մարգարէէն մինչեւ քահանան՝ ամէնքը սուտ կը վարեն։
11 Եւ իմ ժողովրդիս աղջկան վէրքը հեղուանոյթ բժշկեցին,
Խաղաղութիւն, խաղաղութիւն է, ի՛րան,
Երբ խաղաղութիւն չկայ։
12 Մի՞թէ երբ պղծութիւն կ՚ընեն, կ՚ամչնա՞ն.
Բնաւ չեն ամչնար,
Եւ պատկառել չեն գիտեր.
Անոր համար կ՚իյնան անոնք իյնողներուն մէջ պիտի իյնան,
Երբ անոնց այցելութիւն ըլայ, պիտի գլորին, կ՚ըսէ Տէրը։
13 Զանոնք բոլորովին պիտի վերջնէ, կ՚ըսէ Տէրը.
Որթին վրայ խաղող պիտի չըլլայ,
Եւ թզենւոյն վրայ թուզ պիտի չըլլայ.
Անոնց տերեւն ալ պիտի թառամի,
Եւ ինչ որ անոնց տուի՝ անոնցմէ պիտի անցնի։
14 Մինչ՞ւ ինչո՞ւ կը նստինք.
Ժողովուեցէ՛ք, եւ պարսպաւոր քաղաքները մտնենք
Եւ հոն լուռ կենանք.
Վասն զի մեր Տէր Աստուածն զմեզ լռեցուց,
Եւ մեզ դառնութեան ջուր խմցուց,
Քանզի Տէրոջը դէմ մեղք գործեցինք։
15 Խաղաղութեան սպասեցինք, բայց բարութիւն չկար.
Բժշկութեան ժամանակին՝ ահ ու շլմնջ,
Բայց ահա խռովութիւն է։
16 Անոր ձիերուն փնչիւնը Դանէ լսուեցաւ.
Անոր երիվարներուն խրխնջման ձայնէն
Բոլոր երկիրը շարժեցաւ.
Վասն զի պիտի գան, եւ զերկիրը եւ անոր լիութիւնը,
Քաղաքը եւ անոր բնակիչները պիտի ուտեն։
17 Քանզի ահա ես ձեր մէջ օձեր՝
Բասիլիսկներ կը զրկեմ, որոց թովչութիւն չպիտի,
Եւ զձեզ պիտի խայթեն, ի՛րան Տէրը։

18 Զուարթութիւնս սրամիտ եղան ինձ՝
Սիրաս նեղսի դիս կը մաղի,
19 Ահա հեռաւոր երկրէ եկողներուն պատճառաւ՝
Ժողովուրդիս աղջկան ողջոյ ձայնը.
Միթէ Տէրը Սիոնի մէջ չէ՞,
Անոր Թագաւորն հոն չէ՞,
Ինչո՞ւ իրենց քանդակած կուռքերով
Ու օտարաց ունայնութիւններով զիս բարկացուցին,
20 Հնձոց ժամանակն անցաւ, ամառը վերջացաւ,
Բայց մենք չփրկուեցանք։
21 Իմ ժողովուրդիս աղջկան վիրաց համար վիրաւորեցայ,
Խաւարեցայ ու ապշութիւն զիս պատեց։
22 Միթէ Գաղաադա՛ւ մէջ բալասան չկա՞յ,
Հոն բժիշկ չկա՞յ.
Ապա ինչո՞ւ համար ժողովրդեանս ապրելիքը բժշկութիւն չգտաւ։

## Գլ. Թ

1 Երանի թէ գլուխս՝ ջուր,
Ու աչքերս արտասուաց աղբիւր ըլլային,
Որ ցերեկ և գիշեր լայի
Ժողովուրդիս աղջկան սպանուածներուն համար։
2 Երանի թէ անապատի մէջ ճամբորդներու իջևան ունենայի,
Որ ժողովուրդս թողուի և անոնցմէ երթայի.
Վասն զի ամէնքը շնացողք են,
Ու՝ նենգաբարներու ժողով են.
3 Ու իրենց լեզուներն իրենց աղեղներուն պէս կը լարեն սուտ թեան համար,
Բայց ճշմարտութեան համար երկրի վրայ քաջութիւն չունին.
Վասն զի չարութենէ՝ ի չարութիւն կ'երթան,
Ու զիս չեն ճանչնար, կ'ըսէ Տէրը։
4 Ամէն մարդ իր ընկերէն զգուշանայ,
Ու բնաւ եղբօր մի ապաւինիք.
Վասն զի ամէն եղբայր խաբեութիւն կը հնարէ,
Ու ամէն ընկեր բանսարկութիւն կը պտտի.
5 Ու ամէն մարդ իր ընկերը կը խաբէ,
Ու ճշմարտութիւն չեն խօսիր.
Անոնք իրենց լեզուները սուտ խօսելու սովրեցուցած են,
Անօրէնութիւն ընելով կը յոգնին։
6 Քու բնակարանդ նենգութեան մէջ է.
Նենգութեան պատճառաւ զիս ճանչնալ չեն ուզեր, կ'ըսէ Տէրը։
7 Անոր համար զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Ահա զանոնք պիտի հալեցնեմ և պիտի փարձեմ,
Վասն զի ժողովուրդիս աղջկան համար ի՞նչպէս ընեմ,
8 Անոնց լեզուն մահաբեր նետ է,
Նենգութիւն կը խօսի.
Բերնով իր բնակիչին հետ խաղաղութիւն կը խօսի,
Բայց սրտով անոր դարան կը պատրաստէ։
9 Միթէ այս բաներուն համար անոնց այցելութիւնն պիտի չընեմ՞, կ'ըսէ Տէրը,
Կամ այսպիսի ազգէ մը հոգիս վրէժ պիտի չառնո՞։
10 Լեռներուն համար լաց և ողբ,
Ու անապատի արօտներուն համար կոծ պիտի ընեմ.
Վասն զի այրեցան, ոչ ոք մարդ չանցնիր,
Ու խաշանց ձայն չլսուիր.
Օդին թռչուններէն մինչև անասունները փախան գացին,
11 Ու Երուսաղէմ աւերակոյտ դնեմ
Ու՝ շնագայլերու բնակարան պիտի ընեմ,
Ու Յուդայի քաղաքներն անբնակ ամայութեան պիտի դարձնեմ,
12 Ո՞վ է այն իմաստուն մարդը, որ հասկընայ զայս.
Ու անոր՝ Աստուծոյ բերանը խօսած ըլլայ, որ պատմէ զայս,



Թէ երկիրը ինչո՞ւ համար աւերակացաւ
Ու այրած անապատի պէս եղաւ,
Առանց մարդ չանցնիր։
13 Ու Տէրը ըսաւ,
Վասն զի անոնք իմ օրէնքս թողին,
Զոր անոնց առջև դրած եմ,
Ու իմ ձայնիս մտիկ չընելով՝ անոր համաձայն չգործեցին,
14 Այլ իրենց սրտին կամակորութեամբ
Ու իրենց հայրերուն անոնց սորվեցուցած Բահաղիմի ետևէն գացին,
15 Անոր համար զօրաց Տէրը՝ Իսրայէլի Աստուածն այսպէս կ'ըսէ.
Ահա ես այս ժողովուրդին ծշինդր պիտի կերցնեմ,
Ու անոնց դառնութեան ջուր պիտի խմցնեմ,
16 Ու զանոնք պիտի ցրուեմ այն ազգերուն մէջ,
Զորս ոչ անոնք գիտցան և ոչ անոնց հայրերը,
Ու անոնց վրայ սուր պիտի զրկեմ,
Մինչև որ զանոնք հատցուածնեմ։
17 Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Մտածեցէ՛ք, և լալիսն կանայք կանչեցէ՛ք՝ որ գան,
Ու հոնձառիթ կանանց ղրկեցէ՛ք՝ որ գան,
18 Ու մեզի համար չուռաւ ողբ ձայն վերցուցնեն,
Որ մեր աչքերն արտասուք իջեցուցնեն,
Ու մեր արտեւանունքը ջուրերը վազցուցնեն.
19 Քանզի Սիոնէ ողբի ձայն լսուեցաւ,
Ի՜նչպէս կործանեցանք, շատ ամչցանք,
Վասն զի երկիրը թողացինք,
Վասն զի Ե՛շ-ուիներէն հիմնատապակ բերին մեր բնակարանները։
20 Ուրեմն, ով կանայք, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք,
Ու ձեր ականջներն անոր բերնէն խօսքը թող ընդունին.
Ու ձեր աղջիկներուն ողբ սորվեցուցէք,
Ու ամէն կին իր գացուցն եղերերգութիւն սորվեցուրէ։
21 Վասն զի մահը մինչև մեր պատուհանները եկաւ,
Մեր պալատները մտաւ,
Որ փողոցներէն տղայք
Ու հրապարակներէն երիտասարդները բնաջինջ ընէ։
22 Ըսէ որ Տէրը այսպէս կ'ըսէ.
Մարդոց դիակները ոտիկ իյնան
Արտերու երեսին վրայ եղող աղբի պէս,
Կամ հնձողներուն հետևի հնձուածքաւրձի պէս.
Ու պիտի չըլլայ մէկը որ ղեռնէ ժողվէ.
23 Տէրը այսպէս կ'ըսէ.
Իմաստունը իր իմաստութեամբ չպարծի,
Ու զօրաւորը իր զօրութեամբ չպարծի,
Հարուստը իր հարստութեամբ չպարծի։
24 Այլ ան որ կը պարծի՝ Քաղ ասավ պարծի,
Որ կը հասկընայ և զիս կը ճանչնայ,
Ու՝ ի՛նչ թէ ես եմ Տէրը
Որ երկրի վրայ ողորմութիւն, իրաւունք և արդարութիւն կ'ընեմ.
Քանզի ես ասոնց կը հաճիմ, կ'ըսէ Տէրը։
25 Ահա օրեր պիտի գան, կ'ըսէ Տէրը,
Որ թլփատած ծնորհուն և անթլփատութեան,
26 Եգիպտոսի և Յուդայի և Եդոմի
Ու Ամմոնի որդւոց և Մոաբու,
Ու ե՛ղէ՛ք ձրա՛ւորէն ծայրերը կտրող անապատի բոլոր բնակիչներուն
Այս կերպով պիտի ընեմ.
Վասն զի ամէն ազգերն անթլփատ են,
Ու բոլոր Իսրայէլի տունը սրտով անթլփատ է։

## Գլ. Ժ

1 Ով Իսրայէլի տունը,
Տէրոջը ձեզի համար ըսած խօսքը մտիկ ըրէ՛ք։
2 Տէրը այսպէս կ'ըսէ.

---

*Կամ Եւրէ՛ս ծայրերը եղող

Ազգերուն Յամրանները մի սորվիք,
Եւ երկնից նշաններէն մի զարհուրիք,
վասն զի անոնցմէ հեթանոսները կը
զարհուրին։
3 Քանզի ժողովրդոց սովորութիւններն
ունայնութիւն են.
Քանզի անտառէն փայտ կը կարեն,
Անիկա արուեստագիտին ձեռաց գործն
է՝ տապարով։
4 Արծաթով և ոսկւով կը զարդարեն
զայն,
Ե՛ գամերով և ուռնդրով կը գամեն
զայն և չշարժիր։
5 Անոնք արմաւենւոյ պէս ուղիղ են,
բայց չեն խօսիր.
Անոնք՝ ի հարիւղ պիտի վերցուին, վասն
զի չեն կրնար քալել.
Անոնցմէ մի վախնաք, վասն զի չարիք
չեն կրնար հասցունել,
Եւ ոչ բարիք ընելու կարող են։
6 Ով Տէր, քեզի նման չկայ.
Դուն մեծ ես, և քու անունդ զօրութեամբ մեծ է,
7 Քեզմէ ո՞վ պիտի չվախնայ, ով ազգաց
Թագաւոր,
Քանզի քեզի կը վայլէ.
վասն զի ազգաց բոլոր իմաստուններուն մէջ՝
Եւ անոնց բոլոր թագաւորութիւններուն մէջ
Քեզի նման չկայ։
8 Բայց անոնք բոլորովին անբան և անմիտ են.
Անոնց [ըստ]ն ունայնութեանց վարդապետութիւն է, փայտ է։
9 Թարսեայ ճեղուած արծաթ,
Եւ Ուփազէ ոսկի կը բերուի,
Անոնք տարտարի և ոսկերչի ձեռաց գործ են.
Անոնց զգեստը կապուտակ և ծիրանի է.
Ամէնքը հանճարեղներու գործ են։
10 Սակայն Նոյան է Ճշմարիտ Աստուած,
Նա է կենդանի Աստուած և յաւիտենական Թագաւոր.
Անոր բարկութենէն երկիր կը դողայ,
Եւ ազգերն անոր սրտմտութեանը չեն դիմանար։
11 [*Անոնց այսպէս բսէք.
Այն աստուածները՝ որ երկինք և երկիր չստեղծին,
Երկրէ և այս երկնից տակէն պիտի կորսուին։]
12 Ձերկիր իւր զօրութեամբ չինեց,
Հաստատեց իւր իմաստութեամբ հաստատեց,
Եւ երկինք իւր խորհրդով տարածեց։
13 Երբ իւր ձայնը կու տայ՝ երկնից մէջ
ջուրերու բազմութիւն կ'ըլլայ,
Եւ երկրի ծայրերէն շոգիներ կը հանէ.
Անձրեւի համար փայլակներ կը շինէ,
Եւ հով կը հանէ իւր շտեմարաններէն։
14 Ամէն մարդ գիտութենէ դիւրաւ՝ անասուն դարձաւ.
Ամէն ոսկերիչ է՛ր քանդակած կուռքին պատճառաւ ամօթով եղաւ.
վասն զի ձուլած կուռքը սուտ է՛ն է,
Եւ անոնք հոգի չունին։
15 Անոնք ունայնութեան և խաբէութեան գործեր են,
Անոնց այցելութեան եղած ատեն անոնք պիտի կորսուին։
16 Յակոբայ բաժինն ասոնց պէս չէ,
վասն զի անիկա ամէն բան Ստեղծողն է,
Եւ Իսրայէլ անոր ժառանգութեան վիճակն է.
Ե՛ր անոր անունը Նոյովա Սաբաւովթ է։
17 Ով բերդի մէջ բնակող,
Քու վաճառներդ երկրէն ժողվէ։
18 Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես այս անգամ երկրին բնակիչները †դուրս պիտի նետեմ,
Եւ զանոնք նեղութեան մէջ պիտի ձգեմ, որ իրենց ըրածին գտնեն։
19 Վա՜յ ինծի իմ հարուածիս համար,
իմ վէրքս անդարմանելի է.
Բայց ես ըսի, իրաւ ցաւն է ասիկա ալ է,
Եւ զանիկա կրելու եմ։
20 Իմ վրանս կործանեցաւ և ամէն չուանները փրթան.
Տղաքս ինձմէ ելան և չկան.

*Այս հատուածը Թագրէմպրէն վերցուած է։
†Եբր. պարսակով



Ձյատեղեւ վրանս կանգնող՝
Եւ վարագոյրներս դնող չկայ։
21 Վասն զի հովիւներն անասուն դարձան,
Եւ Տէրը չհանգրեցին.
Անոր համար յաջողութիւն չգտան,
Եւ անոնց բոլոր հօտը ցրուեցաւ։
22 Ահա հնչմամբ երկրէն գոչիւն ձայն
Եւ մեծ խռովութիւն կու գայ,
Որ Յուդայի քաղաքներն աւերակ՝
Եւ շնագայլերու բնակարան ընէ։
23 Գիտեմ, ով Տէր, որ մարդուն ճամբան անոր ձեռքը չէ,
Քալող մարդ իւր քայլուածն ուղղելու կարող չէ։
24 Ով, Տէր, զիս խրատէ, բայց չափաւորութեամբ,
Ոչ թէ քու բարկութեամդ, գուցէ սպառես զիս։
25 Սրտմտութիւնդ քեզ չճանչցող ազգերուն վրայ
Եւ անուանդ չկանչող ազգատոհմներուն վրայ թափէ։
Վասն զի զՅակոբ կերան,
Կերան և հաւսցուցին զնա,
Եւ անոր բնակութիւնն աւերակ դարձուցին։

## ԳԼ. ԺԱ.

1 Այն խօսքը որ Տէրոջմէ կոզմանէ Երեմիայի եղաւ՝ ըսելով, Ա՛յս ուխտիս խօսքերը մտիկ ըրէք, և Յուդայի մարդոց
3 և Երուսաղէմի բնակչաց խօսեցէք։ Եւ դուն անոնց ըսէս, Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս կ'ըսէ. Անէծքալ ըլլայ այն մարդը՝ որ մտիկ չընէ այս
4 ուխտին խօսքերը, Զոր ես ձեր հայրերուն պատուիրեցի Եգիպտոսի երկրէն՝ այն երկաթի հնոցէն զանոնք հանած օրս՝ և ըսի, Իմ ձայնս մտիկ ըրէք, և ձեզի բոլոր հրամայածիս համեմատ ի գործ դրէք, որ դուք իմ ժողովրդիս
5 ըլլաք, և ես ձեր Աստուածն ըլլամ. Որպէս զի հաստատեմ երդումը զոր ձեր հայրերուն ըրի, երկիր մը տալու անոնց՝ որ կաթ և մեղր կը բղխէ, ինչպէս որ այսօր կ'երեւայ։ Եւ ես պատասխան տուի և ըսի, Ամէն, ով Տէր։
6 Եւ Տէրը ինծի ըսաւ, Ա՛յս բոլոր խօսքերը Յուդայի քաղաքներուն մէջ և Երուսաղէմի փողոցներուն մէջ կանչէ՝ ըսելով, Ա՛յս ուխտին խօսքերը մտիկ
7 ըրէք, և զանոնք ի գործ դրէք. Վասն զի ձեր հայրերը փութով խրատեցի, զանոնք եգիպտոսի երկրէն հանած օրէս մինչև այս օր, կանուխ կանգնելով և խրատելով ըսի, Իմ ձայնս մտիկ ըրէք։
8 Բայց անոնք մտիկ չըրին և իրենց ականջը չդռնատհկեցուցին, այլ ամէն մարդ իւր չար սրտին կամակորութեան համեմատ քալեց. ուստի ես անոնց վրայ կը բերեմ այս ուխտիս բոլոր խօսքերը, զոր ես անոնց պատուիրեցի որ
9 ընեն, և անոնք չըրին։ Եւ Տէրը ինծի ըսաւ, Յուդայի մարդոց մէջ և Երուսաղէմի բնակչաց մէջ դաւ գտած են։
10 դարձեալ. Անոնք իմ խօսքերս մտիկ ընել չուզեցին իրենց նախահարց անօրէնութիւններուն դարձան, և օտար աստուածներու ետեւէ գացին, որ անոնց ծառայեն ընեն. Իսրայէլի տունը և Յուդայի տունն իրենց հայրերուն հետ ըրած ուխտս աւրեցին։
11 Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես այնպիսի չարիք կը բերեմ անոնց վրայ,
Որ անկէ ելլելու կարող պիտի չըլլան.
Եւ ինծի պիտի աղաղակեն, և անոնց մտիկ պիտի չընեմ։
12 Եւ Յուդայի քաղաքները և Երուսաղէմի բնակիչները պիտի երթան,
Եւ պիտի աղաղակեն այն աստուածներուն՝ որոց խունկ ծխած էին.
Բայց անոնց ձախորդութեան ժամանակ
Բնաւ պիտի չազատեն զանոնք։
13 Քանզի քու աստուածներդ, ով Յուդա,
Քու քաղաքներուդ թիւովն չափ եղան.
Եւ Երուսաղէմի փողոցներուն թիւովն չափ՝
Ամօթալից կռապաշտութեան համար սեղաններ՝
Բահաղի խունկ ծխելու համար սեղաններ կանգնեցիք։

14 Ուստի դուն այս ժողովրդեան համար
աղօթք մի ընէր,
Եւ անոնց համար խնդրուածով և պա-
դասանաւք մի ազաչեր.
Քանզի երբ իրենց վրայ հառաչ չլսեմ
համար ինծի ազազակին,
Առաջ մտիկ պիտի չընեմ.
15 Իմ սիրելիս ի՞նչ իրաւունք ունի տանս
մէջ,
Քանզի *շատերուն հետ անօրէնութիւն
գործած է.
Սուրբ միսն ալ քեզնէ անցայ,
Քանզի բան քու չարութեանդիդ կ'ուս-
յամանաս,
16 Տէրը քու անունդ
Կանաչ, գեղեցիկ ի բարեպտուղ ձի-
թենի կոչեց,
Բայց անոր վրայ մեծ աղմկի ձայնով
կրակ բռնկեցուց,
Եւ անոր ոստերը կտրեցան.
17 Եւ քեզ անկոչ զօրաց Տէրը
Դուռ վրայ չարիք խօսեցաւ,
Իսրայէլի տան և Յուդայի տան չա-
րութեան համար՝
Զոր անոնք գործեցին,
Եւ Բահաղի խունկ ծխելով՝ ինս բար-
կացուցին.
18 Եւ Տէրը ինծի գիտցուց, և գտայ։
գիտեմ.
Անոնէն ինծի անոնց գործերը ցու-
ցուցիր.
19 Բայց ես մարթասէրաս առջեւդ ընծա-
յեցած գառի պէս էի,
Եւ չէի գիտեր որ անոնք ինծի համար
նենգութիւններ կը հնարէին ըսե-
լով,
Ծառը իր պտղով կործանենք,
Եւ զայն կենդանեաց երկրէն բնաջինջ
բնենք,
Որ անոր անունն այլ եւս չյիշուի։
20 Սակայն, ով Տէր զօրութեանց, արդար
Դատաւոր,
Որ երիկամունքը և սիրտը կը քննես,
Անոնցմէ *վրէժդ տեսնեմ.
Քանզի իմ դատս քեզի յայտնեցի։

21 Ուստի Տէրը այսպէս կ'ըսէ Անաթով-
թի մարդոց համար՝
Որ քու հոգիդ կը փնտռեն և կ'ըսեն,
Տէրոջը անունէն մարգարէութիւն
մի ընէր,
Որ մեր ձեռքէն չմեռնիս.
22 Անոր համար զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Ահա ես անոնց այցելութիւն պիտի ը-
նեմ.
Երիտասարդները սրով պիտի մեռնին,
Անոնց որդիքը և աղջիկները սովամահ
պիտի ըլլան.
23 Եւ անոնք մնացորդ պիտի չունենան.
Վասն զի ես Անաթովթի մարդոց վրայ՝
Անոնց այցելութեան տարին չարիք պի-
տի բերեմ։

Գլ. ԺԲ

1 Ով Տէր, երբ քեզի հետ վիճիմ դուն
արդար պիտի ճանաչես.
Սակայն քեզի *իրաւանց վրայ պիտի
խօսիմ.
Ինչո՞ւ ամբարիշտներուն ճամբան յա-
ջող է,
Ե՞ր բոլոր նենգութիւն ընողներն հան-
գիստ կը վայելեն։
2 Դուն զանոնք տնկեցիր, և անոնք ար-
մատացան,
Անոնք կ'աճեն և պտուղ կու տան.
Դուն անոնց բերնին մօտ ես,
Բայց անոնց երիկամունքէն հեռու ես։
3 Եւ դուն, ով Տէր, զիս գիտես,
Զիս տեսար և իմ սիրտս քու առջեւդ
քննեցիր.
Ջոհ տեսար և իմ սիրտս քու առջեւդ
քննեցիր։
Եւ սպանման օրուան համար †զատ-
րուտակ։
4 Մինչեւ ե՞րբ երկիր սուգ պիտի բռնէ՝
Եւ բնակիչց չարութեանը համար,
Եւ բոլոր դաշտին խոտը պիտի չորնայ.
Անասուններէն և թռչուններէն կորսուե-
ցան,

*Կամ՝ գատաստանութիւնդ։
†Ընդ. արբի, Լամ նուիրեր։



Վասն զի ըսին, Անիկա մեր վախճանը
պիտի չտեսնէ։
5 Երէ դուն հետհետէ հետ վա-
զեցիր, և քեզ յոգնեցուցին,
Այլ հետ արնէրան հետ ինչպէս ա-
պրիս պիտի մտնես.
Եւ դուն որ խաղաղութեան երկրին
մէջ ապահով ես,
Ի՞նչ պիտի ընես երբ Յորդանան ե-
ղերը բարձրանայ։
6 Քանզի քու եղբայրներդ և քու հօրդ
տունն ալ՝
Անոնք անդամ քեզի դէմ նենգու-
թիւն ըրին,
Եւ քու հետիդ բարձրաձայն ազազա-
կեցին.
Թէ և անոնք քեզի ազէկ բաներ ալ
խօսին,
Դուն անոնց մի հաւատար։
7 Իմ տունս թողուցի, ժառանգու-
թիւնս ձգեցի,
Հոգւոյս սիրածը իւր թշնամիներուն
ձեռքը տուի։
8 Իմ ժառանգութիւնս անտառի առիւ-
ծին պէս եղաւ ինծի,
Անիկա իւր ձայնով իմ վրաս գոչեց։
Ան իս պատճառով ատեցի զնա։
9 Իմ ժառանգութիւնս *գոյնզգոյն թըռչ-
նոց դէմ եղաւ ինծի,
Թռչուններն անոր չորս կողմն են.
Եկէք՝ անասնոց բոլոր գազանները
ժողվեցէք,
Ըլլան որ ուտեն։
10 Շատ հովիւներ իմ այգիս ապականեցին,
Իմ բաժինս առնակոխ ըրին,
Ե՞ր ցանկալի վիճակս անապատի ամա-
յութեան գարձուցին։
11 Զանիկա ամայութեան գարձուցին,
Ե՞ր ամայի ըլալով իմ առջեւս սուգ
բռնեց.
Բոլոր երկիրն ամայութեան գարձաւ,
Քանզի մարդ չկայ որ սրտի բեմ մը-
տածէ.
12 Անապատին ամէն բարձրութեանց վրայ
աւերածներ եկան.

*Կամ գիշատիչ։

Սրեցի զի երկրին մէկ ծագքէն մինչեւ
միւս ծագքը
Տէրոջը սուրը կ'ուտէ,
Ե՞ր ամէն մարմնոյ խաղաղութիւն չկայ։
13 Ցորեն ցանեցին, բայց փուշեր պիտի
հնձեն.
Աշխատանք փաթեցին, բայց օգուտ պի-
տի չտեսնեն.
Եւ Տէրոջը սաստիկ բարկութեանը հա-
մար
Ձեր արդիւնքներէն պիտի ամչնաք։
14 Այսպէս կ'ըսէ Տէրը իմ չար գրացի-
ներուս համար,
Որ իմ ժողովուրդիս խորհրդի տուած
ժառանգութեանս կը դպչին.
Ահա ես զանոնք իրենց երկրին երե-
սէն պիտի խլեմ,
Յուդայի տունն ալ անոնց միջէն պի-
տի խլեմ։
15 Եւ պիտի ըլայ որ զանոնք խլելէս ետքը
Պիտի դառնամ անոնց ողորմիմ,
Եւ իրենք իրենց իրենց ժառանգութեան
Եւ իրենք իրենց երկիրը պիտի
դարձնեմ։
16 Եւ երէ անոնք իմ ժողովրդեանս ճամ-
բաները ազովին,
Եւ իմ անուանս երդում ընեն ըսելով
կենդանի է Տէրը,
(ինչպէս որ անոնք իմ ժողովրդիս
Բահաղի անուամբ երդում ընել
սորվեցուցին,)
Անոնէն ժողովրդիս միջէ պիտի *շատ-
ատուին։
17 Բայց երէ մտիկ չընեն,
Անոնէն այն ազգն արմատախիլ պիտի
խլեմ
Եւ պիտի կորսնցնեմ, կ'ըսէ Տէրը։

Գլ. ԺԳ

1 Տէրը ինծի այսպէս ըսաւ. Գնա՝ քեզի
քմահաճ գօտի մը ծախու առ, և զայն
մէջդ կապէ, և զանիկա ջուրը մի խո-
2 թեր։ Ուստի Տէրոջը խօսքին համեմատ
գօտին ծախու առի և մէջս կապեցի։

*Ընդ. չինուհին։

3 Եւ երկրորդ անգամ Տէրոջը խօսքը
4 ինձի եղաւ՝ ըսելով, Այն գօտին զոր
գնեցիր և որ քու մէջդ է, առ և նէ՝
Եփրատ գնա, և հոն վէմին ծակին մէջ
5 պահէ զայն։ Եւ ես գացի և եփրատի
Է֊ԷՐԷԸ պահեցի զայն, ինչպես որ Տէրը
6 ինձի պատուիրեց։ Եւ չատ օրեր եա-
րը Տէրը ինձի ըսաւ, նէ՝ Եփրատ գը-
նա, և անկէ առ այն գօտին, որ քեզի
7 հրամայեցի հոն պահել։ Եւ ես Եփրատ
գացի, և փորելով՝ գօտին այն տեղէն
ուր պահած էի առի և ահա գօտին
փտած էր, և բնաւ բանի մը չէր գար։
8 Եւ Տէրոջը խօսքը ինձի եղաւ՝ ըսե-
լով,
9 Տէրը այսպէս կ'ըսէ.
Ծուռցնի հպարտութիւնը
Եւ երուսաղէմի մեծ հպարտութիւնն
այսպէս պիտի աւերեմ։
10 Այս չար ժողովուրդը՝
Որ իմ խօսքս լսել չեն ուզեր,
Եւ իրենց սրտին կամակորութեամբ կը
քալեն,
Եւ օտար աստուածներու եաւէխ կ'ևր-
թան՝
Անոնց ծառայութիւն ընելու և անոնց
երկրպագութիւն ընելու,
Այդ անպիտան գօտւոյն պէս պիտի ըլ-
լան.
11 վասն զի ինչպէս որ գօտին մարդուն
մէջքը կը փակչի,
Բոլոր Իսրայէլի տունը և բոլոր Ցու-
դայի տունը
ինձի այնպէս փակցուցած էի, կ'ըսէ
Տէրը,
Որ ինձի ժողովուրդ ըլլան,
Նաև անուն և փառք և պարծանք.
Բայց անոնք մտիկ չըրին։
12 Նաև այս խօսքն ըսես անոնց,
Իսրայէլի Տէր Աստուածն այսպէս կ'ըսէ.
Ամէն սրկի գինւով պիտի լեցուի.
Բայց անոնք քեզի պիտի ըսեն,
Մի՞թէ մենք չի՞նք գիտեր որ ամէն
սրկի գինւով պիտի լեցուի։
13 Իսկ դուն անոնց ըսես,
Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես այս երկրին բոլոր բնակիչները,
Եւ Դաւթի աթոռին վրայ նստող թա-
գաւորները,
Եւ քահանաները և մարգարէները,
Եւ Երուսաղէմի բոլոր բնակիչներն ար-
բեցութեամբ պիտի լեցունեմ.
14 Եւ զանոնք իրարու ջախջախ պիտի կո-
տրտեմ,
Հայրերը ազգը հետ ի միասին, կ'ըսէ
Տէրը,
Եւ ոչնչ պիտի չգթամ և պիտի չը-
խնայեմ,
Եւ առանց ողորմելու զանոնք բնաջինջ
պիտի բնեմ։
15 Մտիկ ըրէք, ականջ առէք, մի հը-
պարտանաք,
Վասն զի Տէրը խօսեցաւ։
16 Ձեր Տէր Աստուծոյն փառք առէք՝
Գետ խաւարը չէր վրայ չհասած,
Եւ ձեր ոտքերը մութ լեռներու վրայ
չգահաճ,
Նէ ձեր լուսոյ սպասած առներ՝
Աստուած զանիկա մահուան սաւերի
չվերածած,
Եւ զանիկա թանձր մէգի չդարձու-
ցած։
17 Բայց եթէ մտիկ չընէք,
Ձեր հպարտութեան համար իմ հոգիս
ծածուկ սեղմուանք պիտի լայ,
Եւ իմ աչքս խիստ չատ լալով ար-
ցունք պիտի թափէ,
Վասն զի Տէրոջը հօտը գերի առնուե-
ցաւ։
18 Թագաւորին և թագուհւոյն ըսէ,
Ձեր անձը խոնարհեցուցէք Ե ՟ի֊ԻՒՆ
էջ նստեցէք,
Վասն զի ձեր գլխէն ձեր փառաց թագը
ինկաւ։
19 Հարաւային քաղաքները գոցուեցան,
Եւ բացող մը չկայ.
Բոլոր Ցուդա գերութեան գնաց.
Ամէնքը գերութեան գացին։
20 Ձեր աչքերը վերցուցէք և հիւսիսի
կողմէն եկողները նայեցէք.
Քեզի տրուած հօտը՝ քու փառացդ
խաշինքն ո՞ր են։
21 Ի՞նչ պիտի ըսես՝ երբ քեզի այցելու-
թիւն ընէ.



Վասն զի դուն անոնց սորվեցուցիր որ
քու վրադ իշխան և դլուխ ըլլան.
Մի՞թէ քեզ ծննդական կնոջ պէս ցա-
ւեր պիտի չգանեն։
22 Եւ եթէ սրտիդ մէջ ըսես,
Այս բաները ինձի հանդիպեցան ինձի.
Անօրէնութեանդ բազմութենէն քե-
զանցներդ բացուեցան,
Եւ գարշապարներդ բռնութեամբ մեր-
կացան։
23 Մի՞թէ կարելի՞ է որ եթովպացին իր
մորթը՝
Կամ ինձը իր խայտուցը փոխէ,
Որ դուք ալ չարութիւն ընելու սոր-
ված ըլլալով՝
Կարենաք բարութիւն ընել։
24 Ուստի անապատի հովէն վերցուած
մղեղի պէս
Պիտի ցրուեմ զանոնք։
25 Այս է քու վիճակդ Ե քու բաժինդ՝
Զոր ես քեզի պատրեցի, կ'ըսէ Տէրը,
Քանզի զիս մոռցար և սուտութեան ա-
պաւինեցար։
26 Ուստի ես ալ քղանցներդ երեսիդ վը-
րայ վերցուցի,
Եւ անարգանքդ երեւցաւ։
27 Ես չնութիւններդ, և վնջիւններդ,
Ե֊լերը պոռնկութիւնդ,
Ե֊բլուրներու վրայ Ե գաշտի վրայ
ըրած պղծութիւններդ տեսայ.
Վա՛յ քեզ, ով երուսաղէմ.
Պիտի չմաքրուի՞ս ալ մինչև ե՞րբ։

## ԳԼ. ԺԳ

1 Տէրոջը խօսքը որ երեմիայի եղաւ ե-
րաչտութեան վրայ,
2 Ծուռցա սուտ կը բռնէ,
Եւ անոր դուռները կը նուագին.
Անոնք գետնի վրայ սրսուռ կը նըս-
տին,
Եւ երուսաղէմի ազազակը վեր ելաւ։
3 Եւ անոնց ազնուականներն իրենց ման-
կունքը Ջուրի կը դրկեն.
Աւազաններէն գացին, Ջուր չգտան,
Ե֊դարձան իրենց անօթները պարապ
Բերբերվ.
Աչերնին և պատկառեցան և իրենց գը-
լուխը ծածկեցին։
4 Երկրին վրայ անձրև չըլլալուն պատ-
ճառով
Գետինը ճաքելուն համար՝
Երկրագործներն աչերնին և իրենց գը-
լուխը ծածկեցին։
5 Գանզի նաև եղնիկը գաշտի մէջ ծնաւ,
Եւ խոտ չըլլալուն համար Ե֊Ը Ն֊ԸՆ Թո-
ղուց,
6 Եւ վայրենի էշերը բլուրներու վրայ
կայնեցան,
Եւ շնագայլերու պէս օդը ծծեցին,
Եւ անոնց աչքը ակոտացաւ, վասն զի
խոտ չկար։
7 Թէև մեր անօրէնութիւնները մեզի
դէմ *եղած են,
Ս֊Է֊Ր, ով Տէր, քու անուանդ հա-
մար ըրէ.
Գանզի մեր ցանցատը շատ են.
8 գաւ երեմիայի. Եւ Կարէլի որդին Յոհանան և անոր հետ եղող բոլոր զօրավարները և փոքրէն մինչև մեծը բո-
9 լոր Ժողովուրդը կանչեց, Եւ անոնց ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածն ատ որ զրկեցիք զիս ձեր ապաղաչքը մատու-
10 ցանելու, այսպէս կ'ըսէ. Եթէ չարաչահիկ այս երկրիս մէջ բնակիլ, ես զձեզ պիտի չշինեմ և պիտի չքակեմ, և զձեզ պիտի անկիմ և պիտի չխլեմ, վասն զի զղջացի այն չարիսայ վրայ զոր
11 ձեզի բրի. Մի վախնաք Բաբելոնի թագաւորին երեսէն որմէ զարհուրած էք, անկէ մի վախնաք, կ'ըսէ Տէրը, վասն զի զձեզ անոր ձեռքէն ազատելու հա-
12 մար և զձեզ ապրեցնելու համար ես ձեզի հետ եմ. Եւ ձեզի ողորմու-թիւն ընծայէ պիտի տայ, և անիկա ձեզ պիտի ողորմի, և զձեզ ձեր երկիրը
13 դարձնէ, բայց եթէ ըսէք, Մենք եր-կրիս մէջ չենք բնակիր. և ձեր Տէր
14 Աստուծոյն խօսքը մտիկ չընելով ըսէք, Ոչ, այլ Եգիպտոս երկիրը մտնենք, ուր պատերազմ պիտի չտես-նենք և փողի ձայն պիտի չլսենք, և հացի համար անօթի պիտի չմնանք, և



15 հոն պիտի բնակինք։ Ուրեմն հիմա Տէրոջը խօսքը մտիկ ըրէք, ով Յուդայի մնացորդը։ Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածն, այսպէս կ'ըսէ. Եթէ դուք ձեր երեսները շտիւէ Եգիպտոս մտնելու,
16 և հոն պանդխտանալու երթաք, Անատեն այն սուրն ուսկէ կը վախնաք, հոն Եգիպտացւոց երկրին մէջ ձեր վրայ պիտի գայ, և այն ուսկէ կը զարհուրիք, հոն Եգիպտացւոց երկրին մէջ
17 ձեր հետևէն պիտի պաշարէ, և հոն պիտի մեռնիք, Եւ այն ամէն մարդիկը որ իրենց երեսները կ'ուղղեն Եգիպտոս երթալ հոն պանդխտանալու համար, սրով, սովով և ժանտախտով պիտի մեռնին. և այն չարեայց երեսէն զոր անոնց վրայ պիտի բերեմ մնացորդ և ազատուած պիտի չմնայ անոնցմէ,
18 Վասն զի զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածն, այսպէս կ'ըսէ. Ինչպէս որ իմ բարկութիւնս և սրտմտութիւնս Երուսաղէմի բնակչաց վրայ թափեցաւ, այնպէս ձեր վրայ պիտի թափի իմ սրտմտութիւնս, երբ Եգիպտոս մտնէք. և անիծից, զարմանաց, նզովի և նախատանաց էնէլ պիտի ըլլաք, և այլ
19 ևս այս տեղը պիտի չտեսնէք։ Ով Յուդայի մնացորդ, Տէրը ձեզի համար բաւ, Եգիպտոս մի մտնէք. ՚՚՚՚ա-զէկ գիտցէք որ այսօր ձեզի վկայու-
20 թիւն կ'ընեմ, վասն զի դուք ձեր հոգւոյն դէմ նենգ թիւն ըրիք, երբ զիս ձեր Տէր Աստուածդն զրկեցէք՝ ըսելով, Մեզի համար մեր Տէր Աստուածդն ազօթք ըրէ, և մեր Տէր Աստուածդն ամէն բան խօսքը մեզի պատմէ,
21 և պիտի բնենք։ Եւ ես այսօր ձեզի պատմեցի, և դուք մտիկ չըրիք ձեր Տէր Աստուածդն ձայնը, և այն ամէն
22 որոնց համար զիս ձեզի զրկեց։ Եւ հիմա ուրկէ գիտցէք որ դուք սրով, սովով և ժանտախտով պիտի մեռնիք այն տեղ ուր կ'ուզէք երթալ պանդխտանալու համար։

## Գլ. Խգ

1 Երբ երեմիա բոլոր Ժողովուրդեան անոնց Տէր Աստուածդն բոլոր խօսքերն բաւ և լմնցուց, որոնց համար անոնց Տէր Աստուածը զանիկա անոնց զրկած
2 էր, այսինքն այս բոլոր խօսքերը, Ազարիա Ոմսէիայի որդին Ազարիա և Կարէէի որդին Յոհանան և բոլոր ամբարտաւան մարդիկը երեմիայի խօսեցան և ըսին, Գուն սուտ կը խօսիս. մեր Տէր Աստուածն զքեզ չզրկեց որ դուն ըսես թէ Եգիպտոս մի մտնէք հոն
3 պանդխտանալու համար. Այլ Ներիայի որդին Բարուք զքեզ մեզի դէմ սաք կը հանէ, որպէս զի մեզ Քաղդէացւոց ձեռքը տայ, որ զմեզ մեռցունեն և զմեզ Բաբելոն գերի տանին,
4 Եւ Կարէի որդին Յոհանան և բոլոր զօրավարները և բոլոր Ժողովուրդը Տէրոջը ձայնը մտիկ չըրին, որ Յուդայի
5 երկրին մէջ բնակին. Այլ Կարէի որդին Յոհանան և բոլոր զօրավարները Յուդայի բոլոր մնացորդն առին, որ Յուդայի երկրին մէջ բնակելու համար ետ դարձած էին այն բոլոր ազգերէն
6 ուր ցրուած էին. Այսինքն արք և կանայք, և ոտտայք, և Թագաւորին աղջիկները, և Նաբուզարդան գաՀէմանեան Ասափանի որդւոյն Գադոդիայի քով Թողուցած բոլոր մարդիկը, և Երեմիա մարգարէն, և Ներ-
7 իայի որդին Բարուք, Եւ Եգիպտոսի երկիրը գացին. վասն զի Տէրոջը ձայնը մտիկ չըրին, և մինչև Տափնաս եկան։
8 Եւ Տափնասի մէջ Տէրոջը խօսքը ե-
9 գաւ երեմիայի բանալով, Ձեռքդ մեծ քարեր առ, և զանոնք Յուդայի մարդոց աչքին առջև Տափնաս եղող փարաւոնի տան դրան առջևի պղնձա-
10 ուտը քարի մէջ թաղէ, Եւ անոնց ըսէ, Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածն, այսպէս կ'ըսէ. Ահա ես պիտի զրկեմ, և իմ ծառաս Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը պիտի առնեմ, և անոր աթոռն այս իմ թաղած քարերուս վրայ պիտի դնեմ. և անիկա իր որ-

քայական խոռանն անոնց վրայ պիտի
11 տարածէ. Եւ պիտի գայ, Եգիպտոսի
երկիրը պիտի զարնէ. մահուան համար
եղողները՝ մահուան, գերութեան հա-
մար եղողները՝ գերութեան, և սրոյ
12 համար եղողները սրոյ պիտի հարձակի։ Եւ
Եգիպտոսի աստուածներուն տուներուն
մէջ կրակ պիտի բռնկեցնեմ. և ա-
նոնք զանոնք պիտի գերէ և զանոնք
գերի պիտի առնէ. և անոնք Եգիպ-
տոսի երկիրը պիտի հագնի, ինչպէս որ
հովիւն իր հանդերձը կը հագնի. և
13 անկէ խաղաղութեամբ պիտի ելլէ։ Եւ
Եգիպտոսի երկրին մէջ եղող արևու
սրբարանները պիտի կոտրէ, և Ե-
գիպտոսի աստուածներուն տուները
կրակով պիտի այրէ։

ԳԼ. ԽԹ.

1 Եգիպտոսի երկրին մէջ բնակող բոլոր
Հրեաներուն համար, այսինքն Մագ-
դոլ, Տափնես, Մեմփիս և Պաթուրոսի
երկրին մէջ բնակողներուն համար
Երեմիայի եղած խօսքն է, որ է՝ ըսաւ
2 Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածն,
այսպէս կ՚ըսէ. Դուք տեսաք այն ամէն
չարիքը որ Եղուսաղէմի վրայ և բոլոր
Յուդայի քաղաքներուն վրայ բերի. և
ահա անոնք այսօր ամայի են, և ա-
3 նոնց մէջ բնակող չկայ, Չոր բարկա-
նալնուս համար անոնց բրած չարու-
թեան պատճառաւ, որ գացին, խունկ
ծխելցին և ծառայութիւն ըրին ուրիշ
աստուածներու, զորս ոչ իրենք ճանչ-
ցած էին, ոչ դուք և ոչ ձեր հայրերը։
4 Եւ ես ձեզի զրկեցի իմ բոլոր ծառա-
ներս մարգարէները կանուխ կելլելով
և զրկելով, և ըսի, Ա՛յդ պիղծ գործը
5 մի ընէք, զոր ես կ՚ատեմ, բայց մր-
տիկ չդրին և ականջ չդնեցին որ ի-
րենց չարութիւնէն դառնան, և
6 ուրիշ աստուածներու խունկ չծխեն։
Ուստի իմ պատուհասս և բարկու-
թիւնս թափուեցաւ, և Յուդայի քաղաք-
ներուն մէջ և Երուսաղէմի փողոցնե-
րուն մէջ բորբոքեցաւ. և անոնք այս
օրուան նման ամայութիւն և ա-
7 մայի եղան։ Եւ հիմա զօրաց Տէր Աս-
տուածը, Իսրայէլի Աստուածն, այսպէս
կ՚ըսէ. Ինչո՞ւ համար դուք ձեր հա-
զիւն դէմ այս մեծ չարութիւնը կը
գործէք, որ Յուդայի մէջէն այրը և
կինը, տղան և կաթնկեր մանուկը կոր-
սընցնէք, այնպէս որ ձեզի մնացորդ
8 չմնայ. Ձեր ձեռաց գործերով զիս բար-
կացնելով, և ուրիշ աստուածներու
խունկ ծխելով Եգիպտոսի երկրին մէջ,
ուր գացէք մնալ պանդխտանալու,
որպէս զի ձեր անձը կորսընցնէք, և
երկրիս բոլոր ազգերուն մէջ անէծք
9 և նախատինք ըլլաք։ Միթէ Յուդայի
երկրին մէջ և Երուսաղէմի փողոցնե-
րուն մէջ ձեր հայրերուն բրած չարու-
թիւնները և Յուդայի թագաւորներուն
չարութիւնները, և անոնց կանանց չա-
րութիւնները, և ձեր չարութիւնները
10 մոռցած էք։ Անոնք մինչև այս օր իրենց
անձերը չխոնարհեցուցին և չվախցան,
և ձեր առջև և ձեր հայրերուն առջև
դրած օրէնքիս և պատուիրաններուս
11 մէջ չգնացին։ Ուստի հետևեալ զօրաց Տէ-
րը, Իսրայէլի Աստուածն, այսպէս կ՚ը-
սէ. Ահա ես ձեր վրայ կը հաստատեմ
իմ երեսս չարի համար, և բոլոր Յու-
12 դա կորսընցնելու համար։ Եւ միմի
առնեմ Յուդայի մնացորդը որ իրենց
երեսն հաստատեցին Եգիպտոսի երկի-
րը մտնելու հոն պանդխտանալու հա-
մար. և ամենքը Եգիպտոսի երկրին
մէջ պիտի հատին. սրով, սովով պի-
տի լմնան՝ հատնին. փոքրէն մինչև
մեծը սրով և սովով պիտի մեռնին,
և անիծից, զարմանաց, նզովից և նա-
խատանաց ենթակայ պիտի ըլլան։ Եւ ե-
գիպտոսի երկիրը բնակողներուն այցե-
լութիւն պիտի բնեմ, ինչպէս Երուսա-
զէմի սրով, սովով և ժանտախտով
14 այցելութիւն բրի։ Եւ Յուդայի մնաց-
ցորդէն, որոնք Եգիպտոսի երկիրը
պանդխտանալու գացողներէն, մնաց-
ցորդ և ազատած պիտի չմնայ, որ
Յուդայի երկիրը դառնան, ուր անոնք կը



յուսան դառնալ՝ հոն բնակիլ. վասն
զի նէ՛ղ-ուռ փախչողներէն մէկն պի-
տի դառնայ։
15 Եւ այն բոլոր մարդիկ որ գիտէին
թէ իրենց կանայք օտար աստուածնե-
րուս խունկ կը ծխէին, և բոլոր ներկայ
եղող կանայք՝ մեծ ժողով մը, և ե-
գիպտոսի երկիրը, Պաթուրոսի մէջ,
բնակող բոլոր ժողովուրդը Երեմիայի
16 պատասխան տուին ըսելով, Տէրոջը ա-
նուամբ մեզի խօսած խօսքիդ վրայ
17 մենք քեզի մտիկ չենք ըներ. Այլ ան-
շուշտ մեր բերնէն ելած ամէն խօսքը
պիտի ընենք, երկինքի թագուհւոյն
խունկ ծխելով և անոր թափելու նուէր-
ներ մատուցանելով, ինչպէս որ ըրինք
մենք և մեր հայրերը, մեր թագաւոր-
ները և մեր իշխանները Յուդայի քա-
ղաքներուն մէջ և Երուսաղէմի փողոց-
ներուն մէջ, ուր հացով յագեցանք և
հանգիստ էինք և չարիք չտեսանք։
18 Սակայն այն ատենէն՝ի վեր որ երկի-
նից թագուհւոյն խունկ ծխելէ և ա-
նոր թափելու նուէրներ մատուցանե-
լէ ետ կեցանք, ամէն բանի կարօտ
եղանք, և սրով և սովով հատանք։
19 Եւ երբ երկինքի թագուհւոյն խունկ կը
ծխէինք և անոր թափելու նուէրներ
կը մատուցանէինք, միթէ առանց մեր
արանց հրաժարիլ զայն պատրաստ հա-
մար բլիթներ շինեցինք, և անոր թա-
փելու նուէրներ մատուցինք։
20 Եւ Երեմիա բոլոր ժողովրդեան, ա-
նոնց և կանանց, և իրեն այս պատաս-
խանը տուող բոլոր ժողովրդեան խօ-
21 սեցաւ և ըսաւ, Միթէ այն խունկը զոր
Յուդայի քաղաքներուն մէջ և Երու-
սաղէմի փողոցներուն մէջ կը ծխէիք,
դուք և ձեր հայրերը, ձեր թագաւոր-
ները և ձեր իշխանները և երկրին ժո-
ղովուրդը, Տէրը չյիշեց և անոր միտ-
քը չենկաւ։ Եւ Տէրը ձեր չար գործե-
րուն՝ ձեր բրած գարշելութիւններուն
պատ և չկրցաւ համբերել. ուստի ձեր
երկիրը աւերակ, անապատ և նզոված
՝ անբնակ եղաւ, ինչպէս այսօր կ՚երե-
23 նայ։ Որովհետև դուք խունկ ծխեցիք,
և Տէրոջը դէմ մեղք գործեցիք, և
Տէրոջը ձայնին հնազանդութիւն չըրիք,
և անոր օրէնքին, պատուիրանքներուն
և վկայութիւններուն մէջ չգնացիք,
անոր համար այս չարիքը ձեզի եկաւ,
ինչպէս այսօր կ՚երեւայ։
24 Եւ Երեմիա բոլոր ժողովրդեան և բո-
լոր կանանց ըսաւ, Տէրոջը խօսքը մր-
տիկ ըրէք, ով Եգիպտոսի երկրին մէջ
25 եղող բոլոր Յուդա։ Զօրաց Տէրը, Իս-
րայէլի Աստուածն, այսպէս կը խօսի և
կ՚ըսէ, Դուք և ձեր կանայք ձեր բեր-
նով խօսեցաք, և ձեր ձեռքով կ՚գործ
ըրիք, և ըսիք, Անշուշտ մեր բրած
ուխտը պիտի կատարենք, պիտենք
երկինքի թագուհւոյն խունկ պիտի ծխ-
խենք, և անոր թափելու նուէրներ
պիտի մատուցանենք. այո՛ դուք ձեր
ուխտերուն վրայ հաստատ պիտի կե-
նաք, և ձեր ուխտերը պիտի կատա-
26 րէք։ Ուստի Տէրոջը խօսքը մր-
տիկ ըրէք, ով բոլոր Յուդա, որ Եգիպ-
տոսի երկրին մէջ կը բնակիք. Ահա
ես իմ մեծ անունս երդուայ ըրի,
կ՚ըսէ Տէրը, որ Եգիպտոսի բոլոր երկրին
մէջ այլ ևս բնաւ Յուդայի մարդոց մը
բերնէն իմ անունս պիտի չհնչեցնէ՝
ըսելով, Կենդանի է Տէրը Եհովա
27 կենդանի է։ Ահա ես անոնց վրայ կը հսկեմ չարի համար,
ոչ թէ բարւոյ համար. և Եգիպտոսի
երկրին մէջ եղող Յուդայի բոլոր մար-
դիկը սրով և սովով պիտի կատարին
28 մինչև որ հատնին։ Եւ սուր փախչող մար-
դիկ պիտի ըլլան որ սուրէն ազատուին
Եգիպտոսի երկրէն Յուդայի երկի-
րը պիտի դառնան, և Եգիպտոսի եր-
կիրը պանդխտանալու գացող Յուդայի
բոլոր մնացորդները պիտի գիտնան թէ
որու խօսքը պիտի հաստատուի, իմ
29 թէ իրենցը։ Եւ ասիկա ձեզի նշան ըլ-
լայ, կ՚ըսէ Տէրը, որ այս տեղս ձեզի
այցելութիւն պիտի ընեմ, որպէս զի
գիտնաք թէ իմ խօսքս ձեր վրայ ան-
շուշտ պիտի հաստատուի չարի համար։
30 Տէրը այսպէս կ՚ըսէ. Ահա ես Եգիպտո-
սի Փարաւոն Վափրա Թագաւորը իր
թշնամիներուն ձեռքը և իր հոգին

վնասուցանելոցն ձեռքը պիտի մնանեմ. ինչպէս որ Յուդայի Սեդեկիա Թագաւորը իւր Բշնամւոյն և իւր հոգին փրկուոց Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին ձեռքը մնաներցի։

## Գլ. ԽԸ

1 Երեմիա մարգարէին խօսքը, որ Նեբիայի որդւոյն Բարուքայ խօսեցաւ, երբ անիկա այս խօսքերը Երեմիայի բերնէն գիրքի մէջ գրեց Յուդայի Թագաւորին Յովսիայի որդւոյն Յովակիմի
2 չորրորդ տարին. և ըսաւ, Ով Բարուք, Իսրայէլի Տէր Աստուածը քեզի համար
3 այսպէս կ'ըսէ. Դուն ըսիր, Հիմա վայ ինծի, վասն զի Տէրը իմ ցաւս վրայ ատամնթիւն աւելցուց. իմ հեծութիւնս յոգնեցայ և հանգիստ չեմ գտներ։
4 Անոր այսպէս ըսես, Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես իմ շինածս պիտի քանդեմ, և իմ անկածս պիտի խլեմ, այս-
5 ինքն այս բոլոր երկիրը։ Եւ դուն քեզի մեծ բաներ կը փնտռես. մի փընտռեր, քանզի ահա ես ամէն մարմնոց վրայ չարիք պիտի բերեմ, կ'ըսէ Տէրը, բայց քու կեանքդ քեզի աւար պիտի պիտի տամ քու ամէն երթալու տեղեանդդ։

## Գլ. ԽԹ

1 Տէրոջը խօսքը որ եղաւ Երեմիա մարգարէին ազգերուն վրայ։
2 Եգիպտոսի համար, Եգիպտացւոց Թագաւորին Փարաւոնի Քարքամիսի մէջ Եփրատ գետին քով եղող զօրուց վրայ, զոր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը զարկաւ, Յուդայի Թագաւորին Յովսիայի որդւոյն Յովակիմի չորրորդ տարին։
3 Ասպար և վահան պատրաստեցէք
Եւ պատերազմի մօտեցէք։
4 Ձիերը լծեցէք, և դուք, ով ձիաւորներ, հեծէք.
Սաղաւարտներով կայնեցէք,
Նիզակները փայլեցուցէք, զրահները հագէք։
5 Զանոնք ինչո՞ւ համար զարհուրած և նահ դարձած կը տեսնեմ.
Անոնց զօրաւորները անդամ զարնուեցան,
Եւ աճապարանօք փախչելով իրենց նայն չնայեցան.
Այնչն կողմէ վախ կայ, կ'ըսէ Տէրը։
6 Շուտ փախչողը Թող չխափչի,
Եւ զօրաւորը չազատի.
Անոնք հիւսիսային կողմը Եփրատ գետին քով
Գլորելով պիտի իյնան։
7 Ո՞վ է սա որ գետի պէս վեր կ'ելլէ,
Որոյ յորձրերը գետերուն պէս կը ծփին։
8 Եգիպտոս գետի պէս վեր կ'ելլէ,
Եւ անոր յորձրերը գետերու պէս կը ծփին.
Եւ կ'ըսէ, Վեր կելնեմ, երկիրը ծածկեմ,
Քաղաքը և անոր բնակիչները ընաջինջ ընեմ։
9 Ով ձիեր, ելէք, և ով կառքեր, կատղեցէք.
Եւ զօրաւորները Թող ելլեն,
Վասն զի Քուշ եւ Փութ զօրեղ և Փուգացիք,
Եւ ալեղ բռնող Լ բարդ Ղուդացիք։
10 Վասն զի այսօր զօրաց Տէր Եհովայի վրէժխնդրութեան օրն է,
Որ իւր Բշնամիներէն վրէժ առնու.
Եւ սուրը պիտի ուտի և յագի,
Եւ անոնց արեամբ պիտի արբենայ,
Վասն զի հիւսիսի երկրին մէջ Եփրատ գետին քով
Զօրաց Տէր Եհովան զոհ ունի։
11 Գաղաադ ելիր և բալասան առ,
Ով Եգիպտոսի կոյս աղջիկը.
Դեղերը պարապ տեղը կը շատցունես,
Քեզի բժշկութիւն չկայ։
12 Ազգերը քու անարգանքդ լսեցին,
Եւ քու ազաղակդ երկիրը լեցուց.
Վասն զի զօրաւորը զօրաւորին վրայ գլորեցաւ,
Երկուքն ի միասին ինկան։
13 Այս է խօսքը զոր Տէրը Երեմիա մարգարէին խօսեցաւ, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին գալուն Եգիպտացւոց երկիրը զարնելուն վրայ։
14 Եգիպտոսի մէջ պատմեցէք, Մագդադոլի մէջ հրատարակեցէք,
Եւ Մեմփիսի և Տափնասի մէջ հրատարակեցէք,
Ե՛ր ըսէք, Կայնիչ և պատրաստ եղիր,
Վասն զի քու բոլորտիքդ սուրը պիտի ուտի։
15 Քու զօրաւորներդ ինչո՞ւ կործանեցան.
Անոնք չկրցան կենալ, վասն զի Տէրը զանոնք վար ձգեց։
16 Գլորուածներըը չատցուց, և իրարու վրայ ինկան.
Եւ ըսին, Ելիր, և դառնանք սորց երեսին
Մեր ժողովրդին և մեր ծնած երկիրը դառնանք,
17 Հոն կը կանչենք,
Եգիպտոսի փարաւոն Թագաւորը ոտքը ազազակ է.
Անիկա նշոյլ արուեցաւ ժամանակին անցուց։
18 Ես կենդանի եմ, կ'ըսէ այն Թագաւորը
Որոյ անունը զօրաց Տէր է,
Ինչպէս որ Թաբոր լեռներու մէջ է,
Եւ ինչպէս որ Կարմէղոս ծովեզրը կը հառնի,
Այնպէս անիկա պիտի գայ։
19 Ով Եգիպտոս բնակող աղջիկ,
Գերութեան կարասիներ պատրաստէ քեզ.
Վասն զի Մեմփիս ամայի պիտի ըլլայ,
Եւ աւերակ առանց բնակիչի։
20 Եգիպտոս շատ գեղեցիկ երինջ է,
Բայց կոտորած կու գայ. հիւսիսէն կու գայ,
21 Եւ անոր մէջ վարձքով բռնուած զբօսը գերեցած զուարնիներու պէս են.
Քանզի անոնք ևս դարձան, իրենց միասին փախան, չկայնեցան.
Վասն զի անոնց վրայ անոնց կորսուան օրը
Ե՛ անոնց այցելութեան ժամանակը հասաւ։
22 Անոր ձայնը օձի չափ պէս պիտի ըլլայ,
Վասն զի զօրքով պիտի հասնին,
Եւ անոր վրայ փայտահարներու պէս տապարներով պիտի գան.
23 Անոր անտառը պիտի կտրեն, կ'ըսէ Տէրը,
Թէպետև անոր չափէն անթիւ են.
Քանզի անոնք մարախէն չատ են,
Անհնարին որ չեն համրուիր։
24 Եգիպտոսի աղջիկն ամօթով պիտի ըլլայ,
Հիւսիսային ժողովրդեան ձեռքը պիտի մատնուի։
25 Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, կ'ըսէ,
Ահա ես *Նովոյի Ամմոնը և փարաւոնը
Եւ Եգիպտոսի և անոր աստուածներուն և Թագաւորներուն,
Այո՛ն ևս փարաւոնի և անոր ապաւինողներուն այդկերթիւն պիտի ընեմ.
26 Եւ զանոնք անոնց հոգին փնտռողներուն ձեռքը,
Եւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին ձեռքը,
Եւ անոր ծառաներուն ձեռքը պիտի մատնեմ.
Եւ անկէ ետքը առջի օրերուն պէս պիտի բնակուի, կ'ըսէ Տէրը։
27 Բայց դուն, ով իմ ծառաս Յակոբ, մի վախնար,
Եւ, ով Իսրայէլ, մի զարհուրիր.
Քանզի ահա ես քեզ հեռուէն,
Եւ քու սերունդդ երկնից գերեզմանի երկրէն պիտի ազատեմ.
Եւ Յակոբ պիտի դառնայ, և հանգարտ և խաղաղ պիտի ըլլայ,
Եւ ընդվզող պիտի չըլլայ։
28 Դուն մի վախնար, ով իմ ծառաս Յակոբ, կ'ըսէ Տէրը,
Վասն զի ես քեզի հետ եմ.
Քանզի պիտի ապատեմ այն բոլոր ազգերը
Որոնց մէջ ցրուեցի զքեզ,
Բայց զքեզ պիտի չապատեմ,
Այլ զքեզ չափաւորութեամբ պիտի խրատեմ,
Եւ անպատիժ պիտի չձգեմ։

*Ամմոն Նովին Եւրոպական անուն,

Եւ զքենդ բոլորալին անմեղ պահէ չհանեմ։

## Գլ. Խ

1 Տէրոջը խօսքը որ եղեմիա մարգարէին եղաւ փղշտացւոց վրայ, պէս փարաւոն զԳազա չզարհուր։
2 Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա հեւսիսէն ջուրեր կ'ելլեն,
Որ յորդած հեղեղի պէս պիտի ըլլան,
Եւ երկիրը և անոր լիութիւնը,
Քաղաքը և անոր բնակիչները պիտի կոխեն.
Եւ մարդիկ պիտի ազաղակեն,
Եւ երկրին բոլոր բնակիչները պիտի ոռնան,
3 Անոր երիվարներուն սմբակներուն ձայնէն,
Անոր կառքերուն շաչիւնէն
Եւ անիւներուն ղառաչիւնէն
Հայրերն էջնոց որդւոց պիտի չնային,
Իջնոց ձեռքերը թոյլնալուն համար,
4 Բոլոր փղշտացիները կորնչելուն,
Եւ Տիւրոսի և Սիդոնի
Բոլոր մնացած օգնականները կտրելուն ակոզ օրուան պատճառաւ.
Քանզի Տէրը փղշտացիները,
Կափթոր կղզւոյն մնացորդները, պիտի կորնչցնէ։
5 Գազայի վրայ կնաւթիւն եկաւ,
Ասկաղոն իւր հովիտին մնացորդով ահեղակ եղաւ.
Մինչև ե՞րբ քու մարմնոյդ վրայ կրտրածներ պիտի բնես։
6 Ով Տէրոջը սուրը,
Մինչև ե՞րբ հանդարտ չես կենար.
Քու պատեանդ դարձիր,
Հանգչէ և լռէ։
7 Ի՞նչպէս կրնայ հանդարտ կենալ.
Վասն զի Տէրը անոր հրաման տուած է
Ասկաղոնի և Ծովեզերքայ դէմ,
Հոն խրկած է զայն։

## Գլ. ԽԱ

1 Մովաբի վրայ զօրաց Տէրը,
Իսրայէլի Աստուածն, այսպէս կ'ըսէ.
Վա՜յ Նաբաւի, վասն զի աւերուեցաւ.
Կարմաթեմ ամչցաւ և առնուեցաւ.
Մատաղաւ ամչցաւ և զարհուրեցաւ։
2 Մովաբ այլ եւս պիտի չգովուի Եսեբոնի մէջ.
Անոր վրայ չարիք խորհեցան՝ ըսելով,
Եկէք և զանիկա ազգ ըլլալէն կտրենք։
Դուն ևս, ով Մադմէն, պիտի կոտրիս.
Քու հետեւդ սուր կու գայ։
3 Որոնայիմէ աղաղակի ձայն կու գայ.
Աւերում և մեծ կոտորած կայ։
4 Մովաբ կոտրեցաւ.
Անոր փոքր ազգքն ազաղակ վերցուցին։
5 Քանզի Ղուխիթ զառ՝ի վերին վրայ
Մեծ լացով պիտի ելլեն.
Քանզի Որոնայիմի զառ՝ի վայրերն վրայ
Թշնամիները կոտորածէն ազգակ լսեցին։
6 Փախէ՛ք, ձեր անձն ազատեցէ՛ք,
Եւ անապատի մէջ մերկի պէս եղէ՛ք։
7 Քանզի քու գործերուդ և գանձերուդ ապաւինելուդ համար
Դուն ևս պիտի առնուիս.
Եւ Քամոս գերութեան պիտի երթայ
Իւր քուրմերով և իւր իշխաններով ի միասին։
8 Եւ ամէն քաղաքի վրայ կործանողը պիտի գայ,
Եւ քաղաք մը պիտի չազատի.
Հովիտը պիտի կորսուի և դաշտը պիտի աւերուի,
Ինչպէս որ Տէրը բսաւ։
9 Մովաբի թևերը տուէք որ թռչելով փախչի.
Եւ անոր քաղաքներն ամայի պիտի ըլլան բնակիչ չունենալով։
10 Տէրոջը գործը ծանրութեամբ կատարուին անիծեալ ըլլայ,
Եւ իւր սուրն արիւնէ ինացողն անիծեալ ըլլայ։
11 Մովաբ իւր ստոյգութենէն ի վեր հանգստեան մէջ էր,

*Կամ թուրութեամբ

Եւ ջէնոյ ղէս իւր մրոյն վրայ կը նըստէր,
Եւ ամանէ աման չփոխուեցաւ,
Եւ գերութեան չգնաց.
Անոր համար անոր համն անոր մէջ մընաց
Եւ հոտը չփոխուեցաւ։
12 Ուստի ահա օրերը կու գան, կ'ըսէ Տէրը,
Որ անոր փոխադրողներ պիտի ղրկեմ,
Եւ զանիկա պիտի փոխադրեն.
Եւ անոր ամաններըը պիտի պարպեն,
Եւ սրիկերը կոր կոր պիտի բեկեն։
13 Եւ Մովաբ Քամոսէ պիտի ամչնայ,
Ինչպէս որ Իսրայէլի տունը իւր ապաւինած Բեթէլէն ամչցաւ։
14 Ի՞նչպէս կ'ըսէք թէ Մենք քաջ ենք,
Եւ պատերազմի համար զօրաւոր մարդիկ ենք։
15 Մովաբ աւերուեցաւ և անոր քաղաքներն *այրեցան,
Եւ անոր ընտիր երիտասարդները մորթուելու իջան,
Կ'ըսէ այն Թագաւորը որուն անունը Զօրաց Տէր է։
16 Մովաբի կորուստը գալու մօտ է,
Եւ անոր պատուհասը կը փութայ յոյժ։
17 Ով անոր բոլորակը եղողներ, ամէնքդ զանիկա ողբացէ՛ք,
Եւ ըսէ՛ք դուք ամէնքդ որ անոր անունը գիտէ՛ք,
Զօրութեան գաւազանը, պարծանաց ցուղը
Ի՞նչպէս կոտրեցաւ։
18 Ով Դիբոնի մէջ բնակող աղջիկ,
Փառքէն իջիր և ծարաւի մէջ նստէ.
Վասն զի Մովաբ կործանողը քու վրադ պիտի ելլէ,
Եւ քու պարիսպներդ պիտի աւրէ։
19 Ճանուր վրայ կայնէ և դիտէ,
Ով Արոերի բնակիչ,
Փախչողին և ազատողին հարցուր
Եւ ըսէ թէ Ի՞նչ եղաւ։
20 Մովաբ ամչցաւ, վասն զի կոտրեցաւ.
Հեծէ՛ք և ազազակէ՛ք.

*Եբր. վէր եղան,

Մովաբի աւերուին Առնոնի մէջ պատմեցէ՛ք,
21 Եւ դատաստանն երկրին վրայ,
Քօղոնի, Յասայի և Մեփաաթի վրայ
գատաստան եկաւ,
22 Նաև Դիբոնի վրայ, Նաբաւի վրայ,
Բեթդիբղաթեմի վրայ,
23 Եւ Կարիաթեմի վրայ, և Բեթգամուղի վրայ, և Բեթմաոնի վրայ,
24 Եւ Կարիոթի վրայ, և Բոսրայի վրայ,
Եւ Մովաբի երկրին բոլոր քաղաքներուն վրայ,
Թէ հեռաւոր և թէ մօտաւոր։
25 Մովաբի եղջիւրը կորուեցաւ,
Եւ բազուկը կոտրեցաւ, կ'ըսէ Տէրը։
26 Զանիկա գինովցուցէ՛ք,
վասն զի Տէրոջը դէմ հպարտացաւ,
Եւ Մովաբ թող իւր փսխուքին մէջ թաւալի,
Եւ ինքն ալ ծաղր ըլլայ։
27 Մի՞թէ Իսրայէլ քեզի ծաղր չեղա՞ւ.
Անիկա գողերու մէջ գտնուեցաւ,
Որ գուն քանի որ անոր վրայ կը խօսէիր գլուխ կը շարժէիր։
28 Ով Մովաբի բնակիչներ,
Քաղաքներըը թողուցէ՛ք, վիմերու մէջ բնակեցէ՛ք,
Եւ փոսի բերանն իւր բոյնը շինող աղաւնւոյ պէս եղէ՛ք։
29 Մովաբի ամբարտաւանութիւնը լսեցինք.
Անիկա շատ ամբարտաւան է.
Անոր հպարտութիւնը, ամբարտաւանութիւնը, գոռոզութիւնը
Եւ սրտին բարձրութիւնը լսեցինք։
30 Ես անոր սրտմտութիւնը գիտեմ, կ'ըսէ Տէրը,
Բայց պարապ է.
Անոր անապատած խօսքերը պարապ պիտի ելլեն։
31 Ուստի Մովաբի համար պիտի ողբամ,
Եւ բոլոր Մովաբի համար պիտի ազազակեմ.
Կիրհարեսի մարդոց համար սուգ պիտի բռնեմ։
32 Ով Սեբամայի որթ, քու վրադ Յազեռի լացով պիտի լամ.

Քա՛ւ չառաւելիցներդ Ծովէն անցնելով
Մինչև Յազերի Ծովն հասած էին.
Քա՛ւ սահմանային պղծողդ վրայ և սպիճակութիւնդ վրայ աւարառու լինիս։
33 Եւ պատարէզ արտերէն և Մոաբի երկրէն
Ո՛րթալութիւնը և ցնծութիւնը պակաս վերնայ.
Եւ հնձանները գինին գազրեցուցի.
Ցնծութեամբ ԽՈՏՈՂ պիտի չխոտորի,
Եւ– ցնծութեան ձայն պիտի չլսուի։
34 Եսեբոնի ազաղակէն մինչև Եղեալէ,
Մինչև Յասսա իրենց ձայնը տուին,
Երկ՛ սարեկան Լուհիթի պէս Սեղոմէ մինչև Ովրոնայիմ.
Քանզի Նեմրիմի ջուրերն անգամ կ՛աւերուին,
35 Եւ Մոաբէ բարձր տեղը զոհակեց մատուցանողը,
Եւ իւր աստուածներուն խունկ ծխողը
Պիտի վերցունեմ, կ՛ըսէ Տէրը։
36 Ա՛յս պատճառաւ իմ սիրտս Մոաբի համար սրինգներու պէս պիտի հնչէ.
Եւ Կիրհարեսէ մարդոց համար իմ սիրտս սրինգներու պէս պիտի հնչէ.
Վասն զի անոնց ստացած հարստութիւնը կորսուեցաւ.
37 Քանզի ամէն գլուխ կնատակ պիտի ըլայ,
Եւ ամէն մօրուք պիտի կտրուի.
Եւ ամէն ձեռքերու վրայ կտրածներ պիտի ըլան,
Եւ ոտքն ուղիքներուն վրայ քուրձ պիտի ըլայ։
38 Մոաբի բոլոր տանեաց վրայ
Եւ անոր փողոցներուն մէջ բոլորովին կոծ պիտի ըլայ,
Վասն զի զՄոաբ կոտրեցի այնպիսի ամանի մը պէս
Որուն մէկը չհաճիր, կ՛ըսէ Տէրը։
39 Ո՛ւրչափ կոտրեցաւ Մոաբ,
Եւ ո՛ւրչափ ամօթով կռնակ դարձուց ը՛ռ-ը՛ռ պիտի ոռան.
Եւ Մոաբ ամէն իւր բոլորտիքը ծաղրանքուն
Խայտառակութեան և սասկման պատճառ պիտի ըլայ։
40 Վասն զի Տէրը այսպէս կ՛ըսէ.
Ահա ը՛ռ-ի պէս պիտի թռչի,
Եւ իւր թևերը Մոաբի վրայ պիտի տարածէ։
41 *Քաղաքները կ՛առնուին
Եւ բերդերը կը նուաճին,
Եւ այն օրը Մոաբի զօրաւոր մարդոցն սիրտը
Իւր ներսիններ մէջ ծոցի կնոջ պտղեն պէս պիտի ըլայ։
42 Եւ Մոաբ ժողովուրդ ըլալէն պիտի կտրուի,
Վասն զի Տէրոջը դէմ հպարտացաւ։
43 Ով Մոաբի բնակիչ,
Քա՛ւ վրայդ վախ, գո՛ւբ և որոգայթ պիտի ըլայ, կ՛ըսէ Տէրը։
44 Վախէն փախչողը գո՛ւբը պիտի իյնայ
Եւ գո՛ւբէն ելլողը որոգայթի մէջ պիտի բռնուի.
Քանզի անոր վրայ, Մոաբի վրայ,
Անոնց այցելութեան տարին պիտի բերեմ, կ՛ըսէ Տէրը։
45 †Ուժէն փախչողները Եսեբոնի հովանւոյն տակ կայնեցան.
Բայց Եսեբոնէ կրակ,
Եւ Սեհոնի միջէն բոց ելաւ,
Եւ Մոաբի ծայրը,
Եւ ապստամբներուն գագաթը կերաւ։
46 Վա՛յ քեզ, Մոաբ,
Քամոսի ժողովուրդը կորսուեցաւ.
Քանզի քու տղաքդ գերի առնուեցան
Եւ աղջիկներդ գերութեան գնացին։
47 Բայց ետքէն օրերը
Մոաբի գերութիւնը պիտի դարձնեմ, կ՛ըսէ Տէրը։
Մոաբի դատաստանը մինչև հոս է։

## ԳԼ. ԽԸ.

1 Ամմոնի օրդւոց վրայ Տէրը այսպէս կ՛ըսէ.
Միթե Իսրայէլ տղաք չունի՞.
Միթե անոնց ժառանգ չունի՞.
Ինչո՞ւ Մելքոմ Գադի ժառանգ եղաւ,

*Կամ կարիօթը կ՛առնուի

†Կամ փախչողները ուժէ լինկած։



Եւ իւր ժողովուրդն անոր քահանաներուն մէջ բնակեցաւ։
2 Ասոր համար ահա օրեր կու գան, կ՛ըսէ Տէրը,
Որ Ամմոնի որդւոց Բաբբայի մէջ
Պատերազմի ազազակ լսել պիտի տամ.
Եւ աւերակ աւերակներու դէզ պիտի ըլայ,
Եւ անոր *գեղերը կրակով պիտի այրին.
Եւ Իսրայէլ իրեն ժառանգներուն վրայ պիտի տիրէ, կ՛ըսէ Տէրը։
3 Ողո՛ւ, ով Եսբոն, վասն զի Գայի կործանեցաւ.
Ազազակեցէ՛ք, ով Բաբբայի աղջիկներ,
Քո՛ւրձեր հագէ՛ք, լացէ՛ք
Եւ ցանգ ցանգ վազեցէ՛ք.
Վասն զի Մելքոմ գերութեան կ՛երթայ
Իւր քուրմերով և իշխաններով հանդերձ։
4 Ինչո՞ւ †ո՛ս հովիտներուն կը պարծիս.
Քա՛ւ հովիտդ աւերեցաւ, ով ապստամբ աղջիկ,
Որ քու գանձերուդ յոյսդ էիր,
Եւ՝ ըսելէդ ետքը թէ Իմ վրաս ո՞վ կրնայ գալ։
5 Ահա ես, կ՛ըսէ զօրաց Տէր Եհովան,
Քա՛ւ վրադ վախ պիտի բերեմ
Քովէն բոլորտիքդ եղողներէն,
Եւ խրտնեցնիք իւր առջեւէ ՀՐԷՇ-ՀՐԷՇ պիտի ցրուիք,
Եւ փախստականները Հողմոդ պիտի չհաւաքէ։
6 Եւ անկէ ետքը Ամմոնի որդւոց գերութիւնը
Պիտի դարձնեմ, կ՛ըսէ Տէրը։
7 Եդոմի վրայ զօրաց Տէրն այսպէս կ՛ըսէ.
Արդեօք թեմանի մէջ այլ ևս խմաստութիւն չկայ.
Եւ– հանճարեղներէն խորհուրդը կորսուեցա՞ւ.
Անոնց խմաստութիւնն հատա՞ւ.
8 Փախէ՛ք, դարձէ՛ք, իւր տեղուանք բնակիչնե՛ր,

*Եբր. աղջիկները

Ով Դեդանի բնակիչներ,
Վասն զի Եսաւ կերուածը
Անոր այցելութիւն բրած ժամանակս անոր վրայ կը բերեմ.
9 Եթէ քեզի կթողներ գայիս,
Մի՛թէ ճիւաղ պիտի չթողուին.
Եթէ գիշերով գողը գայ,
Իրենց բաւական եղածին չափ պիտի յափշտակեն։
10 Բայց ես Եսաւ մերկացուցի,
Անոր ծածուկ տեղերը բացի,
Եւ անկէ պահուըտելու կարող չէ.
Անոր զաւակները, անոր եղբայրները և անոր դրացիները կորսուեցան,
Եւ ինք չկայ։
11 Որբերդ թող տուր, ես զանոնք ողջ կը պահեմ.
Եւ քա՛ւ այրիներդ թող ինծի ապաւինին։
12 Վասն զի Տէրը այսպէս կ՛ըսէ.
Ահա անոնք որ բաժակը խմելու պարտական չէին, անպատիժ պիտի խմեն.
Իսկ դուն բոլորովին անպատիժ պիտի մնաս.
Անպատիժ պիտի չմնաս,
Այլ սաստիկ պիտի խմես։
13 Վասն զի իմ անձիս վրայ երդում կ՛ընեմ, կ՛ըսէ Տէրը,
Որ Բոսրա ամայութիւն, նախատինք, աւերակ և անէծք պիտի ըլայ,
Եւ անոր ամէն քաղաքները յաւիտենական աւերակներ պիտի ըլան։
14 Տէրոջը կողմանէ լուր լսեցի,
Եւ ազգերուն դեսպան զրկուած է ՝ը՛ ՝ը՛ ՝ը՛ ՝ը՛,
Ժողովեցէ՛ք և անոր վրայ գացէ՛ք
Եւ պատերազմի ելէ՛ք։
15 Քանզի ահա զքեզ ազգերու մէջ փոքր,
Եւ մարդոց մէջ անարգ բրի։
16 Քա՛ւ ահաւորութիւնդ, քա՛ւ սրտիդ հպարտութիւնն, զքեզ խաբեցին,
Ով վէմին խառնուներուն մէջ բնակող
Եւ բարձր բլուրներուն փակղող.
Թէև քու բոյնդ արծուի պէս բարձրերը չինես,

Զքեզ անկէ պիտի լլկեցուներմ, կ'ըսէ Տէրը։
17 Եւ եղայր մայրի պիտի ըլլայ։
Անկէ ամէն անցնող պիտի հիանայ,
Եւ անոր բոլոր հարուածներուն համար պիտի սուլէ։
18 Սոգոմի և Գոմորի և անոր չրջակայ քաղաքներուն կործանման պէս, կ'ըսէ Տէրը,
Հոն մարդ պիտի չնստի,
Եւ անոր մէջ մարդու զաւակ պիտի չբնակի։
19 Ահա առիւծի պէս ամբարձուի Յորդանանու ճոխութենէն վրայ պիտի ելլէ
Յարմ անտառ։ Վազվզելէն.
Բայց անոր վրայէն չուռայ պիտի փախցնեմ զինք.
Եւ ո՞վ է այն ընտրեալը որ անոր վրայ դնեմ.
Վասն զի ինծի նման ո՞վ կայ.
Եւ *ինծի հետ ո՞վ պիտի վիճաբանի՞.
Եւ ո՞վ է այն հովիւը որ իմ առջեւս պիտի կենայ։
20 Անոր համար Եդովմի վրայ Տէրոջը խորհած խորհուրդը,
Եւ Թեմանի բնակչաց վրայ մտածած մտածմունքը մտիկ ըրէք.
Հօտին պիտի ոլորիկն առուգիս պիտի քշէ զանոնք,
Անոնց բնակարանները անոնց հետ պիտի աւրէ։
21 Անոնց կործանուն ձայնէն երկիրը կը շարժի.
Անոնց ազաղակին ձայնը մինչև Կարմիր ծովը կը լսուի։
22 Ահա թռչնոյն արծուի պէս բարձրանալով պիտի թռչի,
Եւ իւր թևերը Բոսրայի վրայ պիտի տարածէ.
Եւ այն օրը Եդովմի զօրաւորներուն սիրտը
Իւր երկանց մէջ եղող կնոջ սրտին պէս պիտի ըլլայ։
23 Դամասկոսի վրայ.
Եմաթ և Արփադ աչդան,
Քանզի գէշ լուր լսեցին և մաթնեցան.
Ծովուն մէջ տառապանք կայ,
Ան- անիկա չկրնար հանգարտիլ։
24 Դամասկոս ուժասպառ,
Փախչելու դարձաւ,
Սբհնաւիրքն անոր վրայ հասաւ.
Ջանիկա ծննդական կնոջ պէս նեղութիւն և ցաւեր բռնեցին։
25 Ի՜նչպէս չմոռցաւ երեւելի քաղաքը,
Իմ ուրախութեանս քաղաքը։
26 Ուստի անոր ջահելն անոր հրապարակներուն մէջ պիտի կ'իյնան,
Եւ բոլոր պատերազմական մարդիկ
Այն օրը բնաջինջ պիտի ըլլան, կ'ըսէ զօրաց Տէրը։
27 Եւ Դամասկոսի պարսպին մէջ կրակ պիտի բռնկցնեմ,
Եւ Բենադադին պալատները պիտի ուտէ։
28 Կեդարաց վրայ և Հասորի թագաւորութեանց վրայ, զոր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը զարկաւ, Տէրը այսպէս կ'ըսէ.
Ելէք, կեդարաց վրայ գացէք,
Եւ արևելքի բնակիչները չարգելէք։
29 Անոնց վրաններն և հօտերը պիտի առնեն,
Անոնց վարագոյրներն և բոլոր կարասիները
Եւ ուղտերն իրենց համար պիտի առնեն.
Եւ անոնց ձայն պիտի տրուի Թէ
Աւէտ կողմանէ վախ կայ։
30 Փախէք, չուռայ հեռացէք, խոր տեղուանք բնակիչներ,
Ով Հասորի բնակիչներ, կ'ըսէ Տէրը,
Վասն զի Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը
Ձեզի դէմ խորհուրդ խորհեցաւ,
Եւ ձեզի դէմ դիտաւորութիւն մտածեց։
31 Ելէք և հանգստութեան՝ ապահովութեան մէջ բնակող ազգին գացէք, կ'ըսէ Տէրը,
Որ անիկա դուռներ և նիգեր չունի և առանձին կը բնակի։
32 Եւ անոնց ուղտերն աւար պիտի ըլլան,

*Կամ ով ինծի ժամնակ պիտի որոշէ.



Եւ անոնց խաշանց բազմութիւնը պիտի յափշտակուի.
Եւ էրէնց մօրուաց ծայրը կարօղներն ամէն հովի պիտի ցրուեմ,
Եւ անոնց կործանումն ամէն կողմէն պիտի բերեմ, կ'ըսէ Տէրը։
33 Եւ Հասոր շնագայլերու բնակարան,
Յաւիտենական ամայութիւն պիտի ըլլայ.
Հոն մարդ պիտի չնստի,
Եւ հոն մարդու զաւակ պիտի չբնակի։
34 Յուդայի Թագաւորին Սեդեկիայի թագաւորութեան սկիզբը Եղամի վրայ Երեմիա մարգարէին եղած Տէրոջը խօսքն է, որ բսաւ,
35 Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Ահա ես Եղամի աղեղը,
Անոնց գլխաւոր զօրութիւնը պիտի կոտրեմ։
36 Եւ Եղամի վրայ երկնից չորս կողմէն չորս հովերը պիտի բերեմ,
Եւ զանոնք այս բոլոր հովերուն պիտի ցրուեմ.
Եւ պիտի չըլլայ ազգ, որուն Եղամի փախստականները չերթան,
37 Եւ Եղամացիք իրենց թշնամիներուն առջեւ
Եւ իրենց հոգին փնտռողներուն առջեւ պիտի վախցնեմ,
Եւ անոնց վրայ պատահաս պիտի բերեմ,
Այսինքն իմ սաստիկ բարկութիւնս, կ'ըսէ Տէրը,
Եւ անոնց ետևէն սուր պիտի զրկեմ,
Մինչև որ զանոնք հատցնեմ։
38 Եւ իմ աթոռս Եղամի մէջ պիտի դնեմ,
Եւ անկէ թագաւոր և իշխաններ պիտի կորսնցունեմ, կ'ըսէ Տէրը։
39 Բայց ետքի օրերը
Եղամի դերութիւնը պիտի դարձուներմ, կ'ըսէ Տէրը։

ԳԼ. Ծ

1 Բաբելոնի վրայ, Քաղդեացւոց երկրին վրայ, Երեմիա մարգարէին բերնով Տէրոջը խօսած խօսքը։
2 Ազգերուն մէջ պատմեցէք.
Հրատարակեցէք և գրոշ վերցուցէք.
Հրատարակեցէք և մի ծածկէք, և ըսէք,
Բաբելոն առնուեցաւ, Բէլ ամչցաւ,
Մարովդաք կոտրեցաւ,
Անոր արձաններն ամչցան,
Անոր կուռքերը կոտրտեցան.
3 Վասն զի անոր վրայ հիւսիսէն ազգ մը եկաւ,
Անիկա անոր երկիրն աւերակ պիտի բնէ,
Եւ հոն բնակիչ պիտի չմնայ.
Մարդ մինչև անասուն պիտի փախչին երթան։
4 Այն օրերը և այն ժամանակը, կ'ըսէ Տէրը,
Իսրայէլի որդիքը, իրենք և Յուդայի որդիքն ի միասին, պիտի գան,
Գալլալով և լալով պիտի երթան,
Եւ իրենց Տէր Աստուածը պիտի փընտռեն։
5 Սիոնի համար պիտի հարցունեն,
Իրենց երեսը դէպ ի հոն դարձնելով.
Եկէք և Տէրոջը յարիք
Յաւիտենական ուխտով։
6 Իմ ժողովուրդս կորսուած ոչխարներու պէս եղաւ,
Զանոնք իրենց հովիւները մոլորեցուցին,
Զանոնք լեռներու վրայ պատուցին.
Գնացին և լեռնէ լեռ և բլուր բլուր գացին,
Եւ իրենց մակաղաւորը մոռցան։
7 Ամէն գտնողները զանոնք կերան.
Եւ անոնց թշնամիներն ըսին,
Մենք յանցանք չունինք,
Վասն զի անոնք արդարութեան բնակարան եղող Տէրոջը դէմ,
Եւ իրենց հայրերուն յոյսը եղող Տէրոջը դէմ, մեղք գործեցին։
8 Բաբելոնի մէջէն փախեք,
Եւ Քաղդեացւոց երկրէն ելէք,
Եւ հօտերուն առջեւէն գոյզ նոխազներու պէս եղէք։
9 Քանզի ահա ես Բաբելոնի վրայ
Հիւսիսի երկրէն մեծ ազգերու ժողով պիտի արթնցունեմ և հանեմ,

եւ անոր առջեւ գուղձերով պիտի շաբաւին,
Անկէ պիտի առնուի.
Անոնց նեռները յայդարակ պատերազմզի նէբէրոն պէս
Պարապ պիտի չդառնան,
10 եւ Քաղդէացւոց երկիրն աւար պիտի ըլլայ,
եւ զանիկա բոլոր Թալաղներըը պիտի յագենան, կ'ըսէ Տէրը։
11 Որովհետեւ դուք աւելաթաթաղ եւ խընդացիք,
Ով իմ ժառանգութեանս կողոպտիչներըը,
•կանաչ խոտերու մէջ արածուող՝ երինջի պէս ցաթկեցիք,
եւ երիվարներու պէս վրնջեցիք.
12 Ձեր մայրը շատ ամչցաւ.
Ձեզ ծնանողն ամօթ ուզաւ.
Ահա անիկա ազգերուն յետինը,
Անապատ, անջուր եւ ամայի պիտի ըլլայ,
13 Տէրոջը բարկութեան պատճառաւ հոն մարդ պիտի չբնակի,
Այլ բոլորովին ամայի պիտի ըլլայ։
Բաբելոնէ ամէն անցնող
Անոր բոլոր հարուածներուն վրայ
Պիտի հիանայ եւ սիսի աւլի։
14 Բաբելոնի դէմ շուրջանակի շարուեցէք,
Ով բոլոր աղեղ լարողներ,
Անոր նետեցէք, նետին մի խնայէք,
Քանզի անիկա Տէրոջը դէմ մեղք գործեց,
15 Անոր դէմ շուրջանակի ազաղակ վրնջցուցէք.
Անիկա իւր ձեռքը տուաւ.
Անոր հիմերը կործանեցան,
Անոր պարիսպներն աւերեցան,
Վասն զի սա՛ Տէրոջը վրէժխնդրութիւնն է.
Անկէ վրէժ առէք,
Անոր իւր ըրածին համեմատ ըրէք։
16 Բաբելոնէ սերմնացողը եւ հնձող ժամանակ մանգաղ բռնողը կտրեցէք.
Բռնաւոր սրոյն երեսէն

•կամ Ցօրեն ծեծող

Ամէն մարդ իւր ժողովրդեան պիտի դառնայ,
եւ ամէն մարդ իւր երկերը պիտի փախչի։
17 Իսրայէլ մոլորեալ ոչխար է,
Առիւծներ հալածեցին զնա.
Նախ Ասորեստանի թագաւորը կերաւ զնա,
Եւ յետքը այս Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորն անոր ոսկորները կրծեց։
18 Ասոր համար զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածն, այսպէս կ'ըսէ.
Ահա ես Բաբելոնի թագաւորին եւ անոր երկրին այցելութիւն պիտի ընեմ,
Ինչպէս որ Ասորեստանի թագաւորին այցելութիւն ըրի։
19 Եւ զիսրայէլ իւր բնակարանը պիտի դարձնեմ,
Եւ Կարմէղոսի և Բասանի մէջ պիտի արածի,
Եւ անոր հոգին Եփրեմի լեռան վրայ
Եւ Գաղաադ՝ վրայ պիտի յագենայ։
20 Այն օրերը և այն ժամանակ, կ'ըսէ Տէրը,
Իսրայէլի անօրէնութիւնը պիտի փընտրեն,
Բայց անիկա՝ անէրեւոյթ պիտի չգտնեն.
Եւ Յուդայի մեղքերը՝ ո՛չ գտնուին,
Բայց պիտի չգտնեմ.
Վասն զի իմ պահած մնացորդներուս ներում պիտի տամ։
21 •Մերաթայիմի երկրին վրայ
Եւ †Փակուդի բնակիչներուն վրայ երթ։
Անոնց հետեւէն սուր,
Եւ նզովածի պէս բնաջինջ ըրէ, կ'ըսէ Տէրը,
Եւ քեզի ամէն պատուիրածիս պէս ըրէ։
22 Երկրին մէջ պատերազմի ձայն
Եւ մեծ կոտորած կայ։
23 Բոլոր երկրին մուրճն իշնչպէս կոտրեցաւ և մանրեցաւ,

•Այսինքն՝ ապստամբութեան։
†Այսինքն՝ այցելութեան։



Բաբելոն ազգերուն մէջ իշնչպէս աւերակ եղաւ։
24 Քեզի որոգայթ լարեցի և բռնուեցար, ով Բաբելոն,
Բայց դուն չգիտցար։
Գտնուեցար և ձեռք անցար,
Վասն զի Տէրոջը դէմ հակառակեցար։
25 Տէրը իւր զինարանը բացաւ
Եւ իւր բարկութեան զէնքը հանեց,
Քանզի Քաղդէացւոց երկրին մէջ
Զօրաց Տէր Եհովան գործ ունի,
26 Երէքէ՛ն ծայրէն անոր վրայ եկէք,
Անոր շտեմարանները բացէք,
Զանիկա չղիներու պէս դիզեցէք,
Եւ նզովածի պէս զանիկա բնաջինջ ըրէք.
Անոր միացորդ չմնայ,
27 Անոր բոլոր զառաւակները կոտնցուցէք,
Թող անոնք սպանդանոց իջնեն.
Վա՛յ անոնց, քանզի անոնց օրը,
Անոնց այցելութեան ժամանակն, հասած է,
28 Բաբելոնի երկրէն փախստեներուն և ազատածներուն ձայնը Սիոնի մէջ պատմել,
Որ մեր Տէր Աստուծոյն վրէժխնդրութիւնը,
Անոր տաճարին վրէժխնդրութիւնը Սիոնի մէջ պատմել։
29 Բաբելոնի վրայ •աղեղնաւորները կանչեցէք.
Ով բոլոր աղեղ լարողներ,
Անոր բոլորտիքն անոր դէմ բանակեցէք.
Գուցէ մարդ մը ազատի,
Անոր իւր գործոց համեմատ հատուցում ըրէք,
Անոր իւր ամէն բանին համեմատ ըրէք.
Վասն զի անիկա Տէրոջը դէմ,
Իսրայէլի Սրբոյն դէմ, հպարտութիւն ըրաւ։
30 Ուստի անոր քաղաքները իւր հրապարակներուն մէջ պիտի իյնան,
Եւ անոր բոլոր պատերազմական մարդիկը

•կամ չաուերը

Այն օրը բնաջինջ պիտի ըլլան, կ'ըսէ Տէրը։
31 Ահա ես քեզի դէմ եմ, ով հպարտ, կ'ըսէ զօրաց Տէր Եհովան.
Քանզի քու օրդ, քեզի այցելութիւն ընելու ժամանակս, հասած է,
32 Եւ հպարտը գլորելով պիտի իյնայ,
Եւ մարդ պիտի չըլայ որ զանիկա վերցունէ.
Եւ անոր քաղաքներուն մէջ կրակ պիտի բռնկցնեմ,
Որ անոր բոլոր չրջակայ տեղւոյն քը պիտի ուտէ։
33 Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Իսրայէլի որդիքը և Յուդայի որդիքը միկտեղ ջիանք կրեցին.
Եւ անոնց բոլոր գերեվարները զանոնք բռնեցին,
Եւ չեն ուզեր զանոնք արձակել։
34 Անոնց Փրկիչը զօրաւոր է,
Անոր անունը Զօրաց Տէր է.
Անիկա անշուշտ անոնց դատին չատաւգով պիտի ըլլայ,
Որպէս զի երկրին հանգիստ տայ,
Եւ Բաբելոնի բնակիչները խռովեցնէ։
35 Տէրը կ'ըսէ որ Քաղդէացւոց վրայ
Եւ Բաբելոնի բնակիչներուն վրայ
Եւ անոր իշխաններուն և իմաստուններուն վրայ սուր իյնայ։
36 Ստախօսներուն վրայ սուր իյնայ, և պիտի խենթենան.
Անոր քաջերուն վրայ սուր իյնայ, և պիտի զարհուրին.
37 Անոր ձիերուն և կառքերուն վրայ
Եւ անոր մէջ եղող բոլոր խառնիճաղանճ բազմութեան վրայ սուր իյնայ,
Եւ կանանց պէս պիտի ըլլան.
Անոր գանձերուն վրայ սուր իյնայ,
և պիտի յափշտակուին.
38 Անոր ջուրերուն վրայ չորութիւն իյնայ, և պիտի ցամքին.
Քանզի անիկա գրաւեալ երկիր է,
Եւ էրէց կուռ քերով կը յիմարին։
39 Անոր համար հոն վայրենի կատուները և բուերնիները պիտի բնակին,
Եւ հոն ջայլամներ պիտի բնակին.

և անիկա ապէ և մարդաբնակ պիտի
չըլլայ,
և ազգէ ազգ հոն բնակիչ պիտի չըլլայ։
40 Աստուծոյ կործանած Սոդոմի և Գոմո-
րի
և անոր չրջակայ քաղաքներուն պէս,
կ'ըսէ Տէրը,
Հոն պիտի չնստի,
և անոր մէջ մարդու զաւակ պիտի
չբնակի։
41 Ահա հիւսիսէն ժողովուրդ կու գայ,
և մեծ ազգ և շատ թագաւորներ
երկրքս ծայրերէն պիտի արթննան։
42 Անոնք աղեղ և նիզակ կը կրեն,
Անոնք անգութ և անգթասիրտ են.
Անոնց ձայնը ծովու պէս կը գոռայ,
և անոնք ձիերու վրայ կը հեծնեն,
և պատերազմող մարդու պէս
ինձի դէմ կը շարուին, օվ Բաբելոնի
աղջիկ։
43 Երբ Բաբելոնի թագաւորն անոնց լու-
րը լսեց,
Անոր ձեռքերը թուլցան։
Նեղութիւնը պատեց զինա
Ծննդական կնոջ երկանց պէս։
44 Ահա առիւծի պէս ամբառ բնա-
կարանին վրայ պիտի ելնէ
Յորդանանու գետերուն յորդելէն.
Բայց անոր վրայէն չափազանց պիտի փախ-
ցունեմ զանոնք։
և ո՞վ է այն ընտրեալը որ անոր վրայ
դնեմ.
Վասն զի ինծի նման ո՞վ կայ,
և ինծի հետ ո՞վ պիտի վիճաբանի.
և ո՞վ է այն հովիւը որ իմ առջեւս
պիտի կենայ։
45 Անոր համար Բաբելոնի վրայ Տէրոջը
խորհուրդը,
և Քաղդեացոց երկրին վրայ մտա-
ծած մտածմունքը, մանկ ըրէք.
Հօտին փոքրիկն անպատճառ պիտի
քշէ զանոնք.
Անշուշտ անոնց բնակարանները անոնց
հետ պիտի աւրէ։
46 Բաբելոնի առնուելուն ձայնէն երկիրը
կը շարժի,
և ազգերուն մէջ աղաղակ կը լսուի։

1 Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես Բաբելոնի վրայ
և իմ Թշնամիներուս մէջնեղ բնակող-
ներուն վրայ
Ապականիչ հով մը պիտի հանեմ։
2 և Բաբելոնի վրայ հօտաղներ պիտի ղրր-
կեմ,
և զանիկա պիտի հօտեն և անոր եր-
կիրը պիտի պարպեն.
Վասն զի պատուհասի օրն անոր վրայ
ամէն կողմէ պիտի գան։
3 Աղեղնաւորը պիտի լարէ իր աղեղն
ազեղնաւորին դէմ,
և իր զրահով հպարտացողին դէմ.
և անոր երիտասարդներուն մի խնա-
յեր,
Անոր բոլոր զօրքը նզովածի պէս բնա-
ջինջ ըրէք։
4 Եւ Քաղդեացոց երկրին մէջ՝ սպան-
նուածներ,
և անոր հրապարակներուն մէջ խոցո-
տուածներ պիտի իյնան։
5 Քանզի Իսրայէլ և Յուդա իր Աս-
տուածմէն,
Զօրաց Տէրոջմէն, չլերժուեցաւ,
Թէպէտև անոնց երկիրը Իսրայէլի Սբը-
բոյն դէմ
Յանցանօք լցաւ։
6 Բաբելոնի մէջէն փախէք,
և ամէն մարդ Իր իր անձն ազատէ,
Որ անոր անօրէնութեանմէ չկործանիք.
Քանզի ասիկա Տէրոջը վրէժխնդրու-
թեան ժամանակն է,
Ինք անոր հատուցում պիտի բնէ։
7 Բաբելոն Տէրոջը ձեռքով մէջ
Բոլոր երկիրն արբեցուցնող ոսկի գա-
ւաթ եղաւ.
Անոր դիւթէն ազգերը խմեցին,
Անոր համար ազգերը յիմարեցան։
8 Բաբելոն յանկարծ ինկաւ կոտրեցաւ,
Անոր վրայ ողբացէք.
Անոր վիրաց համար բալասան առէք,
Թերևս բժշկութիւն գտնէ։
9 Բաբելոնի դեղ ըրինք, բայց բժշկու-
թիւն չգտաւ.



Զանիկա թողէք, և իւրաքանչիւր իւր
երկիրը երթայ.
Վասն զի անոր դատաստանը մինչև եր-
կինք հասաւ,
և մինչև ամպերը ելաւ։
10 Տէրը մեր արդարութիւնը էր՝ եկէք հա-
նենք
Եկէք, և Սիոնի մէջ
Մեր Տէր Աստուծոյն գործը պատմենք։
11 Նետերը փայլեցուցէք, վահաններն
առէք.
Տէրը Մարաց թագաւորներուն հոգին
արթնցուց,
Քանզի Բաբելոնի վրայ խորհեցաւ որ
բնաջինջ ընէ զնա.
Վասն զի Տէրոջը վրէժխնդրութիւնը,
Անոր տաճարին վրէժխնդրութիւնն է
այս։
12 Բաբելոնի պարիսպներուն դէմ դրօշ
վերցուցէք,
Պահապան զօրքը զօրացուցէք,
Դէմերը կարգեցէք, դարաններ պատ-
րաստեցէք.
Քանզի Տէրը որոշեց,
և Բաբելոնի բնակչաց վրայ ըսած
խօսքն ի գործ դրաւ։
13 Ով շատ ջուրերու քով բնակող՝ շատ
գանձեր ունեցող,
Քու վախճանդ՝ քու ագահութեանդ
չափը եկաւ։
14 Զօրաց Տէրը իր անձին վրայ երդուաւ
ըսաւ. ըսելով,
Անշուշտ գերդ մարախի նման
չափ մարդերով պիտի լեցնեմ.
և քու վրադ բարձր ձայնով պիտի
պոռան։
15 Երկիրը իր զօրութեամբը հիմնեց,
Աշխարհը իր իմաստութեամբ հաստա-
տեց,
և երկինք իր խորհրդով տարածեց։
16 Երբ իր ձայնը կու տայ, երկինքի մէջ
ջուրերու բազմութիւն կ'ըլլայ,
և երկրի ծայրերէն շղթաներ կը հանէ.
Անձրեւի համար փայլակներ կը շինէ,
և հով կը հանէ իր շտեմարաններէն,
17 Ամէն մարդ գիտութենէ զուրկ, ա-
նուսում դարձաւ,
Ամէն ոսկերիչ է՝ քանդակած կուռ-
քին պատճառաւ ամօթով կ'ա-
զատ.
Վասն զի անոր ձուլածոյ կուռքը սը-
տութիւն է,
և անոնք հոգի չունին,
18 Անոնք ունայնութեան և խաբէութեան
գործեր են.
Երբ պատիժ իրենց ըլլայ անոնց, պիտի
կորսուին,
19 Յակոբայ բաժինն ասոնց պէս չէ,
Վասն զի անիկա ամէն բան Աստեղծողն
է,
և Իսրայէլ անոր ժառանգութեան վի-
ճակն է.
Ե՛ անոր անունը Եհովայ Զաբաւոթ
է։
20 Դուն իմ կռանս, պատերազմական
գործիս ես.
և քեզմով ազգեր պիտի կործանեմ,
և քեզմով թագաւորութիւններ պի-
տի աւրեմ,
21 և ձին և անոր հեծեալը քեզմով պի-
տի կործանեմ,
և կառքը և անոր վրայ հեծեալը քեզ-
մով պիտի կործանեմ,
22 և քեզմով մարդը և կինը պիտի կոտ-
րեմ,
և քեզմով ծերը և երիտասարդը պի-
տի կործանեմ,
և կոյսը և կոյսը քեզմով պիտի
կործանեմ,
23 և հովիւը և անոր հօտը քեզմով պի-
տի կործանեմ,
երկրագործը և անոր եզները զոյգ
քեզմով պիտի կործանեմ,
և կուսակալները և նախարարները
քեզմով պիտի կործանեմ։
24 և Բաբելոնի և քաղդեացոց երկրին
բոլոր բնակիչներուն
Պիտի հատուցանեմ իրենց բոլոր չա-
րութիւնը
Զոր ձեր աչաց առջեւ Սիոնի մէջ, կ'ը-
սէ Տէրը։
25 Ով բոլոր երկիր աւրող ապականիչ
լեռ,
Ահա ես քեզի դէմ եմ, կ'ըսէ Տէրը,

Եւ իմ ձեռքս քու վրադ պիտի երկննցունեմ,
Եւ զքեզ վճռերէն վար պիտի գլորեցնեմ,
Եւ զքեզ այրած լինս պիտի ընեմ.
26 Եւ քենէ անկեան քար և հիման քար պիտի չառնեն,
Քանզի յաւիտենական աւերակ պիտի ըլլաս, կ'ըսէ Տէրը։
27 Երկրին մէջ դրօշ վերցուցէք,
Ազգերուն մէջ փող հնչեցուցէք,
Անոր դէմ ազգերը պատրաստեցէք,
Անոր վրայ Արարատայ, Մինեայ և Ասքենազեայ թագաւորութիւնները կանչեցէք,
Անոր վրայ զօրապետներ դրէք,
Մարտա մարախներու պէս ձիեր հանեցէք։
28 Անոր վրայ ազգերը, Մարաց թագաւորները,
Անոնց կուսակալները և բոլոր նահանգապետները
Եւ անոնց իշխանութեան բոլոր երկիրը պատրաստեցէք։
29 Եւ երկիրը պիտի դողայ և նեղութիւն կրէ,
Վասն զի Բաբելոնի վրայ Տէրոջը ուղեցած խորհուրդները պիտի հաստատուին
Բաբելոնի երկիրն աւերակ ընելու թիւն ընելու համար։
30 Բաբելոնի զօրաւոր մարդիկը պատերազմելէն դադրեցան,
Բերդերու մէջ բնակեցան.
Անոնց ոյժը կտրեցաւ, կանանց պէս եղան.
Անոր բնակարանները այրեցին, անոր նիգերը կտրեցան։
31 Սուրհանդակը սուրհանդակի հանդիպելու,
Եւ լուրերը լուրերի հանդիպելու պիտի վազէ
Բաբելոնի թագաւորին պատմելու համար
Թէ անոր քաղաքը մէկ ծայրէն առնուեցաւ,
32 Եւ Թէ ամէն անցք բռնուեցան,
Եւ եղէգները կրակով այրեցան,
Եւ պատերազմականն մարդիկը պարոտրեցան։
33 Քանզի զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածն, այսպէս կ'ըսէ.
Բաբելոնի ազջիկը կալի պէս է,
Անոր ծեծուելու ատենն է.
Քիչ ժամանակ ետքը անոր հնձոյ ժամանակը պիտի գայ։
34 Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը
Զիս կերաւ, զիս բնաջինջ ըրաւ,
Զիս պարապ ամանի պէս ըրաւ,
Վիշապի պէս զիս կլլեց,
Իմ փափկութիւններէս իր փորը կշտացուց,
Զիս դուրս նետեց։
35 Սիոնի բնակիչը պիտի ըսէ,
Ինծի և իմ մարմնոյս եղած զրկանքը Բաբելոնի վրայ ըլլայ։
Եւ Երուսաղէմ պիտի ըսէ,
Իմ արիւնս Քաղդեացւոց երկրին բնակիչներ վրայ ըլլայ։
36 Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես քու դատիդ պաշտպան պիտի կենամ,
Եւ քեզի համար վրէժխնդիր պիտի ըլլամ,
Եւ անոր ծովը ցամաք պիտի ընեմ,
Եւ անոր աղբիւրը պիտի չորցուներ.
37 Եւ Բաբելոն ——էր—ի դէզեր,
Շնագայլերու բնակարան,
Եւ զարմանքի և սուլելու ——ի պիտի ըլլայ,
Եւ հոն մարդ պիտի չբնակի։
38 Անոնք առիւծներու պէս իրարու պիտի մռնչեն,
Ս— կորիւններու պէս պիտի կանչուրտան։
39 Երբ անոնք ջերմնան, անոնց կուտամ պիտի ընեմ,
Եւ գինով պիտի արբեցուներ, որպէս զի զուարթանան,
Եւ յաւիտենական քնով քնանան
Եւ չարթննան, կ'ըսէ Տէրը։
40 Ջանոնք սպանդանոց պիտի իջեցուներ գառներու պէս
Կամ խոյերու պէս նոխազներու հետ։



41 Ի՜նչպէս առնուեցաւ Սիսակ.
Եւ բոլոր երկրին պարծանքը բռնուեցաւ.
Բաբելոն ի՜նչպէս աւերակ եղաւ ազգերուն մէջ,
42 Ծովը Բաբելոնի վրայ եկաւ,
Անոր ալեաց յորդութիւնէն ծածկուեցաւ։
43 Անոր քաղաքները աւերակ,
Անջուր երկիր և անապատ եղան.
Ս— այնպիսի երկիր մը եղաւ ուր մարդ չբնակիր,
Եւ անկէ մարդու որդի չանցնիր։
44 Եւ Բաբելոնի մէջ Բէլայ այցելութիւն պիտի ընեմ,
Եւ անոր բերնէն անոր կլածը պիտի հանեմ.
Եւ այլ ևս ազգերն անոր պիտի չդիմեն.
Բաբելոնի պարիսպն ալ պիտի փլի։
45 Անոր ժէջէն ելէք, ով իմ ժողովուրդս
Եւ ամէն մարդ իր անձն ազատէ
Տէրոջը սաստիկ բարկութենէն։
46 Գուցէ երկրին մէջ լսուելու լուրէն
Ձեր սիրտը թուլնայ և վախնաք,
Երբ մէկ տարի մէջ՝ լուր մը,
Եւ հետևեալ տարին մէջ ուրիշ լուր մը գայ,
Եւ երկրին մէջ բռնութիւն ըլլայ,
Ս— իշխան իշխանի դէմ ոտ+ ելլէ։
47 Անոր համար ահա օրերը կու գան
Որ Բաբելոնի կուռց այցելութիւն պիտի ընեմ.
Եւ անոր բոլոր երկիրն ամօթով պիտի ըլլայ,
Եւ անոր բոլոր սպաննուածներն անոր մէջ պիտի իյնան։
48 Ս. երկինք և երկիրը և բոլոր անոնց մէջ եղածը
Բաբելոնի վրայ պիտի ցնծան,
Վասն զի աւերմունքն հիւսիսէն պիտի գան անոր, կ'ըսէ Տէրը։
49 Ինչպէս որ Բաբելոն Իսրայէլի սպանուածներուն վար ձգեց,
Նոյնպէս Բաբելոնի մէջ բոլոր երկրին սպանուածները պիտի իյնան։
50 Ով սուրէ ազատուածներ, գացէք,
Մի կայնիք.
Հեռուէն Տէրը յիշեցէք,
Եւ Երուսաղէմ ձեր միտքը թող գայ։
51 Ամչցանք, վասն զի նախատինք լսեցինք.
Ամօթ ծածկեց մեր երեսը,
Քանզի Տէրոջը տան սրբարաններուն մէջ օտարազգիներ մտան։
52 Անոր համար ահա օրերը կու գան, կ'ըսէ Տէրը,
Որ անոր կուռքերուն այցելութիւն պիտի ընեմ,
Եւ անոր բոլոր երկրին մէջ վիրաւորները պիտի հեծեծեն։
53 Թէև Բաբելոն մինչև երկինք ելլէ,
Եւ իր *զօրութիւնը բարձրութեան մէջ հաստատէ,
Իմ կողմանէս աւերողներ պիտի գան անոր, կ'ըսէ Տէրը։
54 Բաբելոնէ՝ աղաղակի ձայն,
Եւ Քաղդեացւոց երկրին մեծ կոտորածի ձայն է—ւ։
55 Քանզի Տէրը զԲաբելոն կ'աւերէ,
Եւ անոր մէջէն մեծ ձայնը կը խափանէ.
Քանզի անոնց ալիքը շառաչելու պէս կը գոչեն,
Ս— անոնց ձայնն ազդակուիլ կ'ելլէ։
56 Քանզի անոր վրայ, Բաբելոնի վրայ, աւերող մը եկաւ,
Եւ անոր զօրաւորներն առնուեցան,
Անոնց աղեղները կտրեցան.
Քանզի Տէրը հատուցիչ Աստուած է.
Անշուշտ հատուցում պիտի ընէ։
57 Եւ անոր իշխաններն և իմաստուններն,
Կուսակալներն և նախարարներն
Եւ զօրաւոր մարդիկը պիտի արբեցուներ.
Եւ անոնք յաւիտենական քնով պիտի քնանան,
Եւ պիտի չարթննան, կ'ըսէ այն Թագաւորը
Որոյ անունը Զօրաց Տէր է։
58 Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Բաբելոնի լայն պարիսպները բոլորովին պիտի փլին,

*ԵԲՐ. զօրութեանը բարձրութիւնը ամբացուանէ,

եւ անոր բարձր գուռները կրակով պիտի այրին։
Եւ Ժողովուրդները ի զուր,
եւ ազգերը կրակի համար պիտի աշխատեն եւ յոգնին։
59 Այս խօսքն է զոր Երեմիա մարգարէն պատուիրեց Մաասեայի որդւոյն Ներիայի որդւոյն Սարայեայի, երբ անիկա Յուդայի Սեդեկիա Թագաւորին *կը դնէր, անոր Թագաւորութեան չորրորդ տարին, Բաբելոն գնաց. և Սարայեա գլխաւոր աներկապան էր։
60 Ասոնք զի Երեմիա Բաբելոնի վրայ գալու ամէն չարիքը գրքի մը մէջ գրեց, այսինքն այս բոլոր խօսքերը որ Բաբելոնի դէմ գրուած են. Եւ Երեմիա Սարայեայի ըսաւ, երբ Բաբելոն հրթռաս, *նայէ որ կարդաս այս բոլոր խօսքերը, եւ ըսես, Ով Տէր, դուն այս անդունդս համար բսիր որ ոչինիս պիտի ապրեցնէ, և մարդ ու մինչև անասուն անոր մէջ բնակիչ պիտի չըլլայ, այլ յաւիտենական ամայութիւն պիտի ըլլայ։
63 Եւ երբ այս գիրքը կարդաս լմնցնես, անոր վրայ քար մը կապես և գանիկա Եփրատ մէջ նետես. Եւ ըսես, Այսպէս պիտի ընկղմի Բաբելոն, և ալ *ոտ պիտի չկանգնի այն չարեաց պատճառաւ զոր Ես անոր վրայ պիտի բերիմ, և անոնք պիտի յոգնին։
Երեմիայի խօսքերը մինչև հոս են։

## ԳԼ. ՝Ր

1 Անդեկիա քառասնիկ տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, և Երուսաղէմ մէջ տասնումէկ տարի Թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Ամիտաղ էր Լիբնացի Երեմիայի աղջիկն էր։ Եւ անիկա Յոյակիմի բոլոր ըրածներուն Տէրոջ 3 չը առջև չարութիւն ըրաւ։ Որովհետև Տէրոջը բարկութիւնը Երուսաղէմի և Յուդայի վրայ էր, մինչև որ զանոնք իր երեսէն ձգէր. անոր համար Սեդեկիա Բաբելոնի Թագաւորին ապստամբեցաւ։

4 Եւ եղաւ որ անոր Թագաւորութեան իններորդ տարին տասներորդ ամիսը ամսուն տասներորդ օրը Բաբելոնի Նաբուգողոնոսոր Թագաւորը իր բոլոր զօրօք Երուսաղէմի վրայ եկաւ, և անոր դիմացը բանակեցաւ, և անոր դէմ 5 չորքմասնի պատնէշներ շինեցին։ Եւ մինչև Սեդեկիա Թագաւորին տասնմէկերորդ տարին քաղաքը պաշարեալ 6 մնաց էր։ Ե՝ չորրորդ ամսուն մէջ ամսուն իններորդ օրը քաղաքին մէջ սաստիկ սով կար, և երկրին ժողովուրդը հաց չունէր։ Եւ քաղաքին պարիսպը ճեղքուեցաւ, և բոլոր պատերազմողները փախան, և գիշերով Թագաւորի պարտէզին քով Եղոգ երկու պարիսպին մէջի դրան ճամբով քաղաքէն հեռացան. և Քաղդէացիք քաղաքին բոլորտիքը կեցած էին. և անոնք գացին ճամբէն 8 գացին։ Եւ Քաղդէացւոց զօրքը Թագաւորին հետևեցաւ Երիքովի դաշտերուն մէջ Սեդեկիայի հասան, և անոր բոլոր զօրքն անոր քովէն ցրուեցան։ Եւ Թագաւորը բռնեցին, և դարձեալ Բաբելոնի Թագաւորին Ռեվղաթ տարին Եմաթի երկրին մէջ, և անոր 10 դատաստանը տեսաւ։ Եւ Բաբելոնի Թագաւորը Սեդեկիայի որդիքն անոր աչաց առջև սպրդեց. և Յուդայի բոլոր իշխանները Ռեվղաթի մէջ մորթեց։
11 Եւ Սեդեկիայի աչքերը կուրցուց և զանիկա շղթաներով կապեց, և Բաբելոնի Թագաւորը զանիկա Բաբելոն տարաւ, և զանիկա մինչև անոր մահուան օրը բանտի մէջ պահեց։
12 Եւ Բաբելոնի Թագաւորին, Նաբուգողոնոսոր Թագաւորին, իններորդ տարին հինգերորդ ամսոյ տասնին Բաբելոնի Թագաւորին առջև կայնող Նաբուզարդան գահճապետ պահր Երուսաղէմ մտաւ։ Եւ Տէրոջը տունը և Թագաւորին տունն այրեց, և Երուսաղէմի բոլոր տուները և բոլոր մեծ տուները կրակով այրեց։ Եւ գահճապետին հետ եղող Քաղդէացւոց բոլոր զօրքը Երուսաղէմի բոլոր շրջակայ 15 պարիսպները փլուցին։ Եւ Ժողովուրդին ազքատներէն, և քաղաքին մէջ մնացած Ժողովուրդէն մնացորդը, և Բաբելոնի Թագաւորին խնդող փախստականները, և մնացած բազմութիւնը, 16 Նաբուզարդան գահճապետը գերի տարաւ։ Եւ Նաբուզարդան գահճապետը երկրին ազքատներէն Թողուց այգեգործներ և երկրագործներ ըլլալու համար։
17 Եւ Քաղդէացիք Տէրոջը տան մէջ եղած պղնձէ սիւները և սեղաններները, և Տէրոջը տան մէջ եղած պղնձէ ծովը կոտոր կոտոր ըրին, և անոնց բոլոր պղ18 ղինձը Բաբելոն տարին։ Եւ Թաղարները և Թակոնները և բազմոցականները և կոնքերը և խնկանամանները և պաշտօնի համար գործածուած բոլոր պղնձէ ա19 մանները առին։ Եւ գաւաթները և բուրվառները և կոնքերը և Թաղարները և աշտանակները և խնկամանները և բաժակները առաջ դահճապետը, ինչ որ ոսկիէ էր ոսկի, և ինչ 20 որ արծաթէ էր արծաթ. Երկու Սողոման Թագաւորին Տէրոջը տան հաստատած չինած երկու սիւները, մէկ ծովը և *տեղանոցներուն տակ եղած տասուերկու պղնձէ եղերը, բոլոր այս 21 գործեցած պղինձը կշռոյ չէր գար։ Եւ սիւներէն մէկուն բարձրութիւնը տասնուերկու կանգուն էր, և անոր շրջապատը տասուերկու կանգուն էր, և անոր 22 հաստութիւնը չորս մատնաչափ էր։ Եւ անոր վրայ պղնձէ խոյակ կար. և մէկ խոյակին բարձրութիւնը հինգ կանգուն էր, և խոյակին վրայ շուրջանակի ցանցակերպ զարդ և նռնեւեր կային, ամէնքը պղնձէ էին. միւս սիւնն ալ նռնեւերով այնպէս էր։ 23 Եւ նռնեւերն ամէն կողմէն իննսունեվեց էին, և ցանցակերպ զարդին վրայ շուրջանակի բոլոր նռնեւերն հարիւր էին։
24 Եւ դահճապետն առաջին քահանան Սարայեա և երկրորդ քահանան Սոփոնիա և դրան երեք պահապաններն ա25 ռաւ։ Եւ քաղաքէն առաւ ներքինի մը որ պատերազմող մարդոց զօրագլուխն էր։ և քաղաքին մէջ գտնուած Թագաւորին *առջև կացողներէն եօթը մարդ, և երկրին ժողովուրդը զինուորութեան գրող՝ զօրքին մեծ գրագիրը, և քաղաքին մէջ գտնուած երկրին ժողովուրդէն վաթսուն մարդ։
26 Եւ Նաբուզարդան գահճապետը զանոնք առաւ և Բաբելոնի Թագաւորին 27 Ռեվղաթ տարաւ։ Եւ Բաբելոնի Թագաւորը զանոնք զարկաւ, և Եմաթի երկրին Ռեվղաթի մէջ գանոնք մեռուցց։ Այսպէս Յուդա իր երկրէն գերի տարուեցաւ։
28 Նաբուգողոնոսոր գերի վարած ժողովուրդն այս է. եօթներորդ տարին երեք հազար քսանևերեք Հրեայ.
29 Նաբուգողոնոսոր Երուսաղէմէ ութ հարիւր եւ եօթանասներորդ հոգի. Նաբուգողոնոսոր քսանևերրորդ տարին Նաբուզարդան գահճապետ Հրեաներէն եօթը հարիւր քառասունհինգ հոգի գերի վարեց. ամէնքը չորս հազար վեց հարիւր հոգի էր։
31 Եւ եղաւ որ Յուդայի Յովաքին Թագաւորին գերութեան երեսունևեօթներորդ տարին երկոտասաներորդ ամիսը, ամսուն քսանևհինգերորդ օրը, Բաբելոնի Նշմարտվածք Թագաւորը, իր Թագաւորութեան տարին, Յուդայի Յովաքին Թագաւորին գլուխը բարձրացուց, և զանիկա բանտէն հանեց. 32 Եւ անոր հետ քաղցրութեամբ խօսեցաւ, և անոր աթոռը Բաբելոնի մէջ իրեն հետ եղող Թագաւորներուն աթոռէն վեր դրաւ. Եւ անոր բանտի հագուստները փոխեց. և անիկա իր կենացը բոլոր օրերուն մէջ միշտ անոր առաջև հաց կ'ուտէր. Եւ անոր ուտիքը մշտական ուտիք ըլլալով, անոր կենաց բոլոր օրերուն մէջ մինչև մահուան օրը Բաբելոնի Թագաւորին կողմէն օր օր անոր կը տրուէր։

*Կամ հնաբ՝ †Կամ տես և կարդա

*Կամ անոր տակը եղած տասուերկու եղերը՝ մեքենաները։

*Եբր. երեսը տեսնողներէն

# ՈՂԲՔ ԵՐԵՄԻԱՅ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Ի՛նչպէս առանձին կը նստի բազմամարդ քաղաքը.
Ազգերու մէջ մեծ եղողն իրրև այրի եղաւ,
Գաւառներուն մէջ իշխանուհի եղողն հարկառուու եղաւ։
2 Գիշերն անդադար կու լայ, և անոր արտասուքն այտերուն վրայ են.
Անոր բոլոր սիրելիներէն անոր մխիթարութիւն առնող չկայ.
Անոր բոլոր բարեկամներն անոր նենգութիւն ըրին, անոր թշնամի եղան։
3 Ցուդա տառապանաց և խիստ ծառայութեան համար գերի վարեցաւ.
Հեթանոսներուն մէջ կը բնակի, հանգիստ չգտաներ.
Անոր բոլոր հալածիչներն անոր նեղութեանց մէջ անոր վրայ հասան։
4 Սիովնի ճամբաները սուգ կը բռնեն, վասն զի հանդիսաւոր ասներուն եկողներ չկան.
Անոր բոլոր դուռներն ամայացած են, անոր քահանաները կը հեծեծեն.
Անոր կոյսերը կը տրտմին, և ինք դառնութեան մէջ է։
5 Անոր նեղիչներն իշխան եղան, անոր թշնամիներն յաջողութիւն գտան,
վասն զի Տէրը տրտմութեան մատնեց զնա անոր շատ յանցանաց համար.
Անոր փոքր ազգերը թշնամւոյն առջեւէն գերի գացին։
6 Եւ Սիոնի դստերէն անոր բոլոր վայելչութիւնը գնաց.
Անոր իշխանները ճարակ չգտնող եղջիւրներու պէս եղան,
Եւ հալածողին առջեւէն առանց ուժոյ կ'երթան։
7 Երուսաղէմ իւր տառապանաց և թըշուառութեան օրերը,
Իւր առաջուց ունեցած բոլոր ցանկալի բաները յիշեց,
Երբ անոր ժողովուրդը թշնամւոյն ձեռք իյնար, և անոր օգնութիւն ըլլող չեղաւ.
Թշնամիները տեսան զնա և անոր կործանման վրայ խնդացին։
8 Երուսաղէմ ծանր մեղք գործեց, անոր համար *պղծի համարուեցաւ.
Անոնք որ կը պատուէին զնա՝ անարգեցին զնա, վասն զի անոր մերկութիւնը տեսան.
Եւ անիկա հառաչեց և նա դարձաւ։
9 Անոր պղծութիւնն անոր քղանցներուն վրայ է, անիկա իւր վախճանը չյիշեց,
Եւ զարմանալի կերպով նուաստացաւ. անիկա մխիթարիչ չունի։
Ով Տէր, իմ տառապանաց նայէ, վասն զի թշնամին հպարտացաւ։
10 Անոր բոլոր ցանկալի բաներուն թըշնամին ձեռք երկրնցուց.
Ցանզի հեթանոսները տեսան որ իւր սրբարանին մէջ մտան,
Որոնց համար դուն պատուիրած էիր որ անոնք քու ժողովքիդ մէջ չմտնեն։
11 Անոր բոլոր ժողովուրդը հաց փնտռելէ հառաչեց.
Իրենց հոգին զօրացունելու համար իրենց ցանկալի բաները կերակրոյ փոխարէն տուին.
Տես, ով Տէր, և նայէ, վասն զի անարգուեցայ։

*Կամ Թափառական եղար։

12 Ամենուքնէ հոգ չէք ըներ, ով բոլոր անցաւորք ճանապարհաց.
Նայեցէք և տեսէք, թէ արդեօք կայ ցաւ այս ցաւին պէս որ իմ վրաս եկաւ.
Վասն զի Տէրը զիս նեղեց իւր սաստիկ բարկութեան օրը։
13 Բարձրէն իմ ոսկորներուս կրակ ղրկեց որ անոնց տիրեց.
Ոտքերուս ցանց տարածեց և զիս ետ դարձուց.
Զիս ամայի ըրաւ և բոլոր օրը վէս մատած ըլլալս։
14 Իմ յանցանացս լուծն անոր ձեռքով կապուեցաւ.
Անոնք *միացան և իմ պարանոցիս վրայ եկան, իմ ոյժս կարեց,
Տէրը զիս այնպիսի ձեռաց մատնեց որոնցմէ չեմ կրնար դիմադրել։
15 Տէրը իմ մէջս իմ բոլոր զօրաւորներս անարգեց.
Իմ երիտասարդներս կոտրելու համար իմ վրաս ժողովք կանչեց.
Տէրը ցուցոյի կոյս աղջիկը հնձանի մէջ կոխեց։
16 Ասոնց համար կու լամ, աչքերս, աչքերս †արտասուք կ'իջեցնեն.
Վասն զի ինձ հեռացաւ մխիթարիչը որ իմ հոգիս պիտի նորոգէր.
Իմ որդիքս նուաղեցան, վասն զի թըշնամին զօրացաւ։
17 Սիօն իւր ձեռքը տարածեց, անոր մխիթարութիւն առնող չկայ.
Տէրը Յակոբայ համար հրամայեց որ անոր թշնամիները պատեն զնա.
Երուսաղէմ անոնց մէջ դաշտանաւոր կնոջ պէս եղաւ։
18 Տէրը արդար է, վասն զի անոր հրամանին ապստամբ եղայ.
Լսեմ, ով բոլոր ժողովուրդներդ, մտիկ ըրէք և իմ ցաւս տեսէք.
Իմ կոյսերս և երիտասարդներս գերութեան գացին։

*Նբէր. հիւսուեցան
†Նբէր. առաք եղեվ,
‡Նբէր. չուր

19 Իմ սիրականներս կանչեցի, անոնք զիս խաբեցին.
Իմ քահանաներս և ծերերս քաղաքին մէջ իրենց հոգին աւանդեցին,
Երբ իրենց համար կերակուր կը փընտռէին իրենց հոգին զօրացունելու համար։
20 Ով Տէր, նայէ, վասն զի նեղեցայ, աղիքս խառնեցան,
Սիրտս նեղուի զիս տակնուվրայ է, վասն զի խիստ շատ ապստամբեցայ.
Դուրսէն սուրը վէս կը զրկէ ՝ ներսը մահ կայ։
21 Իմ հառաչանքս լսեցին, բայց ինծի մխիթարութիւն տուող չկայ.
Իմ բոլոր թշնամիներս իմ թշուառութիւնս լսելով ուրախացան, վասն զի դուն ըրիր ասիկա.
Այն օրը որ կը կանչես, պիտի բերես, և անոնք ինծի պէս պիտի ըլլան։
22 Անոնց բոլոր չարութիւնը թող քու առջեւդ հասնի.
Եւ անոնց այնպէս ըրէ, ինչպէս ինծի ըրիր իմ բոլոր յանցանացս համար.
Վասն զի իմ հեծութիւններս շատ են և սիրտս նուաղած է։

## ԳԼ. Բ

1 Ի՛նչպէս Տէրը իւր բարկութեամբ խաւարով ծածկեց Սիօնի աղջիկը.
Իսրայէլի փառքը յերկինից վար նետեց,
Եւ իւր բարկութեան օրը իւր ոտից պատուանդանը չյիշեց։
2 Տէրը առանց խնայելու Յակոբայ բոլոր բնակարանները կլլեց,
Ցուդայի աղջիկան ամրոցները իւր բարկութեամբ փլուցուց և հիմնայատակ ըրաւ,
Թագաւորութիւնը և անոր իշխանները պղծեց։
3 Սաստիկ բարկութեամբ Իսրայէլի բոլոր եղջիւրը փշրեց.
Անոր աջ ձեռքը թշնամւոյն երեսէն ետ դարձուց,

Եւ ծակոցայ մէջ կրակի բոցայ պէս բռնկի՛ցաւ, ոչ անոր բոլորտիքը կ'երթար։
4 Իւր ադեղը թշնամւոյ պէս լարեց, իւր աջ ձեռքով հակառակորդի պէս կեցաւ,
Եւ բոլոր աչաց հաճոյ եղողները մեռցուց, Իւր բարկութիւնը կրակի պէս թափեց Սիօնի աղջկան խորանին մէջ։
5 Տէրը թշնամւոյ պէս եղաւ, կ'ոսրայէլ կլլեց,
Անոր բոլոր պալատները կլլեց. անոր ամրոցները կործանեց,
Եւ Յուդայի աղջկան մէջ ողբը և կոծը շատցուց։
6 Անոր *'հիւղը պարտիզի հէ՛ղէ պէս՝ բռնութեամբ կործանեց, անոր ժողովատեղին ա՛րեց։
Տէրը Սիօնի մէջ հանդիսաւոր օրնը և շաբաթը մոռցուց,
Եւ իւր սաստիկ բարկու՛թեամբ թագաւորը և քահանան անարգեց։
7 Տէրը իւր սեղանը մերժեց Ի՛ւր սրբարանին զզուեցաւ,
Անոր պալատներուն պարիսպները թշնամւոյն ձեռքը մատնեց.
Անո՛ր Տէրոջը տան մէջ հանդիսաւոր օրնի օրուան պէս ձայն տուին։
8 Տէրը խորհեցաւ Սիօնի աղջկան պարիսպն ա՛րկել.
Լարը քաշեց, իւր ձեռքը կործանելէն հետ չդարձուց.
Պատնէշին և պարսպին սուգ բռնել տուաւ, անոնք միանգամայն աղտոտութեան մէջ են։
9 Անոր դուռները գետին անցան, անոր նիգերն ա՛րեց և կոտրեց.
Անոր թագաւորը և իշխաններն ազգաց մէջ են. օրէնք չկայ,
Անոր մարգարէներն ալ Տէրոջմէ տեսիլք չեն գտներ։
10 Սիօնի աղջկան ծերերը գետնի վրայ նստած լուռ կը կենան.
Իրենց գլուխն վրայ հողմ դրին, քուրձեր հագան,
Երուսաղէմի կոյսերն իրենց գլուխը գետին իջեցուցին։
11 Իմ ժողովրդիս աղջկան բեկմանը համար աչքերս արտասուք թո՛ւխխ ա՛րեցան,
Աղիքս խռովեցան, լեարդս գետին թափեցաւ,
Վասն զի ազգաց և տնանկազգ գաղաթին հրապարակներուն մէջ կը մարին,
12 Անոնք իրենց մայրերուն կ'ըսեն, Ո՞ր է ցորն և գինի,
Երբ վիրաւորուածներու պէս կը մարին գաղաթին հրապարակներուն մէջ,
Ե՛ր իրենց հոգին կ'աւանդեն իրենց մայրերուն գիրկը մէջ։
13 Քեզի ի՞նչ բան վկայութիւն բերեմ. քեզի ի՞նչ օրինակ բերեմ, ով Երուսաղէմի աղջիկ.
Զքեզ մխիթարելու համար քեզի ի՞նչ նմանութիւն բերեմ, ով Սիօնի կոյս աղջիկ.
Քանզի քու խրամատութիւնդ ծովու չափ մեծ է. ո՞վ կրնայ զքեզ բժշկել։
14 Քու մարգարէներդ քեզի համար սնոտի և յիմարական տեսիլներ տեսան,
Եւ քու անօրէնութիւնդ չէին յայտնեցուցեր, որ քու գերութիւնդ հետ դարձուներն.
Այլ քեզի համար անոսի՛ առաջնորդներ և մղորութիւններ տեսան։
15 Բոլոր անցաւորք ձեռնափարհոյս քեզի համար ծափ զարկին,
Ե՛ սուլելով իրենց գլուխը չարժեցին Երուսաղէմի աղջկան համար,
Ե՛ ըսին, Այ՛ս է այն քաղաքը որ Գեղեցկութեան կատարելութիւն Ի՛ր Բոլոր երկրին ուրախութիւնը կ'ըսուէր։
16 Քու բոլոր թշնամիներդ իրենց բերանը քու վրադ բացին.
Ե՛ սուլելով ակռայ կրճտեցին և ըսին, Զո՛ւիլ կլլեցինք։

*Եբր. պատգամներ



Ահա այս է օրը որուն կը սպասէինք, գտանք, տեսանք զայն։
17 Տէրը իւր խորհածը կատարեց, առջի օրերէն պատուիրած խօսքն ի գործ դրաւ.
Քցեց և չխնայեց, և թշնամին քու վրադ ուրախացուց,
Քու թշնամիներուդ եղջիւրը բարձրացուց։
18 Անոնց սիրտը Տէրոջը աղաղակեց.
Ով Սիօնի աղջկան պարիսպը, տա՛ւ և գիշեր հեղղի պէս արտասո՛ր թափէ.
Քեզի հանգիստ մի՛ տար, աչքիդ բիբը չդադարի։
19 Ելի՛ր, գիշերով աղաղակէ՛ սկիզբը պահերուն սկիզբը.
Քու սիրտդ ջրոյ պէս թափէ՛ Տէրոջը երեսին առջև.
Ձեռքդ դէպ՛ի նա վերցուր քու որդւոցդ հոգիներուն համար,
Որ ամէն փողոցներու գլուխը անօթութենէ կը մարին։
20 Տես, ով Տէր, և նայէ, որո՞ւ այսպէս ըրիր։
Մի՞թէ կանայք իրենց պտուղն, էրեւոյ գրկած տղայք ուտե՞ն։
Քահանան և մարգարէն Տէրոջը սրբարանին մէջ սպանուի՞ն։
21 Տգան և ծերը փողոցներու մէջ գետնի վրայ պառկեցան,
Իմ կոյսերս և երիտասարդներս սրով ինկան.
Քու բարկութեանդ օրը սպա՛նած մեծուցուցիր, մորթեցիր և չխնայեցիր։
22 Այժմ կոչեցի իմ վախերս հանդիսաւոր օրնի օրուան պէս կանչեցիր,
Եւ Տէրոջը բարկութեան օրը մնացորդ կամ ազատուած չկայ։
Իմ գրկածներս և մեծցուցածներս իմ թշնամիս հատուցաւ։

Գլ. Գ

1 Ես այն մարդն եմ, որ տառապանք տեսայ անոր բարկութեան գաւազանով։
2 Զիս տարաւ խաւարի մէջ պտրացուց՝ և ոչ թէ լուսոյ մէջ։
3 Այո, ինծի դէմ դարձաւ, ամէն օր իւր ձեռքն էմ վրա՛ դարձուց։
4 Իմ մարմինս և մորթս մաշեց, ոսկրներս կոտրատեց։
5 Ինծի դէմ պատնէշ չինեց, և գիս դառնութեամբ և նեղութեամբ պատեց։
6 Զիս մութ տեղեր նստեցուց՝ յաւիտենական մեռածներու պէս։
7 Իմ բոլորտիքս ցանգ գաշեց, և չեմ կրնար դուրս ելլել. իմ շղթաներս ծանրացուց։
8 Ագաղակած և կանչած ատենս անգամ անիկա իմ աղօթքս մերժեց։
9 Իմ ճամբաներս տաշտած քարերով պատեց, իմ շաւիղներս ծռեցուց։
10 Անիկա ինծի դարանակալ արջու, առիւ՛ծ ժամադիր տեղատեղ պատրաստած առիւծու պէս եղաւ։
11 Իմ ճամբաներս խաւարցուց և զիս պատառեց, զիս ամայի ըրաւ։
12 Իւր աղեղը լարեց և զիս նետի նպատակի պէս կանգնեցուց։
13 Իւր նետաղբը երիկամներս մէջ մխեց։
14 Իմ բոլոր ժողովուրդիս ծաղր եղայ, և բոլոր օր անոնց երգը։
15 Զիս դառնութեամբ յագեցուց, զիս օշինդրով արբեցուց։
16 Նաև ակռաներս խիճերով կոտրտեց, զիս մոխրով ծածկեց։
17 Աչքերս իմ հոգիս խաղաղութենէ հեռացուցին, բարիքը մոռցայ։
18 Ես ըսի, կորաւեցաւ իմ զօրութիւնս և իմ ակնկալութիւնս Տէրոջմէ։
19 Յիշէ՛ իմ տառապանքս և թշուառութիւնս, օշինդրը և դառնութիւնը։
20 Իմ հոգիս միշտ կը յիշէ զայն և իմ նեղած դիս կը նուաստանայ։
21 Այսիկա մտածած կը բերեմ, անոր համար յոյս կ'ունենամ։

*Եբր. գուբսը արգիլեց։

22 Տէրոջը ողորմութիւններէն է որ չհատաւանք, վասն զի անոր գթութիւնը չպակասեցաւ.
23 Անոնք առտու առտու կը նորոգուին. քու ճշմարտութիւնդ մեծ է։
24 Իմ հոգիս բաւ, Տէրը իմ բաժինս է, այս պատճառով անոր պիտի յուսամ։
25 Տէրը բարի է իրեն սպասելիներուն և հոգւոյն որ զինքը կը փնտռէ։
26 Տէրոջը փրկութեան սպասել և լռութեամբ յուսալ բարի է։
27 Բարի է մարդուս որ իր երիտասարդութեան առեն լուծը կրէ.
28 Առանձին կը նստի և լուռ կը կենայ, քանզի լուծը վրան դրուեցաւ։
29 Իր բերանը հողին կու տայ ըլլալ, թերեւս յոյս կայ.
30 Իր ծնօտը զանիկա զարնողին կու տայ, և նախատանօք կը յագեցայ։
31 Բայց Տէրը յաւիտեան չնձղեր։
32 Վասն զի թէեւ ցաւ կու տայ, իր ողորմութեան առատութեամբ զթութիւն ալ կ'ընէ։
33 Քանզի իր կամքը նեղութիւն չտար, և մարդու որդիները չարամեղցուներ։
34 Երկրիս բոլոր բանտարկեալները ոտից տակ ձգուել,
35 Բարձրելոյն առջև մարդու իրաւունքը ծռել,
36 Մարդու իր դատին մէջ անիրաւութիւն ընել Տէրոջը հաճելի չէ։
37 Ո՞վ է այն որ կը խօսի և անոր խօսքը կը կատարուի, Դէպ Տէրը հրամայած չէ։
38 Մէկէն բարիքը և չարիքը բարձրելոյն բերնէն չէն ելլեր։
39 Ապրող մարդն ինչո՞ւ տրտունջ ընէ, մարդը *իր մեղքերուն պատիժին համար։"
40 Մեր ճամբաները քննենք և փորձենք և Տէրոջը դառնանք։
41 Մեր սիրտերը ձեռաց հետ երկինքը եղող Աստուծոյն վերցուենք։
42 Մենք յանցանք ըրինք և ապստամբեցանք, դուն թողութիւն չտուր։
43 Բարկութեամբ ծածկեցիր և հալածեցիր, մեռցուցիր և չխնայեցիր։
44 Ձեզի ամպով ծածկեցիր, որ ձեր աղօթքը չանցնի։
45 Ձիզ ժողովուրդներուն մէջ խառնան և անարգ ըրիր։
46 Մեր բոլոր թշնամիները մեզի դէմ բերնոց բերանները բացած են։
47 Մեր վրայ վախ և գուբ, ապերուստ և կոտորած եկաւ։
48 Իմ ժողովուրդիս աղջկան ընկճման համար աչքս յորդ հեղեղներ կ'իջնեն։
49 Իմ աչքս անդադար արտօսր կը թափի, և քնաս հանգիստ պիտի չունենայ,
50 Մինչև որ Տէրը յերկինց նայի և տեսնէ։
51 Իմ քաղաքիս բոլոր աղջիկներուն համար աչքս հոգւոյս նեղութիւն կու տայ։
52 Իմ թշնամիներս ի զուր անդադար պես ճնճղկի պէս կ'որսան։
53 Իմ կեանքս գուբի մէջ կտրեցին, վրան քար նետեցին։
54 Ջուրերը գլխիս վրէ բարձրացան. ըսի թէ կոտրեցայ։
55 Խորունկ գուբին քու անունդ կանչեցի, ով Տէր։
56 Իմ ձայնս լսեցիր. իմ հառաչանացս և աղաղակիս քու ականջդ մի գոցեր։
57 Ձեզի կանչած օրս մօտեցար, ըսիր թէ Մի վախնար։
58 Իմ հոգւոյս դատը վարեցիր, ով Տէր, իմ կեանքս ազատեցիր։
59 Ով Տէր, ինծի եղած զրկանքը տեսար. իմ իրաւունքս պաշտպանէ։
60 Անոնց բոլոր վրէժխնդրութիւնը, անոնց ինծի դէմ ըրածէն բոլոր դիտաւորութիւնները տեսար,
61 Անոնց նախատինքը լսեցիր, ով Տէր, անոնց ինծի դէմ ըրածէն բոլոր դիտաւորութիւնները,

*Կամ իր մեզմէ վրայ խնդ պրծիր։



62 Իմ վրաս ելլողներուն շրթունքը և ամէն օր ինծի դէմ անոնց խորհածը։
63 Անոնց նստելուն և ելլելուն նայէ. ես անոնց երգն եմ։
64 Ով Տէր, անոնց հատուցում պիտի ընես իրենց ձեռաց գործերուն համեմատ։
65 Անոնց սրտի *թմրութիւն պիտի տաս, քու անէծքդ պիտի ըլլա անոնց։
66 Բարկութեամբ պիտի հալածես զանոնք, և Տէրոջը երկնից տակէն քանդիլ պիտի ընես։

## Գլ. Դ

1 Ոսկին ի՜նչպէս իր գոյնը կորսընցուց, և մաքուր ոսկին փոխուեցաւ։ Սրբարանին քարերն ամէն փողոցներու գլուխը թափուեցան։
2 Սիոնի պատուական որդիքը որ ընտիր ոսկւոյ հաւասար էին։ Ի՜նչպէս բրան ձեռքով չինուած խեցեղէն սափոններու պէս համարուեցան։
3 †Վիշապներն անգամ իրենց ծիծերը կը հանեն և իրենց ձագերուն կաթ կու տան. Իմ ժողովուրդիս աղջիկն անապատի կայտիմնոց պէս անգութ եղաւ։
4 Կաթնակերն լեզուն ծարաւէն իր քմային վրայ կպաւ։ Տղայք հաց ուզեցին, բայց անոնց չբաժնող չկար։
5 Ազնիւ կերակուրներ ուտողները փողոցներու մէջ յուսահատութ մնացին. Կարմիր հագուստներով մեծցողներն աղբանոցներ գրկեցին։
6 Եւ իմ ժողովուրդիս աղջկան անօրէնութիւնը Սոդոմի մեղքէն մեծ եղաւ. Նա մէկ վայրկեանի մէջ տակնուվրայ եղաւ առանց ձեռք անոր դպչելու։

*Եբր. ծածկոց †Կամ շնագայլերը

7 Անոր ազնուականները ձիւնէ մաքուր, կաթէ ճերմակ էին. Անոնց մարմինը *յակինթներէ կարմիր էր, անոնց կերպարանքը շափիւղայի կը նմանէր։
8 Անոնց դէմքն ածուխէն աւելի սեւ եղաւ, և փողոցներուն մէջ չեն ճանչցուիր. Անոնց մարմին իրենց ոսկրներուն վրա կաւ, չորցաւ և փայտի պէս եղաւ։
9 Սուրէ մեռածներն անօթութենէ մեռածներէն երջանիկ էին, Վասն զի սոսկալ արտադրակի պղտճանց պակասութենէն մաշեցան և մեռան։
10 Ողորմած կանանց ձեռքն իրենց տղայքը եփեցին, Իմ ժողովուրդիս աղջկան կոտորածին առեն անոնց կերակուր եղան։
11 Տէրը իր բարկութիւնը կատարեց, իր սաստիկ բարկութիւնը թափեց. Եւ Սիոնի մէջ կրակ բռնկեցուց, որ անոր հիմերը կերաւ։
12 Երկրի թագաւորները և աշխարհի բոլոր բնակիչները չհաւատացին Թէ հակառակորդը և թշնամին Երուսաղէմի դուռներէն պիտի մտնեն։
13 Անոր մարգարէներուն մեղքէն, անոր քահանաներուն անօրէնութիւններէն Որ անոր մէջ արդարներուն արիւնը թափեցին,
14 Փողոցներուն մէջ կուրերու պէս աստանդական պարսեցան, արեամբ պղծուեցան. Այնպէս որ մարդ կարող չէր անոնց զգեստներուն դպչիլ։
15 †Անոնց կը կանչէին, Նա քաշուեցէք, ով պիղծեր," Եւ քաշուեցէք, եւ քաշուեցէք, մի դպչիք։

*Կամ բուստերէն
†Կամ Անոնց համար կը կանչէին, Նա քաշուեցէք, պիղծ են.

Անոնք փախան և ապրին անդին պատահեցան. ապրեցան մէջ բան ևս չեղաւ, Անոնք այլ եւս չտեսնին,
16 Տէրոջը բարկութիւնը ցրուեց զանոնք, անոնց այլ եւս չնայիր.
Քահանայից երեսին պատիւ չըրին, ծերերուն գթութիւն չըրին,
17 Մեզի բլլալու օգնութեան համար ի զուր մինչև հիմա մեր աչքը մնաչեցան.
Դիտելով ապահով ազգ մը որ չէր կրնար ազատել։
18 Մեր քայլերը կ'օրանան, որ մեր փողոցներուն մէջ չպտրտինք.
Մեր վախճանը մօտեցաւ, մեր օրերը լրացուցան, արդարև մեր վախճանը հասաւ։
19 Զմեզ հալածողները երկինքէ արծիւներէն արագընթաց եղան,
Զմեզ լեռներու վրայ ատակ հալածեցին, անապատ մէջ մեզի համար դարանամուտ եղան։
20 Մեր ռնգաց շունչը, Տէրոջը օծեալն, անոնց որոգայթներուն մէջ բռնուեցաւ,
Որոյ համար մենք կ'ըսէինք, Ազգերուն մէջ անոր հովանոյն տակ պիտի ապրինք։
21 Ցնծա և ուրախ եղիր, օվ Եդոմի ազգիկ, որ Հուս երկրին մէջ կը բնակիս.
Քեզի ալ պիտի անցնի բաժակը. պիտի արբնուս և զբնիզ պիտի մերկանաս։
22 Քու անօրէնութիւնդ վերջացաւ, օվ Սիոնի աղջիկ, զքեզ այլ ևս գերի պիտի չվարէ.
Քու անօրէնութեանդ այցելութիւն պիտի բնէ, օվ Եդոմի աղջիկ, քու մեղքերդ պիտի յայտնէ։

## Գլ. Ե

1 Մեզի եղածը յիշէ, օվ Տէր,
Նայէ և մեր նախատինքը տես։
2 Մեր ժառանգութիւնն օտարներու անցաւ,
Մեր տուներն՝ օտարազգիներու։
3 Հայր չունենցող որբեր եղանք,
Մեր մայրերն այրիներու պէս են։
4 Մեր ջուրն ոսկով խմեցինք,
Մեր փայտը գնով կու գայ։
5 Լուծը մեր պարանոցին վրայ բլլալով հալածուեցանք,
Կ'աշխատինք և հանգիստ չունինք։
6 Հացով յագենալու համար
Դէպ յԵգիպտոս և Ասորեստան ձեռք *երկնցուցինք։
7 Մեր հայրերը մեզի դարձեցին և չկան,
Եւ անոնց անօրէնութիւններուն պատիժը մենք կը կրենք։
8 Ծառաներ տիրեցին մեր վրայ,
Անոնց ձեռքէն ղէղ ազատող չկայ։
9 Անապատի սրոյն երեսէն
Մեր հոգիը մեր կենաց վտանգով ձեռք բերինք։
10 Սովին սաստիկութենան պատճառաւ
Մեր մորթը փռան պէս սեացաւ։
11 Սիոնի մէջ խոտաուակեցին կանայք,
Եւ կոյսերը Յուդայի քաղաքներուն մէջ։
12 Իշխանները †անոնց ձեռքով կախուեցան։
Երեցոց երեսին պատիւ չըրին։
13 Երիտասարդները երիանաքարեր վերցուցին,
Եւ տղայք փայտի տակ ինկան։
14 Երիտերը դադրեցան դուռը նստիլէ,
Եւ երիտասարդներն իրենց երաժշտութենէն։
15 Մեր սրտին ուրախութիւնը դադրեցաւ,
Մեր կաքաւելն ի սուգ փոխուեցաւ։
16 Մեր գլուխն թագն ինկաւ։
Հիմա վայ մեզ, վասն զի մեզի գործեցինք։
17 Ասոր համար մեր սիրտը նուաղած է,
Ասոնց պատճառաւ մեր աչքերը խաւարեցան.
18 Սիոն լեռան պատճառաւ որ ամայի եղաւ։

*Նէբ. առունք.
†Կամ իրենց ձեռքէն



Անոր վրայ ազատ կանոք կը պարտին։
19 Դուն, օվ Տէր, յաւիտեան կը մնաս.
Քու աթոռդ գարէ ի գար կը տեւէ։
20 Ինչո՞ւ համար յաւիտեան զմեզ կը մոռնաս,
Եւ երկար ժամանակ զմեզ կը թողուս։
21 Դարձո՛ զմեզ քեզի, օվ Տէր, և դառնանք.
Մեր օրերը առաջուան պէս նորոգէ։
22 Սակայն դուն բոլորովին զմեզ մերժեցիր,
Մեր վրայ սաստիկ բարկացար։

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՋԵԿԻԷԼԻ

## Գլուխ Ա

1 Եւ եղաւ որ երեսնեւրորդ տարին չորրորդ ամսուն հինգին երբ ես գերիներուն մէջ Քեբար գետին քով էի, երկինք բացուեցաւ, և Աստուծոյ տեսիլքը տեսայ։ Ամսուն հինգերորդը՝ այսինքն Յովակին թագաւորին գերութեան հինգերորդ տարին, Քաղդեացոց երկրին մէջ Քեբար գետին քով Բուզիի որդւոյն Եզեկիէլ քահանային յայտնապէս Տէրոջը խօսքը եղաւ, և հոն անոր վրայ Տէրոջը ձեռքը եղաւ։
4 Ու տեսայ որ ահա հիւսիսային կողմէն մրրկայից հով, մեծ ամպ և բոցկոտ կրակ կու գար, որուն բովորտիքը պայծառութիւն կար, և մէջտեղէն՝ կրակի մէջէն ոսկեզօծեալ կապոյտ մի էլեկտրոնի նմանութիւն կար։
5 Մէջ էլեկտրոնը, ու ասոր մէջ չորս կենդանւոյ կերպարանք կար։ և անոնց երեւոյթն այս էր. անոնք մարդու կերպարանք ունէին։
6 Ամեն մէկ չորս երեսներ ունէր, և ամեն մէկ չորս թեւեր ունէր։
7 Չորս թեւ ունէր։ Ու անոնց ոտքերը ուղղ ոտք էին, և անոնց ոտից թաթը զուարակի ոտից թաթին պէս էր, և փայլուն պղնձի պէս կը փայլէին։
8 Ու անոնց չորս կողմերն անոնց թեւերուն տակ մարդու ձեռք կար, և չորսն ալ երեսներ և թեւեր ունէին։ Անոնց թեւերը իրարու կցուած էին, անոնք երբ երթալու ատեն չէին դառնար, իւրաքանչիւրը իր առջեւի կողմը կ'երթար։
10 Երեսներուն նմանութիւնը՝ անոնց չորսն ալ մարդու երես ունէին, և աջ կողմն առիւծու երես։ Նաև չորսն ալ ձախ կողմն եզան երես, և չորսն ալ արծուոյ երես ունէին։ Ու անոնց երեսներն այսպէս էին. և անոնց թեւերը վերէն կը տարածուէին, երկու-ական իրարու կցուած էին, և երկու-ական անոնց մարմինը կը ծածկէին։ Ու իւրաքանչիւրը շիտակ իր առջեւ կ'երթար. ո՛րտեղ որ երթալ անոնք հոն կ'երթային, և չէին դառնար անոնք երբ կ'երթային։
13 Երբ կ'երթային՝ բնի դառնար։ Ու կենդանիներուն կերպարանքն՝ անոնց երեւոյթը՝ կրակի վառած կայծերու պէս՝ ջահերու երեւութեան պէս էր, որ կենդանիներուն մէջտեղ կը պտտէր. և այն կրակը լուսաւոր էր, և կրակին մէջէն կայծակներ կ'ելլէին։
14 Ու կենդանիները փայլակի երեւութեան պէս կը վազէին և կը դառնային։
15 Ու կենդանիներուն նայելով, և ահա գետնի վրայ՝ կենդանիներուն էրեսին քով չորս երեսով անիւ մը կար։
16 Անիւներուն երեւոյթը և անոնց շինուածքը ոսկեգոյի կը նմանէր, և չորսին ձեւը մէկ էր. և անոնց երեւոյթը և շինուածքն այնպէս էր, որպէս թէ անիւ
17 անուայ մէջ եղած ըլլար։ Երբ կ'երթային, իրենց չորս կողմերուն վրայ

կ'երթային. երբ կ'երթային, էբէց –Ց
18 [–ո յ–ե [–ոմը չէին դառնար. Եւ անոնց
շրջանակները բարձր և ահեղ էին, և
չորսին ալ շրջանակները ամէն կող-
19 մէն աչօք լեցուն էին. Եւ երբ կեն-
դանիները կ'երթային, անիւները –Ւ
անոնց քովէն կ'երթային. և երբ կեն-
դանիները երկրի երեսէն կը վերա-
20 նային, անիւները –Ւ կը վերանային. Ո-
ղին ուր որ երթալու ըլլար, անոնք
հոն՝ ոգւոյ գացած տեղը կ'երթային.
անիւները ալ անոնց հետ ի մէնային կը
վերանային. քանզի անիւներուն մէջ
21 կենդանիներուն ոգին կար. երբ անոնք
կ'երթային, –ոռնէ –Ւ կ'երթային, և
երբ անոնք կը կայնէին, ռոռնէ –Ւկը
կայնէին. և երբ անոնք երկրի երեսէն
կը վերանային, անիւները անոնց հետ
կը վերանային. քանզի անիւներուն մէջ
22 կենդանիներուն ոգին կար. Եւ կենդա-
նիներուն գլուխն վրայ՝ էրիէց հաստա-
ատութեան նմանու թիւնը վերէն անոնց
գլուխներուն վրայ տարածուած էր
23 *լուսափայլ սիւնլանաց նման, եւ այն
հաստատութեան տակ՝ անոնց թևերն
իրարու կ'ուղղէին, իւրաքանչիւրը
մէկ կողմէն էր ծածկող երկու
ըն– ունէր, և նոյնպէս միւս կողմէն իր
24 մարմինը ծածկող երկու ըն– ունէր. Եւ
երբ կ'երթային, անոնց թևերուն ձայ-
նը լսեցի, շատ չէր ըներու. ձայնին պէս,
Ամենակարողին ձայնին պէս, աղմկի
ձայնի ե բանակի ձայնի պէս. երբ կը
կայնէին, իրենց թևերը կ'իջեցուն էին.
25 Եւ երբ անոնք կը կայնէին ե իրենց թևե-
րը կ'իջեցուն էին, անոնց գլուխն վրայ
եղող հաստատութենէն ձայն մը կ'ել-
լէր.
26 Եւ անոնց գլուխն վրայ եղող հաս-
տատութենէն վեր շափիւղայ քարի
երեւութով աթոռի նմանութիւն մը
կար, և այն աթոռի նմանութեան վր-
րայ մարդու կերպարանքով նմանու-
27 թիւն մը կար վերէն. Եւ անոր երե-
կամանց երեւութէն վեր ոսկեզնդի

*Եբր. ափաւոր

նման, բոլորտիքը ե ներսը կրակին նմա-
նութեան պէս տեսայ, և երիկամանց
երեւութէն վար կրակի նմանութեան
պէս տեսայ. և պայծառութեամբ պա-
28 տած էր. Ինչպէս է անձրեւի օր ամպի
մէջ եղող ծիածանին երեւոյթը, այն-
պէս էր այն պատող պայծառութեան
երեւոյթը. Ասիկա Տէրոջը փառաց նմա-
նութեան երեւոյթն էր. և երբ տեսայ,
երեսիս վրայ ինկայ, և խօսողի մը ձայ-
նը լսեցի.

Գլ. Բ

1 Եւ ինծի բսաւ, Որդի մարդոյ, ոտիդ
2 վրայ կայնէ և քեզի հետ խօսիմ. Եւ
ինծի հետ խօսած պէս Հոգին իմ
վրաս եկաւ, և զիս ոտքի վրայ վերց-
ուց. և ինծի հետ խօսողին յ–ը լսե-
3 ցի. Եւ ինծի բսաւ, Որդի մարդոյ, ես
քեզ Իսրայէլի որդւոց, ինծի դէմ ա-
պստամբող ապստամբներու ազգին կը
ղրկեմ, որ թէ իրենք և թէ իրենց
հայրերը մինչև այս օր ինծի դէմ յան-
4 ցաւոր դժուեցան. Եւ անոնք անա-
մօթ և խստասիրտ որդիք են. ես զքեզ
անոնց կը ղրկեմ, և անոնց ըսես, Տէր
5 Եհովան ասպիզս կ'ըսէ. Եւ անոնք թէ
լսեն և թէ զանց ընեն, (քանզի անոնք
ապստամբներու տուն են,) սակայն
պիտի գիտնան թէ իրենց մէջ մարգա-
բէ կայ.
6 Եւ դուն, որդի մարդոյ, անոնցմէ մի
վախնար, և անոնց խօսքէն մի վախ-
նար. թէև փուշ քովէդ *կամակոր և
ծուռ մարդիկ կան, և կարիճներու
քով կը բնակիս. անոնց խօսքէն մի
վախնար և անոնց երեսէն մի զարհու-
րիր, թէև անոնք ապստամբներու տուն
7 են. Եւ անոնց իմ խօսքերս խօսիս,
թէ լսեն և թէ զանց ընեն, քանզի ա-
նոնք ապստամբ են.
8 Եւ դուն, որդի մարդոյ, քեզի ըսածս
մտիկ ըրէ, այն ապստամբ տան պէս
ապստամբ մի ըլլար. բերանդ բաց և

*Կամ փուշերը և տատասկները



9 քեզի տուածս կեր. Եւ նայեցայ, և ա-
հա ինծի երկնցած ձեռք մը, և ահա
10 անոր մէջ գիրքի աուն մը կար. Եւ
զանիկա իմ առջեւս բացաւ. և անիկա
ներսէն և դուրսէն գրուած էր. և ա-
նոր վրայ ողբեր, հառաչանք և վայ
գրուած կար.

Գլ. Գ

1 Եւ ինծի բսաւ, Որդի մարդոյ, ոտդ
առած դիր. այդ ուտիը կեր և գնա
2 Իսրայէլի տանը խօսէ. Եւ իմ բերանս
բացի, և այն ուտիը ինծի կերցուց.
3 Եւ ինծի բսաւ, Որդի մարդոյ, այս
ուտիը զոր քեզի ուտի՝ փորիդ կեր-
ցուր և պղիպդ լեցուր. և ես կերայ
զայն, և բերնիս մէջ մեղրի պէս անոյշ
4 եղաւ. Ասուաւն ինծի բսաւ, Որդի մար-
դոյ, ազէ Իսրայէլի տան գնա և իմ
5 խօսքովս անոնց խօսէ. Վասն զի դուն
դժուարբմաց խօսքը և ծանր լեզուս ու-
նեցող ազգի մը չղրկուածդար, այլ Իս-
6 րայէլի տան. Ոչ թէ դժուարբմաց խօսք
և ծանր լեզուս ունեցող շատ ազգերու,
որոց խօսքը դուն չես հասկնար. ար-
դարև եթէ զքեզ անոնց ղրկէի, անոնք
7 քեզի մտիկ պիտի ընէին. Բայց Իսրա-
յէլի տունը քեզի մտիկ ընել պիտի
չուզեն, վասն զի չեն ուզեր ինծի մտիկ
ընել. քանզի բոլոր Իսրայէլի տունն
8 անլուս և խստասիրտ է. Ահա անոնց
երեսին դէմ քու երեսդ պինդ, և ա-
նոնց ճակատին դէմ քու ճակատդ
9 պինդ բրի, Քու ճակատդ վէմէն ամուր,
անդամանդի պէս բրի. անոնցմէ չվախ-
նաս և անոնց երեսէն չզարհուրիս,
թէև անոնք ապստամբներու տուն են.
10 Եւ Տէրը ինծի բսաւ, Որդի մարդոյ,
իմ բոլոր խօսքս որ քեզի պիտի խօ-
սիմ, սրտիդ մէջ ընդունէ և ականջ-
11 ներովդ լսէ. Եւ գնա գերիներուն մէջ
մտիր, քու ժողովրդիդ որդւոց մէջ,
և անոնց խօսէ և անոնց բսէ, Տէր Ե-
հովան այսպէս կ'ըսէ. Թէ մտիկ ընեն
և թէ զանց ընեն.
12 Ամաուն Հոգին զիս վերցուց, և ե-
տևէս մեծ շարժման ձայն մը լսեցի ո-
ր'ըն– Տէրոջը փառը օրհնեալ ըլլայ
13 իր տեղէն. Եւ կենդանիներուն թևաց
իրարու զարնելուն ձայնը, և անոնց
քովի անիւներուն ձայնը, և մեծ շարժ-
14 ման ձայն ըսեցի. Եւ Հոգին զիս վեր-
ցուց տարաւ, և ես իմ հոգւոյս չկըր-
մնեցի բնաւ դառնութեամբ գացի. և
Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ. զօրու-
15 թեամբ. Եւ Թէլաբիպի գերիներուն եկայ, և
անոնց նստած տեղը նստայ, և հոն
եօթն օր անոնց մէջ ապշած նստայ.
16 Եւ եօթն օր ետքը Տէրոջը խօսքը
17 ինծի եղաւ ըսելով, Որդի մարդոյ,
զքեզ Իսրայէլի տան դէս զրի. և իմ
բերնէս խօսք լսես, և իմ կողմանէս
18 զանոնք զգուշացնես երբ ամբարշ-
աին բսեմ Թէ Անշուշտ պիտի մեռնես,
և դուն զանիկա չզգուշացնես և չը-
սես, որ ամբարիշտ ապրելուներնդու հա-
մար իր չար ճամբէն զգուշացնես,
այն ամբարիշտը իր անօրէնութեան
մէջ պիտի մեռնի, բայց անոր արիւնը
19 քու ձեռքդէդ պիտի փնտռեմ. Իսկ ե-
թէ դուն ամբարիշտը զգուշացնես,
և անիկա իր ամբարշտութենէն և չար
ճամբէն չդառնայ, անիկա իր անօրէ-
նութեան մէջ պիտի մեռնի, բայց դուն
20 քու հոգիդ ազատած կ'ըլլաս. Եւ երբ
արդարը իր արդարութենէն դառնայ
և չարութիւն ընէ, և ես անոր առջև
գայթակղութիւն դնեմ որ անիկա մե-
ռնի, զանիկա չզգուշացնելուդ համար
անիկա իր մեղաց մէջ պիտի մեռնի,
և անոր բրած արդարութիւնը պիտի
չյիշուի, բայց անոր արիւնը քու ձեռ-
21 քդէդ պիտի փնտռեմ. Իսկ եթէ դուն
այն արդարը զգուշացնիս որ ար-
դարը մեղք չգործէ, և եթէ անիկա
մեղք չգործէ, անիկա անշուշտ պիտի
ապրի խրատ մտիկ ընելուն համար, և
դուն քու հոգիդ ազատած պիտի ըլ-
22 լաս. Եւ հոն Տէրոջը ձեռքը իմ վրաս ե-
ղաւ, և ինծի բսաւ, Ելի, դաշտը գնա,
23 և հոն քեզի հետ պիտի խօսիմ. Եւ ես

Ելոյ գալոյը գային. և ահա հան կայնած էր Տէրոջը փառքը, այն փառաց պէս զոր Բեթաբ դիտմն քով տեսայ.
24 և երթամ վրայ բնկայ։ Եւ Հազիէլ իմ վրաս եկաւ, և զիս ոտքի վրայ կացնեցուց և ինծի հետ խօսեցաւ և ինծի բսաւ, Գնա տանդ մէջ պահնապետ եղիր.
25 դուն, որդի մարդոյ, ահա քու վրադ կապանք պիտի դնեն, և անոնցմով գրկուիս պիտի կապեն, և անոնց մէջ պի-
26 տի չելլեաս եւ քու լեզուդ քու քմնդպիտի փակուցանեմ, և համր պիտի ըլլաս. և անոնց մէջ յանդիմանող մարդու պէս պիտի չըլլաս, զատ միայն
27 ապստամբներու տան են։ Բայց երբ ես քեզի հետ խօսիմ, քու բերանդ պիտի բանամ. և անոնց պիտի բսես, Տէր ԵՀովան այսպէս կ'բսէ. Լսողը թող լսէ, և զանց բնողը թող զանց բնէ. զատ միայն ապստամբներու տան են։

## Գլ. Դ

1 Եւ դուն, որդի մարդոյ, քեզի աղիւս մը առ և զանիկա առջեդ դիր, և անոր վրան քաղաք մը, այսինքն Երուսաղէմ գծագրէ.
2 և անոր դէմ պատրէ, և անոր բոլորտիքը պաշարում դիր, և անոր դէմ մատակոյ չկնիք, և անոր դէմ պատնէշ կանգնէ, և անոր դէմ բանակ կազմէ, և անոր բոլորտիքը *պատերազմական մե-
3 քենաներ դիր։ Եւ դուն քեզի երկաթէ տապակ մը առ, և զանիկա երկաթէ պարսպի պէս դիր ի մէջ քու և քաղաքին, և քու երեսդ անոր դէմ ուղղէ որ անիկա պաշարուի, և զանիկա պաշարէ. ասիկա Իսրայէլի տան նշան
4 ըլլայ։ Եւ դուն քու ձախ կողմիդ վրայ պառկէ, և անոր վրայ դիր Իսրայէլի տան անօրէնութիւնը. անոր վրայ պառկած օրերուդ թուով անոնց անօրէ-
5 նութիւնը կրեսես։ Զանգի ես անոնց անօրէնութեան տարիներն օրերու թուով

*Եբր. խոյերը

քու վրադ դրի, երեք հարիւր իննսուն օր, որ Իսրայէլի տան անօրէնութիւնը
6 կրեսես։ Եւ երբ այն օրերը լմնցնես, նորէն պառկիս քու աջ կողմիդ վրայ, և քառասուն օր Յուդայի տան անօրէնութիւնը կրես. քեզի իւրաքանչիւր տարւոյ տեղ մէկ օր տուի.
7 և քու երեսդ դէպ Երուսաղէմի պաշարումն ուղղես, և քու բազուկդ մերկացուցած, և անոր վրայ մարգարէացնես, և անոր վրայ մարգարէութիւնը ընես։ Եւ ես ահա քու վրադ կապանք պիտի դնեմ, որ մէկ կողմիդ միւս կողմդ չդառնաս, մինչև որ քու պաշարման օրերդ լմնցուցած
9 ըլլաս։ Եւ դուն քեզի ցորեն, գարի, բակլայ, ոսպ, կորեկ և հնծար առ, և զանոնք անօթի մը մէջ դիր, և անոնցմէ քեզի հաց շինէ. զանիկա քու յաղ կողմիդ վրայ պառկած օրերուդ համրանքով երեք հարիւր իննսուն օր ու-
10 տես։ Եւ ուտելու կերակուրդ կշռով լլայ, օր քան սկսիր զանիկա ժա-
11 մանակ ժամանակ ուտես։ Եւ ջուրը չափով, հինգնի մը վեցերորդ մասը, խմես։ զանիկա ժամանակ ժամանակ
12 խմես։ Եւ այն դո՛ւ կերակուրդ գարեկէն չօթերու պէս կրնաս ուտել. և զանիկա անոնց այրկին առջեւ մարդու ագրի
13 վրայ եփես։ Եւ Տէրը բսաւ, Իսրայէլի որդիքն այսպէս պղծուած պիտի ուտեն իրենց հացն այն ազգերուն մէջ,
14 ուր զանոնք պիտի տանիմ։ Եւ ես բսի, Ո՜հ, Տէր ԵՀովայ, ահա իմ անձս չպղծեցաւ, և իմ մարմնոյ մինչև հիմա մեռելոտի կամ գազանաբեկ չկերայ, և իմ բերանս պիղծ միս չմտաւ։
15 Եւ ինծի բսաւ, Նայէ, քեզի մարդու այրերն ուեղ կովի քակոր տամ, և քու հացդ անոր վրայ եփեսես։
16 Նաև ինծի բսաւ, Որդի մարդոյ, ահա ես Երուսաղէմի մէջ հացին ցուպը պիտի կոտրեմ, և հացը կշռով և անձկութեամբ պիտի ուտեն, և չորը չափով և տարտղնութեամբ պիտի խմեն,
17 զի պակաս և անոնց անօրէնութեամբ պիտի հալին և իրենց անօրէնութեամբ պիտի հալին։



## Գլ. Ե

1 Եւ դուն, որդի մարդոյ, քեզի սուր դանակ մը առ, քեզի սափրչի մազի մը առ, և զանիկա գլխուդ մազին և մօրուագդ վրայէն անցուր. և քեզի կշիռ մը առ, և հաւէրը բաժին բաժնէ
2 ըրէ։ Երրորդ մասը քաղաքին մէջ կրակով այրես, երբ պաշարման օրերը լմնան. և երրորդ մասն առնուս և դանակով զարնես անոր բոլորտիքը. և երրորդ մասը հովին ցրուես, և ես
3 անոնց ետևէն սուր պիտի քաշեմ։ Եւ անոնցմէ քիչ թիւով առնուս, և զանոնք քու թանդիներուդ մէջ ծրարես։ Եւ դարձեալ անոնցմէ առնուս և դանոնք կրակը նետես և զանոնք կրակով այրես. անկէ բոլոր Իսրայէլի տան կրակ պիտի ելլէ։
5 Տէր ԵՀովան այսպէս կ'բսէ. Ասիկա Երուսաղէմն է. զանիկա ազգերուն մէջ և իր բոլորտիքը եղող երկիրներուն
6 մէջ դրի։ Եւ անիկա իմ *դատաստաններս ազգերէն, և իմ կանոններս իր բոլորտիքը եղող երկիրներէն աւելի ամպարշտութեան փոխեց." վասն զի իմ դատաստաններս մերժեցին և իմ
7 կանոններուս չքալեցին։ Ասոր համար Տէր ԵՀովան այսպէս կ'բսէ. Որովհետև ձեր բոլորտիքը եղող ազգերէն աւելի †ապստամբ եղաք, իմ կանոններուս չքալեցիք և իմ դատաստաններս չգործ չդրիք. և ոչ ձեր բոլորտիքը եղող հեթանոսներուն օրէնքներուն
8 համեմատ ըրիք. Ասոր համար Տէր ԵՀովան այսպէս կ'բսէ. Ահա ես քեզի դէմ եմ, և ազգաց այրերուն առջեւ քու մէջդ դատաստաններ չգործ պի-
9 տի դնեմ, և քու բոլոր պղծութիւններուդ համար այնպիսի բան մը պիտի ընեմ քու մէջդ, որուն նմանը ալ բ-
10 րած եմ և ոչ պիտի ընեմ, Անոր համար քու մէջդ հայրերը էբէնց որդիքը պիտի ուտեն, և որդիք իրենց հայրերը պիտի ուտեն. և քու մէջդ դատաստաններ չգործ պիտի դնեմ, և քու բոլոր մնացորդդ ամէն հովի պիտի ցրուեմ. Ասոր համար ես կենդանի եմ,
11 կ'բսէ Տէր ԵՀովան, որովհետև դուն քու բոլոր գարշութիւններովդ և բոլոր պղծութիւններովդ իմ սրբարանս պղծեցիր, և իմ աչքս պիտի չխնայեմ և
12 պիտի չողոքիմ, քու երրորդ մասդ ժանտախտով պիտի մեռնին, և քու մէջդ սովով պիտի ոտատին. և քու երրորդ մասդ չորս կողմդ սրով պիտի իյնան. և երրորդ մասդ ամէն հովի պիտի ցրուեմ, և անոնց ետևէն սուր
13 պիտի քաշեմ։ Այսպէս իմ բարկութիւնս պիտի կատարուի, և իմ սրտմտութիւնս անոնց վրայ պիտի իջեցնեմ և վրէժ պիտի առնեմ։ ԵՒ երբ իմ սրտմտութիւնս անոնց վրայ կատարեմ, պիտի գիտնան թէ ես Տէրս իմ նախանձոտ խօսեցայ։ Եւ ամէն անգնդի այաց առջև քու բոլորտիքդ և-
14 զող ազգերուն մէջ աւերման և անարգանք պիտի տամ քեզ։ Եւ
15 քու բարկութեամբ և սրտմտութեամբ և սրտմտութեան պատիժներով քու վրադ դատաստաններ չգործ դնեմ, այս Տէրս քու բոլորտիքդ եղող ազգերուն մէջ անարգանք, նախատինք, ա-
16 ւազակ և զարմացում պիտի ըլլայ։ Ես Տէրս խօսեցայ, երբ անոնց վրայ սովին չար և ապականիչ նետերը զրկեմ, զորս ձեզ ապականելու համար պիտի զրկեմ, սովը ձեր վրայ պիտի աւելցնեմ, և ձեզի համար հացին ցուպը պի-
17 տի կոտրեմ։ Այսպէս ձեր վրայ սով և չար գազաններ պիտի զրկեմ, և ըզձզող պատառակ պիտի թողուն։ Եւ քու մէջդ ժանտախտ և արիւն պիտի անցնի, և քու վրադ սուր պիտի բերեմ. ես Տէրս խօսեցայ։

*Կամ դատաստաններուս՝ ազգերէն, և իմ կանոններուս՝ իր բոլորտիքը եղող երկիրներէն աւելի ամպարշտութեամբ դէմ կեցաւ.
†Կամ խռովայղց

## ԳԼ. Զ

1 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
2 Որդի մարդոյ, երեսդ Իսրայէլի լեռներուն դարձուր, և անոնց մարգարէացիր
3 Թիւն ըրէ, Ես ըսի, Ով Իսրայէլի լեռներ, Տէր Եհովային խօսքը մտիկ ըրէք. այսպէս կ'ըսե Եհովայ Տէրը լեռներուն, բլուրներուն, ձորերուն և հովիտներուն. Ահա ես ձեր վրայ սուր պիտի բերեմ, և ձեր բարձր տեղատեղքը պիտի կործանեմ.
4 Եւ ձեր սեղաններն աւերակ պիտի ըլան, և ձեր արեգական կուռքերը պիտի կոտրտին. և ձեր մեղքին ապաննուածները ձեր կուռքերուն առջեւ պիտի գնեմ,
5 առջեւ ինկած պիտի ձգեմ, Եւ Իսրայէլի որդւոց դիակներն իրենց կուռքերուն առջեւ պիտի գնեմ, և ձեր ոսկորները ձեր սեղաններուն բոլորտիքը պիտի ցրուեմ.
6 Ձեր ամէն բնակած տեղերուն մէջ քաղաքներն աւերակ պիտի ըլլան, և բարձր տեղատեղք ամայի պիտի ըլլան. որպէս որ ձեր սեղաններն աւերակ և ամայի ըլլան, և ձեր կուռքերը կոտրտին և խափնուին, և ձեր արեգական կուռքերը կործանին, և ձեր գործերը չնչնին.
7 Եւ ձեր մէջ ապաննուածներ պիտի իյնան, և պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը.
8 Բայց երբ դուք երկիրներու մէջ ցրուիք, ձենէ աւերին ապրուածներն ազգերուն մէջ միացորդ պիտի ըլլամ.
9 Եւ ձեր ապրուածներուն միս պիտի յիշեն այն ազգերուն մէջ ուր գերի պիտի տարուին, *ինչպէս որ իրենց շնացող և ինծի խռովեցաւ սրտով, և իրենց կուռքերուն ետեւէն պոռնկացաւ աչք. և անոնք իրենց չարութիւններուն պատճառաւ զոր ըրին իրենց բոլոր պղծութիւններուն համեմատ իրենց առջեւ
10 ձերէն պիտի զզուին. Եւ պիտի գիտնան Թէ ես Տէրս ի զուր չխօսեցայ Թէ
11 այս չարիքն անոնց պիտի ընեմ. Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ձեռքերդ իրարու զարկ և ոտքդ գետինը զարկ, և ըսէ, Ախտա՜ Իսրայէլի տան բոլոր չար պղծութիւններուն, վասն զի սրով, սովով և ժանտախտով պիտի իյնան.
12 Հեռուն եղողը ժանտախտով պիտի մեռնի, և մօտ եղողը սրով պիտի իյնայ, և մնացածը և *պահպանեալը սովով պիտի մեռնի. այսպէս իմ սրտմտութիւնս անոնց վրայ պիտի կատարեմ.
13 Եւ ձեր անոնց ապրուածներն իրենց կուռքերուն մէջտեղ իրենց սեղաններուն բոլորտիքը, ամէն բարձր բլուր վրայ, ամէն լեռներու գլուխ և ամէն կանանչ ծառ տակ, և ամէն տերեւախիտ բեւեհնուկ տակ՝ տեսած ըլլան, ուր անոնք իրենց բոլոր կուռքերուն անոյշ հոտ կը մատուցանէին, պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը, Ձեռքս կօղայ իմ ձեռքս անոնց վրայ պիտի երկրը ցնաւնեմ. և երկիրն, այսինքն անոնց բոլոր բնակած տեղատեղքը, Դիբղաթ կողմը եղող անապատէն աւելի ամայի և աւերակ պիտի ընեմ. և պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը.

## ԳԼ. Է

1 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
2 Եւ դուն, որդի մարդոյ, Հռէլ ըսէ. Տէր Եհովան Իսրայէլի երկրին այսպէս կ'ըսէ. վախճան, երկրին չորս կողման վրայ վախճան հասած է.
3 Հիմա քու վրադ վախճան է՜ ըսայ, Եւ իմ բարկութիւնս քու վրադ պիտի դրկեմ. Եւ քու ճամբաներուդ համեմատ քեզի դատաստան պիտի ընեմ, Եւ քու բոլոր պղծութիւններդ քու վրադ պիտի բերեմ.
4 Եւ իմ աչքս քեզի պիտի չխնայէ, և պիտի չողոքեմ.

*Կամ պահուըտածը

*Կամ երբոր կատրեմ իրենց շնացող և ինծմէ խռովեցած սրտով, և իրենց կուռքերուն ետեւէն պոռնկութիւն ընող աչքերը.



5 Այլ քու ճամբաներդ քու վրադ պիտի գնեմ, Եւ քու պղծութիւններդ քու մէջդ պիտի ըլլան, Եւ պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը.
6 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Զարիք մը, ահա չարիք մը կու գայ.
7 Վախճանը կու գայ, վախճանը կու գայ. Քու վրադ արթնցար, ահա կու գայ.
8 Ով երկրին բնակիչը, կարգը քեզի կու գայ, ժամանակը կու գայ, խռովութեան օրը մօտեցաւ, Եւ ոչ Թէ լերանց ցնծութիւնը.
9 Հիմա մօտեցա իմ սրտմտութիւնս քու վրադ պիտի Թափեմ, Եւ իմ բարկութիւնս քու վրադ պիտի կատարեմ, Եւ քու ճամբաներուդ համեմատ քեզի դատաստան պիտի ընեմ, Եւ քու բոլոր պղծութիւններդ քու վրադ պիտի բերեմ.
10 Եւ իմ աչքս պիտի չխնայէ, և պիտի չողոքեմ. Քու ճամբաներուդ համեմատ քեզի հատուցում պիտի ընեմ, Եւ քու պղծութիւններդ քու մէջդ պիտի ըլլան, Եւ պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը որ կը զարնեմ.
11 Ահա օրը, ահա կու գայ. Կարգը ելեւ հասաւ, Գաւազանը ծաղկեցաւ, ամբարտաւանութիւնն ընձիղեցաւ.
12 Բռնաւորութիւնը ելաւ, ամբարշտութեան գաւազան եղաւ. Անոնցմէ մարդ պիտի չմնայ, Եւ անոնց բազմութենէն և օտարացածքէն բան մը պիտի չմնայ, Եւ անոնց մէջ *վայելչութիւն պիտի չըլլայ.
13 Ծախողը ծախուածին պիտի չդառնայ, Թէև ողջ ըլլան. Ծանուցումը բոլոր բազմութեան համար եղած տեսիլքը ետ պիտի չդառնայ, Եւ մարդ մը իր կենաց անօրէնութեամբ պիտի չզօրանայ.
14 Փողը հնչեցուցին, ամէն բան պատրաստեցին, Բայց պատերազմի գացող չկայ. Վասն զի իմ բարկութիւնս անոր բոլոր բազմութեան վրայ է.
15 Դուրսէն՝ սուր, և ներսէն՝ ժանտախտ և սով պիտի ըլլայ. Դաշտը եղողը սրով պիտի մեռնի, Եւ քաղաքին մէջ եղողը սովը և ժանտախտը պիտի ուտեն.
16 Եւ անոնց ապրուածներէը ոք պիտի ազատին, Լեռներուն վրայ ձորերու ագռաւներուն պէս պիտի ըլլան. Ամէնքը պիտի հեծեծեն իւրաքանչիւրը իր անօրէնութեան համար.
17 Ամէն ձեռք պիտի թուլնայ, Եւ ամէն ծունկ ջրոյ պէս պիտի հալի.
18 Եւ անոնք քուրձեր պիտի հագնին, Եւ զանոնք սոսկումը պիտի ծածկէ. Եւ ամէն երեսի վրայ՝ ամօթ, Եւ անոնց ամէն գլուխն վրայ կնատաղիւն պիտի ըլլայ.
19 Իրենց արծաթը փողոցներուն մէջ պիտի նետուին, Եւ անոնց ոսկին անարդ բան մը պիտի համարուի. Անոնց արծաթը և ոսկին Տէրոջը բարկութեան օրը կարող պիտի չըլլայ զանոնք ազատել. Անով պիտի չկրնան իրենց անձը յագեցնել, Ոչ ալ իրենց փորը լեցնել, Վասն զի անիկա անոնց անօրէնութեան գայթակղութիւնը եղաւ.
20 Իրենց զարդերուն փառքը հպարտութեան գործեցին, Եւ անով իրենց գարշութիւններն, իրենց պղծութիւններուն պատկերները, չինեցին.

*Կամ սուգ

Ա,յս պատճառաւ անոնց առջև անարգ
բան մը կ'ընեմ զանիկա.
21 Եւ զանիկա օտարներուն ձեռքը պիտի
տամ որ յափշտակեն,
Եւ երկրի ամբարիշտներուն որ զանի-
կա կողոպտեն,
Եւ զանիկա պիտի պղծեն։
22 Եւ իմ երեսս անոնցմէ պիտի դարձու-
նեմ,
Եւ իմ գաղտնի տեղս պիտի պղծեն.
Եւ հոն բռնաւորներ պիտի մտնեն,
Եւ զանիկա պիտի պղծեն։
23 Շղթայ մը չկնի՛,
վասն զի երկիրն արեան դատաստանով
լցաւ,
Եւ քաղաքը բռնութեամբ լցաւ։
24 Եւ ազգերուն չարագոյնները պիտի բե-
րեմ,
Եւ անոնց տուները պիտի ժառանգեն.
Եւ բռնաւորներուն ամբարտաւանու-
թիւնը պիտի դադրեցնեմ,
Եւ անոնց սուրբ տեղերը պիտի պղծ-
ուին։
25 Կործանումը կու գայ.
Եւ խաղաղութիւն պիտի փնտռեն, բայց
պիտի չգտնուի։
26 Պատուհասի վրայ պատուհաս պիտի
գայ,
Եւ գուժի վրայ գոյժ պիտի ըլլայ.
Եւ մարգարէին տեսկը պիտի ուզեն,
Եւ քահանային օրէնքը, և ծերերուն
խորհուրդը պիտի կորսուի։
27 Թագաւորը սուգ պիտի բռնէ,
Եւ իշխանը սոսկումի պիտի հագնի,
Եւ երկրին ժողովուրդին ձեռքերը վա-
խով պիտի թաւլնան.
Անոնց ճամբաներուն համեմատ անոնց
հատուցում պիտի բնեմ,
Եւ անոնց դատաստաններուն համեմատ
զանոնք պիտի դատեմ,
Եւ պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

## Գլ. Ը

1 Եւ եղաւ որ վեցերորդ տարին վեցե-
րորդ ամսուն հինգերորդ օրը ես իմ
տանս մէջ կը նստէի, և Յուդայի ծե-
րերն իմ առջևս կը նստէին, և հոն
Տէր Եհովայի ձեռքն իմ վրաս ինկաւ։
2 Եւ նայեցայ, և ահա հրդեհ կերպա-
րանք մը կար կրակի երեւութով. ա-
նոր երեւմանց երեւութէն վար կրակ
էր, և անոր երեւմանցէն վար ոսկե-
պղինձի նման փայլուն երեւոյթ կար։
3 Եւ անիկա ձեռքի նմանութիւն մը եր-
կրնցուց, և իմ գլուխս վարսէն բռա-
նեց. և Հոգին զիս երկրի և երկինքց
միջտեղ վերցուց, և զիս Աստուծոյ
տեսլեամբ Երուսաղէմ դեպ ի հիւսիս
նայող ներքին դրան մուտքը բերաւ,
ուր նախանձ գրգռող նախանձոտ կուռ-
քը կը կենար։ Եւ ահա հոն, այն տես-
լեան պէս զոր տեսայ գաշտին մէջ, Իս-
րայէլի Աստուծոյ փառքը կար։
5 Եւ ինծի ըսաւ, Որդի մարդոյ, հիմա
քու աչքդ դէպ ի հիւսիս վերցուր։ Եւ
երբ աչքս դէպ ի հիւսիս վերցուցի,
ահա սեղանին դրան մտից հիւսիսային
կողմը այս նախանձու կուռքը կար։
6 Անոնն ինծի ըսաւ, Որդի մարդոյ,
կը տեսնե՞ս տանց ըրածը, այն մեծ
պղծութիւնները զոր Իսրայէլի տունը
հոս կ'ընէ, որպէս զի ես իմ սրբարա-
նէս հեռանամ։ բայց նորէն դարձիր
և տեսիլ մեծ պղծութիւնները պիտի
տեսնես։
7 Եւ զիս գաւթին դուռը տարաւ. և
տեսայ, և ահա պատին վրայ ծակ մը
կար։ Եւ ինծի ըսաւ, Որդի մարդոյ,
հիմա այս պատը փորէ։ և երբ պատը
փորեցի, ահա դուռ մը կար։ Եւ ինծի
ըսաւ, Մտիր և տես այն չար պղծու-
թիւնները զոր անոնք հոս կ'ընեն։ Եւ
ես մտայ և տեսայ, և ահա ամէն տե-
սակ սողուններու և գարշելի անաս-
ուններու պատկերներ և Իսրայէլի
տան բոլոր կուռքերը պատին վրայ
չուրջանակի փորուած էին։ Եւ անոնց
առջև կայնած էին Իսրայէլի տան ծե-
րերէն եօթանասուն մարդ, և Սափա-
նի որդին Յեզոնիա ալ անոնց մէջ կայ-
նած էր. խունկաքանչիր ձեռքը բռնե-
ւած ունէր, և խնկոց ծուխն ամպի
12 պէս վեր կ'ելլէր։ Եւ Տէրը ինծի ըսաւ,



Որդի մարդոյ, կը տեսնե՞ս թէ ինչ կը
ընեն Իսրայէլի տան ծերերը մութ տե-
ղի, ամէն մարդ իր ծածուկ պատկերա-
տան մէջ. վասն զի անոնք կ'ըսեն Թէ
Տէրը զմեզ չտեսնէր, Տէրը երկիրը թո-
ղուց։ Եւ ինծի ըսաւ, Նորէն դարձիր
և անոնց ըրած աւելի մեծ պղծութիւն-
ները պիտի տեսնես։
14 Եւ զիս Տէրոջը տան դէպ ի հիւսիս
կղզող դրան մուտքը բերաւ. և ահա
հոն Թամուզին համար լացող կանայք
15 կը նստէին։ Եւ ինծի ըսաւ, Որդի մարդոյ,
կը տեսնե՞ս։ Նորէն դարձիր, և
ասոնցմէ աւելի մեծ պղծութիւններ
պիտի տեսնես։
16 Եւ զիս Տէրոջը տան ներքին գաւ-
թը բերաւ. և ահա Տէրոջը տաճարին
դուռը, սրահին և սեղանին միջտեղ
քսան հինգ հոգիի չափ կային, ա-
նոնք Տէրոջ տաճարին դարձուցած էին,
և իրենց երեսը արեւելք էր, և իրենց
դէմ արեւելք արեգական կղմպը կր-
կրապաղութիւն կ'ընէին։ Եւ ինծի ը-
սաւ, Տեսա՞ր, Որդի մարդոյ, տեսա՞ր
Յուդայի տան փոքր բան կ'երեւնայ ի-
րենց հոս ըրած պղծութիւններն ընե-
լը, որ երկիրը բռնութեամբ լեցու-
ցին, և զիս բարկացնելու դարձան.
և ահա ճիւղը իրենց քթին կ'երկնցու-
18 նեն։ Եւ ես ալ սրտմտութեամբ պիտի
վարուիմ. անոնց հետ. աչքս պիտի չխը-
նայէ, և պիտի չողորմիմ. և անոնք
իմ ականջներուս մեծ ձայնով պիտի
կանչեն, սակայն անոնց մտիկ պիտի
չընեմ։

## Գլ. Թ

1 Եւ մեծ ձայնով կանչեց իմ ականջնե-
րուս և ըսաւ, Քաղաքին վրայ որ-
շուածները մտեցուցէք, և իւրաքան-
չիւր իր ապականիչ գործիքն իր
2 ձեռքն առնէ։ Եւ ահա վեց հի-
սիս նայող վերի դրան ճամբէն վեց
մարդ կու գար, և իւրաքանչիւրին կո-
տորիչ գործիքը իր ձեռքն էր. և ա-
նոնց մէջ կատէ զգեստ հագած մարդ
մը կար, և մելանը գրչագրի կազմած
էր. և անոնք գային կայնեցան առ-
3 նէն գալ կայնեցան։ Եւ Իսրայէլի Աս-
տուծոյ փառքը որ քերովբէներուն վրա
բայէր, անոնց վրայէն տանը սեմը եղաւ։
Եւ այն կատէ զգեստ հագած և
մելանը գրչագրի կազմած եղնեցող
մարդը կանչեց։ Եւ Տէրը անոր ըսաւ,
Քաղաքին միջէն, Երուսաղէմի միջէն
անցիր, և անոր միջ եղած բոլոր պղծ-
ութիւններուն համար հառաչող և
ողբացող մարդոց ճակտներուն վրայ
5 նշան դիր։ Եւ ինչ ես կը լսէի, միւս-
ներուն ըսաւ, Անոր ետևէն քաղաքին
անցէք և զարկէք. ձեր աչքը չխնայէ
6 և մի ողորմիք. Ծերը, երիտասարդը
և կոյսը, փոքր ազգը և կանայք
սպաննեցէք և կոտորեցէք, բայց վր-
ան նշան ունեցող մարդու ամենևին
մի մօտենաք. և իմ սրբարանէս սկսէ-
ցէք։ Ուստի սան առջև եղող ծերե-
7 րէն սկսան։ Եւ անոնց ըսաւ, Տունը
պղծեցէք, և գաւիթները մեռելներով
լեցուցէք։ Ելէք։ Եւ անոնք ելան և
քաղաքին մէջ զարկին։
8 Եւ երբ զանոնք զարկին, և ես մնացի,
անսուն երեսս վար ինկայ և աղա-
ղակելով ըսի, Ո՜հ, Տէր Եհովայ, դուն
Երուսաղէմի վրայ քու բարկութիւնդ
թափելով Իսրայէլի բոլոր մնացորդը
9 բնաւին պիտի բնեա՞ս։ Եւ ինծի ըսաւ,
Իսրայէլի և Յուդայի տան անօրէնու-
թիւնը շատ մեծ է, և երկիրն արեամբ
լցաւ և քաղաքն անիրաւութեամբ լը-
ցաւ. վասն զի ըսին, Տէրը երկիրը թո-
10 ղուց, և Տէրը չտեսնէր։ Եւ ինծի իմ
աչքս ալ ետ պիտի չխնայէ և պիտի
չողորմիմ. անոնց ճամբաներն անոնց
գլուխը պիտի բերեմ։
11 Եւ ահա կատէ զգեստ հագած և
մելանը կապտաթոր ունեցող մարդը լուր
բերաւ և ըսաւ, Ինծի հրամայածիդ
պէս ըրի։

## Գլ. Ժ

1 Եւ տեսայ որ ահա քերովբէներուն

գլխուն վրայէ հասնուած Թեման մէջ չափուած քառ. պէս ութսուն ձեռք երանուԹիւն մը կ'երևնար անոնց վրայ։
2 Եւ կառուցի զգեստ հագած մարդուն խօսեցաւ ընդ ինձ, Քերովբէներուն տակ եղող անիւներուն մէջտեղ մտիր, և ձեռքերդ քերովբէներուն մէջտեղ եղող կրակի կայծերէն լեցուր, և քաղաքին վրայ ցանէ. և անիկա իմ աչքերուս առջև մտաւ։
3 Եւ երբ այն մարդը մտաւ, քերովբէները տան աջ կողմը կայնած էին, և ամպը ներքին գաւիթը լեցուցած էր։
4 Եւ Տէրոջը փառքը քերովբէներուն վրայէն տանը սեմը վերացաւ, և տունն ամպով լցաւ, և գաւիթը Տէրոջը փառքին պայծառութենէն լցաւ։
5 Ու թեւերուն ձայնը մինչև արտաքին գաւիթը կը լսուէր Ամենակարող Աստուծոյ ձայնին պէս, երբ կը խօսի։ Եւ երբ կոչուէ զգեստ հագած մարդուն հրամայեց, և ըսաւ թէ քերովբէներուն մէջտեղ եղող անիւներուն մէջէն կրակ առ, անիկա գնաց անիւներուն քով կայնեցաւ։ Եւ քերովբէներէն մին իր ձեռքը քերովբէներուն մէջտեղ եղած կրակին երկնցուց և առաւ, և կառուկ զգեստ հագնողին ձեռքը տուաւ։ ա-
8 Նիկա ալ առաւ և ելաւ։ (Եւ քերովբէից թևերուն տակ մարդու ձեռքի նմանութիւն կ'երևնար։)
9 Եւ տեսայ որ ահա քերովբէներուն քով չորս անիւ կար, իւրաքանչիւր քերովբէի քով մէկ անիւ. և անիւները երևոյթը ոսկեքարի կը նմանէր։
10 Եւ անոնց երևոյթը, չորսին ալ, միակերպ էր, որպէս թէ անիւ անուի մէջ։
11 Երբ կ'երթային, իրենց չորս կողմերուն վրայ կ'երթային. երթալու ատեն երեսները չէին դառնար, հապա զի որ կողմը որ գլուխը կը նայէր, անոր հետեւեն կ'երթային, երթալու ատեն չէին դառնար։ Եւ անոնց բոլոր մարմինը, թիկունքը, ձեռքերը և թեւերը, նաև անիւները, այսինքն ան չորսին անիւներն, ամէն կողմէն լի էին
13 աչօք։ Անիւներուն համար լսեցի որ անոնց անուն դրուեցաւ Մրրիկ։
14 և իւրաքանչիւրը չորս երես ունէր։ առաջին երեսը քերովբէի երես էր, և երկրորդ երեսը մարդու երես էր, և երրորդն առիւծի երես էր, և չորրորդն արծուի երես էր։ Եւ քերովբէները վերացան։ կենդանիները դորս Բոբար
16 գետին քով տեսայ։ տանը էին։ Եւ երբ քերովբէները կ'երթային, անիւներն ալ անոնց քովէն կ'երթային, և երբ քերովբէները երկրէն բարձրանալու համար իրենց թևերը կը վերցնէին, այս անիւներն անոնց քովէն
17 չէին դառնար։ երբ անոնք կայնէին, առ՝ նա կը կայնէին, երբ անոնք վերանային, առ՝ նա կը վերանային անոնց հետ. վասն զի անոնց մէջ կենդանիներուն ոգին կար։
18 Եւ Տէրոջը փառքը տան սեմին վրայէն ելաւ, և քերովբէներուն վրայ
19 կայնեցաւ։ Եւ իմ աչքիս առջև քերովբէները կ'ելլելով իրենց թևերը վերցուցին և երկրէն բարձրացան. անիւներն ալ անոնց հետ էին, և Տէրոջը տան արևելեան դրան մուտքը կայնեցան, և Իսրայէլի Աստուծոյն փառքը վերէն ա-
20 նոնց վրայ էր։ կենդանիները Բոբար գետին քով Իսրայէլի Աստուծոյն տակը տեսայ՝ տանը էին, և գիտցայ
21 որ անոնք քերովբէներ էին։ Իւրաքանչիւրը չորս երես ունէր, և իւրաքանչիւրը չորս թև ունէր, և անոնց թևերուն տակ
22 մարդու ձեռաց նմանութիւն կար։ Եւ անոնց երեսներուն երևոյթն այն երեսներուն էր՝ զոր տեսայ Բոբար գետնին քով տեսայ, թէ անոնց կերպարանքը և թէ իրենք։ իւրաքանչիւրը դէպ ուղղ յառաջ կ'երթար։

## Գլ. Ժ.Ա

1 Եւ հոգին զիս վերցուց, և Տէրոջը տան դէպ արեւելք նայող արեւելեան դուռը բերաւ։ և ահա դրան մուտքը քսան և հինգ մարդ կար, և անոնց մէջ տեսայ

*Կամ Դիւրաթաւալ, Տէր։ Գաղգազ։



Ժողովրդեան իշխանները, Ազոտի որդին Յազնիա և Բանեայի որդին Փաղատիա։
2 Եւ անիկա ինծի ըսաւ, Որդի մարդոյ, Ասոնք են այն մարդիկը որ անօրէնութիւն կը մտածեն,
Եւ չար խորհուրդ կու տան այս քաղաքիս մէջ,
3 Եւ կ'ըսեն, Մօտ չէ՛ [*]շէնութիւն, տուներ չինենք.
Այս [*]պատ կաթսայ է, և մենք միս ենք։
4 Ուստի մարգարէացիր անոնց վրայ,
Մարդագէացիր, որդի մարդոյ։
5 Անատեն Տէրոջը Հոգին իմ վրաս իջնաւ.
Եւ ինծի ըսաւ, Ըսէ որ Տէրը այսպէս կ'ըսէ.
Դուք այսպէս ըսիք, ով Իսրայէլի տուներ,
Բայց ես ձեր միտքին անցածը գիտեմ։
6 Դուք այս քաղաքիս մէջ ձեր սպանուածները շատցուցիք,
Եւ անոր փողոցները սպանուածներով լեցուցիք։
7 Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Ձեր սպանուածները որոնց անոր մէջ դրիք,
Անոնք միսն են, և անիկա կաթսան է.
Բայց զձեզ անոր մէջէն պիտի հանեմ։
8 Դուք սուրէն վախցաք,
Ու ես սուրը ձեր վրայ պիտի բերեմ,
Կ'ըսէ Տէր Եհովան։
9 Եւ զձեզ անոր մէջէն պիտի հանեմ,
Ու զձեզ օտարներուն ձեռքը պիտի մատնեմ,
Եւ ձեր մէջ դատաստաններ ի գործ պիտի դնեմ։
10 Դուք սրով պիտի իյնաք.
Իսրայէլի սահմանին վրայ զձեզ պիտի դատեմ,
Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։
11 Այս [*]պատը ձեզի համար կաթսայ պիտի չըլլայ,
Որ դուք անոր մէջ միս ըլլաք.
Իսրայէլի սահմանին վրայ զձեզ պիտի դատեմ,
12 Եւ պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը.
Վասն զի իմ օրէնքներովս չգացիք,
Ու իմ իրաւունքներս ի գործ չդրիք,
Այլ ձեր բոլորտիքը եղող ազգերուն սովորութեանց համեմատ վարուեցաք։
13 Եւ եղաւ որ երբ ես մարգարէութիւն կ'ընէի, Բանեայի որդին Փաղատիա մեռաւ. անատեն երեսիս վրայ ինկայ, բարձր ձայնով աղաղակեցի և ըսի, Ո՜հ, Տէր Եհովայ, միթէ Իսրայէլի մնացորդը բոլորովին պիտի սպառէ՞ս։
14 Անատեն Տէրոջը խօսքը ինծի եղաւ
15 ըսելով, Որդի մարդոյ, քու եղբայրներդ, քու եղբայրներդ, քու ազգականներդ և բոլոր Իսրայէլի տունը, այնքան այն մարդիկն են որոց Երուսաղէմի բնակիչներն ըսին, Տէրոջը քովէն հեռացէք. այս երկիրը մեզի ժառանգութիւն արուած է։
16 Անոր համար ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Թէպէտև զանոնք ազգերուն մէջ հեռացուցի,
Եւ զանոնք երկիրներու մէջ ցրուեցի,
Բայց անոնց մատ երկիրներուն մէջ
Ինչ մը ոխէն անոնց սրբարան պիտի ըլլամ։
17 Անոր համար ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Զձեզ ժողովրդներէն պիտի հաւաքեմ,
Եւ զձեզ պիտի ժողվեմ այն երկիրներէն
Որ ցրուած եք,
Եւ ձեզի պիտի տամ Իսրայէլի երկիրը։
18 Եւ հոն պիտի մտնեն,
Ու անոր բոլոր գարշութիւններն
Ու բոլոր պղծութիւններն անկէ պիտի վերցունեն։
19 Եւ անոնց մէկ սիրտ պիտի տամ,
Ու անոնց ներսի դին նոր հոգի պիտի դնեմ.
Ու անոնց մարմինէն քարեղէն սիրտը պիտի հանեմ,

Եւ անոնց մեքենայէն սիրտ պիտի տամ.
20 Որպէս զի իմ օրինացս մէջ գայեն,
Եւ իմ իրաւունքս պահեն և զանոնք
Ի գործ դնեն.
Եւ անոնք ինծի ժողովուրդ ըլլան,
Եւ ես անոնց Աստուած ըլլամ։
21 Բայց անոնց որոց սիրտն իրենց կամաց
գարշութիւններուն
Եւ պղծութիւններուն ետեւէն կ'երթայ,
Անոնց ճամբան իրենց գլուխը պիտի
բերեմ,
Կ'ըսէ Տէր Եհովան։
22 Եւ բերանէրնին իրենց Թևերը մերկացուցին, և անիներն անոնց քովն էին,
և Իսրայէլի Աստուածն փառքը վերէն
23 անոնց վրայ էր։ Եւ Տէրոջը փառքը քաղաքին մէջտեղէն ելաւ, և քաղաքին արևելեան կողմը եղող լեռան
վրայ կեցաւ։
24 Եւ Հոգին զիս վերցուց և Քաղդեացոց երկիրը եղող գերիներուն քով բերաւ, և տեսիլ— Եզե— Աստուծոյ Հոգւով
տեսայն ինծի. և տեսիլը զոր տեսայ
25 իմ վրայէս եղաւ։ Եւ ես գերիներուն
խօսեցայ Տէրոջը բոլոր խօսքը զոր ինծի
յայտնած էր։

## Գլ. ԺԲ։

1 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
2 Որդի մարդոյ, դուն բնակած ես, ապստամբներու տան մէջ, որ տեսնելու
աչք ունին և չեն տեսներ, և լսելու
ականջ ունին և չեն լսեր. վասն զի ա-
3 նոնք ապստամբներու տուն են։ Եւ
դուն, որդի մարդոյ, քեզի չտեսնելու
կարասիներ պատրաստէ, և անոնց աչքերուն առջեւ ցուրտ ատենէ տեղ չտեւէ,
Թերևս տեսչութիւն ընեն, Թէև
4 անոնք ապստամբներու տուն են։ Եւ
անոնց աչքերուն առջեւ քու կարասիներդ
հանես գերիի չտեսնելու կարասիներու
պէս, բայց դուն անոնց աչքերուն առջեւ
իրիկունը ելլես գերութեան գացողներու
5 պէս։ Անոնց աչքերուն առջեւ պատը
6 ծակելու և անկէ հանես. Անոնց աչքերուն առջեւ ուսդ վրայ վերցնես,
և մթնցած ատենը հանես. երեսդ ծածկէ որ երկիրը չտեսնես. վասն զի զքեզ
Իսրայէլի տան նշան ատի։
7 Եւ այնպէս ըրի ինչպէս որ ինծի հրամայեցաւ. իմ կարասիներս չտեսնելու
կարասիներու պէս հանեցի ցորեկ, և
իրիկունը ձեռքովս պատը ծակեցի, և
մթնցած ատենը հանեցի. անոնց աչքերուն առջեւ ուսս վրայ վերցուցի։ Եւ ա-
8 ռաւօտուն Տէրոջը խօսքը ինծի եղաւ
9 ըսելով, Որդի մարդոյ, Իսրայէլի տունը, այն ապստամբներու տունը, քեզի
10 չըսի՞ Թէ ի՛նչ կ'ընես։ Անոնց ըսէ,
Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Այս պատգամը Երուսաղէմի մէջ եղող իշխաններն, և հոն բնակող Իսրայէլի բոլոր տան
11 համար է։ Ըսէ,
Ես ձեզի համար նշան եմ.
Ես ինչպէս որ ըրի, անոնց այնպէս պիտի ըլլայ.
Անոնք պիտի չերթան և գերութեան կը-
12 տան։ Եւ անոնց մէջ եղող իշխանը
Իր ուսին վրայ Բ֊ պիտի վերցունէ,
Եւ մթնցած ատեն պիտի ելլէ.
Պատը պիտի ծակեն որ անկէ հանեն.
Անիկա իր երեսը պիտի ծածկէ,
Որ երկիրն աչքով չտեսնէ։
13 Եւ անոր վրայ իմ ցանցս պիտի տա-
րածեմ,
Եւ անիկա իմ որոգայթիս մէջ պիտի
բռնուի.
Եւ զանիկա Բաբելոն,
Քաղդէացւոց երկիրը պիտի տանիմ,
Եւ անիկա այն տեղը պիտի չտեսնէ,
Թէև հոն պիտի մեռնի։
14 Եւ անոր բոլորտիքը եղող բոլոր օգ-
նականները
Եւ անոր բոլոր գունդերը
Անձին հովերու պիտի ցրուեմ,
Եւ անոնց հետևէն սուր պիտի քաշեմ։
15 Եւ երբ զանոնք ազգերու մէջ ցրուեմ,
Եւ զանոնք երկիրներու մէջ ցանեմ,
Պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը։

*Կամ տեսանեն Թէ իրենք



16 Եւ անոնցմէ սուրբ, սովէ և ժանտախտէ
Քիչ մարդ մնացորդ պիտի թողում,
Որպէս զի իրենց բոլոր պղծութիւնները
պատմեն
Այն ազգերուն մէջ ուր պիտի մտնեն.
Եւ պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը։
17 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
18 Որդի մարդոյ, քու հացդ դողալով ու-
տես,
Եւ ջուրդ տագնապով և անձկութեամբ
խմես.
19 Եւ երկրին ժողովրդեան ըսէ,
Իսրայէլի երկրին մէջ եղող Երուսաղէմի բնակիչներուն վրայ
Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Անոնք իրենց հացն անձկութեամբ պիտի ուտեն,
Եւ իրենց ջուրն ապշութեամբ պիտի
խմեն,
Որպէս զի իրենց երկիրը բոլորովին ա-
մայի մնայ
Իր բոլոր բնակչաց անիրաւութեան
պատճառաւ։
20 Եւ մարդաբնակ քաղաքները պիտի
աւերուին,
Եւ երկիրն ամայի պիտի ըլլայ.
Եւ պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը։
21 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
22 Որդի մարդոյ, ինչ պիտի ըլլայ ձեզի
այն առակը
Զոր դուք Իսրայէլի երկրին մէջ կը գործածէք,
Եւ կ'ըսէք, Օրերը կ'երկննան,
Եւ ամեն տեսիլ պարապ կ'ելլէ։
23 Անոր համար անոնց ըսէ,
Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Այս առակը պիտի խափանեմ,
ԵՒ այս առակն այլ ևս Իսրայէլի մէջ
պիտի չբանեն.
Բայց անոնց ըսէ, Օրերը մօտեցան,
Նաև ամեն տեսիլան կատարումը։
24 Վասն զի Իսրայէլի տան մէջ այլ ևս
ունայն տեսիլ
Եւ չաղաքարթուեան գուշակութիւն
պիտի չըլլայ։
25 Քանզի ես Տէրս կը խօսիմ,
Եւ խօսքս կը գործ պիտի դրուի,
Այլ ևս պիտի չուշանայ.
Վասն զի ձեր օրերուն մէջ, ով ապըս-
տամբներու տուն,
Խօսք պիտի խօսիմ և պիտի կատարեմ,
Կ'ըսէ Տէր Եհովան։
26 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
27 Որդի մարդոյ, Ահա Իսրայէլի տունը
կ'ըսեն Թէ
Ատոր տեսած տեսիլը շատ օրերու համար է,
Եւ անիկա հեռաւոր ժամանակներու
համար մարգարէութիւն կ'ընէ.
28 Անոր համար անոնց ըսէ,
Այսպէս կ'ըսէ Տէր Եհովան.
Այսուհետև բնաւ ուրիշ խօսքս պիտի
չուշանայ,
Այլ իմ խօսած խօսքս պիտի կատարուի,
Կ'ըսէ Տէր Եհովան։

## Գլ. ԺԳ։

1 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
2 Որդի մարդոյ, մարգարէութիւն ընող
Իսրայէլի մարգարէներուն դէմ մարգարէացիր,
Եւ իրենց ըսէն մարգարէութիւն ը-
նողներուն ըսէ,
Տէրոջը խօսքը մտիկ ըրէք.
3 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Վա՛յ անզգամ մարգարէներուն
Որ իրենց հոգւոյն եռանդն կ'երթայ,
Եւ բան մը տեսած չեն։
4 Քու մարգարէներդ, ով Իսրայէլ,
Աւերակներու մէջ եղող աղուէսներու
պէս եղան։
5 Խրամատութեան տեղ ալանք չելաք,
Եւ Տէրոջը օրը պատերազմի մէջ հաստատ կայնելու համար

*Կամ ես եմ Տէրը, ես կը խօսիմ,

Իսրայէլի տունը պարզապով չպատեցիք։
6 Անոնք ունայն տեսիլ և սուտ գուշակութիւն կը տեսնեն,
Ու կ'ըսեն Թէ Տէրը ըսաւ,
Թէև Տէրը զանոնք ղրկած չէ։
Ու յոյս կու տան Թէ էրէոյ խօսքը պիտի կատարուի։
7 Մի՞թէ դուք ունայն տեսիլներ չտեսաք,
Ու սուտ գուշակութիւններ չխօսեցաք,
Ու չըսի՞ք Թէ Տէրը խօսեցաւ,
երբ ես խօսած չէի։
8 Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Ձեր խօսքին ունայն,
Ու ձեր տեսիլը սուտ ըլլալուն համար
Ահա ես ձեզի դէմ եմ,
կ'ըսէ Տէր Եհովան.
9 Ու իմ ձեռքս ունայն տեսիլ տեսնող
Ու սուտ գուշակութիւն ընող մարգոցներուն դէմ պիտի ըլլայ։
Անոնք իմ ժողովրդեանս խորհուրդին մէջ պիտի չըլլան,
Ու Իսրայէլի տան գրքին մէջ պիտի չ'գրուին,
Ու Իսրայէլի երկիրը պիտի չմտնեն.
Ու պիտի գիտնաք Թէ ես եմ Տէր Եհովան։
10 Վասն զի անոնք իմ ժողովուրդս կը մոլորեցուցին,
Ու խաղաղութիւն է, կ'ըսեն, երբ խաղաղութիւն չկայ.
Ու անիկա պատ կը չինէ,
Ու անոնք կրով կը ծեփեն զայն.
11 Ա՛ն կրով ծեփողներուն ըսէ որ Անիկա պիտի փլչի.
Յորդահոս անձրեւ պիտի ըլլայ,
Ու դուք, ալ կարկտայ քարեր, պիտի կ'իյնաք.
Ու ջա՛ր մրրկայից հովը պիտի ճեղքէ։
12 Ու ահա էրէ՛ պատը փլչի,
Չեզի պիտի չըսե՞ն Թէ
Ո՞ւր է ծեփը զոր ծեփեցիք։
13 Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Իմ սրտմտութեամբս մրրկայից հով պիտի հանեմ,
Ու իմ բարկութեամբս յորդահոս անձրեւ,
Ու սրտմտութեամբս կարկտայ քարեր պիտի ըլլան,
Որ ջա՛ր բնաջինջ ընեն։
14 Ու ձեր կրով ծեփած պատը պիտի փլցունեմ,
Ու գետնին հետ հաւասար պիտի ընեմ զայն։
Ու անոր հիմը պիտի երևնայ, և անիկա պիտի կրնայ,
Ու դուք անոր մէջ բնաջինջ պիտի ըլլաք.
Ու պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը։
15 Ու ես իմ սրտմտութիւնս* պատին վրայ,
Ու զանիկա կրով ծեփողներուն վրայ պիտի կատարեմ,
Ու ձեզի պիտի ըսեմ,
Պատը և զայն ծեփողները ոչինչ եղան,
16 Ա՛յսինքն Իսրայէլի մարգարէները
Որ Երուսաղէմի վրայ մարգարէութիւն կ'ընեն,
Ու անոր վրայ խաղաղութեան տեսիլներ կը տեսնեն,
Թանի որ խաղաղութիւն չկայ, կ'ըսէ Տէր Եհովան։
17 Ու դուն, որդի մարդոյ, երեսդ ուղղէ քոյ ժողովուրդիդ աղջիկներուն դէմ որ իրենց սրտէն մարգարէութիւն կ'ընեն, և անոնց վրայ մարգարեցիր
18 ըսացիր, Ու ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Վա՛յ այն կիանանց որ ամէն Թեւերու տակ բարձ կը կարեն, և ամէն հասակի մարդոց գլուխներուն †ջալակներ կը չինեն, որ հոգիներ որսան. Միթէ դուք իմ ժողովուրդիս հոգիները որսալով ձեր հոգիները պիտի ապրեցունէ՞ք։ Ու ինծի լեղուն գարշուհամար և հացի պատառներու համար իմ ժողովուրդիս առջև զիս պիտի անարգէ՞ք, որպէս զի սուտ Թեան ականջ դնող ժողովուրդիս սուտ խօսքով չմեռցնեք, և չապրելու հոգիները ապրեցնէ՞ք։
20 Ուստի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա ես ձեր բարձերուն դէմ եմ, որովք

*Կամ երեսի բարձեր



դուք հոգիները կ'որսաք *Թռչուններու պէս, և զանոնք ձեր թևերէն պիտի պատռեմ, և այն հոգիները պիտի արձակեմ, այսինքն այն հոգիները զոր դուք կորսաք *Թռչուններու
21 պէս։ Ու ձեր լաչակները պիտի պատռեմ, և իմ ժողովուրդս ձեր ձեռքէն պիտի ազատեմ, և այլ ևս ձեր ձեռաց մէջ որս պիտի չըլլան, և պիտի գիտնաք
22 նաև Թէ ես եմ Տէրը։ Վասն զի դուք չէր սուտ Թիւններով արդարին սիրտը, զոր ես չէի տրտմեցուցած, և զօրացուցիք ամբարշտին ձեռքը, որպէս զի իւր չար ճամբեն չդառնա-
23 նայ և ապրի։ Անոր համար այլ ևս ունայն տեսիլք պիտի չտեսնէք, և գուշակութիւն պիտի չընէք. և իմ ժողովուրդս ձեր ձեռքէն պիտի ազատեմ. և պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը։

Գլ. ԻԴ

1 Եւ Իսրայէլի ծերերէն քանի մը մարդիկ ինծի եկան, և իմ առջև նստան։
2 Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
3 Որդի մարդոյ, այդ մարդիկն իրենց կուռքերն իրենց սրտերուն մէջ կանգնեցին, և իրենց անօրէնութեան գայթակղութիւնն իրենց երեսներուն առջև դրին. միթէ բնա՞ւ †անոնց պատասխան պիտի տա՞մ։ Ուստի անոնց հետ խօսէ և անոնց ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Իսրայէլի տունէն ով որ իւր կուռքերը իւր սրտին մէջ կանգնէ, և իւր անօրէնութեան գայթակղութիւնը իւր երեսին առջև դնէ, և մարգարէին գայ, այն եկողին ես Տէրս անոր կուռքերուն բազմութեան համեմատ պատասխան պիտի տամ.
5 որպէս զի Իսրայէլի տունն իրենց սիրտերն բռնեմ, վասն զի անոնց ամէնքն իրենց կուռքերովնին հեռացան։
6 Անոր համար Իսրայէլի տան ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Դարձէ՛ք, և

*Կամ որ Թռչին,
†Եբր. անոնցմէ պիտի հարցուի՞մ,

ձեր կուռքերէն չդի՛ջ դարձուցէք, և ձեր ամէն պղծութիւններէն երեսնիդ
7 դարձուցէ՛ք։ Քանզի Իսրայէլի տունէն կամ Իսրայէլի մէջ պանդխտող եղող օտարականներէն ով որ ինծի դառնայ, և իւր կուռքերը իւր սրտին մէջ կանգնէ, և իւր անօրէնութեան գայթակղութիւնը իւր երեսին առջև դնէ, և մարգարէին գայ, այն եկողին ես Տէրս անոր կուռքերուն բազմութեան համեմատ պատասխան պիտի տամ. Որպէս զի Իսրայէլի տունն իրենց սրտերն բռնեմ, վասն զի անոնց ամէնքն իրենց կուռքերովնին հեռացան։
8 Ինծի պիտի տամ անոր. Ու իմ երեսս այն մարդուն վրայ պիտի հաստատեմ, և զանիկա նշան և առակ պիտի ընեմ, և իմ ժողովուրդիս միջէն ջնջելով պիտի ընեմ զնա, և պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը։
9 Ու եթէ մարգարէ մը ախալտիալ բան մը խօսի, այն մարգարէին ես Տէրս սբխալեցուցի, և իմ ձեռքս անոր վրայ պիտի երկնցնեմ, և իմ ժողովուրդիս Իսրայէլի միջէն զանիկա պիտի կորնչուցնեմ, Ու անոնք իրենց պատիժը պիտի կրեն. Քահանային պատիժը և մարգարէին պատիժը մէկ
11 պիտի ըլլայ. Որպէս զի Իսրայէլի տունն այլ ևս ինծի չմոլորի, և այլ ևս իրենց բոլոր յանցանօք չպղծուին, այլ անոնք ինծի ժողովուրդ ըլլան, և ես անոնց Աստուած ըլլամ, կ'ըսէ Տէր Եհովան։
12 Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
13 Որդի մարդոյ, եթէ երկիր մը անհաւատարմութիւն ընելով ինծի դէմ մեղանչէ, և ես անոր վրայ իմ ձեռքս երկնցնեմ, և անոր հացին ցուպը կոտրեմ և անոր վրայ սով ղրկեմ, և մարդ և անասուն անկէ կորսնցնեմ։
14 Մանի՛կ և անոնց մէջ կորսնին, Դանիէլ, եթէ սա երեք մարդիկ նոյ, Դանիէլ և Յոբ անոր մէջ ըլլան, անոնք իրենց արդարութեամբ ինքզինքնին պիտի ազատեն, կ'ըսէ Տէր Եհովան։
15 Եթէ երկրի վրայ չար գազաններ բերեմ, որ զայն անպտուղ թողուն, և ամայի ըլլայ, այնպէս որ գազաններուն
16 պատճառաւ անկէ անցնող չըլլայ. եթէ այն երեք մարդիկ անոր մէջ ըլլան, ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովան, որ էրէոյ որդիքը և աղջիկները պիտի չը-

կրնան ազատել. միայն իրենք պիտի
ազատին, և երկիրը ամայի պիտի ըլլայ։
17 Կամ եթէ այն երկրին վրայ սուր բե-
րեմ, և ըսեմ թէ, Ով սուր, երկիրն
մէջէն անցիր, և անկէ մարդ և անա-
18 ռուն կտրեմ. Ես էին այն երեք մար-
դիկ անոր մէջ ըլլան ես կենդանի եմ,
կ'ըսէ Տէր Եհովան, որ իրենց որդիքը
և աղիկները պիտի չկրնան ազատել,
բայց միայն իրենք պիտի ազատին։
19 Կամ եթէ այն երկրին վրայ ժան-
տախտ դրկեմ, և արեամբ իմ բարկու-
թիւնս անոր վրայ թափեմ, այնպէս որ
20 մարդ և անասուն անկէ կտրեմ. Ես
Նոյ, Դանիէլ և Յոբ անոր մէջ ըլլան,
ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովան,
որ իրենց մէկ որդին կամ աղջիկը պի-
տի չկրնան ազատել. անոնք իրենց ար-
դարութեամբ իրենց անձը պիտի
ազատեն։
21 Վասն զի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Որչափ աւելի երբ ես իմ չորս սաս-
տիկ պատիժներս՝ սուրը, սովը, չար
գազանները և ժանտախտը երուսաղէ-
մի վրայ դրկեմ մարդ և անասուն ան-
22 կէ կտրելու համար։ Բայց ահա հոն ա-
զատուած մնացորդ մը պիտի ըլլայ,
այսինքն ազատուող և աղջկանց, որ պիտի
հանեն. ահա անոնք ձեզի պիտի գան,
և անոնց ճամբան և անոնց գործերը
պիտի տեսնէք, և չարեաց վրայ զղրա-
բերի երուսաղէմի վրայ, բոլոր ըրածով
վրայ զոր բերի անոր վրայ՝ պիտի մխի-
23 թարեսիք եւ երբ անոնց ճամբան և
գործերը տեսնէք, անոնք ձեզ պիտի
մխիթարեն և պիտի գիտնաք թէ ինչ
որ բրի անոր մէջ առանց պատճառի
չըրի, կ'ըսէ Տէր Եհովան։

## ԳԼ. ԺԴ

1 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
2 Որդի մարդոյ, այրեներ այսոնք իրենց սր-
տերնին կռոտներուն հանեցին, և
չարչարանքի վրայ իրենց առջև
դրին։

[1] Ձեռք։

Անոնք ինձի մօտեցան չառաւիղ մը որ անո-
ւառի ծառերուն մէջ կ'ելլէ։
3 Մինչ անկէ վայն կ'առնուի՝ բանի մը
դործածելու համար։
Կամ թէ անկէ ցից մը կ'առնուի անկէ
աման մը կախելու համար։
4 Ահա կրակի մէջ կը նետուի անոր կե-
րակուր ըլլալու համար։
Կրակն անոր երկու ծայրերը կ'ուտէ,
և մէջը կ'այրի։
Միթէ անիկա բանի մը օգտակար կ'
5 Ահա անիկա ամբողջ եղած ատենը քա-
նի մը չգար։
Ո՛րչափ անոր որ անիկա բանի մը օգտա-
կար ըլլայ։
Կրակը զանիկա ուտելէն և այրելէն ետ-
քը։
6 Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ը-
սէ.
Անառաւոլ վայրերուն մէջ ինչպէս է որ-
թիւն վայրը,
Զոր կրակին տուի կերակրուղ համար,
Այնպէս Երուսաղէմի բնակիչները ալ ի-
7 Եւ իմ երեսս անոնց վրայ պիտի հաս-
տատեմ.
Անոնք մէկ կրակէ պիտի ելլեն,
Եւ ուրիշ կրակ մը զանոնք պիտի ուտէ.
Եւ երբ իմ երեսս անոնց վրայ հաս-
տատեմ,
Պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։
8 Եւ անոնց անհաւատարմութիւն ընե-
լուն համար
Ի կիկեն տամայ պիտի ընեմ,
կ'ըսէ Տէր Եհովան։

## ԳԼ. ԺԶ

1 Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ
ըսելով,
2 Որդի մարդոյ, երուսաղէմի իր պղծու-
թիւնները գիտցուր։
3 Եւ ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ
Երուսաղէմի.
Գրա ակիզքդ և ծնունդդ Քանանացւոց
երկրէն էր,
Քու հայրդ Ամորհացի և մայրդ Քետա-
ցի էր։



4 Եւ քու ծնունդդ այսպէս էր.
Քու ծնած օրդ տղոյդ կիսրուեցաւ,
Եւ ջրով չլուացան զքեզ՝ հաստատելու համար,
Աղով չտրուեցար և խնամքով չմանրթիս եցար։
5 Աչք մը քեզի չխնայեց, որ քեզի ոեւոր-
մէր,
Եւ այս բաներուն միւն ընէր քեզի.
Բայց ծնած օրդ
Քու անձիդ գարշելի թափուի դաշտի ե-
րեսին վրայ նետուեցաւ։
6 Եւ ես քու քովդէն անցայ,
Եւ քեզ արեանդ մէջ կոխոտած տեսայ.
Եւ էրէ արեանդ մէջ էիր, քեզի, Ապ-
րէ ըսի.
Այո, էրէ արեանդ մէջ էիր, քեզի, Ապ-
րէ, ըսի.
7 Զքեզ դաշտի բոյսերուն պէս բիւր բաս որ
ըրիր,
Եւ չատցար և մեծցար,
Եւ կատարեալ գեղեցկութեան հասար.
Մորթդ գոյացաւ և մազերդ աճեցան,
Բայց դուն մերկ և անծածկոյթ էիր։
8 Եւ քու քովդէն անցայ և քեզի նայե-
ցայ,
Եւ ահա քու ժամանակդ սիրոյ ժամա-
նակ էր,
Եւ ես իմ շալուանս քու վրադ տարա-
ծեցի,
Եւ քու մերկութիւնդ ծածկեցի.
Եւ քեզի երդում ընկայ
Քեզի հետ ուխտ ըրի, կ'ըսէ Տէր Եհո-
վան,
Եւ դուն իմս եղար։
9 Եւ զքեզ ջրով լուացի,
Եւ քու վրայդէն քու արիւնդ ալէկ
մաքրեցի,
Եւ զքեզ եղով օծեցի։
10 Եւ քեզի նկարագործ հանդերձ հա-
գուցի,
Եւ քեզի թխհաչի հրէնի չխնամած մու-
ճակներ հագուցի,
Եւ քու ձկիդդ բիսեղէն գօտի կապեցի,
Եւ զքեզ մետաքսերով ծածկեցի.
11 Եւ զքեզ զարդերով զարդարեցի,
Եւ ձեռացդ վրայ ապարանջաններ դրի,
12 Եւ պարանոցիդ վրայ մանեակ դրի
Քու ծնած օրդ պտղոյդ կիսրուեցաւ,
Եւ ականջներդ դիմդ եր,
Եւ գլուխդ պարծանաց պսակ դրի։
13 Եւ ոսկով և արծաթով զար-
դարուեցար,
Եւ քու հանդերձներդ բեհեզ մետաքս
և նկարագործ եղան.
Նաշիլ և մեղր և իղ կերար,
Եւ գեղեցկացար յոյժ,
Եւ թագաւորու թեան հասար։
14 Եւ քու գեղեցկութեանդ համար քու
անունդ ազգերուն մէջ տարա-
ծուեցաւ.
Վասն զի անիկա կատարեալ եղած այն
վայելչութեան պատճառաւ
Զոր քու վրադ դրի, կ'ըսէ Տէր Եհովան։
15 Բայց դուն քու անուանդդ պատճա-
ռաւ,
Քու գեղեցկութեանդդ ապաւինելով
շնու թիւն ըրիր,
Եւ քու պոռնկութիւնդ ամէն անցնո-
ղին առջև թափեցիր՝ անորը
կ'ըլլար։
16 Եւ քու հանդերձներէդ առիր,
Եւ քեզի գոյնզգոյն զարդերով բարձ
տեղեր շինեցիր,
Եւ անոնց վրայ շնու թիւն ըրիր.
Անոնց նման չէզաւ, և ոչ պիտի ըլլայ։
17 Եւ առիր սակիսն և ալծաթիսն, զոր
քեզի տուի,
Շինած քու պատանացդ զարդերը,
Եւ քեզի արուական պատկերներ շինե-
ցիր
Եւ անոնցմով պոռնկեցար։
18 Եւ քու նկարագործ հանդերձներդ առ-
նելով
Զանոնք ծածկեցիր,
Եւ իմ իւղս և խունկս անոնց առջև
դրիր։
19 Եւ հացը զոր քեզի տուի,
Նաշիսը զոր քեզի կերցուցի, իւղն և
մեղրս ալ
Անոնց առջև դրիր անուշ հոտի համար.
Եւ ասիկա եղաւ, կ'ըսէ Տէր Եհովան,
20 Եւ ինծի համար ծնած որդիքդ և աղ-
ջիկներդ առիր,

Եւ զանոնք կերակրոյ համար զոհ ըլլիր
անոնց,
Այս քու պառնկութիւնդ քիչ բան է,
21 Որ իմ ազաչքս մարթիացիր,
Եւ զանոնք անոնց տուիր լուծ անցուն ելով,
22 Եւ քու բոլոր պղծութիւններուդ և պառնկութիւններուդ մէջ
Քու մանկութեանդ օրերը չյիշեցիր,
Երբ մերկ և անծածկոյթ
Եւ քու արեանդ մէջ կոխաւած էիր,
23 Եւ եղաւ որ բոլոր չարութիւններէդ հետքը,
(վա՜յ, վա՜յ քեզի, կ'ըսէ Տէր Եհովան,)
24 Դուն քեզի բազանոց ալ շինեցիր,
Եւ քեզի ամէն հրապարակի մէջ բարձր տեղ ըլլիր,
25 Ամէն ճամբու գլուխ քու բարձր տեղերդ չինեցիր,
Եւ քու գեղեցկութիւնդ ղազուելի ըլլիր,
Եւ ամէն անցնողին քու ոտքերդ բացիր,
Եւ քու պառնկութիւններդ բազմացուցիր,
26 Եւ քու մեծանդամ սահմանակիցներուդ,
Եգիպտոսի որդւոց հետ, պառնկութիւն ըլլիր,
Եւ զիս բարկացնելու համար քու պառնկութիւններդ բազմացուցիր,
27 Եւ ահա իմ ձեռքս քու վրադ երկընցուցի,
Եւ քու ուռճիկդ պակսեցուցի,
Եւ զքեզ քու թշնամիներուդ, փղշտացւոց աղիկներուն, կամաց յանձնեցի,
Որ քու անհամեստ վարմունքէդ կ'ամչնային,
28 Եւ չկշտանալով Ասորեստանի որդւոց հետ պառնկութիւն ըլլիր,
Եւ թէպէտ անոնց հետ պառնկութիւն ըլլիր, սակայն չյագեցար։
29 Եւ քանանացւոց երկրին մինչև Քաղդեացւոց երկիրը
Քու պառնկութիւններդ բազմացուցիր,
Բայց ասով ևս չյագեցար։
30 Քու սիրտդ ո՜րչափ ակաբէ, կ'ըսէ Տէր Եհովան,
Որ այս ամէն բաներն ըլլիր,
Անառաք պառնիկ կինոջ գործը։
31 Ամէն ճամբու գլուխ քու բազանոցներդ շինեցիր,
Եւ քեզի ամէն հրապարակի մէջ բարձր տեղ ըլլիր,
Եւ վարձքն անարգելով՝ պառնիկ կընոջ պէս չեղար,
32 Այլ ընութիւն ընող այն կնոջ պէս էղար,
Որ իւր էրկան տեղ օտարներ կ'առնու։
33 Ամէն բովերու վարձք կու տան,
Բայց դուն ամէն համանիներուդ քու վարձքդ կու տաս,
Այո, կաշառք կու տաս անոնց որ ամէն կողմէն քեզի գան
Քեզի հետ պառնկութիւն ընելու համար։
34 Եւ քու պառնկութեանդդ մէջ կանանց եղածին ներհակը կ'ըլլայ քեզի,
Վասն զի պառնկութեան համար քու հետեւէդ եկող մարդ չկայ,
Եւ քու վարձք ոտկոչ և ուրիշին վարձք չառնելովդ
Դուն ներհակդ եղար։
35 Ասոր համար, ով պառնիկ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէ,
36 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Որովհետեւ քու պղինձդ ածած ուեցաւ,
Եւ քու պառնկութիւններովդ մերկութիւնդ
Քու հաճախներուդ և ամէն գարշելի կռոցդ յայտնուեցաւ,
Եւ անոնց նուիրած ազգդ արիւնը
Քովդ-եցաւ,
37 Անոր համար ահա ես պիտի ժողվեմ քու բոլոր հոմանիներդ
Որոց դուն հաճոյ եղար,
Եւ բոլոր անոնք զորս սիրեցիր,
Եւ զանոնք ամէն կողմէն քու վրադ պիտի ժողվեմ,
Եւ քու մերկութիւնդ անոնց պիտի բանամ,
Եւ անոնք քու բոլոր մերկութիւնդ պիտի տեսնեն,



38 Եւ զքեզ պիտի դատեմ
Շնութիւն ընող և արիւն թափող կանանց դատաստանով,
Եւ քեզի բարկութեամբ և նախանձով արեան վէճ պիտի տամ.
39 Եւ զքեզ անոնց ձեռքը պիտի տամ,
Եւ քու բազանոցդ պիտի փլցնեն,
Եւ քու բարձր տեղերդ պիտի աւերեն.
Եւ քու հանդերձներէդ զքեզ պիտի մերկացնեն,
Եւ քու պարծանագդ գոյքերը պիտի առնեն,
Եւ զքեզ մերկ և անծածկոյթ պիտի թողուն.
40 Եւ քու վրադ ժողով մը ոտք պիտի հանեն,
Եւ զքեզ քարերով պիտի քարկոծեն,
Եւ իրենց սուրերովն զքեզ պիտի խոցոտեն,
41 Եւ քու տուներդ կրակով պիտի այրեն,
Եւ շատ կանանց առջեւ քու վրադ դատաստաններ պիտի գործ պիտի դնեն.
Եւ զքեզ պառնկութիւն ընելէն պիտի դադրեցունեմ,
Եւ այլ ևս պարգև պիտի չտաս։
42 Այսպէս պիտի դադրեցունեմ իմ բարկութիւնս որ քեզի դէմ է.
Եւ իմ նախանձս քենէ պիտի վերնայ,
Եւ պիտի հանդարտիմ և այլ ևս պիտի չբարկանամ։
43 Քանզի դուն քու մանկութեանդդ օրերը չյիշեցիր,
Այլ այս ամէն բաներով զիս բարկացուցիր,
Անոր համար ահա և ես քու ճամբադ քու գլուխդ պիտի բերեմ,
Կ'ըսէ Տէր Եհովան,
Եւ դուն քու բոլոր պղծութիւններուդ վրայ
Այս եղեռնագործութիւնը պիտի չընես։
44 Ահա ամէն առակ խօսող
Քու վրադ առակ պիտի խօսի ըսելով,
Ինչպէս է մայրը, աղիկը ևս այնպէս է։
45 Դուն քու մօրդ աղիկն ես,
Որ իւր ամուսնին և աղոցմէն զզուեցար.
Եւ քու քոյրերուդ քոյրն ես,
Որ իրենց ամուսիններէն և աղոցմէն զզուեցան.
Ձեր մայրը Քետացի, և ձեր հայրն Ամորհացի է։
46 Եւ քու մեծ քոյրդ Սամարիան է,
Որ իւր աղիկներով քու ձախ կողմդ կը բնակի,
Եւ քենէ փոքր քոյրդ Սոդոմ է,
Որ իւր աղիկներով քու աջ կողմդ կը բնակի.
47 Եւ դուն անոնց ճամբաներուն մէջ չը քալեցիր,
Եւ անոնց պղծութիւններուն պէս չըրիր.
Այլ որպէս թէ սոնց չըրածը փոքր և չնչին էր,
Դուն քու բոլոր ճամբաներուդ մէջ անոնցմէ աւելի ապականեցար։
48 Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովան,
Որ քու քոյրդ Սոդոմ, ինք և իւր աղիկներն այնպէս չըրին,
Ինչպէս որ դուն և քու աղիկներդ ըրիք։
49 Ահա քու քրոջդ Սոդոմի անօրէնութիւնն այս էր.
Անիկա իւր աղիկներով
Հպարտութիւն, հացի լիութիւն և անհոգ հանգիստ ունեցաւ,
Եւ աղքատին և անանկին ձեռքը զօրացուց։
50 Եւ հպարտացան և իմ առջեւս պղծութիւն ըրին.
Եւ զանոնք տեսածիս պէս վերցուցի։
51 Եւ Սամարիա քու մեղքերուդ կէսին չափ մեղք չգործեց.
Եւ դուն քու պղծութիւններդ անոնցմէ աւելի բազմացուցիր,
Եւ քու բոլոր պղծութիւններովդ
Քու քոյրերդ արդարացուցիր։
52 Եւ դուն որ քու քոյրերդ դատապարտեցիր,
Քու անարգանքդ կրէ քու մեղացդ համար,
Որ անոնցմէ աւելի պղծութիւն ըրիր.
Անոնք քան զքեզ արդար են.

իսկ դուն քոյրերդ արդարացունելուդ համար
Ամիչոյի և քոյ անարգանքդ կրէ։
53 Եւ ես պիտի դարձնեմ անոնց գերութիւնը,
Սոդոմի և անոր ագլիկներուն գերութիւնը,
Եւ Սամարիայի և անոր ագլիկներուն գերութիւնը.
Անոնց մէջ քու գերութիւնդ ես եւս
ունիմ դարձունելու,
54 Որպէս զի քոյ անարգանքդ կրես
Եւ ամէն բանէդ ամչնաս
Անոնց մխիթարութիւն ըլլալուդ համար։
55 Եւ քու քոյրերդ Սոդոմ, և անոր ագլիկներն,
Իրենց առաջին վիճակը պիտի դառնան,
Եւ Սամարիա և անոր ագլիկներն ես
Իրենց առաջին վիճակը պիտի դառնան,
Ու դուն և քու ագլիկներդ ես
Ձեր առաջին վիճակը պիտի դառնաք։
56 Վասն զի քու հպարտութիւնդ օրը
Դեռ քոյրդ Սոդոմ քու բերնիդ չէր ուզեցար,
57 Մինչ դեռ քու չարութիւնդ յայտնուած չէր,
Ինչպէս որ հիմա յարդուելդ ես
Սուրիոյ աղջիկներուն առջեւ,
Ու անոնց բոլորովիքը եղող բոլոր Փղշտացւոց աղջիկներուն առջեւ
Որ ամէն կողմին զքեզ նախատեցին,
58 Քու եղեռնագործութիւնդ և քու պղծութիւնները.
Դուն կրեցիր, կ'ըսէ Տէրը։
59 Վասն զի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Քու երդումդ հաւէտ պիտի ընեմ քեզի,
Որ երդումն անարգեցիր և ուխտը աւրեցիր։
60 Բայց ես քու մանկութեանդ օրերը
քեզի հետ ընծ ուխտս պիտի յիշեմ,
Եւ քեզի հետ յաւիտենական ուխտ պիտի հաստատեմ.
61 Եւ դուն քու ճամբաներդ պիտի յիշես,
Եւ պիտի ամչնաս երբ ընդունիս քոյրերդ,
Եւ էրէ զանոնք քեզի աղջիկներու տուր
ասոր,
Բայց ոչ թէ քու ուխտովդ։
62 Այլ ես քեզի հետ իմ ուխտս պիտի հաստատեմ,
Եւ պիտի գիտնաս թէ ես եմ Տէրը
63 Որպէս զի յիշես և ամչնաս,
Եւ ամչնալուդ պատճառաւ այլ ես բերանդ չբանաս,
Երբ քու բոլոր գործերուդ համար
Քեզի քաւութիւն ընեմ, կ'ըսէ Տէր Եհովան։

## Գլ. ԻԷ

1 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
2 Որդի մարդոյ, խրատ բեր Հանելուկ
3 պատմէ և առակ խօսէ Իսրայէլի տան ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Մեծ արծիւ մը, մեծ թևերով, երկայն փետուրներով և գոյնզգոյն բարակ փետուրներով լեցուն, Լիբանան եկաւ, և եղեւ
4 Նէն բարձրաբերձ ճիւղն առաւ. Անոր ընձիւղներուն ծայրը փրցուց և զանիկա վաճառականի երկիրը տարաւ, Ե զանիկա վաճառականաց քաղաքը դրաւ։
5 Եւ այն երկրին հունտէն առաւ, Ե զանիկա բարէբեր արտի մէջ դրաւ. դՆէիս չափ չուբերու գով տարաւ,
6 ուռաց գԷս դրաւ. (Եւ անիկա բուսաւ, և տարածուելով կարճահասակ որթ մը եղաւ.) այնպէս որ անոր ոստերը դէպ ի նմա դառնան, և իր արմատները իրեն տակն ըլլան. և անիկա որթ ըլլալով ոստեր բուսցուց և ընձիւղներ արձակեց։
7 Եւ ուրիշ մեծ թևեր և բազմափետուր մեծ արծիւ մը կար. և ահա այս որթը իր արմատները դէպ ի նա ծռեց, և իր ոստերը դէպ ի նա երկնցուց, որպէս զի իր անուած ածուներով ոռոգուէր ըլլա։
8 Անիկա բարեբեր արտի մէջ շատ չուբերու գով անկուեցաւ, որ ոստեր արձակէը և պտուղ բերէը և գեղեցիկ որթ ըլլար։
9 Ասիկա ըսէ՝ Ըսէ որ Տէր Եհովան



այսպէս կ'ըսէ. Մի՞թէ անիկա պիտի յաջողի. մի՞թէ այն ոտքերը անոր արմատները պիտի չխլէ, և անոր պտուղը պիտի չկրցունէ, Այնոր ամէն բուսած տերևները պիտի չորնան. և առանց մեծ բազկի և շատ ժողովրդեան զանիկա արմատէն պիտի խլէ։ Եւ ահա տնկուելուս, միթէ պիտի յաջողի. ո՞չ ապաքէն արևելեան հովը անոր դպած ատեն բոլորովին պիտի չորնայ. անիկա իր բուսած ածուներուն վրայ պիտի չոքնայ։
11 Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ
12 ըսելով, Հիմա ապստամբներուս ըսէ, Այսուհ ինչ բանը չէ գիտեր որ Ահա Բաբելոնի թագաւորը Երուսաղէմ եկաւ, և անոր թագաւորը և իշխաններն առաւ, և զանոնք իրեն
13 քով Բաբելոն տարաւ։ Եւ թագաւորին սերունդէն հէն առնելով, անոր հետ ուխտ բրաւ, և անոր երդումն ընել տուաւ. նաև երկրին զօրաւորներն առաւ։
14 Որպէս զի թագաւորութիւնը ցած ըլլար, և չկրնար դնիւր բարձրանալ. և իր ուխտը պահելով անոր վրայ հաստատ կենար։ Բայց անիկա անկ ապստամբեցաւ, և Եգիպտոս դեսպաններ դրկեց, որ իրեն ձիեր և շատ զօրք տան, միթէ անիկա յաջողութիւն պիտի գտնէ. այս բաներն ընողը պիտի ազատի, կամ թէ ուխտը աւրելով պիտի ազատի՞։
16 Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովան, որ անիկա անշուշտ այն թագաւորին, որ զնա թագաւոր դրած էր, և որոյ նա երդումն անարգած և ուխտն աւրած էր, Բաբելոնի մէջ պիտի մեռնի, անոր քով
17 Բաբելոնի մէջ պիտի մեռնի, Ու փարաւոն մեծ զօրքով և շատ բազմութեամբ պատերազմի մէջ անոր համար մը պիտի չընէ, երբ պատնէշներ կանգնեն և մատակոցներ շինուին
18 շատ հոգիներ կորուստ համար։ վասն զի անիկա երդումն անարգեց և ուխտն աւրեց, և ահա անիկա իր ձեռ դր տալէն հետը՝ այս ամէն բաներն ընելուն համար պիտի չազատի։
19 Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ես կենդանի եմ որ անէծքս անոր գլխուն պիտի դարձնեմ իմ երդումս զոր անիկա անարգեց, և իմ ուխտս զոր աւրեց. Ես անոր վրայ իմ ցանցս պիտի տարածեմ, և անիկա իմ որոգայթիս մէջ պիտի բռնուի, և զանիկա Բաբելոն պիտի տանիմ, և հոն անոր հետ դատ պիտի վարեմ, անոր ինծի դէմ բրած յանցանաց համար։
21 Եւ անոր բոլոր փախստականներէն և անոր բոլոր զօրքը սրով պիտի իյնան, և մնացորդներն ամէն հովերու պիտի ցրուին. և պիտի գիտնաք թէ Ես Տէրս խօսեցայ։
22 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ես ես բարձր եղևնին բարձրերէն ձիւղէն պիտի առնեմ, և պիտի անկեմ. Ես անոր ընձիւղներուն ծայրէն մատաղահոտ պիտի փրցունեմ, և բարձր և վեհացած լեռան մը վրայ պիտի անկեմ։
23 Զանիկա Իսրայէլի բարձր լեռան վրայ պիտի անկեմ. և անիկա ոստեր պիտի արձակէ և պտուղ ծայ, և ազնիւ եղևնի պիտի ըլայ. և անոր տակ ամէն տեսակ թռչուն պիտի նստի, անոր ոստերուն հովանւոյն տակ պիտի բնակին։ Եւ դաշտի բոլոր ծառերը պիտի գիտնան թէ ես Տէրս բարձր ծառը ցածցուցի, ցածը ծառը բարձրացուցի, դալարը ծառը չորցուցի, և չոր ծառը դալարեցուցի. ես Տէրս խօսեցայ և պիտի կատարեմ։

## Գլ. ԻԸ

1 Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ
2 ըսելով, Ինչ պիտի ըլայ ձեզի այն առածովը զոր դուք Իսրայէլի երկրին մէջ կը խօսիք ըսելով, Հայրք ազրիս կերան
3 և որդւոց ատամները առան, Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովան, որ իսրայէլի մէջ այս առածին այլ ես պիտի չգործեք։ Ահա բոլոր հոգիները իմ են, ինչպէս հօրը հոգին իմ է այն անձը որ մեղք կը գործէ անիկա պիտի մեռնի, իսկ

եթէ մարդ մը արդար է, և իրաւունք
6 և արդարութիւն կ՚ընէ, Լեռներու վրայ չուտի, և աչքերը դէպ Իսրայէլի
տան կուռքերը չվերցուներ, և իր դրացւոյն կինը չպղծէ, և իր դաշտա-
7 նին մէջ եղող կնոջ չմօտենայ, և մարդու զրկանք չընէ, և պարտականին
դրաւը կու տայ, բռնութեամբ բան չը յափշտակէ, և իր հացը քաղցեալին տայ,
8 և մերկը հանդերձով ծածկէ, Տոկոսը վաշխով չտայ և տոկոսիք չառնու, իր
ձեռքն անօրէնութենէն կու պահէ, երկու մարդու մէջ ուղիղ դատաստան
9 ընէ, Հնձարաութիւն ընելով իմ օրինացս մէջ քալէ, և իմ իրաւունքս
պահէ. անիկա արդար է, անշուշտ պիտի ապրի, կ՚ըսէ Տէր Եհովան։
10 Բայց եթէ անիկա անիրաւ և արիւնահեղ որդի մը ծնանի, որ ասանց պէս
11 բան մը ընէ. Այսինքն, եթէ այն ամէն ըսածներէն չընէ, այլ մինչեւ լեռներու վրայ ուտէ, և իր դրացւոյն կինը
12 պղծէ, Աղքատին և անանկին զրկանք ընէ, բռնութեամբ բան յափշտակէ,
գրաւը կու չտայ, և իր աչքերը կուռքերուն վերայ ուռճէ, գարշելիութիւն գործէ,
13 Տոկոսով տայ և տոկոսիք առնու. անիկա պիտի ապրի՞. պիտի չապրի. անիկա այս բոլոր գարշելիութիւններն ընելուն համար անշուշտ պիտի մեռնի,
անոր արիւնն անոր վրայ պիտի ըլլայ։
14 Եւ եթէ որդի ծնանի, և անիկա իր հօրը բոլոր մեղքերը տեսնելով վախ-
15 նայ և անոնց համեմատ չընէ. Լեռներու վրայ չուտի, և իր աչքերը դէպ Իսրայէլի տան կուռքերուն չվերցուներ, իր
16 դրացւոյն կինը չպղծէ, Եւ մարդու զրկանք չընէ, գրաւը չպահէ, և բռնութեամբ բան չ՚յափշտակէ, իր հացը քաղցեալին տայ, և մերկը հանդերձով
17 ծածկէ, Աղքատին առնչութենէն ընկճուն իր ձեռքը կու քաշէ, վաշխ և տոկոսիք չառնու, իմ դատաստաններս կ՚գործ դնէ, և իմ օրինացս մէջ քալէ. անիկա իր հօրը անօրէնութեան համար պիտի չմեռնի, անշուշտ պիտի
18 ապրի։ Ես անոր հայրը, որովհետեւ զրկանք ըրաւ և իր եղբօրմէն բռնութեամբ բան յափշտակեց և ազգին չբարձաւ իր անօրէնութեան մէջ, ահա անիկա իր անօրէնութեան մէջ պիտի մեռնի։

19 Եւ դուք կ՚ըսէք թէ ինչո՞ւ համար որդին չ՚ը հօրը անօրէնութիւնը չիբերի. Որովհետեւ որդին իրաւունք և արդարութիւն ըրաւ, և իմ բոլոր օրէնքս պահեց և զանոնք կ՚գործ դրաւ, անշուշտ պիտի ապրի։ Այն անձը որ մեղք կը գործէ անիկա պիտի մեռնի. որդին հօրը անօրէնութիւնը պիտի չկրէ, և հայրը որդւոյն անօրէնութիւնը պիտի չկրէ. արդարին արդարութիւնն անոր վրայ պիտի ըլլայ, և ամբարշտին ամբարշտութիւնն անոր վրայ պիտի ըլ-
21 լայ։ Եւ եթէ ամբարիշտը իր գործած բոլոր մեղքերէն դառնայ, և իմ բոլոր օրէնքս պահէ, և իրաւունք և արդարութիւն ընէ, անշուշտ պիտի ապրի,
22 պիտի չմեռնի. Անոր ըրած բոլոր յանցանքն անոր դէմ պիտի չյիշուին, այլ անիկա իր արդարութեամբ պիտի
23 ապրի. Միթէ ես բնաւ ամբարշտին մեռնիլը կ՚ուզե՞մ, կ՚ըսէ Տէր Եհովան. ո՞չ ապաքէն ես կ՚ուզե՛մ որ անիկա իր
24 ճամբէն դառնայ և ապրի։ Բայց եթէ արդարը իր արդարութենէն դառնայ, և ամբարշտին ըրած բոլոր գարշութիւններուն պէս անօրէնութիւն ընէ, պիտի ապրի՞. անոր ըրած բոլոր արդարութիւնը պիտի չյիշուի. անիկա իր յանցանքով և գործած մեղքով, անոնցմով պիտի մեռնի։
25 Եւ դուք կ՚ըսէք թէ Տէրոջը ճամբան ուղիղ չէ. հիմա մտիկ ըրէք, ով Իսրայէլի տունը, միթէ իմ ճամբաս ուղիղ չէ. ո՞չ ապաքէն ձեր ճամբաներն ու-
26 ղիղ չեն։ Երբ արդարը իր արդարութենէն դառնայ և անօրէնութիւն ընէ, և անոր մէջ մեռնի, անիկա իր անօ-
27 րէնութեան համար կը մեռնի. Եւ երբ ամբարիշտը իր ամբարշտութենէն դառնայ և իրաւունք և արդարութիւն ընէ, անիկա իր անձը պիտի ապրեցունէ, վասն զի անիկա ուշադրութիւն
28 ըրաւ և իր ըրած բոլոր յանցանքէն դարձաւ, անշուշտ պիտի ապրի, պիտի չմեռնի։
29 Բայց Իսրայէլի տունը կ՚ըսէ Թէ Տէրոջը ճամբան ուղիղ չէ. ով Իսրայէլի տունը, միթէ իմ ճամբաներս ուղիղ չեն. ո՞չ ապաքէն ձեր ճամբաներն ու-
30 ղիղ չեն։ Անոր համար, ով Իսրայէլի տունը, ձեզմէ իւրաքանչիւրը իր ճամբաներուն համեմատ պիտի դատեմ, կ՚ըսէ Տէր Եհովան. դարձէ՛ք և ձեր բոլոր յանցանքէն դարձէ՛ք, որպէս զի անօրէնութիւնը *ձեր կորըս-
31 տան պատճառ չըլլայ։ Ձեր բոլոր յանցանքը ձեր վրայէն նետեցէ՛ք, և ձեզի նոր սիրտ և նոր հոգի †սաացէ՛ք. քանզի ինչո՞ւ մեռնէք, ով Իսրայէլի
32 տունը, վասն զի մեռնողին մեռնիլը չեմ ուզեր, կ՚ըսէ Տէր Եհովան. ուստի դարձէ՛ք և ապրեցէ՛ք։

## Գլ. ԺԹ.

1 Եւ դուն Իսրայէլի իշխաններուն վրայ
2 ողբ էրբէ, Ես բսե.
Քու մայրդ ի՞նչ է. մատակ առիւծ է, Որ առիւծներու մէջ կը պառկի,
Ես իր կորիւններն առյղ առիւծներու մէջ կը մեծցնէ,
3 Եւ անիկա իր կորիւններէն մին մեծցուց,
Եղաւ առյղ առիւծ եղաւ,
Եւ յափշտակութիւն ընել սորվեցաւ Ես մարդ կ՚ուտէր.
4 Եւ անոր վրայ ազգերը լսեցին.
Անիկա անոնց փոսին մէջ բռնուեցաւ.
Եւ զանիկա կարթերով եգիպտոսի երկիրը տարին։
5 Եւ երբ անիկա տեսաւ որ պոչտ դիզը կը սպասէ, յոյսը կտրեցաւ,
Եւ իր կորիւններէն ուրիշ մը առաւ,
Եւ զանիկա առյղ առիւծ ըրաւ։
6 Ես անիկա առիւծներու մէջ պտրտող առյղ առիւծ եղաւ,
Եւ յափշտակութիւն ընել սորվեցաւ Ես մարդ կ՚ուտէր.
7 Եւ անոնց †պալատները գիտցաւ,
Եւ անոնց քաղաքները կործանեց.
Եւ անոր մէջտեղուն ձայնէն
Երկիրը իր լրութեամբ սարսափեցաւ,
8 Եւ շրջակայ գաւառներէն անոր վրայ ազգեր եկան,
Եւ անոր դէմ իրենց ցանցը տարածեցին.
Ես անոնց փոսին մէջ բռնուեցաւ։
9 Եւ զանիկա կարթերով վանդակի մէջ ղրկին,
Եւ զանիկա Բաբելոնի թագաւորին տարին,
Ես զանիկա բերդը դրին,
Որպէս զի անոր ձայնը այլ ևս Իսրայէլի լեռներուն վրայ չլսուէր։
10 Քու մայրդ քու †նմանութեամբդ Ջուրերու քով անկուած որթի պէս է,
Որ շատ ջուրերու պատճառաւ պտղատու ոստերով լեցուն եղաւ։
11 Եւ անիկա զօրաւոր չաւազիները ունեցաւ իշխանաց գաւազաններու համար,
Եւ անոր հասակը խիտ ճիւղերուն մէջէն բարձրացաւ,
Եւ իր բարձրութեամբն և բազմաճիւղութեամբ երեւցաւ։
12 Բայց անիկա բարկութեամբ խլուեցաւ և գետինը ձգուեցաւ,
Եւ արեւելեան հովն անոր պտուղը չորցուց.
Անոր զօրաւոր չաւազիները կտրեցան և չորցան,
Ես զանոնք կրակը կերաւ։
13 Եւ հիմա անապատի մէջ,
Ջուր և անջուր տեղ անկուեցաւ։
14 Եւ անոր ոստերուն մէկ չաւազիէն կրակ եկաւ
Ես անոր պտուղը կերաւ,
Եւ անոր վրայ իշխանի գաւազանի համար զօրաւոր չաւազիդ չմնաց։
Ասիկա ողբ է և ողբի տեղ պիտի ըլլայ։

*Կամ այրինները
†Կամ արեւմտեան մէջ



*ՆԷՐ. ձեզի խոշնդոտ †ՆԷՐ. ըրէք.
‡ՆԷՐ. վերցուր։

Գլ. Ի

1 Եւ եղաւ որ Եհովային երդուեցաւ ասելով, Եթէ ես քեզ չբերեմ Տէրոջը հարցնելու համար իսրայէլի ծերերին հետ խօսիլ և անոնց ըսել, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ, Մի՞թէ դուք ինծի հարցնելո՞ւ եկաք։ Ես կենդանի եմ որ "ձեզի պատասխան պիտի չբերեմ," կ'ըսէ Տէր Եհովան։ Մի՞թէ անոնց դատաստան պիտի ընէս, դատաստան պիտի ընէս, որովհետև անոնց հայրերուն պղծութիւնները ա-
3 նոնց գիտցուր, Ու անոնց ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ, Այն օրը որ գիտցուր, Ու անոնց ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ, Այն օրը որ ձեռքս անոնց վերցուցի, որ զանոնք Եգիպտոսի երկրին մէջ անոնց հայրերուն տանիմ, ես իմ ձեռքս անոնց վերցնելով ըսի թէ Ձեր Տէր Աստուածը
6 ես եմ։ Այն օրը իմ ձեռքս անոնց վերցուցի, որ զանոնք Եգիպտոսի երկրէն այն կաթ և մեղր բղխող և ամէն երկիրներուն պարծանքը եղող երկիրը հանեմ, զոր անոնց համար հայրաս-
7 տած էի։ Ես անոնց ըսի, ամէն մարդ իր աչաց գարշելիութիւնները թող մի-
8 դի ձգէ, և Եգիպտոսի կուռքերով մի պղծուիք։ Ես եմ ձեր Տէր Աստուածը։ Բայց անոնք ինծի անհնազանդեցան, և չուզեցին ինծի մտիկ ընել, և մի կը չձգեցին իրենք քանի իրենց աչաց գարշելիութիւնները, և Եգիպտոսի կուռքերը չթողուցին։ Անոսոնի ըսի որ իմ սրտմտութիւնս անոնց վրայ թափեմ, և Եգիպտոսի երկրին մէջ իմ բարկու-
9 թիւնս անոնց վրայ կատարեմ։ Բայց ես ըրի իմ անունս համար, որ չըլլայ թէ պղծուի այն ազգերուն առջև
10 որոնց մէջ անոնք կը գտնուէին, և որոց աչքէն ես անոնց յայտնուեցայ, երբ զանոնք Եգիպտոսի երկրէն հանեցի։
11 Ու զանոնք հանեցի, և զանոնք անապատը բերի. Ու իմ օրէնքս անոնց տուի, և իմ դատաստաններս անոնց գիտցուցի, որովհետև եթէ մարդ զանոնք կատարէ, 12 Ու իմ շաբաթներս ես անոնց տուի, որ իմ և անոնց միջտեղ նշան ըլլան, որպէս զի գիտնան թէ ես եմ Տէրը որ զանոնք կը սրբեմ։
13 Բայց իսրայէլի տունն անապատին մէջ ինծի ապստամբեցաւ. իմ օրինօքս չգացին, և իմ դատաստանները մերժեցին, որովհետև եթէ մարդ զանոնք կատարէ, և իմ շաբաթներս ամենևին պղծեցին։ Ես անոնց վրայ թափեմ անապատին մէջ, և զանոնք
14 սպառեմ։ Բայց ես ըրի իմ անունս համար, որ չըլլայ թէ պղծուի այն ազգերուն առջև որոց առջև զանոնք հանեցի։
15 Նաև անապատին մէջ իմ ձեռքս անոնց վերցուցի, որ զանոնք չբերեմ այն կաթ և մեղր բղխող և ամէն երկիրներուն պարծանքը եղող
16 երկիրը, զոր ձեռաց առած էի։ Զանզի իմ դատաստաններս մերժեցին, և իմ օրինօքս չգացին, և իմ շաբաթներս պղծեցին. վասն զի անոնց սիրտն ի-
17 րենց կուռց հետևէն կ'երթար։ Բայց իմ աչքս անոնց խնայեց, որ զանոնք չկորնցնեմ. ուստի անապատին մէջ
18 զանոնք չսպառեցի։ Ես անապատին մէջ անոնց որդիներուն ըսի, Ձեր հայրց կանոններով մի քալէք, և անոնց սովորութիւնները մի պահէք, և անոնց կուռքերով մի պղծուիք։
19 Ես եմ Տէրը, ձեր Աստուածը. իմ օրինօքս քալեցէք, և իմ դատաստաններս պահեցէք, և զանոնք ի գործ
20 դրէք։ Ու իմ շաբաթներս սուրբ պահեցէք, և անոնք իմ և ձեր միջտեղ նշան ըլլան. որպէս զի գիտնաք թէ ես եմ Տէրը, ձեր Աստուածը։

*ԵԲԲ. ձեզմէ պիտի չհարցուիմ,
†Ա.ՅԻՇԷՆ՝ երդումի ըրի։
‡Կամ հոգացած էի։



21 Բայց անոնց որդիներն ալ ինծի ապստամբեցան. իմ օրինօքս չգացին և ուշադրութիւն չըրին կատարել իմ դատաստանները, որովհետև մարդ զանոնք կատարէ, և իմ շաբաթներս պղծեցին։ ուստի ըսի որ իմ սրտմտութիւնս անոնց վրայ թափեմ, և անապատին մէջ իմ բարկու-
22 թիւնս անոնց վրայ կատարեմ։ Սակայն իմ ձեռքս քաշեցի և ըրի իմ անունս համար, որ գոյացի պղծուի այն ազգերուն առջև որոց առջև զանոնք հանեցի։
23 Նաև անապատին մէջ իմ ձեռքս անոնց վերցուցի, որ զանոնք ազգերու մէջ ցրուեմ, և զանոնք երկիրներու
24 մէջ ցիրուցան ընեմ. վասն զի իմ դատաստաններս ի գործ չդրին, և իմ օրէնքս մերժեցին, և իմ շաբաթներս պղծեցին. և անոնց աչքերն իրենց հարց կուռքերուն հետևէն եղաւ։
25 Ուստև և ես այնպիսի օրէնքներ տուի անոնց՝ որ բարի չէին, և այնպիսի դատաստաններ՝ որովհետև չէին կրնար ապ-
26 րիլ։ Ես զանոնք իրենց ընծաներով պղծեցի, [illegible] որ ամէն արգանդ բացող էգ անցուցանեն, որպէս զի զանոնք կործանեմ, որ գիտնան թէ ես եմ Տէրը։
27 Անոր համար, որդի մարդոյ, խօսէ՛ իսրայէլի տան հետ և անոնց ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ձեր հայրերն այսու ևս ինծի դէմ յանցանք ընելով՝
28 ինծ նախատեցին, վասն զի երբ զանոնք տարի այն երկիրը, զոր անոնց տալու համար ձեռքս վերցուցած էի, ամէն բարձր բլուր և ամէն տերևաւետ ծառ տեսնելով՝ հոն իրենց զոհերը մատուցին, և իրենց բարկութիւն գրգռող ընծաներն հոն տարին, և իրենց անուշահոտ խունկերն հոն ծխեցին, և իրենց թափելու նուէրներն հոն
29 մատուցին։ Ու անոնց ըսի, Ի՞նչ է այդ բարձր տեղն՝ ուր դուք կ'երթաք։ և անոր անունը մինչև այս օր Բարձր տեղ կ'կոչուի։
30 Անոր համար իսրայէլի տան ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Դուք որ ձեր հայրերուն ճամբուն մէջ կը պղծուիք, և անոնց գարշութիւններուն հետևիք,
31 ու պոռնկութիւն կ'ընէք, Ու ձեր ընծաները մատուցանելով և ձեր տղաքը կրակէ անցուցանելով՝ ձեր բոլոր կուռքերով կը պղծուիք մինչև այս օր. Մի՞թէ ես ձեզի պատասխան պիտի տա՞մ, ով իսրայէլի տուն։ Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովան, որ ձեզի պատաս-
32 խան պիտի չտամ։ Ու ձեր որոշեն խորհուրդն անհնարին պիտի չկատարուի, որ կ'ըսէք թէ Մենք ըլանք և քար պաշտելով, հեթանոսներուն պէս պի-
33 ի ըլլանք։ Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովան, որ անշուշտ ձեր վրայ՝ զօրաւոր ձեռքով և երկնցած բազկաւ և թափուած բարկութեամբ թագաւո-
34 րութիւն պիտի ընեմ։ Ու զօրաւոր ձեռքով և երկնցած բազկաւ և թափուած բարկութեամբ զձեզ ժողովրդներէն պիտի հանեմ, և ձեզ պիտի ժողվեմ այն երկիրներէն՝ ուր դուք ցրուեցաք։
35 Ու զձեզ ժողովրդոց անապատը պիտի տանիմ, և հոն ձեզի հետ երես առ ե-
36 րես պիտի վարեմ։ Ինչպէս որ Եգիպտոսի երկրին անապատին մէջ ձեր հայրերուն հետ դատ վարեցի, այնպէս ձեզի հետ դատ պիտի վարեմ, կ'ըսէ
37 Տէր Եհովան։ Ու զձեզ գաւազանին տակէն պիտի անցուցանեմ, և զձեզ ուխտին
38 կապին տակ պիտի հանեմ։ Ու ձեր պատամբները և ինծի դէմ յանցաւորները ձեզմէ պիտի զատեմ. զանոնք իրենց պանդխտութեան երկրէն պիտի հանեմ, և անոնք Իսրայէլի երկիրը պիտի չմտնեն. և պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։
39 Ու դուք, ով իսրայէլի տուն, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Գացէք, այսուհետև իւրաքանչիւր ձեր կուռց ծառայութիւն ըրէք, վասն զի ինծի մտիկ չէք ըներ. բայց իմ սուրբ անունս ձեր ընծաներով և ձեր կուռքերով մի պղծէք։
40 Վասն զի իմ սուրբ լեռանս վրայ, Իսրայէլի բարձր լեռան վրայ, կ'ըսէ Տէր

Եհովան, զոր Իսրայէլի առաջ, ամէն-
քին էջնէ երկրին մէջ բլլալով, հան ին-
ձի ծառայութիւն պիտի ընեն. հան ա-
նոնց պիտի հաճիմ, և ձեր պատարագ-
ները և ձեր ընծաներուն երանայրնե-
րը ձեր բոլոր սուրբ բաներով հան պի-
41 տի վնտռեմ, երբ զձեզ ազգերէն հա-
նեմ և ժողվեմ զձեզ այն երկիրներ-
էն, ուր ցրուած էք, անուշա-
հոտ էնով ձեզի պիտի հաճիմ, և ձեր
42 մէջ ազգերուն աչաց առջև սուրբ պի-
տի բլլամ։ Եւ երբ զձեզ Իսրայէլի եր-
կիրը առնեմ, այսինքն այն երկիրը զոր
ձեր հայրերուն տալու համար ձեռք
վերցուցի, պիտի գիտնաք թէ ես եմ
43 Տէրը։ Եւ հան պիտի յիշէք ձեր ճամ-
բաները և ձեր բոլոր գործերը՝ որովք
պղծուեցաք, և ձեր ըրած բոլոր չարու-
թիւններուն համար դուք ձեզմէ պիտի
44 զզուիք։ Եւ պիտի գիտնաք թէ ես եմ
Տէրը, երբ ձեզի ձեր ընեմ ան-
նման համար՝ ոչ թէ ձեր չար ճամբա-
ներուն և ձեր ապականած վարմանց
համեմատ, ով Իսրայէլի տունը, կ'ըսէ
45 Տէր Եհովան։ Եւ Տէրոջը խօսքը ինձի եղաւ ըսե-
46 լով, Որդի մարդոյ, երեսդ դէպ ի հա-
րաւ ուղղէ և դէպ ի հարաւ խօսէ, և
հարաւային դաշտին անտառին վրայ
47 մարգարէութիւն ըրէ. Եւ հարաւային
անտառին ըսէ, Տէրոջը խօսքը մտիկ
ըրէք. Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա
ես քու մէջդ հուր պիտի բորբոքեմ և
քու մէջդ եղած ամէն կանաչ ծառ և
ամէն չոր ծառ պիտի ուտէ. բորբոքեալ
բոցը պիտի չմարի, և անով հարաւէն
մինչև հիւսիս ամէն երեսներ պիտի այրին։
48 Եւ ամէն մարմին պիտի տեսնէ թէ ես
Տէրս զանիկա բռնկուցի. և անիկա
49 պիտի չմարի։ Անատեն ես ըսի, Ո՜հ, Տէր
Եհովայ, անոնք ինձի համար կ'ըսեն,
Ո՞չ ապագային առակներ կը խօսի
ատ։

*Եբր. երեսները



1 Եւ Տէրոջը խօսքը ինձի եղաւ ըսելով,
2 Որդի մարդոյ, երեսդ Երուսաղէմ
դէմ ուղղէ, և սուրբ տեղերուն խօսէ,
և Իսրայէլի երկրին մարգարէութիւն
3 ըրէ, Եւ Իսրայէլի երկրին ըսէ, Տէրը
այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ,
և իմ սուրս պատեանէն պիտի հանեմ,
և արդարն ու ամբարիշտը քեզմէ պիտի
4 կտրեմ։ Որովհետև արդարը և ամբա-
րիշտը քեզմէ պիտի կտրեմ, անոր հա-
մար հարատէն մինչև հիւսիս ամէն մարմ-
նոյ դէմ իմ սուրս պատեանէն պիտի
5 քաշուի։ Եւ ամէն մարմին պիտի գիտ-
նայ թէ ես Տէրս իմ սուրս պատե-
անէն հանած եմ. անիկա այլ եւս պի-
6 տի չդառնայ։ Եւ դուն, որդի մարդոյ,
հեծէ. մէջքը կոտրածի պէս դառնու-
7 թեամբ անոնց աչաց առջև հեծէ։ Եւ
երբ քեզի ըսեն թէ ինչո՞ւ կը հեծես,
անտեսն ըսես, Գուժին համար, զոր
գու կու գայ. և ամէն սիրտ պիտի հալի,
և ամէն ձեռք պիտի թուլնայ, և ամէն
հոգի պիտի մարի, և ամէն ծունկ ջրոյ
պէս պիտի բլլայ. ահա կու գայ և պի-
տի կատարուի, կ'ըսէ Տէր Եհովան։
8 Դարձեալ Տէրոջը խօսքը ինձի եղաւ
9 ըսելով, Որդի մարդոյ, մարգարէացիր
և ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ըսէ որ
Սաբը, սուրը սրուեցաւ, նաեւ սրբուե-
10 ցաւ։ Մեծ կոտորած ընելու համար
սրուեցաւ, փայլելու համար սրբուե-
ցաւ. հիմա մենք ուրախանա՞նք. իմ
որդւոյս գաւազանն ամէն փայտը կ'ա-
11 նարգէ։ Բայց ինք սրբուելու տուաւ
զանիկա, որ ձեռքով բռնուի. այս
սուրը սրուած է և սրբուած է, որ զա-
12 նիկա սպանողին ձեռքը տայ։ Ազաղա-
կէ և ողբա, որդի մարդոյ, քանզի ա-
նիկա իմ ժողովրդիս վրայ, Իսրայէլի
բոլոր իշխաններուն վրայ պիտի բլլայ.
իմ ժողովրդիս վրայ սրոյ պատճա-
ռաւ երկիւղ պիտի բլլայ. անոր համար
13 ւռա ազդրիդ զարկ։ Վասն զի փորձը
եղաւ. և ի՞նչ եղէ ըսէ, եթէ այն ա-
նարգող գաւազանն այլ եւս չբլլայ, կ'ը-



14 սէ Տէր Եհովան, Եւ դուն, որդի մարդոյ, մարգարէութիւն ըրէ, և ձեռքդ
ծափ զարկ. և սուրը, սպանուածնե-
րուն սուրը երրեք անգամ պիտի կրկին-
15 նո՞ւի. մեծամեծաց վիրաւորներուն սուրը
այս է, որ՝ անոնց բոլորտիքը պա-
16 շարեց։ Սիրտերը նուաղելու համար և
խոչերը բազմանալու համար անոնց բո-
լոր դուռներուն վրայ սրոյն փայլը դրի.
աւաղ, անիկա փայլելու համար շինուե-
17 ցաւ, մորթելու համար սրուեցաւ. ինք-
զինքդ ժողվէ. քու առջև կամ ձախ կողմդ
ուր որ երեսդ դարձած է, զարկ։
18 Եւ ես ևս ձեռօքս ծափ պիտի զարկեմ,
և իմ սրամտութիւնս պիտի հասց-
19 նեմ. ես Տէրս խօսեցայ։
Եւ Տէրոջը խօսքը ինձի եղաւ ըսե-
20 լով, Որդի մարդոյ, դուն քեզի երկու
ճամբայ պատրաստէ, որ Բաբելոնի թա-
գաւորին սուրը գայ. անոնց երկուքն
ալ մէկ երկրէ պիտի ելլեն. և ոտք մը
ընաբէ, քաղաքին ճամբուն գլուխն
21 ընաբէ. ճամբայ պատրաստէ, որ Մա-
մանի որգւոյ Ռաբբայի վրայ և Յուդայի
մէջ ևզող պարսպաւոր Երուսաղէմի վը-
րայ սուր գայ։
22 Վասն զի Բաբելոնի թագաւորը ճամ-
բուն բաժանման վրայ, երկու ճամբուն
գլուխը կայնեցաւ, որ հմայութիւն ը-
նէ. անիկա իր նետերն երերցուց,
թերափիներուն հարցուց, լերդին նա-
23 յեցաւ։ Անոր աչ ձեռաց մէջ հմայու-
թիւն կար Երուսաղէմի համար, որ մե-
քենաներ դնեն, պատերազմի մէջ երկնց
բերան բանան և ազաղակով ձայն
վերցունեն, դառներու դէմ մեքե-
նաներ դնեն, հողաբլուր կանգնեն և
մարտկոց շինեն. Բայց ասիկա անոնց
աչաց առջև անառակ հմայութեան պէս
պիտի բլլայ, ուռնդ անոնց երդումնե-
ր ըրած են. բայց անիկա էբէնց ա-
նօրէնութիւնը պիտի յիշեցունէ, որ-
պէս զի բռնուին։
24 Անոր համար Տէր Եհովան այսպէս
կ'ըսէ. Որովհետև դուք ձեր անօրէ-

*Կամ զանոնք խոցեց։

ՀԱՏՈՐ

1 Եւ Տէրոջը խօսքը ինձի եղաւ ըսելով,
2 Եւ դուն, որդի մարդոյ, այս արիւնա-
հեղ քաղաքին դատաստան պիտի ը-

*Կամ խնամ չառ արիւնաթե՞ր որ փայլի,

նէին, դառնասան պիտի ընէին, ուրեմն անոր բոլոր պղծութիւններն իրեն գիտցուբ, եւ ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ· Ով քաղաք որ քու մէջդ ապրիլն կը թուլեւս, որպէս զի քու ժամանակդ գայ, եւ քու անձդ պղծելու համար քեզի դէմ կուռքեր կը շինես,
4 Դուն քու թափած արեամբդ յանցաւոր եղար, եւ շինած կուռքերովդ պղծուեցար, եւ քու օրերդ մօտեցուցիր եւ քու տարիներուդ հասար· անոր համար զքեզ ազգերուն նախատինք, եւ ամէն երկիրներու ծաղր ըլլալէ տուի։
5 Թէդ մօտ եղողները եւ քենէ հեռու եղողներն զքեզ ծաղր պիտի ընեն, ով պատահարաբար եւ ազմկալից։
6 Ահա քու մէջդ Իսրայէլի իշխանները իւրաքանչիւր իր բազկով արիւն թափելու համար կաշխատ են։
7 Քու մէջդ հայրը եւ մայրն անարգեցին, քու մէջդ օտարականին բռնութիւն ըրին, քու մէջդ որբին եւ այրուն զրկանք ըրին։
8 Իմ սուրբ բաներս արհամարհեցիր, եւ իմ շաբաթներս պղծեցիր։
9 Քու մէջդ բանսարկու մարդիկ եղան արիւն թափելու համար, եւ քու մէջդ լեռներու վրայ կերան, եւ քու մէջդ եղեռնագործութիւն ըրին։
10 Քու մէջդ հօրը ամօթը յայտնեց, քու մէջդ դաշտանի պատճառաւ անմաքուր կինը բռնաբարեցին։
11 Նաեւ մէկը իւր դրացնոյն կնոջ հետ պղծութիւն ըրաւ, եւ մէկը եղեռնագործութիւն ըրաւ իւր հարսը պղծելով, եւ քու մէջդ ուրիշ մը իւր քոյրը, իւր հօրը աղջիկը բռնաբարեց։
12 Քու մէջդ արիւն թափելու համար կաշառք առին, վաշխ եւ առկոսիք առիր, եւ բռնութիւն ընելով քու դրացիներէդ բան վաստկեցար ա-զանց թողուելդ, եւ զիս մոռցար, կ'ըսէ Տէր Եհովան։
13 Ուստի ահա քու ապահութիւնդ եւ քու մէջդ եղած արիւնհեղութեան համար ձեռքերս խփարու
14 զարկի։ Միթէ քու սիրտդ կրնայ դիմանալ, կամ թէ ձեռքերդ կրնա՞ն զօրանալ այն օրերը որ ես քեզի հաշուեյառ պիտի ընեմ. ես Տէրս խօսեցայ եւ պիտի կատարեմ։
15 ցայ եւ պիտի ցրուեմ, եւ զքեզ ազգերու մէջ պիտի ցրուեմ, եւ զքեզ երկիրներու մէջ ցիրուցան պիտի ընեմ, եւ քու պղծութիւնդ քենէ պիտի հատցնեմ։
16 Եւ դուն քենէ պիտի պղծուիս ազգերու աչքերուն առջեւ, եւ պիտի գիտնաս թէ ես եմ Տէրը։
17 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
18 Որդի մարդոյ, Իսրայէլի տունն ինծի կղկղանաց պէս եղաւ. ամէնքը հալոցի մէջ պղնձոյ, անագի, երկաթոյ եւ կապարի պէս արծաթոյ կղկղանաց պէս եղան։
19 Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ· Որովհետեւ ամէնդ կղկղանաց պէս եղաք, անոր համար ահա ես զձեզ Երուսաղէմի մէջ պիտի ժողվեմ։
20 Ինչպէս որ արծաթը եւ պղինձը եւ երկաթը եւ կապարը եւ անագը հալոցի մէջ կը ժողվուին, եւ անոր վրայ կրակը կը փչէն՝ հալեցնելու համար, այնպէս ես զձեզ իմ բարկութեամս եւ սրտմտութեամս պիտի ժողվեմ, եւ պիտի թողամ եւ
21 պիտի հալեցնեմ։ Եւ զձեզ մէկտեղ բերելով ձեր վրայ իմ բարկութեանս կրակով պիտի փչեմ, եւ դուք անոր
22 մէջ պիտի հալիք՝ ինչպէս որ արծաթը հալոցին մէջ կը հալի, դուք ալ անոր մէջ պիտի հալիք, եւ պիտի գիտնաք թէ ես Տէրս իմ սրտմտութիւնս թափեցի ձեր վրայ։
23 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
24 Որդի մարդոյ, անոր ըսէ, Դուն այնպիսի երկիր ես, որ ոչ մաքրուած է եւ ոչ բարկութեան օրն անձրեւով թրջուած։
25 Ջուած՝ Անոր մէջ իր մարգարէներուն դաւաճանութիւնը կայ, որ առիւծ յաչխրոտակող եւ մնջոտ առիւծի պէս հոգիներ կ'ուտեն. անոնք գանձ եւ պատուական բաներ առին, եւ անոր մէջ
26 անոր այրիները բազմացուցին։ Անոր քահանաներն իմ օրէնքս աւրեցին, եւ իմ սուրբ բաներս պղծեցին. սուրբը պղծեն չորոշեցին, եւ անմաքրին եւ մաքրին տարբերութիւնը չգիտցուցին, եւ իրենց աչքերը իմ շաբաթներէս ծածկեցին, եւ ես անոնց մէջ պիղծ հա-



27 մարուեցայ։ Անոր իշխաններն անոր մէջ յափշտակող գայլերու պէս արիւն թափելու՝ հոգի կորսնցնելու եւ ահան, որպէս զի ագահութեամբ բան վաստկին։ Եւ անոր մարգարէներն ան-նայն անօրինութիւն անելով, և անոնց առաջ գաւազանութիւն ընելով զանոնք կրով ծեփելուին, և ըսին, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ, թէև Տէրը խօսած չէր։
29 Երկրին ժողովուրդը մեծ զրկանք բրին և մեծ յափշտակութիւն ըրին, և աղքատը և անանկը բռնազաւթեցին, և օտարականին անիրաւութեամբ դրկան ը բրին։ Եւ մարդկանց մէջ պիտի չգտնուի մէկը որ պարսպ շինէ, և իսրաէլին մէջ իմ առջեւս կայնի երկրին համար, որ զայրիկ չաւերեմ, բայց չգտնեմ։
31 ապա։ Ուստի իմ բարկութիւնս անոնց վրայ թափեցի, զանոնք իմ սրտմտութեանս կրակով ոչնչացուցի. անոնց ճամբաներն իրենց գլուխը տուի, կ'ըսէ Տէր Եհովան։

## Գլ. ԻԳ

1 Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ
2 ըսելով, Որդի մարդոյ, երկու կանայք
3 կային մէկ մայրական։ Եւ անոնք Եգիպտոսի մէջ պոռնկութիւն ըրին, իրենց մանկութեան ատեն պոռնկութիւն ըրին. անոնց ծիծերը հոն զրնշուեցան, և անոնց կուսութեան տունը
4 քր հոն չշօշափուեցաւ։ Եւ անոնց անուններէն, մեծերը՝ Ոհոլա, և անոր քրոջը՝ Ոհոլիբա էր և անոնք իմ եղան, և որդիներ և աղջիկներ ծնան. (և անոնց անուններէն, Ոհոլա՝ Սամարիա է, և Ոհոլիբա Երուսաղէմ է։)
5 Եւ Ոհոլա ցորտալ իմ էր, պոռնկութիւն ըրաւ և իր հմանիներուն սիրահարեցաւ, այսինքն Ասորեստանցի զրացիներուն,
6 կապուտակ հագնող կուսակալներուն և նախարարներուն, ձի հեծնող ձիաւորներուն որոց ամէնքը շնորհալի երիտասարդներ էին։ Եւ անկիա պոռնկութիւն ըրաւ անոնց հետ պղծուեցաւ, և Խթէը անոր հոգին ա-

*Կամ մեծ ապարօշներ

18 Նոցայէ զատուեցաւ. Եւ իւր պառնկու-
թիւններն յայտնեց և իւր մերկութիւ-
նը բացաւ, ուստի իմ հոգիս անկէ զա-
տուեցաւ, ինչպես որ անոր քրոջմէն
19 զատուած էր։ Այսպէս անիկա իւր
պառնկութիւնները բազմացուց, յիշե-
լով իւր մանկութեան օրերը, Եգիպ-
տոսի երկրին մէջ շնութիւն ըրած ժա-
20 մանակը։ Եւ սիրահարեցաւ անոնց
արբշիռներուն որոց մարմինն կ-
ՙշերտ մարմին է, և անոնց զօրութիւ-
21 նը ձիերու զօրութիւն է։ Եւ դուն նա-
յեցիր քու մանկութեանդ պղծագործու-
թիւնը ձեռք առիր, որ քու մանկու-
թեանդ ծիծերուն ՀՆԴՈՒԵՑՔ՝ սին-
դիդ Եգիպտացիներէն չօչափուեցաւ։

22 Ասոր համար, ով Ոողիբայ, Տէր Ե-
հովան այսպէս կ՚ըսէ. Ահա ես քու վր-
դովդ պիտի արթնցնեմ քու հոժա-
րիդ յարց քու հոգիդ զատուե-
ցաւ, և զանոնք ամէն կողմէն քու վր-
23 դովդ պիտի բերեմ, Բաբելոնի որդիքը
և բոլոր Քաղդեացիները, *Փեկոդը, Ո-
ւաէն ու Կուէն՝ և անոնց հետ Ասո-
ւրեացիք բոլոր որդիքը, ամէնքը շնոր-
հալի երիտասարդներ, կուսակալներ և
նախարարներ, ամէնքը ձի հեծնող զո-
24 րագլուխներ և անուանի մարդիկ։ Եւ
անոնք զինուք, կառօք և անիւներ-
ով և ժողովրդոց բազմութեամբ քու
վրադ պիտի գան, և ամէն կողմէն քե-
զի դէմ վահան, ասպար և սպաւառա
պիտի դնեն. և զատաստանն անոնց
ձեռքը պիտի տամ, և զքեզ իրենց
25 դատաստաններով պիտի դատեն։ Եւ
իմ նախանձս քեզի դէմ պիտի դնեմ.
և քեզի հետ բարկութեամբ պիտի վա-
րուին, քու քիթդ և ականջներդ պի-
տի կարեն, և քու մնացորդդ սրով
պիտի իյնայ. անոնք քու որդիքդ և
աղջիկներդ պիտի առնեն, և քու մնա-
26 ցորդդ կրակով պիտի այրի։ Եւ քու
հանդերձներդէդ զքեզ պիտի մերկացու-
ցանեն, և քու պարծանագդ զգեստը

27 պիտի առնուն։ Եւ քեզի պիտի դադ-
րեցնեմ քու պղծագործութիւնդ և
քու պառնկութիւններդ Եգիպտա-
ցի երիկէն էրէլէ. և աչքդ անոնց պի-
տի չվերցնաս և այլ եւս զԵգիպտոս
պիտի չյիշես։

28 Քանզի Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ.
Ահա ես զքեզ պիտի մատնեմ անոնց
ձեռքը զորս դուն ատելիր, և անոնց
ձեռքը յորոց քու հոգիդ զատուե-
29 ցաւ։ Եւ անոնք քեզի հետ ատելու-
թեամբ պիտի վարուին, և քու բոլոր
վաստակդ պիտի առնուն, և զքեզ մերկ
և անծածկոյթ պիտի թողուն. և քու
պառնկութիւններուդ մերկութիւնը,
քու պղծագործութիւնդ և պառնկու-
30 թիւնդ ծիծերուն ՀՆԴՈՒԵՑՔ՝ սինդիդ
հետևելով պառնկութիւն ընելուդ հա-
մար և անոնց կուռքերով պղծուելուդ
համար այս բաները քեզի պիտի ընեմ։
31 Դուն քու քրոջդ Շամրան գացիր, և
ես անոր բաժակը քու ձեռքդ պիտի
32 տամ, Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ.
Դուն քու քրոջդ խոր և լայն բաժակը
պիտի խմես. խաղք և խայտառակ պի-
տի ըլլաս, այն բաժակը շատ բան կ՚առ-
33 նու։ Դուն արբեցութեամբ և տրտմու-
թեամբ պիտի լցուիս, ապշութեան և
զարմացման բաժակ է քու քրոջդ Սա-
մարիայի բաժակը։ Եւ դուն զայն պի-
տի խմես և պիտի քամես, և անոր կը-
ատրները պիտի ՙլզես և սրունքդ պի-
տի պատռես, քանզի ես խոսեցայ,
35 կ՚ըսէ Տէր Եհովան։ Անոր համար Տէր
Եհովան այսպէս կ՚ըսէ. Զիս մոռնալուդ
և կռնակիդ հետ նետելուդ համար,
դուն ես քու պղծագործութիւնդ և
պառնկութիւններդ կրես։

36 Եւ Տէրը ինծի բաւ, Որդի մարդոյ,
Ոողայի և Ոողիբայի գատաստանը պի-
տի տեսնե՞ս. ուրեմն անոնց պղծու-
37 թիւնները իրենց պատմէ։ Վասն զի շը-
նութիւն ըրին, և անոնց ձեռաց մէջ
արիւն կայ. և իրենց կուռքերով շնու-
թիւն ըրին, և իրենց ինծի ծնած որ-

*Կամ իշխանները, հարուստները և ազ-
նուականները։

*Կամ կրծես,



զաքն ալ իրենց անցուցին, որ անոնց
38 կերակուր ըլլան։ Այս ևս ըրին ինծի.
Նոյն օրը իմ սրբարանս անմաքուր ը-
39 րին և իմ շաբաթներս պղծեցնին։ Վա-
սն զի երբ իրենց տղաքն իրենց կուռ-
քերուն զոհեցին, նոյն օրը իմ սրբա-
րանս մտան որ զայն պղծեն. և ա-
40 հա իմ տանս մէջ այսպէս ըրին. Եւ
նաև հեռուէն գալու մարդոց ղրկ
կեցիք, որոց պատգամաւորներ ղրկ
կուղուեցան. և դուն անոնց համար լուացուեցար
և աչքերուդ վրայ ծաղոյր դրիր և
41 զարդերով զարդարուեցար. Եւ պա-
տուական բազմոցի վրայ նստար, ո-
րուան առջև պատրաստուած սեղան
կար, և իմ խունկս և իւղս անոր վր-
42 դայ դրիր։ Եւ հոն ուրախութիւն ընդ
բազմութեան ձայն չը լսուեր. և այն
բազմաթիւ մարդոցմին զատ անապա-
տէն արբեցող մարդիկ բերուեցան, որ
անոնց ձեռքերը ապարանջաններ և
անոնց գլուխները պարծանաց թագեր
կը դնէին։
43 Եւ շնութեան մէջ պատաւածին վրայ
ըսի, Հիմա ալ ասոր հետ պառնկու-
44 թիւն պիտի ընեն։ Եւ անոր քովկը
մտնէին. ինչպես որ պառնկի կինոջ քովկը
կը մտնեն, այնպես Ոողայի և Ոողի-
բայի, այն պղծագործ կանանց քովկը
45 մտնէին։ Բայց արդար մարդիկ շնացող
կանանց դատաստանով և արիւն թա-
փող կանանց դատաստանով պիտի դա-
տեն զանոնք. վասն զի անոնք շնացող
կանայք են, և անոնց ձեռաց մէջ ա-
րիւն կայ։
46 Քանզի Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ.
Անոնց դէմ ժողովք պիտի հանեմ, և
զանոնք նեղութեան և յափշտակու-
47 թեան պիտի մատնեմ։ Եւ ժողովքը
զանոնք քարկոծով պիտի քարկոծեն,
և զանոնք իրենց սուրերով պիտի կտ-
րեն. անոնց որդիները և աղջիկները
պիտի սպաննեն, և անոնց տուները
48 կրակով պիտի այրեն։ Եւ երկրին պղծ-
ագործութիւնը պիտի վերցնեմ,
որ ամէն կին խրատուի և ձեր պղծա-
49 գործութիւնը ձեր վրայ պիտի գրնեն,
և դուք ձեր կռոց մեղքերը պի-
տի կրէք. և պիտի գիտնաք թէ ես
եմ Տէր Եհովան։

## Գլ. ԻԴ

1 Եւ բնաբերող տարին տասներորդ ա-
միսը ամսոյն տասներորդ օրը Տէրոջը
2 խօսքն ինծի եղաւ ըսելով, Որդի մար-
դոյ, դուն քեզի այս օրուան անունը
բուն այս օր գրէ. Բաբելոնի թագա-
ւորը բուն այս օր Երուսաղէմի մտե-
3 ցաւ։ Եւ այն ապստամբներուն առն
առակ խօսիս, և անոնց ըսես, Տէր Ե-
հովան այսպէս կ՚ըսէ. Կաթսան դիր,
դիր և ջուր ալ լեցուր. Անոր
4 կտորները, ամէն ազէկ կտոր, ազդրը
և ուսն անոր մէջ ժողովէ. Ն ՚ՆՒԼ-
5 ընտիր ոսկրներով լեցուր. Ոչխարնե-
րուն ընտրեալն առ և ոսկրները տակը
դիզէ. զանիկա խիտ շատ եռացուր
այնպես որ մէջի ոսկրներն անդամ ե-
փին։
6 Անոր համար Տէր Եհովան այսպէս
կ՚ըսէ. Վա՜յ արիւնահեղ քաղաքին,
այն կաթսային որ ժանգն իր մէջն
է, և ժանգը մէջէն երած չէ. զանիկա
իր ձկի կտորներով հանէ, անոր վրայ
7 վիճակ չգուռէ. Վասն զի անոր արիւնը
իր մէջն է. զանիկա չոր ապառաժի
վրայ դրաւ, զանիկա գետնի վրայ չը-
8 թափեց որ զանիկա հողով ծածկէ, Իմ
սրտմտութիւնս հանելու՝ վրէժ առ-
նելու համար՝ անոր արիւնը չոր ապա-
9 առաժի վրայ դրի որ չծածկուի։ Անոր
համար Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ. Վա՜յ
արիւնահեղ քաղաքին, ես ալ կրակին
10 դէզը պիտի մեծցնեմ։ Փայտերը
բազմացուր, կրակը վառէ որ միսն
հալի, համեմները ևս դիր, և ոսկրները
11 այրին։ Եւ զայն պարապ կաթսան կայծե-
ցուն վրայ դիր, որպէս զի պղինձը
տաքնայ և այրի, և մէջի պղծութիւնն
12 հալի և ժանգը հատնի. Անիկա աշխա-
տութեամբ դէս յոգնեցաւ, և անոր

չաս ժանգն իմ՛ չվաս, անօր ժան-
13 գը կրակով չ՚ուտ։ Ուս անմաքրու-
թիւնդ մէջ պղծադործութիւն կայ.
որովհետև զքեզ *մաքրելու աշխատե-
ցայ,՚ և դուն չմաքրուեցար, այսու-
հետև քու անմաքրութիւնդ պիտի չը-
մաքրուիս, մինչև որ իմ բարկութիւնս
14 քու վրադ լիզնուցնեմ։ Ես Տէրս խօսե-
ցայ, իմ ըսուածս պիտի գայ, և ընելիս
պիտի կատարեմ, դիտելիս չեղեմ՛ և
պիտի ջինջնամ և պիտի չդղմամ. քու
ճամբաներուդ և քու գործերուդ հա-
մեմատ պիտի դատուիս, կ՚ըսէ Տէր Ե-
հովան։
15 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսե-
16 լով, Որդի մարդոյ, ահա ես հարուա-
ծով մը քու աչքերուդ ցանկութիւնը
քենէ պիտի առնում. և դուն չողբաս
և չլաս և քու աչերէդ արտօսք չգայ։
17 Լռութեամբ ըլլայ քու հեծութիւնդ,
մեռելի սուգ մի բաներ. քու սպա-
րոյդ գլուխդ վաթթէ, կօշիկներդ ոտ-
քերդ հագիր և չրթունքդ մի ծածկեր
և մարդոց հացը մի ուտեր։
18 Ես առաւօտուն ժողովրդեան խօսե-
ցայ, և իրիկունը կինս մեռաւ, և հե-
պիւթ առաւօտուն ինծի հրամայուածն
19 ըրի։ Ես ժողովրդն ինծի ըսաւ, Մի-
թէ չե՞ս պատմեր թէ այս քու ըրած-
ներդ ի՞նչ ալէտ նշանակե մեզի։
20 Ես ալ անոնց ըսի, Տէրոջը խօսքը
21 ինծի եղաւ ըսելով, Խօսեայէլի տան ը-
սէ, Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ. Ա՛ն-
կա ես իմ սրբարանս, ձեր զօրութեան
պարծանքը, ձեր աչաց ցանկութիւնը
և ձեր հոգւոյն խնայածը պիտի պղծ-
ուի. և ձեր որդիները և աղջիկները
զոր թողուցիք՝ սրով պիտի իյնան,
22 Եւ դուք իմ ըրածս պէս պիտի ընէք.
չեր չրթունքը պիտի չծածկէք, և մար-
23 գոց հացը պիտի չուտէք. Ես ձեր մ-
պարոշներդ ձեր գլուխը և ձեր կօշիկ-
ները ձեր ոտքը պիտի ըլլայ. պիտի
չողբաք և պիտի չլաք, այլ ձեր անօ-

*Նէք. մաքրելդ,
†Կամ պիտի չդնեմ իմ պէտասորս-ըէնս

րէնութիւններով պիտի մաշիք, և ի-
րարու հետ պիտի հեծէք։ Եւ Եզեկիել
ձեզի նշան է. ամէն ինչ որ բրած-
ին պէս պիտի ընէք. և երբ այս ըլլայ,
պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։
25 Եւ դուն, որդի մարդոյ, երբ ես ա-
նոնցմէ առնում անոնց զօրութիւնը,
անոնց պարծանայ ցնծութիւնը, անոնց
աչաց ցանկութիւնը և անոնց հոգւոյն
26 սիրած որդիները և աղջիկները, Ահա
այն օր ազատուածը քեզի պիտի գայ,
և ես ականջներուդ պիտի պատմէ։
27 Այն օր քու բերանդ պիտի բացուի ա-
զատուածին, և պիտի խօսիս և այլևս
համր չըլլաս. և դուն անոնց նշան պի-
տի ըլլաս, և պիտի գիտնան թէ ես եմ
տէրը։

## Գլ. ԻԵ

1 Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ
2 ըսելով, Որդի մարդոյ, երեսդ Ամմոնի
որդւոց դարձուր, և անոնց վրայ մար-
3 գարէութիւն ըրէ։ Եւ Ամմոնի որդւոց
ըսէ, Տէր Եհովայի խօսքը մտիկ ըրէք.
Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ. Որովհետև
դուն վա՜շ ըսիր իմ սրբարանիս վրայ
երբ պղծուեցաւ, և Իսրայէլի երկրին
վրայ երբ աւերակ եղաւ, և Յուդայի
տան վրայ երբ գերութեան գնաց.
4 Անոր համար ահա ես զքեզ արևելքի
բնակիչներուն ժառանգութիւնն կա-
տամ. և քու մէջդ իրենց գիւղերը պի-
տի հաստատեն, և քու մէջդ իրենց վր-
րաններդ պիտի դնեն. քու պտուղներդ
պիտի ուտեն և քու կաթդ պիտի խըմ-
5 ծեն։ Եւ Ռաբբա՝ ուղտերու փարախ, և
Ամմոնի որդւոց երկիրը հօտերու մանա-
զաուղ պիտի ընեմ, և պիտի գիտնաք
6 թէ ես եմ Տէրը։ Վասն զի Տէր Եհովան
այսպէս կ՚ըսէ. Որովհետև դուն ծարի
զարկիր, և ոտքդ գետին զարկիր, և
Իսրայէլի երկրին վրայ քու հոգւոյդ բո-
7 լոր արհամարհանօք ուրախացար, Անոր
համար ահա ես իմ ձեռքս քու վրադ
պիտի երկնցնեմ, և զքեզ ազգերուն
յափշտակութիւն ըլլալու պիտի տամ,



և զքեզ ժողովուրդներէն պիտի կըտ-
րեմ, և զքեզ երկիրներուն միջէն պի-
տի կորսնցնեմ. զքեզ բնաջինջ պի-
տի ընեմ, և պիտի գիտնաս թէ ես եմ
Տէրը։
8 Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ. Որովհե-
տև Մովաբ և Սէիր ըսին թէ Ահա Յու-
դայի տունը բոլոր ազգերուն պէս է,
9 Անոր համար ահա ես Մովաբի սահմա-
նը է՜ քաղաքներէն, անոր ծայրը լա-
ւագոյ քաղաքներէն, երկրին գարձա-
քը եղող Բեթհեսիմթի, Բէէլմէոնի և
10 Կարիաթեմի կողմէն պիտի բանամ Ա-
նեւելքի բնակիչներուն, որ Ամմոնի որ-
դւոց վրայ դեռ. և այն երկիրն անոնց
ժառանգութիւն պիտի տամ, որպէս
զի Ամմոնի որդիքն ազգերուն մէջ չը-
11 յիշուին. Մովաբի մէջ ալ դատաստան-
ներ կ՚գործ պիտի դնեմ, և պիտի
գիտնան թէ ես եմ Տէրը։
12 Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ. Որովհե-
տև Եդոմ վրէժ առած, և անկէ վրէժ առնե-
լով մեծ յանցանք բրաւ, Անոր համար
13 Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ. Եդոմի
վրայ անչուշտ ձեռքս պիտի երկնցնե-
նեմ. և մարդ և անասուն անկէ պիտի
կարեմ, և զանիկա անապատ պիտի ը-
նեմ Թեմանէ, և մինչև Դեդան սրով
14 պիտի իյնան։ Ես իմ ժողովրդեանս Իս-
րայէլի ձեռքով իմ վրէժխնդրութիւնս
Եդոմի վրայ պիտի կատարեմ. և ա-
նոնք իմ բարկութեանս և բարկու-
թեանս համեմատ պիտի ընեն Եդոմի
մէջ, և իմ վրէժխնդրութիւնս պիտի
գիտնան, կ՚ըսէ Տէր Եհովան։
15 Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ. Որովհե-
տև Փղշտացիք վրէժխնդրութեամբ
վարուեցան, և հոգւոյ արհամարհանօք
վրէժ առին հինաւուրց սիրութեամբ
16 աւերելով, Անոր համար Տէր Եհովան
այսպէս կ՚ըսէ. Ահա ես իմ ձեռքս քե-
ղերչացուց վրայ պիտի երկնցնեմ, և
քերեթիները պիտի կտրեմ, և ծովե-
զերքը եղողներուն մնացորդը բնաջինջ
17 պիտի ընեմ. Եւ անոնց վրայ իմ սրբա-
տութեանս յանդիմանութիւններով

մեծ վրէժխնդրութիւններ պիտի ի-
մացնեմ. և երբ իմ վրէժս անոնցմէ
առնում, պիտի գիտնան թէ ես եմ Տէ-
րը։

## Գլ. ԻԶ

1 Եւ եղաւ որ մեռապանդրդ ամբին
ամսուն առաջին իրը Տէրոջը խօսքը ին-
2 ծի եղաւ ըսելով, Որդի մարդոյ, որով
հետև Տիւրոս Երուսաղեմի վրայ բաւ,
վա՜շ, ժողովրդոց դուռները կոտրե-
ցան, անոր ինծի դարձ ինծի փոխադ-
րուեցաւ, անոր անապատ գտնեմալիր
3 Ես պիտի լեցուիմ. Անոր համար Տէր
Եհովան այսպէս կ՚ըսէ. Ահա ես քեզի
դէմ եմ, ով Տիւրոս, և քու վրադ
շատ ազգեր պիտի յարուցանեմ, ինչ-
պէս որ ծովը իր ալիքը կը յարուցա-
4 նէ։ Եւ անոնք Տիւրոսի պարիսպները
պիտի ապրեն, և անոր աշտարակները
պիտի փըցուանեն. և ես անոր հողն ան-
կէ պիտի աւերեմ, և զանիկա չոր ապա-
5 ռաժի պիտի դարձնեմ։ Ան ովկա ծո-
վուն մէջ ուռկաններ փռելու տեղ պի-
տի ըլլայ, վասն զի ես խօսեցայ, կ՚ըսէ
Տէր Եհովան, և անիկա ազգերուն ա-
6 ռաջ պիտի ըլլայ։ Եւ անոր աղջիկները
որ գաշտի մէջ են, սրով պիտի սպա-
նուին, և հարկ պիտի գիտնան թէ ես
եմ Տէրը։
7 Վասն զի Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ.
Ահա ես հիւսիսէն Տիւրոսի վրայ պիտի
բերեմ թագաւորաց թագաւորը Բա-
բելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը
երիվարօք, կառօք, ձիաւորներով,
բազմութեամբ և շատ ժողովուրդով։
8 Անիկա քու աղջիկներդ դաշտի մէջ
սրով պիտի մեռցնէ, և քեզի դէմ
մարտկոց պիտի չինէ, և քեզի դէմ հո-
գարլուր պիտի կոնդակէ, և քեզի դէմ
9 վահան պիտի վերցնէ։ Եւ քու պա-
րիսպներուդ դէմ իր պատերազմա-
կան մեքենաները պիտի դնէ, և իր
ատաղձներով քու աշտարակներդ պի-
10 տի փըցուկ։ Անոր ձիերուն բազմու-
թենէն անոնց փոշին զքեզ պիտի ծած-

կէ. ձիաւորներուն և անբնակներուն և կառաց ձայնէն քու պարիսպներդ պիտի սասանին, երբ նա քու դուռներդ մտնէ պարիսպը փլած քաղաքի
11 մէջ մտնողներու պէս։ Քու բոլոր փողոցներդ իւր ձիերուն ամբոխներով պիտի կոխէ, քու ժողովուրդդ սրով պիտի սպաննէ, և քու ամուր բերդերդ
12 գետին հետ հաւասար պիտի ըլլան։ Եւ քու հարստութիւնդ պիտի թալնեն, և ապրանքդ աւար պիտի առնուն, և քու պարիսպներդ պիտի փլցնեն, և գեղեցիկ առներդ պիտի քակեն, և քու քարերդ, փայտերդ և հողդ յուրբուն
13 մէջ պիտի ձգեն։ Եւ քու երգերուդ ազդագրի պիտի դադրեցնեմ, և քու քնարներուդ ձայնն այլ եւս պիտի չլսուի։
14 Եւ դարձ չոր ապառաժի պիտի դարձնեմ. ուռկաններ փռելու տեղ պիտի ըլլաս, այլ եւս պիտի չշինուիս։ Վասն զի ես Տէրս խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովան։
15 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ Տիւրոսի. Միթէ քու կործանմանդ ձայնէն երկիրները պիտի չսասանի՞ն, երբ քու մէջդ կառաւած բլալով վիրաւորներն
16 հեծեծեն։ Այնտեղ ծովուն բոլոր իշխաններն իրենց աթոռներուն վրայէն պիտի իջնեն, և իրենց պատմուճաններն պիտի հանեն, և իրենց նկարագործ հանդերձները պիտի մերկանան, սոսկալի պիտի հագնին, գետնի վրայ պիտի նստին, և ամէն վայրկեան պիտի ահաբեկին, և քու վրադ պիտի ապշին։
17 Եւ քու վրադ աղբ *ընելով կեզի պիտի բանն, Ի՜նչպէս կործանեցար, ով ծովեզրեակ անուանի քաղաք, որ ծովուն մէջ զօրաւոր էիր դուն և քու բնակիչներդ, որ ամէնուրեք էիք ահ-ի՜նչ-ոյ
18 բոլոր բնակիչներուն։ Հիմա քու կորկործանմանդ օրը կղզիները պիտի դողան, և ծովուս մէջ եղող կղզիները քու բնակիչդ ըլլալուդ վրայ պիտի ապշին։
19 Քանզի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Երբ զքեզ աւերակ քաղաք մը ընեմ

*ԵԲՐ. վերցուներով

ալն քաղաքներուն պէս, որ բնակիչ չունին, և քու վրադ անդունդը հանեմ, և շատ ջուրերը զքեզ ծածկեն, եւ զքեզ դուրս իջնողներուն հետ հին ժողովրդեան իջեցուցնեմ, և զքեզ դարը իջնողներուն հետ դնեմն խորերը, յաւիտենական աւերակներուն մէջ նստեցուցնեմ, այնպէս որ այլ եւս չբնակուիս, անտեն ես կենդանեաց
21 երկրին մէջ փառք պիտի դնեմ։ Զքեզ ահեղ առնեմ և երբ մի՛ եղիր, և պիտի ուզտնան։ և երբ փնտրես, այլ եւս յաւիտեան պիտի չգտնուիս, կ'ըսէ Տէր Եհովան։

## ԳԼ. ԻԷ

1 Դարձեալ Տէրոջը խօսքն ինծի եղաւ
2 ըսելով, Դուն, որդի մարդոյ, Տիւրոսի
3 վրայ ողբ ըրէ։ Եւ Տիւրոսի ըսէ, Ով ծովուն մուտքերը բնակող, շատ կղզիներու մէջ ժողովրդոց հետ վաճառականութիւն ընող, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ։ Ով Տիւրոս, դուն ըսիր Թէ
4 Ես գեղեցկութեան մէջ կատարեալ եմ, Քու սահմաններդ *ծովուն մէջ տեղն են. գեղեզ շինողները քու գեղեցկութիւնդ կատարեալ ըրին։
5 Անոնք քու բոլոր նաւերուդ տախտակներդ Սանիրի մայրիէն շինեցին. Լիբանանէ եղեւնիներ առին, որ քեզի կայմեր շինեն։ Քու Թիւրդ Բասանի կաղնիներէն շինեցին, քու դնացարաններդ Կիտացւոց կղզիներէն Էլիշ աստեղծ
7 շինեցին վզուզկով պատած։ Քու բացած առագաստդ Եգիպտոսի նկարագործ բեհեզի էր. քու ծածկոցդ եղիսացի կղզիներուն կապուտակ և ծիրա-
8 նեգոյն ներքուստ էր։ Սիդոնի և Արուադ բնակիչները քու թիավարներդ էին. քու մէջդ եղող իմաստուններդ, ով Տիւրոս, անոնք քու նաւավարներդ
9 էին։ Գեբալի ծերերը և անոր իմաստունները քու մէջդ էին քու ծակուած

*ԵԲՐ. ծովերուն սրտին մէջ
†ԿԱՄ տախտակամած քդ՝



նաւերդ նորոգելու համար. ծովուն բոլոր նաւերը և անոնց նաւաստիները քու առուտուրդ բանալու համար քու
10 մէջդ էին։ Քու զօրքերուդ մէջ պահեստազմական մարդիկ Պարսք, Ղուդացիք և Փութիացիք էին. քու մէջդ վառնան և դաղտագտա կախող անոնք էին, և անոնք գրեզ փառաւորեցին։
11 Արուադացիք քու զօրացդ հետ շուրջանակի քու պարիսպներուդ վրայ, և *գամադացիք քու աշտարակներուդ մէջ էին. անոնք իրենց վահանները շուրջանակի քու պարիսպներուդ վրայ կը կախէին, անոնք քու գեղեցկութիւնդը կատարեալ ըրին։
12 Աւձէն զեռալ ապրանք չառ ըլլալուն համար Թարսիս բեռնընդերը քու վաճառականներդ էին. անոնք քու վաճառանոցներուդ մէջ արծաթով, երկաթով, անագի և կապարի առուտուր
13 կ'ընէին։ Յաւան, Թուբալ և Մոսոք քու վաճառականներդ էին. անոնք քեզի հետ մարդոց հոգիներու և պղնձէ առ-
14 ներու առուտուր կ'ընէին։ Թոգարմայի տունէն քու վաճառանոցներդ կը բերէին ձիեր ու ձիաւորներ և ջո-
15 րեներ։ Դեդանի օրդիքը քու վաճառականներդ էին. շատ կղզիներու վաճառականութիւն քու ձեռքդ էր. անոնք քեզի հետ փղոսկրի ժանեակ և
16 աղեխաղով փոխանակութիւն կ'ընէին։ Հեռագործներուդ բազմութեան համար Սիւրիա քու վաճառականներդ էին. և քու վաճառանոցներուդ մէջ կարկեհանի, ծիրանեգոյնի, նկարագործ կերպասի, բեհեզի, քու տաներու և կար-
17 միր յաղթիի առուտուր կ'ընէին։ Ցուդա և Իսրայէլի երկիրը քու վաճառականներդ էին. անոնք քեզի հետ Մինննիթի ցորենով, խմորեղէնի, մեղրի, իւղով և բալասանի առուտուր կ'ընէին։
18 Հեռագործներուդ բազմութենէն առնի պէսով ապրանք շատ բլլալուն համար Դամասկոս քու վաճառականդ էր Փեղրաթի գինւով և ճերմակ բըր-
19 դոյ։ *Վէդան և Ցաւան քու վաճառանոցներդ մտնած կը բերէին. քու վաճառանոցներդ մէջ բանած երկաթ,
20 կտսիա և խանդիդէն կային. նստելու համար պատառականներ բերող
21 վաճառականդ Դեդան էր։ Արաբացիք և կեդարու բոլոր իշխանները քու պատրաստ վաճառականներդ էին. անոնք քեզի հետ գառներ, խոյեր և նոխազներ հետ գառնային, քու մէջդ։
22 Նախշուներու առուտուր կ'ընէին։ Սաբայի և Ռեգմայի վաճառականները քու վաճառականներդ էին. անոնք քու վաճառանոցներուդ մէջ ամէն փեսալ բնաւոր խանդիկներու և ամէն գեսալ պատառական փարերու և ոսկւոյ առու-
23 տուր կ'ընէին։ Խառան, †Քանէ և Եդեմ, Սաբայի վաճառականները, Ասորեստան և Քազմադ քու վաճառական-
24 ներդ էին։ Անոնք քու վաճառանոցներուդ մէջ քեզի հետ չքեղ հանդերձներով, կապուտակի և նկարագործ վերարկուներով և երփնագեղ դրհեաններով հագցեալ կապուտակ եղէնամորթ անուաձիներու առուտուր
25 կ'ընէին։ Թարսիսի նաւերը քու առուտուրդ համար կը պատրաստին. և դուն լեցուեցար և յոյժ փառաւոր եղար ծովուն մէջտեղ։
26 Քու թիավարներդ դքեզ շատ ջուրերու բերին. արեւելեան հովիւ զքեզ ծո-
27 վուն մէջտեղ կտրեց։ Քու ապրանքդ և վաճառանոցներդ և առուտուրդ, քու նաւավարներդ և նաւավարներդ, քու նաւերդ նորոգողները և քեզի հետ առուտուր բնողները, և քու մէջդ եղող բոլոր պատերազմական մարդիկ, և քու մէջդ եղող բոլոր բազմութիւնդ քու կործանմանդ օրը ծովուն մէջտեղ
28 պիտի իյնան։ Քու նաւավարներուդ ազդակին ձայնէն արաւարձանները պիտի սարսին։ Եւ ամէն թի փսղող նաւավարներն, ծովու բոլոր նաւավարներն իրենց նաւերէն պիտի իջնեն և
30 ցամաքը պիտի կանգնին։ Եւ իրենց ձայնը քու վրադ լսել պիտի տան, և դառ-

*ԿԱՄ քաղաքներդ

†ԿԱՄ Քազանէ,

նապէս պիտի ապրուդակին, և իրենց գըլուխ բնէրուն վրայ հող պիտի դնեն, և
31 մինչեւ մէջ պիտի թաղուին։ Եւ քեզի համար իրենց մնացորդը պիտի փետրեն և քու բակ պիտի հաղորդեն, և քեզի համար սրան ցաւով և գառն ազգով պիտի
32 լան։ Ես իրենց աւերին մէջ քեզի համար ողբագիր չոչ պիտի վերցուննեն, և քու վրայ ողբան ընելով, ինչ գործ կայ Տիւրոսի նման որ ծովուն
33 մէջ բնակիլ եղաւ։ Մինչ քու վաճառներդ ծովին կ'ելլէին, շատ ազգեր կը յագեցնէիր, շատ ապրանքովդ և առատութիւններովդ երկրի թագաւորները
34 կը հարստացունէիր։ Հիմա երբ խորտիկ եղար ծովերուն կատարածդ առնող քու վաճառականութիւնդ և բոլոր բազմութիւնդ քու մէջդ ինկան։
35 Կղզիներուն բոլոր բնակիչները քու վրայդ սոսկացան, և անոնց թագաւորները շատ զարհուրեցան, անոնց երեսները դէղնցան։ Ազգերուն մէջ վաճառականները քու վրայդ սուլեցին, դուն սոսկման ըլար եղար և յաւիտեան ոչնչացար։

## ԳԼ. ԻԸ

1 Ես Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
2 Որդի մարդոյ, Տիւրոսի իշխանին ըսէ թէ Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Որովհետեւ քու սիրտդ հպարտացաւ, քու ըսիր թէ Ես աստուած եմ, ես ծովուն մէջտեղ Աստուծոյ աթոռը կը նստիմ. սակայն դուն մարդ ես և ոչ Աստուած, թէեւ քու սիրտդ Աստուծոյ սրտին պէս
3 ըրիր։ Ահա դուն դանիէլէ իմաստուն ես, բնաւ գաղտնիք մը քենէ չըպահուեցաւ։ Քու իմաստութիւնդով և հանճարովդ քեզի հարստութիւն առաջ, և ոսկի և արծաթ ժողվեցիր։ Շատ իմաստութիւնդով վաճառականութիւնդով քու հարստութիւնդ բազմացուցիր, և քու հարստութիւնդ պատճառաւ սիրտդ հպարտացաւ։
6 Ասոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Որովհետեւ դուն քու սիրտդ
7 Աստուծոյ սրտին պէս դրիր, Ահա ես քու վրադ օտարներ, ազգաց բռնաւորները պիտի բերեմ. և անոնք քու իմաստութիւնդ վրայ իրենց գեղեցկութիւնդ պղծեցին, և քեզ գերեզմանին պիտի թշնեն, և քու վախկոտութիւնդ պիտի
8 ապականեն. Ձրեզ գերբը պիտի իջեցնեն, և ծովուն մէջտեղ վիրաւորներուն մահուամբ պիտի մեռնիս։ Միթէ դեռ պատնաղներուն առջեւ պիտի կրնաս ըսել թէ ես Աստուած եմ. դուն զրեզ մեռցնողներուն ձեռաց
9 մէջ մարդ պիտի ըլաս և ոչ Աստուած։
10 Օտարաց ձեռաք անթլփատներուն մահուամբ պիտի մեռնիս, քանզի ես խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովան։
11 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
12 Որդի մարդոյ, Տիւրոսի թագաւորին վրայ ողբ ըրէ, և անոր ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Դուն որ կատարեալ թեան կնիքն ես, իմաստութեամբ լեցուած և գեղեցկութեան
13 մէջ կատարեալ ես, Դուն Աստուծոյ դրախտին Եդեմի մէջ էիր, քու ծածկոյթդ բոլոր պատուական քարերն էին, սարդիան, տոպազիոն և մուգ մանուշակ, ակնկթար, եղնգնադար և յասպիս, շափիրոս, կարկեհան և զմրուխտ և ոսկի. քու թմբուկներուդ և սրինգներուդ գործը քու առեղծուած օրդ բերին։
14 զի պատրաստուեցաս. Դուն օծուած Ծածկող քերովբէ էիր, և ես զքեզ դրի. և դուն Աստուծոյ սուրբ լեռան վրայ էիր, դուն հրեզէն
15 քարերուն մէջտեղերը կը շրջէիր։ Դուն քու ճամբաներուդ մէջ կատարեալ էիր, քու առեղծուած օրդ մինչեւ որ քու վրադ անօրէնութիւն գըտնուեցաւ։
16 Քու առուտուրդ բազմութեան համար քու մէջդ զրկանօք լեցուցին, և մեզք գործեցիր. ես ալ զքեզ Աստուծոյ լեռնէն իբրև պղծուած նետեցի, և զքեզ, օ՛ ծածկող քերովբէ, հրեզէն քարերուն մէջէն բըկ։ Որովհետեւ դուն գեղեցկութեանդ համար սիրտդ
17 հպարտացար, քու գեղեցկութեանդ համար սիրտդ հպարտացար, քու ծայրագոյն իմաստութիւնդ պատճառաւ քու խնամութիւնդ աւերեցիր։ Ես զքեզ գետին նետեցի, զքեզ թագաւորներուն առջեւ
18 դրի տեսասղ ըլլալու։ Քու խարդախ վաճառականութեամբդ շատ անօրէնութիւններովդ քու սրբութիւններդ պղծեցիր, և ես քու մէջդ կրակ հանեցի, անիկա զքեզ կերաւ, և ամէն զքեզ տեսնողներուն աչքը առին։
19 Ես զքեզ գետնի վրայ մոխիր ըրի։ Ազգերուն մէջ ամէն քեզ ճանչցողները քու վրադ սոսկացան. դուն սոսկման պատճառ եղար և յաւիտեան ոչնչացար։
20 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
21 Որդի մարդոյ, երեսդ Սիդոնի դարձուր, և անոր վրայ մարգարէութիւն ըրէ, և անոր ըսէ,
22 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, Սիդոն, և քու մէջդ պիտի փառաւորուիմ. և երբ անոր մէջ դատաստաններ ընեմ, և անոր մէջ սուրբ հաստատուիմ, պիտի գիտնան թէ ես եմ
23 Տէրը։ Վասն զի անոր մէջ ժանտախտ, և անոր փողոցներուն մէջ արիւն պիտի զրկեմ. և չորքոտանի անոր վրայ եղող սրով անոր մէջ վիրաւորներ պիտի իյնան. և պիտի գիտնան թէ ես
24 եմ Տէրը։ Եւ իսրայէլի տան այլ եւս խայթող տատասկ և ցաւագնող փուշ պիտի չըլլայ անոնց բոլորտիքը եղող զանազան ամէն նախատանքներէն. և պիտի գիտնան թէ ես եմ Տէր Եհովան։
25 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Երբ Իսրայէլի տունը ժողվեմ այն ժողովուրդներէն որոց մէջ ցրուած են, անոնովն անոնց մէջ ազգերու աչքը առջեւ սուրբ պիտի համարուիմ. և անոնք պիտի բնակին իրենց երկրին մէջ, զոր ես իմ
26 ծառայ Յակոբ տուի։ Եւ անոր մէջ ապահովութեամբ պիտի բնակին, և տուներ պիտի շինեն և այգիներ պիտի անկնին. և երբ գատաստաններ ի գործ դնեմ անոնց բոլորտիքը եղողներուն վրայ որ զանոնք նախատեցին, անոնք





ապահովութեամբ պիտի բնակին, և պիտի գիտնան թէ ես եմ իրենց Տէր Աստուածը։

## ԳԼ. ԻԹ

1 Տասներորդ տարին տասներորդ ամսուն երկուտասաներորդ օրը Տէրոջը խօս-
2 քը ինծի եղաւ ըսելով, Որդի մարդոյ, երեսդ Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին դարձուր, և անոր դէմ և բոլոր Եգիպտացիներուն դէմ մարգարէութիւն ըրէ.
3 խօսէ և ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ով Եգիպտոս փարաւոն Թագաւոր, քու գետերուդ մէջ պառկող մեծ վիշապ, որ կ'ըսես թէ իմ գետս ինծի է, և ընդ-
4 և ես ինծի համար շինեցի։ Բայց ես քու կզակներուդ կարթ պիտի անցուցնեմ, և քու գետերուդ ձուկերը քու թեփերուդ պիտի փակցնեմ, և քեզ գետերուդ մէջէն պիտի հանեմ, և գետերուդ բոլոր ձուկերը քու թե-
5 փերուդ պիտի փակչին։ Եւ զքեզ և գետերուդ բոլոր ձուկերն անապատ պիտի նետեմ. դուն դաշտի երեսին վրայ պիտի իյնաս և պիտի չժողվուիս և չամփոփուիս. գազան երկրի գազաններուն և երկնից թռչուններուն կե-
6 րակուր տուի։ Եւ Եգիպտացիք բոլոր բնակիչները պիտի գիտնան թէ ես եմ Տէրը, վասն զի իսրայէլի տան եղէգէ ցուպ
7 եղար։ Երբ անոնք զքեզ ձեռքով բռնեցին, դուն կոտրեցար և անոնց բոլոր *թաղուկը ձեղքեցիր. և երբ քեզի կռթնեցան, փշրուեցար և անոնց բոլոր մէջքը դղրդացուցիր։
8 Ասոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա ես քու վրադ սուր պիտի բերեմ և մարդ և անասուն քենէ պի-
9 տի կոտրեմ։ Եւ Եգիպտոսի երկիրն աւերակ և անապատ պիտի ըլայ, և պիտի գիտնան թէ ես եմ Տէրը. որովհետեւ անիկա բաւ, Գետը ինծի է, և
10 ընդ- ես չինեցի։ Անոր համար ահա

եւ քեզի և քոյ զեաեերայդ դէմ եմ,
և Եգիպտոսի երկիրը Մագդոզին մինչև Սուհէն և մինչև եթովպացւոց
սահմանն աւերակ և անբնակ անապատ
պիտի ընեմ. Անկէ մարդու ոտք պիտի
չանցնի ոչ ալ անասնոյ ոտք անկէ պիտի անցնի, և քառասուն տարի անբնակ պիտի մնայ. Եւ Եգիպտոսի երկիրն ամայացած երկիրներու մէջ ամայի պիտի ընեմ, և անոր քաղաքներն աւերուած քաղաքներու մէջ քառասուն տարի ամայի պիտի մնան, և Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ, և զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ.

Սակայն Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Քառասուն տարի լեռքը Եգիպտացիները պիտի ժողվեմ այն ազգերէն որոնց մէջ ցրուեցան. Ու Եգիպտացւոց գերութիւնը կրկ պիտի դարձնեմ, և զանոնք Պաթուրոսի երկիրը իրենց հայրենի երկիրը պիտի դարձնեմ, և հոն ցած թագաւորութիւն մը պիտի ըլլան. Թագաւորութիւններուն ցածագոյնը պիտի ըլլան, և այլ եւս ազգերուն վրայ պիտի չբարձրանան. զանգի զանոնք պիտի վտրկեցնեմ, որ ազգերու վրայ չտիրեն. Ու անոնք այլ եւս իրենց յոյսը ան ազատնութիւն պիտի չըլլան, որ իրենց հետէն երթալնուն անօրէնութիւնը յիշուի. և պիտի գիտնան թէ ես եմ Տէր Եհովան։

Ու եղաւ որ քսանեւեօթներորդ տարին առաջին ամսուն առաջին օրը Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով, Որդի մարդոյ, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը իւր զօրքը մեծ ծառայութեան գործածեց Տիւրոսի դէմ. ամէն գլուխ կեռացաւ և ամէն ուսը մերկցաւ եւ. սակայն անոր և անոր զօրքին հատուցում չեղաւ Տիւրոսէն այն ծառայութեան համար որ անոր դէմ ըրաւ. Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա ես Եգիպտոսի երկիրը Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին պիտի տամ. և անոր բազմութիւնը պիտի առնու, և անոր կողոպուտը պիտի կողոպտէ, և անոր աւարը պիտի յափշտակէ, և այս անոր զօրքոյ վարձք պիտի ըլլայ. Հոն ըրած գործին համար Եգիպտոսի երկիրն անոր տուի, զանգի ինծի համար աշխատեցան՝ կ'ըսէ Տէր Եհովան. Ա յն օրը խրոչկըլի ատն հզիւրը պիտի բուսցնեմ, և անոնց մէջ բերնի բացութիւն պիտի տամ, և պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

## Գլ. Լ.

1 Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ
2 ըսելով, Որդի մարդոյ, մարգարէութիւն ըրէ և ըսէ, Տէր Եհովան այսպէս
կ'ըսէ. Ողբացէք Ե ըէ, Աւա՛ղ, յո-
3 րոյն օր. Վասն զի օրը մօտ է, Տէրոջը
օրը մօտ է, անիկա ամպոտ օր է. ազ-
4 գերուն ժամանակը պիտի ըլլայ. Ու Եգիպտոսի վրայ սուր պիտի գայ, և Եթովպիոյ մէջ սասակի խռովութիւն
պիտի ըլլայ, երբ Եգիպտոսի մէջ վիրաւորներ իյնան. և անոր բազմութիւնը պիտի առնուն, և անոր հիմերը պիտի կործանին. Եթովպացիք, Փութիացիք և Ղուդացիք և բոլոր խառնիճաղանճ ժողովուրդը և Քուպ բացիք և
ուխտով երկրին որդիքն անոնց հետ սրով
6 պիտի իյնան։ Տէրը այսպէս կ'ըսէ. Եգիպտոսի օգնականներն ալ պիտի իյնան, և անոր զօրութեան հպարտութիւնը պիտի խոնարհի. Մագդոզին
7 մինչև Սուհէն սրով պիտի իյնան անոր
8 մէջ, կ'ըսէ Տէր Եհովան. Ու ամայացած երկիրներու մէջ ամայի պիտի ըլլան,
և անոր քաղաքները կործանուած
9 քաղաքներու մէջ պիտի ըլլան. Ու երբ Եգիպտոսի մէջ կրակ ձգեմ, և անոր բոլոր օգնականները կաթուին, պիտի
գիտնան թէ ես եմ Տէրը. Ա յն օրը իմ առջեւէս նաւերով դեսպաններ պիտի
ելլեն, որ ապահովութեան մէջ եղող
Եթովպացիները վախցուցանեն, և անոնց
վրայ պատրիկ խռովութիւն պիտի ըլ-

*Կամ՝ Նոբթացիք,



լայ Եգիպտոսի օրուան պէս. Վասն զի
ահա կու գայ։

10 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Եգիպտոսի բազմութիւնն ալ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքով
11 բնաջինջ պիտի ընեմ, Անիկա և անոր հետ անոր ժողովուրդը ազգերուն
ռնաւարութիւնը երկիրն ուբերու պիտի
բերուին. անոնք իրենց սուրերը Եգիպտոսի վրայ պիտի քաշեն, և երկիրը
12 սպանուածներով պիտի լեցնեն. Ու
ես գետերը պիտի ցամքեցնեմ, և
երկիրը չարերուն ձեռքը պիտի մատնեմ. և երկիրը և բոլոր անոր մէջ եղածը օտարներուն ձեռքով պիտի կործանեցնեմ. ես Տէրս խօսեցայ։

13 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Կառափերն ալ բնաջինջ պիտի ընեմ, և Մեմփիսի չաստուածները պիտի ոչնչացնեմ, և այլ եւս Եգիպտոսի երկրին իշխան պիտի չըլլայ. և Եգիպտոսի երկրին
14 մէջ վախ պիտի դնեմ. Ու զՊաթուրոս
աւերակ պիտի ընեմ, և Սայանիս կրակի պիտի տամ, և Նոյի մէջ դա-
15 տաստանները կ'գործ պիտի դնեմ. Ու
Եգիպտոսի ամրութիւնը Սինի վրայ իմ սրտմտութիւնս պիտի թափեմ,
և Նոյի բազմութիւնը պիտի կտրեմ։
16 Ու Եգիպտոսի մէջ կրակ պիտի ձգեմ. Սին ահագին պիտի ծագնայ, և Նոյի պատուիրն խռովութիւն պիտի ըլլայ, և Մեմփիսի ցորեկով թշնամիներ պիտի ունենայ։
17 Թշնամիներու Աւենի պատանիները և Բուբաստոսի քաղքերը սրով պիտի իյնան, և
18 անոնց բնակիչները գերութեան պիտի
երթան. Նաև Տափնասի մէջ ցորեկը խաւար պիտի ըլլայ, երբ հոն Եգիպտոսի լուծերը կոտրեմ. և հոն անոր զօրութեան հպարտութիւնը պիտի աչքընայ. զանիկա ամպ պիտի ծածկէ, և
անոր աղջիկները գերութեան պիտի
19 երթան. Այսպէս Եգիպտոսի դատաստաններ կ'գործ պիտի դնեմ, և
պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։
20 Ու եղաւ որ մեհասաներորդ տարին
առաջին ամսուն եօթնին Տէրո-
21 ջը խօսքը ինծի եղաւ ըսելով, Որդի

*Կամ՝ ամպերու.

մարդոյ, Եգիպտոսի փարաւոն Թագաւորին բազուկը կտրեցի. և ահա անիկա պիտի չխոթեցուի, և ոչ անոր վրայ գեղը և կտաւեր դնելով զանիկա պատի որ զօրանայ սուր ըրած.
22 Նէրուս. Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա ես Եգիպտոսի փարաւոն Թագաւորին դէմ եմ, և անոր բազուկները պիտի կոտրեմ, թէ զօրաւորը և թէ կոտրածը, և սուրն անոր ձեռքէն վար ձգել պիտի տամ.
23 Ու Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ, և զանոնք երկիրներուն
24 մէջ ցիրուցան պիտի ընեմ. Ես Բաբելոնի Թագաւորին բազուկները պիտի զօրացնեմ և իմ սուրս անոր ձեռքը պիտի տամ. իսկ փարաւոնի բազուկները պիտի կոտրեմ, և անիկա անոր առջեւ կ'մաղ վիրաւորուածի հեծծումբ պիտի հնծէ։ Այսպէս Բաբելոնի Թագաւորին բազուկները պիտի
25 զօրացնեմ, և փարաւոնի բազուկները պիտի կ'նան. և երբ իմ սուրս Բաբելոնի Թագաւորին ձեռքը տամ, և նա զայն Եգիպտոսի երկրին վրայ երկնցնէ, պիտի գիտնան թէ ես եմ
26 Տէրը։ Ու Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ, և զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ, և պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

## Գլ. Լա.

1 Եւ եղաւ որ մեհասաներորդ տարին
երրորդ ամսուն առաջին օրը
2 Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով, Որդի մարդոյ, Եգիպտոսի փարաւոն Թագաւորին և անոր բազմութեան պըսպ,
Դուն քու մեծութեանդ որուն կը նըմանիս. Ահա Ասորեստանցին Լիբանանու մէջ եղող եղեւնոյ պէս էր, անոր ոստերը գեղեցիկ, և տերեւախիտ չաղաւորիներ հալածուող էին, և հասակը բարձր էր, և անոր գլուխը *թխտ
4 Տիւղերուն մէջ էր։ Ջուրերը զանիկա

*Կամ՝ ամպերու.

մեծցուցին, անգուսնդները զանիկա բարձրացուցին, իրենց գեաերն անոր անկուած տեղին բոլորտիքը կը պտըտէին, և իրենց վառոները դաշտին բոլոր ծառերուն կը զրկէին։ Այս պատճառաւ անոր հասակը դաշտին բոլոր ծառերէն բարձր եղաւ, և տարածուելով՝ չուրերուն բազմութենէն անոր ոստերը չատցան և շառաւիղները երկընցան։ Անոր ոստերուն վրայ երկինքը բոլոր թռչունները բոյն կը շինէին, և շառաւիղներուն տակ դաշտի բոլոր գազանները կը ծնանէին, և անոր հովանոյն տակ բոլոր մեծ ազգերը կը բնակէին։ Եւ իր մեծութեամբն և իր ոստերուն երկայնութեամբն գեղեցիկ էր, վասն զի անոր արմատը չատ չուրերու քով էր։ Աստուծոյ դրախտին եղևինները չէին ծածկեր զնա, մայր ծառերն անոր ոստերուն չէին նմաներ, և ասպինեզն անոր շառաւիղներուն պես չէին։ Աստուծոյ դրախտին մէջ բնաւ ծառ մը գեղեցկութեան կողմանէ անոր նման չէր։ Զանիկա իր ոստերուն բազմութեամբ գեղեցիկ չինած էի, և Աստուծոյ դրախտին մէջ եղող Եդեմի բոլոր ծառերն անոր կը նախանձէին։

Ասոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Որովհետև հասակով *բարձրացաւ և գլուխը խիտ ճիւղերուն մէջ վերցուց, և անոր սիրտը իր բարձրութեամբը հպարտացաւ, ես ալ ազգերուն զօրաւորին ձեռքը տուի զնա, որ անշուշտ անոր հետևցած պիտի ընէ. իր չարութեանը համար քշեցի զնա։ Եւ օտարները՝ ազգերուն բռնաւորները կտրեցին զնա և թողուցին. անոր ոստերը լեռներու վրայ և ամէն հովիտներու մէջ ինկան, և անոր շառաւիղները երկրին ամէն ձորերուն մէջ կոտրեցան, և երկրիս բոլոր ժողովուրդներն անոր հովանիէն իջան և թողուցին զնա։ Անոր ինկած ոստերուն վրայ երկինքը բոլոր թռչունները պիտի բնակին, և անոր շառաւիղներուն վրայ դաշտի բոլոր գազանները պիտի ըլլան։ Որպես զի չբարձրանան բնաւ իրենց հասակին վրայ չհպարտանան, և իրենց գլուխը խիտ ճիւղերուն մէջ չվերցունեն, և բոլոր չրով *ոռոգուածները անոնց հպարտութեան համար անոնց չյարին։ վասն զի ամէնքը գեղնի խորերը մահուան ձեռքը տրուած են գետ իջնող մարդոց որդիներուն մէջ։ Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Գերեզմանը իջած օրը սուգ բռնել տուի. անոր համար անդունդը ծածկեցի և անոր գետերն արգելեցի, և շատ չուրեր արգելուեցան. և անոր համար Լիբանանը սուգ ղրեցուցի, և անոր համար դաշտի բոլոր ծառերը թառամեցան։ Երբ զանիկա գետ իջնողներուն հետ գերեզման իջեցուցի, անոր կործանման ձայնէն ազգերը դողացուցի. և Եդեմի բոլոր ծառերը, Լիբանանու ընտիր և գեղեցիկ ծառերը, ամէն չրով ոռոգուածները գեանին խորերը մխիթարեցան։ Անոնք ալ անոր հետ սրով սպանուածներուն քով գերեզման իջան, և նաև անոր բազուկը եղողները որ անոր հովանոյն տակ ազգերուն մէջ կը նստէին։

Դուն այսպիսի փառաւ և մեծութեամբ որով կը նմանիս Եդեմի ծառերուն մէջ. դուն Եդեմի ծառերուն հետ գետնին տակ պիտի նետուիս, և սրով սպանուածներուն հետ անթլփատներուն մէջ պիտի պառկիս։ Փարաւոն և անոր բոլոր բազմութիւնն այսպես պիտի ըլլայ, կ'ըսէ Տէր Եհովան։

## Գլ. ԼՒ

1 Եւ եղաւ որ երկոտասաներորդ տարին երկոտասաներորդ ամսոյն առաջին օրը Տէրոջը խօսքը ինծի եղաւ
2 ըսելով, Որդի մարդոյ, Եգիպտոսի փարաւոն թագաւորին վրայ ողբ ըրէ և անոր ըսէ,
Դուն ազգաց մէջ առյդ առիւծու կը նմանիս,
Եւ ծովերու մէջ վիշապի պէս ես.
Դուն գետերուդ վրայ կը յարձակիս,
Եւ ոտիդդ չուրերը կը խառնես,
Եւ անոնց գետերը կը պղտորես։
3 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Ես շատ ազգերու ժողովրդով
Իմ ցանցս քու վրադ պիտի տարածեմ,
Եւ զքեզ իմ ուռկանովս պիտի հանեմ։
4 Եւ զքեզ գետին պիտի նետեմ,
Եւ զքեզ դաշտի երեսին վրայ պիտի ձգեմ,
Եւ քու վրադ երկինքը բոլոր թռչունները պիտի իջեցունեմ,
Եւ բոլոր երկրին գազանները քենէ պիտի յագեցունեմ.
5 Եւ քու մսերովդ լեռներու վրայ պիտի դնեմ,
Եւ քու գետերովդ ձորերը պիտի լցնեմ,
6 Եւ քու լողացած երկիրդ մինչև լեռները
Քու արեամբդ պիտի առուգեմ,
Եւ հեղեղատները քենէ պիտի լեցուին,
7 Եւ երբ զքեզ մարեմ, երկինքը պիտի ծածկեմ,
Եւ անոր աստղերը պիտի խաւարեցնեմ.
Արեգակն ամպով պիտի ծածկեմ,
Եւ լուսինն իր լոյսը պիտի չտայ։
8 Քու վրադ երկինքը բոլոր լուսաւորները պիտի խաւարեցունեմ,
Եւ քու երկիրդ վրայ մթութիւն պիտի բերեմ,
Կ'ըսէ Տէր Եհովան։
9 Եւ երբ քու կործանմանդ լուրը
Ազգերու և քու չգիտցած երկիրներուդ հասցունեմ,
Շատ ժողովուրդներուն սիրտը պիտի խռովեցունեմ։
10 Եւ քու պատճառուդ շատ ժողովուրդներ պիտի ապշեցունեմ,
Եւ քու պատճառուդ անոնց թագաւորները պիտի զարհուրին յոյժ,
Երբ իմ սուրս անոնց երեսին առջև երերցունեմ.
Եւ քու կործանմանդ օրը
Ամէն մարդ իր հոգւոյն համար ամէն վայրկեան պիտի սարսափին։
11 Քանզի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Բաբելոնի թագաւորին սուրը քու վրադ պիտի գայ։
12 Քու բազմութիւնդ զօրաւորներուն սուրերով վար պիտի ձգեմ,
Անոնց ամէնքը ազգաց բռնաւորներն են.
Եւ անոնք Եգիպտոսի փառքը պիտի կողոպտեն,
Եւ անոր բոլոր բազմութիւնը պիտի կորսուի։
13 Եւ անոր բոլոր անասուններն
Շատ չուրերուն քովէն պիտի կտրընդունեմ.
Եւ այլ ևս մարդու ոտք զանոնք պիտի չպղտորէ,
Անասոնց կճղակներն ևս զանոնք պիտի չպղտորեն։
14 Անասուն անոնց չուրերն ականակիտ պիտի ընեմ,
Եւ անոնց գետերը իւղոյ պէս պիտի քալեցունեմ,
Կ'ըսէ Տէր Եհովան,
15 Երբ Եգիպտոսի երկիրն աւերակ դարձնեմ,
Եւ երկիրը *բոլորովին ամայի մնայ,
Եւ երբ անոր բոլոր բնակիչները զարնեմ,
Եւ պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը։
16 Այս ողբն է որ պիտի զրուցեն.
Զանիկա ազգաց աղջիկները պիտի զրուցեն,
Եգիպտոսի վրայ և անոր բոլոր բազմութեան վրայ զանիկա պիտի զրուցեն,
Կ'ըսէ Տէր Եհովան։
17 Եւ եղաւ որ երկոտասաներորդ տարին ամսուն տասնհինգին Տէրոջը խօսքն ինծի եղաւ ըսելով,
18 Որդի մարդոյ, Եգիպտոսի բազմութեան վրայ ողբա,

*Եբր. բարձրացար,

*Կամ ոռոգուած անոնց կաղնիները իրենց հպարտութեան մէջ հասատատ չկենան.

*Եբր. իւր լուսինն

Եւ զանիկա և երեսելի ազգերուն աղջիկները
Քան իշխողներուն հետ գեանի խորհուրդ իշխեցաը,
19 Քանզի արմէ գեղեցիկ ևս.
Իշխը և անթլփատներուն հետ պառկէր,
20 Անոնք սրով սպանուածներուն մէջ պիտի իյնան.
Անիկա սրոյ տրուեցաւ.
Զանիկա և անոր բոլոր բազմութիւնը քաշկռտեցէք.
21 Գերեզմանին մէջէն զօրաւոր երիտասարդներուն
Անոր օդնութիւն ընդներուն հետ՝ անոր պիտի գուշեն.
Անոնց սրով սպանուած անթլփատները հոն իջած կը պառկին.
22 Ասուր և անոր բոլոր ժողովքն հոն են.
Անոր գերեզմաններն անոր բոլորտիքն են.
Անոնք սպանուած, սրով ինկած են.
23 Որոց գերեզմանները գուբին խոր ուղտանքը սեղաւորուած են,
Եւ անոր ժողովքը իր գերեզմանին բոլորտիքն է.
Անոնք սպանուած, սրով ինկած են,
Անոնք որ կենդանեաց երկրին մէջ վախ կու տային.
24 Եղամ և անոր բոլոր բազմութիւնը հոն անոր գերեզմանին բոլորտիքն են.
Անոնք սպանուած, սրով ինկած են,
Եւ գեհենին խորերն անթլփատ իջան,
Անոնք որ կենդանեաց երկրին մէջ իրենց վախը կու տային,
Սակայն գուբ իշխողներուն հետ իրենց ամօթը կը կրեն.
25 Սպանուածներուն մէջ անկողին դրին անոր և անոր բոլոր բազմութեանը.
Անոր գերեզմաններն անոր բոլորտիքն են.
Անոնք սրով սպանուած անթլփատներ են.
Թէպէտ և անոնք կենդանեաց երկրին մէջ իրենց վախը կու տային,
Սակայն գուբ իշխողներուն հետ իրենց ամօթը կը կրեն.
Անիկա սպանուածներուն մէջ դրուած է.
26 Մասոք և Թոբէլ և անոր բոլոր բազմութիւնն հոն է,
Անոր գերեզմաններն անոր բոլորտիքն են.
Անոնք սրով սպանուած անթլփատներ են,
Թէպէտև անոնք կենդանեաց երկրին մէջ իրենց վախը կու տային,
27 Եւ անոնք անթլփատներէն իյնող զօրաւորներուն հետ պիտի չպառկին,
Որ իրենց պատերազմական զինուք գերեզման իջան,
Եւ իրենց սուրերն իրենց գլուխներուն տակ դրին,
Սակայն անոնց անօրէնութիւնները անոնց ոսկորներուն վրայ պիտի ըլլան,
Թէև անոնք կենդանեաց երկրին մէջ զօրաւորներուն սարսափ էին,
28 Եւ դուն անթլփատներուն մէջ պիտի կառրուիս,
Եւ սրով սպանուածներուն հետ պիտի պառկիս.
29 Եդովմ, անոր թագաւորները և բոլոր իշխանները հոն են,
Որ իրենց զօրութեամբ սրով սպանուածներուն հետ դրուած են.
Անոնք անթլփատներու հետ
Եւ գուբ իշխողներուն հետ կը պառկին.
30 Հիւսիսի բոլոր իշխանները և բոլոր Սիդոնացիք հոն են,
Որ սպանուածներուն հետ իջան.
Անոնք իրենց սարսափելիութեամբ իրենց զօրութենէն կ'ամչնան,
Եւ անոնք սրով սպանուածներուն հետ անթլփատ կը պառկին,
Եւ գուբ իշխողներուն հետ իրենց ամօթը կը կրեն.
31 Փարաւոն զանոնք պիտի տեսնէ
Եւ իւր բոլոր բազմութեան համար պիտի մխիթարուի,
Փարաւոն և անոր բոլոր զօրքը սրբ եղբով սպանուեցան,



Կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱՅ.
32 Որ անոր կենդանեաց երկրին մէջ իմ վախս դրի,
Եւ անիկա անթլփատներուն մէջ սրով սպանուածներուն հետ պիտի պառկի,
Այն Փարաւոն և անոր բոլոր բազմութիւնը,
Կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱՅ.

ԳԼ. ԼԲ.

1 Գարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ
2 ըսելով, Որդի մարդոյ, քու ժողովրդեանդ որդւոց խօսէ և անոնց ըսէ,
Եթէ երկրի մը վրայ սուր բերեմ, և այն երկրին ժողովուրդն իրենց միջէն մարդ մը ընտրեն և զանիկա իրենց հսկայ դէտ ընեն,
3 Եւ անիկա այն երկրին վրայ սրոյ գալը տեսնէ, և փող հնչեցնէ և ժողովուրդը զգուշացնէ.
4 Անատեն եթէ փողին ձայնը լսողը չզգուշանայ, և սուրը գայ, զանիկա վերցուցանէ, անոր արիւնն անոր գլուխը պիտի ըլլայ.
5 Անիկա փողին ձայնը լսեց և չզգուշացաւ, անոր արիւնն անոր վրայ պիտի ըլլայ. բայց զգուշացողը իր անձը կազատէ.
6 Հոգին կ'ազատուի. իսկ եթէ դէտը սրոյ գալը տեսնէ և փող չհնչեցնէ, և ժողովուրդը չզգուշանայ, և սուրը գայ և անոնցմէ հոգի մը վերցուցանէ, անիկա իր անօրէնութեան համար վերցուեցաւ, բայց անոր արիւնը դէտին ձեռքէն պիտի պահանջեմ.
7 Եւ դուն, որդի մարդոյ, դիտող Իսրայէլի տան դէտ դրի, և իմ բերնէս խօսք լսես և իմ կողմանէս զանոնք զգուշացնես, երբ ամբարշտին ըսեմ, Ով ամբարիշտ, անշուշտ պիտի մեռնիս, և դուն ամբարիշտը իր ճամբէն զգուշացնելու համար չխօսիս, այն ամբարիշտը իր անօրէնութեան մէջ պիտի մեռնի, բայց անոր արիւնը քու ձեռքէդ պիտի փնտռեմ.
9 Ձեռքէդ պիտի փնտռեմ. իսկ եթէ դուն ամբարիշտը իր ճամբէն զգուշացնես որ անկէ դառնայ, և անիկա իր ճամբէն չդառնայ, անիկա իր անօրէնութեան մէջ պիտի մեռնի, բայց դուն քու հոգիդ ազատած կ'ընես։
10 Եւ դուն, որդի մարդոյ, Իսրայէլի տան ըսէ, Գուբ այսպէս կը խօսիք և կ'ըսէք, Մեր յանցանքը և մեղքը մեր վրայ են, և մենք անոնց մէջ կը մաշինք, ուրեմն ինչպէս պիտի ապրինք։
11 Անոնց ըսէ, Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱՅ, որ ամբարիշտին մեռնիլը չեմ ուզեր, այլ որ ամբարիշտը իր ճամբէն դառնայ և ապրի. դարձէք, դարձէք ձեր չար ճամբաներէն, վասն զի ինչո՞ւ մեռնիք, ով Իսրայէլի տուներ,
12 Եւ դուն, որդի մարդոյ, քու ժողովրդիդ որդւոց ըսէ, Արդարին արդարութիւնն անոր յանցանք բած օրը զանիկա պիտի չազատէ, և ամբարշտին ամբարշտութիւնն անոր ամբարշտութենէ դարձած օրը անոր գլուխն պատճառ պիտի չըլլայ, և ոչ արդարը մեղք գործած օրը իր արդարութեան համար պիտի կրնայ ապրիլ։
13 Քանի՞ պիտի կրնայ ապրիլ, երբ ես արդարին ըսեմ թէ անշուշտ պիտի ապրի և անիկա իր արդարութեան վստահութենէ անօրէնութիւն ընէ, անոր բոլոր արդարութիւնը պիտի չյիշուի, այլ անիկա իր անօրէնութեան մէջ պիտի մեռնի, և անոր համար պիտի մեռնի.
14 Եւ երբ ամբարշտին ըսեմ, Դուն անշուշտ պիտի մեռնիս, և անկէ իր մեղքէն դառնայ և իրաւունք և արդարութիւն ընէ. Ա՛ն ամբարիշտը գրաւ լուա տայ և յափրշտակածը հատուցանէ, և անօրէնութիւն չընելով կենաց կանոններուն համաձայն քալէ, անկէ անշուշտ պիտի ապրի, պիտի չմեռնի. Անոր գործած բոլոր մեղքերն անոր դէմ պիտի չյիշուին. անիկա իրաւունք և արդարութիւն ըրաւ, անշուշտ պիտի ապրի։
17 Եւ քու ժողովուրդիդ որդիքը կ'ըսեն թէ Տէրոջը ճամբան ուղիղ չէ. սակայն իրենց ճամբան է որ ուղիղ չէ։ Երբ արդարը իր արդարութենէն դառնայ և անօրէնութիւն ընէ, անիկա անոր

*Կամ թէև կենդանեաց երկրին մէջ անոր վախը դրի, բայց

19 մէջ պիտի մեռանի, եւ երբ ամբարիշտը
իր ամբարշտութենէն դառնայ եւ իրա-
ւունք եւ արդարութիւն ընէ, անիկա
20 անոնցմով պիտի ապրի, բայց դուք
կ'ըսէք թէ Տէրոջը ճամբան ուղիղ չէ.
Ես ձեզի ամենուն դատաստանն անոր
ճամբաներուն համեմատ պիտի տես-
նեմ, ով Իսրայէլի տունը։
21 Եւ եղաւ որ մեր գերութեան երկո-
տասաներորդ տարին տասներորդ ամ-
սուն հինգերորդ օրը Երուսաղէմէ ա-
զատուածին մէկը ինծի եկաւ և ըսաւ,
22 Բազաքը զարնուեցաւ։ Եւ այն ազա-
տուածը չեկած՝ երկիւղը Տէրոջը ձեռ-
քը իմ վրաս եղաւ, և իմ բերանս բա-
ցաւ մինչև որ առաւօտուն անկից ին-
ծի եկաւ, և երբ բերանս բացուեցաւ,
այլ ևս համր չեղայ։
23 Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսե-
24 լով, Որդի մարդոյ, այս Իսրայէլի երկ-
րին աւերակներուն բնակիչները կը խօ-
սին և կ'ըսեն, Աբրահամ մէկ հոգի էր,
և երկիրը ժառանգեց. մենք որ շա-
տաւոր ենք՝ երկիրը մեզի ժառանգու-
25 թիւն արուեցաւ։ Անոր համար ըսէ ա-
նոնց, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Դուք
գէշ արեամբ կ'ուտէք, և ձեր աչքերը
ձեր կուռքերուն կը վերցնէք, և ա-
րիւն կը թափէք. և երկիրը պիտի ժա-
26 ռանգե՞ք։ Դուք ձեր սուրերուն կ'ա-
պաւինիք, պղծութիւն կ'ընէք, և իւ-
րաքանչիւրը իւր ընկերին կինը կը պղ-
27 ծէ. և երկիրը պիտի ժառանգէ՞ք։ Ա-
նոնց այսպէս ըսաս, Տէր Եհովան այս-
պէս կ'ըսէ. Ես կենդանի եմ որ աւե-
րակներուն մէջ եղողները սրով պիտի
իյնան, և գաշտին երեսը եղողները գա-
զաններուն կերակուր ըլլալու պիտի
տամ, և բերդերուն և քարայրներուն
մէջ եղողները ժանտախտով պիտի
28 մեռնին. Եւ երկիրը բոլորովին ամայի
պիտի ընեմ, և անոր զօրութեան հը-
պարտութիւնը պիտի կոտրուի. Իսրա-
յէլի լեռներն ալ ամայի պիտի ըլլան,
և ոեւէնց անցնող պիտի չըլլայ։
29 Եւ երբ երկիրը բոլորովին ամայի ընեմ
անոնց բոլոր գարշութիւններուն հա-
մար, պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։
30 Եւ դուն, որդի մարդոյ, քու ժողո-
վուրդիդ որդիքը պատերուն քով և
տուներուն դուռներուն քով կը
խօսին, և իրարու, իւրաքանչիւրը իր
եղբօրը կը խօսի և կ'ըսէ, Հիմա եկէք
և լսեցէք թէ ինչ է Տէրոջմէ ելած խօս-
31 քը։ Անոնք ժողովրդեան գալուն պէս
քեզի կու գան, և քու առջեւդ իմ ժո-
ղովուրդիս պէս կը նստին, և քու խօս-
քերդ կը լսեն, բայց զանոնք չեն ըներ.
վասն զի անոնք իրենց բերնով հաճո-
թիւն կը ձևացնեն, բայց անոնց սիր-
տերն իրենց ագահութեան ետևէն կ'եր-
32 թան։ Եւ ահա դուն անոնց քաղցրա-
ձայն և հմուտ նուագածուի մը պէս ես
քովերնին կ'ըլլաս, որ քու խօսքերդ
կը լսեն, բայց զանոնք չեն գործ դնե-
33 ներ։ Սակայն երբ ասիկա ըլլայ, (ահա
պիտի ըլլայ,) անոնք պիտի գիտնան
թէ իրենց մէջ մարգարէ կար։

## ԳԼ. Լ.Գ.

1 Գարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ
2 ըսելով, Որդի մարդոյ, Իսրայէլի հո-
վիւներուն դէմ մարգարէութիւն ըրէ,
մարգարէութիւն ըրէ և անոնց ըսէ,
Տէր Եհովան այսպէս կ'ըսէ հովիւնե-
րուն. վա՛յ Իսրայէլի հովիւներուն որ
զիրենք կ'արածեն. հովիւները հօտն
3 արածելու չե՞ն. Դուք ճարպը կ'ու-
ձէք և բուրդը կը հագնիք և գերը կը
մորթէք, բայց հօտը չէք արածեր.
4 Տկարները չուժովցուցիք, և հիւանդ-
ները չբժշկեցիք, և կոտրածը չկաթ-
թեցիք, և մոլորածը չդարձուցիք, և
կորուածը չփնտռեցիք. այլ բռնու-
թեամբ և խստութեամբ անոնց վրայ
5 տիրեցիք։ Եւ անոնք հովիւ չունենա-
լուն համար ցրուեցան, և ցրուելով
դաշտի բոլոր գազաններուն կերակուր
6 եղան. իմ ոչխարներս ամէն լեռներու
վրայ և ամէն բարձր բլուրներու վրայ
մոլորեցան, և իմ ոչխարներս բոլոր
երկրի երեսին վրայ ցրուեցան, և խնդրող չկայ և փնտռող չկայ։
7 Ասոր համար, ով հովիւներ, Տէրոջը
8 խօսքը մարկ բրէք. Ես կենդանի եմ,
կ'ըսէ Տէր Եհովան, որովհետև հովիւ
չըլլալուն համար իմ հօտս յափշտա-
կուեցաւ, և իմ ոչխարներս դաշտի
բոլոր գազաններուն կերակուր եղան.
և իմ հովիւներս իմ ոչխարներս չխնդ-
տացին, և հովիւները զիրենք արա-
9 ծեցին և իմ հօտս չարածեցին. Անոր
համար, ով հովիւներ, Տէրոջը խօսքը
10 մարկ բրէք. Տէր Եհովան այսպէս կ'ըս-
սէ. Ահա ես հովիւներուն դէմ եմ, և
իմ ոչխարներս անոնց ձեռքէն պիտի
պահանջեմ, և զանոնք ոչխար արա-
ծելէ պիտի արգիլեմ. և հովիւներն
այլ ևս զիրենք պիտի չարածեն, և իմ
ոչխարներս անոնց բերնէն պիտի հա-
նեմ, որպէս զի այլ ևս անոնց կերա-
կուր չըլլան։
11 Ոչնոյն զի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ.
Ահա ես ինքնին իմ ոչխարներս պիտի
12 խնդրեմ և պիտի փնտռեմ. ինչպէս
որ հովիւը երբ իւր ցրուած ոչխարնե-
րուն մէջ կը գտնուի, իւր հօտը կը
փնտռէ, այնպէս ալ ես իմ ոչխարներս
պիտի փնտռեմ և պիտի ազատեմ զա-
նոնք ամէն տեղէ, ուր որ ամպի և
13 մառախուղ օրը ցրուեցան. Ես զանոնք
ժողովուրդներէն պիտի հանեմ, և զա-
նոնք երկիրներէն պիտի ժողվեմ, և
զանոնք իրենց երկիրը պիտի բերեմ,
և զանոնք Իսրայէլի լեռներուն վրայ,
ձորերու մէջ և երկրին ամէն բնակու-
14 լու տեղերը պիտի արածեմ. Զանոնք
պզեկ արօտի մէջ պիտի արածեմ, և
անոնց փարախն Իսրայէլի բարձր լեռ-
ներուն վրայ պիտի ըլլայ. հոն պզեկ
փարախի մէջ պիտի պառկին, և Իս-
րայէլի լեռներուն վրայ պարարտ ա-
15 րօտի մէջ պիտի արածին. Իմ ոչխար-
ները ես պիտի արածեմ և զանոնք ես
պիտի պառկեցնեմ, կ'ըսէ Տէր Եհո-
վան. Կորուածը պիտի փնտռեմ և
մոլորածը պիտի դարձնեմ, և կոտ-
րածը պիտի փաթթեմ և հիւանդը պի-
տի զօրացնեմ, բայց պարարտը և
զօրաւորը պիտի կորնչցնեմ. զանոնք
իրաւամբ պիտի պատժեմ։
17 Եւ դուք, ով իմ ոչխարներս, Տէր
Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա ես ոչխա-
րին և ոչխարին, խոյերուն և նոխազ-
ներուն միջեւ դատաստան պիտի ը-
18 նեմ. Միթէ ապէկ արօտի մէջ արա-
ծում քիչ բան է ձեզի, որ ձեր ա-
րօտներուն միացեալը ոտիք կը կո-
խէք. և մաքուր ջուրերը խմելը, որ
19 միացածները ոտիք կը պղտորէք. Եւ
իմ ոչխարներս ձեր ոտից կոխածը կը
ճարակին, և ձեր ոտքերէն պղտորա-
ծը կը խմեն։
20 Անոր համար Տէր Եհովան այսպէս
կ'ըսէ անոնց. Ահա ես ինքնին դատաս-
տան պիտի ընեմ պարարտ ոչխարին և
21 նիհար ոչխարին միջեւ. Որովհետև դուք
ուժ կողով և ուսով հրեցիք, և ձեր
եղջիւրներով բոլոր տկարները զարկիք,
մինչև որ դուրս ցրուեցիք զանոնք,
22 ես ալ իմ ոչխարներս պիտի ազատեմ,
և այլ ևս պիտի չյափշտակուին, և ոչ-
խարին և ոչխարին միջեւ դատաս-
23 տան պիտի ընեմ. Եւ անոնց վրայ Հով-
իւ մը, այսինքն իմ ծառայս Դաւիթ
պիտի կեցունեմ, որ զանոնք հովուէ.
անիկա պիտի հովուէ զանոնք, և անի-
24 կա պիտի ըլլայ անոնց հովիւ։ Եւ ես
Տէրս անոնց Աստուած պիտի ըլլամ,
և իմ ծառայս Դաւիթ անոնց մէջ իշ-
խան պիտի ըլլայ. ես Տէրս խօսեցայ։
25 Եւ անոնց հետ խաղաղութեան ուխտ
պիտի ընեմ, և այն երկրին չար գա-
զաններն բնաջինջ պիտի ընեմ. և ա-
նապատին մէջ ապահովութեամբ պիտի
բնակին, և անտառներուն մէջ պիտի
26 քնանան. Եւ զանոնք և իմ լեռանս
շրջակայ տեղերն օրհնութեամբ պիտի
կեցունեմ, և անձրևները իրենց ժա-
մանակին պիտի իջեցնեմ. անոնք
օրհնութեան անձրևներ պիտի ըլլան։
27 Եւ դաշտի ծառերն իրենց պտուղը
պիտի տան, և երկիրը իւր բերքը պիտի
տայ, և անոնք իրենց երկրին վրայ ա-
պահովութեամբ պիտի բնակին, և երբ

անոնց լուծքին կապերը կտորեմ, և զանոնք իրենց ժառանգութեանդ ձեռքէն ազատեմ, պիտի գիտանան Թէ
28 Ես եմ Տէրը։ Ու անոնք այլ ևս ազգերէն պիտի չյափշտակուին, և երկրին գազանները զանոնք պիտի չուտեն. այլ ապահովութեամբ պիտի բնակին,
29 և վախցուցնող մը պիտի չըլլայ։ Ես անոնց անուանի տունկ մը պիտի բազմացնեմ, և այլ ևս երկրին վրայ սովով պիտի չսպառին, և այլ ևս ազգերէն նախատինք պիտի չկրեն։
30 Ու պիտի գիտնան Թէ ես անոնց Տէր Աստուածն անոնց հետ եմ, և անոնք իսրայէլի տունը իմ ժողովրդիս են, կ'ըսէ Տէր Եհովան։
31 Ու դուք իմ ոչխարներս, իմ արօտիս ոչխարները, մարդիկ եք, և ես ձեր Աստուածն եմ, կ'ըսէ Տէր Եհովան։

## Գլ. Լե

1 Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ
2 ըսելով, Որդի մարդոյ, երեսդ Սէիր լեռան վրայ դարձուր և անոր դէմ
3 մարգարէութիւն ըրէ, և անոր ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ, Ահա ես քեզի դէմ եմ, ով Սէիր լեռ, և իմ ձեռքս քու վրադ պիտի երկնցնեմ, և քեզ բոլորովին ամայի պիտի ընեմ։
4 Քու քաղաքներդ աւերակ պիտի ըլլան, և դուն ամայի պիտի ըլլաս և պիտի գիտնաս Թէ ես եմ Տէրը։
5 Որովհետև դուն հինաւուրց ատելութիւն ունեցար, և իսրայէլի որդիքն անոնց պատուհասին ժամանակը, անօրէնութեան ժամանակը լրանալուն,
6 որով ձեռքը մատնեցիր, Անոր համար ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովան, որ զքեզ արեան մէջ պիտի դնեմ, և արիւնն զքեզ պիտի հալածէ. դուն արիւնը չատելուդ համար արիւնն զքեզ պիտի հալածէ։ Ու Սէիր լեռը բոլորովին ամայի պիտի ընեմ, և անկէ անցողը ետ պիտի կարեմ։ Ու անոր լեռները անոր սպանուածներով պիտի լեցնեմ. քու բլուրներուդ վրաս, քու հովիտներուդ մէջ և բոլոր ձորերուդ մէջ սրով սպանուածներ
9 պիտի իյնան։ Զքեզ մշտնջենաւոր ամայութիւն պիտի ընեմ, և քու քաղաքներդ այլևս պիտի չբնակուին, և պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը։
10 Որովհետև դուն ըսիր Թէ Այս երկու ազգը և այս երկիրը իմս պիտի ըլլան, և անոնց պիտի տիրենք. (և Տէրը հոն էր։)
11 Անոր համար, ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովան, որ քու Թշնամութեանդդ անոնց դէմ ի գործ դրած բարկութեանդ և նախանձոտ սիրովդ հատուցում պիտի ընեմ, և քու դատաստանդ տեսած ատենս
12 անոնց մէջ պիտի ճանչցուիմ։ Ու պիտի գիտնաս Թէ ես Տէրս լսեցի քու բոլոր հայհոյութիւններդ որ Իսրայէլի լեռներուն դէմ խօսեցար ըսելով, Անապատ աւերակ եղան, անոնք մեզի կերակուր տրուեցան։ Ես ձեր բերնով ինծի դէմ հպարտացաք, և ձեր խօսքերն ինծի դէմ շատցուցիք, և ես լսեցի։
14 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Բոլոր երկրին ուրախութեան ատենն զքեզ
15 ամայի պիտի ընեմ։ Ինչպէս որ դուն Իսրայէլի տան ժառանգութեան վրայ ուրախացար որ ամայի եղաւ, ես զքեզ այնպէս պիտի ընեմ. դուն, ով Սէիր լեռ և բոլոր Եդովմ, բոլորովին ամայի պիտի ըլլան։ Ու պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը։

## Գլ. Լզ

1 Ես դուն, որդի մարդոյ, Իսրայէլի լեռներուն մարգարէութիւն ըրէ և ըսէ, Ով Իսրայէլի լեռներ, Տէրոջը խօսքը
2 մտիկ ըրէք։ Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Որովհետև Թշնամին ձեզի համար ըսաւ, վա՛շ, յաւիտենական բլուրներն
3 ալ մեզի ժառանգութիւն եղան, Անոր համար մարգարէութիւն ըրէ և ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Որովհետև

*Պահ չնորհուի։



զձեզ աւերեցին և ամէն կողմէ կլեցին, այնպէս որ մնացած ազգերուն ժառանգութիւն ըլլաք, և դուք լեզուաներ խօսաք և ժողովրդեան նախատինք եղաք. Անոր համար, ով խորտակեալ լեռներ, Տէր Եհովային խօսքը մտիկ ըրէք. Տէր Եհովան այսպէս կ'ըսէ լեռներուն և բլուրներուն, ձորերուն և հովիտներուն, և ամայի հնած աւերակներուն և ոչրջած թողուած քաղաքներուն որ չղխակաց ազգերուն մնացորդին յափշտակութիւն և նախատինք եղած են, Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Մնացած ազգերուն համար և բոլոր Եդովմի համար անշուշտ իմ նախանձու կրակով խօսած եմ, գան զի անձնք բոլոր սրտի ուրախութեամբ և հոգւոյ հպարտութեամբ իմ երկիրս իրենց ժառանգութիւն ըլլալու որոշեցին, որ զանիկա աւարի պէս յափշտակին։
6 Անոր համար Իսրայէլի երկրին վրայ մարգարէութիւն ըրէ, և լեռներուն և բլուրներուն, ձորերուն և հովիտներուն ըսէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա ես քու ազգերուն նախատինք կրեցիդ համար ատ եմ իմ նախանձուս և իմ բարկութեանս խօսեցայ. Անոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ես իմ ձեռքս վերցուցի որ ձեր բոլորտիքը եղող ազգերն իրենց անարգանքն իրենք
8 պիտի կրեն. Բայց դուք, ով Իսրայէլի լեռներ, ձեր ոստերը պիտի երկնցնէք, և իմ ժողովրդիս Իսրայէլի հասմար ձեր պտուղները պիտի բերէք, վասն զի անոնք մօտեցաւ պիտի գան։
9 Քանզի ահա ես ձեր կողմն եմ և ձեզի պիտի դառնամ, և դուք պիտի
10 հերկուիք և սերմանուիք. Ես ձեր վրայ մարդիկ, բոլոր Իսրայէլի տունը, ամենքը պիտի բազմացնեմ. և քաղաքները պիտի բնակուին և աւերակները պիտի շինուին. Ես ձեր վրայ մարդ և անասուն պիտի բազմացնեմ, և անոնք պիտի բազմանան և պտղաբեր պիտի ըլլան. և ձեզ առաջի կացութեան պէս զձեզ պիտի բնակեցնեմ, և ձեր սկզբնականէն աւելի ձեզի պիտի ընեմ, այնպէս որ միացած պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը։
12 Նաև Թէ ես եմ Տէրը։ Ես ձեր վրայ մարդիկ, իմ ժողովուրդս Իսրայէլ պիտի պատցունեմ, և անոնք զքեզ պիտի ժառանգեն, և դուն անոնց ժառանգութիւն պիտի ըլլաս, և այլ ևս զանոնք պիտի չպատահիս։
13 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Որովհետև ձեզի համար կ'ըսեն Թէ դուն մարդակեր էիր և քու ազգերդ պատնէշ եղեր. Անոր համար այլ ևս մարդ պիտի չուտես, և այլ ևս քու ազգերդ
15 պիտի չպատահես, կ'ըսէ Տէր Եհովան։ Ու քու վրադ այլ ևս ազգերուն նախատինքը լսել պիտի չտամ, և այլ ևս ժողովուրդներուն անարգանքը պիտի չկրես, և քու ազգերդ այլ ևս պիտի չպատահես, կ'ըսէ Տէր Եհովան։
16 Ես Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսելով,
17 Որդի մարդոյ, Իսրայէլի տունը իրենց երկրին մէջ բնակեցան, և զայն իրենց ճամբով և գործերով պղծեցին. անոնց ճամբան իմ առջևս պատանաւոր կինոջ անմաքրութեան պէս եղաւ։
18 Ուստի իմ բարկութիւնս անոնց վրայ թափեցի այն արիւնան համար որ երկնք թափեցին երկրին վրայ, և զանիկա իրենց կուռքերով պղծեցին. Ես զանոնք ազգերուն մէջ ցրուեցի, և երկիրներուն մէջ ցիրուցան եղան. զանոնք իրենց ճամբան և գործերուն համեմատ
20 դատեցի. Ես այն ազգերուն մէջ ուր գացին՝ անուրջ անունս խարդախ պղծեցին, երբ իրենց համար բսացան Թէ Ատոնք Եհովային ժողովուրդն են, և անոր երկրէն ելան։ Սակայն ես խնայեցի իմ սուրբ անուանս համար, զոր Իսրայէլի տունը պղծեցին այն ազգերուն մէջ ուր գնան։
22 Անոր համար Իսրայէլի տան ըսէ Թէ Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ոչ Թէ ձեզի համար կ'ընեմ դա, ով Իսրայէլի տուն, այլ իմ սուրբ անուանս համար զոր դուք պղծեցիք այն ազգերուն մէջ

*Եբր. անզատական պիտի չըլնաս։

23 ուր մտաք, եւ աւերք պիտի ընեմ իմ
մէջ անուանս, որ ապստերուն մէջ պըղ-
ծուեցաւ, զոր գուք անոնց մէջ պըղ-
ծեցիք. եւ ազգերը պիտի գիտանան Թէ
ես եմ Տէրը, կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱՆ, երբ
անոնց աչաց առջեւ ձեր մէջ սրբուիմ։
24 Եւ ձեզ ազգերէն պիտի առնեմ եւ բո-
լոր երկիրներէ դարձ պիտի ժողվեմ,
25 եւ զձեզ ձեր երկիրը պիտի բերեմ, եւ
ձեր վրայ մաքուր ջուր պիտի սրսկեմ,
եւ պիտի մաքրուիք. ձեր բոլոր պըղ-
ծութիւններէն եւ ձեր բոլոր կուռ-
26 րէն զձեզ պիտի մաքրեմ. Եւ ձեզի նոր
սիրտ պիտի տամ, եւ ձեր ներսը դին
նոր հոգի պիտի դնեմ, եւ ձեր մար-
միններէն քարեղէն սիրտը պիտի հա-
նեմ, եւ ձեզի մարմնեղէն սիրտ պիտի
27 տամ. Եւ իմ Հոգիս ձեր ներսը դնեմ
պիտի դնեմ, եւ ձեզի իմ օրինացս մէջ
քալել պիտի տամ, եւ իմ իրաւունքս
28 պիտի պահէք եւ ի գործ դնէք. Եւ
ձեր հայրերուն տուած երկրիս մէջ պի-
տի բնակիք, եւ դուք ինծի ժողովուրդ
պիտի ըլլաք, ես ալ ձեզի Աստուած
29 պիտի ըլլամ. Ես ձեր բոլոր պղծու-
թիւններէն զձեզ պիտի ազատեմ, եւ
ցորենը պիտի կանչեմ եւ զայն պիտի
բազմացուցանեմ, եւ ձեր վրայ սով պիտի
30 չբերեմ. Ես ծառերուն պտուղը եւ ար-
տերուն բերքը պիտի բազմացուցնեմ,
որպէս զի այլեւս ազգերուն մէջ սովոյ
31 նախատինք չկրէք. Եւ ձեր զէշ ճամ-
բաներնիդ եւ անբարի գործերնիդ պիտի յի-
շէք, եւ ձեր անօրէնութեանց համար
եւ ձեր պղծութեանց համար դուք ձեր
32 անձերնիդ պիտի գզուէք. Ոչ Թէ ձեզի
համար կ'ընեմ ես, կ'ըսէ Տէր ԵՀՈ-
ՎԱՆ, ձեզի յայտնի ըլլայ. ձեր ճամա-
ներնէն ամչցէք եւ պատկառեցէք, ով
Իսրայէլի տունը։
33 Տէր ԵՀՈՎԱՆ այսպէս կ'ըսէ. Այն օրը
որ ձեր բոլոր անօրէնութիւններէն զձեզ
մաքրեմ, քաղաքները մարդաբնակ
պիտի ընեմ, եւ աւերակները պիտի
34 չինուին։ Եւ այն ամայացած երկիրն
ամէն անցնողին աչաց առջեւ փոխանակ
35 ամայի ըլլալու՝ պիտի մշակուի։ Եւ պի-

36 տի ըսեն, Այս ամայացած երկիրը ե-
դեմի դրախտին պէս եղաւ. եւ աւե-
րակ, ամայի եւ փլած քաղաքները պա-
րսպաւոր եւ մարդաբնակ եղան։ Եւ
ձեր բոլորտիքը մնացած ազգերը պի-
տի գիտանան Թէ ես Տէրս փլածները կը
շինեմ, եւ ամայացած երկիրը կը տնկեմ.
Ես Տէրս խօսեցայ եւ պիտի կատարեմ։
37 Տէր ԵՀՈՎԱՆ այսպէս կ'ըսէ. Իսրայէլի
տունը խնդրած պիտի ըլլամ ինծի համար
որ անոնց այսինքն ընեմ. անոնց
մարդիկը ոչխարի պէս պիտի բազմացու-
38 նեմ։ Սուրբ հօտին պէս, Երուսաղէմի
հաներքեւի ժողովուրդն հօտին պէս, ա-
րօթած քաղաքները մարդոց հօտերով
այնպէս լեցուն պիտի ըլլան. Եւ պիտի
գիտանան Թէ ես եմ Տէրը։

## ԳԼ. Լ.

1 Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ, եւ †Տէ-
րը զիս Հոգւով հանեց եւ զիս դաշտին
մէջ դրաւ, եւ անիկա լի էր ոսկերօք.
2 Եւ զիս անոնց քովերէն պատուց չուր-
ջանակի, եւ ահա անոնք դաշտին երե-
սին վրայ խիստ շատ էին, եւ ահա ա-
նոնք խիստ չորցած էին։
3 Եւ ինծի ըսաւ, Որդի մարդոյ, այս
ոսկրները կրնա՞ն կենդանանալ. Եւ ըսի,
Ով Տէր ԵՀՈՎԱ, դուն գիտես։ Եւ ինծի
ըսաւ, Այս ոսկրներուն վրայ մարգա-
րէութիւն ըրէ եւ անոնց ըսէ, Ով չոր-
ցած ոսկրներ, Տէրոջը խօսքը մտիկ ը-
5 րէք. Այսպէս կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱՆ այս
ոսկրներուն. Ահա ես ձեր մէջ հոգի
պիտի դնեմ, եւ պիտի կենդանանաք.
6 Ես ձեր վրայ ջիղեր պիտի դնեմ, եւ
զձեզ միսով պիտի պատեմ, եւ զձեզ
մորթով պիտի ծածկեմ, եւ ձեր մէջ
շունչ պիտի դնեմ, եւ պիտի կենդա-
նանաք. եւ պիտի գիտնաք Թէ ես եմ
Տէրը։
7 Ես ես մարգարէութիւն ըրի ինչպէս
որ ինծի հրամայուեցաւ. եւ մարգարէ-

*ԵԲՐ. առնէն՝ ալ պիտի փիւռուիմ,
†Կամ՝ Տէրոջը Հոգւով զիս



ութիւն ըրածիս պէս ձայն մը եղաւ.
եւ ահա շարժում մը եղաւ, եւ ոսկր-
ները էրաս մտանան, ոսկր իր սո-
8 կրոյ. Ես անոյշ որ ահա անոնք ջի-
ղերով եւ միսով պատեցան, եւ մորթն
մարթով ծածկուեցան, բայց անոնց
9 մէջ շունչ չկար. Անասին ինծի ըսաւ,
Շունչին մարգարէութիւն ըրէ, մար-
գարէութիւն ըրէ, որդի մարդոյ, եւ
շունչին ըսէ, Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ'ը-
սէ. Ով շունչ, չորս հովերէն եկուր, եւ
այս սպանուածներուն վրայ փըչէ որ
10 կենդանանան. Ես ես մարգարէութիւն
ըրի ինչպէս որ ինծի հրամայեց, եւ
շունչն անոնց մէջ մտաւ, և կենդանա-
ցան եւ իրենց ոտից վրայ կանգնեցան,
Ե շատ մեծ զօրք եղաւ։
11 Եւ ինծի ըսաւ, Որդի մարդոյ, այս
ոսկրները բոլոր Իսրայէլի տունն է. ահա
անոնք կ'ըսեն, Մեր ոսկրները չորցան և
մեր յոյսը կորսուեցաւ. մենք կորսուած
12 ենք. Վասն զորոյ մարգարէութիւն ըրէ
և անոնց ըսէ, Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ'ը-
սէ. Ահա ես ձեր գերեզմանները պիտի
բանամ, և ձեր գերեզմաններէն զձեզ
պիտի հանեմ, ով իմ ժողովուրդս, և
զձեզ Իսրայէլի երկիրը պիտի բերեմ.
13 Եւ երբ ձեր գերեզմանները բանամ,
և զձեզ ձեր գերեզմաններէն հանեմ,
ով իմ ժողովուրդս, պիտի գիտնաք
14 Թէ ես եմ Տէրը. Եւ իմ Հոգիս ձեր
ներսը պիտի դնեմ, և պիտի կեն-
դանանաք. և ձեր երկիրն մէջ զձեզ
պիտի հանգուցանեմ, և պիտի գիտնաք
*Թէ ես Տէրս խօսեցայ և ըրի, կ'ըսէ
Տէրը։
15 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ ըսե-
16 լով, Եւ դուն, որդի մարդոյ, քեզի
փայտ մը առ և անոր վրայ գրէ, Յու-
դայի համար և անոր ընկերներուն Ի-
սրայէլի որդւոց համար, եւթը ուրիշ
փայտ մը առ և անոր վրայ գրէ, Յով-
սեփայ համար, Եփրեմի և անոր ընկեր-
17 ներուն բոլոր Իսրայէլի տան փայտը. Եւ

*Կամ՝ Թէ ես եմ Տէրը. ես խօսեցայ,
և պիտի կատարեմ։

18 զանոնք իրարու մօտեցուր, որ մէկ
փայտ ըլլան և քու ձեռքիդ մէջ միա-
նան։ Եւ երբ քու ժողովուրդիդ որ-
դիքը քեզի խօսին և ըսեն, Ի՞նչ պիտի
ըլլայ քեզի այս բաներէդ. մեզի չե՞ս
19 պատմեր. Անոնց ըսէ, Տէր ԵՀՈՎԱՆ այս-
պէս կ'ըսէ. Ահա ես պիտի առնեմ Յով-
սեփայ փայտը որ Եփրեմի ձեռքն է, և
անոր ընկերներուն Իսրայէլի ցեղերը, և
զանոնք անոր հետ իմ փայտին Յուդայի
մէկ փայտ պիտի դնեմ, և զանոնք
մէկ փայտ պիտի ընեմ. և իմ ձեռքս
20 մէջ մէկ պիտի ըլլան. Եւ այն փայտե-
րը որոնց վրայ դուն պիտի գրես, ա-
նոնց աչաց առջեւ քու ձեռքիդ մէջ ըլ-
21 լան. Եւ անոնց ըսէ, Տէր ԵՀՈՎԱՆ այս-
պէս կ'ըսէ. Ահա ես Իսրայէլի որդիքը
պիտի առնեմ այն ազգերուն մէջէն
ուր գացին, և զանոնք ամէն կողմէ
պիտի ժողվեմ, և զանոնք իրենց եր-
22 կիրը պիտի բերեմ. Եւ զանոնք երկրին
մէջ Իսրայէլի լեռներուն վրայ մէկ ազգ
պիտի ընեմ, և անոնց ամենուն վրայ
մէկ թագաւոր պիտի թագաւորէ. և
այլ ես երկու ազգ պիտի չըլլան, և
այլ ես երկու թագաւորութեան պիտի
23 չբաժնուին. Եւ այլ ես իրենց կուռ-
քերով և գարշութիւններով և իրենց
բոլոր յանցանօք պիտի չպղծուին. և
ես զանոնք պիտի ազատեմ իրենց բո-
լոր բնակութիւններէն որով մէջ ա-
նոնք մեզ գործեցին, և զանոնք պի-
տի սրբեմ. և անոնք ինծի ժողովուրդ
պիտի ըլլան, և ես անոնց Աստուած
24 պիտի ըլլամ. Եւ անոնց վրայ իմ ծա-
ռայս Դաւիթ թագաւոր պիտի ըլլայ, և
ամենքը մէկ հովիւ պիտի ունենան. և
իմ իրաւունքս մէջ պիտի քալեն, և իմ
օրէնքս պիտի պահեն և զանոնք պիտի
25 կատարեն. Եւ պիտի բնակին այն եր-
կրին վրայ զոր իմ Յակոբ ծառայիս
տուի, որուն մէջ ձեր հայրերը բնակե-
ցան. և անոր վրայ իրենք և իրենց որ-
դիքը և իրենց որդւոց որդիքը յա-
ւիտեան պիտի բնակին. և իմ ծառայս
Դաւիթ յաւիտեան անոնց իշխան պի-
26 տի ըլլայ. Եւ անոնց հետ խաղաղու-

թեան ուխտ պիտի ընեմ, անոնց ա-
նոնց յաւիտենական ուխտ պիտի ըլ-
լայ. և զանոնք պիտի սեզաւորեմ
և պիտի բազմացուցնեմ, և իմ սրբ-
րարանս անոնց մէջ պիտի դնեմ յա-
27 ւիտեան։ Եւ իմ խորանս անոնց քով
պիտի ըլլայ. և ես անոնց Աստուած
պիտի ըլլամ, և անոնք ինծի ժողո-
28 վուրդ պիտի ըլլան։ Եւ իմ սրբարանս
յաւիտեան անոնց մէջ ըլլալով, ազգե-
րը պիտի գիտնան թէ ես եմ Տէրը որ
զիսրասիել կը սրբեմ։

## Գլ. Լը

1 Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ
2 ըսելով, Որդի մարդոյ, երեսդ Մագո-
գի երկիրը եղող Ռոսխի, Մոսոքի և
Թոբելի իշխանին գոգի դարձուր, և
3 անոր վրայ մարգարէութիւն ըրէ, և ը-
սէ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա
ես քեզի դէմ եմ, ով Գոգ, Ռոսխի,
4 Մոսոքի և Թոբելի իշխան։ Ես զքեզ
պիտի դարձնեմ, և քու կզակներուդ
կարթերը պիտի անցնեմ, և զքեզ և
քու բոլոր զօրքդ պիտի հանեմ, ձիե-
րը և ձիաւորները, ամէնքն ալ կատա-
րեալ սպառազէն. և մանաւանդ մեծ ժո-
5 ղովուրդ, ամէնքն ալ սուր բռնող։ Ա-
նոնց հետ Պարսիկները, Եթովպացինե-
րը և Փութացիները, ամէնքն ալ ասպա-
6 րատար և սաղաւարտաւոր։ Նաև
Գոմերը և անոր բոլոր գունդերը, Թոր-
գոմայի տունը հիւսիսի ծայրերէն, և
անոր բոլոր գունդերը, շատ ժողո-
7 վուրդներ քեզի հետ ալեկոծ հանէ։
Պատրաստ եղիր, և զքեզ և քու
բովդ ժողոված բոլոր ժողովներդ
պատրաստէ, և դուն անոնց պահա-
8 պան եղիր։ Շատ օրերէն ետքը *քու
գործդ պիտի հասկնաս։ Ետքի տարի-
ները պիտի գաս այն երկիրն վրայ որ
սուրէն ազատուած է, և այն ժողովր-
դեան վրայ որ շատ ազգերէ ժողովուած

*Եբր. պիտի հասկնաս։

է Իսրայէլի լեռներուն վրայ որ մշտըն-
ջենաւոր աւերակ եղեր. բայց անկից
ազգերէն եղած բլլալով, ամէնքը ա-
9 պահովութեամբ պիտի բնակին։ Իակ
դուն մրրկի պէս պիտի ելլես գաս,
և երկիրը ծածկելու համար ամպի
պէս պիտի ըլլաս, դուն և քու բոլոր
գունդերդ և շատ ժողովուրդներ քեզի
հետ։

10 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Այն օ-
րը պիտի ըլլայ որ քու միտքդ բաներ
11 պիտի գան, և չար խորհուրդ մը պիտի
մտածես։ Եւ պիտի ըսես, Անպարիսպ
գեղերուն երկիրը ելլեմ, հանգստեան
մէջ եղողներուն, ապահովութեամբ բը-
նակողներուն վրայ երթեմ. անոնց ա-
մէնքն անպարիսպ պեղծուած կը բը-
12 նակին, և նիգեր և գուներ չու-
նին։ Որ աւար յափշտակես և կոզո-
պատ կողոպտես, և քու ձեռքդ բը-
նակուած աւերակներուն վրայ, և ազ-
գերէն ժողովուած և խաշինք և ապ-
րանք առացած և երկրին բարձր տե-
դուանքը բնակած ժողովրդեան վը-
13 րայ դարձունես։ Սաբա և Դեդան և
Թարսի վաճառականները և անոր
բոլոր առտիւ ապէ ծնողը քեզի պիտի
ըսեն, Մի՞թէ աւար յափշտակելու ե-
կար։ կոզոպատ կողոպտելու համար
քու ժողովդ ժողվեցիր, որ արծաթ
և ոսկի վերցունես, խաշինք և ապ-
րանք առնուս, մեծ աւար յափշտա-
կես։

14 Անոր համար մարգարէութիւն ըրէ,
որդի մարդոյ, և ըսէ Գոգի, Տէր Եհո-
վան այսպէս կ'ըսէ. Այն օրը որ իմ
ժողովուրդս Իսրայէլ ապահովութեամբ
15 բնակի, անա դուն պիտի գիտնաս, Եւ
քու տեղէդ, հիւսիսի ծայրերէն պիտի
գաս, դուն և քեզի հետ շատ ժողո-
վուրդներ, ամէնքը ձիեր հեծած, մեծ
16 բազմութեամբ և շատ զօրքով։ Եւ իմ
ժողովուրդիս Իսրայէլի վրայ ամպի պէս
երկիրը ծածկելու պիտի ելլես. ՚ետ-
նաքի օրերը պիտի ըլլայ, և զքեզ իմ
երկրիս վրայ պիտի բերեմ, որպէս զի
ազգերը զիս ճանչնան երբ ես անոնց



աչաց առջեւ քու վրադ *փառաւո-
րուիմ, ով Գոգ։
17 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Դուն ա-
նիկա՞ ես, որու համար առաջի օրե-
րուն, այն օրերը Ի ատրիները մարգա-
րէութիւն ընող Իսրայէլի մարգարէնե-
րուն իմ ծառաներուս միջոցով ըսի
թէ զքեզ անոնց վրայ պիտի բերեմ,
18 Եւ այն օրը, Գոգի Իսրայէլի երկրին
վրայ եկած օրը, կ'ըսէ Տէր Եհովան,
իմ սրամտութիւնս երեսաբաժակ ելլէ։
19 Եւ իմ նախանձուս, իմ բարկութեանս
կրակով խօսեցայ, որ անշուշտ անշուշտ
Իսրայէլի երկրին վրայ մեծ խռովու-
20 թիւն պիտի ըլլայ։ Եւ ծովու ձուկերը
և երկինքի թռչունները և դաշտի գա-
զանները և գետնի վրայ սողացող բո-
լոր սողուններն և երկրի երեսին վրայ
եղող բոլոր մարդիկ իմ երեսէս պիտի
դողան, և լեռները պիտի փլչին, և
գահավէժ ժայռերը պիտի իյնան, և
բոլոր պարիսպները գետին պիտի կո-
21 ծան։ Նաև ես անոր դէմ իմ բոլոր լեռնե-
րուս վրայ սուր պիտի կանչեմ, կ'ըսէ
Տէր Եհովան. մարդուն սուրը իր եղ-
22 բօրը վրայ պիտի ըլլայ։ Եւ անոր հետ
ժանտախտով և արիւնով պիտի վիճիմ,
և անոր վրայ և անոր զօրաց գունդե-
րուն վրայ և անոր հետ եղող շատ ժո-
ղովուրդոց վրայ յորդահոս անձրեւ և
կարկտոյ քարեր, կրակ և ծծումբ պի-
23 տի տեղամ։ Եւ շատ ազգերու առջեւ
պիտի փառաւորուիմ և սրբուիմ և
ճանչցուիմ, և պիտի գիտնան թէ ես
եմ Տէրը։

## Գլ. Լթ

1 Եւ դուն, որդի մարդոյ, Գոգի վրայ
մարգարէութիւն ըրէ և ըսէ, Տէր Ե-
հովան այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի
դէմ եմ, ով Գոգ, Ռոսխի, Մոսոքի և
2 Թոբելի իշխան. Եւ ես զքեզ պիտի
դարձունեմ, զքեզ պիտի առնեմ և

*Եբր. արբուիմ,
Կամ բարկութեանիս

հիւսիսի ծայրերէն գլեզ պիտի հանեմ,
և զքեզ Իսրայէլի լեռներուն վրայ պի-
3 տի բերեմ։ Եւ քու ոտիդ քու ձախ
ձեռքդ վար պիտի ձգեմ, և քու նե-
տերդ ալ ձեռքդ վար պիտի ձգեմ։
4 Դուն քու բոլոր գունդերովդ և քու
հետդ եղող ժողովուրդներով Իսրայէ-
լի լեռներուն վրայ պիտի իյնաս. զքեզ
ամէն տեսակ թռչուն ուտեցող գիշատիչ
թռչնոց և դաշտի գազաններուն կերա-
5 կուր պիտի տամ. Դաշտի երեսին վը-
րայ պիտի իյնաս, վասն զի ես խօսե-
6 ցայ, կ'ըսէ Տէր Եհովան։ Եւ Մագոգի
վրայ և կղզիներուն մէջ ապահովու-
թեամբ բնակողներուն վրայ կրակ պի-
տի ղրկեմ, և պիտի գիտնան թէ ես
7 եմ Տէրը։ Եւ իմ սուրբ անունս իմ
ժողովուրդիս Իսրայէլի մէջ պիտի ծանուց-
նեմ, և պիտի չթողում որ այլ եւս
իմ սուրբ անունս պղծուի. և ազգերը
պիտի գիտնան թէ ես եմ Տէրը, Իսրա-
8 էլի մէջ եղող Սուրբը։ Ահա կու
գայ, և պիտի կատարուի, կ'ըսէ Տէր
9 Եհովան. օրը որը խօսեցայ։ Եւ Իսրա-
էլի քաղաքներուն բնակիչները պիտի
ելլեն, և կրակ պիտի վառեն, և
զէնքերը պիտի այրեն. և մանրանե-
րով, վահաններով, ազեղներով, նե-
տերով, բիրերով և նիզակներով եօ-
10 թը տարի կրակ պիտի վառեն։ Եւ դաշ-
տէն փայտ պիտի չբերեն, և ոչ ան-
տառներէն պիտի կտրեն, այլ զէնքե-
րով կրակ պիտի վառեն. և զիրենք
թալանողները պիտի թալնեն, և զիրենք
կողոպտողները պիտի կողոպտեն, կ'ը-
սէ Տէր Եհովան։
11 Եւ պիտի ըլլայ որ այն օրը հոն Իս-
րայէլի մէջ Գոգի գերեզմանի տեղ պի-
տի տամ անցաւորաց ձորը, ծովուն ա-
րեւելեան կողմին. և անիկա անցաւոր-
ները պիտի արգիլէ, և հոն պիտի Գոգ և
անոր բոլոր բազմութիւնը պիտի թա-
ղեն, և անիկա Գոգի բազմութեան ձո-
12 րը պիտի կոչեն։ Եւ Իսրայէլի տունը
երկիրը մաքրելու համար եօթն ամիս
13 զանոնք պիտի թաղեն։ Եւ երկրին բո-
լոր ժողովուրդը պիտի թաղեն.

և սեպհական անունց անուն մը պիտի ըլլայ այն օրը որ կա վաճառուրեամ,
14 կ'ըսէ Տէր Եհովան։ Եւ մարդիկ պիտի որուչին որ չարուհնակ երկրին մէջ պըտրեն, և անցնողներուն հետ երկրի երեսին վրայ Յիսացածները թաղեն, որպէս զի մաքրեն զայն։ անոնք եօթն ամիս հատը պիտի փնտռեն։ Եւ երկրին մէջէն անցնողները երբ անցնին և մարդ. ոսկր տեսնեն, քովը նշան մը պիտի կանգնեն մինչև որ թաղողները զայն Գոգի բազմութեան ձորը թաղեն։
16 Եւ քաղաքին անունը "Համոնա պիտի ըլլայ։ այսպէս երկիրը պիտի մաքրեն։
17 Եւ դուն, որդի մարդոյ, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ամէն տեսակ թռչուոց և դաշտի բոլոր գազաններուն ըսէ, ժողովեցէք և եկէք. իմ ձեզի համար զոհած զոհիս, խոշոր լեռներուն վրայ Իսրայէլի մեծ զոհին ամէն կողմէն մօտեցէք, որ միս ուտէք և արիւն խմէք։
18 Զօրաւորներուն միս ուտէք, և երկրի իշխաններուն արիւնը խմէք, խոյերու, գառներու, նոխազներու և զուարակներու որոնց ամէնքը Բասանի գէր անասուններ են։
19 Եւ ձեզի համար զոհած զոհիս ճարպ ուտէք մինչև կշտանաք և
20 արիւն խմէք մինչև գինովնաք։ Եւ իմ սեղանիս վրայ ձիերէն և փառքի ՚նասուններէն," զօրաւորներէն և ամէն պատերազմող մարդէն կշտանաք, կ'ըսէ
21 տէր Տէր Եհովան։ Եւ ազգերուն մէջ իմ փառքս պիտի դնեմ, և ամէն ազգ իմ բրած գատաստաններս և անոնց
22 վրայ դրած ձեռքս պիտի տեսնէ։ Եւ Իսրայէլի տունն այն օրէն յետքը պիտի գիտնան թէ իրենց Տէր Աստուածը ես
23 եմ։ Եւ ազգերը պիտի գիտնան թէ Իսրայէլի տունը իր անօրէնութեան համար, ինծի ապստամբ ըլլալուն համար գերի եղաւ, և ես իմ երեսս անոնցմէ ծածկեցի, և զանոնք իրենց թշնամեաց ձեռքը տուի, և ամէնքը
24 սրով ինկան։ Իրենց պղծութեան համեմատ և իրենց յանցանաց համեմատ իրենց հասուցած ըրի, և իմ երեսս անոնցմէ ծածկեցի։
25 Ասոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Հիմա Յակոբայ գերութիւնը պիտի դարձնեմ, և բոլոր Իսրայէլի տան պիտի ողորմիմ, և իմ սուրբ անունիս համար նախանձաւոր ՚պիտի
26 ըլլամ։ Եւ երբ անոնք իրենց երկրին մէջ ապահովութեամբ բնակին, և վախցնող չըլլայ, անոնք իրենց անարգանքը և իրենց ինծի դէմ բրած բոլոր յանցանքը պիտի կրեն," երբ
27 անոնք ժողովուրդներէն դարձուցած եմ և զանոնք իրենց թշնամեաց երկիրներէն ժողվեմ, անոնց միջէ շատ ազգաց աչքէ պիտի սրբուի։ Եւ պիտի գիտնան թէ ես եմ
28 անոնց Տէր Աստուածը, զանոնք ազգերու մէջ գերի վարեցի, և զանոնք նորէն իրենց երկիրը ժողվեցի, և
29 ոևէ մէկ ալ չթողուցի։ Եւ այլ ևս իմ երեսս անոնցմէ պիտի չծածկեմ, զանոնք իմ Հոգիս Իսրայէլի տան վրայ թափեցի, կ'ըսէ Տէր Եհովան։

## Գլ. Խ

1 Ամէն դերութեան քսանհինգերորդ տարին՝ տասներորդ ամսուն տասներորդ օրը, քաղաքին գարնուելուն չորեքտասաներորդ տարին, նոյն օրը Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ, և զիս
2 հոն տարաւ։ Զիս Աստուծոյ տեսութիւններով Իսրայէլի երկիրը տարաւ, և զիս շատ բարձր լեռան մը վրայ դրաւ։ և անոր վրայ հարաւային կողմը քաղաքի
3 շինուածոյ պէս էր։ Եւ երբ զիս հոն տարաւ, ահա մարդ մը որոյ

---

*Աչսենէթ՝ բազմութիւն
†Կամ կառք հեծողներէն,

*Կամ պիտի ըլլամ, երբ կրեն իրենց անարգանքը և իրենց բոլոր յանցանքները որ ինծի դէմ բրին, քանի որ իրենց երկրին մէջ ապահովութեամբ կը բնակէին, և վախցուցնող չկար։
†Եբր. տարաւ գլուխը



երեւոյթը պղնձի երեւութի պէս էր, և անոր ձեռքը թիանի լար և չափի եղէգ կար, և անիկա դուռը կանգնած էր։
4 Եւ այն մարդն ինծի բսաւ, Որդի մարդոյ, աչօք տես և ականջներովդ լսէ, և ուշադրութիւն բրէ ամէն բանի զոր պիտի ցուցնեմ քեզ. վասն զի դուն հոս բերուեցար որ այս բաներէը քեզի ցուցնեմ. ամէն տեսածդ Իսրայէլի տան պատմէ։
5 Եւ ահա տանը դուրսէն չրջանակի պարիսպ կար, և այն մարդուն ձեռքը վեց կանգնոյ էրկայնութեամբ չափի եղէգ կար, լուսնքը մէկ կանգուն և չորս մատնաչափ. և ՚պարսպին լայնութիւնը՝ եղէգ մը, և բարձրութիւնը եղէգ մը չափեց։
6 Եւ անիկա դէպ արեւելք նայող դուռը եկաւ, և անոր սանդհաններուն վրայ ելաւ, և դրան մէկ սեմը՝ եղէգ մը լայն, և միւս սեմը եղէգ մը լայն էր։
7 չափեց։ Եւ խցուխնէրը խոշ եղէգ մը երկայն և եղէգ մը լայն էր, և խուցերուն միջեցը հինգ կանգուն էր. և դրան սրահին քով եղող դրան սեմը
8 ներսէն մէկ կանգուն էր։ Եւ անիկա դրան սրահը ներսէն մէկ եղէգ չափեց։
9 Եւ դրան սրահը ութ կանգուն չափեց. և անոր դրանդիքը երկու կանգուն էր, և դրան սրահը ներսի կողմն էր։
10 Եւ դէպ արեւելք եղող դրան խուցերը մէկ կողմն երեք և միւս կողմն երեք էին, և երեքին չափը մէկ էր. և դրանդեաց չափը մէկ կողմն և միւս
11 կողմն մէկ էր։ Եւ դրան մուտքին լայնութիւնը տասը կանգուն չափեց, և դրան երկայնութիւնը տասներեք
12 կանգուն։ Եւ խուցերուն առջեւ, մէկ [ողնի] մէկ կանգնոյ սահման, և միւս կողմէն մէկ կանգնոյ սահման կար. և խուցերը մէկ կողմն՝ վեց կանգուն, և
13 միւս կողմն վեց կանգուն էին։ Եւ դուռը չափեց մէկ խուցին տանիքէն մինչև միւսին տանիքը. անոր լայնութիւնը քսանհինգ կանգուն էր, և

---

*Եբր. չէնքին

14 մուտքերը դիմացէ դիմաց էին։ Եւ դրանդեաց չորբերը վաթսուն կանգուն բրաւ, մինչև դրան բոլորտիքը
15 եզող գաւիթն դրանդիքը։ Եւ դուրսի դրան երեսէն մինչև ներսի դրան սրահը
16 հին երեսը յիսուն կանգուն էր։ Եւ խուցերուն և անոնց դրանդեաց փակ դրան ներսի կողմէն չուրջանակի *պատուհաններ կային, սրբատներուն ալ այսպէս էին, և ներսի կողմէն չուրջանակի պատուհաններ կային. և դրանդեաց վրայ արմաւենիներ կային։
17 Եւ զիս դուրսի գաւիթը բերաւ, և ահա հոն սենեակներ և գաւիթին համար չինուած չուրջանակի քարայատակ կար. և քարայատակին վրայ երեսուն
18 սենեակ կար։ Եւ գաւառներուն քովի քարայատակը դաւառներուն երկայնութեան դիմացը եզող վարի քարայատակն էր։ Եւ անիկա վարի դրան առջեւէն մինչև ներքին սրահին առջեւ դուրսէն դէպ արեւելք և հիւսիս լայնութիւնը հարիւր կանգուն չափեց։
20 Եւ դուրսի գաւիթին դէպ ի հիւսիս նայող դրան երկայնութիւնն և լայնութիւնը քսանհինգ կանգուն էր։
21 Թիւնը չափեց։ Եւ անոր խուցերը երեք մէկ կողմէն էր, և երեք՝ միւս կողմէն, և անոր դրանդիքը և սրահներն առջի դրան չափովն էին. անոր երկայնութիւնը՝ յիսուն կանգուն, և լայնութիւնը քսանհինգ կանգուն էր։
22 Եւ պատուհանները և սրահները և արմաւենիները դէպ արեւելք նայող դրան չափովն էին, և եօթն ասպիճանով այն դռնով կ'ելլէին. և սրահներն անոնց
23 առջեւն էին։ Եւ ներսի գաւիթը դուռ մը ունէր հիւսիսային դրան և արեւելեան դռան դիմացը, և մէկ դուռնէն մինչև միւս դուռը հարիւր կանգուն չափեց։
24 Եւ զիս հարաւային կողմը տարաւ, և ահա հարաւային կողմը դուռ մը կար. և անոր դրանդիքը և սրահները չափեց, որ նոյն չափերուն համեմատ

---

*Կամ ներսէն լայն՝ դուրսէն նեղ

28 Ընդ եւ անկիւնք եւ անոր սրահներըն նոյն պատուհաններուն պէս պատուհաններ ունէին շուրջանակի. անոր երկայնութիւնը յիսուն կանգուն, եւ լայնութիւն
26 նը քսանհինգ կանգուն էր. եւ այն դրունը ելլելու համար եօթն ասիճան կար, եւ անոր սրահներն անոնց առջեւն էին. եւ անոր դրանդեակաց վրայ մէկ կողմին եւ միւս կողմին արմաւենիներ կային.
27 Եւ ներսի գաւիթը դուռ մը ունէր դէպ ի հարաւ, եւ մէկ դուռնէն մինչեւ միւս դուռը դէպ ի հարաւ հարիւր
28 կանգուն չափեց. Եւ զիս հարաւային դուռնէն ներսի գաւիթը բերաւ, եւ հարաւային դուռը չափեց, ըստ նոյն չա-
29 փերուն համեմատ էր. եւ անոր խուցերը եւ դրանդիքը եւ սրահները նոյն չափերուն համեմատ էին. եւ անկիւն եւ անոր սրահները շուրջանակի պատուհաններ ունէին. անոր երկայնութիւնը՝ յիսուն կանգուն, եւ լայնութիւնը քը-
30 սանհինգ կանգուն էր. Եւ սրահները շուրջանակի քսանհինգ կանգուն էր-
31 կայն եւ հինգ կանգուն լայն էին. Եւ սրահները դէպ ի դուրսի գաւիթն էին, եւ դրանդեակաց վրայ արմաւենիներ կային. եւ այն դրունը ելլելու համար ութ ասիճան կար.
32 Եւ զիս ներսի գաւիթը տարաւ դէպ արեւելք, եւ դուռը չափեց, ըստ նոյն չա-
33 փերուն համեմատ էր. Եւ անոր խուցերը եւ դրանդիքը եւ սրահները նոյն չափերուն համեմատ էին. եւ անկիւն եւ անոր սրահները շուրջանակի պատուհաններ ունէին. անոր երկայնութիւնը՝ յիսուն կանգուն, եւ լայնութիւնը քը-
34 սանհինգ կանգուն էր. Եւ անոր սրահները դէպ ի դուրսի գաւիթն էին, եւ անոր դրանդիքը մէկ կողմին եւ միւս կողմին արմաւենիներ ունէին. եւ այն դրունը ելլելու համար ութ ասիճան կար.
35 Եւ զիս հիւսիսային դուռը բերաւ, եւ նոյն չափերուն համեմատ չափեց
36 խուցերը, դրանդիքը եւ սրահները, եւ շուրջանակի պատուհաններ ունէր. Հա-
37 նոր երկայնութիւնը՝ յիսուն կանգուն, եւ լայնութիւնը քսանհինգ կանգուն էր. Եւ անոր դրանդիքը դէպ ի դուրսի գաւիթն էր, եւ դրանդիքը մէկ կողմին եւ միւս կողմին արմաւենիներ ունէին. եւ այն դրունը ելլելու համար ութ ասիճան կար.
38 Եւ անկեակ մը կար որոյ մուտքը դրանդիքաց մօտ էր. ողջակէզն հոն կը լուային. Եւ դրան
39 սրահին մէջ մէկ կողմին երկու սեղան, եւ միւս կողմին երկու սեղան կար, որ անոնց վրայ ողջակէզը եւ մեղքի պատարագը եւ յանցանքի պատարագը
40 մորթեն. Եւ հիւսիսային դրան մատքը ելլելու գաւթի կողմէ երկու սեղան, եւ միւս կողմը եղող դրան սրա-
41 հին մէջ երկու սեղան կար. Չորս սեղան մէկ կողմին չորս սեղան կար, ութ սեղան էր, որ
42 ի անոնց վրայ կը մորթեին. Եւ չորս սեղանները որ ողջակիզի համար էին, տաշուած քարէ մէկ ու կէս կանգուն երկայն եւ մէկ ու կէս կանգուն լայն եւ մէկ կանգուն բարձր էին. եւ ողջակէզը եւ զոհը մորթելու գործիքներն ա-
43 նոնց վրայ կը դնեին. Եւ ներսէն չորս չափակ չորս մատնաչափ *եղբեր մը շինուած էր. եւ սեղաններուն վրայ պահին միսը կը դրուէր.
44 Եւ ներսի դրան գաւթին կողմը հիւսիսային դրան քով եղող ներսի գաւթին մէջ երգեցողներուն սենեակները կային, եւ անոնց երեսը դէպ ի հարաւ էր. մին արեւելեան դրան քովը էր, եւ
45 երեսը դէպ ի հիւսիս էր. Եւ ինծի ըսաւ, Այս սենեակը որ դէպ ի հարաւ կը նայի, ահաւասիկ քահանաներուն համար է. Եւ այն սենեակը որ դէպ ի հիւսիս կը նայի, սեղանին պահապանութիւնն ընող քահանաներուն համար է. անոնք Սադովկի որդիքն են, որՂեւեայ որդիներէն Տէրոջմէ կը մօտենան անոր ծառայութիւն ընելու համար.

*Կամ՝ կաթիլը



47 Եւ գաւիթը չափեց, հարիւր երկայնութիւնն հարիւր կանգուն, եւ լայնութիւնը հարիւր կանգուն էր, անկիւնք քառակուսի էր. եւ սեղանը ահա առջեւն էր.
48 Եւ զիս ահա սրահը տարաւ, եւ սրահին դրանդիքը չափեց, հինգ կանգուն՝ մէկ կողմէն, եւ հինգ կանգուն միւս կողմէն. եւ դրան լայնութիւնը մէկ կողմէն երեք կանգուն էր, եւ միւս կողմէն երեք
49 կանգուն էր. Սրահին երկայնութիւնը՝ քսան կանգուն, եւ լայնութիւնը մեռասան կանգուն *էր, եւ հոն [դռնը] ասիճաններով կ'ելլէին՝ եւ դրանդեակ քով սիւներ կային, մէկը՝ մէկ կողմէն, միւսը՝ միւս կողմէն։

## Գլ. ԽԱ.

1 Եւ զիս սաճարը տարաւ, եւ անոր դրանդիքը չափեց, մէկ կողմէն՝ վեց կանգուն լայն, եւ միւս կողմէն վեց կանգուն լայն էր խորանին լայնութեան
2 համեմատ. Եւ դրան լայնութիւնը տասը կանգուն էր, եւ դրան քովերը մէկ կողմէն՝ հինգ կանգուն, եւ միւս կողմէն հինգ կանգուն էին. եւ անոր երկայնութիւնը՝ քառասուն կանգուն, եւ լայնութիւնը քսան կանգուն չափեց.
3 Եւ ներս մտաւ, եւ դրան դրանդիքը՝ երկու կանգուն, եւ դուռը վեց կանգուն չափեց. եւ դրան լայնութիւնը եօթը կանգուն էր.
4 Եւ անոր երկայնութիւնը չափեց քսան կանգուն, եւ լայնութիւնը քսան կանգուն սաճարին լայնութեան համեմատ. եւ ինծի ըսաւ, Այս է սրբութիւն սրբութեանց.
5 Եւ տան պատը վեց կանգուն, եւ տան բոլորտիքը եղող սենեակներուն լայնութիւնը չորս կանգուն չափեց.
6 Եւ սենեակները իրարու վրայ էին եռեք փոխիներով եւ երեսուն սենեակ. եւ անոնց ֆէրուաններ կը մտնէին տաճարին պատին մէջ որ սենեակներուն համար չէր շրջանակի, որ անոր կռթնէին, բայց տան պատին մէջ չէին
7 կռթներ. Եւ սենեակներն եղելուն համար լայնցող եւ շրջանակաւոր անդրադարձ կար, որ տան բոլորտիքը վեր ելլելու համար տունը կը զուարթ. անոր համար եղելով տունը կը լայնար, եւ այսպես վարի դասիկանէն վերի դասիկանը
8 միջին դասիկանէն կ'ելլէին. Եւ շրջակայ տան բարձրութիւնը տեսայ. սենեակներուն հիմերը ամբողջ մէկ եղ-
9 ղէգ վեց մեծ կանգուն էր. Սենեակներուն պատին լայնութիւնը դուրսէն հինգ կանգուն էր, եւ մնացածը սենեակներուն հիմերը տան բոլորտիքը քսան կանգուն լայն միջոց կար.
10 Եւ սենեակներուն մէջտեղը միացած սեղին կը նայէին, մէջտեղն մէկը դէպ ի հիւսիս, եւ մէջտեղն մէկը դէպ ի հարաւ կը նայէր. եւ միացած սեղին լայնութիւնը շուրջանակի հինգ կանգուն էր.
12 Եւ պատած սեղին առջեւ դէպ արեւմտեան ծայրը եղող շէնքին լայնութիւնը եօթանասուն կանգուն էր. եւ շէնքին պատը շուրջանակի հինգ կանգուն լայն, եւ երկայնութիւնն իննսուն
13 կանգուն էր. Եւ տան երկայնութիւնը հարիւր կանգուն չափեց. եւ պատած սեղը եւ շէնքը իր պատերով հարիւր
14 կանգուն երկայն էր. Եւ տան եւ պատած սեղին երեսը դէպ արեւելք հարիւր կանգուն լայն էր.
15 Եւ փառ նեսէի կողմին պատած սեղին դիմացը եղող շէնքին երկայնութիւնը եւ անոր սիւնազարդ սրահները մէկ կողմէն եւ միւս կողմէն ներքին տաճարին եւ գաւթին սրահներուն հետ
16 հարիւր կանգուն չափեց. Գռան սեմերը եւ մանջախցատ պատուհանները եւ շուրջանակի այն երեք շէնքերուն մէջտեղը եղող սրահները սրահներն ամէն կողմէն սոխատակամած չէնուած էին գեանէն մինչեւ պատուհանները, եւ
17 պատուհանները ծածկուած էին. Նաև

*Կամ՝ էր այն տասիճաններով մէկտեղ որով հոն կ'ելլէին.

դրան վրան և մինչև ներքին տունը, և դուրսն և բոլոր պատը չորքանակի ներսէն և դուրսէն էբենոյ չափերով,
18 Այս պոլոխոճոնէն վրայ քերովբէները և արմաւենիներ քանդակուած էին, և և երկու քերովբէներուն մէջ արմաւենի մը, և էրեսոճոնէը քերովբէ երկու
19 երես ունէր, Այսինքն մէկ կողմին դէպ արմաւենին՝ մարդու երես, և միւս կողմն դէպ արմաւենին առիւծու երես. բոլոր տան քանդակը չորքան-
20 նակի պատին էր։ Ճաճանչէն մինչև դրան վրան քերովբէներ և արմաւենիներ քանդակուած էին, նոյնպէս տա-
21 ճարին պատին վրայ։ Տաճարին դրանդիմը քառանկիւնաձև էին, և սրբարանին երեսը. ձոյլ երեւոյթը դէմ երեսու-
22 թիւն պէս էր։ Փայտէ սեղանը երեք կանգուն բարձր էր, և երկայնութիւնը երկու կանգուն էր, և անոր անկիւնները իրմէ էին, և անոր երկայնութիւնը և քովերը փայտէ էին. և անիկա ինծի ըսաւ, Ասիկա
23 է Տէրոջը առջև եղող սեղանը։ Եւ տաճարը և սրբարանը երկու դուռ ունէին.
24 Եւ դուռները երկերկու փեղկ ունէին, և փեղկերը երկու-քի կը ծալուէին, երկու փեղկ՝ մին ունէր, և երկու փեղկ՝
25 միւսը։ Եւ անոնց վրայ, տաճարին դուռներուն վրայ, պատերուն վրայի քանդակին պէս քերովբէներ և արմաւենիներ քանդակուած էին. և դուրսէն
26 կար։ Եւ սրահին քովերը և տան սենեակներուն միջ և ամպատուններուն վրայ, մէկ կողմին և միւս կողմին, փանդակուած պատուհաններ և արմաւենիներ կային։

## Գլ. ԽԲ

1 Յետոյ զիս դէպ՝ ի հիւսիս եղող ճամբով արտաքին դատիճն հանեց, և զիս զառաւած տեղին դիմացը եղող և դէպ՝ ի հիւսիս նայող շէնքին դիմացի սեն-
2 եակները բերաւ։ Այս սենեակները հիւսիսային մուտքին առջևի երկայնութիւնը՝ հարիւր կանգուն, և լայնութիւնը՝ հիսուն կանգուն էր։ Ներսի գաւթին քսան կանգուն դէմ և գուրսի գաւթին քարայատակին դէմ իրարու դիմաց երեք գաւիթով սիւնազարդ
4 պատնէշ կային։ Եւ սենեակներուն առջև ներսէն տասը կանգուն լայն ճեմելիք՝ մէկ կանգուն ճամբայ կար, և անոնց դուռները դէպ՝ ի հիւսիս էին։
5 Եւ վերի սենեակները կարճ էին, վասն զի սիւնազարդ պատնէշն անոնցմէ, այսինքն շէնքին վարի և միջին սենեակ-
6 ներէն փոքր կ՚առնուին։ Քանզի անոնք երեք յարկանի էին, և գաւիթներուն պէս սիւներ չունէին. անոր համար գետնէն, այսինքն վարի և միջին սենեակներէն կը նեղնային։ Եւ սենեակներուն դիմացը, գուրսի գաւթին կողմը, սենեակներուն առջևի գուրսի պատին երկայնութիւնը յիսուն կանգուն էր։
8 գուն էր։ Ասոնք զի գուրսի գաւիթը նայող սենեակներուն երկայնութիւնը յիսուն կանգուն էր. և ահա տաճարին
9 դիմացը հարիւր կանգուն էր։ Եւ այս սենեակներուն տակէն դուրսի գաւթէն անոնց երթալու համար արեւելեան
10 կողմէն մուտք մը կար։ Ե– գաւթին պարսպին լայնութեան մէջ դէպ արեւելք՝ գառաւած տեղին դիմացը և շէնքին դիմացը սենեակներ կային։ Եւ
11 անոնց առջևը ճամբայ կար դէպ՝ ի հիւսիս եղող սենեակներուն երեսութիւնն պէս, թէ անոնց երկայնութեանը, թէ անոնց լայնութեանը և թէ անոնց բոլոր ելքերուն և անոնց ձեւերուն և
12 դուռներուն կողմանէ։ Նոյնպէս էին դէպ՝ ի հարաւ եղող սենեակներուն մուտքերը. ճամբուն գլուխը մուտք մը կար, այսինքն առջևի ուղղով ճամբան,
13 Ե՛ ինծի բսաւ, Զառաւած տեղին առջև եղող հիւսիսային կողմի սենեակները՝ հարաւային կողմի սենեակները սուրբ սենեակներն են, ուր Տէրոջը մօտեցող քահանաները ամենասուրբ բա-

*Կամ վայրագ մարդ



նները պիտի ուտեն. հոն պիտի դնեն ամենասուրբ բաները և հացի ընծան և մեղքի պատարագը և յանցանքի պատարագը, քանզի այն տեղը սուրբ է։
14 Երբ քահանաներն հոն մտնեն, սուրբ տեղէն դուրս դատիճը պիտի չելլեն, այլ հրեղէն պաշտօնի զգեստները հոն պիտի թողուն, վասն զի անոնք սուրբ են. և ուրիշ հանդերձներ հագնելով ժողովրդեան վերաբերեալ բաներուն պիտի մօտենան։
15 Եւ երբ անիկա ներքին տունը չափեց լմընցուց, զիս դէպ արեւելք նայող դուռը հանեց, և զայն ամէն կողմէն չափեց։ Արեւելեան կողմը չափի եղեգով, չորքանակի հինգ հարիւր եղեգ
17 չափեց չափի եղեգով։ Հիւսիսային կողմը չորքանակի չափի եղեգով հինգ
18 հարիւր եղեգ չափեց։ Հարաւային կողմը չափի եղեգով հինգ հարիւր եղեգ
19 չափեց։ Արեւմտեան կողմը դարձաւ, Ե չափի եղեգով հինգ հարիւր եղեգ
20 չափեց։ Զորս կողմէն չափեց զայն. անիկա հինգ հարիւր Ե եղէ երկայն և հինգ հարիւր Ե եղէ լայն էր, Ե պարիսպ ունէր սուրբ և անսուրբ տեղին միջ զառանալու համար։

## Գլ. ԽԳ

1 Եւ զիս դուռը, դէպ արեւելք նայող
2 դուռը, տարաւ։ Եւ ահա արեւելեան ճամբէն Իսրայէլի Աստուծոյն փառքը կու գար. և անոր ձայնը շառաչիւնի ձայնին պէս էր, և երկիրը անոր
3 փառքէն լուսաւորուեցաւ։ Եւ տեսիլը զոր տեսայ՝ նման էր այն տեսիլքան զոր տեսայ երբ քաղաքն աւերելու եկայ. և տեսիլները այն տեսիլքան պէս էին զոր տեսայ Քեբար գետին քով, և երեսիս
4 վրայ ինկայ։ Եւ Տէրոջը փառքը դէպ արեւելք նայող դրան ճամբէն տունը
5 մտաւ։ Եւ Հոգին զիս վերցուց և զիս ներքին գաւիթը տարաւ, և ահա Տէրոջը փառքը տունը լեցուցած էր։ Եւ
6 Ես՝ հը լսեցի որ տաճարէն ինծի կը խօսէր. (և իմ քովս մարդ մը կայնած
7 էր։) Եւ ինծի բսաւ, Որդի մարդոյ, իսրայէլի օրդւոց միջ յատկանան բնակելու աթոռիս տեղը, և իմ ոտիցս գարշապարներուն տեղն այս է, և իսրայէլի տունը, իրենք և իրենց թագաւորներն, իրենց պոռնկութիւններով և իրենց թագաւորներուն դիեցով իրենց բարձր տեղերուն միջ այլ ևս իմ
8 սուրբ անունս պիտի չպղծեն, վասն զի իրենց սեմերն իմ սեմոցս, և իրենց դրանդիքն իմ դրանդիցս մտա դրին, այնպէս որ իմ և անոնց միջտեղ Ճաշ պատ մը կար, և իրենց գարշութիւններով իմ սուրբ անունս պղծեցին. և ես իմ բարկութեամբս ապառնչի պա-
9 նեցի։ Հիմա թող իրենց պոռնկութիւնը և իրենց թագաւորներուն դիեցն իրենէ հեռացունեն, և յաւիտեան անոնց միջ պիտի բնակիմ։
10 Դուն, որդի մարդոյ, Իսրայէլի տան այս տունը դիտացուր, որ իրենց անօրէնութիւններուն ամչնան, և թող —
11 նոր գաղափարը չափեն։ Եւ եթէ իրենց բոլոր ըրածներէն ամչնան, տան ձևը և կարգաւորութիւնը, և անոր ելքը և մուտքը, և բոլոր ձևերը և բոլոր կանոններ, (և բոլոր ձևերը) և բոլոր օրէնքներն անոնց գիտցուր. և անոնց աչաց առջև գրէ, և անոր բոլոր ձևերը և բոլոր կանոնները պահեն և զանոնք կատարեն։ Այս է տաճարին օրէնքը, Անոր բոլոր սահմանը չորքանակի լեռան գլուխն վրայ սահմանուելը պիտի ըլլայ. ահա տաճարին օրէնքն այս է։
13 Եւ սանդք են սեղանին չափերը կանգունով. (կանգունը մէկ կանգուն և չորս մատնաչափ է։) և խոր տեղը մէկ կանգուն, և անոր լայնութիւնը մէկ կանգուն, և անոր սահմանին անոր եզերքին վրայ չորքանակի մէկ թիզ պիտի ըլլայ. և այս պիտի ըլլայ սեղանին հիմը։ Եւ գետնին խոր տեղէն մինչև վարի չորքանակը երկու կանգուն, և անոր լայնութիւնը մէկ կանգուն պիտի ըլլայ. և փոքր չորքանակէն մինչև մեծ չորքանակը չորս կանգուն, և լայնութիւ-

15 նր մէկ կանգուն պիտի ըլլայ։ Եւ կլա-
կաթանը չորս կանգուն քառակ պիտի
ըլլայ, և կրակարանէն վեր չորս եղջիւր
16 պիտի ըլլայ։ Եւ *կրակարանը երկուասա-
սան կանգուն երկայն և երկուասասան
կանգուն լայն, չորս կողմն ալ հաւասար
17 ըլլալով. քառակուսի պիտի ըլլայ։ Եւ
անոր բոլորտիքը եղող չբլթակաւոր չո-
բերքառասան կանգուն երկայն և չորք-
ասասան կանգուն լայն պիտի ըլլայ, և
բոլորտիքը եղող սահմանը կէս կանգուն
և խոր անոր չուրջանակի մէկ կանգուն
պիտի ըլլայ, և անոր աստիճանները
դէպ արեւելք պիտի ըլլան։
18 Եւ ինծի ըսաւ, Որդի մարդոյ, Տէր
Եհովան այսպէս կ'ըսէ. Ասանք պիտի
ըլլան սեզանին կանոններն այն օրը որ
զայն շինեն, անոր վրայ ողջակէզներ
մատուցանելու և անոր վրայ արիւն
19 սրսկելու համար։ Սադովկի սերունդէն
եղող Ղեւտացի քահանաներուն (որ
ինծի պաշտօնեայ ընելու համար ին-
ծի պիտի մօտենան, կ'ըսէ Տէր Եհո-
վան,) մեղքի պատարագի համար ար-
ջառ մը պիտի տաս.
20 Եւ անոր արիւնէն պիտի առնու, և
եզերքն չորս եղջիւրներուն վրայ և
չրջանակին չորս անկիւնները վրայ
և շուրջանակի անոր սահմանին վրայ
դնես, և զայն պիտի սրբես և անոր
21 համար քաւութիւն ընես։ Մեղքի
պատարագին գուրս տանուի արջառը,
և սրբարանէն գուրս տաճարին տու-
22 շաճ տեղը պիտի այրուի։ Եւ երկ-
րորդ օրը մեղքի պատարագի համար
այծերէն անարատ նոխազ մը մատու-
ցանես, և սեզանը պիտի սրբեն ինչ-
23 պէս որ զուարակով սրբեցին։ Երբ սրբ-
բելը լմնցնես, արջառներէն անարատ
զուարակ մը և ոչխարներէն անարատ
24 խոյ մը պիտի մատուցանես։ Եւ դա-
նոնք Տէրոջը առջեւ պիտի մատեցնես,
և քահանաներն անոնց վրայ աղ պիտի
ցանեն, և զանոնք Տէրոջը ողջակէզ
25 պիտի մատուցանեն։ Եօթն օր մեղքի

պատարագի համար օրը մէն մի նոխազ պիտի մատուցանես. նաև ար-
ջառներէն զուարակ մը և ոչխարնե-
րէն խոյ մը պիտի մատուցանեն, ոչ ա-
26 նարատ պէտք ըլլան։ Եօթն օր սեզանին
քաւութիւն պիտի բնեն, և զայն պի-
27 տի սրբեն և զայն նուիրեն։ Եւ երբ
այն օրերը լմնան, ութերորդ օրը և
անկէ ետքը քահանաները սեզանին վր-
րայ ձեր ողջակէզները և ձեր խաղա-
ղութեան զոհերը պիտի մատուցանեն,
և ես գձեզ պիտի ընդունիմ, կ'ըսէ
Տէր Եհովան։

## ԳԼ. ԽԴ.

1 Ե՛տ զիս արբարանին դէպ արեւելք նա-
յող գուրսի դրան ճամբան դարձուց,
2 և անիկա գոց էր։ Եւ Տէրը ինծի ը-
սաւ, Այս դուռը գոց պիտի մնայ, պի-
տի չբացուի, և անկէ մարդ պիտի չը
մտնէ. քանզի անկէ Իսրայէլի Տէր Ա-
ստուածը մտաւ, անոր համար գոց պի-
3 տի մնայ։ Ան՝իշխանին համար թէթ
ըլլայ, հան միայն իշխանը պիտի նստի
Տէրոջը առջեւ հաց ուտելու համար. ա-
նիկա դրան սրահէն ճամբէն պիտի
մտնէ, և նոյն ճամբէն պիտի ելլէ։
4 Ե՛տ զիս հիւսիսային դրան ճամբէն
տաճարը առջեւ բերաւ. և անոյշ որ ա-
նոր Տէրոջը փառքը Տէրոջը տաճարը լե-
ցուցած էր. և երեսիս վրայ ինկայ։
5 Եւ Տէրը ինծի բսաւ, Որդի մարդոյ,
Տէրոջը տան բոլոր կանոնները և ա-
նոր բոլոր օրէնսդրութիւնները վրայ դիպուկ մէկ դիտէ, և աչքերովդ
նայէ և ականջներովդ լսէ, և տանը
մուտքերը և արբարանին բոլոր ելքերն
6 ապէկ դիտէ։ Եւ ապստամբներուն, Իս-
րայէլի, տան բսէ, Տէր Եհովան այս-
պէս կ'ըսէ. Այլ ևս հերիք է ձեզի ձեր
բոլոր պղծութիւնները, օվ Իսրայէլի
7 տուներ, Զի դուք որ սրտով անթլփատ
և մարմնով անթլփատ օտարազգինե-
րը մացուցիք, որ իմ արբարանիս մէջ
բլլան և իմ տունս պղծեն, երբ
դուք իմ հացս, ճարպը և արիւնը կը

*ԵԲՐ. Արիէլը



մատուցանէիք. և ձեր բոլոր պղծու-
թիւններէն զատ անունք իմ ուխտս
8 խախտեցին։ Եւ իմ սուրբ բաներուս
պահպանութիւնը չպահեցիք, այլ իմ
սրբարանիս մէջ ձեր ՚ներքինին պէս իմ
պահպանութեանս վրայ պահապաններ
դրիք։
9 Տէր Եհովան ասպէս կ'ըսէ. Իսրայէ-
լի որդւոց մէջ եղող բոլոր օտարազ-
գիներէն որոյ անթլփատ և մարմ-
նով անթլփատ բնաւ օտարազգի մը
10 իմ արբարանիս պիտի չմտնէ։ Մանաւ-
անդ Ղեւտացիները, որ ինծի հեռացան,
երբ Իսրայէլի մոլորեցան ինծմէ և իրենց կռոց ետեւէն գացին, իրենց
անօրէնութիւնը պիտի կրեն։ Եւ իմ
սրբարանիս մէջ սան գործերը օրե-
նուած սպասաւորներ և տաճարին բա-
պասաւորները պիտի բլլան։ Ժողովր-
դին համար ողջակէզները և գոհութ-
նանք պիտի մատուցեն, և անոնց ծառա-
յութիւնն ընելու համար անոնց առջեւ
12 անոնք պիտի կայնին։ Որովհետև ա-
նոնց համար անոնց կռապաշտութեան առ-
ջեւ ծառայութիւն բրին, և Իսրայէլի
տան գայթակղութիւն ՚ անօրէնու-
թեան պատճառ եղան, անոր համար
անոնց վրայ իմ ձեռքս վերցուցի, կ'ը-
սէ Տէր Եհովան, և իրենց անօրէնու-
13 թիւնը պիտի կրեն։ Եւ ինծի պիտի չը
մատնանեն՝ ինծի քահանայութիւն ընե-
լու և իմ բոլոր սուրբ բաներուս և
ամենասուրբ բաներուս մատնեն,
այլ իրենց անարգանքը և իրենց պղծ-
14 ծութիւնները պիտի կրեն։ Սակայն
զանոնք տան պահպանութեան վրայ
պահապան պիտի դնեմ տանը ամէն
ծառայութեան համար, և անոր մէջ
բլլալու ամէն գործին համար։
15 Բայց Ղեւտացի քահանաները, Սա-
դովկի սերունդը, որ իմ սրբարանիս
պահպանութիւնը պահեցին, երբ Իս-
րայէլի որդիքն ինծմէ մոլորեցան, անոնք
ինծի ծառայութիւն ընելու համար ին-
ծի պիտի մատնանեն, և ճարպը և ա-
րիւնն ինծի մատուցանելու համար ա-
նոնք իմ առջեւս պիտի կայնին, կ'ըսէ
16 Տէր Եհովան։ Անոնք իմ սրբարանիս
պիտի մտնեն, և ինծի ծառայութիւն
ընելու համար անոնք պիտի մօտենան
իմ սեղանիս, և իմ պահպանութիւնս
17 պիտի պահեն։ Եւ երբ ներսի գռնե-
րուն մտնեն, կտաւէ զգեստներ
պիտի հագնին, և ներսի գռներն գոռ-
ները, և երբ ներսի ծառայութիւն կ'ը-
նեն, բրնոյ վրայ բուրդ պիտի չհագ-
18 նին։ Անոնց գլուխներուն վրայ կտաւէ
ապարեշներ բլլան, և անոնց մէջքը կը-
ատէ վրայնին բլլան, և քրտնցնող
19 բան պիտի չհագնին։ Եւ երբ դուրսի
գաւիթը ժողովրդին ելլեն, իրենց
պաշտօնի զգեստները պիտի հանեն, և
զանոնք սուրբ սենեակներուն մէջ դը-
նեն, և ուրիշ զգեստներ պիտի հագ-
նին, որպէս զի իրենց զգեստներով
20 ժողովուրդը չսրբեն։ Եւ իրենց գլուխը
պիտի չսափրեն, և ոչ վլուրը երկնցու-
նեն, այլ միայն իրենց գլուխը մազերը
21 փոքրեն։ Եւ բնաւ քահանայ մը գինի չխմէ, երբ ներսի գաւիթը կը
մտնէ։ Եւ այրին կամ արձակուածն ի-
րենց կին չառնուն, այլ Իսրայէլի տան
սերունդէն եղող կոյսը, կամ քահա-
23 նայ այրի մնացած կին առնուն։ Եւ
իմ ժողովրդիս սուրբ և անսուրբ
բաներուն սարբերութիւնը պիտի սոր-
վեցնեն, և անմաքրին և մաքրին
սարբերութիւն անոնց գիտցուցնեն։
24 Եւ գատելու վրայ անոնք պիտի կե-
նան դատաստան ընելու համար, և
իմ իրաւունքս համեմատ զանոնք դա-
տեն, և իմ բոլոր տօներուս մէջ իմ
օրէնքներս և կանոններս պիտի պահ-
25 հեն, և իմ շաբաթներս սրբեն։ Եւ
մեռելոտ մեռելի քով չերթան որ պղծ-
ծուին. այլ միայն հոր համար, կամ
մօր համար, կամ որդւոյ համար, կամ
աղջկան համար, եղբօր համար, կամ
չամուսնացած քրոջ համար պղծուին։
26 Եւ մէկը սրբուելէն ետքը եօթն օր
27 պիտի համրեն անոր։ Եւ անիկա սրբա-
րանին մէջ ծառայութիւն ընելու հա-

*ԵԲՐ. չելէ.

մաը ներթև գաւիթը սրբարանը մտած
օրն անկիւս իւր մեղայ պատարագը
պիտի մատուցանէ, կ'ըսէ Տէր Եհովան։
28 Եւ ասկիս անոնց ժառանգութիւն
ըլլայ, անոնց ժառանգութիւնը ես եմ.
և Իսրայէլի մէջ անոնց կալուածք չը
29 տաք, անոնց կալուածը ես եմ։ Հա-
ցի ընծան և մեղայ պատարագը և յան-
ցանաց պատարագն անոնք պիտի ու-
տեն. և Իսրայէլի մէջ ամէն նուիրա-
30 նանց պիտի ըլլայ։ Եւ ամէն ԹՈՒ[*] բա-
նէն բոլոր երախայրիներուն առաջինը,
և ձեր բոլոր ընծաներէն ամէն բանի
ընծային բոլորը քահանային պիտի ըլ-
լայ. և ձեր խմորներուն երախայրին
քահանային պիտի տաք, որ քու տանդ
31 վրայ օրհնութիւն [†]բերնա։ Քահանա-
ները բնաւ մեռած կամ գազանաբեկ
անասուն ՓԸ պիտի չուտեն, թէ թռչու-
նէն ըլլայ և թէ չորքոտանի։

## Գլ. ԽԵ

1 Եւ երբ երկիրը վիճակով ժառանգու-
թիւն բաժնէք, երկիրն քահանայից
հազար եղէն երկայնութեամբ, և ամ-
ր հազար լայնութեամբ սուրբ ընծայ
մատուցանէք Տէրոջը. ասիկա չուրջա-
նակի իւր բոլոր սահմաններուն մէջ
2 սուրբ ըլլայ։ Ասկէ, քառակուսի չա-
փուած, հինգ հարիւրով հինգ հարիւրը
սրբարանին համար ըլլայ, և անկիա
չուրջանակի յիսուն կանգուն արուար-
3 ձան ունենայ։ Եւ այս չափովէ, երկայ-
նութիւնը քառանկիւնդ հազար և լայ-
նութիւնը ասոր հազար, չափես, և ա-
նոր մէջ պիտի ըլլայ սրբարանը, ամե-
4 նասուրբ տեղը։ Աւասիկ Տէրոջը ծառա-
յութիւն ընելու մտնելոց սրբարանի
պաշտօնեաներուն, քահանաներուն հա-
մար սուրբ ըլլայ երկիրն, որ անոնց
տուներու համար տեղ, և սրբարանին
համար սուրբ տեղ ըլլայ։
5 Եւ ասոր ծառայութիւն ընող Ղեւտա-

[*] Կամ բերէ։
[†] Կամ չափին

յիները քառանկիւնդ հազար երկայնու-
թեամբ և ասոր հազար լայնութեամբ
կալուած պիտի ունենան, նաև քսան
սենեակ։
6 Եւ, հինգ հազար լայնութեամբ և
քառանկիւնդ հազար երկայնութեամբ,
քաղաքին կալուածը պիտի տաք սրբ-
րարանին ընծային քով. ասիկա բոլոր
Իսրայէլի տան ըլլայ։
7 Եւ իշխանին [‡]ըոռոծը, սուրբ ըն-
ծային և քաղաքին կալուածին մէկ
կողմին և միւս կողմին, սուրբ ընծա-
յին և քաղաքին կալուածին դիմացը
արեւմտեան ծայրին՝ դէպ արեւմուտք,
և արեւելեան ծայրէն դէպ արեւելք ըլ-
լայ. և երկայնութիւնն արեւմտեան
սահմանէն մինչև արեւելեան սահմանը
հաս բաժիններուն մէկուն հետ հաւա-
8 սար ըլլայ, Իսրայէլի մէջ երկիրն ասի-
կա անոր կալուած ըլլայ, և իմ իշ-
խաններս այլ եւս իմ ժողովուրդս չը-
հարստահարեն. և հաց երկիրն Իս-
րայէլի տան սրտի անանց ցեղերուն
համեմատ։
9 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ա՛յլ եւս
հերիք է ձեզի, ով Իսրայէլի իշխաններ,
զրկանքը և յափշտակութիւնը վերցու-
ցէք, և իրաւունք և արդարութիւն
լրէք. իմ ժողովուրդիս ձեր բռնի
պահանջմունքը վերցուցէք, կ'ըսէ Տէր
10 Եհովան։ Ձեր կշիռներն արդար, ձեր
արդեփ արդար և ձեր մարն ար-
11 դար ըլլայ։ Արդուն և մարը մէկ չափ
ըլլան, որ մարը քառին տասներորդը
պարունակէ, և արդուն քառին տաս-
ներորդը. քառին նայելով պիտի ըլլայ
12 անոնց չափը։ Եւ սիկղը քսան կերաս
պիտի ըլլայ. ձեր մնաս քսան սիկղ,
քսանհինգ սիկղ, տասնհինգ սիկղ
պիտի ըլլայ։
13 Ձեր մատուցանելու ընծան այս ը-
լայ. ցորենի քառէն արդուն վեցե-
րորդ մասը, և գարւոյ քառէն արդուն
14 վեցերորդ մասը. Եւ իւղոյ կանոնն ա-
ռաջի. իւղին մարէն՝ մարին տասներոր-
դքն ՈՀՆ քառէ, այսինքն ՈՀՆ խո-
մերէ, որ տասը մար [‡]ը պարունակէ,



15 վասն զի տասը մարը մէկ խոմէր է. Եւ
Իսրայէլի ջրարբի արօտներուն հօտէ-
րէն երկու հարիւրէն մէկ ոչխար. Ա-
սոնք պէտք հացադրանէն իրենց ընծայ և ողջակէզ և խաղաղութեան զոհ,
որ իրենց համար քաւութիւն ընէյ,
16 կ'ըսէ Տէր Եհովան։ Երկրին բոլոր ժո-
ղովուրդն այս ընծան Իսրայէլի մէջ իշ-
խան եղգոյն պատ- պարտական պիտի
17 ըլլայ։ Եւ ասոնց ամանգութիւնները
և շաբաթներու մէջ, Իսրայէլի տան բո-
լոր հանդիսաւոր օրերուն մէջ, ողջա-
կէզները և հացի ընծան և թափելու
նուէրը իշխանին վրայ պիտի ըլլայ. ա-
նոր պատարագը և հացի ընծան և ող-
ջակէզը և խաղաղութեան զոհերը պիտի մատուցանեն, և անկիա
զոհը պիտի մատուցանէ իսրայէլի տան քա-
ւութիւն ընելու համար։
18 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Առա-
ջին ամսուն առաջին օրն արջառներէն
անարատ զուարակ մը առնուս, և սրբ-
19 բարանը մաքրես։ Եւ քահանան մեղայ
պատարագին արիւնէն պիտի առնու, և
տանը դրանդեաց վրայ և սեղանին
չորս անկիւններուն վրայ և ներքի գաւթին դրան դրանդեաց
20 վրայ դնէ։ Ամսուն եօթներորդ օրն ալ
սխալած կամ անմիտ մարդու համար
այնպէս ընես, և տանը համար քաւու-
թիւն պիտի ընէք։
21 Առաջին ամսուն չորեքտասաներորդ
օրը ձեզի զատիկ ըլլայ. եօթն օր ան
22 պէտ պահած ի բաղարջ ուտուի։ Եւ
այն օր իշխանն իրեն համար և երկրին
բոլոր ժողովրդեան համար զուարակ մը
պիտի մատուցանէ ԷՔբԼ մեղայ պատա-
23 րագ։ Եւ ամենն եօթն օրը Տէրոջը ող-
ջակէզ պիտի մատուցանէ, այն եօթն
օրուան մէջ օրը եօթը զուարակ և եօ-
թը անարատ խոյ, և ամէն օր այ-
ծերէն նախատ մը էքբԼ մեղայ պատա-
24 րագ։ Եւ իւղաքանչիր զուարակի
համար՝ արդու մը, և իւղաքանչիր
խոյի համար՝ արդու մը հացի ընծայ, և իւղաքանչիր արդուի համար
25 մէկ հինէն իւղ մատուցանէ։ Նոյն-
պէս եօթներորդ ամսուն հնգետասա-

ներորդ օրը ասոնին տասն եօթն օր այս
մեղայ պատարագին, աղջակէզի, հացի
ընծային և իւղին պէս պիտի մատու-
ցանէ։

## Գլ. ԽԶ

1 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ներքին
գաւթին դէպ արեւելք նայող դուռը
գործի վեց օրերը գոց ըլլայ, և շաբաթ
օրը բացուի, և ամսագլխուն օրը բա-
2 ցուի։ Եւ իշխանն այն դրան սրահին
ճամբէն դուրսէն պիտի մտնէ, և դրան
դրանդեաց քով կայնի. և քահանա-
ներն անոր աղջակէզը և խաղաղութեան
զոհերը պիտի մատուցանեն, և անկիա
դրան սեմին վրայ երկրպագութիւն
պիտի ընէ և ելլէ. և այն դուռը մին-
3 չև երեկոյ պիտի չգոցուի։ Եւ երկրին
ժողովուրդը շաբաթ օրերը և ամսա-
գլուխներու Տէրոջը առջև այս դրան
մուտքին մէջ երկրպագութիւն պիտի
ընէ։
4 Եւ իշխանին շաբաթ օր Տէրոջը մա-
տուցանելու աղջակէզը վեց անարատ
5 գառն և մէկ անարատ խոյ ըլլայ։ Եւ
խոյին համար հացի ընծայ՝ ափա մը,
և գառանց համար հացի ընծայ՝ ձեռ-
քին կարծր, և իւղաքանչիր ափայ
6 համար մէկ հինէն իւղ հոպոպայնէ։ Եւ
ամսագլուխն օրը արջառներէն անա-
րատ զուարակ մը և վեց գառն և խոյ
7 մը, որ անարատ պիտի ըլլան։ Եւ զուա-
րակին համար ափա մը և խոյին հա-
մար ափա մը հացի ընծայ մատուցա-
նէ, և գառանց համար՝ ինչ որ ձեռ-
քին կու գայ, և իւղաքանչիր ափայ
համար մէկ հինէն իւղ ըլլայ։
8 Եւ երբ իշխանը գայ, դրանը սրա-
հին ճամբէն մտնէ, և նոյն ճամբէն ել-
9 լէ։ Եւ երկրին ժողովուրդը հանդի-
սաւոր օրերուն մէջ երկրպագութիւն
ընելու համար երբ Տէրոջը առջև կու
գայ, հիւսիսային դրան ճամբէն մտ-
նողը հարաւային դրան ճամբէն ելլէ,
և հարաւային դրան ճամբէն մտնողը
հիւսիսային դրան ճամբէն ելլէ. մտած

դրան ճաղերէն չդաձնայ, այլ անոր դի-
10 մացնէն կլլէ։ Եւ իշխանն անոնց մէջտեղ
տեղն անոնց հետ մտնէ, և անոնց հետ
միասին դուրս ելլէ։
11 Եւ տօներու մէջ և հանդիսաւոր օ-
րերու մէջ հացի ընծան զատ-
րակի համար՝ արդու մը, և ամէն խոյի
համար արդու մը ըլլայ, և գառնոց
համար՝ ձեռքին եկածը, և իւղ բաժան-
իւղ արդուի համար մէկ հինէն իւղ ըլ-
12 լայ։ Եւ երբ իշխանը կամաւոր ողջա-
կէզ մը, կամ կամաւոր խաղաղութեան
զոհ մը Տէրոջը մատուցանելու ըլլայ,
դէպ արեւելք նայող դուռն անոր բա-
նան, և անիկա իւր ողջակէզը և խա-
զաղութեան զոհը մատուցանէ, ինչպէս
որ շաբաթ օրը կը մատուցանէ, և ելլէ.
և անոր ելլելէն ետքը դուռը զոցին։
13 Եւ ամէն օր մէկ տարեկան անարատ
գառնուկ մը Տէրոջը ողջակէզ մատու-
ցանես, ամէն առաւօտ մատուցանես
14 զայն։ Եւ անոր հետ ամէն առաւօտ
արդուին վեցերորդ մասն հացի ընծայ
մատուցանես, և հիմնական երրորդ մասը
իւղ՝ նաշտայ հետ խառնելու համար.
ասիկա յաւիտենական կանոնով Տէրոջը
15 մշտնջենաւոր ողջակէզ ըլլայ։
16 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Երբ իշ-
խանը իւր որդւոց մէկուն պարգեւ տայ,
անոր ժառանգութիւնն անոր որդւոց
ըլլայ. անիկա ժառանգութեան կա-
17 րգած ըլլայ անոնց. իսկ երբ իւր ժա-
ռանգութենէն իւր ծառաներուն մէ-
կուն պարգեւ տայ, անոնն անիկա
մինչև թողութեան տարին անոր պիտի
ըլլայ, յետքը իշխանին պիտի դառնայ.
միայն թէ անոր ժառանգութիւնը միայն
18 անոր որդւոց պիտի ըլլայ։ Եւ իշխանը
ժողովուրդին ժառանգութենէն չառ-
նու՝ զանոնք իրենց կալուածէն զրկե-
լով. իւր որդւոցը իւր կալուածէն
ժառանգութիւն տայ, որպէս զի իմ
ժողովուրդս իւրաքանչիւր իւր կա-
լուածէն չցրուի։
19 Եւ զիս դրան քով եղող մուտքէն
քահանաներուն դէպ ի հիւսիս նայող
սուրբ սենեակներուն տարաւ, և ահա
հոն եւս կողմերը դէպ արեւմուտք
20 անդ մը կար։ Եւ ինծի ըսաւ, Ասիկա
այն տեղն է ուր քահանաները յան-
ցանքի պատարագին և մեղաց պատա-
րագին խաշը պիտի խաշեն, և հաց
թխեն, մի գուցէ զանոնք դուրսի
դատերը հանեն և ժողովուրդը սրբեն։
21 Եւ զիս դուրսի դատերը հանեց, և զիս
գաւթին չորս անկիւններէն անցուց,
և ահա գաւթին իւրաքանչիւր անկիւ-
22 նը մէկ մէկ գաւիթ կար։ Գաւթին չորս
անկիւններուն մէջ քառասուն լաւնքան
երկայնութեամբ և երեսուն լայնու-
թեամբ. չորեքանակի գոյութիւն գա-
ւիթներն կային. չորսին չափը մէկ էր
23 անկիւններուն մէջ։ Եւ անոնց բոլոր-
ակրղ, չորսին ալ բոլորակրղ, լերնէքա-
կորդ մը կար, և այն կարգերուն տակ
չորքանակի եփարաններ չինուած էին։
24 Եւ ինծի ըսաւ, Ասոնք եփոզներուն
տեղերն են, ուր տան պատարագները
ժողովրդեան զոհ պիտի եփեն։

## Գլ. ԽԶ

1 Եւ զիս նորէն տան դրան առջև բե-
րաւ, և ահա արեւելեան կողմէն տանը
սեմին տակէն ջուրեր կ'ելլէին, քանզի
տան երեսը դէպ արեւելք էր. և ջու-
րերը տան աջ կողմին տակէն սեղա-
2 նին հարաւային կողմէն կ'իջնէին։ Եւ
զիս հիւսիսային դրան ճամբէն հանեց,
և զիս դուրսի ճամբան, դուրսի դրան
արեւելք նայող ճամբան պատացուց, և
ահա աջ կողմէն ջուրեր կը վազէին։
3 Այն մարդը որ իւր ձեռքը լար ու-
նէր՝ դէպ արեւելք ելաւ, և հազար
կանգուն չափեց, և զիս ջուրերէն անց-
ուց, և ջուրերը մինչև գարշապարնե-
4 րը կ'ելլէին։ Հազար եւս չափեց, և զիս
ջուրերէն անցուց, և ջուրերը մինչև
ծունկերս կ'ելլէին։ Հազար եւս չափեց,

*Կամ պլոխիկ



և զիս ջուրերէն անցուց, և ջուրերը
5 մինչև մէջքս կ'ելլէին։ Նորէն հազար չ-
չափեց, և այնպիսի գետ մը էր, որ
չէի կրնար անցնիլ. վասն զի ջուրե-
րը յարձած էին, և լաստ մարդ չէր կրնար
անցնիլ բայց միայն լողալով։
6 Անոնան ինծի ըսաւ, Տեսա՞ր, որդի
մարդոյ. և զիս առաւ և գետին ե-
7 զերքը պարզացուց։ Եւ մինչ հոն կը պր-
տաւակի, անտաց որ գետին եզերքը մէկ
կողմէն և միւս կողմէն շատ ծառեր
8 կային։ Եւ ինծի ըսաւ, Այս ջուրերն
արեւելեան կողմը կ'ելլեն և անապատ
կ'իջնեն և ծովը կ'երթան. և ծովը ե-
լլելով ջուրերը բժշկութիւն կը
9 գտնեն։ Եւ եղեռնին ամէն գացած ա-
զգը ամէն շարժուն կենդանիք պիտի
ապրին, և ձուկերը խիստ շատ պիտի
ըլլան. քանզի այս ջուրերն հոն պիտի
երթան, և գետնին ամէն գացած տեղը
բժշկութիւն պիտի ըլլայ, և պիտի ապ-
10 րին. Եւ անոր վրայ նեղադիծ մինչև
Ենգեդլիմ ձկնորսներ պիտի կայնին,
հոն ուռկաններ վռնելու տեղ պիտի ըլ-
լայ. ձուկերը տեսակ տեսակ պիտի ըլ-
լան, մեծ ծովուն ձուկերուն պէս խիստ
11 շատ պիտի ըլլան։ Բայց անոր ապականից
տեղերուն և ճահիճները բժշկութիւն
պիտի չգտնեն, անոնք աղի համար պի-
12 տի տրուին։ Եւ գետին եզերքը մէկ
կողմէն և միւս կողմէն ամէն պտղաբեր
պտղատու ծառ պիտի բուսնի, որոց
տերեւը պիտի չթառամի և պտուղը չը
հատնի. ամէն ամիս նորէն պտուղ պի-
տի տան, վասն զի անոր ջուրերը սրբ-
րարանէն կ'ելլեն. և անոնց պտուղը՝
կերակրոյ համար, և տերեւները բժշ-
կութեան համար պիտի ըլլան։
13 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Այս է
երկիրն որ ձեր ազգ ազգ պիտի ժա-
ռանգէք իսրայէլի տասներկու ցեղե-
րուն համեմատ. (Յովսէփ երկու բաժին
14 պիտի ժառանգէ.) Եւ զայն ամէն մարդ
իւր եղբօրը պէս պիտի ժառանգէ,
զոր որ իմ ձեռքս վերցուցի որ զայն
ձեր հայրերուն տամ. և այս երկիրը
15 ձեզի ժառանգութիւն պիտի իյնայ։ Եւ
երկրին սահմանն այս է. Հիւսիսային
կողմը՝ մեծ ծովէն ելի ճամբան մին-
16 չև Սեդադ, Եմաթ, Բերոթա, Սիբրա-
իմ որ Դամասկոսի սահմանին և Ե-
մաթի սահմանին մէջտեղն է, և Հա-
Ազրանի սահմանը եղող Ազեր-աթթի-
17 քոնի սահմանը Եփէնի մինչև
Ազար-Ենան որ Դամասկոսի սահմանին
է դէպ ի հիւսիս, նաև Եմաթի սահմա-
նը պիտի ըլլայ. և հիւսիսային կողմն
18 այս ըլլայ։ Եւ արեւելեան կողմը Ազրա-
նի մէջէն և Դամասկոսի մէջէն և Գա-
զաադի մէջէն և Յորդանանու երէ Իջե-
իսրայէլի երկրին մէջէն, սահմանէն մին-
չև արեւելեան ծովը, չափէք. և արև-
19 լեան կողմն այս ըլլայ։ Եւ դէպ ի հա-
րաւ հարաւային կողմը Թամարէ մին-
չև Վիճաբանութեան ջուրերը Կադէսի
մէջ և մինչև մեծ ծովը երթալու հեղգա-
ծը պիտի ըլլայ. և դէպ ի հարաւ հա-
20 րաւային կողմն այս ըլլայ։ Եւ արեւմ-
տեան կողմը մեծ ծովը պիտի ըլլայ
սահմանէն մինչև Եմաթի դիմացը. ա-
րեւմտեան կողմն այս ըլլայ։
21 Եւ այս երկիրը ձեզի բաժնէք իսրա-
յէլի ցեղերուն համեմատ, և զայն ժա-
22 ռանգութեան համար վիճակով բաժ-
նէք թէ ձեզի, և թէ ձեր մէջ բնակ-
ող և ձեր մէջ զաւակներ ծնանող օ-
տարականներուն. և անոնք ձեզի բնակ-
ներուն պէս պիտի ըլլան իսրայէլի որդւոց
մէջ, և անոնք ձեզի հետ ժառանգու-
թիւն պիտի առնուն իսրայէլի ցեղերուն
23 մէջ։ Եւ որ ցեղին մէջ որ օտարական
պանդխտացած է, հոն անոր ժառանգու-
թիւն պիտի տաք, կ'ըսէ Տէր Եհովան։

## Գլ. ԽՇ

1 Եւ ցեղերուն անուններն այս են։ Հիւ-
սիսի ծայրէն, Եթլոնի ճամբուն քով
դէպ Եմաթ երթալով, մինչև Ազար-Ե-

*Նէբր. լողալու ջուրերը, անանցանելի գետ նշանակէ։
†Կամ երկու գետերուն

նան ընդ Դամասկոսի սահմանն է դէպ
ի հիւսիս մինչեւ Եմաթի փակ, և արև-
ելեան կողմէն մինչեւ արեւմուտք Դա-
2 ման մէկ բաժին ըլայ։ Եւ Դամի սահմա-
նին փակ, արեւելեան կողմէն մինչեւ ա-
րեւմտեան կողմը, Աաերի մէկ բաժին ըլ-
3 լայ։ Եւ Աաերի սահմանին փակ, արև-
ելեան կողմէն մինչեւ արեւմտեան կողմը,
4 Նեփթաղիմի մէկ բաժին ըլայ։ Եւ Նեփ-
թաղիմի սահմանին փակ, արեւելեան
կողմէն մինչեւ արեւմտեան կողմը, Մա-
5 նասէի մէկ բաժին ըլայ։ Եւ Մանասէի
սահմանին փակ, արեւելեան կողմէն մին-
չեւ արեւմտեան կողմը, Եփրեմի մէկ բա-
6 ժին ըլայ։ Եւ Եփրեմի սահմանին փակ,
արեւելեան կողմէն մինչեւ արեւմտեան
7 կողմը, Ռուբենի մէկ բաժին ըլայ։ Եւ
Ռուբենի սահմանին փակ, արեւելեան
կողմէն մինչեւ արեւմտեան կողմը, Գա-
դայի մէկ բաժին ըլայ։
8 Եւ Գադայի սահմանին փակ, արեւե-
լեան կողմէն մինչեւ արեւմտեան կողմը,
պիտի ըլայ այն ընծան զոր պիտի նուի-
րէք, և անկէ քառանկիւնի հազար եղէգ
լայնութիւն, և միւս բաժիններուն մի-
կտեն չափ երկայնութիւն ալեկոծ ջուր
եղայ, արեւելեան կողմէն մինչեւ արև-
մտեան կողմը։ և սրբարանն անոր մէջ-
9 տեղ պիտի ըլայ։ Տէրոջը նուիրելու ձեր
ընծան քառանկիւնի հազար երկայնու-
թիւն, և տասը հազար լայնութիւն ու-
10 նենայ։ Եւ սուրբ ընծան տասնց ըլլայ,
այսինքն քահանաներուն. հիւսիսին
երկայնութիւնը քսան և հինգ հազար, և
արեւմուտքին լայնութիւնը տասն հա-
զար, և արեւելքին լայնութիւնը տասն
հազար, և հարաւին երկայնութիւնը
քսանևհինգ հազար եղէգ։ և Տէրոջը
11 սրբարանն անոր մէջտեղ ըլլայ։ Սա-
դոկի որդիներէն սրբուած
քահանաներուն ըլլայ, որ իմ պահպա-
նութիւնս պահեցին, և երբ Իսրայէլի
որդիքը մոլորեցան, անոնք չմոլորեցան,
ինչպէս որ Ղեւտացիները մոլորեցան։
12 Եւ երկրին ընծայէն, այս ընծան անոնց
համար ամենասուրբ պիտի ըլլայ Ղե-
ւտացւոց սահմանին փակ։
13 Եւ քահանայից սահմանին փակ Ղե-
ւտացւոց քսանևհինգ հա-
զար երկայնութեամբ և տասն հազար
լայնութեամբ։ բոլոր երկայնութիւնը
քսանևհինգ հազար, և լայնութիւնը
14 տասն հազար ըլլայ։ Եւ անկէ պիտի
չծախեն և չփոխեն, և երկրին երա-
խայրին առաջին չպատճառեն, վասն
զի անիկա Տէրոջը նուիրուած է։
15 Եւ քսանևհինգ հազարին փակ լայ-
նութենէն միացած հինգ հազարն ան-
սուրբ պիտի ըլլայ քաղաքին համար,
բնակութեան համար և արուարձաններ-
ուն համար, և քաղաքն անոր մէջ-
16 տեղ ըլլայ։ Եւ անոր չափերն ասոնք
ըլլան. Հիւսիսային կողմէ՝ չորս հազար
հինգ հարիւր, և հարաւային կողմէ՝
չորս հազար հինգ հարիւր, և արևել-
եան կողմէ՝ չորս հազար հինգ հարիւր,
և արեւմտեան կողմէ՝ չորս հազար հինգ
17 հարիւր։ Եւ քաղաքին արուարձանը
դէպ ի հիւսիս՝ երկու հարիւր քսան,
և դէպ ի հարաւ՝ երկու հարիւր քի-
սան, և դէպ արեւելք երկու հարիւր
քսան, և դէպ արեւմուտք երկու հա-
18 րիւր քսան ըլլայ։ Եւ սուրբ ընծային
փակ երկայնութենէն միացած դէպ ա-
րեւելք տասն հազարը, և դէպ արև-
մուտք տասն հազարը (որ սուրբ ըն-
ծային փակ է,) անոր բերքը քաղա-
քին ծառայութիւն ընդունողներուն կէ-
19 րակուր ըլլայ։ Եւ քաղաքին ծառայու-
թիւն ընդունողն Իսրայէլի ամէն ցեղե-
րէն պիտի ըլլան։
20 Բոլոր ընծան քառանկիւնի հազարով
քսան և հինգ հազար ըլլայ, և սուրբ
ընծան քաղաքին կալուածոյ հետ
իւրաքանչիւրնիդ մատուցանէք։
21 Եւ սուրբ ընծային և քաղաքին կա-
լուածոյ մէկ կողմն և միւս կողմն
միացածն իշխանին համար ըլլայ։ Նուի-
րուած քառանկիւնի հազարին դիմաց
մինչեւ արեւմտեան սահմանը, և դէպ ա-
րեւմուտք քառանկիւնի հազարին դիմաց
մինչեւ արեւմտեան սահմանը շեղքեր-
ուն բաժիններուն փակ իշխանին համար ըլ-
լայ։ Ասիկա պիտի ըլլայ սուրբ ընծան,



և տաճարին սրբարանն անոր մէջտեղ
22 պիտի ըլլայ։ Իշխանին բաժինին մէջտեղ
եղող Ղեւտացւոց կալուածէն և քա-
ղաքին կալուածէն դուրս։ Յուդայի
սահմանին և Բենիամինի սահմանին
մէջտեղ իշխանին պիտի ըլլայ։
23 Եւ մնացած ցեղերուն, արեւելեան
կողմէն մինչեւ արեւմտեան կողմը, Բե-
24 նիամինի մէկ բաժին ըլայ։ Եւ Բենիա-
մինի սահմանին փակ, արեւելեան կող-
մէն մինչեւ արեւմտեան կողմը, Շմաւոնի
25 մէկ բաժին ըլայ։ Եւ Շմաւոնի սահմա-
նին փակ, արեւելեան կողմէն մինչեւ ա-
րեւմտեան կողմն Իսաքարի մէկ բաժին
26 ըլայ։ Եւ Իսաքարի սահմանին փակ,
արեւելեան կողմէն մինչեւ արեւմտեան
27 կողմը, Զաբուղոնի մէկ բաժին ըլայ։ Եւ
Զաբուղոնի սահմանին փակ, արեւելեան
կողմէն մինչեւ արեւմտեան կողմը, Գադի
28 մէկ բաժին ըլայ։ Եւ Գադի սահմանին
փակ, հարաւային կողմը դէպ ի հարաւ,
Թամարէն մինչեւ Մենեբաթեան ջուրերը
Կադէսի մէկ, և Եգիպտոսի գետը մինչեւ
29 մեծ ծովը կերթայ։ Այս է այն երկիրը զոր Իսրա-
յէլի ցեղերուն վիճակով պիտի բաժ-

նէք ժառանգութեան համար, և ա-
նոնց բաժիններն ասանք են, կ'ըսէ Տէր
Եհովան։
30 Եւ քաղաքին ելքերը ասանք են.
Հիւսիսային կողմէն չորս հազար հինգ
31 հարիւր չափ ըլլալով, (Եւ քաղաքին
դուռներն իսրայէլի ցեղերուն անուն-
ներուն համեմատ պիտի ըլլան.) երեք
դուռ դէպ ի հիւսիս. դուռ մը Ռու-
բենի, դուռ մը Յուդայի՝ դուռ մը
32 Ղեւիի. Եւ արեւելեան կողմէն, չորս հա-
զար հինգ հարիւր չափ ըլլալով, երեք դուռ
պիտի ըլլայ. դուռ մը Շմաւոնի, դուռ
դուռ մը Իսաքարի և դուռ մը Գադի.
33 Եւ հարաւային կողմէն չորս հազար
հինգ հարիւր չափ ըլլալով երեք դուռ
պիտի ըլլայ. դուռ մը Շմաւոնի, դուռ
մը Իսաքարայ և դուռ մը Զաբուղոնի.
34 Արեւմտեան կողմէն ալ չորս հազար
հինգ հարիւր չափ ըլլալով երեք դուռ
պիտի ըլլայ. դուռ մը Գադի, դուռ մը
35 Ասերի և դուռ մը Նեփթաղիմայ. Բո-
լոր շրջապատը տասնեւութ հազար չափ
պիտի ըլլայ. և ան օրէն քաղաքին ա-
նունը *Եհովա-Սամա պիտի ըլլայ։

# ՄԱՐԳԱՐԻՒԹԻՒՆ ԴԱՆԻԵԼԻ

## ԳԼՈՒԽ Ա

1 Յուդայի թագաւորին Եհոյակիմի թա-
գաւորութեան երրորդ տարին Բաբե-
լոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը ե-
րուսաղէմ եկաւ, և զանիկա պաշարեց։
2 Եւ Տէրը անոր ձեռքը տուաւ Յուդա-
յի Եհոյակիմ թագաւորը, և Աստուծոյ
տան անօթներուն մէկ մասը. և անի-
կա զանոնք Սենաար երկիրը իր աստ-
ուծոյն տունը տարաւ, և անօթները
իր աստուծոյն գանձատունը դրաւ։
3 Եւ թագաւորը իր ներքինապետին

Աշփենազին բաւ որ Իսրայէլի որդի-
ներէն և թագաւորական սերունդէն
4 և իշխաններէն բնաւ արատ չունեցող,
գեղեցիկ դէմքով, և ամէն իմաստու-
թեան հմուտ, և գիտութեան տեղեակ
հանճարեղ, և թագաւորին պալատին
մէջ կայնելու կարողութիւն ունեցող
ոտյալ բերէ, և անոնց Քաղդեացւոց
5 գիրը և լեզուն սորվեցունէ։ Եւ թա-

*Աշ-Եհովա՝ Տէրը հոն է

գաւառն անոնց օրհնան առաքիլ ասիմանենց Թագաւորին ազնիւ կերակուրէն
և անոր խմած գինիէն, որ զանոնք եր-
6 կար սաթի պահէ ատեցնէ, և ետ-
քը Թագաւորին առջև կացնին։ Եւ ա-
նոնց մէջ էին Յուդայի որդիներէն Դա-
նիէլ, Անանիա, Միսայէլ և Ազարիա։
7 Եւ ներքինապետն անոնց անուններ
դրաւ. Դանիէլի՝ Բաղտասարաւր, Անա-
նիայի՝ Սեդրաք, Միսայէլի՝ Միսաք,
և Ազարիայի Աբեդնագով դրաւ։
8 Եւ Դանիէլ միտքը դրաւ որ Թագա-
ւորին ազնիւ կերակրով և անոր խմած
գինւոյ չպղծուի. և ներքինապետէն
խնդրեց որ ասոնցմով
9 ինքզինք չպղծէ։ Եւ Աստուած ներքի-
նապետին առջև շնորհք և գիւրութիւն
10 գտնել տուաւ Դանիէլի։ Եւ ներքինա-
պետը Դանիէլի ըսաւ, Ես կը վախնամ
իմ Թագաւոր աիրոջմէս որ ձեր ուտե-
լիքը և ըմպելիքը սահմանեց. վասն զի
ինչո՞ւ համար անկիւս ձեր երեսները
ձեզի հասակակից եղող ուրիշ տղոց երե-
սէն աւրած տեսնէ, և դուք Թագաւո-
11 րին առջև գլուխս կորսնցնէք։ Եւ Դա-
նիէլ ըսաւ *պահապանին զոր ներքինա-
պետը Դանիէլի, Անանիայի, Միսայելի
12 և Ազարիայի վրայ դրած էր, Ծնորհք
ըրէ, քու ծառաներդ տասն օր փորձէ,
և մեզի ուտելու համար ընդհոլին և
13 խմելու համար չուր տուրն։ Եւ քու
առջևդ մեր դէմքը և Թագաւորին
ազնիւ կերակուրն ուտող տղոց դէմքը
երևնան, և ինչպէս որ տեսնես, անոր
14 համեմատ ըրէ քու ծառաներուդ։ Եւ
անոնք այս բանիս համար անոնց մտիկ
ըրաւ, և զանոնք տասն օր փորձեց։
15 Եւ տասն օր եղեր անոնց դէմքը Թա-
գաւորին ազնիւ կերակուրն ուտող ա-
մէն տղոցմէ գեղեցիկ ու գէր
16 երևցաւ։ Ուստի անսեան անոնց ազ-
նիւ կերակուրը և խմելու գինին կը
վերցնէր, և անոնց ընդհոլին կու
տար։
17 Եւ Աստուած այս չորս տղոցմէ ամէն

*Կամ Մելցարի

դպրութեան և խմաստութեան մէջ գի-
տութիւն և հանճար տուաւ. և Դա-
նիէլ ամէն տեսիլ և երազ կը հասկը-
18 նար։ Եւ երբ այն օրերը լրիանալէն ետքը,
ինչպես որ Թագաւորն հրաման ըրած էր
զանոնք բերել, ներքինապետը զանոնք
19 Նաբուգոդոնոսորի առջև տարաւ. Եւ
Թագաւորն անոնց հետ խօսեցաւ, և
անոնց ամենուն մէջ Դանիէլի, Անա-
նիայի, Միսայելի և Ազարիայի պէս չը
գտնուեցաւ. և անոնք Թագաւորին
20 առջև կը կայնէին։ Եւ Թագաւորն ա-
նոնց հարցուցած ամէն խմաստութեան
և դիտութեան վերաբերեալ բաներուն
մէջ զանոնք իր բոլոր Թագաւորու-
թեան մէջ եղող բոլոր մոգերէն և հր-
ացողներէն տասնապատիկ գերազանց
21 գտաւ։ Եւ Դանիէլ մինչև Կիւրոս Թա-
գաւորին առաջին տարին մնաց։

## Գլ. Բ

1 Եւ Նաբուգոդոնոսորայ Թագաւորու-
թեան երկրորդ տարին Նաբուգոդոնո-
սոր երազներ տեսաւ, և անոր ոգին
2 խռովեցաւ և քունը փախաւ։ Եւ Թա-
գաւորը հրամայեց որ մոգերը, հմա-
յողները, կախարդները և Քաղդեա-
ները կանչեն, որպէս զի Թագաւորին
իր երազները պատմեն. և անոնք ե-
կան և Թագաւորին առջև կայնեցան։
3 Եւ Թագաւորն անոնց ըսաւ, Երազ
տեսայ, և իմ ոգիս կը խռովի որ այն
4 երազը գիտնամ։ Եւ Քաղդեացիները
Թագաւորին †Ասորերէն ըսին, Ով Թա-
գաւոր, յաւիտան ողջ կեցիր. ըսէ ե-
րազը քու ծառաներուդ, և մենք ա-
5 նոր մեկնութիւնը կ՚ընենք։ Նոր Մելքոմ Թագաւորն պատասխան տուաւ և Քաղ-
դեացիներուն ըսաւ, †Բանն ինձմէ ելաւ.
եթէ երազը և անոր մեկնութիւնն ինձ
չյայտնէք, դուք կատ կատ պիտի
ըլլաք, և ձեր տուներն պարզոց պի-
6 տի ըլլան։ Բայց եթէ երազը և անոր

*Կամ Քաղդեացին
†Կամ Հրամանը



մեկնութիւնն ինձ խմացուցէք, ինձ
պարգեւներ, տուրք և շատ պատիւ
պիտի առնէք. ուրեմն երազը և անոր
7 մեկնութիւնն ինծի խմացուցէք։ Անոնք
նորէն պատասխան տուին և ըսին,
Թագաւորը Թող ըսէ երազը իր ծա-
ռաներուն, և անոր մեկնութիւնն ի-
8 մացնենք։ Թագաւորը պատասխան
տուաւ և ըսաւ, Ադեկ գիտեմ որ դուք
ժամանակը ծախու կ՚առնէք, վասն զի
կը տեսնէք որ †բանն ինձ եղած է։
9 Բայց եթէ զուք երազն ինծի չյայտ-
նէք, ձեզի համար մէկ վճիռ կայ. վա-
սն զի դուք ձեր մէջ պատրաստ որ
իմ առջևս սուտ և ապականեալ խօսք
մը զրուցէք մինչև որ ժամանակը փո-
խուի. ուստի ըսէք ինծի երազը, որ
գիտնամ թէ պիտի կարենաք անոր
10 մեկնութիւնն իմացնել։ Քաղդեացին-
երը Թագաւորին առջև պատասխան տը-
ուին և ըսին, Երկրի վրայ այնպիսի
մարդ մը չկայ, որ կարող ըլլայ Թա-
գաւորին պահանջած բանն իմացնել.
անոր համար բնաւ Թագաւոր մը, նա-
խապատիւ մը կամ իշխան մը այսպիսի
բան պահանջած չ՚եղեր մը կամ շը-
11 մայգի մը կամ Քաղդեացի մը։ Եւ
Թագաւորին պահանջած բանը դժուա-
րին է, և ուրիշ մէկը չկայ որ պահին
Թագաւորին առջև իմացնէ, բայց
եթէ աստուածները որ մսեղմաց մէջ
չեն բնակիր։
12 Ասոր վրայ Թագաւորը զրգռեցաւ
և շատ բարկացաւ, և հրամայեց որ
Բաբելոնի բոլոր իմաստունները կոտ-
13 րեն։ Եւ հրամանը ելաւ, և իմաստուն-
ները կը կոտորէին. և փնտռեցին
զԴանիէլ և անոր բնկերները որ մեռ-
14 ցնեն։ Այնատեն Դանիէլ իմաստու-
թեամբ և խոհեմութեամբ խօսեցաւ
Թագաւորին պահապան Արիովքի
հետ որ Բաբելոնի իմաստուններուն կոտ-
15 րելու եկած էր։ Ան Թագաւորին իշխա-
նին Արիովքի խօսեցաւ և ըսաւ, Ին-
չո՞ւ համար այս հրամանը Թագաւորին

*Կամ հրամանը

երեսէն չատապ ելաւ։ Անսեան Ա-
16 րիովք բանը Դանիէլի յայտնեց։ Եւ
Դանիէլ մտաւ և Թագաւորին խընդ-
րեց որ իրեն ժամանակ տայ, որ մեկ-
17 նութիւնը Թագաւորին իմացնէ։ Եւ
Դանիէլ իր տունը գնաց, և այս բա-
նը իր ընկերներուն, Անանիայի, Մի-
18 սայէլի և Ազարիայի յայտնեց, Որ այս
գաղտնեաց համար երկնից Աստուծմէն
գիտութիւն խնդրեն, որպէս զի Դա-
նիէլ և անոր ընկերները Բաբելոնի
մեռ իմաստուններուն հետ չկորսնցու-
նեն։
19 Եւ գաղտնիքը գիշերաւան տեսլեան
մէջ Դանիէլի յայտնուեցաւ. անսեան
Դանիէլ երկնից Աստուածն օրհնեց,
20 Դանիէլ խօսեցաւ և ըսաւ, Աստուծոյ
անունը յաւիտեան յաւիտենից օրհ-
նեալ ըլլայ, վասն զի իմաստութիւն և
21 զօրութիւն անոնն է. և ատենները
և ժամանակները փոխադրէ, Թագաւոր-
ներ վերցնող և Թագաւորներ դը-
նադն անկիւս է. անկիւս իմաստուննե-
րուն իմաստութիւն կու տայ, և հան-
22 ճարեղներուն գիտութիւն. Խորտնկ
և ծածկուած բաներն ինք կը յայտնէ,
մութի մէջ եղածը գիտէ, և լոյսն ա-
23 նոր քով կը մնայ։ Նոր քեզի գոհու-
թիւն և փառք կը տամ, ով
իմ հայրերուս Աստուածդ, որ ինծի ի-
մաստութիւն և զօրութիւն տուիր, և
հիմա ինծի գիտցուցիր ինչ որ քենէ
խնդրեցինք, քանզի Թագաւորին բա-
նը մեզի գիտցուցիր։
24 Ուստի Դանիէլ Արիովքի առջև ե-
կաւ, զոր Թագաւորը դրած էր Բաբե-
լոնի իմաստուններուն կորսնցնելու.
գնաց և անոր այսպէս ըսաւ. Բաբե-
լոնի իմաստուններուն մի կորսնցներ,
զիս Թագաւորին առջև տար, և մեկ-
նութիւնը Թագաւորին իմացնեմ։
25 Անսեան Արիովք շատապ գինիէլ
Թագաւորին առջև հանեց, և անոր
այսպէս ըսաւ. Հրէաստանի գերիներէն
մէկը գտայ, որ մեկնութիւնը պի-
26 տի գիտցնէ Թագաւորին։ Պատաս-
խան առաւ Թագաւորը և ըսաւ. Դա-

Նեբելի, որոյ անունը Բաղտասասար ՉԸՐ-
ՈՒՉԻ էր, կարո՞ղ ես գուն իմ տեսած
երազս և անոր մեկնութիւնն ինծի
գիտցունել։
27 Դանիէլ թագաւորին առջեւ պատաս-
խան առաւ և ըսաւ . Թագաւորին
հարցուցած գաղտնիքն իմաստուններն,
հմայողները, մոգերը և բոխա նայող-
ները թագաւորին յայտնելու կարող
28 չեն. Բայց երկնից մէջ գաղտնիք յայտ-
նող Աստուած կայ, և Նաբուգոդոնո-
սոր թագաւորին կը յայտնէ ինչ որ
եաբէ օրերը պիտի ըլլայ։ Ներգդ և
անկողնիդ մէջ գլխուդ տեսերն այս է.
29 Գուն, ով թագաւոր, քու անկողնիդ
մէջ կը մտածէիր թէ ապէ երթը ինչ
պիտի ըլլայ։ և գաղտնիք յայտնողն
30 ըլլալու բանը քեզի գիտցուց։ Եւ այս
գաղտնիքը ոչ թէ ամէն ապրողներէն
աւելի իմաստութիւն ունենալուս հա-
մար ինծի յայտնուեցաւ, այլ մեկնու-
թիւնը թագաւորին գիտցունելու հա-
մար, և որ գուն քու սրտիդ խորհուրդ-
ները գիտնաս։
31 Գուն, ով թագաւոր, կը տեսնէիր
որ ահա մեծ արձան մը կար։ այս մեծ
և շատ պայծառ արձանը քու դիմացդ
կայնած էր, և անոր երեւոյթն ահա-
32 ւոր էր։ Այս արձանին գլուխը զուա-
նակիւթ, անոր կուրծքը և թեւերն ար-
33 ծաթէ, մէջքը և ապդրերը պղնձէ, Սը-
րունքը երկաթէ և ոտքերուն մէկ
մասը երկաթէ և մէկ մասը կաւէ էր։
34 Գուն կը տեսնէիր, մինչև որ քար մը
կարուեցաւ առանց ձեռքի, և այն ար-
ձանին երկաթէ և կաւէ ոտքերուն
35 զարկաւ, և զանոնք փշրեց։ Անոնց
երկաթը, կաւը, պղինձը, արծաթը և
ոսկին միանգամայն փշրուեցան, և ա-
մառուան կալերուն մղկոյն պէս եղան.
և հովը զանոնք տարաւ, և ամենևին
անոնց տեղ չգտնուեցաւ։ բայց արձա-
նը զարնող քարը մեծ լեռ եղաւ, և
36 բոլոր երկիրը լեցուց։ Երազն այս է,
և Թագաւորին առջեւ անոր մեկնու-
թիւնն ըսենք։
37 Ով թագաւոր, գուն Թագաւորաց
Թագաւոր ես, վասն զի երկնից Աս-
տուածը քեզի Թագաւորութիւն, կա-
րողութիւն, զօրութիւն և պատիւ տը-
38 ուած է։ Եւ մարդոց որդիները բոլոր
բնակած տեղերուն մէջ գաշտի գա-
զաններն և երկնից թռչունները քու
ձեռքդ տուած է, և անոնց ամենուն
վրայ դքեզ իշխան դրած է. այն ոսկի
39 գլուխը գուն ես։ Եւ քեզնէ ետքը ու-
րիշ Թագաւորութիւն մը պիտի կանք-
փնէ ցած, և պղնձէ ուրիշ երրորդ
Թագաւորութիւն մը որ բոլոր երկրին
40 պիտի տիրէ։ Եւ չորրորդ Թագաւոր-
ութիւնը երկաթի պէս ամուր պիտի ըլ-
լայ. և ինչպէս որ երկաթն ամէն բան
կը փշրէ և կը մանրէ, նոյնպէս սա այս
ամէն բաները կոտրող երկաթին պէս
41 փշրելով պիտի կոտրէ։ Եւ որովհետև
ոտքերը և մատները, մէկ մասը բրտի
կաւէ և մէկ մասը երկաթէ, տեսար,
այն Թագաւորութիւնը պիտի բաժնը-
ուի, բայց երկաթի պնդութենէն ջ-ՈՒՆ
պիտի ունենայ, քանզի երկաթը սրդ-
42 մուտ կաւի հետ խառնած տեսար։ Եւ
ոտքերուն մատները, մէկ մասը երկա-
թէ և մէկ մասը կաւէ, ըլլալ-ԱՅՆ է ՈՐ
այն Թագաւորութենէն մէկ մասն ա-
մուր և մէկ մասը դիւրաբեկ պիտի
43 ըլլայ։ Եւ տգմուտ կաւին հետ երկա-
թը խառնած տեսնելդ այս է ՈՐ անոնք
մարդոց սերունդին հետ պիտի խառ-
նուին, բայց անոնք իրարու պիտի չը
փակչին, ինչպէս որ երկաթը կաւին
հետ չխառնուիր։
44 Եւ այն Թագաւորներուն օրերը երկ-
նից Աստուածը Թագաւորութիւն մը
պիտի հանէ, որ յաւիտեան պիտի չաւ-
երի, և այս Թագաւորութիւնն ուրիշ
ժողովրդի պիտի չթողուի. անիկա
այս բոլոր Թագաւորութիւնները պիտի
փշրէ և պիտի հատցունէ, և ինք յա-
45 ւիտեան պիտի մնայ։ Որովհետև գուն
առանց ձեռքի լեռնէն կտրած քարը
մը տեսար, և անիկա երկաթը, պղին-
ձը, կաւը, արծաթը և ոսկին փշրեց,
մեծ Աստուածն ապագ եղաբը ինչ ըլլա-
լիքը Թագաւորին գիտցուց. և երազը



ճշմարիտ է, և անոր մեկնութիւնը
հաւատարիմ։
46 Այնուհետև Նաբուգոդոնոսոր Թագա-
ւորը իր երեսին վրայ ինկաւ, և Դա-
նիէլի երկրպագութիւն ըրաւ, և հրա-
մայեց որ ընծայ և անոյշ հոտեր մա-
47 ուցանեն անոր։ Եւ Թագաւորը Դա-
նիէլի պատասխան առաւ և ըսաւ,
Իրաւցնէ ձեր Աստուածն ինքն է
աստուածներուն Աստուածը, և Թա-
գաւորաց Տէրը, և գաղտնիք յայտ-
նող, քանզի գուն կարող եղար այս
48 գաղտնիքն յայտնել։ Այնուհետև Թագա-
ւորը մեծացուց Դանիէլ, և անոր շատ
և մեծ պարգեւներ տուաւ, և զանիկա
Բաբելոնի բոլոր գաւառին վրայ կա-
ռավարիչ, և Բաբելոնի բոլոր իմաստ-
նոց գլխաւորներուն վրայ իշխան դը-
49 րաւ։ Եւ Դանիէլ Թագաւորէն խընդ-
րեց, և Բաբելոնի գաւառին գործոց
վրայ Սիդրաք, Միսաք և Աբեդնագով դրաւ. և Դանիէլ Թագաւորին
գուռն էր։

## Գլ. Գ

1 Նաբուգոդոնոսոր Թագաւոր ոսկիէ
արձան մը չինեց, անոր բարձրութիւնը
վաթսուն կանգուն և լայնութիւնը վեց
կանգուն։ զանիկա Բաբելոնի գաւառը
2 Դուրա գաշտին մէջ կանգնեց։ Եւ Նա-
բուգոդոնոսոր Թագաւորն հրամայեց որ
կուսակալները, նախարարները, կառա-
վարիչները, գաւառականները, դատա-
ւորները, գանձապետները, խորհրդականները, օ-
րէնսգէտները և գաւառներուն բոլոր
իշխանները ժողվուին, որ Նաբուգո-
դոնոսոր Թագաւորին կանգնած ար-
3 ձանին գործոց վրայ գրկին, այսինքն
Սիդրաք, Միսաք և Աբեդնագով, այս
մարդիկը քեզ բանի տեղ չեն դներ,
ով Թագաւոր, քու աստուածներդ չեն
պաշտեր, և քու կանգնած ոսկի ար-
ձանիդ երկրպագութիւն չեն ըներ։
13 Այնուհետև Նաբուգոդոնոսոր սրտմուռ-
Թեամբ և բարկութեամբ հրամայեց որ
Սիդրաք, Միսաք և Աբեդնագով բե-
րեն. ուստի այն մարդիկը Թագաւո-
րին առջեւ բերին. Պատասխան առաւ
14 Նաբուգոդոնոսոր և անոնց ըսաւ, Ով
Սիդրաք, Միսաք և Աբեդնագով, խոր-
հրդո՞վ է որ իմ աստուածներս չեք

պաշտաւք, և իմ կանգնած տակի արձա-
15 նիս երկրպագուԹիւն չէք ընէր. Հիմա
եթէ պատրաստ էք, վաղին, աղնգին,
փնարին, ջուԹակին, տաւղին, տակին և
ամէն տեսակ նուագարաններուն ձայնը
լսած ատենիդ, իյնալ և իմ չնուած ար-
ձանիս երկրպագուԹիւն ընել, աւելի.
բայց եթէ երկրպագուԹիւն չընէք, նոյն
ժամուն բոլորուած կրակի հնոցին մէջ
պիտի նետուիք. և ով է այն Աստուա-
ծը որ զձեզ իմ ձեռքէս պիտի ազատէ։
16 Պատասխան առին Սեդրաք, Միսաք
և Աբեդնագաւ, և Թագաւորին ըսին,
Ով Նաբուգոդոնոսոր, այս բանիս վրայ
չենք պատասխաներ մեր Տիրակալդ.
17 ԹԷն չունինք. Ահա մեր պաշտած Աս-
տուածը մեզ բոլորուած կրակի հնոցէն
ազատելու կարող է, բայ ձեռքէդ ալ
18 զմեզ պիտի ազատէ, ով Թագաւոր. Այ-
սպէս Թէ ոչ, գիտցի քու, ով Թագաւոր, որ մենք քու աստուածդ-
ներդ չենք պաշտեր, և քու կանգնած
ակի արձանիդ երկրպագուԹիւն չենք
ըներ։
19 Այնուհետև Նաբուգոդոնոսոր բարկու-
Թեամբ լեցուեցաւ, և անոր երեսին
եւ ակի վրայ, Սեդրաքի, Մի-
սաքի և Աբեդնագոյի վրայ, և պա-
տասխան տալով հրամայեց որ հնոցը
վառելով տասնուհինգ
20 աւելի վառեն. և իր զօրագլ մէջ ե-
զող զօրաւոր մարդոց հրամայեց զԱնդ-
րաք, զՄիսաք և զԱբեդնագոյ կապել,
21 Այնուհետև այս մարդիկն իրենց անդրա-
վարտեալք, բանիմնիներով, վերարկու-
ներով և գլխարկ հանդերձներով կապե-
ցին, և բոլորուած կրակի հնոցին մէջ
22 նետեցին. Եւ Թագաւորին հրամանը
սաստիկ պնդացաւ և հնոցը չատ
աւելցած բլուրան հուրով, զԱնդրաք,
զՄիսաք և զԱբեդնագոյ վերցուցող
23 մարդիկը կրակին բոցը սպաննեց. Եւ
այս երեք մարդիկը, Անդրաք, Միսաք
և Աբեդնագոյ, կապուած ինկան բոր-
բոքած կրակի հնոցին մէջ։
24 Անսանեն Նաբուգոդոնոսոր Թագա-
ւորն սաստիկ սաստ եղաւ տագնապած,
իր խորհրդականներուն խօսեցաւ և
ըսաւ, Մենք կրակին մէջ երեք կա-
պուած մարդ ձգեցինք. անոնք պա-
տասխան տուին և Թագաւորին ըսին,
25 Այո, ով Թագաւոր. Անիկա պատաս-
խան տուաւ և ըսաւ, Ահա ես կրակին
մէջ չորս արձակուած մարդ կը տես-
նեմ որ կը քալեն, անոնք ամենևին
վնաս չեն կրեր. և չորրորդին դէմքն
26 աստուածներու զաւակ կը նմանի. Ան-
սանեն Նաբուգոդոնոսոր բորբոքած
կրակի հնոցին դրան մօտենալով խո-
սեցաւ և ըսաւ, Ով Բարձեալ Աստու-
ծոյ ծառաներդ, Սեդրաք, Միսաք և
Աբեդնագոյ, դուրս եկէք և հո եկէք.
Անսանեն Սեդրաք, Միսաք և Աբեդ-
27 նագոյ կրակին մէջէն եկան. Եւ կու-
սակալներդ, նախարարներդ և կառա-
վարչներդ և Թագաւորին խորհրդա-
կաններդ ժողովեցան, և տեսան այս
մարդիկը, որոց մարմիններուն վրայ
կրակն ամենևին չէր իշխեց, և անոնց
գլխուն մէկ մազը չվառեցաւ, և անոնց
անդրավարտիքը դոյնը չնետեց. անոնց
վրայ կրակին հոտն անգամ չկար։
28 Պատասխան առաւ Նաբուգոդոնոսոր
և ըսաւ, Օրհնեալ բլլայ Սեդրաքայ, Մի-
սաքայ և Աբեդնագոյի Աստուածը, որ
իր հրեշտակը ղրկեց, և իր ծառա-
ներն ազատեց, զորս որ անոր յու-
սացին, և իրենց մարմիններուն չէ-
ղան տուին, որպէս զի իրենց Աստուածէն զատ ու-
րիշ աստուծոյ ծառայութիւն և երկրր-
29 պագութիւն չընեն. Արդ ես հրաման
կուտամ որ ամէն ժողովուրդ, ազգ
և լեզու որ Սեդրաքայ, Միսաքայ և
Աբեդնագոյի Աստուծոյն դէմ սխալ
բան մը ըսէ, կտոր կտոր բլլայ, և ա-
նոր տունն աւերակոյ բլլայ. վասն զի
ուրիշ աստուած չկայ որ կարող բլլայ
30 այսպէս ազատել. Անսանեն Թագաւորն
աւելի մեծցուց զՍեդրաք, զՄիսաք և
զԱբեդնագոյ Բաբելոնի գաւառին մէջ։



## Գ.: Գ

1 Նաբուգոդոնոսոր Թագաւորը բոլոր
երկրի վրայ բնակող բոլոր ժողովուրդ-
ներուն, ազգերուն և լեզուներուն.
2 Ձեր խաղաղութիւնը չատնայ։ Իմ առիթս
հաճոյ երևցաւ որ Բարձեալ Աստու-
ծոյն ինծի բրած նշանները և հրաշ-
3 ներն յայտնեմ. Անոր նշաններն ի՜նչ
մեծ, և հրաշներն ի՜նչ զօրաւոր են.
անոր Թագաւորութիւնը յաւիտենա-
կան Թագաւորութիւն է, և անոր իշ-
խանութիւնը դարէ՛ դարս կը մնայ։
4 Ես Նաբուգոդոնոսոր երբ իմ տանս
մէջ հանգստացած էի, և պալատիս մէջ կը
5 զուարճանայի, Երազ մեսայ որ զիս
վախցուց. և անկողնիս վրայ իմ խոր-
հուրդներս և իմ գլխուս տեսիլները
6 զիս խռովեցուցին. Ուստի Բաբելոնի
բոլոր իմաստուններդ իմ առջևս բերե-
լու հրամայեցի, որ անոնք ինծի ե-
7 րազին մեկնութիւնը գիտցնեն. Ա-
նոնք եկան, հմայողներ, Քաղդեա-
ցիները և բախտ նայողները եկան, և ես
երազն անոնց ատջև բսի, բայց անոնք
չկրցան մեկնութիւնն ինծի գիտցնել։
8 Եւ վերջապէս Դանիէլ առջևս եկաւ,
որուն անունը իմ աստուծոյս անունոյն
համեմատ Բաղտասասար կը կոչուի. և
որուն ներսի դին սուրբ աստուածներուն
հոգին կայ, և անոր առջև երազը պատ-
9 մեցի, ով Բաղտասասար, պետիհան մեծ
գիտցիր որ քու
մէջդ սուրբ աստուածներուն հո-
գին կայ, և քեզի բնաւ գաղտնիք մը
չնեղու Թիւն չատար, ահա տեսած երա-
զիս տեսիլները, և զուն անոնց մեկ-
նութիւնն բսէ։
10 Իմ անկողնիս մէջ գլուխս տեսիլնե-
րը տասնք էին. Ես կը տեսնէի որ ահա
երկրին մէջ ծառ մը կար, և անոր
11 բարձրութիւնը մեծ էր. Այն ծառը
մեծցաւ և զօրացաւ, և անոր բարձ-
րութիւնը մինչև երկինք հասաւ. և ա-
նիկա բոլոր երկրին ծայրերէն կը տես-
12 նուէր. Անոր տերևները գեղեցիկ և
պտուղն առատ էր, և անոր վրայ ա-
մենուն համար կերակուր կար. գազան
անասուններն անոր տակ կը
նստէին, և երկնից թռչուններն անոր
ոստերուն վրայ կը բնակէին, և ամէն
13 մարմին անկէ կը կերակրուէր։ Անկող-
նիս վրայ գլուխս տեսիլներուն մէջ կը
տեսնէի որ ահա երկինքէն սուրբ պա-
14 հապան մը իջաւ. Անիկա ուժգնով կան-
չեց և այսպէս բսաւ. Ծառը կտրեցէք,
և ոստերը ջիղդ հանեցէք. տերևնե-
րը թօթափեցէք, և պտուղները ցրուե-
ցէք. անոր տակէն անասունները և
15 ոստերէն թռչունները փախչին. Բայց
արմատներուն բունը երկրի մէջ թո-
ղուցէք, և երկաթէ և պղնձէ կապա-
նօք դաշտի խոտերուն մէջ բլլայ, և
երկնից ցօղով թրջուի, և անոր բա-
ժինն անասուններու հետ երկրի խո-
16 տին մէջ բլլայ. Անոր սիրտը մարդու
սրտէն փոխուի, և անոր անասնոյ սիրտ
արուի, և անոր վրայէն եօթն ժամա-
17 նակ անցնի. Այս բանը պահապաններուն
հրամանով է, և այս խնդիրը սուրբ-
ներուն խօսքովն է. որպէս զի ապրող-
ները գիտնան թէ Բարձեալը կը տիրէ
մարդոց Թագաւորութեան վրայ, և
զանիկա իր ուզածին կուտայ, և ա-
18 նոնց վրայ մարդոց անարգը կը դնէ. Ես
Նաբուգոդոնոսոր Թագաւորս այս ե-
րազը տեսայ, և դուն, ով Բաղտասա-
սար, անոր մեկնութիւնն բսէ. վասն
զի իմ Թագաւորութեանս բոլոր իմաս-
տուններդ կարող չեղան ան-
մեկնութիւնն ինծի գիտցնել. բայց դուն
կարող ես, քանզի քու ներսիդ սուրբ
աստուածներուն հոգին կայ։
19 Այնուհետև Դանիէլ որուն անունը Բաղ-
տասասար էր, Թիւր մէկ ժամ հիա-
ցած մնաց, և անոր խորհուրդները
զանիկա խռովեցուցին։ Պատասխան
առաւ Թագաւորը և ըսաւ, Ով Բաղ-
տասասար, երազը կամ անոր մեկնու-
Թիւնը զքեզ չխռովեցնէ. պատաս-
խանեաւ Բաղտասասար և ըսաւ,

---

ՀԱՅ. պատասխան և ասաւ մէ
ՀԱՅ. ժամանակ մէ

Ով մեր իմ, երազը՝ քեզ ասացիներուն,
և անոր մեկնութիւնը քու իշխանիներդ
20 բուդ ըլլայ։ Այն ծառը զոր աեսար՝ որ
մեծցաւ և ուժովցաւ, և անոր բարձրութիւնը մինչև երկինք հասաւ, և
անկից բոլոր երկրի ծչ կը տեսնուէր,
21 Եւ անոր տերևները գեղեցիկ և պտուղն առատ էր, և անոր վրայ ամենուն համար կերակուր կար, անոր
ստկ դաշտի անասունները կը բնակէին, և անոր ոտներուն վրայ երկնից
22 թռչունները կը կենային, Անկից դուն
ես, ով թագաւոր, որ մեծցար և ուժովցար. և քու մեծութիւնդ բարձրացաւ և մինչև երկինք հասաւ, և
քու իշխանութիւնդ մինչև երկրիս
23 ծայրերը հասաւ։ Եւ որովհետև թագաւորը սուրբ պահապան մը տեսաւ
որ երկինքէն իջաւ, և ըսաւ, Ծառը
կտրեցէք և զանիկա ուրեցէք, բայց
անոր արմատներուն բունը երկրի մէջ
թողուցէք, և երկաթէ և պղնձէ կապանօք դաշտի խոտերուն մէջ ըլլայ,
և երկնից ցօղով թրջուի, և անոր բաժինը դաշտի անասուններուն հետ ըլլայ, մինչև որ անոր վրայէն եօթն ժա-
24 մանակ անցնի։ Այս է մեկնութիւնը,
ով թագաւոր, և այս է բարձրելոյն
վճիռը որ իմ թագաւոր տիրոջս վրայ
25 հասած է. Զքեզ մարդոց մէջէն պիտի
վռնտեն, և քու բնակութիւնդ դաշտի անասուններուն հետ պիտի ըլլայ.
և զքեզ պիտի թաղուն որ արջառներ
պես խոտ ուտես, և երկնից ցօղով թրջուիս. և քու վրայէդ եօթն
ժամանակ պիտի անցնի, մինչև որ գիտնաս թէ մարդոց թագաւորութիւնն
վրայ բարձրելոյը կը տիրէ, և զանիկա
26 իւր ուզածին կու տայ։ Եւ որ բուներ թէ այն ծառին արմատներուն
բունը թողուին, այս է որ դուն երկնաւոր իշխանութիւնը ճանչնալէդ ետքը
քու թագաւորութիւնդ քեզի պիտի
27 հաստատուի։ Անոր համար, ով թագաւոր, թող իմ խրատս քեզ հաճոյ
երևնայ. քու մեղքերդ արդարութեամբ և քու անօրէնութիւններդ
ողորմելով *վկկի ձրգէ.՝ Թերևս հանդիստ երկարի։
28 Այս ամենը Նաբուգոդոնոսոր թա-
29 գաւորին վրայ եկաւ։ Տասներկու ամիս հետքը երբ Բաբելոնի թագաւոր-
30 ութեան պալատին վրայ կը ձեմէր, թագաւորը խօսեցաւ և ըսաւ, Այս չէ՞
այն մեծ Բաբելոն զոր ես իմ զօրութեամբս և կարողութեամբս իմ մե-
31 ծութեանս փառքին համար թագաւորութեան տունն շինեցի. Երբ խօսքը
դեռ թագաւորին բերանն էր, երկինքէն ձայն մը իջաւ, Քեզի կ'ըսուի, ով
Նաբուգոդոնոսոր թագաւոր, թագա-
32 ւորութիւնը քեզմէ գնաց. Եւ զքեզ
մարդոց մէջէն պիտի վռնտեն, և քու
բնակութիւնդ դաշտի անասուններուն
հետ պիտի ըլլայ, զքեզ պիտի թողուն
որ արջառներու պէս խոտ ուտես, և
քու վրայէդ եօթն ժամանակ պիտի
անցնի, մինչև որ դիտնաս թէ մարդոց
թագաւորութեան վրայ բարձրելոյը կը
տիրէ, և զանիկա իւր ուզածին կու
33 տայ։ Նոյն ժամուն մէջ այս խօսքը
Նաբուգոդոնոսորայ վրայ կատարուեցաւ, և մարդոց մէջէն վռնտուեցաւ,
և արջառներու պէս խոտ կ'ուտէր և
անոր մարմինը երկնից ցօղով կը թրջուէր, մինչև որ մազերն արծիւներու
ՓՈՒՏՔԵՐԻՆ պէս և եղունգները
թռչուններու ՃԱՊՇՏԵՐԻՆ պէս երկնցան։
34 Եւ այն օրերուն վերջը ես Նաբուգոդոնոսոր այքերս երկինքը վերցուցի, և խելքս ինծի դարձաւ, և Բարձրեալն օրհնեցի, և զովեցի և փառաւորեցի զանիկա որ յաւիտեան կենդանի է, և անոր իշխանութիւնը յաւիտենական իշխանութիւն է, և անոր
35 թագաւորութիւնը դարէ ի դար կը
մնայ։ Եւ երկրիս բոլոր բնակիչները ոչինչի պէս կը համարուին. և անկիա
երկնից զօրագ մէջ և երկրի բնակիչներուն մէջ իւր ուզածը կը գործէ. և
անոր ձեռաց դէմ դնող կամ անոր

*Կամ քաւէ



36 ի՞նչ կ'ընես, բաղ չկայ։ Անատեն
խելքս ինծի դարձաւ, և իմ թագաւորութեանս պատուոյն հետ իմ փառքս և մեծցուցիչ թիւնս ինծի գարձան, և իմ խորհրդականներս և մեծամեծներս զիս փնտռեցին, և իմ
թագաւորութեանս մէջ հաստատուեցայ. և ինծի աւելի մեծ վեհափառութիւն տրուեցաւ։
37 Հիմա ես Նաբուգոդոնոսոր երկինքի
թագաւորը կը գովեմ, կը բարձրացնեմ և կը փառաւորեմ, քանզի անոր
բոլոր գործերը՝ ճշմարտութիւն, և ճամբաներն իրաւունք են, և անիկա կարող է ամբարտաւանութեամբ քալողները խոնարհեցնելու։

## ԳԼ. Ե

1 Բաղտասար թագաւորը իւր մեծամեծներուն հազար հոգւոյ մեծ կոչնակ բրաւ, և հազարին առջև գինի խմեց։
2 Եւ երբ Բաղտասար գինիէն զուարթացաւ, հրամայեց իւր *Հօրը Նաբուգոդոնոսորայ Երուսաղէմի տաճարէն հանած ոսկիի և արծաթի անօթները բերել, որպես զի թագաւորը և անոր մեծամեծները, անոր կանայքն ու հարճերը
3 ձերը անոնցմով խմէին։ Ուստի երուսաղէմ եղող Աստուծոյ տանը տաճարէն հանուած ոսկի անօթները բերին, և թագաւորը և անոր մեծամեծները, անոր կանայքն և հարճերը անոնցմով
4 խմեցին։ Անոնք գինի խմեցին, և ոսկի, արծաթի, պղնձի, երկաթի, փայտի և քարի աստուածները գովեցին։
5 Նոյն ժամուն մէջ մարդու ձեռաց մատեր երան, և ալաստակին դիմաց թագաւորական պալատին պատին ծեփին վրայ գրեցին. և թագաւորն այն
6 գրող ձեռաց թաթը տեսաւ։ Անատեն թագաւորին գոյնը փոխուեցաւ, և անար խորհուրդները խռովեցուցին զինք, այնպէս որ մէջքին յօդուածները կը քակուէին և ծունկերն իրարու կը

*Այլ՝ նախահօրը

7 զարնէին։ Թագաւորը բարձրաձայն աղաղակեց որ հմայզները, Քաղդեացիները և բախտ նայողները բերեն. Թագաւորը Բաբելոնի իմաստուններուն խօսեցաւ և ըսաւ, Ով որ այս գիրը կարդայ և մեկնութիւնն ինծի իմացնէ, ծիրանի պիտի հագնի և անոր պարանոցը ոսկի մանեակ պիտի դրուի, և
8 թագաւորութեան մէջ երրորդ իշխան պիտի ըլլայ։ Ուստի թագաւորին բոլոր իմաստունները եկան, բայց գիրը կարդալու և անոր մեկնութիւնը թագաւորին ցուցնելու կարող չեղան։ Ա-
9 նոնէն գիտցածնին կարող չեղան։ Անատեն Բաղտասար թագաւորը սասպիկ խռովեցաւ և երեսին գոյնը փոխուեցաւ. անոր մեծամեծներն ալ տարափրեցան։
10 Ե- թագուհին թագաւորին և անոր մեծամեծաց խօսքերուն պատճառաւ կոչնակին տունը եկաւ, Ե թագուհին խօսեցաւ և ըսաւ, Ով թագաւոր, յաւիտեան ողջ կեցիր. քու խորհուրդներդ զիրար չխռովեցնեն, և երեսիդ
11 գոյնը չփոխուի. Քու թագաւորութեանդդ մէջ մարդ մը կայ, և անոր ներքոյ դին սուրբ աստուածներուն հոգին կայ, և քու հօրդ օրերն անոր վրայ լոյս, հանճար, և աստուածոյ իմաստութեան պէս իմաստութիւն գտնուեցաւ, և քու հայրդ Նաբուգոդոնոսոր թագաւորը զանիկա մոգերուն, հմայզներուն, քաղդեացիներուն Ե բախտ
12 նայողներուն վրայ իշխան գրաւ։ Քանզի այս հոգիով, այսինքն Դանիէլի, որուն անունը թագաւորը Բաղտասար դրաւ, գերազանց հոգի, գիտութիւն և հանճար կայ երազները մեկնելու, առեղծուածները յայտնելու և դժուարին խնդիրները լուծելու. հիմա Դանիէլ թող կանչուի, և անիկա մեկնութիւնը պիտի իմացնէ։
13 Անատեն Դանիէլ թագաւորին առջև տարուեցաւ. Թագաւորը խօսեցաւ և Դանիէլի ըսաւ, Իմ թագաւոր հօրս հրեաստանի գերեզ-
14 նէրէն եղող Դանիէլ գուն ես. Աստուած քի քեզի համար լսեցի որ քու ներքոյ

դիդ առաւտածներուն հոգին կայ, և քու քովդ լոյս, հանճար և գերազանց
15 իմաստութիւն կը գտնուի ։ Եւ հիմա իմ առջեւս իմաստուններ ։ հմայգիներ բերուեցան, որ այս գրութիւնը կարդան և անոր մեկնութիւնն ինծի գիտցունեն, բայց անոնք չկրցան այս խօսքին
16 մեկնութիւնն իմացունել։ Եւ ես քեզի համար լսեցի որ մեկնութիւններ ածես, և զժուարին խնդիրները լուծելու կարող ես։ հիմա եթէ դուն այն գրութիւնը կարդալու, և անոր մեկնութիւնն ինծի գիտցունելու կարող ըլլաս, ծիրանի պիտի հագնիս, և քու պարանոցդ ոսկի մանեակ պիտի դրուի, և թագաւորութեան մէջ երրորդ իշխան պիտի ըլլաս։
17 Այնտեղ Դանիէլ պատասխան ըրաւ և թագաւորին առջեւ ըսաւ, Քու պարգեւներդ քեզի ըլլան, և ուրիշին ուրիշին տուր. բայց ես այն գրութիւնը թագաւորին պիտի կարդամ, և մեկնութիւնն անոր գիտցունեմ։
18 Ով թագաւոր, Բարձրեալ Աստուածը քու հօրդ Նաբուգոդոնոսորայ թագաւորութիւն և մեծութիւն և պատիւ և
19 փառք տուաւ։ Եւ անոր տուած մեծութենէն բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները անոր երեսէն կը դողային և կը վախնային. անիկա ուզածը կը մեռցունէր և ուզածը ողջ կը թողուր, անիկա ուզածը կը բարձրացունէր և ուզածը կը ցածցունէր։
20 Բայց երբ անոր սիրտը բարձրացաւ, և անոր հոգին ամրտուածութեամբ կարծրացաւ, իր թագաւորութեան աթոռէն ինկաւ, և պատիւն անկէ
21 առնուեցաւ։ Եւ անիկա մարդոց որդիներուն մէջէն վռնտուեցաւ, և անոր սիրտը անասունց պէս եղաւ, և անոր բնակութիւնը վայրենի էշերուն հետ եղաւ. արջառներու պէս խոտ կը կերցունէին անոր, և անոր մարմինը երկնից ցօղովը կը թրջուէր, մինչև որ գիտցաւ թէ մարդոց թագաւորութեան վրայ Բարձրեալ Աստուածը կը տիրէ, և իր ուզած մարդը անոր վրայ
22 կը դնէ։ Եւ դուն, ով Բաղտասար, անոր որդին, քու սիրտդ չխոնարհեցուցիր, թէ և այս ամէնը գիտցար։ Այլ երկինքի Տէրոջը դէմ դրիր բարձրացուցիր, և անոր տան անօթները քու առջեւդ բերին. և դուն և քու մեծամեծներդ, քու կանայդ և հարճերդ ա-նոնցմով գինի խմեցիք. և դուն արծաթէ, ոսկիէ, պղնձէ, երկաթէ, փայտէ և քարէ չտեսնող աստուածները գովեցիր, որ ոչ կը լսեն, ոչ կը գիտեն, և ոչ բան մը գիտեն. և այն Աստուածը որուն ձեռքն է քու շունչդ, և որուն են քու բոլոր ճամբաներդ, չը
23 փառաւորեցիր։ Անոր համար այն ձեռքի թաշն անոր երեսէն դրկուեցաւ,
25 և այս գրուածը գրուեցաւ։ Եւ գրուած գիրն այս է։ *ՄԱՆԷ, ՄԱՆԷ,
26 ԹԵԿԷԼ, ՈՒ ՓԱՐՍԻՆ։" Այս խօսքին մեկնութիւնն այսէ։ Մանէ, Աստուած քու թագաւորութիւնդ համրեց և
27 դուն վերջացուցիր։ Թեկէլ, կշռուի կըշռուեցար և պակաս գտնուեցար։ Փա-
28 րէս, քու թագաւորութիւնդ բաժնուեցաւ և Մարաց և Պարսից արուեցաւ։
29 Այնտեղ Բաղտասար հրամայեց, և Դանիէլի ծիրանի հագուցին և ոսկի մանեակ դրին, և անոր համար մեկնաբան կանչել տուին որ թագաւորութեան մէջ երրորդ իշխան ըլլայ։
30 Հոյն գիշերը Բաղտէացւոց Բաղտա-
31 սար թագաւորն սպանուեցաւ։ Եւ թագաւորութիւնը Մարաց Դարեհ Քաֆաոբ առաւ, երբ իբր վաթսունհինգ տարեկան էր։

## Գլ. Զ

1 Դարեհին դիւրին հաճոյ երեցաւ թագաւորութեան վրայ հարիւր քսան հուսկալ դնել, որ բոլոր թագաւորու-
2 թեան մէջ ըլլան։ Եւ անոնց վրայ երեք հրամանատար, որոց մին էր Դանիէլ։

*Այլեւս՝ Համրուած, համրուած, կըշռուած ու բաժնուած։



որպէս զի այն երեք հաշիւ տային, որ թագաւորին վնաս չըլ-
3 լար։ Եւ այս Դանիէլ դուս հրամանատարներուն և կուսակալներուն նախապահ էր, վասն զի անոր վրայ գերազանց հոգի կար, և թագաւորը միտք ունէր բոլոր թագաւորութեան վրայ զինել զայն։
4 Եւ հրամանատարները և կուսակալները թագաւորութեան գործերուն կողմէն Դանիէլի դէմ պատճառ գտնելու կը ջանային, բայց անոնք բնաւ պատճառ կամ չարութիւն գտնելու կարող չեղան. վասն զի անիկա հաւատարիմ էր, և անոր վրայ բնաւ յանցանք կամ
5 չարութիւն չգտնուեցաւ։ Ուստի այս մարդիկը ըսին, Մենք այս Դանիէլի դէմ առնելուն պատճառ պիտի չգտնենք, բայց եթէ անոր դէմ անոր Աստուծոյն օրէնքոյ կողմանէ գտնենք։
6 Այնտեղ հրամանատարները և կուսակալները թագաւորին քով ժողով եղան, և անոր ըսացին թէ՝ Դարեհ թագաւոր, յաւիտեան ապրի կեցիր։
7 Թագաւորութեան բոլոր հրամանատարները, նախարարները, կուսակալները, խորհրդականները և կառավարիչները խորհրդակից եղան, որ թագաւորին հրաման մը արձակէ, և արգելիչ օրէնք մը հաստատէ, թէ ով որ մինչև երեսուն օր խնդրած ըլլայ
8 քեզ և քեզ նայողներէն զատ մարդ մը կամ աստուած, ով թագաւոր, այս արգելիչ օրէնքը հաստատէ, և հրովարտակը գրէ, որ Մարաց և Պարսից անխախտելի օրի-
9 նաց համեմատ չփոխուի։ Անոր համար Դարեհ թագաւորը հրովարտակը և արգելիչ օրէնքը հաստատեց։
10 Եւ երբ Դանիէլ իմացաւ թէ հրովարտակը հաստատուեցաւ, իր տունը գնաց, և իր պատուհանները իր սենեկին մէջ պատուհաններուն դէպ Երուսաղէմ բաց էին, և օրը երեք անգամ ծնկան վրայ գալով աղօթք կ'ընէր, և իր Աստուծոյն գոհութիւն կը մատուցանէր իբր ա-
11 ռաջին սովորութեան պէս։ Եւ այս մարդիկը ժողվուեցան, և Դանիէլ գտան որ իր Աստուծոյն առջեւ աղօթք
12 և պաղատանք կ'ընէր։ Անոնք մտեցան, և թագաւորին առջեւ թագաւորին արգելիչ օրինաց վրայ բսին, Դուն արգելիչ օրէնք մը չստորագրեցիր, թէ ով որ մինչև երեսուն օր քեզ և թագաւոր, քեզմէ զատ մարդ մը կամ աստուած խնդրէ, որ առիւծներու փոսը պիտի ձգուի։ Թագաւորը պատասխան առաւ և ըսաւ, Այդ խօսքը ճշմարիտ է։ Մարաց և Պարսից
13 անխախտելի օրինաց համեմատ։ Անոնք անոնք պատասխան առին և ըսին թագաւորին առջեւ, Հրեաստանի գերութենէն տղաքներէն Դանիէլ դուն, թագաւոր, քեզի և քու արգելիչ օրէնքիդ բանին տակ չի գներ, ով թագաւոր, այլ օրը երեք անգամ իր
14 խնդրուածքը կը մատուցանէ։ Անոնն թագաւորն այս խօսքը լսածին պէս ինքնիրեն չատ տրտմեցաւ, և իր սիրտը Դանիէլի վրայ դրաւ որ զանիկա ազատէ, և մինչև արեւուն մտնելը կը ջա-
15 նար որ զանիկա ապրեցունէ։ Բայց այն մարդիկը թագաւորին քով ժողվուեցան, և թագաւորին ըսին, Ով թագաւոր, գիտցիր որ Մարաց և Պարսից օրէնքն այս է, որ թագաւորին ամէն հաստատած արգելիչ օրէնքը և հրա-
16 մանը չփոխուի։ Անոնն թագաւորը հրամայեց, և Դանիէլ բերին, և զանիկա առիւծներուն գուբը նետեցին։ Թագաւորը Դանիէլի խօսեցաւ և ըսաւ, Քու Աստուածդ զոր դուն անդադար կը պաշտես, անիկա քեզի պիտի ազատէ։
17 Եւ քար մը բերին և գուբին բերանը դրին, և թագաւորը զանիկա իր կնքովը և իր մեծամեծներուն կնքով կնքեց, որ Դանիէլի վրայ բան մը չփո-
18 խուի։ Ետքը թագաւորը իր տունը գնաց, և գիշերը անօթի անցուց, և իր առջեւ *նուագարաններ բերել չտուաւ. և քունն անկէ փախաւ։

*Կամ համադամ կերակուրներ

19 Եւ թագաւորն արշալուսին կանուխ
եղեալ, և փութով ագռաւներուն գու-
20 բը գնացաւ։ Եւ երբ գուբին մտաւոր,
աղաղակ ձայնով գոչեց Դանիէլին, Ե
թագաւորը խօսեցաւ և ըսաւ Դանիէ-
լի, Ով Դանիէլ, կենդանի Աստուծոյ
ծառան, քու Աստուածդ զոր դուն
անդադար կը պաշտես, կարող եղաւ
21 զքեզ առիւծներէն ազատել։ Անոնն
Դանիէլ թագաւորին բսաւ, Ով թա-
22 գաւոր, յաւիտեան ողջ կեցիր. իմ Աս-
տուածս իր հրեշտակը զրկեց, և ա-
ռիւծներուն բերանը գոցեց, և ինծի
վնաս չտուին. ըսան զի անոր առջև իմ
վրան անմեղութիւն գտնուեցաւ, և
քու առջև դարձեալ, ով թագաւոր, յան-
23 ցանք բրած չեմ։ Անսաւն թագաւորը
շատ ուրախացաւ, և հրամայեց զԴա-
նիէլ գուբէն հանել։ և Դանիէլ դու-
բէն հանեցին, և անոր վրայ ամենևին
վնաս չգտնուեցաւ, ըսան զի իւր Աս-
24 տուածոյն հաւատացաւ։ Եւ թագաւորը հր-
ամայեց, և Դանիէլի վրայ չարախօ-
սութիւն ընող մարդիկը բերին, և զա-
նոնք և անոնց որդիքը և կիներն ա-
ռիւծներուն գուբը նետեցին. և ա-
նոնք դեռ գուբին յատակը չհասած՝
առիւծներն անոնց վրայ տիրեցին, և
անոնց բոլոր ոսկորները փշրեցին։
25 Անսաւն Դարեհ թագաւորը բոլոր
երկրի վրայ բնակող ժողովուրդներուն,
ազգերուն և լեզուներուն այսպէս գր-
26 բեց։ Ձեր խաղաղութիւնը շատնայ։ Ինչ
հրաման եղաւ, որ իմ թագաւորութեան-
նըս բոլոր իշխանութեան մէջ Դանիէ-
լի Աստուծոյն երեսէն դողան և վախ-
նան, ըսան զի անիկա կենդանի Աս-
տուած է և յաւիտեան կը կենայ, և
անոր թագաւորութիւնը չի բառբր, և
անոր իշխանութիւնը մինչև վերջը կը
27 հաւ։ Անիկա ի՛ազատէ և կը փրկէ, և
երկնից մէջ և երկրի վրայ նշաններ և
հրաշներ ի՛յանէ, որ զԴանիէլ առիւծ-
ներուն *բերնէն ազատեց։
28 Եւ այս Դանիէլ Դարեհի թագաւո-

*Բառգր. ձեռքէն

բութեան և Պարսիկ Կիւրոսի թագա-
ւորութեան տաներն յաջողութիւն դը-
ուաւ։

## Գլ. Է

1 Բաբելոնի թագաւորը թագաւորին ա-
ռաջին տարին Դանիէլ երազ տեսաւ, և
իւր անկողնին մէջ իւր գլխուն տեսիլ-
ները. և անոնք երազը գրեց և բանե-
2 րուն համառօտաբար թուեն բսաւ։ Դանիէլ
խօսեցաւ և ըսաւ, Գիշերը տեսիլան
մէջ տեսայ որ ահա երկնից չորս հով-
3 քը մեծ ծովուն վրայ կը յարձակէին։ Եւ
ծովէն չորս մեծ գազաններ ելան, որ
իրարմէ տարբեր էին։
4 Առաջինն առիւծու պես էր, և արծ-
ուոյ թևեր ունէր։ և կը տեսնէի մին-
չև որ անոր թևերը փրցուեցան, և
երկրէն վերացաւ և մարդու պես ոտ-
քերուն վրայ կայնեցաւ։ և անոր մարդ-
ու սիրտ տրուեցաւ։
5 Եւ ահա ուրիշ երկրորդ գազան մը
արջու նման որ մէկ ծոցին վրայ կայ-
նեցաւ, և բերանը ակռաներուն մէջ
երեք կողի ոսկր կար. և անոր այսպէս
բսին։ Ելիր, շատ մսա կեր։
6 Ասկէ ետքը կը տեսնէի, և ահա ըն-
ձառ նման ուրիշ մը որ կռնակին վր-
րայ թռչուն չորս թևեր կային. և այս
գազանը չորս գլուխ ունէր, և անոր
իշխանութիւն տրուեցաւ։
7 Ասկէ ետքը գիշերտան տեսիլներու
մէջ կը տեսնէի, և ահա չորրորդ գա-
զան մը անիկա ահեղ, սոսկալի և շատ
զօրաւոր էր, և անիկա մեծ երկաթէ
ակռաներ ունէր, անիկա կ'ուտէր և
կը փշրէր և մնացածը ոտքով կը կո-
խէր, և իրմէ առաջ եղող բոլոր գա-
զաններէն տարբեր էր, և տասը եղ-
8 ջիւր ունէր։ Երբ ես այն եղջիւրները
կը դիտէի, ահա անոնց մէջ ուրիշ փոքր
եղջիւր մը ելաւ, որուն առջևէն առջի եղ-
ջիւրներուն երեքը խլուեցան. և ահա
այս եղջիւրին վրայ մարդու պես աչքեր և մեծ բաներ խօսող բե-
րան կար։



9 Ես կը տեսնէի մինչև որ աթոռներըդրուեցան, և Հինաւուրցը նստաւ. ա-
նոր զգեստը ձեան պէս սպիտակ և
գլխուն մազը մաքուր բուրդի պէս էր,
անոր աթոռը կրակի բոցի պէս էր և ա-
10 նիւները վառած կրակի պէս էին. Ա-
նոր առջևէն կրակի գետ կ'ելլէր և կը
հոսէր. հազարք հազարաց ծառայու-
թիւն կ'ընէին անոր, և բիւրք բիւրուց
անոր առջև կը կայնէին. առեւանը
բազմեցաւ, և գիրքերը բացուեցան։
11 Անսաւն կը նայէի այն եղջիւրին խօ-
սած մեծ խօսքերուն ձայնին համար,
և նայեցայ մինչև որ այն գազանը ըս-
պանուեցաւ, և անոր մարմինը կոր-
ուսուեցաւ և կրակի բոցերու տրուեցաւ։
12 Եւ մնաց գազաններուն իշխանութիւնը
վերցուեցաւ, բայց մինչև ժամանակ
մը և ատեն մը կենաց երկարութիւն
13 տրուեցաւ անոնց։ Գիշերուան տեսիլ-
ներու մէջ կը տեսնէի, և ահա երկինքից
ամպերով մարդոյ որդւոյն նման մէկը
կուգար, և մինչև Հինաւուրցը հասաւ,
և դանիկա անոր առջև մատուցուցին։
14 Եւ անոր իշխանութիւն, պատիւ և
թագաւորութիւն տրուեցաւ, որ բոլոր
ժողովուրդներ, ազգեր և լեզուներ ա-
նոր ծառայութիւն ընեն. անոր իշխա-
նութիւնը յաւիտենական իշխանութիւն
է որ չանցնիր, և թագաւորութիւնը
չի րառբր։
15 Ես Դանիէլս հոգւով վշտացայ իմ
ներսի մէջս, և իմ գլխուս տեսիլները
16 զիս խռովեցուցին։ Ես կանգնողներէն
մէկուն մատեցայ, և այս ամէնը ճշդ-
րտութիւնն անոր հարցուցի։ Եւ անիկա ինծի խօսեցաւ, և այս բա-
ները անոնց մեկնութիւնը ինծի գիտցուց։
17 Այս չորս մեծ գազանները չորս թա-
գաւորներ են, որ երկրէն պիտի ել-
18 լեն։ Եւ թագաւորութիւնը Բարձրելոյն
սուրբերը պիտի առնեն, և անոնք
պիտի յաւիտեան թագաւորութիւ-
նը յաւիտեան և յաւիտեանս յաւի-
տենից։
19 Ետքը ուզեցի ճշմարիտը գիտնալ
չորրորդ գազանին վրայ, որ բոլոր
միւսներէն սարսռելի էր, և շատ ահեղ
էր. անոր ակռաները երկաթէ, և ը-
նդունգները պղնձէ էին, անիկա կ'ու-
տէր, կը փշրէր և մնացածը կը կոխէր
20 ոտքերով. Եւ անոր գլուխը եղող տասը
եղջիւրներուն վրայ, և միւս եղածին
վրայ որ առջևէն երեքը ինկան, այս-
ինքն այն եղջիւրին վրայ որ աչք և
մեծ բաներ խօսող բերան ունէր, և
21 անոր դէմքը միւսներէն մեծ էր։ Կը
տեսնէի որ այն եղջիւրը սուրբերուն
հետ պատերազմ կ'ընէր, և անոնց
22 յաղթեց, Մինչև որ Հինաւուրցը եկաւ,
և Բարձրելոյն սուրբերուն իրաւունք
տրուեցաւ, և ժամանակը հասաւ որ
23 սուրբերը թագաւորութիւնն առին։ Ա-
նիկա այսպէս բսաւ. Չորրորդ գազանը
երկրի վրայ չորրորդ թագաւորութիւն
պիտի ըլլայ, որ ամէն թագաւորու-
թիւններէն տարբեր պիտի ըլլայ, և
բոլոր երկիրը պիտի ուտէ, և զանիկա
պիտի կոխէ և փշրէ։ Եւ այն տասը եղ-
ջիւրներն որ տասը թագաւորներ են՝
այն թագաւորութենէն պիտի ելլեն,
և անոնցմէ ետքը մէկ ուրիշը պիտի
ելլէ, և անիկա առջիններէն տարբեր
պիտի ըլլայ, և անիկա երեք թագաւոր
24 պիտի կոխէ։ Եւ անոր եղջիւրներն որ տասը թագաւորներ են՝
այն թագաւորութենէն պիտի ելլեն,
և անոնցմէ ետքը մէկ ուրիշը պիտի
ելլէ, և անիկա առջիններէն տարբեր
պիտի ըլլայ, և անիկա երեք թագաւոր
25 պիտի կործանէ։ Եւ Բարձրելոյն դէմ
խօսքեր պիտի ըսէ, և Բարձրելոյն
սուրբերը պիտի մաշէ, և պիտի մտա-
ծէ ժամանակներ և օրէնքներ փոխել,
և անոնք պիտի ձեռքը ժամանակ մը, ժամա-
նակներ և կէս ժամանակ անոր ձեռ-
26 քը պիտի տրուին։ Բայց տեսակաց պիտի
բազմի, և անոր իշխանութիւնը
պիտի վերցուեն, չքանայ մինչև վերջը
բնաջինջ պիտի ընեն և կործանուելու
27 Եւ թագաւորութիւնը և իշխանութիւ-
նը, և բոլոր երկնից տակ եղող թա-
գաւորութեանց մեծութիւնը Բարձրե-
լոյն սուրբերուն ժողովրդեան պիտի
տրուի. անոր թագաւորութիւնը յա-
ւիտենական թագաւորութիւն է, և
բոլոր իշխաններն անոր պիտի ծառա-
յեն և պիտի հնազանդին։
28 Խօսքին վերջը մինչև հոս է։ Ես Դա-
նիէլս իմ խորհուրդներս խառնեցուցին

յոյժ, և երեսիս գոյնը փոխուեցաւ. և այս խօսքը սրտիս մէջ պահեցի։

## Գլ. Է

1 Բաղտասար թագաւորին Բաբելացւոց թեան երրորդ տարին ինծի Դանիէլիս տեսիլ երեցաւ այն առջի տեսածիս 2 ետքը։ Ու տեսիլան մէջ տեսայ և նայեցայ որ տեսած տաենս ես Եղամի գաւառին մէջ եղող Շուշան մայրաքաղաքին էի, և տեսիլան մէջ տեսայ որ Ուլայ գետին քովն էի։ 3 Ես իմ աչքերս վերցուցի և տեսայ, և ահա գետին *քով խոյ մը կայնած էր, և անիկա երկու եղջիւր ունէր, և այն եղջիւրները բարձր էին, և մին քան զմիսա բարձր էր, և այն բարձրը 4 ետքին եկաւ։ Ես տեսայ այն խոյը որ դէպ ի հիւսիս և դէպ ի հարաւ կը զարնէր, և գիսաւոր մը անոր առջեւն չէր կրնար կենալ, և անոր ձեռքէն ազատող չկար։ այլ անիկա իր ուզածին պէս բրաւ և մեծցաւ։ 5 Ես երբ ես կը մտածէի, ահա արեւմուտքէն բոլոր երկրի երեսին վրայ այծեղջ մը եկաւ, և գետնին չէր դպչեր. և խոյը իր աչքերուն մէջտեղ 6 նշանաւոր եղջիւր մը ունէր։ Ես անիկա հասաւ մինչև երկու եղջիւր ունեցող խոյը, զոր տեսայ որ գետին քով կայնած էր, և իր կատաղի զօրու- 7 թեամբ անոր վրայ յարձակեցաւ։ Ես տեսայ որ խոյին մտաեցաւ, և անոր վրայ կատաղելով խոյը զարհաւ, և անոր երկու եղջիւրը կտաւնց։ և խոյն ոյժ չունէր որ անոր առջեւ կայնէր. և զանիկա գետինը զարհաւ և անիկա կոխկռտաց, և ինկը չկար որ խոյն ա- 8 նոր ձեռքէն ազատէր։ Ես այծեղջ քոշը չատ մեծցաւ. և երբ անիկա զօրացաւ, այն մեծ եղջիւրը չորս հովիւ 9 իր չորս նշանաւոր էղէ-ջերէն երան։ Ես

*Նբր. առջևը

անոնց մէկէն փոքր եղջիւր մը ելաւ, և անիկա դէպ ի հարաւ, դէպ արեւելք և դէպ ի փառաւոր երկիրը մեծ- 10 ցաւ. յոյժ։ Ես մինչև երկինց զօրքը մեծցաւ, և զօրքին և աստղերուն գե- 11 տինը ձգեց և զանոնք կոխկռտեց։ Ես մինչև զօրաց իշխանը զինքը բարձրացուց. և անկէ ինծանիլուան որ ղեր- 12 ցուեցաւ, և անոր սրբարանին բնակարանը կործանեցաւ։ Ես *զօրք մը ամբարեալ թեամբ ընծանիլուան որ ղեհն դէմ դրաւ, և ճշմարտութիւնը գետինը ձգեց, և ըրած ամենը գործեց և յաջողեցաւ։ Ես մէկ սուրբ մը 13 խոսեր, և այն խոսողին ուրիշ սուրբ մը բսաւ, Մչտնջենաւոր ըղհէն, և տրոց ամբարշտութեան, և սրբարանին և զօրքին կոխկռտելու տրուելուն տե- 14 սիլը մինչև ե՞րբ պիտի ըլլայ։ Ես անիկա ինծի բսաւ, Մինչև երկու հազար երեք հարիւր †օր. և սրբարանը պիտի մաքրուի։

15 Ես երբ ես Դանիէլս տեսիլը տեսայ, և զինքն կը փնտռէի որ հասկրնամ, ահա իմ դէմացս մարդու կերը- 16 պարանքով մէկը կը կայնէր։ Ես Ուլայ գետնին մէջէն մարդու ձայն լսեցի որ կը կանչէր և կ'ըսէր, Ով Գաբրիէլ, 17 տեսիլը տուր հասկրցնէ։ Ես անիկա իմ կեցած տեղս մտաւ ելաւ. և երբ եկաւ, վախցայ և երեսիս վրայ ինկայ. և անիկա ինծի բսաւ, Հասկրցիր, որ- դի մարդոյ, որ այս տեսիլը վերջին 18 ժամանակին համար է։ Ես երբ անիկա ինծի հետ կը խոսէր, ես թմրած, երեսիս վրայ գետին ինկած էի. և անիկա ինծի դպաւ, և զիս իմ կեցած 19 տեղս կայնեցուց։ Ես բսաւ, Ահա քեզի կ'իմացնեմ իմ վերջը. վասն զի ուրիշ բարկութեան վերջը. վասն զի ուրիշ պե- 20 հէտ վերջի ժամանակին համար է։ Այն փու տեսած խոյդ որ երկու եղջիւր

*Ահա ամբարշտաւ թեան համար՝ մէյ մըն ալ ճշմարտութեան ղհէն դէմ էրէն զօրք տրուեցաւ։

†Նբր. իրիկուան առաւօտ



ունէր, Մարաց և Պարսից թագաւորն է։ 21 Նեղն ես, որ *այծեղջ քոշը Յունաց թագաւորն է. և անոր աչքերուն մէջ- տեղի մեծ եղջիւրն առաջին թագաւորն է։ 22 Ես ես որ կոտրեցաւ, և անոր տեղը չորս թագաւորութիւն պիտի ելլէ, բայց ոչ թէ անոր զօրութեամբ։ 23 Ես անոնց թագաւորութեան վերջը, երբ մեղքերնին լրնան, †անօրէնութիւն ընող թագաւոր մը պիտի ելլէ։ Ես անոր երեսը չկրնան, պինդ երես և խորագէտ 24 թագաւոր մը պիտի ելլէ։ Ես անոր իշխանութիւնը պիտի զօրանայ, բայց ոչ թէ իր զօրութեամբ։ և անիկա սքանչելի կերպով պիտի աւերէ, և պիտի յաջողի և բան պիտի ընէ, և զօրաւորները և սրբոց ժողովուրդը պիտի 25 սրէ։ Ես անոր խելքին միջոցով անոր ձեռքը մէջ նենգութիւնը պիտի յաջողի, և իր սրտին մէջ պիտի հպարտանայ, և խաղաղութեան մէջ շատերը պիտի կորնչցնէ, և իշխանաց իշխանին դէմ պիտի դնէ, բայց 26 առանց ձեռք պիտի կոտրի։ Ես երեկոյեան և առաւօտեան տեսիլը որ բսուեցաւ՝ ճշմարիտ է։ և դուն տեսիլը գոցէ, քանզի շատ օրերու հա- մար է։

27 Ես ես Դանիէլս մարեցայ և քանի մը օր հիւանդացայ. յետոյ ելայ թագա- ւորին գործը տեսայ։ և տեսիլան հա- մար զարմացման մէջ էի, և մէկը չկար որ †ինծի հասկցնէր։"

## Գլ. Ը

1 Առաջին տարին Բաւերսի որդւոյն Բաբելի որ Մարաց տէրունդէն էր և Բաղտէսարայ թագաւորութեան վրայ 2 թագաւոր դրուեցաւ, Անոր թագաւո- րութեան առաջին տարին ես Դանիէլս դիբերբերն իմացայ այն տարիներուն թիւը որոց համար Տէրոջը խօսքը ե- ղած էր Երեմիա մարգարէին, թէ հօ-

*Կամ մազոտ

†Կամ այս բառը իմանար։



թանաւանն տարւով պիտի վերջացնէր երուսաղէմի աւերակներուն։ 3 Ու ես իմ երեսս Տէր Աստուծոյ դարձուցի, ծոմապահու թեամբ, քրձով և մոխրով ազօթք և աղաչանք մատուցանել։ Ես իմ Տէր Աստուծոյս ա- զօթք ըրի, խոստովանեցայ և ըսի, Ո՜, Տէր, մեծ և ահաւոր Աստուած, որ ըղ- քեզ սիրողներուն և քու պատուիրանն- ներդ պահողներուն ուխտ և ողորմու- 5 թիւն կը պահես, Մենք մեղք գործե- ցինք, անօրէնութիւն ըրինք, և ամ- բարշտութիւն ըրինք, և ապստամբ ե- ղանք, և քու պատուիրաններդէդ և 6 իրաւունքէդ խոտորեցանք. Ես քու ծառաներուդ մարգարէներուն մինչ չըրինք, որ մեր թագաւորներուն, մեր իշխաններուն և մեր հայրերուն և երկ- րին բոլոր ժողովրդեան քու անուանդ 7 խօսեցան։ Ով Տէր, քեզի կը վայլէ ար- դարութիւն, և մեզ՝ ամօթ երեսաց, (ինչպէս որ այսօր եղաւ,) Ցուդայի մարդոց, Երուսաղէմի բնակիչներուն և ամէն մերձաւոր և հեռաւոր իսրա- յէլացիներուն այն բոլոր երկիրներուն մէջ ուր դուն զանոնք վտարեցիր՝ անոնց քեզի դէմ ըրած յանցանաց համար։ 8 Ով Տէր, ամօթ երեսաց կը վայլէ մեզ, մեր թագաւորներուն, մեր իշխաննե- րուն և մեր հայրերուն, քանզի քեզի 9 դէմ մեղք գործեցինք։ Իսկ ողորմու- թիւն և ներողութիւն մեր Տէր Աս- տուծոյն կը վայլէ, վասն զի մենք անկէ ապստամբեցանք, 10 և մեր Տէր Աստու- ծոյն ձայնին մտիկ չըրինք որ անոր օ- րինէնքը քալենք, զոր իր ծառաներ- ուն մարգարէից բերնով մեր առջև 11 դրաւ։ Ես բոլոր Իսրայէլ քու օրէնքդ զանց ըրին, և քու ձայնիդ մտիկ չը- նելով խոտորեցան. ուստի Աստուծոյ ծառային Մովսէսի օրինաց մէջ գրուած անէծքը և երդումը մեր վրայ թափե- ցաւ. քանզի Աստոր դէմ մեղք գործե- 12 ցինք։ Ես մեր վրայ մեծ չարիք բերե- լով հաստատեց իր խօսքը զոր մեր վրայ և մեզ դատող մեր դատաւոր- ներուն վրայ խօսած էր. այնպէս որ

Նբուսագլխի մէջ եղածին պէս բոլոր
13 երկնից ազգ չեզաւ։ Մովսեսի օրինաց
մէջ գրուածին պէս այս բոլոր չարիքը
մեր վրայ եկաւ, ասկայն մենք մեր ա-
նօրէնութիւններէն դառնալու և քու
ճշմարտութեանդ խելամուտ ըլլալու
համար մեր Տէր Աստուածն երեսը չա-
14 դախեցնինք։ Եւ Տէրը այս չարեաց հա-
մար հսկելով զայն մեր վրայ բերաւ,
քանզի մեր Տէր Աստուածը իր բոլոր
բերած գործերուն մէջ արդար է։ բայց
15 մենք անոր ձայնին մտիկ չըրինք։ Եւ
արդ, ով Տէր Աստուած մեր, որ քու
ժողովրդդ զօրաւոր ձեռքով եգիպ-
տոսի երկրէն հանեցիր, և քեզի անուն
վաստկեցար ինչպէս որ այսօր կ'երեւի,
մենք մեզք գործեցինք, անբարուս-
16 թիւն ըրինք։ Ով Տէր, քու բոլոր *քա-
ջութեանդ համեմատ չնորհք ըրէ, քու
սուրբ լեռնէդ Սիրուսաղէմ քաղաքին
քու սրտմտութիւնդ և բարկութիւնդ
դառնայ. վասն զի մեր մեղաց համար
և մեր հարց անօրէնութիւններուն հա-
մար Սիրուսաղէմ և քու ժողովրդդ
17 ամէն մեր բոլորտիքը եղողներուն նա-
խատինք եղան։ Եւ հիմա, ով Աստուած
մեր, քու ծառայիդ աղօթքը և աղ-
չանքը լսէ, և Տէրոջը համար քու ա-
մայացած սրբարանիդ վրայ երեսդ
18 փայլեցուր։ Ականջդ խոնարհեցուր, ով
Աստուած իմ, և լսէ, աչքերդ բաց և
տես մեր աւերումներդը և այն քաղաքը
որուն վրայ քու անունդ կոչուած է.
վասն զի մեր արդարութիւններուն համար քու ողորմ-
19 ութեանդ համար։ Ով Տէր, լսէ, ով
Տէր, ներէ, ով Տէր, մտիկ ըրէ և կա-
տարէ. մի ուշանար քեզի համար, ով
Աստուած իմ, քանզի քու քաղաքդ
վրայ և քու ժողովրդեանդ վրայ քու
անունդ կոչուած է։
20 Եւ երբ ես տակաւին կը խօսէի, կ'ա-
ղօթէի, և իմ մեղքս և իմ ժողովուր-
դիս Իսրայէլի մեղքը կը խոստովանէի,
և իմ Աստուածս սուրբ լեռան համար
իմ աղաչանքս իմ Տէր Աստուածս առ-
21 ջև կը մատուցանէի. երբ ես տակաւին
աղօթքի մէջ կը խօսէի, ահա այն մարդը զոր առաջին տեսլեան մէջ տեսայ,
Գաբրիէլ, շուտ մը թռչելով ինծի դը-
22 պուռ երեկոյեան զոհին ատենը, եւ ինծի
հասկցունելով ինծի հետ խօսեցաւ և
ըսաւ, Ով Դանիէլ, հիմա ելայ որ գի-
23 տի խմաստութիւն սորվեցունեմ. քու
աղաչանացդ սկիզբը պատգամ եղաւ,
և ես եկայ որ պատմեմ, վասն զի դուն
Աստուծոյ սիրելի ես. ուրեմն պատգա-
մը մտաք առ և տեսիլը հասկցիր. Ցան-
ցանքը վերջացունելու, և մեղքը հատ-
ցունելու, և անօրէնութիւնը քաւելու,
և յաւիտենական արդարութիւնը բե-
րելու, և տեսիլը և մարգարէութիւ-
նը կնքելու, և սրբոց Սուրբը օծելու
համար քու ժողովրդիդ վրայ և
սուրբ քաղաքիդ վրայ եօթանասուն
24 եօթնեակ որոշուած է։ Եւ գիտցիր և
հասկցիր, որ վերստացիլ նորէն չինե-
լու հրամանը ելլելէն մինչև *Օծեալ իշ-
խանը եօթը եօթնեակ և վաթսուն և
երկու եօթնեակ կայ. և նորէն հրապա-
րակը և պարիսպը պիտի շինուի նեղու-
26 թեան ժամանակներու մէջ։ Եւ վաթ-
սունեերկու եօթնեակին ետքը Օծեալը
պիտի կտրուի, բայց ոչ թէ իրեն հա-
մար. և գալու իշխանին ժողովուրդը
քաղաքը և սրբարանը պիտի աւերէ, և
վերջը հեղեղով պիտի ըլլայ. և մինչև
պատերազմին վերջը աւերումներ սահ-
27 մանուած են։ Եւ եօթնեակ մը շա-
ւերուն հետ ուխտ պիտի հաստատէ,
և եօթնեակին մէջտեղ զոհը և պատա-
րագը պիտի դադրեցունէ. և †աւե-
ղողը պղծութեանց աշտարակին վրայ
պիտի ըլլայ," մինչև որ ասոնցմէն
վրայ նախատհամանեալ կորուստը թա-
փուի։

*ՆԲՔ. Մեսիա

†Կամ աւերող պղծութիւնը աշտարակին վրայ պիտի ըլլայ, և կամ պղծութեանց թևին վրայ աւերողը գէշ է։



## Գլ. Թ.

1 Պարսից կիւրոս թագաւորին երրորդ
տարին խոսք մը յայտնուեցաւ Դանիէ-
լի, որուն անունը Բաղտասարաս կոչուած
էր. և այն խոսքը ճշմարիտ էր, և *մեծ
առաքինութեան վրայ էր." և անիկա խոս-
քը հասկցաւ և տեսլեան տեղեակ ե-
2 ղաւ։ Ան օրերը ես Դանիէլս լման
3 երեք շաբաթ սուգի մէջ էի. Ախոր-
ժելի կերակուր չկերայ և բերանս մս
կամ գինի չմտաւ, և ամենևին նո-
չով չօծուեցայ մինչև որ երեք շաբաթը
լրցնեցաւ։
4 Եւ առաջին ամսուն քսանևչորրորդ
օրը ես Տիգրիս †մեծ գետին ե-
5 զերքն էի. Եւ աչքերս վերցուցի և նա-
յեցայ, և ահա կաւ հագած և մէջ-
քը Ոփազի ոսկի գօտի կապած մարդ
6 մը կար. Եւ անոր մարմինը ակնկարկի
պէս, և երեսը փայլակի երեւոյթի պէս,
և աչքերը կրակի բոցերու պէս, և
թևերը և ոտքերը փայլուն պղնձի գոյ-
նին պէս, և անոր խօսքերուն ձայնը
7 բազմութեան ձայնին պէս էր։ Եւ ես
տեսիլը միայնակ ես Դանիէլս տեսայ,
և ինծի հետ եղող մարդիկ տեսիլը
տեսան, այլ անոնց վրայ մեծ վախ ինկաւ,
8 և փախան որ պահուըռնին։ Եւ ես մի-
նակ մնացի, և այս մեծ տեսիլը տեսայ,
և իմ վրաս ոյժ չմնաց, և իմ վայելչու-
թիւնս այլակերպութեան դարձաւ,
9 և ոյժ չունեցայ։ Եւ անոր խօսքերուն
ձայնը լսեցի, և անոր խօսքերուն
ձայնը լսածիս պէս, քնած, երեսիս
վրայ գետին ինկայ։
10 Եւ ահա ինծի ձեռք մը դպաւ, և
զիս ծունկերուս և ձեռացս թաթխե-
11 րուն վրայ վերցուց։ Եւ ինծի ըսաւ,
Ով Դանիէլ, սիրելի մարդ, քեզի լսե-
լու խօսքերս հասկըցիր, և եղած անդր-
կայնէ, քանզի հիմա քեզի զրկուեցայ։
և երբ անիկա այս խօսքը ինծի ըսաւ,
12 դողալով կանգնեցայ։ Եւ ինծի ըսաւ,
Մի վախնար, ով Դանիէլ, քանզի այն
առաջին օրէն ի վեր որ քու սիրտդ
այս հասկընալու և քու Աստուածդդ
առջև անձդ խոնարհեցունելու,
քու խօսքերդ լսուեցան, և ես քու
13 խօսքերուդ համար եկայ։ Բայց Պար-
սից Թագաւորութեան իշխանը քսան
և մէկ օր իմ երեսիս դէմ կեցաւ. ա-
սկայն ահա Միքայէլ, առաջին իշխան-
ներէն մին, ինծի օգնութեան եկաւ, և
ես հոն Պարսից թագաւորներուն քով
14 մնացի։ Եւ հիմա եկայ որ հասկցունեմ
քեզ ինչ որ պիտի բլլայ եւսքն օրերը
քու ժողովրդիդ, վասն զի տեսիլը
15 գալու օրերուն համար է։ Եւ անիկա
ինծի այսպիսի խօսքեր ըսածին պէս
երեսս դէպ ի գետին ծռեցի և համր
մնացի։
16 Եւ ահա մարդու որդւոց կերպարան-
քով մէկը շրթունքներուս դպաւ, և
բերանս բացի և խօսեցայ, և դիմացս
կանգնողին ըսի, Ով տէր իմ, այս տես-
լեանէ ցաւերս վրաս դարձան, և այլ
17 եւս ոյժ չունեցայ։ Եւ այս իմ տիրոջս
ծառան այս իմ տիրոջս հետ ի՞նչպէս
խօսելու կարող բլլայ, վասն զի հիմա-
կուընէ վրաս ոյժ չկայ, և վրաս չունչ
18 չմնաց։ Եւ այն մարդու կերպարանք
ունեցողը նորէն ինծի դպաւ և զիս
19 զօրացուց։ Եւ ըսաւ, Մի վախնար, ով
սիրելի մարդ, խաղաղութիւն բլլայ քե-
զի, զօրացիր և քաջ եղիր։ Եւ երբ ա-
նիկա ինծի հետ խօսեցաւ, զօրացայ և
ըսի, Թող խօսի իմ տէրս, վասն զի
զօրացուցիր զիս։
20 Եւ անիկա ըսաւ, Գիտե՞ս թէ ինչու
համար քեզի եկայ. և հիմա Պարսից
իշխանին դէմ պատերազմելու պիտի
դառնամ, և երթլուս պէս ահա Յու-
21 նաց իշխանը պիտի գայ։ Բայց ես ճըշ-
մարտութեան գիրքին մէջ գրուածը
քեզի պիտի պատմեմ. և ասոնց *մէջ
մէկը չկայ որ ինծի օգնէ, բայց միայն
ձեր իշխանը Միքայէլ։

*ՆԲՔ. զօրքը մեծ էր, կամ՝ պատերազմը մեծ էր։

*Կամ դէմ

ԳԼ. ԺԱ.

1 Եւ Մարտոց Դարեհ Խաչաբաղին առաջին տարին ես կացուցայ որ զանիկա
2 ուժովացուցեալ և զօրացուցեալ։ Եւ հիմա քեզի ճշմարտութիւն պիտի պատմեմ։ Ահա Պարսից երկրէն մէջ երեք թագաւոր ևս պիտի կայ։ և չորրորդը մեծ հարստութեամբ քան զամենը հարուստ պիտի ըլլայ, և երբ իր հարստութեամբ զօրանայ, ամենը ամբ պիտի հանի Յունաց թագաւորութեան դէմ։
3 Նաև զօրաւոր թագաւոր մը պիտի կայէ, և մեծ իշխանութեամբ պիտի տիրէ, և իր կամացը պէս պիտի ընէ։
4 Եւ կայնելուն պէս անոր թագաւորութիւնը պիտի կոտրի, և երկնից չորս հովիտներուն պիտի բաժնուի. բայց ոչ անոր յաջորդներուն, և ոչ անոր վարած իշխանութեան պէս։ վասն զի անոր թագաւորութիւնը պիտի քակուի, և անոնցմէ ուրիշներուն պիտի ըլլայ։
5 Եւ հարաւի թագաւորը պիտի զօրանայ, և անոր իշխաններէն մին անոր վրայ պիտի զօրանայ և պիտի տիրէ. անոր իշխանութիւնը մեծ իշխանութիւն պիտի ըլլայ։
6 Եւ գալէն մը ետքը իրարու հետ դաշնակցութիւն պիտի ընեն, վասն զի հարաւի թագաւորին աղջիկը հիւսիսի թագաւորին պիտի երթայ հաստատութիւն ընելու համար, բայց բազկի ոյժ պիտի չունենայ։ և այն խոնարհութեան անոր բազուկը պիտի չկարենայ դիմանալ, այլ այն աղջիկը և զանիկա բերողները և զանիկա ծնանողը և զանիկա ժամանակներուն հաստատ զօրացուցողը ձեռք պիտի տրուին։
7 Բայց անոր արմատներուն ընձիւղներէն մին պիտի կայէ անոր տեղը, և անիկա զօրքով պիտի գայ, և հիւսիսի թագաւորին ամրոցները պիտի մտնէ, և անոնց մէջ բան պիտի ուներ և յաղթէ։
8 Թող պիտի ըլլայ։ Եւ անոնց աստուածներն ալ ձուլածոյ կուռքերուն և ոսկեղէն և արծաթեղէն ընտիր առանները բուն հետ Եգիպտոս գերու թեան պիտի տանի։ և անիկա հիւսիսի թագաւորէն աւելի շատ տարիներ պիտի կայնի։
9 Որ հարաւի թագաւորին թագաւորութեան մէջ պիտի մտնէ, և նորէն իր երկիրը պիտի դառնայ։
10 Եւ անոր որդիքը պատերազմի պիտի կելլեն, և շատ զօրաց բազմութիւն պիտի ժողվեն, ինքն ալ անպատճառ պիտի գայ և հեղգի պէս պիտի անցնի, և դարձեալ մինչև անոր ամրոցը պիտի պատերազմի։ Իսկ հարաւի թագաւորը պիտի կատղի և պիտի կելլէ, և անոր հետ, այսինքն հիւսիսի թագաւորին հետ, պատերազմ պիտի ընէ։ ան ալ շատ բազմութիւն առաջ պիտի հանէ, բայց բազմութիւնն անոր ձեռքը պիտի
12 արուի։ Եւ իրը այն բազմութիւնն առնէ, անոր սիրտը պիտի բարձրանայ, և բիւրաւորներ պիտի կործանէ, բայց
13 պիտի չզօրանայ։ Քանզի հիւսիսի թագաւորը պիտի դառնայ, և առջինէն աւելի բազմութիւն առաջ պիտի հանէ, և քանի մը տարի ետքը մեծ զօրքով և մեծ պատրաստութեամբ անդադար
14 պիտի գայ։ Եւ այն ժամանակներուն հարաւի թագաւորին վրայ շատերը պիտի կելլեն. և քու ժողովրդիդ բռնաւորներուն որդիքը ոտք պիտի կելլեն տեսիլը կատարելու համար, բայց պիտի
15 գլորին։ Եւ հիւսիսի թագաւորը պիտի գայ, և հողաբլուր պիտի կանգնէ, և պարսպած քաղաքները պիտի առնու։ և հարաւի խոնարհները բազկները, և անոր ընտրեալները պիտի չդիմանան, և ոչ դիմանալու ոյժ պիտի ու-
16 նենան։ Նէնաւ։ Եւ անոր վրայ եկողը իր ուզածին պէս պիտի ընէ, և անոր երեսին դէմ դնող պիտի չըլլայ, և վայելուչ երկրին մէջ պիտի կենայ, որ
17 անոր ձեռքով պիտի աւրի։ Եւ երեսը պիտի ուղղէ իր բոլոր թագաւորութեան ուժով գալու, և անոր հետ ուղիղներ պիտի ըլլան, և բան պիտի ուներ
18 նէ. և կանանց աղջիկն անոր պիտի տայ, որ անոր խաթարութիւնն առնէ, բայց անիկա անոր հետ պիտի չկայնի
19 և անոր պիտի չըլլայ։ Ետքը իր երեսը դէպ ի կղզիները պիտի դարձնէ, և շատերը պիտի առնու։ և իշխան մը անոր նախատինքը պիտի դադրեցնէ, և ատկէ զատ անոր նախատինքը վրան պիտի դարձնէ։ Եւ իր երեսը դէպ իր երկրին ամրոցները պիտի դարձնէ, բայց պիտի գլորի, պիտի իյնայ և պիտի չգտնուի։
20 Եւ անոր տեղ մէկը պիտի կելլէ, որ հարկապահանջը պիտի ղրկէ իր թագաւորութեանը փառաց համար։ բայց անիկա քիչ օրերու մէջ պիտի կոտրի, ամպին ոչ բարկութեամբ և ոչ պատերազմով։
21 Եւ անոր տեղ անարգ մը պիտի կելլէ, որուն թագաւորական պատիւ պիտի չտան, բայց անիկա հանդարտութեամբ պիտի գայ, և չողոքորթութիւններով թագաւորութիւնը պիտի
22 առնու։ Եւ անոր առջևէն հեղգի բազուկներով պիտի ընկրկին և պիտի
23 կոտրին, նաև ուխտին իշխանը։ Քանզի անոր հետ դաշնակցութիւն ընելէն ետքը նենգութիւն պիտի ընէ, և պիտի կելլէ և փոքր ազգով պիտի յաղ-
24 թէ։ Անիկա հանդարտութեամբ պատրաստ գտնուածին մէջ պիտի մտնէ, և իր հայրերուն և հարց հայրերուն չըլլած պիտի ընէ. անոնց մէջ աւար և կողոպուտ և առատութիւն պիտի բաշխէ, և մինչև ժամանակ մը պրնպաներուն դէմ իր խորհուրդները
25 պիտի խորհի։ Եւ մեծ զօրքով իր զօրութիւնը և սիրտը պիտի զրդռնի հարաւի թագաւորին դէմ. հարաւի թագաւորն ալ խոտա մեծ և զօրաւոր զօրքով պատերազմի պիտի ելլէ, բայց պիտի չկարենայ դիմանալ. վասն զի անոր
26 դէմ խորհուրդներ պիտի խորհին։ Անոր ռաքիւ կերակուրները ուտողներն անգամ զանիկա պիտի կոտրեն. և ա-

*Կամ փառաւոր մասին։



նոր զօրքը պիտի տրորի, և շատերը
27 ապաւեած պիտի իյնան։ Եւ այս երկու թագաւորաց սիրտը չարութիւն ընելու փչուելու պիտի ըլլայ, և մէկ սեղանի վրայ սուտ պիտի խօսին, բայց պիտի չյաջողի. վասն զի վախճանը ոըոշուած ժամանակի մէջ պիտի ըլլայ։
28 Եւ անիկա շատ հարստութեամբ իր երկիրը պիտի դառնայ, և անոր սիրտը սուրբ ուխտին դէմ պիտի ըլլայ, և բան պիտի ուներ, և իր երկիրը պիտի դառնայ։
29 Որոշուած ժամանակի մէջ պիտի դառնայ, և հարաւի վրայ պիտի երթայ, բայց վերջինն առաջինին պէս պի-
30 տի չըլլայ։ Քանզի կիտացոց նաւերն անոր վրայ պիտի երթան, և անիկա պիտի թուլնայ, և դառնալով սուրբ ուխտին դէմ պիտի բարկանայ, և բան պիտի ուներ. և պիտի դառնայ, և սուրբ ուխտը թողողներուն ուշադրութիւն պիտի ընէ։ Եւ անոր կողմէն բազուկներ պիտի կայնին, և սրբարանը և ամրոցը պիտի պղծեն, և միշտ-
31 ջնեաւոր ընծան պիտի վերցուենն, և աւերող պղծութիւնը պիտի դնեն։ Եւ ուխտին դէմ ամբարշտութիւն ընողները չողոքորթութիւններով գիւր պիտի հանի. բայց իրենց Աստուած ճանչցողներուն ժողովուրդը ոյժ պիտի ընեն
32 և բան պիտի ուներն։ Եւ ժողովուրդին խելացիները շատերուն պիտի
33 ուսուցանեն, և աուեն մը սրոյ, հրոյ, գերութեան և յափշտակութեան պիտի հանդիպին։ Եւ երբ ա-
34 նոնք փոքր մը հանդիպին, փչ մը օգնութիւն պիտի գտնեն, և շատերը չողոքորթութիւններով անոնց պիտի յա-
35 րին։ Եւ խելացիներէն ոմանք ալ քաղքենի պիտի հանդիպին, որպէս զի մինչև վերջին ժամանակը զանոնք փորձէ, մաքրէ և ճերմկցնէ. քանզի մինչև ուսուցման որոշ ժամանակ մը ե-
36 կէ տակաւին։ Եւ այն թագաւորը իր ուզածը պիտի ընէ, և գլուխը բարձր ա-

*Կամ կոխէ, նէբ. յորդէ

առաւածներէն վեր պիտի բարձրանայ եւ պիտի մեծցնէ, եւ աստուածոց Աստուածին դէմ սոսկալի բաներ պիտի խօսի, եւ յաջողութիւն պիտի ունենայ մինչեւ որ բարկութիւնը կատարուի. քանզի նախասահմանուածն ի գործ
37 պիտի դրուի։ Եւ անիկա իւր հարց աստուածներուը բանի տեղ պիտի չդնէ, եւ կանանց ցանկութիւնը եւ բնաւ աստուած մը պիտի չյարգէ, վասն զի զինք ամէնուն վրայ պիտի մեծցնէ.
38 Այլ բերդերուն աստուածն անոր հետ պիտի պատուէ, եւ իւր հայրերուն չճանչցած աստուածը ոսկով, արծաթով, պատուական քարերով եւ
39 ցանկալի բաներով պիտի պատուէ։ Եւ այն օտար աստուածին հետ զօրաւոր բերդերուը մէջ բան պիտի անէ, եւ ղեկի՞ն ճանչցողներուն փառքը պիտի շատցնէ, եւ շատերուն վրայ տիրել պիտի տայ անոնց, եւ երկիրն *իբրեւ վարձ՝ պիտի բաժնէ։
40 Եւ վերջին ժամանակն հարաւի թագաւորն անոր հետ պիտի ծեծկռտի. եւ հիւսիսի թագաւորը կառքով, հեծելովք եւ շատ նաւերով մրրկի պէս անոր դէմ պիտի երթայ, եւ երկիրները պիտի մտնէ
41 նէ եւ կոխելով պիտի անցնի։ Եւ փառաւոր երկիրը պիտի մտնէ, եւ շատ Էլիէրներ վերվայր պիտի ըլլան. բայց անոր ձեռքէն ասոնք պիտի ազատին. Եդոմ, Մովաբ եւ Ամմոնի որդոց
42 գլխաւոր *մա՛սը։ Եւ իր ձեռքը երկիրներուն վրայ պիտի երկնցունէ, եւ Եգիպտոսի երկիրը պիտի չկարենայ ա-
43 զատուիլ։ Եւ ոսկւոյ և արծաթոյ գանձերուն և Եգիպտոսի բոլոր պատուական բաներուն պիտի տիրէ, և Լիբիա-
ցիք և Եթովպացիք անոր †հնազանդ
44 պիտի ըլլան։ Բայց արեւելքէն և հիւսիսէն լուրեր պիտի գան, ե զանիկա պիտի խռովեցունեն. և մեծ բարկութեամբ պիտի երթայ որ շատերը կոտորածի տանի եւ
45 բնաջինջ բնէ։ Եւ պալատներու պէս

*Կամ գնով
†Եբր. քայլերուն մէջ

վրանները *Ծովերուն միջեւ փառաւոր և սուրբ լեռանը վրայ պիտի հանգնէ. բայց անկէ մինչեւ իր վախճանը պիտի հասնի, և անոր օգնութիւն ընող պիտի չըլլայ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ այն ժամանակ քու ժողովուրդիդ որդւոց վրայ կանգնող Միքայէլ մեծ իշխանը պիտի երթայ, և *դժուարին նեղութեան ժամանակ պիտի ըլլայ, որ ազգ ըլլալէն մինչեւ այն աւուրն նմանը եղած չէր. և այն ժամանակ քու ժողովուրդդ պիտի ազատի, այսինքն ով որ
2 գրքին մէջ գրուած գտնուի։ Եւ երկրիս հողին մէջ քնացողներուն շատերը պիտի արթննան, ոմանք յաւիտենական կենաց համար, և ոմանք նախատանաց և յաւիտենական անարգանաց համար։
3 Եւ խելացիները էջին հաստատութեան լուսոյն պէս, և անոնք որ շատերն արդարութեան կ՚առաջնորդեն՝ աստղերու պէս պիտի փայլին յաւիտեանս յաւիտենից։
4 Եւ դուն, ով Դանիէլ, այս խօսքերը գոց, և գիրքը կնքէ մինչեւ վերջին ժամանակը. շատերը †ուշադրութեամբ պիտի կարդան," և գիտութիւնը պիտի շատնայ։
5 Եւ ես Դանիէլս տեսայ որ անոնք ուրիշ երկու մարդիկ կանգնած էին, մին՝ գետին մէկ եզերքը, և միւսը՝ գետին միւս եզերքը։
6 Եւ մէկը ըսաւ այն կտաւ հագած մարդուն որ գետին ջուրերուն վրայ էր՝ Ա՞յս սքանչելի բաներուն վերջը մինչեւ ե՞րբ պիտի ըլլայ։
7 Եւ լսեցի որ այն կտաւ հագած մարդը որ գետին ջուրերուն վրայ էր, իւր աջ և ձախ ձեռքերը երկինք վերցուցնելով յաւիտեան կենդանի եղողին վրայ երդում ըրաւ, որ ժամանակ մը, ժամանակներ, և կէս ժամ՝ պիտի

*Կամ Ծովերուն ու փառաւոր սուրբ լեռանը միջեւ
†Կամ հոս հոն պիտի պտրտին,



լլայ. և երբ սուրբ ժողովուրդին զօրութիւնը բոլորովին ցրուի, ասոնց ա-
8 մէնը պիտի կատարուին։ Եւ ես լսեցի, բայց չհասկցայ. և ըսի,
Ով տէր իմ, ասոնց վերջն ի՞նչ պիտի
9 ըլլայ։ Եւ ան ինձ ըսաւ, Գնա՛, ով Դանիէլ, քանզի այս խօսքերը մինչեւ վերջին ժամանակը գոցուած և կնքուած
10 են։ Շատերը պիտի մաքրուին և պիտի ճերմկնան և պիտի փորձուին, բայց ամբարիշտները ամբարշտութիւն պիտի
ընեն. և բնաւ ամբարիշտ մը պիտի
չհասկնայ, այլ իմաստունները պիտի
11 հասկնան։ Եւ մշանջենական զոհին *վերցուելուն և ապրող պղծութեան դրուելուն ժամանակէն՝ հազար երկու հա-
12 րիւր իննսուն օր պիտի ըլլայ։ Երանի անոր որ պիտի սպասէ, և հազար երեքհարիւր երեսունհինգ օրուան
13 պիտի հասնի։ Բայց դուն գնա մինչեւ վախճանը, վասն զի պիտի հանգչիս, և օրերուն վերջը քու վիճակիդ մէջ պիտի կենայնս։

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՈՎՍԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

1 Տէրոջը խօսքը որ Բէէրիի որդւոյն Ովսէէի եղաւ. Յուդայի թագաւորութեան ոգեայն, Յովաթամի, Ահազու և Եզեկիայի օրերը և Իսրայէլի թագաւորին Յովասի որդւոյն Յերոբովամի օրերը։
2 Ովսէէի միջոցով եղած Տէրոջը խօսքին սկիզբը։ Եւ Տէրը բաւ Ովսէէի, Գնա, քեզի պոռնկութեան կին մը և պոռնկութեան ազգ առ, քանզի երկիրը Տէրոջմէ խոտորելով խիստ շատ պոռնկեցաւ։
3 Եւ անիկա գնաց և Դաբլայիմի աղջիկը Գոմեր առաւ, և անիկա յղացաւ
4 և անոր որդի մը ծնաւ։ Եւ Տէրը անոր բաւ, Անոր անունը Յեզրեէլ դիր, քանզի քիչ ատեն հետքը Յեզրեէլի ձէղ Խափաննե՛ արիւնները Յեհուի տունէն պիտի պահանջեմ, և Իսրայէլի տան թագաւորութիւնը պիտի դադրեցու-
5 նեմ։ Եւ պիտի ըլլայ որ այն օրը Յեզրեէլի հովտին մէջ Իսրայէլի աղեղը պիտի կոտրեմ։
6 Եւ Գոմեր դարձեալ յղացաւ և աղջիկ մը ծնաւ։ Եւ Տէրը բաւ Ովսէէի,

*Կամ վերցուած ժամանակէն մինչեւ աւերող պղծութեան դրուիլը
"Այսինքն՝ չզգոյշանալ։
†Կամ որ անոնց մէկ կերպով մը ներեմ, †Այսինքն՝ իմ ժողովուրդս չէ։

նէ Աստուծոյ արդիքը պիտի բառնայ։
11 Եւ Յակոբայ արդիքը և Իսրայէլի արդիքն իմանայն պիտի ժողովուրդն, և իրենց վրայ եչխան մը պիտի գնեն, և երկրին պիտի լլլեն, քանզի Եհովայեան օրը մեծ պիտի ըլլայ։

## Գլ. Ը

1 Զնոր եղբայրներուդ՝ Ամմի,
եւ ձեր քոյրերուն Րուհամման բսէք։
2 Վիճեցէք ձեր մօրը հետ, վիճեցէք,
Քանզի անիկա իմ կինս չէ,
եւ ես անոր այրը չեմ.
եւ անիկա իր երեսէն իր պոռնկութիւնները,
եւ իր ծնծերուն մէջէն իր շնութիւնները թող վերցնէ։
3 Գուցէ մերկացուցնեմ զնա,
եւ իր ծնած օրուան պէս թողում զնա,
եւ զայնեցնեմ զնա անապատի,
եւ անջուր երկրի պէս բնեմ զնա,
եւ մեռցնեմ զնա ծարաւով։
4 Եւ անոր որդւոց ողորմութիւն պիտի չընեմ,
Քանզի անոնք պոռնկութեան որդիք են։
5 Քանզի անոնց մայրը պոռնկեցաւ ըրաւ,
Զանոնք յղացողը խայտառակութիւն գործեց,
Վասն զի ըսաւ, Իմ համբերներուս ետեւէն երթամ,
Որ իմ հացս և ջուրս, բուրդս և քթանս,
Իւղս և ըմպելիներս ինծի կու տան։
6 Անոր համար ահա ես փուշերով ցանգ պիտի փակեմ ճանապարհն,*
Եւ անոր ԲուրԲուէը պատ պիտի չինեմ,
Որ իւր ճամբաները չկրնայ գտնել։
7 Եւ անիկա իւր համբերներուն կու եւէն պիտի երթայ, բայց անոնց պիտի չհասնի,
Եւ զանոնք պիտի փնտռէ, բայց պիտի չկրնայ գտնել.
Անառանն պիտի ըսէ, երթամ իմ առաջին ամուսնացս դառնամ,
Քանզի անառանն յետագային վիճակն ալ էր քան հիմա։
8 Եւ անիկա չգիտցաւ որ ցորենը և գինին և լեզը ես անոր կու տայի,
Եւ անոր ոսկիներ և ոսկին ես կը բազմացուցնէի,
Որոնք անոնք Բահաղի նուէրներ չընեցին։
9 Անոր համար պիտի դառնամ, և իմ ցորենս իւր եղանակին,
Եւ իմ գինիս իւր որոշ ժամանակին պիտի առնեմ,
Եւ անոր մերկութիւնը ծածկող բուրդը և քթանս ետ պիտի առնեմ։
10 Եւ հիմա անոր համանիներուն առջեւ Անոր անզգամութիւնը պիտի յայտնեմ,
Եւ մարդ մը պիտի չկրնայ զանիկա իմ ձեռքէս ազատել։
11 Եւ անոր բոլոր ուրախութիւնը,
Անոր տօները, ամսագլուխներն և շաբաթները
Եւ բոլոր հանդիսաւոր օրերը պիտի խափանեմ։
12 Եւ պիտի աւերեմ անոր որթերը և թզենիները,
Որոց համար կ'ըսէր Թէ Ասանք իմ համբերներս ինծի սրաւոճ պարգեւներն են,
Եւ զանոնք անտառ պիտի դարձնեմ.
Եւ զանոնք դաշտի գազաններ պիտի ուտեն։
13 Եւ զանիկա պիտի պատժեմ այն օրերուն համար
Որոց մէջ անիկա Բահաղիմներուն խունկ կը ծխէր,
Իւր օղերով և մանեակներով կը զարդարուէր,
Ու իւր համբերներուն կու եւէն կ'երթար,
Եւ զիս մոռցած էր, կ'ըսէ Տէրը։
14 Անոր համար ահա ես զանիկա պիտի համոզեմ,

*Ա. յունարէն՝ իմ ժողովուրդս։
†Ա. յունարէն՝ ողորմեալ։
‡Եբր. քոս ճամբուզ։



Եւ զանիկա անապատ պիտի առնեմ,
Եւ անոր սրտին պէս պիտի խօսիմ։
15 Եւ անկէ անոր պզինները
Եւ Աքորի ձորը յուսոյ դրան համար անոր պիտի տամ,
Եւ հոն իւր մանկութեան օրերուն պէս,
Եւ եգիպտոսի երկրէն ելած օրուան պէս երգը պիտի երգէ։
16 Եւ պիտի ըլայ որ այն օրը, կ'ըսէ Տէրը,
Զիս իմ այրս պիտի կոչես,
Եւ այլեւս զիս իմ Բահաղս պիտի կոչես։
17 Եւ անոր բերանէն Բահաղիմի անուններըը պիտի վերցնեմ,
Եւ անանք այլեւս իրենց անուններով պիտի չյիշուին։
18 Եւ անոնց համար այն օրը
Դաշտի գազաններուն հետ և երկինքց թռչուններուն հետ
Եւ երկրի սողուններուն հետ ուխտ պիտի բնեմ,
Եւ երկրէն աղեղը, սուրը և պատերազմը պիտի կոտրեմ,
Եւ զանոնք ապահովութեամբ պիտի պառկեցնեմ։
19 Եւ զքեզ յաւիտեան ինծի պիտի նշանեմ,
Եւ զքեզ արդարութեամբ, իրաւամբ,
Ողորմութեամբ և գթութեամբ ինծի պիտի նշանեմ։
20 Այո զքեզ ճշմարտութեամբ ինծի պիտի նշանեմ,
Եւ Տէրը պիտի ճանչնաս։
21 Եւ պիտի ըլայ որ այն օրը, կ'ըսէ Տէրը, պատասխան պիտի տամ.
Ես երկինքը պատասխան պիտի տամ,
Եւ անանք երկիրն պատասխան պիտի տան,
22 Եւ երկիրը ցորենով, գինւով և իւղով պատասխան պիտի տայ,
Եւ անանք †Յեզրեաղի պատասխան պիտի տան։
23 Եւ զանիկա ինծի համար երկրի վրայ պիտի սերմանեմ,

*Ա. յունարէն՝ ակբս
†Ա. յունարէն՝ Աստուծոյ սերմանած։

Եւ չողորմելոյն պիտի ողորմիմ,
Եւ իմ ժողովրդիս չըղողին՝ Դուն իմ ժողովուրդս ես, պիտի ըսեմ.
Եւ նա ինծի՝ Իմ Աստուածս ես, պիտի ըսէ։

## Գլ. Գ

1 Անկէ ետքը Տէրը ինծի ըսաւ, Նորէն գնա, էրը բարեկամէն սիրուած չնացող կին մը սիրէ, ինչպէս որ Տէրը Իսրայէլի որդիքը կը սիրէ, թէեւ անոնք օտար աստուածներու կը դառնան, և չամիզկէն կարկանդակներ կը սիրեն։
2 Ուստի զանիկա հինգ հատասանան ոսկի արծաթով և մէկ ու կէս փռա գարւով
3 ինծի առի. Եւ անոր ըսի, Ինծի համար շատ օրեր նստիս, չնութիւն չընես և ուրիշ մարդու չկոմնասս, և ես քեզի համար այնպէս պիտի ըլլամ։
4 Քանզի Իսրայէլի որդիքը շատ օրեր առանց թագաւորի, առանց իշխանի, առանց զոհի, առանց կառոց, առանց եփուդի և թէրափիմի պիտի նստին։
5 Յետքը Իսրայէլի որդիքը պիտի դառնան, և իրենց Տէր Աստուածը և իրենց Դաւիթ թագաւորը պիտի փնտռեն, և ետքի օրերը Տէրոջը և անոր բարութեան պիտի ապաստանին։

## Գլ. Դ

1 Տէրոջը խօսքը մտիկ ըրէք, ով Իսրայէլի որդիք,
Քանզի Տէրը երկրի բնակիչներուն հետ վէճ ունի,
Քանզի երկրի վրայ ճշմարտութիւն չկայ և ողորմութիւն չկայ
Եւ Աստուծոյ գիտութիւնը չկայ։
2 Երդում, սուտիսութիւն, մարգասպանութիւն,
Գողութիւն և շնութիւն բռնկեցած են,
Եւ արիւնները արիւններու կը հասնին։
3 Անոր համար երկիրը սուգ պիտի բռնէ,
Եւ անոր բոլոր բնակիչները
Դաշտի գազաններուն և երկինքց թռչուններուն հետ պիտի նուազին,

Եւ ծոմս ձուկերն եւս պիտի ապառնան։
8 Սակայն մարդ Թող չլինի, և մարդ
Թող չյանդգնանի,
Քանզի քու ժողովրդդ քահանային
հետ վիճողներու պէս է։
5 Ուստի գուն ցորկը պիտի գլորես,
Եւ մարգարէն եւս քեզի հետ դիշերը
պիտի գլորի։
Եւ քու մայրդ բնաջինջ պիտի ընեմ,
6 Իմ ժողովրդս գիտութենէն չունե-
նալուն համար բնաջինջ եղաւ։
Որովհետև գուն գիտութիւնը մերժե-
ցիր,
Եւ ես քեզի պիտի մերժեմ, որ այլևս
ինծի քահանայ չըլլաս.
Եւ որովհետև քու Աստուծոյդ օրէնքը
մոռցար,
Եւ ես քու որդիներդ պիտի մոռնամ։
7 Անոնք որչափ բազմացան,
Այնչափ ինծի դէմ մեզք գործեցին.
Ո՛ւռաբ անոնց փառքն անարգութեան
պիտի փոխեմ։
8 Անոնք իմ ժողովրդիս մեզքը կ'ու-
տեն,
Եւ *իրենց սրտերն անոնց անօրէնու-
թեանը կու տան։
9 Ուրեմն ինչպէս ժողովրդին, նոյնպէս
և քահանային պիտի ըլլայ։
Եւ զանոնք իրենց ճամբաներուն հա-
մեմատ պիտի պատժեմ,
Եւ անոնց իրենց գործերուն փոխարէ-
նը պիտի հատուցանեմ։
10 Եւ պիտի ուտեն, բայց պիտի չյագե-
նան.
Պոռնկութիւն պիտի ընեն, բայց պիտի
չբազմանան.
Քանզի Տէրոջը ուշադրութիւն ընելը
թողուցին,
11 Շնութիւնը, գինին և քաղցուն
Սիրտը դէր իսպառն։
12 Իմ ժողովուրդս իր փայտին կը հար
ցանէ,
Եւ անոր ցուպն անոր կ'իմացուցանէ.
Քանզի պոռնկութեան ոգին պատճառ
դրեր հանեց,
Եւ իրենց Աստուածը թող տալով պոռ-
նկեցան։
13 Լերանց գլուխներուն վրայ կազմեցին,
Եւ բլուրներու վրայ կաղնւոյ, կաղա-
մախի և բնկնկուղ տակ,
Անոնց հովանին հաճելի բլլալուն համար,
Խունկ կը ծխեն.
Անոր համար ձեր աղջիկները պոռնը-
կութիւն պիտի ընեն,
Եւ ձեր հարսները շնութիւն պիտի ընեն։
14 Ձեր աղջիկները պիտի չպատժեմ, երբ
պոռնկութիւն ընեն,
Եւ ոչ ձեր հարսները՝ երբ շնութիւն ընեն.
Քանզի հոգբէն իրենք պոռնիկներու
հետ կը դառնան,
Եւ բոզերուն հետ կը զոհեն.
Ուստի անհանճար ժողովուրդը պիտի
կործանի։
15 Թէև դուն պոռնկութիւն կ'ընես,
ով Իսրայէլ,
Յուդա թող յանցաւոր չըլլայ.
Եւ Գողգոթա մի մտնէք, և Բեթաւան
մի ելլէք,
Եւ Տէրը կենդանի է ըսելով երդում
մի ընէք։
16 Քանզի Իսրայէլ կամակոր երինդի պէս
ապստամբած է.
Հիմա Տէրը լայնատարած տեղ մը գա-
ռանց պէս պիտի արածէ զանոնք։
17 Եփրեմ կուռց յարած է.
Զանիկա թող առ։
18 Անոնց *խնճոյքն ապականած է.
Շատ պոռնկութիւն ըրին.
Յուէք ըսել կը սիրեն,
Ամօթ անոնց իշխաններուն։
19 Հովը զանիկա իր թեւերուն վրայ պի-
տի կապէ,
Եւ անոնք իրենց զոհերէն պիտի ամչ-
նան։

## Գլ. Ե

1 Լսեցէք զայս, ով քահանաներ,

*Կամ զինին



Եւ մնիք ըրէք, ով Իսրայէլի տունը,
Եւ ականջ առէք, ով թագաւորին
տունը,
Քանզի ձեզի համար դատաստան կայ,
Քանզի դուք Մասփայի մէջ՝ որոգայթ,
Եւ Թաբովր վրայ տարածուած վարմ
եղաք.
2 Մոլորածներն սպանու թիւն ընելով հեզ-
է հէլ խորասոյզ եղան,
*Թէև ես անոնց ամենուն խրատ կ'ը-
դայ։
3 Ես զԵփրեմ կը ճանչնամ,
Եւ Իսրայէլ ինէ պահուած չէ.
Այո, հիմա, ով Եփրեմ, դուն շնու-
թիւն կ'ընես,
Ես Իսրայէլ պղծուած է։
4 †Անոնք իրենց գործերը չեն ուզեր,
Որ իրենց Աստուծոյն դառնան,
Քանզի անոնց մէջ պոռնկութեան ոգի
կայ,
Եւ Տէրը չեն ճանչնար։
5 ‡Ուստի Իսրայէլի հպարտութիւն ա-
նոր երեսին առջև պիտի խոնարհ-
հի։
Եւ Իսրայէլ և Եփրեմ իրենց անօրէ-
նութեանմբը պիտի գլորին.
Յուդա եւս անոնց հետ պիտի գլորի։
6 Անոնք իրենց օշխարներով և արջառ-
ներով
Տէրը փնտռելու պիտի երթան, բայց
պիտի չգտնեն.
Անկէ անոնցմէ քաշուեցաւ։
7 Անոնք Տէրոջը անհաւատարմութիւն ը-
րին,
Քանզի օտար ազգ ծնան։
Հիմա իրենց վիճակներով ի վիսաին
||Մէկ ամսուան մէջ պիտի ապահրին։
8 Գաբաայի մէջ շեփոր հնչեցուցէք,
Եւ Ռամայի մէջ՝ տագնապով։

*Կամ Ուստի ես անոնց ամենուն վրայ պատիժ պիտի բերեմ։
†Կամ Իրենց գործերը չեն թո-ղուր,
‡Կամ Եւ Իսրայէլի հպարտութիւնն ա-նոր երեսին դէմ կը վկայէ։
||Եբր. մէկ ամիսը զանոնք պիտի ուտէ։

Բեթաւանի մէջ բարձրաձայն կանչեցէք,
Քու եւսէբդ, ով Բենիամին։
2 զայաւ. Ու Տէրոջը աղօթք ըրաւ և ըսաւ. Ոհ, Տէր, երբ ես դեռ իմ երկիրս էի, իմ խօսքս այս չէի՞ր. սորա համար առաջ թարսիս փախչելու եղայ, քանզի գիտէի որ դուն ողորմած, գթած, երկայնամիտ և բազումողորմ Աստուած ես, և չարեաց համար կը
3 զղջաս։ Ու հիմա, ով Տէր, կ'աղաչեմ, իմ հոգիս ինձմէ առ, քանզի լաւ է ինձ
4 մեռնիլ քան ապրիլ։ Ու Տէրը ըսաւ, "Միթէ այդպէս նեղանալովդ ազէկ կ'ը-
5 նես։" Ու Յովնան դարձաւ քաղաքէն դուրս երթաւ, և քաղաքին արեւելեան կողմը նստաւ, և հոն իրեն տաղաւար մը շինեց, և անոր հովանոցին տակ նստաւ, մինչև որ
6 տեսնէր թէ քաղաքին ինչ պիտի ըլլար։ Ու Տէր Աստուած դդմենոյ մը հրամայեց, և Յովնանու վրայ երաւ անոր գլխուն վրայ հովանի ըլլալու, որպէս զի զանիկա իր տառապանքէն ազատէր. և Յովնան դդմենոյն համար մեծ ուրախութեամբ ուրախացաւ։
7 Ու հետևեալ օրը երբ առաւօտ կ'ըլլար, Աստուած հրամայեց որդի մը որ
8 դդմենին ջարկաւ, և այն չորցաւ։ Ու երբ որ երբ արեւը կը ծագէր, Աստուած խորշակաբեր արեւելեան հովի մը հրամայեց, և արեւը Յովնանու գլխուն վրայ զարկաւ, այնպէս որ անիկա մարեցաւ. և անձինք ինքներն մեռնելով ըսաւ, Լաւ է ինձ մեռնիլ քան ապրիլ։
9 Ու Աստուած Յովնանու ըսաւ, Միթէ դդմենոյն համար նեղանալովդ ազէկ կ'ընես և անիկա ըսաւ, Մինչև ի մեռ նեղանալս ազէկ կ'ընեմ։
10 Անոնոն Տէրը ըսաւ, Դուն դդմենոյն խնայեցիր, որ անոր համար աշխատութիւն չքաշեցիր և զայն չմեծցուցիր, որ մէկ գիշերուան մէջ բուսաւ և մէկ գիշերուան մէջ կորսնցաւ.
11 ու ես պիտի չխնայեմ Նինուէի այն մեծ քաղաքին, որ հարիւր քսան հազարէ աւելի մարդիկ կան, որ աջ և ձախ ձեռաց տարբերութիւնը չեն գիտեր, և նաև շատ անասուններ։

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՄԻՔԻԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Տէրոջը խօսքը որ Յուդայի Թագաւորներուն Յոթամայի, Աքազու և Եզեկիայի օրերը Մօրաշտի Միքիայի եղաւ, և Սամարիայի և Երուսաղէմի վրա-
2 Լսեցէք, ով բոլոր ժողովուրդներ, Մտիկ ըրէ, ով երկիր, և անոր *բոլոր բնակիչները.

*Եբր. լիութիւնը.

*Կամ իրաւ է որ շատ նեղացած եմ։



Ու Տէր Եհովան ձեզի դէմ վկայ ըլլայ, Տէրը իւր սուրբ տաճարէն։
3 Քանզի ահա Տէրը իւր տեղէն կ'ելլէ, Ու պիտի իջնէ և երկրին բարձր տեղերուն վրայ պիտի պարզի։
4 Ու լեռներն անոր տակ պիտի հալին, Ու հովիտները պիտի պատռտին Կրակին առջեւ հալած մոմի պէս Ու գառ ի վայրկեան թափուած ջրոյ պէս։
5 Այս ամէնը Յակոբայ յանցանքոյ համար Ու Իսրայելի տան մեղաց համար է։ Յակոբայ յանցանաց պատճառն ո՞վ է. Ոչ ասպաքէնն Սամարիա՞ Ու Յուդայի բարձր տեղերուն պատճառն ո՞վ է, ոչ Երուսաղէմն Մրտեսատեղ։
6 Ուստի Սամարիա դաշտի քարակոյտի Ու այգի անկելու տեղոյ պիտի դարձնեմ, Անոր քարերը ձորին մէջ պիտի գլորեցնեմ, Ու անոր հիմերը պիտի բանամ.
7 Ու անոր բոլոր կուռքերը պիտի կոտրտուին, Ու անոր բոլոր նուիրուած բաները կրակով պիտի այրին, Ու անոր բոլոր արձանները բնաջինջ պիտի ընեմ. Քանզի պոռնի բոզի վարձով ժողվեց, Ու բոզի վարձու պիտի դառնան։
8 Ասոր համար պիտի ողբամ և պիտի հառաչեմ, Անձնազգեստ և մերկ պիտի չըլլամ. Շնագայլերու պէս կոծ և յոլալումներու պէս սուգ պիտի ընեմ։
9 Քանզի անոր վէրքն անբժշկելի է, Քանզի մինչև Յուդա եկաւ, Մինչև իմ ժողովուրդիս դուռը, մինչև Երուսաղէմ հասաւ։
10 Գէթ մէկ մի պատմէք ի բնաւ Գէթ Աքքոյի մէջ փոչոյ մէջ թաւալի։
11 Ով †Սաֆիրի բնակիչ, քու մերկու թիւնդ բաց ունենալով անցիր.

*Այլն՝ վիշտ տուն։
†Այլն՝ գեղեցկութիւն։

*Սաանանի բնակիչը դուրս չելլեր, †Բեթեսեզելի կոծը իւր օթեւանը ձենէ կ'առնու։
12 Ուստի զի †Մարօթի բնակիչը բարեաց համար կը վհատայ. Քանզի մինչև Երուսաղէմի դուռը Տէրոջմէ չարիք իջաւ։
13 Ով բնակիչ կուքիշ ըլլ, ով Լաքիսի բնակիչ. Սիօնի աղջկան մեղաց սկիզբն անիկա է. Քանզի քու մէջդ Իսրայէլի յանցանքը գտնուեցաւ։
14 Անոր համար Մօրաշեթ-գեթին ընծաներ պիտի տաս. ‖Ակզիբի տուներն Իսրայէլի թագաւորներուն պիտի տուին։
15 Տակաւին քեզի ժառանգ պիտի բերեմ, ով **Մարեսայի բնակիչ. Իսրայէլի փառքը մինչև Ադողամ պիտի հասնի։
16 Քու սիրելի զաւակներդ համար մազերդ պիտի կտրէ, Կնատութիւնդ արծուոյ պէս չատախ, Քանզի քենէ գերութեան գացին։

ԳԼ. Բ

1 Վա՜յ անոնց որ անօրէնութիւն կը խորհին, Ու իրենց անկողիններուն վրայ չարութիւն կը հնարեն. Անոնք առաւօտեան լոյս տեսնէ զայն ի գործ կը դնեն, Քանզի իրենց ձեռաց մէջ ոյժ կայ։
2 Ու անոնք ագարակներու կը ցանկան և զանոնք կը յափշտակեն, Ու տուներու և զանոնք կ'առնուն. Նաև մարդուն և անոր տանը, Մարդուն և անոր ժառանգութեանը զրկանք կ'ընեն։

†Այլն՝ մեղեակաց տուն, կամ իմ ինեանն տուն։
‡Այլն՝ գառնութիւններ։
‖Այլն՝ սուտ թիւն։
**Այլն՝ ժառանգութիւն, կամ գլխաւոր։

3 Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես այս ազգին վրայ չարիք կը
խորհիմ,
Ուսմէ պիտի չկրնաք ձեր պարանոցն
հանել,
Եւ պիտի չկրնաք հպարտութեամբ քա-
լել,
Վասն զի ժամանակը չար է։
4 Այն օրը ձեր վրայ առակ պիտի խօսին,
Եւ տրտմալի ողբալ պիտի ողբան և
ըսեն,
Բոլորովին յափշտակուեցանք.
Իմ ժողովրդիս բաժինը փոխեց,
Զանիկա ի՛նչպէս ինձ վերցուց.
Մեր ագարակները ետ տալու տեղ
բաժնեց։
5 Անոր համար Տէրոջը ժողովքին մէջ
վիճակով չար գաւազ մը պիտի չունե-
նաս։
6 Մարգարէութիւն ընողներուն Մար-
գարէութիւնը մի ընէք։ Ո՛ըսէն.
Անոնց մարգարէութիւն պիտի չընեն,
Որ նախատինքը պիտի չվեր-
նայ։
7 Ով Յակոբայ տուն ըսուող, միթէ Տէ-
րոջը ոգին կարճցա՞ւ,
Անոր գործերն ասո՞նք են.
Միթէ ուղղութեամբ քալողին իմ խօս-
քերս ազնիւ չե՞ն։
8 Եւ իմ ժողովուրդս չառանցմէ առաջ ե-
լաւ թշնամի ըլլալու համար.
Ապահովութեամբ անցնողներէն, պա-
տերազմէ դարձողներէն
Հանդերձներուն վրայէն պատմուճանը
կը կողոպտէք։
9 Իմ ժողովուրդիս կանայք իրենց զուար-
ճալի տուներէն կը վռնտէք,
Անոնց տղոցմէն յաւիտեան իմ փառքս
կ'առնուք։
10 Ելէք և գացէք,
Ձանգի սպիա հանգստանան տեղ չէ.
Պիղծ ըլլալուն պատճառաւ,
Մեծ կործանմամբ բնաջինջ պիտի ըլլայ։
11 Եթէ մարդ մը հովի և ունայնութեան
հետևէ երթայ,

և սուտ խօսի ըսելով,
Գինւոյ և օղւոյ համար քեզի մարգա-
րէութիւն ընեմ,
Անիկա պիտի ըլլայ այս ժողովուրդին
մարգարէն։
12 Ո՛վ Յակոբ, ամէնքդ անշուշտ պիտի
ժողվեմ,
Իսրայէլի մնացորդը պիտի հաւաքեմ,
Ես զանոնք վարախին մէջ եղող հօտերուն
պէս, և մէրսին պիտի դնեմ.
Մարդոց բազմութիւնն անոր պատճառ
պիտի ըլլայ։
13 Խրամատողութիւնն ընողն անոնց առջև
ելաւ,
Անոնք խրամատեցին և դուռնէն ան-
ցան և անկէ ելան.
Եւ անոնց թագաւորն անոնց առջև ան-
ցաւ,
Եւ Տէրը իրեւ անոնց գլուխ ե՛լաւ։

## Գլ. Գ

1 Եւ ըսի. Հլմա մտիկ ըրէք, ով Յակո-
բայ գլխաւորներդ,
Եւ Իսրայէլի տան իշխաններդ.
Պէտք չէ՞ որ դուք իրաւունքը ճանչ-
նաք.
2 Դուք որ բարութիւնը կ'ատէք և չա-
րութիւնը կը սիրէք,
*Մարդոց վրայէն մորթերը և անոնց
ոսկորներէն միսերը կը հանէք.
3 Եւ անոնք որ իմ ժողովուրդիս միսը
կ'ուտեն,
Եւ անոնց վրայէն մորթերը կը հանեն,
Եւ անոնց ոսկորները կը փշրեն,
Եւ զանոնք պղպեղ մէջ և կթխասի
մէջ եփելու մսոյ պէս կտոր կտոր
կ'ընեն,
4 Անոնք Տէրոջը պիտի աղաղակեն,
Բայց անոնց պատասխան պիտի չտայ,
Եւ այն ժամանակ իր երեսն անոնցմէ
պիտի ծածկէ
Վասն զի անոնք չար դործեր ըրին։

*Եբր. Անոնց

*Կամ հետ



5 Այսպէս կ'ըսէ Տէրը այն մարգարէ-
ներուն համար
Որ իմ ժողովուրդս կը մոլորեցնեն,
Եւ իրենց ակռաներով կը խածնեն,
Եւ խաղաղութիւն կը քարոզեն,
Եւ ով որ անոնց բերանը բան չդնէր,
Անոր դէմ պատերազմ կը հրատարա-
կեն.
6 Անոր համար ձեզի գիշեր պիտի ըլլայ,
Որ տեսիլ չտեսնէք.
Եւ ձեզի խաւար պիտի ըլլայ,
Որ գուշակութիւն չընէք.
Եւ մարգարէներուն վրայ արեգը պիտի
մտնէ,
Եւ անոնց վրայ օրը պիտի խաւարի.
7 Եւ տեսանողները պիտի ամչնան,
Եւ գուշակողները ամօթով պիտի ըլ-
լան.
Այո՛, ամէնքն ալ իրենց շրթունքը պիտի
ծածկեն,
Վասն զի Աստուծմէ պատասխան պիտի
չըլլայ։
8 Բայց ես Տէրոջը Հոգւով
Զօրութեամբ, դատաստանով և արու-
թեամբ լցուած եմ,
Որ Յակոբայ իր յանցանքը,
Եւ Իսրայէլի իր մեղքը յայտնեմ։
9 Լմնա մտիկ ըրէք դուք,
Ով Յակոբայ տան գլխաւորներդ
Եւ Իսրայէլի տան իշխաններդ,
Դուք որ իրաւունքին կը զզուիք,
Եւ ամէն ուղղութիւն կը ծռեք,
10 Ձիթոն սրեամբ
Եւ ղերուսաղէմ անիրաւութեամբ կը
կը շինէք։
11 Անոր գլխաւորները կաշառքով կը դա-
տեն,
Եւ անոր քահանաները վարձով կը սոր-
վեցնեն,
Եւ անոր մարգարէները առակով գու-
շակութիւն կ'ընեն,
Եւ Տէրոջը վրայ կը կռթնին և կ'ըսեն.
Ո՞չ ապաքէն Տէրը մեր մէջն է.
Մեր վրայ չարիք պիտի չգայ։
12 Ուրեմն ձեր պատճառաւ Սիօն ագա-
րակի պէս պիտի հերկուի,
Եւ Երուսաղէմ աւերակներու դէզեր,
Եւ Տէրոջը տունը լեռն անտառի բարձր
տեղերու պէս պիտի ըլլայ։

## Գլ. Դ

1 Բայց հաքի օրերը պիտի ըլլայ որ Տէ-
րոջը տանը լեռը
Լեռներուն գլխաւն վրայ պիտի հաստա-
տուի,
Եւ բլուրներէն վեր պիտի բարձրանայ,
Եւ ժողովուրդներն հեղեղի պէս անոր
պիտի դիմեն.
2 Եւ շատ ազգեր պիտի երթան և ըսեն,
Եկէք, Տէրոջմէն լեռը,
Յակոբայ Աստուծոյն տունը երթանք,
Որ մեզի իր ճամբաներէն սորվեցու-
նէ,
Եւ անոր շաւիղներուն մէջ քալենք։
Վասն զի օրէնքը Սիօնէ,
Եւ Տէրոջը խօսքը Երուսաղէմէ պիտի
ելլէ.
3 Եւ անիկա շատ ժողովուրդներու մէջ
դատաստան պիտի ընէ,
Եւ զօրաւոր ազգեր մինչև հեռաւոր
տեղեր անոնք պիտի յանդիմանէ.
Եւ անոնք իրենց սուրերը՝ խոփեր,
Եւ իրենց նիզակներն՝ գործիներ պիտի
շինեն,
Ազգ ազգի վրայ սուր պիտի չվերցու-
նէ,
Եւ այլ եւս պատերազմ պիտի չսորվին.
4 Այլ ամէն մարդ իր թզենւոյն տակ պիտի նստի,
Եւ իր թզենւոյն տակ պիտի նստի,
Եւ վախցնող պիտի չըլլայ.
Քանզի զօրաց Տէրոջը բերանը խօսե-
ցաւ։
5 Քանզի բոլոր ժողովուրդներն
Իրարմէ անջրպետ իր աստուածոյն անուամբ
կը քալէ,
Բայց մենք յաւիտեան յաւիտենից
Մեր Տէր Աստուծոյն անուամբ պիտի
քալենք։
6 Այն օրը, կ'ըսէ Տէրը, կաղը պիտի
ժողվեմ,
Եւ աքսորածը պիտի հաւաքեմ,
Եւ զայն ևս որ նեղեցի.
7 Եւ կաղը մնացորդ պիտի ընեմ,

եւ հեռաւէն վանեսուածքը զօրաւոր ձգէր.
եւ Տէրը Սիոն լեռան վրէ անոնց վրայ պիտի թագաւորէ
Այժմէն մինչեւ յաւիտեան։
8 Եւ դուն, ով հօտի աշտարակ, Սիոնի աղջկան բլուրը,
Մինչեւ քեզի պիտի գայ,
Քեզի պիտի հասնի առաջին իշխանութիւնը,
Եւ թագաւորութիւնը՝ Երուսաղէմի աղջկան։
9 Արդ ինչո՞ւ բարձրացածի կը պոռաս.
Միթէ քու մէջդ թագաւոր չկայ,
Կամ թէ քու խորհրդատուդ կորսուեցա՞ւ,
Որ ցաւ բռնեց զքեզ ծննդկան հինզ ձեւ ցաւ բռնեց,
10 Ցաւ քաշէ եւ ծննդկանի պէս երկանց մէջ եղիր, ով Սիոնի աղջիկ,
Քանզի հիմա քաղաքէն պիտի ելլես,
Եւ դաշտի մէջ պիտի բնակիս,
Եւ մինչեւ Բաբելոն պիտի երթաս,
Եւ հոն պիտի ազատուիս.
Հոն Տէրը պիտի ազատէ զքեզ քու թշնամիներուդ ձեռքէն։
11 Եւ հիմա քու վրադ շատ ազգեր ժողովուեցան, որ ի՛ըսեն,
Թող անիկա պղծուի,
Եւ մեր աչքերն Սիոն տեսնեն։
12 Բայց անոնք Տէրոջը խորհուրդները չեն գիտեր,
Եւ անոր դիտաւորութիւնը չեն հասկրնար.
Քանզի ինք զանոնք կը ժողվէ հինչպէս արտերը կալին մէջ կը ձրվէ՛ն։
13 Ելիր և կալը ծեծէ, ով Սիոնի աղջիկ,
Քանզի քու եղջիւրդ երկաթէ պիտի ընեմ,
Եւ քու կճղակներդ պղնձէ պիտի ընեմ,
Եւ շատ ժողովուրդներ պիտի մանրես.
Եւ անոնց վաստակը Եհովային,
Եւ անոնց ստացուածքը բոլոր երկրին Տէրոջը պիտի նուիրեմ։

## Գլ. Ե

1 Հիմա, ով դնդի ազջիկ, քեզի գունդ կազմէ.
Մեր վրայ պաշարում դրած կայ.
Իսրայէլի դատաւորին ծնօտին գաւազանով պիտի զարնեն։
2 Եւ դուն, ով Բեթլհէմ Եփրաթա,
Թէեւ Յուդայի հազարաւորներուն մէջ ըլլալու փոքր ես,
Բայց քենէ պիտի ելլէ ինծի համար որ Իսրայէլի վրայ իշխան պիտի ըլլայ,
Եւ անոր ելքն ի հնուց, յաւիտենական օրերէն է։
3 Անոր համար զանոնք պիտի տայ Մինչեւ ծնանողին ծնանելու ժամանակը,
Եւ անոր եղբայրներուն մնացորդը Իսրայէլի որդւոց պիտի դառնայ։
4 Եւ անիկա պիտի կենայ, և Տէրոջը զօրութեամբ
Եւ իր Տէր Աստուծոյն անուան մեծ վեհութեամբ պիտի հովուէ,
Եւ անոնք պիտի բնակին.
Քանզի հիմա մինչեւ երկրին ծայրերը պիտի մեծնայ։
5 Եւ անիկա խաղաղութիւն պիտի ըլլայ.
Երբ Ասորեստանցին մեր երկիրը մտնէ,
Եւ մեր պալատներուն մէջ ոտք կոխէ,
Անոր դէմ հօթեն հովիւ
Եւ ութ իշխանաւոր մարդիկ պիտի հանենք։
6 Եւ անոնք Ասորեստանի երկիրը՝ սրով,
Եւ Նեմրոթի երկիրը իր դուռներուն մէջ պիտի ապատէն.
Եւ անիկա զմեզ պիտի ազատէ Ասորեստանցիներէն,
Երբ անոնք մեր երկիրը մտնեն
Եւ մեր սահմաններուն մէջ ոտք կոխեն։
7 Եւ Յակոբայ մնացորդը շատ ժողովրդոց մէջ
Յուդայ պէս պիտի ըլլայ որ Տէրոջմէ ներկայ,
Ու շատերու պէս՝ որ կանանչ խոտի վրայ կ՚իջնէ.
Անիկա որ մարդէ չապասէր,



Եւ մարդու որդիներէն չյուսար։
8 Եւ Յակոբայ մնացորդն ազգաց մէջ,
Շատ ժողովրդոց մէջ՝ անոնք պիտի ըլլայ,
Ինչպէս առիւծ մը անտառի գազաններուն մէջ,
Կամ առյոգ առիւծ մը ոչխարաց հօտերուն մէջ,
Որ երթ անցնի, կը կոխկռտէ և կը պատառէ,
Եւ ազատող չըլլար։
9 Քու ձեռքդ քու հակառակորդներուդ վրայ պիտի վերնայ,
Եւ բոլոր թշնամիներդ պիտի կտրուին։
10 Եւ պիտի ըլլայ որ այն օրը, կ՚ըսէ Տէրը,
Քու ձիերդ քու մէջդէն ընաջինջ պիտի ընեմ,
Եւ քու կառքերդ պիտի կորնցունեմ.
11 Եւ քու երկրիդ քաղաքները բնաջինջ պիտի ընեմ,
Եւ բոլոր պարիսպներդ պիտի փլցուցանեմ.
12 Եւ քու ձեռքդէ կախարդութիւնները բնաջինջ պիտի ընեմ,
Ա՛լ ևս գուշակութիւն քնացներ պիտի չունենաս.
13 Եւ քու մէջդէ քու գրաւոր արձանները բնաջինջ պիտի ընեմ,
Եւ այլևս քու ձեռագործ գործերուն երկրպագութիւն պիտի չընես.
14 Եւ քու մէջդէ Աստարովթի կուռքերդ պիտի կործանեմ,
Եւ քու քաղաքներդ պիտի աւերեմ.
15 Եւ էն՛դ մարի չընող ազգերէն
Սրատաւ թեամբ և բարկութեամբ վրէժ պիտի առնեմ։

## Գլ. Զ

1 Հիմա Տէրոջը խօսքը մարի՛ ըրէք.
Ելիր և լեռներուն առջև դատ վարէ,
Ու բլուրները քու ձայնդ թող լսեն։
2 Ով լեռներ և երկրին ամուր հիմերը,
Տէրոջը դատը մարի՛ ըրէք.
Քանզի Տէրը իր ժողովրդեան հետ դատ ունի,
Եւ խրատելի հետ պիտի վիճի։
3 Ով իմ ժողովուրդս, քեզի ի՞նչ ըրի,
Եւ ի՞նչ բանով քեզ յոգնեցուցի.
Ինծի դէմ պատասխան տուր։
4 Վասն զի զքեզ Եգիպտոսի երկրէն հանեցի,
Եւ ծառայութեան տունէն զքեզ փրկեցի,
Եւ քու առջեդ զՄովսէս, զՀարոն և զՄարիամ դրկեցի։
5 Ով իմ ժողովուրդս, միտք դիր
Ինչ որ Մովաբացւոց Բաղակ թագաւորը խորհեցաւ,
Եւ ինչ որ Բէովրեան Բաղաամ անոր պատասխանեց,
Ե՛ւ Խէ՛ր եղա՛ Սատիմէ մինչեւ Գազգազա,
Որպէս զի Տէրոջը արդարութիւնը գիտանաս։
6 Տէրոջը առջև ինչո՞վ երթամ,
Եւ Բարձրեալ Աստուծոյն առջև խնամ.
Արդեօք անոր առջև ողջակիզներո՞վ,
Մէկ տարեկան արձերո՞վ երթամ։
7 Արդեօք Տէրը հազարաւոր խոյերու
Կամ բիւրաւոր ի զով գետերու պիտի հաճի՞.
Արդեօք իմ յանցանացս համար՝ իմ անդրանիկս,
Եւ հոգւոյս մեղաց համար որովայնիս պտո՞ղը տամ։
8 Քեզի յայտնեց, ով մարդ, թէ ինչ է բարին.
Եւ Տէրը քենէ ի՞նչ կը պահանջէ,
Բայց միայն իրաւունք ընել, ողորմութիւն սիրել
Եւ խոնարհութեամբ քու Աստուծոյդ հետ քալել։
9 Տէրոջը ձայնը քաղաքին կը կանչէ,
Եւ իմաստութիւնը քու անունդ պիտի տեսնէ.
Գաւազանը և անոր հրամայողը լսեցէք։
10 Անօրէնին տան մէջ տակաւին անօրէնութեան գանձեր կա՞ն,
Եւ պակաս արդու՝ որ պիղծ է։
11 Միթէ անօրէնութեան կշիռներ

Եւ խարդախ քարերուս քանակ մի՛ ունիցիր մանր ու մեծ պիտի հատարիս՝
12 Քանզի անոր հարուստները զրկեալ են, Եւ անոր բնակիչները սուտ կը խօսին, Եւ իրենց լեզուն մէջ նենգաւոր լեզու ունին։
13 Ուստի և ես զքեզ զարնելով հիւանդ պիտի ընեմ, Եւ քու մեղացդ համար ջնջ աւերակ պիտի ընեմ,
14 Դուն պիտի ուտես և պիտի չյագենաս, Եւ քու անօթութիւնդ փորիդ մէջ պիտի ըլլայ. Պիտի յափշտակես, բայց պիտի չկարենաս ազատել, Եւ ազատածդ սրոյ պիտի մատնեմ։
15 Դուն պիտի սերմանես, բայց պիտի չհնձես. Դուն ձիթապտուղ պիտի կոխես, բայց իւղով պիտի չօծուիս. Քաղցու պէրէ պոբօ՚, բայց գինի պիտի չխմես։
16 Քանզի Ամրիի հրամաններուն կը պահուին Եւ Աքաաբու տան բոլոր գործերը Եւ դուք անոնց խորհուրդներով կը քալէք, Որպէս զի զքեզ ամայի ընեմ, Եւ՝ քու բնակիչներդ սուլելու՝ ։ Ուստի իմ Ժողովուրդիս նախատինքը պիտի կրէք։

## Գլ. Ը.

1 Վա՛յ ինծի որ առնաձնային պտուղը քաղուածի պէս, Այգեկութէն ճաշակ ճմելուքու պէս եմ։ Ուտելու ողկոյզ չկայ. Հոգիս կանխահաս պտուղներուն կը ցանկայ։
2 Բարեպաշտը երկրէս կորսուեցաւ, Եւ մարդոց մէջ ուղիղ չկայ. Ամէնքն արիւններու համար դարան կը գործեն,
Ամէն մարդ իր եղբայրը որոգայթով կ՚որսայ։
3 Չեռոք չաս չարը թիւն ընելու համար Իշխանը պարգեւ կը պահանջէ, Եւ դատաւորը կաշառք կ՚ուզէ, Եւ մեծ մարդը իր սրտին ցանկութիւնն համեմատ կը խօսի։
4 Անոնց ամենէն՝ փշոյ պէս, Ուղիղը փշերէն ցանգէն ջլել է. Քու դէտերուդ օրը քու այցելութիւնդ եկաւ, Անոնց չփոթութիւնը հիմա պիտի ըլլայ։
5 Բարեկամի մի հաւատաք, Մտերիմի բարեկամի մի ապաւինիք, Ծոցդ պառկողին բերնիդ դուռները պահէ։
6 Քանզի որդին իր հայրը կ՚անարգէ, Դուստրը իր մօրը վրայ և հարսը իր կնոջմէն վրայ կ՚ելլէ. Մարդուն թշնամիներն անոր բնտանիքն են։
7 Բայց ես Տէրոջը պիտի ապասեմ, Իմ փրկութեանս Աստուծոյն պիտի յուսամ, Իմ Աստուածս լսել պիտի կ՚ընէ։
8 Ով իմ թշնամիս, վրաս մի ծիծաղիր. Թէև ինկայ, պիտի ելլեմ, Թէև խաւարի մէջ նստիմ, Տէրը լոյս պիտի ըլլայ։
9 Տէրոջը բարկութիւնը պիտի կրեմ, (Քանզի անոր դէմ մեղք գործեցի,) Մինչև որ անիկա իմ դատս պաշտպանէ և ինծի իրաւունք ընէ, Զիս ի լոյս հանէ և անոր արդարութիւնը տեսնեմ։
10 Անտես իմ թշնամիս պիտի տեսնէ. Ամօթ պիտի ծածկէ զնա որ ինծի կ՚ըսէր թէ՝ Ո՞ւր է քու Տէր Աստուածդ. Իմ աչքս պիտի տեսնեն զնա. Հիմա անիկա փողոցներու ցեխին պէս ոտից կոխան պիտի ըլլայ։
11 Այն օրը որ քու պարիսպներդ պիտի շինուին, Նոյն օրը պատուէրն հեռացած պիտի ըլլայ,

*Եբր. անոր



12 Այն օր Ասորեստանէ և *արտասաւոր քաղաքներէն, Եւ †պարսպէն մինչև Գետը, Եւ ծովէ ծով և լեռնէ լեռ քեզի պիտի գան։
13 Սակայն երկիրն ամայի պիտի ըլլայ իր բնակիչներուն ‡պատճառաւ, Ո՛ր իրենց գործերուն պտղին համար։
14 Քու դաւազանովդ հովուէ քու ժողովուրդդ, Քու ժառանգութեանդ խաչնէրը, Որ առանձին անտառի մէջ կը նստի Կարմելոսի մէջ։ Անոնք առջի օրերուն պէս Բաշանի և Գաղաատի մէջ թող արածին։
15 Անոր հրաշներ պիտի ցուցնեմ, Ինչպէս այն օրերը որ եգիպտոսի երկրէն ելար։
16 Ազգերը պիտի տեսնեն, Եւ իրենց բոլոր զօրութենէն պիտի ամչնան. Բերնի վրայ ձեռք պիտի դնեն, Ե՛ անոնց ականջները պիտի խլանայ,
17 Օձի պէս հող պիտի լիզեն, Երկրի սողուններուն պէս Իրենց պահարանած տեղերէն պիտի դողան, Մեր Տէր Աստուածին պիտի դարհուրին, Եւ քեզմէ պիտի վախնան։
18 Քեզի պէս Աստուած ո՞վ կայ Որ անօրէնութիւնը կը ներէ, Եւ իր ժառանգութեան մնացորդին յանցանքն անտես կ՚ընէ. Իր բարկութիւնը յաւիտեան չպահեր, Քանզի ողորմութիւն կը սիրէ։
19 Անիկա պիտի դառնայ, մեզի ողորմութիւն պիտի բնէ, Մեր անօրէնութիւնները ոտքերն տակ պիտի առնէ. Այո, անոնց բոլոր մեղքերը Ծովուն խորութեան մէջ պիտի նետես,
20 Յակոբայ ճշմարտութիւն պիտի ընես, Եւ Աբրահամու ողորմութիւն, Ինչպէս որ առչի օրերէն ի վեր Մեր հայրերուն երդմամբ խոստացար։

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՆԱՀՈՒՄԱՑ

## Գլուխ Ա.

1 Նինուէի պատգամը. Եղկոացի Նաւումի տեսլեան գիրքը։
2 Եհովա նախանձոտ և վրէժխնդիր Աստուած է. Եհովա վրէժ առնող և բարկութեան տէր է. Եհովա իր հակառակորդներէն վրէժ կ՚առնու, Եւ իր թշնամիներուն բարկութիւն կը պահէ։
3 Եհովա երկայնամիտ է, և անոր զօրութիւնը մեծ է, Բայց յանցաւորն ամենևին անպատիժ չթողուր։ Եհովային ճամբան մրրկի և փոթորկի մէջ է, Եւ ամպերն անոր ոտից փոշին են։
4 Ծովուն կը սպառնայ և կը ցամքեցնէ զայն, Եւ բոլոր գետերը կը չորցուցնէ. Բասան և Կարմէղոս կը թառամին, Եւ Լիբանանու ծաղիկը կը թառամի։
5 Լեռներն անկէ կը դողան և բլուրները կը հալին. Երկիրը անոր երեսէն կը խախտի,

*Կամ եգիպտոսի
†Կամ եգիպտոսէն ‡Կամ հետ

Աչխարհ և անոր բոլոր բնակիչները.
6 Անոր ցասման առջև ո՞վ կրնայ կայնիլ,
Եւ անոր սաստիկ բարկութեան ո՞վ կրնայ դէմ դնել.
Անոր սրամտութիւնը կրակի պէս կը թափի,
Եւ ապառաժներն անկէ կը խորտակին։
7 Եհովան բարի է, նեղութեան օր մը բութիւն է,
Եւ իրեն ապաստնողները կը ճանչնայ։
8 Բայց այն *առատ ջուրերէն ատոր յորդահոս հեղեղով բոլորովին պիտի ապչէ,
Եւ խաւարը պիտի հալածէ անոր թըշնամիները։
9 Եհովայի դէմ ի՞նչ կը խորհիք.
Բնաջինջ ընողն անելիք է.
Նեղութիւնը երկրորդ անգամ պիտի չելլէ։
10 Քանզի ցորչափ անոնք փուշերու պէս միահիւսած են,
Եւ իրենց ըմպելիքով արբեցած ալ պէս են,
Բոլորովին չորցած չորգի պէս պիտի այրին։
11 Քեզնէ Եհովայի դէմ չարութիւն մտածող
Անօրէն խորհրդական ելաւ։
12 Տէրը այսպէս կ'ըսէ.
Թէև անոնք խաղաղութեան մէջ են և բազում են թուով,
Սակայն պիտի կոտրին, երբ անկիւնն անցնի.
Թէև զքեզ նեղեցի, այլ ևս պիտի չնեղեմ,
13 Եւ հիմա քու վրայէդ անոր լուծը պիտի կոտրեմ,
Եւ քու կապերդ պիտի կտրեմ։
14 Եւ Տէրը քեզի համար հրամայեց,
Որ այլ ևս քու անունէդ տարբ չսաբածուի։
Քու աստուածներուդ տունէն
Քանդակած և ձուլածոյ կուռքերը բնաջինջ պիտի ընեմ.
Քու գերեզմանդ պիտի ընեմ ըզնե,
Քանզի դուն անարդ եղար։
15 Ահա լեռներուն վրայ աւետաբեր բերողին,
Խաղաղութիւն քարոզողին ոտքերը։
Տօներդ պահէ, ով Յուդա, ուխտերդ հատարէ։
Քանզի այլ ևս քու մէջդ անօրէն պիտի չանցնի,
Անիկա բոլորովին կտրուեցաւ։

## Գլ. Բ

1 Խորտակողը քու երեսիդ դէմ ելաւ,
Պարիսպը պահապանէ, ճամբան դիտէ,
Մէջքերը զօրացուր ՝ բոլոր ոյժդ վառէ ժողվէ։
2 Քանզի Տէրը Յակոբայ վայելչութիւնը
Իսրայէլի վայելչութեան պէս նորոգեց.
Վասն զի պարպողները զանոնք պարպեցին,
Եւ անոնց որթի ուռիները տրեցին։
3 Անոր զօրաւորներուն վահանը կարմրեցուցած,
Անոր քաջ մարդիկը կարմրով ներկուածան.
Անոր պատրաստութեան օրը կառքը *պողպատի փայլուներ» պիտի ունենայ,
Եւ նիզակները պիտի երերցուին։
4 կառքերը փողոցներուն մէջ պիտի կատղին,
Հրապարակներուն մէջ իրար պիտի բաղխեն.
Անոնց երեւոյթը ջահերու պէս պիտի ըլլայ,
Ե՛ փայլակներու պէս պիտի վազեն։
5 Իր քաջերը պիտի յիշէ.
Անոնք քալելու ատեն պիտի գլորին,
Իսկ ՚Ընդ-Խնդիրը պարսպին հոգնածու պիտի փութան,
Եւ պատապարան պիտի պատրաստուի։
6 Գետերուն դուռները պիտի բացուին,
Եւ պալատը պիտի †փլչի։
7 Եւ ‡նախատանմանուհացաւ ըլ՚ անկիա գերութեան պիտի երթայ,
Եւ անոր ազախիններն իրենց կուրծքին զարնելով
Ե՛ ազաւնւոյ պէս ձկկելով ՚ձայն հետ պիտի երթան։

*Կամ ջահերու լոյս
†ՆԷՔ. հալի։
‡Կամ թէև պահապաններ դրուած են,



8 Եւ Նինուէ չատ ժամանակէ հետէ ջուրերու աւազանի պէս էր։
Սակայն անոնք փախչելով, կայնեցէք, կայնեցէք, պիտի ըսէ,
Բայց դարձող պիտի չըլլայ։
9 Արծաթի յափշտակեցէք, ոսկի յափըշտակեցէք,
Քանզի ՚ահռ զարդերն անթիւ են,
Եւ ամէն ցանկալի սպասներու առատութիւն կայ։
10 Պարապ և պարպած և դատարկացած է.
Եւ սիրտերը կը հալին, և ծունկերն իրարու կը զարնեն,
Եւ ամէն մէջք կը դողայ,
Եւ ամէնուն երեսները կը գունատին։
11 Ո՞ւր է առիւծներուն բնակարանը,
Եւ առյոգ առիւծներուն արօտը,
Ուր արու առիւծը, մտատակ առիւծը
Եւ առիւծու կորիւնը կը պարապին,
Եւ ՚ընդոյ վախցուներ չկար։
12 Առիւծը իր կորիւններուն բաւական եղածին չափ կը պատառէր,
Եւ իր մատակ առիւծներուն համար կը խեղդէր,
Եւ իր մորիները՝ որսով,
Եւ իր բնակարանները յափշտակութեամբ կը լեցնէր։
13 Ահա ես քեզի դէմ եմ, կ'ըսէ զօրաց Տէրը,
Եւ անոր կառքերը պիտի այրեմ ՝ ի ծուխ պիտի դարձնեմ,
Եւ քու առյոգ առիւծներդ սուրը պիտի ուտէ.
Եւ քու որսդ երկրին վրայէն պիտի ՚ընդհատ,
Եւ քու դեսպաններուդ ձայնն այլ ևս պիտի չլսուի։

## Գլ. Գ

1 Վա՜յ արիւններու քաղաքին,
Բոլորովին սուտ[1]եամբ ՝ յափշտակութեամբ լի է.
Հոն որսը պակաս չէ։
2 Ահա խարազանին ձայնը,
Եւ անուայ շարժման ձայնը,
Եւ սրընթաց ձիու և ցնցուղ կառաց տչէ՚նը։
3 Հեծեալը կը վերցնէ *փայլուն սուրը և չողշողուն նիզակը,
Եւ շատ վիրաւորներ և յոյժ շատ մեռելներ կ'ըլլան,
Եւ դիերն անթիւ են, դիերուն վրայ կը գլորին
4 Ա՛յն պոռնկին պոռնկութեան չաճախութեան համար,
Որ շատ շնորհալի և կախարդութեանց տէր ըլլալով,
Իր պոռնկութիւններով՝ ազգեր,
Եւ իր կախարդութիւններով ազգատոհմներ կը վաճառէր։
5 Ահա ես քեզի դէմ եմ, կ'ըսէ զօրաց Տէրը,
Եւ քու երեսիդ դէմ քու քղանցդ պիտի բանամ,
Եւ քու մերկութիւնդ՝ ազգերուն,
Եւ քու անարգանդդ թագաւորութիւններուն պիտի ցուցնեմ.
6 Եւ քու վրադ պղծութիւններ պիտի նետեմ,
Եւ զքեզ խայտառակ պիտի ընեմ,
Եւ զքեզ օրինակ պիտի դնեմ։
7 Եւ պիտի ըլլայ որ ամէն զքեզ տեսնող փեղէն պիտի փախչի, և պիտի ըսէ,
Նինուէ աւերակ եղաւ.
Անոր վրայ ո՞վ պիտի ողբայ.
Քեզի ուսո՞ մխիթարիչներ փնտռեմ.
8 Մինէ դու լաւ ես քան զՆով-ամոն,
Որ գետերուն մէջ կը բնակէը,
Եւ ջուրերով պատած էր,
Որուն խորա՛ եղած էր ծովը,
Ե՛ ծովն անոր պարիսպն էր։
9 Անոր զօրութիւնը Եթովպիա և Եգիպտոս էը,
Եւ ծայր չունէը։
Փութացիք և Լիբեացիք քեզի օգնականն էին։
10 Անիկա ևս աքսոր և գերութեան գընացաւ,

*ՆԷՔ. սուրին բոցը և նիզակին փայլակը,

Անոր ազգքն անգամ ամէն ծամբու
գլուխ գիտին զարնուելցան.
Եւ անոր պատուականներուն վրայ վի-
շակ ձգելցին,
Եւ անոր բոլոր մեծամեծները չղթանե-
րով կապուելցան։
11 Գուռ ևս պիտի արբենայ և անկայուն ըլ-
լաս,
Գուռ ևս թշնամիին ամրանալուս տեղ
պիտի փնտռեսես։
12 Գուռ բոլոր բերդերդ կանխահաս պը-
տուղներ ունեցող թզենիներու
պէս պիտի ըլլան,
Որ երբ թօթափուին, ուտողին բերանը
կ'իյնան։
13 Ահա գուռ ժողովուրդդ գուռ մէջդ կա-
նանց պէս պիտի ըլլան,
Գուռ երկրիդ դուռներն անոյշա գուռ
թշնամիներուդ պիտի բացուին,
Կրակը պիտի ուտէ գուռ նիգերդ։
14 Պաշարման համար քեզի ջուրը քաշէ,
Ամրոցներդ ամրացուր.
Ցեխի մէջ մտիր և կաւը կոխէ,
Եւ աղիւսոյ փուռը նորոգէ։
15 Հոն կրակն քեզի պիտի ուտէ,
Սուրն քեզի պիտի կոտրէ,

Եւ չորեակին պէս քեզի պիտի սպառէ։
Դուռ քեզի չորեակին պէս բազմացուր,
Գարեզ մարախի պէս բազմացուր։
16 Գուռ վաճառականներդ երկնից աստ-
ղերէն աւելի բազմացուցիր.
Չորեակը տարածեցաւ, յետոյ թռաւ։
17 Գուռ թագակիրներդ մարախի պէս,
Եւ զօրավարներդ անթիւ մարախներու
պէս են,
Որ ցուրտ օրը ցանգերու վրայ կը հանգ-
չին.
Երբ արեգը ծագի, կը չուեն,
Եւ չգիտցուիր թէ ուր է անոնց տեղը։
18 Գուռ հովիւներդ կը քնանան, ով Աս-
ղեստանի թագաւոր,
Գուռ ազնուականներդ կը պառկին.
Գուռ ժողովուրդդ լեռներու վրայ ցը-
րուեցան,
Եւ չկայ ոք որ ղեկավ ժողվէ։
19 Գուռ բեկմանդ դարման չկայ,
Գուռ վէրքդ անդարմանելի է.
Ով որ քու լուրդ կը լսէ՝ քեզի համար
ծափ պիտի զարնէ,
Քանզի ամէն ժամանակ գուռ չարու-
թիւնդ որո՞ վրայ անցած չէ։

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՄԲԱԿՈՒՄԱՅ

## ԳԼՈՒԽ Ա

1 Ամբակում մարգարէին տեսլեան
յայտնուած պատգամը։
2 Մինչև ե՞րբ, ով Տէր, ազազակեմ և
չլսես,
Եւ զրկանաց համար քեզի կանչեմ և
չազատես,
3 Ինչո՞ւ համար ինծի անօրէնութիւն կը
ցուցնես,
Եւ նեղութիւն կ'երևցուննս,
Քանզի իմ առջև յափշտակութիւն և
զրկանք կայ,

Եւ դատ և վէճ հանող կայ։
4 Անոր համար օրէնքը կը խափանի,
Եւ իրաւունքն ի գործ չդրուիր,
Վասն զի անօրէնն արդարին բոլորեր-
քը կ'առնու.
Այս պատճառաւ դատաստանը ծռուր
կ'ելլէ։
5 Աղգերու մէջ նայեցէք և տեսէք,
Եւ զարմանալով սպասեցէք,
Վասն զի ձեր օրերուն մէջ այնպիսի
գործ մը պիտի գործեմ,

Որ եթէ չհաւատաք, պիտի չհաւա-
տաք։
6 Քանզի ահա ես պիտի արթնցունեմ
Քաղդէացիները,
Այն դառն և արագընթաց ազգը,
Որ երկնքը չեզած բնակութիւններուն
տիրելու համար
Երկրիս լայնութիւնը կը պտրտի։
7 Անիկա սոսկալի և ահաբեկու է,
Անոր դատաստանը և իշխանութիւնն
իրմէ կ'ելլէ։
8 Անոր ձիերը գան պնձաւ աւելի արագա-
շարժ են,
Եւ գան ղերեկչեան գայլս աւելի կատա-
ղած են,
Եւ անոր ձիաւորները պիտի ցաքուին,
Եւ անոր ձիաւորները հեռուէն պիտի
գան,
Եւ կերակրոյ վրայ փութացող արծուոյ
պէս պիտի թռչին։
9 Ամէնքը զրկանաց համար պիտի գան,
Գունդերուն երեսները դէպ ՚յառաջ
պիտի ըլլան,
Եւ աւազի պէս գերիներ պիտի ժողվէ։
10 Եւ անիկա թագաւորները ծաղր պիտի
ընէ,
Եւ իշխաններն անոր խաղալիկ պիտի
ըլլան։
Անիկա ամէն պարսպի վրայ պիտի խնդայ,
Վասն զի հող պիտի դիզէ և գայն պիտի
առնու։
11 Անառակն անոր միտքը պիտի փոխուի
և պիտի հպարտանայ,
Եւ այս իւր զօրութիւնը իւր աստու-
ծոյն համբերվ ցանցառոր պիտի
ըլլայ։
12 Մթիթ գուն ի յաւիտենից չե՞ս, ով
իմ Տէր Աստուածս, իմ Սուրբս.
Պիտի չմեռնինք.
Ով Տէր, զանիկա դատաստանի համար
որոշեցիր,
Ով Վէմ, զանիկա յանդիմանելու հա-
մար հաստատեցիր։
13 Գուն որոյ աչքերը չարութիւն տեսնե-
լէ մաքուր են,

*Կամ արևելքը



Եւ անիրաւութեան նայելու կարող չես,
Ինչո՞ւ կը նայիս,
Ամբարիշտն իրմէ արդար աղորը կլաճ
առնէն երբ՞ կը լռես.
14 Եւ մարդը ծովու ձկներուն պէս կ'ը-
նես,
Սողուններուն պէս որ իրենց վրայ տի-
րող չունին։
15 Անոնց ամէնը կարթով կը հանէ,
Ձանոնք իր ուռկանով կը բռնէ,
Եւ զանոնք իր ցանցով կը ժողվէ,
Անոր համար կ'ուրախանայ և կը ցըն-
ծայ,
16 Անոր համար իր ուռկանին զոհ կը
մատուցանէ,
Եւ իր ցանցին խունկ կը ծխէ,
Վասն զի անոնցմով իր բաժինը՝ դէը,
Եւ իր կերակուրը պարարտ է։
17 Արդեօք այս պատճառաւ իր ուռկա-
նը պիտի պարպէ,
Եւ միշտ ազգերը կոտորելէ պիտի չդա-
դարի։

## ԳԼ. Բ

1 Իմ պահպանութեանս տեղը պիտի կե-
նամ,
Եւ պարսպին վրայ պիտի կայնիմ,
Եւ պիտի սպասեմ որ տեսնեմ թէ ին-
ծի հետ ինչ պիտի խօսի,
Եւ թէ իմ դրած յանդիմանութեանս
վրայ ինչ պատասխան պիտի տամ։
2 Եւ Տէրը ինծի պատասխան տուաւ և
ըսաւ,
Տեսիլը գրէ և տախտակներու վրայ
յայտնի նշանակէ,
Որ զայն կարդացողն *համարձակ կար-
գայ։
3 Քանզի տեսիլը տակաւին որոշեալ ժա-
մանակի համար է,
Բայց վախճանին կը փութայ, տուտ պի-
տի չելլէ.
Եթէ յապաղէ, անոր սպասէ,
Քանզի անշուշտ պիտի գայ, հուս պիտի
չնայ։

*Կամ վազէ։

4 Ահա հպարտ հոգին իւր ներսի
դին ուղիղ չէ,
Բայց արդարը իւր հաւատքով պիտի
ապրի։
5 Մանաւանդ գինին կը կաղեցուցնէ,
Հպարտ մարդն հանդարտ չկենար,
Քանզի իւր հոգին գերեզմանի պէս կը
լայնցուցնէ,
Եւ մահուան պէս ըլլալով չի յագենար,
Այլ բոլոր ազգերն իրեն կը ժողվէ,
Եւ բոլոր ժողովուրդներն իրեն քով կը
գումարէ։
6 Մի՞թէ ասոնց ամէնքն անոր վրայ առակ
պիտի չհանե՞ն,
Եւ անոր համար ծաղրական խօսքերով
պիտի չըսե՞ն,
Վա՜յ անոր որ իրենը չեզածը կը
բազմացունէ,
(Մինչև ե՞րբ պիտի տե՛ւէ,)
Եւ իրեն վրայ *գրաւներ կը բեռնաւորէ։
7 Մի՞թէ յանկարծ քեզ խածնողներն պիտի չկանգնի՞ն,
Եւ քեզ նեղութիւն տուողներ պիտի
չարթնա՞ն,
Եւ դուն անոնց աւար պիտի չըլլա՞ս։
8 Որովհետև դուն շատ ազգեր կողոպտեցիր,
Ձքեզ ևս ժողովուրդներուն բոլոր մնացորդները պիտի կողոպտեն
Մարդոց արիւններուն համար,
Եւ երկրին, քաղաքին և բոլոր անոր
մէջ բնակողներուն զրկանաց համար։
9 Վա՜յ անոր որ իւր տանը համար չար
ագահութեամբ ըն կը վաստկի,
Որպէս զի իւր բոյնը բարձր տեղ դնէ
Չարին ձեռքէն զինք ազատելու համար։
10 Շատ ժողովուրդներ կտրիճցուիր
Քու տանդ վրայ անարգանք խրճիթիդ,
Եւ քու հոգւոյդ դէմ մեղք գործեցիր։
11 Քանզի քարը պատէն պիտի աղաղակէ,
Եւ գերանը չէնքէն փայտերուն մէջէն
պատասխան պիտի տայ անոր։
12 Վա՜յ անոր որ արիւններով քաղաք
կը շինէ,
Եւ անիրաւութեամբ աւան կը հաստատէ։
13 Ահա ասիկա զօրաց Տէրոջմէն չէ՞,
Որ ժողովուրդները կրակի համար կ'աշխատին,
Եւ ազգերն ի զուր կը յոգնին։
14 Քանզի երկիր Տէրոջը փառաց գիտութեամբ պիտի լեցուի,
Ինչպէս որ ջուրերը ծովը կը ծածկեն։
15 Վա՜յ †նը որ քու ընկերիդ չէնչ կը
խմցունես,
Եւ քու *արբեցուցիչ լսկերիդ՝ աւազան կը բաշխես,
Որ ո՞րչ նէնչ ալ արբեցունես,
Որպէս զի անոնց մերկութիւնը տեսնես։
16 Քառքի աւելի ամօթով կշտացար,
Դուն ևս խմէ և մերկացիր։
Տէրոջը աջ ձեռքին բաժակը քեզի պիտի դառնայ,
Եւ քու փառացդ վրայ անարգանք պիտի ըլլայ։
17 Քանզի Լիբանանու զրկանքն քեզի պիտի ծածկէ,
Եւ գազաններուն յափշտակութիւնը պիտի վախցունէ
Մարդոց արիւններուն համար,
Եւ երկրին, քաղաքին և բոլոր անոր
մէջ բնակողներուն զրկանաց համար։
18 Ի՞նչ օգուտ ունի արուեստաւորին
քանդակած կուռքը,
Զուլածոյ կուռքը և սուտ ի՞նչն ասրվեցունողը,
Որ չինողը իւր չինած բանին ապաւինի,
Եւ համր կուռքեր չինէ։
19 Վա՜յ անոր որ փայտին կ'ըսէ, Արթնացիր,
Եւ համր քարին՝ Նկեր։
Մի՞թէ անիկա ըն պիտի սորվեցունէ։
Ահա անիկա ոսկւով և արծաթով պատած է,
Բայց անոր մէջ ամենևին հոգի չկայ։
20 Սակայն Տէրը իւր սուրբ տաճարին մէջէ։

*Կամ թանձր ցեխ †Եբր. խորհեցար,

*Եբր. տաքութիւնդ



Անոր երեսին առջև լուռ կեցիր, ով
բոլոր երկիր։

ԳԼ. Գ

1 *Շիկիոնոթի վրայ, Ամբակում մարգարէին աղօթքը։
2 Ով Տէր, քու լուրդ լսեցի և վախցայ.
Քու գործդ տարիներու մէջ նորոգէ,
ով Տէր,
Տարիներու մէջ գիացուր,
Բարկութեան մէջ ողորմութիւն յիշէ։
3 Աստուած Թեմանէ եկաւ,
Եւ Սուրբը՝ փառան լեռնէն. (Սէլա.)
Անոր փառքը ծածկեց երկինքը,
Եւ երկիր անոր գովութեամբ լցաւ։
4 Եւ անոր պայծառութիւնը լուսոյ պէս
էր.
Անոր ձեռքէն ճառագայթներ կ'ելլէին,
Եւ անոր զօրութեան ծածկոյթն հոն
էր։
5 Անոր առջևէն ժանտախտ կ'երթար,
Եւ անոր ոտից հետևէն †հրաստիգնապ
տեղեր կ'ելլէր։
6 Անիկա կայնեցաւ և երկիրը չափեց,
Նայեցաւ և ազգերը դողացուց.
Եւ յաւիտենական լեռները փշրեցան,
Եւ վաղեմի բլուրք խոնարհեցան.
Անիկա յաւիտենական ճամբաներ ունի։
7 ‡Քուշանի վրաններուն նեղութեան տակ
տեսայ,
Մադիամու երկրին վրաններն դողացին։
8 Մի՞թէ գետերուն բարկացա՞ Տէրը,
Քու զրմնութիւնդ գետերուն վրա՞յ
էր,
Բարկութիւնդ ծովուն վրա՞յ էր,
Որ քու ձիերդ և փրկութեան հառքերդ հեծար։
9 Քու աղեղդ բոլորովին մերկ եղաւ
Իսրայէլի ցեղերուն ըրած երդումներուդ
և խո՛ խօսքիդ պէս։ (Սէլա.)

*Կամ Մեղեդիներու.
†Կամ կայծակ,
‡Կամ Եթովպիայի

Զերկիր գետերով պատառեցիր։
10 Լեռները զքեզ տեսան և դողացին,
Ջուրերուն յորդութիւնն անցաւ,
Անդունդ իւր ձայնը առաւ,
Եւ ձեռքը վեր վերցուց։
11 Արև և լուսին իրենց կարգին մէջ կայնեցան,
Անոնք քու նետերուդ լուսով
Եւ քու չողչողուն նիզակիդ պայծառութեամբ քալեցին։
12 Երկրի վրայ սրտմտութեամբ պտտեցար,
Եւ բարկութեամբ ազգերը կոխեցիր։
13 Քու ժողովուրդիդ փրկութեան համար,
Քու օծեալդ հետ փրկութեան համար
ելար։
Անօրինի տունէն գլուխ ձգմեցիր՝
Հիմ մինչև պարանոցը բանալով։ (Սէլա.)
14 Իրենց գաւազաններով իրենց գլխաւորներուն գլուխը խոցոտեցիր,
Զիս ցրուելու համար փոթորկի պէս եկան,
Անոնց ուրախութիւնը մանկիկ գաղտուկ ուտելու պէս էր։
15 Քու ձիերովդ ծովուն վրայ,
Շատ չուրերուն խառնութեան վրայ քալեցիր։
16 Լսեցի և սիրտս սարսափեցաւ,
Ձայնէն շրթունքս դողացին.
Ոսկորներուս մէջ փտութիւն մտաւ,
Եւ եղած տեղս սարսափեցայ,
Որ հանգիստ ունենամ նեղութեան օրը,
Երբ ժողովուրդին եկեր ել իւր գունդերով անոր վրայ պիտի յարձակի։
17 Թէև թզենին ընձիւղ չտայ,
Եւ որթերու վրայ պտուղ չըլլայ,
Եւ ձիթենւոյն բերքը սահ,
Եւ արտերը կերակուր չտան,
Եւ փարախէն ոչխարը կտրի,
Եւ գոմերու մէջ արջառ չըլլայ,
18 Սակայն ես Տէրոջմով պիտի ցնծամ,

իմ փրկութեանս Աստուծով պիտի ու-
րախանամ։
19 Տէր Եհովան իմ զօրութիւնս է,
Եւ իմ ոտքերս եղնիկի ոտքերուն պէս
պիտի ընէ,
Եւ զիս իմ բարձր տեղերուս վրայ պի-
տի պատցուցնէ։
Գլխաւոր երաժշտին, իմ չարնելու նը-
ւագարաններուս վրայ։

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՍՈՓՈՆԻԱՅ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Տէրոջը խօսքը որ Եզեկիայի որդւոյն
Ամարիայի որդւոյն Գոդոլիայի որդւոյն
Քուսիի որդւոյն Սոփոնիայի եղաւ Յու-
դայի Թագաւորին Ամոնի որդւոյն Յո-
սիայի օրերը։
2 Երկրի երեսէն ամէն բան բոլորովին
պիտի կորնչցնեմ, կ'ըսէ Տէ-
րը։
3 Մարդ և անասուն պիտի կորնչցնեմ,
Երկինքի թռչունները և ծովուն ձուկե-
րը
Եւ գայթակղութիւններն ամբարիշտնե-
րուն հետ պիտի կորնչցնեմ,
Եւ երկրիս երեսէն մարդը պիտի կոտ-
րեմ, կ'ըսէ Տէրը։
4 Եւ իմ ձեռքս Յուդայի վրայ
Եւ Երուսաղէմի բոլոր բնակիչց վրայ
պիտի երկնցնեմ։
Եւ այս տեղէն բնաջինջ պիտի ընեմ
Բահաղայս մնացորդը,
Քուրմերուն անունը քահանաներուն
հետ,
5 Եւ տանեաց վրայ երկինքի զօրաց երկրը-
պագութիւն բնողները,
Եւ երկրպագութիւն ընելով Տէրոջմով
երդում բնողները,
Եւ Մալգոմով երդում բնողները,
6 Եւ Տէրոջմէ ետ դարձողները, և Տէրը
չփնտռողները
Եւ զանիկա չխնդրողները։
7 Տէր Եհովային առջև լուռ կեցիր,
Քանզի Տէրոջը օրը մօտ է,
Քանզի Տէրը զոհ պատրաստեց, իր
կոչնականներն *հրաւիրեց։
8 Եւ պիտի ըլլայ որ Տէրոջը զոհին օրը
Իշխանները և Թագաւորին որդիքը
Եւ բոլոր օտար զգեստ հագնողներ պի-
տի պատժեմ։
9 Եւ այն օրը սեմին վրայէն բոլոր ցաթ-
կողները,
Իրենց տիրոջը տունը զրկանօք և նեն-
գութեամբ լեցնողները պիտի
պատժեմ։
10 Եւ պիտի ըլլայ որ այն օրը, կ'ըսէ Տէրը,
Ձկանց դուռանէն ազազակի ձայն,
Եւ Մասենայէ՝ հեծութիւն,
Եւ բլուրներէն մեծ կոտորած պիտի
ըլլայ։
11 Ողբացէք, ով Մաքթեսի բնակիչներ,
Քանզի բոլոր վաճառական ժողովուր-
դը կորսուեցաւ,
Բոլոր արծաթի բերողները կտրուեցան։
12 Եւ պիտի ըլլայ որ այն ժամանակ
Ջերուսաղէմ ճրագներով պիտի քննե-
մեմ,
Եւ ինծի պէս իրենց մրերուն վրայ հան-
դարտ նստող մարդիկ պիտի
պատժեմ,
Որ իրենց սրտին մէջ կ'ըսեն,
Տէրը ոչ բարիք պիտի ընէ և ոչ չա-
րիք։
13 Եւ անոնց առացուածն՝ աւար,
Եւ անոնց տուներն աւերակ պիտի ըլ-
լան։
Եւ տուներ պիտի չհինեն, բայց անոնց
Մէջ պիտի չբնակին,
Եւ այգիներ պիտի անկեն, բայց անոնց
գինին պիտի չխմեն։
14 Տէրոջը մեծ օրը մօտ է,
Մօտ է, և կը փութայ յոյժ։
Տէրոջը օրուան ձայնը կատ է,
Զօրաւորն հոն դառնապէս պիտի ա-
զազակէ։
15 Ա,յն օրը բարկութեան օր է,
Նեղութեան և տառապանաց օր,
Կործանման և աւերման օր,
Խաւարի և մթի օր,
Ամպի և մառախղայ օր է։
16 Պարսպաւոր քաղաքներու դէմ
Եւ բարձր աշտարակներու դէմ փողոյ
և ազազակի օր է։
17 Եւ մարդիկ նեղութեան մէջ պիտի ձը-
գեմ,
Եւ կուրերու պէս պիտի պտտին,
Քանզի Տէրոջը դէմ մեղք գործեցին։
Եւ անոնց արիւնը՝ փոշւոյ պէս,
Եւ մարմինները աղբի պէս պիտի թա-
փուին։
18 Տէրոջը բարկութեան օրը
Անոնց արծաթը և ոսկին անգամ
Զանոնք ազատելու կարող պիտի չըլ-
լան։
Այլ բոլոր երկիր անոր նախանձոյն կը-
բակով պիտի սպառի,
Քանզի անկից շատ չուտով երկրիս բո-
լոր բնակիչները պիտի ապաշէ։

## ԳԼ. Բ

1 *Հաւաքուեցէք ձեր անձերը, քննեցէք,
Ով չամչցող ազգ,
2 Դեռ նախասահմանութիւնը չծնած,
Օրը մղեղի պէս չանցած,
Դեռ Տէրոջը սաստիկ բարկութիւնը
ձեր վրայ չհիած,
Դեռ Տէրոջը բարկութեան օրը ձեր վը-
րայ չհիած։

*Կամ ժողովուեցէք, ժողվուեցէք։



3 Տէրը փնտռեցէք, ով երկրիս բոլոր
խոնարհները,
Դուք որ անոր իրաւունքն ի գործ կը
դնէք,
Արդարութիւն փնտռեցէք, խոնարհու-
թիւն փնտռեցէք,
Թերեւս Տէրոջը բարկութեան օրը պա-
հուիք։
4 Քանզի Գազա պիտի թողուի,
Ասկաղոն ամայի պիտի ըլլայ։
ԶԱզովտոս կէս օրուան առեն պիտի
վռնտեն,
Եւ Ակկարոն արմատէն պիտի խլուի։
5 Վա՛յ ծովեզերքը բնակողներուն, Քե-
րեթհիներուն ազգին,
Տէրոջը խօսքը քեզի դէմ է, ով Փղշ-
թացւոց երկիրը Քանան,
Զքեզ ես պիտի աւերեմ, այնպէս որ
բնակիչ չմնայնաս։
6 Եւ ծովեզերքը հովիւներու *բնակա-
րաններ և ոչխարանոցներ
Եւ հօտերու փարախներ պիտի ըլլայ։
7 Եւ ծովեզերքը Յուդայի տան մնացոր-
դին պիտի ըլլայ,
Հոն պիտի արածին
Երեկոյին Ասկաղոնի տուներուն մէջ
պիտի պառկին,
Քանզի անոնց Տէր Աստուածն անոնց
այցելութիւն պիտի ընէ,
Եւ անոնց գերութիւնը պիտի դարձու-
նէ։
8 Մովաբի նախատինքը
Եւ Ամմոնի որդւոց հայհոյութիւնները
լսեցի,
Որ իմ ժողովրդս նախատեցին,
Եւ անոնց սահմանին դէմ հպարտա-
ցան։
9 Անոր համար իսրայէլի Աստուածը, զօ-
րաց Տէրն, այսպէս կ'ըսէ.
Կենդանի եմ ես, որ Մովաբ Սոդոմի
պէս,
Եւ Ամմոնի որդիքը Գոմորի պէս
Եղինճներու կալուածք և աղի հանք
Եւ յաւիտեան ամայութիւն պիտի ըլ-
լան։

*Կամ գեղատիպոր բնակարաններ,

իմ ժողովրդիս ձեացորդը զանոնք
պիտի յափշտակէ,
Եւ իմ աղջիս ձեացորդները զանոնք
պիտի ժառանգեն։
10 Ասկէ անոնց հպարտութեան հասնար
իրենց պիտի ըլլայ,
Քանզի անոնք զօրայ Տէրոջը ժողո-
վուրդը նախատեցին
Եւ անոր դէմ հպարտացան։
11 Տէրը անոնց վրայ ահարկու պիտի ըլ-
լայ,
Քանզի անիկա երկիրս բոլոր աստուած-
ները ընկճելով պիտի ընէ,
Եւ ազգայ բոլոր կղզիները,
Իւրաքանչիւր իւր տեղէն երկրպագու-
թիւն պիտի ընէ անոր։
12 Դուք ալ, ով Եթովպացիք,
իմ սրովս պիտի սպանուիք։
13 Եւ անիկա իւր ձեռքը հիւսիսի վրայ
պիտի երկնցունէ,
Եւ Ասորեստանին պիտի կորսնցունէ.
Եւ զինքնէ աւերակ
Ե՛ անապատի պէս չոր երկրի պիտի
դարձունէ.
14 Եւ անոր մէջ հօտեր,
Ազգայ բոլոր գազանները պիտի պառ-
կին.
Հաւալուսը և ոզնին ալ
Անոր խոյակներուն մէջ տեղ գիշերը պի-
տի անցունեն.
Պատուհաններէն ձայն պիտի հնչուի,
Սեմերուն մէջ աւերումն պիտի ըլլայ,
Քանզի եղևնափայտը պիտի բակուի։
15 Զբօսասէր քաղաքն այս է, որ ապա-
հովութեամբ կը բնակէր,
Որ իւր սրտին մէջ կ'ըսէր Թէ
Ես եմ և ինձմէ զատ ուրիշ չկայ։
Ի՜նչպէս աւերակ և գազանաց խլեակ ե-
ղաւ.
Անկէ ամէն անցնող պիտի սուլէ և ձեռ-
քը պիտի շարժէ։

ԳԼ. Գ

1 Վա՜յ ապստամբ և պիղծ քաղաքին,
Հարստահարութիւն ընող քաղաքին։
2 Ձայնը մտիկ չըրաւ, խրատ չընդունեց,
Տէրոջը չապաւինեցաւ, իւր Աստուծոյն
չմտաբերեցաւ։
3 Անոր իշխաններն անոր մէջ մռնչող ա-
րիւծներ են,
Անոր դատաւորներն երեկոյեան գայլեր
են,
Որ մինչև առաւօտ բան չեն թողուր։
4 Անոր մարգարէները անզգաստ և նեն-
գաւոր մարդիկ են,
Անոր քահանաները սրբարանը պղծեցին
և օրէնքը բռնադատեցին։
5 Արդար Տէրն անոր մէջ է,
Անիկա անօրէնութիւն չգործեր.
Առաւօտ առաւօտ իւր իրաւունքն ի
լոյս կը հանէ և ձախ չմնար,
Բայց անիրաւն ամաչել չգիտեր։
6 Ազգերը բնաջինջ ըրի,
Անոնց աշտարակները կործանեցան.
Անոնց փողոցներն աւերեցի,
Այնպէս որ անոնցմէ անցնող չկայ.
Անոնց քաղաքներն ամայացան,
Անմարդի և անբնակ եղան։
7 Ըսի որ Դուն անշուշտ պիտի վախնաս
և խրատ պիտի ընդունիս,
Եւ անոր բնակարանը բնաջինջ չըլլայ,
Որչափ որ զանիկա պատժեմ.
Սակայն անոնք կանուխ եղան,
և իրենց բոլոր գործերն ապականե-
ցուին։
8 Ուրեմն ինծի սպասեցէ՛ք, կ'ըսէ Տէրը,
Մինչև այն օրը որ որսի համար ոտք
ելլեմ.
Քանզի իմ վճիռս ազգերը ժողվել,
Թագաւորութիւնները դատմարել է,
Որ անոնց վրայ իմ սրտմտութիւնս,
Իմ բոլոր սաստիկ բարկութիւնս թա-
փեմ.
Քանզի բոլոր երկիրը իմ նախանձուս կր-
բակով պիտի սպառի։
9 Վասն զի այն ժամանակ ժողովուրդ-
ներուն չրթունքը
Մաքուր չրթանց պիտի դարձունեմ,
Որ ամէնքը Տէրոջը անունը կանչեն,
Եւ մէկ *օրագով անոր ծառայութիւն
ընեն։

*Եբր. ուսով



10 Եթովպիայի գետերուն անդիի կողմէն
Իմ ազօթողներս, իմ ցրուածներուս
աղջիկը,
Իմ ընծաս, պիտի բերուին։
11 Այն օրը պիտի չամչնաս քու բոլոր գոր-
ծերդ,
Որովհետև դէմ յանցանք ըրիր.
Քանզի անոնցմէ քու հպարտութեամբդ
զուարճացողները քեզմէ պի-
տի վերցնեմ,
Եւ այլ ևս իմ սուրբ լեռանս վրայ դո-
ղութիւն պիտի չընես։
12 Եւ քու մէջդ խոնարհ և ազքատ ժո-
ղովուրդ մնացորդ պիտի թո-
ղում,
Եւ Տէրոջը անուան պիտի յուսան։
13 Իսրայէլի մնացորդն անօրէնութիւն պի-
տի չընէ,
Սուտ պիտի չխօսի,
Եւ անոնց բերնին մէջ նենգաւոր լեզու
պիտի չգտնուի.
Քանզի անոնք պիտի արածին և պիտի
պառկին,
Եւ վախցնող պիտի չըլլայ։
14 Ցնծա, ով Սիոնի աղջիկ,
Բարձրաձայն ազաղակէ, ով Իսրայէլ,
Բոլոր սրտով ուրախ և զուարթ եղիր,
Ով Երուսաղէմի աղջիկ։
15 Տէրը քու դատաստաններդ վերցուց,
Քու թշնամիդ վռնտեց.
Իսրայէլի Թագաւորը, Տէրը, քու մէջդ
է, —

Ա՛յլ ևս չարիք պիտի չտեսնես։
16 Այն օրը Երուսաղէմի պիտի ըսուի,
Մի վախնար,
Եւ Սիոնի Ձեռքերդ չթուլնան։
17 Քու Տէր Աստուածդ քու մէջդ զօրա-
ւոր է,
Անիկա ուրախ պիտի վրնկէ
Անիկա քեզի համար ուրախութեամբ
պիտի զուարճանայ,
Եւ իւր սիրովը էրէն թողութիւն պիտի
տայ,
Եւ քու վրադ ցնծութեամբ պիտի ու-
րախանայ։
18 Հանդիսաւոր ժողովէն
Ոչ քեզմէ էին,
Եւ անոնց վրայ նախատինքը բեռ էր։
19 Ահա ես այն ժամանակ քու բոլոր նե-
ղիչներդ պիտի սպառեմ,
Եւ կաղը պիտի ազատեմ, և վռնտուա-
ծը պիտի ժողվեմ.
Եւ զանոնք գովելի և անուանի պիտի
ընեմ
Այն բոլոր երկիրներուն մէջ ուր նա-
խատինք կրած էին։
20 Այնատեն զձեզ կը պիտի բերեմ,
Եւ անատեն զձեզ պիտի ժողվեմ.
Վասն զի երկրիս բոլոր ժողովուրդնե-
րուն մէջ ձեզ անուանի և գովե-
լի պիտի ընեմ,
Երբ ձեր գերութիւնը ձեր աչաց առջև
կը դարձունեմ, կ'ըսէ Տէրը։

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՆԳԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Դարեհ Թագաւորին երկրորդ տարին,
վեցերորդ ամսոյ, ամսուան առաջին օրը
Տէրոջը խօսքը Անգէ մարգարէին բեր-
նով Զուբբայի իշխանին Սաղաթիէլեան
Զօրաբաբելի, և մեծ քահանային Յով-
2 սեդեկեան Յեսուի եղաւ ըսելով, Զօ-
րաց Տէրը կը խօսի և այսպէս կ'ըսէ.
Այս ժողովուրդը կ'ըսէ Թէ ժամանա-
կը չէ հասած, Տէրոջը տաճարը չինե-
3 լու ժամանակը։ Եւ Անգէ մարգարէին

բերնով Տէրոջը խօսքը եղաւ ըսե-
լով,
4 Արդեօք ժամանակ է որ դուք ձե-
զանդնաղարդ առներու մէջ բնա-
կիք,
եւ այս առունն աւերակ մնայ։
5 Սակայն հիմա զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Ձեր ճամբաներուն վրայ մտածեցէք,
6 Շատ ցանեցիք, բայց քիչ բերիք.
կերաք, բայց չյագեցաք.
խմեցիք, բայց ձեր ծարաւը չյագուցիք.
Հագուեցաք, բայց չտաքցաք.
եւ վարձով բանողը ծակ քսակի հա-
մար կը վաստկի էջ վարձքը։
7 Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Ձեր ճամբաներուն վրայ մտածեցէք.
8 Լեռը երթաք, փայտ բերէք
եւ առունը շինեցէք, եւ անոր պիտի հա-
ճիմ,
եւ պիտի փառաւորիմ, կ'ըսէ Տէրը։
9 Շատին նայեցաք, եւ ահա քիչ եղաւ.
Ձէք առնէրն անդամ բերիք, բայց ա-
նոր վրայ փչեցի։
Ինչո՞ւ համար, կ'ըսէ զօրաց Տէրը.
իմ առնս համար, որ աւերակ է,
եւ ձեռնէ իւրաքանչիւրն իւր առունը կը
վազէ։
10 Անոր համար երկինքը ձեր վրայէն էջ
ցօղը հառ կը պահէ,
եւ երկիրը իւր պտուղը չտար,
11 եւ հա երկրի վրայ, եւ լեռներու վրայ,
եւ ցորենի վրայ, եւ գինւոյ վրայ, եւ
իւղոյ վրայ,
եւ գետնի բերոյ վրայ,
եւ մարդոց վրայ, եւ անասուններու
վրայ,
եւ ձեռաց բոլոր վաստակին վրայ կե-
բաչուռ գիւն կանչեցի։
12 Անատն Սաղաթիէլեան Զօրաբաբէլ,
եւ մեծ քահանայ Յովսեդեկեան Յեսու,
եւ ժողովուրդին բոլոր մնացորդը մէ-
ծիկ ըրին իրենց Տէր Աստուածոյն ձայ-
նին եւ Անգէ մարգարէին խօսքերուն,
ինչպէս որ իրենց Տէր Աստուածը զա-
նիկա ղրկած էր. եւ ժողովուրդը Տէ-
13 րոջը երեսին վախցաւ։ Եւ Տէրոջը դես-
պանն Անգէ Տէրոջը դեսպանու թեամբ
ժողովրդեան խօսեցաւ եւ ըսաւ. Ես
14 ձեզի հետ եմ, կ'ըսէ Տէրը։ Եւ Տէրը
Զաւդայի իշխանին Սաղաթիէլեան Զօ-
րաբաբէլի հոգին, եւ մեծ քահանային
Յովսեդեկեան Յեսուի հոգին, եւ ժո-
ղովրդեան բոլոր մնացորդին հոգին
արթնցուց. եւ գացին եւ իրենց Աս-
տուածոյն, զօրաց Տէրոջը տան մէջ աշ-
15 խատեցան, Դարեհ թագաւորին երկ-
րորդ տարին վեցերորդ ամսուն քսան
եւ չորրորդ օրը։

## ԳԼ. Բ

1 Եօթներորդ ամսուն քսանեւմէկերորդ
օրն Անգէ մարգարէին բերնով Տէրոջը
2 խօսքը եղաւ ըսելով, Խիմա Զաւդայի
իշխանին Սաղաթիէլեան Զօրաբաբէլի,
եւ մեծ քահանային Յովսեդեկեան Յե-
սուի, եւ ժողովրդեան մնացորդին խօ-
սէ եւ ըսէ.
3 Ձեր մէջ մնացած ո՞վ կայ,
Որ այս առունը իւր առաջին փառաւո-
րութեամբն տեսած է.
Եւ հիմա դուն ինչպէս կը տեսնէք.
Մրեթէ այս անոր քով ոչինչ բանի մը
պէս չէ՞ ձեր աչաց առջեւ։
4 Բայց արդ զօրացիր, ով Զօրաբաբէլ,
կ'ըսէ Տէրը.
Եւ ով Յովսեդեկեան Յեսու մեծ քա-
հանայ, զօրացիր.
Եւ դուք, ով երկրին բոլոր ժողովուրդը,
Զօրացէք, կ'ըսէ Տէրը, եւ աշխատե-
ցէք.
Քանզի ես ձեզի հետ եմ, կ'ըսէ զօրաց
Տէրը։
5 Ինչպէս որ ձեր եգիպտոսէ ելած առե-
նը ձեզի հետ խօսք կապեցի,
Իմ հոգիս ձեր մէջ կը կենայ. մի վախ-
նաք։
6 Քանզի զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Քիչ առնէնէ ետքը նորէն երկինք եւ
երկիր,
Եւ ծով եւ ցամաք պիտի շարժեմ,
7 Նաեւ ամէն ազգերը պիտի շարժեմ,
Եւ ամէն ազգերուն ցանկալի բաները
պիտի գան.



Եւ այս առունը փառքով պիտի լեցու-
նեմ, կ'ըսէ զօրաց Տէրը։
8 Արծաթն իմն է եւ ոսկին իմն է, կ'ըսէ
զօրաց Տէրը։
9 Այս վերջին տան փառքը քան առաջ-
նոյնը մեծ պիտի ըլլայ, կ'ըսէ
զօրաց Տէրը,
Եւ հոս խաղաղութիւն պիտի տամ,
կ'ըսէ զօրաց Տէրը։
10 Դարեհի երկրորդ տարին, իններորդ
ամսուն քսանչորրորդ օրն Անգէ մար-
գարէի բերնով Տէրոջը խօսքը եղաւ
11 ըսելով, Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Արդ օրէնքին վրայ հարցմունք ըրէ
12 քահանաներուն եւ ըսէ. Եթէ մարդ մը
իւր հանդերձին փղանցով սուրբ միս
վերցունէ, եւ փղանցով դպչի հացի
կամ ապուրի կամ գինւոյ կամ իւղոյ
կամ ինչ եւ իցէ կերակուրի, անիկա
սուրբ կ'ըլլա՞յ։ Եւ քահանաները պա-
տասխանեցին եւ ըսին. Ոչ։ Եւ Անգէ
դարձեալ ըսաւ. Եթէ մեռելէ պղծուած մը
մարդ միկուն դպչելու ըլլայ, կը պղծո՞ւի։ Եւ քահանաները պատասխան
13 տուին եւ ըսին. Կը պղծուի։ Եւ Անգէ
պատասխան տուաւ եւ ըսաւ.
Այսպէս է այս ժողովուրդը,
Եւ այսպէս է այս ազգն իմ առջեւս,
կ'ըսէ Տէրը,
Եւ այսպէս է անոնց ձեռաց բոլոր գոր-
ծը.
Եւ ինչ որ հոն բնծայ կը մատուցանեն՝
պիղծ է։
15 Ուրեմն հիմա այս օրէն առաջ եղածը
մտածեցէք,
Երբ դեռ Տէրոջը տաճարին մէջ քար
քարի վրայ դրուած չէր։
16 Անատն երբ մէկը քսան չափ դիզին
դէզին քով կ'երթար,
Տասը չափ կը դառնար։

Եւ երբ երեք գինւոյ աւազանին քով
կ'երթար հնձանին չափան հա-
նելու,
Քսան չափ կը դառնար։
17 Ձեզ և ձեր ձեռաց բոլոր գործը
խորշակահարութեամբ և դաշիով և
կարկտով զարկի,
Սակայն ինձի չդարձաք, կ'ըսէ Տէրը։
18 Հիմա այս օրէն առաջ եղածը մտածե-
ցէք,
Տէրոջը տաճարին հիմնարկութեան օրէն,
Իններորդ ամսուն քսանչորրորդ օ-
րէն առաջ եղածը մտածեցէք։
19 Հատիկ ամբարին մէջ է.
Եւ որթը և թզենին և նռնենին և ձի-
թենին
Դեռ պտուղ չտուին.
Այս օրէն ի վեր պիտի օրհնեմ։
20 Եւ Տէրոջը խօսքը երկրորդ անգամ
Անգէի եղաւ ամսուն քսանչորրորդ
օրն ըսելով,
21 Զաւդայի իշխանին Զօրաբաբէլի խօսք
և ըսէ,
Ես երկինք և երկիր պիտի շարժեմ,
22 Եւ թագաւորութեանց աթոռը վեր ի
վար պիտի ընեմ,
Եւ ազգաց թագաւորութիւններուն զո-
րութիւնը պիտի կործանեմ,
Եւ կառքը և անոր հեծեալները վեր ի
վար պիտի ընեմ.
Եւ ձիերը և անոնց հեծեալները պիտի
իյնան
Իւրաքանչիւր իւր եղբօրը սրով։
23 Այն օրը, կ'ըսէ զօրաց Տէրը,
Ձեզ պիտի առնեմ, ով Սաղաթիէլ-
եան Զօրաբաբէլ, իմ ծառաս,
կ'ըսէ Տէրը,
Եւ զքեզ կնքով պէս պիտի դնեմ,
Քանզի քեզ ընտրած եմ, կ'ըսէ զօ-
րաց Տէրը։

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՋԱՔԱՐԻԱՅ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Դարձեալ երկրորդ տարին ութերորդ ամիսը Տէրոջը խօսքն Ադդովի որդւոյն Բարաքիայի որդւոյն Զաքարիա մարգարէին եղաւ ըսելով,
2 Տէրը ձեր հայրերուն չատ բարկացաւ։
3 Եւ անոնց ըսես. Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Ինծի դարձէք, կ'ըսէ զօրաց Տէրը,
Եւ ես ձեզի պիտի դառնամ, կ'ըսէ զօրաց Տէրը։
4 Ձեր հայրերուն պէս մի ըլլաք,
Որոց առաջին մարգարէները կը կանչէին ըսելով,
Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Ձեր չար ճամբաներէն և չար գործերէն դարձէք,
Բայց անոնք մտիկ չըրին
Եւ ինծի ականջ չասին, կ'ըսէ Տէրը։
5 Ձեր հայրերն ո՞ւր են.
Եւ մարգարէներն յաւիտեան կ'ապրի՞ն,
6 Սակայն իմ խօսքս և հրամաններս
Զոր իմ ծառաներու մարգարէներուն պատուիրած էի,
Ձեր հայրերուն չհասա՞ն.
Իսկ անոնք դարձան և ըսին,
Զօրաց Տէրն ինչ որ մեզի ընելու ոըտոյած էր՝
Մեր ճամբաներուն և գործերուն համեմատ
Մեր վրայ՝ ի գործ դրաւ զայն։
7 Դարեհի երկրորդ տարին Սեպտեմբեր ամսուն քառասնչորրորդ օրը Տէրոջը խօսքն Ադդովի որդւոյն Բարաքիայի որդւոյն Զաքարիա մարգարէին եղաւ ըսելով,
8 Գիշերով տեսայ որ ահա աշխատ ձիու վրայ հեծած մարդ մը ձորին մէջ եղող միւռներուն մէջտեղ կը կայնէր, և անոր եւմին աշխատ, պիտակ և ճերմակ
9 ձիեր կային, եւ ըսի. Ասոնք ի՞նչ են, ով տէր իմ. և ինծի հետ խօսող հրեշտակին ինծի ըսաւ, Ասոնց ինչ ըլլալը
10 կը ջեզի պիտի ցուցնեմ։ Եւ մրտենիներուն մէջ կայնող մարդը պատասխան առաւ և ըսաւ, Ասոնք անոնք են զոր Տէրը զրկեց երկիրը պտտելու։ Եւ մրտենիներուն մէջ կայնող Տէրոջը հրեշտակին պատասխան առին և ըսին. Երկիրը պտտեցանք, և ահա բո-
12 լոր երկիրը հանգստանալ կը նստի։ Եւ Տէրոջը հրեշտակը պատասխան առաւ և ըսաւ. Ով զօրաց Տէր, մինչև ե՞րբ չես ողորմիր Երուսաղէմի և Յուդայի քաղաքներուն, որոց այս հօթանասունն
13 տարին բարկացար։ Եւ Տէրը ինծի հետ խօսող հրեշտակին բարի խօսքերով՝ մխիթարական խօսքերով պատասխան
14 առաւ։ Եւ ինծի հետ խօսող հրեշտակն ինծի ըսաւ, կանչէ և ըսէ.
Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Երուսաղէմի համար և Սիոնի համար
Մեծ նախանձով կը նախանձիմ.
15 Եւ հանգստանան մէջ եղող ազգերուն բարկացած եմ յոյժ յոյժ,
Քանզի ես քիչ բարկացայ,
Եւ անոնք չարիքն աւելցուցին։
16 Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
Երուսաղէմի ողորմութեամբ դարձայ.
Իմ տունս անոր մէջ պիտի շինուի, կ'ըսէ զօրաց Տէրը,
Եւ երուսաղէմի վրայ լար պիտի քաշուի։
17 Դարձեալ կանչէ և ըսէ.
Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Իմ քաղաքներս նորէն բարիօք պիտի յորդին,
Եւ Տէրը նորէն գԻոն պիտի մխիթարէ,
Եւ նորէն ընտրեսւսլեմ պիտի ընտրէ։



18 Եւ աչքս վերցուցի և նայեցայ, և ա-
19 հա չորս եղջիւր։ Եւ ինծի հետ խօսող հրեշտակին ըսի, Ասոնք ի՞նչ են, և ինծի ըսաւ. Ասոնք են այն եղջիւրները որ զՅուդա, զԻսրայէլ և զԵրուսաղէմ
20 ցրուեցին։ Եւ Տէրը ինծի չորս արուես-
21 տաւոր ցուցուց։ Եւ ըսի, Ասոնք ի՞նչ ընելու կու գան. և անիկա խօսեցաւ և ըսաւ. Ասոնք են այն եղջիւրները որ զՅուդա ցրուեցին այնպէս որ մարդ չկրցաւ իւր գլուխը վերցունել. ուստի ասոնք եկան որ զանոնք վախցունեն, և Յուդայի երկրին վրայ ցրուելու համար եղջիւր վերցնող ազգերուն եղջիւրները վար ձգեն։

## ԳԼ. Բ

1 Եւ աչքս վերցուցի և նայեցայ, և ա-
հա մարդ մը որոյ ձեռքը չափերու
2 չուան կար։ Եւ ըսի, Դուն ո՞ւր կ'երթաս. և ինծի ըսաւ. Երուսաղէմ չափելու, և տեսնեմ թէ լայնութիւնը որչափ և երկայնութիւնը որչափ է։
3 Եւ ահա ինծի հետ խօսող հրեշտակը ելաւ, և անոր դիմաց ուրիշ հրեշտակ
4 մը եկաւ։ Եւ անոր ըսաւ. վազէ, այս երիտասարդին խօսէ և ըսէ,
Երուսաղէմ առանց պարսպի պիտի բնակուի
Մարդոց և անասնոց բազմութեան համար որ անոր մէջ պիտի ըլլան։
5 Եւ ես անոր բոլորտիքը հրեղէն պա-
րիսպ պիտի ըլլամ, կ'ըսէ Տէրը,
Եւ անոր մէջ փառաց համար պիտի ըլլամ։
6 Ազէ, ազէ, հիւսիսի երկրէն փախէք,
կ'ըսէ Տէրը,
Քանզի զձեզ երկնից չորս հովիւրուն պէս ցրուեցի, կ'ըսէ Տէրը։
7 Ազէ, զձեզ ազատէ, ով Սիօն,
Որ Բաբելոնի աղջկան հետ կը բնակիս։
8 Քանզի զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Փառաց ետևէն զիս զձեզ կողոպտող ազգերուն զրկեց,
Քանզի ձեզի դպչողն անոր աչաց բրբին կը դպչի։
9 Վասն զի ահա ես իմ ձեռքս անոնց վրայ պիտի շարժեմ,
Եւ անոնք իրենց ծառաներուն աւար պիտի ըլլան,
Եւ պիտի գիտնաք որ զօրաց Տէրը զիս զրկած է։
10 Ցնծա և ուրախացիր, ով Սիօնի աղջիկ,
Քանզի ահա ես կու գամ
Եւ քու մէջդ պիտի բնակիմ, կ'ըսէ Տէրը։
11 Եւ այն օրը շատ ազգեր Տէրոջը պիտի յարին,
Եւ ինծի ժողովուրդ պիտի ըլլան.
Եւ ես քու մէջդ պիտի բնակիմ,
Եւ պիտի գիտնաս որ զօրաց Տէրը զիս քեզի զրկած է։
12 Եւ Տէրը իւր բաժինն զՅուդա
Սուրբ երկրին մէջ ժառանգութեան պիտի առնու,
Եւ նորէն զԵրուսաղէմ պիտի ընտրէ։
13 Տէրոջը առջև լուռ կեցէք, ով բոլոր մարմին,
Քանզի անիկա իւր սուրբ բնակութենէն արթնցաւ։

## ԳԼ. Գ

1 Եւ Տէրը ինծի ցուցուց մեծ քահանայ Յեսուա, որ Տէրոջը հրեշտակին առջև կայնած էր, և Սատանան անոր ա՛ կողմը կայնած էր անոր դէմ դնելու։
2 Եւ Տէրը Սատանային ըսաւ. Տէրը քեզի յանդիմանէ, ով Սատանայ, և զքեզ ընտրեսւսլեմ ընտրող Տէրը յանդիմանէ. միթէ սրիկա կրակէ հանուած խանձուռ չէ։
3 Եւ Յեսուա ազտուտ հանդերձները հագած էր, և հրեշտակին առջև կը կայնէր։
4 Եւ ես իրեն առջև կայնողներուն պատասխան առաւ, և խօսեցաւ ըսելով, Ազտուտ հանդերձները ատոր վրայէն հանեցէք. և անոր ըսաւ. Տես, քու անօրէնութիւնդ վրայէդ վերցուցի, և քեզի պատուական զգեստներ պիտի
5 հագցնեմ։ Եւ ես ըսի որ անոր գլուխը մաքուր խոյր դնեն. և անոր գլու-

խը մաքուր խորը դրին, և անոր հանդերձները հագցուցին. և Տէրոջը հրեշտակը կայնած էր։

6 Եւ Տէրոջը հրեշտակը ձեռսն վիա-
7 յութիւն ըրաւ և բսաւ. Զօրաց Տէրն այսպես ի՛ըսէ. Եթէ իմ ճամբաներուս մէջ քալես և իմ պահպանութիւնս պահես, անասեն դուն ես իմ տունս պիտի դատես և իմ նրահներս պիտի պահես, և այս ներկայ գտնուողներուն *մէջէն առաջնորդներ՝ պիտի տամ քեզ։
8 Արդ մեծի ըրէ, ով Յեսու քհանայ, դուն և քու առջևդ նստող բարեկամներդ, զանոնք անոնք նշան ըլլալու համրերին են. վասն զի ահա ես իմ
9 ծառաս Շառաւիղը պիտի բերեմ։ Քանզի ահա քարը զոր Յեսուի առջև դրի, այն մեկ քարին վրայ եօթն աչք պիտի ըլլան. ահա ես անոր փորագրութիւնը պիտի փորագրեմ, ի՛ըսէ զօրաց Տէրը, և այն երկրին անօրէնութիւնը մէկ օ-
10 րուան մէջ պիտի վերցնեմ։ Այն օրը, ի՛ըսէ զօրաց Տէրը, ձենի խրտանչիւրդ ձեր իւր դրացին որթի տակ և թզենւոյ տակ պիտի կանչէ։

## Գլ. Գ

1 Եւ ինծի հետ խօսող հրեշտակը գար-
ձաւ, և զիս իւր քունէն արթնցուց
2 մարդու պէս արթնցուց։ Եւ ինծի բսաւ. Ի՞նչ կը տեսնես։ և բսի. Կը տեսնեմ որ ահա բոլորովին ոսկիէ աշտանակ մը կայ, և անոր վրայ՝ բաժակ մը, և անոր վրայ՝ եօթը ճրագ, և անոր վրայի եօթը ծրագներուն համար եօթը
3 խողովակ կայ. Եւ անոր քով երկու ձիթենի կայ, մին՝ բաժակին աջ կող-
4 մէն, և միւսը՝ ձախ կողմէն։ Եւ պատասխան առի, և ինծի հետ խօսող հրեշտակին խօսեցայ և բսի, Ասոնք
5 ի՞նչ են, ով տէր իմ։ Եւ ինծի հետ խօսող հրեշտակը պատասխան առաւ և ինծի բսաւ. Ասոնց ինչ ըլլալը չգի՞տես։ և ես բսի. Ոչ, ով տէր իմ։
6 Եւ պատասխան առաւ և ինծի խօսեցաւ ըսելով, Այս է Տէրոջը խօսքը որ կ՚ըսուի Զօրաբաբելի.
Ոչ զօրութեամբ, և ոչ ուժովով,
Այլ իմ Հոգւովս, կ՚ըսէ զօրաց Տէրը։
7 Դուն, ով մեծ լեռ, ո՞վ ես.
Զօրաբաբելի առջև դաշտ պիտի ըլլաս.
Եւ գլխոյ քարն ինք պիտի հանեմ,
Եւ պիտի աղաղակեն, շնորհք, շնորհք անոր։
8 Դարձեալ Տէրոջը խօսքն ինծի եղաւ ըսելով,
9 Այս ձեռները Զօրաբաբելի ձեռքն հիմ նեցին,
Եւ անոր ձեռքը պիտի կատարեն զայն,
Եւ պիտի գիտնաս որ զօրաց Տէրը զիս ձեզի դրկած է։
10 Քանզի փոքր բաներուն օրն ո՞վ անարհեց։
Վասն զի այն եօթն ուրախութեամբ պիտի տեսնեն գնառակը Զօրաբաբելի ձեռաց մէջ։
Անոնք Տէրոջը աչքերն են, որ բոլոր երկրի մէջ կը պտրտին։
11 Եւ ես պատասխան առի և բսի անոր, Աչառանակին աջ կողմը և անոր ձախ կողմն եղող այս երկու ձիթենիները
12 ներն ի՞նչ են։ Եւ երկրորդ անգամ պատասխան առի և անոր բսի. Երկու ոսկի խողովակներուն միջոցով է՞ը իրենցմէ ոսկեղ գէս թափող երկու ձի-
13 թենւոյ ոստերն ի՞նչ են։ Եւ ինծի խօսեցաւ և բսաւ, Ասոնց ինչ ըլլալը չգիտեր։ և ես բսի. Ոչ, ով տէր իմ։
14 Եւ բսաւ, Ասոնք երկու *օծեալներն են որ բոլոր երկրի Տէրոջը առջև կը կայնին։

## Գլ. Ե

1 Եւ դարձայ և աչքս վերցուցի և տե-
սայ, և ահա երկու լեռներու միջէն չորս կառք կ՚ելլէին, և լեռները պղ-
2 ղնձէ լեռներ էին։ Առջի կառքին աջ կողմը ձիեր ճերմակ էին, և երկրորդ կառքին ծիրանի ձիեր,
3 Կառքին ալ ձիերը, Եւ երրորդ կառքին ծիրանի ձիեր, և չորրորդ կառքին՝ սիրամոյն և գորշագոյն ձիերը։ Եւ պատասխան առի և ինծի հետ խօսող հրեշտակին բսի, Ասոնք ի՞նչ են,

*Կամ՝ Տեմելիքները

*Եբր. հղի որդիք



5 ով տէր իմ։ Եւ հրեշտակը պատաս-
խան առաւ և ինծի բսաւ. Ասոնք երկնից չորս հովերն են, որ բոլոր երկրին Տէրոջը առջև կայնելէն
6 ի՛ելլեն։ Սև ձիերը որ այն կառքին ետեւ են՝ հիւսիսի երկիրը կ՚ելլեն, և ճերմակներն անոնց ետևէն կ՚ելլեն, և պիտակներն հարաւոյ երկիրը կ՚ելլեն,
7 Եւ գորշագոյնները եկան, և ուզեցին որ երթան և երկրի վրայ պտրտին։ և անիկա բսաւ, Գացէք, երկրի վրայ պտրտեցէք. և անոնք երկրի վրայ պտրտեցան։ Եւ անիկա ինծի ազաղակեց և ինծի խօսեցաւ բսելով, Նայէ՛ հիւսիսի երկիրը հանգստացուցին իմ հոգիս հիւսիսային երկրին մէջ հանգուցուին։
9 Դարձեալ Տէրոջը խօսքն ինծի եղաւ
10 ըսելով, Գերութենէն գոյացողներէն, Հեղդայէ, Տոբիայէ և Յեդայիայէ առ, և դուն օրը գնա Բաբելոնացին Յոսփեհայի որդւոյն Յովսիայի տունը մտիր։
11 Արծաթէ և ոսկի առ և պսակները շինէ, և մեծ քահանային Յովսեդեկեայ Յե-
12 սուի գլուխը դիր։ Եւ անոր խօսէ բսելով,
Զօրաց Տէրը կը խօսի և այսպէս կ՚ըսէ. Ահա այն մարդը որոյ անունը Շառաւիղ է.
Անիկա իւր տեղէն պիտի բսանի,
Եւ Տէրոջը տաճարը պիտի շինէ։
13 Անիկա պիտի շինէ Տէրոջը տաճարը,
Եւ պատիւ պիտի ունենայ,
Եւ իւր աթոռին վրայ նստելով իշխանութիւն պիտի վարէ,
Եւ քահանայ պիտի ըլլայ իւր աթոռին վրայ։
Եւ երկուքին մէջ խաղաղութեան խորհուրդ պիտի ըլլայ։
14 Եւ պսակները Հելդէի, Տոբիայի և Յեդայիայի և Սոփոնիայի որդւոյն Հենի պիտի ըլլան Տէրոջը տաճարին մէջ յիշո-
15 ոսկի գան, և Տէրոջը տաճարին մէջ պիտի շինեն, և պիտի գիտնաք որ զօրաց Տէրը զիս ձեզի դրկած է և այս պիտի ըլլայ, եթէ ուշադրութեամբ ձեր Տէր Աստուծոյն ձայնին մտիկ ընէք։

Գլ. Ի

1 Եւ եղաւ որ Դարեհ Քագաւորին չորրորդ տարին հինգերորդ ամսուն, այսինքն հնգետի չորրորդ օրը Տէրոջը խօսքը Զաքարիայի եղաւ, երբ Սարասար
2 քը Զաբարիայի եղաւ, երբ Սարասար և Ռէկէմմելէքը և անոնց մարդիկն Աստուծոյ տունը զրկուեցան, որ Տէրոջը
3 առջև աղօթք ընեն, և զօրաց Տէրոջը տան մէջ եղող քահանաներուն և մարգարէներուն խօսքն ու ըսեն. Արդեօք հինգերորդ ամսուն մէջ իմ անձս զատելով լամ, ինչպէս որ այսչափ տա-
4 րիներ ըրի։ Ա՛նաւնեն զօրաց Տէրոջը
5 խօսքն ինծի եղաւ ըսելով. Այս երկրիս բոլոր ժողովրդեան և քահանաներուն խօսէ և ըսէ. Այս եօթանասուն տարին, երբ հինգերորդ և եօթներորդ ամիսներուն մէջ ծոմապահութիւն կ'ընէիք և սուգ կը բռնէիք, միթէ ինծի՞
6 համար ծոմապահութիւն կ'ընէիք։ Եւ երբ կ'ուտէիք և կը խմէիք, ձեզի համար չէի՞ք ուտեր և ձեզի համար չէի՞ք
7 խմեր։ Ասոնք չէ՞ն այն խօսքը զոր Տէրը առաջին մարգարէներուն բերնով հրատարակեց, երբ Երուսաղէմ և անոր չրջակայ քաղաքները բնակուած և հանգստեան մէջ էին, և հարաւային և դաշտային կողմերը բնակուած էին։
8 Դարձեալ Տէրոջը խօսքը Զաքարիայի
9 եղաւ ըսելով, Զօրաց Տէրն այսպէս խօսեցաւ և ըսաւ. Արդար դատաստան տեսէք, և ձնեղ իւրաքանչիւր իւր եղբօր ողորմութիւն և գթութիւն ընէ։
10 Եւ այրին և որբը, օտարականը և աղքատը մի հարստահարէք, և բնաւ մարդ իւր եղբօրը համար իւր սրտին մէջ չա-
11 րութիւն չխորհի։ Բայց անոնք չուզեցին մտիկ ընել, այլ էրէնց ուսը ետ քաշեցին, և իրենց ականջը ծանրացուցին որ չլսեն. Եւ իրենց սիրտն ադամանդի պէս ըրին, որ չլսեն այն օրէնքը և այն խօսքը զոր զօրաց Տէրը իւր Հոգւով առաջին մարգարէներուն բերնով անոնց զրկեց. անոր համար զօրաց Տէրոջը կողմանէ մեծ բարկութիւն
13 եղաւ։ Եւ եղաւ որ ինչպէս որ անիկա կանչեց և անոնք մտիկ չըրին, այնպէս անոնք կանչեցին և ես մտիկ չըրի, կ'ը-
14 սէ զօրաց Տէրը. Այլ զանոնք իրենց չգիտցած բոլոր ազգերուն մէջ փոթորկով ցրուեցի, և անոնց ետևէն երկիրն անցնողէ և դարձողէ մնայի մեաց. այնպես ցանկալի երկիրն ամայի ըրին։

Գլ. Լ

1 Դարձեալ զօրաց Տէրոջը խօսքն ինծի
2 եղաւ ըսելով, Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ. Սիօնի համար չատ մեծ նախանձով նախանձեցայ, և անոր համար մեծ
3 սրտմտութեամբ նախանձեցայ։ Տէրը այսպէս կ'ըսէ. Սիօնի դարձած եմ, և Երուսաղէմի մէջ պիտի բնակիմ, և Երուսաղէմ ճշմարտութեան քաղաք, և զօրաց Տէրոջը լեռը Սուրբ լեռ պիտի կոչուի։
4 Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ. Երուսաղէմի հրապարակներուն մէջ տակաւին ծեր մարդիկ և պառաւներ պիտի նըստին, որոց իւրաքանչիւրին ձեռքը ցուպ
5 պիտի ըլլայ օրերու չատութենեն. Եւ քաղաքին հրապարակները տղաներով և աղջիկներով պիտի լեցուին, որ անոր հրապարակներուն մէջ պիտի խաղան։
6 Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ. Եթէ այն օրերն այս ժողովրդեան մնացորդին աչաց դժուարին երևնայ այս, միթէ իմ աչացս ալ դժուարին պիտի երևնայ, կ'ըսէ զօրաց Տէրը։
7 Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ. Ահա իմ ժողովուրդս արևելեան երկրէն և ա-
8 րևմտեան երկրէն պիտի փրկեմ. Եւ զանոնք պիտի բերեմ, և Երուսաղէմի մէջ պիտի բնակին. և անոնք ինծի ժողովրդ պիտի ըլլան, և ես ճշմարտութեամբ և արդարութեամբ անոնց Աստուած պիտի ըլլամ։
9 Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ. Ձեր ձեռքը թող զօրանայ, ով դուք որ այս օրերս կը լսէք այս խօսքերն այն մարգարէներուն բերնէն, որ զօրաց Տէրոջը տան հիմնարկութեան և տաճարին



10 Նորգութեան օրը էօթօ։ Քանզի այն օրերէն առաջ մարդու համար վարձք չկար, և անասնոյ համար վարձք չկար. և նեղութեան պատճառաւ ելլողին և մտնողին խաղաղութիւն չկար, քանզի ես ամէն մարդ իւր ընկերին
11 դէմ ոչ հանած եմ։ Բայց հիմա այս ժողովրդեան մնացորդին առաջին օրերուն պէս պիտի չըլլամ, կ'ըսէ զօրաց
12 Տէրը։ Քանզի հաւնոը խաղաղութիւն պիտի տայ, և երկիրը իւր բերքը պիտի տայ, և երկինք իւր ցօղը պիտի տայ. և այս ամէն բաներն այս ժողովրդեան մնա-
13 ցորդին ժառանգել պիտի տամ։ Եւ պիտի ըլլայ որ ինչպէս դուք ազգերու մէջ անէծք եղաք, ով Յուդայի տունը և Իսրայէլի տունը, այնպես զձեզ պիտի ազատեմ, և օրհնութիւն պիտի ըլլաք. մի վախնաք, ձեր ձեռքը թող
14 զօրանան։ Քանզի զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ. Ինչպես որ ձեզի չարիք բներելու դիտաւորութիւն ըրի, երբ ձեր հայրերը զիս բարկացուցին, կ'ըսէ զո-
15 րաց Տէրը, և չզղջացէ, Այնպես գործայ և այս օրերը Երուսաղէմի և Յուդայի տան բարիք ընելու դիտաւորու-
16 թիւն ըրի, մի վախնաք։ Ձեր ընելու բաներն ասոնք են. Ճշմարտութիւն խօսեցէք իւրաքանչիւր ոք իւր ընկերին, ձեր դուռներուն մէջ արդարութեամբ և խաղաղութեամբ դատաստան տե-
17 սէք. Եւ ձնեղ ոչ ոք իւր սրտին մէջ իւր ընկերին համար չարութիւն մտածէ, և սուտ երդում մի սիրէք. վասն զի ես այս բոլոր բաները կ'ատեմ, կ'ըսէ Տէրը։
18 Դարձեալ զօրաց Տէրոջը խօսքն ինծի
19 եղաւ ըսելով, Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ. Չորրորդ ամսոյ ծոմը, և հինգերորդին ծոմը, և եօթներորդին ծոմը, և տասներորդին ծոմը Յուդայի տան ցնծութիւն և ուրախութիւն և ինդալից տօներ պիտի ըլլան. ուստի ճշմարտութիւն և խաղաղութիւն սիրեցէք։
20 Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ. Նորէն ժողովուրդներ և շատ քաղաքներու
21 բնակիչներ պիտի գան. Եւ մէկուն բնակիչները միւսին պիտի երթան և ըսեն. Եկէք Տէրոջը առջև աղօթք ընելու և զօրաց Տէրը փնտռելու երթանք։
22 Ես ալ պիտի երթամ։ Եւ շատ ժողովուրդներ և զօրաւոր ազգեր Երուսաղէմի մէջ զօրաց Տէրը փնտռելու և Տէրոջը առջև աղօթք ընելու պիտի
23 գան։ Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ. Այն օրերը ազգերուն բոլոր լեզուներէն տասն մարդ հէյ-ի-ըէօշ պիտի բռնեն, այսինքն Հրեայ եղող մարդուն քղանցը պիտի բռնեն, և ըսեն, Ձեզի հետ երթանք, քանզի լսեցինք որ Աստուած ձեզի հետ է։

Գլ. Թ

1 Հադրաքի երկրին դէմ Տէրոջը խօսքին պատգամն է,
Եւ Դամասկոսի վրայ պիտի հանգչի.
(Քանզի Տէրոջը աչքը մարդուս,
Եւ Իսրայէլի բոլոր ցեղերուն [է Դամ-
2 ասկոս։)
Եւ Եմաթի եւ անոր սահմանակիցն է,
Նաև Տիւրոս և Սիդոն, թէև շատ իմաստուն են։
3 Եւ Տիւրոս իրեն ամրոց չինեց,
Եւ արծաթը՝ հողի պէս,
Եւ զուտ ոսկին փողոցներուս ցեխի պէս դիզեց։
4 Ահա Տէրը զանիկա պիտի ջլէ,
Եւ ծովուն մէջ անոր ունեցած զօրութիւնը պիտի զարնէ,
Եւ անիկա կրակով պիտի ապառի։
5 Ասկաղոն պիտի տեսնէ և պիտի վախնայ,
Նաև Գազա, և մեծապես պիտի տագնապի։
Ակկարոն ևս, քանզի իւր յոյսը *պատ-
րաստ պիտի կրէ.
Եւ Գազայէ թագաւորը պիտի կորսուի,
Եւ Ասկաղոն պիտի չբնակուի։

*Եբր. պիտի ամչնայ

6 Եւ Ադոմասի վրէ *տապարագի պիտի
բնակի,
Եւ Փղշտացւոց հնարաւորութիւնը պիտի
ջնջուի։
7 Եւ անոնց արիւնն անոնց բերնէն,
Եւ անոնց պղծութիւններն անոնց ակ-
առներուն մէջէն պիտի վերցու-
նեմ.
Եւ մնացորդը, նաև այն մեր Աստու-
ծոյն պիտի ըլլայ,
Եւ Ցուդայի մէջ՝ հազարապետի պէս,
Եւ Ակկարոն Յեբուսացւոյն պէս պիտի
ըլլայ։
8 Եւ անցնող և դարձող զօրաց պատ-
ճառաւ
Իմ տանս բոլորտիքը պիտի բնակիմ,
Եւ այլ եւս անոնց մէջէն բռնաւոր պի-
տի չանցնի,
Քանզի հիմայ իմ աչօքս տեսայ։
9 Մեծապէս ուրախացիր, ով Սիօնի
աղջիկ,
Ցնծութիւնով աղաղակէ, ով Երուսա-
ղէմի աղջիկ.
Ահա քու Թագաւորդ քեզի կու գայ.
Անիկա արդար և փրկիչ է,
Հեզ է, և իշու վրայ հեծած,
Եւ իշու ձագի, ամանակի վրայ։
10 Եւ Եփրեմէ՛ կառքը,
Եւ Երուսաղէմէ՛ ձին պիտի ջնջուի,
Եւ պատերազմին աղեղը պիտի կոտ-
րի։
Եւ անիկա ազգերուն խաղաղութիւն
պիտի խօսի.
Եւ անոր իշխանութիւնը ծովէն մինչև
ծով,
Եւ գետէն մինչև երկրի ծայրերը պի-
տի ըլլայ։
11 Եւ քեզի ալ՝ քու ուխտիդ ա-
րիւնովը
Քու գերիներդ ջուր չունեցող գուբէն
հանեցի։
12 Ամրոցը դարձէ՛ք, ով յուսոյ գերիներ,
Ես այսօր եւս կը ծանուցանեմ
Որ քեզի կրկնապատիկ հատուցում
պիտի ընեմ.

13 Վասն զի զՑուդա ինծի համար աղեղի
պէս պիտի լարեմ,
Եւ զԵփրեմ *նետի պէս պիտի դնեմ,
Եւ քու որդիդը, ով Սիօն,
Ցունաց որդւոց վրայ պիտի յարուցա-
նեմ,
Եւ զքեզ զօրաւորին սրոյն պէս պիտի
ընեմ։
14 Եւ Տէրը անոնց վրայ պիտի երեւնայ,
Եւ անոր նետը փայլակի պէս պիտի կէ-
լէ.
Եւ Տէր Եհովան փող պիտի հնչեցունէ,
Եւ հարաւային մրրիկներով պիտի քա-
լէ։
15 Զօրաց Տէրը զանոնք պիտի պատապա-
նէ.
Եւ անոնք ընաջինջ պիտի ընեն,
Եւ †գնդաքարերու վրայ՝ պիտի կո-
խեն,
Եւ պիտի խմեն և գինովի պէս պիտի
աղաղակեն.
Եւ անոնք սրսկի պէս,
Սեղանին անկիւններուն պէս պիտի լե-
ցուին։
16 Եւ այն օր անոնց Տէր Աստուածը
Զանոնք իբր ժողովրդեան հօտին պէս
պիտի փրկէ.
Քանզի անոր երկրին վրայ թագի քա-
րերու պէս պիտի բարձրանան։
17 Քանզի անոր բարութիւնը և գեղեց-
կութիւնն ի՜նչ մեծ է.
Ցորիներ երիտասարդները, և քաղցուն
կոյսերը պիտի մնուցանէ։

Գլ. Ժ

1 Հնաբի անձրեւին ժամանակ
Տէրոջմէ անձրեւ խնդրեցէք.
Տէրը փայլակներ պիտի ընէ,
Եւ անոնց առատ անձրեւ պիտի տայ,
Ե՛ւ իւրաքանչիւր մարդու՝ ագարակին
խոտ։
2 Քանզի թերափիմներն ունայնութիւն
խօսեցան,

*ԵԲՐ. անհարազատ ՝ի՛մ ազեղնկորդի

*ԵԲՐ. պիտի լեցունեմ,
†Կամ գալատքարերով



Եւ գուշակութիւն ընողները սուտ տեսան,
Եւ սուտ երազներ պատմեցին,
Պարապ մխիթարութիւն տուին։
Անոր համար հօտերու պէս չուեցին,
Հովիւ չլլալուն համար տագնապեցան։
3 Հովիւներուն վրայ իմ բարկութիւնս
բորբոքեցաւ,
Եւ նոխազներուն այցելութիւն պիտի
ընեմ.
Քանզի զօրաց Տէրը իր հօտին,
Ցուդայի տան այցելութիւն ըրաւ,
Եւ զանոնք իր պատերազմի մէջ հե-
ծեծ գեղեցիկ ձիուն պէս պիտի
ընէ։
4 *Անկիւնն անկէ, բլուրն անկէ,"
Պատերազմի աղեղն անկէ,
Ամէն զօրապետ միանգամայն անկէ
պիտի ելլէ։
5 Եւ այ՛սպէ՛ս զօրաւորներու պէս պիտի
ըլլան,
Որ պատերազմի մէջ իշխանին փողցնե-
րու ցեխին մէջ կը կռիւեն.
Եւ անոնք պատերազմ պիտի ընեն.
Քանզի Տէրը անոնց հետ է,
Եւ ձիերու վրայ հեծնողները պիտի ա-
մչցնան։
6 Եւ Ցուդայի տունը պիտի զօրացու-
նեմ.
Եւ Յովսէփայ տունը պիտի փրկեմ,
Եւ զանոնք դարձ պիտի բնակեցնեմ,
Քանզի անոնց ողորմեցայ.
Եւ անոնք այնպէս պիտի ըլլան,
Որպէս թէ զանոնք երբեք ձգած չէի.
Քանզի անոնց Տէր Աստուածը ես եմ,
Եւ անոնց պիտի լսեմ։
7 Եւ Եփրեմ զօրաւորի պէս պիտի ըլլայ,
Եւ անոնց սիրտն ուրախ պիտի ըլլայ՝
իբր թէ գինուով.
Անոնց որդիքը եւս պիտի տեսանին և
պիտի ուրախանան,
Անոնց սիրտը Տէրոջմով պիտի ցնծայ։
8 Անոնց պիտի սուլեմ և զանոնք պիտի
ժողվեմ,
Քանզի զանոնք փրկեցի։

*Կամ Իշխանը անկէ, գլխաւորն անկէ,

Եւ անոնք պիտի բազմանան, ինչպէս
որ բազում էին։
9 Թէև զանոնք ժողովուրդներու մէջ
ցանեմ,
Սակայն հեռաւոր տեղերուն մէջ պի-
տի յիշեն,
Եւ իրենց որդւոց հետ պիտի ապրին և
նա պիտի դառնան։
10 Եւ զանոնք Եգիպտոսէ երկրէն պիտի
դարձնեմ,
Եւ զանոնք Ասորեստանէ պիտի ժո-
ղովեմ,
Եւ զանոնք Գաղաադու երկիրը
Եւ Լիբանան պիտի բերեմ.
Եւ անոնց համար բ֊ո֊ւ֊ա֊կ տեղ պիտի
չգտնուի։
11 Եւ ծովուն *նեղութեամբ պիտի անցնի,
Եւ ծովուն ալիքները պիտի զարնէ.
Եւ գետին բոլոր խորութիւնները պի-
տի ցամքին,
Եւ Ասորեստանի հպարտութիւնը պի-
տի իջնէ,
Եւ Եգիպտոսի գաւազանը պիտի վեր-
ցուի։
12 Եւ զանոնք Տէրոջմով պիտի զօրացու-
նեմ,
Եւ անոր անուամբ պիտի պտտին, կ'ը-
սէ Տէրը։

Գլ. ԺԱ

1 Դո՛ւռնեղդ բաց, ով Լիբանան,
Եւ կրակը քու եղևիններդ ուտէ։
2 Մայր ծառը թող ողբայ,
Քանզի եղեւինն ինկաւ,
Վասն զի ազնուականները կողոպտուե-
ցան.
Բաասնու կաղնիները թող ողբան,
Քանզի անմատչելի անտառը †կարուե-
ցաւ։
3 Հովիւներուն ողբալու ձայնը կ՛լսուի,
Քանզի անոնց վառքը յափշտակուե-
ցաւ.
Առյոզ առիւծներու մռնչելուն ձայնը
կ՛լսուի,

*Կամ նեղութիւն †ԵԲՐ. ԻՄԱՆ։

քանզի Յորդանանս չբերաք զայս ժողովուրդս ի վերայ առաջի։
4 իմ Տէր Աստուածս այսպէս կ'ըսէ. Մարթուելու ոչխարներն արածէ,
5 Զանոնք՝ զորս գնացիները կը մարթեն Եւ յանցաւոր չեն համարուիր.
Եւ զանոնք վաճառողները կ'ըսեն, Տէրը օրհնեալ ըլլայ որ հարստացայ.
Եւ անոնց հովիւներն անոնց վրայ գութ չունին։
6 Քանզի ես այլ ևս երկրի բնակիչներուն պիտի չդթամ, կ'ըսէ Տէրը,
Մանաւանդ ահա ես ամէն մարդ իւր ընկերին ձեռքը
Եւ իւր թագաւորին ձեռքը պիտի մատնեմ.
Եւ երկիրը պիտի զարնեն,
Եւ անոնց ձեռքէն պիտի չփրկեմ։
7 Եւ մարթուելու ոչխարները, Այո, հօսին ողորմելիներն, արածեցին։
Ու ինծի երկու գաւազան առի, Մէկին անունը՝ Գեղեցկութիւն,
Եւ մէւսին անունը կապոյր դրի,
Եւ ոչխարներն արածեցին։
8 Ես մէկ ամսոյ մէջ երեք հովիւ կտրեցի,
Քանզի հոգիս անոնց նեղացաւ,
Եւ անոնց հոգին ևս ինձ զզուեցաւ։
9 Ես ըսի, Չեզ պիտի չհովուեմ. Մեռնողը թող մեռնի,
Եւ կորսուողը թող կորսուի,
Եւ մնացածներէն թող իրարու միս ուտեն։
10 Ես գեղեցկութիւն կոչուած գաւազանս առի և զանիկա կտրեցի,
Որ բոլոր ժողովրդոց հետ ըրած ուխտս արբեմ.
11 Ես նոյն օրն արբեցաւ.
Եւ ինծի սպասող հօսին ողորմելիներն Հասատաւ գիտցան որ Տէրոջը խօսքն էր այս։
12 Ես անոնց ըսի, Եթէ ձեր աչքց հաճոյ կ'երևնայ, իմ վարձս տուէք,
Ապա թէ ոչ, զանց ըրէք.
Ես իմ վարձուս համար երեսուն արծաթ կշռեցին։
13 Ես Տէրը ինծի ըսաւ, Զանիկա *բրտին նետէ.
Վայելուչ գին է այս,
Զոր անոնք ինծի համար կաթեցին.
Ես երեսուն արծաթին առի,
Ես զանիկա Տէրոջը տունը †բրտին նետեցի։
14 Ետքը կտրեցի իմ գաւազանս կապոյր, Որ Յուդայի և Իսրայէլի մէջ եղող եղբայրութիւնն արբեմ։
15 Ես Տէրը ինծի ըսաւ, Քեզի նորէն յիմար հովիւի գործիներ առ.
16 Քանզի ահա ես երկրի վրայ հովիւ մը պիտի հանեմ.
Անիկա կորսուելու վրայ եղողներուն այցելութիւն պիտի չընէ,
Ցրուածը պիտի չփնտռէ,
Ես կոտրածը պիտի չբժշկէ,
Ե՝ †ողջը պիտի չանուցանէ.
Այլ գեղերուն միսը պիտի ուտէ,
Ես անոնց կճղակները պիտի խորտակէ։
17 Վայ ոնայնութեան հովիւին որ ոչխարները կը թողու.
Անոր բազկին վրայ և աջ աչքին վրայ սուր պիտի ըլլայ.
Անոր բազուկը բոլորովին պիտի չորնայ,
Ես աջ աչքը բոլորովին պիտի խաւարի։

## Գլ. ԺԲ

1 Իսրայէլի վրայ Տէրոջը խօսքին պատգամը։
Երկինքը տարածող և երկիր հիմնարկող,
Ես մարդուն հոգին անոր մէջ սահեցնող Տէրը կ'ըսէ.
2 Ահա ես զերուսաղէմ բոլոր չրջակայ ազգերուն
Թմրութեան բաժակ պիտի ընեմ.
Նաև Յուդայի վրայ պիտի ըլլայ երուսաղէմի պաշարման ատեներ։
3 Ես պիտի ըլլայ որ այն օրը զերուսաղէմ

*Կամ գանձատունը

†Կամ կա մնացածը



Բոլոր ժողովուրդներուն ծանր քար պիտի ընեմ.
Բոլոր անոնք որ անով կը բեռնաւորուին՝ բոլորովին պիտի կտրին,
Թէև երկրիս բոլոր ազգերն անոր վրայ ժողովուին։
4 Այն օրը, կ'ըսէ Տէրը, Ամէն ձի սոսկմանք պիտի զարնեմ,
Ես անոր հեծեալն՝ տգիտութեամբ.
Ես Յուդայի տան վրայ աչքս պիտի բանամ,
Ես ժողովուրդներուն բոլոր ձիերը կուրութեամբ պիտի զարնեմ։
5 Ես Յուդայի հազարապետներն իրենց սրտին մէջ պիտի ըսեն,
Երուսաղէմի բնակիչները *մեր զօրութիւնն են
Զօրաց Տէրոջմով, իրենց Աստուծով։
6 Այն օրը Յուդայի հազարապետները
Կրակի վառարանի պէս պիտի ընեմ փայտերու մէջ,
Ես կրակի ջահի պէս՝ հունձերու մէջ.
Ես անոնք աջ կողմն և ձախ կողմն
Բոլոր չրջակայ ժողովուրդները պիտի ուտեն.
Ես դարձեալ երուսաղէմ իւր տեղը,
Երուսաղէմի մէջ, պիտի բնակուի։
7 Ես Տէրը նախ Յուդայի վրաններն պիտի փրկէ,
Որպէս զի Դաւթի տան պարծանքը
Ես Երուսաղէմի բնակիչներուն պարծանքը
Յուդայի վրայ չհպարտանայ։
8 Այն օրը Տէրը Երուսաղէմի բնակիչներուն պաշտպանութիւն պիտի ընէ.
Ես անոնց մէջ տկար եղողն այն օրը Դաւթի պէս պիտի ըլլայ,
Ես Դաւթի տունն՝ Աստուծոյ պէս,
Տէրոջը հրեշտակին պէս պիտի ըլլայ անոնց առջեւ։
9 Ես պիտի ըլլայ որ այն օրը Երուսաղէմի վրայ եկող բոլոր ազգերը
Բնաջինջ ընելու համար պիտի ըլլամ։
10 Ես Դաւթի տան վրայ
Ես Երուսաղէմի բնակիչներուն վրայ Շնորհաց և աղօթից հոգին պիտի թափեմ,
Ես անոնք ինծի, իրենց խոցածին, պիտի նային.
Ես անոր վրայ միամոր զաւակի վրայ ողբալու պէս պիտի ողբան,
Ես անոր վրայ անդրանիկ զաւակի վրայ ցաւելու պէս պիտի ցաւին։
11 Այն օրը Երուսաղէմի մէջ մեծ ողբ պիտի ըլլայ,
Մակեդովի դաշտին մէջ Ադադ-ռեմմոնի ողբին պէս։
12 Ես երկիրը պիտի ողբայ՝
Իւրաքանչիւր ազգատոհմ առանձին.
Դաւթի տան ազգատոհմն առանձին,
Ես անոնց կանայք առանձին,
Նաթանի տան ազգատոհմն առանձին,
Ես անոնց կանայք առանձին,
13 Ղեւեայ տան ազգատոհմն առանձին,
Ես անոնց կանայք առանձին,
Սեմէիի ազգատոհմն առանձին,
Ես անոնց կանայք առանձին,
14 Բոլոր մնացած ազգատոհմներուն իւրաքանչիւրն առանձին,
Ես անոնց կանայք առանձին։

## Գլ. ԺԳ

1 Այն օրը Դաւթի տան և երուսաղէմի բնակիչներուն
Բացուած աղբիւր պիտի ըլլայ
Մեղքի համար և պղծութեան համար։
2 Ես պիտի ըլլայ որ այն օրը, կ'ըսէ զօրաց Տէրը,
Կռոց անուններն երկրէն պիտի ջնջեմ,
Ես այլ ևս պիտի չյիշուին.
Նաև մեռոց մարգարէները և պիղծ ոգին երկրէն պիտի վերցունեմ։
3 Ես պիտի ըլլայ որ երբ մարդ մը այնուհետև մարգարէութիւն ընէ,
Զանիկա ծնանող հայրը և մայրն անոր պիտի ըսեն,
Զապրիս, քանզի Տէրոջը անունէն սուտ խօսեցար.
Ես անոր մարգարէութիւն ըրած ատեներ
Զանիկա ծնանող հայրը և մայրը զանիկա պիտի խոցեն։

*Եբր. իմ զօրութիւնս

4 Եւ պիտի ըլլայ որ այն օրը, երբ մար-
գարէները
Մարդաբեւթիւն կ'ընեն, պիտի ամչը-
նան իւրաքանչիւրը տեսիլէն,
Եւ խաբելու համար մազա վերարկու
պիտի չհագնին,
5 Եւ ան-ոյն էրգասաւն-ը-ըզ պիտի ըսէ՝
Ես մարդաբեւ չեմ, ես երկրագործ մարդ
եմ.
Քանզի իմ մանկութենէս հետէ զիս
*ծառայեան էջբ- հաւէ-.
6 Եւ անոր պիտի ըսուի,
Ձեռացդ մէջ այս վէրքերն ի՞նչ են.
Եւ անիկա պիտի ըսէ,
Ասոնք վէրքերս են զորս ընդունեցայ
բարեկամներուս տան մէջ։
7 Արթնցիր, ով սուր, իմ Հովուիս
վրայ,
Եւ իմ ընկերս եղող մարդուն վրայ,
կ'ըսէ զօրաց Տէրը.
Հովիւը զարկ, և ոչխարները ցրուին,
Եւ իմ ձեռքս փոքրիկներուն վրայ գար-
ձուցնեմ.
8 Եւ պիտի ըլլայ բոլոր երկրին մէջ, կ'ը-
սէ Տէրը,
Որ երկու մասը պիտի կտրուի և պիտի
մեռնի,
Եւ երրորդ մասը պիտի մնայ անոր մէջ.
9 Եւ այն երրորդ մասը կրակի պիտի անց-
ուցնեմ,
Եւ զանոնք պիտի զտեմ, ինչպէս արծա-
թը կը զտուի,
Եւ զանոնք պիտի փորձեմ, ինչպէս
ոսկին կը փորձուի.
Անոնք իմ անունս պիտի կանչեն,
Եւ ես անոնց պատասխան պիտի տամ.
Ես պիտի ըսեմ թէ Անիկա իմ ժողո-
վուրդս է.
Եւ անոնք Տէրը իմ Աստուածս է պի-
տի ըսեն։

ԳԼ. ԺԴ

1 Ահա Տէրոջը օրը կու գայ,
Եւ քու աւարդ քու մէջդ պիտի բաժ-
նուի։

*Կամ ստացուածներուս վրայ դրին։

2 Քանզի բոլոր ազգերը պատերազմի հա-
մար
Երուսաղէմի վրայ պիտի ժողվեմ.
Եւ քաղաքը պիտի առնուի,
Եւ տուները պիտի կողոպտուին,
Եւ կանայք պիտի պղծուին,
Եւ քաղաքին կէսը գերութեան պիտի
երթայ,
Բայց ժողովուրդեան մնացորդը քաղա-
քէն պիտի չկտրի։
3 Եւ Տէրը պիտի ելլէ,
Եւ այն ազգերուն հետ պիտի պատե-
րազմի,
Ինչպէս օր պատերազմին օրը պատե-
րազմեցաւ։
4 Եւ այն օր անոր ոտքերը
Ձիթենեաց լեռան վրայ պիտի կայնին,
Որ Երուսաղէմի առջևն է դէպ արեւելք.
Եւ Ձիթենեաց լեռը դէպ արեւելք և
դէպ արեւմուտք կէսէն պիտի
պատառուի,
Եւ չատ մեծ ձոր պիտի ըլլայ.
Եւ լեռան կէսը դէպ ի հիւսիս,
Եւ կէսը դէպ ի հարաւ պիտի քաշուի։
5 Եւ դուք լեռներուն ձորը պիտի
չկթէ.
Քանզի լեռներուն ձորը մինչև Ասել
պիտի հասնի.
Եւ պիտի փախչիք, ինչպէս գետնաս-
չարժէն փախաք
Յուդայի Թագաւորին Ոզիայի օրերը.
Եւ իմ Տէր Աստուածս պիտի գայ,
Բոլոր սուրբերը քու հետդ պիտի ըլ-
լան։
6 Եւ պիտի ըլլայ որ այն օրը
*Լոյսը պայծառ կամ մթնոլորտ պիտի չըլ-
լայ.
7 Եւ անիկա Տէրոջը յայտնի օր մը,
Ոչ ցերեկ և ոչ գիշեր պիտի ըլլայ,
Սակայն երեկոյեան ժամանակը լոյս
պիտի ըլլայ։
8 Եւ այն օրը Երուսաղէմէ կենդանի ջու-
րեր պիտի հոսին,
Կէսը դէպ արեւելեան ծովը,

*Կամ լոյս պիտի չըլլայ, այլ ցուրտ և
սառ.



Եւ կէսը՝ դէպ արեւմտեան ծովը.
Ամառ և ձմեռ այնպէս պիտի ըլլայ։
9 Եւ Տէրը բոլոր երկրի վրայ Թագաւոր
պիտի ըլլայ.
Այն օրը Տէրը՝ մէկ, և անոր անունը
մէկ պիտի ըլլայ։
10 Բոլոր երկիրը դաշտ պիտի դառնայ
Գաբայէ մինչև Ռեմոն, Երուսաղէմի
հարաւային կողմը,
Եւ պիտի բարձրանայ և իր տեղը պի-
տի բնակուի,
Բենիամինի դուռնէն մինչև Առաջին
դրան տեղը, մինչև Անկիւնոց
դուռը,
Եւ Անանեայէլի աշտարակէն մինչև Թա-
գաւորին հնձաններըը։
11 Եւ հոն պիտի բնակին, և հոն այլ ևս
նզովք պիտի չըլլայ։
Եւ Երուսաղէմ ապահովութեամբ պի-
տի բնակուի։
12 Եւ այս պիտի ըլլայ այն հարուածը
Որով Տէրը պիտի զարնէ ամէն ժողո-
վուրդ
Որ Երուսաղէմի դէմ պատերազմե-
ցաւ.
Անոնց մարմինը պիտի հալի, երբ ոտքի
վրայ կայնին,
Եւ անոնց աչքերն իրենց խոռոչներուն
մէջ պիտի հալին,
Եւ անոնց լեզուն անոնց բերնին մէջ
պիտի հալի։
13 Եւ պիտի ըլլայ որ այն օր անոնց մէջ
Մեծ խառնութիւն պիտի ըլլայ Տէրոջ-
մէ,
Եւ իւրաքանչիւրը իր ընկերին ձեռքը
պիտի բռնէ,
Եւ անոր ձեռքը իր ընկերին ձեռաց
դէմ պիտի վերցուի։
14 Նաեւ Յուդա Երուսաղէմի *մէջ պիտի
պատերազմի.
Եւ բոլոր չրջակայ ազգերուն ստա-
ցուածքը,
Ոսկի և արծաթ և հանդերձներ մեծ
առատութեամբ հաւաքուի պիտի ժո-
ղովուին։
15 Եւ ձիուն, ջորւոյն, ուղտին և իշուն
Եւ այն բանակներուն մէջ բոլոր անա-
սուններուն հարուածը
Այն հարուածին պէս պիտի ըլլայ։
16 Եւ Երուսաղէմի վրայ եկած բոլոր ազ-
գերէն ամէն մնացորդ
Անոնցմէն տարուէ տարի Թագաւորին,
զօրաց Տէրոջը, երկրպագութիւն
ընելու
Եւ տաղաւարահարաց տօնը կատարե-
լու պիտի ելլեն,
17 Եւ երկրի ազգատոհմներէն ով որ Ե-
րուսաղէմ չելլէ
Թագաւորին, զօրաց Տէրոջը, երկրպա-
գութիւն ընելու,
Անոր վրայ անձրեւ պիտի չըլլայ։
18 Եւ եթէ Եգիպտացւոց ազգատոհմը չել-
լէ և չգայ,
(Որ *անձրեւ չունի,) Ա՛նոնց վրայ պիտի ըլլայ այն հարուածը,
Որով Տէրը պիտի զարնէ այն ազգերը
Որ տաղաւարահարաց տօնը կատարե-
լու չեն ելլեր,
19 Այսիկա պիտի ըլլայ Եգիպտոսի պատիժը
Եւ տաղաւարահարաց տօնը կատարե-
լու չելլող բոլոր ազգերուն պա-
տիժը։
20 Այն օրը ձիերուն սանձի զարդերուն
վրայ
ՍՐԲՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒՆ պիտի ըլլայ։
Եւ Տէրոջը տան մէջ կաթսաները
Սեղանին առջեւ կոնքերուն պէս պի-
տի ըլլան։
21 Եւ Երուսաղէմի մէջ և Յուդայի մէջ
ամէն կաթսայ
Զօրաց Տէրոջը սուրբ պիտի ըլլայ։
Եւ ամէն զոհ ընողները պիտի գան,
Եւ անոնցմէ պիտի առնուն, և անոնց
մէջ պիտի եփեն.
Եւ այն օր այլ ևս զօրաց Տէրոջը տան
մէջ Քանանացի պիտի չըլլայ։

*Կամ դէմ

# ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՄԱՂԱՓԻԱՅ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Ա աղաչքիայի բերնով Իսրայէլի եղած
Տէրոջը խօսքին պատգամը։
2 Ես զձեզ սիրեցի, կ'ըսէ Տէրը,
Եւ դուք՝ Զմէզ ինչո՞վ սիրեցիր, կ'ըսէք։
Մի՞թէ եսաւ Յակոբայ եղբայրը չէր,
կ'ըսէ Տէրը,
Եւ զՅակոբ սիրեցի,
3 Բայց զԵսաւ ատեցի,
Եւ անոր լեռները՝ ամայութեան,
Եւ անոր ժառանգութիւնն անապատի
*բնակութեան դարձուցի։
4 Եթէ Եդոմ ըսէ Թէ կործանեցանք,
Բայց պիտի դառնանք և աւերակները
չնորհենք,
Զօրաց Տէրն այսպէս կ'ըսէ.
Անոնք պիտի չնորհեն, բայց ես պիտի
փլցնեմ.
Եւ անոնք պիտի կոչուին Անօրէնութեան սահման,
Եւ ժողովուրդ՝ որուն դէմ Տէրը յաւիտեան բարկացած է։
5 Եւ ձեր աչքերը պիտի տեսնեն, և պիտի ըսէք,
Տէրը Իսրայէլի †սահմանէն անդին փառաւորուի։
6 Տղան՝ իւր հօրը,
Եւ ծառան իւր տիրոջը պաղա կ'ընէ.
Եթէ ես հայր եմ, իմ պատիւս ո՞ւր է,
Եւ Եթէ Տէր եմ, ինչ վախնալն ո՞ւր է,
կ'ըսէ ձեզի զօրաց Տէրը,
Ով քահանաներ, որ իմ անունս կ'անարգէք.
Եւ դուք կ'ըսէք, Ո՛ւր անունդ չ՚նչ բանով անարգեցինք։
7 Իմ սեղանիս վրայ պիղծ հաց կը մատուցանէք,
Եւ կ'ըսէք, Զքեզ ինչո՞վ պղծեցինք.
Վասն զի ըսիք, Տէրոջը սեղանն անարգ է։
8 Եւ երբ կոյր ը զոհի համար կը մատուցանէք, գէշ չէ՞,
Եւ երբ կաղը կամ հիւանդը կը մատուցանէք, գէշ չէ՞.
Աղէ, քու խչխանիդ ընծայէ զայն.
Մի՞թէ քեզի պիտի հաճի՞,
Կամ *դէմդ սիրով՝ պիտի ընդունի՞,
կ'ըսէ զօրաց Տէրը։
9 Եւ հիմա Աստուծոյ երեսն աղաչեցէք,
Որ մեզի ողորմութիւն ընէ.
Ասիկա ձեր ձեռքէն եղաւ,
Մի՞թէ զձեզ սիրով պիտի ընդունի՞,
կ'ըսէ զօրաց Տէրը։
10 Ձեր մէջ անգամ դուռները չէ՞ դոցող
ո՞վ կայ.
Իմ սեղանիս կրակն անգամ ձրի չէք վառեր.
Չեզի չիմ հաճիր, կ'ըսէ զօրաց Տէրը,
Եւ ձեր ձեռքէն ընծայ չեմ ընդունիր։
11 Քանզի արեւուն ծագած տեղէն մինչև
անոր մտած տեղը
Ազգաց մէջ իմ անունս մեծ պիտի ըլլայ.
Եւ ամէն տեղ իմ անուանս
Խունկ և սուրբ ընծայ պիտի մատուցուի,
Քանզի իմ անունս ազգաց մէջ մեծ
պիտի ըլլայ, կ'ըսէ զօրաց Տէրը։
12 Եւ դուք կը պղծէք զայն,
Ըսելով Թէ Տէրոջը սեղանը պիղծ է,
Եւ անոր բերքն, այսինքն կերակուրն,
անարգ։
13 Նաև կ'ըսէք, Ահա ինչ աշխատութիւն
է,

*Կամ չնագայլերուն տուի։
†Կամ սահմանին վրայ

*Եբր. քու երեսդ



Եւ անոր վրայ կը փչէք, կ'ըսէ զօրաց
Տէրը,
Եւ յափշտակուածը և կաղը և հիւանդը բերիք։
Այսպէս ընծայ բերիք,
Միթէ ձեր ձեռքէն պիտի ընդունիմ
զայն, կ'ըսէ Տէրը։
14 Բայց անիծեալ ըլլայ այն խաբեբայ
մարդը,
Որ իւր հօտին մէջ արձ ոչնչնալով
ուխտ կ'ընէ,
Եւ արատաւորը Տէրոջը կը մատուցանէ.
Քանզի ես մեծ Թագաւոր եմ, կ'ըսէ
զօրաց Տէրը,
Եւ իմ անունս ազգաց մէջ ահարկու է։

## ԳԼ. Բ

1 Եւ հիմա այս պատուէրը ձեզի է, ով
քահանաներ,
2 Եթէ մտիկ չընէք,
Եւ Եթէ չէք սրտին մէջ չդնէք
Որ իմ անուանս պատիւ տաք, կ'ըսէ
զօրաց Տէրը,
Անատեն անէծք պիտի ղրկեմ ձեզ,
Եւ ձեր օրհնութիւնները պիտի անէծնեմ.
Այո, զանոնք արդէն անիծած եմ,
Քանզի դուք չէք սրտին մէջ չէք դներ։
3 Ահա ես ձեր սերունդը պիտի յանդիմանեմ,
Եւ ձեր երեսին վրայ պղտ,
Ձեր ժողովուն պղտը, պիտի ցանեմ,
Եւ անիկա զձեզ իրեն հետ պիտի տանի,
4 Եւ պիտի գիտնաք որ ես ձեզի ղրկեցի
այս պատուէրը,
Որպէս զի իմ ուխտս Ղեւեայ հետ ըլլայ,
կ'ըսէ զօրաց Տէրը։
5 Իմ ուխտս անոր հետ էր կենաց և
խաղաղութեան համար.
Եւ զանոնք անոր տուի այն երկիւղին
համար
Որով ինձ կը վախնար,
Եւ իմ անուանս երեսին կը սարսափէր։
6 Ճշմարտութեան օրէնքն անոր բերնին
մէջ էր,
Եւ անոր շրթանց մէջ անիրաւութիւն
չգտնուեցաւ.
ինծի հետ խաղաղութեամբ և ուղղութեամբ կը քալէր,
Եւ շատերն անօրէնութենէ դարձուց։
7 Քանզի քահանային շրթունքը գիտութիւն սահելու են,
Եւ հրէշ անոր բերնէն օրէնք խնդրելու են,
Քանզի անիկա զօրաց Տէրոջը հրեշտակն է։
8 Բայց դուք ճամբէն խոտորեցաք,
Շատերն օրէնքին մէջ դժկակեցուցիք,
Ղեւեայ ուխտն աւերեցիք, կ'ըսէ զօրաց
Տէրը։
9 Ուստի և ես զձեզ բոլոր ժողովուրդին
առջև անարդուած և ցած ըրի,
Ինչպէս որ դուք իմ ճամբաներս չպահեցիք,
Եւ օրէնքին մէջ ակնառութիւն ըրիք։
10 Միթէ ամէնքս մէկ հայր չունինք.
Միթէ մէկ Աստուած չստեղծեց զմեզ.
Ինչո՞ւ համար մեր հարեցքն ուխտն
աւրելով
Մենք իւրաքանչիւրս ալ իւր եղբօրը
հնազանդութիւն կ'ընէ։
11 Ցուդա հնազանդութիւն ըրաւ,
Եւ Իսրայէլի մէջ և Երուսաղէմի մէջ
պղծութիւն գործուեցաւ։
Վասն զի Ցուդա պղծեց Տէրոջը սրբարանը զոր ինք կը սիրէր,
Եւ օտար աստուծոյ աղկան այր եղաւ։
12 Տէրը Յակոբայ վրաններէն բնաւինչ պիտի ընէ այս բանն ընող մարդը,
*Արթուն եղողը և պատասխան առողը,
Եւ զօրաց Տէրոջը ընծայ մատուցանողը։
13 Եւ դարձեալ զայս ըրիք.
Տէրոջը սեղանն արտասուօք,
Լացով և աղաղակով ծածկեցիք.
Այնպէս որ Անիկա այլ ևս ընծային չը նայիր,
Որ ձեր ձեռքէն հաճութեամբ ընդունի զայն։
14 Բայց դուք ըսիք, ինչո՞ւ համար.
Անոր համար որ Տէրը վկայ եղաւ քու
և քու երիտասարդութեանդ կնոջ մէջ սեղ,

*Կամ Ուսուցիչը և աշակերտը

Որոյ հետ անհաւատարմութեամբ վար-
ուեցար.
եւ անիկա քու ընկերդ և քու ուխ-
տիդ կինն է։
15 Եւ մէկը չըրաւ, որ Հոգւոյն առատու-
թիւնն ունէր։
Եւ այն մէկը ի՞նչ կը փնտռէր։ Աստու-
ծոյ սերունդ։
Ուրեմն ձեր հոգւոյն զգուշութիւն ը-
րէք,
եւ ձենէ մէկը իւր երիտասարդութեան
կնոջ հետ անհաւատարմութեամբ
չվարուի։
16 Ֆարզի Իսրայէլի Տէր Աստուածը կ'ըսէ
թէ
*ինք կ'ատէ ալ արձակուիը.
Բայց ծոբ իւր հանդերձով զրկանքը
կը ծածկէ, կ'ըսէ զօրաց Տէրը։
Ուստի ձեր հոգւոյն զգուշութիւն ըրէք
և անհաւատարիմ մի ըլլաք։
17 Ձեր խօսքով Տէրը ձանձրացուցիք։
Բայց դուք կ'ըսէք, ինչով ձանձրա-
ցուցինք։
Այսպէս ըսելով, Ամէն չարութիւն ընողը
Տէրոջը աչաց առջև հաճոյ է,
Եւ ինք անոնց կը հաւնի,
կամ թէ Դատաւորն Աստուածն ո՛ր
է։

## Գլ. Գ

1 Ահա ես իմ պեսպանս կը ղրկեմ,
եւ իմ առջև ճամբայ պիտի պատրաս-
տէ.
Եւ ձեր փնտռած Տէրը, յանկարծ նա իւ-
րոյն հրեշտակը տաճարն կը հասնի՛ք,
Ցանկարծ իւր տաճարը պիտի գայ.
Ահա կու գայ, կ'ըսէ զօրաց Տէրը։
2 Եւ անոր գալստեան օրն ո՞վ կրնայ դի-
մանալ,
Եւ անոր երեւնալուն առեն ո՞վ կրնայ
կայնիլ.
Ֆարզի անիկա հնձեցնողոյ կրակին
պէս,
Եւ լուացողներուն օճառին պէս պիտի
ըլլայ։
3 Եւ անիկա արծաթի հալեցնողի և
մաքրողի պէս պիտի նստի,
Եւ Ղեւեայ որդիները պիտի մաքրէ,
Եւ զանոնք ոսկւոյ պէս և արծաթոյ
պէս պիտի զտէ.
Եւ անոնք արդարութեամբ Տէրոջը ըն-
ծայ մատուցանողներ պիտի ըլ-
լան։
4 Եւ Յուդայի և Երուսաղէմի ընծան
Հին օրերուն պէս և առաջին տարինե-
րուն պէս
Տէրոջը ընդունելի պիտի ըլլայ։
5 Եւ դատաստանի համար ձեզի պիտի
մօտենամ,
Եւ կախարդներուն և շնացողներուն
Եւ սուտ երդում ընողներուն,
Եւ վարձկանին իւր վարձուն վրայ,
Այրւոյն և որբին զրկանք ընողներուն,
Եւ պանդուխտին կրնաւնդէք խոտորե-
ցուցողներուն,
Եւ ինձ չվախցողներուն դէմ արագ վկայ
պիտի ըլլամ, կ'ըսէ զօրաց Տէրը։
6 Ֆանզի ես Եհովայ եմ, չեմ փոխուիր,
Անոր համար դուք, ով Յակոբայ որ-
դիք, չպառնացաք։
7 Ձեր հայրերուն օրերէն ի վեր
իմ հրամաններէս դառուելցաք և չե-
նոյ չպահեցիք.
Ինծի դարձէք և ես ձեզի պիտի դառ-
նամ, կ'ըսէ զօրաց Տէրը։
Սակայն դուք կ'ըսէք, ինչով դառ-
նանք։
8 Մարդ Աստուած կը կողոպտէ,
Որ դուք ինծ կը կողոպտէք։
Բայց դուք կ'ըսէք, Ինչէ՞ կողոպ-
տեցինք։
Տասանորդներ և ընծաներ։
9 Դուք անէծքով անիծուած էք,
Ֆանզի դուք բոլոր ազգը ինծ կողոպ-
տեցիք։
10 Բոլոր տասանորդները գանձատունը
տարէք,
Որ իմ տանս մէջ պաշար ըլլայ։
Եւ ասով զիս փորձեցէք, կ'ըսէ զօրաց
Տէրը,

*Կամ թէ որ կ'ատէ զՆիմ, թո՛ղ ար-
ձակէ.



Թէ արդեօք ձեզի երկինէ պատուհան-
ները չեմ բանար,
Եւ ձեզի օրհնութիւն թափեր,
Այնպէս որ ան՛որ բաւական տեղ չըլլայ։
11 Եւ ձեզի համար ուտողը պիտի յան-
դիմանեմ,
Եւ անիկա ձեր երկրին պատուղը պիտի
չապականէ,
Եւ ձեր այգւոյն մէջ որթին անպտուղ
պիտի չըլլայ, կ'ըսէ զօրաց Տէրը։
12 Եւ ամէն ազգ ձեզի երանի պիտի ըսէ.
Ֆանզի դուք ցանկալի երկիր պիտի ըլ-
լաք, կ'ըսէ զօրաց Տէրը։
13 Ձեր խօսքերն ինծի դէմ խիստ ե-
ղան, կ'ըսէ Տէրը.
Բայց դուք կ'ըսէք, Ինչի դէմ ի՞նչ
խօսեցանք։
14 Դուք ըսիք, Աստուծոյ ծառայութիւն
ընելը պարապ բան է,
Եւ անոր պահպանութիւնը պահելն
Եւ զօրաց Տէրոջը առջև սգով քալե-
լէն ի՞նչ շահեցանք։
15 Եւ հիմա մենք հպարտներուն երանի
կ'ըսենք.
Ամբարշտութիւն ընողներն անգամ բա-
րգելն են,
Աստուած խակ կը փորձեն և կ'ազա-
տին,
16 Այնտեղ Տէրոջմէ վախցողներն
Իրարու հետ խօսեցան,
Եւ Տէրը մտիկ ըրաւ և լսեց.
Եւ իրեն առջև յիշատակի գիրք գը-
րուեցաւ
Տէրոջմէ վախցողներուն համար
Եւ անոր անունը մտածողներուն հա-
մար։
17 Եւ անոնք իմ պիտի ըլլան, կ'ըսէ զօ-
րաց Տէրը,
Այն օրը որ ես սեպհական գանձս ժո-
ղովեմ,
Եւ անոնց պիտի խնայեմ,
Ինչպէս որ մարդ մը կը խնայէ իւր որ-
դւոյն
Որ իրեն ծառայութիւն կ'ընէ.
18 Եւ պիտի դառնաք, և արդարին և
ամբարշտին,
Աստուծոյ ծառայութիւն ընողին
Եւ անոր ծառայութիւն չընողին
Տարբերութիւնը պիտի տեսնէք։

## Գլ. Դ

1 Ֆանզի ահա վառան պէս վառած օրը
կու գայ,
Եւ բոլոր հպարտները և բոլոր ամբա-
րշտութիւն ընողները
Յարդի պէս պիտի ըլլան.
Եւ գալու օրը զանոնք պիտի այրէ, կ'ըսէ
զօրաց Տէրը,
Այնպէս որ անոնց արմատ կամ ոստ
պիտի չթողու։
2 Բայց ձեզ, իմ անունէս վախցողնե-
րուդ,
Արդարութեան արեգակը պիտի ծագի,
Եւ անոր թեւերուն վրայ բժշկութիւն
պիտի ըլլայ։
Եւ դուք դոմի պարարտ որթերուն
պէս
Դուրս պիտի ելլէք և պիտի խայտաք,
3 Եւ ամբարիշտները պիտի կոխէք,
Վասն զի իմ գործ ստեղծելու օրս
Անոնք ձեր ոտից թաթերուն տակ
Մոխիր պիտի ըլլան, կ'ըսէ զօրաց Տէ-
րը։
4 Յիշեցէք իմ ծառային Մովսէսի օ-
րէնքը,
Այսինքն այն կանոնները և դատաս-
տանները,
Զորս անոր պատուիրեցի Հորեբի մէջ
բոլոր Իսրայէլի համար։
5 Ահա ես Եղիա մարգարէն ձեզի պիտի
ղրկեմ
Դեռ Տէրոջը մեծ և ահեղ օրը չեկած.
6 Եւ անիկա հայրերուն սիրտը՝ որդւոց.
Եւ որդւոց սիրտը հայրերուն պիտի
դարձնէ,
Գուցէ ես գամ, և վերկիր անիծքով
զարնեմ։

ՎԱԽՃԱՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

208.2
Ա-90

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1883

# ԱՒԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ ՄԱՏԹԷՈՒԻ

### ԳԼՈՒԽ Ա.

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի, Դաւթի որդւոյն, Աբրահամու որդւոյն։
2 Աբրահամ ծնաւ զիսահակ. Իսահակ ծնաւ զՅակոբ. Յակոբ ծնաւ զՅուդա
3 և զեղբայրսն նորա. Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա Թամարէ. Փարէս ծնաւ զԵսրոն. Եսրոն ծնաւ զԱրամ.
4 Արամ ծնաւ զԱմինադաբ. Ամինադաբ ծնաւ զՆաասոն. Նաասոն ծնաւ զՍալմոն.
5 Սալմոն ծնաւ զԲոոս իՌաքաբէ. Բոոս ծնաւ զՈվբէդ ի Հռութէ. Ովբէդ
6 ծնաւ զԵսսէ. Եսսէ ծնաւ զԴաւիթ թագաւոր. Դաւիթ թագաւոր ծնաւ
7 զՍողոմոն Ուրիայի կնոջէն. Սողոմոն ծնաւ զՌոբաւամ. Ռոբաւամ ծնաւ զԱ-
8 բիա. Աբիա ծնաւ զԱսա. Ասա ծնաւ զՅովսափատ. Յովսափատ ծնաւ զՅով-
9 րամ. Յովրամ ծնաւ զՈզիա. Ոզիա ծնաւ զՅովաթամ. Յովաթամ ծնաւ զԱ-
10 քազ. Աքազ ծնաւ զԵզեկիա. Եզեկիա ծնաւ զՄանասէ. Մանասէ ծնաւ զԱ-
11 մոն. Ամոն ծնաւ զՅովսիա. Յովսիա ծնաւ զԵկքոնիա և անոր եղբայրսն զբաբելոնեան գերութեան առնելոցն։
12 Բաբելոն գերութեան երթալէն ետքը Եկքոնիա ծնաւ զԱլաթիէլ. Սաղա-
13 թիէլ ծնաւ զԶօրաբաբէլ. Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ զԵղիա-
14 կիմ. Եղիակիմ ծնաւ զԱզովր. Ազովր ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ զԱքին.
15 Աքին ծնաւ զԵղիուդ. Եղիուդ ծնաւ զԵղիազար. Եղիազար ծնաւ զՄաաթիան.
16 Մաաթիան ծնաւ զՅակոբ. Յակոբ ծնաւ զՅովսէփ, զայրն Մարիամայ, որմէ ծնաւ
17 Յիսուս, որ կ'ըսուի Քրիստոս։ Արդ բոլոր ազգերն Աբրահամէ մինչև Դաւիթ՝ չորեքտասան ազգ, և Դաւիթէ մինչև Բաբելոնեան գերութիւնը՝ չորեքտասան ազգ, և Բաբելոնեան գերութենէն մինչև Քրիստոս՝ չորեքտասան ազգ։
18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս. Անոր մայրը Մարիամ, Յովսէփայ խոստացեալ, դեռ երկուքը քով չեկած՝ նա՛ւ գտնուեցաւ յղացած Հոգիէն Սրբոյ։
19 Յովսէփ անոր այրն արդար էրլլալով և չուզելով խայտառակ ընել զնա, խորհեցաւ գաղտ արձակել
20 զնա։ Եւ մինչ նա զայս կը խորհէր, ահա Տէրոջը հրեշտակը երազի մէջ երեւցաւ անոր և ըսաւ, Յովսէփ, որդի Դաւիթ, մի վախնար առնուլ քեզ Մարիամ կինդ. քանզի այն որ ի նմա
21 ծնած է՝ Սուրբ Հոգիէն է։ Եւ որդի մը պիտի ծնանի, և անոր անունը Յիսուս դնես, քանզի նա պիտի փրկէ իր
22 ժողովուրդն իրենց մեղքերէն։ Եւ այս ամենը եղաւ որ կատարուի Տէրոջմէ ըսուածը մարգարէին բերնով, որ կ'ըսէ,
23 Ահա կոյսը պիտի յղանայ և պիտի ծընանի որդի, և անոր անունը պիտի կոչեն Իմմանուէլ, որ կը թարգմանուի
24 Աստուած մեզ մէջ։ Եւ Յովսէփ զարթնելէն ետքը արի ընելով, ըրաւ ինչպէս որ Տէրոջը հրեշտակն անոր հրամայեց, և իր
25 կինը զուն առաւ։ Եւ չէր գիտեր զնա մինչև ծնաւ իր անդրանիկ որդին, և անոր անունը դրաւ Յիսուս։

### ԳԼ. Բ

1 Եւ երբ Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլեհեմի մէջ Հերովդէս թագաւորին օրերը, ահա արեւելքէն մագեր եկան Երուսաղէմ,
2 և ըսին, Ո՞ր է Հրեից

---

*Այս էջին՝ Փրկիչ։

թագաւորը որ ծնաւ. քանզի մինչ աբեւկլթի մէջ անասնաբ անոր առաջը, և նմանաբ երկրպագութիւն ընել անոր։
3 Եւ երբ Հերովդէս թագաւորը լսեց, խռովեցաւ, և բոլոր Երուսաղէմ անոր
4 հետ. Եւ ժողվելով բոլոր քահանայապետները և ժողովրդեան գպիրները հարցուց անոնց թէ ո՛ւր պիտի ծնաւ-
5 նէր Քրիստոս։ Եւ անոնք ըսին անոր, Հրէաստանի Բեթլեհեմի մէջ. քանզի այսպէս գրուած է մարգարէին ձեռ-
6 քով. Եւ դուն, Բեթլեհեմ, Յուդայի երկիրը, Յուդայի իշխաններուն մէջ բնաւ փոքր չես. քանզի քենէ պիտի ելլէ իշխան, որ պիտի հովուէ իմ ժողո-
7 վուրդս զիսրայէլ։ Այնաուհետև Հերովդէս գաղտ կոչեց մոգերը, և առ ի գնոյ ա-
8 նոնցմէ ատաղին երեւման աստեղը։ Եւ զանոնք Բեթլեհեմ զրկելով ըսաւ, Գացէք ատենգիտ այն մանկան վրայ, և երբ գտնէք, իմացուցէք ինձ, որ և ես գամ երկրպագութիւն ընծայ անոր։
9 Եւ երբ անոնք լսեցին զ՚ոյ թագաւորէն, գնացին. և ահա ատաղը զոր աբեւկլթի մէջ տեսած էին գնաց անոնց առջեւնէն, մինչև եկաւ կեցաւ տեղ-
10 վրայ ուր էր մանուկին։ Երբ տեսան ատաղը, մեծ ուրախութեամբ ուրախա-
11 ցան։ Եւ տունը մտնելով տեսան մանուկը իւր մօրը Մարեմայ հետ, և ինկան երկրպագութիւն ըրին անոր, և իրենց գանձերը բանալով ընծաներ տուին անոր, ոսկի և կնդրուկ և զ-
12 մուռս։ Եւ հրաման առնելով երազի մէջ որ նորէն չդառնան Հերովդեսի, ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը։
13 Եւ երբ անկէ գացին անոնք, ահա Տէրոջը հրեշտակը երազի մէջ երեւեցաւ Յովսեփայ և ըսաւ, Ելլ, առ մանուկը և անոր մայրը, և փախիր Եգիպտոս, և հոն կեցիր մինչև որ բսեմ քեզ, քանզի Հերովդէս պիտի փնտռէ մանուկը կորսուանելու համար։ Եւ նա ելաւ, առաւ մանուկը և անոր մայրը գիշերայն և դնաց Եգիպտոս, և հոն
15 էր մինչև Հերովդեսի մահը։ Որպէս զի կատարուի Տէրոջմէ ըսուածը մարգարէին բերնով, որ կ՚ըսէ Եգիպտոսէ կոչեցի որդիս։
16 Այնաուհետև երբ տեսաւ Հերովդէս թէ *խաբուեցաւ մոգերէն, սաստիկ բարկացաւ, և զրկեց Ջարդեց Բեթլեհեմի և անոր ամէն սահմաններուն մէջ զբոնուած բոլոր տղոցք երկու տարուընէ վար, այն ժամանակին համեմատ զոր
17 ստուգեց մոգերէն։ Այնաուհետև կատարուեցաւ Երեմիա մարգարէին բերնով
18 ըսուածը, որ կ՚ըսէ, Ռամայի մէջ ձայն լսուեցաւ. ողբ, լաց և մեծ կսկիծ. Ռաքէլ կու լար իւր որդւոց համար, և չէր ուզեր մխիթարուիլ, քանզի չկային։
19 Եւ երբ Հերովդէս մեռաւ, ահա Տէրոջը հրեշտակը Եգիպտոս երազի մէջ
20 երեւեցաւ Յովսեփայ, Եւ ըսաւ, Ելլ, առ մանուկը և անոր մայրը, և դնա Իսրայէլի երկիրը, քանզի մեռան անոնք որ մանկան անձը կը խնդրէին։
21 Եւ նա ելաւ, առաւ մանուկը և անոր
22 մայրը և եկաւ Իսրայէլի երկիրը, իսկ երբ լսեց թէ Արքեղայոս թագաւորեց Հրէաստանի փոխանակ իւր հօրը Հերովդէի, վախցաւ հոն երթալ. և երազի մէջ հրաման առնելով գնաց Գալիլեայ կողմերը։
23 Եւ եկաւ բնակեցաւ Նազարէթ քաղաքը, որպէս զի կատարուի մարգարէներուն խօսքը թէ Նազովրեցի պիտի կոչուի։

## Գլ. Գ

1 Ա յն օրերը Յովհաննէս մկրտիչ եկաւ, և կը քարոզէր Հրէաստանի անապատին մէջ, Եւ կ՚ըսէր, Ապաշխարեցէ՛ք, քանզի երկինից թագաւորութիւնը մօտեցած է։ 3 Վասն դի այս այն է՝ որոյ համար Եսայի մարգարէին բերնով բսուեցաւ, որ կ՚ըսէ, Անապատի մէջ կանչողի ձայն, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, ուղղեցէ՛ք անոր շաւիղները։ 4 Բայց Յովհաննէս ուներ հագուստ ուղտի մազէ և իր մէջքը գօտի մաշկէ կապած. և անոր կերակուրն էր մարախ և վայրենի մեղր։ 5 Այնաուհետև Երուսաղէմ և բոլոր Հրէաստան և Յորդանանու 6 բոլոր կողմերը կ՚ելլէին անոր, Եւ կը մկրտուէին անկէ Յորդանանու մէջ, և կը խոստովանէին իրենց մեղքերը։ 7 Եւ երբ տեսաւ փարիսեցիներէն և սադուկեցիներէն շատերը իր մկրտութեանը եկած, ըսաւ անոնց, Խիւրու ծնունդք, ո՞վ խնդրաց ձեզ փախչել գալու բարկութենէն։ 8 Ուրեմն բերէ՛ք պտուղ ապաշխարութեան։ 9 Եւ մի խորհիք ձեր մէջ ըսելով, Թէ Մենք ունինք Հայր զԱբրահամ. քանզի կ՚ըսեմ ձեզ որ Աստուած կարող է այս քարերէն հանել որդիներ Աբրահամու։ 10 Հիմա կացինը կը դրուի ծառերուն արմատին. ուստի ամէն ծառ որ բարի պտուղ չբերէ՝ կը կարուի և կը նետուի կրակի։ 11 Ես զձեզ ջրով կը մկրտեմ ապաշխարութեան համար, բայց այն որ իմ ետևէս կու գայ՝ զօրաւոր է քան զիս. և ես անոր կօշիկները կրելու արժանի չեմ. Նա զձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով և հրով. 12 Որոյ հեծանոցը իր ձեռքն է, և իր կալը պիտի մաքրէ և ցորենը պիտի ժողվէ համբարը, և յարդը պիտի այրէ անշէջ հրով։
13 Այնաուհետև Յիսուս գալիլեայէ Յորդանան եկաւ առ Յովհաննէս մկրտուիլ 14 անկէ։ Եւ Յովհաննէս կ՚արգելէր զնա և կ՚ըսէր, Ինձ պէտք է քենէ մկրտուիլ, և դուն ինծի կու գաս Յիսուս պատասխան առաւ և ըսաւ անոր, Թող տուր այժմ, քանզի այսպէս կը վայելէ մեզ որ բոլոր արդարութիւնը կատարենք. ապա թող տուաւ անոր։
16 Եւ երբ Յիսուս մկրտեցաւ, իսկոյն դուրս ելաւ ջրէն, և ահա երկինք բացուեցան անոր, և տեսաւ Աստուծոյ Հոգին որ աղաւնւոյ պէս կ՚իջնէր և կու գար 17 անոր վրայ։ Եւ ահա յերկինից ձայն ելաւ որ կ՚ըսէր, Դա է իմ սիրելի Որդիս, որուն հաճած եմ։

## Գլ. Դ

1 Այնաուհետև Յիսուս վարեցաւ Սուրբ Հոգին յանապատ Սատանայէն փորձուելու։ 2 Եւ քառասուն տիւ և քառասուն գիշեր ծոմ պահելէն հետը անօթեցաւ։
3 Եւ փորձողը մտաենալով անոր ըսաւ։ Եթէ Որդի ես Աստուծոյ, ըսէ որ այս քարերն հաց ըլլան։ Նա պատասխան տուաւ և ըսաւ, Գրուած է Թէ Ոչ միայն հացիւ կ՚ապրի մարդ, այլ ամէն խօսքով որ կ՚ելլէ Աստուծոյ բերնէն։
5 Այնաուհետև Սատանան առաւ զնա սուրբ քաղաքը, և կեցուց զնա 6 տաճարին աշտարակին վրայ, Եւ ըսաւ անոր, Եթէ Որդի ես Աստուծոյ, ձգէզ ասկէ վար նետէ, քանզի գրուած է Թէ Իւր հրեշտակներուն պիտի պատուիրէ քեզի համար, և իրենց ձեռաց վրայ պիտի վերցուանեն զքեզ, որպէս զի քարի չզարնես ոտքդ։ Յիսուս ըսաւ անոր, Դարձեալ գրուած է Թէ Չես Տէր Աստուածդ չփորձես։
8 Սատանան նորէն առաւ հանեց զնա շատ բարձր լերան մը վրայ, և ցուցուց անոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները և անոնց փառքը։ Եւ ըսաւ անոր, Ա յս ամէնը քեզի կու տամ, եթէ 10 իյնաս երկրպագութիւն ընես ինձ։ Այնաուհետև Յիսուս ըսաւ անոր, [Երթ] գնա, Սատանայ, քանզի գրուած է Թէ Չես Տէր Աստուածդ երկրպագութիւն ընես 11 նմա, և զնա միայն պաշտես։ Այնաուհետև Սատանան թողուց զնա. և ահա հրեշտակները եկան և սպասաւորութիւն կ՚ընէին անոր։
12 Եւ երբ լսեց Յիսուս Թէ Յովհաննէս 13 մատնուեցաւ, ելաւ գնաց Գալիլեա։ Եւ թողուլով զնազարէթ եկաւ բնակեցաւ Կափառնայում ծովեզերեայ *տ-ղ-ե-ը, Զաբուղոնի և Նեփթաղիմայ սահմանին 14 մերձաւ մէջ։ Որպէս զի կատարուի Եսայի մարգարէին բերնով ըսուած խօսքը, 15 Զաբուղոնի երկիրը և Նեփթաղիմայ երկիրը, ծովու ճամբով Յորդանանու անդիի կողմն, հեթանոսաց Գալիլեան, խաւարի մէջ նստող ժողովուր-
16 դեղէն. և անոր հերակուրն էր մարախ 5 և վայրենի մեղր։ Այնաուհետև Երուսաղէմ և բոլոր Հրէաստան և Յորդանանու 6 բոլոր կողմերը կ՚ելլէին անոր, Եւ կը մկրտուէին անկէ Յորդանանու մէջ, և 7 կը խոստովանէին իրենց մեղքերը։ Եւ երբ տեսաւ փարիսեցիներէն և սադուկեցիներէն շատերը իր մկրտութեանը եկած, ըսաւ անոնց, Խիւրու ծնունդք, ո՞վ խնդացուց ձեզ փախչել գալու բար-
8 կութենէն։ Ուրեմն բերէ՛ք պտուղ ապա-
9 շխարութեան։ Եւ մի խորհիք ձեր մէջ ըսելով, Թէ Մենք ունինք Հայր զԱբրահամ. քանզի կ՚ըսեմ ձեզ որ Աստուած կարող է այս քարերէն հանել որդիներ Աբրահամու։
10 Հիմա կացինը կը դրուի ծառերուն արմատին. ուստի ամէն ծառ որ բարի պտուղ չբերէ՝ կը կարուի և կը նետուի կրակի։ 11 Ես զձեզ ջրով կը մկրտեմ ապաշխարութեան համար, բայց այն որ իմ ետևէս կու գայ՝ զօրաւոր է քան զիս. և ես անոր կօշիկները կրելու արժանի չեմ. Նա զձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով և հրով. 12 Որոյ հեծանոցը իր ձեռքն է, և իր կալը պիտի մաքրէ և ցորենը պիտի ժողվէ համբարը, և յարդը պիտի այրէ անշէջ հրով։
13 Այնաուհետև Յիսուս գալիլեայէ Յորդանան եկաւ առ Յովհաննէս մկրտուիլ 14 անկէ։ Եւ Յովհաննէս կ՚արգելէր զնա և կ՚ըսէր, Ինձ պէտք է քենէ մկրտուիլ, և դուն ինծի կու գաս Յիսուս պատասխան առաւ և ըսաւ անոր, Թող տուր այժմ, քանզի այսպէս կը վայելէ մեզ որ բոլոր արդարութիւնը կատարենք. ապա թող տուաւ անոր։
16 Եւ երբ Յիսուս մկրտեցաւ, իսկոյն դուրս ելաւ ջրէն, և ահա երկինք բացուեցան անոր, և տեսաւ Աստուծոյ Հոգին որ աղաւնւոյ պէս կ՚իջնէր և կու գար 17 անոր վրայ։ Եւ ահա յերկինից ձայն եկաւ որ կ՚ըսէր, Դա է իմ սիրելի Որդիս, որուն հաճած եմ։

## Գլ. Դ

1 Այնաուհետև Յիսուս վարեցաւ Սուրբ Հոգին յանապատ Սատանայէն փորձուելու։ 2 Եւ քառասուն տիւ և քառասուն գիշեր ծոմ պահելէն հետը անօթեցաւ։
3 Եւ փորձողը մտաենալով անոր ըսաւ։ Եթէ Որդի ես Աստուծոյ, ըսէ որ այս քարերն հաց ըլլան։ Նա պատասխան տուաւ և ըսաւ, Գրուած է Թէ Ոչ միայն հացիւ կ՚ապրի մարդ, այլ ամէն խօսքով որ կ՚ելլէ Աստուծոյ բերնէն։
5 Այնաուհետև Սատանան առաւ զնա սուրբ քաղաքը, և կեցուց զնա 6 տաճարին աշտարակին վրայ, Եւ ըսաւ անոր, Եթէ Որդի ես Աստուծոյ, ձգէզ ասկէ վար նետէ, քանզի գրուած է Թէ Իւր հրեշտակներուն պիտի պատուիրէ քեզի համար, և իրենց ձեռաց վրայ պիտի վերցուանեն զքեզ, որպէս զի քարի չզարնես ոտքդ։ Յիսուս ըսաւ անոր, Դարձեալ գրուած է Թէ Չես Տէր Աստուածդ չփորձես։
8 Սատանան նորէն առաւ հանեց զնա շատ բարձր լերան մը վրայ, և ցուցուց անոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները և անոնց փառքը։ Եւ ըսաւ անոր, Ա յս ամէնը քեզի կու տամ, եթէ 10 իյնաս երկրպագութիւն ընես ինձ։ Այնաուհետև Յիսուս ըսաւ անոր, [Երթ] գնա, Սատանայ, քանզի գրուած է Թէ Չես Տէր Աստուածդ երկրպագութիւն ընես 11 նմա, և զնա միայն պաշտես։ Այնաուհետև Սատանան թողուց զնա. և ահա հրեշտակները եկան և սպասաւորութիւն կ՚ընէին անոր։
12 Եւ երբ լսեց Յիսուս Թէ Յովհաննէս 13 մատնուեցաւ, ելաւ գնաց Գալիլեա։ Եւ թողուլով զնազարէթ եկաւ բնակեցաւ Կափառնայում ծովեզերեայ *տ-ղ-ե-ը, Զաբուղոնի և Նեփթաղիմայ սահմանին 14 մերձաւ մէջ։ Որպէս զի կատարուի Եսայի մարգարէին բերնով ըսուած խօսքը, 15 Զաբուղոնի երկիրը և Նեփթաղիմայ երկիրը, ծովու ճամբով Յորդանանու անդիի կողմն, հեթանոսաց Գալիլեան, խաւարի մէջ նստող ժողովուր-
16 դեղէն. և անոր հերակուրն էր մարախ

դը մեծ լոյս աւուրս, և լոյս ծագեցաւ
անոնց որ նստուան երկրին և սուռ ե-
17 րին մէջ կը նայեին. Աչխատեցաւ Յի-
սուս ակամբ քարոզել և բանալ, Ապաշ-
խարելոյ, քանզի երկնից թագաւո-
րութիւնը մօտ է։
18 Երբ Յիսուս կը պարակէր Գալիլեաց-
ւոց Ծովուն քովերը, տեսաւ երկու
եղբայրներ, Պետրոս կոչուած Սիմոնը
և անոր եղբայրը զԱնդրէաս, որ ծովը
ուռկան կը նետէին, քանզի ձկնորս
19 էին։ Ես ըսաւ անոնց, Իմ հետևէս ե-
կէք, և ձեզ մարդոց որսորդ ընեմ։
20 Ես անոնք իսկոյն թողուցին ուռկան-
21 ները և անոր հետևեցին զացին։ Ես անկէ
յառաջ երթալով տեսաւ ուրիշ երկու
եղբայրներ, Զեբեդեան Յակոբոսը և
անոր եղբայրն զՅովհաննէս նաւին մէջ
հրենց հօրը Զեբեդեոսի հետ, երբ ի-
րենց ուռկաններուն կը կարկատէին. և կո-
22 չեց զանոնք։ Ես անոնք մազմզակի
թողուցին նաւը և հրենց հայրը, և գա-
ցին անոր հետևեցան։
23 Ես Յիսուս պտրտելով բոլոր Գալիլեա,
կը սորվեցնէր անոնց ժողովրդանց-
ներուն մէջ, և որբայտարեան աւետա-
րանը կը քարոզէր, և ժողովրդոց բոլոր մէջ
ամէն տեսակ հիւանդութիւն և ամէն
24 տեսակ ցաւ կը բժշկէր։ Ես անոր համբ
բաւը տարտաձայնեցաւ բոլոր Սիւրիա, և
անոր բերին բոլոր հիւանդները որ կերպ
կերպ ցաւերով և տանջանօք կը նե-
ղային, և դիւահարները և լուսնոտ-
ները և անդամալոյծները. և բժշկեց
25 զանոնք։ Ես շատ ժողովրդներ անոր
հետևեցան կ'երթային Գալիլեայէ և Դե-
կապոլսէ և Երուսաղեմէ և Հրեաստա-
նէ և Յորդանանու անդիի կողմէն։

## Գլ. Ե

1 Կ՚տեսնէր զժողովրդը և նստաւ լեռը,
և երբ նստաւ հոն, աշակերտները գա-
2 ցին քովը։ Ես բերանը բանալով կը սոր-
վեցունէր անոնց և կ՚ըսէր,
3 Երանի հոգւով աղքատաց, քանզի
երկնից թագաւորութիւնն անոնց է։
4 Երանի սգաւորաց, քանզի անոնք պի-
5 տի մխիթարուին։ Երանի հեզոց, վասն
զի անոնք պիտի ժառանգեն զերկիր։
6 Երանի անոնց որ անօթի և ծարաւի են
արդարութեան, վասն զի անոնք պիտի
7 յագեցնան։ Երանի ողորմածաց, վասն
զի անոնք ողորմութիւն պիտի գտնեն։
8 Երանի անոնց որ սրտով մաքուր են,
քանզի անոնք պիտի աստուածն զկատուած։
9 Երանի խաղաղարարաց, վասն զի անոնք
10 որդիք Աստուծոյ պիտի կոչուին։ Երա-
նի անոնց որ հալածուած են արդա-
րութեան համար, քանզի երկնից թա-
11 գաւորութիւնն անոնց է։ Երանի ե ձեզ
երբ կը նախատեն զձեզ և կը հալածեն
և սուտ ամէն կերպ դէշ խօսք
12 կը խօսին ձեր վրայ ինձի համար։ Յըն-
ծագեցէք և ուրախ եղէք, քանզի ձեր
վարձքը շատ է երկինքը։ վասն զի այս
կերպով հալածեցին մարգարէները որ
քան զձեզ առաջ էին։
13 Դուք էք աղ երկրի. իսկ եթէ աղը
կորընցուցած իւր համը, ինչով պիտի
ազուի. այնուհետև բանի մը չունի,
միայն թէ դուրս նետուելու և մարդոց
14 ոտքին տակ կոխտուելու։ Դուք էք լոյս
աշխարհի. քաղաք մը որ լերան վրայ
15 կեցած է չկրնար պահուիլ։ Ես ճրագը
չեն վառեր և դնեն գրուանի տակ,
այլ աշտանակի վրայ, և լոյս կու տայ
16 բոլոր անոնց որ տունը մէջ են։ Այնպէս
թող լուսաւորի ձեր լոյսը մարդոց առ-
ջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը,
և փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է։
17 Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը
կամ մարգարէները ապրելու. չեկայ
18 ապրելու, այլ կատարելու։ Քանզի ճշմ-
արտապէս կ'ըսեմ ձեզ, Մինչև երկինք
և երկիր անցնին, օրէնքէն յոտ մը
կամ նշանագիր մը պիտի չանցնի, մին-
19 չև բոլորը կատարուին։ Ուստի ով որ
այս փոքրագոյն պատուիրաններուն մին
ապրի, և այնպէս սորվեցնէ մարդոց,
նա փոքր պիտի կոչուի երկնից թագա-
ւորութեան մէջ. բայց ով որ ընէ և
սորվեցունէ, նա մեծ պիտի կոչուի երկ-
20 նից թագաւորութեան մէջ։ Քանզի



կ'ըսեմ ձեզ, եթէ ձեր արդարութիւնն
աւելի չըլլայ քան դպիրներուն և փա-
րիսեցիներուն արդարութիւնը, բնաւ
պիտի չմտնէք երկնից թագաւորու-
թիւնը։
21 Լսած էք որ բսուեցաւ նախնիներ-
ուն, Սպանութիւն մի ընէր. և ով որ
սպանութիւն ընէ, դատաստանի պարտ-
22 ական պիտի ըլլայ։ Բայց ես կ'ըսեմ
ձեզ, Ով որ իւր եղբօրը բարկանայ ա-
նպատճառ, դատաստանի պարտական
պիտի ըլլայ. և ով որ իւր եղբօրն ըսէ,
Յիմար, պարտական պիտի ըլլայ տան-
ջանի. և ով որ էր Էքէօն ըսէ Անմիտ,
գեհենի հրոյն պարտական պիտի ըլլայ։
23 Ուրեմն, եթէ դուն ընծադ սեղանին վր-
րայ բերես, և հոն միտքդ գայ թէ դու
24 եղբայրդ քեզի դէմ բան մը ունի, հոն
թող դուն ընծադ սեղանին առջև, և
գնա հաշտուէ նախ եղբօրդ հետ, և ա-
25 պա եկու մատուցանել ընծադ։ Դու
ոսոխդ հետ միրանիկ վաղագոյն մինչ
ճամբան ես անոր հետ. գուցէ ոսոխդ
մատնէ զքեզ դատաւորին, և դատա-
26 ւորը դահճին, և բանտ դրուիս։ Ճըշ-
մարիտ կ'ըսեմ քեզ, պիտի չկրնաս ան-
կէ մինչև հատուցանես վերջին նաքարա-
կիսը։
27 Լսած էք որ բսուեցաւ՝, Շնութիւն
28 մի ընէր, բայց ես կ'ըսեմ ձեզ, Ով որ
կնոջ կը նայի չանկանալու համար ա-
նոր, իւր սրտին մէջ շնացաւ անոր հետ։
29 Ուրեմն եթէ քու աչքդ կը գայթակղ-
եցունէ զքեզ, հանէ զայն և նետէ քեզ-
մէն, վասն զի լաւ է քեզ որ անդամնե-
րուդ մին կորսուի, և բոլոր մարմինդ
30 շնետուի դժոխք, Ես եթէ աջ ձեռքդ
կը գայթակղեցունէ զքեզ, կտրէ զայն
և նետէ քենէ, քանզի լաւ է քեզ որ
անդամներուդ մին կորսուի, և բոլոր
31 մարմինդ շնետուի դժոխք։ Ասկէ ե-
րասխացաւ թէ Ով որ իւր կինը կ'ար-
ձակէ, թող տայ անոր արձակման
32 թուղթ. Բայց ես կ'ըսեմ ձեզ, Ով որ
իւր կինը կ'արձակէ առանց պատճառի

*Ոմանք կը յաւելուն նախնիներուն

պոռնկութեան, պատճառ կ'ընէ ա-
նոր շնութիւն ընելու, և ով որ այն
արձակուածն առնու՝ շնութիւն կը գոր-
ծէ։
33 Դարձեալ լսած էք որ բսուեցաւ նախ-
նիներուն, Սուտ երդում մի ընէր, այլ
34 երդումներդ Տէրոջը։ Բայց ես
կ'ըսեմ ձեզ, Ամենևին երդում մի ը-
նէք, ոչ երկնից վրայ որ Աստուծոյ ա-
35 թոռն է, և ոչ երկրի վրայ որ անոր ո-
տից պատուանդանն է, և ոչ Երուսա-
ղեմի վրայ որ մեծ Թագաւորին քաղա-
36 քըն է։ Ես ոչ քու գլխուդ վրայ եր-
դում ընես, քանզի չես կրնար մազ մը
37 ոսիսական ընել կամ սև։ Այլ ձեր խօս-
քերն ըլլայ, այոն՝ այո, և ոչն՝ ոչ. և
աւելին քան դայս չարէն կուգայ։
38 Լսած էք որ բսուեցաւ, Ակն ընդ ա-
39 կան և առուին ընդ առուման։ Բայց
ես կ'ըսեմ ձեզ, Հակառակ մի կենաք
չարին, այլ եթէ ոք ապտակ դարնի
ձ աջ ծնօտիդ, դարձուր անոր միւսը։
40 Ես ով որ կ'ուզէ քեզ հետ դատ վա-
րել և առնուլ չալվկդ, թող տուր ա-
41 նոր վերարկուդ ևս։ Ես ով որ պահակ
բռնէ զքեզ և մղոն մը ճամբայ տանի,
42 գնա անոր հետ երկու։ Բնէ ուզողին
տուր, և երես մի դարձներնէ անկէ որ
կ'ուզէ փոխ առնուլ քենէ։
43 Լսած էք որ բսուեցաւ, Բաւ ընկէ-
44 րըդ սիրես և թշնամիդ ատես։ Բայց
ես կ'ըսեմ ձեզ, Սիրեցէք ձեր թշնա-
միները, օրհնեցէք զձեզ անիծողները,
բարի րնէք անոնց որ զձեզ կ'ատեն,
և աղօթք րնէք անոնց համար որ ըզ-
45 ձեզ կը չարչարեն և կը հալածեն. Որ-
պէս զի որդիք ըլլաք ձեր երկնաւոր
Հօր. քանզի իւր արեը կը ծագեցնէ
թէ չարաց և թէ բարեաց վրայ, և կը
դրկէ անձրեւ թէ արդարոց և թէ մե-
46 ղաւորաց վրայ։ Վասն զի եթէ դուք
սիրէք զձեզ սիրողները, ինչ վարձք
կ'ունենաք։ ոչ ապաքէն մաքսաւորք
47 ևս նոյնը կ'ընեն։ Ես եթէ ձեր եղբայր-
ներուն միայն ողջոյն ուաք, ինչ աւե-
լի կ'ընէք։ ոչ ապաքէն մաքսաւորք

48 եւ նոյնը կ'ընեն, Ուրիմն դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր
Հայրը կատարեալ է։

## Գլ. Զ

1 Զգոյշ եղէք որ ձեր ողորմութիւնը
մարդոց առջեւ չընէք անոնց երեւնալու
համար, եթէ ոչ վարձք չէք առնուր
2 ձեր Հօրմէն որ երկինքն է։ Ուստի երբ
ողորմութիւն կ'ընես, առջեւդ փող մի
հնչեցուներ, ինչպէս կ'ընեն կեղծաւորները ժողովարաններուն եւ փողոցներուն
մէջ, որպէս զի փառաւորուին մարդոցմէ. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, անոնք ի3 րենց վարձքն առած կ'ըլլան։ Իսկ երբ
դուն ողորմութիւն կ'ընես, ձախ ձեռքդ չգիտնայ ինչ կը գործէ աջ
4 ձեռքդ։ Որպէս զի քու ողորմութիւնդ
ծածուկ ըլլայ, եւ քու Հայրդ որ ծածուկը կը տեսնէ, հատուցում պիտի
5 ընէ քեզ յայտնապէս։ Եւ երբ աղօթք կ'ընես, նման չըլլաս
կեղծաւորներուն, որ կը սիրեն ժողովրդանոցներու մէջ եւ հրապարակներու անկիւններուն կայնելով աղօթք ընել, որպէս զի երեւնան մարդոց։ Ճշ6 մարիտ կ'ըսեմ ձեզ, անոնք իրենց
վարձքն առած կ'ըլլան։ Իսկ դուն երբ
աղօթք կ'ընես, մտիր քու ներքին սենեակդ եւ փակէ դուռդ, եւ աղօթք ըրէ քու Հօրդ որ ի ծածուկ է. եւ քու
Հայրդ որ ծածուկը կը տեսնէ, հատու7 ցում պիտի ընէ քեզ յայտնապէս։ Եւ
երբ աղօթք կ'ընէք, հեթանոսներուպէս չսուսփռուիք մի ըլլաք, վասն զի կը
կարծեն թէ իրենց շատ խօսելուն հա8 մար պիտի լսուին։ Ուրիմն անոնց չնմանիք, քանզի գիտէ ձեր Հայրը ինչ
որ պիտոյ է ձեզ դեռ դուք անկէ չեղ
9 ինդրած։ Ուստի աղօթք ըրէք դուք
այսպէս.

Ով Հայր մեր որ յերկինս ես, քու
10 անունդ սուրբ ըլլայ։ Քու թագաւորութիւնդ գայ, քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ։
11 Մեր հանապազորդ հացը տուր մեզ այս-
12 օր։ Եւ ներէ մեզ մեր պարտքերը, ինչպէս եւ մենք կը ներենք մեր պարտա-
13 պաններուն։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ ազատէ զմեզ չարէն.
քանզի քուկդ է թագաւորութիւնը եւ
զօրութիւնը եւ փառքը յաւիտեան։
Ամէն։

14 Վասն զի եթէ դուք ներէք մարդոց
իրենց յանցանքը, ձեր երկնաւոր Հայրն
15 ալ կը ներէ ձեզ, իսկ եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքը, ձեր
Հայրն ալ չներէ ձեզ ձեր յանցանքը։
16 Եւ երբ ծոմ կը պահէք, մի րլլաք
տխուր կեղծաւորներուպէս պէս. քանզի
իրենց երեսները կ'աւերեն որպէս զի
մարդոց երեւնան թէ ծոմ կը պահեն.
ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Անոնք իրենց
17 վարձքն առած կըլլան։ Բայց դուն երբ
ծոմ կը պահես, օծէ գլուխդ եւ լուա
18 երեսդ, Որ չերեւնաս մարդոց իբրեւ ծոմ
պահող, այլ քու Հօրդ որ ի ծածուկ է.
եւ քու Հայրդ որ ծածուկը կը տեսնէ,
հատուցում պիտի ընէ քեզ։

19 Մի դիզէք ձեզ գանձեր երկրի վրայ,
ուր ցեցը եւ ժանգը կ'ապականեն, և
ուր գողերը պատ կը ծակեն եւ կը գող20 նան. Այլ դիզեցէք ձեզ գանձեր յերկինս, ուր ոչ ցեցը եւ ոչ ժանգը կ'ապականէ, և ոչ գողերը պատ կը ծա21 կեն եւ կը գողնան։ Քանզի ուր է ձեր գանձը, հոն պիտի ըլլան նաեւ ձեր սիր22 տերը։ Մարմնոյն ճրագն աչքն է. ապա եթէ քու աչքդ պարզ է, բոլոր մար23 մինդ լուսաւոր կ'ըլլայ. Բայց եթէ քու աչքդ վատ է, բոլոր մարմինդ մութ կ'ըլլայ. ուրեմն եթէ լոյսը որ ի քեզ է՝
24 խաւար է, խաւարը որչափ է։ Մարդ չկրնար երկու տէրանց ծառայել. քանզի կամ զմին պիտի ատէ և միւսը սիրէ, կամ թէպէտ պիտի յարի՝ և միւսը պիտի արհամարհէ. չէք կրնար ծառա25 յել Աստուծոյ և մամոնային։ Ուստի կ'ըսեմ ձեզ, Հոգ մի ընէք ձեր կենաց համար թէ ինչ պիտի ուտէք, կամ ինչ

---

*Ոմանք կը յաւելուն յայտնապէս
†Կամ զմին պիտի մեծարէ



պիտի խմէք. և ոչ ձեր մարմինդ որուն
համար թէ ինչ պիտի հագնիք. ոչ ա-
պրանքն աւելի է քան զկերակուրը, և մարմինը՝ քան զհանդերձ,
26 Նայեցէք երկնից թռչուններուն, որ
ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն և ոչ
չամբարանի մէջ կը ժողվեն, և ձեր
երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք.
ոչ ապրանքն դուք շա՛տ եք քան զնո-
27 սա։ Աւ Արդ ձեզնէ ո՞վ կրնայ հոգ ընելով
իւր հասակին վրայ կանգուն մի յաւե-
28 լուլ։ Եւ հանդերձի համար ինչո՞ւ հոգ
կ'ընէք. Նայեցէք դաշտի շուշաններուն,
ինչպէս կ'աճին. ոչ կ'աշխատին և ոչ
29 կը մանեն. Բայց կ'ըսեմ ձեզ որ Սողոմոն իսկ իւր բոլոր փառաւորութեան
մէջ չհագուեցաւ անոնց միոյն պէս։
30 Ուստի եթէ դաշտի խոտը որ այսօր
կայ և վաղիւ փուռը կը նետուի՝ Աստուած այնպէս կը հագուեցնէ, ա-
պա օրտյի՛ւ եւ առաւել զձեզ, Թերա-
31 հաւատներ։ Ուրիմն հոգ մի ընէք ըսելով, Ի՞նչ պիտի ուտենք, կամ Ի՞նչ
32 պիտի խմենք, կամ Ի՞նչ պիտի հագնինք. (քանզի այդ բոլոր բաներըը հեթանոսները կը խնդրեն.) վասն զի ձեր
երկնաւոր Հայրը գիտէ թէ այդ բոլոր
33 բաներըը պիտոյ են ձեզ։ Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը և անոր արդարութիւնը, և այդ
34 բոլոր բաներըը պիտի տրուին ձեզ։ Ուստի վաղուան համար հոգ մի ընէք. քանզի վաղուան օրն իրեն համար հոգ պիտի ընէ. հերիք է օրուան իւր նեղութիւնը։

## Գլ. է

1 Մի դատէք որ չդատուիք. (2) Քանզի ինչ դատաստանով դատէք, անով
պիտի դատուիք. և ինչ չափով չափէք,
3 անով պիտի չափուի ձեզ։ Եւ ինչո՞ւ համար քու եղբօրդ աչքին շիւղը կը տեսնես, և չես նայիր գերանին որ աչքիդ
4 մէջ է։ Կամ ի՞նչպէս կրնաս ըսել քու եղբօրդ, Թող տուր աչքէդ շիւղը հանեմ. և ահա քու աչքիդ մէջ գերան
5 կայ։ Կեղծաւոր, առաջ քու աչքէդ հանէ գերանը, և յետը յստակ պիտի տեսնես որ հանես շիւղը եղբօրդ աչքէն։
17 Եւ երբ Յիսուս Երուսաղէմ կ'երթար, ճամբան երկոտասան աշակերտներն իրեն հետ առաւ առանձին և ըսաւ անոնց, 18 Ահա երուսաղէմ կ'երթանք, և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն և դպիրներուն, և իրեն մահ պիտի դատապարտեն զնա, 19 Եւ հեթանոսներուն պիտի մատնեն զնա ծաղր ընել և ծեծել և ի խաչ հանել, և երրորդ օրը յարութիւն պիտի առնու։ 20 Այնուհետև Զեբեդեայ որդւոց մայրը իւր որդւոց հետ եկաւ անոր, երկրպագութիւն կ'ընէր և բան մը կը խնդրէր 21 ըլլ անկէ։ Եւ նա ըսաւ անոր, Ի՞նչ կ'ուզես։ Ըսաւ անոր, Ըսէ որ այս իմ երկու որդիքս, մին՝ աջ կողմդ, և միւսը՝ ձախ կողմդ, նստին քու թագաւորութեանդ մէջ։ 22 Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ, Չէք գիտեր ինչ կը խնդրէք։ կրնա՞ք խմել այն բաժակը զոր ես պիտի խմեմ, կամ այն մկրտութեամբ մկրտուիլ զոր ես պիտի մկրտուիմ։ Ըսին անոր, Կրնանք։ 23 Ըսաւ անոնց, Իմ բաժակս պիտի խմէք, և այն մկրտութեամբ զոր ես մկրտուիմ՝ պիտի մկրտուիք։ բայց իմ աջ կողմս և ձախ կողմս նստել իմս չէ տալ, այլ որոց պատրաստուած է իմ Հօրմէս։ 24 Երբ տասն ալ լսեցին, բարկացան այն երկու եղբայրներուն։ 25 Իսկ Յիսուս իրեն կոչեց զանոնք և ըսաւ, Գիտէք որ ազգաց իշխանները կը տիրեն անոնց, և մեծամեծները կ'իշխեն անոնց։ 26 Բայց ձեր մէջ այնպէս պիտի չըլլայ, այլ ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ թող ըլլայ ձեր ծառան։ 27 Եւ ձեզմէ ով որ առաջին ըլլալ կ'ուզէ՝ թող ըլլայ ձեր ծառան։ 28 Ինչպես Որդին մարդոյ չեկաւ սպասաւորութիւն ընդունել, այլ սպասաւորութիւն ընել և իւր կեանքը չատերուն համար փրկանք տալ։

29 Եւ երբ անոնք Երիքովէ ելան, մեծ բազմութիւն անոր հետևէն գնաց։ 30 Եւ ահա ճամբուն քով երկու կոյր նստած էին։ երբ լսեցին թէ Յիսուս կ'անցնէր, աղաղակեցին և ըսին, Ողորմէ մեզ,



31 Տէր, Որդի Դաւթի։ Եւ բազմութիւնը կը յանդիմաներ զանոնք որ լռէին, բայց անոնք ևս աւելի կ'աղաղակէին և կ'ըսէին, Ողորմէ մեզ, Տէր, Որդի 32 Դաւթի։ Եւ Յիսուս կեցած առնելով կոչեց զանոնք և ըսաւ, Ի՞նչ կ'ուզէք որ 33 ընեմ ձեզ։ Ըսին անոր, Տէր, որ մեր 34 աչքերնիը բացուին։ Եւ Յիսուս գթալով՝ դպաւ անոնց աչքերնուն, և իսկոյն բացուեցան անոնց աչքերնիը, և անոր հետևեցան գացին։

ԳԼ. ԻԱ

1 Եւ երբ Երուսաղէմի մօտեցան և եկան Բեթփագէ դէպ ի Ձիթենեաց լեռը, անտեղ Յիսուս խոր աշակերտներէն երկու 2 կոչը ղրկեց։ Եւ ըսաւ անոնց, Գացէք այդ ձեր դիմացի գիւղը, և չուտ մը պիտի գտնէք կապած էշ մը և անոր հետ յաւանակ մը։ արձակեցէք ինծի 3 և բերէք ինձ։ Եւ եթէ ոք բան մը ըսէ ձեզ, ըսէք թէ Տէրոջը պիտոյ են։ և իսկոյն պիտի դրկէ զանոնք։ 4 Այս ամէն բաները եղան, որ կատարուի մարգարէին խօսքը որ կ'ըսէ, 5 Ըսէք Սիօնի դստեր, Ահա քու թագաւորդ կու գայ քեզ հեզ, և իշու վրայ հեծած, և իշու 6 ձագի, յաւանակի, վրայ։ Աշակերտները գացին, և ինչպէս որ Յիսուս անոնց 7 պատուիրած էր՝ ըրին։ Եւ բերին էշը և յաւանակը, և անոնց վրայ դրին իրենց հանդերձները, և նստաւ անոնց 8 վրայ։ Եւ ժողովուրդէն շատերն իրենց հանդերձները ճամբուն վրայ տարածեցին, և ուրիշները ծառերէն ճիւղեր կը կտրէին և ճամբուն վրայ կը տարածէին։ 9 Եւ ժողովուրդները որ առջևէն և հետևէն կ'երթային՝ կ'աղաղակէին և կ'ըսէին, Ովսաննա Որդւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ յանուն Տեառն։ Ովսաննա ի բարձունս։

10 Եւ երբ նա Երուսաղէմ մտաւ, բոլոր քաղաքը շարժեցաւ և ըսաւ, Ո՞վ է սա։ 11 Եւ ժողովուրդներն ըսին, Սա է Յիսուս մարգարէն Գալիլեայի Նազարէթէ։

12 Եւ Յիսուս Աստուծոյ տաճարը մտաւ, և դուրս հանեց բոլոր անոնք որ տաճարին մէջ կը վաճառէին և կը գնէին, և սեղակ փոխողներուն սեղանները և աղաւնի վաճառողներուն աթոռները 13 կործանեց։ Եւ ըսաւ անոնց, Գրուած է թէ Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի, բայց դուք աւազակներու այր ըրիք զայն։

14 Եւ տաճարին մէջ կոյրեր և կաղեր եկան անոր, և բժշկեց զանոնք։ 15 Երբ քահանայապետները և դպիրները տեսան անոր հրաշքները, և զուարճացող տաճարին մէջ կ'աղաղակէին և կ'ըսէին, Ովսաննա Որդւոյ Դաւթի, բարկացան 16 Եւ ըսին անոր, Կը լսե՞ս ինչ կ'ըսեն դուքս։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, Այո. բնաւ չէք կարդացած, Թէ Մանկանց և կաթնկիր տղայոց բերնէն գովութիւն կատարեցիր։

17 Եւ թողուց զանոնք, քաղաքէն դուրս ելաւ Բեթանիա եկաւ, և գիշերը հոն կեցաւ։ 18 Եւ առաւօտուն երբ քաղաքը կը դառնար, անօթեցաւ։ 19 Ճամբուն վրայ թզենի մը տեսնելով գնաց մօտ, և անոր վրայ ուրիշ բան չգտաւ բայց միայն տերև։ և ըսաւ անոր, Այսուհետև քեզմէ պտուղ չբլլայ յաւիտեան։ Թզենին յանկարծ չորցաւ։ 20 Եւ երկոտասանները երբ տեսան, զարմացան և ըսին Թէ ինչպէս չուտ չորցաւ թզենին։ 21 Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Եթէ հաւատք ունենաք և չերկմտիք, ոչ միայն պիտի ընէք ինչ որ այդ թզենուն եղաւ, այլ և եթէ այս լերան ըսէք, Վե՛ր և ինկի՛ր ի ծով, պիտի ըլլայ։ 22 Եւ ամէն ինչ որ աղօթքի մէջ հաւատալ կը խնդրէք՝ պիտի առնէք։

23 Եւ երբ տաճարը եկաւ, քահանայապետները և ժողովրդեան ծերերն անոր մօտեցան, երբ կը սորվեցնէր, և ըսին, Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները, և ո՞վ տուաւ քեզ այդ իշխանութիւնը։ 24 Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոնց, Եւ ես բան մը

---

¹Ողջո՛ւ նատուցին

հարցանեմ ձեզ, զոր կթէ ինծի ըսէք, և ես ալ ձեզ կ՚ըսեմ թէ ինչ իշխա-
25 նութեամբ կ՚ընեմ այս բաները։ Յովհաննու մկրտութիւնն ուրկէ՞ էր, յերկ-
նից թէ ի մարդկանէ։ Եւ անոնք ի-
26 րենց մէջ կը խորհէին և կ՚ըսէին, Ե-
թէ ըսենք, Յերկնից, պիտի ըսէ մեզ
թէ Ապա ինչո՞ւ չհաւատացիք անոր.
խոկ եթէ ըսենք, Ի մարդկանէ, ժողո-
վուրդն կը վախնանք, քանզի ամէնքն
29 զՅովհաննէս իբրև մարգարէ կ՚ընդու-
27 նին։ Եւ պատասխան ատելով Յիսուս
ըսին, Չենք գիտեր։ Եւ նա ըսաւ ա-
նոնց, Ես ևս չեմ ըսեր ձեզ թէ ինչ իշ-
խանութեամբ կ՚ընեմ այս բաները։
28 Բայց ի՞նչպէս կերեւի ձեզ։ Մարդ մը
երկու որդի ունէր, և գնաց ըսաւ ա-
ռաջինին, Որդեակ, գնա այսօր գործէ
29 այգիս։ Նա պատասխան առաւ և ը-
սաւ, Չեմ ուզեր երթալ, բայց յետոյ
30 զղջացաւ և գնաց։ Մէկալին ևս գնաց
և այնպէս ըսաւ։ Եւ նա պատասխան
առաւ և ըսաւ, Կ՚երթամ, տէր և
31 չգնաց։ Ա՞ր այս երկուքին որը կա-
տարեց հօրը կամքը։ Ըսին անոր,
Առաջինը։ Յիսուս ըսաւ անոնց, Ճշմա-
րիտ կ՚ըսեմ ձեզ որ մաքսաւորք և
պոռնիկք քան զձեզ առաջ կը մտնեն
32 Աստուծոյ թագաւորութիւնը։ Քանզի
Յովհաննէս եկաւ ձեզ արդարութեան
ճանապարհով, և դուք չհաւատացիք
անոր, բայց մաքսաւորք և պոռնիկք
հաւատացին անոր։ և դուք տեսանելէ
յետոյ չզղջացիք հաւատալ անոր։
33 Այլ առակ ևս լսեցէք։ Տանուտէր
մարդ մը կար որ այգի մնկաց և ցան-
գով պատից զայն, և անոր մէջ հնձան
փորեց և աշտարակ շինեց, և յանձնեց
զայն մշակներու, և ինք գնաց օտար
34 երկիր։ Երբ պտղոց ժամանակը մօտե-
ցաւ, իր ծառաները ղրկեց մշակնե-
35 րուն, անոր պտուղներն առնուլ։ Եւ
մշակները բռնեցին անոր ծառաները,
զմին ծեծեցին, զմիւսն սպաննեցին, ու-
36 րիշ մը քարկոծեցին։ Նորէն ղրկեց ու-
րիշ ծառաներ ուրիշ քան զառաջինն,
37 և ըրին անոնց ևս այնպէս։ Վերջապէս



ղրկեց անոնց իր որդին ըսելով,
38 Թերևս ամէնան իմ որդիէս։ Բայց մշ-
չակները երբ տեսան իր որդին ըսին իրա-
րու, Սա է ժառանգը։ Եկէք սպան-
նենք զնա և տիրենք անոր ժառան-
39 գութեանը։ Եւ առին զնա, այգիէն
40 դուրս հանեցին և սպաննեցին։ Ուստի
երբ այգւոյն տէրը գայ, ի՞նչ պիտի ը-
41 նէ այն մշակներուն։ Ըսին անոր, Այն
չարիքը չարաչար պիտի կորսուանէ և
այգին պիտի յանձնէ ուրիշ մշակներու
որ պտուղներն իրենց ժամանակին պի-
42 տի տան անոր։ Ըսաւ անոնց Յիսուս,
Ընա՞ չէք կարդացած գրքին մէջ, Գա-
րը զոր շինողք անտրաշեցին, նա եղաւ
գլուխ անկեան։ Տէրոջմէ եղաւ այս և
43 պարմանալի է յաչս մերս։ Վասն այոյ
կ՚ըսեմ ձեզ, որ Աստուծոյ թագաւո-
րութիւնը պիտի առնուի ձեզմէ, և պի-
տի տրուի այնպիսի ազգի մը որ անոր
44 պտուղները բերէ։ Եւ ով որ այս քա-
րիս վրայ կ՚ինայ՝ պիտի կտրուի, և ո-
րուս վրայ կ՚ինայ՝ պիտի փշրէ զնա։
45 Եւ երբ քահանայապետները և փա-
րիսեցիք լսեցին անոր առակներն, ի-
46 մացան թէ իրենց համար կ՚ըսէր։ Եւ
կը փնտռէին ԹԷ ի՛նչպէս բռնեն զնա,
բայց ժողովրդին վախցան, քանզի
իբրև մարգարէ կ՚ընդունէին զնա։

## Գլ. ԻԲ։

1 Դարձեալ պատասխան առաւ Յիսուս
2 և ըսաւ անոնց առակաբ, Նմանեցաւ Թա-
գաւորութիւնը կը նմանի թագաւոր
մարդու, որ իւր որդւոյն համար հար-
3 սանիք ըրաւ։ Եւ ղրկեց իր ծառանե-
րը կանչել հարսանիք հրաւիրեալները,
4 և անոնք չկամեցան գալ։ Դարձեալ
ղրկեց ուրիշ ծառաներ և ըսաւ, Ըսէք
հրաւիրեալոց, Ահա ճաշս պատրաստեցի,
ցուլերնիս և գեր անասուններս զե-
նուած են, և ամէնայն ինչ պատրաստ
5 է։ Հարսանիք եկէք։ Բայց անոնք ան-
հոգ եղան ընելով գացին, մին իր
6 արտը, և միւսը իր առեւտուրը։ Եւ
ուրիշներն անոր ծառաները բռնեցին,
7 նախատեցին և սպաննեցին։ Եւ թա-
գաւորը երբ լսեց, բարկացաւ, և ղրկեց
իր զօրքը և սատակեց այն սպա-
նողները, և անոնց քաղաքն այրեց։
8 Անուանն ըսաւ իր ծառաներուն, Հար-
սանիքը պատրաստ է, բայց հրաւիր-
9 եալները չէին արժանիր։ Ուստի գացէք
ճամբու գլուխները, և զոր որ գտնէք
10 հարսանիք հրաւիրեցէք։ Եւ այն ծա-
ռաները ելան ճամբաները վրայ, և
զոր որ գտան, թէ չար և թէ բարի,
ամէնքը ժողվեցին, և հարսանիքը լցաւ
11 հարսնեւորներով։ Եւ թագաւորը երբ
մտաւ տեսնել հարսնեւորները, հոն տե-
սաւ մարդ մը որ հարսանեաց հանդերձ
12 հագած չէր։ Եւ ըսաւ անոր, Բնկեր,
ինչո՞ւ համար հոս մտար առանց ու-
նենալու հանդերձ հարսանեաց։ ԵՒ նա
13 պապանձեցաւ։ Անուանն թագաւորն ը-
սաւ սպասաւորներուն, Կապեցէք ա-
նոր ոտքը և ձեռքը, և առէք և հա-
նեցէք զնա դուրս խաւարը։ Հոն պի-
տի լինայ լալ և կրճտել առուանց։
14 Քանզի բազումք են կոչեցեալք և սա-
կաւ են ընտրեալք։
15 Անուանն փարիսեցիք գացին խոր-
հուրդ ըրին, ԹԷ ինչպէս անոր որոգայթ
16 դնեն խօսքով։ Եւ իրենց աշակերտ-
ները Հերովդեանացիներուն հետ ղրկեցին
անոր և ըսին, Վարդապետ, գի-
տենք որ ճշմարիտ ես, և ճշմարտու-
թեամբ Աստուծոյ ճամբան կը սորվե-
ցնես, և մարդու համար հոգ չես,
քանզի մարդոց այսուհետեւ չես ըներ,
17 Ուստի ըսէ մեզ, ի՞նչպես կերեւի քեզ,
կայսեր հարկ տալ արժա՞ն է ԹԷ ոչ,
18 Յիսուս գիտնալով անոնց խորամանա-
կութիւնն ըսաւ, Ընդէ՞ր կը փորձէք
19 զիս, կեղծաւորներ։ Ցուցէք ինծ հար-
կին դրամը։ Եւ անոնք դահեկան մը
20 բերին անոր։ Եւ ըսաւ անոնց, Որո՞ է
21 այս պատկերը և գիրը։ Ըսին անոր,
Կայսեր։ Յիսուս ըսաւ անոնց, Ուրեմն
տուէք զկայսերն կայսեր, և զԱստու-
22 ծոյն Աստուծոյ։ Երբ լսեցին, զարմա-
ցան, և թողին զնա և գացին։
23 Նոյն օրը եկան առ նա ոտքուկացիք

որ կ՚ըսեն ԹԷ չկայ յարութիւն, և ա-
24 նոր հարցուցին ըսելով, Վարդապետ,
Մովսէս ըսաւ, ԹԷ մարդ մը առանց
զաւակի մեռնի, անոր եղբայրն առնու
անոր կինը, և հանէ զաւակ իր եղբօ-
25 րը։ Արդ եօթն եղբարք կային մեր մէջ,
և առաջինն առաւ կին և մեռաւ, և
զաւակ չունենալուն համար թողուց իր
26 կինը իր եղբօրը։ Նոյնպէս և երկրոր-
դը և երրորդը, մինչև եօթներորդը։
27 Յետ ամենուքեան մեռաւ կինը։ (28) Ու-
րեմն ի յարութիւն այն եօթնէն որու
կին պիտի ըլլայ, քանզի ամէնքն ու-
29 նեցան զնա։ Եւ Յիսուս պատասխան
տալով ըսաւ անոնց, Դուք մոլորեալ
կ՚ըլլաք, որ ոչ գիրքերը գիտէք, և ոչ Աս-
30 տուծոյ զօրութիւնը։ Քանզի ի յարու-
թիւն ոչ կին կ՚առնուն, և ոչ երկան
կը տրուին, այլ երկինք մէջ Աստուծոյ
31 հրեշտակներուն պէս են։ Բայց մեռե-
ալներուն յարութիւն առնելուն համար
չէք կարդացած Աստուծմէ ձեզի ը-
32 սած խօսքը։ Ես եմ Աստուած Աբ-
րահամու, և Աստուած Իսահակայ, և
Աստուած Յակոբայ։ Աստուած մեռե-
33 լոց Աստուած չէ, այլ կենդանեաց։ Եւ
ժողովրդեան բազմութիւնը լսելով կը զարմանային
անոր վարդապետութեան վրայ։
34 Բայց փարիսեցիք երբ լսեցին ԹԷ զա-
նգիներուն նա զսպած կելլէ, ի միա-
35 սին ժողովեցան։ Եւ անոնցմէ մին օրի-
նական մը, հարցուց փորձելով զնա և
36 ըսաւ, Վարդապետ, որ պատուիրանը
37 մեծ է յօրէնս։ Եւ Յիսուս ըսաւ անոր,
Դուս Տէր Աստուածդ սիրես քու բոլոր
սրտովդ և քու բոլոր անձովդ և քու
38 բոլոր մտօքդ։ Այս է առաջին և մեծ
39 պատուիրան։ Եւ երկրորդը նմանապէս,
Քու բնկերդ սիրես քու անձիդ պէս։
40 Այս երկու պատուիրանն կախուած
են ամենայն օրէնք և մարգարէք։
41 Եւ երբ փարիսեցիք ժողովեցան, Յի-
42 սուս հարցուց անոնց և ըսաւ, Փրիս-
տոսի վրայ ի՞նչ կարծիք ունիք, որո՞
43 որդի է նա։ Ըսին անոր, Դաւիթ։ Ը-
սաւ անոնց Յիսուս, Ապա ինչպէս Դա-
ւիթ Հոգւով Տէր կը կոչէ զնա և կ՚ը-

14 սէ. Ցերը իմ Տէրոջս բառ, Նասէ իմ
աղ կողմն, մինչև զու թշնամիներդ ոտ-
15 քերուդ պատուանդան ընեմ. Ուրեմն
կթէ Դաւիթ Տէր կը կոչէ զնա, ինչպես
16 անոր որդին կ'ըլլայ նա. Եւ ոչ ոք կըր-
նար պատասխանել անոր խօսք մը. և
այն օրէն հետէ ոչ ոք կը համարձակէր
անոր բան մը հարցունել,

## ԳԼ. ԻԴ

1 Ա Նատաեն Յիսուս խօսեցաւ ժողովուրդ-
ներուն և իր աշակերտներուն և ը-
2 սաւ, Մովսէսի աթոռը դպիրները և
3 փարիսեցիները նստած են. Ուրեմն ինչ
որ ձեզի կ'ըսեն որ պահէք՝ պահեցէք
և ըրէք, բայց անոնց գործերուն պես
մի ընէք, վասն զի կ'ըսեն և չեն ըներ։
4 Բանդի ծանր և դժուարակիր բեռներ
կը կապեն և կը դնեն մարդոց ուսե-
րուն վրայ, և իրենց մատով չեն ու-
5 զեր շարժել զանոնք։ Ես իրենց ամէն
գործը կ'ընեն մարդոց երևնալու հա-
մար. կը լայնցունեն իրենց գրապա-
նակները և կ'երկնցունեն իրենց հան-
6 դերձներուն քղանցները. Առաջին բազ-
մոցները կը սիրեն քրնեքրիս, և ժողո-
վրդանոցներուն մէջ առաջին աթոռ-
ները, և շուկաներուս մէջ ողջոյններ,
7 Ես Ռաբբի, Ռաբբի կոչուիլ իրենց հան-
8 դէս։ Բայց դուք Ռաբբի մի կոչուիք,
քանզի ձեր Ուսուցիչը մի է, այսինքն՝
Քրիստոս, և դուք ամէնքդ եղբայր էք։
9 Ես երկրի վրայ Հայր մի կոչէք ձեզ,
քանզի ձեր Հայրը մի է որ յերկինս է։
10 Ես դուք ուսուցիչներ մի կոչուիք,
քանզի ձեր Ուսուցիչը մի է, այսինքն՝
11 Քրիստոս։ Ես ձենէ մեծը պիտի ըլլայ
12 ձեր ծառայողը։ Ով որ իր անձը կը
բարձրացունէ՝ պիտի խոնարհցուի, և ով
որ իր անձը կը խոնարհեցունէ՝ պիտի
բարձրանայ։

13 Բայց վայ ձեզ, կեղծաւոր դպիրներ
և փարիսեցիներ, որ երկինքը թագա-
ւորութիւնը մարդոց առջև կը փակէք.
քանզի դուք չէք մտներ, և մտնողնե-
14 րը չէք թողուր որ մտնեն։ Վայ ձեզ,
կեղծաւոր դպիրներ և փարիսեցիներ,
որ այրիներուն տուները կ'ուտէք, և
Էրկարաց երևնալու համար կ'երկարէք
աղօթքը. վասն որոյ աւելի դատապար-
15 տութիւն պիտի ընդունիք։ Վայ ձեզ,
կեղծաւոր դպիրներ և փարիսեցիներ,
որ ծով և ցամաք կը պտրտիք նոբա-
հատուած մը ընել, և երբ ըլլայ, դէհենի
որդի կ'ընէք զնա կրկին և աւելի քան
16 զձեզ։ Վայ ձեզ, կոյր առաջնորդներ,
որ կ'ըսէք թէ Ով որ տաճարին վրայ
երդում ընէ՝ բան մը չէ, բայց ով որ
ոսկւոյն վրայ երդում ընէ որ տաճա-
17 րին մէջ է պարտաւոր կ'ըլլայ։ Յիմարք
և կոյրք, ո՞րը մեծ է, ոսկին եթէ տա-
18 ճարը որ կը սրբացունէ ոսկին։ Ես թէ,
Ով որ սեղանին վրայ երդում ընէ՝ բան
մը չէ, բայց ով որ երդում ընէ պա-
տարագին վրայ որ սեղանին վրայ է՝
19 պարտաւոր կ'ըլլայ։ Յիմարք և կոյրք,
ո՞րը մեծ է, պատարագը թէ սեղանը
20 որ կը սրբացունէ պատարագը։ Ուստի
ով որ սեղանին վրայ երդում ընէ, եր-
դում կ'ընէ անոր վրայ և ամէն բանի
21 վրայ որ անոր վրայ է։ Ես ով որ տա-
ճարին վրայ երդում ընէ, երդում կ'ը-
նէ անոր վրայ և անոր մէջ բնակողին
22 վրայ։ Ես ով որ երկնից վրայ երդում
ընէ, երդում կ'ընէ Աստուծոյ աթո-
ռին վրայ և անոր վրայ նստողին վրայ։
23 Վայ ձեզ, կեղծաւոր դպիրներ և փա-
րիսեցիներ, որ անանխայ և սամիթ և
չամանի տասանորդը կուտաք, և կը
թողուք օրինաց ծանր ծանր բաները,
դատաստանը և ողորմութիւնը և հա-
ւատքը. ասոնք պարտ էրընել, և զա-
24 նոնք չթողուլ։ Կոյր առաջնորդներ,
որ մէղուկը կը քամէք և ուղտը կը
25 կլանէք։ Վայ ձեզ, կեղծաւոր դպիրներ
և փարիսեցիներ, որ բաժակին և պնա-
կին դուրսը կը մաքրէք, և ներքուստ
լի են յափշտակութեամբ և *անբարե-
26 կեցութեամբ։ Կոյր փարիսեցի, մաքրէ նախ
բաժակին և պնակին ներսը, որ անոնց
27 դուրսը ևս մաքուր ըլլայ։ Վայ ձեզ,

*Յոյն. անթարեխառնութեամբ



կեղծաւոր դպիրներ և փարիսեցիներ,
որ կը նմանիք բանալ գերեզմաններու,
որ արտաքուստ գեղեցիկ կ'երևին, և
ներքուստ լի են մեռելներու ոսկրնե-
28 բով և ամէն պղծութեամբ. Նոյնպես
և դուք արտաքուստ արդար կ'երևիք
մարդոց, և ներքուստ լի էք կեղծաւո-
29 րութեամբ և անօրէնութեամբ։ Վայ
ձեզ, կեղծաւոր դպիրներ և փարիսե-
ցիներ, որ կը շինէք մարգարէից տա-
պանները, և կը զարդարէք արդարոց
30 գերեզմանները, Ես կ'ըսէք, Եթէ մեր
հայրերուն օրերն ըլլայինք, մասնակից
չէինք բլլար անոնց հետ մարգարէնե-
31 րուն արեան։ Ուրեմն դուք ձեր վրայ
կը վկայէք թէ զաւակներ էք անոնց
32 որ մարգարէները կը սպաննէին։ Ո՛ւռ-
33 և դուք ձեր հայրերուն չափը լցէք։ Օ-
ձեր, խիւրու ծնունդներ, ինչպես պիտ
պիտի փախչիք դատաստանէ-
34 թենէն։ Վասն որոյ ահա ես կը զրկեմ
ձեզ մարգարէներ և իմաստուններ և
դպիրներ, և անոնցմէ ոմանք պիտի
սպանէք և խաչ հանէք, և ոմանք
ձեր ժողովրդանոցներուն մէջ պիտի
ծեծէք, և հալածէք քաղաքէ քաղաք։
35 Որպէս զի երկրի վրայ թափուած բոլոր
արդար արիւն գայ ձեր վրայ, Աբելի
արդարոյ արիւնէն մինչև ցարիւնն Բա-
րաքիայի որդւոյն Զաքարիայ զոր սպան-
նեցիք տաճարին և սեղանոյն մէջտեղ։
36 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Այս ամէն բա-
ները պիտի գան այս ազգին վրայ։

37 Ով Երուսաղէմ, Երուսաղէմ, որ
մարգարէները կը սպաննէիր, և զրկը-
ւածներուն առ քեզ կը քարկոծէիր, քա-
նի անգամ կամեցայ ժողո-
վել ինչպես հաւը կը ժողվէ իր ձագե-
րը թևերուն տակ, և դուք չկամեցաք։
38 Ահա ձեր տունը աւերակ պիտի մնայ
39 ձեզ։ Քանզի կ'ըսեմ ձեզ որ այսուհե-
տև պիտի չտեսնէք զիս, մինչև ըսէք,
Օրհնեալ որ կու գայ յանուն Տեառն։

## ԳԼ. ԻԴ

1 Եւ Յիսուս տաճարէն դուրս ելլելով
գնաց, և աշակերտները անոր քով
գացին տաճարին շինվածը ցուցնե-
2 լու. Ես Յիսուս անոնց ըսաւ, Չե՞ք
տեսներ այս ամէնը. Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզ, պիտի չմնայ հոս քար քարի վրայ
որ չքակուի։

3 Ես երբ նստած էր նա Ձիթենեաց լե-
ռը, աշակերտները եկան անոր առան-
ձին և ըսին, Ըսէ մեզ, երբ պիտի ըլ-
լան այդ բաները. և ի՞նչ պիտի ըլլայ
քու գալստեանդ և աշխարհիս կատա-
4 րածին նշանը։ Ես Յիսուս պատասխան
տուաւ և ըսաւ անոնց, Զգոյշ կեցէք,
5 գուցե ոք խաբէ զձեզ. Քանզի շատե-
րը պիտի գան իմ անունովս և ըսեն
Թէ ես եմ Քրիստոսը, և պիտի մոլո-
6 րեցունեն շատերը։ Ես պիտի լսէք պա-
տերազմներ և պատերազմներուս լուր-
ը. զգոյշ կեցէք որ չխռովիք. քան-
զի պէտք է որ այն ամէն բաները ըլ-
7 լան, բայց դեռ կատարած չէ. Վասն
զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ, և Թա-
գաւորութիւն Թագաւորութեան վրայ,
և տեղ տեղ սովք և սրածութիւնք և
8 երկրաշարժք պիտի ըլլան, Բայց ասոնք
ամէնը սկիզբն են երկանց։ Այնուհետև
նեղութեան պիտի մատնեն զձեզ և պիտ
պատանեն զձեզ, և իմ անուանս հա-
մար ատելի պիտի ըլլաք բոլոր ազգաց։
10 Ես անատեն շատերը պիտի գայթակ-
ղին, և պիտի մատնեն զիրար և պիտի
11 ատեն զիրար։ Ես շատ սուտ մարգա-
րէներ պիտի ելլեն և պիտի մոլորեցու-
12 նեն շատերը։ Ես անօրէնութեան բազ-
մանալուն համար շատերուն սէրը պի-
13 տի պաղի. Բայց ով որ մինչև ի սպառ
14 համբերէ՝ պիտի ապրի։ Ես աւետարան
Թագաւորութեան այս ամենայն տիեզեր-
քին բանակաչ աշխարհ բոլոր ազգե-
րուն ի վկայութիւն, և ապա վախճա-
նը պիտի գայ։

15 Ուստի երբ տեսնէք աւերածին պղծ-
ութիւնը որ Դանիէլ մարգարէին բեր-
նով բսուած է, Թէ սուրբ տեղը կը
կենայ. (ով որ կարդայ՝ Թող հասկը-
16 նայ.) Անատեն անոնք որ Հրէաստանի
17 մէջ են լեռները Թող փախչին. Ես նա

որ առնեսայ վրայ Ի՛ Թագ չիմնէ իւր
18 առնէն բան մը առնուլ. Եւ նա որ
ասած է՝ Թագ եա չդառնայ իւր հան-
19 դերձներն առնուլ, Բայց մայ այն օ-
20 րերը յղեսայ և առնուսայ՝ ու ազօթք
բրէ՛ք որ ձեր փախուստը ձմեռը չըլլայ,
21 և ոչ շաբաթ օրը. Քանզի անսանեն
այնպիսի մեծ նեղութիւն պիտի ըլլայ,
որոյ նմանը եղած չէ աշխարհի սկիզբէն
22 մինչև ցարդ, և ոչ պիտի ըլլայ. Եւ ե-
թէ այն օրերը չնուազեին, ընաս մար-
մին մը պիտի չապրեր. բայց ընտրելոց
23 համար այն օրերը պիտի նուազին. Ա-
սանեն եթէ ոք ըսէ ձեզ, թէ Ահա ասա
է Քրիստոս կամ անդ, մի հաւատաք.
24 Քանզի սուտ քրիստոսներ և սուտ
մարգարէներ պիտի երթեն, և մեծ նը-
շաններ և հրաշներ պիտի ցուցընեն, որ
եթէ հնար եր, ընտրեալներն անգամ
25 մոլորեցնէին. Ահա ասացուց ըսի ձեզ.
26 Ուստի եթէ բանեն ձեզ թէ Ահա անա-
պատն է, մի երթէք. և ըսէ՝ Ահա ներ-
քին սենեակներուն մէջ է, մի հաւա-
27 տաք. Վասն զի ինչպես որ փայլակն
յարեւելից ի՛երթէ և մինչև արեւմուտք
ի՛երեւնայ, այնպես պիտի ըլլայ Որդւոյ
28 մարդոյ գալուստը. Քանզի ուր մեռած
մարմին կայ, հոն պիտի ժողովին արծ-
ծուխը.
29 Եւ փոխադարձ այն նեղութեան օ-
րերէն ետքը արեգակը պիտի խաւարի,
և լուսին պիտի չտայ իւր լոյսը, և աս-
տեղք յերկինից պիտի իյնան, և զօրու-
30 թիւնք երկինից պիտի շարժին. Եւ ան-
սանեն Որդւոյ մարդոյ նշանը պիտի ե-
րեւնայ յերկինս, և անսանեն երկրի բո-
լոր ազգերը կոծ պիտի բնեն, և պիտի
տեսանեն Որդին մարդոյ երկինից ամպե-
րուն վրայ եկած զօրութեամբ և մեծ
31 փառօք. Եւ պիտի զրկէ նա իւր հրեշ-
տակները մեծաձայն փողով, և պիտի
ժողվեն անոր բնտրեալները չորս հո-
վերէն, երկինից մէկ ծայրէն մինչև միւս
ծայրը.
32 Թզենիէն առակը սորվեցէք առակը. երբ ա-
նոր ոստերը կը կակղանան և տերև-
ները կը ցցուին, գիտէք թէ մօտ է ա-
33 մառը. Նոյնպէս և դուք երբ տեսնէք
բոլոր այս բաները, գիտցէք թէ մօտ է
34 առ դուռս. Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզ որ
այս ազգը պիտի չանցնի մինչև այս ա-
35 մէն բաները ըլլան. Երկինք և երկիր
պիտի անցնին, բայց իմ խօսքերս ըս-
նաւ պիտի չանցնին.
36 Իսկ այն օրուան և այն ժամուն հա-
մար ոչ ոք գիտէ, և ոչ երկնից *հրեշ-
37 տակները, բայց միայն Հայրս Բայց ինչ-
պէս եղաւ Նոյի օրերը, Որդւոյ մարդ-
38 ոյ գալուստն ալ պիտի ըլլայ այնպէս.
Քանզի ինչպէս էին այն օրերը ջրհեղե-
ղին առաջ, կ՚ուտէին, կ՚ըմպէին, կին
կ՚առնուին և երիան կը տրուէին, մին-
39 չև այն օրը որ Նոյ մտաւ տապանը, Եւ
չգիացան մինչև ջրհեղեղը եկաւ և ջրնս-
չեց ամենքը. Այսպէս պիտի ըլլայ նաև
40 ետ պիտի ըլլայ այնպէս. Անսանեն երէ
երկու հոգի արտի մը մէջ են, մին պի-
41 տի առնուի և միւսը թողուի. Եւ երէ
երկու կին միւկ ադօրայ մէջ ադալու
վրայ դառնեն, մին պիտի առնուի և
միւսը թողուի.
42 Ուրեմն արթուն կեցէք, քանզի չէք
գիտեր թէ որ ժամուն ձեր Տէրը կու
43 գայ. Բայց զայս գիտցէք, որ եթէ տա-
նուտէրը գիտեար թէ ո՛ր պահուն գողը կու գայ, արթուն կը կե-
նար և չէր թողուր ծակել իւր տունը.
44 Ուստի և դուք պատրաստ կեցէք,
քանզի Որդին մարդոյ կու գայ այնպէ-
45 ս ժամու, որ դուք չէք կարծեր. Ուս-
տի ո՞վ է այն հաւատարիմ և խոհե-
մուն ծառան զոր իւր տէրը դրաւ իւր
ծառաներուն վրայ, որ ատեներն անոնց
46 կերակուր տայ. Երանի է այն ծառա-
յին, զոր իւր տէրը երբ գայ այնպէս
47 գտած գանէ. Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզ որ
իւր բոլոր ընչից վրայ պիտի կեցունէ
48 զնա. Ապա եթէ այն չար ծառան ըսէ
իւր սրտին մէջ, Իմ տէրս կ՚ուշացու-
49 նէ իւր գալը. Եւ սկսի ծեծել իւր ծո-
ռայակիցները, և արբեցողներու հետ
50 ուտել և ըմպել, Այն ծառային տէրը

*Ոմանք հրեշտակները և ոչ Որդին,



պիտի գայ ուրախութ օր մը որ չսպասեր,
51 և ուրախութ ժամ մը որ չգիտեր, Եւ բնդ
ամէն պիտի կարէ զնա, և կեղծաւորնե-
րուն հետ պիտի դնէ անոր բաժինը.
Հոն պիտի ըլլայ լալ և կրճտել ատա-
մանց.

## Գլ. ԻԵ

1 Ապառնեն երկինից թագաւորութիւնը
պիտի նմանի տասն կուսանաց, որ ի-
րենց լապտերներն առնելով ելան գիմա-
2 ւսրել փեսային Ասոնցմէ հինգն խոհա-
3 ական էին, և հինգն յիմար, Յիմարնե-
րուն առին իրենց լապտերները, և ի-
4 րենց հետ ձէթ չառին. Բայց խոհա-
կաններուն առին իրենց լապտերներուն
5 հետ ամանները ձէթ Եւ երբ փեսան
ուշացաւ, ամենքը թմրեցան և քնա-
6 ցան. Եւ կէս գիշերին ձայն եղաւ, Ա-
հա փեսան կու գայ. ելէք դիմաւորել
7 զնա Ասոնցմէ բոլոր կուսանք ելան և
8 իրենց լապտերները կազմեցին Եւ յի-
մարներն բսին խոհականներուն, Տուէք
մեզ ձեր իւղէն, քանզի մեր լապտեր-
9 ները կը մարին. Պատասխան առին ի-
մաստուններն և բսին, Մի գուցէ մեզ
և ձեզ չբաւէ. այլ գացէք մանաւանդ
վաճառականներուն և գնեցէք ձեզի
10 համար. Երբ անոնք գացին գնել, ե-
կաւ փեսան, և պատրաստ եղողները
անոր հետ հարսանիքը, և փակուեցաւ
11 դուռը. Յետոյ միւս կուսանք ալ եկան և
12 բսին, Տէր, Տէր, բաց մեզ. Բայց նա
պատասխան առաւ և բսաւ, Ճշմարիտ
կ՚բսեմ ձեզ թէ չեմ ճանչնար զձեզ.
13 Ուրեմն արթուն կեցէք, քանզի ոչ գի-
տէք օրը և ոչ *ժամը.
14 Քանզի ինչպես օտար երկիր գացող
մարդ մը կոչեց իւր ծառաները, և իւր
15 ստացուածն յանձնեց անոնց. Մէկուն
առաւ հինգ տալանդ, և միւսն երկու,
և միւսն մի, իւրաքանչիւրոյ ըստ իւր
կարողութեան, և իսկոյն ճամբայ ելաւ.

*Ոմանք ժամը, որուն մէջ Որդին մարդոյ կու գայ.

16 Եւ այն որ հինգ տալանդն առած էր՝
գնաց անոնցմով գործ բրաւ, և ուրիշ
17 հինգ տալանդ շահեցաւ. Նմանապէս
այն որ երկուքն առած էր՝ ուրիշ եր-
18 կու շահեցաւ. Իսկ այն որ առած
էր զմին գնաց փորեց գետինը, և թա-
19 ղուց իւր արծաթը. Շատ ժա-
մանակ եաքը եկաւ ծառաներուն տէ-
20 րը և հաշիւ պահանջեց անոնցմէ. Եւ
հինգ տալանդն առնողը եկաւ ուրիշ
հինգ տալանդ ևս բերաւ, և բսաւ,
Տէր, հինգ տալանդ յանձնեցիր ինձ,
ահա այլ հինգ տալանդ ևս անոնց վր-
21 րայ շահեցայ. Բսաւ անոր տէրը, Ա-
ղէ՛ւ, բարի և հաւատարիմ ծառայ.
դու որ սակաւուն մէջ հաւատարիմ
եղար, շատ բաներու վրայ պիտի կե-
ցունեմ զքեզ. մտի՛ քու տիրոջդ ու-
22 րախութիւնը. Երկու տալանդն առնո-
ղը եկաւ և բսաւ, Տէր, երկու տալանդ
յանձնեցիր ինձ, ահա այլ երկու տա-
լանդ ևս անոնց վրայ շահեցայ. Բսաւ
անոր տէրը, Աղէ՛ւ, բարի և հաւա-
տարիմ ծառայ. դու որ սակաւուն մէջ
հաւատարիմ եղար, շատ բաներու վրայ
պիտի կեցունեմ զքեզ. մտի՛ քու տի-
24 րոջդ ուրախութիւնը. Մէկ տալանդն
առնողը եկաւ և բսաւ, Տէր, գիտէի
թէ դուն խիստ մարդ ես, կը հնձես
ուրկից չսերմանեցիր, և կը ժողվես ու-
25 րկից չցանեցիր. Ուստի վախնալով գացի
թաղուցի քու տալանդդ գետնին տակ.
26 ահա քուկդ քեզ. Պատասխան առաւ
անոր տէրը և բսաւ անոր, Ջար և ծոյլ
ծառայ, գիտէիր թէ կը հնձեմ ուրկից
չսերմանեցի, և կը ժողվեմ ուր չցա-
27 նեցի. Ուրեմն պարտ եր քեզ իմ ար-
ծաթս սեղանաւորներուն տալ, որ երբ
28 գայի, շահով առնուի ինձ Ապա առէք
տակի տալանդը, և տուէք անոր որ
29 տասը տալանդ ունի. Քանզի այն ա-
մենուն որ ունին պիտի տրուի, և պի-
տի աւելնայ, և անկէ որ չունի՝ նաև
30 այն զոր ունի պիտի առնուի. Եւ զայ-
անպիտան ծառան հանեցէք արտաքին
խաւարը. հոն պիտի ըլլայ լալ և կըր-
ճտել ատամանց.

31 Եւ երբ Որդին մարդոյ գայ իւր փառօք և բոլոր *սուրբ հրեշտակներն ա-
նոր հետ, անսաեն պիտի նստի իւր
32 փառաց աթոռոը։ Եւ անոր առջև պիտի
ժողովին բոլոր ազգերը, և զանոնք պի-
տի զատէ իրարմէ, ինչպես հովիւ կը
33 զատէ ոչխարներն այծերէն։ Եւ ոչխար-
ները պիտի կեցունէ իւր աջ կողմը, և
այծերը՝ ձախ կողմը։
34 Անսաեն Թագաւորը պիտի ըսէ ա-
նոնց որ աջ կողմն են, Եկէք, օրհնեալք
Հօր իմոյ, ժառանգեցէք զձեզ հա-
մար պատրաստուած թագաւորու-
35 թիւնը։ Վը ժառանգեցէք։ Քանզի քաղցեալ
էի, և տուիք ինձ ուտել. ծարաւի էի,
և արբուցիք ինձ. օտարական էի, և
36 ներս առիք զիս։ Մերկ էի, և հագու-
ցուցիք զիս. հիւանդ էի, և կեցաք սե-
նեակ զիս. բանտի մէջ էի, և եկաք առ
37 իս։ Անսաեն արդարները պատասխան
պիտի տան անոր և ըսեն, Տէր, ե՞րբ
տեսանք զքեզ քաղցեալ և կերակրե-
ցինք, կամ ծարաւի և արբուցինք։
38 Ե՞րբ տեսանք զքեզ օտարական և ներս
առինք, կամ մերկ և հագուեցու-
39 ցինք։ Ե՞րբ տեսանք զքեզ հիւանդ
կամ բանտի մէջ, և եկանք առ քեզ։
40 Եւ Թագաւորը պատասխան տալով պի-
տի ըսէ անոնց, ճշմարիտ կ'ըսեմ ձեզ,
Որովհետև այս իմ եղբայրներուս փոքր-
րագոյններէն միոյն ըրիք, ինձ ըրիք։
41 Անսաեն անոնց որ ձախակողմն են՝
պիտի ըսէ, Մեկնի ղձայեք ինէ, անիծ-
եալներ, ի հուր յաւիտենական որ
պատրաստուած է Սատանային և անոր
42 հրեշտակներուն։ Քանզի քաղցեալ էի,
և չտուիք ինձ ուտել. ծարաւի էի, և
43 չարբուցիք ինձ. Օտարական էի, և չա-
ռիք զիս ներս. մերկ էի, և չհագու-
ցուցիք զիս. հիւանդ և բանտի մէջ էի,
44 և չեկաք առնել զիս։ Անսաեն անոնք
պատասխան պիտի †տան և ըսեն, Տէր,
ե՞րբ տեսանք զքեզ քաղցեալ կամ ծա-
րաւի կամ օտար կամ մերկ կամ հի-
ւանդ կամ բանտի մէջ, և ապասաու-
45 բութիւն չըրինք քեզ։ Անսաեն պա-
տասխան պիտի տայ անոնց և ըսէ,
ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Որովհետև այս
փոքրագոյններէն միոյն չըրիք, և ոչ
ինձ ըրիք։
46 Եւ սոսկալ պիտի երթան ի տանջանս
յաւիտենական, իսկ արդարք՝ ի կեանս
յաւիտենական։

## Գլ. ԻԶ

1 Եւ երբ կատարեց Յիսուս այս բոլոր
խօսքերը, ըսաւ իւր աշակերտներուն,
2 Գիտէք որ երկու օր ետքը զատիկ կ'ըլ-
լայ, և Որդին մարդոյ կը մատնուի խա-
չը հղլու։
3 Անսաեն քահանայապետները և գր-
պիրները և ժողովրդեան ծերերը ժո-
ղովեցան ի սրահ քահանայապետին, ո-
4 րոյ անունն էր Կայափա. Եւ խորհուրդ
ըրին նենգութեամբ բռնել զՅիսուս և
5 սպանել։ Բայց կ'ըսէին Թէ ոչ տօնին
ատեն, որ խռովութիւն չըլլայ ժողո-
վրդեան մէջ։
6 Եւ երբ Յիսուս Բեթանիա էր բորա-
7 Սիմոնի տունը, եկաւ անոր կին մը որ
ունէր շիշ մը ծանրագին իւղ, և թա-
փեց անոր գլխուն վրայ երբ նա անդան
8 նստած էր։ Եւ անոր աշակերտները
տեսնելով զայրացան և ըսին, ինչո՞ւ
9 ըլլար այս կորուստը. Քանզի այդ իւղը
կրնար վաճառուիլ ծանրագին, և տը-
10 րուիլ աղքատաց։ Եւ Յիսուս իմանա-
լով ըսաւ անոնց, ինչո՞ւ անհանգիստ
կ'ընէք կինը. քանզի բարի գործ մը
11 գործեց ան ինձ։ Վասն զի աղքատները
ունիք միշտ ձեր հետ, բայց ես չունիք
12 միշտ։ Քանզի ան որ թափեց այդ իւղն
իմ մարմնոյս վրայ՝ իմ թաղմանս հա-
13 մար ըրաւ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ Թէ
բոլոր աշխարհ ուր և քարոզուի այս
աւետարանը, պիտի խօսուի նաև ինչ
որ ըրաւ ան անոր յիշատակին համար։
14 Անսաեն մին յերկոտասանից որ կը
կոչուէր Յուդա Իսկարիովտացի, գնաց
15 քահանայապետներուն և ըսաւ, Ինչ
կ'ուզէք տալ ինձ, և ես մատնեմ զնա

*Ոմանք չտանին †Ոմանք տան անոր



ձեզ. և անոնք երեսուն արծաթ
16 *հատացան անոր։ Եւ այնուհետև պա-
տեհութիւն կը փնտռէր, մատնել զը-
նա ուրեք։
17 Եւ քաղաքչակերաց առաջին օրը ա-
շակերտներն եկան Յիսուսի և ըսին ա-
նոր, Ո՞ւր կ'ուզես որ պատրաստենք
18 քեզ ուտել զատիկը։ Եւ նա ըսաւ, Գա-
ցէք քաղաքն այս ինչ մարդուն և ըս-
ւէք անոր, Վարդապետը կ'ըսէ, Ժա-
մանակս մօտ է. աշակերտներուս հետ
19 քու քովդ պիտի ընեմ զատիկը։ Եւ ա-
շակերտներն ըրին ինչպես որ Յիսուս
հրամայեց անոնց, և պատրաստե-
ցին զատիկը։
20 Եւ երբ երեկոյ եղաւ, նստաւ սեղան
21 երկոտասանից հետ։ Եւ մինչ կ'ուտէին,
ըսաւ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ ձեզմէ
22 մին պիտի մատնէ զիս։ Եւ շատ արբու-
ցան, և անոնցմէ իւրաքանչիւրն ըս-
կսաւ ըսել անոր, Տէր, միթէ՞ ես եմ։
23 Նա պատասխան տուաւ և ըսաւ, Ա-
յն որ իմ հետս իւր ձեռքը պնակը մխեց,
24 նա պիտի մատնէ զիս։ Որդին մարդոյ կ'երթայ ինչպես որ գրուած է
անոր համար, բայց վա՛յ այն մարդուն
որոյ ձեռօք կը մատնուի Որդին մարդ-
ոյ. լաւ էր այն մարդուն որ ծնած
25 չըլլար։ Պատասխան տուաւ Յուդա որ
պիտի մատնէր զնա և ըսաւ, Վարդա-
պետ, միթէ՞ ես եմ։ Ըսաւ անոր, Դուն
ըսիր։
26 Եւ մինչ անոնք կ'ուտէին, Յիսուս
հաց առաւ, օրհնեց և կոտրեց, և տը-
ւաւ աշակերտներուն և ըսաւ, Առէք,
27 կերէք. այս է մարմին իմ։ Եւ բաժակն
առաւ, գոհացաւ, և տուաւ անոնց և
28 ըսաւ, Ամենքդ խմեցէք ասկէ. Քանզի
այս է արիւն իմ նոր ուխտի, որ թա-
փուիլ կը թափուի ի թողութիւն
29 մեղաց։ Բայց կ'ըսեմ ձեզ, Ա՛յսուհետև
որիցէ բերքին բնաւ պիտի չխմեմ մին-
չև այն օրը երբ ձեր հետ նոր խմեմ
զայն իմ Հօրս Թագաւորութեան մէջ։
30 Եւ օրհնութիւն մը երգելէն ետքը

*Կամ հատեցին

31 ելան Ձիթենեաց լեռը։ Անսաեն Յի-
սուս ըսաւ անոնց, Դուք ամենքդ այս
գիշեր պիտի գայթակղիք իմ վրաս.
վասն զի գրուած է Թէ Հարուիը պիտի
զարնեմ, և հօտին ոչխարները պիտի
32 ցրուին։ Բայց յարութիւն առնելէս ետ-
քը յառաջ քան զձեզ Գալիլեա պիտի
33 երթամ։ Պատասխան տուաւ Պետրոս
և ըսաւ անոր, Թէպէտ ամենքդին գայ-
թակղին քու վրադ, բայց ես բնաւ պի-
34 տի չգայթակղիմ։ Յիսուս ըսաւ անոր,
Ճշմարիտ կ'ըսեմ քեզ, Այս գիշեր գե-
հաւը չհնսած երեք անգամ պիտի ու-
րանաս զիս։ Ըսաւ անոր Պետրոս, Թէև
քեզի հետ մեռնելու ըլլամ, բնաւ ըզ-
քեզ պիտի չուրանամ։ Այսպէս կ'ըսէին
նաև բոլոր աշակերտները։
36 Անսաեն Յիսուս եկաւ անոնց հետ
տեղ մը որոյ անունն էր Գեթսեմանի,
և ըսաւ աշակերտներուն, Նստեցէք
հոս մինչև ես երթամ հոն աղօթք ը-
37 նեմ, Եւ իրեն հետ առնելով զՊետրոս
և Զեբեդեայ երկու որդիքը, սկսաւ
38 տրտմիլ և վշտանալ։ Անսաեն ըսաւ
անոնց, Իմ անձս տրտում է մինչև ի
մահ. հոս կեցէք և ինծի հետ արթուն
39 մնացէք։ Եւ քիչ մը յառաջ երթալով
երեսին վրայ ինկաւ և աղօթք ըրաւ ը-
սելով, Ով Հայր իմ, եթէ հնար է, Թող
անցնի ինձ այս բաժակը. բայց ոչ Թէ
ինչպես ես կամիմ, այլ ինչպես դուն
40 Եւ եկաւ աշակերտներուն և գտաւ զա-
նոնք ի քուն, և ըսաւ Պետրոսի, Այդ-
պես մի՞ ժամ չկրցաք ինծի հետ ար-
41 թուն կենալ, Արթուն կեցէք և աղօթք
ըրէք որ փորձութեան մէջ չմանէք. հո-
գին յօժար է, բայց մարմինը ակար։
42 Դարձեալ երկրորդ անգամ գնաց ա-
ղօթք ըրաւ ըսելով, Ով Հայր իմ, ե-
թէ անհնար է որ այս բաժակն անցնի
ինձմէ չխմեմ անկէ, Թող քու
43 կամքդ լլայ։ Եւ եկաւ գտաւ զանոնք ա-
ղօթք ի քուն գառ զանոնք, քանզի անոնց ա-
չքերը ծանրացած էին։ Եւ Թողուց
զանոնք, և գարձեալ գնաց երրորդ
անգամ աղօթք ըրաւ նոյն խօսքն ը-
45 սելով։ Անսաեն եկաւ իր աշակերտ-

ներուն և բաւ անոնց, Ա՛յսուհետև
ննջեցէ՛ք և հանգչեցո՛ւք. ահա հասաւ
ժամը, և Որդին մարդոյ կը մատնուի
46 մեղաւորներուն ձեռքը։ Ելէ՛ք երթանք
ահկ. ահա մատնեցաւ այն որ զիս պի-
տի մատնէ։
47 Եւ մինչդեռ նա կը խօսէր զայս, ա-
հա Յուդա, մին յերկուտասանից, եկաւ,
և անոր հետ մեծ բազմութիւն սուսե-
րօք և բրօթ քահանայապետներէն և
48 ժողովրդեան ծերերէն։ Եւ անոր մատ-
նիչն անոնց նշան տուած էր ըսելով,
Զոր որ ես համբուրեմ՝ նա է, բռնե-
49 ցէ՛ք զնա։ Եւ իսկոյն մտանելով Յի-
սուսի ըսաւ, Ողջո՛յն քեզ, վարդապետ,
50 և համբուրեց զնա։ Եւ Յիսուս բաւ
անոր, Ընկե՛ր, ինչո՞ համար ներա-
կա՛ն։ անոնք մտանցան, ձեռք զար-
51 կին Յիսուսի և բռնեցին զնա։ Եւ ահա
Յիսուսի հետ եղողներէն մին ձեռքը
երկնցուց և սուրը հանելով զարկաւ
քահանայապետին ծառային, և մկրկի
52 հանեց անոր ականջը։ Ապա Յիսուս
բաւ անոր, Դարձո՛ւր սուրդ իր տե-
ղը, քանզի ամէնքը որ սուր կ՚առնուն՝
53 սրով պիտի կորսուին։ Կը կարծե՞ս թէ
կարող չեմ հիմա իմ Հօրս աղաչել, և
ինծի հասցնել տասէն դան հրեշտա-
54 ման *գունդ հրեշտակաց։ Բայց ի՞նչ-
պէս պիտի կատարուին գիրքերը, թէ
պէտք պիտի եղապէս րլլալ։
55 Ապա Յիսուս բաւ այն բազմու-
թեան, Իբր թէ աւազակի՞ վրայ ելած
սուսերօք և բրօթ բռնել դիս։ ամէն
օր տաճարին մէջ ձեր հետ կը նստէի
և կ՚ուսուցանէի, և չբռնեցիք զիս։
56 Բայց բոլոր այս բաներն եղան որ կա-
տարուին մարգարէից գիրքերը։ Ապա-
տեն բոլոր աշակերտները թողուն զնա
և փախան։
57 Եւ անոնք որ բռնեցին զՅիսուս՝ տա-
րին կայաphա քահանայապետին, ուր
գպրներն և ծերերը ժողոված էին։
58 Եւ Պետրոս հետևէն անոր եաւէն գը-
նաց մինչև քահանայապետին գաւիթը,
և նստաւ մնացելով ապառաւներուն հետ
59 նայիլ վախճանը։ Իսկ քահա-
նայապետք և ծերք և բոլոր ժողովը
սուտ վկայութիւն կը փնտռէին Յիսու-
60 սի զէմ, որ սպանանէին զնա։ Եւ չգը-
տան։ Թէև շատ սուտ վկաներ եկան,
բայց չգտան։ Յետոյ երկու սուտ վկայք
61 եկան, Եւ ըսին Թէ Սա բաւ, Ես կըր-
նամ Աստուծոյ տաճարը քակել, և ե-
62 րեք օրուան մէջ չինել զայն։ Եւ քա-
հանայապետը ոտք կեցնելով բաւ անոր,
Պատասխան չե՞ս տար. ի՞նչ կը վկա-
63 յեն սոսնք քեզի զէմ։ Եւ Յիսուս
լուռ կը կենար։ Պատասխան առաւ
քահանայապետը և բաւ անոր, Կ՚երդ-
մցնեմ զքե՛զ կենդանի Աստուած՝ կենդանի
որ ըսես մեզ, Թէ դո՞ւ ես Քրիստոս
64 Աստուծոյ Որդին։ Յիսուս բաւ անոր,
Դուն ըսիր։ բայց կ՚ըսեմ ձեզ, Ա՛յսու-
հետև պիտի տեսնէք զՈրդին մարդոյ
Զօրութեան աջ կողմը նստած, և երկ-
65 նից ամպերուն վրայ եկած։ Անոնուն
նից ամպերուն վրայ եկած։ Անոնուն
քահանայապետը պատառեց հանդերձ-
ները և բաւ, Հայհոյեցի՞ն բրաւ.
այլ ևս ի՞նչ պէտք են մեզ վկաներ.
ահա հիմա լսեցի՛ք տասը հայհոյութիւ-
66 նը։ Ի՞նչպէս կը թուի ձեզ։ Պատաս-
խան առին և բսին, Մահապարտ է։
67 Անոնուն Թքին անոր երեսը, և ծեծե-
ցին զնա բռնցի։ և ոմանք ապտակ զար-
68 նելով բսին, Մարգարէացիր մեզ, դուն
Քրիստոս, ո՞վ է այն որ զարկաւ զնէ։
69 Իսկ Պետրոս դուրսը գաւիթը նստած
էր, և ազախին մը եկաւ անոր և ը-
սաւ, Դու ևս Գալիլեացի Յիսուսի հետ
70 էիր։ Բայց նա ամենուն առջև ուրա-
ցաւ և բաւ, Չեմ գիտեր ինչ կը խօս-
71 սիս։ Եւ երբ դուրս ելաւ, ուրիշ աղա-
ղնէ մը տեսաւ զնա, և հոն եղողներուն
բաւ, Սա ևս Յիսուսի Նազովրեցւոյ
72 հետ էր։ Եւ Պետրոս դարձեալ երդումով
ընելով ուրացաւ, Թէ Ես այն մարդը
73 չեմ ճանչնար։ Եւ փոյ հաքը հոն ե-
զողները եկան և ըսին Պետրոսի, Ա՛ր-
դարև դու ևս անոնցմէ ես, քանզի
խօսուածդ իսկ յայտնի կ՚ընէ զքե՛զ։
74 Անոնուն սկսաւ անիծել և երդնուլ ը-

*Յոյն. լեգէոն



սէլ Թէ ես այն մարդը չեմ ճանչնար։
75 և իսկոյն հաւ խօսեցաւ։ Եւ Պետրոս
յիշեց Յիսուսի խօսքը որ անոր ըսած
էր Թէ Դուն հաւ չխօսած երիցս պիտի
ուրանաս զիս։ և դուրս ելլելով լացաւ
դառնապէս։

## Գլ. Իվ

1 Երբ առաւօտ եղաւ, բոլոր քահանա-
յապետք և ժողովրդեան ծերերը խոր-
հուրդ բրին Յիսուսի համար սպաննել
2 զնա։ Եւ կապելով զնա տարին, և տա-
րին Պոնտացի Պիղատոսի կուսակալին
ձեռքը։
3 Անոնուն Յուդա որ մատնիչ զնա,
տեսնելով Թէ դատապարտեցաւ, զղջ-
ցաւ, և երեսուն արծաթը նա դար-
ձուց քահանայապետներուն և ծերե-
4 րուն, Եւ բաւ, Մեղայ, վասն զի մատ-
նեցի անմեղ արիւն։ Եւ անոնք բսին,
5 Մեզ ի՞նչ փոյթ, դուն տես։ Եւ ար-
ծաթը նետեց տաճարը և դուրս եկաւ,
6 և գնաց խղդեց զինք։ Իսկ քահանա-
յապետներն առնելով արծաթին բսին,
Արժան չէ դնել զայդ *կորբանը՝, քան-
7 զի արեան գին է։ Ուստի խորհուրդ ը-
րին, և անով գնեցին բրտին ագարա-
կը օտարներու դերեզմանատան համար։
8 Ա՛յս պատճառաւ այն ագարակը կոչ-
ուեցաւ Ագարակ արեան մինչև յայսօր։
9 Անոնուն կատարուեցաւ †Երեմիա մար-
գարէին բերնով բսուած խօսքը։ Եւ
առին երեսուն արծաթը գին կորուա-
ծին գինը, զոր Իսրայէլի որդիներէն ե-
10 ղածէ գին կորեցին, Եւ տուին զայն
բրտի ագարակին, ինչպէս որ հրաման
բրաւ ինձ Տէր։
11 Եւ Յիսուս կուսակալին առջև կեցաւ.
և կուսակալը հարցուց անոր և բաւ,
Դո՞ւ ես Հրեից Թագաւորը։ Եւ Յիսուս
12 բաւ անոր, Դուն կ՚ըսես։ Եւ մինչ
կ՚մադրասանուէր քահանայապետներէն
և ծերերէն, բնաւ պատասխան չտուաւ։
13 Անոնուն Պիղատոս բաւ անոր, Չե՞ս
լսեր Թէ որչափ քեզի դէմ կը վկայեն
14 սոսնք։ Եւ ամենևին պատասխան չը-
տուաւ անոր, մինչև շատ զարմացաւ
կուսակալը։
15 Բայց կուսակալը սովորութիւն ունէր
տօնին տաներ կապեալ մէր արձակել
16 ժողովրդեան զով որ ուզէին։ Անոնուն
բարաբբաս անուն երեւելի բանտարկեալ
17 մը ունէին։ երբ ժողովեցան, բաւ ա-
նոնց Պիղատոս, Ո՞րը կ՚ուզէ՛ք որ ար-
ձակեմ ձեզ. զԲարաբբա՞, Թէ զՅիսուս
18 որ Քրիստոս կ՚ըսուի. Քանզի գիտէր
Թէ առ նախանձու մատնեցին զնա։
19 Եւ երբ նա նստած էրատեանը, ա-
նոր կինը դրկեց անոր և բաւ,
Դուն այն արդարոյն հետ բան չունե-
նաս, քանզի բազում անցք անցան ընդ
իս այսօր երազիս մէջ անոր համար։
20 Բայց քահանայապետք և ծերք հա-
մոզեցին ժողովուրդը խնդրել զԲարաբ-
բա և զՅիսուս կորուսանել։ Պատաս-
խան առաւ կուսակալը և բաւ ա-
նոնց, Ա՛յս երկուքէն ո՞ր կ՚ուզէ՛ք որ
արձակեմ ձեզ։ Եւ անոնք բսին, ԶԲա-
22 րաբբաս։ Բաւ անոնց Պիղատոս, Ապա
ի՞նչ ընեմ զՅիսուս որ Քրիստոս կ՚ըս-
23 ուի։ Ամէնքն բսին անոր, Թող խաչուի։
Եւ կուսակալն բաւ, Բայց ի՞նչ չար
գործ բրաւ։ Եւ անոնք ևս առաւել
կ՚ագաղակէին և կ՚ըսէին, Թող խաչուի։
24 Եւ Պիղատոս տեսնելով Թէ օգուտ չէր-
լար, այլ ևս աւելի խռովութիւն կ՚ըս-
լար, ջուր առաւ, լուաց ձեռքերը
ժողովրդեան առջև և բաւ, Անպարտ
եմ ես այդ արդարոյն արենէն. դուք
25 խորհեցէ՛ք։ Եւ բոլոր ժողովուրդը պա-
տասխան տալով բաւ, Անոր արիւնը
մեր վրայ և մեր որդւոց վրայ ըլլայ։
26 Անոնուն զԲարաբբա արձակեց անոնց,
և զՅիսուս ծեծելով առաւ անոնց ձեռ-
քը որ խաչուէր։
27 Անոնուն կուսակալին զինուորներն
առին զՅիսուս պալատը, և բոլոր գե-
ղերքերուն գունդը ժողովեցին անոր
28 վրայ։ Եւ մերկացնելով զնա կարմիր
29 վերարկու հագուցին անոր, Եւ փուչ-

*Անհ՝ տաճարին գանձանակը։
†Ոմն՝ Երեմիա

ըէ պահակ հիւսելով գբին անոր գլուխը,
և եղէգ մը անոր աջ ձեռքը. և ի ծունր
իյանալով անոր առջև՝ ծաղր կ'ընէին
զնա, և կ'ըսէին, Ողջոյն քեզ, Հրեից
30 Թագաւոր։ Եւ թքնելով անոր վրայ՝
եղէգը կ'առնուին և կը ծեծէին անոր
31 գլուխը։ Եւ երբ ծաղր բրին զնա, վե-
րարկուն հանելին վրայէն և իւր հան-
դերձներն հագուցին անոր, և տարին
զնա հանել ի խաչ։
32 Եւ գտրա կոլլով Կիւրենացի մարդ
մը գան Սիմոն անուն, զնա բռնեցին
33 պահակ որ վերցուներ անոր խաչը։ Եւ
եկան Գողգոթա բառած տեղը, որ է
34 գանկի տեղ։ Եւ տուին անոր խմել լե-
զուով խառնեալ քացախ. և երբ համ
35 առաւ, չէր ուզեր խմել։ Եւ ի խաչ
հանելով զնա, բաժնեցին անոր հան-
դերձները վիճակաւ. [որ մարգարէն
բառածը կատարուէր, Իմ հանդերձներս
բաժնեցին իրենց մէջ, և պատմուճա-
36 նիս վրայ վիճակ արկին։] Եւ նստած
37 կը պահէին զնա։ Եւ անոր գլխուն վրայ
գրին անոր յանցանքը գրուած, Թէ
38 Սա է Յիսուս, Հրեից Թագաւորը։ Ան-
ատեն անոր հետ երկու աւազակ խա-
չուեցան, մին՝ յաջմէ, և մին՝ ի ձախ-
մէ։
39 Եւ անոնք որ կ'անցնէին՝ կը հայհո-
յէին անոր, կը շարժէին իրենց գլուխ-
40 ները, Եւ կ'ըսէին, Դուն որ աւերարը կը
քակէիր և երեք օրուան մէջ կը չինէիր,
ազատէ գլեզ. եթէ Որդի ես Աստուա-
41 ծոյ, էջ խաչէդ։ Նոյնպէս և քահանա-
յապետք գ պիրներուն և ծերերուն հետ
42 ծաղր ընելով կ'ըսէին, Ուրիշներն ա-
զատեց, զինք չէ կարող ազատել. Ի-
թէ Իսրայէլի Թագաւոր է, Թող այժմ
43 իջնէ խաչէն, և հաւատանք անոր։ Ա-
ստուծոյ յուսացած է, հիմա Թող փրկէ
զնա եթէ կամի զդա. քանզի բառ, Թէ
44 Որդի Աստուծոյ եմ։ Անոր հետ խա-
չուած աւազակներն ես նոյնպէս կը
նախատէին զնա։
45 Եւ վեցերորդ ժամէն մինչև իններորդ
ժամ բոլոր երկրի վրայ խաւար եղաւ։
46 Եւ իններորդ ժամուն առենները Յի-
սուս մեծ ձայնիւ աղաղակեց և բառ,
Ելի, Ելի, լամա սաբաքթանի։ որ ըսել
է, Աստուած իմ, Աստուած իմ, ընդ-
47 դէմ Թողեր զիս։ Ոմանք անոնցմէ որ
հոն կեցած էին, երբ լսեցին, կ'ըսէին,
48 Զեղիա կը կանչէ զա։ Եւ վազվազակի
անոնցմէ մին վազեց ապուհ առաւ,
լեցուց քացախով, և եղէգի անցուն-
49 լով տուաւ անոր խմել։ Եւ միւսները
կ'ըսէին, Թող, տեսնենք թէ Եղիա կու
50 գայ ազատել զդա։
Եւ Յիսուս դարձեալ մեծ ձայնիւ ա-
ղաղակեց և աւանդեց հոգին։
51 Եւ ահա տաճարին վարագոյրը վե-
րուստ ի վայր երկու ձեղքեցաւ, և եր-
կիրը չարժեցաւ, և քարերը պատառե-
52 ցան, Եւ գերեզմանները բացուեցան,
և շատ սուրբ ննջեցեալ մարմիններ յա-
53 րութիւն տանին, Եւ գերեզմաններէն
ելան անոր յարութենէն ետքը, մտան
սուրբ քաղաքը և երեւցան շատերուն։
54 Բայց հարիւրապետը և անոր հետ
զՅիսուս պահողները, երբ տեսան երկ-
րաշարժը և ինչ որ եղան, շատ վախ-
ցան և բսին, Արդարև Աստուծոյ Որդի
էր զա։
55 Եւ կային հոն շատ կանայք որ հե-
ռուէն կը նայէին, որ Գալիլեայէ Յի-
սուսի հետէն եկան անոր ծառայու-
56 թիւն ընելու. Որոց մէջ էր Մարիամ
Մագդաղինացի և Յակոբոսի և Յովսե-
ի մայրը Մարիամ և Զեբեդեայ որ-
դւոց մայրը։
57 Եւ երբ երեկոյ եղաւ, Արիմաթիայէ
հարուստ մարդ մը որոյ անունն
Յովսէփ էր, որ և ինք Յիսուսի աշա-
58 կերտ էր։ Սա Պիղատոսի գալ երթա-
լով խնդրեց Յիսուսի մարմինը։ Ան-
ատեն Պիղատոս հրամայեց տալ մարմ-
59 ինը։ Եւ Յովսէփ առաւ մարմինը, պա-
տեց մաքուր կտաւով, Եւ գրաւ իւր
60 նոր գերեզմանին մէջ զոր փորած էր
ի վիմի. և գերեզմանին դուռը մեծ քար
մը գլորելով գնաց, Եւ հոն էր Մար-
իամ Մագդաղինացի և միւս Մարիամ
որ կը նստէին գերեզմանին դիմացը։
62 Եւ հետեւեալ օրը որ ետքէն եւթն



էր, քահանայապետները և փարիսեցիք
63 նները ժողովեցան Պիղատոսի քով, Եւ
բսին, Տէր, կը յիշենք որ այն մոլոր-
ւցիչը իւր կենդանութեան ատեն կը-
64 սէր Թէ երեք օր ետքը յարութիւն
կ'առնուի։ Ուստի հրաման ետը ըզ-
զուշանալ գերեզմանին մինչև երրորդ
օրը. գուցէ աշակերտները գիշերով
գան, գողնան զնա, և բսեն ժողովուր-
դեան Թէ մեռելներէն յարութիւն ա-
ռաւ. և յետին մոլորութիւնն ըլլայ չար
65 քան զառաջինն։ Պիղատոս բառ անոնց,
Ունիք պահապան զինուորներ. գացէք
զգուշացէք ինչպես որ գիտէք։ Եւ ա-
նոնք գացին զգուշացան գերեզմանին,
քարը կնքելով և պահապան զինուոր-
ները դնելով։

## Գլ. ԻԸ

1 Ե. շաբթի գիշերը յարուտ միաշաբա-
թին կը լուսնար, եկաւ Մարիամ
Մագդաղինացի և միւս Մարիամը տես-
2 նել գերեզմանը։ Եւ ահա մեծ երկրա-
շարժ եղաւ, քանզի Տէրոջը հրեշտակն
իջնելով յերկինից գնաց գնաւն ի բաց
քաւուցուց քարը, և անոր վրայ նըս-
3 տաւ։ Եւ անոր տեսիլն էր փայլակի պէս,
և անոր հանդերձները՝ ձիւնի պէս սպի-
4 տակ։ Եւ անոր ահէն պահապանները
խռովեցան, և եղան իբրև մեռեալ։
5 Պատասխան առաւ հրեշտակը և բառ
կանանց, Մի երկնչիք, քանզի գիտեմ
որ կը փնտռէք զՅիսուս որ խաչուե-
6 ցաւ։ Հոս չէ, քանզի յարութիւն ա-
ռաւ, ինչպես որ բառ։ Եկէք տեսէք
7 տեղն ուր Տէրը պառկած էր։ Եւ վազ-
վազակի գացէք բսէք անոր աշակերտ-
ներուն Թէ յարեաւ ի մեռելոց, և ահա
յառաջ քան զձեզ կ'երթայ Գալիլիա,
հոն պիտի տեսնէք զնա. ահա բսի ձեզ։
8 Եւ անոնք ելան վազվազակի գերեզմա-
նէն ահով և մեծ ուրախութեամբ և
կ'ընթանային պատմել աշակերտներուն։
9 Եւ երբ կ'երթային պատմել անոր ա-
շակերտներուն, ահա Յիսուս անոնց դի-
մացը ելաւ և բառ, Ողջոյն ընդ ձեզ։
Եւ անոնք մօտենալով բռնեցին անոր
10 ոտքերը, և երկրպագութիւն բրին ա-
նոր։ Անատեն Յիսուս բառ անոնց, Մի
վախնաք, գացէք իմ եղբայրներուս
ըսէք որ Գալիլիա երթան, և հոն պիտ
տեսնեն զիս։
11 Երբ անոնք կ'երթային, ահա պահա-
պան զինուորներէն ոմանք քաղաքը
եկան, և պատմեցին քահանայապետ-
12 ներուն բոլոր ինչ եղաւ։ Եւ անոնք ծե-
ւրերուն հետ ժողովուելով և խորհուրդ
բնելով շատ ոսկի տուին զինուորնե-
13 րուն, Եւ բսին, Ըսէք Թէ Անոր աշա-
կերտները գալով գիշերը գողցան զնա
14 մինչ մենք կը քնանայինք։ Եւ եթէ այդ
բանը կատակին ականջն հասնի, մենք
կը համձեցուննք զնա, և զձեզ ապա-
15 հով կ'ընենք։ Եւ անոնք առին տուին
և բրին ինչպես սորվեցան. և այս բա-
նը Հրեից մէջ տարածուեցաւ մինչև
յայսօր։
16 Իսկ մնացեալ աշակերտները գացին
Գալիլեա այն լեռը ուր Յիսուս անոնց
17 էր անոնց Յիսուս։ Եւ երբ տեսան զնա,
երկրպագութիւն բրին անոր, բայց ո-
18 մանք կերկուացան։ Եւ Յիսուս մօտե-
նալով խօսեցաւ անոնց և բառ, Ամէն
իշխանութիւն տրուեցաւ ինձ յերկինս
19 և յերկրի։ Ուրեմն գացէք աշակերտաց-
ուեցէք բոլոր ազգերը, մկրտեցէք զնոսա
յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սըր-
20 բոյ. Սորվեցուցէք անոնց պահել ամէն
ինչ որ պատուիրեցի ձեզ. և ահա ձեր
հետ եմ ես ամէն օր մինչև ի կատա-
րած աշխարհիս։ Ամէն։

*Յոյն. անհոգ

# ԱՒԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

### ԳԼՈՒԽ Ա

1 Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստո-
2 սի Որդւոյն Աստուծոյ, ինչպէս գրուած
է ի մարգարէս, Ահա ես կը զրկեմ քա-
րեսիդ առջև իմ դեսպանս, որ քա-
ճարտարէ պիտի պատրաստէ քու ա-
3 ճանդդ. ձայնը, Անապատի մէջ կոչողին ձայնը,
Տէրոջը ճամբան պատրաստեցէք, ու-
4 ղիղեցէք անոր շաւիղները. Յովհաննէս
անապատին մէջ կը մկրտէր, և կը քա-
րոզէր ապաշխարութեան մկրտութիւն
5 ի թողութիւն մեղաց. Եւ բոլոր Հրէաս-
տանի երկիրը և Երուսաղէմացիք կ'եր-
թային անոր, և ամէնքը կը մկրտուէին
անկէ Յորդանան գետին մէջ խոստա-
6 վանելով իրենց մեղքերը. Եւ Յովհան-
նէս հագած էր ուղտի մազ, և իւր մէջ-
քը կաշիէ գօտի. և անոր կերակուրն
7 էր մարախ և վայրենի մեղր. Եւ կը քա-
րոզէր և կ'ըսէր, Իմ ետևէս գան զիս
զօրաւորը կու գայ, որուն ես արժանի
չեմ ծռել և կօշիկներուն կապերն ար-
8 ձակել. ես ձեզ ջրով մկրտեցի, բայց
նա պիտի մկրտէ ձեզ Հոգւով Սրբով.
9 Եւ եղաւ որ այն օրերը եկաւ Յիսուս
Գալիլեայի Նազարէթէն, և մկրտուե-
10 ցաւ ի Յովհաննէ Յորդանանու մէջ. Եւ
իսկոյն երբ ջուրէն ելաւ, տեսաւ զերկինս
բացուած, և զՀոգին աղաւնւոյ
11 պէս որ անոր վրայ կ'իջնէր. Եւ եկաւ
յերկնից ձայն որ կ'ըսէր, Դուն ես իմ
սիրելի Որդիս, որուն համած եմ.
12 Եւ իսկոյն Հոգին հանեց զնա անա-
13 պատին մէջ. Եւ նա էր քառասուն օր անա-
պատին մէջ Սատանայէն փորձուած. և
գազաններու հետ էր, և հրեշտակք
ապաստարութիւն կ'ընէին անոր.
14 Եւ Յովհաննու մատնուելէն ետքը Յի-
սուս Գալիլեա եկաւ, կը քարոզէր Աս-
տուծոյ արքայութեան աւետարանը և
15 կ'ըսէր, Թէ ժամանակը լրացած է, և
Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցած
է. ապաշխարեցէք և հաւատացէք ա-
ւետարանին.
16 Երբ Գալիլեայ ծովուն եղերքը կը
պտրտէր, տեսաւ Սիմոն և Սիմոնի եղ-
բայրը Անդրէաս ծովը ուռկան նե-
17 տած, քանզի ձկնորս էին. Եւ Յիսուս
ըսաւ անոնց, Իմ ետևէս եկէք, և ես
ընեմ ձեզ որ մարդու որսորդ ըլլաք.
18 Անոնք թողին վաղվաղակի իրենց ու-
19 կանները և գացին անոր ետևէն. Եւ
անկէ փոչ մը առաջ երթալով տեսաւ
զՅակոբոս Զեբեդեան և անոր եղբայրն
զՅովհաննէս, որ նոյնպես նաւին մէջ
20 ուռկանները կը յարդարէին. Եւ ես-
կոյն կոչեց զանոնք, և անոնք իրենց
հայրն զԶեբեդէոս վարձականներուն հետ
նաւին մէջ թողուլով գացին անոր ետև-
ևէն.
21 Եւ մտան Կափառնայում. և իսկոյն
շաբաթ օրը ժողովրդանոցը մտնելով
22 կ'ուսուցանէր. Եւ կը զարմանային ա-
նոր վարդապետութեան վրայ, քանզի
իբրև իշխանութիւն ունեցող կը ուր-
վեցուներ անոնց, և ոչ գրիչներուն
23 պէս. Եւ անոնց ժողովրդանոցին մէջ
մարդ մը կար, որ ունէր պիտի ոգի, և
24 աղաղակեց բսելով, Թող տուր, դուն
մեզի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս Նա-
զովրեցի. միթե զմեզ կորսուանցնել ե-
կար. գիտեմ զքեզ ով ես, Սուրբը
25 Աստուծոյ. Եւ Յիսուս սաստեց անոր
26 ըսելով, Պապանձէ և էլ ատկէ ելի
պիտի ոգին սաստիկ ցնցել զնա, և մեծ
27 ձայնիւ աղաղակեց և էլաւ անկէ. Եւ
ամէնքը զարմացան, այնպէս որ կը
հարցունէին իրարու և կ'ըսէին, Այս
ի՞նչ է. ի՞նչ նոր վարդապետութիւն է
այս, որ իշխանութեամբ պիտի ոգինե-
րուն ևս կը հրամայէ, և կը հնազան-
28 դին անոր. Եւ վաղվաղակի եղաւ անոր
համբաւը Գալիլեացւոց բոլոր կողմերը.
29 Եւ իսկոյն ելլելով ժողովրդանոցէն
մտան Սիմոնի և Անդրէի տունը Յակո-
30 բայ և Յովհաննու հետ. Եւ Սիմոնի զո-
քանչը ջերմ բռնուած պառկած էր,
31 և չուտով անոր համար ըսին անոր. Եւ
Յեսուս մտնելով բռնեց անոր ձեռքէն,
վերցուց զնա. և վաղվաղակի թողուց
զնա ջերմը, և անոնց սպասաւորութիւն
կ'ընէր.
32 Եւ երբ երեկոյ եղաւ մինչ արեգակը
կը մտնէր, բոլոր հիւանդները և դի-
33 ահարները կը բերէին անոր. Եւ բոլոր
34 քաղաքը դուռը ժողովուած էր. Եւ չատ
հիւանդներ բժշկեց կերպ կերպ ցաւե-
րէ, և չատ դեւեր հանեց, և դեւերուն
խօսել չէր տար, քանզի կը ճանչնային
զնա.
35 Եւ առաւօտուն չատ կանուխ ելլե-
լով չատ լուսնալը ելաւ և գնաց
անապատ տեղ մը, և հոն աղօթք կ'ը-
36 նէր. Եւ Սիմոն և որ անոր հետ էին
37 գացին անոր ետևէն. Եւ երբ գտան
զնա, ըսին անոր Թէ Ամէնքը կը փրնտ-
38 տանեն զքեզ. Եւ ըսաւ անոնց, Եկէ՛ք եր-
թանք մերձակայ գիւղաքաղաքները,
որ հոն ևս քարոզեմ, քանզի այս բա-
39 նիս համար եկած եմ. Եւ անոնց ժո-
ղովրդանոցներուն մէջ կը քարոզէր բո-
լոր Գալիլիա, և դեւեր կը հանէր.
40 Բորոտ մը եկաւ անոր, կ'աղաչէր,
ծունր կը դնէր և կ'ըսէր անոր, Եթէ
41 կամիս կրնաս զիս մաքրել. Եւ Յիսուս
զթալով երկնցուց ձեռքը, դպաւ ա-
նոր, և ըսաւ անոր, Կամիմ, մաքրուէ.
42 Եւ երբ ան ըսաւ անոր, իսկոյն գնաց
անկէ բորոտութիւնը, և մաքրուեցաւ.
43 Եւ սաստիկ պատուէր տուրլ անոր իսկ
և իսկ դուրս հանեց, և ըսաւ անոր,
44 Զգոյշ եղիր, մարդու բան չըսես, այլ
ցոյց զքեզ քահանային, և տուր քու
մաքրուելուդ ընծան, զոր պատուիրեց
Մովսէս անոնց վկայութեան համար.
45 Բայց նա ելլելով սկսաւ քարոզել յոյժ
և բանը տարածել, այնպէս որ այլ ևս
չէր կրնար նա յայտնի քաղաք մը մըտ-
նել, այլ դուրսը էր անապատ տեղեր.
և ամէն կողմէ կու գային անոր.

### ԳԼ. Բ

1 Եւ դարձեալ մտաւ Կափառնայում
2 քանի մը օր ետքը. Եւ լսուեցաւ Թէ
տան մէջ էր, և վաղվաղակի չատ մար-
դիկ ժողովեցան, այնպէս որ տեղ չկար,
և ոչ դրան քով. և կը խօսէր անոնց
3 Աստուծոյ խօսքը. Եւ կու գային անոր,
կը բերէին չորս մարդ վերցուած ան-
4 դամալոյծ մը. Եւ երբ բազմութենէն
չէին կրնար մատենալ անոր, քակեցին
տանիքը յորկր ուր Յիսուս էր, և ծակ
բանալով իջեցուցին մահիճը որուն վրայ
5 պառկած էր անդամալոյծը. Եւ Յիսուս
անոնց հաւատքը տեսնելով բսաւ ան-
դամալոյծին, Որդեակ, քու մեղքերդ
6 քեզի նետուած են. Եւ կային գպիր-
ներէն ոմանք որ հոն նստած էին, և
իրենց սրտերուն մէջ կը խորհէին ը-
7 սելով, Ինչո՞ւ համար այսպիսի հայհոյա-
թիւններ կը խօսի սա. ո՞վ կրնայ մե-
ղաց թողութիւն տալ, բայց միայն Ա-
8 ստուած. Եւ Յիսուս իսկոյն իմանալով
իր հոգւոյն մէջ Թէ անոնք այնպէս կը
խորհէին յանձինս, ըսաւ անոնց, Ա՛յդ
ինչ կը խորհիք ձեր սրտերուն մէջ.
9 Ո՞րն աւելի դիւրին է, անդամալոյծին
բսել, Քու մեղքերդ նետուած են, Թէ
10 բսել, Ելի, մահիճդ առ և քալէ. Բայց
որպէս զի գիտնաք Թէ Որդիս մարդոյ
իշխանութիւն ունի երկրի վրայ մեղաց
թողութիւն տալու, (ըսաւ անդամա-
11 լոյծին,) Քեզ կ'ըսեմ, Ելի, մահիճդ առ
12 և տունդ գնա. Եւ նա իսկոյն ելաւ, և
մահիճն առնելով գնաց ելաւ ամէնուն
առջև, այնպէս որ ամէնքն զարմա-
ցան, և փառաւորեցին Աստուած, և
բսին Թէ Այսպիսի բան ամենևին տես-
նած չենք.
13 Եւ ելաւ դարձեալ ծովեզրը, և բո-

լոր ժողովուրդը կու գային անոր, և
14 կ'ուտեցանէր զանոնք։ Եւ երբ կ'անցնէր, տեսաւ պղնձ Ալփեան, որ մեկը
ընդունելու տեղը նստած էր, և բսաւ
անոր, Եկու իմ հետևս։ և նա ելաւ
15 դնաց անոր հետևէն։ Եւ եղաւ որ երբ
տեղան նստած էր անոր սուրը, չսա
մսբսաւորներ և մեզաւորներ ևս տեղան նստած էին Յիսուսի և անոր աշակերտներուն հետ. քանզի բազումք
16 էին, և անոր հետևէն կ'երթային։ Եւ
գպիրները և փարիսեցիները երբ տեսան թէ մսբսաւորներուն և մեզաւորներուն հետ կ'ուտէր նա, ըսին անոր
աշակերտներուն, Ինչո՞ համար մսբսաւորներուն և մեզաւորներուն հետ
17 կ'ուտէ և կը խմէ։ Եւ Յիսուս երբ լսեց, բսաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք չէ, այլ հիւանդներուն. ես արդարները կոչելու չեկայ, այլ մեզաւորները։
18 Եւ Յովհաննու և փարիսեցւոց աշակերտները ծոմ կը պահէին. և կուգան
ըսին անոր, Ինչո՞ Յովհաննու և փարիսեցւոց աշակերտները ծոմ կը պահեն, և քու աշակերտներդ ծոմ չեն
19 պահեր։ Եւ Յիսուս բսաւ անոնց, Միթէ հնարք է որ առագաստի մանկունքը, մինչ փեսան անոնց հետ է, ծոմ պահեն. որչափ ժամանակ փեսան իրենց
20 հետ ունին, հնար չէ ծոմ պահել։ Բայց օրեր պիտի գան երբ փեսան անոնցմէ վերցուի, ապա այն օրը ծոմ պիտի պահեն։ Ոչ ոք կը դնէ նոր լաթի կտոր
21 կապերտ հին հանդերձի վրայ. ապա թէ ոչ այն նորը որ անոր լրութեան համար դրուաձ էր՝ կ'առնու հինէն, և պա-
22 տառումը ևս աւելի գէշ կ'ըլլայ։ Նաև ոչ ոք նոր գինին կը դնէ հին ափկերու մէջ. եթէ ոչ՝ նոր գինին ափկերը կը պատռէ, և գինին կը թափի և ափկերը կը կորնչին, այլ նոր գինին նոր ափկերու մէջ դրուելու է։
23 Եւ եղաւ որ շաբաթ օրը ինք արտերէն կ'անցնէր, և աշակերտները որ

*Ոմանք Յ'ասիացոներէն ազգաշխարհութեան։

կ'երթային՝ սկսան ցորեխ հասկեր քաղել։ Եւ փարիսեցիք ըսին անոր, Տես,
24 շաբաթ օրը ի՞նչ կ'ընեն, որ չի արժան։
25 Եւ նա բսաւ անոնց, Բնաւ չէք կարդացած դուք ինչ որ ըրաւ Դաւիթ երբ պէտք եղաւ, և անօթեցաւ նա և ա-
26 նոնք որ անոր հետ էին։ Ինչպէս մտաւ Աստուծոյ տունը Աբիաթար քահանայապետին օրը, և առաջաւորութեան հացերը կերաւ, և տուաւ անոնց ևս որ անոր հետ էին, զոր ոչ ոքի օրինաւոր է ուտել, բայց միայն քահանայից։ Եւ բսաւ անոնց, Շաբաթը մարդոյ համար եղաւ, և ոչ թէ մարդ շաբաթուն համար։ Ուրեմն Որդին մարդոյ տէր է շաբաթուան ևս։

## Գլ. Գ

1 Եւ դարձեալ ժողովրդանոցը մտաւ, և հոն մարդ մը կար որուն ձեռքը գո-
2 ռացած էր։ Եւ անոր կը սպասէին թէ արդեօք շաբաթ օրը պիտի բժշկէր զայն, որ անոր վրայ ամբաստանութիւն
3 ընեն։ Եւ բսաւ մարդուն որուն ձեռքը
4 գոռացեալ էր, Կեր, մէջտեղ կայ։ Եւ բսաւ անոնց, Շաբաթ օրը բարիք ընել արժան է թէ չարիք ընել, հոգի մը ապրեցունել թէ մեռցունել։ բայց ա-
5 նոնք լուռ կեցան։ Եւ ձեռամբ բարկութեամբ չորքնանակի անոնց վրայ նայելով, անոնց սրտերուն կուրութեան համար տրտմած, բսաւ այն մարդուն,
6 Երկնցու ձեռքդ։ և նա երկնցուց, և անոր ձեռքը *ողջացաւ։ Եւ փարիսեցիք Հերովդեականց հետ վազվզակի դուրս ելլելով, խորհուրդ կ'ընէին անոր դէմ թէ ինչպէս կորսուանէին զնա։
7 Բայց Յիսուս իր աշակերտներով գընաց ծովեզրը, և չատ բազմութիւն գացին անոր Գալիլեայէ, և Հրէ-
8 ստանէ, Եւ Երուսաղէմէ, և Եդոմէ, և Յորդանանու անդիի կողմէն։ և անոնք որ Տիւրոսի և Սիդոնի չրջակայ ազգերէն էին, չատ բազմութիւն երբ

*Ոմանք ողջացաւ միւսին պէս։



9 լսեցին ինչ որ կ'ընէր՝ եկան անոր։ Եւ իր աշակերտներուն բսաւ որ իրեն նաւակ մը պատրաստ կենայ բազմութեան
10 համար, որ չնեղչին զնա։ Քանզի չատերը բժշկեց, այնպէս որ ցաւ ունեցողներն անոր վրայ կը դիպուէին որ
11 դպչէին անոր։ Եւ պիղծ ոգիները երբ կը տեսնէին զնա, կ'իյնային անոր առ-
12 ջև, և կ'աղաղակէին և կ'ըսէին, Դուն Աստուծոյ Որդին։ և նա կը սաստէր յոյժ անոնց, որ չյայտնէին զնա։
13 Եւ լեռը ելլելով կոչեց իրեն զորս և
14 կամեցաւ, և գացին անոր քով։ Եւ երկոտասան հոգի որոշեց, որ իրեն հետ ըլլային, և որ դրկէր զանոնք քարոզել,
15 Եւ իշխանութիւն ունենալ ցաւեր
16 բժշկելու և դևեր հանելու։ Եւ Սիմոնի
17 անունը Պետրոս դրաւ։ Եւ Զեբեդեան Յակոբոսի և Յակոբոսի եղբօր Յովհաննու անուններէն դրաւ Բաներգէս, որ
18 է Որդիք որոտման։ Եւ զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և զԲարթողիմէոս, և ըզՄատթէոս, և զԹովմաս, և զՅակոբոս Ալփեան, և զԹադէոս, և զՍիմոն Կա-
19 նանացի, Եւ զՅուդա Իսկարիովտացի, որ և մատնեց զնա։
20 Տուն մը եկան, և դարձեալ խռնեցաւ ժողովուրդը մինչև կարող չըլլալ
21 անոնց հաց ուտել։ Եւ երբ իրենները լսեցին, ելան բռնել զնա, քանզի կ'ը-
22 սէին թէ Մոլեգնեալ է։ Եւ այն գպիրները որ Երուսաղէմէ իջած էին, կ'ըսէին թէ Բէեղզեբուղ կայ ի սմա, և դևերուն իշխանաւը կը հանէ դևերը։
23 Եւ իրեն կոչելով զանոնք առակներով
24 կ'ըսէր անոնց, Ինչպէս կրնայ Սատա-
25 նայ զՍատանայ հանել։ Եւ եթէ թագաւորութիւն մը իրեն դէմ բաժնուի, այն թագաւորութիւնը չկրնար կենալ։
26 Եւ եթէ տուն մը իրեն դէմ բաժնուի, այն տունը չկրնար կենալ։ Եւ եթէ Սատանան իրեն դէմ ելաւ և բաժնուած է, չկրնար կենալ, այլ անոր վերջը հա-
27 սած է։ Ոչ ոք կրնայ հզօրի տունն մտնելով յափշտակել անոր կարասին, եթէ նախ չկապէ հզօրը, ապա կողոպտէ
28 անոր տունը։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ

*Ոմանք երկինից թողութիւնները

9 և փոխանակ միոյ՝ հարիւր։ Եւ կ'ըսէր,
Ով որ լսելիս ականջ ունի՝ թող լսէ։
10 Եւ երբ առանձին էր, անոնք որ ա-
նոր քով էին՝ երկոտասանիկ հետ հար-
11 ցուցին անոր այն առակը։ Եւ ըսաւ ա-
նոնց, Ձեզի արուած է գիտնալ Աստու-
ծոյ Թագաւորութեան խորհուրդը,
բայց անոնց որ դուրսն են՝ ամէն բան
12 առակներով կ'ըլլայ։ Որ տեսնելով տես-
նեն և չտեսնեն, և լսելով լսեն և չմ-
տանան, դի մի գուցէ դառնան, և Թո-
13 ղութիւն ըլլայ անոնց մեղաց։ Եւ ըսաւ
անոնց, Այս առակը չե՞ք գիտեր. ու-
րեմն ի՞նչպէս պիտի գիտնաք բոլոր ա-
14 ռակները։ Սերմ ցանողը կը ցանէ խօս-
15 քը։ Եւ ճամբուն քովինները անոնք են
որոց մէջ խօսքը կը ցանուի, և երբ կը
լսեն, վազվզակի կու գայ Սատանան
և կը հանէ անոնց սրտերուն մէջ ցա-
16 ռուած խօսքը։ Նոյնպէս ապառաժուտ
տեղերու վրայ ցանուածներն անոնք
են, որ երբ կը լսեն խօսքը, իսկոյն կ'ըն-
17 դունին զայն ուրախութեամբ, եւ իրենց
մէջ արմատ չունենալով քիչ ժամանակ
կը տեւեն. յետոյ երբ նեղութիւն կամ
հալածանք ըլլայ խօսքին համար, վազ-
18 վազակի կը գայթակղին։ Եւ փուշերուն
մէջ ցանուածներն անոնք են, որ երբ
19 կը լսեն խօսքը, Աշխարհիս զբաղմունք-
քը և հարստութեան խաբէութիւննե-
րը և ուրիշ բաներու ցանկութիւննե-
րը մէջ մտնելով կը հեղձուցանեն խօսքը,
20 և կ'ըլլայ անպտուղ։ Եւ բարւոք հողի
մէջ ցանուածներն անոնք են, որ կը
լսեն խօսքը և կ'ընդունին, և կու տան
պտուղ փոխանակ միոյ երեսունն, և փո-
խանակ միոյ՝ վաթսունն, և փոխանակ
միոյ՝ հարիւր։
21 Եւ ըսաւ անոնց, Մի՞թէ կու գայ ճը-
րագ որ գրուանի կամ մահճի տակ դը-
նուի. ո՞չ թագաքին որպէս զի աչառնա-
22 կի վրայ դրուի։ Քանզի չկայ ծածուկ,
որ չյայտնուի. և եղած չէ գաղտնի որ
23 չգայ ի յայտ։ Եթէ ոք լսելիս ականջ
ունի՝ թող լսէ։
24 Եւ ըսաւ անոնց, Տեսէք թէ ինչ կը լսէք։
ինչ չափով որ կը չափէք, նոյն չափով պի-
տի չափուի ձեզ, և պիտի աւելնայ ձեզ
25 որ կը լսէք։ Վասն զի ով որ ունի՝ ա-
նոր պիտի տրուի. և ով որ չունի՝ ին-
ձմէ որ ունի այն ևս պիտի առնուի ա-
նկէ։
26 Եւ կ'ըսէր, Աստուծոյ Թագաւորու-
թիւնն այսպէս է, որպէս թէ մարդ մը
27 հողին մէջ սերմ դնէ, Եւ քնանայ և
արթննայ գիշեր և ցորեկ, և սերմը
բուսնի և աճի, Ե՛ ինք չգիտեր թէ ինչ-
28 պէս։ Քանզի հողն ինքնին պտուղ կու
տայ, առաջ՝ խոտը, յետոյ՝ հասկը, և
29 ապա՝ լեցուն ցորենը հասկին մէջ։ Եւ
երբ պտուղը հասնի, իսկոյն կը ղրկէ
մանգաղ, քանզի հնձոյ ատենն հասած է։
30 Եւ կ'ըսէր, Աստուծոյ Թագաւորու-
թիւնն ի՞նչ բանի նմանցուցնենք, կամ
31 ի՞նչ առակով ցուցնենք զայն։ Նման
է մանանեխոյ հատի, որ երբ հողի մէջ
կը ցանուի, փոքրագոյն է քան զամէ-
32 նայն սերմանիս երկրի։ Եւ երբ ցանուի՝
կը բուսնի և կ'ըլլայ մեծ քան զամէ-
նայն բանջար, և մեծամեծ ոստեր կ'ար-
ձակէ, այնպէս որ բուսական կ'ըլլայ երկ-
նից թռչուններուն անոր հովանոցն
տակ բնակել։
33 Եւ այսպէս շատ առակներով կը խօ-
սէր խօսքն անոնց, որչափ որ կրնային
34 լսել։ Եւ առանց առակի բան մը չէր
խօսեր անոնց, բայց առանձին իւր ա-
շակերտներուն կը մեկնէր ամէնը։
35 Եւ այն օրը երբ երեկոյ կ'ըլլար, ը-
սաւ անոնց, Եկէ՛ք անդիի կողմն
36 անցնինք։ Եւ անոնք ժողովուրդը թող-
լով առին զնա ինչպէս որ էր նաւուն
մէջ, և ուրիշ նաւակները ևս կային ա-
37 նոր հետ։ Եւ հովի մեծ փոթորիկ ե-
ղաւ, և ալիքը նաւուն վրայ կու գա-
յին, այնպէս որ գրեթէ կը լեցուէր։
38 Եւ նա նաւուն խելոյ կողմը բարձի վր-
րայ կը քնանար. արթնցուցին զնա և
կ'ըսէին անոր, Վարդապետ, փրկե՛ զմեզ
39 քեզ որ կը կորսուինք։ Եւ երկնցով սաս-
տից հովին, և ծովուն ըսաւ, Դադա-
րէ, կարկի։ և հովը գադրեցաւ, և
40 եղաւ մեծ խաղաղութիւն։ Եւ ըսաւ ա-
նոնց, Ընդէր այդպէս վհատասիրտ ե՞ք



ի՞նչպէս հաւատաք չունիք։ Եւ անոնք
վախցան չափ և կ'ըսէին իրարու, Ա-
դեօք ո՞վ է սա որ հովը և ծովը կը
հնազանդին ասոր։

## ԳԼ. Ե

1 Եւ եկան ծովուն անդիի կողմը ՚Գա-
2 դարացոց երկիրը։ Եւ երբ նաւէն ե-
լաւ նա, գերեզմաններէն պատահեցաւ
անոր մարդ մը որ պիղծ ոգի ունէր։
3 Որոյ բնակած տեղը գերեզմաններուն
մէջ էր, և չղթայով իսկ մարդ չէր
4 կրնար կապել զնա։ Քանզի չատ ան-
գամ ոտնակապօք և չղթայիւք կապ-
ուած էր, բայց նա չղթաները խզած
և ոտնակապերը խորտակած էր, և ոչ
5 ոք կարող էր նուաճել զնա։ Եւ միշտ
ամէն գիշեր †գերեզմաններուն մէջ և
լեռներուն մէջ՝ կ'աղաղակէր, և իւր
6 մարմինը կը պատառէր քարերով։ Երբ
հեռուէն տեսաւ զՅիսուս, վազեց և
7 երկրպագութիւն ըրաւ անոր, Եւ մեծ
ձայնիւ աղաղակեց և ըսաւ, Դուն ին-
ծի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս, Որ-
դի Աստուծոյ բարձրելոյ, կ'երդմնցու-
նեմ զքեզ Աստուծով, մի տանջեր զիս։
8 (Քանզի կ'ըսէր անոր, Պիղծ ոգի, էլ
9 այդ մարգէն։) Եւ հարցուց անոր Թէ
Անուդ ի՞նչ է։ ԵՒ ըսաւ անոր, Իմ ա-
նունս Լեգէոն է քանզի մենք բազում
10 ենք։ Եւ ‡կ'աղաչէին զնա յոյժ չղրկել
11 զանոնք այն երկրէն դուրս։ Եւ կար
հեն լերան մօտ խոզերու մեծ հօտանի
12 մը արօտական։ Եւ բոլոր դեւերն աղա-
չեցին զնա և ըսին, Խոզերուն ղրկէ
13 զմեզ, որ անոնց մէջ մտնենք։ Եւ Յի-
սուս իսկոյն հրաման տուաւ անոնց։ և
երբ եելան պիղծ ոգիները, մտան խոզե-
րուն մէջ և երկանակը վազեց դարձն
ծովը, (էին իբրև երկու հազար) և ծո-
14 վուն մէջ հեղձան։ Եւ խոզարածները
փախան, և պատմեցին քաղաքը և ա-
գարակները։ և Ելան տեսնել
15 Թէ ինչ էր որ եղաւ։ Եւ եկան Յիսու-
սի, և տեսան որ դիւահարը որ լեգէոն
ունէր՝ հագուած և գգաստացած կը
16 նստէր, և վախցան։ Եւ անոնք որ տե-
սած էին՝ պատմեցին անոնց Թէ ինչ ե-
17 ղաւ դիւահարին, նաև խոզերուն վրայ։
Եւ սկսան աղաչել զնա որ երթար ի-
18 րենց սահմաններէն։ Եւ երբ նա նաւը
մտաւ, այն որ դիւահար եղած էր՝ կա-
19 ղաչէր զնա անոր հետ ըլլալ։ Եւ Յի-
սուս Թոյլ չտուաւ անոր, այլ ըսաւ ա-
նոր, Գնա քու տունդ քու ընտանեացդ,
և պատմէ անոնց ինչ որ ըրաւ քեզ
20 Տէրը և ողորմեցաւ քեզ։ Եւ նա գնաց,
և սկսաւ Դեկապոլսի մէջ քարոզել ինչ
որ Յիսուս ըրաւ անոր։ և ամէնքը կը
զարմանային։
21 Եւ երբ Յիսուս անցաւ միւսանգամ
նաւով Հ֊ևերն անդիի կողմը, շատ բազ-
մութիւն ժողովեցաւ անոր քով, և նա
22 ծովեզերքն էր։ Եւ ահա ժողովրդա-
պետներէն մին կու գար, որոյ անունն
էր Յայրոս, և երբ տեսաւ զնա, ին-
23 կաւ անոր ոտքը։ Եւ կ'աղաչէր զնա
յոյժ և կ'ըսէր Թէ Աղջիկս մեռնելու
մօտ է, գաս, ձեռք դնես անոր վրայ,
24 որպէս զի ազատի, և պիտի ապրի։ Եւ
գնաց անոր հետ, և շատ բազմութիւն
անոր հետևէն կ'երթայիւն և կը նեղէին
զնաս։
25 Եւ կին մը որ երկոտասան տա-
26 րուան տեստեսութեան մէջ էր, Եւ
վատացեալ էր յոյժ շատ բժիշկներէ, և
իւր բոլոր ինչքը ծախած էր, և օգուտ
չէր գտած, այլ ևս առաւել դայրա-
27 ցած էր, Երբ լսեց Յիսուսի վրայ, ե-
կաւ անոր հետևէն բազմութեան մէջ,
28 և անոր հանդերձին դպաւ։ Քանզի կ'ը-
սէր, Եթէ միայն անոր հանդերձներուն
29 դպչիմ, պիտի բժշկուիմ։ Եւ վազվ-
զակի ցամաքեցաւ անոր արեան աղ-
բիւրը, և իւր մարմնոյն մէջ իմացաւ
30 Թէ բժշկուեցաւ տանջանքէն։ Եւ Յի-
սուս իսկ և իսկ գիտնալով յանձին այն
զօրութիւնը որ իրմէ ելաւ, դարձաւ

*Մատ. Գերգեսացոց
†Մատ. լեռներուն մէջ և գերեզման-
ներուն մէջ
‡Կամ կ'աղաչէր

բազմութիւնն մէջ և ըսաւ, Ով զգաս
31 իմ հանդերձներուս եւ աչակերտներն
բսին անոր, Կը տեսնես որ բազմու-
թիւնը կը նեղէ զքեզ, և կ'ըսե՞ս թէ
32 Ով ինծի դպաւ։ Եւ կը նայէր չորքի
33 որ այս բանն ընդոր տեսնէր։ Եւ կինը
վախցաւ և դողաց, գիտնալ գիտէր թէ
իրեն ինչ եղաւ, և եկաւ ինկաւ անոր
առջև, ևամէն ըն տուգութեամբ
34 ըսաւ անոր։ Եւ Յիսուս ըսաւ անոնց,
Դուստր, հաւատքդ բժշկեց զքեզ։ գը-
նա խաղաղութեամբ, և բժշկուած ե-
ղիր քու տանջանքէդ։
35 Երբ նա դեռ կը խօսէր, Ժողովրդա-
պետին տունէն մարդ եկան և ըսին
թէ Դուստրդ մեռաւ, այլ ևս ինչո՞ւ
36 կը յոգնեցուցնես վարդապետը։ Իսկ Յի-
սուս երբ բսուած խօսքը լսեց, ըսաւ
Ժողովրդապետին, Մի վախնար, միայն
37 հաւատա։ Եւ ոչ ոք թոդ տուաւ իրեն
հետ երթալ, բայց միայն Պետրոս և
Յակոբոսի եղբայրն Յովհ-
38 հաննէս։ Եւ Ժողովրդապետին տունը
գալով տեսաւ աղմուկ և սաստիկ լա-
39 յողներ և ազազակողներ։ Եւ ներս
մտնելով ըսաւ անոնց, Ընդհէ՞ր խռո-
վեալ էք և կու լայք։ մանուկը մեռած
40 չէ, այլ կը ննջէ։ Եւ ծաղր կ'ընէին զնա-
նոր։ բայց նա ամէնքը դուրս հանելով իրեն
հետ առաւ մանկան հայրը և մայրը և
զանոնք որ իրեն հետ էին, և մտաւ
41 հոն ուր պառկած էր մանուկը։ Եւ
մանկան ձեռքին բռնելով ըսաւ անոր,
Տալիթա, կումի, որ կը թարգմանուի,
42 Աղջիկ դուս, (քեզի կ'ըսեմ,) ել։ Եւ
իսկոյն աղջիկը ոտք եղաւ և կը քալէր,
քանզի երկոտասանամեայ էր։ և զար-
43 մացան մեծ զարմանօք։ Եւ սաստիկ
պատուէր տուաւ անոնց որ մարդ չգիտ-
նար այս բանը, և ըսաւ ուտելիք տալ
անոր։

## Գլ. Զ

1 Եւ անկէ ելլելով եկաւ իւր երկիրը, և
2 աչակերտները գացին անոր ետևէն։ Եւ
երբ շաբաթ օրը հասաւ, սկսաւ ժողո-
վրդանոցին մէջ սորվեցնել. և շա-
մարը լսելով կը զարմանային և կ'ըսէին,
Ուսա՞ն ունի սա այս բաները, կամ
այս ի՞նչ իմաստութիւն է տուր տրուած,
որ այսպիսի հրաշք կ'ըլլան տուր ձեռ-
3 քով։ Հիւսը չէ՞ սա, Մարիամայ որդին,
և Յակոբոսի և Յովսեսի և Յուդայի և
Սիմոնի եղբայրը. և տուր քոյրերն հոս
մեր քով չէ՞ն և կը դժգոհակղէին անոր
4 վրայ։ Բայց Յիսուս ըսաւ անոնց, Մար-
գարէ մը անպատիւ չէ բայց միայն իւր
երկրին մէջ և իւր ազգականներուն և
5 իւր տան մէջ։ Եւ չէր կրնար հոն և ոչ
հրաշք մը ընել, միայն քանի մը հի-
ւանդաց վրայ ձեռք դրաւ և բժշկեց
6 զանոնք։ Եւ կը զարմանար անոնց ան-
հաւատութեան վրայ. և չորեակայ գիւ-
ղերը պտտելով կը սորվեցնէր։
7 Եւ իրեն կոչեց երկոտասաններըը, և
սկսաւ երկու երկու զրկել զանոնք, և
իշխանութիւն տուաւ անոնց պիղծ ո-
8 գիներու վրայ։ Եւ պատուիրեց անոնց
ճամբու համար բան չառնուլ, բայց
միայն գաւազան մը. ոչ պարկ, ոչ հաց,
9 ոչ սակ իրենց գօտիներուն մէջ, Այլ
հողաթաղ հագնել. և ըսաւ, կրկին
10 հանդերձ մի հագնիք։ Եւ ըսաւ անոնց,
Ո՛ր տուն մտնէք, հոն կեցէք մինչև որ
11 անկէ ելլէք։ Եւ անոնք որ չեն ընդու-
ներ զձեզ և չեն լսեր ձեզ, երբ անկէ
կ'ելլէք, թօթափեցէք փոշին որ ձեր
ոտից տակն է անոնց վկայութեան հա-
մար։ *Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Սոդո-
մացւոց և Գոմորացւոց աւելի դիւրին
պիտի ըլլայ դատաստանին օրը քան թէ
այն քաղաքին։"
12 Եւ անոնք ելլելով կը քարոզէին որ
13 ապաշխարէին մարդիկ։ Եւ շատ դևեր
կը հանէին, և շատ հիւանդներ իւղով
կ'օծանէին և կը բժշկէին զանոնք։
14 Եւ Հերովդէս թագաւորը լսեց, (քանի
մի անոր անունը յայտնի եղաւ,) և
կ'ըսէր թէ Յովհաննէս մկրտիչ մեռեալ-
ներէն յարութիւն առած է, և անոր
15 համար հրաշներ կ'ըլլան անոր։ Ու-

*Ոմանք լսեին։



րիշները կ'ըսէին թէ Եղիա է. և այլք
կ'ըսէին թէ Մարգարէ ումն է, կամ
16 մարգարէից միոյն պէս։ Բայց երբ Հե-
րովդէս լսեց, ըսաւ, Սա է Յովհաննէս
որուն գլուխը կտրեցի ես, մեռելներէն
յարութիւն առած է։
17 Քանզի Հերովդէս ինք հրդէ զրկեց
բռնեց զՅովհաննէս, և կապեց բանտը
դրաւ իւր եղբօրը Փիլիպպոսի կնոջ Հե-
րովդիայի համար, քանզի իրեն կին ա-
18 ռած էր զնա։ Վասն զի Յովհաննէս կ'ը-
սէր Հերովդէի, Օրինաւոր չէ քեզ քոյ
19 եղբօրդ կինն ունենալ։ Եւ Հերովդիա
ոխ ունէր անոր դէմ, և կ'ուզէր ըս-
20 պանել զնա և չէր կարող. Քանզի Հե-
րովդէս կը վախնար Յովհաննէ, գիտ-
նալով թէ արդար և սուրբ մարդ էր
նա. և անոր բերանը կը նայէր, և ան-
կէ լսելով շատ բան կ'ընէր, և քաղց-
21 րութեամբ կը լսէր անոր։ Եւ երբ յար-
մար օր մը եղաւ, որ Հերովդէս իւր
ծննդեան օրը ընթրիք կ'ընէր իւր նա-
խարարներուն և հազարապետներուն
22 և Գալիլեայի մեծամեծներուն, Եւ Հե-
րովդիայի աղջիկը հոն մտնելէ ետքը մրա-
նալով խազաց, և հաճելի եղաւ Հերով-
դէ և բազմականաց, Թագաւորն ըսաւ
աղջկան, Խնդրէ ինէ զինչ և կամիս,
23 և պիտի տամ քեզ։ Եւ անոր երդումն
ըրաւ ըսելով, Ինչ որ խնդրես ինէ՝ պի-
տի տամ քեզ մինչև թագաւորութիւ-
24 նըս կեսը։ Եւ նա դուրս ելլելով ըսաւ
իւր մօրը, Ի՞նչ ուզեմ. և նա ըսաւ,
25 Յովհաննու մկրտչի գլուխը։ Եւ փու-
թով թագաւորին քով մտաւ և խընդ-
րեց ըսելով, Կ'ուզեմ որ անդէն տաս
ինձ սկուտեղի վրայ Յովհաննու մկրտչի
26 գլուխը։ Եւ թագաւորը տրտմեցաւ
յոյժ, բայց երդմանց համար և իւր
հետ նստողներուն համար չուզեց անոր
27 երես դարձնել։ Եւ թագաւորն իսկոյն
դահիճ զրկեց, և հրաման ըրաւ անոր
գլուխը բերել։ և նա գնաց բանտին
28 մէջ գլխատեց զնա, Եւ բերաւ անոր
գլուխը սկուտեղը և տուաւ աղջկան,
29 և աղջիկը տուաւ զայն իւր մօրը։ Եւ
անոր աչակերտները լսելով եկան վեր-
ցուցին անոր մարմինը և գերեզմանի
մէջ դրին։
30 Եւ առաքեալներն Յիսուսի քով ժո-
ղովեցան, և պատմեցին անոր ինչ որ
31 ըրին և ինչ որ սորվեցուցին։ Եւ նա
ըսաւ անոնց, Եկէք դուք առանձին
անապատ տեղ մը և քիչ մը հանգչե-
ցէք։ քանզի շատերը կային որ կու գա-
յին և կ'երթային. և հաց ուտելու ան-
32 գամ ժամանակ չէին ունենար։ Եւ նա-
ւով անապատ տեղ մը գացին առան-
33 ձին։ Եւ ժողովրդոցը տեսան զանոնք
որ կ'երթային, և շատերը ճանչցան զը-
նա, և հետի բոլոր քաղաքներէն հոն
կը վազեին, և անոնցմէ առաջ հասնե-
34 լով անոր քով ժողովեցան։ Եւ Յի-
սուս երբ դուրս ելաւ, շատ ժողովուրդ
տեսնելով գթաց անոնց վրայ, քանզի
հովիւ չունեցող ոչխարներու պէս էին.
և սկսաւ շատ բաներ սորվեցնել ա-
նոնց։
35 Եւ երբ ժամանակը շատ ուշացաւ,
աչակերտները եկան անոր ըսին, Այս
տեղ անապատ է, և ժամանակն ուշա-
36 ցած է. Արձակէ՛ զնոսա որ երթան
շուրջ ագարակները և գիւղերը և ի-
րենց հաց գնեն, քանզի ուտելու բան
37 չունին, Բայց նա պատասխան տուաւ
և ըսաւ անոնց, Դուք տուէք զոգա
ուտել։ Եւ ըսին անոր, Երթանք եր-
կու հարիւր դահեկանի հաց գնենք և
38 տանք ուտուց որ ուտեն։ Ըսաւ անոնց,
Քանի՞ նկանակ ունիք, գացէք նայե-
ցէք։ և երբ գիտցան, ըսին, Հինգ, և
39 երկու ձուկն։ Եւ հրաման ըրաւ անոնց
ամէնքը դալար խոտին վրայ գոնդ
40 գոնդ նստեցնել։ Եւ գոնդ գոնդ նըս-
41 տան, ուր՝ հարիւր և ուր՝ յիսուն։ Եւ
հինգ նկանակը և երկու ձուկն առաւ
և նայելով յերկինս օրհնեց, և մանր
և նայելով յերկինս օրհնեց, և մանր
ըց նկանակները և տուաւ աչակերտ-
ներուն, որ անոնց առջև դնեն, Նաև
42 երկու ձուկը բաժնեց ամէնուն։ Եւ ա-
43 մէնքը կերան և յագեցան։ Եւ երկո-
տասան կողով լեցուն կտորոցանք վեր-
ցուցին, և ձուկերէն ևս։ այն հացերէն
44 ուտողներն էին երկու հինգ հազար այր։

45 Եւ վաղվաղակի փութացուց աշա-
կերտները նաւ մտնել, և յառաջ ե-
նել միւս կողմը Բեթսայիդա անցնել,
մինչև որ ինք ժողովուրդն արձակէր։
46 Եւ անոնցմէ զատուելով լեռը ելաւ ա-
47 ղօթք ընել։ Եւ երբ երեկոյ եղաւ, նա-
ւը ծովուն մէջ էր, և ինք միայն էր
48 ցամաքը։ Եւ տեսաւ զանոնք որ կը
տագնապէին հոփ-հոփ ընելու առն,
քանզի հովը դէմ էր անոնց. և գի-
շերուան չորրորդ պահուն մօտ ծովուն
վրայ քալելով կու գայ անոնց, և կ'ու-
49 զէր անցնիլ զանոնք։ Անոնք երբ տե-
սան որ ծովուն վրայ կը քալէր, կար-
ծեցին թէ աչքի երեւոյթ էր, և ազա-
50 ղակեցին. քանզի ամէնքը տեսան զնա
և խռովեցան. և նա վաղվաղակի խօ-
սեցաւ անոնց հետ և ըսաւ անոնց, Քա-
51 ջալերուեցէք, ես եմ, մի վախնաք։ Եւ
նաւը ելաւ անոնց քով, և հովը դա-
դարեցաւ. և անոնք իրենց մտաց մէջ
52 ապշած էին չոյժ և կը զարմանային,
վասն զի չմտացան հացէն որ էին հա-
ցին վրայ, քանզի անոնց սիրտը թմրած
53 էր։ Եւ միւս կողմն անցնելով հասան Գեն-
նեսարեթի երկիրը և դեռեղեցին նա-
54 ւը։ Եւ երբ նաւէն ելան, ան֊ դէեւ ֊ր֊
55 ջէն իսկոյն ճանչցան զնա. Եւ ապրն
անդին վազելով բոլոր չրջակայ տե-
դուանք, սկսան մահիճներով հիւանդ-
56 ները բերել ուր և կը լսէին թէ էր։ Եւ
ուր և կը մտնէր, գիւղերը կամ քա-
ղաքները կամ ագարակները, հրապա-
րակներու մէջ կը դնէին հիւանդները,
և կ'աղաչէին զնա որ գոնէ անոր հան-
դերձին փղանցին դպչէին. և անոնք
որ դպան բժշկեցան։

## Գլ. Ն

1 Եւ անոր քով Ժողովեցան փարիսեցիք
և դպիրներէն ոմանք որ Երուսաղէմէ
2 եկած էին, Եւ երբ տեսան որ անոր
աշակերտներէն ոմանք պիղծ, այսինքն
անլուայ, ձեռօք հաց կ'ուտէին, մե-
3 ղադրեցին. քանզի փարիսեցիք և բո-
լոր Հրեայք մինչև որ աղէկ մը չլուան
իրենց ձեռնրները, հաց չեն ուտեր,
4 քանզի Ժերերուն աւանդութիւնը կը
բռնեն. Եւ էբէ կո ֊ չուկային, եթէ
չլուացուին, չեն ուտեր. և ուրիշ շատ
բաներ կան որ ընդունած են և կը
բռնեն, այսինքն բաժակներու և ըս-
տամանաց և պղնձէ ամաններու և ան-
5 կողիններու լուացմունք։ Անտեսն փա-
րիսեցիք և դպիրք հարցուցին անոր,
Թէ ընդէր քու աշակերտներդ չեն եր-
թար ըստ աւանդութեան ծերոց, այլ
6 անլուայ ձեռօք հաց կ'ուտեն։ Ին նա
պատասխան տուաւ և ըսաւ անոնց,
Բարւոք մարգարեացաւ Եսայի ձեզ,
կեղծաւորներուդ համար, ինչպես որ
գրուած է, Այս ժողովուրդը ձ֊ շրը-
թամբք կը պատուէ զիս, բայց անոնց
7 սիրտը հեռացած պատուած է ինէ։ Եւ ի
զուր կը պաշտեն զիս, մարդոց պատու-
ելած բաներն էբէ֊ վարդապետութիւն
8 սորվեցնելով։ Վասն զի Աստուծոյ
պատուիրանը թողուլով, մարդոց աւան-
դութիւնը կը բռնէք, էնչ֊ ան֊ ան֊
ներու և բաժակներու լուացմունք, և
ասոնց նման շատ ուրիշ բաներ կ'ընէք։
9 Եւ ըսաւ անոնց, Աղէկ կ'անարգէք Աս-
տուծոյ պատուիրանը որ ձեր աւան-
10 դութիւնը պահէք։ Քանզի Մովսէս ը-
սաւ, Քու հայրդ և մայրդ պատուէ. և
Ով որ չ֊ հայրը կամ մայրն անիծէ՝
11 մահու թող մեռնի։ Բայց դուք կ'ը-
սէք, Եթէ ոք չ֊ հօրը կամ մօրն ըսէ,
Այն բանը զոր ինէ պիտի շահիս, Ա֊ ֊ր֊
ձոյ ֊ կորբան է, (որ ըսել է ընծա-
12 ծայ,) ա֊ չ֊ ի֊ ։ Եւ այլ ևս թող
չէք տար անոր բան մը ընել իւր հօրը
13 կամ իւր մօրը։ Եւ Աստուծոյ խօսքը
կը խափանէք ձեր աւանդութեամբ զոր
կ'աւանդէք։ Եւ ասոր նման ուրիշ շատ
բաներ կ'ընէք։

14 Եւ բոլոր ժողովուրդը կանչելով իրեն
ըսաւ անոնց, Լսեցէք ինձ ամէնդդ և
15 հասկցէք։ Բան մը չկայ որ դուրսէն
մարդուն ներսը մտնէ, և կարող ըլ-
լայ պղծել զնա, այլ այն բաները որ
անկէ կ'ելլեն, անոնք են որ կը պղծեն
զմարդ։ Ով որ լսելու ականջ ունի՝
թող լսէ։
17 Եւ երբ այն բազմութենէն ջ֊ ֊ե֊
ւաւ մտաւ, աշակերտներն հար-
ցուցին անոր այն առակին համար։ Եւ
18 ըսաւ անոնց, Դ֊ ֊ք և այդպէս ան-
միտ եք. չէ՞ք հասկընար թէ ամէն ինչ
որ դուրսէն մարդուն ներսի կողմը կը
19 մտնէ, չկրնար պղծել զնա. Վասն զի
ոչ թէ անոր սրտին մէջ կը մտնէ, այլ
փորը, և արտաքնոց կ'ելլէ, և կը մա-
20 քրի բոլոր կերակուրները։ Եւ կ'ըսէր թէ
Ինչ որ կ'ելլէ մարդուն ներսէն՝ այն
21 կը պղծէ զմարդ։ Քանզի ներսէն, մար-
դոց սրտէն, կ'ելլեն չար խորհուրդներ,
շնութիւններ, պոռնկութիւններ, սպա-
22 նութիւններ, գողութիւններ, ագահու-
թիւններ, չարութիւններ, նենգութիւն,
դիճութիւն, չարակնութիւն, հայհոյու-
թիւն, ամբարտաւանութիւն, անզգա-
23 մութիւն։ Այս բոլոր չար բաները
կ'ելլեն ներսէն, և կը պղծեն զմարդ։
24 Եւ անկէ ելլելով գնաց Տիւրոսի և
Սիդոնի սահմանները, և տուն մը մտ-
նելով չէր ուզեր մարդու յայտնուիլ,
25 բայց չկրցաւ ծածկուիլ. Քանզի կին մը
որոյ դուստրը պիղծ ոգի ունէր լսեց
անոր վրայ, և եկաւ ինկաւ անոր ոտ-
քը։ Եւ այն կինը *Հեթանոս էր, ազ-
գով Փիւնիկ Ասորի, և կ'աղաչէր զնա
26 հանել դևը իւր դստերէն։ Եւ Յիսուս
ըսաւ անոր, Թոյլ տուր որ առաջ մանկ-
կունք յագենան, քանզի աղէկ չէ ար-
դարոց հացն առնուլ և շուներուն նե-
27 տել։ Նա պատասխան տուաւ և ըսաւ
անոր, Այո, Տէր, քանզի շունք կը կե-
րակրին սեղանին տակ ոտղոց փշրան-
28 քէն։ Եւ ըսաւ անոր, Այդ խօսքիդ
համար գնա, դեւը ելաւ քու դստերէդ։
29 Եւ երբ տունը երթալով գտաւ որ
դեւը ելած, և աղիկը պառկած էր ան-
30 կողնին վրայ։
31 Եւ նորէն Տիւրոսի և Սիդոնի սահ-
մաններէն ելլելով եկաւ Գալիլեայի ծո-
վեզերը Դեկապոլսի սահմաններուն մէ-
32 ջէն։ Եւ բերին անոր առջև զմի խուլ
և դժուարախօս, և կ'աղաչէին որ ա-
33 նոր վրայ ձեռք դնէր։ Եւ առնելով ըզ-
նա մեկուսի ժողովրդեն, իւր մատ-
ունները դրաւ անոր ականջներուն մէջ
34 և թքաւ, և դպաւ անոր լեզուին, Եւ
երկինք նայելով հառաչեց և ըսաւ ա-
նոր, Եփփաթա, (որ ըսել է բացուէ։)
35 Եւ իսկոյն բացուեցան անոր ականջնե-
րը, և քակուեցաւ անոր լեզուին կա-
36 պը, և ուղիղ կը խօսէր։ Եւ պատուի-
րեց անոնց մարդու չըսել։ և օրչափ
նա կը պատուիրեր անոնց, անոնք ևս
37 աւելի կը քարոզէին։ Եւ կը զարմանա-
յին չոյժ և կ'ըսէին, Ամէն բան ադէկ
ըրաւ սա, որ խուլերուն լսել կու տայ
և համրերուն խօսել։

## Գլ. Ր

1 Ա յն օրերը ժողովուրդը չատ էր չոյժ,
և ուտելու բան չունէր, ձ֊ ֊ աշա-
կերտները կանչեց իրեն և ըսաւ անոնց,
2 Կը գթամ այդ ժողովրդեան վրայ,
քանզի արդ երեք օր է որ իմ քովս
են, և բան չունին ուտելու. Եւ եթէ
անօթի զրկեմ տառնք իրենց տուները,
ճամբան պիտի մաբին, քանզի ատոնց-
4 մէ ոմանք հեռու տեղէ եկած են։ Եւ
աշակերտները պատասխան տուին ա-
նոր, Այս անապատիս մէջ ուտե֊ կըր-
նայ մարդ հացով յագեցունել ատոնք
5 Եւ հարցուց անոնց, Քանի՞ նկանակ
6 ունիք. և անոնք ըսին, Եօթն։ Եւ հր-
ամայեց բոլոր ժողովրդեան գետնի վը-
րայ նստիլ, և առաւ եօթն նկանակը,
գոհացաւ և կոտրեց և տուաւ աշակերտ-
ներուն դնել ժողովրդեան առջև, և
7 դրին։ Եւ քանի մը մանր ձուկեր ու-
նէին, և օրհնեց և ըսաւ զանոնք ևս
8 դնել առջև։ Եւ կերան և յա-
գեցան, և ուելցած կտորները վերցու-
9 ցին եօթն զամբիւղ։ Եւ ուտողներն էին
իբր չորս հազար, և արձակեց զանոնք։
10 Եւ վաղվաղակի նաւը մտնելով աշա-
կերտներուն հետ եկաւ Դալմանութայի
կողմերը։

*Յոյն

11 Եւ վաթսունեցիք կիլկիլով ակառն անոր հետ վիճել և փոքձելով զնա անկէ նը-
12 շան կը խնդրէին յերկնից։ Եւ նա իւր հոգւոյն մէջ հառաչելով ըսաւ, Ընդէ՞ր այս ազգը նշան կը խնդրէ. ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ այս ազգին նշան պիտի
13 չտրուի։ Եւ զանոնք թողլով դարձեալ նաւը մտաւ, և գնաց Յաղո՞ւ կողմը։
14 Եւ հաց առնելու մոռցած էին, և նաւուն մէջ իրենց հետ նկատակ մը մի-
15 այն ունէին։ Եւ կը պատուիրէր անոնց և կ'ըսէր, Նայեցէք և զգուշացէք փա-
16 րիսեցւոց խմորէն և Հերովդեսի խմո-
17 րէն։ Եւ իրարու հետ կը խորհէին և կ'ըսէին թէ վասն զի հաց չունինք։ Իսկ Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով ըսաւ անոնց, Ընդէ՞ր կը խորհիք թէ հաց չունիք. տակաւին չէ՞ք հասկընար և չէ՞ք իմանար, Թմրած են
18 ձեռ ձեր սիրտերը։ Աչք ունիք և չէ՞ք տեսներ, և ականջներ ունիք և չէ՞ք
19 լսեր, և չէ՞ք յիշեր։ Երբ հինգ նկանակը հինգ հազարին կոտրեցի, քանի՞ կո-
20 ղով լեցուն կառրուանք վերցուցիք։ Ըսին անոր, Երկուասանն։ Եւ երբ եօթն նկ՚նակը չորս հազարին կոտրեցի, քանի՞ զամբիւղ լեցուն կառրուանք վերցու-
21 ցիք։ Եւ անոնք ըսին, Եօթն։ Եւ ըսաւ անոնց, Ա՞յսպէս չէ՞ք հասկնար։
22 Եւ Բեթսայիդա կուգայ, և անոր մա-
23 կը կոյր մը բերին, և կ'աղաչէին զնա դպչել անոր։ Եւ նա կոյրին ձեռքէն բռնելով գիւղէն դուրս հանեց, և ա-
նոր աչքերուն թքնելով ձեռքը դրաւ անոր վրայ, և կը հարցնէր ա-
24 նոր թէ բան մը կը տեսնէր։ Եւ նա նայեցաւ և կ'ըսէր, Մարդիկ կը տես-
նեմ որ կը պտրաին ծառերու պէս։
25 Նորէն ձեռքը դրաւ անոր աչքերուն վրայ, և նայել տուաւ անոր. և ողջա-
ցաւ և ամէն բան հստակօրէն կը տես-
26 նէր։ Յիսուս զրկելով զնա իր տունը ըսաւ, Գիւղը մի մտներ, և գիւղին մէջ մարդու մի ըսեր։
27 Եւ Յիսուս աշակերտներուն հետ ե-
լաւ Փիլիպպոսի կեսարիոյ գիւղերը, և ճամբան կը հարցնէր աշակերտներուն
և կ'ըսէր անոնց, Ինծի համար ո՞վ կ'ը-
28 սեն մարդիկ թէ եմ։ Եւ անոնք պա-
տասխան տուին ը ըսին, ՄեծաՀա-
նէա միւրուիչ, և այլք՝ Եղիա, իսկ այլք՝
29 մարգարէներէն մին։ Եւ նա ըսաւ ա-
նոնց, Իսկ դուք ինծի համար ո՞վ կ'ը-
սէք թէ եմ։ Պատասխան տուաւ Պետ-
րոս և ըսաւ անոր, Դու ես Քրիստոս։
30 Եւ սաստիկ պատուիրեց անոնց մար-
դու բան չըսել անոր համար։
31 Եւ սկսաւ ուսուցանել անոնց, թէ Պարտ էր Որդւոյ մարդոյ շատ չարչարանք կրել, և երէցներէն և քահա-
նայապետներէն և դպիրներէն մեր-
ժուիլ և սպանուիլ, և երեք օր յա-
32 րիլ։ Եւ յայտնապէս առնուլ։ Եւ այս խօսքը յայտնի խօսեցաւ։ Եւ Պետրոս մե-
կուսի առաւ զնա, և սկսաւ յանդի-
33 մանել զնա։ Եւ նա դարձաւ և իր աշակերտներուն նայելով յանդիմանեց Պետրոսն և ըսաւ, Երթա՛ զնա, Սատանա՛, քանզի դուն Աստուծոյ բաներըը չես խորհիր, այլ մարդոց բաներըը։
34 Եւ Յոդովրդը իր աշակերտներուն հետ կանչելով իրեն ըսաւ անոնց, Ով որ կ'ուզէ իմ ետևէս գալ, թող ուրանայ իր անձը, և վերցունէ իր խաչը, և
35 գայ իմ ետևէս։ Վասն զի ով որ կ'ու-
զէ իր անձն ապրեցունել, պիտի կո-
րսնցնէ զնա. և ով որ ինծի և աւե-
տարանին համար կորսնցնէ իր ան-
36 ձը, պիտի ապրեցունէ զնա։ Քանզի ի՞նչ օգուտ է մարդոյ եթէ բոլոր աշ-
խարհ շահի, և իր անձը կորսնցնէ։
37 Կամ իւր անձին համար ի՞նչ փրկանք
38 պիտի տայ մարդ։ Վասն զի ով որ ինծ և իմ խօսքս դաւանի մեծի հանդիսի այս շնացող և մեղաւոր ազգին մէջ, Որդին մարդոյ ևս անոր պիտի համա-
րի դաւանի զնա երբ գայ իր Հօրը փառօք սուրբ հրեշտակներուն հետ։ Եւ
39 ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ հոս զանուողներէն կան ոմանք որ մահուան համը պիտի չառնուն, մինչև տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը զօրութեամբ եկած։



Գլ. Թ

1 Եւ ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, կան հոս ոմանք որ կեցած են, որ մահուան համը չեն առնուր մինչև որ տեսնեն թէ Աստուծոյ թագաւորութիւնը զօրութեամբ եկած։
2 Եւ վեց օր ետքը Յիսուս իրեն հետ առաւ զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և բարձր լեռ մը հանեց զանոնք առանձին, և անոնց առջև այլա-
3 կերպեցաւ։ Եւ անոր հանդերձները լոյսի փայլուն սպիտակ լոյժ, այնպէս որ երկրի վրայ Թափիչ մը չկրնար այն-
4 պէս սպիտակացնել։ Եւ երևցաւ Մովսէսի հետ Եղիա։ Եւ Պետրոս պատասխան տուաւ և ըսաւ Յիսուսի, Ռաբբի, լաւ է մեզ հոս կենալ. և եր-
րեք տաղաւար շինենք, մին՝ քեզ, և
5 մին՝ Մովսէսի, և մին՝ Եղիայի։ Վասն զի չէր գիտեր ինչ խօսէր, քանզի զար-
6 հուրած էին։ Եւ ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ, և ձայն եկաւ ամպէն ըսելով, Դա է իմ սիրելի Որդիս,
7 սորա լսեցէ՛ք։ Եւ երբ յանկարծ աս-
դին անդին նայեցան, այլ ոչ ումեւէ, բայց միայն Յիսուս իրենց հետ։ Եւ
8 երբ լեռնէն կ'իջնէին, պատուիրեց անոնց մարդու չպատմել ինչ որ տեսան, մինչև որ Մարդոյ Որդին մեռելներէն յարութիւն առնուլ։ Եւ անոնք
9 այն խօսքը պահեցին, և կը հարցա-
տնէին իրարու թէ ինչ էր մեռելներէն
10 յարութիւն առնուլ։ Եւ հարցուցին անոր և ըսին, Ի՞նչ է այն որ դպիրնե-
րը կ'ըսեն թէ Պետք է որ առաջ Եղիա
11 գայ։ Եւ նա պատասխան տուաւ և ըսաւ անոնց, Իրաւ Եղիա կուգայ, և ամէն բան կը կարգադրէ. և թէ, ինչպէս գրուած է Որդւոյ մարդոյ հա-
մար, շատ չարչարանք պիտի կրէ և ա-
12 նարգուի։ Բայց կ'ըսեմ ձեզ թէ Եղիա եկաւ, և ինչ որ կամեցան ըրին անոր, ինչպէս որ գրուած է անոր համար։
13 Եւ աշակերտներուն գալ տեսաւ չատ ժողովուրդ անոնց բոլորտի-
քը և դպիրները, որ կը վիճէին անոնց
14 հետ։ Եւ իսկոյն բոլոր ժողովուրդը երբ տեսան զնա, զարմացան յոյժ, և յա-
ռաջ վազելով ողջոյն կուտային անոր։
15 Եւ հարցուց դպիրներուն թէ ի՞նչ կը
16 վիճէիք անոնց հետ։ Եւ ժողովուրդէն ումն պատասխան տալով ըսաւ, Վար-
դապետ, առ քեզ բերի որդիս, որ
17 համր ոգի ունի. Եւ ուր և Յանկի ա-
նոր կը զգեանէ զնա, և նա կը փըր-
փրի և ակռաները կը կրճտէ և կը ցա-
մաքի. և ըսի աշակերտներուդ հանել
18 զնա և չկրցան։ Պատասխան տուաւ ա-
նոնց և ըսաւ, Ով անհաւատ ազգ, մինչև ե՞րբ ձեզի հետ ըլլամ, մինչև ե՞րբ հանդերձեմ ձեզ. բերէ՛ք զնա առ ի-
19 նէ։ Եւ բերին զնա անոր. երբ տեսաւ զնա, վազուզուկի չար ոգին ասրեց զնա, և գետին իյնալով կը թաւալէր
20 և կը փրփրէր։ Եւ Յիսուս հարցուց ա-
նոր հօրը և ըսաւ, Որչա՞փ ժամանակ է որ այդ բանը եղաւ անոր։ Եւ նա ը-
21 սաւ, Ի մանկութենէ. Եւ շատ անգամ հրով և ջրով կը նետէ զնա որ կո-
րսուանէ. բայց եթէ կարող ես, օգնէ
22 մեզ գթալով մեր վրայ։ Եւ Յիսուս ը-
սաւ անոր, Եթէ կարող ես հաւատալ, ամէն բան հնարաւոր է անոր որ կը հա-
23 ւատայ։ Եւ ուղուն հայր իսկոյն ագա-
ղակեց և ըսաւ արտասուօք, Կը հաւա-
տամ, Տէր, օգնէ անհաւատութեանս։
24 Յիսուս երբ տեսաւ որ ժողովուրդը վը-
րան կը դիզուէր, սաստկաց պիղծ ոգ-
ւոյն և ըսաւ անոր, Համր և խուլ ո-
գի, կը հրամայեմ քեզ, ել ասկէ, և
25 այլ ևս չմտնես ի զա։ Եւ ազաղակե-
լով՝ սաստիկ սրսկց զնա և եկաւ. և զգա եղաւ մեռելի պէս, այնպէս որ
26 շատերն ըսին թէ մեռաւ։ Եւ Յիսուս անոր ձեռքէն բռնելով վերցուց զնա.
27 և նա կանգնեցաւ։ Եւ երբ նա առն մտաւ, աշակերտներն առանձին հար-
ցուցին անոր ըսելով Մենք ընդի՞ր չը-
28 կրցանք հանել զնա։ Եւ ըսաւ անոնց, Այդ տեսակին հնար չէ ոեւէւ բանով ելլել, բայց միայն աղօթքով և պահոմով։
29 Եւ անկէ ելլելով Գալիլեայէ կանց-
նէին, և չէր ուզեր որ մարդ գիտնար։
30 Քանզի կը սորվեցնէր իր աշակերտ-
ներուն և կ'ըսէր անոնց Թէ Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռ-
քը, և պիտի սպանանեն զնա. և երբ ըս-

պանութիւ, երրորդ օրը յարութիւն պի-
31 տի առնու։ Եւ անոնք չէին հասկընար այն խօսքը, և կը վախնային հարցունել անոր։
32 Եւ եկաւ Կափառնայում, և երբ առանձնաւ հարցուց անոնց, Ի՞նչ կը վիճէիք
33 ճամբան իրարու հետ։ Եւ անոնք լուռ կեցան, քանզի ճամբան իրարու հետ
34 կը վիճէին թէ ո՛վ մեծ է։ Եւ երբ նըստաւ, կոչեց երկոտասաններըն և ըսաւ անոնց, Եթէ ոք կ'ուզէ առաջին ըլլալ, ամենուն յետինը պիտի ըլլայ և ամե-
35 նուն սպասաւորը։ Եւ առաջ մը առաւ կեցուց անոնց մէջ, և գիրկն առնելով
36 զնա ըսաւ անոնց, Ով որ այսպիսի արգասյոց մին ընդունի յանունն իմ, զիս կ'ընդունի։ և ով որ զիս ընդունի, ոչ թէ զիս կ'ընդունի, այլ զիս ղրկողը։
37 Պատասխան առաւ անոր Յովհաննէս և ըսաւ, Վարդապետ, տեսանք զմին որ քու անուամբդ դևեր կը հանէր, և մեր հետևէն չգործեր, և արգելեցինք զնա, վասն զի մեր հետևէն չգործեր։
38 Եւ Յիսուս ըսաւ, Մի արգելէք զնա, քանզի չկայ մարդ որ իմ անուամբս հրաշք գործէ, և կարենայ իսկոյն հայ-
39 հոյել զիս։ Քանզի ով որ *մեզի հակա-
40 ռակ չէ, մեր† կողմն է։ Վասն զի ով որ բաժակ մը չուր խմցունէ ձեզ ի մի անուամբս թէ գուք Քրիստոսին էք, ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Ի՛ր վարձքը պի-
41 տի չկորսուանի։ Եւ ով որ գայթակղեցունէ այս փոքրիկներէն մին որ կը հաւատան ինձ, լաւ էր անոր որ երկանի քար կախուէր անոր վիզէն, և ծովը նե-
42 տուէր։ Եւ եթէ քու ձեռքդ կը գայթակղեցունէ զքեզ, կտրէ զայն։ լաւ է քեզ խեղ մտնել ի կեանս, քան երկու ձեռք ունենալ և գեհեան երթալ ի
43 հուրն անշէջ, Ուր անոնց որդը չմեռ-
44 նիր և կրակը չմարիր։ Եւ եթէ քու ոտքդ կը գայթակղեցունէ զքեզ, կտրէ զայն։ լաւ է քեզ կաղ մտնել ի կեանս, քան երկու ոտք ունենալ և
45 նետուիլ գեհեան ի հուրն անշէջ, Ուր
46 անոնց որդը չմեռնիր և կրակը չմարիր։
47 Եւ եթէ քու աչքդ կը գայթակղեցունէ զքեզ, հանէ զայն։ լաւ է քեզ միականի մտնել Աստուծոյ թագաւորութիւնը, քան երկու աչք ունենալ և
48 գեհեան նետուիլ, Ուր անոնց որդը չմեռնիր և կրակը չմարիր։ Քանզի ամէն մարդ կրակով պիտի աղուի,
49 և ամէն զոհ աղով պիտի աղուի։ Աղը լաւ է, բայց եթէ աղն անհամի, ինչո՞վ պիտի համեմեք։ Ձեր անձին մէջ աղ ունեցէք, և իրարու հետ խաղաղութիւն ըրէք։

## Գլ. Ժ

1 Եւ անկէ կելլելով եկաւ Հրէաստանի սահմաններն, յայնկոյս Յորդանանու, և նորէն ժողովուրդները կը ժողվուէին անոր քով։ և ինչպէս սովորութիւն ունէր, դարձեալ կը սորվեցուցնէր անոնց։
2 Եւ փարիսեցիք եկան, և փորձելով զնա կը հարցունէին անոր թէ Արժա՞ն
3 է առն արձակել իւր կինը։ Եւ նա պատասխան առաւ և ըսաւ անոնց, Մովսէս ինչ որ պատուիրեց ձեզ։ Եւ անոնք
4 ըսին, Մովսէս հրաման առաւ արձակման գիր գրել և արձակել։ Եւ Յիսուս
5 պատասխան տալով ըսաւ անոնց, Ձեր սրտին կարծրութեան համար գրեց
6 ձեզ այդ պատուէրը, Բայց սկիզբնագործութեան սկիզբէն Աստուած զա-
7 նոնք արու և էգ ըրաւ, Ի՞նչ-որ, վասն այսորիկ մարդ իւր հայրը և մայրը թո-
8 ղու և իւր կնոջը յարի, Եւ երկուքը ըլլան մի մարմին։ ուստի այլ ևս երկու
9 կոչ չեն, այլ մի մարմին։ Ուրեմն այն զոր Աստուած միաւորեց, մարդ Թող
10 չպատէ։ Եւ տունը դարձեալ աշակերտները նոյն բանը հարցուցին անոր։ Եւ
11 նորը նոյն բանը հարցուցին անոր։ Եւ ըսաւ անոնց, Ով որ իւր կինը արձակէ և ուրիշ մը առնու, անոր դէմ շը-
12 նութիւն կ'ընէ։ Եւ կին մը եթէ զատուի իւր առնէն և ուրիշ առն ըլլայ, շնութիւն կ'ընէ։

*Ոմանք՝ ձեզի հակառակ չէ, ձեր
†Ոմանք՝ այս



13 Եւ մանր տղայք բերին անոր, որ ա-
նոնց դպչէր, բայց աշակերտները կը
14 յանդիմանէին բերողները։ Յիսուս երը տեսաւ, բարկանալով ըսաւ անոնց, Թող առէք այդ մանր տղայոց որ ինձ գան, և մի արգելէք զանոնք, քանզի Աստուծոյ թագաւորութիւնն այդ-
15 պիսեաց է։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը փոքրիկ տղու պէս չընդունի, բնաւ պիտի
16 չմտնէ անոր մէջ։ Եւ առաւ զանոնք գիրկը, ձեռք դրաւ անոնց վրայ և օրհնեց զանոնք։
17 Եւ երբ դուրս ելաւ ճամբուն մէջ, —Ահա մարդ մը վազեց և ծունր դնելով անոր առջև կը հարցուներ անոր Ե՛ր-
18 է, վարդապետ բարի, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։
19 Եւ Յիսուս ըսաւ անոր, Ինչո՞ւ կը կո-
չես զիս բարի։ չկայ բարի բաց ի միոյն,
19 որ է Աստուած։ Պատուիրանները գի-
տես։ Մի շնար, Մի սպաներ, Մի գողնար, Մի սուտ վկայեր, Մի զրկ-
20 կեր, Հայրդ և մայրդ պատուէ։ Նա պատասխան առաւ և ըսաւ անոր, վարդապետ, ատոնք ամէնը պահած
21 եմ ի մանկութենէ։ Եւ Յիսուս նայելով անոր, սիրեց զնա, և ըսաւ անոր, Բան մը պակաս է քեզ։ գնա, ինչ որ ունիս վաճառէ և տուր աղքատաց, և գանձ պիտի ունենաս յերկինս, և եա-
22 լը վերցու և եկու իմ հետևէս։ Եւ նա այս խօսքին համար խժդժացավ գնաց տրտմած, քանզի շատ ստացուած ու-
23 նէր։ Եւ Յիսուս նայելով շուրջ ըսաւ իւր աշակերտներուն, Որչափ դժուարին է անոնց որ հարստութիւն ունին Աստուծոյ թագաւորութիւնը մտնել։
24 Եւ աշակերտները զարմացած էին անոր խօսքին վրայ։ բայց Յիսուս դարձեալ պատասխան տալով ըսաւ անոնց, Որդեակք, էրէնց հարստութեան յու-
սացողներուն դժուար է մտնել Աստուծոյ թագաւորութիւնը։
25 Նել Աստուծոյ թագաւորութիւնը։ Դիւ-
րին է ուղտու աւելի ծակէն անցնիլ, քան մեծատան Աստուծոյ թագաւո-
26 րութիւնը մտնել։ Եւ անոնք կը զար-
մանային յոյժ և կ'ըսէին իրարու, Իսկ
27 ո՞վ կրնայ փրկուիլ։ Եւ Յիսուս նայելով անոնց ըսաւ, Մարդոց կողմանէ անհնարին է այդ, բայց ոչ Աստուծոյ կողմանէ, քանզի Աստուծոյ կրնամ-
28 նէ։ Սկսաւ Պետրոս ըսել անոր, Ահա մենք ամէն բան թողունք և եկանք քու հետևդ։
29 Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Չկայ ոք որ թողուց տուն, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին,
կամ որդիներ, կամ արտեր ինծի հա-
30 մար և աւետարանին համար, Եւ չառնու հարիւրապատիկ հիմա այս առեն տուներ, և եղբայրներ, և քոյրեր, և մայրեր, և որդիներ, և արտեր հալածանօք հանդերձ, և գալու աշխարհին
31 մէջ յաւիտենական կեանք։ Բայց շատ առաջիններ պիտի ըլլան յետին, և յետիններ՝ առաջին։
32 Եւ անոնք դեռ Երուսաղէմ կ'ելլէին և Յիսուս էին։ և Յիսուս զան զնաց առաջ կ'երթար, և անոնք կը զարմանային, և հետևէն երթալով կը վախնային։ Եւ գաբձեալ իրեն քով առնելով երկուասաններն սկսաւ ըսել ա-
նոնց ինչ բաներ որ պիտի պատահէին
33 անոր։ Ը՞ռ-ը՞ռ-, Ահա երուսաղէմ կ'ելլենք, և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն և դպիրներուն, և ի մահ պիտի դատապարտեն զնա, և պիտի մատնեն զնա հե-
34 թանոսաց։ Եւ ծաղր պիտի ընեն զնա և ծեծեն, և անոր վրայ պիտի թքնեն, և սպաննեն զնա, և երրորդ օրը յա-
րութիւն պիտի առնու։
35 Եւ անոր քով գացին Յակոբոս և Յովհաննէս, Զեբեդեոսի որդիքը, և ը-
սին, Վարդապետ, կ'ուզենք որ ինչ որ
36 խնդրենք զ*ենէ ընես մեզ։ Եւ նա ը-
սաւ անոնց, Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ձեզ։
37 Եւ անոնք ըսին անոր, Շնորհէ մեզ որ նստինք, մինէ մին՝ աջ կողմդ, և մի-
սը՝ ձախ կողմդ, քու փառացդ մէջ։
38 Եւ Յիսուս ըսաւ անոնց, Չէք գիտեր ինչ կը խնդրէք։ կրնա՞ք խմել բաժա-

կը զոր ես կը խմեմ, և մկրտուիլ այն մկրտութեամբ որով ես կը մկրտիմ,
39 Եւ անոնք ըսին անոր, Կրնանք. և Յիսուս բսաւ անոնց, Բաժակը զոր ես կը խմեմ՝ պիտի խմէք, և այն մկրտութեամբ որով ես կը մկրտուիմ՝ պիտի
40 մկրտուիք. Բայց իմ աջ կողմն և ձախ կողմն նստել իմս չէ տալ, այլ որոց պատրաստուած է։ Եւ երբ տասն աշակերտները լսեցին, սկսան բարկանալ
42 Յակոբոսի և Յովհաննու։ Իսկ Յիսուս իրեն կոչեց զանոնք և բսաւ անոնց, Գիտէք որ ազգաց իշխան համարուածները կը տիրեն անոնց, և անոնց մե-
43 ծամեծները կ'իշխեն անոնց. Բայց ձեր մէջ այնպէս պիտի չըլլայ, այլ ձեզնէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ՝ ըլլայ ձեր ապա-
44 սաւորը. Եւ ձեզնէ ով որ առաջին ըլլալ կ'ուզէ՝ ըլլայ ամենուն ծառայ։
45 Քանզի Որդին մարդոյ ես չեկաւ սպասաւորութիւն ընդունել, այլ սպասաւորութիւն ընել, և իւր կեանքը տալ չատերուն համար փրկանք.
46 Եւ եկան Երիքով. և երբ Երիքովէ կ'ելլէր աշակերտներովը և շատ բազմութեամբ, Տիմէի որդին կոյր Բարտիմէոս ճամբուն քով նստած էր մուրա-
47 լու, Եւ երբ լսեց թէ Յիսուս Նազովրեցին էր, սկսաւ աղաղակել և ըսել, Յիսուս, որդի Դաւիթ, ողորմէ ինձ։
48 Եւ շատերը կը յանդիմանէին զնա որ լռէր, բայց նա աւելի ես կ'աղաղակէր, Որդի Դաւիթ, ողորմէ ինձ։ Եւ Յիսուս
49 զկայ առնելով հրամայեց կոչել զնա։ Կ'ելլեն կոյրը և ըսին անոր, Քաջ ե-
50 զիր, կը, կը կոչէ զքեզ։ Եւ նա իւր հանդերձը նետելով ելաւ և եկաւ Յի-
51 սուսի։ Եւ Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ անոր, Ի՞նչ կ'ուզես որ ընեմ քեզ։ Ըսաւ անոր կոյրը, Ռաբբունի,
52 որ այուընէս բացուին։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Գնա. քու հաւատդ բժշկեց զքեզ։ և իսկոյն բացուեցան անոր աչուընները, և կ'երթար ճամբան Յիսուսի հետևէն։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ երբ մօտեցան Երուսաղէմի ի Բեթփագէ և ի Բեթանիա դէպ ի Ձիթենեաց լեռը, Յիսուս իւր աշակերտներէն
2 երկուքը զրկեց, Եւ բսաւ անոնց, Գացէք այդ գիւղը որ ձեր դիմացն է. և երբ հոն մտնէք, իսկ և իսկ պիտի գըտնէք կապուած յատնակ մը, որու վրայ մարդ նստած չէ. արձակեցէք զը-
3 նա և բերէք. Եւ եթէ ոք ըսէ ձեզ Թէ ի՞նչ կ'ընէք զայդ, ըսէք Թէ Տէրոջը պետք է. և վազվազակի պիտի զրկէ
4 զնա հոս։ Գացին և գտան յատնակը դուրսը փողոցին մէջ դրան քով կապուած, և արձակեցին զնա։ Եւ հոն կեցողներէն ոմանք ըսին անոնց, Ի՞նչ
6 կ'ընէք որ կ'արձակէք յատնակը։ Եւ անոնք ըսին անոնց ինչպէս որ Յիսուս պատուիրած էր, և Թոյլ տուին անոնց։
7 Եւ յատնակը բերին Յիսուսի, և գրին անոր վրայ իրենց հանդերձները, և
8 նստաւ անոր վրայ։ Եւ չատերն իրենց հանդերձները տարածեցին ճամբուն վրայ, և այլք ծառերէն ոստեր կը կտրէին և ճամբուն վրայ կը տարածէին։
9 Եւ անոնք որ յառաջ և յետոյ կ'երթային՝ կ'աղաղակէին և կ'ըսէին, Ովսաննա. Օրհնեալ որ գայ յանուն Տեառն։ Օրհնեալ է մեր հօրը Դաւիթ Թա-
10 գաւորութիւնը որ կու գայ. Ովսաննա ի բարձունս։
11 Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ և տաճարը, և դիտեց չուրջ ամէն բան. և երկոտասանիկ հետ։
12 Եւ ի վաղիւն երբ Բեթանիայէ կ'ելլէին, անօթեցաւ։ Եւ տեսնելով ի հեռուստ թզենի մի տերևազարդ եկաւ որ
13 Թերևս բան մը գտնէր անոր վրայ. և երբ անոր քով գնաց, բաց ի տերևներէ ուրիշ բան չգտաւ, քանզի գեռ
14 Թզոյ ժամանակ չէր։ †Եւ պատասխան

*Ոմանք՝ Տէրոջը անուամբ կու գայ։
†Ոմանք՝ Եւ Յիսուս



տուաւ և բսաւ անոր, Ա յսուհետև մարդ քենէ պտուղ չուտէ յաւիտեան. և աշակերտները լսեցին։
15 Եւ եկան Երուսաղէմ. և Յիսուս տաճարը մտնելով սկսաւ դուրս հանել զանոնք որ տաճարին մէջ կը վաճառէին և կը գնէին. և կործանեց սեղանները փոխադրներուն և աթոռները
16 վաճառականներուն աֆոռներուն, Եւ Թոյլ չէր տար որ մարդ տաճարին միջէն մը
17 անցնէր։ Եւ կը սորվեցուներ և կ'ըսէր անոնց, Գրուած չէ՞ որ իմ տունս տուն աղօթից պիտի կոչուի բոլոր ազգաց, բայց դուք աւազակներու տեր
18 ըրիք զայն։ Եւ գպիրները և քահանայապետները լսելով զայս կը խնդրէին Թէ ինչպես կորսուածին զնա, քանզի կը վախնային անկէ. վասն զի բոլոր ժողովուրդը զարմացած էր անոր վար-
19 դապետութեան վրայ։ Եւ երբ երեկոյ եղաւ, դուրս կելաւ քաղաքէն։
20 Եւ առաւօտուն երբ առիւ կ'անցնէին,
21 տեսան Թզենին արմատէն չորցած։ Եւ յիշեց Պետրոս և բսաւ անոր, Ռաբբի, ահա Թզենին զոր անիծեցիր՝ չորցած
22 է։ Եւ Յիսուս պատասխան տալով բսաւ անոնց, Ունիցիք յոյս աստուծոյ ունե-
23 ցէք. Քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Ով որ այս լերան բսէ, Նիլ և ծովը ինկիր, և չերկմտի իւր սրտին մէջ, այլ հաւատայ Թէ ինչ որ ըսէ կ'ըլլայ, պիտի ըլ-
24 լայ անոր ինչ որ ըսէ. Վասն որոյ կ'ըսեմ ձեզ, ինչ որ աղօթիւք կը խընդրէք, հաւատացէք Թէ պիտի առնուք, և պիտի ըլլայ ձեզ։ Եւ երբ աղօթքի կը կենաք, ներեցէք եթէ մարդու դէմ բան մը ունիք, որպէս զի Նաև ձեր Հայրը որ յերկինս է՝ ներէ ձեզ
26 ձեր յանցանքը։ Իսկ եթէ դուք չէք ներեր, Նաև ձեր Հայրը որ յերկինս է՝ պիտի չներէ ձեր յանցանքը։
27 Եւ միւսանգամ Երուսաղէմ եկան, և երբ տաճարին մէջ կը պտըտէր, քահանայապետները և դպիրները և ծե-
28 րերը եկան անոր, Եւ ըսին անոր, Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները, և ո՞վ տուաւ քեզ այդ իշխանութիւ-
29 նը, որ այդ բաներն ընես։ Պատասխան տուաւ Յիսուս և բսաւ անոնց, Եւ ես բան մը հարցունեմ ձեզ, և էք պատասխան տաք ինձ, ես ես պիտի ը-
30 սեմ ձեզ Թէ ինչ իշխանութեամբ կ'ը-
30 նեմ այս բաները։ Յովհաննու մկրտութիւնը յերկինքէ՞ էր Թէ ի մարդկանէ։
31 պատասխան տուէք ինձ, Եւ անոնք իրենց մէջ կը խորհէին և կ'ըսէին, Եթէ բսանք, Յերկինքէ, պիտի բսէ, Ա՛պա ընդ-
32 Ո՞ր չհաւատացիք անոր. Իսկ եթէ բսանք, Ի մարդկանէ, Ժողովուրդն կը վախնային, քանզի ամէնքը *գիտէին զՅովհաննէս Թէ արդարև մարգարէ էր։ Եւ պատասխան տալով բսին Յիսուսի, Չենք գիտեր։ Եւ Յիսուս պատասխան տուաւ և բսաւ անոնց, Եւ ես չեմ բսեր ձեզ Թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները։

ԳԼ. ԺԲ.

1 Եւ սկսաւ առակներով խօսել անոնց հետ։ Մարդ մը այգի տնկեց, և ցանգաւ պատեց զայն, և գուբ հնձան փորեց, և աշտարակ շինեց, և մշակներու յանձնեց զայն, և ինք գնաց օտար
2 երկիր։ Եւ ժամանակին ծառայ մը զրկեց մշակներուն, որ մշակներէն առ-
3 նէ պտղոց իր այգիին։ Եւ անոնք բռնեցին, ծեծեցին զնա և արձակեցին ու-
4 նայն։ Դարձեալ ուրիշ ծառայ զրկեց անոնց, և զնա քարկոծելով կատափառակեցին և արձակեցին անարգեալ։
5 Եւ դարձեալ ուրիշ մը զրկեց, և զնա սպաննեցին. և շատ ուրիշներ զրկեց, յորոց զոմանս ծեծեցին և զայլս սպան-
6 նեցին։ Ունայն սիրելի որդի մը ունէր, զնա եւս զրկեց անոնց յետոյ քանզի,
7 Թերևս ամենեան իմ որդիէս՝ բայց այն մշակներն բսին իրարու, Սա է ժառանգը. Եկէք սպանենք զնա, և մեր ըլ-
8 լայ ժառանգութիւնը։ Եւ բռնեցին զնա և սպաննեցին, և այգիին դուրս
9 հանեցին։ Ունայն այգուոյն տէրն ի՞նչ

*Յոյն. ունէին

պիտի ընէ. պիտի գայ և կորուսանի
մշակները, և այգին պիտի տայ ուրիշ-
ներու։ Եւ չէ՞ք կարդացած սա գիրը,
Թէ Ան քարը զոր շինողներն անար-
գեցին, նա եղաւ գլուխ անկեան. Տէ-
րոջմէ եղաւ այս, և զարմանալի է յայս
մեր։

Եւ կը թնդբեին բռնել զնա, բայց
ժողովուրդէն վախցան, քանզի իմա-
ցան Թէ իրենց համար բսաւ այն առա-
կը. և Թողին զնա և գացին։

Եւ փարիսեցիներէն և Հերովդեսեան-
ներէն ոմանք զրկեցին անոր, խօսքով
բռնել զնա։ Եւ անոնք եկան և ըսին
անոր, վարդապետ, գիտենք Թէ ճըշ-
մարիտ ես, և մարդու համար փոյթ չէ
քեզ, քանզի մարդոց ակնառութիւն
չես ըներ, այլ ճշմարտութեամբ Աս-
տուծոյ ճամբան կը սորվեցունես։ Կայ-
սեր տուրք տալ արժա՞ն է Թէ ոչ,
տա՞նք Թէ չտանք։ Եւ Յիսուս գիտե-
նալով անոնց կեղծաւորութիւնն ըսաւ
անոնց, Ընդէ՞ր կը փորձէք զիս. բե-
րէք ինձ դահեկան մի որ տեսնեմ։ Եւ
անոնք բերին։ և ըսաւ անոնց, Որո՞ւ է
այս պատկերը և գիրը։ Եւ անոնք ը-
սին անոր, Կայսեր։ Եւ Յիսուս պա-
տասխան տալով ըսաւ անոնց, Տուէք
զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աս-
տուծոյ. և զարմացան անոր վրայ։

Եւ եկան անոր սադուկեցիք, որ կ'ը-
սեն Թէ յարութիւն չկայ, և հարցու-
ցին անոր ըսելով, Վարդապետ, Մով-
սէս գրեց մեզ որ եթէ ուրուք եղբայրը
մեռնի, և կին Թողու և զաւակ չը-
Թողու, անոր եղբայրն առնու անոր
կինը, և իւր եղբօրը զաւակ յարուցա-
նէ։ Արդ եօթն եղբարք կային, և ա-
ռաջինը կին առաւ և մեռաւ և զաւակ
չԹողուց։ Եւ երկրորդն առաւ զնա և
մեռաւ, և նա ևս չԹողուց զաւակ.
նոյնպէս և երրորդը։ Եւ եօթանեքին
առին զնա և զաւակ չԹողին. յետ ա-
մենքուն մեռաւ և կինը։ Արդ ի յա-
րութեան, երբ յառնեն, անոնցմէ որո՞ւ
կինը պիտի ըլլայ. քանզի եօթանեքին
ունեցան զնա։ Եւ Յիսուս պատասխան
տալով ըսաւ անոնց, Ո՞չ ապա-
քէն ասոր համար մոլորած էք, որ
ոչ Գիրքը գիտէք և ոչ Աստուծոյ զո-
րութիւնը։ Քանզի երբ մեռելներէն
յարութիւն առնուն, ոչ կին կ'առ-
նուն և ոչ առն կը տրուին, այլ երկ-
նից հրեշտակներուն պէս են։ Բայց մե-
ռելոց համար Թէ յարութիւն կ'առ-
նուն, Մովսեսի գրքին մէջ չէ՞ք կար-
դացած մորենւոյն վրայ, ինչպէս Աս-
տուած անոր խօսեցաւ ըսելով, Ես եմ
Աստուած Աբրահամու, և Աստուած
Իսահակայ, և Աստուած Յակոբայ։ Մե-
ռելոց Աստուած չէ նա, այլ կենդա-
նեաց. ուրեմն դուք յոյժ մոլորեալ էք։

Եւ դպիրներէն մին եկաւ, և ունկն
դնելով անոնց երբ կը վիճէին, երբ ես-
աւ Թէ ապէկ պատասխան առաւ ա-
նոնց, հարցուց անոր Ե ըսս, Ո՞րն է
բոլոր պատուիրանները առաջինը։ Եւ
Յիսուս պատասխանեց անոր, Բոլոր
պատուիրանները առաջինն այս է.
Լսէ, ով Իսրայէլ, մեր Տէր Աստուածն
է մի Տէր։ Եւ դու Տէր Աստուածդ սի-
րես ի բոլոր սրտէ, և ի բոլոր անձնէ,
և ի բոլոր մտաց, և ի բոլոր զօրու Թե-
նէ։ այս է առաջին պատուիրան։ Եւ
երկրորդն՝ անոր նման, Դու ընկերդ
սիրես քու անձիդ պէս։ քան զսոսա
մեծ ուրիշ պատուիրան չկայ։ Եւ դը-
պիրն ըսաւ անոր, Բարւոք է, վարդա-
պետ, ուղիղ խօսեցար Թէ մի է Աս-
տուած, և չէք այլ բաց ի նմանէ։ Եւ
սիրելն զնա ի բոլոր սրտէ, և ի բոլոր
մտաց, և ի բոլոր անձնէ, և ի բոլոր
զօրութենէ, և ընկերը սիրել իւր ան-
ձին պէս աւելի է քան զամենայն ող-
ջակէզս և զզոհս։ Եւ Յիսուս տեսնելով
որ իմաստութեամբ պատասխան ար-
ար, ըսաւ անոր, Չես հեռի Աստու-
ծոյ Թագաւորութենէն. և այլ ևս
ոք չէր համարձակեր բան մը հարցու-
նել անոր։

Եւ Յիսուս երբ տաճարին մէջ կը սոր-
վեցուներ, պատասխան առաւ և ըսաւ, Դպիրներն ի՞նչպէս կ'ըսեն Թէ
Քրիստոս Դաւիթի որդի է։ Եւ ինք Դա-



ւիթ Հոգւով Սրբով կ'ըսէ, Տէրը իմ
Տէրոջս ըսաւ, Նստէ իմ ալ կողմս,
մինչև քու Թշնամիներդ ոտիդ պա-
տառնդան ընեմ։ Արդ եթէ Դաւիթ
զնա Տէր կը կոչէ, ի՞նչպէս ա-
նոր որդին է։ և ժողովուրդէն չատերը
յօժարութեամբ մտիկ կ'ընէին անոր։

Եւ ի վարդապետութեան մէջ կ'ը-
սէր անոնց, Զգուշացէք դպիրներէն,
որ կ'ուզեն փառաւոր հանդերձներով
պտտիլ, և աղջիկներ կը փնտռեն չու-
կանեքու մէջ, և առաջին աթոռները՝
ժողովրդանոցներու մէջ, և առաջին
բազմոցները՝ յընթրիս. Որ կ'ուտեն
այրիներուն տուները, և ծաղոյ երե-
նալու համար կ'երկարեն աղօթքը. ա-
նոնք աւելի դատապարտութիւն պիտի
ընդունին։

Եւ Յիսուս գանձանակին դիմացը նըս-
տած կը նայէր Թէ ժողովուրդն ինչպէս
սառկ կը նետէր գանձանակը. և շատ
հարուստներ շատ բան նետեցին։ Ապ-
ա գար մի կա նկատ և նետեց եր-
կու լումայ որ նաբարակիա մի է։ Եւ
աշակերտները կոչելով իրեն ըսաւ ա-
նոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ այս
աղքատ այրին աւելի նետեց քան զա-
մենը որ ոտով նետեցին գանձանա-
կը. Քանզի ամենքն իրենց աւելորդէն
նետեցին, բայց սա իւր չքաւորութե-
նէն ինչ որ ունէր՝ բոլորը նետեց, իւր
բոլոր ապրուստը։

## Գլ. ԺԳ

1 Եւ երբ տաճարէն դուրս կ'ելլէր, ա-
շակերտներէն մին ըսաւ անոր, Վար-
դապետ, տես որպիսի քարեր են և որ-
2 պիսի շինուած։ Եւ Յիսուս պատասխան
տալով ըսաւ անոր, Կը տեսնե՞ս այդ
մեծ շինքը. քար քարի վրայ պիտի չը-
մնայ որ չքակուի։

3 Եւ երբ նա Ձիթենեաց լերան տաճա-
րին դիմացը նստած էր, Պետրոս և Յա-
կոբոս և Յովհաննէս և Անդրեաս հար-
4 ցուցին անոր առանձին, Ըսէ մեզ երբ
պիտի ըլլան այդ բաները, և ինչ նշան

պիտի ըլլայ, երբ այդ ամէն բաները
5 կատարուին։ Եւ Յիսուս պատասխան
տալու անոնց և սկսաւ ըսել, Զգույշ
կեցէք, մի գուցէ խաբէ ոք զձեզ.
6 Քանզի շատերը պիտի գան իմ անունիս
բերս և ըսեն Թէ ես եմ Քրիստոսը, և
7 շատերը պիտի մոլորեցունեն։ Բայց երբ
լսէք պատերազմներ և պատերազմնե-
րու լուրեր, մի խռովիք, քանզի պարտ
8 է լինել, բայց դեռ չէ կատարած։ Վասն
զի պիտի կրկի ազգ ազգի վրայ, և Թա-
գաւորութիւն Թագաւորութեան վը-
րայ, և տեղ տեղ պիտի ըլլան երկրա-
շարժներ, պիտի ըլլան նաև սովեր և
խռովութիւններ. սասնք սկիզբն են
9 երկանց։ Զգուշացէք ձեր անձերուն,
քանզի առեանններու պիտի մատնեն
զձեզ, և ժողովրդանոցներու մէջ պի-
տի ծեծեն զձեզ, և իմ անուանս հա-
մար պիտի կենաք կուսակալներու և
Թագաւորներու առջև անոնց վկայու-
10 թեան համար։ Եւ առաջ պէտք է որ
աւետարանը քարոզուի բոլոր ազգաց։
11 Բայց երբ տանին զձեզ մատնել, յա-
ռաջագոյն մի հոգաք և մի խորհիք Թէ
ինչ պիտի խօսիք, այլ այն ժամուն
ինչ որ տրուի ձեզ՝ զայն խօսեցէք.
քանզի ոչ Թէ դուք էք որ կը խօսիք,
12 այլ Հոգին Սուրբ։ Եւ եղբայր զեղբայր
պիտի մատնի ի մահ, և հայր՝ զորդի,
և որդիք պիտի ելլեն էրենց ծնողաց
վայ և սպաննեն զանոնք։ Եւ իմ ա-
նուանս համար ատելի պիտի ըլլաք ա-
մենուն. բայց ով որ համբերէ մինչև
14 ի սպառ՝ նա պիտի ապրի։ Եւ երբ տես-
նէք աւերածին պղծութիւնը որ Դա-
նիէլ մարգարէին բերնով բսուած է,
Թէ կը կենայ ուր չէ արժան. (ով որ
կարդայ՝ Թող հասկրնայ։) անատեն ա-
նոնք որ Հրէաստանի մէջ են՝ Թող
15 փախչին լեռներու։ Եւ ով որ տանեաց
վրայ է՝ Թող չիջնէ տուն, և չմտնէ իւր
16 տունէն բան մը առնուլ. Եւ ով որ
արտն է՝ Թող ետ չդառնայ առնուլ
17 իւր հանդերձը։ Բայց վա՜յ յղեաց և
18 ծանուտաց այն օրերը։ Եւ աղօթք
բրէք որ ձեր փախուստը չըլլայ ձմե-

19 ո.ը. Քանզի այն օրերը պիտի ըլլայ այնպիսի նեղութիւն, որոյ նմանը եղած չէ Աստուծոյ ստեղծած սկզբէն մինչև
20 չև ցայժմ, և այլ ևս պիտի չըլլայ։ Ու եթէ Տէրը չկարճեցուներ այն օրերը, բնաւ մարմին մը պիտի չազատէր. բայց բնտրելոց համար զորս ընտրեց՝ կարճեցուց այն օրերը։ Եւ անառնն եթէ
21 ոք ըսէ ձեզ, Ահա աստ է Քրիստոս, կամ, Ահա անդ, մի հաւատաք։ Քանզի պիտի ելլեն սուտ Քրիստոսներ և սուտ մարգարէներ և պիտի ցուցնեն նշաններ և հրաշներ, որ եթէ հնար էր՝
23 ընտրեալներն ևս մոլորեցուներին։ Իսկ դուք զգայք եղէք. ահա յառաջագոյն ըսի ձեզ ամէնը։
24 Բայց այն օրերը այն նեղութենէն ետքը արեգակը պիտի խաւարի, և լուսին պիտի չտայ իր լոյսը, Ու աստեղք յերկնից պիտի թօթափին, և զօրու-
26 թիւնները պիտի շարժին յերկինս։ Ու անառնն պիտի տեսնեն զՈրդին մարդոյ եկած յամպս մեծ զօրութեամբ և
27 փառօք։ Ու անառնն պիտի ղրկէ իր հրեշտակները և պիտի ժողովէ իր ընտրեալները չորս հովիտէն, երկրի ծայրէն
28 մինչև երկնից ծայրը։ Թզենիին սորվեցէք առակը։ Երբ անոր ոստերը կը կակղանան և տերևները կը ցցուին,
29 գիտէք թէ մօտ է ամառը։ Նոյնպէս և դուք երբ այս բաները եղած տեսնէք, գիտցէք որ մերձ է առ դուրս։
30 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ այս ազգը պիտի չանցնի, մինչև այս ամէն բաները
31 ըլլան։ Երկինք և երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանց-
32 նին։ Իսկ այն օրուան և ժամուն համար ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս և ոչ Որդի, բայց միայն Հայր։
33 Զգայք կեցէք, հսկեցէք և աղօթք ըրէք, քանզի չէք գիտեր ե՛րբ է ժա-
34 մանակը։ Ինչպես օտար երկրի գացող մարդ մը կը թողու իր տուները, և իշխանաւ թիւն կուտայ իր ծառաներուն, և իւրաքանչիւրոյ իր գործը, և դրա-
35 նապանին կը պատուիրէ որ արթուն կենայ։ Ուրեմն արթուն կեցէք, քանզի չէք գիտեր թէ երբ կու գայ տանուտէրը. երեկոյին, թէ կէս գիշերին, թէ ի հաւախօսի և թէ առաւօտուն։
36 Մի գուցէ յանկարծ գայ և զձեզ քնա-
37 ձեզ ի բաց ըսի։ Ինչ որ կ'ըսեմ ձեզ՝ ամենուն կ'ըսեմ, Արթուն կեցէք։

## Գլ. ԻԴ

1 Եւ երկու օր եւթը զատիկ էր և բաղարձակերք. և քահանայապետք և դպիրք կը խնդրէին թէ ինչպես նենգութեամբ բռնեին զնա և սպաննէին։
2 Բայց կ'ըսէին թէ Ոչ տօնին առեներ, որ ժողովրդեան մէջ խռովութիւն չըլլայ։
3 Եւ երբ էր նա ի Բեթանիա Սիմոնի բորոտի տունը բազմէր, եկաւ կին մը որ ունէր շիշ մը պատուական նարդոսի իւղ մեծագին, և կոտրեց շիշը և
4 անոր գլուխն վրայ թափեց։ Ու կային ոմանք որ կը զայրէին և կ'ըսէին, Ինչ համար եղաւ այդ իւղին կորուս-
5 տը. Քանզի այդ իւղը կրնար վաճառուիլ աւելի քան երեք հարիւր դահեկանի և արուի աղքատաց։ և սաստիկ
6 կը յանդիմանէին զնա։ Բայց Յիսուս ըսաւ, Թոյլ տուէք տարը, ընդէ՞ր անհանգիստ կ'ընէք զդա. բարի գործ մը
7 գործեց յիս։ Քանզի աղքատներն համապատ ունիք ձեր հետ, և երբ ուզէք, կրնաք բարիք ընել անոնց, բայց զիս
8 չունիք հանապատ։ Ինչ որ ունէր գործեց. յառաջագոյն օծեց իմ մարմինս
9 թաղմանս համար։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Թէ բոլոր աշխարհ ուր և քարոզուի այս աւետարանը, պիտի խօսուի նաև ինչ որ ըրաւ դա ատոր յիշատակին համար։
10 Ու Յուդա Իսկարիովթացի երկոտասաններէն մին գնաց քահանայապետ-
11 ներուն մատնել զնա անոնց։ Ու անոնք լսելով ուրախացան, և խոստացան տալ ատ մարդ։ և նա կը խնդրէր Թէ ինչպես պատեհութեամբ մատնէր զնա։
12 Ու բադարձակերաց առաջին օրը երբ զատիկը կը մորթէին, աշակերտներն ը-



սին անոր, Ուր կամիս երթանք պատ-
13 րաստենք որ ուտես զատիկը։ Ու ղրկեց աշակերտներէն երկուքը և ըսաւ անոնց, Գացէք քաղաքը, և պիտի պատահի ձեզ մարդ մը որ սափոր կը տանի, գացէք անոր ե-
14 տևէն, Ու ուր մտնէ՝ տանտիրոջն ըսէք, Վարդապետը կ'ըսէ, Ուր է օթևանը ուր աշակերտներուս հետ ու-
15 տեմ զատիկը։ Ու նա մեծ վերնատուն մը պիտի ցուցնէ ձեզ յարդարեալ և պատրաստ. հոն պատրաստեցէք մեզ։
16 Ու աշակերտները գացին և մտան քաղաքը, և ինչպես որ անոնց ըսաւ, գտան զնա, և պատրաստեցին զատիկը։
17 Ու երբ երեկոյ եղաւ, երկոտասանից
18 հետ եկաւ։ Ու երբ սեղան նստան և կ'ուտէին, ըսաւ Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ որ ձեզմէ մին որ հիմա իմ հետս
19 կ'ուտէ՝ պիտի մատնէ զնա։ Ու անոնք սկսան տրտմիլ, և մի քան մի մըմէ ըսել անոր, Միթէ՞ ե՛s եմ, և ուրիշ մը՝ Մի-
20 թէ՞ ե՛s եմ, Նա պատասխան առաւ և ըսաւ անոնց, Այդ երկոտասանէն մին՝ որ ինձի հետ ի՛ր չ՛ե՛ս մեկց պը-
21 նակը։ Արդարև Որդին մարդոյ կ'երթայ ինչպես որ գրուած է անոր համար, բայց վա՜յ այն մարդուն որոյ ձեռամբ Որդին մարդոյ կը մատնուի. լաւ էր այն մարդուն թէ չէր ծնած։
22 Ու մինչ անոնք կ'ուտէին, Յիսուս առաւ հաց, օրհնեց և կոտրեց, և տուաւ անոնց և ըսաւ, *Առէ՛ք, այս է
23 մարմին իմ։ Ու բաժակն առաւ, գոհացաւ, և տուաւ անոնց, և ամէնքը
24 խմեցին անկէ։ Ու ըսաւ անոնց, Այս է արիւն իմ նոր ուխտի, որ հանուի
25 համար կը թափուի ճշմարիտ կ'ըսեմ ձեզ. այսուհետև արմտի բերքէն բնաւ պիտի չխմեմ մինչև այն օրը երբ նոր խմիմ զայն Աստուծոյ թագաւորութեան մէջ։
26 Ու օրհնութիւն մը երգելէն ետքը
27 ելան Ձիթենեաց լեռը։ Ու Յիսուս ըսաւ անոնց, Դուք ամէնդ՛ին այս գի-

*Ո՛ռե՛ Առէ՛ք, կեցէ՛ք,

չեր պիտի գայթակղիք ինէ. քանզի գրուած է Թէ Հովիւը պիտի զարնեմ,
28 և ոչխարները պիտի ցրուին, Բայց յարուԹենէս ետքը նախ քան զձեզ պիտի երթամ Գալիլեա, իսկ Պետրոս ըսաւ անոր, Թէպէտ ամէնդ՛ին գայ-
30 թակղին, բայց ես ոչ։ Ու Յիսուս ըսաւ անոր, Ճշմարիտ կ'ըսեմ քեզ, որ դուն այս գիշեր գոռ հարը երկու անգամ չխօսած՝ երեցս պիտի ուրանաս զիս,
31 Բայց Պետրոս աւելի կը պնդեր և կ'ըսէր, Թէև քեզի հետ մեռնիլ հարկ ըլլայ ինձ, բնաւ պիտի չուրանամ զքեզ։ Նոյնպես կ'ըսէին ամէնքը։
32 Եկան այն տեղը որոյ անունն էր Գեթսեմանի, և ըսաւ աշակերտներուն, Նս-
33 տեցէք մինչև ես աղօթք ընեմ։ Ու իրեն հետ առնելով զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, սկսաւ խռովիլ և
34 հոգալ։ Անառնն ըսաւ անոնց, Իմ անձս մինչև չամ տրտում է. հոս մնացէք և արթուն կեցէ՛ք։ Ու քիչ մը
35 յառաջ երթալով՝ ՚ի՛ր ՚ի՛ն վրայ գետին ինկաւ և աղօթք ըրաւ, որ եթէ
36 հնար է, անցնի անկէ ժամը։ Ու ըսաւ, Աբբայ Հայր, ամէն բան հնարաւոր է քեզ, այս բաժակն անցուր ինէ. բայց ոչ Թէ որպէս ես կամիմ, այլ որպէս
37 դուս։ Ու եկաւ և գտաւ զանոնք ի քուն, և ըսաւ Պետրոսի, Սիմո՛ն, կը քնանա՞ս. չկրցար ժամ մի արթնանալ
38 կենալ։ Արթուն կեցէ՛ք և աղօթք ըրէ՛ք, որ փորձութեան մէջ չմանէք. հոգին յօժար է, բայց մարմինը տկար։
39 Ու դարձեալ գնաց աղօթք ըրաւ նոյն
40 խօսքն ըսելով։ Ու դարձաւ և զանոնք նորէն գտաւ ի քուն, քանզի անոնց աչքերը ծանրացած էին, և չէին գիտեր Թէ ինչ պատասխան տային ա-
41 նոր։ Երրորդ անգամ եկաւ և ըսաւ անոնց, Այսուհետև նստեցէ՛ք և հանգչեցէ՛ք. բաւական է, ժամը հասաւ. ահա Որդին մարդոյ կը մատնուի մե-
42 ղաւորաց ձեռքը։ Ելէ՛ք երթանք, ահա մատնեցաւ նա որ զիս պիտի մատնէ։
43 Ու մինչդեռ նա կը խօսէր զայն, իսկոյն Յուդա, մին յերկոտասանից, ե-

կաւ, և անոր հետ քահանայապետներուն և գլխաւորներուն ծերերուն կոչուձն չատ բաղմութիւն առաւօտուն
44 լոյս։ Եւ անոր մատնիչն անոնց նշան տուած էր ըսելով, Ով որ ես համբուրեմ՝ նա է, բռնեցէք զնա և զգուշութեամբ տարէք։ Եւ նա գալով իսկոյն
45 մտաւ անոր և ըսաւ, Ռաբբի, Ռաբբի,
46 և համբուրեց զնա։ Եւ անոնք ձեռք զարկին անոր և բռնեցին զնա։
47 Եւ քովը կեցողներէն մին սուրը քաշեց և զարկաւ քահանայապետին ծառան, և մկկդ հանեց անոր ականջը։
48 Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ անոնց, Իբր թէ աւազակի՞ վրայ ելաք
49 սուսերօք և բրօք բռնել զիս։ Ամէն օր ձեր քովն էի և տաճարին մէջ կը սորվեցնէի, և չբռնեցիք զիս։ բայց
50 որպէս զի կատարուին գիրքերն։ Անտանի բոլոր աշակերտները թողին զնա և փա-
51 խան։ Եւ երիտասարդ մը անոր հետևէն կ'երթար մերկ շորո՞ւն վրայ կտաւ մը առած, և երիտասարդները բռնեցին
52 զնա։ Իսկ նա կտաւը թողուց և մերկ փախաւ անոնցմէ։
53 Եւ տարին զՅիսուս առ քահանայապետն, և անոր քով ժողովեցան բոլոր քահանայապետները և ծերերը և դպ-
54 պիրները։ Եւ Պետրոս ի հեռուստա անոր հետևէն գնաց մինչև ներս քահանայապետին գաւիթը, և նստաւ ոտասաւորներուն հետ, և կրակին քով կը
55 տաքնար։ Իսկ քահանայապետները և բոլոր ժողովը Յիսուսի դէմ վկայութիւն կը փնտռէին սպանանել զնա, և
56 չէին գտներ։ Քանզի շատերը սուտ վկայութիւն կուտային անոր դէմ, և վկայութիւնները էրթ-
57 չէին։ Եւ անոնք ելան սուտ վկայութիւն կրնէին անոր դէմ և կ'ըսէին Թէ
58 Մենք լսեցինք աւակէ որ կ'ըսէր, Ես այդ ձեռագործ տաճարը պիտի քա-
ղեմ, և երեք օրուան մէջ պիտի շինեմ ուրիշ մը առանց ձեռագործի։
59 Բայց և այնպէս անոնց վկայութիւնն
60 հաստատուն չէր։ Եւ քահանայապետը մէջտեղ ոտք ելլելով հարցուց Յիսու-
սէ և ըսաւ, Պատասխան չունս տար։ ի՞նչ
61 կը վկայեն ասոնք քեզի դէմ։ Բայց նա լուռ կը կենար և պատասխան չէր
տար։ Քահանայապետը դարձեալ կը հարցունէր անոր և կ'ըսէր, Դո՞ւ ես
62 Քրիստոս, Որդի Աստուծոյ օրհնելոյն։ Եւ Յիսուս ըսաւ, Ես եմ։ և պիտի տես-
նէք Որդին մարդոյ Զօրութեան աջ կողմը նստած, և երկնից ամպերով ե-
63 կած։ Եւ քահանայապետը պատառեց իր հանդերձները և ըսաւ, Ա՛լ ևս
64 ի՞նչ պէտք ունինք մեզ վկաներու։ Լսեցիք հայհոյութիւնը։ ի՞նչպէս կ'երևայ
ձեզ։ Եւ ամէնքը դատապարտեցին զը-
65 նա Թէ մահապարտ է։ Եւ սկսան անոնք ոմանք թքանել անոր և երեսը ծածկել և բռնցի ծեծել և ը-
սել, Մարգարեացիր։ Եւ ապասաւորներն ապտակ կը զարնէին անոր։
66 Եւ Պետրոս վարը դատիճն էր, և քահանայապետին աղախիններէն մին
67 եկաւ, Եւ տեսնելով զՊետրոս որ կը տաքնար, նայեցաւ անոր և ըսաւ, Եւ դու Յիսուսի Նազովրեցւոյ հետ էիր։
68 Բայց նա ուրացաւ և ըսաւ, Ջեմ գիտեր և չեմ հասկնար Թէ ինչ կը խոսիս դուն։ և երբ դուրս ելաւ գաւթին
69 դէ՛ն առջև, հաւ խոսեցաւ։ Եւ աղախինը նորէն տեսաւ զնա, և սկսաւ
70 նոյնմէկ է։ Եւ նա դարձեալ ուրացաւ։ Եւ փոքր մը հասքը շուրջ կեցողները
դարձեալ բսին Պետրոսի, Արդ արև դուն անոնցմէ ես, քանզի Գալիլեացի ես, և
71 խոսուածդ իսկ նման է անոնց։ Բայց նա սկսաւ անիծանել և երդնուլ ըսելով Թէ ես այն մարդը չեմ ճանչնար,
72 որուն համար դուք կ'ըսէք։ Եւ իսկոյն երկրորդ անգամ հաւ խոսեցաւ։ և Պետրոս յիշեց այն խոսքը զոր Յիսուս ըսած էր անոր Թէ Դեռ հաւը երկու անգամ չխոսած՝ դուն երիցս պիտի ուրանաս զիս, և սկսաւ լալ։

## ԳԼ. ԺԵ

1 Եւ իսկ և իսկ առաւօտուն քահանա-



յապետները ծերերուն և դպիրներուն հետ և բոլոր ժողովքը խորհուրդ ըրին,
զՅիսուս կապեցին և տարին մատնեցին
2 Պիղատոսի։ Եւ Պիղատոս հարցուց զանոր Ե՞ր, Դո՞ւ ես Հրեից Թագաւորը։ Եւ նա պատասխան տալով ը-
3 սաւ անոր, Դուն կ'ըսես։ Եւ քահանայապետները շատ մեղադրութիւն
4 կ'ընէին անոր վրայ։ Եւ Պիղատոս դարձեալ հարցուց անոր ըսելով, Պատասխան չունս տար։ տես որչափ կը վկա-
5 յեն քեզի դէմ։ Եւ Յիսուս տակաւին պատասխան չտուաւ, մինչև զարմացաւ Պիղատոս։
6 Բայց ամէն տաւնը կ'արձակէր ա-
նոնց կապուած մը, զոր ուզեն ու-
7 զէին։ Եւ Բարդ մը կար բարաբբաս անուն կապուած իր խռովարար ընկերներուն հետ, որ խռովութեան ատեն
8 մարդասպանութիւն ըրած էին։ Եւ ժողովուրդն աղաղակելով սկսաւ խնդրել որ ընդ ինչպէս միշտ կ'ընէր անոնց։
9 Եւ Պիղատոս պատասխան տուաւ անոնց և ըսաւ, Կ'ուզէ՞ք որ Հրեից Թա-
10 գաւորն արձակեմ ձեզ։ Քանզի գիտեր Թէ քահանայապետները նախանձ-
11 ոտ։ մատնած էին զնա։ Բայց քահանայապետները դրդռեցին ժողովուրդը Եթէ մանաւանդ արձակել իրենց
12 զԲարաբբաս։ Դարձեալ Պիղատոս պատասխան տուաւ և ըսաւ անոնց, Իսկ Հրեից Թագաւոր կոչուածն ի՞նչ կուզէք որ ընեմ։ Եւ անոնք դարձեալ
13 կ'աղաղակէին, Խաչը հանէ զնա։ Պիղատոս ըսաւ անոնց, Բայց ի՞նչ չար գործ ըրած է զնա։ և անոնք կա՛ւելի կ'աղաղակէին Ե՛ր խաչը հանէ զնա։
15 Եւ Պիղատոս կամենալով ժողովուրդը գոհ ընել արձակեց անոնց զԲարաբբաս, և զՅիսուս ծեծելով ձեռք տուաւ որ խաչուի։
16 Եւ զինուորները տարին զնա ներս գաւթը, այսինքն պալատը, և կոչեցին բոլոր գունդը վրանդամայն։ Եւ
17 հագուցին անոր ծիրանիներ, և փչելէն պատկ հիւսելով դրին անոր ի՛ր-
18 Եւ սկսան ողջոյն տալ անոր Ե՛ր-
19 Ողջ լեր, արքայ Հրեից։ Եւ անոր գլխուն եղէգով կը ծեծէին և կը թքնէին անոր, և ի ծունր իջանելով երկրպագութիւն կ'ընէին անոր։ Եւ երբ
20 ծաղր բրին զնա, հանեցին ծիրանիները և իր հանդերձներն հագուցին անոր, և դուրս հանեցին զնա ի խաչ հանել։
21 Եւ զՍիմոն Կիրենացի, Ալեքսանդրոսի և Ռուփոսի հայրը, որ անկէ կ'անցնէր արտէն եկած, պահակ բռնեցին որ անոր խաչը վերցունէր։ Եւ
22 նեցին որ անոր խաչը վերցունէր։ Եւ տարին զնա Գողգոթա Ի՛ր-
23 (որ կը Թարգմանուի Գանկի տեղ)։ Եւ տուին անոր զմռսով խառնած գինի
24 որ խմէր, բայց նա չառաւ։ Եւ խաչը հանեցին զնա, և անոր հանդերձները բաժնեցին վիճակ նետելով անոնց վրայ Թէ ով ինչ պիտի առնու։ Եր-
25 բորդ ժամ էր, և խաչը հանեցին զնա։
26 Եւ անոր յանցանց գիրը գրուած էր
27 Ի՛ր Հրեից Թագաւորն է։ Եւ անոր հետ երկու աւազակ խաչը հանեցին, մին՝
28 անոր աջ կողմէն, և միսը՝ ձախ կողմէն։ Եւ կատարուեցաւ գիրը որ կ'ըսէ Թէ Անօրէններուս հետ համարուեցաւ։
29 Եւ անոնք որ կ'անցնէին կը հայհոյէին անոր, կը շարժէին իրենց գլուխը և կ'ըսէին, Վա՛հ որ տաճարը կը քակէիր,
30 և երեք օրուան մէջ կը շինէիր։ Ապա-
31 ո՛ւ զքեզ և էջ խաչէդ։ Նոյնպէս և քահանայապետները դպիրներուն հետ իրենց մէջ ծաղր ընելով կ'ըսէին, Ու-
րիշներն ազատեց, զինք չկրնար ազա-
32 ո՛ւ։ Այդ Քրիստոսը, Իսրայէլի Թագաւորը, Թող հիմա վար իջնէ խաչէն, որ տեսնենք և հաւատանք։ Եւ անոր հետ խաչը կելղեները կը նախատէին զնա։
33 Եւ երբ վեցերորդ ժամ եղաւ, բոլոր երկրի վրայ խաւար եղաւ մինչև
34 իններորդ ժամ։ Եւ իններորդ ժամուն Յիսուս մեծ ձայնի՛ ազաղակեց և ըսաւ, Էլոի, Էլոի, լեմա սաբաքթանի՞։ որ կը Թարգմանուի, Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր Թողեր զիս։ Եւ
35 քովը կեցողներէն ոմանք երբ լսեցին,
36 կ'ըսէին Թէ կ'ողիա կը կոչէ։ Եւ ոմն

վազեց ապունգ մը լցուց քացախով, և անցուներով եղէգան առաւ անոր որ խմէր, և բսաւ, Թող տեսնենք թէ ե-
37 ղիա կու գայ վար իջեցնել զայս։ Եւ Յիսուս մեծ ձայն հանեց և ա-
38 ւանդեց հոգին։ Եւ ահաւասիկ վարագոյրը երկու պատառեցաւ վերէն ա՛ի վայր։
39 Եւ հարիւրապետը որ անոր դիմացը կեցած էր, տեսնելով որ այսպէս ազաղակելով աւանդեց հոգին, բսաւ, Արդարև Որդի Աստուծոյ էր այս մարդը։
40 Կային և կանայք որ ի հեռուստա կը նայէին, ընդ որս էր Մարիամ Մագդաղենացի, և փոքրն Յակոբոսի և Յովսեայ մայրը Մարիամ, և Սողոմէի,
41 Որք երբ Յիսուս Գալիլեա էր, անոր կուտէին ի՛երթային, և ծառայութիւն ի՛րենին անոր։ Նաև ուրիշ շատ կանայք որ անոր հետ երուսաղէմ եկած էին։
42 Եւ երբ երեկոյ եղաւ, ա՜ր որ ուրբաթ, այսինքն շաբաթուն առաջին
43 օրն էր, Յովսեփ Արիմաթացի, երեւելի խորհրդական մը, որ և ինք կը սպասէր Աստուծոյ Թագաւորութեանը, կուգա՛ և համարձակելով մտաւ Պիղատոսի քով, և խնդրեց Յիսուսի մարմինը։
44 Եւ Պիղատոս զարմացաւ որ արդէն մեռած էր։ և կոչելով իրեն հարիւրապետը հարցուց անոր թէ շատ ատե՞ն
45 է որ մեռաւ։ Եւ երբ գտաւ ի խնդացաւ հարիւրապետէն, շնորհեց մարմինը Յովսեփայ։
46 Եւ նա՛ եկաւ գնեց կտաւ, և վար իջեցունելով զնա պատեց կտաւով, և դրաւ գերեզմանի մէջ որ քարէ փորուած էր, և քար մը թաւալեցուց գերեզմանին դուռը։ Իսկ Մարիամ Մագդաղենացի և Յովսեսի մայրը Մարիամ տեսան ո՛ւր դրաւեցաւ։

## Գլ. ԻԶ

1 Եւ երբ շաբաթն անցաւ, Մարիամ Մագդաղենացի և Յակոբոսի մայրը Մարիամ և Սողոմէ խունկեր գնեցին,
2 որ գային օծել զնա։ Եւ միաշաբթի առաւօտուն շատ կանուխ մինչ արեւը կը
3 ծագէր, նկան գերեզմանը, Եւ կ'ըսէին իրարու, Ո՞վ պիտի թաւալեցունէ մեզ
4 քարը գերեզմանին դռնէն, (Եւ նայեցան տեսան որ քարը թաւալեցուցեալ
5 էր,) քանզի մեծ էր յոյժ։ Եւ ներս մտնելով գերեզմանը, տեսան երիտասարդ մը որ ալ կողմը նստած էր բոպիտակ պատմուճան հագած, և զար-
6 հուրեցան։ Եւ նա բսաւ անոնց, Մի զարհուրիք։ ԶՅիսուս Նազովրեցին կը ինդրէք, որ խաչուեցաւ։ Նա յարեաւ, հոս չէ։ ահա տեղն ուր դրին զնա։
7 Բայց գացէք, բսէք անոր աշակերտներուն և Պետրոսի, Թէ ա՜ռ յառաջ քան զձեզ կ'երթայ Գալիլեա, հոն պիտի տեսնէք զնա ինչպէս որ բսաւ ձեզ։
8 Եւ անոնք գացով և ապրեցեալը բռնուած *էին և վախան գերեզմանէն, և մարգած բան չըսին, քանզի կը վախնային։
9 Յիսուս միաշաբթի առաւօտուն յարուցեալ առաջ երեւեցաւ նախ Մարիամ Մագդաղենացւոյն, որմէ եօթն
10 դեւ հանած էր։ Նա գնաց պատմեց անոնց որ անոր հետ էին, երբ սուգ կ'ը-
11 նէին և կու լային։ Իսկ անոնք երբ լսեցին թէ կենդանի էր և երեւեցաւ, չհաւատացին անոր։
12 Յետոյ ուրիշ կերպարանօք երեւեցաւ անոնցմէ երկուց որ հետի արտը կ'եր-
13 թային։ Եւ անոնք գացին պատմեցին ուրիշներուն։ և անոնց ևս չհաւատացին։
14 Յետոյ երեւեցաւ վեհասանիկ երբ սեղան նստած էին, և յանդիմանեց անոնց անհաւատութիւնը և խստասրտութիւնը, վասն զի չհաւատացին անոնց որոց երեւեցաւ յետ յարութեան իւրոյ ի մեռելոց։
15 Եւ բսաւ անոնց, Գացէք բոլոր աշխարհ, և քարոզեցէք աւետարանը բո-
16 լոր արարածոց։ Ով որ հաւատայ և մկրտուի պիտի փրկուի, և ով որ չը
17 հաւատայ՝ պիտի դատապարտուի։ Եւ անոնք որ կը հաւատան, սա նշաններն

*Ոմանք՝ վազվազակի եկան



անոնց հետ պիտի երթան. Իմ անունիս դեմ պիտի հանեն, նոր լե-
18 զուներ պիտի խօսին, Ձեր պիտի բռնեն իրենց ձեռքը, և եթէ մահացու բան խմեն, պիտի չվնասէ անոնց. հիւանդներու վրայ ձեռք պիտի դնեն, և անոնք պիտի առողջանան։
19 Արդ Տէրը անոնց հետ խօսելէն ետքը համբարձաւ յերկինս, և Աստուծոյ
20 ալ կողմը նստաւ։ Եւ անոնք ելան և ամէն տեղ կը քարոզէին, և Տէրը գործակից էր անոնց, և խօսքը կը հաստատէր այն նշաններով որ անոնց հետ կ'երթային։ Ամէն։

# ԱԻԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

### ԳԼՈՒԽ Ա

1 Որովհետև շատերը ձեռն արկին կարգել այն բաներուն պատմութիւնը որ
2 հաստատ գիտցած են մեր մէջ, ինչպէս որ ականատեսք և սպասաւորք
3 բանին աւանդեցին մեզ ի սկզբանէ, ես ևս, որ ի սկզբանէ այն ամէն բաներուն ուղեկցած էի շշնջաքննութեամբ, յարմար դատեցի կարգաւ գրել քեզ, քաջ-
4 Թէոփիլէ, Որ իմանաս այն բաներուն ստուգութիւնը զորս ուսար։
5 Հերովդէսի Հերովդէս Թագաւորին օրերը քահանայ մը կար Աբիայի դասակարգութենէն Զաքարիա անուն, որոյ կինն էր ի դստերաց Ահարոնի, և
6 անոր անունը Եղիսաբէթ։ Եւ երկուքեան արդար էին Աստուծոյ առջև, և Տէրոջը բոլոր պատուիրանքներուն և իրաւանց մէջ կը քալէին անարատու-
7 Թեամբ։ Եւ զաւակ չունէին, քանզի Եղիսաբէթ ամուլ էր, և երկուքեան անցեալ էին զաւուրքը։
8 Եւ երբ անոր գասակարգութեան օրերը հասան, և քահանայական պաշտօնը կը կատարէր նա Աստուծոյ առ-
9 ջև, Ըստ սովորութեան քահանայութեան անոր բնկաւ Տէրոջը տաճարը
10 մտնել խնկարկութիւն ընել։ Եւ ժողովրդեան բոլոր բազմութիւնը դուրսը
11 աղօթք կ'ընեցած էին խնկոյ ատենը։ Եւ երեւեցաւ անոր Տէրոջը հրեշտակը, որ կեցած էր խնկոյ սեղանին աջ կողմը։
12 Եւ Զաքարիա երբ տեսաւ, շփոթեցաւ,
13 և ահ բնկաւ անոր վրայ։ Եւ հրեշտակն բսաւ անոր, Մի վախնար, Զաքարիա, քանզի քու աղօթքդ լսուեցաւ, և կինդ Եղիսաբէթ որդի մը պիտի ծնանի քեզ, և անոր անունը *Յովհաննէս
14 գնես։ Եւ ուրախութիւն և ցնծութիւն պիտի ըլլայ քեզ, և շատերը պիտի ու-
15 րախանան անոր ծնանելուն վրայ։ Քանզի Տէրոջը առջև մեծ պիտի ըլլայ, և գինի և օղի պիտի չխմէ, և գէթ իւր մօրը որովայնէն Հոգւով Սրբով պիտի
16 լցուի, Եւ Իսրայէլի որդիներէն շատերը պիտի դարձունէ իրենց Տէր Աստուածնին մէջ կը փափեին անարատու-
17 ծոյն։ Եւ ինք անոր առջևէն պիտի գայ Հոգւով և զօրութեամբ Եղիայի, հարց սիրտերը որդւոց վրայ դարձնելու, և անհնազանդներն արդարներուն խմտասութեանը, որ պատրաստէ Տէրոջ ի՛ր բարեկարգ ժողովուրդ։ Եւ Զաքարիա բսաւ հրեշտակին, Ինչո՞վ գիտնամ զայդ, քանզի ես ծեր եմ, և կինս ան-
19 ցեալ զաւուրքը։ Եւ հրեշտակը պա-

*Այսինքն՝ Տէրոջը շնորհքը։

տասեան տալով ըսաւ անոր, Ես եմ Գաբրիէլ որ Աստուծոյ առջեւ կը կեննամ, և զրկուեցայ խօսել քեզ և այս բաներուն աւետեար տալ քեզ։ Եւ ահա համր պիտի ըլլաս դուն, և պիտի չկրնաս խօսիլ մինչեւ այն օրը որ այս բաները ըլլան, քանզի չհաւատացիր խօսքիս, որ պիտի կատարուին իրենց ժամանակին։ Եւ ժողովուրդը կը սպասէր Զաքարիայի, և կը զարմանային անոր յամելուն վրայ տաճարին մէջ։ Եւ երբ դուրս ելաւ, չէր կրնար խօսիլ անոնց հետ, և իմացան թէ տեսիլ մը տեսած էր։ Եւ նա նշանացի կը խօսէր անոնց հետ, և համր կը կենար։ Եւ եղաւ որ երբ անոր պաշտօնին օրերը լցան, գնաց իր տունը։ Եւ այն օրերէն ետքը անոր կինը Եղիսաբէթ յղացաւ, և հինգ ամիս կը պահէր զինքը, և կ'ըսէր, Այսպէս ըրաւ ինձ Տէր օրերս, որ նայեցաւ էր վերանախատինքս վերցուելու մարդոց մէջ։

Եւ վեցերորդ ամսուն մէջ Գաբրիէլ հրեշտակ զրկուեցաւ Աստուծմէ Գալիլեայի քաղաք մը որուն անունն Նազարէթ էր, Կուսի մը որ խօսեցալ էր մարդու մը որուն անունն էր Յովսէփ Դաւիթի տունէն, և կուսին անունն էր Մարիամ։ Եւ հրեշտակը գալով ըսաւ անոր, Ողջոյն քեզ, շնորհընկալ կոյս, Տէրը քու հետդ է. դուն կանանց մէջ օրհնեալ ես։ Եւ նա տեսնելով չխռովեցաւ անոր խօսքին վրայ, և կը խորհէր ի միտս իւր թէ ինչպիսի բան պիտի ըլլար այս ողջոյնը։ Եւ հրեշտակն ըսաւ անոր, Մի երկնչիր, Մարիամ, քանզի շնորհք գտար Աստուծմէ։ Եւ ահա պիտի յղանաս և որդի մը պիտի ծնանիս, և անոր անունը Յիսուս պիտի դնես։ Նա մեծ պիտի ըլլայ, և Որդի Բարձրելոյ պիտի կոչուի, և Տէր Աստուած պիտի տայ անոր իր հօրը Դաւիթի աթոռը, և յաւիտեան տան վրայ պիտի թագաւորէ։ Եւ անոր թագաւորութիւնը վախճան պիտի չունենայ։ Եւ Մարիամ ըսաւ հրեշտակին, Ի՞նչպէս պիտի ըլլայ այդ, քանզի ես այր չեմ գիտեր։ Եւ հրեշտակը պատասխանելով ըսաւ անոր, Հոգին Սուրբ պիտի գայ ի քեզ, և բարձրելոյն զօրութիւնը հովանի պիտի ըլլայ քու վրադ։ Ուստի այն սուրբը որ քենէ պիտի ծնանի Նի՛ Որդի Աստուծոյ պիտի կոչուի։ Եւ ահա քու ազգականդ Եղիսաբէթ, նա իր պառաւութեան առեն որդի մը յղացած է, և այս վեցերորդ ամիսն է անոր որ ամուլ կոչուած էր։ Քանզի Աստուծոյ կողմանէ բան մը անհնարին չէ։ Եւ Մարիամ ըսաւ, Ահաւասիկ կամ աղախին Տէրոջ, քու խօսքիդ պէս թող ըլլայ ինձ։ Եւ հրեշտակը գնաց անոր քովէն։

Այն օրերը ելաւ Մարիամ և գնաց փութապէս լեռնակողմը, Յուդայի քաղաք մը, և մտաւ Զաքարիայի տունը և ողջոյն տուաւ Եղիսաբէթի։ Եւ եղաւ երբ լսեց Եղիսաբէթ Մարիամայ ողջոյնը, խաղաց մանուկն անոր որովայնին մէջ, և Եղիսաբէթ լցաւ Սուրբ Հոգւով, Եւ բարձր ձայնի գոչեց և ըսաւ, Օրհնեալ ես դուն ի կանայս, և օրհնեալ է քու որովայնիդ պտուղը։ Եւ ուստի՞ եղաւ ինձ այս, որ իմ Տէրոջս մայրը գայ առ իս։ Վասն զի ահա երբ քու ողջոյնիդ ձայնը եկաւ ականջս, ցնծալով խաղաց մանուկը որովայնիս մէջ։ Եւ երանի անոր որ հաւատացած է, քանզի պիտի կատարուին այն բաները որ Տէրոջմէ ըսուեցան անոր։ Եւ Մարիամ ըսաւ, Մեծացուցանէ անձն իմ զՏէր, Եւ ցնծացաւ հոգիս յԱստուած Փրկիչ իմ։ Քանզի նայեցաւ իր աղախնոյն խանարհութեանը, վասն զի ահա այսուհետեւ բոլոր ազգերը երանի պիտի տան ինձ։ Քանզի մեծ մեծ բաներ ըրաւ ինձ Հզօրը, և սուրբ է անուն նորա։ Եւ անոր ողորմութիւնն անկէ վերացողներուն վրայ է ազգէ յազգ։ Իւր բազկաւոր զօրութիւն ցուցուց, ցրուեց ամբարտաւաններն իրենց սրտին խորհրդովը։ Հզօրներն էջերէն առաքուեցան իջեցուց, և բարձրացուց

*Ա՛լ հաւատացած է թէ



53 խնդարհներով Անօթիները բարութեամբ լցուց, և հարուստներն արձակեց ուստ
54 Նայն Օգնութիւն ըրաւ իր ծառային Իսրայէլի՝ յիշելով ի՛ողորմութիւնը,
55 ինչպէս խօսեցաւ մեր հայրերուն, Աբրահամու և անոր զաւակին յաւիտեան։
56 Եւ Մարիամ կեցաւ անոր քով իբր երեք ամիս, և դարձաւ իր տունը։
57 Եւ Եղիսաբեթի ծնանելու ժամանակը եկաւ, և որդի մը ծնաւ։ Եւ լսեցին անոնք որ անոր բովանդակը կը բնակէին, և անոր ազգականները, թէ Տէրը ցուցուց անոր վրայ իր մեծ ողորմութիւնը, և կ'ուրախանային անոր հետ։
59 Եւ եղաւ որ ութերորդ օրը եկան թլփատել մանուկը, և իր հօրը անունով Զաքարիա կը կոչէին զնա։ Եւ անոր մայրը պատասխանեց ու ըսաւ, Ոչ, այլ Յովհաննէս պիտի կոչուի։
61 Ըսին եւ անոր թէն թէ Քու ազգականներուդ մէջ չկայ ոք որ այս անունով կոչուի։
62 Նշանով կը կոչէին ի՛նչ կերպով կ'ուզէր կոչել զնա։ Եւ նա տախտակ խնդրեց և գրեց ըսելով, Յովհաննէս է անոր անունը։ Եւ ամէնքը զարմացան։ Եւ իսկոյն բացուեցաւ անոր բերանը և անոր լեզուն, և կը խօսէր և կ'օրհնէր զԱստուած։ Եւ ահ բնակ ամէնուն վրայ որ անոնց բովանդակը կը բնակէին, և այս բոլոր բաները կը խօսուէին Հրէաստանի բոլոր լեռնակողմը։ Եւ բոլոր լսողները դրին իրենց սիրտերուն մէջ, և կ'ըսէին, Արդեօք այս տղան ի՞նչ պիտի ըլլայ։ Եւ Տէրոջը ձեռքն էր անոր հետ։
67 Եւ անոր հայրը Զաքարիա Հոգւով Սրբով լցուած մարգարէացաւ և ըսաւ,
68 Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, որ եկաւ յայցելութիւն և փրկութիւն բրաւ
69 իւր ժողովրդեան, և հանեց մեզ փրկութեան եղջիւր իւր ծառային Դաւիթ տունէն,
70 ինչպէս որ խօսեցաւ բերանով սրբոց, որ աշխարհի սկիզբէն
71 հետէ անոր մարգարէներն էին, փրկութիւն մեր թշնամիներէն և բոլոր
72 մեզ ատելներուն ձեռքէն, ողորմութիւն ընել մեր հայրերուն հետ, և յիշել իր սուրբ ուխտը,
73 երդումը զոր ըրաւ մեր հօրը Աբրահամու, տալ
74 մեզ որ Մեր թշնամիներուն ձեռքէն ազատելով առանց երկիւղի պաշտենք
75 զնա Սրբութեամբ և արդարութեամբ անոր առջեւ մեր կեանց բոլոր օրերուն
76 մէջ։ Եւ դուն, ով մանուկ, Բարձրելոյն մարգարէն պիտի կոչուիս, քանզի Տէրոջը երեսին առջեւ պիտի երթաս պատրաստել անոր ճամբաները, Անոր ժողովրդեան տալ գիտութիւն փրկութեան իր ողորմութիւն մեզազ իբրեւնց,
78 Մեր Աստուծոյն գթած ողորմութեան համար, որով ծագող Արեւը ի բարձրութենէ մեզ այցելութիւն բրաւ մեզ,
79 Ձանց այցելութիւն բրաւ մեզ, խաւարի և մահուան ստուերի մէջ նստողներուն լոյս տալ, և ուղղել զոտս մեր խաղաղութեան ճամբուն մէջ։
80 Եւ մանուկը կը մեծնար և կը զօրանար հոգւով, և անապատներու մէջ էր մինչեւ այն օրը որ երեւեցաւ Իսրայէլի։

## Գլ. Բ

1 Էր եղաւ որ այն օրերը հրաման ելաւ Օգոստոս կայսերէ գրել բոլոր աշխարհը։
2 Այս առաջին աշխարհագիրն եղաւ ի կատարելութեան Կիրենեայ Սիրիայի
3 վրայ։ Եւ ամէնքը կ'երթային աշխարհագրուելու իւրաքանչիւր իր քաղաքը։
4 Դարձեալ Յովսէփ ալ Գալիլեայէ, Նազարէթ քաղաքէն, ելաւ ի Հրէաստան Դաւիթի քաղաքը որ Բեթլեհեմ կը կոչուի, վասն զի Դաւիթի տունէն և ազգատոհմէն էր, Աշխարհագրուելու Մարիամ հանդերձ, որ անոր խօսեցեալ էր, և էր յղի։ Եւ եղաւ երբ անոնք հոն էին, անոր ծնանելու օրերը
7 լցան։ Եւ ծնաւ իւր անդրանիկ որդին, և պատեց խանձարրօք և պառկեցուց զնա մսրոյ մէջ, քանզի տեղ չկար անոնց յիջեւանին։
8 Եւ այն տեղ կային դաշտի մէջ կեցած հովիւներ, որ իրենց հօտերուն գիշերուան պահպանութիւնը կ'ընէին,

9 Եւ ահա Տէրոջը հրեշտակն իջաւ անոնց,
և Տէրոջը փառքը ծագեց անոնց բո-
10 լորտիքը, և վախցան յոյժ։ Եւ հրեշ-
տակն ըսաւ անոնց, Մի վախնաք, քան-
զի ահա ես աւետիս կու տամ ձեզ մեծ
ուրախութեան, որ բոլոր ժողովրդեան
11 պիտի ըլլայ. վասն զի այսօր Դաւթի
քաղաքը Փրկիչ ծնաւ ձեզ, որ է Օծեալ
12 Տէր։ Եւ այս նշան ըլլայ ձեզ. մանուկ
մը պիտի գտնէք պատեալ ի խանձա-
13 րուբս և մսրոյ մէջ պառկած։ Եւ իս-
կոյն այն հրեշտակին հետ եղաւ բազ-
մութիւն երկնային զօրաց, որ կ'օրհ-
14 նէին զԱստուած և կ'ըսէին, Փառք ի
բարձունս Աստուծոյ, և երկրի վրայ
խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։
15 Եւ եղաւ որ երբ հրեշտակներն անոնց-
մէ վերացան յերկինս, հովիւներն ըսին
իրարու, Նիկէք երթանք մինչև Բեթլե-
հէմ, և տեսնենք ըն է այս որ ե-
16 ղաւ, զոր Տէրը ցուցուց մեզ։ Եւ նկան
փութով, և գտան զՄարիամ և զՅով-
սէփ և մանուկը մսրոյն մէջ պառկած։
17 Եւ երբ տեսան, իմացուցին այն խօս-
քին վրայ որ այս մանկան համար ը-
18 սուեցաւ անոնց։ Եւ ամէնքը որ կը
լսէին կը զարմանային այն բաներուն
վրայ զոր հովիւները կ'ըսէին անոնց։
19 Բայց Մարիամ այս ամէն բաները կը
պահէր, և կը խորհէր իւր սրտին մէջ։
20 Եւ հովիւները դարձան, կը փառաւո-
րէին և կ'օրհնէին զԱստուած այն ա-
մէն բաներուն համար զոր լսեցին և
տեսան, ինչպես որ ըսուած էր անոնց։
21 Եւ երբ ութ օրերը լրացան *մանուս-
կը թլփատելու, անոր անունը դը-
րուեցաւ Յիսուս, որ հրեշտակէն կո-
չուած էր, մինչդեռ նա յղացած չէր
յորովայնի։
22 Եւ քանի օրինաց Մովսիսի երբ †անոնց
մաքրութեան օրերը լցան, Երուսաղէմ
23 տարին հանել զնա Տէրոջը առջև, ինչ-
պես որ գրուած է Տէրոջը օրինաց մէջ,
Թէ Ամէն արու որ կը բանայ զարգանդ՝

*Ոմանք գնա
†Ոմանք անոր

24 սուրբ Տեառն կոչուի, Եւ ինչպես ը-
սուած է Տէրոջը օրինաց մէջ, տալ ըն-
ծայ զոյգ մը տատրակ, և կամ ազա-
25 ռնոյ երկու ձագ։ Եւ ահա Երուսաղէ-
մի մէջ մարդ մը կար որոյ անունն էր
Սիմէօն, և այն մարդն արդար և երկիւ-
ղած էր, և կը սպասէր խրաչելի մխի-
թարութեան. և Հոգին Սուրբ էր ի
26 նմա։ Եւ անոր յայտնուած էր ի Հոգ-
ւոյն Սրբոյ Թէ մահ պիտի չտեսնէր,
27 մինչև տեսնէր Տէրոջը Օծեալը։ Եւ Հոգ-
ւով տաճարը եկաւ. և երբ ծնողքը
բերին զՅիսուս մանուկը որ ըստ սովո-
րութեան օրինաց ընեն անոր համար,
28 Նա առաւ զնա իւր գիրկը, և օրհնեց
29 զԱստուած և ըսաւ, Եւ արդ, ով Տէր,
արձակես զոծառադ խաղաղութեամբ
30 ըստ բանի քումմէ. Վասն զի աչուըներս
31 տեսան զոր փրկութիւնդ, Զոր բոլոր
32 ժողովրդոց առջև պատրաստեցիր, Լոյս
ի լուսաւորել զհեթանոս, և փառք
33 զոր ժողովրդեանդ Իսրայելի։ Եւ Յով-
սէփ և անոր մայրը զարմացած էին այն
բաներուն վրայ որ անոր համար կը խօ-
34 սուէին։ Եւ Սիմէօն օրհնեց զանոնք,
և անոր մօրը Մարիամու ըսաւ, Ահա
կը կենայ սա ի գլորումն և ի կանգնումն
բազմաց Իսրայելի մէջ, և ի նշան հա-
35 կառակութեան. Եւ քու սրտիդ ևս
սուր պիտի անցնի. որ շատ սրտերուն
խորհուրդներ յայտնուին։
36 Եւ հոն էր Անննա մարգարէ փաներու-
ելի դուստրը Ասերայ ցեղէն. սա անցեալ
էր յոյժ գուցորբ երկան հետ եօթը
տարի ապրած ըլլալով ի կուսութեան
37 Ժամանակէն, Եւ էր այրի իբր ութսուն
և չորեքամեայ, որ չէր մեկներ տաճա-
րէն, այլ ծոմով և ազօթիւք Աստուծոյ
ծառայութիւն կ'ընէր գիշեր և ցեր-
38 եկ։ Եւ սա նոյն ժամուն եկաւ, և գո-
հութիւն կու տար Տէրոջը, և անոր վր-
րայ կը խօսէր այն ամենուն որ Երու-
սաղեմի մէջ կը սպասէին փրկութեան։
39 Եւ երբ ամէն բան կատարեցին Տէ-
րոջը օրինաց համեմատ, դարձան Գա-
40 լիլեա իրենց քաղաքը Նազարէթ։ Եւ
մանուկը կ'աճէր և կը զօրանար հոգ-



ւով, լի իմաստութեամբ, և Աստուծոյ
շնորհքն անոր վրայ էր։
41 Եւ անոր ծնողքն ամէն տարի զատկի
42 տօնին կ'երթային Երուսաղէմ. Եւ երբ
եղաւ երկոտասանամեայ, ըստ սովո-
րութեան տօնին երբ անոնք երուսա-
43 ղէմ եկան, Եւ երբ կատարեցին օրերը
և կը դառնային, Յիսուս մանուկը մը-
նաց Երուսաղէմ. և Յովսէփ և անոր
44 մայրը չէին գիտեր. Այլ կարծելով Թէ
ուղեկիցներուն հետ էր նա, մի օրուան
ճամբայ գացին, և կը փնտռէին զնա
էջերէ ազգականներուն և ծանօթնե-
45 րուն մէջ, Եւ երբ չգտան, դարձան
46 անդրէն Երուսաղէմ խնդրել զնա։ Եւ
եղաւ որ երեք օր ետքը տաճարին մէջ
գտան զնա, որ վարդապետներուն հետ
նստած էր, և կը լսէր անոնցմէ և կը
47 հարցնէր անոնց. Եւ ամէնքը որ կը
լսէին անկէ կը զարմանային անոր ի-
մաստութեանը և պատասխաններուն
48 վրայ։ Եւ երբ տեսան զնա, սքանչա-
ցան. և անոր մայրն ըսաւ անոր, Որ-
դեակ, ինչո՞ւ համար մեզի այդպես ը-
րիր. ահա հայրդ և ես չատ տառապե-
49 լով կը փնտռէինք զքեզ։ Եւ ըսաւ ա-
նոնց, Ձես ընդհէր կը փնտռէիք, չէի՞ք
գիտեր Թէ պարտ է ինձ իմ Հօրս *գոյնն
50 լինել։ Եւ անոնք չհասկցան խօսքը զոր
51 ըսաւ անոնց։ Եւ իջաւ անոնց հետ և
գնաց Նազարէթ, և հնազանդ էր ա-
նոնց. բայց անոր մայրն այս ամէն խօս-
քերը կը պահէր իւր սրտին մէջ։
52 Եւ Յիսուս կը զարգանար իմաստու-
թեամբ և հասակաւ, և շնորհքով †դէպ Աստուծմէ և ի մարդկանէ։

## Գլ. Գ

1 Տիբերիոս կայսեր թագաւորութեան հնգետասաներորդ տարին, ի կառավարութեան Պոնտացի Պիղատոսի Հրէաստանի վրայ, և ի չորրորդպետութեան Հերովդէ Գալիլեացւոց վրայ, և ի չորրորդպետութեան անոր եղբօրը

*Կամ ի տրամիրուն մէջ

Փիլիպպոսի Իտուրացւոց և Տրաքոնա-
գւոց երկրին վրայ, և ի չորրորդպետու-
թեան Լիւսանեայ Աբիլինացւոց վրայ,
2 Ե– ի քահանայապետութեան Անննայի
և Կայիափայ, Աստուծոյ խօսքը եղաւ
Զաքարիայի որդւոյն Յովհաննու վրայ
3 անապատին մէջ։ Եւ եկաւ նա Յորդա-
նանու բոլոր կողմերը, և կը քարոզէր
մկրտութիւն ապաշխարութեան ի թո-
4 ղութիւն մեղաց. Ինչպես որ նաչեայ
մարգարէի խօսքերուն գրքին մէջ գը-
րուած է ըսելով, Անապատի մէջ կան-
չողին ձայնը, Տէրոջը ճամբան պատ-
րաստեցէք, անոր շաւիղներն ուղղե-
5 ցէք. Ամէն ձոր պիտի լցուի, և ամէն
լեռ և բլուր պիտի խոնարհի, և ծռե-
ռը պիտի ուղղուին, և խորտուբորտ
տեղեր պիտի ըլլան հարթ ճանապարհ.
6 Եւ ամէն մարմին պիտի տեսնէ Աստու-
ծոյ փրկութիւնը։
7 Եւ ժողովրդոց որ անկէ մկրտուելու
կ'ելլէին՝ ըսաւ, Ովնուդք իժից, ո՞վ ի-
մացուց ձեզ փախչել գալու բարկու-
8 թենէն։ Ուրեմն ապաշխարութեան ար-
ժանի պտուղներ բերէք, և մի սկսիք
ըսել յանձինս Թէ Մեզ հայր ունինք
մեզ զՄրբահամ, քանզի կ'ըսեմ ձեզ
որ Աստուած կարող է այս քարերէն
9 հանել Աբրահամու որդիներ. Եւ արդ
կացինը կը դրուի ծառերուն արմա-
տին. ուստի ամէն ծառ որ բարի պը-
տուղ չբերէր՝ կը կտրուի և կը նետուի
10 ի հուր։ Եւ ժողովրդները կը հար-
ցունէին անոր և կ'ըսէին, Ուրեմն ի՞նչ
11 ընենք։ Պատասխան առաւ և ըսաւ
անոնց, Ով որ երկու հանդերձ ունի՝
թող չունեցողին, և ով որ
12 կերակուր ունի՝ նոյնպես ընէ։ Մաք-
սաւորք ևս եկան մկրտուիլ, և ըսին ա-
նոր, Վարդապետ, մենք ի՞նչ ընենք։
13 Եւ նա ըսաւ անոնց, Մի պահանջէք ա-
14 ւելի քան զոր հրամայուած է ձեզ։ Զին-
ուորք ևս կը հարցունէին անոր և կ'ը-
սէին, Եւ մենք ի՞նչ ընենք։ Ըսաւ ա-
նոնց, Մի զոք հարստահարէք, և մի՛ զ-
ր՛ր՛ զրպարտութիւն մի ընէք, և
բաւականացէք ձեր թոշակով։

15 Երբ ժողովուրդը կը սպասէր, և ա-
մէնքն իրենց սրտերուն մէջ կը խոր-
հէին Յովհաննու համար թէ Միթէ սա
16 է Քրիստոսը, Յովհաննէս պատասխան
տուաւ ամենուն և ըսաւ, Ես կը մկըր-
տեմ զձեզ ջրով, բայց քան զիս աւել-
ի զօրաւորը կու գայ, որուն ես կօշիկ-
ներուն կապերը քակել չեմ արժանի,
նա պիտի մկրտէ զձեզ Հոգւով Սրբով
17 և հրով· Որուն հեծանոցը իր ձեռքն է,
և պիտի մաքրէ իր կալը, և ցորենը
պիտի ժողովէ իր շտեմարանը, և յար-
18 դը պիտի այրէ անշէջ հրով· Ուրիշ
շատ բաներ ևս կը քարոզէր ժողովուր-
դը յորդորելով·
19 Բայց Հերովդէս չորրորդապետ յան-
դիմանուելով անկէ իր *եղբօրը կնոջ
Հերովդիայի համար, և բոլոր չարու-
թիւններուն համար զոր Հերովդէս գոր-
20 ձեց, Ա,ին ամենուն վրայ սա ևս ա,ել-
ցուց, որ զՅովհաննէս բանտի մէջ փա-
կեց·
21 Եւ երբ բոլոր ժողովուրդը մկրտեցաւ,
և Յիսուս ևս մկրտուելով աղօթք կ'ը-
22 նէր, երկինք բացուեցաւ, եւ Հոգին
Սուրբ մարմնաւոր տեսակաւ իջաւ ա-
նոր վրայ ազաւնւոյ պէս, և եկաւ յերկ-
նից ձայն որ կ'ըսէր, Դու ես սիրելի
Որդիս, քեզի հաճեցայ·
23 Եւ ինքն Յիսուս սկսած էր լինել գր-
եթէ երեսնամեայ, որ (ինչպէս կը
կարծուէր) էր որդի Յովսեփայ, որ
24 Հեղեայ, որ Մատթայ, Որ Ղեւեայ,
որ Մելգեայ, որ Յաննէայ, որ Յովսե-
25 փայ, Որ Մատաթիայ, որ Ամովսայ, որ
Նաւումայ, որ Եսղեայ, որ Նաագէի,
26 Որ Մաաթայ, որ Մատաթիայ, որ Սե-
27 մէեայ, որ Յովսեփայ, որ Յուդայի, Որ
Յովհաննայ, որ Բեսայի, որ Զօրաբա-
28 բելի, որ Սաղաթիելի, որ Նէրեայ, Որ
Մելգեայ, որ Ադդեայ, որ Կոսամայ,
29 որ Եղմոդադայ, որ Իրայ, Որ Յով-
սեայ, որ Եղիազարու, որ Յովրիմի, որ
30 Մատաթայ, որ Ղեւեայ, Որ Սիմէոնի,
որ Յուդայի, որ Յովսեփայ, որ Յոնիա-
31 նու, որ Եղիակիմայ, Որ Մելեայ, որ
Մայնանայ, որ Մատաթայ, որ Նաթա-
32 նու, որ Դաւիթ, Որ Յեսսեայ, որ Ով-
բեդի, որ Բոոսի, որ Սաղմնի, որ Նա-
33 ասոնի, Որ Ամինադաբայ, որ Արամայ,
որ Եսրոնի, որ Փարեսի, որ Յուդայի,
34 Որ Յակոբայ, որ Իսահակայ, որ Աբ-
րահամու, որ Թարայի, որ Նաքովրայ,
35 Որ Սերուգայ, որ Ռագաւայ, որ Փա-
36 ղեկայ, որ Եբերայ, որ Սաղայի, Որ
Կայնանու, որ Արփաքսադայ, որ Սե-
37 մայ, որ Նոյի, որ Ղամեքայ, Որ Մա-
թուսաղայի, որ Ենովքայ, որ Յարեդի,
38 որ Մաղաղիելի, որ Կայնանու, Որ Ե-
նոսայ, որ Սեթայ, որ Ադամայ, որ
Աստուծոյ·

## Գլ· Դ

1 Եւ Յիսուս Հոգւով Սրբով լցուած
դարձաւ Յորդանանէ, և ի Հոգւոյն վա-
2 րեցաւ յանապատ, Եւ քառասուն օր
փորձուեցաւ Սատանայէն· և այն օրե-
րը բան չկերաւ, և այն չէրեքն կատա-
րուելէն ետքը անօթեցաւ·
3 Եւ Սատանան ըսաւ անոր, Եթէ Որ-
դի ես Աստուծոյ, ըսէ այդ քարին որ
4 հաց ըլլայ· Եւ Յիսուս պատասխան տը-
ւաւ անոր և ըսաւ, Գրուած է Թէ Ոչ
հացիւ միայն կ'ապրի մարդ, այլ Աս-
տուծոյ ամէն խօսքով·
5 Եւ Սատանան հանելով զնա բարձր
լեռ մը, ցուցց անոր ի վայրկեան ժա-
մանակի աշխարհի բոլոր թագաւորու-
6 թիւնները· Եւ Սատանան ըսաւ անոր,
Այս ամէն իշխանութիւնը և անոր
փառքը պիտի տամ քեզ, քանզի ինձ
յանձնուած է, և որու որ կամիմ՝ կու-
7 տամ զայն· Ուստի եթէ երկրպագու-
թիւն ընես իմ առջեւս, ամէնն ըլլայ
8 քեզ· Եւ Յիսուս պատասխան տուաւ
անոր և ըսաւ, *Գրուած է Թէ Տէր
Աստուծոդ երկրպագութիւն ը-
նես, և զնա միայն պաշտես·

*Ոմանք եղբօրը՝ Փիլիպպոսի

*Ոմանք եւթես գնա, Սատանայ, վասն զի
գրուած



9 Եւ տարաւ զնա Երուսաղէմ և կե-
ցուց տաճարին աշտարակին վրայ, և
ըսաւ անոր, Եթէ Որդի ես Աստուծոյ,
10 վար նետէ զքեզ ասկէ· Քանզի գրուած
է Թէ Իր հրեշտակներուն պիտի պա-
տուիրէ քեզի համար որ պահեն զքեզ·
11 Եւ իրենց ձեռաց վրայ պիտի վերցու-
նեն զքեզ, որ քարի չդարնես ոտքդ·
12 Եւ Յիսուս պատասխան տուաւ և ը-
սաւ անոր, Ըսուած է Թէ Տուր Տէր
13 Աստուծդ չփորձես· Եւ երբ Սատա-
նան կատարեց ամէն փորձութիւնը,
Ժամանակ մը ետ կեցաւ անկէ·
14 Եւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն Գա-
լիլեա գարձաւ, և անոր համբաւը տա-
րածեցաւ այն գաւառին ամէն կողմե-
15 րը· Եւ անոնց ժողովրդանոցներուն
մէջ կը սորվեցուներ, և կը փառաւո-
րուէր ամենուն·
16 Եւ հկաւ Նազարէթ ուր սնած էր, և
ըստ իւր սովորութեան շաբաթ օրը
մտաւ ժողովրդանոցը, և ելաւ կար-
17 դալ· Եւ տուին անոր Եսայեայ մար-
գարէին գիրքը· և երբ բացաւ գիրքը,
18 գտաւ այն տեղն ուր գրուած էր, Տէ-
րոջը Հոգին իմ վրաս է· *քանզի օծեց
զիս, աւետարանել աղքատաց զրկեց
19 զիս, բժշկել սրտին բեկեալներըը, գո-
րոզել գերեալ թողութիւն և կուրաց
տեսանել, հարատահարեալներն ազա-
տել յարատութիւն, քարոզել Տէրոջը
20 ընդունելի տարին, Եւ գիրքը գոցելով
տուաւ սպասաւորին և նստաւ· և ա-
մէնեցուն որ ժողովրդանոցին մէջ էին
աչքերնին ի նա յառեալ կը նայէին,
21 Եւ սկսաւ ըսել անոնց, Այսօր լցաւ
22 այս գրուածն յականջս ձեր· Եւ ամէն-
քը կը վկայէին անոր, և կը զարմանա-
յին շնորհաց խօսքերուն վրայ որ կ'ել-
լէին անոր բերնէն, և կ'ըսէին, Ոչ սա
23 է որդին Յովսեփայ· Եւ ըսաւ անոնց,
Ապառքն պիտի ըսէք ինձ այս առակը,
Բժիշկ, բժշկուա զանձն քոյ· որչափ բան
լսեցինք Թէ եղաւ ի Կափառնայում,
24 հաս ևս ըրէ քոյ քաղաքիդ մէջ· Եւ

*Կամ վասն որոյ

25 ըսաւ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Թէ Մար-
գարէ ընդունելի չէ իւր քաղաքը· Եւ
ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Թէ շատ այ-
րիներ կային Եղիայի օրերը Իսրայէլի
մէջ, երբ երկնք սարի և վեց ամիս վա-
26 կեցան երկինքը, այնպէս որ մեծ սով
եղաւ բոլոր երկրին մէջ· Եւ Եղիա ա-
նոնցմէ մարդու չղրկուեցաւ, բայց մի-
այն Սիդոնացւոյ Սարեփթա հոլովէ
27 մէջ այրի կնոջ մը· Եւ շատ բորոտներ
կային Իսրայէլի մէջ Եղիսէ մարգարէին
ատեներ, և անոնցմէ ոչ ոք մաքրուե-
28 ցաւ, բայց միայն Նէեման Ասորի· Եւ
ժողովրդանոցին մէջ ամէնքը լցան բար-
29 կութեամբ երբ լսեցին այս խօսքերը, Եւ
ելան հանեցին զնա քաղաքէն դուրս,
և տարին զնա մինչև լերան ծառևանքը
որուն վրայ շինուած էր անոնց քաղա-
քը, որպէս զի բարձր տեղէն վար նե-
30 տին զնա· Բայց նա անոնց մէջէն ան-
ցաւ գնաց·
31 Եւ իջաւ Գալիլեայի Կափառնայում
քաղաքը, և շաբաթ օրերը կը սորվե-
32 ցնէր անոնց· Եւ կը զարմանային ա-
նոր վարդապետութեան վրայ, քանզի
33 իշխանութեամբ էր անոր խօսքը· Եւ
ժողովրդանոցին մէջ մարդ մը կար, որ
ունէր պիղծ դեւի ոգի, և մեծ ձայնով
34 աղաղակեց Ըսելով, Թող տուր, մեզի
հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս Նազով-
րեցի· Միթէ կորսուանել եկար զմեզ·
գիտեմ զքեզ ով ես, Սուրբ Աստու-
35 ծոյ· Եւ Յիսուս սաստեց անոր ըսելով,
Պապանձէ և ել ասկէ· և զգետնեց
զնա դևն ի մէջի, և ելաւ անկէ, և չվը-
36 նասեց անոր· Եւ զարմանք եկաւ ամե-
նուն վրայ, և իրարու հետ կը խօսէին
և կ'ըսէին, Ի՞նչ խօսք է այս, որ ի-
շխանութեամբ և զօրութեամբ կը հրա-
37 մայէ պիղծ ոգիներուն, և կ'ելլեն· Եւ
անոր համբաւը տարածեցաւ չրջակայ
գաւառին բոլոր տեղերը·
38 Եւ ժողովրդանոցէն ելլելով մտաւ
39 Սիմոնի տունը· Եւ Սիմոնի զոքանչը կը
ապտակէր տաստիկ չերմանալ, և աղա-
40 չեցին զնա անոր համար· Եւ Յիսուս
կենալով առ նմա տաստաց չերմանալ, որ

Թողուց զնա. և վաղվաղակի ելաւ և
կը ապաւաւորէր անոնց։
41 Եւ երբ արևը կը մտնէր, ամէնքը որ
ունէին հիւանդներ պէս պէս ցաւօք,
բերին զանոնք անոր. և նա անոնցմէ
իւրաքանչիւրին վրայ ձեռք դնելով
42 բժշկեց զանոնք։ Դեւք ևս կ'ելլէին շա-
տերէն, կ'աղաղակէին և կ'ըսէին Թէ
Դուն ես Քրիստոս, Աստուծոյ Որդին։
Եւ նա կը սաստէր և չէր Թողուր ա-
նոնց խօսիլ, քանզի գիտէին Թէ նա է
Քրիստոսն։
43 Եւ երբ առաւ եղաւ, ելաւ և գնաց ա-
նապատ տեղ, և ժողովուրդները կը
փնտռէին զնա, և եկան մինչև առ նա,
և կը սահմռկէին զնա որ իրենցմէ չերթար,
44 Բայց նա բաւ անոնց, Պարտ է ինձ ու-
րիշ քաղաքներու ևս աւետարանել
Աստուծոյ Թագաւորութիւնը, քանզի
45 առ այս ղրկուած եմ։ Եւ Գալիլեայի
ժողովրդապետներուն մէջ կը քարոզէր։

## Գլ. Ե

1 Եւ եղաւ որ երբ ժողովուրդը դիզուե-
ցաւ անոր բովը թափուիլը լսել Աստուծոյ
խօսքը, ինք կեցած էր Գեննեսա-
2 րեթի ծովակին քով։ Եւ տեսաւ եր-
կու նաւ որ կեցած էին ծովակին
քով, և ձկնորսներն էղելով անոնց
3 մէջէն կը լուային ուռկաններըը։ Եւ մը-
տաւ նա այն նաւերէն մին որ Սիմոնին
էր, և ազատիլ զնա ցամաքէն քիչ մը
հեռու տանել։ և նստելով կը սորվե-
ցուներ ժողովուրդը նաւէն։
4 Եւ երբ դադարեցաւ խօսելէ, ըսաւ
Սիմոնի, Աւազ տար դէպ ի խո-
րը, և նետեցէք ձեր ուռկաններն որ-
5 ոչ համար։ Եւ Սիմոն պատասխան տա-
լով ըսաւ անոր, Վարդապետ, բոլոր
գիշերս ալխատեցանք և բան մը չբռնա-
նեցինք, բայց քու խօսքիդ համար նե-
6 տեմ ուռկանը։ Եւ երբ բրին գային,
փակեցին ի մէջ մեծ բազմութիւն ձր-
կանց, մինչև կը պատռտէր ուռկա-
7 նը։ Եւ կ'անհարկեին իրենց բնկեր-
ներուն որ միւս նաւուն մէջ էին՝ գալ
օգնել անոնց. և եկան և երկու նա-
ւերն ևս լցուցին, մինչև մօտ էին ընկըղ-
8 մել։ Սիմոն Պետրոս երբ տեսաւ, ին-
կաւ առ Յուսկան Յիսուսի և ըսաւ,
Տէր, ի բաց զնա ինէ, քանզի մեղաւոր
9 մարդ եմ ես։ Վասն զի ապշութիւն
պատեց զնա և ամէնքը որ անոր հետ
էին՝ ձուկերուն որսին համար զոր
10 բռնեցին. Նոյնպէս և Զեբեդէոսի որ-
դիքը, զՅակոբոս և զՅովհաննէս, որ
Սիմոնի բնկերներն էին։ Եւ Յիսուս ը-
սաւ Սիմոնի, Մի վախնար, այսուհետև
11 մարդոց որսորդ պիտի ըլլաս։ Եւ նա-
ւերը ցամաք հանելով ամէն բան Թո-
ղուին և գացին անոր ետևէն։
12 Եւ եղաւ որ երբ նա քաղաքի մը մէջ
էր, ահա մարդ մը լի բորոտութեամբ,
երբ տեսաւ զՅիսուս, երեսի վրայ կը-
նալով ազաչէց զնա և ըսաւ, Տէր, եթէ
13 կամիս, կրնաս մաքրել զիս։ Եւ Յիսուս
երկնցունելով ձեռքը դպաւ անոր, և
ըսաւ, Կամիմ, մաքրուէ։ Եւ իսկոյն
14 գնաց անկէ բորոտութիւնը։ Եւ նա
պատուիրեց անոր մարդու չըսել, այլ
ըսաւ, Գնա ցոյց գքեզ քահանային և
տուր մաքրութեանդ ընծան, ինչպէս
պատուիրեց Մովսէս անոնց վկայու-
15 թեան համար։ Եւ անոր համբաւն ա-
ւելի կը տարածուէր. և շատ ժողովուրդ-
ներ կը ժողովուէին լսել, և բժշկուիլ
16 անոնց իրենց հիւանդութիւններէն։ Եւ
նա խոյս կու տար անապատ տեղերը և
աղօթք կ'ընէր։
17 Եւ եղաւ որ օր մը ինք կը սորվեցու-
նէր, և նստած էին փարիսեցիք և օ-
րինաց վարդապետք, որ Գալիլեայի և
Հրէաստանի և Երուսաղէմի բոլոր գիւ-
ղաքաղաքներէն ժողոված էին. և
Տէրոջը զօրութիւնը ներկայ էր բժշկել
18 զանոնք։ Եւ ահա ոմանք անդ ամլացած
մը բերին մահճով, և հնար կը խնդ-
րէին Թէ ինչպէս մտցնեն զնա ի
19 ներքս, և դնեն անոր առջև։ Եւ երբ
բազմութենէն չէին գտներ Թէ ուստի
մտցնեն զնա ի ներքս, երան ամանի-
քը, և կղմինտրներէն մահճով իջուցին
20 զնա ի մէջ Յիսուսի առջև։ Եւ նա տես-



նելով անոնց հաւատքն՝ ըսաւ, Ո-
21 վբ դու, քու մեղքերդ ներուած են
քեզ։ Եւ գրագէրդ և փարիսեցիք սկսան
խորհիլ և ըսել, Ո՞վ է սա որ հայհո-
յութիւններ կը խօսի. ո՞վ կրնայ մե-
ղաց Թողութիւն տալ, բայց միայն Ա-
22 ստուած։ Եւ Յիսուս իմանալով անոնց
խորհուրդները պատասխան տուաւ և
ըսաւ անոնց, Ի՞նչ կը խորհիք ձեր սրբ-
23 տերուն մէջ։ Ո՞րն աւելի դիւրին է,
ըսել Քու մեղքերդ քեզի ներուած են,
24 Թէ ըսել Ել և քալէ։ Բայց որպէս զի
գիտնաք Թէ Որդին մարդոյ իշխանու-
Թիւն ունի երկրի վրայ մեղաց Թողու-
Թիւն տալու, ըսաւ անդամալուծին,
Կ'ըսեմ քեզ, Ել, առ մահիճդ և գնա
25 տունդ։ Եւ նա իսկոյն ելաւ անոնց առ-
ջև, և վրան առաւ ինչ բանի վրայ որ
պառկած էր, և գնաց իւր տունը, և
26 փառք կու տար Աստուծոյ։ Եւ ամէն-
քին ապշած մնացին, և փառք կու տա-
յին Աստուծոյ, և լի սիրտ կ'ըսէին Թէ
Այսօր նորանչան բաներ տեսանք։
27 Եւ յետ այսորիկ ելաւ առնէ, և տես-
աւ մաքսատուր մը որոյ անունն էր
Ղեւի, որ նստած էր մաքս ընդունելու-
տեղը, և ըսաւ անոր, Եկո՛ հետևէս։
28 Եւ նա Թողուց ամէնը և ելաւ գնաց
29 անոր հետևէն։ Եւ Ղեւի անոր մեծ կո-
չունք մը ըրաւ իւր տունը. և շատ բազ-
մութիւն կար մաքսատուրներու և ու-
րիշներու որ անոնց հետ սեղան նստած
30 էին։ Եւ անոնց գրագիրները և փարիսե-
ցիք տրտունջ կ'ընէին անոր աշակերտ-
ներուն և կ'ըսէին, Ընդէ՞ր մաքսատուր-
ներուն և մեղաւորներուն հետ կ'ու-
31 տէք և կը խմէք։ Եւ Յիսուս պատաս-
խան տալով ըսաւ անոնց, Ոչ է պիտոյ
32 բժիշկ ողջոց, այլ հիւանդաց. Ես չե-
կայ կոչել արդարները, այլ մեղաւոր-
ներն յապաշխարութիւն։
33 Եւ անոնք ըսին անոր, Ընդէ՞ր Յով-
հաննու աշակերտները շատ անգամ
Ծոմ կը պահեն և աղօթք կընեն, նոյն-
պէս և փարիսեցոցը, և քոյդդ կ'ու-
34 տեն և կը խմեն։ Եւ նա ըսաւ անոնց,
Կրնա՞ք մանկանց առագաստի Ծոմ պա-
հել մինչ անոնց հետ է փեսան։
35 Բայց պիտի գան օրեր, և երբ փեսան
վերցուի անոնցմէ, ապա այն օրերը
36 Ծոմ պիտի պահեն։ Առակ մի ևս ըսաւ
անոնց, Թէ Ոչ ոք կ'արկանէ նոր հան-
դերձէ կտորա հին հանդերձի վրայ.
ապա Թէ ոչ կը պատռտէ նաև նորը,
և ոչ հնոյն հետ կը միաբանի կտորը։
37 Եւ որ նորէն է։ Եւ ոչ ոք նոր գինին
կը դնէ հին ափերու մէջ. ապա Թէ ոչ
նոր գինին կը պատռտէ *ափկերը, ինք
38 կը Թափի և ափկերը կը կորնչին. Այլ
նոր գինին գրուելու է նոր ափերու մէջ,
39 և երկոքեան կը պահուին։ Եւ ոչ ոք
հին գինին խմելէն ետքը կ'ուզէ անմի-
ջապէս նորը, քանզի կ'ըսէ Թէ Հինը
լաւագոյն է։

## Գլ. Զ

1 Եւ եղաւ որ երկրորդ առաջին շաբաթ
օրը ինք արտերէն կ'անցնէր, և աշա-
կերտները ցորնեղէն հասկեր կորզելով կը
ջախչախին իրենց ափերուն մէջ և կ'ուտէին։
2 Եւ փարիսեցիներէն ոմանք ըսին ա-
նոնց, Ինչո՞ւ կ'ընէք զոր ընել արժան
3 չէ շաբաթ օրը։ Եւ Յիսուս պատասխան
տալով անոնց ըսաւ, Չէ՞ք կարդացած
դուք ինչ որ Դաւիթ ըրաւ, երբ անօ-
4 թեցաւ ինք և որ անոր հետ էին. Ինչպէս
մտաւ նա Աստուծոյ տունը, և առաւ
առաջաւորութեան հացերը և կերաւ,
և տուաւ անոնց ևս որ անոր հետ էին.
զոր չէր օրէն ուտել, բայց միայն քա-
5 հանայից։ Եւ ըսաւ անոնց, Որդին մարդ-
ոյ Տէր է նաև շաբաթուս։
6 Եւ եղաւ որ ուրիշ շաբաթ օր մը ինք
ժողովրդանոցը մտաւ և կը սորվեցու-
նէր. և հոն մարդ մը կար որոյ աջ ձեռ-
7 քը գօսացեալ էր։ Եւ գրիչքն և փարի-
սեցիք կը սպասէին անոր Թէ շաբաթ
օրը կը բժշկէ՞ զնա, որպէս զի չարաս-
8 խօսութիւն գտնեն անոր դէմ։ Իսկ
նա գիտնալով անոնց խորհուրդներն
ըսաւ այն մարդուն որոյ ձեռքը գօսա-

*Ո՛նահ՝ հին ափկերը

ցեալ էր, Ել, կանգնէ մէջտեղ. և նա
9 եկաւ կանգնեցաւ. Անաանն Յիսուս ը-
նաւ անոնց, Հարցունեմ ձեզ. Շաբաթ
օր ի՞նչ արժան է, բարի՞ ընել թէ չար
գործել, հոգի մը ապրեցունե՞լ թէ կո-
10 րսուանել. Եւ նայեցաւ շուրջ ամենուն
վրայ, ըսաւ անոր, Երկնցու ձեռքդ.
Եւ նա ըրաւ այնպէս, և անոր ձեռքը
11 ողջացաւ իբրև մէնաը. Եւ անոնք կա-
տաղութեամբ լցան, և իրարու հետ կը
խօսէին թէ ինչ ընէին Յիսուսի.
12 Եւ եղաւ որ այն օրերը լեռը եկաւ
աղօթք ընել, և բոլոր գիշերն անցուց
13 աղօթք ընելով Աստուծոյ. Եւ երբ ա-
ռաւօտ եղաւ, կոչեց աշակերտները, և
ընտրեց անոնցմէ երկոտասան հոգի,
14 զորս և առաքեալ անուանեց. ԶՍիմոն
զոր և Պետրոս անուանեց, և անոր
եղբայրը զԱնդրէաս, զՅակոբոս և զը-
Յովհաննէս, զՊիլիպպոս և զԲարթո-
15 ղիմէոս, զՄատթէոս և զԹովմաս, և
զՅակոբոս Ալփեան և զՍիմոն որ կը կո-
16 չուէր նախանձայոյզ, Յակոբոսի եղբայրն
զՅուդա և զՅուդա իսկարիովտացի որ
17 և եղաւ մատնիչ. Եւ անոնց հետ իջնե-
լով կեցաւ տափարակ տեղ մը, նաև
աշակերտներուն ժողովը և մեծ բազ-
մութիւն ժողովրդեան բոլոր Հրէաս-
տանէ և Երուսաղէմէ և Տիւրոսի և
18 Սիդոնի ծովեզրէն, որ եկան լսել ա-
նոր և բժշկուիլ իրենց հիւանդու-
թիւններէն. և անոնք որ պիղծ ո-
գիներէ կը նեղուէին՝ ելան և կը բժշը-
19 կուէին. Եւ բոլոր ժողովուրդը կ'ուզէր
դպչիլ անոր, քանզի զօրութիւն կ'ել-
լէր անկէ և կը բժշկէր ամենքը.
20 Եւ նա զէպ իւր աշակերտները վեր-
ցուց այուրներուն և ըսաւ, Երանի՝ Հէ-
ադքաաացդ, վասն զի ձեր է Աստու-
21 ծոյ թագաւորութիւնը. Երանի՝ Հէ՛ որ
հիմա անօթի էք, քանզի պիտի յագե-
նաք. Երանի՝ Հէ՛ որ հիմա կուլաք,
22 քանզի պիտի խնդաք. Երանի է ձեզ
երբ աներն զձեզ մարդիկ, և երբ որո-
շեն զձեզ և նախատեն, և հանեն անուն
չար ձեր վրայ վասն Որդւոյ մարդոյ.
23 Ուրախ եղէք դուք այն օրը և ցնծա-
ցէք, զի ահա ձեր վարձքը շատ է յեր-
կինս. վասն զի անոնց հայրերն այդպէս
24 կ'ընէին մարգարէներուն. Բայց վայ
ձեզ մեծատանց, վասն զի առած էք
25 ձեր մխիթարութիւնը. Վայ ձեզ որ
յագեալ էք, վասն զի պիտի անօթե-
նաք. Վայ ձեզ որ կը ծիծաղիք այժմ,
26 վասն զի պիտի ագաք և լաք. Վայ ձեզ
երբ բարի խօսին Հմարդիկ ձեր վրայ,
վասն զի անոնց հայրերն այդպէս կ'ը-
նէին սուտ մարգարէներուն.
27 Բայց կ'ըսեմ ձեզ որ կը լսէք, Սի-
րեցէք ձեր թշնամիները, բարի ըրէք
28 զձեզ ատողներուն, Օրհնեցէք զձեզ ա-
նիծողները, աղօթք ըրէք ձեզ նեղու-
29 թիւն տուողներուն համար. Անոր որ
կը զարնէ քու ծնօտիդ՝ մատեցուր նաև
միսը. և անիկ որ քու վերարկուդ կը
հանէ քեզմէ, մի արգելուր նաև շա-
30 պիկդ. Ամէն ումեակն որ քեզմէ կը խընդ-
րէ՝ տուր, և ինչ որ կ'առնու ոք քե-
31 զմէ մի պահանջեր. Եւ ինչպես կամիք
թէ ընեն ձեզ մարդիկ, և դուք այն-
32 պես ըրէք անոնց. Եւ եթէ դուք սի-
րէք զձեզ սիրողները, ի՞նչ շնորհ կու-
նենաք. վասն զի մեղաւորք ևս կը սի-
33 րեն զիրենք սիրողները. Եւ եթէ ձեր
բարերարներուն բարի ընէք, ի՞նչ շը-
նորհ կ'ունենաք. վասն զի մեղաւորք
34 ևս կ'ընեն զնոյն. Եւ եթէ փոխ տաք
այնպիսի մարդոց յորոց յոյս ունիք
առնուլ, ի՞նչ շնորհ կ'ունենաք. քան-
զի մեղաւորք ևս փոխ կուտան մեղա-
ւորաց, որ նոյն չափով առնուն հատ.
35 Այլ սիրեցէք զուք ձեր թշնամիները,
և բարի ըրէք, և փոխ առէք առանց
յուսալու բան մը, և ձեր վարձքը շատ
պիտի ըլլայ, և Բարձրելոյն որդիք պի-
տի ըլլաք. քանզի քաղցր է նա ա-
36 պերախաներուն և չարերուն. Ուրեմն
գթած եղէք ինչպես ար ձեր Հայրն ևս
37 գթած է. Մի դատէք, և պիտի չդատ-
ուիք. մի դատապարտէք, և պիտի չը
դատապարտուիք. Ներեցէք, և պիտի
38 ներուի ձեզ. Տուէք, և պիտի արուի

*Ոմանք բոլոր մարդիկ



ձեզ. չափ բարւոք, կոխուած, ցնցը-
ուած, ղեզուն, պիտի արուի ձեր գո-
գը. քանզի այն չափով որով կը չա-
փէք՝ պիտի չափուի ձեզ.
39 Առակ մի ևս բսաւ անոնց, Միթէ
կուրը կրնա՞ կուրդին կուրի, ո՞չ
40 ամբողջն երկոքեան պիտի իյնան ի
խորխորատ. Աշակերտը չէ մեծ քան
իր վարդապետը, բայց ամէն կատար-
եալ վարժուած կ'ըլլայ իբրև իր վար-
դապետը.
41 Եւ ընդէ՞ր կը տեսնես շիւղը որ եղ-
բօրդ աչքին մէջ է, և չես նշմարեր գե-
42 րանը որ է քու աչքիդ մէջ, կամ ի՞նչ-
պես կրնաս ըսել քու եղբօրդ, Եղբայր,
թող հանեմ շիւղը որ քու աչքիդ մէջ
է, և դուն չես տեսներ քու աչքիդ
մէջ գերանը. կեղծաւոր, հանէ նախ
գերանը քու աչքէդ, և ապա յստակ
պիտի տեսնես հանել շիւղը որ է եղ-
43 բօրդ աչքին մէջ. Քանզի չկայ բարի
ծառ որ չար պտուղ բերէ, և ոչ չար
44 ծառ որ բարի պտուղ բերէ. Վասն զի
ամէն ծառ կը ճանչցուի իր պտղէն.
քանզի փուշերէ չեն քաղեր թուզ, և
45 ոչ մորենիէ կը ժողովեն խաղող. Բարի
մարդ իւր սրտին բարի գանձէն կը բըղ-
խէ բարին, և չար մարդ իւր սրտին
չար գանձէն կը բղխէ չարը. քանզի ի
յաւելուածոյ սրտի խօսի բերան.
46 Ի՞նչ ընդէ՞ր կը կոչէք զիս, Տէր, Տէր,
47 և ինչ որ կ'ըսեմ չէք կատարեր. Ամէն
ումեակը որ կու գայ առ իս և կը լսէ
իմ խօսքերս և կը կատարէ զանոնք,
48 ցուցնեմ ձեզ թէ որու կը նմանի. կը
նմանի տուն շինող մարդու, որ փորեց
և խորեց, և հիմը դրաւ վրայի վրայ.
և երբ յուրերուն յորդեցին, զեղը զար-
կաւ տանը, և չկրցաւ շարժել զայն,
վասն զի վրայ հաստատուած էր.
49 Բայց ով որ էՀ Էհէ՛էր կը լսէ և չկա-
տարէր, կը նմանի մարդոյ որ հողի վը-
րայ առանց հիման շինեց տուն, որուն
գարկաւ գետը, և վազվազակի փլաւ,
և այն տան կործանումը մեծ էր.

## Գլ. Ե

1 Եւ երբ իւր բոլոր խօսքը կատարեց
ժողովրդեան ականջին, մտաւ Կափառ-
2 նայում. Եւ ծառը հիւանդացած մեռ-
էր մեռնելու հարիւրապետի մը ծառայ
3 որ սիրելի էր անոր. երբ Յիսուսէ վրայ
լսեց, Հրեաներէն Հէ՛ծերէր ղրր-
կելով աղաչեց զնա գալ ապրեցունել
4 իւր ծառան. Եւ անոնք եկան Յիսուսի
և թախանձանօք կ'աղաչէին զնա և
կ'ըսէին թէ Արժանի է նա օգուն այս
5 ԸնծէՀ ընես. Քանզի կը սիրէ մեր ազ-
գը, և ժողովրդանոցը նա շինեց մեզ.
6 Եւ Յիսուս գնաց անոնց հետ. երբ շատ
հեռու չէր տունէն, հարիւրապետը ղրր-
կեց անոր բարեկամներ, և ըսաւ անոր,
Տէր, մի յոգնիր, քանզի արժանի չեմ
7 որ իմ յարկիս տակ մտնես. վասն
որոյ և ես արժանի չհամարեցայ զիս
գալ առ քեզ, այլ ըսէ բանիւ և պի-
8 տի բժշկուի ծառաս. Քանզի և ես
մարդ եմ ընդ իշխանութեամբ և հրա-
մանս տակ ունիմ զինուորներ. և ա-
սոր կ'ըսեմ, Գնա, և կ'երթայ. և մի-
սին Թէ եկու, և կու գայ. և ծառա-
9 յիս Թէ Ըրէ զայս, և կ'ընէ. Յիսուս
լսելով ատոնք զարմացաւ անոր վրայ.
և իբր եաւէն գացող ժողովրդեան
դարձաւ և ըսաւ, կ'ըսեմ ձեզ, որ Իս-
րայէլի մէջ անգամ չգտայ այսչափ
10 հաւատք. Եւ պատգամաւորները տուն
դարձան, և գտան հիւանդ ծառան ա-
ռողջացած.
11 Եւ եղաւ որ հետեւեալ օրը քաղաք
մը կ'երթար որոյ անունն էր Նային,
և անոր հետ կ'երթային աշակերտնե-
12 րէն շատերը և մեծ բազմութիւն. Եւ
երբ մատեցաւ քաղաքին դրան, ահա
մեռեալ մը դուրս կը հանէին, իբր մե-
րը միամօր որդին. և նա այրի էր, և
քաղաքին շատ ժողովուրդն անոր հետ
13 էր. Եւ Տէրը տեսնելով զնա, գթաց
անոր վրայ, և ըսաւ անոր, Մի լար.
14 Եւ մօտենալով դպաւ դագաղին, և
տանողներն զկայ առին. Եւ ըսաւ, Ով
տանուկն, կ'ըսեմ քեզ, Ել. Եւ մեռե-
15 ալն նստաւ, կ'ըսէր քեզ, Ել. Եւ մեռե-

հալը եկաւ նասաւ, և սկսաւ խօսել,
16 և ասաւ գնա իւր մօրը։ Եւ ամենևքին բանեւեցան ասխս, և կը փառաւորէին զԱստուած ըսելով թէ Մեծ մարգարէ եղած է մեր մէջ, և թէ Աստուած այցելութիւն բրաւ իւր ժողո-
17 վրդեան։ Եւ այս ձայնն անոր վրայ եկաւ բոլոր Հրէաստան և բոլոր չրջակայ տեղեր։
18 Եւ պատմեցին Յովհաննու անոր աշակերտներն այս ամէն բաներուն վրայ։ Եւ Յովհաննէս կոչեց իրեն իւր աշակերտներէն երկուքը, և զրկեց զնա-
19 ռած Յիսուսի ըսելով, Դուն այն ես որ գալոց էիր, Թէ ուրիշ։ Եւ այն մարդիկը եկան անոր և ըսին, Յովհաննէս մկրտիչ զրկեց զմեզ առ քեզ, և կ'ըսէ, Դուն այն ես որ գալոց էիր,
21 Թէ ուրիշ։ Եւ նոյնժամայն բժշկեց շատերն էրենց հիւանդութիւններէն և հարուածներէն և չար ոգիներէն, և շատ կոյրերու շնորհեց տե-
22 սութիւն։ Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ անոնց, Դացէք պատմեցէք Յովհաննու ինչ որ տեսաք և լսեցիք։ որ կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռելները կը յառնեն, աղ-
23 քատաց աւետարան կը քարոզուի։ Եւ երանի անոր որ իմ վրաս չգայթակղիր։
24 Եւ երբ Յովհաննէսի զրկուած մարդիկ գացին, Յիսուս սկսաւ ըսել ժողովրդոց Յովհաննու համար, Ի՞նչ եք ելաք տեսնել անապատին մէջ, հովին
25 շարժուած եղէգ։ Այլ ի՞նչ եք ելաք տեսնել, փափուկ հանդերձներ հագած մարդ։ ահա անոնք որ փառաւոր հանդերձներով և փափկութեան մէջ են՝
26 թագաւորական պալատներն են։ Այլ ի՞նչ եք ելաք տեսնել, մարգարէ։ այո, կ'ըսեմ ձեզ, աւելի եւս քան զմարգա-
27 բէ։ Քանզի սա է որոյ համար գրուած է, Ահա ես իմ դեսպանս կը զրկեմ քու երեսիդ առջև, որ պատրաստէ
28 քու ճամբադ քու առջեդ։ Քանզի կ'ըսեմ ձեզ, կանանց ծնունդներուն մէջ չկայ մարգարէ մեծ քան զՅովհաննէս
մկրտիչ։ սակայն Աստուծոյ թագաւորութեան մէջ փոքրագոյնը մեծ է քան զնա։
29 Եւ բոլոր ժողովուրդը և մաքսաւորները երբ լսեցին, արդարացուցին զԱստուած, որ Յովհաննու մկրտութեամբ
30 մկրտուեցան։ Բայց փարիսեցիք և օրինականք իրենց անձին դէմ Աստուծոյ խորհուրդն անարգեցին, որ անկէ չմկրտուեցան։
31 *Ուստի որո՞ւ նմանցնեմ այս ազգին մարդիկը, և որո՞ւ կը նմանին։ կը
32 նմանին մանչոց, որ նստելով չուկաները կը կանչեն իրարու և կ'ըսեն, փող հնչեցուցինք ձեզ՝ և չպարեցիք, ողբացինք ձեզ՝ և չլացիք։ Վասն զի Յովհաննէս մկրտիչ եկաւ, ոչ հաց կ'ուտէր և ոչ գինի կը խմէր, և կ'ը-
34 սէք, Դեւ կայ ի նմա։ Որդին մարդոյ եկաւ, կ'ուտէ և կը խմէ, և կ'ըսէք, Ահա այր կերակուր և արբեցող, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց։ Եւ իմաստութիւնն արդարացաւ իւր բոլոր որդիներէն։
36 Փարիսեցիներէն ոմն կ'աղաչէր զնա իրեն հետ հաց ուտել։ և նա մտաւ փա-
37 րիսեցւոյն տունը և նստաւ սեղան։ Եւ ահա մեղաւոր կին մը կար քաղաքին մէջ, և երբ իմացաւ թէ նա սեղան նստած էր փարիսեցւոյն տունը, բե-
38 րաւ շիշ մը անուշահոտ իւղ, Եւ հանելի կողմէն անոր ոտքերուն քով կեցած կու լար, և արտասուօք սկսաւ անոր ոտքերը թրջել, և կը սրբէր գլխուն մազերովը, և կը համբուրէր
39 անոր ոտքերը, և իւղով կ'օծէր։ Եւ երբ տեսաւ փարիսեցին որ հրաւիրած էր զնա, կ'ըսէր իր մտքին մէջ, Եթէ մարգարէ էր սա, պիտի գիտնար թէ ով և ինչպիսի կին է որ կը դպչի ա-
40 նոր, քանզի մեղաւոր է։ Եւ Յիսուս պատասխան տուաւ և բսաւ անոր, Սիմոն, բան մը ունիմ ըսել քեզ։ Եւ նա
41 ըսաւ, Ըսէ, վարդապետ։ Ե– ը–, փոխառու մը ունէր երկու պարտապան,

*Ոմանք Եւ Տէրը ըսաւ, Ուստի



մին հինգ հարիւր դահեկան պարտք
42 ունէր, և միսյ չիտուն։ Եւ որովհետև հատուցանելու ‡բան չունէին, երկուցունց ևս շնորհեց։ Հիմա ըսէ, Անոնցմէ ո՞րն աւելի պիտի սիրէ
43 զնա։ Պատասխան տուաւ Սիմոն և ըսաւ, Ինձ այնպէս կը թուի Թէ որու որ շատ շնորհեց։ Եւ նա ըսաւ անոր,
44 Ուղիղ դատեցիր։ Եւ դառնալով դէպ ի կինն ըսաւ Սիմոնի, Կը տեսնե՞ս այս կինը։ Ես մտայ քու տունդ, դու ոտքս չուր չտուիր, բայց սա է– արտասուօք Թրջեց ոտքերս, և *մազերովը սրբ-
45 եց։ Դուն համբոյր մը չտուիր ինձ, բայց սա, յորմէ հետ մտած եմ հոս չդա-
46 դարեցաւ ոտքերս համբուրելէ։ Դուն չօծեցիր իմ գլուխս ձիթով, բայց սա օծեց ոտքերս անուշահոտ իւղով։
47 Վասնորոյ կ'ըսեմ ձեզ, Ներուած են սորա շատ մեղքերը, քանզի շատ սիրեց։ բայց որու քիչ կը ներուի, քիչ
48 կը սիրէ։ Եւ բսաւ անոր, Քու մեղքերդ
49 ներուած են։ Եւ անոր հետ սեղան նըստողներն սկսան իրենց մէջ ըսել, Ո՞վ է սա որ մեղայ խակ Թողութիւն կու-
50 տայ։ Եւ նա բսաւ կնոջը, Քու հաւատքդ †փրկեց զքեզ, գնա խաղաղութեամբ։

## Գլ. Ը

1 Եւ եղաւ որ այնուհետև ինք քաղաքէ քաղաք և գիւղ գիւղ պարտելով կը քարոզէր, և կ'աւետարանէր Աստուծոյ թագաւորութիւնը, և երիսունսանք անոր
2 հետ էին, Նաև կանայք ոմանք որ չար ոգիներէ և հիւանդութիւններէ բժշկուած էին, Մարիամ որ Մագդաղենացի կը կոչուէր, որմէ եօթն դև ելած էր,
3 Եւ Յովհաննու, Հերովդեսի տան վերակացուին Քուզային կինը, և Շուշան և ուրիշ շատեր, որ իրենց բաստացուածէն ‡անոր ծառայութիւն կ'ը-
4 Եւ երբ մեծ բազմութիւն ժողովեցաւ և շատ քաղաքներէ եկան անոր, ա-
5 ռակով բսաւ ասոնց, Սերմ ցանող մը եկաւ իր սերմը ցանել։ և մինչ կը ցանէր, ոմն ինկաւ ճամբուն վրայ և ոտքէ
6 ոտքի կոխուեցաւ, և երկնից թռչուննե-
6 րը կերան զայն։ Եւ ուրիշն ինկաւ ապառաժի վրայ, և երբ բուսաւ, իսկ և իսկ չորացաւ՝ վասն զի հիւթ չու-
7 նէր։ Եւ ուրիշն ինկաւ փուշերու մէջ, և փուշերն անոր հետ բուսնելով հեղ-
8 ձուցին զնաւ։ Եւ ուրիշն ինկաւ աղէկ հողի մէջ, և բուսնելով հարիւրապատիկ պտուղ տուաւ։ Երբ այս բաները կ'ըսէր, կոպտակեր, Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։
9 Եւ աշակերտները կը հարցունէին անոր ըսելով Թէ Ի՞նչ պիսի ըլլար այն
10 առակը։ Եւ նա բսաւ, Ձեզ արաւած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդները, բայց ուրիշներուն առակներով կ'ըսէմ, որ տեսնելով՝ չտեսնեն, և լսելով՝ չհասկնան։
11 Արդ առակն այս է։ սերմն Աստուծոյ խօսքն է։ Եւ ճամբուն վրայինները
12 ծոյ խօսքն է։ Եւ ճամբուն վրայինները անոնք են, որ կը լսեն, և յետոյ Սատանան կու գայ, կը տանի խօսքն ա-
13 նոնց սրտէն, որ մի գուցէ հաւատան և փրկուին։ Եւ ապառաժին վրայինները անոնք են, որ երբ կը լսեն, ուրախութեամբ կ'ընդունին խօսքը, բայց արմատ չունին, ժամանակ մը կը հաւատան, և փորձութեան ատեն կը հե-
14 ռանան։ Եւ փուշերուն մէջ ինկածն անոնք են, որ կը լսեն, բայց հոգերով և հարստութեամբ և այս կեանց ցանկութիւններով զբաղիալ կը հեղձնուն
15 և կ'ըլլան անպտուղ։ իսկ աղէկ հողի մէջ ցանուածն անոնք են, որ բարի և յօժար սրտիւ լսելով կ'ընդունին խօսքը և պտուղ կու տան համբերութեամբ։
16 Ոչ ոք վառելով ճրագ կը թագուցանէ տակի կամ կը դնէ բնդմէնճով, այլ կը դնէ աչառնակի վրայ,
17 որ ներս մտնողները լոյս տեսնեն։ Վասն զի չիք ինչ ծածուկ որ չյայտնուի, և ոչ գաղտնիք՝ որ չգիտցուի և չգայ ի

*Ոմանք գլխուն մազերովը
†Կամ բժշկեց ‡Ոմանք անոնց

18 յայտ. Ուստի ասեմք թէ ինչպէս կը
լսէք, զանգի ով որ ունի, պիտի տրուի
ան՝որ, և ով որ չունի, այն ևս զոր
կը կարծէ թէ ունի՝ պիտի առնուի ան-
կէ։
19 Եւ անոր մայրը և եղբայրները եկան
անոր, և բազմութենէն չէին կրնար եր-
20 թալ անոր քով։ Եւ անոր իմացուցին
ըսելով, Մայրդ և եղբայրներդ դուրս
կեցած են, և կ՚ուզեն տեսնել քե-
21 զի։ Եւ նա պատասխան տալով բաւ
անոնց, Իմ մայրս և իմ եղբայրներս
ասոնք են որ Աստուծոյ խօսքը կը լսե-
ւոն և կը կատարեն զայն։
22 Եւ եղաւ որ օր մը ինք նաւ մտաւ և
աշակերտներն ալ, և բաւ անոնց,
Յորմէկին միւս կողմն անցնինք։ Եւ ճամ-
23 բայ եղան։ Եւ մինչ կը նաւէին, քնա-
ցաւ նա։ և հովի մրրիկ իջաւ ծովակին
վրայ, և ջրո՛ւ կը լեցուէր, և կին ի վը-
24 տանգի։ Եւ մտանելով արթնցուցին
զնա և ըսին, Վարդապետ, վարդա-
պետ, ահա կը կորնչինք։ Եւ նա ելաւ
աստուեղ հովին և ջուրերուն խառնուա-
ծութեանը, և դադրեցան, և եղաւ
25 խաղաղութիւն։ Եւ ըսաւ անոնց, Ո՞ր
է ձեր հաւատքը։ Եւ անոնք զարհուր-
եալ զարմացան, և կ՚ըսէին իրարու,
Ո՞վ է արդեօք սա որ հովերուն և ջու-
րին ևս կը հրամայ կու տայ, և կը հնա-
զանդին անոր։
26 Եւ նաւելով իջան *Գադարացւոց եր-
27 կիրը, որ է հանդէպ Գալիլեայի։ Եւ երբ
ցամաք ելաւ, պատահեցաւ այն քա-
ղաքէն մարդ մը որ շատ ժամանակէ
հետէ դեւեր ունէր. և հանդերձ չէր
հագներ, և ոչ տան մէջ կը բնակէր,
28 այլ դերեզմաններու մէջ։ Եւ տեսնե-
լով զՅիսուս աղաղակեց և ինկաւ անոր
առջև, և բարձր ձայնիւ բաւ, Դուն
իմ հետս ի՞նչ բան ունիս, Յիսուս, Որ-
դի Աստուծոյ բարձրելոյ. կ՚աղաչեմ
29 զքեզ, մի տանջեր զիս։ Զան զի հրա-
մայեց պիղծ ոգւոյն ելլել այն մարդէն,
քանզի շատ ատեն էր որ յափշտակած
էր զնա, և կը պահուէր չղթայիւք և
ոտնակապօք կապուած, բայց կապերը
կը խորտակէր և կը տարուէր դեւէն
30 յանապատս։ Հարցուց անոր Յիսուս և
բաւ, Ի՞նչ է անունդ։ Եւ նա բաւ,
Լեգէոն. քանզի շատ դեւեր մտած էին
31 ի նմա։ Եւ կ՚աղաչէին զնա հրաման չը-
32 նել անոնց երթալ անդունդ։ Եւ կար
հոն շատ խոզերու երամակ մը որ կ՚ա-
բածուէին լեռը. և աղաչեցին զնա հր-
բաման տալ իրենց մանել անոնց մէջ։
33 և հրաման տուաւ անոնց։ Եւ դեւերը
ելլելով մարդէն, մտան խոզերուն մէջ,
և երամակը գիմեց գահէնն ծովակը և
34 հնձաւ։ Եւ խոտպտածները տեսնելով
ինչ որ եղաւ՝ փախան, և պատմեցին
35 քաղաքը և ագարակները։ Եւ ելաւ
երթալ տեսնել ինչ որ եղած էր, և ե-
կան Յիսուսի, և գտան այն մարդն
ուստի դեւերը ելած էին՝ հագուած, և
զգաստացեալ նստած առ ոտս Յիսու-
36 սի, և վախցան։ Եւ անոնք որ տեսած
էին պատմեցին անոնց թէ ինչպէս ա-
37 զատեցաւ դեւահարը։ Եւ Գադարացւոց
շրջակայ ուղղերուն բոլոր բազմու-
թիւնը կ՚աղաչէր զնա, երթալ իրենց-
մէ, քանզի մեծ ահ բռնուած էին.
38 և նա նաւ մտնելով դարձաւ։ Եւ մար-
դն ուստի դեւերը ելած էին՝ կ՚աղա-
չէր զնա անոր հետ ըլլալ, բայց Յիսուս
39 արձակեց զնա և բաւ, Դարձիր քու
տունդ, և պատմէ ինչ որ Աստուած ը-
րաւ քեզ։ Եւ նա գնաց, և բոլոր քա-
ղաքին մէջ քարոզեց ինչ որ Յիսուս ը-
րաւ իրեն։
40 Եւ երբ Յիսուս ետ դարձաւ, ժողո-
վուրդն ընդունեց զնա, քանզի ամէնքը
41 կը սպասէին անոր։ Եւ ահա Յայրոս ա-
նուն մարդ մը եկաւ, և նա իշխան էր
ժողովրդանցին։ և ինկնելով Յիսուսի
ոտքը կ՚աղաչէր զնա գալ իր տունը։
42 Քանզի միամոր դուստր մը ունէր իր
երկտասանամեայ, որ մեռնելու մօտ
էր։ Եւ երբ կ՚երթար նա, բազմութիւ-
նը կը նեղէր զնա։
43 Եւ կին մը էր ի սեռատեսութեան
արեան երկտասան տարիէ հետէ, և իր

*Ոմանք Գերգեսացւոց



բոլոր ստացուածքը ծախած էր բժիշկ-
րերը պիտի աղաղակեն։
41 Եւ երբ մօտեցաւ, տեսնելով քաղա-
42 քը լացաւ անոր վրայ և ըսաւ, Գոնէ
այս քու օրուանդ մէջ գիտնայիր քու
խաղաղութիւնդ, բայց հիմա ծածկե-
43 ցաւ քու աչքերէդ։ Քանզի օրեր
պիտի գան քու վրադ, որ թշնամիներդ
չորթանակի պատնէշ պիտի շինեն, և
պիտի պատարեն զքեզ, և ամէն կող-
44 մանէ պիտի նեղեն զքեզ։ Եւ հիմնա-
յատակ պիտի ընեն զքեզ և որդիներդ
որ ի քեզ, և քար քարի վրայ ամենե-
րին պիտի չթողուն ի քեզ, վասն զի չը
ճանչցար քու այցելութեանդ ժամա-
նակը։

45 Եւ տաճարը մտնելով սկսաւ դուրս
հանել անոր մէջ վաճառողները եւ գը-
46 նողները. եւ ըսաւ անոնց, Գրուած է
Թէ իմ տունս աղօթքի տուն է, բայց
դուք աւազակներու որջ ըրիք զայն։
47 Եւ ամէն օր տաճարին մէջ կ'ուսու-
ցանէր. բայց քահանայապետները եւ
գպիրները եւ ժողովրդեան գլխաւորնե-
րը կը խնդրէին Թէ ինչպէս կորսուա-
48 նեցնեն զինք, եւ չէին գտներ Թէ ինչ ը-
նեին, քանզի բոլոր ժողովուրդն անոր
կապուած էր լսել։

## Գլ. Ի

1 Եւ եղաւ որ այն օրերէն մին, երբ տա-
ճարին մէջ կ'ուսուցանէր ժողովրդեան
եւ կը քարոզէր աւետարանը, քահա-
նայապետները եւ գպիրները ծերերուն
2 հետ վրայ հասան. եւ խօսեցան անոր
ըսելով, Ըսէ մեզ ինչ իշխանութեամբ
կ'ընես այդ բաները, կամ ո՛վ է որ
3 տուաւ քեզ այդ իշխանութիւնը։ Պա-
տասխան տուաւ եւ բսաւ անոնց, Եւս
բան մը հարցնելու ձեզ, և ըսէք
4 ինձ. Յովհաննու մկրտութիւնը յերկ-
5 նից էր Թէ ի մարդկանէ։ Եւ անոնք
6 իրենց մէջ խորհեցան եւ ըսին, Եթէ ը-
սենք, Յերկինից, պիտի ըսէ, Իսկ ըն-
դՀակառակն չհաւատացիք անոր. ապա եթէ
բսենք, ի մարդկանէ, բոլոր ժողովուր-
դը պիտի քարկոծէ զմեզ. քանզի հաս-
տատ համոզուած են Թէ Յովհաննէս
7 մարգարէ էր։ Եւ պատասխան տուին
Թէ չեն գիտեր ուստի էր։ Եւ Յիսուս
8 ըսաւ անոնց, Եւ ես չեմ ըսեր ձեզ Թէ
ինչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաներ-
ը։
9 Եւ սկսաւ ըսել սա առակը ժողովուր-
դեան. Մարդ մը տնկեց այգի և յանձ-
նեց գայն մշակներու, և ինք երթալով
10 օտար երկիր մնաց չատ ժամանակ։ Եւ
ժամանակին ղրկեց ծառայ մը մշակնե-
րուն որ տային նմա այգւոյն պտղէն.
իսկ մշակները ծեծեցին զնա և արձա-
11 կեցին ունայն։ Եւ ղրկեց ուրիշ ծառայ
մը. իսկ անոնք զնա ևս ծեծեցին, ա-
12 նարգեցին և արձակեցին ունայն։ Եւ
ղրկեց երրորդ մը ևս. իսկ անոնք զնա
ևս վիրաւորեցին և հանեցին դուրս։
13 Ասեաւն այգւոյն տէրն ըսաւ, Ի՞նչ ը-
նեմ. ղրկեմ իմ սիրելի որդիս, Թերևս
14 զնա տեսնելով ամչնան։ Բայց մշակնե-
րը երբ տեսան զնա, խորհուրդ ըրին
իրարու հետ ըսելով, Սա է ժառանգը,
եկէք սպաննենք զնա որ մերն ըլլայ
15 ժառանգութիւնը։ Եւ դուրս հանեցին
զնա այգիէն և սպաննեցին. ուստի այ-
գւոյն տէրն ի՞նչ պիտի ընէ անոնց։
16 Պիտի գայ և կորսուանէ այն մշակնե-
րը, և պիտի տայ այգին այլոց։ Երբ
17 ըսյս լսեցին, ըսին, Չառ լիցի։ Եւ ինք
անոնց նայելով ըսաւ, Ապա ի՞նչ է այս
գրուածը, Թէ Քարը զոր շինողները
մերժեցին, նա եղաւ գլուխ անկեան։
18 Ամէնը որ այն քարին վրայ իյնայ՝ պիտի
խորտակի, և որու վրայ իյնայ՝ պիտի
19 փշրէ զնա։ Եւ քահանայապետները և
գպիրները կը խնդրէին Թէ ներ-
ձայնեն նոյն ժամուն ձեռք մեկնին ի նա, բայց վախ-
ցան ժողովուրդէն, քանզի իմացան Թէ
այն առակն ըսաւ իրենց համար։
20 Եւ յետոյ չարխ ուխտ սպասելով,
ղրկեցին քանի մը խարեբայ մարդիկ
որ կեղծաւորութեամբ արդար կը ձե-
ւացունէին զիրենք, որպէս զի խօսքով
բռնեն զնա մատնել զնա տէրութեան
21 և կառավարին իշխանութեանը։ Եւ
հարցուցին անոր բսելով, Վարդապետ,
գիտենք որ ուղիղ կը խօսիս և կը սոր-
վեցնես, և աչառութիւն չես ըներ,
այլ ճշմարտութեամբ կ'ուսուցանես
22 Աստուծոյ ճամբան։ Արժա՞ն է մեզ
23 կայսեր հարկ տալ Թէ ոչ։ Եւ խմանա-
լով անոնց խորամանկութիւնն՝ ըսաւ
24 անոնց, Ընդե՞ր կը փորձէք զիս. Ցու-
ցէք ինձ դահեկան մը։ Որո՞յ պատկե-
րը և գիրն ունի։ Պատասխան տուին և
25 ըսին, Կայսեր։ Եւ նա ըսաւ անոնց,
Ուրեմն տուէք զկայսերն կայսեր, և
26 Աստուծոյն՝ Աստուծոյ։ Եւ չկրցան
խօսքով բռնել զնա ժողովրդեան առ-
ջև, և զարմանալով անոր պատասխա-
նուն վրայ լուռ կեցան։



27 Եւ եկան սադուկեցիներէն ոմանք,
որ կը պնդէին Թէ չկ յարութիւն, և
28 հարցուցին անոր Ըսելով, Վարդապետ,
Մովսէս գրեց մեզ, Եթէ ուրուք եղ-
բայրը որ ունի կին մեռնի, և ըլլայ ա-
նորդի մեռած տունը, անոր եղբայրն
առնու այն կինը և հանէ զաւակ իբ
29 եղբօրը։ Արդ եօթն եղբարք կային. և
առաջինը կին առնելով մեռաւ անորդի։
30 Երկրորդն ևս առաւ այն կինը, և նա
31 ևս մեռաւ. անորդի։ Երրորդն ևս ա-
ռաւ զնա, նմանապէս եօթանեքեան և
32 չթողին որդի և մեռան։ Յետ ամենե-
33 ցուն մեռաւ և կինը։ Ուրեմն ի յարու-
Թեան անոնցմէ որո՞ւ կին պիտի ըլլայ,
քանզի եօթանեքին ունեցան զնա կին։
34 Եւ Յիսուս պատասխան առնելով ըսաւ
անոնց, Այս աշխարհիս որդիքը կին
35 կ'առնուն և առն կը տրուին։ Բայց ա-
նոնք որ արժանի պիտի ըլլան հասնել
այն աշխարհին և յարութեան ի մեռե-
լոց՝ ոչ կին կ'առնուն և ոչ առն կը
36 տրուին. վասն զի այլ ևս չեն կրնար
մեռնիլ, քանզի հաւասար են հրեշտա-
կաց, և որդիք են Աստուծոյ, վասն զի
37 յարութեան որդիք են։ Բայց Թէ մե-
ռելոք կը յառնեն, Մովսէս ևս իմա-
ցուց մորենւոյն պատմութեան մէջ, երբ
կը կոչէ Տէրը՝ Աստուած Աբրահամու,
և Աստուած Իսահակայ և Աստուած
38 Յակոբայ։ Եւ Աստուած չէ Ապրողաց
մեռելոց, այլ կենդանեաց, քանզի ա-
39 մէնքը կենդանի են անոր։ Եւ գպիր-
ներէն ոմանք պատասխան տուին և ը-
40 սին, Վարդապետ, ազնիւ բսիր։ Եւ այլ
ևս ոչ ոք կը համարձակէր բան մը
հարցունել անոր։
41 Եւ ըսաւ անոնց, Ի՞նչպէս կ'ըսեն Թէ
42 Քրիստոս որդի է Դաւիթ։ Եւ ինք Դա-
ւիթ Սաղմոսաց գրքին մէջ կ'ըսէ, Տէ-
րը բսաւ իմ Տէրոջս, Նստէ իմ ա-
43 կաղմս, Մինչև զու Թշնամիներդ ընեմ
44 պատուանդան ոտիցդ։ Ուրեմն Դաւիթ
որ Տէր կը կոչէ զնա, ի՞նչպէս անոր որ-
դին է նա։
45 Եւ բոլոր ժողովրդեան առջև բսաւ
46 իւր աշակերտներուն, Զգուշացէք գը-
պիրներէն, որ կ'ուզեն փառաւոր հան-
դերձներով շրջիլ, և չուկաներուն մէջ
ողջոյններ կը սիրեն, և ժողովրդանոց-
ներու մէջ առաջին աթոռները, և ա-
47 ռաջին բազմոցները՝ յրնթրիս. Որ կ'ու-
տեն այրիներու տուները, և հրջրոց ե-
րևնալու համար կ'երկարեն աղօթքը.
սոքա աւելի դատապարտութիւն պի-
տի ընդունին։

## Գլ. ԻԱ.

1 Եւ նայելով տեսաւ հարուստները որ
իրենց ընծաները կը նետէին գանձա-
2 նակը։ Տեսաւ նաև տնանկ այրի մը, որ
3 նետեց հոն երկու լումայ։ Եւ ըսաւ,
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ Թէ այս աղքատ
այրին քան զամենեսին աւելի նետեց.
4 Քանզի անոնց ամէնքն իրենց աւելորդէն նետեցին Աստուծոյ ընծաներուն
մէջ, բայց սա իր չքաւորութենէն բո-
լոր ապրուստը զոր ունէր՝ նետեց։
5 Եւ երբ ոմանք տաճարին համար կ'ը-
սէին Թէ Գեղեցիկ քարերով և նուէր-
6 ներով զարդարուած է, ըսաւ, Այդ
զոր կը տեսնէք, օրեր պիտի գան որ
պիտի չմնայ քար քարի վրայ որ չքակ-
7 ուի։ Եւ հարցուցին անոր և ըսին, Վար-
դապետ, ե՞րբ պիտի ըլլայ այդ, և ի՞նչ
8 է նշանը երբ այդ ըլլայ։ Եւ նա ըսաւ,
Զգոյշ կեցէք, չմոլորուիք, քանզի շա-
տերը պիտի գան յանուն իմ և ըսեն
Թէ ես եմ Քրիստոս, և ժամանակը մօ-
տեցած է. ուրեմն չերթաք անոնց ե-
9 տեւն։ Բայց երբ լսէք պատերազմներ
և խռովութիւններ, մի վախնաք, քան-
զի պէտք է որ առաջ գան բաներ ըլլան,
10 բայց չէ առժամայն վախճան։ Անոնց
ըսաւ անոնց, Ազգ ազգի վրայ պիտի
ելլէ, և թագաւորութիւն՝ թագաւո-
11 րութեան վրայ. Եւ տեղ տեղ պիտի
ըլլան մեծ երկրաշարժներ և սովք և
մահաժանտ ախտեր, նաև սոսկալի բաներ և
մեծ նշաններ պիտի ըլլան յերկնից։
12 Բայց յառաջ քան զայս ամենայն պի-
տի վրան իրենց ձեռնարկներն ի ձեզ և
հալածեն, և պիտի մատնեն ժողովուր-

դանոցներու և բանաւորու. և իմ անուանս համար պիտի տարուիք առաջի
13 թագաւորաց և կուսակալաց։ Եւ այս բնաւ չհոգայ պիտի ըլլան ձեզ ի վկա-
14 յութիւն։ Ուստի դիտեցէք ձեր սրտին մէջ չխորհիլ յառաջագոյն տալ պատաս-
15 խանիլ։ վասն զի ես պիտի տամ ձեզ բերան և իմաստութիւն, որուն պիտի չկրնան հակառակ խօսիլ կամ դէմ կենալ ձեր բոլոր հակառակորդները։
16 Եւ պիտի մատնուիք ի ծնողաց և յեղբարց և յազգականաց և ի բարեկա-
17 մաց, և պիտի սպանենն ձեզնէ. Եւ իմ անուանս համար ատելի պիտի ըլլաք
18 ամենուն. Բայց մազ մը ձեր գլխէն
19 պիտի չկորսուի։ Ձեր համբերութեամբ պիտի սեանձնաք ձեր հոգիները։
20 Եւ երբ տեսնէք զերուսաղէմ չորս կողմանէ պաշարեալ զօրօք, անասնն
21 գիացէք թէ մօտ է անոր աւերը։ Անտառն անոնք որ Հրէաստանի մէջ են՝ թող փախչին լեռները, և որ անոր մէջ են՝ թող հեռանան, և անոնք որ գարաւանները՝ թող չմտնեն անոր մէջ։
22 Վասն զի այն օրերը վրէժխնդրութեան օրեր են, որ բոլոր գրուածները կա-
23 տարուին։ Բայց վա՛յ յղեաց և սնունուց այն օրերը, քանզի մեծ նեղութիւն պիտի ըլլայ երկրին վրայ, և բարկութիւն ալեաց ի՛ այս ժողովրդեան.
24 Եւ պիտի իյնան ի սուր սուրերի և պիտի տարուին գերի բոլոր ազգաց մէջ և Երուսաղէմ կոխան պիտի ըլլայ ազգաց, մինչև լրանան ազգերուն ժամա-
25 նակները։ Եւ պիտի ըլլան նշաններ յարեգական և ի լուսնի և յաստեղս, և երկրի վրայ ազգերը պիտի տագնապին ապշութեամբ, և ծով և ալիք պիտի
26 գոռան. Մարդոց սիրտերը պիտի նուաղին երկիւղէ և ի կասկածանաց աշխարհի վրայ գալու իրաց, քանզի զո-
27 րութիւնք երկնից պիտի չարժին։ Եւ անոնք պիտի տեսնեն զՈրդին մարդոյ եկած յամպս զօրութեամբ և մեծ
28 փառօք։ Եւ երբ սասնք սկսին ըլլալ, երկէք և բարձրացուցէք ձեր գլուխները, քանզի մօտ է ձեր փրկութիւնը։
29 Եւ ըսաւ անոնց առակ մի. Տեսէք
30 թզենին և ամէն ծառ. երբ կը բողբոջին, տեսնելով կ'իմանաք դուք ձե-
31 ղմէն թէ մօտ է արդէն ամառը։ Նոյնպէս և դուք երբ տեսնէք այս բաները եղած, գիտցէք թէ մօտ է Աստու-
32 ծոյ թագաւորութիւնը։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ այս ազգը պիտի չանցնի,
33 մինչև ըլլայ այս ամենը։ Երկինք և երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս
34 բնաւ պիտի չանցնին։ Իսկ դուք ղգուշացէք ձեր անձերուն, մի գուցէ ծանրանան ձեր սիրտերը չուայտութեամբ և արբեցութեամբ և աշխարհային հոգովք, և յանկարծ այն օրը հասնի
35 ձեր վրայ. Քանզի իբրև որոգայթ պիտի հասնի ամենուն վրայ որ կը բնա-
36 կին բոլոր երկրիս երեսին վրայ։ Ուստի արթուն կեցէք, և ազօթք ըրէք ամէն ատեն, որ արժանի ըլլաք ազատիլ այն բոլոր բաներէն որ պիտի ըլլան և կենալ Որդւոյ մարդոյ առջև։
37 Եւ ցերեկ կը սորվեցնէր տաճարին մէջ, և գիշերները կ'ելլէր կը կենար
38 Ձիթենեաց կոչուած լեռը։ Եւ բոլոր ժողովուրդն առտուընուն կուգուէր առնոր կ'երթայնն տաճարը լսել անոր։

## Գլ. ԻԲ

1 Բազարջակերաց տօնը մօտեցաւ որ զա-
2 տիկ կը կոչուէր. Եւ քահանայապետները և գոլիրներըը կը խնդրէին թէ ինչպես սպաննեին զնա, քանզի կը վախնային ժողովրդեն։
3 Եւ Սատանան մտաւ ի Ցուդա որ կը կոչուէր Իսկարիովտացի և էր երկո-
4 տասանից թուին։ Եւ գնաց քահանայապետներուն և իշխաններուն հետ խօսք բրաւ թէ ինչպես մատնէր զնա
5 անոնց։ Եւ անոնք ուրախացան և խոս-
6 տացան սուտի տալ անոր։ Եւ նա յանձն առաւ, և կը խնդրէր պատեհութիւն մատնել զնա անոնց ի կուսուի ամբոխէն։
7 Եւ բազարջակերաց օրը եկաւ, յո-
8 րում օրէն էր զնոյն զառնիկը։ Եւ ղրկեց զՊետրոս և զՅովհաննէս և ըսաւ,



Գացէք պատրաստեցէք մեզ զառնիկը
9 որ ուտենք։ Եւ անոնք ըսին անոր,
10 Ո՞ւր կ'ուզես որ պատրաստեմք։ Եւ ըսաւ անոնց, Ահա երբ մտնէք քաղաքը, պիտի պատահի ձեզ մարդ մը որ բարձեալ ունի ջրոյ սափոր. գացէք անոր ետևէն այն առնը ուր կը մտնէ
11 Եւ ըսէք այն տան տիրոջը, Վարդապետը կ'ըսէ քեզ, Ո՞ր է օթեւանն ուր աշակերտներուս հետ ուտեմ զառիվ։ Եւ նա պիտի ցուցնէ ձեզ մեծ
12 վերնատուն մի յարդարեալ, հոն պատ-
13 րաստեցէք։ Եւ գացին գտան ինչպես որ ըսաւ անոնց, և պատրաստեցին զառիվ։
14 Եւ երբ ժամը հասաւ, անկաւ նստաւ, և երկոտասան առաքեալք անոր հետ։
15 Եւ ըսաւ անոնց, փափաքելով փափաքեցայ ուտել այս զառիվը ձեզի հետ
16 յառաջ քան չարչարուելս։ Քանզի կ'ըսեմ ձեզ որ այլ եւս բնաւ պիտի չուտեմ ատկէ, մինչև կատարուի Աստուծոյ թագաւորութեան մէջ։
17 Եւ ընդունելով բաժակը, գոհացաւ և ըսաւ, Առէք զայս և բաժնեցէք ձեր մէջ։
18 Քանզի կ'ըսեմ ձեզ որ պիտի չխմեմ բնաւ ի բերոյ որթոյ մինչև որ գայ Աստուծոյ թագաւորութիւնը։
19 Եւ առաւ հաց, գոհացաւ, կտրեց և տուաւ անոնց և ըսաւ, Այս է մարմին իմ, որ ձեզի համար արուած է. զայս ըրէք զիս յիշելու համար։ Նոյնպէս ——— բաժակը յետ ընթրելոյ և ըսաւ, Այս բաժակը նոր ուխտ է իմ արեամբս, որ ձեզի համար կը թափուի։
21 Բայց ահա ձեռն մատնողին ձեռքն ինձ
22 ծի հետ է այս սեղանը։ Եւ Որդին մարդոյ կ'երթայ ինչպես սահմանուած է, բայց վա՛յ այն մարդուն որոյ ձեռօք կը մատնուի նա։ Եւ անոնք սկսան իրենց մէջ հարցանել թէ իրենցմէ ով էր որ պիտի բներ զայն։
24 Վէճ մը եւս եղաւ անոնց մէջ թէ ով
25 մեծ պիտի համարուի անոնցմէ։ Եւ նա ըսաւ անոնց, Ազգաց թագաւորները կը տիրեն անոնց, և անոնք որ կ'իշխեն անոնց՝ բարերար կը կոչուին.
26 Բայց դուք այնպես պիտի չըլլաք, այլ այն որ մեծ է ի ձեզ՝ ըլլայ իբրև կրտսերը, և առաջնորդն իբրև սպասաւորը։
27 Որը՞ մեծ է մեծ, բազմելոյը թէ սպասաւորը։ Ոչ սպասաւորն բազմելոյը։ սակայն ես ձեր մէջ եմ իբրև
28 սպասաւոր։ Եւ դուք էք որ միշտ կը կենայիք ինծի հետ իմ փորձութիւնս։
29 Ներուս մէջ։ Եւ ես կ'ուխտեմ ձեզ
30 Թագաւորութիւն մը, ինչպես որ իմ Հայրս ուխտեց ինձ Թագաւորութիւն մը։ Որ դուք իմ սեղանէս ուտէք և խմէք իմ Թագաւորութեանս մէջ, և աթոռներու վրայ նստիք դատել Իսրայէլի երկոտասան ցեղերը։
31 Եւ Տէրը ըսաւ, Սիմոն, Սիմոն, ահա Սատանան խնդրեց զձեզ, խարբալել
32 իբրև զցորեան, Բայց ես աղաչեցի քեզի համար որ հաւատքդ չպակսի. և դուն երբ դառնաս, հաստատէ քու
33 եղբայրներդ։ Իսկ նա ըսաւ անոր, Տէր, ես պատրաստ եմ քեզի հետ երթալ
34 և՛ ի բանտ և՛ ի մահ։ Եւ նա ըսաւ, Պետրոս, կ'ըսեմ քեզ, որ այսօր հար պիտի չկոսի, մինչև դուն երեքս ուրանաս ընտրել թէ չես ճանչնար զիս։
35 Եւ ըսաւ անոնց, Երբ ղրկեցի զձեզ առանց քսակի և պարկի և կօշկաց,
36 բանի մը կարօտ եղա՞ք։ Եւ անոնք ըսին, Ոչ բանի մը։ Ցետոյ ըսաւ, Բայց հիմա ով որ քսակ ունի թող առնէ, նոյնպես և պարկը. և ով որ չունի, թող ծախէ իւր հանգերձը և
37 առը մը գնէ իրեն. Քանզի կ'ըսեմ ձեզ թէ պէտք է որ նաև այս գրուածը կատարուի իմ վրաս, Եւ անօրէնները հետ համարուեցաւ. քանզի ինչ
38 որ ինծի համար է՝ վճարում է։ Եւ անոնք ըսին, Տէր, ահա հոս երկու սուր կան. և նա ըսաւ անոնց, Բաւական են։
39 Եւ ելաւ գնաց ըստ սովորութեան գնաց Ձիթենեաց լեռը, աշակերտներն ալ
40 զացին անոր հետևէն։ Երբ հոն հասաւ, ըսաւ անոնց, Աղօթք ըրէք որ փոր-
41 ձութեան մէջ չմտնէք։ Եւ ինք անոնց-

մէ զաւուեցաւ իբր քաբընկէց մի, և
42 ծունր դնելով աղօթք կ'ընէր, ու կ'ըսէր, Հայր, եթէ կամիս, անցուր ինէ այս բաժակը. բայց ոչ թէ իմ կամքս,
43 այլ քոյդ թող ըլլայ։ Ու հրեշտակ մը երեւեցաւ անոր յերկինքէ և կը զօրացուներէր զնա. և ասաւիկ նեղութեան մէջ ըլլալով՝ աւելի եռանդուածիւ կ'ա-
44 ղօթէր։ Ու անոր քրտինքն արեան մեծ կաթիլներու պէս եղաւ, և կը թափէր գետին։
45 Ու աղօթքէն ելլելով եկաւ աշակերտներուն քով, և գտաւ զանոնք ապրատ-
46 մութենէն ի քուն. ու ըսաւ անոնց, Ինչո՞ւ կը քնանաք. ելէք աղօթք ըրէք որ փորձութեան մէջ չմտնէք։
47 Ու երբ դեռ կը խօսէր, ահա բազմութիւն մը, և Յուդա կոչուածն ևս, մին յերկուասանէից, կ'երթար անոնց առջև, և Յիսուսի մօտեցաւ համբուրել զնա։ Բայց Յիսուս ըսաւ անոր,
48 Յուդա, համբուրելո՞վ կը մատնես զՈրդի մարդոյ։ Երբ անոնք որ բովանդակին էին տեսան ինչ որ պիտի ըլլար, ըսին
50 անոր, Տէր, զարնե՞նք սրով։ Ու առնոնցմէ մին զարկաւ քահանայապետին ծառան և մկրկի հանեց անոր ա-
51 կանջը։ Պատասխան առաւ Յիսուս և ըսաւ, Թողէ տուէք մինչև այդ տեղը։ Ու դպաւ անոր ականջին և բժշկեց
52 զայն։ Ու Յիսուս ըսաւ իրեն վրայ եկող քահանայապետներուն և տաճարին իշխաններուն և ծերերուն, Իբր թէ աւազակի՞ վրայ ելաք սուսերօք և
53 բոթօք։ Ամէն օր ձեզի հետ էի տաճարին մէջ, և ձեռք չմեկնեցիք ինծ. բայց այս է ձեր ժամանակը և խաւարին իշխանութիւնը։
54 Ու բռնելով զնա տարին և մտցուցին քահանայապետին տունը. Պետրոս ևս
55 ի հեռուստա կ'երթար։ Երբ կրակ վառեցին գետինին մէջ և իր միասին նստան, Պետրոս ալ նստաւ անոնց
56 մէջ։ Ազախին մը տեսնելով զնա որ կրակին քով նստած էր, նայեցաւ անոր և ըսաւ, Ու սա անոր հետ էր։
57 Բայց Պետրոս ուրացաւ զնա և ըսաւ,
58 Կին դուռ, ես չեմ ճանչնար զնա։ Ու փոչ մը հապը ուրիշ մը տեսաւ զնա և ըսաւ, Ու դուն անոնցմէ ես։ Ու Պետրոս ըսաւ, Այր դուռ, ես չեմ։
59 Ու իբր ժամ մը հապը՝ ուրիշ մը ևս կը պնդէր և կ'ըսէր, Արդարև սա ևս անոր հետ էր, վասն զի Գալիլեացի է։
60 Բայց Պետրոս ըսաւ, Այր դուռ, չեմ գիտեր ինչ կ'ըսես դուն։ Ու մինչ կ'ըսէր զայս, մանուկին հետ խօսեցաւ։
61 Ու Տէրը գարձաւ և նայեցաւ Պետրոսի. և Պետրոս յիշեց Տէրոջը խօսքը որ անոր ըսած էր թէ Դեռ հաւը չխօսած երկու պիտի ուրանաս զիս։ Ու
62 Պետրոս դուրս ելլելով լացաւ դառնապէս։
63 Ու այն մարդիկը որ զՅիսուս կը պահէին, ծաղր կ'ընէին զնա և կը ծեծէին.
64 Ու անոր երեսը ծածկելով կը հանէին նմա ապտակ, և կը հարցուներէին անոր ըսելով, Մարգարեացիր, ով է որ զարկաւ քեզ։ Ու ուրիշ շատ բաներ կ'ըսէին անոր հայհոյելով։
66 Ու երբ առաւօտ եղաւ, ժողովրդեան ծերակոյտը, քահանայապետները և դպիրները ժողվուեցան, և տարին զնա իրենց առեանը և ըսին, Եթէ դու ես
67 Քրիստոս, ըսէ մեզ։ Ըսաւ անոնց, Եթէ
68 ըսեմ ևս ձեզ, պիտի չհաւատաք։ Ու եթէ բ֊ն հարցուներմ ձեզ, պատասխան պիտի չտաք ինծ, և ոչ պիտի ար-
69 ձակէք զիս։ Այսուհետև Որդին մարդոյ պիտի նստի Աստուծոյ զօրութեան
70 աջ կողմը։ Ու ամէնքն ըսին, Ուրեմն դուն Աստուծոյ Որդի՞ն ես։ Ու նա ըսաւ անոնց, Դուք կ'ըսէք թէ ես եմ։
71 Ու անոնք ըսին, Այլ ևս ի՞նչ պէտք է մեզ վկայութիւն, քանզի մենք մեզնէն լսեցինք ատոր բերնէն։

## Գլ. ԻԳ.

1 Ու անոնց բոլոր բազմութիւնը ոտք ելլելով տարին զնա Պիղատոսի։ Ու ակսան ամբաստանութիւն բռնել անոր վրայ և ըսել, Գտանք զսա որ կը մոլորեցուներ ժող ազգը, և կ'արգելէր
2 տալ հարկ տալէ, և իրեն համար կ'ըսէր թէ Քրիստոս Թագաւոր է։
3 Իսկ Պիղատոս հարցուց անոր և ըսաւ, Հրեից Թագաւորը դո՞ւն ես։ Ու նա պատասխան տուաւ անոր և ըսաւ, Դուն
4 կ'ըսես։ Անատեն Պիղատոս ըսաւ քահանայապետներուն և ժողովրդոյն, Ես յանցանք չեմ գտներ այս մարդուն
5 վրայ։ Բայց անոնք կը պնդէին և կ'ըսէին թէ կը խռովէ ժողովուրդը, և բոլոր Հրէաստանի մէջ կը սորվեցնէ, և
6 Գալիլեայէ սկսեալ մինչև հոս։ Ու Պիղատոս երբ լսեց Գալիլեայի համար, հարցուց թէ Գալիլեացի՞ էր այդ մար-
7 դը։ Ու երբ իմացաւ թէ Հերովդի իշխանութենէն էր, ղրկեց զնա Հերովդի, քանզի և նա Երուսաղէմ էր այն օրերը։
8 Ու Հերովդէս երբ տեսաւ զՅիսուս, շատ ուրախացաւ, վասն զի ի բաղմաց հետէ կը փափաքէր տեսնել զնա. քանզի յոյս բաներ լսած էր անոր վրայ, և կը յուսար անոր ձեռօք նշան մը կատարուած տեսնել։ Ու շատ խօսքերով
9 կը հարցուներէր զնա, բայց նա բնաւ պա-
10 տասխան չտուաւ անոր։ Նաև քահանայապետները և դպիրները կեցած էին, և ամենայն ամբաստանութիւն կ'ընէին
11 անոր վրայ։ Իսկ Հերովդէս անարգեց զնա իւր զօրականներուն հետ, և ծաղրելէն ետքը հագուց անոր փառաւոր հանդերձներ, և դարձեալ ղրկեց Պի-
12 զատոսի։ Ու այն օրը Պիղատոս և Հերովդէս բարեկամ եղան իրարու, քանզի առաջ թշնամութիւն կար անոնց մէջ։
13 Ու Պիղատոս կոչեց քահանայապետները և իշխանները և ժողովուրդը, Ու
14 ըսաւ անոնց, Ահա մարդը բերիք իմ առջև իբրև մոլորեցուցիչ ժողովրդեան, և ահա ես ձեր առջև քննութիւն ընելով չգտայ այդ մարդուն վրայ յանցանք որոց վասն կ'ամբաստանէք
15 զդա. Ու ոչ Հերովդէս, քանզի անոր ղրկեցի զձեզ, և ահա մահու արժանի
16 գործ բրած չէ դա. Ուրեմն պատիժ
17 տամ տաոր և արձակեմ։ Իսկ ստիպ-



ուածներ պարտ էր արձակել զոք անոնց։
18 Ու բոլոր բազմութիւնն ի միասին աղաղակեցին ըսելով, Բարձ զդա, և ար-
19 ձակէ մեզ զԲարաբբաս. Որ քաղաքին մէջ եղած խռովութեան և մարդասպանութեան համար բանտ դրուած էր։
20 Ու Պիղատոս ուզելով արձակել զՅի-
21 սուս դարձեալ խօսեցաւ անոնց, Բայց անոնք կ'աղաղակէին և կ'ըսէին, Խաչ
22 հանէ զդա, խաչ հանէ։ Ու նա երրորդ անգամ ըսաւ անոնց, Բայց ի՞նչ չար գործ բրած է դա. Ես տեր վրայ մահու արժանի յանցանք չգտայ. ուրեմն
23 պատիժ տամ տաոր և արձակեմ, իսկ անոնք մեծաձայն աղաղակներով կը պնդէին, և կը խնդրէին որ խաչուէր նա. և անոնց և քահանայապետներուն
24 ձայները զօրացան։ Ու Պիղատոս վճռեց որ անոնց խնդիրն ի գործ դրուի։
25 ուէր։ Ու թողուց զոր անոնք կը խնդրէին, և որ խռովութեան և մարդասպանութեան համար բանտ դրուած էր՝ արձակեց անոնց, և զՅիսուս մատնեց անոնց կամացը։
26 Ու երբ կը տանէին զնա, մարդ մը բռնեցին Սիմոն Ասրա, Կիւրենացի, որ արտէն կու գար, և խաչը դրին անոր
27 վրայ բերել զկնի Յիսուսի։ Ու անոր հետէն կ'երթար մեծ բազմութիւն ժողովրդեան, նաև կանանց, որ կ'ազա-
28 յին և կու լային անոր համար։ Ու Յիսուս դարձաւ անոնց և ըսաւ, Դաստերք Երուսաղէմի, մի լաք իմ վրաս, այլ լացէք ձեր անձերուն վրայ և ձեր որ-
29 դւոց վրայ։ Քանզի ահա օրերը կու գան յորս պիտի ըսեն, Երանի ամլոց և որովայնից որ չծնան, և տտանց որ չը
30 դիեցուցին։ Անատեն պիտի սկսին ըսել լերանց, Ինկէք մեր վրայ, և բլուրներուն՝ Ծածկեցէք զմեզ։ Վասն
31 զի եթէ դալար փայտին այսպէս կ'ընեն, հապա չորին ի՞նչ պիտի ըլլայ։
32 Ուրիշ երկու ևս, չարագործք, բերուեցան որ զնա հետ սպանուելու։
33 Ու երբ գացին Գագաթ կոչուած տեղը, հոն հանեցին զնա ի խաչ, և այն չարագործներն ևս, մին յաջմէ, և միւսն

34 ի ձախմէ, եւ ըսաւ Յիսուս, Հայր, թող դուցա, քանզի չեն գիտեր ինչ կ'ընեն, եւ երբ կը բաժնէին անոր հանդերձները, ընկերցին վիճակ եւ ժողովուրդը կայնած կը նայէր. իշխաններն ևս անոնց հետ կը նախատէին զնա, և կ'ըսէին, Ուրիշներն ազատեց, թող զինք ևս ազատէ, եթէ զա է Քրիստոս, 36 Աստուծոյ ընտրեալը։ Զօր կ'ընէին զնա և զինուորները, առէն կու գային, կը մատուցանէին անոր քաց, 37 ցաւ, եւ կ'ըսէին, եթէ դուն ես Հրեից 38 Թագաւորն, ազատէ քու անձդ։ Եւ էր գրուած գիր անոր վրայ Յունարէն և Լատիներէն և Երբայեցերէն գրերով, Թէ Սա է արքայն Հրեից։

39 Եւ կախուած չարագործներէն մին կը հայհոյէր զնա և կ'ըսէր, եթէ դուն ես Քրիստոս, ազատէ քու անձդ և մեզ 40 և։ Իսկ միւսը պատասխան առաւ և յանդիմանելով զնա՝ ըսաւ, Դուն Աստուծմէ չե՞ս վախնար, քանզի նոյն դատապարտութեան մէջ ես։ 41 Եւ մենք իրաւամբ, քանզի — մեր գործերուն արժանի հատուցմունը կ'առնունք. բայց 42 սա չար բան մը չըրաւ։ Եւ ըսաւ Յիսուսի, Տէր, յիշէ զիս, երբ գաս արքայութեանդ։ 43 Յիսուս ըսաւ անոր, ճշմարիտ կ'ըսեմ քեզ, Դուն այսօր ինծի հետ պիտի ըլլաս ի դրախտին։

44 Եւ ժամն էր իրրև վեցերորդ, և բոլոր երկրի վրայ եղաւ խաւար մինչև իններորդ ժամ. 45 արեգակը խաւարեցաւ, և տաճարին վարագոյրը ցրեցաւ։ 46 Եւ Յիսուս ազաղակեց ի ձայն մեծ և ըսաւ, Հայր, քու ձեռքդ կ'աւանդեմ հոգիս։ Եւ երբ զայս ըսաւ, աւանդեց հոգին։

47 Եւ հարիւրապետը տեսնելով ինչ որ եղաւ՝ փառք տուաւ Աստուծոյ և ըսաւ, Արդարև այս մարդն արդար էր։ 48 Եւ բոլոր բազմութիւնը որ այս տեսիլը դիտելու համար ժողովեալ էր՝ տեսնելով ինչ որ եղաւ, կը բախէին իրենց կուրծքը և կը դառնային։ 49 Նաև անոր բոլոր ծանօթները հեռուն կայնած էին, նոյնպէս և կանայք որ անոր հետևէն եկած էին Գալիլեայէ, և կը տեսնէին այս բաները։

50 Եւ ահա մարդ մը Յովսէփ անուն՝ որ խորհրդական էր, այր բարի և արդար, 51 Այս չէր միաբան անոնց խորհրդոյն և գործին, Հրէից Արիմաթիա քաղաքէն, որ և ինքն իսկ կը սպասէր Աստուծոյ 52 Թագաւորութեանը։ Այս գնաց առ Պիղատոս և խնդրեց Յիսուսի մարմինը, 53 Եւ իջուցանելով զնա խաչէն՝ պատեց կտաւով և դրաւ քարէ փորուած գերեզմանի մէջ, ուր բնաւ մարդ գրուած չէր։ 54 Եւ այն օր ուրբաթ էր, և շաբաթը պիտի *սկսէր։

55 Եւ հետևէ եկած կայնեցան կանայք որ եկած էին անոր հետ Գալիլեայէ, և տեսան գերեզմանը և թէ ինչպէս գրուեցաւ անոր մարմինը։ 56 Եւ դառնալով խունկեր և իւղեր պատրաստեցին, և շաբաթ օրը հանգստացան ըստ պատուիրանին։

## Գլ. ԻԴ

1 Եւ ի միաշաբաթուն, առաւօտուն շատ կանուխ, եկան գերեզմանը, և բերին խունկերը զոր պատրաստած էին, և 2 ուրիշ կանայք ևս անոնց հետ։ Եւ գտան քարը գերեզմանէն վէրկի թաւած։ 3 Եւ ներս մտնելով չգտան Տէր Յիսուսի մարմինը։ 4 Եւ եղաւ որ երբ անոնք ի տարակուսի էին այս բանին համար, ահա արք երկու լուսաւոր հանդերձներով հասան առ նոսա։ Եւ երբ անոնք վախցան և գլուխնին գետին խոնարհեցուցին ի գետին, ըսին ցանց, Ընդէ՞ր կը փնտռէք կենդանին մեռելոց հետ։ 6 Չէ նա, այլ յարեաւ։ Յիշեցէք ինչպես խօսեցաւ ձեզ, երբ 7 դեռ Գալիլեա էր, Ըսելով թէ Պարտ է Որդւոյ մարդոյ մատնուիլ մեղաւոր մարդոց ձեռքը և ի խաչ ելլանել, և երրորդ օրը յառնել։ 8 Եւ յիշեցին անոր խօսքը։ 9 Եւ դառնալով գերեզմանէն պատմեցին այս ամէնը մնացածներուն։

*Յոյն. լուանար



10 և բոլոր ուրիշներուն։ Եւ էին Մարիամ Մագդալենացի և Յովհաննա և Յակոբոսի Մարիամ, և անոնց հետ ուրիշներ, որ պատմեցին այս բաները 11 առաքեալոց։ Եւ անոնց առջև չտպտպտութիւն երևեցաւ անոնց խօսքը, և չէին հաւատար անոնց։ 12 Բայց Պետրոս եղաւ վազեց դէպ ի գերեզմանը, և ծռելով նայեցաւ և տեսաւ որ միայն կտաւները կային։ և գնաց իւր մտքին մէջ զարմանալով եղածին վրայ։

13 Եւ ահա անոնցմէ երկուքը նոյն օրը գիւղ մը կ'երթային, որ հեռու էր Երուսաղէմէ վաթսուն ասպարէզ, և ա- 14 նոր անունն էր Էմմաուս։ Եւ անոնք կը խօսէին իրարու հետ այս բոլոր անցեալ վրայ։ Եւ եղաւ որ երբ անոնք կը խօսէին և կը խորհէին, ինքն Յիսուս 16 մտաենալով կ'երթար անոնց հետ։ Բայց անոնց աչուքները բռնուած էին, որ 17 չճանչնային զնա։ Եւ ըսաւ անոնց, Ինչ են այդ խօսքերը զոր քալելով կը խօսիք 18 սէր իրարու հետ, և տրտում էք։ Պատասխան առաւ Կղէոպէ մին որուն անունն էր Կղէոպաս, և ըսաւ անոր, Դուն միայն կաս յԵրուսաղէմ, և չես գիտեր Թէ ինչեր եղան հոն այս օրերու։ 19 Եւ նա ըսաւ անոնց, Ի՞նչ։ Եւ անոնք ըսին անոր, Յիսուսի Նազովրեցւոյ համար, որ Աստուծոյ և բոլոր ժողովրդեան առջև գործով և բանիւ եղաւ 20 զօրաւոր մարգարէ։ Ինչպես քահանայապետք և իշխանք մեր մատնեցին զնա ի մահ դատապարտութեան և հանեցին ի 21 խաչ։ Իսկ մենք կը յուսայինք թէ նա էր որ պիտի ազատէր գիսրայէլ։ և ի վերայ այսր ամէնայնի այս երրորդ օր 22 է որ այս բաներն եղան։ Նաև զարմացուցին զմեզ մեր կանայք ոմանք, որ առաւօտուն կանուխ գացին գերեզմա- 23 նը, եւ չգտնելով անոր մարմինը եկան և ըսին թէ հրեշտակներու տեսիլ ևս տեսան, որ ըսած են թէ կենդանի է 24 նա։ Եւ մերիններէն ոմանք գացին գերեզմանը և գտան այնպէս, ինչպէս ըսին կանայք, միայն չտեսան զնա։ Եւ 25 նա ըսաւ անոնց, Ով անմիտք և թու- 26 ղատիրաք ի հաւատալ այն բոլոր բաներուն զորս խօսեցան մարգարէք։ Ո՞չ ապաքէն պարտ էր Քրիստոսի կրել այս չարչարանքը և մտնել իւր փառքը։ 27 Եւ սկսելով Մովսէսէ և բոլոր մարգարէներէն կը մեկնէր անոնց, ինչ որ ԷՐ-ՐՈՒՆ էր իրեն համար բոլոր գրոց մէջ։ 28 Երբ մտեցան գիւղը ուր կ'երթային, ինք ևս կը ցուցնէր որպես Թէ պիտի 29 երթար աւելի հեռու տեղ։ Բայց ստիպեցին զնա և ըսին, Մնար քով կեցիր, քանզի իրիկունը մօտ է և իջած է օրը։ և մտաւ հինալ անոնց հետ։ Եւ 30 եղաւ որ երբ նա սեղան նստաւ անոնց հետ, առաւ հացը, օրհնեց, և կարե- 31 լով առաւ անոնց։ Անոնցմէ անոնց աչուքները բացուեցան և ճանչցան զնա, 32 և նա անհետացաւ եղաւ անոնցմէ։ Եւ կ'ըսէին իրարու, Մի՞ ապաքէն մեր սիրտերը կը բորբոքէին ի մեզ, երբ մեզի հետ կը խօսէր ճամբան, և կը մեկնէր մեզ գիրքերը։

33 Եւ նոյն նոյնժամայն գարձան Երուսաղէմ, և գտան ժողովեալ ի միասին 34 մեռածները և որ անոնց հետ էին, Որ կ'ըսէին Թէ Արդարև յարեաւ Տէր, և 35 երևեցաւ Սիմոնի։ Եւ անոնք պատմեցին ինչ որ ճամբան եղաւ, և Թէ ինչպէս ճանչցուց զինք անոնց երբ հացը կը կարէր։

36 Եւ մինչ կը խօսէին այս բաները, ինքն Յիսուս կեցաւ անոնց մէջ և ըսաւ ա- 37 նոնց, Խաղաղութիւն ընդ ձեզ։ Բայց անոնք զարհուրելով կը վախնային, և 38 կը կարծէին Թէ ոգի կը տեսնէին։ Եւ ըսաւ անոնց, Ընդէ՞ր խռովեալ էք, և ընդէր խորհուրդներ կ'ելլեն ձեր 39 սիրտերուն մէջ։ Տեսէք ձեռքերնիս և ոտքերնիս, որ ես ինքն եմ. չօշափեցէք զիս և տեսէք, վասն զի ոգին մարմին և ոսկր չունի, ինչպես զիս կը 40 տեսնէք որ ունիմ։ Եւ այս ըսելով ցուցուց իւր ձեռքերը և ոտքերն։ 41 անոնց։ Եւ երբ տակաւին չէին հաւատար էրէնց ուրախութենէն և զարմացեալ էին, ըսաւ անոնց, Ունի՞ք հոս 42 կերակուր։ Եւ անոնք տուին անոր կըտ-

տար մը խորտակած ձուկ և խորխոխ մե-
43 զուս։ Եւ առաւ կերաւ անոնց առջեւ։
44 Եւ ըսաւ անոնց, Այս են խօսքերը զոր
խօսեցայ ձեզ, երբ դեռ ձեզի հետ էի,
թէ Պէտք է որ կատարուին բոլոր գրո-
ւածներն որ Մովսէսի Օրէնքին եւ մար-
45 գարէից եւ սաղմոսաց Անո-
ւանն բացաւ անոնց միտքն խնամով
46 զգիրս։ Եւ ըսաւ անոնց Թէ Այսպէս
գրուած է, և այսպէս պարտ էր Քրիս-
տոսի չարչարուիլ, և երրորդ օրը մե-
47 ռելներէն յառնել։ Եւ քարոզուիլ ա-
նոր անուամբ ապաշխարութիւն և մե-
ղաց թողութիւն բոլոր ազգերու մէջ,
48 սկսեալ Յերուսաղէմէ։ Եւ դուք էք
49 վկայ սոցա։ Եւ ահա ես կը ղրկեմ իմ
Հօրս խոստումը ձեր վրայ, բայց դուք
նստեցէք Երուսաղէմ քաղաքիս մէջ,
մինչեւ որ վերէն զօրութիւն առնուք
ձեր վրայ։
50 Եւ հանեց զանոնք մինչեւ Բեթանիա,
և վերցուելով իր ձեռքերն օրհ-
51 նեց զանոնք։ Եւ եղաւ որ երբ կ'օրհ-
նէր զանոնք, զատուեցաւ անոնցմէ և
52 կ'երթար վեր յերկինս։ Եւ անոնք երկրր-
պագութիւն ընելով անոր դարձան յե-
53 րուսաղէմ մեծ ուրախութեամբ։ Եւ
տաճարին մէջ էին հանապազ, և կը
գովէին և կ'օրհնէին զԱստուած։ Ամէն։

# ԱՒԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

### ԳԼՈՒԽ Ա՛

1 Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ
2 Աստուած, և Աստուած էր Բանն։ Նա
3 էր ի սկզբանէ առ Աստուած։ Ամէն
բան անով եղաւ, և առանց անոր բան
4 մը չեղաւ՝ ինչ որ եղաւ։ Կեանքն ա-
նով էր, և կեանքը մարդոց լոյսն էր։
5 Եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր,
և խաւարը չեղաւ անոր հասու։
6 Աստուածմէ ղրկուած մարդ մը կար,
7 որուն անունն էր Յովհաննէս։ Սա եկաւ
ի վկայութիւն որ վկայէր լուսոյն հա-
մար, որպէս զի ամենքն հաւատա-
8 յին անոր միջոցաւ։ Նա չէր այն լոյսը,
այլ եկաւ որ վկայէր լուսոյն համար։
9 Ճշմարիտ լոյսն այն էր, որ *կը լու-
սաւորէ աշխարհ եկող՝ բոլոր մարդիկ։
10 Յաշխարհի էր, և աշխարհ անով եղաւ,
11 և աշխարհ չճանչցաւ զնա։ Եկաւ ա-
12 իւրան, և իւրքն չընկալան զնա։ Բայց
որք ընկալան զնա, իշխանութիւն ա-
ւաւ անոնց լինել որդիս Աստուծոյ,
անոնց որ կը հաւատան յանուն նորա։
13 Որք ոչ յարիւնէ և ոչ ի կամաց մարմ-
նոյ և ոչ ի կամաց առն, այլ Աստուծ-
14 մէ ծնան։ Եւ Բանն մարմին եղաւ և
բնակեցաւ ի մեզ, և տեսանք անոր
փառքն իբրև զփառս միածնի ի Հօրէ
լի շնորհօք և ճշմարտութեամբ։
15 Յովհաննէս վկայեց անոր համար և
ազդարկեց բսելով, Սա է որոյ համար
կ'ըսէի, Ան որ իմ ետեւէս կու գայ
քան զիս յառաջ եղաւ, վասն զի յա-
16 ռաջ էր քան զիս։ Եւ անոր լրութե-
նէն մեզ ամենքիս առինք շնորհս փո-
17 խանակ շնորհաց։ Քանզի օրէնքը արր-
ուեցաւ Մովսէսէ ձեռօք, իսկ շնորհք
և ճշմարտութիւն եղան ի ձեռն Յիսու-
18 սի Քրիստոսի։ ԶԱստուած ոչ ոք տես-

*Կամ աշխարհ գալով՝ կը լուսաւորէ



սած է երբէք, Բայց միածին Որդին որ
Հօրը ծոցն է՝ նա պատմեց։
19 Եւ Յովհաննու վկայութիւնն այս է
երբ Հրեայք ղրկեցին Երուսաղէմէ քա-
հանաներ և Ղեւտացիներ հարցունել ա-
20 նոր Թէ Դու ո՞վ ես։ Եւ նա խոստովա-
նեցաւ և չուրացաւ և խոստովանե-
21 ցաւ Թէ Ես չեմ Քրիստոսն։ Եւ հար-
ցուցին անոր, Հապա ի՞նչ, Եղիա՞ ես։
Եւ ըսաւ, Չեմ։ Ա՞յն մարգարէ՞ն ես։
22 Պատասխան տուաւ Թէ Ոչ։ Անոնն
ըսին անոր, Դուն ո՞վ ես, զի՛ր դոյ որ
պատասխան առնենք զմեզ ղրկողնե-
րուն։ Դուն ի՞նչ կ'ըսես քեզի համար։
23 Ըսաւ, Ես ձայն եմ անոր որ անապա-
տին մէջ կ'աղաղակէ։ Ուղղեցէք Տէրո-
ջը Ճանապարհը, ինչպէս ըսաւ Եսայի
24 մարգարէն։ Եւ այն ղրկուածներն էին
25 փարիսեցիներէն։ Եւ հարցուցին անոր
ըսելով, Ընդ՞ի կը մկրտես ուրեմն, ե-
Թէ դուն չես Քրիստոսն, և ոչ Եղիա,
26 և ոչ մարգարէն Պատասխան տուաւ
անոնց Յովհաննէս և ըսաւ, Ես ջրով
կը մկրտեմ, բայց ձեր մէջ կայ զոր
27 դուք չէք ճանչնար։ Նա է որ իմ ե-
տեւէս կու գայ, որ յառաջ եղաւ քան
զիս, որոյ ես արժանի չեմ քակել կօշ-
28 կին կապը։ Այս բաները Բեթաբարայի մէջ յայնկոյս Յորդանանու ուր
Յովհաննէս կը կնքար և կը մկրտէր։
29 Ի վաղիւ անդր Յովհաննէս տեսաւ
զԻեսուս որ կու գար անոր, և ըսաւ,
Ահա Գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս
30 աշխարհի։ Սա է որոյ համար կ'ըսէի,
Իմ ետեւէս կու գայ մարդ մը որ յա-
ռաջ եղաւ քան զիս, վասն զի յառաջ
31 իսկ էր քան զիս։ Եւ ես չէի ճանչնար
զնա, բայց սա պատճառաւ եկայ ես
մկրտել ջրով, որ նա յայտնուէր Իս-
32 րայէլի։ Եւ Յովհաննէս վկայեց ըսելով
Թէ Կը տեսնեմ զՀոգին որ կ'իջնէր յերկ-
նից դաշտանի, և կը հանգչէր ա-
32 նոր վրայ։ Եւ ես չէի ճանչնար զնա,
բայց որ ղրկեց զիս մկրտել ջրով, նա
ըսաւ ինձ, Որոյ վրայ տեսնես զՀոգին,
որ կ'իջնէ և կը հանգչի անոր վրայ, նա
34 է որ կը մկրտէ Հոգւով Սրբով։ Եւ ես

տեսայ, և վկայեցի Թէ սա է Որդին
Աստուծոյ։
35 Ի վաղիւ անդր գարձեալ Յովհաննէս
կեցած էր, և անոր աշակերտներէն եր-
36 կուքը։ Եւ նայելով Յիսուսի որ կը գը-
նայր՝ ըսաւ, Ահա Գառն Աստուծոյ։
37 Եւ լսեցին անկէ երկու աշակերտները
մինչ կը խօսէր, և գացին Յիսուսի ե-
38 տեւէն։ Յիսուս երբ դարձաւ և տեսաւ
զանոնք որ կուգէն կու գային ըսաւ
անոնց, Ի՞նչ կ'ուզէք։ Եւ անոնք ըսին
անոր, Ռաբբի, որ Թարգմանուելով կը
նշանակէ Վարդապետ, ո՞ւր է քու օ-
39 թեւանդ։ Ըսաւ անոնց, Եկէք և տե-
սէք։ Եկան և տեսան ուր էր անոր օ-
թեւանը։ և այն օր անոր քով կեցան,
քանզի էր ժամն իբրև տասներորդ։
40 Սիմոն Պետրոսի եղբայրն Անդրեաս էր
մին այն երկուքէն որ լսեցին ի Յով-
41 հաննէ և գացին անոր հետէն։ Սա կը
գտնէ նախ իւր եղբայրը Սիմոն և կ'ը-
սէ անոր, Գտանք զՄեսիա, որ կը
42 Թարգմանուի *Քրիստոս։ Եւ տարաւ
զնա առ Յիսուս։ Յիսուս նայելով ա-
նոր ըսաւ, Դուն ես Սիմոն որդի Յով-
հաննու։ դուն պիտի կոչուիս Կեփաս, որ
կը Թարգմանուի †Պետրոս։
43 Ի վաղիւ անդր Յիսուս կամեցաւ Գա-
լիլեա երթալ, և գտնելով զՓիլիպպոս ը-
44 սաւ անոր, Եկու իմ հետեւէս։ Եւ Փի-
լիպպոս էր Բեթսայիդայէ, Անդրէի և
45 Պետրոսի քաղաքէն։ Փիլիպպոս կը գըտ-
նէ զՆաթանայէլ և կ'ըսէ անոր, Որոյ
համար Մովսէս գրեց յօրէնս և մար-
գարէք ես, գտանք զնա, այսինքն
զՅիսուս Նազովրեցի զորդին Յովսե-
46 փայ։ Եւ Նաթանայէլ ըսաւ անոր, Մի-
թէ հնար է որ բարի բան մը ըլլայ Նա-
զարեթէ։ Ըսաւ անոր Փիլիպպոս, եկու
47 և տես։ Յիսուս երբ տեսաւ զՆաթա-
նայէլ որ կու գար առ նա, ըսաւ ա-
նոր համար, Ահա արդարև Իսրայելա-
48 ցի, յորում նենգութիւն չկայ։ Նա-
թանայէլ ըսաւ անոր, Ուստի՞ կը ճանչ-
նաս զիս։ Պատասխան տուաւ Յիսուս

*Աւետ՝ Օծեալ։ †Աւետ՝ վէմ։

և բաւ անոր, Դեռ փիլիպպոսի գնեզ
չկոչած, դուն որ թիզնուդն տակն էիր,
49 տեսայ գնեզդ։ Պատասխան առաւ Նա-
թանայէլ և բաւ անոր, Ռաբբի, դու
ես Աստուծոյ Որդին, դու ես Իսրայէ-
50 լի Թագաւորը։ Յիսուս պատասխան
առաւ և բաւ անոր, Վասն զի բսի
քեզ, Թէ տեսայ գնեզդ Թզնուդն տակ,
կը հաւատաս. քան զայս աւելի մեծ
51 բաներ պիտի տեսնես։ Եւ բաւ անոր,
Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, այսու-
հետև պիտի տեսնէք զերկինս բաց-
ուած, և Աստուծոյ հրեշտակները որ
կ'ելլեն և կ'իջնեն Որդւոյ մարդոյ վը-
րայ։

## Գլ. Բ

1 Եւ երրորդ օրը հարսանիք կար Գալի-
լեայի Կանայ քաղաքը, և Յիսուսի մայրն
2 հոն էր։ Յիսուս ևս կոչուեցաւ այն հար-
3 սանիքը, նաև անոր աշակերտները։ Եւ
երբ գինին պակասեցաւ, Յիսուսի մայրն
4 բաւ անոր, Գինի չունին։ Յիսուս բա-
ւաւ անոր, Կին դու, դուն իմ հետս
ի՞նչ բան ունիս. իմ ժամանակս դեռ
5 հասած չէ։ Անոր մայրն ըսաւ ապատա-
ւորներուն, Ինչ որ ըսէ ձեզ՝ րնէք։
6 Հոն Հրէից մաքրութեան համեմատ
քարէ վեց ջրհոսներ դրուած էին մէկ
մէկ երկու
7 կամ երեք մար։ Յիսուս բաւ անոնց,
Լեցէք այդ ջրհոսները ջրով։ Եւ լցին
8 զանոնք մինչև ի բերան։ Եւ բաւ ա-
նոնց, Հիմա հանեցէք և տարէք սեղա-
9 նապետին։ Եւ անոնք տարին։ Եւ սե-
ղանապետը երբ ճաշակեց գինի եղած
ջուրը, և չէր գիտեր Թէ ուսկի էր,
բայց ապատաւորները որ հանած էին
ջուրը՝ գիտէին։ Սեղանապետը կը խօ-
10 սի փեսային, Եւ կ'ըսէ անոր, Ամէն
մարդ բարւոք գինին առաջ կը մա-
տուցանէ, և երբ կ'արբենան, ապա
սակաւագոյնը. Բայց դուն բարւոք գի-
11 նին մինչև ցարդ պահեցիր։ Յիսուս նը-
քանչելութեան սկիզբն այս ըրաւ Գալիլեա-
յի Կանայ քաղաքը, և յայտնեց իր
փառքը, և անոր աշակերտներն հա-
ւատացին անոր։
12 Ա֊ետև Հետև Յիսուս Կափառնայում
իջաւ ինք և անոր մայրը և եղբայրնե-
րը և աշակերտները, և շատ օրեր չկե-
ցան հոն։
13 Եւ Հրէից զատիկը մօտ էր, և Յիսուս
14 երուսաղէմ ելաւ։ Եւ տաճարին մէջ
գտաւ արջառ և ոչխար և աղաւնի վա-
ճառողները, նաև սակի փոխողները որ
15 նստած էին։ Եւ չուանէ խարազան շի-
նելով զուրս հանեց տաճարէն ամէն-
քը, նաև ոչխարները և արջառները,
և սակի փոխողներուն պղինձները ցիր-
ուցան ըրաւ, և սեղանները կործա-
16 նեց։ Եւ ագռաւի վաճառողներուն ը-
սաւ, Վերցուցէք տառնէ տակէ, իմ
Հօրս տունը մի ընէք տուն վաճառի։
17 Եւ անոր աշակերտներն յիշեցին Թէ
գրուած է, Քու տանդ նախանձը կե-
րաւ զիս։
18 Անտանեն պատասխան առին Հրեա-
ները և բսին անոր, Ի՞նչ նշան կը ցու-
ցընես մեզ, որ կ'ընես այդ բաները։
19 Պատասխան առաւ Յիսուս և բաւ ա-
նոնց, Քակեցէք այս տաճարը, և երեք
20 օրուան մէջ պիտի կանգնեմ զայն։ Եւ
Հրեաներն բսին, Քառասուն և վեց
տարուան մէջ շինուեցաւ այս տաճա-
րը, և դուն երեք օրուան մէջ պիտի
21 կանգնես զայն։ Բայց նա իր մարմնոյն
22 տաճարին համար կ'ըսէր։ Ուստի երբ
մեռելներէն յարեաւ, աշակերտներն
յիշեցին Թէ բաւած էր զայս, և հաւա-
տացին գրոյն և խօսքին զոր բաւ Յի-
սուս։
23 Եւ երբ զատկի տօնին Երուսաղէմ
էր, շատ մարդիկ տեսնելով անոր հր-
բաշներ հաւատացին անոր անուանը։
24 Բայց ինք Յիսուս չէր հաւատար անոնց
իր անձը, քանզի գիտեր ամէն մարդ։
25 Եւ պէտք չէր որ վկայեր ոք անոր մար-
գոյ համար, քանզի ինք գիտեր Թէ
ինչ կար ի մարդն։

*Ոմն֊ Ի֊ես֊ուն֊ էրեց



## Գլ. Գ

1 Եւ փարիսեցիներէն մարդ մը կար Նի-
կոդեմոս անուն որ իշխան էր Հրէից։
2 Սա եկաւ առ *Յիսուս գիշերայն և բ-
սաւ անոր, Ռաբբի, գիտենք որ դուն
Աստուծմէ եկած ես վարդապետ, քան-
զի ոչ ոք կրնայ ընել այդ հրաշները
զոր դուն կ'ընես, եթէ Աստուած չէ
3 անոր հետ։ Պատասխան առաւ Յիսուս
և բաւ անոր, Ճշմարիտ ճշմարիտ կ'ը-
սեմ քեզ, եթէ մարդ †վերստին չծը-
նանի, չկրնար տեսնել Աստուծոյ թա-
4 գաւորութիւնը։ Նիկոդեմոս բաւ ա-
նոր, Ի՞նչպես կրնայ ծնանիլ մարդ որ
ծեր է. միթէ հնար է կրկին մօրը որո-
5 վայնը մտնել և ծնանիլ։ Յիսուս պա-
տասխան առաւ, Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ քեզ, եթէ մարդ չծնանի ի ջրոյ
և ի Հոգւոյ, չկրնար մտնել Աստուծոյ
6 թագաւորութիւնը։ Մարմնէ ծնածը
մարմին է, և ի Հոգւոյն ծնածն հոգի է։
7 Դու մի զարմանար որ բսի քեզ, Պարտ
8 է ձեզ վերստին ծնանիլ։ Հովն ուր կա-
մի կը փչէ, և անոր ձայնը կը լսես,
բայց չես գիտեր ուստի կու գայ կամ
ուր կ'երթայ. այնպէս է այն ամէն
9 որ կը ծնանի ի Հոգւոյն։ Պատասխան
առաւ Նիկոդեմոս և բաւ անոր, Ի՞նչ-
10 պէս կրնայ ըլլալ այդ։ Պատասխան
առաւ Յիսուս և բաւ անոր, Դուն
վարդապետ ես Իսրայէլի, և չե՞ս գի-
11 տեր զայդ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ
քեզ, Թէ ինչ որ գիտենք կը խօսինք,
և ինչ որ տեսանք կը վկայենք, և մեր
12 վկայութիւնը չէք ընդունիր. եթէ եր-
կրաւորներն բսի ձեզ և չէք հաւատար,
ի՞նչպես պիտի հաւատաք եթէ երկնա-
13 ւորներն ըսեմ ձեզ։ Եւ ոչ ոք եղաւ
յերկինս, բայց նա միայն որ յերկինից
իջաւ, Որդին մարդոյ որ է յերկինս։
14 Եւ ինչպէս որ Մովսէս բարձրացուց
զօձն անապատին մէջ, այնպէս պարտ
15 է Որդւոյ մարդոյ բարձրանալ, Որպէս
զի ամէնը որ անոր հաւատայ՝ չկորսուի,
այլ յաւիտենական կեանք ունենայ։
16 Քանզի Աստուած այնպէս սիրեց զաշ-
խարհ, մինչև իր միածին Որդին տուաւ,
որպէս զի ամէնը որ անոր հաւատայ՝
չկորսուի, այլ յաւիտենական կեանք
17 ունենայ։ Վասն զի Աստուած չղրկեց
իր Որդին յաշխարհ որ դատէ զաշ-
խարհ, այլ որ աշխարհ փրկուի անով։
18 Ով որ կը հաւատայ անոր՝ չդատա-
պարտուիր. և ով որ չհաւատար՝ ար-
դէն իսկ դատապարտուած է, քանզի
չհաւատաց Աստուծոյ միածին Որդւոյն
19 անուանը։ Եւ այս է դատապարտու-
թիւնը, որ լոյսը եկաւ յաշխարհ, և
մարդիկ սիրեցին խաւարը քան զլոյսն
աւելի, քանզի անոնց գործերը չար
20 էին։ Վասն զի ամէնը որ չար կը գոր-
ծէ կ'ատէ լոյսը, և չգար առ լոյսն որ
21 չյանդգնանուին իր գործերը։ Բայց
ով որ ճշմարտութիւն կը գործէ՝ կու
գայ առ լոյսն, որ յայտնի ըլլան իր
գործերը Թէ Աստուծով գործուեցան։
22 Յետ այսորիկ եկաւ Յիսուս և անոր
աշակերտները Հրէաստանի երկիրը, և
հոն կը կենար անոնց հետ, և կը մկը-
23 ներ։ Յովհաննէս ևս կը մկրտէր Յայ-
նոն Սաղիմի մօտ, քանզի շատ ջուր
կար հոն, և կու գային և կը մկրտուէին։
24 Քանզի Յովհաննէս դեռ բանտ դրուած
չէր։
25 Անտանեն խնդիր եղաւ Յովհաննու ա-
շակերտներէն †Հրէից հետ մաքրու-
26 թեան վրայ։ Եւ եկան Յովհաննու և
բսին անոր, Ռաբբի, նա որ քեզի հետ
էր յայնկոյս Յորդանանու, որուն դուն
վկայեցիր, ահա կը մկրտէ նա, և ա-
27 մէնքը կու գան առ նա։ Պատասխան
առաւ Յովհաննէս և բաւ, Մարդ չը
կրնար բան մը առնուլ, եթէ որուած
28 չէ անոր յերկնից։ Դուք ձեզի կը վկա-
յէք ինձ Թէ բսի, Ես Քրիստոսը չեմ,
29 այլ ղրկուած եմ անոր առջև։ Ով որ
ունի հարսը՝ նա է փեսային. խակ փե-
սային բարեկամը որ կը կենայ և կը լսէ
անոր, ուրախութեամբ կ'ուրախանայ

*Ոմն֊ առ Նա †Կամ վերէն

‡Կամ Հրէի մը

փեսային ձայնին համար. ուստի այս
30 իմ ուրախութիւնս լցուած է. Պէտք
31 է որ նա աճի, բայց ես նուազիմ։ Այն
որ վերէն կու գայ՝ ի վեր է քան զա-
մենքն. այն որ յերկրէ՝ երկրաւոր
է, և յերկրէ կը խօսի. այն որ յերկ-
նից կու գայ՝ ի վեր է քան զամենքն.
32 Եւ ինչ որ տեսաւ և լսեց՝ զայն կը
վկայէ, և անոր վկայութիւնը ոչ ոք
33 կ'ընդունի։ Ով որ անոր վկա-
յութիւնը կ'ընդունի՝ կնքեց թէ Ա-
34 ստուած ճշմարիտ է։ Վասն զի այն զոր
Աստուած զրկեց՝ Աստուծոյ խօսքերը
կը խօսի, քանզի Աստուած ՚ի չափ չտար
35 Հոգին չափով։ Հայրը կը սիրէ Որդին,
և ամէն բան անոր ձեռքը տուած է։
36 Ով որ Որդուն կը հաւատայ՝ յաւի-
տենական կեանք ունի. և ով որ Որ-
դուն չհնազանդիր՝ կեանք պիտի չտես-
նէ, այլ Աստուծոյ բարկութիւնը կը
մնայ անոր վրայ։

## Գլ. Դ

1 Այդ երբ Տէրը իմացաւ որ փարիսե-
ցիք լսած էին թէ Յիսուս քան զՅով-
հաննէս աւելի աշակերտներ կ'ընէր և
2 կը մկրտէր, Թէպէտ ոչ թէ Յիսուս ինք
3 կը մկրտէր, այլ աշակերտները, Թո-
ղուց զԱրբհասան և գնաց միւսանգամ
4 ի Գալիլեա։ Եւ Հարկ եղաւ որ անցնէր
5 Սամարիայէ։ Ուստի եկաւ Սամարացւոց քաղաք մը որոյ անուն էր Սու-
քար, մօտ այն տեղւոյն զոր Յակոբ
6 տուաւ իւր որդւոյն Յովսեփայ. Եւ հոն
Յակոբայ աղբիւրը կար. և Յիսուս ճամ-
բէն յոգնած ըլլալով նստաւ այն աղ-
բեր վրայ. և ժամ էր իբրև վեցերորդ։
7 Սամարիայէ կին մը եկաւ ջուր հա-
նելու։ Յիսուս ըսաւ անոր, Տուր ինձ
8 ըմպել. քանզի աշակերտները քաղաք գացած էին կերակուր գնելու։
9 Անտեն Սամարացի կինն ըսաւ անոր,
Դուն որ Հրեայ ես՝ ինչպէս կը խնդրես
խմել ինէ, Սամարացի կնոջէ. վասն զի
Հրեայք չեն հաղորդիր Սամարացւոց
10 հետ։ Յիսուս պատասխան տուաւ և
ըսաւ անոր, Եթէ գիտնայիր դուն Աս-
տուծոյ պարգեւը, և թէ ով է նա որ
կ'ըսէ քեզ, Տուր ինձ խմել, դուն պի-
տի խնդրէիր անկէ, և նա պիտի տար
11 քեզ կենդանի ջուրը։ Կինը ըսաւ անոր,
Տէր, դուն դոյլ և չունիս, և այս ջրհորը խոր է. ուրեմն ուստի պիտի ու-
12 նենաս այն կենդանի ջուրը։ Մի թէ դուն
աւելի մեծ ես քան հայրը մեր Յակոբ,
որ այս ջրհորը տուաւ մեզ, և ան-
կէ խմեց ինք և անոր որդիքը և անոր
13 անասուններըը։ Պատասխան տուաւ Յի-
սուս և ըսաւ անոր, Ամէնը որ այդ
ջուրէն խմէ՝ պիտի ծարաւի մի ուան-
գամ, բայց ով որ խմէ այն ջուրէն զոր
ես պիտի տամ անոր՝ յաւիտեան պի-
14 տի չծարաւի. Այլ այն ջուրը զոր ես
պիտի տամ անոր՝ պիտի ըլլայ ի նմա
ջրոյ աղբիւր որ կը բղխի յաւիտեան-
15 կան կենաց համար։ Կինն ըսաւ անոր, Տէր, տուր ինձ այն ջուրը որ չծա-
16 րաւիմ, և չգամ հոս ջուր հանել. Յի-
սուս ըսաւ անոր, Գնա կոչէ այրդ, և
17 եկու հոս։ Կինը պատասխան տալով
ըսաւ, Ես այր չունիմ։ Յիսուս ըսաւ
անոր, Ազէկ բան թէ Այր չունիմ։
18 Քանզի դուն հինգ այր ունեցած ես,
և այն զոր հիմա ունիս՝ քու այրդ չէ.
19 ուզիղ բսիր զայդ։ Կինն ըսաւ անոր,
Տէր, կը տեսնեմ որ դուն մարգարէ
20 ես։ Մեր հայրերն այս լերան վրայ եր-
կիր պագին, և դուք կ'ըսէք թէ Ե-
րուսաղէմ Դաշն է տեղի, ուր պարտ
21 է երկիր պագանել։ Յիսուս ըսաւ ա-
նոր, Կին դու, հաւատա ինձ որ ժա-
մանակ կու գայ, երբ ոչ այս լերան
վրայ, և ոչ յերուսաղէմ պիտի երկրը-
22 պագէք Հօր։ Դուք կ'երկրպագէք այնմ
զոր չէք ճանչնար. մենք կ'երկրպա-
գենք այնմ զոր կը ճանչնանք. քանզի
23 փրկութիւնը Հրեաներէն է։ Բայց ժա-
մանակ կու գայ և արդէն իսկ է, որ
ճշմարիտ երկրպագուք պիտի երկրպա-
գեն Հօր հոգւով և ճշմարտութեամբ,
քանզի և Հայր այնպիսի երկրպագու-
24 ներ կ'ուզէ իրենն։ Աստուած Հոգի է,
և անոր երկրպագողներն ևս պարտին



հոգւով և ճշմարտութեամբ երկիր պա-
25 գանել։ Կինն ըսաւ անոր, Գիտեմ որ
կու գայ Մեսիան որ Քրիստոս կ'ըսուի.
երբ նա գայ, ամէն բան պիտի պատ-
26 մէ մեզ։ Յիսուս ըսաւ անոր, Ես այն
27 եմ որ քեզի հետ կը խօսիմ։ Եւ ատոր
վրայ եկան անոր աշակերտները, և
զարմացան որ ՚ի հնոջ հետ կը խօսէր.
բայց անոնցմէ ոչ ոք բսաւ թէ Ինչ
կ'ուզես, կամ Ինչ կը խօսես ատոր
28 հետ։ Անտեն կինը թողուց իւր ա-
փորը և գնաց քաղաք, և բսաւ մար-
29 դոց, Եկէք տեսէք մարդ մը որ բսաւ
ինձ զամենայն զոր գործած եմ. միթէ
30 նա է Քրիստոսը։ Եւ անոնք ելան քա-
ղաքէն և կու գային անոր։
31 Եւ այս միջոցին աշակերտները կ'ա-
ղաչէին անոր և կ'ըսէին, Ռաբբի, հո-
32 կեր։ Նա բսաւ անոնց, Ես ունիմ ու-
տելու կերակուր զոր դուք չէք գիտեր։
33 Ուստի աշակերտները կ'ըսէին իրարու,
Միթէ մարդ ատոր ուտելու բան մը
34 բերաւ։ Յիսուս բսաւ անոնց, Իմ կե-
րակուրս այն է որ զես զրկողին կամքն
35 ընեմ, և անոր գործը կատարեմ։ Ո՞չ
ապաքէն կ'ըսէք դուք թէ Այլ ևս
չորս ամիս կայ, և հունձը կու գայ։
Ահա ես կ'ըսեմ ձեզ, Վերցուցէք ձեր
աչուըներն և նայեցէք արտերուն, որ
36 արդէն սպիտակացեալ են ի հունձ։ Ես
այն որ կը հնձէ՝ վարձք կ'առնէ, և
յաւիտենական կենաց համար պտուղ
կը ժողովէ, որպէս զի սերմանողը և
37 հնձողն ուրախանան ի միասին։ Վասն
զի յայտ ճշմարիտ է այն խօսքը թէ
Ուրիշը կը սերմանէ և ուրիշը կը հնձէ։
38 Ես զրկեցի զձեզ հնձել զոր դուք չաշ-
խատեցաք. ուրիշներն աշխատեցան,
և դուք անոնց աշխատանաց մէջ մը-
տաք։
39 Եւ այն քաղաքէն շատ Սամարացիք
հաւատացին անոր այն պատճառաւ
հնոջ խօսքին
համար որ վկայեց, ըսելով թէ Ինչ որ
40 ես գործած էի բոլորն բսաւ ինձ։ Եւ
երբ Սամարացիք եկան անոր, կ'աղա-
չէին զնա իրենց քով մնալ. և երկու
41 օր հոն կեցաւ։ Եւ այլ ևս շատեր հա-
42 ւատացին անոր իւր խօսքին համար։
Եւ կ'ըսէին կնոջը, Այլևս հետև ոչ թէ
քու խօսքիդ համար կը հաւատանք,
քանզի մենք մեզին լսեցինք, և գի-
տենք թէ զա է ճշմարտապէս աշխարհի փրկիչը Քրիստոս։
43 Եւ յետ այն երկու աւուր ելաւ ան-
44 կէ և գնաց Գալիլեա։ Քանզի Յիսուս
ինք վկայեց թէ Մարգարէ պատիւ չու-
45 նենար իւր զաւառին մէջ։ Եւ երբ
Գալիլեա եկաւ, Ընկալան զնա Գալի-
լեացիք որ տեսած էին բոլոր ինչ որ
ըրաւ յերուսաղէմ տօնին ատենը. վասն
զի անոնք ևս գացած էին այն տօնին։
46 Եւ Յիսուս նորէն եկաւ Գալիլեացւոց
կանայ ւռ-ռւ-ւը, ուր ըրած էր ջուրը
գինի. և հոն ազնուական մը կար, ո-
րոյ որդին հիւանդ էր ի Կափառնա-
47 յում։ Սա լսելով թէ Յիսուս Հրէաս-
տանէ Գալիլեա եկած էր, եկաւ անոր
և կ'աղաչէր որ իջնէր և բժշկէր իւր
որդին, վասն զի մեռնելու մօտ էր։
48 Անտեն Յիսուս ըսաւ անոր, Եթէ նը-
շաններ և հրաշներ չտեսնէք, ընաւ
49 պիտի չհաւատաք։ Ազնուականն ըսաւ
անոր, Տէր, էջ, մինչդեռ մեռած չէ
50 մանուկս։ Յիսուս ըսաւ անոր, Գնա,
որդիդ կենդանի է։ Եւ մարդն հաւա-
տաց խօսքին զոր Յիսուս ըսաւ անոր,
51 և գնաց։ Եւ մինչ կ'իջնէր, անոր ծա-
ռաներն գիմաւորեցին զնա, և աւե-
տիս տուին ըսելով թէ Մանուկդ կեն-
52 դանի է։ Ուստի հարցուց անոնց ժա-
մը յորում առողջացաւ, և ըսին անոր,
Երէկ հօթներորդ ժամուն թողուց զնա
53 չերմը։ Անտեն գիտաց հայրը
թէ այն ժամն էր յորում Յիսուս ըսաւ
անոր թէ Որդիդ կենդանի է. և հա-
54 ւատաց ինքն և անոր բոլոր տունը։ Այս
դարձեալ երկրորդ հրաշն է զոր Յիսուս
ըրաւ, երբ Հրէաստանէ եկաւ ի Գալի-
լեա։

## Գլ. Ե

1 Յետ այսորիկ ոտն էր Հրէից, և Յիսուս
2 երթ. յերուսաղէմ։ Ուս-

խաթաց գէշ գով կայ աւազան մը, որ Երբայեցերէն կը կոչուի Բեթհեզդա,
3 հինգ սրահներ ունի. Անոնց մէջ պառկած էր բազմութիւն յոյժ հիւանդից, կուրաց, կաղաց, գօսացելոց, որ կը սպասէին ջրոյն յուզմանը.
4 վասն զի ժամանակ ժամանակ հրեշտակ կ'իջնէր աւազանը և կը յուզէր ջուրերը, և ով որ յետ յուզման ջրոյն կը մտնէր նախ, կը բժշկուէր ինչ հիւանդութիւն որ
5 ունէր։ Եւ հոն մարդ մը կար, որ երեսունևութ տարիէ հետէ հիւանդու-
6 թիւն ունէր։ Յիսուս երբ տեսաւ զնա պառկած, և գիտցաւ թէ բազմաժամանակեայ էր, ըսաւ անոր, Կամիս ա-
7 ռողջանալ։ Հիւանդը պատասխան տուաւ անոր, Տէր, մարդ չունիմ որ երբ ջուրերը կը յուզուին, նետէ զիս աւազանը. այլ մինչ ես կը դանդաղիմ,
8 ուրիշ մը առաջ կ'իջնէ։ Ըսաւ անոր Յիսուս, Ել, առ մահիճդ և քալէ։
9 Եւ իսկոյն առողջացաւ մարդը, և մահիճը վերցուելով կը քալէր։ Եւ
10 այն օր շաբաթ էր։ Անոնք Հրեայք ըսին բժշկուած մարդուն, Շաբաթ է, ՚ի պիտան չէ որ մահիճդ վերցուես։
11 Պատասխան տուաւ անոնց Ե՛ր ըսաւ, նա որ զիս բժշկեց՝ ըսաւ ինձ, Առ մահիճդ
12 առ և քալէ։ Ուստի հարցուցին անոր, Ո՞վ է այն մարդը որ ըսաւ քեզ, Առ
13 հինգ առ և քալէ։ Եւ բժշկուողը չէր գիտեր թէ ով էր նա, քանզի Յիսուս խոյս առաւ, վասն զի բազմութիւն
14 կար հոն։ Յետոյ Յիսուս գտնելով զնա տաճարին մէջ ըսաւ անոր, Ահա բժշկուեցար, այլ ևս մի մեղանչեր, որ ևս
15 աւելի չար չպատահի քեզ։ Գնաց մարդը, և պատմեց Հրեից թէ Յիսուս էր որ բժշկեց զնա։
16 Եւ այս պատճառաւ Հրեայք կը հալածէին զՅիսուս, և կը խնդրէին սպանանել զնա, որ շաբաթ օրը կ'ընէր ա-
17 նոնք։ Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց, Իմ Հայրս մինչև ցայժմ կը
18 գործէ, ես ևս կը գործեմ։ Այս պատճառաւ ևս աւելի կը խնդրէին Հրեայք սպանանել զնա, վասն զի ոչ միայն կը

լուծէր շաբաթ օրը, այլ և Հայր իւր կ'անուանէր զԱստուած, և այսպէս կը-
19 նէր զինք հաւասար Աստուծոյ։ Իսկ Յիսուս պատասխան առաւ և ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ. Որդին ինքնին չկրնար բան մը ընել, միայն ինչ որ տեսնէ թէ Հայրը կ'ընէ. վասն զի ինչ որ նա կ'ընէ, նմանապէս
20 Որդին կ'ընէ նոյնը։ Քանզի Հայրը կը սիրէ զՈրդին, և ամէն բան կը ցուցընէ անոր ինչ որ ինք կ'ընէ. և քան զսոսա աւելի մեծ գործեր պիտի ցու-
21 ցընէ անոր, որպէս զի դուք զարմանաք։ Նաև՝ վասն զի ինչպէս որ Հայրը կը յարուցանէ զմեռեալս և կենդանի կ'ընէ, նոյնպէս Որդին զորս կամի կը կեն-
22 դանացունէ։ Քանզի Հայրը չդատեր զոք, այլ ամէն դատաստան տուաւ
23 Որդւոյն, Որպէս զի ամէնքը պատուեն զՈրդին, ինչպէս կը պատուեն զՀայրը. ով որ չպատուեր զՈրդին՝ չպատուեր զՀայրը որ զրկեց զնա։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ թէ Ով որ կը լսէ իմ
24 խօսքս և կը հաւատայ անոր որ զրկեց զիս՝ յաւիտենական կեանք ունի, և դատապարտութեան տակ չիյնար, այլ
25 անցած է ի մահուանէ ի կեանս։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ ժամանակ պիտի գայ և արդէն եկած է, երբ մեռելք պիտի լսեն Աստուծոյ Որդւոյն ձայնը, և անոնք որ կը լսեն՝ պիտի
26 ապրին։ Վասն զի ինչպէս Հայրը կեանս ունի յանձին իւրում, նոյնպէս Որդւոյն տուաւ կեանս ունենալ յանձին իւ-
27 րում։ Եւ դատաստան ընելու ևս իշխանութիւն տուաւ անոր, քանզի Որ-
28 դի մարդոյ է նա։ Ընդ այս մի զարմանաք, քանզի ժամանակ պիտի գայ երբ ամէնքը որ գերեզմաններու մէջ են՝
29 պիտի լսեն անոր ձայնը, և պիտի գան դուրս, անոնք որ բարի գործած են՝ ի յարութիւն կենաց, և անոնք որ չար
30 գործած են՝ ի յարութիւն դատապարտութեան։ Ես յանձնէ բան մը չեմ կրնար ընել. ինչպէս կը լսեմ՝ այնպէս կը դատեմ, և դատաստանս արդար է, քանզի ես չեմ խնդրեր իմ կամքս,



31 այլ *անոր կամքը որ զրկեց զիս։ Եթէ ես ինձի համար վկայեմ, ճշմարիտ չէ
32 վկայութիւնս։ Ուրիշ է որ ինձի համար կը վկայէ. և ես գիտեմ թէ ճշմարիտ է վկայութիւնը զոր նա վկայեց
33 ինձի համար։ Դուք զրկեցիք Յովհաննու, և նա վկայեց ճշմարտութեան։
34 Բայց ես ոչ թէ ի մարդկանէ կ'առնեմ վկայութիւն, այլ կ'ըսեմ ասոնք
35 որ դուք փրկուիք։ Նա ճրագ էր որ կը վառէր և լոյս կու տար, և դուք փոյթ առին կամեցաք անոր լուսովն ու-
36 րախանալ։ Բայց ես քան զՅովհաննու վկայութիւնը մեծ ես վկայութիւն ունիմ, քանզի այն գործերը զորս Հայր տուաւ ինձ որ կատարեմ զանոնք, այն գործերը զոր ես կը գործեմ կը վկայեն ինձի համար թէ Հայրը զրկեց զիս։
37 Եւ Հայրը որ զրկեց զիս, նա վկայեց ինձի համար. դուք բնաւ անոր ձայնը չլսեցիք, և ոչ անոր կերպարանքը տե-
38 սաք. Եւ ոչ անոր խօսքը ձեր մէջ բնակած ունիք, քանզի անոր զոր նա
39 զրկեց՝ չէք հաւատար։ Փիրփիրը քննեցէք, քանզի դուք նոքօք կը համարիք ունենալ յաւիտենական կեանք, և բուն անոնք են որ կը վկայեն ինձի
40 համար. Եւ դուք չէք ուզեր գալ առ
41 իս, որ կեանք ունենաք։ Ես փառք
42 չեմ առնուր ի մարդկանէ. Բայց գիտեմ զձեզ որ Աստուծոյ սէրը չունիք
43 ի ձեզ։ Ես իմ Հօրս անուամբ եկայ, և զիս չէք ընդունիր. եթէ այլ ոք գայ իւր անուամբ, զնա պիտի ընդունիք։
44 Դուք ի՞նչպէս կրնաք հաւատալ, որ իրարմէ փառք կ'առնուք, և այն փառքը որ ի միոյն Աստուծոյ է՝ չէք խընդ-
45 րեր։ Մի կարծէք թէ ես ամբաստանութիւն պիտի ընեմ ձեզի համար Հօրը. կայ որ ամբաստանութիւն կ'ընէ ձեզի համար, Մովսէս յոր դուք յու-
46 սացած էք։ Վասն զի եթէ դուք Մովսիսի հաւատայիք, ինձ ևս պիտի հաւատայիք, քանզի նա գրեց ինձի հա-
47 մար։ Բայց եթէ անոր գրուածներուն

*Ոմն։ Հօրը

չէք հաւատար, իմ խօսքերուս ի՞նչպէս պիտի հաւատաք։

## Գլ. Զ

1 Յետ այսորիկ Յիսուս գնաց յայնկոյս Գալիլեացի, այսինքն Տիբերիոյ, ծովուն.
2 Եւ շատ ժողովուրդ կ'երթար անոր ետևէն, քանզի կը տեսնէին հրաշներըը
3 զորս կ'ընէր հիւանդաց վրայ։ Եւ Յիսուս լեռը ելաւ, և հոն նստաւ աշա-
4 կերտներուն հետ։ Եւ մօտ էր Հրէից զատկի տօնը։
5 Յիսուս երբ վեր վերցուց իւր աչուըները և տեսաւ որ շատ ժողովուրդ կու գար իրեն, ըսաւ Փիլիպպոսի, Ուստի
6 գնենք հաց որ տանք ուտեն։ Եւ զայս կ'ըսէր փորձելու համար զնա, քանզի
7 ինք գիտէր ինչ պիտի ընէր։ Փիլիպպոս պատասխան տուաւ անոր, Երկու հարիւր դահեկանի հաց բաւական չէ ատոնց, որ իւրաքանչիւր փոչ մը առ-
8 նու։ Անդրեասն Սիմոն Պետրոսի եղբայրն, Անդրեաս, ըսաւ անոր,
9 Հոս պատանի մը կայ որ հինգ գարեղէն հաց և երկու ձուկ ունի, բայց ա-
10 նոնք ի՞նչ պիտի ըլլան այդչափ մարդոց։ Իսկ Յիսուս ըսաւ, Նստուցէք այդ մարդիկը։ Եւ այն տեղ շատ խոտ կար, և մարդիկը նստան թուով իբրև
11 հինգ հազար։ Եւ Յիսուս հացերն առաւ և գոհացաւ, և աշակերտներուն բաժնեց, և աշակերտներըը՝ նստացնելոցն, նոյնպէս և ձուկերէն որչափ և
12 կամեցան։ Եւ երբ յագեցան, ըսաւ իւր աշակերտներուն, Ժողովեցէք ա-
13 ւելցած կտորները որ բան չկորսուին։ Ուստի ժողովեցին, և լցին երկոտասան կողով այն հինգ գարեղէն հացերու կտորներէն, որ ուտողներէն աւելցան։
14 Իսկ մարդիկը երբ տեսան հրաշքը զոր ըրաւ Յիսուս՝ կ'ըսէին թէ Սա է ճշմարտապէս մարգարէն որ աշխարհ պի-
15 տի գար։ Եւ Յիսուս գիտնալով թէ պիտի գային յափշտակել զնա որ թագաւոր ընէին, դարձեալ առանձին գը-
16 նաց լեռը։ Եւ երբ երեկոյ եղաւ, ա-

17 չակերտներն իջան ծովեզերը. Եւ մրա-
նելով նաւը կ՚երթային յայնկոյս ծո-
վուն Կափառնայում և արդէն նահա-
ցած էր, և Յիսուս դեռ եկած չէր ա-
18 նոնց. Եւ ծովը կը յուզէր հովին սաս-
19 ոիկ փչելէն։ Եւ երբ թիավարելով գա-
ցին իբր քսանևհինգ կամ երեսուն ա-
պաթէզ, տեսան զՅիսուս որ ծովուն
վրայ քալելով կը մօտենար նաւին, և
20 վախցան։ Բայց նա բսաւ անոնց, Ես
21 եմ, մի երկնչիք։ Անոնք կամեցան
առնուլ զնա նաւը. և նաւն հասաւ
իսկոյն յերկիրն ուր կ՚երթային։
22 Հետևեալ օրը ժողովուրդը որ էր
յայնկոյս ծովուն և տեսած էր թէ ու-
րիշ նաւակ չկար հոն բայ ի միոյն յոր
մտած էին անոր աշակերտները, և թէ
Յիսուս նաւակը մտած չէր իր աշա-
կերտներուն հետ, այլ աշակերտները
23 միայն գացած էին, (Բայց Տիբերիայէ
ուրիշ նաւակներ եկան այն տեղւոյն
մօտ ուր Տէրոջը գոհանալէն ետքը կե-
24 րած էին հացը,) Անոնք ժողովուր-
դը տեսնելով թէ ոչ Յիսուս հոն էր,
և ոչ անոր աշակերտները, իրենք ևս
մտան նաւերը և եկան Կափառնայում
25 խնդրել զՅիսուս։ Եւ երբ գտան զնա
յայնկոյս ծովուն, բսին անոր, Ռաբբի,
26 երբ եկար հոս Յիսուս պատասխան
առաւ անոնց և բսաւ, Ճշմարիտ ճըշ-
մարիտ կ՚ըսեմ ձեզ, Դուք զիս կը
խնդրէք, ոչ թէ վասն զի հրաշք տե-
սաք, այլ վասն զի կերաք հացերէն
27 և յագեցաք։ Գործեցէք ոչ
թէ կորսուտական կերակրոյն համար,
այլ այն կերակրոյն համար որ կը մնայ
ի կեանս յաւիտենից, Ե զոր Որդին
մարդոյ պիտի տայ ձեզ. քանզի Հայրն
28 Աստուած կնքեց զնա։ Անոնք բսին
անոր, Ինչ բնենք որ Աստուծոյ գոր-
29 ծերը գործենք։ Պատասխան առաւ
Յիսուս և բսաւ անոնց, Այս է Աստու-
ծոյ գործը, որ հաւատաք անոր զոր
30 նա դրկեց։ Բսին անոր, Բայց դուն ինչ
նշան կ՚ընես որ տեսնենք և հաւատանք
31 քեզ. ինչ կը գործես։ Մեր հայրերն
անապատին մէջ կերան զմանանայն,



48 կան կեանքի։ Ես եմ հացն կենաց։
49 Ձեր հայրերն անապատին մէջ կերան
50 զմանանայն և մեռան։ Այս այն հացն
է որ յերկինէն կ՚իջնէ, որպէս թէ ոեւէ
51 ոք, պիտի չմեռնի։ Ես եմ հացն կեն-
52 դանի որ յերկինէ իջայ։ Եթէ ոք ու-
տէ այս հացէն, պիտի ապրի յաւի-
տեան. և հացը զոր ես պիտի տամ
իմ մարմինս է, զոր ես պիտի տամ
վասն կենաց աշխարհի։
53 Ուստի Հրեայք կը վիճէին իրարու
հետ և կ՚ըսէին, Ինչպէս կրնայ սա
54 տալ մեզ է՞ր մարմինն ուտել։ Իսկ
Յիսուս բսաւ անոնց, Ճշմարիտ ճշմա-
րիտ կ՚ըսեմ ձեզ, Եթէ չուտէք Որդւոյ
մարդոյ մարմինը և չխմէք անոր արիւ-
նը, չէք ունենար կեանք յանձինս ձեր։
55 Ով որ ուտէ իմ մարմինս և խմէ իմ
արիւնս, կ՚ունենայ յաւիտենական
կեանք, և ես պիտի յարուցանեմ զնա
56 վերջին օրը։ Քանզի իմ մարմինս ճշմա-
րիտ կերակուր է, և իմ արիւնս ճշմա-
57 րիտ ըմպելի է։ Ով որ կ՚ուտէ իմ մար-
մինս և կը խմէ իմ արիւնս, նա յիս
58 կը բնակի և ես՝ ի նմա։ Ինչպես կեն-
դանի Հայրը զրկեց զիս, և ես կենդա-
նի եմ Հօրը ձեռօք, այնպէս և նա որ
կ՚ուտէ զիս, նա ևս կենդանի կը մնայ
59 իմ ձեռօքս։ Այս է այն հացը որ յերկ-
նից իջած է։ ոչ որպէս ձեր հայրերը
կերան զմանանայն և մեռան. ով որ
ուտէ այս հացը՝ պիտի ապրի յաւիտեան։
60 Զայս բսաւ ժողովրդանոցին մէջ, երբ
կ՚ուսուցանէր ի Կափառնայում։
61 Եւ աշակերտներէն շատերը երբ լսե-
ցին, բսին, Խիստ է՝ այդ խօսքը, ո՞վ
62 կրնայ լսել զայն։ Յիսուս իմանալով
յանձին թէ աշակերտները կը տրտընջէին
այն բանին համար, բսաւ անոնց,
63 Այդ կը գայթակղեցնէ՞ զձեզ։ Ապա
ի՞նչպէս կ՚ըլլայ եթէ տեսնէք զՈրդին
64 մարդոյ որ կ՚ելլէ ուր էր առաջ։ Հոգին
է կենդանարար, մարմինն օգուտ չու-
նի. այն խօսքերը զոր ես *կը խօսիմ
65 ձեզ՝ հոգի են և կեանք։ Բայց ձեզ-

*Ոմն՝ խօսեցայ՝

կան ոմանք որ չեն հաւատար։ Քանզի
Յիսուս ի սկզբանէ գիտէր թէ ովքեր
անոնք որ չէին հաւատար, և ով էր
66 այն որ պիտի մատնէր զնա։ Եւ կ՚ըսէր,
Ասոր այսօրիկ բսի ձեզ թէ ոչ ոք կըր-
նայ գալ առ իս, եթէ որուած չըլայ
անոր իմ Հօրմէս։
67 Այս պատճառաւ անոր աշակերտնե-
րէն շատերը ետ գացին, և այլ ևս
68 չէին շրջիր անոր հետ։ Անաւասն Յիսուս
բսաւ երկոտասանից, Միթէ և դո՞ւք
69 կամիք երթալ։ Սիմոն Պետրոս պա-
տասխան առաւ անոր, Տէր, որո՞ւ պի-
տի երթանք, դուն յաւիտենական կեա-
70 նաց խօսքեր ունիս։ Եւ մենք հաւա-
տացինք և գիտցանք թէ դուն ես Քրի-
71 ստոս, *Աստուծոյ Որդին։ Յիսուս
պատասխան առաւ անոնց, Ո՞չ ես ըն-
տրեցի զձեզ երկոտասանդ, և ձեռնէ ևս
72 մին սատանայ է։ Զայս կ՚ըսէր Իսկա-
րիովտացի Սիմոնեան Յուդայի համար,
քանզի նա էր որ պիտի մատնէր զնա,
և էր մին յերկոտասանից։

## Գլ. Է

1 Եւ յետ այսորիկ կը շրջէր Յիսուս Գա-
լիլեայի մէջ, քանզի չէր ուզեր Հրէաս-
տանի մէջ շրջիլ, վասն զի Հրեայք կ՚ու-
զէին սպաննել զնա։
2 Եւ մօտ էր Հրէից տաղաւարահաղոյ
3 տօնը։ Ուստի անոր եղբայրներն ըսին
անոր, Ել ասկէ և գնա Հրէաստան,
որ աշակերտներդ ևս տեսնեն գործե-
4 րը զոր կ՚ընես. Քանզի չկայ մարդ որ
բան մը ընէ ի ծածուկ, և ինք ուզէ
յայտնի ըլլալ. եթէ դուն այդ բաները
5 կ՚ընես, յայտնէ դիզեզ աշխարհի։ Քան-
զի անոր եղբայրներն ևս չէին հաւա-
6 տար անոր։ Իսկ Յիսուս բսաւ անոնց,
Իմ ժամանակս դեռ հասած չէ, բայց
ձեր ժամանակը միշտ պատրաստ է։
7 Աշխարհ զձեզ չկրնար ատել, բայց զիս
կ՚ատէ, քանզի ես կը վկայեմ անոր
համար թէ անոր գործերը չար են։

*Ոմն՝ կենդանի Աստուծոյ

8 Դուք երէք այս ածնին. ես [զես] չեմ
երկիր այս ածնին, քանզի իմ ժամա-
9 նակս դեռ լցուած չէ։ Զայս ըսելով
10 անոնց՝ ինք մնաց Գալիլեա։ Բայց երբ
անոր եղբայրները երան, յետոյ ինք
ես երաւ ածնին, ոչ թէ յայտնի այլ
ի ծածուկ։
11 Եւ Հրեայք ածնին առնոր կը փնար-
12 ռէին զնա. և կ'ըսէին, Ո՞ւր է նա։ Եւ
բրթմնջիւն բազում էր ժողովրդեան
մէջ անոր վրայ։ Ոմանք կ'ըսէին թէ
Ագէկ է։ այլք կ'ըսէին, Ոչ, այլ կը մո-
13 լորեցնէ ժողովուրդը։ Սակայն ոչ ոք
համարձակ կը խօսէր անոր վրայ առ-
ակին Հրէից։
14 Իսկ երբ ածնն ընդմիջեցաւ, Յիսուս
15 երաւ տաճարը և կը սորվեցուներ։ Եւ
Հրեայք կը զարմանային և կ'ըսէին,
Ի՞նչպէս գիտէ սա որ ուսեալ
16 չէ։ Յիսուս պատասխան տուաւ անոնց
և ըսաւ, Իմ վարդապետութիւնս իմն
17 չէ, այլ զիս ղրկողինն է։ Եթէ ոք կ'ու-
զէ ընել անոր կամքը, պիտի գիտնայ
այս վարդապետութեան համար թէ
Աստուծմէ՞ է արդեօք կամ թէ ես
18 յանձնէ կը խօսիմ։ Ան որ յանձնէ
կը խօսի՝ կը խնդրէ իւր անձին փառ-
քը, բայց ան որ կը խնդրէ զինք ղրր-
կողին փառքը, նա ճշմարիտ է, և ա-
19 նիրաւութիւն չկայ անոր քով։ Մովսէս չտուա՞ւ ձեզ օրէնքը, և ձեզնէ ոչ
20 ոք կը պահէ օրէնքը։ Ինչո՞ւ կը խնդ-
րէք սպաննել զիս։ Պատասխան տուաւ
ժողովուրդը և ըսաւ, Դեւ կայ ի քեզ։
21 ո՞վ կը խնդրէ սպաննել զքեզ։ Պա-
տասխան տուաւ Յիսուս և ըսաւ ա-
նոնց, Գործ մը գործեցի, և ամէնդդ
22 զարմացած էք։ Արդ Մովսէս թլփա-
ւութիւնը տուաւ ձեզ, որ ոչ թէ Մով-
սիսէ էր՝ այլ նահնիներէն, և շաբաթ
23 օր մարդ կը թլփատէք։ Եթէ շաբաթ
օր մարդ կ'առնու թլփատութիւն որ
Մովսիսի օրէնքը չքակուի, կը բարկա-
նա՞ք ինձ որ ես շաբաթ օր ամբողջ մարդ
24 մը բժշկեցի։ Մի ըստ աչս դատէք, այլ
արդար դատաստան ըրէք։
25 Անասնն Երուսաղէմացիներէն ոմանք

26 կ'ըսէին, Ո՞չ ասիկա սա է զոր կը
խնդրեն սպաննել։ Եւ ահա յայտնի
կը խօսի, և բան մը չեն ըսեր անոր։
Միթէ իշխանները գիտցա՞ծ են թէ ար-
27 դարև Քրիստոսն է սա։ Սակայն մենք
զսա գիտենք ուսեալ է, բայց Քրիստոս
28 երբ գայ, ոչ ոք գիտէ ուսեալ է։ Եւ
Յիսուս մինչ կ'ուսուցանէր, տաճարին
մէջ աղաղակեց ըսելով, Ե՛ս զիս գի-
տէք, և ուսեալ եմ գիտէք։ Եւ ես ին-
ձմէն եկած չեմ, այլ այն որ զիս ղրր-
կեց՝ ճշմարիտ է, զոր դուք չէք գի-
29 տեր։ Բայց ես գիտեմ զնա, քանզի ես
30 անկէ եմ, և նա ղրկեց զիս։ Ուսոի
կը խնդրէին բռնել զնա, բայց ոչ ոք
ձեռք մխեց ի նա, քանզի դեռ հասած
31 չէր անոր ժամանակը։ Եւ ժողովուր-
դէն շատ մարդիկ հաւատացին անոր,
և կ'ըսէին, Քրիստոս երբ գայ, քան
զայս աւելի՞ նշաններ պիտի ընէ, որ-
չափ սա կ'ընէ։
32 Փարիսեցիք լսեցին ժողովրդեան այս
քրթմնջիւնն անոր վրայ։ Եւ փարիսե-
ցիք և քահանայապետք սպասաւորներ
33 ղրկեցին բռնել զնա։ Իսկ Յիսուս *ը-
սաւ, Փոքր ինչ ժամանակ ես ձեզի
հետ եմ, և կ'երթամ առ այն որ ղրր-
34 կեց զիս։ Զիս պիտի փնտռէք և պիտի
չգտնէք, և ուր ես եմ՝ դուք չէք կըր-
35 նար գալ։ Ասոնն Հրեայք ըսին իրա-
րու, Ո՞ւր պիտի երթայ սա, որ մենք
պիտի չգտնենք զնա։ Միթէ †Հեթանո-
սաց մէջ ցիրուցան եղածներո՞ւն պիտի
երթայ և հեթանոսներուն սորվեցու-
36 նէ։ Ի՞նչ է այն խօսքը զոր ըսաւ, Զիս
պիտի փնտռէք և պիտի չգտնէք, և
ուր ես եմ՝ դուք չէք կրնար գալ։
37 Տօնին վերջին մեծ օրը Յիսուս կե-
ցած կ'աղաղակէր և կ'ըսէր, Եթէ ոք
ծարաւի է՝ թող գայ առ իս և խմէ։
38 Ով որ կը հաւատայ ինձ, ինչպէս կ'ը-
սէն գիրք, կենդանի ջրոյ գետեր պի-
տի բղխեն անոր որովայնէն։ Զայս ըսաւ
Հոգւոյն համար զոր անոր հաւատա-

*Ոմանք ըսաւ անոնց
†Յոյն. Ցուներս



ցողները պիտի առնուին, վասն զի Սուրբ
Հոգին դեռ չէր, քանզի Յի-
40 սուս դեռ չէր փառաւորուած։ Ժողո-
վուրդէն շատ մարդիկ երբ լսեցին այս
խօսքը, կ'ըսէին, Արդարև սա է մար-
41 գարէն։ Այլք կ'ըսէին, Սա է Քրիս-
տոս։ Այլք ևս կ'ըսէին, Միթէ Գա-
42 լիլեայէ՞ կու գայ Քրիստոս։ Ո՞չ ասպա-
քէն գիրքը կ'ըսէ թէ Քրիստոս կու
գայ ի զաւակէ Դաւիթի և Բեթղեհեմի
43 գիւղէն ուր էր Դաւիթ։ Ուսոի ժո-
ղովրդեան մէջ երկպառակութիւն ե-
44 ղաւ անոր համար։ Եւ անոնցմէ ոմանք
կամեցան բռնել զնա, բայց ոչ ոք ձեռք
մխեց ի նա։
45 Եւ սպասաւորները դարձան եկան քա-
հանայապետներուն և փարիսեցիներ-
ուն. և ասոնք ըսին անոնց, Ընդէ՞ր
46 հո չբերիք զնա։ Պատասխան տուին
սպասաւորները, Երբէք այնպէս չխօ-
47 սեցաւ մարդ, ինչպէս այս մարդը։ Ա-
սոնն փարիսեցիք պատասխան տուին
անոնց և ըսին, Միթէ և դո՞ւք մոլոր-
48 եցաք։ Իշխաններէն կամ փարիսեցի-
49 ներէն ոք հաւատա՞ց անոր։ Բայց այս
խաժամուժ ամբոխը որ չգիտեր օրէն-
50 քը՝ նզովեալ է։ Նիկոդէմոս որ ե՛ն
ղ՞ն գիշերոյն եկած էր առ նա և էր
51 անոնցմէ մին, ըսաւ անոնց, Միթէ մեր
օրէնքը կը դատէ՞ զոք, եթէ նախ չլսէ
52 անկէ, և չգիտնայ թէ ինչ կ'ընէ։ Պա-
տասխան տուին և ըսին անոնց, Միթէ
դո՞ւն ևս Գալիլեայէ ես. քննէ և տես
53 որ Գալիլեայէ մարգարէ չկըլլար։ Եւ գը-
նաց իւրաքանչիւրը իւր տունը։

## Գլ. Ը

1 Եւ Յիսուս գնաց Ձիթենեաց լեռը։
2 Եւ առաւօտուն դարձեալ եկաւ տա-
ճարը, և բոլոր ժողովուրդը կու գար
անոր, և ինք նստած կը սորվեցուներ
3 անոնց։ Եւ գրիչք և փարիսեցիք բեր-
ին անոր շնութեան մէջ բռնուած
4 կին մը, և կեցուցանելով զնա ի մէջ ըսին
անոր, վարդապետ, այս կինը մինչ ի
գործի անդ շնութեան էր՝ բռնուե-
5 ցաւ։ Եւ Մովսէս պատուիրեց մեզ յօ-
րինս զայսպիսիս քարկոծել. արդ դուն
6 ի՞նչ կ'ըսես։ Զայս կ'ըսէին փորձելով
զնա, որ ամբաստանութիւն ունենա-
յին անոր վրայ. բայց Յիսուս ի վայր
ծռելով կը գրէր մատամբ գետինը։
7 Սակայն երբ կը պնդէին հարցունելով
զնա, վեր նայեցաւ և ըսաւ անոնց,
Ձեզնէ անմեղը նախ նա թող նետէ քար
8 ասոր վրայ։ Եւ դարձեալ ի վայր ծռ-
9 ելով կը գրէր գետինը։ Եւ անոնք
լսելով և խրճուելով խղճէն յանդիմանուե-
լով՝ մի ըստ միոջէ կ'ելլէին դուրս, ծե-
րերէն սկսեալ մինչև յետիններըն. և
Յիսուս մնաց միայն, և կինը կեցած ի
10 մէջ։ Եւ Յիսուս վեր նայելով և բաց
ի կնոջէն չտեսնելով զոք, ըսաւ անոր,
կին դու, ո՞ւր են որ կ'ամբաստանէին
զքեզ. ո՞չ ոք դատապարտեց զքեզ։
11 Եւ նա ըսաւ, Ոչ ոք, Տէր։ Եւ Յիսուս
ըսաւ անոր, Եւ ես ալ կը դատապար-
տեմ զքեզ. գնա և այսուհետև մի մե-
ղանչեր։
12 Արդ Յիսուս դարձեալ խօսեցաւ ա-
նոնց և ըսաւ, Ես եմ լոյս աշխարհի.
ով որ իմ հետևէս կու գայ՝ խաւարի
մէջ պիտի չքալէ, այլ պիտի ունենայ
13 կենաց լոյսը։ Իսկ փարիսեցիք ըսին ա-
նոր, Դուն քու անձիդ համար կը վկա-
յես, քու վկայութիւնդ ճշմարիտ չէ։
14 Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ ա-
նոնց, Թէև ես իմ անձիս համար վկա-
յեմ, իմ վկայութիւնս ճշմարիտ է,
քանզի գիտեմ ուսեալ եկայ և ուր կ'եր-
թամ. բայց դուք չէք գիտեր ուսեալ
15 կու գամ կամ ուր կ'երթամ։ Դուք
ըստ մարմնոյ կը դատէք, ես կը գա-
16 տեմ ոչ զոք. Եւ եթէ դատեմ ես,
իմ դատաստանս ճշմարիտ է, քանզի
ես միայն չեմ, այլ ես և Հայրը որ ղրր-
17 կեց զիս։ Եւ ձեր օրինաց մէջ ևս գը-
րուած է թէ երկու մարդոց վկայու-
18 թիւնը ճշմարիտ է։ Ես եմ որ իմ ան-
ձիս համար կը վկայեմ, և կը վկայէ
ինծի համար նաև Հայրը որ ղրկեց զիս։
19 Անասնն ըսին անոր, Ո՞ւր է քու Հայ-
րըդ։ Յիսուս պատասխան տուաւ, Ոչ

զիս գիտէք և ոչ իմ Հայրս. եթէ զիս գիտայիք, իմ Հայրս ևս պիտի գիտնայիք։
20 Յիսուս այս խօսքերը խօսեցաւ գանձատունը, երբ կը սորվեցունէր ասճարին մէջ. և ոչ ոք բռնեց զնա, քանզի գեռ անոր ժամանակն հասած չէր։
21 Ցետոյ Յիսուս դարձեալ բսաւ անոնց, Ես կ'երթամ, և զիս պիտի փընտրէք, և պիտի մեռնիք ձեր մեղաց մէջ։ ուր ես կ'երթամ, դուք չէք կրնար
22 նար գալ։ Ուստի Հրեաները կ'ըսէին, Միթէ զիրսովի՞ պիտի երթայ, որ կ'ըսէ թէ Ուր ես կ'երթամ, դուք չէք
23 կրնար գալ։ Եւ բսաւ անոնց, Դուք ի ներքուստ էք, ես ի վերուստ եմ. դուք այս աշխարհէս էք, ես այս աշ-
24 խարհէս չեմ. վասն այնորիկ բսի ձեզ թէ Ձեր մեղաց մէջ պիտի մեռնիք, քանզի եթէ չհաւատաք թէ ես եմ,
25 պիտի մեռնիք ձեր մեղաց մէջ։ Անոնք ըսին անոր, Դու ո՞վ ես։ Եւ Յիսուս բսաւ անոնց, Ինչ որ ի սկզբանէ
26 կը խօսիմ ձեզ։ Շատ բաներ ունիմ ձեզի համար խօսել և դատել. բայց այն որ զիս զրկեց՝ ճշմարիտ է, և ես ինչ որ անկէ լսեցի, զայն կը խօսիմ
27 յաշխարհի։ Անոնք չհմացան թէ Հօրը համար կ'ըսէր անոնց։
28 Իսկ Յիսուս բսաւ անոնց, Երբ զՈրդին մարդոյ բարձրացունէք, այնատեն պիտի գիտնաք թէ ես եմ, և յանձնէ բան մը չեմ ըներ, այլ ինչպես սորվեցուց ինձ Հայրս՝ այնպես կը խօսիմ։
29 Եւ զիս զրկողն իմ հետս է. Հայրը չթողուց զիս միայն. վասն զի ես կ'ընեմ միշտ ինչ որ հաճելի է նմա։
30 Երբ խօսեցաւ սասնք, շատ մարդիկ
31 հաւատացին անոր։ Անոնտեն Յիսուս բսաւ հրեն հաւատացող Հրեից, եթէ դուք կենաք իմ խօսքիս մէջ, ճշմար-
32 տապէս իմ աշակերտներս կ'ըլլաք. Եւ ճշմարտութիւնը պիտի գիտնաք, և այն ճշմարտութիւնը պիտի ազատէ
33 զձեզ։ Պատասխան տուին անոր, Մենք զաւակ ենք Աբրահամու, և ոչ ումիք երբէք ծառայեցինք. դուն ի՞նչպես
34 կ'ըսես թէ Ազատ պիտի ըլլաք։ Յիսուս պատասխան տուաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ թէ Ամէնը որ
35 մեղք կը գործէ, ծառայ է մեղայ։ Եւ ծառան չմնար տան մէջ յաւիտեան, բայց որդին կը մնայ յաւիտեան։ Ուս-
36 տի եթէ Որդին ազատ զձեզ, ճշմար-
37 տապէս ազատ պիտի ըլլաք։ Գիտեմ որ զաւակ էք Աբրահամու, բայց կը խնդրէք սպաննել զիս, վասն զի իմ
38 խօսքս տեղի չունի ի ձեզ։ Ես ինչ որ տեսայ իմ Հօրս քովՙ զայն կը խօսիմ. և դուք ևս ինչ որ տեսաք ձեր Հօրը
39 քովՙ զայն կ'ընէք։ Պատասխան տուին և ըսին անոր, Մեր Հայրն Աբրահամ է։ Ըսաւ անոնց Յիսուս, Եթէ ըլլայիք որ-
40 դիք Աբրահամու, Աբրահամու գործերը կը գործէիք։ Բայց հիմա կը խնդրէք սպաննել զիս, մարդ մը որ խօսեցայ ձեզ ճշմարտութիւնը, զոր լսեցի Աստուծմէ. Աբրահամ չըրաւ գայդ-
41 Դուք կ'ընէք ձեր հօրը գործերը։ Անոնտեն ըսին անոր, Մենք ծնած չենք պոռնկութենէ, մենք մի Հայր միայն
42 ունինք որ է Աստուած։ Յիսուս բսաւ անոնց, Եթէ Աստուած ձեր Հայրն ըլլար, կը սիրէիք զիս. քանզի ես Աս-
43 տուածմէ ելայ և եկայ. և ոչ թէ ես յանձնէ եկայ, այլ նա զրկեց զիս։ Ինչո՞ւ համար չէք հասկնար դուք իմ ա-
44 սացուածս. վասն զի չէք կրնար լսել իմ խօսքս։ Դուք չէր հօրմէն Սատանային էք, և կ'ուզէք ընել ձեր հօրը բաղձանքը. նա մարդասպան էր ի բս-
կըզբանէ հետէ, և չկեցաւ ի ճշմարտութեան, քանզի ճշմարտութիւն չկայ ի նմա. երբ նա սուտ խօսի, բուն իրեններէրն կը խօսի, քանզի սուտախօս
45 է նա և անոր Հայրը։ Բայց որովհետև ես ճշմարտութիւն կը խօսիմ, չէք հա-
46 ւատար ինձ։ Ձեզնէ ո՞վ կրնայ յանդիմանել զիս մեղաց համար։ Իսկ եթէ ես ճշմարտութիւն կը խօսիմ, ընդի՞ր
47 չէք հաւատար ինձ։ Ով որ Աստուծմէ է՝ կը լսէ Աստուծոյ խօսքերը. դուք վասն այնորիկ չէք լսեր, վասն զի չէք
48 Աստուծմէ։ Պատասխան տուին Հրեայք



և ըսին անոր, Ո՞չ ապաքէն ազէկ կ'ըսենք մենք թէ դուն Սամարացի ես,
49 և դև կայ ի քեզ։ Յիսուս պատասխան տուաւ՝ ըսաւ, Դև չկայ յիս, այլ ես կը պատուեմ իմ Հայրս, և դուք զիս
50 կ'անարգէք։ Իսկ ես իմ փառքս չեմ խնդրեր. կայ որ կը խնդրէ և կը դա-
51 տէ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, եթէ ոք պահէ իմ խօսքս, մահ պիտի
52 չտեսնէ յաւիտեան։ Անոնտեն Հրեաները ըսին անոր, Հիմա գիտցանք թէ դև կայ ի քեզ։ Աբրահամ մեռաւ և մարգարէներդ, և դուն կ'ըսես, եթէ
ոք պահէ իմ խօսքս, յաւիտեան պի-
53 տի չճաշակէ զմահ։ Միթէ դուն աւելո՞ մեծ ես քան զհայր մեր զԱբրահամ որ մեռաւ, և մարգարէք ևս մեռան. զո-
54 ո՞վ կ'ընես զքեզ։ Յիսուս պատասխան տուաւ, եթէ ես փառաւորեմ զիս, իմ փառքս ոչինչ է. զիս փառաւորողն է Հայրս, որդ համար դուք
55 կ'ըսէք թէ Մեր Աստուածն է. և չէք ճանչնար զնա, բայց ես գիտեմ զնա. և եթէ բսեմ թէ չեմ գիտեր զնա, ձեզի պէս սուտասու կ'ըլլամ. այլ ես գիտեմ զնա, և կը պահեմ անոր
56 խօսքը։ Ձեր հայրն Աբրահամ ցանկացաւ տեսնել իմ օրս, և տեսաւ և ու-
57 րախ եղաւ։ Իսկ Հրեայք ըսին անոր, Դեռ ասպատիւ չհասնիս էս, և զԱբ-
58 րահա՞մ տեսար։ Յիսուս բսաւ անոնց, ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես։
59 Անոնտեն քարեր վերցուցին նետել անոր վրայ. բայց Յիսուս ծածկուեցաւ, և անոնց միջէն անցնելով՝ հեռ տաճարէն դուրս, և այնպես գնաց։

## Գլ. Թ

1 Եւ երբ կ'անցնէր, տեսաւ մարդ մը ի
2 ծնէ կոյր։ Եւ աշակերտներն հարցուցին անոր և ըսին, Ռաբբի, որո՞ւ է մեղքը, տա՞ր թէ ծնողացը, որ կոյր
3 ծնաւ։ Պատասխան տուաւ Յիսուս, Ոչ

*Ոմանք՝ ձեր

անոր է մեղքը, և ոչ անոր ծնողաց, այլ որպէս զի Աստուծոյ գործերն
4 յայտնի ըլլան անոր վրայ։ Մինչդեռ տէ՛ր է, պարտ է ինձ գործել զիս զրկողին գործերը. կու գայ գիշեր երբ
5 ոչ ոք կրնայ գործել։ Մինչդեռ յաշ-
6 խարհի եմ, լոյս եմ աշխարհի։ Երբ ըսաւ բսաւ, թքաւ գետինը և թքովը շինեց կաւ, և ծեփեց այն կաւը կու-
7 րին աչերնիքուն։ Եւ բսաւ անոր, Գնա, լուացուէ Սելովամի աւազանը, որ կը թարգմանուի Աստաքեալ։ Ուստի գնաց և լուացուեցաւ, եկաւ և կը
8 տեսնէր։ Իսկ դրացիները և անոնք որ յառաջագոյն տեսած էին զնա որ *կոյր էր, կ'ըսէին, Սա չէ՞ր որ կը նստէր և կը մուրար։ Ոմանք կ'ըսէին, Նա է։
9 Այլք Ը՛ըսէին, Անոր նման է. էհ՛ ինք
10 կ'ըսէր թէ Ես եմ։ Ուստի ըսին անոր, Ասպա ի՞նչպես բացուեցան աչերնիքդ։
11 Նա պատասխան տուաւ և բսաւ, Յիսուս կոչուած մարդ մը կաւ շինեց և ծեփեց աչերնիքուս, և բսաւ ինձ, Գնա Սելովամի աւազանը և լուացուէ։ Ես գացի, լուացուեցայ և կը տես-
12 նեմ։ Եւ ըսին անոր, Ո՞ւր է նա։ Բսաւ անոնց, Չեմ գիտեր։
13 Փարիսեցիներուն տարին զնա որ յա-
14 ռաջագոյն կոյր էր։ Եւ շաբաթ օր էր երբ Յիսուս շինեց կաւը և անոր աչ-
15 ուքները բացաւ։ Դարձեալ փարիսեցիք կը հարցունէին անոր թէ ինչպես կը տեսնէր։ և նա բսաւ անոնց, Կաւ դրաւ աչերնիքուս վրայ, և լուացուե-
16 ցայ և կը տեսնեմ։ Ուստի փարիսեցիներէն ոմանք կ'ըսէին, Այն մարդն Աստուածմէ չէ, քանզի շաբաթ օրը չը պահեր։ Այլք կ'ըսէին, Ի՞նչպէս կրնայ մեղաւոր մարդ մը այսպիսի հրաշք գործել։ Եւ անոնց մէջ երկպառակութիւն
17 կար։ Դարձեալ ըսին կուրին, Դուն ի՞նչ կ'ըսես անոր համար որ քու աչերնիդդ բացաւ։ Եւ նա բսաւ թէ
18 Մարգարէ է։ Իսկ Հրեայք չհաւատացին անոր համար թէ կոյր էր և ստե-

*Ոմանք՝ մուրացիկ

սաւ, մինչև կալեցին զՅեղոս նորա ա-
19 րոյ աչուընքերը բացուած էին, և հար-
ցուցին անոնց և ըսին, Այս է ձեր որ-
դին, որոյ համար կ'ըսէք Թէ կայր ծը-
20 նաւ. իսկ հիմա ի՞նչպէս կը տեսնէ. Ա-
նոր ծնողքը պատասխան առին անոնց
և ըսին, Գիտենք Թէ այս է մեր որ-
21 դին, և Թէ կայր ծնաւ. Բայց հիմա
ի՞նչպէս կը տեսնէ չենք գիտեր, կամ
Թէ ո՛վ բացաւ աչուընքերը՝ մենք
չենք գիտեր. ինք չափահաս է, անոր
հարցուցէք. Թող ինք խօսի իրեն հա-
22 մար։ Այս ըսին անոր ծնողքն ան, ա-
հին Հրէից. քանզի Հրեայք միասին
հաւանութեամբ որոշած էին որ եթէ
ոք դաւանէր զնա Քրիստոս, դուրս
23 հանուէր ժողովրդանոցէն. Այս պատ-
ճառաւ անոր ծնողքն ըսին Թէ Ինք
24 չափահաս է, անոր հարցուցէք. Եւ կոչ
գարձեալ կոչեցին այն մարդը որ կոյր
էր, և ըսին անոր, Աստուծոյ փառք
տուր. մենք գիտենք որ այն մարդը
25 մեղաւոր է։ Եւ նա պատասխան տուաւ
և ըսաւ, Եթէ մեղաւոր է, ես չեմ գի-
տեր. միայն գիտեմ որ կոյր էի և հի-
26 մա կը տեսնեմ։ Դարձեալ ըսին անոր,
Ի՞նչ բրաւ քեզ, ի՞նչպէս բացաւ աչ-
27 ուընքերդ։ Պատասխան տուաւ անոնց,
Հիմա ձեզ և չլսեցիք. ընդէ՞ր միւս-
անգամ կ'ուզէք լսել. միթէ և դո՞ւք
28 կ'ուզէք անոր աշակերտ ըլլալ։ Անոնք
նախատեցին զնա ըսին, Դուն ես անոր
աշակերտ, իսկ մենք Մովսէսի աշա-
29 կերտ ենք. Մենք գիտենք որ Աստ-
ուած Մովսէսի հետ խօսեցաւ, բայց
30 զսա չենք գիտեր Թէ ուստի է։ Պա-
տասխան տուաւ մարդը և ըսաւ ա-
նոնց, Այդ է զարմանալի որ դուք չէք
գիտեր Թէ ուստի է, և նա իմ աչուը-
31 ներս բացաւ։ Գիտենք որ Աստուած
մեղաւորներուն չլսեր, բայց եթէ ա-
աստուածապաշտ ըլլայ ոք և կատարէ ա-
32 նոր կամքը, անոր կը լսէ։ Ի սկզբանէ
աշխարհի լսուած չէ Թէ բացաւ ոք ի
33 ծնէ կուրի աչուընքերը։ Եթէ Աստուծ-
մէ չէր այն մարդը, չէր կրնար բան մը
34 ընել։ Պատասխան տուին և ըսին ա-

նոր, Դուն բոլորովին ի մեզս ծնած ես,
և կը վարդապետե՞ս մեզ։ Եւ դուրս
հանեցին զնա։
35 Յիսուս լսեց Թէ դուրս հանեցին զնա,
և երբ գտաւ զնա, ըսաւ անոր, Դուն
36 կը հաւատա՞ս Աստուծոյ Որդուդին. Նա
պատասխան տուաւ և ըսաւ, Տէր, ո՞վ
37 է որ հաւատամ անոր։ Եւ Յիսուս ը-
սաւ անոր, Տեսար իսկ զնա, և քեզի
38 հետ խօսողը նա է։ Եւ նա ըսաւ, Կը
հաւատամ, Տէր. և երկրպագեց անոր։
39 Եւ Յիսուս ըսաւ, Ես այս աշխարհը
եկայ դատաստանի համար, որ չտես-
նողները տեսնեն և տեսնողները կու-
40 բանան։
Եւ փարիսեցիներէն ոմանք որ անոր
հետ էին լսելով այս բաներն ըսին ա-
41 նոր, Միթէ և մե՞նք կոյր ենք։ Յիսուս
ըսաւ անոնց, Եթէ կոյր էիք, մեղք
չէիք ունենար, բայց հիմա կ'ըսէք Թէ
կը տեսնենք, վասն որոյ ձեր մեղքը
կը մնայ է չէ։

## Գլ. Ժ

1 Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Այն
որ դռնէն չմտներ ոչխարներուն գա-
ւիթը, այլ ուրիշ տեղէ կ'ելլէ, գող է
2 նա և աւազակ։ Բայց այն որ դռնէն
կը մտնէ, հովիւ է նա ոչխարներուն։
3 Դռնապանը կը բանայ անոր, և ոչխար-
ները կը լսեն անոր ձայնին, և իւր ո-
չխարները կը կոչէ յանուանէ, և դուրս
4 կը հանէ զանոնք։ Եւ երբ կը հանէ
իւր ոչխարները, կ'երթայ անոնց առ-
ջևէն, և ոչխարները կ'երթան անոր
հետևէն, քանզի կը ճանչնան անոր ձայ-
5 նը։ Սակայն օտարի հետևէ չեն երթար,
այլ կը փախչին անկէ, քանզի չեն
ճանչնար օտարներուն ձայնը։
6 Յիսուս այս առակն ըսաւ անոնց,
բայց անոնք չէին իմանար Թէ ինչ էր
7 զոր կը խօսէր անոնց։ Եւ Յիսուս դար-
ձեալ ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզ, Ես եմ դուռն ոչխարաց,
8 Ամէնքը որ յառաջ քան զիս եկան՝
գող էին և աւազակ, բայց ոչխարները



9 չլսեցին անոնց։ Ես եմ դուռն. եթէ
ոք ներս մտնէ ինէ՝ պիտի փրկուի, և
պիտի մտնէ և ելլէ և արօտ գտնէ.
10 Գողը չգայ, բայց միայն որպէս զի գող-
նայ և սպանանէ և կորուսանէ. Ես ե-
կայ որ կեանք ունենան, և աւելի ևս
11 ունենան։ Ես եմ բարի հովիւը. բարի
հովիւը իւր կեանքը կը դնէ ոչխարնե-
12 րուն համար։ Բայց վարձկանը որ հո-
վիւ չէ և ոչխարներն անոր չեն, երբ
կը տեսնէ գայլը որ կու գայ, կը թո-
ղու ոչխարները և կը փախչի. և գայլը
կը յափշտակէ ոչխարները և կը ցրուէ
13 զանոնք։ Եւ վարձկանը կը փախչի,
քանզի վարձկան է և անոր փոյթ չէ
14 ոչխարներուն համար։ Ես եմ բարի
հովիւը, և կը ճանչնամ իմիններս և կը
15 ճանչցուիմ իմիններէս ինչպէս Հայրը
կը ճանչնայ զիս, ես ևս կը ճանչնամ
զՀայր, և կը դնեմ կեանքս ոչխարնե-
16 րուն համար։ Ուրիշ ոչխարներ ևս ու-
նիմ որ չեն այս գաւթէն. զանոնք ևս
պարտ է ինձ բերել, և պիտի լսեն ձայ-
նիս, և պիտի ըլլան մի հօտ՝ մի հո-
17 վիւ։ Վասն այնորիկ կը սիրէ զիս Հայ-
րը, վասն զի ես կը դնեմ իմ կեանքս,
որպէս զի միւսանգամ առնում
18 զնա։ Ոչ ոք կը հանէ զնա ինէ, այլ ես
կը դնեմ զնա անձամբ. իշխանութիւն
ունիմ դնել զնա, և իշխանութիւն ու-
նիմ միւսանգամ առնուլ զնա. այս
պատուէրն առի իմ Հօրմէս։
19 Դարձեալ երկպառակութիւն կ'ըլ-
լար Հրէից մէջ այս խօսքերուն համար։
20 Եւ անոնցմէ շատերը կ'ըսէին, Դեւ կայ
ի դմա, և մոլեգնեալ է. ընդէ՞ր կը
21 լսէք զնոր։ Ուրիշները կ'ըսէին, Ա՛յս
խօսքերը դեւահարի չեն. միթէ դեւը
կրնա՞յ կուրաց աչուընքերը բանալ։
22 Անատեն եղաւ նաւակատիք յԵրու-
23 սաղէմ, և ձմեռն էր։ Եւ Յիսուս կը
շրջէր տաճարին մէջ Սողոմոնի սրահը։
24 Եւ չուրջ պատեցին զնա Հրեայք և ը-
սին անոր, Մինչև ե՞րբ կը թափես զո-
գիս մեր. եթէ դու ես Քրիստոս, ըսէ
25 մեզ համարձակ։ Յիսուս պատասխան
տուաւ անոնց, Ըսի ձեզ և չէք հաւա-

9 սար. գործերը զոր ես կը գործեմ
իմ Հօրս անուամբ՝ անոնք կը վկայեն
26 ինծի համար։ Բայց դուք չէք հաւա-
սար, քանզի չէք իմ ոչխարներէս,
27 ինչպէս ըսի ձեզ։ Ոչխարներս կը լսեն
իմ ձայնիս, և ես կը ճանչնամ զա-
28 նոնք, և կու գան իմ ետևէս. Եւ ես
կու տամ անոնց յաւիտենական կեանք,
և յաւիտեան պիտի չկորսուին, և ոչ
ոք պիտի յափշտակէ զանոնք իմ ձեռ-
29 քէս։ Հայրս որ ընծայեց ինձ՝ մե-
ծագոյն մեծ է, և ոչ ոք կրնայ
30 յափշտակել իմ Հօրս ձեռքէն։ Ես և
Հայր մի եմք։
31 Անատեն Հրեաները դարձեալ քա-
32 րեր վերցուցին քարկոծել զնա։ Յի-
սուս պատասխան տուաւ անոնց, Շատ
բարի գործեր ցուցի ձեզ իմ Հօրմէս,
անոնցմէ ո՞ր գործին համար կը քար-
33 կոծէք զիս։ Հրեաները պատասխան
տուին անոր ըսելով, Բարի գործոյ հա-
մար չենք քարկոծեր զքեզ, այլ հայ-
հոյութեան համար, և վասն զի դուն
որ մարդ ես, Աստուած կ'ընես զքեզ։
34 Յիսուս պատասխան տուաւ անոնց,
Ո՞չ ապագէն ձեր օրինաց մէջ գրուած
է, Ես ըսի Թէ դուք աստուածներ էք։
35 Եթէ աստուածներ կ'անուանէ զանոնք
առ որս եղաւ Աստուծոյ խօսքը, և
հնար չէ որ այն գրուածը եղծանի,
36 իսկ զոր Հայրը սրբեց և աշխարհ ղըր-
կեց, դուք կ'ըսէ՞ք անոր Թէ հայհո-
յութիւն կ'ընես, վասն զի ըսի Թէ Աս-
37 տուծոյ Որդի եմ. Եթէ չեմ գործեր
իմ Հօրս գործերը, մի հաւատաք ինձ.
38 Ապա եթէ կը գործեմ, Թէև ինձ չէք
հաւատար, ևս՛ գործերուն հաւատա-
ցէք, որ գիտնաք և †հաւատաք Թէ
Հայր յիս է, և ես ի նմա։
39 Դարձեալ կը խնդրէին բռնել զնա,
40 և անոնց ձեռքէն ելաւ. Եւ գնաց միւս-
անգամ յայնկոյս Յորդանանու, այն
տեղ ուր Յովհաննէս կը մկրտէր առաջ,
41 և կեցաւ հոն։ Եւ շատերը եկան անոր

*Ոմանք՝ ըսէին
†Ոմանք՝ ճանչնաք

և կ'ըսէին, Արդարև Յովհաննէս հրաշք
42 չըրաւ. Բայց ինչ որ Յովհաննէս ըսաւ
անոր համար՝ ամէնը ճշմարիտ էր. և
չատ մարդիկ հոն հաւատացին անոր։

Գլ. Ժ.Ա.

1 Եւ Մարիամու և անոր քրոջ Մար-
թային գիւղէն, Բեթանիայէ, Ղազարոս
2 անուն հիւանդ էր։ Այս այն Մա-
րիամն էր որ օծեց Տէրը իւղով, և սրբե-
ց անոր ոտուընները իր մազերով,
որուն եղբայրը Ղազարոս հիւանդ էր։
3 Ուստի քոյրերը ղրկեցին անոր և ըսին,
Տէր, ահա զոր դուն կը սիրես հիւանդ
4 է։ Յիսուս երբ լսեց, ըսաւ, Այս հի-
ւանդութիւնը չէ ի մահ, այլ Աստու-
ծոյ փառացը համար, որ Աստուծոյ
5 Որդին փառաւորուի անով։ Արդ Յի-
սուս կը սիրէր զՄարթա և անոր քոյ-
6 րը և զՂազարոս։ Իսկ երբ լսեց թէ
հիւանդ է, երկու օր ևս կեցաւ ուր
7 էր։ Ու յետ այնորիկ ըսաւ աշակերտ-
ներուն, Նէ՛ դարձեալ Հրէաստան եր-
8 թանք։ Աշակերտներն ըսին անոր,
Ռաբբի, հիմա կը խնդրէին քարա-
կոծել զքեզ, և դարձեալ հո՞ն կ'եր-
9 թաս։ Յիսուս պատասխան տուաւ, Ո՞չ
ապաքէն օրը երկոտասան ժամ է. եթէ
ոք քալէ ի տուընջեան չգահիր, քան-
10 զի այս աշխարհիս լոյսը կը տեսնէ. Բայց
եթէ ոք քալէ գիշերը, կը սահի, վասն
11 զի լոյս չկայ անոր հետ։ Ասոնք ըսելէն
ետքը ըսաւ անոնց, Ղազարոս մեր բա-
րեկամը քնացած է, բայց կ'երթամ որ
12 արթնցնեմ զնա։ Աշակերտներն ըսին,
Տէր, եթէ քնացած է, պիտի առող-
13 ջանայ։ Իսկ Յիսուս անոր մեռնելուն
համար կ'ըսէր, բայց անոնք կը կար-
ծէին թէ քունն քնանալուն համար կ'ը-
14 սէր։ Անատեն Յիսուս յայտնապէս ը-
15 սաւ անոնց, Ղազարոս մեռաւ։ Ու ես
ուրախ եմ ձեզի համար որ հոն չէի,
որ դուք հաւատաք. բայց երթ՛ք եր-
16 թանք անոր։ Թովմաս որ Երկուորեակ
կը կոչուէր՝ ըսաւ ընդ աշակերտակից-
ներուն, Մեք ևս երթանք որ անոր
հետ մեռնինք։

17 Յիսուս երբ եկաւ, գտաւ որ արդէն
չորեքօրեայ գերեզմանը պրտռոճ էր
18 նա։ Ու Բեթանիա Երուսաղէմի մօտ էր
19 իբր հնգետասան ասպարէզ։ Ու Հրեա-
ներէն չատերը եկած էին առ Մարթա
և առ Մարիամ մխիթարել զանոնք
20 իրենց եղբօրը համար։ Արդ երբ լսեց
Մարթա թէ Յիսուս կու գայ, գնաց
դիմաւորել զնա, բայց Մարիամ տան
21 մէջ նստած էր։ Ու Մարթա ըսաւ Յի-
սուսի, Տէր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս
22 չէր մեռներ։ Բայց գիտեմ որ հիմա
ևս դուն ինչ որ խնդրես Աստուծմէ,
23 Աստուած պիտի տայ քեզ։ Յիսուս ը-
սաւ անոր, Քու եղբայրդ պիտի յառ-
24 նի։ Մարթա ըսաւ անոր, Գիտեմ թէ
պիտի յառնի ի յարութեան վերջին օ-
25 րը։ Յիսուս ըսաւ անոր, Ես եմ յա-
րութիւն և կեանք. ով որ կը հաւա-
տայ յիս, թէ և մեռնի, պիտի ապրի։
26 Ու ամէն որ կենդանի է և կը
հաւատայ յիս, պիտի չմեռնի յաւի-
27 տեան. դուն կը հաւատա՞ս այս։ Ըսաւ
անոր, Այո, Տէր, ես հաւատացած եմ
թէ դու ես Քրիստոսն Աստուծոյ Որ-
28 դին, որ յաշխարհ գալոց էիր։ Ու երբ
ըսաւ զայս, գնաց գաղտ և կոչեց իւր
քոյրը Մարիամ ըսելով, Վարդապետը
29 եկած է և կը կոչէ զքեզ։ Երբ լսեց նա,
30 իսկոյն եղաւ և եկաւ անոր։ Իսկ Յի-
սուս դեռ գիւղը եկած չէր, այլ այն
տեղն էր ուր Մարթա դիմաւորեց զնա։
31 Բայց Հրեայք որ անոր հետ էին տանը
մէջ և կը մխիթարէին զնա, երբ տե-
սան թէ Մարիամ եղաւ վարդապակի և
գնաց, էջե՛ւ ետևն գացին անոր ասելէն
ըսելով թէ Գերեզմանն կ'երթայ որ հոն
32 լայ։ Իսկ Մարիամ երբ եկաւ ուր էր
Յիսուս և տեսաւ զնա, ինկաւ իւղ անոր
ոտքը ըսաւ անոր, Տէր, եթէ հոս ըլ-
33 լայիր, եղբայրս չէր մեռներ։ Յիսուս
երբ տեսաւ զնա որ կու լար, և անոր
հետ եկող Հրեայք որ կու լային, հա-
34 ռաչեց և խռովեցաւ յոգի իր, Ու ը-
սաւ, Ո՞ւր դրած էք զնա։ Ըսին անոր,
35 Տէր, եկու և տես։ Յիսուս լացաւ։
36 Ուստի Հրեայք կ'ըսէին, Տես որչափ կը

17 Յիսուս երբ եկաւ, գտաւ որ արդէն
չորեքօրեայ գերեզմանը պրտռոճ էր
18 նա։ Ու Բեթանիա Երուսաղէմի մօտ էր
19 իբր հնգետասան ասպարէզ։ Ու Հրեա-
ներէն չատերը եկած էին առ Մարթա
և առ Մարիամ մխիթարել զանոնք
20 իրենց եղբօրը համար։ Արդ երբ լսեց
Մարթա թէ Յիսուս կու գայ, գնաց
դիմաւորել զնա, բայց Մարիամ տան
21 մէջ նստած էր։ Ու Մարթա ըսաւ Յի-
սուսի, Տէր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս
22 չէր մեռներ։ Բայց գիտեմ որ հիմա
ևս դուն ինչ որ խնդրես Աստուծմէ,
23 Աստուած պիտի տայ քեզ։ Յիսուս ը-
սաւ անոր, Քու եղբայրդ պիտի յառ-
24 նի։ Մարթա ըսաւ անոր, Գիտեմ թէ
պիտի յառնի ի յարութեան վերջին օ-
25 րը։ Յիսուս ըսաւ անոր, Ես եմ յա-
րութիւն և կեանք. ով որ կը հաւա-
տայ յիս, թէ և մեռնի, պիտի ապրի։
26 Ու ամէն որ կենդանի է և կը
հաւատայ յիս, պիտի չմեռնի յաւի-
27 տեան. դուն կը հաւատա՞ս այս։ Ըսաւ
անոր, Այո, Տէր, ես հաւատացած եմ
թէ դու ես Քրիստոսն Աստուծոյ Որ-
28 դին, որ յաշխարհ գալոց էիր։ Ու երբ
ըսաւ զայս, գնաց գաղտ և կոչեց իւր
քոյրը Մարիամ ըսելով, Վարդապետը
29 եկած է և կը կոչէ զքեզ։ Երբ լսեց նա,
30 իսկոյն եղաւ և եկաւ անոր։ Իսկ Յի-
սուս դեռ գիւղը եկած չէր, այլ այն
տեղն էր ուր Մարթա դիմաւորեց զնա։
31 Բայց Հրեայք որ անոր հետ էին տանը
մէջ և կը մխիթարէին զնա, երբ տե-
սան թէ Մարիամ եղաւ վարդապակի և
գնաց, էջե՛ւ ետևն գացին անոր ասելէն
ըսելով թէ Գերեզմանն կ'երթայ որ հոն
32 լայ։ Իսկ Մարիամ երբ եկաւ ուր էր
Յիսուս և տեսաւ զնա, ինկաւ իւղ անոր
ոտքը ըսաւ անոր, Տէր, եթէ հոս ըլ-
33 լայիր, եղբայրս չէր մեռներ։ Յիսուս
երբ տեսաւ զնա որ կու լար, և անոր
հետ եկող Հրեայք որ կու լային, հա-
34 ռաչեց և խռովեցաւ յոգի իր, Ու ը-
սաւ, Ո՞ւր դրած էք զնա։ Ըսին անոր,
35 Տէր, եկու և տես։ Յիսուս լացաւ։
36 Ուստի Հրեայք կ'ըսէին, Տես որչափ կը



37 սիրէր զնա։ Ու անոնցմէ ոմանք կ'ը-
սէին, Դա որ կուրին աչուընները բա-
ցաւ, չէր կրնար ընել որ ոա ևս չմեռ-
38 նէր։ Յիսուս դարձեալ իւր ըրտին մէջ
հառաչելով գերեզմանը կու գայ. և այն
էր քարայր մը, և քար դրուած էր ա-
39 նոր վրայ։ Յիսուս ըսաւ, Վերկրէ քրեք
այդ քարը։ Մեռելին քոյրը Մարթա
ըսաւ անոր, Տէր, արդէն հոտած պի-
40 տի ըլլայ, քանզի չորեքօրեայ է։ Ըսաւ
անոր Յիսուս, Ո՞չ ապաքէն ըսի քեզ
թէ, եթէ հաւատաս, պիտի տեսնես
41 Աստուծոյ փառքը։ Անոնն ուրկրէ քա-
րին տեղը, և Յիսուս վեր վերցուց
աչուընները և ըսաւ, Հայր, շնորհակալ
42 եմ քենէ, որ լսեցեր ինձ։ Ու ես գի-
տէի թէ յամենայն ժամ կը լսես ինձ.
բայց ըսի ժողովրդեանս համար որ
չորջ կան, որպէս զի հաւատան թէ
43 դու զրկեցեր զիս։ Ու այս ըսելէն ետ-
քը, ուժգնձայնի կոչեց, Ղազարէ, Ելի
44 արտաքս։ Ու մեռելը ելաւ, ձեռուընե-
րն և ոտուընները պատանօք կապ-
ուած և երեսը վարշամակով պա-
տած։ Յիսուս ըսաւ անոնց, Արձակե-
ցէ՛ք զնա և թողէ՛ք երթալ։
45 Ու Հրեաներէն չատերը որ եկած էին
առ Մարիամ, երբ տեսան ինչ որ ը-
46 րաւ Յիսո՛ւս՝ հաւատացին անոր։ Բայց
անոնցմէ ոմանք գացին փարիսեցիներ-
ուն, և պատմեցին անոնց ինչ որ ը-
րաւ Յիսուս։
47 Ուստի քահանայապետներն և փա-
րիսեցիք գումարեցին ժողով և ըսին,
Ի՞նչ ընենք, քանզի այս մարդը չատ
48 հրաշք կ'ընէ։ Եթէ թողունք զնա այս-
պէս, ամենքը պիտի հաւատան անոր,
և Հռովմայեցիք պիտի գան և վերցու-
49 նեն մեր տեղը և ազգը։ Ու անոնցմէ
մին, Կայափա անո՛ւն, որ քահանայա-
պետ էր այն տարւոյն, ըսաւ անոնց,
50 Դուք ոչինչ գիտէք, Ու ոչ իսկ կը խոր-
հիք թէ լաւ է մեզ որ մարդ մը ժո-
ղովրդեան համար մեռնի, և բոլոր ազ-
51 գը չկորսուի։ Բայց զայս ոչ թէ յանձ-
նէ ըսաւ, այլ որովհետև քահանայա-
պետ էր այն տարւոյն, մարգարեացաւ
թէ Յիսուս պիտի մեռնէր ազգին հա-
52 մար։ Ու ոչ միայն ազգին համար, այլ
և որպէս զի Աստուծոյ ցրուած որդի-
ները ևս ժողովէր ի մի։
53 Ու այն օրէն խորհուրդ ըրին սպան-
54 նել զնա։ Ուստի Յիսուս այնուհետև
համարձակ չէր շրջիր Հրէից մէջ, այլ
գնաց անկէ անապատին մօտ տեղ քա-
զաք մը որոյ անունն էր Եփրայիմ, և
հոն կը կենար իւր աշակերտներուն
հետ։
55 Ու մօտ էր Հրէից զատիկը, և այն
գաւառէն չատ մարդիկ յառաջ քան
զզատիկն երուսաղէմ եկան մաքրել
56 զանձինս։ Ու կը փնտռէին զՅիսուս,
և մինչ տաճարին մէջ կեցած էին, կ'ը-
սէին իրարու, Ի՞նչպէս կը թուի ձեզ,
57 թէ այս տօնիս բնաւ պիտի չգայ։ Իսկ
քահանայապետք և փարիսեցիք պատ-
ուէր տուած էին որ, եթէ ոք գիտ-
նար թէ ուր էր նա, իմացունէր որ
բռնեն զնա։

Գլ. Ժ.Բ

1 Իսկ Յիսուս վեց օր յառաջ քան զզա-
տիկն եկաւ Բեթանիա, ուր էր Ղազա-
րոս մեռեալն, զոր Յիսո՛ւս յարեյց մե-
2 ռելներէն։ Ու հոն ընթրիք ըրին անոր,
և Մարթա սպասաւորութիւն կ'ընէր,
և Ղազարոս էր անոր հետ սեղան նս-
3 տողներէն մին։ Իսկ Մարիամ լիւր մի
նարդոսի պատուական մեծագին իւղ
առնելով, օծեց Յիսուսի ոտուընները,
և մազերովը սրբեց անոր ոտուընները.
և տունը լցաւ անուշահոտութենէ իւ-
4 ղին։ Աստանի աշակերտներէն մին,
Իսկարիովտացի Սիմոնեան Յուդա, որ
5 պիտի մատնէր զնա, ըսաւ, Ընդ ո՞ր այդ
իւղը չվաճառեցաւ երեք հարիւր դա-
6 հեկանի, որ տրուէր աղքատաց։ Զայս
ըսաւ ոչ թէ աղքատաց համար փոյթ
էր նմա, այլ վասն զի գող էր և ինք
կը պահէր դանձանակը, և ինչ որ նետ-

*Ո՛ոռռ քարը՝ ուր պառկած էր մեռեալը։

7 ուէր՝ ինչ կը կրէր, Իսկ Յիսուս ըսաւ,
Թող տուր տառը, Թագմանս օրուան
8 համար պահեց զայն։ Վասն զի աղքատ-
ներն յամենայն ժամ ունիք ընդ ձեզ,
բայց զիս յամենայն ժամ չունիք։
9 Ուստի Հրեաներէն շատ ժողովուրդ
իմացան Թէ հոն էր նա, և եկան ոչ
միայն Յիսուսի համար, այլ և որպէս
զի զՂազարոս ևս տեսնէին, զոր յա-
10 րոյց մեռելներէն։ Իսկ քահանայապետ-
ները խորհուրդ ըրին զՂազարոս ևս
11 սպաննել. Քանզի Հրեաներէն շատերը
կ'երթային անոր պատճառաւ և կը հա-
ւատային Յիսուսի։
12 Հետևեալ օրը շատ ժողովուրդ որ
տօնին եկած էին, երբ լսեցին Թէ Յի-
13 սուս կու գար Երուսաղէմ, Առին
արմաւենոյ ոստեր և ելան դիմաւո-
րել զնա, և կ'աղաղակէին, Ովսաննա,
օրհնեալ է Թագաւորը որ
14 կու գայ յանուն Տեառն։ Եւ Յիսուս
գտնելով յաւանակ մը նստաւ անոր
15 վրայ, ինչպէս որ գրուած է. Մի եր-
կնչիր, դուստր Սիովնի. ահա քու Թա-
գաւորդ կու գայ նստած իշու յաւա-
16 նակի վրայ։ Եւ անոր աշակերտները
չիմացան առաջ այս բաները, բայց երբ
Յիսուս փառաւորուեցաւ, անառնն
յիշեցին Թէ այս բաներն անոր համար
գրուած էին, և Թէ իրենք այս բա-
17 ները ըրին անոր։ Եւ ժողովուրդը որ
անոր հետ էր՝ կը վկայէր Թէ զՂազա-
րոս գերեզմանէն դուրս կոչեց, և ևս-
18 հներէն յարոյց զնա։ Եւ վասն այ-
սորիկ ժողովուրդը դիմաւորեց զնա,
վասն զի լսեցին Թէ այս հրաշքն ըրած
19 էր նա։ Իսկ փարիսեցիք կ'ըսէին իրա-
րու, Կը տեսնէ՞ք որ օգուտ չէք ըներ.
ահա աշխարհ անոր հետևէն գնաց։
20 Եւ հոն կային Յոյնք ոմանք անոնց
մէջ որ երկրպագելու եկած էին ի տօ-
21 նին։ Անոնք եկան առ Փիլիպպոս որ
էր Գալիլեայի Բեթսայիդացին, և կ'ա-
ղաչէին զնա և կ'ըսէին, Տէր, կ'ուզենք
22 զՅիսուս տեսնել։ Փիլիպպոս եկաւ և
ըսաւ Անդրէասի, և դարձեալ Անդրէաս
23 և Փիլիպպոս ըսին Յիսուսի։ Յիսուս
պատասխան տուաւ անոնց և ըսաւ,
Ժամանակը հասաւ որ փառաւորուի
24 Որդին մարդոյ։ Ճշմարիտ Ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզ, Եթէ ցորենոյ հատն հողին
մէջ կ'ինկնայ և չմեռնի, ինք միայն կը
մնայ. ապա եթէ մեռնի, շատ ար-
25 դիւնք կը բերէ։ Ով որ իւր անձը կը
սիրէ, պիտի կորսնցնէ զնա. և ով որ
իւր անձը կ'ատէ այս աշխարհիս մէջ,
յաւիտենական կեանց համար պիտի
26 պահէ զայն։ Եթէ ոք կը ծառայէ ինձ,
Թող գայ իմ հետևէս. և ուր ես եմ,
իմ ծառան ևս հոն պիտի ըլլայ. Եթէ
ոք կը ծառայէ ինձ, Հայրը պիտի պատ-
27 ուէ զնա։ Հիմա խռոված է հոգիս, և
ի՞նչ ըսեմ. Հայր, ազատէ զիս այս
ժամէն. բայց ես վասն այսորիկ եկայ
28 այս ժամուս։ Հայր, փառաւորէ քու ա-
նունդ։ Ձայնեան ձայն եկաւ յերկինց,
Ե՛ւ փառաւորեցի, և՛ դարձեալ պիտի
29 փառաւորեմ։ Ուստի ժողովուրդը որ կե-
ցած էր և կը լսէր, կ'ըսէին, Որոտաւ
կ'ըլլայ։ Ոմանք ևս կ'ըսէին, Հրեշտակ
30 խօսեցաւ անոր հետ։ Յիսուս պատաս-
խան տուաւ և ըսաւ, Այս ձայնը ին-
ձի համար չեկաւ, այլ ձեզի համար։
31 Հիմա է այս աշխարհիս դատաստանը,
հիմա այս աշխարհիս իշխանը դուրս
32 պիտի նետուի։ Եւ ես երբ երկրէն
բարձրանամ, ամէնքը պիտի ձգեմ առ-
33 ի՛ս Ջոյս կ'ըսէր խնդացնելով Թէ որ-
34 պիտի մեռնէր պիտի մեռնէր։ Ժողո-
վուրդը պատասխանեց անոր, Մենք
լսեցինք յօրինաց Թէ Քրիստոս յաւի-
տեան կը մնայ, և դու ի՞նչպէս կ'ը-
սես Թէ պարտ է Որդւոյ մարդոյ բարձ-
35 րանալ։ ո՞վ է այդ Որդին մարդոյ։ Եւ
Յիսուս ըսաւ անոնց, Փոքր մի ժամա-
նակ ևս լոյսը ձեր հետն է. մինչդեռ
ունիք լոյսը, քալեցէք, դուցէ մութը
հասնի ձեր վրայ. քանզի խաւարի մէջ
36 քալողը չգիտեր Թէ ուր կ'երթայ։ Մինչ-
դեռ ունիք լոյսը, հաւատացէք լու-
սոյն որ լուսոյ որդիք ըլլաք։ Յիսուս
այս բաներն ըսաւ, և գնաց Թաքնուե-
անոնցմէ։
37 Եւ Թէպէտ այնչափ հրաշք ըրած էր



անոնց առջև, Բայց անոնք չէին հաւա-
38 սար անոր։ Որ կատարուի Եսայի մար-
գարէին խօսքը որ ըսաւ, Տէր, ո՞վ հա-
ւատաց մեր լուրին, և Տէրոջը բազուկը
39 որո՞ւ յայտնուեցաւ։ Վասն այնորիկ
չէին կրնար հաւատալ, քանզի դար-
40 ձեալ կ'ըսէ Եսայի, Անոնց աչքերնին
կուրացուց, և անոնց սիրտերը թմրե-
ցուց, զի մի դուցէ տեսնեն աչօք և ի-
մանան սրտիւ և դառնան, և ես բժըշ-
41 կեմ զնոսա։ Այս Եսայի ըսաւ Եսայի,
երբ տեսաւ անոր փառքը, և խօսեց
42 ցաւ անոր վրայ։ Այսու ամենայնիւ իշ-
խաններէն ևս շատերը հաւատացին ա-
նոր, բայց փարիսեցիներուն համար չէին
դաւաներ, որպէս զի չհանուէին ժողո-
43 վրդանոցէն։ Քանզի աւելի սիրեցին
մարդոյ փառքը քան զփառս Աստուծոյ։
44 Իսկ Յիսուս կ'աղաղակէր և կ'ըսէր,
Ով որ կը հաւատայ յիս՝ չհաւատար
45 ինձ, այլ յայն որ զրկեց զիս. Եւ ով
որ կը տեսնէ զիս, կը տեսնէ զայն որ
46 զրկեց զիս։ Ես լոյս եկայ յաշխարհ,
որպէս զի ամէնը որ հաւատայ յիս՝ չը
47 մնայ ի խաւարի։ Եւ եթէ ոք իմ խօս-
քերս լսէ և չհաւատայ, ես չեմ դա-
տեր զնա, քանզի ես չեկայ որ դա-
տեմ զաշխարհ, այլ որ փրկեմ զաշ-
48 խարհ։ Ով որ զիս կ'անարգէ և իմ
խօսքերս չընդունիր, կայ որ կը դա-
տէ զնա. խօսքը զոր ես խօսեցայ, այն
49 պիտի դատէ զնա վերջին օրը։ Քանզի
ես յանձնէ չխօսեցայ, այլ Հայրը որ
զրկեց զիս՝ նա պատուիրեց ինձ ինչ
50 պիտի ըսեմ և ինչ պիտի խօսիմ։ Եւ
գիտեմ Թէ ինչ որ նա պատուիրեց՝
յաւիտենական կեանք է. ուստի ինչ
որ ես կը խօսիմ, ինչպէս Հայրն ըսաւ
ինձ, այնպէս կը խօսիմ։

## Գլ. ԺԳ

1 Յառաջ քան զտօն զատկին Յիսուս
գիտնալով Թէ հասած էր իւր ժամա-
նակը որ ելլէր աշխարհս առ Հայր,
սիրած ըլլալով իրենները որ յաշխար-
հի էին, խաղաս սիրեց զնոսա։
2 Եւ երբ ընթրիքը կ'ըլլար, Սատանան
արդէն դրած էր իսկարիովացի Սի-
մոնեան Յուդայի սիրտը, որ մատնէր
3 զնա, Յիսուս գիտնալով Թէ Հայրն ա-
մենայն ինչ տուաւ անոր ձեռքը, և
Թէ ինք Աստուծմէ ելաւ և առ Աստ-
4 ուած կ'երթար, Ելաւ յընթրեցից և
մկկդի դրաւ հանդերձները և գինջակ
5 մը առնելով սփածաւ։ Ետոյ կոնքի մէջ
ջուր դրաւ, և սկսաւ լուանալ աշա-
կերտաց ոտքերը, և սրբել գինջա-
6 կաւ որով սփածած էր։ Ուստի եկաւ
առ Սիմոն Պետրոս. և նա ըսաւ անոր,
Տէր, դո՞ն իմ ոտքերս պիտի լուայ։
7 Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ
անոր, Ես ինչ որ կ'ընեմ դուն հիմա
չես իմանար, սակայն յետոյ պիտի ի-
8 մանաս։ Պետրոս ըսաւ անոր, Դուն իմ
ոտքերս պիտի չլուայս յաւիտեան։
Պատասխան տուաւ անոր Յիսուս, Ե-
թէ չլուայ զքեզ, բաժին չունիս ինձի
9 հետ։ Սիմոն Պետրոս ըսաւ անոր, Տէր,
ոչ միայն ոտքերս, հապա նաև ձեռ-
10 ներս և գլուխս։ Յիսուս ըսաւ ա-
նոր, Լուացեալին ուրիշ բան պէտք չէ
բայց միայն լուանալ ոտքերը, այլ
ևս բոլորովին մաքուր է. և դուք մա-
11 քուր եք, բայց ոչ ամենեքին։ Վասն
զի գիտէր զայն որ պիտի մատնէր զնա.
վասն որոյ ըսաւ, Ոչ ամենեքին մաքուր
12 էք։ Եւ երբ անոնց ոտքերնին լուաց,
և իւր հանդերձները առնելով դարձեալ
տեղն նստաւ, ըսաւ անոնց, Գիտէ՞ք
13 ինչ ըրի ձեզ։ Դուք զիս կը կոչէք Վար-
դապետ և Տէր, և ուղիղ կ'ըսէք, քանզի
14 եմ։ Իսկ եթէ ես Տէրս և Վարդապետս
ձեր ոտքերնիը լուացի, պէտք է որ
15 դուք ևս իրարու ոտք լուաք։ Վասն զի
օրինակ մը տուի ձեզ, որ ինչպէս ես ը-
16 րի ձեզ, դուք ևս ընէք։ Ճշմարիտ ճըշ-
մարիտ կ'ըսեմ ձեզ, Ծառան մեծ չէ
քան իւր Տէրը, և ոչ զրկուածը մեծ
17 է քան զզրկողն զնա։ Եթէ դուք գի-
տէք ասոնք, երանելի էք եթէ կատա-
րէք զանոնք։ Ոչ Թէ ձեր ամենուն
18 րէք զանոնք։ Ոչ Թէ ձեր ամենուն
համար կ'ըսեմ, Ես զիս կը ճանչ-
նամ զանոնք զոր ես ընտրեցի, այլ

որպէս զի կատարուի գրուածք Թէ Աչն
որ իմ հետս հաց կ'ուտէր, ինծի դէմ
19 կրունկ վերցուց։ Աչիմէն կ'ըսեմ ձեզ
մինչդեռ եղած չէ, որպէս զի երբ ըլ-
20 լայ, հաւատաք Թէ ես ա՛ն եմ։ Ճշմա-
րիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, Ով որ կ'ըն-
դունի զոյն զոր ես կը ղրկեմ, զիս
կ'ընդունի. և ով որ զիս կ'ընդունի,
զիս ղրկողը կ'ընդունի։
21 Յիսուս երբ զայս ըսաւ, Ե՛ր հոգւոյն
մէջ խռովեցաւ, և վկայեց ըսելով,
Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, որ ձե-
22 ՆԷ մին պիտի մատնի զիս։ Աւտի ա-
շակերտները տարակուսած իրարու կը
23 նայէին Թէ որու համար կ'ըսէր։ Եւ Յի-
սուսի *քով նստած էր աշակերտներէն
24 մին զոր Յիսուս կը սիրէր։ Եւ Սիմոն
Պետրոս անոր կ'անկարկէը հարցունել
Թէ ո՞վ էր այն որոյ համար կ'ըսէր։
25 Եւ նա ինկնելով Յիսուսի լանջքոյ վրայ
26 ըսաւ անոր, Տէր, ո՞վ է այն։ Յիսուս
պատասխան տուաւ, Նա է որուն պա-
տառը թրջելով կուտամ։ Եւ թրջելով
պատառը տուաւ իսկարիովտացի Սի-
27 մոնեան Յուդայի։ Եւ պատառէն ետ-
քը Սատանան մտաւ ի նա։ Եւ Յիսուս
ըսաւ անոր, Ինչ որ պիտի ընես՝ լրի
28 վացուպակի։ Բայց այս բանը ոեւէն
նստողներէն և ոչ մին հասկցաւ, Թէ
29 ինչու համար ըսաւ անոր։ Վասն զի ո-
մանք կը խորհէին Թէ, որովհետև Յու-
դա կը պահէր դանձանակը, Յիսուս
անոր կ'ըսէր, Գնէ ինչ որ պէտք է
մեզ խնամիս, կամ Թէ աղքատնե-
30 րուն բան մը տայ։ Եւ նա երբ պա-
տառն առաւ, իսկոյն դուրս ելաւ, և
էր գիշեր։
31 Եւ երբ դուրս ելաւ նա, Յիսուս ը-
սաւ, Աչիմ փառաւորեցաւ Որդին
մարդոյ, և Աստուած փառաւորուե-
32 ցաւ անով։ Եթէ Աստուած անով փա-
ռաւորեցաւ, և Աստուած ևս իւր
անձովը պիտի փառաւորէ զնա, և շու-
33 տով պիտի փառաւորէ զնա Որդեակք,
սակաւ մի ժամանակ ևս ձեզի հետ եմ.

*Յոան. գողը

զիս պիտի փնտռէք. և ինչպէս ըսի
Հրեաներուն Թէ Ուր ես կ'երթամ
դուք չէք կրնար գալ, հիմա ձեզ ևս
34 կ'ըսեմ։ Նոր պատուիրան կու տամ
ձեզ որ զիրար սիրէք, ինչպէս որ ես
զձեզ սիրեցի, որ դուք ևս սիրէք զմի-
35 մեանս։ Աստով ամէնքը պիտի գիտնան
Թէ իմ աշակերտներս էք, եթէ իրա-
36 րու վրայ սէր ունենաք։ Սիմոն Պետ-
րոս ըսաւ անոր, Տէր, ո՞ւր կ'երթաս։
Յիսուս պատասխան տուաւ անոր, Ուր
ես կ'երթամ, դուն հիմա չես կրնար
իմ ետևէս գալ, բայց յետոյ պիտի
37 գաս իմ ետևէս։ Պետրոս ըսաւ անոր,
Տէր, ինչու՞ հիմա չեմ կրնար քու ե-
տևէդ գալ. ես իմ կեանքս է՛լ քեզի
38 համար պիտի դնեմ։ Յիսուս պատաս-
խան տուաւ անոր, Քա՞ կեանքդ
պիտի դնես ինծի համար։ Ճշմարիտ
ճշմարիտ կ'ըսեմ քեզ, Հաւը պիտի
չկանչէ, մինչև դուն երկու անգամ
զիս

Գլ. ԺԴ

1 Ձեր սիրտերը չխռովին. Աստուծոյ
հաւատացէք, և ինձ հաւատացէք իմ
2 Հօրս տունը շատ բնակարաններ կան.
ապա Թէ ոչ պիտի ըսէի ձեզ, Չեմ
կ'երթամ և տեղ կը պատրաստեմ ձեզ,
3 Եւ եթէ երթամ և տեղ պատրաստեմ
ձեզ, դարձեալ կու գամ և քովս կ'առ-
նեմ զձեզ, որպէս զի ուր ես եմ
4 դուք ևս հո՛ն ըլլաք։ Եւ ուր ես կ'եր-
թամ գիտէք, և ճամբան ևս գիտէք։
5 Թովմաս ըսաւ անոր, Տէր, չենք գի-
տեր ուր կ'երթաս, և ինչպէս կրնանք
6 ճամբան գիտնալ։ Յիսուս ըսաւ անոր,
Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն
և կեանք. ոչ ոք կու գայ առ Հայր,
7 եթէ ոչ ինծմով։ Եթէ զիս ճանչնայիք,
իմ Հայրս ևս կը ճանչնայիք, և այսու-
հետև կը ճանչնաք զնա և տեսած զնա։
8 Փիլիպպոս ըսաւ անոր, Տէր, Հայրը
9 ցուցուր մեզ, և հերիք է մեզ։ Ըսաւ
անոր Յիսուս, Աչքան ժամանակ ձե-
զի հետ եմ, և չճանչցա՞ր զիս, Փիլիպ-
պէ. ով որ զիս տեսաւ՝ տեսաւ Հայրը,



և դուն ինչպէս կ'ըսես Թէ ցուցուր
10 մեզ Հայրը, Չե՞ս հաւատար Թէ ես
ի Հայր եմ և Հայրը յիս է. այն խօս-
քերը զորս ես կը խօսիմ ձեզ, ոչ Թէ
յանձնէ կը խօսիմ, այլ Հայրը որ յիս
բնակած է՝ նա կը գործէ այն գործե-
11 րը։ Հաւատացէք ինձ Թէ ես ի Հայր
12 եմ և Հայր յիս է. Ապա Թէ ոչ դո՛նէ
գործերուն համար հաւատացէք ինձ։
Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ Թէ Ով
որ կը հաւատայ յիս, այն գործերը
զորս ես կը գործեմ՝ ինք ևս պիտի
գործէ, և գան զնոսա աւելի մեծա-
մեծներ պիտի գործէ, քանզի ես կ'եր-
13 թամ առ Հայր։ Եւ իմ անուանովս ինչ
որ խնդրէք, պիտի կատարեմ զայն,
14 որ Հայրը փառաւորուի Որդով։ Եթէ
իմ անուանովս բան մը խնդրէք, պիտի
15 կատարեմ զա՛յն։ Եթէ զիս կը սիրէք,
16 պահեցէք իմ պատուիրանները։ Եւ ես
պիտի աղաչեմ Հայրը, և ուրիշ Մխի-
թարիչ պիտի տայ ձեզ, որ յաւիտեան
17 բնակի ձեզի հետ, Ճշմարտութեան Հո-
գին, զոր աշխարհս չկրնար ընդունիլ,
քանզի չտեսներ զնա և չճանչնար զնա.
բայց դուք կը ճանչնաք զնա, քանզի
ձեր քով կը բնակի և ձեր մէջ պիտի
18 ըլլայ։ Չե՛մ թողուր զձեզ որբ, կու
19 գամ առ ձեզ։ Փոքր մի ժամանակ ևս
և աշխարհ չտեսներ զիս. բայց դուք
պիտի տեսնէք զիս, քանզի ես կենդա-
նի եմ, և դուք կենդանի պիտի ըլ-
20 լաք։ Ա՛յն օրը պիտի գիտնաք Թէ ես
ի Հայր եմ, և դուք յիս, և ես ի ձեզ։
21 Ով որ իմ պատուէրներս կը բռնէ և
կը պահէ զանոնք, նա է որ կը սիրէ
զիս. և ով որ զիս կը սիրէ՝ պիտի սի-
րուի Հօրմէս, և ես պիտի սիրեմ զնա,
և պիտի յայտնեմ զիս անոր։
22 Ըսաւ անոր Յուդա, ոչ Իսկարիով-
տացին, Տէր, ի՞նչպէս կ'ըլլայ որ դուն
զքեզ պիտի յայտնես մեզ և ոչ աշ-
23 խարհի։ Յիսուս պատասխան տուաւ և
ըսաւ անոր, Եթէ ոք զիս կը սիրէ՝ իմ
խօսքս պիտի պահէ. և Հայրս պիտի
սիրէ զնա, և անոր պիտի գանք և ա-
24 նոր քով օթևան պիտի ընենք։ Ով որ

զիս չսիրեր, իմ խօսքերս չպահեր. և
այն խօսքը զոր կը լսէք իմս չէ, այլ
25 Հօրը որ զիս ղրկեց։ Այս բանները խօ-
26 սեցայ ձեզ, մինչ առ ձեզ եմ։ Բայց
Մխիթարիչը, Հոգին Սուրբ, զոր Հայր
պիտի ղրկէ յանունիս, նա պիտի սոր-
վեցունէ ձեզ զամենայն, և ինչ որ ըսի
27 ձեզ պիտի յիշեցունէ ձեզ։ Խաղաղու-
Թիւն կը թողում ձեզ, իմ խաղաղու-
Թիւնս կու տամ ձեզ. ոչ ինչպէս աշ-
խարհս կու տայ, կու տամ ես ձեզ.
ձեր սիրտերը չխռովին և չվախնան։
28 Լսեցիք որ ըսի ձեզ Թէ կ'երթամ և
կու գամ առ ձեզ. եթէ զիս սիրէիք,
պիտի ուրախանայիք, *Թէ ես առ Հայր
կ'երթամ, քանզի Հայր իմ մեծ է քան
29 զիս։ Եւ այժմէն դեռ չըսած ըսի ձեզ,
30 որ երբ ըլլայ, հաւատաք։ Այլ ևս ձե-
զի հետ շատ պիտի չխօսիմ, քանզի այս
աշխարհս իշխանը կու գայ, և իմ վրաս
31 բան մը չունի. Միայն Թէ աշխարհս գիտ-
նայ Թէ ես կը սիրեմ զՀայր, և ինչ-
պէս որ Հայրը պատուիրեց ինձ, այն-
պէս կ'ընեմ. ելէ՛ք երթանք ասկէ։

Գլ. ԺԵ

1 Ե՛ս եմ ճշմարիտ որթը, և իմ Հայրս
2 մշակն է։ Ամէն ճիւղ որ իմ վրաս է
և պտուղ չբերէր՝ կը կտրէ զայն. և
ամէնը որ պտուղ կը բերէ՝ կը մաքրէ
3 զայն, որ ևս աւելի պտուղ բերէ։ Դուք
արդէն իսկ մաքուր էք այն խօսքով
4 զոր խօսած եմ ձեզ։ Կեցէ՛ք յիս, և
ես ի ձեզ. ինչպէս որ ճիւղը չկրնար
ինքնին պտուղ բերել, եթէ հաստա-
տուած չէ որթին վրայ, նոյնպէս և
դուք չէ՛ր կրնար, եթէ հաստատուած
5 չէք իմ վրաս։ Ես եմ որթն է՛ դուք
ճիւղերն էք. այն որ իմ վրաս հաս-
տատուած է և ես անոր վրայ՝ նո՛ւա
պտուղ կը բերէ, քանզի առանց ինձ
6 բան մը չէք կրնար ընել։ Եթէ ոք իմ
վրաս հաստատուած չէ, նա ճիւղի մը
պէս դուրս նետուած և չորցած է. և

*Ոմանք՝ որ ըսի Թէ

կը ժողովին զանոնք և կը նեռանին
7 ի հոգը, և կ'ապրին՝ եթէ գութ յիս կենաք և իմ խօսքերս և կենան ի ձեզ, ինչ որ ուզէք՝ պիտի խնդրէք,
8 և պիտի ըլլայ ձեզ։ Ասով իմ Հայրս փառաւորուեցաւ, որ դուք շատ պտուղ բերէք, և իմ աշակերտներս ըլլաք։
9 Ինչպէս որ Հայրը սիրեց զիս, և ես զձեզ սիրեցի. կեցէք ի սէր իմ,
10 եթէ իմ պատուէրներս պահէք, պիտի կենաք ի սէր իմ, ինչպէս որ ես իմ Հօրս պատուէրները պահեցի, և կեցած եմ
11 ի սէր նորա։ Այս բաները խօսեցայ ձեզ որ իմ ուրախութիւնս ձեզ ի ձեզ, և
12 ձեր ուրախութիւնը լցեալ ըլլայ։ Այս է իմ պատուէրս որ զիրար սիրէք,
13 ինչպէս որ ես զձեզ սիրեցի։ Քան զայս աւելի մեծ սէր ոչ ոք կրնայ ունենալ, որ մարդ իւր կեանքը դնէ բարեկամներուն համար։
14 Դուք իմ բարեկամներս էք, եթէ ընէք ինչ որ կը պատուիրեմ ձեզ։
15 Այսուհետև ծառայ չեմ անուաներ զձեզ, քանզի ծառան չգիտեր ինչ կ'ընէ իւր տէրը. այլ ես բարեկամ անուանեցի զձեզ, քանզի այն ամէնը զոր իմ Հօրմէս լսեցի՝ իմացուցի ձեզ։
16 Ոչ թէ դուք զիս ընտրեցիք, այլ ես ընտրեցի զձեզ, և դրի զձեզ որ դուք երթաք և պտուղ բերէք, և ձեր պտուղը մնայ. որպէս զի իմ անուանիս ինչ որ խնդրէք Հօրմէն,
17 տայ ձեզ։ Զայս կը պատուիրեմ ձեզ որ զիրար սիրէք։
18 Եթէ աշխարհ կ'ատէ զձեզ, գիտցէք
19 որ նախ քան զձեզ զիս ատեց։ Եթէ աշխարհէն ըլլայիք, աշխարհ կը սիրէր իրեններըը. բայց որովհետև չէք աշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ աշխարհէ, վասն որոյ աշխարհ կ'ատէ զձեզ։
20 Յիշեցէք այն խօսքը զոր ըսի ձեզ թէ Ծառան մեծ չէ քան զտէր իւր։ Եթէ զիս հալածեցին, զձեզ ևս պիտի հալածեն. եթէ իմ խօսքս պահեցին, պիտի
21 պահեն նաև ձերը։ Բայց այս ամէնը պիտի բնեն ձեզ իմ անուանս համար, քանզի չճանչցան զայն որ զրկեց զիս։
22 Եթէ ես եկած և անոնց խօսած չըլլայի, անոնք մեղք չէին ունենար. բայց հիմա պատճառանք չունին իրենց մեղքին համար։
23 Զիս ատողը Հայրս ալ կ'ատէ։
24 Թէ նաև իմ Հայրս՝ եթէ անոնց մէջ ըրած չըլլայի այն գործերը զոր այլ ոք ըրած չէ, անոնք մեղք չէին ունենար. բայց հիմա տեսան, և ատեցին
25 թէ զիս և թէ իմ Հայրս։ Սակայն այս եղաւ՝ որ կատարուի այն խօսքը որ անոնց օրինաց մէջ գրուած է թէ ի զուր
26 ատեցին զիս։ Բայց երբ Մխիթարիչը գայ զոր ես Հօրմէն պիտի զրկեմ ձեզ, Ճշմարտութեան Հոգին որ Հօրմէն կ'ելլէ, նա պիտի վկայէ զիս։
27 Եւ դուք ևս կը վկայէք, քանզի ի սկզբանէ իմ հետս էք։

## Գլ. ԺԶ

1 Այս բաները խօսեցայ ձեզ որ չգայթակղիք։
2 Ժողովրդանոցներէն պիտի հանեն զձեզ. և ժամանակ կա պիտի գայ որ ամէնը որ զձեզ սպաննէ, այնպէս պիտի համարի թէ
3 Աստուծոյ պաշտօն կը մատուցանէ։ Եւ այս բաները պիտի բնեն չեմ՝ վասն զի
4 ոչ Հայրը ճանչցան և ոչ զիս։ Բայց այս բաները խօսեցայ ձեզ որ երբ ժամանակը գայ, յիշէք թէ ես բսի ձեզ։ և այս բաներն ի սկզբան չըսի ձեզ, քանզի ձեզի հետ էի։
5 Սակայն հիմա ես կ'երթամ առ այն որ զրկեց զիս, և ձենէ ոչ ոք կը հարցունէ թէ Ո՞ւր կ'երթաս։
6 Բայց որովհետև այս բաները խօսեցայ ձեզ, ձեր սիրտերը տրտմութեամբ լցան։
7 Սակայն ես ճշմարիտը կ'ըսեմ ձեզ, Լաւ է ձեզ եթէ ես երթամ. քանզի եթէ ես չերթամ, Մխիթարիչը չգայ ձեզ. ապա եթէ երթամ, կը զրկեմ զնա ձեզ։
8 Եւ նա երբ գայ, պիտի յանդիմանէ զաշխարհ մեղքի համար և արդարութեան համար և դատաստանի
9 համար։ Մեղքի համար՝ որ չեն հաւատար
10 ասր ինձ. Արդարութեան համար՝ որ ես իմ Հօրս քով կ'երթամ, և այլ ևս
11 չէք տեսներ զիս։ Եւ դատաստանի համար՝ որ այս աշխարհիս իշխանը դատապարտուած է։
12 Տակաւին շատ բաներ ունիմ ըսել ձեզ, այլ հիմա չէք
13 կրնար տանիլ։ Բայց երբ նա գայ, Ճշմարտութեան Հոգին, ամէն Ճշմարտութեան պիտի առաջնորդէ զձեզ, քանզի ոչ թէ յանձնէ պիտի խօսի, այլ ինչ որ լսէ՝ զայն պիտի խօսի, և գալոցը
14 պիտի պատմէ ձեզ։ Նա զիս պիտի փառաւորէ, քանզի իմինէս պիտի առնու
15 և պատմէ ձեզ։ Այն ամէնը զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ըսի ձեզ թէ իմինէս պիտի առնու և պատմէ
16 ձեզ։ Փոքր ինչ ժամանակ և, և այլ պիտի չտեսնէք զիս, և դարձեալ փոքր ինչ ժամանակ, և պիտի տեսնէք զիս, քանզի ես առ Հայր կ'երթամ։
17 Այս պատճառաւ աշակերտներէն ոմանք իրարու կ'ըսէին, Ի՞նչ է այս զոր կ'ըսէ մեզ, թէ փոքր ինչ ժամանակ և, և պիտի չտեսնէք զիս, և դարձեալ փոքր ինչ ժամանակ և պիտի տեսնէք զիս. և, Քանզի ես առ Հայր կ'երթամ։
18 Ուստի կ'ըսէին, Ի՞նչ պիտի ըլլայ այն փոքր ժամանակը որ կ'ըսէ. չենք գիտեր ինչ
19 կ'ըսէ։ Իսկ Յիսուս գիտնալով թէ կ'ուզէին հարցունել անոր, ըսաւ անոնց, Առա՞ր համար իրարու կը հարցունէք, որ ըսի թէ փոքր ինչ ժամանակ և, և պիտի չտեսնէք զիս, և դարձեալ փոքր ինչ ժամանակ, և պիտի տեսնէք զիս.
20 Նէք զիս՝ ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, դուք պիտի լաք և ողբաք, բայց աշխարհս պիտի ուրախանայ. դուք պիտի տրտմիք, սակայն ձեր տրտմութիւնը պիտի փոխուի ուրախութեան։
21 Կին մը երբ պիտի ծնանի, տրտմութիւն կ'ունենայ, քանզի հասած է իւր ժամը. բայց երբ տղան ծնաւ, այլեւս չյիշեր նեղութիւնը ուրախութենէն որ
22 մարդ ծնաւ աշխարհ։ Եւ արդարև դուք հիմա տրտմութիւն ունիք. բայց ես դարձեալ պիտի տեսնեմ զձեզ, և ձեր սիրտերն ուրախ պիտի ըլլան, և ոչ ոք պիտի հանէ ձենէ ձեր ուրախութիւնը։
23 Եւ այն օր բան մը պիտի չհարցունէք ինձմէ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզ, թէ իմ անուամբս ինչ որ խնդրէք Հօրմէն, պիտի տայ ձեզ։
24 Մինչեւ ցարդ բան մը չխնդրեցիք իմ անուամբս. խնդրեցէք և պիտի առնուք, որպէս զի ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ։
25 Առակներով խօսեցայ ձեզ ասոնք. Բայց ժամանակ պիտի գայ, որ այլ ևս առակներով պիտի չխօսիմ ձեզ, այլ յայտնապէս Հօրը վրայ պիտի պատմեմ ձեզ։
26 Այն օր իմ անուամբս պիտի խնդրէք. և չեմ ըսեր ձեզ թէ ես ձեզի համար պիտի աղաչեմ Հայրը.
27 Քանզի ինքն իսկ Հայր կը սիրէ զձեզ, վասն զի դուք զիս սիրեցիք և հաւատացիք թէ ես Աստուծմէ ելայ։ Ելայ ի Հօրէ և եկայ յաշխարհս. դարձեալ կը թողում զաշխարհս և կ'երթամ առ Հայրը։
29 Աշակերտներն ըսին անոր, Ահա հիմա յայտնապէս կը խօսիս, և առակ
30 ամենևին չես ըսեր։ Հիմա խնացանք որ ամէն բան գիտես, և պէտք չէ որ հարցունէ քեզ ոք. այսու կը հաւատանք որ Աստուծմէ ելար։
31 Յիսուս պատասխան տուաւ անոնց Ա՞ռ ըսաւ,
32 Հիմա կը հաւատա՞ք. Ահա ժամանակ պիտի գայ, և եկած իսկ է, որ ցիրուցան պիտի ըլլաք իւրաքանչիւր իւր տեղը, և պիտի թողուք զիս մինակ. բայց ես չեմ մինակ, քանզի Հայրը իմ հետս է։
33 Խօսեցայ ձեզ ասոնք որ ինծմով խաղաղութիւն ունենաք. աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջալերուեցէք. ես յաղթեցի աշխարհին։

## Գլ. ԺԷ

1 Յիսուս երբ խօսեցաւ ասոնք, իւր աչուըները վերցուց յերկինս և ըսաւ, Հայր, հասած է ժամանակը, փառաւորէ քու Որդիդ, որ քու Որդիդ ևս
2 փառաւորէ զքեզ. ինչպէս որ իշխանութիւն տուիր անոր ամէն մարմնոյ վրայ, որ յաւիտենական կեանք տայ
3 այն ամենուն զոր անոր տուիր։ Եւ այս է յաւիտենական կեանք, որ ճանչնան



զքեզ՝ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցիր Յիսուս Քրիստոս։
4 Ես քեզ փառաւորեցի երկրի վրայ, գործը կատարեցի զոր տուիր ինծի որ ընեմ։
5 Եւ հիմա դուն, Հայր, փառաւորէ զիս քեզի մօտ այն փառքով որ ունէի քեզի մօտ նախ քան զաշխարհի ըլլալը։
6 Յայտնեցի քու անունդ այն մարդոց որ աշխարհէն տուիր ինծի. քուկինները էին, և ինծի տուիր, և քու խօսքդ պահեցին։
7 Հիմա գիտցին թէ ամէն բան զոր տուիր ինծի՝ քեզմէ են։
8 Վասն զի խօսքերը զոր տուիր ինծի՝ տուի անոնց, և անոնք առին, և ճշմարտապէս գիտցին թէ քեզմէ ելայ, և հաւատացին թէ դուն զիս առաքեցիր։
9 Ես անոնց համար կ'աղաչեմ. աշխարհի համար չեմ աղաչեր, հապա անոնց համար զոր տուիր ինծի, վասն զի քուկինները են,
10 և իմինները քուկինները են, և փառաւորուեցայ անոնց մէջ։
11 Եւ ես այլևս աշխարհի մէջ չեմ, և անոնք աշխարհի մէջ են, և ես քեզի կու գամ։ Սուրբ Հայր, պահէ զանոնք քու անունիդ մէջ զոր տուիր ինծի, որպէս զի մի ըլլան իրարու պէս, ինչպէս որ մենք։
12 Երբ անոնց հետ աշխարհի մէջ էի, ես պահեցի զանոնք քու անունիդ մէջ զոր տուիր ինծի, և պահեցի, և ոչ մէկը կորսուեցաւ, բայց միայն կորստեան որդին, որպէս զի գրուածքը կատարուի։
13 Եւ հիմա քեզի կու գամ, և այս բաները կը խօսիմ աշխարհի մէջ, որպէս զի իմ ուրախութիւնս կատարեալ ունենան իրենց մէջ։
14 Ես տուի անոնց քու խօսքդ, և աշխարհ զանոնք ատեց, որովհետև աշխարհէն չեն, ինչպէս որ ես աշխարհէն չեմ։
15 Չեմ աղաչեր որ զանոնք աշխարհէն վերցնես, հապա որ զանոնք պահես չարէն։
16 Աշխարհէն չեն, ինչպէս որ ես աշխարհէն չեմ։
17 Սրբէ զանոնք ճշմարտութեամբ. քու խօսքդ ճշմարտութիւն է։
18 Ինչպէս որ զիս աշխարհ առաքեցիր, ես ևս զանոնք աշխարհ առաքեցի։
19 Եւ անոնց համար ես զիս կը սրբեմ, որպէս զի անոնք ևս ճշմարտութեամբ սրբուած ըլլան։
20 Եւ ոչ միայն անոնց համար կ'աղաչեմ, հապա անոնց համար ևս որ իրենց խօսքով պիտի հաւատան ինծի,
21 որպէս զի բոլորը մէկ ըլլան, ինչպէս որ դուն, Հայր, իմիս մէջ եմ, և ես քուկիդ մէջ, որ անոնք ևս մեզի մէջ մէկ ըլլան, որպէս զի աշխարհ հաւատայ որ դուն զիս առաքեցիր։
22 Եւ ես այն փառքը որ տուիր ինծի՝ տուի անոնց, որպէս զի մէկ ըլլան ինչպէս որ մենք մէկ ենք։
23 Ես անոնց մէջ եմ, և դուն իմիս մէջ, որպէս զի կատարեալ ըլլան մէկ, և աշխարհ գիտնայ որ դուն զիս առաքեցիր, և զանոնք ինչպէս զիս սիրեցիր։
24 Հայր, կ'ուզեմ որ ուր որ ես ինծի տուիր՝ անոնք ևս ինծի հետ ըլլան, որպէս զի տեսնեն զփառքս զոր տուիր ինծի, վասն զի սիրեցիր զիս նախ քան զաշխարհի հիմնարկութիւնը։
25 Արդար Հայր, աշխարհ քեզ չճանչցաւ, բայց ես ճանչցայ, և անոնք գիտցին թէ դուն զիս առաքեցիր։
26 Եւ ես քու անունդ յայտնեցի անոնց, և պիտի յայտնեմ, որպէս զի այն սէրը որով զիս սիրեցիր՝ անոնց մէջ ըլլայ, և ես անոնց մէջ։

գքեզ մի միայն ճշմարիտ Աստուած, և զՅիսուս Քրիստոս՝ զոր դուն զրկեցեր։
4 Նա գքեզ փառաւորեցի երկրի վրայ, գործը զոր տուիր ինձ ընել՝ կատարե-
5 ցի։ Եւ հիմա, ով Հայր, փառաւորէ զիս առ քեզ այն փառօք զոր ունէի յառաջ քան զինեալն աշխարհի առ քեզ։
6 Քու անունդ յայտնի ըրի այն մարդոց՝ զորս տուիր ինձ աշխարհէ. քո էին, և ինձ տուիր զանոնք, և քու խօսքդ
7 պահեցին։ Հիմա գիտցան թէ այն ամէն բաներդ զոր տուիր ինձ՝ քենէ
8 են. Քանզի այն խօսքերը զոր տուիր ինձ՝ տուի անոնց, և անոնք ընկալան, և ճշմարտութեամբ իմացան որ ես քե-
9 նէ եկայ, և հաւատացին թէ դու զրկեցիր զիս։ Ես անոնց համար կ'ազաչեմ. ոչ թէ աշխարհի համար կ'ազաչեմ, այլ անոնց համար զոր դուն
10 տուիր ինձ, քանզի քո են անոնք։ Եւ ինչ որ իմս է՝ այն բոլորը քո է, և ինչ որ քո է՝ այն իմս է, և ես փառաւոր-
11 ուած եմ նոքօք։ Եւ ես այլ ևս չեմ յաշխարհի, բայց անոնք յաշխարհի են, և ես կու գամ առ քեզ։ Ով Հայր սուրբ, քու անուանդով պահէ զանոնք զոր դուն տուիր ինձ, որպէս զի մի
12 ըլլան, ինչպէս որ մենք մի ենք։ Մինչ յաշխարհի էի անոնց հետ, ես կը պահէի զանոնք քու անուանդով. զորս դուն տուիր ինձ՝ ես պահեցի, և ո-
նոնցմէ ոչ ոք կորաւեր, բայց միայն կորաւեան որդին, որպէս զի գրուածը
13 կատարուի։ Այլ հիմա կու գամ առ քեզ, և աշխարհի մէջ այս բաները կը խօսիմ, որ իմ ուրախութիւնս իրենց անձերուն մէջ կատարեալ ունենան։
14 Ես քու խօսքդ տուի անոնց, և աշխարհս ատեց զանոնք. քանզի աշխարհէ չեն, ինչպէս որ ես աշխարհէ չեմ։
15 Չեմ ազաչեր որ վերցնես զանոնք աշխարհէ, այլ որ պահես զանոնք ի
16 չարէն։ Անոնք աշխարհէ չեն, ինչպէս
17 որ ես չեմ աշխարհէ։ Սրբէ զանոնք քու ճշմարտութեամդ. քու խօսքդ
18 ճշմարտութիւն է։ Ինչպէս որ դուն զրկեցիր զիս յաշխարհ, նոյնպէս և ես
19 զրկեցի զանոնք յաշխարհ։ Եւ անոնց համար ես իմ անձս կը սրբեմ, որ անոնք ևս սրբացած ըլլան ճշմարտու-
20 թեամբ։ Բայց ոչ թէ անոնց համար միայն կ'ազաչեմ, այլ և անոնց խօսքով բոլոր ինձ հաւատացողներուն հա-
21 մար. Որ ամէնքը մի ըլլան, ինչպէս որ դուն, ով Հայր, յիս և ես ի քեզ, որ և անոնք ի մեզ ըլլան մի, որպէս զի աշխարհս հաւատայ թէ դուն զրկեցիր
22 զիս։ Եւ այն փառքը զոր դուն տուիր ինձ՝ ես անոնց տուի, որ մի ըլլան,
23 ինչպէս որ մենք մի եմք. Ես ի նոսա և դու յիս, որ անոնք կատարեալ ըլլան ի միութեան. և աշխարհս գիտնայ թէ դուն զրկեցիր զիս, և սիրեցիր զա-
24 նոնք, ինչպէս սիրեցիր զիս։ Ով Հայր, զորս դուն տուիր ինձ, կ'ուզեմ որ ուր ես եմ՝ անոնք ևս իմ հետս ըլլան, որպէս զի տեսնեն փառքս զոր տուիր ինձ. քանզի դուն սիրեցիր զիս յառաջ
25 քան զինկդն աշխարհիս։ Ով արդար Հայր, աշխարհս չճանչցաւ զքեզ, բայց ես ճանչցայ զքեզ, ևասոնք ճանչցան
26 թէ դուն զրկեցիր զիս։ Եւ քու անունդ ճանչցուցի անոնց, և պիտի ճանչցնեմ, որ այն սէրը որով դուն զիս սիրեցիր՝ անոնց մէջ ըլլայ, և ես անոնց մէջ։

## Գլ. ԺԸ

1 Յիսուս ասոնք ըսելէն ետքը իր աշակերտներուն հետ ելաւ կիդրան հեղեղատին անդիի կողմն ուր կար պարտէզ,
2 յոր մտաւ ինքը և աշակերտանները։ Եւ Յուդա ևս որ պիտի մատնէր զնա գիտէր այն տեղը, քանզի Յիսուս շատ անգամ աշակերտներուն հետ հոն ժող-
3 ոված էր։ Ուստի Յուդա զինուորները և քահանայապետներէն և փարիսեցիներէն սպասաւորներ առնելով հոն եկաւ ճրագներով և լապտերներով և զինուքներով։
4 Յիսուս գիտնալով իրեն վրայ գալու բոլոր բաները՝ ելաւ և ըսաւ անոնց, Զո՞վ կը
5 խնդրէք։ Պատասխան տուին անոր, Յիսուս Նազովրեցին։ Ըսաւ անոնց Յիսուս, Ես եմ։ Եւ Յուդա՝ որ կը մատ-
6 նէր զնոսա հետ կեցած էր։ Եւ երբ ըսաւ Թէ Ես եմ, ետ ետ գացին
7 և գետին ինկան։ Եւ նորէն հարցուց անոնց, Զո՞վ կը խնդրէք։ Եւ անոնք
8 ըսին, Յիսուս Նազովրեցին։ Յիսուս պատասխան տուաւ, Ըսի ձեզ Թէ Ես եմ. ուստի եթէ զիս կը խնդրէք, Թոյլ
9 տուէք սոնոց երթալ։ Որպէս զի կատարուի այն խօսքը զոր ինք ըսած էր Թէ Ես ոչ ոմին կորուսի անոնցմէ զորս
10 տուիր ինձ։ Ապա Սիմոն Պետրոս որ սուր ունէր՝ հանեց զայն և քահանայապետին ծառային զարնելով կտրեց հանեց անոր աջ ականջը։ Եւ ծառային
11 անունն էր Մաղքոս։ Իսկ Յիսուս ըսաւ Պետրոսի, Սուրդ պատեանը դիր. բաժակը զոր Հայր տուաւ ինձ՝ պիտի չը խմեմ զայն։
12 Ուստի զինուորները գունդը և հազարապետը և Հրէից սպասաւորները
13 բռնեցին զՅիսուս և կապեցին. Եւ նախ տարին զնա առ Աննա, քանզի նա էր աներ այն տարուան քահանայապետին
14 կայիափայի։ Եւ այս այն կայիափա էր որ Հրէից խրատ տուաւ Թէ լաւ է որ մարդ
15 մի կորսուի ժողովրդեան համար։ Եւ Յիսուս եկաւ հետևեցաւ կ'երթային Սիմոն Պետրոս և ուրիշ աշակերտ մը. և այն աշակերտը ծանօթ ըլլալով քահանայապետին՝ մտաւ Յիսուսի հետ քահանայապետին
16 գաւիթը։ Բայց Պետրոս կը կենար դուրսը դրան քով։ Ուստի ելաւ միւս աշակերտը որ քահանայապետին ծանօթն էր, և բաւ դռնապանին, և ներս
17 մուցուց զՊետրոս։ Աղջիկն դռնապան որ Պետրոսի, Միթէ դո՞ւ և այն մարդոն աշակերտներէն ես։
18 Նա ըսաւ, Չեմ։ Իսկ ծառաներն և սպասաւորները հոն կեցած էին, և կրակ շաղած կը տաքնային, քանզի ցուրտ էր։ Եւ Պետրոս անոնց հետ կեցած էր
19 և կը տաքնար։ Եւ քահանայապետը հարցուց Յիսուսի անոր աշակերտներ-
20 ուն և վարդապետութեան վրայ։ Յիսուս պատասխան տուաւ անոր, Ես



յայտնի խօսեցայ յաշխարհի. ես ամէն ժողովրդեանցներուն և տաճարին մէջ ուր բոլոր Հրեայք կը ժողովին, և ծածուկ բան մը չխօսեցայ։
21 Ընդէ՞ր կը հարցունես ինձ. լսողներուն հարցուր Թէ ինչ խօսեցայ անոնց. ահա
22 ինչ որ խօսեցայ գիտեն անոնք։ Երբ բաւ զայս, սպասաւորներէն մին որ հոն կեցած էր՝ ապտակ մը տուաւ Յիսուսի բսելով, Այդպէ՞ս պատասխանես քահանայապետին,
23 կոչ տաս քահանայապետին, Յիսուս պատասխանեց անոր, Եթէ չար խօսեցայ, վկայէ չարին համար. իսկ եթէ
24 բարի, ինչո՞ւ կը զարնես ինձ։ Եւ Անանա զրկեց զնա կապեալ առ Կայիափա քահանայապետ։ Սիմոն Պետրոս ևս
25 հոն կեցած էր և կը տաքնար. և ըսին անոր, Միթէ դո՞ւ ևս անոր աշակերտներէն ես։ Նա ուրացաւ և բաւ Թէ
26 Չեմ։ Եւ քահանայապետին ծառաներէն մին, այն հարազատ ազգականը որոյ ականջը Պետրոս կտրած էր, ըսաւ, Ո՞չ պարտէզն տեսայ զքեզ պարաիջին
27 մէջ անոր հետ։ Անանա Պետրոս դարձեալ ուրացաւ, և իսկոյն հաւ խօսեցաւ։
28 Եւ զՅիսուս տարին կայիափայի դուռնէն [illegible] պալատը, և ուրէ՞ն առաւօտ էր. և իրենք պալատը չմտան որ չպղծուէին, այլ որ ուտէին զատիկը
29 կրնան։ Ուստի Պիղատոս դուրս ելաւ առնոնց և ըսաւ, Ի՞նչ մեղադրանս կը բերէք
30 մարդուս դէմ։ Պատասխան տուին և ըսին անոր, Եթէ չարագործ չէր գա, չէինք մատներ դնաս
31 քեզ։ Անանա Պիղատոս ըսաւ անոնց, Դուք առէք զնա, և ըստ ձեր օրինաց դատեցէք զնա։ Հրեայք ըսին անոր,
32 Մեզ չէ օրէն սպաննել զոք։ Որ կատարուի Յիսուսի խօսքը զոր ըսաւ իմացնելով Թէ ինչ մահուամբ պիտի մեռնէր։
33 Ուստի իսկ Պիղատոս մտաւ գաւթէսպասաւոր, կոչեց զՅիսուս և ըսաւ ա-
34 նոր, Դո՞ւ ես Հրէից Թագաւորը։ Յիսուս պատասխան տուաւ անոր, Դուն քենէ՞ կ'ըսես զայդ, Թէ ուրիշներն ը-
35 սին քեզ ինձի համար։ Պատասխան

տուաւ Պիղատոս, Մի՛թէ ես Հրեայ եմ. քո ազգդ և քահանայապետները մատնեցին զքեզ ինձ. ի՞նչ ըրած ես
36 դուն։ Յիսուս պատասխան տուաւ, Իմ թագաւորութիւնս այս աշխարհէս չէ. եթէ այս աշխարհէս ըլլար իմ թագաւորութիւնս, ապառաժներս կը կռուէին որ ես Հրեից ձեռքը չմատնուէի,
37 բայց հիմա իմ թագաւորութիւնս չէ։ Ասոր Անաանն Պիղատոս ըսաւ անոր, Ուրեմն դուն թագաւո՞ր ես։ Պատասխան տուաւ Յիսուս, Դուն կ'ըսես, քանզի թագաւոր եմ. ես յայն սակս ծնած եմ, և յայն սակս աշխարհք եկած, որ վկայեմ ճշմարտութեան. այն ամէնը որ ճշմարտութենէ է՝ կը լսէ
38 իմ ձայնիս։ Պիղատոս ըսաւ անոր, Ի՞նչ է ճշմարտութիւն։ Ու զայս ըսելով դարձեալ դուրս ելաւ Հրեաներուն և ըսաւ անոնց, Ես յանցանք չեմ գըտ-
39 ներ անոր վրայ։ Բայց սովորութիւն ունիք որ ձեզի մէկը ձեղ զոք ազատկին. հիմա կ'ուզէ՞ք որ Հրեից Թագաւորն
40 արձակեմ ձեզ։ Անաանն ամէնքը դարձեալ աղաղակեցին ըսելով, Մի զդա, այլ զԲարաբբաս։ Եւ Բարաբբաս աւազակ էր։

## Գլ. ԺԹ

1 Անաանն Պիղատոս առաւ զՅիսուս և
2 ծեծեց։ Եւ զինուորները փուչերէ պըսակ հիւսելով դրին անոր գլուխը, և
3 հագուցին անոր Հանդերձ ծիրանի. Եւ կ'ըսէին, Ողջ լեր, Թագաւոր Հրէից։
4 և ապտակ կը հարկէին անոր։ Պիղատոս դարձեալ ելաւ դուրս և ըսաւ անոնց, Ահա դուրս կը բերեմ զնա ձեզ, որ գիտնաք թէ ես յանցանք չեմ գտներ
5 անոր վրայ։ Անաանն Յիսուս դուրս ելաւ փշեղէն պսակը և ծիրանի հանդերձն հագած. և Պիղատոս ըսաւ ա-
6 նոնց, Ահա այն մարդը։ Քահանայապետները և սպասաւորները երբ զնա տեսան զնա, աղաղակեցին և ըսին, Խաչ հանէ, խաչ հանէ [զդա]։ Պիղատոս ըսաւ անոնց, Դո՛ւք առէք զդա և հանեցէ՛ք ի խաչ, քանզի ես յանցանք
7 չեմ գտներ ասոր վրայ։ Հրեաները պատասխան տուին անոր, Մենք օրէնք ունինք, և ըստ մեր օրինաց պարտի մեռանել, քանզի զինք Աստուծոյ Որ-
8 դի ըրաւ։ Երբ Պիղատոս լսեց այս խօս-
9 քը, ևս աւելի վախցաւ։ Եւ զարձեալ մտնելով պալատը՝ ըսաւ Յիսուսի, Ուսա՞ր ես դուն։ Բայց Յիսուս պատասխան
10 չտուաւ անոր։ Ուստի Պիղատոս ըսաւ անոր, Ինծի հետ չե՞ս խօսիր. չե՞ս գիտեր որ իշխանութիւն ունիմ ի խաչ հանել
11 զքեզ, և իշխանութիւն ունիմ արձակել զքեզ։ Յիսուս պատասխան տուաւ, Դուն իմ վրաս բնաւ իշխանութիւն չէիր ունենար, եթէ տրուած չըլլար քեզ ի վերուստ. վասն որոյ նա որ զիս մատնեց քեզ, անոր մեղքն աւելի
12 մեծ է։ Եւ այնուհետև Պիղատոս կը ջանդրէր թէ ձերէ՛ արձակէր զնա. բայց Հրեայք կ'ազաղակէին և կ'ըսէին, Եթէ արձակես զդա, չես բարեկամ կայսեր. ով որ թագաւոր կ'անուանէ
13 զինք, հակառակ կը խօսի կայսեր։ Իսկ Պիղատոս երբ լսեց այս խօսքը, դուրս հանեց զՅիսուս, և նստաւ բեմին վրայ այն տեղը որ Քարայատակ կ'ըսուէր,
14 և Եբրայեցերէն՝ Գապտաթա։ Զատկին ուրբաթն էր և ժամն էր իբրև վեցերորդ, և ըսաւ Հրեից, Ահա ձեր թա-
15 գաւորը։ Բայց անոնք աղաղակեցին, Վերցուր, վերցուր, խաչը հանէ զդա։ Պիղատոս ըսաւ անոնց, Զձեր թագաւորը խաչը հանեմ։ Քահանայապետները պատասխան տուին, Մենք թագաւոր
16 չունինք բաց ի կայսերէն։ Անաանն տըւաւ զնա անոնց ձեռքը որ խաչուէր։
17 Եւ անոնք առին զՅիսուս և կը տա-
18 նէին։ և նա վերցնելով իւր խաչը ելաւ Գագաթ ըսուած տեղը, որ Եբ-
19 րայեցերէն կը կոչուի Գողգոթա։ Հոն խաչը հանեցին զնա, և անոր հետ ուրիշ երկուք ևս, զմի՝ ասի, և զմիւսն՝
20 անաի, և ի մէջն զՅիսուս։ Տախտակ մի ևս գրեց Պիղատոս, և դրաւ խաչին վրայ, և գրուած էր, Յիսուս Նազովրեցի, Թագաւոր Հրէից։ Եւ Հրեաներէն շատերը կարդացին այն տախտա-



կը, վասն զի քաղաքին մօտ էր տեղն ուր Յիսուս խաչուեցաւ. և գրուած էր Եբրայեցերէն, Յունարէն և Լատի-
21 ներէն։ Անաանն Հրէից քահանայապետներն ըսին Պիղատոսի, Մի գրեր Թագաւոր Հրէից, այլ Թէ ինք ըսաւ, Թագաւոր եմ Հրէից։ Պիղատոս պատաս-
22 խան տուաւ, Ինչ որ գրեցի՝ գրեցի։
23 Եւ զինուորները երբ խաչը հանեցին զՅիսուս, առին անոր հանդերձները և չորս բաժին ըրին, իւրաքանչիւր զինուորի մաս մի. նաև պատմուճանը. իսկ պատմուճանն առանց կարանի էր վե-
24 րուստ ի վայր ամբողջ հիւսուած. Ուստի ըսին իրարու, Չպատռենք զայդ, այլ ընկնունք վրան տալով վրայ Թէ որու պիտի բլլայ. որպէս զի կատարուի գրուածքն որ կ'ըսէ, Հանդերձներս բաժնեցին իրենց մէջ, և պատմուճանիս վրայ արկին վիճակ։ Ահա այս բաներն
25 րրին զինուորները։ Եւ Յիսուսի խաչին քով կեցած էին անոր մայրը և մօրը քոյրը Մարիամ Կղէոպասյ և Մարիամ Մագդաղենացի։
26 Ուստի Յիսուս երբ տեսաւ իւր մայրը, և աշակերտը զոր կը սիրէր՝ ան մօտ կեցած էր, ըսաւ իւր մօրը, Կին դուս,
27 ահա որդի քոյ։ Յետոյ ըսաւ աշակերտին, Ահա մայր քոյ։ Եւ այն ժամանակէն աշակերտն առաւ զնա իրեն քով։
28 Այնուհետև Յիսուս գիտնալով Թէ արդէն ամէնայն բան կատարեալ էր, որպէս զի գրուածքն կատարուի, ըսաւ,
29 Ծարաւի եմ։ Եւ հոն քացախով լի աման կար. և անոնք քացախով սպունգ մը լեցնելով, զոսպայի շլթի կապելով
30 մատուցին անոր բերանը։ Ուստի Յիսուս երբ քացախն առաւ, ըսաւ, Ա-ւարտեալ է՛։ Եւ գլուխը ծռելով ետ տուաւ հոգին։
31 Իսկ Հրեայք, որովհետև ուրբաթ էր, մի գուցէ մարմինները խաչին վրայ մնային մինչև շաբաթ, քանզի այն շաբաթը մեծ օր էր, աղաչեցին Պիղատոսի խորտակել անոնց սրունքը, և վեր-
32 ցնել. Ուստի զինուորները եկան, և առջինին սրունքը խորտակեցին, նաև
33 միւսինը՝ որ անոր հետ խաչ եւած էր։ Բայց երբ եկան Յիսուսի և տեսան որ արդէն մեռած էր, անոր սրունքը չը-
34 խորտակեցին։ Այլ զինուորներէն մին գեղարդով խոցեց անոր կողը, և վազ-
35 վազակի եղաւ արիւն և ջուր։ Ու՛ն որ տեսաւ՝ վկայեց, և անոր վկայութիւնը ճշմարիտ է, և ինք գիտէ Թէ ճշմարիտ կ'ըսէ, որ և դուք հաւատաք։
36 Բանզի այս բաներն եղան որ կատարուի գրուածքն Թէ Անոր ոսկրը պիտի
37 չրնկանի։ Եւ դարձեալ ուրիշ գրուած մը կ'ըսէ Թէ Պիտի նային անոր զոր խոցեցին։
38 Ա՛յնուհետև Յովսէփ Արիմաթացի, որ Յիսուսի աշակերտ էր, բայց ի ծածուկ առ ահին Հրէից, խնդրեց Պիղատոսէ հրաման վերցունել Յիսուսի մարմինը. և Պիղատոս հրաման տուաւ. ուստի եկաւ և վերցուց Յիսուսի մար-
39 մինը։ Նիկոդեմոս որ յառաջագոյն գիշերոյն եկած էր առ Յիսուս, և բերաւ զմուռս և հալուխի
40 խառնուրդ իբր հարիւր լիտր։ Եւ առին Յիսուսի մարմինը և պատեցին զնա բնկօք կտաւներու մէջ, ինչպէս
41 Հրեայք սովոր են թաղել։ Եւ այն տեղ ուր խաչուեցաւ՝ կար պարտէզ, և պարտիզին մէջ նոր գերեզման, ուր բնաւ
42 մարդ դրուած չէր։ Հրէից ուրբաթին համար հոն դրին զՅիսուս, քանզի մօտ էր գերեզմանը։

## Գլ. Ի

1 Եւ միաշաբաթի օրը Մարիամ Մագդաղենացի առաւօտուն յառաջ քան լուսանալը կու գայ գերեզմանը, և կը
2 տեսնէ քարը վերցուած գերեզմանէն։ Ետոյ կը վազէ կու գայ առ Սիմոն Պետրոս և առ միւս աշակերտն զոր կը սիրէր Յիսուս, և կ'ըսէ անոնց, Վեր-ցուցին Տէրը գերեզմանէն, և չենք գի-
3 տեր ուր դրին զնա։ Ուստի ելաւ Պետրոս և միւս աշակերտը, և կու գային
4 գէպ ի գերեզմանը։ Եւ երկոքին կը վազէին ի միասին. և միւս աշակերտը

վազելով գան զԻեսուա արագ, եկաք
5 Նախ զերեզմանը, եւ ծռնելով նայեցաք, և տեսաք որ կաւաները կը կեր-
6 նային, բայց ներս չմտաք։ Հասաք և Սիմոն Պետրոս, որ անոր հետևէն կու գար, և մտաք զերեզմանը, և տեսաք
7 կաւաները որ հոն կը կերնային. եւ վաշխանակը որ անոր գլուխն էր՝ չեն կաւաներուն հետ չէր, այլ ուրոյն ծալ-
8 ուած ի մի կողմն։ Ապա ետև ներս մտաւ և միւս աշակերտը որ յառաջագոյն եկած էր զերեզմանը, տեսաւ և
9 հաւատաց։ Քանզի դեռ չէին գիտեր գիրը, թէ պարտ էր նմա յարուներն
10 յառնել։ Ուստի աշակերտները գացին դարձեալ առ իրենաս։
11 Բայց Մարիամ գերեզմանին դուրսը կեցած էր և կու լար, և երբ կու լար,
12 ծռնեցաւ նայեցաւ դէպ ի գերեզմանը. եւ տեսաւ երկու հրեշտակ ի սպիտակս որ նստած էին, մին՝ ի գլուխ, և միւսն՝
13 յանուսից, ուր եղած էր Յիսուսի մարմինն։ Եւ անոնք ըսին անոր, Կնոջի՛ կու լաս, կին դուս Ըսաւ անոնց, Վասն զի վերցուցին Տէրս, և չեմ գիտեր ուր
14 գրին զնաս։ Երբ զայս ըսաւ, դարձաւ ի թիկունս և տեսաւ զՅիսուս որ կեցած էր, և չէր գիտեր թէ Յիսուս էր։
15 Յիսուս ըսաւ անոր, Կին դուս, ընդի՞ր կու լաս, զո՞վ կը խնդրես։ Նա կարծելով թէ պարտիզպանն էր, ըսաւ անոր, Տէր, եթէ դուն վերցուցիր զնա,
16 ըսէ ինձ, ո՞ր գրիր զնաս, որ ես առնեմ զնաս Յիսուս ըսաւ անոր, Մարիամ։ Եւ նա դարձաւ և ըսաւ անոր
17 [Եբրայեցերէն], Ռաբբունի, որ կը նշանակէ վարդապետ։ Յիսուս ըսաւ անոր, Մի դպչիր ինձ, քանզի դեռ եղած չեմ առ Հայր իմ. այլ գնա եղբայրներուս և ըսէ անոնց, Ես կ'ելլեմ
18 առ Հայր իմ և առ Հայր ձեր, և առ Աստուած իմ և Աստուած ձեր։ Մարիամ Մագդաղենացի եկաւ և պատմեց աշակերտներուն թէ տեսաւ Տէրը,
19 և թէ այն բաներն ըսաւ անոր։ Եւ նոյն օրը միաշաբաթի երեկոյին, մինչ առ աշին չբեկից փակուած էին
20 դրուռնք ուերգոյն ուր ժողովել էին աշակերտք, Յիսուս եկաւ և կեցաւ ի մէջի, և ըսաւ անոնց, Խաղաղութիւն ընդ ձեզ։ Եւ զայս ըսելով ցուցուց ա-
21 նոնց իր ձեռուընները և կողը։ և աշակերտանները ուրախացան երբ տեսան Տէրը։ Եւ Յիսուս դարձեալ ըսաւ անոնց, Խաղաղութիւն ընդ ձեզ. ինչպէս
22 Հայրը զրկեց զիս, և ես կը զրկեմ զձեզ։ Եւ զայս ըսելով փչեց ՚ի վրանոնց, և ըսաւ անոնց, Առէք Հոգի
23 Սուրբ։ Որոց թողուք զմեղս՝ թողուած ըլլայ անոնց. և որոց բռնէք՝ բռնուած ըլլայ։
24 Բայց երկոտասաններէն մին, Թովմաս, որ Երկուորեակ կը կոչուէր, չէր
25 անոնց հետ, երբ Յիսուս եկաւ։ Ուստի միւս աշակերտները կ'ըսէին անոր Թէ Տեսանք Տէրը։ Եւ նա ըսաւ անոնց, Եթէ չտեսնեմ անոր ձեռաց վրայ բուեռներուն նշանը, և չմխեմ մատս բուեռներուն տեղը, և չմխեմ ձեռքս անոր կողը, չեմ հաւատար։
26 Եւ ութ օր ետքը դարձեալ աշակերտները ներսն էին, և Թովմաս անոնց հետ։ Եկաւ Յիսուս, մինչ դուռները գոց էին, և կեցաւ ի մէջի և ըսաւ, Խաղաղութիւն ընդ ձեզ։
27 Յետոյ ըսաւ Թովմասի, Բեր մատդ հոս և տես ձեռուընես, և բեր ձեռքդ և մխէ կողս, և մի ըլլար անհաւատ, այլ հա-
28 ւատացեալ։ Եւ Թովմաս պատասխան տուաւ և ըսաւ անոր, Տէր իմ և Աստուած իմ։ Յիսուս ըսաւ անոր, *Որովհետև տեսար զիս, հաւատացիր. երանի անոնց որ տեսած չեն և կը հաւատան։
30 Եւ Յիսուս իր աշակերտներուն առջև շատ նշաններ որ գրուած չեն այս գրքին մէջ. Բայցասոնք գրուեցան, որ հաւատաք թէ Յիսուս է Քրիստոսն, Աստուծոյ Որդին, և որ հաւատալով կեանք ունենաք յանուն նորա։

*Ոնոյ. Թովմաս, որովհետև.



ԳԼ. ԻԱ

1 Յետ այսորիկ Յիսուս դարձեալ յայտնեց զինք իր աշակերտներուն Տիբերիոյ ծովուն եզերքը, և յայտնեց այս-
2 պէս։ Էին ի միասին Սիմոն Պետրոս և Թովմաս, կոչեցեալն Երկուորեակ, և Նաթանայէլ որ էր ի Կանայ Գալիլեացւոց, և Զեբեդեասի որդիքը և այլ եւս
3 երկու ք աշակերտներէն։ Սիմոն Պետրոս ըսաւ անոնց, Կ'երթամ ձուկն որսալ։ Ըսին անոր, Մենք ևս կու գանք քեզի հետ։ Ելան և խոկոն մտան նաւը, և այն գիշեր չբռնեցին բան մը։
4 Եւ երբ առաւօտ եղաւ, Յիսուս կեցած էր յեզը ծովուն, բայց աշակերտները չէանգցան Թէ Յիսուս էր։ Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Մանկտնք, ունի՞ք ուտելու բան մը։ Պատասխան տուին անոր, Ոչ։ Եւ ըսաւ անոնց, Նաւին աջ
6 կողմը նետեցէք ուռկանը և պիտի գտնէք։ Ուստի նետեցին, և ձկանց բազմութենէն այլ ևս չէին կրնար ձգել
7 զայն։ Ապա Աստուած աշակերտը զոր Յիսուս կը սիրէր՝ ըսաւ Պետրոսի, Տէր է այն։ Իսկ Սիմոն Պետրոս երբ լսեց Թէ Տէր է, վրան առաւ վերարկուն, քանզի
8 մերկ էր, և նետեց զինք ծովը։ Եւ միւս աշակերտները նաւակով եկան, քանզի ցամաքէն հեռու չէին, միայն իրր երկու հարիւր կանգուն, և կը ձգ-
9 էին ուռկանը ձուկերով։ Եւ երբ ցամաք եջան, տեսան կրակ վառած հոն, և վրան ձուկ դրուած և հաց։ Յիսուս
10 ըսաւ անոնց, Բերէք այդ ձուկերէն
11 զորս հիմա բռնեցիք։ Սիմոն Պետրոս *մտաւ նաւը, և ցամաք քաշեց ուռկանը, լի հարիւր յիսուն և երեք մեծամեծ ձկամբ. և թէպէտ այնչափ բան կար, չպատառեցաւ ուռկանը։
12 Յիսուս ըսաւ անոնց, Ակէք ճաշեցէք։ Եւ աշակերտներէն ոչ մին կը համարձակէր հարցունել անոր Թէ Դուն ո՞վ ես, քանզի գիտէին Թէ Տէրն էր։
13 Ապաան Յիսուս եկաւ և առաւ հացը
14 և տուաւ անոնց, նոյնպէս և ձուկը։ Այս երրորդ անգամ էր որ Յիսուս երևեցաւ իր աշակերտներուն մեռելներէն յառնելէն ետքը։
15 Եւ երբ ճաշեցին, Յիսուս ըսաւ զՍիմոն Պետրոս, Սիմոն Յովհաննու, կը սիրե՞ս զիս աւելի քան զդուսս։ Նա ըսաւ անոր, Այո, Տէր, դուն գիտես Թէ կը սիրեմ զքեզ։ Ըսաւ անոր, Արածեա
16 զգառինս իմ։ Դարձեալ երկրորդ անգամ ըսաւ անոր, Սիմոն Յովհաննու, կը սիրե՞ս զիս։ Ըսաւ անոր, Այո, Տէր, դուն գիտես Թէ կը սիրեմ զքեզ։ Ը-
17 սաւ անոր, Արածեա զոչխարս իմ։ Ըսաւ անոր երրորդ անգամ, Սիմոն Յովհաննու, կը սիրե՞ս զիս։ Տրտմեցաւ Պետրոս որ երեք անգամ ըսաւ անոր Թէ կը սիրե՞ս զիս։ և ըսաւ անոր, Տէր, դուն գիտես զամենայն. գիտես Թէ կը սիրեմ զքեզ։ Ըսաւ անոր Յիսուս, Ա-
18 րածեա զոչխարս իմ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզ, որ մինչ մանկագոյն էիր, անձամբ կը կապէիր գօտի, և կ'երթայիր ուր և կը կամէիր. բայց երբ ծերանաս, ձեռուըներդ պիտի բանես վրը, և ուրիշը պիտի կապէ քեզ գօտի, և պիտի տանի ուր ոչ կամիս։
19 Զայս ըսաւ՝ ցուցնելով Թէ ինչ մահով պիտի փառաւորէր զԱստուած. և երբ ըսաւ զայս, ըսաւ անոր, Եկու իմ ե-
20 տևէս։ Եւ Պետրոս դարձաւ և տեսաւ աշակերտը զոր Յիսուս կը սիրէր, որ եւսկէն կ'երթար, որ և ընթրեաց առին անոր լանջքոյ վրայ ինկած և ըսած էր, Տէր, ո՞վ է որ պիտի մատնէ զքեզ։
21 Պետրոս տեսնելով զնա ըսաւ Յիսուսի,
22 Տէր, իսկ սա ի՞նչ պիտի ըլլայ։ Յիսուս ըսաւ անոր, Եթէ ես կամիմ որ կենայ գա մինչև ես գամ, զի՞ փոյթ է քեզ։
23 դուն եկու իմ ետևէս։ Եւ այս խօսքը ելաւ եղբայրներուն մէջ Թէ այն աշակերտը պիտի չմեռնէր. սակայն Յիսուս չըսաւ անոր Թէ Պիտի չմեռնի, այլ Եթէ կամիմ որ կենայ գա մինչև ես գամ, զի՞ փոյթ է քեզ։
24 Այս է աշակերտը որ կը վկայէ առնց համար, որ և գրեց առնք. և

*Յոյն. եջաւ.

գիտենք թէ ճշմարիտ է անոր վկայու-
25 թիւնը։ Կան նաև ուրիշ շատ բաներ
զոր ըրաւ Յիսուս, որ եթէ գրուած
էին մի ըստ միոջէ, կարծեմ թէ և ոչ
աշխարհս բաւական էր տանել զգիրսն
որ գրուէին, Ամէն։

# ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Առաջին պատմութիւնն ըրի, ով Թէո-
փիլէ, այն ամէն բաներուն վրայ զոր
Յիսուս սկսաւ ընել և ուսուցանել,
2 Մինչև այն օրը որ ի ձեռն Հոգւոյն
Սրբոյ առաւ պատուէր առաքելոց
3 զոր ընտրած էր, և համբարձաւ։ Ո-
րոց ցուցաց զինք կենդանի յետ չար-
չարանաց իւրոց շատ ապացոյցներով,
քառասուն օր անոնց երեւնալով և խօ-
սելով Աստուծոյ Թագաւորութեան
4 վրայ։ Եւ մինչ անոնց հետ *կը գտնուէր,
կը պատուիրէր անոնց չհեռանալ Ե-
րուսաղէմէ, այլ սպասել Հօրը խոստ-
5 մանց զոր լսեցիք, ըսէր, ինձ։ Զանա-
զի արդարև Յովհաննէս ջրով մկրտեց,
բայց դուք մասի ոչ շատ օրեր ետքը
6 պիտի մկրտուիք Հոգւով Սրբով։ Եւ
անոնք մինչ ժողովեալ էին, կը հար-
ցունէին անոր և կ'ըսէին, Տէր, այս
ժամանակին մէջ պիտի հաստատես
գաձեալ իսրայէլի Թագաւորութիւնը։
7 Եւ ըսաւ անոնց, Ձեզ չվերաբերիր գիտ-
նալ ժամերը և ժամանակները զոր
Հայր գրաւ իւր իշխանութեան մէջ։
8 Բայց երբ Հոգին Սուրբ գայ ձեր վրայ,
զօրութիւն պիտի առնուք, և ինծի
համար վկաներ պիտի ըլլաք Երուսա-
ղէմ և բոլոր Հրէաստան և ի Սամարիա
9 և մինչև ի ծագս երկրի։ Եւ ասոնք ը-
սելով, մինչ անոնք կը նայէին, համ-
բարձաւ, և ամպ մը առաւ զնա անոնց
10 աչքերնէրէն։ Եւ մինչ անոնք պչուցեալ
կը նայէին յերկինս անոր երթալուն,

*Կամ հաց կ'ուտէր

ահա երկու արք կեցան անոնց քով
11 սպիտակ հանդերձներով, Որ և ըսին,
Արք Գալիլեացիք, ընդ ի՞նչ կեցած կը
նայիք յերկինս։ այս Յիսուս որ համ-
բարձաւ ձեզնէ յերկինս՝ պիտի գայ այս-
պէս ինչպէս տեսաք անոր երթալն
12 յերկինս։ Անառեն դարձան Երուսա-
ղէմ Ձիթենեաց անուանեալ լեռնէն,
որ իրր չաբաթ օրուան ճանապարհա-
13 մատ է Երուսաղէմ։ Եւ երբ մտան
*տղաքը, երան վերնատունը, ուր կը
բնակէին Պետրոս և Յակոբոս, Յովհան-
նէս և Անդրէաս, Փիլիպպոս և Թով-
մաս, Բարթուղիմէոս և Մատթէոս,
Յակոբոս Ալփեան և Սիմոն Նախանձա-
14 յոյզ և Յուդա *Յակոբեան։ Ասոնք ա-
մէնքը միաբանութեամբ կ'ընէին միշտ
աղօթք և ազաչանք կանանց և Յիսու-
սի մօրը Մարիամայ հետ, և անոր եղ-
բայրներուն հետ։
15 Եւ այն օրերը երբ Պետրոս աշա-
կերտներուն մէջ, ըսաւ իրր հարիւր քը-
սան հոգւոյ բազմութիւն կար ժողով-
16 ուած հոն, և ըսաւ, Արք եղբարք, պարտ էր
կատարել գրոյն զոր Հոգին Սուրբ ը-
սաւ յառաջագոյն Դաւիթի բերնով Յու-
դայի համար որ ղեկուցաւ բռնողներուն
17 առաջնորդ եղաւ։ Քանզի մէզի հետ էր
մեր Թուոյն մէջ, նաև այս պաշտօնէն
18 ունէր բաժին։ Սա անիրաւութեան
վարձով տապան ազարակ, և գլխիվ-
վար կքնալով ճեղքեցաւ ընդ մէջ, և

*Ա.յնհետև՝ Յակոբոսի եղբայրն ըստ ընտ-
հանուր լուծիւոց



անոր բոլոր փորոտիքը դուրս թափե-
19 ցաւ։ Եւ այս յայտնի եղաւ Երուսաղէմ
բնակողներէն ամէնուն, մինչև իրենց
լեզուաւ այն ագարակին անունը դրու-
եցաւ Ակէլդամայ, այսինքն Արեան
20 ագարակ։ Քանզի Սաղմոսաց գրքին մէջ
գրուած է թէ Անոր բնակարանն աւե-
րակ ըլլայ, և անոր մէջ բնակող չըլ-
լայ, և անոր պաշտօնն առնու ուրիշը։
21 Ուրեմն պէտք է որ այս մարդերէն որ
մեր հետ եղան այն բոլոր ժամանակը
որ Տէր Յիսուս մտաւ և ելաւ մեր մէջ,
22 Յովհաննու մկրտութենէն սկսեալ մին-
չև այն օրը որ համբարձաւ մեզնէ, ա-
նոնցմէ մին մեզի հետ վկայ ըլլայ անոր
23 յարութեանը։ Եւ երկու հոգի կեցու-
ցին, զՅուստոս որ Բարսաբաս կը կոչ-
ուէր որ և Յուստոս անուանեցաւ, և
24 զՄատաթիա։ Եւ աղօթք ընելով ըսին,
Դուն, Տէր, սրտագէտ ամենուն, այս
երկուքէն մին զոր ընտրեցիր՝ յայտնի
25 դարձ Որ առնու այս պաշտօնին և ա-
ռաքելութեան վիճակը, որմէ ինկաւ
26 Յուդա երթալ իւր տեղը։ Եւ անոնց
հարց ընկեցին վիճակ, և վիճակը ե-
լաւ Մատաթիային, և նա համարուե-
ցաւ ընդ միառասան առաքեալս։

## ԳԼ. Բ.

1 Եւ երբ հասաւ Պենտեկոստէի օրը, ա-
2 մէնքն էին միաբան ի միասին։ Եւ յան-
կարծակի ձայն՝ եղաւ յերկինից իբրև
սաստկացուցիչ հողմոյ, և լցուց բոլոր
3 տունը ուր նստած էին։ Եւ բաժնուած
լեզուներ երեւեցան անոնց որպէս թէ
ի հրոյ, և նստաւ իւրաքանչիւրին վը-
4 րայ։ Եւ ամէնքը լցան Հոգւով Սրբով,
և սկսան ուրիշ լեզուներ խօսել, ինչ-
պէս որ Հոգին կու տար անոնց խօսել։
5 Եւ երուսաղէմի մէջ բնակած Հրեաներ
կային, երկիւղած մարդիկ երկնից տակ
6 գտնուած բոլոր ազգերէն։ Եւ երբ այս
ձայնը եղաւ, բազմութիւնն ի միասին
եկաւ և խռովեցաւ, քանզի կը լսէին
որ անոնք կը խօսէին անոնց իւրաքան-
7 չիւրին լեզուաւ։ Ամէնքը կը սքանչա-
նային և կը զարմանային և կ'ըսէին ի-
րարու, Ո՞չ ապաքէն ասոնք ամէնքը
8 որ կը խօսին Գալիլեացի են։ Եւ ինչ-
պէս կը լսենք մենք իւրաքանչիւր մեր
9 լեզուաւ յորում ծնած ենք։ Պարթեաք
և Մարք և Եղամացիք, և անոնք որ
կը բնակին ի Միջագետս, և Հրէաս-
տան և Կապադովկիա, Պոնտոս և Ա-
10 սիա, Փռիւգիա և Պամփիւլիա, Եգիպ-
տոս և կիւրենէի մօտ Լիբէացւոց կող-
մերը, նաև Հռովմայեցի պանդուխտ-
11 ներ, Թէ Հրեայ և Թէ նորահաւատ,
Կրետացիք և Արաբացիք, կը լսենք ա-
նոնցմէ որ մեր լեզուներով կը խօսին
12 զմեծամեծն Աստուծոյ։ Կը սքանչա-
նային ամենքն և տարակուսած
կ'ըսէին իրարու, Ի՞նչ պիտի ըլլայ սա։
13 Եւ ուրիշներ ծաղր ընելով կ'ըսէին Թէ
Անոնք նոր գինովցած են։
14 Բայց Պետրոս կայնելով միասանից հետ
վերցուց ձայնը և խօսեցաւ անոնց,
Արք Հրէաստանեայք և դուք ամենե-
քին որ կը բնակիք Երուսաղէմ, այս
յայտնի ըլլայ ձեզ, և ունկն դրէք խօս-
15 քերուս։ Քանզի ասոնք ոչ Թէ արբեալ
են, ինչպէս դուք կը կարծէք, քանզի
16 դէ՛ օրուան երրորդ ժամն է։ Այլ այս
այն է որ Յովէլ մարգարէին բերնով
17 բանեցաւ, Եւ պիտի ըլլայ որ վերջին
օրերը, կ'ըսէ Աստուած, իմ Հոգիէս
պիտի թափեմ ամէն մարմնոյ վրայ, և
որդիք ձեր և դուստերք ձեր պիտի մար-
գարէանան, և երիտասարդք ձեր տե-
սիլներ պիտի տեսնեն, և ծերք ձեր ե-
18 րազներ պիտի տեսնեն։ Եւ իմ ծառա-
յներուս վրայ և աղախիններուս վրայ
ևս այն օրերը պիտի թափեմ իմ Հո-
19 գիս, և պիտի մարգարէանան։ Եւ ցոյ-
ցեր պիտի տեսնեմ, և նշաններ պիտի ցուցնեմ,
և վարը յերկրի՝ նշաններ, արիւն և
20 հուր և մառախուղ ծխոյ։ Արեգակը
պիտի դառնայ ի խաւար, և լուսին՝
յարիւն, գնա՛ Տէրոջը մեծ և երեւելի
21 օրը չհասած։ Եւ պիտի ըլլայ որ ամէնը
որ Տէրոջը անունը կոչէ՝ պիտի փրկուի։
22 Արք Իսրայէլացիք, լսեցէք այս խօս-
քերը։ զՅիսուս Նազովրեցի Աստուծմէ

ձեզի ցուցուած մարդ մը զօրութեամբըք և հրաշիւք և նշաններով զոր Աստուած բրաւ անոր ձեռօք ձեր
23 մէջ, ինչպէս դուք իսկ գիտէք, Զնա որ Աստուծոյ որոշեալ խորհրդով և կանխագիտութեամբ մատնուեցաւ, առաք և *անօրէններու ձեռօք պատ-
24 նեցիք և փայտի վրայ գամելով. Զոր Աստուած յարոյց քակելով մահուան ցաւերը, քանզի հնար չէր որ բռնուէր
25 նա անկէ. Քանզի Դաւիթ կ'ըսէ վասն նորա, Տեսանեայն ժամ կը տեսնէի Տէրը իմ առջեւս, քանզի աջ կողմն է,
26 որ չսասանիմ. վասն որոյ ուրախ եղաւ սիրտս, և ցնծաց լեզուս նաև
27 մարմինս պիտի հանգչի յուսով. վասն զի †գերեզմանին մէջ պիտի չթողուս իմ անձս, և քու Սրբոյդ կա պիտի չը-
28 տես տեսնել ապականութիւն, կենաց ճամբաները ծանչցուցիր ինձ. քու երեսիդ ուրախութեամբ պիտի լնուս
29 զիս։ Արք եղբարք, արժան է ձեզ հաստատակ բսել Դաւիթ նահապետին համար, թէ մեռաւ և թաղեցաւ, և անոր գերեզմանը մեր մէջ է մինչև այս
30 օր։ Արդ որովհետև մարգարէ էր նա և գիտէր թէ Աստուած հաստատ երդում ըրաւ անոր, թէ անոր երկիամանց պտղէն մարմնով կոդմանէ պիտի յարուցանէր զԲրիստոս որ անոր ա-
31 թոռն նստէր, ինչ կանխատեսութեամբ խօսեցաւ Բրիստոսի յարութեան համար, թէ անոր անձը չթողուեցաւ գերեզմանը, և անոր մարմինը չտեսաւ
32 ապականութիւն։ Աստուած յարոյց զայս Յիսուս, որոյ մեք ամենքին վկայ կայ եմք։ Ուստի Աստուծոյ աջ ձեռօք բարձրանալով, և Հոգւոյն Սրբոյ խոս-
33 տումն առնելով ի Հօրէ՝ սփռեց զայս, զոր դուք հիմա կը տեսնէք և կը լսէք։
34 Դաւիթ չելաւ յերկինս, բայց կ'ըսէ, Տէրը բսաւ իմ Տէրոջս,
35 Նստէ իմ աջ կողմս, Մինչև դնեմ քու թշնամիներդ պատուանդան ոտից քոց։
36 Ուստի բոլոր Իսրայէլի տունը թող գիտնայ ճշմարտապէս, որ Աստուած բրաւ զնա և՝ Տէր և՝ Օծեալ, զայն Յիսուս զոր դուք խաչեցիք։

37 Եւ լսելով զայսցին էրինդ սրտերուն մէջ, և բսին Պետրոսի և միւս առաքելոց, Արք եղբարք, ի՞նչ բընենք։ Եւ
38 Պետրոս բսաւ անոնց, Ապաշխարեցէք, և ձենէ իւրաքանչիւր ոք թող մկրտուի յանուն Յիսուսի Բրիստոսի ի թո-
39 ղութիւն մեղաց, և պիտի ընդունիք Հոգւոյն Սրբոյ պարգեւը։ Քանզի խոստումն ձեզ է և ձեր որդւոց, և ամենուն որ հեռու են, զորս միր Տէր Աս-
40 տուածը պիտի կոչէ։ Եւ ուրիշ շատ խօսքերով վկայութիւն կու տար, և կը յորդորէր զնոսա և կ'ըսէր, Աչխատեցէք ազատիլ ատկէ ժամանակիս ծուռ
41 ցեղէն։ Եւ անոնք որ իւրմէ ընկալան անոր խօսքերը՝ մկրտուեցան. և այն օր իրը
42 երեք հազար անձինք աւելցան։ Եւ միշտ զնեա էին առաքելոց վարդապետութեան, և միաբանութեան, և հացը բեկանելու և աղօթից։

43 Եւ ամէն մարդու վրայ ահ իննկաւ. և առաքելոց ձեռօք շատ հրաշներ և
44 նշաններ կը գործուէին։ Եւ բոլոր հաւատացեալներն էին ի միասին, և ա-
45 նոնց ամէն բանն հասարակաց էր։ Եւ իրենց առոգանքը և ինչ որ ունէին կը վաճառէին, և անոնց գինը կը բաժնէին ամենուն, որու որ բան մը պէտք
46 էլար։ Եւ ամէն օր միաբանութեամբ կը յամախէին տաճարը, և առանին կը բեկանէին հացը, և իրենց կերակուրը կ'ուտէին ուրախութեամբ և միամտու-
47 թեամբ սրտի։ ԶԱստուած կ'օրհնէին, և ունէին շնորհս բոլոր ժողովրդեան առջեւ։ և Տէրն օր բսաւ օրէ կը յաւելու փրկուածներն յեկեղեցին։

## Գլ. Գ

1 Արդ Պետրոս և Յովհաննէս աղօթից իններորդ ժամուն կ'ելլէին տաճարը։
2 Եւ կը բերուէր մարդ մը իր մօրը ո-րովայնէն կաղ, զոր ամէն օր կը դնէին տաճարին Գեղեցիկ կոչուած դրան քով,

*Կամ անօրէն †Կամ գժոխոց



որ տաճարը մտնողներէն ողորմութիւն
3 խնդրէր։ Սա տեսնելով պետրոս և յովհաննէս որ տաճարը պիտի մտնէին, կ'աղաչէր ողորմութիւն առ-
4 նել։ Իսկ Պետրոս յովհաննու հետ դէպ նայեցաւ անոր և բսաւ, Նայ
5 մեզ։ Եւ նա դարձաւ անոնց և կը յու-
6 սար թէ մեզմէ առնու։ անոնցմէ։ Եւ Պետրոս բսաւ, Արծաթ և ոսկի չունիմ, այլ ինչ որ ունիմ՝ զայն կու տամ քեզ. յանուն Յիսուսի Բրիստոսի Նազով-
7 րեցւոյ կաց և քալէ։ Եւ անոր աջ ձեռքէն բռնեց վերցուց զնա, և իսկոյն անոր ոտից թաթերը և կոճերը զօրացան։
8 Եւ վեր ցատկելով կանգնեցաւ և կը քալէր, և անոնց հետ տաճարը մտաւ քալելով և վազվզելով
9 և օրհնելով զԱստուած։ Եւ բոլոր ժողովուրդը տեսաւ զնա որ կը քալէր և
10 կ'օրհնէր զԱստուած։ Եւ կը ճանչնային թէ նա էր, որ ողորմութեան համար տաճարին Գեղեցիկ դրան քով կը նըս-տէր. և զարմանօք և սքանչութեամբ լցան այն բանին համար որ եղաւ անոր։
11 Եւ մինչդեռ *նա յարած էր Պետրոսի և Յովհաննու, բոլոր ժողովուրդը զարմացած դիմեցին անոնց քով
12 ի սրահն որ կը կոչուէր Սողոմոնի։ Զայս տեսնելով Պետրոս պատասխան տուաւ ժողովրդեան, Արք Իսրայէլացիք, ընդէ՞ր զարմացած էք ատոր վրայ, կամ ընդէ՞ր պըտըտիլ կը նայիք մեզ, որպէս թէ մենք մեր զօրութեամբ կամ բարեպաշտութեամբ տուած ենք ա-
13 ստր քալել։ Աստուած Աբրահամու և Իսահակայ և Յակոբայ, մեր հայրերուն Աստուածը, փառաւորեց †զՈրդի իր զՅիսուս, զոր դուք մատնեցիք, և ու-րացաք Պիղատոսի առջեւ, երբ նա վճռ-
14 ուեց արձակել, բայց դուք ուրացաք զՍուրբն և զԱրդարն, և խնդրեցիք
15 շնորհել ձեզ մարդասպան մը։ Եւ ըս-պաննեցիք կենաց առաքինորդը, զոր Աստուած յարոյց մեռելներէն, որուն

*Ոմանք այն բժիշկուած կաղը
†Կամ զծառայն

16 մեք վկայ եմք։ Եւ անոր անունը հաւատով, անոր անունը հաստատեց զնա, զոր դուք կը տեսնէք և գիտէք. և այն հաւատքը որ անով է այս ա-ողջութիւնը տուաւ անոր ձեր ամե-
17 նուն առջեւ։ Եւ հիմա, եղբայրներ, գիտեմ որ անգիտութեամբ բրիք,
18 ինչպէս ձեր իշխաններն ևս։ Բայց Աստուած ինչ որ կանխաւ իր բոլոր մարգարէներուն բերնով յայտնած էր Բրիստոսի չարչարանքն վրայ, այսպէս
19 կատարեց։ Ուստի ապաշխարեցէք և դարձէք, որ ձեր մեղքերը ջնջուին. Որպէս զի սրտիցնաց ժամանակները գան Տէրոջը երեսէն, և զրկէ զՅիսուս Բրիստոս առաջուց *ձեզի քարոզուած.
21 Զոր պարտ է երկինից ընդունել մինչև ի ժամանակս հաստատութեան ամենայնի, որոց համար Աստուած ի սկզբանէ հետէ խօսած է իր սուրբ մարգարէներուն բերնով։ †Մովսէս ևս
22 գարձներուն բերնով։ †Մովսէս ևս հայրերուն բսաւ թէ Ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրներէն պիտի հանէ ձեզ մարգարէ մը իրրև զիս. անոր լսեցէք
23 ինչ որ խօսի ձեզ։ Եւ պիտի ըլլայ թէ ամէն որ հոգի որ չլսէ, պիտի
24 կորսուի ժողովրդեան մէջէն։ Եւ բոլոր մարգարէները որ Սամուելէ հետէ խօսեցան՝ խնայուցին այս օրերուն հա-
25 համար եւս։ Դուք էք մարգարէներուն որդիքը և այն ուխտին, զոր Աստուած բրաւ մեր հայրերուն հետ, և բսաւ Աբրահամու, Եւ քու զաւակովդ պիտի
26 օրհնուին երկրի բոլոր ազգերը։ Աստուած իր ‡Որդին յարուցանելով առաջ զրկեց զնա ձեզ օրհնել զձեզ, ձենէ իւրաքանչիւրը իր չարութիւնները դարձնելով։

## Գլ. Դ

1 Եւ երբ անոնք կը խօսէին ժողովրդեան, քահանաները և տաճարին իշ-

*Ոմանք ձեզի համար սահմանուած
†Ոմանք Քանզի Մովսէս
‡Ոմանք Որդին զՅիսուս

խանը և առուկիկեցիք հասան անոնց
2 վրայ, Զայրանալով որ անոնք կը սորվեցունէին ժողովրդեան և կը քարոզէին Յիսուսիս յարութիւն մեռելոց։
3 Եւ ձեռք մեկնին անոնց և բանտը դրին զանոնք մինչև ի վաղիւն, քանզի
4 արդէն երեկոյ էր։ Բայց այն խօսքը լսողներէն շատեր հաւատացին, և մարդոց թիւը եղաւ իրրև հինգ հազար։
5 Եւ եղաւ որ ի վաղիւ անդր ժողովեցան անոնց իշխանները և ծերերը և
6 դպիրներն յերուսաղէմ, Նաև Աննա քահանայապետ և Կայիափա և Յովհաննէս և Ալեքսանդրոս և որ ամենը որ քահանայապետի ցեղէ էին։ Եւ կեցուներով զանոնք ի միջի՝ կը հարցունէին, Ի՞նչ զօրութեամբ կամ ի՞նչ
8 անուամբ ըրիք գուք զայս։ Անտանն Պետրոս Հոգւով Սրբով լցուած բաւ անոնց, Իշխանք ժողովրդեան և ծերք
9 Իսրայէլի, Եթէ մենք այսօր կը քննուինք վասն երախտաւոր մարդոյ մը, Թէ ինչո՛վ բժշկուեցաւ նա,
10 Յայտնի ըլլայ ձեզ ամենուդ և բոլոր Իսրայէլի ժողովրդեան, որ յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ զոր գուք խաչեցիք, Ե՛ զոր Աստուած յարոյց ի մեռելոց, անով կեցած է սա
11 ձեր առջև բժշկուած։ Նա է այն քարը ձեզ շինողներիդ անարգուած, որ
12 եղաւ գլուխ անկեան։ Եւ չկայ այլով ի՛նք փրկութիւն։ քանզի բաց անկէ չկայ այլ անուն երկնից տակ մարդոց մէջ տրուած, որով կարող ըլլանք
13 փրկուիլ։ Իսկ անոնք Պետրոսի և Յովհաննու համարձակութեան նայելով, և իմանալով Թէ ոչխա և աստանց ուսման մարդիկ էին, կը զարմանային։ և ճանչցան Թէ անոնք Յիսուսի հետ էին.
14 Եւ այն բժշկուած մարդը անանկով որ անոնց հետ կեցած էր՝ չէին կրնար ա-
15 ռնոյ դէմ բան մը խօսիլ։ Եւ հրամայելով անոնց դուրս ելլել ժամեն՝ խորհուրդ բրին հետս իրարու հետ, Եւ ըսին, Ի՞նչ բնենք այս մարդոց. քանզի երեւսաղէմի բոլոր բնակչաց յայտնի է Թէ սոսոց ձեռօք երեւելի հրաշք եղաւ, և մենք չենք կրնար ուրանալ։
17 Բայց որպէս զի ժողովրդեան մէջ ևս աւելի չսաբածանի, սաստիկ սպառնանք անոնց այլ ևս չխօսիլ ումիք այն
18 անուամբ։ Եւ կոչելով զանոնք պատուիրեցին անոնց ամենևին չխօսիլ և
19 չսորվեցունել յանուն Յիսուսի։ Բայց Պետրոս և Յովհաննէս պատասխան տուին անոնց և ըսին, Եթէ Աստուծոյ առջև ուղիղ է ձեզ լսել մանուանդ
20 քան Աստուծոյ, դուք դատեցէք։ Վասն զի մենք զոր տեսանք և լսեցինք՝ չենք
21 կրնար չխօսիլ։ Իսկ անոնք դարձեալ սպառնալին եաքը արձակեցին զանոնք, բան մը չգտանելով Թէ ինչպես պատժէին զանոնք ժողովրդեան համար, քանզի ամենքը կը փառաւորէին
22 զԱստուած եղած բանին համար։ Վասն զի աւելի քան քառասնամեայ էր մարդը որոյ վրայ եղաւ այս բժշկութեան նշանը։
23 Եւ արձակուելով եկան առ իւրեանս, և պատմեցին ինչ որ քահանայապետք
24 և ծերք ըսին անոնց։ Եւ անոնք երբ լսեցին, միաբանութեամբ վերցուցին իրենց ձայներն առ Աստուած ըսելով, Ով Տէր, դու ես Աստուած որ սահեցիր զերկինս և զերկիր և զծով և
25 զամենայն ինչ որ ի՛նոսա, Որ խօսեցար բերանով քու ծառայիդ Դաւթի, Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցան մնուտիս։ Թագաւորք երկրի պատրաստ կեցան, և
26 իշխանք ի միասին ժողովեցան Տէրոջը դէմ և անոր Օծեալին դէմ։ Քանզի արդարև [այս քաղաքին մէջ] ժողովեցան քու սուրբ Որդւոյդ Յիսուսի
27 վրայ զոր դուն օծեցիր, Հերովդէս և Պոնտացի Պիղատոս, ազգերուն հետ
28 և Իսրայէլի ժողովրդոց հետ, Ընել ինչ որ քու ձեռքդ և խորհուրդդ առաջուընէ առաջուց որ ըլլար։ Եւ հիմա,
29 տէր, նայէ անոնց սպառնալեացս և շնորհէ քու ծառաներուդ որ բոլոր
30 քրդի, Քու ձեռքդ երկնցունելով բժշկել, և քու սուրբ Որդւոյդ Յիսուսի



անուամբ նշանները և հրաշները գործել։
31 Եւ երբ անոնք ազօթք բրին, շարժեցաւ տեղն ուր ժողոված էին, և ամենքը Հոգւով Սրբով լցան, և կը խօսէին համարձակ Աստուծոյ խօսքը։
32 Եւ հաւատացեալներուն բազմութիւնն ունէր մի սիրտ և մի հոգի. և անոնցմէ ոչ ոք կ'ըսէր իր ստացուածոց վերայ համար Թէ իրը էր, այլ իրենց բոլոր բաներն հասարակաց կը
33 համարէին։ Եւ մեծ զօրութեամբ առաքեալները վկայութիւն կու տային Տէր Յիսուսի յարութեան, և անոնց
34 ամենուն վրայ մեծ շնորհք կար։ Եւ անոնց մէջ կարօտութիւն կրող չկար, վասն զի անոնք որ ագարակներու կամ տուներու տէր էին, կը վաճառէին և
35 վաճառուց գիները կը բերէին, Եւ կը դնէին առաքելոց ոտքը. և իւրաքանչիւր ումիք կը բաժնուէր ըստ իւր կարօտութեան։ Եւ Յովսէս որ առաքեալներէն Բառնաբաս անուանեցաւ, որ կը թարգմանի Որդի մխիթարութեան, Ղեւտացի, Կնդացեամբ Կիպրոս-
37 ցի, Ագարակ մը ունենալով, վաճառեց և սակը բերաւ դրաւ առաքելոց ոտքը։

## Գլ. Ե

1 Բայց մարդ մը Անանիա անուն իւր կընոջը Սափիրայի հետ սեպհական մը
2 վաճառեց։ Եւ անոր գինէն խորհեցաւ, մինչ կինն ևս գիտեր, և մի բաժինը
3 բերաւ դրաւ առաքելոց ոտքը։ Եւ Պետրոս ըսաւ, Անանիա, ընդէ՞ր Սատանան լցուց քու սիրտդ ստել Հոգւոյն Սրբոյ և խորհել սպարակին գնէն։
4 Ո՞չ սպարքեն մինչ կար, քո էր, և մինչ վաճառեցաւ, քու իշխանութեանդ ներքև էր։ ի՞նչ է որ քու սրտիդ մէջ դրիր այդ բանը. ոչ Թէ մարդոց ստեցիր, այլ Աստուծոյ։ Եւ Անանիա այս խօսքերը լսելով ինկաւ և վրայ հոգին. և մեծ ահ ինկաւ ամենուն
6 վրայ որ լսեցին զայս։ Եւ երիտասարդները ելան և պատեցին զնա, և դուրս
7 հանելով թաղեցին։ Եւ երբ իրր երեք ժամ անցաւ, անոր կինը չգիտնալով
8 ինչ որ եղած էր՝ մտաւ ներս։ Եւ Պետրոս ըսաւ անոր, Ըսէ ինծի, ապարանքն այնչափ ծոց վաճառեցիք։ Եւ նա ըսաւ, Այո, այնչափ։ Եւ Պետրոս ըսաւ անոր, Ինչ է այդ որ դուք միաբանեցաք Տէրոջը Հոգին փորձել. ահա այրդ թաղողներուն ոտքը դրան քով են, և
10 զքեզ ևս դուրս պիտի հանեն։ Եւ իսկոյն ինկաւ առ ոտս նորա, և վրայ հոգին. և երիտասարդները մտնելով նեռս գտան զնա մեռեալ, և հանեցին
11 թաղեցին իր երկանը քով։ Եւ մեծ ահ ինկաւ բոլոր եկեղեցւոյն վրայ, և ամենուն վրայ որ լսեցին ասոնք։
12 Եւ առաքելոց ձեռօք շատ նշանները և հրաշները կ'լլային ժողովրդեան մէջ. և ամենքն էին միաբանութեամբ ի սղ-
13 բանին Սողոմոնի։ Եւ ուրիշներէն ոչ ոք կը համարձակէր յարել անոնց, բայց ժողովուրդը կը մեծարէր զ-
14 նոնք։ Եւ Տէրոջը հաւատացեալներն ևս աւելի կը բազմանային, բազմութիւն մարդոց և կանանց։ Այնպէս որ
15 հիւանդները կը հանէին հրապարակները, և պատգարակօք և մահճօք կը դնէին, որ, երբ Պետրոս անցնէր, գոնե անոր հովանին հասնէր անոնց մէյն
16 վրայ։ Եւ շրջակայ քաղաքաց բազմութիւնը կը ժողվուէր Երուսաղէմ, բերելով հիւանդներ և պիղծ ոգիներէ նեղեալներ, որոց ամենքը կը բժշկուէին։
17 Ոտք ելաւ քահանայապետը և ամենքը որ անոր հետ էին սադուկեցւոց աղանդէն, նախանձով լցուած, Եւ մի-
18 խեցին ձեռս յառաքեալս, և գրին բանտը հասարակաց բանտը։ Բայց Տէրոջ հրեշտակը բացաւ գիշերայն բանտին դուռները, և դուրս հանելով զանոնք
20 ըսաւ, Գացէք և տաճարին մէջ կեցէք և խօսեցէք ժողովրդեան կենաց այս
21 բոլոր պատգամները։ Եւ երբ լսեցին զայս, մտան տաճարն առաւօտուն և կը սորվեցունէին։ Իսկ քահանայապետը եկաւ և որ անոր հետ էին, և կո-

չեցին Ժողովն ի մի վայր և Իսրայէլի որդւոց բոլոր ծերակոյսը, և բանար
22 Յոզէ զրկեցին բերել զանոնք, Ել երբ սպասաւորներըն գացին, չգտանելով զանոնք բանտին մէջ՝ դարձան պատմե-
23 ցին, Ել ըսին թէ Աստիճան զգուշութեամբ փակուած գտանք բանտը, և պահապանները դուռներուն առջև կեցած, բայց բանալով մարդ չգտանք
24 ներսը։ Ել երբ Հէ քահանան և տաճարին իշխանը և քահանայապետները լսեցին այս խօսքերը, կը զարմանային անոնց համար թէ ինչ պիտի ըլլար այն։
25 Ել մարդ մը եկաւ պատմեց անոնց թէ Ահա այն մարդիկ զոր բանտ դրիք՝ կեցած են տաճարը և ի՛ւսւսցանեն
26 Ժողովրդեան։ Անսուն իշխանը սպասաւորներով գնաց բերաւ զանոնք առանց բռնութեան, քանզի կը վախնային Ժողովուրդէն, որ չքարկոծուէին։
27 Ել բերին կեցուցին զանոնք յատենի։
28 և քահանայապետն հարցուց անոնց ըսելով, Ոչ ապաքէն ամուսիկ պատուիրեցինք ձեզ որ այս անուամբ չսորվեցունէք։ և ահա լցուցիք զԵրուսաղէմ ձեր ուսմամբ, և այն մարդուն արիւնը կ՚ուզէք բերել մեր վրայ։
29 Պատասխան տուին Պետրոս և Հ-
առաքեալները և ըսին, Առաւել Աստուծոյ հնազանդել պարտ է քան մարդոց։ Մեր հայրերուն Աստուածն յա-
30 րոյց զՅիսուս, զոր դուք փայտէն կա-
31 խելով սպաննեցիք։ Զնա Աստուած իր աջովը բարձրացոյց լինել Առաքինորդ և Փրկիչ, տալ Իսրայէլի ապաշխարու-
32 թիւն և մեզաց թողութիւն։ Ել մենք այս բաներուն համար անոր վկաներ ենք, և Հոգին Սուրբ ևս, զոր Աստուած տուաւ իրեն հնազանդողներուն։
33 Ել անոնք լսելով զայրացան յոյժ, և կը խորհէին սպաննել զանոնք։
34 Ել մարդն մէջ ոտք եւս փարիսեցի մը որոյ անունն էր Գամալիէլ, օրինաց վարպետ, բոլոր Ժողովրդեան առջև պատուաւոր, և հրամայեց առաքեալ մի դուրս հանել առաքեալներ-
35 րը։ Ել ըսաւ անոնց, Արք Իսրայէլա-
36 ցիք, զգուշացէք ձեզ այս մարդոց համար թէ ինչ պիտի ընէք։ Քանզի այս օրերէն առաջ եկաւ Թեւդաս, ըսելով իրեն համար թէ ԷՆԷՒՆ ումն էր, և մարդիկ Թուով չորս հարիւր յաբեցան ի նա. ինք սպանուեցաւ, և այն ամենը որ հնազանդած էին անոր՝
37 ցրուեցան և եղան ոչինչ։ Յետ նորա Յուդա Գաղիլեացին եկաւ աշխարհագրին օրերը, և շատ Ժողովուրդ ձգեց իր կողմը։ Նա ևս կորաւ, և այն ամենը որ հնազանդած էին անոր՝ եղան
38 ցիր և ցան։ Ել հիմա կ՚ըսեմ ձեզ, ի բաց կացէք այդ մարդերէն և թողուցէք անոնց, քանզի եթէ ի մարդկանէ է այդ խորհուրդը կամ գործը,
39 պիտի քակուի. իսկ եթէ Աստուծմէ է, չէք կարող քակել զայդ, գուցէ և
40 աստուածամարտ գտնուիք։ Ել անոնք հաւանեցան անոր, և առաքեալները կոչելով՝ ծեծեցին, և պատուիրելով այլ ևս չխօսել յանուն Յիսուսի, ար-
41 ձակեցին զանոնք։ Ել անոնք Ժողովոյն առջևէն գացին, ուրախանալով որ Տէրոջը անուան համար արժանի եղան ա-
42 նարգուիլ։ Ել ամէն օր տաճարը և տուներու մէջ չէին դադարեր ուսուցանելէ և քարոզելէ զՅիսուս Քրիստոս։

## Գլ. Զ

1 Ել այն օրերը երբ աշակերտներուն բազմացան, *Հելլենացիոց կողմէն արաւնիք եղաւ Եբրայեցւոց դէմ, քանզի ի հանապազօրեայ մատակարարութեան անտես կ՚ըլլային անոնց այրիները։ Ել ե-
2 րկոտասանք հրեղին աշակերտաց բազմութիւնը և ըսին, Չմեծկերը մեզ Աստուծոյ խօսքը թողուլ և սեղաններու
3 ծառայութիւն ընել։ Ուստի, եղբարք, ընտրեցէք ձեզմէ եօթը վկայուած, հոգւով Սրբով և իմաստութեամբ լի եօթն այր, զորս զնենք այս գործին
4 վրայ, Ել մենք պարապինք աղօթից և
5 Աստուծոյ խօսքին պաշտամանն։ Ել այս

*Ա. յԱրձն Հելլենախօս Հրէից



խօսքը հաճոյ եղեւեցաւ բոլոր բազմութեանը առջև. և ընտրեցին զՍտեփանոս, այր լի հաւատով և Հոգւով Սրբով, և զՓիլիպպոս, և զՊրոքորոս, և զՆիկանովրաս, և զՏիմոնիա, և զՊարմենաս և զՆիկողայոս նորահաւատ Անթիոքացի։ Զորս կեցուցին առաքելոց առջև, և աղօթք ընելով ձեռք
7 դրին անոնց վրայ։ Ել Աստուծոյ խօսքը կ՚աճէր, և աշակերտաց թիւը կը բազմանար յոյժ Երուսաղէմ. և քահանաներէն մեծ բազմութիւն կը հնազանդէին հաւատոյն։
8 Ել Ստեփանոս, լի *հաւատով և զօրութեամբ, մեծ հրաշներ և նշաններ
9 կ՚ընէր ժողովրդեան մէջ։ Բայց ոմանք այն ժողովրդանոցէն որ կը կոչուէր Ազատացելոց և Կիւրենացւոց և Ալէքսանդրացւոց, և որք Կիլիկիայէ և Ասիայէ էին, հարց ելան Ստեփանոսի հետ. և չէին կրնար դէմ դնել իմաստութեան և հոգւոյն որով
11 կը խօսէր։ Ել Աստուծոյ հրապարակեցին զանոնք ըսել թէ Մենք լսեցինք զայս հայհոյական խօսքեր կը խօսէր
12 Մովսիսէ և Աստուծոյ դէմ, Ել գրգռեցին Ժողովուրդը և ծերերը և գրագիրները, և անոր վրայ հասնելով բռնեցին զնա և տարին յատեան, Ել կեցուցին սուտ վկաներ, որ կ՚ըսէին, Այս մարդը չդադարիր հայհոյական բաներ խօսելէ սուրբ տեղւոյս և օրինաց դէմ.
14 Քանզի լսեցինք ասիկ որ կ՚ըսէր թէ Այս Յիսուս Նազովրեցի պիտի քակէ այս տեղը, և պիտի փոխէ սովորութիւնները զոր աւանդեց մեզ Մովսէս։
15 Ել տաեսանը նստողներուն ամէնքը երբ անոր նայեցան, տեսան անոր երեսն իբրև հրեշտակի։

## Գլ. Է

1 Անսուն քահանայապետն բսաւ, Աբ-
2 դարև այդ բաներն այդպէ՞ս են։ Ել նա բսաւ, Արք եղբարք և հարք, լսեցէք. Աստուած փառաց երեւեցաւ մեր հօրը Աբրահամու մինչ ի Միջագետս էր, յառաջ քան զբնակել նորա ի Խառան,
3 և բսաւ անոր, Ել քու երկրէդ և քու ազգականներէդ, և եկու այն երկիրը զոր ես պիտի ցուցնեմ քեզ։ Անսուն
4 Քաղդէացւոց երկրէն ելլելով բնակեցաւ ի Խառան. և անոր հօրը մեռնելէն ետքը փոխադրեց զնա այս երկիրն,
5 ուր դուք կը բնակիք այժմ։ Ել սորը մէջ անոր ժառանգութիւն չտուաւ, և ոչ քայլ մի ատեն, բայց խոստացաւ անոր տալ զայս իրեն կալուած, և յետ նորա անոր զաւակին, մինչդեռ որդի
6 չունէր նա։ Ել Աստուած այսպէս խօսեցաւ, Թէ անոր սերունդը պանդխտ պիտի ըլլար օտար երկրի. և պիտի ծառայեցնէին զնա և չարչարէին չորս
7 հարիւր տարի։ Ել այն ազգը որուն պիտի ծառայեն, ես պիտի դատեմ, բսաւ Աստուած, և այնուհետև պիտի
8 ելլեն և պաշտեն զիս այս տեղ։ Ել անոր տուաւ Թլփատութեան ուխտը, և ապա ծնաւ նա զԻսահակ, և Թլփատեց զնա ութերորդ օրը։ Ել Իսահակ զՅակոբ, և Յակոբ՝ երկոտասան նահապետները։
9 Ել նախանձելով Յովսեփայ վաճառեցին յԵգիպտոս. Ել Աստուած անոր հետ էր,
10 բայց Աստուած անոր հետ էր, և փրկեց զնա անոր բոլոր նեղութիւններէն, և տուաւ անոր շնորհք և իմաստութիւն Եգիպտոսի փարաւոն Թագաւորին առջև. և նա իշխան դրաւ զնա
11 Եգիպտոսի և իր բոլոր տան վրայ։ Ել Եգիպտոսի և Քանանու բոլոր երկրին վրայ սով եկաւ և մեծ նեղութիւն, և մեր հայրերը չէին գտներ կերակուր։
12 Ել Յակոբ երբ լսեց թէ ցորեն կը գտնուէր յԵգիպտոս, առաջին անգամ
13 մեր հայրերը զրկեց։ Ել երկրորդ անգամուն Յովսեփ ճանչցուց զինք իր եղբայրներուն. և Յովսեփայ ազգը յայտնի եղաւ փարաւոնի։ Ել Յովսեփ զրկեց և կոչեց իր հայրը զՅակոբ և բոլոր ազգատոհմը, եօթանասունհինգ
15 հոգով։ Ել Յակոբ իջաւ յԵգիպտոս, և մեռաւ ինք և մեր հայրերը.

*Ոմանք չնորհօք

16 Եւ Աբիքեմ ասպուելով դրուեցան այն
գերեզմանը զոր Աբրահամ առած էր
արծաթի գնով Սիւքեմի հօրը Եմմորի
17 որդիներէն։ Եւ երբ մտեցաւ խոսա-
ման ժամանակը, զոր Աստուած երդ-
մամբ խոստացած էր Աբրահամու, Ժո-
ղովուրդն աճեցաւ և բազմացաւ յԵ-
18 գիպտոս, Մինչև ուրիշ թագաւոր ե-
19 լաւ որ չէր ճանչնար զՅովսէփ։ Նա
հնարք նենգեց մեր ազգին դէմ և
չարչարեց մեր հայրերը, ընկեցիկ ը-
նել տալով անոնց ազգային անգամ որ
20 չապրէին։ Այն ժամանակ ծնաւ Մով-
սէս, և Աստուծոյ առջև գեղեցիկ էր,
որ երեք հօրը տունը սնաւ երեք ամիս։
21 Եւ երբ ընկեցիկ եղաւ, փարաւոնի
դուստրը վերցուց զնա, և անոյշ իրեն
22 իբրև որդի։ Եւ Մովսէս վարժեցաւ Ե-
գիպտացւոց բոլոր իմաստութեամբը,
և զօրաւոր էր իր խօսքերով և գոր-
23 ծերով։ Եւ երբ եղաւ քառասնամեայ,
անոր սիրտն բնաւ այցելութիւն ընել
իր եղբայրներուն, իսրայէլի որդւոց։
24 Եւ իսրայէլացիներէն մին հարստահա-
րուած տեսնելով պաշտպանեց, և զըր-
կելոյն վրէժն առաւ պատնէշելով այն
25 եգիպտացին, կը կարծէր Թէ իր եղ-
բայրները պիտի իմանային Թէ Աստուած
անոր ձեռօք ազատութիւն պիտի տար
26 անոնց, բայց անոնք չիմացան։ Եւ ի
վաղիւ անոր հանդիպեցաւ անոնց մին
կը կռուէին, և ատիպեց զանոնք խա-
զաղութիւն ընել ըսելով, Աբդ, դուք
27 եղբարք եք, ընդէ՞ր կը զրկէք զիրար։
Բայց նա որ կը զրկէր ընկերը՝ մերժեց
զնա և ըսաւ, Ո՞վ կացոյց զքեզ մեր
28 վրայ իշխան և դատաւոր։ Կամի՞ս ըս-
պանել զիս, ինչպես սպաննեցիր երէկ
29 եգիպտացին։ Եւ Մովսէս փախաւ այս
խօսքին վրայ, և եղաւ պանդուխտ
Մադիամու երկրին մէջ, ուր ծնաւ
30 երկու որդի։ Եւ երբ քառասուն տա-
րի անցաւ, Սինայ լերան անապատին
մէջ Տէրոջ հրեշտակը երևեցաւ անոր
31 մորենւոյ կրակի բոցով։ Եւ երբ մե-
նաւ Մովսէս, զարմացաւ այն տեսլեան
վրայ, և երբ մտեցաւ զննել, Տէրոջը
32 ձայնը եկաւ անոր, Ես եմ քու հայ-
րերուդ Աստուածը, Աստուած Աբրա-
համու և Աստուած Իսահակայ և Աս-
տուած Յակոբայ։ Եւ Մովսէս դողալով
33 չէր համարձակեր զննել։ Եւ Տէրը ը-
սաւ անոր, Հանի՛ր սանդգ կօշիկները,
քանզի տեղիդ ուր դուն կեցած ես՝
34 սուրբ երկիր է։ Արդարև տեսայ Ժո-
ղովրդեանս չարչարանքը որ յԵգիպ-
տոս, և լսեցի անոնց հեծութիւնը, և
իջայ փրկել զանոնք։ և հիմա եկու
35 զրկեմ զքեզ յԵգիպտոս։ Այն Մովսէս
զոր ուրացան և ք'ըսէին, Ո՞վ կացոյց
զքեզ իշխան և դատաւոր, Աստուած
զրկեց զնա իշխան և փրկիչ ի ձեռն
հրեշտակին որ մորենւոյն մէջ երևե-
36 ցաւ անոր։ Նա հանեց զանոնք հրաշ-
ներ և նշաններ ընելով եգիպտոսի երկ-
րին և կարմիր ծովուն մէջ և անա-
37 պատին մէջ քառասուն տարի։ Այս
Մովսէս է որ բսաւ իսրայէլի որդւոց,
Ձեր Տէր Աստուածը մարգարէ պիտի
յարուցանէ ձեզ ձեր եղբայրներէն իբրև
38 զիս, անոր լսեցէ՛ք։ Այս այն է որ ա-
նապատը ժողովին մէջ էր Սինայ լե-
րան վրայ անոր խօսող հրեշտակին հետ
և մեր հարց հետ, որ կենդանի պատ-
39 գամներ առաւ տալ մեզ։ Որուն մեր
հայրերը չկամեցան հնազանդիլ, այլ
մերժեցին և իրենց սրտերով դարձան
40 յԵգիպտոս։ Եւ ըսին Ահարոնի, Մեզի
աստուածներ շինե՛ որ մեր առջև երթ-
թան. քանզի այն Մովսէս որ հանեց
զմեզ եգիպտոսի երկրէն՝ չենք գիտեր
41 ինչ եղաւ անոր։ Եւ այն օրերը որթ
մը շինեցին, և այն կաց մատուցին
զոհ, և կը զուարճանային իրենց ձե-
42 ռաց գործովը։ Եւ Աստուած էբե՛ս
դարձուց, և թողուց զանոնք պաշտել
երկնից զօրքը. ինչպես գրուած է ի
գիրս մարգարէից, Միթէ՛ անապատին
մէջ քառասուն տարի զոհեր և պա-
տարագներ մատուցի՛ք ինձ, ով Իս-
43 րայէլի տունը։ Եւ Մողոքայ վրանն ա-
ռի՛ք և ձեր Հռեմփա աստուծոյն աս-
տղը, այն պատկերները զոր շինեցի՛ք
անոնց երկրպագութիւն ընելու. և ես



պիտի փոխադրեմ զձեզ Բաբելոնէ ան-
44 դին։ Վկայութեան խորանն անապա-
տին մէջ մեր հայրերուն հետ էր, ինչ-
պես որ Մովսէսի հետ խօսողն հրամա-
յեց, որ շիներ զայն ըստ օրինակին զոր
45 տեսաւ։ Զոր և հարք մեր յաջորդա-
բար առնելով, Յեսուայ հետ բերին զնա
այն ազգերուն կալուածը զորս Աս-
տուած հալածեց մեր հայրերուն առջև.
46 մինչև Դաւթի օրերը, Որ Աստուծոյ
առջև շնորհք գտաւ, և կը խնդրէր
գտնել բնակարան Յակոբայ Աստու-
47 ծոյն։ Եւ Սողոմոն շինեց անոր տուն։
48 Սակայն Բարձրեալը չընակիր ձեռա-
գործ տաճարներու մէջ, ինչպես մար-
49 գարէն կ'ըսէ, Երկինք իմ աթոռս է,
և երկիր իմ ոտիցս պատուհանդանն է.
որպիսի՞ տուն պիտի շինէք ինձ, կ'ըսէ
Տէրը, կամ ի՞նչ պիտի ըլլայ իմ հան-
50 գստեանս տեղը։ Ո՞չ ապաքէն այս ա-
51 մէնը իմ ձեռքս չինած է։ Ով խոստա-
պարանոցներ և սրտով և ականջով
անթլփատք, դուք Հանապազ Հոգւոյն
Սրբոյ հակառակ կը կենա՛ք, ինչպէս
52 ձեր հայրերը՝ նոյնպես դուք։ Մարգա-
բէներէն ո՞րը չհալածեցին ձեր հայրե-
րը, և սպաննեցին զանոնք որ առա-
ջուց պատմեցին այն Արդարոյն գալըս-
տեան համար, որոյ դուք հիմա մատ-
53 նիչները և սպանողներն եղաք։ Դուք
որ օրէնքն առաք հրեշտակներու մա-
տակարարութեամբ, և չպահեցի՛ք։
54 Եւ անոնք լսելով այս բաները կը
ցայրանային իրենց սրտին մէջ և կը
կրճտէին իրենց առամունքն անոր
55 դէմ։ Բայց նա Հոգւով Սրբով լցեալ
նայեցաւ յերկինս և տեսաւ Աստուծոյ
փառքը, և զՅիսուս կանգնած որ Աստուծոյ
աջ կողմը կեցած էր, և բսաւ, Ահա
կը տեսնեմ երկինքս բացուած, և զՈր-
դւոյն մարդոյ Աստուծոյ աջ կողմը կե-
56 ցած, իսկ անոնք մեծաձայն ազաղա-
կելով ականջներնին իրենց և ա-
մէնքը միանգամայն դիմեցին անոր վը-
57 րայ։ Եւ քաղաքէն դուրս հանելով կը
քարկոծէին զնա. և վկաները կը դը-
նէին իրենց հանդերձներն առ ոտս ե-
58 րիտասարդի մը որ կը կոչուէր Սօղոս։
Եւ կը քարկոծէին զՍտեփանոս, որ կ'ա-
59 ղաչէր և կ'ըսէր, Տէր Յիսուս, ընկալ
զոգի իմ։ Եւ ծունր դնելով ազաղա-
կեց բարձրաձայն, Տէր, մեղք մի հա-
մարիր զայս դոյզ։ Եւ զայս ըսելով
ննջեց, և Սօղոս համակից էր անոր
սպանմանը։

## Գլ. Ը

1 Եւ այն օրը մեծ հալածում եղաւ յե-
րուսաղէմ եկեղեցւոյն վրայ, և բոլ-
յոսաքոյց ամէնքը ցրուեցան Հրէաս-
2 տանի և Սամարիայի երկիրները։ Եւ
երկիւղած մարդիկ վերցուցին զՍտե-
փանոս, և մեծ ողբ ըրին անոր վրայ։
3 Բայց Սօղոս չար վնաս կու տար եկե-
ղեցւոյն, տուները կը մտնէր, այր և
կին կը քաշէր, դնել կու տար բանտը։
4 Եւ այն ցրուեալները կը շրջին և կը
5 քարոզէին խօսքը։ Փիլիպպոս ևս Սա-
մարիայի քաղաք մը իջնելով կը քա-
6 րոզէր անոնց զՔրիստոս։ Եւ ժողո-
վուրդները միաբան հաւանութեամբ
մեա կը դնէին Փիլիպպոսի խօսքին՝ լսե-
լով և տեսնելով նշանները զորս կ'ը-
7 նէր։ Վասն զի շատ դիւահարներէ պիղծ
ոգիներ կ'ելլէին մեծաձայն ազաղակե-
8 լով։ Եւ շատ անդամալոյծներ և կա-
ղեր կը բժշկուէին։ Եւ մեծ ուրախու-
9 թիւն եղաւ այն քաղաքին մէջ։ Բայց
կար Սիմոն անուն մարդ մը որ յառա-
ջագոյն մոգութիւն կ'ընէր այն քաղա-
քին մէջ, և կ'ապշեցնէր Սամարացւոց ազգը իրեն համար ըսելով Թէ մեծ
10 ոմն էր։ Որուն մոգերը էին ամէնքը փոքրէն մինչև մեծը, և կ'ըսէին, Սա
է մեծ [կոչուած] զօրութիւնն Աստու-
11 ծոյ։ Շատ ժամանակէ հետէ կախար-
դութիւններով ապշեցուներուն համար
12 զանոնք՝ մտածեր էին անոր։ Բայց
երբ հաւատացին Փիլիպպոսի որ կը քա-
րոզէր Աստուծոյ Թագաւորութեան
և Յիսուսի Քրիստոսի անուան վրայ,
13 կը մկրտուէին արք և կանայք։ Եւ ինքն
ևս Սիմոն հաւատաց, և մկրտուելով

միչա Փիլիպպոսի հետ էր. և անանկ-
լով նշաններըը և մեծ զորութիւններըը
14 որ կ'ըլլային՝ կը զարմանար, իսկ ա-
ռաքեալներըը որ Երուսաղէմ էին, երբ
լսեցին թէ Սամարացիք ընդունած էին
Աստուծոյ խօսքը, զրկեցին անոնց ըս-
15 Պետրոս և Յովհաննէս. Որ իջնելով
աղօթք ըրին անոնց համար որ Սուրբ
16 Հոգին առնուին. Քանզի դեռ անոնց
և ոչ մէկուն վրայ իջած էր, այլ միայն
առած էին միայն Տէր Յիսուսի ան-
17 ուամբ. Անոնոն իրենց ձեռուընները
դրին անոնց վրայ, և Սուրբ Հոգին
18 կ'առնուին. երբ տեսաւ Սիմոն թէ ա-
ռաքելոց ձեռք դնելուն ի վերայ կը
տրուէր Սուրբ Հոգին, տասկ մատոյց
19 անոնց և ըսաւ, Տուէք և ինձ այս իշ-
խանութիւնը, որպէս ալ որու վրայ
ձեռք դնեմ, առնու Սուրբ Հոգին.
20 Բայց Պետրոս ըսաւ անոր, Քու ար-
ծաթդ քեզի հետ թող կորսուի, քանզի
կարծեցիր թէ Աստուծոյ պարգեը
21 կ'առնուի տակավ. Դուն այդ բանին
մէջ մասն և բաժին չունիս, քանզի քու
22 սիրտդ ուղիղ չէ Աստուծոյ առջեւ. Ուս-
տի ապաշաւէ այդ քու չարութենէդ
և աղաչէ զԱստուած, թերևս ներուի
23 քեզ քու սրտիդ ըղձ խորհուրդը. Քան-
զի ես կը տեսնեմ զքեզ մաղձի դառ-
նութեան և անիրաւութեան կապա-
24 նաց մէջ. Սիմոն պատասխան առաւ
և ըսաւ, Դուք ինձի համար աղօթք
ըրէք առ Տէր, որ այդ բաներէն ոչը
25 ըսիք՝ բան մը չգայ իմ վրաս. Ու նո-
քա վկայութիւն տալով Տէրոջը խօս-
քը խօսեցին հաւքը գարձան Երուսա-
դէմ, և Սամարացւոց շատ գիւղերուն
մէջ քարոզեցին աւետարանը.
26 Ու Տէրոջը հրեշտակը խօսեցաւ Փի-
լիպպոսի ըսելով, Ել և գնա դու հա-
րաւային կողմն, այն ճամբան որ կ'ի-
ջնէ Երուսաղէմէ գէպ ի Գազա, որ ա-
27 նապատ տեղ է. Ու նա ելաւ գնաց. և
ահա Եթովպացի ներքինի մը Եթովպա-
ցւոց կանդակա Թագուհւոյն զօրաւո-
րը, որ անոր բոլոր գանձերուն վրայ
էր, որ և երուսաղէմ եկած էր երկիր
28 պագանել. Ու կը դառնար, և իր
կառքը նստած կը կարդար Եսայի մար-
29 գարէն. Ու Հոգին ըսաւ Փիլիպպոսի,
30 Մօտեցիր և գնա այդ կառաց քով. Ու
Փիլիպպոս վազելով մատ ձեռ՝ և կը
լսէր որ կը կարդար Եսայի մարգարէին
Ու ըսաւ, Կը հասկընաս արդեօք ինչ
31 որ կը կարդաս. Ու նա ըսաւ, Ի՞նչպես
կրնամ հասկընալ, եթէ ոչ ոք առաջ-
նորդ ինձ. Ու աղաչեց Փիլիպպոսի ել-
32 լել նստիլ իրեն քով. Ու տեղը զոր կը
կարդար գրքին մէջ այս էր, Իբրև ոչ-
խար մորթուելու տարուեցաւ, և իբ-
րև գառն որ անմռունչ կ'ինայ իր
խուզողին առջեւ՝ այնպէս չբանար իր
33 բերանը. Անոր խոնարհութեան մէջ ա-
նոր դատաստանը վերցաւ, և անոր
ազգատոհմը ո՞վ պիտի պատմէ. Քան-
զի անոր կեանքը երկրէն կը վերցուի.
34 Ներքինին պատասխան առաւ Փիլիպ-
պոսի և ըսաւ, Ա՛ազաչեմ գրեդ, մար-
գարէն որո՞ւ համար կ'ըսէ զայս. իրե՞ն
35 համար թէ ուրիշի մը համար. Իսկ Փի-
լիպպոս բացաւ իր բերանը, և գրքին
այս Եսայեէն սկսելով՝ քարոզեց անոր
36 զՅիսուս. Ու երը էրթնէ ճամբան կ'եր-
թային, եկան ջուրի մը քով. Ու ըսաւ
37 ներքինին, Ահա ջուր, ի՞նչ բան կ'ար-
գելու ինծի մկրտուելէ. Ու Փիլիպպոս
ըսաւ անոր, Եթէ քու բոլոր սրտովդ
կը հաւատաս, հնարաւոր է. Նա պա-
տասխան առաւ և ըսաւ, Կը հաւա-
տամ թէ Յիսուս Քրիստոս է Որդի Ա-
38 ստուծոյ. Ու հրամայեց կեցուցնել կառ-
քը. և երկուքեան իջան ջուրը, Փիլիպ-
39 պոս և ներքինին, և մկրտեց զնա. Ու
երբ դուրս եկան ջուրէն, Տէրոջը Հո-
գին յափշտակեց զՓիլիպպոս, և այլ
ևս չտեսաւ զնա ներքինին, և իր ճամ-
40 բան կ'երթար ուրախութեամբ. Բայց
Փիլիպպոս Ազովտոսի մէջ գտնուեցաւ.
և չրջելով կը քարոզէր աւետարանը
բոլոր քաղաքներուն, մինչև եկաւ նա
Կեսարիա.



ԳԼ. Թ

1 Բայց Սօղոս տակաւին սպառնալիք և
մահ փչելով Տէրոջը աշակերտներուն
2 դիմ գնաց քահանայապետին քով, Ու
անկէ խնդրեց Թուղթեր ի Դամասկոս
ժողովրդանոցները՝ որ եթէ
այն ճամբան հետևողներ գտնէ, այր
կամ կին, կապած բերէ յերուսաղէմ.
3 Ու երբ կ'երթար և մօտեցաւ ի Դա-
մասկոս, յանկարծ յերկնից լոյս վրայ-
4 եաւակից անոր բոլորեցաւ. Ու գետին
իյնալով ձայն մը լսեց որ կ'ըսէր անոր,
Սաւուղ, Սաւուղ, ընդէ՞ր կը հալածես
5 զիս. Ու նա ըսաւ, Դուն ո՞վ ես, Տէր.
Ու Տէրը ըսաւ, Ես եմ Յիսուս զոր
դուն կը հալածես. *դժուարին է քեզ
6 ընդդէմ խթանի ոտքդել. Ու նա դո-
ղով և ապշութեամբ ըսաւ, Տէր, ի՞նչ
7 կամիս որ ընեմ. Ու Տէրը ըսաւ անոր,
Ել և մտիր քաղաքը, և պիտի ըսուի
քեզ ինչ որ պարտաս ընել. Իսկ այն
մարդիկը որ անոր հետ կ'երթային՝ տա-
ղտած կեցած էին, ձայնը միայն կը լսէին,
8 բայց ոչ զոք կը տեսնէին. Ու Սօղոս
գետնէն ելաւ, և բաց աչօք ոչ զոք կը
տեսնէր. ուստի անոր ձեռքերն բռնե-
9 ցին և մուծին ի Դամասկոս. Ու երեք
օր կեցաւ առանց տեսնելու, և ոչ կե-
րաւ և ոչ խմեց.
10 Ու Անանիա անուն աշակերտ մը կար
ի Դամասկոս. և Տէրը տեսլեան մէջ ը-
սաւ անոր, Անանիա. Ու նա ըսաւ,
11 Տէր, ահաւասիկ եմ. Ու Տէրը ըսա-
նոր, Ել և գնա այն փողոցը որ Ու-
ղիղ կ'ըսուի, և հարցուր տան մէջ
փնտռէ Սօղոս անուն ումն Տարսոնացի.
12 Զի ահա նա կ'աղօթէ. Ու մարդ
մը տեսաւ ի տեսլեան Անանիա անուն
ար մտնել և ձեռք անոր վրայ դրաւ
13 որ տեսնէր. Ու Անանիա պատասխան
առաւ, Տէր, շատերուն լսեցի այն մար-
դուն համար թէ որչափ չարիք բրաւ
14 քու սուրբերուդ յերուսաղէմ. Ու հոս
ևս քահանայապետներէն իշխանութիւն
ունի կապել այն ամենքը, որ քու ա-
15 նունդ կը կոչեն. Ու Տէրը ըսաւ անոր,
Գնա դու, քանզի բնաիր ումն է նա
ինձ, իմ անունս կրելու հեթանոսաց
և թագաւորաց և իսրայէլի որդւոց
16 առջեւ. Քանզի ես պիտի ցուցնեմ ա-
նոր թէ որչափ պարտ է նմա իմ ան-
17 ունս համար նեղութիւն կրել. Ու
Անանիա գնաց և մտաւ այն տունը, և
ձեռք բնելով անոր վրայ ըսաւ, Սաւուղ եղբայր, Տէրը զրկեց զիս, այն
Յիսուս որ ճամբան մէջ երեւեցաւ քեզ
եկր կու գայիր, որպէս զի տեսութիւնդ
առնաս, և լցուիս Հոգւով Սրբով.
18 Ու շատ մը բնկան անոր աչքերէն
թեփերու պէս իյնէր. և խոյն տե-
19 սաւ և ելաւ մկրտուեցաւ. Ու կերա-
կուր ուտելով զօրացաւ. *և քանի մը
օր կեցաւ աշակերտաց հետ որ էին ի
Դամասկոս.
20 Ու անմիջապէս ժողովրդանոցներուն
մէջ կը քարոզէր †Յիսուս, թէ նա է
21 Աստուծոյ Որդին. Ու բոլոր լսողները
մեծապես զարմացած էին, և ի'րենին,
Ո՞չ ապաքէն սա է որ Երուսաղէմի մէջ
կը կործանէր զանունը որ այս անուններ
կը կոչէին. և հոս ևս եկած էր յայն
ոսկս որ զանունք կապած տաներ քա-
22 հանայապետներուն. Բայց Սօղոս ևս
աւելի կը զօրանար, և կը պատանդե-
ցուներ Դամասկոսի մէջ բնակող Հրեա-
ները, ապացուցանելով թէ այս է Քրս-
23 բոսոս. Ու երբ շատ օրեր անցան,
Հրեայք խորհուրդ ըրին սպաննել զնա,
24 Բայց Սօղոսի յայտնուեցաւ անոնց նեն-
գութիւնը. և դիտ. և զգիչեր դուռ-
25 ները կը սպասէին սպաննել զնա, իսկ
աշակերտները գիշերայն առին զնա, և
զամբիւղով կախելով վար իջեցուցին
պարսպէն.
26 Երբ Սօղոս եկաւ յերուսաղէմ, կը
ջանար յարել աշակերտներուն, բայց
ամենքը կը վախնային անկէ չհաւա-
27 տալով թէ աշակերտ էր նա. Բայց
Բառնաբաս առնելով զնա տարաւ ա-

*Գործ. ը-ներին.

*Գործ. և Սաւուղ. †Գործ. զՔրիստոս

ազգքեալներուն, և պատմեց անոնց թէ
ինչպէս ի ճանապարհին տեսաւ զՏէր,
և թէ խօսեցաւ անոր հետ, և թէ ինչ-
պէս Դամասկոսի մէջ համարձակ քա-
28 րոզից Յիսուսի անուամբ։ Եւ երուսա-
ղէմի մէջ անոնց հետ կը մտնէր և կ'ել-
29 լէր Տէր Յիսուսի անուամբ համարձակ
քարոզելով, Նաև *Հելլենացնելոց դէմ
կը խօսէր և կը վիճէր. և անոնք կը
30 ֆնդրէին սպաննել զնա, իսկ եղբայր-
ներն իմանալով իջուցին զնա ի կեսա-
րիա, և ղրկեցին զնա ի Տարսոն։
31 Ա՛նատեն եկեղեցիներն ունեցան խա-
ղաղութիւն բոլոր Հրէաստան և ի Գա-
լիլեա և ի Սամարիա, և շինուիլն
կ'ընդունէին, և Տէրոջը երկիւղը և
Հոգւոյն Սրբոյ մխիթարութեամբ քա-
լելով կ'աճէին։
32 Ե՛ւ երբ Պետրոս ամէն տեղ կը պըտ-
րտէր, իջաւ նաև Լիւդդեա բնակող
33 սուրբերուն քով։ Եւ գտաւ հոն մարդ
մը որդ անունն էր Ենէա, ութ տարիէ
հետէ մահիճը պառկած անդամալոյծ։
34 Եւ ըսաւ անոր Պետրոս, Ենէա, Յիսուս
Քրիստոս կը բժշկէ զքեզ. ել և շտկէ
35 անկողինդ։ Ե՛ւ նա իսկոյն ելաւ։ Եւ
Լիւդդեայի և Սարոնի մէջ բնակողնե-
րուն ամէնքը տեսան զնա, և դարձան
36 առ Տէր։ Եւ Յոպպէի մէջ աշակերտած
կին մը կար Տաբիթա անուն, որ կը
թարգմանուի Ա՛յծեւիկ։ Սա լի էր բա-
րի գործովք և ողորմութիւնքովը զորս
37 կ'ընէր։ Եւ եղաւ որ այն օրերը հիւան-
դացաւ նա և մեռաւ. և լուացին զնա
38 և դրին վերնատունն մը։ Եւ Լիւդդեա
Յոպպէի մօտ էր. ուստի աշակերտնե-
րը լսելով թէ Պետրոս հոն էր, ղրկե-
ցին առ նա երկու մարդ, ազաչելով
39 չ'յապաղել իրենց գալ։ Եւ Պետրոս ե-
լաւ անոնց հետ եկաւ. և երբ եկաւ,
հանեցին զնա վերնատունը. և բոլոր
այրիք կեցան շուրջանակի, լալով
և կը ցուցնէին բաճկոնները և հան-
դերձները զորս կ'ընէր Ա՛յծեւիկ, մինչ
40 անոնց հետ էր։ Եւ Պետրոս դուրս հա-

*Ա՛յսինքն՝ Հելլենախօս Հրեից

նելով ամէնքը՝ ծունր դրաւ և աղօ-
թեց, և դէպ ի մարմինը դառնալով ը-
սաւ, Տաբիթա, կ'ելնդնէ։ Եւ նա
բացաւ աչքերը, և տեսնելով զՊետ-
41 րոս՝ նստաւ ուղիղ։ Եւ նա ձեռքը տը-
ւաւ անոր, և վերցուց զնա. և կոչե-
լով սուրբերը և այրիները կեցուց զնա
42 ենդդ առջև ողջ։ Եւ բոլոր Յոպպէի
մէջ իմացուեցաւ, և շատերն հաւատա-
43 ցին ի Տէր։ Եւ եղաւ որ ինք շատ օ-
րեր կեցաւ Յոպպէ Սիմոն անուն խա-
ղտխորդի մը քով։

## Գլ. Ժ

1 Ա՛յրդ մը կար կեսարիա Կոռնելիոս
անուն, հարիւրապետ, Իտալացի կո-
2 չուած գունդէն. Բարեպաշտ և երկիւ-
ղած իւր բոլոր տանը, որ շատ ողոր-
մութիւններ կը տար ժողովրդեան, և
յամենայն ժամ կ'աղօթէր առ Աս-
3 տուած։ Սա օրուան իրը իններորդ ժա-
մուն տեսիլեան մէջ յայտնի տեսաւ Ա-
ստուծոյ հրեշտակը որ անոր քով մտաւ
4 և ըսաւ անոր, Կոռնելիէ։ Եւ նա նա-
յելով անոր և շատ վախնալով ըսաւ,
Ի՞նչ է, Տէր։ Եւ նա ըսաւ անոր, Քո
աղօթքդ և ողորմութիւններդ հա-
սան Աստուծոյ առջև յիշատակի համար,
5 Եւ արդ մարդիկ ղրկէ Յոպպէ, և կոչէ
Սիմոն անուն մի որ Պետրոս անուա-
6 նեալ է. Նա իրեն հիւր կը կենայ Սի-
մոն անուն խաղտխորդի մը քով, որոյ
7 տունը մտա է ծովուն։* Եւ երբ գնաց
հրեշտակը որ կը խօսէր †անոր հետ,
կոչեց իւր ծառաներէն երկուքը, և
իրեն քով սպասաղներէն ևս բարե-
8 պաշտ զինուոր մը, Եւ բոլորը պատ-
մելով անոնց՝ ղրկեց զանոնք Յոպպէ։
9 Ե՛ւ ի վաղիւ անդր երբ անոնք երթն
ի ճանապարհ և մօտեցան քաղաքին,
Պետրոս իրը վեցերորդ ժամուն ելաւ
10 ի տանիս աղօթելու. Եւ շատ անօթեցած

*Ո՛նուն՝ Կ'ասէլացոն։ Նա պիտի ըսէ քեզ
ինչ որ պարտիս ընել։
†Ո՛նուն՝ Կոռնելիոսի



ըլլալով կ'ուզէր ճաշել. և մինչ ետ-
րաստատութիւն կը տեսնէին, ե-
11 կաւ անոր վրայ յափշտակութիւն մը-
ասց. Եւ տեսաւ զերկինս բացեալ, և
չորս ծայրէն կապուած աման իրրև
12 մեծ կաւս, որ ի՛նչ երկրի վրայ. Ց-
րտում կային երկրի բոլոր չորքոտանի-
ները և գազանները և սողունները և
13 երկնից թռչունները։ Եւ ձայն եկաւ
14 անոր, Ել, Պետրոս, դնէ և կեր։ Բայց
Պետրոս ըսաւ, Ո՛չ իրիկ, Տէր, քան-
զի ես ամենևին պիղծ կամ անմաքուր
15 բան կերած չեմ։ Դարձեալ ձայն եկաւ
անոր, Զոր Աստուած սրբեց, դուն
16 պիղծ մի համարիր։ Այս եղաւ երիցս,
17 և ամանը վերացաւ յերկինս։ Եւ Պետ-
րոս երբ կը զարմանար ի միտս իւր թէ
ինչ պիտի ըլլար տեսիլը զոր տեսաւ,
ահա Կոռնելիոսէ ղրկուած մարդիկ
հարցուցին Սիմոնի տունը, և կեցան
18 դրան առջև. Եւ կոչելով կը հարցու-
նէին թէ Սիմոն որ Պետրոս կը կոչուի
19 հո՞ն կը կենայ։ Եւ երբ Պետրոս կը խոր-
հէր այն տեսլեան վրայ, Հոգին Սուրբ
ըսաւ անոր, Ահա երեք մարդիկ կը
20 ֆնդրեն զքեզ. Ուստի ել, էջ, և ա-
նոնց հետ գնա առանց տլզնելու, քան-
21 զի ես ղրկեցի զանոնք։ Եւ Պետրոս
իջնելով †այն մարդոց քով ըսաւ, Ա՛հ
ես եմ այն զոր դուք կը ֆնդրէք. Ի՞նչ
22 բանի համար եկած էք։ Եւ անոնք ը-
սին, Կոռնելիոս հարիւրապետ, այր
արդար և երկիւղած, վկայուած բոլոր
Հրէից ազգէն, հրաման առաւ սուրբ
հրեշտակէ կոչել զքեզ իր տունը և
23 լսել բնէ խօսքեր։ Անոնցմէ կոչեց
զանոնք ի ներքս և հիւրընկալեց։

Ի վաղիւ անդր Պետրոս երթ. գնաց
անոնց հետ, և ոմանք ևս եղբայրներէն
24 որ էին Յոպպէ՝ գացին անոր հետ։ Եւ
ի վաղիւն մտան ի կեսարիա. և Կոռ-
նելիոս իր ազգականները և մտերիմ
բարեկամները կոչած կը սպասէր ա-
25 նոնց։ Եւ երբ Պետրոս կը մտնէր ի ներ-

*Ո՛նուն՝ իջաւ անոր
†Ո՛նուն՝ Կոռնելիոսէ անոր ղրկուած

քը, Կոռնելիոս ելաւ անոր դիմացը
և իյնալով անոր ոտքը կ'երկրպագէր։
26 Բայց Պետրոս կանգնեցուց զնա և ը-
սաւ, Ել կանգնէ. ես ինքն ևս մարդ
27 եմ։ Եւ անոր հետ խօսելով մտաւ ի
ներքս, և գտաւ հոն շատ մարդիկ ժո-
28 ղովեալ։ Եւ ըսաւ անոնց, Դուք գի-
տէք թէ ինչպէս ապօրինաւոր է Հրէ-
այ մարդու հաղորդութիւն ընել օ-
տարազգւոյ հետ կամ մտանել անոր.
բայց Աստուած ցուցուց ինձ ո՛չ ումեք
ի մարդկանէ ըսել պիղծ կամ անմա-
29 քուր։ Ե՛ւ վասնորոյ և ես որ կոչուեցայ
առանց դէմ խօսելու եկայ. բայց հի-
մա կը հարցնեմ, ի՞նչ բանի համար
30 կոչեցիք զիս։ Եւ Կոռնելիոս ըսաւ,
Զորս օր առաջ մինչև այս ժամս կը
պահէի ծոմ, և իններորդ ժամուն
կ'աղօթէի տանս մէջ. և ահա փայլուն
հանդերձներով մարդ մը կեցաւ առջևս
31 և ըսաւ, Կոռնելիէ, աղօթքդ լսուե-
ցաւ, և ողորմութիւններդ յիշուեցան
32 Աստուծոյ առջև. Ուստի հրէք զրկէ
Յոպպէ, և կոչէ զՍիմոն որ և Պետրոս
կը կոչուի. նա ծովուն մտ Սիմոն ա-
ռնոտ խաղտխորդի մը տունը կը կենայ
իրրև հիւր. որ երբ գայ, պիտի խօսի
33 քեզ։ Ուստի իսկոյն հրէք զրկեցի քեզ,
և դուն ուղիղ բրիր որ եկար. և հիմա
մենք ամէնքս Աստուծոյ առջև կեցած
ենք լսել այն ամէն բաները որ Աս-
տուծմէ հրամայուած են քեզ։
34 Իսկ Պետրոս բացաւ իւր բերանը և
ըսաւ, Ճշմարտութեամբ կը հասկընամ
թէ աստուածութիւն չկայ առ ի յԱստու-
35 ծոյ, Այլ ամէն ազգի մէջ ով որ ան-
կէ կը վախնայ և արդարութիւն կը
36 գործէ՝ ընդունելի է նմա։ Աստուած
ղրկեց խօսքը Իսրայէլի որդւոց քա-
րոզել խաղաղութիւն Յիսուս Քրիս-
տոսի ձեռօք. սա է ամենուն Տէրը.
37 Դուք քալ գիտէք այն բանը որ եղաւ
բոլոր Հրէաստանի մէջ Գալիլեայէ ըս-
կսեալ, մկրտութենեն յետքը զոր Յով-
38 հաննէս քարոզեց. Զ՚Յիսուս որ Նա-
զարէթէ էր, զոր Աստուած օծեց Հո-
գւով Սրբով և զօրութեամբ, որ շըր-

ջեցաւ բարեբք ընելով և բժշկելով Սատանայէն բոլոր տանջուածները, քանի
39 զի Աստուած անոր հետ էր։ Եւ մենք վկայ ենք այն ամէն բաներուն զոր ըրաւ Հրէաստանի երկրին և Երուսաղէմի մէջ. զոր փայտին կախած սպան-
40 նեցին և Աստուած յարոյց զնա երրորդ օրը, և յայտնի ըրաւ զնա, Ո՛չ
41 թէ բոլոր ժողովրդեան, այլ մեզ առաջուց Աստուծմէ վկայ րլլալու ընտրուածներուս, որ անոր հետ կերանք և խմեցինք ետ յետ յարութեան նո-
42 րա ի մեռելոց։ Եւ ինք պատուիրեց մեզ քարոզել ժողովրդեան և տալ վկայութիւն, թէ նա է Աստուծմէ տանմանուած Դատաւոր կենդանեաց և մե-
43 ռելոց։ Անոր կը վկայեն բոլոր մարգարէք թէ անոր հաւատացողներուն ամէնքը կ'առնուն անոր անուամբ մեղաց թողութիւն։
44 Եւ երբ Պետրոս կը խօսէր այս խօսքերը, Հոգին Սուրբ իջաւ ամէնուն վր-
45 րայ որ կը լսէին խօսքը։ Եւ հաւատացեալք որ թլփատութենէ էին և որ եկած էին Պետրոսի հետ, զարմացան որ հեթանոսներուն վրայ ալ կը դեզուր
46 Հոգւոյն Սրբոյ պարգեւը. Քանզի կը լսէին որ անոնք կը խօսէին ուրիշ լեզուներով, և կը փառաւորէին զԱս-
47 տուած։ Այնատեն Պետրոս պատասխան առաւ, Կրնա՞յ մարդ արգելուլ ջուրը որ չմկրտուին ասոնք, որ ղՀոգին Սուրբ
48 ալ ընկալան իրեւ մեզ։ Եւ հրամայեց որ մկրտուէին Տէրոջը անուամբ. անապաստն աղաչեցին զնա մնալ քանի մը օր։

## Գլ. ԺԱ.

1 Եւ առաքեալները և եղբարք որ Հրէաստանի կողմերն էին, լսեցին թէ հեթանոսներն ալ ընդունած էին Ա-
2 ստուծոյ խօսքը։ Եւ երբ Պետրոս եկաւ Յերուսաղէմ, անոնք որ թլփատուած-
3 ներէն էին կը վիճէին անոր հետ, Ե-
4 կ'ըսէին թէ Դուն անթլփատ մարդոց քով մտար, և կերար անոնց հետ։
5 անոնց, և ըսաւ, Ես Յոպպէ քաղաքը կ'աղօթէի, և մտաց յափշտակութեան մէջ տեսայ տեսիլ. ահա մի իրեւ մեծ կաւե իջաւ երկինքէ չորս ծայրերէն
6 կախուած և հասաւ մինչև առ իս։ Որոյ վրայ յառնեալ կը նայէի, և տեսայ երկրի չորքոտանիները և գազանները և սողուններն և երկնից թռչուները։
7 Եւ ձայն լսեցի որ կ'ըսէր ինձ, Նէ, Պետ-
8 րէ, զնա և կեր։ Բայց ես ըսի, Ջաւ լեսի Տէր, քանզի պիղծ կամ անմաքուր բան ամենեւին մտած չէ իմ բե-
9 րանս։ Պատասխան առաւ ինձ երկրորդ անգամ ձայնը յերկինքն. Զոր Աստուած սրբեց՝ դու պիղծ մի համա-
10 րիր։ Այս երեք անգամ եղաւ, և դարձեալ բոլորը վերացաւ յերկինս։
11 Եւ ահա իսկոյն երեք մարդ կեսարիայէ առ իս դրկուած՝ եկան տանը առջև
12 ուր էի։ Եւ Հոգին ըսաւ ինձ անոնց հետ երթալ առանց խղճի. այս վեց եղբարք ես գացին ինծի հետ, և մը-
13 տանք այն մարդուն տունը։ Եւ նա պատմեց մեզ թէ ինչպէս իւր տան մէջ տեսաւ հրեշտակը որ կեցած էր և կ'ը-
14 սէր, Մ՚ղրկ զրկէ Յոպպէ և կոչէ զՍիմոն որ և Պետրոս կը կոչուի. Նա պիտի խօսի քեզ խօսքեր որովք փրկուիս
15 դու և քու բոլոր տունդ։ Եւ երբ սկսայ խօսիլ, Հոգին Սուրբ իջաւ անոնց վրայ, ինչպէս և մեզ առաջ սկզբան։
16 Եւ յիշեցի Տէրոջը խօսքը որ կ'ըսէր, Յովհաննէս մկրտեց ջրով, բայց դուք պիտի մկրտուիք Հոգւով
17 Սրբով։ Ուստի եթէ Աստուած մի և նոյն շնորհքը տուաւ անոնց, ինչպէս մեզ ալ, երբ հաւատացին ի Տէր Յիսուս Քրիստոս, ես ո՞վ էի որ կարե-
18 նայի Աստուծոյ դէմ դնել։ Այս բաները լսելով լռեցին, և կը փառաւորէին զԱստուած և կ'ըսէին, Ուրեմն Աստուած հեթանոսաց ալ տուաւ կեանց համար ապաշխարութիւն։
19 Եւ ցրուեալքն ի նեղութենէն որ եկաւ Ստեփանոսի համար վրայ՝ հասան մինչև ի Փիւնիկէ և ի Կիպրոս և Անտիոք, և ոչ ումեք կը խօսէին Ա-



20 ՚ե՛ն խօսքը բայց միայն Հրէից։ Բայց անոնցմէ ոմանք էին Կիպրացի և Կիւրենացի մարդիկ, որ երբ մտան Անտիոք, *Հելլենացւոց հետ կը խօսէին՝
21 քարոզելով զՏէր Յիսուս։ Եւ Տէրոջը ձեռքն էր անոնց հետ, և շատ մարդիկ
22 հաւատալով դարձան առ Տէր։ Եւ անոնց վրայ այս լուրը հասաւ Երուսաղէմի եկեղեցւոյն ականջը. և զՔառնաբաս ղրկեցին երթալ մինչև Անտիոք.
23 Որ երբ եկաւ և տեսաւ Աստուծոյ շնորհքը, ուրախացաւ, և կը յորդորեր ամենքը՝ յաժար սրտիւ Տէրոջը հետ
24 ՚ե՛ն մնալ. Քանզի բարի մարդ էր նա, և լի Հոգւով Սրբով և հաւատով. և շատ ժողովուրդ աւելցաւ Տէրոջը։
25 Յետոյ Բառնաբաս եկաւ ի Տարսոն փընտռելու զՍօղոս, և գտնելով զնա բերաւ
26 Անտիոք։ Եւ եղաւ որ անոնք ամբողջ տարի մը եկեղեցւոյն հետ ժողովուելով սորվեցուցին շատ ժողովուրդ. և աշակերտները նախ և առաջ Անտիոք անուանեցան Քրիստոնեայ։
27 Այն օրերը Երուսաղէմէ մարգարէ-
28 ներ իջան Անտիոք։ Եւ անոնցմէ մին, Ագաբոս անուն, եկաւ յիմացուց զօրութեամբ Հոգւոյն թէ մեծ սով պիտի ըլլար բոլոր աշխարհ, որ և եղաւ †Կղո-
29 դիոսի օրերը։ Եւ աշակերտներն որոշեցին իրենցմէ իւրաքանչիւր ըստ կարի զրկել օգնութիւն Հրէաստանի մէկ
30 բնակող եղբարց։ Որ և կատարեցին, Հրէացներուն ղրկելով Բառնաբասի և Սօղոսի ձեռօք։

## Գլ. ԺԲ.

1 Ա՛յն առենները Հերովդէս թագաւորը ձեռնարկեց չարչարել զոմանս յեկե-
2 ղեցւոյն։ Եւ Յակովբոս եղբայրն զԶա-
3 քարէս սպանեց սրով։ Եւ տեսնելով թէ հաճոյ էր Հրէից, յաւել և բռնել զՊետրոս. և էին բաղարջակերաց օրե-
4 րը։ Երբ զնա բռնեց, բանտը դրաւ,

*Ոմանք՝ Յոյներուն
†Ոմանք՝ Կղոդիոս կայսեր

5 նել զնա Ժողովրդեան։ Ուստի Պետրոս բանտին մէջ պահուած էր, բայց եկեղեցին անդադար կ'աղօթէր Աստու-
6 ծոյ անոր համար։ Եւ երբ Հերովդէս կամենար զուրս բերել զնա, այն գիշերը Պետրոս կը քնանար երկու զինուորներուն մէջ կրկին շղթայիւք կապուած. և պահապանները դրան առջև
7 կը պահէին բանտը։ Եւ ահա Տէրոջը հրեշտակը կեցաւ անոր վրայ, և լոյս ծագեց տանը մէջ, և Պետրոսի կողը խթելով արթնցուց զնա, և ըսաւ, Նէ վաղվաղակի։ Եւ շղթաներն ինկան ա-
8 նոր ձեռքերէն։ Եւ հրեշտակն ըսաւ անոր, Կապէ գօտիդ և հագաւթափներդ հագիր ոտքդ։ Եւ նա ըրաւ այնպէս։ Եւ ըսաւ անոր, Հանգերձդ վրադ առ
9 և եկու հետևէս։ Եւ նա ելլելով կ'երթար անոր հետևէն, և չէր գիտեր թէ ճշմարիտ էր ինչ որ եղաւ հրեշտակին, այլ կը կարծէր թէ տեսիլ կը տեսնէր։
10 Եւ երբ անոնք անցան առաջին և երկրորդ պահապաններէն, եկան մինչև երկաթի դուռը որ կը տանի քաղաքին մէջ, որ և ինքնին բացուեցաւ առնոնց. և ելլելով փողոց մը անցան, և հրեշտակն իսկոյն զատուեցաւ անկէ։
11 Եւ Պետրոս ինքն գալով ըսաւ, Հիմա ճշմարտապէս գիտեմ թէ Տէրը զրկեց իւր հրեշտակը, և ազատեց զիս Հերովդէ ձեռքէն և Հրէից ժողովրդեան բո-
12 լոր ակնկալութենէն։ Եւ խորհելով եկաւ ի տուն Մարիամայ մօր Յովհաննու որ կը կոչուէր Մարկոս, ուր շա-
13 տեր ժողովուել կ'աղօթէին։ Եւ քանի դուռնէն դուռը երբ *թակեց, աղախին մը Հռոդէ անուն գնաց ունկն դնել.
14 Եւ երբ ճանչցաւ Պետրոսի ձայնը, ուրախութենէն չբացաւ դուռը, այլ վազելով ի ներքս պատմեց թէ Պետրոս
15 կեցած էր դրան առջև։ Իսկ անոնք ըսին անոր, Կը մոլիս։ Բայց նա կը պընդէր թէ այնպէս էր։ Եւ անոնք կ'ը-

*Ոմանք՝ Պետրոս բաղխեց,

16 ակին, Անոր հրեշտակն է։ Սակայն Պետրոս անդադար կը բաղխէր։ Եւ երբ բացին, տեսնելով զնա ապշեցան։
17 Բայց նա ձեռամբ նշան կ'ընէր անոնց լուռ կենալ, և պատմեց անոնց Թէ ինչպէս Տէրը բանակն հանեց զնա. և ըսաւ, Պատմեցէք զայս Յակոբոսի և եղբայրներուն։ Եւ ելաւ գնաց այլ տեղ։
18 Երբ ուրեմն ցերեկ մը եղաւ, ոչ մի փոքր առաւօտ եղաւ, ժիժ խռովութիւն կար զինուորներուն մէջ Թէ ի՞նչ եղաւ Պետրոս։
19 Իսկ Հերովդէս երբ խնդրեց զնա և չգտաւ, քննութիւն ընելով հարցուփորձ ընելով հրամայեց սպանել։ Եւ ինք իջաւ Հրէաստանէ ի Կեսարիա, և հոն կը կենար։
20 Եւ Հերովդէս սաստիկ բարկացած էր Տիւրացւոց և Սիդոնացւոց հետ. և նոքա միաբան հաւանութեամբ եկան անոր, և համոզելով Բագաւորին սենեկապետն զԲղաստոս հաշտութիւն կը խնդրէին. քանզի անոնց երկիրը կը կերակրուէր Բագաւորին երկրէն։
21 Եւ օրն որ մը Հերովդէս Բագաւորական հանդերձն հագած և աթոռին նըստած առաջնորդութիւն կ'ընէր անոնց։
22 Եւ ժողովուրդը կ'ազազակէր Թէ Աստուծոյ ձայն է այդ, և ոչ մարդոյ։
23 Եւ իսկոյն Տէրոջը հրեշտակը զարկաւ զնա, վասն զի չտուաւ փառս Աստուծոյ. և որդնոտից ըլլալով մեռաւ։
24 Եւ Աստուծոյ խօսքը կ'աճէր և կը բազմանար։
25 Եւ Բառնաբաս և Սօղոս երբ Երուսաղէմէն պաշտօնը կատարեցին, դարձան նորէն ետ՝ առնելով իրենց հետ զՄարկոս որ Յովհաննէս ալ կը կոչուէր։

## Գլ. ԺԳ

1 Եւ Եկեղեցիէն որ էր յԱնտիոք՝ կային մարգարէք ոմանք և վարդապետք, Բառնաբաս և Շմաւոն որ Նիգեր կ'անուանուէր, և Ղուկիոս Կիւրենացի և Մանայեն, Հերովդէ չորրորդապետի
2 սընդակիցը, և Սօղոս։ Երբ ասոնք Տէրոջը պաշտօնին մէջ էին և ծոմ կը պահէին, Հոգին Սուրբ ըսաւ, Զատեցէք ինձ զԲառնաբաս և զՍօղոս այն գործին համար, ուր ես կոչած եմ
3 զդոսա։ Անոնք ծոմ պահելով և աղօթելով՝ ձեռք դրին անոնց վրայ և ղրկեցին։
4 Եւ անոնք Սուրբ Հոգիէն ղրկուած իջան ի Սելեւկիա, և անկէ գացին Նաւով ի Կիպրոս։
5 Եւ ի Կիպրոս։ Եւ ի Սալամինա հասնելով կը քարոզէին Հրէից ժողովրդասնոցներուն մէջ Աստուծոյ խօսքը, և զՅովհաննէս ալ ունէին իբրեւ սպասաւոր։
6 Եւ ի չըլլալով այն (քաղաք) կղզին մինչև Պափոս, հոն գտան Հրեայ մըզ, սուտ մարգարէ, որուն անունն էր Բարեյեսու։
7 Որ էր փոխանակի բդեշխին հետ որ իշ խոշ-էր Սերգիոս Պօղոս, այր խնամուն։ Ան գոան Հրեայ մըզ, սուտ մարգարէ, որուն անունն էր Բարեյեսու։

և կը յորդորէին զանոնք հաստատ կե-
44 նալ միշտ Աստուծոյ շնորհքուն մէջ։ Եւ
հետևեալ շաբաթ օրը գրեթէ բոլոր
քաղաքը ժողովուեցաւ լսել Աստուծոյ
45 խօսքը։ Իսկ Հրեայք երբ տեսան այն
բազմութիւնը, լցան նախանձու, և
Պօղոսի բսուածներուն դէմ կը խօ-
սէին հակառակելով և հայհոյելով։
46 Անոնուն Պօղոս և Բառնաբաս համար-
ձակեցան և ըսին, Պարտ էր առաջ ա-
ձեզ խօսիլ Աստուծոյ խօսքը, բայց
որովհետև դուք կը մերժէք զայն, և
արժանի չէք համարիր զձեզ յաւիտե-
նական կենաց, ահա մենք կը դառ-
47 նանք հեթանոսներուն։ Քանզի Տէրը
այսպէս պատուիրած է մեզ։ Դրի ըղ-
քեզ լոյս հեթանոսաց, որ դուն փրր-
կութեան պատճառ ըլլաս մինչև երկ-
48 րի ծայրերը։ Զայս լսելով հեթանոսք
կ'ուրախանային, և Աստուծոյ խօսքը
կը փառաւորէին։ և որք յաւիտենա-
կան կենաց սահմանուած էին՝ հաւա-
49 տացին։ Եւ Տէրոջը խօսքը կը տարա-
50 ծուէր բոլոր գաւառը։ Բայց Հրեայք
զրգռեցին բարեպաշտ և պատուաւոր
կանայք և քաղաքին մեծերը, և հա-
լածանք հանելով Պօղոսի և Բառնա-
բայ դէմ՝ դուրս ըրին զանոնք իրենց
51 սահմաններէն։ Եւ անոնք թօթափե-
լով իրենց ոտից փոշին անոնց դէմ՝
52 եկան Իկոնիոն։ Եւ աշակերտները կը
լնուին ուրախութեամբ և Հոգւով
Սրբով։

## Գլ. ԺԴ

1 Եւ եղաւ որ Իկոնիոնի մէջ անոնք ի
միասին մտան Հրեից ժողովրդեանցը,
և այնպէս խօսեցան որ հաւատացին
2 Հրեայք և Յոյնք բազում իսկ։ Բայց
չհաւատացող Հրեայք զրդեցին և գըրգ-
ռեցին ի չարութիւն հեթանոսներուն
3 սիրտը եղբայրներուն դէմ։ Իսկ ա-
նոնք շատ ժամանակ հոն կենալով հա-
մարձակ կը քարոզէին Տէրոջմէ, որ իր
շնորհաց խօսքին կը վկայէր, և նշան-
ներ և հրաշներ ընել կու տար անոնց
4 ձեռօք։ Եւ քաղաքին բազմութեան
մէջ երկպառակութիւն եղաւ. ոմանք
Հրեից կողմն եղան, և ոմանք՝ առա-
5 քելոց։ Եւ երբ հեթանոս և Հրեայք
իրենց իշխաններովն յարձակեցան —
Նոյն ՀՀ զանոնք նախատել և քա-
6 րկոծել, իմանալով փախան Լիկայոնա-
ցւոց քաղաքներն, ի Լիւստրա և ի Դեր-
բէ և շրջակայ տեղեացն, և հոն կը
քարոզէին աւետարանը։
7 Եւ Լիւստրայի մէջ նստած էր ոմն
ոտից իւր մօրը արտմայնէն կաղ մարդ
8 մը, որ բնաւ քալած չէր։ Սա կը լսէր
Պօղոսի խօսքը։ և նա այնչն անոր ուշ-
նկատելով և տեսնելով թէ ունէր հաւատք
9 բժշկուելու, բարձր ձայնիւ ըսաւ, Նէ
ոտիդ վրայ կանգնէ ուղիդ։ Եւ նա
10 ցաթկելով կը քալէր։ Եւ Յովհաննէս երբ
տեսան ինչ որ բրաւ Պօղոս, վերս-
ուանելով իրենց ձայնը ըսին Լիկայո-
ներէն, Աստուածները մարդոց նմա-
11 նութեամբ իջած են առ մեզ։ Եւ զԲառ-
նաբաս կը կոչէին Դիոս, և զՊօղոս՝
Հերմէս, քանզի նա էր գլխաւոր խո-
12 սող։ Իսկ քահանան Դիոսի որ քաղաքին
առջև էր՝ ցուլեր և պսակներ բերելով
դուռներուն առջև, բազմութեան հետ
13 կ'ուզէր զոհ մատուցանել։ Բայց Բառ-
նաբաս և Պօղոս առաքեալք երբ լսե-
ցին, պատառելով իրենց հանդերձնե-
րը դուրս վազեցին բազմութեան մէջ,
14 կ'ազաղակեն և կ'ըսեն, Արք, ինչո՞ւ
համար կ'ընէք այդ բաները. մենք ևս
կիրք ունեցող մարդիկ ենք իբրև ըղ-
ձեզ, և կը քարոզենք ձեզ որ այդ ու-
նայն բաներէն դառնաք առ Աստուած
կենդանի, որ ստեղծեց երկինքն և երկ-
կիրը և ծովը և բոլոր ինչ որ կայ ա-
15 նոնց մէջ։ Որ անցած դարերուն մէջ
թողուց բոլոր ազգաց երթալ իրենց
16 ճամբաները։ Այսու ամենայնիւ առանց
վկայութեան չթողուց զինք, բարերա-
րութեամբ յերկնից *մեզ անձրևներ
և պտղաբեր եղանակներ տալով, կե-
բակրովք և ուրախութեամբ †մեր սիր-

*Ոմանք՝ ձեզ †Ոմանք՝ ձեր



17 տերը ընդով։ Եւ այս բանէրն ըսելով
հազիւ կրցան զամբոխները ժողո-
վուրդները չմատուցանել անոնց զոհ։
18 Սակայն հասան Հրեայք Անտիոքէ և
Իկոնիոնէ և համոզեցին ժողովուրդը,
և քարկոծեցին զՊօղոս քարկոծելին և քաղաքէն
դուրս քաշեցին կարծելով թէ մեռած
19 էր։ Բայց աշակերտները երբ անոր բո-
լորտիքը պատեցին, ելաւ մտաւ քա-
ղաքը, և ի վաղիւ անդր Բառնաբասի
20 հետ եկաւ ի Դերբէ։ Եւ անոնք այն
քաղաքին մէջ աւետարանը քարոզե-
լով, և աշակերտ ընելով շատերը դար-
ձան ի Լիւստրա և ի Կիկոնիոն և ի Անտի-
21 ոքիա, Աշակերտներուն սիրտերը հաս-
տատելով, և յորդորելով հաստատ
մնալ ի հաւատս. և ըսելէն թէ շատ
նեղութեամբ պարտ է մեզ մտնել
22 Աստուծոյ թագաւորութիւնը։ Եւ երբ
անոնց իւրաքանչիւր եկեղեցւոյն ձեռ-
նադրեցին երէցներ, ծոմով աղօթե-
լով յանձնեցին զանոնք Տէրոջը որում
23 հաւատացած էին։ Եւ Պիսիդիայի մէջ
24 չրջելով եկան ի Պամփիլիա։ Եւ երբ
Տէրոջը խօսքը խօսեցան Պերգէի
25 մէջ և ելան Աթտալիա։ Եւ անտի նաւով գա-
ցին Անտիոքիա, ուստի Աստուծոյ շնոր-
հաց յանձնուած էին այն գործին հա-
26 մար զոր կատարեցին։ Եւ երբ եկան,
եկեղեցին ժողովելով պատմեցին ինչ
որ Աստուած բրած էր անոնց հետ, և
թէ բացած էր հեթանոսներուն հա-
27 ւատոց դուռն։ Եւ հոն շատ ժամանակ
կեցան աշակերտներուն հետ։

## Գլ. ԺԵ

1 Եւ ոմանք իջնելով Հրէաստանէ կը
սորվեցուներին եղբայրներուն թէ, Եթէ
Մովսէսի սովորութեան
համեմատ չթլիփատուիք, չէք կրնար
2 փրկուիլ։ Ուստի երբ Պօղոս և Բառ-
նաբաս շատ հակառակութիւն և վէճ
բրին անոնց դէմ, որոշուեցաւ որ Պօ-
ղոս և Բառնաբաս և անոնցմէ ոմանք
ելլեն Երուսաղէմ առ առաքեալս և
3 առ երիցունս այս խնդրոյն համար։ Եւ

*Ոմանք՝ Յիսուսի Քրիստոսի

ձեալ պիտի չինեմ Դաւթի ինկած խրանը և վերստին պիտի չինեմ անոր կործանած տեղերը և կանգնեմ զնա.
17 Որ մնացեալ մարդիկ ինդրեն Տէրը, և բոլոր հեթանոսները որոց վրայ կոչուած է իմ անունս, կ'ըսէ Տէրը որ
18 կ'ընէ այս ամէնը։ Յայտնի է *Աստուծոյ իր բոլոր գործերն աշխարհիս բո-
19 կիզքէն հետէ։ Վասն որոյ ես յորմոր կը դատեմ նեղութիւն չտալ անոնց որ հեթանոսներէն Աստուծոյ կը դառնան.
20 Այլ թուղթ գրել անոնց որ ետ կեղնան կուռ պղծութիւններէն և պահնկութենէն և ի հեղձուցելոյ և յարենէ,
21 Քանզի Մովսէս հին դարերէն հետէ ամէն քաղաքի մէջ ունի որ կը քարոզեն զնա, և ժողովրդանոցներու մէջ ամէն շաբաթ օր կը կարդացուի։
22 Անառն բարւոք թուեցաւ առաքելոց և երիցանց, բոլոր եկեղեցւոյն հանդերձ, իրենցմէ մարդիկ ընտրելով զրկել յԱնտիոք Պօղոսի և Բառնաբայ հետ, զՅուդա, անուանեալն Բարսաբա, և զՇիղա որ գլխաւոր մարդիկ էին
23 եղբայրներուն մէջ։ Եւ անոնց ձեռօք խոստ զրկեցին այսպէս գրուած.
Առաքեալք և երիցունք և եղբարք, առ եղբարս որ հեթանոսներէն էք՝ յԱնտիոք և ի Սիւրիա և ի Կիլիկիա՝ ողջոյն։
24 Որովհետեւ լսեցինք թէ ոմանք մեզմէ ելլելով խռովեցուցած են զձեզ բանիւք և ձեր անձերը խախտած են ըսելով է պէտք է թլփատուիլ և պահել օրէնքը, որոց մենք չպատուիրեցինք,
25 ցինք, Մեզ, միաբանութեամբ ժողովեցոյս, բարւոք թուեցաւ մարդիկ ընտրելով զրկել ձեզ մեր սիրելիներուն,
26 Բառնաբայ և Պօղոսի հետ, Որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուան համար իրենց անձերը մատնած մարդիկ են,
27 Ուստի զրկեցինք զՅուդա և զՇիղա, որ բերանացի ըսեն նոյն բաները։
28 Քանզի բարւոք թուեցաւ Հոգւոյն Սրբոյ և մեզ ևս ասելի բեռ չդնել ձեր
29 վրայ բաց ի սա կարեւորներէն, Որ ետ կռնաք կուռ զոհուածէ և արիւնէ և ի հեղձուցելոյ և պոռնկութենէ։ Այս բաներէն զձեզ եթէ պահէք, ազէկ պիտի ընէք։ Ողջ լերուք։
30 Եւ անոնք յետ արձակուելով գացին յԱնտիոք, և ժողովուրդը ժողվելով
31 տուին Թուղթը։ Եւ երբ կարդացին, ուրախացան այն մխիթարութեան վրայ։
32 Իսկ Յուդա և Շիղա, որք և մարգարէ էին, շատ խօսքերով յորդորեցին զեղբարս և հաստատեցին։ Եւ ժամանակ մը հոն կենալէն ետքը՝ խաղաղութեամբ յուղարկուեցան եղբայրներէ
34 ըն դարձ։ [առ առաքեալս։ Բայց Շի-
35 զայի բարւոք թուեցաւ հոն մնալ։ Պօղոս և Բառնաբաս ևս կը կենային յԱնտիոք, և ուրիշ շատերու հետ կը սորվեցուներն և կը քարոզէին Տէրոջը խօսքը։
36 Եւ քանի մը օր ետքը Պօղոս ըսաւ Բառնաբայ, Դառնանք և այցելութիւն ընենք եղբայրներուն՝ իւրաքանչիւր քաղաք ուր Տէրոջը խօսքը քարոզե-
37 ցինք, Ե ինչպէս են։ Իսկ Բառնաբաս կ'ուզէր առնուլ նաև զՅովհաննէս, որ Մարկոս կը կոչուէր։
38 Բայց Պօղոս արժան չհամարեցաւ Պամփիլիոյ մէջ իրենցմէ զատուող և իրենց հետ գործի չելկող առնուլ իրենց
39 հետ։ Այսպէս ծաղս ձէջ գժտութիւն եղաւ, մինչև իրարմէ զատուեցան. և Բառնաբաս առաւ զՄարկոս և նաւով
40 գնաց ի Կիպրոս։ Իսկ Պօղոս ընտրեց զՇիղա և ելաւ, Աստուծոյ շնորհացը
41 յանձնուելով եղբայրներէն, Եւ կը շրջէր ի Սիւրիա և ի Կիլիկիա և կը հաստատէր եկեղեցիները։

## Գլ. ԺԶ

1 Եւ հասաւ ի Դերբէ և ի Լիւստրա. և ահա հոն աշակերտ մը կար Տիմոթէոս անուն, որ հաւատացեալ Հրեայ կնոջ
2 որդի էր, և հայրը Յոյն էր. Որ և Լիւստրայի և Իկոնացի եղբայրներէն
3 բարի վկայուած էր։ Պօղոս կամեցաւ որ սա անոր հետ ելլէր, և առաւ թլը-

*Ոմն։ Տէրոջը



փատեց զնա Հրէից համար որ այն տեղերն էին, քանզի ամէնքը գիտէին թէ
4 անոր հայրը Յոյն էր։ Եւ քաղաքներէն անցնելով, առաքելներէն և երէցներն որ Երուսաղէմ էին՝ ապսպրուած հրամանները կ'աւանդէին անոնց պա-
5 հել։ Եւ եկեղեցիները կը հաստատուէին ի հաւատս, և անոնց թիւը կ'աւելնար օր ըստ օրէ։
6 Եւ շրջեցան ի Փռեւգիա և Գաղատացւոց կողմերը. և Սուրբ Հոգիէն արգելուելով որ Ասիոյ խօսքը չխօսին
7 յԱսիա, Երբ Միւսիոյ կողմերը եկան, կը ջանային գնալ ի Բիւթանիա երթալ. և [Յիսուսի] Հոգին չթոյլ ետ անոնց։
8 Եւ Միւսիոյ քովէն անցնելով իջան ի
9 Տրովադա։ Եւ հոն գիշերը տեսիլ երեւեցաւ Պօղոսի. Մակեդոնացի մարդ մը կեցած կ'աղաչէր անոր և կ'ըսէր, Մա-
10 կեդոնիա անցիր և օգնէ մեզ։ Եւ երբ տեսաւ այն տեսիլը, իսկ և իսկ կամեցանք ելլել ի Մակեդոնիա, հասկնալով Թէ Տէրը կը հրաւիրէր զմեզ աւետարանը քարոզել անոնց։
11 Ուստի ելանք Նաւով Տրովադայէ և գացինք ուղիղ դէպ ի Սամոթրակէ, և
12 ի վաղուն՝ ի Նեապոլիս, Եւ անկէ՝ ի Փիլիպպէ, որ է Մակեդոնիոյ Ա՛ի մասին գլխաւոր քաղաքը՝ *Կողոնիական. և
13 քանի մը օր կեցանք այն քաղաքը։ Եւ շաբաթ օրը քաղաքէն դուրս ելանք գետակը քով ուր սովորութիւն ունէին աղօթել, և նստելով կը խօսէինք
14 ժողովեալ կանանց։ Եւ Թիւատիր քաղաքէն Ծերանամազաց կին մը Լիդիա անուն, որ էր կրկիւդած, կը լսէր. զորոյ սիրտը բացաւ Տէրը ուշադրութիւն
15 ընել Պօղոսի խօսքերուն։ Եւ երբ մկրտուեցաւ ինք և իւր տունը, աղաչեց և ըսաւ, Եթէ Տէրոջը հաւատացեալ կը համարիք զիս, մտէք իմ տունս, բնակեցէք։ Եւ ստիպելով տարաւ զմեզ։
16 Եւ եղաւ որ մինչ մենք աղօթքի կ'երթայինք, աղախին մը պատահեցաւ

*Ա յոյնդէն գաղթականաց տեղ։

մեզ որ ունէր հարցուկ ոգի, որ գուշակութիւն ընելով շատ շահ կը բերէր
17 իւր տէրանց։ Սա Պօղոսի և մեր հետեւէն իյնալով կ'աղաղակէր և կ'ըսէր, Այս մարդիկ Բարձրեալ Աստուծոյ ծառաներն են, որ փրկութեան ճամբան
18 կը քարոզեն մեզ։ Եւ կ'ընէր զայս շատ օրեր։ Իսկ Պօղոս զայրանալով դարձաւ և ըսաւ այն ոգւոյն, Յանուն Յիսուսի Քրիստոսի կը հրամայեմ քեզ,
19 Ել ատկէ։ Եւ նոյնժամայն ելաւ։ Եւ երբ տեսան անոր տէրերը որ կարելաւ իրենց շահուն յոյսը, բռնեցին զՊօղոս և զՇիղա և ի հրապարակ ձգեցին իշ-
20 խաններուն առջեւ, Եւ տարին զանոնք զօրապետներուն քով և ըսին, Այս մարդիկ կը խռովին մեր քաղաքը. Ի-
21 նքն Հրեայ են, Եւ այնպիսի սովորութիւններ կը քարոզեն, զորս չէ արժան մեզ ընդունել և ոչ ընել, քանզի Հռովմայեցի ենք։ Եւ բազմութիւնը գիրուելուն անոնց վրայ. և զօրապետները բռնութեամբ հանեցին անոնց հանդերձները, և հրամայեցին ծե-
23 ծել զանոնք։ Եւ անոնց շատ վերքեր տալէն ետքը դրին բանտ, պատուիրելով բանտապետին զգուշութեամբ պա-
24 հել զանոնք։ Եւ նա այսպէս հրաման առնելով՝ գրաւ զանոնք ներքին բանտը և անոնց ոտքերնը պնդեց ի կոճեղ։
25 Եւ կէս գիշերին Պօղոս և Շիղա կ'աղօթէին և կ'օրհնէին զԱստուած, և
26 բանտարկեալք ևս կը լսէին անոնց։ Եւ յանկարծակի մեծ շարժ եղաւ, այնպես որ բանտին հիմերը սասանեցան, և իսկոյն բոլոր դուռները բացուեցան, և
27 ամէնուն կապերն արձակուեցան։ Եւ բանտապետը երբ արթնցաւ և բանտին դուռները բացուած տեսաւ, թուրը քաշեց և պիտի սպաննէր զինք, կարծելով Թէ կալուածները փախած էին։
28 Բայց Պօղոս բարձր ձայնիւ կոչեց և ըսաւ, Վնաս մի ըներ անձինդ, քանզի
29 ամէնքս հոս ենք։ Եւ նա խնդրեց ճը-

*Ոմն։ ձեզ

բագ և վաղեց ի ներքս, և պոռալով
30 ինկաւ Պօղոսի և շիրայի առջև. Եւ
դուրս բերելով զանոնք ըսաւ, Տէրե՛ր,
ի՞նչ ընել պարտ է ինձ որ փրկուիմ.
31 Եւ անոնք ըսին, Հաւատա Տէր Յիսուս
Քրիստոսի, և պիտի փրկուիս դուն և
32 տունդ։ Եւ խօսեցան Տէրոջը խօսքն
անոր և ամենուն որ անոր տան մէջ
33 կէին։ Եւ առաւ զանոնք գիշերուան
նոյն ժամուն և լուաց անոնց վէրքերը,
և վազվազակի մկրտուեցաւ ինք և բո-
34 լոր իրենները։ Եւ զանոնք իր տունը
տանելով սեղան դրաւ,
և բոլոր տամբ ուրախ եղաւ հաւատա-
35 լով Յաստուած։ Եւ երբ առաւօտ ե-
ղաւ, զօրագլուխները դրկեցին սպա-
36 սաւորներն և ըսին, Արձակէ այդ մար-
դիկը։ Եւ բանտապետը պատմեց այն
խօսքերը Պօղոսի, Թէ Զօրագլուխները
37 դրկեցին որ արձակուիք։ ուստի հիմա
ելէք և գացէք խաղաղութեամբ։ Բայց
Պօղոս ըսաւ անոնց, Մեզ յայտնապես
ծեծելով որ չդատապարտուած Հռով-
մայեցի մարդիկ ենք, դրին բանտ, և
հիմա ի ծածուկ կը հանեն զմեզ։ ոչ
38 այդպէս, այլ թող իրենք գան և հա-
նեն զմեզ։ Եւ սպասաւորները պատմե-
ցին զօրագլուխներուն այն խօսքերը.
և անոնք երբ լսեցին Թէ Հռովմայեցի
էին, վախցան, և եկան գթագրութեամբ
39 խօսեցան անոնց հետ. Եւ դուրս հա-
նելով կ'ապաչէին այն գաղաքէն եր-
40 թալ։ Եւ անոնք բանտէն ելլելով մը-
տան Լիդիայի տունը, և տեսնելով եղ-
բայրները՝ մխիթարեցին զանոնք և գա-
ցին։

## Գլ. ԻԷ

1 Եւ չրջելով Յամֆիպոլիս և Յապողո-
նիա՝ եկան ի Թեսաղոնիկէ, ուր էր Հր-
2 էից ժողովրդանոցը։ Պօղոս քաա ա-
ղորութեան իբրև մեռ անոնց մէջ,
և երեք շաբաթ օր խօսեցաւ անոնց
3 հետ ի գրոց, Մեկնելով և անոնց առ-
ջև դնելով Թէ պարտ էր Քրիստոսի
չարչարուիլ, և յառնել ի մեռելոց, և
Թէ Այն Յիսուս զոր ես կը քարոզեմ
4 ձեզ, ըսաւ, Քրիստոսն է։ Եւ անոնց-
մէ ոմանք հաւատացին և միացան Պօ-
ղոսի և շիրայի հետ. երկու դաս Յոյներ-
ըն ևս մեծ բազմութիւն, և երևելի
5 կանանց ևս ոչ սակաւ։ Բայց չհաւա-
տացող Հրեայք նախանձեցան, և առնե-
լով քանի մը դատարկապորտ անօրէն
մարդիկ ոգևոռ հանեցին և խռովեցին
քաղաքը, և Յասոնի տան վրայ յար-
ձակելով կ'ուզէին ժողովրդեան առջև ա-
6 նոնք դուրս բերել։ Երբ չգտան զանոնք,
զՅասոն և քանի մը եղբայրներ քար-
չելով տարին քաղաքապետներուն առ-
ջև, պոռալով Թէ Անոնք որ զաշ-
խարհ խռովեցին՝ հոս ևս հասած են.
7 Զորս Յասոն ընդունած է. և ասոնք
ամենքը կայսեր հրամանաց դէմ կը
գործեն, ըսելով Թէ ուրիշ Թագաւոր
8 մը կայ Յիսուս։ Եւ խռովեցուցին ժո-
ղովուրդը և քաղաքապետները որ կը
9 լսէին ասոնք։ Բայց երբ առին երաշ-
խաւորութիւն Յասոնէ և ուրիշներէն,
10 արձակեցին զանոնք։ Իսկ եղբայրները
վուբեալ գիշերայն զրկեցին զՊօղոս և
զՇիղա ի Բերիա. որ հոն հասնելով՝
11 գացին Հրէից ժողովրդանոցը։ Գան
Թեսաղոնիկէի մէջ եղողներն ազնուա-
գոյն էին ասոնք, որ Ամենայն
ՆՕԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՑ. ուստի զոր գուբ
չմանչելով կը պաշտէք, ես զնոյն կը
24 քարոզեմ ձեզ։ Աստուած որ ստեղծեց
զաշխարհ և զամենայն որ ի նմա, նա
լինելով Տէր երկինից և երկրի՝ ոչ ձե-
ռագործ տաճարներու մէջ կը բնակի,
25 Եւ ոչ մարդոց ձեռօք կը պաշտուի
իբրև բանի մը կարօտ, զանկէ ինք
կու տայ ամենուն կեանք և շունչ և
26 ամենայն ինչ. Եւ ի մի արենէ ըրաւ
բոլոր մարդոց ազգերը որ բնակին բո-
լոր երկրի երեսին վրայ, և հաստատուց
որոշած ժամանակներ, և անոնց բը-
նակութեան սահմանները՝ խնդրել զԱ-
27 աստած, Որ թերևս խորխորատելով գըտ-
նէին զնա. Թէպէտև չէ նա հեռու մեր
28 իւրաքանչիւրէն. Քանզի անով կ'ապ-
րինք և կը շարժինք և կանք, ինչպէս



Թէնք, անոր հոգին անհանգիստ էր ի
նմա, վասն որ կը տեսներ քաղաքը բո-
լորովին ընկղմեալ ի կռապաշտութեան։
17 Ուստի ժողովրդանոցին մէջ կը խօսէր
Հրէից և բարեպաշտ մարդոց և ամէն
օր հրապարակներուն մէջ որոց և կը
18 հանդիպէր։ Եւ Epիկուրեան և Ստո-
այիկեան փիլիսոփաներէն ոմանք կը վի-
ճէին անոր հետ. և ոմանք կ'ըսէին,
Ի՞նչ ըսել կ'ուզէ այս սերմանաբաղդը,
և ուրիշներ՝ Նորահնարից երևի թէ օտար աստ-
ուածներու քարոզիչ է։ քանզի զՅիս-
ուս և յարութիւնը կ'աւետարանէր
19 անոնց։ Եւ առնելով զնա տարին Յի-
րիսապագոս, և կ'ըսէին, Կրնա՞ք իմա-
նալ Թէ ինչ է այդ նոր վարդապետու-
20 թիւնը զոր դուն կ'ըսես. Քանզի օտար
բաներ կը բերես մեր ականջներուն.
ուրեմն կ'ուզենք իմանալ Թէ ինչ պի-
21 տի ըլլան ասոնք. Քանզի Աթենացիք
ամենքը, և հոն գտնուղ օտարականք,
ուրիշ բանի չէին պարապեր, բայց միայն
ըսել կամ լսել նոր բան։
22 Անաստն Պօղոս Արիսպագոսի մէջ
կեցաւ և ըսաւ, Արք Աթենացիք, ա-
մէն կողմանէ կրօնասէր յայտ կը տես-
23 նեմ ձեզ։ Քանզի ես չրջելով և զրն-
նելով ձեր պաշտամունքը գտայ բա-
զին մի, որուն վրայ գրուած էր Անծա-
նօթին ԱՍՏՈՒԾՈՑ. ուստի զոր դուք
չճանչնալով կը պաշտէք, ես զնոյն կը
24 քարոզեմ ձեզ։ Աստուած որ ստեղծեց
զաշխարհ և զամենայն որ ի նմա, նա
լինելով Տէր երկինից և երկրի՝ ոչ ձե-
ռագործ տաճարներու մէջ կը բնակի,
25 Եւ ոչ մարդոց ձեռօք կը պաշտուի
իբրև բանի մը կարօտ, զանկէ ինք
կու տայ ամենուն կեանք և շունչ և
26 ամենայն ինչ. Եւ ի մի արենէ ըրաւ
բոլոր մարդոց ազգերը որ բնակին բո-
լոր երկրի երեսին վրայ, և հաստատուց
որոշած ժամանակներ, և անոնց բը-
նակութեան սահմանները՝ խնդրել զԱ-
27 աստած, Որ թերևս խորխորատելով գըտ-
նէին զնա. Թէպէտև չէ նա հեռու մեր
28 իւրաքանչիւրէն. Քանզի անով կ'ապ-
րինք և կը շարժինք և կանք, ինչպէս
որ ձեր բանաստեղծներէն ոմանք ըսին,
Քանզի մենք նորա ցեղէն իսկ ենք.
29 Ուստի որովհետև Աստուծոյ ցեղէն ենք,
չէ պարտ մեզ այնպէս համարիլ Թէ
Աստուածութիւնը նման է ոսկւոյ կամ
արծաթոյ կամ քարի, որ մարդու ձար-
ուրութեամբ և խելօք քանդակուած
30 է. Արդ Աստուած ազգութեան ժա-
մանակներէն անտես առնելով հիմա ա-
մէն տեղ կը պատուիրէ բոլոր մարդոց
31 ապաշխարել։ Քանզի ինք սահմանեց
օր մը, յորում պիտի դատէ զաշխարհս
արդարութեամբ այն մարդուն ձեռօք
զոր որոշեց և ամենուն հաւատացուց
յարուցանելով զնա ի մեռելոց։
32 Երբ լսեցին մեռելոց յարութիւնը,
ոմանք ծաղր կ'ընէին, ոմանք ևս կ'ը-
սէին, Այդ բանին համար ուրիշ ան-
33 գամ լսենք քեզ։ Եւ այսպէս Պօղոս
34 անոնց մէջէն ելաւ։ Սակայն ոմանք ա-
նոր յարելով հաւատացին, ընդ որս
էր Դիոնեսիոս Արիսպագացի և Դամա-
րիս անուն կին մը և անոնց հետ ու-
րիշներ ևս։

## Գլ. ԻԸ

1 Ա յնուհետև Պօղոս մեկնելով Աթէն-
2 քէ եկաւ ի Կորնթոս, Եւ գտաւ Հրեայ
մն Ակիւղաս անուն, ծննդեամբ Պոն-
տացի, որ իբր կիսով Պրիսկիլլայ հետ
նոր եկած էր յԻտալիայ, վասն զի կզ-
դեոս հրամայած էր բոլոր Հրէից հե-
ռանալ Հռովմէ, և անոնց քով գնաց,
3 Եւ որովհետև համաբուեստ էր, կեցաւ
անոնց քով և կը գործէր, քանզի ար-
4 ուեստիւ խորանակար էին։ Եւ ամէն շա-
բաթ օր կը խօսէր ժողովրդանոցին մէջ,
և կը համոզէր Հրեաներըը և Յոյներըը։
5 Եւ երբ Շիղա և Տիմոթէոս իջան Մա-
կեդոնիայէ, Պօղոսի հոգին հառնդով
վառուած ըլլալով, վկայութեամբ կը
հաստատէր Հրէից Թէ Յիսուս է Քրի-
6 ստոսը։ Եւ երբ անոնք դէմ կեցան
և կը հայհոյէին, հանդերձները թօթա-
փելով ըսաւ անոնց, Արիւն ձեր ի գլուխ
ձեր, ես անպարտ եմ. այսուհետև հե-

7 Թանուսաց պիսի երթամ, եւ անկէ երթալով մտաւ ի տուն ուրումն, որոյ անունն էր *Յուստոս, աստուածապաշտ, որոյ տունը կից էր ժողովրդապետին 8 Նոցին, եւ կրնաքոս ժողովրդապետն իր բոլոր տամբ հաւատաց ի Տէր. և Կորնթացիներէն շատեր լսելով հաւատացին, և մկրտուեցան։ եւ գիշերը տեսլեան մէջ բսաւ Տէրը Պօղոսի, Մի վախնար, այլ խօսէ և լուռ մի կենար, 10 Քանզի ես քեզի հետ եմ, և ոչ ոք դէմ պիսի կայէ քեզ՝ վնաս հասուցանել քեզ. քանզի այս քաղաքին մէջ շատ ժողովուրդ ունիմ ես։ եւ կեցաւ հոն տարի մը և վեց ամիս, և կը սորվեցուներ Աստուծոյ խօսքն անոնց մէջ։

12 Եւ Ագքայիոյ բդեշխի փոխանակին Գաղիոնի օրերը հրեայք միաբանելով դէմ եղան Պօղոսի և տարին դնա յատեան, 13 Ըսելով Թէ Այս կը հրապուրէ զմարդիկ պատուոյ օրինաց պաշտել զԱստուած։ 14 Եւ երբ Պօղոս պատրաստ էր բանալ իւր բերանը, Գաղիոն բսաւ Հրէից, Եթէ անիրաւութեան կամ չար գործի մը համար ըլլար, ով Հրեայք, արժան էր ինձ լսել ձեզ։ Բայց եթէ վէճը խօսքի և անուանց և ձեր օրինաց վրայ է, դուք ձեզէն տեսէք. քանզի ես այդպիսի բաներու դատաւոր ըլլալ չեմ 16 ուզեր։ Եւ զանոնք մերժեց ատեանէն։ 17 Ապատեն բոլոր Յոյները բռնեցին զՍոսթենէս ժողովրդապետ և առջև կը ծեծէին. և այս բաներուն վրայ Գաղիոն բնաւ հոգ չէր ընէր։

18 Եւ Պօղոս առկաւին շատ օրեր հոն մնալէն ետքը, եղբայրներէն հրաժարելով նաւեց դէպ ի Սիւրիա, և անոր հետ նաև Պրիսկիլլա և Ակիւղաս, որ գլուխը փոքրած էր ի Կենքրէա, քանզի ուխտադիր էր։ Եւ երբ Եփեսոս հասաւ, հոն թողուց զանոնք, և ինք ժողովրդանոցը մտնելով կը խօսէր Հրեից 20 հետ։ Եւ կ'ազաչէին զնա աւելի ժամանակ մնալ հրենց քով, բայց չհաւա-

21 յանձն. Այլ հրաժարեցաւ անոնցմէ ըսելով, *Պարտ է անշուշտ այս առաջիկայ տօնը կատարել Յերուսաղէմ, բայց՝ Աստուծոյ կամքը դարձեալ կը դառնամ առ ձեզ։ Եւ եփեսոսէ ճամբ. 22 բայ եկաւ Նաւտով. Եւ հասնելով ի Կեսարիա՝ երթ բսաւ, և ողջոյն առաւ եկեղեցւոյն, յետոյ իջաւ յԱնտիոք։ եւ երթալով մը հոն կենալէն ետքը ելաւ, և կը շրջէր կարգաւ Գաղատացւոց երկիրը և Փռիւգիա և կը հաստատէր բոլոր աշակերտները։

24 Եւ Ապողոս անուն մին Հրեայ, ծնընդեամբ Աղեքսանդրացի, այր ճարտասան, որ զօրաւոր էր Գրուածք, եկաւ Եփեսոս յԱխայա։ Այս Տէրոջը ճամբուն մէջ վարժուած էր, և ունենալով ջերմեռանդ հոգի կը խօսէր և կը սորվեցուներ ճշդութեամբ Տէրոջը վրայ. բայց ինք գիտէր Յովհաննու մկրտութիւնը 26 միայն։ Սա սկսաւ խօսել համարձակ ժողովրդանոցին մէջ. և երբ Ակիւղաս և Պրիսկիլլա լսեցին անկէ, առին զնա իրենց քովէ և աւելի ճշդիւ խնացուցին 27 անոր Աստուծոյ ճամբան։ Եւ երբ կամեցաւ նա երթալ յԱխայիա, եղբայրները քաջալերեցին զնա, և գրեցին աշակերտներուն ընդունել զնա, որ հոն հասնելով շատ օգտակար եղաւ հաւատացեալոց շնորհօք։ Քանզի հրապարակաւ կը յանդիմանէր առատիկ դէմերացս, ցուցնելով ի Գրոց թէ Յիսուս է Քրիստոս։

## ԳԼ. ԺԹ

1 Եւ մինչ Ապողոս էր ի Կորնթոս, Պօղոս շրջելով վերի կողմերը եկաւ յԵփեսոս, և գտնելով աշակերտներէն 2 ոմանս՝ Ըսաւ անոնց, երբ հաւատացիք, առի՞ք սրբեօք զՀոգին Սուրբ։ Եւ անոնք ըսին անոր, Բայց մենք լսած 3 անգամ չենք թէ Սուրբ Հոգի կայ։ Եւ ըսաւ անոնց, Ապա ինչո՞վ մկրտուեցաք։ Եւ անոնք ըսին, Յովհաննու-

*Ոմանք՝ Տիտոս Յուստոս

*Ոմանք՝ Լուկիոս։



4 մկրտութեամբ։ Եւ Պօղոս ըսաւ, Յովհաննէս մկրտեց ապաշխարութեան մկրտութեամբ, ըսելով ժողովրդեան հաւատալ անոր որ իրմէ ետքը պիտի գար, այսինքն Յիսուսի Քրիստոսի։ 5 Եւ երբ լսեցին, մկրտուեցան Տէր Յիսուսի անունէն առէջ։ 6 և Պօղոս երբ անոնց վրայ ձեռք դրաւ, Սուրբ Հոգին եկաւ անոնց վրայ, և կը խօսէին լեզուներ և 7 կը մարգարէանային։ Եւ այն բոլորը մարդիկ էին իրր երկոտասան։ Եւ Պօղոս մտնելով, երեք ամիս համարձակութեամբ կը խօսէր Աստուծոյ թագաւորութեան վրայ և կը համոզէր։ 9 Իսկ երբ ոմանք կը յամառէին և դէմ կը դնէին բառնալ Տէրոջը ճամբան առջև բամբասելով այն ճամբան, հեռացաւ անոնցմէ և զաւակ աշակերտները, և ամէն օր կը խօսէր Տիւրաննայ ուրումն դպրատան մէջ։ 10 Եւ այս տեւեց երկու տարի, մինչև բոլոր Ասիա բնակող Հրեայք և Յոյնք լսեցին *Տէրոջը խօսքը։ Եւ Աստուած նշանաւոր հրաշներ կ'ընէր 12 Պօղոսի ձեռօք. Այնպէս որ անոր մարմնէն թաշկինակ և վարշամակ կը տանէին հիւանդներուն, և կը բժշկուէին իրենց ցաւերէն, և չար ոգիները կ'ելլէին։ 13 Բայց ասաննգպան Հրեաներէն ոմանք որ երթ կենցաղ կ'երթային Դանդըգենեան Տէր Յիսուսի անունը կոչել անոնց վրայ որ ունէին չար ոգիներ, և կ'ըսէին, Կ'երդմնցնենք զձեզ Յիսուսի 14 որ, զոր Պօղոս կը քարոզէ։ Եւ զայս բնաղներն էին եօթն որդիք Սկեւայ, 15 Հրեայ քահանայապետի։ Իսկ չար ոգին պատասխանի ետ բսաւ, ԶՅիսուս կը ճանչնամ և զՊօղոս գիտեմ, բայց դուք ով էք։ Եւ այն մարդը յորում էր չար ոգին՝ վազելով անոնց վրայ բռնեց զանոնք և յաղթեց, մինչև դուրս փախան այն տունէն մերկ և 17 վիրաւորեալ։ Եւ այս յայտնի եղաւ Եփեսոսի մէջ բնակող բոլոր Հրէից և Յունաց. և ահ ինկաւ անոնց ամենուն վրա-

†Յոան. ձեռն արկին

30 Թաւրոնը, իսկ Պօղոս երբ կամեցաւ մտնել ամբոխին մէջ, աշակերտները
31 չԹողուցին զնա։ Ասիոյ պետերէն ևս ոմանք որ անոր բարեկամ էին՝ դրկելով առ նա կ՚աղաչէին չհամարձակիլ
32 երթալ Թաւրոնը։ Ուստի այլք այլ բան կ՚աղաղակէին, քանզի ժողովը խռովեալ էր, և շատերը չէին գիտեր
33 Թէ ընդէր ժողովեալ էին։ Եւ բազմութենէն յառաջ բերին զԱղէքսանդրոս, զոր Հրեայք մղեցին յառաջ։ և Ագէքսանդրոս ձեռքը շարժելով կ՚ուզէր պատասխան տալ ժողովրդեան, իսկ երբ
34 գիտացան Թէ Հրեայ էր նա, ամէնքը միաբերան կ՚աղաղակէին իրը երկու ժամ Մեծ է Արտեմիս Եփեսացւոց։
35 Սակայն ատենագրին հանդարտեցնելով ամբոխն, ըսաւ, Արք Եփեսացիք, ո՞ր մարդ է որ չգիտեր Եփեսացւոց քաղաքը պաշտօնատար *մեծին Արտեմեայ և Դիոսէ ինկած կուռքին։
36 Ուրեմն, որովհետև այն անհակառակելի է, պարտ է ձեզ հանդարտ կենալ, և չընել ինչ յանդգնութեամբ։
37 Քանզի դուք այդ մարդիկը բերիք հոս, ոչ տաճարախոսողներ, և ոչ հայհոյիչ
38 ձեր աստուծոյն։ Ուստի եթէ Դեմետրիոս և ճարտարք որ անոր հետ են՝ բան մը ունին մարդու հետ, գաւառ օրեր կան և բռնչխի փախանակ կան։
39 Թող առիթասանեն զիրար։ Իսկ եթէ ուրիշ բաներու վրայ է ձեր խնդիրը, օրինաւոր ժողովոյ մէջ թող որոշուի։
40 Քանզի և մենք ի վտանգի ենք ամբաստանուելու այս օրուան խռովութեան վրայ, վասն զի չկայ պատճառ որով կարող ըլլանք պատասխան տալ այս ամբոխին համար։ Եւ այսպէս բանալով ար ձակեց ժողովը։

## Գլ. Ի

1 Եւ երբ ադմուկը դադարեցաւ, Պօղոս աշակերտները կոչեց իրեն, և հրաժարական ողջոյն առալով երթալ էր Մակեդոնիա։ 2 Եւ այն կողմերը շրջելէ և շատ խօսքերով զանոնք յորդորելէ 3 եկաւ, եկաւ յԵլլադա։ Եւ երբ հոն երեք ամիս կեցաւ, Հրեայք նենգութեան խորհուրդ բրին անոր դէմ, երբ կ՚ուզէր Սիւրիա երթալ. վասն որոյ դառնալ Մաքեդոնիա։ Մակեդոնիոյ 4 Նիոյ։ Եւ մինչև Ասիա անոր հետ կ՚երթար Բերիոյ [Պիւռոս որդի] Սոպատրոս, և Թեսաղոնիկեցիներէն Արիստարքոս և Սեկունդոս, և Գայիոս Դերբացի և Տիմոթէոս, և Ասիացիք՝ Տիւքիկոս և Տրոփիմոս։ Ասոնք յառաջագոյն 5 կաս և Տրոփիմոս։ Ասոնք յառաջագոյն դացին և Տրոադացի մէջ կը սպասէին 6 մեզ։ Եւ բաղարջակերաց օրերէն ետքը Փիլիպպէ նաւեցինք, և հինգ օրուան մէջ եկանք անոնց քով ի Տրոադա, և կեցանք հոն եօթն օր։
7 Եւ միաշաբաթի օրը երբ *ժողոված էինք՝ բեկանելու հաց, կը քարոզէր առնոնց Պօղոս, որ ի վաղիւն ճամբայ ելիար եղէր։ Եւ երկարեց խօսքը մինչև 8 կէս գիշեր։ Եւ շատ լապտերներ կային այն վերնատան մէջ ուր ժողոված էինք։
9 Եւ երիտասարդ մը Եւտիքոս անուն պատուհանին վրայ նստած՝ ընկղմած էր ի խոր քուն. երբ Պօղոս երկայնեց խօսքը, նա խոր քնով բռնուած՝ ինկաւ վար երրորդ յատակունէն, և վերցուցին զնա մեռած։ Եւ Պօղոս իջնելով ինկաւ անոր վրայ և գրկեց զնա և ըսաւ, Մի խռովիք, քանզի անոր 10 հոգին ի սմա է։ Եւ վերելլով կոտրեց հացը և կերաւ, և երկար խօսելով մինչև առաւօտ՝ յետոյ ելաւ գը-
11 նաց։ Եւ բերին այն պատանին ողջ, և
12 մեծապէս մխիթարուեցան։ Իսկ մենք նաւ մտնելով ճամբայ ելանք դէպ ի Ասոն, ուստի պիտի առնուինք զՊօղոս, քանզի այնպէս պատուիրած էր, վասն
13 զի ինք պիտի երթար †ցամաքաւ։ Եւ երբ հանդիպեցաւ մեզ, առինք զնա և եկանք Միտիլինէ։ Եւ նաւելով հեռացաք օրը հասանք Քիոսի դիմացը։ և

*Ոմանք՝ մեծ աստուածուհւոյն

*Ոմանք՝ աշակերտները ժողոված էին
†Կամ հեռի



միւս օրը հասանք ի Սամոս, և հինգերորդ կենալով ի Տրոգիլիոն՝ միւս օրը եկանք
16 ի Միղիտոս։ Քանզի Պօղոս դրած էր ի մտի նաւով անցնել Եփեսոսի քովէն, որ մի գուցէ ժամանակ անցուներ յԱսիա, քանզի կը փութար, եթէ հնար էր նմա, Պենտեկոստէի օրն ըլլալ Երուսաղէմ։
17 Եւ Միղիտոսէ *ղրկեց յԵփեսոս
18 և կոչեց եկեղեցւոյն երէցները։ Եւ երբ եկան անոր, ըսաւ անոնց, Դուք գիտէք որ այն առաջին օրէն հետէ որ ես յԱսիա եկայ, ինչպէս վարուեցայ
19 ձեր հետ բոլոր ժամանակ. Ամենայն խոնարհութեամբ Տառապելով Տեառն, և շատ արտասուօք և փորձութեամբ որ Հրեից դներդութիւններէն պատա-
20 հեցան ինձ. Ինչպէս ես չկեցայ օգտակար բաներէ և ոչ մին ըսել ձեզ, և հրապարակաւ և առանձին սորվեցնել
21 զձեզ. Վկայութիւն տալով Հրեից և Յունաց ապաշխարութեան հանդէպ առ Աստուած, և հաւատալ հանդէպ ի Տէր
22 մեր Յիսուս Քրիստոս։ Եւ հիմա ահա ես հոգւով կապուած կ՚երթամ Երուսաղէմ, և հոն ինչ որ պիտի պատահի
23 ինձ, չեմ գիտեր. Միայն Թէ Հոգին Սուրբ ամէն քաղաքի մէջ կը վկայէ և կ՚ըսէ Թէ կապեր և նեղութիւններ կը
24 սպասեն ինձ։ Բայց ոչինչ փոյթ է ինձ, և ոչ պատուական կը համարիմ զանձն, միայն Թէ կատարեմ ընթացքս ուրախութեամբ, և պաշտօնը զոր առի ի Տեառնէ Յիսուսէ վկայ ըլլալ Աւետարանի
25 շնորհաց աւետարանին։ Եւ արդ ահաւասիկ գիտեմ որ այլ ևս իմ երեսս պիտի չտեսնէք դուք ամենքդին, յորս չքնեցայ քարոզելով Աստուծոյ Թագաւորութիւնը։ Ուստի այսօր կը վկայեմ
26 ձեզ, որ ես անպարտ եմ յարենէ ամենեցուն. Քանզի չխորշեցայ յայտնել
27 ձեզ Աստուծոյ բոլոր կամքը։ Ուրեմն զգուշացէք ձեր անձերուն և բոլոր հօտին, որոյ վրայ Հոգին Սուրբ դրաւ զձեզ տեսուչ՝ հովանալ *Աստուծոյ ե-
28 կեղեցին, զոր ստացաւ իւր արեամբ։
29 Քանզի գիտեմ որ իմ մեկնելէս ետքը պիտի մտնեն ձեր մէջ *յափշտակող
30 գայլեր, որ պիտի չխնայեն հօտին։ Եւ ձեռէ ևս պիտի ելլեն այնպիսի մարդիկ, որ ծարաւ բաներ պիտի խօսին՝ աշա-
31 կերտներն իրենց ետև ձգելու։ Ուստի արթուն կեցէք, և յիշեցէք որ երեք տարի գիշերօրեայ չդադարեցայ արտասուօք խրատել իւրաքանչիւր։
32 Եւ հիմա, եղբարք, կը յանձնեմ զձեզ Աստուծոյ և անոր շնորհաց խօսքին, որ կարող է շինել և բոլոր սրբուածներուն հետ տալ ձեզ ժառանգութիւն։
33 Ոչ արար արծաթոյն կամ ոսկւոյն
34 կամ հանդերձին ցանկացայ. Դուք ձեզն գիտէք որ ինձ և ինծի հետ եղողներուն պէտքը հոգացին այս ձեռքերս։
35 Ամէն բան ցոյց ձեզ, Թէ այսպէս պարտ է աշխատիլ և օգնութիւն ընել ակարաց, և յիշել Տեառն Յիսուսի խօսքը զոր ըսաւ, Երանելի է տալն
36 քան առնուլն։ Եւ երբ զայս ըսաւ, անոնց ամենուն հետ ծունր դնելով աղօթեց։ Եւ ամենքը սաստիկ կոծ լային,
37 և Պօղոսի պարանոցին վրայ իյնալով
38 կը համբուրէին զնա։ Անոնց սիրտը կը ցաւէր մանաւանդ այն խօսքին համար զոր կ՚ըսէր Թէ այլ ևս պիտի չտեսնէին անոր երեսը։ Եւ յետ ճարկեցին զնա մինչև նաւը։

## Գլ. ԻԱ

1 Եւ երբ եղանք և անոնցմէ պատուելացանք, ուղղակի նաւելով եկանք ի Կոս, և ի վաղիւն ի Հռոդոս, և անկէ՛ ի Պատարա։ 2 Եւ գտանք նաւ մի որ կ՚երթար ի Փիւնիկէ, և անոր մէջ մտնելով
3 ելանք ի ճամբայ։ Եւ երբ կիպրոս երեւեցաւ, Թողլով զայն մեր ձախ կողմը՝ նաւեցինք դէպ ի Սիւրիա և եղանք ի Տիւրոս, քանզի նաւը հոն պիտի Թա-
4 փէր բեռը։ Եւ գտնելով աշակերտները եօթն օր կեցանք հոն, որ Հոգւով Աստ-

*Կամ ինքնակար

*Ոմանք՝ Տէրոջը

Քեզ կ'ըսէին Պօղոսի չկրել յերուսաղէմ, եւ երբ այն օրերն անցուցինք, ելանք եւ կ'երթայինք. ամէնքը կանանցիք եւ մանուկով մինչեւ քաղաքէն դուրս յառաջկէին զմեզ. եւ ծունր դնելով յեզերք ծովուն աղօթեցինք, եւ իրարու հրաժարական ողջոյն տալով՝ մենք նաւը ելանք, եւ անոնք դարձան իրենց տեղերը, իսկ մենք Տիւրոսէ ընդհատելէ ծովու ճանապարհորդութիւնը կատարելով հասանք Պտողէմայիս, եւ եղբայրները ողջունելով օր մը կեցանք անոնց քով. եւ ի վաղիւ անդր ելանք եւ եկանք ի Կեսարիա, եւ մտնելով ի տունն փիլիպպոսի աւետարանչին, որ էր մին եօթնոցն, կեցանք անոր քով. նա աներէց չորս դուստր կոյս, որ մարգարէութիւն կ'ընէին, եւ երբ հոն չատ օրեր կեցանք, հրէաստանէ մարգարէ մը իջաւ Ագաբոս անուն. նաեւ. եւ երբ եկաւ առ մեզ, առնելով Պօղոսի գօտին կապեց իր ձեռքերը եւ ոտքերները, եւ ըսաւ, Այսպէս կ'ըսէ Հոգին Սուրբ. Այն մարդը որուկ է այս գօտին՝ այսպէս պիտի կապեն Հրեայք յԵրուսաղէմ, եւ պիտի մատնեն հեթանոսաց ձեռքը։ Եւ երբ լսեցինք զայս, աղաչեցինք, թէ՛ մենք թէ՛ ուրացիք, որ չերթայ յԵրուսաղէմ։ Իսկ Պօղոս պատասխան տուաւ, Ի՞նչ կ'ընէք, ընդ՞ի կուլաք եւ կը ճմլէք սիրտս. քանզի ես ոչ միայն յԵրուսաղէմ կապուելու, այլ եւ մեռնելու պատրաստ եմ յանուն Տեառն Յիսուսի։ Եւ երբ չլսեց, լուռ կեցանք, եւ ըսինք, Կամք Տեառն եղիցի։

Եւ այն օրերէն ետքը պատրաստուելով եկանք յԵրուսաղէմ։ Եւ կնասրացի աշակերտներէն ես անոնք մեր հետ եկան, եւ մարէին ընդ՞նեղեան աշակերտի մը, կիպրացի Մնասեանի, որուն քով պիտի կենայինք։ Եւ երբ մտանք յԵրուսաղէմ, եղբայրներն ընկալան զմեզ ուրախութեամբ։ Եւ ի վաղիւ անդր Պօղոս մեզի հետ գնաց առ Յակոբոս, եւ բոլոր երիցունք ներկայ եղան։ Եւ զանոնք ողջունելով մի քսան միջէ կը պատմէր ինչ որ բրաւ Աստուած հեթանոսաց միջէ անոր ծառայութեամբ։ Եւ անոնք լսելով փառք կու տային *Տէրոջը. և ըսին անոր, Կը տեսնե՞ս, եղբայր, քանի բիւրաւոր հաւատացեալ հրեաներ կան, և ամէնքը նախանձաւոր են օրինացս։ Բայց քու վրադ խնդրան թէ դուն բոլոր հրէից որ հեթանոսաց մէջ են՝ կը սորվեցնես ապստամբել Մովսիսէ, ըսելով չթլխատել իրենց ազգքը, և չվարուիլ քանս սովորութեանց։ Արդ ի՞նչ պիտի ըլայ. անչուշտ բազմութիւն պիտի ժողովի, քանզի պիտի լսեն թէ եկած ես։ Ուստի ըրէ զոր զոր կ'ըսենք քեզ։ Մեր քով չորս մարդիկ կան, որ իրենց վրայ ուխտ դրած են։ Առ զանոնք, անոնց հետ մաքրուէ, և անոնց համար ծախք ըրէ, որ իրենց գլուխն ածիլեն. որպէս զի ամէնքը գիտանան թէ ինչ որ խնդրած են քու վրադ՝ ոչինչ է, այլ դուն ևս դէպ հետ կը քալես պահելով օրէնքը։ Բայց հաւատացեալ հեթանոսաց համար մենք թուղթ զրկեցինք, ինչպէս որոշեցինք, որ անոնք բնաւ այսպիսի բաներ չպահեն. միայն զգուշանան կռոց զոհուածէ և յարենէ և ի հեղձուցիչէ և պոռնկութենէ։ Անոնք Պօղոս առաւ այն մարդիկը, և հետևեալ օրն անոնց հետ մաքրուած՝ մտաւ տաճարը, յայտնելու համար թէ մաքրութեան օրերը կատարած էին, մինչև որ անոնց իւրաքանչիւրին համար պատարագ մատուցուեցաւ։

Եւ երբ եօթն օրերը կատարելու մօտ էին, Ասիացի հրեաները տաճարին մէջ տեսնելով զայն՝ խռովեցուցին բոլոր բազմութիւնը, և ձեռք մխկելով ի վրա ի՛ազգակիցն, Այր Իսրայէլացիք, օգնութեան հասէք. այս այն մարդն է որ ամէն տեղ ժողովրդեան և օրինաց և այս տեղուս դէմ բան կը սորվեցու-

*Ոմանք՝ Յ՚ԵՐՈՒՍՂԵՄԻՆ մինչ որ Պօղոսի ընկերներն էինք՝

*Ոմանք՝ Աստուծոյ



նէ ամէնուն, մինչև տաճարին մէջ Յոյները մտուցէ, և պղծէց այս սուրբ տեղը։ (Վասն զի յառաջագոյն ՏԻՐՈՓԻՄոս Եփեսացի տեսած էին անոր հետ քաղաքին մէջ, և կը կարծէին թէ Պօղոս մտուցէ զնա տաճարը)։ Եւ բոլոր քաղաքը շարժեցաւ և ժողովուրդը դիմեցաւ, և բռնեցին զՊօղոս, ձգեցին տաճարէն դուրս, և փակեցան դռնքն անմիջապէս։ Եւ երբ անոնք կ'ուզէին սպաննել զնա, լուր հասաւ առ հազարապետս գնդին թէ բոլոր Երուսաղէմ խառնակեալ է։ Որ յայնժամ առեալ հազարապետը զինուորներ և հարիւրապետներ՝ դիմեց անոնց վրայ. և անոնք տեսնելով հազարապետը և զինուորները դադրեցան ծեծելէ զՊօղոս։ Անառնն հազարապետը մտանելով բռնեց զնա, և հրամայեց կրկին չղթայիւք կապել. և կը հարցանէր թէ ո՞վ է և ի՞նչ բրած է։ Եւ ոմանք մէջէն մին այս կերպ, և մին այն կերպ կ'աղաղակէին. իսկ երբ չկրցաւ ստոյգը գիտալ այն չափ խռովութենէն, հրամայեց տանել զնա բերդը։ Եւ երբ հասաւ սանդուղը, դէպ եղաւ զինուորաց վեր վերցունել զնա ժողովրդեան բռնութեանը համար. Քանզի ժողովրդեան բազմութիւնը կ'երթար եւանէն, և կ'ըսէին, Բարձ զզա։ Եւ երբ Պօղոս մտնելու մօտ էր բերդը, ըսաւ հազարապետին, Արդեօք կարելի՞ է որ բան մը խօսիմ քեզ։ Եւ նա ըսաւ, Յունարէն գիտե՞ս։ Մի՞թէ դուն այն Եգիպտացին չէ՞ս որ այս օրերէն առաջ ապստամբեցուցիր չորս հազար *սրիկայ մարդիկ, և տանեցիր անապատս։ Իսկ Պօղոս ըսաւ, Ես եմ այր Հրեայ, ի Տարսոնէ Կիլիկիոյ, ոչ աննշան քաղաքի քաղաքացի, և կ'աղաչեմ զքեզ՝ հրաման տուր ինձ խօսել ժողովրդեան։

Եւ երբ հրաման առաւ նա, Պօղոս սանդղին վրայ կենալով շարժեց ձեռքը ժողովրդեան, և երբ չատ լռութիւն եղաւ, խօսեցաւ անոնց Եբրայեցական լեզուաւ, և ըսաւ,

## Գլ. ԻԲ

1 Այր եղբարք և հարք, լսեցէք ինձ որ
2 հիմա պատասխան կու տամ ձեզ։ (Երբ լսեցին որ Եբրայական լեզուաւ կը խօսէր անոնց, առաւել ևս լուռ կեցան.
3 Եւ նա ըսաւ,) Ես այր Հրեայ եմ, ծնեալ ի Տարսոն Կիլիկիոյ, և այս քաղաքիս մէջ սնեալ առ ոտն Գամաղիէլի, կրթեալ ըստ ճշդութեան հայրենի օրինաց, նախանձաւոր էի Աստուծոյ, ինչ-
4 պես այսօր դուք ամէնդդ էք։ Որ հալածեցի այս ճանապարհս մահ-
5 նելով՝ հալածեցի այս ճամբան մինչև ի մահ։ Ինչպէս որ քահանայապետն ևս կը վկայէ ինձ և բոլոր ծերակոյտը. յորոց և թուղթեր առնելով եղբայրներուն՝ կ'երթայի ի Դամասկոս, զանոնք ևս որ հոն էին կապուած բերել յԵրուսաղէմ որ պատժուէին։ Եւ եղաւ
6 երբ կ'երթայի և մօտեցայ ի Դամասկոս, կէս օրուան մօտ յանկարծակի յերկինքն լոյս մեծ փայլատակեց բոլոր-
7 ութիւն։ Եւ գետին ինկայ, և լսեցի ձայն որ կ'ըսէր ինձ, Սաւուղ, Սաւուղ, ընդ-
8 դէ՞ր կը հալածես զիս։ Եւ ես պատասխանեցի թէ Դուն ո՞վ ես, Տէր։ Եւ նա ըսաւ ինձ, Ես եմ Յիսուս Նազով-
9 րեցի, զոր դուն կը հալածես։ Բայց անոնք որ ինծի հետ էին՝ լոյսը տեսան և ահի լցան, սակայն չլսեցին ինձ խօսողին ձայնը։ Եւ ըսի, Ի՞նչ ընեմ, Տէր։
10 Եւ Տէրը ըսաւ ինձ, Կեցիր, և գնա ի Դամասկոս, և հոն պիտի ըսուի քեզ այն ամէն բաներուն համար որ սահմանուած են
11 քեզ ընել։ Եւ երբ չէի տեսներ այն լուսոյն փառքին, անոնք որ հետս էին՝ ձեռքէս բռնեցին, և մտայ ի Դամաս-
12 կոս։ Եւ մին Անանիա, երկիւղած ըստ օրինաց, Դամասկոս բնակող բոլոր հրէից վկայուած,
13 եկաւ առ իս, և կենալով քովս ըսաւ ինձ, Սաւուղ
14 եղբայր, վեր նայէ։ Եւ ես նոյնժամայն

*Յոյն. սիկարեան, այսինքն մարդ սպանող սակառով

վէր նայեցայ անոր. և նա ըսաւ, Մեր հայրերուն Աստուածն յառաջագոյն ընտրեց զքեզ որ անոր կամքը ճանչնաս և այն Արդարը տեսնես, և լսես
15 ձայն անոր բերնէն. Քանզի բոլոր մարդոց առջև անոր վկայ պիտի ըլլաս այն բաներուն համար զորս տեսար և լսեցիր. եւ հիմա այլ ևս ի՞նչ կը յապաղես. ել, մկրտուէ և լուա մեղքերդ
17 կորնչելով *անոր անունը։ Եւ եղաւ երբ դարձայ Երուսաղէմ և ի՛աղօթէի տաճարին մէջ, մտաց յափշտակութիւն ե-
18 կաւ վրաս, եւ տեսայ զնա, որ ի՛ըսէր ինձ, Փութա և ել վազվազակի Երուսաղէմէ, քանզի քու վկայութիւնդ ինծի
19 համար պիտի չընդունին. եւ ես ըսի, Տէր, անոնք գիտեն թէ ես էի որ հաւատացեալներն ի քեզ բանտ կը դնէի, և ժողովրդանոցներու մէջ կը ծեծէի.
20 Եւ երբ քու վկայիդ Ստեփանոսի արիւնը կը թափուէր, ես ինքն ներկայ էի և կամակից էի դառնը ապանձն, և զնա սպանողներուն հանդերձները
21 ես կը պահէի. եւ ըսաւ ինձ, Գնա, քանզի ես պիտի ղրկեմ զքեզ հեռաւոր հեթանոսներուն։
22 Եւ անոնք մինչև այս խօսքն ունկն դրին անոր, յետոյ վերցուցին իրենց ձայները և ըսին, Վերցու աշխարհէ այդպիսի մարդը, քանզի չվայելը տոր
23 ողջ մնալ։ Եւ երբ կ'աղաղակէին և կը նետէին իրենց հանդերձները և կը ցա-
24 նէին փոշին յօդս, Հազարապետն հրամայեց մուծանել զնա բերդը, և ըսաւ ծեծով հարցու փորձ ընել զնա, որ գիտնար թէ ինչ յանցանաց համար այն-
25 պէս կ'աղաղակէին անոր դէմ։ Եւ երբ կապկպին զնա փակերով, Պօղոս ըսաւ վերակացու հարիւրապետին, Արժա՞ն է ձեզ Հռովմայեցի և չդատապար-
26 տուած մարդ ծեծել։ Հարիւրապետը երբ լսեց, գնաց պատմեց հազարապետին և ըսաւ, ‡Ի՞նչ պիտի բնես, քանի
27 զի այս մարդն Հռովմայեցի է։ Եւ հազարապետը գնաց և ըսաւ անոր, Ըսէ ինձ, դուն Հռովմայեցի՞ ես։ Եւ նա
28 ըսաւ, Այո՛։ Հազարապետը պատասխան առաւ, Ես շատ մեակով ստացայ այս քաղաքացիութեան իրաւունքը։ Եւ Պօղոս ըսաւ, Ես ծնած իսկ եմ
29 —Տէր Աստուած։ Եւ անոնք որ հարցու փորձ պիտի ընէին զնա, իսկոյն ետ կեցան անկէ. և հազարապետն իսկ վախցաւ, երբ իմացաւ թէ Հռովմայեցի էր, և քանզի կապած էր զնա։
30 Եւ ի վաղիւ անոր կամենալով ուղիղ գիտնալ թէ ինչ էր Հրէից ամբաստանութիւնն անոր դէմ, *արձակեց զնա, և հրամայեց քահանայապետներուն և բոլոր ժողովոյն գալ ի մի վայր. և Պօղոս իջուցանելով կեցուց անոնց առջև։

## Գլ. ԻԳ

1 Եւ Պօղոս իր աչուընները ժողովոյն դարձնելով ըսաւ, Արք եղբարք, ես բոլորովին բարի խղճիս կեանք վարած եմ Աստուծոյ առջև մինչև այս օր։
2 Եւ Անանիա քահանայապետն հրամայեց իրեն քով կեցողներուն զարնել
3 անոր բերնին։ Անոնէն Պօղոս ըսաւ անոր, Աստուած պիտի զարնէ զքեզ, սրտ բռնակ, որ նստած ես օրինաց համեմատ զիս դատելդ, և արտաքոյ օրինաց կը հրամայե՞ս զարնել ինձ։ Եւ
5 ըսողն կեցողներն ըսին, Աստուծոյ քահանայապե՞տը կը նախատես։ Եւ Պօղոս ըսաւ, Եղբարք, չէի գիտեր թէ քահանայապետ է։ Զի գրուած է, Իշխանին դէմ չարախօսութիւն մի ըներ։
6 Եւ Պօղոս գիտնալով թէ մի կողմը սադուկեցի էր, և մէկը՝ փարիսեցի էր, կանչեց ժողովոյն մէջ, Արք եղբարք, ես փարիսեցի եմ, փարիսեցւոյ որդի. մեռելոց յարութեան յուսոյն համար կը
7 դատուիմ։ Եւ երբ բաւ զսյն՝ փարիսեցւոց և սադուկեցւոց մէջ երկպառակութիւն ինկաւ, և բազմութիւնը

*Ոմանք՝ կապերէն արձակեց



8 բաժնուեցաւ, Քանզի սադուկեցիք կ'ըսեն թէ չիք յարութիւն, և ոչ հրեշտակ և ոչ հոգի. բայց փարիսեցիք կը
9 դաւանին վերկոսին։ Եւ մեծ աղաղակ եղաւ. և դպիրք որ փարիսեցւոց կողմէն էին՝ յոտն կալով կը հակառակէին և կ'ըսէին, Մենք այս մարդուն վրայ չարութիւն չենք գտներ. այլ թէ հոգի կամ հրեշտակ խօսած է
10 անոր, *Ի՞նչ։ Եւ երբ ազմուկը սաստկացաւ, հազարապետը վախնալով թէ գուցէ Պօղոս անոնցմէ պատառուէր, հրամայեց զինուորներուն իջնել յափշտակել զնա անոնց մէջէն և բերել բերդը։ Եւ յաջորդ գիշերը Տէրը կեցաւ անոր քով և ըսաւ, Քաջալերուէ, Պօղոս, վասն զի ինչպէս որ Երուսաղէմ վկայեցիր ինծի համար, այնպէս պարտ է քեզ ի Հռովմ ևս վկայել։ Եւ երբ առաւօտ եղաւ, Հրէաներէն ոմանք միաբանեցան, և նզովքին դանձին, ըսելով չուտել և
13 չխմել մինչև սպաննեն զՊօղոս։ Եւ էին աւելի քան զքառասունն որ այս երդումին
14 բերին իրարու հետ. Որք և գացին քահանայապետներուն և ծերերուն և ըսին, Նզովիւ նզովեցինք զանձինս մեր բան մը չուտել մինչև սպաննենք զՊօ-
15 ղոս։ Ուստի դուք ժողովոյն հետ իմացուցէք հազարապետին որ վաղիւ իջուցանէ զնա առ ձեզ, որպէս թէ գուք աւելի ճիշդ քննութիւնը կ'ուզէք անոր վրայ. և մենք, յառաջ քան անոր մօտենալը, պատրաստ ենք սպան-
16 նել զնա։ Եւ Պօղոսի քեռորդին երբ լսեց այս դաւաճանութիւնը, եկաւ բեր-
17 դը մտաւ և պատմեց Պօղոսի։ Եւ Պօղոս կոչելով հարիւրապետներէն մին իրեն՝ ըսաւ, Այս պատանին տար հազարապետին, քանզի բան մը ունի ի-
18 մացնելու անոր։ Եւ նա առաւ զնա և տարաւ հազարապետին և ըսաւ, Բանտարկեալն Պօղոս կոչեց զիս, և աղաչեց բերել առ քեզ այս պատանին որ
19 խօսք ունի քեզ։ Եւ հազարապետը

*Ոմանք՝ Աստուծոյ հետ չմարանչինք։

բռնելով անոր ձեռքէն գնաց մեկուսի, և հարցուց, Ի՞նչ ունիս իմացու-
20 նելդ ինծի։ Եւ ըսաւ, Հրեայք միաբանեցան աղաչել զքեզ որ վաղիւ ի-ջուցանես յառաջ ժողովոյ, որպէս թէ ի՛ուզեն աւելի ճիշդ քննութիւն ընել
21 անոր վրայ։ Բայց դուն չլսես անոնց, քանզի դարանամուտ եղած են անոր համար անոնցմէ մարդիկ աւելի քան զքառասուն, որ նզովեցին զանձինս չուտել և չխմել մինչև սպաննեն զնա. և հիմա պատրաստ են, և կը սպասեն քու հրամանիդ։ Անտուն հազարապետն արձակեց զպատանին, պատուիրելով, Մարդու մի ըսեր որ իմացուցիր ինծ զայս։
23 Եւ կոչեց հարիւրապետներէն երկուքը և ըսաւ, Պատրաստեցէք երկու հարիւր զինուոր, և երեսուն ձիաւոր և երկու հարիւր աջապաւոր, որ երթան մինչև Կեսարիա գիշերուան երրորդ ժամուն։ Եւ գրաստներ պատրաստեցէք, որ Պօղոս հեծցնեն և տանեն ապահովաբար առ Փելիքս
25 կուսակալ։ Եւ գրեց թուղթ զայս օ-
26 րինակ։ Կղօդիոս Լիսիաս առ պատ-
27 ուական Փելիքս կուսակալ, ողջոյն։ Այս մարդը Հրեաներէն բռնուած էր, և սպաւ սպանուէր անոնցմէ, իսկ ես վրայ հասնելով զօրականօք ազատեցի զնա, իմանալով թէ Հռովմայեցի է։ Եւ կա-
28 մեցայ գիտնալ պատճառը որով վասն զոր վրայ ամբաստանութիւն կ'ընէին,
29 անոնց տուի զնա իջուցի զնա, Զոր գտայ ամբաստանուած իրենց օրինաց վէճ-
բերելու համար, և չունէր մեռնելու կամ կապուելու արժանի
30 յանցանք. Եւ երբ լուաւ թէ Հրեայք դաւադիր պիտի լրտեն այդ մարդուն համար, իսկոյն զրկեցի առ քեզ, հրամայելով ամբաստանողներուն ևս որ քու առջևդ խօսին առոր վրայ։ Ողջ լեր։
31 Եւ զինուորք բան հրամանին առին զՊօղոս և գիշերայն տարին յԱնտի-
32 պատրիս։ Եւ ի վաղիւ անոր թողուցին ձիաւորներն երթալ անոր հետ, և ի-

33 բննեք զարձան բերդը, իսկ անոնք մը-
ան կնաբրիա, և տանին թուղթը կու-
սակալին, և զՊօղոս կեցուցին անոր
34 առջև։ Երբ *կարդաց, հարցուց թէ
ո՞ր գաւառէ էր, և իմանալով թէ կի-
35 լիկեցի էր, Լսաս, Պիտի լսեմ քեզ,
երբ գտատառնելդ ես դան։ Եւ հրա-
մայեց պահել զնա Հերովդեսի պալատը։

## ԳԼ. ԻԹ

1 Եւ հինգ օր ետքը Անանիա քահանա-
յապետ իջաւ Ծերերուն հետ և Տեր-
թուղոս անուն ճարտասանօրէ մը հետ.
և ատոնք խնդացուին կուսակալին Պօ-
2 ղոսի դէմ։ Եւ երբ կոչեցին զնա, Տեր-
թուղոս սկսաւ ամբաստանել և ըսել,
Որովհետև քու ձեռօքդ կը վայելենք
շատ խաղաղութիւն, և խնամօքդ այս
ազգին բաներուն տակէ կարգադրու-
3 թիւնը, Ամենայնիւ և ամենայն ուրեք
բոլորովին գոհ ըլլալով շնորհակալ ենք,
4 ով պատուական Փելիքս։ Բայց որպէս
զի աւելի ձանձրութիւն չտամ քեզ,
կ'աղաչեմ որ քու քաղցրութեամբդ
5 ունկն դնես մեզ համառօտիւ։ Քանզի
գտանք այս մարդն ապականիչ և խռո-
վարար բոլոր Հրէից որ են յաշխարհին,
և Նազովրեցւոց աղանդին առաջնորդ։
6 Որ զառաջն անգամ ուզեց պղծել
զոր բանեցինք և մեր օրինաց համեմատ
7 կամեցանք դատել։ Բայց Լիւսիաս հա-
զարապետ եկաւ մեծ բռնութեամբ ա-
8 ռաւ մեր ձեռքէն, Եւ առ քեզ գալ
հրամայեց անոր դատախազներուն,
զորս դուն քննելով կարող պիտի ըլլաս
անդրկանալ այն ամէն բաներուն, որոց
համար մենք ամբաստանութիւն կ'ը-
9 նենք ատոր վրայ։ Հրեայք ևս միաբան
ըսին թէ այդպէս է։
10 Գատաստան առաւ Պօղոս, երբ կու-
սակալն անկարգեց անոր խօսել։ Գիտ-
նալով որ շատ տարիներէ հետէ դուն
այս ազգին դատաւորն ես, ուստի յօ-
ժարութեամբ պատասխան կու տամ

*Ոմանք+ կուսակալը կարդաց

այն բաներուն համար որ կը վերաբե-
11 րին ինձ։ Քանզի կրնաս գիտնալ թէ
չէ աւելի քան երկուասան օր յորմէ
հետէ ելայ յԵրուսաղէմ երկրպագու-
12 թիւն ընել։ Եւ չգտան զիս տաճարին
մէջ որ մարդոց հետ կը վիճէի կամ
բազմութիւնը ժողված էի ի մի վայր,
13 և ոչ ի ժողովրդանոցս, Եւ ոչ ի քա-
ղաքին։ և ոչ խակ կրնան յանդիման
կացուցանել որոց համար արդ կ'ամ-
14 բաստանեն զիս։ Բայց կը խոստովանիմ
քեզ զայս, թէ ըստ ճանապարհին զոր
սոքա հերձուած կ'անուանեն, ես այն-
պէս կը պաշտեմ իմ հայրենի Աստուա-
ծոյս, հաւատալով ամէնայնի որ գրուած
15 են յօրէնսն և ի մարգարէս. Ու. ունիմ
յոյս առ Աստուած, ինչպէս սոքա ևս
ունին ակնկալութիւն, թէ պիտի լլայ
յարութիւն մեռելոց, թէ՛ արդարոց
16 և թէ՛ մեղաւորաց։ Եւ ես սորա համար
կը ջանամ միշտ մաքուր խիղճ ունենալ
17 առաջի Աստուծոյ և մարդկան։ Արդ
ես շատ տարիներէ հետէ եկայ բերել
ողորմութիւններ ազգիս և ընծաներ.
18 Այսպէս Ասիացի Հրեաներէն ոմանք
զիս տաճարին մէջ մաքրուած գտան,
19 ոչ բազմութեամբ և ոչ ամբոխիս, Որոց
պարտ էր գալ առաջի քո և ամբաս-
տանել եթէ ունէին ինչ ինծի դէմ.
20 կամ թէ ինքեանք խակ թող ըսեն,
ինչ անիրաւութիւն գտան ինծ, երբ
21 առեալք կեցած էի, Բայց մի միայն այ
խօսքին համար որ, երբ անոնց մէջ կե-
ցած էի, գոչեցի թէ Մեռելոց յարու-
թեան համար ես այսօր կը դատուիմ
22 ձեներէ։ Եւ փելիքս *յապաղից զանոնք,
ուսան զի ջալ աւելցակ էր այն ճամ-
բուն, և ըսաւ, Երբ Լիւսիաս հազարա-
23 պետ իջնէ, կը քննեմ ձեր գործը։ Եւ
հարկ բանակապետին հրամայեց պահել զնա,
և ունել յընդարձակի, և իրեններէն
ոչ ոք արգելուլ սպասաւորել անոր,
կամ երթալ առ նա։
24 Եւ քանի մը օր ետքը Փելիքս եկաւ
իւր կնոջ Դրուսիլլայի հետ որ էր Հր-

*Ոմանք+ այս բաները լսելով ուրիշ



բեայ, և կոչել տուաւ զՊօղոս, և լսեց
անկէ հաւատոյն համար որ ի Քրիստոս
25 Յիսուս։ Եւ երբ նա կը խօսէր արդա-
րութեան և ժուժկալութեան և հան-
դերձեալ դատաստանին վրայ, Փելիքս
զարհուրելով պատասխան տուաւ, Դա-
հիմա գնա, և երբ ժամանակ ունենամ,
26 զարձեալ կը կոչեմ զքեզ։ Նաև կը
յուսար թէ Պօղոսէ տակ *տուէր ի-
րեն, այս պատճառաւ շատ անգամ կո-
չել կու տար զնա և կը խօսէր անոր
27 հետ։ Բայց երբ երկու տարի եղաւ, փո-
խանակ Փելիքսի եկաւ Պորկիոս Փես-
տոս։ և Փելիքս Հրեից շնորհ ընել կա-
մելով՝ կապուած թողուց զՊօղոս։

## ԳԼ. Ի

1 Արդ երբ Փեստոս հասաւ էր էպհես-
բէ գաւառն, երեք օր ետքը ելաւ
2 Կեսարիայէ յԵրուսաղէմ։ Եւ քահա-
նայապետք և Հրէից գլխաւորք խնա-
3 ցուցին անոր Պօղոսի դէմ, Ու կա-
պչէին զնա և շնորհք կը խնդրէին
անոր դէմ, Երուսաղէմ բերել տալ
զնա, և իրենք դարան կը պատրաս-
տէին ի ճանապարհին սպանանել զնա։
4 Բայց Փեստոս պատասխան տուաւ, Թէ
Պօղոս պիտի պահուէր ի Կեսարիա, և
Թէ ինք ևս ընդ հուպ պիտի երթար
5 հոն։ Ուստի ձեներէ անոնք որ կարող են,
ըսաւ, Թող իջնեն էնէն հետ, և եթէ կայ
յանցանք այն մարդուն վրայ, Թող
ամբաստանութիւն բերեն անոր դէմ։
6 Եւ հոն չկենալով աւելի քան ութ կամ
տասն օր՝ իջաւ ի Կեսարիա, և ի վաղն
անդր նստելով յաւէնի հրամայեց բե-
7 րել զՊօղոս։ Եւ երբ եկաւ նա, երու-
սաղէմի իջնող Հրեայք կեցուցին չուրջ,
կը բերէին Պօղոսի դէմ շատ և ծանր
ամբաստանութիւններ, զորս չէին կըր-
8 նար ապացուցանել։ Քանզի Պօղոս
պատասխան կու տար Թէ Ես ոչ Հրէից
օրինաց և ոչ տաճարին և ոչ կայսեր

*Ոմանք+ տուէր, որ արձակէր զնա,
†Ոմանք+ աւելի քան տասն օր կենալով,

9 դէմ յանցաւոր եմ։ Բայց Փեստոս կա-
մելով շնորհ ընել Հրէից, պատասխան
տուաւ Պօղոսի և ըսաւ, Կ'ուզե՞ս ել-
լել յԵրուսաղէմ, և հոն այդ բանե-
10 րուն վրայ դատուիլ իմ առջևս։ Եւ
Պօղոս ըսաւ, Կեցած եմ կայսեր առ-
ջևը որ պարտ է ինձ դատուիլ։ Ես
Հրէից անիրաւութիւն ըրած չեմ, ինչ-
11 պէս որ դուն իսկ քաջ գիտես։ Քանզի
եթէ անիրաւութիւն և մահուան ար-
ժանի ինչ գործած եմ, չեմ պնդիլ
սիր մեռնելէ։ բայց եթէ չկայ այն բա-
ներէն մին որոց համար սոքա կ'ամ-
բաստանեն զիս, ոչ ոք կրնայ շնորհել
զիս զոցա։ Կայսեր կը բողոքեմ։
12 Յայնժամ Փեստոս խօսելով խորհրդա-
կանաց հետ՝ պատասխան տուաւ, Թէ
Կայսեր բողոքեցեր, առ կայսր պիտի
երթաս։
13 Երբ քանի մը օր անցան, Ագրիպպաս
արքայ և Բերենիկէ եկան ի Կեսարիա
14 ողջունել զՓեստոս։ Եւ վասն զի շատ
օրեր հոն անցուցին, Փեստոս խնդացուց
թագաւորին Պօղոսի համար և ըսաւ,
Հոս մարդ մը կայ զոր Փելիքս բան-
15 տարկած Թողած էր, Որուն վրայ,
երբ Երուսաղէմ գացի, քահանայա-
պետները և Հրէից Ծերերն խնդացուցին
ինձ, և կը խնդրէին անոր դէմ դա-
16 տապարտութեան վճիռ։ Որոց պատաս-
խան տուի թէ սովորութիւն չէ Հռով-
մայեցւոց շնորհել զոք ի կորուստ մինչև
ամբաստանեալը չունենայ յանդիման
դատապաշտները, և պատեհութիւն չը-
տրուի անոր պատասխան տալ այն ամ-
17 բաստանութեան։ Ուստի երբ անոնք
ինծի հետ հոս եկան, ամենևին չյա-
պաղեցի, այլ ի վաղիւ անդր նստելով
18 յաւէնի հրամայեցի բերել մարդը։ Ա-
նոր դատապաշտներն ևս գալով չէին
բերեր յառաջ և ոչ դիմն ի յանցա-
19 նաց զոր ես կը կարծէի։ Այլ քանի մը
խնդիրներ ունէին անոր հետ իրենց կը-
րօնից վրայ, և Յիսուս անուն մեռելոյ
մը վրայ, որուն համար Պօղոս կ'ըսէր
20 Թէ կենդանի է։ Եւ երբ տարակու-
սանաց մէջ էի այս բանին քննութեան

վրայ, ըսի Թէ Կ՚ուզե՞ս երթալ Յերուսաղէմ, 21 ուր՝ բայց Պօղոս երբ բողոքեց պահ-
ուիլ *յանդիման օգոստափառ Կայսէր, հրամայեցի պահել զնա մինչև զրկեմ
22 առ Կայսր։ Եւ Ագրիպպաս ըսաւ Փեստոսի, Ես ևս կամիմ լսել այդ մարդուն։
Եւ նա ըսաւ, Վաղիւ կը լսես։
23 Եւ ի վաղիւն երբ Ագրիպպաս և Բեր-
նիկէ մեծ հանդիսիւ եկան, և մտան
յաւարան հազարապետներով և քա-
ղաքին պատուականներով, Փեստոս
24 հրամայեց և բերին զՊօղոս։ Եւ ըսաւ
Փեստոս, Արքայ Ագրիպպա, և դուք
ամենեքեան որ մեր հետ էք, կը տեսնէք
զայս, որոյ վրայ Հրէից բոլոր բազմու-
թիւնը եկան առ իս երբ ուզէի՛ն և հոս
եւս, և ի՛ազաղակէին Թէ Չէ պարտ
25 գնա ողջ մնալ։ Բայց ես խմանալով
Թէ մեռնելու արժանի բան մը գործած
չէ նա, և զի ինքն ևս բողոքեց առ
26 Կայսր, որոշեցի զրկել զնա։ Որոյ հա-
մար չունիմ ինչ հաստատուն ի գրել իմ
տիրոջս։ ուստի բերի զնա ձեր առջև,
և մանաւանդ առաջի քո, արքայ Ագ-
րիպպա, որպէս զի յետ քննութեան ու-
27 նենամ գրելու բան մը։ Քանզի անլսելի
կը թուի ինձ բանտարկեալ մը զրկել,
և անոր վրայ յանցանք չիմացանել։

## ԳԼ. ԻԶ

1 Եւ Ագրիպպաս ըսաւ Պօղոսի, Հրաման
կ՚քեզ խօսել վասն քո։ Ցայնժամ Պօ-
ղոս ձգելով ձեռքը պատասխան ետու
2 իրեն համար։ Հրէից բոլոր ամբաստա-
նութիւններուն համար իմ վրաս, ար-
քայ Ագրիպպա, երանելի կը համարիմ
զիս, որ այսօր քու առջևդ պատաս-
3 խան պիտի տամ։ Մանաւանդ որ դուն
քաջ գիտես Հրէից բոլոր սովորութիւն-
ները և խնդիրները, վասն որոյ կ՚ա-
ղաչեմ ունկն գնել ինձ երկայնմտու-
4 թեամբ։ Արդ բոլոր Հրեաները տեղեակ
են թէ ինչպես ապրած եմ մանկու-

*Յոյն. քննութեան,

թենէ հետէ, ի սկզբանէ յերուսաղէմ
5 իմ ազգիս մէջ ըլլալով. Քանզի ի վա-
ղուց ունեմ զնոսա զիս, եթէ կամին
վկայել, թէ մեր կրօնից ճշդագոյն ճա-
նապարհին համեմատ ապրած եմ փա-
6 րիսեցի։ Եւ հիմա կեցած կը դատուիմ
Աստուծմէ մեր հայրերուն եղած խոստ-
7 ման յուսոյն համար։ Որուն մեր ներ-
կուսանդ ցեղերն անդադար զայգ և
զցերեկ պաշտելով կը յուսան հասնել։
ես այն յուսոյն համար կ՚ամբաստանե-
8 ուիմ ի Հրէից, արքայ Ագրիպպա։ Ինչ։
հաւատալո՞ւ բան կ՚ երևի ձեզ Թէ Աս-
9 տուած կը յարուցանէ մեռելները։ Ես
ինքն իսկ պարտ կը համարէի ինձ ճի-
շատ Նազովրեցւոյ անուան դէմ բնել
10 շատ բան. Որ և ըրի իսկ յերուսաղէմ,
առնելով իշխանութիւն քահանայապետ-
ներէն, բանտարկեցի սուրբերէն շատե-
րը, և երբ անոնք կը սպանուէին, հա-
11 ւանութիւն տուի։ Եւ բոլոր ժողովրդ-
ոց ներուն մէջ շատ անգամ պատ-
ժելով զանոնք կը բռնադատեի հայ-
հոյել։ և անոնց դէմ սոսկալի կատաղած
կը հալածէի մինչև օտար քաղաքներ։
12 Այսպէս երբ ի Դամասկոս եւս կ՚երթայի
քահանայապետներէն իշխանութիւն և
13 հրաման առած, կէս օրուան ատեն ի
ճանապարհին, արքայ, տեսայ յերկնից
լոյս աւելի քան զարեւուտ փայլուն
աղեղական բոլորտիքը ծագած, նաև ա-
նոնց բոլորտիքը որ իմ հետս կ՚երթա-
14 յին։ Եւ երբ ամենքս գետին իյնանք,
լսեցի ձայն որ կ՚ըսէր ինձ՝ Եբրայա-
կան լեզուով, Սաւուղ, Սաւուղ, ընդ-
հալածես զիս. դժուարին է քեզ ընդ
15 դէմ խթանի ածքացել։ Եւ ես ըսի, Դու
ո՞վ ես, Տէր։ Եւ Նա ըսաւ, Ես եմ Յի-
16 սուս զոր դուն կը հալածես. Բայց կաց
և ոտիդ վրայ կանգնէ. քանզի վասն
այնորիկ երևեցայ քեզ, որ առնեմ
գրել ի ձեռն՝ ընել պաշտօնեայ և վկայ
այն բաներուն զորս տեսար, և այն բա-
ներուն որովք պիտի երևնամ քեզ,
17 Ազատելով զքեզ այս ժողովրդէն և
հեթանոսներէն, առ որս հիմա կը զըր-
18 կեմ զքեզ, Անոնց աչքերը բանալ



խաւարէ ի լոյս, և զարձուցնել Սատա-
նայի իշխանութենէն առ Աստուած, որ
առնուն մեղաց թողութիւն և մասնա-
կից ըլլան սուրբերուն հետ հաւատա-
19 լով յիս։ Ուստի, արքայ Ագրիպպա,
չեղայ անհնազանդ այն երկնային տես-
20 լեան։ Այլ քարոզեցի նախ անոնց որ
էին ի Դամասկոս և յերուսաղէմ և բո-
լոր Հրէաստանի երկիրը և հեթանոսաց՝
ապաշխարել և դառնալ առ Աստուած,
և գործել ապաշխարութեան արժա-
21 նաւոր գործեր։ Այս պատճառաւ Հր-
էայք բռնեցին զիս տաճարին մէջ, և
22 կը ջանային սպաննել։ Սակայն Աստուծ-
մէ օգնութիւն հասնելով մինչև այս օր
մնացի՝ վկայութիւն ասելով փոքու և
մեծի, բան մը չըսելով այն բաներէն
զոր մարգարէք և Մովսէս խօ-
23 սեցան Թէ պիտի ըլլային. Թէ Քրիս-
տոս պիտի չարչարուէր, և Թէ նախ և
առաջ նա մեռելներէն յառնելով լոյս
պիտի քարոզէր ժողովրդեան և հե-
թանոսաց։
24 Եւ մինչ նա այսպէս պատասխան կու-
տար իրեն համար, Փեստոս բարձր
ձայնիւ ըսաւ, Կը մոլիս, Պօղոս. բա-
զում ուսմունք կը յիմարեցուցանեն զը-
25 քեզ իակ Պէտք ըսաւ, Ես չեմ մոլիր,
պատուական Փեստոս, այլ ճշմարտու-
թեան և զգաստութեան խօսքեր կ՚ը-
26 սեմ։ Քանզի այս բաները գիտէ թա-
գաւորը, որոյ և առաջի կը խօսիմ հա-
մարձակ. քանզի չեմ կարծեր Թէ ա-
նոնցմէ բան մը ծածկուած է անկի,
վասն զի այս բանը եղած չէ անկիւնի մը։
27 Մարգարէներուն կը հաւատա՞ս, արքայ
Ագրիպպա. գիտեմ Թէ կը հաւատաս։
28 Եւ Ագրիպպաս ըսաւ Պօղոսի, Սակաւ
մի և զիս համոզես քրիստոնեայ
29 ըլլալ։ Եւ Պօղոս ըսաւ, Աստուծմէ կը
խնդրեմ որ, Թէ սակաւուք և Թէ բազմօք, ոչ միայն դուն, այլ և ամեն-
քը որ այսօր կը լսեն ինձ, ըլլային այն-
պիսի որպիսի եմ՝ բաց ի կապանացս։
30 *Ոտք ելաւ թագաւորը և կուսակալը

*Ոմն. Եւ երբ այս բաներն ըսաւ՝ ոտք
31 նստած էին. Եւ զարս երկրէն եառքը
խօսեցան իրարու հետ և ըսին Թէ այս
մարդը մեռնելու կամ կապուելու ար-
32 ժանի բան մը չընէր։ Եւ Ագրիպպաս
ըսաւ Փեստոսի, Հնար էր արձակել այս
մարդը, եթէ բողոքած չըլլար առ Կայսր։

## ԳԼ. ԻԷ

1 Երբ որոշուեցաւ երթալ մեզ նաւով
Իտալիա, յանձնեցին զՊօղոս, և ուրիշ
կապեալներ հարիւրապետի մը որոյ ա-
նունն էր Յուլիոս, Սեբաստեան գնդէն։
2 Եւ Անդրամիտացի նաւ մը մտնելով
երանք ի ծանապարհ, և Ասիոյ կողմե-
րէն պիտի նաւեինք։ Նաև Արիստար-
քոս Մակեդոնացի որ էր Թեսաղոնի-
3 կէէ մեզի հետ էր։ Եւ ի վաղիւ անդր
իջանք ի Սիդոն. և Յուլիոս մարդասի-
րութիւն ցուցնելով Պօղոսի, հրաման
ետուաւ երթալ բարեկամներուն և գըտ-
4 նել զտանուն։ Եւ անկէ ելլելով Կիպ-
րոսի վարի կողմէն նաւեցինք, վասն
5 զի ընդդիմ էր հովը։ Ծովայ նաւելով
ընդ մէջ Կիլիկիոյ և Պամփիլիո-
6 ւոյ, իջանք Լիկիոյ Միւռա Քաղաքը։ Եւ
հարիւրապետը գտնելով հոն Աղեք-
սանդրացի նաւ մը որ կ՚երթար Իտա-
7 լիա, մեզուց զմեզ անոր մէջ։ Եւ շատ
օրեր ծանր ծանր նաւելով՝ հազիւ հա-
սանք Կնիդոսի մօտ. և օդոյ հետև ընդ-
դէմ էր մեզ հովը, նաւեցինք Կրետէի
8 վարի կողմէն Սաղմոնայի քովէն։ Եւ
դժուարաւ անկէ անցնելով, եկանք
տեղ մը, որ Գեղեցիկ Նաւահանգիստ
կ՚ըսուէր, որուն մօտ էր Դասեա քա-
ղաքը։
9 Եւ երբ շատ ժամանակ անցաւ և նա-
ւարկել ևս վտանգաւոր էր, նաև ծո-
մի ատենն անցած էր արդէն, Պօղոս
10 խրատ կուտար, Եւ կ՚ըսէր անոնց,
Արբ, կը տեսնեմ որ այս նաւարկու-
թիւնը պիտի ըլլայ տապալանօք և շատ
վնասով, ոչ միայն բեռին և նաւին,
11 այլ և մեր անձերուն։ Բայց հարիւրա-
պետը կ՚անսար մեռնուանդ նաւապե-

սին և նաւավարին քան Պօղոսի խօս-
12 քին, եւ որովհետև այն նաւահանգիստը չէր յարմար ձմեռելու, շատերը խորհեցան երթալ անկէ, որ թերևս կարող ըլլային հասնիլ և ձմեռել ի Փիւնիկէ, նաւահանգիստ կրետէի որ կը նայի դէպ ի հարաւ և արևմտեան հիւ-
13 սիս։ Եւ երբ հարաւային մեղմ հով մը փչեց, կարծելով թէ հասան իրենց նպատակին, ճամբայ ելլան և կ'անցնէին
14 կրետէի մօտ։ Եւ ոչ յետ բաղմաց ետք անոր դէմ ուռուցիկ հողմ, որ
15 եւրակիկլոն կը կոչուի։ Երբ նաւը յափրշտակուեցաւ և չկրցաւ հանդուրժել ընդդէմ հողմին, թոյլ տուած կ'ե-
16 րթայինք և կու գայինք։ Եւ փախելով յետ կղզի մը որ կը կոչուէր Կրադա, հազիւ կրցանք բռնել մակոյ-
17 կը։ Զոր առին և օգնութիւնները գործածելով տակէն կապեցին նաւը։ և վախնալով Կիւ գուցէ * յորձանուտն կայնային, առագաստն իջուցած, այնպէս
18 կ'երթայինք և կու գայինք։ Եւ որովհետև սաստիկ ալէկոծութեան մէջ էինք, ի վաղիւն բնկեցիկ ըրին բե-
19 բրդ օրը նաւին գործիները մեր ձե-
20 ռօք ընկեցինք։ Եւ երբ շատ օրեր ոչ արև և ոչ աստեղք կ'երևէին, և փոթորիկ ոչ սակաւ ի վերայ կար, մեր
21 ազատելուն յոյսը վերցաւ խաղաւ։ Եւ որովհետև շատ օրերէ հետէ անօթի էին, անոնց մէջ կանգնելով բաւ, Ով արք, պարտ էր ձեզ լսել ինձ և չելլել Կրետէէ, և շահել
22 այս տուժապանքը և վնասը։ Եւ հիմա կը յորդորեմ զձեզ քաջալերուիլ, քանզի ձենէ ոչ ուրուք անձին վնաս պիտի
23 ըլլայ, բայց միայն նաւին. Քանզի այս գիշեր երևեցաւ ինձ հրեշտակ Աստուծոյ, որուց եմ ես, և զոր կը պաշտեմ,
24 Եւ ըսաւ, Մի երկնչիր, Պօղոս, պարտ է քեզ կալլել յանդիման կայսեր. և ահա Աստուած շնորհեց քեզ ամենքը,
25 որ նաւին մէջ քեզի հետ են։ Ուստի, արք, քաջալերուեցէք, քանզի ես կը
26 հաւատամ Աստուծոյ որ այնպէս պիտի ըլլայ, ինչպէս բսուեցաւ ինձ։ Միայն
27 Թէ հարկ է մեզ կղզի մի, եւ երբ չորեքտասաներորդ գիշերն էր որ Ադրիական ծովուն մէջ կը տարուբերէինք, կէս գիշերին նաւաստիները կը կարծէին Թէ երկրի մը մօտեցած էին։
28 Եւ գնահակը նետելով՝ գտան քսան գրկաչափ. և սակաւ մի ևս յառաջ երթալով՝ գտնեալ նետեցին, և գը-
29 տան հնգետասան գրկաչափ։ Եւ վախնալով Թէ գուցէ քարուտ տեղեր կընային, ետևէ կոզմէն նետեցին չորս խարիսխ, և կը փափաքէին առաւօ-
30 տուն։ Իսկ նաւաստիները նաւէն փախչել ուզելով՝ իջուցին մակոյկն ի ծով, պատճառելով որպէս Թէ առաջոյ կոզմէն ևս խարիսխ պիտի բնկեցնուին,
31 Բայց Պօղոս ըսաւ հարիւրապետին և զինուորներուն, Եթէ սոքա չնային մէջ չկենան, գուք չէք կրնար ազա-
32 տիլ։ Անատեն զինուորները կտրեցին մակուկին չուանները, և թողուցին
33 գուրս իյնալ։ Եւ երբ առաւօտ մօտ էր, Պօղոս կ'աղաչէր ամենուն կ'երակուր ուտել, ըսելով, Այսօր չորեքտասան օր է որ գուք սպասելով անօթի մնացած էք, և բան մը կերած
34 չէք։ Ուստի կ'աղաչեմ զձեզ որ կերակուր ուտէք, վասն զի ձեր ազատութեան համար է այս. քանզի ձենէ ոչ ուրուք գլխէն մազ մի պիտի կորսուի։
35 Եւ այսպէս ըսելով առաւ հաց, և օրհնեաւ Աստուծմէ, և
36 կտրելով սկսաւ ուտել։ Եւ ամենքը քաջալերուեցան, և իրենք ևս կերա-
37 կուր կերան։ Եւ նաւին մէջ ամենքս հոգի հարիւր հոթանասունեւվեց հո-
38 գի էինք։ Երբ յագեցան կերակրով, նաւը թեթևցուցին ցորենը թափելով ի ծով։
39 Եւ երբ առաւօտ եղաւ, չէին ճանչնար ցամաքը, միայն կը նշմարէին ծոց մը որ ծովեզր ունէր, և կը խորհէին,
40 Եթէ հնար էր, նաւը մխել անոր մէջ։ Եւ խարիսխները կտրելով՝ թողուցին ծովուն, և թուլցուցին զկնկերան-

*Կամ Ծանծաղուտը



կապերը, և առագաստը պարզելով հովին՝ կ'երթային դէպ այն ծովեզերը։
41 Եւ այնպիսի տեղ մը իյնալով որոյ երկու կողմը ծով էր, նաւաւցին նաւը. և նաւուն առաջոյ կողմը խրելով՝ մնաց անշարժ, և յետակողմը կը փակուէր
42 ալեաց սաստկութենէն։ Եւ զինուորները խորհուրդ բրին կտրատածներն ապանելլ, որ մի գուցէ ոք լողալ և
43 փախչէր։ Բայց հարիւրապետը որ կ'ուզէր ազատել զՊօղոս՝ արգիլից զանոնք այն խորհուրդէն, և հրամայ բրաւ առնոնց որ կրնային լողալ՝ յառաջագոյն
44 նետուիլ և ելլել ցամաք։ Եւ մնացածներն, ոմանք տախտակներով և ոմանք նաւին ոբէչ կարասիաւ. և այսպէս ամենքն ազատելով ելան ի ցամաք։

## ԳԼ. ԻԸ

1 Եւ երբ ազատեցան, գիտցան Թէ առնն կղզւոյն էր Մելիտէ. և բարբարոսները ոչ սակաւ մարդասիրութիւն
2 ցուցին մեզ. Քանզի կրակ վառեցին, և ընկալան զմեզ ամենեսին մեր վրայ
3 հասած անձրևին և ցրտոյն համար։ Եւ երբ Պօղոս ժողվեց շատ խոխ և դրաւ կրակին վրայ, իժ մը ելաւ տա-
4 քութենէն, և բանեց անոր ձեռքը։ Եւ բարբարոսներն երբ տեսան գազանը կախուած անոր ձեռքէն, կ'ըսէին ի-
5 րարու, Անտարակոյս մարդասպան է սա, որ Թէպէտ ծովէն ազատեցաւ, իբաւունքը չթողուց ապրել։ Իսկ նա գազանը կրակին մէջ թօթափեց և ո-
6 նոր ինսու չեղաւ։ Եւ անոնք կը սպասէին Թէ պիտի ուռնար կամ յանկարծ իյնար մեռնէր. բայց երբ շատ սպասեցին, և տեսան Թէ ինսու չեղաւ տար, փոխելով իրենց կարծիքը՝ կ'ը-
7 սէին Թէ աստուած ումն է։ Եւ այն տեղն բոլորտիքը կային ազարակք կղզւոյն գլխաւորին, որոյ անունն էր Պապղիոս, որ ընկալաւ զմեզ և երեք օր հիւրասիրութեամբ պահեց իրեն
8 քով։ Եւ եղաւ որ Պապղիոսի հայրը կրմտով և թանչիւ հիւանդացած պառկած կր։ և Պօղոս մտաւ անոր քով, և աղօթելով ձեռնադրեր դրաւ անոր
9 վրայ և բժշկեց զնա։ Եւ երբ այս եղաւ, ուրիշ հիւանդներ որ այն կղզւոյն մէջ
10 էին՝ եկան գային և կը բժշկուէին. Որ և բազում պատուով պատուեցին ըզմեզ, և երբ կ'երթայինք, տուին ինչ որ հարկաւոր էր։
11 Եւ երեք ամիս ետքը ձմռնոյ եղանք Ագէքսանդրացի նաւով մը, որ ձմեռած էր այն կղզին, և ունէր Դիոսկուռաց նշանը։ Եւ Սիրակուսա իջնելով կե-
12 ցանք հոն երեք օր։ Եւ անկէ պտոյտ մը ընելով՝ հասանք Հեգիոն. և որ-
13 բամետեան օր մը հետքը հարաւ փչեց, երկրորդ օրը եկանք Պուտիողոս։ Եւ հոն գտանք եղբայրներ, որ աղաչեցին զմեզ եօթն օր մնալ իրենց քով. և այ-
14 սպէս ի Հռոմ։ Եւ անկէ եղբայրները երբ լսեցին մեր վրայ, եկան դիմաւորելլ զմեզ մինչև Ապիոսի վաճառանոցը և Երեք պանդոկները. և Պօղոս տեսնելով զանոնք գոհացաւ Աստուծոյ և քաջալերուեցաւ։
15 Եւ երբ մտանք ի Հռոմ՝ հարիւրապետն յանձնեց կառավարները զօրապետին. իսկ Պօղոսի հրաման եղաւ իւր պահապան զինուորին հետ մնալ ա-
16 ռանձին։ Եւ եղաւ որ երեք օր ետքը կոչեց նա Հրեից գլխաւորները, և երբ եկան ի մի վայր, բսաւ անոնց, Ա՛րք եղբարք, ես Հռոմէացւոց կամ հայրենական սովորութեանց դէմ բան մը չըրած, երուսաղէմէ կապուած մատ-
17 նեցաւ Հռոմէացւոց ձեռքը. Որ երբ քննեցին զիս, կամեցան արձակել, քանզի մահու արժանի յանցանք չկար
18 յիս։ Բայց երբ Հրեայք հակառակեցան, հարկ եղաւ ինձ բողոքել ի կայսր, ոչ որպէս Թէ ամբաստանութիւն ու-
19 նեի ազգիս դէմ։ Ուստի այս պատճառաւ ազաչեցի տեսնել զձեզ և խօսել ձեզ. քանզի Իսրայէլի յուսոյն համար
20 կը կրեմ ես այս շղթան։ Եւ անոնք բսին անոր, Մենք քու վրադ Հրէաստանէ ոչ Թուղթեր առինք, և ոչ եղբայրներէն ոք հոս գալով քու վրադ
21

չարութիւն մը պատմել կամ խօսեցաւ։
22 Բայց կ'աղաչենք լսել քենէ թէ զուն ինչ կը խորհիս. քանզի այդ ազանդին վրայ յայտնի է մեզ թէ ամենայն ուր-
23 ենէ կը խօսուի տուրը գէմ, եւ օր ա-ռաքելով նմա գացին առ նա անոր օ-թեւանը չտաներ, որոց կը ծանուցանէր Աստուծոյ Թագաւորութիւնը վկայու-թեամբ, և կը համոզէր զանոնք Յիսու-սի վրայ յօրինաց Մովսէսի և ի մար-
24 գարէից առաւօտէ մինչև երեկոյ, եւ ոմանք կը հաւատային ըսուածներուն,
25 և ոմանք չէին հաւատար։ Եւ իրարու հետ չմիաբանելով մեկնեցան, երբ Պօ-ղոս խօսք մը ըսաւ, թէ Հոգին Սուրբ բարւոք խօսեցաւ մեր հայրերուն ե-
26 սայի մարգարէին բերնով, եւ ըսաւ, Գնա այս ժողովրդեան և ըսէ, Լսելով պիտի լսէք, և չհնանաք, և տեսնելով
27 պիտի տեսնէք, և չտեսնէք. Քանզի այս ժողովրդեան սիրտը թանձրացաւ, և չլսեց ականջներով ծանր լսեցին, և իրենց աչուքները կափարեցին, դի մի երբէք տեսնեն աչօք, և լսեն ականջօք, և իմանան սրտիւք, և դառնան, և ես
28 բժշկեմ զանոնք։ Ուստի յայտնի ըլլայ ձեզ որ Աստուծոյ փրկութիւնը հեթա-նոսաց ղրկուեցաւ, և անոնք պիտի լը-
29 սեն։ Եւ երբ ըսաւ զայս, Հրեայք ե-լան արտաքս, շատ վէճ ունենալով ի-րենց մէջ։

30 Եւ ամբողջ երկու տարի կեցաւ Պօ-ղոս իւր վարձով բռնուած տան մէջ։
31 Եւ կ'ընդունէր իրեն եկողներուն ամէն-
32 քը, կը քարոզէր Աստուծոյ Թագաւո-րութիւնը, և կը սորվեցունէր Տէր Յի-սուս Քրիստոսի վրայ անխափան ամե-նայն համաբաձակութեամբ։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՌ ՀՌՈՎՄԱՑԵՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, ծառայ Յիսուսի Քրիստոսի, առաքեալ ըլլալու կոչուած, Աստու-ծոյ աւետարանին համար որոշուած,
2 (Որ յառաջ խոստացաւ իւր մարգարէ-
3 ներուն միջոցով սուրբ գրուածքին) Իւր Որդւոյն Տէրոջ մերոյ Յիսուսի Քրիս-տոսի վրայ՝ որ մարմնոյ կողմանէ Դաւի-
4 թի սերունդէն եղաւ, Այն որ սրբու-թեան հոգւոյն կողմանէ յայտնապէս Որդի Աստուծոյ զօրութեամբ՝ յառնե-
5 լովի մեռելոց Որով շնորհք և առա-քելութիւն առինք հնազանդութեան համար յամենայն ազգս ա-
6 նոր անուան համար. Որոց և դուք կոչուածներ էք Յիսուսի Քրիստոսի։
7 Ձեր ամենուն որ ի Հռոմ էք, սիրե-լեաց Աստուծոյ, սուրբ ըլլալու կոչե-ցելոցդ՝ շնորհք և խաղաղութիւն ձեզ յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տէրանէ Յիսուսէ Քրիստոսէ։
8 Նախ կը գոհանամ իմ Աստուծմէս ի Յիսուս Քրիստոսի ձեր ամե-նուն համար, որ ձեր հաւատքը կը
9 պատմուի բոլոր աշխարհ։ Քանզի վկայ

*Ոմանք կ'ունին այս համարը։



է ինձ Աստուած, զոր կը պաշտեմ հոգ-
10 ւով յաւետարանի Որդւոյ նորա, թէ ինչպէս անդադար կը յիշեմ զձեզ, հա-նապազ յաղօթս իմ խնդրելով որ թէ-բևս անգամ մը յաջողի ինձ կամօքն
11 Աստուծոյ գալ առ ձեզ։ Քանզի կը փափաքիմ տեսնել զձեզ, որ տաղտ-կեմ ձեզ հոգևոր շնորհք մը որպէս զի
12 հաստատուիք։ Այսինքն ես եւս միխ-թարակից ըլլամ ձեզ իմ և ձեր փո-
13 խադարձ հաւատովն միջոցաւ։ Սակայն չեմ ուզեր որ անգիտ ըլլաք, եղբայր-ներ, թէ շատ անգամ կամեցայ գալ առ ձեզ, և մինչև ցարդ արգիլուեցայ, որ ձեր մէջ ևս ունենամ պտուղ ինչ-
14 պէս ուրիշ հեթանոսաց մէջ։ Յունաց և բարբարոսաց, իմաստնոց և անմտաց
15 ևս պարտական եմ։ Ուստի որչափ ի կարի իմում է, յօժարութիւն առնէմ ձեզ ևս որ ի Հռոմ էք՝ քարոզել ա-ւետարանը։
16 Քանզի ես ամօթ չեմ համարիր *ա-ւետարանը, վասն զի Աստուծոյ զօրու-թիւնն է այն՝ բոլոր հաւատացելոց փըր-կութեան համար, նախ Հրէին և ապա
17 Յունին։ Քանզի անով Աստուծոյ ար-դարութիւնը որ հաւատքին է՝ հաւա-տոյ համար կը յայտնուի. ինչպէս գըր-ուած է թէ Արդարն հաւատքէն պիտի ապրի։
18 Քանզի Աստուծոյ բարկութիւնը կը յայտնուի յերկինէ ի վերայ ամենայն ամբարշտութեան և անիրաւութեան մարդկան որ ճշմարտութիւնը բռնած
19 են անիրաւութեամբ։ վասն զի Աստու-ծոյ վրայ գիտնալու բանն յայտնի է անոնց մէջ, վասն զի Աստուած յայտ-
20 նեց անոնց։ Քանզի անոր աներեւոյթ բաներն աշխարհի սկիզբէն ստեղծուած-ներով իմացուելով կը տեսնուին, այս-ինքն՝ անոր մշտնջենաւոր զօրութիւ-նը և աստուածութիւնը, որպէս զի ա-
21 նանց պատասխանի մնան։ Քանզի զԱս-տուած ճանչնալով ոչ իբրև Աստուած փառաւորեցին կամ շնորհակալ եղան,
22 այլ ունայնացան իրենց խորհուրդնե-րուն մէջ, և *անոնց սիրտն անմտաց-
23 եաւ։ Թեամբ՝ խաւարեցաւ։ Ըսելով թէ ի-մաստուն են՝ յիմարեցան. Եւ փոխե-ցին անեղծին Աստուծոյ փառքն ի նմա-նութիւն պատկերի եղծանելի մարդոյ և թռչնոց և չորքոտանեաց և սողոց։
24 Վասն որոյ և Աստուած մատնեց զնո-սա ապզութեան իրենց սիրտերուն ցան-կութիւններով իրենց մարմինները խայ-
25 տառակել իրենց մէջ. Որք փոխեցին Աստուծոյ ճշմարտութիւնը սուտ հետ, և մատուցին երկրպագութիւն և պաշ-տօն արարածոց քան Արարչին, որ է
26 օրհնեալ յաւիտեանս Ամէն։ Վասն ո-րոյ Աստուած անարգ կրից մատնեց զնոսա, որոց էգերն անգամ փոխեցին բնական պէսքը յայն որ բնութեան
27 դէմ է։ Նոյնպէս արուներըը թողլով կնոջ բնական պէսքն՝ իրենց ցանկու-թեամբ վառեցան ի միմեանս. արուք ընդ արուս խայտառակութիւն կը գոր-ծէին, և իրենց մոլութեան վայելուչ հատուցումը կ'ընդունէին իրենց վրայ։
28 Եւ որովհետև չուզեցին պահել զԱս-տուած ի գիտութեան, Աստուած մատ-նեց զնոսա անարգ խորհուրդներու ան-
29 վայել բաներ ընել. Որ լցուած էին ա-մէն անիրաւութեամբ, պոռնկութեամբ, անզգամութեամբ, ագահութեամբ, չարութեամբ, լի նախանձու, մարգաս-պանութեամբ, հակառակութեամբ, նենգութեամբ, չարասրտութեամբ.
30 Լուր քսուք, Զարախօսք, Աստուած-ատեացք, նախատողք, հպարտք, ամ-բարտաւանք, չարաշնորք, ծնողաց
31 անհնազանդք, Անմիտք, ուխտա-դրուժք, անգութք, անհաշտք, անո-
32 ղորմք. Որ գիտնալով Աստուծոյ դա-տաստանը, թէ անոնք որ կ'ընեն այս-պիսի բաներ՝ մահու արժանի են, ոչ միայն կ'ընեն այն բաներն, այլ և հա-ւանութիւն կու տան ընդոներուն։

*Յոյն անոնց անմիտ սիրտը

### Գլ. Բ

1 Ուստի, ով մարդ, ով որ ես որ կը դատես, պատասխան չունիս ասելու. քանզի ինչ բանով որ ուրիշը կը դատես, անով կը դատապարտես քու անձդ, վասն զի դուն որ կը դատես՝ կ'ընես
2 նոյն բաները. Բայց գիտենք թէ Աստուծոյ դատաստանը ճշմարտութեամբ կ'ըլլայ անոնց վրայ որ այնպիսի բաներ
3 կը գործեն. Արդ, ով մարդ, դուն որ կը դատես այնպիսի բաներ ընողները, և դուն նոյն բաները կ'ընես, կը կարծե՞ս թէ ազատ պիտի մնաս դուն Աս-
4 տուծոյ դատաստանէն. Կամ թէ կ'արհամարհե՞ս անոր անչափ քաղցրութիւնը և համբերութիւնը և երկայնմտութիւնը, չգիտնալով թէ Աստուծոյ քաղցրութիւնը կ'առաջնորդէ զքեզ յա-
5 պաշխարութիւն, Բայց դուն քու բռնութեամբդ և անզղջ սրտովդ կը դիզես քու անձիդ բարկութիւն՝ բարկութեան և Աստուծոյ արդար գատաստանին յայտնուելու օրուան համար.
6 Ա՛յն որ պիտի հատուցանէ իւրաքանչ-
7 յոր իւր գործերուն վրայութիւն. Յաւիտենական կեանք անոնց որ բարի գործերու մէջ համբերութեամբ անձնասլով կը խնդրեն փառք և պատիւ և
8 անմահութիւն. Բայց անոնց որ հակառակ են, և ճշմարտութեան անհնազանդ և անիրաւութեան հնազանդած՝
9 բարկութիւն և սրտմտութիւն. Նեղութիւն և տառապանք պիտի ըլլայ ամէն մարդու վրայ որ չար կը գործէ, առաջ Հրեային և ապա Յունին. Իսկ փառք և պատիւ և խաղաղութիւն այն ամէնուն որ բարի կը գործէ, առաջ Հրեին և
11 ապա Յունին. Վասն զի Աստուծոյ քով
12 աչառութիւն չկայ. Քանզի անոնք որ առանց օրինաց մեղան, առանց օրինաց պիտի կորսուին. և անոնք որ մեղան ընդ օրինօք՝ օրինօք պիտի դատուին,
13 (Քանզի ոչ թէ օրէնքը լսողներն են արդար առաջի Աստուծոյ, այլ օրէնքը կատարողները պիտի արդարանան.
14 Քանզի հեթանոսք որ օրէնք չունին, երբ բնականապէս կը գործեն օրինաց գործերն, օրէնք չունենալով բուն իրենք կ'ըլլան իրենց անձանց օրէնք.
15 Որ օրինաց գործն իրենց սրտին մէջ գրուած կը ցուցընեն իրենց խղճին վկայութեամբ, և իրենց խորհուրդներուն իրար յանդիմանելով՝ կամ իրա-
16 ւունք տալով), Ա՛յն օրը որ Աստուած պիտի դատէ զդատաստան մարդկան իմ ձեռն Յիսուսի Քրիստոսի ըստ աւետարանիս.
17 Ահա դուն Հրեայ կոչուած ես և յենցուել ես յօրէնս, և կը պարծիս յԱստուած, Ու գիտես ամէ կամքը, և
18 սաւորէր բաները կը զանազանես՝ օրէնքէն խրատուած. Ու վստահ ես քանձեզ իլնել առաջնորդ կուրաց, լոյս խա-
20 ւարելոց, Խրատուու անմտաց, վարդապետ տգեղոց, և քէ ունես գիտութեան և ճշմարտութեան կերպարանքն յօրէնսն. Իսկ արդ դուն որ ի՛նուացնես ընկերդ, չե՞ս ուսուցաներ անձդ. որ կը քարոզես չգողանալ, կը գողա-
22 նա՞ս. Որ կ'ըսես չշնալ, կը շնա՞ս. որ կը գարշես ի կռաց, սրբապղծութիւն
23 կ'ընես. Որ կը պարծիս օրէնօք, օրինազանց ըլլալով զԱստուած կ'անարգե՞ս. Քանզի Աստուծոյ անունը ձեր
24 պատճառաւ կը հայհոյուի հեթանոսաց մէջ, ինչպէս գրուած է.
25 Արդ թլփատութիւնն օգուտ, եթէ պահես զօրէնսն. իսկ եթէ օրինաց գէմ յանցաւոր ես, թլփատութիւնդ
26 եղաւ անթլփատութիւն. Ուստի եթէ անթլփատութիւնը պահէ օրինաց իրաւունքը, ո՞չ թլփատչէն անոր անթլփատութիւնը պիտի համարուի թլփատութիւն. Եւ այն որ ի բնէ անթլփատութիւն է՝ օրէնքը կատարելով պիտի
27 դատապարտէ զքեզ, որ գրով և թլփատութեամբ յանցաւոր ես օրինաց.
28 Քանզի Հրեայ այն չէ որ արտաքուստ է, և թլփատութիւն այն չէ որ արտաքուստ մարմնով է. Այլ Հրեայ այն
29 է որ ի ներքուստ է, և թլփատութիւն՝ սրտինը, հոգւով, և ոչ թէ գրով. որուն գովութիւնը ոչ թէ ի մարդկանէ է, այլ յԱստուծոյ.



### Գլ. Գ

1 Ի՞նչ աւելի ունի ուրեմն Հրեայն, կամ
2 ի՞նչ օգուտ թլփատութենէն, Շատ՝ ամէն կերպով. Նախ այն՝ որ Աստուծոյ պատգամները հաւատացուեցան
3 անոնց, Քանզի եթէ անոնք չհաւատացին, ի՞նչ. միթէ անոնց անհաւատութիւնը կը խափանէ՞ը Աստուծոյ հաւա-
4 տարմութիւնը. քա՛ւ լիցի. Սակայն Աստուած ճշմարիտ թող ըլլայ, և բոլոր մարդիկ՝ սուտ. ինչպէս որ գրուած է, Որ քու խօսքերուդ մէջ արդար ըլլաս, և դատուելու առնդ դուն յաղթեաս
5 Ուրեմն եթէ մեր անիրաւութիւնը յայտնի կը ցուցնէ Աստուծոյ արդարութիւնը, ի՞նչ ընենք. միթէ անիրա՞ւ Աստուած որ կը բերէ բարկութիւնը.
6 (Մարդկօրէն կ'ըսեմ.) քա՛ւ լիցի. ապա թէ ոչ ի՞նչպէս պիտի դատէ Աստուած
7 դաշխարհս. Քանզի եթէ Աստուծոյ ճշմարտութիւնը կ'առատանայ իմ սուտութեամբս իւր փառացը համար, այլ ևս ես ընդէ՞ր կը դատուիմ իբրև մեղա-
8 ւոր. Ու՝ ինչո՞ւ հապա՝ չընե՞նք չարեաթ որ բարիք գան, որուն համար կ'ըսեն չարախօսութիւն ընելով մեր վրայ թէ կ'ըսենք, Թող գտնենք չարը որ բարին գայ. որոց դատապարտութիւնն յիրաւի է.
9 Ու արդ, ի՞նչ. առնե՞նք խիթ. արդարև և ոչ խիթ. վասն զի յառաջագոյն մեղադրեցինք զՀրեայս և զհեթանոսս թէ ամենքին ընդ մեղաք են.
10 Ինչպէս գրուած է, Թէ Արդար չկայ և
11 ոչ մի. Չկայ ոք որ իմանայ, չկայ ոք
12 որ խնդրէ զԱստուած. Ամէնքը խոտորեցան, միանգամայն անպիտանացան. բարութիւն ընող չկայ, չկայ և ոչ մի,
13 Բացուած գերեզման է անոնց կոկորդը. իրենց լեզուաւ նենգեցուր. իժերու թոյն կայ անոնց շրթանց ատակ.
14 Անոնց բերանը լի է անիծքով և դառ-
15 նութեամբ. Անոնց ոտքերն արագ
16 են թափել արիւն. Կործանում և թշուառութիւն կայ անոնց ճամբաներուն
17 մէջ. Եւ խաղաղութեան ճամբան չգիտե-
18 ցան. Աստուծոյ երկիւղը չկայ անոնց
19 աչքերուն առջև. Գիտենք սակայն թէ օրէնքն ինչ որ կ'ըսէ, կ'ըսէ անոնց որ ընդ օրէնօք են. որպէս զի ամէն բերան խցուի, և բոլոր աշխարհ դա-
20 տապարտուած ըլլայ Աստուծոյ առջև. Քանզի օրինաց գործերէն բնաւ մարմին մը պիտի չարդարանայ անոր առջև. քանզի օրէնօք է մեղքը ճանչնալ.
21 Բայց հիմա առանց օրինաց՝ Աստուծոյ արդարութիւնն յայտնուած է, վկայեալ յօրինաց և մարգարէից. Այ-
22 սինքն Աստուծոյ արդարութիւնը որ Յիսուսի Քրիստոսի հաւատքէն է՝ բոլոր հաւատացելոց և անոնց ամենուն վրայ.
23 քանզի խորհութիւն չկայ, վասն զի ամենքը մեղան, և վրիպեալ են Աստու-
24 ծոյ փառքէն, Եւ անոր շնորհօքը ձրի կ'արդարանան փրկութեամբ որ է Քրիստոս Յիսուս.
25 Զոր յառաջագոյն սահմանեց Աստուած ի քաւութիւն հաւատով յարիւնն նորա, Աստուծոյ երկայնմտութեան առնելուն յառաջագոյն գործուած մեղաց Թողութիւն տալով՝
26 ցուցնելու համար իւր արդարութիւնը. Ա՛յսինքն ցուցնելու համար իւր արդարութիւնն այս ժամանակիս մէջ, որ ինք արդար ըլլայ, և արդարացնէ զանոնք որ Յիսուսի հաւատքէն են.
27 Ուրեմն ո՞ւր է պարծանքը. խափանեցաւ. որ օրէնքէն, գործերո՞ւն. ոչ,
28 այլ հաւատոյ օրէնքէն, Քանզի կը հաստատենք թէ մարդ կ'արդարանայ հաւատով առանց գործոց օրինաց, Միթէ
30 Աստուած միայն Հրեից է և հեթանոսաց ալ՞. այո, հեթանոսաց ևս. Քանզի մի է Աստուած որ կ'արդարացնէ թլփատութիւնն հաւատքէն և անթլփատութիւնը՝ հաւատքով.
31 միաւորութիւնը՝ Ուրե՞ք հաւատքով. Ուստի մենք հաստատո՞ւմ կը խափանե՞նք օրէնքը. քա՛ւ լիցի. այլ կը հաստատենք օրէնքը.

### Գլ. Դ

1 Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք թէ գտաւ Աբրահամ մեր նահապետն ըստ մարմ-
2 նոյ. Քանզի եթէ Աբրահամ գործով

էը արդարացեալ, կ'ունենաը պարծանք, բայց ոչ Թէ Աստուծոյ առջեւ։
3 Քանզի ի՞նչ կ'ըսէ գիրքը. Աբրահամ հաւատաց Աստուծոյ, և այն համարուեցաւ նմա արդարութիւն։
4 Բայց որ գործ մը կ'ընէ՝ վարձքը չհամարուիր անոր իբրեւ շնորհք, այլ իբրեւ պարտք։
5 Իսկ այն որ չգործեր, բայց կը հաւատայ անոր որ կ'արդարացնէ ամբարիշտը, անոր հաւատքը կը համարուի
6 նմա արդարութիւն։ Ինչպէս Դաւիթ եւս կ'ըսէ այն մարդուն երանութիւնը որուն Աստուած արդարութիւն կը հաշուի առանց գործոց։
7 Երանի անոնց, որոց անօրէնութիւնները ներուեցան,
8 և որոց մեղքերը ծածկուեցան։ Երանի այն մարդուն որուն մեղք չհամարիր
9 Տէրը։ Ուստի այս երանութիւնը թլփատութեա՞ն վրայ է, Թէ անթլփատութեան վրայ եւս. քանզի կ'ըսենք Թէ Հաւատքն արդարութիւն համար-
10 ուեցաւ Աբրահամու։ Ուրեմն ինչպէս համարուեցաւ. մինչ ի թլփատութեա՞ն էր, Թէ յանթլփատութեան. ոչ Թէ ի թլփատութեան, այլ յանթլփատու-
11 թեան։ Եւ թլփատութեան նշանն առաւ, կնիք արդարութեան հաւատոյն որ էր անթլփատութեան առնէին, որ ինք հայր ըլլար բոլոր այն հաւատացելոց որ անթլփատութենէ են, (անոնց եւս արդարութիւն համարուելու
12 համար,) Եւ հայր թլփատեան՝ ոչ միայն անոնց որ թլփատութենէ են, այլ և անոնց որ կը քալեն մեր հօրը Աբրահամու հաւատոյ չափերուն մէջ որ ունեցաւ անթլփատութեան ժա-
13 մանակ։ Քանզի Աբրահամու և անոր սերնդեան զաւրարկ ժառանգելու խոստումը ոչ Թէ օրէնքով եղաւ, այլ հա-
14 ւատոյ արդարութեամբ։ Քանզի եթէ ժառանգ ըլլային անոնք որ օրէնքէն են, ունայն պիտի ըլար հաւատքը և
15 խոստումը պիտի խափանուէր։ Վասն զի օրէնքը բարկութիւն կը գործէ. քանզի ուր օրէնք չկայ, օրինազանցու-
16 թիւն ևս չկայ։ Վասն որոյ ՚ի—ՈՒՆ ընդ հաւատքէն է, որ շնորհօք եղած



ըլլայ, օրպէս զի խոստումը հաստատուն ըլլայ բոլոր սերնդեան, ոչ միայն անոր որ օրէնքէն է, այլ և անոր՝ որ է ի հաւատոյ Աբրահամու, որ մեր ա-
17 մենուն հայրն է, (ինչպէս որ գրուած է Թէ Շատ ազգերու հայր ըրի զքեզ,) Աստուծոյ առջեւ, որուն հաւատաց նա, այն որ կ'ենդանի կ'ընէ մեռածները, և
18 կը կոչէ չգոն իբրեւ գոյ։ Որ չյուսալէն յուսով հաւատաց Թէ շատ ազգերու հայր պիտի ըլլար, (ինչպէս որ բսուեցաւ ևս, Թէ Ուր սերունդդ այսպէս
19 պիտի ըլլայ·) Եւ չըլլալով տկար ի հաւատս՝ չնայեցաւ իւր մարմնոյն որ էր արդէն իբրեւ մեռեալ, (քանզի իբր հարիւրամեայ էր,) և ոչ Սառայի արգան-
20 դին մեռելութեանը. Եւ անհաւատութեամբ չերկմտեցաւ Աստուծոյ խոստմանն, այլ հաւատով զօրացած՝ փառք
21 առաւ Աստուծոյ, Եւ իւր մտաց մէջ հաստատ պահեց Թէ այն որ խոստացաւ, կարող է և ընել։ Վասն այսորիկ
22 համարուեցաւ նմա արդարութիւն։
23 Բայց ոչ միայն նորա համար գրուեցաւ Թէ համարուեցաւ նմա,
24 Այլ և մեզի համար որոց պիտի համարուի, որ կը հաւատանք այնմ որ յարեցոյց մեռելներէն զՏէր մեր Յիսուս,
25 Ա՛յն որ մատնուեցաւ մեր յանցանաց համար, և յարեաւ արդարացուելու համար մեզ։

## Գլ. Ե

1 Ուստի մենք հաւատով արդարացած ըլլալով խաղաղութիւն ունինք Աստուած հետ Տէրոջմէ մեր Յիսուսէ Քրիս-
2 տոսի միջոցաւ։ Որով մէկդի ընկալանք հաւատով այս շնորհաց մտանելուն եւս, յորում կեցած ենք, և կը պարծինք
3 յուսով փառացն Աստուծոյ, Եւ ոչ այսչափ միայն, այլ և կը պարծինք ի նեղութիւնս. քանզի գիտենք Թէ նեղու-
4 թիւնը կը գործէ համբերութիւն, Եւ համբերութիւնը՝ փորձառութիւն, և
5 փորձառութիւնը՝ յոյս։ Եւ յոյսն ամօթով չմեղուր. քանզի Աստուծոյ սէ-



րը սփռեալ է մեր սիրտերուն մէջ Հոգւոյն Սրբոյ միջոցաւ, որ տրուեցաւ մեզ։
6 Վասն զի մինչ մենք դեռ տկար էինք, յարմար ժամանակին Քրիստոս մեռաւ
7 ամբարիշտաց համար։ Վասն զի արդարոյ մը համար հազիւ Թէ կը մեռնի ոք։ (բայց բարի մարդու մը համար Թերեւս
8 համարձակի ոք մեռնել։) Սակայն Աստուած իւր սէրը որ մեր վրայ՝ յայտնեց նոյն, որ մինչդեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեռաւ մեզի համար։ Ուրեմն հիմա որ անոր արեամբն արդարացանք,
9 որչափ եւս առաւել անով պիտի ազատ-
10 անք բարկութենէն։ Վասն զի եթէ, մինչ Թշնամի էինք, Աստուծոյ հետ հաշտեցանք անոր Որդւոյն մահուամբ, որչափ եւս առաւել մինչ հաշտուած
11 ենք՝ պիտի ապրինք անոր կենօքն։ Եւ ոչ միայն այս, այլ և կը պարծինք ևս Աստուած Տէրոջ մերոյ Յիսուսի Քրիստոսով ձեռօք, որով արդէն ընկալանք հաշտութիւնը։
12 Վասն զի ինչպէս որ մի մարդէ մեզք մտաւ յաշխարհ, և այն մեղքին մահ, և այնպէս բոլոր մարդոց վրայ տարածեցաւ մահը, քանզի ամէնքը մեղան,
13 (վասն զի մինչև օրէնքը մեզք կար յաշխարհի. բայց մեղք չհամարուիր
14 ուր օրէնք չկայ։ Սակայն մահը թագաւորեց Ադամայ մինչև ի Մովսէս Ադամայ յանցանաց նման չմեղանչողներուն վրայ եւս, որ օրինակ էր անոր
15 որ յետոյ պիտի գար։ Բայց ոչ Թէ ինչպէս յանցանքը՝ նոյնպէս և շնորհքն է. քանզի եթէ միոյն յանցանօք շատերը մեռան, որչափ եւս առաւել Աստուծոյ շնորհքը և պարգեւն որ միոյ մարդոյն Յիսուսի Քրիստոսի շնորհօքն է՝ ա-
16 նոյցա շատերուն վրայ։ Եւ ոչ Թէ այս պարգեւն ՚Ա—ՈՒՆ է՝ ինչպէս մեկ մը մեղանչեց. քանզի դատաստանը մեկ մեղանչեց՝ դատապարտութեան մէջ Նէ-
17 պէ՞ս, բայց շնորհքը շատ մեղքերէն ՚Ա—ՈՒՆ յարդարութիւն, վասն զի եթէ մի մարդուն մեղօք մահը թագաւորեց

այն միով, որչափ եւս առաւել անոնք որ շնորհաց և արդարութեան պարգեւին առատութիւնը կ'առնուն, պիտի թագաւորեն ի կեանս միոյն Յիսու-
18 սի Քրիստոսի ձեռօք։) Ուրեմն ինչպէս միոյն յանցանօք բոլոր մարդոց դատապարտութեան չէ՞ Եղա՜ծ, նոյնպէս միոյն արդարութեամբ՝ բոլոր մարդոց կենաց արդարութեան շնորհք
19 վասն զի ինչպէս որ միոյ մարդուն անհնազանդութեամբ շատերը մեղաւոր եղան, նոյնպէս միոյն հնազանդութեամբ
20 շատերը պիտի ըլլան արդար։ Սակայն օրէնքը մէջ մտաւ որ յանցանքը բազմանայ. բայց ուր առաւել եղաւ մեղքը, նոյնպէս և շնորհքը Թագաւորեց
21 արդարութեամբ ի կեանս յաւիտենից Տէրոջմէ մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօք։

## Գլ. Զ

1 Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք հիմա. մնա՞նք ի մեղս, որ շնորհքը բազմանայ. Քա-
2 զի՜ւղ. մենք որ մեռանք մեղաց, ի՞նչպէս դեռ կենանք անոր մէջ։ Չէ՞ք գիտեր, Թէ մենք որ Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք, անոր մահուանը մկրտուեցանք։ Անոր հետ Թաղուեցանք
4 մկրտութեամբ մահուան համար, որ ինչպէս Քրիստոս փառօք Հօր յարեաւ ի մեռելոց, նոյնպէս և մենք քալենք
5 կենաց նորոգութեան մէջ։ Վասն զի եթէ անկակից եղանք անոր մահուանը նմանութեամբ, պիտի ըլլանք նաև
6 անոր յարութեանը։ Այս գիտնանք որ մեր հին մարդը խաչակից եղաւ անոր, որպէս զի մեղաց մարմինը խափանուի, որ այսուհետեւ չծառայենք մեղաց·
7 վասն զի այն որ մեռած է ծէ՞ց՝ արդա-
8 րացած է ի մեղաց։ Արդ եթէ մենք Քրիստոսի հետ մեռանք, կը հաւատանք
9 Թէ անոր հետ ևս պիտի ապրինք։ Գիտենք Թէ Քրիստոս որ յարուցեալ է ի մեռելոց՝ ալ չմեռնիր։ մահը չունի իշխանութիւն

10 անոր վրայ, վասն զի մինչ մեռաւ, մեզաց մեռաւ մի անգամ, և որ կենդա-
11 նի է՝ կենդանի է Աստուծոյ։ Այսպէս դուք ձեր անձերն համարեցէք մեռած մեզաց, բայց կենդանի Աստուծոյ Տեառն
12 մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօք։ Ուստի՝ չը՛ նա մեղքը չթագաւորէ ձեր մահ-
կանացու մարմնոյն վրայ, որ անոր ցան-
13 կութեանց հնազանդիք։ Եւ մի ընծայէք մեզաց ձեր անդամները գործիք չըլլալ անիրաւութեան, այլ ձեր անձերն ընծայեցէք Աստուծոյ, որպէս թէ մեռելներէ կենդանացած, և ձեր անդամներն արդարութեան գործիք Աստու-
14 ծոյ։ Քանզի մեզքը ձեր վրայ պիտի չիշխէ. վասն զի չէք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք։
15 Ուրեմն ի՞նչ. մեղք գործենք որ չենք ընդ օրինօք այլ ընդ շնորհօք։
16 քա՛ւ լիցի։ Չէ՞ք գիտեր թէ որու որ ի՛նքնայէք ձեր անձերը ծառայ ի հնազանդութիւն, ծառայ էք որու որ կը հնազանդիք, թէ՛ մեղաց՝ ի մահ, և թէ՛ հնազանդութեան՝ յարդարութիւն։
17 Բայց գոհութիւն Աստուծոյ, որ էիք ծառայ մեզաց ծառայ էիք, սակայն սրտիկ հնազանդեցաք այն վարդապետութեան զոր տրուիք որ յանձնուեցաք ձեզ։
18 Ուստի ազատ ըլլալով ի մեզաց՝
19 ծառայ եղաք արդարութեան։ (Մարդիօրէն կ՚ըսեմ, ձեր մարմնոյն տկարութեան համար։) քանզի ինչպէս ընծայեցիք ձեր անդամներն ծառայ պղծութեան և անօրէնութեան յանօրէնութիւն, նոյնպէս հիմա ընծայեցէք ձեր անդամները ծառայ արդարութեան
20 ի սրբութիւն։ վասն զի երբ ծառայ էիք
21 ծառայք մեզաց, ազատ էիք արդարութենէ։ Ուրեմն ի՞նչ պտուղ ունէիք յայնժամ այն բաներէն որովք հիմա կ՚ամչնա՛ք. քանզի անոնց վախճանը
22 մահ է։ Բայց հիմա ազատուած ի մեզաց և Աստուծոյ ծառաներ եղած՝ ունիք ձեր պտուղը սրբութեամբ, և ի
23 վախճանի յաւիտենական կեանք։ Քանզի մեզաց վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւն յաւիտենական կեանք՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօք։

## Գլ. Է

1 Մի՞թէ չէ՛ք գիտեր, եղբայրներ, (քանզի կը խօսիմ օրէնքը գիտցողներուն,) որ օրէնքը կ՚իշխէ մարդուս վրայ ցոր-
2 չափ կենդանի է։ Քանզի առնականին օրինօք կապուած է իւր ողջ երկնքը. բայց եթէ այրը մեռնի, արձակուած է
3 երկնքը օրէնքէն։ Ուրեմն մինչ ողջ է այրը, շնացող պիտի ըսուի, եթէ ըլլայ ուրիշ երկան. բայց եթէ այրը մեռնի՝ ազատ կ՚ըլլայ այն օրէնքէն, այնպէս որ շնացող չըլլար, եթէ ըլլայ ուրիշ
4 երկան։ Ուստի դուք ևս, եղբարք իմ, Քրիստոսի մարմնովը մեռաք օրինաց, որ ըլլաք ուրիշի մը, անոր՝ որ մեռե-
նեռին յարութիւն առած է, որպէս զի
5 պտղաբեր ըլլանք Աստուծոյ. Քանզի մինչ էինք մարմնով, մեզաց կիրքերը որ օրինօք կ՚ըլլային՝ կը գործէին մեր անդամներուն մէջ պտղաբեր ըլլալու-
6 համար։ Բայց հիմա արձակուեցանք օրէնքէն. քանզի մեռանք այնմ որով բռնուած էինք, որպէս զի ծառայենք նորոգութեամբ հոգւոյն, և ոչ թէ հնութեամբ գրոյն։
7 Ուրեմն ի՞նչ ըսենք. օրէնքը մե՞ղք է. քա՛ւ լիցի։ Բայց ևս չէի ճանչնար մեզքը, եթէ ոչ օրինօք. ինչպէս նաև չէի գիտեր ցանկութիւնը, եթէ օրէնքն ը-
8 սած չըլլար. Մէ՛ ցանկար, Բայց մեզքն առիթ առնելով պատուիրանքէն գործեց յիս բոլոր ցանկութիւնները. վասն զի առանց օրինաց մեզքը մեռած է։
9 Եւ ես առանց օրինաց երբեմն կենդանի էի, բայց երբ պատուիրանքն հասաւ, մեզքը կենդանացաւ, և ես մե-
10 ռայ։ Եւ պատուիրանքը որ կենաց հասմար էր, նոյն եղաւ ինձ ի մահ։ Քանզի մեզքն առիթ առնելով պատուիրանքէն խաբեց զիս, և անով մեռցուց։
12 Ուստի օրէնքը սուրբ է, և պատուիրանքը սուրբ և արդար և բարի։
13 Ուրեմն բարին մա՞հ եղաւ ինձ. քա՛ւ



լիցի։ այլ մեզքը, որպէս զի երեւնայ թէ մեզք է, որ այն բարւով մահ գործեց ինձ, որ մեզքն աւելի մեզաւոր ըլլայ
14 պատուիրանքէ։ Վասն զի գիտենք թէ օրէնքն հոգևոր է, բայց ես մարմնա-
15 որ եմ ընդ մեզաց վաճառեալ։ Քանզի ինչ կ՚ընեմ՝ չեմ ճանչնար. ոչ թէ ինչ որ կամիմ զայն կ՚ընեմ, այլ
16 ինչ որ կ՚ատեմ զայն կ՚ընեմ, իսկ եթէ կ՚ընեմ ինչ որ չեմ կամիր, հաւանութիւն կու տամ օրինաց թէ բարի է։
17 Իսկ արդ ոչ թէ ես կ՚ընեմ զայն, այլ
18 մեզքը որ յիս կը բնակի։ Քանզի գիտեմ թէ յիս, այսինքն մարմնոյս մէջ, բարի բան չբնակիր. քանզի կամել կայ յիս, բայց բարին ի գործ դնել չեմ
19 գտներ. Քանզի ոչ թէ զբարին զոր կամիմ՝ կ՚ընեմ, այլ չարը զոր չեմ կա-
20 միր կ՚ընեմ, իսկ եթէ կ՚ընեմ ինչ որ չեմ կամիր, այլ ես ոչ թէ ես կ՚ընեմ զայն, այլ մեզքը որ յիս բնակեալ
21 է։ Ուստի կը գտանեմ օրէնք մը, որ երբ բարին ընել կը կամիմ, չարն իմ քովս
22 է։ Վասն զի հաճելով ներքին մարդուն
23 կը համձնմ Աստուծոյ օրինաց. Բայց ուրիշ օրէնք կը տեսնեմ անդամներուս մէջ՝ որ կը պատերազմի ընդդէմ օրինաց մտացս, և զիս գերի կ՚ընէ օրինաց մեզաց որ անդամներուս մէջ է։
24 Ինչ ողորմելի մարդ եմ ես. ո՞վ զիս պիտի ազատէ այս մահացու մարմնէն։
25 Գոհութիւն Աստուծոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեռօք. ուրեմն ես ինքն մտօք կը ծառայեմ օրինաց Աստուծոյ, և մարմնով՝ օրինաց մեզաց։

## Գլ. Ը

1 Իսկ արդ չկայ դատապարտութիւն անոնց որ ի Քրիստոս Յիսուս են և չեն
2 քալեր ըստ մարմնոյ։ Քանզի ի Քրիստոս Յիսուս կենաց հոգւոյն օրէնքն ազատեց զիս մեզաց և մահուան օրէնքէ։
3 Վասն զի այն որ անկնար էր օրինաց, վասն զի ակար էր մարմնով, Աստուած իւր Որդին զրկեց ի նմանութիւն մարմնոյ մեզաց և մեզաց համար,
4 և դատապարտեց մեզքն ի մարմնի, Որ օրինաց արդարութիւնը կատարուի ի մեզ, որ չենք քալեր ըստ մարմնոյ,
5 այլ ըստ հոգւոյ։ Քանզի անոնք որ մարմնաւոր են՝ մարմնոյ բաներըը կը խորհին, իսկ անոնք որ հոգևոր են՝
6 հոգւոյն բաներըը։ Վասն զի մարմնաւոր խորհուրդը մահ է, և հոգևոր խորհուրդը՝ կեանք և խաղաղութիւն։
7 Քանզի մարմնաւոր խորհուրդը թշնամութիւն է Աստուծոյ դէմ. վասն զի չհնազանդիր Աստուծոյ օրինաց, մա-
8 նաւանդ չկրնար իսկ։ Քանզի անոնք որ մարմնով են՝ չեն կրնար հաճոյ ըլ-
9 լալ Աստուծոյ։ Բայց դուք մարմնով չէք՝ այլ հոգւով, եթէ Աստուծոյ Հոգին բնակած է ի ձեզ. իսկ եթէ ոք չու-
նի Քրիստոսի Հոգին, անորը չէ։ Եւ ե-
10 թէ Քրիստոս ի ձեզ է, ապա մարմինը մեռած է մեզաց համար, և հոգին կեն-
11 դանի՝ արդարութեան համար։ Իսկ եթէ՝ զձիրաս մեռելներէն յարուցանողին Հոգին բնակած է ի ձեզ, ապա այն որ զՔրիստոս յարոյց մեռելներէն՝ պիտի կենդանացուցանէ ձեր մահկանացու մարմիններն իւր Հոգւովը որ կը բնակի ի ձեզ։
12 Ապա ուրեմն, եղբարք, պարտական ենք, ոչ թէ մարմնոյն ըստ մարմնոյ
13 ապրիլ. Քանզի եթէ ըստ մարմնոյ ապրիք, պիտի մեռնիք. բայց եթէ սպանէք Հոգւով մարմնոյն գործերը, պի-
14 տի ապրիք։ Վասն զի անոնք որ կ՚առաջնորդուին Աստուծոյ Հոգւովը, որ-
15 դիք են Աստուծոյ։ Քանզի դուք չստացաք ծառայութեան հոգին միւսանգամ ի՛րկիւղ, այլ ստացաք որդեգրութեան հոգին, որով կ՚աղաղակենք Աբբայ
16 Հայր։ Նոյն ինքն Հոգին կը վկայէ մեր հոգւոյն հետ, թէ որդիք ենք Աստու-
17 ծոյ։ Եւ եթէ որդիք, ուրեմն ժառանգ, ժառանգ Աստուծոյ, և ժառանգակից Քրիստոսի. որ, եթէ ըլլանք կցորդ — նոր չարչարանաց, անոր փառացն ևս ըլլանք հաղորդ։

*Ոմանք՝ Յարութեան՝ այլ ըստ հոգւոյ

18 Վասն զի ես այսպէս կը դաւանիմ որ այս ժամանակիս չարչարանքը չեն արժանի բաղդատուելու գալու փառաց որ
19 պիտի յայտնուի ի մեզ։ Վասն զի ամբարծոց եռանդուն ակնկալութիւնը կը սպասէ Աստուծոյ որդւոց յայտնելուն։ Քանզի արարածք հնազանդեցան ունայնութեան՝ (ոչ թէ իրենց կամքը՝ այլ անոր համար որ հնազան-
21 դեցոյց,) Ա՛ն յուսով որ նոյն իսկ արարածք ազատին ապականութեան ծառայութենէն յազատութիւն փառաց
22 որդւոցն Աստուծոյ։ Քանզի գիտենք թէ բոլոր արարածք մինչև ցարդ կը հեծեծեն և երկունք կը կրեն ի միասին։
23 Եւ ոչ՝ միայն՝ այլ և մենք իսկ որ Հոգւոյն առաջին պտուղն ունենք, մենք մեզնեն կը հեծեծենք յանձինս մեր ազատելով որդեգրութեան, այսինքն
24 մեր մարմնոյն ազատութեանը։ Քանզի վերկոնդակով յուսով։ բայց յոյսը որ կը տեսնուի՝ չէ յոյս։ վասն զի այն զոր կը տեսնէ ոք՝ ընդ՞ի՞ր այլ ևս պիտի
25 յուսայ։ իսկ եթէ զոր չենք տեսներ՝ կը յուսանք, ա՜ւ՜ղ կը սպասենք համ-
26 բերութեամբ։ Նոյնպես և Հոգին կը հասնի յօգնութիւն մեր տկարութիւններուն։ քանզի ինչ բանէ հարկ ըսա արժանւոյն ազօթելու ենք, չենք գիտեր. բայց ինքն Հոգին բարեխօս կ'ըլլայ մեզի համար անբարբառ հեծու-
27 թեամբ։ Եւ սիրտերը քննողը գիտէ թէ ինչ կը խորհի Հոգին, քանզի Աստուծոյ կամացը համեմատ կը բարեխօսէ սրբոց համար։
28 Մեկնայն գիտենք թէ ամենայն ինչ ի բարին գործակից կ'ըլլայ անոնց որ զԱստուած կը սիրեն, որ նախասահմա-
29 նութեամբ կոչուած են։ վասն զի զորս յառաջ կը ճանչնար՝ յառաջագոյն և սահմանեց կերպարանակից ըլլալ իւր Որդւոյն պատկերին. որպէս զի անդրանիկ ըլլայ նա շատ եղբայրներու մէջ։
30 Եւ զորս յառաջագոյն սահմանեց, նաև կոչեց. և զորս կոչեց, նաև արդարացուց. և զորս արդարացուց, նաև փա-
31 առաւորեց։ Ուրեմն ի՞նչ ըսենք այս բաներուն համար. եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեզ հակառակ։
32 Ա՛ն որ իւր Որդւոյն չխնայեց՝ այլ մեր ամենուն համար մատնեց զնա, ի՞նչպէս անոր հետ չպարգեւեր մեզ նաև ամէն
33 բան։ Ո՞վ է որ մեղադիր ըլլայ Աստուծոյ ընտրեալներուն. Աստուած է որ
34 կ'արդարացունէ, ո՞ւ՞մ է որ կը դատապարտէ. Քրիստոս է որ մեռաւ, մանաւանդ թէ յարեաւ խակ, և է ընդ աջմէ Աստուծոյ, որ և բարեխօս է մեզի
35 համար. ո՞ւ՞մ պիտի զատէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի. տառապա՞նք, թէ նեղութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ,
36 թէ մերկութի՞ւն, թէ վտա՞նգ, թէ սո՞ւր. (ինչպէս որ գրուած է, Ա՛յն
37 օր կը սպաննուինք ջեզի համար, մըրթաւելու ոչխարի պէս կը համարուինք։)
Ա՛յդ այս ամենուն մէջ ևս աւելի յաղթող կ'ըլլանք անով որ սիրեց զմեզ։
38 Քանզի զիս գիտեմ թէ ոչ մահ, և ոչ կեանք, և ոչ հրեշտակք, և ոչ իշխանութիւնք, և ոչ զօրութիւնք, և ոչ
39 ներկայքս, և ոչ հանդերձեալքն, Եւ ոչ բարձրութիւն, և ոչ խորութիւն, և ոչ այլ ինչ արարած կրնայ զատել զմեզ ի սիրոյն Աստուծոյ որ է ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։

## Գլ. Թ

1 Ա՛ստգիւ կ'ըսեմ Քրիստոսով, չեմ սուտը, (խիղճս ևս կը վկայէ ինձ Հո-
2 գւով Սրբով,) Որ մեծ տրտմութիւն
3 է ինձ և անպակաս ցաւ սրտիս. Քանզի ես ինքն կը խնդրէի նզով լինել ի Քրիստոսէ իմ եղբայրներուս և ազգա-
4 կաններուս համար ըստ մարմնոյ, Որ են իսրայէլացիք. որոց է որդեգրութիւնը և փառքը և ուխտերը և օրէնադրութիւնը և պաշտօնը և խոստո-
5 մունքը. Որոց են նահապետք, յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ամենուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեան։ Ամէն։ Բայց ոչ իբր թէ Աս-
6 տուծոյ խօսքը գետին ինկած է. քանզի ոչ թէ ամէնքը որ Իսրայէլէ են՝ Իսրայէլացի են. Եւ ոչ թէ վասն զի Աբրահամայ սերունդ են, ամէնքը որդիք են. այլ՝ Իսահակէ պիտի կոչուի քեզ
8 սերունդ։ Այսինքն՝ ոչ թէ անոնք որ են մարմնոյ որդիք՝ որդիք են Աստուծոյ, այլ խոստման որդիքը կը համա-
9 րուին սերունդ։ Քանզի խոստման խօսքն այս էր, Թէ Այս ժամանակ պիտի գամ, և Սառա պիտի ունենայ որդի։
10 Եւ ոչ միայն այսպէս, այլ և Ռեբեկա, որ յղացաւ ի միջէ, մեր հօր-
11 մէն Իսահակայ։ Քանզի մինչ դեռ ծնած չէին, և մինչ դեռ բարի կամ չար գործած չէին, (որպէս զի նախասահմանութիւնն Աստուծոյ հաստատ
12 մնայ ըստ ընտրութեան, ոչ թէ ի գործոց, այլ անկէ որ կոչեց,) ըսուեցաւ
13 անոր, Թէ Երէցը պիտի ծառայէ կրտսերոյն, ինչպէս որ գրուած է Թէ ԶՅակոբ սիրեցի, բայց զԵսաւ ատեցի։
14 Ուրեմն ի՞նչ ըսենք. միթէ անիրաւութի՞ւն կայ Աստուծոյ քով. քա՛ւ
15 լիցի։ Քանզի կ'ըսէ Մովսէսի, Որու պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ, և որու պի-
16 տի գթամ՝ կը գթամ։ Ուրեմն ոչ անկէ է որ կը կամի, և ոչ անկէ որ կ'ընթանայ, այլ Աստուծմէ որ կ'ողորմի։
17 Քանզի գիրքը կ'ըսէ փարաւոնի, Անոր համար վերցուցի զքեզ, որ զօրութիւնս ցուցնեմ ի քեզ, և բոլոր երկրի մէջ
18 պատմուի իմ անունս։ Ուստի որու կամի՝ կ'ողորմի, և զոմ կամի՝ կը խըս-
19 տացնէ։ Ուրեմն պիտի ըսես ինձ, Թէ Ասյա ընդէ՞ր մեզադիր կ'ըլլայ. վասն
20 զի ո՞վ դեմ դրաւ անոր կամացը։ Բայց դուն ո՞վ ես, մարդ, որ պատասխան կուտաս Աստուծոյ դէմ. միթէ ստեղծուածը կրնայ ըսել Ստեղծողին Թէ
21 Ընդէ՞ր այդպէս բրիր զիս։ Բրուոյը չունի՞ իշխանութիւն կաւին վրայ՝ նոյն չաղաւածէն չինել ուրեմն, զիմի՛ ի պա-
22 տիւ, և զմիւսն՝ չանարգանս։ Ապա ի՞նչ ըլլէ, եթէ Աստուած կամելով ցուցնել բարկութիւնը և յայտնել իր զօրութիւնը, շատ երկայնմտութեամբ համբերեց ի կորուստս պատրաստուած
23 բարկութեան ամաններուն. Եւ, որպէս զի յայտնի ընէ իւր փառաց մեծութիւնը ողորմութեան ամաններուն վրայ, զորս յառաջագոյն պատրաստեց
24 ի փառս. Այսինքն զմեզ որ կոչեց, ոչ միայն Հրեաներէն, այլ և հեթա-
25 նոսներէն. Ինչպէս Ովսեէի մէջ ևս կ'ըսէ, Ա՛յն որ իմ ժողովուրդս չէ՝ իմ ժողովուրդս պիտի կոչեմ, և այն որ
26 սիրելի չէ՝ սիրելի. Եւ պիտի ըլլայ Թէ ուր անոնց ըսուեցաւ Թէ Դուք իմ ժողովուրդս չէք, հոն անոնք պիտի կոչ-
27 ուին Կենդանի Աստուծոյ որդիք։ Նաև Եսայի կ'աղաղակէ Իսրայէլի համար, Թէև Իսրայէլի որդւոց Թիւն ըլլայ ծովու ջրոց պէս, մնացորդ պիտի ազա-
28 ւէ. Քանզի Տէրը կատարելապէս կ'ընէ արդարութեամբ. վասն զի Տէրը հակիրճ բան մը պիտի ընէ երկրի
29 վրայ։ Եւ ինչպէս Եսայի ըսաւ յառաջագոյն, Եթէ զօրաց Տէրը սերունդ թողուցած չըլլար մեզ, պիտի ըլլայինք իբրև Սոդոմ, և Գոմորայ պիտի նմանէինք։
30 Ուրեմն ի՞նչ ըսենք. Թէ հեթանոսները որ արդարութեան հետեւ չէին երթար՝ արդարութեան հասան, այն
31 արդարութեան որ ի հաւատոյ է. Բայց Իսրայէլ որ կ'երթար հետեւ օրինաց արդարութեան՝ չհասաւ օրինաց արդա-
32 րութեան։ Ընդէ՞ր. վասն զի ոչ թէ ի հաւատոյ, այլ որպէս Թէ օրինաց գործերէն խ-ը-ց-ա- ո-ւ-ր-ա-ն-ա-լ. քանզի գլորեցան գայթակղութեան վիմին վը-
33 րայ. Ինչպէս գրուած է, Ահա կը դնեմ ի Սիոն քար գայթակղութեան, և վէմ գլորման. և ով որ անոր հաւատայ՝ պիտի չամչնայ։

## Գլ. Ժ

1 Եղբարք, իմ սրտիս փափաքը և աղօթքն առ Աստուած *Իսրայէլի վրայ
2 է ի փրկութիւն, Քանզի կը վկայեմ անոնց համար, Թէ ունին զնախանձն Աս-
3 տուծոյ, բայց ոչ գիտութեամբ։ Վասն

*Ոմն. անոնց

զի չդիտացալով Աստուծոյ արդարութիւնը, և կամելով հաստատել իրենց արդարութիւնը, չենազանդեցան Աստուծոյ արդարութեանը։ Քանզի օրէնից վախճանը Քրիստոս է ամէն հաւատացելոյ արդարութեան համար։

5 Վասն զի Մովսէս այն արդարութիւնը որ յօրինաց է կը նկարագրէ. Թէ զանոնք կատարող մարդը պիտի ապրի
6 անոնցմով։ Բայց այն արդարութեան համար որ ի հաւատոց է կ'ըսէ այսպէս. Մի ըսեր քու սրտիդ մէջ, Ո՞վ պիտի ելլէ յերկինս, (այսինքն զՔրիստոս իջուցանել.) կամ Թէ Ո՞վ պիտի
7 իջնէ անդունդը, (այսինքն զՔրիստոս հանել ի մեռելոց) Այլ ինչ կ'ըսէ. Խօսքը մօտ է քեզ, քու բերնիդ մէջ և քու սրտիդ մէջ է, այսինքն հաւատոյ խօսքը զոր կը քարոզենք։ Վասն
9 զի եթէ բերնովդ խոստովանիս զՏէր Յիսուս, և սրտիդ մէջ հաւատաս Թէ Աստուած յարոյց զնա ի մեռելոց, պիտի փրկուիս. (Վասն զի սրտով կը հաւատայ մարդ յարդարութիւն, և բերանով կը խոստովանի ի փրկութիւն)
11 Գրանզի Գիրքը կ'ըսէ, Ով որ հաւատայ անոր՝ պիտի չամչնայ։ Վասն զի
12 խտրութիւն չկայ ի մէջ Հրէային և Յունին. վասն զի ամենուն Տէրը նոյն է, առատ առ ամենեսին որ կը կոչեն առ
13 նա։ Գրանզի ով որ Տէրոջը անունը կը կոչէ՝ պիտի փրկուի։

14 Ուրեմն ինչպէ՞ս պիտի կոչեն առ նա որուն չհաւատացին. կամ ինչպէ՞ս պիտի հաւատան անոր՝ որոյ վրայ չլսեցին. կամ ինչպէ՞ս պիտի լսեն առանց
15 ուրուք քարոզելոյ. կամ ինչպէ՞ս պիտի քարոզեն, եթէ չղրկուին. ինչպէս որ գրուած է, Ինչպէս գեղեցիկ են ոտք աւետարանչաց խաղաղութեան,
16 և աւետարանչաց բարիոց։ Բայց ամէնքը հնազանդ չեղան աւետարանին. Գրանզի Եսայի կ'ըսէ, Տէր, ո՞վ հաւա-
17 տաց մեր լսուին։ Ուրեմն հաւատքը լսելէն է, և լսելը՝ Աստուծոյ խօսքէն։
18 Բայց կ'ըսեմ, Միթէ չլսեցի՞ն. մանաւանդ Բոլոր երկիր ելաւ անոնց հընչիւնը, և անոնց խօսքը՝ մինչև ի ծագս
19 աշխարհի։ Բայց կ'ըսեմ, Միթէ Իսրայէլ չդիտացա՞. նախ Մովսէս կ'ըսէ, Ես զձեզ ի նախանձ պիտի գրգռեմ *անպիտան ժողովրդեամբ, և անմիտ ազ-
20 գաւ պիտի զայրացնեմ զձեզ։ Բայց Եսայի կը համարձակի և կ'ըսէ, Ես գտնուեցայ անոնց՝ որ զիս չէին խընդրեր, յայտնի եղայ անոնց՝ որ զիս չէին
21 հարցներ։ Յակառակ Իսրայէլի վրայ կ'ըսէ, Բոլոր օրը ձգեցի ձեռքս անհնազանդ և հակառակ ժողովրդեան։

## Գլ. ԺԱ.

1 Ուրեմն կ'ըսեմ, Միթէ մերժե՞ց Աստուած իւր ժողովուրդը. քաւ լեցի. քանզի և ես Իսրայէլացի եմ, Աբրահամու սերունդէն, Բենիամինի ցեղէն։
2 Չմերժեց Աստուած իւր ժողովուրդը զոր յառաջ ճանչցաւ. միթէ չէ՞ք դիտեր ինչ կ'ըսէ գիրքը յեղիա. ինչպէս կը դանգատի առ Աստուած
3 Իսրայէլի համար. Տէր, սպաննեցին մարգարէներդ և փլուցին սեղաններդ, և միայն ես մնացած եմ, և կը փնտրեն իմ անձս։ Բայց ի՞նչ կ'ըսէ աստուածային պատասխանն անոր. Թողի ինձ եօթն հազար մարդ որ ծունր
5 չկրկնեցին Բահաղու։ Նոյնպէս և այս ժամանակ մնացորդ կայ ըստ ընտրու-
6 թեան շնորհաց. Եւ եթէ շնորհօք, ոչ ևս գործերէն. ապա թէ ոչ՝ շնորհքն այլ ևս շնորհք չըլլար։ Իսկ եթէ գործերէն է, շնորհք չէ. ապա թէ ոչ՝
7 գործը գործ չըլլար։ Ուրեմն ինչ։ Իսրայէլ չհասաւ այնմ զոր կը խնդրէր. բայց ընտրածներն հասան, և մնա-
8 ցածներըը կուրացան (ինչպէս գրուած է, Աստուած տուաւ անոնց թմրութեան ոգի, աչքերնիր՝ որովք պիտի չտեսնեն, և ականջներ՝ որովք պիտի
9 չլսեն,) մինչև այսօր։ Եւ Դաւիթ կ'ըսէ, Անոնց սեղանն ըլլայ անոնց որոգայթ և որս և գայթակղութիւն և

*Յոյն. ոչ ի ժողովրդեան։



10 հատուցումն. Անոնց աչքերը մթանան որ չտեսնեն, և անոնց թիկունքը
11 միշտ կորացուր։ Ուրեմն կ'ըսեմ, Միթէ վասն այնորիկ յանգանք ըրին որ կործանին. քաւ լիցի. այլ անոնց յանցանօք հեթանոսաց փրկութիւն եղաւ,
12 որ զանոնք ի նախանձ գրգռէ։ Ուստի եթէ անոնց յանցանքը մեծութիւն աշխարհի, և անոնց նուաստութիւնը՝ մեծութիւն հեթանոսաց, որչա՜փ և առաւել անոնց լրութիւնը։
13 Բայց կ'ըսեմ ձեզ հեթանոսաց. որովհետև առաքեալ եմ հեթանոսաց, կը
14 մեծարեմ իմ պաշտօնս. Որ թերևս զանոնք որ իմ մարմինս են՝ ի նախանձ գրգռեմ, և ապրեցունեմ անոնցմէ
15 զոմանս։ Վասն զի եթէ անոնց մերժումն հաշտութիւն է աշխարհի, ապա ընդունելութի՞ւն չ՝ի պիտի ըլլայ, եթէ ոչ կենդանութիւն ի մեռելոց։ Արդ եթէ
16 սուրբ է երախայրին, նաև զանգուածը. և եթէ սուրբ է արմատը, ոտիերն
17 և։ Եթէ այն ոտիերն ամենք խլեցան, և դուն որ վայրենի ձիթենի էիր՝ պատուաստեցար ի նոսա, և ձիթենւոյն արմատին և պարարտութեանը
18 եղար հաղորդ, Ոտիերուն դէմ մի պարծենար. իսկ եթէ պարծենաս, ոչ
19 թէ դուն վեր բանած ես արմատը, այլ արմատն զքեզ։ Ուրեմն պիտի ըսես, Ոտիերը խլեցան որ ես պատուաստուիմ
20 Բարւոք է, անոնք անհաւատութեամբ խլեցան, և դուն հաւատով հաստատեցար. մի հպարտանար, այլ վախ-
21 ցիր։ Վասն զի եթէ Աստուած բնական ոտիերուն չխնայեց, Թերևս չխնայէ և
22 քեզ։ Ուստի տես Աստուծոյ քաղցրութիւնը և խստութիւնը, կործանելոց վրայ՝ խստութիւն, և քու վրադ՝ քաղցրութիւն, եթէ այն քաղցրութեան մէջ կենաս, ապա թէ ոչ՝ դուն ևս պի-
23 տի կտրուիս։ Իսկ անոնք, եթէ անհաւատութեան մէջ չկենան, պիտի պատուաստուին. քանզի կարող է Աստուած միւսանգամ պատուաստել զնոսա։
24 Ռնէ, եթէ դուն կտրուեցար ի բնէ վայրենի ձիթենիէն, և արտաքոյ բնութեան պատուաստեցար բարի ձիթենւոյն վրայ, որչափ ևս աւելի՜ անոնք որ բնական ճիւղերը են՝ պիտի պատուաստուին իրենց ձիթենւոյն
25 վրայ։ Վասն զի ձեզ, եղբարք, չուզեմ որ անգիտանաք այս խորհուրդը, (որպէս զի չհամարիք զձեզ իմաստուն,) Թէ բուն մասին եղաւ կուրութիւն Իսրայէլի, մինչև մտնէ հեթանոսաց լրութիւնը։
26 Եւ այսպէս բոլոր Իսրայէլ պիտի փրկուի. ինչպէս գրուած է, Սիոնէ պիտի գայ Փրկիչ և պիտի դարձնէ
27 ամբարշտութիւններն ի Յակոբայ. Եւ այս է իմ ուխտս անոնց, երբ անոնց մեղքը վերցունեմ։ Բնաւ աւետարանին
28 մեղքը վերցունեմ։ Բնաւ աւետարանին անոնք թշնամի են ձեզի համար. իսկ բուն ընտրութեան սիրելի են հարց հա-
29 մար։ Քանզի Աստուծոյ պարգեւները
30 և կոչումն առանց զղջանալոյ են։ Վասն զի ինչպէս դուք ժամանակաւ չեիք հաւատար Աստուծոյ, և հիմա ողորմութիւն գտաք *անոնց անհաւատու-
31 թեամբը, նոյնպէս անոնք հիմա անհաւատ եղան, որ ձեր ողորմութիւն գանելովին անոնք ևս գանեն ողորմու-
32 թիւն։ Քանզի Աստուած արգելից ամենքն անհաւատութեան մէջ, որ ամենուն ողորմի։

33 Ո՜վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեան Աստուծոյ. Ինչպէս անքննելի են անոր դատաստանները, և անգնելի են անոր ճամբանե-
34 րը, Վասն զի ո՞վ գիտցաւ Տէրոջը միտքը, կամ ո՞վ խորհրդակից եղաւ անոր։
35 Կամ ո՞վ յառաջագոյն առաւ անոր,
36 որ փոխարէնը տրուի անոր։ Քանզի ամէն բան անկէ և անով և անոր համար է։ Նմա փառք յաւիտեանս Ամէն։

## Գլ. ԺԲ.

1 Արդ կ'աղաչեմ զձեզ, եղբարք, Ա-

*Կամ մինչ անոնք անհաւատ էին, նոյնպէս անոնք հիմա անհաւատ եղան, մինչ դուք ողորմութիւն գտաք, որպէս զի անոնք

առաջոյ ողորմութեամբ, որ ձեր մարմիններն ընծայէք կենդանի զոհ սուրբ, հաճոյ Աստուծոյ, այն է ձեր բանաւոր
2 պաշտօնը։ Եւ մի կերպարանիք այս աշխարհիս կերպարանօք, այլ նորոգուեցէք ձեր մտաց նորոգութեամբ, որ քննէք թէ ինչ է Աստուծոյ կամքը,
3 բարին և հաճոյն և կատարեալն։ Զանազի ինձ տրուած *շնորհօք կ'ըսեմ ի բաց քանչիւր ումեք որ ձեր մէջ է, որ չիմարհի քան զոր պիտան է խորհել, այլ խորհի զպատասխանել, ինչպես որ Աստուած իւրաքանչիւրոյ
4 բաժնեց հաւատոյ չափը։ Վասն զի ինչպես որ մի մարմնոյ մէջ շատ անդամներ ունինք, և այն բոլոր անդամները
5 չունին միևնոյն գործը, Այսպես մենք բազումքս մի մարմին եմք ի Քրիստոս, և իւրաքանչիւրք իրարու անդամներ։
6 Ուստի որովհետև այլ և այլ պարգևներ ունինք ըստ շնորհացս որ տրուած է մեզ, եթէ մարգարէութիւն՝ հաւատոյ չափով։
7 եթէ սպասաւորութիւն՝ ի սպասաւորութեան. այն որ կը վարդապետէ՝ ի վարդապետութեան,
8 Այն որ կը յորդորէ՝ ի յորդոր, այն որ կը բաշխէ՝ պարզութեամբ, այն որ վերակացու է՝ փութով, այն որ կ'ողորմի՝ ցուարթութեամբ։ Սէր՝ առանց կեղծաւորութեան, ատելով չարը, յարելով
10 լաւ բարւոյն։ Ցեղբայրասիրութեան՝ իրարու վրայ գթած, ի պատուի՝ իրարու հետ մրցող։ Ի փոյթ՝ մի վհետրատհոգւով եռացէք, Տեառն ծառայեցէք,
12 Ցուսով խնդացէք, նեղութեան մէջ
13 համբերեցէք, առ պաղծեցէք։ Սուրբերուն պիտոյիցը հաղորդեցէք։ Հիւ-
14 րասիրութեան հետևեցէք։ Ձձեզ հալածողներն օրհնեցէք, օրհնեցէք և մի
15 անիծէք։ Խնդացէք ընդ խնդացողս,
16 և լացէք ընդ լացողս։ Իրարու վրայ միևնոյն խորհուրդն ունեցէք։ Մի ամբարտաւանիք, այլ խոնարհներուն հետ դիմէք։ Ձձեզ իմաստուն մի համարիք։
17 Մի հատուցանէք ումեք չար փոխա-

նակ չարի։ բայց մարդոց առջև բարին
18 հոգացէք։ Որչափ հնար է ձեզ՝ բոլոր մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք։
19 Սիրելիք, վրէժխնդրութիւն մի ընէք ձեր անձերուն համար, այլ տեղի տուէք բարկութեան. քանզի գրուած է, Իմ է վրէժխնդրութիւն, ես պիտի հա-
20 ատուցանեմ, կ'ըսէ Տէրը։ Ուստի եթէ թշնամիդ քաղցեալ է, հաց տուր նմա, և եթէ ծարաւի է, յուր տուր նմա. քանզի զայս ընելով անոր գլխուն վրայ
21 կրակի կայծեր կը դիզես։ Մի յաղթուիր չարէն, այլ յաղթէ բարեաւ չարին։

## Գլ. ԺԳ

1 Ամէն անձ թող հնազանդի էրէն վրայ կարգեալ իշխանութեանց. վասն զի չկայ իշխանութիւն որ չէ Աստուծմէ. և *անոնք որ կան՝ կարգեալ են Աս-
2 տուծմէ։ Ուրիմն ով որ հակառակ կը կենայ իշխանութեան, հակառակ կը կենայ Աստուծոյ հրամանին. և անոնք որ հակառակ կը կենան՝ իրենց անձին
3 գատաստանութիւն կ'ընդունին։ Վասն զի իշխանները չեն յերկիւղ բարի գործոց, այլ չարաց. կամիս չերկնչել իշխանութենէն. բարի գործէ, և գո-
4 վութիւն պիտի ընդունիս անկէ. Քանզի Աստուծոյ պատասուր է նա բարւոյ համար. բայց եթէ դուն չար կը գործես՝ վախցիր. քանզի ոչ թէ ի դուր կասած է սուր ընդ մէջ, վասն զի Աստուծոյ պատասուր է, վրէժխնդիր ի բարկութիւն անոր որ չար կը գործէ։
5 Վասն որոյ պարտ է հնազանդել, ոչ միայն բարկութեան համար՝ այլ և խղճ-
6 մի համար։ Ասոր պատճառաւ նաև հարկ կու տաք, քանզի Աստուծոյ ըսպասաւորներն են որ նոյն բանին հոգ
7 կը տանին։ Ուստի հատուցէք ինչ որ պարտ է ամենուն. որուն հարկ՝ հարկը, որուն մաքս՝ մաքսը, որուն երկիւղ՝ երկիւղը, որուն պատիւ՝ պատիւը։
8 Ումենեւին պարտական մի գտնուիք

*Ոմն+ շնորհօքն Աստուծոյ

*Ոմն+ այն իշխանութիւնները



ումեք, բայց միայն զիրար սիրելու. Վասն զի ով որ կը սիրէ ընկերը՝ կը
9 կատարէ օրէնքը. Քանզի Մի շնար, Մի սպանաներ, Մի գողնար, Մի աու վկայեր, Մի ցանկար, և այլ որ և իցէ պատուէրք կը բովանդակուի ի յայս բան, թէ Քու ընկերդ սիրես քու անձիդ
10 պէս։ Սէրը չարութիւն չըներ ընկերին. ուրեմն լրումն օրինաց սէրն է։
11 Եւ զայս, գիտնալով ժամանակը, թէ հիմա ժամանակ է մեզ արթնալ ի քնոյ. քանզի հիմա փրկութիւնը մեր է
12 մեզ քան երբ հաւատացինք։ Գիշերը շատ անցաւ և տիւը մերձեցաւ. ուստի մեկդի ընենք խաւարին գործերը, և
13 հագնինք մեր վրայ լուսոյ զէնքը։ Որպէս թէ ի տուընջեան քալենք պարկեշտութեամբ, մի՛ անառակութեամբք և արբեցութեամբք, և մի՛ խառն անկողնօք և պղծութեամբք, մի՛ հակառա-
14 կութեամբ և նախանձու։ Այլ հագեցէք զՏէր Յիսուս Քրիստոս, և մարմնոյ խնամ մի առնէք ի ցանկութիւնս։

## Գլ. ԺԴ

1 Զակարն ի հաւատս ընդունեցէք, մի՛ տարակուսանաց որոշումներու համար։
2 Ումն կը հաւատայ ուտել զամենայն, և
3 ով որ տկար է բանջար կ'ուտէ։ Այն որ կ'ուտէ՝ չուտողը Թող չանարգէ, և այն որ չուտէր՝ Թող չդատէ ուտողը, քանզի Աստուած ընդունած է զնա։
4 Դու ո՞վ ես որ կը դատես զայլոյ ծառայ. իւր Տէրոջը կը կանգնի կամ կ'կընայ, բայց պիտի կանգնի, քանզի *Աստուած կարող է կանգնեցուցանել զնա։
5 Ումն կը յարգէ օր մը քան զայլ օր, այլ ումն կը յարգէ ամէն օր։ Թող ի-
6 րաքանչիւրը ոք համճ գիւր միտս։ Այն որ կը յարգէ օրը, Տէրոջը կը յարգէ, և այն որ չյարգեր օրը, Տէրոջը չյարգեր։ և այն որ կ'ուտէ, Տէրոջը կ'ուտէ, քանզի կը գոհանայ Աստուծմէ. և այն որ չուտեր, Տէրոջը չուտեր, և
7 կը գոհանայ Աստուծմէ։ Քանզի մենք ոչ ոք իւր անձին համար կ'ապրի, և ոչ ոք իւր անձին համար կը մեռնի։
8 Քանզի եթէ ապրինք, Տէրոջը համար կ'ապրինք, և եթէ մեռնինք, Տէրոջը համար կը մեռնինք. ուրեմն թէ ապրինք և թէ մեռնինք, Տէրոջն ենք։
9 Վասն զի Քրիստոս ևս վասն այնորիկ մեռաւ *և ապրեցաւ, որ մեռելոց և
10 կենդանեաց իշխէ. Իսկ դուն ընդէ՞ր կը դատես եղբայրդ, կամ ընդէ՞ր կ'անարգես եղբայրդ. վասն զի ամէնքս պիտի կենանք Քրիստոսի առջև։
11 Քանզի գրուած է, կենդանի եմ ես, կ'ըսէ Տէրը, որ ամէն ծունր պիտի ինկնուի ինձ, և ամէն լեզու պիտի խոս-
12 տովանի Աստուծոյ։ Ուրեմն մենք իւրաքանչիւրս ոք հաշիւ պիտի տայ Աս-
13 տուծոյ իւր անձին համար։ Ուստի այլ ևս չդատենք զիրար, այլ մանաւանդ զայս դրէք ի մտի՝ չընել խոչ կամ
14 պայծառութիւն եղբօր։ Ձայս գիտեմ և հաստատուած եմ ի Տէր Յիսուս, որ բան մը ինքնին պիղծ չէ, բայց ով որ պիղծ կը համարի բան մը՝ պիղծ է ա-
15 նոր։ Իսկ եթէ կերակրոյ համար եղբայրդ տրտմի, ոչ ևս սիրով վարուեցար. քու կերակրովդ մի կորուսաներ զնա որոյ համար Քրիստոս մեռաւ։
16 Արդ չըլլայ թէ ձեր բարւոյն համար
17 չար խօսին. Քանզի Աստուծոյ արքայութիւնը չէ կերակուր և ընկալի, այլ արդարութիւն և խաղաղութիւն և
18 ինդութիւն ի Հոգին Սուրբ։ Քանզի ևթէ ոք այս բանիւքավ կը ծառայէ Քրիստոսի, հաճելի է Աստուծոյ և մար-
19 դոց գովելի։ Ապա ուրեմն զհետ երթանք խաղաղութեան և շինութեան
20 առ միմեանս։ Ձըլլայ թէ կերակրոյ պատճառաւ քակես Աստուծոյ գործը. ամենայն ինչ մաքուր է. չար է այն մարդուն համար միայն որ կ'ուտէ ի
21 գայթակղութիւն։ Լաւ է չուտել միս, և չխմել գինի, և ոչ այլ ինչ որով եղբայրդ կը գայթի կամ կը գայթակղի

*Ոմն+ Տէրը

*Ոմն+ և յարեաւ և դարձեալ

22 կամ կը ակարանայ։ Դուն հաւատաք
ունիմ. պահէ քեզ զայն Աստուծոյ առ-
ջև. երանի անոր որ իր անձը չդատա-
23 պարտեր անով զոր *կ'ընդունի. Բայց
ով որ կը խղճէ, եթէ ուսի կը դա-
տապարտուի, վասն զի չի հաւատար.
քանզի ինչ որ հաւատով չէ՝ մեղք է։

## Գլ. ԺԵ

1 Պարտ է մեզ որ կարող ենք՝ տկար-
ներուն տկարութիւնը վերցունել, և
2 ոչ մեր անձին հաճոյ ըլլալ. Այլ մենք
իւրաքանչիւր ոք հնարաւորութեան համար
հաճոյ ըլլայ իւր ընկերին ի բարիս
3 Քանզի և Քրիստոս ոչ թէ իւր անձին
հաճոյ եղաւ, այլ ինչպէս գրուած է,
Զրկելոց նախատինացդ նախատինքն ինկան
4 իմ վրաս։ վասն զի ինչ որ յառաջա-
գոյն գրուեցաւ՝ գրուեցաւ ի մեր վար-
դապետութիւն, որպէս զի հանդերձա-
թեամբ և մխիթարութեամբ Գրոց ունե-
5 նանք յոյս։ Եւ համերաշխութեան և մխի-
թարութեան Աստուածը տայ ձեզ ի-
րարու հետ ըստ Յիսուսի Քրիստոսի։
6 Նենաք քան Յիսուսի Քրիստոսի։ Որ
միաբանութեամբ ի մի բերան փառա-
բերէք զԱստուած և զՀայր Տեառն մերոյ
7 Յիսուսի Քրիստոսի։ վասն այսորիկ ըն-
դունեցէք զիրար, ինչպէս և Քրիստոս
ընկալաւ †զմեզ ի փառս Աստուծոյ։
8 Բայց կ'ըսեմ Թէ Յիսուսի Քրիստոսի
Թլփատութեան պատուհանայ ըլլալն Ա-
ստուծոյ ճշմարտութեան համար էր, որ
9 հաստատէր նախահարց խոստումն։ Ա-
յլոյն հեթանոսներն ողորմութեան հա-
մար փառաւորեն զԱստուած. ինչպէս
որ գրուած է, վասն այսորիկ ազգե-
րուն մէջ դ.ձեզ պիտի դաւիթ, և քու
10 անուանդ սաղմոս պիտի երգեմ։ Եւ
դարձեալ կ'ըսէ Թէ, Ով ազգեր, անոր
11 ժողովրդեան ուրախակից եղէք։ Եւ
դարձեալ Թէ Օրհնեցէք զՏէր, բոլոր
ազգեր, և գովեցէք զնա, բոլոր ժո-
12 ղովուրդներ։ Եւ դարձեալ Եսայի կ'ը-
սէ, Ցեսսէի արմատը պիտի ըլլայ, և
որ ազգերուն իշխան պիտի կանգնի,
13 անոր պիտի յուսան ազգերը։ Արդ
յուսոյ Աստուածը լի ընէ զձեզ բոլոր
ուրախութեամբ և խաղաղութեամբ ի
հաւատալ, որպէս զի առատանաք յու-
սով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ։
14 Եւ ես ինքն հաստատուած եմ ձեզի
համար, եղբարք, որ դուք լի էք բա-
րութեամբ, լցեալ էք ամենայն գի-
տութեամբ, և կրնաք խրատել զի-
15 մեանս։ Սակայն համարձակութեամբ
գրեցի ձեզ փոքր ի շատ որպէս թէ
յիշեցունեմ ձեզ, եղբարք իմ, այն շը-
նորհքոյ համար որ տրուած է ինձ Ա-
16 ստուծմէ, Որ Յիսուսի Քրիստոսի սպա-
սաւորն ըլլամ հեթանոսաց մէջ, և
մատակարարեմ Աստուծոյ աւետարա-
նը, որպէս զի հեթանոսաց ընծայուիլն
ընդունելի ըլլայ՝ Սուրբ Հոգւով սրբ-
17 բուելով։ Ուստի ունիմ պարծանս առ
18 Աստուած ի Քրիստոս Յիսուս։ Քանզի
չեմ համարձակիր խօսել այն բաներէն
մին զոր Քրիստոս իմ ձեռօքս գործած
չէ՝ հնազանդեցնելու համար հեթա-
19 նոսները բանիւ և գործով, Նշանակե-
րաց և հրաշալեաց զօրութեամբ, *Ա-
ստուծոյ Հոգւոյն զօրութեամբ. այնպէս
որ Երուսաղէմէ և շուրջանակի մինչև
Իլիւրիկեցւոց կողմերը լցի Քրիստոսի
20 աւետարանով։ Այնպէս ձանձրի զբա-
նալ աւետարանը, ոչ թէ ուր Քր-
իստոսի անունն յիշուած էր, դի մի
21 ուրիշ այլոց հիման վրայ շինեմ. այլ
ինչպէս գրուած է, Թէ որոց չպատ-
մուեցաւ անոր վրայ՝ պիտի տեսնին,
22 և որք չլսեցին՝ պիտի իմանան։ վասն
որոյ շատ արգելուեցայ գալ առ ձեզ։
23 Բայց հիմա որ այս կողմերս այլ ևս
տեղ չկայ ինձ, և շատ տարիներէ հե-
տէ կը փափաքիմ յոյժ գալ առ ձեզ,
24 Երբ գեպ ի Սպանիա երթամ, †կը յու-
սամ անցնելու տանն տեսնել զձեզ,

*Ոմանք՝ Սուրբ
†Ոմանք՝ պիտի գամ առ ձեզ. վասն զի
կը յուսամ

*կամ կը փորձէ  †Ոմանք՝ զձեզ



և ձեզէ յառաջիկայ հոն, եթէ յա-
25 ռաջ քիչ մը լցուիմ ձեզմով։ Բայց
հիմա երուսաղէմ կ'երթամ սպասա-
26 րել սուրբերուն. վասն զի Մակեդո-
նացիք և Աքայեցիք յօժարեցան ապ-
րուստ տալ աղքատներուն որ յերուսաղէմ են՝
27 քիչ մը հանդստանալիքին ընկ. Յօ-
ժարեցան, վասն զի պարտական ևս
են անոնց. քանզի եթէ հոգւորդ եղան
հեթանոսք անոնց ի հոգևորս, պարտին
28 ապասաւորել նաև ի մարմնաւորս։ Ու-
րեմն կատարելով զայս և կնքելով ա-
նոնց այս պտուղը՝ պիտի անցնիմ
29 ձենէ ի Սպանիա։ Եւ գայս գիտեմ որ
երբ գամ առ ձեզ, Քրիստոսի *աւե-
տարանին լի օրհնութեամբը պիտի
գամ։
30 Կ'աղաչեմ զձեզ, եղբարք, ի Տէր մեր
Յիսուս Քրիստոս և սիրով Հոգւոյն,
պատերազմակից ըլլալ ինձ յաղօթս
31 առ Աստուած ինձի համար, Որպէս զի
հրէաստանի մէջ ապաստի հաւատայ
չհնազանդողներէն, և պաշտօնս յն-
32 րուսաղէմ ընդունելի ըլլայ սրբոց, Որ-
պէս զի կամօքն Աստուծոյ ուրախու-
թեամբ գալով առ ձեզ՝ հանդչիմ ձեզի
33 հետ։ Եւ Աստուած խաղաղութեան ըլ-
լայ ձեր ամենուն հետ։ Ամէն։

## Գլ. ԺԶ

1 Կը յանձնեմ ձեզ մեր քոյրը Փիփէ,
որ կենդրքայի եկեղեցւոյն սպասաւորն
2 է։ Որ ընդունիք զնա ի Տէր ինչպէս
արժան է սրբոց, և ինամ տանիք նմա
ինչ բանի մէջ որ պէտ ունենայ ձեզ.
քանզի և նա ինամ տարաւ շատերուն,
և ինձ ևս։
3 Ողջոյն տուէք Պրիսկեայ և Ակիւղա-
սայ, գործակիցս ի Քրիստոս Յիսուս.
4 (Որ իմ կենացս համար տուին իրենց
պարանոյնները. որոց ոչ միայն ես շը-
նորհակալ եմ, այլ և բոլոր եկեղեցիք
5 հեթանոսաց.) Եւ անոնց տանն եկե-
ղեցւոյն ևս։ Ողջոյն տուէք իմ սիրել-
ւոյս Եպենետոսի, որ *Աքայիայէ առա-
6 ջին պտուղ է Քրիստոսի։ Ողջոյն տուէք
Մարիամէ, որ մեր վրայ շատ աշխա-
7 տեցաւ։ Ողջոյն տուէք Անդրոնիկոսի
և Յունիայի, իմ ազգականներուս և
գերեկիցներուս, որ ի մէջ առաքելոց
երեւելիներ են, որք և յառաջ քան
8 զիս եղան Քրիստոսի։ Ողջոյն տուէք
9 Ամպղեայ իմ սիրելւոյս ի Տէր։ Ողջոյն
տուէք Ուրբանոսի մեր գործակցին ի
Քրիստոս, և Ստաքեայ իմ սիրելւոյս։
10 Ողջոյն տուէք Ապելէսի, որ ընտրեալ
11 է ի Քրիստոս։ Ողջոյն տուէք անոնց որ
Արիստոբուղոսի տունէն են։ Ողջոյն
տուէք Հերովդիոնի իմ ազգականիս։
Ողջոյն տուէք անոնց որ Նարկիսի տու-
12 նէն են ի Տէր։ Ողջոյն տուէք Տրիփե-
նայ և Տրիփոսեայ աշխատաւորաց ի Տէր։
Ողջոյն տուէք Պերսիդեայ սիրելւոյն,
13 որ շատ աշխատեցաւ ի Տէր։ Ողջոյն
տուէք Ռուփոսի՝ ընտրելոյ ի Տէր, և
14 անոր մերը և իմին։ Ողջոյն տուէք Ա-
սինկրիտոսի, Փլեգոնի, Երմեսայ, Պատ-
րոբայ, Երմեսի և եղբարց որ անոնց
15 հետ են։ Ողջոյն տուէք Փիղոզոգոսի և
Յուլեայ, Ներեայ և անոր քրոջը, և
Ողիմպասայ և բոլոր սրբոց որ անոնց
16 հետ են։ Ողջոյն տուէք միմեանց ի
համբոյր սրբութեան։ Ողջոյն կու տան
ձեզ [ամենայն] եկեղեցիք Քրիստոս-
սի։
17 Կ'աղաչեմ զձեզ, եղբարք, դիտել
այնպիսիները որ կ'ընեն հերձուածներ
և գայթակղութիւններ արտաքոյ այն
վարդապետութեան զոր սորվեցաք, և
18 հեռ կեցէք անոնցմէ։ Քանզի այնպիսիք
չեն ծառայեր Տեառն մերոյ †Քրիստո-
սի, այլ իրենց որովայնին. և քաղցր
բանիւք և գովութեամբ կը խաբեն
19 սրբազամաց սիրտերը. Քանզի ձեր հը-
նազանդութիւնն հասած է ամենուն.
ուստի ուրախ եմ ձեր վրայ. բայց կ'ու-
զեմ որ խնամուն ըլլաք գործ ի բա-
20 րին, և միամիտ ի չարն։ Եւ Աստուած

*Կամ Աքայէ
†Ոմանք՝ Յիսուսի Քրիստոսի

*Ոմանք՝ Լուկիոս։

խաղաղութեան խորհուրդ վաղվաղակի ձեր ոտից տակ։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ։*

21 Ողջոյն կու տայ ձեզ Տիմոթէոս, գործակիցս, և Ղուկիոս և Յասոն և Սոսիպատրոս, ազգականներս։ (Ողջոյն կու տամ ձեզ ի Տէր և ես Տերտիոս որ այս
23 Թուղթը գրեցի։) Ողջոյն կու տայ ձեզ Գայիոս, իմ և բոլոր եկեղեցւոյն հիւրընկալը։ Ողջոյն կու տայ ձեզ Երաստոս՝ գանձապետ քաղաքիս, և Կուարտոս
24 եղբայր։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեր ամենուն հետ։ Ամէն։

25 Արդ՝ այնմ որ կարող է հաստատել զձեզ ըստ աւետարանիս և քարոզութեան Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն որ ծածկուած էր յաւիտենական դարերէ հե-
26 տէ, եւ այժմ յայտնուեցաւ, և մարգարէական գրոցք ճանչցուեցան յաւիտենական Աստուծոյ հրամանաւ բոլոր ազգաց՝ հնազանդելու համար հա-
27 ւատոյ, Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ՝ Յիսուսի Քրիստոսի ձեռօք փառք յաւիտեանս, Ամէն։

# Ա.ՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս, Աստուծոյ կամքէն Յիսուսի Քրիստոսի առաքեալ կոչուած,
2 և Սոսթենէս եղբայրս, եկեղեցւոյն Աստուծոյ որ ի Կորնթոս, Քրիստոս Յիսուսով սրբուածներուս, սուրբ կոչուածներուս, ամենուն հետ որ ամէն տեղ կը կոչեն զանուն Տեառն մերոյ
3 Յիսուսի Քրիստոսի, նոցա և մեր։ Շնորհք և խաղաղութիւն ձեզ յԱստուծոյ մերմէ Հօրմէն և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։

4 Յամենայն ժամ կը գոհանամ Աստուծմէս ձեզի համար Աստուծոյ շնորհացն որ տրուած է ձեզ ի Քրիստոս Յի-
5 սուս։ Որ զուարճանով հարստացաք յամենայնի ամենայն խօսքով և ամենայն
6 գիտութեամբ, ինչպէս Քրիստոսի վկայութիւնն իսկ հաստատուեցաւ ի ձեզ.

7 Որ դուք չնուազիք և ոչ մի շնորհօք, ապասելով յայտնութեան Տեառն մերոյ
8 Յիսուսի Քրիստոսի։ Որ և պիտի հաստատէ զձեզ ամբիծ մինչև ի կատարած՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի օրը։
9 Հաւատարիմ է Աստուած, որով կոչուեցաք հաղորդ լինել Որդւոյն՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

10 Կ'աղաչեմ զձեզ, եղբայրք, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ մի և նոյն խօսքն ունենաք ամենքդ, և երկպառակութիւն չլինի ձեզ։ այլ լինիք *հաստատուած միևնոյն մտաց և
11 միևնոյն խորհրդոյ վրայ։ Քանզի ձեզի համար լուր հասաւ ինձ, եղբայրք, ի Քղուէեանց, թէ հակառակութիւնները
12 կան ի ձեզ։ Արդ կ'ըսեմ զայս, թէ ձեզնէ իւրաքանչիւր ոք կ'ըսէ, Ես Պօղոսեան եմ, և Ես՝ Ապողոսեան, և Ես՝ Կեփասեան, և Ես՝ թէ ես Քրիստոսեան։
13 Թէ ես Քրիստոսեան։ Միթէ Քրիստոս բաժնուած է. միթէ Պօղո՞ս ի խաչ եղաւ ձեզի համար, կամ թէ Պօղոսի՞ ա-
14 նուամբ մկրտուեցաք։ Կը գոհանամ Աստուծմէ որ ձեզնէ ոչ ոք մկրտեցի,
15 մայն Կրիսպոս և Գայոս։ Որպէս զի չըսէ ոք թէ իմ անուամբս մկրտե-
16 ցի։ Արդարև մկրտեցի նաև Ստեփանեան տունը. և զայլ ոք չեմ գիտեր ամենևին թէ մկրտեցի։
17 Քանզի Քրիստոս չղրկեց զիս մկրտել, այլ աւետարանել, ոչ թէ ճարտարութեան խօսքերով, որպէս զի ընդունայն չըլլայ Քրիստոսի խաչը։ Քանզի խաչին քարոզութիւնը կորուսելոց յիմարութիւն է, բայց մեզ փրկելոցս զօրու-
19 թիւն Աստուծոյ է։ Վասն զի գրուած է, իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորուսանեմ, և հանճարեղներուն
20 հանճարը պիտի խափանեմ։ Ո՞ւր է իմաստուն, ո՞ւր գրիչ, ո՞ւր քննիչ այս աշխարհի. ոչ ապաքէն Աստուած յիմարեցուց այս աշխարհիս իմաստու-
21 թիւնը։ Քանզի, որովհետև, իմաստութեամբն Աստուծոյ, աշխարհ չճանչցաւ իմաստութեամբ զԱստուած, հաճեցաւ Աստուած քարոզութեան յիմարութեամբն ապրեցուցանել հաւատացո-
22 ղները։ Քանզի Հրեայք նշան կը խնդրեն, և Յոյնք իմաստութիւն կը
23 փնտռեն։ Իսկ մենք կը քարոզենք ըն-խաչեալն Քրիստոս՝ Հրեից գայթակղու-
24 թիւն և Յունաց *յիմարութիւն. բայց անոնց որ կոչուած են, թէ՛ Հրեից և թէ Յունաց, զՔրիստոս Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն։
25 Քանզի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ, և տկարն Աստուծոյ հզօրագոյն է քան զմարդիկ։
26 Արդարև դուք ձեր կոչումը կը տեսնէք, եղբայրք, որ ոչ մարմնոյ կողմանէ շատ իմաստուններ, ոչ շատ զօրաւորներ, ոչ շատ ազնուականներ կոչ-
27 եաւ։ Այլ աշխարհիս յիմարները ընտրեց Աստուած, որ յամօթ ընէ իմաստուններըը. և աշխարհիս տկարները ընտրեց Աստուած, որ յամօթ ընէ զօ-
28 րաւորները. և աշխարհիս անտանելիները և անարգուածներն ընտրեց Աստուած և որ չեն բնաւ, որպէս զի բանայնէ զա-
29 նոնք որ են բնաւ. Որպէս զի և ոչ մի
30 մարմին պարծի Աստուծոյ առջև։ Իսկ դուք անկէ էք Քրիստոս Յիսուսով, որ իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն և փրկութիւն եղաւ մեզ Աս-
31 տուծմէ. Որ ինչպէս գրուած է, Ով որ կը պարծի Թող պարծի ի Տէր։

### ԳԼ. Բ

1 Եւ ես, եղբարք, որ եկայ առ ձեզ, ոչ թէ խօսքի կամ իմաստութեան ա-
2 ւետութեամբ եկայ Աստուծոյ վկայութիւնն յայտնել ձեզ, վասն զի չդրի ի մտի ուրիշ բան գիտնալ ձեր մէջ, բայց միայն զՅիսուս Քրիստոս, և զնա
3 խաչուած։ Եւ ես տկարութեամբ և երկիւղիւ և շատ դողով կեցայ ձեր
4 քով. Եւ իմ խօսքս և քարոզութիւնս ոչ թէ *մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերով էր, այլ ապացուցու-
5 թեամբ Հոգւոյն և զօրութեան. Որպէս զի ձեր հաւատքը չըլլայ մարդոց իմաստութեամբ, այլ Աստուծոյ զօրու-
6 թեամբ։ Սակայն կատարեալներուն հետ իմաստութիւն կը խօսինք, բայց ոչ թէ այս աշխարհիս իմաստութիւնը, և ոչ այս աշխարհիս ոչնչանալու իշխանին-
7 ներունը. Այլ խորհրդով կը խօսինք Աստուծոյ ծածուկ իմաստութիւնը, զոր Աստուած առաջուընէ յառաջ քան զաշ-
8 խարհս ի փառս մեր. Զոր ոչ ոք այս աշխարհիս իշխաններէն ճանչցաւ. քանզի եթէ ճանչցած ըլլային, փառաց Տէրը չէին հաներ ի խաչ. այլ ինչպէս գրուած է, Աչն բաները զոր աչք տե-
9 սած չէ և ականջ լսած չէ և մարդու սիրտ բնկած չէ, Աստուած պատրաս-
10 տեց անոնց որ կը սիրեն զնա. Բայց Աստուած յայտնեց մեզ իւր Հոգւով,

*Ոմանք չեն ունին

քանզի Հոգին կը քննէ զամենայն, նաև
11 զխորս Աստուծոյ։ Վասն զի ո՞վ ի մարդկանէ գիտէ մարդունները, բայց միայն
մարդուն հոգին որ է ի նմա. նոյնպես
ոչ ոք գիտէ զԱստուծոյն, բայց միայն
12 Աստուծոյ Հոգին։ Իսկ մենք ոչ զհ այս
աշխարհս հոգին առինք, այլ զՀոգին
որ Աստուծմէ է. որ ճանչնանք զինչ որ
13 Աստուծմէ պարեւցաւ մեզ. Որ և կը
խօսինք, ոչ թէ խօսքերով զոր մարդկային իմաստութիւնը կը սորվեցնէ,
այլ զոր Հոգին կը սորվեցունէ, և ըզհոգևորս կը համեմատինք հոգևորաց
14 հետ։ Իսկ հոգի շնաւոր մարդը չընդունիր
Աստուծոյ Հոգւոյն բաներըր, քանզի անոնք յիմարութիւն են անոր, և չկրնար իսկ գիտնալ, քանզի հոգևորապես կը քննուին։ Բայց այն որ հոգևոր
15 է կը քննէ զամենայն, և ինք չքննուի
16 նուրբ ուրիշի։ Քանզի ո՞վ գիտցաւ
Տէրոջը միտքը, որ ըլլայ անոր խրատու։ բայց մենք ունինք Քրիստոսի
միտքը։

## Գլ. Գ

1 Եւ ես եղբարք, չկրցայ խօսել ձեզ՝
որպես հոգևորներու, այլ որպես մարմնաւորներու, Որպես թէ Քրիստոսով
2 նորածոց։ կաթ չտմրեցի ձեզ՝ ոչ թէ կերակուր, քանզի դեռ կարող չէիք, և
հիմա եւս տակաւին կարող չէք, վասն
3 զի դեռ մարմնաւոր էք։ Որովհետև
տակաւին ձեր մէջ նախանձ և հակառակութիւն և բաժանումներ կան, ո՞չ
մարմնաւոր էք, և մարդկօրէն կը քալէք։
4 Քանզի երբ ՅՆէն ոք կ'ըսէ թէ Ես Պօղոսեան եմ, և միւսը՝
թէ Ես Ապողոսեան, ո՞չ մարմնաւոր էք։
5 ո՞վ է Ապողոս. Պաշտօնեաներ են որովք
հաւատացիք, և ինչպէս որ Տէրը ար-
6 ւաւ իւրաքանչիւրին։ Ես տնկեցի, Ապողոս ջուր տուաւ, բայց Աստուած
7 աճեցուց։ Ուստի ոչ տնկողն է ինչ, և
ոչ ջուր տուողը, այլ Աստուած՝ որ աճեցուց։ Տնկողը և ջուր տուողը մի են,
8 և իւրաքանչիւր իւր վարձքը պիտի առ-
9 նու իւր աշխատութեան չափով։ Քանզի
մենք Աստուծոյ գործակից ենք։ դուք
Աստուծոյ հնկերութիւն էք, Աստուծոյ
10 շինուիլն էք։ Աստուծոյ շնորհացը
չափով որ տրուեցաւ ինձ, իբրև իմաստուն վարպետ հիմ դրի, բայց ոմն
վրայ շինողն ուրիշ է. միայն թէ
11 իւրաքանչիւր թող զգուշանայ թէ ինչպէս կը շինէ։ Քանզի ոչ ոք այլ հիմ
12 ուրիշ հիմ կրնայ դնել բայց ի գրուածէն, որ է Յիսուս Քրիստոս։ Եթէ ոք
այս հիման վրայ կը շինէ ոսկի, արծաթ,
պատուական քարեր, փայտ, խոտ, ե-
13 դէգն, իւրաքանչիւր մարդու գործը
յայտնի պիտի ըլլայ. քանզի օրը պիտի
հանէ յերևան, վասն զի կրակով պիտի յայտնուի. և կրակը պիտի փորձէ
թէ իւրաքանչիւր մարդու գործն ինչ-
14 պէս է։ Եթէ գործը զոր կը շինէ ոք՝
15 մնայ, ինք վարձ պիտի առնու. Եթէ
այրի այն գոր կը շինէ օգ, վնաս պիտի
կրէ. բայց ինք պիտի ազատի, ասկայն
16 այնպէս որպես թէ կրակի միջէն։ Չէ՞ք
գիտեր որ Աստուծոյ տաճար էք դուք,
և Աստուծոյ Հոգին բնակած է ի ձեզ։
17 Եթէ ոք Աստուծոյ տաճարը կ'ապականէ, Աստուած պիտի ապականէ զնա,
քանզի Աստուծոյ տաճարը սուրբ է, որ
է՛ք դուք։
18 Մի ոք խաբէ զինք. եթէ ոք ի ձեզ
իմաստուն կը համարի զինք այս աշխարհս մէջ, թող յիմար ըլլայ՝ որպէս
19 զի իմաստուն ըլլայ. Քանզի այս աշխարհս իմաստութիւնը յիմարութիւն
է Աստուծոյ առջև. վասն զի գրուած
է թէ Նա իմաստուններն իրենց խո-
20 րամանկութեան միջէ կը բռնէ. Եւ գար-
ձեալ թէ Տէրը գիտէ իմաստուններուն
21 խորհուրդները որ ունայն են. Ուրեմն
22 Թող չպարծի ոք ի մարդ. Քանզի ամենայն ինչ ձեր է, թէ Պօղոս, թէ Ապողոս, թէ Կեփաս, թէ աշխարհ, թէ
կեանք, թէ մահ, թէ ներկայք և թէ
հանդերձեալք՝ ամենայն ինչ ձեր է.

*Ոմանք՝ Սուրբ Հոգին



23 իսկ դուք Քրիստոսի, և Քրիստոս՝ Աստուծոյ։

## Գլ. Դ

1 Թող այսպէս համարին զմեզ մարդիկ,
իբրև Քրիստոսի պատասուրներ և Աս-
2 տուծոյ խորհրդոց մնտեսներ. Ասկէ,
անհանելու մէջ կը խնդրուի որ մարդ
3 հաւատարիմ գտնուի։ Բայց ինձ ոչինչ
է այս, որ դատուիմ ձեռնէ կամ մարդոյ *դատաստանէն, մանաւանդ որ
4 ես իսկ իմ անձս չեմ դատեր. (Վասն
զի ես իմ անձիս վրայ բան մը չեմ գիտեր. բայց ոչ թէ այսու կ'արդարա-
5 նամ.) այլ դիս դատողը Տէրն է. Ուրեմն յառաջ քան ժամանակն մի դատէք, մինչև գայ Տէրը որ պիտի հանէ
ի լոյս գաղտնիս խաւարի, և յայտնի
պիտի ընէ սրտերուն խորհուրդները.
և անոնէն իւրաքանչիւրին գովութիւնը պիտի ըլլայ Աստուծմէ։
6 Ասոնք օրինակ բերի, եղբարք, իմ
վրաս և Ապողոսի վրայ ձեզի համար,
որ դուք մեզմէ սորվիք զան գրուածն
առնլի բան չխորհիլ, որ չըլլայ թէ ձեզնէ ոք հպարտանայ մէկու մը համար ու-
7 րիշի դէմ։ Քանզի ո՞վ է որ տարբերը
կ'ընէ զքեզ. և ի՞նչ ունիս զոր առած
չես. և եթէ առիր, ընդէ՞ր իբրև չառած կը պարծիս։
8 Արդէն յագեալ էք, արդէն հարստացաք, առանց մեզի թագաւորեցիք։
և երանի թէ թագաւորէիք, որ և մենք
9 ձեզի հետ թագաւորէինք։ Քանզի կարծեմ թէ Աստուած մեզ առաքեալներս
վերջի առաքեալներու նմանեցուց. քանզի տեսարան եղանք աշխարհի և հրեշտակաց և մարդկան։
10 Մենք յիմար Քրիստոսի համար, և դուք իմաստուն Քրիստոսով. մենք
ակար, և դուք զօրաւոր. դուք վա-
11 ռարեալ, և մենք անարգեալ։ Մինչև այս օր և՛ կ'անօթենանք, և՛ կը ծարաւենք, և՛ մերկ կը մնանք, և՛ կը
ծեծուինք, և՛ աստանդական կը շրջինք,
12 Եւ մեր ձեռօք գործելով կ'աշխատինք.
երբ կը նախատին զմեզ, կ'օրհնենք.
13 երբ կը հալածուին, կը համբերենք. երբ
կը հայհոյեն, կ'ազաչենք. իբրև աշխարհի ապտակ եղանք, գան զամենեսին
14 անարգ ըլլալով մինչև ցարդ։ Այս բաները կը գրեմ ոչ թէ ամչցունելու համար զձեզ, այլ կը խրատեմ իբրև սի-
15 րելի որդիներս։ վասն զի Թէպետև բիւր վարժապետներ ունենաք ի Քրիստոս,
բայց ոչ շատ հայրեր, քանզի ի Քրիստոս Յիսուս ես ծնայ զձեզ աւետարա-
16 նաւ։ Ուրեմն կ'աղաչեմ զձեզ, նմանող
17 եղէք ինձ։ վասնորոյ զրկեցի առ ձեզ
զՏիմոթէոս, որ իմ սիրելի որդիս է և
հաւատարիմ ի Տէր, որ յիշեցունէ իմ
ճամբաներս ի Քրիստոս, ինչպէս որ ամէն տեղ բոլոր եկեղեցիներուն մէջ կը
18 սորվեցնեմ։ Ոմանք հպարտացան,
19 որպես թէ պիտի չգամ առ ձեզ։ Բայց
վաղվաղակի պիտի գամ առ ձեզ, եթէ
Տէրը կամի, և պիտի հասկնամ ոչ թէ
հպարտացողներուն խօսքը, այլ զո-
20 րութիւնը։ վասն զի Աստուծոյ թագաւորութիւնը ոչ թէ խօսքով է, այլ զո-
21 րութեամբ։ Ինչ կ'ուզէք, գաւազանո՞վ գամ առ ձեզ, թէ սիրով և հեզութեան հոգւով։

## Գլ. Ե

1 Ա՛ւա հասարակ կը լսուի թէ պոռնկութիւն կայ ձեր մէջ, և այնպիսի պոռնկութիւն՝ որ հեթանոսաց մէջ անգամ
*չկայ, որպես թէ ոք իւր հօրը կինն ու-
2 նենայ։ Եւ դուք հպարտացած էք, և
ոչ մանաւանդ սուգ ըրիք, որ ձեր մէ-
3 ջէն վերցուի այս բանն ընդոր։ Քանզի
թէպետ ես մարմնով հեռու եմ, բայց
հոգւով մօտ եմ. ուստի հիմա որպես
թէ մօտ ըլլալով որոշեցի, որ այս բանն
4 ընողը, երբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի անունէն ի մի ժողովիք
դուք և իմ հոգիս Տեառն մերոյ Յի-

*Յոյնն օրութենն

*Ոմանք՝ չկիտուիք։

5 սուսի Բրիսառոսի զօրութիւնովք, Սաուա-
նայի մատնեցք այնպիսին՝ ի կորուստս
մարմնոյն, որպէս զի հոգին փրկուի
6 Տէր Յիսուսի օրը։ Այլ ձեր պարծանքն
ոչինչ չէ. չէ՞ք գիտեր որ փոքր մի խո-
մոր կը խմորէ ամբողջ զանգուածը,
7 ի բաց մաքրեցեք հին խմորը, որ ըլ-
լաք նոր զանգուած, ինչպէս որ ան-
խմոր էք. քանզի Բրիսառոս մեր զատի-
8 կը զոհուեցաւ մեզի համար։ Ուստի
տօն կատարենք՝ ոչ հին խմորով և ոչ
չարութեան և անզգամութեան խմո-
րով, այլ անկեղծութեան և ճշմար-
9 տութեան անխմոր հացիւ։ Գրեցի ձեզ
ի Թղթին, պոռնիկներու հետ չխառ-
10 նուիլ։ Ես ձրէն, ոչ թէ այս աշխար-
հիս պոռնիկներուն հետ, կամ ագահ-
ներուն հետ, կամ յափշտակողներուն
հետ, կամ կռապաշտներուն հետ. ապա
թէ ոչ՝ պարտ էր ձեզ աշխարհէս դուրս
11 ելլել։ Բայց հիմա գրեցի ձեզ չխառ-
նուիլ, այսինքն եթէ ոմն, եղբայր
կոչուած, կամ պոռնիկ է, կամ ա-
գահ, կամ կռապաշտ, կամ նախա-
տող, կամ արբեցող, կամ յափշտա-
կող, այնպիսւոյն հետ հաց անգամ
12 չուտելու։ Վասն զի ի՞նչ փոյթ ինձ արտա-
քինները դատել. ո՞չ ապաքէն
13 դուք ներքինները կը դատէք. Իսկ
արտաքինները ալիսի դատի Աստուած.
ուստի վերցուցէք չարը ձեր մէջէն։

## Գլ. Զ

1 Ձենէ ոք եթէ բան մը ունենայ իր
ընկերին հետ, կը համարձակի՞ անիրաւ-
ներու առջև դատուիլ և ոչ սուրբե-
2 րու առջև։ Չէ՞ք գիտեր որ սուրբերը
պիտի դատեն զաշխարհ. և եթէ աշ-
խարհ կը դատուի ձենէ, ուրեմն ար-
ժանի չէ՞ք դուք չնչին դատեր տրուե-
3 լու։ Չէ՞ք գիտեր որ մենք հրեշտակ-
ներ պիտի դատենք. ո՛րչ կը մնան ապա
4 աշխարհային։ Ուրեմն եթէ ձեր մէջ
աշխարհային դատեր ունիք, եկեղեց-
ւոյն անարգները նստուցէ՛ք դատաւոր։
5 Ձեզ ամչցնելու համար կ'ըսեմ. այնչափ
չկա՞յ ձեր մէջ իմաստուն ոք, որ կա-
րող ըլլայ իրաւունքը որոշել իր եղ-
6 բարց մէջ, Այլ եղբայր եղբօր հետ կը
դատուի, և այն՝ անհաւատից առջև։
7 Արդարև բոլորովին յանցանք է այս ձեր
մէջ, որ իրարու հետ դատեր ունիք.
ընդէ՞ր մանաւանդ դուք չէք կրեր անի-
րաւութիւն. ընդէ՞ր մանաւանդ դուք
8 չէք զրկուիր։ Այլ դուք անիրաւութիւն
կ'ընէք և կը զրկէք, և այն՝ եղբայրները։
9 Չէ՞ք գիտեր որ անիրաւ Աստուծոյ
արքայութիւնը պիտի չժառանգեն. մի
խաբուիք, ոչ պոռնիկք, ոչ կռապաշտք,
10 ոչ շնացողք, Այլ իգացեալք, ոչ արուա-
գէսք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ արբե-
ցողք, ոչ նախատողք և ոչ յափշտա-
կողք պիտի ժառանգեն Աստուծոյ Թա-
11 գաւորութիւնը։ Եւ ձենէ ոմանք այն-
պիսի էիք. բայց լուացուեցաք, բայց
սրբուեցաք, բայց արդարացաք յա-
նուն Տեառն Յիսուսի և մեր Աստու-
ծոյ Հոգւով։
12 Ամէնքն ինչ օրինաւոր է ինձ, բայց ոչ
ամէնքն ինչ ծառայող. ամէնքն ինչ
օրինաւոր է ինձ, բայց ես բանի մը իշխա-
13 նութեան տակ պիտի չըլլամ։ Կերա-
կուրները որովայնի համար են, և ո-
րովայնը՝ կերակուրներու. բայց Աս-
տուած պիտի խափանէ թէ՛ այս և թէ՛
անոնք. Իսկ մարմինը չէ պոռնկու-
թեան համար, այլ Տէրոջը, և Տէրը՝
14 մարմնոյն համար։ Եւ Աստուած որ յա-
րեաց Տէրը, պիտի յարուցանէ զմեզ իւր
15 զօրութեամբ։ Չէ՞ք գիտեր որ ձեր մար-
մինները Բրիսառոսի անդամներն են. ուս-
տի Բրիսառոսի անդամներն առնելով
պոռնիկի անդամներ ընեմ. քա՛ւ լիցի։
16 Չէ՞ք գիտեր թէ այն որ կը մտաւնայ
պոռնիկի՝ մի մարմին կ'ըլլայ. քանզի
կ'ըսէ Գէէ՛ը, Երկուքը մի մարմին պիտի
17 ըլլան։ Իսկ այն որ կը մտաւնայ Տէրոջը՝
18 մի հոգի կ'ըլլայ։ Փախէք պոռնկու-
թենէ. Ամէն մեղք զոր կը գործէ մարդ,
անոր մարմնէն դուրս է. բայց այն որ
կը պոռնկի՝ իւր մարմնոյն դէմ կը մե-
19 ղանչէ. Չէ՞ք գիտեր որ ձեր մարմին-
ները տաճար են Հոգւոյն Սրբոյ որ ի



ձեզ, զոր Աստուծմէ ունիք, և դուք
20 ձեր անձին չէք. Գանգի գնով գնուե-
ցաք. ուստի փառաւորեցէ՛ք Աստուած
ձեր մարմիններուն և հոգիներուն մէջ,
որ Աստուծոյ են։

## Գլ. Է

1 Արդ այն բաներուն համար որ դուք
գրեցիք ինձ, լաւ է մարդոյ որ կնոջ
2 չմօտենայ։ Բայց պոռնկութեանց պատ-
ճառաւ իւրաքանչիւր Թող ունենայ իւր
կինը, և ամէն կին Թող ունենայ իւր
3 այրը։ Այրը իւր կնոջ Թող պարտքը
հատուցանէ, նոյնպէս կինը՝ իւր առն։
4 Կինը իւր մարմնոյն չիշխեր, այլ այրը.
նոյնպէս այրը իւր մարմնոյն չիշխեր,
5 այլ կինը։ Մի զրկէք զմիմեանս, եթէ
ոչ միաբանութեամբ առ ժամանակ մի
աղօթքի պարապելու համար, և դար-
ձեալ իրարու գարձէք. որ Սատանան
չփորձէ զձեզ ձեր անժուժկալութեան
6 համար։ Զայս կ'ըսեմ Թոյլ տալով և
7 ոչ Թէ հրամայելով։ Գանգի կ'ուզէի որ
բոլոր մարդիկ ըլլային իրեւ զիս. բայց
իւրաքանչիւր ունի իւր պարգեւն Աս-
տուծմէ, մին այսպէս և միւսն այնպէս։
8 Բայց ամուրեաց և այրեաց կ'ըսեմ,
Լաւ է անոնց եթէ կենան ինծի պէս։
9 Իսկ եթէ չունին ժուժկալութիւն, Թող
ամուսնանան, քանզի լաւ է ամուսնա-
10 նալ քան չեռնուիլ։ Բայց ամուսնացե-
լոց կը պատուիրեմ, ոչ ես այլ Տէրը,
11 որ կինը չզատուի յառնէն, (Իսկ եթէ
զատուի և՝ առանց ամուսնանալու մը-
նայ, կամ իւր առն հետ հաշտուի,)
12 և այրը իւր կինը Թող չթողու։ Բայց
ուրիշներուն ես կ'ըսեմ, ոչ Թէ Տէրը.
եթէ եղբայր մը անհաւատ կին ունի,
և հաճոյ է նմա անոր հետ բնակիլ,
13 Թող չթողու զնա։ Եւ կին մը որ ան-
հաւատ այր ունի, և հաճոյ է նմա ա-
նոր հետ բնակիլ, Թող չթողու զնա։
14 Գանգի անհաւատ այրը սրբուած է կը-
նաւ, և անհաւատ կինը սրբուած է ա-
բառք. ապա Թէ ոչ ձեր որդիքը պիտի
ըլլային պիղծ, բայց հիմա սուրբ են։
15 Իսկ եթէ անհաւատը զատուի, Թող
զատուի. եղբայր մը կամ քոյր մը այն-
պիսի պարագաներու մէջ գերի չէ. սա-
կայն Աստուած կոչեց զմեզ ի խաղա-
16 ղութիւն։ Գանգի ի՞նչ գիտես, կին
դուռ, Թէ ուրեմն պիտի ապրեցնես քու
այրդ. կամ ի՞նչ գիտես, այր դուռ,
17 Թէ ուրեմն պիտի ապրեցնես կինդ։ Միայն
Թէ իւրաքանչիւրին ինչպէս Տէրը բաժ-
նեց, իւրաքանչիւր ինչպէս Աստուած
կոչեց, այնպէս Թող երթայ, և բոլոր
եկեղեցիներուն մէջ ես այսպէս պատ-
ուէր կու տամ։
18 Եթէ Թլփատուած ոք կոչուեցաւ,
Թող դարձեալ անթլփատ չըլլայ. եթէ
չթլփատուածներնուն կոչուեցաւ, Թող
19 չթլփատուի. Բանզի Թլփատութիւնը
բան մը չէ, և անթլփատութիւնը բան
մը չէ, այլ Աստուծոյ պատուիրանաց
20 պահպանութիւնը. Բայց իւրաքանչիւր
ինչ կոչման մէջ որ կոչուեցաւ, Թող
21 անոր մէջ կենայ։ Ծառայ կոչուեցաւ,
փոյթ չըլլայ քեզ. բայց եթէ կրնաս ա-
զատ ըլլալ, ընտրէ զայն։ Վասն զի ծա-
ռան որ կոչուած է Տէրոջմէ՝ Տէրոջը ա-
զատացեալն է. նոյնպես և ազատը որ
23 կոչուած է Քրիսառոսի ծառան է։ Գնե՛ք
գնով գնուեցաք, մարդոց ծառայ մի
24 ըլլաք։ Եղբայրք, իւրաքանչիւր ինչ կոչ-
ման մէջ որ կոչուեցաւ, Թող անոր մէջ
կենայ Աստուծոյ առջև։
25 Բայց կուսանաց համար հրաման չու-
նիմ ի Տէառնէ, միայն Թէ իբրև ողոր-
մութիւն գտած Տէրոջմէ հաւատարիմ
26 ըլլալու՝ խրատ կու տամ։ Ուրեմն ես
կը համարիմ Թէ լաւ է այս այժմուն-
դութեան համար, այսինքն լաւ է մարդ-
27 դոյ որ այսպէս ըլլայ։ Կապուա՞ծ ես
կնոջ, մի խնդրեր արձակուիլ. ար-
ձակուա՞ծ ես կնոջմէ, մի խնդրեր կին։
28 Իսկ եթէ ամուսնանաս, չմեղանչեցիր,
և եթէ կոյս ամուսնանայ, չմեղան-
չեց. բայց այնպիսիք պիտի ունենան
մարմնոյ նեղութիւն. ասկայն ես կը
29 խնայեմ ձեզ։ Բայց կ'ըսեմ զայս, եղ-
բարք, որ ժամանակս կարճցեալ է. այլ
ես անոնք որ կին ունին՝ այնպէս ըլ-

30 լան որպէս թէ չունին, եւ անոնք որ կուլան՝ որպէս թէ չեն լար, և անոնք
որ կը խնդան՝ որպէս թէ չեն խնդար,
և անոնք որ կը գնեն՝ որպէս թէ չեն
31 նին, եւ անոնք որ կը վաճեն զաշխարհս՝ որպէս թէ չարաչար չեն վաճեր·
քանզի այս աշխարհիս կերպարանքը
32 կ'անցնի։ Բայց ես կ'ուզեմ որ դուք
անհոգ ըլլաք· չառնանացեալ մարդը
կը հոգայ Տէրոջը բաներըը, թէ ինչպէս
33 հաճոյ ըլլայ Տէրոջը, իսկ առնանացեալը կը հոգայ աշխարհիս բաներըը, թէ
34 ինչպէս հաճոյ ըլլայ իւր կնոջը, եւ առնանացեալ կինը և կոյսը կը տարբերին իրարմէ· *անվէղ կոյսը կը հոգայ Տէրոջը բաներըը, որ սուրբ ըլլայ հոգւով
և մարմնով· իսկ առնանացեալ կինն
կը հոգայ աշխարհիս բաներըը, թէ ին-
35 պէս հաճոյ ըլլայ իւր առն։ Բայց կ'ըսեմ զայս ձեր օգտին համար, ոչ թէ
ձեր վրայ վարմ ձգելու, այլ պարկեշտութեան համար և Տէրոջը ծառայելու համար առանց զբաղանացու։ Իսկ եթէ
36 ոք անհի կը համարի իւր կուսին հասմար, եթէ չափն անցած է, և պէտք
է այնպէս ըլլալ, ինչ որ կ'ուզէ՝ թող
37 ընէ, մեղք չգործեր· թող առնանանան։
Նաեւ, բայց այն որ հաստատ կը կենայ
իւր սրտին մէջ, և հարկ չկայ իւր վրայ, այլ իւր կամաց վրայ ունի իշխանութիւն, և իւր սրտին մէջ այսպէս ո-
38 րոշած է որ պահէ իւր կոյսը, ադեկ կ'ը-
39 նէ։ Եւ այն որ չառնանացուներ, ադեկ կ'ընէ։ *կապուած է որչափ ժամանակ ողջ է այրը·
իսկ եթէ այրը մեռնի, ազատ է առնանանալ որուն որ ուզէ, միայն թէ Տէրոջմէ։
40 Բայց բան իմ դատմանս աւելի երանելի է, եթէ այնպէս կենայ· և կարծեմ
թէ ես ալ Աստուծոյ Հոգին ունիմ։

## Գլ· Ը

1 Բայց կուռց զոհերուն վրայ գիտենք թէ

*Ոմանք՝ օրինօք կապուած

ամէնքս գիտութիւն ունինք· գիտութիւնը կը հպարտացունէ, բայց սէրը
2 կը շինէ։ Եւ եթէ ոք կը կարծէ թէ բան
մը գիտէ, դեռ բնաւ բան չգիտեր՝ ինչ-
3 պէս պարտ է գիտնալ։ Իսկ եթէ ոք
կը սիրէ զԱստուած, անկէ ճանչցուած
4 է։ Ուստի կուռց զոհուածներուն ուտելուվայ դիտենք թէ կուռքը աշխարհ է յաւիտեան, և թէ չկայ այլ Աստուած բայց
5 մի մէն։ Քանզի թէեւ ըլլան, անուանմբ
ասուածներ, թէ յերկինս և թէ յերկրի, (ինչպէս կան շատ աստուածներ
6 և շատ տէրեր,) Բայց մեզի մի Աստուած ունինք զՀայր, որմէ ամէնայն,
և մենք ևս *անով· և մի Տէր Յիսուս
Քրիստոս, որով ամէնայն և մենք ևս
7 անով։ Բայց ամէնուն գով գիտութիւն
չկայ· և ոմանք կուռց վրայ խիղճ ունենալով՝ մինչև հիմա կ'ուտեն իբրև
կուռց զոհեալ, և իրենց խիղճը, որովհետև տկար է, կը պղծուի։ Սակայն
8 կերակուրը չմեծցուներ զմեզ Աստուծոյ
առջեւ· քանզի ոչ, եթէ ուտենք, կ'աւելնանք, և ոչ, եթէ չուտենք, կը պակսինք, Բայց զգոյշ կեցէք, որ այդ
9 ձեր իշխանութիւնը գայթակղութիւն
10 չըլլայ տկարներուն։ Քանզի եթէ ոք
տեսնի զքեզ, որ գիտութիւն ունիս,
կուտաս մէջ սեղան նստած, ոչ ա-
պաքէն այն տկար մարդուն խիղճն հաստատութիւն պիտի առնու ուտել
11 կուռց զոհուածը, Եւ քու գիտութեամբդ
կորսուի այն տկար եղբայրը որոյ հա-
12 մար Քրիստոս մեռաւ։ Եւ այսպէս եղբայրներուն դէմ մեղանչելով և անոնց
տկար խիղճը վիրաւորելով՝ կը մեղանչես Քրիստոսի դէմ։ Ուստի եթէ կերբակուրը կը գայթակղեցունէ իմ եղբայրս, միս պիտի չուտեմ յաւիտեան
որ իմ եղբայրս չգայթակղեցունեմ։

## Գլ· Թ

1 Ո՞չ ազատ չեմ։ ո՞չ առաքեալ եմ։ ո՞չ
տեսած չեմ Յիսուս Քրիստոս Տէր մեր։ ո՞չ

*Կամ անոր համար։



ձեր գործս Տէրոջ մէջ չէք։
2 Թէպէտ և ուրիշներուն առաքեալ չըլլամ, բայց ձեզ եմ անտարակոյս· քանզի իմ առաքելութեանս կնիքը դուք
3 էք Տէրոջ մէջ։ Իմ պատասխանս անոնց որ
4 զիս կը քննեն՝ այս է· Մի՞թէ իշխանութիւն
5 չունի՞նք ուտել և ըմպել։ Մի՞թէ իշխանութիւն չունի՞նք կին որ քոյր է՝
շրջեցունել, ինչպես ուրիշ առաքեալք
6 և Տէրոջը եղբայրները և Կեփաս։ Մի-
թէ ես և Բառնաբաս միայն իշխանութիւն
7 չունինք չգործել։ Ո՞վ կը զինուորի երբէք իւր ծախքերով։ ո՞վ կը տնկէ այգի և չուտեր անոր պտուղը։ կամ ո՞վ կ'արածէ ոչխարներ և չուտեր ո-
8 խարներուն կաթէն։ Մի՞թէ մարդկօրէ՞ն
կ'ըսեմ զայս, կամ ոչ օրէնքն նաև
9 օրէնքը կ'ըսէ զնոյն։ Քանզի գրուած է Մովսիսի, Չկապես կալի մէջ աշխատող եզնի ցուռկը։ Մի՞թէ
10 եզներո՞ւ համար փոյթ է Աստուծոյ, Ո՞չ
ապաքէն մեզի համար կ'ըսէ։ Վասն զի
մեզի համար գրուեցաւ։ քանզի այն որ
կը հերկէ՝ պարտ է յուսով հերկել, և
այն որ կը կալսի՝ *վայելելու յուսով։
11 Եթէ մենք սերմանեցինք ձեզ զհոգեւորս, մե՞ծ բան է եթէ հնձենք ձեր
12 գմաթիաւորս, Եթէ ալլք ունին ձեր վրայ այս իշխանութիւնը, ո՞չ ապաքէն
և աւելի մենք։ բայց մենք չգործածեցինք այս իշխանութիւնը, այլ ամէն
բանի կը համբերենք, որ աւրհնելք չըլ-
13 լանք Քրիստոսի աւետարանին։ Չո՞չ
գիտեր որ սաճարին մէջ աշխատողները սաճարէն կ'ուտեն, և անոնք որ
սեղանին պաշտօնեաներն են՝ սեղանէն
14 կ'առնուն բաժին, Նոյնպես և Տէրը
հրաման տուաւ, որ աւետարանը քա-
15 րոզողներն ապրին աւետարանէն, Բայց
ես ասոնց և ոչ մին գրի է գործ, և ոչ
գրեցի ասոնք որ այնպես ըլլայ ինձ·
քանզի լաւ է ինձ մեռանիլ աւելին,
16 քան թէ ոք ընդունայն ընէ իմ պար-
ծանքս վասն զի եթէ ես աւետարանը քարոզեմ, պարծանք չկայ ինձ,

*Ոմանք՝ իւր յոյսը վայելելու համար

քանզի իմ վրաս հարկ է· մանաւանդ
վայ է ինձ եթէ չքարոզեմ աւետարանը,
17 Քանզի եթէ կամաւ ընեմ զայս, վարձք
կ'ունենամ· իսկ եթէ ակամայ՝ այն ինձ
18 յանձնուած անտեսութիւն է։ Ուրեմն
ի՞նչ վարձք կ'ըլլայ ինձ· որ երբ կը
քարոզեմ, ձրի տամ Քրիստոսի աւետարանը, որպէս զի չարաչար չվարեմ
իմ իշխանութիւնս աւետարանին մէջ,
19 Քանզի ես որ ազատ էի ամենուն,
իմ անձս ամենուն ծառայ ըրի, որ չա-
20 տերը շահիմ· Հրէից հետ եղայ իբրև
Հրէայ որ զՀրէայս շահիմ· Անոնց որ
ընդ օրինօք էին՝ եղայ իբրև ընդ օրի-
նօք, [ոչ թէ ես ընդ օրինօք էի,] որ-
պէս զի չահիմ զանոնք որ ընդ օրինօք
են· անոնց հետ որ առանց օրինաց էին՝
եղայ իբրև առանց օրինաց, (ոչ թէ
առանց օրինաց էի Աստուծմէ, այլ
Քրիստոսի օրինաց մէջ,) որպէս զի չա-
հիմ զանոնք որ առանց օրինաց են·
22 Տկարներուն հետ եղայ իբրև տկար, որ
տկարները չահիմ· ամենուն հետ եղայ
ամենայն, որ ամենայնիւ ապրեցունեմ
23 զոմանս։ Եւ զայս կ'ընեմ աւետարանին
24 համար, որ անոր հպարտ ըլլամ· Չէ՞ք
գիտեր թէ, անոնք որ ասպարիզին մէջ
կը վազեն, վազել կը վազեն ամենքը,
բայց մին կ'առնու մրցանակը· այնպես
25 վազեցէք որ հասնիք։ Եւ ով որ կը
մրցի՝ ամէն բանի մէջ կը պահէ զինք·
անոնք՝ որպէս զի եղծանելի պսակն
26 առնուն, և մենք՝ անեղծանելին։ Ուստի ես այնպէս կը վազեմ, ոչ թէ իբր
անստուգութեամբ։ Ես այնպէս կը մըրցիմ, ոչ թէ իբրև զնոյն ծեծելով·
27 Այլ կը ճնշեմ մարմինս և կը նուաճեմ,
որ, միւսոց ուրիշներուն կը քարոզեմ,
ես ինքն չդատուիմ խոտան։

## Գլ· Ժ

1 Զեմ ուզեր որ անգէտ ըլլաք, եղբարք,
որ մեր հայրերն, ամէնքը ամպին տակ
2 էին, և ամէնքը անցան ծովէն, Եւ ա-
մէնքը Մովսէսին մկրտուեցան ամպին
3 և ծովին մէջ, Եւ ամէնքը նոյն հոգե-

4 ւոր կերակուրը կերան, եւ ամէնքը
նոյն հոգեւոր ըմպելին խմեցին, քանզի
կը խմէին այն հոգեւոր վիմէն որ անոնց
հետ կ'երթար. և այն վէմը Քրիստոս
5 էր. բայց ոչ թէ անոնցմէ շատերուն
հաճեցաւ Աստուած, քանզի անապա-
6 տին մէջ մեռած ինկան։ Եւ այն բաները
մեզի օրինակ եղան, որ չսրեաց
ցանկացող չըլլանք, ինչպէս անոնք ցան-
7 կացան. եւ ոչ կռապաշտ ըլլաք, ա-
նոնցմէ ոմանց պէս. ինչպէս գրուած
է, ժողովուրդը նստաւ ուտել և ըմ-
8 պել, և երգել խաղալ։ Եւ պոռնկու-
թիւն չընենք, ինչպէս անոնցմէ ոմանք
պոռնկեցան, և մի օրուան մէջ ինկան
9 քսան և երեք հազար հոգի։ Եւ Քրիստո-
սը չսրբազնենք, ինչպէս անոնցմէ ոմանք
փորձեցին, և չարդուեցան օձերէն։
10 Եւ չրմտնջէք, ինչպէս անոնցմէ ոմանք
տրտնջեցին, և կորեան սատակչէն։
11 Բայց այս ամէնը կը պատահէր անոնց
իբրև օրինակ. իսկ մեզ որոց դարե-
րուն վախճանը հասաւ՝ գրուեցաւ իբ-
12 րատու համար։ Ուստի ով որ կը հա-
մարի թէ հաստատուն կեցած է, թող
13 զգուշանայ, որ չինայ։ Ուրիշ փորձու-
թիւն չէ պատահած ձեզ, բայց մարդկա-
յին. սակայն Աստուած հաւատարիմ է
որ պիտի չթոյլ զձեզ փորձուիլ ի վեր
քան զկար ձեր, այլ փորձութեան հետ
պիտի տայ նաև ելք, որ կարող ըլլաք
համբերել։
14 Վասն որոյ, սիրելիք, կռապաշտու-
15 թենէ փախէք։ Որպէս թէ խելացուն-
ներու հետ կը խօսիմ. դուք դատե-
16 ցէք ինչ որ կ'ըսեմ։ Օրհնութեան բա-
ժակը զոր կ'օրհնենք՝ ոչ արեանն հա-
ղորդութիւն է Քրիստոսի։ Հաց
ցը զոր կը բեկնենք՝ ոչ մարմնոյն հա-
ղորդութիւն է Քրիստոսի մարմնոյն։
17 Քանզի մենք բազումքս մի հաց՝ մի
մարմին ենք, վասն զի ամէնքս կը վա-
18 յելենք այն մի հացէն։ Նայեցէք մարմ-
նաւոր Իսրայէլի. ոչ ապաքէն այն զոհ-
ուածներուն ուտողները հաղորդ են սե-
19 ղանոյն։ Ուրեմն ի՞նչ կ'ըսեմ, թէ կուռ-
քը բա՞ն մ'է, կամ թէ կռած զոհուա-
20 ծը բա՞ն մ'է։ Բայց կ'ըսեմ թէ այն բա-
ները զորս հեթանոսները կը զոհեն՝
դիւաց կը զոհեն և ոչ թէ Աստուծոյ.
և չեմ ուզեր որ դուք հաղորդ ըլլաք
21 դիւաց. չէք կրնար խմել Տէրոջը բա-
ժակը և դիւաց բաժակը. Չէք կրնար
վայելել Տէրոջը սեղանէն և դիւաց սե-
22 ղանէն։ Ի նախանձ զրդունք Տէրը.
միթէ մենք քան զնա զօրաւոր ենք։
23 Ամենայն ինչ օրինաւոր է ինձ, բայց
ոչ թէ ամենայն ինչ օգտակար. ամե-
նայն ինչ օրինաւոր է ինձ, բայց ոչ ա-
24 մենայն ինչ ի շինութիւն։ Մի ոք իւր
անձին նայ՝ այլ և ընկերինը։
25 ինչ որ ապանդանոցի մէջ
կը վաճառուի՝ կերէք, և մի քննէք
26 խղճի համար. Քանզի երկիր իւր լրու-
27 թեամբ Տէրոջն է։ Եւ եթէ անհաւատ-
ներէն ոք հրաւիրէ զձեզ, և ուզէք եր-
թալ, ինչ որ կը դրուի ձեր առջեւ, կե-
28 րէք, և մի քննէք խղճի համար։ Ապա
եթէ ոք ըսէ ձեզ թէ կռոց զոհեալ է
այդ, անոր համար որ իմացուց և խղճ-
29 ի համար, մի ուտէք։ Սակայն խիղճ
կ'ըսեմ՝ ոչ թէ ձերն, այլ ընկերինը։
Բայց ընդէ՞ր իմ ազատութիւնս պիտի
30 դատուի ուրիշին խղճէն. եթէ ես †շը-
նորհօք կը վայելեմ, ընդէ՞ր հայհոյ-
ուիմ, որոյ համար կը գոհանամ։
31 Արդ թէ՛ ուտէք, թէ՛ ըմպէք և թէ
ինչ որ ընէք, ամենայն ինչ ըրէք ի
32 փառս Աստուծոյ։ Գայթակղութեան
պատճառ մի ըլլաք՝ ոչ Հրէից, ոչ ‡Հե-
թանոսաց և ոչ Աստուծոյ եկեղեցւոյն.
33 ինչպէս և ես ամէն կերպով հաճոյ կ'ըլ-
լամ ամենուն, և չեմ խնդրեր իմ ան-
ձիս օգուտը, այլ շատերունը որ փըր-
կուին։

## ԳԼ. ԺԱ

1 Հետեւող լինիք ինձ եղէք, ինչպէս և ես Քր-
2 իստոսի։ Արդ կը գովեմ զձեզ, եղ-
բարք, որ յամենայնի կը յիշէք զիս,

*Ոմանք ‘ը յահեղսն վասն զի երկիրը իւր լրութեամբ Տէրոջն է։
†Կամ շնորհակալութեամբ
‡Յոյն Յունաց



և ինչ որ պատուիրեցի կը բռնէք, ինչ-
3 պէս որ ես աւանդեցի ձեզ։ Բայց կ'ուզեմ
որ գիտնաք թէ գլուխ ամենայն առնբր-
իստոս է, և գլուխ կնոջ՝ այրը, և գլուխ
4 Քրիստոսի՝ Աստուած։ Ամէն այր որ
ծածկած գլխով կ'աղօթէ կամ կը մար-
գարէանայ՝ անպատիւ կ'ընէ իւր գլուխ-
5 ը։ Եւ ամէն կին որ բաց գլխով կ'ա-
ղօթէ կամ կը մարգարէանայ՝ անպատ-
ուէ կ'ընէ իւր գլուխը. քանզի այնպէս
է հասկնալ որպէս թէ ածիլուած ըլլայ։
6 Վասն զի եթէ կինը չծածկուիլը, թող
փոքրէ իւր մազերը. իսկ եթէ ամօթ է
կնոջ փոքրիլ կամ ածիլիլ իւր մազե-
7 րը, ըծածկուի։ Գէաք չէ որ այրը
ծածկի իւր գլուխը, քանզի Աստուծոյ
պատկերը և փառքն է. բայց կինը
8 փառք է առն, Քանզի ոչ թէ այրը
9 կնոջէ է, այլ կինը՝ յառնէ։ Վասն զի
այրը չստեղծուեցաւ կնոջ համար, այլ
10 կինը առն համար։ Ա.յս պատճառաւ
պէտք է որ կինը *չուք դնի իւր գլու-
11 խոյն հրեշտակաց համար։ Բայց ոչ կինն
առանց առն, և ոչ այրն առանց կնոջ
12 ի Տէր։ Վասն զի ինչպէս որ կինը առ-
նէն, նոյնպէս այրը կնոջը միջոցաւ,
13 բայց ամէնքն Աստուծմէ։ Դուք ձեզիդ
դատեցէք։ կը վայելէ՞ կնոջ մերկ բաց
14 գլխով աղօթել Աստուծոյ առջեւ. Ո՞չ
բնութիւնն իսկ կը սորվեցուցէ ձեզ որ
այր մը, եթէ երկար մազերով է, ա-
15 նարգանք է անոր։ Բայց կինը, եթէ
երկար մազերով է, փառք է անոր.
քանզի մազերը ծածկոցի տեղ տրուած
16 են անոր։ Սակայն եթէ ոք կ'ուզէ հա-
կառակող ըլլալ, մենք այնպիսի սովո-
րութիւն չունինք, և ոչ Աստուծոյ ե-
կեղեցիները։
17 Բայց զայս պատուիրելով չեմ գովեր
չէ՛ որ, քանզի ոչ թէ ի լաւ՝ այլ ի վատ
18 թարն կը ժողովիք։ Քանզի նախ, երբ
ի մի վայր կը ժողովիք եկեղեցւոյ մէջ,
կը լսեմ թէ հերձուածք կան ձեր մէջ,
19 և մասամբ ալ կը հաւատամ։ Վասն զի
հարկաւ ձեր մէջ հերձուածներ ևս պի-
տի ըլլան, որ անոնք որ ընտիր են ձեր
20 մէջ՝ երեւնան։ Ուստի դուք որ ի մի
վայր կը ժողովիք, Տէրունական ընթ-
21 րիքն ուտել չէ այդ. Քանզի ուտելու
ատեն իւրաքանչիւր ոք նախ իւր ընթ-
րիքը կ'առնու, և մին անօթի կը մնայ
22 և մէսը կ'արբենայ։ Միթէ ուտելու
և ըմպելու համար տուն չունիք, կամ
թէ Աստուծոյ եկեղեցին կ'անարգէք,
և ամօթով կ'ընէք չքաւորները. Ի՞նչ
ըսեմ ձեզ, գովե՞մ զձեզ յայդմ, չեմ
23 գովեր. Քանզի ես ընկալայ Տէրոջմէն
զոր և ձեզ աւանդեցի, թէ Տէր Յիսուս
ի գիշերին յորում կը մատնուէր՝ ա-
24 ռաւ հաց. Եւ գոհանալով՝ կտրեց և ը-
սաւ, Առէք, կերէք, այս է մարմին իմ
որ ձեզի համար կը բեկանի. զայս ը-
25 րէք զիս յիշելու համար։ Նոյնպէս և
զբաժակն յետ ընթրելացդ, և ըսաւ, Այս
բաժակը նոր ուխտն է իմ արեամբս.
զայս ըրէք զիս յիշելու համար։ Վասն զի քանի
26 անգամ որ ուտէք զայս հացը և խմէք
զայս բաժակը, կը պատմէք Տէրոջը մա-
27 հը մինչև գայ։ Ուստի ով որ ուտէ այս
հացը կամ ըմպէ Տէրոջը բաժակն ա-
նարժանապէս, պարտական պիտի ըլլայ
28 Տէրոջը մարմնոյն և արեանը։ Ուրեմն
թող մարդ փորձէ իւր անձը, և այն-
պէս ուտէ այն հացէն և ըմպէ այն բա-
29 ժակէն. Վասն զի ով որ անարժանա-
պէս կ'ուտէ և կ'ըմպէ, իւր անձին դա-
տապարտութիւնը կ'ուտէ և կ'ըմպէ,
30 քանզի չդրազեր Տէրոջը մարմինը։ Վասն
այսորիկ կան ձեր մէջ շատ հիւանդներ
և ցաւագարներ, և շատեր ևս կը նըն-
31 ջին, Քանզի եթէ մեր անձերը դա-
32 տէինք, պիտի չդատուէինք։ Իսկ երբ
կը դատուինք, Տէրոջմէ կը խրատուինք,
որ չդատապարտուինք աշխարհի հետ։
33 Ուստի, եղբարք իմ, երբ ի մի վայր
կը ժողովիք ուտել, իրարմէ սպասե-
34 ցէք։ Իսկ եթէ ոք անօթի է, Թող ու-
տէ ի տան, որպէս զի դատապարտու-
թեան համար չժողովիք. Եւ ուրիշ բա-
ներ պիտի պատուիրեմ երբ գամ։

*Յոյն իշխանութիւն

ԳԼ. ԺԲ

1 Բայց հոգևոր պարգևներուն վրայ չեմ ուզեր, եղբարք, որ տգիտ ըլլաք։
2 Գուք գիտէք որ երբ հեթանոս էիք, անմունջ կուռց կը տարուէիք՝ ինչպէս որ կ՚առաջնորդուէիք։ Ուստի կ՚ինացուներմ ձեզ զայն թէ ոչ ոք Աստուծոյ Հոգւով խօսելով նզովեալ կը կոչէ զՅիսուս. և ոչ ոք կրնայ Տէր կոչել զՅիսուս, եթէ ոչ Հոգւով Սրբով։
4 Եւ պարգևները պէսպէս են, բայց նոյն
5 Հոգի է. նաև պաշտօնները պէսպէս
6 են, բայց նոյն Տէր է. նոյնպէս ներգործութիւնները պէսպէս են, բայց նոյն Աստուած է՝ որ կը ներգործէ զամե-
7 նայն յամենայնի։ Բայց Հոգւոյն յայտնութիւնը արուած է իւրաքանչիւրը
8 մարդու յօգուտ. Միոյն արուած է Հոգւով խնամութեան խօսք, ուրիշի մը գիտութեան խօսք՝ նոյն Հոգւոյն
9 չափով. Միւսին հաւատք՝ նոյն Հոգւով. ուրիշին բժշկութեան պարգևներ՝ նոյն
10 Հոգւով. Ուրիշին հրաշագործութիւններ, ուրիշին մարգարէութիւն, ուրիշին հոգիները զանազանել, ուրիշին պէսպէս լեզուներ, ուրիշին լեզուներ
11 բռնի թարգմանութիւն։ Բայց այս ամենը մէկնոյն Հոգին կը ներգործէ, և կը բաշխէ իւրաքանչիւրը ուրոյն ուրոյն, ինչպէս և կամի։
12 Քանզի ինչպէս որ մարմինը մի է և շատ անդամներ ունի, և՝ այն մարմնոյն բոլոր անդամները որ շատ են՝ մի մարմին են, նոյնպէս և Քրիստոս։ Քանզի մենք ամենքս մկրտուեցանք մի Հոգւով մի մարմին բլլալու, թէ Հրեայք, թէ հեթանոսք, թէ ծառայք, թէ ազատք, և ամենքս խմցուինք մի Հոգի։ Քանզի
15 մարմինը մի անդամ չէ, այլ շատ։ Եթէ ոտքն ըսէ, Որովհետև ես ձեռք չեմ, մարմնին չեմ, ոչ թէ անով չէ այն
16 մարմնին։ Եւ եթէ ականջն ըսէ, Որովհետև ես աչք չեմ, մարմնին չեմ, ոչ
17 թէ անով այն մարմնին չէ։ Եթէ բոլոր

*Ոմանք այն մի

մարմինն աչք բլլար, լսելիքն ո՞ւր պիտի բլլար։ Եթէ բոլորը լսելիք բլլար,
18 ո՞ւր պիտի բլլար հոտառելիքը։ Բայց հիմա Աստուած դրաւ անդամներն, իւրաքանչիւրը մարմնոյն մէջ, ինչպէս որ
19 ինք կամեցաւ։ Ապա եթէ ամենը մի անդամ բլլար, մարմինն ո՞ւր պիտի բլ-
20 լար։ Բայց հիմա անդամները շատ են,
21 և մարմինը՝ մի։ Չկրնար աչքն ըսել ձեռքին թէ Չես ինձ պիտոյ. և ոչ գլուխ ոտից թէ Չեք ինձ պի-
22 տոյ։ Մանաւանդ մարմնոյն այն անդամները որ շատ ակար կ՚երեւնան՝ ա-
23 նելի հարկաւոր են. Եւ մարմնոյն այն անպատիւները զարդ մանաւանդ կը համարինք թէ պատաւոր են, անոնց աւելի պատիւ կը դնենք. և այսպէս մեր անվայելչութիւնները աւելի վայելչու-
24 թիւն ունին։ Եւ մեր վայելչութիւնները բան մը պէտք չէ. բայց Աստուած մարմինը բաղխաստնեց, և թերի-
25 ւոյն աւելի պատիւ տուաւ, Որպէս զի մարմնոյն մէջ երկպառակութիւն չբլլայ, այլ անդամները միեւնոյն փոյթն
26 ունենան իրարու վրայ։ Եւ եթէ մի անդամը նեղուի, բոլոր անդամները կը նեղուին անոր հետ. և եթէ փառաւորուի մի անդամը, բոլոր անդամները
27 կ՚ուրախանան անոր հետ։ Արդ դուք Քրիստոսի մարմինն էք, և մասնաւո-
28 րապէս՝ անդամները։ Եւ Աստուած եկեղեցւոյն մէջ դրաւ զոմանս, նախ առաքեալներ, երկրորդ՝ մարգարէներ, երրորդ՝ վարդապետներ, յետոյ հրաշներ, յետոյ բժշկութեանց պարգևներ, օգնութիւններ, կառավարութիւններ,
29 լեզուներու տեսակներ։ Միթէ ամենքն առաքեալ են. միթէ ամենքը մարգարէ՞ են. միթէ ամենքը վարդապե՞տ են. միթէ ամենքը հրաշ՞ք կը գործեն.
30 Միթէ ամենքը բժշկութեան պարգևներ ունին. միթէ ամենքը լեզուներ կը խօսին. միթէ ամենքը կը թարգմանե՞ն։
31 Բայց դուք նախանձաւոր եղէք այն շնորհաց որ լաւագոյն են. և ես՝ ևս աւելի լաւ ճամբայ կը ցուցնեմ ձեզ։



ԳԼ. ԺԳ

1 Եթէ մարդոց և հրեշտակաց լեզուներով խօսիմ և սէր չունենամ, եղայ ես ձայն առւոյ պղինձ կամ հնչեցող
2 ծնծղայ. Եւ եթէ ունենամ մարգարէութիւն, և հասկնամ ամէն խորհուրդ և ամէն գիտութիւն, և եթէ ունենամ ամէն հաւատք մինչև լեռները տեղափոխելու, և սէր չունենամ,
3 ոչինչ եմ. Եւ եթէ բոլոր ինչքս ջամբեմ ուտելոյս, և մարմինս առ յայրումն, և սէր չունենամ, չեմ օգտիր.
4 Սէրը երկայնամիտ է, քաղցր է. սէրը չնախանձիր, սէրը չդոռոզանար, չՀպարտանար,
5 Չմարուիր անպարկեշտ, չՀնդրկեր իրենը, չգրգռուիր, չմտիրիր
6 չար, Չուրախար անիրաւութեան վրայ, այլ խնդակից է ճշմարտութեան.
7 Ամենայնի կը զիջնայ, ամենայնի կը հաւատայ, ամենայնի կը յուսայ, ամենայնի
8 կը համբերէ։ Սէրը բնաւ չկ՚իյնար. բայց եթէ մարգարէութիւնք՝ պիտի խափանին, եթէ լեզուներ՝ պիտի դադարին, եթէ գիտութիւն՝ պիտի խափա-
9 նի. Ես՝ քանզի փոքր ի չատէ գիտենք, և
10 փոքր ի չատէ կը մարգարեանանք. բայց երբ կատարեալը գայ, անատեն փոքրը
11 ի չատէն պիտի խափանի. Երբ ատեն էի, իբրև ատեն կը խօսէի, իբրև ատեն կը խորհէի, իբրև ատեն կը Համարէի. բայց երբ այր եղայ, ատենս թեան բա-
12 ներն ի բաց խափանեցի. Քանզի հիմա մենք օրպէս թէ հայելւոյ մէջ կը տեսնենք բնդ ատեամ, բայց անատեն դէմ յանդիման. հիմա մեզմէ եմ փոքր ի չատէ, բայց անատեն այնպէս պիտի
13 ճանչնամ, ինչպէս ճանչցուեցայ. Ուստի հիմա կը մնայ հաւատք, յոյս, սէր՝ այս երեքը, և առնոց մեծագոյնը սէրն է։

ԳԼ. ԺԴ

1 Ամրոյ հետևեցէք, և նախանձաւորեցէք հոգևոր պարգևներուն, մանաւանդ
2 որ մարգարէանաք։ Վասն զի այն որ լեզուով կը խօսի՝ ոչ թէ մարդոց կը խօսի, այլ Աստուծոյ, քանզի ոչ ոք կը հասկնայ, այլ հոգւով կը խօսի խոր-
3 հուրդներ։ Բայց այն որ կը մարգարէանայ, մարդոց կը խօսի ի շինութիւն և ի մխիթարութիւն և ի սփոփանս։
4 Այն որ լեզուով կը խօսի՝ իր անձը կը շինէ, և այն որ կը մարգարէանայ՝
5 եկեղեցին կը շինէ. Կ՚ուզեմ որ դուք ամենքդ լեզուներ խօսիք, բայց մանաւանդ որ մարգարէանաք, քանզի լաւ է այն որ կը մարգարէանայ քան զայն որ լեզուներ կը խօսի, բայց եթէ թարգմանէ, որ եկեղեցին շինութիւն առնու։
6 Եւ հիմա, եղբարք, եթէ ես գամ առ ձեզ լեզուներ խօսելով, ինչ օգուտ պիտի ընեմ ձեզ, եթէ չխօսիմ ձեզ կամ յայտնութեամբ, կամ գիտութեամբ, կամ մարգարէութեամբ, կամ
7 վարդապետութեամբ։ Եւ ձայն առւոյ անշունչ բաներն անդամ, թէ սրինգ և թէ քնար, եթէ ձայներու զանազանութիւն չտան, ինչպէս պիտի ճանչցուի թէ ինչ կը նուագուի սրինգով կամ քնա-
8 նարով։ Քանզի եթէ փողն անորոշ ձայն հանէ, ով պիտի պատրաստուի ի պա-
9 տերազմ։ Նոյնպէս և դուք եթէ լեզուով յայտնի խօսք չբերէք, խօսուածն ինչպէս պիտի հասկցուի. քանզի պիտի բլլաք բնդ օդս խօսողներ։ Անա
10 աշխարհի մէջ ձայնի այնչափ տեսակներ կան, և անոնց և ոչ մէն առանց նշա-
11 նակութեան է։ Ուստի եթէ ձայնին զօրութիւնը չգիտնամ, ես բարբարոս պիտի բլլամ խօսողին, և խօսողը բարբարոս պիտի բլլայ ինձ։ Նոյնպէս և
12 դուք որովհետև նախանձաւոր էք հոգևոր պարգևաց, խնդրեցէք որ առատևութ եկեղեցւոյն շինութեան համար։
13 Վասն որոյ այն որ լեզուով կը խօսի՝ աղօթք թող ընէ որ թարգմանէ։
14 Քանզի եթէ ես աղօթք ընեմ լեզուով, իմ հոգիս աղօթք կ՚ընէ, բայց միտքս
15 անպտուղ է։ Ուրեմն ի՞նչ է. աղօթք ընեմ հոգւով, աղօթք ընեմ և միտքս. ազմնս երգեմ հոգւով, ազմնս եր-
16 գեմ և միտքս։ Ապա թէ ոչ, եթէ դուն

հագուստ փառաւորանաս, նա որ իբրև սո-
ղոմ կեցած է ի՞նչպէս պիտի ըսէ Աստ-
ծոյ գոհութեան ձայն. քանզի չգիտնար
17 ինչ որ կ՚ըսես, Թեպէտ գուն բարւոք
18 կը գոհանաս, բայց միւսը չշինուիր։ Կը
գոհանամ *Աստուծմէ որ քան զձեզ ա-
մէնքդ աւելի լեզուներով կը խօսիմ։
19 Բայց եկեղեցւոյն մէջ կ՚ուզեմ հինգ
խօսք խօսել մտօք, որ ուրիշներուն
եւս սորվեցունեմ, քան թէ բիւրաւոր
խօսք՝ լեզուով։
20 Եղբարք, մտայ մի ըլլաք յիմաստու-
թեան, այլ եղէք մտայ ի չարիս, և կա-
21 տարեալ եղէք յիմաստութեան։ Գրե-
ւած է օրէնքին մէջ Թէ Օտար լեզու օք
և օտար շրթամտիք պիտի խօսիմ այդ
ժողովրդեան, ասկայն և այնպէս պի-
22 տի չլսեն ինձ, կ՚ըսէ Տէրը։ Ուրեմն լե-
զուք նշանի համար են, ոչ թէ հաւատա-
ցեղոց, այլ անհաւատից, բայց մարգա-
րէութիւնք՝ ոչ թէ անհաւատից, այլ
23 հաւատացելոց։ Արդ եթէ բոլոր եկե-
ղեցին ի մի վայր գայ, և ամէնքը լե-
զուօք խօսին, և հոն մանեն ագէաներ
կամ անհաւատներ, պիտի չըսե՞ն Թէ
24 դուք մոլեգնեալ եք։ Իսկ եթէ ամէն-
քը մարգարէանան, և անհաւատ մի
կամ ագէա մը մտնէ, կը յանդիմանուի
25 ամէնէն, կը քննուի ամէնէն, և անոր
սրտին ծածուկ բաները կ՚ըլլան յայտ-
նի. և այսպէս երեսն վրայ իյնկած պի-
տի երկրպագէ Աստուծոյ, և խոս-
տովանի Թէ արդարև Աստուած ձեր
մէջ է։
26 Ուստի ի՞նչ է, եղբարք. երբ ի մի
վայր կը ժողովիք, ձեզմէ իւրաքանչիւր
սաղմոս ունի, վարդապետութիւն ու-
նի, լեզու ունի, յայտնութիւն ունի,
թարգմանութիւն ունի։ ամէնը շի-
27 նութեան համար թող ըլլայ։ Եթէ ոք
լեզու կը խօսի, երկու հոգի, և թէ ա-
ւելի՝ երեք թող ըլլան, և այն ևս մի
քա՛ մի՛ջէ, և մին թող թարգմանէ։
28 Բայց եթէ չկայ թարգմանող, թող
լուռ կենայ եկեղեցւոյն մէջ, և ինքզին
29 և Աստուծոյ թող խօսի։ իսկ մարգա-
րէներէն երկու կամ երեք հոգի թող
30 խօսին, և միւսները թող քննեն։ իսկ
եթէ նստողներէն ուրիշի մը ևս յայտ-
նութիւն ըլլայ, առաջինը թող լռէ։
31 Քանզի ամէնքդ կրնաք մի քա՛ միով
մարգարէանալ, որ ամէնքը սորվին և
32 ամէնքը մխիթարեն։ Եւ մարգարէից
հոգիները մարգարէից հնազանդ են։
33 Քանզի Աստուած խռովութեան Աստ-
ուած չէ, այլ խաղաղութեան, ինչպէս
որ աուրբերուն բոլոր եկեղեցիներուն
մէջ։
34 Ձեր կանայք եկեղեցիներուն մէջ
լուռ կենան, քանզի անոնց հրաման
չկայ խօսել, այլ հնազանդ ըլլալ, ինչ-
35 պէս որ օրէնքն ևս կ՚ըսէ։ Բայց եթէ
բան սորվիլ կ՚ուզեն, թող հարցունեն
առանձին իրենց արանց։ քանզի կանանց
36 անվայել է եկեղեցւոյ մէջ խօսիլ։ Մի-
թէ Աստուծոյ խօսքը ձենէ՞ ելաւ, կամ
37 թէ միայն ձե՞զ հասաւ։ եթէ ոք կը
կարծէ Թէ մարգարէ է, կամ հոգևոր,
թող առաւել գիտնայ Թէ ինչ որ գրե-
լեցի ձեզ, Տէրոջը պատուէրներն են։
38 Բայց եթէ ոք ագէա է, թող ագէա
39 ըլլայ։ Ուստի, եղբարք, նախանձեցէք
մարգարէանալու, և լեզուներ խօսիլը
40 և ևս մի արգելլուիք։ Եւ ամէնայն ինչ թող
ըլլայ պարկեշտութեամբ և քան կարգի։

## Գլ. ԺԵ

1 Եղբարք, կ՚ինծացուներմ ձեզ աւետա-
րանը զոր ևս քարոզեցի ձեզ, զոր և
ընկալաք և յորոյ վերայ հաստատուած
2 էք. Որով և կը փրկուիք, եթէ պինդ
բանէք խօսքը զոր քարոզեցի ձեզ,
միայն եթէ ի զուր հաւատացած չէք։
3 Քանզի նախ ևս աւանդեցի ձեզ զայն՝
զոր և ևս ընկալայ, Թէ Քրիստոս մեր
4 մեղաց համար մեռաւ քան գրոց, Եւ
Թէ թաղեցաւ և յարեաւ երրորդ օրն
5 քան գրոց, Եւ Թէ երևեցաւ Կեփայի,
6 և ապա երկտասանից։ Յետոյ երևե-
ցաւ աւելի քան հինգ հարիւր եղբարց
միանգամայն, յորոց շատերը կան մին-

*Ոմանք իմ Աստուծմէս



7 չև. յայժմ, և ոմանք ննջեցան. Եւ յե-
տոյ երևեցաւ Յակոբոս, յետոյ բոլոր
8 առաքելոց։ Հուսկ յետոյ, որպէս Թէ
9 վիժածի, երևեցաւ և ինձ։ Վասն զի
ես եմ փոքրագոյնն առաքելոց, որ և
չեմ արժանի կոչուելու առաքեալ,
քանզի հալածեցի զեկեղեցին Աստու-
10 ծոյ։ Միայն Թէ շնորհօքն Աստուծոյ
եմ ինչ որ եմ. և անոր շնորհքը որ
առ իս՝ ընդունայն չեղաւ, այլ քան
զնոսա ամենեսեան աւելի աշխատեցայ.
և ոչ Թէ ես, այլ Աստուծոյ շնորհքը
11 որ ինծի հետ էր։ Ուստի Թէ ես և Թէ
նոքա այսպէս կը քարոզենք, և դուք
այսպէս հաւատացիք։
12 Ուրեմն եթէ Քրիստոս կը քարոզուի
Թէ մեռելներեն յարեաւ, ի՞նչպէս ձե-
նէ ոմանք կ՚ըսեն Թէ Մեռելոց յա-
13 րութիւն չկայ։ եթէ մեռելոց յարու-
թիւն չկայ, ուրեմն նաև Քրիստոս յա-
14 րութիւն առած չէ. Եւ եթէ Քրիստոս
յարութիւն առած չէ, ուրեմն ընդու-
նայն է մեր քարոզութիւնը, ընդու-
15 նայն է և ձեր հաւատքը։ Եւ կը գըտ-
նուինք սուտ վկայք Աստուծոյ. վասն
զի վկայեցինք Աստուծոյ համար, Թէ
յարեաւ զՔրիստոս. զոր արդարև չյա-
րեաւ, եթէ մեռելք չեն յառներ.
16 Քանզի եթէ մեռելք չեն յառներ,
17 ապա և Քրիստոս չէ յարուցեալ. Եւ
եթէ Քրիստոս չէ յարուցեալ, ընդու-
նայն է ձեր հաւատքը, տակաւին ձեր
18 մեղաց մէջ էք. Նոյնպէս և ննջեցեալք
19 ի Քրիստոս կորուած են, եթէ միայն
այս կենաց համար յուսացած ենք Քր-
իստոսի, ողորմելի ենք քան զամե-
20 նայն մարդիկ։ Բայց արդ Քրիստոս
յարուցեալ է ի մեռելոց, առաջին պը-
21 տուղ ննջեցելոց։ Քանզի որովհետև
մահուամբ եղաւ մահ, մահուամբ ևս մե-
22 ռելոց յարութիւն։ Վասն զի ինչպէս
Ադամէ ամէնքը կը մեռնին, նոյնպէս
Քրիստոսով ամէնքը կենդանի պիտի
23 ըլլան. Բայց իւրաքանչիւր իւր կար-
գաւ, առաջին պտուղ Քրիստոս, ետ-
ոց Քրիստոսինները ի գալստեան նորա.
24 Այնուհետև՝ վախճան, երբ Թագաւո-

7 neither Jacob, and all the apostles. 8 And last of all he was seen of me also, as of one born out of due time. 9 For I am the least of the apostles, that am not meet to be called an apostle, because I persecuted the church of God. 10 But by the grace of God I am what I am: and his grace which was bestowed upon me was not in vain; but I laboured more abundantly than they all: yet not I, but the grace of God which was with me. 11 Therefore whether it were I or they, so we preach, and so ye believed. 12 Now if Christ be preached that he rose from the dead, how say some among you that there is no resurrection of the dead? 13 But if there be no resurrection of the dead, then is Christ not risen: 14 And if Christ be not risen, then is our preaching vain, and your faith is also vain. 15 Yea, and we are found false witnesses of God; because we have testified of God that he raised up Christ: whom he raised not up, if so be that the dead rise not. 16 For if the dead rise not, then is not Christ raised: 17 And if Christ be not raised, your faith is vain; ye are yet in your sins. 18 Then they also which are fallen asleep in Christ are perished. 19 If in this life only we have hope in Christ, we are of all men most miserable. 20 But now is Christ risen from the dead, and become the firstfruits of them that slept. 21 For since by man came death, by man came also the resurrection of the dead. 22 For as in Adam all die, even so in Christ shall all be made alive. 23 But every man in his own order: Christ the firstfruits; afterward they that are Christ's at his coming. 24 Then cometh the end,

*Or, that I say, that I preached



when he shall have delivered up the kingdom to God, even the Father; when he shall have put down all rule and all authority and power. 25 For he must reign, till he hath put all enemies under his feet. 26 The last enemy that shall be destroyed is death. 27 For he hath put all things under his feet. But when he saith all things are put under him, it is manifest that he is excepted, which did put all things under him. 28 And when all things shall be subdued unto him, then shall the Son also himself be subject unto him that put all things under him, that God may be all in all. 29 Else what shall they do which are baptized for the dead, if the dead rise not at all? why are they then baptized for the dead? 30 And why stand we in jeopardy every hour? 31 I protest by your rejoicing which I have in Christ Jesus our Lord, I die daily. 32 If after the manner of men I have fought with beasts at Ephesus, what advantageth it me, if the dead rise not? let us eat and drink; for to morrow we die. 33 Be not deceived: evil communications corrupt good manners. 34 Awake to righteousness, and sin not; for some have not the knowledge of God: I speak this to your shame. 35 But some man will say, How are the dead raised up? and with what body do they come? 36 Thou fool, that which thou sowest is not quickened, except it die: 37 And that which thou sowest, thou sowest not that body that shall be, but bare grain, it may chance of wheat, or of some other grain: 38 But God giveth it a body as it hath pleased him, and to every seed his own body. 39 All flesh is not the same flesh: but there is one kind of flesh of men, another flesh of beasts, another of fishes, and another of birds. 40 There are also celestial bodies, and bodies terrestrial: but the glory of the celestial is one, and the glory of the terrestrial is another. 41 There is one glory of the sun, and another glory of the moon, and another glory of the stars: for one star differeth from another star in glory. 42 So also is the resurrection of the dead. It is sown in corruption; it is raised in incorruption: 43 It is sown in dishonour; it is raised in glory: it is sown in weakness; it is raised in power: 44 It is sown a natural body; it is raised a spiritual body. There is a natural body, and there is a spiritual body. 45 And so it is written, The first man Adam was made a living soul; the last Adam was made a quickening spirit. 46 Howbeit that was not first which is spiritual, but that which is natural; and afterward that which is spiritual. 47 The first man is of the earth, earthy: the second man is the Lord from heaven. 48 As is the earthy, such are they also that are earthy: and as is the heavenly, such are they also that are heavenly. 49 And as we have borne the image of the earthy, we shall also bear the image of the heavenly. 50 Now this I say, brethren, that flesh and blood cannot inherit the kingdom of God; neither doth corruption inherit incorruption. 51 Behold, I show you a mystery; We shall not all sleep, but we shall all be changed, 52 In a moment, in the twinkling of an eye, at the last trump: for the trumpet shall sound, and the dead shall be raised incorruptible, and we shall be changed. 53 For this corruptible must put on incorruption, and this mortal must put on immortality. 54 So when this corruptible shall have put on incorruption, and this mortal shall have put on immortality, then shall be brought to pass the saying that is written, Death is swallowed up in victory. 55 O death, where is thy sting? O grave, where is thy victory? 56 The sting of death is sin; and the strength of sin is the law. 57 But thanks be to God, which giveth us the victory through our Lord Jesus Christ. 58 Therefore, my beloved brethren, be ye stedfast, unmoveable, always abounding in the work of the Lord, forasmuch as ye know that your labour is not in vain in the Lord.

*Or, are baptized

*Ոմանք չունին թէ եթէ մեռելք չեն յառներ, ուստի և ն.

մի, և իւրաքանչիւր սերման իւր մարդ-
39 մինը, Ոչ ամէն մարմին մի մարմին է,
այլ մարդոց մարմինն ուրիշ է, և ա-
նասնոց մարմինն ուրիշ, և ձկանց և՝
40 ուրիշ, և թռչնոց՝ ուրիշ։ Կան երկնա-
ւոր մարմիններ, և երկրաւոր մարմին-
ներ· բայց երկնաւորներուն փառքն
41 ուրիշ է, և երկրաւորներունն՝ ուրիշ։
Արեւուն փառքն ուրիշ է, և լուսնին
փառքն՝ ուրիշ, և աստղերուն փառքն՝
ուրիշ· և մի աստղ քան զմիւս աստղ
42 աւելորդ է փառօք։ Այսպէս է մեռե-
լոց յարութիւնը· կը սերմանուի ապա-
43 կանութեամբ, կը յառնէ անապական-
44 նութեամբ։ Կը սերմանուի անարգու-
թեամբ, կը յառնէ փառօք· կը սեր-
մանուի տկարութեամբ, կը յառնէ զո-
րութեամբ· Կը սերմանուի շնչաւոր
մարմին, կը յառնէ հոգեւոր մարմին·
45 Կայ շնչաւոր մարմին կայ, և հոգեւոր մար-
մին կայ· Եւ այսպէս գրուած է, Առա-
ջին մարդն Ադամ եղաւ շունչ կենդա-
նի, վերջինն Ադամ՝ հոգի կենդանա-
46 բար։ Բայց ոչ թէ առաջ հոգեւորն, այլ
47 շնչաւորը, և ապա հոգեւորը· Առաջին
մարդը երկրէն է՝ հողեղէն, երկրորդ
48 մարդը Տէր է՝ յերկինից· Ինչպէս էր հո-
ղեղէնը՝ նոյնպէս և հողեղիններըը, և
ինչպէս երկնաւորը՝ նոյնպէս և երկնա-
49 ւորներըը· Եւ ինչպէս հագած ենք հո-
ղեղինին կերպարանքը, երկնաւորին
50 կերպարանքը եւս պիտի հագնինք։ Բայց
զայս կ'ըսեմ, եղբարք, որ մարմին և
արիւն Աստուծոյ արքայութիւնը չեն
կրնար ժառանգել· և ոչ ապականու-
թիւնը կը ժառանգէ անապականու-
թիւն։
51 Ահա խորհուրդ մը կ'ըսեմ ձեզ· Ա-
մէնքս պիտի չննինք, բայց ամէնքս
52 պիտի փոխուինք, Ցանկարծակի յա-
կան թօթափիլ, վերջին փողոյ առեն·
քանզի փող պիտի հնչէ, և մեռեալք
պիտի յառնեն առանց ապականու-
թեան, և մենք պիտի փոխուինք·
53 Վասն զի պարտ է այս ապականացուն
զգեստուիլ անապականութիւն, և այս
մահկանացուն զգեստուիլ անմահու-
54 թիւն։ Բայց երբ այս ապականացուն զգեստու
անապականութիւն, և այս մահկանա-
ցուն զգեստու անմահութիւն, յայնժամ
պիտի կատարուի այն խօսքը որ գրուե-
ցաւ Թէ Մահ ընկղմեցաւ յաղթութեան
55 մէջ։ Ո՞ւր է, ով մահ, քու խայթոցդ·
ո՞ւր է, ով գերեզման, քու յաղթու-
56 թիւնդ։ Մահու խայթոցը մեղքն է, և
57 մեղաց ոյժն՝ օրէնքը։ Բայց գոհութիւն
Աստուծոյ, որ յաղթութիւն կու տայ
մեզ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսով
58 ձեռօք։ Ուստի, եղբարք իմ սիրելիք,
հաստատուն եղէք, անշարժ կ՚ըլլաք և
միշտ աւելցէք Տէրոջը գործին մէջ,
գիտնալով որ ձեր աշխատութիւնն ըն-
դունայն չէ Տէրոջմէ։

## ԳԼ· ԺԶ

1 Բայց սուրբերուն համար ողորմութիւն
ժողվելու վրայ, ինչպէս որ պատուէր
տուի Գաղատացւոց եկեղեցիներուն,
2 դուք ալ այնպէս ըրէք։ Ամէն մէա-
շաբաթի ջ ձենէ իւրաքանչիւր իրեն
3 քով Թող դիզէ ինչ որ կը յաջողի, Մի
գուցէ երբ գամ, անատեն ժողովուա-
ծներ ըլլան։ Եւ երբ գամ, որոց դուք
հաճիք, զանոնք Թուղթերով պիտի
դրկեմ տանիլ ձեր պարգեւներն յե-
4 րուսաղէմ։ Եւ եթէ իմ երթալս ալ
արժան դատուի, Թող երթան ինծի
5 հետ։ Մակայն ես պիտի գամ ձեզ, երբ
Մակեդոնիայէ անցնիմ։ (քանզի Մա-
6 կեդոնիայէ կ'անցնիմ։) Եւ թերեւս ձեր
քով մնամ, կամ ձմերեմ, որ դուք
յուղարկէք զիս ուր որ պիտի երթամ։
7 Քանզի չեմ ուզեր զձեզ հիմա հարթ-
ւանդի տեսնել, բայց յոյս ունիմ որ
ժամանակ մը ձեր քով կենամ, եթէ
8 Տէրը հրաման տայ։ Սակայն Եփեսոս
9 պիտի մնամ մինչև Պենտեկոստէ· Քան-
զի մեծ և արդիւնաւոր դուռ բացուած
է ինձ, և չատ հակառակորդներ կան։
10 Արդ եթէ Տիմոթէոս գայ, նայեցէք

*Կամ յանձնաժողովութիւն ընդ Թուղթերով, ես զանոնք



որ ձեր քով առանց երկիւղի ըլլայ·
քանզի Տէրոջը գործը կը գործէ, ինչ-
11 պէս և ես։ Ուստի ոչ ոք արհամարհէ
զնա, այլ խաղաղութեամբ յառաջիկա-
յ ընծայեցէք զնա, որ գայ առ իս· քանզի ա-
նոր կը սպասեմ եղբայրներով հան-
12 դերձ։ Իսկ Ապողոս եղբօր համար, շատ
ապաչեցի անոր որ գայ եղբայրներուն
հետ առ ձեզ· և բնաւ կամք չունեցաւ
գալ հիմա, բայց պիտի գայ երբ յար-
մար ժամանակ գտնէ։
13 Արթուն կեցէք, հաստատուն կեցէք
14 ի հաւատս, Ժիր եղէք, զօրացէք· Ամե-
նայն ինչ ձեր ըլլայ սիրով։
15 Կ'աղաչեմ զձեզ, եղբարք, (գիտէք
դուք Ստեփանեայ ընտանիքը Թէ Ա-
քայիոյ առաջին պտուղն է, և իրենց
անձերը նուիրեցին սուրբերուն սպա-
16 սաւորութեանը·) Որ հնազանդ ըլլաք
այնպիսեաց, և ամէնուն որ գործ հետ
17 կը գործեն և կ'աշխատին։ Ուրախ եմ
ես Ստեփանեայ և Փորտունատոսի և
Աքայիկոսի գալուստեան վրայ, որ ձեր
18 պակասութիւնն անոնք լցին· Քանզի
հանգուցին իմ հոգիս և ձերը· ուստի
ճանչցէք այնպիսիները։
19 Ողջոյն կու տան ձեզ Ասիոյ եկեղեցի-
ները· ողջոյն շատ կու տան ձեզ ի Տէր
Ակիւղաս և Պրիսկիլա իրենց տանէն
20 եկեղեցեաւ։ Ողջոյն կու տան ձեզ բա-
լոր եղբարք· ողջոյն տուէք իրարու
սուրբ համբուրմամբ։
21 Ա,յս ողջոյնը իմ ձեռացս Պօղոսի է։
22 Եթէ ոք չսիրէ զՏէր Յիսուս Քրիստոս,
նզովեալ ըլլայ· *Մեր Տէրը կու գայ·
23 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
24 տոսի ընդ ձեզ· Իմ սէրս ձեր ամէնուն
հետ ըլլայ ի Քրիստոս Յիսուս։ Ամէն։

# ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի՝
կամօքն Աստուծոյ, և Տիմոթէոս եղ-
բայր· Աստուծոյ եկեղեցւոյն որ Կորն-
թոսի մէջ է, և բոլոր սրբոց որ են բոլոր
2 Աքայիա· Շնորհք և խաղաղութիւն ձեզ
Աստուծմէ մեր Հօրմէն և ի Տեառնէ
Յիսուսէ Քրիստոսէ։
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայր գթու-
թեանց և Աստուած ամենայն մխիթա-
4 րութեան· Որ կը մխիթարէ զմեզ մեր
բոլոր նեղութիւններուն մէջ, որ և
մենք կարող ըլլանք մխիթարել զանոնք
որ ամէն նեղութիւններու մէջ են մը-
խիթարութեամբն որով կը մխիթա-
5 րուինք Աստուծմէ· Քանզի ինչպէս որ
Քրիստոսի չարչարանքը չատ եղան մեր
վրայ, նոյնպէս և մեր մխիթարութիւ-
6 նը չատ կ'ըլլայ Քրիստոսի ձեռօք· Իսկ
եթէ նեղութիւն կրենք, ձեր մխիթա-
րութեան և փրկութեան համար է, և
եթէ մխիթարուինք, ձեր մխիթարու-
թեան և փրկութեան համար է, որ կը
յաջողի համբերելով այն չարչարանաց
7 որովք և մենք կը չարչարուինք· Եւ
մեր յոյսն հաստատուն է ձեզի համար,

*Յոյն (Անաթեմէ) Մարան աթա·

քանզի գիտէնք թէ ինչպէս որ հաղորդիք չարչարանաց, նոյնպէս պիտի ըլլաք
8 և մխիթարութեան։ Զի ան զի չէմ ուզեր որ անգիտ ըլլաք, եղբարք, նեղութեանց որ պատահեցան մեզ յԱսիա, թէ գան զկարողութենէն մեր շատ աւելի ծանրացանք, մինչև ի կենաց
9 խակ անցոյս եղանք։ Բայց ունեցանք յանձինս մեռուան վճիռ, որպէս զի մեր անձերուն չապաւինինք, այլ Աստուծոյ՝ որ կը յարուցանէ զմեռեալս.
10 Որ և փրկեց զմեզ և կը փրկէ այնպիսի
11 մեծ մահուընէ. Որում կը յուսանք թէ տակաւին պիտի փրկէ, օգնակատեութեամբ ձեր աղօթից մեզի համար. որպէս զի այն շնորհաց համար որ շատերուն կողմանէ եղած է մեզ՝ գոհութիւն արուի մեզի համար շատերէն։
12 Քանզի մեր պարծանքն այս է, մեր խղճին վկայութիւնը, թէ Աստուծոյ պարզամտութեամբ և անկեղծութեամբ, ոչ թէ մարմնաւոր իմաստութեամբ, այլ շնորհքով Աստուծոյ վարուեցանք յաշխարհի, բայց մանաւանդ դէպ ի
13 ձեզ։ Քանզի ոչ այլ ինչ կը գրենք ձեզ բայց զայն զոր դուք կը կարդաք և կը ճանչնաք. և կը յուսամ թէ մինչև ի
14 վախճան պիտի ճանչնաք. ինչպէս որ մասքը ի չասկ ճանչցաք զմեզ, թէ ձեր պարծանքն ենք, ինչպէս և դուք մեր՝ Տէր Յիսուսի օրը։
15 Եւ այս վստահութեամբ կ'ուզէի նախ գալ առ ձեզ, որպէս զի երկրորդ անգամ շնորհք ընդունիք.
16 Եւ ձեզի անցնել ի Մակեդոնիա, և դարձեալ ի Մակեդոնիայ գալ առ ձեզ, և ձեզի յաղորդիլ ի Հրէաստան։ Ուստի այս զոր խորհեցայ, միթէ թեթեւութեամբ շարժեցայ. կամ թէ ինչ զոր կը խորհիմ,
18 բան մարմնոյ կը խորհիմ, որ իմ կողմանէս ըլլայ այո այո, և ոչ ոչ։ Այլ
19 հաւատարիմ է Աստուած, որ մեր խօսքն առ ձեզ Այո և ոչ չէր։ Քանզի Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոս որ մեզմով քարոզուեցաւ ձեզ, (իմովս և Սիղուանոսիս և Տիմոթէոսիս,) այո և ոչ չեղաւ, այլ եղաւ այո ի նմա.
20 Քանզի որչափ կան խոստումնք Աստուծոյ, են Այո ի նմա, և Ամէն ի նմա ի
21 փառս Աստուծոյ մեր ձեռօք։ Բայց այն որ հաստատեց զմեզ ի Քրիստոս ձեզի հետ, և օծեց զմեզ, Աստուած
22 է. Որ և կնքեց զմեզ, և տուաւ Հոգւոյն գրաւը մեր սիրտերուն մէջ։ Բայց
23 ես զԱստուած վկայ կը կոչեմ իմ անձիս, որ ձեզ խնայելու համար տակաւին չեկայ Կորնթոս։ ոչ թէ ձեր հաւատոյն վրայ կը տիրենք, այլ գործակից ենք ձեր ուրախութեանը. վասն զի կը կենաք հաւատով։

## Գլ. Բ

1 Սակայն ես ինձէն որոշեցի զայս, որ նորէն տրտմութեամբ չգամ առ ձեզ։
2 Քանզի եթէ ես տրտմեցուցնեմ զձեզ, ո՞վ է որ ուրախ պիտի ընէ զիս, եթէ
3 ոչ այն որ կը տրտմի ինէ։ Եւ զայս գրեցի, որ երբ գամ, տրտմութիւն չունենամ անոնցմէ, ուսկի պարտ է ինձ ուրախ լինել. քանզի վստահ եմ ձեր ամենուն վրայ, որ իմ ուրախութիւնս
4 ձեր ամենուն է։ Քանզի շատ նեղութենէ և սրտի տագնապէ գրեցի ձեզ բազում արտասուօք. ոչ թէ որ դուք տրտմիք, այլ՝ որ գիտնաք սէրը զոր ունիմ մանաւանդ առ ձեզ։
5 Բայց եթէ ոք տրտմեցուց, ոչ թէ զիս տրտմեցուց, այլ փոքր ի չասկ (որ
6 չծանրացնեմ ըսեմ) ձեր ամենքս, չերբիք է այնպիսւոյն այն պատիժը որ
7 շատերէն եղաւ։ Ուստի ընդ հակառակն պարտ է մանաւանդ ներել անոր և մխիթարել զնա, որ չընկղմուելի տրտմութեան։
8 Ուստի կ'աղաչեմ զձեզ, որ
9 անոր վրայ հաստատեք սէրը։ (Քանզի և վասն այնորիկ գրեցի, որ գիտցի փորձելով զիմանամ թէ հնազանդ եք յամենայնի։ Եւ որու դուք բան մը կը նեղէք, և ես. քանզի եթէ և ես նեղեմ,
11 որու և նեղեմ՝ ձեզի համար է Քրիստոսի երեսը։) Որ զրկանք չկրենք

*Ոմանք+ գրեցի ձեզ. †կամ առջև



Սատանայէ. քանզի չգիտցող չենք անոր խորհուրդները։
12 Արդ երբ ես Տրովադա հասայ Քրիստոսի Աւետարանը +ուրախ լա, և դուռ
13 բաց էր ինձ ի Տէր, իմ հոգւոյս մէջ հանգիստ չունէի, քանզի Տիտոս եղբայրս չգտայ. այլ հրաժարելով անոնցմէ գացի ի Մակեդոնիա։
14 Բայց գոհութիւն Աստուծոյ որ միշտ յաղթոջ կ'ընէ զմեզ Քրիստոսով, և յայտնի կ'ընէ միջոցով ամէն տեղ զնա
15 ճանչնալուն հոտը. Քանզի մենք Քրիստոսի անոյշ հոտ ենք Աստուծոյ առջև
16 փրկուելոց մէջ և կորնչելոց մէջ. Ոմանց՝ հոտ մահուան ի մահ, և ոմանց՝ կենդանութեան հոտ ի կեանս. և առ այս
17 ո՞վ բաւական է. Քանզի չենք շատերուն պէս, որ կը խարդախեն Աստուծոյ խօսքը, այլ որպէս թէ անկեղծութեամբ, այլ որպէս թէ Աստուծմէ Աստուծոյ առջև. կը խօսինք ի Քրիստոս։

## Գլ. Գ

1 Կը սկսի՞նք յանձն առնել դարձեալ մեր անձերը. կամ թէ, ոմանց պէս, պիտո՞յ են մեզ յանձնարարութեան
2 թուղթեր առ ձեզ կամ ձենէ. Այլ մեր թուղթը դուք էք մեր սրտերուն մէջ գրուած, ճանչցուած և կարդա-
3 ցուած բոլոր մարդկանէ. Յայտնի ըլլալով որ դուք Քրիստոսի թուղթն էք մեր սպասաւորութեամբ, ոչ թէ մելանով գրուած, այլ կենդանի Աստուծոյ Հոգւով, ոչ թէ քարեղէն տախտակներու վրայ, այլ սրտի մարմնեղէն
4 տախտակներուն վրայ։ Եւ այսպէս վստահութիւն ունինք մենք Աստուծոյ
5 վրայ Քրիստոսի ձեռօք. Ոչ թէ մենք ինքներնիս բաւական ենք բան մը խորհել որպէս թէ մենք, այլ մեր բաւա-
6 կանութիւնն Աստուծմէ է. Որ և բաւական ըրաւ զմեզ ըլլալ պաշտօնեաներ նոր կտակարանին, ոչ թէ գրոյն, այլ Հոգւոյն. քանզի գիրը կը սպանանէ, 7 բայց Հոգին կ'ապրեցուցնէ։ Իսկ եթէ

3 Ծոյ առջև, իսկ եթէ մեր աւետարանը
ծածկուած և է, կորուսելոց մէջ ծած-
4 կուած է. Որոց մէջ այս աշխարհիս աս-
տուածը կուրացուց անհաւատներուն
միտքը, որ չծագէ անոնց վրայ լոյս
փառաց աւետարանին Քրիստոսի որ
5 ինքն է Աստուծոյ պատկերը. Քանզի
ոչ թէ մեր անձերը կը քարոզենք, այլ
զՅիսուս Քրիստոս Տէր, և զմեզ՝ ձեր
6 ծառաներն Յիսուսի համար։ Վասն զի
Աստուած որ հրամայեց լուսոյ ի-
նել ծագել, ինք ծագեց մեր սիրտե-
րուն մէջ՝ տալու համար Աստուծոյ փա-
ռաց գիտութեան լոյսը յանձին Յի-
7 սուսի Քրիստոսի։ Սրբ ունինք մենք
այս գանձը հողեղէն անոթներու մէջ, որ
զօրութեան առաւելութիւնն լլայ Ա-
8 ստծմէ, և ոչ մենէ։ Ամէն կողմանէ
վշտացած ենք, բայց ի նեղ ընկած
չենք. կարօտեալ ենք, բայց յուսա-
9 հատեալ չենք. Հալածեալ ենք, բայց
լքեալ չենք. մար ենք տուած ենք, բայց
10 կորուսեալ չենք. Յանէնայն ժամ *Յի-
սուսի մահը կը կրենք մեր մարմիննե-
րուն մէջ, որ նաև Յիսուսի կեանքն
11 յայտնուի մեր մարմիններուն մէջ։ Վասն
զի մենք որ կենդանի ենք՝ Յիսուսի
համար միշտ ի մահ կը մատնուինք, որ
և Յիսուսի կեանքն յայտնի լլայ մեր
12 մահկանացու մարմիններուն մէջ։ Ուս-
տի մահը մեր մէջ կը գործէ, և կեան-
13 քը՝ ձեր մէջ։ Բայց հաւատոյ նոյն հո-
գին ունինք, ինչպէս որ գրուած է,
Հաւատացի, վասն որոյ և խօսեցայ.
մենք ևս կը հաւատանք, վասն որոյ և
14 կը խօսինք. Զայս գիտնալով թէ այն որ
զՏէր Յիսուս յարոյց՝ զմեզ ևս պիտի
յարուցանէ Յիսուսիւ, և մեզ առջև
15 պիտի կեցուցանէ ձեզմով հանդերձ. Քան-
զի ամէնայն ինչ ձեզի համար է, որ
շնորհքն առատանալով՝ չաւելցուն մի-
ջոցաւ գոհութիւն աւելցնէ ի փառս
Աստուծոյ։
16 Վասն որոյ չենք ձանձրանար. բայց
թէպէտ մեր այս արտաքին մարդը կ'ա-

*Ոմանք՝ Տէր Յիսուսի

պականի, սակայն մեր ներքինը կը նո-
17 րոգուի օր բան օրէ։ Քանզի մեր վայր-
կենական թեթև նեղութիւնն առաւել
քան զառաւել փառաց յաւիտենական
18 առաւելութիւն կը գործէ մեզ՝ վասն
զի չենք նայիր այնց որ կ'երևին, այլ
այնց որ չեն երևիր. քանզի երևելիքս
առ ժամանակ մի են, իսկ այնք որ չեն
երևիր՝ յաւիտենական։

## Գլ. Ե

1 Վասն զի գիտենք որ եթէ մեր երկ-
րաւոր վրանի տունը քակուի, ունինք
չինուած Աստուծմէ անձեռագործ յա-
2 ւիտենական տուն յերկինս։ Եւ ար-
դարև ասոր մէջ կը հառաչենք՝ մեր
երկնաւոր բնակութիւնն հագնիլ փա-
3 փաքլով. Միայն թէ երբ հագնինք
զայն, մերկ չգտնուինք։ Վասն զի մենք
որ այս վրանին տակ ենք՝ կը հառա-
չենք ծանրութիւն կրելով. քանզի
չենք ուզեր հանել, այլ ի վերայ հագ-
նել, որ մահկանացուն ընկղմի ի կե-
5 նաց։ Իսկ այն որ զմեզ կը պատրաստէ
առ այս՝ Աստուած է, որ նաև տուաւ
6 մեզ Հոգւոյն գրաւ։ Ուստի յամենայն
ժամ համարձակութիւն ունինք, և գի-
տենք թէ ցորչափ մարմնոյ մէջ կը կե-
7 նանք, Տէրոջմէ հեռու ենք. (Վասն զի
հաւատոյ կը քալենք, ոչ թէ երևու-
8 թիւն.) Ուստի կը համարձակինք, և ա-
ւելի ևս կ'ուզենք հեռանալ մարմնէ
9 և Տէրոջը քով կենալ։ Վասն որոյ կը
ջանանք ևս, որ թէ կենանք և թէ
10 հեռանանք, հաճոյ ըլլանք անոր։ Վասն
զի պէտք է որ ամէնքս Քրիստոսի առե-
ւնին առջև երևնանք, որ իւրաքանչիւր
փոխարէնը, ինչ որ գործած է, թէ
բարի և թէ չար։
11 Ուստի Տէրոջը երկիւղը գիտնալով
մարդոց վերքը կը համեցուննենք. սա-
կայն մենք Աստուծոյ աչքին յայտնի
ենք, և կը յուսամ թէ ձեր խղճին մէջ
12 ևս յայտնի ենք։ Ոչ թէ նորէն մեր
անձերը կ'ընծայնենք ձեզ. այլ պատ-



ճառ կու տանք ձեզ՝ պարծելի մեր վրայ,
որ ունենաք պատասխան անոնց որ
առ ի ցոյց կը պարծին, և ոչ սրտով։
13 Քանզի եթէ ցնորած ենք, այն Աս-
տուծոյ համար է, և եթէ զգաստ ենք,
14 այն ձեզի համար է. Վասն զի Քրիս-
տոսի սէրը կը տարփէ զմեզ. քանզի
մեր դատաստանն այս է որ եթէ մին ամե-
նուն համար մեռաւ, ուրեմն ամէնքը
15 մեռան. Եւ ամէնուն համար մեռաւ,
որ անոնք որ կենդանի են՝ այլ և չըլլան
կենդանի իրենց անձերուն, այլ անոր՝ որ
16 անոնց համար մեռաւ և յարեաւ։ Ուս-
տի այսուհետև մենք ոչ զոք գիտենք
մարմնով, և թէպէտ ճանչցանք զՔրիս-
տոս մարմնով, այլ հիմա չենք ճանչ-
17 նար զայնպէս։ Ուրեմն եթէ ոք է ի Քրի-
ստոս, նոր սաեղծուած է. հիներն
անցան, և ահա ամէնայն ինչ նոր է-
18 ղաւ։ Սակայն ամէնայն ինչ Աստուծմէ
է, որ հաշտեցուց զմեզ իրեն հետ Յի-
սուսի Քրիստոսի ձեռօք, և տուաւ մեզ
19 հաշտութեան պաշտօնը. Այսինքն Ա-
ստուած էր որ Քրիստոսով հաշտեցուց
աշխարհս իրեն հետ, և անոնց յանցան-
քը չհամարեցաւ անոնց, և հաշտու-
20 թեան խօսքը դրաւ մեր մէջ։ Ուրեմն
Քրիստոսի կողմանէ դեսպանութեան
կ'ընենք, իբրև թէ Աստուած կը բա-
րեխօսէր մեզմով. կ'աղաչենք Քրիս-
տոսի կողմանէ, հաշտուեցէք Աստու-
21 ծոյ հետ։ Վասն զի զնա, որ մեզք չէր
գիտեր, մեզի համար *մեղաւոր համա-
րեցաւ,՝ որ մենք անոր միջոցով Ա-
ստուծոյ արդարներն ըլլանք։

## Գլ. Զ

1 Ուստի և մենք գործակից լինելով կ'ա-
զաչենք որ Աստուծոյ շնորհքն ի զուր
2 ընդունած չըլլաք։ Քանզի կ'ըսէ, Ըն-
դունելի ժամանակ լսեցի քեզ, և փրկ-
ութեան օրն օգնեցի քեզ։ ահա հի-
մա է ժամանակ ընդունելի, ահա հի-
3 մա է օր փրկութեան։ Ինու բանով մը

*Յունա. մեզք բրաւ.

*Կամ ի ներքս ի ձեզ

18 սէ Տէրը, և պիղծ բանի մի գոյչիք. Եւ
ես պիտի ընդունիմ զձեզ, և ես Հայր
պիտի ըլլամ ձեզ, և դուք որդիք և
դստերք պիտի ըլլաք ինձ, կ'ըսէ Տէր
Ամենակալ։

## Գլ. Ն

1 Ասա, սիրելիք, որպիսեան ունինք
այս խոստումները, մաքրենք մեր ան-
ձերը մարմնոյ և հոգւոյ ամէն պղծութիւ-
նէ, և կատարեալ գործենք սրբութիւ-
նը երկիւղիւն Աստուծոյ։
2 Ընդունեցէք զմեզ. մեղք ոնիք
չըրինք, ոչ եղծեցինք զոք, ոչ զրկե-
ցինք զոք։ Ոչ թէ դատապարտելու
համար կ'ըսեմ ասիկա ես և յա-
ռաջագոյն ըսած եմ թէ դուք մեր
սիրտերուն մէջ էք՝ մեռնելու և ապ-
4 րելու չէ՛ հետ։ Շատ է համարձակու-
թիւնս ձեր վրայ. չատ է պարծանքս
ձեզի համար. լի եմ մխիթարութեամբ,
առատացեալ եմ ուրախութեամբ մեր
5 բոլոր նեղութիւններուն մէջ, վասն զի
երբ մենք Մակեդոնիա հասանք, մեր
մարմինը բնաւ հանգիստ չունեցաւ, այլ
ամէն կողմանէ նեղութիւն կը կրէինք.
արտաքուստ պատերազմներ կային,
6 ներքուստ երկիւղներ։ Բայց Աստուած
որ խոնարհները կը մխիթարէ՝ մխիթա-
7 րեց զմեզ Տիտոսի գալստեամբ։ Եւ ոչ
միայն անոր գալստեամբ, այլ այն մխ-
իթարութեամբ ևս՝ որով մխիթարուած էր նա ձեզմով, երբ պատմեց
մեզ ձեր բաղձանքը, ձեր ողբը, ձեր
նախանձը վասն իմ, այնպէս որ աւելի
8 ևս ուրախ եղայ. Թանգի եթէ զձեզ
տրտմեցուցի այն թղթով, չեմ ղղջար,
(թէև ղղջացած էի,) քանզի կը տես-
նեմ որ այն թուղթը տրտմեցուց զձեզ,
9 թէև առ ժամանակ մի։ Արդ ուրախ
եմ, ոչ թէ վասն զի տրտմեցաք, այլ
վասն զի ապաշխարութեան համար
տրտմեցաք. քանզի դուք ըստ Աստու-
ծոյ տրտմեցաք, այնպէս որ ոչ իւիք
10 կրեք ինեւ մենք։ Քանզի տրտմութիւ-

*Կամ Համբերեցէք մեզ

նը որ ըստ Աստուծոյ է՝ կը գործէ
փրկութեան համար ապաշխարութիւն
որ չէ ղղջանալի. բայց աշխարհի տրտա-
11 մութիւնը մահ կը գործէ։ Քանզի ահա
նոյն իսկ ձեր տրտմելն ըստ Աստուծոյ,
ձեր մէջ որչափ ջանք գործել, որչափ
չքմեղութիւն, որչափ պատմութիւն,
որչափ երկիւղ, որչափ անձուկ, որչափ
նախանձ, որչափ վրէժխնդրութիւն.
յամենայնի ցուցուցիք զձեզ թէ մա-
12 քուր էք այդ գործին մէջ։ Ուրեմն այս
որ գրեցի ձեզ, ոչ թէ զրկանք ընողին
համար էր, և ոչ թէ զրկանք կրողին
համար, այլ որպէս զի հոգը դուր ձեր
վրայ ունենաք՝ յայտնի ըլլայ ձեզ Աստու-
13 ծոյ առջեւ։ Ուստի ձեր այն մխիթարու-
թեան համար մխիթարուեցանք. և
աւելի շատ ուրախացանք Տիտոսի ու-
րախութեան համար, քանզի անոր հո-
գին ձեր ամենեն հանգիստ գտած էր։
14 Վասն զի ինչ որ անոր առջեւ պարծե-
ցայ ձեզի համար, ամօթով չելայ. այլ
ինչպէս որ ամէն բան ճշմարտութեամբ
խօսեցանք ձեզ, նոյնպէս Տիտոսի առ-
ջեւ մեր պարծենալը ճշմարիտ եղաւ։
15 Նաև անոր սէրն աւելի է ձեր վրայ,
երբ կը յիշէ ձեր ամենուն հնազանդու-
թիւնը, թէ ինչպէս ահիւ և դողու-
16 թեամբ ընդունած էք զնա։ Ուստի ու-
րախ եմ որ յամենայնի վստահութիւն
ունիմ ձեր վրայ։

## Գլ. Ը

1 Արդ, եղբայրներ, կը ծանուցանենք
ձեզ Աստուծոյ շնորհքը, որ տրուած է
2 Մակեդոնացւոց եկեղեցիներուն. Որ
նեղութեան մեծ փորձին մէջ անոնց
ուրախութեան առատութիւնը եւ խո-
ր, և անոնց ծայր աղքատութիւնն
աւելի մեծ առատաձեռնութիւն եղաւ։
3 Քանզի կը վկայեմ որ ըստ կարողու-
թեան իւրեանց և աւելի իսկ քան զկա-
րողութիւն իւրեանց յօժարակամ ըլ-
4 լալով, շատ աղաչանօք կ'աղաչէին զմեզ
մեզ ընդունել առաքելոյն և սուրբերուն
համար եղած պաշտօնին մասնակցու-



5 թիւնը։ Եւ ոչ թէ որչափ մենք կը յու-
սացինք, այլ իրենց անձերն ևս տուին,
նախ՝ Տէրոջը, և մեզ մէկ՝ Աստուծոյ
6 կամքը։ Որ Տիտոսի ապշեցինք թէ
ինչպէս որ յառաջագոյն սկսաւ, նոյն-
պէս և ձեր մէջ կատարէ նաև այդ շը-
7 նորհքը։ Բայց ինչպէս որ յամենայնի
առատացած էք դուք, (հաւատով և
խօսքով և գիտութեամբ և ամէն ջան-
ք և սիրով որ ձենէ մեր վրայ է,)
նայեցէք որ այդ շնորհօք ևս առատա-
8 նաք։ Ոչ թէ հրամայելով կ'ըսեմ, այլ
ուրիշներուն ջանից պատճառաւ, և որ-
պէս զի փորձեմ ձեր սիրոյն հարազա-
9 տութիւնը։ Քանզի դուք գիտէք Տէրոջն
մերոյ Յիսուսի Քրիստոսի շնորհքը, թէ
նա ձեզի համար ազքատ եղաւ՝ այն որ
հարուստ էր, որ դուք անոր ազքա-
10 տանալովն հարստանաք։ Եւ յայտ
խրատ մը կու տամ. քանզի այս ձեր
օգտին համար է, դուք որ ոչ միայն
ընելը, այլ և կամենալն յառաջագոյն
11 սկսաք հերուընէ. Ուստի հիմա ընելն
ևս կատարեցէք, որ ինչպէս կամեց յօ-
ժարութիւն կայ, նոյնպէս և ընելն ըլ-
12 լայ ըստ չափոյն որ ունիք։ Վասն զի եթէ
առաջ յօժարութիւն ըլլայ, ուրե-
ք ըստ չափոյն որ ունի օք՝ ընդունելի է,
13 և ոչ թէ ըստ չափոյն որ չունի. Քանզի ոչ թէ ուրիշներուն հանգիստ և ձեզ
14 նեղութիւն, Այլ հաւասարութեամբ՝ ա
ժամ ձեր ասելին անոնց պակասու-
թեանը, որպէս զի անոնց ասելին ևս
ըլլայ ձեր պակասութեանը, որ հաւա-
սարութիւն ըլլայ. ինչպէս որ գրուած
15 է, Թէ Ան որ շատ ժողվեց՝ չաւելցուց,
16 և ան որ սակաւ՝ չպակսեցուց։ Բայց
գոհութիւն Աստուծոյ որ գրաւ նոյն
17 հոգը ձեր վրայ Տիտոսի սիրտը. Քանզի
ընկալաւ ազաչանքն, և վասն զի շատ
էր յօժարամտութիւնը, իւր կամքը
18 հրաւ ձեզ։ Եւ անոր հետ զրկեցինք
այն եղբայրը որոյ գովութիւնն յա-
տարածն է բոլոր եկեղեցիներուն մէջ.
19 Եւ ոչ միայն այսչափ, այլ նաև եկեղե-
ցիներէն ընտրուեցաւ ուղեկից ըլլալ
մեզ այս սրոց մէջ, զոր մենք կը մա-

20 կատարեմնք Տէրոջը փառացը համար,
և ձեր յօժարութիւնը. Կը զգուշա-
նայինք սակայն որ սրատ չդնենք ոք
21 մեր վրայ այս առատութեան մէջ զոր
կը մատակարարենք. Քանզի ոչ միայն
Տէրոջը առջեւ, այլ և մարդոց առջեւ
22 կը հոգանք ինչ որ բարի է. Եւ անոնց
հետ զրկեցինք մեր եղբայրը, զոր շատ
բաներուն մէջ փորձելով՝ շատ անգամ
յօժարամիտ գտած ենք, և հիմա ա-
ւելի ևս յօժարամիտ՝ բազում վստա-
23 հութեամբ ձեր վրայ. Եթէ ոք հարցու-
ի Տիտոսի համար, նա իմ ընկերս է
և ձեր մէջ իմ գործակիցս. իսկ եթէ
մեր եղբայրներուն համար, անոնք ե-
կեղեցիներուն զրկուածներ են, և փառք
24 Քրիստոսի. Ուստի տուէք ատնց ձեր
սիրոյն և մեր ձեր վրայ պարծանաց ա-
պացոյցը եկեղեցիներուն առջեւ։

## Գլ. Թ

1 Քանզի պատառութեան վրայ որ առ
սուրբս՝ աւելորդ է ինձ գրել ձեզ.
2 Գիտեմ ձեր յօժարամտութիւ-
նը, որով վրայ կը պարծենամ ձեզի
համար Մակեդոնացւոց մէջ, թէ Աքա-
յեցիք հերուընէ պատրաստ են. և ձեր
3 նախանձը գրգռեց շատերը։ Եւ զրկե-
ցի եղբայրները, որ մեր պարծանքը
ձեզի համար յայտի չըլլայ, այլ
պատրաստ գտնուիք, ինչպէս որ ըսած
4 եմ. Որ մի գուցէ երբ Մակեդոնացիք
իմ հետս գան և գձեզ անպատրաստ
գտնեն, մենք (որ չըսենք թէ դուք,)
ամօթով մնանք այս †պարծանաց վրա-
5 ստհութեան մէջ։ Ուստի հարկաւոր
համարեցայ ազաչել եղբայրներուն, որ
յառաջագոյն գան առ ձեզ, և յառա-
ջագոյն կարգի դնեն այն ձեր յառաջ-
գոյն ծանուցուած ընծան որ պատրաստ
ըլլայ, այնպէս որ ընծայի պես ըլլայ,
6 և ոչ թէ ագահութեան պես։ Բայց
զայս կ'ըսեմ՝ Թէ ով որ խնայե-
լով կը սերմանէ՝ խնայելով պիտի հնձե-

*Ոմանք մեր †Ոմանք ըսածնիս։

ձէ, և ով որ առաւաւթեամբ կը սերմանէ՝ առաւաւթեամբ պիտի հնձէ. իւրաքանչիւրը ժոյ ինչպէս որ իւր սրտով կը յօժարի, ոչ թէ տրտմութեամբ կամ ստիպմամբ. քանզի Աստուած յօժարակամ առուղը կը սիրէ։ 8 Աստուած ամէն շնորհք առաւօրէն ալ ձեզ, որ յամէնայնի ունենալով միշտ ինչ որ պիտոյ է ձեզ՝ առատաձեռնութեան համար որով շատ գործակցութիւն կ'ընէք անոնց և Աստուծոյ գերազանց շնորհքոյ համար որ ի ձեզ է, 15 Գոհութիւն Աստուծոյ՝ անոր անպատում պարգեւին համար։

## Գլ. ժ.

1 Բայց ես Պօղոս կ'աղաչեմ զձեզ Քրիստոսի հեզութեան և քաղցրութեանը համար, ես որ երես առ երես խոնարհ եմ ձեր մէջ, բայց ի հեռուստս կը համարձակիմ ձեզ, կ'աղաչեմ որ ի մոտ չհամարձակիմ այն վստահութեամբ, որով միտք ունիմ համարձակել անոնց վրայ, որ մեր վրայ այնպէս կը կարծեն թէ մարմնաւորապէս կը քալենք։ 3 Քանզի թէպէտ կը քալենք ի մարմնի, բայց ոչ թէ ըստ մարմնոյ կը զինուրենք։ 4 Քանզի մեր զինուորութեան պէնքը չէ մարմնաւոր, այլ զօրաւոր Աստուծով՝ ամրացնելը քակելու. մենք 5 խորհուրդներ կը քակենք, և ամէն բարձր բան հպարտացեալ Աստուծոյ գիտութեանը դէմ, և ամէն միտք գերի կ'բնենք Քրիստոսի հնազանդութեան։ 6 Եւ պատրաստ ենք վրէժ առնուլ ամէն անհնազանդութենէ, երբ ձեր հնազանդութիւնը կատարեալ ըլլայ։ 7 Արտաքուստ երևութին կը նայիք. եթէ ոք վստահ ըլլայ իւր անձին վրայ թէ Քրիստոսին է, այնպիսին դարձեալ ինքնին թող խորհի, թէ ինչպէս Քրիստոսին է նոյնպէս և 8 մենք՝ քանզի եթէ աւելի ևս պարծենալու ըլլամ այս մեր իշխանութեան վրայ զոր Տէրը տուաւ մեզ՝ չշինել ըզձեզ և ոչ թէ քակել, պիտի չամչնամ։ 9 Որ այնպէս չհամարուիմ, որպէս թէ թուղթերով երկիւղ կու տամ ձեզ. 10 Քանզի թուղթերը, կ'ըսեն, ծանր և զօրաւոր են, բայց մարմնոյն երևոյթը տկար, և խօսքն՝ անարգ. 11 Այնպիսին թող զայս խորհի, որ մենք ինչպէս ի հեռուստս ենք բաներ մեր թուղթերով, ի մօտ ևս այնպէս պիտի ըլլանք գործով։ 12 Ծով. Քանզի չենք համարձակիր մեր անձն ի կշիռ դնել և բաղդատել անոնց հետ, որ կը գովեն զինքնեանս. բայց անոնք չափելով իրենց անձերն իրենցմով, և բաղդատելով զիրենք իրենց 13 հետ՝ չեն հասկնար։ Սակայն մենք ոչ թէ յանդգնա կը պարծենանք, այլ այն կանոնին չափով զոր Աստուած բաժին տուաւ մեզ հասնել մինչև ձեզ։ 14 Ոչ թէ որպէս թէ մենք հասած չենք ձեզ, և զանձինս քան զպատին աւելի կ'երկնցուենք. քանզի Քրիստոս մեզ ալ առաջնորդեց մինչև ձեզ ալ ի ճշմարիտ աւետարանին։ 15 Ոչ թէ յանդգնութիւն կ'ընենք ուրիշներուն աշխատանքովը, այլ յոյս ունինք որ երբ ձեր հաւատքն աւելնայ, մեր կանոնին չափով աւելի 16 ընդարձակուինք ձեզմով, Անդր ևս քան զձեզ աւետարանը քարոզել, և ոչ թէ պատրաստ բաներու վրայ պարծենալ՝ 17 ձենալ ուրիշի կանոնով։ Բայց ով որ կը պարծենայ՝ Թող ի Տէր պարծենայ. 18 Վասն զի ոչ թէ այն որ իւր անձը կը գովէ՝ նա է ընտրեալ, այլ զոր Տէրը կը գովէ։

## Գլ. ԺԱ.

1 Երանի թէ քիչ մը համբերէիք անմտութեանս. և արդարև համբերեցէք ինձ, 2 վասն զի ձեր վրայ նախանձաւորեմ Աստուծոյ նախանձով. քանզի ես զձեղ խօսեցայ մի երկան իբրև մաքուր 3 կոյս Քրիստոսի դիմաց հանելու։ Սակայն թէ կը վախնամ գուցէ ինչպէս որ օձը խաբեց զԵւայ խորամանկութեամբ, այնպէս ձեր միտքերն ապականին միտմտութենէն որ ի Քրիստոս։ 4 Վասն զի եթէ ոք գայ և քարոզէ ուրիշ Յիսուս զոր մենք չքարոզեցինք, կամ առնուք ուրիշ հոգի զոր չառիք, կամ ուրիշ աւետարան զոր չէք ընդունած, 5 շատ լաւ ալեկ կը համբերիք։ Քանզի ես այսպէս կը համարիմ թէ քան զերևելի առաքեալս բանով մը պակաս 6 չեմ։ Եւ թէպէտ խօսքի կողմանէ անվարժ եմ, բայց ոչ գիտութեան կողմանէ. սակայն յամէնայնի բոլորովին մեր անձերն յայտնի ըրինք ձեզ։ 7 Մի՞թէ յանցաւոր եղայ որ Աստուծոյ աւետարանը ձրի քարոզելով ձեզ իմ անձս խոնարհեցուցի, որ դուք բարձ8 րանաք։ Ուրիշ եկեղեցիները կողոպտեցի՝ ձրիակ առնելով որ ծառայեմ 9 ձեզ։ Եւ մինչ ձեր քով կի, երբ կարօտութիւն մը ունեցայ, ոչ ումեք ձանձրացուցի։ Քանզի իմ կարօտութիւնս լցին եղբարք որ եկան Մակեդոնիայէ. և յամէնայնի պահեցի անձս և պիտի պահեմ ծանրութիւն տալէ 10 ձեզ։ Քրիստոսի ճշմարտութիւնը կայ յիս, որ այս իմ պարծանքս պիտի չբռնա11 թափանցի ինձ Աքայիոյ կողմերը։ Ընդ է՞ր. որպես թէ չեմ սիրեր զձեզ. 12 աչք Աստուած գիտէ։ Բայց ինչ որ կ'բնեմ՝ պիտի ընեմ ևս, որ կարիմ անոնց պատճառը որ պատճառ կը փընտրեն, որպէս զի ինչ բանով որ կը պարծենան, իրենք ևս մեզի պէս գըտնուին։ 13 Ընդ. Քանզի այնպիսիք սուտ առաքեալներ, խարեբայ գործաւորներ ըլլալով, Քրիստոսի առաքեալներուն կերպարանքը կ'առնուն իրենց վրայ, 14 և զարմանք չէ, քանզի ինքն իսկ Սատանայ լուսաւոր հրեշտակի կերպա15 րանք կ'առնու. Ապա մեծ բան չէ, որ անոր պաշտօնեանները ևս արդարութեան պաշտօնեաներու նման կերպարանք կ'առնուն. որոց վախճանն իրենց գործերուն համեմատ պիտի ըլ16 լայ։ Դարձեալ կ'ըսեմ, մի ոք անմիտ համարի զիս, ապա թէ ոչ գոնէ իբրև անմիտ ընդունեցէք զիս, որ և ես քիչ 17 մը պարծենամ. ինչ որ ես կը խօսիմ՝ կը խօսիմ ոչ թէ ըստ Տեառն, այլ որպէս թէ անմիտութեամբ այդ պարծե18 նալուն վստահութեամբ։ Որովհետև շատերը մարմնոյ կողմանէ կը պարծե19 նան, ևս ևս պիտի պարծենամ. Քանզի դուք իմաստուն ըլլալով յօժարութեամբ կը համբերէք անմիտներուն, 20 վասն զի կը համբերէք, եթէ ոք ծառայեցնէ զձեզ, եթէ ոք չխ ստացուածն ուտէ, եթէ ոք առնու, եթէ ոք հպարտանայ, եթէ ոք ձեր երեսին 21 զարնէ։ Իբրև հեգնելով կ'ըսեմ, որպես թէ մենք տկար եինք. բայց ինչ բանով որ կը համարձակի ոք (անմտութեամբ կ'ըսեմ,) կը համարձակիմ և 22 ես։ Եբրայեցի՞ են, և ես. Իսրայէլացի՞ են, և ես. Աբրահամի՞ սերունդ են, 23 և ես. Քրիստոսի պաշտօնեաներ են, (յիմարաբար կ'ըսեմ՝) ևս աւելի ես. աշխատանօք աւելի, ծեծերով ևս աւելի, բանտարկութեամբք՝ աւելի, մահուան վտանգներով բազում անգամ.

*Ոմանք՝ կերակրոյ համար հաց ևս պիտի պարգևէ, և պիտի աւելցուն ձեր սերմանիքը,
†Ոմանք՝ պիտի բազմացուն,

*Ոմանք՝ Կաւելցուցէն Քրիստոսին հնձք.

24 Հրեաներէն հինգ անգամ քառանկ
25 մխով պակաս Հէֆ կերայ. Երիցս ձաղ-
կեցայ. մի անգամ քարկոծուեցայ. Ե-
րիցս նաւաբեկութեան հանդիպեցայ.
գիշեր մը և ցերեկ մը անդունդը անա-
26 ցի. Շատ անգամ ճանապարհորդու-
թեանց մէջ ջրհեղեղներէ, ի վտանգս գե-
տերէ, ի վտանգս աւազակներէ, ի վը-
տանգս ազգէս, ի վտանգս հեթանո-
սներէ, ի վտանգս քաղաքի մէջ, ի վը-
տանգս անապատի մէջ, ի վտանգս ծո-
վու վրայ, ի վտանգս եղբայրնե-
27 րու մէջ. Եղայ ի ջանս և յաշխատանս,
շատ անգամ ի սգնութեան, ի քաղց և
ի ծարաւ, շատ անգամ յանօթութ-
28 թեան, ի ցուրտ և ի մերկութեան. Թող
արտաքին նեղութիւնքն, ամէն օրուան
զբաղումը, բոլոր եկեղեցիներուն հո-
29 գը կը դիզուէր իմ վրաս։ Ո՞վ կը ան-
կարանայ, և ես չեմ ականատես. ո՞վ կը
30 գայթակղի, և ես չեմ այրուիր։ Եթէ
պարծենալ պէտք է, անգութեանս
31 բաներուն վրայ պարծենամ։ Աստուած
և Տէրան մերոյ Յիսուսի Քրիստոսի
Հայրը որ յաւիտեան օրհնեալ է, գի-
32 տէ որ չեմ սուտ։ Դամասկոսի մէջ Ա-
րետաս թագաւորը զիս բռնա-
նել ուզելով Դամասկացւոց քաղաքը
33 պահապաններ գրած էր. Եւ ես պա-
տուհանէ մը զամբիւղով պարապէն վար
թողուեցայ, և փախայ անոր ձեռքէն։

## Գլ. ԺԲ

1 Պարծենալ *արդարև անօգուտ է ինձ.
միայն Թէ Տէրոջը տեսիլներուն և յայտ-
2 նութիւններուն գամ։ Մարդ մը գի-
տեմ Քրիստոսով յորերքառասն ամօթ
յառաջ, (եթէ մարմնով էր՝ չեմ գի-
տեր, և եթէ առանց մարմնոյ՝ չեմ գի-
տեր, Աստուած գիտէ,) այնպիսին յա-
փրշտակուեցաւ մինչև երրորդ եր-
3 կինս։ Ու գիտեմ այնպիսի մարդ մը
(եթէ մարմնով և եթէ առանց մարմ-
4 նոյ՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ,) Ո՛ր

*Ոմանք պէտք է, բայց



մար բան դիզել, այլ ծնողք՝ որդւոց
15 համար։ Ես ես մեծ յօժարութեամբ
ծախք պիտի ընեմ, և ծախք պիտի
բլլամ ես ձեր անձերուն համար, թէ-
պետև աւելի սիրելով զձեզ՝ աւելի
քիչ սիրուիմ։
16 Սակայն թող բլլայ որ ես ծանրութիւն
չտուի ձեզ, այլ, ուան զի խորագէտ
17 էի, խելօք բռնեցի զձեզ։ Միթէ ապա-
հեցի՞ ձենէ բան մը անոնց ձեռօք զոր
18 ղրկեցի առ ձեզ։ Տիտոսի ապահեցի, և
անոր հետ ղրկեցի այն եղբայրը. միթէ
ձենէ բան մը ապահեց Տիտոս. ո՞չ ա-
պաքէն նոյն հոգւով քալեցինք, ո՞չ ա-
պաքէն նոյն ճամբով։
19 Դարձեալ կը կարծէք թէ ձեր առջև
ինքնագովութիւն կ'ընենք. Աստուծոյ
առջև Քրիստոսով կը խօսինք. և ամէն
բան, սիրելիք, ձեր շինութեան համար
20 է. Քանզի կը վախնամ թէ գուցէ երբ
գամ, չգտնեմ զձեզ ինչպես կը կամիմ,
և ես գտնուիմ ձեզ ինչպես դուք չէք
կամիր. գուցէ բլլան դարձեալ վէճ,
նախանձ, սրտմտութիւնք, գրգռու-
թիւնք, չարախօսութիւնք, բանսար-
կութիւնք, ամբարտաւանութիւնք,
21 խռովութիւնք. Գուցէ երբ դարձեալ
գամ, իմ Աստուածս նկուն ընէ զիս
ձեր քով, և սուգ ընեմ շատերուն
համար որ յառաջագոյն մեղան, և չա-
պաշխարեցին պղծութեան և պոռնի-
կութեան և գիճութեան համար զոր
գործեցին։

## Գլ. ԺԳ

1 Ա՛յս երրորդ անգամ է որ կու գամ
առ ձեզ. երկու կամ երեք վկաներու
բերնէ պիտի հաստատուի ամէն բան։
2 Ցառաջագոյն բսած եմ, և յառաջա-
գոյն կ'ըսեմ (որպէս թէ երկրորդ ան-
գամ ներկայ, թէև հիմա ի հեռաւոր
կը գրեմ) յառաջագոյն մեղանչող-
ըսան և ուրիշ ամենուն, որ եթէ դար-
3 ձեալ գամ, պիտի չխնայեմ. վասն զի
ապացոյց կը խնդրէք թէ Քրիստոս կը
խօսի իմովս, այն որ տկարացած չէ առ-
4 ձեզ, այլ զօրացած է ի ձեզ. Որ թէ-
պետ խաչուեցաւ տկարութեամբ, բայց
կենդանի է զօրութեամն Աստուծոյ.
քանզի և մենք թէպետ կը տկարա-
նանք անով, բայց կենդանի պիտի ըլ-
լանք անոր հետ զօրութեամն Աստու-
5 ծոյ ի ձեզ։ Փորձեցէք ձեր անձերը թէ
ի՞նչ է հաւատս. քննեցէք ձեր անձերը.
չէ՞ք գիտեր ձեր անձերը որ Յիսուս
Քրիստոս ի ձեզ է, միայն թէ խոտան
6 չըլլաք։ Բայց կը յուսամ թէ պիտի
7 գիտնաք թէ մենք խոտան չենք։ Եւ
կը խնդրեմ Աստուծմէ որ չար բան մը
չընէք. ոչ թէ՝ որ մենք ընտիր երե-
ւինք, այլ որ դուք զբարին գործէք,
8 թէև մենք իբրև խոտան ըլլանք։ Քան-
զի ոչինչ կարող ենք ճշմարտութեան
դէմ, այլ ճշմարտութեան համար։
9 Վասն զի ուրախ ենք, երբ մենք կը
տկարանանք և դուք զօրաւոր էք, և
մենք ձեր այդ հաստատութեան հա-
10 մար կ'աղօթենք։ Ուստի զայս կը գը-
րեմ ձեզ ի հեռուստս, որ երբ գամ,
աստակութեամբ չվարուիմ այն իշխա-
նութեան համեմատ, զոր Տէրը տուաւ
ինձ ի շինել և ոչ ի քակել։
11 Վերջապէս, եղբարք, ողջ եղէք,
հաստատուն կեցէք, միաբանուեցէք,
միաբան եղէք, խաղաղութիւն ըրէք.
և սիրոյ և խաղաղութեան Աստուածը
12 պիտի բլլայ ձեր հետ։ Ողջոյն տուէք ի-
րարու սուրբ համբուրիւ։ ողջոյն կու-
13 տան ձեզ բոլոր սուրբերը։ Տէր Յիսուսի
Քրիստոսի շնորհքը և Աստուծոյ սէրը
և Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը ձեր
ամենուն հետ բլլայ։ Ամէն։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
## ԱՒ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս առաքեալ (ոչ ի մարդկանէ և ոչ մարդու ձեռաւք, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, և Աստուծոյ Հօր որ
2 յարոյց զնա ի մեռելոց) Եւ բոլոր եղբարք որ իմ հետս են՝ Գաղատիոյ ե-
3 կեղեցիներուդ՝ շնորհք և խաղաղութիւն ձեզ Հօր Աստուծմէ և ի Տեառնէ
4 Նէ Յիսուսէ Քրիստոսէ, Ա՛յն որ իւր անձը տուաւ մեր մեղաց համար, որ զմեզ փրկէ այժմու չար աշխարհէն՝
5 Աստուծոյ և մեր Հօր կամաց համեմատ, Որուն փառք յաւիտեանս յաւիտենից, Ամէն։
6 Կը զարմանամ որ այդպէս վազ կը փոխուիք անկէ որ կոչեց զձեզ Քրիս-
7 տոսի շնորհաց՝ յայլ աւետարան, Որ չկայ ուրիշ. միայն թէ կան ոմանք որ զձեզ կը խռովեցուցնեն, և կամին խան-
8 գարել Քրիստոսի աւետարանը։ Բայց եթէ մենք կամ հրեշտակ յերկինց աւետարանէ ձեզ այլ ինչ քան զոր մենք աւետարանեցինք ձեզ, նզովեալ ըլլայ։
9 Ինչպէս որ առաջ ըսինք, հիմա ևս կ'ըսեմ, եթէ ոք քարոզէ ձեզ ուրիշ աւետարան քան զոր ընդունեցաք, նզո-
10 վեալ ըլլայ։ Քանզի հիմա զմարդի՞կ կը համոզեմ թէ Աստուած. կամ մարդո՞ց համոյ ըլլալ կը խնդրեմ. քանզի եթէ առաւելին մարդոց հաճոյ ըլլայի, այլ ևս Քրիստոսի ծառայ չէի։
11 Կը ծանուցանեմ ձեզ, եղբարք, աւետարանը որ ինէ քարոզեցաւ, թէ
12 մարդու գործ չէ այն, Քանզի ես իսկ մարդէ չառի զայն, և չսորվեցայ, այլ Յիսուսի Քրիստոսի յայտնութենէն։
13 Վասն զի լսած էք զուրբ իմ նախկին վարքս ի Հրեայ թեան, ընչպէս յանգուգն կը հալածէի Աստուծոյ եկեղեցին և կը
14 կործանէի զայն. Եւ հասկնի աւանդութիւններուն չատ նախանձաւոր ըլլալով յաւելաչափ էի ի Հրեութեան քան զհասակակիցս իմ որ ազգիս
15 մէջ էին։ Բայց երբ կամեցաւ Աստուած (որ որոշեց զիս մօրս արգանդին, և
16 իւր շնորհօք կոչեց զիս) Որ Որդին յայտնել *ինձ, որ քարոզիմ զնա հեթանոսաց մէջ, իսկոյն բան մը չխոր-
17 ցուցի մարմնոյ և արեան, Եւ ոչ Երուսաղէմ գնացի առ առաքեալներն որ էին առաջ քան զիս առաքեալ էին, այլ գացի Արաբիա, և դարձեալ դարձայ ի Դա-
18 մասկոս։ Յետոյ երեք տարի ետքը Երուսաղէմ գնացի տեսնել զՊետրոս, և
19 կեցայ անոր քով հնգետասան օր. Սակայն առաքեալներէն այլ ոչ չտեսայ, բայց միայն զՅակոբոս, եղբայրը Տեառն։
20 Ա՛յս՝ Աստ՝ զոր գրեմ ձեզ, ահա Աստուծոյ առջև, չեմ սուտ։
21 Յետոյ եկայ Սիւրիոյ և Կիլիկիոյ կողմերը. Եւ զիս երես առ երես չէին ճանչնար եկեղեցիք որ Հրեաստանի
23 մէջ էին Քրիստոսով։ Միայն լսած էին թէ այն որ ժամանակաւ կը հալածէր զմեզ, հիմա ինք կը քարոզէ այն հաւատքը զոր երբեմն կը կործա-
24 նէր։ Եւ իրմով զԱստուած կը փառաւորէին։

*Կամ իրմով



ԳԼ. Բ

1 Յետոյ տասնչորս տարի նորէն գացի Երուսաղէմ հետ՝
2 զՏիտոս առնելով ի միասին։ Եւ ելայ յայտնութեամբ, և անոնց խնդացի աւետարանը զոր հեթանոսաց մէջ կը
քարոզեմ, բայց առանձին անոնց որ երեւելիներ էին, որպէս զի ի դատ չվա-
3 զէի կամ վազած չըլլայի։ Բայց ոչ թէ Տիտոս որ իմ հետս էր, Յոյն ըլլալով ըս-
4 ղփռուեցաւ թլփատուիլ։ Մանաւանդ նորա սպրդած սուտ եղբարց համար որ սահելով մտան նորա լրտեսել մեր ազատութիւնը զոր ունինք ի Քրիստոս Յիսուս, որպէս զի ծառայեցնեն զմեզ։
5 Որոց քիչ մը տահն անգամ չտանցինք հնազանդիլ, որ աւետարանին ճշմարտութիւնը հաստատուն մնայ ձեր
6 մէջ։ Բայց անոնք որ կը կարծուէին բան մը ըլլալ, (ինչ որ էին՝ այն փոյթ չի՛նձ. Աստուած մարդոց աչառութիւն չընէր. վասն զի ոչինչ կարծուածները բան մը չխմացուցին ինձ.
7 Այլ ընդհակառակն, երբ տեսան թէ անթլփատութեան աւետարանը յանձնուած է ինձ, ինչպէս Պետրոսի Թլփատութեան
8 աւետարանը. (Վասն զի այն որ յաջողեց Պետրոսի յառաքելութիւն Թլփատուածներուն, ինձ ևս յաջողեց
9 հեթանոսներուն.) Եւ երբ գիտցան շնորհքը որ տրուած է ինձ՝ Յակոբոս և Կեփաս և Յովհաննէս որ սիւնք համարուած էին, տուին ինձ և Բառնաբասյ, որ մենք երթ-
10 փառաւածներուն. Միայն թէ աղքատներն յիշենք. որ և ես փութացայ բ-
11 նել զնոյն։ Բայց երբ Պետրոս եկաւ Անտիոք, դէմ կեցայ անոր. քանզի մե-
12 ղադրելի էր։ Վասն զի մինչդեռ ոմանք եկած չէին Յակոբոսի քովէն, հեթանոսներուն հետ կ'ուտէր. բայց երբ եկան, ետ կը կենար և կը զատեր զինք, վախնալով անոնցմէ որ թլփատուած-
13 Ներէն էին։ Եւ անոր հետ կեղծաւորեցան միւս Հրեայք ևս, այնպէս որ Բառնաբաս ևս միտեցաւ անոնց կեղծաւո-
14 րութեանը։ Բայց ես երբ տեսայ թէ ուղիղ չէին քալեր աւետարանին ճշմարտութեան մէջ, ամենուն առջև ըսի Պետրոսի, եթէ դուն, որ Հրեայ ես, հեթանոսի պէս և ոչ Հրէի պէս կ'ապրիս, ինչպէս կը ստիպես հեթանոսները վա-
15 րուիլ Հրէի պէս։ Մենք որ ի բնէ Հրեայ ենք, և ոչ թէ հեթանոսներէն
16 մեղաւորք, Գայս գիտնալով թէ մարդ օրէնքին գործերէն չկրնար արդարանալ, այլ Յիսուսի Քրիստոսի հաւատքին, մենք ևս Քրիստոս Յիսուսի հաւատացինք՝ որ արդարանանք Քրիստոսի հաւատքին, և ոչ թէ օրէնքին գործերէն, քանզի օրէնքին գործերէն
17 մարմին մը պիտի չարդարանայ։ Իսկ եթէ մենք որ կ'ուզենք Քրիստոսով արդարանալ՝ մեղաւոր գըտնուինք, ուրեմն Քրիստոս մեղաց պաշ-
18 տօնեայ եղա՞։ Քա՛ւ լիցի։ Քանզի եթէ ես վերստին կը չինեմ ինչ որ քակեցի,
19 իմ անձս յանցաւոր կը ցուցնեմ։ Քանզի ես օրէնքով մեռայ օրէնքաց, որ կեն-
20 դանի Լսյսո Հետ խաչ եղայ. և այսու հետև կենդանի եմ ոչ թէ ես, այլ Քրիստոս կենդանի է յիս. բայց ես որ հիմա մարմնով կ'ապրիմ կ'ապրիմ հաւատով Աստուծոյ Որդւոյն, այն որ զիս սիրեց և իւր ան-
21 ձը մատնեց ինձի համար։ Ես չեմ խափաներ Աստուծոյ շնորհքը. քանզի եթէ արդարութիւնն օրէնքէն էր, ուրեմն Քրիստոս ի զուր մեռաւ։

ԳԼ. Գ

1 Ո անմիտ Գաղատացիք, ո՞վ հրապուրեց զձեզ՝ որոց աչաց առջև Յիսուս Քրիստոս ձեր մէջ ի
2 խաչ եղած։ Սա միայն կ'ուզեմ սորվիլ ձենէ. Օրինաց գործերով առիք հո-
3 գիս, թէ լսելով և հաւատալով։ Այդչափ անմիտ էք. հոգւով սկսաք, և

*Ոմանք կ'ուզեն չընդունիլ ճըշմարտութեան.

4 հետա մարմնով կը վերջանաք։ Ա֊ինչպէս
բաներ կրեցիք ի ձեր, (ՏԲԿ եղան
5 ի ղուբ)։ Ուստի այն որ բաշխեց ձեզ
պՀոգին և գործեց զօրութիւններ ի
ձեզ, օրինաց գործերէն էր, թէ՝ լսե֊
6 լով և հաւատալով։ Ինչպես Աբրահամ
հաւատաց յԱստուած, և համարուեցաւ
7 նմա արդարութիւն։ Ուրեմն գիտցէք
թէ անոնք որ հաւատքէն են՝ որդիք են
8 Աբրահամու։ Եւ Գիրքն յառաջագոյն
դիտալով թէ Աստուած հեթ անոնները
կ՚արդարացունէ հաւատով՝ յառաջա֊
գոյն աւետեաց ուսաւ Աբրահամու, թէ
Բեզմով պիտի օրհնուին բոլոր ազգե֊
9 րը։ Ուստի անոնք որ հաւատքէն են՝
կ՚օրհնուին հաւատացեալ Աբրահամու
10 հետ։ Վասն զի անոնք որ օրինաց գոր֊
ծերէն են՝ անիծից տակ են. քանզի
գրուած է թէ Անիծեալ ըլլայ ամէն
մարդ՝ որ չկենայ օրինաց գիրքին բո֊
լոր գրուածներուն մէջ որ զանոնք կա֊
11 տարէ։ Եւ թէ օրէնքով ոչ ոք կրնայ
արդարանալ Աստուծոյ առջեւ, այն
յայտնի է. քանզի Արդարը հաւատքէն
12 պիտի ապրի։ Բայց օրէնքը հաւատքէն
չէ, այլ Ով որ կը կատարէ այն բաներն՝
13 անոնցմով պիտի ապրի։ Քրիստոս գո֊
նեց զմեզ օրէնքին անէծքէն՝ ինք մե֊
զի համար ըլլալով անէծք։ (Քանզի
գրուած է թէ Անիծեալ է ամէն ոք
14 որ կը կախուի փայտէ։) Որպէս զի Աբ֊
րահամու օրհնութիւնը հեթանոսներուն
վրայ ըլլայ Քրիստոս Յիսուսով, որ մենք
ընդունինք խոստումն հոգւոյն հա֊
15 ւատով։ Մարդիկօրէն կ՚ըսեմ, եղբայր֊
ներ. արդարև կտակը զոր կը հաստա֊
տէ մարդ՝ ոչ ոք կը խափանէ, և ոչ
16 կը յաւելու ուրիշ պատուէր անոր վը֊
րայ։ Արդ, խոստումնքն Աբրահամու
և անոր սերնդեան եղան. չըսեր, Եւ
սերնդոցդ որպէս թէ շատերու, այլ
որպէս թէ միւսի, Եւ քու սերնդեանդ,
17 որ է Քրիստոս։ Բայց զայս կ՚ըսեմ.
Կտակը՝ որ յառաջագոյն Աստուծմէ
հաստատուեցաւ Քրիստոսով, օրէնքը
որ դրուեցաւ չորս հարիւր երեսուն
տարիէ հետէ, չկրնար անվաւեր ընել՝
18 խոստումը խափանելու համար։ Վասն
զի եթէ ժառանգութիւնը օրէնքէն
կ՚ըլլայ, ուրեմն ոչ ևս խոստումէն է.
բայց Աբրահամու խոստմամբ շնորհեց
Աստուած։
19 Ապա ուրեմն ինչո՞ւ համար է օրէն֊
քը. յանցանաց համար վրայ աւելցաւ,
(մինչև գայ սերմնդը որուն խոստա֊
ցուած էր,) հրեշտակներով տրուած՝
20 միջնորդի մը ձեռօք։ Բայց միջնորդը
միջոցէ չէ միայ. սակայն Աստուած մի
21 է։ Ուրեմն օրէնքը հակառակի է Աս֊
տուծոյ խոստումներուն. թո՛ւ լինի.
քանզի եթէ արուած ըլլար այնպէս
օրէնք մը որ կարող ըլլար կենդանի
ընել, ստուգիւ արդարութիւնը կ՚ըլ֊
22 լար օրէնքէն։ Բայց Գիրքն ամէնքը
փակեց մեղաց տակ, որ խոստումն հա֊
ւատով ի Յիսուս Քրիստոս արուի հա֊
23 ւատացելոց։ Բայց մինչ եկած չէր հա֊
ւատքը, փակուած կը պահուէինք օ֊
րէնքին տակ, ապառնիվ հաւատքն որ
24 պիտի յայտնուէր։ Ուրեմն օրէնքը մեր
դաստիարակն եղաւ ի Քրիստոս, որ
25 մենք հաւատով արդարանանք։ Բայց
երբ հաւատքը եկաւ, այլ և դաստիա֊
26 րակի տակ չենք։ Քանզի ամէնքդ Աս֊
տուծոյ որդիք էք հաւատով որ ի Քը֊
27 րիստոս Յիսուս։ Քանզի զո՛ւք ամէնքդ
որ Քրիստոսով մկրտուեցաք, զՔրիս֊
28 տոս հագած էք։ Այլևևէ՛ոչ Հրեայ
կայ, և ոչ Յոյն. ոչ ծառայ կայ, և ոչ
ազատ. ոչ արու կայ, և ո՛չ էգ. քան֊
զի դուք ամէնքդ մի էք ի Քրիստոս
29 Յիսուս։ Ապա եթէ դուք Քրիստոսին
էք, ուրեմն Աբրահամու սերունդ էք,
և ժառանգ ըստ խոստման։

## Գլ. Դ

1 Բայց կ՚ըսեմ, որչափ ժամանակ ժա֊
ռանգը տղայ է, չունի տարբերութիւն
2 ծառայէ, թէև ամենուն տէրն է։ Այլ
խնամակալաց և հոգաբարձաց տակ
է մինչև հօրմէն որոշեալ ժամանակը։
3 Այսպէս և մենք երբ տղայ էինք, աշ֊
խարհիս սկզբանց տակ ծառայ եղած



4 էինք, բայց երբ ժամանակը լրացաւ,
զրկեց Աստուած իւր Որդին որ եղաւ
5 ի կնոջէ, ստաւ ընդ օրինաւք, Որպէս զի
փրկէ զանոնք որ ընդ օրինաւք են, որ֊
պէս զի մենք որդեգրութիւնն ընդու֊
6 նինք։ Եւ որովհետև դուք որդիք էք,
Աստուած զրկեց *ձեր սիրտերուն մէջ
իւր Որդւոյն Հոգին որ կ՚ազդակէ Աբ֊
7 բայ Հայր։ Ուստի այլ ևս ծառայ չես,
այլ որդի. և եթէ որդի, ապա և ժա֊
8 ռանգ Աստուծոյ ի Քրիստոս։ Բայց մինչ
չէիք գիտեր զԱստուած, կը ծառա֊
յէիք անոնց որ չէին ի բնէ աստուած֊
9 նե։ Սակայն հիմա որ ճանչցաք զԱս֊
տուած, մանաւանդ թէ ճանչցուեցաք
Աստուծմէ, ինչպէս դարձեալ կը դառ֊
նա՞ք այն տկար և աղքատ սկզբանց,
10 որոց դարձեալ կ՚ուզէք ծառայել։ Օ֊
րերը կը նայիք, և ամիսները և ժա֊
11 մանակները և տարիները։ Կը վախնամ
ձեզմէ, թէ գուցէ ի զուր աշխատած եմ
ձեր վրայ։
12 Իրա՛ւ դիս եղէք, քանզի և ես իրա՛ւ
ձեզ նման, եղբայրներ, խնդրեմ ըզ֊
ձեզ. դուք ինծ ոեւէ հասուցած չէք ինձ։
13 Գիտէք թէ մարմնոյս տկարութեամբ
առաջին անգամ քարոզեցի ձեզ աւե֊
տարանը. և փորձութիւնը զոր կը կրէի
14 մարմնոյս վրայ՝ Զանարգեցիք և չար֊
համարեցիք, այլ իրա՛ւ զիս իբրև Աս֊
տուծոյ ընկալաք զիս, իբրև զՔրիստոս
15 Յիսուս։ Ուրեմն *ի՞նչ էր այն ձեր ե֊
րանութիւնը. քանզի ես կը վկայեմ
ձեզ որ, եթէ հնար էր, ձեր աչուընե֊
16 րը պիտի հանէիք և տայիք ինձ։ Ու֊
ստի ձեր †թշնամի՞ն եղայ ճշմա֊
17 րիտը ձեզ ըսելով ձեզ. Նախանձաւոր են
ձեզ, ոչ թէ ի բարին, և կ՚ուզեն ար֊
գելուլ ‡ձեզ, որ նախանձաւոր ըլլաք
18 անոնց։ Սակայն լա՛ւ է միշտ նախանձա֊
ւոր ըլլալ բարւոյն, և ոչ միայն երբ
19 ձեր մէջ եմ։ Որդեակք իմ, զորս վե֊
րըստին կ՚երկնեմ մինչև Քրիստոս կեր֊
20 պաւորի ի ձեզ, կ՚ուզէի հիմա ձեր մէջ

*Ոմանք ունին
†Կամ ոխեր է
‡Կամ զմեզ

ըլլալ, և փոխել ձայնս. քանզի ապ֊
րակուած եմ ձեր վրայ։
21 Ըսէ՛ք ինձ, դուք որ ընդ օրինօք
22 կ՚ուզէք ըլլալ, չէ՞ք լսեր օրէնքը։ Վա֊
սն զի գրուած է թէ Աբրահամ երկու
որդի ունէր, զմին՝ ազատնկեն, և զմիւսն՝
23 ազատ կնոջէն։ Բայց այն որ ազատնկեն
էր՝ մարմնով կոյսմանէ ծնած էր, իսկ
այն որ ազատ կնոջէն՝ խոստման հա֊
24 մեմատ։ Այս բաներն այլաբանօրէն կը
մեկնուին. քանզի սոքա են երկու կը֊
տակարանութիւնները, մին՝ Սինայ լեռնէն որ
ծառայութեան համար կը ծնանի, որ
25 է Հագար. Քանզի Հագար Արաբիոյ մէջ
Սինայ լեռն է, և կը համեմատի այժ֊
մու Երուսաղէմի որ իւր զաւակներով
26 կը ծառայէ. Բայց վերինն Երուսաղէմ
ազատ է, որ մեր *մայրն է։
27 Քանզի գրուած է, Ո՛վ չծնանող ամուլ,
ցնծա. ով երկունք չկրող, գոչէ և ա֊
դաղակէ. քանզի լքեալըն որդիքը շատ
28 են քան անոր որ այր ունի։ Ուս֊
տի մենք, եղբայրներ, Իսահակայ
29 պէս խոստման որդիք ենք։ Բայց ինչ֊
պէս անառնեն մարմնոյ կոյսմանէ ծնաւ֊
ծը կը հալածէր զայն որ հոգւոյն կոյ֊
30 սմանէ էր, նոյնպես և հիմա։ Սակայն
ի՞նչ կ՚ըսէ Գիրքը. Դուրս հանէ այդ
աղախինը և անոր որդին, քանզի ա֊
զատնկեն որդին պիտի չժառանգէ ա֊
31 զատ կնոջ որդւոյն հետ։ Ուստի, եղ֊
բարք, մենք աղախնոյն որդիքը չենք,
այլ ազատին։

## Գլ. Ե

1 Ուստի ամուր կեցէ՛ք այն ազատու֊
թեամբ որով Քրիստոս ազատեց զմեզ,
և մի՛ նորէն դարձեալ ծառայութեան
2 լծոյ տակ։ Ահա ես Պօղոս կ՚ըսեմ ձեզ
որ, եթէ թլփատուիք, Քրիստոս օ֊
3 գուտ չըներ ձեզ։ Եւ դարձեալ կը վը֊
կայեմ ամէն մարդու որ կը թլփատ֊
ուի, թէ պարտական է կատարել բո֊
4 լոր օրէնքը։ Խափանած էք դուք Քրս

*Ոմանք ըսեն՝

բիատաճ, որ կ'ուզէք արդարանալ օ-
5 րէնքով, ինձած էք չնորհքէն։ Քանզի
մենք Հոգւով կը սպասենք արդարու-
6 թեան յուսոյն հաւատովւ։ Վասն զի
Քրիստոս Յիսուսի քով ոչ թլփատու-
թիւնը բան մը կարող է, և ոչ ան-
թլփատութիւնը, այլ հաւատքը որ ա-
7 բար է գործ կը դրէ։ Դուք բարւոք
կ'ընթանայիք. ով ձեզ հակառակ չէր
8 հնազանդիլ ճշմարտութեան։ Այս դրդ-
9 ռումն անկէ չէ որ կոչեց զձեզ։ Փիչ մը
խմոր կը խմորէ բոլոր զանգուածը։
10 Ես վստահ եմ ձեր վրայ Տէրոջմբ,
որ ուրիշ բան պիտի չհորհիք, և այն
որ կը խռովեցունէ զձեզ, պիտի կրէ
11 դատապարտութիւն ով որ է։ Սակայն,
եղբարք, եթէ ես տակաւին թլփատու-
թիւն կը քարոզեմ, այլ ես ընդհէր կը
հալածուիմ։ ուրեմն խաչին գայթակ-
12 ղութիւնը խափանուած է։ Երանի թէ
բղտրտովին կտրուէին անոնք որ կը խըռ-
ովեցունեն զձեզ։
13 Վասն զի դուք ազատութեան կոչ-
ուած էք, եղբարք. միայն թէ ազա-
տութիւնը չըլլայ պատճառանք մարմ-
նոյ, այլ սիրով ծառայեցէք իրարու։
14 Քանզի բոլոր օրէնքն ի մի բան կը կա-
տարուի, յայտնի թէ, Դուն ընկերդ սի-
15 րես որպէս անձիդ պէս։ Ապա եթէ զի-
րար խածնէք և ուտէք, զգոյշ եղէք
16 որ չսպանուիք իրարմէ։ Միայն թէ կ'ը-
սեմ, Հոգւով քալեցէք և մարմնոյ
17 ցանկութիւնը պիտի չկատարէք։ Քան-
զի մարմինը կը ցանկայ հակառակ հոգ-
ւոյ, և հոգին՝ հակառակ մարմնոյ. և
ասոնք իրարու հակառակ են, որպէս
18 զի ինչ որ կ'ուզէք՝ զայն չընէք։ Իսկ
եթէ կ'առաջնորդուիք ի հոգւոյն, այլ
19 ևս ընդ օրինօք չէք։ Արդ մարմնոյն
գործերը յայտնի են, որ են՝ շնութիւն,
պոռնկութիւն, պղծութիւն, գիճու-
20 թիւն, կռապաշտութիւն, կախարդու-
թիւն, թշնամութիւնք, կռիւ, նա-
խանձք, բարկութիւնք, հակառակու-
թիւնք, երկպառակութիւնք, ժաժան-
21 մունք, Զարհուրութիւնք, մարդաս-
պանութիւնք, արբեցութիւնք, անա-

ռակութիւնք, և ինչ որ ասոնց նման
են. որ այժմէն կ'ըսեմ ձեզ, ինչպէս
յառաջագոյն ևս կ'ըսէի, թէ այսպիսի
բաներ գործողներն Աստուծոյ արքա-
22 յութիւնը պիտի չժառանգեն։ Բայց
յութիւնը պտուղն այս է. սէր, խնդու-
թիւն, խաղաղութիւն, երկայնմտու-
23 թիւն, քաղցրութիւն, բարութիւն,
հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժ-
կալութիւն. այսպիսի բաներուն դէմ
24 օրէնք չկայ։ Եւ անոնք որ Քրիստոսին
են՝ մարմինը խաչ հանեցին կրնկ և
ցանկութեամբք հանդերձ։ Եթէ հոգ-
ւով կ'ապրինք, Հոգւոյն համեմատ
26 քալենք։ Մեզապարծ չըլլանք՝ զիրար
գրգռելով, իրարու վրայ նախանձելով։

## Գլ. Զ

1 Եղբարք, եթէ ոք յանկարծ ինչ և ի-
ցէ յանցանօք բռնուի, դուք որ հո-
գևոր էք՝ հեզութեան հոգւով բերէք
զայնպիսին յաւդութիւն. քու անձիդ
ևս զգոյշ եղիր որ փորձութեան մէջ
2 չիյնաս։ Իրարու նեղութիւնները կրե-
ցէք, և այնպէս կատարեցէք Քրիստո-
3 սի օրէնքը։ Քանզի եթէ ոք զինք բան
մը ըլլալ կը համարի և չէ, իբր անձը
4 կը խաբէ։ Բայց ամէն մարդ Թող կըշ-
ռէ իւր գործը, և ապա իւր անձին
վրայ միայն պարծանք ունենայ, և ոչ
5 թէ ուրիշի վրայ։ Քանզի իւրաքանչիւրը
ոք պիտի կրէ իւր բեռը։
6 Խօսքին ուսակերտութիւն ընդոն ա-
մէն բարի բաներու մասնակից ընէ վար-
7 դապետը։ Մի խաբուիք, Աստուած
8 ծաղր չըլլար։ Վասն զի ինչ որ կը սեր-
մանէ մարդ, նոյնը պիտի հնձէ. ով որ
կը սերմանէ իւր մարմնոյն, մարմինէն
պիտի հնձէ ապականութիւն. և ով որ
կը սերմանէ Հոգւոյն, Հոգիէն պիտի
9 հնձէ յաւիտենական կեանք։ Բայց բա-
րի գործելէ չձանձրանանք, քանզի
յարմար ժամանակին պիտի հնձենք,
10 եթէ չհուսկնանք։ Ուստի մինչդեռ ժա-
մանակը մեր ձեռքն է, բարիք ընենք
ամենուն, մանաւանդ հաւատոյ ըն-
տանեներուն։



11 Նայեցէք, որպիսի գիրերով գրեցի
12 ձեզ իմ ձեռօք։ Անոնք որ կ'ուզեն
մարմնոյ կողմանէ բարի երեւնալ, ա-
նոնք կը սպիղեն զձեզ Թլփատել,
միայն թէ Քրիստոսի խաչին համար չը-
13 հալածուին։ Քանզի անոնք իսկ որ Թլ-
փատուած են՝ չեն պահեր օրէնքը,
այլ կ'ուզեն որ դուք Թլփատուիք,
որ իրենք ձեր մարմնով պարծենան։
14 Բայց ես, քա՛զ լիցի ոչ պարծենամ,
բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, որով աշխարհ ի խաչ
15 եղած է ինձ, և ես աշխարհի։ Քանզի
Քրիստոս Յիսուսով ոչ Թլփատութիւնն
է բան մը, և ոչ անթլփատութիւնը,
16 այլ նոր ստեղծուած։ Եւ որ ասիկայ
կանոնիս համեմատ կը քալեն՝
խաղաղութիւն և ողորմութիւն ըլլայ
անոնց վրայ, և Աստուծոյ Իսրայէլին
17 վրայ։ Ուստի հետէ մարդ ինձ Թող չը-
յոգնեցունէ, քանզի ես Տէր Յիսուսի
վերաց նշաններն իմ մարմնոյս վրայ կը
18 կրեմ։ Եղբարք, Տեառն մերոյ Յիսու-
սի Քրիստոսի շնորհքը ձեր հոգւոյն
հետ ըլլայ։ Ամէն։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի
կամքովն Աստուծոյ, սուրբերուն որ են
Եփեսոս և հաւատացեալց ի Քրիստոս
2 Յիսուս. շնորհք և խաղաղութիւն ձեզ
Աստուծմէ մեր Հօրմէն և ի Տեառնէ
Յիսուսէ Քրիստոսէ։
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեց
զմեզ ամէն հոգեւոր օրհնութեամբք
4 երկինքներուն մէջ ի Քրիստոս. ինչ-
պէս ընտրեց զմեզ անով յառաջ քան
աշխարհիս սկիզբը, որ սուրբ և անա-
5 րատ ըլլանք անոր առջեւ սիրով. Եւ
յառաջագոյն սահմանեց զմեզ իրեն որ-
դեգիր ըլլալ Յիսուսի Քրիստոսի ձեռ-
նօք իւր կամաց հաճութեանը պէս,
6 ի գովութիւն իւր փառաւոր շնորհաց,
որով զմեզ շնորհեց Սիրելւոյն ձեռ-
7 ն.օք. Որով ունինք վրկութիւն անոր
արեանը միջոցաւ, Թողութիւն մեղաց
բան չափով հարստութեան շնորհաց նո-
8 րա, Զոր մեր վրայ առատացուց բոլոր ի-
9 մաստութեամբ և գիտութեամբ, Յայտ-
նելով մեզ իւր կամաց խորհուրդը իւր
հաճութեանը պէս, զոր նախասահմա-
10 նած էր ի նմա՝. Որ ժամանակաց լրման
անուռնու թեան մէջ բովանդակել ամե-
նայն ինչ ի Քրիստոս, ինչ որ յերկինս և
11 ինչ որ յերկրի ի նմա, Որով մենք և ժա-
ռանգութիւն առինք, յառաջագոյն ո-
րոշուած ըլլալով նախասահմանութեամբ
նորա որ ի գործ կը դնէ ամէն բան իւր
12 կամացը խորհրդով. Որ մենք անոր փա-
ռաց գովութիւն ըլլանք՝ յառաջագոյն
13 Քրիստոսի վրայ յուսացողներս. Որոյ
վրայ դուք ևս լսեցաք, Ճշմարտութեան խօսքը,
ձեր փրկու-
թեան աւետարանը, որուն նաև հաւա-
տալով կնքուեցաք խոստացեալ Սուրբ
14 Հոգւով. Այն որ մեր ժառանգութեան

*Ոմանք անով

գրան է մինչև տացուածքին փրկութիւնը՝ անոր փառաց գովութեանը համար։
15 Ուստի և ես, երբ լսեցի հաւատքը որ ունիք ի Տէր Յիսուս, և սէրը որ
16 ունիք բոլոր սուրբերուն վրայ, Չեմ դադարիր գոհանալէ ձեզի համար, յի-
17 շելով զձեզ աղօթիներուս մէջ. Որ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուածը, փառաց Հայրը, տայ ձեզ խմաստութեան և յայտնութեան հոգին գիտնալ զնա.
18 Որպէս զի ձեր սիրտերուն աչքը լուսաւորուելովը գիտնաք թէ ինչ է անոր կոչման յոյսը, և ինչ է անոր փառաց գութեան փառաց ճոխութիւնը սուրբերուն մէջ,
19 Եւ ինչ է անոր զօրութեան գերազանց մեծութիւնն ի մեզ, հաւատացեալս, անոր հզօր զօրութեա-
20 նը Ներգործութեամբ, Զոր Քրիստոսի վրայ ի գործ դրաւ, երբ յարոյց զնա ի մեռելոց, և նստոյց իւր աջ կողմն
21 յերկինս Ամէն իշխանութեան և պետութեան և զօրութեան և տէրութեան վրայ, և ամէն անուան վրայ որ կ'անուանուի, ոչ միայն այս աշխարհիս
22 մէջ, այլ և հանդերձեալին մէջ. Եւ ամէն բան անոր ոտից տակ հնազանդեցուց, և ամէն բաներու վրայ գրաւ
23 դնա գլուխ եկեղեցւոյ, Որ անոր մարմինն է, լրումն նորա՝ որ կը լնու զամէնայն յամէնայնի։

## Գլ. Բ

1 Եւ ձեզ որ մեռած էիք
2 յանցանաց և մեղաց մէջ. Որոց մէջ երբեմն կը քալէիք ըստ բնութեցից աշխարհիս, ըստ իշխանի իշխանութեան օդոյս, ոգւոյն որ հիմա կը գործէ
3 յորդիս ապստամբութեան. Որոց մէջ երբեմն մենք ամէնքս կը շրջէինք մեր մարմնոյն ցանկութիւններով, և կը կատարէինք մարմնոյն և մտաց կամքը, և էինք բնութեամբ բարկութեան որ-
4 գիք, ինչպէս ուրիշներըն. Բայց Աստուած որ մեծ է ողորմութեամբ, իւր առատ
5 սիրոյն համար որով սիրեց զմեզ, երբ
20 Աստուծոյ ընտանիք, շինուած առա-



քելոց և մարգարէից հիման վրայ, որոյ անկեան գլուխը Յիսուս Քրիստոս է.
21 Որով բոլոր շէնքն ի միասին յարմարութեամբ կազմուած՝ կ'աճի և կ'ըլլայ
22 սուրբ տաճար ի Տէր. Որով և դուք ի միասին կը շինուիք բնակարան Հոգւով։

## Գլ. Գ

1 Ուստի ես Պօղոս, կապեալ Յիսուսի Քրիստոսի ձեզ հեթանոսաց համար.
2 Անշուշտ լսած էք Աստուծոյ շնորհացն անոնց որ տրուած է ինձ ես
3 զի համար, Թէ ինձ այն խորհուրդը յայտնութեամբ յայտնեցաւ. (ինչպէս յառաջագոյն համառօտիւ գրեցի ձեզ,
4 Որով կրնաք կարդալ և ի միտ առնել իմ ուղեցիկ ըլլալը Քրիստոսի խոր-
5 հրդոյն.) Որ ուրիշ դարերու մէջ չծանուցուեցաւ մարդոց որդիներուն, ինչպէս հիմա Հոգւով յայտնուեցաւ իւր սուրբ առաքեալներուն և մարգարէ-
6 ներուն. Որ հեթանոսներն ըլլան Քրիստոսով ժառանգակից և մարմնակից և անոր խոստմանը հաղորդ ասելոտրա-
7 նով. Որոյ ես սպասաւոր եղայ Աստուծոյ շնորհաց պարգեւին հաւնիմաս որ արուեցաւ ինձ իւր զօրութեան ներ-
8 գործութեամբը. Ինձ՝ որ բոլոր սրբոց փոքրագոյնն եմ, այս շնորհքը արուեցաւ, հեթանոսաց մէջ Քրիստոսի ան-
9 քննելի ճոխութիւնը քարոզել, Եւ ամէնքը լուսաւորել, Թէ ինչ է այն խորհրդոյն անօրինութիւնը որ ի յաւիտենից ծածկուած էր Աստուծոյ զոր
10 որ ամէն բան *ստեղծեց. Որ հիմա Աստուծոյ բազմատեսակ իմաստութիւնը եկեղեցւոյ ձեռօք յայտնի ըլլայ իշխանութեանց և պետութեանց որ երկինս
11 են, Իւր յաւիտենական նախասահմանութեան համեմատ, զոր ըրաւ ձեռօք
12 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Որով ունինք համարձակութիւն և մատչում վստահութեամբ՝ հաւատալով ի նա,

*Ոմանք Յիսուս Քրիստոսով ստեղծեց.

13 Ուստի կ'աղաչեմ որ չձանձրանաք իմ նեղութիւններուս պատճառաւ, որ ձեզի համար են, և որ ձեր փառքն են,
14 Վասն որոյ ծունր դնելով Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի առ Հայն,
15 Որմէ ամէն ազգատոհմ յերկինս և
16 յերկրի կ'առնու անուն, կ'աղաչեմ որ տայ ձեզ իւր փառաց ճոխութեանը չափով՝ զօրութեամբ հաստատուիլ իւր
17 Հոգւովն ի ներքին մարդն. Որպէս զի Քրիստոս բնակի հաւատով ձեր սիրտերուն մէջ, և դուք սիրով արմատացած և հաստատուած ըլլաք, Որ կարենաք հականալ բոլոր սուրբերուն հետ,
18 Թէ ինչ է լայնութիւնը և երկայնութիւնը և խորութիւնը և բարձրութիւնը,
19 Եւ գիտնալ Քրիստոսի սէրը որ առաւել է քան զգիտութիւն, որպէս զի լցուիք Աստուծոյ բոլոր լրութեամբը։ Աստ անոր որ կարող է ա-
20 ւելութեամբ բնել առաւել քան զամենայն զոր կը խնդրենք կամ կը խորհինք, այն զօրութեամբ որ մեր մէջ
21 կը գործէ, Նմա փառք յեկեղեցւոյ Քրիստոս Յիսուսով բոլոր դարերու մէջ յաւիտեանս յաւիտենից, Ամէն։

## Գլ. Դ

1 Ուստի կ'աղաչեմ զձեզ ես որ Տէրոջը համար կապուած եմ, որ գնաք այնպէս քալէք, ինչպէս կը վայելէ կոչմանը որով կոչուեցաք, Ամենայն խոնարհութեամբ և հեզութեամբ, երկայնամտութեամբ, սիրով ներելով միմեանց,
3 Ջանալով պահել Հոգւոյն միութիւնը խաղաղութեան կապով։
4 Մի մարմին և մի հոգի, ինչպէս որ կոչուեցաք ձեր կոչմանը մի յուսով. Մի
5 Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն,
6 Մի Է Աստուած և Հայր ամենուն, որ է ամենուն վրայ և ամենուն հետ և
7 *ձեր ամենուն մէջ. Բայց մենք իւրաքանչիւրին տրուած է շնորհք Քրիստոսի պարգեւին չափով, Վասն որոյ կ'ը-

*Ոմանք մեր

ակ Թէ Բարձրը եղաւ, զերկոց գերեզ-
Թիանը, և առեալ պարգևներ մարգոյ,
9 նկատն ինչ է, եթէ ոչ որ իմաս առաջ
10 երկրին վաթ կողմերը։ Այն որ իմա-
նայն է որ եղաւ քան զբոլոր երկինս ի
11 վեր, որպէս զի ընդ զամենայն։ Եւ ինք
առաւ զամանս առաքեալս, զամանս
մարգարէս, զամանս աւետարանչաց,
12 զամանս հովիւս և վարդապետս, Սա-
րբերուն կատարելու Թեանը համար,
պաշտօնին գործին համար, Քրիստոսի
13 մարմնոյն չինու Թեանը համար։ Մինչև
որ ամենքս հասնինք միաբանու Թեան
հաւատոց և Աստուծոյ Որդին ճանչնա-
լոյ, կատարեալ մարդ ըլլալու, Քրիս-
տոսի լիու Թեան հասակին չափն ունե-
14 նալու։ Որ այսուհետև չըլլանք տղայք
երերեալ և ապին անդին տատանեալ
վարդապետու Թեան ամէն հովէն մար-
դոց խաբէու Թեամբ, որ խարդախու Կա-
15 Թեամբ կը խաբեն մոլորեցունել։ Այլ
սիրով հետևելով ճշմարտու Թեան, ա-
ճինք յամենայնի անով որ գլուխ է,
16 այսինքն՝ Քրիստոս։ Որմէ բոլոր մար-
մինը միանգամայն կազմուած, և բոլոր
յօդուածներով իրարու հաղորդելով
կցուած, իւրաքանչիւր մասին չա-
փով գործելովը, կու տայ աճում մարմ-
նոյն իրեն շինու Թեանը համար սիրով։
17 Ուստի զայս կ'ըսեմ և կը վկայեմ ի
Տէր, որ դուք այլ ևս չքալէք ինչպէս
ուրիշ հեթանոսները կը քալեն իրենց
18 մտայ ունայնու Թեանը մէջ։ Որոց խա-
ւսղու Թիւնը խաւարած է, և օտարա-
ցած են Աստուծոյ կեանքէն ապիտու-
Թեան պատճառաւ որ անոնց մէջ է
իրենց սրտին կուրու Թեանը համար։
19 Որ անզգայ ըլլալով, ղիրենք անառա-
կու Թեան տուին, գործել ամէն կերպ
20 պղծու Թիւն †ագահու Թեամբ։ Բայց
դուք այսպէս չսորվեցաք զՔրիստոս,
21 եթէ անոր վրայ լսեցիք և անկէ սոր-
ված եք, ինչպէս որ է ճշմարտու Թիւ-
22 նը Յիսուսի մէջ։ Որպէս զի ի բաց հա-

*Յոյն բթու Թեանը
†Կամ անյագու Թեամբ

նէք ձեզի այն որ յԱ՛ռ առաջին վարման
պէս է, հին մարդը, որ ապականեալ
23 ի խաբեալ ցանկու Թեամբը, Եւ ձեր
24 մտաց հոգւոյը նորոգուելը, Եւ հագ-
նիք նոր մարդը, այն որ Աստուծոյ
պատկերին պէս առեղծուած է արդա-
րու Թեամբ և ճշմարիտ սրբու Թեամբ։
25 Ուստի առու Թիւնը մէկդի նետելով
ճշմարտու Թիւն խօսիցիք իւրաքանչիւր
իր ընկերին հետ, քանզի իրարու ան-
26 գամներ ենք։ Եթէ բարկանաք, մի մե-
ղանչէք։ արեգակը ձեր բարկու Թեան
27 վրայ չմտնէ։ Եւ Սատանային տեղի մի
28 տաք։ Ով որ գողցած է՝ ի՛ր ևս
ևս չգողնայ։ այլ մանուանդ բան ի գոր-
ծի պարապելով աշխատի իւր ձեռօք,
որ կարող ըլլայ *տալ անոր որ կարօտ
29 է։ Ա՛պականեալ խօսք չելլէ ամենևին
ձեր բերնէն, այլ ինչ որ բարի է շի-
նու Թեան համար ըստ պիտոյից, որ-
30 պէս զի լսողներուն շնորհք տայ։ Եւ մի
տրտմեցունէք Աստուծոյ Սուրբ Հո-
գին, որով կնքուեցաք փրկու Թեան
31 օրուան համար։ Ամէն դառնու Թիւն
և բարկու Թիւն և սրտմտու Թիւն և ա-
զաղակ և հայհոյու Թիւն վերցուի ձեզի
32 բոլոր չարու Թեամբ հանդերձ։ Եւ ի-
րարու հետ քաղցր եղէք, գիտած, նե-
րելով իրարու, ինչպէս Աստուած Քրի-
ստոսով ներեց ձեզ։

## Գլ. Ե

1 Արդ Աստուծոյ նմանող եղէք սիրելի
2 որդիներու պէս։ Եւ սիրով քալեցէք,
ինչպէս և Քրիստոս սիրեց զմեզ, և իր
անձը մատնեց մեզի համար՝ անուշա-
հոտ պատարագ և զոհ ըլլալով Աստու-
3 ծոյ։ Բայց պոռնկու Թիւն և ամէն
պղծու Թեան կամ ագահու Թեան ա-
նունն անգամ չլսուի ձեր մէջ, (ինչ-
4 պէս որ կը վայելէ սուրբերուն,) Եւ
զաղրու Թիւն կամ յիմարական խօսք
կամ խեղկատակու Թիւն որ չվայելեր,
5 այլ մանաւանդ գոհու Թիւն։ †Քանզի

*Յոյն հաղորդել
†Կամ Այս իմանալով գիտեցէք,



գիտէք,՝ որ բնաւ պոռնիկ կամ պիղծ
կամ ագահ, որ կռապաշտ է, Քրիստո-
սի և Աստուծոյ Թագաւորու Թեան մէջ
6 ժառանգու Թիւն չունի։ Թող չխաբէ ոք
զձեզ ունայն խօսքերով։ քանզի այս
բաներուն համար Աստուծոյ բարկու-
Թիւնը կու գայ անհնազանդու Թեան
7 որդւոց վրայ։ Ուստի անոնց հաղորդ
8 մի ըլլաք։ Քանզի երբեմն գուք խա-
ւար էիք, բայց հիմա լոյս էք ի Տէր։
9 լուսոյ որդիներու պէս քալեցէք։ Վասն
զի *Հոգւոյն պտուղն ամէն բարու-
Թեամբ և արդարու Թեամբ և ճշմար-
10 տու Թեամբ է։ Քննեցէք ինչ է Տէրոջը
11 հաճելին։ Եւ հպարտ մի ըլլաք խաւա-
րին անպտուղ գործերուն, այլ մանա-
12 ւանդ յանդիմանեցէք զանոնք։ Քանզի
անոնց մէջ ծածուկ գործուածները
13 խօսիլ անգամ ամօթ է։ Բայց ամէն
բան յանդիմանուելով լուսով յայտնի
կ'ըլլայ։ քանզի ամէն բան որ յայտնի
14 կ'ըլլայ՝ լոյս է։ Անոր համար կ'ըսէ,
Արթնցիր դուն որ կը քնանաս, և կանգ-
նէ մեռելներէն, և Քրիստոս լոյս պիտի
տայ քեզի։
15 Ուստի նայեցէք Թէ ինչպէս զգու-
շու Թեամբ պիտի քալէք, ոչ Թէ ան-
16 միաներու պէս, Այլ խնաւանեներու
պէս։ գնեցէք ժամանակը, քանզի օ-
17 րերս չար են։ Վասն որոյ անմիտ մի
ըլլաք, այլ խոհեցէք Թէ ինչ է Տէրոջը
18 կամքը։ Եւ մի արբենաք գինով յո-
րմէ անառակու Թիւն կայ, այլ Հոգ-
19 ւով լցուեցէք։ Եւ սաղմոսելք և օրհ-
նու Թեամբ և հոգևոր երգերով ձեր
մէջ խօսակցելով երգեցէք և սաղմո-
20 ցեցէք Տէրոջը ձեր սիրտերուն մէջ։ Ա-
մէն տուն ամէն բանի համար գոհա-
նալով Աստուծոյ և Հօր՝ յա-
նունն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։
21 Իրարու հնազանդ եղէք երկիւղին
22 †Աստուծոյ։ կանայք հնազանդ ըլլան
իրենց արանց որպէս Թէ Տեառն։
23 Քանզի այրն է գլուխ կնոջ, ինչպէս և
Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, և ինքն

*Ոմանք լուսոյ †Ոմանք Քրիստոսի

24 է փրկիչ մարմնոյն։ Ուստի ինչպէս և
եկեղեցին հնազանդ կ'ըլլայ Քրիստոսի,
նոյնպէս և կանայք ամէն բանի մէջ
25 իրենց արանց։ Արք, սիրեցէք զկա-
նայս ձեր, ինչպէս և Քրիստոս սիրեց
զեկեղեցին, և իր անձը մատնեց ա-
26 նոր համար։ Որպէս զի սրբէ զնա և
27 մաքրէ ատազանին ջրով բանիւ։ Որ
ինք կեցուներ զեկեղեցին իր դիմացը
փառաւոր, որ չունենայ արատ կամ
խոթոտու Թիւն կամ այսպիսի ինչ, այլ
28 որ ըլլայ սուրբ և անարատ։ Նոյնպէս
և արք պարտին սիրել իրենց կիներն
իրենց մարմիններուն պէս։ ով որ իր
29 կինը կը սիրէ՝ իր անձը կը սիրէ։ Քան-
զի ոչ ոք երբեք կ'ատէ իր անձը, այլ
կը սնուցանէ և կը խնամէ զայն, ինչ-
30 պէս որ *Տէրը՝ զեկեղեցին։ Վասն զի
մենք անոր մարմնոյն անդամներն ենք՝
անոր մարմնէն և անոր ոսկորներէն։
31 Վասն որոյ մարդ պիտի Թողու իր հայ-
րը և մայրը, և յարի իւր կնոջը, և եր-
32 կուքը պիտի ըլլան մի մարմին։ Այս
խորհուրդը մեծ է, բայց ես կ'ըսեմ
33 Քրիստոսի և եկեղեցւոյ վրայ։ Սակայն
ձենք իւրաքանչիւր ոք իր կինն այնպէս
սիրէ՝ որպէս Թէ իւր անձը, և կինն
ակնածէ իւր առնէն։

## Գլ. Զ

1 Որդիք, հնազանդ եղէք ձեր ծնողացն
2 ի Տէր, զի այն է արժանը։ Պատուէ
քու հայրդ և մայրդ, (որ առաջին
3 պատուիրանն է խոստմամբ,) Որպէս
զի բարի ըլլայ քեզ, և երկար կեանք
4 ունենաս երկրի վրայ։ Եւ դուք, հարք,
մի բարկացունէք ձեր որդիները, այլ
սնուցէք զնոսա Տէրոջը վարժու Թեամբ
5 և խրատով։ Ծառայք, հնազանդ եղէք
ձեր տերանց ըստ մարմնոյ, ահիւ և
դողու Թեամբ ձեր սրտին միամտու-
6 Թեամբը, որպէս Թէ Քրիստոսի։ Ոչ
Թէ մարդահաճոյի պէս առ ակնի ծա-
ռայելով, այլ Քրիստոսի ծառաներու

*Ոմանք Քրիստոս

պէս՝ կատարելով ի սրտէ Աստուծոյ
7 կամքը. Ցաժարութեամբ ծառայելով
որպէս թէ Տեառն, և ոչ թէ մարդոց.
8 Գիտանալով որ իւրաքանչիւր ինչ բարիք
որ ընէ, զնոյն պիտի ընդունի Տէրոջ-
մէն, թէ ծառայ ըլլայ և թէ ազատ։
9 Եւ դուք, տեարք, զնոյն ըրէք անոնց,
և թողէք սպառնալիքը, գիտնալով որ
Ե՛ւ ձեզ և ձեր Տէրն յերկինս է, և
աչառութիւն չկայ անոր քով։
10 Ա.յսուհետև, եղբարք, զօրացէք Տե-
րամբ և անոր զօրութեան կարողու-
11 թեամբը. Հագէք ձեր վրայ Աստուծոյ
սպառազինութիւնը, որ կարող ըլլաք
12 դէմ դնել հնարից Սատանային. Քանզի
մեր պատերազմը չէ արեան և մարմնոյ
հետ, այլ իշխանութիւններու՝ և պե-
տութիւններու հետ, և այս *խաւարա-
յին աշխարհիս իշխաններուն հետ, չար
ոգիներուն հետ որ երկնաւորներուն
13 մէջ են։ Վասն որոյ, առէք ձեր վրայ
Աստուծոյ սպառազինութիւնը, որ կա-
րող ըլլաք դէմ դնել չարութեան օրը,
14 Եւ ամէն բան կատարելէ ետքը հաս-
տատուն կենալ։ Ուստի կեցէք, ճշմար-
տութեամբ մէջտեղով ձեր մէջքը, և
15 հագնելով արդարութեան զրահը։ Եւ
ձեր ոտքերնուն հագցնելով խա-
զաղութեան աւետարանին պատրաս-
16 տութիւնը. Եւ ի վերայ ամենայնի ա-
ռէք հաւատոյ վահանը, որով կարող
պիտի ըլլաք մարել չարին ամէն կրա-
17 կոս նետերը. Եւ առէք փրկութեան
սաղաւարտը, և Հոգւոյն սուրը՝ որ
18 Աստուծոյ խօսքն է. Ամենայն ազօ-
թիւք և խնդրուածովք ազօթք ըրէք
յամենայն ժամ Հոգւով, և սոյնը վրայ
հսկեցէք կատարելապատութեամբ
և ազաչանօք բոլոր սուրբերուն համար,
19 Ինծի համար ևս, որպէս զի խօսք
տրուի ինձ որ բանամ բերանս հա-
մարձակութեամբ յայտնել աւետարա-
20 նին խորհուրդը. Որոյ համար դեսպա-
նութիւն կ'ընեմ կապանօքս, որ այ-
նոյնս համարձակիմ խօսել՝ ինչպէս որ
պէտք է։
21 Բայց որպէս զի դուք ևս գիտնաք
իմ վրաս թէ ինչ կ'ընեմ ես, ամենայն
ինչ պիտի ցուցնէ ձեզ Տիւքիկոս սի-
րելի եղբայրը և հաւատարիմ պաշտօ-
22 նեան ի Տէր. Զոր այս բանին համար
դրկեցի ձեզ, որ գիտնաք դուք մեր
վրայ, և նա մխիթարէ ձեր սիրտերը։
23 Խաղաղութիւն եղբայրներուն և սէր
հաւատով հանդերձ Հօր Աստուծմէ և
ի Տեառնէ Յիսուս Քրիստոսէ։ Շնորհք
24 ամենուն հետ որ անկեղծութեամբ կը
սիրեն զՏէր մեր Յիսուս Քրիստոս։
Ամէն։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## Ա.Ո ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս և Տիմոթէոս, ծառայք Յիսու-
սի Քրիստոսի, Քրիստոս Յիսուսով բո-
լոր սուրբերուն որ ի Փիլիպպէ են՝ ե-
պիսկոպոսներով և սարկաւագներով.
2 Շնորհք և խաղաղութիւն ձեզ Աստուծ-
մէ մեր Հօրմէն և ի Տեառնէ Յիսուսէ
Քրիստոսէ։
3 Կը գոհանամ իմ Աստուծմէս ամէն

*Յունն աշխարհիս խաւարին



4 անգամ որ կը յիշեմ զձեզ, Ուրախու-
թեամբ ազօթելով միշտ ձեր ամենուն
համար իմ բոլոր խնդրուածոցս մէջ,
5 Վասն որ առաջին օրէն մինչև հի-
6 մա հաղորդ էք աւետարանին. Այս
մասին վստահ ըլլալով թէ այն որ սկսաւ
բարի գործ մը ձեր մէջ, պիտի կատա-
7 րէ մինչև Յիսուսի Քրիստոսի օրը. Ինչ-
պէս և ինձ արժան է խորհիլ զայս ձեր
ամենուն վրայ, վասն զի ունիմ զձեզ
սրտիս մէջ, և վասն զի իմ կապերուս
մէջ, և աւետարանին չաստգուծութեան
և հաստատութեան մէջ, ամենքդ
հաղորդ էք շնորհաց որ եղած է ինձ.
8 Քանզի վկայ է ինձ Աստուած, թէ ինչ-
պէս անձուկ ունիմ ձեր ամենուն Քրի-
9 ստոս Յիսուսի գթով։ Եւ այս ա-
զօթքը կ'ընեմ, որ ձեր սէրը հետզ-
հետէ առատանայ դիտութեամբ և ա-
10 մենայն բնաթոյրութեամբ, Որ դուք
ապրիլը բաները զանազանէք, որպէս
զի մինչև Քրիստոսի օրն լլլաք անկեզծ
11 և առանց գայթակղութեան. Արդա-
րութեան պտուղներով լցուած Յիսուսի
Քրիստոսի ձեռօք ի փառս և ի գովեստ
Աստուծոյ։
12 Կ'ուզեմ որ գիտնաք, եղբարք, թէ
ինչ որ պատահեցաւ ինձ՝ ևս աւելի
պատճառ եղաւ աւետարանին յառա-
13 ջադիմութեան. Մինչեւ իմ կապերս
որ Քրիստոսի համար են՝ յայտնի ե-
ղան բոլոր պալատին մէջ և ուրիշ ա-
14 մենուն, Եւ եղբայրներուն որ ի Տէր՝
շատերը քաջալերուելով իմ կապերէս,
ևս աւելի համարձակիլ խօսել Աստու-
15 ծոյ խօսքն առանց երկիւղի. Ոմանք ա-
ռ նախանձու և հակառակութեան,
և ոմանք առ բարեհաճութեան կը քա-
16 րոզեն զՔրիստոս. Թէև անոնք հակառա-
կութեամբ համար կը պատմեն զՔրիս-
տոս, ոչ թէ անկեղծութեամբ, կար-
ծելով աւելցուցանել վիշտ իմ կապերուս
17 վրայ. Իսկ ասոնք սիրոյ համար, քան-
զի գիտեն թէ կեցած եմ պատասխան
18 տալ աւետարանին համար, Բայց ի՞նչ
է. որ կերպով որ ըլլայ, թէ պատճա-
ռաւոր և թէ ճշմարտութեամբ, Քրիս-
տոս կը պատմուի, և սորա վրայ ու-
րախ եմ և ուրախ ևս պիտի ըլլամ,
19 Քանզի գիտեմ թէ սորա վախճանն իմ
փրկութեանս համար պիտի ըլլայ ձեր
խնդրուածովդ, և Յիսուսի Քրիստոսի
20 Հոգւոյն օգնականութեամբ, Իմ եռան-
դուն ակնկալութեանս և յուսոյս հա-
մեմատ, որ բանով մը ամօթի չգիտեմ,
այլ կատարեալ համարձակութեամբ
ինչպէս միշտ, նոյնպէս և այժմ Քրիս-
տոս փառաւորի իմ մարմնոյս մէջ թէ
21 ապրիմ և թէ մեռնիմ։ Քանզի ինծի
համար ապրիլ Քրիստոս է, և մեռնիլ
22 օգուտ։ Ապա եթէ ապրելը ի մարմնի
պտուղ կը բերէ գործոյս, այլ ևս չեմ
23 գիտեր զոր ընտրեմ. Երկուս կողմանէ
ևս նեղը մեացած եմ, մեկնիլ և Քրի-
24 ստոսի հետ ըլլալ փափաքելով, քան-
զի այն չատ աւելի բաւ է, Բայց մնալ
ի մարմնի ձեզի համար աւելի հարկա-
25 ւոր է։ Եւ այս համոզուած ըլլալով
գիտեմ որ պիտի կենամ և մնամ ձեր
ամենուն հետ, որ դուք զարգացած
26 և ուրախ ըլլաք հաւատով։ Որ ձեր
պարծանքն իմ վրաս աւելի ըլլայ Քրի-
ստոս Յիսուսով իմ գալստեանս
պատճառաւ դարձեալ առ ձեզ։
27 Միայն թէ ինչպէս կը վայելէ Քրիս-
տոսի աւետարանին, այնպէս վարուե-
ցէք. որ թէ գամ և զձեզ տեսնեմ, և
թէ հեռու ըլլամ, ձեր վրայ լսեմ որ
դուք հաստատուն կը կենաք մի հոգ-
ւով, և միաբանչ պատերազմակից կ'ըլ-
լաք աւետարանին հաւատոյն համար։
28 Եւ բանով մը մի զարհուրիք հակառա-
կորդներէն, որոց կորստեան ապացոյց
է այն, և ձեզ փրկութեան, Այն ևս
Աստուծմէ է. քանզի ձեզ տրուեցաւ
Քրիստոսի համար ոչ միայն հաւատալ
անոր, այլ և անոր համար չարչարուիլ,
30 Նոյն պատերազմին ունենալով՝ զոր տե-
սաք յիս և հիմա կը լսէք իմ վրաս։

*Կամ վասն զի ունիք զիս չէք սրտերուն մէջ

†Ոմանք 17 էրսրդ տողը կոչ 16 էրսրդին ետևէն կը դնեն։

Գլ. Բ

1 Ուստի եթէ կայ Քրիստոսով մխիթարութիւն, եթէ սիրոյ սփոփանք, եթէ Հոգւոյ հաղորդութիւն, եթէ գթութիւն և ողորմութիւնս,
2 լցէք զուարճութիւնս, զի նոյն խորհուրդն ունիցէք, միևնոյն սէրն ունենալով, միաբանութեամբ, միաքնութեամբ.
3 ոչ ինչ հակառակութեամբ կամ անպարծութեամբ, այլ խոնարհութեամբ զիրար լաւ համարիցէք քան զձեր անձերը.
4 Մի՛ոյն ձեր անձերունը մի նայիք. այլ իւրաքանչիւր իւր բնկերոջն։ Զինէ իւրաքանչիւր ոք թող ունենայ նոյն միտքը, որ էր ի Քրիստոս Յիսուս.
6 Որ Աստուծոյ կերպարանքն ունէր, չհամարեցաւ ըլլալն հաւասար Աստուծոյ.
7 Այլ զանձն ունայնացոյց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով. և կերպարանօք գտնուելով
8 իբրև մարդ, խոնարհեցոյց զինք, հնազանդեղ եղաւ մինչև ի մահ, և ի մահ խաչի, վասն որոյ և Աստուած բարձրացոյց զնա յոյժ, և տուաւ նմա անուն որ ի վեր է քան զամենայն անուն.
10 Որ յանուն Յիսուսի ամէն ծունր կրկրկնի, երկնաւորաց և երկրաւորաց և առնդարձեռականաց,
11 և ամէն լեզու դաւանի թէ Յիսուս Քրիստոս Տէր է ի փառս Աստուծոյ Հօր. Ուստի, սիրելիք իմ, ինչպես միշտ հնազանդեղաք, ոչ միայն ի ներկայութեանս, այլ և աւելի հիմա՛ ի բացակայութեանս, աշխատ և զոզութեամբ ձեր անձերուն փրկութիւնը գործեցէք. Քանզի Աստուած է որ ձեր մէջ կը գործէ կամելը և բնելը ի՛նչ հաճութեանը համար։
14 Ամէն բան առանց տրտնջանաց և վէճերէ
15 ըրէք. Որ ըլլաք ամբիծ և անարատ, Աստուծոյ որդիներ առանց մեզապրանաց, կամակոր և խառնակեալ ազգին մէջ, որոց մէջ դուք լուսաւորիչներու
16 պէս կը փայլիք յաշխարհի, կենաց խօսքը պինդ բռնելով պարծանք ըլլալու
17 համար ինձ Քրիստոսի օրը, թէ ի զուր չդարձեցի, և ի զուր չաշխատեցայ։ Բայց թէպէտ և ձեր հաւատոյ պատարագին և պաշտաման վրայ ընծայուիմ, կ՚ուրախանամ և ձեր ամենուն ուրախանամ
18 կից եմ. Նոյնպես և դուք ուրախացէք և ուրախակից եղէք ինծ։
19 Արդ կը յուսամ ի Տէր Յիսուս զՏիմոթէոս վազ առ ձեզ դրկել, որ և իմ սիրտս հանգչի երբ գիտնամ ձեր վիճակը։ Քանզի չունիմ
20 ասանկ միտքով հոգով չունիմ, որ մանրամասն հոգայ ձեզի
21 համար։ Քանզի ամենքը կը փնտռեն իրենցը՝ ոչ թէ Յիսուսի Քրիստոսինը։
22 Բայց զուք գիտէք անոր փորձը, որ ինչպես որդի հօր հետ՝ ինծի ծառայեց
23 ինձի հետ յաւետարանին։ Ուստի կը յուսամ դրկել զնա վազ, երբ տեսից զիս
24 թէ ինչ պիտի ըլլամ։ Բայց վստահութիւն ունիմ ի Տէր որ և ես ի մասոյ
25 պիտի գամ։ Սիրոյն թէ հարկաւոր համարեցայ դրկել առ ձեզ զԵպափրոդիտոս զիմ եղբայր և գործակից և զինուորակից, զոր դուք դրկեցիք և ոչ
26 իմ պիտոյից ծառայեց։ Վասն զի և ինք կը փափաքէր յոյժ [տեսնել] զձեզ ամենքդ. և կը տրամէր որ լսած էիք
27 թէ հիւանդացաւ։ Եւ արդարև հիւանդացաւ մերձ ի մահ, բայց Աստուած ողորմեցաւ նմա. ոչ թէ նմա միայն, այլ և ինձ, որ տրտմութեան վրայ
28 տրտմութիւն չունենայի. Վասն որոյ աւելի փութացի դրկեցնել զնա, որ զուք տեսնելով զնա դարձեալ ուրախ ըլլաք, և
29 ես առանց տրտմութեան ըլլամ։ Ուրեմն ընդունեցէք զնա ի Տէր ամենայն ուրախութեամբ, և բանեցէք այնպիսիները պատուականներու կարգը.
30 Քանզի մեռաւ ի մահ Քրիստոսի գործին համար՝ վտանգի մէջ դնելով իւր կեանքը, որ լեցուսէ ձեր ծառայութեան պակասութիւնն առ ինս։

Գլ. Գ

1 Ուստի, եղբարք, ուրախ եղէք ի Տէր. Նոյն բաները գրել ձեզ ինձ ձանձրութիւն չէ, և ձեզ ապահովութիւն է։
2 Զգուշացէք չուներէն, զգուշացէք չար մշակներէն, զգուշացէք կրճատութենէն.
3 Նէնի Քանզի Քրիստոսի մէնք ենք, որ Հոգւով կը պաշտենք զԱստուած, և կը պարծենանք Քրիստոս Յիսուսով, և մարմնոյ վրայ չէ մեր վստահութիւնը։ Թէպէտ և ես ունիմ վստահութիւն մարմնոյ վրայ. եթէ այլ ոք կը կարծէ թէ վստահութիւն ունի
5 մարմնոյ վրայ, ես աւելի. Ութօրեայ թլփատուած, Իսրայէլի ազգէն, Բենիամինի ցեղէն, Եբրայեցի՝ Եբրայեցիներէ, քան օրինաց՝ փարիսեցի.
6 Նախանձաւոր ըլլալու կոչմանէ կը հալածէի եկեղեցին. օրէնքին արդարութեամբ
7 Թէևներ կոչմանէ անարատ էի։ Բայց ինչ որ չահ էր ինձ, զայն վնաս համարեցայ Քրիստոսի համար։
8 Եւ արդարև զամենայն ինչ վնաս կը համարիմ վասն գերազանց գիտութեան Տէրոջն իմոյ Քրիստոսի Յիսուսի, որով վասն զորոյ զամենայնէ յամենայնէ, և աղեղուքին կը համարիմ, որ զՔրիստոս շահիմ,
9 Եւ անոր մէջ գտնուիմ, ոչ թէ իմ արդարութիւնս ունենամ որ օրէնքէն է, այլ ի ձեռն հաւատոյն Քրիստոսի այն արդարութիւնը որ Աստուծմէ է հաւատով. Ճանչնալ զնա և անոր յարութեան զօրութիւնը և անոր չարչարանաց հաղորդութիւնը,
11 անոր մահուան կերպարանքը։ Որ թէ բնա հասնիմ մեռելոց յարութեան։
12 Ոչ թէ ես արդէն առած եմ, կամ արդէն կատարեալ եղած եմ, այլ զնեմ որ բռնեմ տըշտեղը, որով համար
13 և բռնուեցայ Քրիստոս Յիսուսէ։ Եղբարք, ես չեմ համարիր թէ բռնած եմ. բայց բան մը կ՚ընեմ, մոռնալով հաւիննները և դիմելով առջիններուն,
14 բուն, Ըստ նպատակին կը վազեմ ի մրցանակն Աստուծոյ վերին կոչման
15 որ է Քրիստոս Յիսուս։ Ուստի մենք ա՛մէնքս որ կատարեալ ենք՝ զայս խորհինք, և եթէ կը խորհիք բան մը ուրիշ կերպով, զայն ևս պիտի յայտնէ
16 ձեզ Աստուած. Միայն թէ առ ինչ որ հասած ենք՝ նոյն կանոնին համեմատ քալենք, նոյն խորհուրդն ունենանք։
17 Նմանողներ եղէք ինձ, եղբարք, և նայեցէք անոնց որ կը քալեն այնպէս, ինչպես որ օրինակ ունիք մեզի.
18 Քանզի շատերը կը քալեն, որոց համար շատ անգամ կ՚ըսէի ձեզ, և հիմա լալով ևս կ՚ըսեմ, թէ են Քրիստոսի խաչին թշնամիներ.
19 Որոց վախճանը կորուստ է, որոց աստուածը որովայնն է, և փառքն՝ յամօթի իւրեանց, որ
20 երկրաւոր բաները կը մտածեն։ Բայց մեր քաղաքացիութիւնն յերկինս է, ուստի և կը սպասենք փրկչին, Տէրոջն
21 Յիսուսի Քրիստոսի։ Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը կերպարանակից ըլլալ իւր փառաւոր մարմնոյն, այն զօրութեամբ որ կարող է հնազանդեցնել ամենն իրեն տակ։

Գլ. Դ

1 Ուստի, եղբարք իմ սիրելիք և անձկալիք, ուրախութիւն և պսակ, այսպէս հաստատուն կեցէք ի Տէր, սիրելիք։
2 Զեւոդիա կ՚պատչեմ և զՍինդիքէ կ՚պատչեմ որ միևնոյն խորհուրդն ունենան ի Տէր։
3 Նէնան և Արդարև գքեզ ևս կ՚պատչեմ ճշմարիտ լծակից էմ, դուս ևս օգնական եղիր անոնց, որ ինծի հետ աշխատեցան յաւետարանին կղեմէս և ուրիշ գործակիցներուս հետ, որոց անունք կենաց գրքին մէջ են։ Ուրախ եղէք ի Տէր յամենայն ժամ. գրեմ կ՚ըսեմ, ուրախ եղէք։ Ձեր քաղցրութիւնն յայտնի ըլլայ ամէն մարդու.
6 Տէրը մօտ է։ Բան մի՛ հոգայ մի՛ ընէք. այլ ամէն բան մէջ աղօթիւք և աղաչանօք, գոհութեամբ հանգերձ, ձեր խնդրուածքներն յայտնի ըլլան Աստուծոյ։ Եւ Աստուծոյ խաղաղութիւնը որ է վեր է քան զամենայն միտք՝ ձեր սիրտերը և միտքը պիտի պահպանէ
8 Նէ Քրիստոս Յիսուսով։ Վերջապէս, եղբարք, ինչ որ ճշմարտութեամբ է,

*Պահ կենցաղավարութիւնը

ինչ որ պարկեշտութեամբ, ինչ որ արդարութեամբ, ինչ որ մաքրութեամբ, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով, ինչ առաքինութիւն և ինչ գովութիւն որ կայ, զանոնք խորհեցէք։
9 Ինչ որ սորվեցաք և առիք և լսեցիք և տեսաք իմ վրաս, զայն ըրէք։ և խաղաղութեան Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ։
10 Մեծապէս ուրախացայ ի Տէր, որ հոգը զոր ունիք իմ վրաս՝ հիմա նորոգուեցաւ, ինչպես և կը հոգայիք ևս,
11 միայն թէ պատեհութիւն չունէիք։ Ոչ թէ կսրտութեան համար կ'ըսեմ, քանզի ես սորվեցայ գոհ ըլլալ իմ վիճակիս մէջ։ Գիտեմ չքաւորութիւն կրել, գիտեմ շատ ունենալ. ամէն բանի մէջ ամէն կերպով քաջ սորված եմ թէ յագենալ, թէ անօթենալ, թէ
13 շատ ունենալ և թէ չբաւարել։ Ամէն բանի կարող եմ *անով որ զօրացոյց զիս։ Բայց բարւոք ըրիք որ նեղուցաք։
15 Թեսաղոնիկեցիք, դուք ևս գիտէք, Փիլիպպեցիք, որ ի սկիզբն աւետարանին երբ ես Մակեդոնիայէն եկայ, բնաւ եկեղեցի մը հաղորդութիւն չբրաւ ինծի հետ տալոց և առնելոց կոգմանէ, այլ միայն դուք։
16 Որ Թեսաղոնիկէ ևս մի անգամ և երկիցս զրկեցիք ինչ որ պիտոյ էր ինծի,
17 Ոչ թէ տուրքը կը փնտռեմ, այլ պտուղ կը փնտռեմ որ ձեր հաշուին
18 վրայ աւելնայ։ Բայց ես ամէն բան առած եմ և առատութիւն ունիմ. լցուած եմ Եպափրոդիտոսէ ձեռօք ձեր ընծաներէն ընդունելով, որ անոյշ հոտ է, ընդունելի պատարագ, հաճոյ Աստուծոյ։
19 Ծոյ, ես իմ Աստուածս ձեր ամէն պիտոյքը պիտի ըլնու իր Տոքութեան չափովը փառօք՝ Քրիստոս Յիսուսի ձեռօք։
20 Ա.օք Աստուծոյ և մեր Հօրը փառք յաւիտեանս յաւիտենից, Ամէն։
21 Ողջոյն տուէք բոլոր սուրբերուն Քրիստոս Յիսուսով։ Ողջոյն կու տան
22 ձեզ եղբարք որ իմ հետս են։ Ողջոյն կու տան ձեզ բոլոր սուրբերը, մանաւանդ անոնք որ Կայսեր տունէն են։
24 Շնորհք Տէրունջ Յիսուսի Քրիստոսի ձեր ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՒ ԿՈՂՈՍԱՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամքովն Աստուծոյ, և Տիմոթէոս եղբայր,
2 ի Քրիստոս սուրբ և հաւատացեալ եղբարց որ ի Կողոսա են. Շնորհք և խաղաղութիւն ձեզ յԱստուծոյ մեր Հօրմէն [և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ]։

*Ոմանք Քրիստոսով։

Յամենայն ժամ ձեզի համար աղօթելով՝ կը գոհանանք Աստուծմէ և Տեառն
4 մերոյ Յիսուսի Քրիստոսի Հօրմէն, լրսելով ձեր հաւատքն ի Քրիստոս Յիսուս, և սէրը զոր բոլոր սուրբերուն
5 վրայ ունիք, Հին յոյսի համար որ կը պահուի ձեզ յերկինս, որոյ վրայ առաջուց լսեցիք աւետարանին Ճշմարտութեան
6 Խօսքով, Որ հասաւ ձեզ, որպէս և բոլոր աշխարհ, և է պտղաբեր [և աճեցուն], ինչպէս ձեր մէջ, այն օրէնէ որ դուք լսեցիք և ճանչցաք Աստուծոյ շնորհքը ճշմարտութեամբ,
7 Ինչպէս ալ սորվեցաք մեր սիրելի Յառայակցին Եպափրասէ, որ ձեզի հաւատարիմ պաշտօնեայ է Քրիստոսի,
8 Որ և պատմեց մեզ ձեր սէրն Հոգւով։
9 Վասն որոյ և մենք այն օրէնէն որ լսեցինք՝ չենք դադարիր ձեզի համար աղօթելէ և խնդրուածներ մատուցանելէ, որ կատարեալ ըլլաք անոր կամացը գիտութեամբ բոլոր իմաստութեամբ և հոգեւոր հանճարով.
10 Որ դուք Տէրոջը արժանի կերպով քալեք ամէն բանի մէջ հաճեցունելով ըն, ամէն բարի գործերու մէջ պտղաբեր ըլլալով, և աճեցուն Աստուծոյ գիտութեամբը։ Անոր փառաց կարողութեանը համեմատ ամէնուն զօրացեալ բոլոր համբերութեան և երկայնմտութեան համար ուրախութեամբ,
12 Գոհանալով ի Հօրէ, որ արժանացուց զմեզ մասնակից ըլլալ լուսոյ մէջ Քահանայ սուրբերուն վիճակին.
13 Որ ազատեց զմեզ խաւարին իշխանութենէն, և փոխադրեց ի Թագաւորութիւն իր սիրելի Որդւոյն. Որով փրկութիւն ունինք անոր արեանմբ, այսինքն մեղաց թողութիւն. Որ է պատկեր անտեսանելի Աստուծոյ, անդրանիկ
16 Նիւթ ամենայն արարածոց. Քանզի անով ամէն բան ստեղծուեցաւ, ինչ որ յերկինս և ինչ որ յերկրի, անոնք որ կ'երեւին և անոնք որ չեն երեւիր, թէ՛ աթոռք, թէ՛ տէրութիւնք, թէ՛ պետութիւնք, թէ՛ իշխանութիւնք. ամէնայն անով և անոր համար ստեղծուեցաւ. Եւ նա է յառաջ քան զամէնայն,
18 և ամէնայն ինչ անով կը կենայ հաստատ. Եւ նա է մարմնոյն, այսինքն Եկեղեցւոյն, գլուխը. որ սկիզբն է, անդրանիկ ի մեռելոց, որպէս զի ըլլայ առաջնորդ ամենայնի մէջ.
19 Վասն զի հաճեցաւ Հայրը բոլոր լրումն Աստուածութեան բնակի անոր մէջ. Եւ ամենով հաշտեցունէ ամէնքն իրեն հետ, խաղաղութիւն ընելով անոր խաչին արեամբը, անով [՝ըե՛ թէ զանոնք որ երկրի վրայ են, և թէ զանոնք՝ որ յերկինս։
21 Եւ զձեզ որ էիք երբեմն օտարացեալ և թշնամիք մտօք ի գործս չարութեան, Հիմա հաշտեցուց բանի իր մարմնոյ մահուամբ, մատուցանէ, որ կեցուցէ ըզձեզ անոր դիմացը սուրբ և ամրիծ և անարատ. Եթէ կենաք հիմնուած և հաստատուն և առանց խախտելու ի յուսոյ աւետարանին զոր լսեցիք, որ քարոզուեցաւ բոլոր արարածոց երկինիս տակ, որոյ ես, Պօղոս,
24 եղայ ծառայ։ Հիմա ուրախ եմ ի չարչարանս իմ ձեզի համար, և Քրիստոսի նեղութիւններուն պակասութիւնը կը լնամ իմ մարմնոյս մէջ անոր մարմնոյն համար որ է եկեղեցին. Որոյ ես ծառայ եղայ Աստուծոյ անեսութեանը որ տրուեցաւ ինծ ձեզի համար՝ լիով քարոզել Աստուծոյ խօսքը,
26 Այն խորհուրդը որ ծածկուած էր դարերէ և ազգերէ հետէ, և յայտնուեցաւ հիմա անոր սուրբերուն. Որոց կամեցաւ Աստուած ծանուցանել, թէ ինչ է այս խորհրդոյն փառաւորութիւնը հեթանոսաց մէջ, որ է Քրիստոս ի ձեզ, յոյսն փառաց. Զոր մենք կը քարոզենք, և ամէն մարդ կը խրատնենք, և կը սորվեցնենք ամէն մարդ ամէնայն խոհեմութեամբ, որպէս զի կեցուցնենք ամէն մարդ կատարեալ ի Քրիստոս Յիսուս. Որոյ համար և ես կ'աշխատիմ՝ չափալով անոր ներգործութեանը հաճելիաս որ զօրութեամբ է գործ կը դրուի յիս։

### Գլ. Բ

1 Քանզի կ'ուզեմ որ գիտնաք թէ ինչպես մեծ անձկութիւն ունիմ ձեզի համար և Լաւոդիկեացւոց համար, և ամենց ամենուն համար որ տեսած չեն
2 իմ երեսս մարմնով. Որ անոնց սիրտերը մխիթարուին սիրով միացեալ, և հասնին ի բովանդակ հոգեւոր

ի խնայման , այնչափ ի գիտութիւն
խորհրդոյն Հոր Աստուծոյ և Քրիստո-
3 սի, Յորում պահուած են խնամուա-
թեան և գիտութեան բոլոր գանձերը:
4 Եւ զայս կ'ըսեմ, որ ոչ ոք հրապու-
5 րանօք բանից ի մտքերնիդ զձեզ՝ Որ
թէպէտ մարմնով հեռու եմ, բայց հո-
գւով ձեզի հետ եմ, և կ'ուրախանամ
երբ կը տեսնեմ ձեր բարեկարգութիւ-
նը և ձեր հաստատ հաւատոյ հաստատութիւնն
6 ի Քրիստոս Ի՛սուս Տէրունս, ասոնք
նենգաբ զՏէր Յիսուս Քրիստոս, ասոնք
7 քալեցէք, Արմատացեալ և շինեալ ի նմա,
և հաստատեալ ի հաւատս՝ ինչպէս սո-
վեցաք, և անոր մէջ աճեցէք գոհու-
8 թեամբ: Զգուշացէք, որ գերի չլինիք
ոք զձեզ փիլիսոփայութեամբ և ունայն
խաբէութեամբ, որ ի բան աւանդու-
թեան մարդկան, բան սկզբանց աշ-
9 խարհս, և ոչ բան Քրիստոսի: Քանզի
բոլոր լրումն Աստուածութեան կը բնա-
10 կի ի նմա մարմնապէս: Եւ դուք ևս
լցուած էք անով, որ է գլուխ ամե-
նայն իշխանութեան և պետութեան.
11 Որով դուք թլփատուեցաք անձեռա-
գործ թլփատութեամբ՝ մերկանալով
մեզաց մարմնին թլփատութեամբն Քրի-
12 ստոսի. Թաղուելով անոր հետ մկրը-
տութեամբ, որով նաև անոր հետ յա-
րեաք հաւատով ներգործութեամբն Աս-
տուծոյ, որ յարոյց զնա ի մեռելոց:
13 Եւ զձեզ որ մեռած էիք յանցանաց և
ձեր մարմնոյն անթլփատութեան մէջ՝
կենդանացուց անոր հետ, ներելով մեզ
14 Ի՛նչ բոլոր յանցանքը, Եւ ջնջից հրա-
մաններով մեզ հակառակող ձեռագի-
րը որ մեզի դէմ կը կենար, և վերցուց
զայն ի մէջէն, և բևեռեց խաչափայտին.
15 Եւ մերկացուց իշխանութիւնները և
պետութիւնները, և յայտնապէս խա-
չահաւակեց՝ յաղթելով անոնց *անով:
16 Ասպա թող չդատէ ոք զձեզ ուտելու
կամ խմելու, կամ տաներու կամ ամ-
սագրի խներու կամ շաբաթներու կող-
17 մանէ. Որ գոլոս բաներուն շուքն են,

18 բայց մարմինը Քրիստոսինն է: Մրցա-
նակին չզրկէ զձեզ ոք որ կը կամի խո-
նարհութեամբ և հրեշտակաց կրօնիք-
մէջ մտնելս ըլլալ այն բաներուն զոր
տեսած չէ, իւր մարմնոյն մտօք ի զուր
19 հպարտանալով. Եւ չբռնելը Գլուխը,
ուստի բոլոր մարմինը յօդուածներով
և խազերով հաղորդուած և ի մի կըց-
20 ուած կ'աճի աճմամբն Աստուծոյ: Իսկ
եթէ դուք Քրիստոսի հետ մեռաք այս
աշխարհիս սկզբանց, ալ ևս ընդէ՞ր
աշխարհիս մէջ կենդանիներու պէս կը
21 հնազանդիք այնպիսի կանոններու, ըսե-
լով, Մի մերձենար, մի ձեռնկիր, մի
22 զպչիր, (Որոց ամենքն ապականու-
թեան համար են գործածուելոմբ,)
բան պատուիրանաց և վարդապետու-
23 թեանց մարդկան, Որ խնամուութեան
կերպարանք ունին ինքնակամ կրօ-
նքով և խոնարհութեամբ և չխնայելով
մարմնոյ; Բայց ոչ թէ պատուոյ արժա-
նի են, այլ մարմինը յագեցնելու ի
դառնալն:

## Գլ. Գ

1 Արդ եթէ Քրիստոսի հետ յարուցաք
ամէն, ուրեմն խնդրեցէք վերինն բա-
նները, ուր Քրիստոս կը նստի բնդ աջ-
2 մէ Աստուծոյ ողջոյն բաները խորհե-
ցէք, ոչ թէ զայնս որ երկրիս վրայ են:
3 Քանզի դուք մեռաք, և ձեր կեանքը
պահուած է Քրիստոսի հետ յԱստուած:
4 Երբ Քրիստոս, ձեր կեանքն յայտնուի,
յայնժամ և դուք պիտի յայտնուիք
անոր հետ փառօք:
5 Ուստի սպաննեցէք ձեր երկրաւոր
անդամները. պոռնկութիւնը, պղծու-
թիւնը, ամաչն կիրքը, չար ցանկու-
թիւնը և ագահութիւնը որ է կռապաշ-
6 տութիւն. Որոց համար Աստուծոյ բար-
կութիւնը կու գայ անհնազանդութեան
7 որդւոց վրայ. Որոց մէջ և դուք կը
քալէիք երբեմն, երբ կ'ապրէիք անոնց
8 մէջ: Բայց հիմա ի բաց թողուցէք և
դուք ամէնը. զբարկութիւն, զբրա-
նութիւն, զչարութիւն, զհայհոյու-

*Կամ իւր անձամբ:



թիւն, անհամեստ խօսքեր ձեր բերան-
9 նեցէք: Մի սուտ իրարու. մերկացէք
10 հին մարդը իւր գործերովը, Եւ հագէք
նորը զոր նորոգուած քան
11 պատկերի Արարչին իւրոյ. Ուր Յոյն և
Հրեայ, Թլփատութիւն և անթլփատու-
թիւն, Բարբարոս, Սկիթացի, Ծառայ
և ազատ չկայ. այլ Քրիստոս է ամե-
12 նայն և յամենայնին: Ուստի Աստուծոյ
ընտրեալ սուրբերու և սիրելիներու
պէս հագէք ձեր վրայ զգութ, զողոր-
մութիւն, զքաղցրութիւն, զհեզութիւն,
13 զերկայնմտութիւն, Համբերելով իրարու և ներելով
իրարու, եթէ ոք որոումէ ունի զու-
մէք. ինչպէս Քրիստոս ներեց ձեզ,
14 նոյնպէս և դուք: Եւ ի վերայ այսոք ա-
մենայնի հանդերձ սէրը, որ կատարելու-
15 թեան կապն է. Եւ Աստուծոյ խաղա-
ղութիւնը թագաւորէ ձեր սրտերուն
մէջ, առ որ կոչուեցաք միով մարմնով.
16 և գոհացող եղէք: Քրիստոսի խօսքը
բնակի ի ձեզ առատապէս ամենայն ի-
մաստութեամբ՝ ուսուցանել զիրար և
իրաւել, սաղմոսիւք և օրհնութեամբք
և երգոք հոգեւորօք ձեր սիրտերուն
17 մէջ շնորհօք օրհնել զԱստուած: Եւ ա-
մենայն ինչ զոր կ'ընէք թէ բանիւք
և թէ գործովք՝ բոլորն ընդ անուն
Տէրոջն Յիսուսի, մատուցանելով ի ձեռն
նորա գոհութիւն Աստուծոյ և Հօր:
18 Կանայք, հնազանդ եղէք ձեր արանց,
19 ինչպէս որ վայել է Տէրոջմէ: Արք, սի-
րեցէք զկանայս ձեր, և դառն մի լի-
20 նիք անոնց: Որդիք, հնազանդ եղէք
ձեր ծնողաց յամենայնի, քանզի այն
21 է հաճոյ առաջի Տէրոջն: Հարք, մի
բարկացուցանէք ձեր որդիները, որ չլմո-
22 նին Ծառաներ, հնազանդ եղէք յա-
մենայնի ձեր մարմնաւոր տէրանց, ոչ
թէ առ ակնառ ծառայելով իբրև մարդ-
հաճոյից, այլ միամտութեամբ սրտի
23 վախնալով Տէրոջմէ: Ինչ որ կ'ընէք ը-
ընէք սրտի մտօք, որպէս թէ Տէրոջը և
24 ոչ թէ մարդոց, Գիտնալով թէ պիտի

առնուք ժառանգութեան հատուցումն
ի Տեառնէ. քանզի կը ծառայէք Քրիս-
25 տոսի Տեառն. Բայց անօրէնը պիտի ըն-
դունի իւր անօրէնութեան *որ ինչ
չկայ ազատութիւն:

## Գլ. Դ

1 Տէրեր, իրաւունք և հաւասարութիւն
առէք ձեր ծառաներուն, գիտնալով
թէ դուք ևս ունիք Տէր յերկինս:
2 Անդադար աղօթքի եռանիք եղէք, ա-
նոր մէջ արթուն մնալով գոհութեամբ:
3 Աղօթք ըրէք նաև մեզի համար, որ
Աստուած բանայ մեզ խօսքի դուռն
խօսել Քրիստոսի խորհուրդը, որով հա-
4 մար կապուած ևս եմ, Որ յայտնի ը-
նեմ զայն ինչպէս որ արժան է ինձ
5 խօսել: Խոհեմութեամբ վարուեցէք
արտաքինները հետ՝ գնելով ժամա-
6 նակը: Ձեր խօսքն ըլլայ ամէն ժամանակ
շնորհօք՝ *դիպեր իբ աղով համեմուած,
և գիտնաք թէ ինչպէս վայել է ձեզ
ամէն պատասխան իւրաքանչիւրը ուզել:
7 Այլ իմ վրաս բոլորը պիտի իմացու-
նէ ձեզ Տիւքիկոս սիրելի եղբայրը և
հաւատարիմ պաշտօնեան և ծառայա-
8 կից ի Տէր: Զոր ղրկեցի ձեզ այդ բա-
նին համար, որ *գիտնայ ձեր վրայ, և
9 մխիթարէ ձեր սիրտերը, Ընկերմամբ
հաւատարիմ և սիրելի եղբօր հետ՝ որ
ձենէ է. անոնք պիտի իմացունեն ձեզ
10 ամէն բան ինչ որ հոս կայ: Ողջոյն կու
տայ ձեզ Արիստարքոս, գերեկից իմ,
և Մարկոս, եղբօրորդին Բառնաբասի,
(որոյ համար պատուէր առիք. եթէ
11 գայ առ ձեզ, ընդունեցէք զնա,) Եւ
Յիսուս, որ Յուստոս կոչուած է, որ
Քրիստոսին են. ասոնք միայն գոր-
ծակից եղան ինձ Աստուծոյ Թագաւո-
րութեան մէջ, որք և եղան ինձ մխի-
12 թարութիւն, Ողջոյն կու տայ ձեզ Ե-
պափրաս, Քրիստոսի ծառայն, որ ձե-
նէ է, ամէն ժամանակ ձեզի համար
ջանալով յաղօթս, որ կենաք կատար-

*Կամ Քրիստոսի

*Կամ՝ որ գիտնաք մեր վրայ, և ինք

հալ և լի Աստուծոյ բոլոր կամացը մէջ։
13 Բանզի կը վկայեմ անոր համար Թէ շատ նախանձ ունի ձեզի համար և անոնց համար որ Լաւոդիկիա և Ցիերապոլիս են, Ոչինչ կուսած ձեզ սիրելի
15 Ղուկաս բժիշկ և Դեմաս, Ոչինչ սբէ՛ք եղբայրնեւուն որ ի Լաւոդիկիա են, և Նիմփասայ և անոր առանին եկեղեցւոյն, Եւ երբ կարդացուի այս
16 թուղթը ձեր մէջ, կատարեցուց եկեղեցւոյն մէջ և կարդալ տուէք. և դուք զայն որ Լաւոդիկիայէն է՝ կարդացէք։
17 Ադիպոս, Եւ ըսէք Արքիպպոսի, Զգոյշ եղիր սպասաւորութեանդ զոր առիր Տէրոջմէ, որպէս զի կատարես զայն։
18 Ա՛ս ողջոյն իմ ձեռքիս Պօղոսի է. յիշեցէք իմ կապերս։ Շնորհք ընդ ձեզ։ Ամէն։

# Ա. ՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս, Թեսաղոնիկեցւոց եկեղեցւոյդ յԱստուած
2 Հայր և ի Տէր Յիսուս Քրիստոս. Շնորհք և խաղաղութիւն ձեզ [յԱստուծոյ մեր Հօրմէն և ի Տէրոջմէ Յիսուս Քրիստոսէ]։

Կը գոհանանք Աստուծմէ հանապազ ձեր ամենուն համար՝ յիշելով զձեզ մեր
3 ազօթիներուն մէջ. Անդադար յիշելով ձեր հաւատոյ գործը և սիրոյ աշխատութիւնը և Տէրոջն մերոյ Յիսուսի Քրիստոսի յուսոյն համբերութիւնը՝
4 Աստուծոյ և մեր Հօրը առջև. Եւ գիտնալով, Աստուծմէ սիրուած եղբայրներ, ձեր, ձեր ընտրութիւնը,
5 Որ մեր աւետարանը ոչ թէ խօսքով միայն եղաւ ձեզ, այլ և զօրութեամբ և Հոգւով Սրբով և շատ ապահովութեամբ, ինչպէս գիտէք էս թէ ինչպես կեցանք ձեր
6 մէջ ձեզի համար։ Դուք և մեզ և Տէրոջը նմանող ըլլալով՝ ընդունելով խօսքը շատ նեղութեան մէջ ուրախութեամբ Հոգւոյն Սրբոյ.
7 Քեզանք Հոգւոյն Սրբոյ. Այնպես որ օրինակ եղաք բոլոր հաւատացեալ որ
8 են ի Մակեդոնիա և յԱքայիա։ Քանզի ձեզնէ հաղակաւեցաւ Տէրոջը խօսքը, ոչ միայն ի Մակեդոնիա և յԱքայիա, այլ և ամէն տեղ ձեր հաւատքը որ յԱստուած մատուցուեցաւ, այնպէս որ հարկ չէ մեզ այլ և բան մը խօ-
9 սիլ։ Քանզի իրենք կը պատմեն մեզի համար, Թէ ինչպես մուտ ունեցանք առ ձեզ, և ինչպես դուք դարձաք ի կռոց յԱստուած՝ ծառայել կենդանի
10 և ճշմարիտ Աստուծոյ, Եւ սպասել անոր Որդւոյն յերկինից. զոր յինքն յարոյց ի մեռելոց, այսինքն զՅիսուս, որ կ՚ազատէ զմեզ գալու բարկութենէն։

### ԳԼ. Բ

1 Քանզի, եղբարք, դուք ինքնին գիտէք մեր առ ձեզ մուտը որ չեղաւ ի
2 զուր։ Այլ առաջ փիլիպպէի մէջ չարչարուելով և անարգուելով, ինչպես գիտէք, համարձակութիւն ունեցանք մեր Աստուծմով պատմել ձեզ Աստուծոյ աւետարանը մեծ հակառակութեան մէջ։
3 Քանզի մեր յորդորանքը ոչ մոլորութենէ է և ոչ պղծութենէ և ոչ խա-
4 բէութեամբ։ Այլ, ինչպես որ մենք Աստուծմէ ընդունեցանք որ աւետարանուած ըլլանք մեզի Աստուծոյ, այսպէս կը խօսինք, ոչ թէ մարդոց հաճոյ ըլլալու համար, այլ Աստուծոյ՝ որ մեր սրտերը
5 կը քննէ։ Քանզի չեղանք բնաւ շողոքորթութեան խօսքով, ինչպես գիտէք, և ոչ ագահութեան պատճա-
6 ռանօք, վկայ է Աստուած, Եւ ի մարդկանէ չխնդրեցինք փառք, ոչ ձեզնէ և ոչ ուրիշներէն, Թէև կրնայինք, իբրև Քրիստոսի առաքեալներ, ծանրութիւն ալ։ բայց եղանք քաղցր ձեր մէջ, ինչպէս դայեակ կը խնամէ իր մանուկները։
8 Այսպէս մենք, փափաք ունենալով ձեր վրայ, կը յօժարէինք ոչ միայն Աստուծոյ աւետարանը ալ ձեզ, այլ և մեր անձերը, վասն զի սիրելիներ եղաք մեզ։ Քանզի կը յիշէք, եղբարք,
9 մեր աշխատութիւնը և չանքը, որ ձեզնէ ունէք ծանրութիւն չտալու համար ոեւէ գիշեր գործելով՝ քարոզեցինք
10 ձեզ Աստուծոյ աւետարանը։ Վկայ էք դուք, և Աստուած ևս, Թէ ինչպես սրբութեամբ և արդարութեամբ և առանցքութեամբ եղանք ձեզի հետ որ
11 հաւատացիք։ Ինչպես գիտէք որ իրեւ
12 հայր իւր որդիներն Ա՛ր եղաք կը յորդորէինք ձեզի իւրաքանչիւրը և կը մխիթարէինք և վկայութիւն կը դնէինք որ դուք քալէիք ինչպես վայել է Աստուծոյ որ կոչեց զձեզ ի թագաւորու-
13 թիւն իւր և ի փառս։ Վասն որոյ և մենք անդադար կը գոհանանք Աստուծմէ, որ Աստուծոյ խօսքը ընդունելով մենէ ընդունեցիք, ոչ թէ իբրև մարդոց խօսք, այլ, ինչպես է ճշմարտապէս, իբրև Աստուծոյ խօսք, որ և կը գործէ ի ձեզ
14 որ կը հաւատաք։ Քանզի դուք, եղբարք, նմանող եղաք Աստուծոյ եկեղեցիներուն որ Հրէաստանի մէջ են ի Քրիստոս Յիսուս. քանզի դուք ևս կրեցիք զնոյն ձեր հայրագիներէն, ինչ-
15 պես անոնք ի Հրեից։ Որ և զՏէր Յիսուս սպանին և *մարգարէներդ, և զմեզ հալածեցին, և Աստուծոյ անհա-
16 ճոյ և բոլոր մարդոց հակառակ են. Ու

*Ոմանք իրենց մարգարէներն



բանն հաւատացած մեզ, այնպէս կը խօսինք, ոչ թէ մարդոց հաճոյ ըլլալու համար, այլ Աստուծոյ՝ որ մեր սրտերը
5 կը քննէ։ Քանզի չեղանք բնաւ շողոքորթութեան խօսքով, ինչպես գիտէք, և ոչ ագահութեան պատճա-
6 ռանօք, վկայ է Աստուած, Եւ ի մարդկանէ չխնդրեցինք փառք, ոչ ձեզնէ և ոչ ուրիշներէն, Թէև կրնայինք, իբրև Քրիստոսի առաքեալներ, ծանրութիւն ալ։ բայց եղանք քաղցր ձեր մէջ, ինչպէս դայեակ կը խնամէ իր մանուկները։
8 Այսպէս մենք, փափաք ունենալով ձեր վրայ, կը յօժարէինք ոչ միայն Աստուծոյ աւետարանը ալ ձեզ, այլ և մեր անձերը, վասն զի սիրելիներ եղաք մեզ։ Քանզի կը յիշէք, եղբարք,
9 մեր աշխատութիւնը և չանքը, որ ձեզնէ ունէք ծանրութիւն չտալու համար ոեւէ գիշեր գործելով՝ քարոզեցինք
10 ձեզ Աստուծոյ աւետարանը։ Վկայ էք դուք, և Աստուած ևս, Թէ ինչպես սրբութեամբ և արդարութեամբ և առանցքութեամբ եղանք ձեզի հետ որ
11 հաւատացիք։ Ինչպես գիտէք որ իրեւ
12 հայր իւր որդիներն Ա՛ր եղաք կը յորդորէինք ձեզի իւրաքանչիւրը և կը մխիթարէինք և վկայութիւն կը դնէինք որ դուք քալէիք ինչպես վայել է Աստուծոյ որ կոչեց զձեզ ի թագաւորու-
13 թիւն իւր և ի փառս։ Վասն որոյ և մենք անդադար կը գոհանանք Աստուծմէ, որ Աստուծոյ խօսքը ընդունելով մենէ ընդունեցիք, ոչ թէ իբրև մարդոց խօսք, այլ, ինչպես է ճշմարտապէս, իբրև Աստուծոյ խօսք, որ և կը գործէ ի ձեզ
14 որ կը հաւատաք։ Քանզի դուք, եղբարք, նմանող եղաք Աստուծոյ եկեղեցիներուն որ Հրէաստանի մէջ են ի Քրիստոս Յիսուս. քանզի դուք ևս կրեցիք զնոյն ձեր հայրագիներէն, ինչ-
15 պես անոնք ի Հրեից։ Որ և զՏէր Յիսուս սպանին և *մարգարէներդ, և զմեզ հալածեցին, և Աստուծոյ անհա-
16 ճոյ և բոլոր մարդոց հակառակ են. Ու

կ՚արգելուն մեզ խօսիլ հեթանոսաց անոնց փրկութեանը համար, որ իրենց մեղաց չափը լեցուններն միշտ. և բարկութիւնն անոնց վրայ հասած է մինչև
17 վախճան։ Իսկ մենք, եղբարք, արդարև ձեզնէ որբ մնացինք երեսով և ոչ թէ սրտով, բայց ջանացինք մանաւանդ տեսնել
18 ձեր երեսը մեծ փափաքով։ Վասն որոյ ես Պօղոս մի անգամ և երկիցս կամեցայ գալ առ ձեզ, բայց արգելեց ըզմեզ Սատանայ։ Քանզի ով է մեր յոյսը կամ ուրախութիւնը կամ պարծանոց պսակը, եթէ ոչ դուք՝ Տէրոջ մերոյ Յիսուսի Քրիստոսի առջև անոր գա-
20 լստեան առեն։ Վասն զի դուք էք մեր փառքը և ուրախութիւնը։

### Գլ. Գ

1 Ուստի այլ ևս չկրնալով համբերել, բարւոք թուեցաւ մեզ Աթենք մնալ
2 մենակ։ Եւ զՏիմոթէոս մեր եղբայրը և Աստուծոյ պաշտօնեան և մեր գործակիցը Քրիստոսի աւետարանին մէջ զրկեցինք հաստատել և մխիթարել ըզ-
3 ձեզ ձեր հաւատոյն համար։ Որ այս նեղութիւններուն մէջ ոչ ոք խախտի. քանզի դուք ինքնին գիտէք Թէ կեցած ենք այդ բաներուն համար։
4 Քանզի մինչ էինք առ ձեզ, յառաջագոյն կ՚ըսէինք ձեզ Թէ պիտի հանդիպինք նեղութիւններու, ինչպես եղաւ
5 իսկ, և գիտէք։ Վասն որոյ ես չկրնալով աւելի համբերել, զրկեցի գիտնալ ձեր հաւատքը, որ մի գուցէ փորձողը փորձած ըլլայ զձեզ, և մեր աշխատու-
6 թիւնն ըլլայ ընդունայն։ Բայց հիմա, երբ Տիմոթէոս ձենէ առ մեզ եկաւ, և առաւ մեզ ձեր հաւատոյ և սիրոյն աւետիսը, որ ամէն ժամանակ ունիք Է տէր մեր բարի յիշատակը, և կը փափաքիք տեսնել զմեզ, ինչպես և մենք՝
7 զձեզ։ Վասն այսորիկ, եղբարք, մխիթարեցանք ի ձեզ մեր բոլոր վիշտերուն և նեղութիւններուն վրայ ձեր
8 հաւատովը։ Քանզի հիմա կենդանի ենք

մենք, եթէ դուք հաստատուն կենաք
9 ի Տէր։ Բանդի ի՞նչ գոհութիւն կրնանք մատուցանել Աստուծոյ ձեր վրայ այն ամէն ուրախութեան համար զոր կ'ունենանք վասն ձեր մեր Աստուծոյն
10 առջև, ու գյայդ և գյերեկ կ'աղաչենք չափ չափ ձեր երեսը տեսնել, և լրացուլ ձեր հաւատոյն պակասութիւնները։
11 Բայց ինքն Աստուած և Հայր մեր և Տէր մեր Յիսուս Քրիստոս յաջողէ մեր ճամբան դէպ ի ձեզ։
12 Եւ ձեզ սիրոյն անասունի ի սրբութեան առաջի Աստուծոյ և մեր Հօրը, ի գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի իր բոլոր սուրբերովն հանդերձ։

## Գլ· Դ

1 Ուրեմն, եղբարք, կ'աղաչենք զձեզ և կը յորդորենք ի Տէր Յիսուս, որ ինչպէս առիք մեզմէ թէ ինչպես պարտ է ձեզ քալել և հաճոյ ըլլալ Աստուծոյ,
2 ևս քան զևս աւելցնաք է։ Բանդի դիտէք թէ ինչ պատուէրներ տուինք
3 ձեզ Տէր Յիսուսէն։ Վասն դի այս է կամքն Աստուծոյ, այսինքն ձեր սրբութիւնը, որ դուք ևս կենաք պոռնկութենէն։ Ձեզմէ իւրաքանչիւրը
4 ներկու թենէն։ Ձեզմէ իւրաքանչիւրը ոք գիտցայ սանանալ իւր անօթը սրբութեամբ և պատուով։
5 Ոչ թէ ցանկութեան կրիւք ինչպես հեթանոսները որ
6 չեն ճանչնար զԱստուած։ Որ այդ բանին մէջ չանցնի ոք բան չասի և զրկէ իւր եղբայրը, քանդի վրէժխնդիր է Տէր բոլոր այդ բաներուն համար, ինչպես կանխաւ ըսինք ձեզ և վկայուցինք։
7 Քանի որ Աստուած չկոչեց զմեզ ի պղծութիւն, այլ ի սրբութիւն։
8 Ուրեմն ով որ կ'անարգէ՝ ոչ թէ զմարդ կ'անարգէ, այլ զԱստուած, որ և տուաւ *մեզ իւր Սուրբ Հոգին։

9 Բայց եղբայրասիրութեան վրայ չէ պարտ գրել ձեզ, քանդի դուք ինքներնին սորված էք Աստուծմէ սիրել զմիմեանս։
10 Եւ այդպէս կ'ընէք զայդ բոլոր եղբայրներուն որ բոլոր Մակեդոնիոյ մէջ են։ Սակայն կ'աղաչենք զձեզ, եղբարք, որ ևս աւելի առաջանաք։
11 Եւ ջանաք կենալ հանդարտ, և ձենէ իւրաքանչիւր օգ գործէ իւր գործը, և աշխատիք ձեր ձեռքերով (ինչպես պատուիրեցինք ձեզ,) որ պարկեշտութեամբ վարուիք արտաքինները հետ, և կարօտ չըլլաք *իմիք։
12 Զենք ուզեր, եղբարք, որ տգիտ ըլլաք ննջեցեալոց համար, որպէս զի չըտրտմիք ինչպէս ուրիշները որ չունին
13 յոյս։ Բանդի եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ և յարեաւ, նոյնպէս և Աստուած ննջեցեալներն Յիսուսի պիտի բերէ անոր հետ։ Վասն զի զայս կ'ըսենք ձեզ Տէրոջը խօսքով, թէ մենք որ կենդանի կը մնանք մինչև ի գալուստն Տեառն, պիտի չանցնինք նրանցմէ ննջեցեալներէն առաջ։ Բանդի Տէրն ինքներնին պիտի իջնէ յերկինից, աղաղակութեան հրամանատ, հրեշտակապետին ձայնիւ և Աստուծոյ փողով, և մեռելոք ի Քրիստոս պիտի յառնեն յառաջագոյն։ Ետոյ մենք որ կենդանի մնացած ենք՝ պիտի յափշտակուինք նրանց հետ ամպովք երկիր ընդ առաջ Տեառն օդոյն մէջ, և այնպէս յաւիտեան պիտի ըլլանք Տէրոջը հետ։ Ուստի միխիթարեցէք զիրար այս խօսքերով։

## Գլ· Ե

1 Բայց ժամերուն և ժամանակներուն համար, եղբարք, չէ պարտ գրել ձեզ։
2 Բանդի դուք ինքներնին ջոկ գիտէք թէ օրն Տեառն իրև գող գիշերով այնպէս
3 կը հասնի։ Երբ ըսեն թէ խաղաղութիւն և ապահովութիւն է, անտեղի

*Ոմանք ձեզ

*Կամ ուժիք



կորուստը պիտի հասնի յանկարծ անոնց վրայ յղուց երկունց պէս, և պիտի չազատին։
4 Բայց դուք, եղբարք, խաւարի մէջ չէք, որ այն օրն իրև գող
5 հասնի ձեր վրայ։ Բանդի դուք ամէնդ էք որդիք լուսոյ և որդիք ցերեկին։
6 Գիշերուան չենք, խաւարի չենք։ Ուրեմն չքնանանք ինչպես ուրիշները,
7 այլ ըլլանք արթուն և զգաստ։ Բանդի անոնք որ կը քնանան՝ գիշերը կը քնանան, և անոնք որ կ'արբենան՝ գիշերը կ'արբենան։
8 Բայց մենք, որ ցերեկուան ենք, ըլլանք զգաստ, և հագնինք մեր վրայ հաւատոյ և սիրոյ զրահը և փրկութեան յուսոյ սաղաւարտ։ Բանդի Աստուած չտրաշեց զմեզ բարկութեան համար, այլ փրկութիւն ունենալու համար Տեառն մերոյ
10 Յիսուսի Քրիստոսի ձեռօք։ Որ մեզի համար մեռաւ, որպէս զի թէ արթուն ըլլանք և թէ քնանանք, անոր հետ ի
11 միասին ապրինք։ Վասն որոյ միխիթարեցէք զիրար և շինուիք ուրեք իրարու, ինչպէս որ կ'ընէք իսկ։
12 Եւ կ'աղաչենք զձեզ, եղբարք, ճանչնալ ձեր աշխատաւորները և վերակացուները ի Տէր, և ձեր խրատիչները։
13 Եւ մեծապէս պատուեցէք զնոսա սիրով անոնց գործին համար։ Իրարու հետ
14 խաղաղութիւն ունեցէք։ Եւ կ'աղաչենք զձեզ, եղբարք, խրատեցէք անկարգները, միխիթարեցէք վհատոսիրտները, ձեռնտու եղէք տկարաց, երկայնամիտ եղէք ամէնուն։
15 Զգուշացէք որ չհատուցանէ ոք ուրուչական չարի չարի։ այլ միշտ բարին զնետ ևս
16 զէ՛ք Թէ իրարու և Թէ ամէնուն։ Ուրախ եղէք հանապազ։
17 Ընդ ատ եղէք աղօթք։
18 Գոհ եղէք ամէն բանի համար։ Զայս է Աստուծոյ կամքն ի Քրիստոս Յիսուս ձեր վրայ։
19 ԶՀոգին մի մարեցնէք։
20 Մարգարէութիւնները մի արհամարհէք։
21 Ամէն բան փորձեցէք։ Զբարին պահեցէք։
22 Զամէն տեսակ բանէ չարէն հեռու կեցէք։
23 Եւ ինքն Աստուած խաղաղութեան կատարեալ սուրբ ընէ զձեզ, և ձեր ամբողջ հոգին և շունչը և մարմինը պահուին անարատ Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի գալստեան։
24 Հաւատարիմ է նա որ կոչեց զձեզ, որ և պիտի կատարէ։
25 Եղբարք, աղօթք ըրէք մեզի համար։
26 Ողջոյն տուէք բոլոր եղբայրներուն
27 սուրբ համբուրիւ։ Կ'երդմնացնեմ զձեզ ի Տէր, որ այս Թուղթը կարդացուի բոլոր սուրբ եղբայրներուն։
28 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շնորհքը ձեզի հետ ըլլայ։ Ամէն։

# ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս, Թեսաղոնիկեցւոց եկեղեցւոյդ Յաստուած Հայր մեր և ի Տէր Յիսուս Քրիստոս·
2 Շնորհք և խաղաղութիւն ձեզ յԱստուծոյ մեր Հօրմէն և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Պարտական ենք միշտ Աստուծմէ ձեզի համար, եղբարք, ինչպէս և կը վայելէ· քանդի ձեր հաւատքը կ'աճի յոյժ, և ձեր ամենուն իրարու հանդուրժութիւն սէրն իրարու վրայ կ'աւելնայ։
4 Նոյ· Այնպէս որ մենք ևս կը պարծե-

Նանաք ձեզմով Աստուծոյ եկեղեցիներուն մէջ՝ ձեր հանդիսութեան և հաստատութեան համար ձեր բոլոր հալածանաց և նեղութեանց մէջ որոց կը համբերէք. Ոչ է Աստուծոյ արդար դատաստանին ապացոյցը, որ դուք արժանանաք Աստուծոյ թագաւորութեան, որոյ համար և նեղութիւն կը կրէք. Քանզի Աստուծոյ առջև իրաւունք է ձեր նեղիչներուն հատուցանել նեղութիւն, և ձեզ նեղելոցդ՝ ձեզի հետ հանգիստ, Տէր Յիսուսի յերկինից յայտնութեամբ ժամակը իւր զօրաւոր հրեշտակներով, բոցոքեալ հրոյ առնուլ վրէժ անհնազանդ որ չեն ճանչնար զԱստուած, և որ չեն հնազանդիր աւետարանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որք պիտի պատժուին յաւիտենական ոտանակմամբ Տէրոջը երեսէն և անոր փառաց զօրութենէն, Երբ գայ փառաւորուիլ իւր սուրբերուն մէջ, և հիանալի ըլլալ բոլոր հաւատացելոց մէջ (քանզի մեր վկայութիւնը ձեր մէջ հաւատացաւ) այն օրը, Ա յս պատճառաւ խակ ձեզի համար ազօթք կ'ընենք միշտ, որ Աստուած մեր արժանի ընէ զձեզ ՅԷր կոչման, և կատարէ ԸՀ բարութեան բոլոր հաճութիւնը, և հաւատոյ գործ՝ զօրութեամբ. Որ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի անունը փառաւորուի ի ձեզ, և դուք ևս ի նմա՝ մեր Աստուծոյն և Տեառն Յիսուսի Քրիստոսի շնորհաց համեմատ։

## ԳԼ. Բ

1 Կ'ապաչենք զձեզ, եղբարք, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գալստեան և մեր ժողովելուն համար անոր քովը, Որ շուտով չխախտիք ի մտաց, և չխռովիք՝ ոչ հոգւով և ոչ խօսքով, և ոչ թղթով իբր թէ մենք, որպէս թէ Քրիստոսի օրը եկած հասած է. Մի ոք խաբէ զձեզ կերպով մը. քանզի ՈՉ ՕՐԸ ՀՂՒՏ ՉԷՆ՝ եթէ չգայ նախ ապստամբութիւնը, և յայտնուի մեղաց մարդ, կորստեան որդին, Հակառակորդն

Հպարտացեալ ամէնուն վրայ որ Աստուած կ'րսուի կամ կը պաշտուի, մինչև Աստուծոյ տաճարին մէջ *պիտի նստի, և ցուցնէ զինք թէ Աստուած է. Չէ՞ք յիշեր որ երբ ձեր քովն էի, կ'րսէի ձեզ այս բաները. Ու հիմա դիտէք թէ ինչ է այն որ կ'արգիլէ, որ յայտնուի նա իր ժամանակին. Քանզի անօրէնութեան խորհուրդն արդէն խակ կը գործանայ. բայց այն որ հիմա կ'արգիլէ, ՀՂՒՒ ԱՐՁԱԿԷ՝ մինչև որ ինք վերնայ ի միջոյ։ Եւ ապա պիտի յայտնուի այն անօրէնը, զոր Տէր [Յիսուս] պիտի սպառէ իր բերնին շնչովը, և պիտի կորուսանէ իր գալստեան երեւմամբ, Եւ որոյ գալուստը Սատանայի ազդեցութեամբն է բոլոր զօրութեամբ և նշաններով և սուտ հրաշիւք, Եւ անիրաւութեան բոլոր խաբէութեամբ կորսուելոց վրայ. քանզի ՉՍիրացան զՃշմարտութիւնն սէրը չընկալան որ փրկուէին. Վասն որոյ և Աստուած պիտի ղրկէ անոնց զօրեզ մոլորութիւն որ հաւատան սուտին, Որպէս զի դատապարտուին ամէնքը որ չհաւատացին ՃշմարտութԻան, այլ յօժարեցան յանօրէնութիւն։

Բայց մեզ պարտ է միշտ գոհանալ Աստուծմէ ձեզի համար Տէրոջմէ սիրուած եղբայրներ, քանզի Աստուած յառաջագոյն ընտրեց զձեզ փրկուիլ Հոգւոյն սրբելովը և Ճշմարտութեան հաւատովը։ Ա՛ր որ կոչեց զձեզ մեր աւետարանաւ՝ տանիլ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի փառքը։

Ուստի, եղբարք, հաստատուն կեցէք, և պինդ բռնեցէք աւանդութիւններէն զորս ազդուեցաք թէ՛ բանիւ և թէ՛ մեր թղթով։ Եւ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս և Աստուած Հայր մեր, որ սիրեց զմեզ և տուաւ մեզ յաւիտենական մխիթարութիւն և բարի յոյս շնորհօք, Մխիթարէ ձեր սիրտերը և հաստատէ զձեզ ամէն բարի խօսքերու և գործերու մէջ։

*Ո՛Հ՜Ե+ Աստուծոյ պէտ պիտի



## ԳԼ. Գ

1 Վերջապէս, եղբարք, մեզի համար աղօթք ըրէք, որպէս զի Տէրոջը խօսքը յառաջանայ և փառաւոր ըլլայ, ինչպէս ձեր մէջ. Եւ որպէս զի ազատինք ա-
2 նիրաւ և չար մարդկանէ, քանզի ամէնքը չունին *հաւատաք. Բայց հաւատարիմ է Տէրը, որ պիտի հաստատէ զձեզ և պա-
4 հէ չարէն. Եւ ունինք ձեր վրայ վստահութիւն ի Տէր, թէ ինչ որ պատուիրեցինք ձեզ՝ կ'ընէք, և պիտի ընէք
5 նաև. Եւ Տէրը ուղղէ ձեր սիրտերն Աստուծոյ սիրոյն և Քրիստոսի համբերութիւնը։

6 Եւ կը պատուիրենք ձեզ, եղբարք, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի անունովը, որ եւս կ'ունաք ամէն եղբօրէ որ անկարգ վարուի, և ոչ այն աւանդութեան պէս զոր առաւ մեննէ.
7 Քանզի դուք ինքնին գիտէք թէ ինչպէս պարտիք նմանուիլ մեզ. քանզի մենք ձեր մէջ անկարգութեամբ չվարուեցանք, Եւ ոչ ուրուք հացը կերանք ձրի, այլ չանիւ և աշխատութեամբ գիշեր և ցերեկ կը գործէինք՝
8 Ծանրանալ չտալու համար ձեզմէ ոմանց։ Ոչ թէ վասն զի իշխանութիւն չունէինք, այլ որպէս զի մեր անձերն
10 ընէնք ձեզ օրինակ որ նմանուիլ ըլլաք։ Մեզ՝ վասն զի մինչ էինք առ ձեզ, զայս կը պատուիրէինք ձեզ, թէ ով որ չուզեր գործել, թող չուտէ Եւս։
11 Արդ՝ կը լսենք թէ ոմանք ձեր մէջ անկարգութեամբ կը վարուին, և գործ չեն գործեր, այլ հետաքրքիր կը շրջին։
12 Ա յեսպիսեաց պատուէր կու տանք և կ'աղաչենք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ հանդարտութեամբ գործեն և ուտեն իրենց հացը։ Բայց դուք, եղբարք,
14 մի ձանձրանաք բարիս գործելէ. իսկ եթէ ոք չհնազանդիր մեր խօսքին այս թղթով, նշանակեցէք զնա, և անոր
15 հետ մի խառնուիք, որ ամչնայ։ Բայց մի իբրև թշնամի համարիք, այլ խրատեցէք իբրև եղբայր։ Եւ ինքն խաղաղութեան Տէրը տայ ձեզ խաղաղութիւն
16 միշտ ամէն կերպով։ Տէրը ձեր ամենուն հետ ըլլայ։
17 Ա յս ողջոյնս իմոյ ձեռքին՝ Պօղոսի է, որ բոլոր Թուղթերուն մէջ նշան է.
18 այսպէս կը գրեմ։ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շնորհքը ձեր ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

# ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի
ըստ հրամանի մեր Փրկչին Աստուծոյ և
†Քրիստոսի Յիսուսի՝ որ մեր յոյսն է,
2 Տիմոթէոսի հարազատ որդւոյն հաւատովք, Շնորհք, ողորմութիւն և խաղա-
3 ղութիւն Աստուծոյ մեր Հօրմէն և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ։
Ինչպէս ազաչեցի զքեզ Ծով յԵփեսոս երբ կ'երթայի Մակեդոնիա, որ պատուիրես ոմանց չսորվեցնել օ-
4 տար ուսմունք, Եւ չնայիլ առասպելներու և ազգահամարներու որ վերջ չունին, որ պատճառ կ'ըլլան վէճերու

†Ո՛Հ՜Ե+ Տեառն Յիսուսի Քրիստոսի

մանաւանդ զան Աստուծոյ *չհնազանդ-
5 Թեանը որ կ'ըլլայ հաւատով, իսկ պատուիրանին վախճանը սէր է սուրբ սրտէ եւ բարի խղճէ եւ անկեղծ հաւատով. Որոց մեռնելով ոմանք զանց
7 ցին ուղղի խօսքերու հեռէ. Կ'ուզեն ըլլալ վարդապետ օրինաց, բ—չը չեն հասկնար, ո՛չ ինչ որ կը խօսին, եւ ո՛չ
8 ինչու համար կը պնդեն. Արդ գիտենք թէ օրէնքը բարի է, եթէ օր գործա-
9 ծէ զայն բան օրինի. Բայց զայս թող գիտենալ որ արդարոց համար չէ օրէնքը, այլ անօրինաց և անհնազանդից համար, ամբարչաց և մեղաւորաց, անսրբոց և պղծոց, դիայր և զիայր
10 հարիանողաց, մարդասպանաց, պոռնկաց, արուագիրաց, մարդագողաց, սուտախօսաց, սեռրդմնից, և կամ ուրիշ ինչ որ հակառակ է ողջամիտ վարդա-
11 պետութեան, Որ Աւետարանին Հանիսա Աստուծոյ փառաւոր աւետարանին Հանձնեա
12 է, որ յանձնեցուցաւ ինձ. Եւ շնորհակալ եմ անոր որ զօրացոյց զիս, այսինքն՝ Քրիստոսի Յիսուսի Տէրոջս մեր,
13 զքաւ այն ապաստատութեան մէջ. Որ առաջ հայհոյիչ էի և հալածիչ և ընդհանրիկ, բայց ողորմութիւն գտայ, քանզի անհաւատութեան մէջ անգի-
14 տութեամբ ըրի. Եւ Տէրոջս մերոյ չքնորհքը շատ եղաւ յոյժ —ա— ի հաւատով և սիրով որ ի Քրիստոս Յիսուս.
15 Ա՛յս խօսքն հաւատարիմ է և բովանդակի ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհք եկաւ փրկել զմեզաւորս, որոց գլուխը ես եմ.
16 Բայց ուստի այնորիկ գտայ ողորմութիւն, որ նախ և առաջ Յիսուս Քրիստոս իմ վրայ ցուցնէ բոլոր երկայնմտութիւնն իբրև օրինակ անոնց որ պիտի հաւատային անոր յաւիտենական
17 կենաց համար. Արդ Թագաւորին յաւիտենից՝ անեղծի և անտեսանելի, †միայնոյն Աստուծոյ փառք և պատիւ

*Կ—ՏՀ անհնազանդ

†ՈՀՆ+ միայն իմաստուն

յաւիտեանս յաւիտենից, Ամէն.
18 Ա՛յս պատուէրը կ'աւանդեմ քեզ, որդեակ իմ Տիմոթէոս, ըստ մարգարէութեանց որ յառաջագոյն եղան քու վրադ, որ անոնցմով պատերազմիս այն բարի պատերազմը, Եւ ունենաս հաւատաք և մաքուր խիղճ մտաց, զոր ոմանք իրենցմէ մէկդի նետելով՝ նաւաբեկութիւն կրեցին հաւատոյ կոգմանէ.
20 Որոց են Հիմենոս և Ալեքսանդրոս, զորս մատնեցի Սատանայի, որ սորվին չհայհոյել.

## Գլ. Բ

1 Աւրդ կ'ապաչեմ նախ քան զամենայն ընել ագօթք, խնդրուած, ազաչանք,
2 գոհութիւն բոլոր մարդոց համար, Մանաւանդ թագաւորաց և բոլոր իշխանաց համար. որ խաղաղ և հանդարտ կեանք վարենք բոլորովին Աստուածպաշտութեամբ և պարկեշտութեամբ.
3 Քանզի այն է բարին և ընդունելին մեր
4 Փրկիչ Աստուծոյն առջև, Որ կ'ուզէ թէ բոլոր մարդիկ փրկուին և գան ի գիտութիւն ճշմարտութեան, Քանզի մի է Աստուած, և մի միջնորդ ի մէջ
6 աստուծոյ և մարդկան, Քրիստոս Յիսուս մարդը, Որ իւր անձը տուաւ փրկանք փոխանակ ամենուն՝ բուն ժամանակին վկայութիւն ըլլալու. Որոյ ես դրուեցայ քարոզիչ և առաքեալ, (Ճշմարիտ կ'ըսեմ [ի Քրիստոս] Ե չեմ սուտը,) հնազանդող վարդապետ հաւատով և ճշմարտութեամբ. Արդ
8 կ'ուզեմ որ արք ամէն տեղ ագօթք բննեն սուրբ ձեռուըներ վերցուելով առանց բարկութեան և երկմտութեան.
9 Նոյնպէս և կանայք պայծուչ հանդերձից, ամօթխածութեամբ և պարկեշտութեամբ զարդարուին զիրենք, ոչ թէ հիւսուածներով կամ ոսկւով կամ մարգարտաց կամ մեծագին հանդերձից.
10 Այլ, Այլ բարի գործերով՝ ինչպես վայել է աստուածպաշտութիւնը դառնող կանանց, կին մարդը թող սորվի լռութեամբ՝ ամենայն հնազանդու-
11



12 թեամբ. Բայց կնոջ մարդոյ հրաման չեմ տար սորվեցնել, և ոչ իշխել
13 ասն, այլ լռել կենալ. Վասնզի առաջ Ադամ ստեղծուեցաւ, Ե տարա Եւա
14 Եւ Ադամ չխաբուեցաւ, այլ կինը խաբուեցաւ և յանցանք գործեց. Սակայն պիտի փրկուի նաւորդեծնութեամբ, եթէ կենան հաւատոյ և սիրոյ և սրբութեան մէջ պարկեշտութեամբ.

## Գլ. Գ

1 Ա՛յս խօսքը հաւատարիմ է. եթէ ոք եպիսկոպոսութեան կը ցանկայ, բարի
2 գործոյ կը ցանկայ. Ուստի պարտ է եպիսկոպոսին լինել անարատ, միոյ կնոջ այր, զգաստ, խոհեմ, պարկեշտ, հիւրասէր, սորվեցուներու յարմար, Մի զինեմոլ, մի հարկանող, *այլ հանդարտ, մի կռուող, մի արծաթասէր.
4 Որ իւր տանը բարւոք վերակացու ըլլայ, իւր զաւակներն հնազանդութեան մէջ պահելով ամենայն ծանրութեամբ.
5 (Ապա եթէ ոք իւր տանը վերակացու ըլլալ չգիտնայ, ի՞նչպէս պիտի ըլլայ հոգաբարձու Աստուծոյ եկեղեցւոյն.)
6 Մի՛ նորահաւատ, որ հպարտանալով չիյնայ Սատանայի դատապարտութեան
7 մէջ. Այլ պարտ է նմա արտաքինները ևս բարի վկայութիւն ունենալ, որ նախատանաց և Սատանայի որոգայթին մէջ չիյնայ.
8 Նոյնպէս և սարկաւագունք ըլլան ծանրաբարոյ, մի՛ երկլեզու, մի գինեսէր, մի՛ գօշագող. Այլ հաւատոյ խորհուրդը պահեն մաքուր խղճի մէջ.
10 Եւ ասոնք նախ թող փորձուին, և ապա, եթէ անմեղադիր գտնուին, կառաքեն
11 սարկաւագութեան պաշտօնը. Նոյնպէս և կանայք ծանրաբարոյ ըլլան, մի չարախօս, այլ զգաստ, հաւատարիմ յամենայնի.
12 Նայնի. Սարկաւագունք ըլլան միոյ կնոջ այր, և բարւոք վերակացուին ընդ
13 որդւոց և իրենց տան. Քանզի անոնք որ բարւոք կը կառավարեն սարկաւագութեան պաշտօնը, բարի ասպնձան կը շահին իրենց, և մեծ համարձակութիւն հաւատոյ մէջ որ ի Քրիստոս Յիսուս.

*ՈՀՆ+ մի զինեսէր, այլ

14 Ասոնք կը գրեմ քեզ յուսալով գալ
15 առ քեզ ի մօտոյ. Բայց եթէ յամենամ, գիտնաս թէ ինչպես պարտ է քեզ շրջիլ Աստուծոյ տանը մէջ, որ է կենդանի Աստուծոյ եկեղեցին, սիւն և
16 հաստատութիւն ճշմարտութեան. Եւ յայտնապէս մեծ է խորհուրդն աստուածպաշտութեան. Աստուած յայտնուեցաւ մարմնով, արդարացաւ հոգւով, երեւեցաւ հրեշտակաց, քարոզուեցաւ հեթանոսաց մէջ, հաւատացուեցաւ յաշխարհի, համբարձաւ փառօք.

## Գլ. Դ

1 Բայց Հոգին յայտնի կ'ըսէ թէ ի յետին ժամանակս ոմանք պիտ ապստամբին ի հաւատոյ, և միտ պիտ դնեն մոլորեցուցիչ ոգիներու և դիւաց ուսմանց,
2 Սաստկասիրտներ կեղծաւորութեամբը,
3 որոց խիղճը խանձուած է. Որ պիտ արգիլուն ամուսնանալ, և եւս պիտ պահեն կերակուրներէ՝ զորս Աստուած ստեղծած է որ հաւատացեալք և ճշմարտութիւնը ճանչցնողները վայելեն
5 գոհութեամբ. Քանզի ինչ որ Աստուած ստեղծեց՝ բարի է, և մերժելու բան չկայ, եթէ գոհութեամբ ընդունուի.
6 Քանզի Աստուծոյ խօսքովը և աղօթքը կը սրբուի. Զիչեցնելով սուրբ եղբայրներուն պիտ ըլլաս բարի պաշտօնեայ Յիսուս Քրիստոսի, և պիտ անոնց հաւատոյ խօսքերով և այն բարի վարդապետութեամբ որուն եղար
7 հետևող. Բայց եւս կեղծ պիտ է պառաւական առասպելներէն, և վարժեցուր քու անձդ աստուածպաշտու-
8 թեան. Քանզի մարմնոյ վարժութիւնը քիչ բանի օգտակար է, բայց աստուածպաշտութիւնն ամէն բանի օգտակար է, որ թէ ներկայ և թէ գալոնի կեանց խոստումն ունի. Ա՛յս խօսքը հաւատարիմ է և բոլորովին ընդունելու-
9

10 Թեան արժանի, Քանզի բան ասող հա-
մար կ'աշխատիք և նախատինք կը
կրենք, վասն զի կենդանի Աստուծոյ
յուսացած ենք, որ բոլոր մարդոց Փրկի-
11 կչն է, մանաւանդ հաւատացելոց։ Այս
12 բաները պատուիրէ և սորվեցուր։ Ոե-
ումանու Թիւղ չանարգէ ոք. այլ օրի-
նակ եղիր հաւատացելոց՝ բանիւ, վա-
րուք, սիրով, *հաւատով և մաքրու-
13 Թեամբ։ Մինչև ես գամ՝ միտ դիր կար-
դալու, յորդորելու, ուսուցանելու։
14 Անհոգ մի ըլլար պարգեւին վրայ որ ի
քեզ է, որ մարգարէութեամբ արուե-
ցաւ քեզ երէցներուն ձեռնադրու-
15 Թեամբ։ Ասոնց վրայ խորհէ և ասոնց
պարապէ, որ քու յառաջդիմութիւնդ
16 յայտնի ըլլայ Թամիոնու։ Զգուշացիր
քու անձիդ և վարդապետութեանդ,
և միշտ ասոնց մէջ կեցիր. քանզի այդ-
պէս ընելովդ պիտի ապրեցնես և՛ ըզ-
քեզ և՛ զանոնք որ կը լսեն քեզ։

## Գլ. Ե

1 Ծերոյն մի սաստեր, այլ իբրև հայր
յորդորէ ՀՆ. երիտասարդներն՝ իբրև
2 եղբայր, Ջատաւուներն՝ իբրև գթած,
զմանկամարգս՝ իբրև զբոյս, ամենայն
3 մաքրութեամբ։ Զայրիս պատուէ, զա-
4 նոնք որ ճշմարտապէս այրի են։ Իսկ
եթէ այրի մը որդիներ կամ թոռնիներ
ունի, թող նախ անոնք սորվին իրենց
տան մէջ որդիական գութ ցուցնել, և
փոխարէն հատուցանել իրենց ծնողաց·
քանզի այն է բարի և ընդունելի Աս-
5 տուծոյ առջև։ Իսկ այն որ ճշմարտա-
պէս այրի է և մինակ մնացած, իր
յոյսն Աստուծոյ վրայ դրած է, և գի-
շեր ցորեկ աղօթից և աղաչանաց կը
6 պարապի։ Բայց փափկասէրը՝ ողջ կեան-
7 քանդն մեռած է։ Եւ այս բաները
8 պատուիրէ, որ անպարտ ըլլան։ Բայց
եթէ ոք իրեններուն և մանաւանդ իւր
ընտանեաց հոգ չտանիր, այնպիսին ու-

*Ոմն.+ հոգւով, հաւատով, †Կամ ամէն բանի մէջ։

բացած է հաւատքը, և չար է քան
9 զանհաւատն։ Այրիներ՝ կարգը թող
դասուի այրին որ վաթսուն տարեկան
10 պակաս չէ, միայ առն կնոջ, բարի գոր-
ծերով վկայեալ։ Թէ որդիներ սնուց-
ած ըլլայ, թէ հիւրեր ընդունած ըլ-
լայ, թէ սուրբերուն ոտներները լուա-
ցած ըլլայ, թէ նեղելոց օգնութիւն ը-
րած ըլլայ, թէ ամէն գործ բարեգոր-
11 ծութեան մէջ յառաջացած ըլլայ։ Բայց
մերժէ մանկամարդ այրիները. քանզի
երբ Քրիստոսի դէմ չտնչիլով կ'ըլ-
լան անձնասէր հնչասարութեան, ա-
12 մուսնանալ կ'ուզեն։ Ու դատապար-
ութիւն կ'ընդունին, քանզի մեկզ
նեանցին իրենց առաջին հաւատքը։
13 Նաև կը սորվին ծոյլ ըլլալ, չըլլոզք
տանէ ի տուն, և ոչ միայն ծոյլ, այլ և
չաղախօս և հետաքրքիր, և կը խօսին
14 անպատեհ բաներ։ Ուստի կ'ուզեմ որ
մանկամարդ կանայք ամուսնանան, որ-
դիս ծնանին, ըլլան անաչէն և նախա-
տինաց պատճառ չտան հակառակոր-
15 դին։ Քանզի արդէն ոմանք Սատանայի
16 հետևէն խոտորեցան։ Եթէ հաւատա-
ցեալ այր կամ կին մարդ այրիներ ու-
նի, թող օգնութիւն ընծ անոնց, և ե-
կեղեցին չծանրաբեռնէնի, որ ճշմարտա-
պէս այրիներուն օգնութիւն ընէ։
17 Լաւօրէն վերակացութիւն ընող երէ-
ցանց կրկին պատուոյ արժանի թող
համարուին, մանաւանդ անոնք որ
կ'աշխատին խօսքը †ուսուցանել և սորվե-
18 ցնելով։ Քանզի Գիրքը կ'ըսէ Թե
կապի մէջ աշխատող եզին գունդը չկա-
պես, և Թէ՝ Մշակն արժանի է իւր
19 վարձուն։ Երէցու վրայ ամբաստանու-
Թիւն մի ընդունիր, բայց միայն երկու
20 կամ երեք վկայից։ Զանոնք որ մեղք
կը գործեն՝ ամենուն առջև յանդիմա-
21 նէ, որ և ուրիշները վախնան։ Վկայու-
Թիւն կը դնեմ Աստուծոյ առջև և
*Յիսուս Քրիստոսի և ընտրեալ հրեշ-
տակաց, որ այս բաները պահես առանց
նախապաշարման, բան մի ձեռնա-

*Ոմն.+ Տէր Յիսուս



22 Թեամբ չընդունիլով։ Շատով ուրիշ մէկ
ձեռք չդնես, և ուրիշներուն մեղաց հա-
ղորդ չըլլաս. զան զքեզ մաքուր պահէ։
23 Այսու հետև լոկ ջուր չխմես, այլ քիչ
մը գինի ևս գործածէ ստամոքսիդ և
յաճախ հիւանդութեանցդ համար։
24 Կան մարդիկ որոց մեղքը յայտնի է՝ն,
և յառաջագոյն դատաստանի հասած.
25 և կան՝ որոց ևս գործերն յայտնի
են՝ն. և անոնք բարի որ ուրիշ կերպ են՝ չեն
կրնար ծածուկ մնալ։

## Գլ. Զ

1 Ամենքը որ ծառայութեան լծոյ տակ
են՝ իրենց տէրերն ամէն պատուոյ ար-
ժանի համարին, որ Աստուծոյ անունը
2 և վարդապետութիւնը չհայհոյուի։ Եւ
անոնք որ հաւատացեալ տէրեր ունին,
թող չարհամարհեն զան զի եղբայր
են, այլ ծառայեն մանաւանդ, քանզի
հաւատացեալ են և սիրելի, որ բարե-
բարութեան մասնակից են. սորվեցուր
3 այս բաները և յորդորէ։ Եթէ ոք ու-
րիշ կերպ սորվեցուներ, և չըսէ Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի առջևտիսո
խօսքերը, և այն վարդապետութիւնը
որ աստուածպաշտութեան համեմատ է՝
4 Ամբարիշտ հպարտացած է և ոչինչ գի-
ուէ, այլ տխուրացած է վէճերով և բա-
նակռուութեամբ. յորոց կ'ըլլան նա-
խանձ, կռիւ, հայհոյութիւններ, չար
5 կասկածներ, Ունայն վէճեր մեռած ա-
պականեալ և ճշմարտութենէ հեռա-
ցեալ մարդոց, որ չահավաճառութիւն
կը համարին աստուածպաշտութիւնը.
6 այնպիսիներէն մէկզի կեցիր։ Սակայն
աստուածպաշտութիւնը բաւականու-
Թեամբ հանդերձ մեծ շահավաճառու-
7 Թիւն է։ Քանզի ոչինչ բերինք յաշխարհ,
և յայտնի է Թէ ոչինչ կրնանք տանել՝
8 Այլ ունենալով կերակուր և հանդերձ՝
9 անոնցմով բաւականանանք։ Բայց ա-
նանք որ կ'ուզեն հարստանալ, կ'ինան
փորձութեան և որոգայթի և բազում
անմիտ և վնասակար ցանկութիւններու
մէջ, որ սատակման և կորստեան մէջ

10 կ'ընկղմեն զմարդիկ։ Քանզի ամէն չա-
րութեան արմատ արծաթասիրութիւնն
է. որուն ունանք անձնասէր ըլլալով՝
մոլորեցան ի հաւատոց և խոցեցին զի-
րենք չատ ցաւերով։
11 Բայց դուն, օվ մարդ Աստուծոյ,
փախիր այս բաներէն, և դնա զհետ
արդարութեան, աստուածպաշտու-
Թեան, հաւատոյ, սիրոյ, համբերու-
12 Թեան, հեզութեան։ Պատերազմէ հա-
ւատոյ բարի պատերազմը, բռնէ յաւի-
տենական կեանքը առ որ կոչուեցար,
և գաւանեցար բարի գաւանութիւնը
13 չատ վկաներու առջև։ Կը պատուիրեմ
քեզ առաջի Աստուծոյ որ կենդանի
կ'ընէ զամենայն, և Քրիստոսի Յիսուսի
որ Պոնտացւոյ Պիղատոսի առջև վկա-
14 յեց բարի գաւանութիւնը, Որ դուն
այն պատուէրը պահես ամրիծ անա-
րատ մինչև Տեառն մերոյ Յիսուսի Քր-
15 Քրիստոսի յայտնութիւնը, Զոր իւր ժա-
մանակին պիտի ցուցնէ Երանելին և մի
միայն Հզօր, Թագաւորաց Թագաւորաց
16 և Տէրն տէրանց. Որ միայն ունի ան-
մահութիւն և անմերձենալի լուսոյ մէջ
կը բնակի, զոր ոչ ոք ի մարդկանէ տե-
սաւ, և ոչ տեսանել կարող է, որուն պա-
տիւ և զօրութիւն յաւիտեան, Ամէն։
17 Մեծատանց որ այս աշխարհի մէջ
են՝ պատուէր տուր չհպարտանալ, և
չդնել իրենց յոյսն անստոյգ հարստու-
Թեան վրայ, այլ կենդանի Աստուծոյ,
որ ամէն բան կուտայ մեզ վայելել ա-
18 ռատապէս, Բարիս գործել, հարստա-
նալ բարի գործերով, ըլլալ առատա-
19 ձեռն, հաղորդ եղբայրասիրութիւնը,
գանձել իրենց անձերուն բարի հիմն հան-
դերձելոյն համար, որ յաւիտենական
կեանքն առանան։
20 Ով Տիմոթէոս, †եղի զգուշ աւան-
դը պահէ, փախչելով պիղծ ունայնա-
բանութիւններէ և սուտանուն գիտու-
21 Թեան հակառակութիւններէն, Զոր
ոմանք գաւանելով մոլորեցան ի հա-
ւատոյ։ Շնորհք ընդ քեզ։ Ամէն։

*Ոմն.+ Յիսուս Քրիստոս

# ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

### ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի
կամքն Աստուծոյ ըստ խոստման կեա-
2 նաց որ է ի Քրիստոս Յիսուս, Տիմո-
թէոսի սիրելի որդւոյս շնորհք, ողոր-
մութիւն և խաղաղութիւն յԱստուծոյ
Հօրէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրի-
ստոսէ։
3 Շնորհակալ եմ Աստուծոյ որ կը
պաշտեմ ի նախնեաց մաքուր խղճմ-
տ(երբ անպակաս կը յիշեմ զքեզ իմ ա-
4 ղօթիցներուս մէջ զոյգ և զցերեկ, ցան-
կանալով տեսնել զքեզ, և յիշելով ար-
տասուքդ, որ ուրախութեամբ լցուիմ,)
5 Միտք բերելով անկեղծ հաւատքը որ
ի քեզ, որ բնակեցաւ յառաջագոյն ի
հանիդ Լաւոդէ և ի մայրդ Եւնիկէ,
և համոզուած եմ թէ ի քեզ ևս կայ։
6 Վասն որոյ կը յիշեցունեմ քեզ ար-
ծարծել Աստուծոյ պարգեւը, որ տրուած
7 է քեզ իմ ձեռնադրութեամբս։ Քանզի
Աստուած երկչոտութեան հոգի
չտուաւ մեզ, այլ զօրութեան և սիրոյ
8 և զգաստութեան։ Ուստի մի համա-
րիր Տեառն մերոյ վկայութիւնը, և
ոչ զիս կապեալս անոր համար. այլ
մասնակից եղիր աւետարանին չարչա-
9 րանաց ըստ զօրութեան Աստուծոյ։ Որ
փրկեց զմեզ և սուրբ կոչմամբ կոչեց,
ոչ թէ մեր գործերուն համեմատ, այլ
ըստ իւր նախասահմանութեան և շնոր-
հաց, որ տրուեցաւ մեզ Քրիստոս
Յիսուսիս յառաջ քան զժամանակս
10 յաւիտենից, բայց հիմա յայտնուեցաւ
երեւմամբ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի. որ խափանեց զմահ, և հանեց
ի լոյս զկեանս և զանմահութիւն ա-
11 ւետարանին միջոցաւ։ Որոյ ես դրաւե-
ցայ քարոզիչ և առաքեալ և վարդա-
12 պետ հեթանոսաց։ Վասն որոյ և կը
կրեմ այս չարչարանքը. բայց ամօթ
չեմ համարիր, քանզի գիտեմ թէ որու
հաւատացած եմ, և համոզուած եմ
թէ ինչ որ աւանդեցի անոր՝ կրնայ
13 պահել մինչև այն օրը։ Պէտք բռնի այն
ողջմտիկ խօսքերուն օրինակը զորս լսե-
ցիր ինէ, հաւատով և սիրով որ ի Քրի-
ստոս Յիսուս։
14 Պահէ բարի աւանդն ի ձեռն Հոգւոյն
15 Սրբոյ որ ի մեզ բնակած է։ Գիտես որ
երես դարձուցին ինէ ամէնքը որ ի նո-
յնիսկ յորոց են Փիւգեղոս և Հերմո-
16 գինէս։ Տէրը ողորմութիւն տայ Ոնե-
սիփորոսի տան, քանզի հանգոյց զիս
շատ անգամ, և ամօթ չհամարեցաւ
17 չղթայս։ Այլ երբ եկաւ Հռոմ, փընտ-
ռեց զիս բազում ջանիւ, և գտաւ։
18 (Տէրը տայ անոր որ այն օրը ողորմու-
թիւն գտնէ Տէրոջմէն։) և ինչեսի
մէջ ևս թէ որչափ սպասաւորութիւն
ըրաւ Էյն, դուն քաջ գիտես։

### ԳԼ. Բ

1 Աւրդ դու, որդեակ իմ, զօրացիր յՀ-
2 նարաւնդ որ է ի Քրիստոս Յիսուս։ Եւ
այն բաները զորս լսեցիր ինէ բազում
վկայից՝ յանձնէ հաւատարիմ մարդոց,
որ կարող ըլլան ուրիշներուն ևս սոր-
3 վեցնել։ Աւրդ դուն հաստիերի նեղու-
թիւններու իբրև բարւոք զինուոր Յի-
4 սուսի Քրիստոսի։ Ոչ ոք որ զինուոր է՝
կը զբաղի այս կենաց գործերով, որպէս
5 զի հաճոյ ըլլայ զօրավարին։ Եւ եթէ ոք
կը մրցի, չպսակուիր, եթէ չմրցիր ըստ
6 օրինի։ Աշխատող երկրագործին պարտ
է նախ պտուղներէն վայելել։ Իմացիր
ինչ որ կ'ըսեմ. Տէրը խնամութիւն
8 տայ քեզ յամենայնի. Յիշէ զՅիսուս
Քրիստոս Դաւթի ցեղէն, յարուցեալ
9 ի մեռելոց ըստ աւետարանիս, Որուն
կը չարչարուիմ իբրև չարագործ կա-
պանօք չափ. բայց Աստուծոյ խօսքը
10 կապուած չէ։ Ուստի ամէնքին կը
համբերեմ ընտրելոց համար, որ և ա-
նոնք հասնին փրկութեան որ ի Քրիս-
տոս Յիսուս յաւիտենական փառօք։
11 Ա՛յս խօսքն հաւատարիմ է. վասն զի
եթէ մեռանք ընդ նմա, ընդ նմա հնա
12 և պիտի ապրինք. եթէ համբերենք,
ընդ հնա և պիտի թագաւորենք. ե-
թէ ուրանանք զնա, նա ևս պիտի ու-
13 րանայ զմեզ. եթէ չհաւատանք, ինք
կը մնայ հաւատարիմ, չկրնար ուրա-
14 նալ իւր անձէն։ Զայնք յիշեցուր՝ Տէ-
րոջը առջև վկայութիւն դնելով, չի-
նելէ բանակռիւ յանօգուտս, ի կործա-
15 նումն լսողաց։ Ջանա ընծեր կացուցա-
նել քեզ անձդ Աստուծոյ առջև, իբրև
առանց ամօթոյ, ճշմարտութեան խօսքն
16 ուղիղ բացատրելով։ Բայց մեկուկ կե-
ցիր պիղծ և ունայն խօսքերէ. քանզի
անոնք առելի յառաջ կ'երթան ամբա-
17 րշտութեան մէջ, Եւ անոնց խօսքը
ճաշակ կը գտնէ քաղցկեղի պէս. որոց
18 կարգն են Հիմենէոս և Փիղետոս. Որ
ճշմարտութենէ մոլորեցան, և կ'ըսեն
թէ հարութիւն արդէն եղած
19 է, և կը կործանեն ոմանց հաւատքը։
Բայց Աստուծոյ հիմն հաստատուն կը
կենայ, և ունի այս կնիքը, Թէ Տէրը
կը ճանչնայ զանոնք որ իւրն են. և՝
Անիրաւութենէ մեկուկ թող կենայ այն
ամէնը որ կ'անուանէ Քրիստոսի անու-
20 նը։ Սակայն մեծ տան մէջ կան ոչ միայն
ոսկեղէն և արծաթեղէն ամաններ, այլ
և՝ փայտեղէն և հողեղէն, և ոմանք՝ ի
21 պատիւ, և ոմանք՝ յանարգանս։ Ու-

*Ոմն։ Տէրոջը



սի եթէ ոք մաքրէ իւր անձն այսպի-
սի բաներէ, պիտի ըլլայ անօթ պատ-
ուական, սրբուած և պիտանի Տեառն,
ամէն բարի գործերու պատրաստուած։
22 Երիտասարդական ցանկութիւններէ ևս
փախիր, և գնա դէնա արդարութեան,
հաւատոյ, սիրոյ, խաղաղութեան ա-
նոնց հետ որ Տէրոջը անուանը կը կոչեն
23 մաքուր սրտով։ Բայց յիմար և անի-
մաստ վէճերէ հրաժարէ, գիտնալով
24 թէ անոնցմէ կը ծնանին կռիւներ. Եւ
Տէրոջը ծառային չի պարտ կռուիլ,
այլ՝ լինել քաղցր առ ամենեսին, ու-
սուցանող, անհնակալ, Հեզութեամբ
25 խրատելով հակառակողները, որ թեր-
ևս Աստուած տայ անոնց ապաշխարու-
26 թիւն ճանչնալ ճշմարտութիւնը, Եւ
սթափին Սատանային որոգայթէն, որ-
մէ բռնուած են ըստ կամայ նորա։

### ԳԼ. Գ

1 Եւ զայս գիտցիր որ չար ժամանակներ
2 պիտի գան նաքի օրերը. Քանզի մար-
դիկ պիտի ըլլան անձնասէր, արծա-
թասէր, մեծաբանութեան, հպարտ, հայ-
հոյիչ, ծնողաց անհնազանդ, տպե-
3 բախտ, անսուրբ, Անգութ, անհաշտ,
բանսարկու, անժուժկալ, դաժանա-
4 բարոյ, անբարեսէր, Մատնիչ, յան-
դուգն, գոռոզ, ցանկասէր մանաւանդ
5 քան աստուածասէր. Որ ունին աստ-
ուածպաշտութեան կերպարանքը, բայց
ուրացած են անոր զօրութիւնը. ա-
6 նոնցմէ ևս խոյրէ. Քանզի սոսկացիկ են
որ կը սպրդին տուները, և գերի կ'ը-
նեն մեղօք բեռնաւորեալ ախտաձիտ
կիներ, մարեալ պէս պէս ցանկութ-
7 թիւններէ, Որ միշտ կը սորվին, և եր-
բէք չեն կրնար հասնիլ ճշմարտութիւ-
8 նը ճանչնալու։ Այլ ինչպէս Յանէսն և
Յամբրէս հակառակ կեցան Մովսէսի,
նոյնպէս և սոքա հակառակ կը կե-
նան ճշմարտութեան. ապականեալ մի-
տօք մարդիկ, հաւատոյ մէջ անպիտանա-
9 ներ են։ Բայց աւելի յառաջ պիտի
չերթան, քանզի սոցա անմտութիւնն

յայտնի պիտի ըլլայ ամենուն, ինչպէս
10 եղաւ անոնցը, իսկ դուն ուղեղակ ե-
դար իմ վարդապետութեանս, վար-
մանս, դիտաւորութեանս, հաւատոյս,
երկայնմտութեանս, սիրոյս, համբե-
11 րութեանս, Հալածանացս, չարչարա-
նացս, ինչպէս եղան ինձ յԱնտիոք՝
յԻկոնիա՝ և ի Լիւստրա, որպիսի հալա-
ծանաց համբերեցի, և ամենեն ազա-
12 ակց զիս Տէրը։ Եւ բոլոր անոնք որ
կ՚ուզեն ասաուածապաշտութեամբ ապ-
րիլ ի Քրիստոս Յիսուս՝ պիտի կրեն
13 հալածանք։ Բայց չար և խաբեայ մարդիկ պիտի յառաջանան չարութեան
14 մէջ՝ մոլորեցուցնելով և մոլորելով։ Սա-
կայն դուն հաստատուն կեցիր այն բա-
ներուն մէջ զորս ուսար և հաւատաի
եղար, քանզի գիտես թէ որմէ ուսած
15 ես. Եւ նաև ի մանկութենէդ հետ գիտես
գրոց գիրս, որ կրնան իմաստուն ը-
նել զքեզ ի փրկութիւն հաւատալ որ
16 ի Քրիստոս Յիսուս։ *Բոլոր Գիրքն Աս-
տուածով շունչն է, և օգտակար՝ սոր-
վեցուցանելու, յանդիմանելու, ուղղելու
17 և խրատելու յարդարութիւն, Որպէս
զի Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝
պատրաստուած բոլոր բարի գործերու։

## Գլ. Գ

1 **Ա**յս ալ գիտցիր թէ վերջին օրերը
դժուարին ժամանակներ պիտի ըլլան։
2 Վասն զի մարդիկ պիտի ըլլան ինքնասէր,
արծաթասէր, պարծենկոտ, հպարտ, հայ-
հոյ, ծնողաց անհնազանդ, շնորհակալու-
3 թենէ զուրկ, անսրբութեան մէջ ինկած,
անգութ, չհաշտուող, զրպարտիչ, անպ-
ստակալ, դաժան, բարուն թշնամի,
4 մատնիչ, անխոհեմ, ամբարտաւան, հե-
ճոյից սիրող քան թէ Աստուծոյ սիրող,
5 որոնք ունին աստուածպաշտութեան
կերպարանք, բայց անոր զօրութիւնը
կ՚ուրանան։ Ասոնցմէ ալ հեռու կեցիր։
6 Վասն զի ասոնցմէ են անոնք որ տուն
տուն կը մտնեն և կը գերեվարեն տկար
կիներ, որոնք մեղքերով ծանրացած են,
և զանազան ցանկութիւններու կը տան-
7 ին առաջնորդուին, Որոնք միշտ կը ու-
սանին, և երբեք չեն կրնար ճշմարտու-
8 թեան գիտութեան հասնիլ։ Ինչպէս Յան-
նէս և Յամբրէս հակառակեցան Մովսէսի,
նոյնպէս ասոնք ալ կը հակառակին ճշ-
մարտութեան, մարդիկ որ խելքերնին
կորսնցուցած են, և հաւատոյ կողմանէ
9 անյաջողակ են։ Բայց ասոնք աւելի
յառաջ չեն երթար, վասն զի անոնց
յիմարութիւնը բոլորին յայտնի պիտի
ըլլայ, ինչպէս նաև անոնցմէ առաջուան
մարդոցը եղաւ։

10 Բայց դուն իմ վարդապետութեանս,
կերպարանքիս, նպատակիս, հաւատոյս,
համբերութեանս, սիրոյս, համբերու-
11 թեանս, հալածանացս, չարչարանացս
հետևեցար, որ եղան ինձ Անտիոք, Իկո-
նիա և Լիւստրա, որպիսի հալածանաց
համբերեցի, և ամենեն ազատեց զիս
12 Տէրը։ Եւ բոլոր անոնք որ կ՚ուզեն աս-
տուածապաշտութեամբ ապրիլ ի Քրիս-
տոս Յիսուս՝ պիտի հալածուին։
13 Չարագործ մարդիկ և խաբեբայ մար-
դիկ պիտի յառաջանան չարութեան
մէջ՝ մոլորեցնելով և մոլորելով։
14 Սակայն դուն հաստատուն կեցիր այն
բաներուն մէջ զորս ուսար և հաւատաի
եղար, քանզի գիտես թէ որմէ ուսած
15 ես. Եւ նաև ի մանկութենէդ հետ գիտես
գրոց գիրս, որ կրնան իմաստուն ը-
նել զքեզ ի փրկութիւն հաւատալով որ
16 ի Քրիստոս Յիսուս։ *Բոլոր Գիրքն Աս-
տուածով շունչն է, և օգտակար՝ սոր-
վեցուցանելու, յանդիմանելու, ուղղելու
17 և խրատելու յարդարութիւն, Որպէս
զի Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝
պատրաստուած բոլոր բարի գործերու։

## Գլ. Դ

1 Ես կը պատուիրեմ քեզ առաջի Աս-
տուծոյ և Յիսուս Քրիստոսի, որ պի-
տի դատէ կենդանիս և մեռելս իր յայ-
տնութեանն և թագաւորութեան
2 իւրոյ՝ Քարոզէ խօսքը, մնադրու-
թեամբ պարապէ ժամուն և առանց ժամուն, դատէ, յանդիմանէ, յորդորէ
ամենայն երկայնմտութեամբ
3 և վարդապետութեամբ։ Քանզի ժա-
մանակ պիտի գայ որ պիտի չհանդուր-
ժեն առողջահամ վարդապետութեան, այլ ի-
րենց ցանկութիւններուն համեմատ
պիտի դիզեն իրենց վարդապետներ ի-
4 րենց լսելեաց մրմնջելովը։ Եւ ճշմար-
տութենէն պիտի դարձունեն իրենց
լսելիքը, և պիտի մոլորին առասպելնե-
5 րու։ Բայց դուն արթուն կեցիր
յամենայնի, նեղութիւններու համբե-
րէ, աւետարանչի գործ գործէ, կա-
6 տարէ քու պաշտօնդ։ Քանզի ես ար-
դէն ընծայուելու եմ, և ժամանակս
7 ժամանակի հասած է։ Բարւոք պա-
տերազմը պատերազմեցայ, ընթացքը
8 կատարեցի, հաւատքը պահեցի։ Այ-
սու հետև կայ ինձ դրուած արդարութեան
պսակը, զոր Տէրը, արդար Դատաւորը,
պիտի տայ ինձ այն օրը, և ոչ ինձ մի-
այն այլ և ամենուն՝ որ անոր յայտ-
նութիւնը սիրեցին։
9 Ջանա վաղ գալ առ իս։ քանզի Դեմաս
10 զիս սիրելով դայժմս աշխարհ,
և գնաց Թեսաղոնիկէ։ Կրեսկէս՝ Գա-
11 ղատիա, Տիտոս՝ Դալմատիա։ Ղուկաս
միայն ընդ իս է։ Զմարկոս առնուս
բերես հետդ, քանզի օգտակար է նա
12 ինձ սպասաւորութեան համար։ Եւ ես
13 զՏիւքիկոս դրկեցի Յեփեսոս։ Երբ գաս
կուզեն զոր Թռոյի Տրովադա Կարպոսի
քով, երբ կու գաս, բերէ, նաև մատ-
եանները, մանաւանդ մագաղաթները։
14 Ալեքսանդրոս դարբին չատ չարութիւն
ըրաւ ինձ։ Տէրը *հատուցանէ նմա ա-
15 ռած գործերուն համեմատ։ Դուն ևս
զգուշանալ անկէ, քանզի շատ հակա-
16 ռակեցաւ մեր խօսքերուն։ Առաջին
անգամ որ պատասխան տուի առաջին
անգամ, իմ կողմանէս ոչ ոք կեցաւ ին-
ձի հետ, այլ ամենքը թողին զիս։ այս
17 չհամարուի անոնց։ Բայց Տէրը կեցաւ
քովս և զօրացուց զիս, որ քարոզու-
թիւնն ի լիոյ իմ միջոցիս, և բոլոր
հեթանոսները լսեն։ և ազատեցայ ա-
18 ռիւծուն բերնէն։ Եւ Տէրը պիտի ա-
զատէ զիս ամեն չար գործէ, և ապա-
հովութեամբ պիտի հասցուցանէ իր երկ-
նային թագաւորութիւնը։ Նմա փառք
յաւիտեանս յաւիտենից, Ամէն։
19 Ողջոյն տուր Պրիսկեայ և Ակիւղասայ,
20 և Ընեսոփորայ տանը։ Երաստոս մնաց

*Կամ Բոլոր աստուածաշունչ Գիրքն օգտակար է։

*Ոմանք պիտի հատուցանէ



Ի Կորնթոս. և զՏրոփիմոս Թռոյի Մի-
21 լետոս հիւանդացեալ։ Ջանա գալ յա-
ռաջ քան զձմեռն։ Ողջոյն կու տան
քեզ Եւբուղոս և Պուդէս և Լինոս և
22 Կղոդիա և բոլոր եղբարքդ։ Տէր Յիսուս
Քրիստոս քու հոգւոյդ հետ ըլլայ։ Շը-
նորհք ընդ ձեզ։ Ամէն։

# ԹՒՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ Առաքեալին
## Ա՛Ր ՏԻՏՈՍ

### Գլուխ Ա.

1 Պօղոս ծառայ Աստուծոյ և առաքեալ
Յիսուսի Քրիստոսի, ըստ հաւատոյ ընտ-
րելոցն Աստուծոյ, և գիտութեան ճըշ-
մարտութեան որ է ըստ աստուածա-
2 պաշտութեան, Յաւիտենական կենաց
յոյսով, զոր ինքն անստուտ Աստուած
խոստացաւ յառաջ քան զժամանակս
3 յաւիտենից, Բայց յայտնեց իւր խօսքը
բուն ժամանակին քարոզութեամբ, որ
յանձնուեցաւ ինձ ըստ հրամանի Աստու-
4 ծոյ Հոգւոյ մերոյ, Տիտոսի, հարազատ
որդւոյս հասարակաց հաւատով, շնորհք
*և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ և
ի Տէրոջմէ Յիսուսէ Քրիստոսէ մեր
Փրկչէն։
5 Վասն այսորիկ թողի զքեզ Կրետէ,
որ ինչ պակաս որ կայ, ուղղես, և ի-
րաքանչիւր քաղաքի մէջ կարգես ե-
րէցներ, ինչպէս պատուիրեցի քեզ։
6 Եթէ ոք անմեղադրելի է, միոյ կնոջ
այր և հաւատացեալ տղայ ունի, որ
անառակութեան համար ամբաստան-
7 ուած չեն կամ անհնազանդ։ Քանզի ե-
պիսկոպոսին պարտ է անմեղադրելի ըլ-
լալ Աստուծոյ անտեսի պէս, ոչ յան-
դգուն, ոչ բարկացող, ոչ գինեմոլ,
8 ոչ հարկանող, ոչ զշաքեղ, Այլ հիւ-
րասէր, բարեսէր, խոհեմ, արդար,
9 սուրբ, ժուժկալ, Հաստատ բռնելով

*Ոմանք՝ ողորմութիւն և.

վարդապետութեան հաւատարիմ խօս-
քը, որ կարող ըլլայ ողջմախօս վարդա-
պետութեամբ յորդորել, և յանդիմա-
10 նել հակառակորդները։ Քանզի շատ
են անհնազանդք, զրուխօսք և մոա-
խաբք, մանաւանդ անոնք որ թլփա-
11 տութենէ են։ Զորս պարտ է պատան-
ձեցունել, որ ամբողջ տուներ կը կոր-
ծանեն, և կը սորվեցնեն անպատեհ
12 բաներ զօրաքաղութեան համար։ Ա-
նոնցմէ մին, բուն իսկ անոնց մարգա-
րէն, ըսաւ, Կրետացիք միշտ սուտկա-
ներ են, չար գազաններ, զառապուկ ապրուստ։
13 Այս վկայութիւնը ճշմարիտ է։ վասն
որոյ սաստիկ յանդիմանէ զանոնք, որ
14 առողջանան ի հաւատս։ Եւ հնոյին հր-
էական առասպելից և ճշմարտութե-
նէ հեռացող մարդոց պատուիրեներուն
15 Այնը բան մաքուր է մաքուրներուն,
բայց պղծերուն և անհաւատներուն
չկայ մաքուր բան, այլ անոնց թէ միա-
16 քը և թէ խիղճը պղծած են։ Կը
խոստովանին թէ կը ճանչնան զԱստ-
ուած, բայց կ՚ուրանան գործով, ըն-
լալով պղծ և անհնազանդ, և առ ա-
մենայն բարի գործ անպիտան։

### Գլ. Բ

1 Բայց դուն խօսէ ինչ որ կը վայելէ ողջ
2 ճամիա վարդապետութեան. Երկերուն՝

զգաստ ըլլալ, ծանրաբարոյ, խոհեմ, ողջամիտ՝ հաւատալով, սիրով, համբերութեամբ։ Նոյնպէս և պառաւանց այնպիսի վարք առնելով, ինչպէս կը վայելէ սրբութեան, ոչ բանսարկու ըլլալ, ոչ *գինեմոլ, այլ բարի խրատուող։ Որ խրատեն զնաննկամարդս 5 ըլլալ այրասէր և որդեսէր, խոհեմ, ողջախոհ, անարատ, բարեգործ, հնազանդ իրենց արանց, որպէս զի չհայհոյեսի Աստուծոյ խօսքը։ Նոյնպէս և զերիտասարդս յորդորէ խոհեմ ըլլալ։ 7 Յամենայնի ցուցնելով քու անձդ օրինակ բարի գործերու, վարդապետութեան մէջ անեղծութիւն, պարկեշտութիւն, 8 խրատ, ողջամիտ և անմեղադրելի խօսք, որ հակառակ կեցգն ամչնայ, և մեր վրայ չար բան չունենայ բերելու։ Ծառաներուն ոտնվեր իրենց տէրանց հնազանդ ըլլալ, և յամենայնի հաճելի։ 10 ոչ հակառակախօս, ոչ խորտոց, այլ բոլորովին բարի հաւատարմութիւն ցուցնեն, որ ամէն բանի մէջ զարդարեն մեր փրկչին Աստուծոյ վարդապետութիւնը։ 11 Քանզի Աստուծոյ փրկարար շնորհքը երեւեցաւ բոլոր մարդոց, 12 և կը խրատէ զմեզ որ ուրանալով ամբարշտութիւնը և աշխարհային ցանկութիւնները, սաղրիւք ապրինք այժմու աշխարհիս մէջ զգաստութեամբ և արդարութեամբ և բարեպաշտութեամբ, 13 ապասելով երանելի յուսոյն, և մեծին Աստուծոյ և մեր Փրկչին Յիսուսի Քրիստոսի փառաց յայտնութեան։ Որ տուաւ իւր անձը մեզի համար, որ ազատէ զմեզ ամէն անօրէնութենէ, և մաքրէ իրեն սեպհական ժողովուրդ բարի գործերու 15 նախանձաւոր։ Այդ բաները խօսէ և յորդորէ և յանդիմանէ բոլորովին հասակաւորով։ ոչ ոք անարգէ զքեզ։

## Գլ. Գ

1 Յիշեցուր անոնց հնազանդիլ իշխանութեանց և պետութեանց և հպատակ

*Յոյն. ծառայացեալ բազում դինւոյ

ըլլալ, և պատրաստ գտնուիլ ամէն 2 բարի գործերու։ Ոչ զոք հայհոյել, չըլլալ կռուարար, այլ հեզ, ցուցնել ամէն մարդու բոլորովին քաղցրութիւն։ 3 Քանզի մենք ևս երբեմն էինք անմիտ, անհնազանդ, մոլորեալ, և կը ծառայէինք պէս պէս ցանկութեանց և հեշտութեանց։ Կը վարուէինք չարութեամբ և նախանձու, ատելի էինք, և 4 կ'ատէինք զիրար։ Բայց երբ յայտնուեցաւ մեր Փրկչին Աստուծոյ քաղցրու- 5 թիւնը և մարդասիրութիւնը, Ոչ թէ արդարութեան գործերէն զոր ըրինք մենք, այլ բան իւր ողորմութեան փրկեց զմեզ վերծանին ծնանիլ աւազանին միջոցաւ և նորոգմամբ Հոգւոյն Սրբոյ, 6 Զոր առաւ թափեց Յիսուս Քրիստոս մեր Փրկչին վրայ մեզ, 7 Որ անոր շնորհքն արդարացած՝ ըլլանք ժառանգ յաւիտենական կենաց 8 յուսով։ Այս խօսքն հաւատարիմ է. և կ'ուզեմ որ այս բաներուն վրայ հաստատուն ըլլաս, որպէս զի հաւատացեալք Աստուած փոյթ տանին բարի գործերու վրայ ըլլալ։ Այնոնք են բա- 9 րի և մարդոց օգտակար։ Բայց դուն զգուշացիր յիմարական վէճերէ և ազգականութիւններէ և հակառակութիւններէ և օրինաց վրայ կռիւներէ, քանզի անօգուտ են և սնոտի։ Հերձուածող 10 մարդէ, առաջին և երկրորդ անգամ խրատուէ զնոյն, 11 Գիտնալով որ այնպիսին խորտոցած է, և մեղք կը գործէ ինքզինք դատապարտելով։

12 Երբ զկաբեմաս կամ զՏիւքփիկոս ղրկեմ առ քեզ, չանա գալ առ իս ի Նիկապոլիս, քանզի դրի ի մտի ձմեռել 13 հոն։ ԶԶենաս օրինական և զԱպողոս փութով յուղարկէ, հոգ տարէլով որ 14 անոնց բան չպակսի։ Եւ մերիններն ևս թող սորվին բարի գործերու թևակոխել ըստ կարեւոր պիտոյից, որպէս զի չըլլան անպտուղ։ Ողջոյն կու տան քեզ 15 ամէնքը որ ինծի հետ են։ ողջոյն տուր անոնց որ զմեզ կը սիրեն հաւատալով։ Շնորհք ձեր ամենուն հետ։ Ամէն։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

1 Պօղոս, կապեալ Յիսուսի Քրիստոսի, և Տիմոթէոս եղբայր, Փիլիմոնի մեր սիրելւոյն և գործակից, 2 Եւ Ապփիայ սիրելւոյ, և Արքիպպոսի մեր զինուորակից, և առանին եկեղեցւոյդ։ 3 Շնորհք և խաղաղութիւն ձեզ յԱստուծոյ մեր Հօրմէն և ի Տէառնէ Յիսուսէ Քրիստոսէ։ 4 Կը գոհանամ միշտ իմ Աստուծմէս յիշելով զձեզ աղօթիներուս մէջ, երբ 5 կը լսեմ սէրը և հաւատքը զոր ունիս առ Տէր Յիսուս և առ ամենայն սուրբս, 6 Որ քու հաւատացդ հաղորդակցութիւնը արդիւնաւոր ըլլայ, երբ ճանչցուի առ ամէն բարութիւն որ եղած է *ի ձեզ 7 ի Քրիստոս Յիսուս։ Քանզի չատ ուրախութիւն և մխիթարութիւն ունինք քու սիրոյդ վրայ, որ սուրբերուն սիրտերը քեզմով հանգչած են, եղբայր։ 8 Վասն որոյ թէև չատ համարձակութիւն ունիմ Քրիստոսով հրամայելու քեզ ինչ որ վայելուչ է, 9 Բայց սիրոյ համար կ'աղաչեմ, իբրև այնպիսի որպիսի Պօղոս ծերացեալ, և հիմա Յիսուսի Քրիստոսի համար 10 կապեալ ևս, Ս'աղաչեմ զքեզ իմ որդւոյս Ընեսիմոսի համար զոր ծնայ իմ 11 կապանացս մէջ։ Որ երբեմն անպիտան էր քեզ, բայց հիմա Թէ՛ քեզ և Թէ՛ 12 ինձ պիտանի է։ Զոր ետ դրկեցի։ դու 13 ևս ընդունի զնա որ է իմ ադիքս։ Զոր կամէի պահել առ իս, որ փոխանակ քո ապաւառութիւն ընէր ինձ ատե- 14 տաքին կապանաց մէջ։ Բայց առանց

*Ոմանք՝ ի մեզ

քո կամացդ չուզեցի բան մը ընել, որ քու բարերարութիւնդ եղած չըլլայ 15 երբ թէ ասիկամայ, այլ կամաւ։ Քանզի թերեւս այս պատճառաւ զատուեցաւ նա առ ժամանակ մի, որ յաւիտեան 16 տեան ունենաս զնա, Ոչ թէ այլ ևս իբրև ծառայ, այլ ի վեր քան զծառայ, իբրև սիրելի եղբայր։ Ը Էէ ինձ այսպէս է, ս'րչափ ևս աւելի պիտի ըլլայ քեզ՝ թէ՛ մարմնով կոդմանէ և թէ՛ Տէ- 17 րոջը։ Ուստի եթէ զիս հաղորդ կը համարիս ևՀ, ընդունի զնա՝ որպէս թէ զիս։ Եւ եթէ անիրաւութիւն ըրած է 18 քեզ կամ պարտք ունի, զայն անցուր իմ հաշուոյս։ Ես Պօղոս իմ ձեռամբ գրեցի, ես կը հատուցանեմ։ որ չըսեմ քեզ թէ դուն ևս քու անձդ պարտա- 20 կան ես ինձ։ Ա,յո, եղբայր, Թող քենէ ունենամ այս օգուտը Տէրոջմէ։ Հանգչեցուր իմ ադիքս *ի Տէր։ Քու հը- 21 նազանդութեանդ վստահանալով գրեցի քեզ, քանզի գիտեմ թէ պիտի ընես աւելի քան զոր կ'ըսեմ։

22 Միանգամայն բնակարան ևս պատրաստէ ինձ, քանզի կը յուսամ թէ ձեր աղօթից միջոցաւ պիտի շնորհուիմ ձեզ։ 23 Ողջոյն կու տայ քեզ Եպափրաս, գե- 24 րակից իմ ի Քրիստոս Յիսուս։ Նո՛ Մարկոս, Արիստարքոս, Դեմաս, Ղուկաս, գործակիցք իմ։ Տէառն մերոյ 25 Յիսուսի Քրիստոսի շնորհքը ձեր հոգւոյն հետ ըլլայ։ Ամէն։

*Ոմանք՝ ի Քրիստոս

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
## ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

### ԳԼՈՒԽ Ա

1 Աստուած որ բազում մասամբք և բազում եղանակօք կանխաւ խօսեցաւ
2 հայրերուն հին մարգարէից, Այս յետին օրերը խօսեցաւ մեզի հետ Որդւովը, զոր դրաւ ժառանգ ամենայնի, որով և զաշխարհս առեղծից,
3 Որ է լոյս փառաց և բուն պատկեր էութեան նորա. որ իւր զօրութեան խօսքովն ամէն բան կը կրէ, և իւր անձառը սրբեց մեր մեղքերը և նստաւ բարձրերը Աստուածայ մեծութեան աջ
4 կողմը. Ու այնչափ աւելի եղաւ քան զհրեշտակս որչափ քան զնոսա աւելի
5 յա անուն ժառանգեց։ Քանզի հրեշտակներէն որո՞ր երբէք, Դուս ես իմ Որդիս, ես այսօր ծնայ զքեզ և դարձեալ Ես անոր Հայր պիտի լի-
6 լամ, և նա Որդի պիտի ըլլայ ինձ։ Ու դարձեալ, երբ Անդրանիկը կը մուծանէ աշխարհ, կ'ըսէ, Աստուծոյ բոլոր հրեշտակները թող երկրպագեն անոր։
7 Ու հրեշտակներուն վրայ կ'ըսէ, Որ իւր հրեշտակները կ'ընէ հոգիներ, և իւր
8 պաշտօնեաները՝ կրակի բոց։ Սակայն Որդւոյն կ'ըսէ, Քու աթոռդ, ով Աստուած, յաւիտեանս յաւիտենից է. քու
9 Թագաւորութեանդ գաւազանը ուղղութեան գաւազան է։ Սիրեցիր զարդարութիւն և ատեցիր զանօրէնութիւն. վասն որոյ, ով Աստուած, քու Աստուածդ օծից զքեզ ուրախութեան
10 իւղով առաւել քան զընկերս քոյս։ Ու Դուն, ով Տէր, ի սկզբանէ զերիր երկիրն հիմնեցը, և երկինք քու ձեռագործ
11 գործն է. Անոնք պիտի կորսուին, բայց դու կը կենաս և կը մնաս. և ամէնքը
12 հանդերձի պէս պիտի մաշին, Ու փոխարկուի պէս պիտի դարձնես զանոնք, և պիտի փոխուին, բայց դու նոյն ես,
13 և քու տարիներդ պիտի չսպառին։ Ու հրեշտակներէն որո՞ր բնաւ երբէք, Իմ աջ կողմս նստէ, մինչև դնեմ քու թշնամիներդ պատուանդան ոտիդդ։
14 Ոչ ապաքէն անոնց ամէնքը ծառայական հոգիներ են, որ կը զրկուին ի ծառայութիւն անոնց համար որ պիտի ժառանգեն փրկութիւն։

### ԳԼ. Բ

1 Վասն որոյ պարտ է մեզ աւելի ևս մխիթարել այն բաներուն զոր լսեցինք,
2 որպէս զի չսպկսինք երբէք։ Վասն զի եթէ խօսքը որ հրեշտակներուն միջոցաւ բան եղաւ՝ հաստատուն եղաւ, և ամէն յանցանք և անհնազանդութիւն առած արդար հատուցում,
3 Ապա մենք ի՞նչպէս պիտի ազատուինք, եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութենէն, որ խօսուելու սկիզբն առաւ Տէրոջմէ և լսողներուն ձեռօք հաստատուեցաւ առ մեզ։ Աստուած ևս վկայեց նշաններօք և հրաշիւք և տպաւէս զօրութեամբք և Սուրբ Հոգւոյն պարգեւներով, ինչպես ինք կամեցաւ։
5 Քանզի ոչ թէ հրեշտակներուն հնազանդեցուց գալու աշխարհը, որոյ վրայ
6 կը խօսինք մենք։ Այլ ումն տեղ մը վկայեց և ըսաւ, Ի՞նչ է մարդ որ կը յիշես զնա, կամ մարդու որդին որ այ-
7 ցելութիւն կ'ընես անոր. Փոքր մի խնարկ ըրիր զնա քան զհրեշտակս. փա-



ռօք և պատուով պսակեցիր զնա, և դու ձեռացդ գործերուն վրայ կեցու-
8 ցիր զնա. Ամէն բան հնազանդեցուցիր անոր ոտից տակ. ուստի եթէ հնազանդեցուց ամէնքը, չթողուց բան մը անհնազանդ նմա. բայց հիմա դեռ չենք
9 տեսներ ամէնքն անոր հնազանդած. Սակայն կը տեսնենք փառօք և պատուով պսակուած զՅիսուս որ քան զհրեշտակս փոքր մի խնարկ եղած էր մահուան չարչարանքին համար, որպէս զի շնորհօքն Աստուծոյ մահ ճաշակէ
10 ամենուն համար։ Վասն զի կը վայելէր Անոր, (որոյ համար ամէն բան, և որով ամէն բան եղած է,) չառ որ զիրենք մեծ ծանեալ առնէ ի փառս՝ կատարել ա-
նոնց փրկութեան Առաջնորդը չարչարանօք։
11 Վասն զի այն որ կը սրբէ և այն որ կը սրբուին, ամէնքն ի միոյէ են. վասն որոյ ամօթ չհամարիր եղբայր կոչել զ-
12 նոնք, բանալով, Քու անունդ պիտի պատմեմ եղբայրներուս, ժողովի մէջ պիտի
13 գովիմ զքեզ։ Ու դարձեալ, Ես անոր պիտի յուսամ։ և դարձեալ, Ահա Ես և մանկունքը զոր ատուաւ ինձ Ա-
14 տուած։ Ուստի, որովհետև մանկունք հպատրդ եղան մարմնոյ և արեան, ինքն ևս եղաւ անոնց բաժանորդ, որպէսզի մահուամբն ունայնացնէ զայն որ մահուան իշխանութիւնն ունէր, այսինքն զՍա-
15 տանայ. Ու ազատէ զոնոնք որ մահուն երկիւղէ կ'ապրէին միշտ ի ծա-
16 ռայութեան։ Քանզի ոչ երբէք հրեշտակաց ձեռք կը բռնէ, այլ Աբրահամու
17 մեր սերնդեան ձեռք կը բռնէ։ Վասն որոյ պարտ էր նմա բոլորովին նմանիլ եղբայրներուն, որ ըլլայ ողորմած և հաւատարիմ քահանայապետ Աստուծոյ կողմանէ, ժողովրդեան մեղքը քա-
18 լու։ Քանզի յորում ինքն չարչարեցաւ փորձութիւն կրելով կրնայ փորձանաւորաց ևս օգնական ըլլալ։

### ԳԼ. Գ

1 Ուստի, սուրբ եղբայրնե՛ր, երկնային

կոչման մասնակիցներ, նայեցէ՛ք մեր գառանութեան Առաքեալն և Քահա-
2 նայապետն, Յիսուս Քրիստոս. Որ հաւատարիմ է անոր որ զինքը զնա, ինչպէս և Մովսէս անոր բոլոր տան
3 մէջ։ Քանզի ինք արժանացաւ քան զՄովսէս աւելի փառաց, որչափ աւելի պատիւ կ'ունենայ տո՛ւն չինողը քան զտունը. Քանզի ամէն տուն կը
4 չինուի մէկէ, բայց այն որ ամէն բան
5 չինեց՝ Աստուած է։ Ու արդարև Մովսէս հաւատարիմ էր անոր բոլոր տանը մէջ իբրև ծառայ՝ բանալու բաներուն
6 մէկայ ըլլալու համար, Բայց Քրիստոս՝ իբրև որդի իր տանը վրայ. որուն տունը մենք ենք, միայն թէ հաստատ բռնենք համարձակութիւնը և յուսոյն պարծանքը մինչև ի վախճան։
7 Ուստի ինչպէս կ'ըսէ Հոգին Սուրբ, Այսօր եթէ պիտի լսէք անոր ձայնին,
8 Մի խստացուներ ձեր սիրտերն, ինչպես երբ բարկացուցին Աստուած փոր-
9 ձութեան օրն անապատին մէջ, Ուր ձեր Հայրերը փորձեցին զիս, քննեցին զիս, և տեսան քառասուն տարի իմ
10 գործերս. Վասն որոյ զգուեցայ այն ազգին, և ըսի, Միշտ մոլորած են սրբտով, և չճանչցան իմ ճամբաներս.
11 Ուստի երդուայ իմ բարկութեանս մէջ
12 թէ Պիտի չմտնեն իմ հանգիստս։ Նայեցէ՛ք, եղբարք, որ ձեզնէ միոյն մէջ չըլլայ անհաւատութեան չար սիրտ ա-
պրատաբ ըլլալ կենդանի Աստուծմէ.
13 Այլ ամէն օր յորդորեցէ՛ք զիրար, մինչդեռ այսօր կ'ըսուի, որ ձեզնէ ոք չխար-
14 տանայ մեղաց խաբէութեամբ։ Քանզի մենք բրիստոսեան մասնակից եղած ենք, միայն թէ հաստատ բռնենք մեր սկզբնաւորութիւնը մինչև ի վախճան։
15 Թեան ակիզբը մինչև ի վախճան։ Մինչդեռ կ'ըսուի, Այսօր եթէ պիտի լսէք անոր ձայնին, մի խստացունէք ձեր սիրտերը ինչպես բարկացուներնոյնպէս։
16 Նոյ. Քանի՞սն էին և բարկացուցին, բայց ոչ թէ այն ամէնը որ

*Կամ արձանը լսեցին և բարկացուցին։ ոչ ապաքէն

եղած էին Եգիպտոսի Մոմփիս ձեռօք։
17 Յորոց զզուեցաւ այն քառասուն ամբրին. ոչ ապաքէն մերազնեղոցն, որոց
18 ոսկրունքն ինկան անապատին մէջ։ Եւ որոց համբաւ երդուաւ որ չմտանեն իբր հանգիստս, եթէ ոչ անհնազանդեցան
19 եւ կը տեսանենք որ չկրցան մտնել անհաւատութեան համար։

## Գլ. Դ

1 Ասպա ուրեմն վախնանք, որ ձեզի ոք զրկուած չգտնուի անոր հանգիստը մտնելու խոստմանէն որ մնացած է դեռ։
2 Քանզի մենք ևս աւետս առած ենք անոնց պէս. բայց անոնց օգուտ չըրաւ լսել այն խօսքը, քանզի հաւատով
3 խառնուած չէր լսողներուն մէջ։ Իսկ մենք որ հաւատացինք՝ կը մտնենք հանգիստը. ինչպէս ըսաւ, Ուստի երդուայ իմ բարկութեանս մէջ թէ Պիտի չմտնեն իմ հանգիստս. թէև ան գործերն աշխարհի սկիզբէն եղած
4 էին. Քանզի Գլխոն այսպէս կ'ըսէ տեղ մը եօթներորդ օրուան համար, Եւ Աստուած հանգեաւ եօթներորդ օրը իր
5 բոլոր գործերէն. Եւ հոս դարձեալ կ'ըսէ թէ Պիտի չմտնեն իմ հանգիստս։
6 Ուստի որովհետև մնանց կը մնայ մտնել հոն, և անոնք որ յառաջագոյն առած էին աւետիսը, չմտան անհաւատութեան համար, Դարձեալ կը սահմանէ օր մը և կ'ըսէ, Այսօր, Դաւիթ բերնով այնչափ ժամանակ ետքը, ինչպէս որ բսուեցաւ, Այսօր եթէ պիտի լսէք անոր ձայնին, մի խստացնէք
8 ձեր սիրտերը։ Քանզի եթէ Յեսու հանգուցած ըլլար զանոնք, այնուհետև
9 ուրիշ օրուան համար չէր ըսեր, Ուրեմն Աստուծոյ ժողովրդեան կը մնայ պէս
10 հանգիստ։ Վասն զի այն որ մտաւ անոր հանգիստը, այլ ևս հանգեաւ իր գործերէն, ինչպես Աստուած իրենցն։
11 Ըստ ուրեմն ջանանք մտնել այն հանգիստը, որ նոյն անհաւատութեան օրինակին պէս չինկնայ ոք։ Քանզի Աստուծոյ խօսքը կենդանի է և զօրեղ, և



8 զածութեանն," Եւ թէպէտ Որդիէր, իբր չպշտպանբէն սորմեցաւ հնազանդութեան
9 Թիւն. Եւ կատարուելով եղաւ պատճառ յաւիտենական փրկութեան բոլոր իրեն
10 հնազանդողներուն, Եւ Աստուծմէ կոչուեցաւ քահանայապետ ըստ կարգին
11 Մելքիսեդեկի։ Որոյ վրայ ունինք բանս շատ բան, որ և դժուարին է մեկնել, քանզի ձեր լսելիքը բթացած են.
12 վասն զի, մինչ պարտ էր ձեզ ժամանակին նայելով ուսուցանող ըլլալ, դարձեալ պէտք ունիք ուսանիլ թէ ինչ են Աստուծոյ պատգամներուն առաջին սկզբունքը, և կարօտ եղաք կաթին, ոչ թէ հաւատացուն կերակրոյ.
13 Քանզի այն մէկը որ կաթնակեր է անհմուտ է արդարութեան խօսքին,
14 վասն զի տղայ է։ Բայց հասուցուն կիրկակուրն է կատարելոց համար, որոց զգայարանքը սովորութեամբ կրթուած են որոշել բարին և չարը։

## Գլ. Զ

1 Ուստի թողլով առաջին ուսանելիքը Քրիստոսի վրայ, գանք կատարելոյն, չդնելով դարձեալ հիմն մեռած գործերէն ապաշխարութեան, և հաւատոյ
2 առ Աստուած, Մկրտութիւններուն վարդապետութեան, և ձեռք դնելու, և մեռելոց յարութեան, և յաւիտենական դատաստանին։ Եւ այս պիտի
3 նախան դատաստանին։ Եւ այս պիտի ընենք, եթէ Աստուած հրաման տայ։
4 Քանզի անկարելի է միանգամ լուսաւորելոց, որ ասին երկնաւոր պարգևին համը, և հաղորդ եղան Հոգւոյն Սրբոյ,
5 Եւ ասին Աստուծոյ բարի խօսքին և հանդերձեալ աշխարհին զօրութիւններուն,
6 բուն համը, եթէ իյնան, դարձեալ նորոգուիլ ապաշխարութեամբ. վասն զի Աստուծոյ Որդին կրկին խաչը կը հանեն իրենց անձանց, և կը խայտառակեն
7 կհեն։ Քանզի երկիր որ կը խմէ իր վրայ շատ անգամ եկած անձրևը, և կը բերէ արդիւնք պիտանի անոնց որոց համար կը մշակուի, կ'ընդունի օրհնութիւն
8 Թիւն Աստուծմէ. Բայց այն որ կը բերէ փուշ և տատասկ՝ անպիտան է և անիծից մօտ, և անոր վերջն այրուիլն
9 է։ Իսկ մենք, սիրելիք, ունինք ձեր վրայ լաւագոյն և փրկութեան վերաբերեալ բաներ, թէև այսպէս կը խօսինք։ Քանզի անիրաւ չէ Աստուած, որ մոռնայ ձեր գործը, և սէրը զոր ցուցիք անոր անուանը համար, որ և ծառայեցիք սուրբերուն և կը ծառայէք։
11 Բայց մենք կը բաղձանք որ ձեզմէ իւրաքանչիւրը ոք ցուցնէ նոյն չանքը յուսոյն հաստատութեան մինչև վերջը։
12 Որպես զի չծգրտաք, այլ նմանող ըլլաք անոնց որ հաւատով և համբերութեամբ ժառանգեցին խոստումները։
13 Վասն զի երբ Աստուած խոստացաւ Աբրահամու, որովհետև չկար մեծագոյն ոք որով վրայ երդնուր, երդուաւ իր անձին վրայ և ըսաւ, Այո, օրհնելով պիտի օրհնեմ զքեզ, և բազմացունելով պիտի բազմացունեմ զքեզ։
15 Եւ այսպէս համբերելով հասաւ խոստման։ Քանզի մարդիկ կ'երդնուն մեծագունի վրայ, և հաստատութեան համար անոնց ամեն հակառակութեան
17 վախճանն է երդումը։ Յորում Աստուած կամելով աւելի ևս ցուցնել իր խորհրդոյն անփոփոխութիւնը հոստման ժառանգաւորներուն, երդումը
18 մէջ դրաւ։ Որ երկու անփոփոխելի բաներով որովք անկարելի է Աստուծոյ ստել՝ ունենանք հաստատուն մխիթարութիւն մենք որ ապաստանեցանք պինդ բռնել մեր առջև դրուած յույսը։ Զոր ունինք իբրև հաստատ և անշարժ խարիսխ մեր անձին, որ և կը
20 մտնէ վարագուրին ներքին կողմը։ Որ Յեսու իբրև նահապետ մտաւ մեզի համար՝ յաւիտենական քահանայապետ ըլլալով ըստ կարգին Մելքիսեդեկի։

## Գլ. Է

1 Քանզի այս Մելքիսեդեկ Թագաւոր Երը Սալէմայ, Բարձրեալ Աստուծոյ քահանայ, որ դիմաւորեց զԱբրահամ, երբ

կը դառնար նա թագաւորներուն կո-
2 ատրածէն, և օրհնել զնա. Որուն և Աբրահամ տասանորդ առաւ ամենէն. որ կը թարգմանուի նախ՝ թագաւոր արդարութեան, և ապա թագաւոր Սաղեմայ, այն է՝ թագաւոր խաղաղու-
3 թեան, Անհայր, անմայր, առանց ազգահամարի, որոյ ոչ օրերուն սկիզբը կայ, և ոչ կենաց վախճանը. և բլլալով նման Որդւոյն Աստուծոյ՝ կը կենայ և կը մնայ միշտ քահանայ։
4 Արդ նայեցէք թէ որչափ մեծ ումն էր սա, որուն Աբրահամ նահապետն
5 իսկ տասանորդ առաւ աւարէն. Եւ անոնք որ Ղեւեայ որդիներէն են որ քահանայութիւնը կ'առնուն՝ պատուէր ունին առնել տասանորդ ժողովրդէն ըստ օրինաց, այսինքն իրենց եղբայրներէն, թէպէտև անոնք ելած են
6 Աբրահամու երանքէն. բայց նա որոյ ազգահամարն անունդիմ չէր՝ առաւ տասանորդ առաւ Աբրահամէ և օրհնեց զնա որ ա-
7 նաւ էր խոստումներու։ Սակայն առանց ամենայն հակառակութեան է թէ փոքրը կ'օրհնուի մեծէն։
8 Եւ հոս մահկանացու մարդիկ կ'առնեն տասանորդ, բայց հոն կ'առնէ այն որոյ համար վկայուած է թէ կեն-
9 դանի է։ Եւ կրնայ ըսուիլ թէ Ղեւի ևս որ տասանորդ կ'առնու՝ տասանորդ
10 առաւ Աբրահամու ձեռօք. Քանզի դեռ իւր հօրը ներքին էր, երբ Մելքիսեդեկ դիմաւորեց զնա։
11 Արդ եթէ կատարելութիւնը Ղեւացոց քահանայութեան ձեռօք էր, (ռամիհետև ժողովուրդն անոր տակնը գրուեցաւ ընդ օրինօք,) ինչ պէտք էր որ ուրիշ քահանայ ելլէր ըստ կարգին Մելքիսեդեկի, և չըսուէր ըստ
12 կարգին Ահարոնի։ Քանզի երբ քահանայութիւնը փոխուեցաւ, հարկ էր որ
13 օրինաց ևս փոփոխութիւն ըլլար։ Ե—ղբօրէ Ե—, ուրկից զի այն որոյ համար այսպէս կ'ըսուի, կը վերաբերէր ուրիշ ցեղի, որմէ ոչ ոք երբէք մնաե-
14 ցաւ սեղանին։ Քանզի յայտնի է թէ մեր Տէրը յառաջ եկաւ Յուդայի ցեղէն,

որ ցեղին վրայ Մովսէս բան մը չըսաւ
15 քահանայութեան համար։ Եւ այս աւելի ևս յայտնի է, մինչ ուրիշ քահանայ կ'ելլէ Մելքիսեդեկի նմանու-
16 թեամբ, Որ ոչ թէ եղաւ քան մարմնաւոր պատուիրանին օրինաց, այլ քան զօրութեան անխափան կենաց։
17 Քանզի կը վկայէ թէ Դուն յաւիտեան քահանայ ես ըստ կարգին Մելքիսեդեկի։
18 Վասն զի ան առաջին պատուէրը կը խափանուի իւր տկարութեան և ան-
19 շահութեան համար, (Քանզի օրէնքը բան մը կատարեալ չըրաւ,) և փոխանակ այնր կը մտնէ լաւագոյն յոյս մը որով կը մտնենանք Աստուծոյ։
20 Եւ որչափ չեղաւ երդմամբ առանց երդման, (քանզի անոնք առանց երդ-
21 ման քահանայ եղած են, իսկ սա երդմամբ՝ անոր ձեռօք որ ըսաւ անոր, Տէրը երդուաւ և պիտի չզղջայ, Դուն յաւիտեան քահանայ ես ըստ կարգին
22 Մելքիսեդեկի,) Այնչափ աւելի լաւութեան երաշխաւոր եղաւ Յիսուս։
23 Եւ անոնք եղած են շատ քահանաներ, վասն զի մահով միշտ մնալուն ար-
24 գելք եղած է մնալը։ Բայց սա յաւիտեան կենալուն համար՝ անանձնաւորիկ
25 ունի քահանայութիւնը։ Ուստի բոլորովին կարող ևս է ապրեցնելու զանոնք որ անոր միջոցաւ կու գան առ Աստուած, քանզի ինք միշտ կենդանի է բարեխօսելու անոնց համար։
26 Վասն զի կը վայելէր մեզ այսպիսի քահանայապետ, սուրբ, անմեղ, անարատ, միւսներէն զատուած և բան
27 դերկինս վեր բարձրացած. Որոյ օրէ օր հարկ չէ, ինչպէս առաջ իւր մեղաց համար մատուցանել պատարագ, և ապա ժողովրդեան Դէպ համար. վասն զի անգամ մը բուռ զայն իւր անձը պա-
28 տարագ մատուցանելով։ Քանզի օրէնքը կը կարգէ քահանայապետ տկարութեամբ պարարուած մարդիկ, բայց երդման խօսքը, որ օրէնքէն ետքն էր, զՈրդին՝ որ յաւիտեան կատարեալ է։



### Գլ. Ը

1 Եւ ըսուածներուն գլխաւորութիւնն այս է. ունինք այնպիսի քահանայապետ որ նստաւ յերկինս Աստուածային մե-
2 ծութեան աջ առնին մէջ կողմն. Պաշտօնեայ սրբարանին, և ճշմարիտ խորանին զոր Տէրը կանգնեց և ոչ մարդ։
3 Քանզի ամէն քահանայապետ կարգուած է մատուցանելու պատարագներ և զոհեր, ուստի հարկ է և սա ունե-
4 նալ բան մը զոր մատուցանէ. Քանզի եթէ երկրի վրայ ըլլար, և ոչ իսկ կ'ըլլար քահանայ, վասն զի կան քահանաներ որ կը մատուցանեն ըստ օրի-
5 նաց պատարագները։ (Որք երկնային բաներուն նմանութեամբ և ստուերով կը պաշտեն, ինչպէս որ Մովսիսէ հրամայուեցաւ, երբ պիտի չիներ խորանը. քանզի ըսաւ, Տես, ամէնը շինես ըստ օրինակին որ ցուցուեցաւ քեզ
6 լերան վրայ։) Բայց հիմա Յիսուս հասաւ աւելի գերազանց պաշտօնի, որչափ լաւագոյն խոստումներով հաստատուած լաւագոյն ուխտի միջնորդ է։
7 Քանզի եթէ առաջինն անմեղադրելի ըլլար, երկրորդին տեղ չէր փնտռուեր։
8 Քանզի կը յանդիմանէ զանոնք և կ'ըսէ, Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը, որ նորացնէի տան Հիւդայի տան
9 հետ պիտի ընեմ նոր ուխտ, ոչ թէ այն ուխտին պէս զոր ըրի անոնց հայրերուն հետ, այն օրը որ անոնց ձեռքէն բռնեցի հանել զանոնք Եգիպտացի երկրէն, վասն զի անոնք չհետցան իմ ուխտիս մէջ, և ես անհոգ եղայ անոնց
10 վրայ, կ'ըսէ Տէրը։ Քանզի այս է ուխտը զոր պիտի դնեմ Իսրայէլի տան հետ այն օրերէն ետքը, կ'ըսէ Տէրը. պիտի դնեմ իմ օրէնքս անոնց մտքին մէջ, և պիտի գրեմ զանոնք անոնց սրտին վրայ, և ես պիտի ըլլամ անոնց Աստուած, և անոնք պիտի ըլլան ինձ ժո-
11 ղովուրդ։ Եւ բնաւ պիտի չսորվեցնեն իւրաքանչիւրը իւր ընկերին, և իւրաքանչիւր իւր եղբօրը, ըսելով, Ճանչցիր Տէրը. քանզի անոնց փոքրէն մինչև մեծն ամէնքը պիտի ճանչնան զիս։
12 Վասն զի ներող պիտի ըլլամ անոնց անիրաւութիւններուն, և այլ ևս պիտի չյիշեմ անոնց մեղքերը և անօրէնութիւնները։
13 Նոր ուխտ ըսելով հնացուց առաջինը. և այն որ կը հնանայ և կը ծերանայ՝ աւնուհետև մօտ է կորուստեան։

### Գլ. Թ

1 Արդարև առաջին ուխտն իսկ ունէր պաշտամանի կանոնադրութիւններ և
2 աշխարհային սուրբ տեղ։ Քանզի կազմուեցաւ առաջին խորանը որ Սրբութիւն կը կոչուէր, յորում էին աշտանակը և սեղանը և առաջաւորութեան
3 հացը։ Եւ յետ երկրորդ վարագուրին կար խորանը որ կը կոչուէր Սրբութիւն
4 սրբութեանց, Յորում էին ոսկի բուրվառ, և ուխտին տապանակն ամէն կողմանէ ոսկւով պատած. յորում էին ոսկի սափորը որ ունէր մանանան, և Ահարոնի գաւազանը որ ծաղկեցաւ, և
5 ուխտին տախտակները, Եւ անոր վրայ փառաց քերովբէները որ հովանի կ'ընէին քաւութեան վրայ, որոց համար չէ այժմուս խօսել մի քան մի՛ջէ։
6 Եւ մինչ այս բաներն այսպէս կարգադրուած էին, առաջին խորանն հանապազ կը մտնէին քահանաները կա-
7 տարել պաշտամունքը. Բայց երկրորդին մէջ տարին անգամ մը կը դրէնէր քահանայապետը միայն, ոչ թէ առանց արեան, զոր կը մատուցանէր իրեն հա-
8 մար և ժողովրդեան յանցանաց համար, Հոգին Սուրբ զայս ցուցնելով թէ սրբարանին ճանապարհն յայտնի եղած չէր, մինչ դեռ առաջին խորանը կը
9 կենար. Որ օրինակ էր այն ժամանակին երբ պատարագներ և զոհեր կը մատուցանէին, որ խղճի կատարեալ չէին կրնար կատարել բնել պաշտօն մատուցանողը, այլ էին միայն, կերակ-
10 րով և ըմպելիքով և պէսպէս լուացմամբք, մարմնոյ արարողութիւններ,

որ կը կենային մինչև ուղղութեան
11 ժամանակը։ Բայց Քրիստոս որ ներկայ, գալու բարեաց քահանայապետ, աւելի մեծ և կատարեալ խորանաւ, որ չէ ձեռագործ, այսինքն որ չէ այս ստեղծուածներէն, եւ ոչ նոխազներու և զուարակներու արեամբ, այլ իւր արեամբը մի անգամ մտաւ Սրբարանը բոլորովի յաւիտենական փրկութիւն վաստակելով։ Վասն զի եթէ ցուլերու և նոխազներու արիւնը և երինջայ մխիթարը սրսկուելով՝ պղծեալները կը սրբէր մարմնոյ մաքրութեան կարգանէ, Քրիստոսի արիւնը որ յաւիտենական Հոգւոյն ձեռօք մատոյց իւր անձն անարատ պատարագ՝ Աստուծոյ՝ պիտի սրբէ ձեր խիղճը մեռած գործերէ՝ պաշտել զԱստուած կենդանի։
15 Եւ վասն այնորիկ միջնորդ է նոր ուխտի, որպէս զի, մահն բոլորովի քաւութիւն առաջին ուխտին ժամանակ ներքոյ անցանց, կոչուածները առնուն յաւիտենական ժառանգութեան խոստումը։ Քանզի ուր կտակ կայ, հարկ է որ կտակարարին մահը մնայ մէջ։ Վասն զի կտակը յետ մեռելան հաստատուն կ'ըլլայ. քանզի բնաւ ուժեւորութիւն չունի մինչ 18 կտակարարը ողջ է։ Վասն որոյ առաջինն ոչխար եւս առանց արեան չէր հաստատեր։ Քանզի երբ Մովսէս խօսեցաւ օրինաց ամէն պատուիրները բոլոր ժողովրդեան, ցուլերուն և նոխազներուն արիւնն առնելով՝ սրսկեց ջրով և կարմիր բրդով և զոպային բուն գիրքին և բոլոր ժողովրդեան վրայ. 20 եւ ըսաւ, Այս է արիւն ուխտին զոր Աստուած պատուիրեց ձեզ։ Եւ խորանին վրայ և պաշտօնին բոլոր գործիներուն 22 վրայ նոյնպէս սրսկեց արիւնը։ Եւ գրեթէ ամէն բան արեամբ կը մաքրուի ըստ օրինաց, և առանց արեան հեղման չըլլար թողութիւն։
23 Ուստի հարկ էր որ երկնաւոր բաներուն օրինակները մաքրուէին սոսկ, բայց բուն երկնաւորները քան զսոսա լաւագոյն զոհերով։ Քանզի Քրիստոս ոչ թէ ձեռագործ սրբարանը մտաւ, որ ճշմարտին օրինակն է, այլ բուն յերկինս՝ որ հիմա ներկայանայ Աստուծոյ առջև մեզի համար։ Ոչ որ չատ անգամ մատուցանէ իւր անձը պատարագ, ինչպէս քահանայապետը, որ ամէն տարի կը մտնէ սրբարանը արեամբ որ իւրը չէ։ Ապա թէ ոչ պարտէր նոյնպէս աշխարհի սկիզբէն հետէ չատ անգամ չարչարուիլ։ բայց հիմա մի անգամ գարերուն վերջը յայտնուեցաւ իւր անձին պատարագովը մեղքի նեռելու համար մեղքը։ Եւ ինչպէս որ մարդոց սահմանուած է մի անգամ մեռանիլ, և այնուհետև դատաստան, նոյնպէս և Քրիստոս մի անգամ մատուցեալ պատարագ՝ չատերուն մեղքը վերցնելու համար, բայց երկրորդ անգամ, առանց մեղաց, վերկութեան համար պիտի յայտնուի անոնց որ կը սպասեն անոր։

## Գլ. Ը

1 Քանզի օրէնքը որ ունի գալու բարեաց ստուերը և ոչ թէ այն բաներուն բուն կերպարանքը՝ չկրնար միշտ ամէն տարի մատուցուած նոյն զոհերով երբէք կատարեալ ընել զանոնք որ կը
2 մատենան։ Ապա թէ ոչ, ոչ սպաքէն պիտի դադարէին մատուցուելէ. վասն զի պաշտօն մատուցանողները, մի անգամ մաքրուելէն ետքը, մեղաց վրայ այլ եւս խղճի յանդիմանութիւն
3 պիտի չունենային. Բայց անոնցմով ամէն տարի մեղաց յիշատակութիւն կ'ըլլայ. Քանզի նոխազներու և ցուլերու արիւնը չկրնար վերցնել մեղքերը։
5 Վասն որոյ աշխարհ մտնելու առենը կ'ըսէ, Զոհ և ընծայ չուզեցիր, այլ
6 մարմին պատրաստեցեր ինձ. Ողջակիզներու և մեղաց պատարագներու չհաճեցար։
7 Ես ըսի, Ահաւասիկ իմ, Ահա կու գամ, (գիրքի ոտնի մէջ գրուած է ինծի համար,) գու Կամքդ ընելու, ով Աստուած։
8 ուստի վերը ըսելով թէ Զոհ ընծայ և ողջակէզներ և մեղաց պատարագներ և չհաճեցար ըստ

բան հաստատութիւնը և չերեւցած
2 բաներուն ապացոյցը. վասն դի անով առաջինները առին վկայութիւն.
3 Հաւատով կ'իմանանք թէ աշխարհք հաստատուեցան Աստուծոյ խօսքովը, և անտեսից բաներէն եղան տեսնք որ կ'երեւին.
4 Հաւատով Աբէլ քան զԿայէն մատոյց Աստուծոյ լաւագոյն զոհ, որով վկայուեցաւ լինել արդար. քանզի անոր պատարագներուն վրայ վկայութիւն եղաւ Աստուծմէ. և անով, թէպէտ մեռաւ, դարձեալ կը խօսի.
5 Հաւատով Ենովք փոխադրուեցաւ որ մահ չտեսնէր. և չէր գտնուեր, վասն զի Աստուած փոխադրեց զնա. քանզի յառաջ քան փոխադրուիլը վկայուեցաւ թէ հաճոյ էր Աստուծոյ.
6 Բայց առանց հաւատոյ անհնար է հաճոյ լինել. Որովհետեւ ով որ կը մօտենայ Աստուծոյ, պարտ հաւատալ թէ կայ Աստուած, և թէ վարձահատոյց կ'լինի անոնց որ կը խնդրեն զնա.
7 Հաւատով Նոյ պատգամ առնելով Աստուծմէ դեռ չերեւցած բաներուն համար, վախնալով շինեց տապանը իր տանը փրկութեան համար, որով աշխարհս դատապարտեց, և ժառանգաւոր եղաւ արդարութեան որ հաւատով է.
8 Հաւատով Աբրահամ, երբ կոչուեցաւ, հնազանդեցաւ երթալ այն տեղը զոր պիտի առնուր ժառանգութիւն. և երթաւ գնաց, և չէր գիտեր թէ ուր
9 կ'երթար. Հաւատով պանդխտացաւ աւետեաց երկիրին մէջ որպէս թէ յօտարութեան, և վրաններու մէջ բնակեցաւ, խոստակից և ցեղակից հետ, որ անոր հետ ժառանգորդ էին նոյն
10 խոստման. Քանզի կը սպասէր հիմնարկեալ հաստատուած քաղաքին, որոյ շինարարն և արարիչ Աստուած է.
11 Հաւատով և ինքն Սառա առաւ զօրութիւն յղանալու սերմն ընդունելու, զօրութիւն, և անցեալ հասակի մէջ ծնաւ որդի. քանզի հաւատարիմ համարեցաւ
12 զնա որ խոստացաւ. Ուստի այն մէկէն ծնան, (և այն իրեն նմանեալ,) բազմութեան կողմանէ իրեն զաւակեղ երկինքի, և իրեն զառագաստ առ ափն ծովուն առանց թուոյ.
13 Առանց ամենքը հաւատով մեռան խոստումնէրը չառած, այլ հեռուէն տեսան զանոնք և ողջունեցին, և խոստովանեցան թէ իրենք օտար և պանդխտ էին երկրիս վրայ.
14 Քանզի անոնք որ այսպիսի բաներ կը խօսին, յայտնի կ'ընեն թէ գաւառ մը կը խնդրեն.
15 Եւ արդարեւ եթէ յիշէին ուստի եկան, ժամանակ ունէին հոն դառնալու.
16 Բայց հիմա կը փափաքին լաւագոյն հայրենիք, այսինքն երկնաւորին. ուստի աստի չէ ամաչեր Աստուած անոնց Աստուածն բոլոր, քանզի ինք պատրաստեց անոնց քաղաք.
17 Հաւատով Աբրահամ, երբ փորձուեցաւ, մատոյց դիտահակ. և այն որ խոստումները առած էր՝ կը մատուցանէր
18 նէր էաթ միածնը զրկէին. Որուն ըսուեցաւ թէ Իսահակ պիտի կոչուի քեզ
19 սերունդ. Քանզի կը խորհէր թէ Աստուած մեռելներէն իսկ կարող էր յարուցանել. ուրկէ օրինակաւ ընկալաւ զայն.
20 Հաւատով Իսահակ գալու բաներուն նկատմամբ օրհնեց զՅակոբ և զԵսաւ.
21 Հաւատով Յակոբ, երբ կը մեռնէր, օրհնեց Յովսեփայ որդիներէն իւրաքանչիւրը, և երկրպագեց ի ծայր իւր գաւազանին. Հաւատով Յովսէփ, երբ կը վախճանէր, յիշեցուց թէ Իսրայէլի որդիքը պիտի երթային Եգիպտոսէ, և պատուէր տուաւ իւր ոսկրներուն համար.
23 Հաւատով, երբ ծնաւ Մովսէս, իւր ծնողաց ձեռօք երեք ամիս պահուեցաւ ծածուկ. քանզի դիտեցին տեսան տղան, և չվախցան թագաւորին հրամանէն.
24 Հաւատով Մովսէս երբ մեծցաւ, յանձն չառաւ կոչուիլ որդի դստեր
25 տէրն փարաւոնի. Քանզի լաւ համարեցաւ չարչարուիլ Աստուծոյ ժողովրդեան հետ, քան վայելել մեղաց ժամանակաւոր զուարճութիւնը. Եւ աւելի մեծ հարստութիւն համարեցաւ Քրիստոսի նախատինքը քան Եգիպտոսի գանձերը. քանզի դիտելով կ'ըսպասէր վարձուց հատուցման.
27 Հաւատով թողուց զԵգիպտոս, և չվախցաւ թագաւորին բարկութենէն. քանզի համբերեց, որպէս թէ կը տեսնէր Անտեսանելին.
28 Հաւատով ըրաւ զաթիկը և արեան սրսկուածը, որպէս զի անդրանիկներուն աւերիչը չմերձենար անոնց.
29 Հաւատով անցան կարմիր ծովէն որպէս թէ ցամաքէ. որոյ փորձն ընկալով Եգիպտացիք ընկղմեցան.
30 Հաւատով Երիքովի պարիսպներն իյնան, երբ եօթն օր անոնց բոլորուիլը չքննեցան.
31 Հաւատով անհնազանդներուն հետ չկորսուեցաւ Ռահաբ պոռնիկ, որ ընդունած էր լրտեսները խաղաղութեամբ.
32 Եւ այլ ևս ի՞նչ ըսեմ. քանզի ժամանակը բաւական չէ որ պատմեմ Գեդէոնի և Բարակայ և Սամփսոնի և Յեփթայեայ և Դաւիթ և Սամուէլի և մարգարէներուն համար.
33 Որ հաւատով չարչիներուն թագաւորութիւններու, գործեցին արդարութիւն, հասան խոստումներու, խցին առիւծներու բերան,
34 Մարեցին կրակի զօրութիւնը, ազատեցան սրոյ բերնէ, զօրացան անզօրութենէ, զօրաւոր եղան պատերազմի մէջ, ցրուեցին օտարներու բանակներ.
35 Կանայք ընդունեցան յարութեամբ իրենց մեռեալները. ոմանք չարչարուեցան և չընդունեցան ազատութիւնը, որ լաւագոյն յարութեան հասնէին.
36 Եւ այլք նախատանաց և գանձ, նաև կապոյ
37 նաց և բանտից փորձ տեսին. Քարկոծեցան, սղոցեցան, փորձանաց մէջ մնացին, մեռան սպանմամբ սրոյ, ոչխարի մորթերով և այծի մորթերով շրջեցան, կարօտութիւն կրելով, չնեղ
38 եալ, չարչարուելով, (Որոց արժանի չէր աշխարհս,) մոլորելով անապատները և վռնեներու և ապերու և երկրի խոռոչներու մէջ.
39 Եւ ասոնց ամենքը հաւատով վկայուեցան, չառին խոստումը.
40 Ուստի չառնին մեզ. Քանզի Աստուած մեզի համար կանխաւ լաւագոյն բան պատրաստեց, որ առանց մեզ չըհասնին կատարման.

## Գլ. ԺԲ

1 Ուստի և մենք որ այսչափ վկաներու բազմութիւն ունինք պատած մեր բոլորտիքը, մեկզի նետենք ամէն ծանրութիւն, և մեծ դիւրաշարժ մեզզը, և համբերութեամբ վազենք մեր առջև դրուած ասպարիզին
2 Յիսուսի նայելով, Դէ հաւատոյ առաջնորդին և կատարողին, որ այն ուրախութեան համար որ անոր առջև դրուած էր՝ յանձն առաւ խաչը, արհամարհեց ամօթը, և նստաւ Աստուծոյ աթոռին աջ կողմը.
3 Արդ յիշեցէք զնա, որ այսպէս հակառակութիւն մեղաւորներուն իրեն դէմ հակառակ խօսեցաւ, որ չյոգնիք և չըթուլնաք յանձինս ձեր. Տակաւին ասկէմէ չէք պատերազմեցած հակառակ
5 չկեցաք մեղաց. Եւ մոռցաք յորդորանքը որ կը խօսի ձեզի հետ իբրև որդիներու հետ, Որդեակ իմ, մի անարգեր Տէրոջը խրատը, և յանդիմանուելե
6 լով անկէ՝ մի թուլնար. Վասն զի Տէրը կը խրատէ զոյն զոր կը սիրէ, և կը
7 ծեծէ ամէն որդի զոր ի'ընդունի. եթէ համբերէք խրատու, Աստուած կը վարուի ձեզի հետ իբրև որդիներու հետ. քանզի ո՞ր որդի է այն զոր հայրը չըծեծէ.
8 պատժէր. իսկ եթէ բոլոր առանց խրատու, որուն ամէնը մասնակից եղան, ապերնի խորթ էք դուք, և ոչ թէ որ
9 դիք. Նաև մեր մարմնաւոր հայրերը խրատիչ ունէինք, և ամչնայնք կը պատկառէինք. ոչ ապաքէն աւելի եւս պիտի հնազանդինք հոգիներուն Հօրը և
10 ապրինք. Քանզի մանուկ փիլ օրերը կը

խրատին ընդ[1] ինչպէս հաճոյ կը թուէր անոնց, բայց նա Աստ օգտին համար՝ որ
11 հաղորդ ըլլանք անոր սրբութեանը։ Եւ արդարև ամէն խրատ նոյն ժամանակ չթուէր ուրախարար, այլ տրտմական, բայց յետոյ կը հասուցանէ արդարութեան խաղաղաբար պտուղն անով վարժուողներուն։
12 Ուստի հասառակեցէք թուլցած ձեռ-
13 ուքները և տկար ծունկերը։ Եւ ուղիղ ճամբաներ րընէք ձեր ոտքերուն համար, որպէս զի այն որ կաղ է՝ չխառնուի, այլ
14 առնուդ բժշկուի։ Խաղաղութեան հետևէ եղէք ամենուն հետ և սրբութեան, առանց որոյ ոչ ոք պիտի տեսնէ
15 Տէր։ Զգուշացէք, որ Աստուծոյ շնորհքին ետև չմնայ ոք, որ դառնութեան արմատ վերև երևնալով չնեղէ
16 զձեզ և շատեր պղծուին անով։ Որ չըլլայ ոք պոռնիկ, կամ անառըրջ ևսաւ մի պէս, որ մի կերակրոյ համար
17 վաճառեց իր անդրանկութիւնը։ Գիտէք զի ետքէն ալ երբոր կ՚ուզեր օրհնութիւնը, չընդունեցաւ. քանզի տապաստի տեղի չգտաւ հոգը վրայ, թէպէտև արտասուօք խնդրեց զայն։
18 Վասնզի դուք մտեցած չէք շօշափելի լերան որ կրակով կը վառէր, և ոչ
19 մրկին և խաւարին և մրրկին, եւ փողոյն հնչուելուն, և խօսքերուն ձայնին, զոր լսողներն ապաչեցին որ այն խօսքն
20 այլ ևս չըսուէր անոնց։ Վասն զի չէին կրնար տանել այն հրամանին, Եթէ գազան ևս մերձենայ լերանը, պիտի
21 քարկոծուէր[2]։ Եւ այնպէս ահագին էր երևոյթը որ Մովսէս ըսաւ, Սաստիկ
22 կը վախնամ և կը դողամ։ Բայց դուք մտեցեալ էք Սիոն լերան, և կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնաւոր Երու-
23 սաղէմի, և բիւրաւոր հրեշտակաց, Եւ երկինքը գրուած անդրանկաց հանդիսաւորի ժողովին և եկեղեցւոյն, և Աս-
24 տուծոյ՝ որ ամենուն Դատաւորն է, և արդարոց հոգիներուն՝ որ կատարուած են, Եւ Յիսուսի՝ որ նոր ուխտին միջնորդն է, և սրսկուելու արեան՝ որ
25 զոհ ըլլալով աբելի աւելի լաւ կը խօսի։ Զգուշացէք, որ չմերժէք զայն որ կը խօսի։ Վասն զի եթէ անոնք երկրի վրայ Աստուծոյ պատգամները խօսողը մերժելով չազատուեցան, որչափ ևս աւելի մենք, եթէ յերկինէ խօսողէն երես
26 դարձունենք։ Որոյ ձայնը շարժեց զերկիր յայնժամ, և հիմա խոստացած է և կ՚ըսէ, Մի ևսանգամ պիտի շարժեմ՝
27 ոչ միայն զերկիր, այլ և զերկինս։ Եւ այն Մի ևսանգամը կը ցուցնէ շարժուած բաներուն բարձումը չինուած բաներու պէս, որ անշարժ բաները մնան
28 հաստատուն։ Ուստի անշարժ թագաւորութիւն առած ըլլալով ունենք շնորհք որով պաշտենք զԱստուած հաճոյական կերպով, ակնածութեամբ
29 և բարեպաշտութեամբ. Քանզի մեր Աստուածը մաշող կրակ է։

## Գլ. ԺԳ

1 Եղբայրասիրութիւնը հաստատ մնայ ձեր
2 մէջ։ Հիւրասիրութիւնը մի մոռնաք, քանզի անով ոմանք հրեշտակներ ընկան յանդիմանուն։ Յիշեցէք կապուածները, որպես թէ դուք նոյն կապուած եք անոնց հետ. և չարչարուածները՝ որպէս թէ դուք ևս մարմնով եք։
4 Ամուսնութիւնը բոլորովին պատուական է, և անկողինն անարատ է. բայց պոռնիկներուը և շնացողները պիտի դա-
5 տէ Աստուած։ Ձեր բարքն անարծաթասէր ըլլայ. բաւական համարեցէք որչափ բան որ ձեր ձեռքը կայ. քանզի ինքը ըսաւ թէ բնաւ պիտի չձգեմ զձեզ, և բնաւ պիտի չլքեմ զձեզ։
6 Այնպէս որ համարձակ ըլլանք բսելու, Տէրը իմ օգնականս է, և ևս պիտի չվախնամ. մարդ ի՞նչ պիտի ընէ ինձ։
7 Յիշեցէք ձեր առաջնորդները որ Աստուծոյ խօսքը խօսեցան ձեզ, և նայելով անոնց վարման վախճանին՝ նը-

[1] Կամ գլորի, †Ոմանք՝ կ՚ուզեն կամ նեռով զարնուի։



8 մանող եղէք անոնց հաւատոյն։ Յիսուս Քրիստոս նոյն է երէկ և այսօր և յաւիտեան։
9 Պէսպէս և օտարածայն ուսմամբ մի տարուբերիք. քանզի լաւ է որ սիրտը շնորհօք հաստատուի, ոչ թէ կերակրովք, յորոց օգուտ չունեցան անոնք
10 որ այնպէս գացին։ Սեղան ունինք մենք, որմէ ուտելու իշխանութիւն չունին անոնք որ կը ծառայեն խորանին։
11 Քանզի որ անասնոց արիւնը որ սրբութեանը կը տարուի մեղաց համար քահանայապետին ձեռօք անոնց մարմին-
12 ները բանակէն դուրս կ՚այրուին։ Ուստի և Յիսուս իւր արեամբ ժողովուրդը սրբելու համար դուռնէն դուրս
13 չարչարուեցաւ։ Ուրեմն անոր երթանք բանակէն դուրս, մեր վրայ առնելով
14 լուն անոր նախատինքը։ Քանզի մենք հոս մնայուն քաղաք չունինք, այլ կը
15 փնտռենք հանդերձեալը։ Ուստի անոր ձեռօք մատուցանենք Աստուծոյ հանապազ օրհնութեան պատարագ, այսինքն՝ զպտուղ շրթանց որ անոր անուա-
16 նը կը դաւանին։ Իսկ բարերարութիւնը և հաղորդակցութիւնը մի մոռնաք, քանզի Աստուած կը հաճի
17 այնպիսի պատարագներու։ Անսացէք ձեր առաջնորդներուն և հնազանդ կեցէք անոնց, քանզի անոնք կը հսկեն ձեր հոգիներուն համար, որպէս թէ հաշիւ պիտի տան, որ խնդութեամբ ընեն զայն, և ոչ թէ հառաչելով, զի
18 այն օգտակար չէ ձեզ։ Մեզի համար ազօթք րընէք, քանզի համոզուած ենք թէ բարուոք խիղճ ունինք, և ամէն բանի մէջ կ՚ուզենք բարի վարուիլ։ Ու-
19 նենալ։ Եւ մանաւանդ կ՚աղաչեմ որ դայս ընէք, որպէս զի վաղագոյն դառնամ առ ձեզ։
20 Եւ խաղաղութեան Աստուածը որ մեռելներէն յարոյց զՏէր մեր Յիսուս, որ յաւիտենական ուխտին արեամբ ոչ-
21 խարներուն մեծ Հովիւն է, Զձեզ ամէն բարի գործոյ մէջ հաստատէ անոր կամքն ընելու, և ընէ ձեր մէջ ինչ որ հաճոյ է իրեն առջև Յիսուս Քրիստոսի ձեռօք, որուն փառք յաւիտեանս յաւիտենից, Ամէն։
22 Կ՚աղաչեմ զձեզ, եղբարք, համբերել այս յորդորական խօսքիս, քանզի համառօտաբար ձեզի գրեցի։
23 Գիտցէք որ Ժոդ եղբայրը Տիմոթէոս արձակուած է, որով հետև, եթէ չուտով գայ, պիտի տեսնեմ
24 զձեզ։ Ողջոյն տուէք ձեր բոլոր առաջնորդներուն և բոլոր սուրբերուն. ողջոյն կու տան ձեզ անոնք որ Իտալիայէ
25 են։ Շնորհքը ձեր ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

# ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ
# ՅԱԿՈԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## Գլուխ Ա.

1 Յակոբոս, Աստուծոյ և Տէրոջ Յիսուսի Քրիստոսի ծառայ, երկտոհմեան ցրվերուդ որ ողջոյն։
2 Եղբայրներ, բոլորովին ուրախութեան արժանի համարեցէք երբ պէսպէս
3 փորձանաց մէջ իյնաք, Գիտնալով որ ձեր հաւատոյն փորձը համբերութիւն
4 կը գործէ։ Բայց համբերութիւնը կատարեալ գործ թող ունենայ, որ կատարեալ և ամբողջ ըլլաք, և բանի մը կարօտութիւն չունենաք։

5 Ասա ևթէ ձենէ ոք պակասած է իմաս-
տութենէ, թող խնդրէ Աստուծմէ որ
կու տայ ամենուն առատապէս և չնա-
6 խատիր, և պիտի տրուի անոր։ Միայն
թէ հաստատ թող խնդրէ և չերկմտի,
վասն զի այն որ երկմիտ է՝ նման է հող-
մակածեալ և առատանալով ծո-
7 վու։ Այն մարդը թող չկարծէ թէ բան
մը պիտի առնու Տէրոջմէ։ Երկմիտ մար-
8 դին անհաստատ է իր բոլոր ճամբա-
ներուն մէջ։

9 Խոնարհ եղբայրը թող պարծի իր
10 բարձրութեան վրայ, եւ այն որ հա-
րուստ է՝ իր խոնարհութեան վրայ,
վասն զի պիտի անցնի իբրև ծաղիկ խո-
11 տի։ Քանզի արեւը կը ծագէ առատիկ
տապով և կը չորցնէ խոտը, և անոր
ծաղիկը կը թօթափի, և անոր
երեսոյթին գեղեցկութիւնը կորսու-
ի։ Նոյնպէս և հարուստը պիտի թա-
ռամի իր ճամբաներուն մէջ։

12 Երանելի է այն մարդը որ կը համ-
բերէ փորձանաց։ քանզի եթէ փոր-
ձուելով բնաւոր գտնուի, պիտի առնու
կենաց պսակը, զոր Տէրը խոստացաւ
13 անոնց որ կը սիրեն զնա։ Մի ոք որ կը
փորձուի՝ ըսէ թէ Աստուծմէ կը փոր-
ձուիմ։ քանզի Աստուած անփորձ է
14 չարեաց, և ոչ ինք կը փորձէ զոք։ Ա-
կայն իւրաքանչիւր ոք կը փորձուի իւր
ցանկութիւններէն հրապուրուած և
15 խաբուած։ Ապա ցանկութիւնը
յղանալով կը ծնանի մեղք, և մեղքը
կատարուելով կը ծնանի մահ։ Մի խաբ-
16 ուիք, եղբարք իմ սիրելիք։ (17) Ամէն
բարի տուրք և ամէն կատարեալ պար-
գեւ ի վերուստ է, և կ'իջնէ լուսոյ Հօր-
մէն, յորում չկայ բնաւ փոփոխութիւն
18 կամ դառնալու ստուեր։ Կամեցաւ ծնաւ
զմեզ ճշմարտութեան խօսքովը, որ
Երկնայրի ըլլանք անոր ստեղծուած-
19 ներուն։ Ուստի, եղբարք իմ սիրելիք,
ամէն մարդ թող արագ ըլլայ լսելու,
և դանդաղ՝ ի խօսելն, դանդաղ՝ ի բարկանալ։
20 Քանզի մարդուն բարկութիւնն Աստու-
ծոյ արդարութիւնը չգործեր։
21 Ուստի մեկդի նետելով ամէն ազա-
տութիւն և չարութեան առատելութիւն,
հեզութեամբ ընդունեցէք չէզ մէջ սեր-
մանուած խօսքը, որ կրնայ փրկել ձեր
հոգիները։

22 Բայց խօսքին ընողներ եղէք, և ոչ
23 լսողներ միայն՝ խաբելով զձեզ։ Քանզի
եթէ ոք խօսքին լսող է միայն և ոչ
ընող, նման է նա մարդու որ հայելւոյ
24 մէջ կը դիտէ իւր բնական երեսը։ Քան-
զի դիտելով անոնա զինք և անցայ
գնաց, և վաղվազակի մոռցաւ թէ որ-
25 պիսի ոք էր։ Բայց այն որ յառնալ կը
նայի ազատութեան կատարեալ օրէ-
նքով և կը կենայ անոր մէջ, Էւոէէ լսող
է մոռցող չըլլալով այլ գործն ընող,
26 երանելի պիտի ըլլայ ընելութեան մէջ։ Եթէ
ոք կը կարծէ թէ բարեպաշտ է ձեր
մէջ և սանձ չդներ իւր լեզուին, այլ
կը խաբէ իւր սիրտը, ունայն է այն-
27 պիսւոյն բարեպաշտութիւնը։ Աստու-
ծոյ և Հօր քով մաքուր և անարատ
բարեպաշտութիւն այս է, այցելու ըլ-
լալ որբոց և այրեաց անոնց նեղութեան
ատեներ և անարատ պահել զանձն աշ-
խարհէ։

## Գլ. Բ

1 Եղբարք իմ, այտառութեամբ մի բռա-
նէք զհաւատս Տեառն մերոյ Յիսուս
2 Քրիստոսի, փառաց Տէրոջ։ Քանզի
եթէ ձեր ժողովին մէջ մանէ մարդ մը
որ ունի ոսկի մատանի և փառաւոր
հանդերձներ, հոն մանէ նաև ազքատ
3 մը ապառղի հանդերձներ, և նայիք
անոր վրայ որ փառաւոր հանդերձներ
ունի, և ըսէք թէ Դուն նստէ հոս պատ-
ուով, և ազքատին ըսէք թէ Դուն կե-
ցիր հոդ ոտից վրայ, կամ թէ նստէ
4 պատառանդանիս քով, ոչ ապաքէն
խորհիք կ'ընէք ձեր մէջ և կ'ըլլաք
5 չար խորհուրդներու դատաւորք։ Լսե-
ցէք, եղբարք իմ սիրելիք։ ոչ ապա-
քէն Աստուած ընտրեց աշխարհս ազ-
քատները որ հարուստ են հաւատով և
ժառանգաւորք արքայութեան, զոր
խոստացաւ անոնց որ կը սիրեն զնա,



6 Բայց դուք անարգեցիք զազքատս։ ոչ
ապաքէն հարուստները կը յարձակա-
բերն զձեզ, և անոնք կը քաշեն զձեզ ի
7 դատաստան։ ոչ ապաքէն անոնք կը
հայհոյեն բարի անունը որ կոչուած է
8 ձեր վրայ։ Արդ, եթէ զարքա-
նական օրէնքը կը կատարէք ըստ Գրոյն
թէ՝ Դու ընկերդ սիրես զքո անձիդ
9 պէս, բարւոք կ'ընէք։ Բայց եթէ ա-
չառութիւն կ'ընէք, մեղք կը գործէք,
և կը յանդիմանիք յօրինաց իբրև օ-
10 րինադանց։ Քանզի նա որ բոլոր օրէն-
քը պահէ և միոյն մէջ յանցաւոր ըլլայ,
11 պարտական կ'ըլլայ ամենուն։ վասն զի
այն որ ըսաւ թէ Մի շնար՝ ըսաւ նաև
թէ Մի սպաննաներ. ուստի եթէ չշնաս,
բայց սպաննանես, կ'ըլլաս օրինազանց։
12 Այնպէս խոսեցէք և այնպէս ըրէք, որ-
պէս թէ պիտի դատուիք ազատութեան
13 օրինօք։ վասն զի դատաստան անողորմ
պիտի ըլլայ անոր որ ողորմութիւն չընէր.
և ողորմութիւնը կը պարծենայ դա-
տաստանին դէմացը։

14 Ի՞նչ օգուտ է, եղբարք իմ, եթէ
ոք ըսէ թէ հաւատք ունի, և գործ
չունենայ։ միթէ հաւատքը կրնայ փրկ-
15 ել զնա։ եթէ եղբայր կամ քոյր մերկ
16 է կամ օրուան կերակրոյն կարօտ, և
ձենէ ոք ըսէ անոնց, Գացէք խաղա-
ղութեամբ, տաքցէք և յագեցէք, և
մարմնոյն հարկաւոր բաները չտաք ա-
17 նոնց, ի՞նչ օգուտ է։ Այսպէս և հա-
ւատքը, եթէ էրէն հետ գործ չունի,
18 ըստ ինքեան մեռած է։ Նաև կրնայ
ոք ըսել թէ Դուն հաւատք ունիս, և
ես գործեր ունիմ. դուն ցոյց ինձ
քու հաւատքդ առանց գործոց, և ես
ցուցնեմ քեզ իմ հաւատքս գործերէս։
19 Դուն կը հաւատաս թէ մի է Աստուած,
բարւոք կ'ընես. դեւք ևս կը հաւատան
20 և կը սարսին։ Բայց կ'ուզե՞ս գիտնալ,
ով մնամ մարդ, թէ հաւատք առանց
21 գործոց մեռեալ է։ Աբրահամ հայր
մեր գործերով չարդարացա՞ւ, երբ իւր
որդին զիւտակ սեղանին վրայ հանից,
22 կը տեսնե՞ս որ հաւատքն անոր գործե-
րուն հետ գործեց, և այն գործերով
23 հաւատքը կատարեալ եղաւ։ Եւ կա-
տարուեցաւ Գիրքին Էւոէէ որ կ'ըսէ,
Աբրահամ Աստուծոյ հաւատաց, և այն
համարուեցաւ անոր արդարութիւն, և
24 կոչուեցաւ բարեկամ Աստուծոյ։ Կը
տեսնէ՞ք որ մարդ գործերով կ'արդա-
25 րանայ, և ոչ հաւատով միայն։ Նոյնպէս
և Ռահաբ պոռնիկ ոչ ապաքէն գոր-
ծերով արդարացաւ, երբ լրտեսներն
առաւ ներս, և ուրիշ ճամբով արձա-
26 կեց։ Քանզի ինչպէս մարմին առանց
հոգւոյ մեռած է, նոյնպէս և հաւատք
առանց գործոց մեռեալ է։

## Գլ. Գ

1 Եղբարք, չատ վարդապետներ մի ըլ-
լաք՝ գիտնալով թէ աւելի մեծ գա-
2 տաստան պիտի ընդունինք։ Քանզի ա-
մենքս շատ յանցանք կ'ընենք։ եթէ
ոք խօսքով յանցանք չընէ, կատար-
եալ մարդ է, որ կարող է բոլոր մար-
3 մինը ևս սանձել։ Տես որ ձիոց բերանը
սանձ կը դնենք որ հնազանդին մեզ,
և կը կառավարենք անոնց բոլոր մար-
4 մինը։ Ահա և նաւք որչա՜փ մեծ են, և
սաստիկ հովերէ կը տարուին, բայց փոք-
րիկ ղեկով մը կը կառավարուին, ո՛ր
5 կողմ և ուզէ ղեկավարին կամքը։ Այս-
պէս և լեզուն փոքրիկ անդամ է, և մեծ
բաներ կը խօսի։ ահա փիչ մը կրակ ո՛ր-
6 չափ նիւթ կը հրդեհէ։ Լեզուն ևս կրակ
է, անիզերք անիրաւութեան. լեզուն
այնպէս դրուած է մեր անդամներուն
մէջ, որ ի՛ապականէ բոլոր մարմինը, և
կը վառէ բնութեան շրջանը, և ինք
7 կը վառի գնհնենէն։ Քանզի բոլոր գա-
զանաց և թռչնոց և սողոց և անանց
որ ծովու մէջ են բնութիւնը կը նուա-
ճի և նուաճեալ է մարդկային բնու-
8 թենէն։ Բայց ղեզուն ոչ ոք ի մարդ-
կանէ կրնայ նուաճել. անդուլ չար է,
9 լի մահաբեր թունով. Անով կ'օրհ-
նենք զԱստուած և Հայր, և անով
կ'անիծենք զմարդիկ որ Աստուծոյ
10 նմանութեան ստեղծուած են։ Միևնոյն
բերնէն կ'ելլեն օրհնութիւն և անէծք.

եղբարք իմ, պէտք չէ որ այս այսպէս
11 ըլլայ։ Միթէ աղբիւր նոյն բերանէն կը
12 բղխէ՞ քաղցր և դառն։ Միթէ հնար ե՞ր
է, եղբարք իմ, որ թզենին բերէ ձի-
թապտուղ, կամ որթը՝ թուզ։ Նոյնպէս
և ոչ աղբիւր մը կրնայ տալ աղտաղ-
13 ոտն և քաղցր ջուր։ Ձեր մէջ իմաս-
տուն և հանճարեղ ո՞վ կայ։ Թող բա-
րի վարմամբ ցուցնի իւր գործերն ի-
14 մաստութեան հեզութեամբ։ Այլ եթէ
դառն նախանձ և հակառակութիւն
ունիք ձեր սրտին մէջ, մի պարծե-
նաք և սուտ հանէք ճշմարտութիւնը։
15 Այս իմաստութիւնը վերէն իջած չէ,
այլ է երկրաւոր, հոգեառ, դիւական։
16 Քանզի ուր նախանձ և կռիւ կայ, հոն
է անկարգութիւն և ամէն չար բան։
17 Այլ վերէն իմաստութիւնը նախ սուրբ
է, ապա խաղաղարար, հեզ, հնազ, լի
ողորմութեամբ և բարի պտուղներով,
18 անաչառ և անկեղծ։ Եւ արդարութեան
պտուղը խաղաղութեամբ կը սերմանուի
անոնց որ խաղաղութիւն կ'ընեն։

## Գլ. Դ

1 Ուստի՞ են պատերազմներ, և ուստի՞
կռիւներ ձեր մէջ. ո՞չ ապաքէն ձեր
ցանկութիւններէն որ կը պատերազմին
2 ձեր անդամներուն մէջ։ Կը ցանկաք և
չունիք. կը սպաննէք և կը նախանձիք,
և չէք կրնար հասնիլ. կը պատերազ-
միք և կը կռուիք, բայց չունիք, քան-
3 զի չէք խնդրեր. կը խնդրէք և չէք առ-
նուր, վասն զի չարաչար կը խնդրէք,
որպէս զի ձեր ցանկութիւններուն գոր-
4 ծածէք։ Շնացողներ, չէ՞ք գիտեր որ
աշխարհի սէրը թշնամութիւն է Աստու-
ծոյ դէմ. ուստի ով որ կ'ուզէ բարե-
կամ ըլլալ աշխարհի, թշնամի կ'ընէ
5 զինք Աստուծոյ։ Կամ կը կարծէք թէ
Գիրքն ի զո՞ւր *կ'ըսէ Թէ Նախանձու
կը փափաքի Հոգին որ կը բնակի ի մեզ։"
6 Սակայն աւելի շնորհք կու տայ. վասն
որոյ կ'ըսէ, Ամբարտաւանին կը
կենայ ամբարտաւանութեան, բայց շնորհք
7 կու տայ խոնարհներուն։ Ուստի հնազան-
դեցէք Աստուծոյ. հակառակ կեցէք
Սատանային, և պիտի փախչի ձեզմէ.
8 Մօտեցէք Աստուծոյ, և պիտի մօտե-
նայ ձեզ. սրբեցէք ձեր ձեռքերը,
մեղաւորներ, և մաքրեցէք ձեր սիր-
9 տերը, երկմիտներ. Տառապեցէք, սգ-
գացէք և լացէք. ձեր ծիծաղը գառ-
նայ ի սուգ, և ձեր ուրախութիւնն ի
10 տրտմութիւն. Խոնարհեցէք Տէրոջը
առջև, և պիտի բարձրացնէ զձեզ։
11 Ձերոյ մի բամբասէք, եղբայրներ.
ով որ կը բամբասէ իւր եղբայրը կամ
կը դատէ իւր եղբայրը, կը բամբասէ օ-
րէնքը և կը դատէ օրէնքը. ապա եթէ
օրէնքը դատես, այլ ևս դուն օրէնքը
12 կատարող չես, այլ դատաւոր։ Մէկ է օ-
րէնադիր [և Դատաւորը], որ կարող է
փրկել և կորսուանել. դու ո՞վ ես որ
կը դատես ուրիշը։
13 Հիմա լսեցէք, դուք որ կ'ըսէք, Այ-
սօր կամ վաղիւ երթանք այս ինչ քա-
ղաք, և հոն տարի մը կենանք, և վա-
14 ճառենք և շահինք. (Դուք որ վաղիւը
15 չէք գիտեր. Քանզի ի՞նչ է ձեր կեան-
քը. արդարև շոգի *է, որ փշշ մը ա-
տեն կ'երեւայ և յետոյ կ'անհետանայ.)
փոխանակ ըսելու, եթէ Տէրը կամենայ
և ողջ մնանք, լսենք այս ինչ կամ այն
16 ինչ, բայց հիմա ձեր ամբարտաւանու-
թեամբ կը պարծիք. բոլոր այսպիսի
17 պարծանք չարութիւն են։ Ուստի ով
որ բարին ընել գիտայ և չընէ, այն
մեզք է անոր։

## Գլ. Ե

1 Ագէ հիմա, հարուստներ, լացէք և ողբացէք թշուառութեանց համար որ
2 պիտի գան ձեր վրայ. Ձեր հարստու-
թիւնն ապականած է, և ձեր հանդերձ-
3 ները՝ կերակուր ցեցոյ. Ձեր ոսկին և
արծաթը ժանգոտած են, և անոնց

*Կամ կը խօսի. Նախանձո՞ւ կը փափաքի Հոգին որ կը բնակի ի մեզ։

*Ոմանք եւ



ժանգը պիտի ըլլայ վկայ ձեզի դէմ, և
պիտի ուտէ ձեր մարմինը կրակի պէս.
4 գանձեցիք վերջին օրերուն համար. Ա-
հա ձեր արածին հնձող մշակաց վարձ-
քը զոր եւս պահեցիք՝ կ'աղաղակէ, և
հնձողներուն բողոքը հասաւ յականջս
5 Տեառն զօրութեանց, երկրի վրայ ապ-
րեցաք փափկութեամբ և հեշտու-
թեամբ, ձեր սիրտերը մեծցիք՝ որպէս
6 թէ մորթուելու օրուան համար. Դա-
տապարտեցիք և սպաննեցիք արդարը,
ոչ հակառակ չկենար ձեզ։
7 Ուստի համբերող եղէք, եղբարք, մին-
չեւ Տէրոջը գալուստը. ահա երկրա-
գործը կը սպասէ երկրի պտուղին
պատուական, համբերելով անոր համար,
մինչեւ առնու առաջինն և վերջին անձ-
8 րեւ, երկայնամիտ եղէք և դուք, հաս-
տատ բռնեցէք ձեր սիրտերը. քանզի
9 Տէրոջը գալուստը մօտ է, Իրարու դէմ
մի հառաչէք, եղբայրներ, որ չդատա-
պարտուիք. ահա Դատաւորը կեցած է
10 դրան քով։ Եղբարք իմ, չարչարանաց
և համբերութեան օրինակ առէք մար-
գարէները, որ խօսեցան յանուն Տեա-
11 ռն։ Ահա երանի կու տանք համբե-
րողաց. լսեցիք Յոբայ համբերութիւնը,
և տեսաք Տէրոջը վախճանն ա՛ռ նա, թէ
Տէրը բազմագութ և ողորմած է։
12 Մէդ յառաջ քան զամենայն ինչ, եղ-
բարք իմ, մի երդնուիք, ոչ յերկինս,
ոչ յերկիր, և ոչ ուրիշ երդում. այլ
ձեր այոն ըլլայ այո, և ոչը՝ ոչ, որ դա-
տապարտութեան տակ չիյնաք։
13 Եթէ ոք ձենէ նեղութեան մէջ է, թող
աղօթէ. եթէ ոք ուրախ է, սաղմոս
14 թող երգէ. եթէ ոք ձենէ հիւանդ է,
թող կոչէ եկեղեցւոյն երէցները, և ա-
ղօթեն անոր վրայ, և իւղով օծեն զնա
15 յանուն Տեառն. Եւ աղօթքը որ հաւա-
տով է՝ պիտի փրկէ հիւանդը, և Տէրը
պիտի կանգնէ զնա. և եթէ մեղք գոր-
16 ծած է, պիտի ներուի անոր. Ձեր յան-
ցանքները խոստովանեցէք իրարու, և
աղօթք ըրէք իրարու համար՝ որ բժըշ-
կուիք. շատ զօրաւոր է արդարոյն ե-
17 ռանդուն աղօթքը։ Եղիա իբրև զմեզ
մարդ էր ընդ կրեաց, և աղօթք ըրաւ
որ անձրեւ չգար, և երեք տարի և վեց
18 ամիս անձրեւ չեկաւ երկրի վրայ։ Եւ
դարձեալ աղօթք ըրաւ, և երկինքը անձ-
րեւ տուաւ և երկիրը բուսցոյց իւր պը-
տուղը։
19 Եղբարք, եթէ ոք ձենէ մոլորի ճշմար-
20 տութենէ, և դարձնէ ոք զնա, Գիտ-
նայ թէ այն որ կը դարձնէ մեղաւորն
իւր մոլորութեան ճանապարհէն, հոգի
մը կ'ազատէ մահուանէ, և կը ծածկէ
բազմութիւն մեղաց։

# ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

# ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## ԳԼՈՒԽ Ա

1 Պետրոս, առաքեալ Յիսուսի Քրիստո-
սի, օտարականացած ցրուելոց ի Պոն-
տոս, ի Գաղատիա, ի Կապադովկիա,
2 Ասիա և ի Բիւթանիա, ընտրելոց ըստ
կանխագիտութեան Աստուծոյ Հօր,
Հոգւոյն սրբացուցանելովն ի հնազանդու-
թիւն և ի սրսկումն արեան Յիսուսի
Քրիստոսի. շնորհք ձեզ և խաղաղու-
թիւն բազմանայ։
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն

մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ իւր առատ ողորմութեան ծնաւ զմեզ վերըստին ի յոյսն կենդանի, ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց,
4 Ածելոյ և անապական և անթառամ ժառանգութիւն որ պահեալ է ձեզ
5 յերկինս, Որ զօրութեամբն Աստուծոյ պահպանեալ էք հաւատով այն փրկութեան որ պատրաստեալ է յայտնել վերջին ժամանակ. Որով կ'ուրախանայք, թէև հիմա, ինչպէս հարկ է, սակաւ ինչ տրտմած էք պէս պէս
7 փորձութիւններով. Որպէս զի ձեր հաւատոյն փորձք (որ պատուական է քան զկորնչական ոսկի, թէև սա հրով կը փորձուի,) գտանի գովութեամբ և պատուով և փառօք Յիսուսի Քրիստոսի յայտնուելու ժամանակը. Ա՛յն զոր դուք չտեսած՝ կը սիրէք, զոր հիմա չէք տեսներ, բայց կը հաւատաք, և ուրախ էք անպատմելի և փառաւորեալ խնդութեամբ. Ընդունելով ձեր
10 հաւատոյն վախճանը, այսինքն ձեր հոգիներուն փրկութիւնը. Որ փրկութեան համար ի խնդիր եղան և քննեցին մարգարէք որ մարգարէացան շնորհաց համար որ պիտի գար ձեզ. Ու կը քննէին
11 թէ երբ կամ որպիսի ժամանակ կ'ի՛նայեցնէր Քրիստոսի Հոգին որ ի նոսա, որ կանխաւ կը վկայէր Քրիստոսի չարչարանաց, և յետ ասոնց՝ փառացը համար,
12 Որոց յայտնուեցաւ, որ ոչ թէ իրենց՝ այլ մեզ մատակարարեցին այն բաները, որ հիմա պատմուեցան ձեզ անոնց ձեռօք որ աւետարանը քարոզեցին ձեզ Հոգւով Սրբով որ յերկինից զրկուեցաւ. որ բաներուն կը ցանկան ակնկառոյց նայիլ հրեշտակները.
13 Ուստի ձեր մտաց մէջքը գօտևորած, արթուն կեցած, կատարեալապէս յուսացէք ձեր վրայ հասնելու շնորհաց՝ Յիսուսի Քրիստոսի յայտնուելու ատենը,
14 Հնազանդ որդիներու պէս, ոչ թէ ձեր ոգիաւորեան ժամանակին առաջին
15 ցանկութիւններով վարուելով. Այլ զձեզ կոչող Սրբոյն պէս և դուք սուրբ
16 եղէք ՅԲԷ բոլոր վարմանց մէջ. վասն
17 զի գրուած է Թէ Սուրբ եղէք, քանզի ես սուրբ եմ, Եւ եթէ Հայր կը կոչէք զոյն որ առանց աչառութեան կը դատէ ըստ գործոց իւրաքանչիւրին, ուրեմն ձեր պանդխտութեան ժամանակն
18 անցուցէք երկիւղիւ, Գիտնալով Թէ դուք ոչ թէ ապականացու արծաթով կամ ոսկւով փրկուեցաք ձեր հայրենի
19 նաւաւոր ուրացի ճամբաներնէն, Այլ Քրիստոսի պատուական արեամբ, իբրև
20 ամրիծ և անարատ գառին. Որ յառաջագոյն ճանչցուած էր նախ քան զրկիզրն աշխարհի, և ի յետին ժամա-
21 նակս յայտնուեցաւ ձեզի համար, Որ անոր միջոցաւ հաւատացիք Աստուծոյ, որ զնա մեռելներէն յարոյց, և տուաւ անոր փառք, որպէս զի ձեր հաւատքը
22 և յոյսն ըլլան Աստուած. Ձեր անձերը մաքրած ըլլալով հնազանդութեամբ ճշմարտութեան ի ձեռն Հոգւոյն ի եղբայրսիրութիւն անկեղծաբար, ի սուրբ
23 սրտէ զիրար սիրեցէք ջերմեռանդ, Վերըսին ծնած ըլլալով ոչ թէ ապականացու սերմանէ, այլ անապականացու ի՛ն Աստուծոյ կենդանի և յաւիտենական
24 խօսքովը. Վասն զի ամէն մարմին իբրև գիտաւ է, և մարդուն բոլոր փառքն իբրև ծաղիկ խոտոյ. խոտը կը չորնայ
25 և անոր ծաղիկը կը թօթափի. Բայց Տէրոջը խօսքը յաւիտեան կը մնայ, այսինքն՝ այն խօսքը որ աւետարանով քարոզուեցաւ ձեզ.

## ԳԼ. Բ

1 Ուրեմն ի բաց թօթափելով ամէն չարութիւն և ամէն խաբէութիւն և կեղծաւորութիւն, և նախանձ և ամէն չա-
2 բախօսութիւն, Նորածին մանկանց պէս փափաքեցէք բանական և անխարդախ կաթին, որով մեծնաք [ի փրկութիւն],
3 Եթէ ճաշակեցիք թէ քաղցր է Տէր.
4 Առ որ մատնեցուալ, առ վէմն կենդանի, որ թէպէտ ի մարդկանէ անարգուած, բայց Աստուծմէ ընտրուած և պատուա-
5 կան է, Դուք ևս, իբրև կենդանի քարեր, շինուիք հոգևոր տաճար, սուրբ



քահանայութիւն, մատուցանել հոգևոր պատարագներ հաճոյ Աստուծոյ
6 Յիսուսի Քրիստոսի ձեռօք. Քանզի Գրքին մէջ կա՛յ Թէ Ահա Սիոնի մէջ կը դնեմ վէմ անկեան, ընտիր, պատուական. և ով որ հաւատայ անոր՝ ըս-
7 նաւ պիտի չամչնայ: Ուստի ձեզ հաւատացողիդ պատուական է, բայց ան-
8 հաւատներուն՝ քարը զոր անարդեցին չինողք, նա եղաւ գլուխ անկեան, Եւ գլորման վէմ և գայթակղութեան քար անոնց՝ որ չհնազանդելով կը գայթակղին խօսքէն, ատ որ և սահմանուած էին:
9 Բայց դուք ընտիր ցեղ էք, թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեպհական ժողովուրդ, որ քարոզէք անոր առաքինութիւնները, որ զձեզ կոչեց խաւարէն իր սքանչելի լոյսը.
10 Որ երբեմն ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդ էք. որ առանց ողորմութեան էիք, բայց հիմա ողորմութիւն գտաք:
11 Սիրելիք, կ'աղաչեմ, իբրև պանդուխտ և օտարական մէկէդի կեցէք մարմնաւոր ցանկութիւններէ, որ հո-
12 գւոյ դէմ կը պատերազմին, Ձեր վարքն հեթանոսաց մէջ բարի պահելով, որպէս զի ուրեք ձեզ չարագործ, տեսնելով ձեր բարի գործերը, փառաւորեն զԱստուած այցելութեան օրը. Ուստի հնազանդեցէք ամէն մարդկային հաստատութեան Տէրոջը համար, թէ թագաւորին՝
14 իբրև վերնագունի, թէ կուսակալաց, իբրև անոր կողմանէ զրկուածներուն, ի պատիժ չարագործաց, և ի գովութիւն
15 բարեգործաց, Քանզի Աստուծոյ կամքն այսպէս է, որ բարեգործ ըլլալով պապանձեցունէք անմիտ մարդոց տգիտութիւնը. Ազատներու պէս ըլլալով, և ոչ թէ գործածելով ազատութիւնն
16 իբրև ծածկոյց չարութեան, այլ իբրև
17 Աստուծոյ ծառաներ. Պատուեցէք ամենքը. սիրեցէք եղբայրութիւնը. վախցէք Աստուծմէ. պատուեցէք թագաւորը:
18 Ծառայք ամէն բանի մէջ ահիւ հնա-

զանդին ոչ միայն բարեբարոյից և հեզոց, այլ և ժանտաբարոյից:
19 Եւ հեզոց, այլ և ժանտաբարոյից: Քանզի այս շնորհք է, եթէ ոք խղճիւ առ
20 Աստուած համբերէ տխուր զրպա կը կրէ. Բէ յանիրաւի. վասն զի ինչ գովութիւն է, եթէ մեղք գործելով ծեծուիք և համբերէք. այլ եթէ բարի գործելով չարչարուիք և համբերէք, այս
21 է շնորհք Աստուծոյ քով: Քանզի սորա համար կոչուեցաք. վասն զի և Քրիստոս ձեզի համար չարչարուեցաւ, և թողուց ձեզ օրինակ, որ հետևիք ա-
22 նոր չաւիղներուն. Որ մեղք չգործեց, և անոր բերանը նենգութիւն չգտնուեցաւ:
23 Որ կը նախատուէր, և փոխարէն չէր նախատեր. կը չարչարուէր, և ըսպառնալիք չէր ըներ. այլ զինք կը յանձնէր արդարութեամբ դատողին.
24 Որ մեր մեղքերը իր մարմնովը վերցուց խաչափայտին վրայ, որ մենք ապրուինք ի մեղայ, և ապրինք արդարութեան համար. որով վիրօք քժկեցաք. Քանզի մոլորեալ ոչխարներու պէս էիք, բայց հիմա դարձաք ձեր հոգիներուն Հովիւին և Տեսչին.

## ԳԼ. Գ

1 Նմանապէս կանայք հնազանդին իրենց արանց, որ եթէ անոնք չհնազանդին ևս խօսքին, չսահմանին առանց
2 խօսքի կանանց վարմամբը, Տեսնելով
3 ձեր երկիւղած պահկեցող վարքը: Որոց զարդը չըլլայ արտաքուստ մազերու հիւսուածք և ընդելուզուած ոսկիներ
4 կամ հանդերձներու զգեցումն, Այլ ըլլայ սրտին ծածուկ մարդը՝ անեղծութեամբ հեզ և հանդարտ հոգւոյ, որ Աստուծոյ առջև պատուական է յոյժ,
5 Քանզի ժամանակ ատ որ կանայք որ իրենց յոյսը դրած էին յԱստուած՝ այսպէս կը զարդարէին գիրենք, իրենց ա-
6 րանց հնազանդելով. Ինչպէս կը հնազանդէր Աբրահամ և տէր կը կոչէր զնա Սառա, որոյ կ'ըլլաք զաւկներ՝ ըլլալով բարեգործ և ոչ մի երկիւղ վախնալով.

7 Նմանապէս արք խոհեմութեամբ բնակին անոնց հետ, իբրև ամօթ պատիւ տալով կանանց, իբրև ժառանգակիցք կենաց շնորհաց, որպէս զի չխափանուին ձեր աղօթքները։
8 Վերջապէս ամէնքդ համամիտ ըլլաք, կարեկից, եղբայրասէր, ողորմած և
9 *քաղցրաբարոյ։ Չհատուցանէք չարութիւն փոխանակ չարութեան, կամ նախատինք՝ փոխանակ նախատանաց. այլ ընդ հակառակն օրհնեցէք, գիտնալով թէ յայն սակս կոչուեցաք, որ օրհնութիւն ժառանգէք։
10 Քանզի որ կ՚ուզէ սիրել կեանս և տեսանել բարի օրեր, թող դադրեցնէ իւր լեզուն չարութենէ, և իւր շրթունքը՝ նենգութենէ խօսելէ։
11 Զարութենէ եա կենայ և բարութիւն ընէ, խաղաղութիւն
12 ընդրէ և անոր եաևէն երթայ։ Քանզի Տէրոջը աչքը արդարներուն վրայ են, և անոր ականջներն անոնց աղօթքին։ բայց Տէրոջը երեսը չարագործներուն
13 վրայ է։ Եւ ո՞վ պիտի հատցնէ ձեզ չարիք, եթէ դուք նմանող ըլլաք բարւոյն։
14 Բայց եթէ չարչարուիք ալ արդարութեան համար, երանելի եք։ և մի վախնաք անոնց ահէն և մի չխռովիք։
15 Քրիստոս Աստուած ձեր սրտերուն մէջ։ և միշտ պատրաստ եղէք հեզութեամբ և երկիւղածութեամբ պատասխան տալ ամենուն որ կը հարցունէն ձեզ ձեր յուսոյն պատճառը։ Եւ բարի խիղճ ունենաք, որ
16 ինչ բանով որ կը բամբասանն զձեզ իբրև չարագործ, ամչնան անոնք որ կը պարսաւեն ձեր բարի վարքը որ ի Քրիստոս։
17 Քանզի լաւ է բարիք գործելով չարչարուիլ, եթէ այն է Աստուծոյ կամքը, քան չարիք գործելով։
18 Վասն զի և Քրիստոս մեռաւ մեղաց համար մի անգամ չարչարուելոյ, Արդարն անարդարներուն համար, որ զձեզ մատուցանէ առ Աստուած. որ թէպէտ մեռաւ մարմնով, բայց կենդանեցաւ հոգւով։
19 Ընդ որում և բանտի հոգիներուն քարոզեց գնաց։
20 Անոնց որ ապերախտ եղան յաւուրս Նոյի, երբ Աստուծոյ երկայնմտութիւնը կը համբերէր մինչ տապանը կը շինուէր, յորում քիչ անձինք, այսինքն ութ հոգի, ապրեցան ջուրէն։
21 Որ և զձեզ այն օրինակին պէս կ՚ապրեցնէ հիմա մկրտութիւնը, (ոչ թէ մկկի նեաւելը մարմնոյն պարտ, այլ բարի խղճին վկայութիւնն առ Աստուած,) յարութեամբն
22 Յիսուսի Քրիստոսի, Որ երթալով յերկինս՝ է ընդ աջմէ Աստուծոյ հրեշտակաց և իշխանութեանց և զօրութեանց հնազանդելովն անոր։

## Գլ. Դ

1 Արդ որովհետև Քրիստոս չարչարուեցաւ մեզի համար մարմնով, դուք ևս նոյն մտօք զինուեցէք. վասն զի այն որ մարմնով չարչարուեցաւ, դադարած է ի մեղաց։
2 Որ ոչ եա մարդոց ցանկութիւններուն պէս՝ այլ բուն Աստուծոյ կամաց ապրիլ ի մարմնի մնացեալ ժամանակը։
3 Քանզի հերիք է մեզ կենաց անցեալ ժամանակը, յորում կատարեցինք հեթանոսաց կամքը, և վարուեցանք գինութեամբ, ցանկութեամբ, գինեհարութեամբ, անառակութեամբ, արբեցութեամբ և
4 անօրէն կռապաշտութեամբք։ Ընդ որոր կը զարմանան որ դուք նոյն անառակութեան զեղուութեան մէջ չէք վազեր անոնց հետ, և կը հայհոյեն։
5 Որք պատասխան պիտի տան անոր որ պատրաստ է դատել դիւրդանիս և զմեռեալս։
6 Եւքան Քանզի վասն այսորիկ մեռելոց եա աւետարան քարոզուեցաւ, որ դատուին ըստ մարդկան՝ մարմնով, և կենդանի ըլլան ըստ Աստուծոյ՝ հոգւով։
7 Սակայն ամէն բանի վախճանը մօտեցած է։ ուստի զգաստ եղէք և արթուն կեցէք յաղօթս։ Եւ յառաջ քան զամենայն ինչ ունեցէք առ միմեանս փառքի սէրը կը ծածկէ զմեղս։
9 զայ բաղմութիւնը, Իբարու հիւրասիրութիւն ցուցէք առանց տրտնջելոյ։





10 Իւրաքանչիւր ինչ շնորհք որ առաւ, զայն մատակարարեցէք իրարու իբրև Աստուծոյ պէսպէս շնորհացը բարի պաշտօնեաներ։
11 Եթէ ոք խօսի, Աստուծոյ պատգամներուն պէս խօսի։ եթէ ոք մատակարարէ, Ըստ ըժխ պարկս թէ Աստուծմէ շնորհուած զօրութենէն, որպէս զի յամենայնի փառաւորուի Աստուած Յիսուսի Քրիստոսի ձեռօք. որում փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
12 Սիրելիք, մի օտարուած համարիք ներքինիութեան բորբոքը, որ կըլլայ զձեզ փորձելու, որպէս թէ օտար բան մը հանդիպած է ձեզ։
13 Այլ քան որչափ հաղորդ եք Քրիստոսի չարչարանաց, ուրախացեք, որ անոր փառաց յայտնութեան ատենը եա ուրախանաք գնծութեամբ։
14 Եթէ նախատուիք Քրիստոսի անուանը համար, երանելի եք. քանզի փառաց [և զօրութեան] և Աստուծոյ Հոգին հանգչած է ձեր վրայ։ [արդարև կը հայհոյուի նա անոնց կողմանէ, բայց կը փառաւորուի ձեր կողմանէ։] Մի ոք չարչարուի ձենէ իբրև մարդասպան, կամ գող, կամ չարագործ, կամ իբրև ուրիշի գործին միջամուխ։ Բայց եթէ ըստ Քրիստոսի իբրև Քրիստոնեայ, թող չամչնայ, այլ յայսմ թող փառք տայ
17 Աստուծոյ։ Քանզի ժամանակ է որ դատաստանն սկսի Աստուծոյ տանէն. և եթէ նախ մեզմէ կը սկսի, ապա ի՞նչ պիտի ըլլայ անոնց վերջը որ չեն հնազանդիր
18 Աստուծոյ աւետարանին։ Եւ եթէ արդարը հազիւ կը փրկուի, ամբարիշտը և մեղաւորն ո՞ր պիտի գտնուին։
19 Ուստի անոնք որ ըստ Աստուծոյ կամաց կը չարչարուին, բարիք գործելով Թող յանձնեն իրենց հոգիները անոր իբրև հաւատարիմ Ստեղծողի։

## Գլ. Ե

1 Երիցանց որ ձեր մէջ են՝ կ՚ապաւեմ իբրև երիցակից, և Քրիստոսի չարչարանաց վկայ, և մասնակից հանդերձեալ
2 փառաց որ պիտի յայտնուի։ Աստուծոյ հօտը որ ի ձեզ է՝ արածեցէք, վերակացու ըլլալով ոչ ակամայ, այլ կամաւ, ոչ թէ զօշափառութեամբ, այլ յօժարութեամբ, Ոչ թէ վիճակներուն վրայ տիրելով, այլ օրինակ ըլլալով հօտին.
4 Եւ երբ երեւնայ Հովիւապետը, պիտի ընդունիք փառաց անթառամ պսակը։
5 Նմանապէս դուք, երիտասարդք, հնազանդ եղէք ծերոց. և ամէնքդ իրարու հնազանդ ըլլալով՝ խոնարհութիւն հագէք. քանզի Աստուած հակառակ կը կենայ ամբարտաւանից, բայց
6 շնորհք կու տայ խոնարհաց։ Ուրեմն խոնարհեցէք Աստուծոյ հզօր ձեռացը տակ, որ բարձրացուէ զձեզ ի ժամանակ։
7 Ձեր ամէն հոգը նետեցէք անոր վրայ, վասն զի նա կը հոգայ ձեզի համար։
8 Արթուն եղէք, հսկեցէք, քանզի ձեր հակառակորդը Սատանան իբրև մռնչող առիւծ կը շրջի և կը խնդրէ թէ զով
9 կլանէ. Որուն դէմ կեցէք հաստատով հաւատալով, գիտնալով թէ ձեր եղբայրներն աշխարհի մէջ կը կրեն նոյն չարչարանքը։
10 Եւ ամէն շնորհաց Աստուածը որ կոչեց զձեզ իւր յաւիտենական փառաց Քրիստոսի Յիսուսի ձեռօք՝ ձեր սակաւ ժամանակեայ նեղութենէն յետքը, կատարեալ ընէ զձեզ, հաստատէ, զօ.
11 բացունէ, ընէ հաստատիմն. նմա փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից, Ամէն։
12 Սիլուանոս հաւատարիմ եղբօր ձեռօք, (ինչպէս կը կարծեմ,) համառօտիւ գրեցի ձեզ, յորդորելով և վկայելով թէ այս է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը, յորում հաստատ կեցած եք։
13 Ողջոյն կու տայ ձեզ ի Բաբելոն ընտրեալ
14 կանչեց եկեղեցին, և Մարկոս որդիկ։ Ողջոյն տուէք իրարու համբուրիւ սիրոյ։ Խաղաղութիւն ձեր ամենուն հետ որ եք ի Քրիստոս Յիսուս։ Ամէն։

# ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

# ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## ԳԼՈՒԽ Ա.

1 Շմաւոն Պետրոս, Յիսուս Քրիստոսի
ծառայ և առաքեալ, ՚ի՛նչ որ մեզի հետ
նոյն պատուական հաւատոց հասաք մեր
Աստուծոյն և Փրկչին Յիսուս Քրիստո-
2 սի արդարութեամբը։ Շնորհք և խաղա-
ղութիւն ձեր վրայ աւելցայ Աստուծոյ
և Տեառն մերոյ Յիսուս գիտութեամ-
3 բը, ինչպէս անոր աստուածային զօրու-
թիւնը տուաւ մեզ կենաց և աստուած-
պաշտութեան վերաբերեալ ամէն բան
գիտութեամբ նորա որ հրաւիրեց զմեզ
4 փառաւ և առաքինութեամբ։ Որով մե-
ծամեծ և պատուական խոստումներ
արուած են մեզ, որպէս զիասոնցմով
հազորդ ըլլաք աստուածային բնու-
թեան փախչելով ապականութենէն որ
5 աշխարհի մէջ է ցանկութեամբ։ Եւ այն
այս բանին համեմատ ամէն ջանք՝ աւել-
ցուցէք ձեր հաւատոյն վրայ առաքի-
նութիւն, և առաքինութեան վրայ՝ գի-
6 տութիւն, եւ գիտութեան վրայ՝ ժուժ-
կալութիւն, և ժուժկալութեան վրայ՝
համբերութիւն, և համբերութեան վր-
7 րայ՝ աստուածպաշտութիւն, եւ աստ-
ուածպաշտութեան վրայ՝ եղբայրսիրու-
թիւն, և եղբայրսիրութեան վրայ՝ սէր։
8 Վասն զի մինչ ասոնք կը գտնուին ձեր
վրայ և կ՚աճեին, ուղղակի և անպտուղ
չեն բներ ՚ձեզ Տեառն մերոյ Յիսուս
9 Քրիստոսի գիտութեան մէջ։ Բայց ով
որ չունի ասոնք, կոյր է և զգայուն, և
մոռցած է թէ մաքրուեցաւ իր առա-
10 ջին մեղքերէն։ Վասն որոյ, եղբայրք,
ջանացէք մանաւանդ հաստատել ձեր
կոչումը և ընտրութիւնը, քանզի բնև-
11 լով գայք՝ բնաւ պիտի չվրիպիք։ Քան-
զի այսպէս առատօրէն պիտի շնորհուի
ձեզ մտնել Տեառն մերոյ և Փրկիչին Յի-
սուս Քրիստոսի յաւիտենական թա-
գաւորութիւնը։

12 Ուստի ես դանդ պիտի չլինիմ յիշեցու-
նել ձեզ միշտ ասոնք, թէև գիտէք և
հաստատուած էք յառաջիկայ ճշմար-
13 տութեան։ Եւ իրաւունք կը համարիմ,
ցորչափ այս *մարմնոյս մէջ եմ, յիշե-
14 ցուներով արթնցուցնել զձեզ։ Քանզի
գիտեմ թէ վաղ պիտի մերկանամ այս
մարմնոս, ինչպէս Տէրն մեր Յիսուս Քր-
15 իստոս յայտնեց ինձ։ Ուստի պիտի
ջանամ որ իմ կղկղիչ ներքս ես աշխար-
հէ միշտ կարող ըլլաք յիշել զայսոսիկ։
16 Քանզի ոչ թէ հնարուած բաներով չին-
ուած առաքելներու եմք ձեզ ծանու-
ցուցինք ձեզ Տեառն մերոյ Յիսուս
Քրիստոսի զօրութիւնը և գալուստը,
այլ ականատես լինելով անոր մեծա-
17 կութեանը։ Վասն զի առաւ նա Հօր
Աստուծմէ պատիւ և փառք, երբ այն-
պիսի ձայն եկաւ մեծափառութեան
փառքէն, թէ Դուն է Որդի իմ սիրելի,
18 որուն հաճած եմ։ Եւ այս ձայնը որ
յերկինէ եկաւ՝ լսեցինք մենք որ անոր
19 հետ էինք սուրբ լեռան վրայ։ Եւ ու-
նինք նաև մարգարէական խօսքը որ
աւելի հաստատուն է, որուն լաւ կ՚ըն-
էք եթէ մինչ դուք, իբրև ճրագի որ
կը ծագէ մութ տեղ, մինչև ցորեկը լու-
նայ և արտաքուստ ծագէ ձեր սիրտե-
20 րուն մէջ։ Բայց նախ այս գիտնաք, թէ
գրոց ամէն մարգարէութիւն չունի իր

*Յառն. վրանիս

21 ուրոյն մեկնութիւնը։ Քանզի մարգա-
րէութիւն չորուեցաւ երբէք քան կա-
մաց մարդկան, այլ Աստուծոյ սուրբ
մարդիկը Սուրբ Հոգիէն չարժեալ խօ-
սեցան։

## ԳԼ. Բ

1 Բայց սուտ մարգարէներ ևս կ՚ըլլային
ժողովրդեան մէջ, ինչպէս ձեր մէջ ևս
սուտ վարդապետներ պիտի ըլլան, որ
գաղտ պիտի մուծանեն կորուսիչ հեր-
ձուածներ, և զիրենք գնող Տէրն ու-
րանալով՝ իրենց վրայ պիտի բերեն ա-
2 րագահաս կորուստ։ Եւ շատեր պիտի
երթան զհետ *կորստական ընթացից
նոցա, որոց համար պիտի հայհոյուի ճըշ-
3 մարտութեան ճամբան։ Եւ առ ագահու-
թեան խաբեական խօսքերով շահավա-
ճառ պիտի ընեն զձեզ։ որոց ի վաղուց
դատապարտութիւնը չյամենար, և ա-
նոնց կորուստը չնիրհեր։
4 Վասն զի եթէ Աստուած չխնայեց մե-
ղուցեալ հրեշտակաց, այլ խաւարին
կապանօք նետելով տարտարոսը ալա-
5 հել տուաւ դատաստանի։ Եւ ան հինն
աշխարհի ևս չխնայեց, այլ պահեց †ու-
թերորդն, Նոյ, արդարութեան քա-
րոզիչ, երբ բերաւ ջրհեղեղ ամբարիշտ-
6 ներուն աշխարհին վրայ։ Եւ Սոդոմայ
և Գոմորայ քաղաքները մոխիր դար-
ձնելով կործանման դատապարտեց,
օրինակ կացուցանելով ըն*ծ*ե մարդոց
7 որ պիտի ամբարշտեին ետ յառաջ։ Եւ
ազատեց զարդարն Ղովտ որ ձանձրա-
ցած էր անօրէններուն անառակ վար-
8 քէն։ (Քանզի այն արդարը կենակցե-
անոնց մէջ ականատես և ականջալուր,
կը տանջէը օր քան օրէ *ե*ր արդար հո-
9 գին *ե*նոնց անօրէն վարմունքը։) Տէրը
գիտէ ազատել բարեպաշտները փոր-
ձութենէ, և անիրաւները պահել տան-
ջանաց համար դատաստանի օրուան։
10 Մանաւանդ զանոնք որ պղծութիւ ցան-

*Ոմն+ անառակութեանց
†Ա.յ+ ընտանեօք՝ ութ,

կութեամբ կ՚երթան մարմնոյ եւսեկ,
և կ՚անարգեն տէրութիւնը։ ինքնա-
հաւանք, յանդգնեալք, չեն վախնար
մեծափառութեանց դէմ հայհոյել։
11 Մինչ հրեշտակները որ քան զնոսա
մեծ են զօրութեամբ և կարողու-
թեամբ՝ չեն բերեր Տէրոջը առջև անոնց
12 դէմ հայհոյութեան դատաստան։ Բայց
ասոնք անբան անասուններու պէս (որ
եղած են բռնել որսոյ և սատակման
համար,) կը հայհոյեն այն բաներուն
դէմ զորս չեն գիտեր, և իրենց ապա-
13 կանութեան վարձքն ընդունելով։ որ
ցորեկոան զեղում թիւնը զուարճա-
թիւն կը համարին. արատ և բիծ են,
իրենց խաբէութիւններովը զուարճա-
նալով երբ ձեզի հետ խրախճութեանց
14 կը նստին։ Ունին աչքերը լի շնու-
թեամբ, որ չեն դադրիր ի մեղաց.
կը խաբեն անհաստատ հոգիներ. ունին
ագահութեան սովրած սիրտեր. ա-
15 նիծեալ որդիք են. Թողլով ուղիղ
ճամբան մոլորեցան հետևելով ճամ-
պարհին Բաղաամայ Բեովրեան, որ սի-
16 րեց անիրաւութեան վարձքը. Բայց
առաւ իր անօրէնութեան յանդիմա-
նութիւնը. անիսօս էշը մարդկային ձայ-
նիւ խօսելով մարգելից մարգարէին յի-
17 մարութիւնը։ Ասոնք աղբիւրք են ան-
ջրդիք, և փոթորկէ մղուած մէգեր,
որոց համար պահուած է թանձր խա-
18 ւար յաւիտեան։ Քանզի ունայնու-
թեամբ մեծարանալով կը խաբեն գի-
ծութեամբք, մարմնոյ ցանկութեամբք
զանոնք որ փիլ մը առաջ փախած էին
անոնցմէ որ կը շրջին ի մոլորութեան.
19 կը խոստանան անոնց ազատութիւն,
և ինքեանք ծառայ են ապականու-
թեան. վասն զի ինչ բանէ որ կը յաղ-
20 թուի օգ, անոր ծառայ կ՚ըլլայ։ Քան-
զի եթէ Տեառն և Փրկչին Յիսուս Քր-
իստոսի գիտութեամբ աշխարհիս պըղ-
ծութիւններէն հրաժարելէ ետքը դար-
ձեալ այն բաներէն բռնուած յաղ-
թուին, անոնց յետինը չար կ՚ըլլայ քան
21 զառջինը։ Քանզի լաւ էր անոնց որ

բան՝ ճանչցած չըլլային արդարութեան ճամբան, քան թէ ճանչնալով ետ դառնային այն սուրբ պատուիրանէն որ յանձնուեցաւ անոնց։ Սակայն անոնց հանդիպեցաւ բան ճշմարիտ առակին, թէ շուն կը դառնայ անդրէն ի փսխած իւր, և խոզ լուացեալ՝ ապրի մէջ թաւալելու։

## ԳԼ. Գ

1 Սիրելիք, այս երկրորդ թուղթը հիմա կը գրեմ ձեզ, որովք արթնցնելով 2 ձեր անկեղծ միտքն ի յիշել, որպէս զի միտք բերէք սուրբ մարգարէներէն յառաջագոյն բառած խօսքերը, և մեր, այսինքն Տէառն և Փրկիչին առաքելոց պատուէրները. բայց նախ զայս գիտնաք, որ պիտի գան վերջին օրերը ծաղր բնողներ, որ պիտի գային իրենց ցանկութիւններուն համեմատ, 4 ու պիտի ըսեն, Ո՞ւր է անոր գալուստեան խոստումը. վասն զի յորմէ հետ հայրերը քնացան, ամէն բան այնպէս կայ և կը մնայ արարածոց սկիզբէն հետէ։ 5 Քանզի անոնք կամելով կը մոռնան զայս թէ երկինք յաւիտենական էզաւ, և երկիր ջուրէ և ջրով հաստատ կեցած է Աստուծոյ խօսքովը, 6 որով հին աշխարհը ջրհեղեղով ապականեալ կորաւ։ 7 Եւ այժմու երկինք և երկիր պահպանուած են նոյն խօսքով, մինչև դատաստանին և ամբարիշտ մարդոց կորաուան օրը հրոյ համար պահուած։ Սակայն ձեզմէ ծածուկ չմնայ այս, սիրելիք, որ Տէրոջը 9 քով մի օր իրեն հազար տարի է, և հազար տարին՝ իրեն մի օր։ Տէրը չյապաղեր ե՞ր խոստումը, ինչպէս ոմանք յապաղել կը համարին, այլ երկայնամիտ կ'ըլլայ մեզ. քանզի չուզեր որ կորած ոք, այլ որ ամէնքն ապաշխարութեան դան։ 10 Սակայն իրեն *գող պիտի գայ Տէրոջը օրը, յորում երկինք սաստիկ շառաչմամբ պիտի անցնին, և տարերք վառած պիտի լուծուին, և երկիրս և ինչ գործեր որ կը գտնուին անոր մէջ պիտի այրին։ 11 Արդ որովհետև այս ամէնը պիտի լուծուին, ձեզ ինչպիսի մարդիկ ըլլալ կը վայելէ սուրբ վարուք և բարեպաշտութեամբ, 12 ապասելով և փութալով Աստուծոյ օրուան գալստեան, յորում երկինք կրակով այրած պիտի լուծուին, 13 և տարերք վառած պիտի հալին։ Սակայն անոր խոստման համեմատ կը սպասենք նոր երկինք և նոր երկրի, որոց մէջ կը բնակի արդարութիւն։

14 Ուստի, սիրելիք, ասոնց սպասելով ջանացէք, որ զձեզ ամբիծ և անարատ 15 գտնէ նա խաղաղութեամբ։ Եւ Տէառն մերոյ երկայնմտութիւնը փրկութիւն համարեցէք. ինչպէս և մեր սիրելի եղբայրը Պօղոս իրեն տրուած իմաստութեամբ 16 ձեզի գրեց ձեզ. ինչպէս նաև կը խօսի այս բաներուն վրայ բոլոր Թուղթերուն մէջ. յորս կը գտնուին ինչ ինչ դժուարիմաց, զորս ապերախտ և անհաստատ կը թիւրեն, ինչպէս նաև ուրիշ գիրքերն ի կորուստ անձանց իւրեանց։ 17 Ուրեմն դուք, սիրելիք, յառաջագոյն գիտնալով զգոյշ եղէք, որ անօրէնութեան խաբէութենէն բռնուած չիյնաք 18 ձեր հաստատութենէն. այլ աճեցէք Տէառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի շնորհօք և գիտութեամբը։ Նմա փառք և՛ այժմ և՛ մինչև յաւիտենական օրն։ Ամէն։

*Ոմն+ գիշերաւան գող

# ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## ԳԼՈՒԽ Ա

1 Այն որ ի սկզբանէ էր, որոյ համար լսեցինք, զոր տեսանք մեր աչօք, որ բուռն նայեցանք և զոր մեր ձեռուընե-2 ր չոչափեցին կենաց բանին վրայ, (և կեանքը յայտնուեցաւ, և տեսանք և կը վկայենք և կը պատմենք ձեզ այն յաւիտենական կեանքը, որ Հօր քով էր և յայտնուեցաւ մեզ,) 3 Այն զոր տեսանք և լսեցինք՝ կը պատմենք ձեզ, որ և դուք հաղորդութիւն ունենաք մեզի հետ. և մեր հաղորդութիւնն է Հօր հետ և անոր Որդւոյն Յիսուսի Քրիստոսի հետ։ 4 Եւ կը գրենք ձեզ ատոնք, որ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ։

5 Եւ այս է պատգամը զոր լսեցինք անկէ և կը պատմենք ձեզ, թէ Աստուած լոյս է, և բնաւ խաւար չկայ ի նմա։ 6 Եթէ ըսենք թէ Անոր հետ հաղորդութիւն ունինք, և խաւարի մէջ շրջինք, կը սուտնք և չենք ըներ ճշմարտութիւն։ 7 Բայց եթէ լուսոյ մէջ քալենք, ինչպէս նա լուսոյ մէջ է, կ'ունենանք իրարու հետ հաղորդութիւն, և անոր Որդւոյն Յիսուսի Քրիստոսի արիւնը կը սրբէ զմեզ ամէն մեղքէ։ 8 Եթէ ըսենք թէ Զանցնք մեղք, կը խաբենք զմեզ, և չկայ ճշմարտութիւն մեր մէջ։ 9 Եթէ խոստովանինք մեր մեղքերը, հաւատարիմ և արդար է նա տալ թողութիւն մեր մեղաց, և սրբել զմեզ ամէն անօրէնութենէ։ 10 Եթէ ըսենք թէ Զմեղանչեցինք, կ'ընենք զնա սուտ, և անոր խօսքը չէ մեր մէջ։

## ԳԼ. Բ

1 Որդեակք իմ, կը գրեմ ձեզ ասոնք, որ չմեղանչէք. և եթէ ոք մեղանչէ, ունինք Հօրը քով բարեխօս զԻսուս 2 Քրիստոս զարդարն։ Եւ նա քաւութիւն է մեր մեղաց, և ոչ միայն մերոցս, այլ և բոլոր աշխարհին։

3 Եւ սորով գիտանք թէ ճանչցանք զնա, եթէ անոր պատուիրանները պահենք։ 4 Ով որ կ'ըսէ թէ Ես ճանչցայ զնա, և չպահեր անոր պատուիրանները, սուտաւոր է, և ճշմարտութիւն չկայ ի նմա։ 5 Բայց ով որ կը պահէ անոր խօսքը, ատոր մէջ կատարեալ եղած է ի նմա Աստուծոյ սէրը. սորով կը ճանչնանք թէ նմանք ի նմա։ 6 Ով որ կ'ըսէ թէ կը բնակի ի նմա, պարտի քալել այնպէս ինչպէս նա քալեց։

7 *Եղբարք, ոչ թէ նոր պատուիրան կը գրեմ ձեզ, այլ հին պատուիրան զոր ի սկզբանէ ունէիք։ Հին պատուիրանն այն խօսքն է, զոր ի սկզբանէ 8 լսեցիք։ Դարձեալ նոր պատուիրան կը գրեմ ձեզ, և այս ճշմարիտ է ինձմէ և ի ձեզ. քանզի խաւարը կ'անցնի, և ճշմարիտ լոյսն արդէն կ'երեւայ։ 9 Ով որ կ'ըսէ թէ լուսոյ մէջ է, և կ'ատէ իւր եղբայրը, խաւարի մէջ է մինչև հիմա։ 10 Եղբայրը, խաւարի մէջ է տակաւին, Ով որ կը սիրէ իւր եղբայրը, կը բնակի լուսոյ մէջ, և գայթակղութիւն չկայ ի նմա։ 11 Բայց ով որ կ'ատէ իւր եղբայրը, խաւարի մէջ է և կը քալէ խաւարի մէջ, և չգիտեր թէ ուր կ'երթայ, քանզի

*Ոմն+ Սիրելիներ,

խաւարը կուրացուցած է անոր աչուքները,
12 Կը գրեմ ձեզ, որդեակք, քանզի թողուած են ձեր մեղքերն անոր անունը համար,
13 ուանոր համար, կը գրեմ ձեզ, հարք, քանզի ճանչցաք զայն որ ի սկզբանէ է։ Կը գրեմ ձեզ, երիտասարդք, վասն զի յաղթեցիք չարին։ Կը գրեմ ձեզ, մանկունք, քանզի ճանչցաք զՀայր։ Գրեցի ձեզ, հարք, քանզի ճանչցաք զայն որ ի սկզբանէ է։ Գրեցի ձեզ, երիտասարդք, քանզի հզօր էք, և Աստուծոյ խօսքը կը բնակի ի ձեզ, և յաղթեցիք չարին։ Մի սիրէք զաշխարհ, և մի՛ ինչ
16 որ յաշխարհի է։ Եթէ ոք կը սիրէ զաշխարհ, Հօր սէրը չկայ ի նմա. քանզի ամենայն ինչ որ յաշխարհի է, ցանկութիւն մարմնոյ և ցանկութիւն աչաց և ամբարտաւանութիւն կենաց, չէ ի Հօրէ, այլ աշխարհէս է։
17 Եւ աշխարհս կ՚անցնի, և անոր ցանկութիւնը. բայց ով որ Աստուծոյ կամքը կը կատարէ՝ կը մնայ յաւիտեան։
18 Որդեակք, վերջին ժամանակ է. և ինչպէս լսեցիք թէ Նեռը պիտի գայ, և արդէն շատ նեռներ եկած են. ասկէ կ՚իմանանք թէ վերջին ժամանակ է։
19 Մենք ելան մեզմէ, բայց չէին մենք. քանզի եթէ մենք եղած ըլլային կը մնային մեզի հետ. այլ ելան, որ յայտնի ըլլայ թէ անոնք ամենքը չէին մենք։
20 Բայց դուք օծութիւն ունիք Սուրբէն, և գիտէք զամենայն։
21 Չգրեցի ձեզ իբր թէ չէք գիտեր ճշմարտութիւնը, այլ թէ գիտէք զայն, նաև թէ՝ և ոչ մի սուտ
22 թիւն ճշմարտութենէ է։ Ո՞վ է սատանան, եթէ ոչ այն որ կ՚ըսէ թէ Յիսուս չէ Քրիստոս. Նոյն է այն որ Հայրն ու
23 Որդին կ՚ուրանայ։ Ամէն որ կ՚ուրանայ զՈրդի, չունի նաև զՀայր. [Բայց ով որ կը խոստովանի զՈրդի, կ՚ունի
24 նաև զՀայր։] Ուրեմն ինչ որ լսեցիք դուք ի սկզբանէ, թող բնակի ի ձեզ. եթէ այն որ լսեցիք ի սկզբանէ՝ բնակի ի ձեզ, դուք ևս կը բնակիք յՈրդին և ի Հայր։
25 Եւ այս է խոստումն զոր խոստացաւ նա մեզ, այսինքն յաւիտենական կեանք։
26 Զսոսա կը գրեմ ձեզ վասն նոցա որ կը մոլորեցնեն ձեզ։
27 Եւ դուք օծումն զոր առիք ի նմանէ՝ կը բնակի ի ձեզ, և պէտք չէ որ մարդ սորվեցնէ ձեզ, այլ ինչպէս նոյն օծումն կը սորվեցնէ ձեզ ամէն բան, և ճշմարիտ է և սուտ չէ, և ինչպէս սորվեցուց ձեզ, կեցէք ի նմա։
28 Եւ հիմա, որդեակք, կեցէք ի նմա, որ երբ յայտնուի, համարձակութիւն ունենանք, և չամչնանք անկէ, երբ գայ։
29 Եթէ գիտէք թէ արդար է, գիտէք նաև թէ ամէն որ արդարութիւն կը գործէ՝ ծնած է անկէ։

## Գլ. Գ

1 Տեսէք որպիսի սէր շնորհեց մեզ Հայր, որ որդիք Աստուծոյ կոչուինք. վասն այնորիկ չճանչցաւ զմեզ աշխարհ, քանզի չճանչցաւ զնա։
2 Սիրելիք, հիմա որդիք Աստուծոյ ենք, և տակաւին յայտնի չէ թէ ինչ պիտի ըլլանք. բայց գիտեն զթէ երբ նա յայտնուի, նման պիտի ըլլանք անոր. վասն զի պիտի տեսնենք զնա ինչպէս որ է։
3 Եւ ամէնը որ ունի այս յոյսն անոր վրայ, կը մաքրէ զինք, ինչպէս նա մաքուր է։
4 Ամէնը որ կը գործէ մեղք, նա անօրէնութիւն ևս կը գործէ, և մեղքն անօրէնութիւն է։
5 Եւ գիտէք թէ վասն այնորիկ յայտնուեցաւ նա, որ վերցնէ մեր մեղքերը. և մեղք չկայ ի նմա։
6 Ամէնը որ կը կենայ ի նմա՝ չմեղանչեր. ամէնը որ կը մեղանչէ՝ տեսած չէ զնա
7 և ճանչցած չէ զնա։ Որդեակք, չխաբէ ոք զձեզ. այն որ արդարութիւն կը գործէ՝ արդար է, ինչպէս և նա արդար է։
8 Եւ այն որ կը գործէ մեղք՝ Սատանայէն է, քանզի ի սկզբանէ հետէ Սատանան կը մեղանչէ. վասն այնորիկ յայտնուեցաւ Աստուծոյ Որդին, որ քակէ Սատանային գործերը։
9 Ամէնը որ Աստուծմէ ծնած է չգործեր մեղք, քանզի անոր սերմը կը մնայ ի նմա, և չկրնար մեղանչել, քանզի ծնած է Աստուծմէ։
10 Աստուծոյ և որդիք Սատանային։ Ամէնը որ արդարութիւն չգործեր՝ չէ Աստուծմէ, և ով որ չսիրեր իր եղբայրը։
11 Քանզի այս է պատուիրանը զոր լսեցիք ի սկզբանէ, որ զիրար սիրենք։
12 Ոչ թէ կայէնի պէս որ չարէն էր և սպանեց իր եղբայրը. և ինչու՞ համար սպանեց զնա. վասն զի իր գործերը չար էին, և եղբօրը երկրիւղ արդար։ Մի զարմանաք, եղբարք իմ, և
13 թէ աշխարհ ատէ զձեզ։ Մենք գիտենք թէ փոխուեցանք մահուանէն ի կեանս, քանզի կը սիրենք եղբայրները. ով որ չսիրեր եղբայրը՝ կը մնայ մահուան մէջ։
14 Ամէնը որ կ՚ատէ իր եղբայրը՝ մարդասպան է. և գիտէք թէ և ոչ մի մարդասպան ունի յաւիտենական
15 կեանք բնակեալ յինքեան։ Այսով գիտցանք Քրիստոսէ սէրը, որ նա իր կեանքը դրաւ մեզի համար, մենք ևս պարտիմք դնել մեր կեանքը Հոգ եղբայրներուն։
16 Եւ ով որ ունի աշխարհիս բարիքը, և կը տեսնէ իր եղբայրը կարօտ իմիք և կը փակէ անկէ իր գութը, ի՞նչպէս Աստուծոյ սէրը կը բնակի ի նմա։ Որդեակք իմ, ոչ թէ խօսքով և լեզուով սիրենք, այլ գործով և ճշմարտութեամբ։
17 Եւ այսով կը ճանչնանք թէ ճշմարտութենէ ենք, և մեր սիրտերուն համարձակութիւն պիտի տանք անոր առ
18 ջև։ Եթէ մեր սիրտերը կը մեղադրեն զմեզ, այլ Աստուած քան մեր սիրտերը մեծ է և գիտէ ամենայն ինչ։
19 Սիրելիք, եթէ մեր սիրտերը չմեղադրեն զմեզ, համարձակութիւն կ՚ունենանք առ Աստուած։
20 Եւ ինչ որ խնդրենք՝ կ՚առնենք անկէ, քանզի կը պահենք անոր պատուիրանները, և կ՚ընենք ինչ որ հաճոյ է անոր առջև։
21 Եւ այս է անոր պատուիրանը, որ հաւատանք անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի անուան և զիրար սիրենք,
22 ինչպէս պատուէր տուաւ մեզ։ Եւ ով որ կը պահէ անոր պատուիրանները՝ կը կենայ ի նմա, և նա ի սա։ ԵՒ այսու գիտենք թէ կը կենայ ի մեզ, այսինքն՝ ի Հոգւոյն զոր տուաւ մեզ։

## Գլ. Դ

1 Սիրելիք, ամէն հոգւոյ մի հաւատաք, այլ փորձեցէք հոգիները թէ Աստուծմէ՛ են. քանզի շատ սուտ մարգարէ
2 ներ ելած են յաշխարհ։ Այսով կրնաք ճանչնալ զՀոգին Աստուծոյ. ամէն հոգի որ կը խոստովանի զՅիսուս Քրիստոս
3 մարմնով եկած՝ Աստուծմէ է, Եւ ամէն հոգի որ չխոստովանիր զՅիսուս Քրիստոս մարմնով եկած՝ չէ Աստուծմէ. և այս Նեռին հոգին է, որոյ համար լսեցիք թէ պիտի գայ, և արդէն
4 իսկ յաշխարհի է։ Դուք Աստուծմէ եք, որդեակք, և յաղթեցիք անոնց. քանզի մեծ է այն որ ի ձեզ է, քան զայն որ
5 յաշխարհի է։ Անոնք աշխարհէ են. վասն որոյ կը խօսին աշխարհի վրայ, և աշխարհ կը լսէ անոնց։
6 Մենք Աստուծմէ ենք. ով որ զԱստուած կը ճանչնայ՝ կը լսէ մեզ. ով որ Աստուծմէ չէ՝ չլսեր մեզ.ասով կը ճանչնանք ճշմարտութեան հոգին և խաբէութեան հոգին։
7 Սիրելիք, սիրենք զիրար, քանզի սէրն Աստուծմէ է. և ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է, և կը ճանչնայ զԱստուած։
8 Ով որ չսիրեր՝ զԱստուած չճանչնար, քանզի Աստուած սէր է։
9 Աստուծոյ սէրը յայտնի եղաւ մեր վրայ յայտ, որ Աստուած իւր միածին Որդին զրկեց յաշխարհ, որպէս զի տա
10 րինք անոր միջոցաւ։ Յայտ է սէրը, որ ոչ թէ մենք սիրեցինք զԱստուած, այլ նա սիրեց զմեզ, և զրկեց իւր Որդին քաւութիւն ըլլալ մեր մեղաց։
11 Սիրելիք, եթէ Աստուած այսպէս սիրեց զմեզ, ուրեմն մենք ևս պարտինք
12 սիրել զիրար։ Ոչ ոք երբէք տեսած է զԱստուած. եթէ կը սիրենք զիրար, Աստուած ի մեզ կը բնակի, և անոր սէրը կատարեալ է ի մեզ։ Այսով գիտենք
13 թէ կը բնակինք ի նմա և նա ի մեզ, որ իւր Հոգիէն տուաւ մեզ։ Եւ մենք տեսանք և կը վկայենք թէ Հայր զրկեց Որդին փրկիչ ըլլալ աշխարհին։
14 Ով որ կը խոստովանի թէ Յիսուս Որ-

դի Աստուծոյ է, Աստուած կը բնակի
16 ի՛նմա, և նա՝ յԱստուած։ Եւ մենք
ճանչցանք և հաւատացինք սէրը զոր
Աստուած ունի մեր վրայ. Աստուած
սէր է, և ով որ սիրոյ մէջ կը բնակի՛ կը
բնակի յԱստուած, և Աստուած ի՛նմա։
17 Ասով սէրը կատարեալ կ'ըլլայ մեր վրայ,
որ համարձակութիւն ունենանք դա-
տաստանին օրը. վասն զի ինչպէս է նա,
18 այնպէս և մենք ենք յաշխարհիս։ Սի-
րոյ մէջ երկիւղ չկայ, այլ կատարեալ
սէրը կը մերժէ երկիւղը. քանզի եր-
կիւղ ունի տանջանք. ուստի այն որ
կը վախնայ՝ կատարեալ չէ սիրոյ մէջ։
19 Մենք կը սիրենք զնա, քանզի նախ նա
20 սիրեց զմեզ։ Եթէ ոք ըսէ Թէ կը սի-
րեմ զԱստուած, և ատէ իւր եղբայրը,
սուտ է. քանզի այն որ չսիրեր իւր
եղբայրը զոր կը տեսանէ, զԱստուած զոր
21 չտեսներ՝ ի՞նչպէս կրնայ սիրել։ Եւ
ասկէ ունինք այս պատուէրը, Թէ այն
որ զԱստուած կը սիրէ՝ սիրէ նաև իւր
եղբայրը։

## Գլ. Ե

1 Ամէնը որ կը հաւատայ Թէ Յիսուս է
Քրիստոս՝ Աստուծմէ ծնած է. և ամէն
որ կը սիրէ ծնողը՝ կը սիրէ նաև անկէ
2 ծնածը։ Ասով կը ճանչնանք Թէ կը սի-
րենք Աստուծոյ որդիները, երբ զԱստու-
ած սիրենք և անոր պատուիրանները-
3 րը պահենք։ Քանզի այս է Աստուծոյ
սէրը, որ անոր պատուիրանները պա-
հենք. և անոր պատուիրանները ծանր
4 չեն։ վասն զի ամէնը որ Աստուծմէ ծը-
նած է՝ կը յաղթէ աշխարհին. և այս է
յաղթութիւնը որ կը յաղթէ աշխարհին,
5 այսինքն մեր հաւատքը։ Ո՞վ է որ կը
յաղթէ աշխարհին, եթէ ոչ այն որ կը
հաւատայ Թէ Յիսուս է Որդի Աստու-
ծոյ։
6 Սա է որ եկաւ ջրով և արեամբ, այ-
սինքն՝ Յիսուս Քրիստոս. ոչ միայն ջը-
րով, այլ ջրով և արեամբ, և Հոգին է
որ կը վկայէ, քանզի Հոգին ճշմարտու-
7 Թիւն է։ վասն զի երեք են որ կը վը-
կայեն {յերկինս, Հայր, Բանն և Սուրբ
8 Հոգին, և այս երեքը մի են։ Եւ երեք
են որ կը վկայեն յերկրի}, Հոգին, ջու-
րը և արիւնը, և երեքը միաբան են։
9 Եթէ մարդոց վկայութիւնը կ'ընդու-
նինք, Աստուծոյ վկայութիւնն աւելի
մեծ է. քանզի այս է Աստուծոյ վկա-
յութիւնը զոր վկայեց իւր Որդւոյն հա-
մար։ Ով որ կը հաւատայ Աստուծոյ
10 Որդւոյն՝ վկայութիւնն ունի յինքեան.
ով որ չհաւատար Աստուծոյ՝ սուտաց
կ'ընէ զնա, քանզի չհաւատար վկայու-
թեանը զոր Աստուած վկայեց իւր Որդ-
11 ւոյն համար։ Եւ վկայութիւնն այս է,
որ Աստուած յաւիտենական կեանք
տուաւ մեզ, և այս կեանքն անոր Որդ-
12 ւոյն մէջ է։ Ան որ ընդունած է զՈրդ-
ին՝ ունի կեանք, և ան որ ընդունած չէ Աստուծոյ Որդին՝ չունի կեանք։
13 Ասոնք գրեցի ձեզ որ կը հաւատաք
Աստուծոյ Որդւոյն անունը, որպէս
զի գիտնաք Թէ ունիք յաւիտենական
14 կեանք՝ և այս է համարձակութիւնը
զոր ունինք անոր քով, որ զինչ և
խնդրենք անոր կամաց համեմատ՝ կը
15 լսէ մեզ։ Եւ եթէ գիտնանք Թէ կը լը-
սէ մեզ ինչ որ խնդրենք, կը գիտնանք
Թէ կ'առնունք մեր խնդիրները զոր կը
խնդրենք անկէ։
16 Եթէ ոք տեսնէ Թէ իւր եղբայրը կը
մեղանչէ մեղք ոչ մահացու, թող խնդ-
րէ, և Աստուած կեանք պիտի տայ ա-
նոր, այսինքն մեղանչողաց ոչ մահացու.
կայ մեղք որ մահացու է, չեմ ըսեր
17 Թէ անոր համար խնդրէ։ Ամէն անի-
րաւութիւն մեղք է, և կայ մեղք որ
մահացու չէ։
18 Գիտենք Թէ այն ամէնը որ Աստուծ-
մէ ծնած է՝ չմեղանչեր. այլ այն որ
Աստուծմէ ծնած է՝ կը պահէ իւր ան-
19 ձը, և չարը չդպչիր անոր։ Գիտենք Թէ
Աստուծմէ ենք, և բոլոր աշխարհ ի

*Ոմանք՝ յԱբէլցոներն և որպէս զի հաւատաք Աստուծոյ Որդւոյն անուանը։



20 չարի է։ Եւ գիտենք Թէ Աստուծոյ
Որդին եկաւ, և տուաւ մեզ միտք, որ
ճանչնանք ճշմարիտը. և ենք ի ճշմար-
տին, յիւրմին Որդին Յիսուս Քրիս-
տոս. նա է ճշմարիտ Աստուած և յա-
21 ւիտենական կեանք։ Որդեակք, պահե-
ցէք զձեզ ի կուռց։*

# ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ
# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

1 Երէց՝ առ ընտրեալ Տիկին և անոր զա-
ւակաց, զորս ես կը սիրեմ ճշմարտու-
Թեամբ, (և ոչ ես միայն, այլ և ամէն-
քը՝ որ կը ճանչնան ճշմարտութիւնը,)
2 վասն այն ճշմարտութեան որ կը մնայ
մեր մէջ, և յաւիտեան պիտի ըլլայ մե-
3 զի հետ. Շնորհք, ողորմութիւն, խա-
ղաղութիւն յԱստուծոյ Հօրէ և ի Յիսու-
Նէ Յիսուսէ Քրիստոսէ, Հօրը Որդիէն,
ձեզի հետ ըլլայ ճշմարտութեամբ և սի-
րով։
4 Շատ ուրախ եղայ, որ քու որդիներդ գտայ որ ճշմարտութեամբ կը քա-
լեն ըստ պատուիրանին զոր առինք ի
5 Հօրէ։ Եւ հիմա կ'աղաչեմ զքեզ, ով
Տիկին, ոչ իբր Թէ նոր պատուիրան կը
գրեմ քեզ, այլ զայն զոր ունինք ի
6 սկզբանէ, որ սիրենք զիրար։ Եւ այս է
սէրը որ գալենք անոր պատուիրանե-
րուն համեմատ։ Ե՛ պատուիրանն այս է
որ, ինչպէս լսեցիք ի սկզբանէ հետէ,
7 անոր համեմատ գալիք։ Քանզի նման

յաւիտենական ուրախացայ, երբ եղբայրներէն ո-
մանք եկան, և վկայեցին քու ճշմար-

*Ոմանք՝ յԱբէլցոներն Ամէն։
†Ոմանք՝ յԱբէլցոներն Ամէն։

աւութեանդ համար, ինչպէս գուն կը
4 քալես Ճշմարտութեամբ՝ քան զայս մեծ
ուրախութիւն չունիմ, որ կը լսեմ թէ
իմ որդիներս կը քալեն Ճշմարտութեան
5 մէջ։ Սիրելի, հաւատարմութեամբ կ'ը-
նես, ինչ որ կ'ընես եղբայրներուն և
6 օտարներուն, Որք եկեղեցւոյ առջեւ վր-
կայեցին քու սիրոյդ. զորս յաջորդիւ-
լով ըստ արժանի Աստուծոյ՝ լաւ պիտի
7 ընես։ Քանզի Անուան անուանը հա-
մար ելան, և հեթանոսներէն բան մը
8 չեն առներ։ Ուստի մենք պարտինք
ընդունել այնպիսիները, որ գործակից
ըլլանք Ճշմարտութեան։
9 Եկեղեցւոյն գրեցի. բայց Դիոտրե-
փէս՝ որ անոնց մէջ կ'ուզէ առաջին
10 ըլլալ, չընդունիր զմեզ։ Վասն որոյ
եթէ գամ, պիտի յիշեմ անոր գոր-
ծերը, որ չաղակրաւելով չարախօսու-
թիւն կ'ընէ մեզի դէմ. և այսու ևս
գոհ չըլլալով՝ ինք չընդունիր եղբայր-
ները, և զանոնք որ կ'ուզեն ընդունել՝
կ'արգիլէ, և եկեղեցիէն ևս կը հանէ։
11 Սիրելի, նմանողը մի ըլլար չարին, այլ
բարւոյն. այն որ բարի կը գործէ՝ Ա-
ստուծմէ է. բայց այն որ չար կը գոր-
12 ծէ՝ անաստ չէ զԱստուած։ Դեմետրիոսի
համար ամէնքը կը վկայեն, և բուն իսկ
ճշմարտութիւնը. և մենք ևս կը վկա-
յենք, և գուք գիտէք թէ ճշմարիտ
է մեր վկայութիւնը։
13 Շատ բան ունէի գրել, բայց չեմ ու-
14 զեր մելանաւ և գրչով գրել քեզ։ Սա-
կայն կը յուսամ իմ մօտ ատենէ գրել,
և պիտի խօսինք բերան առ բերան։
15 Խաղաղութիւն քեզ։ բարեկամները ող-
ջոյն կուտան քեզ։ ողջոյն ատենադպրա-
կանները՝ իւրաքանչիւր յանուանէ։

## ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

# ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

1 Յուդա Յիսուսի Քրիստոսի ծառայ և
եղբայր Յակոբոսի, ձեզ՝ որ սրբուած էք
Հայր Աստուծոյ Հօրէ, և ի Յիսուսէ Քրիս-
2 տոսէ պահուած և կոչուած. Ողորմու-
թիւն և խաղաղութիւն և սէր բազմա-
նայ ձեր վրայ։
3 Սիրելիք, ամէն չափ յանձն առնելով
գրել ձեզ հասարակաց փրկութեան
համար, հարկ անձին համարեցայ գրել
ձեզ և յորդորել որ մրցիք այն հաւա-
տոյն համար որ անգամ մը աւանդուե-
4 ցաւ սուրբերուն։ Քանզի քանի մը մար-
դիկ մտան գաղտ, այնչեւ անոնք որ
յառաջագոյն որոշուած էին այս դա-
տապարտութեան համար, ամբարիշտ-
ներ, որ մեր Աստուծոյ շնորհքը դար-
ձուցին անառակութեան, և ուրացան
մի միայն *Իշխանը և Տէրը մեր Յի-
սուս Քրիստոս։
5 Ուզեմ ձեզ յիշեցնել, թէև արդէն գիտէք զայս,
թէ Տէրը որ ազատեց ժողովուրդը ե-
գիպտոսի երկրէն, յետոյ կորոյս չհա-
6 ւատացողները։ Եւ այն հրեշտակները
որ չպահեցին իրենց իշխանութիւնը,
այլ թողին իրենց բնակութիւնը, մըշ-
տենջենաւոր կապանօք պահեց խաւարի
7 մէջ մեծ օրուան դատաստանին, ինչ-
պէս Սոդոմ և Գոմոր և անոնց չըշա-
կայ քաղաքները՝ որ ասոնց նման պոռ-
նկեցան օտար մարմնոյ հետէն երթ-
ալով, մեր առջեւ օրինակ կեցած են՝
ընդունելով յաւիտենական հրոյն դա-
8 տապարտութիւնը։ Նմանապէս և ա-
սոնք յանուրջս կը պղծեն մարմինը,
կ'անարգեն տէրութիւնը, և կը հայհո-
9 յեն մեծարութեանց դէմ։ Բայց
Միքայէլ հրեշտակապետ, երբ Սատա-

*Ոմն+ Աստուած իշխանը



նային դէմ դնելով կը վիճէր Մովսիսի
մարմնոյն համար, չհամարձակեցաւ հայ-
հոյութեան դատապարտութիւն բերել
ասոր վրայ, այլ ըսաւ, Տէրը յանդիմ-
10 անէ զքեզ։ Իսկ ասոնք ինչ բաներ որ
չեն հասկնար՝ կը հայհոյեն. և ինչքաներ
որ իրենց անբան անասուններ գիտեն
բնականապէս, այն բաներուն մէջ կ'ա-
11 պականին։ Վայ անոնց, վասն զի գա-
ցին Կայենի ճանապարհաւ, և գացին
վաթսուց եռանդ ըստ մոլորութեան Բա-
զաամայ ցանկութեամբ, և կորուեց-
ան ըստ հակառակութեան Կորխայ։
12 Ասոնք արատներ են ձեր սիրոյ խնջոյից
մէջ, և երբ կը նստին ձեզի հետ խրա-
խութեանց, անվախութիւ կը կերակրեն
զինքեանս. անջրդի ամպեր հողմա-
կոծելք. պտղակորոյս ծառեր, ան-
բերք, կրկնամեռք, արմատաքի խըլ-
13 եալք. ծովու անասուն ալիք, որ կը
վրիպեցնեն իրենց անձերուն ամօթը.
մոլորական աստղեր, որոց համար խա-
ւարին մէգը պահուած է յաւիտեան։
14 Անոնց վրայ մարգարէացաւ և Ենովք՝
որ եօթներորդ էր յԱդամայ, և ըսաւ,
Ահա Տէրը եկաւ իր բիւրաւոր սուրբ-
15 բերովը, Դատաստան ընել ամենուն,
և յանդիմանել բոլոր ամբարիշտներն
անոնց ամբարշտութեան բոլոր գործե-
րուն համար զորս ամբարշտացան, և
բոլոր խիստ խօսքերուն համար զորս
ամբարիշտ մեղաւորք խօսեցան անոր
16 դէմ։ Ասոնք արտնջողներ և քրթմն-
ջողներ են, որ կ'երթան ըստ իրենց
ցանկութեանց, և անոնց բերանները
կը խօսին ամբարտաւանս, և աչառու-
17 թիւն կ'ընեն շահու համար։ Բայց դուք,
սիրելիք, յիշեցէք խօսքերը որ Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի առաքեալ-
18 ներէն կանխաւ բսուեցան. Որ կ'ըսէին
ձեզ թէ ի յետին ժամանակի պիտի ըլ-
լան ծաղր ընդներ, որ պիտի երթան
ըստ իրենց ամբարիշտ ցանկութեանց։
19 Ասոնք են զերծնող զատող, շնչաւոր-
20 ներ, որ Հոգի չունին։ Բայց դուք, սի-
րելիք, ձեր անձերը շինելով ձեր ամե-
նասուրբ հաւատոյն վրայ, և ապրե-
21 լով Սուրբ Հոգւով, Պահեցէք ձեր ան-
ձերն Աստուծոյ սիրոյն մէջ, ապասելով
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ողոր-
մութեանը յաւիտենական կենաց հա-
22 մար։ Եւ ոմանց ողորմեցէք խրատելով։
23 Եւ զոմանս երկիւղիւ ազատեցէք՝ յա-
փրշտակելով կրակին, առելով մարմ-
նէն աղտեղեալ հանդերձը։
24 Եւ անոր՝ որ կարող է պահել զձեզ
առանց սխալի և իր փառաց առջեւ կեցու-
նել անարատ ցնծութեամբ, միայնոյն
25 *Աստուծոյ մեր Փրկչին [Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի Հեռօք] փառք և
մեծութիւն, զօրութիւն և իշխանու-
թիւն [յառաջ քան զյաւիտեանս,] և
այժմ և յամենայն յաւիտեանս, Ամէն։

*Ոմն+ իսմառանոյն Աստուծոյ

# ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

## ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

### ԳԼՈՒԽ Ա

1 Յիսուսի Քրիստոսի յայտնութիւնը, զոր տուաւ նմա Աստուած ցուցնել իւր ծառաներուն ինչ որ վաղվադակի պարտի ըլլալ. և իւր հրեշտակին ձեռօք զրկելով՝ իմացուց իւր ծառային Յովհաննու,
2 Որ վկայեց Աստուծոյ խօսքին, և Յիսուսի Քրիստոսի վկայութեանը, ինչ որ
3 տեսաւ։ Երանի անոր որ կը կարդայ, և անոնց որ կը լսեն այս մարգարէութեան խօսքերը, և կը պահեն ինչ որ գրուած է անոր մէջ. քանզի մօտ է ժամանակը։

4 Յովհաննէս առ եօթն եկեղեցիս որ են յԱսիա, շնորհք և խաղաղութիւն ձեզ Անկէ որ է և որ էր և որ պիտի գայ, և եօթն հոգիներէն որ են անոր
5 աթոռին առջև, Եւ Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէ, որ է անդրանիկ ի մեռելոց և երկրի թագաւորներուն իշխան, Անոր որ սիրեց զմեզ, և իւր արեամբ լուաց զմեզ մեր մեղքերէն, Եւ բրաւ զմեզ թագաւորներ և
6 քահանաներ Աստուծոյ և իւր Հօրը, Նմա փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

7 Ահա կու գայ ամպերով. և ամէն աչք պիտի տեսնէ զնա, և անոնք որ խոցեցին զնա. և կոծ պիտի բնեն անոր վրայ երկրիս բոլոր ազգերը։ Այո, Ամէն։

8 Ես եմ Ալֆա և Օմէգա,* կ'ըսէ Տէր [Աստուած], որ է և որ էր և որ պիտի գայ, Ամենակալն։

9 Ես Յովհաննէս, եղբայր ձեր, և Յիսուսի Քրիստոսի նեղութեան և արքայութեան և համբերութեան մէջ բնակից, էի կղզին որ կը կոչուի Պատմոս Աստուծոյ խօսքին համար և Յիսուսի Քրիստոսի վկայութեանը համար։
10 Ես՝ *կիրակի օր Հոգին եկաւ իմ վրաս, և հետևէս լսեցի ձայն մեծ նման փողոյ
11 որ կ'ըսէր, †Ինչ որ կը տեսնես՝ գրէ գիրքի մէջ, և դրկէ ‡եօթն եկեղեցեացդ, որ են յԵփեսոս, և ի Զմիւռնիա, և ի Պերգամոն, և ի Թիւատիր, և ի Սարդիկէ, և ի Փիլադելփիա, և ի Լաոդիկիա։ Եւ դարձայ տեսնել ձայնը որ կը խօսէր ինծ. և երբ դարձայ,
13 տեսայ եօթն ոսկեղէն աւանակ։ Եւ եօթն աւանակներուն մէջ մին, նման Որդւոյ մարդոյ, պճղնաւոր պատմուճան հագած և կուրծքին վրայ ոսկի գօտի կապած։ Ու անոր գլուխը և մազերն ալեհատակ իբրև զասր՝ իբրև ըղձիւն, և անոր աչքերն իբրև բոց
15 հրոյ։ Եւ անոր ոտքերը՝ ոսկեզոյնի նման, որպէս թէ հնոցի մէջ հրացեալ, և անոր ձայնը՝ շատ յուրերու ձայնի
16 պէս։ Եւ իւր աջ ձեռքին մէջ ունէր եօթն աստղ, և անոր բերնէն կ'ելլէր սուր երկայրի սրեալ, և անոր երեսն էր իբրև զարեգական որ կը շողայ իւր
17 զօրութեամբ։ Եւ երբ տեսայ զնա, ինկայ անոր ոտքն իբրև մեռեալ. և դրաւ իւր աջ ձեռքն իմ վրաս և ըսաւ ինձ, Մի վախնար. ես եմ Առաջինն և

*Ոմանք՝ Լաւելցուցանեն Առաջինն և վերջինն,

*Այլուրեք՝ սէրուռնական
†Ոմանք՝ Ես եմ Ալֆա և Օմէգա, Առաջինն և վերջինն. և ինչ
‡Ոմանք՝ Ասիա եղած եօթը



18 վերջինն. Եւ կենդանի եմ, և ես նոյն եմ որ մեռայ, և ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից.* և ունիմ
19 մահուան և դժոխոց բանալիները։ [Ուսուր] գրէ ինչ որ կը տեսնես, ինչ որ
20 կայ և ինչ որ յետոյ պիտի ըլլայ. Եօթն աստղոց խորհուրդը զոր տեսար աջ ձեռքիս մէջ և եօթն ոսկեղէն աչսանաւակները. այն եօթն աստղք եօթն եկեղեցեաց հրեշտակներն են, և եօթն աչսանաւակները՝ եօթն եկեղեցիներն են։

### ԳԼ. Բ

1 Առ հրեշտակ եկեղեցւոյն որ յԵփեսոս՝ գրէ. Այսպէս կ'ըսէ այն որ ունի եօթն աստղ իւր աջ ձեռքին մէջ, և կը շրջի եօթն ոսկեղէն աչսանաւակաց մէջ.
2 Գիտեմ գրս գործերդ և գրս աշխատութիւնդ և գրս համբերութիւնդ, և որ չես կրնար տանել չարերուն, և փորձեցիր զանոնք որ կ'ըսեն թէ առաքեալ են, և չեն, և գտար թէ սրտասխօս են. Եւ համբերութիւն ունես, համար և չթուլացար։ Բայց ունիմ քեզի դէմ բան մը, որ գրս առաջին սէրդ
5 թողուցիր։ Ցիշէ հետս ուստի ինկար, և ապաշխարէ և երէ առաջին գործերդ. եթէ ոչ՝ կու գամ առ քեզ վաղվաղակի, և պիտի շարժեմ գրս աչսանաւակդ
6 իւր տեղէն, եթէ չապաշխարես։ Բայց զայս ունես, որ նիկողայտացանց գործերը կ'ատես, զորս և Ես կ'ատեմ։
7 Ան որ ականջ ունի՝ թող լսէ թէ ինչ կ'ըսէ Հոգին եկեղեցիներուն։ Ան որ կը յաղթէ, անոր պիտի տամ ուտել կեանց ծառէն որ Աստուծոյ դրախտին մէջ է։

8 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Զմիւռնիա՝ գրէ. Այսպէս կ'ըսէ Առաջինն և Վերջինն, որ մեռաւ և կենդա-

*Ոմանք՝ Լաւելցուցանեն Ամէն.
†Ոմանք՝ Լաւելցուցանեն զորս տեսար,
‡Ոմանք՝ և աշխատացար իմ անուանս համար

9 նացաւ. Գիտեմ գրս գործերդ և նեղութիւնդ և աղքատութիւնդ, (բայց հարուստ ես,) և անոնց հայհոյութիւնը որ կ'ըսեն թէ Հրեայ են, և չեն, այլ
10 ժողով Սատանայի. Բնաւ մի վախնար այն բաներէն զորս պիտի կրես. ահա Բանսարկուն պիտի ձգէ քանի մը ձեր ընկերներդ ի բանտ որ փորձուիք, և պիտի ունենաք նեղութիւն տասն օր. Հաւատարիմ եղիր մինչև ի մահ, և պիտի տամ
11 քեզ կենաց պսակը։ Ով որ ականջ ունի՝ թող լսէ թէ ինչ կ'ըսէ Հոգին եկեղեցիներուն. Ան որ կը յաղթէ՝ պիտի չվնասուի երկրորդ մահէն։

12 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Պերգամոն՝ գրէ. Այսպէս կ'ըսէ այն որ
13 ունի երկսայրի սրեալ սուրը. Գիտեմ գրս գործերդ, և թէ ուր կը բնակիս, այսինքն՝ ուր է Սատանայի աթոռը, և կը պահես իմ անունս, և չուրացար իմ հաւատքս այն օրերն անգամ յորս Անտիպաս իմ հաւատարիմ վկաս ըսպանուեցաւ ձեր մէջ, ուր Սատանան կը
14 բնակի. Բայց ունիմ քեզի դէմ փիչ մը բան, թէ ունիս հոն զոմանս որ կը բռնեն զվարդապետութիւնն Բաղաամայ, որ սորվեցուց Բաղակայ գայթակղութիւն դնել իսրայէլի որդւոց առջև, որպէս զի կուռց զոհուածներէն ու-
15 տին և պոռնկութիւն ընեն. Այսպէս և գուն ունիս զոմանս որ կը բռնեն զվարդապետութիւն Նիկողայտացանց,
16 բան մը զոր կ'ատեմ։ [Ուստի] ապաշխարէ. եթէ ոչ՝ կու գամ առ քեզ վաղվաղակի և բերնիս սրովը պիտի պատեր
17 բազմամ անոնց հետ։ Ան որ ականջ ունի՝ թող լսէ թէ ինչ կ'ըսէ Հոգին եկեղեցիներուն. Անոր որ կը յաղթէ՝ պիտի տամ ուտել պահուած մանանայէն, և պիտի տամ անոր ապիտակ խիճ, և այն խճին վրայ գրուած նոր անուն, զոր ոչ ոք գիտէ բայց միայն այն որ կ'ընդունի։

18 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Թիւատիր՝ գրէ. Այսպէս կ'ըսէ Աստուծոյ Որդին, որ ունի աչուըներ կրակի բոցի պէս, և անոր ոտքերը նման

19 են ոսկեզդենից. Գիտեմ քու գործերդ և սէրդ և ծառայութիւնդ, և հաւատքդ և համբերութիւնդ, և թէ քու վերջինն գործերդ բազում են քան զառաջինսն. Բայց ունիմ քեզի դէմ՝ զանմիտ որ կը թողուս Յեզաբէլ կինը, որ ինքզինքն մարգարէ կ'անուանէ, և իմ ծառաներս մոլորեցնելով՝ կը սորվեցունէ ընել պոռնկութիւն և ուտել կռոց զոհուածոց։
21 Ետու ես նմա ժամանակ ապաշխարել իւր պոռնկութենէն վրայ, և չապաշխարեց։ 22 Ահա ես պիտի նետեմ զնա անկողնի, և անոր հետ շնութիւն ընողները՝ մեծ նեղութեան մէջ, եթէ չապաշխարեն իրենց գործերուն վրայ։
23 Եւ պիտի սպաննեմ անոր որդիքը մահուամբ. և բոլոր եկեղեցիները պիտի գիտանան թէ ես այն եմ որ կը քննեմ զերդիկամտունս և զսիրտս. և պիտի հատուցանեմ ձեզմէ իւրաքանչիւրին ըստ իւր գործոց։ 24 Բայց կ'ըսեմ ձեզ մնացեալդ որ եք ի Թիւատիրա, և չունիք այս վարդապետութիւնը, որ չգանգցաք զխորս Սատանայի (ինչպես կ'ըսեն), զի ես դնեմ ձեր վրայ ուրիշ ծանրութիւն. 25 բայց զոր զոր ունիք՝ պահեցէք մինչև գամ։ 26 Եւ անոր որ կը յաղթէ և կը պահէ իմ գործերս մինչև ի վախճան, պիտի տամ իշխանութիւն ազգերուն վրայ, (Եւ պիտի հովուէ զանոնք երկաթի գաւազանաւ. իբրև բրած անօթներ պիտի փշրուին.) ինչպես և ես առի իմ Հօրմէս. 27 և անոր պիտի տամ առաւօտեան աստղը։ Ով որ ականջ ունի՝ թող լսէ թէ ինչ կ'ըսէ Հոգին եկեղեցիներուն։

Գլ. Գ

1 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Սարդիկ՝ գրէ. Այսպես կ'ըսէ այն որ ունի Աստուծոյ եօթն Հոգիները և եօթն աստղերը։ Գիտեմ քու գործերդ՝ որ ունես անուն թէ կենդանի ես, և մեռած ես։ 2 Արթուն կեցիր և հաստատէ մնացածներդ որ մեռնելու մօտ են, քանզի չգտայ քու գործերդ կատարեալ առաջի Աստուծոյ մեր։ 3 Հիմա յիշէ թէ ինչպէս ընկալար և լսեցիր, և պահէ և ապաշխարէ. իսկ եթէ չկենաս արթուն, պիտի գամ վրադ իբրև գող, և բնաւ պիտի չգիտնաս թէ ո'ր ժամ պիտի գամ վրադ։ 4 Սակայն ունիս ի Սարդիկէ մարդիկ, որ չպղտեղեցին իրենց հանդերձները, և պիտի քալեն ինծի հետ սպիտակներով, քանզի արժանի են։ 5 Ով որ կը յաղթէ՝ պիտի հագնի սպիտակներ. և պիտի չջնջեմ անոր անունը կենաց գիրքէն, և պիտի դառնեմ անոր անունը իմ Հօրս առջև և հրեշտակներուն առջև։ 6 Ով որ ականջ ունի՝ թող լսէ թէ ինչ կ'ըսէ Հոգին եկեղեցիներուն։

7 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Փիղադելփիա՝ գրէ. Այսպես կ'ըսէ Սուրբը, Ճշմարիտը, այն որ ունի Դաւթի բանալին, այն որ կը բանայ և չկայ ոք որ փակէ, և կը փակէ և չկայ ոք որ բանայ։ 8 Գիտեմ քու գործերդ, (ահա գրի քու առջևդ բացուած դուռ մը, զոր ոչ ոք կրնայ փակել,) թէ ունիս քիչ մը կարողութիւն, և պահեցիր իմ խօսքս և չուրացար իմ անունս։ 9 Ահա ես կու տամ քեզի զանոնք որ Սատանայի ժողովին են, որ կ'ըսեն թէ Հրեայ են և չեն, այլ կը սանեն. ահա պիտի ստիպեմ զանոնք որ գան և երկրպագեն քու ոտիցդ առջև, և ճանչնան թէ ես սիրեցի զքեզ։ 10 Նաև թէ ես պրեցի զքեզ։ Որովհետև պահեցիր իմ համբերութեանս խօսքը, ես ևս պիտի պահեմ զքեզ փորձութեան ժամանակ, որ գալու մօտ է բոլոր աշխարհի վրայ՝ փորձել երկրիս բնակողները։ 11 Ահա կու գամ վաղվաղակի. ինչ որ ունիս՝ պինդ բռնէ, որ ոչ ոք առնու քու պսակդ։ 12 Այն որ կը յաղթէ՝ պիտի ընեմ զնա սիւն իմ Աստուծոյս տաճարին մէջ և այլ ևս դուրս պիտի չելլէ. և պիտի գրեմ անոր վրայ իմ Աստուծոյս անունը, և իմ Աստուծոյս քաղաքին անունը, այսինքն՝ նոր Երուսաղէմի, որ կ'իջնէ յերկինից իմ Աստուծմէս, և իմ 13 նոր անունս։ Ով որ ականջ ունի՝ թող լսէ թէ ինչ կ'ըսէ Հոգին եկեղեցիներուն։

14 Եւ առ հրեշտակ եկեղեցւոյն որ ի Լաւդիկիէ՝ գրէ. Այսպես կ'ըսէ Ամէնը, հաւատարիմ և ճշմարիտ վկան, Աստուծոյ սկիզբը. Գիտեմ 15 քու գործերդ որ ոչ ցուրտ ես և ոչ տաք. երանի թէ ցուրտ ըլլայիր կամ տաք։ 16 Ուստի դուն որ գաղջ ես, և ոչ տաք և ոչ ցուրտ, պիտի փսխեմ զքեզ ի բերնէս դուրս։ 17 Զի կ'ըսես, թէ Հարուստ եմ և մեծացայ, և բանի մը կարօտ չեմ. և չես գիտեր թէ դուն ողորմելի ես և թշուառ և աղքատ և կոյր և մերկ։ 18 Խորհուրդ կու տամ քեզ. գնէ ինէ կրակի մէջ փորձուած ոսկի որ հարստանաս, և սպիտակ հանդերձներ՝ որ հագնիս, որպէս զի ամօթալի մերկութիւնդ չերեւայ. և դիր դեղ աչերդ որ տեսնես։ 19 Ներդ որ սիրեմ, նա կը յանդիմանեմ և կը խրատեմ։ ուստի նախանձաւոր եղիր և ապաշխարէ։ 20 Ահա կայնած եմ դուռը և կը բախեմ. եթէ ոք լսէ իմ ձայնս և բանայ դուռը, պիտի մտնեմ անոր տունը և ընթրիք պիտի ընեմ անոր հետ, և նա իմ հետս։ 21 Անոր որ կը յաղթէ՝ պիտի տամ նստիլ ինծի հետ իմ աթոռս, ինչպես ես յաղթեցի և նստայ իմ Հօրս հետ անոր աթոռը։ Ով որ ականջ ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն։

Գլ. Դ

1 Յետ այսորիկ տեսայ, և ահա բացուած դուռ մը կար յերկինս, և առաջին ձայնը զոր լսեցի՝ փողոյ նման էր, որ ինծի հետ կը խօսէր և կ'ըսէր. Համբա՛ր և ցուցնեմ քեզ ինչ որ պիտի ըլլայ 2 այսուհետև։ Ես վաղվաղակի Հոգին եկաւ իմ վրաս. և ահա աթոռ դրուած էր յերկինս. 3 էր յերկինս. Եւ աթոռոյն վրայ նստած էր ոմն. և նստողը նման էր յասպիս և սարդիոն քարերու երեւութին. Եւ աթոռոյն չուրջը ծիածան զմրխտոյ երեւութի նման. և աթոռոյն չուրջը քսան և չորս աթոռներ, և այն աթոռներուն վրայ քսան և չորս երիցունք նստած էին սպիտակ հանդերձներ հագած, և ունէին ոսկիէ պսակներ իրենց գլուխներն։ 5 Եւ փայլակներ և ձայներ և որոտումներ կ'ելլէին աթոռէն, և աթոռոյն առջևը կային եօթն բորբոքած կրակի ջամբարներ, որ Աստուծոյ եօթն Հոգիներն են։ 6 Հոգիներն են։ Եւ աթոռոյն առջև իբրև ապակեղէն ծով, նման ակնի վանին, և աթոռոյն մէջ և աթոռոյն չուրջը՝ չորս կենդանիք, որ լի էին աչօք յառաջ և յետոյ։ 7 Եւ առաջին կենդանին նման էր առիւծու, և երկրորդ կենդանին նման զուարակի, և երրորդ կենդանին ունէր մարդու երես, և չորրորդ կենդանին 8 թռչող արծուոյ նման։ Եւ չորս կենդանեաց իւրաքանչիւրն ունէր չուրջանակի վեց վեց թեւ, և ի ներքոյ լի էին աչօք. և չեն հանգչիր ոչ տիւ և ոչ գիշեր ըսելով, Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր Աստուած Ամենակալ, որ էր և որ է և որ պիտի գայ։ Եւ երբ այն կենդանիք կու տային փառք և պատիւ և գոհութիւն աթոռոյն վրայ նստողին որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից, 10 դանի է յաւիտեանս յաւիտենից, Տեան և չորս երիցունք աթոռոյն վրայ նստողին առջև կ'երկրպագեն անոր որ յաւիտեանս յաւիտենից կենդանի է, և իրենց պսակները կը 11 նետեն աթոռոյն առջև՝ ըսելով, Արժանի ես, Տէր, առնուլ փառք և պատիւ և զօրութիւն, քանզի դու ստեղծեցիր զամենայն, և քու կամքդ եղան և ստեղծուեցան։

Գլ. Ե

1 Եւ աթոռոյն վրայ նստողին աջ ձեռքը տեսայ գիրք մը ներքուստ և արտաքուստ գրուած, և կնքուած եօթն կնքով։ 2 Եւ տեսայ զօրաւոր հրեշտակ որ մեծ ձայնիւ կը գոչէր, Ո՞վ արժանի է բա-

*Ոմանք նստած տեսայ



*Ոմանք քիչ մը բան

նալ այդ գիրքը և քակել առոր կնիքները։ 3 Ոչ ոք չկրնայ, ոչ չկրնայ և ոչ երկրի տակ *Փառաւոր ոք որ կարող էր բանալ այն գիրքը, և ոչ նայել 4 անոր։ Եւ ես սաստիկ կու լայի որ ոչ ոք արժանի գտնուեցաւ բանալ՝ այն գիրքը, և ոչ նայել անոր։ 5 Եւ երէցներէն մին ըսաւ ինձ, Մի լար. ահա Առիւծը որ Յուդայի ցեղէն է, Դաւթի Արմատը յաղթեց բանալ այն գիրքը և քակել 6 անոր եօթն կնիքները։ Եւ տեսայ որ աթոռոյն և չորս կենդանիներուն մէջ և երէցներուն մէջ կը կենար Գառն իբր մորթուած, որ ունէր եօթն եղջիւր և եօթն աչք, որ Աստուծոյ եօթն Հոգիներն են, որ կը ղրկուին բոլոր եր- 7 կիր։ Եւ եկաւ և առաւ գիրքը աթո- 8 ռոյն վրայ նստողին աջ ձեռքէն։ Եւ երբ առաւ գիրքը, չորս կենդանիները և քսան և չորս երէցունք Գառին առջեւ իյնան, և ամէնքն ունէին քնարներ, և ոսկիէ խնկամաններ լի խնկով, որ ե 9 աւրբերուն ազօթքն են։ Եւ նոր երգ կ'երգէին ըսելով, Արժանի ես առնուլ այդ գիրքը և բանալ անոր կնիքները. քանզի մորթուեցար, և գնեցիր մեզ Աստուծոյ քու արեամբդ ամէն ցեղէ և լեզուէ 10 և ժողովուրդէ և ազգէ։ Եւ ըրիր †մեզ մեր Աստուծոյն թագաւորներ և քահանաներ, և պիտի ‡թագաւորենք երկրի վրայ։ 11 Եւ նայեցայ և լսեցի շատ հրեշտակներու ձայն, որ աթոռոյն և կենդանիներուն և երէցանց բոլորտիքն էին. և անոնց թիւն էր բիւրք բիւրուց 12 և հազարք հազարաց. Որ մեծ ձայնիւ կ'ըսէին. Արժան է գառն որ մորթուած է առնուլ զօրութիւն և հարստութիւն և իմաստութիւն և կարողութիւն և պատիւ և փառք և օրհնութիւն։ 13 Եւ բոլոր արարածք որ են յերկինս և որ յերկրի և որ երկրի տակ և ծովու մէջ, և ամէն ինչ որ անոնց մէջ կայ՝ լսեցի որ կ'ըսէին, Աթոռոյն վրայ նստողին և Գառնին օրհնութիւն և պատիւ և փառք և զօրութիւն յաւիտեան յաւիտենից։ 14 Եւ չորս կենդանիները կ'ըսէին, Ամէն. և երէցները ինկան և երկիր պագին†։

## Գլ. Զ

1 Եւ տեսայ, երբ Գառնուկը ‖կնիքոց մին բացաւ, և չորս կենդանիներէն մին լսեցի իբրև որոտման ձայն՝ որ կ'ըսէր, 2 Եկ և տես։ Եւ տեսայ, և ահա սպիտակ ձի, և անոր վրայ հեծնողն ունէր աղեղն. և պսակ տրուեցաւ անոր, և նա յաղթող էր և եկաւ յաղթել։

3 Եւ երբ երկրորդ կնիքը բացաւ, երկրորդ կենդանիէն լսեցի որ կ'ըսէր, ‖Եկ։ 4 Եւ ուրիշ ձի եկաւ շառագոյն, և անոր վրայ հեծնողին տրուեցաւ առնուլ խաղաղութիւնը երկրէ, որպէս զի սպանեն զիրար. և անոր տրուեցաւ սուր մեծ։

5 Եւ երբ բացաւ երրորդ կնիքը, երրորդ կենդանիէն լսեցի որ կ'ըսէր, Եկ և տես։ Եւ տեսայ, և ահա սև ձի և անոր վրայ հեծնողն ունէր իր ձեռքը 6 կշիռ։ Եւ լսեցի չորս կենդանիներուն մէջէն ձայն որ կ'ըսէր, Մի կապիճ ցորեան՝ մի դահեկանի, և երեք կապիճ գարի՝ մի դահեկանի. և ձիթոյ և գինւոյ մի՛ վնասեր։

7 Եւ երբ բացաւ չորրորդ կնիքը, չորրորդ կենդանիէն լսեցի ձայն որ կ'ըսէր, 8 Եկ և տես։ Եւ տեսայ, և ահա դեղին ձի, և անոր վրայ հեծնողին անունն էր Մահ, և Դժոխք կ'երթար անոր ետեւէն. և զօրութիւն տրուեցաւ անոնց իշխանութիւն երկրի չորրորդ մասին վրայ սատակել սրով և սովով և մահու և երկրի գազաններով։

9 Եւ երբ բացաւ հինգերորդ կնիքը, տեսայ տակը հոգիները, որ սպանուած էին Աստուծոյ խօսքին համար, և վկայութեան համար, որ ունէին։ 10 Եւ կանչեցին մեր Աստուծոյն ծառանելու ճակատները։ Եւ կնքուածներուն թիւը լսեցի որ էր հարիւր քառասուն և չորս հազար կնքուած Իսրայէլի որդւոց բոլոր ցեղերէն։ Յուդայի ցեղէն 5 երկուտասան հազար կնքուած, Ռուբենի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Գադի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Ասերի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Նեփթաղիմի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Մանասէի ցեղէն երկուտասան հազար կնքուած, 7 Շմաւոնի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Ղեւեայ ցեղէն երկուտասան հազար կնքուած, Իսաքարայ ցեղէն 8 երկուտասան հազար կնքուած, Զաբուղոնի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Յովսեփայ ցեղէն երկուտասան հազար կնքուած, Բենիամինի ցեղէն երկուտասան հազար կնքուած։

9 Ա յետ հետեւ տեսայ, և ահա մեծ բազմութիւն զոր թուել ոչ ոք կարող էր, բոլոր ազգերէ և ցեղերէ և ժողովուրդներէ և լեզուներէ, որ կեցած էին աթոռոյն առջեւ և Գառնին առջեւ սպիտակ հանդերձներ հագած, և արմաւենի 10 ձեռքերնին ունենց ձեռքը։ Եւ մեծաձայն կ'ազազակէին ըսելով, Փրկութիւն մեր Աստուծոյն որ աթոռոյն վրայ կը նստի, 11 և Գառնին։ Եւ բոլոր հրեշտակները կեցած էին աթոռոյն և երիցանց և չորս կենդանիներուն չորջը, և իրենց երեսներուն վրայ իյնան աթոռոյն առջեւ և 12 երկիր պագին Աստուծոյ, ըսելով, Ամէն. օրհնութիւն և փառք և իմաստութիւն և գոհութիւն և պատիւ և զօրութիւն և կարողութիւն մեր Աստուծոյն յա- 13 ւիտեանս յաւիտենից, Ամէն։ Եւ երիցանց մին պատասխան տալով ըսաւ ինձ, Ասոնք որ սպիտակ հանդերձներ հագած են՝ ովքե՞ր են, և ուստի՞ եկած։ 14 Եւ ըսի անոր, Տէր, դուն գիտես։ Եւ ըսաւ ինձ, Ասոնք են որ կու գան մեծ նեղութենէ, և որ լուացին իրենց հանդերձները, և սպիտակացուցին զանոնք Գառնին արեամբը։ 15 Ասոնց համար Աստուծոյ աթոռոյն առջեւ են, և կը ծառայեն

*Ոմանք՝ լ'աւելցնեն և կարդալ
†Ոմանք՝ ասոնք ‡Ոմանք՝ թագաւորեն

*Ոմանք՝ քսան և չորս երիցունք
†Ոմանք՝ լ'աւելցնեն անոր որ յաւիտեան յաւիտենից կենդանի է
‡Ոմանք՝ եօթն կնիքը
‖Ոմանք՝ Եկ և տես։



չև կընենք մեր Աստուծոյն ծառանելու։ 4 Եւ ես լսեցի որ էր հարիւր քառասուն և չորս հազար կնքուած Իսրայէլի որդւոց բոլոր ցեղերէն։ 5 Յուդայի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Ռուբենի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Գադի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Ասերի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Նեփթաղիմի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Մանասէի ցեղէն երկուտասան հազար կնքուած, 7 Շմաւոնի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Ղեւեայ ցեղէն երկուտասան հազար կնքուած, Իսաքարայ ցեղէն 8 երկուտասան հազար կնքուած, Զաբուղոնի ցեղէն երկուտասան հազար կնքուած, Յովսեփայ ցեղէն երկուտասան հազար կնքուած, Բենիամինի ցեղէն երկուտասան հազար կնքուած։

9 Ա յետ հետեւ տեսայ, և ահա մեծ բազմութիւն զոր թուել ոչ ոք կարող էր, բոլոր ազգերէ և ցեղերէ և ժողովուրդներէ և լեզուներէ, որ կեցած էին աթոռոյն առջեւ և Գառնին առջեւ սպիտակ հանդերձներ հագած, և արմաւենի 10 ձեռքերնին ունենց ձեռքը։ Եւ մեծաձայն կ'ազազակէին ըսելով, Փրկութիւն մեր Աստուծոյն որ աթոռոյն վրայ կը նստի, 11 և Գառնին։ Եւ բոլոր հրեշտակները կեցած էին աթոռոյն և երիցանց և չորս կենդանիներուն չորջը, և իրենց երեսներուն վրայ իյնան աթոռոյն առջեւ և 12 երկիր պագին Աստուծոյ, ըսելով, Ամէն. օրհնութիւն և փառք և իմաստութիւն և գոհութիւն և պատիւ և զօրութիւն և կարողութիւն մեր Աստուծոյն յա- 13 ւիտեանս յաւիտենից, Ամէն։ Եւ երիցանց մին պատասխան տալով ըսաւ ինձ, Ասոնք որ սպիտակ հանդերձներ հագած են՝ ովքե՞ր են, և ուստի՞ եկած։ 14 Եւ ըսի անոր, Տէր, դուն գիտես։ Եւ ըսաւ ինձ, Ասոնք են որ կու գան մեծ նեղութենէ, և որ լուացին իրենց հանդերձները, և սպիտակացուցին զանոնք Գառնին արեամբը։ 15 Ասոնց համար Աստուծոյ աթոռոյն առջեւ են, և կը ծառայեն

անոր մէջ. և դիշեր անոր տաճարին մէջ. և աթոռոյն վրայ նստողը պիտի տարածէ
16 ծէկ իւր վրանն անոնց վրայ. Ա՛ևս չեն անհամ և ոչ պիտի անօթենան և ոչ ծարաւին, և ոչ արեգակը կամ ասոր պիտի
17 իյնայ անոնց վրայ. վասն զի Գառնուկը որ աթոռոյն մէջ է՝ պիտի հովուէ զանոնք, և պիտի առաջնորդէ զանոնք կենդանի ջուրերու աղբիւրներուը. և Աստուած պիտի սրբէ ամէն արտասուք անոնց այրերէնէն։

## Գլ. Ը

1 Եւ երբ բացաւ եօթնեորդ կնիքը, լռութիւն եղաւ յերկինս իբրև կէս ժամ։
2 Եւ տեսայ եօթն հրեշտակները, որ Աստուծոյ առջև կը կենային, և արբ-
3 ուեցաւ անոնց եօթն փող։ Եւ ուրիշ հրեշտակ եկաւ կեցաւ սեղանին առջև, և ունէր ոսկեղէն խնկանոց. և անոր տրուեցաւ շատ խունկ, որ մատուցանէր բոլոր սրբոց աղօթներուն հետ ոսկի սեղանոյն վրայ որ աթոռոյն առջև
4 էր։ Եւ խունկերուն ծուխը եկաւ սրբոց աղօթներուն հետ հրեշտակին ձեռքէն Աստուծոյ առջև։
5 Եւ հրեշտակն առաւ խնկանոցը և լեցուց զայն սեղանոյն կրակէն, և նետեց երկրի վրայ. և եղան ձայներ և որոտումներ և փայլատակումներ և երկրաշարժ։
6 Եւ եօթն հրեշտակք որ ունէին եօթն փողերը՝ պատրաստուեցան հնչեցնելու։
7 Եւ առաջին հրեշտակն հնչեցուց փողը, և եղաւ կարկուտ և հուր արեամբ խառն, և նետուեցաւ երկրի վրայ, [և երկրի երրորդ մասն այրեցաւ,] և ծառերուն երրորդ մասն այրեցաւ, և ամէն կանաչ խոտ այրեցաւ։
8 Եւ երկրորդ հրեշտակն հնչեցուց փողը, և որպէս թէ մեծ լեռ մը կրակով բորբոքած՝ նետուեցաւ ծովը, և ծո-
9 վուն երրորդ մասն եղաւ արիւն։ Եւ ծովուն մէջ հոգւոյ որ արարածներուն երրորդ մասը մեռաւ, և նաւերուն երրորդ մասը կորաւ։
10 Եւ երրորդ հրեշտակն հնչեցուց փողը, և ինկաւ յերկնից մեծ լոյս վառեալ որպէս ջահ, և ինկաւ գետոց երրորդ մասանց և յորդ աղբիւրներուն երրորդ մասն։
11 Անուն վասոյ է ըսուի դառնութիւն, և շատ մարդիկ մեռան ի ջուրէն, զի դառն եղան։
12 Եւ չորրորդ հրեշտակն հնչեցուց փողը, և զարնուեցաւ արեգական երրորդ մասը և լուսնին երրորդ մասը և աստղերուն երրորդ մասը, որպէս զի անոնց երրորդ մասը խաւարէր, և օրուան երրորդ մասը չտար լոյս, նոյնպէս և գիշերուան։
13 Եւ նայեցայ, և լսեցի երկինքի միջ թռչող *հրեշտակ մը որ կ'ըսէր մեծ ձայնիւ, Վա՛յ, վա՛յ, վա՛յ բնակիչը երկրի վրայ՝ մնացեալ ձայներէն փողերն երեք հրեշտակաց որ պիտի հնչեցնեն։

## Գլ. Թ

1 Եւ հինգերորդ հրեշտակն հնչեցուց փողը, և տեսայ որ աստղ մ'ինկաւ յերկնից երկրի վրայ, և տրուեցաւ անոր
2 բանալի գրկին անդնդոյ. Եւ բացաւ անդնդոյն գուբը, և կ'ելլէր գուբէն ծուխ, իբրև մեծ հնոցի ծուխ. և խաւարեցաւ արեգակը և օդը գրկին ծուխէն։
3 Եւ ծուխէն մարախներ կ'ելլէին երկրի վրայ, և տրուեցաւ անոնց զօրութիւն երկրի կարձիներուն զօրութիւնն
4 պէս։ Եւ ըսուեցաւ անոնց չվնասել խոտ երկրի, և ոչ բանջարոյ և ոչ ծառոյ, այլ միայն այն մարդոց որ իրենց ճակատներուն վրայ չունին Աստուծոյ
5 կնիքը։ Եւ տրուեցաւ անոնց հրամայ չսպաննել զանոնք, այլ չարչարել հինգ ամիս. և չարչարանքն էր իբր չարչարանք կարձի, երբ կը խայթէ նա մարդ։
6 զը։ Եւ այն օրերը մարդիկ պիտի խնդրեն մահ և պիտի չգտանեն. և պիտի ուզեն մեռնիլ, և մահը պիտի փախչի

*Ոմանք արծուոյ



7 անկէ։ Եւ մարախներուն նմանութիւնն էր իբրև պատրաստուած պատերազմի ձիոց, և անոնց գլուխներուն վրայ՝ *ոսկեզօծ պսակներու պէս, և անոնց երեսները՝ մարդոց երեսներ
8 պէս։ Եւ անոնք ունէին մազեր կանանց մազերուն պէս, և անոնց ատամունքն էր առիւծներու ժանիք
9 պէս։ Եւ ունէին զրահներ երկաթէ զրահներու պէս. և անոնց թևերուն ձայնը՝ նման ձայնի կառաց պատերազմի
10 վազող շատ ձիերու։ Եւ ունէին պոչեր իրենց նման ժանիքներ, և իրենց պոչերուն մէջ էր իշխանութիւն անոնց վնասելու մարդոց հինգ ամիս։
11 Ունէին անդնդոյն հրեշտակ մը իրենց վրայ թագաւոր, որուն անունը երրայերէնէն †Աբադոն, և յՅոյն լեզուով կ'ըսուի †Ապոլիոն։ Մի վայն անցաւ. այսու հետև ահա երկու վայ կու գան։
13 Եւ վեցերորդ հրեշտակն հնչեցուց փողը, և լսեցի չորից ոսկի սեղանոյն որ էր առաջի Աստուծոյ՝ ձայն,
14 Որ կ'ըսէր վեցերորդ հրեշտակին որ ունէր փողը, Արձակէ մեծ գետոյն Եփրատայ վրայ կապուած չորս հրեշտակները։ Եւ արձակուեցան այն չորս հրեշտակներն, որ պատրաստուած էին ժամու և օրուան և ամսոյ և տարւոյ համար մեռցնելու մարդոց երրորդ մասը։
16 Եւ ձիուորաց զօրաց թիւն էր երկու բիւր բիւրեայ։ Եւ լսեցի անոնց թիւը։
17 Եւ տեսիլեան մէջ այսպէս տեսայ ձիերը, և անոնց հեծեալները որ ունէին հրակէն և յակինթեղէն և ծծմբեղէն զրահներ. և ձիերուն գլուխները էին առիւծներու գլխոյ պէս, և անոնց բերնէն կ'ելլէր կրակ և ծուխ և ծծումբ։
18 Ա՛յս երեք [հարուած]ներէն մեռաւ մարդոց երրորդ մասը, այսինքն կրակէն և ծուխէն և ծծմբէն որ կ'ելլէին
19 անոնց բերնէն։ Քանզի †անոնց զօրութիւնն անոնց բերաններուն մէջ է և ապիներուն մէջ. քանզի անոնց պոչերը նման էին օձերու ատոնց, և ոտ-
20 Նէին կ'ընծայեր որովք կը մնացեալն։ Եւ մարդոց մնացեալներն որ չսպաննուեցան այս հարուածներէն՝ չապաշխարեցին իրենց ձեռաց գործերէն, որ չերկրպագեն դիւաց, և սկիւճ և արծաթ և պղնձէ և քարէ և փայտէ չիներ, որ ոչ կրնան տեսնել և
21 ոչ լսել և ոչ քալել։ Նաև չապաշխարեցին իրենց սպանութիւններէն, և ոչ իրենց կախարդութիւններէն և ոչ իրենց պոռնկութիւններէն և ոչ իրենց գողութիւններէն։

## Գլ. Ժ

1 Եւ տեսայ ուրիշ զօրաւոր հրեշտակ որ կ'իջնէր յերկինից, և ամպ հագած էր և անոր գլխուն վրայ կար ծիածան. և անոր երեսն էր արեգական պէս, և ո-
2 տներն իբրև կրակի սիւներ։ Եւ ձեռքն ունէր գրքոյկ մը բացուած. և դրաւ իւր աջ ոտքը ծովուն վրայ, և
3 ձախ՝ ցամաքին վրայ։ Եւ աղաղակեց մեծ ձայնիւ, ինչպէս կը մռնչէ առիւծ. և երբ աղաղակեց, եօթն որոտումներ
4 խօսեցան իրենց ձայներովը։ Եւ երբ *խօսեցան եօթն որոտումներ, պիտի գրէի. և լսեցի յերկնից ձայն որ †կ'ըսէր, Ինչ որ այն բաները զոր եօթն որոտումներ խօսեցան, և մի գրեր զա-
5 նոնք։ Եւ հրեշտակը զոր տեսայ կանգնած ծովուն վրայ և ցամաքին վրայ՝ վերցուց իւր ‡ձեռքն յերկինս։ Եւ երդուաւ անոր վրայ որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից, որ ստեղծեց զերկինս և զոր ի նմա, և զերկիր՝ և
6 զոր ի նմա, և զծով՝ և զոր ի նմա, թէ այլ ևս ժամանակ պիտի չըլլայ։ Այլ եօթներորդ հրեշտակին ձայնին օրերը՝ երբ փող հնչեցնէ, Աստուծոյ խորհուրդը պիտի կատարուի, ինչպէս ա-
7 ւետեց իւր ծառաներուն մարգարէից։

*Ոմանք իրենց ձայներովը խօսեցան,
†Ոմանք կ'ըսէր ինձ,

8 Եւ ձայնը զոր յերկնից լսեցի՝ դարձեալ խօսեցաւ ընդ իս և ըսաւ, Գնա, առ այն բաց գրքոյկը որ ծովուն և ցամաքին վրայ կեցած հրեշտակին ձեռքէն
9 է։ Եւ ես գացի հրեշտակին և ըսի անոր, Տուր ինձ այդ գրքոյկը։ և ըսաւ ինձ, Առ զայն և կեր։ և պիտի դառնայ դառնութիւն փորիդ մէջ, բայց բերնիդ մէջ
10 պիտի ըլլայ քաղցր իբրև զմեղր։ Եւ առի գրքոյկը հրեշտակին ձեռքէն և կերայ զայն, և բերնիս մէջ էր քաղցր իբրև զմեղր, և երբ կերայ, դառնացաւ փորիս մէջ։
11 Եւ ըսաւ ինձ, Գուցէ կրկին պիտի մարգարէանաս ազգաց ժողովուրդներուն և ազգերուն և լեզուներուն և թագաւորներուն *վրայ։

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ տրուեցաւ ինձ եղէգ նման գաւազանի, և հրեշտակը կեցած էր և կ'ըսէր, Ելի և չափէ Աստուծոյ սրահը և սեղանը, և անոր մէջ երկրպագողները։
2 Եւ գաւիթը որ սրահէն դուրսն է թող, և մի չափեր, քանզի այն արտաքոյ է հեթանոսաց, և անոնք պիտի կոխատեն սուրբ քաղաքը քառասուն և երկու ամիս։ Եւ պիտի տամ իմ երկու վկաներուս ջուբ-ի-ներ, և անոնք քուրձ հագած պիտի մարգարէանան հազար երկու
4 հարիւր և վաթսուն օր։ Ասոնք են այն երկու ձիթենիները և երկու աչտանակները, որ կը կենան երկրին Տէրոջը
5 առջեւ։ Եւ եթէ օք կամի վնաս ընել անոնց, կրակ կ'ելլէ անոնց բերանները, և կ'ուտէ անոնց թշնամիները։ և եթէ օք կամի վնաս ընել անոնց, այսպէս
6 պարտի սպանուիլ։ Անոնք իշխանութիւն ունին փակել զերկինս որ անձրեւ չգայ անոնց մարգարէութեան օրերը, և ջուրերուն վրայ իշխանութիւն ունին՝ դարձնել զանոնք յարիւն, և ամէն պատահանիներով զարնել զերկիր, քանիցս անգամ որ ուզեն։ Եւ երբ կատարեն իրենց վկայութիւնը,
7 անդունդէն ելլող գազանը պատերազմ պիտի ընէ անոնց հետ, և պիտի յաղթէ
8 անոնց և պիտի սպաննէ զանոնք։ Եւ անոնց դիները կ'ելնէ ոտքի՝ ճառ այն մեծ քաղաքին հրապարակին մէջ, որ հոգեւորապէս կ'ըսուի Սոդոմ և Եգիպտոս, ուր և Տէրն *մեր խաչուեցաւ։ Եւ ժողովուրդներէն և ցեղերէն և լեզուներէն և ազգերէն պիտի անանկ անոնց դիները երեք և կէս օր։ և պիտի չթողուն անոնց դիները թաղել գերեզմանները։
10 Եւ երկիր ուրախ պիտի ըլլան և իրենց անանց վրայ, և իրարու ընծաներ պիտի ղրկեն. քանզի այս երկու մարգարէք չարչարեցին զերկրի երկիր։
11 Եւ երեք և կէս օրէն հոգի մտաւ անոնց մէջ, և իրենց ոտից վրայ կանգնեցան. և մեծ մեծ վախ զանոնք տեսնողները։
12 ըսին վրայ։ Եւ †լսեցին յերկինէ ձայն մեծ, որ կ'ըսէր անոնց, Վեր ելէք հոս։ Եւ անոնք ամպով վերացան յերկինս, և անոնց թշնամիները տեսան զանոնք։
13 Եւ նոյն ժամուն մեծ երկրաշարժ եղաւ, և քաղաքին տասներորդ մասը կործանեցաւ, և այն երկրաշարժէն մարդ հօթն հազար մարդիկ, և մնացածները լցան սաստ և փառք տուին
14 երկինից Աստուծոյն։ Երկրորդ վայն անցաւ։ ահա երրորդ վայը կու գայ վազվազակի։
15 Եւ հօթներորդ հրեշտակն հնչեցուց փողը. և եղան երկինէ մէջ մեծ ձայներ որ կ'ըսէին, Աշխարհի թագաւորութիւնները Տէրոջ մերոյ և անոր Օծեալին եղան, և նա պիտի թագաւորէ
16 յաւիտեանս յաւիտենից։ Եւ քսան և չորս երիցուկք որ իրենց աթոռներուն վրայ նստած էին Աստուծոյ առջեւ, ինկան իրենց երեսներուն վրայ և երկիր
17 պագին Աստուծոյ ըսելով, Գոհութիւն կը մատուցանենք քեզ, Ամենակալ Տէր Աստուած, որ ես և որ էիր, ‡որ գո-

*Ոմն+ իրենց †Ոմն+ լսեցի,
‡Ոմն+ իջ յո-ե-լը-ն և որ պիտի գաս,



մեծ զօրութիւնդ առիր և թագաւորեցիր։
18 Եւ ազգերը բարկացան. և եկաւ քու բարկութիւնդ, և ժամանակը՝ դատուելու, և վարձ տալու քու ծառաներուդ մարգարէից և սրբոց և երկիւղածաց անուան քոյ, փոքունց և մեծամեծաց, և ապականելու զանոնք որ կ'ապականեն զերկիր։
19 Եւ Աստուծոյ տաճարը բացուեցաւ յերկինս, և *անոր ուխտին տապանն երեւեցաւ անոր տաճարին մէջ. և եղան փայլակներ և ձայներ և որոտմունք և երկրաշարժ և կարկուտ մեծ։

## ԳԼ. ԺԲ

1 Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին մը արեգակն իրեն վրայ առած, և լուսինը իր ոտից ներքեւն տակ. և անոր գլխուն վրայ պսակ երկոտասան աստղով։ 2 Եւ բլլալով յոյն կը ճչէր երկնելով և տանջուելով ծնանելու համար։
3 Եւ ուրիշ նշան երեւեցաւ յերկինս, և ահա վիշապ մեծ չկարգոն, որ ունէր հօթն գլուխ և տասն եղջիւր, և գլուխներուն վրայ՝ հօթն թագ։ 4 Եւ անոր պոչովը կը քաշէր երկինքէ աստղերուն երրորդ մասը, և նետեց զանոնք երկրի վրայ, և վիշապը կեցած էր այն կնոջ առջեւ որ ծնանելու վրայ էր, որ երբ ծնանէր, կլլէր անոր զաւակը։ 5 Եւ ինք ծնաւ արու զաւակ, որ երկաթէ գաւազանով պիտի հովուէր բոլոր ազգերը. և անոր զաւակն յափշտակուեցաւ Աստուծոյ քով և անոր աթոռին քով։ 6 Եւ կինը փախաւ անապատ, ուր պատրաստուած էր անոր տեղ Աստուծմէ, օրպէս զի կերակրուէր հազար երկու հարիւր և վաթսուն օր։
7 Եւ եղաւ պատերազմ յերկինս. Միքայէլ և անոր հրեշտակները պատերազմեցան վիշապին հետ. և վիշապը իր հրեշտակներով պատերազմեցաւ.
8 Եւ չկրցան դէմ դնել, և ոչ տեղ

*Ոմն+ Տէրոջը

գտնուեցաւ անոնց այլ ևս յերկինս։
9 Եւ նետուեցաւ մեծ վիշապն, հին օձը որ կը կոչուի Բանսարկու և Սատանայ, որ մոլորեցուց բոլոր աշխարհս, նետուեցաւ յերկիր, և անոր հրեշտակները անոր հետ նետուեցան։ Եւ լսեցի ձայն մեծ յերկինս որ կ'ըսէր, Հիմա եղաւ մեր Աստուծոյ փրկութիւնը և զօրութիւնը և թագաւորութիւնը, և անոր Օծեալին իշխանութիւնը. քանզի վար նետուեցաւ մեր եղբայրներուն չարախօսը, որ կը չարախօսէր անոնց դէմ մեր Աստուծոյն առջեւ ամէն
11 և գիշեր։ Եւ անոնք անոր յաղթեցին Գառնին արեւովը, և իրենց վկայութեան խօսքովը. և չսիրեցին իրենց
12 կեանքը մինչև ի մահ։ Վասն որոյ ուրախացէք, ով երկինք և անոր մէջ բնակողներ. վայ երկրի և ծովու՛, որ Բանսարկուն իջաւ ձեզ, որ ունի մեծ բարկութիւն՝ գիտնալով թէ քիչ ժամանակ ունի։
13 Եւ երբ վիշապը տեսաւ որ նետուեցաւ երկրի վրայ, հետապնդեց զառակ
14 ծնանող կնոջ եղուէն։ Եւ այն կնոջ տրուեցան մեծ արծուոյ երկու թեւեր, թաղել անապատ իր տեղը, ուր պիտի կերակրուէր ժամանակ և ժամանակներ և կէս ժամանակի յերեսաց օձին։
15 Եւ օձը իր բերնէն ջուր վազեցուց զաւակի պէս կնոջը հետեւէն, որպէս զի բնաղմէր զնա հեղեղով։ 16 Եւ երկիր օգնեց կնոջը, և երկիր բացաւ իր բերանը և կլլեց գետը, զոր վիշապը վազեցուց
17 իր բերնէն։ Եւ վիշապը բարկացաւ կնոջը դէմ, և գնաց պատերազմիլ անոր մնացեալ զաւկներուն հետ, որ կը պահեին Աստուծոյ պատուիրանները, և ունէին †Յիսուսի վկայութիւնը։
18 Եւ ‡կանգնած էի ծովուն աւազին վրայ։

*Ոմն+ իջ յո-ե-լը-ն քնակացդ
†Ոմն+ Յիսուսի Քրիստոսի
‡Ոմն+ կանգնեցաւ։

Գլ. ԺԹ

1 Եւ տեսայ որ գառան ի՛ վերկեր Ծովին և
ունէր եօթն գլուխ և տասն եղջիւր,
և անոր եղջիւրներուն վրայ տասն թագ,
և անոր գլուխներուն վրայ հայհոյա-
2 թեան անուններ։ Եւ գազանը զոր տե-
սայ՝ նման էր ընձուղ, և անոր ոտուր-
ներն՝ իբրև արջոյ, և բերանն՝ իբրև
բերան առիւծու. և վիշապը տուաւ
անոր իր զօրութիւնը և իր աթոռը
3 և մեծ իշխանութիւնը։ Եւ անոր գլուխ-
ներէն մին որպես թէ մահու չափ վի-
րաւորուած *էր. և անոր մահուան
վէրքն առողջացաւ. և բոլոր երկիրը
4 զարմացաւ գազանին ետեւէն։ Եւ եր-
կիրը պագին վիշապին որ իշխանու-
թիւն տուաւ գազանին, և երկիր պագին գա-
զանին բսելով, Ո՛վ նման է գազանին,
և ո՛վ կրնայ պատերազմիլ անոր հետ։
5 Եւ տրուեցաւ անոր բերան խօսելու
մեծամեծ բաներ և հայհոյութիւններ.
և գործառնութիւնէրկու ամիս տրուեցաւ
անոր իշխանութիւն ընել։
6 Եւ բացաւ իր բերանն հայհոյութիւններ
Աստուծոյ դէմ, հայհոյել անոր անու-
նը և անոր խորանը և բնակողներն
7 յերկինս։ Եւ տրուեցաւ անոր պատե-
րազմ ընել սուրբերուն հետ և անոնց
յաղթել. և տրուեցաւ անոր իշխանու-
թիւն բոլոր ցեղերու [և ժողովուրդ-
ներուն] և լեզուներու և ազգերու վրայ։
8 Եւ պիտի երկրպագեն անոր երկրի վը-
րայ բոլոր բնակողները որոց անուն-
ները աշխարհիս սկիզբէն հետէ գրուած
չեն մարթուած Գառնի կենաց գրքին
9 մէջ, Ով որ ականջ ունի՝ թող լսէ։
10 Ով որ ի գերութիւն վարէ, ինք գերի
պիտի տարուի. ով որ սրով պատնէշ,
պարտ պատնուիլ սրով։ Հոս է սուր-
բերուն համբերութիւնը և հաւատքը։
11 Եւ տեսայ ուրիշ գազան որ կ՛ելլէր
երկրէ, և ունէր երկու եղջիւր իբրև
գառին, և կը խօսէր վիշապի պէս։
12 Եւ կը վարէր առաջին գազանին բոլոր
իշխանութիւնն անոր առջեւ, և կը տա-
պէր երկիրը *և անոր բնակիչները երկ-
րպագել առաջին գազանին որոյ մահ-
13 ուան վէրքն առողջացաւ։ Եւ կ՛ընէր մե-
ծամեծ նշաններ, մինչև կրակ անդամ ի-
ջեցնել յերկինէ յերկիր մարդոց առ-
14 ջեւ։ Եւ կը մոլորեցնէր երկրի վրայ
բնակողները նշաններով զոր տրուած
էր անոր ընել գազանին առջեւ, և երկ-
րի բնակիչներուն կ՛ըսէր չնել պատկեր
գազանին, որ սրով վիրաւորուած էր
15 և առողջացաւ։ Եւ տրուեցաւ անոր
հոգի տալ գազանին պատկերին, որ-
պէս զի գազանին պատկերը խօսէր, և
անոնք որ չերկրպագէին գազանին
16 պատկերին՝ սպաննել տար դանոնք։ Եւ
կը տպաւէր ամէնքը, այրեն փոքրերը
և մեծամեծներն, և հարուստները և
աղքատները, և ազատները և ծառա-
ները, որ ընդունէին դրոշմ իրենց աջ
17 ձեռաց վրայ կամ իրենց ճակտին վրա-
յ. Եւ որ ոչ օք կարենար գնել կամ
վաճառել բայց միայն այն որ ունէր
18 անոր անուն թիւը։ Հոս է իմաստու-
թիւնը. ով որ միտք ունի՝ թող հաշ-
ուէ գազանին թիւը. քանզի մարդու
թիւ է, և անոր թիւն է վեց հարիւր
վաթսուն և վեց։

Գլ. ԺԴ

1 Եւ տեսայ, և ահա Գառնուկը կանգ-
նած էր Սիօն լերան վրայ, և անոր հետ
հարիւր քառասուն և չորս հազարք,
որ ունէին [անոր անունը և] անոր Հօրն
անունը գրուած իրենց ճակտներուն
2 վրայ։ Եւ յերկինէ լսեցի ձայն չատ մե-
ծաբերու ձայնի պէս և մեծ որոտման ձայ-
նի պէս, և լսեցի ձայն քնարահարաց
3 որ կը հարկանեն իրենց քնարները։ Եւ
կ՛երգեին նոր երգ† աթոռոյն առջեւ և
չորս կենդանիներուն և երիցանց առ-
ջեւ. և ոչ ոք կարող էր սորվիլ երգը
բաց այն հարիւր քառասուն և չորս
հազարէն, որ փրկուած էին երկրէն։
4 Ասոնք անոնք են որ չխառնակեցան
կանանց հետ, քանզի կոյս են. ասոնք
կ՛երթան Գառնի հետէն ուր որ երթայ
նա. ասոնք փրկուեցան մարդոց միջէն
իբրև երախայրի Աստուծոյ և Գառնի։
5 Եւ չգտաւ նենգ բերան անոնց բերանը,
քանզի անբիծ են*։
6 Եւ տեսայ ուրիշ հրեշտակ որ կը թռչ-
էր յերկինս, և ունէր յաւիտենական
աւետարան քարոզել բոլոր ազգերու
և ցեղերու և լեզուներու և ժողովրդ ոց
7 որ երկրի վրայ կը բնակին։ Եւ մեծ
ձայնիւ կ՛ըսէր, Վախցէք Աստուծմէ և
փառք տուէք անոր, քանզի եկաւ ա-
նոր դատաստանին ժամը, և երկիր
պագէք անոր որ ստեղծեց զերկինս և
զերկիր և զծով և զաւերքն աղբիւ-
րոց։
8 Եւ ապա ուրիշ հրեշտակ եկաւ և ը-
սաւ, Ինկաւ, ինկաւ մեծ †Բաբելոն,
քանզի արբեցուց բոլոր ազգերը իր
9 կատաղի պոռնկութեան գինիէն։ Եւ
անոնցմէ երրորդ հրեշ-
տակ, և մեծ ձայնիւ ըսաւ, Ով որ կ՛եր-
կրպագէ գազանին և անոր պատկե-
րին, և կ՛ընդունի անոր դրոշմն իր
ճակտանն վրայ կամ իր ձեռաց վրայ,
10 Պիտի խմի Աստուծոյ սրտմտութեան
գինիէն որ լցուած է անապակ անոր
բարկութեան բաժակին մէջ, և պիտի
տանջուի հրով և ծծմբով սուրբ հրեշ-
տակներուն առջեւ և Գառնի առջեւ։
11 Եւ անոնց տանջանաց ծուխը կ՛ելլէ յա-
ւիտեանս յաւիտենից. և տիւ և գիշեր
չունին հանգիստ անոնք որ կ՛երկրպա-
գեն գազանին և անոր պատկերին, և
12 կ՛ընդունին անոր անուան դրոշմը։ Հոս
է սուրբերուն համբերութիւնը, ‖որ կը
պահեն Աստուծոյ պատուիրանները և
13 Յիսուսի հաւատքը։ Եւ լսեցի յերկինէ

*Ոմն.+ տեսայ

*Ոմն.+ և բոլորը
†Ոմն.+ որպես թէ նոր

*Ոմն.+ Ը յաւելուն Աստուծոյ աթոռոյն առջեւը †Ոմն.+ Բաբելոն քաղաքը
‡Ոմն.+ ուրիշ
‖Ոմն.+ Հոս են անոնք որ



ձայն որ *կ՛ըսէր, Գրէ, Այսուհետև ե-
րանելի են մեռեալք որ ի Տէր կը նդն-
ջին. այո, կ՛ըսէ Հոգին, որպէս զի հանգ-
չին իրենց աշխատութիւնէն. և անոնց
գործերը կ՛երթան անոնց ետևէն։
14 Եւ տեսայ, և ահա ամպաւոր սպիտ, և
ամպին վրայ նստած էր մին նման Որ-
դւոյ մարդոյ, և ունէր գլուխը պսակ
ոսկի, և մէջը՝ սուր մանգաղ։
15 Եւ տաճարէն կ՛ելլէր ուրիշ հրեշտակ,
որ մեծ ձայնիւ կ՛աղաղակէր ամպին վը-
րայ նստողին Ե Ղ՚ըսէր, Երկինցս ման-
գաղդ և հնձէ. քանզի †եկաւ հնձելու
ժամանակը, վասն զի երկրի հունձքն
16 հասած է։ Եւ այն որ կը նստէր ամպին
վրայ՝ երկինցուց իր մանգաղը երկրի
վրայ, և երկիրը հնձուեցաւ։
17 Եւ երկինէ տաճարէն ելաւ ուրիշ
հրեշտակ, և ան ևս ունէր սուր ման-
18 գաղ։ Եւ սեղանէն եկաւ ուրիշ հրեշ-
տակ, որ ունէր իշխանութիւն կրակի
վրայ, և մեծ ձայնիւ գոչեց անոր որ
ունէր սուր մանգաղը, և ըսաւ, Երկին-
ցու սուր մանգաղդ, և կթէ երկրի
այգւոյն ողկոյզները, քանզի անոր թա-
19 ղողներն հասած են։ Եւ հրեշտակը եր-
կինցուց իր մանգաղը երկրի վրայ, և
կթեց երկրի այգւոյն Ը ղողները, և նե-
տեց Աստուծոյ բարկութեան մեծ հըն-
20 ձանն մէջ։ Եւ հնձանը կոխուեցաւ
ձանին մէջ։ Եւ հնձանէն կ՛ելլէր
քաղաքին դուրսը. և հնձանէն կ՛ելլէր
արիւն, մինչև ձիերուն սանձերը հա-
զար վեց հարիւր ասպարէզ։

Գլ. ԺԵ

1 Եւ տեսայ ուրիշ մեծ և զարմանալի
նշան յերկինս, եօթն հրեշտակներ որ
ունէին վերջին եօթն հարուածները,
վասն զի անոնցմով կը կատարուէր Աս-
2 տուծոյ բարկութիւնը։ Եւ տեսայ իբրև
ապակեղէն ծով կրակով խառնուած.
և անոնք որ յաղթեցին գազանին և
անոր պատկերին ‡և անոր անուան թը-

*Ոմն.+ կ՛ըսէր ինձ,
†Ոմն.+ եկաւ ջեզ,
‡Ոմն.+ և անոր գրոշմին

ւոյն՝ կանգնած էին ապակիղէն ծովուն վրայ, և ունէին Աստուծոյ փնարները։
3 Եւ կ՚երգէին Աստուծոյ ծառային Մովսիսի երգը, և Գառին երգն՝ ըսելով, Մեծ և զարմանալի են քու գործերդ, ով Տէր Աստուած Ամենակալ. արդար և ճշմարիտ են քու ճամբաներդ, ով
4 թագաւոր *սրբոց. Տէր, ով պիտի չվախնայ քենէ, և քու անունդ չփառաւորէ, վասն զի դո՛ւ միայն սուրբ ես. քանզի բոլոր ազգերը պիտի գան և երկրպագեն քու առջեւդ, վասն զի քու արդար գատաստաններդ յայտնուեցան։
5 Եւ այսուհետեւ տեսայ, և բացուեցաւ վկայութեան խորանին տաճարը
6 որ էր յերկինս. Եւ եօթն հարուածներն ունեցող եօթն հրեշտակք մաքուր և պայծառ կտաւ հագած, և բունն կրծոց վրայ ոսկեղէն գօտի կապած, երան տաճարէն։ Եւ չորս կենդանեացն մին տուաւ եօթն հրեշտակներուն եօթն ոսկեղէն սկաւառակ, լի բարկութեամբն Աստուծոյ որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից։ Եւ տաճարը լցաւ ծխով Աստուծոյ փառքէն և անոր զօրութենէն. և ոչ ոք կարող էր մտնել տաճարը, մինչեւ կատարուէին եօթն հրեշտակաց եօթն հարուածները։

## Գլ. ԺԶ

1 Եւ տաճարէն լսեցի ձայն մեծ որ կ՚ըսէր եօթն հրեշտակներուն, Գացէք թափեցէք Աստուծոյ բարկութեան [եօթն] սկաւառակները երկրի վրայ։
2 Եւ առաջին հրեշտակը գնաց և թափեց իր սկաւառակն երկրի վրայ. և չարաչար պարարներ եղան այն մարդոց վրայ, որ ունէին գազանին գրոշմը և կ՚երկրպագէին անոր պատկերին։
3 Եւ երկրորդ հրեշտակը թափեց իր սկաւառակը ծովուն վրայ, և եղաւ արիւն իբրև մեռելոյ, և մեռան բոլոր անասունք ծովուն մէջ։
4 Եւ երրորդ հրեշտակը թափեց իր սկաւառակը գետերու և ջուրերու ազբիւրներուն վրայ, և եղան արիւն։
5 Եւ լսեցի ջուրերուն հրեշտակին որ կ՚ըսէր, Արդար ես դուն, *որ ես և որ էիր, և սուրբ ես, որ ըրիր այսպիսի դատաստաններ. Քանզի անոնք թափեցին սուրբերուն և մարգարէներուն արիւնը. և դուն խմել տուիր անոնց արիւն,
7 քանզի արժանի էին։ Եւ †լսեցի սեղանէն որ կ՚ըսէր, Այո, Ամենակալ Տէր Աստուած, արդար և ճշմարիտ են քու դատաստաններդ։
8 Եւ չորրորդ հրեշտակը թափեց իր
9 սկաւառակն արեգական վրայ։ Եւ տրուեցաւ անոր այրել մարդիկ հրով.
և այրեցան մարդիկ այրումն մեծ, և հայհոյեցին Աստուծոյ անունը, որ ունի իշխանութիւն այս հարուածներուն վրայ. և չապաշխարեցին փառք տալ անոր։
10 Եւ հինգերորդ հրեշտակը թափեց իր սկաւառակը գազանին աթոռոյն վրայ, և եղաւ խաւար անոր թագաւորութիւնը. և առ ցաւոյն կը ծամէին իրենց լեզուները,
11 Եւ հայհոյեցին երկնից Աստուածն իրենց ցաւերուն և իրենց պալարներուն պատճառաւ. և չապաշխարեցին իրենց գործերէն։
12 Եւ վեցերորդ հրեշտակը թափեց իր սկաւառակը մեծ գետոյն Եփրատայ վրայ, և անոր ջուրերը ցամքեցան, որ պատրաստուի արեւելից թագաւորներուն ճամբան։
13 Եւ տեսայ ‡ի վիշապին բերնէն և գազանին բերնէն և սուտ մարգարէին բերնէն երեք պիղծ ոգիներ ի՚նչպէս գորտեր նման. Քանզի անոնք դեւերու ոգիներ են որ կ՚ընեն նշաններ, և կ՚երթան երկրի աշխարհի թագաւորներուն, որ ժողվեն զանոնք Ամենակալ Աստուծոյ այն մեծ օրուան պատերազմին համար։ (Ահա գողի պէս կու գամ. երանի անոր որ

*Ոմանք՝ ապրած

*Ոմանք՝ Ով Տէր, որ
†Ոմանք՝ ուրիշ մը լսեցի
‡Ոմանք՝ երկրին և



արթուն կը կենայ և կը պահէ իր հանդերձները, որ մերկ չպտրտի և չերեւնայ
16 իր ամօթը.) Եւ զանոնք ժողվեցին տեղ մը որ կը կոչուի Եբրայեցերէն Արմագեդոն։
17 Եւ եօթներորդ հրեշտակը թափեց իր սկաւառակն օդին վրայ. և երկինքէ տաճարէն, աթոռէն, ելաւ ձայն մեծ
18 որ կ՚ըսէր, Եղաւ։ Եւ *փայլակներ և ձայներ և որոտումներ եղան. և մեծ երկրաշարժ եղաւ, այնպիսի որ յորմէ հետէ մարդիկ կան երկրի վրայ՝ այնպիսի մեծ երկրաշարժ եղած չէր։ Եւ մեծ քաղաքը եղաւ երեք մաս, և ազգերուն քաղաքները կործանեցան, և մեծ Բաբելոն յիշուեցաւ Աստուծոյ առջեւ՝ տալ անոր իր մեծ բարկութեան գինւոյն բաժակը։ Եւ ամէն կղզի փախաւ, և լեռները չգտնուեցան։
21 Եւ մեծ կարկուտ իբրև տալանդի կշռով կ՚իջնէր յերկինէ մարդոց վրայ. և մարդիկ հայհոյեցին Աստուած կարկտոյ հարուածին համար, քանզի մեծ էր յոյժ հարուածը։

## Գլ. ԺԷ

1 Եւ եօթն սկաւառակներն ունեցող եօթն հրեշտակաց մին եկաւ և խօսեցաւ ինծի հետ ըսելով, Եկ, և ցուցնեմ քեզ մեծ պոռնկին դատաստանը, որ
2 կը նստի շատ ջուրերուն վրայ. Որոյ հետ պոռնկեցան երկրի թագաւորները, և երկրի բնակիչները արբեցան
3 անոր պոռնկութեան գինւով. Եւ առաւ զիս հոգւով անապատ. և տեսայ կին որ նստած էր կարմիր գազանի վրայ, որ լի էր հայհոյութեան անուններով, և ունէր եօթն գլուխ և տասն եղջիւր։ Եւ կինը ծիրանի և կարմիր հագած էր, և զարդարուած էր ոսկւով և պատուական քարերով և մարգարիտներով, և իր ձեռքն ունէր բաժակ ոսկի լի պղծութեամբ և իր

*Ոմանք՝ ձայներ և որոտումներ և փայլակներ

պոռնկութեան անմաքրութիւնովք.
5 Եւ անոր ճակտին վրայ գրուած էր անուն, խորհուրդ, Մեծ Բաբելոն, պոռնիկներուն և երկրի պղծութեանց
6 մայրը։ Եւ տեսայ կինը որ արբեցած էր սուրբերուն արեամբ և Յիսուսի վկաներուն արեամբ. և երբ տեսայ զայն, զարմացայ զարմացումն մեծ։ Եւ հրեշտակն ըսաւ ինծի, Ընդէ՞ր զարմացար. ես քեզ կ՚ենչ խորհուրդը, և գազանին որ կը կրէ զնա իր վրայ, և ունի եօթն գլուխ և տասն եղջիւր։
8 Գազանը զոր տեսար՝ կար և չկայ, և անդունդէն ելլելու է և կորստեան երթալու վրայ է. և երկրի վրայ բնակողներն որոց անունները գրուած չեն ի սկզբանէ աշխարհի կենաց գիրքին մէջ՝ պիտի զարմանան, երբ տեսնեն գազանը
9 որ կար և չկայ, *կ՚ենչ և կայ։* Հոս է խնամութիւն ունեցող միտք. եօթն գլուխը եօթն լերինք են, որոց վրայ կը նստի կինը. և եօթն թագաւորներ
10 են. Հինգն ինկած են, մին կը կենայ, և միւսը դեռ եկած չէ, և երբ գայ,
11 քիչ ժամանակ պիտի մնայ։ Եւ գազանը որ կար և չկայ, նա ութերորդ է, և եօթնէն է, և կ՚երթայ ի կորուստ։
12 Եւ տասն եղջիւրը զոր տեսար՝ տասն թագաւորք են, որ դեռ առած չեն թագաւորութիւն, այլ գազանին հետ իբրև մի ժամ թագաւորներու պէս
13 կ՚առնուն իշխանութիւն։ Անոնք մի կամք ունին, և իրենց զօրութիւնը և
14 իշխանութիւնը կու տան գազանին. Անոնք Գառին հետ պիտի պատերազմին. և Գառնիկը պիտի յաղթէ անոնց, քանզի նա է Տէր տէրանց և Թագաւոր թագաւորաց. և անոնք որ անոր հետ են՝ կանչուած և ընտրուած և հաւատարիմ են, և ըսաւ ինծի,
15 Ջուրերը զոր տեսար, որոց վրայ պոռնիկը նստած է, ժողովուրդներ են և բազմութիւններ և ազգեր և լեզուներ։ Եւ տասն եղջիւրք զոր տեսար գազանին վրայ՝ պիտի ատեն պոռնիկը, և պիտի

*Ոմանք՝ և մեռ է։

ընեն զնա ամայի և մերկ, և պիտի ուտեն անոր մարմինը, և զայրեն զնա կրակով։ Քանզի Աստուած անոնց սրտին
17 մէջ դրաւ որ կատարեն իր կամքը և մի կամք ըլլան, և իրենց թագաւորութիւնը տան գազանին, մինչև կատարուին Աստուծոյ խօսքերը։ Եւ կինը զոր տեսար՝ այն մեծ քաղաքն է որ կը թա-
18 գաւորէ երկրի թագաւորներուն վրայ։

## ԳԼ. ԺԸ

1 Ետև այսուհետև տեսայ [ուրիշ] հրեշտակ որ կ'իջնէր յերկինից, և ունէր իշխանութիւն մեծ, և երկիր լուսաւորուեցաւ անոր փառքին։ Եւ *զօրաւոր
2 ձայնիւ ազազակեց ըսելով, Ինկաւ, ինկաւ Բաբելոն մեծ, և եղաւ բնակարան դիւաց, և բոլոր պիղծ ոգիներուս ապրելանոց, և բոլոր պիղծ և ատելի
3 թռչնոց վանդակ. Քանզի անոր կատաղի պոռնկութեան գինիէն խմեցին բոլոր ազգերը, և թագաւորք երկրի պոռնկեցան անոր հետ, և վաճառականք երկրի հարստացան անոր չափազանց
4 զեղխութենէն։ Եւ լսեցի յերկնից ուրիշ ձայն որ կ'ըսէր, Ելէք անոր մէջէն, իմ ժողովուրդս, որ հաղորդ չըլլաք անոր մեղացը, և ի՞նչէն չառնուք ա-
5 նոր հարուածներէն։ Քանզի անոր մեղքերը հասան կեցան մինչև յերկինս. և Աստուած յիշեց անոր անիրաւու-
6 թիւնները։ Հատուցէք նմա ինչպէս նա †հատուց. և կրկնեցէք նմա կրկինն ըստ գործոց նորա. ի բաժակը զոր լցուց՝
7 լցէք նմա կրկին։ Որչափ փառաւորեց զինք և զեղխութեամբ ապրեցաւ, այնչափ տանջանք և սուգ հատուցէք նմա. քանզի կ'ըսէ իւր սրտին մէջ Թէ Նա կը նստիմ թագուհի, և այրի չեմ, և բը-
8 նաւ սուգ պիտի չտեսնեմ։ Վասն որոյ մի օրուան մէջ պիտի գան անոր հարուածները, մահ և սուգ և սով, և պիտի այրի հրով. քանզի հզօր է Տէր

*Ոմանք՝ զօրաւորութեամբ՝ մեծ
†Ոմանք՝ հատոյց ձեզ։

9 Աստուած որ դատեց զնա։ Եւ երկրի թագաւորները որ պոռնկեցան անոր հետ և հեշտացան՝ պիտի լան և կոծն անոր վրայ երբ տեսնեն անոր հրկիզու-
10 թեան ծուխը։ Եւ անոր տանջանաց ահէն հեռուն պիտի կայնին և ըսեն, Վա՛յ, վա՛յ քեզ Բաբելոն մեծ քաղաք, հզօր քաղաք, որ մի ժամու մէջ եկաւ քու դատաս-
11 տանդ։ Եւ երկրի վաճառականները պիտի ողբան և սգան անոր վրայ. քանզի այլ ևս ոչ ոք կը գնէ անոնց վա-
12 ճառները, ոսկւոյ, և արծաթոյ, և ականց պատուականաց, և մարգարիտներու, և բեհեզի, և ծիրանւոյ, և մետաքսի, և որդան կարմրոյ վաճառներ, և ամէն խնկոյ փայտ, և ամէն անօթ փղոսկրեայ, և ամէն անօթ պատուական փայտէ և պղնձէ և երկաթէ և
13 մարմարիոնէ, Եւ կինամոն [և ամոմոն] և խունկեր, և անուշահոտ իւղ, և կնդրուկ, և գինի, և ձէթ, և նաշխի, և ցորեն, և արջառներ, և ոչխարներ, և ձիեր, և կառք, և մարմիններ, և
14 մարդոց հոգիներ։ Եւ պատղք որոց կը ցանկար քու անձդ՝ գացին քեզմէ, և բոլոր չքեղ և փայլուն բաները կորսուեցան քենէ, և այլ ևս երբէք պի-
15 տի չգտանես զանոնք։ Այս բաներուն վաճառականները որ անկէ հարստացած էին՝ հեռուն պիտի կայնին անոր տան-
16 ջանաց ահէն, լալով և սգալով, Եւ պիտի ըսեն, Վա՛յ, վա՛յ, մեծ քաղաք, որ հագած էիր բեհեզ և ծիրանի և որդան կարմիր, և զարդարուած էիր ոսկւով և պատուական քարերով և մարգա-
17 ռաւք. Քանզի այնչափ հարստութիւնը մի ժամու մէջ կործանեաւ։ Եւ ամէն նաւավար, և ամէնքը որ կ'երթան նաւով տեղ տեղ, և նաւատներ և որ ծովու մէջ կը գործեն՝ հեռուս կեցան.
18 Եւ տեսնելով անոր հրկիզութեան ծուխը՝ կ'ազազակէին ըսելով, Ո՞վ նման է
19 այս մեծ քաղաքին։ Եւ ցանցին հող իրենց գլուխներուն վրայ, և լալով և սգալով կ'ազազակէին ըսելով, Վա՛յ, վա՛յ մեծ քաղաքին, ուր հարստացան անոր պատուականութենէն ամէնքը որ



ունէին նաւեր ծովուն վրայ. վասն զի
20 ամայացաւ մի ժամու մէջ։ Ուրախացէք անոր վրայ, երկինք և սուրբ առաքեալք և մարգարէք, քանզի Աստուած առաւ ձեր վրէժն անկէ։
21 Եւ զօրաւոր հրեշտակ մը առաւ քար իրեն մեծ երկանաքար, և ծովը նետեց ըսելով, Այսպէս ուժով պիտի նետուի Բաբելոն, մեծ քաղաքը, և այլ ևս
22 պիտի չգտնուի։ Եւ քնարահարաց և երգահարաց և շեփորահարաց և փողահարաց ձայն այլ ևս պիտի չլսուի ի քեզ. և ամէն արուեստի ճարտար ևս պիտի չգտնուի ի քեզ. և ազօրայն ձայն
23 այլ ևս պիտի չլսուի ի քեզ. Եւ ճրագի լոյսն այլ ևս պիտի չերևնայ ի քեզ. և փեսային ձայնը և հարսին ձայնը այլ ևս պիտի չլսուին ի քեզ. քանզի քու վաճառականներդ էին երկրի մեծամեծները. վասն զի բոլոր ազգերը մոլորեցան քու կախար-
24 դութեամբդ։ Եւ մարգարէներուն և սուրբերուն և երկրի վրայ բոլոր ըսպանուածներուն արիւնը գտնուեցաւ անոր մէջ։

## ԳԼ. ԺԹ

1 Եւ յետ այնորիկ լսեցի յերկինս իբրև մեծ բազմութեան ձայն մեծ որ կ'ըսէր, Ալէլուիա. փրկութիւն և փառք և պատիւ և զօրութիւն *Աստուծոյն մերոյ.
2 վասն զի ճշմարիտ և արդար են անոր դատաստանները, քանզի դատեց մեծ պոռնիկը, որ իւր պոռնկութեամբ աշխարհս կեղծիքով, և պահանջեց իւր ծառաներուն արեան վրէժն անոր ձեռ-
3 քէն։ Եւ կրկին անգամ ըսին, Ալէլուիա։ Եւ անոր ծխոյ կ'ելնէ յաւիտեան յաւիտենից։ Եւ քառասնչորս երիցունք և չորս կենդանիք ինկան և երկիր պագին Աստուծոյ որ կը նստի
5 աթոռը, և ըսին, Ամէն, Ալէլուիա։ Եւ աթոռէն ելաւ ձայն որ կ'ըսէր, Մեր Աստուծոյն օրհնութիւն տուէք, ամէն բոլոր ծառաները, և դուք որ անկէ

*Ոմանք՝ Տէր Աստուծոյն

կը վախնաք, փոքրունք և մեծամեծք։
6 Եւ լսեցի իբրև զձայն մեծ բազմութեան, և իբրև զձայն յաւ ջուրերու, և իբրև զձայն սաստիկ որոտմանց որ կ'ըսէին, Ալէլուիա, քանզի Ամենակալ Տէր Աս-
7 տուած [մեր] թագաւորեց։ Խնդանք և ուրախանանք և փառս տանք անոր, քանզի Գառին հարսանիքն հասաւ, և
8 անոր կինը պատրաստեց զինք։ Եւ անոր տրուեցաւ հագնել մաքուր և լուսաւոր բեհեզ, (քանզի բեհեզը սուրբներուն արդարութիւնն է։) Եւ ըսաւ ինձ, Գրէ, Երանելի են անոնք որ կոչուած են յընթրիս հարսանեաց Գառնին։ Եւ ըսաւ ինձ, Ատենք են Աստուծոյ
10 ճշմարիտ խօսքերը։ Եւ ինկայ անոր առջև, որ երկրպագէի անոր. և ըսաւ ինձ, Զգուշացիր, մի ընէր. *ծառայակից եմ քեզ և քու եղբայրներուդ, որ ունին Յիսուսի վկայութիւնը. Աստուծոյ երկրպագէ։ (Քանզի Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է։)
11 Եւ տեսայ զերկինս բացուած. և ահա սպիտակ ձի, և անոր վրայ հեծեալը կ'ըսուի Հաւատարիմ և Ճշմարիտ, և արդարութեամբ կը դատէ և կը պա-
12 տերազմի. Եւ անոր աչքերն իբրև բոց հրոյ, և անոր գլխուն վրայ շատ թագեր, և ունէր գրուած անուն մը
13 զոր ոչ ոք գիտէր, բայց միայն նա։ Եւ հագած էր հանդերձ արեամբ ներկուած. և անոր անունը կ'ըսուի Բան
14 Աստուծոյ։ Եւ երկինէ զօրքը կ'երթային անոր ետևէն սպիտակ ձիերով, սպիտակ և մաքուր բեհեզներ հագած.
15 Եւ անոր բերնէն կ'ելլէր սրած սուր, որպէս զի անով զարնէր ազգերը. և պիտի հովուէ նա զանոնք երկաթէ գաւազանաւ, և պիտի կոխէ նա Ամենակալ Աստուծոյ սաստիկ բարկութեան
16 գինւոյն հնձանը։ Եւ իւր պատմուճանին վրայ և իւր ազդր վրայ ունէր գրուած անուն, ԹԱԳԱՒՈՐԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ՏԻՐ ՏԵՐԱՑԱՑ։
17 Եւ տեսայ հրեշտակ մը որ կանգնած էր արեգական մէջ, և մեծ ձայնիւ ա-

զաղակից յերկինս Թոհոզ բոլոր Թըզչնոց՝ ըսկըզբ, նիկ, ժողովուեցէք *ի
18 մեծ ընթրիս Աստուծոյ, Որ ուտէք թագաւորաց մարմինները, և հազարապետաց մարմինները, և զօրաւորաց մարմինները, և ձիոց և անոնց հեծելոց մարմինները, և ամենուն մարմինները, թէ ազատաց և թէ ծառայից, թէ փոքունց և թէ մեծամեծաց։
19 Եւ տեսայ գազանը և երկրի թագաւորները և անոնց զօրքն ի մի վայր ժողոված պատերազմ ընել անոր հետ որ ձիուն վրայ հեծած էր, և անոր զօրայ հետ։ Եւ գազանը բռնուեցաւ, և անոր հետ սուտ մարգարէն որ անոր առջև նշաններ, որովք մոլորեցուց գազանին դրոշմն ընդունողները, և անոր պատկերին երկրպագողները. երկուքին ալ ողջ ողջ ծծմբով վառած
21 կրակին լիճը նետուեցան։ Եւ ուրիշներն սպանուեցան ձիուն վրայ հեծկլտցն սուրին որ անոր բերնէն կ'ելլէր, և բոլոր թռչուններ յագեցան անոնց մարմիններեն։

## Գլ. Ի

1 Եւ տեսայ հրեշտակ որ կ'իջնէր յերկնից, և ունէր անդնդոյն բանալին և
2 մեծ շղթայ իր ձեռքը։ Եւ բռնեց վիշապն, այսինքն հին օձը որ է Բանսարկուն և Սատանան, և կապեց զնա
3 հազար տարի։ Եւ նետեց զնա անդունդը, և փակեց և կնքեց վրայէն, որ այլ ևս չմոլորեցուներ ազգերը, մինչև որ հազար տարին լրանայ, և այնուհետև պարտ է նմա արձակուիլ փիչ մը ժամանակ։
4 Եւ տեսայ աթոռներ, և նստան անոնց վրայ. և արուեցաւ անոնց դատաւորութիւն. Ւեւ նաև Յիսուսի վկայութեանց համար և Աստուծոյ խօսքին համար գլխատուածներուն հոգիները, և անոնք որ երկիր չպագին գազանին և ոչ անոր պատկերին, և չա-

*Ոմն+ յընթրիս մեծ Աստուծոյ

ձին ոտը դրոշմն իրենց ճակտանցն վրայ և իրենց ձեռաց վրայ. և ապրեցան և թագաւորեցին Քրիստոսի հետ
5 հազար տարի։ Եւ մեռելք չապրեցան մինչև կատարուեցաւ հազար տարին. այս է առաջին յարութիւնը։
6 Երանելի և սուրբ է այն որ բաժին ունի առաջին յարութեան մէջ. ասոնց վրայ չունի իշխանութիւն երկրորդ մահն, այլ անոնք պիտի ըլլան Աստուծոյ և Քրիստոսի քահանաները, և անոր հետ պիտի թագաւորեն հազար տարի։
7 Եւ երբ հազար տարին լրանայ, պիտի արձակուի Սատանան իր բանտէն.
8 և պիտի ելլէ և մոլորեցնէ ազգերը որ երկրի չորս անկիւններն են, Գոգ և Մագոգ, որ զանոնք պատերազմի ժողովէ, որոց թիւն է ըրկի ցամաք
9 ծովու։ Եւ երկրի ընդարձակութեան մէջ եկան, և պատեցին սուրբերուն բանակը և սիրելի քաղաքը. բայց հուր
10 ձևն Եւ յերկինից կրակ իջաւ Աստուծմէ և ապառնի զանոնք. և բանտարկուն որ զանոնք մոլորեցուց՝ նետուեցաւ կրակի և ծծմբոյ լիճը, ուր էին գազանը Եւ սուտ մարգարէն. և պիտի չարչարուին ցին և գիշեր յաւիտեանս յաւիտենից։
11 Եւ տեսայ աթոռ մեծ ապառակ, և անոր վրայ նստողը, որոյ երեսէն փախան երկիր և երկինք, և տեղ չգտան.
12 Նոռնեցաւ անոնց Եւ տեսայ փոքր և մեծ մեռելները որ Աստուծոյ առջև կանգնած էին. և գիրքերը բացուեցան, և ուրիշ գիրք մը բացուեցաւ, այսինքն կենաց Էէ։ և գիրքերուն մէջ գրուածներէն մեռելները դատուեցան ի-
13 րենց գործոցն համեմատ Եւ ծով տուաւ իր մեռելները, և մահ և դժոխք տուին իրենց մեռելները. և դատուեցան, իւրաքանչիւր իր գործոց
14 համեմատ Եւ մահ և դժոխք նետուեցան կրակի լիճը. այս է երկրորդ մահը։ Եւ ով որ գրուած չգտնուեցաւ

*Ոմն+ աթոռին



կենաց գիրքին մէջ նետուեցաւ կրակի լիճը։

## Գլ. ԻԱ

1 Եւ տեսայ նոր երկինք և նոր երկիր. քանզի առաջին երկինքն և առաջին
2 երկիրն անցան, նաև ծով չկար։ Ես տեսայ սուրբ քաղաքը, զնորն Երուսաղէմ, որ կ'իջնէր յերկինից Աստուծմէ, իբրև զարդարուած հարսն, պատրաստեալ
3 առեալ իր երկնաւոր հարսնոյ։ Եւ լսեցի յերկինից ձայն մեծ որ կ'ըսէր, Ահա Աստուծոյ խորանը մարդոց մէջ, և պիտի բնակի անոնց հետ. և անոնք պիտի ըլլան անոր ժողովուրդը, և ինքն Աստուած պիտի ըլլայ անոնց հետ ՀԷԸ։
4 անոնց Աստուածը։ Եւ Ֆետ պիտի սրբէ անոնց աչքերէն ամէն արտօսր, և մահ ևս պիտի չըլլայ, ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւ, պիտի ըլլայ այնուհետև, քանզի առաջին բաներն անցան։
5 Եւ ան որ աթոռին վրայ կը նստէր՝ ըսաւ, Ահա նոր կ'ընեմ ամէն բան։ Ըսաւ ինձ, Գրէ, քանզի ճշմարիտ և հաւատարիմ են այս խօսքերը։ Նաև ըսաւ ինձ, Եղաւ։ Ես եմ Ալֆա և Օմեգա, Սկիզբն և Վախճան։ Ես ծարաւածին ձրի պիտի տամ կենաց Ջրոյ աղբիւրէն։ Ով որ կը յաղթէ, պիտի ժառանգէ †ամէն բան՝ և Ես պիտի ըլլամ անոր Աստուած, և նա պիտի ըլլայ ինձ որդի։ Բայց երկչոտներուն, և անհաւատներուն, և պղծուներուն, և մարդասպաններուն, և պոռնիկներուն, և կախարդներուն, և կռապաշտներուն, և բոլոր սուտհաւներուն բաժինը պիտի ըլլայ կրակով և ծծմբով վառած լճին մէջ, որ է երկրորդ մահը։
9 Եւ հոթ հրեշտակներէն որ ունէին հոթ վերջին հարուածներով լի հոթն սկաւառակները՝ մին եկաւ առաջս, և խօսեցաւ ինծի հետ և ըսաւ, Եկ, ցուցից քեզ զկինայ զԲարին՝ զկին Գառնին։
10 Եւ տարաւ զիս հոգւով մեծ և բարձր լերան, և ցուցուց ինձ սուրբ Երուսաղէմ *քաղաքը, որ կ'իջնէր յերկինից Աստուծմէ.
11 և ունէր Աստուծոյ փառք, և անոր լուսաւորութիւնը նման էր շատ պատուական քարի, այնինքն երեսպատուական քարի, իբրև բիւրեղ պարզ։
12 Եւ մեծ և բարձր էր։ Եւ անոր պարիսպը մեծ և բարձր էր, և ունէր երկուասան դուռ. և դուռներուն վրայ հրեշտակներ գրուած էին, այսինքն իրարմէ երկուասան ցեղերուն անուններ գրուած էին,
13 արեւելեան կողմէն երեք դուռ, և հիւսիսային կողմէն երեք դուռ, և հարաւային կողմէն երեք դուռ, և արեւմտեան
14 կողմէն երեք դուռ։ Եւ քաղաքին պարիսպն ունէր երկուասան հիմ, և անոնց վրայ †Գառնին երկուասան առաքելոց (երկուասան) անուններ։
15 Նուններ։ Եւ ինծի հետ խօսողն ունէր չափ եղեգ ոսկի, որպէս զի չափէր քաղաքը և անոր դուռները և անոր պարիսպները։ Եւ քաղաքը քառակուսի էր, և անոր երկայնութիւնն էր այնչափ՝ որչափ լայնութիւնը. և չափեց քաղաքն ‡ն եղեգով երկուասան հազար ասպարէզ. անոր երկայնութիւնը և լայնութիւնը և բարձրութիւնը հաւասար էին։ Եւ չափեց անոր պարիսպը հարիւր քառասունևչորս կանգուն, մարդու չափով, այսինքն հրեշտակին։
18 Եւ անոր պատպին շինուածն էր յասպիս, և քաղաքը զուտ ոսկի էր մանրագոյն ապակւոյ նման։ Եւ քաղաքին պարսպին հիմերն էին ամէն թանկագին քարերով զարդարուած. առաջին հիմն էր յասպիս, երկրորդը՝ սափիւրոս, երրորդը՝ քաղկեդոն, չորրորդը՝ զմրուխտ,
20 հինգերորդը՝ եղնգնաքար, վեցերորդը՝ սարդիոն, եօթներորդը՝ ոսկեքար, ութերորդը՝ բերիլ, իններորդը՝ տոպազիոն, տասներորդը՝ քրիսոպրասոս, մեռասաներ-

*Ոմն+ մեծ քաղաքը

†Ոմն+ Աստուած
‡Ոմն+ այս բաները

բորդն՝ յակինթի, երկոտասաներորդն՝
21 ամեթիստոս։ Եւ երկոտասան դուռներն
էին երկոտասան մարգարիտ, իւրաքանչիւր դուռն էր մի մարգարտէ. և քա-
դաքին հրապարակն էր մաքուր ոսկի,
22 նման թափանցիկ ապակւոյ։ Եւ անոր
մէջ տաճար չտեսայ, քանզի Տէր Աստուած Ամենակալ և Գառնուկն է անոր
23 տաճարը։ Եւ քաղաքը չունի պէտք արեգական և լուսնի, որ լուսաւորեն
զնա, քանզի Աստուծոյ փառքը կը լու-
սաւորէ զնա, և անոր ճրագը Գառ-
24 նուկն է։ Եւ [իրկուածներուն] ազգերը պիտի քալեն անոր լուսովը, և երկրի թագաւորները պիտի բերեն իրենց
25 փառքը և պատիւն անոր մէջ։ Եւ անոր դուռները պիտի չգոցուին ցերեկ-
26 (վասն զի հոն գիշեր պիտի չըլլայ·) Եւ ազգաց փառքը և պատիւը պիտի բե-
27 րեն անոր մէջ։ Եւ հոն բնաւ *անմաքրութիւն պիտի չմտնէ, և ոչ պղծութիւն և սուտութիւն գործող մը, այլ միայն անոնք որ գրուած են Գառնին կենաց գրքին մէջ։

## Գլ. ԻՒ

1 Եւ ցուցուց ինձ կենաց ջրոյ †գետ,
պայծառ իբրև ակնվանիք, որ կ'ելլէր
2 Աստուծոյ և Գառնին աթոռէն։ Եւ *մէ-
ջտեղ հրապարակին մէջ, և գետոյն մի
կողմը և միւս կողմը կար կենաց ծառ
որ կը բերէր երկոտասան փէսէ պտուղ, և կու տար իր պտուղն ամէն
ամիս. և ծառին տերևներն էին ի բժըշ-
3 կութիւն ազգաց։ Եւ այլ և բնաւ նզովք պիտի չըլլայ. և անոր մէջ պիտի
ըլլայ Աստուծոյ և Գառնին աթոռը, և
անոր ծառաները պիտի պաշտեն զնա.
4 Եւ պիտի տեսնեն անոր երեսը, և անոր
անունը պիտի ըլլայ անոնց ճակտանե-
5 րուն վրայ։ Եւ հոն այլ և գիշեր պիտի չըլլայ, և ճրագ և արեգական լոյս չեն պիտոյ, քանզի Տէր Աստուած պիտի լուսաւորէ զանոնք, և պիտի թագաւորեն յաւիտեանս յաւիտենից։

6 Եւ ըսաւ ինձ, Այս խօսքերն հաւատարիմ են և ճշմարիտ. և *սուրբ մարգարէներուն՝ Տէր Աստուածը ղրկեց իւր հրեշտակը ցուցնել իւր ծառաներուն
7 ինչ որ չուտով պարտի ըլլալ։ Ահա ես կու գամ վաղվաղակի. երանի անոր որ կը պահէ այս գրքին մարգարէութեան խօսքերը։

8 Եւ ես Յովհաննէս լսեցի և տեսայ այս բաները. և երբ լսեցի և տեսայ, ինկայ որ երկրպագեմ առաջի ոտից հրեշտակին որ կը ցուցնէր ինձ այս բա-
9 ները։ Եւ ըսաւ ինձ, Զգուշացիր, մի ընէր. քանզի ես քու և քու եղբայրներուդ մարգարէներուն և այս գրքին խօսքերը պահողներուն ծառայակիցն
10 եմ. Աստուծոյ երկրպագէ։ Եւ ըսաւ ինձ, Այս գիրքին մարգարէութեան խօսքերը մի կնքեր, քանզի ժամանակը
11 մօտ է։ Ան որ անիրաւութիւն կ'ընէ՝ այլ ևս անիրաւութիւն թող ընէ, և այն որ պղծեղի է՝ այլ ևս պղծեղի թող ըլլայ, և այն որ արդար է՝ այլ ևս արդար ըլլայ, և այն որ սուրբ է՝ այլ ևս սուրբ
12 ըլլայ։ Ահա ես կու գամ վաղվաղակի, և վարձքս ինծի հետ է՝ հատուցանել իւրաքանչիւրին իւր գործոցը համեմատ։
13 Ես եմ Ալֆա և Օմէգա, Առաջինն և վեր-
14 ջին, Սկիզբն և վախճան։ Երանելի են անոնք որ կը կատարեն անոր պատուիրանները, որպէս զի իշխանութիւն ունենան հինաց ծառին վրայ, և մտնեն
15 դուռներէն ներս քաղաքը։ Բայց դուրս պիտի հանուին շուներն և կախարդները և պոռնիկները, և սպանողները և կռապաշտները և այն ամէնը որ կը սիրէ և կ'ընէ սուտութիւն։

16 Ես Յիսուս իմ հրեշտակս ղրկեցի այս բաները վկայելու ձեզ եկեղեցիներուն †մէջ։ Ես Դաւիթի արմատը և ցեղն եմ,
17 և առաւօտեան պայծառ աստղը։ Եւ Հոգին և հարսը կ'ըսեն, Եկ։ և ով որ կը

*Ոմն։ անմաքրութիւն ընող
†Ոմն։ մանքուր գետ

*Ոմն։ մարգարէից հոգիներուն
†Կամ՝ վրայ։



լսէ՝ թող ըսէ, Եկ։ և ով որ ծարաւի է՝ թող գայ, և ով որ կ'ուզէ՝ կենաց ջուրն առնու ձրի։
18 *Ես կը վկայեմ ամենուն որ կը լսէ այս գիրքին մարգարէութեան խօսքերը. եթէ ոք ասոնց վրայ յաւելու բան
19 մը, Աստուած պիտի յաւելու անոր վրայ հարուածները որ գրուած են այս գիրքին մէջ։ Եւ եթէ ոք այս մարգարէութեան գիրքին խօսքերէն պակսեցունէ
20 բան մը, Աստուած պիտի պակսեցունէ անոր բաժինը կենաց *գիրքէն և սուրբ քաղաքէն †որ գրուած են այս գիրքին մէջ։ Այս բաներուն վկայութիւն տուողը կ'ըսէ, Այո, կու գամ ես վաղվաղա-
21 կի։ Ամէն, եկ, Տէր Յիսուս։ Տէրոջ մերոյ Յիսուսի Քրիստոսի շնորհքը ‡ձեր ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

*Ոմն։ Ծառէն
†Ոմն։ և այն բաներէն որ
‡Ոմն։ բոլոր սուրբերուն

## ՎԵՐՋ



U.K

1301

0028311

1301

<< Ազգային գրադարան
NL0028311
1301